Խոսք առաջին հրատարակության մասին


«Մի փոքր ուշացած և արտասովոր... Դատարանի խնդիրները, հաջողված պատմությունները և (ավելի փոքրաթիվ) անհաջողությունները երբեք չեն ներկայացվել այնպես ամբողջական, համապարփակ և մատչելի, ինչպես այստեղ: ...Որպես համապարփակ հղման աղբյուր յուրաքանչյուր ընթերցողի համար, լինի այս ոլորտի փորձագետ թե սկսնակ, այս գիրքն անչափ օգտակար կլինի:

«Քաղաքացիական արդարություն» պարբերական

Երկրորդ հրատարակությունը՝ *«Գործեր և նյութեր. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա»*, անգնահատելի աղբյուր է ուսանողների համար: Այն էապես նպաստում է Ստրասբուրգի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեծածավալ, բարդ և, հաճախ, երկարատև դատական պրակտիկայի ընկալմանը:

Առանձին գլուխներ են նվիրված հիմնարար իրավունքներից յուրաքանչյուրին՝ զուգահեռաբար ներկայացնելով կոնվենցիայի յուրաքանչյուր հոդվածի մանրամասն վերլուծությունը: Ներկայացված է դատական պրակտիկայի խնամքով կազմված ընտրանի, որը զուգակցվում է հեղինակների խորաթափանց դիտարկումներով, ինչը հնարավորություն է տալիս ընթերցողներին պատշաճ և արդիական պատկերացում կազմելու ՄԻԵԿ-ի և նրա արձանագրություններով երաշխավորված հիմնարար իրավունքների և ազատությունների մասին:

Շապիկի նկարը՝ Արքեյդ/Ալամի (Arcaid/Alamy)



ՄՈՈՒԲՐԵՅ
MOWBRAY

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

վերջին դեպքեր

Այս հրատարակության նորությունները.

- **Ավելի քան 200 նոր գործ՝ մանրամասն դիպարկումներով:**
- **Իրավունքների և ազատությունների առավել լայն շրջանակի ուսումնասիրություն (ներառյալ՝ գլուխներ թիվ 14 և թիվ 17 արձանագրությունների վերաբերյալ):**
- **Նոր գլուխ դիմումների ընդունելիության սպրասբուրգյան համակարգի վերաբերյալ:**
- **Նոր գլուխ կոնվենցիայի սպեղծման վերաբերյալ:**

էլիսթեր Մոուբրեյ՝ Նոթինգեմի համալսարանի հանրային իրավունքի պրոֆեսոր և ՄԻԵԿ-ի մեծ գիտակ: Քսան տարի կոնվենցիայի վերաբերյալ դասընթացներ է վարել համալսարանում և ասպիրանտուրայում, այս թեմայի վերաբերյալ հանդես եկել բազմաթիվ մասնագիտական դասախոսություններով և անցկացրել սեմինարներ տարբեր երկրների դասախոսների, դատավորների, փաստաբանների և պետական մարմինների ներկայացուցիչների համար:

ԵՐԿՐՈՐԴ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



Գործեր և նյութեր

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Երկրորդ հրատարակություն

ԷԼԻՍԹԵՐ ՄՈՈՒԲՐԵՅ
ALASTAIR MOWBRAY

ԳՈՐԾԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ.
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

ԵՐԵՎԱՆ
«ԲԱՎԻՂ» հրատ.
2010

Cases and Materials on the

EUROPEAN CONVENTION ON HUMAN RIGHTS

Alastair Mowbray LLB (Warw), PhD (Edin)
Professor of Public Law,
University of Nottingham

Գործեր և նյութեր

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Էլիսթեր Մոուբրեյ, իրավագիտության բակալավր (Ուորվիկի համալսարան), գիտությունների դոկտոր (Էդինբուրգի համալսարան), հանրային իրավունքի պրոֆեսոր (Նոթինգեմի համալսարան)

ՀՏԴ 341
ԳՄԴ 67.91
Գ 824

Գործեր և նյութեր: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա:
Գ 824 /Էլիսթեր Մոուբրեյ, իրավաբանական գիտությունների բակալավր (Ուորվիկ), իրավաբանական գիտությունների դոկտոր (Էդինբուրգ). - Եր.: Բավիղ, 2010. -1172 էջ:

"Cases and Materials on the EUROPEAN CONVENTION ON HUMAN RIGHTS" was originally published in English in 2007. This translation is published by arrangements with Oxford University Press Inc.

This translation is the result of a joint project between the Raoul Wallenberg Institute of Human Rights and Humanitarian Law, the Human Rights Defender's Office of the Republic of Armenia and the United Nations Development Programme (UNDP) with financial support from the Swedish International Development Cooperation Agency (Sida)."

«Գործեր և նյութեր: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա» գիրքն առաջին անգամ հրատարակվել է անգլերեն 2007 թվականին:
Թարգմանությունը հրատարակվում է «Oxford University Press Inc.» հրատարակչության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն:

Թարգմանությունն իրականացվել է Ռաուլ Վալենբերգի անվան Մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) համագործակցությամբ և Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալության (ՇՄԶՀԳ) ֆինանսական աջակցությամբ:

All rights reserved.
© In the Commentary, Notes, Questions, and in the Selection and Editing of materials, Alastair R.Mowbray, 2007

No part of this publication may be reproduced, stored in a retrieval system, or transmitted by any other means without prior written permission of the copyright holder. Please direct all enquiries to the Raoul Wallenberg Institute of Human Rights and Humanitarian Law.

Բոլոր իրավունքները պաշտպանված են
© Մեկնաբանություններ, ծանոթագրություններ, հարցեր և նյութերի ընտրություն ու խմբագրում, Էլիսթեր Մոուբրեյ, 2007

Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, զետեղվել տեղեկատվական որոնման համակարգում կամ փոխանցվել որևէ այլ միջոցով՝ առանց հեղինակային իրավունքի պահառուի գրավոր համաձայնության: Խնդրում ենք բոլոր հարցերը հղել Ռաուլ Վալենբերգի անվան Մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտին:

The views expressed in this publication do not necessarily represent those of the United Nations (UN), United Nation Development Programme (UNDP), Raoul Wallenberg Institute of Human Rights and Humanitarian Law (RWI) or Swedish International Development Cooperation Agency (Sida).

Սույն հրատարակության մեջ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ ներկայացնեն Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ), Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ), Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի կամ Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալության (ՇՄԶՀԳ) տեսակետները:

ՀՏԴ 341
ԳՄԴ 67. 91

ISBN 978-9939-818-11-5

Raoul Wallenberg Institute of Human Rights and Humanitarian Law

Մարդու իրավունքների պաշտպան

Sida

UNDP Armenia

ՆԱԽԱԲԱՆ

Այս աշխատության առաջին հրատարակության նախաբանում բերված իմ այն դիտողությունը, որ մենք ապրում ենք Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի առումով հետաքրքիր ժամանակաշրջանում, անցած տարիներին մնացել է արդիական: Լիակազմ դատարանը հասունություն և վստահություն ձեռք բերեց բուն դատարանի իրավագիտական հիմքերն ամրապնդելու (օրինակ՝ սպանությունների արդյունավետ հետաքննության տարրերի մշակումը *(«Քելլին ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Kelly v UK,* 4/5/2001) գործում) և ավելի վաղ նախադեպերից հեռանալու շնորհիվ այն գործերում, որտեղ արդի պայմանները պահանջում են անձանց ավելի բարձր պաշտպանության մակարդակ (օրինակ՝ որպես «գույք» սոցիալական արտոնությունների ավելի մեծ շրջանակն ընդգրկելը *(«Ստեքը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Stec and Others v UK,* 6/7/2005) գործում): Դատարանի վերջին տարիների գործելակերպի ուշագրավ տարրերից են բազմաբնույթ վիճահարույց գործերը, որոնք ի հայտ են եկել Խորհրդային Միության և նրա կոմունիստական արբանյակ-պետությունների փլուզումից հետո: Դատարանին ներկայացված գանգատների շարքում էին նախկին Արևելյան Գերմանիայից դեպի Արևմուտք փախուստի դիմած անձանց սպանությունների քաղաքականության համար երկրի նախկին ղեկավարների դատապարտումը *(«Ստրելեցը, Քեսլերը և Կրենցն ընդդեմ Գերմանիայի» (Streletz, Kessler and Krenz v Germany,* 22/3/2001), կոմունիստական վարչակարգերի կողմից առգրավված սեփականության դիմաց փոխհատուցում ստանալու պահանջները *(«Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի»* (*Kopecky v Slovakia,* 28/9/2004) և Խորհրդային Միության զինված ուժերի հետ կապված անձանց վտարումը երկրից (*«Սլիվենկոն ընդդեմ Լատվիայի»* (*Slivenko v Latvia,* 9/10/2003):

Դատարանը շարունակել է վճիռներ կայացնել չլուծված հիմնախնդիրների իրավաբանական հայեցակետերի շուրջ, ինչպես, օրինակ՝ Թուրքիայի կողմից Հյուսիսային Կիպրոսի գրավումը (տե՛ս *«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի»* (*Cyprus v Turkey,* 10/5/2001) և *«Քսենիդես-Արեստիսն ընդդեմ Թուրքիայի»* (*Xenides-Arestis v Turkey,* 22/12/2005) գործերը), Թուրքիայի իշխանությունների կողմից քրդական ահաբեկչությանն ի պատասխան ձեռնարկվող գործողությունները (տե՛ս *«Դոգանը և այլք ընդդեմ Թուրքիայի»* (*Dogan and Others v Turkey,* 29/6/2004) և *«Օջալանն ընդդեմ Թուրքիայի»* (*Ocalan v Turkey,* 12/5/2005) գործերը), ինչպես նաև որոշ ներպետական իրավական համակարգերում գործերը ողջամիտ ժամկետներում չքննելու դեպքերը (տե՛ս *«Ռիկարդի Պիձատին ընդդեմ Իտալիայի»* (*Riccardi Pizzati v Italy,* 29/3/2006) գործը): Թիվ 11 արձանագրությամբ դրական բարեփոխումներ ներմուծվեցին՝ դիմողներին հնարավորություն ընձեռելով գանգատներ ներկայացնելու արդեն 46 անդամ պետությունների դեմ, ինչը կոնվենցիայով երաշխավորված իրավունքների վերաբերյալ հարաճուն իրազեկության պայմաններում դատարանում դիմումների հեղեղ առաջացրեց: Թիվ 14 արձանագրությամբ համաձայնություն ձեռք բերվեց դատարանին ներկայացված գանգատների առավել արդյունավետ ուսումնասիրության խնդրի շուրջ: Այդուհանդերձ, ներկայումս Նախարարների կոմիտեն Ստրասբուրգի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերահսկիչ համակարգի արդյունավետությունն ապահովելու նկատառումով արդեն ուսումնասիրում է ավելի հեռահար և տևական բարեփոխումների հնարավորությունը: Ուստի առաջիկա տարիներին ընթացակարգային և ինստիտուցիոնալ բարեփոխումներն ինչպես դատարանի, այնպես էլ հնարավոր դիմողների համար ամենայն հավանականությամբ կշարունակեն կարևոր դեր ունենալ:

Ես օգտվել եմ նոր հրատարակությամբ ընձեռված հնարավորությունից՝ ոչ միայն դատական պրակտիկան ավելի քան 200 նոր վճիռներով թարմացնելով, այլև գրքի տարածման ոլորտն ընդլայնելու համար ընդգրկելով կոնվենցիայով և կից արձանագրություններով ամրագրված այն նյութական իրավունքները, որոնք հաճախ դատական քննության առարկա են դարձել: Ավելացվել են նաև նոր գլուխներ՝ նվիրված կոնվենցիայի ստեղծմանը և 1-ին ու 47-րդ հոդվածներին: Ստրասբուրգի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համակարգին նվիրված գլուխն ամբողջությամբ վերաշարադրվել է՝ վերոնշյալ բարեփոխումները դրանում արտացոլելու համար: Հավատացած եմ, որ ուսանողների ու սկսնակ գիտաշխատողների համար սույն աշխատությունը կշարունակի ծառայել որպես օգտակար ձեռնարկ՝ մարդու իրավունքների այս առաջադեմ և հաջողված կոնվենցիայի նախադեպային բազային ծանոթանալու տեսանկյունից:

Ես փորձել եմ նախադեպային բազան ներկայացնել 2006 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ:

Ա.Ռ.Մ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խոսք երախտագիտության xi
Օրենսդրական ակտերի ցանկ xiii
Եվրոպական օրենսդրության ցանկ xix
Գործերի ցանկ xxv

1 Կոնվենցիայի ստեղծումը 1

2 Կոնվենցիայի շրջանակներում գանգատների ընդունելիության որոշման ստրասբուրգյան համակարգը 11

Ներածություն 11
Նախնական համակարգը 11
Թիվ 11 արձանագրության համակարգը 14
Թիվ 14 արձանագրության համակարգը 51

3 Հոդված 1 Մարդու իրավունքները հարգելու պարտավորություն 63

4 Հոդված 2 Կյանքի իրավունք 81

Դատարանի ընդհանուր մոտեցումը 81
Հոդված 2(1) 117
Հոդված 2(2) 146

5 Հոդված 3 Խոշտանգման արգելք 151

Դատարանի ընդհանուր մոտեցումը 151
Խոշտանգում 167
Անմարդկային վերաբերմունք 178
Նվաստացնող վերաբերմունք 217
Նվաստացնող պատիժ 227

6 Հոդված 4 Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելք 237

7 Հոդված 5 Ազատության և անվտանգության իրավունք 249

Ներածություն 249
Հոդված 5(1) Ձերբակալության և կալանավորելու թույլատրելի հիմքերը 266
Հոդված 5(2) Կալանքի հիմքերը 306

Հոդված 5(3) Նախնական կալանք և ողջամիտ ժամկետում դատաքննություն 309
Հոդված 5(4). Կալանավորման օրինականությունը վիճարկելու միջոցը 324
Հոդված 5(5). Փոխհատուցման իրավունք 351

8 Հոդված 6 Արդար դատաքննության իրավունք 355

Հոդված 6(1) 355
Հոդված 6(2) 466
Հոդված 6(3) 475

9 Հոդված 7 Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա 491

Հոդված 7(1) 491
Հոդված 7(2) 506

10 Հոդված 8 Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք 507

Հոդված 8(1) 507
Հոդված 8(2) 616

11 Հոդված 9 Խղճի, մտքի և կրոնի ազատություն 627

Դատարանի ընդհանուր մոտեցումը 627
Հոդված 9(1) 637
Հոդված 9(2) 650

12 Հոդված 10 Ազատ արտահայտվելու իրավունք 657

Դատարանի ընդհանուր մոտեցումը 657
Հոդված 10(1) 674
Հոդված 10(2) 728

13 Հոդված 11 Հավաքների և միավորման ազատություն 765

Դատարանի ընդհանուր մոտեցումը 765
Հոդված 11(1) 779
Հոդված 11(2) 816

14 Հոդված 12 Ամուսնության իրավունք 825

15 Հոդված 13 Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք 835

16 Հոդված 14 Խտրականության արգելում 855

17 Հոդված 15 Շեղում պարտավորություններից արտակարգ իրավիճակներում 883

18 Հոդված 16, 17 և 18 907

Հոդված 16 Օտարերկրացիների քաղաքական գործունեության սահմանափակում 907
Հոդված 17 Իրավունքների չարաշահման արգելք 909
Հոդված 18 Իրավունքների նկատմամբ սահմանափակումների կիրառման սահմանները 911

19 Հոդված 41 (նախկին հոդված 50) Արդարացի բավարարում 915

Դատարանի վաղ շրջանի մոտեցումը արդարացի բավարարմանը 915
Արդարացի բավարարման արդի տեսակները 919
Ընդհանուր հարցեր 932
Արդարացի բավարարման պահանջների սահմանափակումները 933
Եզրակացություններ 936

20 Հոդված 47 Խորհրդատվական եզրակացություններ 937

21 Թիվ 1 արձանագրություն. Հոդված 1 Սեփականության պաշտպանություն 943

Դատարանի ընդհանուր մոտեցումը 943
«Գույքի» գաղափարը 955
Առաջին կանոնը. գույքից անարգել օգտվելու սկզբունքը 970
Երկրորդ կանոնը. ունեցվածքից զրկումը 979
Երրորդ կանոնը. պետությունների՝ սեփականության օգտագործումը վերահսկելու իրավունքը 998

22 Թիվ 1 արձանագրության 2-րդ հոդված. Կրթության իրավունք 1009

Դատարանի ընդհանուր մոտեցումը 1009
2-րդ հոդվածի առաջին նախադասությունը 1015
2-րդ հոդվածի երկրորդ նախադասություն 1016

23 Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդված. Ազատ ընտրությունների իրավունք 1025

24 Թիվ 4 արձանագրություն 1041

Հոդված 1 Պարտքի համար ազատազրկման արգելումը 1041
Հոդված 2 Տեղաշարժման ազատությունը 1042

Հոդված 3 Քաղաքացիների արտաքսման արգելումը 1047
Հոդված 4 Օտարերկրացիների հավաքական արտաքսման արգելումը 1048

25 Թիվ 7 արձանագրություն 1053

Հոդված 1. Օտարերկրացիների արտաքսմանը վերաբերող ընթացակարգային երաշխիքները 1053
Հոդված 2. Քրեական գործերով գանգատարկման իրավունքը 1054
Հոդված 4. Կրկին չդատվելու և չպատժվելու իրավունք 1058

Հավելված 1067

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա 1069

Առարկայական ցանկ 1099

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Հեղինակը ցանկանում է երախտագիտություն հայտնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի քարտուղար պրն Է. Ֆրայբերին և Եվրոպայի խորհրդի քարտուղարի տեղակալ պրն Մ. Օբոյլին՝ դատարանի վճիռներից և դրանց առնչվող նյութերից քաղվածքներ վերատպելու թույլտվության համար:

Գրքի 7-րդ գլուխը, որը գրել է հեղինակի գործընկեր, պատվո պրոֆեսոր Դ. Ջ. Հարիսը, ներկայացված է հեղինակի վերանայած տարբերակով:

Խորին երախտագիտություն ենք հայտնում այս գրքում ներկայացված բոլոր նյութերի հեղինակներին և հրատարակիչներին, որոնց հեղինակային իրավունքները պաշտպանված են, մասնավորապես՝ հետևյալ աղբյուրների նյութերի օգտագործումը թույլ տված հեղինակներին.

Cambridge Law Journal և հեղինակ. քաղվածքներ Քոլին Ռ. Մանրո, The Value of Commercial Speech (2003), 62(1), *Cambridge Law Journal,* էջ 134.

N. P. Engel Verlag. քաղվածքներ Պետեր Լոյպրեխտից, M. Nowak, D. Steurer, and H. Tretter (eds), *Progress in the Spirit of Human Rights* (Engle, 1988).

Koninklijke Brill NV. քաղվածքներ Հ.Ա. Ռոբերտսոնից (խմբ.), *Collected Edition of the Travaux Preparatories*, Vol. 1 (Martinus Nijhoff, The Hague, 1975).

Sweet & Maxwell Ltd. քաղվածքներ A. Mowbray, The Role of the European Court of Human Rights in the Promotion of Democracy (1999), *Public Law, էջ* 703 և E. Wicks,The United Kingdom Government's Perceptions of the European Convention on Human Rights at the Time of Entry (2000), *Public Law, էջ* 438:

Մեծ ջանքեր են գործադրվել նախքան նյութերի հրապարակումը հեղինակային իրավունքի պահառուներին գտնելու և նրանց հետ կապ հաստատելու համար: Ծանուցում ստանալուն պես գրքի հրատարակիչը պարտավորվում է առաջին իսկ հնարավորության դեպքում շտկել յուրաքանչյուր սխալ կամ բացթողում: Հեղինակը նաև շնորհակալություն է հայտնում Թոմ Յանգին և Նիկոլա Հեյզլիին, ինչպես նաև Oxford University Press հրատարակչատան բոլոր աշխատակիցներին, ովքեր մասնակցել են այս գրքի պատրաստմանը:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ

Ավստրիա

«Ընտանեկան ագարակների ժառանգման մասին» Կարինթի օրենք, 1903 թ…865
Քրեական օրենսգիրք...674
Հոդված 111… 674
(3)…675
Հոդված 209…870
«Զանգվածային լրատվամիջոցների մասին» օրենք, 1981...636
Պրովինցիալ օրենք, 1922...864
Բաժին 7(2)...864
«Ճանապարհային երթևեկության մասին» օրենք, 1960
Բաժին 5…1059
(1)…1061
99(1)(ա)…1061
«Վերին Ավստրիայի անշարժ գույքի գործառնությունների մասին» օրենք...355

Բելգիա

1849 թ. օրենք...326
Բաժին 3...325, 326
1891 թ. օրենք...267, 324, 325,
Բաժին 8...325
Բաժին 12...325
Բաժին 13...325
Բաժին 15...325
Բաժին 16...326
Բաժին 18...326
1961 թ. օրենք...795, 796, 797
1980 թ. օրենք...242
Սահմանադրություն…378
Հոդված 95…378
Քրեական օրենսգիրք...325
Հոդված 347...325
«Տնտեսական կարգավորման և գների մասին» օրենք, 1945...390
Դատավարական օրենսգիրք...238
Հոդված 455…238
Հոդված 692...244
Հոդված 1107…421
«Զինվորական կարգապահության մասին» օրենք, 1903...380, 382
Ռազմական քրեական օրենսգիրք...380
Հոդված 96…382
Հոդված 114…382
Հոդված 117…382
Թագավորական օրենսդրական որոշում, 1966...796
Հոդված 2(2)...796
Թագավորական որոշում, 1979...378
Հոդված 23…378
«Սոցիալական պաշտպանության մասին» օրենք, 1964...267
Բաժին 22…268
Բաժին 23...268
Բաժին 25...267

Չեխիայի Հանրապետություն

«Օտաերկրացիների մասին» օրենք թիվ 161/2006...1050
Բաժին 7(1)...1050
Օրենք թիվ 283/1991, Ոստիկանության մասին...1048
Հոդված 11(22) ...1048
Օրենք թիվ 329/1999, Ճանապարհային փաստաթղթերի մասին...1044
Բաժին 34...1044
Բաժին 35...1044
«Արտադատական ռեաբիլիտացիայի մասին» օրենք, 1991...959, 961, 962, 963, 964

Դանիա

«Միավորումներին անդամակցելու պատճառով աշխատանքից հեռացվելուց պաշտպանության մասին» օրենք...815
«Պետական դպրոցների մասին» օրենք...1010
5 (1)...961, 964

Ֆրանսիա

1845 թ. օրենք
16(3)...1006
1963 թ. օրենք...1012
Բաժին 5...1012
Բաժին 7...1012
(3)...1011
Բաժին 19...1012
Քրեական դատավարության օրենսգիրք...505, 1055
Հոդված 3...474
(1)…379
(2)…379
Հոդված 3-5…379
Հոդված 4(1) …379
Հոդված 80…1058
Հոդված 81…1061
(2)…1058, 1059, 1061, 1062,
Հոդված 144...320
Հոդված 221-6...108, 109

Հոդված 371-83...1065
Հոդված 380...1064
Հոդված 384-90...1065
Հոդված 630…1056
Հոդված 636…1056
Հոդված 639…1056
Գյուղական տարածքների մասին օրենսգիրք...1002
Հոդված L. 222-1..ա.1002
Հոդված L. 222-10...999, 1001
Հոդված L. 222-13...1001
Հոդված L. 222-16...1001
Հոդված L. 222-21...1001
Հոդված L. 222-25...1001
Հոդված L. 224-3...1001
Հոդված L. 227-8...1000
Հոդված L. 242-1...1001
Հոդված L. 242-11...1001
Հոդված L. 222-54...1002
Հոդված R. 222-83...1003
Հոդված R. 227-7...1002
Հոդված R. 228-1...1002
Մաքսային օրենսգիրք... 471
Հոդված 392(1)...471
Ընդհանուր հարկային օրենսգիրք...992
Հոդված 668...992
1972 հուլիսի 13-ի օրենք
Բաժին 3...371
Լուա Վերդեյ (64-696)…998, 999, 1000, 1001, 1002, 1003

Գերմանիա

«Հոգեկան խանգարումների կապակցությամբ օգնության և պաշտպանության միջոցառումների մասին» օրենք…258
Բաժին 34…258
«Առևտրային գործունեության վարման մասին» օրենք…258
Բաժին 30…258
Քրեական դատավարության օրենսգիրք…268
Հոդված 95...497, 500
Հոդված 163...279
(3)...279
Հոդված 201-203...280, 283
Հոդված 213...497
Հոդված 219...282
Հոդված 282...280
Սահմանադրություն…500
Հոդված 8...500
Հոդված 19...497
(2)...500
Հոդված 20...497
(2)…502, 503
Հոդված 30…497
«Հեղինակային իրավունքի (արվեստների ոլորտ) մասին» օրենք
Բաժին 23(1)...612
«Հասարակական կարգի խախտումների մասին» օրենք...385
Բաժին 17...385
«Ժողովրդական ոստիկանության մասին» օրենք...497
Բաժին 17(2) 497
«Սեփականության իրավունքների մասին» օրենք, 1992...950, 951, 952
«Կարգավորվող իրավախախտումների մասին» օրենք 1968/1975...384, 385, 386
«Ճանապարհային երթևեկության մասին» օրենք, 1952…385
24(2)…385
Ճանապարհային երթևեկության կանոնակարգ...385
Կանոն 1(2)...385
Կանոն 49(1)...385
«Պետական սահմանների մասին» օրենք, 1982
Բաժին 27 (2)...497

Ջիբրալթար

Սահմանադրություն...83
Հոդված 2...83

Հունաստան

Սահմանադրություն…651
Հոդված 13(2)…651, 653
Օրենք թիվ 52/1955...975
Օրենք թիվ 134/1983
Օրենք թիվ 1363/1938…651, 653
Բաժին 1...652
(1)...655
Բաժին 4...
Օրենք թիվ 1701/1987...972
Օրենք թիվ 2215/1994
Օրենսդրական օրենք թիվ 225/1973

Գերնսի

«Բնակարանների մասին» օրենք, 1969...567
«Բնակարանների մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենք, 1975... 567, 568

Իռլանդիա

Սահմանադրություն...749
Հոդված 40.3.3…749, 750, 751, 752, 754
Հոդված 40.3.5…754

Իսլանդիա

«Հանրային վարձակալման նպատակով օգտագործվող ավտոմեքենաների մասին» օրենք...807
Կանոնակարգ թիվ 308/1989...807

Իտալիա

Ակտ թիվ 89, Պինտոյի օրենք, 2001...447, 448, 929
Օրենք թիվ 17, 1982 թ...790
Թագավորական օրենսդրական հրամանագիր, 511, 1946 թ...791
Հոդված 18...791, 792, 793

Լիխտենշտեյն

Սահմանադրություն... 694
Հոդված 112…694
Սահմանադրական դատարանի որոշում, 1991...691

Նիդեռլանդներ

Քաղաքացիական օրենսգիրք...591
Հոդված 1401...353, 591
Հոդված 1407…591
Քրեական օրենսգիրք...591
Հոդված 139(2)…598
Հոդված 239(2)…598
Հոդված 248…598
«Հոգեկան հիվանդ անձանց մասին» օրենք,1884...333
Բաժին 14...333
Բաժին 17...335
Բաժին 23...335
Բաժին 24...335
Բաժին 29...336

Նորվեգիա

«Վնասի փոխհատուցման մասին» օրենք, 1969...472, 473
Հոդված 3-5(2)…473, 474

Լեհաստան

«Միավորումների մասին» օրենք, 2004... 851
Բաժին 16...851
Քաղաքացիական օրենսգիրք...851
Հոդված 417...851
1982 թ. հոկտեմբերի 26-ի օրենք...299
Բաժին 40…299
«Մամուլի մասին» օրենք, 1984...731
Բաժին 5...731, 732
Բաժին 20...731, 732

Ռուսաստան

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրություն...550
Հոդված 38(3)...550
Ուկրաինայի Սահմանադրություն...550
Հոդված 51(2)…550
Մոլդովայի Սահմանադրություն
Հոդված 48(4)…550

Շվեյցարիա

Քաղաքացիական օրենսգիրք...825
Հոդված 150...825, 826, 827
Քրեական օրենսգիրք...66
Բաժին 204…68
(1)…700, 701
«Դաշնային վարչական քրեական օրենքի մասին» օրենք, 1974...629
«Դաշնային ռադիոյի և հեռուստատեսության մասին» օրենք.....693
Բաժին 18(5)...693
«Ճանապարհային երթևեկության մասին» դաշնային օրենք... 1059, 1060
Ցյուրիխի քրեական դատավարութան օրենսգիրք…467
Հոդված 293…467

Թուրքիա

Քաղաքացիական օրենսգիրք,1997...523
Սահմանադրություն...128, 131
Հոդված 65...128
Քրեական օրենսգիրք...903, 904
Հոդված 125…264, 1059
Հոդված 135(ա)...903
Հոդված 243...903
Օրենք թիվ 775
Բաժին 18(5)...130
Օրենք թիվ 2820 (Քաղաքական կուսակցությունների ստեղծման մասին) ...769
Հոդված 78...769
Հոդված 81...769
Հոդված 96(3)...769
«Զինծառայողների մասին» օրենք...642
Բաժին 50(գ)...642
Քրեական օրենսգիրք...40
Հոդված 243...40
Հոդված 245...40
Հոդված 354...40
Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն
Սահմանադրություն...975
Հոդված 159...975

Միացյալ Թագավորություն

«Անձնական գործերին մուտք ծանոթանալու մասին» օրենք, 1987...604
«Արդարադատության իրականացման մասին» օրենք, 1970...279
Բաժին 750...277
«Արդյունաբերության նավաշինության և օդանավաշինության ճյուղերի մասին», 1977... 989
«Զինված ուժերի մասին» օրենք, 1996...453
Իրավունքների մասին օրինաշար, 1689...411
Հոդված 9...411
«Երեխաների մասին» օրենք, 1989...444

«Երեխաների մասին» օրենք, 2004... 166
Բաժին 58...166
«Երեխաների և երիտասարդների մասին» օրենք, 1933...187
Բաժին 39...187
Բաժին 53...349
(1)...349
«Քաղաքացիական ծառայության մասին» հրամանագիր, 1982...817
Հոդված 4...817, 820
«Համագործակցության պետություններ մուտք գործող ներգաղթյալների մասին» օրենք, 1968...226
«Քարոզարշավների մասին» օրենք, 1985...430
Բաժին 434...430
(5) 432
Բաժին 436....430
«Սահմանադրական բարեփոխումների մասին» օրենք, 2005...450
«Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մասին» օրենք, 1981...673
Բաժին 10...760
«Հանցավորության և անկարգությունների մասին» օրենք, 1998...210, 322
Բաժին 56...322
Քրեական ապացույցների մասին կարգ (Հյուսիսային Իռլանդիա), 1988
Հոդված 3…428
Հոդված 4... 428, 433, 434,
(4) 427
Հոդված 6...427, 428, 433, 434,
«Քրեական արդարադատության մասին» օրենք, 1967...342
Բաժին 59...342
(3)...342
(4)...342
(5)...342
(6)...342
Բաժին 61(1)...342
Բաժին 62...342
(1)...342
(3)...342
(4)...342
(5)...342
«Քրեական արդարադատության մասին» օրենք, 1988...595
«Քրեական արդարադատության մասին» օրենք, 1991...392
Բաժին 33...392, 394
(1)...394
Քրեական արդարադատության մասին, 1994... 530
Քրեական արդարադատության մասին, 2003... 349
Գլուխ 7...349
Բաժին 306...315
«Քրեական արդարադատության և հասարակական կարգի մասին» օրենք...320, 433, 495, 510, 927
Բաժին 1
(1)...495
(2)...495
Բաժին 25...320, 321, 927
Բաժին 146...510
«Քրեական դատավարարության և հետաքննության մասին» օրենք, 1996 ...418
«Թագավորական լսումների մասին» օրենք, 1947...414
Բաժին 10...414
«Տվյալների պաշտպանության մասին» օրենք, 1984...589
Բաժին 28(3)...589

«Տվյալների պաշտպանության մասին» օրենք, 1998...604
«Թմրամիջոցների ապօրինի շրջանառության մասին» օրենք, 1986...503
Բաժին 1...504
(1)...504
Բաժին 2 ...504
(3)...504
«Թմրամիջոցների ապօրինի շրջանառության մասին» օրենք, 1994... 472
«Կրթության մասին» թիվ 2 օրենք, 1986…234
«Զբաղվածության մասին» օրենք, 1980…804
«Զբաղվածության ապահովման մասին» օրենք, 1975…76, 818
121(4)...818, 820,
«Զբաղվածության ապահովման (միավորման) մասին» օրենք, 1978...818
138(4)...818, 820
«Ազատ աշխատանքի մասին» օրենք (Հյուսիսային Իռլանդիա), 1976 ...403
Բաժին 42...403
«Գենդերային իրավահավասարության ճանաչման մասին» օրենք, 2004....603
«Բնակարանների մասին» օրենք, 1974...983
«Բնակարանների մասին» օրենք, 2004...583
Բաժին 209...583
«Մարդու ֆերտիլության և սաղմնաբանության մասին» օրենք, 1990 545
«Մարդու իրավունքների մասին» օրենք, 1998...210
«Ներգաղթի մասին» օրենք, 1971…214, 275
Ներգաղթային կանոնակարգ, 1980…860, 861
«Անհնազանդության հրահրման մասին» օրենք, 1934...637
«Արդյունաբերական կապերի մասին» օրենք, 1971...801
«Վարակիչ հիվանդությունների մասին» օրենք, 1988...289
Բաժին 38...290
«Անվճարունակության մասին» օրենք, 1986…595
«Հաղորդակցությունների գաղտնալսման մասին» օրենք, 1985...585, 589
Բաժին 2-5...586
Բաժին 5...590
Բաժին 8...590
Բաժին 57...590
«Հողի գրանցման մասին» օրենք, 1925...997

«Հողի գրանցման մասին» օրենք, 2002...997
«Վարձակալության բարեփոխման մասին» օրենք, 1980...980, 982, 983, 984, 987
«Վաղեմության ժամկետի մասին» օրենք, 1980...401, 402, 403, 404, 997
Բաժին 11(4)(բ)...402
Բաժին 14...402
«Տեղական կառավարման մասին» օրենք, 1972...530
«Տեղական ինքնակառավարման մարմինների և ներքին քաղաքականության մասին» օրենք, 1989...691
«Ամուսնության մասին» օրենք, 1946...832
«Ամուսնության մասին» օրենք, 1949...831
«Ամուսնության (գրանցման) մասին» օրենք, 1985...832
«Մտավոր կարողության մասին» օրենք, 2005...298
«Հոգեկան առողջության մասին» օրենք, 1959...336
Բաժին 66...336
(3)...338
Բաժին 85...336
«Հոգեկան առողջության մասին» օրենք, 1983...119, 292, 293, 296, 297, 530
Բաժին 1(2)...293
Բաժին 73...293
(2)...293
(7)...293
«Հոգեկան առողջության մասին» օրենք (լրամշակում), 1982...340
«Մարդատար ավտոմեքենաների մասին» օրենք, 1998...436
Բաժին 103(2)...436
«Հյուսիսային Իռլանդիայի (արտակարգ դրության) մասին օրենք», 1978...281, 308
Բաժին 11...281
(1)...307
Բաժին 14...283
«Հյուսիսային Իռլանդիայի (արտակարգ դրության) մասին» օրենք, 1987...428
Բաժին 15...428
«Հյուսիսային Իռլանդիայի (արտակարգ դրության) մասին (լրամշակված)» օրենք, 1978...890
Բաժին 10...890
1...890
պարբ. 11...890, 891
պարբ. 24...890
«Անպարկեշտ հրատարակությունների մասին» օրենք, 1959...657, 658, 660
«Անպարկեշտ հրատարակությունների մասին» օրենք, 1964...658, 660
«Պետության դեմ հանցագործությունների մասին» օրենք, 1939...416, 883
Բաժին 52...416
«Պետության դեմ հանցագործությունների մասին» (լրամշակված)... օրենք, 1940…883, 885, 886, 887
Մաս II…884, 885, 887
«Խորհրդարանի մասին օրենք», 1911...511
«Խորհրդարանի մասին օրենք», 1949...511
«Ոստիկանության մասին» օրենք, 1997…619, 620
«Ոստիկանության և քրեական ապացույցների մասին» օրենք, 1984…533, 624
Բաժին 17(6)…624
Բաժին 82(1)…431
Ոստիկանության և քրեական ապացույցների մասին (Հյուսիսային Իռլանդիա) հրաման/օրդեր, 1989…897
«Քաղաքական կուսակցությունների, ընտրությունների և հանրաքվեների մասին» օրենք, 2000…690
Բաժին 131…690
«Ահաբեկչության կանխման մասին» (լրացուցիչ ժամանակավոր դրույթներ) կարգ, 1976…272
Հոդված 5…272, 274
(1)(ա)-(գ)...273, 275
Հոդված 10…272, 274
(1)...272
«Ահաբեկչության կանխման մասին» (ժամանակավոր դրույթներ) օրենք, 1976…272
«Ահաբեկչության կանխման մասին» (ժամանակավոր դրույթներ) օրենք, 1984...892
Բաժին12...893, 896
(1)(բ)...285, 286
«Ահաբեկչության կանխման մասին» (ժամանակավոր դրույթներ) օրենք,1989...897
Հավելված 7…897
Կետ 8…897
«Բանտերի մասին» օրենք, 1952…618
«Բանտերի մասին» կանոնակարգ (1964/388)…394, 618
Կանոն 47... 392
Կանոն 50...394
Կանոն 54(1)... 394
«Հանրային կարգի մասին» օրենք, 1986... 393, 909
Բաժին 4...393
Բաժին 5...393, 909
«Հետաքննչական լիազորությունների կանոնակարգման մասին» օրենք 2000 529
Մաս II...529
Բաժին 1...590
Բաժին 4...590
Բաժին 5...590
Բաժին 8...590
«Վարձակալության մասին» օրենք, 1977...870
Բաժին 14...870
(3)....870
«Ազգաբնակչության ներկայացվածության մասին» օրենք, 1983..689, 1038
Բաժին 3...1038
Բաժին 75 ...689
«Դպրոցական չափորոշիչների և կանոնակարգերի մասին» օրենք, 1998....235
«Անվտանգության ծառայության մասին» օրենք, 1989... 525
«Սեռական խտրականության մասին» օրենք, 1975...408
«Սեռական հանցագործությունների մասին» օրենք, 1956 ...509

Բաժին 1...
Բաժին 13...519
«Սեռական հանցագործությունների մասին» օրենք, 1967 ...519
Բաժին 1... 519
«Սեռական հանցագործությունների մասին» օրենք, 2003 ...520
«Սեռական հանցագործությունների մասին» (լրամշակված)օրենք, 1976 ...491
Բաժին 1...492
(1)…493
(ա)…493
«Սեռական հանցագործությունների մասին» (լրամշակված) օրենք, 2000....493
«Պետության անձեռնմխելիության մասին» օրենք, 1978...406, 407, 408
«Ինքնասպանության մասին» օրենք, 1961...115
«Հեռահաղորդակցության մասին» օրենք 1984... 589
Բաժին 45... 589
«Ահաբեկչության մասին» օրենք, 2000...315
«Ահաբեկչության մասին օրենք, 2006...315
Բաժին 23...315
«Արհմիությունների և աշխատանքային հարաբերությունների մասին» օրենք, 1974...801
«Արհմիությունների բարեփոխման և աշխատանքային իրավունքների մասին» օրենք, 1993...799
Բաժին 13...799
Գործառույթների փոխանցման և լրացուցիչ դրույթների թիվ 2 հրամանագիր2006, SI 1016/2006...450
«Անարդար մրցակցության մասին» օրենք 707, 710, 711
Բաժին 1....707,
«Անչափահասների նկատմամբ արդարադատության և քրեական ապացույցների մասին» օրենք, 1999…432
Հավելված 3…432

Միացյալ Նահանգներ

Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիա…107, 522
Հոդված 4…107
Հոդված 18…522

ԵՎՐՈՊԱՅԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Կոնվենցիաներ

Եվրոպական միության հիմնարար իրավունքների մասին խարտիա …76
Հոդվ. 9...828, 829
Հոդվ. 12...815
Հոդվ. 53...815
Աշխատավորների հիմնարար սոցիալական իրավունքների մասին Եվրոպական համայնքի խարտիա, 1989...815, 828, 829
Կոնվենցիա կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին
Հոդվ. 4(1)…878
Կոնվենցիա խոշտանգումների կանխարգելման մասին …41
Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին, Հռոմ, 1950 թ. նոյեմբերի 4
Հոդված 1...63, 64,65, 66, 68, 69, 70,71, 73, 74, 75, 80, 85, 119, 161, 162, 165, 166, 173, 174, 175, 202, 213, 257, 264, 663, 665, 668,767, 776, 812, 835, 848, 881, 934, 985, 989, 1010, 1026, 1027
(1)…240
(2)…240
Հոդված 2... 7, 27, 29, 42, 43, 44, 68, 69, 82, 83, 84, 86, 90, 91, 93, 97, 98, 99, 100, 102, 103, 104, 105, 106, 107, 108, 109, 110, 111, 112, 113, 114, 115, 116, 117, 118, 119, 120, 121, 122, 123, 124, 125, 127, 128, 131, 132, 134, 135, 136, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 161, 162, 164, 167, 184, 185, 186, 206, 208, 233, 234, 257, 259, 261, 498, 499, 521, 580, 751, 769, 846, 855, 856, 871, 872, 873, 874, 875, 876, 894
(1) . . . 83, 85, 94, 98, 107, 116, 117, 118, 122, 124, 134, 138, 139, 140, 141, 143, 144, 206, 498
(2) . . . 83, 84, 86, 91, 98, 102, 103, 107, 114, 115, 116, 499
(ա)... 88, 93, 146, 147
(բ)... 83,146, 147
(գ)...83, 147, 148
Հոդված 2-13…767
Հոդված 3... 27, 71, 73, 111, 112, 134, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 145, 146, 153, 154, 155, 156, 157, 158, 159, 160, 161, 162, 164, 165, 166, 167, 168, 169, 170, 171, 172, 173, 174, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 184, 185, 186, 187, 188, 189, 190, 191, 192, 193, 194, 195, 2196, 197, 198, 199, 201, 202, 203, 204, 205, 206, 207, 208, 209, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220, 221, 222, 23, 224, 225, 226, 227, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 249, 257, 259, 270, 271, 303, 312, 323, 331, 349, 522, 543, 684, 839, 840, 841, 842, 843, 844, 876, 891, 894, 901, 919, 920
(1)…769
Հոդված 4…238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 437, 438, 439, 440, 1061
(1)…243
(2) …240, 242, 243, 244, 247
(3)…239, 246, 247, 658
(ա) …244
(բ)… 245, 639, 866, 986
(գ)…245
(դ)…239, 242, 246, 247, 862
Հոդված 5... 42, 63, 65, 68, 118, 189, 249, 250, 251, 252, 253, 255, 256, 259, 264, 266, 267, 268, 269, 271, 277, 278, 279, 299, 302, 303, 305, 306, 306, 307, 308, 312, 317, 321, 322, 325, 326, 328, 333, 337, 338, 344, 352, 353, 535, 666, 840, 846, 847, 855, 883, 888, 889, 891, 892, 894, 895, 903, 905, 913, 927
(1) ... 65, 244, 249, 250, 251, 254, 255, 256, 257, 258, 259, 260, 261, 263, 266, 268, 269, 270, 271, 272, 273, 276, 277, 278, 279, 287, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 300, 301, 302, 303, 305, 306, 324, 326, 327, 331, 332, 335, 336, 344, 348, 352, 353, 364, 522, 640, 841, 889, 896, 927, 934
(ա)…244, 250, 266, 267, 269, 270, 271, 287, 292, 317, 326, 336, 340, 344
(ա) -(գ)…275
(բ)…251, 272, 272, 273, 274, 275, 2765, 277, 278
(գ)…251, 279, 280, 281, 282, 283, 284, 285, 286, 287, 305, 306, 307, 312, 319, 912, 913
(դ)…287, 288, 289
(ե) …250, 252, 253, 258, 290, 291, 292, 293, 294, 298, 299, 300, 301, 324, 325, 326, 331, 332, 333, 336, 338, 344, 917
(զ)...202, 273, 302, 303, 304, 305, 306, 328, 986, 989
(2)… 281, 307, 308, 856, 889, 890, 891, 1010
(3)… 251, 259, 260, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 329, 346, 351, 658, 659, 773, 889, 890, 891, 892, 893, 894, 895, 896, 897, 898, 899, 900, 901, 903, 904, 905, 925, 926, 927, 928
(4)…259, 266, 268, 297, 303, 308, 312, 316, 324, 326, 327, 328, 329, 330, 331, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 346,

347, 349, 350, 351, 841, 889, 890, 891, 898, 905, 915, 917, 925, 926, 927, 928
(5)…312, 321, 351, 352, 353, 894, 900, 905, 927
Հոդված 6... 22, 68, 85, 121, 137, 138, 142, 189, 317, 356, 357,360, 361, 365, 366, 373, 375, 381, 382, 383, 384, 385, 387, 388, 389, 391, 393, 394, 395, 407, 415, 419, 421, 424, 425, 426, 427, 428, 429, 430, 431, 436, 438, 441, 442, 444, 447, 449, 450, 458, 460, 461, 462, 471, 473, 477, 478, 481, 483, 487, 508, 569, 663, 666, 669, 670, 673, 769, 796, 855, 883, 919, 993,1044, 1055
(1)... 142, 188, 238, 316, 317, 333, 346, 351, 356, 357, 358, 359, 360, 361, 362, 363, 364, 365, 366, 368, 369, 371, 371, 372, 373, 375, 376, 377, 378. 379, 380, 382, 383, 388, 389, 390, 391, 396, 397, 398, 399, 400, 401, 402, 403, 404, 405, 406, 407, 408, 409, 410, 411, 412, 413, 414, 415, 417, 418, 419, 420, 421, 422, 423, 424, 425, 426, 428, 429, 430, 432, 434,. 435, 436, 437, 438, 439, 440, 441, 442, 443, 444, 445, 447, 448, 449, 450, 451, 452, 453, 454, 456, 458, 459, 461, 463, 464, 465, 466, 467, 468, 474, 476, 478, 479, 481, 482, 483, 484, 487, 504, 558, 566, 570, 658, 666, 715, 744, 758, 759, 763, 773, 796, 847, 484, 849, 850, 851, 924, 929, 934, 968, 1055, 1057
(2)…250, 423, 428, 430, 466, 467, 468, 469, 470, 472, 473, 474, 487
(3)…397, 417, 423, 426, 467, 476, 481, 487
(ա)…475, 856, 1010
(բ)...142, 417
(գ)...142, 238, 241, 391, 395, 400, 401, 428, 429, 440, 441, 476, 477, 479, 480
(դ)…241, 441, 480, 481, 482, 483, 484, 485, 486
(ե)…384, 387, 441, 486, 487, 488, 489, 856
Հոդված 7…381, 385, 472, 491, 492, 493, 494, 495, 496, 498, 503, 504, 505, 565
(1)…250, 491, 493, 495, 498, 500, 501, 502, 503, 504, 505
(2)…500
Հոդված 8...24, 30, 48, 68, 107, 118, 127, 164, 190, 216, 249, 257, 481, 395, 507, 508, 509, 510, 511, 512., 517, 518, 519, 520, 521, 522, 523, 524, 526, 528, 529, 532, 533, 534, 535, 537, 5638, 539, 540, 541, 542, 543, 544, 545, 547, 548, 549, 550, 551, 552, 553, 554, 555, 556, 557, 558, 559, 560, 561, 562, 563, 565, 566, 567, 568, 569, 571, 571, 572, 573, 574, 575, 576, 577, 578, 579, 580, 581, 582, 583, 584, 584, 585, 586, 587, 588, 589, 590, 591, 591, 592, 593, 594, 595, 596, 597, 598, 599, 600, 601, 602, 603, 604, 605, 606, 607, 608, 609, 610, 611, 613, 614, 625, 616, 617, 619, 620, 621, 622, 624, 625, 649, 655, 664, 682, 685, 723, 770, 772,784, 828, 829, 830, 836, 837, 840, 841, 842, 843, 844, 845, 846, 855, 856, 857, 859, 860, 861, 865, 867, 868, 869, 870, 871, 880, 919, 923, 928, 1009, 1011, 1012, 1053
(1) ...108, 507, 509, 521, 522, 525, 529, 532, 533, 537, 548, 550, 552, 569, 573, 574, 575, 583, 585, 591, 596, 604, 613, 161, 623
(2) ...107, 508, 509, 510, 512, 513, 517. 518, 521, 525, 526, 527, 528, 529, 531, 537, 538, 552, 567, 569, 570, 585, 588, 589, 591, 593, 621, 623, 668, 673 , 837, 881
Հոդված 8-11... 617, 628, 663, 664, 1019, 1040,1046
Հոդված 8 (2) -11 (2)...83, 254, 622, 628, 659, 666, 735, 827, 828, 831
Հոդված 9...68, 245, 249, 627, 628, 629, 630, 631, 632, 636,. 634, 635, 638, 639, 640, 641, 642, 643, 644, 645, 646, 647, 648, 649, 650, 651, 653, 654, 655, 692, 761, 866, 877
(1)…628, 632, 343, 637, 638, 640, 641, 643, 644, 647, 685, 692, 723, 744, 761, 866
(2)…629, 640, 646, 652, 653, 655, 668, 723, 744, 770, 772, 775, 801, 803, 805, 807, 808, 822, 831
Հոդված 9 – 11…823
Հոդված 10...68, 104, 174, 384, 469, 610, 611, 617, 633, 634, 635, 636, 657, 658, 659, 660, 661, 662, 663, 666, 668, 672,674, 675, 676,677, 678, 679, 680, 681, 682, 683, 684, 685, 686, 687, 688, 689, 690, 692, 693, 694, 695, 697, 698, 699, 700, 701, 702, 703, 704,705, 706, 707, 709, 710, 711, 712, 714, 715, 716, 717, 718, 720, 722, 723, 724, 725, 726, 727, 728, 729, 731, 732, 733, 735, 738, 739, 740, 741, 743, 744, 745, 746, 747, 748, 749, 751, 753, 754, 755, 756, 757, 758, 760, 761, 763, 764, 769, 770, 772, 775, 780, 788, 801, 803, 805, 807, 808, 822, 823, 907, 908, 909, 910, 911, 924, 935, 1022, 1033, 1035
(1)…658, 668, 673, 674, 678, 691, 694, 700, 707, 716, 718, 719, 721, 722, 723, 724, 725, 727, 735, 746, 748, 751, 769, 881, 908
(2)...107, 493, 658, 659, 660, 661, 664, 667, 668, 669, 670, 671, 672, 673, 674, 675, 682, 685, 691, 693, 694, 696, 698, 700, 701, 702, 704, 705, 708, 713, 714, 718, 721, 722, 723, 724, 725, 726, 727, 728, 729, 730, 732, 733, 734, 735, 741, 742, 743, 745, 746, 747, 751, 758, 759, 762, 763, 769, 816, 908
Հոդված 11...174, 202, 232, 376, 378, 645, 663, 765, 766, 767, 768, 769, 770, 772, 773, 774, 775, 779, 728, 783, 784, 785, 786, 787, 788, 789, 790, 791, 792, 793, 794, 795, 796, 797, 798, 799, 800, 801, 802, 803, 804, 805, 806, 807, 809, 810, 811, 812, 813, 815, 816, 818, 820, 821, 822, 823, 907, 910, 911, 999, 1040
(1)…723, 772, 773, 784, 787, 796, 797, 798, 808, 809, 816, 817, 818, 821
(2)…668, 723768, 770, 772, 773, 775, 779, 780, 781, 782, 784, 785, 788, 790, 791, 792, 797, 798, 803, 804, 805, 806, 808, 811, 816, 819, 820, 821, 822, 823
Հոդված 12... 31, 107, 174, 599, 635, 636, 825, 826, 827, 828, 829, 830, 831, 832, 833

Հոդված 13... 27, 42, 85, 121, 162, 174, 321, 326, 328, 398, 507, 590, 782, 825, 835, 836, 837, 838, 839, 840, 841, 842, 843, 844, 845, 846, 847, 848, 849, 850, 851, 852, 853, 1050
Հոդված 14... 31,138, 143, 163, 242, 243, 246, 247, 398, 403, 510, 511, 522, 523, 524, 541, 544, 549, 550, 569, 608, 634, 767, 777, 795, 797, 855, 856, 857, 858, 859, 860, 861, 862, 863, 865, 866, 8767, 868, 869, 870, 871, 872, 873, 874, 875, 876, 877, 878, 879, 880, 881, 907, 910, 911, 933, 955, 956, 966, 969, 986, 1009, 1012, 1037, 1046
(1)...769
Հոդված 15...82, 102, 141, 160, 169, 202, 314, 411, 492, 731, 883, 884, 886, 888, 889, 890, 891, 892, 893, 894, 896, 900, 901, 905
(1)…314, 658, 666, 884, 885, 886, 887, 889, 890, 891., 893, 899, 900
(2)...155, 228, 883, 889
(3)...82, 886, 887, 888, 889, 896, 897, 904
Հոդված 16...173, 907, 908, 909, 985, 986, 989
Հոդված 17… 398, 381, 751, 753, 688, 766, 767, 768, 772, 907, 909, 910, 911, 1022
Հոդված 18… 286, 332, 381, 674, 886, 907, 912, 913, 954
Հոդված 19...70, 153, 302, 659, 752, 872, 886, 889, 939
Հոդված 20…12, 795
Հոդված 21...15, 16
(1)...17
(2)...18
(3)...18
Հոդված 22...15, 16
Հոդված 23...15
Հոդված 24...18, 932
Հոդված 25...19, 23, 157, 353, 398, 915, 917, 1032
Հոդված 25-27…920
Հոդված 26...17, 157, 326, 609, 658, 915, 916
(դ)...20
(ե)...19
Հոդված 27...916
(1)(բ)...940, 941
(2)...106, 634
(3)...915
Հոդված 28...884
(1)...86, 154
(ա)…154
Հոդված 29
Հոդված 30...32, 537
Հոդված 31... 35, 86, 271, 447
(բ)…938
Հոդված 32...13, 447
(1)...939
(2)...171
(3)...171
Հոդված 33...15, 20, 24, 939, 941
Հոդված 34...15, 20, 24, 22, 23, 25, 34, 939, 941
Հոդված 35...15, 848, 850, 939
(1)... 26, 27, 411, 848
(2)…30
(բ)...937, 938, 939, 941, 942
(3)...23, 31, 215, 910, 966
(բ)…59
(4)...215, 910, 939, 966
Հոդված 36…537, 931
(1)…39
(2)…40
Հոդված 37…26
(1)... 24, 25
(գ)…44, 45, 46
(2)…45
Հոդված 38...15, 45
(1)
(ա)…39, 40
(բ)…40
(2)…40, 44
Հոդված 39...13, 39
Հոդված 40…13
Հոդված 41…570, 915, 919, 922, 923, 926, 929, 930, 932, 933, 935, 936, 996,
Հոդված 43... 42, 147, 193, 391, 420, 543, 560, 561, 574, 775, 998, 1008
(2)...48
(3)...48
Հոդված 44...49
(2)…49
Հոդված 45...939
Հոդված 46...15, 933, 1008
(1)...49, 57
(2)…46, 49, 50, 51
(3)...57
(4)…57
Հոդված 47...937, 938, 939
(2)...938, 939, 941
Հոդված 48...939
(բ)…931
(գ)…931
Հոդված 49... 376
Հոդված 50...19, 158, 169, 598, 915, 916, 917, 918, 924, 925, 928, 930, 931, 934, 936, 995
(2)...918, 919, 923
(3) ...918, 919, 923, 936
(5) ...918, 919, 923
Հոդված 52…252
Հոդված 53...78, 411
Հոդված 55...938, 942
Հոդված 56...70
Հոդված 60… 751, 753, 767
Հոդված 63...767
Հոդված 68…769
Թիվ 1 արձանագրություն, 1952 թ. մարտի 20...211, 369, 374, 411, 639, 1035, 1036, 1037, 1038, 1039, 1040
Նախաբան…1032
Հոդված 1...68, 77, 507, 570, 571, 617, 658, 811, 863, 864, 865, 935, 943, 944, 945, 946, 947, 948, 494, 950, 951, 952, 953, 954, 955, 956, 957, 958,

959, 960, 961, 962, 963, 964, 965, 966, 967, 968, 969, 970, 972, 974, 975, 976, 977, 978, 979, 980, 981, 982, 983, 984, 985, 986, 987, 988, 989, 990, 991, 993, 994, 995, 996, 997, 998, 999, 1002, 1003, 1004, 1005, 1007, 1008, 1032
Հոդված 2… 249, 639, 855, 856, 1009, 1010, 1011, 1012, 1013, 1014, 1015, 1016, 1017, 1018, 1019, 1020, 1021, 1022, 1023, 1032
Հոդված 3…690, 766, 769, 770, 877, 1025, 1026, 1027, 1028, 1029, 1030, 1031, 1032,1033, 1034,
Հոդված 4...1032
Հոդված 5...985, 1032
Թիվ 2 արձանագրություն, 1963 թ. մայիսի 6…939, 941
Թիվ 4 արձանագրություն, 1963 թ. սեպտեմբերի 16...211
Հոդված 1…1041
Հոդված 2…249, 251, 252, 617, 668, 1043, 1044, 1045, 1046, 1047, 1050, 1051
(1)…1041
(2)…1041, 1042, 1043
(3)…744, 1042, 1045, 1047
(4)…1045, 1048, 1049, 1050
Հոդված 3...986, 989
Հոդված 4...853, 986, 989
Նախաբան...1032
Թիվ 6 արձանագրություն, 1983 թ. ապրիլի 28...145
Թիվ 7 արձանագրություն, 1984 թ. նոյեմբերի 22... 1032, 849, 146, 1053, 1054
Հոդված 1…1054, 1055
(1)
(ա) …1054
(բ)…1054
(2)…1053
Հոդված 2...849, 1055, 1056, 1057, 1058
(2)…1055
Հոդված 4…1058, 1059, 1060, 1061, 1062, 1063, 1064, 1065
(1)… 1064, 1065
(2)… 1064, 1065
Թիվ 11 արձանագրություն, 1994 թ. մայիսի 11…11, 14, 15, 23, 36, 47, 50, 56, 59, 917
Թիվ 12 արձանագրություն, 2000 թ. նոյեմբերի 4...878, 879, 880, 881
Թիվ 13 արձանագրություն...136, 140, 144, 145, 146
Հոդված 1...146
Թիվ 14 արձանագրություն, 2004 թ. մայիսի 13…11, 50, 55, 56, 58, 59, 60, 61
Հոդված 20(2)…57
Կոնվենցիա երեխայի իրավունքների մասին, 1989 թ. նոյեմբերի 20…522
Հոդված 7…522
Հոդված 8…522
Հանձնման (էքստրադիցիայի) մասին եվրոպական կոնվենցիա, 1957…199
Հոդված 11…199
Հոդված 19(1)…303
Պետության անձեռնմխելիության մասին եվրոպական կոնվենցիա, Բազելի կոնվենցիա, 1972…405, 406
Անդրսահմանային հեռուստատեսության մասին եվրոպական կոնվենցիա…720
Եվրոպական սոցիալական խարտիա...541, 796, 802
Հոդված 1(2)…541, 542
Հոդված 5...814
Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիա…625
Հոդված 4
(2)...879
(3)...878
Փախստականների կարգավիճակի մասին Ժնևի կոնվենցիա…253
Հաագայի կոնվենցիա…564
Հոդված 2…564, 565
Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին Օվիեդոյի կոնվենցիա… 109
Հոդված 29...109
Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիա, 1969
Հոդված 31… 396, 985
(1)…298, 486, 829
(2)… 397
Հոդված 31-33…298, 396
Հոդված 32…398, 986
Հոդված 33...981
(4)…312, 668
Հոդված 4…396
Հոդված 39...144
Հոդված 62…499

Համաձայնագրեր

ԵՀ համաձայնագիր …76, 750, 909
Հոդված 17-22…909
Հոդված 48(4)…372
Հոդված 60…750
Հոդված 99…1029
Հոդված 100…1029
Հոդված 137…1029
Հոդված 138 բ…1029
Հոդված 144 …1029
Հոդված 158…1029
Հոդված 189
բ…1028, 1030
գ…1029
Հոդված 203…1029
Հոդված 206…1029
Հոդված 226...76
Հոդված 227...77
(4)…1027
Հոդված 228...77
Հոդված 230...76
Հոդված 232...76
Հոդված 234...77
Հոդված 241...76

Հոդված 249...77
Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին Ժնևի ընդհանուր ակտ…916
Հոդված 32…916, 917
Արբիտրաժի և հաշտարարության մասին գերմանա-շվեյցարական համաձայնագիր, 1921…916
Հոդված 10…916, 917
Մաաստրիխտի համաձայնագիր, 1992…854, 1026, 1027,1029
Եվրոպական միասնական ակտ, 1986 ... 76, 1028, 1029
Ամստերդամի պայմանագիր...76
Եվրոպայի Սահմանադրության հաստատման միջազգային պայմանագիր…76
Հոդված 1-9...76
Հոդված II-112(3)...78

Ընթացակարգային կանոնագրքեր

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կանոնակարգ
20(3)…702
24(5)…49
39…33
(1)…33
(2)…33
(3)…33
44(5)…44
47(3)…154
62(2) …45
Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի ընթացակարգային կանոնակարգ …34
36…34
(1)…34
71…916

Որոշումներ

Եվրոպական միության խորհրդի, 1976 թ. սեպտեմբերի 20…1025, 1026

Դիրեկտիվներ

Դիրեկտիվ, 89/552/ EEC, 1989 հոկտեմբերի 3…699

ԳՈՐԾԵՐԻ ՑԱՆԿ

«Ա-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (A v United Kingdom) (1998) 27 EHRR 611, ECHR 1998-VI …80, 159, 165, 166, 652, 411

«Աբդուլազիզը, Կաբալեսը և Բալկանդալին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Abdulaziz, Cabales and Balkandali v UNITED KINGDOM (1985) 7 EHRR 471, [1985] ECHR 7)…226, 227, 550, 551, 777, 857, 864, 878, 879

«Աբենավոլին ընդդեմ Իտալիայի» (Abenavoli v Italy) ECHR 1997-V 1703, [1997] ECHR 54, ECtHR …370

«Ագգան ընդդեմ Հունաստանի» (Agga v Greece) (No 2) [2002] ECHR 676…644

«Աերցն ընդդեմ Բելգիայի» (Aerts v Belgium) [1998] ECHR 64, (2000) 29 EHRR 50, ECtHR …196, 294

«Ազատություն և ժողովրդավարություն» կուսակցությունն (ÖZDEP) ընդդեմ Թուրքիայի (GC)» (Freedom and Democracy Party (ÖZDEP) v Turkey (GC) [1999] ECHR 139, ECtHR …776

«Ազգային և պրովինցիալ շինարարական միությունը, Լիդզի մշտական շինարարական միությունը և Յորքշիրի շինարարական միությունն ընդդեմ Միացյալ Թագավորության» (National & Provincial Building Society, Leeds Permanent Building Society and Yorkshire Building Society v United Kingdom) [1997] ECHR 87, ECtHR …879, 951, 957

«Ազիզն ընդդեմ Կիպրոսի» (Aziz v Cyprus) [2004] ECHR 271, ECtHR …877, 1037

«Ազինասն ընդդեմ Կիպրոսի» (Azinas v Cyprus) judgment of 28 April 2004, unreported, ECtHR …49, 967

«Ալ Ադսանին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Al-Adsani v the United Kingdom) (2002) 34 EHRR 11, 12 BHRC 88, ECtHR …139, 404, 408, 409

«Ալան Յակոբսոնն ընդդեմ Շվեդիայի» (Allan Jacobsson v Sweden) [1989] ECHR 18, (1990) 12 EHRR 56, ECtHR …374

«Ալանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Allan v United Kingdom) (2003) 36 EHRR ...13, 29

«Ալբերը և Լե Կոմպտն ընդդեմ Բելգիայի» (Albert and Le Compte v Belgium), Series A No 58, [1983] ECHR 1, ECtHR …423, 364

«Ալթմանն (Բարբին) ընդդեմ Ֆրանսիայի» (Altmann (Barbie) v France) [2000] ECHR 2, (2002) 34 EHRR 23, ECtHR (1984) 37 DR 225, EComHR …264

«Ալիևն ընդդեմ Ուկրաինայի» (Aliev v Ukraine) [2003] ECHR 201, ECtHR …831

«Ալինակն ընդդեմ Թուրքիայի» (Alinak v Turkey) [2005] ECHR 188, ECtHR …705

«Ալենե դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի» (Allenet de Ribemont v France) Series A No 308, [1995] ECHR 5, (1995) 20 EHRR 557, ECtHR …468, 473

«Ալմեյդա Գառեթը, Մասկարենաշ Ֆալկաոն ընդդեմ Պորտուգալիայի» (Almeida Garrett, Mascarenhas Falcao v Portugal) [2000] ECHR 2, (2002) 34 EHRR 23, ECtHR …949

«Ալ Նաշիֆն ընդդեմ Բուլղարիայի» (Al-Nashif v Bulgaria) [2002] ECHR 502, (2003) 36 EHRR 37, ECtHR …845

«Ահմադն ընդդեմ ILEA -ի» (Ahmad v ILEA), [1978] 1 All ER 574, CA . . . 643

«Ահմադն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ahmad v United Kingdom) (1981) 4 EHRR 126, ECtHR . . . 643

«Ահմեդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ahmed v United Kingdom) [1998] ECHR 78, (2000) 29 EHRR 1, ECtHR …690, 730, 761, 823, 1034, 1040

«Ամանն ընդդեմ Շվեյցարիայի» (Amann v Switzerland) [2000] ECHR 88, (2000) 30 EHRR 843, ECtHR …141, 526, 530, 593

«Ամենիգանն ընդդեմ Նիդեռլանդների» (Amegnigan v Netherlands) decision of 25 November 2004, nreported, ECtHR …215

«Ամինիստրացիոնե դել Ֆինանցե դելլո Ստատոն» ընդդեմ «Սիմենտալ» ՍՊԸ-ի» (Amministrazione delle Finanze dello Stato v Simmenthal SpA) (Case 106/77) [1978] ECR 629, ECJ …1028

«ԱՄՆ-ն ընդդեմ Բըրնսի» (United States v Burns) (2001) SC 7, Canadian Supreme Court …138

«Ամոկո միջազգային ֆինանսական կորպորացիան ընդդեմ Իրանի» (Amoco International Finance Corporation v Iran)», Iran-United States Claims Tribunal Reports (1987-II)...920

«Ամուրն ընդդեմ Ֆրանսիայի» (Amuur v France) (1996) 22 EHRR 533, [1996] ECHR 25, ECtHR …253

«Այդընն ընդդեմ Թուրքիայի» (Aydin v Turkey) ECHR 1997-VI 1889, (1997) 25 EHRR 251, ECtHR...172, 174 800

«Այունտամիենտո դե Մուլան ընդդեմ Իսպանիայի» (Ayuntamiento de Mula v Spain) (1991) 68 DR 209, EComHR...22

«Անգելովան ընդդեմ Բուլղարիայի» (Anguelova v Bulgaria) [2002] ECHR 489, (2004) 38 EHRR 31, ECtHR... 22, 123, 261

«Անդրիչն ընդդեմ Շվեդիայի» (Andric v Sweden), decision of 23 February 1999, unreported, ECtHR …1048, 1050

«Անդրոնիկուն և Կոնստանտինուն ընդդեմ Կիպրոսի» (Andronicou and Constantinou v Cyprus), (1998) 25 EHRR 491, ECtHR...98

«Անկերլն ընդդեմ Շվեյցարիայի» (Ankerl v Switzerland) [1996] ECHR 45, (2001) 32 EHRR 1, ECtHR...424
«Անհոյզեր-Բուշ ինքորփորեյթիդն» ընդդեմ Պորտուգալիայի» (Anheuser-Busch Inc. v Portugal) 2005] ECHR 686, [2006] ETMR 43, ECtHR...969
«Անտիյի մունիցիպալ շրջանն ընդդեմ Ֆրանսիայի» (The Municipal Section of Antilly v France) ECHR 1999-VIII, ECtHR... 22
«Անտրիշն ընդդեմ Ֆրանսիայի» (Hentrich v France) [1994] ECHR 29, (1994) 18 EHRR 440, ECtHR...952, 989, 991
«Աշինգդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ashingdane v United Kingdom) Series A No 93, (1985) 7 EHRR 528, ECtHR...295
«Աշխատանքի ժողովրդավարական ֆրանսիական կոնֆեդերացիան ընդդեմ Եվրոպական համայնքների» (CFDT v European Communities) [1979] 2 CMLR 229, (1978) DR 13, EComHR...75
«Աշուրն ընդդեմ Ֆրանսիայի» (Achour v France) judgment of 29 March 2006, unreported, ECtHR...505
«Ա.Պ.-ն ընդդեմ Իտալիայի» (A.P. v Italy) judgment of 28 July 1999, unreported, ECtHR...848
«Ասանիձեն ընդդեմ Վրաստանի» (Assanidze v Georgia) [2004] ECHR 140, (2004) 39 EHRR 32, ECtHR...63, 928, 934, 935
«Ասենովն ընդդեմ Բուլղարիայի» (Assenov v Bulgaria) Assenov v Belgium [1998] ECHR 98, (1999) 28 EHRR 652, EctHR ...1612, 162, 164, 309, 610, 615
«Ավշարն ընդդեմ Թուրքիայի» (Avsar v Turkey) [2001] ECHR 439, (2003) 37 EHRR 53, ECtHR...102
«Ավջին ընդդեմ Թուրքիայի» (Avci v Turkey, judgment of 27 June 2006, unreported, ECtHR)...200
«Ավստրիայի զինվորների ժողովրդավարական միությունը» և Գուբին ընդդեմ Ավստրիայի» (Vereinigung Demokratischer Soldaten Osterreichs and Gubi v Austria) [1994] ECHR 50, (1995) 20 EHRR 56, ECtHR …745
«Ավրիլն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Averill v United Kingdom) [2000] ECHR 212, (2001) 31 EHRR 36, ECtHR...478
«[Ավստրիայի 16 համայնքները և դրանց որոշ խորհրդականներն] ընդդեմ Ավստրիայի» (Councillors v Austria), Commission Decision of 31 May 1974 ...22
«Արևելյան Աֆրիկայի ասիացիներն ընդդեմ Միացյալ Թագավորության» (East African Asians v United Kingdom) [1973] ECHR 2, (1973) 3 EHRR 76, ECtHR...225, 227
«Արտիկոն ընդդեմ Իտալիայի» (Artico v Italy) (1980) Series A No 37, (1981) 3 EHRR 1...202, 443, 476, 768
«Աուտրոնիկ» բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Շվեյցարիայի» (Autronic AG v Switzerland) Series A No 178, (1990) 12 EHRR...718
«ԱՓԵՀ Ուլդոզոթայնեք Զովեթզեգեն, Իվանյին, Ռոթը և Զերդահելյին ընդդեմ Հունգարիայի» (APEH Uldozotteinek Szovetsege, Ivanyi, Roth and Szerdahelyi v Hungary) [2000] ECHR 451, (2002) 34 EHRR 34, ECtHR...789
«Աքդիվարն ընդդեմ Թուրքիայի» (Akdivar v Turkey) (1997) 23 EHRR 143, 1 BHRC 137...26, 28, 29, 580, 872, 934
«Աքմանն ընդդեմ Թուրքիայի» ECHR 2001-VI 403, ECtHR...41, 42
«Աքսոյն ընդդեմ Թուրքիայի» (Aksoy v Turkey) judgment of 18 December 1996, 23 EHRR 553, ECtHR...26, 162, 167, 172, 174, 259, 310, 314, 587, 901, 905

«Բ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (B v United Kingdom) [1987] ECHR 12, ECtHR... 558
«Բ-ն ընդդեմ Ֆրանսիայի» (B v France) Series A No 232-C, (1992) 16 EHRR 1, ECtHR...600, 601
«Բ.-ն և Լ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (B. and L. v United Kingdom)...832
«Բ-ն և Փ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (B. and P. v United Kingdom), judgment of 24 July 2001...444, 465
«Բ.Բ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (B.B. v United Kingdom), judgment of 10 February 2004, unreported, EctHR ...511
«Բ.Բ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (B.B. v France) ECHR 1998-VI 2595, EComHR...225
«Բադերն ընդդեմ Շվեդիայի» (Bader v Sweden) judgment of 8 November 2005, unreported, EctHR ...145
«Բաղլին ընդդեմ Ֆրանսիայի» (Baghli v France) [1999] ECHR 135, (2001) 33 EHRR 32, ECtHR...555
«Բանկովիչը ընդդեմ Բելգիայի»(Bankovic´ v Belgium) [2001] ECHR 890, ECtHR...64, 68, 265
«Բարաոնան ընդդեմ Պորտուգալիայի» (Baraona v Portugal) [1987] ECHR 13, (1991) 13 EHRR 329, ECtHR...373
«Բարբերան, Մեսեգեն և Խաբարդոն ընդդեմ Իսպանիայի» (Barberà, Messegué and Jabardo v Spain) Series A No 146, (1988) 11 EHRR 360, ECtHR...442
«Բարթոլդն ընդդեմ Գերմանիայի» (Barthold v Germany) Series A No 90, (1985) 7 EHRR 383, ECtHR...710, 712
«Բարի, Սորենտինո և Մեսսենի Նեմանյա պրովինցիաներն ընդդեմ Իտալիայի» (The Province of Bari, Sorrentino and Messeni Nemagna v Italy), decision of 22 March 2001, unreported, ECtHR...22
«Բարֆորդն ընդդեմ Դանիայի» Barfod v Denmark [1989] ECHR 1, (1991) 13 EHRR 493, ECtHR …629, 754
«Բաց դուռ» և «Դուբլինի տատմեր» կազմակերպություններն ընդդեմ Իռլանդիայի» (Open Door and Dublin Well Woman v Ireland) (1992) Series A 246-A 29, (1992) EHRR 244, 18 BMLR 1, ECtHR …107, 522, 739, 749, 767
«Բաումանն ընդդեմ Ֆրանսիայի» (Baumann v France) [2001] ECHR 340, (2002) 34 EHRR 44, ECtHR...689, 1041, 1042, 1043

«Բաքլին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Buckley v the United Kingdom) (1996) 23 EHRR 101, ECtHR...5, 569, 583, 614, 621, 623
«Բելգիայի լեզվաբանակ ան» (Belgian Linguistic) case (No 2), Series A No 6, (1968) 1 EHRR 252, ECtHR...399, 658, 671, 777, 855, 858, 878, 879, 1009, 1014, 1023, 1016, 1018
«Բելգիայի ոստիկանների ազգային միությունն ընդդեմ Բելգիայի» (National Union of Belgian Police v Belgium) [1975] ECHR 2, (1979–80) 1 EHRR 578, ECtHR...795
«Բելիլոսն ընդդեմ Շվեյցարիայի» (Belilos v Switzerland) [1988] ECHR 4, (1988) 10 EHRR 466, ECtHR ... 389
«Բելինգերն ընդդեմ Բելինգերի» (Bellinger v Bellinger) [2001] 3 FCR 1, CA...603, 829
«Բեկոսը և Կուտրոպուլոսն ընդդեմ Հունաստանի» (Bekos and Koutropoulos v Greece) [2005] ECHR 840, ECtHR...163, 876
«Բեյելերն ընդդեմ Իտալիայի» (Beyeler v Italy) [2000] ECHR 1, (2001) 33 EHRR 52, ECtHR...954, 976, 991, 993
«Բենդենունն ընդդեմ Ֆրանսիայի» (Bendenoun v France) [1994] ECHR 7, (1994) 18 EHRR 54, ECtHR...375, 391
«Բենթեմն ընդդեմ Նիդեռլանդների» (Benthem v The Netherlands) Series A No 97, (1985) 8 EHRR 1, ECtHR...363, 365, 366, 374
«Բենկեսսիուրն ընդդեմ Ֆրանսիայի» (Benkessiouer v France) [1998] ECHR 72, ECtHR...376
«Բենհեբան ընդդեմ Ֆրանսիայի» (Benhebba v France) [2003] ECHR 342, ECtHR...55
«Բենհեմն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Benham v the United Kingdom) [1996] ECHR 22, (1996) 22 EHRR 293, ECtHR...263, 270, 276, 391, 478
«Բենսեդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Bensaid v United Kingdom) [2001] ECHR 82, (2001) 33 EHRR 10, ECtHR...216
«Բեռլինսկին ընդդեմ Լեհաստանի» (Berlinski v Poland) [2002] ECHR 505, ECtHR...478
«Բեսարաբիայի մետրոպոլիտան եկեղեցին ընդդեմ Մոլդովայի» (Metropolitan Church of Bessarabia), [2001] ECHR 860, (2002) 35 EHRR 13, ECtHR...646
«Բերեհաբն ընդդեմ Նիդեռլանդների» (Berrehab v Netherlands) (1988) 11 EHRR 322, [1988] ECHR 14, EctHR ...551, 556
«Բերձենիշվիլին ընդդեմ Ռուսաստանի» (Berdzenishvili v Russia) , judgment of 29 January 2004, unreported, ECtHR...1064
«Բժիշկները հանուն կյանքի» պլատֆորմն ընդդեմ Ավստրիայի» (Plattform Artze fur das Leben v Austria) (1988) 13 EHRR 204, ECtHR...782, 809
«Բիթն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Beet v United Kingdom) judgment of 1 March 2005, unreported, ECtHR...276, 393, 478, 927
«Բիրուտիսը ընդդեմ Լիտվայի» (Birutis v Lithuania) [2002] ECHR 349, ECtHR...485
«Բլադեթ Թրոմսոն և Ստենսասն ընդդեմ Նորվեգիայի» (Bladet Tromso and Stensaas v Norway) [1999] ECHR 29, (2000) 29 EHRR 125, ECtHR...715, 728
«Բլումն ընդդեմ Ավստրիայի» (Blum v Austria) [2005] ECHR 53, ECtHR …924
«Բոզանոն ընդդեմ Ֆրանսիայի» (Bozano v France) [1986] ECHR 16, (1987) 9 EHRR 297, EctHR ...141, 263, 269, 276, 301, 305
«Բոզոն ընդդեմ Իտալիայի» (Boso v Italy) ECHR 2002-VII 99, ECtHR...108, 522
«Բոսֆորուս Հավա Յոլլարի Թուրիզմ վե Թիջարեթ Անոնիմ Շիրքեթի»-ն ընդդեմ Իռլանդիայի» (Bosphorus Hava Yollari Turizm ve Ticaret Anonim Sirketi v Ireland) judgment of 30 June 2005, unreported...70, 74
«Բոտացին ընդդեմ Իտալիայի» (Bottazzi v Italy) ECHR 1999-V, ECtHR...446, 848
«Բոտտան ընդդեմ Իտալիայի» (Botta v Italy) (1998) 26 EHRR 241, ECtHR...607
«Բորգերսն ընդդեմ Բելգիայի» (Borgers v Belgium) Series A No 214-A, (1991) 15 EHRR 92...421, 422, 424
«Բոումանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Bowman v United Kingdom) ECHR 1998-I 175, (1998) 26 EHRR 1, EctHR ...1035, 1040
«Բրանդշտեթթերն ընդդեմ Ավստրիայի» (Brandstetter v Austria) (1991) 15 EHRR 378, ECtHR...417
«Բրենիգանը և Մակբրայդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Brannigan and McBride v United Kingdom) [1993] ECHR 21, EctHR ...314, 892, 900, 902, 903, 904
«Բրեննանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Brennan v the United Kingdom) [2001] ECHR 596, (2002) 34 EHRR 18, EctHR ...479
«Բրինկատն ընդդեմ Իտալիայի» (Brincat v Italy) [1992] ECHR 71, (1993) 16 EHRR 591, EctHR ... 310, 311, 315
«Բրոգանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Brogan v United Kingdom) (1988) 11 EHRR 117, [1988] ECHR 24, EctHR ...284, 310, 311, 314, 316, 351, 892, 893, 894, 895, 896, 898, 901, 903
«Բրոզիչեկն ընդդեմ Իտալիայի» (Brozicek v Italy) Series A No 167, (1989) 12 EHRR 371, EctHR ...475
«Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի» (Broniowski v Poland) (2006) 43 EHRR 1, ECtHR...41, 46, 812, 935, 961, 976, 979, 1007
«Բրուալա Գոմես դե լա Տոռեն ընդդեմ Իսպանիայի» (Brualla Gómez de la Torre v Spain) [1997] ECHR 104, (2001) 33 EHRR 57, ECtHR...847
«Բրյուգեմանն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության» (Bruggemann v Federal Republic of Germany) (1977) 10 DR 100, EComHR...107, 108, 520, 521
«Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի» (Brumarescu v Romania) [1999] ECHR 105, (2001) 33 EHRR 36, ECtHR...934, 1064

«Բուամարն ընդդեմ Բելգիայի» [Bouamar v Belgium] [1988] ECHR 1, (1989) 11 EHRR 1, ECtHR...263, 270, 286
«Բուխբերգերն ընդդեմ Ավստրիայի» (Buchberger v Austria) [2001] ECHR 873, (2003) 37 EHRR 13, EctHR ...560
«Բուխենն ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (Buchen v the Czech Republic) [2002] ECHR 766, ECtHR ...967
«Բուխհոլցն ընդդեմ Գերմանիայի» (Buchholz v Germany) Series A No 42, (1981) 3 EHRR 597, EctHR ...446
«Բուշելկիան ընդդեմ Ֆրանսիայի» (Bouchelkia v France) [1997] ECHR 1, (1998) 25 EHRR 686, ECtHR...555
«Բուժլիֆան ընդդեմ Ֆրանսիայի» (Boujlifa v France) [1997] ECHR 83, (2000) 30 EHRR 419, EctHR ...555
«Բուսկարինին ընդդեմ Սան Մարինոյի» (Buscarini v San Marino Marino) (1999) 30 EHRR 208, ECtHR...640
«Բուտկևիչիուսն ընդդեմ Լիտվայի» (Butkevicius v Lithuania) [2002] ECHR 331, EctHR ...469
«Բուրգարցն ընդդեմ Շվեյցարիայի» (Burghartz v Switzerland) [1994] ECHR 2, (1994) 18 EHRR 101, ECtHR...522, 524, 610

«Գ-ն ընդդեմ Ավստրիայի» (G v Austria) 38 DR 84, EComHR...966
«Գ-ն ընդդեմ Գերմանիայի» (G v Germany) (1989) 60 DR 256, EComHR...816
«Գ-ն ընդդեմ Իտալիայի» (G v Italy) [1992] ECHR 20, ECtHR 24
«Գայգուսուզն ընդդեմ Ավստրիայի» (Gaygusuz v Austria) (1996) 23 EHRR 365, ECtHR...865, 966
«Գասկինն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Gaskin v United Kingdom) [1989] ECHR 13, (1990) 12 EHRR 36, ECtHR...604
«Գասուս Դոսիեր ունդ Ֆորդերտեքնիկ» ԲԲԸ-ն ընդդեմ Նիդեռլանդների» (Gasus Dosier und Fordertechnik GmbH v Netherlands) [1995] ECHR 7, (1995) 20 EHRR 403, ECtHR...374, 956, 958, 1005
«Գավեդան ընդդեմ Լեհաստանի» (Gaweda v Poland) [2002] ECHR 301, (2004) 39 EHRR 4, EctHR ...731
«Գարոդին ընդդեմ Ֆրանսիայի» (Garaudy v France), judgment of 24 June 2003, unreported, ECtHR...910, 911
«Գարսիա Ռուիսն ընդդեմ Իսպանիայի» (García Ruiz v Spain), [1999] ECHR 2, (2001) 31 EHRR 22, ECtHR...424, 964
«Գարտուկաևն ընդդեմ Ռուսաստանի» (Gartukayev v Russia) [2005] ECHR 844, ECtHR...1047
«Գարֆալլու ԱԻԲԻ-ն ընդդեմ Հունաստանի» (Garyfallou AEBE v Greece) [1997] ECHR 74, (1999) 28 EHRR 344, ECtHR...391
«Գերմանիայի կոմունիստական կուսակցությունն ընդդեմ …» Communist Party (KPD) v Germany, 1 Yearbook 222, EComHR …763, 767
«Գերմանիան ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների» (Լագրանդ) (Germany v United States of America (LaGrand), judgment of 27 June 2001, ICJ...34
«Գիլլոուներն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Gillow v United Kingdom) A No 109, (1986) 11 EHRR 335, ECtHR...567, 583, 621, 623
«Գիյոն ընդդեմ Ֆրանսիայի» (Guillot v France) [1996] ECHR 48, ECtHR...523
«Գինչոն ընդդեմ Պորտուգալիայի» (Guincho v Portugal) [1984] ECHR 9, (1985) 7 EHRR 223, ECtHR...446
«Գիտոնասն ընդդեմ Հունաստանի» (Gitonas v Greece) [1997] ECHR 35, (1998) 26 EHRR 691, ECtHR...768, 1034, 1040
«Գլասսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Glass v United Kingdom) [2004] ECHR 103, (2004) 39 EHRR 15, ECtHR...540
«Գլեյսերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Glaser v United Kingdom) [2000] ECHR 419, [2000] 3 FCR 193, ECtHR...563
«Գլիմերվենը և Հագենբեքը ընդդեմ Նիդեռլանդների» (Glimmerveen and Hagenbeek v The Netherlands) (1982) 4 EHRR 260, EComHR...766, 910, 911
«Գլխավոր դատախազն ընդդեմ «Գարդիան Նյուզփեյփերս» ՍՊԸ-ի (Attorney-General v Guardian Newspapers) Ltd (No 2) [1988] 3 All ER 545, HL . . . 741
«Գլխավոր դատախազն ընդդեմ X-ի» (Attorney-General v X) [1992] 1 IR 1, Irish Supreme Court . . . 750, 752
«Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի» (Güleç v Turkey) ECHR 1998-IV 1731, (1999) 28 EHRR 121, ECtHR...121, 147
«Գոկտանն ընդդեմ Ֆրանսիայի» (Goktan v France) [2002] ECHR 546, [2002] ECHR 546, ECtHR...1040, 1062
«Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Golder v United Kingdom) (1979–80) 1 EHRR 524, [1975] ECHR 1, ECtHR...298, 396, 558, 593, 1015
«Գոնգաձեն ընդդեմ Ուկրաինայի» (Gongadze v Ukraine) decision of 22 March 2005, unreported, ECtHR...31, 122
«Գոնսալես Մարինն ընդդեմ Իսպանիայի» (Gonzalez Marin v Spain) ECHR 1999-VII...849
«Գորզելիկն ընդդեմ Լեհաստանի» (Gorzelik v Poland) [2004] ECHR 73, (2005) 40 EHRR 4, EctHR ...790
«Գլիմերվինը և Հագենբիքը ընդդեմ Նիդեռլանդների» (Glimmerveen and Hagenbeek v Netherlands) (1982) 4 EHRR 260, EComHR...766, 910, 911
«Գրադինգերն ընդդեմ Ավստրիայի» (Gradinger v Austria) [1995] ECHR 36, ECtHR...1058, 1059, 1060, 1063
«Գրանդե օրիենտե դ'Իտալիա դի պալացո Ջուստինիանին» ընդդեմ Իտալիայի» (Grande Oriente D'Italia Di Palazzo Giustiniani v Italy) [2001] ECHR 500, (2002) 34 EHRR 22, ECtHR...790, 823
«Գրանտն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Grant v United Kingdom) judgment of 23 May 2006, ECtHR...603

«Գրացինգերը և Գրացինգերովան ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (Gratzinger and Gratzingerova v the Czech Republic) (2002) 35 EHRR CD202, ECtHR...960, 965
«Գրիգորիադեսն ընդդեմ Հունաստանի» (Grigoriades v Greece) [1997] ECHR 93, (1999) 27 EHRR 464, ECtHR...744, 745
«Գրիվսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Grieves v United Kingdom) [2003] ECHR 688, (2004) 39 EHRR 2, ECtHR . . . 453
«Գրոպերա ռադիո» բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Շվեյցարիայի» (Groppera Radio AG v Switzerland) [1990] ECHR 7, (1990) 12 EHRR 321, ECtHR... 712, 718, 720, 721, 725, 908
«Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Goodwin v United Kingdom) [1996] ECHR 16, (1996) 22 EHRR 123, ECtHR...673, 748, 759, 761
«Գուերրան ընդդեմ Իտալիայի» (Guerra v Italy) ECHR 1998-I 227, [1998] ECHR 7, (1998) 26 EHRR 357, EctHR ...117, 127, 573, 575, 721
«Գուսինսկին ընդդեմ Ռուսաստանի» (Gusinskiy v Russia) [2004] ECHR 205, ECtHR...286, 912
«Գուստաֆսոնն ընդդեմ Շվեդիայի» (Gustafsson v Sweden) ECHR 1996-II 637, (1996) 22 EHRR 409, ECtHR...809, 812
«Գուրեպկան ընդդեմ Ուկրաինայի» (Gurepka v Ukraine) [2005] ECHR 576, ECtHR...1057
«Գուցարդին ընդդեմ Իտալիայի» (Guzzardi v Italy) (1980) 3 EHRR 333, [1980] ECHR 5, ECtHR...25, 249, 252, 267, 272, 274, 284, 290, 298, 1042

«Դ.Գ.-ն ընդդեմ Իռլանդիայի» (D.G. v Ireland) [2002] ECHR 447, ECtHR . . . 286
«Դ-ն ընդդեմ Թուրքիայի» (D v Turkey), judgment of 22 June 2006, unreported, ECtHR . . . 218
«Դ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (D v the United Kingdom) [1997] ECHR 25, (1997) 24 EHRR 423, ECtHR...51, 213, 215, 216, 217
«Դալիան [ընդդեմ Ֆրանսիայի» 1998-I] (Dalia [v France 1998-I]) [1998] ECHR 5, (2001) 33 EHRR 26, ECtHR...555
«Դանդերիդի քաղաքային իշխանությունն ընդդեմ Շվեդիայի» (Danderyds Kommun v Sweden) , decision of 7 June 2001, unreported, ECtHR... 22
«Դանիան ընդդեմ Թուրքիայի» (Denmark v Turkey) (2001) 29 EHRR CD35, EctHR ...39
«Դաջենն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Dudgeon v United Kingdom) (1982) 4 EHRR 149, (1981) 3 EHRR 40, ECtHR...187, 509, 512, 513, 514, 518, 520, 576, 791, 616, 621, 625, 877
«Դատախազն ընդդեմ Ֆուրունջիյայի» (Prosecutor v Furundzija), (1999) 38 ILM 317, ICTY...406
«Դե Բեկերն ընդդեմ Բելգիայի» (De Becker v Belgium) (1958) 59 YB 214, EComHR...29
«Դեբլեն ընդդեմ Բելգիայի» (Debled v Belgium) [1994] ECHR 28, (1995) 19 EHRR 506, ECtHR...451
«Դելկուրն ընդդեմ Բելգիայի» (Delcourt v Belgium) [1970] ECHR 1, (1979–80) 1 EHRR 355, EctHR ...422, 456, 361, 1014
«Դե Կուբերն ընդդեմ Բելգիայի» (De Cubber v Belgium) [1984] ECHR 14, (1985) 7 EHRR 236, ECtHR...697
«Դե Հաեսը և Գիյսելսոնն ընդդեմ Բելգիայի» De Haes and Gisels v Belgium (1997) 25 EHRR, ECtHR …756
«Դեմադեսն ընդդեմ Թուրքիայի» (Demades v Turkey) judgment of 20 September 2005, unreported, EctHR ...38, 571
«Դեմիկոլին ընդդեմ Մալթայի» (Demicoli v Malta) [1991] ECHR 37, (1992) 14 EHRR 47, ECtHR...388, 464
«Դե Յոնգը, Բալյեն և վան դեն Բրինքը» (de Jong, Baljet and van den Brink) [1984] ECHR 5, ECtHR …313
«Դենիզջին և այլք ընդդեմ Կիպրոսի» (Denizci and Others v Cyprus) [2001] ECHR 351, ECtHR. . .1045, 1047
«Դեպերուան ընդդեմ Ֆրանսիայի» (Deperrois v France), , judgment of 22 June 2000, unreported, ECtHR...1056
«Դե Սանտան ընդդեմ Իտալիայի» (De Santa v Italy) [1997] ECHR 56, ECtHR...377
«Դե Վիլդեն, Օոմսը և Վերսիփն ընդդեմ Բելգիայի» (De Wilde, Ooms and Versyp v Belgium) [1971] ECHR 1, ECtHR...256, 267, 298, 324, 329, 332, 333, 334, 336, 337, 338, 340, 343, 351, 915
«Դեվեերն ընդդեմ Բելգիայի» (Deweer v Belgium) (1980) 2 EHRR 439, ECtHR... 24, 267, 390
«Դեվլինն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Devlin v United Kingdom), judgment of 30 October 2001, ECtHR...372
«Դե Քլայնե Շտաարմանն ընդդեմ Նիդեռլանդների» (De Kleine Staarman v The Netherlands) 42 DR 162, EComHR...966
«Դիզմանն ընդդեմ Թուրքիայի» (Dizman v Turkey), judgment of 20 September 2005, unreported, ECtHR...38
«Դի Մաուրոն ընդդեմ Իտալիայի» (Di Mauro v Italy) [1999] ECHR 63, ECtHR...848
«Դիքսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Dickson v United Kingdom) [2006] ECHR 430, [2006] 2 FCR 1, ECtHR...543, 831
«Դյուրանժեն ընդդեմ Ֆրանսիայի» (Duringer and others v France) decision of 4 February 2003, unreported, ECtH ...31
«Դյուֆեն ընդդեմ եվրոպական համայնքների» (Dufay v European Communities), Commission Decision of 19 January 1989...75
«Դոյմելանդն ընդդեմ Գերմանիայի» (Deumeland v Germany) [1986] ECHR 3, (1986) 8 EHRR 448, ECtHR...368, 374, 968
«Դոգանն ընդդեմ Թուրքիայի» (Dogan v Turkey) [2004] ECHR 296, ECtHR...581, 959
«Դոերգան ընդդեմ Նիդեռլանդների» (Doerga v The Netherlands) [2004] ECHR 175, (2005) 41 EHRR 4, EComHR...593

«Դոմբո Բիհիր ԲՎ-ն ընդդեմ Նիդեռլանդների» (Dombo Beheer BV v Netherlands) Series A No 274, (1993) 18 EHRR 213...422, 424
«Դրաոնն ընդդեմ Ֆրանսիայի» (Draon v France) [2005] ECHR 679, (2006) 42 EHRR 40, ECtHR...979
«Դրեյփերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Draper v United Kingdom) (1980) 24 DR 73, EComHR...832
«Դրոզդը և Յանուսեկն ընդդեմ Ֆրանսիայի և Իսպանիայի (Drozd and Janousek v France and Spain) [1992] ECHR 52, (1992) 14 EHRR 745, ECtHR...271
«Դուգոզն ընդդեմ Հունաստանի» (Dougoz v Greece) judgment of 6 March 2001, unreported, ECtHR...220
«Դուրայրաջը, Թաունենդը և Բրանտն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Durairaj, Townend and Brant v United Kingdom) (1987) EComHR . . . 234
«Դուրսոնն ընդդեմ Նիդեռլանդների» (Doorson v Netherlands) [1996] ECHR 14, (1996) 22 EHRR 330, ECtHR...417, 481, 483

«Երսիլդն ընդդեմ Դանիայի» (Jersild v Denmark) [1994] ECHR 33, (1995) 19 EHRR 1, ECtHR...531, 771, 910, 924, 687, 688, 689, 730, 739
«Երուսաղեմն ընդդեմ Ավստրիայի» (Jerusalem v Austria) [2001] ECHR 122, (2003) 37 EHRR 25, ECtHR...412, 682

«Զ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Z v the United Kingdom) [2001] ECHR 333, (2002) 34 EHRR 3, ECtHR...166, 257
«Զ-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (Z v Finland) (1997) 25 EHRR 371, ECtHR...527
«Զանան ընդդեմ Թուրքիայի» (Zana v Turkey) (1997) 27 EHRR 667, ECtHR...681, 705, 772
«Զանդերն ընդդեմ Շվեդիայի» (Zander v Sweden) Series A No 279, (1993) 18 EHRR 175, ECtHR ...365
«Զարբ Ադամին ընդդեմ Մալթայի» (Zarb Adami v Malta), judgment of 20 June 2006, unreported, ECtHR... 245
«Զդանոկան ընդդեմ Լատվիայի» (Glaser v United Kingdom) [2006] ECHR 231, (2005) 41 EHRR 31, ECtHR...1039
«Զնամենսկայան ընդդեմ Ռուսաստանի» (Znamenskaya v Russia) [2005] ECHR 361, [2005] 2 FCR 406, ECtHR...542
«Զվոլսկի և Զվոլսկա» (Zvolsky´ and Zvolska) [2002] ECHR 738, ECtHR ... 951

«Էդիշընզ Փերիսկոպն ընդդեմ Ֆրանսիայի» (Editions Periscope v France) [1992] ECHR 43, (1992) 14 EHRR 597, ECtHR...373
«Էդվարդսը և Լյուիսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Edwards and Lewis v United Kingdom) [2003] ECHR 381, ECtHR...419, 421
«Էդվարդներն (Փոլ և Օդրի) ընդդեմ Միացյալ Թագավորության» (Edwards (Paul and Audrey) v United Kingdom) (2002) 35 EHRR 19, 12 BHRC 190, ECtHR . . . 122, 123
«Էդվարդները (Փոլ և Օդրի) ընդդեմ Միացյալ Թագավորության» (Edwards (Paul and Audrey) v United Kingdom) [2002] ECHR 303, (2002) 35 EHRR 19, ECtHR ... 845
«Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Edwards v United Kingdom) Series A No 247-B, (1992) 15 EHRR 417...442, 900
«Էզուդին ընդդեմ Ֆրանսիայի» (Ezzouhdi v France) France [2001] ECHR 85, EctHR ...555
«Էզլինն ընդդեմ Ֆրանսիայի» (Ezelin v France) Series A No 202, (1991) 14 EHRR 362, EctHR ...779
«Էթլն ընդդեմ Ավստրիայի» (Ettl v Austria) (1988) 10 EHRR 255, ECtHR...451
«Էլ Բուժայդին ընդդեմ Ֆրանսիայի» (El Boujaidi v France) (1997) 30 EHRR 223, ECtHR...553
«ԷյԲիՍի» ռադիոկայանն ընդդեմ Ավստրիայի» (Radio ABC v Austria) [1997] ECHR 81, (1998) 25 EHRR 185, ECtHR...727
«Էյրին ընդդեմ Իռլանդիայի» (Airey v Ireland) [1979] ECHR 3, (1979–80) 2 EHRR 305, ECtHR...238, 399, 443, 541, 598, 777, 945, 969, 974, 1014
«Էյր Կանադան ընդդեմ Միացյալ Թագավորության» (v United Kingdom) (1995) 20 EHRR 150, CtHR...1004
«Էնգելն ընդդեմ Նիդեռլանդների» (Engel v Netherlands) Series A No 22, [1976] ECHR 3, ECtHR...253, 267, 380, 391, 642, 659, 744, 869
«Էնհորնն ընդդեմ Շվեդիայի» (Enhorn v Sweden) [2005] ECHR 34, ECtHR...289
«Էվանսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Evans v United Kingdom) [2006] ECHR 200, (2006) 43 EHRR 21, ECtHR...543, 621
«Էրգին ընդդեմ Թուրքիայի» (Ergi v Turkey) ECHR 1998-IV 59, (2001) 32 EHRR 18, ECtHR...100, 121, 132
«Էրդողդուն և Ինջեն ընդդեմ Թուրքիայի» (Erdogdu and Ince v Turkey) [2000] ECHR 223, (2002) 34 EHRR 50, ECtHR...681, 727
«Էրթակն ընդդեմ Թուրքիայի» (Ertak v Turkey) ECHR 2000-V 193...45
«Էրիկսոնն ընդդեմ Շվեդիայի» (Eriksson v Sweden) [1989] ECHR 10, (1990) 12 EHRR 183, ECtHR . . . 565
«Էրիկսենն ընդդեմ Նորվեգիայի» (Eriksen v Norway) [1997] ECHR 26, (2000) 29 EHRR 328, ECtHR...293
«Էրոուսմիթն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Arrowsmith v United Kingdom) (1978) 3 EHRR 218, ECtHR...637
«Էփլբին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (Appleby and Others v United Kingdom) [2003] ECHR 222, (2003) 37 EHRR 38, ECtHR...662
«Էֆստրատիուն ընդդեմ Հունաստանի» (Efstratiou v Greece)...639

«Թ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (T v United Kingdom) (1999) 30 EHRR 121, ECtHR...186, 350
«Թ.Վ.-ն ընդդեմ Մալթայի» (T.W. v Malta) (1999) 29 EHRR 185, ECtHR 315

«Թ.-Փ.-ն և Կ.Մ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (T.P. and K.M. v United Kingdom), 10 May 2001, unreported, ECtHR...559
«Թահսին Աջարն ընդդեմ Թուրքիայի» (Tahsin Acar v Turkey) (2004) 38 EHRR 2, ECtHR...42
«Թամերն ընդդեմ Էստոնիայի» (Tammer v Estonia) [2001] ECHR 83, (2003) 37 EHRR 43, ECtHR, 610, 677
«Թայրերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Tyrer v the United Kingdom) (1978) 2 EHRR 1, [1978] ECHR 2, ECtHR...108, 174, 180, 205, 227, 231, 232, 233
«Թանիշը և այլք ընդդեմ Թուրքիայի» (Tanis and Others v Turkey) [2005] ECHR 561, ECtHR...186
«Թանլին ընդդեմ Թուրքիայի» (Tanlı v Turkey) [2001] ECHR 270, (2004) 38 EHRR 3, ECtHR...133, 872
«Թասն ընդդեմ Թուրքիայի» (Tas v Turkey) ECHR 2000-VI 577...45
«Թասքինն ընդդեմ Թուրքիայի» (Taskin v Turkey) [2004] ECHR 621, (2006) 42 EHRR 50, ECtHR...578
«Թելե 1 Փրիվաթֆեռնզեզեզելշաֆթ ՄԲՀ» ընկերությունն ընդդեմ Ավստրիայի» (Tele 1 Privatfernsehgesellschaft MBH v Austria) [2000] ECHR 424, (2002) 34 EHRR 5, ECtHR...721
«Թելֆներն ընդդեմ Ավստրիայի» (Telfner v Austria) [2001] ECHR 228, (2002) 34 EHRR 7, ECtHR...471
«Թեյշեյրա դե Կաստրոն [ընդդեմ Պորտուգալիայի» (Teixeira de Castro) [1998] ECHR 52, (1999) 28 EHRR 101, ECtHR...419
«Թիմուրթաշն ընդդեմ Թուրքիայի» (Timurtas v Turkey) ECHR 2000-VI 222...45, 105
«Թինելլի և որդիներ» ՍՊԸ-ն և Մակէլդաֆն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Tinnelly & Sons Ltd and McElduff v United Kingdom) [1998] ECHR 56, (1998) 27 EHRR 249, ECtHR...403, 414, 891
«Թինը, Ուիլսոնը և Գաննելն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Thynne, Wilson and Gunnell v United Kingdom) [1990] ECHR 29, (1990) 13 EHRR 666, ECtHR... 343, 347, 349, 350, 351
«Թլիմենոսն ընդդեմ Հունաստանի» (Thlimmenos v Greece), judgment of 6 April 2000, unreported, ECtHR...866, 868, 874, 877
«Թյում Հաբեր Շենը և Չինարն ընդդեմ Թուրքիայի» (Tum Haber Sen and Cinar v Turkey), judgment of 21 February 2006, unreported, ECtHR...794
«Թոման ընդդեմ Լյուքսեմբուրգի» (Thoma v Luxembourg) [2001] ECHR 240, (2003) 36 EHRR 21, ECtHR...729
«Թոմասին ընդդեմ Ֆրանսիայի» (Tomasi v France) (1993) 15 EHRR 1, ECtHR...168, 179, 211
«Թոմասն ընդդեմ Սոկինսի» (Thomas v Sawkins) [1935] 2 KB 249, CA...624
«Թորգեյրսոնն ընդդեմ Իսլանդիայի» (Thorgeirson v Iceland) [1992] ECHR 51, (1992) 14 EHRR 843, EctHR ...686, 685, 698, 715
«Թրե Թրակտորեր ԱԲ-ն ընդդեմ Շվեդիայի» (Tre Traktorer AB v Sweden) (1991) 13 EHRR 309, ECtHR...374, 955
«Թուրեկն ընդդեմ Սլովակիայի» (Turek v Slovakia) [2006] ECHR 138, ECtHR...395, 526
«Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունն ընդդեմ Թուրքիայի» (United Communist Party of Turkey v Turkey) (1998) 26 EHRR 121, 4 ERHC 1, [1998] HR CD 247, ECtHR...64, 75, 765, 816, 911, 1026, 1027, 1028, 1040

«Ժանթիյոմը և այլք ընդդեմ Ֆրանսիայի» (Gentilhomme and Others v France) [2002] ECHR 441, ECtHR...64
«Ժինիեևսկին ընդդեմ Ֆրանսիայի» (Giniewski v France), judgment of 31 January 2006, unreported, ECtHR...935

«Ինյակկոլո-Զենիդն ընդդեմ Ռումինիայի» (Ignaccolo-Zenide v Romania) [2000] ECHR 25, (2001) 31 EHRR 7, ECtHR …564, 565
«Իզեն և Քոննորզն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ezeh and Connors v United Kingdom) [2002] ECHR 595, (2002) 35 EHRR 28, ECtHR …391, 395
«Իզեն և Քոննորզն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ezeh and Connors v United Kingdom) [2003] ECHR 485, (2004) 39 EHRR 1, ECtHR . . . 391, 479
«Իլաշկուն ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի» (Ilascu v Moldova and Russia) judgment of 8 July 2004, unreported, ECtHR …34, 37, 65, 71, 112, 175, 257, 270, 872, 935
«Իլեթմիսն ընդդեմ Թուրքիայի» (Iletmis v Turkey) [2005] ECHR 811, ECtHR …543
«Իլինդեն» միավորված մակեդոնական կազմակերպությունը և Իվանովն ընդդեմ Բուլղարիայի» (United Macedonian Organisation Ilinden and Ivanov v Bulgaria) , judgment of 20 October 2005, ECtHR …786
«Իլհանն ընդդեմ Թուրքիայի» (Ilhan v Turkey) [2000] ECHR 354, (2002) 34 EHRR 36, ECtHR …111, 112, 162, 175, 178, 196, 846
«Իմբրիոսիան ընդդեմ Շվեյցարիայի» (Imbrioscia v Switzerland) [1993] ECHR 56, (1994) 17 EHRR 441, ECtHR …428
«Իմմոբիլիարե Սաֆֆին ընդդեմ Իտալիայի» (Immobiliare Saffi v Italy) [1999] ECHR 65, (2000) 30 EHRR 756, ECtHR …415, 948
«Իմրեքն ընդդեմ Թուրքիայի» (Imrek v Turkey), decision of 28 January 2003, unreported, ECtHR . . . 463
«Ինզեն ընդդեմ Ավստրիայի» (Inze v Austria) A No 126, (1987) 10 EHRR 394, ECtHR …862, 867
«Ինջալն ընդդեմ Թուրքիայի» (Incal v Turkey) [1998] ECHR 48, (2000) 29 EHRR 449, ECtHR …121, 141. 347, 348, 461,462, 463, 679
«Ինֆորմաթիոնսֆերայն Լենթիա» միավորումն ընդդեմ Ավստրիայի» (Informationsverein Lentia v Austria) (No 1) [1993] ECHR 57, (1994) 17 EHRR 93, ECtHR …697, 725, 769

«Իջյերն ընդդեմ Թուրքիայի» (Icyer v Turkey), judgment of 9 February 2006, unreported, ECtHR …581
«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ireland v United Kingdom) Series A No 25, (1978) 2 EHRR 25, ECtHR … 20, 25, 28, 46, 49, 64,86, 151, 169, 178, 180, 183, 202, 205, 210, 211, 218, 225, 228, 232, 274, 310, 312, 332, 694,767, 772, 835, 872, 888, 898, 1032
«Իսաևան, Յուսուպովան և Բազևան ընդդեմ Ռուսաստանի» (Isayeva, Yusupova, Bazayeva v Russia) , judgment of 24 February 2005, unreported, ECtHR …26, 101, 102
«Իսսան և այլք ընդդեմ Թուրքիայի» (Issa and Others v Turkey) [2004] ECHR 629, (2005) 41 EHRR, ECtHR …74, 79
«Իվանովը և այլք ընդդեմ Բուլղարիայի» (Ivanov and Others v Bulgaria) [2005] ECHR 754, ECtHR …786
«Իվանչուկն ընդդեմ Լեհաստանի» (Iwanczuk v Poland) [2001] ECHR 757, (2004) 38 EHRR 8, ECtHR …194, 219
«Իփեքն ընդդեմ Թուրքիայի» (Ipek v Turkey) [2004] ECHR 74, ECtHR …140, 105, 185

«Լ-ն և Վ-ն ընդդեմ Ավստրիայի» (L and V v Austria) [2003] ECHR 20, (2003) 36 EHRR 55, ECtHR …869
«Լաբիտան ընդդեմ Իտալիայի» (Labita v Italy) [2000] ECHR 161, ECtHR …1035, 1042, 1043, 1044
«Լապալորչիան ընդդեմ Իտալիայի» (Lapalorcia v Italy) ECHR 1997-V 1663, [1997] ECHR 61, ECtHR …370
«Լասկին, Ջագգարդը և Բրաունն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Laskey, Jaggard and Brown v United Kingdom) (1997) 24 EHRR 39, ECtHR …518, 625
«Լարիսիսն ընդդեմ Հունաստանի» (Larissis v Greece) [1998] ECHR 13, (1999) 27 EHRR 329, ECtHR …632
«Լաուկոն ընդդեմ Սլովակիայի» (Lauko v Slovakia) [1998] ECHR 82, (2001) 33 EHRR 40, ECtHR …391
«Լե Կոմպտը, Վան Լյովեն և Դե Մեյերն ընդդեմ Բելգիայի» (Le Compte, Van Leuven and De Meyere v Belgium) [1981] ECHR 3, (1983) 5 EHRR 183…364, 366, 375, 456, 787
«Լեհիդյոն և Իզորնին ընդդեմ Ֆրանսիայի» (Lehideux and Isorni v France) [1998] ECHR 90, (2000) 30 EHRR 665, ECtHR …134, 687, 688
«Լեյլա Շահինն ընդդեմ Թուրքիայի» (Leyla Sahin v Turkey), judgment of 10 November 2005, unreported, ECtHR …648, 1014
«Լենա Գոլդֆիլդզ» ՍՊԸ-ն ընդդեմ խորհրդային կառավարության» (Lena Goldfields Co Ltd v Soviet Government) Annual Digest and Reports of Public International Law Cases, vol. 5 (1929–1930) (Case No 258) …973
«Լետելիեն ընդդեմ Ֆրանսիայի» (Letellier v France) Series A No 207, (1991) 14 EHRR 83, ECtH…320
«Լիգ դը դրուա դը լ'ոմ» ընկերակցությունն ընդդեմ Բելգիայի» («Ligue des droits de l'homme» v Belgium) (1998) 92-B DR 92, EComHR …530, 531
«Լիթգոուն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Lithgow v United Kingdom) [1986] ECHR 8, (1986) 8 EHRR 329, ECtHR …298, 923, 949, 989
«Լիխտենշտեյնի արքայազն Հանս-Ադամ Երկրորդն ընդդեմ Գերմանիայի» (Prince Hans-Adam II of Liechtenstein v Germany) [2001] ECHR 467…75, 960
«Լինգենսն ընդդեմ Ավստրիայի» (Lingens v Austria) (1986) Series A No 103 …64, 674, 677, 678, 698, 701, 709, 715, 729, 735, 762, 770
«Լինդերն ընդդեմ Շվեդիայի» (Leander v Sweden) [1987] ECHR 4, (1987) 9 EHRR 433, ECtHR …52, 585, 620, 621, 623, 721, 821, 835, 840, 841, 842,
«Լինդսին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Lindsay v United Kingdom) [1979] 3 CMLR 166, EComHR …1027
«Լյուդիքեն, Բելկաչեմը և Կոչն ընդդեմ Գերմանիայի» (Luedicke, Belkacem and Koc v Germany) [1978] ECHR 5, ECtHR …387, 486, 487
«Լյուսթիգ-Փրինը և Բեքեթն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Lustig-Prean and Beckett v United Kingdom) (1999) 29 EHRR 548…511
«Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի» (Loizidou v Turkey) (1995) 20 EHRR 99, ECtHR …47, 50, 64, 67, 68, 70, 73, 74, 76, 78, 79, 139, 571, 767, 768, 770, 931, 973, 975
«Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի» (Loizidou v Turkey) (Preliminary objections) [1995] ECHR 10 ... 82, 174, 028
«Լոլեսն ընդդեմ Իռլանդիայի» (Lawless v Ireland) (No 1) (1979–80) 1 EHRR 1, ECtHR . .. 890
«Լոլեսն ընդդեմ Իռլանդիայի» (Lawless v Ireland) (No 3) [1961] ECHR 2, (1979–80) 1 EHRR 15, ECtHR …251, 272, 284, 332, 770, 772, 857, 888, 889, 892, 895, 902, 904
«Լոմբարդոն ընդդեմ Իտալիայի» (Lombardo v Italy) Series A No 249-B, [1992] ECHR 72, (1996) 21 EHRR 188, ECtHR …369
«Լոպես Օստրան ընդդեմ Իսպանիայի» (Lopez Ostra v Spain) (1994) 20 EHRR 277, ECtHR …573, 574, 600, 923, 928
«Լովենգուտն ընդդեմ Ֆրանսիայի» (Loewenguth v France) ECHR 2000-VI, ECtHR …1056,
«Լուբերտին ընդդեմ Իտալիայի» (Luberti v Italy) [1984] ECHR 3, (1984) 6 EHRR 440, ECtHR …269, 292, 293
«Լուկանովն ընդդեմ Բուլղարիայի» (Lukanov v Bulgaria) 80 DR 108, EComHR ... 940
«Լուկանովն ընդդեմ Բուլղարիայի» (Lukanov v Bulgaria) [1997] ECHR 18, (1997) 24 EHRR... 269, 279, 280, 283
«Լուկշն ընդդեմ Ավստրիայի» (Luksch v Austria) [2001] ECHR 859, (2002) 35 EHRR 17, ECtHR …378
«Լուկ Ռեյնետտն ընդդեմ Ֆրանսիայի» (Luc Reinette v France)…264

«Լուորդոն ընդդեմ Իտալիայի» (Luordo v Italy) [2003] ECHR 372, (2005) 41 EHRR 26, ECtHR …1045
«Լուպսան ընդդեմ Ռումինիայի» (Lupsa v Romania) [2006] ECHR 604, ECtHR …1053, 1054
«Լուկ Ռեյնետն ընդդեմ Ֆրանսիայի» (Luc Reinette v France) (1989) 63 DR 189, EComHR . . . 264
«Լուտցն ընդդեմ Գերմանիայի» (Lutz v Germany) [1987] ECHR 20, (1988) 10 EHRR 182, ECtHR …391, 473
«Լուփկերն ընդդեմ Նիդեռլանդների» (Lupker and Others v The Netherlands) decision of 7 December 1992, unreported …531, 533

«Խայմե Կամպմանիհ և Դիես դե Ռեվենգան և Խուան Լուիս Լոպես-Գալիչո Պերոնան ընդդեմ Իսպանիայի» (Jaime Campmany y Diez de Revenga and Juan Luis Lopez-Galiacho Perona v Spain) judgment of 12 December 2000, unreported, ECtHR …611
«Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Khan v United Kingdom) [2000] ECHR 195, (2001) 31 EHRR 45, ECtHR …619
«Խորժովի գործարանի գործ» (Case Concerning the Factory at Chorzow, Collection of Judgments), Series A No 17, PICJ ... 920
«Խորխերն ընդդեմ Ավստրիայի» (Chorherr v Austria) [1993] ECHR 36, (1994) 17 EHRR 358, ECtHR …746, 748
«Խուդոյորովն ընդդեմ Ռուսաստանի» (Khudoyorov v Russia) judgment of 8 November 2005, unreported, ECtHR …224
«Խուլիո Բու Խիբերտը և էլ Օգարը և Լա Մոդա Խ:Ա.-ն ընդդեմ Իսպանիայի» (Julio Bou Gibert and El Hogar Y La Moda J.A. v Spain) judgment of 13 May 2003, unreported, ECtHR …611

«Ծիրլիսը և Կուլումպասն ընդդեմ Հունաստանի» (Tsirlis and Kouloumpas v Greece) (1997) 25 EHRR 198, ECtHR …269, 639

«Կ.Ա.-ն և Ա.Դ.-ն ընդդեմ Բելգիայի» (K.A. and A.D. v Belgium) judgment of 17 February 2005, unreported, ECtHR …30, 520
«Կ.-ն և Թ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (K. and T. v Finland) judgment of 12 July 2001, unreported …48, 560
«Կ-Հ. Վ.-ն ընդդեմ Գերմանիայի» (K-H.W. v Germany) [2001] ECHR 229, ECtHR …503
«Կ.Վ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (C.W. v Finland)…940
«Կաբալերոն ընդդեմ ՄԹ-ի» (Caballero v United Kingdom) [2000] Crim LR 587, ECtHR …320, 321, 927
«Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի» (Kalashnikov v Russia) [2002] ECHR 596, (2003) 36 EHRR 34, ECtHR …218, 222, 321
«Կալաջն ընդդեմ Թուրքիայի» (Kalac v Turkey) (1999) 27 EHRR 552, ECtHR …641, 650, 633

«Կալդաս Ռամիրես դե Առեյանոն ընդդեմ Իսպանիայի» (Caldas Ramirez de Arrellano v Spain) ECHR 2003-I, ECtHR …850
«Կալսեռադա Ֆորնիելեսը և Կաբեսա Մատոն ընդդեմ Իսպանիայի» (Calcerrada Fornieles and Cabeza Mato v Spain)…940
«Կալվելլին և Չիլիոն ընդդեմ Իտալիայի» (Calvelli and Ciglio v Italy) [2002] ECHR 3, ECtHR …125, 126, 776
«Կամա ընդդեմ Նիդեռլանդների» (Kamma v The Netherlands) 1 DR 4, EComHR …912
«Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի» (Kamasinski v Austria) [1989] ECHR 24, (1991) 13 EHRR 36, ECtHR …847
«Կամենցինդն ընդդեմ Շվեյցարիայի» (Camenzind v Switzerland) ECHR-VIII 2880, (1997) 28 EHRR 458, ECtHR …622
«Կամպանիսն ընդդեմ Հունաստանի» (Kampanis v Greece) Series A No 325, (1995) 21 EHRR 43, ECtHR …330
«Կապուանոն ընդդեմ Իտալիայի» (Capuano v Italy) (1991) 13 EHRR 271, ECtHR …447
«Կասադո Կոկան ընդդեմ Իսպանիայի» (Casado Coca v Spain) Spain Series A No 285, (1994) 18 EHRR 1, ECtHR …712, 713, 714
«Կաստելսն ընդդեմ Իսպանիայի» (Castells v Spain) (1992) EHRR 445, ECtHR …678, 679, 698, 735, 770
«Կատտ Կլիտշե դե լա Գրանջեն ընդդեմ Իտալիայի» (Katte Klitsche de la Grange v Italy) (1995) 19 EHRR 368, ECtHR …447
«Կարհուվաարան և Իլտալեհտին ընդդեմ Ֆինլանդիայի» (Karhuvaara and Iltalehti v Finland) [2004] ECHR 630, (2005) 41 EHRR 51, ECtHR …678
«Կարներն ընդդեմ Ավստրիայի» (Karner v Austria) (2004) 38 EHRR 24, ECtHR …24, 870
«Կեմմաշն ընդդեմ Ֆրանսիայի» (Kemmache v France) (No 3) [1994] ECHR 41, (1995) 19 EHRR 349, ECtHR …494
«Կերկհովենն ընդդեմ Նիդեռլանդների» Kerkhoven v Netherlands) judgment of 19 May 1992, unreported, ECtHR …544
«Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի» (Kyprianou v Cyprus) judgment of 15 December 2005, unreported, ECtHR …460, 764
«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի» (Cyprus v Turkey) ECHR 2001-IV 172, ECtHR … 20, 27, 28, 29, 46, 64, 68, 70, 79, 124, 131, 261, 572, 974, 1013
«Կլասսն ընդդեմ Գերմանիայի» (Klass v Germany) Series A No 28,(1979–80) 2 EHRR 214, ECtHR … 23, 25, 83, 86, 585, 586, 587, 588, 617, 618, 620, 621, 623, 768, 770, 835, 836, 838, 840, 842, 898, 967
«Կյարտան Ազմունդսոնն ընդդեմ Իսլանդիայի» (Kjartan Asmundsson v Iceland) [2004] ECHR 512, ECtHR …967
«Կյելդսենը, Բուսկ Մադսենը և Պեդերսենն ընդդեմ Դանիայի» (Kjeldsen, Busk Madsen and Pedersen v Denmark) Series A No 23…202, 770, 1013, 1015, 1016, 1020, 1021, 1022, 1023

«Կոզակն ընդդեմ Ուկրաինայի» (Kozak v Ukraine) decision of 17 December 2002, unreported, ECtHR …30
«Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի» (Kokkinakis v Greece) [1993] ECHR 20, (1994) 17 EHRR 397, ECtHR …492, 495, 627, 632, 633, 635, 642, 652
«Կոմանիցկին ընդդեմ Սլովակիայի» (Komanicky v Slovakia) [2002] ECHR 477, ECtHR …423
«Կոմինգերսոլլն ընդդեմ Պորտուգալիայի» (Comingersoll v Portugal) [2000] ECHR 160, (2001) 31 EHRR 31, ECtHR …570
«Կոմս Սպենսերը և կոմսուհի Սպենսերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Earl Spencer and Countess Spencer v United Kingdom) [1998] EHRLR 348, ECtHR …608
«Կոմունիստական կուսակցությունն (KPD) ընդդեմ Գերմանիայի (Communist Party (KPD) v Germany)…775
«Կոնկան ընդդեմ Բելգիայի» (Conka v Belgium) ECHR 2002-I 79, (2002) 34 EHRR 54, ECtHR …34, 35, 852, 853, 927, 1048, 1050
«Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի» (Kopecky´ v Slovakia) [2004] ECHR 446, (2005) 41 EHRR 43, ECtHR …951, 965
«Կոստան ընդդեմ էՆԵԼ-ի» (Costa v ENEL) (Case 6/64) [1978] ECR 629, ECJ …1028
«Կոստելլո-Ռոբերթսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Costello-Roberts v United Kingdom) Series A No 247, (1993) 19 EHRR 112 …233, 257, 1023
«Կոտլեն ընդդեմ Ռումինիայի» (Cotlet v Romania) [2003] ECHR 263, ECtHR …615
«Կորդովան (թիվ 1) ընդդեմ Իտալիայի» (Cordova (No 1) v Italy) 2003] ECHR 47, (2005) 40 EHRR 43, ECtHR …413
«Կորիլյանոն ընդդեմ Իտալիայի» (Corigliano v Italy) [1982] ECHR 10, (1984) 6 EHRR CD146, ECtHR ...387
«Կրուզ Վարասն ընդդեմ Շվեդիայի» (Cruz Varas v Sweden) (1991) 14 EHRR 1, ECtHR…33, 34, 35, 36, 49, 86, 209
«Կրեմզովն ընդդեմ Ավստրիայի» (Kremzow v Austria) [1993] ECHR 40, (1994) 17 EHRR 322, ECtHR …349
«Կրժիցկին ընդդեմ Գերմանիայի» (Krzyckiv Germany)…276
«Կրոյզն ընդդեմ Լեհաստանի» (Kreuz v Poland) [2001] ECHR 398, 11 BHRC 456, ECtHR …414
«Կրոմբախն ընդդեմ Ֆրանսիայի» (Krombach v France) [2001] ECHR 88, ECtHR …479, 1054, 1056, 1057
«Կրուսլին ընդդեմ Ֆրանսիայի» (Kruslin v France) [1990] ECHR 10, (1990) 12 EHRR 547, ECtHR …300, 591, 620, 673
«Կուա Պուարեն ընդդեմ Ֆրանսիայի» (Koua Poirrez v France) [2003] ECHR 459, (2005) 40 EHRR 2, ECtHR …967
«Կուդլան ընդդեմ Լեհաստանի» (Kudl´a v Poland) [2000] ECHR 512, (2002) 35 EHRR 11, ECtHR …218, 847, 850, 968
«Կուեն ընդդեմ Ֆրանսիայի» (Couez v France) [1998] ECHR 74, [1998] HRCD 810, ECtHR …370
«Կումպանան և Մազարեն ընդդեմ Ռումինիայի» (Cumpana and Mazare v Romania) [2004] ECHR 692, (2005) 41 EHRR 14, ECtHR …732, 740
«Կունան ընդդեմ Գերմանիայի» (Kuna v Germany) ECHR 2001-V, ECtHR …965
«Կուսկանին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Cuscani v United Kingdom) [2002] ECHR 630, (2003) 36 EHRR 2, ECtHR …488
«Կուստաննուս օյու Վապաա Այատելիյա ԱԲ-ն, Վապաա-Այատելիյաին Լիիտտո- Ֆրիտանկարնաս Ֆորբունդ r.y.-ն և Կիմմո Սունդստրոմն ընդդեմ Ֆինլանդիայի» (Kustannus oy Vapaa Ajattelija AB, Vapaa-Ajattelijain Liitto-Fritankarnas Forbund r.y. and Kimmo Sundstrom v Finland 85-A DR 29) ... 373

«Հ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (H v United Kingdom) (1988) 10 EHRR 95, ECtHR …107, 564, 640
«Հ.L.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (H.L. v the United Kingdom) ECHR 2004-IX …256, 295
«Հ.Մ.-ն ընդդեմ Թուրքիայի» (H.M. v Turkey) , judgment of 8 August 2006, ECtHR …583
«Հ.Մ.-ն ընդդեմ Շվեյցարիայի» (H.M. v Switzerland) ECHR 2002-II, ECtHR …256
«Հ. Վ. Փ-ն և Ք-ն ընդդեմ Ավստրիայի» (H W P and K v Austria) 62 DR 216, EComHR …766
«Հազերն ընդդեմ Շվեյցարիայի» (Haser v Switzerland) judgment of 27 April 2000, unreported, ECtHR . . . 1055, 1056
«Հաթթին ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության» (Hatti v Federal Republic of Germany) 19 Yearbook 1064, EComHR …390
«Համերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Hamer v United Kingdom) (1979) 24 DR 5, EcomHR…831
«Համմերնն ընդդեմ Նորվերգիայի» (Hammern v Norway), judgment of 11 February 2003, unreported, ECtHR …475, 831
«Հանձնաժողովն ընդդեմ Լյուքսեմբուրգի» (Commission v Luxembourg) (Case C-473/93) [1997] ECR I-3207, ECJ...372
«Հանուն չծնված երեխաների պաշտպանության» միությունը (Իռլանդիա) ընդդեմ Ստեֆեն Գրոգանի» (Society for the Protection of Unborn Children (Ireland) Ltd v Stephen Grogan) [1991] ECR I-4685, ECJ…750
«Հաշմանը և Հերըփն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Hashman and Harrup v United Kingdom) [2000] Crim LR 185, EComHR …733, 1003
«Հաջիանաստասիուն ընդդեմ Հունաստանի» (Hadjianastassiou v Greece) [1992] ECHR 78, (1993) 16 EHRR 219, ECtHR …628
«Հասանը և Չաուշն ընդդեմ Բուլղարիայի» (Hasan and Chaush v Bulgaria) [2000] ECHR 511, (2002) 34 EHRR 55, ECtHR …644, 792
«Հավայան կղզիների բնակարանային վարչությունն ընդդեմ Միդկիֆի» (Hawaii Housing Authority v

Midkiff) 104 S Ct 2321 (1984), United States Supreme Court …981
«Հարթմանն ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (Hartman v the Czech Republic)…941
«Հեթթոնը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (Hatton and Others v the United Kingdom) (2003) ECHR 338, ECtHR …49, 128, 574, 578, 812
«Հելֆորդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Halford v United Kingdom) ECHR 1997-III 1004, (1997) 24 EHRR 523, ECtHR …584, 613, 617, 619
«Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Handyside v United Kingdom) (1976) 1 EHRR 737, [1976] ECHR 5, ECtHR …657, 663, 664, 668, 670, 671, 674, 701, 702, 734, 754, 759
«Հենին և Մակգինեսն ընդդեմ Իռլանդիայի» (Heaney and McGuiness v Ireland) [2000] ECHR 684, (2001) 33 EHRR 12, ECtHR …434, 620, 621
«Հերթելն ընդդեմ Շվեյցարիայի» (Hertel v Switzerland) [1998] ECHR 77, (1999) 28 EHRR 534, ECtHR …696, 711
«Հերցեգֆալվին ընդդեմ Ավստրիայի» (Herczegfalvy v Austria) [1992] ECHR 58, (1993) 15 EHRR 437, ECtHR …177, 178, 196
«Հիլբեն ընդդեմ Լիխտենշտեյնի» (Hilbe v Liechtenstein) ECHR 1999-VI, ECtHR …1038, 1039
«Հիլդա Հաֆշտայնսդոտիրն ընդդեմ Իսլանդիայի» (Hilda Hafsteinsdottir v Iceland) [2004] ECHR 251, ECtHR …300, 301
«Հիլեյրը, Կոնստանտինը և Բենջամինը և այլք ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (Hilaire, Constantine and Benjamin et al v Trinidad and Tobago) Inter-American Court of Human Rights…141
«Հիրսթն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Hirst v United Kingdom) (No 2) [2005] ECHR 681, ECtHR …1038
«Հիրկոն ընդդեմ Սլովակիայի» (Hirco v Slovakia) judgment of 20 July 2004, unreported, ECtHR)...758
«Հյու Ջորդանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Hugh Jordan v the United Kingdom) [2001] ECHR 327, (2003) 37 EHRR 2, ECtHR …133
«Հյուիթը և Հարմանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Hewitt and Harman v United Kingdom) (1992) 14 EHRR 657…525, 586, 741
«Հոլմն ընդդեմ Շվեդիայի» (Holm v Sweden) [1993] ECHR 58, (1994) 18 EHRR 79, ECtHR …451, 459
«Հոկկանենն ընդդեմ Ֆինլանդիայի» (Hokkanen v Finland) Finland (1995) 19 EHRR 139 [1994] ECHR 32, ECtHR …563
«Հոյշիլդն ընդդեմ Դանիայի» (Hauschildt v Denmark) (1989) Series A No 154, [1989] ECHR 7, ECtHR …141, 389
«Հորնսբին ընդդեմ Հունաստանի» (Hornsby v Greece) [1997] ECHR 15, (1997) 24 EHRR 250, ECtHR …415
«Հոֆմանն ընդդեմ Ավստրիայի» (Hoffmann v Austria) (1993) 17 EHRR 293, ECtHR …865, 869
«Հուբերն ընդդեմ Ավստրիայի» (Huber v Austria) 18 Yearbook 356, EComHR …390
«Հուբերն ընդդեմ Շվեյցարիայի» (Huber v Switzerland) [1990] ECHR 25, (1998) 25 EHRR 709, ECtHR …310, 311
«Հուդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Hood v United Kingdom) [1999] ECHR 9, (2000) 29 EHRR 365, ECtHR …311
«Հունական «Ստրան» նավթավերամշակման գործարանները և Ստրատիս Անդրեադիսն ընդդեմ Հունաստանի» (Stran Greek Refineries and Stratis Andreadis v Greece) [1994] ECHR 48, (1995) 19 EHRR 293, ECtHR …964, 972
«Հունաստանի գործ» (Greek Case) (1969) 12 YB 170, EComHR . . . 154, 767, 970
«Հունաստանի նախկին թագավորն ընդդեմ Հունաստանի» (Former King of Greece v Greece) [2002] ECHR 790, (2001) 33 EHRR 21, ECtHR … 919, 961, 963
«Հուսեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Hussain v United Kingdom) ECHR 1996-I 2352, (1996) 22 EHRR 1, ECtHR …348
«Հուվին ընդդեմ Ֆրանսիայի» (Huvig v France) [1990] ECHR 9, (1990) 12 EHRR 528, ECtHR …300, 348, 353, 508, 585, 592
«Հուտտեն-Չապսկան ընդդեմ Լեհաստանի» (Hutten-Czapska v Poland) judgment of 19 June 2006, unreported …47, 1006
«Հուրթադոն ընդդեմ Շվեյցարիայի» (Hurtado v Switzerland) [1994] ECHR 1, ECtHR …195, 196, 225

«Մ.-ն ընդդեմ Գերմանիայի» (M. v Germany) 37 DR 113, EComHR …1042
«Մ.-ն ընդդեմ ներքին գործերի նախարարության» (M v Home Office) [1993] 3 All ER 537, HL …840
«Մ. Գ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (M.G. v United Kingdom) (2003) 36 EHRR 3, ECtHR …604
«ՄՍ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (MC v the United Kingdom) (1987) 54 DR 162, EComHR …474
«ՄՍ-ն ընդդեմ Բուլղարիայի» (MC v Bulgaria) (2005) 40 EHRR 20, 15 BHRC 627, ECtHR …163
«ՄՍ-ն ընդդեմ Շվեդիայի» (MS v Sweden) ECHR 1997-IV 1437, (1997) 28 EHRR 313, ECtHR …528
«Մաաուիան ընդդեմ Ֆրանսիայի» (Maaouia v France) [2000] ECHR 455, (2001) 33 EHRR 42, ECtHR …373, 374, 968
«Մաեստրին ընդդեմ Իտալիայի» (Maestri v Italy) [2004] ECHR 77, ECtHR …792
«Մաթյո-Մոհին և Քլերֆայթն ընդդեմ Բելգիայի (Mattieu-Mohin and Clerfayt v Belgium) Belgium [1987] ECHR 1, ECtHR …768, 770, 1028, 1031, 1032, 1035, 1036
«Մալաշևիչն ընդդեմ Լեհաստանի» (Malasiewicz v Poland) [2003] ECHR 508, ECtHR …851
«Մալհուսն ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (Malhous v the Czech Republic), ECHR 2000-XII 466, ECtHR …24, 960

«Մալոունն ընդդեմ քաղաքային ոստիկանության» (Malone v Metropolitan Police Comr (2) [1979] Ch 344, HC)…588
«Մալոունն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Malone v United Kingdom) (1984) 7 EHRR 14, ECtHR…254, 585, 588, 589, 590, 619, 623
«Մակարացիսն ընդդեմ Հունաստանի» (Makaratzis v Greece) [2004] ECHR 694, (2005) 41 EHRR 49, ECtHR …111
«Մակգիներն ընդդեմ Միացյալ Թագավորության» (McGuiness v United Kingdom), judgment of 8 June 1999, unreported, ECtHR . . . 761
«Մակգինլին և Էգանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (McGinley and Egan v United Kingdom) [1998] ECHR 51, (1999) 27 EHRR 1, ECtHR …605
«Մակգլինչին ընդդեմ Միացյալ Թագավորության» (McGlinchey v United Kingdom) [2003] ECHR 211, (2003) 37 EHRR 41, ECtHR …197
«Մակգոնելն ընդդեմ Միացյալ Թագավորության» (McGonnell v the United Kingdom) (2000), 30 EHRR 289, ECtHR …448, 450, 451, 452
«Մակլեոդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (McLeod v United Kingdom) ECHR 1998-VII, (1998) 27 EHRR, ECtHR …623, 624, 625
«Մակլեոդն ընդդեմ քաղաքային ոստիկանության» (McLeod v Metropolitan Police) Comr [1994] 4 All ER 553 …624
«Մակէլհինին ընդդեմ Իռլանդիայի» (McElhinney v Ireland) [2001] ECHR 763, (2002) 34 EHRR 13, ECtHR …409, 412
«Մակմայքլն ընդդեմ ՄԹ-ի» (McMichael v United Kingdom) Series A No 307-B, (1995) 20 EHRR 205, ECtHR …558, 928
«Մակվեյը, Օ'Նիլը և Էվանսը ընդդեմ Միացյալ Թագավորության» (McVeigh, O'Neill and Evans v United Kingdom) (1981) 25 DR 15, EComHR …271, 277
«Մակքեննն ընդդեմ Միացյալ Թագավորության» (McCann v United Kingdom) (1995) 21 EHRR 97, ECtHR …24, 80, 81, 90, 92, 98, 100, 113, 114, 115, 125, 129, 141, 146, 161, 162, 930
«Մակքին ընդդեմ Հյուսիսային Իռլանդիայի գլխավոր կոնստաբլի» գործում (McKee v Chief Constable for northern Ireland) [1984] 1 WLR 1358, HL ... 280, 281
«Մահմեդական համայնքի գերագույն սուրբ խորհուրդն ընդդեմ Բուլղարիայի» (Supreme Holy Council of the Muslim Community v Bulgaria) [2004] ECHR 690, (2005) 41 EHRR 3, ECtHR …646, 930
«Մահմուտ Քայան ընդդեմ Թուրքիայի» (Mahmut Kaya v Turkey) [2000] ECHR 129, ECtHR …114, 119
«Մամաթկուլովը և Ասկարովն ընդդեմ Թուրքիայի» (Mamatkulov and Askarov v Turkey), judgment of 4 February 2005, unreported, ECtHR …32, 38, 78, 853, 1014
«Մանտովանելլին ընդդեմ Ֆրանսիայի» (Mantovanelli v France) [1997] ECHR 14, (1997) 24 EHRR 370, ECtHR …424
«Մանուսակիսն ընդդեմ Հունաստանի» (Manoussakis v Greece) ECHR 1996-IV 1346, (1996) 23 EHRR 387, ECtHR …650
«Մասսան ընդդեմ Իտալիայի» (Massa v Italy) [1993] ECHR 33, (1994) 18 EHRR 266, ECtHR …369
«Մաստրոմատեոն ընդդեմ Իտալիայի» (Mastromatteo v Italy) [2002] ECHR 694, ECtHR …123
«Մատյեկն ընդդեմ Լեհաստանի» (Matyjek v Poland), decision of 29 June 2006, ECtHR …395
«Մաթցներն ընդդեմ Ավստրիայի» (Mattznetter v Austria) (1969) 1 EHRR 198, ECtHR 659
«Մացներն ընդդեմ Ավստրիայի» (Matznetter v Austria) [1969] ECHR 1, (1979–80) 1 EHRR 198, ECtHR ... 251, 320
«Մարգարեթ Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Margaret Murray v United Kingdom) Series A No 300, (1994) 19 EHRR 193 …283, 285, 328
«Մարգարիտա և Ռոջեր Անդերսոններն ընդդեմ Շվեդիայի» (Margareta and Roger Andersson v Sweden) [1992] ECHR 1, (1992) 14 EHRR 615, ECtHR …736
«Մարտինես-Կարո Դե Լա Կոնչա Կաստանեդան ընդդեմ Իսպանիայի» (Martinez-Caro De La Concha Castaneda v Spain) decision of 7 March 2000, ECtHR …372
«Մարթինս Կասիմիրոն և Սերվեյրա Ֆերեյրան ընդդեմ Լյուքսեմբուրգի» (Martins Casimiro and Cerveira Ferreira v Luxembourg), judgment of 27 April 1999, ECtHR …655
«Մարցարին ընդդեմ Իտալիայի» (Marzari v Italy) (2000) 30 EHRR CD218, ECtHR ... 581
«Մարքթ ինթերն ֆերլագ» ՍՊԸ-ն և Քլաուս Բեերմանն ընդդեմ Գերմանիայի» (Markt intern Verlag GmbH and Klaus Beermann v Germany) [1989] ECHR 21, (1990) 12 EHRR 161, ECtHR …696, 706, 710
«Մարքսն ընդդեմ Բելգիայի» (Marckx v Belgium) (1979) 2 EHRR 330, [1979] ECHR 2, ECtHR …508, 545, 549, 598, 864, 934, 944, 947, 955, 1014, 1023
«Մեթյուսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Matthews v United Kingdom) (1999) 28 EHRR 361, [1999] ECHR 12, ECtHR …75, 231, 1025, 1035, 1040
«Մեթյուսն ընդդեմ պաշտպանության նախարարության» (Matthews v Ministry of Defence) [2003] UKHL 4, HL …414
«Մելաքերն ընդդեմ Ավստրիայի» [1989] ECHR 25, (1990) 12 EHRR 391, ECtHR …1007
«Մելնիչենկոն ընդդեմ Ուկրաինայի» (Melnychenko v Ukraine) [2004] ECHR 528, (2006) 42 EHRR 39, ECtHR …1037
«Մենթեշն ընդդեմ Թուրքիայի» (Mentes v Turkey) (1997) 26 EHRR 595, ECtHR …580
«Մենսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Menson v the United Kingdom) (2003) 37 EHRR CD220, ECtHR …874
«Մերիակրին ընդդեմ Մոլդովայի» (Meriakri v Moldova), judgment of 1 March 2005, unreported …45

«Մերֆիի ընդդեմ Իռլանդիայի» (Murphy v Ireland) [2003] ECHR 352, (2004) 38 EHRR 13, ECtHR …698
«Միխեևի ընդդեմ Ռուսաստանի» (Mikheyev v Russia) [2006] ECHR 78, ECtHR …178
«Միկուլիչի ընդդեմ Խորվաթիայի» (Mikulic v Croatia) [2002] ECHR 27, [2002] 1 FCR 720, ECtHR …533
«Մինելլիի ընդդեմ Շվեյցարիայի» (Minelli v Switzerland) [1983] ECHR 4, (1983) 5 EHRR 554, ECtHR …466, 468, 473
«Միֆսուդի ընդդեմ Ֆրանսիայի» (Mifsud v France) ECHR 2002-VIII, ECtHR …850
«Մյուլլերի ընդդեմ Շվեյցարիայի» (Müller v Switzerland) (1988) 13 EHRR 212, ECtHR …628, 699, 707, 712, 966
«Մոգոսը և Կրիֆկան ընդդեմ Գերմանիայի» (Mogos and Krifka v Germany), , decision of 27 March 2003, unreported, ECtHR …28
«Մոդինոսն ընդդեմ Կիպրոսի» (Modinos v Cyprus) (1993) 16 EHRR 485, [1993] ECHR 19, ECtHR …509
«Մոիսեևներն ընդդեմ Լատվիայի» (Moisejevs v Latvia), judgment of 15 June 2006, unreported, ECtHR …224
«Մոլդովանն ընդդեմ Ռումինիայի» (Moldovan v Romania) (No 2), judgment of 12 July 2005, unreported, ECtHR …226
«Մոննելը և Մորիսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Monnell and Morris v United Kingdom) Series A No 115, (1987) 10 EHRR 205, ECtHR …269
«Մորենո Գոմեսն ընդդեմ Իսպանիայի» (Moreno Gomez v Spain) [2004] ECHR 633, (2005) 41 EHRR 40, ECtHR …579
«Մորիսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Morris v United Kingdom) [2002] ECHR 162, (2002) 34 EHRR 52, ECtHR 453
«Մորիսն ընդդեմ Ֆրանսիայի» (Maurice v France) [2005] ECHR 683, (2006) 42 EHRR 42, ECtHR …453, 979
«Մորդովիայի նախագահական կուսակցությունն ընդդեմ Ռուսաստանի» (Presidential Party of Mordovia v Russia) [2004] ECHR 483, (2005) 41 EHRR 34, ECtHR …789
«Մուրը և Գորդոնն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Moore and Gordon v the United Kingdom) [1999] ECHR 77, (2000) 29 EHRR 728, ECtHR …456
«Մուստաքիմն ընդդեմ Բելգիայի» (Moustaquim v Belgium) (1991) 13 EHRR 802, [1991] ECHR 3, ECtHR …552

«Յաբարին ընդդեմ Թուրքիայի» (Jabari v Turkey) ECHR 2000-VIII, ECtHR …852
«Յալոհն ընդդեմ Գերմանիայի» (Jalloh v Germany) [2006] ECHR 721, ECtHR …183, 437
«Յակուբովսկին ընդդեմ Գերմանիայի» (Jacubowski v Germany) [1994] ECHR 21, (1995) 19 EHRR 64, ECtHR …696, 711, 713
«Յաղջին և Սարղինն ընդդեմ Թուրքիայի» (Yagci and Sargin v Turkey) (1995) 20 EHRR 505, ECtHR …773, 925, 934
«Յանգը, Ջեյմսը և Ուեբսթերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Young, James and Webster v the United Kingdom) (1981) 4 EHRR 20, [1981] IRLR 408, ECtHR …116, 769, 800, 808, 812
«Յանն ընդդեմ Գերմանիայի» (Jahn v Germany) [2005] ECHR 444, (2006) 42 EHRR 49, ECtHR …950
«Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի» (Jankovic v Croatia) decision of 12 October 2000, ECtHR …967
«Յանկովն ընդդեմ Բուլղարիայի» (Yankov v Bulgaria) [2003] ECHR 685, (2005) 40 EHRR 36, ECtHR …217, 284
«Յանովսկին ընդդեմ Լեհաստանի» (Janowski v Poland) (1999) 29 EHRR 705 …683, 684
«Յանտներն ընդդեմ Սլովակիայի» (Jantner v Slovakia) [2003] ECHR 113, ECtHR …960, 963
«Յաշան ընդդեմ Թուրքիայի» (Yasa v Turkey) (1999) 28 EHRR 408, ECtHR …27, 104, 120, 121, 131
«Յաջմուրդերելին ընդդեմ Թուրքիայի» (Yagmurdereli v Turkey) [2002] ECHR 482, ECtHR …941
«Յատրիդիսն ընդդեմ Հունաստանի» (Iatridis v Greece) [1999] ECHR 14, (2000) 30 EHRR 97, ECtHR …852, 952
«Յիլմազն ընդդեմ Գերմանիայի» (Yilmaz v Germany) [2003] ECHR 187, (2004) 38 EHRR 23, ECtHR …555
«Յոհանսենն ընդդեմ Նորվեգիայի» (Johansen v Norway) (1985) 44 DR 155, (1997) 23 EHRR 33, EComHR …244, 277, 558
«Յոնգհոնգն ընդդեմ Պորտուգալիայի» (Yonghong v Portugal) Decision of 25 November 1999, unreported, ECtHR …30
«Յորգովն ընդդեմ Բուլղարիայի» (Iorgov v Bulgaria) [2004] ECHR 113, (2005) 40 EHRR 7, ECtHR …192, 198
«Յուլգերն ընդդեմ Թուրքիայի» (Ulger v Turkey) [2002] ECHR 394, ECtHR …462
«Յուրայի խորհուրդը և Յուրայի միությունն ընդդեմ Շվեյցարիայի» (Rassemblement Jurassien and Unité Jurassienne v Switzerland) (1979) 17 DR 93, EComHR...784, 785, 816, 821
«Յուքրենիեն մեդիա գրուփ» ընկերությունն ընդդեմ Ուկրաինայի» (Ukrainian Media Group v Ukraine), judgment of 29 March 2005, unreported 38, 39, 679

«Ն. Ֆ-ն ընդդեմ Իտալիայի» (N.F. v Italy) (2002) 35 EHRR 4, ECtHR …791
«Նաչովան ընդդեմ Բուլղարիայի» (Nachova v Bulgaria) judgment of 6 July 2005, unreported …46, 115, 146, 147, 871, 876
«Նապիյալոն ընդդեմ Խորվաթիայի» (Napijalo v Croatia) [2003] ECHR 592, (2005) 40 EHRR 30, ECtHR …1041, 1043
«Նաումենկոն ընդդեմ Ուկրաինայի» (Naumenko v Ukraine) [2004] ECHR 68, ECtHR …198
«Նեյժելն ընդդեմ Ֆրանսիայի» (Neigel v France) [1997] ECHR 12, (2000) 30 EHRR 310, ECtHR …370

«Նևմերժիցկին ընդդեմ Ուկրաինայի» (Nevmerzhitsky v Ukraine) [2005] ECHR 210, 19 BHRC 177, ECtHR …177
«Նիդերոստ-Հուբերն ընդդեմ Շվեյցարիայի» (Niderost-Huber v Switzerland) (1998) 25 EHRR 709, ECtHR …424
«Նիլսենն ընդդեմ Դանիայի» (Nielsen v Denmark) Series A No 144, (1988) 11 EHRR 175, ECtHR …255
«Նիկիտինն ընդդեմ Ռուսաստանի» (Nikitin v Russia) [2004] ECHR 371, (2005) 41 EHRR 10, ECtHR …1072
«Նիկոդեմոն ընդդեմ Իտալիայի» (Nicodemo v Italy) [1997] ECHR 62, ECtHR. . . 370
«Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի» (Nikolova v Bulgaria) [1999] ECHR 16, ECtHR …925, 927
«Նիկուլան ընդդեմ Ֆինլանդիայի» (Nikola v Finland) [2002] ECHR 324, (2004) 38 EHRR 45, ECtHR …758
«Նյեմեցն ընդդեմ Գերմանիայի» (Niemietz v Germany) Series A No 251-B, (1992) 16 EHRR 97, ECtHR …507, 523, 569, 572
«Նյու Յորք թայմզ» պարբերականն ընդդեմ Միացյալ Նահանգների» (New York Times v United States) (1971) 403 US 713 …731
«Նյումեյսթերն ընդդեմ Ավստրիայի» (Neumeister v Austria) Series A No 8, (1968) 1 EHRR 91, ECtHR …328
«Նյուս Վերլագս ԲԲԸ & CoKG-ն ընդդեմ Ավստրիայի» (News Verlags GmbH & CoKG v Austria) [2000] ECHR 5, (2001) 31 EHRR 8, ECtHR …610
«Նորիսն ընդդեմ Իռլանդիայի» (Norris v Ireland) Series A No 142, (1988) 13 EHRR 186, ECtHR …25, 509, 513, 616, 621, 752
«Նորվուդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Norwood v United Kingdom), judgment of 16 November 2004, ECtHR ...909
«Նուվոլին ընդդեմ Իտալիայի» (Nuvoli v Italy) [2002] ECHR 452, ECtHR …850

«Շանաղան ընդդեմ Միացյալ Թագավորության» (Shanagha v United Kingdom) [2001] ECHR 330, ECtHR ...874
«Շասանյուն ընդդեմ Ֆրանսիայի» (Chassagnou v France) (1999) 29 EHRR 615, ECtHR …788, 810, 816, 867, 998, 1004
«Շարզախը և «Նյուզ ֆերլագզգեզելշաֆտ» ընկերությունն ընդդեմ Ավստրիայի» (Scharsach and News Verlagsgesellschaft v Austria) [2003] ECHR 596, (2005) 40 EHRR 22, ECtHR …677
«Շենկն ընդդեմ Շվեյցարիայի» (Schenk v Switzerland) [1988] ECHR 17, (1991) 13 EHRR 242, ECtHR …424
«Շերերն ընդդեմ Շվեյցարիայի» (Scherer v Switzerland) Series A No 287, ECtHR …24
«Շեֆիլդը և Հորշեմն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Sheffield and Horsham v United Kingdom) [1998] ECHR 6, (1999) 27 EHRR 163, ECtHR …600, 602, 828
«Շիմանեքն ընդդեմ Ավստրիայի» (Schimanek v Austria), judgment of 1 February 2000, ECtHR …910
«Շմաուցերն ընդդեմ Ավստրիայի» (Schmautzer v Austria) Series A No 328-A, (1995) 21 EHRR 511, ECtHR …924
«Շմիդտն ընդդեմ Գերմանիայի» (Schmidt v Germany) Series A 291, (1994) 18 EHRR 513, ECtHR …246, 861
«Շոյթենն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության» (Scheuten v Federal Republic of Germany) (1977) 10 DR 100, EComHR... 107, 108, 520, 521
«Շոնենբերգերը և Դուրմազն ընդդեմ Շվեյցարիայի» (Schönenberger and Durmaz v Switzerland) Series A No 137, (1988) 11 EHRR 137, ECtHR …594, 616
«Շոֆմանն ընդդեմ Ռուսաստանի» (Shofman v Russia) [2005] ECHR 760, [2006] 1 FLR 680, ECtHR …534
«Շվեդիայի մեքենավարների արհմիությունն ընդդեմ Շվեդիայի» (Swedish Engine Drivers' Union v Sweden) Series A No 20, (1976) 1 EHRR 617, ECtHR …797, 810, 812, 819, 835
«Շտոգմյուլլերն ընդդեմ Ավստրիայի» (Stögmüller v Austria) Series A No 9, (1969) 1 EHRR 155, ECtHR …319
«Շտորքն ընդդեմ Գերմանիայի» (Storck v Germany), Judgment of 16 June 2005, unreported, ECtHR …255, 258, 535
«Շտոքեն ընդդեմ Գերմանիայի» (Stocke v Germany) (1991) 13 EHRR 839, ECtHR …263, 264
«Շտրելեցը, Քեսլերը և Քրենզն ընդդեմ Գերմանիայի» (Streletz, Kessler and Krenz v Germany) [2001] ECHR 230, (2001) 33 EHRR 31, ECtHR …495, 503
«Շրաբյետը և Քլարքն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Szrabjet and Clarke v the United Kingdom), decision of 23 October 1997, EComHR …967
«Շուլեր-Զգրագենն ընդդեմ Շվեյցարիայի» (Schuler¬Zgraggen v Switzerland) [1993] ECHR 29, (1993) 16 EHRR 405, ECtHR …968
«Շուսսելն ընդդեմ Ավստրիայի» (Schussel v Austria), judgment of 21 February 2002, unreported, ECtHR …610
«Շուտենը և Մելդրումն ընդդեմ Նիդեռլանդների» (Schouten and Meldrum v The Netherlands) Series A No 304, (1994) 19 EHRR 432 …369, 373
«Շյեսերն ընդդեմ Շվեյցարիայի» (Schiesser v Switzerland) [1979] ECHR 5, (1979–80) 2 EHRR 417, ECtHR …310, 329

«Չաար Շալոմ վե Ցեդեկ» հրեական արարողակարգային ընկերակցությունն ընդդեմ Ֆրանսիայի» (The Jewish Liturgical Association Cha'are Shalom Ve Tsedek v France) [2000] ECHR 351, 9 BHRC 27, ECtHR …647
«Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Chahal v United Kingdom) ECHR 1996-V 1855, (1997) 23 EHRR 413, ECtHR …169, 211, 259, 304, 305, 328, 840, 842, 844, 852

«Չապպելն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Chappell v United Kingdom) [1989] ECHR 4, (1990) 12 EHRR 1, ECtHR …508, 591, 622, 625
«Չարժինսկին ընդդեմ Լեհաստանի» (Charzyn´ski v Poland) unreported, ECtHR …851
«Չաքըջըն ընդդեմ Թուրքիայի» (Cakıcı v Turkey), ECHR 2000-VI 43 …45, 184
«Չեփմենն ընդդեմ Միացյալ Թագավորությանե (Chapman v the United Kingdom) [2001] ECHR 43, (2001) 33 EHRR 18, ECtHR …127, 128, 581, 582, 613, 617
«Չինարն ընդդեմ Թուրքիայի» (Cınar v Turkey) (1994) 79 DR 5, EComHR …139
«Չիչեքն ընդդեմ Թուրքիայի» (Cicek v Turkey) [2001] ECHR 108, (2003) 37 EHRR 20, ECtHR …184
«Չիրաքլարն ընդդեմ Թուրքիայի» (Cıraklar v Turkey) (2001) 32 EHRR 23, [1998] HRCD 955, ECtHR …141, 462
«Չոնկան ընդդեմ Բելգիայի» (Conka v Belgium)…305
«Չոուդհուրին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Choudhury v United Kingdom) (1991) 12 HRLJ 172, EComHR …633

«Պաբլա Կյուն ընդդեմ Ֆինլանդիայի» (Pabla Ky v Finland) [2004] ECHR 279, (2006) 42 EHRR 34, ECtHR …450, 758
«Պանդոլֆելլին և Պալումբոն ընդդեմ Իտալիայի» (Pandolfelli and Palumbo v Italy) Series A No 231, ECtHR …24
«Պապամիխալոպուլոսն ընդդեմ Հունաստանի» (Papamichalopoulos v Greece) Series A No 330-B, (1995) 21 EHRR 439, ECtHR …931, 934, 970, 995
«Պապոն ընդդեմ Ֆրանսիայի» (Papon v France)…1056, 1057
«Պաուգերն ընդդեմ Ավստրիայի» (Pauger v Austria) 80 DR 24, EComHR …940
«Պաուելսն ընդդեմ Բելգիայի» (Pauwels v Belgium) [1988] ECHR 7, (1989) 11 EHRR 238, ECtHR …925
«Պելլեգրին ընդդեմ Ֆրանսիայի» (Pellegrin v France) [1999] ECHR 140, (2001) 31 EHRR 26, ECtHR …369, 372, 373
«Պելտոնենն ընդդեմ Ֆինլանդիայի» (Peltonen v Finland) 80 DR 38, EComHR …940, 1041
«Պենտիդիսն ընդդեմ Հունաստանի» (Pentidis v Greece) [1997] ECHR 30, (1997) 24 EHRR CD 1, ECtHR …655
«Պետերսենն ընդդեմ Գերմանիայի» (Petersen v Germany) (2006) 42 EHRR SE13, ECtHR …755
«Պետրան ընդդեմ Ռումինիայի» (Petra v Romania) [1998] ECHR 93, (2001) 33 EHRR 5, ECtHR …594
«Պետրովիչն ընդդեմ Ավստրիայի» (Petrovic v Austria) [1998] ECHR 21, (2001) 33 EHRR 14, ECtHR …608
«Պերեն ընդդեմ Ֆրանսիայի» (Perez v France) [2004] ECHR 72, (2005) 40 EHRR 39,ECtHR …133, 679
«Պիերմոնն ընդդեմ Ֆրանսիայի» (Piermont v France) [1995] ECHR 14, (1995) 20 EHRR 301, ECtHR …907, 1042
«Պիերսաքն ընդդեմ Բելգիայի» (Piersack v Belgium) Series A No 53, (1982) 5 EHRR 169, ECtHR …456, 457, 462, 763
«Պիեռ-Բլոշն ընդդեմ Ֆրանսիայի» (Pierre-Bloch v France) [1997] ECHR 84, (1998) 26 EHRR 202, ECtHR …373, 374
«Պիշոն և Սաժուն ընդդեմ Ֆրանսիայի» (Pichon and Sajous v France) ECHR 2001-X, ECtHR …649
«Պիսկ-Պիսկովսկին ընդդեմ Լեհաստանի» (Pisk-Piskowski v Poland) [2005] ECHR 392, ECtHR…594
«Պիրին» միավորված մակեդոնական կազմակերպությունը և այլք ընդդեմ Բուլղարիայի» (United Macedonian Organisation-PIRIN and Others v Bulgaria) Judgment of 20 October 2005, unreported, ECtHR …786
«Պիրսն ընդդեմ Հունաստանի» (Peers v Greece) [2001] ECHR 296, (2001) 33 EHRR 51, ECtHR …218, 221
«Պիծատին ընդդեմ Իտալիայի» (Pizzati v Italy) [2006] ECHR 275, ECtHR …447, 848, 929
«Պլոն (Societe)-ն ընդդեմ Ֆրանսիայի» (Plon (Societe) v France) No 58148/00 18 May 2004…611
«Պոդկոլզինան ընդդեմ Լատվիայի» (Podkolzina v Latvia) [2002] ECHR 405, ECtHR …1035, 1037, 1039
«Պոլակկոն և Գարոֆալոն ընդդեմ Իտալիայի» (Polacco and Garofalo v Italy), decision of 15 September 1997, EComHR …1038
«Պոլինո Թոմասն ընդդեմ Պորտուգալիայի (Paulino Tomns v Portugal) ECHR 2003-VIII …851
«Պոլտորացկին ընդդեմ Ուկրաինայի» (Poltoratskiy v Ukraine) [2003] ECHR 216, (2004) 39 EHRR 43, ECtHR …222
«Պրեսոս կոմպանիա Նավիերա Ս.Ա.-ն ընդդեմ Բելգիայի» (Pressos Compania Naviera S.A. v Belgium) [1995] ECHR 47, (1996) 21 EHRR 301, ECtHR …962, 963
«Պրետտոն ընդդեմ Իտալիայի» (Pretto v Italy) Series A No 71, (1983) 6 EHRR 182, ECtHR …464
«Պրիզմա պրեսն» ընդդեմ Ֆրանսիայի» (Prisma Presse v France) judgment of 1 July 2003, unreported, ECtHR …611
«Պրոկաչինին ընդդեմ Իտալիայի» (Procaccini v Italy), decision of 30 March 2000, ECtHR …372
«Պրոկոլան ընդդեմ Լյուքսեմբուրգի» (Procola v Luxembourg) [1995] ECHR 33, (1996) 22 EHRR 193, ECtHR …451
«Պրոկոպովիչն ընդդեմ Ռուսաստանի» (Prokopovich v Russia) [2004] ECHR 642, (2006) 43 EHRR 10, ECtHR …583
«Պուատրիմոլն ընդդեմ Ֆրանսիայի» (Potrimole v France) [1993] ECHR 54, (1994) 18 EHRR 130, ECtHR …1056

«Ջավիթ Անն ընդդեմ Թուրքիայի» (Djavit An v Turkey) [2003] ECHR 91, (2005) 40 EHRR 45, ECtHR …785
«Ջեյլանն ընդդեմ Թուրքիայի (Ceylan v Turkey) (1999) 30 EHRR 73, ECtHR …680, 744

«Ջեյմսն ընդդեմ Միացյալ Թագավորության (James v the United Kingdom) Series A No 98, (1994) 18 EHRR CD130, ECtHR …83, 921, 539, 663, 948, 949, 951, 977, 980, 989, 990, 995
«Ջեսիուսն ընդդեմ Լիտվայի» (Jecius v Lithuania) [2000] ECHR 404, (2002) 35 EHRR 16, ECtHR …65
«Ջիանն ընդդեմ Ռումինիայի» (Jian v Romania) decision of 30 March 2004, unreported, ECtHR …31
«Ջոն Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության» (John Murray v United Kingdom) [1996] ECHR 3, (1996) 22 EHRR 29…425, 429, 430, 434, 478
«Ջոնսթընն ընդդեմ Իռլանդիայի» (Johnston v Ireland) [1986] ECHR 17, (1987) 9 EHRR 203, ECtHR …298, 374, 549, 566, 599, 826, 829
«Ջոնսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Johnson v United Kingdom) ECHR 1997-VII 2391, (1997) 27 EHRR 296, ECtHR …292
«Ջուլիա Մանձոնին ընդդեմ Իտալիայի» (Giulia Manzoni v Italy) [1997] ECHR 36, ECtHR …279, 280

«Ռադոսն ընդդեմ Խորվաթիայի» (Rados v Croatia) [2002] ECHR 722, ECtHR …850
«Ռադովանովիչն ընդդեմ Ավստրիայի» (Radovanovic v Austria) [2004] ECHR 169, (2005) 41 EHRR 6, ECtHR …554
«Ռամիրես Սանչեսն ընդդեմ Ֆրանսիայի» (Ramirez Sanchez (Illich) v France) [2005] ECHR 42, ECtHR …192, 264
«Ռայը և Հոուփն ընդդեմ «Բրիտանական միջուկային վառելիք» ԲԲԸ-ի» (Reay Hope v British Nuclear Fuels) [1994] Medical Law Reports 1, High Court ...117
«Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի» (Raimondo v Italy) Series A No 281, ECtHR …24, 1042, 1043, 1044, 1045, 1046
«Ռայնփրեխտն ընդդեմ Ավստրիայի» (Reinprecht v Austria), judgment of 15 November 2005, unreported, ECtHR …330
«Ռանթզենն ընդդեմ «Միրոր գրուփ նյուզփեյփերս» ՍՊԸ-ի» (Rantzen v Mirror Group Newspapers) 1986) Ltd [1993] All ER 975, CA …735, 738
«Ռանինենն ընդդեմ Ֆինլանդիայի» (Raninen v Finland) [1997] ECHR 102, (1997) 26 EHRR 563, ECtHR …522
«Ռասմուսենն ընդդեմ Դանիայի» (Rasmussen v Denmark) (1984) 7 EHRR 371, ECtHR …857, 858, 859, 879, 663
«Ռեհբոկն ընդդեմ Սլովենիայի» (Rehbock v Slovenia) ECHR 2000-XII, [2000] ECHR 645, ECtHR …114, 182, 331
«Ռեմանը և Շմիդտն ընդդեմ Լյուքսեմբուրգի» (Roemen v Schmit) [2003] ECHR 102, ECtHR . . .760
«Ռեմերն ընդդեմ Գերմանիայի» (Remer v Germany) 82-B DR 117, EComHR …766, 767
«Ռեյդն ընդդեմ Ճամայկայի» (Reid v Jamaica) (No 250/1987), UN Human Rights Committee …138
«Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի» (Rekvenyi v Hungary) (2000) 30 EHRR 519, ECtHR …692, 733, 823, 1034
«Ռեֆահ փարթիսի» («Բարօրություն») կուսակցությունը ընդդեմ Թուրքիայի» (Refah Partisi (The Welfare Party) v Turkey) judgment of 13 February 2003, [2001] ECHR 495, ECtHR …650, 774
«Ռիբիչն ընդդեմ Ավստրիայի» (Ribitsch v Austria) [1995] ECHR 55, (1996) 21 EHRR 573, ECtHR …168, 181, 872, 928
«Ռինգայզենն ընդդեմ Ավստրիայի» (Ringeisen v Austria) Series A No 13, (1971) 1 EHRR 455, ECtHR …355, 359, 360, 361, 376, 396, 397
«Ռիներն ընդդեմ Բուլղարիայի» (Riener v Bulgaria) [2006] ECHR 553, ECtHR …1047
«Ռիսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Rees v United Kingdom) Series A No 106, (1986) 9 EHRR 56, ECtHR …600, 602, 661, 828
«Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի» (Ryabykh v Russia) [2003] ECHR 396, ECtHR …1064
«Ռյեփան ընդդեմ Ավստրիայի» (Riepan v Austria) [2001] Crim. Law Rev. 230, ECtHR …443
«Ռոբինսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Robins v United Kingdom) ECHR 1997-V, (1997) 26 EHRR 527, ECtHR …445
«Ռոշինն ընդդեմ Կալիֆոռնիայի» (Rochin v California) 342 US 165 (1952), US Supreme Court …437
«Ռոշն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Roche v United Kingdom) judgment of 19 October 2005, unreported, ECtHR …413, 414, 605, 721
«Ռոտարուն ընդդեմ Ռումինիայի» (Rotaru v Romania) [2003] ECHR 102, ECtHR …141, 530
«Ռոտենթուրմ կոմունան ընդդեմ Շվեյցարիայի» (Commune Rothenthurm v Switzerland) Commission Decision of 14 December 1988 …22
«Ռոուվը և Դեյվիսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Rowe and Davis v United Kingdom) [2000] Crim LR 584, ECtHR …416

«Սաադին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Saadi v United Kingdom), judgment of 11 July 2006, unreported, ECtHR …306, 309
«Սադամ Հուսեյնն ընդդեմ Ալբանիայի» (Saddam Hussein v Albania) decision of 14 March 2006…79
«Սաթերլենդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Sutherland v United Kingdom) [2001] ECHR 234, (1997) 24 EHRR CD22, ECtHR …509, 511, 870
«Սաթիկն ընդդեմ Թուրքիայի» (Satik v Turkey) [2000] ECHR 466, ECtHR ...163
«Սալաբիակուն ընդդեմ Ֆրանսիայի» (Salabiaku v France) Series A No 141-A, (1988) 13 EHRR 379, ECtHR …470
«Սալգեիրո դա Սիլվա Մուտան ընդդեմ Պորտուգալիայի» (Salgueiro da Silva Mouta v Portugal) [1999] ECHR 176, (2001) 31 EHRR 47, ECtHR …868
«Սալեզին ընդդեմ Իտալիայի» (Salesi v Italy) [1993] ECHR 14, (1998) 26 EHRR 187, ECtHR …368, 446, 968

«Սալմանն ընդդեմ Թուրքիայի» (Salman v Turkey) ECHR 2000-VII 100 …46, 783
«Սայլերն ընդդեմ Ավստրիայի» (Sailer v Austria) [2002] ECHR 486, ECtHR …1062
«Սանդերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Sander v United Kingdom) [2000] ECHR 194, (2001) 31 EHRR 44, ECtHR …457
«Սանդի թայմզ» թերթն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Sunday Times v United Kingdom) [1972] 3 All ER 1136, DC, [1973] 1 All ER 815, CA, [1973] 3 All ER 54, HL . . . 667
«Սանդի թայմզ» թերթն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Sunday Times v United Kingdom) [1979] ECHR 1, (1979–80) 2 EHRR 245, ECtHR …22,313, 332, 333, 591, 617, 663, 664, 675, 718, 731, 733, 736, 742, 750, 752, 759, 762, 763
«Սանդի թայմզ» թերթն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Sunday Times v United Kingdom) (No 2) [1991] ECHR 50, ECtHR …764
«Սանլես Սանլեսն ընդդեմ Իսպանիայի» (Sanles Sanles v Spain), ECHR 2000-XI, ECtHR …25
«Սանչես-Ռեյեսն ընդդեմ Շվեյցարիայի» (Sanchez-Reisse v Switzerland) Series A No 107, (1986) 9 EHRR 71, ECtHR …328, 342, 346
«Սաքիկն ընդդեմ Թուրքիայի» (Sakik v Turkey) [1997] ECHR 95, (1998) 26 EHRR 662, ECtHR …905, 906
«Սեգերստեդտ-Վիբերգն ընդդեմ Շվեդիայի» (Segerstedt-Wiberg v Sweden) judgment of 6 June 2006, unreported, ECtHR …527
«Սելիստոն ընդդեմ Ֆինլանդիայի» (Selisto v Finland) [2004] ECHR 634, (2006) 42 EHRR 8, ECtHR …729
«Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի» (Selmouni v France) ECHR 1999-V, (2000) 29 EHRR 403, ECtHR …140, 848, 935
«Սելջուկը և Ասկերն ընդդեմ Թուրքիայի» (Selcuk and Asker v Turkey) [1998] ECHR 36, (1998) 26 EHRR 477, ECtHR …190, 580
«Սեյդովիչը և Սուլեյմանովիչն ընդդեմ Իտալիայի» (Sejdovic and Sulejmanovic v Italy), judgment of 14 March 2002, unreported, ECtHR …1053
«Սերեսեդա Մարտինն ընդդեմ Իսպանիայի» (Cereceda Martin v Spain) 73 DR 120, EComHR …940
«Սերթքայան ընդդեմ Թուրքիայի» (Sertkaya v Turkey) [2006] ECHR 645, ECtHR… 138
«Սերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Soering v United Kingdom) (1989) 11 EHRR 439, ECtHR …74, 82, 83, 134, 139, 140, 141, 143, 144, 145, 169, 200, 174, 264, 436, 770, 808, 838, 843, 844, 845
«Սերիֆն ընդդեմ Հունաստանի» (Serif v Greece) [1999] ECHR 169, (2001) 31 EHRR 20, ECtHR …643
«Սիբսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Sibson v United Kingdom) (1993) 17 EHRR 193, ECtHR …806, 809
«Սիգուրդսոնն ընդդեմ Իսլանդիայի» (Sigurdsson v Iceland) [2003] ECHR 169, (2005) 40 EHRR 15, ECtHR …458
«Սիգուրյոնսոնն ընդդեմ Իսլանդիայի» (Sigurjonsson v Iceland) (1993) Series A 264, (1993) EHRR 462, ECtHR …116, 231, 232, 774, 787, 807, 812
«Սիդաբրասը և Ջյաուտասն ընդդեմ Լիտվայի» (Sidabras and Dziautas v Lithuania) [2004] ECHR 395, (2006) 42 EHRR 6, ECtHR …540
«Սիդիրոպուլոսն ընդդեմ Հունաստանի» (Sidiropoulos v Greece) [1998] ECHR 55, (1999) 27 EHRR 633, ECtHR …789
«Սիերվա Օսորիո դե Մոսկովոն ընդդեմ Իսպանիայի» (Cierva Osorio De Moscovo v Spain) 28 October 1999, unreported, ECtHR …959
«Սիլիադինն ընդդեմ Ֆրանսիայի» (Siliadin v France) judgment of 26 July 2005, unreported, ECtHR …244
«Սիլվերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Silver v United Kingdom) (1983) 5 EHRR 347, ECtHR …594, 617, 620, 835, 839
«Սինգն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Singh v United Kingdom) [1996] ECHR 9, ECtHR …350
«Սիրբուն և այլք ընդդեմ Մոլդովայի» (Sirbu and Others v Moldova) [2004] ECHR 264, ECtHR …415
«Սլիվենկոն ընդդեմ Լատվիայի» (Slivenko v Latvia) [2003] ECHR 498, (2004) 39 EHRR 24, ECtHR …535, 419, 960
«Սկետինին ընդդեմ Իտալիայի» (Schettini v Italy), judgment of 9 November 2000, unreported, ECtHR …813
«Սկոցարին և Ջունտան ընդդեմ Իտալիայի» (Scozzari and Giunta v Italy) [2000] ECHR 372, (2002) 35 EHRR 12, ECtHR …550, 934
«Սմիթը և Գրեյդին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Smith and Grady v United Kingdom) [1999] ECHR 72, (1999) 29 EHRR 493, ECtHR …227,511, 621, 623, 842, 844
«Սմիթը և Ֆորդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Smith and Ford v the United Kingdom) [1999] ECHR 79, ECtHR …455
«Սմիռնովան ընդդեմ Ռուսաստանի» (Smirnova v Russia) [2003] ECHR 498, (2004) 39 EHRR 24, ECtHR … 30, 941
«Սյուրեքը և Օզդեմիրն ընդդեմ Թուրքիայի» (Sürek and Ozdemir v Turkey) [2002] ECHR 606, ECtHR …463, 779, 740
«Սոդերբեքն ընդդեմ Շվեդիայի» (Söderbäck v Sweden) (1998) 29 EHRR 95, ECtHR …566
«Սոնդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Saunders v United Kingdom) [1996] ECHR 65, (1997) 23 EHRR 313, ECtHR …430, 435
«Սոսիետ Կոլաս Էստն ընդդեմ Ֆրանսիայի» (Societe Colas Est v France) [2002] ECHR 421, (2004) 39 EHRR 17, ECtHR …570
«Սորենսենը և Ռասմուսենն ընդդեմ Դանիայի» (Sorensen and Rasmussen v Denmark) [2006] ECHR 24, ECtHR…811
«Սոցիալիստական կուսակցությունն ընդդեմ Թուրքիայի» (Socialist Party v Turkey) (1998) 27 EHRR 51, ECtHR …773, 775, 778

«Սպորոնգը և Լյոնրոթն ընդդեմ Շվեդիայի» (Sporrong and Lönnroth v Sweden) [1982] ECHR 5, (1983) 5 EHRR 35, ECtHR …374, 847, 943, 944, 955, 957, 971, 983, 984, 989
«Ստաբբինգսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Stubbings v United Kingdom) ECHR 1996-IV 1505, (1997) 23 EHRR 213, ECtHR …165, 401, 403
«Ստանկովը և «Իլինդեն» միավորված մակեդոնական կազմակերպությունն ընդդեմ Բուլղարիայի» (Stankov and the United Macedonian Organisation Ilinden v Bulgaria) [2001] ECHR 567, ECtHR …775, 785
«Ստավիցկին ընդդեմ Լեհաստանի» (Stawicki v Poland) decision of 10 February 2000, ECtHR …967
«Ստեդմանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Stedman v United Kingdom) (1997) 23 EHRR CD 168, ECtHR …643
«Ստենֆորդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Stanford v United Kingdom) [1994] ECHR 6, ECtHR . . . 420, 421, 422
«Ստեֆորդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Stafford v the United Kingdom) (2002) 35 EHRR 32, [2002] ECHR 470, ECtHR …231, 271, 347, 348, 441, 450
«Ստրեչն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Stretch v the United Kingdom) [2003] ECHR 320, (2004) 38 EHRR 12, ECtHR …962
«Ստեքն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Stec v United Kingdom) [2006] ECHR 393, 20 BHRC 348, ECtHR …369, 966
«Ստիլն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Steel v United Kingdom) ECHR VII-2719, (1998) 28 EHRR 603, ECtHR …717, 733, 734, 747, 1003
«Ստիլը և Մորիսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Steel and Morris v United Kingdom), judgment of 15 February 2005 …401, 424, 714
«Ստյերնան ընդդեմ Ֆինլանդիայի» (Stjerna v Finland) [1994] ECHR 43, (1997) 24 EHRR 195, ECtHR …523
«Ստյուարտն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Stewart v United Kingdom) (1985) 7 EHRR CD453, ECtHR …83, 149
«Սրամեկն ընդդեմ Ավստրիայի» (Sramek v Austria) [1984] ECHR 12, (1985) 7 EHRR 351, ECtHR ...364
«Սուլեյմանովիչը և Սուլթանովիչն ընդդեմ Իտալիայի» (Sulejmanovic and Sultanovic v Italy), judgment of 14 March 2002, unreported, ECtHR …1053
«Սուրբ վանքերն ընդդեմ Հունաստանի» (Holy Monasteries v Greece) Series A No 301-A 39, (1995) 20 EHRR 1, ECtHR …83, 949, 995
«Սուրմելին ընդդեմ Գերմանիայի» (Surmeli v Germany), judgment of 8 June 2006, unreported, ECtHR …852

«Վաբլն ընդդեմ Ավստրիայի» (Wabl v Austria) [2000] ECHR 105, (2001) 31 EHRR 51, ECtHR …683, 677
«Վալսամիսն ընդդեմ Հունաստանի» (Valsamis v Greece) (1996) 24 EHRR 294, ECtHR …639, 649, 1023
«Վան Գեյզեգեմն ընդդեմ Բելգիայի» (Van Geyseghem v Belgium) [1999] ECHR 5, ECtHR ... 1056
«Վան դեն Բոուվհույսենը և Շուրինգն ընդդեմ Նիդեռլանդների» (Van den Bouwhuijsen and Schuring v The Netherlands), decision of 16 December 2003, ECtHR …967
«Վան դեր Լեերն ընդդեմ Նիդեռլանդների» (Van der Leer v Netherlands) Series A No 170, [1990] ECHR 3, (1990) 12 EHRR 567, ECtHR …308
«Վան դեր Մեսելն ընդդեմ Բելգիայի» (Van der Mussele v Belgium) Series A No 70, (1983) 6 EHRR 163 …237, 238, 239, 257
«Վան դեր Վենն ընդդեմ Նիդեռլանդների» (Van Der Ven v Netherlands) [2003] ECHR 62, ECtHR …193, 220
«Վան Դրուգենբրեքն ընդդեմ Բելգիայի» (Van Droogenbroeck v Belgium) [1982] ECHR 3, ECtHR …243, 266, 268, 340, 342, 344, 345, 835, 925
«Վան Մեխելենն ընդդեմ Նիդեռլանդների» (Van Mechelen v Netherlands) [1997] ECHR 22, (1998) 25 EHRR 647, ECtHR …417, 480
«Վառնավան ընդդեմ Թուրքիայի» (Varnava v Turkey) 93 DR 5, EComHR …940, 941
«Վասիլևան ընդդեմ Դանիայի» (Vasileva v Denmark) [2003] ECHR 457, (2005) 40 EHRR 27, ECtHR …276
«Վասսինքն ընդդեմ Նիդեռլանդների» ((Wassink v Netherlands) [1990] ECHR 22, ECtHR …263, 292, 352
«Վեբերն ընդդեմ Շվեյցարիայի» (Weber v Switzerland) (1990) 12 EHRR 508, ECtHR...762
«Վեհն ընդդեմ Ավստրիայի» (Weh v Austria) [2004] ECHR 150, (2005) 40 EHRR 37, ECtHR …435
«Վեմհոֆֆն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության» (Wemhoff v Federal Republic of Gemany) [1968] ECHR 2, (1979–80) 1 EHRR 55, ECtHR …316
«Վենդիտելլին ընդդեմ Իտալիայի» (Vendittelli v Italy) [1994] ECHR 23, (1995) 19 EHRR 464, ECtHR …935
«Վեսելս-Բերգերվոտն ընդդեմ Նիդեռլանդների» (Wessels-Bergervoet v The Netherlands) [2002] ECHR 480, (2004) 38 EHRR 37, ECtHR …967
«Վերենիգինգ Վիքբլեյ բլուֆ»շաբաթաթերթն ընդդեմ Նիդեռլանդների» (Vereniging Weekblad Bluf! v Netherlands) (1995) 20 EHRR 189, ECtHR …743
«Վերեյն կոնտակտ ինֆորմեյշն թերապին» և Հագենն ընդդեմ Ավստրիայի» (Verein Kontakt-Information-Therapie and Hagen v Austria) (1988) 57 DR 81 …160
«Վիլեն ընդդեմ Լիխտենշտեյնի» (Wille v Liechtenstein) [1999] ECHR 107, (2000) 30 EHRR 558, ECtHR …693, 730
«Վիլսոնը և Լրագրողների ազգային արհմիությունը, Փոլմերը, Վայեթը և Երկաթուղային, ծովային ու ցամաքային փոխադրամիջոցների աշխատակիցների ազգային միությունը, Դուլանը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (Wilson and The National Union of Journalist, Palmer, Wyeth and The National Union of Rail, Maritime and Transport Workers,

Doolan and Others v United Kingdom) judgment of 2 July 2002, unreported, ECtHR …342, 799, 812, 813
«Վիլվարաջահն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Vilvarajah v United Kingdom) (1991) Series A No 215, (1991) EHRR 248 …210, 841, 843
«Վինտերվերպն ընդդեմ Նիդեռլանդների (Winterwerp v The Netherlands) (1979–80) 2 EHRR 387, [1979] ECHR 4, ECtHR …250, 270, 273, 276, 293, 294, 295, 296, 298, 331, 335, 336, 338, 663
«Վիտոլդ Լիտվան ընդդեմ Լեհաստանի» (Witold Litwa v Poland) [2000] ECHR 141, (2001) 33 EHRR 53, ECtHR …290, 297
«Վիրթշաֆթս-Թրենդ Ցայթշրիֆթեն-Ֆերլագս» ընկերությունն ընդդեմ Ավստրիայի» (Wirtschafts-Trend Zeitschriften-Verlags GMBH v Austria) judgment of 27 October 2005, ECtHR …677
«Վիրջինիայի դեղագործների խորհուրդն ընդդեմ Վիրջինիայի Սպառողների քաղաքացիական խորհրդի» (Virginia State Board of Pharmacy v Virginia Citizens Consumer Council) 425 US 748, (1976) US Supreme Court …715
«Վոկատուրոն ընդդեմ Իտալիայի» (Vocaturo v Italy) Series A No 206, ECtHR …24
«Վոն ընդդեմ Ֆրանսիայի» (Vo v France) (2005) 40 EHRR 12, ECtHR …38, 106, 111, 522
«Վոսն ընդդեմ Լեհաստանի» (Wo s´ v Poland) [2006] ECHR 608, ECtHR …257, 380
«Վորմն ընդդեմ Ավստրիայի» (Worm v Austria ECHR) 1997-V 1534, (1997) 25 EHRR 454, ECtHR...762

«Տետն ընդդեմ Ֆրանսիայի» (Tête v France) 54 DR 52, EComHR …1027, 1028
«Տեքսաքո օվերսիզ պետրոլեում քամփընին» և Կալիֆոռնիայի ասիական նավթային ընկերությունն ընդդեմ Լիբիայի Արաբական Հանրապետության կառավարության» (Texaco Overseas Petroleum Company and California Asiatic Oil Company v Government of the Arab Republic of Libya) preliminary decision of 27 November 1975, International Law Reports, vol. 53 1979 …973
«Տիմիշևն ընդդեմ Ռուսաստանի» (Timishev v Russia) [2005] ECHR 858, ECtHR …876, 1015, 1046
«Տոլստոյ Միլոսլավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Tolstoy Miloslavsky v United Kingdom) (1995) 20 EHRR 442, [1995] ECHR 25, ECtHR …494, 930, 931, 934, 689, 733, 734, 754
«Տոմե Մոտան ընդդեմ Պորտուգալիայի» (Tomé Mota v Portugal) ECHR 1999-IX, ECtHR …849
«Տոտևան ընդդեմ Բուլղարիայի» (Toteva v Bulgaria) [2004] ECHR 212, ECtHR …162
«Տումիլովիչն ընդդեմ Ռուսաստանի» (Tumilovich v Russia), judgment of 22 June 1999, unreported, ECtHR …1064

«Ցիլիբերբերգն ընդդեմ Մոլդովայի» (Ziliberg v Moldova) , judgment of 1 February 2005, unreported, ECtHR... 442
«Ցիմերմանը և Շտայներն ընդդեմ Շվեյցարիայի» (Zimmermann and Steiner v Switzerland) (1983) Series A No 66…64, 446

«Ուելչն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Welch v United Kingdom) Series A No 307-A, (1995) 20 EHRR 247, ECtHR …503, 505
«Ուեյթն ընդդեմ Գերմանիայի» (Waite v United Kingdom) [2002] ECHR 804, (2003) 36 EHRR 54, ECtHR . . . 329
«Ուեյթը և Քենեդին ընդդեմ Գերմանիայի» (Waite and Kennedy v Germany) [1999] ECHR 13 …75
«Ուիգինսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Wiggins v the United Kingdom) 13 DR 40, EComHR …583
«Ուիլիսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Willis v the United Kingdom) [2002] ECHR 488, (2002) 35 EHRR 21, ECtHR …862, 872
«Ուինգրոուվն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Wingrove v United Kingdom) (1996) 24 EHRR 1, ECtHR …636, 699, 704
«Ուինն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Wynne v United Kingdom) Series A No 294, (1994) 19 EHRR 333, ECtHR …346, 347, 348, 349, 351
«Ուիքսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Weeks v United Kingdom) [1987] ECHR 3, (1987) 10 EHRR 293, ECtHR …268, 339, 349
«Ունալ Թեքելին ընդդեմ Թուրքիայի» (Unal Tekeli v Turkey) [2005] 1 FCR 663, (2006) 42 EHRR 53, ECtHR …523
«Ուոքերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Walker v United Kingdom) (2001) 29 EHRR CD276, ECtHR …29
«Ուրանիո Թոքսոն ընդդեմ Հունաստանի» (Ouranio Toxo v Greece), , judgment of 20 October 2005, unreported, ECtHR …794

«Փ.Գ.-ն և Ջ.Հ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (P.G. and J.H. v United Kingdom)…529, 530, 589
«Փայն Վելի Դիվելոփմենթս» ՍՊԸ-ն ընդդեմ Իռլանդիայի» (Pine Valley Developments Ltd v Ireland) Series A No 222, (1991) 14 EHRR 319, ECtHR …956, 962, 1963
«Փարթիդուլ կոմունիստիլոր (Նեփեսերիսթի) և Ունգուրիանուն ընդդեմ Ռումինիայի» (Partidul Comunistilor (Nepeceristi) and Ungureanu v Romania) [2005] ECHR 58, ECtHR …789
«Փաուելը և Ռայներն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Powell and Rayner v United Kingdom) [1990] ECHR 2, ECtHR …573, 575, 621
«Փեկն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Peck v United Kingdom) [2003] ECHR 44, (2003) 36 EHRR 41, ECtHR …529
«Փերրին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Perry United Kingdom) [2003] ECHR 375, (2004) 39 EHRR 3, ECtHR …532
«Փեքդեմիրլին ընդդեմ Թուրքիայի» (Pakdemirli v Turkey) [2005] ECHR 122, ECtHR …681

«Փրագերը և Օբերշլիքը ընդդեմ Ավստրիայի» (Prager and Oberschlick v Austria) (1995) 21 EHRR 1, ECtHR …755, 757
«Փրայսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Price v United Kingdom) [2001] ECHR 458, (2002) 34 EHRR 53, ECtHR …221
«Փրեթին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Pretty v United Kingdom) [2002] ECHR 427, 12 BHRC 149, ECtHR …115, 167, 232, 534, 650, 867

«Ք-Ֆ-ն ընդդեմ Գերմանիայի» (K-F v Germany) ECHR 1997-VII 2657, (1997) 26 EHRR 390, ECtHR …278, 299, 306
«Քայան ընդդեմ Թուրքիայի» (Kaya v Turkey) (1998) 28 EHRR 1, [1998] ECHR 10, ECtHR …121, 130, 846
«Քաղծառայողների միությունների խորհուրդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Council of Civil Service Unions v the United Kingdom), (1987) 50 DR 228, EComHR …817, 822, 940
«Քաղծառայողների միությունների խորհուրդն ընդդեմ քաղաքացիական ծառայության նախարարի» (Council of Civil Service Unions v Minister for the Civil Service) [1984] 3 All ER 935, HL...818
«Քարաթան ընդդեմ Թուրքիայի» (Karata v Turkey) judgment of 8 July 1999, unreported, ECtHR …681, 704
«Քարլինն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Carlin v the United Kingdom) decision of 3 December 1997, EComHR …967
«Քելլին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Kelly v United Kingdom) [2001] ECHR 328, ECtHR …132
«Քեմփբելն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Campbell v United Kingdom) Series A No 233, (1992) 15 EHRR 137, ECtHR …594, 596
«Քեմփբելը և Քոզանսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Campbell and Cosans v United Kingdom) [1983] ECHR 3, (1982) 4 EHRR 293, ECtHR …232, 1015, 1021
«Քեմփբելը և Ֆելն [ընդդեմ Միացյալ Թագավորության]» (Campbell and Fell [v United Kingdom) Series A No 80, [1984] ECHR 8, ECtHR …307, 388, 391, 392, 393, 394, 443, 444, 505
«Քիգանն ընդդեմ Իռլանդիայի» (Keegan v Ireland) (1994) 18 EHRR 342 [1994] 3 FCR 165 [1994] ECHR 18, ECtHR …545, 565, 624
«Քինանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Keenan v United Kingdom) [2001] ECHR 242, (2001) 33 EHRR 38, ECtHR …195, 650
«Քյոնիգն ընդդեմ Գերմանիայի» (König v Germany) Series A No 27, (1978) 2 EHRR 170, ECtHR …358, 363, 365, 366, 373, 374, 376, 377, 379, 445
«Քյուհնենն ընդդեմ Գերմանիայի» (Kühnen v Germany) 56 DR 205, EComHR …766
«Քյուրտն ընդդեմ Թուրքիայի» (Kurt v Turkey) ECHR 1998-III 1187, (1998) 27 EHRR 91, ECtHR 34, 45,183, 184, 185, 259, 315, 847
«Քոլսն ընդդեմ Գերմանիայի» (Kohls v Germany), decision of 13 November 2003, EComHR …967
«Քոնդրոնն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Condron v United Kingdom) [2000] ECHR 191, (2001) 31 EHRR 1, ECtHR …432
«Քոնորսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Connors v United Kingdom) [2004] ECHR 223, (2005) 40 EHRR 9, ECtHR …582
«Քոսին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Cossey v the United Kingdom) Series A No 184, [1990] ECHR 21, (1991) 13 EHRR 622, ECtHR …347, 570, 571, 600, 601, 602, 828
«Քորբեթն ընդդեմ Քորբեթի» (Corbett v Corbett) [1971] PR 83, PDAD …828
«Քոուքն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Coke v the United Kingdom) decision of 9 September 1999, EComHR …967
«Քոփն ընդդեմ Շվեյցարիայի» (Kopp v Switzerland) [1998] ECHR 18, (1999) 27 EHRR 91, ECtHR …592, 964
«Քսենիդես-Արեստիսն ընդդեմ Թուրքիայի» (Xenides-Arestis v Turkey) , judgment of 22 December 2005, unreported …47
«Քրիսթին Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Christine Goodwin v the United Kingdom) [2002] ECHR 588, (2002) 35 EHRR 18, ECtHR …232, 524, 602, 828, 932, 967
«Քրիսթին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Christie v United Kingdom) (1994) DR 119, EComHR . . . 650
«Քրիսթին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Christie v United Kingdom) (1994) ECHR 119 …525, 589
«Քրիստոնեական դպրոցների Ինգրիդ Յորդեբոյի հիմնադրամը և Ինգրիդ Յորդեբոն ընդդեմ Շվեդիայի» (Ingrid Jordebo Foundation of Christian Schools and Ingrid Jordebo v Sweden) (1987) 51 DR 125, EComHR …1020
«Քրիստոնյաներն ընդդեմ ռասիզմի և ֆաշիզմի» միավորումն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Christians Against Racism and Fascism v United Kingdom) (1980) 21 DR 138, EComHR …784, 785
«Քրոն Ֆերլագ» ԲԲԸ & Co. KG-ն ընդդեմ Ավստրիայի» (Krone Verlag GmbH & Co. KG v Austria) [2002] ECHR 159, (2003) 36 EHRR 57, ECtHR …610, 698, 713
«Քրոն Ֆերլագ» ԲԲԸ & Co. KG-ն ընդդեմ Ավստրիայի» (Krone Verlag GmbH & Co KG v Austria (No 3), judgment of 11 December 2003, unreported, ECtHR . . . 21
«Քրոոնն ընդդեմ Նիդեռլանդների» (Kroon v Netherlands) (1995) 19 EHRR 263, [1994] ECHR 35, ECtHR …542, 544, 548
«Քրոչերը և Մոլերն ընդդեմ Շվեյցարիայի» (Krocher and Moller v Switzerland) (1982) 34 DR 24, EComHR …191, 192

«Քուինն ընդդեմ Ֆրանսիայի» (Quinn v France) [1995] ECHR 9, (1996) 21 EHRR 529, ECtHR …259, 280, 303
«Քուփերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Cooper v United Kingdom) [2003] ECHR 686, (2004) 39 EHRR 8, ECtHR …453, 454, 455

«O-ն ընդդեմ Նորվեգիայի» (O. v Norway), judgment of 11 February 2003, unreported, ECtHR …475
«Օաթեսն ընդդեմ Լեհաստանի» (Oates v Poland), judgment of 11 May 2000, unreported, ECtHR …912
«Օբզերվեր» և «Գարդիան» պարբերականներն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Observer and Guardian v United Kingdom) [1991] ECHR 49, ECtHR …611, 731, 740, 743, 754
«Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի» (Oberschlick v Austria) (No 2) ECHR 1997-IV 1266, (1997) 25 EHRR 357...676, 684
«Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի» (Oberschlick v Austria Series A No 204, (1991) 19 EHRR 389, EctHR)…924, 931
«Օդիեվրն ընդդեմ Ֆրանսիայի» (Odievre v France) [2003] ECHR 86, (2004) 38 EHRR 43, ECtHR …605
«Օզգյուր Գունդեմն ընդդեմ Թուրքիայի» (Ozgur Gundem v Turkey) [2000] ECHR 104, (2001) 31 EHRR 49, ECtHR …104, 661
«Օզթուրքն ընդդեմ Գերմանիայի» (Öztürk v Germany) Series A No 73, (1984) 6 EHRR 409, ECtHR …384, 391
«Օլդհեմն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Oldham v UK) [2000] ECHR 433, (2001) 31 EHRR 34, ECtHR …346
«Օհլինգերն ընդդեմ Ավստրիայի» (Ohlinger v Austria), decision of 14 January 1997, ECtHR …24
«Օլինգերն ընդդեմ Ավստրիայի» (Ollinger v Austria), judgment of 29 June 2006, ECtHR …786
«Օլիվեյրան ընդդեմ Շվեյցարիայի» (Oliveira v Switzerland) 1998] ECHR 68, (1999) 28 EHRR 289, ECtHR …1059, 1060, 1061, 1062, 1063
«Օլսոնն ընդդեմ Շվեդիայի» (Olsson v Sweden) (No 2) [1992] ECHR 75, (1994) 17 EHRR 134, ECtHR …563, 564
«O'Հարան ընդդեմ Միացյալ Թագավորության» (O'Hara v United Kingdom) (2002) 34 EHRR 32, ECtHR …315
«Օներյիլդիզն ընդդեմ Թուրքիայի» (Oneryildiz v Turkey) [2004] ECHR 657, (2005) 41 EHRR 20, ECtHR …126, 132, 580
«Օչկանը և այլք ընդդեմ Թուրքիայի» (Ockan and Others v Turkey), judgment of 28 March 2006, unreported, ECtHR …578
«Օջալանն ընդդեմ Թուրքիայի» (Ocalan v Turkey) [2005] ECHR 282, (2005) 41 EHRR 45…79, 134, 147, 199, 263, 462, 476, 479
«Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Osman v United Kingdom) 1998) EHRR 245, ECHR 1998-VIII, ECtHR …114, 117, 128, 166, 189, 661
«Օսմանն ընդդեմ Ֆերգյուսոնի» (Osman v Ferguson) [1993] 4 All ER 344, CA …118, 404
«Օտտո Փրեմինգեր» ինստիտուտն ընդդեմ Ավստրիայի» (Otto Preminger Institute v Austria) (1994) 19 EHRR 34, ECtHR …634, 636, 704, 727, 761, 762
«Օրհանն ընդեմ Թուրքիայի» (Orhan v Turkey) [2002] ECHR 497, ECtHR... 261

«Ֆ-ն ընդդեմ Շվեյցարիայի» (F. v Switzerland) Series A No 128, (1987) 10 EHRR 411, ECtHR …825, 828, 833
«Ֆադեևան ընդդեմ Ռուսաստանի» (Fadeyeva v Russia) [2005] ECHR 376, ECtHR …579
«Ֆադինին ընդդեմ Շվեյցարիայի» (Fadini v Switzerland) (1993) 16 EHRR CD 13, ECtHR …246, 639
«Ֆարբտուհս ընդդեմ Լատվիայի» (Farbtuhs v Latvia) judgment of 2 December 216, unreported, ECtHR …224
«Ֆելդբրուգգեն ընդդեմ Նիդեռլանդների» (Feldbrugge v The Netherlands) Series A No 99 (1986) 8 EHRR 425, ECtHR …374, 365, 368, 968
«Ֆելդեկն ընդդեմ Սլովակիայի» (Feldek v Slovakia) [2001] ECHR 463, (2000) 30 EHRR CD 291, ECtHR …758
«Ֆեյիդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Fayed v the United Kingdom) [1994] ECHR 27, (1994) 18 EHRR 393, ECtHR …714
«Ֆեռարին ընդդեմ Իտալիայի» (Ferrari v Italy), judgment of 28 July 1999, unreported, ECtHR …848
«Ֆերայն գեգեն թիերֆաբրիքեն (VGT)» միավորումն ընդդեմ Շվեյցարիայի» (VGT Verein Gegen Tierfabriken v Switzertland) [2001] ECHR 412, (2002) 34 EHRR 4, ECtHR …696, 699
«Ֆերիդուն Յազարն ընդդեմ Թուրքիայի» (Feridun Yazar v Turkey)[2004] ECHR 436, ECtHR …740, 775
«Ֆերրաձինին ընդդեմ Իտալիայի» (Ferrazzini v Italy) [2001] ECHR 464, (2002) 34 EHRR 45, ECtHR …373
«Ֆիլիպսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Phillips v United Kingdom) [2001] ECHR 437, 11 BHRC 280, ECtHR …472, 473
«Ֆինդլին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Findlay v United Kingdom) [1997] ECHR 8, (1997) 24 EHRR 221, ECtHR …141, 449, 452, 453
«Ֆոգարթին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Fogarty v United Kingdom) [2001] ECHR 762, (2002) 34 EHRR 12, ECtHR …408, 409, 412
«Ֆոգթն ընդդեմ Գերմանիայի» (Vogt v Germany) [1995] ECHR 29, (1996) 21 EHRR 205, ECtHR …512, 514, 816, 822, 823, 691, 693, 716, 769
«Ֆոլգերեն ընդդեմ Նորվեգիայի» (Folgerø v Norway) (2003), unreported …941
«Ֆոն Հանովերն ընդդեմ Գերմանիայի» (Von Hannover v Germany) [2004] ECHR 294, (2005) 40 EHRR 1, ECtHR …609, 678
«Ֆոն Մալցանն ընդդեմ Գերմանիայի» (von Maltzan v Germany) (2006) 42 EHRR SE11, ECtHR …951, 952, 965
«Ֆոտին ընդդեմ Իտալիայի» (Foti v Italy) [1982] ECHR 11, ECtHR …64

«Ֆոքսը, Քեմփբելը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Fox, Campbell and Hartley v United Kingdom) Series A No 182, (1990) 13 EHRR 157, ECtHR …281, 282, 283, 285
«Ֆոքսլին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Foxley v United Kingdom) [2000] ECHR 224, (2001) 31 EHRR 25, ECtHR... 595
«Ֆրանսիան, Նորվեգիան, Դանիան, Շվեդիան և Նիդեռլանդներն ընդդեմ Թուրքիայի» (France, Norway, Denmark, Sweden and the Netherlands v Turkey) 35 DR 143, EComHR …766, 767
«Ֆրանց Ֆիշերն ընդդեմ Ավստրիայի» (Franz Fischer v Austria) [2001] ECHR 352, ECtHR …1060
«Ֆրեդան ընդդեմ Իտալիայի» [Freda v Italy] (1980) 21 DR 250, EComHR …264
«Ֆրեսոն և Ռուարն ընդդեմ Ֆրանսիայի» (Fressoz and Roire v France) [1999] ECHR 1, (2001) 31EHRR 2, ECtHR …686
«Ֆրետն ընդդեմ Ֆրանսիայի» (Frette v France) decision of June 2001, unreported, ECtHR …30, 871
«Ֆրիդլն ընդդեմ Ավստրիայի» (Friedl v Austria) Series A No 305-B, EComHR …531
«Ֆունկն ընդդեմ Ֆրանսիայի» (Funke v France) (1993) 16 EHRR 297, [1993] ECHR 7, ECtHR …426, 427, 429, 430, 621

«ADT-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (ADT v United Kingdom) [2000] 2 FLR 697…519
«C-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (C v United Kingdom) (1983) 37 DR 142, EComHR ... 638, 643
«C-ն ընդդեմ Բելգիայի» (C. v Belgium) (1983) 37 DR 142, EComHR…638, 643
«CR -ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (CR v United Kingdom) A No 335-C, (1995) 21 EHRR 363 …491
«C.W.-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (C.W. v Finland), judgment of 9 October 1991, unreported, ECtHR . . . 940
«E-ն ընդդեմ Նորվեգիայի» (E v Norway) Series A No 181, [1990] ECHR 17, (1994) 17 EHRR 30, ECtHR . . . 344, 345
«JA Փայ» Օքսֆորդ ՍՊԸ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (J.A. Pye (Oxford) Ltd v United Kingdom) [2005] ECHR 921, (2006) 43 EHRR 3, ECtHR ... 997
«H -ն ընդդեմ ընդդեմ Նորվեգիայի (H and Y v Norway) (1992) 73 DR 155, EComHR 102, 103
«HLR -ն ընդդեմ Ֆրանսիայի» (HLR v France) ECHR 1997-III 758, (1998) 26 EHRR 29, ECtHR …165, 215
«IJL-ն, GMR-ն և AKP-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (IJL,GMR and AKP v United Kingdom), (2001) 33 EHRR 11, ECtHR …432, 435
«LCB -ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (LCB v United Kingdom) (1998) 27 EHRR 212, [1998] ECHR 49 ECtHR …116, 118, 124, 257
«M & Co ընկերությունն ընդդեմ Գերմանիայի» (M & Co v Germany) 64 DR 138, EComHR ... 75
«PG -ն և JH-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (PG and JH v United Kingdom) [2002] Crim. Law Rev. 308, ECtHR ...529, 589, 590
«R-ն [Թագուհին] ընդդեմ Բոու սթրիթի քաղաքային վարձատրվող մագիստրատի Պինոչետ Ուգարտեի առնչությամբ» (R v Bow Street Metropolitan Stipendiary Magistrate, ex parte Pinochet Ugarte) (No 3) [2000] Ac 147, HL …406
«R-ն [Թագուհին] ընդդեմ գլխավոր քաղաքային վարձատրվող մագիստրատի, Չոուդհուրիի առնչությամբ» (R v Chief Metropolitan Stipendiary Magistrate, ex p Choudhury) [1991] 1 All ER 306, HC …633, 636
«R-ն [Թագուհին] ընդդեմ ներքին գործերի պետքարտուղարի՝ Փրեմ Սինգհի առնչությամբ» (R v Secretary of State for the Home Department, ex p Prem Singh) [1993] COD 501, DC …350
«R-ն [Թագուհին] ընդդեմ պաշտպանության նախարարության՝ Սմիթի առնչությամբ» (R v Ministry of Defence, ex p Smith) [1996] 1 All ER 257, CA …512
«R-ն [Թագուհին] ընդդեմ պետքարտուղարի՝ Բրեդլիի առնչությամբ» (R v Secretary of State, ex p Bradley)…345
«R-ն [Թագուհին] (Փրեթին) ընդդեմ DPP-ի» (R (Pretty) v DPP) [2001] 3 WLR 1598, HL... 111
«R-ն [Թագուհին] ընդդեմ Ուորդի» (R v Ward) [1993] 2 All ER 577, CA...417
«R-ն ընդդեմ Դեյվիսի» (R v Davis)…418
«R-ն ընդդեմ Լուսլիի» (R. v Looseley) [2001] UKHL 53, CA …419
«R-ն [Թագուհին] ընդդեմ Խանի (Սուլթանի)» (R v Khan (Sultan) [1996] 3 All ER 289, HL. . . 619
«R-ն ընդդեմ Կլարենսի)» (R v Clarence) [1888] 22 QB 23, [1886–90] All ER 133...491
«R-ն ընդդեմ Հ-ի» (R. v H.) [2004] UKHL 3, HL …421
«R-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (R v United Kingdom) Series A No 121-C, (1987) 10 EHRR 74, ECtHR …557
«R-ն [Թագուհին] ընդդեմ պետքարտուղարի՝ Դուդիի առնչությամբ» (R v Secretary of State, ex p Doody) [1994] 1 AC 531; [1993] 3 WLR 154, HL …348
«R-ն ընդդեմ Ջոնսոնի» (R v Johnson)…418
«R-ն ընդդեմ Ռ-ի» (R v R) [1991] 4 All ER 481 …418
«R-ն ընդդեմ Ս-ի» (R v C) [2004] UKHL 3, HL …421
«R-ն ընդդեմ Ուիլքինսոնի» (R v Wilkinson) (1983) 5 Cr App R (S) 105 …344
«S ընկերությունը և T.-ն ընդդեմ Շվեդիայի» (Company S. and T. v Sweden) 50 DR 121, EComHR …373

«S-ն ընդդեմ Մակվանյանեի» (S v Makwanyane) (1996) (6) Butterworths Constitutional Law Reports 665 (South Africa Constitutional Court) ... 138
«S -ն ընդդեմ Շվեյցարիայի» (S. V Switzerland) [1991] ECHR 54, (1992) 14 EHRR 670, ECtHR …479

«S.C.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (S.C. v United Kingdom), judgment of 15 June 2004, unreported, ECtHR …440
«S.L.-ն ընդդեմ Ավստրիայի» (S.L. v Austria) [2003] ECHR 22, ECtHR …870
«S.C.B.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (S.C.B. v United Kingdom) [2001] ECHR 400, EctHR...320
«SW-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (S W v United Kingdom) Series A No 335-C, (1995) 21 EHRR 363, ECtHR…495
«V-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (V v United Kingdom) (1999) 30 EHRR 121, ECtHR)…186, 221, 351, 391, 438, 443, 461
«W -ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (W v United Kingdom) A No 121-A, (1987) 10 EHRR 29, ECtHR …556, 558, 564
«W.F.-ն ընդդեմ Ավստրիայի» (W.F. v Austria) [2002] ECHR 476, (2004) 38 EHRR 39, ECtHR . . . 1062
«W-ը, X-ը, Y-ը և Z-ն ընդդեմ Բելգիայի» (W, X, Y and Z v Belgium) (1976) 18 YB 244, EComHR …1033
«W -ն DM-ն և M-ն և HI-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (W v DM M HI United Kingdom) (1984) 37 DR 96, EComHR …1020
«W.P.-ն ընդդեմ Լեհաստանի» (W.P. v Poland), judgment of 2 September 2004, unreported, ECtHR …910
«X-ն ընդդեմ Ավստրիայի» (X v Austria) (1976) 7 DR 87, EComHR …107, 474
«X-ն ընդդեմ Բելգիայի» (X v Belgium) (1973) Collection of Decisions 42 …312, 1033
«X-ն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության» (X v Germany) (1966) 10 YB 338, EComHR … 1033
«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (X v United Kingdom) (1976) 8 DR 212, EComHR... 30
«X-ն ընդդեմ Նիդեռլանդների» X v Netherlands [1966] 9 Yearbook 568, EComHR . . . 312, 510
«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (X v United Kingdom) (1978) 14 DR 179, EComHR ... 1023
«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (X v United Kingdom) (1980) 19 DR 244, EComHR ...105, 106
«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (X v United Kingdom) Series A No 46, (1981) 4 EHRR 188 ECtHR... 24, 30, 267, 268, 269, 328, 336, 340, 341, 342, 344, 835
«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (X v United Kingdom)…30, 105, 107, 335, 339, 340, 341, 342, 344, 835
«X-ն ընդդեմ Ֆրանսիայի» (X v France) Series A No 234, ECtHR 24
«X» ՍՊԸ-ն ընդդեմ «Մորգան Գրամփիան» (Փաբլիշիրս) ՍՊԸ-ի» (X Ltd v Morgan-Grampian (Publishers) Ltd) [1990] 2 All ER 1, HL . . . 760
«X-ը և Y-ն ընդդեմ Նիդեռլանդների» (X and Y v Netherlands) (1985) Series A No 91, (1986) 8 EHRR 235, ECtHR …165, 257, 596, 783, 509
«X-ը և Y-ն ընդդեմ Շվեյցարիայի» (X and Y v Switzerland) (1978) 13 DR 241, EComHR …830, 831
«X-ը, Y-ը և Z-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (X, Y and Z v United Kingdom) (1997) 24 EHRR 143, (1998) 39 BMLR 128, ECtHR …187, 544, 600, 601, 602
«Y-ն ընդդեմ Նորվեգիայի» (Y v Norway) [2003] ECHR 80, (2005) 41 EHRR 7, ECtHR ...472
«Y.F. -ն ընդդեմ Թուրքիայի» (Y.F. v Turkey) [2003] ECHR 391, ECtHR …535
«W & D M-ն ու Մ-ն & ՀԱ-ն ընդդեմ ՄԹ-ի» (W & D M and M & HI v United Kingdom)
«TW-ն ընդդեմ Մալթայի» (TW v Malta) (1999) 29 EHRR 185, EctHR...316, 927

1 ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Եվրոպայի պետություններում գործող մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային համակարգի ստեղծման գաղափարը նախորդեց 1949 թ. Եվրոպայի խորհրդի ստեղծմանը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից (1945 թ.) հետո Արևմտյան Եվրոպայի տարբեր պետություններում ստեղծվեցին մի շարք ոչ կառավարական խմբեր՝ Եվրոպայի միասնությունը պաշտպանելու նպատակով: Նրանք միավորվեցին՝ կազմավորելու Եվրոպայի միասնության շարժումների միջազգային կոմիտեն: Հաագայում կոմիտեն կազմակերպեց մեծ համաժողով՝ հրավիրելով քաղաքական գործիչների (այդ թվում՝ նախկին առաջնորդների, որոնցից էր Ուինսթոն Չերչիլը (այդ պահին՝ ի պաշտոնե), գործող նախարարների, որոնց թվում էր Ֆրանսուա Միտերանը, և ապագա առաջնորդների, որոնցից էր Կոնրադ Ադենաուերը), քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ներառյալ ակադեմիկոսների, առաջատար ձեռներեցների, արհմիութենական գործիչների և կրոնական առաջնորդների: «Եվրոպայի կոնգրեսը» տեղի ունեցավ 1948 թ. մայիսի 7-10-ը: Համաժողովի մասնակիցների թիվը շուրջ 1000 էր, հիմնականում Եվրոպայից էին, սակայն կային ներկայացուցիչներ նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներից և Համագործակցության երկրներից: Հանդիպման ավարտին կոնգրեսը հրապարակեց հետևյալ հռչակագիրը:

ԵՎՐՈՊԱՆ ՎՏԱՆԳՎԱԾ Է, ԵՎՐՈՊԱՆ ՄԱՍՆԱՏՎԱԾ Է, ԵՎ ԱՄԵՆԱՄԵԾ ՎՏԱՆԳԸ ՆՐԱ ՄԱՍՆԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ Է

Աղքատացած և արգելափակոցներով ծանրաբեռնված, որոնք խաթարում են ապրանքների շրջանառությունը, սակայն այլևս ի զորու չեն պաշտպանելու անվտանգությունը, մեր տարանջատված Եվրոպան քայլում է դեպի իր վերջը: Մեր երկրներից ոչ մեկը չի կարող լուրջ հույսեր փայփայել, որ միայնակ կկարողանա պաշտպանել իր անկախությունը: Մեր երկրներից ոչ մեկը միայնակ չի կարող լուծել այսօրվա տնտեսական հիմնախնդիրները: Առանց ազատ համաձայնության հիմքի վրա կազմավորված միության՝ ներկայիս անիշխանությունը վաղ թե ուշ մեզ կտանի դեպի բռնի միավորում, լինի օտար տերության ներխուժման, թե որևիցե քաղաքական կուսակցության կողմից իշխանության բռնի գրավման ձևով:

Ժամն է արդ անցնելու համազոր գործողությունների՝ սպառնալիքին դիմակայելու համար:

Ընդհանուր ճակատագրով մեզ հետ կապված օտարազգի մարդկանց հետ միասին վաղը կարող ենք կառուցել մեր դարի ամենահզոր քաղաքական կազմավորումը և ամենազորեղ տնտեսական միավորը: Մարդկության պատմությունն ազատ կամքի տեր մարդկանց այդպիսի միություն երբեք չի տեսել: Երբեք նախկինում պատերազմները, վախն ու թշվառությունն այդպիսի հուժկու հակառակորդի չեն հանդիպել:

Այս ահարկու վտանգի և մեծագույն հուսո պայմաններում Եվրոպան հստակ առաքելություն ունի: Այդ առաքելությունն իր ժողովուրդներին միավորելն է՝ իրենց բազմազանության ոգու և ժամանակակից համայնական կյանքի պայմանների համաձայն և, այդպիսով, ճանապարհ հարթելը դեպի կազմակերպված ազատություն, որին ձգտում է համայն աշխարհը: Այդ առաքելությունը ողջ հնարամտությունն արթնացնելն է և ծառայեցնելը անհատի իրավունքների ու պարտականությունների առավել մեծ պաշտպանության գործին, որի համար Եվրոպան, չնայած իր բոլոր սխալներին, լավագույն օրինակ է ծառայում:

Մարդկային արժանապատվությունը Եվրոպայի ամենասքանչելի նվաճումն է, իսկ ազատությունը՝ նրա իրական ուժը: Երկուսն էլ մեր պայքարի գրավականներն են: Մեր մայրցամաքի միությունն այսօր անհրաժեշտ է ոչ միայն մեր նվաճած ազատությունների փրկության, այլև այդ ազատությունների օգուտները մարդկությանը հասցնելու համար:

Այդ միությունից են կախված Եվրոպայի ճակատագիրն ու խաղաղությունը համայն աշխարհում:

Ուստի թող բոլորն իմանան, որ մենք՝ եվրոպացիներս, հավաքվել ենք արտահայտելու Եվրոպայի բոլոր ազգերի կամքը, հանդիսավոր կերպով հայտարարելու մեր ընդհանուր նպատակները հետևյալ հինգ հոդվածներով, որոնք ամփոփում են կոնգրեսի ընդունած որոշումները:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. ***Մենք ցանկանում ենք միավորված Եվրոպա, որի ամբողջ տարածքում կվերականգնվի մարդկանց, գաղափարների և բարիքների ազատ շարժը:***
2. ***Մենք ցանկանում ենք Մարդու իրավունքների խարտիա, որը կերաշխավորի մտքի, հավաքների և արտահայտման ազատությունը, ինչպես նաև քաղաքական ընդդիմություն կազմելու ազատությունը:***
3. ***Մենք ցանկանում ենք Արդարադատության պալատ՝ օժտված սույն խարտիայի իրագործումն ապահովելու համապատասխան լիազորություններով:***
4. ***Մենք ցանկանում ենք Եվրոպական համագումար, որտեղ ներկայացված լինեն մեր բոլոր ժողովուրդների կենդանի ուժերը:***
5. ***Եվ մենք ստանձնում ենք պարտավորություն մեր տներում և հասարակություններում, մեր քաղաքական և հոգևոր կյանքում, մեր մասնագիտական և արհմիութենական շրջանակներում ամեն կերպ աջակցել բոլոր այն մարդկանց և կառավարություններին, որոնք աշխատում են այս վեհ նպատակի համար, որը խաղաղության վերջին հնարավորությունն է և մեծ ապագայի միակ խոստումն այս սերնդի և դրան հաջորդող սերունդների համար:***

Այնուհետև Եվրոպական շարժման միջազգային խորհուրդը փորձեց զարգացնել այս պարտավորությունները՝ 1949 թ. փետրվարին հաստատելով «Եվրոպական Միության սկզբունքների հռչակագիրը» (Declaration of Principles of European Union): Այդ փաստաթղթում, ի թիվս այլոց, ասվում է.

«Եվրոպական միություն չի կարող ընդունվել այն պետությունը, որը չի ընդունում Մարդու իրավունքների մասին խարտիայի (Charter fo Human Rights) հիմնարար սկզբունքները և չի հայտարարում, որ ցանկանում և պարտավորվում է ապահովելու այդ սկզբունքների կիրառումը: … Այն անջրպետը, որ բաժանում է ազատ պետություններն ու Եվրոպայի մնացյալ երկրները, չի կարող համարվել հարատև երևույթ: Մեր նպատակն է Եվրոպայի բոլոր ժողովուրդների ազատությունն ապահովող միությունը»:

Եվրոպական շարժման միջազգային խորհուրդը հիմնեց նաև Միջազգային դատական բաժին, որը նախագահում էր պրն Պիեռ-Անրի Թայթգենը (նախկինում ֆրանսիական Դիմադրության շարժման առաջնորդ և Ֆրանսիայի նախարար)՝ սըր Դեվիդ Մաքսվել-Ֆայֆի (նախկինում Բրիտանիայի պառլամենտի անդամ պահպանողական կուսակցությունից, դատական ատյանի ծառայող և պատերազմի հանցագործությունների նյուրնբերգյան դատավարությունում գլխավոր դատախազի տեղակալ) և պրոֆեսոր Ֆեռնան Դեհուսի (բելգիացի քաղաքական գործիչ և միջազգային իրավաբան) հետ համատեղ՝ որպես հանձնաժողովի զեկուցող: Նրանք մշակեցին Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի նախագիծը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կանոնակարգը: Այդ փաստաթղթերն ավելի ուշ՝ 1949 թ. հուլիսին, Եվրոպական շարժման միջազգային խորհուրդը հանձնեց Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին:

Կառավարության մակարդակով տասը պետություններ (Բելգիա, Ֆրանսիա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Միացյալ Թագավորություն, Իռլանդիա, Իտալիա, Դանիա, Նորվեգիա և Շվեդիա) ստորագրեցին Եվրոպայի խորհրդի կանոնադրությունը՝ 1949 թ. մայիսին ստեղծելով վերը նշված միջազգային կազմակերպությունը: Եվրոպայի խորհրդի գլխավոր նպատակն էր հասնել առավել բարձր համախմբվածության անդամ պետությունների շրջանում: Անդամակցության հիմնական պայմանը, որի մասին խոսվում է կանոնադրության 3-րդ հոդվածում, այն է, որ «Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պարտավոր է ընդունել իրավական պետության և իր իրավազորության ներքո գտնվող բոլոր անձանց կողմից մարդու իրավունքներից ու հիմնարար ազատություններից օգտվելու սկզբունքները …»:

1949 թ. ամռան ընթացքում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն (կազմակերպության գործադիր մարմինը, *տես* ստորև՝ էջ 13) լիազորեց Խորհրդակցական վեհաժողովին (որը կազմված էր անդամ պետությունների ազգային խորհրդարանների ներկայացուցիչներից և այժմ հայտնի է որպես Խորհրդարանական վեհաժողով) իր օրակարգում ներառել մարդու իրավունքների պահպանման և հետագա իրականացման թեման: Խորհրդակցական վեհաժողովի առաջին նիստի հետագա

քննարկումներում և՛ պրն Թայթգենը, և՛ սըր Դեվիդ Մաքսվել-Ֆայֆը կրքոտ ճառեր արտասանեցին՝ վիճաբանելով միջազգային կոնվենցիայի և դատարանի ստեղծման հարցի շուրջ, որոնք պետք է պաշտպանեին մարդու հիմնարար իրավունքները Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում:

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՍՏՐԱՍ-ԲՈՒՐԳՈՒՄ 1949 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ը, ՆԻՍՏԵՐՆ ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ 1949 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ը:

[Քաղված է՝ Collected Edition of the “Travaux Preparatoires” Volume I, Martinus, Nijhoff, The Hague, 1975]

Պրն ԹԱՅԹԳԵՆ (Ֆրանսիա) (թարգմանություն). – Պրն նախագահ, մեր կանոնադրության 1-ին հոդվածում և այնուհետև՝ 3-րդ հոդվածում ասվում է.

«Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել իր անդամների առավել սերտ միասնության՝ հանուն այն սկզբունքների և իդեալների պահպանման և իրագործման, որոնք նրանց ընդհանուր ժառանգությունն են, և խթանել տնտեսական ու սոցիալական առաջընթացը»:

«Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի իրավական պետության և իր իրավազորության ներքո գտնվող բոլոր անձանց նկատմամբ մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների կիրառման սկզբունքները և անկեղծորեն ու արդյունավետորեն համագործակցի հանուն խորհրդի նպատակների իրագործման, ինչպես նշված է 1-ին հոդվածում»:

Այս հիմնարար սկզբունքը, հետևաբար, դրվել է մեր միության հիմքում. յուրաքանչյուր մարդ՝ ելնելով իր ծագումից, իր էությունից և իր ճակատագրից, ունի որոշակի անկապտելի իրավունքներ, որոնց դեմ պետության ոչ մի փաստարկ չի կարող գերակա լինել:

Այսպիսով, պրն նախագահ, մեր առաջին հանդիպման ժամանակ, Նախարարների կոմիտեի սիրահոժար համաձայնությամբ, մենք սկսում ենք բանավեճ՝ մշակելու առաջարկություններ, որոնք հնարավորություն կընձեռեն, որ Եվրոպան կատարի իր խոստումը:

Եվրոպան նախ և առաջ պետք է լինի ազատության երկիր: Մեր երկրների պատմության յուրաքանչյուր էջ վկայում է, թե անցյալում ինչ գնով է մեզ տրվել ազատությունը. գրեթե քսան դար տևած տառապանք, պայքար, պատերազմներ, հեղափոխություններ, անսպառ արցունքներ ու թափված արյուն, իսկ ուժասպառության հասած ժողովուրդների գլխավերևում՝ հերոսի և սրբի հարատև պահանջը:

Ի վերջո մենք նվաճեցինք մեր ազատությունը, և այդ ազատությունը մեր երկրների համար դարձավ այնքան սովորական, որքան օդը, միայն թե արդյունքը, թերևս, եղավ այն, որ մենք այդ ազատությունը բավարար չափով չգնահատեցինք:

Երբ վրա հասան ժամանակակից աշխարհի աղետները՝ ֆաշիզմը, հիտլերիզմը, կոմունիզմը, մենք այդ պահին ընդարմացած էինք, թերահավատ և անզեն: Մեզ հարկավոր էր պատերազմ, իսկ մեզանից ոմանց՝ նաև բշնամու կողմից օկուպացիա, որպեսզի նորովի գնահատեինք մեր մարդասիրության արժեքը:

Արդյոք սա նշանակո՞ւմ է, պարո՛ն նախագահ, որ այսօր՝ մեր հաղթանակից հետո, բոլոր վտանգներն այլևս վանված են: Թույլ տվեք ասել, որ մենք այդպես չենք կարծում: Մեր ազատությանը դեռևս սպառնում է երեք բան: Առաջին սպառնալիքն ինքնին պետության մշտական գոյությունն է, այսինքն՝ պետականության գոյությունը:

Պետության հետևում, անկախ այն հանգամանքից, թե ինչ պետություն է, թեկուզ ամենաժողովրդավարականը, մշտապես դարանակալված է հենց պետականության սպառնալիքը՝ որպես մշտնջենական գայթակղություն:

Մոնտեսքյոն ասել է. «Նա, ով ունի իշխանություն, մշտապես կանգնած է այդ իշխանությունը չարաշահելու գայթակղության վտանգի առջև»: Իրականում երբեմն իշխանությունը չարաշահելու մղումը գայթակղում է նաև խորհրդարանական մեծամասնություններին: Նույնիսկ մեր ժողովրդավարական պետություններում պետք է զգոնություն պահպանենք այդ սպառնալիքին ենթարկվելու գայթակղությանը չտրվելու համար:

Այնուհետև երկրորդ սպառնալիքն է. դժբախտաբար Եվրոպայում ֆաշիզմն ու հիտլերիզմը թունավորել են հասարակական կարծիքը: Այդ մահաբեր ուսմունքները թափանցել են մեր երկրներ և թողել իրենց հետքը: Դրանք թունավորել են մեր հասարակական կարծիքի որոշակի հատվածները:

Ռասիզմը չի մեռել Հիտլերի հետ: Ասեմ նույնիսկ ավելի որոշակի. հակակոմունիստական շարժման մի ճյուղ կա, որը պահանջում է կոմունիզմի դեմ պայքարել ոչ թե ժողովրդավարական, այլ բռնապետական մեթոդներով, իսկ դա երբեմն վտանգի է ենթարկում ժողովրդավարության հիմքերը:

Վերջապես, և ամենից առավել, ազատությունը մեր երկրներում վտանգված է արդի աշխարհի տնտեսական և սոցիալական պայմանների հետևանքով: Ունենանք դա ընդունելու խիզախություն:

Պրն նախագահ, իր պատանեկության անվախ և հաղթանակակիր տարիքում ազատությունը նշանակում էր անձի, աշխատանքի և խղճի ազատություն: Այն նշանակում էր նաև քաղաքական ազատություն, այն նշանակում էր տնտեսական ազատամտություն, ազատ ձեռներեցություն, մրցակցության, շահույթի և փողի ազատություն:

Իսկ դրան հաճախ հետևում էր, ինչպես պարտավոր ենք ընդունել, պրոլետարիատի հսկայական զանգվածների ձևավորումը, որոնք չքավորության մեջ էին, և որոնց համար ազատությունը և ազատությունները դարձել էին հիասթափություն:

Միլիոնավոր մարդիկ դեռևս իրենց առօրյա կյանքում այդ ազատությունները կիրառելու և դրանցից անձնապես օգուտ քաղելու գործնական միջոցներ չունեն:

Ճշմարիտ է, ազատություններն ամրագրված են օրենքում, դրանք գոյություն ունեն թղթի վրա ինչպես նրանց, այնպես էլ մյուսների՝ արտոնյալների համար: Բայց այդ թշվառ ու չքավոր արարածները միջոցներ չունեն, որպեսզի կիրառեն այդ ազատություններն ու օրեցօր օգուտ քաղեն դրանցից:

Ուրեմն իրականում ի՞նչ է նշանակում ազատություն: Ի՞նչ արժեք կարող է ունենալ տան անձեռնմխելիության իրավունքը մի մարդու համար, որը տուն չունի:

Ի՞նչ արժեք ունեն ընտանեկան սուրբ իրավունքներն ու ընտանեկան ազատություններն այն հոր համար, որին մշտապես հալածում է գործազրկության ուրվականը:

Ի՞նչ արժեք ունի հանրային նշանակովի պաշտոնների մատչելիության սկզբունքը, եթե գործնականում կրթությունը, մշակույթն ու մարդասիրությունը միայն ժառանգված հարստության հետ կապված արտոնություններ են:

Մենք պետք է համարձակություն ունենանք ընդունելու, որ փողի, մրցակցության և շահույթի ազատությունները երբեմն սպառնում են ոչնչացնել մարդու ազատությունը: Այդ դեպքում թույլ տվեք հիշեցնել Լակորդերի միտքը, թե ազատությունն է, որ ստրկացնում է, և օրենքն է, որ ազատագրում է:

Կոմունիստներն արագորեն ըմբռնեցին անկարգությունների առավելություններն ու օգտվեցին դրանցից: Կոմունիզմը եկավ և հայտարարեց ճնշվածներին, որ ազատությունն ու սոցիալական արդարությունը չեն կարող մեկտեղ գոյատևել: Ազատությունը, որ նշանակում է ազատականություն (լիբերալիզմ), կոշտ մրցակցություն և երբեմն թույլերի ճնշում ուժեղների կողմից, չի ապահովում և չի կարող ապահովել սոցիալական արդարություն, ուստի դուք պետք է ընտրեք հավասարությունը: Եվ որոշ խղճուկ արարածներ տեղի տվեցին այս գայթակղությանը: Նրանք համաձայնեցին հրաժարվել իրենց ազատությունից հանուն փոքր-ինչ ավելի հացի, իսկ դա մեծ ողբերգություն էր ժամանակակից աշխարհի և մեր եվրոպական ժողովրդավարության համար: Մենք պետք է այդ սոսկալի գայթակղությունը մերժելու միջոցներ գտնենք՝ աշխարհին առաջարկելով լուծումներ, որոնք կարող են ապահովել արդարության հաղթանակի և ազատության ձեռքբերման անքակտելի դաշինքը:

Այսպես կոչված «ուղղորդված և պլանային տնտեսության» ուսմունքները գլուխ բարձրացրին՝ որպես ազատականության հակազդեցություն: Բազմաթիվ հեղինակավոր մարդիկ, ովքեր արդեն դարձել էին ազատ ձեռներեցության սյուները, և նրանց հետ զանազան ուղղությունների հարող քաղաքական գործիչներ հայտարարեցին, որ իրենք կողմնակից են տնտեսական հարցերի որոշակի ուղղորդվածության և շահույթների ու սպառման ապրանքների ապաքաղաքակացված բաշխման՝ որպես ազատականության անարդարությունների և հարստության ավելցուկի շտկման միջոցի: Նրանց առաջ էր մղում արդարություն հաստատելու ցանկությունը, սակայն միաժամանակ քաջ գիտակցում էին, որ իրենց գործի դրած մեխանիզմը կարող է հեշտությամբ վերաճել խառնակիչ վարչարարության, աննպատակ միջամտության և երբեմն էլ անտանելի բռնապետության ու նույնիսկ ավտոկրատիայի: Համոզված եմ, որ նրանք նույնպես մտահոգված են ազատության հիմնախնդրով, ինչպես նաև դրա պաշտպանական մեխանիզմներով այսօրվա աշխարհում՝ պլանային, համաձայնեցված կամ ուղղորդված տնտեսության պայմաններում: Ուստի, պրն նախագահ, ինչպիսին էլ լինի մեր քաղաքական գունավորումը, պարտավոր ենք գնահատել մեր դեմ ծառացած խնդրի բարդությունը, եթե ամենայն լրջությամբ ցանկանում ենք ունենալ միաժամանակ երկուսն էլ՝ ազատություն և սոցիալական արդարություն:

Ի մեծ բարեբախտություն մեզ՝ Եվրոպայի հայեցակարգը ծնվեց այն պահին, երբ դեռ չափազանց ուշ չէր: Փորձը ցույց է տվել բոլորիս, որ իմ ներկայացրած հիմնախնդիրը հնարավոր չէ լուծել սոսկ ազգային դաշտում: Այն կարելի է լուծել միայն համախմբված ջանքերով: Այս բանավեճը սկսելը վկայությունն է այն բանի, որ մենք պատրաստ ենք գործադրել այդ ջանքերը: Իսկ ի՞նչ կարող ենք անել:

Մեր դեմ ծառացած խնդիրը կարելի է լուծել երեք փուլով: Նախ և առաջ պետք է որոշենք մեր հեռավոր, առաջիկա և անհապաղ խնդիրները, որոնց ուղղությամբ պետք է աշխատենք: Կա, անշուշտ, ցանկալի առավելագույն տնտեսական կատարելություն: Դա կլիներ Եվրոպայի բոլոր բաղձալի ազատությունների ու հիմնարար իրավունքների լիարժեք օրենսգրքի մշակումը, ներառյալ՝ ամեն տեսակի անձնական իրավունքներն ու ազատությունները, ամենայն այսպես կոչված «սոցիալական ազատություններն ու իրավունքները»:

Այսուհանդերձ, նման նպատակի համընդհանուր և լիարժեք իրականացումը մեր ուժերից վեր է:

Անհրաժեշտ կլինեն փոխըմբռնման, ուսումնասիրությունների և համատեղ պրպտումների երկար տարիներ, որպեսզի խիզախենք նույնիսկ երկարաձիգ ու անպտուղ փորձերից հետո լիարժեք ձևակերպում և ընդհանրացված սահմանում տալ այն բոլոր ազատություններին, որ Եվրոպան պարտավոր է տալ եվրոպացիներին: Ուստի մի կողմ թողնենք այս պահին այդ բաղձալի առավելագույնը: Բավարարվենք նվազագույնով, որին կարող ենք հասնել շատ կարճ ժամանակամիջոցում, և որը կազմված է այն յոթ, ութ կամ տասը հիմնարար ազատություններից, որոնք էապես անհրաժեշտ են ժողովրդավարական կենսակերպի համար, և որոնք մեր երկրները պետք է երաշխավորեն իրենց ժողովուրդների համար: Պետք է որ հնարավոր լինի ընդհանուր սահմանում գտնել դրանց համար:

Եթե սկսենք աշխատել անհապաղ և, օրինակ, հանձնարարենք այս վեհաժողովի հանձնաժողովին՝ Ձեր և վեհաժողովի թույլտվությամբ, պրն նախագահ, պատրաստել ժողովրդավարական կարևորագույն ազատությունների

ընդհանուր սահմանումը, ապա կարճ ժամանակամիջոցում կկարողանանք առաջարկել այդ սահմանումը տարբեր կառավարությունների: Վերջիններս կարող են ընդունել դրանք, և այդպիսով կարևորագույն ազատությունները կերաշխավորվեն բոլոր երկրների օրենքներով: Այդ ազատությունները կպաշտպանվեն դատական մարմնի կողմից, որին շուտով կանդրադառնամ:

Արդ, խնդրում եմ, որ Դուք վեհաժողովին հղեք այս առաջին որոշումը ձևակերպող բանաձև, որը շուտափույթ կպատրաստենք՝ նպատակ ունենալով այնպիսի սահմանում տալ, որն ընդհանուր լինի Եվրոպայի բոլոր ժողովուրդների համար, ավելի որոշակի՝ հիմնարար ազատությունների քննություն, որն այժմ կարող է մտցվել մեր հավաքական սահմանման մեջ:

Սակայն, Ձեր թույլտվությամբ, պրն նախագահ, մենք այստեղ կանգ չենք առնի: Մենք կփորձենք նույնիսկ այս նիստի ընթացքում ժողովուրդների և հանրության դատին ներկայացնել մի առաջարկություն, որը պետք է ընդունենք անհապաղ՝ նախքան մեր ժողովուրդների հիմնարար ազատությունները սահմանելը:

Հիմնախնդիրը կարելի է ձևակերպել շատ պարզ ձևով: Այն պետությունները, որոնք մասնակցել են մեր կանոնադրության մշակմանը, ստորագրմանը և հրապարակմանը, դրանով իսկ պարտավորություն են ստանձնել պահպանելու մարդ անհատի հիմնարար իրավունքները: Նրանք ընդունել են հիմնարար ազատությունների հավաքական երաշխիքի սկզբունքը:

Մենք չենք կարող առաջարկել, որ նրանք անմիջապես ընդունեն այդ ազատությունների ընդհանուր սահմանումը, սակայն կարող ենք խնդրել նրանց համաձայնել հենց այս պահին, Եվրոպայի խորհրդի շրջանակներում, այդ հիմնարար ազատությունների հավաքական երաշխավորմանն այնպես, ինչպես դրանք ներկայումս սահմանված են նրանց համապատասխան օրենքներում, մինչև կգա ժամանակը, երբ նրանք կկարողանան երաշխավորել այդ ազատություններն ընդհանուր և հավաքական սահմանումով:

Եթե այս սկզբունքն ընդունվի վեհաժողովի կողմից, ապա կարող ենք անմիջապես գործնական և որոշակի առաջարկություն անել: Մենք կհայտնենք անդամ պետություններին, որոնք իրենց համաձայնությունը տվեցին այս քննարկումն օրակարգ մտցնելու գաղափարին, որ կցանկանայինք՝ նրանք անհապաղ պայմանավորվածություն ձեռք բերեն կոնվենցիայի հարցի շուրջ, որը նրանք կստորագրեն, և որը կվավերացվի նրանց խորհրդարաններում: Համառոտակի այն կպարունակի հետևյալ դրույթները. հիմնարար իրավունքների և ազատությունների հավաքական երաշխիքի սկզբունքի սահմանում՝ Եվրոպայի խորհրդի շրջանակներում, Եվրոպայի խորհրդին միացած բոլոր անդամ պետությունների կողմից: Օրինակ՝ անձի անվտանգություն, ազատություն կամայական ձերբակալությունից, ազատություն ստրկությունից և տաժանակրությունից, խոսքի և արտահայտվելու ազատություն, կրոնական հավատքի, դրա կիրառման և քարոզման ազատություն, միությունների և հավաքների ազատություն, ամուսնությունից և հայրությունից բխող բնական իրավունքներ, ինչպես նաև այն իրավունքները, որոնք վերաբերում են ընտանիքին, տան անձեռնմխելիությանը, օրենքի առջև հավասարությանը, կրոնական, ռասայական, ազգային ծագման, քաղաքական կամ փիլիսոփայական հայացքների հետևանքով խտրականությունից պաշտպանությանը, սեփականությունից կամայական զրկման ազատությանը և այլն:

Վերը նշվածը կարելի է համարել հիմնարար, անվիճելի ազատությունների օրինակներ: Հավատացնում եմ, որ այդ թվարկումը լիակատար չէ: Կան նաև շատ այլ ազատություններ, սակայն սկզբի համար բավարարվենք վերոհիշյալով: Պետությունները պարտավորություն կստանձնեն համաձայնագրերով՝ հավաքական եղանակով երաշխավորելու այդ ազատությունները Եվրոպայի խորհրդի շրջանակներում, պահպանելով որոշակի ընթացակարգեր և գտնվելով Եվրոպական դատարանի հսկողության ներքո:

Նրանք այդ հիմնարար ազատությունները կերաշխավորեն ամենամոտ ապագայում՝ դրանցից յուրաքանչյուրն ընդհանուր սահմանելով, որը մենք կարող ենք առաջարկել որոշակի ուսումնասիրությունից հետո:

Պետությունները, սակայն, կարող են այդ իրավունքներն ու ազատությունները երաշխավորել անմիջապես՝ առանց այդ ընդհանուր սահմանմանը սպասելու, այնքանով, որքանով նրանց սահմանադրությունները, օրենքներն ու վարչական պրակտիկան պաշտպանում են այդ իրավունքները:

Նրանք պետք է երաշխավորեն այդ ազատությունները հենց հիմա, անհապաղ և հանուն Եվրոպայի ստորագրված միջազգային կոնվենցիայով ամրագրեն այդ երաշխիքները պահպանելու իրենց պարտավորությունը:

Նույն կոնվենցիայով այնուհետև Եվրոպայի խորհրդի շրջանակներում կստեղծվի երաշխավորող մարմին, այսինքն՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան և Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողով:

Այդ հանձնաժողովը կարող է դառնալ այսպես կոչված «պատնեշ» և խոչընդոտել անհեթեթ և անլուրջ դիմումների ներհոսքը. գործնական մի անհրաժեշտություն, որին ծանոթ են բոլոր իրավաբանները:

Խնդրագրերը կուղարկվեն հանձնաժողով, որը դրանք «կզտի»՝ թողնելով միայն լուրջ ուշադրության արժանի դիմումները: Այդ լուրջ խնդրագրերն էլ կքննի դատարանը: Վերջինս կարող է կազմված լինել ինն ականավոր իրավաբաններից, որոնք կնշանակվեն Նախարարների կոմիտեի և Խորհրդակցական վեհաժողովի կողմից: Դատարանն իր որոշումները կկայացնի այդ խնդրագրերի վերաբերյալ: Դատարանը կարող է անվավեր համարել կառավարությունների այն որոշումները, օրենսդրական, վարչական կամ իրավական այն միջոցները, որոնք ակնհայտորեն հակասում են երաշխավորված իրավունքների սկզբունքին:

Դատարան կարող են դիմել Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, կորպորատիվ ցանկացած մարմին և ցանկացած անձ:

Դատարանը կարող է եզրակացնել, որ իրավունքներն ու ազատությունները խախտվել են, և այդ դեպքում անվավեր դարձնել կայացված վճիռը՝ անհրաժեշտության դեպքում հանձնարարելով վերականգնողական միջոցառումներ, կամ դատարանը կարող է որոշել, որ երաշխավորված իրավունքների ու ազատությունների խախտում տեղի չի ունեցել, որի դեպքում խնդրագիրը կմերժվի:

…

Պրն նախագահ, երբ ես գեստապոյի բանտերում էի, երբ եղբայրներիցս մեկը Դախաուի համակենտրոնացման ճամբարում էր, իսկ զարմիկներիցս մեկը մահանում էր Մաութհաուզենում, հայրս, ով նույնպես Ֆրանսիայի խորհրդարանի անդամ էր, գտնվում էր Բուխենվալդում: Նա պատմել է ինձ, որ համակենտրոնացման ճամբարի հսկայական դարպասի վերևում մի վրդովեցուցիչ գրություն էր փակցված. «Արդար թե անարդար՝ սա է մեր հայրենիքը»:

Ես կարծում եմ, որ մեր առաջին նիստի ավարտին միաձայն կարող ենք հայտարարել, որ Եվրոպայում այսուհետ լինելու են միայն արդար հայրենիքներ»:

…

ՍԸՐ ԴԵՎԻԴ ՄԱՔՍՎԵԼ-ՖԱՅՖ (Միացյալ Թագավորություն)

Այս ոլորտում իմ ընկերոջ և գործընկերոջ՝ պրն Թայթգենի կողմից այդքան լավ և այդքան հուզիչ ներկայացված առաջարկի կարևորությունը գնահատելու համար անհրաժեշտ է կոնվենցիայի և Մարդու իրավունքների դատարանի մասին առաջարկությունն ուսումնասիրել՝ ելնելով թե՛ Եվրոպայի խորհրդի նպատակներից և թե՛ Եվրոպայի ներկայիս դիրքորոշումից: Սա Հաագայում կայացած մեր համաժողովից ի վեր այս ոլորտում Եվրոպական շարժման աշխատանքի հիմքն է եղել:

Ինչ վերաբերում է Եվրոպայի խորհրդին, ապա պետք է հիշենք երեք կետ: Առաջինը, ինչպես նշված է կանոնադրության տեքստում, Եվրոպայի խորհրդի նպատակներին հասնելու մեթոդն է և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պահպանումն ու հետագա իրականացումը: «Հետագա» բառն ինքնին նշանակում է, որ մենք իրավունք չունենք հանգստանալու, որ պետք է շարունակենք աշխատել այս առաջադրանքի ուղղությամբ: Երկրորդ՝ կարևոր է հստակեցնել նվազագույն չափորոշչի գաղափարը՝ կապված մեր խորհրդին անդամակցելու հետ: Սա մեր հետագա գործողությունների բարոյական հիմքերի ընդունման նախապայմանն է:

Երրորդ, սըր, մարդու իրավունքների համաձայնեցման և կիրառման մեխանիզմի ստեղծումն ու գործարկումն արդյունավետ միջոց կդառնան գործնական համագործակցության միջոցով Եվրոպայի ինտեգրման գաղափարը քարոզելու համար, եթե հատկապես ընդունենք միջազգային հավաստիացման որևէ միջոց առ այն, որ այդ իրավունքները կշարունակվեն:

Համաշխարհային հանրության տեսանկյունից չենք կարող բավարարվել լոկ բարոյական սկզբունքների և առաքինի նպատակների հռչակմամբ, որքան էլ սքանչելի լինեն դրանք: Անհրաժեշտ է ունենալ պարտավորեցնող համաձայնագիր, և մենք ներկայացրել ենք այդ բանն անելու գործնական, իրագործելի մեթոդը:

Մենք պետք է ընդունենք այն փաստը, որ աշխարհի բազմաթիվ վայրերում, պայմանավորված քաղաքական համակարգի տոտալիտար բնույթով կամ քաղաքակրթության հետամնացությամբ, մարդիկ իրենց նպատակներով և խառնվածքով պատրաստ չեն այն չափորոշիչներին և իդեալներին, որոնք իրենց նպատակն են դարձրել ժողովրդավարական զարգացած հասարակարգերը: Մյուս կողմից, ինչպես պրն Լանգունգը նշեց այս առավոտ, այն երկրները, որոնք մարդու իրավունքների հիմնախնդրի առնչությամբ միանման վերաբերմունք և այդ իրավունքների իրականացման երկարամյա փորձ ունեն, ամենանպաստավոր պայմաններում են, որպեսզի օրինակ ծառայեն իրենց շրջանակի այն ազգերի համար, որոնք դեռևս անդամ չեն: Այդ օրինակը չի սահմանափակվում սոսկ անձնական իրավունքների ապահովմամբ, այլ ներառում է արևմտյան ժողովրդավարության հիմնարար սկզբունքները, մասնավորապես՝ կառավարություն ընտրելու և փոխելու ազատությունը, քաղաքական ընդդիմություն կազմավորելու ազատությունը, ընդդիմության կողմից թեկնածուների առաջադրման ազատությունը:

Մեր Եվրոպական կոնվենցիան գործնական առաջարկություն է. դրա առջև չեն ծառանա այն դժվարությունները, որոնք կապված են համաշխարհային մասշտաբի կոնվենցիայի հետ: Եթե այդ առաջարկությունն իրագործվի հնարավորինս սեղմ և ողջամիտ ժամկետներում, ապա դա կօգնի նրանց, ովքեր փորձում են մշակել համաշխարհային կոնվենցիան՝ ցույց տալով, թե գործնականում ինչպես դա կգործի այն պետությունների շրջանակներում, որոնք իրենց իրավական և քաղաքական ավանդույթներով ընտելացած են մարդու հիմնարար իրավունքների ապահովման գործունեությանը:

Հաշվի առնելով այդ նախապատմությունը՝ թույլ տվեք անդրադառնալ մեր առաջարկությունների ամենակարևոր հայեցակետերին և այստեղ հնչած քննադատությանը:

Մեր նախագծի 1-ին հոդվածում ներկայացված է անհատի հիմնական իրավունքների համառոտ ցանկը: Քանի որ գործ ունենք ներպետական իրավունքների հետ, այդ իրավունքներն ընկալվում են որպես բացասական իրավունքներ կամ ազատություններ, որոնք իրավունքի յուրաքանչյուր համակարգում կհամարվեն ավելի հիմնարար, քան նույնիսկ դրական իրավունքները: Ճշմարիտ է, մեր ցանկը չի պարունակում ՄԱԿ-ի հռչակագրում ներառված այսպես կոչված «տնտեսական» կամ «սոցիալական» իրավունքներից և ոչ մեկը: Նման իրավունքները, իմ կարծիքով, չափազանց հակասական և դժվար կիրառելի կլինեին նույնիսկ Եվրոպայի սոցիալական և միջազգային զարգացումների փոփոխական իրավիճակում, իսկ դրանց ներառումը կոնվենցիայում վտանգի տակ կդներ հենց կոնվենցիայի ընդունումը: Օրինակները,

որոնց հարկ եմ համարում անդրադառնալ, հետևյալն են. աշխատանքի ազատ ընտրության իրավունք և մեկ այլ իրավունք, որը Ձեզ, պրն նախագահ, իմ համոզմամբ անծանոթ է. հանգստի կամ ժամանցի իրավունքը:

…

Մեր 2-րդ հոդվածում ներկայացված են ժողովրդավարության հիմնարար սկզբունքները, որոնք համաձայնագիր ստորագրող բոլոր պետությունները պարտավոր են հարգել: Ինչպես վերը նշեցի, դրանց թվում է քաղաքական ընդդիմություն կազմավորելու իրավունքը, որի մեջ մտնում է ընտրություններին ընդդիմության թեկնածուներ առաջադրելու իրավունքը:

Ես նշեցի, որ ցանկը կրճատված է, և ցանկանում եմ մի քանի բան ասել ի պատասխան պրն Անգռեդ-Թոմասի հնչեցրած քննադատության առ այն, որ իրավունքները իրավական պարտադիր կիրառման համար բավականաչափ ճշգրիտ սահմանված չեն: Կարծում եմ՝ սա խիստ վիճելի պնդում է: Այն հնացած տեսակետը, որ դատավորները ոչ մի ուշադրության չեն արժանացնում կյանքի փաստերը, բարեբախտաբար հետզհետե արժեզրկվում է: Վկայակոչելով միջազգային տրիբունալներում դատական հարցերով հանդես գալու իմ որոշակի փորձը, ինչպես նաև այն փորձը, որ բոլորս՝ որպես օրենսդիրներ, ունեցել ենք նման հարցերը մեր ազգային դատարաններում հստակեցնելիս, համարձակվում եմ կասկածել, որ պարտադիր կիրառման առաջադրանքը մեր նախագծի առումով անիրագործելի կլինի:

Ի լրումն՝ ինձ իրավունք եմ վերապահում վկայակոչելու Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրության «Իրավունքների մասին» օրինաշարը [Bill of Rights], որը շատ հաջող օրինակ է: Ամերիկայի Միացյալ Նահանգների գերագույն դատարանը դժվար չհամարեց ընդհանուր հիմունքներով «Իրավունքների մասին» օրինագծի ընդունումն ու կիրառումը:

…

Այժմ անդրադառնամ այն ցավոտ հարցին, որ վերջին օրերին այնքան հաճախ է գրավել մեր ուշադրությունը. հրաժարում անկախության իրավունքից: Այս առաջարկը, անշուշտ, նոր մեկնակետ է: Դա հասարակ մարդկանց ցանկության միջազգային հավաստիացումն է:

Ինչպես բոլոր միջազգային համաձայնագրերը, մեր առաջարկած կոնվենցիան նույնպես նախատեսում է կամավոր հրաժարում անկախության որոշ իրավունքներից, մասնավորապես՝ ազատության ու ժողովրդավարական հաստատությունների ճնշման իրավունքից: Դժվար է պատկերացնել, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններից որևէ մեկը կարող է պնդել, թե ուզում է պահպանել այդ իշխանությունը, կամ որևէ ժողովուրդ կարող է տխրել, եթե այդ իրավունքը վերանա:

Բայց սա միակ պատասխանը չէ: Այս ատյանում ներկայացված ժողովուրդների կառավարությունները հրապարակավ հայտարարել են վերազգային մարմին հիմնելու իրենց մեծ ցանկության մասին: ՄԱԿ-ի բոլոր անդամները բարոյապես կապված են Մարդու իրավունքների հռչակագրով և սկզբունքորեն պարտավոր են փորձել մարդու հիմնարար ազատությունները պաշտպանող պարտադիր միջազգային դաշնագիր կամ համաձայնագիր ստեղծել: Ես արդեն նշեցի մեր կանոնադրությունը: Ուստի պարզ ու հասկանալի է, որ կոնվենցիայի նախագիծն այս վեհաժողովին չի առաջարկում ոչինչ, որի շուրջ շահագրգիռ պետությունները մտադիր չլինեին աշխատելու ինչպես ՄԱԿ-ի, այնպես էլ Եվրոպայի խորհրդի շրջանակներում: Տարբերությունն այն է, և դա մեծ տարբերություն է, որ մենք խնդրում ենք՝ մեր երկրները գործի անցնեն անհապաղ, իսկ դա այնքան պարզ ու գործնական է, որ անմիջապես իր ազդեցությունը կունենա:

Իսկ այժմ մի պահ դիտարկենք այդ նույն քննադատությունը հակառակ կողմից, այսինքն՝ դատարանն անզոր կլինի, որովհետև չկա միջազգային ոստիկանություն: Նշեմ, որ 14-րդ հոդվածում ամրագրված է, որ գործը կարող է ներկայացվել Եվրոպայի խորհրդի քննությանը, իսկ Եվրոպայի խորհուրդը կարող է այնպիսի գործողություններ ձեռնարկել, որպիսիք հարկ կհամարի: Սակայն մինչև նման գործողությունները դիտարկելը կխնդրեի, որ իմ գործընկերները գնահատեն դատարանի որոշման ազդեցությունը՝ հաշվի առնելով դրա հետևում կանգնած դատարանի բարոյական հեղինակությունը: Ոչ մի կառավարություն չի ցանկանա համարվել և հանդես գալ որպես իր ժողովրդի ազատությունները ոտնահարող:

….

Խորհրդակցական վեհաժողովը հիմնեց Իրավական և վարչական հարցերի կոմիտե, որը նախագահում էր սըր Դեվիդ Մաքսվել-Ֆայֆը: Այդ կոմիտեն կազմեց մի զեկույց՝ պրն Թայթգենի շարադրմամբ, որը կոչ էր անում մշակել մարդու տասը հիմնարար իրավունքները պաշտպանող կոնվենցիա: Խորհրդակցական վեհաժողովն առաջարկում էր, որ այդ գործընթացը ստանձնի Նախարարների կոմիտեն: 1949 թ. նոյեմբերին Նախարարների կոմիտեն նշանակեց կառավարական փորձագետների հանձնախումբ, որը պետք է զբաղվեր մարդու իրավունքների մասին կոնվենցիայի մշակմամբ: Փորձագետներն օգտվեցին պրն Թայթգենի զեկույցից և համաձայնեցրին կոնվենցիայի նախագծի մի շարք բաղադրիչներ: Որոշ հարցերի շուրջ (օրինակ՝ կոնվենցիայում իրավունքները պետք է մանրամա՞սն շարադրվեն, թե՞ ներկայացվեն ընդհանուր գծերով) փորձագետները տարակարծիք էին, իսկ որոշ հարցերում (օրինակ՝ անհրաժե՞շտ է կազմավորել Եվրոպական դատարան) փորձագետները միասնական էին այն առումով, որ դրանք քաղաքական բնույթի հարցեր են և պետք է վերապահվեն Նախարարների կոմիտեին: Վերջինս 1950 թ. ապրիլին որոշեց գումարել

ավագ պաշտոնյաների խորհրդակցություն և լուծել դեռևս չլուծված հարցերը: 1950 թ. հունիսին ավագ պաշտոնյաները համաձայնության եկան կոնվենցիայի տեքստի մեծ մասի շուրջ: Որոշ իրավունքների մասին խոսվում էր առավել հանգամանալից, իսկ մյուսները ներկայացվում էին ընդհանուր գծերով: Առաջարկվող Եվրոպական դատարանին տրվեց կամավոր իրավասություն: Այն հարցը, թե արդյոք անհատ դիմողները գանգատ ներկայացնելու իրավունք պե՞տք է ունենան, կրկին թողնվեց Նախարարների կոմիտեի որոշմանը: 1950 թ. օգոստոսին Նախարարների կոմիտեն համաձայնության եկավ կոնվենցիայի նախագծի շուրջ, որը նախատեսում էր անհատական դիմում ներկայացնելու պայմանական իրավունք և կամընտիր իրավասություն Եվրոպական դատարանի համար: Այս նախագիծն ավելի թույլ էր, քան Խորհրդակցական վեհաժողովի առաջարկը: Չնայած Նախարարների կոմիտեի ներկայացրած նախագծի հասցեին վեհաժողովի իրավական հանձնաժողովի մի շարք քննադատական դիտողություններին՝ Նախարարների կոմիտեն մերժեց այդ դիտողությունների մեծ մասը և հաստատեց կոնվենցիայի վերջնական տեքստը՝ հիմնվելով օգոստոսյան տարբերակի վրա: Նախարարների կոմիտեի՝ 1950 թ. նոյեմբերի 4-ին Հռոմում կայացած նիստին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (որը հետագայում լայնորեն սկսեցին անվանել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա) բացվեց ստորագրությունների համար:

Խորհրդակցական վեհաժողովի իրավական հանձնաժողովի առաջարկությունն այն մասին, որ կոնվենցիայում պետք է ներառվեն նաև երեք լրացուցիչ իրավունքներ (սեփականության իրավունքը, կրթության իրավունքը և քաղաքական ազատությունները), Նախարարների կոմիտեն հանձնեց կառավարական փորձագետներին: 1951 թ. ընթացքում Խորհրդակցական վեհաժողովի իրավական հանձնաժողովի հետ համատեղ մշակվեց կոնվենցիայի արձանագրությունը, որով երաշխավորվում է սեփականության պաշտպանությունը, կրթություն ստանալու իրավունքը և ազատ ընտրությունների իրավունքը: Արձանագրությունը բացվեց ստորագրությունների համար 1952 թ. մայիսին:

Վերը նշվածում (մեծապես հիմնվելով կոնվենցիայի նախապատրաստական փաստաթղթերի համար Ա. Հ. Ռոբերտսոնի գրած ներածականի վրա) կարելի է նկատել նորաստեղծ Եվրոպայի խորհրդի տարբեր մարմինների փոխգործակցությունը կոնվենցիայի ստեղծման ժամանակաշրջանում: Գործելով Նախարարների կոմիտեի միջոցով՝ անդամ պետությունների կառավարությունները հանդես էին գալիս որպես գլխավոր դերակատարներ, քանզի նրանց էր պատկանում վերջին խոսքը կոնվենցիայի տեքստի վերաբերյալ: Այդուհանդերձ, շնորհիվ իր առաջատար դեմքերի, այդ թվում՝ պարոնայք Թայթգենի և Մաքսվել-Ֆայֆի ջանադիր աշխատանքի, Խորհրդակցական վեհաժողովը կարողացավ նշանակալի ներդրում կատարել կոնվենցիայի առանցքային հարցերում: Խորհրդակցական վեհաժողովում տեղի ունեցած բանավեճերի առանձին հատվածներից կարողանում ենք որոշակի պատկերացում կազմել այն կարևոր ուժերի մասին, որոնք ձևավորում էին հօգուտ կոնվենցիայի փաստարկները: Դրանցից են պատգամավորների անձնական շփումը նացիստների ու նրանց դաշնակիցների կողմից ոչ հեռավոր անցյալում իրագործված ոճրագործությունների հետ, կոմունիստական ռեժիմի կողմից անհատի ազատություններին սպառնացող վտանգը Եվրոպայի կենտրոնական և արևելյան հատվածներում, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության առաջին քայլերը մարդու իրավունքների համաշխարհային համակարգի զարգացման ուղղությամբ:

Կոնվենցիայի ստեղծման գործում Մեծ Բրիտանիայի ներդրումն ուսումնասիրող պրոֆեսոր Ա. Ու. Բրայան Սիմփսոնի ծավալուն աշխատությունում ասվում է հետևյալը. «[Ի]րական պատմությունն այն է, որ Եվրոպական կոնվենցիան և դրա առաջին արձանագրությունը հակասությունների, փոխզիջումների և պատահականությունների արդյունք են: Չկա հստակ պատասխան այն հարցին, թե ինչու 1950 թ. նոյեմբերին Եվրոպայի խորհրդի անդամները ստորագրեցին կոնվենցիան, իսկ 1952-ին՝ դրա առաջին արձանագրությունը» *(Human Rights and the End of Empire*, Oxford University Press, Oxford, 2001, p. vii): Կոնվենցիայի ստեղծման ժամանակամիջոցում անդամ պետությունների միջև եղած հակասությունների և փոխզիջումների առիթով դոկտոր էլիզաբեթ Ուիքսը նկատել է.

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի նախագծման ընթացքում մասնակից պետությունների շրջանում սկսեց ձևավորվել երկու իրարամերժ մտածելակերպ: Պետությունների մի մասը հավանություն էր տալիս Եվրոպայի խորհրդի Խորհրդակցական վեհաժողովի պատրաստած նախագծում արտացոլված մոտեցմանը, որի համաձայն՝ իրավունքները

ձևակերպվում էին ընդհանուր հիմունքներով: Պետությունների մյուս մասը, որոնց թվում ամենաակտիվը Միացյալ Թագավորությունն էր, պահանջում էր մի շարք իրավունքների առավել նեղ ձևակերպում: Անհամաձայնության պատճառը, թերևս, ընդհանուր իրավունքի և քաղաքացիական իրավունքի համակարգերի մոտեցումների թողած ժառանգությունն էր, թեև քաղաքացիական իրավունքի համակարգեր ունեցող մի քանի պետություններ (Նիդեռլանդները, Նորվեգիան, Դանիան և Հունաստանը) համամիտ էին Միացյալ Թագավորությանը: Մտածելակերպի այս երկու դպրոցների առկայությունը նշանակում էր, որ անհրաժեշտ է հասնել փոխզիջման, սակայն փոխզիջումային նախագիծը նպատակ չուներ վերացնելու այս երկու հակասական մտածելակերպերի միջև ընկած անջրպետը: Փոխարենը՝ Միացյալ Թագավորությունն առաջ քաշեց իր նախընտրած դրույթները և ընդամենը մի քանի զիջումներով հասավ դրանց մի մասի ընդգրկմանը նախագծում (թեև դրանք վերաբերում էին հույժ կարևոր հարցերի, այդ թվում՝ անհատական հայցերը և Մարդու իրավունքների մշտական եվրոպական դատարանը):

…

Ինչո՞ւ է Միացյալ Թագավորությունն այդքան հաջողակ բանակցությունների գործընթացում առավելություններ շահելու հարցում: Թեև Միացյալ Թագավորության ներկայացուցիչները բանակցությունների ոչ մի փուլում հստակ չեն սպառնացել դուրս գալ բանակցություններից կամ չստորագրել կոնվենցիայի վերջնական տարբերակը, բանակցող մյուս կողմերը, անկասկած, զգացել են Միացյալ Թագավորության ներկայացուցիչների ճնշումը: Օրինակ՝ Նախարարների կոմիտեին փորձագետների հանձնաժողովի ներկայացրած զեկույցում (որում Միացյալ Թագավորության կառավարության տեսակետներն առավել հանգամանորեն էին շարադրված, քան մյուս պետություններինը) մեջբերվում է Միացյալ Թագավորության կարծիքը, թե ճշգրիտ սահմանումները «յուրաքանչյուր կոնվենցիայի կարևորագույն նախապայմանն են» (Նախապատրաստական փաստաթղթեր, հտ. IV, էջ 10)…

Թեև Միացյալ Թագավորությունը հասավ իր նպատակին իրավունքների սահմանման հարցում, իրականացման միջոցների հարցում պակաս հաջողակ էր: Անհատական հայցերի համակարգում կամընտիր դրույթների և Մարդու իրավունքների մշտական եվրոպական դատարանի ընդունումը, որոնց Միացյալ Թագավորությունը դեմ էր բանակցությունների հենց սկզբնական փուլում, այն գիտեր էր, որ Մեծ Բրիտանիան ստիպված էր վճարել այլ հարցերում իր հաջողության դիմաց (E. Wicks “The United Kingdom Government’s Perceptions of the European Convention on Human Rights at the Time of Entry”, 2000, *Public Law* 438 at 439-40):

Ըստ դոկտոր Դեննի Նիկոլի.

Բանակցությունները պառակտվել էին մրցակից գաղափարախոսությունների երկու ճամբարի: Առաջին ճամբարը հավատացած էր, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ) պետք է, անշուշտ, ծառայի գոյություն ունեցող իրավունքների պաշտպանությանը, մյուս ճամբարը հետապնդում էր առավել հավակնոտ նպատակ՝ հարևան երկրների միջև հիմնել «Իրավունքների մասին» օրինաշար (Bill of Rights): Ոմանք այս ճեղքվածքը բացատրում են ընդհանուր իրավունքի և քաղաքացիական իրավունքի համակարգերի միջև եղած տարբերությամբ: Սա մասամբ ճիշտ տեսակետ է, սակայն անառարկելի բացատրությունը կապված է սահմանադրական մշակույթի հետ: Այն երկրները, որոնք անխախտ վստահություն ունեին վերօրենսդրական իրավունքներն ամրագրող գրավոր սահմանադրության նկատմամբ, դեմ էին այն պետություններին, որտեղ քաղաքական մշակույթը չէր նպաստում խորհրդարանական օրենսդրության վերանայմանը: Անշուշտ, կային ձախակողմյան-աջակողմյան բաժանումներ այնպիսի հարցերում, ինչպիսին է գույքի սեփականությունը, որը, ըստ կուսակցական պատկանելության, պառակտում առաջացրեց նույնիսկ միևնույն պետության ներկայացուցիչների միջև: Սակայն երբ հարցը հասավ ՄԻԵԿ-ի ընդհանուր նպատակին, վեհաժողովի անդամների մեջ պառակտման միտում նկատվեց ըստ ազգային պատկանելության: Այս հանգամանքը վեր է հանում սահմանադրական մշակույթի ուժը յուրաքանչյուր պետության ներսում (D. Nicol “Original Intent and the European Convention on Human Rights”, [2005], *Public Law* 152 at pp. 170-1):

Վարչապետ Հարոլդ Ուիլսոնի գլխավորությամբ Բրիտանիայի (լեյբորիստական) կառավարությունն ընդունեց անհատի՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովին գանգատ ներկայացնելու իրավունքը Միացյալ Թագավորության կողմից կոնվենցիայով սահմանված անձի իրավունքների խախտման դեպքերում (սակայն ոչ անկախ տարածքներում տեղի ունեցած դեպքերի առնչությամբ)՝ սկսած 1966 թ.: Միաժամանակ Բրիտանիայի կառավարությունն ընդունեց նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավասությունը: Թագուհու խորհրդական լորդ Լեսթերը, ի թիվս այլոց, նշել է, որ լորդ Մակնեյրը (Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առաջին նախագահը) և լորդ-կանցլերը (լորդ Գարդիներ) նշանակալի դեր են խաղացել կառավարության կողմից այդ քայլերն իրականացվելու գործում (տե՛ս Lord Lester, UK Acceptance of the Strasbourg Jurisdiction: What Really Went on in Witehal in 1965, 1998, *Public Law* 237):

ՄԻԵԿ-ի և դրա թիվ 1 արձանագրության ընդունումից հետո անդամ պետությունները մի շարք փոփոխություններ են կատարել կոնվենցիայի նախնական տարբերակով ամրագրված ինստի-

տուցիոնալ հարցերում (օրինակ՝ մշտական դատարանի ստեղծումը՝ համաձայն թիվ 11 արձանագրության, տե՛ս ստորև՝ էջ 14): Բացի այդ, նրանք ընդլայնել են այն ազատությունների/իրավունքների շրջանակը, որ անդամ պետությունները պարտավոր են հարգել՝ մշակելով լրացուցիչ արձանագրություններ, որոնք կարող են վավերացվել առանձին պետություններում (օրինակ՝ խաղաղ ժամանակներում մահապատժի արգելումը՝ համաձայն թիվ 6 արձանագրության): Այդ հետագա արձանագրությունների նախագծման մեթոդները հետևել են այն գործելակերպին, որը որդեգրվել էր կոնվենցիայի ստեղծման ընթացքում: Նախարարների կոմիտեն որոշումներ է կայացրել քաղաքականության ու սկզբունքների վերաբերյալ կարևորագույն հարցերի շուրջ (օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի ու ոչ մշտական դատարանի փոխարեն միայն մեկ մարմնի՝ մշտական դատարանի ստեղծման մասին որոշումը), իսկ այնուհետև կազմավորել կառավարական փորձագետների խումբ, որը մշակել է մանրամասն առաջարկություններ նոր արձանագրության տեքստի նախագծային տարբերակի համար: Խորհրդարանական վեհաժողովը (նախկինում՝ Խորհրդակցական վեհաժողով) նույնպես ներգրավված է եղել բարեփոխումների այս գործընթացում (օրինակ՝ Նախարարների կոմիտեի հետ պաշտոնական առաջարկությունների համաձայնեցումը): Կախված բարեփոխման առաջարկության բարդությունից և քաղաքական զգայունությունից՝ նոր արձանագրության անհրաժեշտության ճանաչումը և դրա տեքստի համաձայնեցումը կարող է տևել երկար տարիներ (թիվ 11 արձանագրության դեպքում պահանջվեց ավելի քան տասը տարի):

Այդ առնչությամբ ամերիկացի ակադեմիկոսներից մեկը եզրակացրել է.

> Կոնվենցիան ստեղծել են մարգարեները, և մինչ օրս նրանց մարգարեությունը կատարվում է: Ուրեմն ինչպիսին էլ լինեն հիմնախնդիրները (մարդասիրական բնութագրմամբ՝ դրանք հարաճուն ցավեր են), կոնվենցիայի և Ստրասբուրգի դատարանի գոյությունը մեծագույն նվաճում է համայն մարդկության համար (Paul L. McKaskle, The European Court of Human Rights: What It Is, How It Works, and Its Future (2005) 40(1) *University of San Francisco Law Review* 1 at pp. 72–3):

2 ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ներածություն


Կոնվենցիայով ներկայացվող գանգատների ընդունելիության որոշման նոր ինստիտուցիոնալ համակարգ ստեղծվեց թիվ 11 արձանագրությամբ, որն սկսեց գործել 1998 թ. նոյեմբերից: Այդուհանդերձ, թիվ 11 արձանագրության համակարգը հիմնված էր նախնական համակարգի ինստիտուցիոնալ, ընթացակարգային և իրավագիտական ժառանգության վրա, ուստի նախքան թիվ 11 արձանագրության դիտարկումն անհրաժեշտ է համառոտակի անդրադառնալ որոշում կայացնող սկզբնական մարմիններին և դրանց ընթացակարգերին: 2004 թ. մայիսին անդամ պետությունները համաձայնության եկան թիվ 11 արձանագրությունում որոշակի բարեփոխումներ կատարելու շուրջ, և թիվ 14 արձանագրությունը բացվեց ստորագրությունների համար: Այդ փոփոխություններին մենք կանդրադառնանք այս գլխի եզրափակիչ բաժնում:

Նախնական համակարգը

Ինչպես ցույց է տրված ստորև ներկայացված գծապատկերում, գանգատների ընդունելիության որոշման համար սկզբնական համակարգում հավասարապես պատասխանատու էին երեք հաստատություններ՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն:

Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը կազմավորվեց 1954 թ. և, համաձայն (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի նախնական թիվ 11 արձանագրության) 20-րդ հոդվածի, դրա անդամների թիվը հավասար էր կոնվենցիայի մասնակից երկրների թվին: Հանձնաժողովի անհատ անդամներին ընտրում էր Նախարարների կոմիտեն՝ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի ներկայացրած ցուցակից (որում սովորաբար ներառվում էր երեք հոգի՝ ըստ պաշտոնների հերթականության): Հանձնաժողովում յուրաքանչյուր պետությունից ներգրավվում էր միայն մեկ անձ: Անդամներն ընտրվում էին պաշտոնավարման վեցամյա ժամկետով և կարող էին վերընտրվել: Կոնվենցիայի նախկին թիվ 23 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովի անդամները ներկայանում էին որպես անկախ անձինք, ոչ թե որպես այն պետության ներկայացուցիչ, որի անունից իրենք ընտրվել էին:

Կոնվենցիայի համաձայն գանգատների որոշման ստրասբուրգյան նախնական համակարգը



1990 թ. թիվ 8 արձանագրությամբ կոնվենցիայում կատարվեցին փոփոխություններ, որոնք նպատակ ունեին ամրապնդելու հանձնաժողովի անդամների դիրքն ու անկախությունը՝ պահանջելով, որ այդ անձինք «ունենան բարոյական բարձր նկարագիր և վերին դատական ատյաններում պաշտոնի նշանակման համար անհրաժեշտ հատկանիշներ կամ լինեն իրավաբանության ազգային կամ միջազգային ոլորտներում ճանաչված և իրազեկ անձինք: … Իրենց պաշտոնավարման ընթացքում նրանք չպետք է զբաղեցնեն որևէ պաշտոն, որն անհամատեղելի է նրանց՝ որպես հանձնաժողովի անդամների անկախության և անաչառության կամ աշխատանքի բնույթից բխող պահանջների հետ»: Հանձնաժողովի անդամների նշանակման և ընտրության գործընթացներում այս պահանջներն ամբողջացնում էին վաղուց հաստատված այն միտումը, թե «գործնականում ընդհանուր առմամբ պետական պաշտոնյաների ընտրությունները ընդունելի չեն համարվում, և հանձնաժողովի անդամների մեծ մասը, թեև այն պետության քաղաքացի էր, որի անունից ընտրվել էր, իր երկրում զբաղեցնում էր անկախ պաշտոններ դատական կամ իրավաբանական կրթության ոլորտներում» (F.G. Jacobs, *The European Convention on Human Rights* (1975), p 217): Հանձնաժողովն աշխատում էր ոչ լրիվ աշխատաժամանակով, և նրա գործունեության վերջին փուլում ամեն տարի ութն անգամ գումարվում էին երկշաբաթյա նստաշրջաններ: Հանձնաժողովը լուծարվեց 1999 թ. հոկտեմբերին:

Սկզբնական՝ ոչ մշտական դատարանը կազմավորվեց 1959 թ.: Դրա անդամների թիվը համապատասխանում էր Եվրոպայի խորհրդի կողմ հանդիսացող պետությունների թվին: Այդ շրջանում, այսինքն՝ իր գործունեության սկզբնական տասնամյակների ընթացքում, դատարանն ուներ դատավորներ այն պետություններից, որոնք չէին վավերացրել կոնվենցիան, սակայն հանդես էին գալիս որպես Եվրոպայի խորհրդի անդամներ: Այդուհանդերձ, սկսած 1980 թ., պետություններին արգելվեց միանալ Եվրոպայի խորհրդին, քանի դեռ չէին համաձայնել վավերացնելու կոնվենցիան (ԵԽ-ին միանալու պահին կամ դրանից հետո կարճատև ժամանակամիջոցում): Դատավորներին յուրաքանչյուր անդամ պետությունից առաջադրված թեկնածուների ցուցակից ընտրում էր Խորհրդարանական վեհաժողովը: Թեկնածուները պետք է ունենային «բարոյական բարձր նկարագիր և վերին դատական ատյաններում պաշտոնի նշանակման համար անհրաժեշտ հատկանիշներ կամ լինեին ճանաչված ու բանիմաց իրավագետներ» (նախկին հոդված 39): Պաշտոնի նշանակվելուն պես նրանք պետք է գործեին անկախ և չզբաղեցնեին որևէ պաշտոն, որն անհամատեղելի է նրանց՝ որպես դատարանի անդամների անաչառության հետ (նախկին հոդված 40): Դատավորների պաշտոնավարման ժամկետն ինը տարի էր, նրանք կարող էին վերընտրվել: Դատավորների համար տարիքային որևիցե պաշտոնական սահմանափակում չկար, թեև Խորհրդարանական վեհաժողովը (առանց որևէ հաջողության) խնդրել էր իր անդամներին չքվեարկել այն թեկնածուների օգտին, ովքեր չէին խոստանում թոշակի անցնել 75 տարին լրանալուն պես: Դատարանն աշխատում էր որպես ոչ մշտական մարմին, նստաշրջանները գումարվում էին ամենամսյա պարբերականությամբ:

Նախարարների կոմիտեն Եվրոպայի խորհրդի գործադիր մարմինն է, որի սահմանադրական հիմքերն ամրագրված են Եվրոպայի խորհրդի կանոնադրությունում [Statute of the Council of Europe]: Կոմիտեի կազմում ի պաշտոնե ընդգրկված են անդամ պետությունների արտաքին գործոց նախարարները, սակայն կոմիտեի աշխատանքի մեծ մասն իրականացնում են նախարարների տեղակալները (պետությունների դիվանագիտական ծառայությունների դեսպանական անդամները): Կոնվենցիայի սկզբնական համակարգում կոմիտեն, ի թիվս այլ գործառույթների, պետք է որոշեր այն գանգատների ընդունելիությունը, որոնք ենթակա էին զեկուցման հանձնաժողովի կողմից և չէին ներկայացվել դատարան (նախկին հոդված 32): Այս կիսադատական աշխատանքը կատարելիս կոմիտեն նիստն անցկացնում էր դռնփակ և թույլ չէր տալիս, որ անհատ դիմողը (կամ նրա փաստաբանը) մասնակցեր վարույթին: Նիստին մասնակցելու իրավունք ունեցող անդամների երկու երրորդի մեծամասնությամբ կոմիտեն պետք է որոշեր՝ կոնվենցիայի դրույթների խախտում տեղի ունեցե՞լ է, թե՞ ոչ: Շատ դեպքերում կոմիտեն հետևում էր հանձնաժողովի կարծիքին: Այդուհանդերձ, երբեմն կոմիտեն ի վիճակի չի եղել որոշում կայացնելու: Հին համակարգում կոմիտեի գործունեության քննադատական վերլուծությունը տվել է կոմիտեի նախկին քարտուղարներից մեկը:

Նախարարների տեղակալները հիմնականում պրոֆեսիոնալ դիվանագետներ են, այսինքն՝ անդամ պետությունների մշտական ներկայացուցիչներ Եվրոպայի խորհրդում: Թե՛ մարդու իրավունքներին վերաբերող, թե՛ այլ գործերում նրանք

գործում են իրենց մայրաքաղաքներից ստացված հրահանգների համաձայն: Նրանք հատուկ պատրաստություն չեն անցնում և իրազեկ չեն մարդու իրավունքների հարցերում: Նրանց սովորեցրել են պաշտպանել պետության շահերը (կամ այն, ինչ նրանց իշխանությունը համարում է իր պետության շահ) և, անհրաժեշտության դեպքում, գտնել փոխզիջումային լուծումներ: Նրանց չեն սովորեցրել իրավական հստակ ձևակերպումներ տալ մարդու իրավունքներին վերաբերող հարցերին: Երբ նրանց սեփական պետությունն է հայտնվում փակուղում, նրանք բնազդային մղումով սկսում են պաշտպանել իրենց պետությունը: Սակայն, երբ խոսքը վերաբերում է այլ պետությունների, կարող են մտածել, որ մարդու իրավունքների բնագավառում դրանց գործունեության քննությունն անժամանակ է, անպատշաճ և նույնիսկ անպարկեշտ, եթե, իհարկե, նման քննությունը իրենց պետությունների շահերից չի բխում, իսկ դա հաճախ չի պատահում, որովհետև այս խմբում սկզբունքայնորեն «համակարծիք» պետություններ են ներգրավված

(Peter Leuprecht, The Protection of Human Rights By Political Bodies—The Example of the Committee of Ministers of the Council of Europe, at pp 98 and 106–107 in M Nowak & D Steurer (eds) *Progress in the Spirit of Human Rights* (1988)):

Թիվ 11 արձանագրությամբ (քննարկվում է ստորև) ներմուծված գանգատների ընդունելիության որոշման նոր համակարգի առավելություններից մեկն այն է, որ Նախարարների կոմիտեից վերցվեց վերը նշված դիմումների վերաբերյալ որոշումներ ընդունելու նախնական իրավասությունը: Պայմանավորված Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում նախկին Խորհրդային Միության տիրապետության փլուզմամբ և մի շարք նոր ժողովրդավարությունների ի հայտ գալով՝ Նախարարների կոմիտեն այժմ կազմված է 46 պետությունների ներկայացուցիչներից:

Թիվ 11 արձանագրության համակարգը

Նախապատմություն

1980-ական թթ. սկզբին Ստրասբուրգում սկսեց հասունանալ այն միտքը, որ թերևս ցանկալի կլիներ, որ հանձնաժողովը և դատարանը միավորվեն մեկ հաստատության մեջ, որպեսզի ավելի դյուրին ու արդյունավետ լինի ըստ կոնվենցիայի քննության ներկայացվող հարաճուն թվով գանգատների ընդունելիության որոշման գործընթացը: 1985 թ. Շվեդիայի կառավարությունը հավանություն տվեց այդ մտքին: Չորս տարի անց Նախարարների կոմիտեին հաշվետու փորձագետների հանձնախումբը մշակեց մի զեկույց, որում ամփոփված էին վերոհիշյալ մարմինները միաձուլելու գաղափարի թե՛ կողմ (օրինակ՝ դիմողների համար հսկողության համակարգի պարզեցում), թե՛ դեմ (օրինակ՝ հանձնաժողովի կողմից բարեկամական կարգավորման (հաշտության համաձայնության) խրախուսումը կասկածի տակ առնելը) փաստարկները: Փորձագետների հանձնախումբը հանգեց այն եզրակացության, «որ իր տեսանկյունից չի գտնվել վճռորոշ և ոչ մի փաստարկ, որ կողմ կամ դեմ խոսեր այդ երկու մարմինների միաձուլման գաղափարի մասին» (Փաստաթուղթ H(89)2, պարբ. 57): Հետևաբար, փորձագետների հանձնախումբն ուրվագծեց նոր՝ միացյալ դատարանի կառուցվածքը (Փաստաթուղթ DH-PR(90)6): Նման դատական մարմին ստեղծելու օգուտների վերաբերյալ բանավեճերը պետություններին կանգնեցրին փակուղու առջև, ուստի Հոլանդիայի և Շվեդիայի կառավարություններն առաջարկեցին ստեղծել դատական մարմնի վերահսկման երկաստիճան համակարգ:

Երկու առաջարկների հիմնական գաղափարն այն է, որ հանձնաժողովի եզրակացությունները … դառնան իրավաբանորեն պարտադիր որոշումներ: Այլ կերպ ասած՝ կձևավորվի երկաստիճան դատական համակարգ, այսինքն՝ հանձնաժողովը կգործի որպես առաջին ատյանի դատարան, որից հետո անհատ դիմողներն ու կառավարություններն իրավունք կստանան դատարանում ըստ էության բողոքարկելու հանձնաժողովի որոշումները, իսկ այդ իրավունքը ենթակա է դատարանի հաստատմանը [*Report to the Steering Committee for Human Rights*, 23/3/ 1992, para 8]:

Փորձագետների հանձնախումբը հակված չէր ցանկալի համարելու հոլանդա-շվեդական առաջարկը, սակայն հանձնաժողովի մեծամասնությունը հավանություն տվեց դրան: Դատարանի փոքրամասնությունը կողմ էր մեկ դատական մարմին ստեղծելու գաղափարին: Ինստիտուցիոնալ բարեփոխման

այդ ձևը պաշտպանում էր նաև Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը, որը հաստատեց 1194-րդ առաջարկը (1992 թ.):

Այսպիսով, Խորհրդարանական վեհաժողովն առաջարկում է, որ Նախարարների կոմիտեն … իր հստակ նախապատվությունը տա մշտական մարմնի՝ գոյություն ունեցող հանձնաժողովի և դատարանի փոխարեն մեկ դատարան ստեղծելու գաղափարին և հետ կանգնի ժամանակավոր լուծում գտնելու մտադրությունից, որը կհանգեցնի անհրաժեշտ բարեփոխումների գործընթացի ձգձգման (տե՛ս ստորև A. R. Mowbray, Reform of the Control System of the European Convention on Human Rights [1993] *Public Law* 419):

1993 թ. մայիսին Նախարարների կոմիտեն կայացրեց քաղաքական որոշում մեկ դատարան ստեղծելու գաղափարը հաստատելու մասին:

Այդուհանդերձ, պետությունների կողմից մեկ դատարան ստեղծելու գաղափարի ընդունման գինը եղավ այն պահանջը, որ նոր դատարանն ապահովի բացառիկ դատական գործերի վերաքննության մեխանիզմներ, համաձայն որոնց՝ այդ գործերի վարույթին պետք է մասնակցի տվյալ երկրի դատավորը: Այս անսովոր պահանջը, ըստ որի՝ մեկ դատարանը պետք է հնարավորություն ապահովի, որ երկրորդ վճիռը կայացվի ըստ էության, ժամանակակից քաղաքական փոխզիջում է՝ նման հանձնաժողովի, դատարանի և Նախարարների կոմիտեի տարատեսակ գործառույթների վերաբերյալ կոնվենցիայի սկզբնական պայմանավորվածությանը (A. R. Mowbray, A New European Court of Human Rights [1994] *Public Law* 540):

Որոշ պետություններ (և Բրիտանական կաբինետի որոշ անդամներ) դժկամություն էին ցուցաբերում այն հարցում, որ անհատ դիմողներին անմիջականորեն նոր դատարան դիմելու իրավունք տրվի, սակայն այդ դրույթն արդեն ներառված էր թիվ 11 արձանագրությունում (…*Դրանով հաստատված վերահսկման մեխանիզմների վերակառուցում*), երբ 1994 թ. մայիսին այն բացվեց ստորագրությունների համար:

Թիվ 11 արձանագրությամբ հիմնվում էր Մարդու իրավունքների եվրոպական մշտական նոր դատարան: Թեև նոր դատարանն ունի նույն անվանումը, ինչ հինը, լիովին այլ մարմին է՝ նոր գործառույթներով, նոր իրավասությամբ և նոր կազմով: Դատավորներին ընտրում է Խորհրդարանական վեհաժողովը՝ կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունների թվին համապատասխան: Դատավորներն ընտրվում են պաշտոնավարման վեցամյա ժամկետով և կարող են վերընտրվել (հոդված 22): Պաշտոնավարման ժամկետի նման կրճատումը՝ համեմատած պաշտոնավարման նախկին ժամկետի հետ (որին ապարդյուն դեմ էր արտահայտվել Խորհրդարանական վեհաժողովը) վկայում է, որ պետությունները դեռևս զգուշավորությամբ են վերաբերվում վերահսկման ստրասբուրգյան համակարգին: Ներկայումս դատավորները պարտավոր են անցնել թոշակի, երբ լրանում է նրանց 70 տարին (հոդված 23): Դատավորների նկատմամբ տարիքային սահմանափակման պարտադիր դրույթի կիրառմանը դատարանը դեմ էր, սակայն այն պաշտպանվում էր թիվ 11 արձանագրությամբ, այն հիմքով, որ նոր մշտական դատարանի դատավորների ծանրաբեռնվածությունը շատ ավելի մեծ էր լինելու, քան նախկին ոչ մշտական դատարանի դատավորներինը: Ինչ վերաբերում է դատավորներից պահանջվող որակավորմանը և իրենց պետություններից անկախ լինելու պարտավորությանը, ապա դրանք մնացին անփոփոխ (հոդված 21):

Հին դատարանը կազմալուծվեց 1998 թ. հոկտեմբերի վերջին: Թիվ 11 արձանագրությամբ նախատեսվում էր անցումային բարդ գործընթաց այն գործերի համար, որոնք դեռևս գտնվում էին հին դատարանի և հանձնաժողովի վարույթում: Թիվ 11 արձանագրությունը որևէ փոփոխություն չի կատարել միջպետական դիմումների (նոր հոդված 33) կամ անհատական դիմումների (նոր հոդված 34) սահմանման մեջ: Նմանապես անփոփոխ մնացին դիմումների երկու տեսակներին վերաբերող ընդունելիության չափանիշները (նոր հոդված 35): Նոր դատարանը ստանձնեց գործերի բարեկամական կարգավորումն ապահովելու պատասխանատվությունը (նոր հոդված 38): Եթե նոր դատարանը կոնվենցիայով ճանաչված իրավունքների խախտման փաստ հայտնաբերի, կարող է շնորհել «արդարացի բավարարում/հատուցում» (տե՛ս ստորև՝ գլուխ 19): Նախարարների կոմիտեն պահպանում է նոր դատարանի վճիռների իրականացման հսկողության պատասխանատվությունը (հոդված 46):

Դատարանի կազմը

Համաձայն կոնվենցիայի 22-րդ հոդվածի՝ դատավորների նշանակումը անդամ պետությունների և Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (որը բաղկացած է ազգային իրավական համակարգերից հրավիրված անդամներից) համատեղ պարտականությունն է: Անդամ պետություններից յուրաքանչյուրն առաջադրում է երեք թեկնածուներից կազմված ցուցակ (որոնք բավարարում են 21-րդ հոդվածով սահմանված չափանիշները, այսինքն՝ ունեն «բարոյական բարձր նկարագիր» [օրինակ՝ ներգրավված չեն եղել այնպիսի գործողություններում, որոնք հակասում են կոնվենցիայի արժեքներին] և ունեն այն որակավորումը, որ պահանջվում է դատական բարձր պաշտոն զբաղեցնելու համար, կամ բանիմաց ու ճանաչված «իրավագետներ են» (օրինակ՝ ակադեմիկոսներ)): Խորհրդարանական վեհաժողովն այնուհետև քվեների մեծամասնությամբ ընտրում է առաջադրված թեկնածուներից մեկին: Ուշագրավ է այն հանգամանքը, որ կոնվենցիայով սահմանված չէ, թե ինչպես պետք է անդամ պետություններն ընտրեն իրենց կողմից առաջադրվող թեկնածուներին: Նախկին հանձնաժողովի անդամ, պրոֆեսոր Շերմերզը խիստ քննադատության է ենթարկել նոր դատարանի համար մի շարք երկրներից ընտրված թեկնածությունները:

Մի շարք կառավարություններ առաջադրել են այնպիսի թեկնածուներ, որոնք ակնհայտորեն լիովին անկախ չեն իրենց կառավարություններից: Թեկնածուներից մի քանիսը զբաղեցրել են դեսպանի պաշտոն: … Որոշ կառավարությունների թեկնածություններն այնպիսի տպավորություն են ստեղծում, որ քաղաքական փաստարկները խիստ կարևոր դեր են խաղում առաջադրման գործընթացում: Սա վնասում է դատարանի հեղինակությունը (H. G. Schermers, Election of Judges to the European Court of Human Rights (1998) 23 EL *Rev* 568 at pp. 574–5):

Շերմերզը համարում էր, որ խնդիրներ են եղել նաև Խորհրդարանական վեհաժողովի կողմից առաջադրված թեկնածությունների ուսումնասիրման գործընթացում: Վեհաժողովը պահանջում էր, որ թեկնածուները ներկայացնեն ստանդարտ ինքնակենսագրություն և հարցազրույցի ներկայանան Խորհրդարանական վեհաժողովի ենթահանձնաժողովի արտահերթ նիստին:

Ոչ բոլոր թեկնածուներն էին ներկայացնում իրենց ինքնակենսագրությունը ստանդարտ ձևաչափով: Որոշ թեկնածուների նույնիսկ հաջողվում էր որոշ փաստեր թաքցնել, իսկ մյուսները՝ ընդգծել: Այդուհանդերձ, նրանց համառոտ մասնագիտական կենսագրություններն ընդունվում էին:

Շուրջ 120 թեկնածությունների քննությունը դժվար գործ էր: Դժվար էր գտնել համապատասխան որակավորում ունեցող մասնակիցներ հարցազրույցի անցկացման նպատակով արտահերթ գումարված ենթահանձնաժողովի համար: Երբ դատարանի կազմը վերջապես ընտրված էր, պարզվեց, որ որոշ անդամներ գրեթե անտեղյակ են կոնվենցիայից, էլ չենք ասում հանձնաժողովի ու դատարանի նախադեպային իրավունքի մասին: Հարցազրույցները կարճատև էին՝ յուրաքանչյուրը 10-15 րոպե:

…Արտահերթ գումարված ենթահանձնաժողովի վերջնական հաշվետվությունը բավարար չէր: Որոշ կառավարություններից ընդունվել էին քաղաքական բնույթի թեկնածություններ, նախկին դեսպաններ և մշտական ներկայացուցիչներ… (H. G. Schermers, նույնը, էջ 676–7):

Վեհաժողովի կողմից ընտրված թեկնածուների կազմն ընդգրկում էր նախկին դատարանի տասն անդամներին, հանձնաժողովի 1997-98 թթ. կազմից տասն անդամների և քսան անձի, որոնք նախկինում չէին ծառայել այդ հաստատություններում (ըստ Շերմերզի՝ դրանցից վեցը դիվանագետներ կամ պաշտոնյաներ էին, վեցը՝ ներպետական դատավորներ, չորսը՝ փաստաբաններ և չորսը՝ իրավաբանության պրոֆեսորներ): Նոր դատավորների ներհոսքը ստեղծեց համեմատաբար ավելի երիտասարդ դատարան. դատավորների միջին տարիքը կազմում էր մոտ 54 տարեկան (առավել մանրամասն տեղեկությունների համար տե՛ս A. R. Mowbray, The Composition and Operation of the New European Court of Human Rights [1999] *Public Law* 219):

Այնուհետև Խորհրդարանական վեհաժողովն անդամ պետություններին հորդորում էր առաջադրվող թեկնածուների ընտրության համար ընդունել առավել բաց ընթացակարգեր և խստացնել իրենց կողմից ընտրվող թեկնածությունների քննության գործընթացը: Օրինակ՝ 2004 թ. վեհաժողովն ընդունեց թիվ 1649 (2004) հանձնարարականը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի

թեկնածուների մասին (հանձնարարականները հասցեագրվում են Նախարարների կոմիտեին, իսկ դրանց իրականացման համար պատասխանատու են անդամ կառավարությունները): Հանձնարարականում մասնավորապես ասվում է.

2. Որպեսզի Մարդու իրավունքների եվրոպական դատարանը շարունակի վայելել հասարակության վստահությունը, խիստ կարևոր է, որ դատավորների ընտրության և նշանակման գործընթացը նույնպես վայելի հասարակության վստահությունը:

3. Խորհրդարանական վեհաժողովը պնդում է, որ դատավորների ընտրության գործընթացը համահունչ լինի ժողովրդավարական մեթոդներին, իրավունքի նորմերին, անխտրականության, հաշվետվողականության և թափանցիկության սկզբունքներին:
….

17. … Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թեկնածուների ընտրության ներպետական ընթացակարգերը միշտ չէ որ բավարար են, վեհաժողովը կոչ է անում անդամ պետություններին հրապարակել թեկնածուների ընտրության կարգը:
….

19. Ի լրումն թեկնածուներից ակնկալվող բարոյական մի շարք հատկանիշների և փորձի, որոնք ամրագրված են կոնվենցիայի 21(1) հոդվածով, վեհաժողովն առաջարկում է, որ Նախարարների կոմիտեն նախքան Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնի թեկնածուների ցուցակը ներկայացնելը անդամ պետությունների կառավարություններին ներկայացնի բավարարման ենթակա ևս վեց պահանջ և մասնավորապես պահանջի, որ.

i. թեկնածուների հրավիրումն իրականացվի հատուկ ընթացակարգով,
ii. թեկնածուներն ունենան համապատասխան փորձ մարդու իրավունքների բնագավառում,
iii. յուրաքանչյուր գործում թեկնածուների ցուցակում ընդգրկված լինեն երկու սեռերի ներկայացուցիչներ,
iv. թեկնածուները պաշտոնական լեզուներից առնվազն մեկի հիմնավոր գիտելիքներ ունենան,
v. թեկնածուների անունները դասավորվեն այբբենական կարգով,
vi. հնարավորության դեպքում չպետք է ընդգրկվեն այն թեկնածուները, որոնց ընտրությունը կարող է հանգեցնել *ad hoc* (հատուկ հրավիրված դատավոր) նշանակելու անհրաժեշտության:

Վեհաժողովն ընդունեց նաև թիվ 1366 (2004) բանաձևը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի թեկնածուների մասին (բանաձևերը վեհաժողովի որոշումներն են, որոնք նա իրավասու է իրականացնել): Բանաձևում մասնավորապես ասվում է.

3. Վեհաժողովը որոշում է քննության չառնել թեկնածուների ցուցակը, եթե.

i. մասնագիտական այն ոլորտը, որից ընտրվել են թեկնածուները, խիստ սահմանափակ է
ii. ցուցակում ընդգրկված չէ իգական և արական սեռի առնվազն մեկական ներկայացուցիչ
iii. թեկնածուների քննությունը պարզում է, որ (ա) նրանք բավարար գիտելիքներ չունեն և չեն տիրապետում Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից առնվազն մեկին կամ (բ) իրենց դիրքով ակներևաբար չեն համապատասխանում կոնվենցիայի հոդված 21(1)-ի պահանջներին:

4. Վեհաժողովը մնում է այն համոզման, որ հարցազրույցի գործընթացը լրացուցիչ հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու թեկնածուների հատկանիշները, ուստի որոշում է,

… որ հարցազրույցի արդարացի և արդյունավետ գործընթացի համար պահանջվում է հանձնաժողովներում ընդգրկված անդամների ու աշխատակազմի շարունակական վերապատրաստում և վերագնահատում…

Վեհաժողովն ապացուցեց իր հավատարմությունը վերոհիշյալ սկզբունքներին, երբ 2004 թ. ապրիլին որոշեց այդ պահին Մալթայի և Սլովակիայի դատավորների ընտրություն չանցկացնել (քանի որ առաջադրված թեկնածուների ցուցակում ընդգրկված չէին երկու սեռի ներկայացուցիչներ, իսկ ազգային մակարդակներում իրականացված ընթացակարգերը չէին համապատասխանում վեհաժողովի՝ հրապարակայնությանը/թափանցիկությանը վերաբերող հանձնարարականներին), ինչպես նաև չանցկացնել Պորտուգալիայի դատավորների ընտրություն (քանի որ ազգային ընթացակարգերը բավականաչափ թափանցիկ չէին, և միայն մեկ թեկնածու էր համապատասխանում կոնվենցիայով պահանջվող բոլոր պայմաններին):

Իր լիագումար նիստում (համաձայն 26-րդ հոդվածի) նոր դատարանը նախագահ ընտրեց Լուցիուս Վիլդհաբերին, ով նախկին դատարանում 1991 թ. ի վեր եղել էր Շվեդիայի կողմից դատավորը, իսկ դրանից առաջ՝ Բազելի համալսարանի դասախոս/պրոֆեսոր, այնուհետև՝ ռեկտոր: Դատարանը նրան երկու անգամ վերընտրել է: 2006 թ. նոյեմբերին դատարանի նախագահ ընտրվեց Ժան-Պոլ Կոստան՝ Ֆրանսիայի կողմից դատավոր և դատարանի փոխնախագահ 2001 թվականից, որ եկավ փոխարինելու թոշակի անցնող Լուցիուս Վիլդհաբերին:

Դատավորների կարգավիճակը

Նշանակված դատավորները դատարանի աշխատանքին մասնակցում են անձամբ (հոդված 21(2)), դա նշանակում է, որ գործեր քննելիս նրանք պետք է առաջնորդվեն իրենց անձնական, անկախ կարծիքով: Դատավորների անկախությունն ընդգծված է այն պահանջի մեջ (հոդված 21(3)), ըստ որի՝ պաշտոնավարության ժամկետի ընթացքում դատավորները չպետք է իրականացնեն որևէ գործունեություն, որն անհամատեղելի է նրանց անկախության հետ (օրինակ՝ պաշտոն զբաղեցնեն իրենց ազգային կառավարությունում): Բացի այդ, դատավորներին արգելվում է իրականացնել այնպիսի գործունեություն, որն անհամատեղելի է նրանց աշխատանքի մշտական բնույթից բխող պահանջների հետ (օրինակ՝ որևէ փոքրիշատե նշանակալի աշխատանք՝ վճարվող կամ անվճար): Պաշտոնավարության ժամկետի ընթացքում դատավորը պաշտոնից կարող է հեռացվել միայն այն դեպքում, եթե մյուս դատավորները քվեների երկու երրորդի մեծամասնությամբ որոշում են ընդունում, որ նա այլևս չի համապատասխանում ներկայացվող պահանջներին (հոդված 24), սակայն նման դեպք երբևէ չի արձանագրվել:

Նախագահ Վիլդհաբերը փորձել է դատավորների անկախությունը պաշտպանել վերընտրման անհարկի ճնշումներից: Կոնվենցիայի 50-ամյակին նվիրված Մարդու իրավունքների նախարարական խորհրդաժողովում (2000 թ. նոյեմբեր) ունեցած իր ելույթում նա զգուշացնում է.

> Մենք պարտավոր ենք զգոն լինել, և դա հատկապես կարևոր է դատավորների ընտրության գործընթացին վերաբերող հարցերում: Կոպիտ ասած՝ մշտական, այսինքն՝ գործող դատավորները չպետք է այնպիսի տպավորություն ունենան, թե իրենց՝ որպես թեկնածուի վերընտրությունը կախված է նախընթաց քվեարկությունից: Ես համոզված եմ, որ Նախարարների կոմիտեի կողմից անցկացվող ոչ պաշտոնական խորհրդատվական գործընթացը, ինչպես նաև Խորհրդարանական վեհաժողովի կողմից կիրառվող վերահսկման մեխանիզմները կապահովեն, որ թեկնածուների ընտրությունը, մանավանդ այն դեպքերում, երբ թեկնածուն գործող դատավոր է, որոշվի միմիայն փորձի հիման վրա՝ հատկապես դատական փորձի և կարողության:

Գործնականում ժամանակավոր դատավորների գերակշռող մեծամասնությունը, որ վերընտրման իրավունք է ունեցել (և ցանկացել է պաշտոնում մնալ ևս մեկ ժամկետ), վերընտրվել է (օրինակ՝ 2001 թ. ընթացքում տասնհինգ ժամանակավոր դատավոր վերընտրվել է):

Դատարանի կազմակերպումը

Դատարանն ունի հինգ բաժին: Դրանցից յուրաքանչյուրը հավասարակշված է դատավորների ներկայացվածության առումով՝ ըստ սեռի և ըստ Եվրոպայի աշխարհագրական այն մասերի, որտեղից նրանք առաջադրվել են: Բացի այդ, բաժիններից յուրաքանչյուրն անդամների այնպիսի կազմ ունի, որ հաշվի է առնում անդամ պետությունների զանազան իրավական համակարգերը: Յուրաքանչյուր բաժին ղեկավարվում է դատարանի նախագահի կամ բաժնի նախագահի կողմից (երկու տեսակի նախագահներն էլ ընտրվում են դատարանի լիագումար նիստում): Բաժիններից յուրաքանչյուրի կազմը հաստատվում է երեք տարի ժամկետով: Ռոտացիոն սկզբունքով (պատասխանող պետության

կողմից ընտրված բաժնի նախագահը և դատավորը մշտապես հանդես են գալիս որպես որևէ պալատի անդամ) յուրաքանչյուր բաժնի ներսում կազմավորվում են յոթ հոգուց բաղկացած պալատներ: Տվյալ բաժնի մյուս անդամները մասնակցում են որպես պալատի փոխարինող անդամ: Պալատը հիմնում է երեք դատավորից բաղկացած կոմիտեներ՝ 12 ամիս ժամկետով: 17 անդամից բաղկացած մեծ պալատի կազմում են նախագահը, փոխնախագահները, բաժինների նախագահները, ինչպես նաև 12 այլ դատավորներ (որոնք ընտրվում են ռոտացիոն սկզբունքով):

Դատարանի գրասենյակը

Պաշտոնյաների այս մարմինն ապահովում է դատարանի իրավաբանական և վարչական աջակցությունը: Գրասենյակի կազմավորման սահմանադրական հիմքը կոնվենցիայի 25-րդ հոդվածն է: Դատարանի գրասենյակի ղեկավարը քարտուղարն է, որին նշանակում է դատարանի լիագումար նիստը՝ 26(ե) հոդվածի համաձայն: Մշտական դատարանի առաջին քարտուղարը Միշել դե Սալվիան էր (Իտալիայի քաղաքացի), իսկ 2001 թ. նրան փոխարինեց Փոլ Մահոնին (Մեծ Բրիտանիայի քաղաքացի): Ներկայիս քարտուղարը՝ նշանակված 2005 թ. նոյեմբերին, էրիկ Ֆրայբերգն է (Շվեդիայի քաղաքացի): Դատարանի բաժիններից յուրաքանչյուրն ունի բաժնի քարտուղար: Դատարանի գրասենյակը կազմված է մոտավորապես 500 հոգուց (շուրջ 200 իրավաբան, որոնց անվանում են «դատական քարտուղարներ», և 300 հոգուց բաղկացած օժանդակ աշխատակազմ՝ ադմինիստրատորներ և թարգմանիչներ): Գրասենյակի աշխատակազմի գրեթե կեսը Եվրոպայի խորհրդի մշտական աշխատող է, իսկ մյուս կեսը՝ կազմակերպության ժամկետային աշխատող: Ամբողջ աշխատակազմը պարտավոր է աշխատանքը կատարել անկախության և անաչառության սկզբունքներով (օրինակ՝ նրանք չպետք է փորձեն առաջ քաշել իրենց պետության շահերը): Գրասենյակի անդամները դատական գործեր չեն որոշում: 2006 թ. աշնանը ստեղծվեց մասնագիտական քարտուղարություն, որի խնդիրն էր օժանդակել դատարանին և նվազեցնել չլուծված գործերի քանակը: Այդ ժամանակ աշխատանքի վերցվեցին 46 լրացուցիչ աշխատողներ:

Դատարանի ծախսերը

Համաձայն կոնվենցիայի 50-րդ հոդվածի՝ դատարանի գործունեության հետ կապված ծախսերը հոգում է Եվրոպայի խորհուրդը: Դատարանի բյուջեն Եվրոպայի խորհրդի ընդհանուր բյուջեի մի մասն է, որը համաձայնեցվում է Նախարարների կոմիտեի հետ (անդամ պետությունները Եվրոպայի խորհուրդը ֆինանսավորում են մի սխեմայով, որը հաշվի է առնում յուրաքանչյուր պետության բնակչության թիվը և համախառն ներքին արդյունքը): 2005 թ. դատարանի բյուջեն կազմել է 41.739.000 եվրո: Այդ գումարը ծածկում էր դատավորների ու աշխատակազմի աշխատավարձերը և ընդհանուր ծախսերը (այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ, թարգմանչական ծառայություններ և գործնական ուղևորություններ), սակայն չէր փակում շենքերի ու ենթակառուցվածքների ծախսերը (օրինակ՝ հեռահաղորդակցությունը): Համաձայն Res(2004)50 բանաձևի, Նախարարների կոմիտեն դատավորների աշխատավարձի տարեկան դրույքը սահմանել է 198.349 եվրո (նախագահը ստանում է նաև հավելավճար, որը կազմում է 12.092 եվրո, իսկ փոխնախագահը/բաժինների նախագահները ստանում են 6.046 եվրո հավելավճար): Այս աշխատավարձերն ու հավելավճարները հարկման ենթակա չեն (Եվրոպայի խորհուրդ, Ընդհանուր համաձայնագիր արտոնությունների և հարկերից ազատման մասին (1949)): Վերոհիշյալ աշխատավարձերը պայմանավորված են Եվրոպայի խորհրդի աշխատակազմի հատուկ դասակարգմամբ և ավելանում են՝ դասակարգման համար սահմանված վճարի բարձրացմանը զուգահեռ (երախտագիտությունս եմ հայտնում Սան Ֆրանցիսկոյի

համալսարանի պրոֆեսոր Փոլ Մակքասկլին դատավորների աշխատավարձի մասին տեղեկատվություն տրամադրելու համար): 2006 թ. դատական տարվա բացման կապակցությամբ իր ելույթում (Ստրասբուրգ, 20 հունվարի, 2006 թ.) նախագահ Վիլդհաբերը քննադատական խոսք է ասել.

... [Դատարանում] դատավորների թոշակների ու սոցիալական ապահովության սխեմայի լիարժեք բացակայության մասին: Ներկայիս իրավիճակը միանգամայն անհամատեղելի է իրավունքի նորմերին համապատասխանող անկախ դատական համակարգի գաղափարի հետ և հակասում է իր իսկ Եվրոպայի խորհրդի սոցիալական խարտիային: Վաղուց ժամանակն է, որ Եվրոպայի խորհուրդը զբաղվի այս սկզբունքային հարցով և ընդունի դրանից բխող պատասխանատվությունը:


Գանգատների ընդունելիության որոշումը

Կոնվենցիայի՝ դատարանի ընթացակարգերին վերաբերող դրույթները լրացվել են մանրակրկիտ «Դատարանի կանոններով», որոնք, 26(դ) հոդվածի համաձայն, թողարկել է լիագումար (բոլոր դատավորներից բաղկացած) դատարանը: «Դատարանի կանոնները» պարբերաբար վերանայվում են՝ դատարանի գործունեության մեթոդների փոփոխություններն արտացոլելու նպատակով: 2003 թ. դատարանը լրացրել է «Դատարանի կանոնները»՝ նախաձեռնելով «Գործնական հրահանգների» թողարկումը: Դատական գրասենյակը բացատրում է, որ այդ հրահանգներն ունեն երկու նպատակ. նախ՝ ուղեցույց ծառայել կողմերի համար՝ դատարանի հետ կապված նրանց բազմապիսի գործերի առնչությամբ, և երկրորդ՝ ներկայացնել առավել կանոնակարգված ընթացակարգ՝ այդպիսով հեշտացնելով դատական գործերի քննությունը դատարանում: Դրանք առնչվում են տարբեր հարցերի, որոնցից են՝ ինչպես պետք է ժամանակավոր միջոցների հետ կապված դիմումները ներկայացվեն դատարան (ոչ սովորական փոստով), գրավոր դիմումների կառուցվածքը (որոնք կազմված են դատարանի որոշումներն արտացոլող բաժիններից՝ «փաստեր», «ներպետական իրավունք և պրակտիկա» և այլն): Գործնական հրահանգները փաստորեն օգտակար կլինեն դիմողների այն փաստաբանների համար, ովքեր ստրասբուրգյան դատավարությունների փորձ չունեն:

(i) Ընդունելիություն

Դատարան կարող են դիմել կոնվենցիայի անդամ պետությունները (33-րդ հոդվածով, «Միջպետական գործեր»), ինչպես նաև անհատ անձինք (34-րդ հոդվածով, «Անհատական գանգատներ»): Միջպետական գործեր շատ հազվադեպ են լինում (դրանցից միայն երկուսն են ավարտվել դատարանի վճռով. *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»* A.25 (1978) (*Ireland v United Kingdom* A.25 (1978)), տե՛ս ստորև՝ էջ 151 և *«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի»* (*Cyprus v Turkey* ECHR 2001-IV), տե՛ս ստորև՝ էջ 68): Դրա պատճառն այն է, որ անդամ պետությունների միջև գոյություն ունեցող տնտեսական և քաղաքական կապերը հաշվի առնելով՝ կոնվենցիայով կապված բարեկամական պետության դեմ «ոչ բարեկամական» դիմումները չեն խրախուսվում, բացառությամբ ծայրահեղ իրավիճակների (օրինակ՝ Իռլանդիայի պարագայում, երբ դիմող կողմը պնդում էր Հյուսիսային Իռլանդիայում իշխանությունների կողմից կոնվենցիայով ճանաչված իրավունքների խախտման բազմաթիվ դեպքերի մասին, ինչպես նաև Կիպրոսի պարագայում, երբ դիմող անդամ պետությունը պնդում էր, որ Կիպրոսի հյուսիսային մասի ռազմական օկուպացիայի հետևանքով գրանցվել են կոնվենցիայի բազմաթիվ հոդվածների խախտումներ): Միջպետական դիմումների ընդունելիությունը որոշում է պալատը:

Դիմումների ընդունելիության որոշման ստրասբուրգյան համակարգ (թիվ 11 արձանագրություն)



Անհատական գանգատներով մեծ մասամբ հանդես են գալիս այն անձինք, ովքեր հայտարարում են, որ կոնվենցիայով սահմանված իրենց իրավունքները/ազատությունները ոտնահարվել են: Իրավաբանական անձինք նույնպես կարող են գանգատներ ներկայացնել (օրինակ՝ «Քրոն Ֆերլագ» *ԲԲԸ & Co KG ընկերությունն ընդդեմ Ավստրիայի»* (թիվ 3) դատական գործը, որի կապակցությամբ վճիռը կայացվել է 2003 թ. դեկտեմբերի 11-ին, տե՛ս ստորև, էջ 712-713): Գանգատներ կարող են ներկայացնել նաև հասարակական (ոչ կառավարական) կազմակերպությունները կամ անձանց խմբերը: Հասարակական կազմակերպությունների կարգը դասվող օրինակներից է «Ավստրիայի զինվորների ժողովրդավարական միություն» ասոցիացիան [Vereinigung Demokratischer Soldaten Osterreichs], որը զինվորների համար հրատարակում էր «The Hedgehog» [Ոզնի] հանդեսը (տե՛ս ստորև, էջ 744-45): Անհատների խմբի կարգն են դասվել մի քանի լրագրողներ «*Սանդի թայմզ» թերթն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Sunday Times v United Kingdom* A.30 (1979)) դատական գործում (տե՛ս ստորև՝ էջ 667): Լիագումար դատարանը 34-րդ հոդվածով սահմանված դիմողների հարցը որոշակիացրեց «*Դանդերիդի քաղաքային իշխանությունն ընդդեմ Շվեդիայի»* (*Danderyds Kommun v Sweden),* դիմում թիվ 52559/99)) դատական գործի առնչությամբ 2001 թ. հունիսի 7-ին կայացրած վճռում: Դիմողը տեղական ինքնակառավարմամբ քաղաք է Շվեդիայում, որը փորձում էր վիճարկել Ստոկհոլմի հարկային մարմնի կողմից պահանջվող տեղական ինքնակառավարման մարմնի հարկի գումարը: Շվեդական դատարանները հրաժարվել են գործը լսելուց: Այդ հիմքով դիմողը գանգատ է ներկայացրել դատարան՝ նշելով թիվ 1 արձանագրությամբ և 6-րդ հոդվածով սահմանված իր իրավունքների խախտումները:

…Դատարանը համարում է, որ նախ՝ անհրաժեշտ է ճշտել՝ կոնվենցիայի 34-րդ հոդվածի համաձայն դիմողն իրավունք ունի՞ գանգատ ներկայացնելու դատարան: Համաձայն 34-րդ հոդվածի՝ դատարանը կարող է գանգատներ ընդունել «ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից», ուստի հարց է ծագում՝ վերոհիշյալ դրույթով դիմողը պետք է համարվի հասարակական կազմակերպությո՞ւն, թե՞ անձանց խումբ:

Դիմողը նշում է, որ կոնվենցիայի նախաղեպային օրենքում նախկինում ընդգծվել է, որ տեղական ինքնակառավարման մարմինները պետության անունից իրականացնում են սահմանադրությամբ և օրենսդրական այլ ակտերով սահմանված իրենց պաշտոնեական պարտականությունները: Այդուհանդերձ, Շվեդիայի տեղական ինքնակառավարման մարմիններն անկախ իրավական մարմիններ են, որոնք գործում են սեփական իրավասությունների շրջանակում, ուստի չի կարելի համարել, որ նրանք իրենց իրավասություններն իրականացնում են կառավարության անունից: Ավելին, այս դեպքում տեղական ինքնակառավարման մարմինները գործում են կառավարության մարմինների հետ, որպես նրանց միակ գործընկեր: Հետևաբար տեղական ինքնակառավարման մարմնին պետք է հայց ներկայացնելու իրավունք տրվի՝ համաձայն կոնվենցիայի 34-րդ հոդվածի:

Դատարանը նշում է, որ դատարանի և հանձնաժողովի դատական պրակտիկայում նախկինում արդեն քննվել է այն հարցը, թե արդյոք տեղական ինքնակառավարման մարմինները կարո՞ղ են դիտվել որպես հասարակական կազմակերպություններ, թե՞ պետք է համարվեն անհատների խումբ՝ կոնվենցիայի 34-րդ հոդվածի (նախկին 25-րդ հոդվածի) իմաստով (տե՛ս, օրինակ, «*Ավստրիայի 16 համայնքները և դրանց որոշ խորհրդականներն ընդդեմ Ավստրիայի»* դատական գործը (*16 Austrian Communes and some of their Councillors v Austria*, դիմում թիվ 5765/77 և այլք, հանձնաժողովի որոշում 31 մայիսի 1974 թ., ժողովածու 46, էջ 118) *«Ռոտենթուրմ կոմունան ընդդեմ Շվեյցարիայի»* դատական գործը (*Commune Rothenthurm v Switzerland*, թիվ 13252/87, հանձնաժողովի որոշում 14 դեկտ. 1988 թ., Որոշումներ և զեկույցներ (DR) 59, էջ 251), *«Բարի, Սորենտինո և Մեսսենի Նեմանյա պրովինցիաներն ընդդեմ Իտալիայի»* դատական գործը (*The Province of Bari, Sorrentino and Messeni Nemagna v Italy* (dec.), թիվ 41877/98, 22 մայիսի 2001 թ.), *«Անտիլի մունիցիպալ շրջանն ընդդեմ Ֆրանսիայի»* դատական գործը (*The Municipal Section of Antilly v France* (dec.), թիվ 45129/98, ECHR 1999-VIII) և *«Այունտամիենտո դե Մուլան ընդդեմ Իսպանիայի»* դատական գործը (*Ayuntamiento de Mula v Spain* (dec.), թիվ 55346/00, ECHR 2001)):

Ելնելով դատական փորձից՝ կարելի է եզրակացնել, որ ի տարբերություն ոչ կառավարական կազմակերպությունների՝ աներկբայորեն կառավարական կազմակերպություններ են ոչ միայն պետության կենտրոնական իշխանության, այլև պետական գործառույթներ իրականացնող ապակենտրոնացված մարմինները՝ անկախ կենտրոնական իշխանությունների համեմատ դրանց անկախության աստիճանից: Սա ճշմարիտ է նույնիսկ այն դեպքերում, երբ տեղական ինքնակառավարման մարմինը պնդում է, որ տվյալ իրավիճակում հանդես է գալիս որպես մասնավոր մարմին:

Ավելին, Շվեդիայի տեղական ինքնակառավարման մարմինը ոչ կառավարական կազմակերպություն դիտելու մոտեցման դեմ է այն փաստը, որ դրա գործողությունները կարող են ներառել Շվեդիա պետության՝ կոնվենցիայով սահմանված պատասխանատվությունը: Դատարանի տեսանկյունից պետության տարբեր մարմինների առկա հիերարխիան այսպիսով անկարևոր է դատարանում քննվող գանգատի լսման պարագայում: Ավելին, պետության կենտրոնական

իշխանության մարմնի և տեղական ինքնակառավարման մարմնի միջև առաջացած հակասությունն ավելի շուտ իրավասության խնդիր է, որը դատարանի քննության առարկա չէ:

Բացի այդ, տեղական ինքնակառավարման մարմինը չի կարող դիտվել որպես անհատների խումբ: Նման մեկնաբանությունն անհամատեղելի է, մի կողմից, անհատների խմբերի և մյուս կողմից՝ ոչ կառավարական կազմակերպությունների միջև եղած տարբերության հետ:

Վերադառնալով սույն գործին՝ դատարանը կարծում է, որ դիմողը, անկասկած, պետական մարմին է, որն իրականացնում է պետական գործառույթներ: Հետևաբար, նա պետք է դիտվի կառավարական կազմակերպություն:

Այստեղից հետևում է, որ գանգատն անհամատեղելի է կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթների հետ: Ուստի դատարանը պետք է մերժի տվյալ գանգատը՝ որպես անընդունելի՝ *ratione personae (իրավախախտման անձի գործոն)* հիմունքով»:

Այսպիսով, պալատը միաձայն որոշում կայացրեց, որ գանգատն անընդունելի է: Այստեղից պարզ է դառնում, որ դատարանը թույլ չի տալիս Ստրասբուրգի դատարանում առարկությունների քննություն պետական իշխանության տարբեր մակարդակների միջև՝ ներպետական կառույցներում:

34-րդ հոդվածով դիմող բոլոր գանգատարկուները պետք է պնդեն, որ իրենք եղել են որևէ անդամ պետության (կամ պետությունների) կողմից կոնվենցիայով (և համապատասխան արձանագրություններով) պաշտպանվող իրենց իրավունքի կամ ազատության խախտման զոհ: Դատարանը «զոհի» գաղափարը հանգամանալից քննության է ենթարկել *«Կլասն ընդդեմ Գերմանիայի»* դատական գործում *(Klass v Germany*, A.28 (1978), տե՛ս նաև ստորև՝ էջ 587-88) [Ծանոթություն. կոնվենցիայի՝ թիվ 11 արձանագրությանը նախորդող տեքստում «զոհի» չափանիշներն ամրագրված էին 25-րդ հոդվածում]: Դիմողները իրավաբաններ էին, որոնք բողոքում էին Գերմանիայի իրավական ակտերից մեկի՝ G10 օրենքի կապակցությամբ, որով կառավարությանն իրավունք էր տրվում, պետական անվտանգության նկատառումներից ելնելով, թույլատրելու առանձին անձանց նամակագրության և հեռահաղորդակցության գաղտնի միջամտությունը: Դատարանի համաձայն.

...Հոդված 25-ը պահանջում է, որ անհատ դիմողը պնդի, որ իր վրա փաստացի ազդել է այն խախտումը, որի մասին ինքը հիշատակում է: … Հոդված 25-ն անհատների համար այսպես կոչված *actio popularis* չի սահմանում կոնվենցիան մեկնաբանելու համար, այն թույլ չի տալիս անհատին գանգատվել որևէ օրենքի մասին վերացականորեն, սոսկ այն պատճառով, որ իր կարծիքով այն հակասում է կոնվենցիային: Սկզբունքորեն բավարար չէ, որ անհատ դիմողը պնդի, թե այս կամ այն օրենքի գոյությունն արդեն իսկ խախտում է կոնվենցիայով ճանաչված իր իրավունքները. անհրաժեշտ է, որ տվյալ օրենքը կիրառված լինի ի վնաս այդ անհատի: Այդուհանդերձ, ինչպես նշեցին և՛ կառավարությունը, և՛ հանձնաժողովը, օրենքն ինքնին կարող է խախտել անհատի իրավունքները, եթե այդ օրենքն անմիջականորեն ազդում է անհատի վրա՝ իրականացման որևէ որոշակի միջոցի բացակայության պարագայում:

25-րդ հոդվածը, որով կարգավորվում են անհատների՝ հանձնաժողով դիմելու իրավունքի հարցերը, կոնվենցիայով ճանաչված իրավունքների և ազատությունների կիրառման մեխանիզմի հիմնաքարերից է: …Ներկայիս վարույթում ծագող հարցն այն է, թե արդյոք արժե՞ անհատին զրկել հանձնաժողով գանգատ ներկայացնելու հնարավորությունից այն պատճառով, որ բողոքարկվող միջոցների գաղտնիությունից ելնելով՝ նա չի կարող մատնացույց անել այն որոշակի միջոցը, որն իր վրա ազդել է: Դատարանի կարծիքով՝ նման հանգամանքներում կոնվենցիայի արդյունավետությունը (l'effet utile) նախատեսում է հանձնաժողով դիմելու որոշակի հնարավորություններ: Եթե դա այդպես չլիներ, ապա կոնվենցիայի կիրառման մեխանիզմի արդյունավետությունը նկատելիորեն կթուլանար: Հաշվի առնելով այն փաստը, որ կոնվենցիան և դրա հաստատությունները ստեղծվել են անհատի պաշտպանության նպատակով, կոնվենցիայի ընթացակարգային դրույթները պետք է կիրառվեն այնպես, որ անհատական գանգատների համակարգը գործուն դարձնեն: Ուստի դատարանն ընդունում է, որ որոշակի պայմանների դեպքում անհատը կարող է պնդել, որ ինքը զոհ է դարձել մի խախտման, որի համար առիթ է դարձել գաղտնի միջոցների գոյությունը կամ գաղտնի միջոցները թույլատրող օրենսդրությունը՝ առանց պնդելու, որ նման միջոցները կիրառվել են իր նկատմամբ: Այդ պայմանները յուրաքանչյուր դեպքի համար առանձին են որոշվում՝ հաշվի առնելով կոնվենցիայով ճանաչված այն իրավունքը կամ իրավունքները, որոնք, ըստ պնդման, ոտնահարվել են, բողոքարկվող միջոցների գաղտնի բնույթը, ինչպես նաև անհատի և այդ միջոցների միջև կապը:

Ինչ վերաբերում է որոշակի դեպքի փաստերին, ապա դատարանը նշում է, որ վիճարկելի օրենսդրությունը սահմանում է վերահսկման այնպիսի համակարգ, համաձայն որի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում բոլոր անձանց նամակագրությունը, փոստը և հեռահաղորդակցությունը գուցեև կարող է ստուգվել առանց այդ մարդկանց գիտության, եթե, իհարկե, այդ մասին հայտնի չդառնա որևէ անզգուշության բերումով կամ Դաշնային սահմանադրական դատարանի վճռով նախատեսված հանգամանքների հետագա ծանուցմամբ: …Այդ իմաստով վիճարկելի օրենսդրությունն անմիջականորեն ազդում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության փոստային և հեռահաղորդակցության ծառայություններից օգտվող բոլոր անձանց կամ պոտենցիալ օգտվողների վրա: Ավելին, ինչպես իրավացիորեն նշեցին [հանձնաժողովի] պատվիրակները, վերահսկման սպառնալիքը կարող է ինքնին խանգարել ազատ հաղորդակ-

ցությանը փոստային և հեռահաղորդակցության համակարգերի միջոցով՝ այդպիսով բոլոր օգտվողների կամ պոտենցիալ օգտվողների համար դառնալով 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի անմիջական խախտում…

Հաշվի առնելով տվյալ գործի յուրահատուկ հանգամանքները՝ դատարանը եզրակացնում է, որ դիմողներից յուրաքանչյուրն իրավունք ունի պնդելու, որ ինքը կոնվենցիայի «խախտման զոհ է», եթե անգամ ի նպաստ իր դիմումի ի վիճակի չէ հաստատելու, որ որևէ միջոցով վերահսկվել է (պարբ. 33, 34, 37 և 38):

Հետևաբար, անհատ դիմողներն ընդհանուր առմամբ պետք է ցույց տան, որ իրենք ենթարկվել են պետության գործունեության կամ անգործության որևէ ձևի ուղղակի ազդեցությանը, որպեսզի որակվեն որպես «զոհ»: Այն գործերի հետագա ուսումնասիրության համար, որոնց դեպքում օրենսդրության գոյությունն ուղղակիորեն ազդել է՝ հնարավորություն ընձեռելով, որ նրանք պնդեն, թե զոհ են դարձել, տե՛ս ստորև՝ էջ 509 [Նորիս]: Գաղտնի վերահսկումից գանգատվող անհատների այլ օրինակները քննարկվում են ստորև, էջ 584-ում [Հելֆորդ]:

«Մակքենն ընդդեմ Միացյալ Թագավորության» (*McCann v UK)* գործում (տե՛ս ստորև՝ էջ 81) մահացած ահաբեկչի ունեցվածքի ներկայացուցիչները (ընտանիքի անդամները) կարողացան իրենց գանգատները ներկայացնել Մեծ Բրիտանիայի դեմ: *«Կարներն ընդդեմ Ավստրիայի» (Karner v Austria)* գործում (տե՛ս ստորև՝ էջ 870) մշտական դատարանը հանգամանալից քննության է ենթարկել այն հանգամանքները, որոնց բերումով գանգատը կարող էր շարունակվել՝ չնայած դիմողի մահվանը: Դիմողն այդ գանգատը հանձնաժողովին է ներկայացրել 1997 թ. հուլիսին: Գանգատը փոխանցվել է դատարան 1998 թ.: Դիմողը մահացել է 2000 թ., իսկ 2001 թ. սեպտեմբերին դատարանը հայցը մասնակիորեն ընդունելի է համարել: Երկու ամիս անց դիմողի փաստաբանը դատարանին հայտնել էր իր հաճախորդի մահվան լուրը՝ նշելով, որ դիմողի մայրը հրաժարվել է ունեցվածքի նկատմամբ իր իրավունքներին հետամուտ լինելուց: Դիմողի մահվան բերումով, ինչպես նաև գործը շարունակել ցանկացող ժառանգների բացակայության պարագայում կառավարությունը խնդրել է դատարանին գանգատը հանել գործերի ցուցակից (համաձայն հոդված 37(1)-ի): Դիմողի փաստաբանը պահանջել է շարունակել գանգատի քննությունը՝ պնդելով, որ գործում ներգրավված է Ավստրիայի օրենքի կարևորագույն հարց: Պալատը որոշել է.

22. Դատարանը կարծում է, որ մի շարք գործերում, եթե դիմողը մահացել է վարույթի ընթացքում, դատարանը հաշվի է առել նրա ժառանգների կամ ընտանիքի հարազատ անդամների հայտարարությունները, որոնք ցանկություն են հայտնել հետամուտ լինել վարույթին դատարանում (այլ գործերի թվում տե՛ս *«Դևևերն ընդդեմ Բելգիայի» (Deweer v Belgium)* գործը, 1980 թ. փետրվարի 27-ի վճիռ, շարք A, թիվ 35, էջ 19-20, պարբ. 37-8, *«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*X v the United Kingdom*) գործը, 1981 թ. նոյեմբերի 5-ի վճիռ, շարք A, թիվ 46, էջ 15, պարբ. 32, *«Վոկատուրոն ընդդեմ Իտալիայի»* (*Vocaturo v Italy*) գործը, 1991 թ. մայիսի 24-ի վճիռ, շարք A, թիվ 206-C, էջ 29, պարբ. 2, *«Գ-ն ընդդեմ Իտալիայի»* (*G. v Italy*) գործը, 1992 թ. փետրվարի 27-ի վճիռ, շարք A, թիվ 228-F, էջ 65, պարբ. 2, *«Պանդոլֆելլին և Պալումբոն ընդդեմ Իտալիայի»* (*Pandolfelli and Palumbo v Italy*) գործը, 1992 թ. փետրվարի 27-ի վճիռ, շարք A, թիվ 231-B, էջ 16, պարբ. 2, *«X-ն ընդդեմ Ֆրանսիայի»* (*X v France*) գործը, 1992 թ. մարտի 31-ի վճիռ, շարք A, թիվ 234-C, էջ 89, պարբ. 26 և *«Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի»* (*Raimondo v Italy*) գործը, 1994 թ. փետրվարի 22-ի վճիռ, շարք A, թիվ 281-A, էջ 8, պարբ. 2):

23. Մյուս կողմից՝ դատարանի պրակտիկայում եղել են դեպքեր, երբ գանգատը հանվել է գործերի ցուցակից գանգատի շարունակմանը հետամուտ լինելու ցանկություն ունեցող ժառանգների կամ մերձավոր հարազատների բացակայության պատճառով (տե՛ս *«Շերերն ընդդեմ Շվեյցարիայի» (Scherer v Switzerland)* գործը, 1994 թ. մարտի 25-ի վճիռ, շարք A, թիվ 287, էջ 14-15, պարբ. 31, *«Օլինգերն ընդդեմ Ավստրիայի» (Ohlinger v Austria)* գործը, հանձնաժողովի 1997 թ. հունվարի 14-ի հաշվետվություն, պարբ. 15, չզեկուցված, *«Մալհուսն ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (Malhous v the Czech Republic)* գործը (որոշում), [GC], թիվ 33071/96, ECHR 2000-XII): Այսպիսով, դատարանը պետք է որոշի՝ տվյալ գործով գանգատն անհրաժե՞շտ է հանել գործերի ցուցակից, թե՞ ոչ: Այս հարցին պատշաճ պատասխան տալու համար հարկ է, որպես այդպիսին, հաշվի առնել կոնվենցիայի համակարգի խնդիրներն ու նպատակները:

24. Դատարանը ևս մեկ անգամ նշում է, որ թեև կոնվենցիայի 33-րդ հոդվածով (նախկին հոդված 24) սահմանվում է, որ ցանկացած բարձր պայմանավորվող կողմ կարող է դատարան (հանձնաժողով) դիմել կոնվենցիայի դրույթների «ցանկացած ենթադրվող խախտման» հարցով, որը թույլ է տվել մեկ այլ բարձր պայմանավորվող կողմ, այդուամենայնիվ կոնվենցիայի 34-րդ հոդվածի (նախկին հոդված 25) համաձայն՝ գանգատ ներկայացնելու համար անձը, հասարակական կազմակերպությունը կամ անձանց խումբը պետք է պնդեն, թե դարձել են «կոնվենցիայով կամ նրան կից արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների … խախտման զոհ»: Այսպիսով, ի հակասումն 33-րդ հոդվածում ձևակերպված դրույթի, որով ամրագրված այլ պայմանների համաձայն՝ կոնվենցիայի պահպանման հետ

կապված ընդհանուր հետաքրքրությունը թույլատրելի է համարում միջպետական գանգատների ընդունումը, 34-րդ հոդվածը պահանջում է, որ անհատ գանգատարկողը պնդի, որ իր վրա փաստացիորեն ազդել է իր հայտարարած խախտումը (տե՛ս *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ireland v the United Kingdom)* գործը, 1978 թ. հունվարի 18-ի վճիռ, շարք A, թիվ 25, էջ 90-91, պարբ. 239–240 և *«Կլաասը և այլք ընդդեմ Գերմանիայի» (Klass and Others v Germany)* գործը, 1978 թ. սեպտեմբերի 6-ի վճիռ, շարք A, թիվ 28, էջ 17-18, պարբ. 33): Հոդված 34-ով անհատների համար չի սահմանվում այսպես կոչված *actio popularis* կոնվենցիան մեկնաբանելու համար, այն թույլ չի տալիս անհատին վերացականորեն գանգատվել որևէ օրենքից, սոսկ այն պատճառով, որ իր կարծիքով այն հակասում է կոնվենցիային (տե՛ս *«Նորիսն ընդդեմ Իռլանդիայի» (Norris v Ireland)* գործը, 1988 թ. հոկտեմբերի 26-ի վճիռ, շարք A, թիվ 142, էջ 15-16, պարբ. 31 և *«Սանլես Սանլեսն ընդդեմ Իսպանիայի» (Sanles Sanles v Spain)* գործը (որոշում), թիվ 48335/99, ECHR 2000-XI):

25. Թեև կոնվենցիայի 34-րդ հոդվածով «խախտման զոհի» առկայությունը (այսինքն՝ այն անհատ դիմողի, որի վրա ազդել է կոնվենցիայով սահմանված իրավունքների խախտումը) պարտադիր է կոնվենցիայի պաշտպանական մեխանիզմները գործի դնելու համար, այդ չափանիշը չպետք է ուղղակիորեն, մեքենայորեն և անճկուն կիրառվի ամբողջ վարույթի ընթացքում: Որպես կանոն, և մասնավորապես այն գործերում, որոնցում տեղ են գտել նյութական կամ շահադիտական և այդ պատճառով փոխանցելի պահանջներ, այլ անձանց գոյությունը, որոնց փոխանցվում է այդ պահանջը, կարևորագույն չափանիշ է, որը, սակայն, չի կարող լինել միակը: Ինչպես դատարանը մատնանշել է *Մալհուսի* գործում (որոշումը նշված է վերը), դատարան ներկայացված գործերը՝ մարդու իրավունքներին վերաբերող, ունեն նաև բարոյական կողմ, որն անհրաժեշտ է հաշվի առնել, երբ որոշվում է՝ պե՞տք է շարունակել գանգատի քննությունը դիմողի մահվանից հետո, թե՞ ոչ: Սա հատկապես ճշմարիտ է, երբ դատական գործով բարձրացված հարցն ավելի վեր է, քան դիմողի անձը և շահերը:

26. Դատարանը բազմիցս կրկնել է, որ իր «որոշումներն իրականում ծառայում են ոչ միայն դատարան ներկայացված գանգատների մասին վճիռներ կայացնելու գործին, այլև առավել համընդհանուր նպատակի՝ լուսաբանելու, պահպանելու և զարգացնելու կոնվենցիայով սահմանված կանոնները՝ այդպիսով նպաստելով, որ պետությունները՝ որպես բարձր պայմանավորվող կողմեր, պահպանեն կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորությունները» (տե՛ս *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»* վերը նշված գործը, էջ 62, պարբ. 154 և *«Գուցարդին ընդդեմ Իտալիայի» (Guzzardi v Italy)* գործը, 1980 թ. նոյեմբերի 6-ի վճիռ, շարք A, թիվ 39, էջ 31, պարբ. 86): Թեև կոնվենցիայի համակարգի գլխավոր նպատակն է անհատական օգնություն ապահովել, դրա առաքելությունն է նաև որոշումներ կայացնել պետական քաղաքականության հիմունքներով՝ հանուն ընդհանուր շահի՝ այդպիսով բարձրացնելով մարդու իրավունքների պաշտպանության համընդհանուր չափորոշիչները և կոնվենցիայի անդամ պետությունների համայնքում տարածելով մարդու իրավունքների իրավագիտությունը:

27. Դատարանը համարում է, որ տվյալ հայցի առարկան՝ վարձակալության իրավահաջորդության հարցերում [succession to tenancies] Ավստրիայի օրենքով վերաբերմունքի տարբերությունը համասեռամոլների նկատմամբ, համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող կարևոր թեմա է ոչ միայն Ավստրիայի, այլև կոնվենցիայի անդամ մյուս պետությունների համար: Այդ կապակցությամբ դատարանն անդրադառնում է ILGA-Europe, Liberty և Stonewall հասարակական կազմակերպությունների բերած փաստարկներին, որոնց՝ որպես երրորդ կողմի միջամտությունը վարույթին թույլատրվել է այն հիմքով, որ դրանով ընդգծվում է հարցի համընդհանուր կարևորությունը: Այդպիսով, սույն հայցի քննության շարունակությունը կնպաստի կոնվենցիայով սահմանված պաշտպանությանը, չափորոշիչների լուսաբանմանը, պահպանմանը և զարգացմանը:

28. Վերոհիշյալ յուրահատուկ հանգամանքներում դատարանը համարում է, որ կոնվենցիայով և դրա արձանագրություններով ամրագրված հարգանքը մարդու իրավունքների նկատմամբ պահանջում է գործի քննության շարունակություն (կոնվենցիայի 37-րդ հոդված, 1-ին կետի վերջին մաս), հետևաբար մերժում է կառավարության՝ գանգատը գործերի ցուցակից հանելու խնդրանքը:

Ավստրիայի կողմից *ad hoc* դատավորն առարկում էր, քանզի չէր կարծում, թե գործը «համընդհանուր կարևորություն» ունի: Սակայն *Կարների* գործով կայացված վճիռը ողջունելի է այն առումով, որ դատարանը պետք է ի վիճակի լինի որոշելու կարևոր հարցեր բարձրացնող գործերի ընդունելիությունը, եթե նույնիսկ դիմողը ստրասբուրգյան վարույթի ընթացքում մահացել է և անձնական կամ ընտանեկան բնույթի որևէ լուրջ պատճառ չկա գանգատը գործերի ցուցակից հանելու համար:

Հոդված 35(1)-ով միջպետական գործերի և անհատական գանգատների համար սահմանվում է ընդունելիության երկու չափանիշ: Նախ՝ դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն դեպքում, եթե դիմողը (անձը կամ պետությունը) սպառել է իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները: Դատարանն այդ պահանջի կապակցությամբ իր մոտեցումը բացատրել է

«Իսաևան, Յուսուպովան և Բազաևան ընդդեմ Ռուսաստանի» (Isayeva, Yusupova, Bazayeva v Russia) գործում, 2005 թ. փետրվարի 24 (տե՛ս ստորև, էջ 101):

144. Դատարանը հիշեցնում է, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառմանը վերաբերող կանոնը, որ արծարծված է կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետում, պարտադրում է, որ դիմողը նախևառաջ գործածի բոլոր այն միջոցները, որոնք սովորաբար բավարար և հասանելի են իրավական պաշտպանության ներպետական համակարգերում, որպեսզի իր կողմից հայտարարված խախտումների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ձեռք բերի: Այդ միջոցների գոյությունը պետք է բավականաչափ որոշակի լինի՝ թե՛ տեսական, թե՛ գործնական առումով: Հակառակ դեպքում դիմողը պահանջվող մատչելիություն ու արդյունավետություն չի ունենա: 35-րդ հոդվածի 1-ին կետը պահանջում է նաև, որ այն գանգատները, որոնք հետագայում ներկայացվելու են դատարան, նախ ներկայացված լինեն համապատասխան ներպետական մարմնին առնվազն այն բովանդակությամբ և կարգով, որ պահանջում են ներպետական օրենքներով ամրագրված դրույթները, սակայն ոչ մի հակընդդեմ հայց ներկայացված չլինի դատական պաշտպանության այն միջոցների դեմ, որոնք անհամապատասխան են և անարդյունավետ (տե՛ս *«Աքսոյն ընդդեմ Թուրքիայի» (Aksoy v Turkey)* գործը, 1996 թ. դեկտեմբերի 18-ի վճիռ, Զեկույցներ 1996-VI, էջ 2275–6, պարբ. 51–2 և *«Աքդիվարը և այլք ընդդեմ Թուրքիայի» (Akdivar and Others v Turkey)* գործը [1996-IV], էջ 1210, պարբ. 65–67):

145. Դատարանը շեշտում է, որ դատական պաշտպանության ներպետական միջոցների սպառման մասին կանոնի կիրառման ժամանակ պետք է ճշտում մտցվի, որ այն կիրառվում է մարդու իրավունքների պաշտպանության այն մեխանիզմների համատեքստում, որոնք համաձայնել են հիմնել բարձր պայմանավորվող կողմերը: Հետևաբար, դատարանն ընդունում է, որ 35-րդ հոդվածի 1-ին կետն անհրաժեշտ է կիրառել որոշակի ճկունությամբ և առանց ավելորդ ձևականության: Այնուհետև, դատարանն ընդունում է, որ դատական պաշտպանության ներպետական միջոցների սպառման մասին կանոնը բացարձակ ճշմարտություն չէ և չպետք է կիրառվի մեքենայորեն: Դրա պահպանությունը ստուգելու նպատակով էական է, որ հաշվի առնվեն յուրաքանչյուր գործի հանգամանքները: Սա, մասնավորապես, նշանակում է, որ դատարանը պետք է իրատեսական մոտեցում ցուցաբերի ոչ միայն գործին առնչվող բարձր պայմանավորվող պետության իրավական համակարգում դատական պաշտպանության պաշտոնական միջոցների առկայության, այլև այն ընդհանուր համատեքստի նկատմամբ, որում դրանք գործում են, ինչպես նաև դիմողի անձնական հանգամանքների նկատմամբ: Այնուհետև դատարանը պետք է քննի՝ արդյոք դիմողը գործի բոլոր հանգամանքներում կատարե՞լ է իրենից ողջամտության սահմաններում ակնկալվող ամեն բան, որպեսզի սպառի դատական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները (տե՛ս վերը նշված *«Աքդիվարը և այլք ընդդեմ Թուրքիայի»* գործի վճիռը, էջ 2276, պարբ. 53 և 54):

146. Դատարանը կարծում է, որ Ռուսաստանի օրենքով պետության կամ նրա գործակալությունների ապօրինի և հանցավոր գործողությունների զոհերի կողմից հակընդդեմ հայցի ներկայացման համար սկզբունքորեն նախատեսված է երկու ճանապարհ՝ քաղաքացիական դատական վարույթ և քրեական պաշտպանության միջոցներ:

147. Ինչ վերաբերում է այն քաղաքացիական գործերին, որոնց նպատակն է պետության գործակալությունների ապօրինի գործողությունների կամ անօրինական վարքագծի հետևանքով դիմողի կողմից հայտարարված վնասների հատուցումը, դատարանը հիշեցնում է, որ կառավարությունը հիմնվել է հնարավոր երկու տարբերակների վրա. բողոք ներկայացնել գերագույն դատարան կամ բողոք ներկայացնել այլ դատարաններ: Դատարանը մատնանշում է, որ այն ժամանակ, երբ տվյալ գանգատը հայտարարվել է ընդունելի, ոչ մի որոշում կայացված չի եղել դրա առնչությամբ, որով գերագույն դատարանը կամ այլ դատարաններ ի վիճակի եղած լինեն քրեական հետաքննության որևիցե արդյունքի բացակայության պարագայում համարել, որ գանգատի որոշակի հանգամանքները վերաբերում են այն լուրջ հանցավոր գործողություններին, որոնց մասին պնդում է դիմողը: Այդուհանդերձ, քննության առնվող գործում դիմողները տեղյակ չեն, թե ով է հնարավոր պատասխանողը, ուստի այդ տեղեկությունների համար կախված լինելով քրեական հետաքննության արդյունքներից՝ նման մեղադրանք չեն ներկայացրել:

148. Ինչ վերաբերում է պարոն *Խաշիևի* գործին, որը կառավարության վերաբերյալ գանգատ է ներկայացրել դատարան (թիվ 57942/00), ապա ճշմարիտ է, որ ստանալով կառավարության պնդումն այն մասին, թե գոյություն ունի պաշտպանության քաղաքացիական միջոց, նա դատական գործ է հարուցել Ինգուշեթիայի Նազրանի շրջանային դատարանում: Այդ դատարանն ի վիճակի չէր և չի կատարել որևէ անկախ հետաքննություն՝ հայտնաբերելու այն անձին կամ անձանց, որոնք պատասխանատու էին այդ մահացու հարձակման համար, սակայն վճիռ է կայացրել պարոն Խաշիևի կրած վնասները փոխհատուցելու մասին՝ հիմնվելով տվյալ ժամանակահատվածում տվյալ տարածաշրջանում Ռուսաստանի Դաշնության զինուժի ռազմական գերակայության հայտնի փաստի վրա, ինչպես նաև ռազմական ուժերի գործողությունների համար պետության պատասխանատվության վրա:

149. Դատարանը չի համարում, որ այդ որոշումը ներպետական միջոցների սպառման առումով ազդում է քաղաքացիական հայցի արդյունավետության վրա: Չնայած այն հանգամանքին, որ պարոն Խաշիևի գործը դրական լուծում ստացավ դրամական հատուցման իմաստով, այն ցույց տվեց, որ առանց քրեական հետաքննության արդյունքներն

ունենալու առավելության՝ քաղաքացիական գործն անկարող է հայտնաբերել մահացու հարձակման համար պատասխանատու օրինազանցներին, առավել ևս՝ հաստատել նրանց պատասխանատվության աստիճանը: Այնուհետև բարձր պայմանավորվող պետության՝ կոնվենցիայի 2-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված պարտավորությունը հետաքննություն իրականացնելու վերաբերյալ, որը կարող է տանել մահացու ելքով հարձակման մեղավորների հայտնաբերման և պատժման, կարող է անիրական դառնալ, եթե վերոհիշյալ հոդվածներով տրված գանգատի դեպքում դիմողից պահանջվի բավարարվել միայն վնասների փոխհատուցմամբ (տե՛ս *«Յաշան ընդդեմ Թուրքիայի» (Yasa v Turkey)* գործը, 1998 թ. սեպտեմբերի 2-ի վճիռ, Զեկույցներ 1998-VI, էջ 2431, պարբ. 74):

150. Դատարանը հաշվի է առել նաև դիմողների նշած գործնական բնույթի դժվարությունները, ինչպես նաև այն փաստը, որ Չեչնիայի իրավապահ մարմիններն այդ ժամանակամիջոցում կանոնավոր չէին գործում: Այդ կապակցությամբ դատարանը հանգում է այն եզրակացության, որ եղել են առանձնահատուկ հանգամանքներ, որոնք ազդել են պաշտպանության միջոցները սպառելու հետ կապված պարտավորության կատարման վրա, որն այլ հանգամանքներում հնարավոր կլիներ իրականացնել կոնվենցիայի 35(1) հոդվածի համաձայն:

151. Ելնելով վերը նշվածից՝ դատարանը եզրակացնում է, որ դիմողները պարտավորված չէին հետամուտ լինել կառավարության կողմից առաջարկվող պաշտպանության քաղաքացիական միջոցներին՝ ներպետական բոլոր միջոցները սպառելու համար, ուստի այս կապակցությամբ նախնական առարկությունն անհիմն է:

152. Ինչ վերաբերում է քրեական օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներին, ապա դատարանը նշում է, որ փախստականների շարասյան վրա կատարված հարձակման առնչությամբ նշանակվել է քրեական հետաքննություն, թեև բավական մեծ ուշացումով, այսինքն՝ 2000 թ. մայիսին, չնայած իշխանությունները դրա մասին տեղեկացվել են միջադեպից անմիջապես հետո: Հարձակման մյուս զոհերի, այդ թվում՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և տիկին Բուդինյուկի կողմից 2000 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին իշխանություններին ուղղված բողոքները հետաքննության չեն հանգեցրել: Դատարանն այնուհետև նշում է, որ միջադեպից հետո առնվազն մի քանի տարվա ընթացքում դիմողները երբևէ չեն հարցաքննվել վերը նշված իրադարձության կապակցությամբ, նրանց չի տրվել զոհի կարգավիճակ, չի թույլատրվել ծանոթանալ հետաքննության փաստաթղթերին և տեղեկություն չի հաղորդվել գործի ընթացքի մասին: Որևէ անձի նկատմամբ մեղադրանք չի հարուցվել:

153. Դատարանը համարում է, որ կառավարության նախնական առարկության այս մասը բարձրացնում է հարցեր, որոնք վերաբերում են դիմողների կողմից գանգատարկվող հարձակման՝ քրեական հետաքննության արդյունավետությանը և դրա փաստերի լուսաբանմանն ու պատասխանատվության բացահայտմանը: Այդ հարցերն անմիջականորեն կապված են դիմողների՝ կոնվենցիայի 2-րդ, 3-րդ և 13-րդ հոդվածների համաձայն բարձրացրած հարցերի հետ: Այսպիսով, դատարանը համարում է, որ այդ հարցերը քննվելու են կոնվենցիայի համապատասխան դրույթներով, ըստ դիմողների խնդրանքի: Վերը նշվածի պարագայում անհրաժեշտություն չի առաջանում, որ դատարանը որոշի՝ իրականում տեղի՞ է ունեցել ոստիկանության կամ ռազմական պաշտոնյաների կատարած հանցագործությունների հետաքննության կանխում, ինչպես պնդում են դիմողները:

Ուստի դատարանը միաձայն մերժեց կառավարության պնդումն այն մասին, թե դիմողները չեն բավարարում գանգատի ընդունելիության այն պահանջը, որ սպառված պետք է լինեն իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները:

Այս ամենն արծարծել է մեծ պալատը *«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի»* 2001-IV գործում (տե՛ս ստորև՝ էջ 68):

116. Դատարանն այնուհետ հիշեցնում է, որ ներպետական միջոցների սպառման ոլորտում գոյություն ունի ապացուցման պարտականության բաշխման հարց: Քննվող գործի համատեքստում պատասխանող կառավարությունը պնդում է, թե ներպետական միջոցները չեն սպառվել. այդ կառավարության պարտավորությունն է համոզել դատարանին, որ արդյունավետ միջոց եղել է քննարկվող ժամանակամիջոցում՝ թե՛ տեսականորեն, թե՛ գործնականորեն, այսինքն՝ այդ միջոցը հասանելի է եղել, ի վիճակի է եղել ապահովելու փոխհատուցում տուժած անհատների զրկանքների համար և ողջամիտ հեռանկարներ հաջողության ապահովման համար: Այդուհանդերձ, ապացուցման պարտականությունը բավարարելուց հետո էլ դիմող կառավարության պարտականությունն է հաստատել, որ պատասխանող կառավարության կողմից առաջ քաշվող միջոցն իրականում սպառվել է կամ ինչ-ինչ պատճառներով անհամապատասխան և անարդյունավետ է եղել դեպքի որոշակի հանգամանքներում, որը դեպքի հետ առնչվող անձանց ազատում է այդ միջոցը սպառելու պահանջից: Նման պատճառներից մեկը կարող է լինել պետական պաշտոնյաների լիարժեք պասիվությունն այն պահին, երբ նրանց հանդեպ լուրջ մեղադրանքներ են եղել՝ կապված պետական գործակալությունների թույլ տված խախտումների կամ հասցրած վնասների հետ, այն դեպքում, երբ, օրինակ, նրանք չեն կատարել հետաքննություն կամ չեն առաջարկել օգնություն: Նման հանգամանքներում կարելի է ասել, որ ապացուցման պարտականությունը կրկին տեղափոխվում է, ուստի այժմ պատասխանող կառավարության պարտականությունն է ցույց տալ, թե ինչ են արել

իշխանություններն ի պատասխան գանգատարկվող հարցերի լրջության և մասշտաբների (տե՛ս *mutatis mutandis* [համապատասխան փոփոխություններով] վերը նշված *«Աքդիվարը և այլք ընդդեմ Թուրքիայի»* գործի առնչությամբ կայացված վճիռը, էջ 1211, պարբ. 68):

Ընդունելիության այս չափանիշն ընդգծում է ստրասբուրգյան համակարգի օժանդակ բնույթը կոնվենցիայով ճանաչված իրավունքների և ազատությունների պարտադրման հարցում: Անդամ պետություններն ունեն առաջնային պատասխանատվություն այդ իրավունքները և ազատություններն իրենց ներպետական իրավական համակարգերում պահպանելու գործում, իսկ ստրասբուրգյան համակարգը դառնում է պաշտպանության վերջին ատյան, երբ պետական մակարդակում ձախողում է տեղի ունենում: Պետություններին հնարավորություն է ընձեռվում հայտարարված խախտումները լուծելու իրենց ներպետական հաստատություններում (պոտենցիալ դիմողները պարտավոր են հնարավորինս արդյունավետ օգտագործել և սպառել իրենց պետության ներսում առկա իրավական պաշտպանության բոլոր միջոցները: Օրինակ՝ *«Մոգոսը և Կրիֆկան ընդդեմ Գերմանիայի»* (*Mogos and Krifka v Germany*, թիվ 78084/01) գործում, որի կապակցությամբ որոշումը կայացվել է 2003 թ. դեկտեմբերի 27-ին, դիմողները չեն դիմել Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարան, ուստի Եվրոպական դատարանը նրանց գանգատն անընդունելի է համարել՝ իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները չսպառելու հիմքով): Իսկ Եվրոպական դատարանը որոշ չափով խուսափում է այն գանգատներից, որոնք պատշաճ կերպով քննության չեն առնվել ներպետական ատյաններում:

Դատարանը որոշել է, որ միջպետական դիմողները պարտավոր չեն պատասխանող պետությունում սպառել պաշտպանության ներպետական բոլոր միջոցները, որտեղ, ըստ դիմող պետության, տեղ են գտել կոնվենցիայով երաշխավորված մարդու իրավունքների և ազատությունների խախտման բազմաթիվ փոխառնչվող դեպքեր:

Կոնվենցիայի հետ անհամատեղելի գործելակերպը ներառում է միատեսակ և նույնանման այնպիսի խախտումների կուտակում, որոնք բավական մեծաքանակ են և փոխկապակցված, որպեսզի ներկայանան որպես օրինաչափություն կամ համակարգ, ոչ թե սոսկ որպես առանձին միջադեպեր կամ բացառություններ: Գործելակերպն ինքնին մեկ խախտում չէ, որն առանձնանում է նման այլ խախտումներից: Հնարավոր չէ, որ պետության բարձրաստիճան պաշտոնյաները տեղյակ չլինեն կամ իրավասու չլինեն տեղյակ լինելու նման գործելակերպի մասին: Ավելին՝ կոնվենցիայի համաձայն՝ այդ պաշտոնյաները խստագույն պատասխանատվություն են կրում իրենց ստորադրյալների գործողությունների ու վարքագծի համար: Նրանց վրա պարտականություն է դրված իրենց կամքը թելադրել ստորադրյալներին, և նրանք չեն կարող թաքնվել իրենց անկարողության հետևում, եթե չեն կարողանում ապահովել իրենց կամքի կատարումը:

Գործելակերպի գաղափարը գործնական կարևորություն ունի իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման պահանջի կատարման հարցում: Այդ կանոնը, ինչպես ամրագրված է կոնվենցիայի 26-րդ հոդվածում, վերաբերում է ինչպես պետական (հոդվ. 24), այնպես էլ անհատական (հոդվ. 25) դիմումներին, երբ դիմող պետությունն ավելի ոչինչ չի անում, այլ սոսկ դատապարտում է այն խախտումը կամ խախտումները, որոնցից, իրենց պնդմամբ, տուժել են անհատները, որոնց տեղը, որպես այդպիսին, գրավում է պետությունը: Մյուս կողմից և սկզբունքորեն՝ այդ կանոնը կիրառելի չէ այն դեպքերում, երբ դիմող պետությունը գանգատվում է որևէ գործելակերպից՝ նպատակ ունենալով կանխել դրա շարունակությունը կամ կրկնությունը, սակայն չի խնդրում հանձնաժողովին կամ դատարանին որոշում կայացնել յուրաքանչյուր դեպքի համար, որը ներկայացվում է որպես այդ գործելակերպի ապացույց կամ դրսևորում [(պարբ. 159) *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»*, A.25 (1978) և տե՛ս ստորև՝ էջ 151]:

«Աքդիվարն ընդդեմ Թուրքիայի» 1996-IV–1193 (1996) 1 BHRC 137 գործում (տե՛ս ստորև՝ էջ 580) դատարանը նշեց նաև, որ այդ կանոնը կիրառելի չէ, երբ անհատ դիմողները կարողանում են հաստատել այնպիսի վարչարարական գործելակերպի գոյությունը, որն անհամատեղելի է կոնվենցիայի հետ և «այնպիսի բնույթ ունի, որ [ներպետական] վարույթները դարձնում է անօգուտ և անարդյունավետ» (պարբ. 67): Այդուհանդերձ, այդ գործում դատարանը չկարողացավ հանգել որևէ եզրակացության դիմողների այն պնդման վերաբերյալ, որ գոյություն ունեցող վարչարարական գործելակերպում ներգրավված են նաև անվտանգության ուժերը, որոնք Հարավարևելյան Թուրքիայում այրում են տները:

Ավելի ուշ *«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի»* գործում մեծ պալատը հայտարարեց հետևյալը.

99. …Վերջին հանգամանքի կապակցությամբ դատարանը հիշեցնում է, որ ներպետական միջոցների սպառման մասին կանոնը կիրառելի չէ այն դեպքերում, երբ ապացուցվում է, որ գոյություն ունի վարչարարական գործելակերպ, այսինքն՝ կոնվենցիայի հետ անհամատեղելի գործողությունների օրինաչափ կրկնություն և դրանց հանդուրժում իշխանությունների կողմից, որոնք իրենց բնույթով վարույթներն անօգուտ և անարդյունավետ են դարձնում (տե՛ս *mutatis mutandis* վերը նշված *«Աքդիվարը և այլք ընդդեմ Թուրքիայի»* գործի կապակցությամբ 1996 թ. սեպտեմբերի 16-ի վճիռը, Զեկույցներ 1996-IV, էջ 1210, պարբ. 66-7):

Առավել մեծ տարակարծությունների տեղիք է տալիս այն, որ մեծ պալատն անդամների մեծամասնությամբ (տասը կողմ, յոթ դեմ ձայներով) որոշեց, որ «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունում [թուրքերի գրաված տարածք, որը ճանաչված չէ միջազգային հանրության կողմից որպես պետություն] առկա պաշտպանության միջոցները կարելի է 35-րդ հոդվածով դասակարգել որպես Թուրքիայի «ներպետական» միջոցներ: Իսկ այն հարցը, թե արդյոք այդ միջոցները կարո՞ղ են դիտարկվել որպես արդյունավետ, կախված է այն հանգամանքներից, որոնցով հավաստիացվում է, որ դրանք առկա են եղել, սակայն չեն օգտագործվել:

Հոդված 35(1)-ով սահմանված երկրորդ չափանիշն այն է, որ դիմողներն իրենց դիմումները պետք է ներկայացնեն դատարանի գրասենյակ՝ իրենց գանգատը քննած պետական բարձրագույն ատյանի (սովորաբար սահմանադրական կամ գերագույն դատարան) կողմից վերջնական որոշումը կայացնելու օրից հետո վեց ամսվա ընթացքում: Այս չափանիշը բավարարելու համար անհրաժեշտ պայմանները դատարանը մեկնաբանել է *«Ալանն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Allan v United Kingdom*, թիվ 48539/99) գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2001 թ. օգոստոսի 28-ին:

Հոդված 35(1)-ով սահմանված վեցամսյա ժամկետի ընթացքը, որպես կանոն, ընդհատվում է դիմողի առաջին նամակով, որում նշվում է գանգատ ներկայացնելու մտադրության մասին և որոշ տեղեկություն է տրվում գանգատի բնույթի վերաբերյալ: Ինչ վերաբերում է նախնական դիմումում չներառված գանգատներին, ապա վեցամսյա ժամկետի ընթացքը չի ընդհատվում մինչև այն օրը, երբ գանգատներն առաջին անգամ ներկայացվում են դատարան:

Դատարանը որոշել է, որ դիմողի պաշտպանները վերաքննիչ դատարանի կողմից բողոքարկումը մերժելուց հետո մինչև քսան ամիս դատարանին չեն հայտնել նրա գանգատի մասին, որը վերաբերում էր լռության իրավունքի հայտարարված խախտմանը: Հետևաբար, տվյալ գանգատը ներկայացվել է վեցամսյա ժամկետից դուրս: Հանձնաժողովն իր նախկին կազմով նշել է, որ այս ժամկետի արդարացումը դրսևորում է «բարձր պայմանավորվող կողմերի [անդամ պետությունների] ցանկությունը՝ կանխելու իրենց նախկին վճիռների մասին մշտական հարցադրումները [*«Դե Բեկերն ընդդեմ Բելգիայի» (De Becker v Belgium)*, Yearbook of the European Convention on Human Rights 1958–9, p. 244]: Ընդհանուր առմամբ, դատարանը բավական խիստ մոտեցում է որդեգրել այս պահանջի նկատմամբ: Այսպես, *«Ուոքերն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Walker v United Kingdom*, թիվ 34979/97) գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2000 թ. հունվարի 25-ին, դատարանը որոշել է, որ կարող է այդ չափանիշը կիրառել սեփական առաջարկությամբ, եթե նույնիսկ պատասխանող կառավարությունը չի բարձրացնում այն որպես նախնական առարկում.

… նշվեց, որ այս կանոնը, որն արտացոլում է բարձր պայմանավորվող կողմերի ցանկությունը, այն է՝ կանխել իրենց նախկին որոշումները կասկածի տակ առնելու դեպքերն անսահմանափակ ժամկետի ընթացքում, ծառայում է ոչ միայն պատասխանող կառավարության շահերին, այլև իրավական որոշակիությանը: Դա ցույց է տալիս վերահսկման ժամանակավոր սահմանները և ահազանգում ինչպես անհատին, այնպես էլ պետության իշխանություններին այն ժամկետի մասին, որից հետո վերահսկումն այլևս անհնար է:

Հետևաբար, հաշվի առնելով, որ դիմողն իր գանգատը վերանայելու խնդրանքով չէր դիմել դատարան վեց ամսվա ընթացքում այն բանից հետո, երբ գերագույն դատարանը (իրավական պաշտպանության իր երկրի բարձրագույն ատյանը) որոշում է կայացրել իր բողոքարկման առնչությամբ, նրա գանգատը հայտարարվեց անընդունելի: Սակայն այս չափանիշը կիրառելի չէ այն դեպքերում, երբ կան կոնվենցիայով ճանաչված իրավունքների մշտական խախտումներ: Այսպես օրինակ՝ *«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի»* գործում մեծ պալատը (տասնվեց կողմ և մեկ դեմ ձայներով) համարեց, որ Թուրքիան շարունակաբար խախտում է 2-րդ հոդվածով սահմանված իր ընթացակարգային պարտա-

վորությունը՝ իրականացնելու արդյունավետ հետաքննություն և պարզելու կիպրոսցի հարյուրավոր հույների ճակատագիրը, որոնք 1974 թ. ռազմական օկուպացիայի օրերին անհետացել էին կյանքի համար սպառնալից հանգամանքներում:

Անհատ դիմողները պարտավոր են բավարարել ընդունելիության ևս վեց չափանիշ, որոնք սահմանված են կոնվենցիայի 35(2) և (3) հոդվածներով: (1) Դիմողը չպետք է լինի անանուն, թեև նա կարող է խնդրել, որ դատարանը չբացահայտի իր ինքնությունը հրապարակային փաստաթղթերում (ինչպես բազմիցս պատահել է 8-րդ հոդվածով ճանաչված իրավունքների խախտման վերաբերյալ գանգատներում, օրինակ՝ կյանքի նկատմամբ հարգանքի. տե՛ս *« Կ.Ա.-ն և Ա.Դ. -ն ընդդեմ Բելգիայի» (K.A. and A.D. v Belgium)* գործը, 2005 թ. փետրվարի 17, տե՛ս նաև ստորև՝ էջ 520: (2) Գանգատը չպետք է լինի «ըստ էության նույն հարցը», որն արդեն քննվել է դատարանում: Այս չափանիշը նախատեսված է կանխելու համար այն դեպքերը, երբ դիմողը ներկայացնում է երկրորդ դիմումն այն հիմքերով, որոնք էականորեն չեն տարբերվում նախորդից: Այս չափանիշով անընդունելի հայտարարված գանգատի օրինակ է *«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործը, 25 DR 147 (1981), որում միևնույն դիմողը տարիներ առաջ ներկայացրել էր նաև մեկ այլ գանգատ (*«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»* 8 DR 212 (1976)): (3) Այն գանգատները, որոնք արդեն անցել են միջազգային մեկ այլ քննություն կամ կարգավորում և չեն պարունակում գործին առնչվող նոր տվյալներ, համարվում են անընդունելի: Թեև անցած ժամանակահատվածում ի հայտ են եկել միջազգային մի շարք նոր հաստատություններ, ինչպիսին է Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտեն, դրանք մարդու իրավունքների լուրջ խախտումներից բողոքող անհատներին գրեթե երբեք չեն առաջարկում փոխհատուցման ավելի արտոնյալ պայմաններ, քան կոնվենցիան: Ավելին, դատարանն ընդհանուր առմամբ դժկամություն է ցուցաբերում այս պայմանի բավարարման հարցում միայն այն հազվագյուտ դեպքերում, երբ դիմողն արդեն իսկ դիմել է միջազգային մեկ այլ ատյան: Օրինակ՝ *«Սմիռնովան ընդդեմ Ռուսաստանի» (Smirnova v Russia*, թիվ 46133/99) դատական գործում, որի կապակցությամբ վճիռը կայացվել է 2002 թ. հոկտեմբերի 3-ին, պատասխանող կառավարությունը նախապես առարկություն էր արել, որ առաջին դիմողի գանգատները՝ ուղղված դատարանին, պետք է հայտարարվեն անընդունելի, քանզի ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն նույնպես քննության էր առնում նրա հայտարարած ապօրինի ձերբակալության մասին գործը: Դատարանը մերժեց այդ առարկությունը, քանի որ դատարանին ուղղված գանգատները պարունակում էին առավել լայնածավալ փաստական տվյալներ (այդ թվում՝ դիմողի ինքնությունը հաստատող փաստաթղթի հարկադրյալ հանձնումը շրջանային դատարանին), քան ՄԱԿ-ին ուղղված դիմումը: (4) Գանգատը չպետք է «անհամատեղելի լինի կոնվենցիայի դրույթների հետ»: Այս չափանիշը ներառում է այնպիսի կիրառություններ, որոնք դատարանի կողմից համարվում են անընդունելի *ratione loci (իրավախախտման տեղի գործոն)* հիմունքով (այսինքն՝ վկայակոչված խախտումները տեղի են ունեցել մի վայրում, որը գտնվում է պատասխանող պետության տարածքից դուրս): Օրինակ՝ *«Յոնգհոնգն ընդդեմ Պորտուգալիայի»* (*Yonghong v Portugal*, թիվ 50887/99) գործում, որի կապակցությամբ վճիռը կայացվել է 1999 թ. նոյեմբերի 25-ին, Մակաոյի գերագույն դատարանը որոշում է կայացրել, որ դիմողին անհրաժեշտ է հանձնել Չինաստանին: 1999 թ. հունիսից Մակաոյի դատարանները բացառիկ իրավասություն ունեին այդ տարածքում, իսկ Պորտուգալիայի վարչարարությունը նույն տարածքում ավարտվում էր 1999 թ. դեկտեմբերին: Պորտուգալիան երբևէ հայտարարությամբ հանդես չի եկել 56-րդ հոդվածով Մակաոյում կոնվենցիայի տարածքային կիրառման վերաբերյալ: Այդ իսկ պատճառով դատարանը որոշեց, որ գանգատն անընդունելի է *ratione loci* հիմունքով: Այն իրադարձություններին վերաբերող գանգատները, որոնք տեղի են ունեցել նախքան պատասխանող պետության անդամակցումը կոնվենցիային, համարվում են անընդունելի *ratione temporis (իրավախախտման ժամանակի գործոն)* հիմունքով: *«Կոզակն ընդդեմ Ուկրաինայի»* (*Kozak v Ukraine*, թիվ 21291/02) գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2002 թ. դեկտեմբերի 17-ին, դիմողը գանգատվում էր, որ 1980-ական թթ. չեղյալ է համարվել հողի նկատմամբ սեփականության իր իրավունքը: Դատարանը նրա գանգատը համարել է անընդունելի *ratione temporis* հիմունքով, քանի որ դեպքերը տեղի էին ունեցել Ուկրաինայում կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց ավելի քան տասը տարի առաջ: Եթե դիմողը փորձում է հաստատել մի իրավունք, որը կոնվենցիայով

(կամ պատասխանող պետության համար պարտադիր արձանագրություններով) չի պահպանվում, ապա այդ գանգատը համարվում է անընդունելի *ratione materiae (իրավախախտման օբյեկտի գործոն)* հիմունքով: Օրինակ՝ *«Ֆրետն ընդդեմ Ֆրանսիայի» (Frette v France*, թիվ 36515/97) գործում, որի կապակցությամբ վճիռ է կայացվել 2001 թ. հունիսին, ի թիվս այլ հանգամանքների, դիմողը պնդում էր, որ իշխանություններն իր նկատմամբ թույլ են տվել կոնվենցիայով նախատեսված 14-րդ և 12-րդ հոդվածների խախտում, երբ հնարավորություն չեն տվել երեխա որդեգրելու: Դատարանը եկավ այն եզրահանգման, որ նրա գանգատի կազմն անընդունելի է *ratione materiae* հիմունքով, քանի որ այդ հոդվածներից ոչ մեկը չի երաշխավորում որդեգրման իրավունք: Այդուամենայնիվ, այդ գանգատը հայտարարվեց ընդունելի 8-րդ և 14-րդ հոդվածներով, սակայն հետագայում դիմողը տանուլ տվեց դատը՝ ըստ էության (տե՛ս ստորև՝ էջ 871): (5) Անընդունելի են համարվում այն գանգատները, որոնք «ակնհայտորեն անհիմն են»: Այս չափանիշը կապված է այն պահանջի հետ, թե որքան ապացույցներ պետք է ներկայացնի դիմողն իր գանգատը հիմնավորելու համար: *«Գոնգաձեն ընդդեմ Ուկրաինայի»* (*Gongadze v Ukraine*, թիվ 34056/02) գործում, որի վճիռը կայացվել է 2005 թ. մարտի 22-ին, դիմողը պնդում էր, որ պատասխանող պետությունը պատասխանատու է իր ամուսնու (լրագրողի) սպանության համար, իսկ պատասխանողը ժխտում էր իր ներգրավվածությունը: Պալատը միաձայն որոշեց.

Կողմերի ներկայացրած փաստարկների հիման վրա դատարանը համարում է, որ գանգատը բարձրացնում է կոնվենցիայով սահմանված փաստերի և օրենքների հետ առնչվող լուրջ հարցեր, որոնց լուծումը պահանջում է գործի հանգամանքների քննություն: Ուստի դատարանը եզրակացնում է, որ տվյալ գանգատն ակնհայտորեն անհիմն չէ կոնվենցիայի 3-րդ հոդվածի 3-րդ կետի առումով:

Այսպես, եթե դիմողները ներկայացնում են գանգատներ, որոնք դատարանի այս չափորոշիչը չեն բավարարում, ապա նրանց գանգատը հայտարարվում է անհիմն: (6) Եվ, վերջապես, անընդունելի են հայտարարվում այն գանգատները, որոնք, դատարանի կարծիքով, «չարաշահում են գանգատի իրավունքը»: Այս չափանիշը վերաբերում է այն դիմողներին, ովքեր դատարանի անդամների և նրա գրասենյակի հասցեին անում են անպատվաբեր կամ վիրավորական հայտարարություններ: Նման դրամատիկ օրինակ էր *«Դյուրանժեն և այլք ընդդեմ Ֆրանսիայի»* (*Duringer and others v France*, թիվ 61164/00) գործը, որի առնչությամբ վճիռ կայացվեց 2003 թ. փետրվարի 4-ին.

Պարոնայք Դյուրանժեի ու «Ֆորեստ Գրանջի» գանգատները համարվել են անընդունելի: Նշված դիմողների ուղարկած նամակները պարունակում են լուրջ մեղադրանքներ դատարանի դատավորների և գրասենյակի պաշտոնյաների հասցեին: Դրանք հայտարարություններ են՝ առանց որևէ հիմքի, ծայրագույնս վիրավորական են, վայրագ, շարունակաբար կրկնվում են և չեն համապատասխանում կոնվենցիայի 34-րդ հոդվածի պահանջներին: Պարոն Ժերար Դյուրանժեի և «Ֆորեստ Գրանջի», եթե այդպիսին գոյություն ունի, անհանդուրժելի պահվածքը հակասում է անձի կողմից գանգատ ներկայացնելու իրավունքին, որը երաշխավորվում է կոնվենցիայի 34-րդ և 35-րդ հոդվածներով: Դա գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում է, ինչպես նշված է հոդված 35(3)-ում:

Եթե դիմողը կեղծ փաստաթղթեր է ներկայացնում դատարան, դա նույնպես հանգեցնում է նրան, որ գանգատը համարվի անընդունելի՝ որպես գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում: Օրինակ՝ *«Ջիանն ընդդեմ Ռումինիայի»* (*Jian v Romania*, թիվ 46640/99) գործով 2004 թ. մարտի 30-ին կայացված վճռում ասվում է հետևյալը.

Դատարանը հայտնում է, որ դիմողը, նախ, թաքցրել է փաստաթղթի մի մասը՝ փորձելով կոծկել այն փաստը, որ ինքը որոշել է քրեական գործ չհարուցել և հրաժարվել է դատաբժշկական փորձաքննությունից: Երկրորդ՝ նա ներկայացրել է կեղծ բժշկական տեղեկանք՝ որպես ապացույց այն բանի, որ իրեն տանջել են: Դատարանը շեշտում է, որ դրանով դիմողը դիտավորյալ փորձել է մոլորության մեջ գցել քննությունը՝ իր գանգատի ամենալուրջ մասը ներկայացնելով աղավաղված ձևով: Դա գանգատ ներկայացնելու իրավունքի սաստիկ և կոպիտ խախտում է:

Այսպիսով, այդ գանգատը հայտարարվեց անընդունելի:

Անհատական գանգատների մեծ մասը չի բավարարում վերը նշված ընդունելիության չափանիշները: 2005 թ. դատարանը որոշել է, որ 26.852 գանգատ անընդունելի է եղել: Ընդունելի է համարվել ընդամենը 1000 գանգատ: Յուրաքանչյուր անհատական գանգատ փոխանցվում է

դատարանի հատուկ բաժին, և այդ բաժնի նախագահը դատավորներից մեկին նշանակում է զեկուցող տվյալ գանգատի հարցով: Գանգատին ծանոթանալուց հետո զեկուցողը որոշում է՝ տվյալ գանգատը պետք է ներկայացվի (երեք դատավորներից կազմված) կոմիտե՞, թե՞ (յոթ դատավորներից կազմված) պալատ, որպեսզի որոշվի դրա ընդունելիության հարցը: Եթե դատավոր զեկուցողը կարծում է, որ գանգատն անընդունելի է, այն փոխանցվում է կոմիտեին: Եթե կոմիտեն միաձայն որոշում է, որ գանգատն անընդունելի է, ապա այն մերժվում է: Իսկ եթե կոմիտեն միաձայն եզրակացության չի հանգում գանգատի ընդունելիության վերաբերյալ, ապա այդ գանգատն ուղարկվում է պալատ: Այնուհետև պալատն է ձայների մեծամասնությամբ որոշում գանգատի ընդունելիությունը: Հազվագյուտ դեպքերում (որոնց թվում՝ կոնվենցիայի դրույթների մեկնաբանմանն առնչվող լուրջ հարցեր), եթե դիմողը և պատասխանող պետությունը չեն առարկում, պալատը կարող է գանգատն ուղարկել մեծ պալատ, որպեսզի մեծ պալատը որոշի դրա ընդդատության հարցը (տե՛ս կոնվենցիայի 30-րդ հոդվածն ընդդատությունը զիջելու մասին): Պալատի կողմից գանգատի ընդունելիության որոշումը սովորաբար գրավոր ընթացակարգ է, սակայն պալատը կարող է որոշել հանրային լսում անցկացնել, որպեսզի լուծում տա դժվար հարցերին: Եթե պալատը որոշում է նման լսում անցկացնել, ապա կողմերից նույնպես պահանջվում է անդրադառնալ գործի որոշակի հանգամանքներին: Պալատները կարող են առանձին որոշումներ կայացնել գանգատի և գործի որոշակի հանգամանքների ընդդատության վերաբերյալ, որը համարվում է ընդունելի, կամ կայացնել միացյալ որոշում:

(ii) Ժամանակավոր միջոցներ

Նախկին հանձնաժողովի գործելակերպին հետևելով՝ դատարանն ընդունել է մի կանոն, որն իրեն հնարավորություն է տալիս ձեռնարկելու ժամանակավոր միջոցներ (այսինքն՝ այնպիսի գործողություններ, որոնց իրականացմամբ զբաղվում է կամ չի զբաղվում վարույթի կողմերից որևիցե մեկը, քանի դեռ վարույթը շարունակվում է): Ձայների ճնշող մեծամասնությամբ՝ տասնչորսն կողմ և երեք դեմ, մեծ պալատը նման միջոցների իրավական կարգավիճակի առնչությամբ հիմնովին նոր մոտեցում հաստատեց *«Մամաթկուլովն ու Ասկարովն ընդդեմ Թուրքիայի» (Mamatkulov and Askarov v Turkey)* գործում, որի կապակցությամբ վճիռը կայացվել է 2005 թ. փետրվարի 4-ին: Դիմողներն Ուզբեկստանի քաղաքացիներ էին, որոնց ձերբակալել էին Թուրքիայում: Ոստիկանությունը կալանավորել էր Մամաթկուլովին Ստամբուլի օդանավակայան ժամանելու պահին, միջազգային ոստիկանության հրամանով, Ուզբեկստանում ռումբ պայթեցնելու միջոցով վնասվածքներ հասցնելու և այդ պետության նախագահի դեմ ահաբեկչական հարձակման փորձ անելու կասկածանքով: Երկկողմ միջազգային պայմանագրի համաձայն՝ Ուզբեկստանը պահանջում էր հանձնել Մամաթկուլովին: Ձերբակալությունից երկու օր հետո Մամաթկուլովը կանգնեց դատարանի առջև, որը նրան բանտ վերադարձրեց: Մեկ շաբաթ անց՝ 1999 թ. մարտի 11-ին, Մամաթկուլովին նրա փաստաբանի ներկայությամբ կրկին հարցաքննեց դատավորը և հրամայեց արագացված ընթացակարգով կասկածյալին հանձնել իր երկիր: Նույն օրը Մամաթկուլովը դատարանում գանգատ ներկայացրեց Թուրքիայի դեմ: Մարտի 15-ին նա դիմեց Բաքիրքոյ Ասիզեի դատարան՝ բողոքարկելով էքստրադիցիայի օրդերը, սակայն մարտի 19-ին Ասիզե դատարանը նրա բողոքարկումը մերժեց: Ասկարովը Թուրքիա մուտք էր գործել 1998 թ. դեկտեմբերին կեղծ անձնագրով: 1999 թ. մարտի 5-ին, Ուզբեկստանից հանձնման խնդրանք ստանալով, ոստիկանությունը նրան ձերբակալեց: Ուզբեկստանում Ասկարովին կասկածում էին սպանության, ռումբ պայթեցնելով վնասվածք հասցնելու և նախագահի դեմ ահաբեկչական հարձակման փորձ անելու մեջ: Երկու օր հետո Ասկարովը կանգնեց դատարանի առջև, որը նրան բանտ վերադարձրեց: Մարտի 15-ի լսումից հետո Ֆաթիհի քրեական դատարանը վճիռ կայացրեց և հրամայեց կալանքի տակ պահել Ասկարովին մինչև նրա հանձնումը: Ստամբուլի Ասիզե դատարանը մարտի 26-ին մերժեց նրա բողոքարկումը: Ասկարովը մարտի 22-ին դատարանում գանգատ հարուցեց Թուրքիայի դեմ:

Մարտի 18-ին դատարանի պալատի նախագահը հայտնեց Թուրքիայի կառավարությանը, որ կողմերի շահերից ելնելով և դատարանում հարուցված 30 գանգատների քննությունը սահուն անցկացնելու համար ցանկալի է, որ դիմողը մինչև պալատի նշանակված նիստը (մարտի 23-ը) էքստրադիցիայի չենթարկվի: Նախագահը գործում էր դատարանի կանոնակարգի 39-րդ հոդվածի համաձայն, որում ասվում է հետևյալը.

(1) Հարկ եղած դեպքում պալատը կամ դրա նախագահը, գործին առնչվող որևէ կողմի կամ անձի խնդրանքով կամ իր նախաձեռնությամբ, կարող է կողմերի համար սահմանել միջանկյալ այնպիսի միջոցներ, որոնք իր հայեցողությամբ անհրաժեշտ է ձեռնարկել ի շահ կողմերի կամ վարույթի պատշաճ անցկացման նպատակով:

(2) Այդ միջոցների մասին ծանուցումը պետք է տրվի Նախարարների կոմիտեին:

(3) Պալատը կարող է տեղեկատվություն պահանջել իր ցուցումի համաձայն իրականացվող ժամանակավոր միջոցներին վերաբերող ցանկացած հարցի մասին:

Այդուհանդերձ, մարտի 19-ին Թուրքիայի կառավարությունը հրաման արձակեց դիմողի հանձնման վերաբերյալ: Պալատի նիստի ժամանակ որոշվեց երկարաձգել ժամանակավոր միջոցները մինչև հետագա ծանուցում: Մարտի 27-ին դիմողները հանձնվեցին Ուզբեկստանի իշխանություններին: Ապրիլի 19-ին Թուրքիայի կառավարությունը տեղեկացրեց դատարանին, որ ստացվել է Ուզբեկստանի կառավարության հավաստիացումը (նախքան դիմողների էքստրադիցիան) այն մասին, որ հանձնվածները չեն ենթարկվի խոշտանգումների և մահվան չեն դատապարտվի: 1999 թ. հուլիս ամսվա ընթացքում Թուրքիայի կառավարությունը ծանուցեց դատարանին, որ Ուզբեկստանի գերագույն դատարանը դատապարտել է դիմողներին այն մեղադրանքներով, որոնց համար նրանք էքստրադիցիայի էին ենթարկվել: Մամաթկուլովին դատապարտել էին 20 տարվա, իսկ Ասկարովին՝ 11 տարվա ազատազրկման: 1999 թ. սեպտեմբերին դիմողների թուրք դատապաշտպանները զեկուցեցին դատարանին, որ իրենց հնարավորություն չի տրվում հաղորդակցվելու դիմողների հետ, որ դատավարությունն արդար չի եղել, և Ուզբեկստանի բանտերում պայմանները խիստ վատ են: Հաջորդ ամսվա ընթացքում Տաշքենդում Թուրքիայի դեսպանության ներկայացուցիչներն այցելել են դիմողներին կալանավայրում և տեսել, որ նրանց առողջությունը նորմալ է, և նրանք չեն բողոքում բանտի պայմաններից: Թեև դիմողների հարազատներին հնարավորություն էր տրվել այցելելու նրանց կալանավայրում, դիմողների թուրք իրավաբանները չէին կարողացել շփվել նրանց հետ:

Դատարանի պալատը (վեց կողմ, մեկ դեմ ձայների հարաբերակցությամբ) որոշեց, ի թիվս այլոց, որ ժամանակավոր միջոցների մասին դատարանի վճռին հակառակ՝ Թուրքիայի կառավարության կողմից դիմողների հանձնումը կոնվենցիայի 34-րդ հոդվածի խախտում է: Այդ հոդվածում, մասնավորապես, ասվում է հետևյալը. «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչընդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացումը» (2003 թ. փետրվարի 6-ի վճիռ):

110. …Կոնվենցիայի անդամ յուրաքանչյուր պետություն, որի նկատմամբ կիրառվել են ժամանակավոր միջոցներ՝ պաշտպանելու հայտարարված խախտման զոհին հնարավոր անդառնալի վնասից, պարտավոր է ենթարկվել այդ միջոցներին և չիրականացնել այնպիսի գործողություն կամ բացթողում, որը վարկաբեկում է վերջնական վճռի հեղինակությունը և արդյունավետությունը:

111. Հետևաբար, դատարանի կողմից դատարանի կանոնակարգի 39-րդ հոդվածով սահմանված ժամանակավոր միջոցներին չենթարկվելով՝ Թուրքիան խախտել է կոնվենցիայի 34-րդ հոդվածով ամրագրված իր պարտավորությունները:

Դրանից հետո Թուրքիայի կառավարությունը պահանջեց գործը հանձնել դատարանի մեծ պալատին: Խնդրանքը բավարարվեց, «և դատարանի նախագահը թույլատրեց, որ Իրավաբանների միջազգային հանձնաժողովը (International Commission of Jurists), «Human Rights Watch» և «AIRE Centre» կազմակերպությունները ներկայացնեն իրենց գրավոր դիտողությունները:

Մեծ պալատի առջև դիմողների դատապաշտպանները, ի թիվս այլոց, նշեցին, որ դատարանի՝ ժամանակավոր միջոցների մասին վճռին հակառակ՝ Թուրքիայի կառավարության կողմից դիմողների հանձնումը կոնվենցիայի 34-րդ հոդվածի խախտում է, որովհետև հանձնելուց հետո դատապաշտպանները չեն կարողացել հաղորդակցվել նրանց հետ: Հետևաբար, իրավաբաններին զրկել են հետագա վկայություններ ստանալու հնարավորությունից, որպեսզի նրանք շարունակեն պաշտպանել իրենց հաճախորդների՝ կոնվենցիայով երաշխավորված իրավունքները, որոնք խախտել են Թուրքիայի իշխանությունները (այդ թվում նաև՝ կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումը, որին հակառակ՝ դիմողներին հանձնել են մի պետության, որտեղ նրանք եղել են խոշտանգումների ենթարկվելու վտանգի տակ): Հետևաբար, դիմողների հանձնումը խանգարել է նրանց գործի պատշաճ ներկայաց-

մանը դատարանի առջև: Ի պատասխան՝ Թուրքիայի կառավարությունն առարկեց, որ կոնվենցիայի համաձայն՝ անդամ պետություններն իրավաբանորեն պարտավոր չեն ենթարկվելու ժամանակավոր միջոցներին: Այդ տեսակետն արտահայտված է նաև սկզբնական դատարանի վճռում, որ կայացվել է *«Կրուզ Վարասն ընդդեմ Շվեդիայի»* (*Cruz Varas v Sweden*, A.201 (1991)) դատական գործում: Ավելին, միջազգային դատարանները ղեկավարվում են հիմնադիր միջազգային պայմանագրերով, և եթե տվյալ միջազգային պայմանագիրը դատարանին չի լիազորում ընդունել պարտադրող ժամանակավոր միջոցներ, ապա համապատասխան պետություններն իրավաբանորեն պարտավոր չեն հետևելու այդ ժամանակավոր միջոցների ցուցումներին: Իրավաբանների միջազգային հանձնաժողովն առարկեց՝ պնդելով, որ համաձայն միջազգային իրավունքի՝ միջազգային պայմանագրերի և միջազգային նախադեպային իրավունքի սկզբունքների՝ դատարանի կողմից սահմանվող ժամանակավոր միջոցներն իրավաբանորեն պարտադիր են անդամ պետությունների համար:

Մեծ պալատը որոշեց, որ նախկին իրավաբանական գործելակերպը, այդ թվում՝ *«Քյուրտն ընդդեմ Թուրքիայի»* (*Kurt v Turkey*, 1998-III 1192) գործը հաստատում է, որ 34-րդ հոդվածը ոչ միայն արգելում է դիմողների վրա ճնշում գործադրելը, այլև որևէ այլ գործողություն, որը կարող է խանգարել գործի քննությանը դատարանում: Իսկ ժամանակավոր միջոցների հարցում դատարանը հետևում է նախկին հանձնաժողովի գործելակերպին և դիմում է դրանց միայն սահմանափակ հանգամանքներում: Դատարանը ստանում է բազմաթիվ դիմումներ ժամանակավոր միջոցներ կիրառելու խնդրանքով, սակայն դրանք նախատեսում է միայն այն դեպքում, երբ առկա է «104… անդառնալի վնասի անխուսափելի վտանգ»: Նման խնդրանքները սովորաբար վերաբերում են 2-րդ և 3-րդ հոդվածներին: Երբեմն ստացվում են միջնորդություններ նաև այլ իրավունքների վերաբերյալ, այդ թվում՝ նախատեսված 8-րդ հոդվածով: Եթե դատարանը նախատեսել է ժամանակավոր միջոցների կիրառում, ապա դա հիմնականում վերաբերել է այն գործերին, որոնցում ներառված են եղել հանձնում կամ արտաքսում: Ժամանակավոր միջոցներն առավելապես ուղղված են եղել կառավարություններին, սակայն դրանք կարող են վերաբերել նաև դիմողներին (օրինակ՝ *«Իլաշկուն և այլք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի» (Ilascu and Others v Moldova and Russia)* գործում (2004 թ. հուլիսի 8-ի վճիռ), որում նախագահը «ստիպում» էր դիմողներից կամ կալանավորվածներից մեկին դադարեցնել հացադուլը. դիմողը ենթարկվեց նույն օրը): Խիստ հազվագյուտ են այն դեպքերը, երբ պետությունն անտեսել է իրեն ուղղված ժամանակավոր միջոցների ցուցումները: 1950-ական թթ. վերջերից նախկին հանձնաժողովը սկսել է մի գործելակերպ, որով խնդրում էր պետություններին հետաձգել հանձնման կամ արտաքսման գործընթացները, եթե դրանց իրականացումը կխանգարեր վարույթում գտնվող գանգատների քննությանը: Այնուհետև՝ 1974 թ., հանձնաժողովն ընդունեց իր Կանոնակարգի 36-րդ կանոնը, որում ասվում է հետևյալը.

Հանձնաժողովը կամ, եթե նիստ գումարված չէ, նախագահը կարող է հանձնարարել կողմերին ամեն մի ժամանակավոր միջոց, որի ընդունումը ցանկալի է ի շահ կողմերի կամ հանձնաժողովում տարվող վարույթի պատշաճ իրականացման:

Ինը տարի անց սկզբնական դատարանն ընդունեց նման կանոն.

36(1) Նախքան պալատի կազմավորումը դատարանի նախագահը կողմերից որևէ մեկի, հանձնաժողովի, դիմողի կամ շահագրգիռ այլ անձի խնդրանքով կամ *proprio motu* կարգով կարող է կողմերին կամ, հարկ եղած դեպքում, դիմողին հանձնարարել որևէ ժամանակավոր միջոց, որի կիրառումը նրանց կողմից խելամիտ կլիներ: Երբ պալատը կազմավորված կամ նիստ գումարած լինի, դրա նախագահը կունենա միևնույն իրավասությունը:

Մեծ պալատը նշեց, որ սկզբնական դատարանը *Կրուզ Վարասի* գործում որոշել էր, որ կոնվենցիայի մարմինների կողմից ժամանակավոր միջոցների ցուցումն իրավաբանորեն պարտադիր չէ կողմերի համար: Այդուհանդերձ, մեծ պալատը համարում էր, որ անհրաժեշտ է վճիռը քննարկել միջազգային այլ մարմինների հետագա ժամանակավոր միջոցների համատեքստում: Դրանց թվում են Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտեի հայտարարությունն առ այն, որ պետության՝ ժամանակավոր միջոցներին չենթարկվելը դիտվում է որպես այդ պետության կողմից Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի և դրա կամընտիր արձանագրության խախտում, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանի

որոշումներն առ այն, որ պետությունները պետք է զերծ մնան այնպիսի գործելակերպից, որն անխուսափելիորեն հանգեցնում է պոտենցիալ զոհերի իրավունքների խախտման, ինչպես նաև Արդարադատության միջազգային դատարանի [International Court of Justice] որոշումն առ այն, որ ժամանակավոր միջոցների մասին իր ցուցումները պարտադիր են (*Լագրանդի* գործ *(«Գերմանիան ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների» (Germany v United States of America),* 2001 թ. հունիսի 27-ի վճիռ): Այնուհետև մեծ պալատը փորձեց *Կրուզ Վարասի* գործը դիտել ստրասբուրգյան համակարգի պատմական ինստիտուցիոնալ կարգավորման համատեքստում.

118.... Այսպիսով, դատարանը սահմանափակվում է՝ ժամանակավոր միջոցներ հանձնարարելու առումով դիտարկելով հանձնաժողովի, ոչ թե իր իրավասությունները…

119. Այդ կապակցությամբ դատարանը շեշտում է, որ ի տարբերություն դատարանի և Նախարարների կոմիտեի՝ հանձնաժողովը իրավասություն չունի կայացնելու պարտադիր որոշում առ այն, որ բարձր պայմանավորվող պետությունը խախտել է կոնվենցիան: Գործի որոշակի հանգամանքների առումով հանձնաժողովի առաջադրանքը նախնական բնույթ ունի, իսկ հանձնաժողովի կարծիքն այն մասին՝ կոնվենցիայի խախտման փաստ տեղ գտե՞լ է, թե՞ ոչ, պարտադիր չէ:

Ինչ վերաբերում է մշտական դատարանի պալատի որոշմանը *«Կոնկան և այլք ընդդեմ Բելգիայի» (Conka and Others v Belgium,* որոշում թիվ 51564/99, 13 մարտի, 2001 թ.) գործի առնչությամբ, որում պատասխանող կառավարությունը վտարման ենթարկեց սլովակ դիմողներին հակառակ դատարանի՝ ժամանակավոր միջոցների մասին ցուցումի, մեծ պալատը նշեց, որ պալատն արտահայտել է այն կարծիքը, թե կառավարության գործելակերպը «դժվար է որակել որպես բարեխիղճ համագործակցություն դատարանի հետ»: Բազմիցս կրկնելով այն ավանդական սկզբունքները, որ առանց ողջամիտ հիմնավորման դատարանը չպետք է խախտի իր իսկ նախադեպերը, և կոնվենցիան գործող փաստաթուղթ է, որը պետք է դիտարկվի որոշակի հանգամանքներից ելնելով, մեծ պալատը որոշեց հետևյալը.

123. Այս համատեքստում դատարանը նշում է, որ միջազգային իրավունքի, միջազգային համաձայնագրերի մասին օրենքի և միջազգային նախադեպային իրավունքի ընդհանուր սկզբունքների հիման վրա ժամանակավոր միջոցների մեկնաբանությունը չի կարելի առանձնացնել այն վարույթից, որին դրանք վերագրվում են, կամ ըստ էության կայացված որոշումից: Այդ կապակցությամբ դատարանը ևս մեկ անգամ կրկնում է, որ Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 31(1) հոդվածը սահմանում է, որ միջազգային համաձայնագրերը պետք է մեկնաբանվեն բարեխղճորեն՝ տվյալ առարկային և նպատակին, ... ինչպես նաև արդյունավետության սկզբունքներին համապատասխան:

124. Դատարանը նշում է, որ Արդարադատության միջազգային դատարանը, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն և Խոշտանգումների դեմ կոմիտեն, թեև, ի տարբերություն դատարանի, ղեկավարվում են միջազգային այլ պայմանագրերի դրույթներով, իրենց վերջին որոշումների հիմնավորումներում հաստատել են, որ անխուսափելի վնասների ռիսկի պարագայում կողմերի հաստատված իրավունքների պահպանությունը ժամանակավոր միջոցների հիմնական խնդիրն է միջազգային իրավունքում:

Անշուշտ, կարելի է ասել, թե ցանկացած իրավական համակարգում արդարադատության պատշաճ իրականացումը պահանջում է անուղղելի ոչ մի գործողություն չիրականացնել, քանի դեռ գործը գտնվում է վարույթում… Վտարման և հանձնման գործառույթներում պետության՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցներ կիրառելու իրավունքի կապակցությամբ նախկինում բազմիցս շեշտվել է կասեցնող ազդեցությամբ միջոցների կարևորությունը, երբ որոշվել է պետության պարտավորությունների շրջանակը: 13-րդ հոդվածով սահմանված իրավական պաշտպանության արդյունավետ միջոց հասկացությունը պահանջում է այնպիսի միջոցի կիրառում, որը կարող է կանխել կոնվենցիային հակասող միջոցների իրականացումը, եթե հատկապես դրանք կարող են անուղղելի ազդեցություն ունենալ: Հետևաբար, 13-րդ հոդվածին համահունչ չի լինի, եթե պետական իշխանությունները որոշեն կիրառել նման միջոցներ՝ առանց հավաստիանալու, որ դրանք կոնվենցիային չեն հակասում *(«Կոնկան ընդդեմ Բելգիայի»*, թիվ 51564/99, պարբ. 79, ECHR 2002-I): Դժվար է պատկերացնել, թե ինչու անհատի իրավունքների արդյունավետ պաշտպանությանը կոչված այդ սկզբունքը չպետք է համահունչ լինի կոնվենցիայի պահանջներին դատարանում քննվող միջազգային վարույթներում, եթե դա կիրառելի է ներպետական իրավական համակարգերում:

125. Նմանապես, կոնվենցիայի համակարգի համաձայն, ժամանակավոր միջոցները, որոնք գործնականում հետևողականորեն կիրառվում են, … կարևոր դեր են խաղում՝ խուսափելու այնպիսի անուղղելի իրավիճակներից, որոնք

կխանգարեն դատարանին պատշաճ կերպով քննել գանգատները և հարկ եղած դեպքում դիմողի համար ապահովել կոնվենցիայով երաշխավորված իրավունքների գործնական և արդյունավետ իրացումը: Հետևաբար, նման պայմաններում պետության չենթարկվելը ժամանակավոր միջոցներին կխաթարի 34-րդ հոդվածով ամրագրված անհատական գանգատների իրավունքի արդյունավետությունը և պետության կողմից 1-ին հոդվածով պաշտոնապես ստանձնած պարտավորությունը՝ պաշտպանելու կոնվենցիայով ճանաչված իրավունքներն ու ազատությունները:

Դատարանի կողմից ժամանակավոր միջոցների ցուցումները, ինչպես երևում է քննության առնվող գործում, հնարավորություն են տալիս ոչ միայն արդյունավետորեն քննելու գանգատը, այլև հավաստիանալու, որ դիմողի՝ կոնվենցիայով ապահովվող պաշտպանությունն արդյունավետ է: Բացի այդ, նման միջոցները հնարավորություն են տալիս նաև Նախարարների կոմիտեին վերահսկելու վերջնական որոշման իրականացումը: Այդպիսով, ժամանակավոր միջոցները հնարավորություն են ընձեռում, որ գործին առնչվող պետությունը կատարի դատարանի վերջնական վճռին ենթարկվելու իր պարտավորությունը, որն իրավաբանորեն պարտադիր է՝ համաձայն կոնվենցիայի 46-րդ հոդվածի:

126. Հետևաբար, բարձր պայմանավորվող կողմին՝ այս դեպքում պատասխանող պետությանն ուղղված ժամանակավոր միջոցների հանձնարարականի արդյունավետությունն անհրաժեշտ է քննել այն պարտավորությունների համաձայն, որոնք դրված են բարձր պայմանավորվող պետությունների վրա կոնվենցիայի 1-ին, 34-րդ և 46-րդ հոդվածներով:

127. Գործի փաստերը, ինչպես դրանք շարադրվեցին վերը, հստակ մատնանշում են, որ դիմողներին Ուզբեկստանին հանձնումը խանգարեց դատարանին պատշաճ քննության ենթարկել նրանց գանգատը՝ նման գործերում դատարանի սահմանած կարգի համաձայն, և հնարավորություն չտվեց պաշտպանելու դիմողներին, եթե դրա կարիքն առաջանար, կոնվենցիայի պոտենցիալ խախտումներից, ինչպես նրանք պնդում էին: Փաստորեն դիմողների էքստրադիցիան խոչընդոտեց նրանց կողմից իրենց անհատական գանգատներին արդյունավետ կերպով հետամուտ լինելու իրավունքը, որը երաշխավորված է կոնվենցիայի 34-րդ հոդվածով:

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

128. Դատարանը կրկին հաստատում է, որ կոնվենցիայի 34-րդ հոդվածի հիման վրա բարձր պայմանավորվող պետությունները պարտավորվում են զերծ մնալ ցանկացած գործողությունից կամ բացթողումից, որ կարող է խոչընդոտել անհատի կողմից գանգատ ներկայացնելու իրավունքը: Եթե բարձր պայմանավորվող պետությունը չի ենթարկվում ժամանակավոր միջոցներին, ապա դա համարվում է դիմողի գանգատի արդյունավետ քննության և դիմողի իրավունքների արդյունավետ իրականացման խոչընդոտ, հետևաբար և կոնվենցիայի 34-րդ հոդվածի խախտում:

129. Քննության առնելով իրեն ներկայացված նյութերը՝ դատարանը եզրակացնում է, որ դատարանի կանոնակարգի 39-րդ կանոնով սահմանված ժամանակավոր միջոցներին չենթարկվելով՝ Թուրքիան խախտել է կոնվենցիայի 34-րդ հոդվածով ամրագրված իր պարտավորությունները:

Դատավոր Կաբրալ Բարետոն հայտնեց իր կարծիքը, որ համապատասխանում էր դատարանի կազմի մեծամասնության կարծիքին, այն է՝ մեծ պալատի վճիռը նահանջ է *Կրուզ Վարասի* գործից: Միաժամանակ նա ընդունում էր, որ Թուրքայի իշխանությունների գործողությունները տվյալ դեպքում խախտել են կոնվենցիայի 34-րդ հոդվածը:

Եթե ես ճիշտ եմ ըմբռնել մեծամասնության մտածելակերպը, ապա սոսկ այն փաստը, որ կառավարությունը հրաժարվում է ժամանակավոր միջոցների պահանջին ենթարկվելուց, ինքնին կոնվենցիայի 34-րդ հոդվածի խախտում է:

Կոնվենցիայի 34-րդ հոդվածի խախտման այդ «մեքենայորեն» հաստատման հետ ես չեմ կարող հաշտվել:

Իմ կարծիքով՝ այն հանգամանքը, որ պետությունները մշտապես հրաժարվում են ժամանակավոր միջոցները պարտադիր համարելուց, խանգարում է դատարանին պարտադրել պետություններին այն պարտավորությունները, որոնց ընդունումից նրանք հրաժարվել են:

Բարետոն համարում էր, որ եթե պետությունը չի ենթարկվում ժամանակավոր միջոցներին, իսկ դա խանգարում է, որ դատարանն իրականացնի գանգատի արդյունավետ քննությունը, ապա դա միայն 34-րդ հոդվածի խախտում է:

Դատավորներ Քաֆլիշը, Թուրմենը և Քլովերը մասամբ առարկում էին՝ համարելով, որ վճիռների մեծ մասը «երկիմաստ» է: Չհամընկնող կարծիք հայտնած դատավորները համարում էին, որ դատարանի վերաբերմունքը ժամանակավոր միջոցների նկատմամբ հստակորեն և հանգամանորեն քննարկվել է *Կրուզ Վարասի* գործում: Ավելին, մշտական դատարանն այդ մոտեցումը հաստատել է *Կոնկայի* գործում: Հետևաբար, այդ դատավորները համարում էին, որ մեծամասնության այն կարծիքը,

թե *Կրուզ Վարասի* գործը ժամանակավոր միջոցների առումով վերաբերում էր սոսկ մարդու իրավունքների նախկին եվրոպական հանձնաժողովի լիազորություններին, «այնքան էլ համոզիչ չէ»: Ինչ վերաբերում է *Լագրանդի* գործի առնչությամբ Արդարադատության միջազգային դատարանի վճռին, ապա կարելի է եզրակացնել, որ Միջազգային դատարանը մեկնաբանում է սեփական հիմնադիր միջազգային պայմանագիրը: Այդուհանդերձ, առարկող դատավորները չէին ընդունում, որ կա կոնվենցիայի համադրելի հոդված, որի համաձայն՝ ժամանակավոր միջոցները համարվում են հարկադիր:

11. ... Այլ կերպ ասած՝ մեծ տարբերություն կա միջազգային պայմանագրի սոսկ մեկնաբանության և դրա փոփոխության միջև, ինչպես և դատական գործառույթների իրականացման և միջազգային իրավաստեղծման միջև:

12. Ինչ որ մեծ պալատն արել է *Մամաթկուլովի* և *Ասկարովի* վճիռներում, ինչպես նաև դրան նախորդող պալատը, օրենսդրական գործառույթի կիրառում է եղել, քանզի ներկայիս գործող կոնվենցիայի ոչ մի կետում չի նշվում, թե կոնվենցիայի անդամ պետությունները պարտավոր են ճանաչել այս դատարանի կողմից հանձնարարվող ժամանակավոր միջոցների հարկադիր ուժը: Ահա ինչու, մեր կարծիքով, դատարանը չի կարող գնալ Հաագայի դատարանի ցույց տված ճանապարհով, ահա ինչու իմաստ չունի նահանջել գոյություն ունեցող նախադեպային իրավունքից:

25. ... Եզրակացնել, թե այս դատարանը *de lege lata* [գործող օրենքի տեսանկյունից] իրավունք ունի հանձնարարելու հարկադիր ժամանակավոր միջոցներ, մեր իրավասությունից դուրս է: Նման իրավունքը կարող է ցանկալի թվալ, սակայն բարձր պայմանավորվող կողմերը պետք է դա ապահովեն:

Մամաթկուլովի և *Ասկարովի* գործերով մեծ պալատի կայացրած վճիռները լրջորեն տարբերվում էին ժամանակավոր միջոցների իրավական ուժի առնչությամբ դատարանի նախկին մոտեցումից: Այդ գործերից առաջ ո՛չ սկզբնական դատարանը և ո՛չ էլ մշտական դատարանը երբևէ չէին որոշել, որ այդ միջոցներն իրավաբանորեն պարտադիր են: Մեծամասնության կողմից 34-րդ հոդվածի՝ որպես հիմքի օգտագործումը ժամանակավոր միջոցները հարկադիր պարտավորությունների վերածելու հնարամիտ քայլ էր՝ շրջանցելով կոնվենցիայի տեքստում ուղղակիորեն արտահայտված լիազորության բացակայության փաստը: Այդուամենայնիվ, հաշվի առնելով պետությունների համառ դիմադրությունը նման լիազորություն ավելացնելու հարցում (թիվ 11 արձանագրության կազմման ժամանակ թե՛ հանձնաժողովը և թե՛ սկզբնական դատարանն առաջարկել էին կոնվենցիայում մտցնել պարտադիր ժամանակավոր միջոցների մասին դրույթ), չհամընկնող կարծիք ունեցող դատավորները նշում էին, որ դատավորների մեծամասնությունը օրենսդրություն է սահմանում՝ անտեսելով անդամ պետությունների բացահայտ մտադրությունը: Թեպետ մեծամասնությունը պնդում էր, թե փորձում է պաշտպանել խոցելի դիմողների շահերը, կարելի է եզրակացնել, որ դատավորների հնարամտության շնորհիվ հնարավոր դարձավ հասնել ընթացակարգային խիստ ցանկալի մի բարեփոխման, որն անցնում էր կոնվենցիայի մեկնաբանության թույլատրելի սահմանները:

(iii) Գործի քննություն՝ ըստ էության

Եթե գանգատը համարվում է ընդունելի, ապա պալատը (որի կազմում պատասխանող պետությունից ընտրված դատավորն է՝ համաձայն հոդված 27(2)-ի) հրավիրում է, որ կողմերը ներկայացնեն լրացուցիչ փաստեր և դիտարկումներ: Կարող է նշանակվել լսում, սակայն որպես կանոն դատարանը մշտապես փորձում է գանգատներին լուծում տալ ներկայացված գրավոր փաստաթղթերի հիման վրա, որպեսզի բարձրացնի իր աշխատանքի արդյունավետությունը: Բացառիկ դեպքերում, եթե փաստերն այնքան խրթին են, որ չեն կարող լուծվել փաստաթղթային վկայությունների հիման վրա, ապա դատարանը կարող է մի քանի անդամների հանձնարարել պատասխանող պետության տարածքում անցկացնել հետաքննություն (համաձայն հոդված 38(1)(ա)-ի): Օրինակ՝ *«Իլաշկուն և այլք ընդդեմ Մոլդովայի»* գործում, որի վճիռը կայացվել է 2004 թ. հուլիսի 8-ին (տե՛ս նաև ստորև՝ էջ 65), մեծ պալատը հանձնարարեց իր չորս անդամներին որպես պատվիրակներ այցելել Մերձդնեստրյան տարածք (Պրիդնեստրովիե) և տեղում պարզել իրադրությունը: Պատվիրակները զրուցեցին 43

վկաների հետ, որոնց թվում էին նաև՝ ձերբակալված դիմողները և Ռուսաստանի Դաշնության՝ Մերձդնեստրյան տարածքում տեղակայված զինուժի ներկայացուցիչները:

Համաձայն հոդված 36(1)-ի՝ անդամ պետությունները (որոնք տվյալ գործում պատասխանող պետությունը չեն) իրավունք ունեն ներկայացնելու գրավոր դիտողություններ և մասնակցելու լսումներին, եթե դիմողն իրենց քաղաքացին է: Սովորաբար պետությունները չեն մասնակցում իրենց քաղաքացիների անհատական գանգատներին ընդդեմ այլ պետությունների (ամենայն հավանականությամբ, այն նույն մեկնաբանությամբ, որով նրանք չեն հարուցում միջպետական գործեր): *«Դեմադեսն ընդդեմ Թուրքիայի» (Demades v Turkey)* գործը, որի առնչությամբ վճիռ է կայացվել 2003 թ. հուլիսի 31-ին (տե՛ս նաև ստորև՝ էջ 571), որպես օրինակ կարող է ծառայել, թե ինչպես էր պետությունը պնդում երրորդ կողմի գրավոր դիտողություններ ներկայացնելու իր իրավունքը: Պալատի նախագահը նաև իրավունք ունի հրավիրելու կամ թույլատրելու, որ (վարույթին չմասնակցող) ցանկացած անդամ պետություն կամ շահագրգիռ ցանկացած երրորդ կողմ ներկայացնի գրավոր դիտողություններ և (բացառիկ դեպքերում) մասնակցի լսումներին (հոդված 36(2)): Հասարակական կազմակերպությունները (օրինակ՝ մարդու իրավունքներով զբաղվող խմբերը) փորձում են թույլտվություն ստանալ՝ ներկայացնելու գործի համառոտ գրավոր ակնարկներ հատուկ կարևորության խնդիրներ բարձրացնող գործերում: Օրինակ՝ *Մամաթկուլովի* և *Ասկարովի* վերը նկարագրված գործում մենք տեսնում ենք, որ Իրավաբանների միջազգային հանձնաժողովը, Human Rights Watch-ը և AIRE կենտրոնը թույլտվություն են ստացել ներկայացնելու գրավոր դիտողություններ ժամանակավոր միջոցների իրավական նշանակության վերաբերյալ: Հոդված 38(1)-ի (ա) ենթակետում նշվում է, որ պատասխանող պետությունները պետք է «ապահովեն անհրաժեշտ բոլոր պայմանները», որպեսզի դատարանն արդյունավետ իրականացնի գործերի քննությունը: Երբեմն դատարանն առնչվել է այս պահանջը խախտող պետությունների, ինչպես, օրինակ, *«Դիզմանն ընդդեմ Թուրքիայի» (Dizman v Turkey)* գործում (2005 թ. սեպտեմբերի 20-ի վճիռ), երբ պալատը որոշեց, որ Թուրքիան շարունակաբար խախտում է այս դրույթը՝ չարձագանքելով դատարանի հարցումներին և պահանջներին, որպեսզի տրամադրվեն փաստաթղթեր և տեղեկատվություն դիմողի՝ ոստիկանության կոպիտ վերաբերմունքի մասին գանգատի վերաբերյալ:

30-րդ հոդվածի համաձայն՝ պալատը կարող է ընդդատությունը զիջել մեծ պալատին, (ա) եթե պալատի իրավազորության տակ գտնվող գործը հանգեցնում է կոնվենցիայի մեկնաբանմանն առնչվող լուրջ հարցի, կամ (բ) եթե պալատի իրավազորության տակ գտնվող հարցի լուծումը կարող է հակասել դատարանի ավելի վաղ կայացրած որոշմանը: Պալատը չի կարող ընդդատությունը զիջել այն դեպքերում, երբ գործին առնչվող կողմերից որևէ մեկն առարկում է: Ընդդատության զիջման դեպքերը հաճախակի չեն: Որպես նման փաստի օրինակ կարելի է նշել *«Վոն ընդդեմ Ֆրանսիայի» (Vo v France)* գործը (2004 թ. հուլիսի 8-ի վճիռ, տե՛ս նաև ստորև՝ էջ 106), որը վերաբերում էր կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորվող կյանքի իրավունքի հարցի բավական վիճելի կողմին՝ չծնված երեխայի ապրելու իրավունքին:

(iv) Բարեկամական կարգավորում

Մինչ պալատը զբաղված է գործի ըստ էության քննությամբ, քարտուղարը փորձում է դատարանի անունից գտնել կողմերի միջև բարեկամական կարգավորման հնարավորություններ (հոդված 38(1)(բ)): Այդ քննարկումները գաղտնի են (հոդված 38(2)): Բարեկամական կարգավորումը կարող է շահավետ լինել կողմերի համար, քանի որ այդ դեպքում նրանց վեճը լուծվում է առանց պաշտոնական դատավճռի: Անհատ դիմողներին դա ձեռնտու է այն առումով, որ նրանք կարող են հասնել իրենց խնդրի ավելի արագ և համակողմանի կարգավորման, քան հետագայում, դատավճռի միջոցով: Պետություններին դա ձեռնտու է այն առումով, որ նրանք կարող են խուսափել հետագա դատավճռի հետ կապված խայտառակությունից, եթե հաստատվի, որ խախտել են կոնվենցիան: Բարեկամական կարգավորումը նպաստավոր է նաև դատարանի համար, որովհետև այդ կերպ կրճատվում է դատավճռի սպասող գործերի թիվը (որոնց մի մասն այնուհետև փոխանցվում է մեծ պալատ): Սակայն դրանով հանդերձ, դատարանը պետք է լիովին համոզված լինի, որ կողմերին առաջարկվող

բարեկամական կարգավորման տարբերակը բավարարում է «հարգանք մարդու իրավունքների նկատմամբ» պայմանը (հոդված 38(1)(բ)): Եզակի դեպքերից մեկը, երբ դատարանը մերժեց կողմերի ընդունած բարեկամական կարգավորման տարբերակը, *«Յուքրենիեն մեդիա գրուփն» ընդդեմ Ուկրաինայի» (Ukrainian Media Group v Ukraine)* դատական գործն էր, որի առնչությամբ դատավճիռը կայացվեց 2005 թ. մարտի 29-ին: Դիմողը՝ օրաթերթի հրատարակիչը, հրահանգ էր ստացել ներպետական դատարաններից՝ վճարելու փոխհատուցում երկու քաղաքական գործիչների, որոնց մասին քննադատական նյութեր էր տպագրել իր օրաթերթում: Դիմողը պնդում էր, որ Ուկրաինայի դատարանները չեն կիրառել կոնվենցիայի 10-րդ հոդվածը (մասնավորապես՝ ստրասբուրգյան իրավագիտությունը՝ ըստ փաստերի և ըստ արժեքների դիտողությունների միջև եղած տարբերության մասին): Լսման նշանակված օրից մի քանի օր առաջ, երբ դատարանը պետք է քններ գործն ըստ էության, կողմերը դատարանին ներկայացրին բարեկամական կարգավորման առաջարկը: Առաջարկն ուսումնասիրելուց հետո դատարանը մերժեց այն:

36.…Դատարանն ուշադրություն դարձրեց այն գանգատների լրջությանը, որ արվել էին դիմողի արտահայտման ազատությանը միջամտելու գործի կապակցությամբ: Այդ լրջության պատճառով դատարանը հարկ չի համարում գանգատն իր գործերի ցուցակից հանել: Դատարանը կարծում է, որ կան առանձնահատուկ հանգամանքներ, որոնք առնչվում են կոնվենցիայով և դրա արձանագրություններով սահմանված մարդու իրավունքների պահպանությանը և պահանջում են գործի հետագա քննություն՝ ըստ էության (կոնվենցիայի հոդված 37(1)-ի վերջ և 38(1)(բ)):

Քանի որ դատարանը միաձայն եզրակացրեց, որ «69. …ներկա գործում Ուկրաինայի դատարանների կիրառած չափորոշիչները համատեղելի չեն կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջներին», կարող ենք ենթադրել, որ դատարանն իր պարտադիր որոշման մեջ ցանկանում էր հստակեցնել, որ ներպետական ատյանները չեն կարողացել պաշտպանել քաղաքական արտահայտության էական ազատությունը: Եթե կողմերը հանգում են բարեկամական կարգավորման տարբերակի, իսկ դատարանն այն հաստատում է, ապա վերջինս կայացնում է որոշում, որում տրվում է փաստերի և ձեռք բերված լուծման հակիրճ շարադրանքը (հոդված 39): Ընդունված գործերի զգալի մասը լուծվում է այս մեխանիզմով. օրինակ՝ 2005 թ. ընթացքում դատարանը բարեկամական կարգավորմամբ հաստատել է 37 գործ:

Հազվագյուտ միջպետական գործերի համատեքստում բարեկամական կարգավորման ուշագրավ օրինակ է *«Դանիան ընդդեմ Թուրքիայի»* գործը *(Denmark v Turkey*, գանգատ թիվ 34382/97, դատավճիռ՝ 5 ապրիլի, 2000 թ.): Դանիան բողոքում էր, որ իր քաղաքացիներից մեկը ենթարկվել է խոշտանգումների՝ կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտմամբ, երբ վերը նշված պետությունում կալանավորվել է 1996 թ.: 1999 թ. դատարանն այս հազվագյուտ միջպետական գանգատը հայտարարեց անընդունելի: Այդուհետև կողմերը սկսեցին խորհրդակցական բանակցություններ և հանգեցին բարեկամական կարգավորման, որում ասվում էր հետևյալը.

1. Գանգատի առաջին մասի կարգավորման նպատակով պատասխանող կառավարությունը համաձայնում է դիմող կառավարությանը *ex gratia* [կամավոր] վճարել 450.000 դանիական կրոն՝ ներառյալ գործի հետ կապված իրավաբանական ծախսերը:

2. Դիմող կառավարությունը գոհունակությամբ ընդունում է պատասխանող կառավարության կից հայտարարությունը, որը գործի բարեկամական կարգավորման անքակտելի մասն է:

3. Ըստ գործի առաջին մասի՝ դիմող կառավարությունը գնահատում է պատասխանող կառավարության կողմից Թուրքիայում ժամանակ առ ժամանակ տեղ գտած խոշտանգումների և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի առանձին փաստերի ընդունումը և զղջումը:

4. Դիմող կառավարությունը ողջունում է Թուրքիայի ձեռնարկած քայլերը, որ իրականացվել են 1997 թ. հունվարի 7-ին գանգատը ներկայացնելուց ի վեր խոշտանգումների և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ պայքարելու նպատակով:

5. Դիմող կառավարությունը և պատասխանող կառավարությունը համաձայնում են, որ ոստիկանության հարցաքննության անպատշաճ մեթոդները խախտում են կոնվենցիայի 3-րդ հոդվածը, և նման մեթոդները հետագայում պետք է կանխվեն: Երկու կառավարություններն ընդունում են, որ այդ նպատակին լավագույնս կարելի է հասնել կադրերի ուսուցման միջոցով: Այդ կապակցությամբ դիմող կառավարությունը և պատասխանող կառավարությունը նշում են, որ

Եվրոպայի խորհուրդն իրականացնում էր բազմակողմ մի ծրագիր, որի նպատակն էր անդամ պետություններում վերապատրաստման միջոցով վերակազմավորել ոստիկանության հիմնական, ծառայողական և ղեկավար ուժերը: Դիմող կառավարությունը գոհունակությամբ նշում է պատասխանող կառավարության կամավոր մասնակցությունն այս համընդհանուր ծրագրին: Ծրագրի բաղադրիչներից մեկը ոստիկանական քննության դասընթացն է: Ծրագրի իրականացումը ֆինանսավորում են Թուրքիան և Եվրոպայի խորհրդի այլ պետություններ: Դիմող կառավարությունը ցանկանում է նշանակալի ֆինանսական ներդրում կատարել Եվրոպայի խորհրդի այս ծրագրում: Ավելին, դիմող կառավարությունը կֆինանսավորի նաև մեկ այլ երկկողմ ծրագիր: Երկու կողմերի համաձայնությամբ այդ ծրագիրը նպատակ կունենա վերապատրաստել Թուրքիայի ոստիկանական ուժերը՝ ապահովելու հետագա գիտելիքներ և գործնական հմտություններ մարդու իրավունքների բնագավառում:

6. Հիմնվելով «Թուրքիայի և Դանիայի միջև երկկողմ հարաբերությունների զարգացման գործողությունների ծրագրի» (Action Plan for the Development of the Bilateral Relations Between Turkey and Denmark) վրա, որը Կոպենհագենում 1999 թ. նոյեմբերի 26-ին համաձայնեցվել է Դանիայի արտաքին գործերի նախարարի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարի հետ, Դանիայի կառավարությունը և Թուրքիայի կառավարությունը որոշել են սկսել դանիա-թուրքական շարունակական քաղաքական երկխոսություն: Այդ երկխոսության կիզակետում մարդու իրավունքների խնդիրներն են, իսկ նպատակը՝ որոշակի ոլորտներում մարդու իրավունքների հետ կապված իրավիճակի բարելավումը: Կողմերը համաձայնում են, որ երկխոսության շրջանակներում կողմերից յուրաքանչյուրը կարող է բարձրացնել առանձին խնդիրներ՝ կապված խոշտանգումների և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին հայտարարությունների հետ, ինչպես նաև ընդհանուր բնույթի խնդիրներ, այդ թվում՝ Թուրքիայի կառավարության հայտարարությունում նշվածները:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիայի կառավարությունն իր ափսոսանքն է հայտնում խոշտանգումների և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի առանձին և պատահական դրսևորումների կապակցությամբ, որ տեղ են գտնում երկրում՝ հակառակ կառավարության վճռական գործողություններին, գործող օրենսդրությանը և վարչարարական կանոններին: Թուրքիայում ընդունվել են իրավական և վարչարարական հսկողության ու պատժի նոր կանոնակարգեր, որոնց շնորհիվ նման առանձին դրսևորումները զգալիորեն նվազել են: Այս տարվա ընթացքում փոփոխվել են Թուրքիայի քրեական օրենսգրքի 243-րդ, 245-րդ և 354-րդ հոդվածները, որպեսզի խոշտանգումների ու տանջանքների դրսևորումները վերասահմանվեն և կանխվեն միջազգային կոնվենցիաների համաձայն: Վերը նշված քրեական հանցանքների համար պատիժը խստացվել է: 354-րդ հոդվածի փոփոխությամբ նախատեսվում է քրեական հետապնդում այն բժիշկների և բժշկական անձնակազմի անդամների նկատմամբ, որոնք մեղադրվում են խոշտանգումների ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կապակցությամբ կեղծ եզրակացություն տալու համար: 1998 թ. հոկտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել «Կալանավորման, բանտարկման և հարցաքննության կանոնակարգը» (Regulation on Apprehension, Custody and Interrogation), որով վերը նշված ընթացակարգերը համապատասխանեցվում են Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայի (Convention for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment and the European Convention for the Prevention of Torture (CPT)) չափորոշիչներին: 1999 թ. հունիսի 25-ին վարչապետը թողարկեց շրջաբերական փաստաթուղթ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի ավելացման վերաբերյալ, որով ներդրվում են միջոցներ՝ ապահովելու վերոհիշյալ կանոնակարգի արդյունավետ իրականացումը համապատասխան պետական մարմինների կողմից, և խստացված վերահսկում՝ իրականացման գործընթացի նկատմամբ: Շրջաբերական փաստաթղթում նշվում է, որ նահանգապետները, շրջանային նահանգապետները, պետական դատախազները, պետական տեսուչները և ստուգում կատարելու լիազորություններով օժտված այլ պաշտոնյաները, ժանդարմերիայի հրամանատարները և ոստիկանության պետերն իրավունք ունեն անցկացնելու պատահական ստուգումներ և ստուգայցեր: Բացի այդ, փաստաթղթում ասվում է, որ անհրաժեշտ միջոցառումներ պետք է նախաձեռնվեն ստուգայցերի ընթացքում հայտնաբերված թերությունները շտկելու ուղղությամբ և անհապաղ միջոցներ պետք է ձեռնարկվեն այդ թերությունների համար մեղավոր պաշտոնատար անձանց նկատմամբ: Ի լրումն, սկսած 2000 թ. հունվարի 1-ից, եռամսյա կտրվածքով արդարադատության և ներքին գործերի նախարարությունները վարչապետին առընթեր Մարդու իրավունքների համակարգման գերագույն հանձնաժողովին գրավոր տեղեկատվություն պետք է ներկայացնեն վերը նշված ստուգայցերի ու ստուգումների հաշվետվությունների արդյունքների մասին: Եվ, վերջապես, 1999 թ. դեկտեմբերի 2-ին խորհրդարանի կողմից հաստատված և ուժի մեջ մտած «Քաղաքացիական ծառայողների և այլ պաշտոնյաների նկատմամբ քրեական հետապնդման մասին» օրենքը (Law on Prosecution of Civil Servants and Other Officials) հեշտացնում է պետական պաշտոնյաների նկատմամբ քննություն նախաձեռնելու և քրեական հետապնդում իրականացնելու ընթացակարգերը: Այդ համատեքստում պետական դատախազների կողմից ի պաշտոնե կատարված ենթադրվող հանցագործությունների համար քաղաքացիական ծառայողների նկատմամբ հետաքննություն սկսելու թույլտվություն ստանալու գործընթացը պետք է տևի 4-5 ամիս, ներառյալ՝ բողոքարկման ժամկետը: Նոր օրենքով հստակեցվում են մի շարք խնդիրներ՝ կապված պետական պաշտոնյաների դատավարության հետ, սահմանվում են այն մարմինները, որոնք իրավասու են անցկացնել քննություն, ինչպես նաև այն մարմինները, որոնք իրավունք ունեն իրականացնելու նախնական քննություն և նախապատրաստական ուսումնասիրություն: Վերջին երկու տարիների ընթացքում Թուրքիայի իշխանությունների իրականացրած միջոցառում-

ների արդյունքում մեծապես նվազել են խոշտանգումների և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորումները: 1997 թ. ի վեր նկատվող այդ առաջընթացը ճանաչվել է նաև Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի կողմից. այն գործում է Խոշտանգումների կանխարգելման կոնվենցիայի շրջանակներում, որի կողմերից մեկն է նաև Թուրքիան: Վերոհիշյալ բարեփոխումների շարունակականությունն ապահովելու նպատակով մեր կառավարությունը կձեռնարկի նոր բարեփոխումներ մարդու իրավունքների բնագավառում՝ հատկապես խոշտանգումների և նվաստացնող վերաբերմունքի դրսևորումների առնչությամբ: Թուրքիան շարունակելու է համագործակցել մարդու իրավունքների գործիքներում, հատկապես՝ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայում ընդգրկված միջազգային մարմինների և մեխանիզմների հետ, որոնցում ընդգրկված է նաև Թուրքիան: Բացի այդ, Թուրքիան շարունակելու է զեկուցել այդ մարմիններին և մեխանիզմներին, նրանց համապատասխան կանոնակարգերի համաձայն, այն զարգացումների մասին, որոնք տեղի են ունենում ոլորտում իրավական և վարչարարական միջոցների կիրառման արդյունքում:

Վերոհիշյալ համաձայնագրի պայմանները ցույց են տալիս, թե որքան նպաստավոր էր բարեկամական կարգավորման տարբերակը երկու կողմերի համար: Դանիան ստացավ փոխհատուցում իր քաղաքացու համար, իսկ Թուրքիան խուսափեց դատարանի հնարավոր դատավճռից, որով պետք է մեղադրվեր կոնվենցիայի կարևորագույն հոդվածներից մեկը խախտելու համար: Ավելին, Դանիայի կառավարությունը որոշեց ֆինանսավորում հատկացնել Թուրքիայի ոստիկանական ուժերի վերապատրաստման համար: Միջպետական գործերի բարձր քաղաքական համատեքստն արտահայտվում է նաև երկու երկրների վարչապետների հանդիպմամբ, որը նախորդեց գանգատի բարեկամական կարգավորմանը:

Բարեկամական կարգավորման կարելի է հասնել նաև արդարացի փոխհատուցման չափը որոշելու (ինչպես նաև անհրաժեշտ դատական պաշտպանության ցանկացած այլ միջոցի) հարցում, երբ գործի առնչությամբ վճիռ է կայացվում ըստ էության: *«Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի» (Broniowski v Poland)* գործում, որի վճիռը (բարեկամական կարգավորում) կայացվել է 2005 թ. սեպտեմբերի 28-ին (ըստ էության դատավճռին ծանոթանալու համար տե՛ս ստորև՝ էջ 976, ըստ էության որոշում [substantive judgment]), մեծ պալատը սահմանեց դատարանի կողմից կայացվող «փորձնական դատավճռին» [pilot-judgment] հետևող բարեկամական կարգավորման ընդունելիության գնահատման մոտեցումը: Փորձնականն (պիլոտային) այն վճիռն է, որ տրվում է անհատական այնպիսի գանգատների առնչությամբ, որոնցում բացահայտվում են պատասխանող պետության իրավական համակարգի կառուցվածքային հիմնախնդիրներ: *Բրոնիովսկու* գործում ըստ էության դատավճիռն առաջին դեպքն էր, երբ դատարանը նման ձևով էր որակում իր վճիռներից մեկը: Նոր օրենսդրության ուժի մեջ մտնելուց հետո, որով փոխհատուցման ավելացված մակարդակ էր ապահովվում Բուգ գետի բոլոր գանգատարկուների համար (մոտավորապես 80.000 անձ), կառավարությունը և դիմողը հանգեցին բարեկամական կարգավորման, որով կառավարությունը, ի թիվս այլոց, հայտարարում էր, որ կձեռնարկի գործնական միջոցներ փոխհատուցման սխեման առավել արդյունավետ դարձնելու համար և դիմողին դրամական և ոչ դրամական կորուստների դիմաց փոխհատուցում կվճարի 54 հազար եվրո: Մեծ պալատը միաձայն որոշեց հետևյալը.

37.…Դատարանը հարկ է համարում հաշվի առնել ոչ միայն դիմողի դրությունը, այլև՝ Լեհաստանի իրավական համակարգի այն թերությունների շտկմանն ուղղված միջոցները, որոնք հիշատակվում են հիմնական դատավճռում՝ որպես հայտնաբերված խախտումների աղբյուր:

Հաշվի առնելով բարեկամական կարգավորման առնչությամբ կառավարության ձեռնարկած ընդհանուր և մասնավոր միջոցները՝ մեծ պալատը հանգում է այն եզրակացության, որ համաձայնագիրը հիմնված է «մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի վրա», հետևաբար գործը պետք է ցուցակից հանվի:

Նախարարների կոմիտեն իր Res(2002) 59 որոշմամբ պաշտոնապես շեշտել է «բոլոր գործերում բարեկամական կարգավորման հնարավորությունների հետագա քննարկման» կարևորությունը: Կոմիտեն նշում է, որ բարեկամական կարգավորման տարբերակները կօգնեն թեթևացնելու դատարանի ծանրաբեռնվածությունը և կապահովեն «արագ ու գոհացուցիչ լուծումներ կողմերի համար»:

(v) Ցուցակից հանում

Կոնվենցիայի 37(1) հոդվածի համաձայն՝ դատարանը քննության ցանկացած փուլում կարող է որոշել գանգատը հանել գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այն եզրակացության, որ (ա) դիմողը մտադիր չէ հետամուտ լինել իր գանգատին, (բ) վեճն արդեն կարգավորվել է, (գ) դատարանի կողմից հիմք ընդունված որևէ այլ պատճառով գանգատի քննությունը շարունակելն արդարացված չէ: Վերը (*Կարների* գործ) մենք արդեն քննարկեցինք, թե ինչպես է կիրառվել 37(1) հոդվածը ստրասբուրգյան վարույթի ընթացքում դիմողի մահվան պատճառով: Այդ դրույթի վիճելի մեկ այլ կիրառում է այն դեպքը, երբ պատասխանող պետությունը գանգատի առնչությամբ միակողմ հայտարարությամբ է հանդես գալիս (օրինակ՝ ներողություն է հայցում և առաջարկում որոշակի գումար վճարել դիմողին *ex gratia*, այնուհետև խնդրում է դատարանին գանգատը հանել գործերի ցուցակից, մինչդեռ դիմողը հրաժարվում է ընդունել այդ միակողմ առաջարկը (որը «բարեկամական կարգավորում» չէ) և պահանջում է, որ դատարանը շարունակի գանգատի քննությունը: Նման իրավիճակներում կիրառելի սկզբունքների մասին դատարանը հայտարարել է *«Թահսին Աջարն ընդդեմ Թուրքիայի» (Tahsin Acar v Turkey)* գործում, որի առնչությամբ դատավճիռը (նախնական փաստաթուղթ) կայացվել է 2003 թ. մայիսի 6-ին: Դիմողը գանգատ էր ուղղել դատարանին՝ հայտարարելով, որ իր եղբայրն անհետացել է պետության գործակալների կողմից բռնության գործադրման պայմաններում: Հանձնաժողովը գանգատն ընդունելի էր հայտարարել և գործը փոխանցել դատարան, երբ նախկին մարմինն արդեն լուծարվել էր: Կողմերը չկարողացան բարեկամական կարգավորման տարբերակ ընտրել: Եվ կառավարությունը խնդրեց, որ դատարանը գանգատը հանի գործերի ցուցակից ստորև բերված միակողմ հայտարարության հիման վրա.

Ես հայտարարում եմ, որ Թուրքիայի Հանրապետության կառավարությունն առաջարկում է դիմող պարոն Թահսին Աջարին ex gratia հիմունքով վճարել 70 հազար ֆունտ ստեռլինգ թիվ 26307/95 համարի տակ գրանցված գանգատի կապակցությամբ:

Ֆունտ ստեռլինգով այդ գումարը, որ հատուցում է դրամական և ոչ դրամական բոլոր վնասներն ու ծախսերը և հարկման ենթակա չէ, վճարվելու է դիմողի նշած բանկային հաշվեհամարին: Գումարը վճարվելու է դատարանի կողմից դատավճռի հրապարակումից հետո երեք ամսվա ընթացքում և համարվելու է գործի վերջնական հանգուցալուծումը:

Կառավարությունը ցավում է այն իրադարձությունների համար, որոնք հանգեցրել են սույն գանգատի քննությանը, մասնավորապես՝ դիմողի եղբոր՝ պարոն Մեհմեդ Սալիմ Աջարի անհետացման և նրա ընտանիքին պատճառված տառապանքի համար:

Ընդունված է, որ պաշտոնապես չգրանցված ազատազրկումը և մարդկանց անհետացման փաստի ոչ բավարար քննությունը կոնվենցիայի 2-րդ, 5-րդ և 13-րդ հոդվածների խախտում են: Կառավարությունը պարտավորվում է արձակել համապատասխան ցուցումներ և ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի ազատությունից զրկելու յուրաքանչյուր դեպք լիարժեք և ճշգրիտ արձանագրվի համապատասխան մարմինների կողմից՝ համաձայն կոնվենցիայով սահմանված նրանց պարտականությունների, իսկ մարդկանց անհետացման մասին յուրաքանչյուր հայտարարություն մանրակրկիտ հետաքննվի:

Կառավարությունը հավատացած է, որ այս և նման այլ դեպքերում Նախարարների կոմիտեի կողմից Թուրքիայի նկատմամբ դատարանի վճռի իրականացման վերահսկումը համապատասխան մեխանիզմ է՝ ապահովելու, որ բարեփոխումներ տեղ գտնեն տվյալ համատեքստում: Այդ կապակցությամբ սույն գործընթացի համար անհրաժեշտ համագործակցությունը շարունակվելու է…

Դիմողն առարկեց կառավարության խնդրանքին, սակայն, ի վերջո, դատարանը, վեց կողմ, մեկ դեմ ձայների հարաբերակցությամբ, գանգատը հանեց գործերի ցուցակից՝ ղեկավարվելով կոնվենցիայի 37(1)(գ) հոդվածով:

64. Դատարանը հանգամանորեն ուսումնասիրեց պատասխանող կառավարության հայտարարության պայմանները: Հաշվի առնելով հայտարարությունում տեղ գտած խոստովանությունների բնույթը, ինչպես նաև դրան վերաբերող տարբեր ձեռնարկումների շրջանակն ու ծավալը և առաջարկվող փոխհատուցման գումարը, դատարանը համարեց, որ գանգատի քննության շարունակությունն անիմաստ կլիներ [դատավճիռ՝ 9 ապրիլի, 2002 թ.]:

Ղեկավարվելով կոնվենցիայի 43-րդ հոդվածով՝ դիմողը դիմեց մեծ պալատ՝ խնդրելով գանգատը չհանել գործերի ցուցակից, քանզի, նրա համոզմամբ, կային լուրջ հիմքեր պնդելու, որ «հարգանքը

մարդու իրավունքների նկատմամբ» պահանջում է, որ դատարանը շարունակի գործի քննությունն ըստ էության: Մեծ պալատը, գործի համար թուրք *ad hoc* (հատուկ հրավիրված) դատավորի անհամաձայնությամբ, որոշեց հետևյալը.

74. Նախ՝ դատարանը կարծում է, որ անհրաժեշտ է հստակ տարբերակում անել, մի կողմից, բարեկամական կարգավորման վարույթի խիստ խորհրդապահական համատեքստում կատարված հայտարարությունների և, մյուս կողմից, միակողմ հայտարարությունների միջև, ինչպիսին տվյալ դեպքում պատասխանող կառավարության հայտարարությունն է՝ արված հրապարակային և մրցակցային վարույթում, դատարանի առջև: Կոնվենցիայի 38-րդ հոդվածի 2-րդ կետի և դատարանի կանոնակարգի 62-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը կառաջնորդվի կառավարության միակողմ հայտարարությամբ և կողմերի դիտարկումներով, որոնք ներկայացվել են բարեկամական կարգավորման բանակցությունների շրջանակից դուրս, և կանտեսի կողմերի այն հայտարարությունները, որոնք արվել են գործի բարեկամական կարգավորման հնարավորություն և կողմերի միջև բարեկամական կարգավորման տարբերակներ չգտնելու պատճառներն ուսումնասիրելու համատեքստում:

75. Դատարանը համարում է, որ ղեկավարվելով կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետով, որոշակի հանգամանքներում ճիշտ կլիներ գանգատը հանել գործերի ցուցակից՝ հիմք ընդունելով պատասխանող կառավարության միակողմ հայտարարությունը, եթե նույնիսկ դիմողը ցանկանում է, որ գործի քննությունը շարունակվի: Այդուհանդերձ, պայմանավորված յուրահատուկ հանգամանքներով, միակողմ հայտարարությունը բավարար հիմքեր ապահովո՞ւմ է համարելու համար, որ կոնվենցիայով երաշխավորված հարգանքը մարդու իրավունքների նկատմամբ չի պահանջում դատարանից շարունակել գործի քննությունը (հոդվ. 37, կետ 1-ին, վերջին մաս):

76. Այս առումով կարևոր գործոնները ներառում են ներկայացված գանգատների բնույթը, բարձրացված հարցերի համադրելիությունը դատարանի կողմից նախորդ գործերում որոշված հարցերի հետ, պատասխանող կառավարության ձեռնարկած յուրաքանչյուր միջոցի բնույթն ու շրջանակները՝ նախկին նման գործերի կապակցությամբ դատարանի կայացրած վճիռների իրականացման համատեքստում, ինչպես նաև այդ միջոցների ազդեցությունը քննության առնվող գործի վրա: Կարևոր է նաև պարզել, թե արդյոք կողմերը վիճարկո՞ւմ են գործի փաստերը, և եթե այո, ապա մինչև ի՞նչ աստիճան, և ի՞նչ *prima facie* [հօգուտ հակառակի ապացույցների բացակայությամբ] ապացույցի արժեք է անհրաժեշտ վերագրել փաստերի առնչությամբ կողմերի ներկայացրած փաստարկներին: Այդ առումով կարևոր է պարզել, թե արդյոք դատարանն արդեն վերցրե՞լ է վկայություններ՝ վիճարկելի փաստերը պարզաբանելու նպատակով: Այլ կարևոր գործոններից է այն հարցը, թե իր միակողմ հայտարարությունում պատասխանող կառավարությունն արե՞լ է որևիցե խոստովանություն(ներ)՝ ընդունելու իր կողմից կոնվենցիայի խախտման հայտարարված փաստը, և եթե այո, ապա ի՞նչ ծավալ ունի այդ խոստովանությունը, և ի՞նչ միջոցներով է պետությունը պատրաստվում հատուցել դիմողին: Վերջին կետի վերաբերյալ հարկ է նշել, որ այն դեպքերում, երբ հնարավոր է վերացնել հայտարարված խախտման հետևանքները (ինչպես, օրինակ, սեփականության հետ կապված որոշ գործերում) և պատասխանող կառավարությունը հայտարարում է այդ անելու իր պատրաստակամության մասին, նախատեսվող փոխհատուցումը, ամենայն հավանականությամբ, կդիտվի բավարար՝ գանգատը գործերի ցուցակից հանելու համար, իսկ դատարանին, ինչպես միշտ, կվերապահվի իրավունք գանգատը կրկին մցնելու գործերի ցուցակ՝ համաձայն կոնվենցիայի 37-րդ հոդվածի 2-րդ կետի և դատարանի կանոնակարգի 44-րդ կանոնի 5-րդ կետի:

77. Վերը նշված ցանկը կարելի է շարունակել: Կախված յուրաքանչյուր գործի յուրահատկությունից՝ հասկանալի է, որ հետագա քննարկումները կարող են դեր խաղալ կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի նպատակներով միակողմանի հայտարարությունը գնահատելիս:

78. Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք քննության առնվող գանգատը ճի՞շտ կլինի հանել գործերի ցուցակից՝ հիմնվելով կառավարության միակողմ հայտարարության վրա, դատարանը նախևառաջ նշում է, որ գործի փաստերը վիճարկվում են կողմերի միջև: Դիմողը պնդում է, որ իր եղբայրը առևանգվել է 1994 թ. պետության գործակալների կողմից կամ առնվազն նրանց լուռ համաձայնությամբ, դրանից հետո նրան կալանավորված են պահել պետության ձեռքում, և հետագայում ներպետական որևէ արդյունավետ հետաքննություն չի անցկացվել, երբ նրա հարազատները հայտարարել կամ ենթադրել են, որ 2000 թ. հեռուստացույցով տեսել են իր եղբորը: Եթե հավատանք կառավարությանը, ապա դիմողի եղբոր առևանգումն ու անհետացումը, ներառյալ հարազատների վկայությունները երկու ժանդարմների և գյուղի պահակի դեմ, ինչպես նաև նրանց հայտարարությունները, որ տեսել են դիմողի եղբորը հեռուստացույցով, իրոք հիմք են ծառայել, որ իրազեկ մարմինների կողմից նախաձեռնվի արդյունավետ և շարունակական հետաքննություն, թեև առ այսօր այդ հետաքննությունը որևէ շոշափելի արդյունք չի տվել:

79. Երկրորդ՝ թեև կառավարությունը, մի կողմից, իր միակողմ հայտարարությունում համաձայնել է ընդունել, որ ազատազրկման պաշտոնապես չգրանցված դեպքերն ու մարդկանց անհետացման փաստի անբավարար քննությունը, ինչպես ներկա գործում է, կոնվենցիայի 2-րդ, 5-րդ և 46-րդ հոդվածների խախտում են, մյուս կողմից՝ հետագայում լուրջ

փաստարկներ է ներկայացրել առ այն, որ իր միակողմ հայտարարությունը ոչ մի դեպքում չպետք է դիտվի որպես պատասխանատվության ընդունում կոնվենցիայի այն խախտումների համար, որոնց մասին հայտարարում է դիմողը, ով գանգատ է ներկայացրել՝ առաջնորդվելով կոնվենցիայի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 18-րդ, 34-րդ և 38-րդ հոդվածներով: Դրանով կառավարությունը ժխտում է իր հայտարարության բովանդակած պատասխանատվության ընդունումը:

80. Երրորդ՝ դատարանը համարում է, որ մի շարք կարևոր առումներով *«Աքմանն ընդդեմ Թուրքիայի» (Akman v Turkey)* [2001-VI] գործը և այդ գործում կառավարության միակողմ հայտարարությունը տարբերվում են սույն գործից և դրա կապակցությամբ կառավարության միակողմ հայտարարությունից:

81. Սկսենք նրանից, որ *Աքմանի* գործում որևէ առարկություն չկար այն փաստի շուրջ, որ դիմողի որդուն սպանել են Թուրքիայի անվտանգության ուժերը: Կողմերը չէին համաձայնում միայն այն հարցի առնչությամբ՝ անվտանգության ուժերը գործել են օրինական ինքնապաշտպանության շրջանակներո՞ւմ, թե՞ սպանությունը տեղի է ունեցել նրանց կողմից ուժի չարաշահման հետևանքով:

Ավելին, իր միակողմ հայտարարությունում, որը դատարանին ներկայացվեց այն պահին, երբ դատարանն էր արդեն պատրաստվում ցուցմունքներ վերցնել, կառավարությունն ընդունում է կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման փաստը՝ համաձայնելով, որ դիմողի որդին զոհվել է անհարկի ուժի գործադրման հետևանքով՝ չնայած ներպետական օրենքների պահանջներին: Ի լրումն՝ կառավարությունը հանձն առավ հրապարակել համապատասխան ցուցումներ և ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի ապագայում ապահովվի (կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորվող) կյանքի իրավունքը, ներառյալ՝ արդյունավետ հետաքննություն իրականացնելու իր պարտավորությունը, և այդ առնչությամբ վկայակոչեց վերջերս ընդունված իրավական և վարչարարական նոր միջոցառումները, որոնք, իր պնդմամբ, արդեն իսկ արդյունք են տվել՝ կրճատելով մահացու ելքերի թիվը դիմողի որդու մահվան հանգամանքներին նմանվող իրավիճակներում:

Այնուհետև կառավարությունը պարտավորություն էր ստանձնել համագործակցել Նախարարների կոմիտեի հետ, որը վերահսկելու էր դատարանի որոշումների իրականացման գործընթացն այդ և նման այլ գործերում, որպեսզի ապահովվեր բարեփոխումների ընթացքը և դիմողի փոխհատուցումը՝ 85.000 ֆունտ ստեռլինգի վճարումը:

Եվ, վերջապես, քանի որ նախկինում դատարանի քննության առած մի շարք այլ գանգատներում դատարանն արդեն սահմանել էր պատասխանող պետության՝ կոնվենցիայից բխող պարտավորությունների բնույթն ու ծավալն այն դեպքերում, երբ անվտանգության ուժերը անօրինական սպանություններ էին կատարել, դատարանը կարող էր բավարարվել, որ կոնվենցիայով սահմանված հարգանքը մարդու իրավունքների նկատմամբ չի լիազորում գանգատի քննության շարունակություն:

82. Դատարանի կարծիքով՝ չվիճարկվող սպանության դեպքն անվտանգության ուժերի կողմից, երբ պատասխանող կառավարությունն ընդունում է, որ այդ սպանությունն ավելորդ ուժի գործադրման հետևանք է՝ ի խախտումն կոնվենցիայի 2-րդ հոդվածի, չի կարող համեմատվել մարդու առեղծվածային անհետացման դեպքի հետ, երբ, համաձայն պնդումների, այդ մարդն առևանգվել է պետության գործակալների կողմից կամ նրանց լուռ համաձայնությամբ: Վերը հիշատակված *Աքմանի* գործում փաստերի հետագա քննությունը ներպետական իշխանությունների կամ դատարանի կողմից ավելի պակաս հրատապ էր, քանի որ պատասխանող պետությունն արդեն իր վրա էր վերցրել սպանության պատասխանատվությունը՝ կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն: Ավելին, դատարանի՝ նախկին մի քանի նմանատիպ գործերի առնչությամբ կայացրած վճիռների կապակցությամբ, որոնց իրականացման վերահսկողությունն իրականացնում էր Նախարարների կոմիտեն, և դատարանը համարել էր, որ Թուրքիան խախտել է կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունները, պատասխանող կառավարությունն արդեն ձեռնարկել էր կամ հանձն էր առել ձեռնարկել հատուկ միջոցներ, որոնք նպատակ ունեին ապագայում կանխելու դատարանի կողմից նշված թերությունները:

83. Տվյալ գործում, այնուամենայնիվ, կառավարության կողմից ներկայացված հայտարարությամբ պատշաճ կերպով չի անդրադառնում դիմողի կրած վնասներին, ինչպես պահանջվում է կոնվենցիայով: Ոչ մի տեղ չեն հիշատակվում այն միջոցները, որոնք կառավարությունը խոստանում է ձեռնարկել որոշ գանգատներին արձագանքելու նպատակով: Կառավարությունն ընդամենը ընդհանուր պարտավորություն է ստանձնում՝ գործադրելու ջանքեր, որպեսզի ապագայում կանխվեն մարդկանց անհետացման դեպքերը, առանց հիշատակելու, թե հատկապես այս դեպքի համար ի՞նչ գործնական և տեղին միջոցներ պետք է ձեռնարկվեն:

84. Դատարանը համարում է, որ կոնվենցիայի համաձայն՝ դիմողի կողմից առաջադրված մեղադրանքների լիարժեք ընդունումը դեռևս չի կարող անհրաժեշտ և պարտադիր պայման լինել, որպեսզի դատարանը պատրաստ լինի գանգատը հանել գործերի ցուցակից՝ հիմնվելով պատասխանող կողմի միակողմ հայտարարության վրա: Այդուհանդերձ, այն դեպքերում, երբ մարդիկ անհետանում կամ սպանվում են անհայտ հանցագործների կողմից, և կան ապացույցներ՝ հերքման բացակայության պարագայում, որոնք հաստատում են մեղադրանքներն այն մասին, թե ներպետական հետաքննությունները չեն իրականացրել կոնվենցիայով պահանջվող բոլոր անհրաժեշտ միջոցառումները, միակողմ

հայտարարությունն առնվազն պետք է պարունակի այդ մեղադրանքների ընդունումը և դրա հետ մեկտեղ պատասխանող կառավարության խոստումը, որ Նախարարների կոմիտեի հսկողությամբ, կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պարտականությունների համաձայն, կիրականացվի հետաքննություն՝ ըստ կոնվենցիայի պահանջների, ինչպես սահմանվել է դատարանի կողմից համանման նախորդ գործերի դեպքում (տե՛ս, օրինակ՝ *«Քյուրտն ընդդեմ Թուրքիայի» (Kurt v Turkey)* գործը, որի առնչությամբ դատավճիռը կայացվել է 1998 թ. մայիսի 25-ին (Զեկույցներ դատավճիռների և որոշումների մասին 1998-III), *«Չաքըջըն ընդդեմ Թուրքիայի» (Cakıcı v Turkey)* գործը (GC, թիվ 23657/94, ECHR 1999-IV) *«Էրթակն ընդդեմ Թուրքիայի» (Ertak v Turkey)* գործը (թիվ 20764/92, ECHR 2000-V), *«Թիմուրթաշն ընդդեմ Թուրքիայի» (Timurtas v Turkey)* գործը (թիվ 23531/94, ECHR 2000-VI), և *«Թասն ընդդեմ Թուրքիայի» (Tas v Turkey)* գործը (թիվ 24396/94, 14 նոյեմբերի, 2000թ.)):

85. Քանի որ տվյալ գործում կառավարության ներկայացրած հայտարարությունը չի պարունակում որևէ նման ընդունում կամ նման հանձնառություն, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը պահանջում է, որ գործի քննությունը շարունակվի՝ կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված վերջնական դատավճռի համաձայն: Հետևաբար, գանգատը չի կարող հանվել գործերի ցուցակից կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետով սահմանված կարգով, քանի որ հայտարարությունը բավարար հիմքեր չի ապահովում՝ վճռելու, որ գանգատի հետագա քննությունն այլևս արդարացված չէ:

86. Որպես եզրակացություն՝ դատարանը մերժում է կառավարության խնդրանքը գանգատը կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետով սահմանված կարգով գործերի ցուցակից հանելու մասին և, հետևաբար, շարունակելու է գործի քննությունն ըստ էության:

Վերը նշված վճիռը ցույց տվեց, որ մեծ պալատը որդեգրել է խիստ հաստատական մոտեցում այն հարցին, թե արդյոք պատասխանող կառավարության միակողմ հայտարարությունը բավականաչափ սպառիչ հիմնավորո՞ւմ է դատարանի համար գանգատը գործերի ցուցակից հանելու հարցում: *Թահսին Աջարի* գործի ըստ էության քննությանը հետևող դատավճռում (8 ապրիլի, 2004 թ.) մեծ պալատը միաձայն հաստատեց, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված ընթացակարգային (հետաքննության) պարտականությունների խախտում:

Դատարանի կողմից, հակառակ դիմողի կամքի, պատասխանող պետության միակողմ հայտարարությունը հիմք ընդունելու և դիմողի գանգատը գործերի ցուցակից հանելու օրինակ կարող է ծառայել *«Մերիակրին ընդդեմ Մոլդովայի» (Meriakri v Moldova)* դատական գործը, որի առնչությամբ վճիռը կայացվել է 2005 թ. մարտի 1-ին: Դիմողը պնդում էր, որ քանի դեռ ինքը բանտում էր, իշխանությունները, ի խախտումն 8-րդ հոդվածի, բացել և կարդացել են իր նամակագրությունը դատապաշտպանի և դատարանի հետ: Երբ գործի հանգուցալուծման շուրջ չհաջողվեց հասնել բարեկամական կարգավորման, կառավարությունը տեղեկացրեց դատարանին, որ հարցի լուծման նպատակով անում է հետևյալ հայտարարությունը.

— Դիմողին վճարվելու է 890 եվրոյին համարժեք մոլդովական լեյ (այդ պահին կիրառելի փոխարժեքով, որ կազմում էր 14.000 լեյ)՝ որպես փոխհատուցում ցանկացած դրամական վնասի դիմաց, որ նրան պատճառվել է իր դատապաշտպանի և դատարանի հետ վարած նամակագրությանը միջամտելու հետևանքով: Այդ կապակցությամբ կառավարությունը նշեց, որ Մոլդովայում նվազագույն աշխատավարձը կազմում է 100 մոլդովական լեյ:

— Դիմողից պաշտոնապես ներողություն է հայցվելու այն փաստի համար, որ կալանավայրի ղեկավարությունը միջամտել է նրա նամակագրությանը:

— Ազգային օրենքները ներդաշնակեցվելու են կոնվենցիայի պահանջների հետ այնպիսի հարցերում, ինչպիսին է ազատազրկման դատապարտված բանտարկյալների իրավունքը՝ վարելու գաղտնի նամակագրություն դատարանի և իրավական այլ մարմինների հետ:

Պալատը միաձայն որոշեց, որ հաշվի առնելով կառավարության ստանձնած պարտավորությունները, դիմողին վճարվելիք գումարի չափը և դատարանի կողմից հաստատված նախադեպային իրավունքը բանտարկյալների կողմից գաղտնի նամակագրություն վարելու իրավունքի հարցում՝ այլևս հիմնավորված չի համարում շարունակել գործի քննությունը:

(vi) Վճիռ

Եթե կողմերը համաձայնության չեն գալիս բարեկամական կարգավորման հարցում, և գանգատը չի փոխանցվում մեծ պալատ կամ չի հանվում գործերի ցուցակից, ապա պալատը կայացնում է իր վճիռը: Պալատները գործի ելքը որոշում են մասնակից դատավորների ձայների մեծամասնության հիման վրա: Պալատի յուրաքանչյուր դատավոր իրավունք ունի առանձին կարծիք հայտնելու (համաձայնություն կամ առարկություն): Վճռում սահմանվում են պալատի ստուգած փաստերը: Դատարանի կողմից կիրառվող ապացուցելիության չափանիշը «ողջամիտ կասկածից վեր» չափանիշն է: Մշտական դատարանն այս չափորոշիչը հաստատեց մեծ պալատի վճռով *«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի»* գործում, ECHR 2001-IV:

112. Դատարանը նշում է նաև, որ ընդունելի հայտարարված տարբեր գանգատների հետ կապված ապացույցները գնահատելիս հանձնաժողովը կիրառել է «ողջամիտ կասկածից վեր» ապացույցը, որն էլ դատարանի կողմից հայտարարվել է *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործի առնչությամբ 1978 թ. հունվարի 18-ին կայացված վճռում (շարք A, թիվ 25)՝ նշելով, որ նման ապացույցը կարող է բխել բավականաչափ ամուր, հստակ և համատեղելի հետևությունների կամ չհերքված ենթադրությունների կամ կանխավարկածների համատեղ գոյությունից (նույն տեղում, էջ 64–65, պարբ. 161):

113. Դատարանն իր կողմից հաստատում է այդ չափորոշչի կիրառումը, մանավանդ որ այն առաջին անգամ հայտարարվել է նախկին միջպետական գործերից մեկի համատեքստում և այդ գործի վճռի կայացման օրվանից դարձել դատարանի կողմից հաստատված նախադեպային իրավունքի մաս (որպես ավելի թարմ օրինակ՝ տե՛ս *«Սալմանն ընդդեմ Թուրքիայի» (Salman v Turkey)* գործը, թիվ 21986/93, պարբ. 100, ECHR 2000-VII):

Որոշ դիմողներ և մարդու իրավունքներով զբաղվող խմբեր քննադատել են այս չափորոշիչը՝ համարելով, որ այն սահմանում է ապացուցելիության չափազանց բարձր չափանիշներ, ինչը հնարավորություն է տալիս պետություններին խուսափելու կոնվենցիայով սահմանված պատասխանատվությունից: Օրինակ՝ *«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի» (Nachova and Others v Bulgaria)* գործի առնչությամբ 2005 թ. հուլիսի 6-ին կայացված վճռում «Interights» կազմակերպությունը և դիմողների ընտանիքները բողոք էին հայտնել կոնվենցիայի 14-րդ հոդվածով՝ այդ չափորոշչի կիրառման խտրականության հարցի շուրջ: Մեծ պալատը պաշտպանեց չափորոշչի կիրառության շարունակությունը, բայց իր վճռի 147-րդ պարբերությունում բացատրեց, թե ինչով է այն տարբերվում ներպետական քրեական իրավունքի չափորոշչից (տե՛ս ստորև, էջ 871).

Պալատն այսուհետ կիրառելու է կոնվենցիայի օրենքը (այսինքն՝ կոնվենցիայի համապատասխան հոդվածների նկատմամբ իր իրավազորության հաստատված իրավական սկզբունքները) հաստատված փաստերի նկատմամբ: Եթե պալատը եզրակացնում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի դրույթների խախտում, իսկ դիմողը դիմել է արդարացի հատուցման համար (41-րդ հոդվածով), ապա պալատը որոշում է՝ հատուցումը պե՞տք է հատկացվի, թե՞ ոչ (տե՛ս գլուխ 19):

2004 թ.՝ դատարանի կողմից ներկայացված գործը ստանալուց հետո, Նախարարների կոմիտեն որոշում կայացրեց [Res (2004)3]՝ խնդրելով, որ դատարանը սահմանի.

... իր վճիռներում, եթե հայտնաբերվել է կոնվենցիայի խախտման փաստ, թե ի՛նչն է ինքը համարում հիմնական համակարգային հիմնախնդիր, և որն է այդ հիմնախնդրի պատճառը, մասնավորապես, եթե կա հավանականություն, որ այդ հիմնախնդիրն առիթ է լինելու բազմաթիվ այլ գանգատների համար, որպեսզի օգնեն պետություններին գտնելու համապատասխան լուծումներ, իսկ Նախարարների կոմիտեին՝ վերահսկելու վճիռների իրականացումը:

«Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի» ECHR 2004-V (տե՛ս վերը՝ էջ 41) գործում դատարանն իր վճիռը որակեց որպես «փորձնական վճիռ»: Դա կատարվեց այն պատճառով, որ գործը պատասխանող կառավարության իրավական համակարգում ի հայտ էր բերում համակարգային/կառուցվածքային հիմնախնդիր, որն իր ազդեցությունն էր թողնում բազմաթիվ այլ մարդկանց վրա: Արդեն իսկ վճռի կայացման պահին դատարանի վարույթին էին սպասում *Բուգ գետի* գործով167 այլ գանգատներ: Ավելի ուշ՝ *Բրոնիովսկու* գործով արդարացի հատուցման վերաբերյալ վճիռ կայացնելիս, մեծ պալատը նշում էր հետևյալը.

35. Հիմնական վճիռը «փորձնական վճիռ» որակելու նպատակն էր նպաստել, որ հրատապ և արդյունավետ կերպով լուծվի ազգային՝ այս դեպքում Լեհաստանի իրավական համակարգում սեփականության իրավունքի պաշտպանության վրա ազդող հիմնախնդիրը: Դատարանի կողմից քննության առնված կարևորագույն գործոններից էր այն ահագնացող վտանգը, որ սպառնում է կոնվենցիայի համակարգին և դատարանի՝ գանգատների հարաճուն քանակին լուծում տալու կարողությանը, որը հետևանք է, ի թիվս այլոց, միևնույն կառուցվածքային կամ համակարգային հիմնախնդրից բխող բազմաթիվ կրկնվող դեպքերի: Անշուշտ, փորձնական վճռի կարգը կոչված է նախ և առաջ աջակցելու բարձր պայմանավորվող պետություններին՝ ազգային մակարդակում լուծելու այդ հիմնախնդիրները, դրանով իսկ պաշտպանելով շահագրգիռ անձանց՝ կոնվենցիայի 1-ին հոդվածով ճանաչված իրավունքներն ու ազատությունները, առաջարկելով նրանց հատուցման առավել արագ տարբերակներ և միաժամանակ թեթևացնելով դատարանի ծանրաբեռնվածությունը, որն այլապես ստիպված կլիներ քննության առնել միևնույն բովանդակությամբ մեծաքանակ գանգատներ: Նշենք, որ պարոն Բրոնիովսկու գանգատի առնչությամբ կայացված փորձնական վճռով դատարանը խախտումը հաստատելուց հետո նաև հետաձգեց այն գանգատների քննությունը, որոնք բխում էին միևնույն հանրնդհանուր պատճառից, այն է՝ «սպասում են համապատասխան համընդհանուր միջոցառումների իրականացմանը» (նույն տեղում, պարբ. 198):

Այսպիսով, դատական մարմնի այս բացառիկ պատասխանը վեր է հանում կոնվենցիայով ճանաչված իրավունքների այն խախտումները, որոնք ազդում են բազմաթիվ մարդկանց վրա և, հետևաբար, պահանջում են հրատապ լուծումներ պատասխանող պետությունից, որպեսզի պաշտպանվեն շահագրգիռ անձինք, և կանխվի դատարանի ծանրաբեռնումը միևնույն խախտումներից բխող գանգատներով:

Հետագայում քննված *«Քսենիդես-Արեստիսն ընդդեմ Թուրքիայի» (Xenides-Arestis v Turkey)* գործում, որի դատավճիռը կայացվեց 2005 թ. դեկտեմբերի 22-ին, պալատը փորձնական վճիռ կայացրեց Թուրքիայի իշխանությունների կողմից Կիպրոսի հույն բնակչին Կիպրոսում գտնվող իր տան և սեփականության նկատմամբ արգելք դնելու գործի առնչությամբ: Հակառակ Թուրքիայի կողմից նշանակված պետական դատավորի կարծիքին՝ դատարանը հայտնաբերեց կոնվենցիայի 8-րդ հոդվածի և 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում: Երբ դատարանը պարզեց, որ իր վարույթում վճռի են սպասում սեփականության հարցով Թուրքիայի դեմ հարուցված մոտ 1400 համանման գանգատներ, պալատը (միաձայն) որոշեց հետևյալը՝ վկայակոչելով կոնվենցիայի 46-րդ հոդվածը.

40. Դատարանը համարում է, որ պատասխանող պետությունը պետք է կիրառի դատական պաշտպանության այնպիսի միջոց, որով ապահովվում է իրապես արդյունավետ հատուցում տվյալ դիմողի՝ կոնվենցիայով սահմանված իրավունքների խախտման դիմաց, ինչպես նշվում է փորձնական վճռում, ինչպես նաև ի հատուցումն դատարան ներկայացված համանման բոլոր այլ գանգատների, համաձայն կոնվենցիայի 8-րդ հոդվածով և 1-ին արձանագրության 1-ին հոդվածով սահմանված իրավունքների պաշտպանության սկզբունքների և ընդունելիության մասին 2005 թ. մարտի 14-ի որոշման: Նման միջոցը պետք է գործի դրվի սույն վճռի կայացման ամսաթվից հետո երեք ամսվա ընթացքում, իսկ հատուցումը պետք է տրամադրվի դրանից հետո երեք ամսվա ընթացքում:

….

50….Մինչ համապատասխան ընդհանուր միջոցների իրականացումը, որոնք պետք է ներդրվեն վերը նշված 40-րդ պարբերության համաձայն, դատարանը կհետաձգի միևնույն համընդհանուր պատճառից բխող բոլոր գանգատների քննությունը:

Նշենք այն դժվարությունները, որոնց հանդիպեց Նախարարների կոմիտեն Թուրքիայի կողմից վճռի իրականացման ապահովման հարցում *«Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի»* (*Loizidou v Turkey*) գործում (տե՛ս ստորև՝ էջ 51), որը վերաբերում էր Հյուսիսային Կիպրոսում գտնվող սեփականությանը:

Փորձնական վճռի կիրառման դեմ առարկությամբ մեծ պալատի առջև հանդես եկավ կառավարությունը *«Հուտտեն-Չապսկան ընդդեմ Լեհաստանի» (Hutten-Czapska v Poland)* գործում, որի առնչությամբ վճիռը կայացվել 2006 թ. հունիսի 19-ին (տե՛ս ստորև՝ էջ 1006): Ի թիվս այլոց, կառավարությունն առարկում էր, որ դիմողի հանգամանքները բնորոշ և տիպական չէին մնացած տանտերերի համար: Մեծ պալատի մեծամասնությունը՝ տասնվեց կողմ և մեկ դեմ ձայներով, պաշտպանեց պալատի՝ այս կարգը կիրառելու վերաբերյալ խնդրանքը.

236. …Թեև դատարան ներկայացված նման գանգատների թիվն արդեն հասել է 18-ի, մի թիվ, որը *Բրոնիովսկու* գործի համեմատությամբ կարող է աննշան թվալ, այդ գանգատներից մեկը ներկայացվել է շուրջ 200 տանտերերից բաղկացած միության կողմից, որոնք պնդում են, թե խախտվել են իրենց անձնական իրավունքները: Ամեն դեպքում «սիստեմատիկ իրավիճակ» բնութագրի կիրառումը, որով հիմնավորվում է փորձնական վճռի կիրառումը, պարտադիր կերպով չպետք է կապված լինի արդեն իսկ ներկայացված համանման գանգատների թվի հետ կամ հիմնվի այդ թվի վրա: Համակարգային կամ կառուցվածքային խախտումների համատեքստում ապագա գանգատների պոտենցիալ ներհոսքը նույնպես կարևոր հանգամանք է դատարանի գրանցամատյանում կուտակվող կրկնվող գործերի մուտքը կանխելու առումով, որը խանգարում է այլ գործերի արդյունավետ քննությանը՝ առաջ բերելով այնպիսի իրավունքների խախտումներ, երբեմն նույնիսկ լուրջ խախտումներ, որոնց պաշտպանության համար է ստեղծված դատարանը:

Այսպես, երբ որոշվում է որևէ գործի առնչությամբ փորձնական վճռի կիրառման հարցը, դատարանը հաշվի է առնում ոչ միայն իր վարույթին սպասող և միևնույն կառուցվածքային հիմնախնդրին վերաբերող գանգատների թիվը, այլև այդ նույն հիմնախնդրին վերաբերող պոտենցիալ այլ գանգատները:

Մասնակի չհամընկնող կարծիք հայտնող դատավոր Զագրեբելսկին իր եզրակացությունում մտահոգություն է արտահայտել «փորձնական վճռի ընթացակարգի իրավական թույլ հիմքերի» առնչությամբ: Նա համաձայն չէր մեծամասնության կարծիքին՝ համարելով, որ դատարանն այդ մոտեցումով միջամտում է Նախարարների կոմիտեի՝ վճիռների իրականացման նկատմամբ վերահսկողություն սահմանելու իրավասությանը:

(vii) Գործի հանձնումը մեծ պալատ

Պալատի վճիռ կայացնելու օրվանից երեք ամսվա ընթացքում, կոնվենցիայի 43-րդ հոդվածի համաձայն, գործի կողմերից յուրաքանչյուրը կարող է (բացառիկ դեպքերում) դիմել մեծ պալատ՝ խնդրելով գործի վերալսում մեծ պալատում: Այս անսովոր հնարավորությունը, որով միևնույն դատարանը երկրորդ անգամ է վճիռ կայացնում, ըստ էության, քաղաքական զիջում էր, որն անհրաժեշտ էր անդամ պետություններից թիվ 11 արձանագրությամբ սահմանված բարեփոխումների հաստատումը ստանալու համար: Ձտող հանձնախումբը (որի կազմում են դատարանի նախագահը, երկու բաժինների նախագահներ [ընտրված ռոտացիոն սկզբունքով] և երկու դատավորներ [ընտրված մյուս բաժինների կողմից], դատարանի կանոնակարգի 24(5) կանոն, հուլիս 2006 թ.) գործը վերալսման է ընդունում միայն այն դեպքում, եթե այն արծարծում է այնպիսի լուրջ հարց, որը վերաբերում է կոնվենցիայի կամ նրան կից արձանագրությունների մեկնաբանմանը կամ կիրառմանը, կամ ընդհանուր կարևորության այլ լուրջ խնդիր (հոդված 43(2)): Այս չափանիշի կիրառման հարցում մեծ պալատը չափազանց խիստ մոտեցում է ցուցաբերել, օրինակ, *«Կ.-ն և Թ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (K. and T. v Finland)* գործում (վճիռը՝ 12 հուլիսի, 2001 թ.), երբ առաջին դիմումը չէր ընդունվում մինչև 2000 թ. հոկտեմբեր (տե՛ս նաև ստորև՝ էջ 560-561, հոդված 8-ի համաձայն՝ դիմողի գանգատի բովանդակության վերաբերյալ): Այդ գործում մեծ պալատն իր մոտեցումն արտահայտեց 43-րդ հոդվածով սահմանված իր լիազորությունների շրջանակի վերաբերյալ.

140. Նախ՝ դատարանը ցանկանում է ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ 43-րդ հոդվածի բոլոր երեք կետերում մեծ պալատի քննությանը ներկայացված հարցը բնութագրելու համար օգտագործվում է «գործ» (l'affaire) եզրույթը: Մասնավորապես՝ 43-րդ հոդվածի 3-րդ կետում ասվում է, որ մեծ պալատը «գործը լուծում է՝ վճիռ կայացնելով», այսինքն՝ ամբողջ գործը, ոչ թե սոսկ «լուրջ հարցը» կամ «լուրջ խնդիրը», որոնց մասին խոսվում է 2-րդ կետում: 43-րդ հոդվածի ձևակերպումից պարզ է դառնում, որ թեև գործի կողմերից որևէ մեկի դիմումն ընդունելու համար նախապայման է համարվում այն, որ «գործն արծարծում է այնպիսի լուրջ հարց, որը վերաբերում է կոնվենցիայի կամ նրան կից արձանագրությունների մեկնաբանմանը կամ կիրառմանը, կամ ընդհանուր կարևորության այլ լուրջ խնդիր» (հոդված 43(2)), գործի ընդունման հետևանքը լինում է այն, որ այն հանձնվում է մեծ պալատ «ամբողջությամբ», որպեսզի մեծ պալատը նորովի լուծում տա խնդրին՝ կայացնելով նոր վճիռ (հոդված 43(3)): Նույն «գործ» (l'affaire) եզրույթն օգտագործվում է նաև 44(2) հոդվածում, որով սահմանվում են, թե ինչ պայմաններում է պալատի վճիռը դառնում վերջնական: Եթե 43-րդ հոդվածով սահմանված հիմունքներով գործի կողմերից որևէ մեկի դիմումն ընդունվում է, ապա 44-րդ հոդվածը կարելի է հասկանալ միայն այնպես, որ պալատի ամբողջ վճիռը դրվելու է մի կողմ և դրա փոխարեն կայացվելու է մեծ պալատի նոր վճիռ, որը նախատեսվում է 43(3) հոդվածով: Այսպիսով, եթե «գործը» հանձնվում է մեծ պալատ, ապա դա անպայման ներառում է պալատի կողմից նրա վճռում քննված գանգատի բոլոր կողմերը, ոչ թե սոսկ

այն «հարցը» կամ «խնդիրը», որը հիմք է ծառայել գործը մեծ պալատին փոխանցելու համար: Այլ կերպ ասած՝ չկա որևէ հիմնավորում գործի սոսկ մի մասը մեծ պալատի քննությանը հանձնելու համար:

141. Հստակեցնելու համար դատարանը կարող է միայն ավելացնել, որ մեծ պալատին հանձնված «գործը» գանգատն է, այնքանով, որքանով այն հայտարարվել է ընդունելի (տե՛ս *mutatis mutandis* «*Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության*» գործով կայացված վճիռը (1978), A.25, պարբ. 157): Սա չի նշանակում, թե հարկ եղած դեպքում մեծ պալատը չի կարող քննության առնել նաև գանգատի ընդունելիությանը վերաբերող հարցերը ճիշտ այնպես, ինչպես հնարավոր է պալատի նորմալ վարույթի ընթացքում, օրինակ՝ կոնվենցիայի 35(4) հոդվածի վերջին մասի հիման վրա (որով դատարանն իրավունք է ստանում «մերժելու իրեն հանձնված ցանկացած գանգատ, որն անընդունելի է համարում … քննության ցանկացած փուլում»), կամ եթե նման հարցերը միացված են գործի որոշակի հանգամանքներին, կամ եթե դրանք որևէ այլ կերպ կարևորվում են գործի ըստ էության քննության փուլում:

Սա նշանակում է, որ մեծ պալատը քննելու է բոլոր գանգատարկուների ընդունելի հայտարարված գործերը *de novo*, այսինքն՝ նորից: Դատարանը թույլ է տալիս, որ կողմերը մեծ պալատին ներկայացնեն «նոր նյութեր» (այսինքն՝ այնպիսի տեղեկություններ, որոնք չեն ներկայացվել ներպետական դատարաններին կամ պալատին): Մեջբերելով նախկին դատարանի կայացրած վճիռները, այդ թվում *«Կրուզ Վարասն ընդդեմ Շվեդիայի»* (1991) A.201 գործը, դատարանը որոշեց, որ «146. … Դատարանին չի արգելվում հաշվի առնել ցանկացած լրացուցիչ տեղեկություն և թարմ փաստարկ, երբ քննվում են դիմողի գանգատներն ըստ էության՝ համաձայն կոնվենցիայի պահանջների, եթե դատարանը դրանք կարևոր է համարում»: Սովորաբար գործի քննությունն ըստ էության իրականացնելիս մեծ պալատը հանրային լսումներ է անցկացնում:

Հազվագյուտ դեպքերից մեկը, երբ մեծ պալատը որոշեց, որ 43-րդ հոդվածով ներկայացված գանգատը պետք է համարվի անընդունելի, տեղի ունեցավ *«Ազինասն ընդդեմ Կիպրոսի» (Azinas v Cyprus)* գործի քննության ժամանակ (վճիռը՝ 28 ապրիլի, 2004 թ.): Մեծ պալատի անդամների ճնշող մեծամասնությունը՝ տասներկու կողմ, հինգ դեմ ձայների հարաբերակցությամբ, ընդունեց կառավարության ներկայացրած փաստարկն այն մասին, որ դիմողը չի սպառել իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները (որովհետև սեփականության իրավունքի հարցը չի բարձրացրել Կիպրոսի դատարաններում):

«Հեթթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության» (տե՛ս ստորև՝ էջ 574) գործի քննության պատմությունն արտացոլում է մեծ պալատի իրավասությունը, այն է՝ չեղյալ համարել պալատի կողմից նախկինում կայացված վճիռը: *Հեթթոնի* և *Ազինասի* նման գործերում պետության հաջողությունը բացահայտում է, թե ինչու էին պետություններն այդքան ձգտում հաստատել 43-րդ հոդվածով սահմանված կարգը՝ գործը մեծ պալատին հանձնելը:

(viii) Վճիռների իրականացում

Եթե պալատի վճիռը ենթակա չէ հանձնման մեծ պալատին (կամ զտող հանձնախումբը մերժում է գործը հանձնելու պահանջը), կամ մեծ պալատը կայացնում է վճիռը, ապա այն համարվում է վերջնական (համաձայն հոդված 44-ի): Պատասխանող պետությունը պարտավոր է ենթարկվել այդ վճռին (համաձայն հոդված 46(1)-ի): Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետով Նախարարների կոմիտեն պատասխանատու է բոլոր վճիռների իրականացման ընթացքի վերահսկման համար: Նախարարների կոմիտեն ընդունել է կանոններ (վերջնական տարբերակը համաձայնեցվել է 2006 թ. մայիսին, որով ակնկալվում է թիվ 14 արձանագրության ուժի մեջ մտնելը), որոնցով ղեկավարվում է 46(2) հոդվածի կիրառումը: Կանոններում ասվում է, որ վճիռների կատարման վերահսկողությունը սովորաբար իրականացվում է մարդու իրավունքների հարցերին վերաբերող նիստերի ընթացքում, որոնց օրակարգը հրապարակային է: Եթե կոմիտեի նախագահին այն պետության ներկայացուցիչն է, որին վերաբերում է 46(2) հոդվածով վերահսկվող վճիռը, ապա գործի քննության ընթացքում նախագահը պարտավոր է հանձնել իր պաշտոնը: Երբ վճիռը (որում դատարանի կողմից արձանագրվել են կոնվենցիայի կամ դրա արձանագրությունների խախտումներ) փոխանցվում է Նախարարների կոմիտեին, վերջինս առաջարկում է, որ պատասխանող կառավարությունը տեղեկացնի կոմիտեին՝ (ա) որևէ արդարացի հատուցում վճարվե՞լ է, (բ) անհատական (այսինքն՝

տվյալ դիմողի համար) որևիցե միջոց կիրառվե՞լ է, և (գ) ընդունվե՞լ են «ընդհանուր» (այսինքն՝ դիմողների ավելի լայն լրակազմին վերաբերող) միջոցներ: Քանի դեռ պատասխանող կառավարությունը չի հաստատել, որ արդարացի հատուցումը վճարվել է, կամ անհատական միջոցները ձեռնարկվել են, հարցը մնում է օրակարգում և քննվում է Նախարարների կոմիտեի հետագա յուրաքանչյուր նիստում: Եթե պատասխանող կառավարությունը տեղեկացնում է Նախարարների կոմիտեին, որ դեռևս ի վիճակի չի եղել ձեռնարկելու անհրաժեշտ ընդհանուր միջոցներ, ապա կոմիտեն հարցը քննության է դնում վեց ամիսը մեկ անգամ: Դիմողի՝ արդարացի հատուցման վճարմանը կամ անհատական միջոցների կիրառմանը վերաբերող նամակագրությունը Նախարարների կոմիտեի ուշադրությանն է հանձնվում քարտուղարության միջոցով:

Գործի վճռի կատարման վերահսկողությունն իրականացնելու ընթացքում Նախարարների կոմիտեն կարող է կայացնել ժամանակավոր որոշումներ: Դրանց նպատակն է՝ (ա) ապահովել տեղեկատվություն վճռի կատարման ընթացքի վերաբերյալ, (բ) մտահոգություն արտահայտել կամ (գ) առաջարկություններ անել: Որպես (բ) չափանիշին համապատասխանող ժամանակավոր որոշման ցայտուն օրինակ՝ կարելի է նշել *«Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի»* գործի առնչությամբ 2001 թ. հունիսի 26-ին ընդունված ժամանակավոր որոշումը՝ ResDH (2001)80 (տե՛ս ստորև՝ էջ 973).

...Հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ «Դատարան») 1998 թ. հուլիսի 28-ի վճիռը, որով Թուրքիային հրահանգվում էր մինչև 1998 թ. հոկտեմբերի 28-ը դիմողին վճարել որոշակի գումարներ վնասների, ինչպես նաև ծախքերի ու ծախսերի դիմաց,

հիշատակելով իր ժամանակավոր DH (2000) 105 որոշումը, որով Դատարանը հայտարարում էր, թե Թուրքիայի հրաժարումը Դատարանի վճիռը կատարելուց ցուցադրում է նրա միջազգային պարտավորությունների անտեսումն ինչպես կոնվենցիայի բարձր պայմանավորվող կողմի, այնպես էլ Եվրոպայի խորհրդի անդամ պետության կարգավիճակով, և որով Դատարանը խստորեն պահանջում էր, որ հարցի լրջությունը հաշվի առնելով՝ Թուրքիան անվերապահորեն և անհապաղ ենթարկվի վերը նշված վճռին,

խիստ ցավելով, որ առ այսօր Թուրքիան չի կատարել այդ վճռով սահմանված իր պարտավորությունները,

ընդգծելով, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններից յուրաքանչյուրը պարտավոր է ընդունել իրավունքի նորմերի սկզբունքները և ապահովել իր իրավազորության ներքո գտնվող բոլոր անձանց մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները,

շեշտելով, որ կոնվենցիայի ընդունումը, այդ թվում նաև՝ Դատարանի իրավազորության հարկադիր նշանակությունը և նրա վճիռների պարտադիր բնույթը դարձել են կազմակերպությանն անդամակցելու պարտադիր պայմաններ,

շեշտելով, որ կոնվենցիան իր կողմից պաշտպանվող իրավունքների հավաքական իրականացման համակարգ է՝

հայտարարվում է կոմիտեի վճռականությունը՝ կազմակերպությանը հասու բոլոր միջոցներով ապահովելու Թուրքիայի կողմից սույն վճռով սահմանված պարտավորությունների կատարումը,

և կոչ է արվում անդամ պետությունների իշխանություններին՝ այդ նպատակով ձեռնարկել բոլոր միջոցները, որոնք իրենք կհամարեն նպատակահարմար:

Ի վերջո, 2003 թ. դեկտեմբերի 2-ին Նախարարների կոմիտեի նախագահը հայտարարեց, որ Թուրքիան կատարել է վճիռը՝ վճարելով տիկին Լոիզիդուին 450.000 կիպրոսյան ֆունտ՝ որպես արդարացի հատուցում (ծախսերի և ծախքերի դիմաց): Նախագահը նշեց, որ գործի այդ ելքը բոլոր անդամ պետությունների գործադրած ջանքերի արդյունքն է:

Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների գլխավոր տնօրինությունը [Directorate General of Human Rights] օգնում է Նախարարների կոմիտեին՝ իրականացնելու վերահսկողություն վճիռների կատարման նկատմամբ: Այդ օգնությունը կարող է լինել կոմիտեին ուղղված խորհուրդների կամ պատասխանող պետության հետ հնարավոր լուծումների քննարկման ձևով: Նախարարների կոմիտեի տեղեկացմամբ՝ «[i] գործնականում կոմիտեն խիստ հազվադեպ է ստիպված լինում քաղաքական և դիվանագիտական ճնշում գործադրել: Այն գործում է որպես ազատ խորհրդակցական մարմին

կառուցողական երկխոսությունների համար՝ օգնելով պետություններին գտնելու գոհացուցիչ լուծումներ, որոնք հնարավորություն կտան կատարելու դատարանի վճիռները»: *Լոիզիդուի* գործով վճռի կատարման վերահսկումը, ակնհայտորեն, դասվում էր բացառիկ դեպքերի շարքը: Ի վերջո, եթե պետությունը չի կատարում կոնվենցիայի 46-րդ հոդվածով սահմանված իր պարտավորությունները և շարունակում է համառել, ապա նրա անդամակցությունը կասեցվում է, կամ նա հեռացվում է Եվրոպայի խորհրդից:

Որպես վճռի կատարման անհատական միջոցի օրինակ՝ կարելի է նշել *«Դ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործը (*D v United Kingdom*, տե՛ս ստորև՝ էջ 213), որում Դ-ին տրվեց անսահմանափակ իրավունք՝ մնալու Միացյալ Թագավորությունում (որտեղ նա շարունակելու էր բուժում ստանալ/վիճակը թեթևացնող բժշկական օգնություն). տե՛ս այդ գործի Res DH (98)10 վճիռը, որը Նախարարների կոմիտեն ընդունել է 1998 թ. փետրվարի 18-ին: Որպես ընդհանուր միջոցի օրինակ կարելի է նշել 1985 թ. «Հաղորդակցությանը գաղտնի միջամտելու օրենքը» [Interception of Communications Act 1985] (որով սահմանվում էր փոստային և հեռախոսային հաղորդակցությանը գաղտնի միջամտելու իրավական դաշտը)՝ ի պատասխան ստորև նկարագրված (էջ 588) *«Մալոունն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Malone v United Kingdom)* գործի (տե՛ս Res DH (86)1 որոշումը): Երբ Նախարարների կոմիտեն համարում է, որ պատասխանող պետությունն ընդունել է բոլոր անհրաժեշտ միջոցները, ընդունում է բանաձև/որոշում (ինչպես նախորդ օրինակներում), որով հաստատում է, որ 46(2) հոդվածով սահմանված իր գործառույթներն իրականացված են:

Մեկնաբան Ֆիլիպ Լիչը, որ երկար տարիների փորձ ունի ստրասբուրգյան դատավարությունների բնագավառում, հակված է այն կարծիքին, որ վճիռների իրականացման գործընթացում Նախարարների կոմիտեն պետք է ներգրավի քաղաքացիական հասարակության խմբերին՝ շահագրգիռ հասարակական կազմակերպություններին և Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովին. The Effectiveness of the Committee of Ministers in supervising the enforcement of judgments of the European Court of Human Rights [2006] *Public Law* 443:

Թիվ 14 արձանագրության համակարգը

Մշտական դատարանի աշխատանքն սկսվելուց մի քանի ամիս անց նախագահ Վիլդհաբերն սկսեց հրապարակավ մտահոգություն հայտնել դատարանի վարույթ ընդունած գործերի թվաքանակի աճի կապակցությամբ: 1999 թ. հունիսին իր մամլո հաղորդագրության մեջ նա ասաց հետևյալը.

…Աշխատանքի ծավալներն արդեն իսկ ահռելի են, սակայն ավելի դժվարանալու միտում ունեն, մանավանդ երբ գանգատներ սկսեցին ստացվել 1980-ականների վերջին ՄԻԵԿ-ը վավերացնող պետություններից:

Մեկ տարի անց նա կոչ արեց անդամ պետություններին կազմավորել «բանիմաց մարդկանցից կազմված կոմիտե», որը քննության պետք է առներ կոնվենցիայի կիրառման համակարգի հետագա մեծ բարեփոխումների հարցը: Նախարարների կոմիտեն արձագանքեց այդ կոչին՝ 2001 թ. փետրվարին ստեղծելով գնահատման խումբ [Evaluation Group], որը նախագահում էին պարոն Ջասթին Հարմանը՝ Եվրոպայի խորհրդում Իռլանդիայի դեսպան, նախագահ Վիլդհաբերը և պարոն Հանս-Քրիստիան Կրուգերը՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի տեղակալ: Խումբը պետք է.

(ա) ուսումնասիրեր Մարդու իրավունքների եվրոպական դատարան ուղարկվող գանգատների թիվը և դրանց ակնկալվող աճը, ինչպես նաև դատարանի՝ այդ աճին դիմակայելու կարողությունը,

(բ) ուսումնասիրեր բոլոր հնարավոր միջոցները՝ երաշխավորելու դատարանի գործունեության շարունակական արդյունավետությունը, որպեսզի հարկ եղած դեպքում առաջարկություններ ներկայացներ բարեփոխումների անհրաժեշտության վերաբերյալ և այդ մասին զեկուցեր Նախարարների կոմիտեին:

Գնահատման խումբը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մասին իր զեկույցը (EGCourt(2001)1) ներկայացրեց Նախարարների կոմիտեին 2001 թ. սեպտեմբերին: Դրանից պարզ դարձավ, որ դատարանը գործ պետք է ունենա էլ ավելի մեծ թվով անհատական գանգատների հետ (1988 թ. գրանցված գանգատների թիվը հասնում էր 1013-ի, 1999 թ.՝ 10.486-ի, իսկ 2001 թ. առաջին 7 ամիսների ընթացքում՝ 7909-ի): Դա գրանցված և հերթագրված գանգատների հսկայական և հարաճուն կուտակում էր առաջացնում (1999 թ. 12.635-ից մինչև 18.292՝ 2001 թ. հուլիսին): Խումբը գտնում էր, որ գանգատների նման աննախադեպ աճի պատճառը զանգվածային լրատվամիջոցներում դատարանի կարևորագույն վճիռների լայնածավալ լուսաբանումն է:

3.9. Վերը նշվածից ակնհայտորեն պարզ է դառնում, որ անհրաժեշտ են անհապաղ գործողություններ, եթե ցանկանում ենք, որ դատարանը շարունակի արդյունավետ աշխատել: Եթե քայլեր չձեռնարկենք, ապա իրավիճակը հետզհետե կվատթարանա, իսկ դատարանը չի հասցնի բավարարում տալ գանգատների աննախադեպ աճին: Այլևս հնարավոր չի լինի ողջամիտ ժամկետում լուծում տալ բոլոր գանգատներին, իսկ դրանից կտուժի դատարանի հեղինակությունը, և այն աստիճանաբար կկորցնի հասարակության վստահությունը: Ավելին, արդյունավետության բարձրացմանն ուղղված անընդմեջ ջանքերը հղի են այն վտանգով, որ ի վնաս վճիռների որակի՝ դիմողների գանգատները չեն ստանա բավարար կամ գոհացուցիչ հավաքական քննություն, որը նույնպես կխաթարի դատարանի հեղինակությունը և նրա նկատմամբ վստահությունը: Եվ, ի վերջո, հարկ է հիշել, որ հիմնախնդիրը միայն վիճակագրական տվյալները չեն. հիշատակված թվերը դեռևս ոչինչ չեն ասում «առավել դժվար գործերի» և «պակաս դժվար գործերի» հարաբերակցության մասին, թեև հնարավոր է, որ այդ հարաբերակցությունը մնա անփոփոխ:

Զեկույցում աշխատածավալի ճգնաժամային վիճակի հանգուցալուծման ուղղությամբ նշվում էր երեք նախապայման: Առաջին՝ կոնվենցիայով և դրա արձանագրություններով երաշխավորված իրավունքների թիվը չպետք է կրճատվի: Երկրորդ՝ անհատական գանգատ ներկայացնելու իրավունքը պետք է պահպանվի էական բովանդակությամբ: Երրորդ՝ դատարանը պետք է ի վիճակի լինի գանգատները քննելու ողջամիտ ժամանակահատվածում՝ պահպանելով վճիռների որակը: Այնուհետև զեկույցում մատնանշվում էին կիրառման գործող համակարգի կատարելագործման և պոտենցիալ բարեփոխումների հինգ ուղիներ: Առաջինն այն միջոցառումներն էին, որոնք պետք է իրականացվեին ազգային մակարդակում, ինչպես, օրինակ՝ իրավական պաշտպանության ներպետական արդյունավետ միջոցների ապահովումը կոնվենցիայի խախտումները կանխելու և դրանց հատուցումն ապահովելու ուղղությամբ: Զեկույցում շեշտվում էր դատարանի օժանդակ դերը կոնվենցիայով ճանաչված իրավունքների պաշտպանության գործում, ինչպես նաև անդամ պետությունների առաջնային դերը:

Բարեփոխումների երկրորդ ուղին վերաբերում էր վճիռների կատարմանը: Խումբը նշում էր գործող համակարգի աշխատանքում հանդիպող «լուրջ թերությունները»՝ այն հաճախականությունը, որով դատարանը ստիպված է եղել անդրադառնալ «կրկնվող» գանգատներին. դրանք սահմանվում են որպես «համանման կամ խիստ նման հարցեր վեր հանող գանգատներ, որոնք արդեն իսկ որոշվել են կոնվենցիայի խախտում արձանագրած վճիռներում»: Խումբը նշեց, որ եթե նախնական վճռից անմիջապես հետո պատասխանող կառավարությունները ձեռնարկած լինեին ընդհանուր միջոցներ, ապա հետագա գանգատների անհրաժեշտությունն այլևս կվերանար: Զեկույցում առաջարկվում էր մշակել հատուկ կարգ այդ դեպքերը լուծելու համար: Երբ դատարանն իր վճռում արձանագրում է կոնվենցիայի խախտում, իսկ գրասենյակը տեղյակ է, որ կան նաև այլ գանգատներ, որոնք բարձրացնում են նման հարցեր, ապա գրասենյակը պետք է այդ մասին ծանուցի Նախարարների կոմիտեին: Վերջինս արագացված կարգով պետք է զբաղվի առաջատար գործի վճռի կիրառմամբ: Այդ ընթացքում մնացած բոլոր համանման գանգատները (անորոշ ժամանակով) մնում են դատարանում՝ հնարավորություն ընձեռելով, որ պատասխանող կառավարությունը ձեռնարկի անհրաժեշտ շտկող միջոցները: Խումբը հավատացած էր, որ այս նոր կարգը Նախարարների կոմիտեին հնարավորություն կտա «հատուկ ճնշում գործադրելու շահագրգիռ պետության վրա և դատարանին կազատի որոշ հանգամանքների վերաբերյալ կրկնվող վճիռներ կայացնելու անհրաժեշտությունից»:

Բարեփոխումների երրորդ տեսակը այն միջոցառումներն են, որոնք պետք է իրականացվեին դատարանի կողմից՝ առանց կոնվենցիայի փոփոխության: Զեկույցում առաջարկվում էր, որ դատարանը մշակի գործերին անդրադառնալու տարբեր մակարդակներ՝ կախված գանգատների բնույթից և բովանդակությունից: Օրինակ՝ այն գանգատները, որոնք ակնհայտորեն մտացածին են, և

այն գանգատները, որոնք չեն համապատասխանում դատարանի կանոնակարգին, այլևս չպետք է գրանցվեն: Զեկույցի հեղինակները հակված էին այն գաղափարին, որ դատարանը պետք է ավելի «ակտիվ» հանդես գա գործերի բարեկամական կարգավորման տարբերակի օգտին: Օրինակ՝ կարգավորման նպատակով ֆինանսական շահագրգռությունը կարելի է դիմողների նկատմամբ «պարտադրել այն դեպքերում, եթե դատարանը ունեցել է նմանատիպ փորձ. որպես «արդարացի հատուցում» վճիռ է կայացրել հօգուտ դիմողի, իսկ դիմողը հրաժարվել է դատարանի՝ ողջամիտ համարվող կարգավորման տարբերակից: Այս դեպքում դատարանը նրանց կարող է զրկել նրան ծախսերի մի մասի փոխհատուցման իրավունքից:

Բարեփոխումների չորրորդ ուղին կապված էր ֆինանսական միջոցների հետ: Զեկույցի հեղինակներն առաջարկում էին առաջիկա չորս տարվա ընթացքում փուլային կարգով մինչև 50 տոկոսով ընդլայնել գրասենյակի աշխատակազմը: Այդ առաջարկով առաջնորդվելով՝ մինչև 2005 թ. գրասենյակը կունենար 189 իրավաբան և 95 քարտուղար:

Բարեփոխումների չորրորդ՝ ամենադրամատիկ ուղին. առաջարկվում էր փոփոխություններ մտցնել կոնվենցիայում: Այդ փոփոխություններն անհրաժեշտ են այն առումով, որ եթե նույնիսկ վերը նշված ընթացակարգային բարեփոխումներն ու լրացուցիչ միջոցներն իրականացվեն, ապա վաղ թե ուշ դատարանը կհասնի «հագեցման սահմանին», և նրա վճիռների որակը վտանգված կլինի: Դատարանը պետք է հնարավորություն ունենա իր հայեցողությամբ կենտրոնանալու այն գործերի վրա, որոնք արժանի են նման մանրակրկիտ ուսումնասիրության: Հետևաբար, զեկույցում առաջարկվում էր փոփոխություններ մտցնել կոնվենցիայում՝ լիազորելով, որ դատարանը «մերժի այն գործերի մանրակրկիտ քննությունը, որոնք կոնվենցիայի առումով որևէ էական խնդիր չեն բարձրացնում»: Բացի այդ, դատավորների պաշտոնավարությունը պետք է երկարաձգվի և դառնա ամրագրված ժամկետով՝ ինը տարուց ոչ պակաս, որպեսզի դրանով ամրապնդվի դատարանի անկախությունն ու շարունակականությունը (տե՛ս ստորև, A. Mowbray, Proposals for Reform of the European Court of Human Rights [2002] *Public Law* 252):

2001 թ. նոյեմբերի 8-ին Նախարարների կոմիտեն հրապարակեց *Հռչակագիր Եվրոպայում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի երկարաժամկետ արդյունավետությունը երաշխավորող մարդու իրավունքների պաշտպանության մասին* [Declaration On the Protection of Human Rights in Europe Guaranteeing the Long-term Effectiveness of the European Court of Human Rights]: Այդ հռչակագրում ջերմորեն դրվատանքի է արժանացել գնահատման խմբի զեկույցը: Նախարարների տեղակալներին հրահանգվում էր «անհապաղ քննության առնել» զեկույցում առաջ քաշված առաջարկությունները: Այնուհետև Մարդու իրավունքների հարցերով ղեկավար կոմիտեն (ՄԻՂԿ) [Steering Committee of Human Rights (CDDH)], որ Նախարարների կոմիտեի կողմից նշանակված փորձագետների մի խումբ էր, սկսեց ամենայն ուշադրությամբ քննել առաջարկվող ռեֆորմները: 2003 թ. ապրիլին ՄԻՂԿ-ը Նախարարների կոմիտեին ներկայացրեց որոշակի առաջարկություններ: ՄԻՂԿ-ի առաջարկությունները բովանդակող վերջնական զեկույցում (4 ապրիլի, 2003 թ.), կապված դատարանի ծանրաբեռնվածության հետ, առանձնացվում էր հիմնախնդիրների երկու խումբ. հազարավոր դիմումների քննությունը, որոնք ի վերջո լուծվում էին առանց ըստ էության դատավճռի, և կրկնվող գործերի վերաբերյալ որոշումների ընդունումը: Զեկույցում արտահայտվում էր այն կարծիքը, որ վերը նշված վիճակագրությունը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է «վերստին հանգամանորեն գնահատել, թե ինչպես է գործում կոնվենցիայի համակարգը»: Անհրաժեշտ է ընդլայնել դատավորների երեք կոմիտեների իրավասությունները (թիվ 11 արձանագրության համաձայն՝ կոմիտեներն իրավասու են միաձայն որոշում կայացնելու դիմումն անընդունելի ճանաչելու վերաբերյալ), որպեսզի դրանք իրավունք ունենան (միաձայն) ըստ էության որոշում կայացնելու ակնհայտորեն լավ հիմնավորված գործերի վերաբերյալ, եթե տվյալ գործի առարկան արդեն իսկ կարգավորվում է դատարանի կողմից սահմանված օրենսդրությամբ: Դատարանի գրասենյակն ուսումնասիրություն անցկացրեց, որի շրջանակներում կատարված հաշվարկները ցույց տվեցին, որ այս առաջարկության իրականացումն ընդգրկելու է այն գործերի ավելի քան 50 տոկոսը, որոնցով զբաղվում են դատարանի (յոթ դատավորներից կազմված) պալատները: Այդպիսով, կարելի էր հասնել արդյունավետության զգալի բարձրացման՝ խնայելով դատավորների ժամանակը: Զեկույցը հաստատում էր, որ այս առաջար-

կությամբ վերջ կդրվի «ազգային» դատավորների հարկադրական մասնակցությանն այն բոլոր դատական գործերին, որոնցում ներգրավված է նրանց պետությունը, սակայն նշում էր, որ նման մասնակցությունը «հաճախ ավելորդ» է, քանզի այդ գործերի թիվը սահմանափակվելու է դատարանի հաստատված իրավասությամբ կառավարվող գործերով: Բացի այդ, ազգային դատավորները հրավիրվելու են մասնակցելու կոմիտեի աշխատանքներին միայն բացառիկ իրավիճակներում: Այս նոր գործելակերպը, որով պալատը միաձայն որոշում էր կայացնում հայցի ընդունելիության և որոշակի հանգամանքների վերաբերյալ, պետք է համառոտ համակարգվեր կոնվենցիայի 29-րդ հոդվածի հավելվածում: Քանի որ ապագայում արդեն կայացվելու էին ավելի պակաս թվով առանձին որոշումներ դիմումի ընդունելիության վերաբերյալ, իսկ դիմումի ընդունելիության հարցի որոշումն է խթանում, որ դատարանը փորձի հասնել գործի բարեկամական կարգավորման, զեկույցով հաստատվում էր նոր հոդված բարեկամական կարգավորման վերաբերյալ, որը հնարավորություն կընձեռեր, որ դատարանը գտնվեր կողմերի տրամադրության տակ վարույթի ցանկացած փուլում բարեկամական կարգավորում ապահովելու նպատակով:

Զեկույցում դատարանի կողմից գործերի քննությանը վերաբերող ամենավիճելի առաջարկությունը, թերևս, ուղղված էր ընդունելիության նոր չափանիշ ավելացնելու գաղափարին: ՄԻՊԿ-ը մերժեց գնահատման խմբի նախորդ առաջարկությունն այն մասին, թե դատարանին պետք է լիազորություն տրվի հանգամանալից քննության չենթարկելու այն գործերը, որոնք կոնվենցիայով սահմանված որևէ էական հարց չեն բարձրացնում: ՄԻՊԿ-ի կարծիքով՝ նման ձևակերպումը տեղիք կտա «դատարանի չափից ավելի մեծ ազատության՝ որոշելու և ընտրելու դատական այն գործերը, որոնցով ցանկանում է զբաղվել»: ՄԻՊԿ-ն առաջարկում էր սահմանափակել այդ ազատությունը օբյեկտիվ գործոնների առկայությամբ: Դրանցից են դիմողի ընդհանուր շահագրգռությունը և հանգամանքները: ՄԻՊԿ-ի անդամների «ճնշող մեծամասնությունը» կողմ եղավ կոնվենցիայի 35-րդ հոդվածին ստորև բերված չափանիշի ավելացման գաղափարին.

3. Դատարանն անընդունելի կարող է հայտարարել ցանկացած անհատական դիմում …
բ. եթե դիմողը չի տուժել որևէ լուրջ անբարենպաստ պայմանի հետևանքով, և եթե գործը չի բարձրացնում կոնվենցիայի ու դրա արձանագրությունների մեկնաբանման վրա ազդող որևէ լուրջ հարց կամ համընդհանուր կարևորության որևէ լուրջ խնդիր:

Այս առաջարկության նպատակն էր դատարանին հեռու պահել «փոքր» գանգատներ քննելու անհրաժեշտությունից, օրինակ՝ 500 եվրոյից պակաս հատուցում պահանջող կամ հարևանների միջև ծագած վեճեր պարունակող քաղաքացիական գործերից: Դատարանի գրասենյակը հաշվարկել էր, որ այս նոր չափանիշի «պահպանողական» մեկնաբանությունն արդյունքում կհանգեցնի դատարանի ընթացիկ աշխատանքային ծավալի մոտ 5 տոկոսով կրճատման, իսկ հետագայում «զգալիորեն» կխնայի գրասենյակի ժամանակը: ՄԻՊԿ-ի անդամներից մի քանիսը կողմ էին այս նոր չափանիշի առավել լայն սահմանմանը, որը հնարավորություն կտա դատարանին անընդունելի հայտարարել դիմումները, «եթե նման որոշումն առանձնապես անբարենպաստ պայմանների մեջ չի դնում դիմողին…»:

Առաջարկվող բարեփոխումների երրորդ կատեգորիան ներկայացնում էին այն միջոցները, որոնք նախատեսված են վճիռների կատարումը բարելավելու և արագացնելու համար: Դրանց թվում են (ա) Նախարարների կոմիտեի համար ընթացակարգի մշակումը, որով դատարանի որոշումների կատարման վերահսկման գործընթացում առաջնահերթությունը տրվում է անդամ պետություններում համակարգային թերություններ վեր հանող դատավճիռներին, (բ) կոնվենցիայի փոփոխությունն այն նպատակով, որ Նախարարների կոմիտեն հնարավորություն ստանա վերահսկելու դատարանի՝ բարեկամական կարգավորման մասին վճիռները և, ամենակարևորը, (գ) Նախարարների կոմիտեին լիազորություններ տալը, որպեսզի դատարանի մեծ պալատի առջև խախտման առնչությամբ գործ հարուցի ընդդեմ այն պետությունների, որոնք համառորեն հրաժարվում են դատարանի որոշումներին ենթարկվելուց: ՄԻՊԿ-ը նախատեսում էր, որ նման ընթացակարգով առաջնորդվելով՝ մեծ պալատը կարող է ֆինանսական տույժեր կիրառել անհնազանդ պետությունների նկատմամբ: Թեև ՄԻՊԿ-ն ընդունում էր, որ այս նոր մեխանիզմի ստեղծման հարցն անհրաժեշտ է հետագա քննության առնել,

համարում էր, որ նման կարգը և դրան դիմելու սպառնալիքը պետք է որ հնազանդվելու «հզոր և արդյունավետ» շարժառիթ լինի պետությունների այն փոքրամասնության համար, որը ներկայումս չի ենթարկվում դատարանի որոշումներին:

Նախարարների կոմիտեն ՄԻՊԿ-ի զեկույցը քննության դրեց 2003 թ. մայիսյան նիստում և հրապարակեց հռչակագիր, որը «ողջունում» և «հաստատում» էր *«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի երկարաժամկետ արդյունավետության երաշխավորումը»* [*Guaranteeing the Long-term Effectiveness of the European Court of Human Rights* CM (2003) 62] զեկույցը: Նախարարների կոմիտեն ցանկություն արտահայտեց մեկ տարվա ընթացքում քննության առնել կոնվենցիայի արձանագրությունը փոփոխող մի նախագիծ՝ հիմնվելով ՄԻՊԿ-ի առաջարկությունների վրա: Միաժամանակ նախարարների տեղակալներին հրահանգ տրվեց աշխատել արձանագրության նախագծի վրա՝ հետագայում, ի թիվս այլոց, քննելու նաև Նախարարների կոմիտեի լիազորության հարցը, այն է՝ վերահսկել բարեկամական կարգավորումների կատարումը և խախտումների դեպքում դատական գործ հարուցել այն պետությունների դեմ, որոնք համառորեն հրաժարվում են դատարանի որոշումներին ենթարկվելուց:

Իր «*Գործողությունների վերջնական զեկույցը*» [Final Activity Report] ՄԻՊԿ-ը Նախարարների կոմիտեին ներկայացրեց 2004 թ. ապրիլին: Ի թիվս այլ հարցերի, զեկույցը ներառում էր նաև թիվ 14 արձանագրության նախագիծը և այդ նախագծի «*Բացատրական զեկույցը*» [Explanatory Report]: Այդ զեկույցում բացատրվում էր, որ արձանագրության նախագիծը «արմատական» որևէ փոփոխություն չի մտցնում ստրասբուրգյան պարտադրող համակարգում, սակայն փորձում է բարելավել այդ համակարգի գործունեությունը՝ հնարավորություն ընձեռելով, որ դատարանի ուշադրությունը կենտրոնացվի ամենակարևոր գործերի վրա: Նախարարների կոմիտեն խնդրեց, որ Խորհրդարանական վեհաժողովն իր կարծիքը ներկայացնի արձանագրության նախագծի վերաբերյալ: Վեհաժողովն իր կարծիքը [Կարծիք թիվ 251] ներկայացրեց 2004 թ. ապրիլի 28-ին, որում, ի թիվս այլոց, քննադատվում էր ընդունելիության նոր առաջարկվող չափանիշը, և դժգոհություն էր հայտնվում այն կապակցությամբ, որ արձանագրության նախագծի մասին վեհաժողովին տեղեկացրել են ընդամենը երկու շաբաթ առաջ: 2004 թ. մայիսի 12-ին Նախարարների կոմիտեն համաձայնեցրեց թիվ 14 արձանագրության վերջնական տեքստը, իսկ հաջորդ օրն այն բացվեց ստորագրությունների համար:

Թիվ 14 արձանագրությամբ դատարանի կողմից գործերի քննության կարգում սահմանվում էին երեք նշանակալի փոփոխություններ: Առաջին՝ կոնվենցիայի վերանայված 26-րդ հոդվածի համաձայն՝ ստեղծվում էր որոշում կայացնող նոր մարմին՝ «միանձնյա կազմով դատարանը» կամ «միանձնյա դատավորը» [the single-judge formation]: Կոնվենցիայի վերանայված 27-րդ հոդվածի համաձայն՝ այդ մարմինն օժտված է անհատական դիմումներն անընդունելի հայտարարելու կամ գործերի ցուցակից հանելու լիազորությամբ, «եթե նման որոշում կարող է ընդունվել առանց գանգատի լրացուցիչ ուսումնասիրման»: Բացատրական հաշվետվությունում նշվում էր, որ միանձնյա կազմով դատարանները նման որոշումներ կարող են կայացնել «պարզ և հստակ գործերում, որոնց դեպքում դիմումի անընդունելիության հարցն ակնհայտ է հենց սկզբից»: Կոնվենցիայի վերանայված 26-րդ հոդվածի համաձայն՝ միանձնյա կազմով դատարանները որոշում չեն կայացնելու այն դիմումների վերաբերյալ, որոնք վերաբերում են այն պետություններին, որոնցից ընտրվել են դատավորները: Միանձնյա կազմով դատարաններին օգնելու են դատարանի գրասենյակի կազմից նշանակված «զեկուցողները»: Միանձնյա դատավորը միայնակ է կրելու որոշումների պատասխանատվությունը: Սակայն համաձայն «Բացատրական զեկույցի».

58….անվերապահորեն անհրաժեշտ է մշակել զեկուցողի գործառույթները, որպեսզի հնարավոր լինի հասնել դիմումների զտման արդյունավետության նշանակալի բարելավման, որի համար է ստեղծվել միանձնյա կազմով դատարանը: Զեկուցողի գործառույթներն իրականացնող գրասենյակի անդամներն օգնելու են միանձնյա կազմով դատարանին: Սկզբունքորեն, միանձնյա դատավորներին զեկուցողն օգնելու է պատասխանող կողմի լեզվին տիրապետելու և նրա իրավական համակարգի մասին գիտելիքներով: Այս համատեքստում զեկուցողի գործառույթները երբեք չեն իրականացվելու դատավորների կողմից:

Նշանակվող զեկուցողների թիվը, ինչպես նաև նրանց նշանակման կարգը և ժամկետը որոշում է դատարանը: Նախատեսվում է, որ ամրագրված ժամանակահատվածով զեկուցող նշանակվելու են գրասենյակի այն իրավաբանները, որոնք գործնական գիտելիքներ և փորձ ունեն տվյալ անդամ պետության իրավական համակարգի բնագավառում: Անշուշտ, համաձայն «Բացատրական զեկույցի»՝ «նախատեսվում է, որ զեկուցողի նոր գործառույթները վստահվելու են այնպիսի անձանց, որոնք ունեն նշանակալի իրավաբանական փորձ, իրազեկ են կոնվենցիային և դրա նախադեպային իրավունքին, հիանալի տիրապետում են Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից առնվազն մեկին և, ինչպես գրասենյակի մնացած աշխատակիցները, բավարարում են անկախության և անաչառության պահանջները»:

Միանձնյա կազմով դատարանը նոր մեթոդ է՝ բարձրացնելու դատարանի արդյունավետությունը շատ դիմումների քննության գործընթացում, որոնց մեծ մասն անընդունելի է: Ինչպես նշվեց վերը, թիվ 11 արձանագրության համաձայն՝ այդ առաջադրանքն իրականացնում է երեք դատավորներից կազմված կոմիտեն: Հետևաբար, այդ գործառույթը միանձնյա կազմով դատարաններին փոխանցելն առավելագույնի կհասցնի դատավորների աշխատանքի արդյունավետությունը: Ավելին, հստակորեն անընդունելի դիմումների քննության հարցում դատավորներին օգնելու են նոր զեկուցողները: Գրասենյակի աշխատակազմի այդ խումբը զտման գործառույթն իրականացնող նախկին «փորձագետ-խորհրդատուների» [assessors] իրավահաջորդն է: Քանի որ թիվ 14 արձանագրությամբ պահպանվում են դիմումների ընդունելիության վերաբերյալ որոշում կայացնելու հարցում դատավորների պաշտոնական լիազորությունները, հնարավոր է դառնում խուսափել դատարանի ներսում դատական որոշումներ կայացնողների մեկ այլ դասի ստեղծումից:

Արձանագրությամբ ներդրվող երկրորդ խոշոր փոփոխությունը երեք դատավորից կազմված հանձնաժողովի լիազորությունների ընդլայնումն է: Կոնվենցիայի վերանայված 28-րդ հոդվածի համաձայն՝ այդ կոմիտեները միաձայն որոշմամբ կարող են ընդունելի հայտարարել և միաժամանակ որոշում կայացնել հայցի որոշակի հանգամանքների վերաբերյալ դատական այն գործերում, որոնցում գանգատն «արդեն իսկ դատարանի լավ հիմնավորված նախադեպային իրավունքի առարկա է»: Բացատրական զեկույցում այս արտահայտությունը մեկնաբանվում է հետևյալ կերպ. «…Նախադեպային իրավունք, որը հետևողականորեն կիրառել է պալատը: Բացառիկ դեպքերում, այդուհանդերձ, հնարավոր է, որ սկզբունքային որևէ հարցի վերաբերյալ վճիռը հիմք դնի «լավ հիմնավորված նախադեպային իրավունքի», եթե հատկապես որոշում կայացնողը մեծ պալատն է»: Կոմիտեների այս նոր լիազորությունը նպատակ ունի արդյունավետ դատական քննություն ապահովել ընդունելի հայտարարված այն բազմաքանակ դիմումների համար, որոնք անդամ պետությունների համակարգերում վեր են հանում նախկինում դատարանի կողմից քննված կառուցվածքային հիմնահարցեր (օրինակ՝ Իտալիայի քաղաքացիական և քրեական վարույթներում տխրահռչակ ձգձգումները, որոնք խախտում են կոնվենցիայի 6(1) հոդվածով սահմանված ողջամիտ ժամկետները): Պատասխանող պետությունից նշանակված պետական դատավորը մեխանիկորեն չի դառնալու կոմիտեի անդամ, քանի որ դրա պահանջն ընդհանուր առմամբ չի զգացվում դիմումի բովանդակության մեջ նոր փաստեր չլինելու պատճառով: Այդուհանդերձ, կոմիտեներին իրավունք է տրվում հրավիրելու, որ պետական դատավորը փոխարինի կոմիտեի գործող անդամներից մեկին: Պետական դատավորների մասնակցությունը պահանջելու խնդրում կոմիտեի որոշումների պարտադիր գործոնն այն հարցն է, թե պատասխանող պետությունը վիճարկե՞լ է որոշումների արագացված ընդունման մեթոդի կիրառումը, օրինակ, այն հիմնավորմամբ, որ դիմումն էականորեն տարբերվում է նախորդ դեպքերից: Եթե կոմիտեն միաձայն չէ որոշումների արագացված ընդունման հարցում, ապա որոշում կայացնելու համար դիմումը հանձնվում է յոթ դատավորներից կազմված պալատին:

Պալատների իրավասությունների ընդլայնման վերը նշված հանգամանքը դատարանի արդյունավետության բարձրացմանն ուղղված մեկ այլ ռազմավարություն է, որի շնորհիվ երեք դատավորներից կազմված կոմիտեները հնարավորություն են ստանում որոշելու այն պարզ ու հստակ դիմումները, որոնք վերաբերում են անդամ պետություններում առկա, նախկինում ուսումնասիրված կառուցվածքային հիմնախնդիրներին: Դիմողներին դա հարմար է այն առումով, որ նրանք իրենց

գանգատների ըստ էության վճիռը կստանան ավելի արագ, իսկ պետությունների համար դա օգտակար է այն առումով, որ նրանք տեղեկացված կլինեն իրենց ներպետական համակարգերում առկա շարունակական բնույթի հիմնախնդիրների մասին:

Թիվ 14 արձանագրությամբ ներդրվող երրորդ խոշոր փոփոխությունն ավելի վիճելի է, քանզի այն վերաբերում է անհատական դիմումների համար ընդունելիության մի նոր չափանիշի ներդրմանը: Նոր դրույթը սահմանում է, որ.

> Դատարանն անընդունելի է հայտարարում 34-րդ հոդվածով ներկայացված անհատական ցանկացած դիմում, եթե համարում է, որ … (բ) դիմողը չի տուժել անբարենպաստ որևէ լուրջ պայմանի հետևանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ կոնվենցիայով և դրան կից արձանագրություններով երաշխավորված հարգանքը մարդու իրավունքների նկատմամբ պահանջում է գործի քննություն ըստ էության, պայմանով, որ այդ հիմքերով չի մերժվի ոչ մի գործ, որը լիարժեք կերպով քննություն չի անցել ներպետական ատյաններում:

«Անբարենպաստ լուրջ պայման» հասկացության նշանակությունը սահմանում են մեծ պալատը և պալատները: Իրականում թիվ 14 արձանագրության 20(2) հոդվածի համաձայն՝ արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում միանձնյա կազմով դատարաններն ու կոմիտեներն իրավունք չեն ունենա կիրառելու այս նոր չափանիշը: Հոդված 35(3)(բ)-ի վերջին մասը երաշխիք է, որը «Բացատրական զեկույցի» համաձայն սահմանում է.

> Դատարանի համար երբևիցե հնարավոր չի լինի մերժել դիմումը՝ պատճառաբանելով դրա անկարևորությունը, եթե գործը պատշաճ կերպով չի քննվել ներպետական ատյանների կողմից: Օժանդակության սկզբունքն արտացոլող այս դրույթը երաշխավորում է, որ ընդունելիության նոր չափանիշի կիրառման նպատակով յուրաքանչյուր գործ անցնելու է դատական քննություն, լինի ներպետական թե եվրոպական մակարդակում:

Խորհրդարանական վեհաժողովի Իրավական հարցերի և մարդու իրավունքների կոմիտեն [Committee on Legal Affairs and Human Rights of the Parliamentary Assembly] առաջարկեց ավելացնել այս երաշխիքը՝ նշելով, որ բազմաթիվ հասարակական կազմակերպություններ (այդ թվում՝ «Միջազգային համաներում» [Amnesty International] կազմակերպությունը) դեմ են ընդունելիության այդ նոր չափանիշի սահմանմանը (*Զեկույց թիվ 14 արձանագրության նախագծի վերաբերյալ, փաստաթուղթ 10147, 23 ապրիլի, 2004 թ.*): Խորհրդարանական վեհաժողովը պաշտոնապես հանդես եկավ նոր չափանիշի ներդրման դեմ՝ համարելով, որ «այն հստակ չէ, սուբյեկտիվ է և կարող է դիմողին անարդարացի վնաս պատճառել… [բ]ացի այդ, դատարանում այն կարող է ի վնաս կին դիմողների ոչ դիտավորյալ խտրականություն կիրառելու հետևանքներ ունենալ, օրինակ՝ կրած ֆինանսական վնասներին ավելացնելով հավելավճար» (Կարծիք թիվ 251, պարբ. 11): Այդուհանդերձ, ռեսուրսներն ամենակարևոր դիմումների վրա կենտրոնացնելու համար դատարանին ավելի մեծ ազատություն տալու նպատակով Նախարարների կոմիտեն ի վերջո հաստատեց նոր չափանիշը՝ ներառելով ներպետական քննության երաշխիքը:

Թիվ 14 արձանագրությունը նպատակ ունի նաև բարձրացնելու Նախարարների կոմիտեի՝ դատարանի որոշումների կատարման վերահսկման արդյունավետությունը (երբ հաստատվում է պետության կողմից կոնվենցիայի խախտման փաստը): Արձանագրությամբ սահմանվում է երկու նոր լիազորություն: Առաջինն այն է, որ անդամների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ Նախարարների կոմիտեն կարող է դատարանին խնդրել որոշում կայացնել հիմնախնդրային համարվող դատավճռի մեկնաբանության վերաբերյալ (կոնվենցիայի վերանայված հոդված 46(3)): Այս միջոցը կիրառվում է այն ժամանակ, երբ անհամաձայնություն կա նախնական վճռի իմաստի վերաբերյալ: Երկրորդ՝ կոնվենցիայի վերանայված 46(4) հոդվածի համաձայն՝ համառորեն չենթարկվող երկրների խախտումների դեմ գործ հարուցելու լիազորությունը տրվում է Նախարարների կոմիտեին:

> Եթե Նախարարների կոմիտեն համարում է, որ բարձր պայմանավորվող կողմը հրաժարվում է վերջնական վճռին ենթարկվելուց այն գործում, որի կողմն է հանդիսանում, ապա պաշտոնական ծանուցումն այդ կողմին հանձնելուց հետո կոմիտեում աշխատելու իրավունք ունեցող ներկայացուցիչների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ ընդունված

որոշման հիման վրա Նախարարների կոմիտեն կարող է հարց ուղղել դատարանին, թե այդ կողմը կատարե՞լ է 1-ին կետով սահմանված իր պարտավորությունները:

Դրանից հետո մեծ պալատը ստուգում է՝ պատասխանող պետությունը ենթարկվե՞լ է դատարանի նախնական վճռին, թե՞ ոչ, և տեղեկացնում է Նախարարների կոմիտեին, եթե պարզվում է, որ այդ պետությունը խախտել է կոնվենցիայի 46(1) հոդվածը: Համաձայն «Բացատրական զեկույցի»՝ նախատեսվում է, որ խախտման վերաբերյալ դատական վարույթներն անհրաժեշտ կլինեն միայն «բացառիկ հանգամանքներում», սակայն «այդ կարգի գոյության փաստը, ինչպես նաև դրա կիրառման սպառնալիքն արդեն իսկ կգործեն որպես նոր հզոր շարժառիթ դատարանի վճիռներն ի կատար ածելու համար»: Հատկանշական է, որ թիվ 14 արձանագրությամբ ստեղծված ընթացակարգը թույլ չի տալիս, որ դատարանը կամ Նախարարների կոմիտեն կիրառեն ֆինանսական տույժեր, եթե դատարանը պարզում է, որ պատասխանող պետությունն ի կատար չի ածել դատարանի նախնական վճիռը: Համարվում էր, որ խախտման վերաբերյալ դատական վարույթի նախաձեռնությամբ այդ պետության դեմ գործադրվող քաղաքական ճնշումը և մեծ պալատի վճիռը բավական են:

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի [Council of Europe's Commissioner for Human Rights] կարծիքով՝ ինստիտուցիոնալ այլ բարեփոխումների թվում կարելի է նշել գրավոր կամ բանավոր դիտողությունների միջոցով լսումներին մասնակցելու իրավունքը՝ պալատների կամ մեծ պալատի կողմից քննվող բոլոր գործերում: Նման միջամտությունը կարող է օգնել դատարանին հայտնաբերելու պատասխանող պետությունների (ինչպես նաև այլ անդամ պետությունների) համակարգերում առկա կառուցվածքային թերությունները: Կոնվենցիայի փոփոխությունը հետապնդում է նաև մեկ այլ նպատակ՝ հնարավոր դարձնել Եվրոպական Միության հետագա հնարավոր ընդլայնումը, թեև նման զարգացումը դարձյալ կպահանջի կոնվենցիայի հեռանկարային փոփոխություններ: Փոխվում է նաև դատարանի դատավորների պաշտոնավարման ժամկետը՝ դառնալով ինը տարի: Սա ողջունելի վերադարձ էր դեպի սկզբնական դատարանի դատավորների պաշտոնավարման ժամկետը՝ միայն մեկ փոփոխությամբ, որ դատավորները չեն կարող վերընտրվել: Պաշտոնավարման ժամկետի երկարաձգումը և դատավորների վերընտրության արգելումը պետք է խթանեին դատավորների թվացյալ (գուցեև փաստացի) անկախությունը պետությունների ազդեցությունից: Երկար ժամանակ Խորհրդարանական վեհաժողովը հանդես էր գալիս ի պաշտպանություն դատավորների պաշտոնավարման այդ ժամկետի (թիվ 14 արձանագրության ստեղծման նախապայմանների վերը բերված ուսումնասիրությունը մեծապես հիմնվում է այդ թեմայի վերաբերյալ *«Մարդու իրավունքների մասին օրենքի տեսություն»* [*Human Rights Law Review*] աշխատությունում արծարծված իմ մտքերի վրա):

Թիվ 14 արձանագրությունն ուժի մեջ պետք է մտներ անդամ բոլոր պետությունների կողմից վավերացվելուց երեք ամիս անց: Միացյալ Թագավորությունն այն արդեն վավերացրել էր 2005 թ. մայիսին: Մինչև Նախարարների կոմիտեի 116-րդ նստաշրջանը, որ տեղի ունեցավ 2006 թ. մայիսին, անդամ բոլոր պետություններն արդեն ստորագրել էին այն, իսկ 40 պետություններ վավերացրել էին:

Սակայն նախքան Նախարարների կոմիտեի կողմից թիվ 14 արձանագրության տեքստի ընդունումը նախագահ Վիլդհաբերն իր մամլո հաղորդագրության մեջ (21 ապրիլի, 2004 թ.) մարգարեաբար նախազգուշացնում էր, որ.

…բարեփոխումը, եթե նույնիսկ դա քայլ է ճիշտ ուղղությամբ, չի լուծելու դատարանի բոլոր խնդիրները: Նույնիսկ այս նոր բարեփոխմամբ հանդերձ, դատարանը շարունակելու է աշխատել չափազանց մեծ ծանրաբեռնվածությամբ: Մենք պետք է հնարավոր ամեն բան անենք մեր աշխատանքի արդյունավետությունը պահպանելու համար:

Որոշ դատավորների և պաշտոնյաների հետ հարցազրույց ունենալուց հետո Սթիվեն Գրիները եկավ հետևյալ եզրահանգման.

Ներկայիս ծանրաբեռնվածության հետ կապված ճգնաժամը թեթևացնելով հանդերձ, թիվ 14 արձանագրությունը, թերևս, որոշ ժամանակ է շահել դատարանի ապագայի մասին խորհելու համար (Protocol 14 and the Future of the European Court of Human Rights 2005 *Public Law* 83 at p. 104):

Դատարանական տարվա բացման կապակցությամբ իր ելույթում (21 հունվարի, 2005 թ.) նախագահ Վիլդհաբերը նշում էր.

Թիվ 14 արձանագրության ընդունումը, անշուշտ, լավ հնարավորություն է տալիս հպանցիկ վերլուծելու թիվ 11 արձանագրությամբ 1998 թ. կազմավորված նոր դատարանի նվաճումները: Սկզբունքորեն այս նոր արձանագրությունը նշանավորեց առաջընթաց մեծ քայլ՝ լիարժեքորեն դատական դաշտ բերելով վերահսկման միջազգային մեխանիզմները: Այն միավորեց նախկին դատարանն ու հանձնաժողովը և նոր դատարանը դարձրեց մշտական հաստատություն, անհատական դիմումի իրավունքը դարձրեց պարտադիր և վերացրեց Նախարարների կոմիտեի դատական իշխանությունը: Սրանք այն բաղկացուցիչներն են, որոնք այսօր համարվում են ստրասբուրգյան համակարգի անկյունաքարերը և ընդունվում են բոլորի կողմից, թեև կազմավորվել են ընդամենը վեց տարի առաջ:

Սակայն թիվ 11 արձանագրությունը գործնական հաջողություն ունեցավ նաև այն առումով, որ միակ մշտական դատարանը Ստրասբուրգում ապացուցեց, որ կարող է դիմակայել շատ ավելի մեծ ծանրաբեռնվածության, քան իր երկու իրավանախորդները՝ միաժամանակ կարևորագույն գործերում բարձր պահելով իր հեղինակությունն ու նախադեպային իրավունքի մակարդակը: Ես մտադիր չեմ ձանձրացնել ձեզ վիճակագրական տվյալների ընդարձակ ցուցակով, ուստի կբավարարվեմ՝ մեջբերելով ընդամենը երեք թիվ, որ վերաբերում են անցած հինգ տարիներին: Այդ ժամանակահատվածում դատարան ներկայացված դիմումների թիվն ավելացել է 99 տոկոսով, որ ինքնին սարսափազդու թիվ է, սակայն վերջնական լուծում ստացած դիմումների թիվն աճել է այդ թվից մոտ հինգ անգամ ավելի, այսինքն՝ 470 տոկոսով, և դա բյուջեի ավելացման շատ ցածր մակարդակի՝ ընդամենը 72 տոկոսի պարագայում:

2004 թ. դատարանն ավարտել է 21.100 գործ՝ կայացնելով 20.348 որոշում և 739 վճիռ, մի արդյունք, որը ցույց է տալիս 18 տոկոսի աճ՝ 2003 թ. համեմատությամբ, և նվաճվել է խիստ դժվարին պայմաններում, այնպիսի միջոցներով, որ բավական համեստ են միջազգային այլ դատարանների համեմատությամբ: Այս ցուցանիշը հավաքական և հետևողական ջանքերի արդյունք է, որ գործադրել են մեր նվիրյալ դատարանը և նրան օգնող ոչ պակաս նպատակասլաց և իրազեկ գրասենյակը, որին կցանկանայի իմ երախտագիտությունը հայտնել այսօր: Ցավոք, տարիների ընթացքում նվաճված արդյունավետությունը վտանգվել է նոր դիմումների ու գանգատների հարաճուն հոսքի հետևանքով: Ավելի ու ավելի մեծ թվով եվրոպացիների՝ միջազգային ատյաններում արդարություն գտնելու ձգտումը՝ ի հարգանս իրենց հիմնարար մարդու իրավունքների, ստվերել է թիվ 11 արձանագրությամբ նախաձեռնված կառուցվածքային բարեփոխումների օգուտները:

…

Դատարանն իրենից կախված ամեն ինչ կանի՝ լիարժեք գործի դնելու թիվ 14 արձանագրության գործիքները, ինչպես արվեց թիվ 11 արձանագրության պարագայում: Նախքան թիվ 14 արձանագրության պաշտոնապես ուժի մեջ մտնելը դատարանն արդեն իսկ սկսել էր օգտագործել դրա ընթացակարգերից մի քանիսը՝ արտացոլելու արձանագրությունում տեղ գտած սխեմաները: Տարվում են նախապատրաստական աշխատանքներ, որպեսզի թիվ 14 արձանագրության ուժի մեջ մտնելու պահին մեր կառուցվածքը և աշխատանքի մեթոդները համապատասխանեն դրա պահանջներին:

Սինչդեռ, ինչպես բազմիցս կրկնել եմ, թիվ 14 արձանագրությամբ այս պատմությունը հավանաբար չի ավարտվելու, քանի որ այն բավական չէ ծանրաբեռնվածության հիմնախնդիրը հսկողության տակ պահելու համար: Չնայած իր ներուժին և մեր բոլոր ջանքերին, կա մի բան, որ թիվ 14 արձանագրությունն ի զորու չէ կատարել, և դատարանը միշտ շատ պարզ է արտահայտվել այդ առիթով. այն չի կարող ինքնին նվազեցնել Ստրասբուրգ ուղարկվող գործերի ծավալը, այն չի կարող փակել խողովակը և չի կարող նույնիսկ դանդաղեցնել այդ հոսքը:

Մյուս կողմից՝ դատական մարմնի արդյունավետության հարատև բարձրացումն էլ սահման ունի, և լավ կլիներ, եթե դա միայն ֆիզիկական սահման լիներ: Արդյունավետության բարձրացումը չի կարող լինել թելադրանք, որին դատարանը պետք է մշտապես և ամեն գնով ենթարկվի, որովհետև դա կարող է հանգեցնել ոչ միայն դատարանի անկախության խաթարմանն իր դատական գործունեությունը կազմակերպելու հարցում, այլև սկզբունքորեն սխալ կլինի:

Անկասկած, կոնվենցիայի նպատակը ոչ թե հնարավորինս մեծ թվով դիմումներ անընդունելի հայտարարելն է, այլ անդամ պետություններում մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովումը: Տարեցտարի կարելի է հասնել ավարտված գործերի վիճակագրության ավելացմանը՝ կենտրոնանալով ավելի հեշտ լուծվող, բազմաքանակ անընդունելի դիմումների վրա, որն անխուսափելիորեն ավելի բարդ կլինի ըստ էության դիմումների պատճառով:

Առաջնահերթ խնդիրներից չշեղվելու համար, առաջնորդվելով թիվ 14 արձանագրության նպատակներով, դատարանը վերջերս որոշեց ավելի մեծ ուշադրություն նվիրել ըստ էության գործերին, այսինքն՝ այն դիմումներին, որոնցում դիմողը, լինելով մարդու իրավունքների խախտման զոհ, առաջ է քաշում լուրջ մեղադրանքներ: Ապագայում դա կարող է հանգեցնել առաջին հայացքից թվացյալ լճացման կամ առավել ցածր ընդհանուր արդյունավետության: Սակայն իրականում, եթե ցուցանիշները համեմատվեն ըստ կատեգորիաների, ակնհայտ կդառնա, որ դատարանն ավելի մեծ ծավալով է վերադառնում իր բուն գործին՝ էական դիմումներին, այն գործերին, որոնք փաստացի նպաստում են Եվրոպայի խորհրդի պետություններում և նույնիսկ դրանց սահմաններից դուրս մարդու իրավունքների պաշտպանության խթանմանը:

…

2005 թ. ապրիլին դատարանը հրապարակեց Եվրոպայի խորհրդի երրորդ գագաթնաժողովին ուղղված իր հուշագիրը [Memorandum to the Third Summit of the Council of Europe], որում դատարանը

նախազգուշացնում էր, որ իր ծանրաբեռնվածության մեծացումը նշանակում է, որ այս պահին «վտանգվում է համակարգի արդյունավետությունը՝ չնայած այն նշանակալի առաջընթացին, որին հասել է դատարանն իր ծավալներում»: Դատարանի կարծիքով.

…հնարավոր է, որ աշխատանքային մեթոդների և ներքին կազմակերպվածության բարելավման անընդմեջ որոնումներից զատ, հետագա միջոցներ ներդնելու անհրաժեշտություն առաջանա, եթե ցանկանում ենք երկարաժամկետ կտրվածքով պահպանել ՄԻԵԿ-ի հիմնած մարդու իրավունքների պաշտպանության համակարգի արդյունավետությունը: Ի լրումն թիվ 14 արձանագրության արագ վավերացման՝ **կառավարությունները պետք է սկսեն մտածել գործողությունների երկարաժամկետ տարբերակների մասին,** որոնք կարող են ապահովել կայուն, գործնականորեն կիրառելի համակարգ, ինչն էլ իր հերթին կկարողանա ապահովել մարդու իրավունքների պաշտպանության առավելագույն արդյունավետությունը՝ միաժամանակ պահպանելով ՄԻԵԿ-ի հիմնարար փիլիսոփայությունը: Ըստ էության՝ կառավարությունները կանգնած են միջազգային պաշտպանության մեխանիզմների բնույթի ընտրության առջև, այն մեխանիզմների, որոնք պետք է տրամադրվեն 21-րդ դարում ապրող եվրոպացիներին:

Դատարանն առաջարկեց նշանակել «հանրաճանաչ և փորձառու պետական և միջազգային դատավորներից և այլ փորձագետներից կազմված խումբ», որը քննության կառներ այս հարցերը և կմշակեր «հնարավոր սցենարներ» (իրենց հարաբերական ծախսերով և օգուտներով հանդերձ): Այդուհետ կառավարությունները կարող են ուսումնասիրել խմբի հայթայթած տվյալները:

Երրորդ գագաթնաժողովի ավարտին Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարների հրապարակած *Վարշավայի հռչակագիրը* (CM (2005) 79 վերջնական) վերստին հաստատեց ՄԻԵԿ-ի և դատարանի անփոխարինելի դերը մարդու իրավունքների չափորոշիչների ձևավորման, քարոզման և իրագործման, ինչպես նաև դրանց արդյունավետության երաշխավորման գործում: Դրանից ելնելով՝ վեհաժողովը որոշեց ստեղծել «գիտակ մարդկանցից կազմված խումբ, որը պիտի մշակեր համակողմանի ռազմավարություն՝ համակարգի արդյունավետությունը երկարաժամկետ հեռանկարով ապահովելու համար»: 2005 թ. սեպտեմբերին Նախարարների կոմիտեն հայտարարեց տասնմեկ «գիտակ» մարդկանց անունները, այդ թվում նաև (Անգլիայի և Ուելսի) գլխավոր լորդ դատավորի՝ լորդ Վուլֆի անունը:

Գիտակ այրերի կողմից երկարաժամկետ բարեփոխումների մշակումից զատ, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը և դատարանի նախագահը (2005 թ. հուլիսին) հրավիրեցին լորդ Վուլֆին և նրան օգնող դատարանների՝ վարչարարության գործում փորձառու խմբին՝ անցկացնելու դատարանի աշխատանքային մեթոդների վերլուծություն: 2005 թ. դեկտեմբերին լորդ Վուլֆը հրապարակեց իր 76-էջանոց «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի աշխատանքային մեթոդների տեսություն» փաստաթուղթը: Վերլուծությունը մատնանշում էր այն քայլերը, որ թիվ 14 արձանագրությունն ու կոնվենցիայի հետագա փոփոխություններն իրականացնելուց առաջ պետք է ձեռնարկեին դատարանը և գրասենյակը՝ ի պատասխան աճող աշխատանքային ծանրաբեռնվածության: Լորդ Վուլֆը զեկուցեց, որ դատարանի վարույթում լսման է սպասում 82.100 գործ, իսկ մինչև 2010 թ. նախատեսվում է դրանց քանակի աճ մինչև 250.000: Դատարանի աշխատանքային մեթոդների ոլորտում նա առաջարկում էր յոթ հիմնական փոփոխություն: (1) Դատարանը պետք է վերստին սահմանի, թե ինչ է դիմումը, որպեսզի վարույթ մտնեն միայն դիմումի այն ձևերը, որոնք պատշաճ են լրացված: (2) Վարշավայում և Եվրոպայի երկու-երեք այլ պետություններում, որտեղից ստացվում են մեծ թվով դիմումներ (և որտեղ կա օմբուդսմանի ինստիտուտ՝ լուծելու մարդու իրավունքների հետ կապված գանգատները), պետք է հիմնվեն գրասենյակի արբանյակային/սատելիտային գրասենյակներ: Այդ գրասենյակները պետք է խորհրդատվություն ապահովեն դատարանի ընդունելիության չափանիշների և իրավական պաշտպանության առկա ներպետական միջոցների վերաբերյալ: Բացի այդ, գրասենյակները կարող են անցկացնել նաև տվյալ պետության դեմ ստացված դիմումների նախնական քննություն: (3) Եվրոպայի խորհուրդը և դատարանը պետք է խրախուսեն պետական օմբուդսմանի ներգրավումը և մարդու իրավունքների հետ կապված վեճերի լուծման այլընտրանքային մյուս մեթոդները: Գրասենյակի կառուցվածքում անհրաժեշտ է ստեղծել «բարեկամական կարգավորման» միավոր, որը գործուն ձևով զբաղվի այդ մեթոդով լուծվող ավելի մեծ թվով դիմումների հայտնաբերմամբ: (4) Դատարանի կողմից փորձնական վճռի ընթացակարգի կիրառումը պետք է ընդլայնել, իսկ գրասենյակի կառուցվածքում անհրաժեշտ է ստեղծել «41-րդ հոդվածի» միավոր, որը պետք է մշակի

(հրապարակելի) ցուցումներ փոխհատուցման համապատասխան գումարների վերաբերյալ: Անհրաժեշտ է առանձին ստեղծել նաև «կուտակված գործերի» քարտուղարություն, որը զբաղվի քննության սպասող գործերի թվի կրճատմամբ: (5) Անհրաժեշտ է նշանակել գրասենյակի քարտուղարի երկրորդ տեղակալ (ղեկավարության համար), որը զբաղվի գրասենյակի աշխատակազմի վարձման և վերապատրաստման գործընթացների վերահսկմամբ: (6) Անհրաժեշտ է ներդնել գրասենյակի իրավաբանների վերապատրաստման կենտրոնական միավոր: (7) Դատավորների համար անհրաժեշտ է ներդնել պարտադիր ներածական-ճանաչողական ծրագիր կոնվենցիայի և դատարանի գործունեության վերաբերյալ, ինչպես նաև լեզվական ուսուցման ծրագիր (անգլերեն կամ ֆրանսերեն) այն դատավորների համար, որոնք կարիք ունեն հարստացնելու դատարանի այդ երկու աշխատանքային լեզուների գիտելիքները: Վերլուծության տեքստում կարելի է նկատել արձագանքներ լորդ Վուլֆի ավելի վաղ՝ «Արդարադատության մատչելիությունը. վերջնական զեկույց» աշխատությունից [Access to Justice: Final Report (HMSO 1996)], որը Անգլիայի քաղաքացիական իրավունքի ընթացակարգերի լուրջ ուսումնասիրություն էր և հանգեցրեց քաղաքացիական օրենսդրության նշանակալի փոփոխությունների: Օրինակ՝ լորդ Վուլֆը հանդես էր գալիս ի պաշտպանություն վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերի (ներառյալ՝ օմբուդսմանի ինստիտուտը), որոնք կարող են ծառայել որպես նախնական փուլ պետական մարմինների կողմից ընդունված որոշումների օրինականության վերանայում պահանջող անձանց համար:

2006 թ. մայիսին գիտակ այրերի խումբը Նախարարների կոմիտե ներկայացրեց միջանկյալ զեկույց (Cm(2006)88): Զեկույցում բացատրվում էր այն առաջընթացը, որ արձանագրվել էր խմբի նախնական կարծիքներում: Թեև խումբը համարում էր, որ թիվ 14 արձանագրությամբ սահմանված փոփոխություններն «անկասկած խիստ օգտակար կլինեն», նա զգուշացնում էր, որ դրանք «դատարանի համար բավարար չեն լինելու դիմումների կուտակման հարցի երկարաժամկետ լուծում առաջարկելու առումով»: Դատարանի հաշվարկներից ենթադրվում էր, որ թիվ 14 արձանագրությամբ ներդրվող բարեփոխումները կարող են դատարանի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնել 20-25 տոկոսով: Հետևաբար, խումբը պետք է առաջարկեր «արմատական» միջոցներ՝ ապահովելու դատարանի գործունեության երկարաժամկետ արդյունավետությունը: Խումբը որոշել էր հետամուտ չլինել առաջին ատյանի շրջանային դատարանների ստեղծման գաղափարին՝ ելնելով ծախսերից և հակասական նախադեպային իրավունքի առաջացման ռիսկից: Դատարանը մերժեց նաև քննության համար դատարանի կողմից գործերի հայեցողական ընտրության գաղափարը, քանի որ այն «լիովին խորթ էր մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգին» և «բովանդակում էր համակարգը քաղաքականացնելու միտում այն առումով, որ դատարանը պետք է ընտրություն կատարեր քննության ենթակա գործերի միջև»: Հնարավոր բարեփոխումների թվում, որոնց շուրջ խորհում էր խումբը, դատարանին առընթեր «դատական կոմիտեի» [Judicial Committee] ստեղծման հարցն էր, որը պետք է զբաղվեր այն մեծաքանակ դիմումներով, որ անընդունելի էին ձևական հիմքերով (օրինակ՝ սպառված չեն իրավական պաշտպանության ներպետական միջոցները): Դատարանը իրավասություն կստանար կայացնելու «սկզբունքային վճիռներ» [Judgments of Principle], որոնք պարտադիր կլինեն անդամ պետությունների համար և, այդպիսով, կբարձրացնեին դատարանի «սահմանադրական» դերը՝ միաժամանակ նվազեցնելով առանձին պետություններին վերաբերող առանձին վճիռների կայացման անհրաժեշտությունը: Թեև խումբը համարում էր, որ Եվրոպական Միության նախնական վճիռների մեխանիզմը հարմար չէ ՄԻԵԿ-ի համակարգի համար, գիտակ այրերն ուսումնասիրում էին այն հարցը, թե արդյոք պետական գերագույն դատարաններին պե՞տք է թույլ տալ, որ դատարանից խնդրեն խորհրդատվական կարծիք կոնվենցիայի մեկնաբանման վերաբերյալ, և արդյոք դատարանին պե՞տք է օժտել պետական դատարաններին որոշակի խնդիրներ փոխանցելու լիազորությամբ (օրինակ, թե որքան փոխհատուցում պետք է վճարվի գործը շահած դիմողին): Այս քննարկումները հիմնվում են այն գաղափարների վրա (օրինակ՝ զտման գործառույթ իրականացնող նոր մարմնի ստեղծումը), որոնք տարիներ շարունակ շրջանառվել են Ստրասբուրգի համակարգում: Նախարարների խորհուրդը խնդրեց, որ գիտակ այրերն իրենց վերջնական զեկույցը ներկայացնեն մինչև 2006 թ. վերջը:

3 ՀՈԴՎԱԾ 1 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՐԳԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

«Ասանիձեն ընդդեմ Վրաստանի» (Assanidze v Georgia) 2004 թ. ապրիլի 8-ի վճիռ Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը Վրաստանի քաղաքացի էր, տեղական իշխանության նախկին բարձրաստիճան պաշտոնյա, որին ձերբակալել էին Բաթումում՝ Վրաստանի Աջարական Ինքնավար Հանրապետության մայրաքաղաքում (մի տարածք, որը պատմականորեն տիրապետել են Օսմանյան կայսրությունը և Ռուսական կայսրությունը, իսկ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժամանակաշրջանում եղել է Վրացական ԽՍՀ ինքնավար մարզ: Դատարանի վճռի կայացման պահին Աջարիայի կարգավիճակի հարցն անկախացած Վրաստանում դեռևս լուծված չէր): 1994 թ. դիմողը մեղադրվել է ապօրինի ֆինանսական գործարքների համար և դատապարտվել ութ տարվա ազատազրկման: 1999 թ. նրան ներում է շնորհվել Վրաստանի նախագահի կողմից՝ ազատազրկման մնացյալ ժամանակահատվածի կասեցումով: Աջարիայի իշխանությունները նրան ազատ չեն արձակել: Նրա դեմ հարուցվել են նոր քրեական մեղադրանքներ, և 2000 թ. Աջարիայի գերագույն դատարանը դատապարտել էր նրան տասներկու տարվա ազատազրկման (1993 թ. նրա կալանավորման հետին ամսաթվով): Ասանիձեն վճիռը բողոքարկել է Վրաստանի գերագույն դատարանում, և 2001 թ. այդ դատարանը չեղյալ է համարել նրա մեղադրանքներն ու կարգադրել անհապաղ ազատ արձակել նրան: Չնայած Վրաստանի կենտրոնական իշխանության մարմիններից ստացված բազմաթիվ խնդրանքներին՝ Աջարիայի իշխանությունները հրաժարվում էին ազատ արձակել Ասանիձեին: Վերջինս գանգատով դիմեց Մարդու իրավունքների եվրոպական դատարան, ի թիվս այլոց, հայտարարելով նաև 5-րդ հոդվածով սահմանված ազատության իր իրավունքի խախտման մասին:

Գործի կարևորագույն մասերից մեկը վերաբերում էր կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված Վրաստանի կառավարության պատասխանատվությանն այն փաստի համար, որ դիմողին Աջարիայի իշխանությունները երկար ժամանակ պահել են կալանքի տակ: Կառավարությունն ընդունում էր, որ Աջարիայի Ինքնավար Հանրապետությունը Վրաստանի անքակտելի մասն է, որ Աջարիան անջատողական նկրտումներ չունի, և մինչև դիմողի գործի ի հայտ գալը կենտրոնական և աջարական իշխանությունների միջև դատական մարմինների համագործակցության խնդիր երբևէ չի եղել:

Մեծ պալատը որոշեց հետևյալը.

137. Կոնվենցիայի 1-ին հոդվածով պահանջվում է, որ «բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովեն այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն կոնվենցիայի 1-ին բաժնում»: Այս դրույթից հետևում է, որ կողմ հանդիսացող պետությունը պատասխան պետք է տա խախտման պահին իր «իրավազորության» ներքո գտնվող յուրաքանչյուր անձի իրավունքների ու ազատությունների ցանկացած խախտման համար:

Որոշ բացառիկ դեպքերում իրավազորությունն ընդունվում է ոչ տարածքային գործոնների հիման վրա, որպիսիք են պետական մարմնի ընդունած իրավական ակտերը, որոնք իրականացվում են արտերկրում պետության դիվանագիտական կամ հյուպատոսական կորպուսի ներկայացուցիչների կողմից, անհատների կողմից արտերկրում կատարված քրեորեն հետապնդելի գործողություններն ընդդեմ պետության կամ նրա քաղաքացիների շահերի, պետու-

թյան դրոշը կրող նավերում կամ պետությունում գրանցված ինքնաթիռներում կամ հրթիռներում կատարված գործողությունները և, հատկապես, միջազգային լուրջ հանցագործությունները (ունիվերսալ իրավազորություն):

Այնուամենայնիվ, որպես կանոն, հարկ է հիշել, որ կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով «իրավազորություն» հասկացությունն արտացոլում է հանրային միջազգային իրավունքով սահմանված դիրքորոշումը (*տե՛ս «Ժանտիլոմը և այլք ընդդեմ Ֆրանսիայի» (Gentilhomme and Others v France)* գործը, թիվ. 48205/99, 48207/99 և 48209/99, պարբ. 20, 14 մայիսի 2002 թ.: «*Բանկովիչը և այլք ընդդեմ Բելգիայի և այլ 16 բարձր պայմանավորվող պետությունների» (Bankovic and Others v Belgium and 16 Other Contracting States*) գործը (որոշում) GC թիվ 52207/99, պարբ. 59–61, ECHR 2001-XII): Այդ հասկացությունն «առաջնայնորեն» կամ «էականորեն» տարածքային է (*տե՛ս* վերը նշված *Բանկովիչի* գործը):

138. Ի լրումն պետության համապատասխան տարածքի՝ տարածքային իրավազորությունը կիրառելի է նաև այն տարածքի նկատմամբ, որը ենթադրվող խախտման պահին գտնվել է առնչվող պետության «ընդհանուր տիրապետության» ներքո (*տե՛ս «Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի»* գործի (նախնական առարկություններ) վճիռը՝ կայացված 1995 թ. մարտի 23-ին, շարք A, թիվ 310). խոսքը, մասնավորապես, գրավյալ տարածքների մասին է (*«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի»* [միջպետական գանգատ], թիվ 25781/94, ECHR-2001-IV), բացառությամբ այդ տիրապետությունից դուրս գտնվող տարածքների (*տե՛ս* վերը նշված *Բանկովիչի* գործը):

. . .

146. ... Այստեղ միակ կարևոր հարցը պետության միջազգային պատասխանատվությունն է՝ անկախ այն հանգամանքից, թե ազգային մակարդակում որ մարմնին է վերագրվում կոնվենցիայի՝ ներպետական համակարգում թույլ տրված խախտման պատասխանատվությունը (*տե՛ս mutatis mutandis «Ֆոտին և այլք ընդդեմ Իտալիայի» (Foti and Others v Italy)* գործը, որի վճիռը կայացվել է 1982 թ. դեկտեմբերի 10-ին, շարք A, թիվ 56, էջ 21, պարբ 63, *«Ցիմերմանը և Շտայներն ընդդեմ Շվեյցարիայի» (Zimmermann and Steiner v Switzerland)* գործը, 1983 թ. հուլիսի 13-ի վճիռ, շարք A, թիվ 66, էջ 13, պարբ. 32 և *«Լինգենսն ընդդեմ Ավստրիայի» (Lingens v Austria)* գործը, վճիռը՝ 1986 թ. հուլիսի 8, շարք A, թիվ 103, էջ 28, պարբ. 46):

Թեև անհնար է պատկերացնել, որ պետությունները կարող են դժվարության հանդիպել իրենց տարածքի բոլոր հատվածներում կոնվենցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության հարցում, այդուհանդերձ կոնվենցիայի անդամ յուրաքանչյուր պետություն մնում է պատասխանատու իր պետական տարածքի որևէ մասում տեղի ունեցած իրադարձությունների համար:

Ավելին, կոնվենցիան ոչ միայն պարտադրում է անդամ պետությունների բարձրագույն իշխանություններին իրենց մասով հարգել կոնվենցիայում ամրագրված իրավունքներն ու ազատությունները, այլև հանգեցնում է նրան, որ այդ իրավունքների ու ազատությունների ապահովման նպատակով պետության բարձրագույն իշխանությունները պարտավոր են կանխել կամ հատուցել յուրաքանչյուր խախտում իրենց ստորադաս օղակներում (*տե՛ս «Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործը, 1978 թ. հունվարի 18-ի վճիռ, շարք A, թիվ 25, էջ 90-91, պարբ. 239): Պետության բարձրագույն իշխանությունները պարտավոր են պահանջել իրենց ստորադրյալներից ենթարկվել կոնվենցիայի պահանջներին և չեն կարող արդարանալ նրանով, թե անկարող են ապահովել հարգանքը կոնվենցիայի նկատմամբ (նույն տեղում, էջ 64, պարբ. 159):

147. Չնայած Վրաստանի պետական մեխանիզմների թերություններին և հատուկ կարգավիճակով տարածքներում ահաբեկչական ուժերի առկայությանը՝ Աջարիայի Ինքնավար Հանրապետությունը օրենքով ենթակա է Վրաստան պետությանը: Աջարիայի տեղական իշխանությունները կենտրոնական իշխանության հետ այնպիսի հարաբերությունների մեջ են, որ միայն վերջինիս թերացումով կարող են պայմանավորված լինել կոնվենցիայի խախտումները տեղական ամենացածր մակարդակում: Կոնվենցիայի 1-ին հոդվածով պետության վրա դրված ընդհանուր պարտականությունը ենթադրում և պահանջում է ազգային այնպիսի համակարգի ներդրում, որն ի զորու կլինի ապահովել պետության ողջ տարածքում յուրաքանչյուրի կողմից կոնվենցիայի դրույթների կատարումը: Այս փաստը հաստատվում է նրանով, որ 1-ին հոդվածը, նախ և առաջ, կոնվենցիայի շրջանակներից չի բացառում անդամ պետությունների «իրավազորության» որևէ մասը, և երկրորդ՝ սահմանադրությամբ կիրառվող «իրավազորությամբ» է ընդհանուր առմամբ դրսևորվում պետության ենթակայությունը կոնվենցիայի դրույթներին (*տե՛ս «Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունը և այլք ընդդեմ Թուրքիայի» (United Communist Party of Turkey and Others v Turkey)* գործը, 1998 թ. հունվարի 30-ի վճիռ, Զեկույցներ 1998-I, էջ 17-18, պարբ. 29):

. . .

149. Սրանով դատարանը շեշտում է, որ կոնվենցիայով սահմանված կարգով Վրաստան պետության բարձրագույն ղեկավար մարմինները խստորեն պատասխանատու են իրենց ստորադասների վարքի համար (*տե՛ս* վերը նշված *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործը, էջ 64, պարբ. 159): Միայն իր՝ Վրաստան պետության, ոչ թե ներպետական որևէ ղեկավարի կամ մարմնի պատասխանատվությունն է դատարանի առջև բերված խնդիրը: Բազմապիսի ազգային մարմինների կամ դատարանների հետ գործ ունենալը, ինչպես նաև ազգային տարբեր հաստատությունների միջև ծագած վեճերի քննումը կամ պետության ներքին քաղաքականությունն առհասարակ դատարանի գործառույթը չեն:

150. Հետևաբար դատարանը համարում է, որ փաստացի այն տվյալները, որոնցից ծագել են ենթադրվող խախտումները, Վրաստանի «իրավազորության» ներքո են՝ կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով: Եթե նույնիսկ ներպետական համակարգում այդ խախտումներն անմիջականորեն վերագրվում են Աջարիայի Ինքնավար Հանրապետության իշխանության մարմիններին, կոնվենցիայով պատասխանատվությունը կրում է միայն Վրաստան պետությունը»:

Ինչ վերաբերում է դիմողի շարունակվող բանտարկությանը 2001 թ. Վրաստանի գերագույն դատարանի՝ նրան անհապաղ ազատ արձակելու որոշումից հետո, դատարանը նշեց հետևյալը.

173. Կամայականությունից պաշտպանող 5-րդ հոդվածի պահանջներին համապատասխանության առումով՝ դիմողի ձերբակալության առնչությամբ դատարանն անհանդուրժելի է համարում այն փաստը, որ իրավունքի նորմերին ենթարկվող որևէ պետությունում մարդը շարունակում է ազատազրկված մնալ՝ հակառակ իր ազատ արձակման վճռի:

174. Ինչպես վկայում են գործի փաստաթղթերը, մի շարք առիթներով հենց պետության կենտրոնական իշխանության մարմիններն են մատնանշել, որ դիմողին կալանավորված պահելու համար որևիցե հիմք չի եղել: Դատական և վարչական կենտրոնական մարմիններն իրավացի էին Աջարիայի իշխանություններին ուղղված ուղերձում՝ նշելով, որ դիմողի ազատազրկումը համարվում է կամայականության դրսևորում ներպետական օրենքներով և կոնվենցիայի 5-րդ հոդվածով: Այդուհանդերձ, նրանց բազմաթիվ հիշեցումներն ու կոչերն ապարդյուն եղան…

175. Դատարանը համարում է, որ առանց օրենքով սահմանված որոշակի պատճառի կամ դատարանի վճռի, անձին անորոշ և անկանխատեսելի ժամանակով ազատազրկելն անհարիր է իրավական որոշակիության սկզբունքին (*տե՛ս mutatis mutandis «Ջեսիուսն ընդդեմ Լիտվայի» (Jecius v Lithuania)* գործը, թիվ 34578/97, պարբ. 62, ECHR 2000-IX), կամայական է և հակասում է օրենքի նորմերի հիմնարար սկզբունքներին:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

…
2. *Միաձայն* վճռում է, որ գանգատարկվող հարցերը կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով Վրաստանի «իրավազորության» ներքո են, և այստեղ շոշափվում է միայն կոնվենցիայով սահմանված Վրաստանի պատասխանատվության հարցը (*տե՛ս* վերը, պարբ. 150):

. . .
5. Միաձայն վճռում է, որ 2001 թ. հունվարի 29-ից ի վեր դիմողը կամայական կերպով է ազատազրկված եղել՝ ի խախտումն կոնվենցիայի 5(1) հոդվածի…»:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Մեծ պալատի կազմում էին նախագահ Վիլդհաբերը և դատավորներ Ռոզակիսը, Կոստան, Ռեսը, Բրատցան, Քաֆլիշը, Լուկայդեսը, Կաբրալ Բարետոն, Ստրաժնիչկան, Յունգվիրթը, Կասադեվալը, Զուպանչիկը, Թոմասենը, Բոտուչարովան, Ուգրեխելիձեն, Զագրեբելսկին և Մուլարոնին:

2 *Սասնիձեի* գործի վճիռը ցույց տվեց, որ կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված «իրավազորության» հայեցակարգը դատարանը մեկնաբանում է հանրային միջազգային իրավունքի սկզբունքների համաձայն, որ սովորաբար ընդգրկում է պատասխանող պետության ազգային տարածքը: Այնուհետ, կոնվենցիայի համաձայն, կենտրոնական կառավարությունը հաշվետու է կոնվենցիայով ճանաչված իրավունքների ու ազատությունների ապահովման համար իր տարածքի բոլոր մասերում, կառավարության բոլոր ենթամակարդակներում: Սրանք կարևոր որոշումներ են, որոնք կոչված են ապահովելու, որ կոնվենցիայով հռչակված անձի իրավունքներն ու ազատությունները երաշխավորվեն անդամ պետությունների ողջ տարածքում: Խիստ կարևոր է, որ անդամ պետություններն ապահովեն իրենց ստորադրյալ մարմինների կողմից կոնվենցիայի լիարժեք պահպանումը, որպեսզի ազգային տարածքներում չառաջանան խախտումների de facto օջախներ:

3 Մեկ այլ առիթով, *«Իլաշկուն և այլք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի» (Ilascu and Others v Moldova and Russia)* գործում (2004 թ. հուլիսի 8-ի վճիռ) մեծ պալատը շեշտել է անդամ պետության՝ կոնվենցիայով սահմանված հարատև պատասխանատվությունն իր տարածքի նույնիսկ այն հատ-

վածի համար, որը փաստացի գտնվում է անջատողական վարչակարգի տակ: Չորս դիմողները ձերբակալվել են, մեղադրվել և բանտարկվել այսպես կոչված «Մոլդովական Մերձդնեստրյան Հանրապետության» (ՄՄՀ) իշխանությունների կողմից, Մոլդովայի արևելյան մասում գտնվող մի տարածքի, որն իր անկախությունն է հռչակել 1991 թ., սակայն միջազգային հանրության կողմից չի ճանաչվել: Մեծ պալատը որոշեց հետևյալը.

333. Դատարանը համարում է, որ եթե բարձր պայմանավորվող կողմին իր ողջ տարածքում իր իրավազորությունն իրականացնելուն խանգարում է հակասական de facto իրավիճակը, ինչպիսին է այդ տարածքի մի հատվածում հաստատված անջատողական վարչակարգը, անկախ այն հանգամանքից՝ այդ իրավիճակն ուղեցվում է մեկ այլ պետության կողմից ռազմական օկուպացիայով, թե ոչ, բարձր պայմանավորվող կողմը դրանով չի դադարում կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված իր իրավազորությունն իր տարածքի այդ մասի նկատմամբ պահպանելուց, որը ժամանակավորապես ենթարկվել է ապստամբ ուժերի կողմից օժանդակվող տեղական իշխանություններին կամ մեկ այլ պետության:

Նման de facto իրավիճակը, այդուհանդերձ, նվազեցնում է բարձր պայմանավորվող կողմի իրավազորությունն այն առումով, որ պետության՝ կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն ստանձնած պարտավորությունը դատարանի կողմից դիտարկվում է միայն իր տարածքում գտնվող անձանց նկատմամբ դրական պարտավորությունների համատեքստում: Պետությունը պետք է ձգտի իրեն հասանելի իրավական և դիվանագիտական բոլոր միջոցներով, ի դեմս այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների, շարունակել երաշխավորել կոնվենցիայով հռչակված իրավունքներն ու ազատությունները:

Մեծամասնությունն (տասնմեկ կողմ, վեց դեմ ձայներով) այնուհետև որոշեց, որ դիմողներն ընկնում են Մոլդովայի իրավազորության ներքո: Դատավորների մեծամասնությունը համոզված էր, որ Մոլդովան «արդյունավետ միջոցներ» չի ձեռնարկել՝ դադարեցնելու ՄՄՀ-ում ձերբակալված երեք դիմողների շարունակվող ազատազրկումն ու խոշտանգումը, երբ Իլաշկուն 2001 թ. ազատ էր արձակվել (նշենք, որ դատավորներ Կասադեվալը, Ռեսը, Բիրսանը, Թուլքենսը և Ֆուրա-Սանդստրոմը կարծում էին, որ Մոլդովայի կառավարությունը 1992 թ. ի վեր դիմողների նկատմամբ որդեգրել է «բավական զիջողական վերաբերմունք»): Դատավոր Բրատցան, որի հետ համամիտ էին դատավորներ Ռոզակիսը, Հեդիգանը, Թոմասենը և Պանտիրուն, այլ կարծիքի էր Մոլդովայի իրավական պատասխանատվության հարցում:

8. …Ես դժվարանում եմ ընդունել այն հայտարարությունը, համաձայն որի՝ այն մարդիկ, ովքեր գտնվում են պետության տարածքի մի հատվածում, որտեղ անջատողական վարչակարգի ապօրինի գրավման հետևանքով պետությունը չի կարողանում իրականացնել որևէ իրավասություն կամ հսկողություն, միևնույն է, համարվում են այդ պետության «իրավազորության» ներքո՝ համաձայն կոնվենցիայի 1-ին հոդվածով այդ եզրույթի ինքնուրույն նշանակության, որը ենթադրում է, թե պետությունն իրավունք ունի «յուրաքանչյուրի համար ապահովելու … այն իրավունքներն ու ազատությունները», որոնք սահմանվում են տվյալ հոդվածով: Նմանապես, ես դժվարանում եմ ընդունել դատարանի մեծամասնության եզրակացությունն այն մասին, թե նման փաստացի իրավիճակում այդ տարածքում գտնվողները շարունակում են մնալ պետության «իրավազորության» ներքո, բայց այդ «իրավազորության» շրջանակները նեղանում են, քանի որ պետությունը տարածքում պարտավոր է յուրաքանչյուրի համար ապահովել կոնվենցիայով հռչակված իրավունքները: Իմ կարծիքով՝ արդեն իսկ «պետության դրական պարտավորություններ» հասկացության գործածումը և վճիռը կայացնելիս դատարանի նախադեպային իրավունքի վրա էապես հիմնվելը՝ վկայակոչելով այդ պարտավորություններին անդրադարձող 1-ին հոդվածը, տվյալ համատեքստում շփոթեցնող և անօգուտ է: Այդ նախադեպային իրավունքը, որ հղումներ է պարունակում հանրային շահի և անհատի շահի միջև հավասարակշռություն սահմանելու, ինչպես նաև առաջնահերթությունների ու միջոցների վերաբերյալ ընտրության անհրաժեշտության մասին, մշակվել է փաստացի համատեքստում, որտեղ պատասխանող պետությունը լիարժեք և արդյունավետ հսկողություն էր իրականացնում իր ողջ տարածքում, իսկ այդ տարածքում գտնվող անձինք անվիճելիորեն համարվում էին պետության «իրավազորության» ներքո՝ կոնվենցիայի նպատակներից ելնելով:

Իմ համոզմամբ՝ դատարանի մտածելակերպը չի կարելի կիրառել դրանից արմատապես տարբերվող մեկ այլ իրավիճակի նկատմամբ, երբ իր հսկողությունից դուրս հանգամանքների բերումով պետությունը չի կարողանում իրականացնել որևէ իշխանություն այդ տարածքում, և խնդիրն այն է՝ այդ տարածքում հայտնված անձինք պե՞տք է դիտվեն որպես պետության «իրավազորության» ներքո գտնվողներ՝ կոնվենցիայի նպատակներից ելնելով: Ես չեմ կարող ընդունել, որ նման իրավիճակում այդ տարածքում անհատի՝ կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտման պատասխանատվությունն ընկնում է պետության ուսերին միայն այն պատճառով, որ պետությունը չի կարողացել ապացուցել, որ իրավական և դիվանագիտական դաշտում ձեռնարկել է բավարար չափով միջոցներ՝ այդ իրավունքները երաշխավորելու նպատակով: Սույն գործի յուրահատուկ համատեքստում պետության արդյունավետ հսկողությունից

դուրս գտնվող տարածքում դիմողների ապօրինի բանտարկության համար պետության պատասխանատվությունը, իմ կարծիքով, չպետք է կախված լինի այն հանգամանքից՝ որևէ որոշակի ժամկետում պետությունը՝ դատարանի գնահատմամբ, գործադրե՞լ է բավականաչափ համաձայնեցված միջոցներ նրանց ազատ արձակման ուղղությամբ, թե՞ ոչ: Նմանապես, ես չեմ կարող ընդունել կոնվենցիայի այն մեկնաբանությունը, որով դատարանից պահանջվում է միջազգային բարդ և փոփոխական իրավիճակում գնահատել՝ որևէ որոշակի իրավական կամ դիվանագիտական միջոց արդյունավետ կլինի՞ տվյալ տարածքում սահմանադրական իրավունքը վերականգնելու համար, այդ միջոցն իրականում հնարավո՞ր է եղել իրականացնել և համապատասխա՞ն ձևով է իրականացվել առնչվող պետության կողմից:

9. Ես կարող եմ համաձայնել, որ այն իրավիճակում, երբ պետությունը զրկված է իր սահմանագծում գտնվող տարածքում որևէ իրավասություն կամ հսկողություն իրականացնելու հնարավորությունից, առնչվող պետության անգործությունը, այնուամենայնիվ, կարող է հիմք ծառայել այդ պետության պատասխանատվության համար՝ իր տարածքում գտնվողների նկատմամբ: Սակայն նման պատասխանատվությունը, ըստ իս, կիրառելի է միայն բացառիկ հանգամանքներում, երբ դատարանի տրամադրության տակ եղած փաստերը անվերապահորեն վկայում են, որ առնչվող պետությունը համապատասխան ջանքեր չի գործադրել իր իշխանությունն այդ տարածքում վերականգնելու կամ սահմանադրական կարգուկանոնը վերահաստատելու ուղղությամբ, և այդ ջանքերի անբավարարությունը համազոր է լուռ համաձայնության, որ ապօրինի վարչակարգն այդ տարածքում իրականացնի իր իշխանությունը կամ «իրավազորությունը»:

Դատարանի մեծամասնության կողմից «դրական պարտավորությունների» հայեցակարգի նորարարական կիրառումը (տե՛ս ստորև 12-րդ ծանոթագրությունը) մի ցանկալի նպատակ ուներ (տե՛ս վերը բերված ծանոթագրություններն *Ասանիձեի* գործի կապակցությամբ), այն է՝ հասկացնել, որ անհնազանդության/հարկադրման աշխարհագրական տարածքներն անդամ պետություններում չեն հանդուրժվելու: Իսկ դուք համաձա՞յն եք դատավոր Բրատցայի կարծիքին, թե մեծամասնության մոտեցումը պահանջում է, որ դատարանը չափից դուրս շատ ներգրավվի կառավարությունների դիվանագիտական ռազմավարությունը գնահատելու գործընթացում: Դիմողների նկատմամբ Ռուսաստանի իրավազորային պատասխանատվության համար *տե՛ս* ստորև, 7-րդ ծանոթագրությունը:

4 Բացառիկ իրավիճակներում կիրառվում է իրավազորության առավել լայն հասկացությունը: Օրինակ՝ *«Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի»* A.310(1995) գործում (նախնական առարկություններ) տասնվեց կողմ, երկու դեմ ձայներով մեծ պալատը որոշեց.

62 … Ըստ կոնվենցիայի խնդիրների ու նպատակների՝ բարձր պայմանավորվող կողմի պատասխանատվություն կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ ռազմական գործողությունների հետևանքով, օրինական թե անօրինական, պետությունն իրականացնում է իր պետական տարածքից դուրս գտնվող տեղանքի արդյունավետ հսկողություն:

Նման տարածքում կոնվենցիայով ճանաչված իրավունքների ու ազատությունների ապահովման պարտականությունը բխում է այն հանգամանքից՝ այդ հսկողությունն իրականացվում է անմիջականորե՞ն, զինուժի միջոցո՞վ, թե՞ ստորադրյալ տեղական իշխանությունների:

63. Այդ կապակցությամբ պատասխանող պետությունը ընդունել է, որ դիմողի՝ իր ունեցվածքի նկատմամբ հսկողության կորուստը բխում է թուրքական ռազմական ստորաբաժանումներով Կիպրոսի հյուսիսային մասի օկուպացման և այդ մասում «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» ձևավորման փաստերից [մի մարմին, որը միջազգային հանրության կողմից չի ճանաչվել]: Այնուհետ չի վիճարկվում այն փաստը, որ թուրք զինյալները թույլ չեն տվել դիմողին մոտենալ իր ունեցվածքին:

64. Հետևաբար, կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով նման գործողություններն ընկնում են Թուրքիայի իրավազորության ներքո…»:

Տիկին *Լոիզիդուի* գանգատների որոշակի հանգամանքների հիման վրա կայացված վճռում (տե՛ս ստորև՝ էջ 571 և 973, հոդվ. 8 և A1P1), տասնմեկ կողմ, վեց դեմ ձայների հարաբերակցությամբ, մեծ պալատը որոշեց հետևյալը.

56. Հարկ չկա որոշելու՝ արդյոք (ինչպես դիմողը և Կիպրոսի կառավարությունն են նշել) Թուրքիան իրականում խստորեն վերահսկո՞ւմ է «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» իշխանության մարմինների քաղաքականությունն ու գործողությունները: Հյուսիսային Կիպրոսում տարվող ակտիվ գործողություններում ներգրավված բազմաքանակ ստորաբաժանումների առկայությունից ակնհայտ է, … որ թուրքական բանակը կղզու այդ հատվածում

իրականացնում է արդյունավետ, համընդհանուր հսկողություն: Այդ տիրապետությունը, համաձայն համապատասխան ստուգման և գործի հանգամանքների, հանգեցնում է Թուրքիայի պատասխանատվությանը «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» իշխանությունների քաղաքականության և գործողությունների համար: … Այդ քաղաքականությունից և գործողություններից տուժածները, հետևաբար, ընկնում են Թուրքիայի իրավազորության ներքո՝ համաձայն կոնվենցիայի 1-ին հոդվածի, որովհետև Թուրքիայի՝ կոնվենցիայով ճանաչված իրավունքների ու ազատությունների ապահովման պարտավորությունը տարածվում է նաև Կիպրոսի հյուսիսային մասի վրա:

Ելնելով այդ եզրահանգումից՝ դատարանը հարկ չի համարում արտահայտվել այն փաստարկների շուրջ, որոնք հնչեցրեցին դատարանի առջև կանգնած վկաներն առ այն՝ արդյոք միջազգային իրավունքի նորմերով օրինակա՞ն, թե՞ անօրինական է համարվում 1974 թ. Թուրքիայի ռազմական ներխուժումը կղզի, քանի որ, ինչպես նշվեց վերը, կոնվենցիայի համաձայն, պետության պատասխանատվության սահմանման համար նման հարցադրումն էական չէ: … Բավական է միայն այս համատեքստում վերհիշել դատարանի ստացած տեղեկություններն այն մասին, որ միջազգային հանրությունը համարում է, որ Կիպրոսի Հանրապետությունը կղզու միակ օրինական կառավարությունն է, և բազմիցս հրաժարվել է ընդունել «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության»՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի օրինականությունը:

57. Վերը նշվածից հետևում է, որ դիմողին Հյուսիսային Կիպրոսում գտնվող իր սեփականությանը մոտենալ թույլ չտալը և դրա հետևանքով այդ սեփականությունը տնօրինելու հնարավորության կորուստն այն խնդիրն է, որ 1-ին հոդվածի համաձայն՝ ընկնում է Թուրքիայի «իրավազորության» ներքո և, այդպիսով, դրա համար պատասխանատու է Թուրքիան:

5 Հազվադեպ պատահող միջպետական գործերից մեկում՝ *«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի»* գործում (ECHR 2001-IV, տե՛ս ստորև՝ էջ 124-125 [A 2]), մեծ պալատը, տասնվեց կողմ, մեկ դեմ ձայների հարաբերակցությամբ, հաստատեց *Լոիզիդուի* գործում կիրառված մոտեցումը Թուրքիայի ռազմական ուժերի կողմից Կիպրոսի հյուսիսային տարածքների գրավման համատեքստում:

77. Ճշմարիտ է, անշուշտ, որ *Լոիզիդուի* գործում դատարանը քննում էր անհատի գանգատն առ այն, որ իշխանությունները նրան շարունակաբար արգելում են տնօրինել իր սեփականությունը: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ դատարանի դատողությունը սահմանափակված է սկզբունքի ավելի ընդհանրական սահմանման առումով, երբ խոսքը վերաբերում է կոնվենցիայի համաձայն Թուրքիայի ընդհանուր պատասխանատվությանը «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» իշխանությունների քաղաքականության և գործողությունների համար: Հաշվի առնելով, որ Թուրքիան լիարժեք և արդյունավետ կերպով տիրապետում է Հյուսիսային Կիպրոսը, նրա պատասխանատվությունը չի կարող սահմանափակվել սոսկ Հյուսիսային Կիպրոսում սեփական զինվորների կամ պաշտոնյաների գործողություններով, այլ պետք է ընդգրկի նաև տեղական իշխանությունների գործողությունները, որոնք հարատևում են թուրքական ռազմական ուժերի և այլ տեսակի աջակցության շնորհիվ: Սրանից հետևում է, որ կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով անհրաժեշտ է համարել, որ Թուրքիայի «իրավազորության» մեջ է մտնում նաև կոնվենցիայով և դրա լրացուցիչ արձանագրություններով ամրագրված հիմնարար իրավունքների ամբողջ տիրույթը, անհրաժեշտ է հաշվի առնել, որ Թուրքիան վավերացրել է կոնվենցիան և դրա լրացուցիչ արձանագրությունները, ուստի պատասխանատու է դրանցով երաշխավորված իրավունքների խախտման համար:

Այնուհետև մեծ պալատը, Թուրքիայի կողմից ad hoc դատավորի առարկությամբ, հայտնաբերեց կոնվենցիայով հռչակված իրավունքների մի շարք խախտումներ, այդ թվում՝ մարդկանց անհետացման առնչությամբ արդյունավետ հետաքննությունների բացակայությունը (2-րդ և 5-րդ հոդվածներ), քաղաքացիական անձանց ռազմական դատարաններում դատելու փաստը Հյուսիսային Կիպրոսում (6-րդ հոդված), տեղահանվածներին (կիպրոսաբնակ հույներին) արգելելը մոտենալու Հյուսիսային Կիպրոսում գտնվող իրենց տներին (8-րդ հոդված և թիվ 1 արձանագրության 1-ին հոդված), Հյուսիսային Կիպրոսում կիպրոսաբնակ հույների ազատությունների անհիմն սահմանափակումն իրենց կրոնը դավանելու և արտահայտվելու հարցերում (9-րդ և 10-րդ հոդվածներ):

6 *«Բանկովիչը և այլք ընդդեմ Բելգիայի և այլ 16 բարձր պայմանավորվող պետությունների»* գործում (*Bankovic and Others v Belgium*, ECHR 2001-XII) վեց դիմողները Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության քաղաքացիներ էին, որոնց հարազատները շատերի հետ զոհվել էին 1999 թ. ապրիլի 23-ին ՆԱՏՕ-ի ինքնաթիռներով Սերբիայի ռադիոյի և հեռուստատեսության բելգրադյան գլխամասի ռմբակոծման ժամանակ: Ռազմական այդ գործողությունը մտնում էր 1999 թ. մարտ-հունիս ամիսներին Սերբիայում ՆԱՏՕ-ի օդային ուժերի հարձակողական ծրագրի մեջ, որի կազմակերպման պատճառն այն էր, որ Սերբիայի կառավարությունը հրաժարվել էր ընդունել այն քաղաքական

լուծումը, որը առաջարկվել էր 1998-1999 թթ. ալբանա-սերբական ճգնաժամի առնչությամբ: Սերբիայի ռադիոյի և հեռուստատեսության կայանի շենքի ռմբակոծման ժամանակ զոհվեց 16 մարդ, նույնքան անձինք ստացան ծանր վնասվածքներ: Դիմողները գանգատ ներկայացրին Ստրասբուրգի դատարան ընդդեմ պատասխանող 16 պետությունների (որոնք ՆԱՏՕ-ի անդամ են և կոնվենցիայի կողմ)՝ հայտարարելով, որ նրանք, ի թիվս այլոց, խախտել են նաև իրենց հարազատների կյանքի իրավունքը (հոդված 2): Պատասխանող պետություններն առարկում էին այն հիմնավորմամբ, որ դիմողների գանգատն 1-ին հոդվածով սահմանված իրենց իրավազորությունից դուրս է, ուստի նրանց դիմումներն անընդունելի են: Գանգատների ընդունելիության հարցը քննող պալատը գործը փոխանցեց մեծ պալատ: Իր որոշման մեջ վերջինս հիշատակեց 1-ին հոդվածի մշակման պատմությունը.

19. Իրավական և վարչարարական հարցերի գծով Եվրոպայի խորհրդի Խորհրդակցական վեհաժողովի կոմիտեի [Committee of the Consultative Assembly of the Council of Europe on Legal and Administrative Questions] պատրաստած տեքստում, որը հետագայում դարձավ կոնվենցիայի 1-ին հոդվածը, ասվում է, որ «անդամ պետությունները պարտավորվում են իրենց տարածքներում բնակվող բոլոր անձանց համար ապահովել իրավունքներ…»: Փորձագետների միջկառավարական կոմիտեն [Expert Intergovernmental Committee], որը քննում էր Խորհրդակցական վեհաժողովի պատրաստած փաստաթղթի նախագիծը, որոշեց «իրենց տարածքներում բնակվող բոլոր անձանց» արտահայտությունը փոխարինել «իրենց իրավազորության ներքո գտնվող անձանց» արտահայտությամբ: Դրա պատճառների մասին խոսվում էր *Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի նախապատրաստական փաստաթղթերի* հետևյալ հատվածում (հատոր III, էջ 260):

> «Խորհրդակցական վեհաժողովի նախագծում կոնվենցիայի շահառուների շրջանակն ընդգրկում է «կոնվենցիան ստորագրած պետություններում բնակվող բոլոր անձանց», մինչդեռ կոմիտեն կարծում է, որ «բնակվող» եզրույթը խիստ սահմանափակող է: Մենք համարում ենք, որ բոլոր հիմքերը կան՝ կոնվենցիայի օգուտները հասցնելու անդամ պետություններում գտնվող բոլոր անձանց, նույնիսկ նրանց, ովքեր չեն համարվում այնտեղ օրինական բնակվողներ: Ուստի կոմիտեն «բնակվող» բառը փոխարինեց «իրենց իրավազորության ներքո գտնվող» արտահայտությամբ, որը բովանդակում է նաև Միավորված ազգերի կազմակերպության հանձնաժողովի միջազգային դաշնագրի նախագծի 2-րդ հոդվածը»:

20. Հաջորդ կարևոր դիտողությունը, որ արվեց 1950 թ. օգոստոսի 25-ին Խորհրդակցական վեհաժողովի լիագումար նիստում կոնվենցիայի 1-ին հոդվածն ընդունելուց առաջ Բելգիայի ներկայացուցչի կողմից, այն էր, որ

> «այսուհետ մեր պետությունների կողմից պաշտպանության իրավունքը, կոնվենցիայի պաշտոնական դրույթի համաձայն, կարող է կիրառվել ամբողջ ուժով, առանց որևէ խտրականության կամ տարբերակման, հօգուտ այն անձանց, անկախ նրանց քաղաքացիությունից, ովքեր մեր պետություններից որևէ մեկի տարածքում հիմք են ունեցել գանգատվելու, որ [իրենց] իրավունքները ոտնահարվել են»:

21. Այնուհետև նախապատրաստական փաստաթղթերում նշվում է, որ 1-ին հոդվածի բառակապակցությունները, այդ թվում՝ «իրենց իրավազորության ներքո գտնվող» արտահայտությունը, այլևս որևէ քննարկման տեղիք չտվեցին, և Խորհրդակցական վեհաժողովի կողմից 1950 թ. օգոստոսի 25-ին տեքստն ընդունվեց այնպես, ինչպես կար և մինչև այժմ կա («Նախապատրաստական փաստաթղթերի» համահավաք հրատ., հտ. VI, էջ 132):

Մեծ պալատը որոշեց հետևյալը.

67. Պահպանելով իրավազորության առանցքային տարածքային իմաստը, դատարանն ընդունել է, որ միայն բացառիկ դեպքերում կարելի է համարել, որ բարձր պայմանավորվող կողմի այն գործողությունները, որոնք կատարվել են կամ ազդեցություն են թողել դրա տարածքից դուրս, պետք է դիտվեն որպես պետության կողմից իր իրավազորության կիրառում՝ ըստ կոնվենցիայի 1-ին հոդվածի:

…

71. Ամփոփելով նշենք, որ դատարանի նախադեպային իրավունքի փորձը ցույց է տվել, որ բարձր պայմանավորվող պետության կողմից իր իրավազորության արտատարածքային կիրառման ճանաչումը դատարանի կողմից բացառիկ դեպքերում է եղել: Այդ բանը կատարվել է, երբ պատասխանող պետությունը, առնչվող տարածքի և ռազմական օկուպացիայի հետևանքով արտերկրում գտնվող իր բնակիչների նկատմամբ արդյունավետ հսկողությամբ կամ այդ տարածքի կառավարության համաձայնությամբ, հրավերով կամ լուռ համաձայնությամբ լիարժեք կերպով կամ մասամբ իրականացնում է պետական այն իշխանությունը, որ սովորաբար իրականացնում է այդ տարածքի կառավարությունը:

…

75. Մեր գործում դիմողները պատմում են «արդյունավետ հսկողության» յուրահատուկ կիրառման մասին, որը մշակվել է Հյուսիսային Կիպրոսում: Նրանք պնդում են, որ 1-ին հոդվածով սահմանված դրական պարտավորությունը ներառում է կոնվենցիայով հռչակված իրավունքների պաշտպանությունն այն ձևով, որը համապատասխան է տվյալ արտատարածքային իրավիճակներից ցանկացածում կիրառված հսկողության մակարդակին: Կառավարությունները առարկում էին՝ պնդելով, որ դա հանգեցնում է իրավազորության «պատճառահետևանքային» հասկացությանը, որը չի դիտարկվում կամ չի համապատասխանում կոնվենցիայի 1-ին հոդվածին: Դատարանը համարում է, որ դիմողների ներկայացրած փաստերը հավասարազոր են վիճարկելու, որ բարձր պայմանավորվող պետության գործողությունից տուժած յուրաքանչյուր անձ, անկախ այն հանգամանքից, թե աշխարհի որ մասում է կատարվել այդ գործողությունը, կամ որտեղ է զգացվել դրա ազդեցությունը, անցնում է այդ պետության իրավազորության ներքո՝ համաձայն կոնվենցիայի 1-ին հոդվածի նպատակների:
…

79. Դիմողները կարծում են, որ որևէ ժխտում այն հանգամանքի, որ նրանք ընկնում են պատասխանող պետությունների իրավազորության ներքո, կխախտի կոնվենցիայի հանրային առաքելության կարգը և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առաջ կբերի ցավալի մի վակուում:

80. Այդ առումով դատարանը պարտավոր է հաշվի առնել կոնվենցիայի յուրահատուկ բնույթը՝ որպես Եվրոպայում հասարակական կարգի պահպանման և մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական գործիք, ուստի կոնվենցիայի 19-րդ հոդվածով սահմանված իր դերը տեսնում է բարձր պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու գործում (տե՛ս վերը նշված *Լոիզիդուի* գործով ընդունված վճիռը (նախնական առարկություններ), պարբ. 93): Այդ իսկ պատճառով դժվար է վիճարկել, որ պատասխանող պետությունների արտատարածքային իրավազորության մերժումը հակասում է կոնվենցիայի՝ հասարակական կարգը պահպանելու նպատակին, որն ինքնին շեշտում է կոնվենցիայի համակարգի էապես տարածքային պայմանը, կամ կոնվենցիայի 19-րդ հոդվածին, որը որևէ էական լույս չի սփռում այդ համակարգի տարածքային սահմանի վրա:

Ճիշտ է, որ վերը բերված *«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի»* գործով ընդունված վճռում (պարբ. 78) դատարանը տեղյակ էր Հյուսիսային Կիպրոսում «մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ցավալի վակուումից» խուսափելու անհրաժեշտությանը: Սակայն, ինչպես նշեցին պատասխանող կառավարությունները, այդ դիտողությունը վերաբերում է ներկայիս իրավիճակից բոլորովին տարբեր իրադրության. Հյուսիսային Կիպրոսի բնակիչները կհայտնվեին կոնվենցիայի պաշտպանությունից և համակարգից դուրս՝ այլևս հնարավորություն չունենալով վայելելու նախկինում կոնվենցիայով տրամադրված օգուտներն այն հանգամանքի բերումով, որ Թուրքիան «արդյունավետ հսկողություն» է իրականացնում տարածքում, իսկ Կիպրոսի կառավարությունն ի վիճակի չէ կատարելու կոնվենցիայով որպես բարձր պայմանավորվող կողմ ստանձնած իր պարտավորությունները:

Այլ կերպ ասած՝ կոնվենցիան բազմակողմ միջազգային պայմանագիր է, որը, 56-րդ հոդվածի համաձայն, գործում է էապես տարածքային համատեքստում և բարձր պայմանավորվող պետությունների իրավական դաշտում: Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունն ակնհայտորեն չի մտնում այդ իրավական դաշտի մեջ: Կոնվենցիան նախատեսված չէ համայն աշխարհում կիրառվելու համար, եթե նույնիսկ խոսքը վերաբերում է բարձր պայմանավորվող պետության գործելակերպին: Հետևաբար, դատարանը մինչ այժմ հիմնվել է «մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ցավալի վակուումից» խուսափելու ցանկալիության վրա՝ ի նպաստ իրավազորության հաստատման միայն այն դեպքերում, երբ քննարկվող տարածքը, բացի հատուկ պայմանների առկայության պարագայից, մտնում է կոնվենցիայի նորմալ շրջանակների մեջ:

Այնուհետև մեծ պալատը միաձայն ընդունեց, որ դիմողների հարազատների և պատասխանող պետությունների միջև չկա որևէ իրավազորային կապ, և դիմումը հայտարարվեց անընդունելի:

Հապոլդն այդ կապակցությամբ արել է մի դիտողություն.

Չի կարելի ասել նաև, որ *Բանկովիչը և այլք* իրավական առումով անպաշտպան էին: Գոյություն ունի իրավական մարմին՝ միջազգային մարդասիրական իրավունքը, որը զբաղվում է միջազգային զինված հակամարտություններում ներգրավված հակամարտող կողմերի կարգավորմամբ: Գոյություն ուներ նաև դատական մարմին, որը նախկին Հարավսլավիայում ռմբակոծման պահին իրավասություն ուներ այդ մարմնի օրենքի խախտումների նկատմամբ: Դա Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական տրիբունալն էր [International Criminal Tribunal for the Former Yugoslavia]: Այն հանգամանքը, որ տրիբունալի դատախազը հրաժարվել է գործ հարուցել Սերբիայի ռաղիոյի և հեռուստատեսության կայանի ռմբակոծման կապակցությամբ, չի նշանակում, թե գործը պետք է բերվի Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Դատարանը չի կարող կատարել տրիբունալի աշխատանք (M Happold, Bankovic v Belgium and the Territorial Scope of the ECHR 3 (1) Human Rights Law Review 77 at p 90 (2003)):

7 Մեծ պալատը, ազգությամբ ռուս դատավոր Կովլերի առարկությամբ, *«Իլաշկուն և այլք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի»* գործի առնչությամբ (տե՛ս վերը՝ ծնթ. 3) եզրակացրեց, որ դիմողները նաև Ռուսաստանի իրավազորության ներքո էին:

380. Դատարանը նշում է, որ 1991-1992 թթ. մոլդովական հակամարտության ընթացքում նախկին «14-րդ բանակի» ուժերը (որ հավատարմագրված էին սկզբում ԽՍՀՄ-ին, այնուհետև՝ ԱՊՀ-ին, իսկ հետո նաև՝ Ռուսաստանի Դաշնությանը) տեղաբաշխվել էին Մերձդնեստրյան տարածքում, որը Մոլդովայի Հանրապետության անբակտելի մասն է կազմում, և կռվում էին Մերձդնեստրյան անջատողական ուժերի հետ միասին և նրանց անունից: Ավելին, 14-րդ բանակի (որը հետագայում վերանվանվեց ՌՕԽ, այսինքն՝ ռուսական օպերատիվ խումբ) զինանոցներից մեծ քանակությամբ զենք ու զինամթերք էր կամավոր փոխադրվում անջատողականների համար, որոնք հնարավորություն էին ստացել խլելու նաև այլ զինամթերք, որովհետև ռուս զինվորները դա չէին խոչընդոտում:

Դատարանը նշում է, որ 1991 թ. դեկտեմբերից ի վեր Մոլդովայի իշխանությունները մշտապես բողոքել են միջազգային և այլ մարմիններին՝ նախկին 14-րդ բանակի կողմից Մոլդովայի Հանրապետության դեմ ձեռնարկած «ագրեսիայի գործողությունների» վերաբերյալ, ինչպես նրանք էին դա որակում, և մեղադրում էին Ռուսաստանի Դաշնությանը Մերձդնեստրյան տարածքում անջատողականներին աջակցելու համար:

Իշխանության չարաշահման համար պետությունների պատասխանատվության սկզբունքը հաշվի առնելու պարագայում նշանակություն չունի Ռուսաստանի կառավարության այն պնդումը, թե 14-րդ բանակը չի մասնակցել, որպես այդպիսին, Մոլդովայի զորքերի և մերձդնեստրյան ապստամբների միջև ընթացող ռազմական գործողություններին:

381. Մոլդովայի իշխանությունների և մերձդնեստրյան անջատողականների միջև բախումների ողջ ընթացքում Ռուսաստանի Դաշնության առաջնորդներն իրենց քաղաքական որոշումներով աջակցել են անջատողականներին: Ռուսաստանի Դաշնությունն է մշակել 1992 թ. հուլիսի 21-ի զինադադարի համաձայնագրի հիմնական ուղղությունները և, ավելին, ստորագրել այն որպես դրա կողմերից մեկը:

382. Այս հանգամանքներից ելնելով՝ դատարանը, հաշվի առնելով ռազմական և քաղաքական այն աջակցությունը, որ Ռուսաստանը տրամադրել է անջատողականներին անջատողական վարչակարգ հիմնելու նպատակով և իր զինուժով մասնակցել մարտերին, համարում է, որ Ռուսաստանի Դաշնությունը պատասխանատվություն է կրում՝ կապված Մերձդնեստրյան անջատողականների ապօրինի գործողությունների հետ: Այդ կերպ Ռուսաստանի Դաշնության իշխանությունները ռազմականորեն և քաղաքականորեն նպաստել են անջատողական վարչակարգի ստեղծմանը Մերձդնեստրյան տարածքում, որը Մոլդովայի Հանրապետության անբաժանելի մասն է:

Դատարանը նշում է, որ նույնիսկ 1992 թ. հուլիսի 21-ի զինադադարի պայմանագրի ստորագրումից հետո Ռուսաստանի Դաշնությունը շարունակել է ռազմական, քաղաքական և տնտեսական աջակցություն ցուցաբերել անջատողական վարչակարգին՝ հնարավորություն ընձեռելով, որ այն շարունակվի և ամրապնդվի և որոշակի ինքնավարություն ստանա Մոլդովայի նկատմամբ:

383. Այնուհետև դատարանը նշում է, որ վերը նկարագրված իրադարձությունների համատեքստում 1992 թ. հունիսին դիմողները ձերբակալվել են 14-րդ բանակի (հետագայում՝ ՌՕԽ) զինվորների անմիջական մասնակցությամբ: Դրանից հետո առաջին երեք ձերբակալվածները պահվել են 14-րդ բանակի զորամասում՝ 14-րդ բանակի զինծառայողների հսկողության տակ: Կալանքի տակ եղած ժամանակ երեք դիմողները հարցաքննվել են և ենթարկվել կոնվենցիայի 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի, որից հետո հանձնվել են Մերձդնեստրի ոստիկանությանը:

Նման ձևով Մերձդնեստրի անջատողական ոստիկանությանն է հանձնվել նաև չորրորդ դիմողը, երբ ձերբակալվել է 14-րդ բանակի զինվորների կողմից, կալանքի տակ պահվել, հարցաքննվել և ենթարկվել կոնվենցիայի 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի:

384. Դատարանը համարում է, որ վերը նկարագրված հանգամանքների բերումով դիմողները հայտնվում են Ռուսաստանի Դաշնության իրավազորության ներքո՝ կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով, թեև տվյալ իրադարձությունների ժամանակ կոնվենցիան Ռուսաստանի Դաշնության համար դեռևս ուժի մեջ չէր մտել:

Այդ է պատճառը, որ Ռուսաստանի Դաշնության պատասխանատվությունն առաջացնող իրադարձությունները պետք է դիտարկվեն՝ ներառելով ոչ միայն այն գործողությունները, որոնց անմիջականորեն մասնակցում էին այդ պետության գործակալները, ինչպես, օրինակ, դիմողների ձերբակալումն ու կալանքի տակ պահելը, այլև նրանց հանձնումը Մերձդնեստրյան ոստիկանությանը՝ այդ ոստիկանության կողմից գործադրված հետագա խոշտանգումներով հանդերձ, քանի որ այդ գործողությունները կատարելիս Ռուսաստանի Դաշնության գործակալները քաջատեղյակ էին, որ մարդկանց հանձնում են ոչ օրինական և ոչ սահմանադրական վարչակարգին:

Ինչ վերաբերում է այն արարքներին, որոնց համար մեղադրվում էին դիմողները, ապա Ռուսաստանի Դաշնության գործակալները գիտեին կամ առնվազն պարտավոր էին իմանալ, թե ինչ ճակատագիր է սպասում դիմողներին:

385. Դատարանի կարծիքով՝ դիմողների նկատմամբ ռուս զինվորների կատարած բոլոր գործողությունները, այդ թվում նրանց հանձնումը անջատողական վարչակարգին, այդ ապօրինի վարչակարգի հետ ռուսական իշխանությունների սերտ համագործակցության համատեքստում իրոք կարող է առաջ բերել պատասխանատվություն տվյալ վարչակարգի գործողությունների համար:

Մնում է միայն պարզել՝ այդ պատասխանատվությունը շարունակո՞ւմ էր ուժի մեջ մնալ և դեռևս ուժի մե՞ջ էր այն պահին, երբ Ռուսաստանի Դաշնությունը վավերացնում էր կոնվենցիան:

(Ա) ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ

386. Ինչ վերաբերում է 1998 թ. մայիսի 5-ին Ռուսաստանի Դաշնության՝ կոնվենցիան վավերացնելուն հաջորդող ժամանակաշրջանին, ապա դատարանը ցանկանում է նշել հետևյալը.

387. Ռուսական բանակը դեռևս կայանված է Մոլդովայի տարածքում՝ ի խախտումն զինուժը դուրս բերելու խոստումների, որ Ռուսաստանի Դաշնությունը տվել է ԵԱՀԿ Ստամբուլի (1999) և Պորտուի (2001) վեհաժողովներին: Թեև 1992 թ. ի վեր Մերձդնեստրյան տարածքում տեղակայված ռուսական ռազմական ստորաբաժանումների թիվը զգալիորեն կրճատվել է, դատարանը նշում է, որ ՌՕԽ-ի զինամթերքի պահեստները դեռևս կան:

Հետևաբար, հաշվի առնելով այդ զինամթերքի ծավալները, ՌՕԽ-ի ռազմական նշանակությունն այդ տարածաշրջանում և դրա մտահոգող ազդեցությունը պահպանվում են:

388. Այնուհետև դատարանը նշում է, որ մի կողմից Ռուսաստանի Դաշնության և մյուս կողմից, համապատասխանաբար, Մոլդովայի և Մերձդնեստրյան իշխանությունների միջև կնքված պայմանագրերի համաձայն՝ ՌՕԽ-ի հեռացման պահին Մոլդովական Մերձդնեստրյան Հանրապետության (ՄՄՀ) իշխանություններին պետք է անցնեին ՌՕԽ-ի ենթակառուցվածքներն ու զինամթերքը: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից Մերձդնեստրյան տարածքը բնութագրող «տեղական վարչական իշխանություններ» եզրույթի օգտագործումը մի շարք փաստաթղթերում, այդ թվում՝ 1994 թ. հոկտեմբերի 21-ի համաձայնագրում, տարբերվում է այն եզրույթից, որը գործածում է Մոլդովայի կառավարությունը. մի փաստ, որը հնարավորություն ընձեռեց ՄՄՀ-ին ձեռք բերելու այդ ենթակառուցվածքը:

389. Ինչ վերաբերում է ռազմական հարաբերություններին, ապա դատարանը հարկ է համարում նշել, որ Միացյալ վերահսկման հանձնաժողովի մոլդովական պատվիրակությունը մշտապես հայտարարել է ՌՕԽ-ի և Մերձդնեստրյան իշխանությունների միջև բախումների մասին, երբ խոսքը վերաբերում էր զենքի փոխանցմանը վերջինիս: Պատվիրակների ներկայությամբ ՌՕԽ-ի ներկայացուցիչները ժխտում էին այդ հայտարարությունները՝ պնդելով, որ որոշ սարքավորումներ կարող էին անջատողականների ձեռքն ընկնել գողության ճանապարհով:

Հաշվի առնելով ՌՕԽ-ի դեմ հնչած մեղադրանքները և դրա զենքերի վտանգավոր բնույթը՝ դատարանը դժվարանում է ըմբռնել, թե ինչու ՌՕԽ-ի ռազմական ստորաբաժանումները արդյունավետ իրավական միջոցներ չունեն նման փոխանցումները կամ գողության փաստերը կանխելու համար, ինչպես ակնհայտ է դառնում պատվիրակներին ուղղված նրանց վկայություններից:

390. Դատարանը հատուկ կարևորություն է տալիս ՄՄՀ-ին հատկացվող ֆինանսական աջակցության փաստին՝ հիմնվելով ՄՄՀ-ի և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված հետևյալ համաձայնագրերի վրա.

- Ռուսաստանի Դաշնության և ՄՄՀ-ի ներկայացուցչի միջև 1998 թ. մարտի 20-ին կնքված պայմանագիրը, որով ՌՕԽ-ի սարքավորումների վաճառքից ստացված եկամուտը բաժանվում է ՄՄՀ-ի և Ռուսաստանի Դաշնության միջև:
- 2001 թ. հունիսի 15-ի պայմանագիրը, որը վերաբերում է զինուժի, ռազմական տեխնիկայի և զինամթերքի օգտագործման ուղղությամբ համատեղ աշխատանքին:
- ՄՄՀ-ի նկատմամբ Ռուսաստանի Դաշնության պարտքի կրճատումը 100 միլիոն ԱՄՆ դոլարով:
- Ռուսական գազի մատակարարումը Մերձդնեստրյան տարածքին ֆինանսապես առավել նպաստավոր պայմաններով, քան Մոլդովայի մնացյալ տարածքին:

Այնուհետև դատարանն ուշադրության է արժանացնում այն տեղեկությունները, որոնք ստացվել են դիմողներից և չեն ժխտվել Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից, այն է՝ Ռուսաստանի Դաշնության այն ընկերություններն ու հաստատությունները, մասնավորապես՝ ռազմական ոլորտում գործողները, որոնց գործունեությունը սովորաբար վերահսկվում է պետության կողմից, կամ որոնց քաղաքականությունը ենթակա է հաստատման պետության կողմից, կարողացել են առևտրային հարաբերությունների մեջ մտնել ՄՄՀ-ի համանման ընկերությունների հետ:

391. Այնուհետև դատարանը նշում է, որ 1998 թ. մայիսի 5-ից առաջ և հետո Ռուսաստանի խաղաղարար զորքերի կողմից վերահսկվող անվտանգության գոտում ՄՄՀ-ն շարունակել է իր ռազմական ստորաբաժանումների անօրինական տեղաբաշխումը և զենքի արտադրությունն ու վաճառքը՝ ի խախտումն 1992 թ. հուլիսի 21-ի համաձայնագրի:

392. Վերը բերված փաստերը վկայում են, որ 1991-1992 թթ. Ռուսաստանի Դաշնության օգնությամբ հիմնված ՄՄՀ-ն՝ օժտված իշխանության մարմիններով և իր սեփական վարչակազմով, մնում է Ռուսաստանի Դաշնության արդյունավետ իշխանության կամ առնվազն դրա վճռական ազդեցության ներքո և ամեն դեպքում գոյատևում է Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրվող ռազմական, տնտեսական, ֆինանսական և քաղաքական աջակցության հաշվին:

393. Այդ ամենը հաշվի առնելով՝ դատարանը գտնում է, որ դիմողների ճակատագրի համար առկա է Ռուսաստանի Դաշնության շարունակական և անընդմիջելի պատասխանատության կապը, քանզի Ռուսաստանի Դաշնության՝ անջատողական վարչակարգին աջակցելու քաղաքականությունը և նրա հետ համագործակցությունը շարունակվել են նաև 1998 թ. մայիսի 5-ից հետո: Այդ օրից ի վեր Ռուսաստանի Դաշնությունը որևէ փորձ չի կատարել՝ վերջ դնելու դիմողների վիճակին, որի համար պատասխանատու են իր գործակալները, և գործողություններ չի սկսել՝ կանխելու 1998 թ. մայիսի 5-ից հետո կատարված ենթադրվող խախտումները:

Վերը նշվածի պարագայում նշանակություն չունի այն հանգամանքը, որ 1998 թ. մայիսի 5-ից ի վեր Ռուսաստանի Դաշնության գործակալներն անմիջականորեն չեն մասնակցել սույն դիմումում գանգատարկվող իրադարձություններին:

394. Հետևաբար, որպես եզրակացություն նշվում է, որ դիմողները գտնվում են Ռուսաստանի Դաշնության «իրավազորության» ներքո՝ ելնելով կոնվենցիայի 1-ին հոդվածի նկատառումներից, և Ռուսաստանի Դաշնության պատասխանատվությունը գանգատարկվող գործողությունների համար հաստատվում է:

Այս վերլուծությունից երևում է, թե ինչպես անդամ պետությունը կարող է պատասխանատու համարվել այն գործողությունների համար, որոնք կատարվել են մեկ այլ անդամ պետության տարածքում, որտեղ չի եղել ռազմական ներխուժում:

Իր առարկություններում դատավոր Կովլերը նշել է հետևյալը.

Ելնելով գործի յուրահատուկ բնույթից, որում դիմողների վիճակն անբաժանելի է ծայրահեղ բարդ աշխարհաքաղաքական համատեքստից, դատարանը հայտնվել է իր համար անծանոթ տարածքում, որովհետև չկա կիրառելի նախադեպային իրավունք: Այս գործում դատարանի վճիռը կարող էր նախադեպ ստեղծել Եվրոպայի խորհրդի անդամ այլ պետությունների հակամարտության գոտիներում առկա նման իրադրությունների համար, այդ թվում նաև՝ այն պետությունների, որոնք Եվրոպայի խորհրդին են միացել վերջերս: Պատմական արմատներն այն հակամարտության, որում ներգրավված էին տարածաշրջանի երկրները, ինչպես նաև «մասնատվող կայսրության» ազդեցությունը բնութագրական հատկանիշներ են, որոնք հիշողության մեջ արթնացնում են այլ՝ ոչ շատ վաղ հակամարտություններ, օրինակ՝ Բալկաններում և Կովկասում:

Այդուհանդերձ, դատարանը նախընտրեց (իմ համոզմամբ՝ անարդարացիորեն) իրավիճակը դիտարկել որպես Կիպրոսի տիպի հակամարտություն՝ հետևելով իր համապատասխան նախադեպային իրավունքին և ընկնելով այդ նախադեպային իրավունքի պատրաստած ծուղակը: Իմ կարծիքով՝ դա մեթոդաբանական բնույթի սխալ էր: Այն առերևույթ նմանությունները, որ կապում են ներկա գործը *Լոիզիդուի* գործի հետ, խաբուսիկ են: Դրանց միակ ընդհանրությունը (որին ես դեռ կանդրադառնամ) հակամարտության աղբյուրն է, ավելի ստույգ՝ մեծ համայնքի համար մեկ այլ երկրի կցվելու հեռանկարը, որի հետ ունի արմատական տարբերություններ՝ պատմական, տնտեսական և մշակութային կապերի առումով: Սրանից էլ բխում են հակամարտության կողմերի ազդեցություններն ու հակազդեցությունները, որոնք հետզհետե առավել վայրագ բնույթ էին ստանում և հանգեցնում մարդկային ողբերգությունների:

Կովլերը համաձայն չէր ՄՄՀ-ի պատմական առաջացման մասին դատարանի բացատրությանը, քանզի գտնում էր, որ ռուս-սլավոնական ազդեցությունը տարածաշրջանում արձանագրվել է դեռևս XIX դարի սկզբից: Բացի այդ, նա կարծում էր, որ Ռուսաստանը չի կարող պատասխանատու համարվել ՄՄՀ-ի գործողությունների համար, քանի որ վերջինս հայտարարել է իր գոյության մասին ԽՍՀՄ փլուզումից դեռևս մեկ տարի առաջ: Ավելին.

Ռազմական, քաղաքական և տնտեսական աջակցության վերաբերյալ փաստացի վկայություններում ես չեմ գտել որևէ լուրջ փաստարկ, որով ապացուցվում է ռուսական ներխուժման սահմանափակ կամ շարունակական փաստը հօգուտ Մերձդնեստրիայի և կամ ՄՄՀ-ի կախվածությունը Ռուսաստանից ռազմական, քաղաքական կամ տնտեսական առումով:

Տե՛ս ստորև՝ էջ 176 [հոդված 3] գործի հետագա քննության մասին:

8 *«Իսսան և այլք ընդդեմ Թուրքիայի» (Issa and Others v Turkey)* դատական գործում, որի առնչությամբ վճիռը կայացվել է 2004 թ. նոյեմբերի 16-ին, պալատը միաձայն որոշեց, որ 1995 թ. գարնանը՝ թուրքական ռազմական գործողությունների ժամանակ, որոնցում ներգրավված էին 35 հազարից ավելի հետևակայիններ, Հյուսիսային Իրաքում հրազենով սպանված և այլանդակված հովիվները չէին գտնվում Թուրքիայի իրավազորության ներքո: Վեց դիմողները՝ սպանվածների կանայք/մայրերը, պնդում էին, որ իրենց հարազատներին սպանել են թուրք զինվորները: Թուրքիայի կառավարությունն ընդունում էր, որ իր զինուժը Հյուսիսային Իրաքում իրականացրել է հակաահաբեկչական օպերացիա, սակայն ժխտում էր, որ թուրքական ռազմական ստորաբաժանումները գտնվել են այն վայրում, որտեղ սպանվել են հովիվները: *Քանկովիչի* և *Լոիզիդուի* գործերի նախադեպը կիրառելով՝ պալատը որոշեց հետևյալը.

74. Դատարանը չի բացառում այն հնարավորությունը, որ ելնելով այդ ռազմական գործողություններից՝ պատասխանող պետությունը ժամանակավորապես իրականացրել է արդյունավետ հսկողություն Հյուսիսային Իրաքի տարածքի որոշակի հատվածում: Հետևաբար, եթե կան բավարար թվով փաստացի հիմքեր՝ ընդունելու, որ քննարկվող ժամանակահատվածում զոհերը գտնվել են այդ տարածքում, ապա դրանից տրամաբանորեն հետևում է, որ նրանք գտնվել են Թուրքիայի իրավազորության ներքո:

Այդուհանդերձ, ի թիվս այլ հանգամանքների, հաշվի առնելով նաև դիմողների գյուղի մոտակայքում թուրքական զինուժի առկայության մասին անկախ ականատեսների վկայությունների բացակայությունը, պալատը եկավ այն եզրահանգման, որ «ողջամիտ կասկածից վեր» մակարդակով չի ապացուցվել, որ մահվան պահին զոհվածները գտնվել են Թուրքիայի իրավազորության ներքո: Այս վճիռը վկայում է այն մասին, որ դատարանը խիստ զգուշավոր է անդամ պետության պատասխանատվությունը հաստատելու հարցում, երբ խոսքը վերաբերում է այդ պետության պետական տարածքից դուրս կատարված գործողություններին: *Իսսայի* գործով կայացված վճիռը բացահայտեց նաև այն հանգամանքը, որ սպանությունների պահին կատաղի մարտեր էին ընթանում ՔԱԿ-ի (Քրդստանի աշխատավորական կուսակցություն) և ՔԺԿ-ի (Քրդստանի ժողովրդավարական կուսակցություն) միջև հենց այն տարածքում, որտեղ աշխատում էին զոհվածները:

9 Կոնվենցիայի 1-ին հոդվածում օգտագործված «յուրաքանչյուր» եզրույթը նշանակում է, որ անդամ պետության իրավազորության ներքո գտնվող ոչ քաղաքացիները նույնպես կարող են պահանջել կոնվենցիայով սահմանված իրավունքների և երաշխիքների պաշտպանություն, տե՛ս, օրինակ՝ *«Սերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Soering v United Kingdom*) գործը ստորև՝ էջ 200:

10 Մեծ պալատը ըստ կոնվենցիայի Եվրոպայի խորհրդի նկատմամբ անդամ պետության պատասխանատվության վերաիմաստավորման խնդիրը քննել է նաև *«Բոսֆորուս Հավա Յոլլարի Թուրիզմ վե Թիջարեթ Անոնիմ Շիրքեթի»-ն ընդդեմ Իռլանդիայի» (Bosphorus Hava Yollari Turizm ve Ticaret Anonim Sirketi v Ireland)* գործում, որի վճիռը կայացվել է 2005 թ. հունիսի 30-ին: Դիմող թուրքական ընկերությունը 1992 թ. վարձել է «Հարավսլավական ավիաուղիների» (նախկին Հարավսլավիայի ազգային ավիաընկերություն) երկու ինքնաթիռ: 1993 թ. ապրիլին Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդն ընդունեց մի բանաձև, որով պահանջվում էր, որ բոլոր պետություններն իրենց տարածքում պահեն այն ինքնաթիռները, որոնց բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը պատկանում էր Հարավսլավիայի որևէ ձեռնարկության կամ անձի (այս բանաձևը Հարավսլավիայում մարդու իրավունքների խախտումների դեմ ուղղված շարունակական պատժամիջոցների մասն էր կազմում): Եվրահամայնքն այդ բանաձևն իրականացրեց նույն ամսվա ընթացքում, բայց ավելի ուշ ընդունված ԵՀ կարգադրությամբ [EC Regulation]: 1993 թ. մայիսին դիմողը պայմանավորվածություն էր ձեռք բերել իռլանդական մի ընկերության հետ վարձակալված ինքնաթիռներից մեկի սպասարկման աշխատանքները կատարելու վերաբերյալ: Սպասարկման աշխատանքների ավարտին (երբ դիմողի կողմից կատարվել էին համապատասխան վճարումները) Իռլանդիայի տրանսպորտի դեպարտամենտը որոշեց բռնագրավել ինքնաթիռը՝ հիմնվելով ԵՀ կարգադրության վրա: Դիմողն այդ որոշումը վիճարկեց Իռլանդիայի դատարաններում, որից հետո գանգատ ներկայացվեց

Եվրոպական դատարան՝ նախնական վճիռ կայացնելու համար, որպեսզի որոշվի՝ արդյոք ինքնաթիռը ենթարկվո՞ւմ է վերը նշված կարգադրության պայմաններին, և եթե այո, ապա արդյոք ինքնաթիռի բռնագրավմամբ խախտվո՞ւմ են դիմողի հիմնարար իրավունքները: Եվրոպական դատարանը որոշեց, որ կարգադրագիրը վերաբերում է ինքնաթիռին, և դրա բռնագրավումն իրականացվել է ի նպաստ կարևորագույն միջազգային նպատակների, ուստի այդ միջոցն անհամապատասխան չի կարող համարվել: Այնուհետև Իռլանդիայի գերագույն դատարանը հաստատեց բռնագրավման օրինականությունը: Մեծ պալատի առջև դիմող ընկերությունը պնդում էր, որ Իռլանդիայի իշխանությունների գործողությունները խախտում են կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով իրեն վերապահված իրավունքները: Իռլանդիայի կառավարությունը պնդում էր, որ Հարավսլավիայի դեմ կիրառվող սանկցիաների առնչությամբ իր միջազգային պարտավորությունների կատարումն արդարացնում է յուրաքանչյուր միջամտությունը դիմողի սեփականության իրավունքներին:

152. Մի կողմից՝ կոնվենցիան չի արգելում որ բարձր պայմանավորվող կողմերն իրենց սուվերեն իշխանությունը փոխանցեն միջազգային (այդ թվում՝ անդրազգային) որևէ կազմակերպության՝ գործունեության որոշակի բնագավառներում համագործակցություն իրականացնելու նպատակով *(տե՛ս «M. & Co. ընկերությունն ընդդեմ Գերմանիայի»*, թիվ 13258/87 64 DR 138 գործ, էջ 144 և *«Մեթյուսն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Matthews v UK*) ECHR 1999-I գործ, պարբ. 32): Ավելին, այդ կազմակերպությունը՝ նույնիսկ որպես նման փոխանցված ինքնավար իշխանության կրող, կոնվենցիայով պատասխանատվություն չի կրում իր մարմիններում իրականացված վարույթների կամ իր մարմինների կայացրած որոշումների համար, եթե բարձր պայմանավորվող կողմ չի հանդիսանում (*տե՛ս «Աշխատանքի ժողովրդավարական ֆրանսիական կոնֆեդերացիան ընդդեմ Եվրոպական համայնքների»* (*CFDT v European Communities*) թիվ 8030/77 գործը, որի առնչությամբ որոշումը կայացրել է հանձնաժողովը 1978 թ. հուլիսի 10-ին, DR 13, էջ 231, *«Դյուֆեն ընդդեմ Եվրոպական համայնքների»* (Dufay v European Communities) թիվ 13539/88 գործը, որի կապակցությամբ որոշումը կայացրել է հանձնաժողովը 1989 թ. հունվարի 19-ին և վերը հիշատակված *«M. & Co. ընկերությունն ընդդեմ Գերմանիայի»* գործը, պարբ. 32):

153. Մյուս կողմից՝ ընդունվել է նաև, որ կոնվենցիայի 1-ին հոդվածով բարձր պայմանավորվող կողմը պատասխանատու է իր մարմինների կատարած բոլոր գործողությունների և բացթողումների համար՝ անկախ այն հանգամանքից՝ այդ գործողությունը կամ բացթողումը պահանջվել է ներպետական օրենքո՞վ, թե՞ բխել է միջազգային իրավական պարտավորություններին ենթարկվելու անհրաժեշտությունից: Կոնվենցիայի 1-ին հոդվածը որևէ տարբերակում չի դնում քննության ենթակա կանոնների կամ միջոցների տեսակների միջև և չի բացառում բարձր պայմանավորվող կողմի «իրավազորության» որևէ հատված կոնվենցիայի համաձայն կատարվող քննությունից (*տե՛ս «Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունը և այլք ընդդեմ Թուրքիայի»* (*United Communist Party of Turkey and Others v Turkey*) գործը, որի վճիռը կայացվել է 1998 թ. հունվարի 30-ին, Զեկույցներ 1998-I, պարբ. 29):

154. Այս երկու դիրքորոշումները համաձայնեցնելով և, այդպիսով, հաստատելով այն չափը, որով պետության գործողությունը կարող է արդարացվել իր պարտավորություններին հետևելու հիմնավորմամբ, եթե այդ պարտավորությունները պայմանավորված են պետության անդամակցությամբ ինչ-որ միջազգային կազմակերպության, որին պետությունը փոխանցել է իր ինքնավար իշխանության մի մասը, դատարանն ընդունում է, որ նման փոխանցմամբ պայմանավորված դեպքերում բարձր պայմանավորվող կողմի լիարժեք ազատումը կոնվենցիայով սահմանված իր պարտավորություններից անհամատեղելի կլիներ այդ կոնվենցիայի նպատակների ու խնդիրների հետ, քանզի կոնվենցիայի երաշխիքների կամայական սահմանափակումները կամ բացառությունները կարող են խաթարել կոնվենցիայի բացառիկությունը և դրա երաշխիքների գործնականությունն ու արդյունավետությունը (*տե՛ս* վերը նշված *«M. & Co. ընկերությունն ընդդեմ Գերմանիայի»* գործը, էջ 145 և *«Ուեյթը և Քեննեդին ընդդեմ Գերմանիայի» (Waite and Kennedy v Germany)* գործը, ECHR 1999-I): Պետությունը պարտավոր է կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո հավատարիմ մնալ կոնվենցիայով սահմանված պատասխանատվությանը միջազգային պայմանագրերի հարցում (*տե՛ս mutatis mutandis* վերը նշված *«Մեթյուսն ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործի վճիռը, պարբ. 29 և 32-4 և *«Լիխտենշտեյնի արքայազն Հանս-Ադամ II–ն ընդդեմ Գերմանիայի»* (*Prince Hans-Adam II of Liechtenstein v Germany*) միջպետական գործը, թիվ 42527/98, պարբ. 47, ECHR 2001-VIII):

155. Դատարանի կարծիքով՝ նման իրավական պարտավորություններին հետևելու նկատառումով պետության կատարած գործողություններն արդարացված են այն դեպքում, եթե համարվում է, որ համապատասխան կազմակերպությունը պաշտպանում է հիմնարար իրավունքներն ինչպես առաջարկվող նյութական երաշխիքների, այնպես էլ դրանց պահպանումն ապահովող հսկողական մեխանիզմների առումով, և այնպիսի եղանակով, որ կարող է համարվել առնվազն հավասարազոր այն եղանակներին, որոնց մասին խոսվում է կոնվենցիայում (*տե՛ս* վերը նշված *«M. & Co. ընկերությունն ընդդեմ Գերմանիայի»* գործի վճռի 145-րդ էջը, որում խոսվում է այն մոտեցման մասին, որին համաձայն էին կողմերը և Եվրոպական հանձնաժողովը): «Հավասարազոր» ասելով՝ դատարանը նկատի ունի «համեմատելի, համադրելի»,

որովհետև յուրաքանչյուր պահանջ այն մասին, թե կազմակերպության տրամադրած պաշտպանությունը պետք է «նույնանման» լինի պետության կողմից ապահովվող պաշտպանությանը, հակասում է միջազգային համագործակցության հետապնդած նպատակներին (*տե՛ս* վերը, պարբ. 150): Այդուհանդերձ, հավասարազորության որևէ նման հայտնաբերում չի կարող վերջնական համարվել, որովհետև ենթակա է քննության հիմնարար իրավունքների պաշտպանության յուրաքանչյուր էական փոփոխության դեպքում:

156. Եթե համարվում է, որ կազմակերպությունն ապահովում է նման հավասարազոր պաշտպանություն, ապա ենթադրությունը կամ կանխավարկածն այն է, որ պետությունը չի հրաժարվել կոնվենցիայի պահանջներից, եթե իրականացնում է միայն կազմակերպությանն անդամակցելուց բխող իր իրավական պարտավորությունները:

Այդուհանդերձ, նման ամեն մի կանխավարկած կարող է հերքվել, եթե որոշակի դեպքի հանգամանքներում պարզվի, որ կոնվենցիայով հռչակված իրավունքների պաշտպանությունն ակնհայտորեն թերի է եղել: Նման դեպքերում կոնվենցիայի դերը՝ որպես «Եվրոպայում հասարակական կարգի պահպանման և մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական գործիք», համարվում է առավել գերակշիռ, քան միջազգային համագործակցության շահերը (*տե՛ս «Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի»* գործի (նախնական առարկություններ) վճիռը՝ կայացված 1995 թ. մարտի 23-ին, շարք A, թիվ 310, պարբ. 75):

157. Տվյալ դեպքում կոնվենցիայի պահանջով պետությունը լիովին պատասխանատու է այն գործողությունների համար, որոնք դուրս են մնում նրա միջազգային իրավական պարտավորություններից:

…

158. Քանի որ վիճարկվող գործողությունը ներառում է միայն Իռլանդիայի՝ ԵՀ-ին անդամակցելու հետ կապված պարտավորությունների կատարումը, դատարանն այժմ քննության կառնի այն հարցը, թե կա՞ արդյոք կանխավարկած, որ այդ պարտավորությունները պահպանելով՝ Իռլանդիան կատարել է կոնվենցիայի պահանջները, և արդյոք նման որևէ կանխավարկած հերքվե՞լ է սույն գործի հանգամանքներով:

(բ) ԿԱ՞Ր ԱՐԴՅՈՔ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ ՔՆՆԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

159. Դատարանը նկարագրեց (վերը՝ պարբ. 73-81) հիմնարար իրավունքների ԵՀ-ի երաշխիքները, որոնցով առաջնորդվում են անդամ պետությունները, Համայնքի հաստատությունները՝ բնական և իրավական անձանց («անհատների») հետ մեկտեղ:

Թեև ԵՀ հիմնադիր համաձայնագիրը (Constituent EC treaty) ի սկզբանե չէր պարունակում հիմնարար իրավունքների պաշտպանության հստակ ձևակերպումներ, Եվրոպական դատարանը (European Court of Justuce, ECJ) հետագայում ճանաչեց այն փաստը, որ այդ իրավունքներն առկա են դրա կողմից պաշտպանվող Համայնքի իրավունքի ընդհանուր սկզբունքներում, և կոնվենցիան «հատուկ նշանակություն» ունի՝ որպես այդ իրավունքների աղբյուր: Հիմնարար իրավունքների պահպանումը դարձել է «Համայնքի իրավական ակտերի օրինականության պայմանը» (*տե՛ս* վերը՝ պարբ. 73-75, ինչպես նաև կորպորացիայի՝ AG-ի եզրակացությունը սույն գործում, որ ներկայացված է վերը, պարբ. 45-50), և այս գնահատումը կատարելիս Եվրոպական դատարանը մեծապես օգտվում է կոնվենցիայի դրույթներից և այս դատարանի դատական պրակտիկայից: Ժամանակին իրավագիտական այդ զարգացումներն արտացոլվել են մի շարք միջազգային պայմանագրերի համապատասխան փոփոխություններում (հատկապես 1986 թ. Եվրոպական միասնական ակտի [Single European Act 1986] և Եվրոպական համայնքի միջազգային պայմանագրի [TEU] որոշակի ասպեկտներում):

Այդ զարգացումն այնուհետև շարունակվել է: 1997 թ. Ամստերդամի միջազգային պայմանագրի մասին խոսվել է վերը՝ 79-րդ պարբերությունում: Կոնվենցիայի դրույթների ազդեցությունը մեծապես դրսևորվում է Եվրամիության հիմնարար իրավունքների խարտիայի [Charter of Fundamental Rights of the European Union] դրույթներում, թեև վերջիններս լիարժեքորեն պարտադիր չեն: Խարտիան ճանաչում է կոնվենցիան որպես մարդու իրավունքների նվազագույն ստանդարտներ սահմանող գործիք: Եվրոպայի Սահմանադրության (ուժի մեջ չէ) հաստատման միջազգային պայմանագրի 1-9-րդ հոդվածներում նախատեսվում է, որ խարտիան դառնալու է Եվրամիության առաջնային օրենքը, իսկ Եվրամիությունը միանալու է կոնվենցիային (տե՛ս վերը՝ պարբ. 80-81):

160. Սակայն նման նյութական երաշխիքների արդյունավետությունը կախված է վերահսկման մեխանիզմների առկայությունից, որոնք պետք է ապահովեն այդ իրավունքների պահպանությունը:

161. Դատարանը Եվրոպական դատարանի իրավազորությանն է դիմել (*տե՛ս* վերը՝ պարբ. 86-90), ի թիվս այլոց, նաև չեղյալ հայտարարման գործերում (հոդված 173, այժմ՝ հոդված 230), միջազգային պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու համար՝ Համայնքի հաստատությունների դեմ հարուցված գործերում (հոդված 175, այժմ՝ հոդված 232), 184-րդ հոդվածով նախատեսված անօրինականության հղումները լսելու համար (այժմ հոդված 241) և

միջազգային պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու համար անդամ պետությունների հաստատությունների դեմ հարուցված գործերում (հոդվ. 169, 170 և 171, այժմ՝ հոդվ. 226, 227 և 228):

162. Ճիշտ է, որ այս դրույթների համաձայն՝ անհատ անձանց մուտքը դեպի Եվրոպական դատարան սահմանափակ է. նրանք ընդունելիություն չունեն [locus standi] ըստ հոդված 169-ի և 170-ի, նրանց իրավունքը 173-րդ և 175-րդ հոդվածներով գործ հարուցելու համար սահմանափակ է, ինչպես և սահմանափակ է նրանց իրավունքն ըստ 184-րդ հոդվածի, և նրանք իրավունք չունեն գործ հարուցելու մեկ այլ անձի դեմ:

163. Այդուհանդերձ ճշմարիտ է, որ Համայնքի հաստատությունների կամ անդամ պետությունների կողմից Եվրոպական դատարանում հարուցված գործերը Համայնքի նորմերի պահպանությունը վերահսկելու կարևոր մեխանիզմ են, որից անուղղակիորեն օգտվում են անհատները: Բացի այդ, անհատները կարող են Եվրոպական դատարանում գործ հարուցել վնասների փոխհատուցման համար՝ Համայնքի հաստատությունների ոչ պայմանագրային պատասխանատվության կապակցությամբ:

164. Ավելին, հիմնականում ազգային դատարանների միջոցով է Համայնքն անհատների համար իրավական պաշտպանության միջոցներ ապահովում ընդդեմ անդամ պետության կամ մեկ այլ անհատի, Եվրահամայնքի օրենքը խախտելու համար: Եվրահամայնքի միջազգային պայմանագրի մի շարք դրույթներով Համայնքի հսկողական մեխանիզմներում ի սկզբանե օժանդակ դեր է նախատեսվել ազգային դատարանների համար, մասնավորապես 189-րդ հոդվածով (անմիջական կիրառելիության հասկացություն, այժմ՝ հոդված 249) և 177-րդ հոդվածով (ներկայացման նախնական կարգ, այժմ՝ հոդված 234): Եվրոպական դատարանի՝ կարևորագույն հասկացությունների մշակման շնորհիվ միայն, ինչպիսիք էին ԵՀ օրենքի գերիշխանությունը, ուղղակի ազդեցությունը, անուղղակի ազդեցությունը և պետության պատասխանատվությունը, մեծապես կարևորվեց ներպետական դատարանների դերը Համայնքի օրենքի և դրա հիմնարար իրավունքների երաշխիքների կիրառման գործընթացում:

Ազգային դատարաններում ԵՀ օրենքի, այդ թվում՝ հիմնարար իրավունքների երաշխիքների կիրառման նկատմամբ իր հսկողությունը Եվրոպական դատարանը պահպանում է այն կարգի միջոցով, որի համար և նախատեսված է ԵՀ միջազգային պայմանագրի 177-րդ հոդվածը: … Թեև Եվրոպական դատարանի դերը սահմանափակվում է ազգային դատարանների կողմից առաջադրված մեկնաբանական կամ հիմնավորման բնույթի հարցերին պատասխանելով, այդ պատասխանը վճռական դեր է խաղում ներպետական վարույթներում (ինչպես իրականում կատարվել է տվյալ դեպքում): Նախնական ներկայացման ժամանակի և բովանդակության վերաբերյալ մանրամասն ցուցումներն ընդգրկված են ԵՀ միջազգային պայմանագրի դրույթներում և մշակվել են Եվրոպական դատարանի կողմից այդ դատարանի դատական պրակտիկայում: Ներպետական վարույթի կողմերն իրավունք ունեն 177-րդ հոդվածի գործընթացում իրենց գործը ներկայացնել Եվրոպական դատարան: Այնուհետև, ազգային դատարանները գործում են իրավական այն համակարգերում, որտեղ ներդրվել է կոնվենցիան, թեև տարբեր մակարդակներով:

165. Նման հանգամանքները հաշվի առնելով՝ դատարանը գտնում է, որ ԵՀ օրենքով հիմնարար իրավունքների պաշտպանությունը կարող է համարվել, և համարվել է քննարկվող ժամանակահատվածում, «հավասարազոր» (վերը նշված 155-րդ պարբերության իմաստով) կոնվենցիայի համակարգի պաշտպանությանը: Հետևաբար, առաջ է գալիս կանխավարկած, թե Իռլանդիան չի՞ հրաժարվել կոնվենցիայի պահանջներից այն պահին, երբ կատարում էր ԵՀ անդամակցությունից բխող իր իրավական պարտավորությունները (*տե՛ս* պարբ. 156):

(գ) ԱՐԴՅՈՔ ԱՅԴ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ ՀԵՐՔՎԵ՞Լ Է ՍՈՒՅՆ ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄ

166. Դատարանը քննել է միջամտության բնույթը, բռնագրավման և սանկցիաների հետ կապված համընդհանուր շահը, ինչպես նաև Եվրոպական դատարանի որոշումը (կորպորացիայի՝ AG-ի կարծիքով). մի որոշում, որին գերագույն դատարանը պարտավոր էր ենթարկվել և ենթարկվեց: Դատարանի համար պարզ է, որ չի եղել կոնվենցիայով հռչակված իրավունքների պահպանման վերահսկողական մեխանիզմների խաթարում:

Հետևաբար, դատարանը համարում է, որ չի կարելի պնդել, թե դիմողի՝ կոնվենցիայով ճանաչված իրավունքների պաշտպանությունն ակնհայտորեն թերի է եղել, որից հետևում է, որ պատասխանող պետության կողմից կոնվենցիային ենթարկվելու կարևոր կանխավարկածը չի հերքվել:

4. Եզրակացություն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիմքով

167. Վերը նշվածից հետևում է, որ ինքնաթիռի բռնագրավումը չի առաջացրել կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

Դատավորներ Ռոզակիսը, Թուլքենսը, Թրաժան, Բոտուչարովան, Զագրեբելսկին և Գառլիչկին տվել են համատեղ համընկնող կարծիք, որում նրանք արտահայտել են առավել զգուշավոր մոտեցում ԵՄ համակարգի կողմից հիմնարար իրավունքների պաշտպանության վերաբերյալ.

Մյուս կողմից, ինչպես ինքնին ընդունվում է վճռում, անհատների համար Համայնքի դատարանի մատչելիությունը սահմանափակ է (*տե՛ս* պարբ. 162): Մինչդեռ, ինչպես դատարանը վերստին հաստատեց *«Մամաթկուլովն ու Ասկարովն ընդդեմ Թուրքիայի»* գործի առնչությամբ կայացված վճռում ([պետական գանգատ GC], թիվ 46827/99 և 46951/99, 4 փետրվարի, 2005 թ.), անհատական դիմումի իրավունքը «կոնվենցիայով հռչակված իրավունքների ու ազատությունների կիրառման մեխանիզմի անկյունաքարերից մեկն է» (*տե՛ս* այդ վճռի 122-րդ պարբերությունը): Համաձայն լայնորեն ընդունված կարծիքի՝ Համայնքի օրենքով սահմանված դատական պաշտպանությունը հիմնվում է գանգատների մեծ թվի վրա, որոնց շարքում կարևոր դեր ունի նախնական որոշման համար դիմումը Եվրոպական դատարանին: Այդուհանդերձ, տվյալ դեպքում, չնայած իր արժեքավորությանը, նախնական որոշման համար դիմումը ենթադրում է ներքին, փորձից անկախ, այսինքն՝ ապրիորի քննություն: Այն չունի նույն բնույթը և չի փոխարինում արտաքին, փորձի վրա հիմնված՝ ապոստերիորի վերահսկմանը, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրականացնում է անհատական դիմում ստանալուց հետո:

Անհատական գանգատի իրավունքն այն հիմնական պարտավորություններից մեկն է, որ ստանձնում են պետությունները կոնվենցիան ստորագրելիս: Ուստի դժվար է ընդունել, որ նրանք կարողանային նվազեցնել այդ իրավունքի արդյունավետությունն իրենց իրավազորության ներքո գտնվող անձանց համար՝ պատճառաբանելով, թե իրենք իրենց որոշ լիազորությունները փոխանցել են Եվրոպայի համայնքներին: Եթե դատարանը ԵՄ դատական համակարգին թողնի «համազոր պաշտպանությունն» ապահովելու խնդիրը՝ առանց պահպանելու որևէ միջոց, որով գործ առ գործ ստուգվեր՝ պաշտպանությունն իրո՞ք «համազոր» է, ապա դա նույնը կլիներ, եթե դատարանն իր լուռ համաձայնությունը տար, որ Համայնքի իրավունքի դաշտում կոնվենցիայի չափորոշիչները փոխարինվեն Համայնքի չափորոշիչներով, որոնք գուցեև ոգեշնչված են կոնվենցիայի չափորոշիչներով, սակայն դրանց համազորությունը վերջիններիս այլևս հնարավոր չի լինի ենթարկել ուսումնասիրության:

4. Համաձայն ընդունված կարծիքի՝ վճռում նշվում է, որ նման *in concreto* քննությունը հնարավոր կլիներ, եթե որոշակի գործի հանգամանքներում դատարանը համարեր, թե «կոնվենցիայով հռչակված իրավունքների պաշտպանությունն ակնհայտորեն թերի է եղել» (*տե՛ս* 156-րդ պարբերությունը):

Չնայած իր հարաբերականորեն անորոշ բնույթին՝ «ակնհայտորեն թերի» չափանիշը կարծես թե սահմանում է առավել ցածր շեմ, որը հստակորեն հակասում է այն վերահսկողության գաղափարին, որ իրականացնում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան: Քանի որ կոնվենցիան սահմանում է վերահսկողության նվազագույն մակարդակ (հոդված 53), ապա յուրաքանչյուր իրավազորություն դրա և Համայնքի պաշտպանության միջև կարող է լինել միմիայն միջոցների առումով, ոչ թե արդյունքի: Ավելին, թերևս առավել դժվար է ընդունել, որ «հավասարազոր պաշտպանության» անվան տակ Համայնքի օրենքը կարող է պակաս խիստ չափորոշիչներ կիրառելու իրավունք տալ, քան Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի չափորոշիչներն են, եթե հաշվի առնենք, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի չափորոշիչներն ամրագրված են Եվրամիության հիմնարար իրավունքների խարտիայում, որն ինքնին Միության միջազգային պայմանագրի անքակտելի մասն է, որով հաստատվում է Եվրոպայի սահմանադրությունը: Թեև այս տեքստերը (դեռևս) ուժի մեջ չեն մտել, միջազգային պայմանագրի հոդված II-112(3)-ը պարունակում է մի կանոն, որի բարոյական կշիռն արդեն իսկ պետք է որ պարտադիր լինի Եվրամիության իրավունքի յուրաքանչյուր հետագա օրենսդրական կամ դատական զարգացումների նկատմամբ. «Քանի որ սույն խարտիան պարունակում է իրավունքներ, որոնք համապատասխանում են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորվող իրավունքներին, ապա այդ իրավունքների իմաստն ու շրջանակը նույնը պետք է լինի, ինչ կոնվենցիայով ամրագրված իրավունքներինը»:

Այսպիսով, երկակի չափորոշիչների վտանգից խուսափելու համար անհրաժեշտ է զգոն մնալ: Եթե այդ վտանգն ինչ-որ կերպ իրական դառնար, ապա այն իր հերթին Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի առնչությամբ կստեղծեր տարբեր պարտավորություններ բարձր պայմանավորվող կողմերի համար՝ նրանց համար, որոնք միացել են միջազգային կոնվենցիաներին, և որոնք չեն միացել: Մեկ այլ՝ վերապահումների համատեքստում դատարանը բարձրացրել է բարձր պայմանավորվող պետությունների միջև անհավասարության հնարավորության հարցը և կրկին հաստատել, որ դա «հակասում է մարդու իրավունքների հետագա իրականացման գործում առավել բարձր միասնության հասնելու նպատակին, ինչպես նշվում է կոնվենցիայի նախաբանում» *(տե՛ս «Լոիզիդոում ընդդեմ Թուրքիայի»* գործի (նախնական առարկություններ) վճիռը՝ կայացված 1995 թ. մարտի 23-ին, շարք A, թիվ 310, պարբ. 77):

Իր համընկնող եզրակացության մեջ դատավոր Ռեսն արտահայտել է հետևյալ կարծիքը.

Կարելի է հանգել այն եզրակացության, որ կոնվենցիայով հռչակված իրավունքների պաշտպանությունն ակնհայտորեն թերի կլինի, եթե որևէ գործի առանցքային հարցը քննելիս Եվրոպական դատարանը հրաժարվի կոնվենցիայի կամ դրա

արձանագրությունների մեկնաբանումից կամ կիրառումից, որոնք վաղուց արդեն ՄԻԵԿ-ի հաստատված նախադեպային իրավունքի առարկան են եղել:

Բոսֆորուսի գործի առնչությամբ կայացված վճիռը նպատակ ուներ պահպանել Ստրասբուրգի դատարանի և Եվրոպական դատարանի ներդաշնակ հարաբերությունները: Նախագահ Վիլդհաբերն այն որակեց որպես «նախադեպային, սկզբունքորեն նոր վճիռ եվրոպական երկու դատարանների պատմության մեջ»: Այդուհանդերձ, նա նշեց, որ չնայած ստրասբուրգյան դատարանի դիմողները չէին կարող վիճարկել, որ իրենց դատական գործերում չեն հասել կոնվենցիայով հռչակված իրավունքների «հավասարազոր» պաշտպանության իրենց ազգային դատարաններում ԵՀ օրենքը կիրառելիս, այնուամենայնիվ այդ գանգատները սկզբունքորեն անընդունելի չեն եղել *ratione materiae* առումով (L.Wildhaber, The Coordination of the Protection of Fundamental Rights in Europe, Geneva, 8 September 2005):

Կատրին Կոստելլոն նշել է.

Առ այսօր Ստրասբուրգի և Լյուքսեմբուրգի դատարանների բարեկիրթ հարաբերությունները նկատելիորեն բարելավել են լյուքսեմբուրգյան դատավարությունների որակն այն առումով, որ վերջինս ուղղակիորեն մեջբերում և ուսումնասիրում է Ստրասբուրգի դատական պրակտիկան, ոչ թե էլիպտիկ (ոչ ամբողջական) դատողություններ է անում հիմնարար իրավունքների պաշտպանության վերաբերյալ: Լյուքսեմբուրգը հստակորեն փոխել է իր դիրքորոշումը հիմնարար իրավունքներին վերաբերող մի շարք վճիռներում: Մնում է հետևել՝ արդյոք և որքանո՞վ Ստրասբուրգն առաջ կմղի Լյուքսեմբուրգին՝ զբաղվելով փաստացի անհատական որոշումների քննությամբ: Դատարանի՝ *Բոսֆորուսի* դեպքում նույն կերպ վարվելու չկամությունը կարելի է բացատրել նաև գործի ժամանակի ընտրությամբ, ինչպես նաև՝ Եվրոպական դատարանի նկատմամբ հսկողությունը հաստատելու դատարանի ներքին ինկրեմենտալիստական (աստիճանական) մոտեցմամբ: (The Bosphorus Ruling of the European Court of Human Rights: Fundamental Rights and Blurred Boundaries in Europe (2006) 6(1) *Human Rights Law Review* 87 at p 129):

11 Պալատը միաձայն որոշեց, որ Իրաքի նախկին նախագահի ձերբակալությունը, կալանավորումն ու դատավարությունը տեղի չեն ունեցել անդամ պետության իրավազորության ներքո՝ *«Սադամ Հուսեյնն ընդդեմ Ալբանիայի և այլ 20 պետությունների»* (*Saddam Hussein v Albania and 20 other States*) գործում, որի որոշումը կայացվել է 2006 թ. մարտի 14-ին: Դիմողը բողոքում էր, որ անդամ պետությունները կոալիցիայում հանդես են եկել որպես Ամերիկայի Միացյալ Նահանգների գործընկեր 2003 թ. Իրաքի վրա հարձակման ժամանակ, ուստի կոնվենցիայով սահմանված կարգով պատասխանատու են իր ձերբակալության և հետագա դատավարության նպատակով Իրաքի իշխանություններին հանձնելու համար: Հաշվի առնելով, որ կոալիցիայի գործընկերները ռազմական պատասխանատվություն էին կրում Իրաքի տարբեր աշխարհագրական գոտիների համար, ինչպես նաև այն փաստը, որ դիմողը ձերբակալվել և կալանքի տակ էր պահվել Միացյալ Նահանգների զինուժի կողմից, պալատը որոշեց.

Նման հանգամանքներում դատարանը համարում է, որ դիմողը չի հաստատել, որ գտնվել է պատասխանող պետությունների իրավազորության ներքո ներկայացրած հիմքերից որևէ մեկով: Դատարանը կարծում է, որ նա չի ապացուցել, որ այդ պետություններն ունեցել են իրավազորություն՝ հիմնված իրենց հսկողության վրա այն տարածքում, որտեղ տեղի է ունեցել ենթադրվող խախտումը (*տե՛ս «Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի»* գործի վճիռը՝ կայացված 1996 թ. դեկտեմբերի 18-ին, «Զեկույցներ որոշումների և դատավճիռների վերաբերյալ» 1996 VI և *«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի»* գործը [պետական գանգատ-GC], թիվ 25781/94, ECHR 2001): Եթե նույնիսկ դիմողն իր կալանավորման փաստի բերումով գտնված լիներ պատասխանող պետության իրավազորության ներքո, նա չապացուցեց, որ պատասխանող պետություններից որևէ մեկը որևիցե պատասխանատվություն է կրել, որևիցե մասնակցություն կամ դեր է ունեցել նրա ձերբակալման և հետագայում նրա կալանավորման գործում (*տե՛ս «Իսսան և այլք ընդդեմ Թուրքիայի»*, թիվ 31821/96, պարբ. 71–82, 16 նոյեմբերի, 2004 թ. և *«Օջալանն ընդդեմ Թուրքիայի»* (Ocalan v Turkey) գործը [պետական գանգատ-GC], թիվ 46221/99, պարբ. 91, ECHR 2005): Այն փաստը, որ դիմողը չկարողացավ ապացուցել նման որևէ մասնակցությունը, պատասխան է նաև նրա վերջնական մեղադրանքին, թե պատասխանող պետությունները պատասխանատու են իրենց ռազմական գործակալների գործողությունների համար արտերկրում: Եվ, վերջապես, չկան հիմքեր կոնվենցիայի դատական պրակտիկայում, ինչպես և դիմողը չկարողացավ վկայակոչել միջազգային իրավունքի որևէ հաստատված սկզբունք, համաձայն որի՝ ինքը գտնվել է պատասխանող պետությունների իրավազորության ներքո միայն այն հիմքով, որ այդ պետությունները, իր պնդմամբ, կազմել են ԱՄՆ-ի հետ կոալիցիայի մասը (տարբեր չճշտված մակարդակներով) այն դեպքում, երբ վիճարկվող գործողությունները կատարում էր Միացյալ Նահանգները, այն դեպքում, երբ Միացյալ

Նահանգներին էր հանձնարարված այն գոտու անվտանգությունը, որտեղ տեղի էին ունենում այդ գործողությունները, և այն դեպքում, երբ կոալիցիայի ընդհանուր հրամանատարությունը վստահված էր Միացյալ Նահանգներին:

Այսպիսով, դատարանը հաստատված չի համարում այն փաստը, որ դիմողի և պատասխանող պետությունների միջև եղել է կամ կա որևէ իրավազորային կապ, հետևաբար և այն, որ դիմողը կարող էր գտնված լինել այդ պետությունների իրավազորության ներքո՝ կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն:

Հետևաբար, դիմումը հայտարարվեց անընդունելի: Որոշման վերջին մասը մատնանշում է, որ մասնակցությունն արտերկրյա ռազմական արշավներին, որոնցում ներգրավված են բազմազգ ուժեր, ըստ էության, չի ենթադրում կոնվենցիայով նախատեսված իրավազորային որևէ պատասխանատվություն կոալիցիայի բոլոր գործողությունների համար:

12 Կոնվենցիայի 1-ին հոդվածը դատարանը կիրառել է համակցված այնպիսի հոդվածների հետ, որոնցով նախատեսված նյութական իրավունքները ծառայում են որպես իրավաբանական հիմք անդամ պետությունների վրա դրված մի շարք ենթադրվող դրական պարտավորությունների համար: Որպես օրինակ կարելի է բերել սպանությունների արդյունավետ հետաքննություն իրականացնելու պարտավորությունը, որն առաջին անգամ ճանաչվեց *«Մակքենն ընդդեմ Միացյալ Թագավորության» (McCann v United Kingdom)* գործի 161-րդ պարբերությունում (*տե՛ս* ստորև՝ էջ 81 և 130 [հետաքննություն կատարելու պարտավորվածության բաժինը]), ինչպես նաև խոցելի մարդկանց այլ մասնավոր անձանց պատճառած տանջանքներից, անմարդկային և այլասերող վերաբերմունքից կամ պատժից պաշտպանելու նպատակով միջոցներ կիրառելու պարտավորությունը, որի համար *տե՛ս «Ա-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (A v United Kingdom)* գործի 22-րդ պարբերությունը (*տե՛ս* ստորև՝ էջ 165): Այս թեմայի հանգամանալից վերլուծության համար *տե՛ս* A.Mowbray, The Development of Positive Obligations under the European Convention on Human Rights by the European Court of Human Rights (Hart Publishing, Oxford, 2004):

4 ՀՈԴՎԱԾ 2 ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Դատարանի ընդհանուր մոտեցումը

«Մակքենն ընդդեմ Միացյալ Թագավորության» *(McCann v UK)* A. 324 (1995) 21 EHRR 97

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

1988 թ. սկզբին Մեծ Բրիտանիայի, Իսպանիայի և Ջիբրալթարի իշխանություններին հայտնի դարձավ, որ Իռլանդիայի ժամանակավոր հանրապետական բանակը (ԻՀԲ) ծրագրում է իրականացնել ահաբեկչական հարձակում Ջիբրալթարի վրա: Հետախուզությունը հայտնել էր, որ այդ հարձակման կենտրոնը լինելու է զորահավաքի այն տարածքը, որտեղ բրիտանական բանակը կատարում է պահակազորի հերթափոխ յուրաքանչյուր երեքշաբթի առավոտ: Ջիբրալթարի ոստիկանության հանձնակատարին օգնելու նպատակով Ջիբրալթար ուղարկվեց խորհրդակցական խումբ, որը կազմված էր, ի թիվս այլոց, Հատուկ օդային ծառայության (ՀՕԾ) անձնակազմից, Բրիտանիայի անվտանգության ծառայության սպաներից և ականազերծման մասնագետից: Մարտի 4-ին Իսպանիայի Մալագա քաղաքի տեսադաշտում էին հայտնվել կասկածյալ երեք ահաբեկիչները (որոնք ակտիվ ծառայության ստորաբաժանման անդամներ էին): Մարտի 5-ի գիշերը ոստիկանության հանձնակատարը հրահանգավորեց անվտանգության ծառայության ներկայացուցիչներին՝ նշելով, որ ըստ իրենց հասած տեղեկությունների՝ մարտի 8-ին ԻՀԲ-ն մտադիր է հարձակվել պահակազորի հերթափոխի ընթացակարգի ժամանակ, ակտիվ ծառայության ստորաբաժանման կազմում էին Դանիել Մակքենը (ով նախկինում դատապարտվել էր պայթուցիկներ պահելու համար), Մեյրիդ Ֆառելը (ով նախկինում դատապարտվել էր պայթյուններ իրականացնելու համար) և Շոն Սևիջը (ում բնութագրում էին որպես փորձառու ռումբ պատրաստողի), հարձակումն իրականացվելու է մեքենայի մեջ ռումբ տեղադրելով, ռումբն ակտիվացնելու համար հավանաբար օգտագործվելու է ռադիոկապով հեռակառավարման դետոնատորային սարք, անհավանական է համարվում այն վարկածը, թե ականապատված մեքենայի համար կայանման տեղ պահելու համար օգտագործվելու է այսպես կոչված «խանգարող մեքենա», կասկածյալները վտանգավոր են, որովհետև ամենայն հավանականությամբ դիմելու են զենքի, եթե դեմ առ դեմ հանդիպեին անվտանգության ծառայության ուժերին: Ջիբրալթարից սահմանի վրա գտնվող իսպանական ներգաղթի կետ ուղարկվեց մի քննիչ, որը պետք է հետևեր կասկածյալներին: Ջիբրալթարի մաքսատան և սահմանապահ ոստիկանության հերթապահ աշխատակիցները չէին տեղեկացվել գործողության մասին, որպեսզի հնարավորինս քիչ թվով մարդիկ իմանային հակաահաբեկչական ծրագրի մասին (այդուհանդերձ, մոտակայքում տեղակայված էր ձերբակալման խումբը): Մոտավորապես ժամը 12:30-ին զորահավաքի տարածքում նկատվեց մի մարդ՝ ենթադրաբար Սևիջը, որը կայանում է սպիտակ «Ռենո» մակնիշի մեքենան: Ժամը 14:00-ին մոտ հաստատվեց, որ այդ մարդը Սևիջն է: Կես ժամ անց դիտակետում հայտնվեցին Ֆառելը և Մակքենը, որոնք ոտքով անցնում էին Ջիբրալթարի սահմանը: Մոտավորապես ժամը 15:00-ին հսկող խմբի սպաները նկատեցին, որ երեք կասկածյալները միասին զննում են զորահավաքի տարածքում կայանված մեքենան: Ոստիկանությունը մտածում էր ձերբակալել կասկածյալներին, սակայն նրանք հեռացան մեքենայից: Ականազերծման բրիտանացի մասնագետը երկու րոպե մեքենայի արտաքին զննում կատարեց և նկատեց, որ ավտոմեքենայի ալեհավաքը տեղաշարժված է (այն ժանգոտ էր, թեև

մեքենան նոր էր): Նա զեկուցեց ոստիկանության հանձնակատարին, որ ավտոմեքենան «կասկածի տակ է» (նկատի ուներ, որ մեքենան կայանված է կասկածելի հանգամանքներում, ուստի հիմքեր կան կարծելու, որ դրա մեջ ռումբ կա): Հանձնակատարը որոշեց ձերբակալել կասկածյալներին սպանության մտադրությամբ դավադրության կասկածանքով և հրաման տվեց, որով պահանջում էր ռազմական ուժերի միջամտությունը՝ կասկածյալներին ձերբակալելու համար: Ատրճանակներով զինված և քաղաքացիական հագուստով ՀՕԾ-ի երկու զինվոր շարժվում էին Մակքենի և Ֆառելի հետևից՝ տասը մետր հեռավորությամբ: Մի պահ Մակքենը շրջվեց (միգուցե հեռվում լսելով ոստիկանական մեքենայի ազդանշանը), իսկ զինվոր Ա-ն կարծեց, թե Մակքենը ագրեսիվ շարժում է անում: Նրան մի պահ թվաց, թե Մակքենը պատրաստվում է սեղմել հեռակառավարման կոճակը և ռումբը գործարկել, ուստի նա կրակ բացեց կասկածյալի վրա: Բացի այդ, զինվոր Ա-ին թվաց, թե Ֆառելն էլ է նման շարժում անում՝ ձգվելով դեպի իր ձեռքի պայուսակը, ուստի կրակեց նաև Ֆառելի ուղղությամբ: Զինվոր Բ-ն նույնպես կրակեց երկու կասկածյալներին: Ընդհանուր հաշվով զինվորներն արձակեցին տասներկու գնդակ: Այդ ընթացքում ՀՕԾ-ի երկու այլ զինվոր (նույնպես զինված և քաղաքացիական հագուստով) մոտիկից հետևում էին Սևիջին: Երբ լսվեցին կրակոցները, Սևիջը շրջվեց: Զինվորներից մեկը գոչեց՝ կանգնի՛ր, իսկ Սևիջը ձեռքը տարավ դեպի ազդրը: Զինվոր Դ-ին թվաց, որ Սևիջը փորձում է ձեռքը տանել ռադիոդետոնատորին, ուստի կրակ բացեց կասկածյալի վրա (երկու-երեք մետր հեռավորությունից): Զինվոր Գ-ն նույնպես կրակեց Սևիջի վրա: Ընդհանուր առմամբ արձակվեց տասնհինգ գնդակ: Երեք կասկածյալներն էլ սպանվեցին: Նրանց վրա, ինչպես նաև կայանված «Ռենո» մակնիշի մեքենայում չհայտնաբերվեց ո՛չ դետոնացիայի սարք, ո՛չ էլ ռումբ: Սակայն Ֆառելի պայուսակում գտնված բանալին իսպանական ոստիկանությանն առաջնորդեց դեպի մեկ այլ մեքենա, որը կայանված էր Մարբելայում և պարունակում էր պայթուցիկ սարք (բաղկացած 64 կգ «սեմտեքս» տեսակի պայթուցիկ նյութից, շրջապատված 200 չափաբաժին զինամթերքով և միացված երկու թայմերների. այս ամենը նախատեսված էր հրազգնդի տեսքով պայթեցման համար):

Այս գործի կապակցությամբ 1988 թ. սեպտեմբերին հարցաքննություններ անցկացրեց Ջիբրալթարի սպանությունների գծով քննիչը: Տասնհինը օր շարունակվող լսումներից հետո, որոնց ընթացքում հարցաքննվեցին յոթանասունհինգ վկաներ (այդ թվում գործողություններում ներգրավված զինվորները, անվտանգության և ոստիկանության սպաները), երդվյալների հանձնախմբի մեծ մասը (ինը կողմ, երկու դեմ ձայներով) վճիռ կայացրեց՝ սպանությունները համարելով օրինական: Դիմողները՝ սպանված կասկածյալների սեփականությունը ներկայացնողները, փորձեցին պաշտպանության նախարարության դեմ քաղաքացիական գործեր հարուցել Հյուսիսային Իռլանդիայի գերագույն դատարանում, սակայն գործը փակվեց: Դիմողներն այնուհետև գանգատ ներկայացրին հանձնաժողով՝ պնդելով, որ վերը նկարագրված հակաահաբեկչական գործողության ծրագրումն ու իրականացումը հակասում են կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջներին: Հանձնաժողովի մեծամասնությունը՝ տասնմեկ կողմ, վեց դեմ ձայներով, որոշեց, որ խախտում տեղի չի ունեցել:

Ա. ՀՈԴՎԱԾ 2-Ի ՍԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՏԵՑՈՒՄ

146. Դատարանի մոտեցումը կոնվենցիայի 2-րդ հոդվածի մեկնաբանությանը պետք է առաջնորդվի այն հանգամանքով, որ կոնվենցիայի՝ որպես անհատի իրավունքները պաշտպանող գործիքի նպատակն ու խնդիրը պահանջում են, որ կոնվենցիայի դրույթները մեկնաբանվեն և կիրառվեն այնպիսի եղանակով, որը դրա անվտանգության միջոցները կդարձնի գործնական և արդյունավետ (տե՛ս, ի թիվս այլոց, *«Մերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Soering v UK)* գործի 1989 թ. հուլիսի 7-ի վճիռը, շարք A, թիվ 161, էջ 34, պարբ. 87 և *«Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի»* գործի (նախնական առարկություններ) վճիռը՝ կայացված 1995 թ. մարտի 23-ին, շարք A, թիվ 310, էջ 27, պարբ. 72):

147. Անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ որպես կոնվենցիայի դրույթ, որը ոչ միայն կոչված է պաշտպանելու կյանքի իրավունքը, այլև սահմանում է այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում կյանքից զրկումը կարող է համարվել արդարացված, 2-րդ հոդվածը կոնվենցիայի ամենահիմնարար դրույթներից մեկն է, որը խաղաղ պայմաններում չի հանդուրժում 15-րդ հոդվածով սահմանված և ոչ մի շեղում: Կոնվենցիայի 15(3) հոդվածի համակցությամբ այն նաև պահպանում է Եվրոպայի խորհուրդը կազմող ժողովրդավարական հասարակությունների ամենահիմնական

արժեքներից մեկը (տե՛ս վերը նշված *«Մերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործի վճիռը, էջ 34, պարբ. 88): Ուստի դրա դրույթները պետք է շատ խստորեն մեկնաբանվեն:

148. Դատարանը կարծում է, որ հոդված 2(2)-ում ուրվագծված բացառությունները նշանակում են, որ այս դրույթը տարածվում է նաև, սակայն բացառապես չի վերաբերում, միջազգային սպանություններին: Ինչպես մատնանշել է հանձնաժողովը, 2-րդ հոդվածի տեքստն ամբողջությամբ ցույց է տալիս, որ 2-րդ հոդվածի 2-րդ կետը ոչ թե առաջին հերթին սահմանում է այն դեպքերը, երբ միջազգային կանոնակարգերով թույլատրելի է անձի սպանությունը, այլ նկարագրում է այն իրավիճակները, երբ թույլատրելի է «կիրառել ուժ», որը կարող է հանգեցնել ոչ դիտավորյալ արդյունքի՝ կյանքից զրկման: Ուժի գործադրումը, այդուհանդերձ, պետք է «բացարձակապես անհրաժեշտ» լինի հոդված 2.2-ի (ա), (բ) և (գ) ենթակետերի պահանջները բավարարելու համար (տե՛ս *«Ստյուարտն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Stewart v UK)* գործի թիվ 10044/82 գանգատը, 10 հուլիսի, 1984 թ., Որոշումներ և զեկույցներ 39, էջ 169-71):

149. Այդ իմաստով հոդված 2(2)-ում օգտագործված «բացարձակ անհրաժեշտ» եզրույթը նշանակում է, որ այդ անհրաժեշտությանը հավատալու համար պետք է կիրառել սովորականից առավել խիստ և անհերքելի ստուգում, երբ որոշվում է, թե որքանով է պետության գործողությունն «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում», ինչպես նշվում է կոնվենցիայի 8-11-րդ հոդվածների 2-րդ կետերում: Մասնավորապես, գործադրվող ուժը պետք է խստորեն համարժեք լինի հոդված 2.2-ի (ա), (բ) և (գ) ենթակետերում նշված նպատակների հասանելիությունն ապահովելու համար:

150. Ժողովրդավարական հասարակությունում հոդված 2-ի կարևորությունը պահպանելու նպատակով իր գնահատումը կատարելիս դատարանը պարտավոր է շատ մանրազնին քննության առնել կյանքից զրկելու հանգամանքները, մասնավորապես՝ այն դեպքերում, երբ ոչ դիտավորյալ գործադրվել է մահացու ուժ՝ հաշվի առնելով ոչ միայն այդ ուժը փաստացի կիրառող պետության գործակալների գործողությունները, այլև անխտիր բոլոր այլ հանգամանքները, ներառյալ քննության առնվող գործողությունների ծրագրումն ու վերահսկումը:

2. ՀՈԴՎԱԾ 2-Ի ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

(ա) Ազգային օրենքի և պրակտիկայի համատեղելիությունը կոնվենցիայի 2-րդ հոդվածի չափորոշիչների հետ

151. Այս գաղափարով առաջնորդվելով՝ դիմողները վիճարկում էին, որ կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետը պետությունների վրա դրական պարտավորություն է դնում «պաշտպանելու» կյանքը: Մասնավորապես ազգային օրենքը պետք խստորեն վերահսկի և սահմանափակի այն հանգամանքները, որոնց առկայությամբ անձը կարող է զրկվել կյանքից պետության գործակալների ձեռքով: Բացի այդ, պետությունը պարտավոր է համապատասխան ուսուցում, հրահանգավորում և ցուցումներ ապահովել ուժ գործադրելու իրավասությամբ օժտված իր զինվորների և այլ գործակալների համար, և ամենայն խստությամբ վերահսկել այն գործողությունները, որոնց դեպքում կարող է կիրառվել մահացու ուժ:

Դիմողների կարծիքով՝ համապատասխան ներպետական օրենքն անորոշ է, ընդհանրական և չի արձագանքում 2-րդ հոդվածով սահմանված բացարձակ անհրաժեշտության չափորոշիչը: Դա, իր հերթին, 2-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է: Այդ նույն դրույթի խախտում տեղի է ունեցել նաև այն հարցում, որ օրենքը չի պահանջում պետության գործակալներից ուսուցում անցնել 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված խստագույն չափորոշիչներին համապատասխան:

152. Հանձնաժողովի կարծիքով, որին համամիտ էր կառավարությունը, կոնվենցիայի 2-րդ հոդվածը չպետք է մեկնաբանվի այնպես, որ այն պահանջում է միանման ձևակերպումների առկայություն նաև ներպետական օրենքում: Դրա պահանջները բավարարված են համարվում, եթե կոնվենցիայով սահմանված բուն իրավունքը պաշտպանվում է ներպետական օրենքով:

153. Դատարանը հիշեցնում է, որ կոնվենցիան չի պարտադրում բարձր պայմանավորվող կողմերին իրենց օրենքներում միավորել կոնվենցիայի դրույթները (տե՛ս, ի թիվս այլոց, *«Ջեյմսն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*James v UK*) գործի 1986 թ. փետրվարի 21-ի վճիռը, շարք A, թիվ 98, էջ 47, պարբ. 84 և *«Սուրբ վանքերն ընդդեմ Հունաստանի» (The Holy Monasteries v Greece)* գործի 1994 թ. դեկտեմբերի 9-ի վճիռը, շարք A, թիվ 301-A, էջ 39, պարբ. 90): Ավելին, կոնվենցիայի հաստատություններից չի ակնկալվում վերացականորեն քննել ազգային օրենսդրական կամ սահմանադրական դրույթների համապատասխանությունը կոնվենցիայի պահանջներին (տե՛ս, օրինակ, *«Կլասսն ընդդեմ Գերմանիայի»* (*Klass v Germany*) գործի 1978 թ. սեպտեմբերի 6-ի վճիռը, շարք A, թիվ 28, էջ 18, պարբ. 33):

154. Վերն ասվածը նկատի առնելով՝ դատարանը նշում է, որ Ջիբրալթարի սահմանադրության 2-րդ հոդվածը նման է կոնվենցիայի 2-րդ հոդվածին, բայց այն տարբերությամբ, որ կյանքից զրկելու հանգեցնող ուժի գործադրման հիմնավորման չափորոշիչը սահմանված է որպես «ողջամտորեն արդարացված», ոչ թե «բացարձակ անհրաժեշտ», ինչպես պահանջվում է կոնվենցիայի 2(2) հոդվածով: Թեև կոնվենցիայով սահմանված չափորոշիչն առաջին հայացքից կարող է ավելի խիստ թվալ, քան համապատասխան ազգային օրենքը, կառավարությունը վկայել է, որ հաշվի առնելով այն եղանակը, որով այդ չափորոշիչը մեկնաբանվում և կիրառվում է ազգային դատարաններում, …այդ երկու հայեցակարգերի բուն էության միջև որևէ լուրջ տարբերություն չկա:

155. Դատարանի կարծիքով՝ որքան էլ հավաստի լինի այդ պնդումը, երկու չափորոշիչների միջև եղած տարբերությունը բավականաչափ մեծ չէ, որպեսզի արձանագրվի հոդված 2(2)-ի խախտում միայն այդ հիմքով:

156. Ինչ վերաբերում է պետության գործակալների ուսուցման ու հրահանգավորման վերաբերյալ դիմողների փաստարկներին, ինչպես նաև օպերատիվ վերահսկողության անհրաժեշտությանը, ապա դատարանը կարծում է, որ դրանք հարցեր են, որոնք տվյալ գործի համատեքստում բարձրացնում են կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված խնդիրներ ենթադրյալ ահաբեկչական հարձակման դեմ պետության արձագանքման առնչությամբ: Այդ կապակցությամբ բավական է նշել, որ զինվորների և ոստիկանության համար մշակված ձերբակալման կանոնակարգերը սույն գործում պարունակում են ուժի գործադրումը կարգավորող մի շարք կանոններ, որոնք ճշգրտորեն արտացոլում են ազգային չափորոշիչը, ինչպես նաև կոնվենցիայի չափորոշչի բուն էությունը …

(բ) Դատաքննության ընթացակարգերի համապատասխանությունը՝ որպես քննության մեխանիզմ

157. Այս գաղափարով առաջնորդվելով՝ դիմողները վիճարկել են նաև այն հարցը, … որ պետությունը պարտավոր է անցկացնել օրենսդրության հետադարձ ուժի հարցի արդյունավետ քննություն, որպեսզի անկախ դատական պրոցեսի միջոցով պարզաբանվեն պետության գործակալների կողմից կատարված սպանությունների հանգամանքները, և այդ պրոցեսը լիարժեք կերպով մատչելի լինի սպանվածների հարազատների համար:

Amnesty International և British-Irish Rights Watch and Others հասարակական կազմակերպությունների հետ մեկտեղ նրանք բողոքարկում էին այն փաստը, որ մի շարք բացթողումների պատճառով դատաքննության կարգը չի բավարարել ընթացակարգային այդ պահանջը: Մասնավորապես, դիմողները գանգատվում էին, որ հրազենի օգտագործմանը հանգեցնող գործողությունը ոչ մի տեսանկյունից չի ենթարկվել ոստիկանական անկախ փորձաքննության, որ չեն պահպանվել հանցանքի վայրի հետ կապված ընթացակարգերը, ոչ բոլոր վկաներն են գտնվել և հարցաքննվել ոստիկանության կողմից, սպանությունների գծով քննիչը նստում է «պահակազորային» քաղաքից բերված երդվյալների հանձնախմբի հետ, որի անդամները սերտ կապերի մեջ են զինվորականների հետ, սպանությունների գծով քննիչը թույլ չի տվել, որ երդվյալ ատենակալները ենթարկվեն ստուգման և հանձնախմբից հեռացվեն պետական ծառայողները, և շահագրգիռ կառավարության մարմինների կողմից թողարկվող հանրային շահի բացահայտման տեղեկանքները [public interest certificates] միտումնավոր կրճատել են գործողության փաստերի քննությունը:

Դիմողներն այնուհետ բողոքում էին, որ հետաքննության ժամանակ իրենք Միացյալ Թագավորության ներկայացուցիչների հետ հավասար ներկայացված լինելու հնարավորություններ չեն ունեցել, և դրա հետևանքով սաստիկ տուժել են ճշմարտությունը գտնելու իրենց փորձերում, քանի որ, ի թիվս այլոց, իրենց իրավաբանական օգնություն ցույց չի տրվել, և իրենց ներկայացրել է ընդամենը երկու փաստաբան: Վկաների ցուցմունքները կանխավ ներկայացվել են Թագավորության ներկայացուցիչներին և զինվորականներին ու ոստիկանությանը ներկայացնող իրավաբաններին, մինչդեռ իրենց իրավաբաններին ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել, բացի ձգաբանական (բալիստիկ) հաշվետվությունից և պաթոլոգոանատոմի զեկույցից: Բացի այդ, իրենք չեն ունեցել բավականաչափ միջոցներ դատավարությունների ամենօրյա սղագրության պատճենները ձեռք բերելու համար, որոնցից յուրաքանչյուրն արժեր 500-700 ֆունտ ստեռլինգ:

158. Կառավարությունն առարկում էր՝ պնդելով, որ դատաքննությունը լիովին անկախ, արդյունավետ և հրապարակային քննության մեխանիզմ է, որն ավելի քան բավարարում է կոնվենցիայի հոդված 2(2)-ով պահանջվող յուրաքանչյուր ընթացակարգային պահանջ: Նշվում էր, մասնավորապես, որ դատարանի համար ճիշտ չէր լինի փորձել գտնել չափորոշիչների եզակի համալիր, որով գնահատվեր մահացու ելքով բոլոր գործերի հանգամանքների հետաքննությունը: Ավելին, կարևոր էր տարբերակում դնել նման հետաքննությունների և քաղաքացիական այն վարույթների միջև, որոնց նպատակն է հատուցում ապահովել կյանքի իրավունքի ենթադրվող խախտման դիմաց: Վերջապես, նրանք խնդրեցին, որ դատարանը մերժի միջնորդ կազմակերպության՝ British-Irish Rights Watch and Others-ի հակափաստարկն այն մասին, թե կոնվենցիայի 2(2) հոդվածի խախտում տեղի է ունենում ամեն անգամ, երբ դատարանը գտնում է լուրջ տարբերություններ ՄԱԿ-ի Արտահրավական դատավճիռների իրականացման սկզբունքների [UN Principles on Extra-Legal Executions] և ցանկացած մահվան դեպքի քննության միջև…

159. Հանճնաժողովի կարծիքով՝ դատաքննությունը պետության գործողությունները ենթարկել է համակողմանի, անկախ և խիստ հրապարակային քննության՝ այդպիսով բավարար մակարդակով ընթացակարգային պաշտպանություն ապահովելով կոնվենցիայի 2-րդ հոդվածի նպատակների իմաստով:

160. Դատարանը կարծում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտություն չկա որոշելու՝ կյանքից զրկելու կապակցությամբ քաղաքացիական դատավարություն սկսելու նպատակով դատարան մուտք գործելու իրավունքը տրամաբանորեն բխո՞ւմ է 2-րդ հոդվածի 1-ին կետից, քանզի դա մի խնդիր է, որ ավելի լավ կքննվեր կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածներով, դրույթներ, որոնք դիմողները չեն պահանջել կիրառել:

161. Դատարանը, ինչպես և հանճնաժողովը, սահմանափակվում է՝ նշելով, որ պետության գործակալների կողմից կամայական սպանության արգելման ընդհանուր իրավական իմաստը գործնականում անարդյունավետ կլիներ, եթե գոյություն չունենար որևէ ընթացակարգ պետության իշխանությունների կողմից մահացու ուժի գործադրման օրինականությունը քննելու համար: Հոդված 2-ով պահանջվող կյանքի իրավունքի պաշտպանության պարտականությունը, մեկնաբանված կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված պետությունների ընդհանուր պարտավորությամբ, այն է՝ «ապահովել իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի՝ կոնվենցիայով սահմանված իրավունքներն ու ազատությունները», տրամաբանորեն պահանջում է, որ լինի արդյունավետ պաշտոնական հետաքննության որևէ ձև այն դեպքերի համար, երբ անձինք սպանվում են, ի թիվս այլոց, պետության գործակալների կողմից գործադրված ուժի հետևանքով:

162. Այդուհանդերձ, տվյալ դեպքում հարկ չկա, որ դատարանը որոշի, թե ինչ ձև պետք է ընդունի այդ քննությունը և ինչ պայմաններով պետք է այն իրականացվի, քանի որ հանրային դատաքննության ընթացակարգեր անշուշտ իրականացվել են, դրանց ընթացքում դիմողներն իրավաբանորեն ներկայացվել են, և լսվել են 79 վկաների ցուցմունքները: Ավելին, դատավարությունը տևել է 19 օր, ինչի մասին վկայում են վարույթի սղագրության հաստափոր հատորները, և այդ ընթացքում հանգամանալից վերլուծության են ենթարկվել սպանությունների բոլոր հանգամանքները: Այնուհետև, սղագիր արձանագրություններից (այդ թվում՝ սպանությունների գծով քննիչի՝ երդվյալներին ուղղված խոսքի սղագրությունից) երևում է, որ դիմողների անունից հանդես եկող իրավաբանները հնարավորություն են ունեցել հարցաքննելու և խաչաձև հարցաքննելու գլխավոր վկաներին, այդ թվում՝ հակաահաբեկչական գործողության ծրագրմամբ և իրականացմամբ զբաղվող զինվորականներին և ոստիկաններին, և ներկայացնելու այն բոլոր փաստերն ու նյութերը, որ ցանկացել են ներկայացնել վարույթի ընթացքում:

163. Ելնելով վերը նշվածից՝ դատարանը չի համարում, որ դատավարության ընթացակարգերի թերությունները, որոնց մասին հայտարարել են դիմողներն ու միջնորդները, էականորեն խոչընդոտել են սպանությունների հանգամանքների մանրակրկիտ, անաչառ և հանգամանալից քննությունը:

164. Սրանից հետևում է, որ այդ հիմքով կոնվենցիայի 2(1) հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Բ. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՀՈԴՎԱԾ 2-Ի ԿԻՐԱՌՈՒՄԸ

1. ՓԱՍՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՏԵՑՈՒՄ

165. Ընդունելով, որ կոնվենցիայի հաստատությունների համար դատավարությանը մասնակցող երդվյալների որոշումները պաշտոնապես պարտադիր չեն, կառավարությունն այնուամենայնիվ հայտարարեց, որ դատավճիռները կարևորագույն նշանակություն ունեն սպանվածների մահվան հանգամանքների հետագա ուսումնասիրության համար: Հետևաբար, դատարանը պետք է մեծ կարևորություն տա երդվյալների կայացրած վճիռներին, եթե չլինեն նշաններ, որ այդ վճիռները անարդարացի են, կամ այնպիսի դատավճիռներ են, որ փաստեր քննող և որոշող ոչ մի այլ դատական մարմին չէր կայացնի: Այդ առումով երդվյալ ատենակալները շատ լավ էին պատրաստված սպանությունների հանգամանքները քննելու համար: Երդվյալների հանձնախմբի անդամները տեսան և լսեցին վկայություն տվող յոթանասունինը վկաներից յուրաքանչյուրին, ներկա եղան մանրակրկիտ խաչաձև հարցաքննություններին: Ունենալով այդ հնարավորությունը՝ նրանք կարողացան գնահատել վկաների տված ցուցմունքների ապացուցման ուժն ու արժանահավատությունը: Կառավարությունը մատնանշեց, որ երդվյալների հանձնախումբը լսեց նաև տարբեր կողմերի ցուցմունքները, ներառյալ՝ սպանվածներին ներկայացնող իրավաբանների խոսքը:

166. Մյուս կողմից՝ դիմողները պնդում էին, որ դատավարություններն իրենց բնույթով թերի էին և չէին կարող ապահովել լիարժեք և մանրակրկիտ ուսումնասիրություն՝ սույն խիստ հակասական գործում սպանությունները քննելու համար: Ավելին, դատավարության ընթացքում այդ սպանությունները չէին քննվում այնպիսի հայեցակարգերի տեսանկյունից, ինչպիսիք են «համազորությունը» կամ «բացարձակ անհրաժեշտությունը»՝ դրա փոխարեն կիրառելով ավելի թույլ «ողջամիտ ուժ» կամ «ողջամիտ անհրաժեշտություն» հայեցակարգերը: Բացի այդ, երդվյալները կենտրոնանում էին

կրակ բացող զինվորների գործողությունների վրա, կարծես թե քննության էին առնում նրանց քրեական մեղավորության, ոչ թե գործողության ենթադրվող անշրջահայաց և անփույթ ծրագրման հարցը:

167. Հանձնաժողովը քննեց գործը կողմերի դիտարկումների և նրանց ներկայացրած փաստաթղթերի հիման վրա, այդ թվում՝ դատավարության սղագրությունները: Հանձնաժողովն իրեն պարտավորված չէր համարում ընդունելու երդվյալների եզրակացությունները:

168. Դատարանը հիշեցնում է, որ կոնվենցիայի սխեմայի համաձայն՝ փաստերի հաստատումն ու ստուգումը հանձնաժողովի առաջնային պարտականությունն է (28-րդ հոդվածի 1-ին կետ և 31-րդ հոդված): Հետևաբար, դատարանը միայն բացառիկ դեպքերում կարող է կիրառել իր իրավասություններն այս հարցում: Այդուհանդերձ, դատարանի համար պարտավորեցնող չեն փաստերի առնչությամբ հանձնաժողովի արած եզրակացությունները, և դատարանն ազատ է՝ տալու իր սեփական գնահատականը իրեն ներկայացված նյութի հիման վրա (տե՛ս, ի թիվս այլոց, *«Կրուզ Վարասն ընդդեմ Շվեդիայի»* գործի վճիռը, որ կայացվել է 1991 թ. մարտի 20-ին, շարք A, թիվ 201, էջ 29, պարբ. 74 և *«Կլասսն ընդդեմ Գերմանիայի»* գործի վճիռը, որ կայացվել է 1993 թ. սեպտեմբերի 22-ին, շարք A, թիվ 269, էջ 17, պարբ. 29):

169. Սույն գործում ո՛չ կառավարությունը և ո՛չ էլ դիմողները դատարանի վարույթում չփորձեցին վիճարկել փաստերը հանձնաժողովի որոշած վիճակով, սակայն նրանց կարծիքներն արմատապես տարբերվում էին կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն այդ փաստերից արված եզրակացությունների հարցում:

Հաշվի առնելով դատարանի առջև ելույթ ունեցողների վկայությունները և դատավարության ընթացակարգերը՝ դատարանը համարում է, որ հանձնաժողովի կողմից հաստատված փաստերն ու բացահայտումները … ճշգրիտ և վստահելի ներկայացնում են սույն գործի հանգամանքները:

170. Ինչ վերաբերում է այդ փաստերի գնահատմանը կոնվենցիայի 2-րդ հոդվածի տեսանկյունից, ապա դատարանը նշում է, որ երդվյալների խորհուրդը հնարավորություն է ունեցել անձամբ լսելու վկաներին, հետևելու նրանց պահվածքին և գնահատելու նրանց ցուցմունքների ապացուցային արժեքը:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է հիշել, որ երդվյալների եզրակացությունը սահմանափակվում է սպանության օրինականության մասին որոշում կայացնելով, ինչպես սովորաբար լինում է, և չի ներկայացնում այդ եզրակացությանը հանգելու պատճառները: Բացի այդ, դատավարության ընթացքը և երդվյալների կիրառած չափորոշիչը ուղղված էին հետևյալ հարցին. զինվորականների կատարած սպանությունները ողջամտորեն արդարացված էին դեպքի հանգամանքներո՞վ, թե «բացարձակ անհրաժեշտ» էին հոդված 2(2)-ի տեսանկյունից՝ վերն արտահայտված իմաստով…

171. Այս նախադրյալների հիման վրա դատարանը պետք է կատարեր սեփական գնահատումը և պարզեր՝ հանձնաժողովի կողմից հաստատված փաստերը կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտո՞ւմ են, թե՞ ոչ:

172. Այնուհետև, դիմողները պնդում էին, որ պետության գործողությունները քննելիս՝ մի գործում, որում մահացու ուժի միտումնավոր կիրառումն ուղղակիորեն և գրավոր ծրագրված է եղել, դատարանը պետք է կառավարության վրա դնի ողջամիտ կասկածից վեր ապացուցման բեռը, որ գործողության ծրագրումն ու իրականացումը համապատասխանել են կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջներին: Բացի այդ, դատարանը չպետք է կասկածը մեկնաբանի հօգուտ պետության իշխանությունների:

173. Որոշելիս, թե ներկա գործում եղե՞լ են 2-րդ հոդվածի խախտումներ, դատարանը չի գնահատում այն անձանց քրեական պատասխանատվության հարցը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված են եղել այս գործում: Ուստի, իր սովորական գործելակերպի համաձայն, դատարանը գնահատելու է առկա խնդիրները դիմողների և կառավարության ներկայացրած նյութի հիման վրա կամ, հարկ եղած դեպքում, այն նյութի, որը դատարանը ձեռք է բերել սեփական նախաձեռնությամբ (տե՛ս *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործի առնչությամբ կայացված 1978 թ. հունվարի 18-ի վճիռը, շարք A, թիվ 25, էջ 64, պարբ. 160 և վերը նշված *«Կրուզ Վարասն ընդդեմ Շվեդիայի»* գործի վճիռը, էջ 29, պարբ. 75):

2. ԴԻՄՈՂՆԵՐԻ ՊՆԴՈՒՄԸ, ԹԵ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾ ԵՆ ԵՂԵԼ

174. Դիմողները պնդում էին, որ մահացածների սպանությունը կանխամտածված ծրագիր է եղել: Թեև նրանք ընդունում էին այն հանգամանքը, որ պաշտպանության նախարարության բարձրագույն պաշտոնյաների հրամանի ուղղակի փաստեր չկան, նրանք այդուամենայնիվ պնդում էին, որ կան իրենց հայտարարությունը հաստատող բազմաթիվ կողմնակի ապացույցներ: Դիմողներն առաջ էին քաշում այն վարկածը, որ սպանության ծրագիրը հնարավոր էր իրականացնել այլ միջոցներով, օրինակ՝ ապակողմնորոշող խոսքով և անորոշ ակնարկներով, դրան գումարած ՀՕԾ-ի նման ռազմական ստորաբաժանման ընտրությունը: Ըստ դատավարության ընթացքում իրենց իսկ տված վկայությունների՝ այդ զինվորները թիրախը վնասազերծելու ուսուցում են անցնում՝ սպանելու նպատակով հրազենի կիրառմամբ: Զինվորներին տալով այնպիսի սխալ տեղեկություն, որն իրոք տրվել է սույն գործում, ակնկալվել է, որ տեղի կունենա

սպանելու նպատակով հրազենի կիրառում: ՀՕԾ-ի գործարկումը տվյալ դեպքում վկայում է հենց այն մասին, որ սպանությունը դիտավորյալ է եղել:

175. Դիմողներն այնուհետև պնդում էին, որ Ջիբրալթարի ոստիկանությունը չէր կարող տեղյակ լինել նման ապօրինի գործողության մասին: Նրանք մատնանշում էին, որ ՀՕԾ-ի սպա Ե-ն գաղտնի հրահանգավորում է անցկացրել իր մարդկանց հետ, որին Ջիբրալթարի ոստիկանության մասնակցությունը չի թույլատրվել: Ավելին, երբ դեպքից հետո զինվորները բերվել են ոստիկանության բաժանմունք, նրանց ուղեկցել է բանակի իրավաբանը, որը հասկացրել է, որ զինվորներն այնտեղ են գտնվում միայն զենքը հանձնելու նպատակով: Դրանից անմիջապես հետո զինվորներին օդանավով հեռացրել են Ջիբրալթարից՝ առանց նույնիսկ ոստիկանության հարցաքննության:

176. Ի պաշտպանություն իրենց պնդումների՝ դիմողները բերում էին հետևյալ փաստերը.

- Պայթյունը կանխելու և կասկածյալներին ձերբակալելու ամենալավ և ամենաապահով միջոցը նրանց իրենց ռումբի հետ մեկտեղ Ջիբրալթարի տարածք չթողնելը կլիներ: Իրավապահներն ունեին նրանց լուսանկարները և գիտեին նրանց անուններն ու մականունները, ինչպես նաև անձնագրային տվյալները:

- Եթե, ինչպես վկայում է լրագրող պրն Դեբելիուսը, Իսպանիայի իշխանությունները կասկածյալներին հետևեին Մալագայից Ջիբրալթար ճանապարհին, ապա նրանք ականատես կլինեին, թե ինչպես են նրանք վարձում «Ռենո» մակնիշի սպիտակ ավտոմեքենան, և կիմանային, որ դրա մեջ ռումբ չկա … :

- Նախորդ պնդման օգտին է խոսում այն հանգամանքը, որ իրավապահները չեն վնասազերծել ռումբը և շրջակա տարածքը մարդկանցից չեն ազատել՝ նրանց անվտանգությունն ապահովելու նպատակով: Ջիբրալթարում այդ պահին կային մեծ թվով զինվորներ, որոնք փորձված էին և քաջածանոթ կասկածյալ ռումբերի չեզոքացման և տարածքի արագ ազատման գործողություններին: Անվտանգության ընթացակարգերում տեղ գտած այս անփութության միակ բացատրությունն այն է, որ անվտանգության ծառայողները տեղյակ էին, որ մեքենայի մեջ ռումբ չկա:

- Զինվոր Զ-ն, ում ուղարկել էին մեքենան զննելու, և ով զեկուցել էր, որ մեքենան կասկածի տակ է, դատաքննության ժամանակ ընդունեց, որ ինքը ռադիոազդանշանային հաղորդման սարքերի մասնագետ չէ… Սա կարևոր է, որովհետև միակ բանը, որ հիմք էր ծառայել նրա գնահատման համար, այն էր, որ ավտոմեքենայի ալեհավաքն ավելի հին տեսք ուներ, քան մեքենան: Իսկական փորձագետը կհեռացներ ալեհավաքը, որպեսզի վնասազերծեր ռադիոդետոնատորը, որը հնարավոր է անել առանց պայթուցիկն ապակայունացնելու, ինչպես վկայեց դոկտոր Սքոթը: Բացի այդ, նա կիմանար, որ եթե կասկածյալները ռադիոազդանշանի օգնությամբ ռումբ պայթեցնելու մտադրություն ունեցած լինեին, ապա ժանգոտ ալեհավաքից չէին օգտվի, այլ կօգտագործեին մաքուր սարք… Զինվոր Զ-ի տված ցուցմունքներից պարզ դարձավ, որ նա նաև պայթուցիկների մասնագետ չէ: Ուստի հնարավոր է, որ զինվոր Զ-ի իրական դերը, եթե կասկածեր, որ մեքենան ականապատված է, զեկուցելն է եղել, որպեսզի Ջիբրալթարի ոստիկանությունը ստիպված լիներ ստորագրել մի փաստաթուղթ, որով ՀՕԾ-ը լիազորվում էր մահացու ուժ կիրառել:

177. Կառավարության կարծիքով՝ սպանությունների օրինականությունը հաստատող երդվյալների վճիռներից պարզ էր, որ հանձնախումբը որպես փաստ է ընդունում այն, որ երեք ահաբեկիչներին սպանելու ծրագիր գոյություն չի ունեցել, և Ջիբրալթարում իրականացված գործողությունը չի մշակվել կամ հաստատվել այդ նպատակով: Գործողության նպատակը երեք ահաբեկիչների ձերբակալման օրինական իրականացումն է եղել, և այդ նպատակով է պահանջվել և ստացվել ռազմական ուժերի օգնությունը: Ավելին, երդվյալների խորհուրդը պետք է մերժած լինի դիմողների այն պնդումը, թե զինվորներ Ա-ն, Բ-ն, Գ-ն և Դ-ն մտադրված գնացել են ահաբեկիչներին սպանելու՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպես է ձևակերպվել սպանելու միտումը՝ հստակ հրամանո՞վ, թե՞ գլխի շարժումով կամ աչքով անելով:

178. Հանձնաժողովը եզրակացրեց, որ չկան դիմողների այն պնդումը հաստատող փաստեր, թե սպանությունները կանխամտածված են եղել:

179. Դատարանը նշում է, որ իրեն անհրաժեշտ են համոզիչ փաստեր, որպեսզի եզրակացնի, թե եղել է նախապես մտածված ծրագիր՝ այն իմաստով, ինչ պնդում են դիմողները:

180. Իրեն ներկայացված նյութի ուսումնասիրությամբ դատարանը հաստատված չի համարում, որ գոյություն է ունեցել մահապատժի մտադրություն է եղել պաշտպանության նախարարության կամ կառավարության բարձրագույն մակարդակներում, կամ որ զինվորներ Ա-ին, Բ-ին, Գ-ին և Դ-ին նման հրահանգներ են տվել կամ ոգևորել վերադաս սպաները, որոնք գործողությունից առաջ նրանց հրահանգավորել են, կամ զինվորներն իրականում իրենք են որոշել իրենց սեփական նախաձեռնությամբ սպանել կասկածյալներին՝ չենթարկվելով ձերբակալության մասին տրված ցուցումներին, անկախ այն հանգամանքից՝ կա՞ր որևէ արդարացում մահացու զենք կիրառելու համար, թե՞ ոչ: Չկան

նաև փաստեր, որոնք վկայեն այն մասին, թե իշխանություններն անուղղակի ձևով խրախուսել են կամ ակնարկներ ու նշաններ են տվել զինվորներին՝ սպանելու կասկածյալներին:

181. Դիմողների բերած փաստարկները ենթադրություններ են, թե իշխանությունները տեղյակ են եղել, որ ավտոմեքենայի մեջ ռումբ չկա: Այդուհանդերձ, հաշվի առնելով հետախուզության ստացած տվյալները, երեք ահաբեկիչների հայտնի բնութագրերն առ այն, որ բոլորն էլ նախկինում զբաղվել են պայթուցիկներով, ինչպես նաև այն փաստը, որ հետևողները տեսել են, թե ինչպես նախքան մեքենայից հեռանալը պարոն Սևիջը մեքենայի մեջ ինչ-որ բան է փորփրել…, այն կարծիքը, թե մեքենայի մեջ ռումբ կարող էր լինել, չի կարելի բնութագրել որպես լիովին անհավանական կամ բացարձակապես անհիմն:

182. Մասնավորապես, կասկածյալներին Ջիբրալթար մուտք գործելու հնարավորություն տալը, որքան էլ այն քննադատելի լինի վտանգավորության առումով, կատարվել է Խորհրդակցական խմբի մշակած ձերբակալության քաղաքականության շրջանակներում, համաձայն որի՝ կասկածյալների չպետք է ձերբակալվեին, քանի դեռ երեք կասկածյալները չէին հայտնվի Ջիբրալթարում, և չէին լինի բավարար չափով վկայություններ պայթեցման ծրագրի մասին, որպեսզի մեղադրանքն անհիմն չլիներ…

183. Դատարանը չի կարող ընդունել նաև դիմողների այն պնդումը, թե ՀՕԾ-ի ուժերի կիրառումն ինքնին վկայում է, որ կասկածյալների սպանությունը մտադրված է եղել: Այդ կապակցությամբ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՕԾ-ը հատուկ ստորաբաժանում է, որը մասնագիտական ուսուցում է ստանում ահաբեկչության դեմ պայքարի գործում: Հետևաբար, բնական է, որ ահաբեկչական հարձակման մասին կանխավ տեղեկանալով՝ իշխանությունները ստիպված են եղել դիմելու ՀՕԾ-ի՝ որպես վտանգը վնասազերծող ամենաապահով և իրազեկ ստորաբաժանման հմտությանն ու փորձառությանը:

184. Ուստի դատարանը մերժում է դիմողների չհիմնավորված հայտարարություններն այն մասին, թե կասկածյալների սպանությունը կանխամտածված է եղել կամ կատարվել է գործողություններում ներգրավված կողմերի լուռ համաձայնությամբ:

3. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

(ա) Դատարանում հանդես եկող կողմերի վիճարկումները

(1) Դիմողները

185. Դիմողները վիճարկում էին, որ դատարանի համար սխալ կլիներ գնահատումը սահմանափակել կասկածյալներին սպանող զինվորների հնարավոր արդարացմամբ, ինչպես դա արեց հանձնաժողովը: Դատարանը պետք է քննի կառավարության պատասխանատվության հարցը գործողության բոլոր տեսանկյուններից: Իհարկե, զինվորներն անկասկած կարդարացվեին քրեական դատավարության ընթացքում, եթե կարողանային ապացուցել, որ իրենք ազնվորեն հավատացել են այն անհիմն և կեղծ տեղեկությանը, որ տրվել է իրենց:

186. Սպա Ե-ն (հարձակման հրամանատարը) զինվորներին ասել է, որ Ջիբրալթարում երեք կասկածյալները մեքենայի մեջ ռումբ են տեղադրել, մինչդեռ զինվոր Զ-ն՝ ականազերծման մասնագետը, զեկուցել է, որ դա ընդամենը կասկած է, դա հեռակառավարման ռումբ է, կասկածյալներից յուրաքանչյուրը կարող է գործի դնել այն ընդամենը ակտիվացման կոճակը սեղմելով՝ գտնվելով Ջիբրալթարի ցանկացած կետում, և վտանգի պահին նրանք չեն հապաղի այդ անել: Իրականում այդ «որոշակիություններն» ու «փաստերը» ոչ ավելին էին, քան կասկածներ կամ, լավագույն դեպքում, երկիմաստ գնահատականներ: Այդուհանդերձ, դրանք՝ որպես հավաստի փաստեր, ներկայացվել են զինվորներին, որոնց ոչ միայն սովորեցրել են կրակ բացել վտանգի ամենաթեթև ակնարկի դեպքում, այլև, ինչպես պարզ դարձավ դատավարության ընթացքում հնչած վկայություններից, շարունակել կրակել մինչև թիրախի լիարժեք ոչնչացումը:

Որպես ամփոփում՝ դիմողները պնդում էին, որ սպանությունները կասկածյալների ձերբակալման հակաահաբեկչական գործողության անհրաժեշտ և անփույթ ծրագրման և իրականացման հետևանք էին, ինչպես նաև առաջացած վտանգին դիմակայելու և կասկածյալների կյանքի իրավունքի միջև համապատասխան հավասարակշռությունը պահպանելու ձախողված փորձ:

(2) Կառավարությունը

187. Կառավարությունը հայտարարում էր, որ զինվորների գործողությունները միանգամայն անհրաժեշտ էին «ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար», ինչպես սահմանված է կոնվենցիայի 2.2(ա) հոդվածով: Զինվորներից յուրաքանչյուրը պարտավոր էր վայրկենական որոշում կայացնել, որից կախված էր շատ մարդկանց կյանքը: Նրանք հավատացած էին, որ կասեցման պահին կասկածյալների կատարած շարժումներն այն տպավորությունն էին ստեղծել, թե ահաբեկիչները պատրաստվում են ակտիվացնել ռումբը: Նրանց ցուցմունքները հաստատեցին նաև այլ վկաներ, որոնք ականատես էին եղել այդ շարժումներին: Եթե ընդունենք, որ զինվորներն

ազնվորեն և ողջամտորեն հավատում էին, որ այն կասկածյալները, որոնց վրա իրենք կրակ էին բացել, պատրաստվում էին ակտիվացնելու ռումբը՝ կոճակը սեղմելով, ապա նրանց այլընտրանք չէր մնում, քան կրակ բացելը:

188. Կառավարությունը մատնանշեց նաև, որ իշխանություններին հայտնի դարձած տեղեկությունների մեծ մասը, ինչպես նաև նրանց դատողությունները դատաքննության ընթացքում հաստատվեցին: Երեք սպանվածները կազմում էին ԻՀԲ-ի ակտիվ ծառայության ստորաբաժանումներից մեկը, որը ծրագրում էր Ջիբրալթարում գործողություն իրականացնել: Նրանք իրենց տրամադրության տակ ունեին մեծ քանակությամբ պայթուցիկ նյութ, որը հետագայում հայտնաբերվեց Իսպանիայում, իսկ նրանց գործողության բնույթը մեքենայում տեղադրված ռումբն էր: Հետևաբար, Ջիբրալթարում գտնվողների կյանքին սպառնացող վտանգն իրական էր և շատ լուրջ:

189. Այնուհետև կառավարությունը հայտարարեց, որ հակաահաբեկչական գործողության ծրագրման հարցը քննելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ հետախուզության գնահատականներն անպայման հիմնված են լինում ոչ լիարժեք տեղեկության վրա, քանզի ամբողջական պատկերի միայն առանձին հատվածներ են հայտնի լինում: Ավելին, փորձը ցույց է տվել, որ հակահետախուզության ոլորտում ԻՀԲ-ն ծայրահեղ անգութ և հմտացած է և ամեն ինչ անում է՝ իշխանություններից իր մտադրությունները գաղտնի պահելու համար: Ի լրումն ասվածի՝ Հյուսիսային Իռլանդիայի փորձը ցույց է տվել, որ ԻՀԲ-ն շարունակաբար և արագորեն մշակում է նոր տեխնոլոգիաներ, ուստի իշխանությունները պետք է հաշվի առնեին այն հնարավորությունը, որ ահաբեկիչները կարող են զինված լինել առավել ժամանակակից և հեշտությամբ կոծկվող ռադիոկառավարման սարքերով, քան ԻՀԲ-ի կողմից նախկինում օգտագործված հայտնի սարքերը: Եվ, վերջապես, ակտիվ ծառայության ստորաբաժանման գործողությունների սպառնալիքի թերագնահատումը կարող էր պարզապես աղետալի հետևանքներ ունենալ: Եթե նրանք գործի դնեին Իսպանիայում գտնված պայթուցիկի տեսակի և չափի ռումբ, ապա ավտոկայանում գտնվող բոլոր մարդիկ կսպանվեին կամ կխեղվեին, իսկ շրջակայքի շենքերին ու շինություններին, որոնց թվում մի դպրոց կար և մի ծերանոց, հսկայական վնասներ կհասցվեին:

190. Գործողության ընթացքում հետախուզության գնահատականները ողջամիտ էին՝ իշխանություններին հասանելի տեղեկատվության անխուսափելի սահմանափակության և ահաբեկիչների ուժերն ու միջոցները թերագնահատելու պոտենցիալ աղետալի հետևանքների առումով: Այդ կապակցությամբ կառավարությունն արեց հետևյալ դիտարկումները.

- Համարվում էր, որ օգտագործվելու է հեռակառավարմամբ սարք, որովհետև այն ահաբեկիչներին փախուստի ավելի մեծ հնարավորություն կտար և առավելագույնի կհասցներ զինվորականների զոհվելը՝ համեմատած քաղաքացիական բնակչության հետ: Ավելին, ԻՀԲ-ն նմանատիպ սարք գործի է դրել Բրյուսելում դեպքից ընդամենը մի քանի շաբաթ առաջ:

- Ենթադրվում էր, որ դատարանին ներկայացված հեռակառավարման սարքի տիպի ցանկացած սարք բավական փոքր չափսեր ունի, որպեսզի մարդը կարողանա այն գաղտնի կրել իր վրա: Զինվորները նման ռադիոսարքավորումները հեշտությամբ կրում են իրենց վրա:

- Ինչպես դատավարության ընթացքում նշեց կապիտան Էդվարդսը, կատարված փորձաքննությունը ցույց է տվել, որ ավտոկանգառում կայանված մեքենայում տեղադրված ռումբը կարող էր ակտիվացվել այն կետից, որտեղ սպանվել էին ահաբեկիչները: …

- Փորձը պարզորոշ կերպով ցույց է տվել, որ ահաբեկիչների դետոնատոր սարքերը կարող են գործի դրվել՝ սեղմելով կոճակը:

- Ինչպես դատաքննության ժամանակ բացատրեց վկա O-ն, «խանգարող մեքենան» կարող էր պետք չգալ, քանի որ ըստ սպասելիքների՝ ահաբեկիչների համար չպետք է դժվարություն ներկայացներ մարտի 8-ին ազատ տեղ ճարելը: Բացի այդ, դա վտանգավոր էր, որովհետև դրա համար անհրաժեշտ կլիներ երկու անգամ Ջիբրալթար գալ, իսկ դա կմեծացներ հայտնաբերվելու հավանականությունը …

- Հիմքեր չկան կասկածի տակ առնելու զինվոր Զ-ի բարեխղճությունն այն հարցում, որ նա մեքենայում ռումբի տեղադրման կասկած է ունեցել: Նախ՝ նրա ցուցմունքն այն մասին էր, որ ինքը քաջ ծանոթ է մեքենայի ռումբերին: Ավելին, ահաբեկիչների ավտոմեքենան կայանում էր հայտնի ռումբ պատրաստողը՝ Սևիջը, որին տեսել էին նստելատեղերի արանքում ինչ-որ բան փնտրելիս, իսկ մեքենայի ալեհավաքը տեղաշարժված էր: Փորձից հայտնի է, որ ԻՀԲ-ի ռումբերն ունեն հատուկ ձևով տեղադրվող ալեհավաքներ, և արտաքին զննում կատարելուց հետո զինվոր A-ն չէր կարող վստահությամբ ասել, որ մեքենայի մեջ ռումբ չկա: … Ավելին, երեք կասկածյալներն էլ կարծես պատրաստվում էին հեռանալ Ջիբրալթարից: Եվ, վերջապես, մեքենայի շրջակա տարածքի արգելափակման գործողությունը սկսվեց վերը նկարագրված գնահատումն անցկացնելուց 20 րոպե անց առկա աշխատուժի անբավարարության և այն պատճառով, որ մինչև մարտի 7-ը կամ 8-ը մարդկանց տարհանման ծրագիր նախատեսված չի եղել:

- Իշխանությունների համար անհերելի անփութություն կլիներ ընդունել, որ վտանգի առկայության պարագայում ահաբեկիչները ռումբը չէին պայթեցնի: ԻՀԲ-ն իր նպատակներին խորապես նվիրված ահաբեկչական կազմակերպություն է, որն իր տեսանկյունից պատերազմի մեջ է եղել Մեծ Բրիտանիայի հետ, և որի անդամները պատրաստ են առանց մտածելու զոհաբերելու սեփական կյանքը: Իրական վտանգ կար, որ եթե նրանք կանգնեին մարդկային

զոհերով պայթյունն իրականացնելու և պայթյունն առհասարակ չիրականացնելու ընտրության առջև, նրանք կընտրեին առաջինը:

(3) Հանձնաժողովը

191. Հանձնաժողովը կարծում է, որ հաշվի առնելով Ջիբրալթարում զինվորականների՝ մարդկանց կյանքին սպառնացող վտանգի գնահատումը, երեք կասկածյալների սպանությունը կարելի է համարել մարդկանց անօրինական բռնությունից պաշտպանելու բացարձակ անհրաժեշտություն: Հանձնաժողովը եզրակացրել է, որ հաշվի առնելով այն հնարավորությունը, որ կասկածյալներն իրենց հետ բերել են մեքենայի ռումբ, որի պայթյունը մարդկային զոհերի պատճառ կարող էր դառնալ, ինչպես նաև այն հնարավորությունը, որ կասկածյալները կկարողանային ռումբը գործարկել զինվորներին հանդիպելիս, գործողության ծրագրման ու իրականացման գործընթացներում չի բացահայտվել իշխանությունների մտածված ծրագիր կամ պատշաճ ուշադրության բացակայություն, որը կարող էր հանգեցնել կյանքեր փրկելու նպատակին չհամապատասխանող մահացու զենքի կիրառմանը:

(բ) Դատարանի գնահատականը

(1) Նախնական դատողություններ

192. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ իր ուսումնասիրությունն իրականացնելիս դատարանը պետք է հաշվի առնի, որ ստանալով տեղեկություն Ջիբրալթարում պատրաստվող ահաբեկչական հարձակման մասին՝ Միացյալ Թագավորության իշխանությունները կանգնել են լուրջ երկընտրանքի առջև: Մի կողմից՝ նրանք պետք է հարգեին իրենց պարտականությունը և մտածեին մարդկանց, այդ թվում նաև՝ իրենց ռազմական անձնակազմի կյանքը պաշտպանելու մասին, մյուս կողմից՝ ելնելով ազգային և միջազգային օրենքներից, պետք է նվազագույնս կիրառեին մահացու զենքն այն մարդկանց դեմ, որոնք մարմնավորում էին այդ սպառնալիքը:

193. Անհրաժեշտ է հաշվի առնել էլի մի շարք գործոններ: Նախ՝ իշխանությունների դեմ էր դուրս եկել ԻՀԲ-ի ակտիվ ծառայության ստորաբաժանումներից մեկը, որի կազմում եղած անձինք, այդ թվում նաև՝ պայթյունների հայտնի փորձագետը, նախկինում դատապարտվել են ռումբերի պայթեցման համար: Անցյալում ԻՀԲ-ի կողմից իրականացված գործողությունները ցույց են տալիս, որ այդ կազմակերպության անդամները մարդկային կյանքը չեն արժևորում, նաև իրենց կյանքը:

Երկրորդ՝ իշխանությունները կանխավ տեղեկացված են եղել պատրաստվող ահաբեկչության մասին, ուստի բավական ժամանակ են ունեցել ծրագրելու իրենց գործողությունները և համակարգելու դրանք Ջիբրալթարի իշխանությունների հետ, որպեսզի կանխեն հարձակումը և ձերբակալեն կասկածյալներին: Սակայն անվտանգության ծառայությունը լիարժեք տեղեկություն չուներ և իր գործողությունները ստիպված էր ծրագրել թերի ենթադրությունների հիման վրա:

194. Վերն ասվածը նկատի առնելով, որոշելու համար՝ ուժի գործադրումը համապատասխանո՞ւմ է կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջներին, դատարանը, ինչպես նշվեց վերը, պետք է ուշադրությամբ քններ ոչ միայն այն հարցը, թե զինվորների կողմից կիրառված ուժը արդյոք խստորեն համապատասխանե՞լ է մարդկանց անօրինական բռնությունից պաշտպանելու նպատակին, այլև այն հարցը, թե արդյոք հակաահաբեկչական գործողությունները ծրագրվել և վերահսկվե՞լ են իշխանությունների կողմից՝ հնարավորինս նվազեցնելու համար մահացու ուժի կիրառումը: Դատարանը հերթականությամբ կդիտարկի այդ խնդիրները:

(2) Զինվորների գործողությունները

195. Մտաբերենք, որ կրակ բացող զինվորները (Ա-ն, Բ-ն, Գ-ն և Դ-ն) տեղեկացվել էին իրենց վերադասի կողմից, որ մեքենայի մեջ տեղադրված է ռումբ, այն կասկածյալներից յուրաքանչյուրը կարող է գործի դնել ռադիոկառավարման սարքի միջոցով, որը թաքցված է նրանց մարմինների վրա, այդ սարքը կարող է ակտիվացվել կոճակի սեղմումով, կասկածյալներն ամենայն հավանականությամբ ռումբը կպայթեցնեն, եթե փորձեն նրանց խանգարել՝ հանգեցնելով մարդկային զոհերի և լուրջ վնասվածքների, և կասկածյալները հավանաբար զինված են և ձերբակալելիս դիմադրություն ցույց կտան …

196. Ինչ վերաբերում է պարոն Մակքենի և տիկին Ֆառելի սպանությանը, ապա դատարանը նկատի է առնում հանձնաժողովի եզրակացությունն այն մասին, որ նրանց վրա կրակ է բացվել մոտ տարածությունից, երբ զինվորներ Ա-ն և Բ-ն նկատել են, որ նրանք ձեռքերով կասկածելի շարժումներ են անում, կարծես պատրաստվում են ակտիվացնել ռումբը… Փաստերը վկայում են, որ նրանց վրա կրակել են գետնին ընկնելիս, ոչ թե գետնի վրա պառկած վիճակում: Չորս վկաներ իրենց ցուցմունքներում նշել են, որ հնչել է նախազգուշական կանչ: …Սպա Պ-ն հաստատել է կասկածյալների ձեռքի շարժումների մասին զինվորների վկայությունը: Սպա Ք-ն և ոստիկան Պարոդին նույնպես հաստատել են, որ տիկին Ֆառելը հանկարծակի կասկածելի շարժում է արել դեպի իր ձեռքի պայուսակը …

197. Ինչ վերաբերում է պարոն Սևիջի սպանությանը, ապա ցուցմունքները վկայում են, որ «Shell» ավտոսպասարկման կետի մոտ հնչած կրակոցների (Մակքեն և Ֆառել) և Լանդպորտ թունելի մոտ (Սևիջ) հնչած կրակոցների միջև մի քանի վայրկյանի տարբերություն է եղել: Հանճնաժողովն անհավանական է համարել, որ զինվորներ Գ-ն և Դ-ն ականատես են եղել առաջին երկու սպանություններին նախքան պարոն Սևիջին հետևելը, որը շրջվել է՝ լսելով ոստիկանական մեքենաների ազդանշանի կամ կրակոցների ձայնը …

Զինվոր Գ-ն պարոն Սևիջի վրա կրակ է բացել, որովհետև վերջինս աջ ձեռքը տարել է դեպի բաճկոնի գրպանը՝ դրանով կասկած առաջացնելով, որ պատրաստվում է ակտիվացնել ռումբը: Բացի այդ, զինվոր Գ-ն ինչ-որ ուռուցիկ բան էր նկատել նրա գրպանում, որը, նրա կարծիքով, դետոնացիայի հաղորդիչն էր: Դեպքի մասին զինվորների ցուցմունքները որոշ չափով հաստատել են վկաներ Հ-ն և Ջ-ն, որոնք տեսել են, թե ինչպես է պարոն Սևիջը շրջվել ոստիկանական ազդանշանների կամ առաջին կրակոցի ձայնը լսելիս …

Հանճնաժողովը եզրակացրել է, որ պարոն Սևիջի վրա կրակ է բացվել մոտ տարածությունից այն պահին, երբ նա ընկել է գետնին և, թերևս, ընկնելիս կամ ընկնելուց հետո… Այդ եզրակացությունը դատաքննության ժամանակ հաստատել է ախտաբանը …

198. Հետագայում պարզվել է, որ կասկածյալներն անզեն են եղել, նրանք չեն ունեցել դետոնացման սարք, և մեքենայում ռումբ չի եղել …

199. Չորս զինվորներն ընդունել են, որ կրակել են սպանելու նպատակով: Նրանք համարել են, որ անհրաժեշտ է կրակել կասկածյալների վրա, որպեսզի ի վիճակի չլինեն ակտիվացնելու պայթուցիկ սարքը …

200. Դատարանն ընդունում է, որ զինվորներն ազնվորեն հավատացել են, իրենց տրված տեղեկություններից ելնելով, ինչպես նշվեց վերը, որ անհրաժեշտ է կրակել կասկածյալների վրա, որպեսզի նրանք չկարողանան ակտիվացնել ռումբը և սպառնալ մարդկանց կյանքին … Վերադասից ստացված հրամանի համաձայն իրենց կատարած գործողությունները նրանք ընկալել են որպես անմեղ կյանքեր փրկելու անհրաժեշտություն:

Դատարանը կարծում է, որ կոնվենցիայի 2(2) հոդվածում նշված նպատակներից ելնելով՝ պետության գործակալների կողմից ուժի գործադրումը կարող է արդարացվել այդ դրույթով, եթե այն հիմնված է անկեղծ հավատի վրա, որն այդ պահին ճշմարիտ է թվում, սակայն հետագայում սխալ է դուրս գալիս: Այլ կերպ մտածելն անհիրատեսական բեռ կդներ պետության և նրա իրավապահ մարմինների անձնակազմի վրա՝ պարտքը կատարելու ընթացքում վտանգի տակ դնելով նրանց, ինչպես նաև ուրիշների կյանքը:

Սրանից հետևում է, որ տվյալ պայմաններում իշխանությունների առջև ծառացած երկընտրանքը հաշվի առնելով՝ զինվորներն ինքնին չեն խախտել 2(2)-ի պահանջները:

201. Այդուհանդերձ, հարց է ծագում՝ հակաահաբեկչական գործողությունն ամբողջությամբ վերահսկվել և կազմակերպվե՞լ է այնպես, որ պահպանվեն 2-րդ հոդվածի պահանջները, և զինվորներին տրված ցուցումներն ու հրահանգները, որոնք ի վերջո անխուսափելի են դարձրել մահացու ուժի կիրառումը, պատշաճ կերպով հաշվի՞ էին առել երեք կասկածյալների կյանքի իրավունքը:

(3) Գործողության վերահսկումն ու կազմակերպումը

202. Դատարանը նախ և առաջ նշում է, որ ոստիկանության հանձնակատարի տված հրամանից երևում է, որ իշխանությունների նպատակը կասկածյալներին հարմար պահի ձերբակալելն է եղել: Բացի այդ, դատավարության ժամանակ հնչած ցուցմունքները վկայում են, որ մինչև մարտի 6-ը զինվորները յուրացրել են ձերբակալման ընթացակարգերը, և փորձեր են արվել Ջիբրալթարում համապատասխան վայր գտնելու ուղղությամբ, որտեղ ձերբակալությունից հետո պետք է պահվեին կասկածյալները …

203. Հարց կարող է առաջանալ, թե ինչու երեք կասկածյալները չձերբակալվեցին սահմանում, Ջիբրալթար մուտք գործելուց անմիջապես հետո, և ինչու (ինչպես հայտնի դարձավ տեսուչ Ուլգերի տված ցուցմունքներից) որոշում կայացվեց չկասեցնել նրանց մուտքը Ջիբրալթար, եթե կասկածներ կային, որ նրանք գալիս են ռմբակոծման առաջադրանքով: Չէ՞ որ նախօրոք իմանալով ահաբեկիչների մտադրությունների մասին՝ իշխանությունները, անշուշտ, կկարողանային ձերբակալման գործողություն իրականացնել: Չնայած այն հանգամանքին, որ նրանց փոքր-ինչ զարմացրել էր երեք կասկածյալների վաղ ժամանումը, նրանք սահմանին ունեին հսկողություն իրականացնող խումբ, իսկ ձերբակալման խումբն սպասում էր մոտերքում … Բացի այդ, անվտանգության ծառայությունը և Իսպանիայի իշխանություններն ունեին երեք կասկածյալների լուսանկարները, գիտեին նրանց անուններն ու մականունները, ինչպես նաև անձնագրային տվյալները …

204. Այդ հարցերին կառավարությունը պատասխանել է, որ այդ պահին կասկածյալների ձերբակալության և դատելու համար բավարար հիմքեր չկային: Իսկ ձերբակալել նրանց, հետո ազատ արձակել՝ հնարավորություն տալով, որ նոր փորձեր ձեռնարկեն, կնշանակեր զգոնացնել նրանց և ուրիշներին, որ իշխանությունները տեղյակ են իրենց մասին, որն

ինքնին կմեծացներ վտանգը: Բացի այդ, իշխանությունները չէին կարող համոզված լինել, որ բացի այդ երեքից, այլ ահաբեկիչներ ներգրավված չեն առաջադրանքի մեջ, ինչպես նաև չգիտեին, թե ինչ եղանակով է կատարվելու պայթյունը:

205. Այդ կապակցությամբ դատարանը սահմանափակվում է՝ նշելով, որ կասկածյալների մուտքը Ջիբրալթար չկանխելով՝ Ջիբրալթարի բնակչությանը սպառնացող վտանգը (որն այս գործում կառավարության ներկայացրած վկայությունների առանցքն է) ավելի մեծ էր, քան կասկածյալներին առանց բավարար հիմքերի ձերբակալելու և դատելու հետևանքները: Դատարանի կարծիքով՝ իշխանությունները կա՛մ տեղյակ էին, որ մեքենայում ռումբ չկա, որը դատարանն արդեն անընդունելի է համարել, … կա՛մ գործողության վերահսկման համար պատասխանատու անձինք լուրջ սխալ են թույլ տվել իրենց հաշվարկներում: Արդյունքում ընտրվել է գործողությունների վայրը, որտեղ մահացու հրազենի կիրառումը (հաշվի առնելով հետախուզության տված գնահատականները) դիտվում էր որպես կանխատեսելի հնարավորություն, եթե ոչ հավանականություն:

Այսպիսով, երեք կասկածյալներին Ջիբրալթարի տարածք թողնելն այս առումով կարևոր հանգամանք է, որ պետք է հաշվի առնվի:

206. Դատարանն այնուհետ նշում է, որ գործողությունից առաջ՝ մարտի 5-ին, անցկացվել է զինվորների հրահանգավորում, որին մասնակցել են զինվորներ Ա-ն, Բ-ն, Գ-ն և Դ-ն: Այդ ընթացքում արվել են մի շարք առանցքային կանխատեսումներ, մասնավորապես, որ ահաբեկիչներն ամենայն հավանականությամբ «խանգարող մեքենա» չեն օգտագործելու, ռումբը կարող է ակտիվացվել կոճակի սեղմումով, կասկածյալներն ամենայն հավանականությամբ ռումբը կպայթեցնեն, եթե նրանց փորձեն խանգարել, կասկածյալները հավանաբար զինված են և ձերբակալելիս դիմադրություն ցույց կտան…

207. Հետագայում պարզվեց, որ այդ վճռական ենթադրությունները սխալ են, բացի ահաբեկիչների՝ հարձակում կատարելու մտադրությունից: Այդուհանդերձ, վկայակոչելով ԻՀԲ-ի նախկին փորձը, կառավարությունն ապացուցել է, որ բոլորն էլ հնարավոր վարկածներ են եղել մի իրավիճակում, երբ իրական փաստերն անհայտ են, իսկ իշխանությունները գործում են հետախուզության տրամադրած սահմանափակ տեղեկատվության հիման վրա:

208. Իսկ այլ ենթադրություններին իրականում բավականաչափ ուշադրություն չի դարձվել: Օրինակ, քանի որ ռումբի պայթեցումը չէր ակնկալվում նախքան մարտի 8-ը, երբ կատարվելու էր պահակազորի հերթափոխը, ապա հավասարապես հավանական է, որ կասկածյալների ժամանումը հետախուզական նպատակ է ունեցել: Թեև այդ գործոնը թռուցիկ դիտարկվել է, դրան ամենայն հավանականությամբ լուրջ ուշադրություն չի դարձվել…

Բացի այդ, հրահանգների ժամանակ կամ այն պահին, երբ կասկածյալները երևացել են, գուցեև անհավանական է թվացել, որ նրանք պատրաստվում են, քաղաքացիական բնակչությանը զոհելով, ռումբ պայթեցնել, քանզի պարոն Մակքենը և տիկին Ֆառելը, հանգիստ քայլելով, մոտեցել են սահմանին, թեև դա պետք է որ մեծացներ նկատվելու և ձերբակալվելու ռիսկը: …Գուցեև անհավանական է թվացել նաև այն փաստը, որ այդ պահին նրանք արդեն պատրաստած կլինեն ռադիոհաղորդիչը, որպեսզի հնարավորություն ունենան անմիջապես գործարկել ռումբը, եթե դիմադրության հանդիպեն:

Ավելին, եթե նույնիսկ ընդունենք ԻՀԲ-ի զարգացած տեխնիկական հմտությունները, դետոնատորի բնութագրումը՝ «կոճակով աշխատող սարք», առանց համապատասխան հմտությունների անհրաժեշտության, որոնց մասին հետագայում դատավարության ժամանակ խոսեցին փորձագետները (իսկ իրազեկ մարմիններն այդ մասին պետք է որ տեղյակ լինեին), չափազանց պարզունակ բնութագիր է նման սարքերի իրական նկարագիրը ներկայացնելու համար:

209. Այդ համատեքստում բավական մտահոգիչ է այն փաստը, որ մեքենայի թռուցիկ արտաքին զննումից հետո զինվոր Զ-ն զեկուցել է, որ «կասկածում է, որ մեքենայում ռումբ կա», իսկ դա զինվորներին փոխանցվել է (ինչպես նրանք նշեցին իրենց ցուցմունքներում) որպես հստակ հաստատում, որ մեքենայի մեջ ռումբ կա: … Հիշեցնենք, որ թեև զինվող Զ-ն որոշակի փորձ ուներ մեքենայի մեջ տեղադրվող ռումբերի առնչությամբ, պարզվեց, որ նա ռադիոհաղորդիչների կամ պայթուցիկների մասնագետ չէ: Նրա կասկածն այն մասին, որ մեքենայում կարող է ռումբ լինել, որը հիմնված էր ալեհավաքի տեղաշարժված լինելու փաստի վրա, ավելի շատ հուշում էր, որ մեքենայում ռումբի առկայության հնարավորությունը չպետք է բացառել …

210. Այլընտրանքային հնարավորությունների բավարար ուսումնասիրության բացակայության պարագայում և արտաքին զննումից հետո մեքենայում կոճակի սեղմումով գործի դրվող ռումբի գտնվելու մասին հստակ զեկույցի հիման վրա արված մի շարք ենթադրություններ զինվորներ Ա-ին, Բ-ին, Գ-ին և Դ-ին հաղորդվել են որպես հաստատված փաստեր՝ այդպիսով գրեթե անխուսափելի դարձնելով մահացու ուժի կիրառումը:

211. Այդուհանդերձ, սխալականության սահմանը որոշելու ձախողման փաստն անհրաժեշտ է դիտարկել նաև զինվորների ուսուցման բնույթի հետ մեկտեղ, որի ընթացքում նրանց սովորեցրել են կրակել այնքան ժամանակ, քանի դեռ կասկածյալը չի մահացել: Ինչպես նշեց սպանությունների գծով քննիչը երդվյալներին ուղղված իր խոսքում, բոլոր զինվորներն էլ կրակել են սպանելու մտադրությամբ: Զինվոր Ե-ն ցուցմունք տվեց, որ զինվորների հետ քննարկվել է այն

հարցը, որ մեծ է հավանականությունը, որ անհրաժեշտ կլինի կրակել սպանելու նպատակով, քանի որ օգտագործվելու է կոճակով միացվող պայթուցիկ, և ժամանակը շատ քիչ է լինելու … Այդ ամենը նկատի առնելով՝ իշխանությունները պարտավոր էին հարգել կասկածյալների կյանքի իրավունքը և մեծագույն զգուշությամբ գնահատել իրենց տրամադրության տակ եղած տեղեկությունը նախքան այն զինվորներին հաղորդելը, որոնց համար հրազենի օգտագործումն ինքնաբերաբար ենթադրում է կրակել սպանելու նպատակով:

212. Թեև դատաքննության ժամանակ հանրային շահի բացահայտման տեղեկանքներով թույլ չի տրվել հանգամանալից քննել զինվորների ուսուցման հարցը, … այդուամենայնիվ պարզ չէ՝ զինվորներն անցե՞լ են ուսուցում կամ հրահանգավորում, թե ինչպես պետք է որոշել՝ քիրախի վիրավորման նպատակով հրազենի կիրառումը հիմնավորվո՞ւմ է ձերբակալման որոշակի հանգամանքներով:

Նման կենսականորեն կարևոր հարցում ռեֆլեքսային գործողությունները վկայում են հրազենի կիրառման ժամանակ զգուշավորության ցածր մակարդակի մասին, որն անհարիր է ժողովրդավարական հասարակությունում գործող իրավապահ մարմիններին, եթե անգամ գործ ունենք վտանգավոր ահաբեկիչ կասկածյալների հետ: Դա հակասում է նաև ոստիկանության կողմից հրազենի օգտագործման ցուցումներում արտացոլված զգուշավորության գաղափարին (դրա վրա հրավիրվեց նրանց ուշադրությունը), որը շեշտում է անհատ ոստիկանների իրավական պատասխանատվությունը տվյալ պահին գերիշխող պայմաններում …

Իշխանությունների կողմից թույլ տրված այս բացթողումը վկայում է նաև ձերբակալման գործողության վերահսկման և կազմակերպման գործընթացում պատշաճ հոգատարության բացակայության մասին:

213. Ամփոփելով նշենք, որ հաշվի առնելով այն հանգամանքները, որ չի կասեցվել կասկածյալների ժամանումը Ջիբրալթար, իշխանությունները հաշվի չեն առել այն հնարավորությունը, որ իրենց հետախուզության տվյալները որոշ առումներով առնվազն կարող են սխալ լինել, զինվորները կրակ են բացել ուղղակի սպանելու մտադրությամբ, դատարանը բավարար չափով չի համոզվել, որ երեք ահաբեկիչների սպանությունը կատարվել է այնպիսի ուժի գործադրմամբ, որը խիստ անհրաժեշտ է եղել անձանց անօրինական բռնությունից պաշտպանելու նպատակով, ինչպես սահմանված է կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետի (ա) ենթակետում:

214. Հետևաբար, դատարանը համարում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

Տասը կողմ և ինը դեմ ձայներով որոշում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում:

…

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին դատավորներ Ռուսոն, Շպիլմանը, Վալտիկոսը, Մորինիյան, Լոպես Ռոշան, Միֆսուդ Բոնիճին, Մակարչիկը, Ռեպիկը, Կուրիսը և Լոհմուսը:

2 Չհամընկնող կարծիք ունեցող դատավորները (նախագահ Ռիսդալը և դատավորներ Բերնհարդտը, Տոիր Վիլջաուլմսոնը, Գյոլչյուքլուն, Փալմը, Փեքանենը, Ֆրիլանդը, Բական և Զեմբրեկը) միասին անհամաձայնության եզրակացություն տվեցին: Նրանք համաձայն չէին հակաահաբեկչական գործողության ծրագրման և վերահսկման վերաբերյալ մեծամասնության գնահատականին:

8. Նախքան վճռում քննադատվող գործողությունների զանազան կողմերին անդրադառնալը կցանկանայինք շեշտել ընդհանուր բնույթի երեք հարց:

Նախ՝ գործողության կազմակերպումն ու վերահսկումը գնահատելիս դատարանը պետք է ջանադրաբար դիմադրի հետահայաց մոտեցման նպատակահարմարության գայթակղությանը: Իշխանություններն այդ ժամանակ պետք է ծրագրեին գործողությունը և որոշումներ կայացնեին ոչ լիարժեք տեղեկատվության հիման վրա: Միայն կասկածյալները ճշգրտորեն գիտեին, թե ինչ են մտադիր անել: Նրանց նպատակն էր, ինչպես նաև, անկասկած, նրանց պարապմունքների նպատակը, որ իրենց մտադրությունները հնարավորինս քիչ բացահայտվեն: Հետադարձ հայացք ձգելով անցյալի իրադարձություններին՝ սխալ կլիներ եզրակացնել, որ մի ուղին (ինչպես հետագայում պարզվեց) ավելի լավը կլիներ, քան մյուսը, որն ընդունվել էր այդ պահին հակաահաբեկչական շարունակվող գործողության լարվածության պայմաններում, և այդ վերջին ուղին պետք է համարել հանցավոր սխալ: Չի կարելի այդ ձևով դիտարկել խնդիրը, բացառությամբ այն

դեպքերի, երբ հաստատվում է, որ տվյալ հանգամանքներում և տվյալ պահին նախընտրությունը պետք է տրված լիներ մեկ այլ ուղու:

9. Երկրորդ՝ իշխանությունները ստիպված էին գործել օրենքի սահմաններում, մինչդեռ կասկածյալները գործում էին այնպես, որ անվտանգության ուժերի ներկայացուցիչները դիտվում էին որպես թիրախ, իսկ դրա հետևանքով քաղաքացիական բնակչության շրջանում մահվան դեպքերն ու վնասվածքներն անխուսափելիորեն կասկածյալներին մարտավարական առավելություն կտային, որը չպետք է թույլ տրվեր: Ջիբրալթարի կենտրոնում հզոր պայթյունի հետևանքները կարող էին սոսկալի լինել, ուստի իշխանությունները չէին կարող վտանգի ենթարկել այդ ամենը և կասկածյալներին հնարավորություն տալ պայթեցնելու նման ռումբը: Իհարկե, կոնվենցիայի 2(1) հոդվածով Միացյալ Թագավորության պատասխանատվությունը ներառում էր նաև կասկածյալների կյանքի պաշտպանությունը, ինչպես նաև շատ այլ մարդկանց՝ քաղաքացիների ու զինվորականների կյանքի պաշտպանությունը, որոնք այդ պահին գտնվում էին Ջիբրալթարում: Սակայն, ի տարբերություն վերջինների, Ջիբրալթարում կասկածյալների ներկայության նպատակը քրեորեն պատժելի նախաձեռնության իրականացումն էր, որը կարող էր հանգեցնել բազմաթիվ անմեղ մարդկանց մահվան, եթե հաջողվեր: Իշխանությունները հայտնվել էին մի իրավիճակում, երբ մեծ վտանգ կար, որ կարող էր այդ երկու պարտավորությունների բախում ծագել:

10. Երրորդ՝ իշխանությունների վարքագիծը գնահատելիս դատարանը պետք է լիարժեք ուշադրություն նվիրի այն հանգամանքներին, որ (ա) կանխավ ստացվել էր տեղեկատվություն այն մասին, թե ԻՀԲ-ն մտադիր է Ջիբրալթարում ահաբեկչական լուրջ հարձակում իրականացնել ակտիվ ծառայության երեք հոգուց բաղկացած միավորի միջոցով և (բ) 1988 թ. հունվարի 21-ին Բրյուսելում հայտնաբերվել է (համաձայն դատավարության ընթացքում վկա O-ի կողմից տրված ցուցմունքների) մեքենա «Սեմտեքս» տեսակի պայթուցիկի մեծ քանակությամբ, չորս դետոնատորներով և ռադիոկառավարման համակարգով, սարք, որը լիովին հայտնի է Հյուսիսային Իռլանդիայում:

Հետևաբար, (ա) կետով լիովին արդարացված էր այն որոշումը, որ ի պատասխան ռազմական օգնության խնդրանքի՝ ստացված Ջիբրալթարի ոստիկանության հանձնակատարից, Ջիբրալթար պետք է ուղարկվեն ՀՕԾ-ի անդամները՝ մասնակցելու գործողությանը: Ճիշտ քայլ էր նաև այն ստորաբաժանման ընտրությունը, որի զինվորներն անցել էին հակաահաբեկչական արձագանքման պատրաստություն և կարող էին հաջողությամբ գործել փոքր խմբերով՝ դիմակայելու ԻՀԲ-ի ակտիվ ծառայության ստորաբաժանման սպառնալիքին, որն ազատ գործում էր Ջիբրալթարի պես խիտ բնակեցված վայրում, որտեղ անխուսափելի անհրաժեշտություն պետք է առաջանար հնարավորինս սահմանափակելու անցորդների պատահական մահվան և վնասվածքների հնարավորությունը:

1988 թ. մարտի 5-ին անցկացված մանրակրկիտ հրահանգավորումը … վկայում է այդ պահին հայտնի հանգամանքներում կատարված գնահատման խելամտությունը: Ջիբրալթարի ոստիկանության հանձնակատարի նույն օրն արձակած օպերատիվ կարգադրությունը հստակորեն արգելում էր պետք եղածից ավելի ուժի գործադրումը և պահանջում, որ զենքի կիրառման անհրաժեշտության դեպքում ցուցաբերվի զգուշավորություն մոտակայքում գտնվող մարդկանց նկատմամբ: Գործողության նպատակը բնութագրվում էր որպես կյանքի պաշտպանություն, ահաբեկչական հարձակման փորձի կասեցում, հանցագործների ձերբակալում և բանտարկյալների անվտանգ ու ապահով կալանավորում …

Այս ամենը վկայում է իշխանությունների ցուցաբերած պատշաճ հոգատարության մասին: Նույնն է վկայում նաև մարտի 6-ին հսկողության վերջնական փոխանցումը զինուժին …

11. Ինչ վերաբերում է վճռում հնչած քննադատություններին գործողության իրականացման վերաբերյալ, ապա դրանցից ամենակարևորը կասկածյալների մուտքը Ջիբրալթար թույլատրող որոշման արդարացիությունը կասկածի տակ առնելն է (պարբ. 203-205): 203-րդ պարբերությունում նշվում է, որ իշխանությունները, կանխավ տեղեկացված լինելով և իրենց տրամադրության տակ եղած միջոցներով, կարող էին «ձերբակալությունն իրականացնել» սահմանի վրա:

Սակայն դրանից հետո ոչինչ չի ասվում այն մասին՝ իշխանությունները կարո՞ղ էին ձերբակալել և կալանել կասկածյալներին գործողության այդ փուլում: Հազիվ թե, քանի որ, մեր կարծիքով, այդ պահին չէին կարող բավարար հիմքեր լինել նրանց կալանավորման և դատման նպատակով թույլտվություն ստանալու համար: Իսկ ազատ արձակել նրանց այն ժամանակ, երբ նրանք արդեն զգուշացված կլինեին իշխանությունների պատրաստականության մասին, կնշանակեր մեծացնել այն վտանգը, որ ԻՀԲ-ն կարող էր Ջիբրալթարի վրա նոր և առավել հաջող հարձակում իրականացնել: Ուստի մեզ հայտնի հանգամանքներում լուրջ «սխալ հաշվարկ» չէր այն, որ իշխանությունները հետաձգեցին ձերբակալումը, ոչ թե կանգնեցրին կասկածյալներին սահմանի վրա և հետ ուղարկեցին Իսպանիա:

12. Այնուհետև վճռի 206-րդ պարբերությունում թվարկվում են իշխանությունների արած «կարևորագույն գնահատումները», որոնք 207-րդ պարբերությունում համարվում են սխալ, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, թեև այդ գնահատականներն ընդունվել էին որպես հնարավոր վարկածներ այն հանգամանքներում, երբ իրական փաստերն անհայտ էին, իսկ իշխանություններն առաջնորդվում էին հետախուզության տրամադրած սահմանափակ տեղեկություններով: Ապա 208-րդ պարբերությունում շարունակվում է իշխանությունների գործողությունների քննադատությունը, նշվում է, որ իրականում այլ ենթադրություններին բավականաչափ ուշադրություն չի տրվել:

13. Ասվածը հիմնավորելու համար, որպես առաջին ապացույց, նշվում է, թե քանի որ ռումբի պայթեցումը չէր սպասվում նախքան մարտի 8-ը, … ապա հավասարապես հավանական է, որ կասկածյալների ժամանումը հետախուզական նպատակ է ունեցել:

Այդուհանդերձ, անշրջահայաց ոչինչ չկա, որ մարտի 5-ի հրահանգավորման ժամանակ զինվորներին ասվել է, թե Ջիբրալթար բերված մեքենան դժվար թե օգտագործվի որպես «խանգարող մեքենա»: Ուստի, երբ մեքենան կայանվել էր հավաքակայանի տարածքում, և երեք կասկածյալներն էլ Ջիբրալթարում էին, իշխանությունները լիովին կարող էին գործել այն ենթադրության հիման վրա, որ մեքենայի մեջ ռումբ կա: Հետևաբար, հաշվի առնելով, որ կասկածյալները հազիվ թե իրենց փորձության ենթարկեին երկրորդ այցելությունը կատարելու համար, «հավասարապես հավանական» չէ, որ նրանց ժամանումը հետախուզական նպատակ է ունեցել:

Բացի այդ, զինվոր Զ-ն՝ Ջիբրալթարի ոստիկանության հանձնակատարի ավագ խորհրդականը, դատավարության ժամանակ ցուցմունք տվեց, որ հետախուզությունից ստացված տվյալների համաձայն՝ նման հետախուզական այցեր անցյալում կատարվել են բազմիցս: Ուստի, ըստ տվյալների, հետախուզությունն արդեն ավարտված էր, և գործողությունը պատրաստ էր իրականացման: Նման հանգամանքներում իշխանությունները չէին կարող գործել այլ կերպ, քան «վատագույն սցենարի» տարբերակով՝ ընդունելով, որ մեքենայի մեջ ռումբ կա, որը կարող են պայթեցնել տարածքում գտնվող կասկածյալները, որովհետև այդ դեպքում իշխանություններն իրոք գործած կլինեին՝ առանց մարդկանց անվտանգությունը հաշվի առնելու:

14. Երկրորդ՝ 208-րդ պարբերության երկրորդ ենթապարբերությունում նշվում է, որ «հրահանգների ժամանակ կամ այն պահին, երբ կասկածյալները նշմարվել են, գուցեև անհավանական է թվացել, որ նրանք պատրաստված են, քաղաքացիական բնակչությանը նահատակելով, ռումբ պայթեցնել, քանզի պարոն Մակքենը և տիկին Ֆառելը հանգիստ քայլելով մոտեցել են սահմանին, թեև դա պետք է որ մեծացներ նկատվելու և ձերբակալվելու վտանգը»:

Այս առնչությամբ հարցն ավելի շուտ այն է, թե իշխանությունները կկարողանայի՞ն ապահով գործել՝ ենթադրելով, որ կասկածյալները հազիվ թե պատրաստված լինեն ռումբը պայթեցնելու, եթե (նույնիսկ սահմանի ուղղությամբ շարժվելիս) կասկածյալները հասկանային, որ իրենց նկատել են և պետք է ձերբակալեն: Մեր կարծիքով, պատասխանը հստակ է. ԻՀԲ-ի նախկին գործունեությունը հիմք չի տալիս կարծելու, թե բազմաթիվ քաղաքացիների զոհվելու հավանականությունը կարող է կասեցնել ահաբեկիչներին, կամ նկատվելու պահին կասկածյալները կարող էին հրաժարվել ռումբի պայթեցման մտադրությունից, որովհետև այն կհանգեցներ անմեղ զոհերի: Կա նաև մեկ այլ կարևոր հանգամանք. դատավարության ընթացքում զինվոր Ֆ-ն ցուցմունք տվեց, որ հետախուզության տվյալների համաձայն՝ ԻՀԲ-ն ցանկանում էր «դիտարժան» շոու սարքել այդ պայթյունից: Նա ասաց նաև, որ իր կարծիքով՝ կասկածյալները չէին հապաղի կոճակը սեղմել, եթե նրանց դարանակալեին, որովհետև քարոզչության առումով դա մեծ հաջողություն կլիներ: Նրանք կփորձեին այդ հաջողությունը քաղել այն փաստից, որ ռումբը հասցրել են Ջիբրալթար, և դա, ինչպես իրենք էին ակնկալում, կխլացներ մարդկային զոհերի հետ կապված բացասական քարոզչությունը:

15. Այնուհետև 208-րդ պարբերության երկրորդ ենթապարբերությունում ասվում է հետևյալը. «Գուցեև անհավանական է թվացել նաև այն փաստը, որ այդ պահին [այսինքն՝ այն ժամանակ, երբ պարոն Մակքենն ու տիկին Ֆառելը հանգիստ շարժվում էին դեպի սահմանը] նրանք [կասկածյալները] արդեն պատրաստած կլինեն ռադիոհաղորդիչը, որպեսզի հնարավորություն ունենան անմիջապես պայթեցնել ռումբը, եթե դիմադրության հանդիպեն»:

Այստեղ, մեր կարծիքով, անհրաժեշտ է քննել այն հարցը, թե արդյոք իշխանությունները շրջահայաց լինելու նպատակով կարո՞ղ էին գործել այլ կերպ, քան հիմնվել այն ենթադրության վրա, թե չնչին հնարավորություն կա, որ (եթե ոչ կասկածյալների հայտնաբերվելուց առաջ, ապա դրանից անմիջապես հետո) ռադիոհաղորդիչը պատրաստ վիճակում է՝ ռումբը գործի դնելու համար:

16. Այնուհետև 208-րդ պարբերության երրորդ ենթապարբերությունում նշվում է հետևյալը. «Եթե նույնիսկ ընդունենք ԻՀԲ-ի զարգացած տեխնիկական հմտությունները, դետոնատորի բնութագրումը որպես «կոճակով աշխատող սարք», առանց համապատասխան հմտությունների անհրաժեշտության, որոնց մասին հետագայում դատավարության ժամանակ խոսեցին փորձագետները (իսկ իրազեկ մարմիններն այդ մասին պետք է որ տեղյակ լինեին), չափազանց պարզունակ բնութագիր է նման սարքերի իրական նկարագիրը տալու համար»: Այս քննադատության ճշգրիտ իմաստը թերևս լիովին հասկանալի չէ, սակայն պարզ ու հասկանալի է այն, որ (ինչպես դատավարության ընթացքում նշեց հենց իրենց՝ դիմողների փորձագետը) ռադիոհաղորդիչի այն տեսակը, որի օգտագործումը ներկա գործում հավանական է համարվել, կարող է այնպես միացվել, որ դրա դետոնացիան կատարվի մի կոճակի սեղմումով: Բացի այդ, անցյալի փորձից ելնելով՝ խիստ անխելամիտ կլիներ հաշվի չառնել այդ ոլորտում ԻՀԲ-ի զարգացած տեխնոլոգիաները:

17. Վճռի 209-րդ պարբերությունում մտահոգություն է հայտնվում այն մասին, որ զինվոր Զ-ի գնահատականը, թե «մեքենայում ռումբի տեղադրման կասկած կա», զինվորներին ներկայացվել է այնպես, որ տպավորություն ստեղծվի, թե ռումբի գոյությունը հաստատվել է: Նշենք, որ եղել են գնահատականներ հեռակառավարման սարքի օգտագործման հնարավորության մասին, ինչպես նաև զանազան նշաններ, որոնք վկայել են, որ մեքենայում իրոք հնարավոր է ռումբի գոյությունը, ուստի զինվորներից ակնկալվող գործողությունները նույնը կլինեին անկախ այն հանգամանքից, թե ինչպես են նրանք հասկացել իմաստը՝ իրենց հաղորդված ձևո՞վ, թե՞ զինվոր Ֆ-ի նկատի ունեցած իմաստով: Երկու դեպքում էլ

Ջիբրալթարի բնակչությանը սպառնացող վտանգը բավարար կլիներ, որպեսզի դրանից բխեին այն գործողությունները, որ կատարվել են՝ հաշվի առնելով վտանգի բնույթը:

18. Պարբերություն 209-ում նշվում է նաև, որ զինվող Զ-ն որոշակի փորձ ուներ մեքենայի մեջ ռումբերի տեղադրման ոլորտում, սակայն ռադիոհաղորդիչների կամ պայթուցիկների մասնագետ չէր: Այս գնահատականը քննելիս արդարացի կլիներ ավելացնել, որ թեև զինվոր Զ-ն միայն հպանցիկ զննում է կատարել, դա նրա համար բավական է եղել եզրակացնելու (մասնավորապես հաշվի առնելով ալեհավաքի տեխնիկական վիճակի և մեքենայի հնության անհամապատասխանությունը, ինչպես նաև այն իմացությունը, որ ԻՀԲ-ն նախկինում օգտագործել է մեքենաներ, որոնց վրա հատուկ տեղադրված են եղել ալեհավաքներ), որ մեքենան անհրաժեշտ է դիտարկել որպես կասկածյալ՝ ռումբ պարունակելու իմաստով:

Ամեն դեպքում, իշխանությունների գործողությունները հիմնված չէին լոկ զինվոր Զ-ի գնահատականի վրա: Դրանից առաջ եղել էր նաև մեկ այլ գնահատում, որի մասին մենք խոսեցինք վերը՝ 13-րդ պարբերությունում. այն, որ «խանգարող մեքենա» հավանաբար չպետք է օգտագործվեր: Դրան ավելացնենք, որ հետևողները տեսել են, թե ինչպես է մեքենան կայանում պարոն Սևիջը՝ ռումբ պատրաստող մասնագետը, որը մեքենայից փոքր-ինչ ուշ է դուրս եկել (վկաների ցուցմունքների համաձայն՝ 2-3 րոպե ուշ), որովհետև նստելատեղերի արանքում ինչ-որ բան է որոնել:

19. Վճռի 210-րդ պարբերությունում խոսվում է այն մասին, որ մահացու ուժի կիրառումը դարձել է գրեթե անխուսափելի, որովհետև զինվորներ Ա-ին, Բ-ին, Գ-ին և Դ-ին հաղորդվել են մի շարք ենթադրություններ (որոնք հետագայում հերքվել են, քանի որ արվել են առանց այլընտրանքային հնարավորությունների բավարար ուսումնասիրության), և «մեքենայում կոճակի սեղմումով գործի դրվող ռումբի գտնվելու մասին հստակ զեկույց» է եղել:

13-16-րդ պարբերություններում մենք անդրադարձանք վճռի այն կետերին, որոնք հիմնավորում էին դատարանի՝ այլընտրանքային հնարավորությունների ոչ բավարար ուսումնասիրության մասին եզրակացությունը, իսկ 17-րդ և 18-րդ պարբերություններում՝ այն հարցին, թե ինչպես էր զեկուցվել մեքենայում ռումբի առկայությունը:

Մենք կասկածի տակ ենք դնում այն եզրակացությունը, թե մահացու ուժի կիրառումը դարձել է գրեթե անխուսափելի իշխանությունների թերացումների հետևանքով: Ցանկացած այլ դիտարկումից զատ, այս եզրակացությունը բավարար չափով հաշվի չի առնում այն դերը, որը խաղացել է պատահականությունը գործի վերջնական հանգուցալուծման մեջ: Եթե զինվորներ Ա-ի և Բ-ի մոտենալու պահին Մակքենն ու Ֆառելը շարժումներ չանեին, որոնք միգուցե պայմանավորված են եղել ոստիկանության մեքենայի ազդանշանը լսելու պատահականությամբ, ապա շատ հավանական է, որ նրանց կբռնեին և կձերբակալեին առանց որևէ կրակոցի: Եթե զինվորներ Գ-ի և Դ-ի մոտենալու պահին Սևիջը կասկածելի շարժումներ չաներ, որոնք գուցե պայմանավորված են եղել Մակքենի ու Ֆառելի կողմից լսվող կրակոցների ձայնով, ապա նրան նույնպես կբռնեին և կձերբակալեին առանց որևէ կրակոցի:

20. Պարբերություն 211-ի վերջին մասում զետեղված այն եզրակացությունը, որ իշխանությունները խիստ զգուշությամբ չեն գնահատել իրենց տրամադրության տակ եղած տեղեկատվությունը նախքան այն զինվորներին հաղորդելը, «որոնց համար հրազենի օգտագործումն ինքնաբերաբար ենթադրում է կրակելը սպանելու նպատակով», հավանաբար հիմնվում է նույն պարբերության սկզբում նշված «սխալականության սահմանը որոշելու ձախողման փաստի» վրա: Մենք արդեն անդրադարձել ենք այլընտրանքային հնարավորությունների ոչ բավարար ուսումնասիրությանը (տե՛ս դարձյալ 13-16-րդ պարբերությունները), որը մենք ընկալում ենք նույն կերպ, ինչ որ սխալականության սահմանը որոշելու ձախողումը, ինչի մասին խոսում ենք այս պարբերությունում: Իշխանությունների՝ իրենց տրամադրության տակ եղած տեղեկատվության գնահատումը քննելիս անհրաժեշտ է ամեն դեպքում ըստ արժանվույն գնահատել այն փաստը, որ իշխանություններն ստիպված էին գործ ունենալ ոչ լիարժեք տեղեկատվության հետ (տե՛ս վերը, պարբ. 8), և չկան համոզիչ փաստարկներ, որ որոշակի տեղեկություններ իշխանությունները պարտավոր էին իմանալ, բայց չգիտեին:

21. Պարբերություն 212-ում, թռուցիկ հիշատակելով հանրային շահի բացահայտման տեղեկանքների սահմանափակող ուժը, դատարանը նշում է, որ այնուամենայնիվ պարզ չէ՝ «արդյոք զինվորներն անցե՞լ են ուսուցում կամ հրահանգավորում, թե ինչպես պետք է գնահատել՝ թիրախի վիրավորման նպատակով հրազենի կիրառումը հիմնավորվո՞ւմ է ձերբակալման որոշակի հանգամանքներով»: Դատարանն այնուհետև շարունակում է՝ նշելով, որ «նման կենսականորեն կարևոր հարցում ռեֆլեքսային գործողությունները վկայում են հրազենի կիրառման ժամանակ զգուշավորության ցածր մակարդակի մասին, որն անհարիր է ժողովրդավարական հասարակությունում իրավապահ մարմիններին, եթե նույնիսկ գործ ունենք վտանգավոր ահաբեկիչ կասկածյալների հետ: Դա հակասում է նաև ոստիկանության կողմից հրազենի օգտագործման ցուցումներում արտացոլված զգուշավորության գաղափարին»: Պարբերությունն ավարտվում է այն եզրահանգմամբ, թե «իշխանությունների այս բացթողումը վկայում է նաև ձերբակալման գործողության վերահսկման և կազմակերպման գործընթացում պատշաճ հոգատարության բացակայության մասին»:

22. Ինչ վերաբերում է այն հայտարարությանը, որ եթե ուսուցման կամ հրահանգավորման ընթացքում զինվորներից պահանջված լիներ կատարել վերը նշված գնահատումը, ապա զինվորները գուցեև հիմնավորված համարեին «թիրախի վիրավորման նպատակով հրազենի կիրառումը» ձերբակալման որոշակի հանգամանքներում, ապա չմոռանանք, որ ձերբակալման այդ հանգամանքներից մեկն էլ այն էր, որ զինվորներն անկերծորեն հավատացած էին, որ կասկած-

յալները պատրաստվում են ակտիվացնելու ռումբը կոճակի սեղմումով: Այդ իրավիճակում միայն վիրավորելու նպատակով կրակելը շատ վտանգավոր տարբերակ կլիներ, որովհետև վիրավորելը կարող էր լիովին չանշարժացնել կասկածյալին և հնարավորություն թողնել, որ նա սեղմի ակտիվացման կոճակը, եթե լի է վճռականությամբ:

23. Ավելի ընդհանրական ձևով անդրադառնալով զինվորների ուսուցման հարցին՝ նշենք, որ դատավարության ընթացքում հնչեցին մեծ թվով վկայություններ այն մասին, որ զինվորներին (և ոչ միայն այս զինվորներին) ուսուցանում են, որ այս տիպի վտանգների պարագայում (որը տվյալ դեպքում ակնկալվում էր կասկածյալներից, այսինքն՝ նրանք վտանգավոր ահաբեկիչներն էին և չէին զլանա բազմաթիվ կյանքեր վտանգի ենթարկել) զինվորը պետք է կրակ բացի, երբ արդեն պարզ է, որ կասկածյալը չի հրաժարվելու իր մտադրությունից, կրակ բացի կասկածյալին անշարժացնելու նպատակով, իսկ այդ նպատակին հասնելու եղանակը սպանելու մտադրությամբ կրակելն է: Դատավարության ընթացքում հնչեց նաև այն կարծիքը, որ ՀՕԾ-ի շարքեր ընդունվում են միայն այն զինվորները, որոնք ծառայության ընթացքում ցուցաբերել են շրջահայացություն և խոհեմություն, այսինքն՝ այս զինվորները միանգամից, առանց մտածելու կրակ չէին բացի, ինչպես և չբացեցին տվյալ դեպքում, սակայն նրանք ստիպված էին գործել վայրկենապես: Ավելացնենք, որ նախկինում ՀՕԾ-ի ուժերին գրեթե միշտ հաջողվել է ձերբակալել կասկածյալներին:

24. Մենք համոզված չենք, որ դատավարության ընթացքում լսված ցուցմունքներից ելնելով և վերը նշված ուսուցման՝ ահաբեկչական գործունեությանն առնչվող փորձը հաշվի առնելով՝ դատարանը բավարար հիմքեր ունի եզրակացնելու, թե զինվորներին պետք է տրվեր այլ՝ ավելի նախընտրելի ուսուցում, և տվյալ դեպքում զինվորների գործողությունները վկայում են հրազենի կիրառման ժամանակ զգուշավորության ցածր մակարդակի մասին, որն անհարիր է ժողովրդավարական հասարակարգում գործող իրավապահ մարմիններին: (Ելնելով վկաների ցուցմունքներից՝ մենք համաձայն չենք նաև դատարանի օգտագործած «նման կենսականորեն կարևոր հարցում ռեֆլեքսային գործողություններ» արտահայտությանը: Սովորել արագ գործել և հարկ եղած հանգամանքներում արագ գործել չի նշանակում գործել ռեֆլեքսայնորեն:)

Մենք չենք ընդունում նաև, որ ոստիկանության՝ հրազենի օգտագործման ցուցումների և ոստիկանության հանձնակատարի օպերատիվ կարգադրությանը կցված «Հրազեն. ձերբակալության կանոնների» նշված տարբերությունները … (եթե այդ երկուսը կիրառենք, ինչպես և դրանք հարկ է կիրառել, պաշտպանության նախարարության կողմից զինվոր Ֆ-ին տրված «Ձերբակալության կանոնների» հետ մեկտեղ) կարող են վկայակոչվել ի նպաստ այն պնդման, թե զինվորներին հրահանգված հոգատարության չափորոշիչը պատշաճ մակարդակի չի եղել: Այդ տարբերությունները, անշուշտ, վերագրվում են դրանք ընդունողների պատրաստվածության ու պահանջների տարբերությանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր խմբի նախկին ուսուցման առանձնահատկությունները (հարկ է նշել, որ դատավարությանը զինվոր Ֆ-ի տված ցուցմունքների համաձայն՝ ՀՕԾ-ի զինվորների ունկնդրած դասախոսությունների զգալի մասը վերաբերում է իրավունքի նորմերի հայեցակարգին և նվազագույն ուժի կիրառմանը): Մենք չենք ըմբռնում, թե ինչպես կարող էին զինվորներին տրված ցուցումները նրանց կողմից ընկալվել որպես հրազենի կիրառման ժամանակ սակավ զգուշավորություն պահանջող հրահանգներ:

Այնուհետև կանդրադառնանք վճռի 212-րդ պարբերության վերջին պնդմանը, որ այս հարցում իշխանությունների թույլ տված բացթողումը վկայում է նաև ձերբակալման գործողության վերահսկման և կազմակերպման գործընթացում պատշաճ հոգատարության բացակայության մասին: Մեր կարծիքով՝ այդ պնդումն անարդարացի է:

25. Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված կյանքի իրավունքի խախտման մասին պետությանն ուղղված մեղադրանքը գերագույն լրջություն ունի: Վերը բերված հիմքերով գտնում ենք, որ վճռի 203-213 պարբերություններում արված գնահատականները խիստ հեռու են հիմնավորելուց, թե տվյալ դեպքում տեղի է ունեցել կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում: Մենք ինքներս համաձայն ենք հանձնաժողովի եզրահանգմանը, որն արտահայտված է նրա բազմակողմանի, մանրակրկիտ և խիստ իրատեսական զեկույցում: Ինչպես և հանձնաժողովը, մենք նույնպես բավարարված ենք, գործողության կազմակերպման և վերահսկման ոլորտում իշխանությունների կողմից բացթողումներ չեն եղել, որոնք կհիմնավորեին այն եզրակացությունը, թե կասկածյալների նկատմամբ գործադրված ուժն անհամաչափ է եղել անմեղ մարդկանց անօրինական բռնությունից պաշտպանելու նպատակին: Մենք կարծում ենք, որ մահացու ուժի կիրառումը, որքան էլ ցավալի լինի այդ ուժի կիրառման անհրաժեշտությունը, այս դեպքում չի գերազանցել այն, ինչ տվյալ պահին հայտնի հանգամանքներում «բացարձակապես անհրաժեշտ» է եղել նպատակին հասնելու համար, և Միացյալ Թագավորությունն այդպիսով չի խախտել կոնվենցիայով սահմանված իր պարտավորությունները:

3 Մեծ Բրիտանիայի կառավարությունը, ինչպես նաև բրիտանական զանգվածային լրատվամիջոցների զգալի մասը խիստ քննադատեց մեծամասնության եզրակացությունը: Ի պատասխան գործի վերաբերյալ ընդդիմության ստվերային կաբինետի գլխավոր դատախազ պարոն Ջոն Մորիսի հարցի՝ գլխավոր դատախազ սըր Նիքոլաս Լայելը պատասխանել է.

Այդ վճիռը մեծ անհանգստություն է առաջացրել հասարակայնության շրջանում: Ես ակնկալում էի, որ պատվական և կիրթ ջենտլմենը կհարգի դատարանի փոքրամասնության կարծիքը: Նա հիշում է, որ որոշումը կայացվել է տասը կողմ և

ինը դեմ ձայների հարաբերակցությամբ, և դատարանի նախագահն ընդունել է մեծամասնությունից արմատապես տարբերվող դիրքորոշում ու արտահայտել իր հակիրճ դատողություններում, որոնց, իմ կարծիքով, յուրաքանչյուր խելամիտ անձնավորություն պետք է համաձայնի:

Կարևորո՞ւմ եք արդյոք այն հանգամանքը, որ փոքրամասնության մեջ էին, ի թիվս այլոց, դատարանի ամենաբարձրաստիճան անդամները:

4 *Մակքենի* գործում դատարանն առաջին անգամ էր մեկնաբանում և կիրառում 2-րդ հոդվածը, ուստի խիստ կարևոր է գնահատել այն փաստը, որ բոլոր դատավորները համամիտ էին այդ հոդվածի մի շարք առանցքային հարցերում, օրինակ, (ա) որ 2-րդ հոդվածի 2-րդ կետը վերաբերում է ոչ դիտավորյալ սպանություններին (պարբ. 148), (բ) 2-րդ հոդվածի 2-րդ կետում նշված «բացարձակապես անհրաժեշտ» ուժի խստագույն ստուգումը (պարբ. 149), (գ) որ դատարանը պետք է քննի ոչ միայն պետության այն գործակալների (ինչպիսիք են ոստիկանությունն ու զինվորականները) գործողությունները, որոնք անմիջականորեն պատասխանատու են մահվան համար, այլև այդ գործողությունների ծրագրումն ու վերահսկումը, երբ որոշվում է այն հարցը, թե արդյոք պետությունը խախտե՞լ է կոնվենցիայի 2-րդ հոդվածը (պարբ. 150), (դ) որ պետության գործակալների գործողությունների օրինականությունը գնահատելիս դատարանը պետք է հաշվի առնի այդ անձանց ազնիվ և բարեխիղճ ենթադրությունները (որոնք ունեն բավարար հիմնավորում) սպանության պահին առկա հանգամանքների վերաբերյալ (պարբ. 200) և (ե) կոնվենցիայի 2(1) հոդվածը պետությունների համար սահմանում է ենթադրյալ պարտավորություն՝ իրականացնելու պետության գործակալների կողմից անձանց սպանության դեպքերի արդյունավետ պաշտոնական հետաքննություն (պարբ. 161):

5 Որոշակի հանգամանքներում վերը նշված սկզբունքները կիրառելիս դատարանի ներսում իրարամերժ կարծիքներն այնուհետև արտացոլվեցին *«Անդրոնիկուն և Կոնստանտինուն ընդդեմ Կիպրոսի» (Andronicou and Constantinou v Cyprus (1997) 25EHRR 491, 1997-VI)* գործում: Լեֆթերիս Անդրոնիկուն և էլսի Կոնստանտինուն իրենց նշանադրության մասին հայտարարել էին 1993 թ. դեկտեմբերի 22-ին: 1993 թ. դեկտեմբերի 24-ի առավոտյան հարևանները լսել են, թե ինչպես Անդրոնիկուի բնակարանի կողմից ինչ-որ կին օգնության էր կանչում: Հարևանները ոստիկանություն են կանչել, բայց Անդրոնիկուն սպառնացել է, որ կկրակի ոստիկանին, եթե նա չհեռանա: Ցերեկը ոստիկանության բաժնի պետը զանգահարել է ոստիկանության վարչության պետին և զեկուցել պատանդ վերցնելու դեպքի մասին: Վերջինիս կարգադրությամբ դեպքի վայր է մեկնել ոստիկանության հատուկ դասակը (MMAD)՝ իրադրությունը կարգավորելու նպատակով: Դասակի հրամանատարը զինվորներին հայտնել էր, որ Անդրոնիկուն զինված է երկփողանի որսորդական հրացանով, բայց կարող է նաև այլ զենքեր ունենալ: Հատուկ ուժերի դասակը զինված էր ատրճանակներով և գնդացիրներով (որոնց ամրացված էին լապտերներ): Նրանց հրահանգ է տրվել կիրառել համաչափ ուժ և կրակել միայն այն դեպքում, երբ Կոնստանտինուի կամ իրենց կյանքին վտանգ կսպառնար: Անդրոնիկուն իր բժշկի միջոցով հայտնել է, որ Կոնստանտինուին բաց կթողնի կեսգիշերին, այնուհետև ինքնասպանություն կգործի: Ժամը 23:00-ին բնակարան ուտելիք է բերվել (ոստիկանությունն ուտելիքին քնաբեր էր խառնել): Սակայն Կոնստանտինուն շարունակում էր ճչալ, որ Անդրոնիկուն ուզում է սպանել իրեն: Ոստիկանության ավագ սպաները եկել են այն եզրակացության, որ Անդրոնիկուն պատրաստվում է սկզբում սպանել նրան, իսկ հետո իրեն: Ժամը 23:55-ին հատուկ դասակի զինվորները ներխուժել են Անդրոնիկուի բնակարան: Անդրոնիկուն կրակել է առաջինը ներս մտնող ոստիկանի ուսին, այնուհետև Կոնստանտինուի ձեռքին և ուսին: Մնացած երկու զինվորները կրակել և սպանել են Անդրոնիկուին (արձակվել է առնվազն քսանհինգ գնդակ): Կոնստանտինուին պատահաբար դիպել է գնդացրի երկու գնդակ: Նրան ոստիկանության մեքենայով տեղափոխել են հիվանդանոց (դեպքի վայրում չկար շտապօգնության մեքենա) վիրահատության, սակայն մի քանի ժամ անց նա մահացել է (ոստիկանության փամփուշտներից առաջացած վնասվածքների հետևանքով): Դեպքից հետո կառավարությունը նշանակել է դատաքննչական հանձնաժողով, որը գլխավորում էր գերագույն դատարանի նախագահ (որը նաև Եվրոպական դատարանի դատավոր էր) պարոն Լուազուն: Հանձնաժողովը պետք է քններ Անդրոնիկուի և

Կոնստանտինուի մահվան հանգամանքները: 1994 թ. հունիսին հանձնաժողովը զեկուցել է, որ ոստիկանության հատուկ դասակի գործադրած ուժը եղել է ոչ ավելի, քան այն ուժը, որ «բացարձակապես անհրաժեշտ» էր Կոնստանտինուին փրկելու համար, ուստի ոստիկանության գործողությունների վերաբերյալ որևէ քննադատություն չկա: Դիմողները՝ մահացածների հարազատները, բողոքել էին հանձնաժողովին՝ հայտարարելով, ի թիվս այլոց, որ սպանությամբ խախտվել է Անդրոնիկուի և Կոնստանտինուի կյանքի իրավունքը, որը երաշխավորվում է կոնվենցիայի 2-րդ հոդվածով: Հանձնաժողովի մեծամասնությունը՝ տասնհինգ կողմ և երեք դեմ ձայների հարաբերակցությամբ, որոշել է, որ իշխանությունների կողմից գործողության ծրագրումն ու վերահսկումը (հատկապես ընտանեկան վեճի իրավիճակում ոստիկանության հատուկ դասակին ներգրավելը) կատարվել են այդ հոդվածի խախտումով: Գործը լսող պալատի մեծամասնությունը՝ հինգ դատավոր, որոշել է.

182. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի տեսանկյունից գործողության ծրագրման ու վերահսկման փուլը գնահատելիս դատարանը պարտավոր է հատուկ ուշադրություն դարձնել այն համատեքստին, որում ծագել է այդ դեպքը, ինչպես նաև այն հանգամանքներին, որոնց պարագայում են դեպքերը զարգացել օրվա ընթացքում:

183. Ինչ վերաբերում է համատեքստին, ապա իշխանությունները հստակ հասկանում էին, որ իրենք գործ ունեն երիտասարդ մարդկանց հետ, ոչ թե փորձված ոճրագործների կամ ահաբեկիչների: Բանակցությունները, ինչպես նաև մինչև վերջին հնարավոր պահը բանակցելու փորձերը վկայում են, որ իշխանությունները ոչ մի վայրկյան չեն ձերբազատվել այն ըմբռնումից, որ տվյալ իրավիճակի հիմքում «երկու սիրահարների վեճն» է, և այդ փաստը պետք է հաշվի առնել նաև այն դեպքում, եթե վերջնական հանգուցալուծման պահին ուժ կիրառելու անհրաժեշտություն առաջանա Էլսի Կոնստանտինուին ազատելու նպատակով: Այդ համատեքստում անշրջահայաց չէր իշխանությունների՝ Լեֆթերիս Անդրոնիկուի հարազատներին և ընկերներին օգնության կանչելու որոշումը, որպեսզի իրավիճակը հարթվի: Հարկ է նշել նաև, որ մինչև վերջին պահը իշխանությունները փորձել են համոզելով և երկխոսության միջոցով վերջ տալ այդ վտանգավոր իրավիճակին: Ոստիկանության բանակցողն օրվա վերջում դեռ շարունակում էր համոզել Անդրոնիկուին, որ նրան ոչինչ չի սպառնում, եթե բաց թողնի երիտասարդ կնոջը: Երեկոյան ժամը 11-ին ժողովն ավարտվեց, որի ընթացքում ցուցումներ տրվեցին հնարավորինս հետաձգել ոստիկանության հատուկ դասակի միջամտությունը, որպեսզի հնարավոր լինի շարունակել բանակցությունները: … Իշխանությունների կողմից իրադրությունը բանակցությունների միջոցով լուծելու այս հետևողական փորձերը վկայում են, որ նրանք խորապես մտահոգված էին և հատուկ դասակը պահում էին միայն որպես վերջին միջոց: Թեև կային թերացումներ, օրինակ՝ ամբոխը կառավարելու և այն հարցում, որ չէր հատկացվել հատուկ հեռախոսակապ ոստիկանության բանակցողի և Լեֆթերիս Անդրոնիկուի միջև, դատարանն այնուամենայնիվ համարում է, որ բանակցություններն ընդհանուր առմամբ վարվել են այնպիսի եղանակով, որը տվյալ հանգամանքներում կարելի է համարել խելամիտ:

184. Չնայած կոնֆլիկտի ընտանեկան բնույթին՝ իշխանությունների աչքի առջև իրադրությունն արագորեն զարգանում էր՝ վերաճելով վտանգավոր իրավիճակի, որում պետք էր վճռական որոշումներ կայացնել: Բանակցությունների ընթացքում Լեֆթերիս Անդրոնիկուի անզիջում վերաբերմունքը, սպառնալից տոնը, ինչպես նաև երիտասարդ կնոջ օգնության ճիչերը համոզեցին իշխանություններին, որ Անդրոնիկուն լրջորեն մտադիր է կեսգիշերին սպանել կնոջը և հետո ինքնասպան լինել: Ենթադրվում է, որ Լեֆթերիս Անդրոնիկուն երբեք չի հայտարարել, թե ուզում է սպանել Էլսի Կոնստանտինուին: Նա միայն սպառնացել է, որ կկրակի նրան, եթե ոստիկանությունը ներխուժի իր բնակարան: Այդուհանդերձ, իշխանությունները չէին կարող անտեսել կնոջ կանչերը, որ իր կյանքին վտանգ է սպառնում: Հարկ է շեշտել, որ կեսգիշերից մեկ ժամ առաջ նա անընդհատ գոռում էր, որ Լեֆթերիս Անդրոնիկուն ուզում է իրեն սպանել, … իսկ Լեֆթերիս Անդրոնիկուն արդեն իսկ ցուցադրել էր իր վայրագությունը՝ կնոջը ծեծելով: … Նման հանգամանքներում իմանալով, որ Լեֆթերիս Անդրոնիկուն զինված է, իշխանությունները կարող էին ողջամտորեն համարել, որ կեսգիշերը մոտենում է, իսկ բանակցություններն արդյունք չեն տալիս, ուստի անհրաժեշտ է բնակարանը մուտք գործելու փորձ անել, զինաթափել և ձերբակալել Անդրոնիկուին և ազատ արձակել Էլսի Կոնստանտինուին:

185. Դատարանի կարծիքով՝ ոստիկանության հատուկ ջոկատը գործարկելու մասին իշխանությունների որոշումն այն հանգամանքներում, որոնք այդ պահին հայտնի էին, հիմնավորված էր: Բարձր մասնագիտական պատրաստվածության ոստիկանական միավորի օգնությանը դիմելը լիովին բնական էր ծրագրվող գործողության պարագայում: Ոստիկանության հատուկ ջոկատն օգտագործելը համարվել է վերջին միջոց: Այդ որոշումը քննարկվել է ոստիկանության հրամանատարության բարձրագույն շրջաններում ու նախարարության մակարդակում և կիրառվել է միայն այն ժամանակ, երբ բանակցություններն արդյունք չեն տվել, եղել է ողջամիտ համոզվածություն, ինչպես նշվեց վերը, որ երիտասարդ կնոջ կյանքին անխուսափելի վտանգ է սպառնում: Թեև ճշմարիտ է, որ գործողությանը մասնակցող զինվորները պատրաստ են եղել կրակել սպանելու նպատակով, եթե իրենց վրա կրակելու փորձ արվի, հարկ է նշել, որ նրանց տրվել էին հստակ հրահանգներ, թե երբ կարելի է զենք օգտագործել: Նրանց կարգադրել էին կիրառել համաչափ

ուժ և կրակ բացել միայն այն դեպքում, եթե Էլսի Կոնստանտինուի կամ իրենց կյանքին վտանգ սպառնա: … Հարկ է նշել, որ զենքի գործադրման ոչ մի մտադրություն չի եղել, և իշխանություններն իրոք մտահոգված են եղել, որ երիտասարդ զույգին վնաս չհասցվի: … Այնուամենայնիվ, անշրջահայաց չէր ենթադրվող վտանգների մասին զինվորներին զգուշացնելը և հրազենի գործածման վերաբերյալ մանրակրկիտ հրահանգներ տալը: Այնուհետև անհրաժեշտ է ընդգծել, որ զինվորները տեղեկացված չէին, որ բացի որսորդական հրացանից, Լեֆթերիս Անդրոնիկուն պահում է նաև այլ զենքեր: Նրանց ասվել էր, որ նման հնարավորությունը չպետք է անտեսել: Այդ իմաստով տվյալ տեղեկությունը ոստիկանները կարող էին խելամտորեն ընկալել որպես նախազգուշացում, որպեսզի գործողությունն իրականացնելիս պահպանվի խստագույն շրջահայացություն: Ինչ վերաբերում է ոստիկաններին գնդացիրներով զինելու որոշմանը, ապա արժե մեկ անգամ ևս շեշտել, որ ծրագրի իրականացման ընթացքում հրազեն կիրառելու մտադրություն չի եղել: Սակայն հաշվի առնելով, որ Լեֆթերիս Անդրոնիկուն զինված է երկփողանի հրացանով, և չի բացառվում, որ նա տանն ունի նաև այլ զենքեր, իշխանությունները պետք է ակնկալեին վերջնական արդյունքի բոլոր տարբերակները: Կարելի է ավելացնել նաև, որ գնդացիրներն ունեին այն առավելությունը, որ դրանց ամրացված էին լապտերներ, որոնց օգնությամբ հնարավոր պետք է լիներ առանց որևէ դժվարության հայտնաբերել երիտասարդ կնոջը արցունքաբեր գազով լցված մութ սենյակում՝ միաժամանակ ազատ պահելով ձեռքերը զենքը կառավարելու համար, եթե հանկարծ զինվորները հայտնվեին կրակի տակ: Բացի այդ, գնդացիրներն օգտագործելու վերաբերյալ ոստիկանները ստացել էին նույն հստակ հրահանգները, ինչ ատրճանակների համար…

186. Հաշվի առնելով վերը բերված դատողությունները՝ դատարանը հանգում է այն կարծիքին, թե պատանդին ազատելու գործողությունը ծրագրված և կազմակերպված է եղել այնպես, որ հնարավոր նվազագույնի հասցվի երիտասարդ զույգի կյանքին սպառնացող վտանգը:

Հետևաբար, դատարանի մեծամասնությունը որոշեց, որ կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում չի եղել: Մեծամասնության հետ չհամաձայնող չորս դատավորները կարծում էին, որ գործողության ծրագրման ու վերահսկման մակարդակը չի բավարարում 2-րդ հոդվածի պահանջները: Նրանց մասնավորապես մտահոգում էր ոստիկանության հատուկ ուժերի դասակի և գնդացիրների օգտագործումը պատանդի հետ կապված իրավիճակի հանգուցալուծման նպատակով: Մասնակի չհամընկնող կարծիք հայտնած դատավոր Փեքանենի եզրակացության 6-րդ պարբերությունում մասնավորապես ասվում է հետևյալը. «Սույն գործի հանգամանքներում գնդացիրների օգտագործումն ինձ ներկայանում է որպես անհարկի ուժի գործադրում: Նման տեսակի հրազենի կիրառումն ընդդեմ վախեցած մի երիտասարդի չէր կարող բացարձակապես անհրաժեշտ լինել, նույնիսկ եթե նա հնարավորություն ունենար արձակելու երկու կրակոց իր որսորդական հրացանից»: Հնարավո՞ր է արդյոք համատեղել դատարանի որոշումները *Մակքենի* և *Անդրոնիկուի* ու *Կոնստանտինուի* գործերում: Էակա՞ն է արդյոք, որ ոստիկանության հատուկ դասակի զինվորները կրակ բացեցին միայն այն բանից հետո, երբ Անդրոնիկուն նրանց վրա կրակեց: Ինչո՞ւ Կիպրոսի ոստիկանությունը չցրեց Անդրոնիկուի շենքի բակում հավաքված ամբոխը և ինչո՞ւ պատրաստ վիճակում չպահեց բուժօգնության միջոցներ այն դեպքի համար, եթե լինեին տուժածներ:

6 Մեկ այլ անգամ դատարանն այնուամենայնիվ միաձայն էր, որ եղել է կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում: Խոսքը վերաբերում է *«Էրգին ընդդեմ Թուրքիայի»* (*Ergi v Turkey*, Reports 1998-IV) գործին, երբ անվտանգության ուժերի կողմից ՔԱԿ-ի (Քրդստանի աշխատավորական կուսակցություն) անդամների դեմ (որոնց կասկածել են զինված լինելու մեջ) իրականացված գործողության ծրագրման և վերահսկման գործընթացներում դատարանն արձանագրել է անբավարար հոգածություն: Դիմողը պնդում էր, որ իր քույրը՝ Հասվա Էրգին, սպանվել է թուրքական անվտանգության ծառայության ուժերի արձակած կրակոցներից, երբ նրանք դարանակալված հարձակման գործողություն էին իրականացնում մահացածի գյուղում: Հանձնաժողովը միաձայն որոշեց, որ ի թիվս այլ փուլերի, հարձակման գործողության ծրագրման ընթացքում նույնպես կատարվել է 2-րդ հոդվածի խախտում: Դատարանը որոշեց.

79…. Պետության պատասխանատվությունը չի սահմանափակվում սոսկ այն հանգամանքներով, որոնց դեպքում, ըստ փաստերի, պետության գործակալների կողմից սխալ ուղղությամբ արձակված կրակոցներից քաղաքացիական անձ է զոհվում: Այդ պատասխանատվությունն առկա է նաև այն դեպքերում, երբ ախոյան խմբի դեմ կազմակերպվող գործողությունների ժամանակ մեթոդների ու գործիքների ընտրության հարցում անվտանգության ուժերը չեն կիրառում բավարար ծավալով զգուշավորության միջոցներ՝ խուսափելու կամ համենայն դեպս նվազագույնի հասցնելու քաղաքա-

ցիների զոհվելու հնարավորությունը: Այդպիսով, թեև ողջամիտ կասկածից վեր չի հաստատվել այն փաստը, որ Հաավա Էրգիին սպանող գնդակն արձակված է եղել անվտանգության ծառայողի հրազենից, դատարանը պարտավոր է քննել՝ արդյոք անվտանգության ուժերի օպերացիան ծրագրված և իրականացված եղե՞լ է այնպիսի եղանակով, որ բացառվի կամ հնարավոր նվազագույնի հասցվի գյուղացիների կյանքին սպառնացող ամեն մի վտանգ, այդ թվում նաև՝ այն վտանգը, որ սպասվում էր դարանակալման մեջ հայտնված ՔԱԿ-ի անդամների կողմից:

80. Դառնալով գործի որոշակի հանգամանքներին՝ դատարանը նշում է, որ մի կողմից՝ հանձնաժողովը հայտարարել է, որ գործողության ծրագրումն ու իրականացումը գնահատելու իր կարողությունները սահմանափակ են եղել, որովհետև կառավարությունը լիարժեք տեղեկություններ չի տրամադրել: Հանձնաժողովը տվյալներ չուներ այն մասին, թե ովքե՛ր են մասնակցել գործողություններին, ի՛նչ հանգամանքներում են անվտանգության ծառայողները կրակ բացել, և ի՛նչ քայլեր են ձեռնարկվել անվտանգության ծառայության կողմից, երբ հակամարտությունը թեժացել է:… Մյուս կողմից՝ ժանդարմերիայի ծառայողների՝ հանձնաժողովին տված ցուցմունքները վկայել են, որ դարանակալման գործողություններն իրականացվել են գյուղից դեպի հյուսիս-արևմուտք, իսկ գյուղի և դարանակալման վայրի միջև տարածությունն անհայտ է: Ակնկալվել է, որ ՔԱԿ-ի ահաբեկիչները գյուղին մոտենալու են հյուսիսից կամ առաջանալու են գետի հունով դեպի հյուսիս-արևելք, որի դեպքում կարողանալու են գյուղ մտնել ծայրամասից, առանց նկատվելու անվտանգության ուժերի կողմից և շարժվել դեպի հյուսիս-արևմուտք: Վկայությունների հիման վրա հանձնաժողովը եզրակացրել է, որ անվտանգության ուժերը տեղակայված են եղել գյուղի հարավային մասում: Այս պայմաններում գյուղացիները գտնվել են խաչաձև կրակի մեջ հայտնվելու մեծ վտանգի տակ, որն արձակվել է անվտանգության ուժերի և հյուսիսից ու հյուսիս-արևելքից մոտեցող ՔԱԿ-ի ահաբեկիչների կողմից: Նույնիսկ եթե ընդունենք, որ անվտանգության ուժերը գյուղի մատույցներում ծուղակի մեջ առնված ահաբեկիչների կրակին պատասխանելիս ցուցաբերել են պատշաճ հոգածություն քաղաքացիական բնակչության նկատմամբ, ապա չի կարելի ենթադրել, որ ահաբեկիչները նույն կերպ են վարվել: Չկար որևէ տվյալ, որ հաղորդեր, թե զգուշության ի՛նչ միջոցներ են ձեռնարկվել՝ ապահովելու, որ գյուղացիները չներգրավվեն հակամարտության մեջ: Հետևաբար, օպերացիայի ծրագրման և իրականացման գործընթացին մասնակցած ժանդարմներից ակնկալվող տեղեկատվության բացակայության պայմաններում հանձնաժողովը բավարարված չի եղել, որ Քեսենքաս գյուղի մոտ իրականացված դարանակալման գործողությունն իրականացվել է քաղաքացիական բնակչության կյանքի նկատմամբ անհրաժեշտ հոգածությամբ:

81. Հաշվի առնելով հանձնաժողովի եզրակացությունները և սեփական գնահատումները՝ դատարանը կարծում է, որ Հաավա Էրգիին սպանող գնդակը կարող էր արձակված լինել հարավից կամ հարավ-արևելքից, անվտանգության ուժերը տեղաբաշխվել էին գյուղի հարավում, և եղել է իրական վտանգ, որ գյուղացիները կարող են սպանվել՝ ընկնելով ՔԱԿ-ի և անվտանգության ուժերի կրակահերթերի տակ: Քանի որ պատասխանող պետության իշխանությունները չեն ներկայացրել գործողության ծրագրման և իրականացման մասին ուղղակի տվյալներ, դատարանը, համաձայնելով հանձնաժողովի հետ, կարծում է, որ քաղաքացիական բնակչության կյանքը պաշտպանելու համար անհրաժեշտ նախազգուշական միջոցները բավարար ծավալով չեն կիրառվել:

Վճիռը կարևոր է նաև այն առումով, որ պետություններից պահանջում է անվտանգության ուժերի գործողությունները ծրագրելիս հաշվի առնել այն վտանգները, որ սպառնում են անմեղ անցորդներին ոչ միայն պետության գործակալների, այլև ոչ պետական ուժերի կողմից (օրինակ՝ ահաբեկիչների կամ հանցագործների): Կոնվենցիայի համաձայն՝ պետության ներկայացուցիչներից խստագույնս պահանջվում է «ձեռնարկել նախազգուշական հնարավոր բոլոր միջոցները»՝ նման գործողությունների ծրագրման և իրականացման ընթացքում խուսափելու կամ նվազագույնի հասցնելու համար «մարդկային կյանքի կորուստը քաղաքացիական բնակչության շրջանում»:

7 Մշտական դատարանի նախնական երկու վճիռներում, որոնք վերաբերում էին Չեչնիայում դաշնային ռազմական/անվտանգության ուժերի գործողություններին, պալատը միաձայն որոշեց, որ Ռուսաստանը խախտել է դիմողների կյանքը պաշտպանելու պարտավորությունը՝ չցուցաբերելով պահանջվող հոգատարությունը քաղաքացիների կյանքի նկատմամբ, երբ ծրագրվում և իրականացվում էին ռազմական գործողություններ ապստամբ ուժերի դեմ: *«Իսաևան, Յուսուպովան և Բազաևան ընդդեմ Ռուսաստանի» (Isayeva, Yusupova and Bazayeva v Russia)* գործում, որի վճիռը կայացվել է 2005 թ. փետրվարի 24-ին, դիմողներն այն պահակախմբի անդամներ էին, որն ուղեկցում էր մեքենաների մի շարասյուն, իսկ մեքենաների մեջ գտնվում էին այն անձինք, ովքեր փորձել էին խույս տալ դաշնության ուժերի և ապստամբների միջև Գրոզնիում 1999 թ. ընթացող մարտերից: Զինվորական անցակետից շարասյունը հետ էր ուղարկվել և հետդարձի ճանապարհին ենթարկվել ռմբակոծության ռազմական երկու ինքնաթիռներից, որոնք տասներկու օդ-երկիր տեսակի հրթիռներ

էին արձակել շարասյան ուղղությամբ: Օդաչուները պնդում էին, որ իրենք հրթիռներն արձակել են ի պատասխան բեռնատարներում գտնվող ապստամբների կրակի: Հրթիռների արձակման հետևանքով սպանվել է 16 քաղաքացիական անձ (այդ թվում՝ դիմողների երկու երեխաները): Պալատը որոշեց հետևյալը.

178. Դատարանն ընդունում է, որ քննարկվող ժամանակահատվածում Չեչնիայում տիրող իրավիճակում պետությունից պահանջվում էին բացառիկ միջոցներ՝ այդ հանրապետությունում հսկողությունը պահպանելու և զինված ապօրինի ապստամբներին ճնշելու համար: Այդ միջոցները ենթադրաբար ներառում էին նաև ծանր զինատեսակներով հանդերձ ռազմական օդուժի ներգրավում: Դատարանը պատրաստ է ընդունելու նաև, որ եթե ինքնաթիռների վրա հարձակում գործած լինեին զինված անօրինական խմբեր, ապա դա կարող էր արդարացնել մահացու ուժի կիրառումը՝ համապատասխանելով կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին:

179. Այդուհանդերձ, սույն գործում կառավարությունը չի կարողացել ներկայացնել համոզիչ ապացույցներ, որոնք կհիմնավորեին վերը նշված եզրակացությունները: Երկու օդաչուների և օդային թռիչքների կարգավարի տված ցուցմունքները այդ հարձակման միակ վկայությունն են: Այդ ցուցմունքները վերցվել են 2000 թ. հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին, այսինքն՝ ենթադրվող հարձակումից շուրջ մեկ տարի անց: Դրանք անավարտ են և մեջբերում են այդ վկաների կողմից մեկ այլ հետաքննությանը տրված այլ ցուցմունքները, որի էությունը կառավարությունը չցանկացավ բացահայտել: Այդ ցուցմունքները գրեթե նույնական են և իրադարձությունների մասին պարունակում են խիստ հակիրճ և թերի տեղեկատվություն:

Հաշվի առնելով այն փաստը, որ քաղաքացիական մեքենաների մեծ շարասյան մոտակայքում ռազմական ուժերի կողմից կիրառվել է «չափազանց հզոր զենք» (այսինքն՝ հրթիռներ, որոնց գործողության շառավիղը 300-800 մետր է, և այդ շրջագծում հրթիռների պայթուցիկ ուժի հետևանքով առաջացել էին հազարավոր հրագնդեր), պալատը որոշեց, որ դիմողները տուժել են կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտումից: Նմանապես, *«Իսաևան ընդդեմ Ռուսաստանի»* գործում, վճիռը՝ 24 փետրվարի, 2005 թ., դիմողն իր ընտանիքի հետ գտնվում էր քաղաքացիական մեքենայի մեջ՝ փորձելով փախչել հայրենի քաղաքում ընթացող մարտերից (որտեղ դաշնային ուժերը բռնել էին բազմաթիվ զինված ապստամբների): Ռազմական ինքնաթիռները նրանց վրա են գցել բարձր պայթուցիկության ռումբեր, որի հետևանքով զոհվել են դիմողի որդին և երեք զարմիկները: Պալատը որոշեց.

190. Երբ իշխանություններին հայտնի դարձան մարտնչողների առկայությունն ու նրանց զգալի թիվը, գործողության հրամանատարներն առաջարկեցին գործողությունների ծրագիր, որի ընթացքում ռմբակոծման և հրթիռակոծման պետք է ենթարկվեր Կատիր Յուրտ ավանը (դիմողի բնակավայրը): 2004 թ. փետրվարի 4-ին, առավոտյան ժամը 8-ից մինչև 9-ն ընկած ժամանակահատվածում, գեներալ-մայոր Նեդոբիտկոն հրահանգեց ներգրավել կործանիչներ՝ առանց նշելու, թե ինչ բեռ պետք է դրանք տեղափոխեն: Ինքնաթիռները հանդերձված էին ազատ անկման, բարձր պայթուցիկության FAB-250 և FAB-500 ավիառումբերով, որոնց ազդեցության շառավիղն անցնում է 1000 մետրից: Զինծառայողների վկայությունների համաձայն՝ ռումբեր և չկառավարվող մարտական այլ ծանր զենքեր էին օգտագործվել թիրախների դեմ ինչպես գյուղի կենտրոնում, այնպես էլ ծայրամասերում:

191. Դատարանը համարում է, որ բնակեցված տարածքում խաղաղ ժամանակ և առանց կանխավ քաղաքացիական բնակչության տարհանման նման զենքի կիրառումն անհնար է համատեղել ժողովրդավարական հասարակությունում իրավապահ մարմնից ակնկալվող շրջահայացության մակարդակի հետ: Չեչնիայում չէր հայտարարվել ռազմական դրություն կամ արտակարգ իրավիճակ, ինչպես նաև կոնվենցիայի 15-րդ հոդվածով նախատեսված «արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում»: Հետևաբար, քննարկվող գործողությունն անհրաժեշտ է դիտարկել սովորական իրավական դաշտում: Նույնիսկ այնպիսի իրավիճակում, երբ ըստ կառավարության պնդման՝ գյուղի բնակչությունը պատանդ էր վերցվել լավ զինված և գերազանց մարտական պատրաստություն անցած ապստամբների կողմից, գործողության առաջնային նպատակը պետք է լիներ կյանքի պաշտպանությունն անօրինական բռնությունից: Անխտրական զենքի զանգվածային կիրառումն այդ նպատակի աղաղակող խախտում է, ուստի չի կարող համատեղելի լինել հոգածության այն չափորոշչի հետ, որը պահանջվում է պետության գործակալներից մահացու զենքի կիրառմամբ նման գործողություններ իրականացնելիս:

Այսպիսով, դիմողների հարազատների մահը տեղի է ունեցել կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման հետևանքով: Վերջին երկու դեպքերը վկայում են բնակեցված տարածքներում դաշնային ուժերի

կողմից մարտական զենքի կիրառման մասին՝ առանց մտածելու խաղաղ մարդկանց, այդ թվում նաև՝ երեխաների կյանքը պաշտպանելու մասին:

8 *«Ավշարն ընդդեմ Թուրքիայի» (Avsar v Turkey)* գործում, որի վճիռը կայացվել է 2001 թ. հուլիսի 10-ին, դատարանը սահմանել է, որ անդամ պետությունը պատասխանատու է քաղաքացի կամավորների գործողությունների համար, որոնք գործել են արհեստավարժ անվտանգության ուժերի հետ համատեղ: Գործը հիմնականում վերաբերում էր գյուղի պահակներին, որոնց քաղաքացիական բնակչությունից ընտրում է գյուղի ավագանու խորհուրդը, կամ որոնք իրենք են կամավոր հավաքագրվում պահակության, իսկ գավառների նահանգապետները նրանց նշանակում են այդ պաշտոնին: Գյուղական պահակախումբը զենք է կրում և կոչված է պաշտպանելու իր գյուղի սահմաններում ապրող գյուղացիների կյանքը, պատիվը և ունեցվածքը: Գյուղի պահակներին օգտագործում են նաև ավելի լայն ծավալի անվտանգության գործողություններում, օրինակ, որպեսզի զեկուցեն իրենց գյուղերն այցելող անծանոթների մասին, կանխեն ազգային ենթակառուցվածքներին (ճանապարհներ, կամուրջներ, ամբարտակներ և այլ կառուցվածքներ) հասցվող վնասները և այլն: Ժանդարմերիայի շրջանային հրամանատարը պատասխանատու է իր շրջանի գյուղական պահակների ուսուցման և վերահսկման համար: Ավշարների ընտանիքն ապրում էր Թուրքիայի հարավ-արևելքում և, ըստ անվտանգության ծառայության տվյալների, ինչ-որ ժամանակ սատարել էր Քրդական աշխատավորական կուսակցությանը: 1994 թ. ապրիլին Աբդուլքերիմ Ավշարը գտնվում էր բանտում՝ սպասելով իր դատին: Նա մեղադրվում էր ահաբեկչության համար: Ապրիլի 22-ին գյուղական հինգ պահակներ երկու այլ մարդկանց ուղեկցությամբ, որոնցից մեկը ՔԱԿ-ի նախկին անդամ էր (այսպես կոչված «խոստովանող»), իսկ մյուսը՝ անծանոթ, որ գործում էր անվտանգության ծառայողի կարգավիճակով, մտան Ավշարների ընտանեկան խանութը: Նրանք պահանջում էին, որ Ավշար եղբայրներից մեկը գա իրենց հետ՝ Աբդուլքերիմի մասին ցուցմունք տալու: Որոշ ժամանակ դիմադրելուց հետո Մեհմեթ Ավշարը համաձայնեց նրանց ուղեկցել: Նրան տարան ժանդարմերիայի բաժին: Ավելի ուշ նրան բաժնից հանեցին գյուղական պահակներից երկուսը՝ «խոստովանողը» և անհայտ անձը: Մայիսի 7-ին Մեհմեթի մարմինը (նրան կրակել և սպանել էին) գտել են Դիարբեքիր քաղաքից դուրս: Դրանից մոտավորապես վեց տարի անց գյուղական պահակներից մեկը դատապարտվել է Մեհմեթին սպանելու համար, իսկ մնացած չորսը և «խոստովանողը»՝ առևանգելու: Մեհմեթի եղբայրը դիմել էր Ստրասբուրգ՝ պնդելով, որ տեղի է ունեցել 2-րդ հոդվածի խախտում, քանի որ Մեհմեթը գտնվել է անվտանգության ծառայության հսկողության տակ և սպանվել է այնպիսի հանգամանքներում, որոնք դուրս են 2(2) հոդվածով սահմանվածներից: Դատարանի մեծամասնությունը՝ վեց կողմ, մեկ դեմ ձայներով, պաշտպանեց նրա գանգատը.

412. Դատարանը բավարար է համարում փաստերը՝ ընդունելու համար, որ Մեհմեթ Շերիֆ Ավշարը մահացել է պետության գործակալների կողմից կալանքի առնվելուց հետո: Դատարանը չի ընդունում կառավարության հայտարարությունն այն մասին, որ հանցագործությունը կատարվել է սեփական նախաձեռնությամբ գործող մարդկանց կողմից, առանց իշխանություններին տեղյակ պահելու, ուստի այն պետության պատասխանատվությունից դուրս է:

413. Գյուղական պահակներն ունեին պաշտոնական դիրք, պարտականություններ և պատասխանատվություն: Նրանց ուղարկել էին Դիարբեքիր՝ մասնակցելու կասկածյալների կասեցման գործողություններին, և նրանք ներկայացել էին Ավշարների ընտանիքին որպես պաշտոնական անձինք: Յոթերորդ անձը՝ անվտանգության ծառայության աշխատակիցը, նույնպես ներկայացել է ի պաշտոնե: Հետևաբար, հանցագործության մասնակիցները պետության գործակալներ էին, որից հետևում է, որ նրանք նաև գործում էին որպես պետության գործակալներ, երբ օգտագործելով իրենց պաշտոնական դիրքը՝ ստիպում էին Մեհմեթ Շերիֆ Ավշարին գնալ իրենց հետ: Այս դեպքում կառավարությունը պատասխանատու է նրանց արարքների համար:

414. Վերը բերված համատեքստից դատարանն արդեն արել է իր եզրակացությունն այն մասին, որ 1993 թ. կամ այդ շրջանում Հարավարևելյան Թուրքիայում արձանագրվել է անվտանգության ուժերի պատասխանատվության անկում: Այս դեպքը վեր է հանում այն վտանգները, որոնք կապված են քաղաքացի անձանց կիսաոստիկանական գործառույթներով օժտելու հետ: Չնայած պաշտոնական մարմինները պնդում են, որ գյուղական պահակները գործում են միայն իրենց գյուղի սահմաններում, տվյալ գործում արդեն հաստատվել է, որ գյուղական պահակները պարբերաբար օգտագործվել են զանազան պաշտոնական գործողություններում, այդ թվում՝ կասկածյալների ձերբակալման:

Համաձայն կառավարությունից իջեցված կանոնակարգի՝ գյուղական պահակները հաշվետու են ժանդարմերիայի շրջանային հրամանատարին: Սակայն պարզ չէ, թե ինչ վերահսկում կարող էր իրականացվել այն պահակների նկատմամբ, որոնք իրենց պարտականությունները կատարելիս գտնվում էին ժանդարմերիայի շրջանային հրամանատարի իրավազորությունից դուրս գտնվող որևէ տարածքում: Նմանապես, քանզի գյուղի պահակները չէին մտնում ժանդարմների և ոստիկանության ծառայողների կարգապահական և կրթական նորմալ կառույցի մեջ, պարզ չէ, թե ինչ պատժամիջոցներ էին կիրառվում նրանց նկատմամբ կամայական գործողությունների կամ պաշտոնի ոչ միտումնավոր չարաշահման դեպքերում, երբ դա կատարվում էր նրանց սեփական նախաձեռնությամբ կամ անվտանգության ծառայողների հրահանգով, որոնք հենց իրենք էլ գործում էին օրենքից դուրս:

416. Քանի որ չի ներկայացված Մեհմեթ Ծերիֆ Ավշարի սպանության որևէ արդարացում, դատարանը եզրակացնում է, որ նրա սպանության պատասխանատվությունն ընկնում է կառավարության վրա:

Հետևաբար այս առնչությամբ խախտվել է 2-րդ հոդվածը:

Այս վճիռը խիստ ողջունելի է այն առումով, որ փորձում է ստիպել, որ պետությունները հաշվետու լինեն ոչ միայն իրենց անվտանգության կանոնավոր ուժերի, այլև քաղաքացիական կամավորների գործողությունների համար: Վճիռը վեր է հանում մարդու իրավունքների նկատմամբ ոտնձգությունների այն պոտենցիալ վտանգը, որ գալիս է այդ վերջին կատեգորիայի մարդկանցից: Այդ վտանգն ուժգնանում է այն դեպքերում, երբ քաղաքացիական կամավորների ձեռքին զենք է հայտնվում, երբ այդ կամավորները գործում են այնպիսի տեղանքում, որտեղ ունեն սերտ անձնական կապեր կասկածյալների և զոհերի հետ, և երբ նրանց վերահսկելու հնարավորությունները սահմանափակ են: Եթե պետությունները ցանկանում են իրենց գործողություններում ընդգրկել քաղաքացիական կամավորների, ապա պարտավոր են նրանց համար ապահովել համապատասխան վերապատրաստում իրենց լիազորությունների ճիշտ օգտագործման և այդ լիազորությունների սահմանափակումների վերաբերյալ, նրանց նկատմամբ ապահովել արդյունավետ վերահսկողություն և կարգապահություն:

9 Եթե դիմողը հայտարարում է, թե պետության գործակալները սպանել են որևէ անձի՝ ի խախտումն կոնվենցիայի 2-րդ հոդվածի, ապա նախքան պետությանը կոնվենցիայով սահմանված կարգով ուղղակի պատասխանատվության կանչելը դատարանը պարտավոր է համոզվել, որ քննվող փաստերը բավարար են, որպեսզի դատարանը «ի վիճակի լինի ողջամիտ կասկածից դուրս եզրակացնել» (*Յաշայի* գործով վճռի 97-րդ պարբերություն), որ պետությունը պատասխանատու է մահվան համար: Թուրքիայի հետ կապված մի շարք գործերում դատարանն ի վիճակի չի եղել որոշելու, թե ո՛վ է անմիջականորեն պատասխանատու մահվան համար (օրինակ՝ վերը բերված *Էրգիի* գործում), կամ բավականաչափ փաստեր չեն եղել հաստատելու այդ պետության ուղղակի պատասխանատվությունը մահվան (մահերի) համար (օրինակ՝ *Յաշայի* գործում): *«Յաշան ընդդեմ Թուրքիայի»* (*Yasa v Turkey* (1998) 28 EHRR 408, Reports 1998-VI]) գործում դիմողը՝ լրատվական գործակալը, հայտարարում էր, որ իր քեռին հրազենով սպանվել է թուրքական անվտանգության ծառայության զորքերից այն պատճառով, որ դիմողը վաճառել է քրդամետ «Օզգյուր Գունդեմ» թերթը (10-րդ հոդվածի համաձայն թերթի բավարարված գանգատը տե՛ս ստորև՝ էջ 661): Հանձնաժողովն ի վիճակի չէր ողջամիտ կասկածից վեր հաստատելու, որ անվտանգության կամ ոստիկանության ծառայողները ներգրավված են եղել կրակոցների մեջ: Հետևաբար, դատարանը եզրակացրեց, որ Թուրքիան փաստացի կրակոցների մասով չի խախտել կոնվենցիայի 2-րդ հոդվածը: Թեև միշտ չէ, որ դատարանն ի վիճակի է որոշելու, թե փաստացի ով է պատասխանատվություն կրում տվյալ սպանության համար, այդուհանդերձ դատարանը կարող է պետությանը պատասխանատվության կանչել 2-րդ հոդվածի այլ կողմերը խախտելու համար (օրինակ՝ բացթողումներն անվտանգության գործողության ծրագրման ոլորտում, ինչպես *Էրգիի* գործում, կամ մահվան գործի կապակցությամբ արդյունավետ հետաքննություն չանցկացնելը, ինչպես *Յաշայի* գործում):

10 Եթե անձը կալանավորվում է պետության գործակալների կողմից և դրանից հետո անհետանում, և նրան ոչ ոք այլևս չի տեսնում, իսկ նրա մարմինը երբևէ չի հայտնաբերվում, ապա դատարանը կարող է դատավարությունն անցկացնել բավարար քանակությամբ կողմնակի ապացույցների հիման վրա՝

որոշելով, որ պետությունը պատասխանատու է կոնվենցիայի 2-րդ հոդվածով: Օրինակ՝ *«Իփեքն ընդդեմ Թուրքիայի»* (*Ipek v Turkey*) գործում, որի առնչությամբ վճիռը կայացվել է 2004 թ. փետրվարի 17-ին, դիմողը գանգատվում էր իր երկու որդիների անհետացման կապակցությամբ: Դատարանը պարզեց, որ նրանք գտնվել են վեց երիտասարդներից բաղկացած մի խմբի կազմում, որը ձերբակալվել է 1994 թ.՝ նրանց գյուղի վրա կազմակերպված մարտարշավի ընթացքում: Կալանավորված վեց երիտասարդներին տեղափոխել են մոտակա ավանում գտնվող ռազմական հաստատություն: Այնտեղ ժամանելուց հետո նրանց բաժանել են երեք հոգանոց երկու խմբի: Այդ խմբերից մեկի անդամները հաջորդ օրն ազատ են արձակվել, իսկ մյուս խմբին (որի կազմում էին դիմողի որդիները) ոչ ոք այլևս չէր տեսել, իսկ նրանց մարմինները երբևէ չեն գտնվել: Մեջբերելով առավել վաղ՝ *«Թիմուրթաշն ընդդեմ Թուրքիայի»* (ECHR 2000-VI) գործը՝ դատարանը որոշեց.

166. …Այն հարցը, թե դիակի բացակայության պարագայում իշխանությունների՝ կալանավորվածի ճակատագրի մասին հավաստի բացատրություն տալու անկարողությունը կարո՞ղ է հարցեր առաջացնել՝ կապված կոնվենցիայի 2-րդ հոդվածի հետ, կախված է գործի բոլոր հանգամանքներից, մասնավորապես՝ բավարար թվով կողմնակի ապացույցներից, որոնք հիմնված լինեն որոշակի փաստերի ու հանգամանքների վրա, ինչից կարելի է եզրակացնել, ապացույցների պահանջվող չափանիշի համաձայն, որ կալանավորվածը ենթադրաբար մահացել է կալանքի տակ լինելու ընթացքում: … Այդ կապակցությամբ այն ժամանակահատվածը, որն անցել է անձին կալանքի տակ առնելուց ի վեր, քննության արժանի կարևորագույն գործոն է, թեև ինքնին ոչ այնքան որոշիչ: Անհրաժեշտ է ընդունել, որ առանց նորություններ լսելու, որքան շատ ժամանակ է անցնում, այնքան ավելի է մեծանում այն հավանականությունը, որ այդ անձը մահացել է: Ուստի ժամանակի հոսքը կարող է ինչ-որ չափով ազդել կողմնակի ապացույցների մնացած տարրերի կարևորության վրա, քանի դեռ հնարավոր չի լինի եզրակացնել, որ տվյալ անձին պետք է ենթադրաբար մահացած համարել …

Կիրառելով այս մոտեցումը՝ դատավորները եզրակացրին, որ դիմողի որդիներին տեսել են այն պահին, երբ նրանց ձերբակալել են զինվորները, որոնք նրանց այնուհետև տարել են ռազմական ինչ-որ հաստատություն, և դրանից հետո ինը տարվա ընթացքում ոչ մի տեղեկություն չի հասել, թե որտեղ կարող են նրանք գտնվել: Ուստի դատարանը միաձայն եկավ հետևյալ եզրահանգման.

168.... Սերվեթ և Իքրամ Իփեքներին պետք է ենթադրաբար մահացած համարել՝ անվտանգության ուժերի կողմից չճանաչված նրանց կալանավորումից հետո: Հետևաբար, պատասխանող պետության պատասխանատվությունը նրանց մահվան հարցում հաստատված է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իշխանությունները չեն ներկայացրել ոչ մի բացատրություն, թե ինչ է պատահել Իփեք եղբայրներին կալանքից հետո, ինչպես նաև այն, որ նրանք չունեն արդարացման որևէ հիմք իրենց գործակալների կողմից մահացու ուժի կիրառման առնչությամբ, դրանից հետևում է, որ եղբայրների մահվան համար պատասխանատու է պատասխանող պետությունը: Հետևաբար, այդ առումով տեղի է ունեցել կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում:

Ականատեսների վկայությունները (հատկապես անկողմնակալ երրորդ կողմի), որոնք հաստատում են դիմողների հայտարարությունն այն մասին, որ իրենց հարազատին վերջին անգամ տեսել են պետության գործակալների կողմից կալանքի վերցվելու պահին, ինչպես նաև անհետացման երկար ժամկետները վճռական հանգամանքներ են, որոնք հնարավորություն են տալիս դատարանին որոշելու, որ այս հոդվածով պետությունը պետք է համարվի պատասխանատու մարդկանց անհետացման համար:

11 Նախկին հանձնաժողովը չկարողացավ հստակ պատասխան տալ այն հարցին, թե արդյոք սաղմնային վիճակում գտնվող, դեռևս չծնված երեխաներն ունե՞ն 2-րդ հոդվածով սահմանված իրավունքները: *«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*X v UK*, 19 DR 244 (1980)) գործում դիմողը ամուսնացած տղամարդ էր, որի կինը Անգլիայում օրինական եղանակով վիժեցման գործողություն էր կատարել: Նախկինում դիմողը փորձել էր գերագույն դատարանից հրահանգ ստանալ, որպեսզի կանխվեր աբորտը, սակայն դատարանը նրան մերժել էր (գերագույն դատարանը որոշել էր, որ ներպետական իրավունքի համաձայն՝ չծնված սաղմը օրինական իրավունքներ չունի մինչև այն պահը, երբ ծնվում է և անջատվում իր մորից): Այնուհետև դիմողը հայտարարել էր, ի թիվս այլոց, 2-րդ հոդվածի խախտման մասին, քանզի Անգլիայի օրենքը սաղմին որևէ իրավունք չի վերապահում:

Հանձնաժողովն այս հարցում այն կարծիքին էր, որ «ինչպես կոնվենցիայում օգտագործվող «յուրաքանչյուրը» եզրույթի ընդհանուր գործածությամբ, այնպես էլ այն համատեքստով, որում այդ տերմինը գործածվում է 2-րդ հոդվածում, հաստատվում է այն տեսակետը, որ այն նկատի չի առնում չծնվածներին» (պարբ. 9): Այդուհետ հանձնաժողովը մերժեց այն պնդումը, որ սաղմը ապրելու բացարձակ իրավունք ունի՝ համաձայն 2-րդ հոդվածի:

20. Հանձնաժողովը համարում է, որ նման մեկնաբանումը կհակասեր կոնվենցիայի խնդիրներին և նպատակներին: Հանձնաժողովը նշում է, որ արդեն կոնվենցիայի ստորագրման պահին բարձր պայմանավորվող կողմերը, բացի մեկից, թույլ էին տվել աբորտը, եթե այն անհրաժեշտ է մոր կյանքը փրկելու համար: Միաժամանակ հղիության ընդհատման մասին ազգային օրենսդրությունը առավել մեծ ազատականացման միտում է ցուցաբերել:

Բացի այդ.

22. Սույն գործում հանձնաժողովին զբաղեցնում է ոչ թե հարցի առավել ընդհանրական կողմը, այն է՝ արդյոք 2-րդ հոդվածով ճանաչվո՞ւմ է սաղմի «ապրելու իրավունքը» հղիության ամբողջ տևողության ընթացքում, այլ առավել նեղ սահմանումը, այն է՝ արդյոք այդ իրավունքը ենթադրվո՞ւմ է հղիության սկզբնական փուլում: Ավելին, ինչ վերաբերում է հղիության նախնական փուլում սաղմի «ապրելու իրավունքի» ենթադրվող սահմանափակումներին, ապա միայն հղի կնոջ կյանքն ու առողջությունը պաշտպանող սահմանափակումները (այսպես կոչված «բժշկական ցուցումները») կարող են դեր խաղալ սույն գործի որոշման հարցում, իսկ այլ սահմանափակումների հարց (բարոյական ցուցումները, ժառանգական ցուցումներ, սոցիալական ցուցումներ, ժամանակային սահմանափակումներ) չի ծագում:

23. Հանձնաժողովը կարծում է, որ տվյալ հանգամանքներում իրենից չի պահանջվում որոշել՝ արդյոք 2-րդ հոդվածում սաղմի մասին որևէ բան ասվո՞ւմ է, թե՞ ոչ, կամ արդյոք այդ հոդվածով ճանաչվո՞ւմ է սաղմի «ապրելու իրավունքը», սակայն ենթադրվող սահմանափակումներով: Հանձնաժողովը համարում է, որ աբորտի թույլատրումը Մեծ Բրիտանիայի իշխանությունների կողմից, որը գանգատարկվում է ներկա գործում, համապատասխանում է կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի առաջին նախադասությանը, որովհետև եթե ենթադրվում է, որ այդ դրույթը վերաբերում է հղիության նախնական փուլին, ապա աբորտին վերաբերում է սաղմի «ապրելու իրավունքի» ենթադրվող սահմանափակումը, որով պաշտպանվում են կնոջ կյանքն ու առողջությունն այդ փուլում:

24. Հանձնաժողովը եզրակացնում է, որ դիմողի գանգատը, ըստ կոնվենցիայի 2-րդ հոդվածի, անընդունելի է, քանզի այն ակնհայտ վատ է հիմնավորված հոդված 27(2)-ի իմաստով:

Աբորտի թեմային անդրադարձող այլ գործերի համար տե՛ս ստորև՝ էջ 520 (A.8 *Բրյուգեման (Bruggemann)* և A.10 *«Բաց դուռ» (Open Door)*):

12 Նույն կերպ մեծ պալատը հրաժարվեց որոշակի պատասխան տալուց այն հարցին, թե արդյոք չծնված երեխան համարվո՞ւմ է «անձ»՝ 2-րդ հոդվածի իմաստով, *«Վոն ընդդեմ Ֆրանսիայի» (Vo v France)* գործում, որի առնչությամբ վճիռը կայացվել է 2004 թ. հուլիսի 8-ին: Դիմողը՝ տիկին Թի-Նհո Վոն, 24-ամյա Ֆրանսիայի քաղաքացի էր՝ վիետնամական ծագումով: 1991 թ. նա վեցամսյա հղիության վիճակում գնացել է Լիոնի հանրային հիվանդանոց՝ հերթական բժշկական քննության: Այդ նույն օրը ոմն տիկին՝ Թի Թհան Վան Վոն, պետք է այդ հիվանդանոցում հեռացներ հակաբեղմնավորիչ պարույրը: Պարույրի հեռացման համար պատասխանատու բժիշկը սպասասրահ է դուրս եկել և կանչել՝ տիկին Վո: Դիմողն արձագանքել է այդ անվանը (բժիշկը նկատել է, որ նա լավ չի հասկանում ֆրանսերեն): Այնուհետև բժիշկն աչքի է անցկացրել տիկին Վան Վոյի բժշկական գրանցումները և, առանց զննում կատարելու, փորձել է հեռացնել պարույրը: Այդ գործողությունը կատարելիս բժիշկը ծակել է դիմողի սաղմնապարկը՝ առաջացնելով հեղուկի նշանակալի մասի արտահոսք, որի հետևանքով մի քանի օր անց դիմողը ստիպված է եղել ենթարկվել հղիության (անցանկալի) դադարեցման վիրահատության: Դիմողը և նրա ընկերը քրեական գործ են հարուցել բժշկի դեմ: Նրան ներկայացվող մեղադրանքներն էին (սաղմի) ոչ միտումնավոր սպանությունը և դիմողի ոչ միտումնավոր վնասումը: Վերջին մեղադրանքը հետագայում չեղյալ համարվեց համաներման շնորհիվ: Ի վերջո, վճռաբեկ դատարանը որոշեց, որ առաջին օրինախախտումը պետք է մեկնաբանվի ամենայն խստությամբ, և այն չի տարածվում սաղմի նկատմամբ: Դիմողը գանգատ ներկայացրեց Ստրասբուրգի դատարան՝ հայտարարելով, ի թիվս այլոց, որ Ֆրանսիայի օրենքի հրաժարումն իր

չծնված երեխային կյանքից զրկելու փաստը ոչ դիտավորյալ սպանություն ճանաչելու հարցում 2-րդ հոդվածի խախտում է: Դիմողի համոզմամբ՝ չծնված երեխան նույնպես անձ է: Կառավարությունը պատասխանեց, որ «ո՛չ մետաֆիզիկական և ո՛չ էլ բժշկությունը» որոշակի պատասխան չեն տվել այն հարցին, թե երբ է սաղմը դառնում մարդ արարած, և 2-րդ հոդվածը չի պաշտպանում սաղմի կյանքի իրավունքը: Դատարանը որոշեց.

75. Ի տարբերություն Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի, որում ասվում է, որ կյանքի իրավունքը պետք է պաշտպանվի «առհասարակ, բեղմնավորման պահից սկսված», կոնվենցիայի 2-րդ հոդվածում ոչինչ չի ասվում կյանքի իրավունքի ժամանակային սահմանափակման մասին, ինչպես և, մասնավորապես, չի սահմանվում «յուրաքանչյուր ոք»-ը (toute personne), որի «կյանքը» պաշտպանվում է կոնվենցիայով: Դատարանը դեռևս պետք է որոշի «յուրաքանչյուրի կյանքի իրավունքի» «սկզբնակետը»՝ այդ դրույթի իմաստով և սահմանի՝ չծնված երեխան ունի՞ այդ իրավունքը, թե՞ ոչ:

Առ այսօր այդ հարցը բարձրացվել է միայն աբորտի առնչությամբ: Աբորտը 2-րդ հոդվածի 2-րդ կետով հստակ սահմանված բացառություններից մեկը չէ, սակայն հանձնաժողովն այն միտքն է արտահայտել, որ այն համատեղելի է 2-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե ելնենք մոր կյանքն ու առողջությունը պաշտպանելու շահերից, որովհետև «եթե ենթադրվում է, որ այդ դրույթը վերաբերում է հղիության նախնական փուլին, ապա աբորտին վերաբերում է սաղմի «ապրելու իրավունքի» ենթադրյալ սահմանափակումը, որով պաշտպանվում են կնոջ կյանքն ու առողջությունն այդ փուլում» (տե՛ս *«X-ի ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործով հանձնաժողովի ընդունած որոշումը [(1980) 19 DR 244] էջ 253):

76. Նախապես հրաժարվելով աբորտի մասին օրենքների և կոնվենցիայի 2-րդ հոդվածի համատեղելիության հարցը վերացականորեն քննելուց (տե՛ս *«X-ի ընդդեմ Նորվեգիայի»* (*X v Norway*, թիվ 867/60) գործը, հանձնաժողովի որոշումը՝ 29 մայիսի, 1961 թ., Որոշումների ժողովածու 6, էջ 34 և *«X-ի ընդդեմ Ավստրիայի»* (*X v Austria*, թիվ 7045/75) գործը, հանձնաժողովի որոշումը՝ 10 դեկտեմբերի, 1976 թ. DR 7, էջ 87), հանձնաժողովը որոշեց *«Բրյուգեմանն ու Շոյթենն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության»* (*Bruggemann and Scheuten v the Federal Republic of Germany*, 10 D&R 100 (1977)) գործում, որ այն կանայք, ովքեր, կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն, բողոքում են աբորտների մատչելիությունը սահմանափակող սահմանադրական դատարանի որոշման դեմ, հանդես են գալիս տուժածների կարգավիճակով: Այդ առնչությամբ հանձնաժողովը սահմանեց, որ «հղիությունը չի կարող համարվել սոսկ անձնական կյանքին վերաբերող հանգամանք: Երբ կինը հղիանում է, նրա անձնական կյանքը սերտորեն կապվում է զարգացող սաղմի հետ» (նույն տեղում՝ էջ 116, պարբ. 59): Այդուհանդերձ, հանձնաժողովը չի համարում, որ «այս համատեքստում անհրաժեշտ է որոշել՝ չծնված երեխան պե՞տք է համարվի «կյանք»՝ կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով, թե՞ կարող է համարվել էակ, որը 8-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կարող է արդարացնել միջամտությունը «այլ անձանց … պաշտպանության նպատակով» (նույն տեղում՝ էջ 116, պարբ. 60): Հանձնաժողովն արտահայտեց այն կարծիքը, որ կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել, քանզի «անցանկալի հղիությունների դադարեցման կարգավորման ոչ բոլոր փորձերն են համարվում միջամտություն մոր անձնական կյանքի հարգման իրավունքին» (նույն տեղում՝ էջ 116-117, պարբ. 61): Միաժամանակ հանձնաժողովը շեշտեց՝ «չկան փաստեր, որ կոնվենցիայի բարձր պայմանավորվող կողմերը նպատակ ունեին իրենց պարտավորված համարել՝ ի շահ որևէ որոշակի լուծման» (նույն տեղում՝ էջ 117-118, պարբ. 64):

…

78. *«Հ.-ի ընդդեմ Նորվեգիայի»* (*H. v Norway*) գործում խոսքը ոչ բժշկական հաստատությունում հոր կամքին հակառակ կատարված վիժեցման գործողության մասին էր, հանձնաժողովն ավելացրեց, որ կոնվենցիայի 2-րդ հոդվածով պահանջվում է, որ պետությունը ոչ միայն խուսափի անձին դիտավորյալ կյանքից զրկելուց, այլև համապատասխան քայլեր ձեռնարկի կյանքը պաշտպանելու ուղղությամբ (տե՛ս *«Հ-ի ընդդեմ Նորվեգիայի»* գործը [73D&R 155 (1992)], էջ 167): Հանձնաժողովը համարում էր, որ հարկ չկա որոշելու՝ «արդյոք սաղմը կարո՞ղ է օգտվել կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին նախադասությամբ երաշխավորվող պաշտպանությունից», սակայն չէր բացառում այն հնարավորությունը, որ «որոշակի հանգամանքներում դա այդպես էլ կլինի, չնայած բարձր պայմանավորվող կողմերի շրջանում զգալի տարաձայնություն կա այն հարցի շուրջ, թե արդյոք կամ ինչ աստիճանով է 2-րդ հոդվածը պաշտպանում չծնված կյանքը» (նույն տեղում): Հանձնաժողովն այնուհետ նշեց, որ նման զգայուն հարցում բարձր պայմանավորվող կողմերը պետք է պահպանեն գործողության որոշակի ազատություն, և եզրակացրեց, որ մոր որոշումը՝ ընդունված Նորվեգիայի օրենսդրության համաձայն, չի գերազանցել այդ ազատությունը (նույն տեղում, էջ 168):

79. Դատարանը խիստ հազվադեպ է առիթ ունեցել քննելու սաղմի նկատմամբ կոնվենցիայի 2-րդ հոդվածի կիրառման հարցը: *«Բաց դուռ»-ի և «Դուբլինի տատմեր»-ի* (*Open Door and Dublin Well Woman*, A.246-A (1992)) գործում Իռլանդիայի կառավարությունը հիմնվեց չծնված երեխայի կյանքի պաշտպանության դրույթի վրա՝ արդարացնելով իր օրենսդրությունը, որով արգելվում էր զանգվածայնորեն տեղեկատվություն տարածել (աբորտով զբաղվող) բուժհաստատությունների մասին: Լուծման ենթակա միակ հարցն այն էր, թե արդյոք (կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով) քննվող տեղեկատվությունը ստանալու և հաղորդելու ազատության սահմանափակումն անհրաժե՞շտ է

ժողովրդավարական հասարակությունում՝ հետապնդելու «բարոյականության պաշտպանության օրինավոր նպատակը, որի բաղկացուցիչներից մեկն է Իռլանդիայում չծնված երեխայի կյանքի իրավունքի պաշտպանությունը» (տե՛ս վերը հիշատակված *«Open Door-ի և Dublin Well Woman»-ի* գործը, էջ 27-28, պարբ. 63), քանզի դատարանը հարկ չէր համարում քննել, թե «արդյոք վիժեցման իրավունքը երաշխավորվո՞ւմ է կոնվենցիայով, կամ արդյոք 2-րդ հոդվածով երաշխավորվող կյանքի պաշտպանության դրույթը վերաբերո՞ւմ է սաղմին» (նույն տեղում, էջ 28, պարբ. 66): Վերջերս վերը հիշատակված *«Հ-ն ընդդեմ Նորվեգիայի» (H. v Norway)* գործի համանման հանգամանքներում, երբ կինը որոշել էր ընդհատել հղիությունը երեխայի հոր կամքին հակառակ, դատարանը եզրակացրել է, որ չի պահանջվում որոշել՝ արդյոք 2-րդ հոդվածի 1-ին նախադասությամբ երաշխավորվող պաշտպանությունը վերաբերո՞ւմ է սաղմին, թե՞ ոչ, ինչպես մեկնաբանվում է [կյանքը պաշտպանելու դրական պարտավորությանը վերաբերող դատարանի նախադեպային իրավունքում], և շարունակեց. «Եթե նույնիսկ ենթադրենք, որ որոշակի հանգամանքներում սաղմն ունի կոնվենցիայի 2-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքներ, … ապա քննության առնվող գործում … հղիությունն ընդհատվել է 1978 թ. թիվ 194 օրենքի 5-րդ բաժնի համաձայն, մի օրենք, որն արդարացի հավասարակշռություն է սահմանում կանանց շահերի և սաղմի պաշտպանության անհրաժեշտության միջև» (տե՛ս *«Բոզոն ընդդեմ Իտալիայի» (Boso v Italy)* գործը (որոշում), թիվ 50490/99, ECHR 2002-VII):

80. Դատական պրակտիկայի ներկարագրության այս հակիրճ կրկնությունից հետևում է, որ կոնվենցիայի հաստատությունների կողմից մինչ այսօր քննված հանգամանքներում, այսինքն՝ աբորտին վերաբերող տարբեր օրենքներում չծնված երեխան չի դիտվում որպես «անձ», որն անմիջականորեն պաշտպանվում է կոնվենցիայի 2-րդ հոդվածով, և եթե չծնված երեխան իրոք ունի «կյանքի իրավունք», ապա այն ենթադրաբար սահմանափակվում է մոր իրավունքներով և շահերով: Կոնվենցիայի հաստատությունները, այդուհանդերձ, չեն անտեսել այն հնարավորությունը, որ որոշ հանգամանքներում պաշտպանությունը կարող է ներառել նաև չծնված երեխային: Ըստ որևէթիկ, դա է նկատի առել հանձնաժողովը, երբ սահմանել էր, որ «8-րդ հոդվածի 1-ին կետը չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե հղիությունը և դրա ընդհատումը սկզբունքորեն մոր անձնական կյանքին վերաբերող հարցեր են» (տե՛ս վերը հիշատակված *«Բրյուգեմանն ու Շոյթենն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության»* գործը, էջ 116-117, պարբ. 61), և դա էր հաշվի առել դատարանը վերը հիշատակված *Բոզոյի* գործում: Այդ գործերի ուսումնասիրությունից պարզ է դառնում նաև, որ հարցը քննելիս մշտապես կշռադատվել են այն տարբեր (երբեմն նույնիսկ հակասական) իրավունքներն ու ազատությունները, որ ունեն կինը, մայրը կամ հայրն իրար նկատմամբ կամ չծնված երեխայի նկատմամբ:

2. ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՐԾԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՈՏԵՑՈՒՄԸ

81. Վարույթում գտնվող գործի առանձնահատուկ բնույթից առաջանում է նոր խնդիր: Դատարանը լսում է մի կնոջ գործ, որը մտադիր էր մինչև վերջ հասցնել իր հղիությունը, և նրա լույս աշխարհ չեկած երեխան պետք է որ կենսունակ կամ առնվազն առողջ լիներ: Բժշկի սխալի պատճառով նրա հղիությունը ենթակա է եղել ընդհատման: Փաստորեն երրորդ անձի անփութության պատճառով նա ստիպված է եղել կատարել արհեստական վիժում: Խնդիրը, հետևաբար, այն է, թե բացառությամբ այն դեպքերի, երբ արհեստական վիժումը կատարվում է մոր պահանջով, պտղին հասցված վնասը, ըստ կոնվենցիայի 2-րդ հոդվածի, պե՞տք է համարվի քրեական արարք, որպեսզի այդ հոդվածի շրջանակներում պտուղը պաշտպանվի: Այդ առումով անհրաժեշտ է նախապես ուսումնասիրել այն հարցը, թե որքանով է նպատակահարմար դատարանի համար խառնվել «ով է անձը» և «երբ է սկսվում կյանքը» բանավեճին՝ հաշվի առնելով, որ 2-րդ հոդվածի համաձայն՝ օրենքը պետք է պաշտպանի «բոլորի կյանքի իրավունքը»:

82. Նախադեպային իրավունքի վերը ներկայացված համառոտ տեսությունից ակնհայտ է, որ այս կապակցությամբ 2-րդ հոդվածի մեկնաբանությունը բխում է հավասարակշռություն պահպանելու հստակ նպատակից, իսկ «մարդ էակի» սահմանման իրավական, բժշկական, փիլիսոփայական, էթիկական կամ կրոնական կողմերի առումով կոնվենցիայի հաստատությունների դիրքորոշումը հաշվի է առնում ներպետական մոտեցումները: Սա անդրադարձել է կյանքի սկզբնավորման, պաշտպանության իրավական մշակույթների և ազգային չափորոշիչների տարբեր տեսակետների քննարկումների վրա, և պետությանն զգալի ազատություն է տրվել այս հարցում, քանի որ Համայնքի մակարդակով գործող էթիկայի հարցերով եվրոպական խումբն իրավացիորեն սահմանել է, որ «... Համայնքի իշխանությունները պետք է կարգավորեն այս էթիկական խնդիրները՝ հաշվի առնելով առկա բարոյագիտական և փիլիսոփայական տարբերությունները, որոնք արտահայտվում են մարդու սաղմի հետազոտությունների նկատմամբ գործող իրավական նորմերի միջև առկա խիստ մեծ տարբերություններով… Համայնքի մակարդակով ազգային օրենսդրությունների ներդաշնակեցումը դժվար է ոչ միայն իրավաբանական տեսանկյունից: Համընդհանուր համաձայնության բացակայության պայմաններում նպատակահարմար չէ մեկ բացառիկ բարոյական օրենսգիրք պարտադրելը» [23 նոյեմբերի 1998 թ.]:

Սրանից բխում է, որ կյանքի սկզբնավորման պահը որոշելու խնդիրն առանձին երկրների հայեցողության սահմաններում է: Ընդհանուր առմամբ, դատարանը կարծում է, որ տվյալ ոլորտում պետությունները պետք է ունենան նման իրավասություն, անկախ կոնվենցիայի էվոլյուցիոնիստական մեկնությունից՝ հիմնված այն համոզմունքի վրա, որ այն «գործող փաստաթուղթ է, որը պետք է մեկնաբանվի այսօրվա պայմաններին համապատասխան» (տե՛ս *«Թայրերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Tyrer v the United Kingdom)* գործը, 1978 թ. ապրիլի 25-ի վճիռ, շարք A, թիվ 26, էջ

15-16, պարբ. 31 և դրան հաջորդած իրավունք ձևավորող նախադեպերը): Այս եզրակացությունը, առաջին հերթին, պայմանավորված է այն հանգամանքով, որ նման պաշտպանության խնդիրը կարգավորված չէ պայմանագրին միացած պետությունների մեծ մասում, նաև հենց Ֆրանսիայում, որտեղ դարձել է բանավեճի առարկա... և երկրորդ՝ այն հանգամանքով, որ Եվրոպայում գոյություն չունի միասնական կարծիք կյանքի սկզբնավորման գիտական և իրավական սահմանումների շուրջ:

83. Դատարանը նկատում է, որ 1999, 2001 և 2002 թթ. Ֆրանսիայի վճռաբեկ դատարանի երեք հաջորդական վճիռներում նշվել է, որ այն կանոնը, համաձայն որի՝ իրավախախտումները և պատիժը պետք է սահմանվեն օրենքով, իսկ քրեական օրենքները մեկնաբանվեն խստորեն, պտղին մահացու վնաս պատճառելու գործողությունները քրեական օրենսգրքի 221-6 հոդվածում չի նախատեսում, համաձայն որի՝ «մեկ ուրիշի» չկանխամտածված սպանությունը քրեորեն պատժելի արարք է: Այնուամենայնիվ, եթե մայրը ծննդաբերում է կենդանի երեխա, որը ծնվելուց հետո քիչ անց մահանում է ոչ դիտավորյալ անբարեխղճության պատճառով, ապա պատասխանատու անձը կարող է մեղավոր ճանաչվել երեխայի չկանխամտածված մահ առաջացնելու համար: Նշված առաջին մոտեցումը, հակասելով մի քանի վերաքննիչ դատարանների մոտեցումներին, մեկնաբանվել է որպես իրավական վակուումը լրացնելու նպատակով օրենսդրին ուղղված առաջարկ: Սա եղել է նաև վարույթում գտնվող գործի նկատմամբ քրեական դատարանի դիրքորոշումը. «Դատարանը ...չի կարող ստեղծել օրենք մի խնդրի վերաբերյալ, որը դեռևս սահմանված չէ [օրենսդրի կողմից]»: Ֆրանսիայի խորհրդարանը փորձել է նման օրենք սահմանել՝ առաջարկելով մտցնել կամքին հակառակ հղիության ընդհատում հասկացությունը: Այս առաջարկի նախագիծը, սակայն, չի ընդունվել, քանի որ նոր արարքի ձևակերպումը կարող էր առաջացնել կյանքի սկզբի որոշմանն առնչվող մտավախություններ և անորոշություններ, և առաջարկի թերությունները համարվել են ավելին, քան առավելությունները: Վճռաբեկ դատարանի կրկնվող որոշումների համատեքստում դատարանը նշում է, որ քրեական օրենսգրքի 221-6 հոդվածը չի վերաբերում լույս աշխարհ չեկած պտղին, սակայն Ֆրանսիայի խորհրդարանը ներկա դրությամբ վերանայում է 1994 թ. կենսաէթիկայի մասին օրենքները, որոնք մարդկային սաղմի պաշտպանության մասին նոր դրույթներ են ավելացրել քրեական օրենսգրքում և պահանջում են վերանայել այդ դրույթները գիտական և տեխնոլոգիական առաջընթացի տեսանկյունից: Այս ակնարկից պարզ է, որ ներկայումս Ֆրանսիայում սաղմի կամ լույս աշխարհ չեկած պտղի բնույթը և իրավաբանական կարգավիճակը սահմանված չեն, և դրա պաշտպանության եղանակը կախված է ֆրանսիական հասարակությունում առկա ուժերից:

84. Դատարանը նշում է, որ մարդկային սաղմի կամ չծնված պտղի բնույթի և կարգավիճակի վերաբերյալ ընդհանուր համաձայնություն Եվրոպայում չկա, չնայած գիտական առաջընթացի, ինչպես նաև գենետիկ ճարտարագիտության և բժշկական միջամտությամբ վերաստեղծման կամ սաղմի փորձարկումների գիտական հետազոտությունների պոտենցիալ ազդեցությունների շնորհիվ դրանք արդեն որոշ պաշտպանություն ստանում են: Լավագույն դեպքում պետությունները կարող են ելնել այն ընդհանուր հիմքից, որ սաղմը կամ լույս աշխարհ չեկած պտուղը պատկանում է մարդկային ցեղին: Այդ էակի անձ դառնալու ներուժը և կարողությունը, որը պաշտպանված է քաղաքացիական օրենքով, իսկ մի շարք պետություններում, ինչպես, օրինակ՝ Ֆրանսիայում և Միացյալ Թագավորությունում, ժառանգության և նվիրատվության համատեքստում, պահանջում է, որ նա պաշտպանվի հանուն մարդկային արժանապատվության՝ առանց նրան 2-րդ հոդվածով սահմանված «կյանքի իրավունք» ունեցող «անձ» դարձնելու: Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին Օվիեդոյի կոնվենցիան, իրոք, մեծ զգուշավորություն է ցուցաբերում՝ չտալով «յուրաքանչյուր ոք» հասկացության սահմանումը և իր բացատրական զեկույցում նշելով, որ քանզի միասնական համաձայնություն չկա այդ հասկացության սահմանման վերաբերյալ, անդամ պետությունները որոշել են, որ կոնվենցիայի կիրառման նպատակով պարզաբանումները պետք է սահմանվեն իրենց ազգային օրենսդրություններով: Սա ճիշտ է նաև Մարդկանց կլոնավորումն արգելելու մասին լրացուցիչ արձանագրության և Կենսաբժշկական հետազոտությունների մասին լրացուցիչ արձանագրության նախագծի առնչությամբ, որոնցում «մարդ արարած» սահմանումը տրված չէ: Հարկ է նշել, որ Օվիեդոյի կոնվենցիայի 29-րդ հոդվածի շրջանակներում կարելի է դիմել դատարան և պահանջել, որ նա խորհրդատվական կարծիք հայտնի այդ փաստաթղթի վերաբերյալ:

85. Հաշվի առնելով վերոնշյալը՝ դատարանը համոզված է, որ ո՛չ ցանկալի է, ո՛չ էլ հնարավոր վերացարկված պատասխան տալ այն հարցին, թե արդյոք չծնված երեխան կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով հանդիսանո՞ւմ է անձ (personne՝ ֆրանսերեն տարբերակում): Ինչ վերաբերում է վարույթում գտնվող գործին, ապա անհրաժեշտ չի համարում քննարկել՝ դիմողի հղիության կտրուկ ընդհատումը մտնո՞ւմ է 2-րդ հոդվածի շրջանակների մեջ: Եթե նույնիսկ դատարանը համարի, որ տվյալ հոդվածը կիրառելի է, միևնույն է, պատասխանող պետությունը չի թերացել հանրային առողջապահության ոլորտում գործող դրույթներին հետևելու հարցում: Այս հարցի առնչությամբ դատարանը քննարկել է նաև այն հարցը, թե արդյոք չծնված երեխայի կորստի կապակցությամբ Ֆրանսիայի կողմից դիմողին (որը կրում էր այդ երեխային) տրամադրված իրավական պաշտպանությունը բավարարե՞լ է կոնվենցիայի 2-րդ հոդվածին բնորոշ ընթացակարգային պահանջները:

Մեծ պալատի ճնշող մեծամասնությունը՝ տասնչորս կողմ և երեք դեմ ձայներով, եզրակացրել է (ենթադրելով, որ 2-րդ հոդվածը կիրառելի է), որ Ֆրանսիայի վարչական դատարաններում բժշկի կամ հիվանդանոցի դեմ վնասի փոխհատուցման վարույթ սկսելու տարբերակը, որը դիմողի կողմից չի

օգտագործվել, հնարավորություն կտար նրան լիարժեք փոխհատուցում ստանալու բժշկի անփութության հետևանքով թույլ տված սխալի համար: Հետևաբար, ընթացակարգային պահանջները բավարարված են:

Դատավոր Կոստան առանձին կարծիք է հայտնել, որում ասել է հետևյալը.

17. Վերջին հաշվով, ես որևէ ողջամիտ իրավական պատճառ կամ քաղաքականության որոշիչ հիմք չեմ տեսնում 2-րդ հոդվածը սույն գործի նկատմամբ չկիրառելու համար: Ընդհանուր առմամբ, ես, ինչպես և Եվրոպայի մի շարք այլ գլխավոր դատական մարմիններ, հավատում ենք, որ 2-րդ հոդվածի իմաստով կյանք գոյություն ունի նախքան ծնունդը: Այդ իսկ պատճառով օրենքը պետք է պաշտպանի այդ կյանքը: Եթե ազգային օրենսդիր մարմինը համարում է, որ նման պաշտպանությունը չի կարող բացարձակ լինել, ապա պետք է սոսկ շեղվի դրանից, մասնավորապես՝ հղիության կամավոր ընդհատման մասով, շեղումների շրջանակը սահմանափակող կանոնակարգիչ դաշտի շրջանակներում: Տիկին *Վոյի* գործի փաստացի հանգամանքներն ավելի նպատակահարմար են դարձնում 2-րդ հոդվածի կիրառությունը: Նա հղիության 6-րդ ամսում էր: (Ջուտ ցուցադրական նպատակներով համեմատե՛ք սա Գերմանիայի սահմանադրական դատարանի դիրքորոշման հետ, համաձայն որի՝ կյանքը սկսվում է սաղմնավորումից տասնչորս օր անց): Բոլոր հիմքերը կային կարծելու, որ ծնվելուց հետո պտուղը լինելու է կենսունակ: Վերջապես, հղիությունն ընդհատվել է անփույթ գործողության հետևանքով, հակառակ դիմողի ցանկության:

18. Ես այլևս ավելացնելու ոչինչ չունեմ, քանի որ, որոշ ոչ մեծ տարբերություններով, ես համաձայն եմ, որ վճռի եզրակացությունը պետք է լինի այն, որ 2-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Դատավոր Ռոզակիսը, որին միացել են դատավորներ Քաֆլիշը, Ֆիշբախը, Լորենցենը և Թոմասենը, առանձին կարծիք է հայտնել, որում ասված է.

Ակնհայտ է, որ Եվրոպայում իրավունքի և բարոյական նորմերի զարգացման ներկա փուլում չծնված երեխայի [նախածննդյան] կյանքը, թեպետ պաշտպանված է որոշ հատկանիշների մասով, չի կարող հավասարեցվել հետծննդյան կյանքին, ուստի գոյություն չունի կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով պաշտպանության ենթակա «կյանքի իրավունք»:

Դատավոր Ռեսը համաձայն չէ սրան, քանի որ.

4. …Պատմականորեն, «յուրաքանչյուր ոք» ասելով, իրավաբանները նկատի են ունեցել մարդ արարածին, այդ թվում և՝ դեռևս չծնված մարդուն, և, որ առավել կարևոր է, «կյանքը» նրանց ըմբռնմամբ ընդգրկել է մարդկային կյանքի ողջ զարգացումը՝ սաղմնավորման (այսինքն՝ անկախ գոյության) պահից մինչև մահ, որի պարագայում ծնունդն ընդամենը այդ զարգացման փուլերից մեկն է:
. . .

8. 2-րդ հոդվածի կիրառման հայեցողության սահմանների մասին տվյալ դեպքում խոսք չի կարող լինել: Հայեցողության սահմանները, իմ կարծիքով, վերաբերում են պետության՝ 2-րդ հոդվածից բխող դրական պարտավորությունների կատարման միջոցների որոշմանը: 2-րդ հոդվածի (բացարձակ իրավունքի) մեկնաբանության կամ կիրառելիության հարցը չի կարող կախված լինել առանձին պետությունների հայեցողության սահմաններից: Եթե 2-րդ հոդվածը կիրառելի է, ապա հայեցողության ցանկացած սահման պետք է պայմանավորվի դրա ազդեցությամբ:

9. Կարծում եմ, որ 2-րդ հոդվածը կիրառելի է մարդ էակի նկատմամբ նույնիսկ նախքան նրա լույս աշխարհ գալը: (Այս մեկնաբանությունը, իմ կարծիքով, համահունչ է Եվրամիության հիմնարար իրավունքների մասին խարտիայի մոտեցմանը): Եվ քանի որ Ֆրանսիան երրորդ անձանց անփույթ վերաբերմունքից բավարար պաշտպանություն չի նախատեսում մարդու լույս աշխարհ չեկած պտղի համար, ես կարծում եմ, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում: Ինչ վերաբերում է այդ դրական պարտավորության կատարմանն ուղղված առանձնահատուկ միջոցներին, ապա դա արդեն պատասխանող պետության խնդիրն է, որը կամ պետք է խիստ կարգապահական միջոցներ ձեռնարկի կամ քրեական իրավունքի շրջանակներում պաշտպանություն ապահովի չկանխամտածված սպանություններից:

Դատավոր Մուլարոնին, որին միացել է դատավոր Ստրաժնիչկան, առարկել է՝ համարելով, որ Ֆրանսիայի վարչական դատարանները բավարար իրավական պաշտպանություն չեն ապահովել դիմողի «երեխայի» կորստի դեմ և.

Չնայած անձի իրավաբանական ինքնությունը ձեռք է բերվում միայն ծնվելու ժամանակ, դա, իմ կարծիքով, չի նշանակում, որ «յուրաքանչյուրի կյանքի իրավունքը» չի ճանաչվում կամ չի պաշտպանվում նախքան ծնունդը: Ինձ թվում է, որ այս սկզբունքն ընդհանուր է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների համար: Այլապես, եթե պտուղը չի

համարվում կյանք ունեցող, որը պետք է պաշտպանել, ապա ի՞նչ կարիք կա հղիության կամավոր ընդհատումը թույլատրող ազգային օրենսդրություն ունենալ: Այդ իսկ պատճառով արհեստական վիժումը բացառություն է այդ կանոնից, համաձայն որի՝ կյանքը ենթակա է պաշտպանության նույնիսկ ծնունդից առաջ:

Հիմք ընդունելով մեծ պալատի եզրակացությունը՝ համաձայն որի՝ կյանքի սկզբի կամ սաղմի/պտղի իրավական կարգավիճակի խնդրի շուրջ համաեվրոպական համաձայնություն գոյություն չունի, կարելի է հասկանալ, թե ինչու դատարանը չի կարողացել ընդհանուր որոշումներ ընդունել այդ սուբյեկտների նկատմամբ 2-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ: Այնուամենայնիվ, *Վոյի* գործով դատարանի վճիռը ցույց է տալիս, որ դատարանը ցանկանում է քննել չծնված մարդկանց անունից ներկայացվող գանգատները: Ա. Պլոմերը համեմատական համատեքստում այդ վճիռը գնահատում է «Պտղի իրավունքը կյանքի իրավո՞ւնք է: *«Վոն ընդդեմ ընդդեմ Ֆրանսիայի»* գործը» հոդվածում ((2005) 5(2), *Human Rights Law Review* 311):

13 Պետության գործակալների կողմից վատ վերաբերմունքի համատեքստում 2-րդ և 3-րդ հոդվածների միջև առկա տարբերությունները մեծ պալատը քննարկել է *«Իլհանն ընդդեմ Թուրքիայի» (Ilhan v Turkey)* գործում, որի վերաբերյալ վճիռն ընդունվել է 2000 թ. հունիսի 27-ին: Դիմողի եղբայրը փախուստի է դիմել 1992 թ., երբ ժանդարմներն եկել են նրանց գյուղ: Ժանդարմների խումբը հայտնաբերել է նրան և ենթարկել դաժան ծեծի՝ հրացաններով և ոտքերով հարվածներ տեղալով նրա վրա: Ծեծի հետևանքով նա ստացել է ուղեղի վնասվածք, որի պատճառով նրա ձախակողմյան կենսական ֆունկցիաները 60 տոկոսով նվազել են: Չնայած ստացած վնասվածքների լրջությանը (որոնք հիվանդանոց ընդունվելու պահին բժիշկները նկարագրել են որպես կյանքի համար վտանգավոր), ոստիկանները նրան ձերբակալելուց և ծեծելուց հետո երեսունվեց ժամ շարունակ հիվանդանոց չեն տեղափոխել: Դիմողը կարծում է, որ իր եղբոր նկատմամբ կիրառված բռնությունը 2-րդ հոդվածի խախտում է, քանի որ այդ դրույթը վերաբերում է ինչպես մահացու ուժի, այնպես էլ հնարավոր մահացու ուժի (ինչպես, օրինակ՝ այն ուժի, որն ակնհայտորեն կարող է մահվան պատճառ հանդիսանալ) կիրառմանը: Մեծ պալատը ձայների մեծամասնությամբ (տասներկու կողմ և հինգ դեմ) որոշել է, որ.

76. …Պետության պաշտոնյաների կողմից դաժան ֆիզիկական վերաբերմունքը, որը, սակայն, չի հանգեցնում մահվան, միայն բացառիկ հանգամանքներում կարող է մատնանշել 2-րդ հոդվածի խախտում: Գրեթե բոլոր գործերում, երբ անձինք ենթարկվում են ոստիկանների կամ զինվորների հարձակման կամ արժանանում նրանց դաժան վերաբերմունքին, այդ կապակցությամբ գանգատներն ավելի շուտ համապատասխանում են և քննվում են 3-րդ հոդվածի շրջանակներում:

Այսպիսով, մեծամասնության կարծիքով, դիմողի եղբոր նկատմամբ ժանդարմների գործադրած ուժի բնույթը կամ սաստկությունը 2-րդ հոդվածի խախտում չեն առաջացնում: Անհամաձայնություն հայտնող դատավորների կարծիքով, քանի որ 2-րդ հոդվածը կոչված է պաշտպանելու կյանքի իրավունքը, իսկ դիմողի եղբորը հասցված վնասվածքները սպառնացել են նրա կյանքին, ապա նրա նկատմամբ ցուցաբերված դաժան վերաբերմունքն ընկնում է այդ հոդվածի տակ: Բացի այդ, հաշվի առնելով զոհի վնասվածքների լրջությունը, չհամընկնող կարծիք հայտնող դատավորները հարց են տվել, թե ուրիշ ի՞նչ «բացառիկ հանգամանքներ» են պետք, որպեսզի կյանքի համար վտանգավոր դաժան վերաբերմունքը, որը, սակայն, չի հանգեցրել մահվան, ենթակա լինի քննության 2-րդ հոդվածի շրջանակներում: Մեծ պալատը, այնուամենայնիվ, միաձայն որոշել է, որ դիմողի նկատմամբ ժանդարմների դրսևորած դաժան վերաբերմունքը և ժամանակին բուժօգնություն չտրամադրելը խոշտանգման երևույթ են՝ ի խախտումն կոնվենցիայի 3-րդ հոդվածի: Մեծամասնության մոտեցման հիմքում ընկած է այն տեսակետը, որ 2-րդ հոդվածը պետք է կիրառվի այն գործերի դեպքում, որոնք վերաբերում են դաժան վերաբերմունքի հետևանքով մահվան դեպքերին: Մասամբ, սա կարող է բացատրվել այն հանգամանքով, որ այդ նույն ժամանակահատվածում դատարանն ընդլայնել է խոշտանգման մասին 3-րդ հոդվածի շրջանակները (տես ստորև՝ էջ 173):

14 Ավելի ուշ՝ 2004 թ. դեկտեմբերի 20-ին, *«Մակարացիան ընդդեմ Հունաստանի» (Makaratzis v Greece)* գործով դատարանը կայացրել է բացառիկ վճիռ՝ ընդունելով, որ պետական պաշտոնյաների կողմից մահացու ուժի կիրառությունը 2-րդ հոդվածի խախտում է: 1995 թ. սեպտեմբերին Աթենքի կենտրոնում գտնվող Ամերիկայի դեսպանատան շրջակայքում դիմողն իր մեքենայով կարմիր լույսի տակով վազանցում է կատարել: Երեսունից ավելի ոստիկաններ, այդ թվում նաև սեփական մեքենաներով և մոտոցիկլետներով կամավոր միացած ոստիկաններ, մասնակցել են նրա հետապնդմանը: Դիմողը մեքենայով անցել է ճանապարհային ոստիկանության հինգ պահակակետերի կողքով և, բախվելով մի քանի ոչ ոստիկանական մեքենաների, վիրավորել երկու քաղաքացու: Դրանից հետո ոստիկաններն ատրճանակներով և ինքնաձիգներով կրակել են դիմողի մեքենայի վրա: Բենզալցակայանի մոտ նա կանգնեցրել է իր մեքենան, սակայն ոստիկանությունը շարունակել է կրակահերթը: Դիմողն իր մեքենայից դուրս չի եկել, ուստի ոստիկաններն ուժով մուտք են գործել մեքենա: (Ոստիկաններից մեկը մեքենայի վրա ծաղկաման է նետել և կոտրել մեքենայի դիմապակին:) Դրանից հետո դիմողը ձերբակալվել է: Նրա մոտ զենք չի հայտնաբերվել: Նա տեղափոխվել է հիվանդանոց և բուժվել հրազենային վնասվածքներից (նա վիրավորվել է թևից, ոտքից, հետույքից և կրծքից): Այնուհետև, նա մեղավոր է ճանաչվել իր անփութության պատճառով մյուսներին մարմնական վնասվածք պատճառելու համար և դատապարտվել քառասուն օրվա ազատազրկման: Կատարված վարչական քննության արդյունքում դիմողի մեքենայի վրա հայտնաբերվել է տասնվեց փամփուշտի անցք: Պարզվել է, որ դիմողի դեմ գործողությանը մասնակցել է ոստիկանության քսանինը աշխատակից, որոնց, սակայն, կամավոր միացել են նաև անհայտ թվով այլ ոստիկաններ: Վերջիններս դեպքի վայրից հեռացել են առանց իրենց ինքնությունը հայտնելու կամ զենքը հանձնելու, ինչը հնարավորություն կտար պարզելու՝ նրա՞նք են եղել զենքից կրակողները, թե՞ ոչ: Դատախազը գործ է հարուցել ինքնությունը ճշտված ոստիկաններից յոթի դեմ՝ լուրջ մարմնական վնասվածք պատճառելու և զենքի չարտոնված կիրառման մեղադրանքներով: Այնուամենայնիվ, ավելի ուշ Աթենքի առաջին ատյանի քրեական դատարանն արդարացրել է նրանց, քանի որ չի ապացուցվել, որ մեղադրյալները վիրավորել են դիմողին: Դատարանը որոշել է, որ ոստիկանության աշխատակիցներն իրենց զենքն օգտագործել են մեքենան շարքից հանելու համար՝ կարծելով, որ մեքենայի ղեկի առաջ նստած է վտանգավոր քրեական հանցագործ: Դիմողը բողոքել է Եվրոպական դատարան՝ պնդելով, որ տեղի է ունեցել 2-րդ հոդվածի խախտում, քանի որ իր նկատմամբ ոստիկանները կիրառել են անհարկի և անհամաչափ ուժ, իսկ նրանց գործողություններն արդյունավետորեն չեն հետաքննվել: Մեծ պալատը որոշել է հետևյալը.

51. Մյուս կողմից՝ նախադեպային իրավունքով սահմանվել է, որ միայն բացառիկ հանգամանքների առկայության դեպքերում է, որ պետական պաշտոնյաների դրսևորած վատ վերաբերմունքը, որը չի հանգեցրել մահվան, կարող է դիտվել որպես կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում: Կոնվենցիայի շրջանակներում սկսված վարույթի նպատակը չէ քննարկել վիճելի ուժ գործադրած անձանց քրեական պատասխանատվության ենթարկման հարցը: Այնուամենայնիվ, կիրառված ուժի աստիճանը և տեսակը, ինչպես նաև դրա կիրառման մտադրությունը կամ նպատակը մի շարք այլ գործոնների թվում կարող են օգտակար լինել գնահատելու համար՝ արդյոք տվյալ դեպքում պետական պաշտոնյաների գործողությունները, որոնց հետևանքով անձը մարմնական վնասվածքներ է ստացել և բախտի բերմամբ փրկվել մահից, առաջացնո՞ւմ են 2-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության խնդիր՝ հաշվի առնելով այդ հոդվածի առարկան և նպատակը: Գրեթե բոլոր գործերը, որոնցում անձը ենթարկվել է ոստիկանների կամ զինվորների հարձակման կամ արժանացել նրանց վատ վերաբերմունքին, ավելի շուտ առնչվում են կոնվենցիայի 3-րդ հոդվածին և համապատասխանաբար քննարկվում են այդ հոդվածի շրջանակներում (տե՛ս վերը *«Իլհանն ընդդեմ Թուրքիայի» (Ilhan v Turkey)* գործը, պարբ.76):

52. Այդ իսկ պատճառով, տվյալ գործի դեպքում, երբ դիմողին մարմնական վնասվածքներ են պատճառել պետության պաշտոնյաները, դատարանը ոչ միայն պետք է որոշի՝ դիմողի դեմ օգտագործված ուժը եղե՞լ է պոտենցիալ մահացու ուժ, թե՞ ոչ, այլև ի՞նչ ազդեցություն է ունեցել պետության ներկայացուցիչների նման վարքագիծը ոչ միայն նրա ֆիզիկական դրության, այլ նաև նրա՝ կյանքի իրավունքով պաշտպանվող շահի վրա:

53. Երկու կողմերն էլ ընդունում են, որ դիմողը հետապնդվել է մեծ թվով ոստիկանության աշխատակիցների կողմից, որոնք ավելի քան մեկ անգամ կրակել են ատրճանակներով և ինքնաձիգ հրացաններով:

Դատարանին ներկայացված փաստերից պարզ է, որ ոստիկանները դիմել են զենքի կիրառության՝ նպատակ ունենալով կանգնեցնել դիմողի մեքենան և ձերբակալել նրան: Սա այն դեպքն է, որը լիովին համապատասխանում է 2-րդ

հոդվածի 2-րդ կետում ներկայացված իրավիճակին, երբ մահացու կամ պոտենցիալ մահացու ուժի կիրառությունը կարող է օրինական լինել: Ինչ վերաբերում է 3-րդ հոդվածով արգելված դաժան վերաբերմունքին, ապա ոստիկանության աշխատակիցների վարքագծից որևէ կերպ չի կարելի եզրակացնել, որ նրանք մտադրություն են ունեցել ցավ և տառապանք պատճառել, ստորացնել կամ նվաստացնել նրան (որպես թարմ ծանրակշիռ օրինակ՝ տե՛ս *«Իլաշկուն և այլք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի» (Ilascu and Others v Moldova and Russia)* [GC], 425–8, ECHR 2004-VII): Մասնավորապես, ներկայացված նյութերի հիման վրա դատարանը չի կարող ապացուցված համարել դիմողի պնդումները, թե նրան մեքենայից հեռացնելուց հետո կրակոցներ են արձակվել նրա ոտքի վրա:

54. Նմանապես, դատարանն ընդունում է կառավարության տեսակետը, որ ոստիկանները դիմողին սպանելու մտադրություն չեն ունեցել: Այնուամենայնիվ, դատարանը համարում է՝ այն հանգամանքը, որ դիմողը չի սպանվել, զուտ պատահականություն է: Համաձայն ճգաբանական հաշվետվության՝ մեքենայի վրա հայտնաբերվել է տասնվեց անցք, որոնք առաջացել են մեքենայի ղեկի առաջ նստած վարորդի նկատմամբ հորիզոնական կամ ուղղաձիգ հետագծով արձակված գնդակներից: Մեքենայի դիմապակու վրա հայտնաբերվել են երեք անցք և քերծվածք, որոնք առաջացել են հետևի ապակու միջով արձակված գնդակներից, դրա հետևանքով հետևի ապակին կոտրվել է և թափվել: Վերջապես, դիմողը վիրավորվել է աջ թևից, աջ ոտքից, հետույքի ձախ և կրծքավանդակի աջ հատվածներից, որից հետո ինը օր բուժում է ստացել հիվանդանոցային պայմաններում: Կողմերը չեն վիճարկում նրա ստացած վերքերի լրջությունը:

55. Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները և, մասնավորապես, կիրառված ուժի բնույթը և սաստկությունը՝ դատարանը եզրակացնում է, որ անկախ այն հանգամանքից՝ ոստիկանությունն իրոք մտադիր է եղել սպանել նրան, թե ոչ, դիմողը, նույնիսկ ողջ մնալով հանդերձ, հանդիսացել է կյանքի համար իր բնույթով արդեն իսկ վտանգավոր վերաբերմունքի զոհ: Ուստի 2-րդ հոդվածը տվյալ գործի նկատմամբ կիրառելի է: Բացի այդ, հաշվի առնելով նրա կյանքը վտանգի ենթարկելու հանգամանքները և պետական պաշտոնյաների վիճարկվող վարքագիծը, դատարանը բավարար է համարում գործի փաստերի ուսումնասիրությունը 2-րդ հոդվածով:

Այնուհետև մեծ պալատն ուսումնասիրել է ոստիկանության ծառայողների զենքի գործածությանը վերաբերող օրենսդրությունը և ոստիկանության՝ դիմողին ձերբակալելու գործողությունը:

62. Այսպիսով, խնդրո առարկա իրադարձությունների ծավալման ժամանակ գործող օրենսդրությունը բաղկացած է եղել թիվ 29/1943 թ. օրենքից, որն ընդունվել է դեռևս Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ Հունաստանը շրջափակված էր գերմանական զորքերի կողմից: Այդ օրենքում թվարկված են մի շարք իրավիճակներ, որոնց դեպքում ոստիկաններն իրավասու են օգտագործել հրազեն՝ առանց հետևանքների համար պատասխանատվություն կրելու: 1991 թ. նախագահի որոշմամբ թույլատրվել է հրազեն օգտագործել 1943 թ. օրենքում նշված դեպքերում, «եթե միայն դա բացարձակ անհրաժեշտություն է, կամ եթե բոլոր պակաս ծայրահեղ մեթոդները սպառված են»: Հունաստանի օրենքում չկան ոստիկանական գործողությունների ժամանակ զենքերի կիրառությունը կարգավորող այլ դրույթներ, որոնք ուղենիշ կլինեին ոստիկանության գործողությունների ծրագրման և վերահսկման համար: Փաստորեն այս ոչ կուռ օրենսդրական դաշտը բավարար չէ կյանքի իրավունքի «օրենքով» բավարար պաշտպանության մակարդակ ապահովելու համար, որը, սակայն, Եվրոպայի ներկայիս ժողովրդավարական հասարակությունների պահանջն է:

63. Հունաստանի օրենքի վերաբերյալ այս եզրակացությունը հաստատվում է դատարանին ներկայացված փաստերով, որոնք բացահայտում են, թե տվյալ էական ժամանակահատվածում գործող իրավական և վարչական օրենսդրական դաշտն ինչ ազդեցություն է ունեցել դիմողի ձերբակալությամբ ավարտված ոստիկանական գործողությունն իրականացնելիս պոտենցիալ մահացու ուժի կիրառման եղանակի վրա:

64. Անդրադառնալով սույն գործի փաստերին և հաշվի առնելով ազգային դատարանի եզրակացությունները՝ դատարանն ընդունում է, որ դիմողն իր մեքենան Աթենքի կենտրոնում վարել է անվերահսկելի և վտանգավոր ձևով՝ զարգացնելով չափից ավելի մեծ արագություն, ինչով և վտանգի տակ է դրել ներկաների և ոստիկանների կյանքը: Ուստին այս իրավիճակում ոստիկանությունն իրավասու էր գործելու՝ հիմք ընդունելով այն փաստը, որ նա հասարակական վայրում մանևրել է կյանքի համար վտանգ ներկայացնող օբյեկտով: Այլ կերպ նրան կանգնեցնելու փորձը չի հաջողվել: Սա զուգորդվել է քաոսային իրավիճակի խորացմամբ, որի պատճառը դիմողի գործողություններն էին և այն մահացու վտանգը, որին նա իր օրինազանց վարքով ենթարկում էր անմեղ մարդկանց: Բացի այդ, դիմողին հետապնդող ոստիկանության աշխատակիցները տեղեկացվել են հսկիչ կենտրոնից, որ հնարավոր է՝ նա զինված և վտանգավոր լինի: Այն շարժումները, որոնք արել է դիմողը մեքենան կանգնեցնելուց հետո, ըստ նրանց, ամրապնդել են կասկածները նրա զինված լինելու վերաբերյալ:

65. Անհրաժեշտ է հաշվի առնել նաև մեկ այլ կարևոր հանգամանք: Այդ ժամանակ Հունաստանում տիրող իրավիճակը բնորոշվում էր արտասահմանյան ուժերի դեմ ահաբեկչական գործողություններով: Օրինակ՝ 1975 թ. հիմնված «Նոյեմբերի 17-ի հեղափոխական կազմակերպություն» խումբը նախքան 2002 թ. զինաթափվելը, կատարել է բազմաթիվ հանցագործություններ, այդ թվում և՝ ԱՄՆ պաշտոնյաների սպանություններ: Այն հանգամանքը, որ միջադեպը տեղի է

ունեցել գիշերով, ԱՄՆ դեսպանատան մոտ, նպաստել է, որ ոստիկանությունը դիմողին ընկալի որպես խիստ վտանգավոր անձնավորության:

66. Հետևաբար, ազգային դատարանի պես դատարանը նույնպես համարում է, որ այդ իրավիճակում ոստիկանությունը ողջամտորեն կարող էր մտածել, որ ոչ միայն անհրաժեշտ է ձերբակալել կարմիր լույսի տակով մեքենան քշող վարորդին, այլև, դիմելով զենքի կիրառության, կանգնեցնել նրա մեքենան և չեզոքացնել վարորդի վտանգը: Թեպետ հետագայում պարզվել է, որ դիմողն ահաբեկիչ չէ և անզեն է, դատարանն ընդունում է, որ նրա դեմ ուժի կիրառությունը հիմնված է եղել խոր համոզմունքի վրա, որը, հաշվի առնելով այդ ժամանակ գոյություն ունեցող ծանրակշիռ հանգամանքները, եղել է արժանահավատ: Այլ որոշումը կնշանակեր սեփական պարտականությունների կատարման առումով ոչ իրատեսական բեռ դնել պետության և նրա իրավապահ մարմինների վրա՝ ի վնաս նրանց և մյուսների կյանքի (տե՛ս *«Մակքենը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (McCann and Others v the United Kingdom)*, մեջբերված է վերը՝ էջ 58-9, պարբ. 200):

67. Այնուամենայնիվ, թեպետ տվյալ դեպքում նման մահացու վտանգ ներկայացնող ուժի կիրառությունը, կարելի է ասել, համահունչ է եղել կոնվենցիայի 2-րդ հոդվածի բովանդակությանը, դատարանը ցնցված է այն քաոսային եղանակից, որով ոստիկաններն այդ հանգամանքներում զենք են կիրառել: Կարելի է վկայակոչել միայն այն փաստը, որ անհայտ թվով ոստիկաններ ռևոլվերներով, ատրճանակներով և ինքնաձիգ հրացաններով կրակ են բացել դիմողի մեքենայի ուղղությամբ: Մեքենայի վրա հայտնաբերվել են առնվազն տասնվեց հրազենային կրակոցների հետքեր, որոնց մի մասն արձակվել է հորիզոնական հետագծով, իսկ մյուս մասը՝ դեպի վեր ուղղված հետագծով: Մինչդեռ, եթե հետապնդող ոստիկանների կրակոցների թիրախը լինեին միայն մեքենայի անիվները, ապա կրակոցները պետք է ուղղված լինեին միայն դեպի ներքև: Մեքենայի դիմապակու վրա գնդակներից առաջացել են երեք անցք և քերծվածք, իսկ հետևի ապակին կոտրվել և ընկել է: Դատարանին ներկայացված ապացույցների հիման վրա կարելի է եզրակացնել, որ ոստիկանության մեծ թվով աշխատակիցներ մասնակցել են սկզբունքորեն չկառավարվող հետապնդման գործողության:

68. Այդ իսկ պատճառով լուրջ հարցեր են առաջանում՝ կապված օպերացիայի կազմակերպման և իրականացման հետ: Ճիշտ է, որ ոստիկանության որոշ աշխատակիցներ ուղղակի ցուցումներ են ստացել ղեկավարությունից, սակայն մյուսներն իրենց գործընկերներին օգնության են հասել սեփական կամքով՝ առանց հրահանգներ ստանալու: Հրամանների հստակ շղթայի բացակայությունը այնպիսի գործոն է, որն իր իսկ բնույթով պետք է որ ավելացրած լինի ոստիկանության որոշ աշխատակիցների կողմից սխալ կրակոցներ արձակելու վտանգը:

69. Անկասկած, դատարանը չի անտեսում այն հանգամանքը, որ դիմողը վիրավորվել է չնախատեսված օպերացիայի ընթացքում, որը հանգեցրել է այնպիսի զարգացումների, որոնց պարագայում ոստիկանները ստիպված են եղել գործել առանց նախօրոք պատրաստվելու (տե՛ս, օրինակ՝ *«Ռեհբոկն ընդդեմ Սլովենիայի» (Rehbock v Slovenia)* թիվ 29462/95, պարբ. 71–2, ECHR 2000-XII): Հաշվի առնելով ժամանակակից հասարակություններում ոստիկանական ծառայություններին առնչվող դժվարությունները, մարդկային վարքագծի անկանխատեսելիությունը և ռեսուրսների ու գերակայությունների արագ ընտրությունը, դրական պարտավորության մեկնաբանությունը չպետք է անհնարին բեռ դնի իշխանությունների վրա (տե՛ս mutatis mutandis *«Մահմուտ Քայան ընդդեմ Թուրքիայի» (Mahmut Kaya v Turkey)*, թիվ 22535/93, պարբ. 86, ECHR 2000-III):

70. Այնուամենայնիվ, ընդունելով, որ միջադեպի մեջ ներգրավված ոստիկանության աշխատակիցները բավարար ժամանակ չեն ունեցել իրավիճակի առանձին տարրերը գնահատելու և գործողությունը զգուշորեն կազմակերպելու համար, դատարանը կարծում է, որ իրավիճակի վատթարացումը (որը ոստիկանության որոշ աշխատակիցների կարծիքով ևս եղել է քաոսային) մեծ մասամբ պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ այդ ժամանակ ո՛չ առանձին ոստիկանության աշխատակիցների գործողությունները, ո՛չ էլ որպես կոլեկտիվ ոստիկանական օպերացիա դիտարկվող հետապնդումը չեն ունեցել համապատասխան կառուցվածք (ձև), քանի որ նման բան նախատեսված չի եղել ո՛չ ազգային օրենքով և ո՛չ էլ փորձով: Դատարանը նշում է, որ 1995 թ., երբ տեղի է ունեցել միջադեպը, պետության պաշտոնյաների կողմից զենքի օգտագործումը ամենայն հավանականությամբ ենթակա է եղել կարգավորման ժամանակակից ժողովրդավարական հասարակության համար հնացած և թերի օրենքով: Գոյություն ունեցող համակարգը հիմնված չի եղել հստակ ուղեցույցների, ցուցումների և չափանիշների վրա, որոնք կուղղորդեին խաղաղ ժամանակներում իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից զենքի կիրառումը: Այսպիսով, ոստիկանության աշխատակիցները, որոնք հետապնդել և, վերջին հաշվով, ձերբակալել են դիմողին, անխուսափելիորեն ունեցել են ավելի մեծ գործողությունների ազատություն և չմտածված քայլեր կատարելու հնարավորություններ: Մինչդեռ սրանից հնարավոր կլիներ խուսափել, եթե նրանք ստացած լինեին պատշաճ մակարդակի ուսուցում և հրահանգավորում: Հստակ ուղեցույցների բացակայությունը բացատրում է ոստիկանների տարերային մասնակցությունը գործողությանը, որի համար նրանք չեն զեկուցել ղեկավարող կենտրոնին:

71. Վերը շարադրվածի կապակցությամբ դատարանը հայտնում է, որ Հունաստանի իշխանությունները ժամանակին ամեն ինչ չեն արել, որպեսզի կատարեն 2-րդ հոդվածի առաջին նախադասությամբ ամրագրված պետության՝ պատշաճ օրենսդրական և վարչական դաշտ ստեղծելու դրական պարտավորությունը, թեպետ ողջամտորեն կարելի էր ակնկալել,

որ նրանք իրենց քաղաքացիներին և, մասնավորապես, այն քաղաքացիներին (ներառյալ՝ դիմողին), որոնց դեմ օգտագործվել է պոտենցիալ մահացու ուժ, կապահովեն պահանջվող պաշտպանության մակարդակով և կբացառեն արտակարգ դեպքերում, այդ թվում նաև՝ հրատապ ոստիկանական հետապնդումների ժամանակ առաջացող կյանքի անմիջական և իրական վտանգը, որի առաջացման մասին նրանք քաջատեղյակ են (տե՛ս mutatis mutandis *«Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Osman v United Kingdom)*, համառոտ մեջբերված է վերը՝ էջ 3160, պարբ. 116):

72. Հետևաբար, այս հիմքով դիմողը կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման զոհ է: Հաշվի առնելով այս եզրակացությունը՝ անհրաժեշտություն չկա 2-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում ուսումնասիրելու ոստիկանության՝ կյանքի համար սպառնալիք ներկայացնող վարքագիծը:

Նախագահ Վիլդհաբերը, որին միացել են դատավորներ Կովլերը և Մուլարոնին, առարկել է՝ համարելով, որ ոստիկանությունը հակահարված է տվել «դիմողի անպատասխանատու և վտանգավոր վարքագծին»: Նրա կարծիքով՝ Հունաստանի օրենքը «բացարձակապես հստակորեն» ամրագրում է ոստիկանության աշխատակիցների կողմից ուժի կիրառման չափանիշները: Այնուամենայնիվ, մեծ պալատը միաձայն ընդունել է, որ լուրջ թերացումների, այդ թվում և գերատեսչական հարցման միջոցով դիմողի դեմ ուղղված կրակոցի գործողություններին մասնակցած բոլոր ոստիկանների ինքնությունը պարզելու անկարողության պատճառով տեղի է ունեցել 2-րդ հոդվածի ընթացակարգային խախտում:

Մակարացիսի գործի դեպքում ճնշող մեծամասնության կարծիքը, որ տեղի է ունեցել 2-րդ հոդվածի նյութահիրավական պահանջների խախտում, թեպետ դիմողը չի սպանվել, կարող է բացատրվել դիմողի անօրինական (և վտանգավոր) վարքագծի նկատմամբ ոստիկանության հակահարվածի բնույթով և մասշտաբով (օրինակ՝ երեսունից ավելի ոստիկաններ բազմաթիվ կրակոցներ են արձակել նրա մեքենայի վրա) և ոստիկանության աշխատակիցների կողմից զենքի կիրառությանը վերաբերող ոչ հստակ իրավական սահմանափակումներով: Այս հատկանիշները բավարար են համարվել, որպեսզի 2-րդ հոդվածի կիրառությունը հիմնավորելու համար մեծ պալատն օգտագործի *Իլհանի* «բացառիկ հանգամանքների» թեստը: Հրազենային վնասվածքներից կասկածյալի մահվան նկատմամբ հոդված 2(2)-ի կիրառման փորձի վերլուծության համար տե՛ս *«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի» (Nachova and Others v Bulgaria)*, ստորև՝ 147-րդ էջում:

15 Կյանքի իրավունքի սահմանները որոշվել են *«Փրեթին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Pretty v United Kingdom)* ողբերգական գործում, որի վերաբերյալ վճիռն ընդունվել է 2002 թ. ապրիլի 29-ին: Դիմողը 43 տարեկան կին էր, որը տառապում էր խորացած նեյրոմոտորային հիվանդությամբ: Սա անբուժելի հիվանդություն է, որը հանգեցնում է մկանների հարաճուն թուլացման և շնչահեղձության: Տիկին Փրեթիի հիվանդությունն ախտորոշվել է 1999 թ. և ունեցել զարգացման սուր ընթացք: Դատարանի վճռի կայացման պահին նա պարանոցից վար եղել է անդամալույծ, սակայն նրա մտավոր կարողությունները և որոշում կայացնելու ունակությունը պահպանվել են: Այն միտքը, որ խորացող հիվանդությունը մինչև մահվան հանգեցնելը կարող է լուրջ տառապանք պատճառել, խիստ վշտացրել է տիկին Փրեթիին: Նա ցանկություն է հայտնել իր ամուսնու օգնությամբ ինքնասպանություն գործել իր ընտրած պահին: Հիվանդության պատճառով նա չէր կարող ինքնուրույն ինքնասպան լինել և ուրիշ անձի ֆիզիկական օժանդակության կարիք ուներ: Նա դիմել է գլխավոր պետական մեղադրողին՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել, որպեսզի իր մահից հետո իր ամուսնուն քրեորեն չհետապնդեն, եթե նա օգնի իրեն: (Համաձայն 1961 թ. «Ինքնասպանության մասին» օրենքի, մեկ այլ անձի ինքնասպանությանը մասնակցելը համարվում է քրեորեն հետապնդելի արարք): Գլխավոր պետական մեղադրողը մերժել է այդ միջնորդությունը: Լորդերի պալատը, վերջին հաշվով, մերժել է դիմողի վերանայման բողոքն ընդդեմ այդ որոշման *(«R-ն (Փրեթիին) ընդդեմ ներքին գործերի դեպարտամենտի» (R (Pretty) v DPP))* [2001] 3 WLR 1598): Դատարանում նրա փաստաբանները պաշտպանել են այն տեսակետը, որ կյանքի իրավունքը պաշտպանելուց բացի, 2-րդ հոդվածը պաշտպանում է նաև կյանքը շարունակելու ընտրության իրավունքը: Դատարանը միաձայն որոշել է հետևյալը.

37. Դատարանի նախադեպային իրավունքով մեծ նախապատվություն է տրվում 2-րդ հոդվածին, քանի որ այն կոնվենցիայի ամենահիմնարար դրույթներից մեկն է (տե՛ս *«Մակքենը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (McCann and Others v the United Kingdom)*, 1995 թ. սեպտեմբերի 27-ի վճիռ, շարք A, թիվ 324, պարբ. 146-7): Այն պաշտպանում է կյանքի իրավունքը, առանց որի կոնվենցիայով ամրագրված այլ իրավունքները և ազատությունները դառնում են անիմաստ: Հոդվածը սահմանում է այն փոքրաթիվ հանգամանքները, երբ կյանքից զրկելը կարող է արդարացվել: Դատարանը խիստ մանրակրկիտ ուսումնասիրություն է կատարել բոլոր այն դեպքերում, երբ այդ բացառությունները վկայակոչվել են պատասխանող կառավարությունների կողմից *(«Մակքենը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»,* մեջբերում պարբ. 149-50):

. . .

39. Դատարանի վարույթ ընդունված բոլոր գործերում շեշտը հետևողականորեն դրվել է պետության՝ կյանքը պահպանելու պարտավորության վրա: Դատարանը չի ընդունում, որ 2-րդ հոդվածով երաշխավորված «կյանքի իրավունքը» կարող է մեկնաբանվել որպես բացասական հայեցակետ ունեցող դրույթ: Քանի որ, օրինակ, կոնվենցիայի 11-րդ հոդվածի համատեքստում որոշվել է, որ հավաքների ազատությունը ենթադրում է ոչ միայն ընկերակցությանը միանալու իրավունք, այլև ընկերակցությանը կամքին հակառակ չմիանալու համապատասխան իրավունք, դատարանը նկատում է, որ ազատության գաղափարի իրացմանը բնորոշ են ընտրության որոշակի հնարավորություններ (տե՛ս *«Յանգը, Ջեյմսը և Ուեբսթերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Young, James and Webster v the United Kingdom)*, 1981 թ. օգոստոսի 13-ի վճիռ, շարք A, թիվ 44, պարբ. 52 և *«Սիգուրդ-ուր Ա. Սիգուրյոնսոնն ընդդեմ Իսլանդիայի» (Sigurd–ur A. Sigurjonsson v Iceland)*, 1993 թ. հունիսի 30-ի վճիռ, շարք A, թիվ 264, էջ 15-16, պարբ. 35): Կոնվենցիայի 2-րդ հոդվածում օգտագործված են այլ հասկացություններ: Այն չի վերաբերում կյանքի որակի խնդիրներին կամ սեփական կյանքի հետ վարվելու առնչությամբ անձի նախընտրություններին: Քանի որ այս հայեցակետերը ճանաչվում են որպես մարդու գոյության համար չափազանց հիմնարար, որ պահանջում են պաշտպանություն պետության միջամտությունից, կարող են արտացոլվել կոնվենցիայի այլ հոդվածներով երաշխավորված իրավունքներում և մարդու իրավունքների պաշտպանության մասին այլ փաստաթղթերում: 2-րդ հոդվածը չի կարող, առանց շարադրանքի աղավաղման, մեկնաբանվել որպես տրամագծորեն հակառակ իրավունք, այսինքն՝ մահվան իրավունք ապահովող հոդված: Ոչ էլ կարող է այս առումով ստեղծել ինքնորոշման իրավունք՝ հնարավորություն տալով անձին կյանքի կամ մահվան ընտրություն կատարելու:

40. Հետևաբար, դատարանը համարում է, որ կոնվենցիայի 2-րդ հոդվածը չի նախատեսում երրորդ անձի կամ պետական մարմնի օժանդակությամբ մահանալու իրավունք: Այս տեսակետը հաստատվել է Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1418 (1999 թ.) հանձնարարականում:

Հետևաբար, դատարանը 2-րդ հոդվածով կամ կոնվենցիայով նախատեսված այլ իրավունքի խախտում չի արձանագրում: Դիմողը որոշել է մեծ պալատից չհայցել կրկին լսել իր գործը: Նա մահացել է անկելանոցում տվյալ վճռի հրապարակումից մի քանի շաբաթ անց: Նրա փաստաբանների գործադրած ջանքերը՝ համոզելու համար դատարանին 2-րդ հոդվածի շրջանակներում ճանաչել «մահանալու ածանցյալ իրավունքը», վերջինից կպահանջեին որոշում ընդունել խիստ զգայուն թեմայի վերաբերյալ, որը ազգային և համաեվրոպական համաձայնությանը հակառակ կլիներ (այդ համաձայնությունն արտացոլված է թիվ 1418 հանձնարարականում, որի նպատակն է ամրապնդել «Ծանր անբուժելի հիվանդ կամ մահացող անձանց միտումնավոր կյանքից զրկելու նկատմամբ արգելքը...»): 2006 թ. մայիսին Լորդերի պալատը դեմ է քվեարկել (հարյուր կողմ և հարյուր քառասունութ դեմ ձայներով) «Ծանր անբուժելի հիվանդ անձանց մահվան օժանդակության» օրինագծին, որը ներկայացրել է անկախ լորդ Ջոֆֆեն: Օրինագծի նպատակն էր ծանր անբուժելի հիվանդություններով տառապող չափահասներին հնարավորություն տալ բժշկի միջամտությամբ վերջ տալու իրենց կյանքին: Հակաքարոզչական «Խնամե՛ք, ոչ թե սպանե՛ք» խումբը, որի կազմում եկեղեցիներ և այլ կազմակերպություններ էին, օրինագծի հակաքարոզչություն է իրականացրել: «Թայմս» օրաթերթի համաձայն (13.5.2006 թ.)՝ կաթոլիկ եկեղեցին 500.000 նամակ և լազերային տեսասկավառակ է ուղարկել իր անդամներին՝ խնդրելով ընդդիմանալ օրինագծի ընդունմանը: Անգլիկան եկեղեցու պերերը նույնպես լուրջ դերակատարություն են ունեցել օրինագծի ընդունումը տապալելու մեջ:

Հոդված 2(1)

Պետությունների դրական պարտավորությունները

1 *«LCB-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (LCB v UK)* գործում ((1998 թ.) 27 EHRR 212, զեկույց 1998-III) դատարանն ակնարկել է, որ 2-րդ հոդվածի 1-ին կետը պետությունների վրա իրենց իրավասությունների շրջանակներում անձանց կյանքը պահպանելու դրական պարտավորություններ է դնում: Դիմողի հայրը, լինելով Թագավորական օդուժի սննդի մատակարարման բաժնի աշխատակից, ներկա է գտնվել միջուկային ռումբերի չորս մթնոլորտային փորձարկումների, որոնք տեղի են ունեցել 1957-1958 թթ. Խաղաղ օվկիանոսում գտնվող Սուրբ Ծննդյան կղզում: Դիմողը ծնվել է 1966 թ., իսկ 1970 թ. նրա մոտ ախտորոշվել է լեյկեմիա: Մինչև 10 տարեկան դառնալը նա ստացել է քիմիաթերապևտիկ բուժում: 1992 թ. նա ծանոթացել է Բրիտանիայի միջուկային փորձարկումների վետերանների միության պատրաստած զեկույցին, համաձայն որի՝ Սուրբ Ծննդյան կղզու վետերանների երեխաների շրջանում նկատվել է չարորակ ուռուցքների դեպքերի բարձր տոկոս: Նա գանգատ է ներկայացրել հանձնաժողով՝ պնդելով, որ այն հանգամանքը, որ Բրիտանիայի կառավարությունը չի նախազգուշացրել իր ծնողներին իր առողջությանը սպառնացող վտանգի մասին, որը պայմանավորված է եղել միջուկային փորձարկումներին իր հոր մասնակցությամբ, 2-րդ հոդվածի խախտում է: Հանձնաժողովը միաձայն որոշել է, որ նշված դրույթի խախտում տեղի չի ունեցել: Դատարանը նաև միաձայն որոշել է, որ.

36. . . . 2-րդ հոդվածի 1-ին կետի «առաջին նախադասության պահանջով՝ պետությունը ոչ միայն պետք է ձեռնպահ մնա կյանքից միտումնավոր և անօրինականորեն զրկելուց, այլև համապատասխան քայլեր ձեռնարկի իր իրավասության տակ գտնվող անձանց կյանքը պաշտպանելու համար (համեմատության համար տե՛ս դատարանի հիմնավորումը 8-րդ հոդվածի շրջանակներում *«Գուերրան ընդդեմ Իտալիայի» (Guerra v Italy)* 1998 թ. փետրվարի 19-ի վճռում, Զեկույցներ 1998-I, էջ 227, պարբ. 58 և դիմումի ընդունելիության վերաբերյալ հանձնաժողովի թիվ 7154/75 որոշումը, 12 հուլիսի 1978 թ., Որոշումներ և զեկույցներ 14, էջ 31): Որևէ հիմք չկա կարծելու, որ պատասխանող պետությունը միտումնավոր նպատակ է ունեցել դիմողին զրկել իր կյանքից: Ուստին դատարանի խնդիրն է որոշել, թե տվյալ գործի առնչությամբ պետությունն ամեն քայլ ձեռնարկե՞լ է, որպեսզի կանխի նրա կյանքին սպառնացող խուսափելի վտանգը...

39. Ուսումնասիրելով իրեն ներկայացված փորձագիտական եզրակացությունը՝ դատարանը բավարարված չէ, որ պատճառական կապ է հաստատվել հոր ճառագայթահարման և դրանից հետո սաղմնավորված երեխայի լեյկեմիայի միջև: Դեռևս 1993 թ. բարձր դատարանի (High Court) դատավորը, որը լսում էր *«Բրիտանական միջուկային վառելիք» ԲԲԸ-ի* դեմ *Ռայի և Հոուփի* գործերը *(Reay and Hope v British Nuclear Fuels plc)* ([1994 թ.] «Բժշկական իրավունքի զեկույցներ 1»), զգալի թվով փորձագիտական նյութերի ուսումնասիրությունից հետո եզրակացրել է, որ «կշեռքի նժարը որոշակիորեն թեքված է եղել նման պատճառական կապի բացակայության կողմը... Ուստի դատարանը չէր կարող ողջամտորեն եզրակացնել, որ 1960-ականների վերջին, հիմք ընդունելով չհիմնավորված կապը, Միացյալ Թագավորության իշխանությունները կարող էին կամ պետք է դիմողին ուղղված քայլեր ձեռնարկեին:

40. Վերջապես, հաշվի առնելով դոկտոր Բրոսսի և դոկտոր Էդենի հակասական եզրակացությունները, …ինչպես նաև հանձնաժողովի որոշումը՝ ... խիստ անորոշ է՝ արդյոք ներարգանդային կյանքում դիմողի առողջությանը հետևելը կարո՞ղ էր հանգեցնել հիվանդության ավելի վաղ ախտորոշման և ավելի վաղ բժշկական միջամտության, ինչը կմեղմեր նրա հիվանդության ընթացքը: Եթե նույնիսկ բավարար հիմքեր լինեին կարծելու, որ Սուրբ Ծննդյան կղզում նրա հոր գտնվելու պատճառով նա կարող էր ձեռք բերել կյանքի համար վտանգավոր հիվանդություն, դեռևս վիճելի հարց է, թե իշխանությունները պե՞տք է այդ մասին տեղյակ պահեին նրա ծնողներին՝ անկախ այն հանգամանքից՝ կօգնե՞ր այդ տեղեկությունը դիմողին, թե՞ ոչ: Այնուամենայնիվ, սա այն խնդիրը չէ, որի վերաբերյալ դատարանը պետք է որոշում կայացնի՝ հաշվի առնելով վերոնշյալ եզրակացությունները...

41. Վերջապես, դատարանը չի համարում, որ հաստատել է, թե պետությունը, իր տրամադրության տակ այդ ժամանակ ունենալով որոշակի տեղեկություններ, …որոնք վերաբերում էին դիմողի հոր՝ վտանգավոր չափերով ճառագայթման ենթարկվելու փաստին և դրա հետ կապված առողջական ռիսկերին, պարտավոր էր սեփական նախաձեռնությամբ տեղյակ պահել այդ մասին նրա ծնողներին և ձեռնարկեր նրա հետ կապված հետագա քայլեր:

Սույնից բխում է, որր 2-րդ հոդվածի խախտում չի եղել:

2 Հոդված 2(1)-ից բխող պետությունների դրական պարտավորությունների բնույթը և ընդգրկումը դատարանի կողմից հաստատվել են *«Օսմանն ընդդեմ ՄԹ-ի»* գործում (*Osman v UK* (1998 թ.) 29 EHRR 245, Զեկույցներ 1998-VIII): Դիմողները տիկին Օսմանը և նրա որդի Ահմետն են: 1986 թ. պետական դպրոցի տնօրենը, որտեղ այդ ժամանակ սովորում էր դեռևս 14 տարեկան Ահմետը, նկատել է, որ ուսուցիչներից մեկը՝ Փոլ Փաջեթ-Լյուիսը, հրապուրվել է Ահմետով: Մի քանի ամիս անց տնօրենի տեղակալ պարոն Փերքինսն առաջարկել է, որ Փաջեթ-Լյուիսը դիմի հոգեբանի օգնության: Ոստիկանությունը տեղեկացվել է Փաջեթ-Լյուիսի հրապուրանքի մասին, սակայն եզրակացրել է, որ խնդիրը պետք է կարգավորի դպրոցը, քանի որ Փաջեթ-Լյուիսի հրապուրանքը սեռական տարրեր չի ունեցել: 1987 թ. ապրիլին Փաջեթ-Լյուիսը պաշտոնապես փոխել է իր անունը՝ վերցնելով Փոլ Ահմետ Յիլդիրիմ Օսման անունը: Մայիսին ոստիկանությունը կրկին քննարկել է հարցը դպրոցի [ղեկավարության] հետ, որի ընթացքում նշվել է, որ Փաջեթ-Լյուիսն այդ անունը վերցրել է մի աշակերտից, որին ինքը դասավանդել է մեկ այլ դպրոցում: Կրթության վարչության հոգեբանը զննել է Փաջեթ-Լյուիսին և խորհուրդ տվել, որ նա շարունակի դասավանդել դպրոցում, սակայն ստանա հոգեբանական օգնություն/հոգեթերապիա: Դիմողի տան և մեքենայի վրա հարձակում է կատարվել: Հունիսին Փաջեթ-Լյուիսը ճանաչվել է անաշխատունակ և վերցրել բժշկական արձակուրդ: Դրանից հետո՝ ընթացիկ տարում, դիմողների գույքի նկատմամբ կատարվել են քրեական բնույթի ոտնձգություններ: 1988 թ. հունվարին Փաջեթ-Լյուիսը գողացել է որսորդական հրացան: Մարտի 7-ին նա գնացել է Օսմանների տուն և սպանել պարոն Օսմանին՝ լրջորեն վիրավորելով նաև Ահմետին: Այնուհետև նա մեքենան վարել է դեպի պարոն Փերքինսի տուն, վիրավորել նրան և սպանել վերջինիս որդուն: Հաջորդ օրը Փաջեթ-Լյուիսը ձերբակալվել է և այնուհետև մեղավոր ճանաչվել կրկնակի մարդասպանության մեղադրանքով (նա ճանաչվել է անմեղսունակ և դատապարտվել անժամկետ կալանքի ապահով հոգեբուժական կլինիկայում): Դիմողները բողոքում են մետրոպոլիտեն ոստիկանության կոմիսարից՝ համարելով, որ վերջինս թերացել է Փաջեթ-Լյուիսի սպանության/հարձակման գործողությունները կանխելու հարցում: Վերաքննիչ դատարանը որոշել է, որ հանրային քաղաքականությունը պահանջում է ոստիկանության անձեռնմխելիություն նման բողոքներից *(«Օսմանն ընդդեմ Ֆերգյուսոնի» (Osman v Ferguson)* [1993] 4 All ER 344): Ավելի ուշ դիմողները բողոքել են հանձնաժողովին՝ պնդելով, ի թիվս այլոց, որ ոստիկանությունը թերացել է պաշտպանել պարոն Օսմանի և Ահմետի կյանքը, ինչը պահանջվում է 2-րդ հոդվածով: Տասը կողմ և յոթ դեմ ձայների հարաբերակցությամբ հանձնաժողովը որոշել է, որ այդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել: Դատարանը նշել է.

115. . . . 2-րդ հոդվածի 1-ին կետի առաջին նախադասության պահանջով՝ պետությունը ոչ միայն պետք է ձեռնպահ մնա կյանքից միտումնավոր և անօրինական զրկելուց, այլև համապատասխան քայլեր ձեռնարկի իր իրավազորության ներքո գտնվող անձանց կյանքը պաշտպանելու համար (տե՛ս *«LCB-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (LCB v UK)* գործով 1998 թ. հունիսի 9-ի վճիռը, Վճիռների և որոշումների զեկույցներ 1998-III, էջ 1403, պարբ. 36): Գոյություն ունի ընդհանուր համաձայնություն, որ այս դեպքում պետության պարտավորությունն անցնում է քրեական իրավունքի դրույթների և այդ դրույթների խախտումները կանխող, ճնշող և պատժող մեխանիզմների շրջանակներում կյանքը պաշտպանելու պարտավորությունից: Այսպիսով, դատարան ներկայացած անձինք ընդունում են, որ կոնվենցիայի 2-րդ հոդվածը որոշ հստակ սահմանված հանգամանքներում ենթադրում է, որ պետությունն անձի կյանքը մեկ այլ անձի քրեական արարքների ռիսկից պաշտպանելու համար կանխարգելիչ օպերատիվ միջոցներ ձեռնարկելու դրական պարտավորություն ունի: Այս պարտավորության տիրույթն է կողմերի վիճաբանության առարկան:

116. Դատարանը կարծում է, որ հաշվի առնելով արդի հասարակությունում ոստիկանական ծառայությունների իրականացմանն առնչվող դժվարությունները, մարդկային վարքագծի անկանխատեսելիությունը և ռեսուրսների ու գերակայությունների օպերատիվ ընտրությունները, դրական պարտավորության մեկնաբանությունը չպետք է անհնարին բեռ դնի իշխանությունների վրա: Հետևաբար, վտանգի մասին ոչ բոլոր իրազեկումները կարող են հիմք լինել իշխանությունների համար, որպեսզի քայլեր ձեռնարկեն՝ ուղղված այդ վտանգի կանխմանը: Համաձայն մեկ այլ համահունչ նկատառման՝ ոստիկանները հանցագործությունները վերահսկելու և կանխելու իրենց լիազորությունները պետք է իրականացնեն այնպիսի եղանակով, որ լիովին հարգվեն օրենքի համապատասխան ընթացակարգը և այլ երաշխավորությունները (ներառյալ կոնվենցիայի 5-րդ և 8-րդ հոդվածներում նախատեսված երաշխավորությունները), որոնք օրինականորեն սահմանափակում են ոստիկանների՝ հանցագործությունների քննության և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու գործողությունների շրջանակները: Դատարանի կարծիքով, եթե հայտարարություններ են արվում, որ իշխանությունները խախտել են կյանքի իրավունքը պաշտպանելու դրական պարտավորությունը

անձի դեմ ուղղված հանցագործությունները կանխելու և ճնշելու վերը նշված պարտականության համատեքստում (տե՛ս վերը՝ պարբ. 115), ապա անհրաժեշտ է դատարանի համար բավարար մակարդակով հիմնավորել, որ այդ պահի դրությամբ իշխանությունները գիտեին կամ պարտավոր էին իմանալ ինքնությունը հայտնի անձի կամ անձանց կյանքին երրորդ անձանց կողմից սպառնացող իրական և անմիջական վտանգի մասին, սակայն իրենց իրավասությունների սահմաններում քայլեր չեն ձեռնարկել, որոնք, հիմք ընդունելով ողջամիտ դատողությունները, կարող էին կանխել այդ վտանգը: Դատարանը չի ընդունում կառավարության տեսակետը, որ այն ժամանակ հայտնի հանգամանքներում կյանքին սպառնացող վտանգը չընկալելը կամ վտանգը կանխելու նպատակով կանխարգելիչ միջոցներ չձեռնարկելը կյանքը պաշտպանելու պարտավորության կոպիտ կամ միտումնավոր անտեսում են... Այսպիսի կոշտ չափորոշիչը պետք է անհամատեղելի համարվի կոնվենցիայի 1-ին հոդվածի պահանջների և պայմանագրի կողմ հանդիսացող պետությունների՝ այդ հոդվածով ամրագրված պարտավորությունների հետ, համաձայն որոնց նրանք պետք է ապահովեն դրանում, ներառյալ՝ 2-րդ հոդվածում ամփոփված իրավունքների և ազատությունների գործնական և արդյունավետ պաշտպանությունը (տե՛ս mutatis mutandis *Մակքենի* վճիռը, էջ 45, պարբ. 146): Հաշվի առնելով 2-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքի բնույթը և կոնվենցիայի մակարդակով այդ իրավունքի հիմնարար նշանակությունը՝ դատարանի համար բավարար կլիներ, եթե դիմողը ցույց տար, որ իշխանություններն ամեն ինչ չեն արել, ինչը ողջամտորեն կարելի էր ակնկալել նրանցից՝ կանխելու համար կյանքին սպառնացող իրական և անմիջական վտանգը, որի մասին նրանք տեղյակ են եղել կամ պարտավոր էին տեղյակ լինել: Այս հարցին կարելի է պատասխանել միայն յուրաքանչյուր գործին բնորոշ հանգամանքներից ելնելով: Դատարանը ելնում է սույն նկատառումներից՝ այս գործի մասնավոր հանգամանքների քննության համար…

121. Դատարանի կարծիքով՝ դիմողները իրադարձությունների շարքում չեն կարողացել մատնացույց անել ողբերգական կրակոցներին հանգեցրած որևէ որոշիչ փուլ, երբ կարելի կլիներ ասել, որ ոստիկանությունը գիտեր կամ պետք է իմանար, որ Օսմանների ընտանիքի անդամների կյանքին Փաջեթ-Լյուիսի կողմից սպառնում է իրական և անմիջական վտանգ: Թեպետ դիմողները մատնացույց են արել մի շարք բաց թողնված հնարավորություններ, որոնց շնորհիվ ոստիկանությունը կկարողանար չեզոքացնել Փաջեթ-Լյուսի ներկայացրած վտանգը, օրինակ՝ պատերի վրա գրություններ թողնելու միջադեպի և նրա միջև կապ հաստատելու համար նրա տունը խուզարկելու կամ 1983 թ. ընդունված «Հոգեկան առողջության մասին» օրենքի շրջանակներում նրան կալանքի տակ վերցնելու կամ նրա անհետանալուց հետո ավելի ակտիվ հետաքննական քայլեր ձեռնարկելու միջոցով, չի կարելի ասել, որ այդ միջոցառումները, ողջամտության սահմաններում կշռադատվելու դեպքում, իրականում կհանգեցնեին այն բանին, որ ազգային դատարանը, հիմք ընդունելով իրեն ներկայացված փաստերը, դատապարտեր նրան կամ պահանջեր նրան պահել հոգեբուժական հիվանդանոցում: Ինչպես նշվել է ավելի վաղ (տե՛ս վերը՝ պարբ. 116), ոստիկանությունը պետք է իր պարտականությունները կատարի այնպիսի եղանակով, որը համատեղելի է անձանց իրավունքների և ազատությունների հետ: Տվյալ գործի հանգամանքներում հնարավոր չէ նրանց քննադատել միայն այն բանի համար, որ նախապատվությունը տվել են անմեղության կանխավարկածին կամ չեն օգտագործել ձերբակալության, խուզարկության կամ բռնագրավման իրավասությունը՝ հիմք ընդունելով այն ողջամիտ տեսակետը, որ տվյալ պահին այդ իրավասություններն օգտագործելու համար չեն ունեցել կասկածի համապատասխան հիմքեր, կամ այն բանի համար, որ ձեռնարկված ցանկացած քայլ փաստացի կարող էր հանգեցնել որոշակի արդյունքների:

122. Վերը նշված պատճառներով դատարանը եզրակացնում է, որ տեղի չի ունեցել կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում:

Տասնյոթ դատավոր համաձայնել է վերոհիշյալ եզրակացությանը, սակայն երեք չհամընկնող կարծիք հայտնողները համարել են, որ Բրիտանիայի իշխանությունները չեն կատարել այդ հոդվածի շրջանակներում ստանձնած իրենց պարտավորությունները:

Վճիռը հստակ մատնանշում է, որ 2-րդ հոդվածով պետություններից պահանջվում է պաշտպանել անձանց կյանքի իրավունքը՝ (ա) նախատեսելով քրեական իրավունքի արդյունավետ միջոցներ, (բ) երաշխավորելով այդ միջոցների կիրառումն ապահովող ոստիկանական և քրեական արդարադատության համակարգեր, (գ) ձեռնարկելով ողջամիտ օպերատիվ միջոցներ, եթե առկա է որոշակի անհատի կյանքին մեկ այլ անձի քրեական բնույթի արարքի հետևանքով սպառնացող «իրական և անմիջական» վտանգ: Այնուամենայնիվ, ինչպես կարելի է տեսնել *Օսմանի* գործից, դատարանը անչափ զգուշավոր է այս պահանջի խախտման մասին եզրակացություններ անելիս:

3 Պետության կողմից որոշակի անձի կյանքի պաշտպանության պարտավորության խախտման մասին եզրակացություն անելու համար դատարանի պահանջած ծայրահեղ հանգամանքներն ակնհայտ են դառնում *«Մահմուտ Քայան ընդդեմ Թուրքիայի»* գործից (28 մարտի, 2000 թ.): Դիմողի եղբայրը՝ Հասան Քայան, Թուրքիայի հարավարևելյան տարածաշրջանում զբաղվում էր բժշկական գործու-

նեությամբ: 1992 թ. Ծննդյան տոների ժամանակ Հասանն ասել է եղբորը, որ իր կյանքին վտանգ է սպառնում, և ոստիկանությունը հսկողություն է սահմանել իր նկատմամբ: 1993 թ. փետրվարի 21-ին Հասանը և մեկ այլ անձ մեկնել են վիրավոր ՔԱԿ-ի անդամին բժշկական օգնություն ցույց տալու: Նրանցից և ոչ մեկը տուն չի վերադարձել: Վեց օր անց Հասանի և երկրորդ տղամարդու դիակները հայտնաբերվել են 130 կմ հեռավորության վրա գտնվող կամրջի տակ: Երկու տղամարդու գլխի վրա եղել են հրազենային վերքեր: Նրանց ձեռքերը կապկպված են եղել: Դիմողը, ի թիվս այլոց, հայտնել է նաև, որ Թուրքիայի իշխանությունները չեն կարողացել պաշտպանել իր եղբոր կյանքը՝ ի խախտումն 2-րդ հոդվածի պահանջների: Իր փաստարկը հիմնավորելու համար դիմողը մասամբ առաջնորդվել է «Սուսուրլուկի զեկույցով» (վարչապետի աշխատակազմի վերահսկիչների խորհրդի փոխնախագահի՝ Թուրքիայի հարավարևելյան տարածքներում քաղաքական գործիչների, կառավարման հաստատությունների և ընդհատակյա խմբերի միջև ապօրինի գործարքների վերաբերյալ 1998 թ. զեկույցը): Վեց կողմ և մեկ դեմ ձայներով՝ դատարանը կայացրել է հետևյալ որոշումը.

87. Ընթացիկ գործի առնչությամբ դատարանը հիշեցնում է, որ ողջամիտ կասկածների սահմաններից դուրս չի հաստատվել, որ Հասան Քայայի սպանության մեջ ներգրավված է եղել պետության որևէ գործակալ: Այնուամենայնիվ, այս գործից լուրջ եզրահանգումներ կարող են արվել, որ սպանության պատվիրատուները հայտնի էին իշխանություններին: Դատարանը վկայակոչում է այն հանգամանքը, որ Մեթին Քանը և Հասան Քայան նրանց առևանգիչների կողմից տեղափոխվել են …ավելի քան 130 կմ հեռավորության վրա՝ անցնելով մի շարք անցակետերի մոտով: Դատարանը նաև նշում է, որ համաձայն գործի նյութերի՝ կասկածյալ ահաբեկիչը, որ հայտարարել է, թե ներգրավված է եղել սպանության մեջ, երկու ականատեսների կողմից նկատվել է այն ժամանակ, երբ օժանդակություն էր ստանում ժանդարմ Փերթեկից... Բացի այդ, «Սուսուրլուկի զեկույցի» համաձայն՝ Մեթին Քանի սպանությունը և, ենթադրաբար, նաև Հասան Քայայի սպանությունը, արտադատական հաշվեհարդար է, որի մասին իշխանությունները տեղյակ են պահվել: Դատարանի կողմից պետք է որոշվի այն հարցը, թե արդյոք այդ հանգամանքներում իշխանությունները թերացե՞լ են պետության ստանձնած դրական պարտավորության հարցում, որը Հասան Քայայի կյանքը սպառնացող վտանգից պաշտպանելն էր:

88. Դատարանը նկատում է, որ Հասան Քայան մտավախություն է ունեցել, որ իր կյանքին վտանգ է սպառնում, և ոստիկաններն իր նկատմամբ հսկողություն են սահմանել: Ըստ Բիրա Զորղագի՝ ոստիկանությունը կասկածում էր նրան ՔԱԿ-ի վիրավոր անդամներին բժշկական օգնություն ցույց տալու մեջ: Նրա ընկերը՝ Մեթին Քանը, ով իշխանությունների կողմից դիտվում էր որպես կասկածյալ, փաստաբան էր, ինչպես նաև [մարդու իրավունքների ընկերակցության] նախագահ և հանդես էր եկել որպես ՔԱԿ-ի կասկածյալների և Թունչելիի բանտում պահվող անձանց դատապաշտպան: Վերջինս նույնպես սպառնալիքներ էր ստացել և մտավախություն ուներ, որ գտնվում է հսկողության տակ:

89. Կառավարությունը հայտնել է, որ Հասան Քայային ավելի շատ վտանգ չի սպառնացել, քան հարավարևելյան շրջանում որևէ այլ անձի կամ բժշկի: Դատարանը նկատում է, որ հակամարտության հետևանքով այդ տարածաշրջանում կան շատ մեծ թվով զոհեր: Բոլոր դեպքերում, դատարանը նշում է, որ 1993 թ. լուրեր էին պտտվում, ըստ որոնց՝ հակապարտիզանական խմբերը ներգրավված էին ՔԱԿ-ին օժանդակություն տրամադրելու մեջ կասկածվող անձանց նշանառության տակ առնելու գործողություններում: Կասկած չկա, որ տեղի են ունեցել բազմաթիվ սպանություններ, որոնք հայտնի են դարձել «սպանությունների անհայտ պատվիրատու» որակմամբ, ներառյալ՝ հայտնի քուրդ գործիչների, այդ թվում նաև պարոն Մուսա Անտերի և այլ լրագրողների սպանությունները (տե՛ս... *«Յաշար ընդդեմ Թուրքիայի» (Yasa v Turkey)* վճիռը...): Դատարանի համար համոզիչ է, որ Հասան Քայան, որպես ՔԱԿ-ին օգնող և օժանդակող բժիշկ, այդ ժամանակ եղել է ապօրինի հարձակման ենթարկվելու առանձնահատուկ ռիսկի տակ: Բացի այդ, տվյալ հանգամանքներում այդ ռիսկը կարող էր համարվել իրական և անմիջական:

90. Դատարանի համար նույնքան համոզիչ է, որ իշխանություններն իրավամբ տեղյակ են եղել այդ ռիսկի առկայության մասին: Դատարանն ընդունել է Բիրա Զորղագի ցուցմունքի վերաբերյալ հանձնաժողովի գնահատականը, համաձայն որի՝ Էլազիգի ոստիկանությունը հարցրել է նրան Հասան Քայայի և Մեթին Քանի մասին և սպառնացել, որ նրանք կպատժվեն:

91. Բացի այդ, իշխանությունները տեղյակ են եղել կամ պարտավոր էին տեղյակ լինել, որ այդ ռիսկը կարող էր առաջանալ այն անձանց կամ խմբերի գործողություններից, որոնք գործում էին անվտանգության ուժերի գիտությամբ կամ թողտվությամբ: Խորհրդարանական քննչական հանձնաժողովի 1993 թ. զեկույցի համաձայն՝ …ստացվել են տեղեկություններ, թե անվտանգության ուժերը օժանդակում էին Հեզբոլահի ուսումնական ճամբարին և ուսուցում կազմակերպում այնտեղ: Դատարանը եզրակացրել է, որ հարավարևելյան տարածաշրջանում չբացահայտված 908 սպանությունների մեջ հնարավոր է, որ որոշ պաշտոնյաների «մատը խառը լիներ»: 1998 թ. հունվարին հրապարակված «Սուսուրլուկի զեկույցի» միջոցով վարչապետի գրասենյակը տեղեկացվել է, որ իշխանությունները տեղյակ են եղել ՔԱԿ-

ի ենթադրյալ օժանդակողներին վերացնելու նպատակով կատարված սպանությունների, ներառյալ՝ Մուսա Անտերի և Մեթին Քանի սպանությունների մասին: Կառավարությունն այն կարծիքին է, որ այդ զեկույցը դատավարական կամ փաստական արժեք չունի: Այնուամենայնիվ, նույնիսկ կառավարության համար սա համարվել է այնպիսի տեղեկություններ պարունակող զեկույց, որի հիման վրա վարչապետը պետք է ձեռնարկեր հետագա համապատասխան քայլեր: Այդ իսկ պատճառով այն պետք է համարվի ազդեցիկ փաստաթուղթ: Դատարանը չի հիմնվում զեկույցի վրա՝ որպես պետության որևէ պաշտոնյայի մասնակցությունը որևէ առանձին սպանության դեպքի մեջ հիմնավորող փաստաթղթի: Զեկույցը, սակայն, լրջորեն ամրապնդում է այն տեսակետը, որ այդ ժամանակից սկսած՝ «հակապարտիզանական» խմբերը (ներառյալ խոստովանած անձինք կամ ահաբեկչական խմբերը), ոչ առանց անվտանգության ուժերի համաձայնության և հնարավոր օժանդակության, քիրախ էին դարձնում այն անձանց, որոնք ընկալվում էին որպես պետության շահերի դեմ գործող անձինք:

92. Դատարանը քննարկել է, թե արդյոք իշխանություններն արե՞լ են այն ամենը, ինչը կարող էր ողջամտորեն ակնկալվել նրանցից Հասան Քայային վտանգից հեռու պահելու համար:

93. Դատարանը նշում է կառավարության բացատրությունները, ըստ որոնց՝ հարավարևելյան տարածաշրջանում հասարակական կարգ հաստատելու նպատակով տեղակայված են եղել մեծաթիվ անվտանգության ուժեր: Նրանց առջև դրված է եղել դժվարին առաջադրանք՝ դիմակայել ՔԱԿ-ի և այլ խմբերի զինված և դաժան հարձակումներին: Թուրքիայի պատժի (քրեական) օրենսգրքով սպանությունն արգելված է, և պետական մեղադրողների դատավարական բաժնի վերահսկողության ներքո այնտեղ տեղակայված են եղել ոստիկանական և ժանդարմական ուժեր, որոնց խնդիրն է եղել կանխել և հետաքննել հանցագործությունները: Եղել են նաև դատարաններ, որոնք կիրառել են քրեական օրենքի դրույթները՝ օրինազանցներին հարցաքննելու, դատապարտելու և ազատազրկելու համար:

94. Այնուամենայնիվ, դատարանը նշում է, որ ենթադրաբար անվտանգության ուժերի մասնակցությամբ անօրինական գործողությունների նկատմամբ քրեական օրենքի կիրառումը բացահայտում է հարավարևելյան տարածաշրջանում այդ ժամանակ տիրող իրավիճակին բնորոշ առանձնահատկությունները:

95. Նախ՝ այն դեպքում, երբ օրինախախտումը կատարվել է պետության պաշտոնյայի կողմից որոշ հանգամանքներում, պետական մեղադրողների վարույթ սկսելու գործառույթը նրանցից վերցվել է և տրվել վարչական խորհուրդներին, որոնք էլ որոշում են կայացրել վարույթ սկսելու կամ չսկսելու մասին… Այս խորհուրդները բաղկացած են եղել քաղաքացիական ծառայողներից և կազմավորվել են նահանգապետի կարգադրությամբ, որն անձամբ պատասխանատվություն է կրել անվտանգության ուժերի համար: Նրանց սկսած հետաքննությունները հաճախ իրականացնում էին ժանդարմները, որոնք հիերարխիական աստիճանակարգով կապված են եղել միջադեպին մասնակցած վաշտերի հետ: Համապատասխանաբար, երկու գործի առնչությամբ դատարանը գտել է, որ վարչական խորհուրդները չեն ապահովել անվտանգության ուժերի մասնակցությամբ մահվան դեպքերի հետաքննության անկախ կամ գործուն ընթացակարգ (*«Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի» (Gulec v Turkey)*, 1998 թ. հուլիսի 27-ի վճիռ, Զեկույցներ 1998-IV, էջ 1731–3, պարբ. 77-82):

96. Երկրորդ՝ կոնվենցիայի մարմինների՝ տարածաշրջանին վերաբերող գործերի ուսումնասիրությունն այս անգամ հանգեցրել է մի շարք եզրակացությունների, համաձայն որոնց՝ իշխանությունները թերացել են՝ ընթացք չտալով անվտանգության ուժերի՝ օրինախախտումների մասին հաղորդումներին 2-րդ հոդվածի ընթացակարգային պարտականությունների և կոնվենցիայի 13-րդ հոդվածի արդյունավետ պաշտպանության միջոցների կիրառման պահանջի համատեքստում (2-րդ հոդվածի առնչությամբ տե՛ս *«Քայան ընդդեմ Թուրքիայի» (Kaya v Turkey)* գործով 1998 թ. փետրվարի 19-ի վճիռը, Զեկույցներ 1998–I, պարբ. 86-92, *«Էրգին ընդդեմ Թուրքիայի» (Ergi v Turkey)* գործով 1998 թ. հուլիսի 28-ի վճիռը, Զեկույցներ 1998-IV, պարբ. 82-5, *«Յաշան ընդդեմ Թուրքիայի» (Yasa v Turkey)* գործով 1998 թ. սեպտեմբերի 2-ի վճիռը, Զեկույցներ 1998-VI, պարբ. 98-108…): Այս բոլոր գործերի ընդհանուր բացահայտված առանձնահատկությունն այն է, որ պետական մեղադրողն ընթացք չի տվել անհատների բողոքներին, որոնք պնդել են, որ անվտանգության ուժերը ներգրավված են եղել անօրինական գործողության մեջ, օրինակ՝ չհարցաքննելով և զեկուցագրեր չպահանջելով անվտանգության ուժերի ներգրավված անդամներից, սոսկ ընդունելով միջադեպերի վերաբերյալ անվտանգության ուժերի ներկայացրած հաշվետվությունները և առանց հիմքերի կամ չնչին հիմքերով միջադեպերը վերագրելով ՔԱԿ-ին:

97. Երրորդ՝ հետաքննության և դատական ընթացակարգերի առումով ահաբեկչական հանցագործությունների պատասխանատվությունը ՔԱԿ-ին վերագրելն առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ ահաբեկչական հանցագործությունների ընդդատության իրավասությունը պետական անվտանգության դատարաններինն է... Դատարանը համարել է, որ պետական անվտանգության դատարաններում քննվող մի շարք գործերի դատավարությանը ռազմական դատավորի մասնակցությունը կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված անկախության սկզբունքի խախտում է, քանի որ օրինականորեն մտածելու տեղիք է տալիս, որ դատարանը կարող է անհարկի ենթարկվել այնպիսի հանգամանքների ազդեցությունների, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեն գործի հատկանիշների հետ (տե՛ս *«Ինջալն ընդդեմ Թուրքիայի» (Incal v Turkey)* գործով 1998 թ. հունիսի 9-ի վճիռը, Զեկույցներ 1998-IV, էջ 1571-3, պարբ. 65-73):

98. Դատարանը համարում է, որ սույն գործին վերաբերող ժամանակահատվածում հարավարևելյան տարածաշրջանում առկա այս բացերը սասանել են քրեական իրավունքով երաշխավորվող պաշտպանության արդյունավետությունը: Եվ համարում է, որ սա հնարավորություն է տվել կամ խրախուսել անվտանգության ուժերին՝ խուսափել իրենց կատարած գործողությունների համար պատասխանատվությունից և, ինչպես հանձնաժողովը նշել է իր զեկույցում, համատեղելի չէ ժողովրդավարական հասարակությունը բնորոշ օրենքի գերակայության սկզբունքի հետ, որով հարգվում են կոնվենցիայով երաշխավորված հիմնարար իրավունքներն ու ազատությունները:

99. Հետևաբար, այս թերությունների պատճառով Հասան Քայան զուրկ է եղել պաշտպանությունից, որի իրավունքը նա ուներ օրենքի շրջանակներում:

100. Կառավարությունն առարկել է՝ ասելով, որ յուրաքանչյուր իրավիճակում նրանք կարող էին արդյունավետորեն պաշտպանել հարձակումներից: Դատարանի համար այս փաստարկը համոզիչ չէ: Իշխանությունները պետք է ունենային բազմաթիվ կանխարգելիչ միջոցներ՝ ուղղված իրենց իսկ անվտանգության ուժերի և նրանց հովանավորությամբ կամ նրանց գիտությամբ գործող խմբերի դեմ: Կառավարությունը տեղեկություններ չի տրամադրել այն մասին, թե «Սուսուլուկի զեկույցից» առաջ նրանք ինչ քայլեր են ձեռնարկել ուսումնասիրելու համար հակապարտիզանական խմբերի գոյությունը և այդ ժամանակահատվածում անօրինական սպանություններին պետական պաշտոնյաների մասնակցությունը՝ նպատակ ունենալով կիրառել պաշտպանության համապատասխան միջոցներ:

101. Դատարանը եզրակացնում է, որ այս գործին վերաբերող հանգամանքներում իշխանություններն իրենց հասանելի ողջամիտ միջոցներ չեն ձեռնարկել Հասան Քայայի կյանքին սպառնացող իրական և անմիջական վտանգը կանխելու համար: Հետևաբար, տեղի է ունեցել կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում:

Այսպիսով, դատարանը որոշել է, որ Թուրքիան թերացել է Հասան Քայայի կյանքի իրավունքը պաշտպանելու դրական պարտավորության կատարման հարցում, քանի որ 1993 թ. Հարավարևելյան Թուրքիայում չի ապահովել արդյունավետ քրեական իրավունքի ռեժիմ և չի ձեռնարկել կանխարգելիչ միջոցներ՝ ուղղված նրա կյանքն իրական վտանգներից (այդ ժամանակաշրջանում տարածաշրջանում հարյուրավոր սպանություններ կատարած անօրինական խմբերից) պաշտպանելուն: Սրանք դարձել են 2-րդ հոդվածի խախտման խիստ լուրջ դեպքեր և վեր են հանում այդ տարածքում օրենքի գերակայության անկումը:

Նմանապես, *«Գոնգաձեն ընդդեմ Ուկրաինայի» (Gongadze v Ukraine)* գործով 2005 թ. նոյեմբերի 8-ին կայացված վճռով դատարանը համարել է, որ հետաքննող լրագրողի սպանությունը (որի առնչությամբ եղել են լուրջ փաստեր, որ ոստիկանության աշխատակիցները մասնակցել են սպանությանը) տեղի է ունեցել այն ժամանակ, երբ սպանվել են նաև այլ լրագրողներ: Բացի այդ, հանգուցյալը բողոք էր ներկայացրել գլխավոր դատախազին՝ հայտնելով իրեն հետևող մարդկանց սպառնալիքների և իր նկատմամբ հսկողություն սահմանելու մասին: Սակայն իշխանությունները նրան թողել են առանց պաշտպանության, իսկ երկու ամիս անց նա անհետացել է: Մի քանի շաբաթ անց հայտնաբերվել է նրա գլխատված մարմինը: Պալատը միաձայն որոշել է, որ պատասխանող երկիրը թերացել է մահացածի կյանքի պաշտպանության ապահովման հարցում: Այս գործի կապակցությամբ բազմաթիվ հայտարարություններ են արվել, որոնք վերաբերել են մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների և քաղաքական գործիչների, այդ թվում նաև՝ Ուկրաինայի նախկին նախագահի քրեական վարքագծին և վարչակարգը քննադատողների նկատմամբ ակնհայտ դաժան վերաբերմունքի ժամանակահատվածին:

4 Պալատը միաձայն որոշել է, որ պաշտպանության դրական պարտավորությունը տարածվում է կալանավորի վրա՝ *«Փոլ և Օդրի էդվարդներն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Paul and Audrey Edwards v United Kingdom)* գործի վերաբերյալ 2002 թ. մարտի 14-ի վճռում: Դիմողների՝ հոգեկան հիվանդության պատմություն ունեցող երեսնամյա որդին փողոցում կանանց հասցեին անպարկեշտ արտահայտություններ անելու համար դատարանի որոշմամբ բանտարկվել է: Ավելի ուշ նա տեղափոխվել է Չելմսֆորդի բանտ և տեղավորվել խցում: Մեկ այլ կալանավոր՝ Լինֆորդը, որի մոտ նախկինում ախտորոշվել է շիզոֆրենիա հիվանդություն, բանտախցերի անբավարար քանակի պատճառով նրա հետ տեղավորվել է միևնույն խցում: Մի քանի ժամ անց դաժան հարձակման ընթացքում Լինֆորդը սպանել է դիմողների որդուն: Լինֆորդը դատապարտվել է մարդասպանության

մեղադրանքով՝ ճանաչվելով անմեղսունակ: Գանգատարկուները գտնում են, որ, ի թիվս այլոց, համապատասխան մարմինները թերացել են իրենց որդու կյանքը պաշտպանելու հարցում՝ խախտելով 2-րդ հոդվածի շրջանակներում ստանձնած իրենց պարտավորությունները: Մեջբերելով *Օմանից*՝ դատարանը որոշել է.

56. Բանտարկյալների կապակցությամբ դատարանը նախկինում առիթ է ունեցել շեշտելու, որ կալանավորված անձինք խոցելի վիճակում են, և իշխանությունները պարտավոր են պաշտպանել նրանց:

Այնուհետև դատավորները եզրակացրել են, որ մի շարք պետական հիմնարկներ (ներառյալ բժիշկները, ոստիկանությունը, թագավորական դատախազական ծառայությունը և դատարանները) թերացել են բանտի ղեկավարությանը Լինֆորդի առողջության և նախապատմության վերաբերյալ տեղեկություններ հաղորդելու հարցում, որը ոչ պատշաճ քննության է ենթարկել նրան, երբ վերջինս բերվել է Չելմսֆորդի բանտ: Վերջին հաշվով այս բոլոր թերացումները հավասար են պետության կողմից դիմողների որդու կյանքը 2-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում պահպանելու պարտավորության խախտման: *Էդվարդների* գործի ողբերգական փաստերը ցույց են տալիս, որ ոչ միայն ոստիկանությունը կարող է մարդկանց պաշտպանությունը երրորդ անձանցից առաջացող հայտնի (կամ ենթադրաբար հայտնի) սպառնալիքներից ապահովելու պարտավորություն ունենալ: Այն դեպքում, երբ մարդիկ բանտարկված են, պետական մարմինները, որոնք պատասխանատու են նրանց խնամքի համար, համանման պարտավորություն են կրում: Սա *Օմանի* գործի խիստ ցանկալի ընդլայնում է, քանի որ բանտարկյալներն անտարակույս իրենց պաշտպանելու սահմանափակ կարողություններ ունեն (օրինակ՝ սովորաբար նրանք չեն կարող ընտրել՝ ում հետ ապրել):

5 *«Անգելովան ընդդեմ Բուլղարիայի» (Anguelova v Bulgaria)* գործով 2002 թ. հունիսի 13-ի վճռով դատարանը միաձայն որոշել է, որ ոստիկանության աշխատակիցների կողմից լրջորեն վիրավորված կալանավորին ժամանակին և պատշաճ բուժօգնություն չտրամադրելը, որի հետևանքով վերջինս ստացած վերքերից մահացել է, 2-րդ հոդվածի խախտում է: Դիմողի 17 տարեկան որդուն ոստիկանությունը ձերբակալել է գողության կասկածանքով: Մի քանի ժամ ոստիկանությունում պահվելուց հետո հայտնի է դարձել, որ նրա առողջությունը խիստ վատթարացել է (նա ճակատի մասում վնասվածքներ ուներ և ծանր շնչառություն): Ոստիկանության բաժնի աշխատակիցները շտապօգնություն չեն կանչել, սակայն կանչել են հերթապահության մասի այն աշխատակիցներին, ովքեր բերման են ենթարկել կալանավորին: Այնուհետև նրան ձերբակալած աշխատակիցները գնացել են հիվանդանոց և շտապօգնության մեքենան բերել ոստիկանության բաժին՝ կալանավորին տեղափոխելու համար: Հիվանդանոց հասնելու պահին կալանավորն արդեն մահացած էր: Դատարանը որոշել է, որ ոստիկանության աշխատակիցների այս վարքագիծը և այդ աշխատակիցների նկատմամբ գործողություններ չձեռնարկելը ներառում է «պետության՝ 130... կալանքի տակ գտնվող անձանց կյանքի պաշտպանության պարտավորության» խախտում: Ոստիկանության աշխատակիցների վարքագիծը եղել է կասկածելի, ինչպես նաև բացահայտորեն և լրջորեն չի համապատասխանել լուրջ հիվանդ կալանավորին ողջամիտ խնամք տրամադրելու չափորոշչին:

6 Բանտարկյալների վաղաժամկետ ազատ արձակման համատեքստում պաշտպանության պարտավորության կիրառությունը մեծ պալատը մշակել է *«Մաստրոմատեոն ընդդեմ Իտալիայի» (Mastromatteo v Italy)* գործով 2002 թ. հոկտեմբերի 24-ի վճռի միջոցով: Դիմողի որդին մահացել է բանկի կողոպտիչի արձակած գնդակից, երբ կողոպտիչը փորձել է փախչել հանցանքի վայրից: Կողոպուտի ժամանակ ծանր հանցագործություններ կատարելու մեղադրանքով կողոպտիչը և նրա երկու հանցակիցները կրում էին իրենց ազատազրկման պատիժը: Այնուամենայնիվ, դատական մարմինները նրանց շնորհել են կա՛մ բանտից դուրս գալու, կա՛մ կիսաազատ ռեժիմի տակ կալանքի տակ պահվելու թույլտվություն: Դիմողը բողոքում էր, որ պետությունը չի պաշտպանել իր տղայի կյանքը՝ դրանով իսկ խախտելով 2-րդ հոդվածով նախատեսված իր դրական պարտավորությունը: Հղում կատարելով *Օմանի* և *Էդվարդների* գործերին՝ դատարանը որոշել է.

69. …Վարույթում գտնվող գործը մյուս գործերից տարբերվում է նրանով, որ հարցն այն չէ, որ իշխանությունները պատասխանատվություն են կրում, որովհետև չեն ապահովել [դիմողի որդու] կյանքը: Հարցն այն է, որ դրական պարտավորությունն առհասարակ վերաբերում է հասարակությանը ծանր հանցագործության մեղադրանքով ազատազրկված մեկ կամ մի քանի անձանց պոտենցիալ գործողություններից պաշտպանությանը և այդ պաշտպանության շրջանակներում ընդունվող որոշմանը:

Համաձայն վճռի՝ ազատազրկման հիմնական նպատակներից մեկը հասարակությանը պաշտպանելն է, «72. միաժամանակ դատարանը ճանաչում է դատապարտված անձանց աստիճանական սոցիալական ինտեգրումն ապահովելու քաղաքականության օրինական նպատակը»: Հաշվի առնելով Իտալիայում դատապարտյալների ազատ արձակման սխեմաների հիմնական առանձնահատկությունները (ըստ որոնց՝ պարտադիր է, որ ազատ արձակման ենթակա բանտարկյալների ազատազրկման նվազագույն ժամկետն անցած լինի, բանտում գտնվելու ընթացքում նրանց վարքի վերաբերյալ նշումները լինեն դրական, և տվյալ դատապարտյալին ազատ արձակելու դեպքում հասարակությանը նրա կողմից սպառնացող վտանգը գնահատված լինի դատավորի կողմից) և վաղաժամկետ ազատված դատապարտյալների քրեական վարքի մասին վիճակագրական տվյալները (ըստ որոնց՝ ազատ արձակված և թաքնված դատապարտյալների թիվը կազմել է 1 տոկոսից պակաս)՝ դատարանը միաձայն եզրակացրել է, որ իտալական սխեման համատեղելի է 2-րդ հոդվածի շրջանակներում պետության ստանձնած պարտավորության հետ: Նաև՝ առանձին դատական որոշմամբ կողոպուտին մասնակցած և դրա հետևանքով դիմողի որդուն սպանած դատապարտյալների ազատ արձակումը համարվել է համատեղելի 2-րդ հոդվածի իմաստի հետ, քանի որ.

76. Դատարանը համարում է, որ ազգային մարմինների ձեռքի տակ գտնվող նյութերում ոչինչ չի եղել, որը ցույց կտար, որ Մ. Ռ.-ի կամ Գ. Մ.-ի ազատ արձակումը կյանքի իրական և անմիջական վտանգ է ներառում, և նույնիսկ իրադարձությունների տարերային զարգացման արդյունքում կհանգեցներ Ա. Մաստրոմատեոյի մահվան, ինչը տեղի է ունեցել սույն գործում: Ոչ էլ եղել են հանգամանքներ, որոնք կմատնանշեին, որ ազատ արձակվելուց հետո անհրաժեշտ են լինելու լրացուցիչ միջոցներ երաշխավորելու համար, որ այդ երկուսը վտանգավոր չեն հասարակության համար:

Մաստրոմատեոյի գործի վերաբերյալ վճռով փորձ է արվել զգուշորեն հավասարակշռել բանտարկյալների սոցիալական վերաինտեգրման ցանկալիությունը շուտ ազատ արձակված կամ տնային հսկողության տակ գտնվող դատապարտյալների դաժան հանցագործություններ կատարելու կանխատեսելի ռիսկերից հանրությանը պաշտպանելու անհրաժեշտության հետ: Դատարանը խորությամբ ուսումնասիրել է Իտալիայի սխեմայի չափանիշները և կիրառումը, որպեսզի պարզի դրանց համապատասխանությունը 2-րդ հոդվածի շրջանակներում պետության ստանձնած կյանքը պաշտպանելու պարտավորության հետ: Վիճակագրության տեսանկյունից այս սխեման բացահայտել է խիստ աննշան վտանգ հասարակության համար: Բացի այդ, դատարանը Իտալիայի դատարանների՝ ազատ արձակման որոշումները գնահատելիս զգուշություն է դրսևորել հետահայաց մոտեցման առավելությունից օգտվելու հարցում:

7 Ըստ բազմաթիվ գանգատներից մեկի (տե՛ս նաև ստորև՝ էջ 131 [հետաքննչական պարտավորություններ]), որը դիմող պետությունը ներկայացրել է *«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի»* գործի շրջանակներում, Հյուսիսային Կիպրոսի իշխանությունները չեն կարողացել ապահովել (կամ թույլ չեն տվել ստանալ) պատշաճ բժշկական ծառայություններ ազգությամբ հույն մի քանի հարյուր կիպրոսցիների և մարոնիտների համար, որոնք դեռևս բնակվում էին հյուսիսային տարածաշրջանում՝ դրանով իսկ թույլ տալով 2-րդ հոդվածի խախտում: Մեծ պալատը՝ տասնվեց կողմ և մեկ դեմ ձայներով, որոշել է, որ.

219. Դատարանը նկատում է, որ եթե պայմանագրի կողմ հանդիսացող պետության իշխանությունները վտանգի են ենթարկում անհատի կյանքը՝ մերժելով նրա առողջական խնամքը, որը նրանք պարտավորվել են ապահովել առհասարակ բնակչության համար, ապա կոնվենցիայի 2-րդ հոդվածի շրջանակներում կարող է խնդիր ծագել: Այս կապակցությամբ դատարանը նկատում է, որ կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետը պահանջում է պետությունից ոչ միայն ձեռնպահ մնալ կյանքից միտումնավոր և անօրինական զրկելուց, այլև պատշաճ քայլեր ձեռնարկել իր

իրավազորության ներքո գտնվողների կյանքի պաշտպանության համար (տես *«LCB-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (LCB v the United Kingdom)* գործով 1998 թ. հունիսի 9-ի վճիռը, Զեկույցներ 1998-III, էջ 1403, պարբ. 36): Այնուամենայնիվ, դատարանը նկատում է, որ փաստերի հիման վրա հանձնաժողովը չի կարողացել ապացուցել, որ ՀԿԹՀ-ի [Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության] իշխանությունները միտումնավոր բուժօգնություն ցույց չեն տվել խնդրո առարկա բնակչությանը կամ որդեգրել են հարավում բուժվելու վերաբերյալ հիվանդների դիմումներին ընթացք տալու գործընթացի ուշացման գործելակերպ: Դատարանը նկատում է, որ խնդրո առարկա ժամանակահատվածում բժշկական այցերը իրոք խոչընդոտվել են ՀԿԹՀ-ի կողմից ազգաբնակչության տեղաշարժի նկատմամբ կիրառված սահմանափակումների պատճառով, և որոշ դեպքերում տեղի են ունեցել ձգձգումներ: Այնուամենայնիվ, չի հիմնավորվել, որ առանձին ձգձգումների պատճառով հիվանդների կյանքը վտանգի է ենթարկվել: Պետք է նաև նկատել, որ ո՛չ կիպրոսցի հույն, ո՛չ մարոնիտ համայնքները չեն զրկվել հյուսիսում գտնվող հիվանդանոցների առաջարկած բժշկական ծառայություններից օգտվելու հնարավորությունից: Այնուամենայնիվ, դատարանը չի համարում, որ այս դեպքում անհրաժեշտ է ուսումնասիրել, թե որքանով է կոնվենցիայի 2-րդ հոդվածը առողջապահական խնամքի որոշակի չափորոշչի ապահովման պարտավորություն դնում պայմանագրի կողմ հանդիսացող պետության վրա...

221. Դատարանը եզրակացնում է, որ կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտումը՝ կապված կիպրոսցի հույներին և մարոնիտներին բժշկական ծառայություններ ստանալու հնարավորությունից ենթադրաբար զրկելու հետ, չի հիմնավորվել:

Թեպետ դատարանը սույն առողջապահական հարցերով բերված գանգատների առնչությամբ խախտում չի արձանագրել, Կիպրոսի գործով վճիռը ավելի վաղ ընդունված *LCB-ի* գործով վճռի կատարելագործված տարբերակն է՝ հստակորեն նշելով, որ պետությունները կարող են պատասխանատվություն կրել 2-րդ հոդվածի շրջանակներում կյանքը փրկող բուժօգնություն չտրամադրելու համար, որը նրանք խոստացել են ապահովել բոլորին: Այս պարտավորության նշանակությունն այն է, որ առանձին պետություններն ազատ են առողջապահության ապահովման սեփական մակարդակը որոշելու հարցում: 2-րդ հոդվածը կարող է վկայակոչվել կյանքի սպառնալիքին առնչվող գործերում, եթե պետությունը չի ապահովել իր կողմից սահմանված չափորոշիչը: Այնուամենայնիվ, դատարանը, տանտալոսյան քայլ անելով, առաջարկում է, որ 2-րդ հոդվածը կարող է նաև անդամ պետություններից պահանջել առողջապահության նվազագույն մակարդակի ապահովում: Ուստի 2-րդ հոդվածի շրջանակներում պետության՝ բուժօգնության տրամադրման պարտավորությունը դեռևս զարգացման սկզբնական փուլում է:

8 Պետությունների՝ մասնավոր բժշկական ծառայությունների կարգավորման պարտավորությունները մեծ պալատը դիտարկել է *«Կալվելլին և Չիլիոն ընդդեմ Իտալիայի» (Calvelli and Ciglio v Italy)* գործի վերաբերյալ 2002 թ. հունվարի 17-ի վճռում: Դիմողների երեխան ծնվելուց երկու օր անց մահացել էր մասնավոր կլինիկայում: Վեց տարի անց պատասխանատու բժիշկը, որը նաև կլինիկայի համասեփականատերն էր, մեղավոր է ճանաչվել չկանխամտածված մարդասպանության մեջ: Նա դատարանի վճիռը հաջողությամբ բողոքարկել է վճռաբեկ դատարանում, և երբ նրա գործն ուղարկվել է կրկնակի դատական քննության, վաղեմության ժամկետը սպառվել է: Դիմողները, որոնք քրեական վարույթին մասնակցել են որպես քաղաքացիական կողմ, իրենց պահանջները կարգավորել են բժշկի/կլինիկայի հետ, երբ վերջինիս ապահովագրողները համաձայնել են փոխհատուցման կարգով վճարել 95 միլիոն լիրա: Դիմողները պնդել են, որ, ի թիվս այլոց, բժշկին քրեական հետապնդման ենթարկելու անհնարինությունը՝ պայմանավորված վարույթի գործընթացի ձգձգումներով և ժամանակային սահմանափակումով, 2-րդ հոդվածի խախտում է: Հղում անելով *Մակքենի* և *LCB-ի* գործերին՝ դատարանը հայտարարել է հետևյալը.

49.…Վերոհիշյալ դրական պարտավորությունները, հետևաբար, թելադրում են պետություններին ընդունել կանոնակարգեր, որոնք պարտադրում են հիվանդանոցներին, լինեն դրանք պետական թե մասնավոր, ձեռնարկել հիվանդների կյանքի պաշտպանությանն ուղղված համապատասխան միջոցներ: Դրանք նաև պահանջում են ստեղծել գործուն անկախ դատական համակարգ, որը հնարավորություն կտա որոշելու բժիշկների խնամքի տակ գտնվող անձանց մահվան պատճառները և պատասխանատվության ենթարկել մեղավորներին…

Այնուհետև դատարանն ուսումնասիրել է դիմողների երեխայի մահվան կապակցությամբ Իտալիայի արդարադատության համակարգի պատասխանը:

51. …Եթե կյանքի իրավունքը կամ անձնական անվտանգությունը միտումնավոր չեն խախտվել, ապա 2-րդ հոդվածով սահմանված արդյունավետ դատական համակարգ հիմնելու դրական պարտավորությունը պարտադիր չէ, որ բոլոր դեպքերում պահանջի քրեական իրավունքով ամրագրված իրավական պաշտպանության իրականացում: Բժշկական անփութության ուրույն ասպարեզում պարտավորությունը կարող է, օրինակ, նաև բավարարվել, եթե իրավական համակարգը թույլ տա քրեական իրավունքի պաշտպանությունից առանձին կամ դրան զուգահեռ դիմել նաև իրավունքի քաղաքացիական դատավարության պաշտպանության միջոցների, ինչը հնարավորություն կտա որոշելու տվյալ բժիշկների պատասխանատվությունը և ապահովելու պատշաճ քաղաքացիական փոխհատուցում, ինչպես օրինակ՝ վնասի փոխհատուցման և որոշման հրապարակման վերաբերյալ օրդերի ձեռքբերումը: Կարող են նախատեսվել նաև կարգապահական միջոցներ:

Ճնշող մեծամասնության կարծիքով (տասնչորս կողմ և երեք դեմ ձայներով), քանի որ դիմողները կամավոր մասնակցել էին քաղաքացիական վարույթի շրջանակներում խնդրի կարգավորմանը, իրենց զրկել են բժշկի պատասխանատվության աստիճանի դատական կարգով որոշման լավագույն տարբերակից և չեն կարող շարունակել պնդել, որ հանդիսանում են կոնվենցիայի պահանջների խախտման «զոհ»: *Կալվելլիի և Չիլիոյի* գործի վերաբերյալ որոշումն ավելի հակված է եղել պետության կողմը, քանի որ ձգձգված և, ի վերջո, վաղեմության պատճառով դադարեցված բժշկի հետապնդումը չի համարվել 2-րդ հոդվածի խախտում: Իրենց միասնական չհամընկնող կարծիքում դատավորներ Ռոզակիսը և Բոնելլոն հայտնել են. «...Քաղաքացիական վարույթը 2-րդ հոդվածի պահանջների համար բավարար միջոց համարելն այդ հոդվածով նախատեսված կյանքի իրավունքի նվազեցում է և հավասար է կյանքի իրավունքի պաշտպանության «սեփականաշնորհման»: Այնուամենայնիվ, մեծ պալատը գոնե վճռել է, որ պետություններն ունեն բժշկական ծառայությունների մատուցումը կանոնակարգելու ընդհանուր պարտավորություն»:

9 *«Օներյիլդիզն ընդդեմ Թուրքիայի» (Oneryildiz v Turkey)* գործի վերաբերյալ 2004 թ. նոյեմբերի 30-ի վճռով մեծ պալատը միաձայն եզրակացրել է, որ տեղի է ունեցել կյանքի պաշտպանության դրական պարտավորության խախտում, քանի որ պետական մարմինները չեն կարողացել պաշտպանել մարդկանց կյանքը վտանգավոր թափոնների տեղամասում տեղի ունեցած պայթյունից: Դիմողը, նրա կինը, տասը երեխաները և հարճը (!), սկսած 1988 թվականից, առանց պաշտոնական թույլտվության, ապրել են մի տան մեջ, որը կառուցվել է հանրային սեփականություն համարվող տարածքում: Տունը գտնվում էր Ստամբուլի շրջաններից մեկի «հետնախորշային թաղամասում»: Բացի այդ, տունը գտնվում էր քաղաքային կենցաղային աղբանոցի մոտակայքում: Ընդ որում՝ աղբանոցը շահագործման մեջ է եղել 1970-ականների սկզբից: 1991 թ. տեղական շրջանային խորհուրդը դիմել է շրջանային դատարան՝ պահանջելով նշանակել փորձագետներ, որոնք կուսումնասիրեն աղբանոցի համապատասխանությունը շրջակա միջավայրի ազգային կանոնակարգերի պահանջներին: Նշանակվել է փորձագետների կոմիտե, որի կազմի մեջ մտել է նաև բնապահպանության ճարտարագիտության մեկ պրոֆեսոր: Նրանց 1991 թ. մայիսի զեկույցի համաձայն՝ աղբանոցը չի համապատասխանել գործող տեխնիկական կանոնակարգերի պահանջներին և լուրջ առողջական վտանգ է ներկայացրել՝ լինելով քսան վարակիչ հիվանդությունների աղբյուր տեղի բնակիչների համար: Նաև աղբանոցը չի ունեցել աղբի փտման հետևանքով գոյացած մեթան գազի անվտանգ այրման համակարգ՝ այդպիսով ստեղծելով պայթյունի լուրջ վտանգ: Զեկույցում գրված է հետևյալը. «Թող Տերը մեզ լինի պահապան, քանի որ վնասը կարող է խիստ շոշափելի լինել, քանի որ աղբանոցի հարևանությամբ տներ կան...»: Չորս տեղական խորհուրդները, ինչպես նաև նահանգապետը և կենտրոնական կառավարությունը տեղեկացված են եղել զեկույցի մասին: Տեղական խորհուրդներից երկուսը դիմել են դատարան, որպեսզի զեկույցը հաշվի չառնվի, քանի որ, ինչպես նրանք են հայտնել, իրենցից խորհուրդ չեն հարցրել փորձագիտական կոմիտե ստեղծելու մասին: 1991 թ. հունիսին բնապահպանության ազգային գրասենյակը խորհուրդ է տվել Ստամբուլի նահանգապետին, քաղաքային խորհրդին և տեղական խորհուրդներին քայլեր ձեռնարկել զեկույցի մեջ բարձրացված խնդիրների կարգավորման ուղղությամբ: 1992 թ. օգոստոս ամսին տեղական քաղաքապետներից մեկը դիմել է շրջանային դատարան՝ պահանջելով տրամադրել ժամանակավոր կարգագիր, որով տեղական իշխանություններին կարգելվի օգտագործել աղբանոցը: 1993 թ. ապրիլի 28-ին տարածքում տեղի է ունեցել մեթան գազի պայթյուն, աղբն օդ է բարձրացել և առաջացրել սողանք, որը ծածկել է հարևան հետնախոր-

շերում գտնվող տասը տունը, ներառյալ՝ դիմողինը: Մահացել է երեսունինը մարդ, այդ թվում նաև՝ դիմողի կինը, երեխաներից յոթը և հարճը: Դիմողը բողոքել է, որ, ի թիվս այլոց, իշխանությունները, խախտելով 2-րդ հոդվածը, հանդուրժել են աղբանոցի հարևանությամբ հետնախորշային տների կառուցումը, որևէ քայլ չեն ձեռնարկել աղբանոցի առաջացրած հայտնի վտանգները կանխելու ուղղությամբ և չեն նախազգուշացրել հետնախորշի բնակիչներին այդ վտանգների մասին: Մեծ պալատը վճռել է.

89. 2-րդ հոդվածի շրջանակներում բոլոր անհրաժեշտ քայլերը ձեռնարկելու դրական պարտավորության տեսանկյունից ամենից առավել, առաջնային պարտավորություն է դրվում պետության վրա՝ ստեղծել կյանքի իրավունքին սպառնացող վտանգների արդյունավետ կանխմանն ուղղված օրենսդրական և վարչական դաշտ…

90. Այս պարտավորությունն անվիճելիորեն վերաբերում է վտանգավոր գործունեությունների ուրույն ոլորտին, որի դեպքում, ամեն ինչից զատ, հատուկ ուշադրություն պետք է դարձվի տվյալ գործունեությանը բնորոշ առանձնահատկությունների կանոնակարգմանը՝ հաշվի առնելով, մասնավորապես, մարդկանց կյանքին սպառնացող պոտենցիալ վտանգի աստիճանը:

Կանոնակարգերը պետք է ներառեն գործունեության արտոնագրմանը, հիմնադրմանը, իրականացմանը, անվտանգությանը և վերահսկողությանը վերաբերող հարցեր և պարտադիր լինեն բոլոր նրանց համար, ում խնդիրն է ձեռնարկել գործնական միջոցներ քաղաքացիների կյանքը ռիսկերից առաջացող վտանգից պաշտպանելու համար: Ըստ կոնվենցիայի հաստատությունների նախադեպային իրավունքի՝ հանրության տեղեկատվության իրավունքն այդ կանխարգելիչ միջոցների շարքում առանձնահատուկ նշանակություն ունի: Մեծ պալատը համաձայն է պալատի հետ (տե՛ս պալատի վճռի 84-րդ պարբերությունը), որ այդ իրավունքն արդեն ճանաչված է 8-րդ հոդվածի շրջանակներում (տե՛ս *«Գուերրան և այլք [ընդդեմ Իտալիայի* 1998-*I]»* (*Guerra and Others [v Italy* 1998-I]), պարբ. 60), և ըստ այդմ՝ կարող է նաև կիրառվել կյանքի իրավունքի պաշտպանության առումով...
. . .

100. Դատարանը կարծում է, որ ո՛չ եղելությունը, ո՛չ էլ տվյալ վտանգի անմիջական գոյությունը վեճի թեմա չեն, քանի որ տեսնում է, որ պայթյունի վտանգը հստակ գոյություն է ունեցել նախքան 1991 թ. մայիսի 7-ի զեկույցը, և տեղամասի շահագործումը շարունակվել է նույն կերպ, ինչը կարող էր հանգեցնել միայն ռիսկի մեծացման, նախքան 1993 թ. ապրիլի 28-ին տեղի կունեցար պայթյունը:

101. Հետևաբար, մեծ պալատը համաձայն է պալատի հետ (տե՛ս պալատի վճռի 79-րդ պարբերությունը), որ հնարավոր չէ՝ աղբանոցի վերահսկման և կառավարման համար պատասխանատու վարչական և քաղաքական բաժինները տեղյակ չլինեին մեթանագենեզին բնորոշ ռիսկերի կամ անհրաժեշտ կանխարգելիչ միջոցների մասին, մանավանդ որ այդ խնդիրների առնչությամբ գործում էին առանձնահատուկ կանոնակարգեր: Բացի այդ, դատարանը ապացուցված է համարում, որ տարբեր կառավարման մարմինները նույնպես տեղյակ են եղել այդ ռիսկերի մասին առնվազն 1991 թ. մայիսի 27-ի դրությամբ, երբ նրանք իրազեկվել են 1991 թ. մայիսի 7-ի զեկույցի մասին...

Սրանից բխում է, որ Թուրքիայի իշխանությունները տարբեր մակարդակներում իմացել են կամ պետք է որ իմանային, որ Ումրանիեի քաղաքային աղբանոցի շրջակայքում ապրող մարդկանց կյանքն իրական և անմիջական վտանգի տակ էր: Նրանք, հետևաբար, կոնվենցիայի 2-րդ հոդվածի շրջանակներում այնպիսի կանխարգելիչ օպերատիվ միջոցներ ձեռնարկելու դրական պարտավորություն ունեին, որոնք անհրաժեշտ և բավարար կլինեին մարդկանց պաշտպանությունն ապահովելու համար, մանավանդ որ իրենք էին ստեղծել այդ աղբանոցը և արտոնել դրա շահագործումը, որն էլ հանգեցրել էր խնդրո առարկա ռիսկերի առաջացմանը:

102. Այնուամենայնիվ, դատարանին ներկայացված փաստերից պարզ է, որ 1991 թ. մայիսի 14-ից առաջ և հետո քաղաքային խորհուրդը, մասնավորապես, ոչ միայն չի ձեռնարկել անհրաժեշտ հրատապ միջոցներ, այլև, ինչպես նշել է պալատը, հակադրվել է դրանց վերաբերյալ վարչապետի բնապահպանության գրասենյակի հանձնարարականին:

103. Քաղաքային խորհուրդը նաև հակադրվել է աղբանոցը ժամանակավոր փակելու պահանջով 1992 թ. օգոստոսի 27-ին Ումրանիեի քաղաքապետի՝ դատարան դիմելու վերջին փորձին ...

Սույն հիմքից բացի, կառավարությունը նաև վկայակոչել է *«Չեփմենն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Chapman v the United Kingdom)* [2001-I] գործի վերաբերյալ վճիռը՝ քննադատելով դիմողին օրենքի գիտակցաբար խախտման և աղբանոցի շրջակայքում բնակություն հաստատելու համար:

Այնուամենայնիվ, այս փաստարկները քննության չեն դիմանում հետևյալ պատճառներով.

104. Վարույթում գտնվող գործի կապակցությամբ դատարանն ուսումնասիրել է «հետնախորշերի վերականգնման և մաքրման գոտում» կամ այդ գոտուց դուրս հանրային սեփականությունը երրորդ անձանց փոխանցելու վերաբերյալ ազգային օրենքի դրույթները...

Այս օրենսդրական հարցերի շուրջ քննարկումներից հետո դատարանը եզրակացնում է, որ հակառակ քաղաքաշինության ոլորտում օրենքով սահմանված արգելքների՝ պետությունը վարել է քաղաքային միջավայրի մեջ հետնախորշային թաղամասերի ինտեգրումը խրախուսող հետևողական քաղաքականություն, ինչով և ճանաչել է դրանց գոյությունը և այն քաղաքացիների ապրելակերպը, որոնք, սկսած 1960 թվականից, աստիճանաբար ձևավորել են դրանք: Քանի որ այս քաղաքականությունը հանգեցրել է քաղաքաշինության նորմերի խախտման և հանրային տարածքների ապօրինի զբաղեցման թողտվության, այն պետք է որ անորոշ դարձրած լիներ օրենքով նախատեսված միջոցների կիրառման համար պատասխանատու վարչական մարմինների հայեցողությունը և, հետևաբար, չէր կարող կանխատեսելի լինել հանրության համար:

105. Այս մեկնաբանությունը նաև հիմնավորվում է դիմողի նկատմամբ վարչական մարմինների դրսևորած վերաբերմունքով:

Դատարանը տեսնում է, որ 1988 թ. խնդրո առարկա տան ապօրինի շինարարությունից մինչև 1993 թ. ապրիլի 28-ի պատահարը դիմողը շարունակել է տիրապետել իր շինությունը, չնայած այն փաստին, որ այդ ժամանակահատվածում նրա դրությունը ենթակա է եղել կարգավորման թիվ 775 օրենքով սահմանված դրույթներով և, մասնավորապես, դրա 18-րդ բաժնի դրույթներով, համաձայն որոնց՝ քաղաքային իշխանությունները ցանկացած պահի կարող են քանդել շինությունը: Իրավամբ, կառավարությունը նշել է սրա մասին, սակայն սույն գործի կապակցությամբ նա չի կարողացել ցույց տալ, որ համապատասխան վարչական մարմինները գոնե մտադիր են եղել դիմողի նկատմամբ նման քայլ ձեռնարկել:

Իշխանությունների թողտվությամբ դիմողը և նրա մտերիմ ազգականները հանգիստ ապրել են իրենց տան մեջ, իրենց ստեղծած սոցիալական և ընտանեկան միջավայրում: Բացի այդ, հաշվի առնելով դատարանին ներկայացված որոշակի փաստերը, որոնք չեն հերքվել կառավարության կողմից, որևէ պատճառ չկա հարցականի տակ դնելու դիմողի պնդումը, որ իշխանություններն իրենից և Ումրանիեի հետնախորշերի մյուս բնակիչներից տեղական խորհրդի հարկ են գանձել և այդ գանձումների դիմաց հանրային ծառայություններ մատուցել նրանց:

106. Այդ պարագայում կառավարությունը դժվար թե կարողանա օրինականորեն հիմնավորել, որ զանցառությունը և անհեռատեսությունը պետք է վերագրվեն միայն 1993 թ. ապրիլի 28-ի պատահարի զոհերին, կամ էլ հիմնվել *«Չեփմենն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Chapman v the United Kingdom)* գործի վերաբերյալ դատարանի եզրակացությունների վրա, համաձայն որոնց՝ Բրիտանիայի իշխանությունները պասիվ չեն համարվել տիկին Չեփմենի անօրինական գործողությունների դեպքում:

Դատարանին մնում է միայն անդրադառնալ կառավարության ներկայացրած մյուս փաստարկներին, որոնք, ընդհանուր առմամբ, վերաբերում են Ումրանիեի աղբանոցի առաջացրած խնդիրների մեղմման նպատակով այդ ժամանակ քաղաքային խորհրդի կողմից իրականացվող վերակառուցման ծրագրերի ծավալին, կատարված ներդրումների չափին (ասվում է, որ այն ներգործություն է ունեցել ազգային մարմինների կողմից տեղամասում առկա իրավիճակի կարգավորման տարբերակի ընտրության վրա) և, վերջապես, մարդասիրական նկատառումներին (որոնք այդ ժամանակ ենթադրաբար հետ են պահել այս միջոցների իրականացումից, քանզի դրանց անմիջական հետևանքը լինելու էր ուղղակի հետնախորշերի հիմնովին ոչնչացումը):

107. Դատարանն ընդունում է, որ իր խնդիրը չէ Ստամբուլի այդ տարածքի սոցիալական, տնտեսական և քաղաքային խնդիրների կարգավորման լավագույն քաղաքականության վերաբերյալ տեղական իշխանությունների տեսակետները փոխարինել իր տեսակետով: Ուստի այս առումով նա ընդունում է կառավարության փաստարկը, որ իշխանությունների վրա չպետք է դրվի անհնարին կամ անհամաչափ բեռ՝ առանց հաշվի առնելու, մասնավորապես, որ նրանք պետք է անհապաղ ընտրություն կատարեն գերակայությունների և առկա ռեսուրսների միջև (տե՛ս *«Օսմանն [ընդդեմ ՄԹ-ի]»* 1998-VIII], (*Osman [v UK*, 1998-VIII]), պարբ. 116): Ինչպես դատարանը նշել է նախկինում, սա պայմանավորված է բարդ սոցիալական և տեխնիկական ոլորտներում (որոնց մեջ մտնում է նաև վարույթում գտնվող գործի շրջանակներում բարձրացված հարցը) պետություններին վերապահված հայեցողության լայն սահմաններով (տե՛ս *«Հեթթոնը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (Hatton and Others v the United Kingdom)* [GC], թիվ 36022/97, պարբ. 100–1, ECHR 2003-VIII):

Այնուամենայնիվ, նույնիսկ այս տեսանկյունից դիտարկվելու դեպքում կառավարության փաստարկները, դատարանի կարծիքով, համոզիչ չեն: Դրական պարտավորությունից բխող կանխարգելիչ միջոցները ճշտորեն մտնում են իշխանությանը վերապահված իրավասությունների շրջանակի մեջ և կարող են ողջամտորեն համարվել նրանց ուշադրությանը ներկայացված ռիսկի կանխարգելման նպատակահարմար միջոցներ: Դատարանը կարծում է, որ Ումրանիեի աղբանոցում նախքան իրադարձությունների ճակատագրական ընթացք ստանալը գազահավաք համակարգի տեղադրումը կարող էր համարվել արդյունավետ միջոց, որի համար չէին պահանջվի Թուրքիայի սահմանադրության 65-րդ հոդվածով արգելված չափից առավել պետական հատկացումներ, և այն չէր հանգեցնի այնպիսի ծավալի քաղաքականության խնդիրների առաջացման, որոնց մասին խոսում է կառավարությունը: Այս միջոցը ոչ միայն համահունչ կլիներ Թուրքիայի օրենսդրությանը և ներճյուղային ընդհանուր գործելակերպին, այլև ավելի լավ կարտացոլեր կառավարության կողմից դատարանի ուշադրությանը ներկայացված մարդասիրական նկատառումները:

108. Հաջորդ քայլով դատարանը պետք է գնահատի, թե ինչ նշանակություն (կշիռ) պետք է վերագրվի հանրության տեղեկատվության իրավունքի ապահովման հարցին (տե՛ս վերը՝ պարբ. 90-րդ): Դատարանը համարում է, որ տվյալ դեպքում կառավարությունը չի կարողացել ցույց տալ, որ քայլեր է ձեռնարկել Ումրանիեի հետնախորշերի բնակիչներին տեղեկություններ տրամադրելու ուղղությամբ, ինչի շնորհիվ վերջիններս կկարողանային գնահատել այն ռիսկերը, որոնց կարող էին ենթարկվել իրենց կատարած ընտրության պատճառով: Ամեն դեպքում դատարանը կարծում է, որ Ումրանիեի հետնախորշերի բնակիչներին սպառնացող ռիսկի կանխման ավելի գործնական միջոցների բացակայության պայմաններում նույնիսկ տեղեկատվության իրավունքի հարգման փաստը չի կարող բավարար լինել, որ պետությունն ազատվի իր պատասխանատվությունից:

109. Հիմք ընդունելով վերոհիշյալ հանգամանքները՝ դատարանը չի տեսնում որևէ պատճառ, որ կասկածներ ունենա փաստի կապակցությամբ ազգային քննչական մարմինների եզրակացությունների վերաբերյալ և համարում է, որ տվյալ դեպքում վերը քննարկված հանգամանքները ցույց են տալիս, որ 2-րդ հոդվածի շրջանակներում պետության պատասխանատվությունն առաջացել է մի քանի առումներով:

Նախ՝ կանոնակարգող դաշտի թերությունները երևան են եկել այն պարագայում, որ Ումրանիեի աղբանոցը բացվել է և շահագործվել առանց տեխնիկական չափորոշիչներին համապատասխանելու, և գոյություն չի ունեցել ներդաշնակ վերահսկողական համակարգ, որը կխթաներ հանրության պատշաճ պաշտպանության ապահովման նպատակով պատասխանատու անձանց կողմից համապատասխան միջոցների ձեռնարկումը, տարբեր վարչական մարմինների միջև աշխատանքների համակարգումը և համագործակցությունը, ինչի արդյունքում այն ռիսկերը, որոնք ներկայացվել էին նրանց ուշադրությանը, այնքան չէին խորանա, որ վտանգեին մարդկային կյանքեր:

Այս իրավիճակն ավելի է վատթարացել վարվող ընդհանուր քաղաքականության պատճառով, քանի որ այն ի վիճակի չի եղել լուծելու ընդհանուր քաղաքաշինական խնդիրները՝ հանգեցնելով իրավական միջոցների կիրառման հետ կապված անորոշության, որը, անկասկած, դեր է ունեցել 1993 թ. ապրիլի 28-ի ողբերգական անցքերի առաջացման գործընթացում, որոնք, վերջին հաշվով, խլել են Ումրանիեի հետնախորշերի բնակիչների կյանքը, քանի որ պետության պաշտոնյաները և իշխանություններն իրենց իրավասությունների սահմաններում ամեն ինչ չեն արել, որ պաշտպանեն նրանց այն անմիջական և հայտնի ռիսկերից, որոնց նրանք ենթարկվում էին:

110. Այս հանգամանքները հանգեցնում են կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութական հայեցակետերի խախտման...

Ուստի անդամ պետությունները պետք է երաշխավորեն, որ ունեն վտանգավոր կայանների տեղակայումը, շահագործումը և անվտանգությունը կարգավորող համապատասխան ազգային օրենքներ: Ազգային մարմինները պարտավոր են նաև երաշխավորել, որ այս դրույթները կիրառվում և պահպանվում են: Տեղացի բնակչությունը պետք է պոտենցիալ վտանգավոր կայանքների հարուցած ռիսկերի վերաբերյալ տեղեկություններ ունենա: Բացի դրանից, այդ կայանքների/գործունեությունների հայտնի ռիսկին ենթարկվող անձանց կյանքը պաշտպանելու նպատակով պետությունները պետք է ձեռնարկեն ողջամիտ կանխարգելիչ քայլեր (ինչպես օրինակ՝ աղբանոցների տարածքներում մեթանի հավաքման սարքավորումների տեղադրումը): Այս իրավական և օպերատիվ պահանջները շատ հստակ ցույց են տալիս 2-րդ հոդվածի շրջանակներում պետությունների վրա դրված դրական նյութաիրավական լայն պարտավորությունները:

Շրջակա միջավայրի համար մահացու վտանգ չներկայացնող աղտոտման համատեքստում պետությունների պատասխանատվության վերաբերյալ դատարանի մոտեցումները ներկայացված են ստորև՝ 572-73-րդ էջում:

Պետությունների՝ սպանությունների արդյունավետ հետաքննության պարտականությունը

1 Այս ենթադրելի պարտականության իրականացման համար պահանջվող քննության ձևերը ածանցվել են *Մակքենի* գործով վճռից և դատարանի կողմից լրամշակվել *«Քայան ընդդեմ Թուրքիայի»* գործում (1998) 28 EHRR 1, Զեկույցներ 1998-I: Դիմողը բողոքել է հանձնաժողովին, որ 1993 թ. մարտի 25-ին Թուրքիայի անվտանգության ուժերը կանխամտածված սպանություն են գործել իր եղբոր՝ հողագործ Աբդուլմենաֆ Քայայի դեմ: Կառավարությունը վիճարկել է, որ մահացածը եղել է ահաբեկիչ, որը սպանվել է անվտանգության ուժերի հետ կռվի մեջ մտնելու հետևանքով: Հանձնաժողովը

եզրակացրել է, որ ողջամիտ կասկածից վեր չի հիմնավորվել, որ Աբդուլմենաֆը կանխամտածված սպանվել է զինվորների կողմից դիմողի նշած հանգամանքներում: Այնուամենայնիվ, տեղի է ունեցել 2-րդ հոդվածի խախտում, քանի որ Աբդուլմենաֆի մահվան կապակցությամբ իշխանությունների հետաքննության անպատշաճ մակարդակը եղել է 2-րդ հոդվածի խախտում (քսանյոթ կողմ և երեք դեմ ձայներ): Դատարանի ճնշող մեծամասնությունը (ութ կողմ և մեկ դեմ ձայներ) նույնպես եզրակացրել է, որ հետաքննությունը եղել է անարդյունավետ:

87. Դատարանը նշում է, որ կոնվենցիայի 2-րդ հոդվածով ամրագրված կյանքի իրավունքի անբաժանելի ընթացակարգային պաշտպանությունը երաշխավորում է, որ պետության գործակալները պատասխանատվություն են կրելու մահացու ուժի կիրառության համար նրանց գործողությունները որևէ կերպ անկախ և հանրային քննության ենթարկելու միջոցով, որի արդյունքում հնարավոր կլինի որոշել՝ արդյոք կիրառված ուժը տվյալ հանգամանքներում արդարացվա՞ծ է եղել, թե՞ ոչ...

89. Դատարանը, մասնավորապես, զարմացած է այն փաստից, որ պետական մեղադրողը կարող էր առանց հարցեր տալու ենթադրել, որ մահացածը եղել է ահաբեկիչ, և նա մահացել է անվտանգության ուժերի հետ բախման ժամանակ: Դեպքի վայրում գտնվող զինվորներից զեկուցագրեր չեն պահանջվել: Որևէ փորձ չի արվել համոզվելու համար, որ տարածքում կան օգտագործված փամփուշտներ, ինչը կամրապնդեր ինտենսիվ կրակոցներով բախման տեսակետը: Որպես անկախ հետաքննություն իրականացնող պաշտոնյա՝ նա պետք է տեղյակ լիներ, որ անհրաժեշտ է փաստեր հավաքել դեպքի վայրից, կատարել իրադարձությունների սեփական անկախ վերադասավորություն և անձամբ բավարար համարեր, որ մահացածը, թեպետ հագնված է եղել որպես շարքային գյուղացի, ինչպես և ենթադրվում էր, եղել է ահաբեկիչ: Չկա որևէ բան, որը ցույց տար, որ նա պատրաստ է եղել ուսումնասիրելու զինվորների հաղորդումները տեղի ունեցած անցքերի վերաբերյալ: Զինվորների հաղորդումները որպես զուտ ճշմարտություն ընդունելու պատրաստակամությունը նույնպես կարող է բացատրել, թե ինչու նա փորձ չի արել մահացածի ձեռքերի կամ հագուստի վրա վառոդի հետքեր հայտնաբերել, կամ ինչու զենքից մատնահետքեր չեն վերցվել: Ամեն դեպքում այս բացթողումները պետք է հատկապես համարվեն լուրջ թերացումներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավելի ուշ դիակը հանձնվել է գյուղացիներին՝ դրանով իսկ անհնարին դարձնելով հետագա քննության իրականացումը, նաև մարմնի մեջ գտնվող գնդակների փորձաքննությունը: Հետագա քննության նպատակով դեպքի վայրից վերցված միակ նմուշները եղել են մահացածի կողմից ենթադրաբար օգտագործված զենքը և պայթուցիկ նյութերը: Այնուամենայնիվ, անկախ այս նախաձեռնության արժանիքներից, պետք է նկատել, որ պետական մեղադրողը գործ չհարուցելու մասին իր որոշումը հրապարակել է՝ չսպասելով ճգաբանական (բալիստիկ) փորձագետների եզրակացությանը... Հերձման արձանագրությունը միակ փաստաթուղթն է, որում նշված է մահացածի ստացած հրազենային վերքերի բնույթի, լրջության և տեղի մասին: Դատարանը համամիտ է հանձնաժողովի մտավախությանը, որ որոշ առանցքային առումներով այդ զեկույցը թերի է: Մասնավորապես, դիտարկումներ չեն արվել, թե փաստացի քանի գնդակ է դիպել մահացածին, ինչպես նաև չեն կատարվել հաշվարկներ գնդակների արձակման հեռավորությունը պարզելու նպատակով: Հնարավոր չէ պնդել, որ նման ձևական մակերեսային հերձման կամ զեկույցի եզրակացությունները կարող են հիմք ընդունվել հետագա արդյունավետ քննություն իրականացնելու համար կամ իրոք բավարարել սպանության գործի հստակ օրինական հետաքննության նվազագույն պահանջները, քանի որ անպատասխան են մնացել մի շարք էական նշանակություն ունեցող հարցեր: Դատարանն ընդունում է, որ տեղում հետմահու և դատաբժշկական փորձաքննությունը անցկացվել է ահաբեկչական հակամարտության գոտում, ինչը կարող էր խիստ դժվարացնել ընդունված կարգի պահպանումը: ... Ուստի զարմանալի է, որ ո՛չ բժիշկը, ո՛չ էլ պետական մեղադրողը չեն պահանջել, որ դիակը օդային ճանապարհով տեղափոխվի ավելի ապահով վայր՝ մարմնի, հագուստի և հրազենային վերքերի ավելի մանրամասն զննում կատարելու համար:

90. Պետական մեղադրողը, այնուհետև, որոշակի քայլեր չի ձեռնարկել դիմողի եղբոր մահվան հանգամանքները քննելու համար. օրինակ՝ չի հավաստիացել, որ մահացածն իրականում հանդիսացել է ՔԱԿ-ի ակտիվ անդամ, կամ չի հարցաքննել Դոկումայի շրջակայքում ապրող գյուղացիներին՝ հավաստիանալու համար, որ նրանք այդ օրը լսել են հրազենային կրակոցների ձայներ, կամ չի կանչել ներգրավված անվտանգության ծառայության ներկայացուցիչներին՝ նրանցից ցուցմունքներ ստանալու նպատակով: Պետական մեղադրողի հաստատ համոզվածությունը, որ մահացածը եղել է ահաբեկիչ և սպանվել անվտանգության ուժերի հետ զինված հակամարտության ընթացքում, երբեք չի հակադրվել այլ փաստերի հետ: Վարույթ չսկսելու որոշման պայմանները բարեհաջող ձևով բացառել են ցանկացած հնարավորություն, որ անվտանգության ուժերը կարող էին ինչ-որ կերպ մեղավոր լինել, ինչպես նաև ենթադրյալ զինված բախման ժամանակ կիրառած լինեին անհամաչափ ուժ:

91. Դատարանը նշում է, որ Հարավարևելյան Թուրքիայի անվտանգության իրավիճակի պատճառով այստեղ կյանքից զրկվելը ողբերգական և հաճախադեպ երևույթ է: Այնուամենայնիվ, ո՛չ դաժան զինված բախումների առկայությունը, ո՛չ էլ զոհերի մեծ թիվը չեն կարող վերացնել անվտանգության ուժերի հետ բախման հետևանքով մահվան դեպքերի կապակցությամբ (առավել ևս՝ սույն գործի, որի հանգամանքները շատ առումներով հստակ չեն) 2-րդ հոդվածով նախատեսված արդյունավետ և անկախ քննություն կատարելու պարտավորությունը:

92. Հաշվի առնելով վերոնշյալ նկատառումները՝ դատարանը, հանձնաժողովի նման, եզրակացնում է, որ իշխանությունները դիմողի եղբոր մահվան հանգամանքների արդյունավետ քննություն չեն կատարել: Հետևաբար, այդ առումով խախտվել է կոնվենցիայի 2-րդ հոդվածը:

Դատարանը պահանջում է, որ քննությունն իրականացվի անկախ անձի կողմից, որը կկատարի բոլոր առնչվող փաստերի, ներառյալ՝ պետության պաշտոնյաների կողմից ներկայացված փաստերի քննական գնահատում: Կախված հանգամանքներից՝ պետք է կատարվի նաև համապատասխան դատաբժշկական փորձաքննություն, ինչպես օրինակ՝ հագուստի և մարմնի վրա պայթուցիկ նյութերի կամ վառոդի հետքերի զննում: Որպեսզի քննությունը բավարարի 2-րդ հոդվածի պահանջները, այն պետք է իրոք խստապահանջ լինի և ոչ զուտ արարողակարգային բառախաղ:

2 *«Յաշան ընդդեմ Թուրքիայի» (Yasa v Turkey)* գործով (վերը՝ էջ 104) դատարանն ընդլայնել է հանգամանքների շրջանակը, երբ պետություններից պահանջվում է քննել մահվան դեպքերը՝ հրապարակելով վճիռ.

որ պարտավորությունը չի սահմանափակվում այն գործերով, որոնց դեպքում պարզվել է, որ սպանությունը կատարվել է պետության գործակալի կողմից: Ոչ էլ հարցն այն է, որ մահացածի ընտանիքը կամ մյուսները պաշտոնական բողոք են ներկայացրել սպանության մասին իրավասու քննչական մարմիններին: Խնդրո առարկա գործում միայն այն փաստը, որ իշխանությունները տեղեկացված են եղել դիմողի մորեղբոր/հորեղբոր սպանության մասին, թելադրում են ipso facto (այդ փաստի ուժով) 2-րդ հոդվածի պարտավորության շրջանակներում կատարել արդյունավետ քննություն... (պարբ. 100):

Քանի որ հինգ տարի անց քննության մեջ «որոշակի և վստահելի առաջընթաց» տեղի չի ունեցել, դատարանը ութ կողմ և մեկ դեմ ձայներով որոշել է, որ տեղի է ունեցել 2-րդ հոդվածի խախտում: Վերոնշյալ վճիռները պետք է ողջունելի լինեն, քանի որ նրանք ձգտում են երաշխավորել, որ պետությունները կատարում են սպանությունների արդյունավետ քննություն՝ անկախ սպանության հետևում կանգնած անձի/անձանց դիրքից և պատմությունից, և այդ պարտականությունն առաջանում է, երբ պետությունը տեղյակ է դառնում կատարված սպանության մասին:

3 *«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի»* գործով մշտական գործող դատարանի մեծ պալատը (տե՛ս վերը՝ էջ 124-125 [A2 PO]) ընդլայնել է արդյունավետ քննություն կատարելու պարտականությունը՝ ընդգրկելով այնպիսի իրավիճակների քննությունը, երբ վերջնականորեն հաստատված չէ, որ անձը սպանվել է: Դիմող պետությունը վիճարկում էր, որ, ի թիվս այլոց, նման քննություն չի կատարվել՝ պարզելու համար 1500 անձի ճակատագիրը, որոնց մասին ասվում էր, որ նրանք սպանվել են կամ կալանավորվել 1974 թ. Հյուսիսային Կիպրոսի շրջափակման ժամանակ Թուրքիայի ռազմական ուժերի կամ նրանց սատարող ուժերի կողմից: Մեծ պալատը չի քննարկել իրեն ներկայացված փաստերը, որոնց հիման վրա ապացուցվել է, որ այդ անձանց սպանությունը եղել է անօրինական: Սակայն արդյունավետ քննություն կատարելու պարտավորությունը «132 …նաև առաջանում է այն ժամանակ, երբ հիմնավորվում է այն վիճարկվող պնդումը, որ վերջին անգամ պետության կողմից կալանքի տակ վերցված անձինք անհետացել են կյանքի համար սպառնալիք ներկայացնող հանգամանքներում/համատեքստում»: Ճնշող մեծամասնությամբ՝ տասնվեց կողմ և մեկ դեմ ձայներով (չհամընկնող կարծիք հայտնողը Թուրքիայի քաղաքացի հանդիսացող դատավորն էր), մեծ պալատը որոշել է, որ ըստ փաստերի՝ թուրքական/թուրք-կիպրոսյան ուժերի ռազմական գործողությունների ժամանակ շատ մարդիկ կալանավորվել են, և նրանց կալանքի հետ կապված հանգամանքները կարող են բնորոշվել որպես կյանքի համար վտանգավոր: Հետևաբար, անհետ կորած անձանց ազգականների ներկայացրած դիմումների հիման վրա, որոնք պնդում էին, որ այդ անձինք անհետացել են կյանքի համար սպառնալիք ներկայացնող հանգամանքներում, պատասխանող պետությունը պարտավոր էր արդյունավետ քննություն սկսել: Անհետ կորած կիպրոսցի հույների գտնվելու վայրը և ճակատագիրը պարզելու նպատակով արդյունավետ քննություն չի իրականացվել, ուստի մեծ պալատը համարում է, որ 2-րդ հոդվածի շրջանակներում տեղի է ունեցել այդ պարտականության խախտում:

4 Դատարանը պահանջում է, որ պետության գործակալների կատարած սպանությունների վերաբերյալ ներկայացված վիճելի դիմումների քննությունը բավարարի չորս ինստիտուցիոնալ և ընթացակարգային պահանջ, այդ դեպքում միայն այն կարող է որակվել որպես արդյունավետ քննություն: Այս պահանջները բարձրացվել են *«Քելլին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (Kelly and Others v United Kingdom)* գործով 2001 թ. մայիսի 4-ի վճռում:

95. …Ընդհանուր առմամբ, քննության իրականացման համար պատասխանատու անձինք անհրաժեշտաբար պետք է անկախ լինեն միջադեպին մասնակցություն ունեցած անձանցից... Սա նշանակում է ոչ միայն հիերարխիական կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլև գործնական անկախություն (տե՛ս, օրինակ՝ *«Էրգին ընդդեմ Թուրքիայի» (Ergi v Turkey)* գործը, 1998 թ. հուլիսի 28-ի վճիռ (Զեկույցներ 1998-IV, պարբ. 83-4): Այս դեպքում պետական մեղադրողը, որը քննում էր բախման ժամանակ աղջկա մահվան հանգամանքները, անկախություն չի ցուցաբերել, քանի որ մեծապես կախված է եղել միջադեպի մեջ ներքաշված ժանդարմների տրամադրած տեղեկություններից):

96. Քննությունը պետք է արդյունավետ լինի նաև այն առումով, որ պետք է հնարավորություն տա, ելնելով տվյալ հանգամանքներից, հանգելու եզրակացության, թե որքանով է արդարացված ուժի կիրառումը, ...հասնելու պատասխանատուների ինքնության բացահայտման, ինչպես նաև պատասխանատու անձանց պատժի: Սա ոչ թե արդյունքի հասնելու պարտավորություն է, այլ միջոցների պարտավորություն: Իշխանությունները պետք է օգտագործած լինեին իրենց տրամադրության տակ եղած ողջամիտ միջոցները, որպեսզի ձեռք բերեին միջադեպին առնչվող փաստերը, ներառյալ նաև ականատեսների ցուցմունքները, դատաբժշկական փորձաքննության արդյունքները, իսկ անհրաժեշտության դեպքում կատարեին նաև դիահերձում, ինչը հնարավորություն կտար ստանալու վերքի ամբողջական և ճշգրիտ պատկերը և կատարելու օբյեկտիվ կլինիկական եզրակացություններ, այդ թվում և՝ մահվան պատճառի վերաբերյալ... Քննության մեջ յուրաքանչյուր բացթողում, որը կասկածի տակ է դնում է մահվան պատճառը կամ մահվան պատճառ հանդիսացող անձի ինքնությունը բացահայտելու կարողությունը, կարող է չհամապատասխանել այդ չափորոշչին:

97. Անհապաղությունը և ողջամիտ արագությունը բնորոշ են այս համատեքստին… Պետք է ընդունել, որ կարող են լինել խոչընդոտներ և դժվարություններ, որոնք արգելակում են առանձնահատուկ իրավիճակներում քննությունը: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների կողմից մահացու ուժի կիրառման դեպքերի անհապաղ քննության ընթացքը սկզբունքորեն կարող է կարևոր համարվել՝ հանրությանը ցույց տալու համար, որ հարգվում է օրենքի գերակայությունը և կասեցվում ապօրինի համաձայնությունների կամ նմանօրինակ անօրինական գործողությունների նկատմամբ հանդուրժողականությունը:

98. Նույն հիմքերով պետք է առկա լինեն քննության նկատմամբ պետական վերահսկողության բավարար տարրեր, որոնց միջոցով պատասխանատվությունը կապահովվի ինչպես տեսական, այնպես էլ գործնական մակարդակներում: Պահանջվող պետական հսկողության մակարդակը կարող է տարբեր գործերի առնչությամբ տարբեր լինել: Բոլոր դեպքերում զոհի ամենամտերիմ ազգականը պետք է ներգրավված լինի ընթացակարգի մեջ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է նրա օրինական շահերի պաշտպանության համար…

Դատարանը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել դիմողների ինը ազգականների սպանության արդյունավետ քննության իրականացման կարգի խախտում: Վերջիններս սպանվել էին հատուկ օդային ծառայության (SAS) զինվորների կողմից Հյուսիսային Իռլանդիայի Լուգալ [գյուղում] Օլսթերի թագավորական ոստիկանության բաժնի վրա անակնկալ ահաբեկչական գրոհի ժամանակ: Ազգային մակարդակով քննությունը չի ապահովել անկախության առաջին պահանջը, քանի որ քննությունը կատարվել է Օլսթերի թագավորական ոստիկանության և այդ ուժի այլ անդամների կողմից, որոնք մասնակցել են օպերացիային: Իր վճռով դատարանը պահանջում է, որ ինստիտուցիոնալ մակարդակում քննիչները հստակորեն տարանջատված լինեն սպանության գործողությունների մեջ խառնված պետության գործակալներից: Քննության օրինականության նկատմամբ հասարակության վստահությունը կամրապնդվի, եթե մարդիկ տեսնեն, որ որևէ կապ չկա քննիչների և քննության սուբյեկտների միջև:

5 2-րդ հոդվածի շրջանակներում կարող է պահանջվել արդյունավետ վարույթ սկսել ընդդեմ պետական ծառայողների, որոնց կոպիտ օրինախախտումները հանգեցրել են այդ անձանց մահվան: *«Օներյիլդիզն ընդդեմ Թուրքիայի» (Oneryildiz v Turkey)* (տե՛ս վերը՝ էջ 126) գործում դիմողը վիճարկել է, որ Թուրքիան խախտել է իր ընթացակարգային դրական պարտավորությունը՝ չսկսելով արդյու-

նավետ դատական վարույթ այն պաշտոնյաների դեմ, որոնք թույլ էին տվել աղբանոցի ընթացիկ վտանգավոր շահագործումը: Նա վիճարկել է, որ Ստամբուլի քրեական դատարանի կողմից երկու տեղացի քաղաքապետներին 9.7 եվրոյի տուգանք նշանակելը (այս տուգանքները սառեցվել են) նրանց պարտականությունների հարցում անբարեխիղճ թերացման համար չի բավարարում 2-րդ հոդվածի պահանջները: Մեծ պալատը վճռել է, որ.

93. …Եթե ապացուցվում է, որ պետության պաշտոնյաներին վերագրելի անբարեխղճությունն անցնում է սխալ եզրակացության կամ անզգուշության սահմաններն այն հարցում, որ այդ պետական մարմինները, լիովին գիտակցելով հնարավոր հետևանքները և անտեսելով իրենց վերապահված լիազորությունները, չեն ձեռնարկել վտանգավոր գործունեությանը բնորոշ ռիսկի կանխման համար անհրաժեշտ և բավարար միջոցներ (տե՛ս mutatis mutandis *Օսմանի* գործը, պարբ. 116), ապա այն փաստը, որ նրանք, ովքեր պատասխանատու են եղել կյանքի վտանգման համար, քրեորեն պատժելի արարքի համար չեն մեղադրվել կամ քրեական հետապնդման չեն ենթարկվել, կարող է համարվել հավասարազոր 2-րդ հոդվածի խախտման՝ անկախ իրավական փոխհատուցման այլ միջոցներից, որոնք անձինք կարող են կիրառած լինել սեփական նախաձեռնությամբ…

94. Եզրափակելով՝ 2-րդ հոդվածով պահանջվող դատական համակարգը պետք է ապահովի անկախ և անաչառ պաշտոնական քննության ընթացակարգ, որն արդյունավետության առումով բավարարում է որոշակի նվազագույն չափորոշիչներ և ի վիճակի է երաշխավորելու քննության արդյունքներով արդարացված քրեական պատժամիջոցների կիրառությունն այն դեպքում, երբ վտանգավոր գործունեությունը մահվան պատճառ է եղել (տե՛ս *mutatis mutandis «Հյու Ջորդանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Hugh Jordan v the United Kingdom)*, թիվ 24746/94, պարբ. 105–9, ECHR 2001-III, և *Փոլ և Օդրի Էդվարդների* գործերը, որոնք մեջբերված են վերը՝ պարբ. 69-73): Նման դեպքերում իրավասու պետական մարմինները պետք է գործեն օրինակելի ջանասիրությամբ և արագությամբ՝ իրենց նախաձեռնությամբ սկսելով քննությունը, որի արդյունքում, նախ՝ պետք է պարզեն միջադեպին ուղեկցած հանգամանքները և կանոնակարգող համակարգում առկա թերությունները և, երկրորդ՝ բացահայտեն այն պետական պաշտոնյաների ինքնությունը կամ պետական մարմիններին, որոնց որևէ գործառույթը միջադեպի իրադարձությունների շղթայի մաս է եղել:

95. Այլ կերպ ասած՝ ազգային դատարաններում վարույթ սկսելու դեպքում 2-րդ հոդվածի պահանջներն անցնում են պաշտոնական քննություն անցկացնելու փուլի սահմաններից: Վարույթն ամբողջությամբ, ներառյալ դատավարության փուլը, պետք է բավարարի օրենքով կյանքը պահպանելու դրական պարտավորության պահանջները:

96. Վերոնշյալից որևէ կերպ չպետք է ենթադրել, որ 2-րդ հոդվածի շրջանակներում դիմողն իրավունք ունի պահանջելու, որ երրորդ անձինք քրեորեն հետապնդվեն կամ դատապարտվեն կատարված քրեական արարքի համար (տե՛ս mutatis mutandis *«Պերեն ընդդեմ Ֆրանսիայի» գործը (Perez v France)* [GC], թիվ 47287/99, պարբ. 70, ECHR 2004-I), կամ դրանից առաջանում է բացարձակ պարտավորություն, որ բոլոր քրեական հետապնդումներն ավարտվեն դատապարտումով, կամ, իրոք, առանձնահատուկ պատժով (տե՛ս mutatis mutandis *«Թանլին ընդդեմ Թուրքիայի» (Tanlı v Turkey)* թիվ 26129/95, պարբ. 111, ECHR 2001-III):

Մյուս կողմից՝ անկախ հանգամանքներից, ազգային դատարանները չպետք է պատրաստ լինեն զիջողամտություն դրսևորել՝ անպատիժ թողնելով կյանքի համար սպառնալիք ներկայացնող հանցագործությունները: Սա կարևոր է հանրության վստահությունը պահպանելու և օրենքի գերակայությունն ապահովելու, ինչպես նաև անօրինական արարքների նկատմամբ հանդուրժողականության կամ ապօրինի համաձայնությունների յուրաքանչյուր երևույթ կանխելու համար (տե՛ս mutatis mutandis *Հյու Ջորդանը,* մեջբերված է վերը՝ պարբ. 108 և 136–40): Դատարանի խնդիրը, հետևաբար, այն է, որ ստուգի՝ արդյոք և որքանով են դատարաններն իրենց որոշումները կայացնելիս իրականացրել կոնվենցիայի 2-րդ հոդվածով պահանջվող լիարժեք քննությունը, որի արդյունքում դատական համակարգի կանխարգելիչ ազդեցությունը և կյանքի իրավունքի խախտումների կանխարգելման հարցում ունեցած դերը կասկածի տակ չէին դրվի:

Ճնշող մեծամասնությամբ (տասնվեց կողմ և մեկ դեմ ձայներով) մեծ պալատը եզրակացրել է հետևյալը.

117. Հետևաբար, չի կարելի ասել, որ այս ողբերգության տեսանկյունից Թուրքիայի քրեական դատավարության համակարգի գործելակերպն ապահովել է, որ պետության պաշտոնյաները կամ մարմինները լիարժեք պատասխանատվություն կրեն իրենց դերի և կյանքի իրավունքի պաշտպանության ազգային դրույթների, հատկապես քրեական իրավունքի կանխարգելիչ գործառույթի արդյունավետ կիրառման առումներով:

118. Մի խոսքով, պետք է եզրակացնել, որ վարույթում գտնվող գործի կապակցությամբ տեղի է ունեցել կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում նրա ընթացակարգային մասով, ինչպես նաև, կապված վտանգավոր գործունեության հետևանքով

տեղի ունեցած ճակատագրական պատահարի հետ, «օրենքով» կյանքի իրավունքի պաշտպանության երաշխավորման և հետագայում կյանքի համար սպառնալիք ներկայացնող վարքի կանխարգելման մասով:

Դատավոր Թուրմենն առարկել է, քանի որ.

Նախ՝ մեծամասնությունն այն կարծիքին է, որ 2-րդ հոդվածի ընթացակարգային մասով խախտում է տեղի ունեցել ոչ թե արդյունավետ քննության բացակայության, այլ դատական վարույթի կամ, ավելի ճիշտ՝ ազգային օրենսդրության կիրառման պատճառով: Սա բոլորովին նոր մոտեցում է, որը չի եղել դատարանի նախադեպային իրավունքի համակարգում:

Մեծ պալատի վճռի ազդեցությունն այն է, որ անցնում է անբաժանելի ընթացակարգային պարտավորության ժամանակային սահմաններից՝ ընդգրկելով նաև ազգային դատավարության գործընթացները, որոնք պետք է տեղի ունենան, եթե արդյունավետ քննության փաստերով պարզվում է, որ պետության ներկայացուցիչները կամ մարմինները մեղավոր են խիստ անբարեխղճության հետևանքով տեղի ունեցած մահվան դեպքի համար: Սա 2-րդ հոդվածի շրջանակներում ամփոփված դրական ընթացակարգային պարտավորության տրամաբանական զարգացում է, որի նպատակներից մեկն անօրինական սպանությունների կանխումն է:

Մահապատիժ

Պետությունների՝ մահապատժի կիրառման իրավասությունն ամրագրվել է 2-րդ հոդվածի 1-ին կետում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երբ կոնվենցիան նախագծման փուլում էր, անդամ պետությունները դեռևս այդ դատական պատժամիջոցը կիրառում էին: Որպես օրինակ կարելի է հիշել Ֆրանսիայի ազատագրումից հետո Ֆրանսիայում նացիստների հետ համագործակցություն հաստատած Վիշիի կառավարության ղեկավար մարշալ Պետենի մահապատիժը (տե՛ս *«Լեհիդյոն և Իզորնին ընդդեմ Ֆրանսիայի» (Lehideux and Isorni v France)* ստորև՝ էջ 687-688): Այնուամենայնիվ, մահապատժից հրաժարվող եվրոպական երկրների ավելանալուն զուգահեռ Եվրոպայի խորհուրդը մշակեց մահապատիժը մերժող քաղաքականություն: Այս զարգացումն իր արտացոլումն է գտել թիվ 6 արձանագրությունում, որը հնարավորություն է տալիս ՄԻԵԿ-ի անդամ պետություններին պաշտոնապես համաձայնության գալու խաղաղ ժամանակ մահապատժի կիրառումից հրաժարվելու վերաբերյալ: Թիվ 6 արձանագրությունն ուժի մեջ է մտել 1985 թ. մայիսին՝ հինգ պետությունների կողմից վավերացվելուց հետո: Միացյալ Թագավորությունը այն վավերացրել է 1999 թ.: 2006 թ. հուլիսին այն չէր վավերացրել միայն Ռուսաստանը: Թիվ 13 արձանագրությունն ամրապնդում է մահապատժի կիրառման եվրոպական արգելքը՝ տարածելով այն ոչ միայն խաղաղ, այլև պատերազմական ժամանակների վրա: Այն ուժի մեջ է մտել 2003 թ. հուլիսին՝ տասը պետությունների կողմից վավերացվելուց հետո: ՄԹ-ն թիվ 13 արձանագրությունը վավերացրել է 2003 թ. հոկտեմբերին: 2006 թ. հուլիսին այն վավերացրել է երեսունվեց պետություն, սակայն ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ Ադրբեջանը չեն ստորագրել այն:

Դիմողները խնդրել են դատարանին մեկնաբանել 2-րդ և 3-րդ հոդվածները՝ հիմք ընդունելով մահապատիժը չխրախուսող ժամանակակից եվրոպական մոտեցումը: Սկզբնաստեղծ դատարանն անդրադարձել է այս խնդրին *«Սերինգն ընդդեմ ՄԹ-ի» (Soering v UK)* գործում (տե՛ս ստորև՝ էջ 200): Մշտական գործող դատարանն անդրադարձել է հարցին *«Օջալանն ընդդեմ Թուրքիայի» (Ocalan v Turkey)* գործի վերաբերյալ պալատի 2003 թ. մարտի 12-ի վճռի և մեծ պալատի՝ 43-րդ հոդվածի շրջանակներում կայացրած վճռի միջոցով:

«Օջալանն ընդդեմ Թուրքիայի», 2005 թ. մայիսի 12-ի վճիռ
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Նախքան ձերբակալվելը դիմող Աբդուլլահ Օջալանը հանդիսանում էր «Քրդստանի աշխատավորական կուսակցություն» (ՔԱԿ) ահաբեկչական-քաղաքական կազմակերպության առաջնորդը: 1998 թ. սկզբին այս վիճելի փաստական հիմքերի պատճառով դիմողը արտաքսվել է Սիրիայից, որտեղ նա մի քանի տարի բնակվել է մշտական բնակության իրավունք ունեցողի կարգավիճակով: Նա քաղաքական ապաստան է խնդրել Հունաստանից և մերժում ստանալուց հետո տեղափոխվել Ռուսաստան՝ Հունաստանի գաղտնի ծառայությունների կողմից պատվիրված չարտերային թռիչքով: Ռուսաստանի Դուման (խորհրդարանը) հաստատել է Օջալանին քաղաքական ապաստան տալու միջնորդությունը, այսուհանդերձ վարչապետն այդ որոշման համաձայն չի գործել: Երկու օր անց դիմողն ուղևորվել է Հռոմ, ուր նա կրկին դիմել է քաղաքական ապաստան ստանալու խնդրանքով: Նա վերցվել է տնային կալանքի տակ, սակայն իշխանությունները մերժել են հանձնել նրան Թուրքիային: Օջալանի՝ քաղաքական ապաստանի խնդրանքը մերժվել է, և նա կարճ ժամանակով Իտալիայից մեկնել է Ռուսաստան: Նա վերադարձել է Հունաստան 1999 թ. փետրվարին և անմիջապես տեղափոխվել Քենիա: Հունաստանի դեսպանության աշխատակիցները հանդիպել են նրան Նայրոբիի օդանավակայանում և անմիջապես տեղավորել Հունաստանի դեսպանի առանձնատանը: Այնտեղ գտնվելու ժամանակ Օջալանը ներկայացրել է Հունաստանում քաղաքական ապաստան ստանալու հերթական դիմումը, սակայն պատասխան չի ստացել:

Քենիայի արտաքին գործերի նախարարը հայտարարել է, որ 1999 թ. փետրվարի 2-ին Օջալանը, Հունաստանի պաշտոնյաների ուղեկցությամբ, մուտք է գործել Քենիայի տարածք՝ առանց ինքնությունը բացահայտելու կամ անձնագրային հսկիչ հենակետով անցնելու: Արտգործնախարարը հանդիպման է հրավիրել Հունաստանի դեսպանին: Հանդիպման սկզբում դեսպանը հերքել է իրողությունը, սակայն, ի վերջո, ընդունել է, որ տվյալ անձը եղել է Օջալանը: Նախարարը հայտնել է իր կարծիքը, որ Քենիայում Օջալանի ներկայությունը անվտանգության լուրջ վտանգ է հարուցում: Դեսպանը տեղեկացրել է նախարարին, որ Աթենքի իշխանությունները կարգադրություններ կանեն, որ Օջալանը մեկնի Քենիայից: Քենիայի կառավարությունը լուրջ վերապահումներով է մոտեցել դեսպանի պնդումների իսկությանը և պահանջել անմիջապես կազմակերպել մեկնումը: Նախարարը նշել է, որ Քենիայի իշխանությունները հետագայում որևէ դեր չեն խաղացել Օջալանի ձերբակալության գործում և չեն մասնակցել նրա ընդունող երկրին վերաբերող քննարկումներին:

Նախարարի հետ իր հանդիպումից հետո դեսպանը հայտնել է Օջալանին, որ նա ազատորեն կարող է մեկնել Քենիայից իր ընտրած երկիրը, և Նիդեռլանդները ցանկանում է ընդունել նրան: Նույն օրը՝ փետրվարի 15–ին՝ ավելի ուշ, Քենիայի պաշտոնյաները եկել են Հունաստանի դեսպանատուն՝ Օջալանին օդանավակայան տեղափոխելու համար: Դեսպանը փորձել է ուղեկցել Օջալանին, սակայն վերջինս մեկնել է Քենիայի պաշտոնյայի վարած մեքենայով: Նայրոբիի օդանավակայանում Օջալանին տեղափոխող մեքենան անջատվել է ուղեկցող մեքենաներից և անցել անվտանգության աշխատակիցների համար նախատեսված ուղիով: Նրա մեքենան մոտեցել է ինքնաթիռին, որտեղ նրան սպասում էին Թուրքիայի անվտանգության աշխատակիցները: Նրանք ձերբակալել են Օջալանին (տարբեր ահաբեկչական գործողությունների համար Թուրքիայի դատարանները նրան ձերբակալելու յոթ դատական օրդեր էին ստորագրել), երբ նա երեկոյան՝ մոտ ժամը 8-ին, բարձրացել է ինքնաթիռ: Թռիչքի ընթացքում Օջալանը եղել է ձեռնաշղթաներով և կապված աչքերով (ըստ Թուրքիայի իշխանությունների՝ նրա աչքերի կապը հանվել է, երբ ինքնաթիռը հատել է Թուրքիայի օդային տարածքը): Թուրքական բանակի բժիշկը ներկա է գտնվել թռիչքի ժամանակ: Օջալանի կարծիքով՝ իրեն հոգեմետ հաբեր (տրանկվիլիզատորներ) են տվել (հավանաբար Հունաստանի դեսպանատանը):

Փետրվարի 16-ին Օջալանը տեղափոխվել է Իմրալիի բանտ, որը գտնվում է Թուրքիայի ափերից ոչ հեռու կղզու վրա: Մյուս բոլոր բանտարկյալներն այստեղից տեղափոխվել են այլ բանտեր: Կղզին հայտարարվել է արգելված ռազմական գոտի, քանի որ, կառավարության կարծիքով, Օջալանի անվտանգության ապահովման համար անհրաժեշտ են եղել հատուկ միջոցառումներ: Բանտում

անվտանգության ուժերի անդամները հարցաքննել են Օջալանին: Չորս օր անց գործի նյութերի հիման վրա դատավորը որոշել է, որ Օջալանը պետք է մնա կալանքի տակ, քանի որ նրա հարցաքննությունն ավարտված չէ: Փետրվարի 21-ին կղզի են ժամանել Անկարայի պետական անվտանգության դատարանի դատավորներ և դատախազներ: Օջալանը հայտնել է, որ փետրվարի 22-ին և 23-ին իր ընտանիքի կողմից նշանակված տասնվեց փաստաբանների թույլ չի տրվել իր հետ կղզում հանդիպում ունենալ: 1999 թ. փոտրվարի 22-ին Անկարայի պետական անվտանգության դատարանում պետական մեղադրողը հարցաքննել է դիմողին և ցուցմունք վերցրել նրանից՝ որպես մեղադրյալից: Դիմողը հայտնել է դատախազին, որ ինքը հանդիսանում է ՔԱԿ-ի հիմնադիրը և առաջնորդը: Ի սկզբանե նրա և ՔԱԿ-ի նպատակը եղել է ստեղծել անկախ քրդական պետություն, սակայն ժամանակի ընթացքում նրանք փոխել են իրենց խնդիրը և ձգտել ապահովել քրդերի՝ որպես հանրապետության մեջ կարևոր դեր խաղացած ազատ մարդկանց ներգրավումը իշխանության մեջ: Դիմողը խոստովանել է, որ ՔԱԿ-ի գլխավոր թիրախը եղել են գյուղական ժամապահները: Նա նաև հաստատել է, որ ՔԱԿ-ը վայրագ մեթոդներ է կիրառել քաղաքացիական ազգաբնակչության դեմ, մասնավորապես, սկսած 1987 թվականից: Ինքն անձամբ դեմ է եղել նման մեթոդներին և զուր փորձեր է արել կանխել դրանց կիրառությունը: Նա հայտնել է դատախազին, որ զինվորական պարագլուխները, որոնք ցանկանում էին ՔԱԿ-ի ներսում իշխանությունը զավթել, մասամբ ճնշում են գործադրել նաև քրդական ազգաբնակչության դեմ: Ուստի նրանց մի մասը ենթարկվել է ՔԱԿ-ի ստուգումներին, մեղավոր ճանաչվել և մահապատժի ենթարկվել իր [դիմողի] համաձայնությամբ: Նա ընդունել է, որ ՔԱԿ-ի գործունեության հետևանքով զոհերի [1978 թվականից մինչև Օջալանի ձերբակալության պահը՝ 4472 քաղաքացի, 3874 զինվոր, 247 ոստիկան և 1225 գյուղական ժամապահ] կամ վիրավորների թվի վերաբերյալ Թուրքիայի կառավարության հաշվարկները էապես համապատասխանում են ճշմարտությանը, և իրական թիվը կարող է նույնիսկ ավելի մեծ լինել, և դա եղել է իր պատվերը, որ հարձակումները կազմեն ՔԱԿ-ի զինված պայքարի մասը: Նա ավելացրել է, որ 1993 թ. Թուրքիայի նախագահ պարոն Օզալի խնդրանքով ինքը հայտարարել է հրադադար:

Փետրվարի 23-ին Օջալանը ներկայացվել է Անկարայի պետական անվտանգության դատարանի դատավորին: Նա կրկնել է դատախազին տված իր ցուցմունքը: Դատավորը կարգադրել է Օջալանին կալանքի տակ պահել մինչև դատը կայանալը: Փետրվարի 25-ին Օջալանին թույլ է տրվել հանդիպել իր երկու փաստաբանների հետ: Օջալանի զրույցն իր փաստաբանների հետ տեղի է ունեցել դատավորի և անվտանգության ուժերի դիմակներ կրող անդամների ներկայությամբ: Օջալանը հայտարարել է, որ հետագայում իրեն թույլ է տրվել շաբաթը երկու անգամ՝ մեկական ժամով հանդիպել իր փաստաբանների հետ: Նա պնդել է, որ քննարկումները վերահսկվել են ապակե միջնորմների հետևում կանգնած պաշտոնյաների կողմից և տեսագրվել են: Կառավարությունն առարկել է՝ հայտնելով, որ Օջալանի և նրա փաստաբանների հանդիպումների հաճախականության կամ տևողության սահմանափակումներ չեն եղել, և հարցազրույցները վարվել են համաձայն քրեական դատավարության օրենսգրքի:

1999 թ. մարտի սկզբին Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կանխման եվրոպական կոմիտեի պատվիրակները այցելել են Իմրալիի բանտ: Նրանք հայտնել են Թուրքիայի կառավարությանը, որ Օջալանին տեսել են ֆիզիկապես առողջ վիճակում, և նա հայտնել է իրենց, որ ձերբակալությունից հետո նրան վատ չեն վերաբերվել: Նրա խուցը համապատասխանել է բարձր չափորոշիչների: Պատվիրակները կարծիք են հայտնել, որ Օջալանի մեկուսացված բանտարկությունը և մաքուր օդում գտնվելու սահմանափակ հնարավորությունները կարող են հոգեբանորեն ազդել նրա վրա: Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կանխման եվրոպական կոմիտեի պատվիրակները կրկին Օջալանի խուց են այցելել 2001 թ. սեպտեմբերին: Նրանք նշել են, որ Օջալանի խուցն ունեցել է լվացարան, հիգիենիկ սարքավորումներ և օդափոխության համակարգ: Նա գրքեր, թերթեր ձեռք բերելու և ռադիո ունկնդրելու ազատ հնարավորություն է ունեցել: Բժիշկներն օրական երկու անգամ ստուգել են նրան: Փաստաբաններն այցելել են նրան շաբաթական մեկ անգամ:

1999 թ. ապրիլի 24-ին պետական մեղադրողը Անկարայի պետական անվտանգության դատարանում հանդես է եկել մեղադրական եզրակացությամբ՝ մեղադրելով Օջալանին այնպիսի գործո-

ղությունների համար, որոնց նպատակը եղել է Թուրքիայի մաս հանդիսացող տարածքի անջատումը Թուրքիայից: Դատախազը պահանջել է մահապատիժ նշանակել: Օջալանի գործը բաղկացած է եղել նրա դեմ հարուցված յոթ տարբեր վարույթներից և 17000 թերթից: Օջալանի փաստաբաններին հնարավորություն է տրվել ծանոթանալու գործին մայիսի 7-ին, սակայն իշխանությունները նրանց գործի պատճենը չեն տրամադրել: Օջալանի փաստաբանները ստիպված են եղել օգտագործել սեփական պատճենահանող սարքերը և բոլոր էջերի պատճենահանումը կարողացել են ավարտել մայիսի 15-ին:

Անկարայի պետական անվտանգության դատարանը մարտ ամսվա վերջին, առանց Օջալանի մասնակցության, հրավիրել է երկու նիստ՝ ընթացակարգային հարցերի (ներառյալ՝ Օջալանի գործի վարույթին երրորդ անձանց միջամտության պահանջների) վերաբերյալ որոշումներ կայացնելու համար: 1999 թ. մայիսի 31-ից մինչև հունիսի 29-ը անվտանգության դատարանը, որի կազմում եղել է երկու քաղաքացիական և մեկ զինվորական դատավոր, Իմրալիի կղզում հրավիրել է ինը նիստ: Օջալանն այդ նիստերին ներկա է եղել: Նա կրկնել է դատախազին տված իր ցուցմունքը: Նրա փաստաբաններն առարկել են, որ անվտանգության դատարանը չի հանդիսացել «անկախ և անաչառ տրիբունալ», ինչպես պահանջվում է կոնվենցիայի 6-րդ հոդվածով: Օջալանը հայտարարել է, որ ինքն ընդունել է անվտանգության դատարանի ընդդատությունը: Նա խոստացել է դադարեցնել ՔԱԿ-ի զինված պայքարը: Ընդունել է, որ քաղաքական պատասխանատվություն է կրում ՔԱԿ-ի ընդհանուր ռազմավարության համար, սակայն ժխտել է վայրագության դեպքերի համար քրեական պատասխանատվությունը, ինչն անցել է կազմակերպության հայտարարված քաղաքականության սահմաններից:

1999 թ. հունիսի 18-ին Թուրքիայի խորհրդարանը փոփոխություն է կատարել սահմանադրության մեջ, համաձայն որի՝ ռազմական ուժերի ներկայացուցիչները չեն կարող հանդես գալ որպես պետական անվտանգության դատարանների անդամ: Անվտանգության դատարանը Օջալանի գործը սկսել է լսել 1999 թ. հունիսի 23-ից (նոր քաղաքացիական դատավորը մասնակցել է ավելի վաղ տեղի ունեցած նիստերին): Օջալանի փաստաբանը, առանց հաջողության, բացարկ է հայտնել այդ դատավորին: Անվտանգության դատարանը հունիսի 29-ին Օջալանին մեղավոր է ճանաչել Թուրքիայի մաս կազմող տարածքների անջատմանն ուղղված գործունեություն ծավալելու համար՝ նրան դատապարտելով մահապատժի: Օջալանը բողոքարկել է դատարանի վճիռը: 1999 թ. նոյեմբերին վճռաբեկ դատարանը հաստատել է վճիռը: Եվրոպական դատարանը Թուրքիայի կառավարությունից պահանջել է կասեցնել մահապատժի ի կատար ածումը, մինչև կոնվենցիայի շրջանակներում կուսումնասիրի Օջալանի գանգատը: 2000 թ. հունվարին Թուրքիայի վարչապետը տեղեկացրել է, որ Ստրասբուրգի դատավարությունն ավարտվելուց հետո դիմողի գործը կներկայացվի Թուրքիայի խորհրդարանին, որն իրավասու է հաստատելու կամ մերժելու մահապատժի իրականացումը:

2001 թ. հոկտեմբերին Թուրքիայի սահմանադրության մեջ փոփոխություն է կատարվել, որով մահապատիժը վերացվել է՝բացառությամբ պատերազմի կամ պատերազմի անմիջական սպառնալիքի կամ ահաբեկչության դեպքերի: 2002 թ. օգոստոսին Թուրքիայի խորհրդարանը որոշել է վերացնել մահապատիժը խաղաղ ժամանակներում: 2002 թ. սեպտեմբերին Թուրքիայի կառավարությունը տեղեկացրել է Եվրոպական դատարանին, որ Օջալանին այլևս չի սպառնում ազգային դատարանների կողմից նրա համար սահմանված մահապատժի իրականացումը: Հաջորդ ամսին Անկարայի պետական անվտանգության դատարանը Օջալանի մահապատիժը փոխարինել է ցմահ բանտարկությամբ: 2002 թ. դեկտեմբերին Թուրքիայի սահմանադրական դատարանը մերժել է Թուրքիայի քաղաքական կուսակցության բողոքն ընդդեմ խաղաղ ժամանակներում մահապատժի վերացման: 2003 թ. հունվարին Թուրքիան ստորագրել է կոնվենցիայի թիվ 6 արձանագրությունը և վավերացրել այդ արձանագրությունը 2003 թ. նոյեմբերին:

Դիմողի փաստաբանները նպատակ են ունեցել Եվրոպական դատարանի պալատի առջև վիճարկել, ի թիվս այլոց, որ 2-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի որպես մահապատիժն արգելող հոդված, և նման պատիժը, լինելով անմարդկային և նվաստացուցիչ, խախտում է 3-րդ հոդվածի պահանջները: Պալատը՝ վեց կողմ և մեկ դեմ ձայներով, որոշել է, որ Օջալանի նկատմամբ մահապատժի կիրառումը ոչ արդար դատաքննությունից հետո, որը տեղի է ունեցել ի խախտումն 6-րդ

հոդվածի պահանջների, հավասարազոր է անմարդկային վերաբերմունքի: Այնուհետև, ինչպես դիմողը, այնպես էլ կառավարությունը պահանջել են, որ գործն ուղարկվի մեծ պալատ: Այս պահանջներն ընդունվել են մեծ պալատի դատավորների կողմից:

Ա. ՄԱՀԱՊԱՏԺԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

151. Իր սկզբնական բողոքում դիմողը հայտնել է, որ մահապատժի հետպահանջով կխախտվեն կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածները:

152. Իր վճռում պալատը հաղորդել է, որ իր կարծիքով՝ մահապատժի իրականացման վտանգը հաջողությամբ վերացված է (տե՛ս պալատի վճռի 184-5 պարբերությունները):

153. Կողմերը մեկնաբանություններ չեն արել այս խնդրի շուրջ:

154. Այդ կապակցությամբ դատարանը նկատում է, որ Թուրքիայում մահապատիժը վերացված է, և դիմողի պատիժը փոխարինվել է ցմահ բանտարկությամբ: Բացի այդ, 2003 թ. նոյեմբերի 12-ին Թուրքիան վավերացրել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 6 արձանագրությունը, որը վերաբերում է մահապատժի վերացմանը:

155. Այդ հանգամանքներում դիմողի ներկայացրած բողոքները սկզբնական դիմումում, որոնք վերաբերել են մահապատժի իրականացման առնչությամբ 2-րդ, 3-րդ և 14-րդ հոդվածների խախտումներին, անտեսվել են: Հետևաբար, այդ առումով տվյալ դրույթների խախտումներ տեղի չեն ունեցել:

Բ. ՄԱՀԱՊԱՏԺԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

156. Մեծ պալատը համաձայն է պալատի հետ, որ մահապատժի նշանակման հետ կապված առանձին հարց 2-րդ հոդվածի շրջանակներում չի առաջանում: Այդ իսկ պատճառով տվյալ կետը քննարկելու է 3-րդ հոդվածի շրջանակներում:

1. Կողմերի ներկայացրած տեսակետները

(ա) Դիմողը

157. Պայմանավորվող պետությունների կողմից [մահապատժի] վերացման միտումների առնչությամբ դիմողը խնդրել է մեծ պալատին հետևել պալատի հիմնավորմանը՝ այն մեկ քայլ առաջ տանելով և եզրակացնելով, որ պետություններն իրենց գործողություններով չեղյալ են հայտարարել կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասությամբ նախատեսված բացառությունը, և մահապատիժը 3-րդ հոդվածի իմաստով անմարդկային և նվաստացնող վերաբերմունք է: Այդ կապակցությամբ նա կրկին հիշատակել է այն դիտարկումները, որոնք նա ներկայացրել է պալատին (տե՛ս 2003 թ. մարտի 12-ի վճռի 175-9 պարբերությունները):

Երբ կոնվենցիան ստորագրվում էր 1950 թ., Եվրոպայում մահապատիժը չէր ընկալվում որպես նվաստացնող ու անմարդկային պատիժ և նախատեսվում էր մի շարք պետությունների օրենսդրություններով: Այդ ժամանակից ի վեր, փաստորեն, ողջ Եվրոպայի տարածքում մահապատիժը վերացել է: Այդ զարգացումները պետք է դիտարկվեն որպես պայմանավորվող պետությունների միջև 2-րդ հոդվածի 1-ին կետը փոփոխության ենթարկելու համաձայնություն:

158. 2-րդ հոդվածի ոչ մի մեկնաբանություն չպետք է պետությանը թույլ տա դրսևորել անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք, մինչդեռ մահապատիժը, որպես այդպիսին, նման վերաբերմունքի տեսակ է՝ ի խախտումն կոնվենցիայի 3-րդ հոդվածի: Վերջինիս կապակցությամբ ներկայացվել է հետևյալը:

159. Միջազգային և համեմատական իրավունքի ոլորտի զարգացումները ցույց են տալիս, որ մահապատիժը կարող է դիտվել նաև որպես միջազգային իրավունքին հակասող երևույթ: Այդ կապակցությամբ հղում է կատարվել նաև Հարավաֆրիկյան [Հանրապետության] սահմանադրական դատարանի վճռին, համաձայն որի՝ մահապատիժը հակասում է Հարավաֆրիկյան Հանրապետության սահմանադրությանը, որն արգելում է դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը *(«Տ-ն ընդդեմ Մակվանյանեի» (S v Makwanyane* (1995) Butterworths Constitutional Law Reports 665(6)): Հղում է արված նաև *«ԱՄՆ-ն ընդդեմ Բըրնսի» (US v Burns)* գործի վերաբերյալ Կանադայի գերագույն դատարանի 2001 թ. վճռին (SCC 7), որում այդ դատարանը, դասալիքին Ամերիկայի Միացյալ Նահանգներին հանձնելու կապակցությամբ, համարել է, որ մահապատիժը հավասարազոր է դաժան և անսովոր պատժի: Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտեն նույնպես որոշել է, որ մահապատժի իրականացումը դաժան և անմարդկային վերաբերմունք է, որը հակասում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային

դաշնագրի 6-րդ հոդվածին [*«Ռեյդն ընդդեմ Ճամայկայի» (Reid v Jamaica)* (թիվ 250/1987)]: Հղում է արվել նաև Հունգարիայի սահմանադրական դատարանի և Ուկրաինայի, Ալբանիայի, Լիտվայի և Սերբիայի Հանրապետության (Բոսնիա-Հերցեգովինայի տարածքում) սահմանադրական դատարանների համանման որոշումներին:

160. Վերջապես, դիմողը պնդել է, որ մահապատժի իրականացումը մի դատարանի կողմից, որը չի կարողացել ապահովել կոնվենցիայի պարտադիր պահանջների կատարումը և թույլ է տվել դիմողի 6-րդ հոդվածով սահմանված իրավունքների խախտումներ, նույնպես 2-րդ և 3-րդ հոդվածների խախտում են:

(բ) Կառավարությունը

161. Կառավարությունը չի համաձայնել պալատի եզրակացությանը, որ անարդար դատաքննության ավարտից հետո մահապատժի իրականացումը 3-րդ հոդվածի խախտում է: Նրանք ուշադրություն են դարձրել, որ, նախ, ո՛չ դիմողը, ո՛չ էլ նրա փաստաբանները որևէ փաստարկ այս կապակցությամբ չեն ներկայացրել: Երկրորդ՝ նույնիսկ ենթադրելով, որ դատարանը սեփական նախաձեռնությամբ որոշել է գործը քննել 3-րդ հոդվածի շրջանակներում, դժվար, եթե ոչ անհնարին, կլիներ անել դա՝ հաշվի առնելով 3-րդ հոդվածի բնույթը: 3-րդ հոդվածի իմաստով անմարդկային վերաբերմունքը հիմնված է սուբյեկտիվ հայեցակարգի՝ դիմողի կողմից ցավի և վախի զգացողության վրա, որը հասել է 3-րդ հոդվածով արգելված մակարդակի: Նման բողոքի բացակայության պայմաններում դատարանը չի կարող իրեն դնել դիմողի տեղը և պատկերացնել նրա վիճակը:

Կառավարության ներկայացմամբ՝ պալատի ընդունած եզրակացությունը հակասում է *«Չինարն ընդդեմ Թուրքիայի» (Cınar v Turkey)* գործի ընդունելիության վերաբերյալ հանձնաժողովի ավելի վաղ որոշմանը (թիվ 17864/91, Հանձնաժողովի 1994 թ. սեպտեմբերի 5-ի որոշում, DR 79, էջ 5) և *«Աբբաս Սերթքայան ընդդեմ Թուրքիայի» (Abbas Sertkaya v Turkey)* որոշմանը (թիվ 77113/01, 2003 թ. դեկտեմբերի 11, էջ 4): Այդ որոշումներով կոնվենցիայի հաստատությունները եզրակացրել են, որ դիմողները վախի կամ ցավի զգացում չեն ունեցել, քանի որ մահապատժի իրականացման մորատորիումը վերացրել է նրանց մահապատժի իրականացման ռիսկը:

Դիմողը նույն իրավիճակում է եղել, ինչ պարոն Չինարը և պարոն Աբբաս Սերթքայան, սակայն նրա դեպքում եղել են շատ ավելի հուսալի երաշխիքներ, որ մահապատիժը չի իրականացվելու, քանի որ դիմողի գործը երբեք չի ներկայացվել խորհրդարանին, և մահապատիժը թույլատրող ընթացակարգ երբեք գործի չի դրվել: Բացի այդ, Թուրքիայի կառավարության ընդունած մահապատժի իրականացման մորատորիումը վերապահումներ չի նախատեսում, ուստի որևէ արարք կամ անձ չէին կարող դուրս մնալ դրա ազդեցության շրջանակներից: Կառավարությունը կատարել է դատարանի թիվ 39 որոշմամբ պահանջվող մահապատժի ժամանակավոր կասեցման միջոցառումը: Թուրքիայի խորհրդարանում սկզբունքային համաձայնություն կար, որ դիմողը չպետք է մահապատժի ենթարկվի:

Ընդ որում, մահապատիժը Թուրքիայում վերացվել է այս նույն խորհրդարանական կազմով: Կառավարության կարծիքով՝ պալատի եզրակացության համար փաստական հիմքեր չկային, ոչ էլ դա կարող է հիմնավորվել դատարանի՝ մահապատժի կասեցմանը վերաբերող պահանջով:

Վերջին հաշվով, Թուրքիայի կառավարության որոշումը՝ մահապատժին վերաբերող դրույթները համապատասխանեցնել եվրոպական նորմերին, վերացրել են դիմողի՝ մահապատժի ենթարկվելու վտանգը:

2. Դատարանի գնահատումը

(ա) Մահապատժի առումով պայմանագրին միացած պետությունների փորձի իրավական նշանակությունը

162. Նախ՝ դատարանը պետք է անդրադառնա դիմողի ներկայացրած այն պնդումներին, թե պայմանագրին միացած պետությունների գործելակերպն այս ոլորտում կարող է ընդունվել որպես 2-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասությամբ սահմանված բացառությունը (որը վերաբերում է որոշ հանգամանքներում մահապատժի բացահայտ թույլատրելիությանը) վերացնելու մասին համաձայնություն: Եթե 2-րդ հոդվածը պետք է ընթերցվի որպես մահապատիժը թույլատրող դրույթ, անկախ այն հանգամանքից, որ մահապատիժը գրեթե համատարած վերացված է Եվրոպայում, ապա 3-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես մահապատիժն արգելող հոդված, քանի որ դա կզրոյացնի 2-րդ հոդվածի 1-ին կետի հստակ ձևակերպումը (տե՛ս *«Սերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Soering v the United Kingdom)*, 1989 թ. հուլիսի 7-ի վճիռ, շարք A, թիվ 161, էջ 40, պարբ. 103):

163. Այս կապակցությամբ մեծ պալատը համաձայնություն է հայտնում պալատի հետևյալ եզրակացություններին (տե՛ս պալատի վճռի 189-196 պարբերությունները).

> « …Նախ՝ դատարանը պետք է անդրադառնա դիմողի ներկայացրած այն պնդմանը, ըստ որի՝ այս ոլորտում պայմանագրին միացած պետությունների գործելակերպը կարող է համարվել որպես 2-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասությամբ նախատեսված բացառությունը վերացնելու համաձայնություն, որը բացահայտորեն թույլատրում է մահապատիժը որոշ հանգամանքների առկայության դեպքում»:
>
> «… Դատարանը կրկին նշում է, որ պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ կոնվենցիան մարդու իրավունքների պաշտպանության հատուկ համաձայնագիր է և չի կարող մեկնաբանվել վակուումում: Այն պետք է հնարավորինս

մեկնաբանվի հանրային միջազգային իրավունքի այլ կանոնների (որոնց մասն էլ կազմում է) ներդաշնակությամբ (տե՛ս mutatis mutandis *«Ալ Ադսանին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Al-Adsani v the United Kingdom)* [GC], թիվ 35763/97, պարբ. 55, ECHR 2001-XI և *«Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի» (Loizidou v Turkey)*, 1996 թ. դեկտեմբերի 18-ի վճիռ, Զեկույցներ 1996-VI, էջ 231, պարբ. 43): Այնուամենայնիվ, դատարանը պետք է նախ կենտրոնանա կոնվենցիայի՝ սույն գործին վերաբերող դրույթների մեկնաբանությանը և կիրառմանը»:

« … Նշվել է, որ *«Սերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործի վերաբերյալ վճռում դատարանն ընդունել է, որ անդամ պետություններում հաստատված փորձը կարող է հիմք լինել կոնվենցիան փոփոխելու համար: Այդ գործի հետ կապված՝ դատարանն ընդունել է, որ ազգային մակարդակով քրեադատավարական քաղաքականության փորձը, որն ընդհանուր առմամբ հանգեցրել է մահապատժի վերացմանը, կարող է համարվել որպես պայմանավորվող պետությունների միջև 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված բացառությունը վերացնելու համաձայնություն և, հետևաբար, վերացնում է 3-րդ հոդվածի էվոլյուցիոն մեկնաբանման շրջանակի տեքստային սահմանափակումը (տե՛ս վերը մեջբերված վճռի պարբ. 103): Այնուամենայնիվ, որոշվել է, որ թիվ 6 արձանագրությունը փաստում է, որ պետությունները, նպատակ ունենալով ներմուծել խաղաղ ժամանակներում մահապատժի վերացման նոր պարտավորություն, այդպիսով մտադիր են եղել դա անել կամընտիր փաստաթղթով, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր պետությանն ընտրել նման պարտավորության ստանձնման իրեն հարմար ժամանակը, ինչը փոփոխությունների կատարման սովորական մեթոդ է: Դատարանը, համապատասխանաբար, եզրակացրել է, որ 3-րդ հոդվածը չէր կարող մեկնաբանվել որպես ընդհանուր առմամբ մահապատիժն արգելող հոդված (նույն տեղում, պարբ. 103-4):

« …Դիմողը չի համաձայնել դատարանի՝ *Սերինգի* վճռում դրսևորած մոտեցմանը: Նրա սկզբունքային փաստարկը եղել է այն, որ այդ տրամաբանությունը թույլ է, քանի որ թիվ 6 արձանագրությունն ընդամենը մեկ էտալոն է, որի միջոցով կարող է չափվել պետությունների ձևավորած փորձը, և փաստերը ցույց են տալիս, որ Եվրոպայի խորհրդի բոլոր անդամները *դե ֆակտո* կամ *դե յուրե* լիովին վերացրել են մահապատիժն ամեն տեսակի հանցագործությունների համար և բոլոր հանգամանքներում: Նա առարկել է, որ իրավունքի տեսության տեսանկյունից որևէ պատճառ չկա, որ պետությունները չկարողանան իրենց գործունեությամբ վերացնել մահապատիժն ինչպես 2-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասության ուժը կորցրած ճանաչելու, այնպես էլ գործընթացի պաշտոնական ճանապարհով՝ վավերացնելով թիվ 6 արձանագրությունը:

« …Դատարանը կրկնում է, որ կոնվենցիան գործող փաստաթուղթ է, որը պետք է մեկնաբանվի տվյալ ժամանակի պայմաններին համապատասխան, և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ոլորտում գործող ավելի բարձր չափանիշները համապատասխանաբար և անխուսափելիորեն պահանջում են ժողովրդավարական հասարակությունների հիմնարար արժեքների խախտումների գնահատման ավելի լուրջ հաստատակամություն (տե՛ս *«Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի» (Selmouni v France)*, 1999 թ. հուլիսի 28-ի վճիռ, Զեկույցներ 1999-V, պարբ.101):

« … Դատարանը կրկնում է, որ երբ գնահատում է՝ արդյոք խնդրո առարկա վերաբերմունքը կամ պատիժը 3-րդ հոդվածի իմաստով անմարդկային կամ նվաստացնող վերաբերմո՞ւնք են, չի կարող ընկնել Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների քրեադատավարական քաղաքականության զարգացումների և ընդհանուր առմամբ ընդունված չափորոշիչների ազդեցության տակ (տե՛ս *Սերինգի* վերը մեջբերված վճիռը, էջ 40, պարբ. 102): Բացի այդ, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի և պատժի հայեցակարգերը զգալի զարգացում են ապրել 1950 թ. հետո, երբ կոնվենցիան ուժի մեջ է մտնել և, հիրավի, դատարանի 1989 թ. *«Սերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Soering v the United Kingdom)* գործով կայացված վճռից հետո:

«…Նմանապես, դատարանը նկատում է, որ մահապատժի նկատմամբ իրավական մոտեցումը զգալի զարգացում է ապրել *Սերինգի* գործով որոշման կայացումից հետո: Այդ գործի կապակցությամբ քսաներկու անդամ պետությունների կողմից դե ֆակտո վերացումը հետագայում վերածվել է դե յուրե վերացման պայմանագրի կողմ հանդիսացող քառասունչորս երկրներից քառասուներեքում, իսկ վերջին երկրում՝ Ռուսաստանում, որը դեռևս չի վերացրել մահապատիժը, մորատորիումի կիրառման: Եվրոպայում խաղաղ ժամանակներում մահապատժի այս գրեթե իսպառ վերացումը արտացոլվում է այն փաստով, որ պայմանագրի կողմ հանդիսացող բոլոր պետությունները ստորագրել են թիվ 6 արձանագրությունը, իսկ քառասունմեկ պետություն՝ վավերացրել: Մինչ այս պահը այն չեն վավերացրել միայն Թուրքիան, Հայաստանը և Ռուսաստանը: Սա, այնուհետև, արտացոլվում է Եվրոպայի խորհրդի քաղաքականության մեջ, որը պահանջում է, որ նոր անդամ երկրները, որպես կազմակերպության անդամակցության նախապայման, քայլեր կատարեն մահապատժի վերացման ուղղությամբ: Այս զարգացումների արդյունքում անդամ պետությունների տարածքները վերածվել են մահապատժից ազատ գոտիների:

« . . . Նման շոշափելի զարգացումը կարող է ընդունվել որպես ազդանշան, որ պայմանագրի կողմ հանդիսացող պետությունների միջև համաձայնություն կա վերացնել կամ առնվազն ձևափոխել 2-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասությունը, հատկապես երբ ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ պայմանագրի կողմ հանդիսացող բոլոր պետություններն այժմ ստորագրել են թիվ 6 արձանագրությունը, և դրանցից քառասունմեկը՝ նաև վավերացրել: Հարցն այն է, թե արդյոք անհրաժեշտություն կա՞ սպասելու, որ մնացած երեք պետություններն էլ կվավերացնեն թիվ 6 արձանագրությունը, որպեսզի հնարավոր լինի եզրակացնել, որ 2-րդ հոդվածով նախատեսված մահապատժի բացառությունը զգալիորեն ձևափոխվել է: Իրերի նման դրության պայմաններում կարելի է ասել, որ

խաղաղ ժամանակներում մահապատիժը դարձել է անընդունելի …պատժի ձև, որն այլևս թույլատրելի չէ 2-րդ հոդվածի շրջանակներում»:

164. Դատարանը նկատում է, որ հետամուտ լինելով բոլոր իրավիճակներում մահապատժի վերացման իրենց քաղաքականությանը, անդամ պետությունները, թիվ 13 արձանագրությանը միանալու հնարավորությամբ, ընտրել են կոնվենցիայի տեքստի փոփոխման ավանդական եղանակը: Այս վճռի ընդունման պահին այդ արձանագրությունը չեն ստորագրել երեք անդամ պետություններ, իսկ տասնվեցը դեռևս չեն վավերացրել: Այնուամենայնիվ, ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական իրավիճակներում մահապատժի իսպառ վերացման այս վերջին քայլը կարող է համարվել պայմանավորվող պետությունների պրակտիկայում մահապատժի վերացման միտման հաստատում:

165. Այն փաստը, որ ներկայումս կան մեծ թվով պետություններ, որոնք դեռևս պետք է ստորագրեն կամ վավերացնեն թիվ 13 արձանագրությունը, կարող է հետ պահել դատարանին եզրակացնելուց, որ պայմանագրի կողմ հանդիսացող պետություններում հաստատված փորձի հիման վրա կարելի է եզրակացնել, որ մահապատժի իրականացումը անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք է և հակասում է կոնվենցիայի 3-րդ հոդվածի դրույթներին, մինչդեռ այդ դրույթից շեղումներ չեն կարող արվել նույնիսկ պատերազմական դրության ժամանակ: Այնուամենայնիվ, մեծ պալատը համաձայն է պալատի հետ, որ դատարանի համար անհրաժեշտ չէ այս կետերի վերաբերյալ ունենալ հաստատ եզրակացություն, քանի որ, եթե նույնիսկ 2-րդ հոդվածը մեկնաբանվի որպես մահապատիժը դեռևս թույլատրող դրույթ, մահապատժի իրականացումը հակասության մեջ կլինի կոնվենցիայի հետ հետևյալ պատճառներով.

(բ) Անարդար դատավարությունը և մահապատիժը

(i) 2-րդ հոդվածի շրջանակներում

166. Ինչ վերաբերում է կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված «ի կատարումն դատարանի կայացրած դատավճռին», մեծ պալատը համաձայն է պալատի տեսակետին (տե՛ս պալատի վճռի պարբ. 201-204):

« . . . Քանի որ 2-րդ հոդվածով նախատեսված կյանքի իրավունքը համարվում է կոնվենցիայի ամենահիմնարար դրույթներից և Եվրոպայի խորհրդի ժողովրդավարական հասարակությունների հիմնական արժեքներից մեկը, որից խաղաղ ժամանակներում, համաձայն 15-րդ հոդվածի, շեղումներ չեն կարող արվել, դրա դրույթները պետք է մեկնաբանվեն անչափ խստորեն (տե՛ս *mutatis mutandis «Մակքենն ընդդեմ Միացյալ Թագավորության» (McCann v the United Kingdom)*, 1995 թ. սեպտեմբերի 27-ի վճիռ, շարք A, թիվ 324, էջ 45-46, պարբ. 147), առավել ևս՝ 2-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը:

« …Եթե նույնիսկ մահապատիժը դեռևս թույլատրելի լիներ 2-րդ հոդվածի շրջանակներում, դատարանը համարում է, որ մահապատժի միջոցով կյանքից կամայական զրկումն արգելված է: Սա հետևում է այն պահանջից, որ «յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով»: «Կամայական գործողությունը չի կարող օրինական համարվել կոնվենցիայի շրջանակներում» (*«Բոզանոն ընդդեմ Ֆրանսիայի» (Bozano v France)*, վերը մեջբերված վճիռը, պարբ. 54 և 59):

« . . . 2-րդ հոդվածի 1-ին կետի պահանջից բխում է նաև, որ պետք է կյանքից զրկել «դատարանի վճռի հիման վրա», և այդ պատիժը կիրառող «դատարանը», դատարանի նախադեպային իրավունքի համաձայն, պետք է լինի անկախ և անաչառ տրիբունալ (*«Ինջալն ընդդեմ Թուրքիայի» (Incal v Turkey)*, մեջբերված է վերը, *«Չիրաքլարն ընդդեմ Թուրքիայի» (Ciraklar v Turkey)* մեջբերված է վերը, *«Ֆինդլին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Findlay v the United Kingdom)*, 1997 թ. փետրվարի 25, Զեկույցներ 1997-I, *«Հոշիլդն ընդդեմ Դանիայի» (Hauschildt v Denmark)*, 1989 թ. մայիսի 24, շարք A, թիվ 154), և քրեական դատավարության ինչպես առաջին, այնպես էլ վերաքննիչ ատյաններում պահպանվում են արդարության խստագույն չափանիշները: Քանի որ մահապատժի իրականացումն անշրջելի է, այն պետք է կատարվի այնպիսի չափորոշիչների հիման վրա, որոնք բացառում են կյանքից կամայական և անօրինական զրկումը (այս կապակցությամբ տե՛ս ՄԱԿ-ի Տնտսոցխորհի 1984/50 բանաձևի 5-րդ հոդվածը և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի որոշումները ..., ինչպես նաև «Օրենքի համապատասխան ընթացակարգի շրջանակներում հյուպատոսական օժանդակության վերաբերյալ տեղեկատվական իրավունքի մասին» Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանի 1999 թ. հոկտեմբերի 1-ի OC-16/99 խորհրդատվական կարծիքը, պարբ. 135–6 և *«Հիլեյրը, Կոնստանտինը և Բենջամինը և այլք ընդդեմ Տրինիդադ և Տոբագոյի» (Hilaire, Constantine and Benjamin et al v Trinidad and Tobago)*, պարբ. 148– . . .): Վերջապես, 2-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, որ պատիժը պետք է «նախատեսված լինի օրենքով», նշանակում է, որ ազգային օրենսդրությունը ոչ միայն պետք է պարունակի պատժի հիմք, այլև օրենքի որակի պահանջը պետք է լիովին պահպանված լինի: Այսինքն՝ իրավական հիմքը պետք է լինի «մատչելի» և «կանխատեսելի», ինչպես որ այս սահմանումները հասկացվում են դատարանի նախադեպային իրավունքով (տե՛ս *«Ամանն ընդդեմ Շվեյցարիայի» (Amann v Switzerland)* [GC], թիվ 27798/95, պարբ. 56, ECHR 2000-II, *«Ռոտարուն ընդդեմ Ռումինիայի» (Rotaru v Romania)* [GC], թիվ 28341/95, պարբ. 52, ECHR 2000-V):

« . . . 2-րդ հոդվածի վերոհիշյալ մեկնաբանությունից բխում է, որ մահապատժի իրականացումն ընդունելի չէ այն անձի համար, ում դատավարությունն արդար չի եղել»:

(ii) 3-րդ հոդվածի շրջանակներում

167. Այն դեպքում, երբ տեղի է ունեցել անարդար դատավարություն, 2-րդ հոդվածի մեկնաբանությանը վերաբերող վերոհիշյալ եզրակացությունը պետք է ազդի դատարանի կարծիքի վրա, երբ այն քննարկում է մահապատժի նշանակումը 3-րդ հոդվածի շրջանակներում:

168. Ինչպես 3-րդ հոդվածի կապակցությամբ դատարանը նախկինում նշել է, մահապատժի նշանակման և ի կատար ածման եղանակը, դատապարտյալի անձնական հանգամանքները, պատժի և կատարված հանցագործության անհամաչափությունը, ինչպես նաև նախքան մահապատժի իրականացումը կալանքի պայմաններն այնպիսի գործոններ են, որոնց հետևանքով դատապարտված անձի նկատմամբ դրսևորած վերաբերմունքը կամ պատիժը կարող են հանգեցնել 3-րդ հոդվածով նախատեսված արգելքի խախտման (տե՛ս *Մերինգի* գործը, մեջբերված է վերը՝ էջ 41, պարբ. 104):

169. Դատարանի կարծիքով՝ անարդար դատավարությունից հետո անձին մահապատժի դատապարտելը նշանակում է սխալի հետևանքով այդ անձին մատնել մահապատժի ենթարկվելու վախի: Մահապատժի դատավճռի պատճառով առաջացող վախը և ապագայի նկատմամբ անորոշությունը այնպիսի հանգամանքներում, երբ այդ վճռի կատարումն իրատեսական է, պետք է որ սաստիկ մարդկային տառապանքի պատճառ դառնան: Այդ տառապանքը չի կարող անջատվել անարդար դատավարությունից՝ ընկած վճռի հիմքում, և քանի որ նժարին դրված է մարդկային կյանքը, կոնվենցիայի համատեքստում դառնում է անօրինական:

(iii) Այս սկզբունքների կիրառությունը տվյալ գործի նկատմամբ

170. Դատարանը նշում է, որ սկսած 1984 թվականից՝ Թուրքիայում մահապատժի իրականացման նկատմամբ գործում է մորատորիում, և տվյալ գործի կապակցությամբ Թուրքիայի կառավարությունը հետևել է 39-րդ կանոնի շրջանակներում դատարանի՝ մահապատժի իրականացումը սառեցնելու ժամանակավոր միջոցառմանը: Այնուհետև դատարանը նշում է, որ մահապատժի հաստատման համար դիմողի գործը չի ուղարկվել խորհրդարան, ինչը Թուրքիայի սահմանադրության պահանջն է:

171. Այս համատեքստում դատարանը նաև ուշադրություն է դարձրել *Չինարի* գործին (մեջբերված է վերը՝ էջ 5), որի դեպքում հանձնաժողովը մերժել է այն պնդումը, ըստ որի՝ Թուրքիայում մահապատժի դատապարտված դիմողի նկատմամբ 3-րդ հոդվածը խախտվել է: Իր հիմնավորման մեջ հանձնաժողովը առաջնորդվել է մահապատժի նկատմամբ գործող երկարաժամկետ մորատորիումով և եզրակացրել, որ այդ գործի հանգամանքներում մահապատժի իրականացման վտանգը վերացական է:

172. Մեծ պալատը համաձայն է պալատի հետ, որ վարույթում գտնվող գործի առանձնահատուկ հանգամանքները թույլ չեն տալիս կատարել նույն եզրակացությունը, ինչ *Չինարի* դեպքում: Դիմողի՝ որպես ՔԱԿ-ի առաջնորդի և հիմնադրի կարգավիճակը (կազմակերպություն, որը ներքաշված է եղել շարունակական վայրագության արշավի մեջ և հանդիսացել հազարավոր մահերի պատճառ) նրան դարձրել էր Թուրքիայի ամենախիստ հետապնդվող անձը: Հաշվի առնելով այն փաստը, որ դիմողը մեղադրվել է Թուրքիայի քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ամենածանր հանցագործությունների համար, ինչպես նաև Թուրքիայում տիրող ընդհանուր քաղաքական անհամաձայնությունները, չէր կարելի բացառել, որ նախքան մահապատիժը վերացնելու մասին որոշում ընդունելը այդ վճռի ի կատար ածման վտանգը եղել է իրատեսական: Փաստացի այդ վտանգը գոյություն է ունեցել դիմողին Իմրալիի բանտում պահելու ժամանակ՝ ավելի քանի երեք տարի՝ սկսած այն պահից, երբ վճռաբեկ դատարանի 1999 թ. նոյեմբերի 25-ի վճռով հաստատվել է դիմողի նկատմամբ վճիռը մինչև այն պահը, երբ Անկարայի պետական անվտանգության դատարանի 2002 թ. հոկտեմբերի 3-ի վճռով դիմողի մահապատիժը փոխարինվել է ցմահ բանտարկությամբ:

173. Ինչ վերաբերում է դիմողի դատավարության բնույթին, դատարանը վկայակոչում է նրա գանգատների վերաբերյալ կոնվենցիայի 6-րդ հոդվածի շրջանակներում իր կատարած եզրակացությունները: Դատարանի կարծիքով՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, դիմողի դատը անկախ և անաչառ տրիբունալը չի կատարել, որը համակցվել է նաև 6-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) և (գ) ենթակետերի խախտումներով՝ հաշվի առնելով այն հանգամանքները, որ ոստիկանությունում կալանքի տակ գտնվելու ժամանակ դիմողը փաստաբան չի ունեցել, ի վիճակի չի եղել հաղորդակցվելու իր փաստաբանների հետ նրանց խոսակցություններին պաշտոնյաների ներկա լինելու, փաստաբանների այցերի հաճախականության և տևողության սահմանափակումների պատճառով, ինչի հետևանքով նա անկարող է եղել ծանոթանալու գործին մինչ գործի վարույթի խորացած փուլ մտնելը, իսկ նրա փաստաբաններն էլ բավարար ժամանակ չեն ունեցել գործին հավուր պատշաճի ծանոթանալու համար:

174. Այսպիսով, դիմողի նկատմամբ մահապատիժ սահմանվել է անարդար գործընթացից հետո, որը չի կարող համարվել խստագույն չափանիշների համապատասխանող վարույթ, որը պահանջվում է մահապատժով ավարտվող գործերի համար: Բացի այդ, մահապատժի դատապարտման հետևանքով նա մոտ երեք տարի կրել է դրա դառնությունը:

175. Հետևաբար, դատարանը եզրակացնում է, որ դատարանի (որի անկախությունը և անաչառությունը կասկածների տեղիք են տվել) անարդար դատավարությունից հետո դիմողին մահապատիժ նշանակելը հավասար է եղել անմարդկային վերաբերմունքի՝ ի խախտումն 3-րդ հոդվածի:

. . . .

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

. . .

7. Միաձայն որոշում է, որ կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում չի եղել:

8. Միաձայն որոշում է, որ մահապատժի իրականացման առումով կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում՝ 2-րդ հոդվածի համակցությամբ, տեղի չի ունեցել:

9. Միաձայն որոշում է, որ մահապատժի իրականացման վերաբերյալ բերված գանգատի մասով կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

10. Տասներեք կողմ և չորս դեմ ձայներով՝ որոշում է, որ անարդար դատավարությունից հետո մահապատժի նշանակման կապակցությամբ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում:

. . . .

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են նախագահ Վիլդհաբերը և դատավորներ Ռոզակիսը, Կոստան, Ռեսը, Բրատցան, Փալմը, Քաֆլիշը, Լուկայդեսը, Թուրմենը, Ստրաժնիչկան, Լորենցենը, Բուտկևիչը, Հեդիգանը, Ուգրեխելիձեն, Գառլիչկին, Բոռեգո Բոռեգոն և Գյուլումյանը:

2 Դատավորներ Կոստան, Քաֆլիշը, Թուրմենը և Բոռեգո Բոռեգոն ընդունել են մասնակի չհամընկնող կարծիք, որում նշել են.

Մեծամասնությունն ընդունում է, որ 3-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես մահապատժի վրա արգելք դնող հոդված, քանի որ այդ կերպ այն կչեզոքացներ 2-րդ հոդվածի հստակ ձևակերպումը (վճռի 162-րդ պարբերություն): Այլ կերպ ասած՝ ըստ մեծամասնության, թեպետ մահապատիժը որպես այդպիսին 3-րդ հոդվածի խախտում չէ, մահապատիժը նշանակող դատարանի անաչառության և անկախության մասով ընթացակարգային թերությունը 3-րդ հոդվածի խախտում է:

Այնուամենայնիվ, ըստ չհամընկնող կարծիք հայտնածների՝ փաստեր չեն եղել, որ պետական անվտանգության դատարանի (վիճելի) անկախության կամ անաչառության բացակայության պատճառով Օջալանն ունեցել է վախի կամ տառապանքի զգացումներ, և գոյություն չի ունեցել «իսկական ու անմիջական վտանգ», որ նրա մահապատիժն ի կատար կածվի, քանի որ սկսած 1984 թվականից Թուրքիայում որևէ անձ մահապատժի չի ենթարկվել: Իսկապես, չհամընկնող կարծիք հայտնածները համարել են, որ Օջալանի քաղաքական կարգավիճակը ավելի քիչ հավանական է դարձրել նրա նկատմամբ մահապատժի իրականացումը. նկատի են ունեցել դրա հնարավոր քաղաքական հետևանքները:

3 Դատավոր Գառլիչկին հայտնել է մասնակի համընկնող/չհամընկնող կարծիք, որում շարադրել է հետևյալ տեսակետը.

1. Ես գրում եմ այս առանձին կարծիքը, քանի որ կարծում եմ, որ այս դեպքում իր վճռի գործնական դրույթների միջոցով դատարանը պետք է որոշած լիներ, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում, քանի որ մահապատժի նշանակման յուրաքանչյուր դեպք անմարդկային և նվաստացնող վերաբերմունք է, որն արգելված է կոնվենցիայով: Այսպիսով, մեծամասնության եզրակացությունը, թեկուզ իրավացի, որ անարդար դատավարությունից հետո մահապատժի նշանակումը 3-րդ հոդվածի խախտում է, իմ կարծիքով, հեռու է իրական խնդիրը լուծելուց:

2. Իրավամբ, մեծամասնության կարծիքը բավարար է եղել, որպեսզի հիմնավորվի, որ այս դեպքում տեղի է ունեցել խախտում: Եվ բնավ հարկ չկար հանգելու կուռ եզրակացության այն ավելի ընդհանուր կետի վերաբերյալ, թե արդյոք մահապատժի իրականացումը ներկայումս պե՞տք է համարվի անմարդկային և նվաստացուցիչ և այդպիսով՝ 3-րդ հոդվածին հակառակ: Ես ընդունում եմ, որ դատավարական ինքնազսպվածությունը մի շարք առավելություններ ունի, սակայն համոզված չեմ, որ սա դրա դրսևորման լավագույն տեղն էր:

Ես քաջ գիտակցում եմ, որ կոնվենցիայի նախասկզբնական շարադրանքով մահապատիժը թույլատրված էր՝ պայմանով, որ առկա լինեն 2-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված երաշխիքները: Ես նաև գիտակցում եմ, որ 1986 թ. *Սերինգի* վճռով այս դատարանը չի համաձայնել ընդունել, որ նոր միջազգային համատեքստը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ 2-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված բացառությունը վերացված է: Այսօր դատարանը համաձայնելով, որ «կարելի է ասել, որ խաղաղ ժամանակներում մահապատիժը դարձել է անընդունելի … պատժամիջոց, որն այլևս թույլատրելի չէ 2-րդ հոդվածի շրջանակներում» (տե՛ս վճռի պարբ. 163), թվում է թե համոզված է, որ մահապատիժը տեղ չունի նույնիսկ կոնվենցիայի նախնական տեքստի մեջ: Սակայն միաժամանակ դատարանը որոշել է չարտահայտել այնպիսի կարծիք, որ դա պետք է պարտադիր լինի բոլորի համար: Իմ կարծիքով, կան փաստարկներ, որոնք մատնանշում են, որ դատարանը կարող էր և պետք է շատ ավելի հեռու գնացած լիներ այս գործում:

3. Նախ՝ թվում է, որ խնդրի էության վերաբերյալ տարաձայնություն չկա: Դատարանը միանգամայն ճիշտ է եղել, երբ նկատել է, որ նախորդ տասնհինգ տարիների ընթացքում Եվրոպայի խորհրդի կազմի մեջ մտնող պետությունների տարածքները դարձել են մահապատժից ազատ գոտիներ, և նման զարգացումը հիմա կարող է ընդունվել որպես այն բանի նշան, որ պայմանագրի կողմ հանդիսացող պետությունները համաձայն են վերացնել կամ առնվազն ձևափոխել 2-րդ հոդվածի 1-ին կետը: Անհրաժեշտություն չկա այստեղ հիշատակելու Եվրոպայում տեղի ունեցած բոլոր համապատասխան զարգացումները: Թվում է, թե բավարար է միայն մեջբերել Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 2002 թ. կարծիքը, որում հիշատակվում է, որ ամենավերջին բանաձևերով «վերահաստատել է իր հավատը, որ մահապատիժը անմարդկային և նվաստացնող պատիժ է և ամենահիմնարար իրավունքի՝ կյանքի իրավունքի խախտում, և մահապատիժը տեղ չունի քաղաքակիրթ և օրենքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական հասարակություններում»: Այսպիսով, այսօր՝ 2005 թվականին, մահապատժի՝ որպես պատժատեսակի դատապարտումը դարձել է բացարձակ, և նույնիսկ դատական վարույթի ծայրաստիճան արդարությունը չի կարող օրինականացնել այս պատժամիջոցի նշանակումը: Այլ խոսքերով, հնարավոր է եզրակացնել, որ անդամ պետությունները համաձայնել են իրենց գործունեությամբ ձևափոխել 2-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասությունը: Միակ խնդիրը հետևյալն է. ո՞վ է հայտարարության լիազորություն ունենալու, որ տեղի է ունեցել բոլորի համար պարտադիր փոփոխություն: Այսպիսով, սա ոչ թե բովանդակային խնդիր է, այլ իրավասության խնդիր: Հետևաբար, միակ հարցը, որ մնում է տալ, այն է, թե արդյոք դատարանն իրավասություն ունի՞ հայտարարելու բացահայտ ճշմարտությունը անվանապես, որ մահապատիժը որպես այդպիսին ներկայումս դարձել է անմարդկային և նվաստացնող պատիժ:

4. Պատասխանելով այս հարցին՝ անհրաժեշտ է հիշել, որ կոնվենցիան, որպես միջազգային պայմանագիր, պետք է կիրառվի և մեկնաբանվի միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների համաձայն, մասնավորապես՝ Վիեննայի կոնվենցիայի 39-րդ հոդվածի համաձայն: Սա նշանակում է, որ կոնվենցիան փոփոխելու միակ տարբերակը «փոփոխությունների նորմալ ընթացակարգի» ճանապարհն է (տե՛ս *Սերինգի* վճռի պարբ. 103–4 և սույն վճռի պարբ. 164–5):

Սակայն կոնվենցիան խիստ ուրույն միջազգային փաստաթուղթ է: Մի շարք առումներով նրա բովանդակությունը և կիրառության գործընթացն ավելի մոտ են ազգային սահմանադրություններին, քան «տիպական» միջազգային պայմանագրերին: Դատարանը միշտ ընդունել է, որ կոնվենցիան գործող փաստաթուղթ է և պետք է մեկնաբանվի ընթացիկ պայմաններից ելնելով: Սա կարող է հանգեցնել (և, փաստորեն, բազմիցս հանգեցրել է) կոնվենցիայի սկզբնական իմաստի դատավարական փոփոխությունների: Այս տեսանկյունից մեր դատարանի դերը շատ տարբեր չէ ազգային սահմանադրական դատարանների դերից, որոնց մանդատն է ո՛չ միայն պաշտպանել մարդու իրավունքների վերաբերյալ սահմանադրական դրույթները, այլև զարգացնել դրանք: Ստրասբուրգի դատարանը բազմիցս կոնվենցիայի տեքստի նկատմամբ նման ստեղծագործական մոտեցում է ցուցաբերել՝ վճռելով, որ կոնվենցիայի ընդգրկած իրավունքները և ազատությունները կիրառելի են այնպիսի իրավիճակներում, որոնք նախատեսված չեն եղել այն մշակողների կողմից: Այսպիսով, ճշմարիտ է ենթադրել, որ քանի դեռ անդամ պետությունները հստակ չեն հրաժարվել կոնվենցիայի առանձին դատավարական մեկնաբանություններից (ինչը տեղի է ունեցել օտարերկրացիների վտարման դեպքում՝ դառնալով թիվ 4 և թիվ 7 արձանագրությունների կարգավորման առարկան), դատարանն իրավասու է որոշելու բառերի և արտահայտությունների իրական իմաստը, որոնք մտել են կոնվենցիայի տեքստ ավելի քան հիսուն տարի առաջ: Դատարանը կարող է այսպես վարվել այն դեպքերում, երբ նրա մեկնաբանությունները ներդաշնակ են անդամ պետությունների արժեքներին և չափորոշիչներին, և թվում է, որ սա վերաբերում է նաև մահապատժի դեպքին:

5. Այս դատարանը երբեք չի ժխտել, որ «գործող փաստաթղթի մոտեցումը» կարող է հանգեցնել մարդու իրավունքների պաշտպանության՝ դատական վարույթի արդյունքում որոշված նոր և ավելի բարձր չափանիշների: Այնուամենայնիվ, մահապատժի առումով, *Սերինգի* վճռի միջոցով նա ընդունել է «կանխարգելման սկզբունք»: Ինչպես նշել եմ վերը, դատարանը համարել է, որ քանզի անդամ պետությունները որոշել են մահապատժի խնդիրը կարգավորել կոնվենցիայի

պաշտոնական փոփոխության միջոցով, այս խնդիրը դարձել է պետությունների «ոլորտը», ինչը կասեցրել է դատարանին գործող փաստաթղթի սկզբունքի կիրառումից:

Ես վստահ չեմ՝ արդյոք *Մերինգի* գործի առնչությամբ նման մեկնաբանություն անելը ճի՞շտ էր կամ դա կիրառելի՞ է *Օջալանի* գործի վճռի նկատմամբ:

Մերինգի վճռի հիմքում ընկած է եղել այն փաստը, որ թեպետ թիվ 6 արձանագրությունը նախատեսում է մահապատժի վերացում, 1989 թ. դրությամբ մի քանի անդամ պետություններ դեռևս պետք է վավերացնեին այն: Ուստի այդ ժամանակ դատարանի համար պետք է որ խիստ վաղ լիներ կոնվենցիային համապատասխանելու մասով մահապատժի վերաբերյալ որևէ համընդհանուր դիրքորոշում ընդունելը: Այժմ մեծամասնությունը բարձրացնում է նույն հարցը թիվ 13 արձանագրության առնչությամբ, որը դեռևս մնում է վավերացման փուլում:

Սակայն սա կարող է միայն ցույց տալ, որ որոշ անդամ պետություններ տատանվում են մահապատժի մեկընդմիշտ վերացման լավագույն պահի ընտրության առումով: Միաժամանակ, այլևս անվիճելի է, որ մահապատժի անմարդկային բնույթի վերաբերյալ կա համաեվրոպական համաձայնություն: Ուստի այն փաստը, որ կառավարությունները և քաղաքական գործիչները նախատեսում են պաշտոնական փոփոխություններ կատարել կոնվենցիայի մեջ, կարող է ավելի շուտ ընկալվել որպես վկայություն, որ մահապատիժն այլևս չպետք է գոյություն ունենա, բացի այն դեպքերից, երբ կանխում է դատարանի սեփական նախաձեռնությամբ գործելը:

Դա է պատճառը, որ մեծամասնության կողմից *Մերինգի* մոտեցման ընդօրինակումն ինձ համար համոզիչ չէ: Ես չեմ կարծում, որ մահապատժի բնույթի վերաբերյալ որոշում կայացնելու առումով այս դատարանը հանդիպում է իրավական արգելքների:

6. Նման որոշումը կունենար համընդհանուր կիրառելիություն, մասնավորապես՝ այն կարգելեր մահապատժի նշանակումը ոչ միայն խաղաղ ժամանակներում, այլև պատերազմի կամ այլ պատերազմական դրությունների ժամանակ: Սակայն այն չպետք է հետ պահի դատարանին արդեն այսօր նման որոշման ընդունումից: Միգուցեև ճիշտ է, որ Եվրոպայի պատմությունը ցույց է տալիս, որ եղել են պատերազմներ, ինչպես, օրինակ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմը, որի ժամանակ (որից հետո) մահապատիժը հիմնավորված էր: Ես չեմ կարծում, որ կոնվենցիայի ներկայիս մեկնաբանությունը պետք է նման բացառությունների հնարավորություն տա: Շատ ավելի պարզամտություն կլինի հավատալ, որ եթե կրկին նույն մասշտաբի պատերազմ սկսվի, ապա կոնվենցիան՝ որպես ամբողջություն, կկարողանա գոյատևել, եթե նույնիսկ մահապատժի մասով զիջումներ մտցվեն: Մյուս կողմից՝ եթե տեղի է ունենում պատերազմ կամ զինված հակամարտություն, որն ունի միայն տեղական տարածում (սա այն է, ինչ տեղի է ունեցել Եվրոպայում վերջին հինգ տասնամյակների ընթացքում), միջազգային համայնքը կարող է և պետք է պնդի, որ պահպանվեն մարդասիրության ընդհանուր արժեքները, այդ թվում նաև՝ մահապատժի արգելումը: Նույն հիմնավորումը պետք է վերաբերի նաև այլ «պատերազմներին», ինչպես, օրինակ՝ «ահաբեկչության դեմ պատերազմին», որի դեպքում այսօր մահապատիժը տեղ չունի (տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Մարդու իրավունքների և ահաբեկչության դեմ պայքարի ձեռնարկը», 2002 թ., հոդված X, պարբ. 2):

Բացի այդ, կարելի է նկատել, որ վերջերս ստեղծված Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը ցույց է տալիս, որ միջազգային համայնքն այն կարծիքին է, որ նույնիսկ ամենազազրելի քրեական հանցագործությունների դեպքում մահապատիժ չպետք է կիրառվի:

7. Վերջին տասնհինգ տարվա ընթացքում Եվրոպայի սահմանադրական դատարաններին առաջարկվել է ընդունել մահապատժին վերաբերող մոտեցում: Հունգարիայի, Լիտվայի, Ալբանիայի և Ուկրաինայի դատարաններն առանց տատանվելու համաձայնել են հաստատել, որ մահապատիժն իրենց երկրների սահմանադրություններով այլևս թույլատրելի չէ, եթե նույնիսկ դա հստակ չի ձևակերպված այդ փաստաթղթերի գրավոր շարադրանքում: Այնուամենայնիվ, այս սահմանադրական դատարաններն ընդունել են, որ կառավարության քաղաքական ճյուղերի՝ այս հարցի վերաբերյալ հստակ դիրքորոշում ունենալու անկարողությունը չպետք է խանգարի դատական ճյուղին այդպես վարվելուց: Հարավաֆրիկյան սահմանադրական դատարանը դրսևորել է համանման մոտեցում:

Ես հաստատապես համոզված եմ, որ *Օջալանի* վճռի առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պետք է հետևած լիներ նույն ուղուն:

….

4 *Օջալանի* գործի վերաբերյալ մեծ պալատի վճիռը (պարբ. 164) ցույց է տալիս, որ թեպետ դատարանն անտարբեր չի գտնվել այն տեսակետի նկատմամբ, որ պետությունների գործելակերպի արդյունքում տեղի է ունեցել 2-րդ հոդվածի բարեփոխում, համաձայն որի՝ մահապատժի կիրառությունը խաղաղ ժամանակներում պետք է արգելվի, հաշվի առնելով անդամ պետությունների ընտրությունը, այն է՝ մահապատիժը վերացնել թիվ 6 և թիվ 13 արձանագրությունների միջոցով, սակայն դատարանն այս հարցի վերաբերյալ որոշիչ վճիռ չի կայացնելու: Այնուամենայնիվ, մահապատժի նշանակումը կամ ի կատար ածումը կարող է հակասել 3-րդ հոդվածին:

5 3-րդ հոդվածին վերաբերող վտարման դեպքերի նկատմամբ կիրառված *Սերինգի* մոտեցումը (տե՛ս ստորև՝ էջ 200) դատարանը տարածել է 2-րդ հոդվածին վերաբերող վտարման դեպքերի վրա՝ *«Բադերը և այլք ընդդեմ Շվեդիայի» (Bader and Others v Sweden)* գործի վերաբերյալ 2005 թ. նոյեմբերի 8-ի վճռով: Դիմողները հայտնել էին, որ եթե իրենց վտարեն Սիրիա (նրանց ծագման երկիրը), առաջին դիմողին սպառնում է մահապատիժ, քանի որ նա մեղավոր է ճանաչվել և դատապարտվել մահապատժի իր աներծագի սպանության մեջ (ենթադրաբար) ներգրավված լինելու համար: Պալատը վճռել է, որ.

42.…Սրանից բխում է, որ եթե պայմանագրի կողմ հանդիսացող պետությունը վտարում է օտարերկրացի անձի, ով ընդունող պետությունում տուժել է կամ կարող է տուժել արդար դատավարության հնարավոր կոպիտ խախտումից, որի հետևանքը եղել է կամ ամենայն հավանականությամբ լինելու է մահապատիժը, ապա առաջանում է կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների խնդիր:

Լուրջ թերություններ բացահայտելով առաջին դիմողի՝ Սիրիայում ընթացած դատավարության մեջ, ներառյալ՝ նրա կամ նրա փաստաբանի բացակայությունը դատական նիստերից, և հաշվի առնելով Շվեդիայի կողմից երաշխիքների տրամադրման բացակայությունը, որ նրա գործը վերաբացվելու է, սակայն դատախազը չի պահանջելու մահապատիժ, պալատը որոշել է, որ դիմողների վտարումը Սիրիա 2-րդ և 3-րդ հոդվածների խախտում կլինի: Հետաքրքիր է, որ դատավոր Կաբրալ Բարետոն հայտնել է համընկնող կարծիք, ըստ որի՝ Շվեդիան կխախտի թիվ 13 արձանագրությունը, եթե վտարի դիմողներին:

…Պետությունները, որոնք արդեն վավերացրել են թիվ 13 արձանագրությունը, ցանկություն են ունեցել 2-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը փոխարինել ավելի խիստ պարտավորությամբ, այն է՝ բոլոր դեպքերում վերացնել մահապատիժը:

2-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը ուժը կորցրել է կամ առնվազն դարձել ավելորդ թիվ 13 արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո:

Այն պետությունները, որոնք վավերացրել են թիվ 13 արձանագրությունը, պարտավորվել են ոչ միայն չկիրառել մահապատիժ, այլև որևէ մեկին մահապատժի վտանգի չենթարկել:

Հետևաբար, կարիք չկա ուսումնասիրելու անձի նկատմամբ ընթացած դատավարությունը կամ մահապատժի դատապարտված անձի դրությունը, քանի որ արդեն իսկ առկա է թիվ 13 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

Շվեդիան արդեն վավերացրել է թիվ 13 արձանագրությունը:

Այդ իսկ պատճառով կարծում եմ, որ դիմողի վտարումը Սիրիա առաջացնելու է թիվ 13 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

Հոդված 2(2)

Անձանց պաշտպանությունն անօրինական բռնությունից (2(2)(ա) հոդված)

Այս բացառությունը վկայակոչվել է *Մակքենի* գործում (վերը):

Անձի օրինական ձերբակալության իրականացում կամ օրինականորեն կալանավորված անձի փախուստի կանխում (հոդված 2(2)(բ))

«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի» (Nachova and Others v Bulgaria) գործի վերաբերյալ 2004 թ. փետրվարի 26-ի վճռով պալատը միաձայն ընդունել է կարևոր սահմանափակումներ, որոնք վերաբերում են այս բացառության կիրառությանը: Դիմողները բողոքել են դատարանին, որ իրենց ընտանիքի երկու անդամները սպանվել են հրազենային կրակոցներից: Մահացածներն ազգությամբ

գնչու ոչ վտանգավոր և չզինված դասալիքներ էին, որոնք փախուստի էին դիմել կալանքի տակ գտնվելու ժամանակ: Ռազմական ոստիկանության չորս աշխատակից՝ զինված հրացաններով և «Կալաշնիկով» տիպի ինքնաձիգ հրացաններով, ուղարկվել են դասալիքներին ձերբակալելու: Ռազմական ոստիկանության կանոնակարգերով մի շարք դեպքերում բանակում ծառայող անձանց ձերբակալելու համար թույլ են տալիս կիրառել հրազեն, նաև այն դեպքում, երբ անձը կատարել է քրեորեն հետապնդելի արարք, չի հանձնվել, նրան տրվել է բանավոր նախազգուշացում և օդ արձակվել նախազգուշական կրակոց: Մահացածները փախուստի են դիմել այն տնից, որտեղ նրանք թաքնվել էին ռազմական ոստիկանության ժամանման պահին: Կոչումով մայոր ավագ սպան հետապնդել է նրանց: Դասալիքների հետևից բղավելուց և նախազգուշական կրակոց արձակելուց հետո նա կրակ է բացել «Կալաշնիկով» ինքնաձիգով՝ սպանելով երկու դասալիքներին: Համաձայն հարևանի հայտարարության՝ մայորը զենքն ուղղել է նրա վրա և բացականչել. «Դո՛ւք, անիծյալ գնչուներդ»:

103. Դատարանը կարծում է, որ օրինական ձերբակալության օրինական նպատակը կյանքի՝ որպես հիմնարար արժեքի պահպանության հրամայական անհրաժեշտության հետ հավասարակշռելու արդյունքում հնարավոր չէ արդարացնել մարդու կյանքը ռիսկի ենթարկելն այն դեպքում, երբ դասալիքը կատարել է ոչ դաժան հանցագործություն և ոչ մեկի համար սպառնալիք չի ներկայացնում: Որևէ այլ մոտեցում կհամարվի անհամատեղելի ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքների հետ, որոնք համընդհանուր ճանաչում ունեն այսօր (տես «Միավորված ազգերի կազմակերպության իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի և հրազենի կիրառության հիմնարար սկզբունքները»... և mutatis mutandis *«Օջալանն ընդդեմ Թուրքիայի»* գործի վերաբերյալ դատարանի պատճառաբանությունը, թիվ 46221/99, պարբ. 196, 12 մարտի 2003 թ.):

104. Պոտենցիալ մահացու ուժի կիրառումը թույլատրվում է բացառապես 2-րդ հոդվածի 2-րդ կետի (ա) և (գ) ենթակետերում նշված բռնության (անօրինական բռնություն, ապստամբություն կամ խռովություն) դեպքերում: Այնուամենայնիվ, խիստ համաչափության սկզբունքը, որն ամրագրված է կոնվենցիայի 2-րդ հոդվածում, չի կարող ընթերցվել այդ դրույթի նպատակից անջատ, որը կյանքի իրավունքի պաշտպանությունն է: Սա ենթադրում է, որ նման պայմանը վերաբերում է (բ) ենթակետում նշված դեպքերին:

105. Պոտենցիալ մահացու զենքի կիրառումն անխուսափելիորեն վտանգ է մարդկային կյանքի համար, նույնիսկ եթե գործում են կանոններ, որոնք նվազեցնում են այդ վտանգները: Դատարանը, հետևաբար, համարում է, որ կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով չեն կարող լինել այնպիսի իրավիճակներ, երբ նման զենքի կիրառումը կարող է «անխտիր անհրաժեշտ» լինել ոչ դաժան հանցագործության մեջ կասկածվող անձին ձերբակալելու համար (երբ հայտնի է, որ նա կյանքի և շրջապատի համար վտանգ չի ներկայացնում), եթե նույնիսկ բաց թողնվի դասալիքին ձերբակալելու հնարավորությունը...

Բացի այդ, պալատը համարել է, որ ռազմական ոստիկանությունն անհարկի ուժ է գործադրել մահացածի նկատմամբ: Օրինակ՝ մայորը կրակ է բացել այն դեպքում, երբ ունեցել է այլ հնարավորություններ (օրինակ՝ ռազմական ոստիկանության «Ձիփ» մակնիշի մեքենայով դասալիքներին հետապնդելու հնարավորություն) և կրակել է ինքնաձիգ հրացանից, երբ նրա ձեռքի տակ եղել է նաև մեխանիկական հրացան: Այսպիսով, տեղի է ունեցել 2-րդ հոդվածի խախտում: Խրախուսելի է, որ դատարանն ընդունել է հստակ վճիռ, համաձայն որի՝ ոչ վտանգավոր կասկածյալներին ձերբակալելու համար հրազենի գործածումը 2-րդ հոդվածի շրջանակներում չի կարող համարվել օրինական: Սա հստակ ուղղություն է անդամ պետությունների համար, և նրանք պետք է երաշխավորեն, որ իրենց ուժային կառույցների ողջ անձնակազմը ստացել է համապատասխան ուսուցում և հրահանգավորում այս սահմանափակումը չխախտելու համար: Կյանքի իրավունքի և ոչ վտանգավոր օրինազանցների ձերբակալությունից (ժամանակավորապես) խուսափելու միջև նախապատվությունը բոլոր դեպքերում պետք է տրվի կյանքի իրավունքին, երբ 2-րդ հոդվածի շրջանակներում հրազենի կիրառումն արգելված է: Այնուհետև՝ 43-րդ հոդվածի շրջանակներում գործի վերաքննության ժամանակ, մեծ պալատը միաձայն հաստատել է այս մոտեցումը *«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի» (Nachova and Others v Bulgaria)* գործի 2005 թ. հուլիսի 6-ի վճռով:

95. Հետևաբար, նաև համաձայն կոնվենցիայի 2(2)(բ) հոդվածի, օրինական ձերբակալություն իրականացնելու օրինական նպատակով մարդկային կյանքը վտանգի ենթարկելը կարող է արդարացված լինել միայն բացարձակ

անհրաժեշտության դեպքում: Դատարանը նկատում է, որ, սկզբունքորեն, նման անհրաժեշտություն չի կարող գոյություն ունենալ, եթե հայտնի է, որ ձերբակալության ենթակա անձը վտանգ չի ներկայացնում կյանքի և շրջապատի համար և չի կասկածվում ծանր հանցագործություն կատարելու մեջ, նույնիսկ եթե մահացու ուժ չգործածելու հետևանքով դասալիքին ձերբակալելու հնարավորությունը կարող է բաց թողնվել...

Նաչովայի գործում սպանությունների ենթադրյալ ռասայական երանգավորման կապակցությամբ տե՛ս ստորև՝ էջ 871 [A14]:

Ապստամբությունը կամ խռովությունը ճնշելու համար օրինականորեն ձեռնարկված գործողություններ (հոդված 2(2)(գ))

1 Դատարանը քննել է այս բացառությունը *«Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի» (Güleç v Turkey)* (1998թ.) գործի միջոցով (28 EHRR 121, Զեկույցներ 1998-IV): Դիմողը հայտնել է, որ իր 15 տարեկան որդին՝ Ահմեդը, սպանվել է անվտանգության ուժերի կողմից, որոնք մոտ 3000 ցուցարարներին ցրելու նպատակով կրակ են բացել նրանց վրա: Ըստ դիմողի՝ Ահմեդը փորձում էր դպրոցից տուն գալ: Կառավարությունը պնդել է, որ Ահմեդը սպանվել է զինված ցուցարարների կողմից, որոնք կրակ են բացել անվտանգության ուժերի ուղղությամբ: Հանձնաժողովը համարել է, որ ցուցարարներին ցրելու նպատակով անվտանգության ուժերը կրակ են բացել կա՛մ դեպի վեր (օդ), կա՛մ դեպի վար (գետին)՝ օգտագործելով ինքնաձիգներ կամ զրահապատ մեքենաներ, և Ահմեդին հարվածել է զենքից արձակված գնդակի բեկորը, որը հետ է թռել գետնից կամ պատից: Հանձնաժողովը հավատ չի ընծայել, որ ինքնաձիգներն օգտագործվել են ցուցարարներին սպանելու համար: Այնուամենայնիվ, երեսունմեկ կողմ և մեկ դեմ ձայներով հանձնաժողովը եզրակացրել է, որ տեղի է ունեցել 2-րդ հոդվածի խախտում, քանի որ ցույցի ժամանակ մարտական զենքի օգտագործմամբ կարգի վերականգնումը չի կարող համարվել համաչափ միջոցառում: Դատարանը միաձայն հաստատել է, որ տեղի է ունեցել 2-րդ հոդվածի խախտում:

70. Սույն գործի նյութերը փաստերի հիմնավորման վերաբերյալ հանձնաժողովի զեկույցի առնչությամբ կասկածի տեղիք չեն տալիս: Ինչպես հանձնաժողովը իրավացիորեն նշել է, ցույցը հեռու է եղել խաղաղ լինելուց: Սա ապացուցվում է քաղաքում շարժական և անշարժ գույքին հասցված վնասով, ինչպես նաև որոշ ժանդարմների մարմնական վնասվածքներով: Հանդիպելով բռնության, որը, ենթադրաբար, եղել է լուրջ բռնություն, անվտանգության ուժերը, որոնց թվաքանակը եղել է անբավարար, պահանջել են ուժեղացում և առնվազն երկու զրահամեքենա: «Կոնդորի» վարորդը՝ ավագ սերժանտ Նազըմ Այհանը, հայտնել է, որ ինքը օդ է կրակել: Մինչդեռ, որոշ վկաներ, որոնց թվում եղել են նաև քաղաքի հայտնի բնակիչներ, ասել են, որ նա կրակել է ամբոխի վրա: Այս պնդումը կառավարությունը կտրականապես հերքել է, սակայն դա հաստատվում է այն փաստով, որ գրեթե բոլոր վիրավոր ցուցարարների վնասվածքները եղել են ոտքերի հատվածում, որոնք անկասկած կարող էին լինել զրահամեքենայի աշտարակից դեպի ներքև հետագծով արձակված գնդակներից ստացված ռիկոշետային վերքեր:

71. Դատարանը, ինչպես նաև հանձնաժողովը, ընդունում են, որ ուժի կիրառումը կարող է արդարացվել 2-րդ հոդվածի 2(գ) կետի շրջանակներում, սակայն, անկասկած, հետապնդվող նպատակի և դրան հասնելու համար կիրառված միջոցների միջև պետք է հավասարակշռություն լինի: Ժանդարմներն օգտագործել են շատ հզոր զենքեր, քանի որ ակնհայտորեն մահակներ, վահաններ, ջրցան հրանոթ, ռետինե գնդակներ կամ արցունքաբեր գազ չեն ունեցել: Նման միջոցների բացակայությունն անընդունելի է և անընդունելի, քանի որ նահանգը …, ինչպես նշել է կառավարությունը, գտնվում է մի տարածաշրջանում, որտեղ արտակարգ դրություն էր հայտարարված, և տվյալ ժամանակահատվածում անկարգությունը սպասելի էր:

72. Ինչ վերաբերում է այն հարցին, որ ցուցարարների մեջ եղել են զինված ահաբեկիչներ, ապա դատարանը նկատում է, որ կառավարությունը փաստեր չի ներկայացրել, որոնք կհիմնավորեին այս պնդումը: Նախ՝ ոչ մի ժանդարմ չի վիրավորվել այնտեղ, որտեղ մահացել է դիմողի որդին, ոչ էլ այլ վայրերում, որտեղով անցել են ցուցարարները: Երկրորդ՝ զենքեր կամ օգտագործված փամփուշտներ, որոնք ենթադրաբար պատկանել են ՔԱԿ-ին, տարածքում չեն հայտնաբերվել: Բացի այդ, Դիարբեքիրի ազգային անվտանգության դատարանին ներկայացված գործերն ընդդեմ միջադեպերից հետո առգրավված տասներեք հրացանների սեփականատերերի, ում հրացաններից կրակված փամփուշտները հավաքել են անվտանգության ուժերը, ավարտվել են արդարացումներով, քանի որ ամբաստանյալները խնդրո առարկա իրադարձություններին չեն մասնակցել.…

73. Ամփոփելով՝ դատարանը եզրակացնում է, որ տվյալ հանգամանքներում ցուցարարներին ցրելու նպատակով օգտագործված ուժը, որը հանգեցրել է Ահմեդ Գյուլեչի մահվան, 2-րդ հոդվածի իմաստով բացարձակ անհրաժեշտություն չի եղել:

Ցավոք, այս գործը պետության ծառայողների կողմից ավելորդ (անհամաչափ) ուժի կիրառման դրամատիկ օրինակ է:

2 Անվտանգության ուժերի կողմից պլաստիկ ոստիկանական գնդակների (սովորաբար անվանում են «պլաստիկ գնդակներ») օգտագործումը հանձնաժողովը համարել է անհամաչափ *«Ստյուարտն ընդդեմ ՄԹ-ի»* գործում (*Stewart v UK*, 39 DR 162 (1984թ.)): Դիմողի տասներեքամյա որդին՝ Բրայանը, մոտ 150 այլ անձանց հետ մասնակցել է 1976 թ. Բելֆաստի Թըրֆ Լոջ տարածքում հսկողություն իրականացնող ութ զինվորների դեմ ուղղված անկարգությանը: Երբ ապստամբները զինվորների ուղղությամբ քարեր և շշեր են նետել, զինվորների հրամանատարը, որն ուներ լեյտենանտի կոչում, հրամայել է արձակել մեկ պլաստիկ գնդակ: Այնուամենայնիվ, սա չի կանգնեցրել ապստամբներին, ուստի սպան հրամայել է ապստամբների առաջնորդի վրա արձակել երկրորդ պլաստիկ գնդակը: Պատասխանատու զինվորը նշան է բռնել առաջնորդի ոտքերի վրա, սակայն այդ ժամանակ նրան դիպել է խռովարարների շարտած իրը: Ստացած հարվածներից զինվորը ջղաձիգ շարժումներ է արել, և նրա պլաստիկ գնդակը դիպել է Բրայանի գլխին: Մի քանի օր անց ստացած վնասվածքներից Բրայանը մահացել է: Նրա մայրը բողոքել է պաշտպանության նախարարությանը, սակայն բարձր դատարանը որոշել է, որ պլաստիկ գնդակների կրակոցը եղել է հանցագործության կանխմանն ուղղված ողջամիտ քայլ: Այնուհետև նա բողոքել է հանձնաժողովին, որ անվտանգության ուժերը թույլ են տվել 2-րդ հոդվածի խախտում, քանի որ նրանք ամբոխին հսկելու համար վտանգավոր զենք են օգտագործել, և Բրայանի վրա կրակելն անհրաժեշտություն չի եղել: 1970-1975 թթ. ընթացքում Հյուսիսային Իռլանդիայի անվտանգության ուժերն արձակել են մոտ 55000 «ռետինե գնդակ»: Դրանց օգտագործման հետևանքով երեք հոգի սպանվել է, և բազմաթիվ մարդիկ լրջորեն վիրավորվել (կուրացել) են: 1973 թվականից անվտանգության ուժերը ռետինե գնդակների փոխարեն սկսել են օգտագործել պլաստիկ գնդակներ, որոնք արձակվում են ավելի դիպուկ հրացաններից: Հանձնաժողովի որոշման ընդունման պահին՝ պլաստիկ գնդակները եղել էին 11 անձի, այդ թվում նաև՝ Բրայանի մահվան պատճառը: Հանձնաժողովն իր որոշումն ընդունել է՝ հիմք ընդունելով ազգային դատարանների բացահայտած փաստերը: Նոր փաստեր հանձնաժողովին չեն ներկայացվել:

Հանձնաժողովը նկատում է, որ Հյուսիսային Իռլանդիայում պլաստիկ գնդակները շատ վիճաբանությունների տեղիք են տվել, և դա վտանգավոր զենք է, որը կարող է պատճառել լուրջ վնասվածքներ և մահ, մանավանդ եթե դիպչում է գլխին: Այնուամենայնիվ, զոհերի վերաբերյալ կողմերի ներկայացրած տեղեկությունները՝ համեմատած արձակված պլաստիկ փամփուշտների քանակի հետ, ցույց է տալիս, որ զենքը նվազ վտանգավոր է, քան ներկայացվում է:

Հանձնաժողովը նշում է, որ զինվորների խումբը առճակատել է թշնամաբար տրամադրված և գազազած 150 հոգանոց ամբոխի հետ, որի մեջ մտնող անձինք քարերով և այլ առարկաներով գրոհել են նրանց վրա, և զինվորի նպատակակետը խախտվել է գնդակն արձակելու պահին, երբ նրան դիպել են մի քանի առարկաներ:

Հանձնաժողովի կարծիքով, հաշվի առնելով վերոհիշյալ հարակից հանգամանքները, որոնք նշված են վերը, Բրայան Ստյուարտի մահը առաջացել է ուժի կիրառումից, որը «բացարձակ անհրաժեշտություն» էր «օրինականորեն ձեռնարկված գործողության ժամանակ խռովությունը ցրելու համար» (պարբ. 28-30):

Այդ իսկ հիմքերով հանձնաժողովը հայտարարել է, որ դիմումն անընդունելի է: Գործը նաև չկանխամտածված սպանության օրինակ է, որը գնահատվել է հանձնաժողովի կողմից 2-րդ հոդվածի շրջանակներում:

5 ՀՈԴՎԱԾ 3 ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԱՐԳԵԼՔ

Դատարանի ընդհանուր մոտեցումը

«Իռլանդիան ընդդեմ ՄԹ-ի» (Ireland v UK) A.25 (1978) 2 EHRR 25
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

1921 թ. Իռլանդիա պետության ստեղծումից հետո հյուսիսում գտնվող վեց կոմսությունները նախընտրեցին մնալ Միացյալ Թագավորության կազմում: Դրանք կազմավորեցին Հյուսիսային Իռլանդիան, որը մինչև 1972 թ. ուներ առանձին խորհրդարան (համաձայն սահմանադրության՝ գտնվում էր Վեստմինստերյան խորհրդարանի իրավասության տակ) և առանձին կառավարություն: Դատարանի խոսքով.

Հյուսիսային Իռլանդիան միատարր հասարակություն չէ: Այն բաղկացած է երկու առանձին համայնքներից, որոնք բաժանված են խոր և տևական քշնամությամբ: Համայնքներից մեկը տարբեր կերպ է անվանվում՝ «բողոքական», «յունիոնիստ» կամ «լոյալիստ», իսկ մյուսը՝ ընդհանուր առմամբ «կաթոլիկ», «հանրապետական» կամ «ազգայնական»: Մեկուկեսմիլիոնանոց ազգաբնակչության մոտ երկու երրորդը պատկանում է բողոքական համայնքին, մնացած մեկ երրորդը՝ կաթոլիկ համայնքին: Հիմնական խումբը ծագում է բողոքական վերաբնակիչներից, որոնք Բրիտանիայից Հյուսիսային Իռլանդիա են գաղթել XVII դարում: Այժմ արդեն ավանդական դարձած հակամարտությունը հիմնված է թե՛ կրոնական, թե՛ սոցիալական, տնտեսական և քաղաքական տարբերությունների վրա: Մասնավորապես, բողոքական համայնքը մշտապես դեմ է եղել Միացյալ Թագավորությունից անկախ միավորված և անկախ Իռլանդիայի գաղափարին, մինչդեռ կաթոլիկ համայնքը ավանդաբար աջակցել է դրան (պարբ. 15):

Սկսած 1963 թվականից՝ «քաղաքացիական իրավունքների» արշավը, որը պահանջում էր վերջ դնել պետական բնակարանների տրամադրմանը, տեղական իշխանություններում պաշտոնների նշանակման ժամանակ կաթոլիկների դեմ խտրականության դրսևորումներին և ընտրական սահմանների նենգափոխումներին, սկսեց թափ հավաքել Հյուսիսային Իռլանդիայում: 1968 թվականից սկսեցին արշավը պաշտպանող երթեր, որոնց մի մասն ավարտվել է անկարգություններով: 1968 թ. Հյուսիսային Իռլանդիայի կառավարությունը հայտարարել է բարեփոխման ծրագիր, որի նպատակն էր անդրադառնալ փոքրամասնություն կազմող համայնքի խնդիրներին: Այնուամենայնիվ, բողոքի ցույցերը շարունակվել են՝ վերաճելով նահանգում հանրային անկարգությունների: 1969 թ. գարնանը Հյուսիսային Իռլանդիայի հանրային ծառայությունների համակարգերում գործարկվել են պայթուցիկ սարքեր (ամենայն հավանականությամբ, լոյալիստ ահաբեկիչների ձեռքով), և բրիտանական զորքերն ուղարկվել են նահանգ: Այդ նույն ժամանակ Իռլանդական հանրապետական բանակը (ԻՀԲ), որը «ռազմականացված ընդհատակյա կազմակերպություն էր, գաղտնի ակտիվացրել է իր անդամներին: 1970 թ. ԻՀԲ-ն Հյուսիսային Իռլանդիայում սկսել է ահաբեկչական գործողությունների արշավ՝ պայթեցնելով շենքեր և գրոհելով անվտանգության ուժերի վրա: Այդ նույն ժամանակ լոյալիստ ահաբեկիչները կաթոլիկների սպանություններ են կատարել և ռմբակոծել նրանց շենքերը: Ահաբեկչական բռնությունն իր գագաթնակետին է հասել 1971 թ.: Հիմնականում միջադեպերի հրահրողը եղել է ԻՀԲ-ն: Հարցը ՄԹ կառավարության հետ քննարկելուց հետո՝ 1971 թ. օգոստոսին, Հյուսիսային Իռլանդիայի կառավարությունը նախաձեռնել է կալանքի և քաղաքական բանտարկու-

թյունների արտադատական գործողություններ՝ փորձելով նվազեցնել ահաբեկչական բռնության ծավալը: Իշխանություններն այս միջոցառումները ձեռնարկել են, քանի որ հավատացած են եղել, որ (1) սովորական քրեական արդարադատության համակարգն անզոր է զսպելու ԻՀԲ ահաբեկչությունը, (2) հասարակության վախի պատճառով ԻՀԲ ահաբեկիչների նկատմամբ մեղադրանքների դատական կարգով հաստատումը անհնարին է, և (3) Իռլանդիայի Հանրապետության հետ սահմանը հեշտացնում է ահաբեկիչների փախուստը մեկ դատական համակարգից մյուսը: Մարդկանց արտադատական կարգով քաղաքական կալանքի տակ վերցնելու գործողություններ սկսելուց մի քանի շաբաթ առաջ անվտանգության ուժերը պատրաստել են ԻՀԲ ներգրավվածության կամ ԻՀԲ ահաբեկչության մասին տեղեկություններ ունենալու մեջ կասկածվող անձանց ցուցակներ:

1971 թվականի օգոստոսի 9-ին՝ երկուշաբթի, առավոտյան ժամը 4-ից բանակը ոստիկանության աշխատակիցների հետ միասին (որոնք երբեմն նաև որպես ուղեկցորդ են ծառայել) սկսել է «Դեմետրիուս» գործողությունը, որի նպատակն է եղել ձերբակալել վերջնական ցուցակների մեջ ընդգրկված 452 անձանց: Հատուկ ուժերի կանոնակարգերի կիրառմամբ ձերբակալվել է 350 անձ: Ձերբակալված անձինք տեղավորվել են տարածքային երեք կալանատեղիներից որևէ մեկում (Լոնդոնդերրի կոմսությունում գտնվող «Մալլիգան Ուիքենդ» ուսումնական կենտրոնում, Դաուն կոմսությունում գտնվող «Քալլիքինդեր Ուիքենդ» ուսումնական կենտրոնում և Բելֆաստի «Գլդրդվուդ Փարք» տարածքային բանակային կենտրոնում), որոնք եղել են կազմ և պատրաստ 48 ժամ շարունակ ձերբակալվածներին ընդունելու համար: Բոլոր ձերբակալվածներին հարցաքննել են Օլսթերի թագավորական ոստիկանության (ՕԹՈ) աշխատակիցները: 48 ժամվա ընթացքում 104 ձերբակալված ազատ է արձակվել: Այն անձինք, որոնք ենթակա են եղել կալանքի տակ պահվելու, ուղարկվել են «Մեյդսթոուն» բանտային նավ կամ «Քրամլին Ռոուդի» բանտ. երկուսն էլ գտնվում են Բելֆաստում: Նախքան կալանքի տակ վերցվելը 12 անձ տեղափոխվել է մեկ կամ մեկից ավելի չբացահայտված կենտրոններ՝ «խորքային հարցաքննության» ենթարկվելու նպատակով: Սա տևել է մի քանի օր (պարբ. 39):

Այնուհետև արտադատական կարգով կալանքի վերցված և հարցաքննված անձինք պահվել են Փելես զորանոցում (Հոլիվուդ, Դաունի կոմսություն), Գուգում (Արմայի կոմսություն), Գլդրդվուդ փարքում և Բելիքելիում (Լոնդոնդերրիի կոմսություն): Քաղաքական կալանքն առաջացրել է ավելի լուրջ բռնկումներ և տեղիք տվել ավելի մեծ թափով ահաբեկչական գործողությունների: Անվտանգության իրավիճակի վատթարացման պատճառով 1972 թ. մարտին Միացյալ Թագավորության կառավարությունը Հյուսիսային Իռլանդիայում հաստատել է ուղղակի կառավարում. Հյուսիսային Իռլանդիայի խորհրդարանն ուղարկվել է արձակուրդ, իսկ գործադիր իշխանությունը՝ փոխանցվել Հյուսիսային Իռլանդիայի գծով պետական քարտուղարին: Ուղղակի կառավարության առաջին քայլերից մեկը 250 կալանավորների ազատ արձակելն էր: Լոյալիստների ահաբեկչությունը, այնուամենայնիվ, սկսել է թափ հավաքել՝ ձեռք բերելով աղանդավորական սպանությունների բնույթ: Առաջին լոյալիստները քաղաքական կալանքի տակ են վերցվել 1973 թ.: Հյուսիսային Իռլանդիայում քաղաքական բարեփոխումները հաջողություն չեն ունեցել, և 1975 թ. վերջին արտադատական կալանավորներն ազատ են արձակվել: 1975 թ. մարտին, համաձայն ՄԹ կառավարության, Հյուսիսային Իռլանդիայում ահաբեկչության և հասարակական անկարգությունների պատճառով սպանվել է 1100 մարդ, վիրավորվել՝ 11500 մարդ, և շարքից դուրս է եկել 140 միլիոն ֆունտ ստեռլինգ արժողությամբ գույք:

1971 թ. դեկտեմբերին Իռլանդիայի կառավարությունը ՄԹ-ի դեմ բողոք է ներկայացրել հանձնաժողովին՝ վկայակոչելով կոնվենցիայի մի շարք դրույթների խախտումներ, որոնք վերաբերել են նաև Հյուսիսային Իռլանդիայում արտադատական լիազորությունների շրջանակներում կալանավորված անձանց նկատմամբ դրսևորված վերաբերմունքին: 228 գործի կապակցությամբ դիմող կառավարությունը ներկայացրել է 1971-1974 թթ. միջադեպերին վերաբերող գրավոր փաստեր: Հանձնաժողովը մանրամասն ուսումնասիրել է Իռլանդիայի կառավարության ընտրած տասնվեց «օրինակելի» գործերը: Հանձնաժողովը հաշվի է առել նաև 41 այլ գործ: Դիմող կառավարությանը, մասնավորապես, հուզում էր 1971 թ. չբացահատված կենտրոններում տասնչորս անձանց նկատմամբ «խորքային հարցաքննության» մեթոդի կիրառությունը: «Հինգ մեթոդները» բաղկացած են եղել համատեղ կիրառված հոգեկան զրկանքներ պատճառող հետևյալ միջոցներից.

(ա) «պատի տակ շարում». կալանավորներին ստիպել են մի քանի ժամ շարունակ գտնվել «սթրեսային վիճակում», երբ, ըստ այդ վիճակում գտնված անձանց, նրանց «ծգված դիրքով կանգնեցրել են պատի տակ՝ ստիպելով, որ մատները

պահեն գլխից վերև պատին սեղմած, սրունքները՝ միմյանցից հեռացված և կրունկները վեր, ինչի հետևանքով նրանք, կանգնած ոտնաթաթերի վրա, մարմնի ողջ ծանրությունը կրել են մատների վրա»:

(բ) «վեղարավորում». կալանավորների գլխին հագցրել են սև կամ մուգ կապույտ տոպրակներ, որոնք, առնվազն ամենասկզբում, հանվել են միայն հարցաքննության ժամանակ:

(գ) «աղմուկի տակ պահում». նախքան հարցաքննության տանելը կալանավորներին պահել են մի սենյակում, որտեղ միշտ տիրել է բարձր և սուր աղմուկ:

(դ) «նախքան հարցաքննությունը քնից զրկում». կալանավորներին թույլ չեն տվել քնել:

(ե) «ուտելիքի և ջրի սահմանափակում». կենտրոնում գտնվելու ընթացքում կալանավորներին նախքան հարցաքննության տանելը չափազանց քիչ ուտելիք են տվել (պարբ. 96):

Դիմող կառավարությունը մի շարք հայտարարություններ է արել, որոնք վերաբերում են կալանավորների նկատմամբ անվտանգության ուժերի անդամների գործադրած բռնությանը: 1976 թ. փետրվարյան զեկույցում հանձնաժողովը միաձայն եզրակացրել է, որ, ի թիվս այլոց, իրեն ներկայացված գործերում այս հինգ միջոցների միաժամանակյա կիրառումը եղել է անմարդկային վերաբերմունքի և խոշտանգման երևույթ, որով և հակասել է 3-րդ հոդվածին:

ԻՆՉ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՕՐԵՆՔԻՆ

….

I. 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՄԱՍԻՆ

150. 3-րդ հոդվածը ամրագրում է, որ «ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Ա. ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

151. 3-րդ հոդվածի վկայակոչվող խախտումների վերաբերյալ 1976 թ. հոկտեմբերի 26-ի ընդհանուր միջնորդության մեջ և 1977 թ. փետրվարի նիստի ժամանակ Միացյալ Թագավորության կառավարությունը բարձրացրել է երկու նախնական հարց: Առաջինը վերաբերում է այն խախտումներին, որոնք նա այլևս չի վիճարկում, երկրորդը՝ այն խախտումներին, որոնք վիճարկում է:

1. Նախնական հարցեր 3-րդ հոդվածի չվիճարկվող խախտումների վերաբերյալ

152. Միացյալ Թագավորության կառավարությունը չի վիճարկում 3-րդ հոդվածի՝ հանձնաժողովի բացահայտած խախտումները, ...ոչ էլ, մի բան, որ կասկածից վեր է, դատարանի՝ այդ խախտումներն ուսումնասիրելու իրավասությունը: Այնուամենայնիվ, հիմք ընդունելով, ի թիվս այլոց, Միջազգային արդարադատության դատարանի նախադեպային իրավունքը (*Հյուսիսային կամերունցիների* գործը, 1963 թ. դեկտեմբերի 2-ի վճիռ և *Միջուկային փորձարկումների* գործերը, 1974 թ. դեկտեմբերի 20-ի վճիռ), նա համարում է, որ Եվրոպական դատարանը արդարադատություն իրականացնելուց հետ կանգնելու իրավասություն ունի, եթե դիմումի հիմքում ընկած նպատակը բավարարվել է, կամ գործի հատկանիշների վերաբերյալ կայացված որոշումը զուրկ է լինելու որևէ նպատակից: Նրա կարծիքով՝ սա սույն գործին բնորոշ իրավիճակն է: Կառավարությունը պնդում է՝ բացի այն, որ այս եզրակացությունները չեն վիճարկվում, դրանք նաև լայնորեն լուսաբանվել են և կոնվենցիայի մեկնաբանության կամ կիրառության խնդիրներ չեն առաջացնում, որպեսզի դատարանից պահանջվեր որոշում կայացնել դրանց վերաբերյալ: Ավելին, կառավարության համար այդ եզրակացությունների բովանդակությունն այժմ արդեն անցած պատմություն է, քանի որ Միացյալ Թագավորությունը հրաժարվել է հինգ մեթոդներից (1972 թ.), պաշտոնական և բացարձակ պարտավորություն է ստանձնել այլևս չկիրառել դրանք (8 փետրվարի 1977 թ.) և ձեռնարկել է այլ քայլեր հանձնաժողովի հայտնաբերած խախտումները շտկելու, պատժելու և կանխելու ուղղությամբ:

Այս բացատրությունը վիճարկվում է դիմող կառավարության կողմից: Ընդհանուր առմամբ, այն չի ընդունվում նաև հանձնաժողովի պատվիրակների կողմից: Նրանք հայտնել են, այնուամենայնիվ, որ իրենց եզրակացություններում չեն անդրադառնալու այն հարցին, թե արդյոք հինգ մեթոդները չկիրառելու վերաբերյալ նշված պարտավորության ստանձնումով իմաստազրկվե՞լ է բողոքը:

153. 1977 թ. փետրվարի 8-ին հրավիրված նիստի ընթացքում դատարանը պաշտոնապես արձանագրում է, որ այդ պետության անունից Միացյալ Թագավորության գլխավոր իրավախորհրդատուն դատարանի առջև ստանձնել է հետևյալ պարտավորությունը.

«Միացյալ Թագավորության կառավարությունը, մանրամասն քննելով «հինգ մեթոդների» կիրառության հարցը և հատուկ ուշադրություն դարձնելով կոնվենցիայի 3-րդ հոդվածին, այս պահին անվերապահ պարտավորություն է ստանձնում որևիցե հանգամանքներում հարցաքննության օժանդակելու նպատակով կրկին չկիրառել «հինգ մեթոդները»:

Դատարանը նաև արձանագրում է, որ Միացյալ Թագավորությունը մի շարք քայլեր է ձեռնարկել բողոքում նշված միջադեպերի կրկնությունը կանխելու և դրանց հետևանքները շտկելու ուղղությամբ: Օրինակ՝ բանակին և ոստիկանությանը հրահանգներ և ցուցումներ են տրվել ձերբակալության, հարցաքննության և անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ համապատասխան վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ: Բարելավվել է բողոքների ուսումնասիրության կարգը: Հարցումներ կատարելու համար նշանակվել են հանձնաժողովներ, և մի շարք դեպքերում վճարվել է կամ առաջարկվել է վճարել փոխհատուցում…

154. Այնուամենայնիվ, դատարանը համարում է, որ կոնվենցիայի համակարգում իրեն վերապահված պատասխանատվությունը վերաբերում է նաև 3-րդ հոդվածի խախտումների մասին չվիճարկվող բողոքների վերաբերյալ կարծիք հայտնելուն: Փաստորեն, դատարանի վճիռների նպատակը միայն դատարանին ներկայացված գործերի վերաբերյալ որոշումներ կայացնելը չէ, այլ, ավելի ընդհանուր գծերով, կոնվենցիայով նախանշված կանոնները լուսաբանելը, պաշտպանելը և զարգացնելը, ինչն իր հերթին նպաստում է պայմանավորվող պետությունների ստանձնած պարտավորությունների կատարմանը (19-րդ հոդված):

Բացի այդ, դատարանի սույն եզրակացությունը հիմնավորվում է դատարանի կանոնակարգի 47-րդ կանոնի 3-րդ կետով: Եթե դատարանը կարող է շարունակել գործի քննությունը և որոշում կայացնել դրա վերաբերյալ, նույնիսկ «եթե ստացել է դադարեցման, բարեկամական կարգավորման մասին ծանուցում» կամ «խնդրի լուծմանը վերաբերող այլ նման փաստեր», նա ipso facto իրավունք ունի հետևելու աշխատանքի այդպիսի կարգի, երբ այդ կանոնի կիրառման պայմաններն առկա չեն:

155. Հետևաբար, չի կարելի ասել, որ սույն գործի այդ մասը, ինչպես նշվում է այդ տեսակետում, նպատակից զուրկ է: Դատարանը կարծում է, որ անկախ պատասխանող պետության ստանձնած պարտավորություններից, պետք է որոշում կայացնի դրանց վերաբերյալ….

Բ. ԱՊԱՑՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԵՐ

160. Որպեսզի դատարանը բավարարվի այն կապակցությամբ, որ Հյուսիսային Իռլանդիայում տեղի են ունեցել գործողություններ, որոնք հակասում են 3-րդ հոդվածին, չի հիմնվելու այն հայեցակարգի վրա, որ ապացույցների ծանրությունը պետք է ընկնի մեկ կամ մյուս կառավարության վրա: Իրեն ներկայացված գործերում դատարանը քննարկում է իր ձեռքի տակ եղած բոլոր նյութերը՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք ներկայացրել են հանձնաժողովը, կողմե՞րը, թե՞ այլ աղբյուրներից են, և անհրաժեշտության դեպքում նյութեր է ձեռք է բերում proprio motu (սեփական նախաձեռնությամբ):

161. Հանձնաժողովի եզրակացությունները հիմնականում հիմնվում են հարյուր վկաների ցուցմունքների և իր պահանջով կառավարության ընտրած տասնվեց «օրինակելի» գործերի վերաբերյալ բժշկական եզրակացությունների վրա: Հանձնաժողովը նաև նվազ չափով հիմնվել է *41 գործերի* վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի և գրավոր մեկնաբանությունների ու բազմաթիվ այլ «հիշատակելի գործերի» վրա (տե՛ս վերը՝ 93-րդ պարբ.): Ինչպես և *Հունական գործի* դեպքում (*Հունաստանի գործ* (Greek case), Կոնվենցիայի տարեգիրք, 1969 թ., էջ 196, պարբ. 30): Իր կողմից ձեռք բերված նյութերը գնահատելիս հանձնաժողովը որպես ապացույցի չափանիշ է ընտրել ապացույցի «ողջամիտ կասկածից վեր լինելու» չափանիշը:

Իռլանդիայի կառավարությունը համարում է, որ տվյալ վարույթի նպատակների համար սա չափից ավելի խիստ չափորոշիչ է: Նրանք կարծում են, որ կիրառման համակարգը կարող է անարդյունավետ լինել, եթե prima facie (առաջին հայացքից) 3-րդ հոդվածի խախտման դեպք է նկատվում, որի բացահայտման վտանգը չի զգացել այն պետությունը, որը չի նպաստում ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ հանձնաժողովի կատարած աշխատանքներին, մի բան, որ վերջին հաշվով նրա պարտականությունն է (կոնվենցիայի 28(ա) հոդված, (ա) ենթակետ): Նրանց բացատրությունների համաձայն՝ սա համապատասխանում է Միացյալ Թագավորության ընդունած դիրքորոշմանը:

Պատասխանող կառավարությունը համաձայն չէ այս մոտեցմանը և խնդրում է դատարանին հետևել այն գործելակերպին, որին հետևել է հանձնաժողովը: Դատարանը համաձայն է հանձնաժողովի մոտեցմանը այն հարցի կապակցությամբ, թե որ փաստերի հիման վրա պետք է որոշվի՝ տեղի՞ է ունեցել 3-րդ հոդվածի խախտում, թե՞ ոչ: Այս փաստերը գնահատելու համար դատարանը որդեգրում է «ողջամիտ կասկածից վեր» ապացույցի չափանիշը, սակայն ավելացնում է, որ այդ ապացույցը կարող է բխել բավականաչափ ուժեղ, հստակ և համադրվող եզրակացություններից: Այս համատեքստում ապացույցներ ձեռք բերելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել կողմերի վարքագծի վրա:

Գ. ԳՈՐԾԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԵՐ

162. Ինչպես շեշտել է հանճնաժողովը, բռնությունը պետք է ուժգնության նվազագույն մակարդակ ունենա, որպեսզի որակվի որպես այդպիսին 3-րդ հոդվածի շրջանակներում: Այս նվազագույն մակարդակի գնահատումը, բնականաբար, հարաբերական է և կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպես, օրինակ՝ նման վերաբերմունքի տևողությունից, դրա ֆիզիկական և հոգեկան հետևանքներից և, որոշ դեպքերում, զոհի սեռից, տարիքից, առողջական վիճակից և այլն:

163. Անկախ զոհի վարքագծից, կոնվենցիան խստիվ արգելում է խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը: Ի տարբերություն կոնվենցիայի թիվ 1 և թիվ 4 արձանագրությունների նյութական դրույթների՝ 3-րդ հոդվածը բացառություններ չի նախատեսում և համաձայն 15-րդ հոդվածի 2-րդ կետի, դրա շեղումներ չեն կարող լինել նույնիսկ ազգի կյանքին սպառնացող ներպետական արտակարգ դրության ժամանակ:

164. Դատարանի վարույթում գտնվող գործին վերաբերող միակ համապատասխան հայեցակարգերը «խոշտանգումը» և «անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքն» են՝ առանց «անմարդկային կամ նվաստացնող պատժի»:

1. Չբացահայտված հարցաքննության կենտրոնը կամ կենտրոնները

(ա) »Հինգ մեթոդները«

165.…Հանճնաժողովի գնահատմամբ՝ այդ փաստերը ոչ միայն անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք են ներկայացրել, այլև՝ խոշտանգում: Դիմող կառավարությունը խնդրում է հաստատել այս կարծիքը, որը դատարանում չի վիճարկվում պատասխանող պետության կողմից:

166. 1971 թ. ոստիկանությունը տասնչորս անձի նկատմամբ օգտագործել է «հինգ մեթոդները»…. Չնայած դրանց համար որևէ պաշտոնական փաստաթղթում գրավոր թույլտվություն չի եղել, Անգլիական հետախուզական կենտրոնը 1971 թ. ապրիլի սեմինարի ժամանակ հինգ մեթոդները բանավոր ուսուցանել է ՕԹՈ-ի անդամներին: Համապատասխանաբար, նման պրակտիկա եղել է:

167. Հինգ մեթոդները կիրառվել են միաժամանակ, հատուկ մտադրությամբ և մի քանի ժամ անընդմեջ: Դրանք պատճառել են, եթե ոչ իրական մարմնական վնասվածք, ապա առնվազն ուժգին ֆիզիկական և հոգեկան տառապանք այն անձանց, որոնք ենթարկվել են դրանց, և հարցաքննության ժամանակ հանգեցրել սուր հոգեկան խանգարումների: Հետևաբար, 3-րդ հոդվածի համաձայն, դրանք դասվում են անմարդկային վերաբերմունքի շարքը: Այդ մեթոդները նաև նվաստացնող էին, քանի որ դրանք զոհերի մեջ առաջացնում էին վախի, տառապանքի և ստորակարգության զգացում՝ ստորացնելով և նսեմացնելով նրանց և հավանաբար կոտրելով նրանց ֆիզիկական կամ բարոյական դիմադրությունը:

Այս երկու կետերի առնչությամբ դատարանը պաշտպանում է հանճնաժողովի կարծիքը:

Որպեսզի որոշի՝ արդյոք այս հինգ մեթոդները պե՞տք է որակվեն որպես խոշտանգում, դատարանը պետք է ուշադրություն դարձնի 3-րդ հոդվածում ամրագրված այս գաղափարի և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի տարբերությանը:

Դատարանի կարծիքով՝ այս տարբերությունը սկզբունքորեն առաջանում է հասցված տառապանքի ուժգնությունից:

Դատարանը, փաստորեն, համարում է, որ մի կողմից՝ գոյություն ունի բռնություն, որը չի մտնում կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակների մեջ, սակայն պետք է դատապարտվի ինչպես բարոյական հիմքերով, այնպես էլ, շատ դեպքերում, պայմանագրի կողմ հանդիսացող պետությունների ազգային օրենքով: Սակայն, մյուս կողմից, մտադրություն է եղել կոնվենցիայում տարբերակել «խոշտանգումը» և «անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքը»՝ այդ հասկացություններից առաջինին վերագրելով հատուկ խարան ցույց տալու համար, որ դրսևորվել է անմարդկային վերաբերմունք, որը պատճառել է շատ լուրջ և դաժան տառապանք:

Բացի այդ, թվում է, որ սա ընդհանուր առմամբ, այն միտքն է, որն ընկած է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1975 թ. դեկտեմբերի 9-ին ընդունած թիվ 3452 (XXX) բանաձևի 1-ին հոդվածի հիմքում, համաձայն որի՝

> «Խոշտանգումը դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի սաստիկ և կանխամտածված ձև է»:

Թեպետ որևէ կասկած չկա, որ միաժամանակ կիրառված հինգ մեթոդները հավասարազոր են եղել անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի, թեպետ դրանց նպատակը եղել է խոստովանությունների, ուրիշների անունների կամ տեղեկությունների կորզումը, թեպետ դրանք կիրառվել են հետևողականորեն, չեն պատճառել այն առանձնահատուկ ուժգնության և դաժանության տառապանքը, որը ենթադրվում է և հասկացվում «խոշտանգում» բառով:

168. Դատարանը եզրակացնում է, որ հինգ մեթոդների կիրառությունը հավասարազոր է եղել անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի՝ ի խախտումն 3-րդ հոդվածի:

(Բ) Նշվել է, որ հինգ մեթոդները կիրառվել են բռնության գործադրմամբ

…

2. Պալատական զորանոցներ (Palace Barracks)

173. Հանճնաժողովը հանգել է այն տեսակետին, որ ուսումնասիրված իրը «օրինակելի» գործերից յոթի դեպքում պալատական զորանոցներում 1971 թ. սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին դրսևորվել է անմարդկային վերաբերմունք... Հանճնաժողովը համարել է, որ այս դեպքերը, մի շարք այլ նշանների հետ միասին, ցույց են տվել, որ այս զորանոցներում 1971 թ. աշնանը ՕԹՌ-ի անդամները կիրառել են ազատազրկված անձանց հարցաքննության այնպիսի գործելաոճ, որն անմարդկային վերաբերմունք է եղել: Բրիտանիայի կառավարությունը չի վիճարկում այս եզրակացությունները:

Իռլանդիայի կառավարությունը խնդրում է դատարանից հաստատել դրանք, սակայն նաև մի շարք կողմերով լրացումներ կատարել:

(Ա) Աշուն 1971 թվական

174. Քանի որ հանճնաժողովը համարել է, որ անմարդկային վերաբերմունքի գործելակերպ գոյություն է ունեցել 1971 թվականի աշնանը, ...դատարանին ներկայացված փաստերը ցույց են տալիս, որ այդ ժամանակ պալատական զորանոցներում կալանքի տակ պահվող բավական մեծ թվով մարդիկ ենթարկվել են բռնության ՕԹՌ-ի անդամների կողմից: Այդ բռնությունն ունեցել է կրկնվող բնույթ, կատարվել է նույն տեղում, նույն ձևերով և չի սահմանափակվել զուտ առանձին դեպքերով. այն փաստորեն գործելակերպ է եղել: Նաև՝ ուժգին (երբեմն զգալի) տառապանքի և ֆիզիկական վնասվածքների գործելակերպ: Այսպիսով, սա վերագրվել է անմարդկային վերաբերմունքի դասին:

Համաձայն դիմող կառավարության՝ այս բռնությունը որոշ դեպքերում պետք է դասակարգվի որպես խոշտանգում:

Հիմք ընդունելով իրեն ներկայացված փաստերը՝ դատարանը համաձայն չէ այս տեսակետին: Պետք է նշել, որ այն գործողությունները, որոնց մասին բողոք է ներկայացվել, հիմնականում տեղի են ունեցել հարցաքննությունների ժամանակ և դրանով իսկ ուղղված են եղել խոստովանություններ, այլ անձանց անուններ կամ տեղեկություններ կորզելուն: Սակայն տառապանքի ուժգնությունը, որ նրանք կարող էին պատճառել, չի եղել այն մակարդակով, որը համապատասխանում է խոշտանգման սահմանմանը, ինչպես որ դա ընկալվում է դատարանի կողմից (տե՛ս վերը՝ պարբ. 167)...

3. Այլ վայրեր

178. Ըստ դիմող կառավարության՝ 1971-1974 թթ. Հյուսիսային Իռլանդիայում գոյություն է ունեցել 3-րդ հոդվածի խախտման գործելակերպ, օրինակ՝ «Գլըդվուդ Փարքում» և «Բալլիքինլերում»: Պատասխանող կառավարությունը հերքում է այս պնդումը:

Հանճնաժողովը կարծիք է հայտնել, որ T 16-ը և T 7-ը այնպիսի վերաբերմունքի զոհեր են, որը եղել է թե՛ անմարդկային, թե՛ նվաստացնող, իսկ T 11-ի նկատմամբ վերաբերմունքը եղել է անմարդկային. T 16-ի նկատմամբ՝ 1971 թ. օգոստոսի 13-ին «Գլըդվուդ Փարքում», T 7-ի նկատմամբ՝ 1971 թ. հոկտեմբերի 28-ին Բելֆաստի փողոցում և T 11-ի նկատմամբ՝ 1971 թ. դեկտեմբերի 20-ին Ալբերտ փողոցի զորանոցներում, նույնպես Բելֆաստում:

Այնուամենայնիվ, հանճնաժողովը համարել է, որ այդ գործերի, ներառյալ «Գլըդվուդ Փարքի» ընդհանուր պայմանների կապակցությամբ 3-րդ հոդվածի խախտումները չեն հիմնավորվել, ...և, բացի այդ, Բալլիքինլերում կալանքի պայմանները չեն բացահայտել այդ հոդվածի խախտում (նույն տեղում):

(Ա) Բալլիքինլեր

. . .

180. ՕԹՌ-ն՝ բանակի օժանդակությամբ, 1971 թ. օգոստոսին մի քանի օր շարունակ Բալլիքինլերն օգտագործել է որպես կալանքի և հարցաքննության կենտրոն: «Դեմետրիուս» գործողության ժամանակ ձերբակալված մի քանի տասնյակ մարդ պահվել է ծայրահեղ անհարմար պայմաններում և հարկադրաբար կատարել հուսահատեցնող և ցավ պատճառող գործողություններ:

Այսպիսով, սա ավելի շուտ եղել է գործելաոճ, քան իրար հետ կապ չունեցող առանձին միջադեպեր: Դատարանը հաստատել է սա *Մուրի* գործի վերաբերյալ 1972 թ. փետրվարի 17-ի վճռով:

181. Դատարանը պետք է որոշի՝ արդյոք այս գործելաոճը եղե՞լ է 3-րդ հոդվածի խախտում: Հստակ է, որ խոշտանգման կամ անմարդկային վերաբերմունքի մասին խոսք լինել չի կարող, սակայն հարց է առաջանում՝ արդյոք չի՞ եղել նվաստացնող վերաբերմունք: Արմայի կոմսության դատարանը պարոն Մուրին նշանակել է 300 եվրո վնասի փոխհատուցում. դա այն առավելագույն գումարն է, որը նշանակելու իրավասություն ունի այդ դատարանը: Այս փաստը ցույց է տալիս, որ պարոն Մուրի բողոքի մեջ նշված հանգամանքները, ամեն ինչից զատ, հակասել են Միացյալ Թագավորությունում գործող օրենքին: Բացի այդ, այն վերաբերմունքը, որը դրսևորվել է Բալլիքինլերի բանտարկյալների նկատմամբ, 1972 թ. փետրվարի 18-ի վճռում բնորոշվել է որպես ոչ միայն անօրինական, այլև կոպիտ: Այնուամենայնիվ,

վճռում մանրամասն չի քննարկվում այդ վերաբերմունքը: Հիմնականում մեջբերվում են վկաների ներկայացրած փաստերը, և ցույց է տրվում, որ դատավորը մերժել է պաշտպանության կողմի ներկայացրածները: Քոմփթոնի կոմիտեն, իր հերթին, նկատել է, որ չնայած այն գործողությունները, որոնք կալանավորները հարկադրաբար կատարել են, որոշ չափով հարկադրական են եղել և պետք է որ զրկանքներ պատճառեին, դրանք ավելի շուտ ճիշտ դատողության բացակայության, քան ցավ պատճառելու կամ ստորացնելու մտադրության հետևանք են:

Ամփոփենք. ՕԹՈ-ն և բանակը Բալլիքինլերում հետևել են մի գործելակերպի, որն անպատվաբեր է և դատապարտելի, սակայն դատարանը չի համարում, որ նրանք թույլ են տվել 3-րդ հոդվածի խախտում:

(Բ) Այլևայլ վայրեր

182. Կան նաև բազմաթիվ այլ վայրեր, որոնց մասին նշել է Իռլանդիայի կառավարությունը…. Դատարանին ներկայացված տեղեկությունները, որոնք վերաբերում են այս վայրերին (օրինակ՝ գործերի մեծ քանակը, որոնց համար բրիտանական իշխանությունները փոխհատուցում են վճարել, անվտանգության ուժերի ներկայացուցիչների նկատմամբ կիրառված բազմաթիվ քրեական և կարգապահական տույժերը), …մատնանշում են, որ Հյուսիսային Իռլանդիայում տեղի են ունեցել 3-րդ հոդվածի առանձին խախտումներ, որոնք շատ ավելին են, քան դատարանի կողմից արդեն նշված խախտումները: Այնուամենայնիվ, հանձնաժողովը չի համարել, որ այս տեղեկությունները …բավարար են 3-րդ հոդվածի խախտում բացահայտելու համար:

Դատարանը համամիտ է այս կարծիքին: Պետք է նշել, որ նրան ներկայացված փաստերը հաստատում են հանձնաժողովի կարծիքը…. Այնուամենայնիվ, սրանք եղել են միջադեպեր, որոնց հաճախականությունը և փոխկապակցվածությունը բավարար չեն գործելակերպ համարվելու համար…. Միացյալ Թագավորության ձեռնարկած կանխարգելիչ միջոցառումները … հատկապես 1972 թ. մարտի 30-ին ուղիղ կառավարում մտցնելուց հետո, առաջին հայացքից թվում են անհավանական առանց 3-րդ հոդվածի առանձին խախտումների կամ առնվազն առանց 3-րդ հոդվածի խախտումով շարունակվող կամ սկսվող գործունեության կամ գործողությունների մտադրության, որոնց առնչությամբ դատարանը չպետք է հատուկ որոշում կայացնի: Բացի այդ, յուրաքանչյուր ոք, ով պնդում է, որ ինքը Հյուսիսային Իռլանդիայում հանդիսացել է 3-րդ հոդվածի խախտման զոհ, իրավունք ունի դիմելու իր համար մատչելի իրավունքի ազգային պաշտպանության միջոցների կիրառմանը (կոնվենցիայի 26-րդ հոդված) և, այնուհետև, եթե կարիք լինի, հանձնաժողովին, որի «առանձին» միջնորդություններ ստանալու իրավասությունը ճանաչում է Միացյալ Թագավորությունը (25-րդ հոդված): Սա, փաստորեն, հաճախ է տեղի ունեցել: Վերջապես, հինգ մեթոդների և պալատական զորանոցների վերաբերյալ արված եզրակացությունները, որոնք ամրագրվել են դատարանի պարտադիր կատարման ենթակա վճռի մեջ, երաշխիք են (հեռու աննշան համարվելուց), որ նախկինում կատարված լուրջ սխալներն այլևս չեն կրկնվելու:

Այս հանգամանքներում կոնվենցիայով պաշտպանվող շահերը չեն ստիպում դատարանին նախաձեռնել երկար հետազոտություններ, որոնք կհետաձգեին դատարանի որոշումը….

185. Եզրափակելով դատարանը չի կարծում, որ խնդրո առարկա վայրերում տեղի են ունեցել 3-րդ հոդվածի խախտումով ընթացող գործողություններ:

4. Իռլանդիայի պահանջը հետագա կարգադրությունների վերաբերյալ

186. 1977 թ. հունիսի 5-ի նամակով դիմող կառավարությունը պահանջել է դատարանից, որ վերջինս կարգադրի պատասխանող կառավարությանը.

— հարցաքննության կամ այլ նպատակով ձեռնպահ մնալ հինգ մեթոդների կրկնական կիրառությունից,

— Միացյալ Թագավորության քրեական օրենքի և այլ համապատասխան կարգապահական օրենքների շրջանակներում գործ հարուցել անվտանգության ուժերի այն անդամների դեմ, ովքեր կատարել են 3-րդ հոդվածին հակասող գործողություններ (որոնց մասին խոսվում է հանձնաժողովի եզրակացություններում) և նրանց դեմ, ովքեր խրախուսել են կամ հանդուրժել նրանց:

Նիստերի ժամանակ դիմող կառավարությունը հանել է առաջին պահանջը, երբ Միացյալ Թագավորության կառավարությունը 1977 թ. փետրվարի 8-ին հանդիսավոր պարտավորություն է ստանձնել… Մյուս կողմից՝ երկրորդ պահանջը մնացել է:

187. Սույն վարույթում դատարանից չի պահանջվում քննարկել՝ արդյոք որոշ հանգամանքներում իր գործառույթների մեջ մտնո՞ւմ է պայմանագրի կողմ հանդիսացող պետությունների հետևանքային կարգադրություններին անդրադառնալը: Տվյալ գործի պարագայում դատարանը համարում է, որ իր կողմից կիրառման ենթակա սանկցիաներն իրավասություն չեն տալիս իրեն ուղղորդելու պետություններից որևէ մեկին սկսել քրեական կամ կարգապահական վարույթ՝ համաձայն իր ազգային օրենքի….

V. 50-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

…

245. Նախագահը, գործելով դատարանի անունից, առաջադրանք է տվել մատենավարին, որ վերջինս հարցնի Իռլանդիայի կառավարության գործակալին «որքան հնարավոր է շուտ, թե արդյոք ճի՞շտ կլինի ենթադրել», մասնավորապես, դիմումի ընդունելիության մասին հանճնաժողովի որոշման որոշ հատվածների և 1977 թ. բաց նիստերի սղագրությունների հիման վրա, «որ [իր] կառավարությունը [չի առաջարկում] դատարանից կոնվենցիայի խախտում գտնելու դեպքում 50-րդ հոդվածի իմաստով արդար բավարարում տալ»: Սա մատենավարն արել է 1977 թ. օգոստոսի 8-ի նամակով: 1977 թ. հոկտեմբերի 14-ին դիմող կառավարության գործակալը ներկայացրել է հետևյալ պատասխանը.

> «Դիմող կառավարությունը, թեպետ որևէ ցանկություն չունի մտնելու դատարանի արդարադատության իրականացման փոփոխության ենթակա (de bene esse) շրջանակների մեջ, իր առջև խնդիր չի դրել որևէ անհատ անձի համար ստանալ արդար փոխհատուցում և չի առաջարկում դատարանին 50-րդ հոդվածի շրջանակներում ապահովել դրամական փոխհատուցման ձևով արդար բավարարում կոնվենցիայի խախտման զոհ հանդիսացող որևէ անձի….»:

246. Դատարանը, համապատասխանաբար, համարում է, որ տվյալ գործի նկատմամբ նպատակահարմար չէ կիրառել 50-րդ հոդվածը:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

I. 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. միաձայն ընդունում է, որ թեպետ 3-րդ հոդվածի որոշ խախտումներ չեն վիճարկվել, դրանց վերաբերյալ, միևնույն է, պետք է վճիռ կայացվի,

2. միաձայն ընդունում է, որ ինքն իրավասություն ունի քննելու 3-րդ հոդվածի ենթադրյալ խախտումներին վերաբերող գործերը՝ ներկայացված դիմող կառավարության կողմից, այնքանով, որքանով դիմող կառավարությունը ներկայացրել է դրանք գործելակերպի առկայությունը հիմնավորելու համար,

3. տասնվեց կողմ և մեկ դեմ ձայներով ընդունում է, որ հինգ մեթոդների կիրառությունը 1971 թ. օգոստոսին և հոկտեմբերին եղել է անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի գործելակերպ, որի կիրառությունը հակասել է 3-րդ հոդվածին,

4. տասներեք կողմ և չորս դեմ ձայներով որոշում է, որ վերոհիշյալ հինգ մեթոդների կիրառությունը 3-րդ հոդվածի իմաստով խոշտանգման գործելակերպ չի ձևավորել,

5. տասնվեց կողմ և մեկ դեմ ձայներով որոշել է, որ հարցաքննության չբացահայտված կենտրոններում դաժան վերաբերմունքի այլ գործելակերպ չի հիմնավորվել,

6. միաձայն որոշում է, որ 1971 թ. պալատական զորանոցներում կիրառվել է անմարդկային վերաբերմունքի գործելակերպ, որը հակասել է 3-րդ հոդվածին,

7. տասնչորս կողմ և երեք դեմ ձայներով որոշում է, որ նշված վերջին գործելակերպը 3-րդ հոդվածի իմաստով խոշտանգում չի եղել,

8. միաձայն որոշում է, որ չի ապացուցվել, որ խնդրո առարկա գործողությունները շարունակվել են 1971 թ. աշնանից հետո,

9. տասնհինգ կողմ և երկու դեմ ձայներով որոշում է, որ այլ վայրերում տեղի չեն ունեցել գործողություններ, որոնք հակասում են 3-րդ հոդվածին,

10. միաձայն որոշում է, որ չի կարող ուղղորդել պատասխանող պետությանը սկսել քրեական կամ կարգապահական վարույթ անվտանգության ուժերի այն անդամների դեմ, ովքեր թույլ են տվել դատարանի կողմից բացահայտված 3-րդ հոդվածի խախտումները, կամ այն անձանց դեմ, ովքեր քաջալերել կամ հանդուրժել են այդ խախտումները….

IV. 50-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

18. միաձայն որոշում է, որ անհրաժեշտություն չկա սույն գործի կապակցությամբ կիրառել 50-րդ հոդվածը:

….

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի լրիվ կազմում եղել են նախագահ Բալլադորե Պալիերին և դատավորներ Վիարդան, Զեքիան, Քրեմոնան, Օ'Դոնոգին, Պեդերսենը, Տոիր Վիլջաուլմսոնը, Ռիսդալը, Գանսհոֆ վան դեր Մերշը, Ֆիտցմորիսը, Բինդշեդլեր-Ռոբերտը, Էվրիգենիսը, Թայթգենը, Լագերգրենը, Լիշը, Գյոլչյուքլուն և Մաթշերը:

2 Դատավոր Զեքիան հայտնել է առանձին կարծիք, որում ներկայացրել է խոշտանգման վերաբերյալ իր տեսակետը:

Կարելի է ենթադրել, որ 3-րդ հոդվածում օգտագործված «խոշտանգում» բառը չի կարող ապահովել ճշգրիտ և լիարժեք ձևակերպում: Անտարակույս, դա անմարդկային վերաբերմունքի վատթարագույն ձևն է, որը պատճառում է ուժգին ֆիզիկական կամ մտավոր տառապանք: Չնայած այսպիսի տառապանքի ուժգնությունը և տևողությունը խոշտանգման հիմնական տարրերն են, պետք է հաշվի առնվեն նաև այլ համապատասխան գործոններ, որոնց թվին են պատկանում անձի նկատմամբ կիրառվող դաժան վերաբերմունքի բնույթը, կիրառված միջոցները և մեթոդները, այդ վերաբերմունքի կրկնությունը և տևողությունը, դրան ենթարկվող անձի տարիքը, սեռը և առողջական վիճակը, հավանականությունը, որ նման վերաբերմունքը կարող է վնասել անձի ֆիզիկական, հոգեկան և հոգեբանական վիճակը, և հասցված վնասվածքների լուրջ հետևանքների կարճ և երկար տևողությունը պետք է դիտարկվեն համատեղ, մինչև խոշտանգման մասին որոշում կայացնելը:

Համոզվելու համար՝ արդյոք տեղի՞ է ունեցել խոշտանգում, թե՞ դրսևորվել է անմարդկային վերաբերմունք, ինձ համար ընդունելի է կիրառել ոչ միայն օբյեկտիվ, այլև սուբյեկտիվ թեստ:

Կարելի է բերել դաժան վերաբերմունքի ենթարկված ծեր, հիվանդ մարդու օրինակը, որին մի քանի հարված հասցնելուց հետո ծեծելով գցում են գետնին, հետո քարշ տալիս և մի քանի ժամ շարունակ գետնի վրա ոտքերով անընդհատ հարվածում: Առանց տատանվելու, ես կասեի, որ խեղճ մարդը ենթարկվել է խոշտանգման: Եթե նույն վերաբերմունքը դրսևորվեր ըմբիշի կամ երիտասարդ մարզիկի նկատմամբ, ապա ես կդժվարանայի դա անվանել անմարդկային վերաբերմունք, այլ ընդամենը կհամարեի, որ դրսևորվել է կոշտ վերաբերմունք:

3 Օ'Դոնոգին՝ իռլանդացի դատավորը, առարկել է մի շարք հիմքերով:

Ես համաձայն եմ հանձնաժողովի միաձայն եզրակացությանը, որ հինգ մեթոդների կիրառությունը եղել է «խոշտանգում» և կոնվենցիայի խախտում…. Պարտադիր չէ համարել, որ խոշտանգումը բնորոշ է եղել միայն միջնադարյան բանտերին, որտեղ կիրառվել են գելարան և բութ մատը ճզմող պտուտակամեր: Իրոք, ժամանակակից աշխարհում գրեթե կասկած չկա, որ անձը կարող է ենթարկվել նաև հոգեկան խոշտանգման:

4 Սըր Զերալդ Ֆիտցմորիսը՝ բրիտանացի դատավորը, առարկել է՝ համարելով, որ հինգ մեթոդները անմարդկային և նվաստացնող վերաբերմունք չեն եղել: Ընդհանուր առմամբ, նա 3-րդ հոդվածի շրջանակներն ավելի սահմանափակ է տեսել, քան դատարանը:

Ողջամիտ է ենթադրել, որ այն ժամանակ, երբ պատերազմից և դաժանություններից հետո մշակվել է կոնվենցիան, կողմերը նկատի են ունեցել դաժան վերաբերմունքի շատ ավելի ծանր ձևեր:

Հինգ մեթոդների կիրառությունը, անշուշտ, եղել է կոպիտ վերաբերմունքի, դաժան վերաբերմունքի, վատ վերաբերմունքի դրսևորում: Կարող են գտնվել նաև այլ նկարագրություններ: Սակայն «անմարդկայինը» ենթադրում է միանգամայն այլ որակ կամ տեսության կատեգորիա, որին, իմ կարծիքով, հինգ մեթոդները, նույնիսկ միասին օգտագործվելու դեպքում, ճշտորեն չեն պատկանում…. Եթե բավական երկար ժամանակ որևէ մեկին պատի դիմաց լարված վիճակում կանգնեցնելը կամ նրա գլխին որոշ ժամանակ կնգուղ հագցնելը հավասարազոր են «անմարդկային» վերաբերմունքի, ապա ի՞նչ բառեր պետք է օգտագործվեն նկարագրելու համար մարդու աճուկներին հարվածելը կամ սոված առնետների հետ նրան լրիվ սևով պատած խցում պահելը….

Սույն համատեքստում կարելի է ենթադրել, որ [նվաստացնող վերաբերմունքը] պետք է այնպիսի արարք լինի, որը լրջորեն ստորացնող է, մարդկային արժանապատվությունը նվաստացնող կամ արհամարհող, ինչպես, օրինակ՝ որևէ մեկի գլուխը սափրելը, մոխրով և փետուրներով պատելը, կեղտ քսելը, վրան կեղտ նետելը, մերկ վիճակում օտարների առջև քայլեցնելը, ստիպողաբար արտաթորանք կերցնելը, նրան ստիպելը, որ պղծի իր երկրի միապետի կամ պետության ղեկավարի նկարը, կամ նրան այնպես հագցնելը, որը ծաղր կամ արհամարհանք է հարուցում…

… մինչ գործողությունը կորակվի խոշտանգում, ոչ միայն պետք է որոշ ուժգնության տառապանք պատճառվի, այլև պետք է այդ խոշտանգումը հարուցի տառապանքի լրիվ այլ որակ: Մի բան, որ տվյալ դեպքում բացակայում է: Այն պետք է տարբեր լինի ոչ միայն իր ուժգնությամբ, այլև ձևով: Եթե հինգ մեթոդները պետք է դիտարկվեն որպես խոշտանգում

պարունակող մեթոդներ, ապա ինչպե՞ս նկարագրել որևէ մեկի մատներից եղունգները քաշելը, հետանցքով դանդաղ ցցի վրա հագցնելը կամ էլեկտրական ցանցի վրա խորովելը….

5 Դատավոր էվրիգենիսն ունեցել է դատավոր Ֆիտցմորիսի կարծիքին տրամագծորեն հակառակ կարծիք.

Այս գործի վերաբերյալ դատարանի մեկնաբանությանը բնորոշ է խոշտանգման այնպիսի ընկալումը, որի հիմքում ընկած են տառապանքի պատճառման վաղուց արդեն հնացած մեթոդները, որոնք արդեն փոխարինվել են ճշում գործադրելու ժամանակակից հնարամիտ մեթոդներով: Խոշտանգումն այլևս չի ենթադրում բռնություն, սակայն սա այն գաղափարն է, որը շատ հստակ և ընդհանուր գծերով վկայակոչվում է վճռում: Խոշտանգումը կարող է իրականացվել և իրոք իրականացվում է նուրբ մեթոդներով, որոնք մշակվել են բազմաճյուղային, իրենց ասելով՝ գիտական լաբորատորիաներում: Տառապանքի նոր ձևերով, որոնք քիչ ընդհանրություն ունեն ավանդական խոշտանգման պատճառած ֆիզիկական ցավի հետ, ձգտում են աղճատել անձի անհատականությունը, խախտել հոգեկան հավասարակշռությունը և կոտրել նրա կամքը, թեկուզ ժամանակավորապես: Ինձ համար անչափ ցավալի կլինի, եթե վճռից բխող խոշտանգման սահմանումը չընդգրկի խոշտանգման տեխնոլոգիապես հագեցած այս տարբեր ձևերը: Նման մեկնաբանությունը կանտեսի ընթացիկ իրավիճակը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի իրականացման պատմական հեռանկարները:

6 Դատավոր Մաթշերի համար.

Խոշտանգման տարբերակիչ առանձնահատկությունը կանոնավոր, հաշվարկված (ուստիև կանխամտածված) և տևական վերաբերմունքի դրսևորումն է, որն առաջացնում է որոշակի ուժգնության ֆիզիկական կամ ֆիզիոլոգիական տառապանք, և որի նպատակն է կորզել խոստովանություններ, ձեռք բերել տեղեկություններ կամ պարզապես կոտրել անձի կամքը՝ ստիպելով նրան անել մի բան, որն այլ հանգամանքներում նա չէր անի, կամ էլ ցավ պատճառել մարդուն այլ պատճառով (սադիզմ, պատժի սաստկացում և այլն):

7 Թեև դատարանի արտահայտած վերոնշյալ կարծիքները երևան են հանում այն գործընթացին բնորոշ դժվարությունները, որով որոշվում է վատ վերաբերմունքի տվյալ դրսևորման վերագրումը 3-րդ հոդվածում ներկայացված կատեգորիաների թվին (հետագա ցուցումների համար, թե ինչպես է այս կատեգորիաները կիրառել դատարանը, տե՛ս ստորև ներկայացված գործերի մեջբերումներում), Իռլանդիայի գործով դատարանի վճիռն ընդգծում է հոդվածի որոշ հիմնարար փաստեր: Այսպիսով, զոհի վարքագիծը հնարավորություն չի տալիս պետությանը ենթարկելու նրան 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունքի, եթե նույնիսկ զոհն ահաբեկիչ է կամ լուրջ քրեական հանցագործ: Բացի այդ, հոդվածի վրա բացառություններ չեն տարածվում, և նրա նշանակությունը 15-րդ հոդվածի շրջանակներում նվազեցվել չի կարող, նույնիսկ երբ առկա է ազգի գոյատևմանը սպառնացող համապետական արտակարգ դրություն:

8 Դատարանի կողմից կոնվենցիայի հետ անհամատեղելի «գործելակերպի» գաղափարի մշակումը և դրա կարևորությունը բողոքի ընդունելիության որոշման ժամանակ քննարկվել են վերը՝ 27-28-րդ էջերում:

9 Հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ իրավաբանական անձինք չեն կարող պահանջ ներկայացնել, որ իրենք հանդիսանում են 3-րդ հոդվածի խախտման զոհ: *«Վերեյն կոնտակտ ինֆորմեյշն թերապին» և Հագենն ընդդեմ Ավստրիայի»* (*Verein Kontakt-Information-Therapie and Hagen v Austria* 57 DR81 (1988)) *գործում* առաջին դիմողը մասնավոր ընկերակցություն էր, որը տնօրինում էր երիտասարդ թմրամոլների համար նախատեսված վերականգնողական կենտրոններ: Ազգային դատարանները պահանջել են, որ ընկերակցության աշխատակից հանդիսացող երկու բժիշկ (որոնցից մեկը երկրորդ դիմողն էր) քրեական վարույթի շրջանակներում ցուցմունք տան նախկին հիվանդի՝ թմրանյութերի չարաշահման վերաբերյալ: Բժիշկները, օժանդակություն ստանալով առաջին դիմողից, մերժել են նախկին հիվանդի վերաբերյալ գաղտնի տեղեկություններ տրամադրելը: Դատարանները տուգանել են բժիշկներին՝ յուրաքանչյուրին 5000 ավստրիական շիլինգ, և պարտավորեցրել ընկերակցությանը գանձել տուգանքի գումարը նրանց ամսական աշխատավարձից: Բացի այդ, դիմող-

ները բողոքել են՝ պնդելով, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում: Հանձնաժողովը հայտարարել է, որ դիմումն անընդունելի է, քանի որ 3-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքները «... իրենց բնույթով ենթակա չեն իրավաբանական անձի կիրառման, ինչպիսին մասնավոր ընկերակցությունն է» (էջ 162): Նաև, երկրորդ դիմողի նկատմամբ վերաբերմունքը, որն ընդգրկել է «պահանջվող ցուցմունքը տալու պարտավորությունը, չի ունեցել ուժգնության այնպիսի մակարդակ, որը նախատեսվում է այդ դրույթով» (էջ 163): Տեսականորեն անիմաստ է իրավաբանական անձի նկատմամբ վերաբերմունքը ներկայացնել որպես «խոշտանգում» կամ որպես «անմարդկային»:

10 Ըստ դատարանի՝ 3-րդ հոդվածի մեկնաբանության՝ պետությունները պարտավոր են արդյունավետ հետաքննություն սկսել այն դեպքերում, երբ անձը վիճելի հայտարարություն է անում, որ պետության պաշտոնյաների կողմից ենթարկվել է խիստ վատ վերաբերմունքի: Այս ընթացակարգային պարտավորությունը արտացոլում է 2-րդ հոդվածով ձևավորված համանման պարտավորությունը, որը վերաբերում է այդ հոդվածում նշված պայմաններում անձանց սպանություններին (տե՛ս վերը՝ էջ 130): *«Ասենովը և այլք ընդդեմ Բուլղարիայի» (Assenov and others v Bulgaria)* (1998-VIII) գործում առաջին դիմողը ազգությամբ գնչու Բուլղարիայի քաղաքացի էր: Ծառայություն չիրականացնող մի ոստիկան նկատել է նրան, երբ նա շուկայի հրապարակում մոլ$_{ա}$ խաղով էր զբաղվում: Ոստիկանը ձերբակալել է դիմողին և տարել նրան մոտակա ավտոբուսի կանգառ, որտեղ նա լրացուցիչ օժանդակություն է պահանջել: Դիմողի ծնողներն աշխատում էին ավտոբուսի կանգառում, նրանք քայլեր են արել նրան ազատելու ուղղությամբ: Որպեսզի ցույց տա, որ պատժելու է դիմողին, նրա հայրը խփել է նրան փայտե ձողով: Այնուհետև դիմողը հայտարարել է, որ, ի թիվս այլոց, երեք ոստիկան նրան մահակներով ծեծի են ենթարկել: Հանձնաժողովը, տասնվեց կողմ և մեկ դեմ ձայներով, 3-րդ հոդվածի խախտում չի բացահայտել, քանի որ չի կարողացել պարզել, թե ում կողմից են դիմողին հասցվել նրա կապտուկները: Դատարանը միաձայն որոշել է.

102. ….Եթե անձը վիճելի բողոք է ներկայացնում, որ ապօրինաբար և ի խախտումն 3-րդ հոդվածի ինքը ոստիկանության և պետության այլ համանման գործակալների կողմից ենթարկվել է խիստ վատ վերաբերմունքի, այդ դրույթը, համակցվելով կոնվենցիայի 1-ին հոդվածում ամրագրված պետության «իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար կոնվենցիայով սահմանված իրավունքները և ազատությունները …ապահովելու ընդհանուր պարտավորության հետ», անուղղակիորեն պահանջում է, որ իրականացվի արդյունավետ պաշտոնական քննություն: Այս քննությունը, ինչպես և 2-րդ հոդվածով նախատեսված քննությունը, պետք է հանգեցնեն պատասխանատուների բացահայտմանը և պատժին (կոնվենցիայի 2-րդ հոդվածի կապակցությամբ տե՛ս *«Մակքենը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (McCann and Others v the United Kingdom),* 1995 թ. սեպտեմբերի 27-ի վճիռ, շարք A, թիվ 324, էջ 49 ...): Այլապես խոշտանգման և անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի և պատժի ընդհանուր արգելքը, չնայած իր հիմնարար կարևորությանը, … գործնականում կլիներ անարդյունավետ, և պետության գործակալները որոշ դեպքերում հնարավորություն կունենային չարաշահելու իրենց վերապահված իրավունքները՝ սկզբունքորեն ոչ մի պատիժ չկրելով դրանց համար:

103. Դատարանը նկատում է, որ [դիմողի մոր] բողոքից հետո պետական մարմինները դիմողի բողոքի վերաբերյալ որոշակի քննություն կատարել են: Այնուամենայնիվ, համոզիչ չէ, որ դա եղել է հնարավորինս լիարժեք և արդյունավետ քննություն, որը կբավարարեր 3-րդ հոդվածով նշված պահանջները: Այս տեսանկյունից դատարանը բավարար չի համարում, որ քննիչը պատրաստ էր եզրակացնելու, որ պարոն Ասենովի վնասվածքները հասցվել են նրա հոր կողմից, …չնայած որևէ փաստ չի եղել, որը ցույց կտար, որ վերջինս ծեծել է իր տղային այնպիսի ուժով, որը կարող էր առաջացնել բժշկի եզրակացությունում նշված կապտուկները: Թեև միջադեպը տեղի է ունեցել մարդաշատ վայրում՝ ավտոբուսի կանգառում, և ըստ ոստիկանության աշխատակիցների զեկուցագրերի՝ դրան ականատես են եղել տասնհինգից քսան գնչու և ավտոբուսի քսան վարորդ, միջադեպից անմիջապես հետո, երբ նրանց տպավորությունները դեռևս թարմ էին, որևէ փորձ չի արվել, այս վկաներին հարցուփորձ անելով, պարզելու ճշմարտությունը: Փոխարենը՝ այդ ժամանակ ցուցմունք է վերցվել միայն մեկ անկախ վկայից, որն ի վիճակի չի եղել վերհիշելու տեղի ունեցած իրադարձությունները….

104. Սկզբնական քննությունը, որն իրականացրել են տարածքային ռազմական դատախազության գրասենյակը (ՏՌԴԳ) և ընդհանուր ռազմական դատախազության գրասենյակը (ԸՌԴԳ), եղել է շատ ավելի մակերեսային: Դատարանին հատկապես զարմացնում է այն հանգամանքը, որ ԸՌԴԳ-ն, չունենալով ապացույցներ, որ պարոն Ասենովը եղել է անհնազանդ, և չունենալով բացատրություններ, թե ինչպես է դրսևորվել նրա անհնազանդությունը, կարող էր եզրակացնել, որ «եթե նույնիսկ հարվածներ են հասցվել պատանու մարմնին, ապա դրանք արվել են ոստիկանության

հրահանգներին չենթարկվելու պատճառով»…. Նման ենթադրությունը հակասում է 3-րդ հոդվածում ամրագրված սկզբունքին, համաձայն որի՝ ազատազրկված անձի նկատմամբ ֆիզիկական ուժի կիրառումը, որը նրա վարքագծով պայմանավորված բացարձակ անհրաժեշտություն չէ, սկզբունքորեն նրա իրավունքների խախտում է….
. . .

106. Այսպիսով, հաշվի առնելով, որ դիմողի վիճարկվող պնդումների լիարժեք և արդյունավետ քննություն չի կատարվել, դատարանը համարում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

Քննության այս անուղղակի պարտավորության շարադրանքը արժեքավոր է երկու պատճառով: Նախ՝ այն նպատակ ունի երաշխավորելու, որ պետական պաշտոնյաների վատ վերաբերմունքի զոհերը իրավասու են պահանջելու, որ ազգային մակարդակով կատարվի արդյունավետ քննություն, որի արդյունքում մեղավոր պաշտոնյաները սկզբունքորեն կպատժվեն: Երկրորդ՝ քննության իրականացման՝ կոնվենցիայով սահմանված պարտավորությունը կարող է կանխարգելիչ նշանակություն ունենալ և կասեցնել վատ վերաբերմունքի դրսևորումները, քանի որ պաշտոնյաները կարող են վախենալ, որ քննության արդյունքում բացահայտվելու և պատժվելու են:

Այդուհետ մշտապես գործող դատարանի կողմից ձևավորված այս դրական պարտավորությունը և դրա կիրառությունը որոշ անորոշություն են դրսևորել: Օրինակ՝ *«Իլհանն ընդդեմ Թուրքիայի» (Ilhan v Turkey)* գործի վերաբերյալ 2000 թ. հունիսի 27-ի վճռով (տե՛ս վերը՝ էջ 111 [A2]), մեծ պալատը փորձել է չխրախուսել 3-րդ հոդվածի շրջանակներում նման մոտեցումով քննությունը.

89. *Ասենովի* գործում … դատարանը հանգել է եզրակացության, որ ոստիկանության աշխատակիցների կողմից դիմողի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքի մասին բողոքի կապակցությամբ իշխանությունների կատարած ոչ պատշաճ քննության հետևանքով տեղի է ունեցել 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում: Այդպես վարվելով՝ դատարանն ուշադրություն է դարձրել ազգային համակարգերով խոշտանգման և անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքի հիմնովին արգելման կարևորությանը:

90. Այնուամենայնիվ, այդ գործում դատարանն անկարող է եղել եզրակացնել՝ արդյոք դիմողի վնասվածքներն իրո՞ք հասցվել են ոստիկանների կողմից, ինչպես որ նա ասել է: Եզրակացություններ անելու անկարողությունը, փաստորեն, մասամբ առաջացել է այն պատճառով, որ իշխանությունները ճիշտ ժամանակին արդյունավետորեն չեն անդրադարձել այդ բողոքներին:

91. Կոնվենցիայի տարբեր համատեքստերում անուղղակիորեն գործում են տարբեր ընթացակարգային պարտավորություններ, որոնք անհրաժեշտ են, քանի որ երաշխավորում են, որ կոնվենցիայով երաշխավորված իրավունքները տեսական կամ վերացական չեն, այլ գործնական են և արդյունավետ: Պետության անվտանգության ուժերի կողմից առաջացրած մահվան պատճառների արդյունավետ քննություն իրականացնելու պարտավորությունը, ի թիվս այլոց, ենթադրվում է կյանքի իրավունքը երաշխավորող 2-րդ հոդվածով (տե՛ս *«Մակքենը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (McCann and Others v the United Kingdom)*…): Այդ դրույթը, սակայն, ընդգրկում է պահանջ, համաձայն որի՝ կյանքի իրավունքը պետք է «պաշտպանվի օրենքով»: Նաև կարող է վերաբերել այն իրավիճակներին, երբ նախաձեռնությունը պետությանն է այն գործնական պատճառաբանությամբ, որ զոհը մահացած է, և մահվան հանգամանքները կարող են հիմնականում լինել պետության պաշտոնյաների իմացության շրջանակներում:

92. 3-րդ հոդվածը, այնուամենայնիվ, շարադրված է նյութական սահմանումներով: Բացի այդ, չնայած այդ դրույթի ենթադրյալ խախտման զոհը կարող է խոցելի դրության մեջ լինել, այդ դրության գործնական հրատապությունը հաճախ տարբերվում է մահացու ուժի գործադրման կամ կասկածելի մահվան գործերից: Դատարանը կարծում է, որ կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջը, որը վերաբերում է 3-րդ հոդվածի խախտման վերաբերյալ վիճելի պահանջ ունեցող անձին իրավունքի պաշտպանության համապատասխան միջոցներով ապահովելուն, համապատասխան հնարավորություն կտա դիմողին՝ նաև ապահովելով պետական պաշտոնյաների չարաշահումների դեմ ուղղված ընթացակարգային երաշխիքներով: Դատարանի նախադեպային իրավունքը սահմանում է, որ այս համատեքստում արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի գաղափարն ընդգրկում է լիարժեք և արդյունավետ քննություն կատարելու պարտավորությունը, որը կարող է հանգեցնել դաժան վերաբերմունքի համար պատասխանատու անձանց բացահայտման և գանգատարկուի համար քննչական ընթացակարգի մատչելիության ապահովման *(տե՛ս «Աքսոյն ընդդեմ Թուրքիայի» (Aksoy v Turkey)* …): 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում բացահայտելու անհրաժեշտությունը, հետևաբար, կախված է տվյալ գործի հանգամանքներից:

93. Տվյալ գործի դեպքում դատարանը որոշել է, որ դիմողն անվտանգության ուժերի կողմից խոշտանգման է ենթարկվել: Նրա բողոքները, որոնք վերաբերում են իր վնասվածքների կապակցությամբ իշխանությունների ոչ արդյունավետ քննությանը, այս դեպքում կարող են դիտարկվել կոնվենցիայի 13-րդ հոդվածի շրջանակներում:

Այս վճիռը ցույց է տալիս, որ պետության պաշտոնյաների դրսևորած խիստ վատ վերաբերմունքի դեպքերի առնչությամբ արդյունավետ քննության բացակայության մասին վիճելի բողոքները դատարանը 3-րդ հոդվածի շրջանակներում դիտարկելու է միայն բացառիկ դեպքերում: Մեծ պալատը դատարանի՝ 3-րդ հոդվածի նյութական դրույթների խախտման վերաբերյալ վերջնական եզրակացության հանգելու անկարողությունը կապել է նրա՝ այնպիսի վճիռ կայացնելու ցանկության հետ, որ տեղի է ունեցել արդյունավետ քննության պարտավորության խախտում: Սակայն ավելի ուշ գործերում (ներառյալ՝ *«Սաթիկը և այլք ընդդեմ Թուրքիայի» (Satik and Others v Turkey),* 2000 թ. հոկտեմբերի 10-ի վճիռ և *«Տոտևան ընդդեմ Բուլղարիայի» (Toteva v Bulgaria)* գործում, 2004 թ. մայիսի 19-ի վճիռ) պալատները միաձայն որոշում են կայացրել, որ պետությունները խախտել են 3-րդ հոդվածի թե՛ նյութական, թե՛ ընթացակարգային (արդյունավետ քննություն կատարելու) պահաջները: Իրոք, վերջին գործում դատարանը հստակ նշել է, որ.

62. Այն դեպքերում, երբ անձը պնդում է, որ ինքը, ի խախտումն 3-րդ հոդվածի, ոստիկանության կողմից արժանացել է խիստ վատ վերաբերմունքի, ապա այդ դրույթը, ընթերցվելով 1-ին հոդվածում ամրագրված պետության՝ «կոնվենցիայով սահմանված իր իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար իրավունքները և ազատությունները ապահովելու» պարտավորության հետ, դնում է արդյունավետ պաշտոնական քննություն իրականացնելու անուղղակի պահանջ: Այս քննությունը պետք է հանգեցնի պատասխանատու անձանց բացահայտման և պատժի:

Պալատը նաև միաձայն հայտնաբերել է արդյունավետ քննության պարտավորության խախտում՝ կապված 14-րդ հոդվածի հետ, որով իշխանությունները զլացել են ուսումնասիրել ոստիկանների վայրագության հնարավոր ռասիստական դրդապատճառները *(«Բեկոսը և Կուտրոպուլոսն ընդդեմ Հունաստանի» (Bekos and Koutropoulos v Greece),* 2005 թ. դեկտեմբերի 13-ի վճիռ, տե՛ս ստորև՝ էջ 876):

Սույն հոդվածի համաձայն՝ արդյունավետ քննություն իրականացնելու պարտավորության շրջանակների ընդլայնումը և դրանց մեջ մասնավոր անձանց կողմից խիստ (քրեական բնույթի) վատ վերաբերմունքի մասին բողոքներն ընդգրկելը միաձայն հաստատվել է պալատի կողմից *«ՄՄ-ն ընդդեմ Բուլղարիայի» (MC v Bulgaria)* գործի վերաբերյալ 2003 թ. դեպտեմբերի 4-ի վճռով: Դիմողը, որ ծնվել է 1980 թ., հայտնել է, որ 1995 թ. հուլիսի 31-ին և օգոստոսի 1-ին, երբ ինքը 14 տարեկան և 10 ամսական էր (Բուլղարիայում սեռական հարաբերությունների մեջ մտնելու համաձայնության տարիքը սկսվում է 14 տարեկանից), իրեն բռնաբարել են երկու տղամարդ: 1995 թ. հուլիսի 31-ի երեկոյան նա սպասում էր տեղական դիսկո բարի մուտքի մոտ, երբ մեքենայով մոտեցել են երեք տղամարդ (Պ.-ն՝ 21 տարեկան, Ա.-ն՝ 20 տարեկան և Վ. Ա.-ն՝ անհայտ տարիքի): Դիմողը ճանաչում էր Պ.-ին և Ա.-ին: Նրանք առաջարկել են գնալ քաղաքի մի քիչ ավելի հեռու վայրում գտվող մեկ այլ դիսկո բար, որին նա համաձայնել է: Ճանապարհին նրանք գնացել են ջրամբար, քանի որ Ա.-ն ցանկանում էր լողալ (դիմողը հետագայում հայտնել է, որ ինքը դեմ է եղել ճանապարհից շեղվելուն): Նա մնացել է մեքենայի մեջ, մինչ տղամարդիկ լողում էին: Պ.-ն վերադարձել է մեքենա և սկսել համբուրել նրան: Նրա խոսքով՝ ինքը մերժել է նրա սիրահետումները և խնդրել իրեն մենակ թողնել: Նրա ասելով՝ դրանից հետո Պ.-ն իր ձեռքերը ոլորել է մեջքի վրա: Նա ֆիզիկապես դիմադրելու կամ ճչալու ուժ չի ունեցել: Պ.-ն, այնուհետև, սեռական հարաբերություն է ունեցել նրա հետ: Պ.-ն ավելի ուշ հայտնել է, թե դիմողը համաձայնել է սեռական հարաբերություն ունենալ իր հետ: Աղջիկը հայտնել է, որ դրանից հետո ինքը շատ անհանգիստ է եղել և լաց է եղել: Օգոստոսի 1-ի վաղ առավոտյան խումբը գնացել է մոտակա քաղաք, որտեղ Վ. Ա.-ի բարեկամները տուն ունեին: Դիմողը տուն է գնացել Ա.-ի և Վ. Ա.-ի հետ: Նա ասել է, որ Ա.-ն իրեն գցել է մահճակալի վրա, որի վրա ինքը նստած էր, և ստիպել իրեն սեռական հարաբերություն ունենալ նրա հետ (նա հայտնել է, որ դիմադրելու ուժ չի ունեցել): Դիմողի մայրը գտել է նրան տանը և անմիջապես տեղափոխել տեղի հիվանդանոց: Զննությունն իրականացնող բժիշկը հաստատել է, որ դիմողը վերջերս կորցրել է իր կուսությունը: Մեկ օր անց Պ.-ն այցելել է դիմողի տուն և (ըստ դիմողի և նրա մոր) ներողություն խնդրել ու խոստացել ամուսնանալ դիմողի հետ, երբ նա

չափահաս դառնա: Դիմողի մայրը դա համարել է ընդունելի տարբերակ: Հետևաբար, դիմողը հաջորդ երեկոյան զբոսանքի է դուրս եկել Պ.-ի հետ: Օգոստոսի 10-ին տուն է վերադարձել դիմողի հայրը: Ընտանիքը, այնուհետև, որոշել է բողոք ներկայացնել իշխանություններին:

1995 թ. օգոստոսի 11-ին դիմողը գրավոր հայտարարություն է հանձնել ոստիկանություն: Նույն օրը, սակայն ավելի ուշ, ոստիկանությունը ծերբակալել է Պ.-ին և Ա.-ին, որոնք հայտնել են ոստիկանությանը, թե աղջիկը սեռական հարաբերության մեջ մտնելու համաձայնություն է տվել, որից հետո նրանց բաց են թողել: 1995 թ. նոյեմբերի 14-ին ենթադրյալ բռնաբարությունների գործով շրջանային դատախազը սկսել է քրեական վարույթ և գործը ուղարկել քննիչին: Մեկ տարվա ընթացքում իշխանությունները որևէ քայլ չեն ձեռնարկել: 1996 թ. նոյեմբերին քննիչը հարցաքննել է կողմերին և մեկ ամիս անց կազմել արձանագրություն, որով առաջարկել է կարճել Պ.-ի և Ա.-ի դեմ բացված վարույթը, քանի որ ապացույցներ չկային, որ նրանք դիմողին սպառնացել են կամ նրա նկատմամբ կիրառել բռնություն: 1997 թ. հունվարին շրջանային դատախազը կարգադրել է կատարել հետագա քննություն, քանի որ նախնական քննությունը օբյեկտիվ և լիակատար չի եղել: Ենթադրյալ բռնաբարությունների ժամանակ դիմողի դրսևորած վարքի վերաբերյալ քննիչը խորհրդակցել է հոգեբույժի և հոգեբանի հետ: Նրանք եզրակացրել են, որ աղջիկը եղել է հոգեբանորեն առողջ, սակայն դյուրահավատ բնավորություն ունի: Նա տպավորություն չի թողել, որ այդ իրադարձությունների ժամանակ ցնցում է տարել, քանի որ ամեն ինչ հստակորեն հիշել է: Նրա հետագա շփումը Պ.-ի հետ կարող է բացատրվել ընտանիքի՝ շրջապատի համար իրադարձությունների ընթացքի ընդունելի պատկեր ստեղծելու ցանկությամբ: 1997 թ. փետրվարին քննիչը պատրաստել է երկրորդ արձանագրությունը, որով կրկին առաջարկել է կարճել գործը, քանի որ համարել է, որ փորձագետների կարծիքը կասկածի տակ չի դրել իր ավելի վաղ եզրակացությունն առ այն, որ դիմողի նկատմամբ ուժ կամ սպառնալիքներ չեն գործադրվել: Շրջանային դատախազը 1997 թ. մարտին կարճել է գործը, քանի որ եզրակացրել է, որ Պ.-ի և Ա.-ի կողմից ուժի կամ սպառնալիքների կիրառումը ողջամիտ կասկածից վեր չի հաստատվել և չի հիմնավորվել, որ դիմողը դիմադրություն է ցույց տվել կամ փորձել է օգնություն հայցել ուրիշներից: Դիմողի ներկայացրած բողոքները տարածքային և գլխավոր հանրային դատախազին մերժվել են:

Դիմողը վիճարկել է, որ, ի թիվս այլոց, իշխանությունները բավարար չափով չեն ուսումնասիրել 1995 թ. հուլիսի 31-ի և օգոստոսի 1-ի իրադարձությունները: Դատարանը որոշել է.

151. Որոշ դեպքերում կոնվենցիայի 3-րդ հոդվածը առաջացնում է պաշտոնական քննություն կատարելու դրական պարտավորություն (տե՛ս *«Ասենովն ընդդեմ Բուլղարիայի» (Assenov v Bulgaria)*...): Սկզբունքորեն, այս դրական պարտավորությունները չեն կարող դիտարկվել որպես այնպիսիք, որոնք վերաբերում են միայն պետության գործակալների դրսևորած վատ վերաբերմունքին…

Դատարանը շարունակել է՝ համարելով, որ Բուլղարիայի կառավարությունն անբավարար է ուսումնասիրել դիմողի հայտարարություններին ուղեկցող հանգամանքները՝ անհարկիորեն շեշտը դնելով բռնաբարության «ուղղակի» ապացույցների բացակայության (օրինակ՝ փաստերի բացակայության, որ դիմողը «դիմադրել է» տղամարդկանց) վրա: Հետևաբար, եզրակացվել է, որ պատասխանող պետությունը խախտել է 3-րդ հոդվածով (և 8-րդ հոդվածով) ստանձնած դրական պարտավորությունը: *Ասենովի* գործի այս հետագա զարգացումը 3-րդ հոդվածի շրջանակներում անձանց տրամադրվող ընթացակարգային պաշտպանության հետագա ուժեղացում է: Խիստ դաժան վերաբերմունքի մեղավորները պետք է բացահայտվեն արդյունավետ քննության միջոցով՝ անկախ այն հանգամանքից՝ նրանք պետության գործակալնե՞ր են, թե՞ մասնավոր անձինք: Ընդհանուր առմամբ, մնում է հուսալ, որ դատարանը դառնում է նույնչափ խիստ և հետևողական իր այս պարտականության կիրառման հարցում, որքան 2-րդ հոդվածով նախատեսված համապատասխան պարտականության կիրառման:

11 Չնայած 3-րդ հոդվածի շրջանակներում բերված գործերի մեծ մասն ուղղված է եղել պետության պաշտոնյաների գործողությունների դեմ, դատարանի մեկնաբանությամբ այդ դրույթը պահանջում է պետություններից դրական քայլեր ձեռնարկել, ինչպես, օրինակ՝ օրենքով քրեական հանցագործություններին համապատասխան դրույթներ սահմանել, որոնցով անձը կպաշտպանվի այլ անձանց

կողմից 3-րդ հոդվածում նշված վատ վերաբերմունքի դրսևորումներից: *«Ա-ն ընդդեմ Մեծ-ի» (A v UK*, 1998, 27 EHRR 611, 1998-VI) գործում դիմողը 1984 թ. ծնված պատանի էր: 1993 թ. նրա խորթ հայրը մեղադրվել է նրա նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու մեջ, որի հետևանքով դիմողը ստացել է մարմնական վնասվածք: Խորթ հայրն ընդունել է, որ մի քանի անգամ փայտով ծեծել է դիմողին (հարվածել է ոտքերի ստորին և հետևի մասերին), քանի որ վերջինս դժվար երեխա է, չի ենթարկվում ծնողներին և դպրոցական կարգապահությանը: Որպեսզի հոր արարքը քրեորեն դատապարտելի լիներ, դատախազությունը պետք է հիմնավորեր, որ նրա կիրառած պատժի ձևն անցել է ողջամտության սահմանները: Երդվյալ ատենակալները մեծամասնական կարգով որոշել են, որ խորթ հայրը մեղավոր չէ: Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ ասելով, որ, ի թիվս այլոց և ի խախտումն 3-րդ հոդվածի, կառավարությունը չի պաշտպանել իրեն խորթ հոր ոտնձգություններից: Հանձնաժողովը միաձայն վճռել է, որ դիմողին ծեծելը բավական լուրջ երևույթ էր, որպեսզի մտներ 3-րդ հոդվածի շրջանակների մեջ: (Ծանոթություն. դատարանը չի նշել, թե 3-րդ հոդվածի որ տարրն է խախտվել, այսինքն՝ դա եղել է նվաստացնո՞ղ, թե՞ անմարդկային վերաբերմունք կամ պատիժ:)

22. Պետք է որոշել՝ 3-րդ հոդվածի շրջանակներում պետությունը պե՞տք է պատասխանատվություն կրի դիմողի խորթ հոր կողմից նրան ծեծի ենթարկելու համար: Դատարանը կարծում է, որ կոնվենցիայի 1-ին հոդվածը (համաձայն որի՝ բարձր պայմանավորվող կողմերը պարտավորություն ունեն պաշտպանելու իրենց իրավազորության ներքո գտնվող անձանց՝ կոնվենցիայով սահմանված իրավունքները և ազատությունները) 3-րդ հոդվածի հետ համատեղ պահանջում է, որ պետությունները համապատասխան քայլեր ձեռնարկեն և երաշխավորեն, որ իրենց իրավազորության ներքո գտնվող անձինք չեն ենթարկվում խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ նաև՝ մասնավոր անձանց կողմից դրսևորվող դաժան վերաբերմունքը (տե՛ս mutatis mutandis *«HLR-ն ընդդեմ Ֆրանսիայի» (HLR v France)*, 1997 թ. ապրիլի 29-ի վճիռ, Զեկույցներ 1997-III, էջ 758, պարբ. 40): Անձի ամբողջականության դեմ ուղղված լուրջ խախտումների կանխման միջոցով պետությունը հատկապես պետք է երաշխավորի երեխաների և խոցելի անձանց պաշտպանությունը (տե՛ս mutatis mutandis *«X-ը և Y-ն ընդդեմ Նիդեռլանդների» (X and Y v Netherlands)*, 1985 թ. մարտի 26-ի վճիռ, շարք A, թիվ 91, էջ 11–13, պարբ. 21–7, *«Ստաբբինգսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Stubbings v UK)*, 1996 թ. հոկտեմբերի 22-ի վճիռ, Զեկույցներ 1996-IV, էջ 1505, պարբ. 62–4 և Միավորված ազգերի կազմակերպության Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 19-րդ և 37-րդ հոդվածները):

23. Դատարանը նշում է, որ Անգլիայի օրենքի համաձայն՝ «ողջամիտ դաստիարակչական պատիժը» երեխայի նկատմամբ ֆիզիկական բռնությունն արդարացնող պաշտպանական մոտեցում է.... Ապացույցի բեռն ընկնում է մեղադրական կողմի վրա, որը պետք է ողջամիտ կասկածից վեր ապացույցներ ներկայացնի, որ ֆիզիկական ուժի գործադրումը անցել է օրինականորեն թույլատրված պատժի սահմանները: Տվյալ գործում, չնայած այն փաստին, որ դիմողի նկատմամբ վերաբերմունքը եղել է բավարար ուժգնության 3-րդ հոդվածի շրջանակներում դիտարկվելու համար, երդվյալ ատենակալները արդարացրել են խորթ հորը, որը ցուցաբերել է այդ վերաբերմունքը:

24. Դատարանի կարծիքով՝ հակառակ 3-րդ հոդվածի, այս վերաբերմունքի դրսևորումներից օրենքը բավարար մակարդակի պաշտպանություն չի ապահովել դիմողի համար: Իրոք, կառավարությունն ընդունել է, որ այս օրենքը ներկայումս երեխաների համար համապատասխան պաշտպանություն չի ապահովում և պետք է փոփոխության ենթարկվի: Սույն գործի հանգամանքներում համապատասխան պաշտպանություն չապահովելը կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում է:

Կրած ոչ նյութական վնասի համար դատարանը 10.000 ֆունտ ստեռլինգի փոխհատուցում է նշանակել դիմողին: Արդյոք չափազանցո՞ւմ կլինի, եթե պետության՝ 3-րդ հոդվածում նշված վատ վերաբերմունքի դրսևորումներից անձանց պաշտպանելու պարտավորությունը տարածվի նաև իրավաբանական անձանց կողմից վատ վերաբերմունքի դրսևորումների վրա, որոնք կարող են առաջանալ, օրինակ, վտանգավոր և ստորացնող աշխատանքային պայմաններ ստեղծելու հետևանքով (դատարանն օգտագործել է «մասնավոր անձանց կողմից դրսևորված դաժանություն» արտահայտությունը):

2004 թ. «Երեխաների մասին» օրենքի 58-րդ բաժնից երեխային ծեծելու համար նախատեսված ողջամիտ պատժի դատական պաշտպանության բացառությունն արգելվել է մինչև 16 տարեկան անձանց հասցված վերքերի և ծանր մարմնական վնասվածքների, իրական ֆիզիկական ցավի պատճառման կամ անգթության դեպքերի համար: Նաև երեխայի իրական մարմնական վնասվածք առաջացնող ծեծը որևէ քաղաքացիական վարույթով չի կարող «ողջամիտ պատժի» անվան տակ արդարացվել: Այս սահմանափակումները կիրառվում են Անգլիայում և Ուելսում և ուժի մեջ են մտել

2005 թ. հունվարին: Շոտլանդիայի խորհրդարանը համանման օրենսդրություն ընդունել է ավելի վաղ: Դրանք թույլ են տալիս ծնողներին իրենց երեխաների նկատմամբ թույլ ֆիզիկական պատիժ կիրառել, որը, սակայն, չի առաջացնում կապտուկներ կամ պատռվածքներ: Երեխաների հարցերով առաջատար բարեգործական կազմակերպությունները, ներառյալ NSPCC-ն, քննադատել են այս փոփոխությունները, քանի որ, ի թիվս այլոց, նրանք հավատացած են, որ երեխային հարվածելը նույնքան սխալ է, որքան մեծերին հարվածելը: Դաստիարակչական նպատակներով ֆիզիկական պատժի կողմնակիցները քննադատել են օրենքը, քանի որ ոստիկանության համար հնարավոր չէ կիրառել այն:

12 Մեծ պալատը միաձայն կիրառել է *«Ա-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործի պատճառաբանությունը *«Զ-ն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործի վերաբերյալ 2001 թ. մայիսի 10-ի վճռում, որը վերաբերել է ծնողական խնամքի լուրջ բացակայության պայմաններում տեղական իշխանությունների կողմից երեխաների պաշտպանության նկատմամբ դրսևորած անտարբերությանը: Քույր և եղբայր չորս դիմողները ծնվել են 1982 և 1987 թթ.: Տեղական սոցիալական ծառայությունների բաժինը տեղյակ էր երեխաների բարեկեցությանը վերաբերող խնդիրներին (նրանց հարևանների և ուսուցիչների հաղորդումները մատնանշել են, որ ծնողները երեխաներին պատշաճ չէին կերակրում և պատշաճ հոգ չէին տանում նրանց մասին): 1989 թ. նրանց համար նշանակվել է սոցիալական աշխատող, որը պետք է օգներ ծնողներին խնամելու երեխաներին, քանի որ սոցիալական ծառայությունները եզրակացրել էին, որ երեխաներին հասարակական խնամքի տակ վերցնելու փոխարեն ավելի նպատակահարմար է օգնել ծնողներին, որպեսզի խնամեն նրանց: 1992 թ. դիմողները վերցվել են հանրային խնամքի տակ, երբ նրանց մայրը տեղեկացրել է սոցիալական ծառայություններին, որ չի դիմանում և կծեծի իր երեխաներին: Ուստի դիմողները բողոքել են, որ սոցիալական ծառայությունները չեն պաշտպանել իրենց սեփական ծնողների կողմից դրսևորված անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքից: Մեծ պալատը որոշել է.

73. …Կոնվենցիայի 1-ին հոդվածը (համաձայն որի՝ բարձր պայմանավորվող կողմերը պարտավորություն ունեն պաշտպանելու իրենց իրավազորության ներքո գտնվող անձանց՝ կոնվենցիայով սահմանված իրավունքները և ազատությունները) 3-րդ հոդվածի համակցությամբ պահանջում է, որ պետությունները համապատասխան քայլեր ձեռնարկեն և երաշխավորեն, որ իրենց իրավազորության ներքո գտնվող անձինք չեն ենթարկվում խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, այդ թվում նաև՝ մասնավոր անձանց կողմից (տե՛ս *«Ա-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»,* 1998 թ. սեպտեմբերի 23-ի վճիռ, Վճիռների և որոշումների զեկույցներ 1998-VI, պարբ. 22): Այս միջոցառումները պետք է, մասնավորապես, արդյունավետ պաշտպանություն ապահովեն երեխաների և այլ խոցելի անձանց համար և ընդգրկեն ողջամիտ քայլեր՝ ուղղված դաժան վերաբերմունքի կանխմանը, որի մասին իշխանությունները տեղյակ են եղել կամ պետք է տեղյակ լինեին (տե՛ս mutatis mutandis *«Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Osman v the United Kingdom)* 1998 թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, Զեկույցներ 1998-VIII, պարբ. 116):

74. Տվյալ գործի առնչությամբ կասկածից վեր է, որ չորս դիմող երեխաների բարձիթողի վիճակը և կրած վիրավորանքները հասել են անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի սահմանին…. 1987 թ. հոկտեմբերի սկզբին տեղական իշխանությունները տեղյակ են պահվել այս վերաբերմունքի մասին: Օրենքով նրանք պարտավոր էին պաշտպանել երեխաներին և օժտված էին մի շարք լիազորություններով, ներառյալ՝ երեխաներին տնից հեռացնելու լիազորությամբ: Երեխաները, այնուամենայնիվ, 1992 թ. ապրիլի 30-ին, իրենց մոր պնդումով, հատուկ խնամքի տակ են վերցվել: Միջամտության չորս և կես տարվա ժամանակահատվածում նրանք իրենց տանը ենթարկվել են այնպիսի փորձությունների, որը նրանց զննող մանկական հոգեբույժն անվանել է սարսափելի… Քրեական արարքների պատճառով առաջացած վնասի փոխհատուցման վարչությունը նույնպես գտել է, որ երեխաները բավական երկար ժամանակ եղել են սարսափելի բարձիթողի վիճակում և կրել են բռնության՝ քրեական արարքին վերագրելի ֆիզիկական և հոգեբանական վնաս…. Դատարանն ընդունում է, որ սոցիալական ծառայությունների առջև կանգնած էր բարդ և զգայուն որոշումներ կայացնելու, ինչպես նաև ընտանեկան կյանքը հարգելու և պաշտպանելու հավասարակշռող սկզբունքը: Սույն գործը, այնուամենայնիվ, կասկած չի թողնում, որ համակարգը թերացել է այս մանուկ դիմողներին լուրջ և երկարատև անտեսումից և վիրավորանքից պաշտպանելու հարցում:

75. Համապատասխանաբար, տեղի է ունեցել կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

Քանի որ տեղական իշխանությունները չեն պաշտպանել նրանց դաժան վերաբերմունքի դրսևորումներից, որպես ոչ նյութական վնասի՝ ցավի և տառապանքի փոխհատուցում՝ յուրաքանչյուր դիմողին նշանակվել է 32.000 ֆունտ ստեռլինգ: Բացի այդ, նրանց նշանակվել են անհատական գումարներ 4,000-100,00 ֆունտ ստեռլինգի սահմաններում՝ փոխհատուցելու համար աշխատանքի հնարավորությունների կորուստը և իրենց կրած տանջանքների հետևանքների հետագա բուժման ծախսերը:

Վերոնշյալ վճիռն ընդլայնել է պետությունների վրա դրված պաշտպանական միջոցառումներ իրականացնելու պարտավորությունը և ընդգրկել պետության պաշտոնյաների կողմից արագ ֆիզիկական միջամտության պարտավորություն՝ ուղղված այն երեխաների պաշտպանությանը, որոնց մասին հայտնի է, որ նրանք ծնողների/խնամակալների կողմից վնասվելու լուրջ վտանգի տակ են:

13 Դատարանը չի համաձայնել, որ պետությունները անբուժելի հիվանդության վերջին փուլերում իրավասու և հասուն մարդկանց ինքնասպանությունը երրորդ անձի օժանդակությամբ թույլատրելու դրական պարտավորություն ունեն: *«Փրեթին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Pretty v United Kingdom)* գործում, որի վերաբերյալ դատարանը վճիռ է կայացրել 2002 թ. ապրիլի 29-ին (այս գործի 2-րդ հոդվածին վերաբերող հանգամանքները քննարկված են վերը՝ 115-րդ էջում), դիմողը պնդել է, որ 3-րդ հոդվածի շրջանակներում ազգային մարմինները պետք է պաշտպանեն իրեն նեյրոմոտորային հիվանդության պատճառով իրեն սպառնացող մահվանից:

55. Դատարանը չի կարող այլ կերպ, քան կարեկցանքով մոտենալ դիմողի անհանգստությանը, որ առանց իր կյանքին վերջ տալու հնարավորության, նա կանգնելու է տանջամահ լինելու հեռանկարի առջև: Ճշմարիտ է, որ ֆիզիկական անկարողության պատճառով նա ի վիճակի չէ վերջ տալու իր կյանքին, և օրենքի կարգավիճակն այնպիսին է, որ նրան օժանդակելու դեպքում նրա ամուսինը կարող է ենթարկվել քրեական հետապնդման: Այնուամենայնիվ, պետության դրական պարտավորությունը, որը վկայակոչվում է սույն գործի կապակցությամբ, չի ենթադրում ցավի վերացում կամ թեթևացում, օրինակ, հանրային մարմինների կամ մասնավոր անձանց կողմից դաժան վերաբերմունքի կանխման կամ բարելավված խնամքի պայմանների ապահովման միջոցով: Դրա համար անհրաժեշտ է, որ պետությունը թույլատրի կյանքի դադարեցմանն ուղղված գործողություններ, պարտավորություն, որը չի կարող բխեցվել կոնվենցիայի 3-րդ հոդվածից:

56. Այդ իսկ պատճառով դատարանը եզրակացնում է, որ կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակներում չի առաջանում դրական պարտավորություն, համաձայն որի՝ պատասխանող կառավարության առջև պետք է դրվի դիմողի ամուսնուն քրեորեն չհետապնդելու պահանջ, եթե վերջինս օգնի նրան ինքնասպանություն գործել, կամ էլ՝ երրորդ անձի միջամտությամբ ինքնասպանություն գործելու հնարավորություն ընձեռելու պահանջ:

3-րդ հոդվածի այս մեկնաբանությունը դատարանի ավելի վաղ կայացված որոշման տրամաբանական հետևանքն է, ըստ որի՝ կոնվենցիայի 2-րդ հոդվածը չի ճանաչում մահանալու իրավունքը:

Խոշտանգում

.....

«Աքսոյն ընդդեմ Թուրքիայի» (Aksoy v Turkey) 1996-VI 2287, (1996) 23 EHRR 553
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը եղել է Թուրքիայի քաղաքացի, որը ծնվել է 1963 թ.՝ Թուրքիայի հարավարևելյան տարածաշրջանում: 1994 թ. նա հրազենից սպանվել է, սակայն նրա հայրը շարունակել է հետամուտ լինել Ստրասբուրգի մարմինների առջև բերված նրա դիմումին: Համաձայն դիմողի՝ 1992 թ. նոյեմբերի 24-ի գիշերը ոստիկանության 20 սպա, կալանավորված մեկ անձի ուղեկցությամբ, եկել է նրա տուն: Վերջինս պնդել է, որ դիմողը ՔԱԿ-ի (Քրդստանի աշխատավորական կուսակցություն) անդամ է: Դիմողը ձերբակալվել է և տեղափոխվել Մարդինի հակաահաբեկչական կենտրոն: Նրան հարցեր են

տվել այն մարդու մասին, որը ճանաչել է նրան (դիմողն ասել է, որ այդ մարդուն չի ճանաչում), և սպառնացել խոշտանգման ենթարկել: Իր կալանքի երկրորդ օրը դիմողը հայտնել է, որ իրեն լրիվ մերկացրել են, ձեռքերը կապել մեջքից և կախաղան բարձրացրել թևերից՝ ենթարկելով խոշտանգման այնպիսի ձևի, որը հայտնի է «պաղեստինյան կախաղան» անունով: Մինչ նա կախված է եղել, ոստիկանները էլեկտրոդներ են միացրել նրա սեռական օրգաններին և էլեկտրահարելու ժամանակ ջուր ցանել նրա վրա: Նրա աչքերը մոտ կես ժամ տևած խոշտանգման գործողության ժամանակ լաթով կապել են: Հաջորդ երկու օրվա ընթացքում նա շարունակաբար ծեծի է ենթարկվել ոստիկանության աշխատակիցների կողմից: Դիմողը հայտնել է, որ կախված լինելու պատճառով ինքը կորցրել է ձեռքերը և թևերը շարժելու ունակությունը: Նա տեսակցություն է խնդրել բժշկի հետ, սակայն նրա խնդրանքը մերժվել է: Նա բաց է թողնվել կալանքից 1992 թ. դեկտեմբերի 10-ին, և նրա դեմ մեղադրանք չի հարուցվել: 1992 թ. դեկտեմբերի 15-ին նրան տեղափոխել են Դիքլե համալսարանի հիվանդանոց, որտեղ նրա մոտ ախտորոշվել է երկկողմ ճաճանչային կաթված (երկու թևերի լուծանք՝ պայմանավորված թևերի վերին հատվածի նյարդերի կաթվածով): Նա հիվանդանոցից դուրս է գրվել 1992 թ. դեկտեմբերի 31-ին՝ իր հետ վերցնելով իր հիվանդության պատմությունը: Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ ասելով, որ, ի թիվս այլոց և ի խախտումն 3-րդ հոդվածի, կալանքի տակ գտնվելու ժամանակ իր նկատմամբ դրսևորվել է վատ վերաբերմունք: Հանձնաժողովի պատվիրակները փաստերի ուսումնասիրությունն իրականացրել են Թուրքիայում: Հանձնաժողովը եզրակացրել է, որ, ի թիվս այլոց, որևէ փաստ չկա, որ նախքան ձերբակալությունը դիմողն ունեցել է որևէ հաշմանդամություն: Բժշկական փաստերը ցույց են տվել, որ ազատ արձակվելուց հետո նա տառապել է երկու թևերի ճաճանչային կաթվածից (հազվագյուտ հիվանդություն, որը կարող էր առաջանալ «պաղեստինյան կախաղան» բարձրացվելու հետևանքով): Կառավարությունն այլ բացատրություն դիմողի վերքերի վերաբերյալ չի ներկայացրել: Հանձնաժողովի համար փաստերը բավարար չեն եղել հիմնավորելու համար, որ նա էլեկտրահարվել է և ենթարկվել ծեծի: Տասնհինգ կողմ և մեկ դեմ ձայներով հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում:

…ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ….

60. Դիմողը բողոքել է իր նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքից: Նա հայտնել է, որ հարցաքննության ժամանակ իր աչքերը եղել են կապված, դրա հետևանքով նա ունեցել է ապակողմնորոշում: Նա նաև հայտնել է, որ կախված է եղել թևերից, որոնք կապված են եղել միմյանց («պաղեստինյան կախաղան»), և ենթարկվել է էլեկտրական ցնցումների, որոնք ավելի են խորացվել նրա վրա ջուր ցանելու հետևանքով: Նրան նաև ծեծել են, ապտակներ և հայհոյանքներ հասցրել: Նա վկայակոչել է Դիքլե համալսարանի բժշկական ֆակուլտետի բժշկական եզրակացությունը, ըստ որի՝ հիվանդանոց ընդունվելու ժամանակ ինքն ունեցել է երկկողմ բազկային հյուսակի վնասվածք:

…. Նման վնասվածք կարող էր առաջանալ պաղեստինյան կախաղանի վրա խոշտանգման ենթարկվելուց հետո:

Նա ներկայացրել է, որ իր նկատմամբ վերաբերմունքը եղել է բավականաչափ դաժան, որպեսզի համարվի խոշտանգում: Ընդ որում, դրա նպատակը եղել է ստիպել իրեն խոստովանել, որ ճանաչում է այն մարդուն, որը ճանաչել էր իրեն:

Բացի այդ, նա հայտնել է, որ այն պայմանները, որում նա պահվել է …և խոշտանգման ենթարկվելու մշտական վախը, որ նա զգացել է կալանքի տակ գտնվելու ժամանակ, հավասարազոր են եղել անմարդկային վերաբերմունքի:

61. Դատարանը, որոշելով ընդունել փաստի առնչությամբ հանձնաժողովի եզրակացությունները …համարում է, որ այն դեպքում, երբ անձը վերցվում է ոստիկանական կալանքի տակ առողջ վիճակում, սակայն ազատելու ժամանակ ունենում է վնասվածքներ, պետությունը պարտավոր է տալ ընդունելի բացատրություններ վնասվածքների առաջացման մասին, որի բացակայության դեպքում է միայն կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակներում խնդիր ծագում (տե՛ս *«Թոմասիի ընդդեմ Ֆրանսիայի» (Tomasi v France)* 1992 թ. օգոստոսի 27-ի վճիռ, շարք A, թիվ 241-A, էջ 40–1, պարբ. 108–11 և *«Ռիբիչն ընդդեմ Ավստրիայի» (Ribitsch v Austria)*, 1995 թ. դեկտեմբերի 4-ի վճիռ, շարք A, թիվ 336, էջ 26, պարբ. 34):

62. 3-րդ հոդվածը, ինչպես դատարանը նկատել է մի շարք առիթներով, ամրագրում է ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներից մեկը: Նույնիսկ ամենաբարդ հանգամանքներում, ինչպես, օրինակ՝ կազմակերպված ահաբեկչության և հանցավորության դեմ պայքարի ժամանակ, կոնվենցիան բացարձակապես արգելում է խոշտանգումը կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը: Ի տարբերություն կոնվենցիայի մի շարք նյութական դրույթների և թիվ 1 և թիվ 4 արձանագրությունների, 3-րդ հոդվածը դրանից բացառություն կամ շեղում նախատեսող որևէ կետ չի պարունակում, մինչդեռ 15-րդ հոդվածի շրջանակներում դա թույլատրելի է նույնիսկ ազգի գոյությանը սպառնացող ներպետական արտակարգ դրության ժամանակ (տե՛ս «*Իռլանդիան ընդդեմ Միացյալ*

Թագավորության», 1978 թ. հունվարի 18-ի վճիռ, շարք A, թիվ 25, էջ 65, պարբ. 163, *«Սերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Soering v United Kingdom*) 1989 թ. հուլիսի 7-ի վճիռ, շարք A, թիվ 161, էջ 34, պարբ. 88-8d և *«Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Chahal v United Kingdom)*, 1996 թ. նոյեմբերի 15-ի վճիռ, Զեկույցներ 1996-V, էջ 1855, պարբ. 79):

63. Որպեսզի որոշի՝ արդյոք վատ վերաբերմունքը պե՞տք է որակվի որպես խոշտանգում, դատարանը պետք է հաշվի առնի այս հասկացության և անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքի միջև 3-րդ հոդվածում նշված տարբերությունը: Ինչպես նշվել է նախկինում, այս տարբերակումը կոնվենցիայում մտցվել է ավելի շուտ «խոշտանգման» առանձնահատուկ խարանը այնպիսի կանխամտածված մարդկային վերաբերմունքին վերագրելու համար, որը լուրջ և խիստ տառապանք է պատճառում (տե՛ս *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»,* արդեն մեջբերված վճիռը, էջ 66, պարբ. 167):

64. Դատարանը մեջբերում է, որ ի թիվս այլոց, հանձնաժողովը գտել է, որ դիմողը բարձրացվել է «պաղեստինյան կախաղան»: Այլ կերպ ասած՝ նա մերկացվել է, նրա թևերը մեջքի վրա կապվել են իրար, և այդ վիճակում նա անշարժ կանգնեցվել է թևերից կախված վիճակում…

Դատարանի տեսանկյունից այս վերաբերմունքը կարող էր դրսևորվել միայն կանխամտածված ձևով: Իրոք, այն իրականացնելու համար պահանջվում են որոշ աստիճանի պատրաստվածություն և ջանքեր: Տպավորություն է ստեղծվում, որ այն կիրառվել է՝ նպատակ ունենալով խոստովանություններ կամ տեղեկություններ ստանալ դիմողից: Բացի խիստ ցավից, որ պետք է պատճառած լինի այդ ժամանակ, բժշկական եզրակացությունը ցույց է տալիս, որ այն հանգեցրել է երկու թևերի կաթվածի, որն ունեցել է որոշակի տևականություն... Դատարանը համարում է, որ այս վերաբերմունքն իր բնույթով եղել է անչափ լուրջ և դաժան և կարող է ներկայացվել որպես խոշտանգում:

Հաշվի առնելով այս եզրակացության լրջությունը՝ դատարանն անհրաժեշտ չի համարում ուսումնասիրել դիմողի՝ վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ բողոքները:

Ամփոփենք, տեղի է ունեցել կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

. . .

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 50-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

110. Կոնվենցիայի 50-րդ հոդվածի համաձայն.

> «Եթե դատարանը համարում է, որ բարձր պայմանավորվող կողմի իրավական մարմնի կամ որևէ այլ վարչական մարմնի որոշումը կամ ձեռնարկած միջոցը լրիվ կամ մասամբ հակասում են իր ստանձնած պարտավորություններին, որոնք առաջանում են ... կոնվենցիայից, և եթե նշված կողմի ներքին օրենսդրությունը թույլ է տալիս միայն մասնակիորեն շտկել այդ որոշման կամ միջոցառման հետևանքները, ապա դատարանի որոշումը պետք է, ըստ անհրաժեշտության, հնարավորություն տա իրականացնելու տուժած կողմի պահանջների արդար բավարարում»:

111. Իր միջնորդությամբ դիմողը պահանջել է փոխհատուցել նյութական վնասը (16.635.000 թուրքական լիրա բժշկական ծախսեր և 40 ֆունտ ստեռլինգի եկամտի կորուստ), որը պատճառվել է իրեն կալանքի տակ առնելու և խոշտանգելու հետևանքով:

Բացի այդ, նա պահանջել է ոչ նյութական վնասի փոխհատուցում՝ 25.000 ֆունտ ստեռլինգ…

Նա նաև պահանջել է վճարել իր փաստաբանական ծախսերը, որոնք կազմել են 20.710 ֆունտ ստեռլինգ:

112. Կառավարությունն այս միջնորդության առումով մեկնաբանություններ չի ներկայացրել ո՛չ իր հուշագրում, ո՛չ էլ դատական նիստերի ժամանակ:

Ա. ՎՆԱՍԸ

113. Հաշվի առնելով, որ պարոն Զեկի Ասսոյը եղել է կոնվենցիայի լուրջ խախտման զոհ, ինչպես նաև հաշվի առնելով այն անհանգստությունը և տառապանքը, որ դա, անկասկած, պատճառել է նրա հորը, որը շարունակել է գանգատարկումը որդու մահից հետո, դատարանը որոշել է փոխհատուցման կարգով նշանակել նյութական և ոչ նյութական վնասի ողջ գումարները: Ամբողջ գումարը կազմել է 4,283,450,000 (չորս հազար երկու հարյուր ութսուներեք միլիոն չորս հարյուր հիսուն հազար) թուրքական լիրա՝ հիմք ընդունելով վճռի ընդունման օրը գործող փոխարժեքը:

Բ. ԾԱԽՍԵՐԸ

114. Դատարանը համարում է, որ դիմողի ծախսերը փոխհատուցելու պահանջը ողջամիտ է և նշանակում է ամբողջական ծախսերի փոխհատուցում՝ հաշվի առնելով դրանից Եվրոպայի խորհրդից իրավական օժանդակության կարգով ստացված գումարները, որոնք պահանջի մեջ դեռևս հաշվի չեն առնված:

Գ. ԴԵՖՈԼՏԱՅԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ

115. Ինչ վերաբերում է թուրքական լիրայով նշանակված գումարին, այն պետք է վճարվի 30 տոկոս տարեկան դեֆոլտային տոկոսադրույքով, որը, ըստ դատարանի ունեցած տեղեկությունների, այդ վճռի կայացման օրը Թուրքիայում գործող պարտադիր տոկոսադրույքն է:

Քանի որ ծախսերի մասով փոխհատուցումը պետք է վճարվի ֆունտ ստեռլինգով, դատարանը համարում է՝ նպատակահարմար է, որ այս գումարի նկատմամբ սահմանվի 8 տոկոս տարեկան տոկոսադրույք, որը, ըստ դատարանի ունեցած տեղեկությունների, Անգլիայում և Ուելսում տվյալ վճռի կայացման օրը գործող հաստատված տոկոսադրույքն է:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

. . .

2. Որոշում է ութ կողմ և մեկ ղեմ ձայներով, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Ռիսդալը և դատավորներ Տոիր Վիլջաուլմսոնը, Գյոլչյուքլուն, Փեթիթին, Դե Մեյերը, Մորինիյան, Բական, Մակարչիկը և Լոհմուսը:

Ազգությամբ թուրք դատավոր Գյոլչյուքլուն առարկել է, քանի որ չի հավատացել, որ դիմողը սպառել է ազգային ատյաններին դիմելու հնարավորությունները: Այդ իսկ պատճառով նա ազատ է արձակվել գործին վերաբերող հատկանիշների քննարկումից:

Սա առաջին դեպքն է, երբ դատարանը որոշում է կայացրել, որ պետության պաշտոնյաների վատ վերաբերմունքը հավասար է եղել խոշտանգման: Նույնիսկ այն դեպքում, երբ դիմողը ենթարկվել է նման սահմռկեցուցիչ վերաբերմունքի, 3-րդ հոդվածի շրջանակներում վճարման ենթակա փոխհատուցման գումարը բացարձակ առումով երբեք այդքան մեծ չի եղել: Այնուամենայնիվ, արդար բավարարման փոխհատուցումը շատ ավելի մեծ է եղել՝ համեմատած դիմողի աշխատավարձի մակարդակի հետ (նա պահանջել է ընդամենը 40 ֆունտ ստեռլինգի փոխհատուցում մի քանի շաբաթվա եկամտի կորստի համար): Խոշտանգման գործողությունների համար պատասխանատու ճանաչված անդամ պետության միջազգային վարկանիշի վրա ազդեցությունը, իհարկե, զգալի է:

2 Ավելի վաղ լսված *Հունական* գործում («Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տարեգիրք», թիվ 12 (1969 թ.)) հանձնաժողովը որոշել է, որ Աթենքի անվտանգության ոստիկանության կողմից քաղաքական կալանավորների նկատմամբ կիրառվել է խոշտանգման գործելակերպ: 1965 - 1967 թթ. ավագ ռազմական պաշտոնյաների իրականացրած հեղաշրջումից հետո մի շարք մարդիկ կալանավորվել են: Ընդհանուր առմամբ, ասեկոսեներ են եղել, որ անվտանգության ուժերը կալանավորների նկատմամբ դրսևորել են վատ վերաբերմունք: Քաղաքական կալանավորների նկատմամբ դրսևորած վերաբերմունքի համար Դանիան, Նորվեգիան և Շվեդիան Հունաստանի դեմ միջպետական դիմում են ներկայացրել: Մի քանի օր անց Նիդեռլանդները նույնպես նման դիմում է ներկայացրել: Հանձնաժողովը միացրել է գործերը, և ենթահանձնաժողովը մեկնել է Հունաստան՝ տեղում հարցաքննություններ անցկացնելու և վկաներին լսելու համար:
Հանձնաժողովի հաշվետվության մեջ նշված է հետևյալը.

Ֆալանգան կամ բաստինադոն եղել են դարերով հայտնի խոշտանգման մեթոդ: Այն իրականացվում է ոտքերին փայտե կամ մետաղե ձողով հարվածներ հասցնելով: Սա, եթե արվում է հմտորեն, ոսկորների կոտրվածքներ չի առաջացնում, մաշկի վրա հետքեր, կայուն և ճանաչվող նշաններ չի թողնում, սակայն պատճառում է ոտքերի ուժգին ցավ և այտուց: Ըստ նկարագրությունների, ֆալանգան կիրառվել է տարբեր իրավիճակներում, ներառյալ՝ նստարանի կամ աթոռի և կամ մեքենայի նստելատեղի վրա նստած վիճակում, կոշիկներով կամ առանց կոշիկների: Եղել են դեպքեր, երբ զոհի ոտքերի վրա ջուր է շփվել, և երբեմն ծեծի ենթարկելիս ընդմիջումների ժամանակ զոհին ստիպել են վազել: Ջոհերի բերանները կապված են եղել….

Ենթահանձնաժողովի ուշադրությանը ներկայացված փաստերում ֆալանգան և մարմնի բոլոր մասերին ուժեղ հարվածներ հասցնելը նշվում են որպես խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ամենաընդհանուր ձևեր, սակայն

նկարագրվել են նաև այլ ձևեր, ինչպես օրինակ՝ էլեկտրաշոկի կիրառությունը, մամլիչով գլխի ճզմումը, գլխից կամ շեքի մասից մազերի փետումը, տղամարդու սեռական օրգաններին հարվածելը, գլխին ջուր կաթեցնելը, քունը խանգարելու նպատակով ուժգին աղմուկ ստեղծելը….

Սկսած 1967 թ. ապրիլից՝ Աթենքի անվտանգության ոստիկանությունը (Բուբուլինաս փողոց) դրսևորել է խոշտանգման և վատ վերաբերմունքի գործելակերպ, որն ուղղված է եղել քաղաքական դրդապատճառներով ձերբակալված անձանց դեմ.

(ա) այդ խոշտանգումը և վատ վերաբերմունքը ավելի հաճախ դրսևորվել են «ֆալանգայով» կամ դաժան ծեծով (մարմնի բոլոր հատվածներում),

(բ) դրա նպատակը եղել է տեղեկությունների կորզումը, ներառյալ՝ քաղաքական գործունեության վերաբերյալ խոստովանությունների կորզումը, զոհերի և պետության դեմ ուղղված գործունեության մեջ կասկածվող անձանց փոխկապակցումը….
(էջ 499, 500 և 504)

Հանձնաժողովի զեկույցը փոխանցվել է Նախարարների կոմիտեին 1969 թ. նոյեմբերի 18-ին: 1969 թ. դեկտեմբերի 12-ին Հունաստանի կառավարությունը հրաժարվել է կոնվենցիայից (նախկին 65-րդ հոդվածի համաձայն՝ հրաժարումը ուժի մեջ կարող էր մտնել վեց ամիս անց, այսինքն՝ 1970 թ. հունիսի 13-ից) և զեկույցի հետ կապված հետագա վարույթին մասնակցելուց: Այդ իսկ պատճառով հանձնաժողովը հրապարակել է DH70(1) բանաձևը.

... համաձայնելով հանձնաժողովի կարծիքին, որոշում է.

(ա) որ Հունաստանի կառավարությունը խախտել է 3-րդ հոդվածը:

19. Հաշվի առնելով, որ այս հանգամանքները և հաղորդումները հստակորեն ապացուցել են, որ Հունաստանի կառավարությունը պատրաստ չէ համապատասխանելու կոնվենցիայի շրջանակներում ստանձնած իր շարունակական պարտավորություններին և դրանով իսկ՝ սահմանված մարդու իրավունքների կոլեկտիվ պաշտպանության համակարգին, Նախարարների կոմիտեն, որը հրավիրվել է քննարկելու գործն այնպիսի պայմաններում, որոնք տարբերվում են կոնվենցիայով նախատեսված պայմաններից,

20. եզրակացնում է, որ սույն գործում որևէ հիմք չկա կոնվենցիայի 32-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում հետագա քայլեր ձեռնարկել.

21. եզրակացնում է, որ հանձնաժողովի զեկույցի հրապարակման վերաբերյալ պետք է որոշում կայացնել համաձայն 32-րդ հոդվածի 3-րդ կետի,

22. որոշում է վերոհիշյալ դիմումների վերաբերյալ հանձնաժողովի պատրաստած զեկույցը հրապարակել անմիջապես,

23. կոչ է անում է Հունաստանի կառավարությանը Հունաստանում առանց ձգձգումների վերականգնել կոնվենցիայում նախանշված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները…

24. նաև կոչ է անում է Հունաստանի կառավարությանը, մասնավորապես, անմիջապես վերջ տալ բանտարկյալների խոշտանգմանը և նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորմանը և ազատ արձակել վարչական կարգադրության հիման վրա կալանքի տակ վերցված անձանց,

25. և, հետևաբար, քվեարկությամբ որոշում է կայացնում հետևել Հունաստանում այս առնչությամբ տեղի ունեցող զարգացումներին:

1974 թ. Հունաստանում վերականգնվել է սահմանադրական կարգը, և կառավարությունը փորձել է վերաանդամակցել Եվրոպայի խորհրդին: *Հունական* գործը բացահայտում է մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիայի համակարգի ուժեղ և թույլ կողմերը: Ոչ ժողովրդավարական ռազմական կառավարությունը նախընտրել է դուրս գալ Եվրոպայի խորհրդից, քան թե քաղաքական ընդդիմախոսներին խոշտանգման ենթարկելու համար կոնվենցիայի շրջանակներում արժանանալ քննադատության: Այնուամենայնիվ, դիվանագիտական ճնշումները նպաստել են Հունաստանում ժողովրդավարության վերականգնմանը, և մի քանի տարվա ընթացքում Հունաստանը կրկին անդամակցել է Եվրոպայի խորհրդին և դրան զուգահեռ՝ նաև կոնվենցիային:

3 Դատարանի մեծ պալատը որոշել է, որ պետական պաշտոնյայի կողմից կալանավորի բռնաբարությունը «խոշտանգում» է *«Այդընն ընդդեմ Թուրքիայի» (Aydin v Turkey) գործում* ((1997) 25 EHRR 251, 1997-VI 1889): Դիմողը, որ կալանքի ժամանակ տասնյոթ տարեկան էր, մինչև անվտանգության ուժերի կողմից ձերբակալվելը երբեք իր գյուղից դուրս չի եկել: 1993 թ. հունիսի 29-ին նա հայտնել է, որ գյուղի պահակազորայինները և մեկ ժանդարմ եկել են իրենց գյուղ և ձերբակալել իրեն, իր հորը և հարսին: Նրանց հարցաքննել են իրենց տուն ՔԱԿ-ի անդամների այցելությունների վերաբերյալ (ինչպես վերը նկարագրված *Աքսոյի* գործում): Նրանցից երեքի աչքերն այնուհետև կապել են, որից հետո նրանք տեղափոխվել են Դերիքի ժանդարմական կենտրոնակայան: Դիմողին մենակ տեղափոխել են առանձին սենյակ, մերկացրել, մտցրել մեքենայի անիվի մեջ և պտտել, այնուհետև ծեծի ենթարկել և սառը ջուր ցանել նրա վրա, որից հետո նա բռնաբարվել է զինվորական հագուստով մի տղամարդու կողմից: Դիմողը և նրա ազգակիցները բաց են թողնվել կալանքից 1993 թ. հուլիսի 2-ին: Նա բողոքել է հանձնաժողովին՝ ասելով, որ, ի թիվս այլոց, տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում: Հանձնաժողովի պատվիրակներն այցելել են Թուրքիա՝ վկային լսելու համար: Հանձնաժողովը եզրակացրել է, որ դիմողի հաղորդումները ողջամիտ կասկածից վեր հաստատվում են: Քսանվեց կողմ և մեկ դեմ ձայներով հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում: Դատարանի կազմը ձայների մեծամասնությամբ (տասնչորս կողմ և յոթ դեմ) որոշել է հետևյալը.

83. Կալանքի տակ գտնվելու ժամանակ դիմողը բռնաբարվել է մի անձի կողմից, որի ինքնությունը դեռևս ենթակա է որոշման: Կալանավորի բռնաբարությունը պետական պաշտոնյայի կողմից պետք է համարվի վատ վերաբերմունքի հատկապես ծանր և նողկալի ձև՝ հաշվի առնելով այն անկաշկանդվածությունը, որով օրինազանցը կարող է չարաշահել զոհի խոցելիությունը և թուլացած դիմադրողականությունը: Բացի այդ, բռնաբարությունը խոր հոգեբանական սպիներ է թողնում զոհի վրա, որը ժամանակի ընթացքում չի անցնում նույնպիսի արագությամբ, որքան ֆիզիկական և հոգեկան բռնության հետևանքները: Բռնի ներթափանցման ժամանակ դիմողը նաև զգացել է սուր ֆիզիկական ցավ, որի հետևանքով պետք է որ իրեն ստորացված և ոտնահարված զգար ինչպես ֆիզիկապես, այնպես էլ հոգեպես:

84. Դերիքի ժանդարմական կենտրոնակայանում անվտանգության ուժերի կողմից կալանքի տակ գտնվելու ժամանակ դիմողը նաև ենթարկվել է մի շարք առանձնապես սահմռկեցուցիչ և նվաստացուցիչ փորձությունների, եթե հաշվի առնվեն նրա սեռը, երիտասարդ տարիքը և այն հանգամանքները, որում որ նա պահվել է: Նա կալանքի տակ է պահվել երեք օր, որի ընթացքում պետք է որ շփոթված և ապակողմնորոշված լիներ, քանի որ նրա աչքերը եղել են կապված, նա անընդհատ զգացել է ֆիզիկական ցավ և հոգեկան տառապանք, որոնք պատճառվել են հարցաքննությունների ժամանակ նրան ծեծի ենթարկելու և անորոշության պատճառած վախի հետևանքով: Նրան նաև ստորացնող հանգամանքներում մերկ մաս են ածել, ինչը գումարվել է նրա խոցելիության զգացողությանը: Նաև մեկ անգամ նրան ծեծի են ենթարկել բարձր ճնշման ջրի շիթով, երբ նրան հերթական անգամ պտտում էին անիվի մեջ:

85. Դիմողը և նրա ընտանիքը պետք է որ իրենց գյուղից դուրս բերված և Դերիքի ժանդարմական կենտրոն տեղափոխված լինեին այնպիսի նպատակների համար, որոնք կարող են բացատրվել միայն տարածաշրջանում տիրող անվտանգության իրավիճակով …և անվտանգության ուժերի՝ տեղեկություններ կորզելու մտադրությամբ: Կալանքի տակ գտնվելու ժամանակ դիմողին պատճառված զրկանքը պետք է համարվի այդ նույն կամ դրան առնչվող նպատակներին ծառայող:

86. Այս պարագայում դատարանը բավարար է համարում, որ դիմողի նկատմամբ ֆիզիկական և հոգեկան բռնության գործողությունները և հատկապես դաժան բռնաբարությունը, որին նա ենթարկվել է, հավասարազոր են եղել խոշտանգման՝ ի խախտումն 3-րդ հոդվածի: Իրավամբ, դատարանը կարող էր նման եզրակացություն անել՝ դիտարկելով այս հիմքերից յուրաքանչյուրն առանձին-առանձին:

87. Ամփոփենք. տեղի է ունեցել կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում….

Դատարանը դիմողին նշանակել է 25.000 ֆունտ ստեռլինգի ոչ նյութական վնասի արդար փոխհատուցում՝ «հաշվի առնելով կոնվենցիայի՝ կալանքի տակ գտնվելու ժամանակ դիմողի նկատմամբ թույլ տրված խախտման լրջությունը և տևական հոգեբանական վնասը, և կարելի է համարել, որ այն պատճառվել է նրան բռնաբարության ենթարկելու հետևանքով….» (պարբ.131): Ընդդիմախոսները չեն համարել, որ դիմողի պնդումները հիմնավորված են եղել բավարար չափով ապացույցներով: Որպես իրավունքի խնդիր՝ դատարանի որոշումը հստակորեն ընդունում է, որ կալանավորների բռնաբարությունը 3-րդ հոդվածի առանձնապես լուրջ խախտում է:

4 Մշտապես գործող դատարանի մեծ պալատը վատ վերաբերմունքը որպես խոշտանգում որակելու կապակցությամբ միաձայն ընդունել է նոր մոտեցում *«Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի» (Selmouni v France)* գործում ((1999) 29 EHRR 403): Դատարանի պաշտոնական կարծիքը, համաձայն որի՝ հետագայում «ավելի մեծ հաստատակամություն պետք է դրսևորվի խախտումների գնահատման ժամանակ» (տե՛ս ստորև՝ պարբ. 101), նշանակում է, որ վատ վերաբերմունքի լուրջ գործողությունները դատարանն ավելի մեծ պատրաստակամությամբ պետք է որակի որպես խոշտանգում: Տվյալ դեպքում դիմողը Նիդեռլանդների և Մարոկկոյի քաղաքացի էր (ծնված 1942 թ.), ոստիկանությունը նրան ձերբակալել էր Ֆրանսիայում իր կասկածյալ ընկերոջ կողմից թմրանյութերի թրաֆիքինգի մեջ ներքաշվելուց հետո: Դիմողը պահվել է ոստիկանական կալանքի տակ 1991 թ. նոյեմբերի 25-ի երեկոյան ժամը 8:30-ից մինչև 1991 թ. նոյեմբերի 28-ի երեկոյան ժամը 7-ը: Կալանքի տակ գտնվելու ժամանակ նրան հարցաքննել են մի շարք պաշտոնյաներ Սեն-Սան Դենիսի քրեական հետաքննության բաժնում: Դիմողը հայտնել է, որ իր կալանքի տակ գտնվելու ժամանակ հետաքննող պաշտոնյաները նրա նկատմամբ ցուցաբերել են վատ վերաբերմունք, որն ունեցել է տարբեր դրսևորումներ, ներառյալ՝ կրկնվող ծեծը (այդ թվում նաև՝ բռունցքներով, ոտքերով կամ բեյսբոլի թիակով), մազերը պոկելը, դիմողին հարկադրաբար կնոջ առջև ծնկի իջեցնելն այն ժամանակ, երբ պաշտոնյան հայհոյանքներ է տեղացել նրա վրա, պաշտոնյայի կողմից նրա վրա միզելը, զոդալամպով նրան սպառնալը և մահակը նրա հետանցքը մտցնելը: Ավելի ուշ դիմողը մեղավոր է ճանաչվել թմրանյութերի հետ կապված հանցագործության համար, դատապարտվել տասներեք տարվա ազատազրկման և տուգանվել 24 միլիոն ֆրանկ: Դիմողը բողոքել է իշխանություններին հարցաքննության ժամանակ իր անձի շահագործման մասին, որից հետո ձեռք են բերվել բժշկական տեղեկանքները, ըստ որոնց՝ նրա մարմնի վրա եղել են բազմաթիվ կապտուկներ և վերքեր: Այնուամենայնիվ, այն ժամանակ, երբ դիմողը հայտնել է, որ ինքը պաշտոնյաների կողմից ենթարկվել է սեռական ոտնձգության, արդեն ուշ էր, որպեսզի բժշկական հետազոտությամբ հնարավոր լիներ պարզել նրա հայտարարության իսկությունը: Վերջապես, ոստիկանության մի քանի ծառայողներ մեղավոր են ճանաչվել դիմողին ծեծելու և մարմնական վնասվածքներ հասցնելու համար (մեղավոր ճանաչված ավագ սպան դատապարտվել է տասնութ ամսվա ազատազրկման, որից տասնհինգ ամիսը՝ պայմանական պատժի տեսքով): Մյուս ծառայողին նշանակվել է տասնհինգ ամսվա պայմանական ազատազրկում և վերջինին՝ տասներկու ամսվա պայմանական ազատազրկում: Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ ի թիվս այլոց, տեղի է ունեցել նաև 3-րդ հոդվածի խախտում: Հանձնաժողովը միաձայն որոշել է, որ դիմողի կանխամտածված չարաշահումը այնպիսի լուրջ և դաժան բնույթ ուներ, որ պետք է դասակարգվի որպես խոշտանգում: Դատարանը որոշել է.

96. Որպեսզի որոշի՝ արդյոք վատ վերաբերմունքի առանձնահատուկ ձևը պե՞տք է որակվի որպես խոշտանգում, դատարանը պետք է ուշադրություն դարձնի այս հասկացության և անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքի՝ 3-րդ հոդվածում ամրագրված տարբերակումներին: Ինչպես և Եվրոպական դատարանը եզրակացրել է նախկինում, ակնհայտ է, որ կոնվենցիայի մտադրությունը եղել է տարբերակման միջոցով հատուկ խարան կիրառել կանխամտածված անմարդկային վերաբերմունքի նկատմամբ, որն առաջացնում է շատ լուրջ և դաժան տառապանք (տե՛ս «Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության» վճիռը…):

97. Միավորված ազգերի կազմակերպության Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 1987 թ. հունիսի 26-ին, նույնպես նման տարբերակում է մտցնում, ինչպես կարելի է տեսնել 1-ին և 16-րդ հոդվածներում:

> Հոդված 1.
> «1. Սույն կոնվենցիայի նպատակների համար «խոշտանգում» սահմանումը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից միայն կամ հատուկ են դրանց:

. . .

Հոդված 16, կետ 1.

«1. Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է իր իրավազորության ներքո գտնվող ցանկացած տարածքում կանխել դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի ու պատժի մյուս ձևերը, որոնք չեն դասվում 1-ին հոդվածում որպես խոշտանգում սահմանվածների շարքը, երբ այդպիսի գործողությունները կատարվում են պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող մեկ այլ անձի կողմից կամ նրանց հրահրմամբ կամ նրանց գիտությամբ կամ լուռ համաձայնությամբ: Մասնավորապես, 10, 11, 12 և 13-րդ հոդվածներում նշված պարտավորությունները կիրառվում են խոշտանգման մասին նշումը փոխարինելով դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի մասին նշումով:

98. Դատարանը կարծում է, որ տարբեր բժշկական արձանագրություններում նշված վնասվածքները … և դիմողի հայտարարությունները, որոնք վերաբերում են ոստիկանության կալանքի տակ գտնվելու ժամանակ նրա նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորումներին …ապացուցում են ֆիզիկական և անկասկած, հոգեկան ցավը և տառապանքը (չնայած ցավալի է, որ պարոն Սելմունիի վերաբերյալ հոգեբանական արձանագրությունն այդպես էլ չի տրամադրվել): Իրադարձությունների ընթացքը ևս ցույց է տալիս, որ ցավը և տառապանքը դիմողին պատճառվել են միտումնավոր, այդ թվում և նպատակ ունենալով ստիպել նրան խոստովանել, որ ինքը կատարել է այն հանցագործությունը, որում մեղադրվում է: Վերջապես, բժշկական արձանագրությունները, որոնք կցված են գործին, հստակ ցույց են տալիս, որ ոստիկաններն իրենց պարտականությունները կատարելիս թույլ են տվել բազմաթիվ բռնարարքներ:

99. Այն գործողությունները, որոնց դեմ բերվել է բողոքը, դիմողի մեջ առաջացրել են վախ, տառապանք և ստորակարգության զգացում, որը կարող էր ստորացնել և նսեմացնել նրան և, հնարավոր է, նաև կոտրել նրա ֆիզիկական և բարոյական դիմադրությունը: Այդ իսկ պատճառով դատարանը կարծում է, որ առկա են բավական լուրջ տարրեր, որոնք այս վերաբերմունքը դարձնում են անմարդկային և ստորացնող (տե՛ս *«Իռլանդիան ընդդեմ ՄԹ-ի»* վճիռը, էջ 66, պարբ. 167 և *«Թոմասին ընդդեմ Ֆրանսիայի»* վճռի էջ 42, պարբ. 115): Ամեն դեպքում դատարանը կրկնում է, որ ազատազրկման մեջ գտնվող անձի նկատմամբ ֆիզիկական ուժի կիրառումը, որը նրա վարքագծով պայմանավորված բացարձակ անհրաժեշտություն չէ և ստորացնում է մարդկային արժանապատվությունը, սկզբունքորեն 3-րդ հոդվածում նշված իրավունքի խախտում է (տե՛ս *«Ռիբիչն ընդդեմ Ավստրիայի» (Ribitsch v Austria)* գործի վերաբերյալ 1995 թ. դեկտեմբերի 4-ի վճիռը, շարք A, թիվ 336, էջ 26, պարբ. 38)….

100. Այլ կերպ ասած՝ դատարանի վարույթում գտնվող գործի առնչությամբ դեռևս պետք է հիմնավորվի՝ արդյոք պարոն Սելմունիին պատճառված «տառապանքը կամ ցավը» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով կարող են բնորոշվել որպես «դաժան»... Դատարանը կարծում է, որ այդ «դաժանությունը» նույնն է, ինչ 3-րդ հոդվածով նախատեսվող «նվազագույն դաժանությանը», որը, ինչ խոսք, հարաբերական է: Այն կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպես, օրինակ՝ այդ վերաբերմունքի տևողությունից, ֆիզիկական և հոգևոր ազդեցություններից և որոշ դեպքերում՝ զոհի սեռից, տարիքից, առողջական վիճակից և այլն:

101. Դատարանը նախկինում քննել է գործեր, որոնց կապակցությամբ եզրակացրել է, որ դրանք չեն կարող նկարագրվել այլ կերպ, քան որպես խոշտանգում (տե՛ս *«Ակույն ընդդեմ Թուրքիայի»* գործի վերաբերյալ վճիռը 2279, պարբ. 64 և *«Այդընն ընդդեմ Թուրքիայի»* գործի վերաբերյալ վճիռը, էջ 1892–3, պարբ. 83–4 և 86): Այնուամենայնիվ, ուշադրություն դարձնելով այն փաստին, որ կոնվենցիան «գործող փաստաթուղթ է, որը պետք է մեկնաբանվի ըստ այսօրվա հանգամանքների» (տե՛ս այլ աղբյուրների թվում նաև հետևյալ վճիռները. *«Թայրերն ընդդեմ ՄԹ-ի» (Tyrer v UK),* 25 ապրիլի 1978 թ., շարք A, թիվ 26, էջ 15, պարբ. 31, *«Սերինգն ընդդեմ ՄԹ-ի» (Soering v UK),* էջ 40, պարբ. 102 և *«Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի» (Loizidou v Turkey),* 23 մարտի 1995 թ., շարք A, թիվ 310, էջ 26, պարբ. 71), դատարանը համարում է, որ որոշ գործողություններ, որոնք նախկինում դասակարգվել են որպես «անմարդկային և նվաստացնող վերաբերմունք», այլ ոչ թե «խոշտանգում», հետագայում կարող են դասակարգվել այլ կերպ: Նա գտնում է, որ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ոլորտում գործող վերին աստիճանի բարձր չափորոշիչը համապատասխանաբար և անխուսափելիորեն պահանջում է ավելի մեծ խստությամբ գնահատել ժողովրդավարական հասարակությունների հիմնարար արժեքների խախտումները:

102. Դատարանն ապացուցված է համարում, որ պարոն Սելմունիին հասցվել են մեծ թվով հարվածներ: Անկախ անձի առողջական վիճակից, կարելի է ենթադրել, որ հարվածների նման սաստկությունը կարող է զգալի ցավի պատճառ լինել: Բացի այդ, հարվածը մարմնի վրա անպայման հետք չի թողնում: Այնուամենայնիվ, դոկտոր Գարնիեի 1991 թ. դեկտեմբերի 7-ի բժշկական արձանագրությունից կարելի է տեսնել … որ պարոն Սելմունիի մարմնի բոլոր մասերում նկատելի են բռնության հետքեր:

103. Դատարանը նաև նկատում է, որ դիմողին քարշ են տվել՝ մազերից բռնած, ստիպել են վազել միջանցքով, որի երկու կողմերում կանգնած ոստիկանները խանգարել են նրան, ստիպել են ծնկի գալ երիտասարդ կնոջ առջև, որին ինչ-որ մեկն

ասել է. «Նայի՛ր, դու հիմա ինչ-որ մեկի դայլայլն ես լսելու»: Որից հետո այդ նույն ոստիկանության աշխատակիցը ցույց է տվել նրան իր առնանդամը և նախքան նրա վրա միզելը ասել. «Նայի՛ր, ծծիր այն»: Որից հետո սպառնացել է զոռալամպով, այնուհետև ներարկիչով … Բացի վերը նշված գործողությունների բռնի բնույթից, դատարանը պարտավոր է նաև նկատել, որ դրանք զազրելի են և կարող են ստորացնել յուրաքանչյուր մարդու՝ անկախ իրավիճակից:

104. Վերջապես, դատարանը նկատում է, որ վերը նշված իրադարձությունները չեն սահմանափակվել ոստիկանությունում կալանքի տակ գտնվելու որևէ ժամանակահատվածով և, թեպետ դա չի նշվում որպես արդարացում, ուժգնացրել են լարվածությունը և զգացմունքները, որոնք կարող էին հանգեցնել նման չափազանցված դրսևորումների: Հստակ հիմնավորվել է, որ պարոն Սելմունին հարցաքննության օրերին ենթարկվել է պարբերական ծեծի…

105. Այս հանգամանքներում դատարանն ապացուցված է համարում, որ ֆիզիկական և հոգեկան բռնության ամբողջությունը, որը կիրառվել է դիմողի անձի նկատմամբ, նրան «սաստիկ» ցավ և տառապանք է պատճառել և եղել է առանձնապես լուրջ և դաժան բնույթի: Նման վարքագիծը կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով պետք է համարվի խոշտանգում:

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուստի տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում. . .

Հաշվի առնելով «կոնվենցիայի խախտումների ծայրահեղ լրջությունը, որի զոհն է եղել պարոն Սելմունին» (պարբ. 123), դատարանը նրան նշանակել է 500,000 ֆրանկի անձնական և ոչ նյութական վնասի արդար փոխհատուցում:

Սա եղել է առաջին դեպքը, երբ դատարանը (ինչպես նախկինում մասնակի գործող դատարանը, այնպես էլ ներկա դատարանը) որոշել է, որ Եվրոպական Միության անդամ պետությունում տեղի են ունեցել խոշտանգման արարքներ: Վճիռը ցույց է տալիս, որ պաշտոնյաների կողմից վատ վերաբերմունքի զոհերի համար փաստական անհրաժեշտություն է նրանց ֆիզիկական և հոգեկան վիճակի մասին համապարփակ բժշկական արձանագրությունների արագ ձեռքբերումը: Եթե նման արձանագրություններ չկան, ապա դատարանը ստիպված է իր կարողության սահմաններում որոշել՝ արդյոք գոյություն ունեցե՞լ է վատ վերաբերմունք, և որո՞նք են դրա ազդեցությունները:

5 Մեծ պալատը մեջբերում է կատարել *Սելմունիի* գործից, երբ դատարանը միաձայն որոշել է, որ ժանդարմների կողմից երիտասարդ տղամարդու նկատմամբ կիրառված ֆիզիկական բռնությունները (որոնց հետևանքով նա ստացել է զգալի մնայուն ուղեղի վնասվածք) և նրան հիվանդանոց տեղափոխելու երեսունվեցժամյա ուշացումը համատեղ խոշտանգման դեպք են *«Իլհանն ընդդեմ Թուրքիայի» (Ilhan v Turkey)* գործում, 2000 թ. հունիսի 27-ի վճիռ (տե՛ս նաև վերը՝ էջ 162 [A3]):

6 Մի ուրիշ անգամ մեծ պալատը, տասնվեց կողմ և մեկ դեմ ձայներով, որոշել է, որ Ռուսաստանը, ի թիվս այլոց, պատասխանատու է նաև «Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության» անջատողական վարչակարգի կողմից առաջին դիմողին խոշտանգման ենթարկելու համար *«Իլաշկուն և այլք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի» (Ilascu and Others v Moldova and Russia)* գործում (վերը՝ էջ 73-74 [հոդված 1]):

434. Դիմողը դատապարտվել է մահապատժի 1993 թ. դեկտեմբերի 9-ին և անազատության մեջ պահվել մինչև 2001 թ. մայիսի 5-ն ազատ արձակվելը:

Դատարանը կրկնում է, որ կոնվենցիան պարտադրող ուժ չունի պայմանավորվող պետություններում տեղի ունեցած այլ իրադարձությունների համար, որոնք կատարվել են նախքան դրա ուժի մեջ մտնելը. Մոլդովայի համար համապատասխան տարեթիվը 1997 թ. սեպտեմբերի 12-ն է, իսկ Ռուսաստանի Դաշնության համար՝ 1998 թ. մայիսի 5-ը: Այնուամենայնիվ, դիմողի վրա կալանքի պայմանների ազդեցությունը գնահատելու համար, որը քիչ թե շատ նույնն է եղել նրա՝ բանտում գտնվելու ողջ ժամանակահատվածում, դատարանը կարող է նաև անդրադարձ կատարել խնդրո առարկա ողջ ժամանակահատվածին, ներառյալ այն հատվածին, որը նախորդել է պետություններից յուրաքանչյուրում կոնվենցիայի ուժի մեջ մտնելուն:

435. Այն տևական ընթացքը, որի ժամանակ նա եղել է մահապատժի դատապարտվածների ցուցակում, դիմողը, վախենալով մահապատժից, մշտապես ապրել է մահվան վախը սրտում: Ի վիճակի չլինելով կիրառելու իրավունքի պաշտպանության միջոցներ՝ նա տարիներ շարունակ, ներառյալ՝ կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո, ապրել է անազատության այնպիսի պայմաններում, որոնք անընդհատ հիշեցրել են նրան դատավճռի ի կատար ածման հնարավորության մասին:

Մասնավորապես՝ դատարանը նկատում է, որ Մոլդովայի խորհրդարանին 1999 թ. մարտին նամակ ուղարկելուց հետո Տիրասպոլի բանտի բանտապահները սպառնացել են սպանել պարոն Իլաշկուին և ենթարկել են նրան բարբարոսական ծեծի: Այդ միջադեպից հետո նրան երկու օրով զրկել են ուտելիքից և երեք օրով՝ լույսից:

Ինչ վերաբերում է մահապատժի թատերական նմանակմանը, որը տեղի է ունեցել նախքան կոնվենցիայի ուժի մեջ մտնելը, ապա որևէ կասկած չկա, որ նման բարբարոսական գործողությունների ազդեցությունը անազատության մեջ գտնվող դիմողի վրա պետք է լիներ իր հեռանկարային մահապատժի կապակցությամբ ավելի մեծ անհանգստության զգացողությունը:

436. Նրա զգացած ցավը և տառապանքն ավելի են խորացել այն պատճառով, որ կոնվենցիայի շրջանակներում մահապատիժը իրավական հիմքեր կամ օրինականություն չի ունեցել: «ՄՄՀ գերագույն դատարանը, որն ընդունել է պարոն Իլաշկուի վճիռը, ստեղծվել է մի պետության կողմից, որի օրինականությունը ճանաչված չէ միջազգային իրավունքով, և որը չի ճանաչվել միջազգային հանրության կողմից: «Դատարանը» պատկանում է մի համակարգի, որի մասին դժվար է ասել, որ գործում է սահմանադրական և իրավական հիմքերի վրա և արտացոլում կոնվենցիայի հետ համատեղելի դատական ավանդույթներ: Սա փաստվում է հանգամանքների ակնհայտ կամայական բնույթով (այն հակադիր կողմերը չեն վիճարկել), որը նկարագրված է և վերլուծված ԵԱՀԿ-ի հաստատությունների կողմից:

437. Մոլդովայի Գերագույն դատարանի վճիռը, չեղյալ հայտարարելով դիմողի պատիժը, հաստատել է, որ 1993 թ. դեկտեմբերի 9-ի վճիռը եղել է անօրինական և կամայական:

438. Ինչ վերաբերում է դիմողի կալանքի պայմաններին, դատարանը նկատում է, որ մահապատժի դատապարտվածների ցուցակում ընդգրկվելուց հետո պարոն Իլաշկուն կալանքի տակ է գտնվել ութ տարի շարունակ՝ 1993 թվականից մինչև 2001 թ. մայիսին ազատ արձակվելը, որտեղ նա գտնվել է խիստ մեկուսի պայմաններում: Նա շփում չի ունեցել մյուս բանտարկյալների հետ, որևէ լուր չի ստացել դրսից, քանի որ նրան թույլ չեն տվել նամակներ ուղարկել և ստանալ: Նա իրավունք չի ունեցել շփում ունենալու իր փաստաբանի հետ կամ կանոնավորապես տեսակցելու իր ընտանիքի հետ: Նրա խուցը չի ջեռուցվել նույնիսկ խիստ ձմեռներին և չի ունեցել բնական լույսի կամ օդափոխության հնարավորություն: Փաստերը ցույց են տալիս, որ պարոն Իլաշկուն, որպես պատիժ, զրկված է եղել նաև սննդից, և հանձնուկ ստանալու սահմանափակումների պարագայում դրսից ստացված ուտելիքը նույնիսկ պիտանի չի եղել: Դիմողը ցնցուղ կարող էր ընդունել խիստ հազվադեպ՝ հաճախ ստիպված լինելով մի քանի ամիս սպասել մինչև հաջորդ ցնցուղի օրը: Այս առումով դատարանը հղում է կատարում 2000 թ. Մերձդնեստր այցից հետո ԽԿԿ-ի զեկույցի եզրակացություններին, որում նա այդքան տարիների մեկուսացումը նկարագրել է որպես որևէ արդարացում չունեցող:

Դիմողի կալանքի պայմանները քայքայիչ ազդեցություն են ունեցել նրա առողջության վրա, որը վատացել է այն տարիների ընթացքում, որոնք նա անցկացրել է բանտում: Այսպիսով, նա զուրկ է եղել պատշաճ խնամքից, կանոնավոր բժշկական զննությունից և բուժումից և սննդարար կերակուրի ընդունումից: Բացի այդ, քանի որ գործել են հանձնուկ ստանալու սահմանափակումներ, չեն կարողացել նրա առողջական վիճակը բարելավելու համար դեղեր և սնունդ ուղարկել:

439. Դատարանը մտահոգությամբ անդրադառնում է նամակագրության և բանտեր այցերի առումով կամայական լիազորություններ տվող կանոնների գոյությանը, որոնք կարող էին կիրառվել ինչպես բանտի պաշտոնյաների, այնպես էլ իշխանության այլ մարմինների կողմից: Դատարանը շեշտում է, որ այդ կանոնները կամայական են և անհամատեղելի չարաշահումների դեմ ուղղված համապատասխան և արդյունավետ երաշխիքների հետ, որոնք պետք է բնորոշ լինեն ժողովրդավարական հասարակություններում գործող ցանկացած բանտային համակարգի: Բացի այդ, տվյալ դեպքում այդ կանոնները ավելի են վատթարացրել դիմողի կալանքի պայմանները:

440. Դատարանը եզրակացնում է, որ դիմողին նշանակված մահապատիժը, գումարվելով նրա ապրելու պայմաններին և վավերացումից հետո նրա նկատմամբ դրսևորված վերաբերմունքին, առանձնապես լուրջ և դաժան բնույթ են ունեցել և, համապատասխանաբար, պետք է դիտարկվեին որպես կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով խոշտանգման ակտեր:

441. Քանի որ պարոն Իլաշկուն անազատության մեջ է գտնվել 1998 թ. մայիսի 5-ին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Ռուսաստանի Դաշնությունում ուժի մեջ է մտել կոնվենցիան, վերջինս պատասխանատվություն է կրում վերը նշված պատճառների, …նրա կալանքի պայմանների, նրա նկատմամբ վերաբերմունքի և բանտում նրան պատճառված տառապանքի համար:

Պարոն Իլաշկուն ազատ է արձակվել 2001 թ. մայիսին, և միայն այդ ժամանակից է, որ բողոքարկվող գործողությունների առնչությամբ առաջանում է Մոլդովայի՝ իր դրական պարտավորությունների չկատարման պատասխանատվության հարցը...

Հետևաբար, պարոն Իլաշկուի նկատմամբ Մոլդովան թույլ չի տվել կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

442. Եզրափակելով՝ պարոն Իլաշկուի նկատմամբ կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումը մեղսագրելի է միայն Ռուսաստանի Դաշնությանը:

Վերոհիշյալ եզրակացություններն իրավամբ չարաշահումների սահմռկեցուցիչ թվարկումներ են:

7 Պալատը միահամուռ եզրակացրել է, որ բարոյապես առողջ կալանավորի կերակրումն այն ժամանակ, երբ նա գտնվել է հացադուլի մեջ (որով նա բողոքում էր իր կալանքի տևողությունից և պայմաններից), եղել է խոշտանգում *«Նևմերժիցկին ընդդեմ Ուկրաինայի» (Nevmerzhitsky v Ukraine)* գործի վերաբերյալ 2005 թ. ապրիլի 5-ի վճռում:

94. Դատարանը կրկնում է, որ այն գործողությունը, որը բժշկության հայտնի սկզբունքների տեսանկյունից բժշկական անհրաժեշտություն է, չի կարող, սկզբունքորեն, համարվել անմարդկային և նվաստացնող: Նույնը կարելի է ասել բռնի կերակրման մասին, որի նպատակն է փրկել ուտելիքից գիտակցաբար հրաժարվող կալանավորի կյանքը: Կոնվենցիայի մարմինները, այնուամենայնիվ, պետք է համոզվեն, որ բժշկական անհրաժեշտությունը համոզիչ կերպով գոյություն է ունեցել (տե՛ս *«Հերցեգֆալվին ընդդեմ Ավստրիայի» (Herczegfalvy v Austria*), 1992 թ. սեպտեմբերի 24-ի վճիռ, շարք A, թիվ 244, էջ 26, պարբ. 83): Բացի այդ, դատարանը պետք է հավաստիանա, որ բռնի կերակրման ընթացակարգային երաշխիքները պահպանվել են: Նաև այն ձևը, որով դիմողն իր հայտարարած հացադուլի ժամանակ ստիպողաբար կերակրվել է, չպետք է անցնի կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակներում դատարանի նախադեպային իրավունքով սահմանված ուժգնության նվազագույն շեմը: Դատարանը հաջորդաբար քննարկելու է այս տարրերը:

95. Նախ՝ դատարանը նկատում է, որ դիմողը չի պահանջել, որ իրեն պետք է թողնեին առանց ուտելիքի կամ բուժօգնության՝ անկախ հնարավոր մահվան հետևանքից: Այնուամենայնիվ, նա ասել է, որ բռնի կերակրման բժշկական անհրաժեշտություն չի եղել, քանի որ բժշկական զննություններ, համապատասխան հետազոտություններ կամ այլ փաստաթղթեր չեն եղել, որոնք կհիմնավորեին այդ անհրաժեշտությունը: Նա հայտնել է, որ իրեն բռնի կերակրելու որոշումը հիմնված է եղել իր մեզի մեջ առկա ացետոնի մակարդակով: Նա այնուհետև հայտնել է, որ բռնի կերակրումը նպատակ է ունեցել ստորացնել և պատժել իրեն, քանի որ դրա նպատակը եղել է ստիպել իրեն դադարեցնել հացադուլը և իր մերժելու դեպքում ենթարկել դաժան ֆիզիկական տանջանքի:

96. Դատարանը քննարկում է կառավարության բացատրությունը անազատության մեջ գտնված դիմողի բավարար առողջական վիճակի մասին…. Հաշվի առնելով, որ կառավարությունը չի ներկայացրել «բժշկական հանձնաժողովի կազմած գրավոր արձանագրությունը, որը կմատնանշեր, որ տեղի է ունեցել դիմողի կյանքին սպառնացող առողջական վիճակի վատացում», ինչպես նաև չի ներկայացրել «[կալանքի վերցնելու] հաստատության ղեկավարի որոշումը», որոնք պարտադիր են եղել համաձայն 1992 թ. մարտի 4-ի որոշման, …դատարանը եզրակացնում է, որ կառավարությունը ցույց չի տվել, որ ազգային մարմինները դիմողին բռնի կերակրելու «բժշկական անհրաժեշտությունը» հիմնավորել են: Այդ իսկ պատճառով, կարելի է ենթադրել, որ բռնի կերակրումը եղել է կամայական: Ընթացակարգային երաշխիքները չեն հարգվել, երբ, հակառակ դիմողի ուտելիքից գիտակցաբար հրաժարվելու և կամքի, նա ենթարկվել է բռնի կերակրման: Հետևաբար, չի կարելի ասել, որ իշխանությունների՝ բռնի ուժով կերակրելու գործողությունները բխել են դիմողի լավագույն շահից:

97. Ինչ վերաբերում է դիմողին կերակրելու եղանակին, հաշվի առնելով կողմերի բացատրությունները, դատարանը համարում է, որ իշխանությունները պահպանել են որոշման մեջ ամրագրված բռնի կերակրման ձևը: Այնուամենայնիվ, ինքնին կիրառված սահմանափակումները՝ ձեռնաշղթաները, բերանը լայնացնող սարքը, հատուկ ռետինե խողովակը, որը դիմադրություն ցույց տալու ժամանակ ուժի գործադրմամբ մտցվել է կերակրափողի մեջ, կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով համարվել են խոշտանգում, եթե դա արվել է առանց բժշկական անհրաժեշտության առկայության….

98. Դատարանի վարույթում գտնվող գործի ղեպքում դատարանը կարծում է, որ դիմողին բռնի կերակրելը, որի համար կառավարությունը բժշկական հիմնավորումներ չի բերել, այնպիսի դաժան բնույթի վերաբերմունք է, որը երաշխավորում է, որ այն որակվի որպես խոշտանգում:

99. Հաշվի առնելով վերոնշյալը՝ դատարանը կարծում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

Հետևաբար, պետությունները պետք է կարողանան ցույց տալ, որ ազատազրկված անձի կյանքի պահպանության նպատակով առկա է բռնի կերակրելու բժշկական անհրաժեշտություն: Պատասխանող պետությունը չի ապացուցել, որ այն ժամանակ, երբ որոշում է ընդունվել բռնի կերակրել դիմողին, գոյություն են ունեցել նման ծայրահեղ հանգամանքներ: Բացի այդ, չի պահպանվել ներքին գործերի նախարարի որոշման մեջ ամրագրված համապատասխան ներքին ընթացակարգը, որը վերաբերում է կալանավորներին բռնի կերակրելու գործողությունների կարգավորմանը: Նախաստեղծ դատարանի կողմից հոգեկան հիվանդ կալանավորի բռնի կերակրման օրինականության քննության համար տե՛ս *«Հերցեգֆալվին ընդդեմ Ավստրիայի» (Herczegfalvy v Austria* A.244) ստորև՝ էջ 194:

8 *«Միխեևն ընդդեմ Ռուսաստանի» (Mikheyev v Russia)* գործի վերաբերյալ 2006 թ. հունվարի 26-ի վճռով պալատը միաձայն ընդունել է, որ կալանքի տակ գտնվող և ոստիկանության՝ երիտասարդ աշխատակցի (ծառայությունից ազատված) հարցաքննությունը, որի ժամանակ կիրառվել է ականջների միջով էլեկտրական լարում փոխանցող սարք (որը սուր ցավ է պատճառել վերջինիս՝ դրդելով նրան ինքնասպանության նպատակով ցատկել ոստիկանության բաժնի երկրորդ հարկի պատուհանից), խոշտանգման դեպք է:

135. . . . Դատարանը պատրաստ է ընդունելու, որ կալանքի տակ գտնվելու ժամանակ դիմողը պետության գործակալների կողմից ենթարկվել է բռնության, որի նպատակն է եղել նրանից խոստովանություններ կամ տեղեկություններ կորզելն այն իրավազանցությունների վերաբերյալ, որոնց մեջ նա մեղադրվել է: Նրա նկատմամբ դրսևորած դաժան վերաբերմունքն առաջացրել է այնպիսի սուր ֆիզիկական և հոգեկան ցավ, որ դիմողը փորձել է ինքնասպանություն գործել, որի հետևանքով ձեռք է բերել ընդհանուր բնույթի և ցմահ ֆիզիկական հաշմանդամություն: Այս առումով, հաշվի առնելով կոնվենցիայի նախաղեպային իրավունքը և, մասնավորապես, դաժանության սաստկության չափանիշները և բռնության նպատակը, դատարանը եզրակացնում է, որ խնդրո առարկա դաժան վերաբերմունքը կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով հավասարազոր է եղել խոշտանգման (այլ աղբյուրների թվում տե՛ս *«Իլհանն ընդդեմ Թուրքիայի» (Ilhan v Turkey)* [GC], թիվ 22277/93, պարբ. 85, ECHR 2000-VII):

Հաշվի առնելով այն փաստը, որ նա կոտրել է իր ողնաշարը և հետագայում գամվել անվասայլակին, պալատը նրան նշանակել է 130000 եվրոյի փոխհատուցում՝ նյութական վնասի համար (եկամտի կորուստ և բուժում) և 120000 եվրոյի փոխհատուցում՝ ոչ նյութական վնասի համար:

Անմարդկային վերաբերմունք

Ֆիզիկական բռնություն

Ինչպես արդեն տեսանք *«Իռլանդիան ընդդեմ Մեծ Բրիտանիայի»*-ի գործում (վերը՝ էջ 151), պետության պաշտոնյաների կողմից կալանավորներին ֆիզիկական բռնության ենթարկելը կարող է հավասարազոր լինել 3-րդ հոդվածում նշված անմարդկային վերաբերմունքին: Օրինակ՝ պալատական զորանոցներում (Palace Barracks) անվտանգության ուժերի կողմից կալանավորներին ոտքով կամ բռունցքով հարվածելը դատարանը համարել է անմարդկային վերաբերմունք, քանզի այդ վատ վերաբերմունքը հանգեցրել է սաստիկ տառապանքի և ֆիզիկական վնասվածքների (պարբ. 174):

«Թոմասին ընդդեմ Ֆրանսիայի» (Tomasi v France) A.241-A (1992) 15 EHRR 1
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

1982 թ. Կորսիկայի ազգային ազատագրական ճակատը (շարժում, որն ուղղված էր Ֆրանսիայից անկախանալուն) իր վրա է վերցրել Արտասահմանյան լեգեոնի հանգստի կենտրոնի վրա զինված հարձակման պատասխանատվությունը, որի ժամանակ մեկ զինվոր սպանվել է, և մեկը՝ լրջորեն վիրավորվել: Դիմողը խանութպան է, որն ապրում է Կորսիկայի նույն տարածաշրջանում և եղել է Կորսիկայի քաղաքական կազմակերպության ակտիվ անդամ: Ոստիկանությունը կասկածել է դիմողին հանգստի կենտրոնի վրա կազմակերպված հարձակմանը մասնակցելու մեջ և 1983 թ. մարտի 23-ին ձերբակալել: Նրան տեղափոխել են Բաստիայի ոստիկանության բաժին, որտեղ նա պահվել է մինչև մարտի 25-ի հարցաքննությունը: Այս ժամանակահատվածում, դիմողի ասելով, ոստիկանները նաև հարվածել են նրա ստամոքսին, ապտակել, ոտքով հարվածել նրան և մի քանի ժամ շարունակ մերկ կանգնեցրել պատուհանի առջև: Բժշկական արձանագրությունները հաստատել են, որ նա մարմնի տարբեր հատվածներում ունեցել է կապտուկներ: Այնուհետև նա պահվել է կալանքի տակ հետաքննող դատավորի որոշմամբ և 1988 թ. հոկտեմբերին արդարացվել իրեն մեղսագրվող սպանության արարք գործելուց: Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ ասելով, որ ի թիվս այլոց, ինքը ոստիկանության կողմից ենթարկվել է անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի: Հանձնաժողովը, տասներկու կողմ և երկու դեմ ձայներով, որոշել է, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում:

Բ. ԲՈՂՈՔԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

107. Այս գործի հանգամանքներում պարոն Թոմասիի բողոքում արծարծվել է երկու հարց, որոնք թեպետ առանձին հարցեր են, սակայն սերտորեն կապված են իրար: Առաջին՝ ի՞նչ պատճառահետևանքային կապ կա ոստիկանության կալանքի տակ գտնվելու ժամանակ դիմողի նկատմամբ ենթադրյալ վերաբերմունքի և հետագայում վնասվածքների (որոնք ավելի ուշ նկատվել են դատական քննությանը մասնակցող դատավորի և բժիշկների կողմից) միջև: Եվ երկրորդ, եթե դրա անհրաժեշտությունը կա, ապա ի՞նչ լրջություն ունի դրսևորած վերաբերմունքը:

1. ԲՈՂՈՔԱՐԿՎՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԵՎ ՆԿԱՏՎԱԾ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԸ

108. Ըստ դիմողի՝ ոստիկանությունում կալանքի տակ պահվելու վերջին շրջանում դատական քննությանը մասնակցող Բաստիայի դատավորի 1983 թ. մարտի 25-ի դիտողությունները և տարբեր բժիշկների կազմած արձանագրությունները …հիմնավորում են նրա ասածները, չնայած նա ասել է, որ ափսոսում է, որ ոստիկանության ղեկավարությունը չի կարողացել տրամադրել 1983 թ. ապրիլի 2-ին Բաստիայի հիվանդանոցում արված ռենտգենյան լուսանկարները… Նրա մարմնի վրա եղել են բազմաթիվ նշաններ, որոնք ունեցել եմ միայն մեկ ծագում. այն է՝ քառասուն ժամից մի փոքր ավելի նրան հարցաքննող ոստիկանության որոշ աշխատակիցների գործած բռնությունը: Նրան ապտակել են, խփել ոտքերով և բռունցքներով, հարվածներ տեղացել նրա թիակներին, ստիպել ձեռքերը մեջքին կապված վիճակում և առանց հենարանի երկար ժամանակ կանգնած մնալ: Նրա վրա թքել են, ստիպել մերկ կանգնել բաց պատուհանի առջև, զրկել են ուտելիքից, սպառնացել զենքով և այլն:

109. Կառավարությունն ընդունել է, որ իրենք չեն կարող բացատրություններ տալ վնասվածքների պատճառի մասին, սակայն պնդել է, որ դրանք չեն առաջացել պարոն Թոմասիի կողմից բողոքարկվող վերաբերմունքից: Նրանց կարծիքով՝ բժշկական տեղեկանքներում նշված թեթև կապտուկները և քերծվածքները բնավ չեն համապատասխանում դիմողի նկարագրած բռնության ակտերին: Բաստիայի բանտի գլխավոր բժշկական մասնագետի 1989 թ. հուլիսի 4-ի տեղեկանքը կազմվել է իրադարձությունից բավականին երկար ժամանակ անց և լիովին հակասում է ավելի վաղ տրված տեղեկանքներին: Հարցաքննությունների ժամանակագրությունը, որը որևէ ձևով չի վիճարկվել դիմողի կողմից, չի համապատասխանում պնդումներին: Վերջապես, հինգ այլ անձինք, որոնք կալանքի տակ են պահվել ոստիկանությունում, ոչինչ չեն նկատել և չեն լսել, չնայած նրանցից մեկը նշել է, որ պարոն Թոմասին զրկվել է ատամից (այս փաստը չի նշվել բժշկի կողմից մինչև վեց տարին անցնելը): Մի խոսքով, հստակ կասկածներ են եղել, որոնք բացառել են պատճառահետևանքային կապի գոյության կանխավարկածը:

110. Հանձնաժողովի նման, դատարանն իր տեսակետները կառուցել է մի շարք հանգամանքների վրա:

Առաջին՝ որևէ մեկը չի ասել, որ դիմողի մարմնի վրա նկատված բծերը եղել են նախքան նրան կալանքի տակ վերցնելը կամ կարող էին առաջացած լինել դիմողի կողմից իր դեմ ուղղված գործողությունից կամ փախուստի փորձ կատարելիս:

Բացի այդ, երբ նա առաջին անգամ ներկայացվել է հետաքննությանը մասնակցող դատավորին, վերջինս ուշադրություն է դարձրել նրա կրծքավանդակի և ականջի վրա: Դատավորն անմիջապես գրառում է կատարել դրա մասին և նշանակել փորձագետ…

Բացի այդ, չորս տարբեր բժիշկներ, որոնցից մեկը բանտի աշխատակից էր, զննել են մեղադրյալին նրա ոստիկանական կալանքի ժամկետի ավարտից հետո: Նրանց տեղեկանքները պարունակում են ճշգրիտ և համընկնող բժշկական գրառումներ և նշում վնասվածքների առաջացման տարեթիվը, որը համընկնում է ոստիկանությունում կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածին…

111. Այս եզրակացությունից հետո անհարկի է դառնում, որ դատարանը հարցում անի այլ գործողությունների վերաբերյալ, որոնք, ըստ բողոքի, կատարել են պաշտոնյաները:

2. ԲՈՂՈՔԱՐԿՎՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՇԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

112. Հենվելով *«Իռլանդիան ընդդեմ ՄԹ-ի»* 1978 թ. հունվարի 18-ի վճռի վրա (շարք A, թիվ 25)՝ դիմողը պնդել է, որ իրեն հասցված հարվածները նշանակել են անմարդկային և նվաստացնող վերաբերմունք: Դրանք ոչ միայն ուժգին ֆիզիկական և հոգեկան ցավ են պատճառել նրան, այլև նրա մեջ առաջացրել են վախի, տառապանքի և ստորակարգության զգացում, որ կարող էր նվաստացնել նրան և կոտրել նրա ֆիզիկական և բարոյական դիմադրությունը….

113. Հանձնաժողովը շեշտել է ոստիկանության կալանքի տակ գտնվող անձի խոցելիության հանգամանքը և արտահայտել իր զարմանքը դիմողին հարցաքննելու համար ընտրված ժամանակների կապակցությամբ: Թեպետ նկատված վնասվածքները միգուցե հարաբերականորեն թեթև էին, դրանք, այնուամենայնիվ, եղել են ազատազրկման մեջ գտնվող անձի նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրման նշաններ և այդ իսկ պատճառով նրա ստորադաս վիճակի նշաններ: Ուստի այդ վերաբերմունքը եղել է ինչպես անմարդկային, այնպես էլ նվաստացնող:

114. Մյուս կողմից՝ ըստ կառավարության, դատարանի նախադեպային իրավունքով պահանջվող «դաժանության նվազագույն մակարդակը» (տե՛ս *«Իռլանդիան ընդդեմ ՄԹ-ի»* գործով վերը մեջբերված վճիռը և *«Թայրերն ընդդեմ ՄԹ-ի» (Tyrer v the UK)* վճիռը, 1978 թ. ապրիլի 25, շարք A, թիվ 26) չի ապահովվել: Այս գործում անհրաժեշտ է եղել հաշվի առնել ոչ միայն այն հանգամանքը, որ վնասվածքները եղել են թեթև, այլև գործին առնչվող այլ փաստերը, ներառյալ պարոն Թոմասիի երիտասարդ տարիքը և առողջական լավ վիճակը, հարցաքննությունների չափավոր տևողությունը (տասնչորս ժամ, որից երեքը՝ գիշերվա ընթացքում), Կորսիկայում այդ ժամանակ զարգացող «առանձնահատուկ հանգամանքները» և այն փաստը, որ նա մեղադրվել է ահաբեկչական հարձակմանը մասնակցելու մեջ, որի հետևանքով մեկ տղամարդ մահացել է և մեկ ուրիշը՝ ստացել ծանր վնասվածքներ: Կառավարության կարծիքով՝ հանձնաժողովի կողմից 3-րդ հոդվածի մեկնաբանությունն այս դեպքում հիմնված է եղել այս դրույթի նպատակի բյուրըմբռնման վրա:

115. Դատարանը չի կարող ընդունել այս փաստարկը… Նա բավարար է համարում, որ լրիվ անկախ բժշկական մասնագետների կազմած բժշկական տեղեկանքները և զեկույցները վկայում են պարոն Թոմասիին հասցված բազմաթիվ հարվածների և դրանց ուժգնության մասին. սրանք այն երկու տարրերն են, որոնք բավականաչափ լուրջ են, որպեսզի այդ վերաբերմունքը դառնա անմարդկային և նվաստացնող: Քննության պահանջները և անուրանալի դժվարությունները, որոնք բնորոշ են հանցավորության և, մասնավորապես, ահաբեկչության դեմ պայքարին, չեն կարող հանգեցնել անձանց ֆիզկական անձեռնմխելիության պաշտպանության սահմանափակումների:

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

116. Հետևաբար, տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում….

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

Որոշում է, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում….

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են նախագահ Ռիսդալը և դատավորներ Բերնհարդտը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Փեթիթին, Ռուսոն, Շպիլմանը, Դե Մեյերը և Մորինիյան:

Դատարանը 700.000 ֆրանկի փոխհատուցում է նշանակել դիմողին՝ որպես նյութական և ոչ նյութական վնասի փոխհատուցում, որից 300.00 ֆրանկի փոխհատուցումն արդեն վճարվել է նրան Ֆրանսիայի իշխանությունների կողմից:

Վճիռը ցույց է տալիս, որ պետության պաշտոնյաների կողմից կալանավորի նկատմամբ զգալի ֆիզիկական բռնությունը, նույնիսկ երբ լուրջ երկարաժամկետ վնասվածքներ չեն առաջանում, դասակարգվում են որպես անմարդկային վերաբերմունք: Իրոք, իր համընկնող կարծիքում դատավոր Դե Մեյերը ավելի հեռուն է գնացել՝ հայտնելով հետևյալ տեսակետը.

> Անազատության մեջ գտնվող անձի նկատմամբ ֆիզիկական ուժի որևէ գործադրում, որը նրա վարքագծով պայմանավորված ծայրահեղ անհրաժեշտություն չէ (օրինակ՝ փախուստի փորձ անելու կամ սեփական անձի դեմ ուղղված գործողություններ կատարելու դեպքում…), խախտում է մարդկային արժանապատվությունը և այդ իսկ պատճառով պետք է համարվի որպես կոնվենցիայի 3-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտում:

2 Ավելի ուշ քննարկված *«Ռիբիչն ընդդեմ Ավստրիայի» (Ribitsch v Austria)* գործում A.336 (1995) 21 EHRR 573 դատարանը նկատել է, որ չնայած «…սկզբունքորեն, իր խնդիրը չէ ազգային դատարանների կողմից փաստերի գնահատումը փոխարինել իր կատարած փաստերի գնահատումով …ազգային դատարանների եզրակացությունները պարտադիր չեն իր համար, ինչպես որ չեն հանձնաժողովի որոշումները…. Դատարանը պետք է ավելի մեծ զգոնություն դրսևորի, երբ գործ է ունենում կոնվենցիայի 3-րդ հոդվածում շարադրված իրավունքների հետ, քանի որ այդ հոդվածը, բացարձակ իմաստով, արգելում է խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ զոհի վարքագծից» (պարբ. 32): Դատարանը՝ մեծամասնական կազմով՝ վեց կողմ և երեք դեմ ձայներով, պաշտպանել է դիմողի՝ անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի մասին պնդումը, չնայած ոստիկանության նշված ծառայողներն արդարացվել են Ավստրիայի դատարանների կողմից: Դիմողը ձերբակալվել է, և նրա տանը խուզարկություն է կատարվել: Վիեննայի Դաշնային ոստիկանության գրասենյակի անվտանգության բաժնի աշխատակիցները հայտնաբերել են 0.5 գրամ հաշիշ և կասկածներ ունեցել, որ նա հերոին է մատակարարել թմրանյութերի գերդեղաչափի պատճառով մահացած մարդկանց: Ռիբիչը կալանքի տակ է վերցվել անվտանգության բաժնի կենտրոնում 1988 թ. մայիսի 31-ի ժամը 12:30-ից մինչև 1988 թ. հունիսի 2-ի առավոտյան ժամը 9:30-ը: Ըստ Ռիբիչի՝ ոստիկանությունում նրան հարցաքննելու ժամանակ մի քանի ոստիկաններ ֆիզիկական բռնություն են գործադրել նրա նկատմամբ՝ բռունցքով հարվածելով նրա գլխին, երիկամներին և թևին, պոկելով նրա գլխի մազերը և նրա գլուխը հատակին խփելով: Ոստիկանության կալանքից ազատվելուց հետո դիմողը դիմել է բժշկի: Հիվանդանոցի արձանագրությունը հաստատել է, որ նա աջ թևի վրա ունեցել է մի քանի կապտուկներ: Մամուլն անդրադարձել է Ռիբիչի հայտարարություններին, որ ոստիկանությունում նրա նկատմամբ դրսևորվել է վատ վերաբերմունք, որին ի պատասխան՝ ոստիկանությունն անցկացրել է ծառայողական քննություն: 1989 թ. շրջանային քրեական դատարանը մեղավոր է ճանաչել ոստիկաններից մեկին մարմնական վնասվածք պատճառելու համար (նա դատապարտվել է երկու ամսվա պայմանական ազատազրկման) և արդարացրել մյուս երկուսին: Դատապարտված ծառայողը բողոքարկել է վճիռը՝ պնդելով, որ Ռիբիչը վնասվածքներ է ստացել նրան կալանքի վերցնելուց հետո, երբ նա դիպել է այն մեքենայի դռանը, որով նրան պետք է տեղափոխեին: Տարածքային քրեական դատարանն ընդունել է բողոքը՝ նշելով, որ Ռիբիչը տուգանվել է թմրանյութերի հետ կապված հանցագործությունների համար և գործազուրկ է: Սահմանադրական դատարանը եզրակացրել է, որ Ռիբիչի ձերբակալությունը, նրա տան խուզարկությունը և նրա կալանավորումը եղել են անօրինական: Այնուամենայնիվ, ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի մասին Ռիբիչի պնդումները ողջամիտ կասկածից վեր չեն ապացուցվել: Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ հայտնելով, որ ինքը ոստիկանության կողմից ենթարկվել է անմարդկային և նվաս-

տացնող վերաբերմունքի: Տասը կողմ և վեց դեմ ձայներով հանձնաժողովը եզրակացրել է, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում: Դատարանը որոշել է.

34. Վեճի թեմա չէ, որ Ռիբիչի վնասվածքները ձեռք են բերվել, երբ նա գտնվել է ոստիկանության կալանքի (որը, ամեն դեպքում, եղել է անօրինական) և ոստիկանության ծառայողների ամբողջական հսկողության տակ: Քրեական վարույթի արդյունքում անմեղության կանխավարկածով առաջնորդվող դատարանի կողմից ոստիկանության ծառայող Մարքլի արդարացումը Ավստրիային չի ազատում կոնվենցիայի շրջանակներում իր ստանձնած պարտավորություններից: Հետևաբար, կառավարության պարտավորությունն էր դիմողին հասցված վնասվածքների վերաբերյալ ընդունելի բացատրություններ ներկայացնել: Սակայն կառավարությունը ազգային մակարդակով քրեական վարույթի արդյունքները վկայակոչելուց բացի, ուրիշ ոչինչ չի արել, ըստ այդմ՝ քրեական արարքի հաստատման համար անհրաժեշտ ապացույցի բարձր չափորոշիչը չի ապահովվել: Միանգամայն պարզ է, որ այս համատեքստում զգալի կշիռ է տրվել այն բացատրությանը, որ վնասվածքները ձեռք են բերվել ընկնելիս մեքենայի դռանը հարվածելու հետևանքով: Ինչպես և հանձնաժողովը, այնպես էլ դատարանը համարում են, որ այս բացատրությունը համոզիչ չէ….

Հիմք ընդունելով իրեն ներկայացված նյութը՝ դատարանը եզրակացնում է, որ կառավարությունը բավարար չափով չի հիմնավորել, որ դիմողի վնասվածքները այլ բանի հետևանք են, քան լիովին, մեծ մասամբ կամ մասամբ ոստիկանության կալանքի տակ գտնվելու ընթացքում նրա նկատմամբ դրսևորած վերաբերմունքի արդյունք:

35.…Մի խումբ վկաներ հաստատել են, որ դիմողը ստացել է ֆիզիկական վնասվածքներ և տառապում է զգալի հոգեբանական վնասի հետևանքով….

38. Դատարանը շեշտում է, որ ազատազրկված անձի նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրման յուրաքանչյուր դեպք, որը նրա վարքագծից բխող բացարձակ անհրաժեշտություն չէ, ստորացնում է մարդկային արժանապատվությունը և, սկզբունքորեն, կոնվենցիայի 3-րդ հոդվածում ամրագրված իրավունքի խախտում է….

39. Դատարանի վարույթում գտնվող գործում պարոն Ռիբիչի ստացած մարմնական վնասվածքները ցույց են տալիս, որ նրա նկատմամբ դրսևորվել է անմարդկային և նվաստացնող վերաբերմունքին համարժեք դաժան վերաբերմունք:

Հասցված ոչ նյութական վնասի համար Ռիբիչին նշանակվել է 100.000 ավստրիական շիլինգի արդար փոխհատուցում: Ուշագրավ է, որ դատավոր Դե Մեյերի սկզբունքը ներառված է դատարանի (որի կազմի մեջ մտել է նաև դատավոր Դե Մեյերը) վճռի 38-րդ պարբերությունում (լուսաբանված է *Թոմասիի* գործի վերաբերյալ նրա համընկնող կարծիքում, նշում 1), որ կալանավորի նկատմամբ յուրաքանչյուր ֆիզիկական ուժի գործադրում, որը կալանավորի գործողություններին (ինչպես, օրինակ՝ մյուս կալանավորների վրա հարձակվելու գործողություններին) հակահարված տալու նպատակով պայմանավորված ծայրահեղ անհրաժեշտություն չէ, 3-րդ հոդվածի խախտում է: 3-րդ հոդվածի իրավագիտական էվոլյուցիան կոնվենցիայի շրջանակներում կալանավորներին տրամադրվող կարևոր երաշխիք է, որոնք գտնվում են պոտենցիալ խիստ խոցելի վիճակում, քանի որ ենթակա են կալանքը և հարցաքննությունը վերահսկող պետական պաշտոնատար անձանց հսկողությանը:

3 Պետությունների վրա դրված *Ռիբիչի* պարտավորությունը, համաձայն որի՝ նրանք պետք է կալանքի տակ գտնվելու ընթացքում անձի ձեռք բերած վնասվածքների վերաբերյալ ճշմարիտ բացատրություններ տան, տարածվել է *«Ռեհբոկն ընդդեմ Սլովենիայի» (Rehbock v Slovenia*, 2000 թ. նոյեմբերի 28-ի վճիռ) գործի վրա, որի դեպքում անձն իր վնասվածքները ստացել է ձերբակալության ժամանակ: Դիմողը մարմնակազմության (բոդի-բիլդինգի) Գերմանիայի նախկին չեմպիոն էր, որին Սլովենիայի իշխանությունները կասկածում էին թմրանյութերի վաճառքի մեջ: Ուստի իշխանությունները նրան ձերբակալելու ծրագիր էին մշակել, ըստ որի՝ նա պետք է ձերբակալվեր թմրանյութերի մաքսանենգության նպատակով Սլովենիա կատարելիք այցի ժամանակ: Հաշվի առնելով դիմողի ֆիզիկական ուժը՝ նրան ձերբակալելու նպատակով ներգրավվել է տասներեք ոստիկան: Նա ձերբակալվել է դիմակավորված և սև հագուստներով վեց ծառայողների կողմից, որոնք զինված էին հրացաններով և ատրճանակներով: Ձերբակալությունից հետո պարզվել է, որ դիմողը ծնոտի վրա ստացել է երկու կոտրվածք և դեմքի վրա՝ պատռվածքներ (հետագայում նա դատապարտվել է մեկ տարվա ազատազրկման թմրանյութերի չարտոնված արտադրության, վաճառքի և մաքսանենգության համար): Մեծամասնությունը՝ վեց կողմ և մեկ դեմ ձայներով, որոշել է,

76. …որ կառավարությունը չի ներկայացրել համոզիչ կամ արժանահավատ փաստարկներ, որոնք կընդունվեին որպես ձերբակալության գործողության ժամանակ կիրառված ուժի աստիճանը բացատրող կամ արդարացնող հիմք: Համապատասխանաբար, այդ հանգամանքներում կիրառվել է չարդարացված և չափազանց մեծ ուժ:

77. Ուժի նման կիրառումը հանգեցրել է վնասվածքների առաջացման, որոնք, անկասկած, այնպիսի լուրջ տառապանք են պատճառել դիմողին, որը հավասարազոր է անմարդկային վերաբերմունքի:

78. Այդ իսկ պատճառով տեղի է ունեցել կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ կապված ձերբակալության ժամանակ նրա նկատմամբ դրսևորված վերաբերմունքի հետ:

4 Մեծ պալատի մեծամասնությունը (տասը կողմ և յոթ դեմ ձայներով) *«Յալոհն ընդդեմ Գերմանիայի» (Jalloh v Germany)* գործի վերաբերյալ 2006 թ. հուլիսի 11-ի վճռով որոշել է, որ փսխեցնող միջոցների կիրառումը, որպեսզի թմրանյութերի վաճառքի մեջ կասկածվող անձը փսխի կուլ տված կոկաինի տուփը, հավասարազոր է եղել անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի:

82. Հաշվի առնելով գործին վերաբերող բոլոր հանգամանքները՝ դատարանը կարծում է, որ վիճահարույց միջոցառումն ունեցել է դաժանության այնպիսի նվազագույն մակարդակ, որով այն դառնում է 3-րդ հոդվածի խնդիր: Իշխանությունները դիմողի կամքին հակառակ նրան ենթարկել են ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը խաթարող լուրջ փորձության: Նրանք ստիպել են վերջինիս փսխել, սակայն ոչ թե բուժական նպատակներով, այլ որպեսզի ձեռք բերեն փաստեր, որոնք նրանք կարող էին ձեռք բերել նվազ միջամտության ճևերով: Այն եղանակը, որով իրականացվել է այս վիճելի միջոցառումը, դիմողի մեջ առաջացրել է վախի, տառապանքի և ստորակարգության զգացում, որ կարող էր ստորացնել և նվաստացնել նրան: Բացի այդ, այս գործողության հետևանքով դիմողի մեջ առաջացել են առողջական ռիսկեր, մասնավորապես այն պատճառով, որ նախապես ձեռք չի բերվել նրա ստույգ անամնեզը [հիվանդության պատմության գնահատումը]: Չնայած վերջնանպատակն արդարացված է եղել, այս միջոցառման իրականացման ճևը դիմողի մեջ առաջացրել է ֆիզիկական ցավ և հոգեկան տառապանք: Այդ իսկ պատճառով նա ենթարկվել է անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի՝ ի խախտումն 3-րդ հոդվածի:

Վուպպերտալի պետական մեղադրողի քաղաքականությունը, ըստ որի՝ կարգադրություն է արվել թմրանյութերով զբաղվող հանցագործների դեմ փաստեր ձեռք բերելու համար օգտագործել փսխեցուցիչ միջոցներ, չի բխում անդամ պետությունների ընդհանուր փորձից (հակառակ կասկածյալների ցանկության փսխեցնող միջոցների ստիպողական կիրառումը ընդունված է եղել միայն Գերմանիայում, Լյուքսեմբուրգում, Նորվեգիայում և Մակեդոնիայում):

Հոգեկան տառապանք

1 *«Իռլանդիան ընդդեմ Մեծ Բրիտանիայի»* վճռում (տե՛ս վերը՝ էջ 151) հինգ մեթոդներով կալանավորներին կանխամտածված «ուժգին ֆիզիկական և հոգեկան տառապանքի» ենթարկելը, որը հարցաքննությունների ժամանակ հանգեցրել է «սուր հոգեկան խանգարումների», բնութագրվել է որպես անմարդկային վերաբերմունք (պարբ. 167):

2 «Դաժան հոգեկան ցնցումը և տառապանքը», որին մի քանի տարի շարունակ ենթարկվել է «անհետացած» անձի ազգականը, հանձնաժողովի կողմից նույնպես դասակարգվել է որպես անմարդկային վերաբերմունք *«Քյուրտն ընդդեմ Թուրքիայի» (Kurt v Turkey* (1998) 27 EHRR 91, 1998-III 1187) գործում: Հանձնաժողովը որոշել է, որ 1993 թ. նոյեմբերին այն գյուղում, որտեղ բնակվել է դիմողը, ժանդարմները և գյուղի պահակազորայիններն իրականացրել են ՔԱԿ-ի դեմ ուղղված հակաահաբեկչական օպերացիա: Վերջին անգամ դիմողը կամ նրա ընտանիքի ուրիշ անդամները կամ համագյուղացիները տեսել են դիմողի որդուն՝ Ուզեյիր Քյուրտին 1993 թ. նոյեմբերի 25-ին, երբ նա շրջապատված է եղել անվտանգության ուժերի անդամներով: Դրանից հետո դիմողը բազմաթիվ հարցումներ է ուղղել տարբեր պաշտոնատար անձանց, սակայն նրանք բոլորն էլ ժխտել են, որ տեղյակ են Ուզեյիրի գտնվելու վայրից կամ նրա վիճակից: 1994 թ. մայիսին դիմողն իր և իր որդու

անունից բողոք է ներկայացրել հանձնաժողովին՝ ասելով, որ տեղի են ունեցել կոնվենցիայի մի շարք խախտումներ: Վերջինս, տասնինը կողմ և հինգ դեմ ձայներով, որոշել է, որ ի թիվս այլոց, դիմողը ենթարկվել է անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի՝ նրան իր որդու անհետացման կապակցությամբ «անորոշության, կասկածի և անհանգստության» մատնելով, որի պատասխանատուն Թուրքիայի իշխանություններն են: Դատարանը, վեց կողմ և երեք դեմ ձայներով, համաձայնել է, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում: Սակայն դատարանը չի մասնավորեցրել, թե տվյալ հոդվածի որ բաղկացուցիչն է խախտվել:

133. Դատարանը նկատում է, որ դաժան վերաբերմունքը պետք է ունենա դաժանության նվազագույն մակարդակ, որպեսզի այն ընկնի 3-րդ հոդվածի շրջանակների մեջ… Այս առումով նա հիշատակում է, որ տղայի անհետացմանը հաջորդած օրերին դիմողը դիմել է պետական մեղադրողին՝ վստահ լինելով, որ նա վերցվել է կալանքի տակ: Նա սեփական աչքերով ականատես է եղել, թե ինչպես են իրենց գյուղում կալանավորում տղային, և վերջին անգամ նրան տեսնելուց հետո նրա հետքը կորցնելը ստիպել է, որ նա անհանգստանա վերջինիս անվտանգության համար…. Այնուամենայնիվ, պետական մեղադրողը լուրջ ուշադրություն չի դարձրել նրա բողոքին... Ի վերջո, նա խիստ ցավ է ապրել՝ իմանալով, որ իր տղան կալանված է, և նրա հետագա ճակատագրի մասին պաշտոնական տեղեկությունները բացակայում են: Այս տառապանքը եղել է բավականին տևական:

134. Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, ինչպես նաև այն փաստը, որ բողոքարկողը մարդու իրավունքների խախտման զոհ հանդիսացող անձի մայրն է և ինքն էլ ցավ ու տառապանք կրելով՝ հանդիսանում է իշխանությունների ինքնաբավության զոհը, դատարանը որոշում է, որ դիմողի նկատմամբ պատասխանող պետությունը թույլ է տվել 3-րդ հոդվածի խախտում: .

Թուրքիայից պահանջվել է վճարել 10.000 ֆունտ ստեռլինգ փոխհատուցում:

Ցավոք, *«Չաքըջըն ընդդեմ Թուրքիայի» (Cakici v Turkey*, 8/7/1999) գործում մեծ պալատի մեծամասնությունը (տասնչորս կողմ և երեք դեմ ձայներով) ավելի ուշ սահմանափակ է մոտեցել *Քյուրտի* գործին՝ շեշտելով, որ պետք է առկա լինեն «հատուկ գործոններ», մինչ անհետացած անձի ընտանիքի անդամը կկարողանա հայտարարել, որ ինքը հանդիսանում է 3-րդ հոդվածի խախտման զոհ: Դիմողը, որ բնակվում էր Թուրքիայի հարավարևելյան տարածաշրջանում, իր եղբայր Ահմեդի և իր անունից բողոքել է հանձնաժողովին Ահմեդի անհետացման կապակցությամբ: Թուրքիայի անվտանգության մարմինները կասկածել են Ահմեդին ՔԱԿ-ի ահաբեկչական գործողություններին մասնակցելու մեջ, և 1993 թ. նոյեմբերի 8-ին ժանդարմները ձերբակալել են նրան: Մյուս կալանավորները հայտնել են, որ իրենք տեսել են Ահմեդին, որը խոշտանգման ենթարկվելուց հետո եղել է վատ վիճակում: Իշխանությունները ժխտել են, որ իրենք կալանավորել են Ահմեդին: Այնուհետև կառավարությունը հայտնել է, որ Ահմեդը սպանվել է 1995 թ. փետրվարին ՔԱԿ-ի և անվտանգության ուժերի միջև բախման հետևանքով: Հանձնաժողովը կարծիք է հայտնել (միաձայն), որ, ի թիվս այլոց, Ահմեդի նկատմամբ տեղի է ունեցել 2-րդ հոդվածում ամրագրված կյանքի իրավունքի խախտում, իսկ դիմողի նկատմամբ՝ 3-րդ հոդվածի խախտում (քսանյոթ կողմ և երեք դեմ ձայներով): Դատարանը որոշել է, որ

98. …*Քյուրտի* գործում, …որը վերաբերում էր դիմողի որդու անհետացմանը կառավարության կողմից հերքվող կալանավորման ժամանակ, դատարանը համարել է, որ դիմողը տուժել է 3-րդ հոդվածի խախտման հետևանքով՝ հատուկ ուշադրություն դարձնելով նրա հանգամանքների վրա: Մասնավորապես վկայակոչել է այն փաստը, որ նա լուրջ իրավախախտման զոհ հանդիսացող անձի մայրն է և ինքն էլ հանդիսանում է իշխանությունների ինքնագոհության զոհը՝ ի դեմս իր կրած ցավի և տառապանքի: *Քյուրտի* գործը, այնուամենայնիվ, ընդհանուր սկզբունք չի սահմանում, որ «անհետացած անձի» ընտանիքի անդամը այսպիսով հանդիսանում է 3-րդ հոդվածի խախտման զոհ: Ընտանիքի անդամը հանդիսանում է այդպիսի զոհ, թե ոչ՝ կախված է առանձնահատուկ գործոնների առկայությունից, որոնք դիմողի տառապանքներին հաղորդում են այնպիսի որակ և մասշտաբ, որոնք տարբերվում են լուրջ իրավախախտման զոհի հարազատների համար անխուսափելի համարվող հոգեկան ցնցումից: Համապատասխան հանգամանքների թվին են պատկանում ընտանեկան կապերի սերտությունը (այս համատեքստում հատուկ կշիռ է տրվում ծնող-երեխա կապին), հարաբերությունների առանձնահատուկ հանգամանքները, ընտանիքի անդամի ականատես լինելու աստիճանը խնդրո առարկա իրադարձություններին, մասնակցությունը անհետ կորած անձի մասին տեղեկություններ ձեռք բերելու փորձերին և այն ձևերը, որով իշխանությունները պատասխանել են այս հարցումներին: Դատարանը, այնուհետև, ընդգծել է, որ նման խախտման էությունը ոչ այնքան վերաբերում է ընտանիքի անդամի «անհետացման» փաստին, որքան այդ իրավիճակի նկատմամբ իշխանությունների արձագանքին և մոտեցումներին, երբ նրանց ուշադրությունը

հրավիրվում է դրա վրա: Հատկապես այս վերջինի առնչությամբ է, որ ազգականը կարող է ուղղակի ասել, որ ինքը հանդիսանում է իշխանությունների վարքագծի զոհ:

99. Տվյալ գործում դիմողը եղել է անհետ կորած անձի եղբայրը: Ի տարբերություն *Քյուրտի* գործով հանդես եկող դիմողի, նա ներկա չի գտնվել, երբ անվտանգության ուժերը տարել են նրա եղբորը, քանի որ նա իր ընտանիքի հետ բնակվելիս է եղել այլ քաղաքում: Տպավորությունն այն է, որ մինչ դիմողը ներգրավված է եղել իշխանություններին տարբեր միջնորդություններ և հարցումներ ներկայացնելու մեջ, խնդրի հիմնական ծանրությունը կրել է ոչ թե նա, այլ նրա հայրը՝ Թևֆիք Չաքըջըն, որն իր վրա է վերցրել միջնորդությունը 1993 թ. դեկտեմբերի 22-ին Դիարբեքիրի պետական անվտանգության դատարանին ներկայացնելու գործը: Նաև, տվյալ դեպքում դատարանի ուշադրությանը չեն ներկայացվել պատասխանից առաջացող ծանրացուցիչ հանգամանքները: Հետևաբար, դատարանն այս գործի մեջ չի նկատում առանձնահատուկ հանգամանքների առկայություն, որոնք կարդարացնեին դիմողի նկատմամբ կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման մասին որոշում ընդունելը: Հետևաբար, այս դեպքում դիմողի նկատմամբ 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Դատավոր Թոմասենը, որին միացել են դատավորներ Յունգվիրթը և Ֆիշբախը, կարծիք է հայտնել առանձնահատուկ գործոնների առկայության մասին մեծամասնության սահմանած չափանիշի վերաբերյալ: Ըստ այդմ՝ դիմողի առումով այս չափանիշը բավարարված է եղել, քանի որ «եղբայրը նույնպես կարող է լրջորեն տառապել իր եղբոր (քրոջ) ճակատագրի անորոշությանը բախվելիս»: Բացի այդ.

… այն պահից, երբ նրա եղբայրն անհետացել է, դիմողն ակտիվորեն ներգրավվել է իշխանություններին տարբեր միջնորդություններ և հարցումներ ներկայացնելու գործի մեջ … և նա դիմում է ներկայացրել դատարան: Թուրքիայի կառավարությունը պատասխանատու է համարվել մարդու իրավունքների ծանրագույն խախտումներից մեկի համար՝ թերանալով կյանքի իրավունքը հարգելու հարցում: Բացի այդ, հինգ և կես տարի շարունակ նրանք դիմողին թողել են նրա եղբոր վերաբերյալ անորոշության, կասկածի և ծանր մտորումների մեջ: Այդպես վարվելով՝ նրանք ցուցաբերել են դաժան անտարբերություն նրա եղբոր ճակատագիրը պարզելու հետ կապված զգացմունքների և ջանքերի նկատմամբ: Բացի այն, որ կառավարությունը չի պահպանել նրա եղբոր կյանքի իրավունքը հարգելու պարտավորությունը, նաև պետք է պատասխանատու համարվի ծանր հոգեկան ցնցման և տառապանքի համար, որին իր գործողությունների և զանցառության պատճառով դիմողը ենթարկվել է շարունակաբար տևական ժամանակահատվածի ընթացքում: Ես կարծում եմ, որ այս գործոնները դիմողի նկատմամբ 3-րդ հոդվածի խախտում են:

«Չիչեքն ընդդեմ Թուրքիայի» (Cicek v Turkey) գործի վերաբերյալ 2001 թ. փետրվարի 27-ի վճռով պալատը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում, քանի որ իշխանությունները համառորեն մերժել են տեղեկություններ տրամադրել մորն իր չափահաս տղաների (որոնք «անհետացել» էին ժանդարմների կողմից կալանքի տակ վերցվելուց հետո) գտնվելու վայրի և ճակատագրի մասին:

173. Այս կապակցությամբ պալատը հիշում է, որ որդիների անհետանալուց հետո դիմողը և նրա աղջիկը մի քանի դիմում են ներկայացրել դատախազին և ժանդարմների հրամանատարին՝ լիովին հավատացած, որ նրանք գտնվում են կալանքի տակ Լայսի տարածքային գիշերօթիկ դպրոցում [որտեղ տեղակայված էր ժանդարմների հենակայանը]: Այնուամենայնիվ, դատախազը և ժանդարմների հրամանատարը լուրջ չեն մոտեցել նրա բողոքին: Դատարանը նկատում է, որ դիմողն իր տղաներից որևէ լուր չի ունեցել գրեթե վեց տարի շարունակ: Նա ապրել է վախը սրտում, որ իր տղաները ողջ չեն, և փորձեր է արել դիմել դատախազին և պահանջել իշխանություններից գոնե իրեն հանձնել նրանց մարմինները: Անորոշությունը, կասկածը և սարսափը, որով դիմողն ապրել է տևական ժամանակ, միանշանակորեն նրան պատճառել է ծանր հոգեկան ցնցում և ցավ:

174. Հաշվի առնելով վերը նկարագրված հանգամանքները, ինչպես նաև այն փաստը, որ բողոքողը մարդու իրավունքների ծանր խախտումների զոհ անձանց մայրն է, դատարանը որոշում է, որ նա իր կրած ցավի և տառապանքի պատճառով հանդիսանում է իշխանությունների կամայականության զոհը, և պատասխանող պետությունը դիմողի առնչությամբ խախտել է 3-րդ հոդվածը:

Համանման խախտում բացահայտվել է «անհետացած» որդիների գտնվելու վայրը և ճակատագիրը պարզելու փորձեր արած հոր դեպքում՝ *«Իփեքն ընդդեմ Թուրքիայի»* գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2004 թ. փետրվարի 17-ին (տե՛ս նաև վերը՝ էջ 104, որտեղ քննարկում են այս գործի 2-րդ հոդվածին առնչվող հայեցակետերը):

182. Սույն գործում դատարանը նկատում է, որ դիմողը անհետացած Իփեք եղբայրների հայրն է: Դիմողը ականատես է եղել վեճի առարկա իրադարձություններին, զինվորները մոտ ինը տարի առաջ նրանից տարել են նրա որդիներին, որոնց մասին նա որևէ տեղեկություն այլևս չի ունեցել: Այնուհետև, նրա կողմից ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ իշխանությունները երբևէ արժանահավատ բացատրություն կամ տեղեկություն չեն տրամադրել դիմողին առ այն, թե ինչ է պատահել իր որդիներին զինվորների կողմից նրանց ձերբակալությունից հետո: Հակառակը՝ դիմողի խորը մտահոգությունների առնչությամբ իշխանությունների արձագանքը սահմանափակվել է անվտանգության ուժերի կողմից Իփեք եղբայրներին կալանքի տակ վերցնելու վերաբերյալ հերքումներով: Հարկ է նշել, որ դիմողը նույնիսկ տեղեկացված չի եղել իր բողոքների կապակցությամբ քննության արդյունքների մասին: Բացի այդ, դատարանը կարծում է, որ դիմողի անհանգստությունն իր որդիների ճակատագրի վերաբերյալ ավելի է խորացել նրանց տան փլուզումից հետո:

183. Հաշվի առնելով վերոհիշյալը՝ դատարանը համարում է, որ դիմողն իր երկու որդիների անհետացման և նրանց հետ պատահածը պարզելու իր անկարողության հետևանքով տառապել է և շարունակում է տառապել ցավից և ցնցումներից: Նրա բողոքների նկատմամբ վերաբերմունքը անմարդկային է և հակասում է 3-րդ հոդվածին:

Դատարանը, այսպիսով, եզրակացնում է, որ դիմողի նկատմամբ տեղի է ունեցել կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

Այսպիսով, որքան ավելի շատ ժամանակ (սովորաբար՝ բազմաթիվ տարիներ) է անցնում, որի ընթացքում ծնողները համառորեն փորձում են պարզել իրենց «անհետացած» երեխաների գտնվելու վայրը և ճակատագիրը, ինչին ի պատասխան իշխանությունները դրսևորում են համագործակցության պակաս, այնքան ավելի շատ հավանական է, որ դատարանը եզրակացնի, որ ծնողները տուժել են 3-րդ հոդվածի խախտման հետևանքով:

«Թանիշը և այլք ընդդեմ Թուրքիայի» (Tanis and Others v Turkey) գործի վերաբերյալ 2005 թ. օգոստոսի 2-ի վճռով պալատը միաձայն որոշել է, որ ժանդարմական կենտրոն կանչվելուց հետո «անհետացած» երկու քաղաքական գործիչների կանայք կամ կյանքի ընկերները տուժել են անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից, քանի որ իշխանությունները չորս տարի շարունակ ընդունելի բացատրություն չեն տվել նրանց բարեկամների ճակատագրի վերաբերյալ կամ էլ արդյունավետ հետաքննություն չեն սկսել պարզելու համար անհետացման հանգամանքները (պարզվել է, որ անհետացումները զուգորդվել են 2-րդ հոդվածի նյութական և ընթացակարգային կողմերի խախտումներով):

3 1993 թ. փետրվարյան մի օր *«V-ն ընդդեմ ՄԹ-ի» (V v UK* (1999) 30 EHRR 121) գործի դիմողը (ծնված 1982 թ.) փախել է դպրոցի դասերից մեկ այլ 10 տարեկան տղայի՝ հարակից *«Թ-ն ընդդեմ ՄԹ-ի» (T v UK* (1999) 30 EHRR 12) գործով դիմողի հետ: Փախչելով դասերից՝ T-ն և V-ն հանրախանութից առևանգել են 2 տարեկան տղայի, տեղափոխել նրան մի քանի մղոն հեռու և ծեծելով սպանել, որից հետո լքել են նրա մարմինը և փախել գնացքով: Դիմողները ձերբակալվել են և մեղադրվել սպանության մեջ: Նրանց դատը տեղի է ունեցել Փրեսթոնի թագավորական դատարանում 1993 թ. նոյեմբերին և տևել երեք շաբաթ:

Դատից երկու շաբաթ առաջ յուրաքանչյուր դիմող սոցիալական աշխատողների ուղեկցությամբ այցելել է դատարանի դահլիճ, «երեխա վկաների փաթեթի» միջոցով, որի մեջ մտել են գրքեր և խաղեր, ծանոթացել դատական ընթացակարգերին և աշխատակազմին: Ամեն անգամ, երբ ամբաստանյալները ժամանել են, նրանց դիմավորել է թշնամական ամբոխը: Երբեմն փորձեր են արվել հարձակվել այն մեքենաների վրա, որոնք նրանց դատարան են բերել: Դատարանի դահլիճում մամուլի համար նախատեսված նստարանները և հանրային սրահը եղել են լեփ-լեցուն: Դատավարությունն իրականացվել է չափահասների քրեական դատավարության ձևաչափով: Դատավորը և դատապաշտպանները կրել են կեղծամներ և պատմուճաններ: Ընթացակարգը, այնուամենայնիվ, որոշ չափով ձևափոխվել է՝ հաշվի առնելով ամբաստանյալների տարիքը: Նրանք նստած են եղել սոցիալական աշխատողների կողքին՝ հատուկ բարձրացված հարթակի վրա: Նրանց ծնողները և դատապաշտպանները նստած են եղել նրանցից ոչ հեռու: Դատական նիստերի տևողությունը կրճատվել է՝ հաշվի առնելով դպրոցում դասերի տևողությունը (առավոտյան 10.30-ից մինչև 15:30՝ մեկ ժամ ճաշի ընդմիջումով), և յուրաքանչյուր ժամի ավարտից հետո հայտարարվել է տասը րոպեանոց ընդմիջում: Ընդմիջումների ժամանակ ամբաստանյալներին թույլ է տրվել իրենց ծնողների և սոցիալական աշխատողների հետ գտնվել խաղահրապարակում: Դատավորը հստակ նշել է, որ

ինքը ընդմիջում կհայտարարի ամեն անգամ, երբ սոցիալական աշխատողները կամ դատապաշտպանները հայտնեն իրեն, որ ամբաստանյալներից մեկը հոգնածության կամ ցնցման նշաններ է ցույց տալիս: Սա տեղի է ունեցել ընդամենը մեկ անգամ:

1993 թ. նոյեմբերի 1-ի դատական նիստի բացման ժամանակ դատավորը, 1933 թ. «Երեխաների և երիտասարդների մասին» օրենքի 39-րդ բաժնի դրույթների համաձայն, կարգադրել է …չհրապարակել դիմողի և T-ի անունները, հասցեները և ինքնությանը վերաբերող այլ մանրամասներ, ինչպես նաև լուսանկարները: Նույն օրը դիմողի դատապաշտպանը միջնորդել է կասեցնել վարույթը այն հիմքերով, որ մամուլում հրապարակումների բնույթի և ծավալի պատճառով դատավարությունն անարդար կլինի: Պատճառաբանությունը լսելուց հետո դատավորը որոշել է, որ հիմնավորված չէ, որ ամբաստանյալներին այն աստիճանի զգալի վնաս կպատճառվի, որ արդար դատավարություն չլինի: Նա վկայակոչել է այն հանգամանքը, որ ինքը նախազգուշացրել է երդվյալ ատենակալներին, որ դատարանի դահլիճից դուրս գալուն պես նրանք պետք է մոռանան ամեն ինչ, որ լսել են կամ տեսել գործի առնչությամբ:

Երդվյալ ատենակալները դիմողներին մեղավոր են ճանաչել սպանության մեջ, և դատավորը դատապարտել է նրանց ազատազրկման անորոշ ժամկետով: Այնուհետև դատավորը խորհուրդ է տվել, որ դիմողներն ազատազրկման մեջ մնան ութ տարի պարտադիր ժամկետով (tariff period - ցմահ ազատազրկման դատապարտվածների պատիժն ազատազրկման մեջ կրելու նվազագույն ժամկետը), որպեսզի բավարարեն արդարացի պատժի և նման հանցագործությունների կասեցման պահանջները: Լորդ ավագ դատավորն առաջարկել է, որ նրանց ազատազրկման մեջ մնալու նվազագույն ժամկետը սահմանվի տասը տարի: Ներքին գործերի քարտուղարը մեծ թվով նամակներ է ստացել հասարակայնության ներկայացուցիչներից, ներառյալ մոտ 300,000 անձանց կողմից ստորագրված միջնորդագիրը և «Սան» օրաթերթից կտրված 21,000 կտրոնը, որոնցով պահանջվում էր, որ դիմողները ցմահ մնան ազատազրկման մեջ: Ներքին գործերի քարտուղարը թույլ է տվել դիմողների փաստաբաններին ծանոթացնել իրեն գործին 1994 թ. հուլիսին, որից հետո տեղեկացրել է դիմողին, որ նրա նվազագույն ազատազրկման ժամկետը կարող է լինել տասնհինգ տարին: Դիմողը բողոքարկել է որոշումը դատական վերանայման կարգով, և Լորդերի պալատը (ձայների մեծամասնությամբ) որոշել է, որ ներքին գործերի նախարարը գործել է օրենքին հակառակ՝ տեղի տալով դիմողների նվազագույն ժամկետի (tariff) վերաբերյալ հասարակական բողոքներին: Դատարանի վճռի ընդունման ժամանակ ներքին գործերի քարտուղարը նոր նվազագույն ազատազրկման ժամկետ չի սահմանել դիմողի համար, մասամբ, որովհետև դեռ սպասում էր T-ի բացատրություններին: Դիմողը բողոքել է հանձնաժողովին, որ, ի թիվս այլոց, իր բաց դատավարությունը չափահասների դատարանում և պատիժը հավասար էին անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի՝ ի խախտումն 3-րդ հոդվածի: Հանձնաժողովը, տասնյոթ կողմ և երկու դեմ ձայներով, այդ դրույթի խախտում չի հայտնաբերել: Դատարանի մեծամասնությունը նույնպես (տասներկու կողմ ու հինգ դեմ և տասը կողմ ու յոթ դեմ ձայներով) դիմողի դատավարության կամ պատժի մասերով 3-րդ հոդվածի խախտում չի հայտնաբերել:

63. Դիմողը հայտնել է, որ քրեական պատասխանատվության տարիքը, դատավարության մեղադրական բնույթը, չափահասների համար նախատեսված վարույթը՝ բաց դատական լսումների ձևով, դատավարության տեղությունը, տասներկու օտար մարդկանցից բաղկացած երդվյալ ատենակալների կազմը, դատարանի դահլիճի կառուցվածքը և պայմանները, լրատվամիջոցների և հասարակայնության ճնշող ներկայությունը, հասարակայնության ներկայացուցիչների կողմից իրենց դատարան բերող բանտային ֆուրգոնի վրա հարձակումները և իր ինքնության բացահայտումը՝ իր պատժին առնչվող մի շարք այլ գործոնների հետ, հանրագումարում հավասարազոր են եղել 3-րդ հոդվածի խախտման….

72. Դատարանը, առաջին հերթին, քննության է առել այն հանգամանքը, թե արդյոք կատարված գործողությունների համար դիմողին պատասխանատվության ենթարկելն այն ժամանակ, երբ նա ընդամենը տասը տարեկան էր, ինքնին 3-րդ հոդվածի խախտո՞ւմ է: Դատարանի այս քայլը հիմնվել է իր նախադեպային իրավունքով հաստատված սկզբունքի վրա, համաձայն որի, քանի որ կոնվենցիան գործող փաստաթուղթ է, ապա դրա դրույթների շրջանակներում նախատեսված որևէ միջոցառման մասին որոշում կայացնելիս ճիշտ է հաշվի առնել Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում գործող չափանիշները (տե՛ս *Մերիմգի* (*Soering*) վճիռը …էջ 40, 102, նաև *«Դաջենն ընդդեմ ՄԹ-ի» (Dudgeon v UK)* գործով 1981 թ. հոկտեմբերի 22-ի վճիռը, շարք A, թիվ 45, և *«X-ը, Y-ը և Z-ն ընդդեմ ՄԹ-ի» (X, Y and Z v UK)* 1981 թ. հոկտեմբերի 22-ի վճիռը, Զեկույցներ 1997-II):

73. Այս կապակցությամբ դատարանը նկատում է, որ ներկա պահին Եվրոպայում դեռևս չկա ընդհանուր համաձայնություն քրեական պատասխանատվության ենթարկելու նվազագույն տարիքի վերաբերյալ: Մինչ պայմանավորվող պետությունների մեծ մասն ընդունել է տարիքային շեմ, որն ավելի բարձր է, քան Անգլիայում և Ուելսում գործող տարիքային շեմը, ուրիշ երկրներ, որոնց թվին են պատկանում Կիպրոսը, Իռլանդիան, Լիխտենշտեյնը և Շվեյցարիան, քրեական պատասխանատվություն նախատեսում են ավելի վաղ տարիքից: Բացի այդ, համապատասխան միջազգային տեքստերի և փաստաթղթերի ուսումնասիրությունից հնարավոր չէ որոշել, թե որն է հստակ ուղղությունը, …«Պեկինի կանոնների» 4-րդ կանոնը, որը թեպետ իրավաբանորեն պարտադիր կատարման ենթակա չէ, կարող է որոշակիորեն վկայել միջազգային համաձայնության առկայության մասին, սակայն այն չի նշում, թե որ տարիքից պետք է քրեական պատասխանատվություն նախատեսվի, այլ միայն առաջարկում է պետություններին չսահմանել չափից ավելի փոքր տարիք: Միաժամանակ ՄԱԿ-ի կոնվենցիայի 40(3)(ա) հոդվածը պահանջում է պայմանագրի մասնակից պետություններից սահմանել նվազագույն տարիք, որից ցածր երեխաները ենթադրաբար չեն կարող քրեական օրենք խախտել: Այն, սակայն, որևէ դրույթ չի պարունակում, որը կնշեր, թե որը պետք է լինի այդ տարիքը:

74. Դատարանը չի կարծում, որ այս փուլում Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում հստակ ընդհանուր չափորոշիչ կա, թե որ տարիքը պետք է համարվի քրեական պատասխանատվության նվազագույն տարիք: Եթե նույնիսկ Անգլիան և Ուելսն այն սակավաթիվ երկրներից են, որոնց օրենսդրությամբ սահմանվում է քրեական պատասխանատվության փոքր տարիք, տասը տարեկանն այնքան փոքր չէ, որ անհամաչափորեն տարբեր լինի եվրոպական այլ պետություններում գործող տարիքային շեմերից: Դատարանը եզրակացնում է, որ դիմողին քրեական պատասխանատվության վերագրումը ինքնին կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման հիմք չէ:

75. Դիմողի՝ 3-րդ հոդվածի շրջանակներում դատավարությանը վերաբերող բողոքի երկրորդ մասը շոշափում է այն հանգամանքը, որ քրեական դատավարությունը տեղի է ունեցել որպես բաց դատավարություն, երեք շաբաթ շարունակ չափահասների թագավորական դատարանում (Crown Court)՝ համապատասխան պայմանականությունների պահպանմամբ, և մեղավոր ճանաչվելուց հետո թույլ է տրվել, որ նրա անունը հրապարակվի:

76. Դատարանը նկատում է այս կապակցությամբ, որ ՄԱԿ-ի կոնվենցիայի 40(2)(բ) հոդվածի նվազագույն երաշխիքներից մեկն այն է, որ հանցագործության մեջ մեղադրվող երեխաների մասնավոր կյանքը պետք է հարգվի դատավարության բոլոր փուլերում: Նմանապես, «Պեկինի կանոնների» 8-րդ կանոնն ամրագրում է, որ «պատանիների մասնավոր կյանքը պետք է հարգվի վարույթի բոլոր փուլերում», և «սկզբունքորեն ոչ մի տեղեկություն, որը կարող է հանգեցնել անչափահաս օրինազանցի ինքնության բացահայտմանը, չպետք է ենթակա լինի հրապարակման»: Վերջապես, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն խորհուրդ է տվել 1987 թ., որ անդամ պետությունները վերանայեն իրենց օրենքը և գործելակերպը՝ նպատակ ունենալով խուսափել անչափահասների գործերը մեծահասակների դատարանում լսելուց, եթե գոյություն ունեն անչափահասների դատարաններ, և ճանաչել անչափահասների մասնավոր կյանքը հարգելու իրավունքը…

77. Դատարանը կարծում է, որ վերոհիշյալը ցույց է տալիս, որ միջազգայնորեն առկա է անչափահաս ամբաստանյալների մասնավոր կյանքի պաշտպանության միտում, և նշում է, մասնավորապես, որ ՄԱԿ-ի կոնվենցիայով միջազգային իրավունքը պարտադիր է դարձել ինչպես Միացյալ Թագավորությունում, այնպես էլ Եվրոպայի խորհրդի մյուս անդամ պետություններում…. Բացի այդ, կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը նշում է, որ «մամուլը և հասարակայնությունը կարող են հեռացվել դատավարության բոլոր փուլերից… այն դեպքում, երբ դա բխում է անչափահասների շահերից . . .»: Այնուամենայնիվ, մինչ այդ միտումի առկայությունը ընդամենը մեկ գործոն պետք է հաշվի առնվի կոնվենցիայի հոդվածների շրջանակներում դիմողի նկատմամբ վերաբերմունքի գնահատման ժամանակ. դա չի կարող որոշիչ լինել այն հարցում, թե արդյոք բաց դատավարությունը դաժան վերաբերմունքի այնպիսի՞ դրսևորում է եղել, որը հատել է դաժանության այն նվազագույն մակարդակը, որը մտնում է 3-րդ հոդվածի շրջանակների մեջ….

78. Դատարանն ընդունում է, որ պետական մարմինների կողմից դիմողի դեմ բացված քրեական վարույթը նպատակ չի ունեցել ստորացնել կամ տառապանք պատճառել նրան: Հաշվի առնելով ամբաստանյալների երիտասարդ տարիքը՝ իրոք հատուկ միջոցներ են ձեռնարկվել բազավորական դատարանի ընթացակարգը ձևափոխելու համար, որպեսզի մեղմացվի չափահասների դատավարությանը բնորոշ խստապահանջությունը….

79. Եթե նույնիսկ փաստեր կան, որ դիմողի նկատմամբ այսպիսի վարույթը կարող էր վնասակար ազդեցություն ունենալ տասնմեկ տարեկան երեխայի վրա, …դատարանը կարծում է, որ յուրաքանչյուր վարույթ կամ հարցում, որի նպատակն է եղել պարզել T-ի և դիմողի կատարած գործողությունների հանգամանքները, անկախ այն հանգամանքից՝ այդ հարցումը կատարվել է բաց թե փակ եղանակով, բագավորական դատարանի պաշտոնական կարգի կամ անչափահասների դատարանի ոչ պաշտոնական կարգի համաձայն, կարող էր դիմողի մեջ առաջացնել մեղքի, ցնցման, տառապանքի և վախի զգացում: Հոգեբուժական փաստերը ցույց են տալիս, որ նախքան դատավարության սկսվելը նրա մեջ նկատվել են հանցագործության հետ կապված հետտրավմատիկ ազդեցություններ. նա աղեկտուր լալիս էր, երբ նրան հարցեր էին

տալիս այն մասին, թե ինչ են ինքն ու T-ն արել երկու տարեկան երեխայի հետ, դժվարանում էր պատասխանել և ցնցվում էր, ինչպես նաև վախենում էր պատժից և սարսափելի դատաստանից… Թեպետ դատավարության բաց բնույթը հնարավոր է, որ որոշ չափով խորացրած լիներ դիմողի զգացմունքները, դատարանի համար համոզիչ չէ, որ նրա նկատմամբ կիրառված դատական վարույթի առանձին տարրերը զգալի չափով տառապանք են պատճառել նրան՝ անցնելով այն տառապանքի սահմանագիծը, որին նա անխուսափելիորեն ենթակա կլիներ իր հանցավոր արարքի կատարումից հետո իշխանությունների հետ գործ ունենալու պարագայում…

80. Ի վերջո, այդ իսկ պատճառով, դատարանը չի համարում, որ դիմողի դատավարության արդյունքում տեղի է ունեցել կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում….

93. Դիմողը կարծում է, որ հաշվի առնելով հանցավոր արարք գործելու ժամանակ իր տարիքը՝ անորոշ ժամկետով իրեն ազատազրկման մեջ պահելու ժամկետը խիստ անհամաչափ է և հակասում է կոնվենցիայի 3-րդ հոդվածին…

98. Դատարանը հիշատակում է, որ կոնվենցիայի շրջանակներում պետությունները պարտավոր են միջոցներ ձեռնարկել հանրությանը դաժան հանցագործություններից պաշտպանելու համար (տե՛ս, օրինակ՝ *«Ա-ն ընդդեմ ՄԹ-ի» (A v UK)*, 1998 թ. սեպտեմբերի 23-ի վճիռ, Զեկույցներ 1998-VI, էջ 2699, պարբ. 22 և *«Օսմանն ընդդեմ ՄԹ-ի» (Osman v UK)*, 1998 թ. հոկտեմբերի 28-ի վճիռ, Զեկույցներ 1998-VIII, էջ 3159, պարբ. 115): Դատարանը չի կարծում, որ պատիժը կրելու համար սահմանված նվազագույն ժամկետի մոտեցումը (tariff approach)՝ որպես պատժի տարր, ինքնին 3-րդ հոդվածի խախտման տեղիք է տալիս, կամ կոնվենցիան արգելում է պետություններին ծանր հանցագործությունների մեջ մեղավոր ճանաչված երեխայի կամ պատանու/երիտասարդի նկատմամբ սահմանել անսահմանափակ ժամկետով ազատազրկում, որը հնարավորություն է տալիս առանց ընդհատումների օրինազանցին պահել ազատազրկման մեջ կամ կրկին կալանքի տակ վերցնել նրան ազատ արձակելուց հետո, եթե դա անհրաժեշտ է հանրության պաշտպանության նպատակով (տե՛ս *Հուսաինի* (Hussain) վճիռը, էջ 269, պարբ. 53):

99. Դիմողը դեռևս իր պատիժը համապատասխան չափով չի կրել և չի հասել այն փուլին, երբ կարող է պահանջել, որ իր ազատազրկման մեջ մնալը վերանայվի՝ հաշվի առնելով վտանգավորության հարցը, և թեպետ նրան դեռևս չեն տեղեկացրել պատիժը կրելու պարտադիր նվազագույն նոր ժամկետի (new tariff) մասին, կարելի է ենթադրել, որ նա ներկայումս գտնվում է ազատազրկման մեջ արարքի հատուցման և կասեցման նպատակներով: Այս վճռի ընդունման պահին նա անազատության մեջ է գտնվել վեց տարի անընդմեջ՝ սկսած 1993 թ. նոյեմբերից: Դատարանը չի կարծում, որ գործի բոլոր հանգամանքները, ներառյալ՝ դիմողի տարիքը և նրա անազատության մեջ գտնվելու պայմանները, արարքի հատուցման նպատակով նրան անազատության մեջ պահելու ժամկետը կարող են անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք համարվել:

100. Վերջապես, դատարանը կարծում է, որ չի կարելի բացառել, որ դատապարտման պահին դիմողի նման փոքր տարիք ունեցող երեխայի համար պատիժը կրելու նվազագույն պարտադիր ժամկետի (tariff period) մասին անարդարացիորեն և համառորեն որոշում չկայացնելը, ինչի հետևանքով ազատազրկվածը հայտնվել է իր ապագայի անորոշության մեջ, նույնպես կարող է 3-րդ հոդվածի խնդրո առարկա լինել: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ տվյալ գործի առումով պարտադիր նվազագույն պատժի ժամկետը (tariff period) չի գործել համեմատաբար շատ կարճ ժամանակի ընթացքում, և ինչպես դիմողի, այնպես էլ T-ի կարծիքը ճշտելու անհրաժեշտությունը, …նման հարց չի առաջանում:

101. Սրանից բխում է, որ դիմողի ազատազրկման ժամկետի առումով 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Այս վճիռը ցույց է տալիս, որ որպեսզի դատարանը որոշի, որ հասցված տառապանքի ուժգնությունը 3-րդ հոդվածի խախտում է, ամենայն հավանականությամբ, դատավարության ազդեցությունները և դրան հետևած ազատազրկման պատիժը պետք է կործանարար ազդեցություն ունեցած լինեն անձի հոգեկան հավասարակշռության վրա: (Հարկ է նշել, որ դատարանը որոշել է, որ դիմողի դատավարությունը և նրա նկատմամբ ազատազրկման մեջ գտնվելու պարտադիր նվազագույն ժամկետի սահմանումը տեղի են ունեցել 5-րդ և 6-րդ հոդվածների խախտմամբ:) Երեխաների իրավունքի գծով մասնագետը նախորդ վճռի առումով արել է հետևյալ մեկնաբանությունները.

Երեխային մեղապարտ ճանաչելուց հետո նրա համար, առանց հապաղման, անհրաժեշտ է ստեղծել թերապևտիկ միջավայր, երեխայամետ դատական համակարգ և կալանքի տակ վերցված և չափահասության տարիք թևակոխող երեխայի համար նախատեսված խնամքի համապատասխան ծրագիր: Սրանցից ոչ մեկը գոյություն չի ունեցել 1993 թ. և, ճշմարտությանը համապատասխան, մենք քիչ առաջընթաց ենք ունեցել դրանից հետո: Ստացվում է, որ մենք դժգոհությամբ սպասել ենք, թե երբ պետք է ընդունվի բացասական որոշումը: Այն բարդ և հիմնական հարցը, թե դատավարությունը պետք է բաց, թե փակ լինի, քիչ է քննարկվել: Եթե այս հարցերի առնչությամբ առաջընթաց լիներ, ապա տվյալ որոշումը շատ ավելի դիպուկ կլիներ [Ռ. Ուայթ (2000 թ.) New Law Journal 19]:

2000 թ. փետրվարին նոր գործելակերպին հետևելու մասին ցուցում է տրվել (Թագավորական դատարան. երեխաների և երիտասարդ անձանց դատավարությունը/Crown Court: trial of children and young persons) ([2000] 2 ALL ER 284): Ցուցումի մեջ շեշտվել է, որ պետք է ձեռնարկվեն բոլոր հնարավոր քայլերը, որոնք կօգնեն երիտասարդ/պատանի ամբաստանյալին հասկանալու և մասնակցելու իր դատավարությանը: Վարույթի արդյունքում ամբաստանյալը չպետք է ենթարկվի սպառնալիքների, նվաստացման կամ ցնցման, որոնցից կարելի է խուսափել: Թագավորական դատարանում պատանիների դատավարության վերաբերյալ կարող են արվել հատուկ կարգադրություններ, ներառյալ այնպիսիք, որոնք պահանջում են, որ փաստաբանները պատմուճան և կեղծամ չկրեն, դատարանում ոստիկանության ներկայությունը աննկատ լինի, և դատարանի դահլիճում ներկա լրագրողների թիվը լինի սահմանափակ: (Եթե նպատակահարմար է, վարույթը պետք է հեռարձակվի մեկ այլ՝ մամուլին հատկացված սենյակում:) 2000 թ. մարտին ներքին գործերի քարտուղարը (պարոն Ձեք Սթրոուն) Ռոբերտ Թոմփսոնի և Ջոն Վենաբլեսի գործերն ուղարկել է լորդ գլխավոր դատավորին, որպեսզի վերջինս որոշի ազատազրկման մեջ մնալու պարտադիր նվազագույն ժամկետը՝ մինչ նրանց գործը ենթակա կլինի վաղաժամկետ ազատ արձակման խորհրդի կողմից վերանայման:

2000 թ. հոկտեմբերին Լորդ Վուլֆը որոշել է, որ վաղաժամկետ ազատ արձակման գործընթաց սկսվի ինչպես Թոմփսոնի, այնպես էլ Վենաբլեսի համար: 2001 թ. դեկտեմբերին վաղաժամկետ ազատման խորհուրդը թույլատրել է ազատ արձակել նրանց՝ որոշելով, որ նրանք այլևս հասարակության համար վտանգ չեն ներկայացնում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով նրանց վատ համբավը և նրանց դեմ ուղղված սպառնալիքները, ազատ արձակելու ժամանակ նրանց տրվել են նոր կեղծ անուններ:

Տների քանդումը

«Սելջուկը և Ասկերն ընդդեմ Թուրքիայի» գործում ((*Selcuk and Asker v Turkey,* 1998) 26 EHRR 477, 1998-II) դատարանը ութ կողմ և մեկ դեմ ձայներով որոշել է, որ անդամ պետության անվտանգության ուժերի կողմից մարդկանց տները հրդեհելը կարող է այնքան լուրջ հետևանքներ ունենալ, որոնք այն կհավասարեցնեն անմարդկային վերաբերմունքի դրսևորման: Դատարանը որոշել է, որ.

77. …Այդ ժամանակ տկն Սելջուկը և պրն Ասկերը համապատասխանաբար եղել են 54 և 60 տարեկան և ամբողջ կյանքում ապրել են գյուղում… Նրանց տները և սեփականության մեծ մասը ոչնչացվել են անվտանգության ուժերի կողմից, ինչի հետևանքով դիմողները զրկվել են իրենց ապրուստից և ստիպված լքել են իրենց գյուղը: Կարող է այնպիսի տպավորություն ստեղծվել, որ այս գործողությունը եղել է կանխամտածված և իրականացվել է՝ արհամարհելով և չհարգելով դիմողների զգացմունքները: Նրանց համար դա եղել է կատարելապես անսպասելի: Նրանք պետք է մի կողմ քաշված կանգնեին և դիտեին, թե ինչպես են այրվում իրենց տները: Տեր և տիկին Ասկերների անվտանգությունն ապահովելու համար անբավարար նախազգուշական միջոցներ են ձեռնարկվել, տիկին Սելջուկի բողոքներն անտեսվել են, և դրանից հետո նրանց որևէ օժանդակություն չի տրամադրվել:

78. Հաշվի առնելով, մասնավորապես, դիմողների տները քանդելու եղանակը …և նրանց անձնական հանգամանքները, պարզ է, որ նրանք պետք է որ ենթարկված լինեն 3-րդ հոդվածի իմաստով անմարդկային վերաբերմունք համարվելու համար բավարար ուժգնության տառապանքների:

79. Դատարանը նշում է, որ հանձնաժողովը եզրակացություններ չի արել, թե որոնք են եղել դիմողների գույքի ոչնչացման շարժառիթները: Այնուամենայնիվ, եթե նույնիսկ խնդրո առարկա գործողություններն արվել են առանց դիմողներին պատժելու մտադրության, այլ ընդամենը ահաբեկիչների կողմից նրանց տների օգտագործումը կանխելու կամ մյուսներին տարհամոզելու մտադրությամբ, միևնույն է, դա չի կարող դրսևորված վատ վերաբերմունքի արդարացում լինել:

80. Ի վերջո, դատարանը կարծում է, որ այս գործի առանձնահատուկ հանգամանքներն ի հայտ են բերում 3-րդ հոդվածի խախտում:

Հաշվի առնելով դիմողների գույքի կորուստը՝ դատարանը տկն Սելջուկին նշանակում է 17,760 ֆունտ ստեռլինգ և պրն Ասկերին 22,408 ֆունտ ստեռլինգ փոխհատուցում կրած նյութական վնասի համար: Բացի այդ, նրանց կրած ոչ նյութական վնասի (տառապանքի) փոխհատուցման համար Թուրքիայից պահանջվել է յուրաքանչյուր դիմողին վճարել 10,000 ֆունտ ստեռլինգ: Այն դեպքերում, երբ տները դիտավորյալ քանդելու հանգամանքները և դրանց ազդեցությունները այնքան էլ ցավալի չեն, դատարանը որոշել է, որ այդ գործելակերպը հակասել է 8-րդ հոդվածին (անձի տունը հարգելու իրավունք): Այդ մասին տե՛ս ստորև՝ էջ 580:

Ազատազրկման պայմանները

1 Ծայրահեղ բանտային պայմանների վերաբերյալ 3-րդ հոդվածի պահանջների իր ըմբռնումները հանձնաժողովը շարադրել է *«Քրոչերը և Մոլերն ընդդեմ Շվեյցարիայի» (Krocher and Moller v Switzerland,* 34 DR 24 (1982թ.)) գործի առնչությամբ: Դիմողները հանդիսանում էին կասկածյալ քաղաքական ահաբեկիչներ Գերմանիայից, որոնք կասկածվում էին վայրագ հանցագործություններ կատարելու մեջ: Նրանք ձերբակալվել են Շվեյցարիայի սահմանի վրա՝ մաքսային պաշտոնյայի վրա կրակ բացելուց հետո: Նախնական կալանքի տակ գտնվելու ժամանակ՝ 1977 թ. դեկտեմբերի 21-ից մինչև 1978 թ. հունիսի 30-ը, Շվեյցարիայի իշխանությունները անվտանգության նկատառումներով խիստ հսկողություն են սահմանել դիմողների նկատմամբ: Դիմողներին տեղավորել են միևնույն հարկի իրարից հեռու գտնվող առանձին խցերում: Ընդ որում, այդ հարկում այլ բանտարկյալներ չեն պահվել: Նրանց խցերից վերև և ներքև գտնվող խցերը եղել են դատարկ: Դիմողների նկատմամբ սահմանվել է խիստ հսկողություն փակ տեսախցիկի միջոցով: Նրանց խցերի պատուհանները եղել են լրիվ փակ, և լույսը՝ միշտ միացրած: Նրանց թույլ չեն տվել թերթեր և գրքեր տալ, հեռուստացույց դիտել և ռադիո լսել: Նրանց թույլ չեն տվել շփվել միմյանց, ինչպես նաև այլ բանտակիցների կամ այցելուների հետ: Մի քանի ամիս հետո կալանքի պայմանները մեղմացվել են, և, ի թիվս այլոց, թույլ է տրվել, որ շաբաթական երկու անգամ մեկական ժամով նրանց այցելեն փաստաբանները, խցի լույսը գիշերն անջատվի (1978 թ. փետրվարի 17-ից, սակայն, տեղադրվել է ինֆրակարմիր հսկիչ համակարգ, որը հնարավորություն է տվել անընդհատ հսկողության տակ պահել դիմողներին), ինչպես նաև նրանք լսեն ռադիո և կարդան մատակարարված թերթերը (սկսած 1978 թ. հունիսի 7-ից): 1978 թ. հունիսի 30-ին դիմողները մեղավոր են ճանաչվել Շվեյցարիայի մաքսային ծառայողի նկատմամբ մահափորձ կատարելու մեջ և դատապարտվել տասնմեկ և տասնհինգ տարվա ազատազրկման: 1978 թ. օգոստոսին թույլ է տրվել, որ նրանց այցելեն մտերիմ ազգականները, և նրանք նամակագրություն վարեն այլ անձանց հետ (ինչը ենթակա է եղել խիստ վերահսկողության): Դիմողները բողոքել են հանձնաժողովին՝ ասելով, որ իրենց կալանքի պայմանները եղել են անմարդկային կամ նվաստացնող: Հանձնաժողովը նկատել է.

…[հանձնաժողովն] արդեն առիթ ունեցել է նշելու, որ բանտային համայնքից բանտարկյալի մեկուսացումն ինքնին անմարդկային վերաբերմունքի ձև չէ: Կոնվենցիայի կողմեր հանդիսացող մի շարք պետություններում վտանգավոր հանցագործների համար ավելի խիստ բանտային պայմաններ են գործում…. Այլ առիթներով նա նշել է, որ բացարձակ հուզական մեկուսացումը՝ զուգակցվելով կատարյալ սոցիալական մեկուսացման հետ, կարող է կործանել անհատականությունը և այնպիսի վերաբերմունքի ձև է, որը չի կարող արդարացվել անվտանգության պահանջներով կամ որևէ այլ պատճառով: Բացի այդ, տարբերակում է մտցրել սրա և անվտանգության, կարգապահական կամ պաշտպանական պատճառներով այլ բանտարկյալների հետ ընկերության արգելման միջև և չի գտնում, որ բանտային համայնքից նման մեկուսացումը հավասար է անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի… Սույն գործի կապակցությամբ գնահատականներ տալիս ուշադրություն պետք է դարձվի դրա հետ կապված հանգամանքներին, ներառյալ՝ առանձնահատուկ պայմաններին, միջոցառման խստությանը, տևողությանը, նպատակին և տվյալ անձանց վրա դրանց ազդեցությանը (էջ 53):

Հանձնաժողովը հաշվի է առել այդ ժամանակ համատարած բնույթ ունեցող «ահաբեկչական մթնոլորտը», ներառյալ՝ հայտնի գերմանացի գործարարի առևանգումը և սպանությունը, օդանավի առևան-

գումը և բանտում գերմանական ահաբեկչական խմբի հիմնադիր անդամների մահը: Հանձնաժողովի կարծիքով (ութ կողմ և հինգ դեմ ձայներով).

Հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները և, մասնավորապես, այն փաստը, որ Շվեյցարիայի իշխանությունները նպատակահարմար են համարել աստիճանաբար թուլացնել դիմողների կալանքի կարգադրությունները, և վերջիններս դրսևորել են իրենց ընձեռված շփման որոշ հնարավորությունները մերժելու վարքագիծ, հանձնաժողովն անկարող է հաստատել, որ դիմողները ենթարկվել են ինչ-որ ծնի ֆիզիկական կամ բարոյական տառապանքի, որի նպատակը եղել է պատժել նրանց, խաթարել նրանց անհատականությունը կամ կոտրել նրանց դիմադրությունը…. Այդ իսկ պատճառով, հանձնաժողովը համարում է, որ դիմողների նկատմամբ կիրառված հատուկ պայմանները չեն կարող մեկնաբանվել որպես անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք՝ կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով (էջ 57):

Թեև Նախարարների կոմիտեի կողմից հաստատված վերոհիշյալ կարծիքը (բանաձև DH(83)15) ցույց է տալիս, որ այն դեպքում, երբ կալանավորների փախուստի կամ ինքնավնասման լուրջ վտանգ կա, պետությունները կարող են խիստ անվտանգության միջոցներ ձեռնարկել, սակայն բանտային այն պայմանները, որոնք խաթարում են ազատազրկված անձանց անհատականությունը, հանձնաժողովի կարծիքով՝ համատեղելի չեն 3-րդ հոդվածի հետ:

2 *«Յորգովն ընդդեմ Բուլղարիայի» (Iorgov v Bulgaria)* գործում (2004 թ. մարտի 11-ի վճիռ) պալատը միաձայն ընդունել է, որ բանտարկության խստացված ռեժիմը, որում երեք տարի շարունակ պահվել է բազմաթիվ երեխաների սպանության համար դատապարտված անձը, հավասար է եղել անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի: Մահապատժի նկատմամբ դե ֆակտո մորատորիում հայտարարելուց հետո մահապատժի դատապարտվածը օրը քսաներեք ժամ միայնակ անց է կացրել բանտախցում: Ուտելիքը նրան մատուցվել է խցում, և նրան թույլ չի տրվել ուտել այլ բանտարկյալների հետ: Ամենամսյա երկու տեսակցությունից բացի, նրա ամբողջ շփումը սահմանափակված է եղել է բանտի աշխատակազմի հետ հաղորդակցությամբ և ամենօրյա մեկժամյա զբոսանքների ժամանակ այլ բանտարկյալների հետ զրույցներով:

84. Դատարանը նկատում է, որ այս մերժելի ռեժիմը, որին ենթարկվել է դիմողը, տևել է տարիներ շարունակ, թեպետ դրա վնասակար ազդեցությունը հայտնի է եղել… Բացի այդ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ կառավարությունը չի նշել դիմողի մեկուսացումը պահանջող անվտանգության առանձնահատուկ պատճառներ, ինչպես նաև չի նշել, թե ինչու դիմողի դեպքում հնարավոր չի եղել վերանայել բանտային ռեժիմը, և ինչու մարդկային շփման ու խելամիտ զբաղմունքի պատշաճ հնարավորություններ չեն ընձեռվել նրան…

86. Վերջապես, դատարանը կարծում է, որ 1995 թ. հետո դիմողի նկատմամբ գործող պահպանության խիստ ռեժիմը և նյութական պայմանները պետք է որ խիստ ցավ պատճառած լինեն նրան, որի ուժգնությունը գերազանցել է ազատազրկմանը բնորոշ անխուսափելի ցավի մակարդակը: Այսպիսով, դատարանը եզրակացնում է, որ կոնվենցիայի 3-րդ հոդվածում նշված դաժանության նվազագույն մակարդակը բավարարված է, և դիմողը ենթարկվել է անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի:

Այս գործը տարբերվում է *Քոչերի և Մոլլերի* գործից այն բանով, որ բանտարկյալը անվտանգության սպառնալիք չէր ներկայացնում և շատ ավելի երկար ժամանակ է գտնվել դաժան ռեժիմի տակ:

3 Պալատը խիստ տարակարծիք է եղել այն հարցի շուրջ, թե արդյոք «Կառլոս շնագայլ» մականունով տխրահռչակ ահաբեկիչ Իլիչ Ռամիրեսի ութամյա միայնակ բանտարկությունը անմարդկայի՞ն վերաբերմունք է եղել: *«Ռամիրես Սանչեսն ընդդեմ Ֆրանսիայի» (Ramirez Sanchez v France*, 2005 թ. հունվարի 27-ի վճիռ) գործում դիմողը բողոքել է, որ իրեն կալանքի տակ են պահել 7 քմ-անոց խցում, թույլ են տվել օրական երկու ժամ զբոսնել բանտի մարզական պուրակում, կարդալ թերթեր և դիտել հեռուստացույց: Նրան թույլ չեն տվել շփվել մյուս բանտարկյալների հետ, սակայն շաբաթական երկու անգամ նրան այցելել է բժիշկը, ամիսը մեկ անգամ՝ քահանան, իսկ փաստաբանը, որը դարձել էր նրա ընկերակիցը, հինգ տարվա ընթացքում այցելել է նրան 640 անգամ: Դիմողը ֆիզիկապես և հոգեպես առողջ է եղել: Իշխանությունները փորձել են արդարացնել խստացված ազատազրկման պայմանները՝ պնդելով, որ դիմողը շատ բարձր աստիճանի վտանգ է ներկայացնում: (1990-ականների կեսերին

նրան բռնելու ժամանակ նա համարվում էր աշխարհի ամենավտանգավոր ահաբեկիչը: 1997 թ., մեղավոր ճանաչվելով 1975 թ. երեք ոստիկանների սպանության մեջ՝ նա դատապարտվել է ցմահ բանտարկության: Ընդ որում, այդ սպանությունները նրա ահաբեկչական խմբի հանցավոր գործունեության (որի մեջ մտել են նաև OPEC-ի նախարարների գերումը և «էյր Ֆրանսի» ինքնաթիռների առևանգումը) մի մասն են կազմել:) Պալատը, չորս կողմ և երեք դեմ ձայներով, որոշել է, որ պայմանավորված նրա անհատականությամբ և այն եզակի վտանգով, որ նա ներկայացնում է, նրան անազատության մեջ պահելու պայմանները անմարդկային վերաբերմունք չեն եղել: Վկայակոչելով 43-րդ հոդվածը՝ մեծ պալատը, հաշվի առնելով դիմողի բնավորությունը և նրա ներկայացրած վտանգը, որոշել է (2006 թ. հուլիսի 4-ի վճիռ), որ նրան ազատազրկման մեկուսի պայմաններում պահելը հավասար չի եղել 3-րդ հոդվածի խախտման: Այնուամենայնիվ, մեծ պալատը շեշտել է, որ բանտարկյալը չպետք է անորոշ ժամանակով պահվի ազատազրկման մեկուսի պայմաններում: Սկսած 2006 թ. սկզբից՝ նրան պահել են նորմալ բանտային պայմաններում, որի կապակցությամբ մեծ պալատը կարծիք է հայտնել, որ դա պետք է շարունակվի:

4 *«Վան Դեր Վենն ընդդեմ Նիդեռլանդների» (Van Der Ven v Netherlands)* գործի վերաբերյալ 2003 թ. փետրվարի 4-ի վճռով պալատը որոշել է, որ մերկ վիճակում բանտարկյալին կանոնավորապես խուզարկության ենթարկելը, որը զուգորդվել է ծայրաստիճան խիստ անվտանգության ռեժիմի (օրինակ՝ այցելող ընտանիքի անդամների հետ սահմանափակ ֆիզիկական շփման) հետ, ներկայացնում է անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք: Դիմողը նախնական կալանքի տակ է վերցվել և տեղավորվել սովորական բանտում 1995 թ. սեպտեմբերին, երբ նրան մեղադրանքներ են առաջադրվել սպանության, բռնաբարության և թմրանյութերի հետ կապված հանցագործությունների հոդվածներով: Հաջորդ ամիս նա տեղափոխվել է «Խստացված անվտանգության ռեժիմի հաստատություն» (ԽԱՌՀ), քանի որ, իշխանությունների կարծիքով, նա բանտից փախչելու մտադրություններ է ունեցել: ԽԱՌՀ-ը կազմել է խոշոր բանտային համալիրի մասը: Քանի որ դիմողն սպառնացել է, որ ԽԱՌՀ տեղափոխվելու դեպքում ինքնասպանություն կգործի, նա այդ հաստատությունում պահվել է խիստ անվտանգության ռեժիմի պայմաններում: Նրա խուցը խուզարկության է ենթարկվել առնվազն շաբաթը մեկ անգամ, և ամեն անգամ, երբ դա տեղի է ունեցել, նրան ենթարկել են մերկ խուզարկության, ներառյալ՝ նրա մարմնի բացվածքների արտաքին ստուգումը և նույն սեռի պաշտոնատար անձի կողմից փակ սենյակում հետանցքի հետազոտությունը: Երեք և կես տարի դիմողը ենթակա է եղել այս ռեժիմին: Խոշտանգումների կանխման եվրոպական կոմիտեն իր զեկույցում նշել է, որ իր կարծիքով՝ ԽԱՌՀ-ում պահվող ազատազրկված անձանց մերկ խուզարկությունը չի բխում ճշմարիտ անվտանգության պահանջներից:

61. Այս դեպքում դատարանը ցնցված է այն փաստից, որ ամեն շաբաթ, ԽԱՌՀ-ում գործող այլ անվտանգության միջոցառումներից բացի, դիմողը ենթարկվել է նաև մերկ խուզարկության: Հաշվի առնելով այն փաստը, որ ազգային իշխանությունները քրեակատարողական հիմնարկների ընտրության կենտրոնի հոգեբանական վարչության զեկույցների միջոցով քաջատեղյակ էին, որ դիմողը լրջորեն դժվարացել է համակերպվել, և ուշադրություն դարձնելով այն հանգամանքի վրա, որ ԽԱՌՀ-ում գտնվելու ընթացքում դիմողի մերկ խուզարկությունների ընթացքում նրա մոտ որևէ անպատեհ իր չի հայտնաբերվել, դատարանը մնում է այն կարծիքին, որ դիմողին կանոնավորապես մերկ խուզարկությունների ենթարկելու համար անհրաժեշտ էին շատ ավելի լուրջ հիմքեր, քան տվյալ գործի կապակցությամբ կառավարության կողմից ներկայացվող հիմքերը:

62. Դատարանը կարծում է, որ այնպիսի իրավիճակում, երբ դիմողի նկատմամբ արդեն ձեռնարկվել են բազմաթիվ վերահսկողական միջոցներ, նրան երեք և կես տարվա ընթացքում ամեն շաբաթ մերկ խուզարկությունների ենթարկելը, երբ անվտանգությամբ պայմանավորված հստակ անհրաժեշտություն գոյություն չի ունեցել, պետք է որ առաջացրած լինեին տառապանքի և նվաստացման զգացում, որ կարող էր ստորացնել և նսեմացնել նրան: Դիմողը հոգեբույժին անձամբ հայտնել է, որ իրոք այդպես է եղել, ասելով, որ ինքը, օրինակ, կհրաժարվեր վարսավիրանոց գնալուց, միայն թե իրեն մերկ խուզարկության չենթարկեին…

63. Համապատասխանաբար, դատարանը եզրակացնում է, որ կանոնավոր մերկ խուզարկությունը, որն իրականացվել է ԽԱՌՀ-ի այլ խստացված անվտանգության միջոցառումներին զուգահեռ, եղել է անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք՝ ի խախտումն կոնվենցիայի 3-րդ հոդվածի: Այսպիսով, տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:

Ազատազրկված անձանց մերկ խուզարկության ենթարկելու առումով այս վճիռը պետությունների համար խոչընդոտ չէ, սակայն այդպիսի խուզարկության ենթարկվող յուրաքանչյուր անձի դեպքում նման միջոցառումը պետք է արդարացված լինի անվտանգության առկա իրական հիմքերով (տե՛ս *«Իվանչուկն ընդդեմ Լեհաստանի» (Iwanczuk v Poland),* ստորև՝ էջ 220): Ընդհանրացնելով պետք է կրկին նշել, որ *Վան Դեր Վենի* դեպքում դատարանի որոշումը, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում, ավելի շուտ վերաբերել է ազատազրկման բանտային ռեժիմին, քան թե ազատազրկման ֆիզիկական պայմաններին:

5 Հոգեկան հիվանդությամբ տառապող և հոգեբուժական հիվանդանոցում և հատուկ բանտում պահման ենթակա անձի հարկադիր կերակրումը, նրա նկատմամբ ֆիզիկական զսպիչ և հանգստացնող դեղամիջոցների հարկադիր կիրառումը 3-րդ հոդվածի խախտում չեն համարվել *«Հերցեգֆալվին ընդդեմ Ավստրայի»* (*Herczegfalvy v Austria* A.242-B (1992) 15 EHRR 437) գործում: Ապացուցվել է, որ դիմողը հարձակում է գործել բանտակիցների և բանտի աշխատողների վրա, ինչպես նաև սպառնալիքներ տեղացել դատավորների վրա, սակայն դատարանը որոշել է, որ նա վտագավոր է և հոգեկան հիվանդության պատճառով (paranoia querulans) իր գործողությունների համար քրեական պատասխանատվություն կրելու անընդունակ: Այդ իսկ պատճառով նրան պահել են հատուկ բանտում, իսկ ավելի ուշ՝ հոգեբուժական հիվանդանոցում:

Երբ դիմողը մի քանի շաբաթ շարունակ գտնվել է հացադուլի մեջ, հիվանդանոցի տնօրենը կարգադրել է հարկադրաբար կերակրել նրան: Մի քանի անգամ դիմողին իր կամքին հակառակ տվել են նաև հանգստացնող միջոցներ: Նաև երկու օր նա գոտիներով և ցանցով կապված է եղել անվտանգության մահճակալին: Հանձնաժողովը միաձայն որոշել է, որ դա 3-րդ հոդվածի խախտում է: Սակայն դատարանը, նույնպես միաձայն, պաշտպանել է միանգամայն այլ տեսակետ:

79. Պարոն Հերցեգֆալվին նաև բողոքել է իր բուժումից: Այն, որ նրան հարկադրաբար կերակրել են և խմեցրել նեյրոլեպտիկ հաբեր [տրանկվիլիզատորներ], մեկուսացրել և ձեռնաշղթաներով կապել անվտանգության մահճակալից, …նա ենթարկվել է 3-րդ հոդվածին հակասող դաժան վերաբերմունքի:

80. Հանձնաժողովը համարել է, որ նրա բուժման իրականացման ձևը չի բխել 3-րդ հոդվածի պահանջներից: Բողոքի մեջ նշված տարբեր միջոցառումները եղել են դաժան, չափից ավելի տևական և միասին վերցրած հավասար են եղել անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի, և նույնիսկ նպաստել հիվանդի վիճակի վատթարացմանը:

81. Մյուս կողմից՝ կառավարության կարծիքով՝ միջոցառումները սկզբունքորեն ձեռնարկվել են ի պատասխան դիմողի՝ անհետաձգելի բուժական միջամտությունից հրաժարվելու դիրքորոշման՝ հաշվի առնելով նրա վատացող ֆիզիկական և հոգեկան առողջությունը:

Այսպիսով, երբ պարոն Հերցեգֆալվին հիվանդանոց է վերադարձել 1979 թ. սեպտեմբերի 10-ին, անհրաժեշտ է համարվել նրան կերակրել արհեստական ճանապարհով, քանի որ ուտելիքից հրաժարվելու պատճառով նա եղել է խիստ թուլացած վիճակում… Ավելի ուշ, մասամբ իր պահանջով, նրան կերակրել են խողովակով, մինչ նա շարունակել է իր առնվազն թվացյալ հացադուլը:

Նմանապես, բուժանձնակազմի կողմից հարկադիր միջոցառումների կիրառումը, ներառյալ՝ հանգստացնող միջոցների միջմկանային ներարկումը և ձեռնաշղթաների ու անվտանգության մահճակալի օգտագործումը, պայմանավորված են եղել բուժման նկատմամբ նրա դրսևորած անհանդուրժողականությամբ, նրա ծայրահեղ հարձակողականությամբ և հիվանդանոցի աշխատակիցների նկատմամբ սպառնալիքների և բռնարարքների կիրառմամբ: Այս միջոցառումները համաձայնեցվել են պարոն Հերցեգֆալվիի հոգաբարձուի հետ, և դրանք ունեցել են միայն բուժման նպատակ՝ դադարեցվելով անմիջապես, երբ հիվանդի վիճակը թույլ է տվել այդպես վարվել:

Եվ, վերջապես, կառավարությունը հայտնել է նաև, որ առանձին խցում Հերցեգֆալվիի մեկուսացումը, որը շոշափված է բողոքում, կատարվել է նրա իսկ ցանկությունների համաձայն: Նա շփում է ունեցել բժիշկների և բուժքույրերի հետ և նույնիսկ կարողացել է ընդունել այցելուներ և զբոսնել այգում:

82. Դատարանը կարծում է, որ ավելի մեծ զգոնություն է պահանջվում որոշելու համար՝ արդյոք կոնվենցիայի դրույթները պահպանվե՞լ են՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոգեբուժական հիվանդանոցներում գտնվող հիվանդների մոտ սովորաբար առաջանում է ստորակարգության և անզորության զգացում: Ճիշտ է, որ բժիշկների խնդիրն այն է, որ բժշկության գործող կանոնների հիման վրա որոշեն, թե ինչ բուժական միջոցառումներ պետք է կիրառվեն (անհրաժեշտության դեպքում՝ հարկադրաբար) իրենց հսկողության տակ գտնվող և որոշումներ կայացնելու մեջ լրիվ անընդունակ հիվանդ-

ների ֆիզիկական և հոգեկան առողջությունը պահպանելու համար, սակայն այդ հիվանդները բոլոր դեպքերում գտնվում են 3-րդ հոդվածի պաշտպանության տակ, որի պահանջներից շեղում չի թույլատրվում:

Պարզ է, որ այս դեպքում բժշկության հաստատված սկզբունքները վճռորոշ նշանակություն ունեն: Որպես կանոն՝ բուժական անհրաժեշտություն հանդիսացող միջոցառումը չի կարող համարվել անմարդկային կամ նվաստացնող: Դատարանը, այնուամենայնիվ, պետք է համոզվի, որ իրոք գոյություն է ունեցել բժշկական անհրաժեշտություն:

83. Այս դեպքում ամենից առավել մտահոգողը ձեռնաշղթաների և անվտանգության գոտիների օգտագործման տևողությունն է: Այնուամենայնիվ, դատարանին ներկայացված փաստերը բավարար չեն հերքելու համար կառավարության այն նկատառումը, որ հոգեկան հիվանդությունների ոլորտում այդ ժամանակ գործող սկզբունքների համաձայն՝ բուժումն արդարացված է եղել, քանի որ առկա է եղել բուժական անհրաժեշտություն: Բացի այդ, իր որոշ պնդումները դիմողը չի հիմնավորել փաստերով: Սա, մասնավորապես, վերաբերում է …մեկուսացվածության աստիճանին:

84. 3-րդ հոդվածի խախտում, այսպիսով, չի եղել:

Հետևաբար, դատարանը թույլ է տալու, որ իրենց բուժման վերաբերյալ ռացիոնալ որոշումներ կայացնելու մեջ անընդունակ հոգեկան հիվանդների նկատմամբ կիրառվի հարկադիր բուժում: Սակայն յուրաքանչյուր դեպքում պետությունները պետք է ցույց տան, որ տվյալ բուժման որոշակի ընթացքը պայմանավորված է եղել բուժման անհրաժեշտությամբ: Այս հիվանդների՝ կոնվենցիայով ամրագրված իրավունքների ապահովման առումով դատարանի դրսևորած «զգոնությունը» կենսական համաեվրոպական երաշխիք է, որն ուղղված է պետությունների կողմից իրենց վերապահված լայն ներպետական լիազորությունների շրջանակներում այս պոտենցիալ խոցելի խմբի իրավունքների ոտնահարման դեպքերի կանխմանը:

6 *«Հուրթադոն ընդդեմ Շվեյցարիայի» (Hurtado v Switzerland* A.280A (1994) գործի կապակցությամբ հանձնաժողովը միաձայն որոշել է, որ ձերբակալության ժամանակ վիրավոր անձին շտապ բուժօգնություն չտրամադրելը անմարդկային վերաբերմունքի դրսևորում է եղել: Դիմողը, որ կասկածվում էր թմրանենգությամբ զբաղվող հանցավոր խմբին անդամակցելու մեջ, ձերբակալվել է ոստիկանության հատուկ ուժերի կողմից, որոնք ձերբակալության գործողության ժամանակ լուսաձայնային նռնակ են օգտագործել: Ձերբակալվելուց և կալանքի տակ վերցվելուց երկու օր անց դիմողը բժշկի տեսակցություն է խնդրել: Այնուամենայնիվ դրանից հետո ևս վեց օր որևէ բժիշկ նրան չի զննել: Ի վերջո, ռենտգենյան լուսանկարները ցույց են տվել, որ դիմողն ունեցել է ձախ կողմի իններորդ կողի կոտրվածք:

Հանձնաժողովը համարում է, որ ոստիկանության կողմից ուժի կիրառման հետևանքով ստեղծված նման լուրջ հանգամանքներում կոնվենցիայի 3-րդ հոդվածը պետության մարմիններից պահանջում է ձեռնարկել համապատասխան քայլեր, որոնք ուղղված լինեն ոստիկանության, դատական կամ բանտային մարմինների հսկողության տակ գտնվող անձի ֆիզիկական բարեկեցության ապահովմանը: Կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակներում պետությունն ունի ազատազրկման մեջ գտնվող անձանց ֆիզիկական առողջությունը պաշտպանելու առանձին դրական պարտավորություն: Այս իրավիճակում համապատասխան բուժօգնության բացակայությունը պետք է որակվի որպես անմարդկային վերաբերմունքի դրսևորում (պարբ. 79):

Ավելի ուշ դիմողը և պատասխանող պետությունը բարեկամական կարգավորման են հանգել, որի արդյունքում վերջինս ինքնակամ վճարել է նրան 14.000 շվեյցարական ֆրանկ, սակայն չի ընդունել, որ տեղի է ունեցել կոնվենցիայի խախտում:

7 *«Քինանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Keenan v United Kingdom*, 2001 թ. ապրիլի 3-ի վճիռ) գործի կապակցությամբ դատարանը հետագա հղում է կատարել *Հուրթադոյի* գործին, երբ պետք է որոշեր, թե արդյոք ազատազրկման մեջ գտնվելու ժամանակ ինքնասպանություն գործած հոգեկան հիվանդին առանց համապատասխան մասնագիտական բուժօգնության թողնելը և մեկուսի բանտարկության մատնելը անմարդկային և նվաստացնող վերաբերմո՞ւնք է: Դիմողի որդին՝ Մարկը, հոգեկան հիվանդության պատմություն ուներ և դրսևորել էր պարանոյայի, բռնության և կանխամտածված ինքնավնասման ախտանիշներ: 1993 թ. ապրիլին նա հարձակվել է իր նախկին ընկերուհու

վրա, որի համար դատապարտվել է չորս ամսվա ազատազրկման: Նրան ընդունել են էքսետերի բանտ և տեղափոխել այդ բանտի բժշկական կենտրոն: Բանտի ավագ բժիշկը խորհրդակցել է Մարկին բուժող հոգեբույժի հետ: Մի քանի փորձ է արվել Մարկին տեղափոխելու սովորական խուց, սակայն նա դիմադրել է՝ մի անգամ էլ թաքնվելով հիվանդասենյակում կանգնեցված արգելապատնեշների հետևում: Ապրիլի վերջին բանտ հրավիրված հոգեբույժը խորհուրդ է տվել փոխել Մարկի բուժումը: Հաջորդ օրը Մարկի վիճակը վատացել է, և բանտի բժիշկը, որ հոգեբուժության բնագավառում որակավորում չի ունեցել, պահանջել է, որ նրան նորից հին դեղերը նշանակվեն: Նույն օրը՝ ավելի ուշ ժամի, Մարկը հարձակում է գործել բանտային հիվանդանոցի երկու աշխատողների վրա, որոնցից մեկը հարձակման հետևանքով ստացել է լուրջ վնասվածքներ: Հաջորդ օրը բանտի մեկ այլ բժիշկ, որը հոգեբուժության բնագավառում վեցամսյա դասընթաց էր ավարտել, հաստատել է, որ Մարկի առողջական վիճակը բավարար է, և թույլ է տվել գործած հարձակումների կապակցությամբ կարգապահական միջոցներ կիրառել նրա նկատմամբ, այսինքն՝ նրան միայնակ տեղավորել բանտի տուգանային թևում գտնվող առանձնախցում: Կառավարչի տեղակալը պահանջել է, որ Մարկին տեղավորեն առանձնախցում և փակի տակ պահեն օրական քսաներեք ժամ: Նրան ամեն օր տեսակցության են եկել բժիշկը, բանտի քահանան և բանտի կառավարիչը: Մարկն ասել է, որ ուզում է տեսնել սամարացիների մոտ սովորած բանտարկյալին, որը խորհուրդներ է տալիս ինքնասպանության մտադրություններ ունեցող բանտարկյալներին, և սպառնացել է ինքն իրեն վնասել: Բանտի աշխատողները նրա նկատմամբ յուրաքանչյուր տասնհինգ րոպեն մեկ ժամապահություն են սահմանել: Բանտի բժիշկներն արձանագրել են, որ նա վտանգավոր է աշխատակազմի համար: Մարկի բժշկական թերթիկում 1993 թ. մայիսի 3-ից հետո նշումներ չեն արվել: Այնուամենայնիվ, բանտի առանձնացված մասի պատահարների գրքում մի քանի նշումներ են արվել նրա վարքագծի վերաբերյալ, համաձայն որոնց՝ աշխատողների նկատմամբ նա եղել է նախահարձակ և դրսևորել տարօրինակ վարքագիծ: Մայիսի 14-ին տեղի է ունեցել նրա կարգապահական դատավարությունը՝ հիմք ընդունելով բանտի բժիշկներից մեկի կազմած տեղեկանքը, համաձայն որի՝ նրա առողջությունը բավարար էր վարույթին մասնակցելու համար: Նա մեղավոր է ճանաչվել աշխատողների վրա հարձակում գործելու մեջ և կառավարչի տեղակալի կողմից դատապարտվել քսանութ օր լրացուցիչ ազատազրկման և յոթ օր ազատազրկման բանտի տուգանային մասում: Հաջորդ օրը Մարկին այցելել է նրա ընկերը, որից հետո նկատվել է նրա տրամադրության զգալի բարձրացում: Այդ երեկո Մարկին գտել են իր խցում կախված վիճակում (նախքան Մարկի ինքնասպանությունը բացահայտելը բանտի համապատասխան աշխատողը մի քանի րոպե գտնվել է զուգարանում): Դիմողը կարծում է, որ ի թիվս այլոց, բանտում իր որդուն բավարար չափով հոգեբուժական խնամք չի տրամադրվել, և դա խախտել է նրա՝ 3-րդ հոդվածով ամրագրված իրավունքները: Հինգ կողմ և երկու դեմ ձայներով դատարանը որոշել է.

110. Տվյալ դիմումի համատեքստում տեղին է նաև հիշել, որ իշխանություններն ունեն ազատազրկված անձանց առողջությունը պահպանելու պարտավորություն (*«Հուրթադոն ընդդեմ Շվեյցարիայի» (Hurtado v Switzerland)* Ընդհանուր զեկույց, 8 հուլիսի 1993 թ., շարք A, թիվ 280, էջ 16, պարբ. 79): Համապատասխան բուժման բացակայությունը կարող է համարվել 3-րդ հոդվածում նշված վերաբերմունքին հավասար վերաբերմունք (տե՛ս *«Իլհանն ընդդեմ Թուրքիայի» (Ilhan v Turkey)* [GC] թիվ 22277/93, ECHR 2000-VII, պարբ. 87): Մասնավորապես, հոգեկան խանգարումներ ունեցող անձանց նկատմամբ դրսևորված վերաբերմունքի կամ նշանակված պատժի՝ 3-րդ հոդվածին համապատասխանությունը գնահատելու համար պետք է հաշվի առնվի նրանց խոցելիությունը և որոշ դեպքերում նաև նրանց վրա այդ վերաբերմունքի թողած ազդեցությունից հետևողականորեն կամ առհասարակ որևէ կերպ բողոքելու անկարողությունը (տե՛ս, օրինակ՝ *«Հերցեգֆալվիի ընդդեմ Ավստրիայի» (Herczegfalvy v Austria)* գործը, 1992 թ. սեպտեմբերի 24-ի վճիռ, շարք A, թիվ 244, պարբ. 82, *«Աերթսն ընդդեմ Բելգիայի» (Aerts v Belgium*), 1998 թ. հուլիսի 30-ի վճիռ, Զեկույցներ 1998-V, էջ 1966, պարբ. 66):

113. Այս դեպքում դատարանը ցնցված է, որ թեպետ Մարկ Քինանի ինքնասպանության մտադրությունները եղել են բացահայտելի, և նա ենթարկվել է մեկուսացման, իսկ ավելի ուշ նաև՝ կարգապահական պատժի ազդեցություններից առաջացած ցնցման, նրա վերաբերյալ բժշկական նշումները բացակայել են: 1993 թ. մայիսի 5-ից մինչև մայիսի 15-ը՝ նրա մահանալու օրը, բժշկական քարտում նշումներ չեն արվել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարկ Քինանի խնամքով զբաղվել են բանտի մի քանի բժիշկներ, ակնհայտ է, որ նրա հոգեկան վիճակի վերաբերյալ լրիվ և մանրամասն գրառումներ անելուն պատշաճ նշանակություն չի տրվել, ինչի հետևանքով թուլացել է մոնիթորինգի և վերահսկողության

որևէ գործողության արդյունավետությունը: Հաշվի առնելով այդ նույն ժամանակահատվածում միջադեպերի գրանցամատյանում արված նշումները՝ դատարանը բավարար չի համարում դոկտոր Քիթի բացատրությունը, համաձայն որի՝ նշումների բացակայությունը նշանակում է, որ գրառելու ոչինչ չի եղել:

114. Բացի այդ, թեպետ բանտի ավագ բժիշկը Մարկ Քինանին ընդունելու ժամանակ խորհրդակցել է նրա բժշկի հետ, իսկ դրանից հետո՝ 1993 թ. ապրիլի 29-ին, նաև՝ հատուկ նրան զննելու համար հրավիրված մեկ այլ հոգեբույժի հետ (որը նույնպես ճանաչում էր Մարկ Քինանին), այդ օրվանից հետո հոգեբույժին հարցումներ այլևս չեն արվել: Չնայած 1993 թ. ապրիլի 29-ին դոկտոր Ռոուվը զգուշացրել է, որ մինչև պարանոիկ զգացմունքների անցնելը Մարկ Քինանը պետք է խուսափի շփումից, նրան նորմալ տեղ տեղափոխելու հարցը բարձրացվել է հաջորդ օրը: Երբ նրա վիճակը սկսել է վատանալ, բանտի բժիշկը, որը հոգեբուժության ոլորտում մասնագիտացում չի ունեցել, առանց բուժումը փոխած հոգեբույժի կարծիքը հարցնելու, վերադարձել է Մարկ Քինանի նախկին բուժմանը: Դրան հետևել է բանտի երկու աշխատողների վրա հարձակումը: Չնայած Մարկ Քինանը խնդրել է, որի բանտի բժիշկը բացատրի բանտի կառավարչին, որ հարձակումը տեղի է ունեցել դեղի փոփոխությունից հետո, նրա հետագա բուժումը շարունակելու կամ նրա նկատմամբ վարույթի իրականացման և պատժի նշանակման նպատակահարմարությունը պարզելու համար հոգեբույժի կարծիքը չեն հարցրել:

115. Մարկ Քինանի վիճակի նկատմամբ արդյունավետ վերահսկողության պակասը և նրա վիճակի վերաբերյալ գրագետ հոգեբուժական տեղեկությունների բացակայությունը բացահայտում են հոգեկան խանգարում ունեցող և ինքնասպանության ռիսկի տակ գտնվող անձի առողջական վիճակի գնահատման և բուժման կազմակերպման զգալի թերություններ: Նրա նկատմամբ ուշացած կագապահական տույժի կիրառումը (այն է՝ յոթօրյա մեկուսացում բանտի տուգանային թևում) և նրա պատժին լրացուցիչ քսանութ օր ավելացնելը, որոնք տեղի են ունեցել իրադարձությունից երկու շաբաթ անց և նրա ակնկալվող ազատ արձակումից իննօր առաջ, ևս կարող են ազդած լինել նրա ֆիզիկական և բարոյական դիմադրության վրա և համատեղելի չեն հոգեկան խանգարում ունեցող անձի նկատմամբ վերաբերմունքի չափորոշչի հետ: Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով դա պետք է համարվի անմարդկային և նվաստացնող վերաբերմունք և պատիժ:

Հետևաբար, դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:

Վճիռը կարևոր է այն իմաստով, որ բացահայտում է դատարանի հարաճուն մտահոգությունն առ այն, որ պետությունները պետք է պատշաճ բժշկական խնամք ապահովեն հոգեկան հիվանդ բանտարկյալների և հատկապես նրանց համար, ովքեր ինքնասպանություն գործելու մտադրություններ ունեն:

8 *«Մակգլինչին և մյուսներն ընդդեմ ՄԹ-ի» (McGlinchey and Others v UK)* գործի վերաբերյալ 2003 թ. ապրիլի 29-ի վճռի համաձայն՝ հերոինի ընդունումը դադարեցնելու հետևանքով լուրջ ախտանիշներ ցուցաբերած նոր կալանավորի նկատմամբ ճիշտ և պատշաճ մակարդակի հսկողության և բուժման բացակայությունը համարվել է անմարդկային և նվաստացնող վերաբերմունք: Դիմողները եղել են 1968 թ. ծնված և երկար տարիներ թմրամոլությամբ տառապած Ջուդիթ Մակգլինչիի մայրը և երեխաները: 1998 թ. դեկտեմբերի 7-ին գողության մեղադրանքով նա դատապարտվել է չորս ամսվա ազատազրկման: Վեյքֆիլդի «Նյու հոլլ» բանտ մուտք գործելու պահին նրա քաշը եղել է 50 կգ, և նա բողոքել է թմրանյութերի օգտագործումը դադարեցնելու հետևանքով իր մոտ առաջացած ախտանիշներից (հաճախակի փսխումներ է ունեցել): Հաջորդ օրը բանտի բժիշկը զննել է նրան և թմրանյութերի օգտագործումը դադարեցնելու հետևանքով առաջացած ախտանիշները մեղմացնելու նպատակով դեղորայք նշանակել: Ամսի 9-ին նրա քաշը եղել է 43 կգ, և նրան նշանակել են հակափսխեցուցիչ դեղորայք: Հաջորդ օրը նա զանգահարել է իր մորը և բողոքել, որ իրեն կարգին չեն բուժում: Ամսի 11-ին նրա օրգանիզմում օպիում է հայտնաբերվել: Հաջորդ երկու օրվա ընթացքում նրա զարկերակը և արյան ճնշումը եղել են նորմայի սահմաններում: Այնուամենայնիվ, ամսի 14-ին նա ուշաթափվել է և տեղափոխվել հիվանդանոց: Այնուհետև նրա մոտ առաջացել է սրտի կանգ, և նա մահացել է հիվանդանոցում 1999 թ. հունվարի 3-ին: Հերձումը բացահայտել է ուղեղի վնասվածք և տարբեր օրգանների կաթված: Նրա քաշը եղել է 41 կգ: Նրա մահվան հանգամանքներն ուսումնասիրող երդվյալ ատենակալները բաց վճիռ են ընդունել (չեն հաստատել նրա մահվան պատճառը): Դիմողները բողոքել են, որ իշխանությունները Ջուդիթին ենթարկել են անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի՝ նաև թողնելով, որ նա ջրազրկվի և մաքրի իր փսխածը: Պալատը, վեց կողմ և մեկ դեմ ձայներով, որոշել է, որ.

57. Համաձայն դատարանին ներկայացված փաստերի՝ 1998 թ. դեկտեմբերի 14-ի առավոտյան Ջուդիք Մակգլինչին (որը եղել է թմրամոլ, շարունակաբար գործածել հերոին, բանտ ընդունվելու պահին եղել է հյուծված և վատառողջ) ունեցել է քաշի և օրգանիզմի ջրերի լուրջ կորուստ: Սա սկզբունքորեն եղել է մեկ շաբաթ շարունակ ուշադրությունից դուրս մնացած փսխման ախտանիշների, ուտելու և հեղուկները պահելու անկարողության հետևանք: Այս իրավիճակը, բացի այն հանգամանքից, որ Ջուդիք Մակգլինչիին պատճառել է ցնցում և տառապանք, նաև լրջորեն սպառնացել է նրա առողջությանը, ինչը և հիմնավորվում է հետո տեղի ունեցած ուշաթափությամբ: Դատարանը կարծում է, որ բանտի ղեկավարությունը խախտել է կոնվենցիայի 3-րդ հոդվածի չափանիշները, քանի որ չի կատարել ազատազրկման մեջ գտնվող անձին պահանջվող բժշկական օգնություն տրամադրելու իր պարտականությունը: Այս համատեքստում դատարանը նկատում է, որ բանտի ղեկավարությունը համապատասխան քայլեր չի ձեռնարկել, որպեսզի պարզի Ջուդիք Մակգլինչիի քաշի կորստի պատճառը, որը, սակայն, եղել է այնպիսի գործոն, որ պետք է ահազանգեր բանտի ղեկավարությանը նրա վիճակի լրջության մասին: Սա մեծապես անտեսվել է կշեռքների անճշտության պատճառով: Շաբաթ-կիրակի օրերին Ջուդիք Մակգլինչիի քաշի հետագա անկումը և բանտի կողմից նրան բուժմանն ուղղված արդյունավետ քայլերի (ինչպես, օրինակ՝ ներերակային ճանապարհով դեղորայք և հեղուկներ ներարկելու նպատակով նրան հիվանդանոց տեղափոխելու կամ փսխումները կանգնեցնելու նպատակով ավելի շատ մասնագիտական օժանդակության դիմելու քայլերի) բացակայությունը վրիպել են նրա նկատմամբ հսկողություն իրականացնող բժշկի ուշադրությունից:

58. Դատարանը եզրակացնում է, որ բանտի ղեկավարության վերաբերմունքը Ջուդիք Մակգլինչիի նկատմամբ հակասել է կոնվենցիայի 3-րդ հոդվածում ամրագրված անմարդկային և նվաստացնող վերաբերմունքն արգելող դրույթին:

Այս դեպքում, ինչպես նաև *Քհնանի* դեպքում, զոհը ողբերգական մահ է ունեցել:

9 *«Նաումենկոն ընդդեմ Ուկրաինայի» (Naumenko v Ukraine)* գործի վերաբերյալ 2004 թ. փետրվարի 10-ի վճռով մշտական գործող դատարանը չի համարել, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում, եթե «մահապատժի դատապարտվածների ցուցակում» ընդգրկված և մահապատժի դատապարտված մարդասպանի նկատմամբ (որի դատավճիռը փոխարինվել էր ցմահ բանտարկությամբ) հարկադրաբար դեղորայք է կիրառվել: Բանտում գտնվելու և «մահապատժի դատապարտվածների ցուցակում» ընդգրկված լինելու ընթացքում նրա մոտ ախտորոշվել է հոգեկան խանգարում: Նա մի քանի անգամ փորձել է ինքնասպանություն գործել և եղել է նախահարձակ: Հոգեբույժը նրան նշանակել է նեյրոլեպտիկ և հոգեմետ դեղեր: Դիմողը բողոքել է, որ, ի թիվս այլոց, ենթարկվել է ճառագայթման «հոգեմետ դեղերի գեներատորից»: Դատարանի պատվիրակությունը փաստեր է հավաքել դիմողից և այն բանտի ականատեսներից, որտեղ նա պահվել է: Իր վճռում դատարանը կրկնել է, որ բանտարկյալների առողջության պաշտպանությունը և բուժման միջամտությունը, անկախ այն հանգամանքից, թե որքան տհաճ կարող է դա լինել նրանց համար, տեղական իշխանությունների պարտականությունն է և չի կարող համարվել 3-րդ հոդվածի խախտում, եթե ցույց է տրվել, որ դա անհրաժեշտ է եղել բժշկական նպատակներով: Չնայած դատարանը քննադատաբար է մոտեցել բժշկական արձանագրություններում դիմողի վերաբերյալ առկա տվյալների պակասին, դատավորները միաձայն որոշել են, որ արժանահավատ փաստեր չկան, որ իշխանությունները սխալ են գործել՝ ստիպելով դիմողին ընդունել այդ դեղորայքը: Նաև, փաստեր չեն եղել, համաձայն որոնց նրան բուժելու համար օգտագործվել է հոգեմետ դեղերի գեներատոր: Հոգեկան խանգարում ունեցող ազատազրկված անձի նկատմամբ այս վճռում ընկած հարկադիր բուժման մոտեցումը նման է նախաստեղծ դատարանի կողմից *Հերցեգֆալվիի* գործի նկատմամբ կիրառված մոտեցմանը (վերը՝ ծնթ. 5):

10 *«Յորգովն ընդդեմ Բուլղարիայի»* գործում (վերը՝ ծնթ. 2) դիմողը հայտնել է որ իր այտուցված գեղձի վիրահատությունը անհարկի ձգձգվել է, քանի որ բանտի բուժանձնակազմը և ղեկավարությունը թշնամաբար են տրամադրված եղել իր նկատմամբ: Դատարանը հայտարարել է հետևյալը.

85. Ինչ վերաբերում է դիմողի բժշկական խնամքի որակին, դատարանը նկատում է, որ նրա առողջությունը կանոնավորապես վերահսկվել է, և շատ դեպքերում նա ստացել է անհրաժեշտ բուժում: Այնուամենայնիվ, դիմողի այտուցված թքագեղձի բուժումը, թեպետ ոչ համոզիչ ձևով, սակայն ցույց է տալիս, որ նրան պատշաճ բուժօգնություն տրամադրելու առումով եղել են չհիմնավորված ձգձգումներ: Այս կապակցությամբ հարկ է շեշտել, որ դիմողի ենթադրյալ կոպիտ վերաբերմունքը բուժանձնակազմի նկատմամբ և ազատազրկված անձի կողմից բանտային կանոնների և

կարգապահության ցանկացած խախտումը որևէ կերպ չեն կարող հիմք ընդունվել նրան բուժօգնություն չտրամադրելու համար:

Ակնհայտ է, որ պահանջվող բուժօգնություն չտրամադրելը կամ դրա տրամադրման ուշացումը չեն կարող օգտագործվել որպես բանտարկյալներին պատժելու պաշտոնական կամ ոչ պաշտոնական միջոցներ:

11 *«Օջալանն ընդդեմ Թուրքիայի»* գործի կապակցությամբ (տե՛ս վերը՝ էջ 135) միավորված մեծ պալատը որոշել է, որ խստացված անվտանգության պայմանները, որոնցում պահվում է ցմահ բանտարկության դատապարտված ահաբեկչական/քաղաքական կազմակերպության նախկին առաջնորդը (որին նախագահ Վիլդիաբերն իր միասնական, մասնակի չհամընկնող կարծիքում անվանում է «պատերազմի հրձիգ»), անմարդկային կամ ստորացնող վերաբերմունքի դրսևորում չէ:

192. Տվյալ դեպքում ճիշտ է ասել, որ դիմողին ազատազրկման մեջ պահելը Թուրքիայի իշխանությունների համար զուգորդվել է խիստ լուրջ բարդություններով: Դիմողը հանդիսանում է խոշոր, զինված և անջատողական շարժման առաջնորդը, Թուրքիայում համարվում է երկրի ամենավտանգավոր ահաբեկիչը: Նրա ձերբակալության արձագանքները և նրա ղեկավարած շարժման մեջ առաջացած տարակարծությունները ցույց են տալիս, որ նրա կյանքը, առանց չափազանցության, վտանգի տակ է: Խելամիտ ենթադրություն է նաև այն, որ նրա զինակիցները փորձելու են օգնել նրան փախչել բանտից: Այդ հանգամանքներում հասկանալի է, որ Թուրքիայի իշխանությունները, անհրաժեշտությունից մղված, պետք է արտակարգ անվտանգության միջոցներ ձեռնարկեին դիմողին կալանքի տակ պահելու համար:

193. Դիմողի բանտախուցն անվիճելիորեն կահավորված է այնպիսի չափանիշների համաձայն, որոնք դիտողություն անելու որևէ տեղիք չեն տալիս: Առաջնորդվելով իր տրամադրության տակ եղած լուսանկարներով և 2001 թ. սեպտեմբերի 2-ից մինչև սեպտեմբերի 14-ը ԽԿԿ-ի [Խոշտանգումների կանխման եվրոպական կոմիտեի] պատվիրակների Թուրքիա այցի ժամանակ դիմողի բանտի ստուգման արդյունքներով՝ դատարանը նկատում է, որ խուցը, որտեղ բնակվում է միայն դիմողը, բավականին մեծ է բանտարկյալին տեղավորելու համար և կահավորված է մահճակալով, սեղանով, բազկաթոռով և գրադարակներով: Այն ունի նաև օդորակիչ, լվացարան և զուգարանի հարմարություններ, ինչպես նաև դեպի ներքին բակ նայող պատուհան: Դիմողը, ամենայն հավանականությամբ, բժշկական հսկողության տակ է, որը որքան խիստ է, նույնքան էլ կանոնավոր: Դատարանը կարծում է, որ այս պայմանները կոնվենցիայի 3-րդ հոդվածի խնդիր չեն առաջացնում:

194. Բացի այդ, դատարանը կարծում է, որ չի կարելի համարել, որ դիմողը զգացմունքային կամ խցային մեկուսացման մեջ է: Անշուշտ, քանի որ նա միակ բանտարկյալն է, հնարավորություն ունի շփվելու միայն բանտի աշխատակազմի հետ: Իր տրամադրության տակ նա ունի գրքեր, թերթեր և ռադիո: Նա չի կարող դիտել հեռուստատեսային ծրագրեր կամ օգտվել հեռախոսից: Այնուամենայնիվ, նամակագրությամբ կապ է պահպանում արտաքին աշխարհի հետ: Հանդիպում է բժշկին ամեն օր, իսկ փաստաբաններին և ընտանիքի անդամներին՝ շաբաթական մեկ անգամ: Դատավարության ընթացքում իր փաստաբանների հետ տեսակցելու հնարավորություն է ունեցել շաբաթական երկու անգամ: Իմրալիի բանտ հասնելու հետ կապված դժվարությունները (օրինակ՝ կապված անբարենպաստ եղանակային պայմանների հետ) կարծես թե լուծվել են, քանի որ 2004 թ. վերջին բանտի ղեկավարությանը հատկացվել է հարմար նավ:

195. Դատարանն ուշադրություն է դարձրել ԽԿԿ-ի առաջարկներին, համաձայն որոնց՝ չպետք է թույլ տալ, որ դիմողի հարաբերական սոցիալական մեկուսացումը տևի չափից ավելի երկար, և դրա հետևանքները պետք մեղմացվեն՝ նրան հնարավորություն ընձեռելով դիտելու հեռուստացույց և հեռախոսով շփվելու իր փաստաբանների և մտերիմ ազգականների հետ: Այնուամենայնիվ, ինչպես պալատը, այնպես էլ մեծ պալատը ըմբռնումով են մոտենում կառավարության մտահոգություններին, որ դիմողը կարող է օգտագործել արտաքին աշխարհի հետ կապը՝ իր ղեկավարած զինված անջատողական ուժերի հետ կապերը վերականգնելու համար: Չի կարելի ասել, որ սրանք անհիմն մտահոգություններ են: Սրան նաև ավելանում է կառավարության այն մտավախությունը, որ սովորական բանտում դիմողի կյանքը պաշտպանելը շատ ավելի դժվար կլինի:

196. Համաձայնելով ԽԿԿ-ի առաջարկներին, որ անհրաժեշտ է մեղմացնել դիմողի տևական հարաբերական սոցիալական մեկուսացման հետևանքները և նրա համար ստեղծել նույնպիսի պայմաններ, ինչպիսիք գործում են Թուրքիայում խստացված անվտանգության ռեժիմ ունեցող բանտերում պահվող ազատազրկված անձանց համար (օրինակ՝ նրան ընձեռելով հեռուստացույց դիտելու և ընտանիքի անդամների հետ հեռախոսով շփվելու հնարավորություն), մեծ պալատը համամիտ է պալատի հետ, որ Իմրալիի բանտում նրան պահելու պայմանները չեն ընդունել դաժանության նվազագույն մակարդակ, որն անհրաժեշտ է կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով անմարդ-

կային և նվաստացնող վերաբերմունք համարվելու համար: Հետևաբար, այդ առումով այդ դրույթի խախտում տեղի չի ունեցել:

12 Հացադուլ հայտարարած և գիտակցությունը կորցրած բանտարկյալներին հիվանդանոցի մահճակալներին շղթայելը պալատը միաձայն համարել է անմարդկային վերաբերմունք *«Ավջին և այլք ընդդեմ Թուրքիայի» (Avci and Others* v Turkey) գործի վերաբերյալ 2006 թ. հունիսի 27-ի վճռում: Դատարանը համարել է, որ բանտարկյալների վատառողջությունը ենթադրել է տալիս, որ նրանց կողմից փախուստի դիմելու վտանգ գոյություն չի ունեցել (նրանք նաև գտնվում էին ժանդարմների հսկողության տակ), ուստի սահմանափակումը եղել է անհամաչափ:

էքստրադիցիա կամ հանձնում

.....

«Սերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության»
*(Soering v United Kingdom A.*161 (1989) 11 EHRR 439)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը՝ Յենս Սերինգը, Գերմանիայի քաղաքացի է և ծնվել է 1966 թ.: 1985 թ. մարտին նրա ընկերուհու ծնողները դաժանաբար սպանվել են Վիրջինիա նահանգում (ԱՄՆ) գտնվող իրենց տանը: Դիմողը և նրա ընկերուհին միասին անհետացել են Վիրջինիայից 1985 թ. հոկտեմբերին, այնուհետև ձերբակալվել Անգլիայում 1986 թ. ապրիլին կեղծ չեքեր օգտագործելու մեղադրանքով: Դիմողը Անգլիայում հարցաքննվել է Վիրջինիայի ոստիկանության աշխատակցի կողմից և ընդունել, որ սպանել է իր ընկերուհու ծնողներին, քանի որ նրանք դեմ են եղել իրենց հարաբերություններին: 1986 թ. հունիսին այդ սպանությունների կապակցությամբ Վիրջինիայի մեծ ժյուրին սպանության մեղադրանք է առաջադրել Սերինգի դեմ: Երկու ամիս անց Միացյալ Նահանգների կառավարությունը պահանջել է հանձնել դիմողին (և նրա ընկերուհուն) ԱՄՆ-ի և ՄԹ-ի միջև գործող «Հանձնման մասին» համաձայնագրի հիման վրա: 1986 թ. սեպտեմբերին ՄԹ կառավարությունը հանձնման վարույթ է սկսել դիմողի նկատմամբ: Դրանից որոշ ժամանակ անց Վաշինգտոնում Մեծ Բրիտանիայի դեսպանատունը ԱՄՆ իշխանություններին ներկայացրել է հետևյալ պահանջը.

Քանի որ մահապատիժը վերացված է Մեծ Բրիտանիայում, դեսպանատունը հանձնարարություն է ստացել ճշտել, որ …«Հանձնման մասին» համաձայնագրի պայմանների համաձայն՝ պրն Սերինգին հանձնելու և հարուցված մեղադրանքների հատկանիշներով նրան մեղավոր ճանաչելու դեպքում …եթե նույնիսկ մահապատիժ նշանակվի, ապա այն ի կատար չի ածվի: Եթե Միացյալ Նահանգների կառավարությունը չի կարող սահմանադրության հիման վրա նման երաշխիքներ տրամադրել, ապա Միացյալ Թագավորության իշխանությունները խնդրում են, որ Միացյալ Նահանգների կառավարությունը համապատասխան քայլեր ձեռնարկի և առաջարկի համապատասխան մարմիններին մահապատիժ չնշանակել, իսկ նշանակելու դեպքում՝ ի կատար չածել:

1986 թ. դեկտեմբերին գերմանացի դատախազը հարցաքննել է դիմողին, որից հետո՝ 1987 թ. փետրվարին, Բոննի դատարանը ստորագրել է հրամանագիր, որով թույլատրել է ձերբակալել Սերինգին, որը մեղադրվում էր սպանություններ կատարելու մեջ: Դրանից հետո Գերմանիայի կառավարությունը պահանջել է, որ նա հանձնվի Գերմանիային՝ հիմք ընդունելով Գերմանիայի և ՄԹ-ի միջև ստորագրված «Հանձնման մասին» 1872 թ. համաձայնագիրը: ՄԹ կառավարությունը պատասխանել է, որ ԱՄՆ իշխանություններն արդեն Սերինգին հանձնելու պահանջ են ներկայացրել, և այդ վարույթը պետք է շարունակվի: Վիրջինիայի դատախազը գրավոր երդվել է, որ.

Սույնով ես հավաստում եմ, որ եթե սպանության մեջ մեղադրվող Յենս Սերինգը մեղավոր ճանաչվի Վիրջինիայի Բեդֆորդ համայնքում կատարված …սպանությունների կապակցությամբ իր դեմ հարուցված սպանության

մեղադրանքներով, Միացյալ Թագավորության անունից դատավորին կներկայացվի, որ Միացյալ Թագավորությունը ցանկություն է հայտնել, որ մահապատիժ չնշանակվի կամ ի կատար չածվի:

Այնուամենայնիվ, նա մտադիր էր մահապատիժ պահանջել: Նիստից հետո Բոու Սթրիթի մագիստրատների դատարանի գլխավոր մագիստրատը պարտավորեցրել է դիմողին սպասել ներքին գործերի քարտուղարի հրամանին, որպեսզի նրան վերադարձնեն ԱՄՆ: Նախքան հանձնման իրականացումը Սերինգը դիմել է հանձնաժողովին՝ հայտնելով, որ եթե իրեն հանձնեն ԱՄՆ-ին, ապա մեծ հավանականություն կա, որ իրեն դատապարտելու են մահապատժի և, հետևաբար, ենթարկելու անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի (հատկապես «մահապատժի դատապարտվածների համար նախատեսված խցերում» պահելու երևույթի միջոցով) և պատժի, որը հակասում է 3-րդ հոդվածին: Հանձնաժողովը պահանջել է ՄԹ-ից, որպեսզի ՄԹ-ն չհանձնի Սերինգին, քանի դեռ նրա դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունվել: Այնուհետև հանձնաժողովը՝ վեց կողմ և հինգ դեմ ձայներով, որոշել է, որ 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել: Հանձնաժողովը, ՄԹ-ի և Գերմանիայի կառավարությունները գործն ուղարկել են դատարան:

Ա. ՀԱՆՁՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

81. Այս ենթադրյալ խախտումն առաջանում է դիմողին այսպես կոչված «մահապատժի դատապարտվածների համար նախատեսված խցերում պահելու» երևույթի միջոցով: Այդ երևույթը բաղկացած է մի քանի գործոններից, որոնք ներգործություն են ունենալու դիմողի վրա, եթե նրան Վիրջինիային հանձնելուց հետո նա մեղադրվի սպանության մեջ և դատապարտվի մահապատժի:

82. Իր հաշվետվությունում (պարբ. 94) հանձնաժողովը կրկին հաստատել է «նախադեպային իրավունքը, համաձայն որի՝ անձի արտաքսումը կամ հանձնումը կարող է առաջացնել կոնվենցիայի 3-րդ հոդվածի խնդիր, եթե լուրջ պատճառներ կան հավատալու, որ ընդունող պետությունում անձը ենթարկվելու է այդ հոդվածին հակասող վերաբերմունքի:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը պաշտպանել է հանձնաժողովի տեսակետը՝ մատնանշելով Գերմանիայի դատարանների նախադեպային իրավունքի պրակտիկայում առկա համանման մոտեցումը:

Բացի այդ, դիմողը ներկայացրել է, որ 3-րդ հոդվածը պայմանագրի կողմ հանդիսացող պետություններին ոչ միայն արգելում է իր իրավազորության շրջանակներում ենթարկել անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, այլև ընդգրկում է հարակից պարտավորություն, համաձայն որի՝ անձը չպետք է դրվի այնպիսի դրության մեջ, որի դեպքում նա կարող է այլ պետությունների կողմից ենթարկվել նման վերաբերմունքի կամ պատժի: Դիմողի պարագայում՝ առնվազն 3-րդ հոդվածի մասով, անձը չի կարող հանձնվել կոնվենցիայով պաշտպանվող գոտուց դուրս՝ առանց վստահության, որ այն երաշխիքները, որոնք տրամադրվելու են նրան, նույնքան արդյունավետ են լինելու, որքան կոնվենցիայով տրամադրված երաշխիքները:

83. Միացյալ Թագավորության կառավարությունը, մյուս կողմից, վիճարկել է, որ 3-րդ հոդվածը չպետք է մեկնաբանվի այնպես, իբր այն պատասխանատվություն է դնում պայմանավորվող պետության վրա իր իրավազորության սահմաններից դուրս տեղի ունեցող գործողությունների համար: Մասնավորապես, համաձայն նրանց բացատրության, հանձնումը չի ենթադրում, որ անձին հանձնող պետությունը պատասխանատվություն է կրում հանձնման ենթակա երկրում իր իրավազորությունից դուրս անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի համար, որին հանձնվող անձը կարող է ենթարկվել այդ երկրում: Նախ՝ նրանք նշել են, որ դա 3-րդ հոդվածի շարադրանքի խիստ լուրջ և անընդունելի ընդլայնում է, որ փախուստի մեջ գտնվող հանցագործին հանձնելով (էքստրադիցիայի ենթարկելով)՝ տվյալ պետությունը նրան «ենթարկում է այնպիսի վերաբերմունքի կամ պատժի, որը նա պետք է ստանա ընդունող պետությունում իր դատապարտումից և պատժի նշանակումից հետո: Հանձնաժողովի մոտեցման դեմ արտահայտված մյուս կարծիքը փաստորեն միջամտում է միջազգային համաձայնագրային իրավունքներին, հանգեցնում է հակադրության միջազգային դատավարական նորմերի հետ և դրանով իսկ կոնվենցիայի անդամ չհանդիսացող պետությունների գործերի կամ կոնվենցիայի հաստատությունների կողմից իրականացվող վարույթի մասին որոշում է, պարունակում է գնահատման և հիմնավորման լուրջ դժվարություններ՝ պահանջելով, որ ուսումնասիրվեն իրավունքի օտար համակարգերը և օտարերկրյա պետություններում գործող պայմանները. այն պաշտպանելու համար հնարավոր չէ ողջամտության սահմաններում վկայակոչել ազգային դատարանների և միջազգային հանրության փորձը, անդամ պետություններին, որոնք պետք է պատսպարեն պաշտպանվող անձին, այն դնում է լուրջ վտանգի տակ և թույլ տալիս, որ քրեական հանցագործի դատավարությունը չկայանա, և նա, ըստ էության, մնա անպատիժ:

Այլընտրանքային տարբերակում Միացյալ Թագավորության կառավարությունն առաջարկել է որ հանձնման գործերի նկատմամբ 3-րդ հոդվածի կիրառությունը պետք է սահմանափակվի այն դեպքերով, որոնց առնչությամբ այդ վերաբերմունքը կամ պատիժը օտար երկրում հաստատ անխուսափելի է և լուրջ: Նրանց կարծիքով, այն փաստը, որ բողոքում ներկայացված խնդիրները կարող են զուգորդվել պետությունների՝ փախուստի մեջ գտնվող հանցագործներին

արդարադատության առջև կանգնեցնելու ընդհանուր և օրինական շահի հետ, պահանջում է, որ դաժան վերաբերմունքի ռիսկի աստիճանը լինի շատ բարձր և ողջամիտ կասկածից վեր:

84. Այս հարցի նկատմամբ դատարանի մոտեցումը լինելու է հետևյալը.

85. Համաձայն 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի, որը թույլ է տալիս «օրինական կալանավորել կամ ձերբակալել անձին, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում արտաքսելու կամ հանձնելու նպատակով», կոնվենցիան չի պաշտպանում անձին չհանձնելու (էքստրադիցիայի չենթարկելու) իրավունքը: Այնուամենայնիվ, այնքանով, որքանով հանձնման գործողությունը կարող է ներգործություն ունենալ կոնվենցիայով ամրագրված իրավունքի կիրառման վրա, այն կարող է կոնվենցիայի համապատասխան երաշխիքների շրջանակներում առաջացնել պայմանավորվող պետությանը վերագրելի պարտավորություններ, եթե դրանց հետևանքները ենթադրաբար շատ հեռու չեն գնում (տե՛ս mutatis mutandis *Արդուլազիզի, Կաբալեսի և Բալկանդալիի* (*Abdulaziz, Cabales and Balkandali*) ներգաղթին առնչվող իրավունքների վերաբերյալ գործը, 1985 թ. մայիսի 25-ի վճիռ, շարք A, թիվ 94, էջ 31–2, պարբ. 59–60): Տվյալ դեպքում խնդիրն այն է, թե արդյոք 3-րդ հոդվածը կարո՞ղ է կիրառվել այն դեպքերում, երբ հանձնման (էքստրադիցիայի) բացասական հետևանքները ներգործում են կամ կարող են ներգործել անձի վրա հանձնումն իրականացնող պետության իրավազորությունից դուրս՝ ընդունող պետությունում դրսևորվող վերաբերմունքի կամ կիրառվող պատժի հետևանքով:

86. Կոնվենցիայի 1-ին հոդվածը («Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն կոնվենցիայի I բաժնում») սահմանափակում է դնում հատկապես դրա տարածքային շրջանակների վրա: Մասնավորապես՝ պայմանագրի մաս հանդիսացող պետության ստանձնած համաձայնությունը սահմանափակվում է նշված իրավունքները և ազատությունները իր «իրավազորությանն ներքո գտնվող անձանց համար «երաշխավորելով» (reconnaitre՝ ֆրանսերեն տեքստում): Բացի այդ, կոնվենցիան չի տարածվում այն պետությունների գործողությունների վրա, որոնք կոնվենցիայի անդամ չեն հանդիսանում, ոչ էլ միտում ունի հանդես գալու որպես միջոց, որը պայմանավորվող պետությունները կարող են օգտագործել կոնվենցիայի չափանիշներն այլ պետությունների վրա տարածելու համար: 1-ին հոդվածը չի կարող ընկալվել որպես ընդհանուր սկզբունք արտացոլող դրույթ, համաձայն որի՝ անկախ անձին հանձնելու (էքստրադիցիայի ենթարկելու) իր պարտավորությունից, պայմանավորվող պետությունը կարող է չհանձնել անձին, քանի դեռ չի համոզվել, որ նրան ընդունող երկրի պայմանները լիովին համապատասխանում են կոնվենցիայով նախատեսված երաշխիքներից յուրաքանչյուրին: Իսկապես, ինչպես և շեշտել է Միացյալ Թագավորության կառավարությունը, հանձնման (էքստրադիցիայի) նպաստավոր ազդեցությունը՝ փախուստի մեջ գտնվող հանցագործների՝ արդարադատությունից խուսափելու քայլերը կանխելը, չի կարող անտեսվել, երբ, մասնավորապես, որոշվում է կոնվենցիայի 3-րդ հոդվածի կիրառման սահմանը:

Տվյալ գործի համար ընդհանուր հիմքն այն է, որ Միացյալ Թագավորությունը որևէ իրավազորություն չունի Վիրջինիա նահանգի իշխանությունների գործունեության և կարգադրությունների նկատմամբ, որոնց վերաբերյալ դիմողը բողոք է բերել: Ճիշտ է նաև, որ Միացյալ Թագավորության կառավարության վկայակոչած միջազգային փաստաթղթերը, ներառյալ՝ 1951 թ. ՄԱԿ-ի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան (33-րդ հոդված), Հանձնման մասին եվրոպական կոնվենցիան (11-րդ հոդված) և 1984 թ. ՄԱԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիան (3-րդ հոդված), ընդգրկում են անձին այլ իրավազորության համակարգ փոխանցելուն առնչվող խնդիրները՝ հստակ և մանրամասն անդրադառնալով անցանկալի հետևանքներին:

Այս նկատառումները, այնուամենայնիվ, չեն կարող ազատել պայմանավորվող կողմերին 3-րդ հոդվածի շրջանակներում իրենց ստանձնած պատասխանատվությունից, որոնք առաջանում են իրենց իրավազորության սահմաններից դուրս հանձնմանն (էքստրադիցիային) առնչվող բոլոր և կանխատեսելի հետևանքներից:

87. Կոնվենցիան մեկնաբանելիս հարկ է ուշադրություն դարձնել դրա առանձնահատուկ բնույթին, համաձայն որի՝ այն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին հավաքական կիրառման ենթակա համաձայնագիր է (տե՛ս *«Իռլանդիան ընդդեմ ՄԹ-ի»*, 1978 թ. հունվարի 18-ի վճիռ, շարք A, թիվ 25, էջ 90, պարբ. 239): Այսպիսով, քանի որ կոնվենցիան անհատ անձանց իրավունքները պաշտպանող փաստաթուղթ է, ապա նրա խնդիրը և նպատակը պահանջում են, որ նրա դրույթների մեկնաբանությունը և կիրառությունը նրա երաշխիքները դարձնեն գործնական և արդյունավետ (տե՛ս, ի թիվս այլոց, *Արտիկոյի* (*Artico*) գործի վերաբերյալ 1980 թ. մայիսի 13-ի վճիռը, շարք A թիվ 37, էջ 16, պարբ. 33): Բացի այդ, երաշխավորված իրավունքների և ազատությունների յուրաքանչյուր մեկնաբանություն պետք է բխի «Կոնվենցիայի՝ ժողովրդավարական հասարակության իդեալների և արժեքների պահպանմանը և խթանմանը կոչված փաստաթղթի ընդհանուր ոգուց» (տե՛ս *Կյելդսենի, Բուսկ Մադսենի և Պեդերսենի* (Kjeldsen, Busk Madsen and Pedersen) գործի վերբերյալ 1976 թ. դեկտեմբերի 7-ի վճիռը, շարք A, թիվ 23, էջ 27, պարբ. 53):

88. 3-րդ հոդվածի բացառությունները և շեղումները հարգելի չեն 15-րդ հոդվածում հիշատակված պատերազմական կամ այլ համազգային արտակարգ իրավիճակների ժամանակ: Կոնվենցիայի շրջանակներում խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի վրա դրված այս բացարձակ արգելքը ցույց է տալիս, որ 3-րդ հոդվածն ամրագրում է Եվրոպայի խորհուրդը կազմավորող ժողովրդավարական հասարակությունների հիմնարար արժեքներից մեկը: Նույնանման

ձևակերպումներով այն հանդիպում է նաև այլ միջազգային փաստաթղթերում, որոնց շարքում են 1966 թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը և 1969 թ. Մարդու իրավունքների մասին ամերիկյան կոնվենցիան, և ընդհանուր առմամբ ճանաչվում է որպես միջազգայնորեն ընդունելի չափանիշ:

Խնդիրն այն է, թե արդյոք փախուստի մեջ գտնվող հանցագործին մեկ այլ պետության հանձնելը (էքստրադիցիան) այն դեպքում, երբ այդ պետությունում նա ամենայն հավանականությամբ կարող է ենթարկվել խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի կամ պատժի, ինքնին առաջացնո՞ւմ է 3-րդ հոդվածի շրջանակներում պայմանագրի կողմ հանդիսացող պետության պատասխանատվություն: Այն, որ խոշտանգման ժխտումն ունի նման հետևանքներ, ճանաչվում է ՄԱԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայի 3-րդ հոդվածով, համաձայն որի՝ «ոչ մի մասնակից պետություն չպետք է որևէ անձի ...հանձնի մեկ այլ պետության, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նրան կարող է սպառնալ խոշտանգումների ենթարկվելու վտանգ»: Այն փաստը, որ այս առանձնահատուկ պարտավորությունն ամրագրված է մասնագիտացված համաձայնագրում, չի նշանակում, որ սկզբունքորեն համանման պարտավորությունն ընդհանուր առմամբ անխզելի չէ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածից: Եթե պայմանավորվող պետությունը գիտակցաբար փախստականին հանձներ մեկ այլ պետության՝ իմանալով, որ լուրջ հիմքեր կան կասկածելու, որ այդ անձը ենթակվելու է խոշտանգման վտանգի, որքան էլ սարսափելի լինի կատարված հանցագործությունը, դժվար թե հնարավոր լինի դա համատեղելի համարել կոնվենցիայի հիմքում ընկած և դրա նախաբանում վկայակոչված «քաղաքական ավանդույթների, իդեալների, ազատության և օրենքի գերակայության ընդհանուր ժառանգության» սկզբունքների հետ: Նման հանգամանքներում հանձնման գործողությունը (էքստրադիցիան), թեպետ բառացիորեն նշված չէ 3-րդ հոդվածի ձևակերպման մեջ, միանշանակորեն կիակասի հոդվածի ոգուն և նպատակին, և դատարանի կարծիքով՝ անձանց չհանձնելու (էքստրադիցիայի չենթարկելու) այս անկապտելի պարտավորությունը նաև տարածվում է այն դեպքերի վրա, երբ փախուստի մեջ գտնվող անձը ընդունող պետությունում ենթարկվելու է խոշտանգման կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի իրական ռիսկի, ինչն արգելված է 3-րդ հոդվածի շրջանակներում:

89. «Անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի» հավանականությունը կախված է գործի բոլոր հանգամանքներից (տե՛ս ստորև՝ պարբ.100): Բացի այդ, կոնվենցիան անվերապահորեն ձգտում է արդարացի հավասարակշռություն հաստատել համայնքի ընդհանուր շահի և անձի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև: Ողջ աշխարհում, տեղաշարժի դյուրացմանը և հանցավորության միջազգային չափերի աճին զուգահեռ, արտասահման փախուստի դիմած կասկածյալ հանցագործներին արդարադատության առջև կանգնեցնելը ավելի ու ավելի շատ է վերածվում բոլոր ազգերի շահի: Հակառակ դեպքում փախուստի մեջ գտնվող հանցագործներին ապահով հանգրվան տրամադրելը ոչ միայն կարող է վտանգ ներկայացնել այն պետության համար, որը պարտավոր է ապաստանել պաշտպանվող անձին, այլև միտում ունի սասանել հանձնման (էքստրադիցիայի) հիմքերը: Այս նկատառումները պետք է ներառվեն այն գործոնների մեջ, որոնք պետք է հաշվի առնվեն հանձնման (էքստրադիցիայի) դեպքերում անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կիրառման հասկացությունների մեկնաբանության և կիրառության ժամանակ:

90. Ընդհանուր առմամբ, կոնվենցիայի հաստատությունների խնդիրը չէ հայտարարություններ անել կոնվենցիայի խախտումների կամ դրա հնարավոր խախտումների վերաբերյալ: Այսուամենայնիվ, եթե դիմողը պնդում է, որ իրեն հանձնելու (էքստրադիցիայի ենթարկելու) որոշումը կարող է հակասության մեջ լինել 3-րդ հոդվածի հետ, եթե այն ի կատար ածվի, ապա անհրաժեշտ է մի կողմ թողնել այդ սկզբունքը՝ հաշվի առնելով ենթադրելի տառապանքի լուրջ և անփարատելի բնույթը և նպատակ ունենալով երաշխավորել այդ հոդվածով ամրագրված երաշխիքի արդյունավետությունը (տե՛ս վերը՝ պարբ. 87):

91. Այսպիսով, պայմանագրի մասնակից պետության՝ փախուստի մեջ գտնվող հանցագործին հանձնելու որոշումը կարող է հանգեցնել 3-րդ հոդվածի խնդրի, ուստիև կոնվենցիայի շրջանակներում տվյալ երկրի պատասխանատվությանը, եթե ցույց է տրվել, որ լուրջ հիմքեր կան, որ հանձնումից հետո տվյալ անձը պահանջող երկրում կենթարկվի խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի իրական վտանգի: Նման պատասխանատվության սահմանումն անխուսափելիորեն ընդգրկում է պահանջող երկրի պայմանների գնահատում՝ հիմնված ընդհանուր միջազգային իրավունքի, կոնվենցիայի վրա կամ այլ հիմքերով: Այնուամենայնիվ, ընդունող երկրի վերաբերյալ վճռի կայացման կամ նրա պատասխանատվության որոշման հարց չի առաջանում ընդհանուր միջազգային իրավունքի, կոնվենցիայի հիման վրա կամ այլ հիմքերով: Կոնվենցիայի ներքո գործող կամ առաջացող պարտավորությունը վերաբերում է միայն հանձնումն (էքստրադիցիան) իրականացնող պայմանավորվող պետությանը, քանի որ անձի նկատմամբ դաժան վերաբերմունքը, որ արգելված է, այդ պետության գործողությունների ուղղակի հետևանքն է:

Բ. ՍՈՒՅՆ ԳՈՐԾԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

92. Միացյալ Թագավորությունում դիմողին հանձնելու (էքստրադիցիայի ենթարկելու) գործընթացն ավարտվել է, և պետական քարտուղարը ստորագրել է փաստաթուղթ, որով պահանջվում է հանձնել նրան Միացյալ Նահանգների կառավարությանը... Այս որոշումը, թեպետ դեռ իրականացված չէ, սակայն ուղղակի ազդեցություն ունի նրա վրա: Այդ իսկ

պատճառով, վերը նշված սկզբունքների հիման վրա պետք է որոշվի՝ արդյոք պրն Սերինգհն Միացյալ Նահանգներ հանձնելու կանխատեսելի հետևանքներն այնպիսի՞ն են, որ հանգեցնեն 3-րդ հոդվածի կիրառության: Առաջին՝ այս հարցադրումը պետք է վերաբերի այն հանգամանքին, թե պրն Սերինգը Վիրջինիայում իրո՞ք ենթակա է մահապատժի իրական ռիսկի, քանզի ենթադրյալ անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի աղբյուրը մահապատժի հիմքում ընկած «մահապատժի դատապարտվածների համար նախատեսված խցերում պահելու» երևույթն է: Միայն այս հարցի հաստատական պատասխանի դեպքում է դատարանի համար անհրաժեշտություն առաջանում ուսումնասիրելու այն հարցը, թե արդյոք «մահվան դատապարտվածների համար նախատեսված խցերում» գտնվելու երևույթը դիմողի գործի հանգամանքներում ընդգրկո՞ւմ է 3-րդ հոդվածի հետ անհամատեղելի վերաբերմունք կամ պատիժ:

1. ԱՐԴՅՈՔ ԴԻՄՈՂԸ ԵՆԹԱԿԱ՞ Է ՄԱՀԱՊԱՏԺԻ, ՈՒՍՏԻԵՎ «ՄԱՀԱՊԱՏԺԻ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԻ ԽՑԵՐՈՒՄ» ՊԱՀՎԵԼՈՒ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԻՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ

93. Ի հեճուկս Գերմանիայի Դաշնային Հանրապետության, հանձնաժողովի և դիմողի՝ Միացյալ Թագավորության կառավարությունը չի ընդունում, որ մահապատժի ռիսկի հավանականությունն այնքան մեծ է, որ առաջացնում է 3-րդ հոդվածին վերաբերող խնդիր: Նրանք ներկայացրել են չորս պատճառ:

Առաջին՝ ինչպես ցույց է տվել գերմանացի մեղադրողի հետ նրա [դիմողի] հարցաքննությունը, նա ժխտել է սպանության որևէ մտադրություն… Դիմողը, որպես այդպիսին, չի ընդունել մահապատժի ենթակա մարդասպանություն կատարած լինելու իր մեղքը:

Երկրորդ՝ նրա դեմ այս պահի դրությամբ հարուցված է եղել միայն prima facie գործ: Մասնավորապես՝ Միացյալ Թագավորության կառավարության կարծիքով հոգեկան վիճակին վերաբերող փաստերը …կասկածի տեղիք են տալիս առ այն, որ միգուցե պարոն Սերինգն ունեցել է այնպիսի հոգեկան խանգարում, որը բավարար է Վիրջինիայի օրենքով նրան մոլագարության հիմքերով պաշտպանության տակ առնելու համար…

Երրորդ՝ եթե նույնիսկ պրն Սերինգը մեղավոր ճանաչվի մարդասպանության մեջ, չի կարելի ենթադրել, որ իրենց ընդհանուր հայեցողության սահմաններում ատենակալները (ժյուրին) խորհուրդ կտան, դատավորը կհաստատի, և Վիրջինիայի գերագույն դատարանը կպաշտպանի մահապատժի նշանակումը…. Միացյալ Թագավորության կառավարությունը վկայակոչել է կարևոր մեղմացուցիչ հանգամանքների առկայությունը, որոնց թվում են դիմողի տարիքը և հոգեկան վիճակը հանցագործության կատարման պահին, նախկինում քրեական հանցագործություններ չկատարելու հանգամանքը, որոնք նույնպես պետք է հաշվի առնվեն ատենակալների (ժյուրիի), ապա նաև դատավորի կողմից պատժի սահմանման առանձին վարույթի ժամանակ:

Չորրորդ՝ Միացյալ Նահանգներից ստացված հավաստիացումը պետք է որ ամենաքիչը նվազեցնի դատավճռով մահապատժի նշանակման կամ ի կատար ածման ռիսկը….

Բաց նիստի ժամանակ, այնուամենայնիվ, գլխավոր դատախազը հստակեցրել է իր կառավարության ըմբռնումը, որ եթե պրն Սերինգը հանձնվի Միացյալ Նահանգներին, ապա գոյություն ունի «որոշակի ռիսկ»՝ «շատ ավելին, քան պարզապես անտեսանելի ռիսկը», որ նրան մահապատիժ է նշանակվելու:

94. Դիմողն անձամբ նշել է, որ ամերիկացի և բրիտանացի ոստիկանների և երկու հոգեբույժների առջև ինքն ընդունել է իր մասնակցությունը Հեյսոմ ծնողների սպանությանը, սակայն գերմանացի մեղադրողի կողմից հարցաքննության ժամանակ կարծես թե հրաժարվել է այդ խոստովանություններից…. Եվրադատարանը չի կարող զավթել Վիրջինիայի դատարանների գործառույթները և որոշել, որ հոգեբույժի եզրակացության հիման վրա անմեղսունակության պաշտպանությունը կարող է կամ չի կարող ապահովվել: Միացյալ Թագավորության կառավարությունը ճշմարտացի է իր պնդման մեջ՝ որևէ ենթադրություն չի կարող արվել, որ պրն Սերինգը հաստատապես կամ նույնիսկ հավանաբար մեղավոր է ճանաչվելու սպանության հոդվածով… Այնուամենայնիվ, բաց նիստի ժամանակ գլխավոր դատախազն ընդունել է նրանց անունից, որ «լուրջ ռիսկ» կա, որ դիմողը մեղավոր է ճանաչվելու:

95. Վիրջինիայի օրենքի համաձայն՝ նախքան մահապատժի վերաբերյալ վճիռ ընդունելը մեղադրող կողմը ողջամիտ կասկածից վեր պետք է հիմնավորի երկու պարտադիր ծանրացուցիչ հանգամանքներից մեկի առկայությունը, ներառյալ՝ հետագա վտանգավորությունը կամ հանցանքի «դաժանությունը»….

Ակնհայտ է, որ մեղմացուցիչ հանգամանքները նվազեցնում են մահապատժի նշանակման հավանականությունը: Վիրջինիայի օրենսգրքում հստակորեն շարադրված հինգ մեղմացուցիչ հանգամանքներից առնվազն չորսը ենթադրաբար կիրառելի են պարոն Սերինգի դեպքում: Դրանք են՝ ամբաստանյալի կողմից նախկինում քրեական հանցագործություն չկատարելու հանգամանքը, այն փաստը, որ հանցագործությունը կատարվել է, երբ ամբաստանյալը եղել է ծայրահեղ հոգեկան կամ զգացմունքային խանգարման վիճակում, այն փաստը, որ հանցագործության կատարման ժամանակ ամբաստանյալի՝ սեփական արարքի քրեական բնույթը գնահատելու կամ վարքը օրենքի պահանջներին համապատասխանեցնելու կարողությունը եղել է զգալիորեն նվազած, և ամբաստանյալի տարիքը...

96. Մահապատժին կողմ կամ դեմ այս տարբեր տարրերը պետք է դիտարկվեն մեղադրող մարմինների վերաբերմունքի տեսանկյունից:

97. Համագործակցության Բեդֆորդ կոմսության դատախազ պարոն Ափդայքը, որը զբաղվում է դիմողի քրեական հետապնդման հարցերով, հաստատել է, որ «եթե Յենս Սերինգը մեղավոր ճանաչվի սպանության մեջ, որում մեղադրվում է ... Միացյալ Թագավորության անունից կներկայացվի, որ Միացյալ Թագավորությունը ցանկանում է, որ մահապատիժ չնշանակվի կամ ի կատար չածվի»... Ինչպես օկրուգային դատարանի լորդ դատավոր Լլոյդը, դատարանը նկատում է, ...որ այս խոստումը շատ հեռու է 1972 թ. Միացյալ Թագավորության և Միացյալ Նահանգների միջև հանձնման համաձայնագրի IV հոդվածի շարադրանքից, որում խոսվում է այն մասին, որ «այն երկրին, որին [հանձնման] պահանջ է ներկայացվել, պետք է բավարար հավաստիացումներ տրամադրվեն, որ մահապատիժն ի կատար չի ածվի»... Այնուամենայնիվ, այս հանցարարքը նահանգային, ոչ թե դաշնային հանցագործություն է և ընկնում է Վիրջինիայի համագործակցության իրավազորության ներքո: Քանի որ Համագործակցության մեղադրողին չեն կարող ցուցումներ տրվել, ո՛չ նահանգային, ո՛չ դաշնային մարմինները չեն կարող ավելի մեծ խոստում տալ: Մյուս կողմից՝ Վիրջինիայի դատարանները՝ որպես դատական մարմիններ, չեն կարող նախօրոք հաստատել, թե առկա փաստերի հիման վրա ինչ որոշումներ են ընդունելու, և Վիրջինիայի նահանգապետը, որպես քաղաքականության վարման կանոն, չի խոստանում, որ ավելի ուշ կիրառելու է մահապատիժը փոխարինելու իր գործադիր լիազորությունը... Այդ իսկ պատճառով պրն Ափդայքի խոստումը կարող է լինել այն առավելագույն «հավաստիացումը», որը տվյալ դեպքում Միացյալ Թագավորությունը կարող էր ստանալ Միացյալ Նահանգների կառավարությունից: Համաձայն 1987 թ. խորհրդարանում ներքին գործերի նախարարի կողմից արված հայտարարության, այս պայմաններով երաշխիքների ընդունումը նշանակում է, որ «Միացյալ Թագավորության իշխանությունները հանձնում են փախուստի մեջ գտնվող հանցագործին կամ պատրաստ են քաղաքացուն ուղարկել ամերիկյան դատարան՝ հստակորեն հասկանալով, որ մահապատիժն ի կատար չի ածվելու... Այս հանգամանքներում վերադարձված անձի մահապատիժը որոշիչ հարված կհասցնի մեր երկու երկրների միջև գործող հանձնման կարգադրություններին»... Այնուամենայնիվ, այս երաշխիքի արդյունավետությունը դեռևս փորձարկված չէ:

98. Դիմողը պնդել է, որ օտար երկրի ցանկությունների վերաբերյալ ներկայացված նկատառումները՝ որպես իրավունքի խնդիր, ընդունելի չեն Վիրջինիայի օրենսգրքի շրջանակներում, կամ եթե անգամ ընդունելի են, որևէ ազդեցություն չունեն դատավճիռ կայացնող դատավորի վրա:

Ինչպիսին էլ լինի Վիրջինիայի օրենքի և փորձի վրա հիմնված մոտեցումը, ...անկախ Միացյալ Թագավորության և Միացյալ Նահանգների միջև գործող հանձնման պայմանավորվածությունների դիվանագիտական համատեքստից, չի կարելի օբյեկտիվորեն ասել, որ վճռի կայացման ժամանակ Միացյալ Թագավորության ցանկությունները դատավորին ներկայացնելու երաշխիքը վերացնում է մահապատժի նշանակման ռիսկը: Իր հայեցողությամբ անկախ որոշում կայացնելու լիազորության շրջանակներում Համագործակցության մեղադրողը որոշում է կայացրել պահանջել մահապատիժ, քանի որ առկա փաստերը, իր կարծիքով, պաշտպանում են այդ քայլը... Եթե արարքը հետապնդող ազգային մարմնի դիրքորոշումը սա է, ապա դատարանի համար գրեթե հիմքեր չկան չհավատալու, որ դիմողը ենթակա է լինելու մահապատժի դատապարտման իրական ռիսկի և, հետևաբար, «մահապատժի դատապարտվածների խցերում» պահվելու երևույթի [ազդեցությանը]:

99. Հետևաբար, դատարանը եզրակացնում է, որ դիմողի դեպքում «մահապատժի դատապարտվածների խցերում» պահվելու երևույթի ազդեցության տակ հայտնվելու հավանականությունն այնպիսին է, որ առաջացնում է 3-րդ հոդվածի խնդիր:

2. ԱՐԴՅՈՔ «ՄԱՀԱՊԱՏԺԻ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԻ ԽՑԵՐՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ» ԵՐԵՎՈՒՅԹԸ ԴԱՐՁՆՈ՞Ւ Մ Է ՀԱՆՁՆՈՒՄԸ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԽԱԽՏՈՒՄ

(Ա) Ընդհանուր նկատառումներ

100. Ինչպես սահմանվել է դատարանի նախադեպային իրավունքով, դաժան վերաբերմունքը, ներառյալ պատիժը, պետք է ընդունեն սաստկության նվազագույն մակարդակ, որպեսզի մտնեն 3-րդ հոդվածի շրջանակների մեջ: Բնականաբար, այդ նվազագույն սահմանի գնահատումը հարաբերական է: Այն կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպես, օրինակ՝ վերաբերմունքի կամ պատժի բնույթից և համատեքստից, դրա իրականացման եղանակից և մեթոդից, դրա տևողությունից, ֆիզիկական և մտավոր ազդեցություններից և, որոշ դեպքերում, սեռից, տարիքից, զոհի առողջական վիճակից (տե՛ս ... *«Իռլանդիան ընդդեմ ՄԹ-ի» (Ireland v UK judgment)* վճիռը, շարք A, թիվ 25, էջ 65, պարբ. 162 և *Թայրերի* (*Tyrer*) վճիռը, 25 ապրիլի 1978 թ., շարք A, թիվ 26, էջ 14–15, պարբ. 29 և 30):

Դատարանը որոշել է, որ այդ վերաբերմունքն «անմարդկային է», քանի որ եղել է նախապես կանխամտածված, կիրառվել է մի քանի ժամ շարունակ և «հասցրել է եթե ոչ իրական մարմնական վնասվածք, ապա առնվազն սաստիկ ֆիզիկական և հոգեկան տառապանք», սակայն այն նաև «նվաստացնող» է, քանի որ «իր զոհերի մեջ առաջացրել է վախի, ցավի և ստորակարգության զգացում, որը կարող էր ստորացնել և նվաստացնել նրանց և հավանաբար նաև կոտրել նրանց ֆիզիկական և բարոյական դիմադրությունը» (տե՛ս *«Իռլանդիան ընդդեմ ՄԹ-ի»* վերոհիշյալ վճիռը, էջ 66, պարբ. 167): Որպեսզի պատժի կամ վերաբերմունքի առաջացրած տառապանքը կամ ստորացումը լինեն «անմարդկային» կամ «նվաստացնող», տառապանքը կամ ստորացումը պետք է գերազանցեն նշանակված օրինական

պատժից անկապտելի տառապանքի կամ նվաստացման մակարդակը (տե՛ս *Թայրերի* (*Tyrer*) վճռի մեջբերումները): Այս կապակցությամբ պետք է հաշվի առնել ոչ միայն հասցված ֆիզիկական ցավը, այլև վայրագության տագնապների մեջ ապրող դատապարտված անձի հոգեկան տառապանքն այն դեպքում, երբ պատժի ի կատար ածումը տեղի է ունենում զգալի ձգձգումներով:

101. Որոշ հանգամանքներում կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետը թույլատրելի է: Համաձայն այդ դրույթի՝

> «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը»:

Հաշվի առնելով այս ձևակերպումը՝ դիմողը չի պնդում, որ մահապատիժը՝ որպես այդպիսին, 3-րդ հոդվածի խախտում է: Նա, ինչպես և կողմեր հանդիսացող երկու կառավարությունները, համաձայնել է հանճնաժողովի հետ, որ անձի հանձնումը այն երկրին, որտեղ նա կարող է մահապատժի ենթարկվել, ինքնին 2-րդ հոդվածի կամ 3-րդ հոդվածի խնդիր չի առաջացնում: Մյուս կողմից՝ «Միջազգային համաներում» կազմակերպությունը [Amnesty International] իր գրավոր մեկնաբանություններում ... կարծիք է հայտնել, որ մահապատժի առումով Արևմտյան Եվրոպայում ձևավորվող չափանիշները պահանջում են, որ 3-րդ հոդվածի իմաստով այդուհետ մահապատիժը համարվի անմարդկային և նվաստացնող պատիժ:

102. Անշուշտ, «Կոնվենցիան գործում փաստաթուղթ է, որը ... պետք է մեկնաբանվի տվյալ ժամանակների հանգամանքների հիման վրա», և դատարանը, որպեսզի գնահատի՝ տվյալ վերաբերմունքը կամ պատիժը պե՞տք է 3-րդ հոդվածի իմաստով համարվեն անմարդկային կամ նվաստացնող, թե ոչ, «չի կարող չենթարկվել Եվրոպայի խորհրդի անդամ երկրների քրեադատավարական քաղաքականության ոլորտում այս զարգացումների և ընդհանուր առմամբ ընդունված չափորոշիչների ազդեցությանը» (տե՛ս վերը նշված *Թայրերի* (*Tyrer*) վճիռը, շարք A, թիվ 26, էջ 15–16, պարբ. 31): Դե ֆակտո, խաղաղ ժամանակներում պայմանավորվող պետություններում մահապատիժ այլևս գոյություն չունի: Մի քանի պայմանավորվող պետություններում, որոնք որոշ հանցագործությունների համար խաղաղ ժամանակներում նախատեսում են մահապատժի նշանակում, միևնույն է, մահապատիժը ներկայումս ի կատար չի ածվում: «Միջազգային համաներում» [Amnesty International] կազմակերպության խոսքերը, «որ Արևմտյան Եվրոպայի իրավական համակարգերում փաստական համաձայնություն կա առ այն, որ ներկա հանգամանքներում մահապատիժն այլևս համատեղելի չէ արդարադատության տարածաշրջանային չափորոշիչների հետ», արտացոլված է կոնվենցիայի թիվ 6 արձանագրությունում: Թիվ 6 արձանագրությունը ստորագրությունների համար բացվել է 1983 թ. ապրիլից, ինչը Եվրոպայի խորհրդի պրակտիկայում ցույց է տալիս, որ կազմակերպության անդամ պետությունների կողմից առարկություններ չկան: Այն ուժի մեջ է մտել 1985 թ. մարտին և առ այսօր վավերացվել է կոնվենցիայի տասներեք անդամ պետությունների կողմից, որոնց մեջ, սակայն, չի մտնում Միացյալ Թագավորությունը:

Այն հարցը, թե արդյոք այս զգալի փոփոխությունների ազդեցությունն այն է, որ մահապատիժը՝ որպես դաժան վերաբերմունքի ձև, 3-րդ հոդվածի շրջանակներում դառնում է անթույլատրելի, պետք է որոշվի կոնվենցիայի մեկնաբանությունն ուղղորդող սկզբունքների հիման վրա:

103. Կոնվենցիայի ընթերցումը պետք է լինի ամբողջական, և 3-րդ հոդվածի մեկնաբանությունը, այդ իսկ պատճառով, պետք է ներդաշնակ լինի 2-րդ հոդվածի դրույթներին (տե՛ս mutatis mutandis *Կլաասի* [*Klass*] վճիռը, 1978 թ. սեպտեմբերի 6, շարք A, թիվ 28, էջ 31, պարբ. 68): Դրա հիման վրա ակնհայտ է, որ 3-րդ հոդվածը չէր կարող կոնվենցիայի հեղինակների կողմից նախատեսված լինել որպես ընդհանուր առմամբ մահապատիժն արգելող դրույթ, քանի որ դա կիմաստազրկեր 2-րդ հոդվածի 1-ին կետի հստակ շարադրանքը:

Ազգային քրեադատավարական քաղաքականության հետագա գործելակերպը, որից մահապատիժն ընդհանուր առմամբ վերացված է, կարող է ընդունվել որպես համաձայնություն պայմանավորվող կողմերի միջև՝ չեղյալ հայտարարել 2-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված բացառությունը և դրանով իսկ վերացնել 3-րդ հոդվածի էվոլյուցիոն մեկնաբանության տեքստային սահմանափակումը: Այնուամենայնիվ, թիվ 6 արձանագրությունը՝ որպես հետագա գրավոր համաձայնություն, ցույց է տալիս, որ արդեն 1983 թ. պայմանավորվող կողմերը մտադիր են եղել խաղաղ ժամանակներում մահապատժի վերացման նոր պարտավորություն ներդնելու համար հետևել տեքստի բարեփոխման նորմալ մեթոդի, ավելին, նրանք դա որոշել են անել կամավոր փաստաթղթի միջոցով, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր պետությանն ընտրել համաձայնությանը միանալու ժամանակը: Այս պայմաններում, չնայած կոնվենցիայի առանձնահատուկ բնույթին (տե՛ս վերը՝ պարբ. 87), 3-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես մահապատիժն ընդհանրապես բացառող հոդված:

104. Սա, այնուամենայնիվ, չի նշանակում, որ մահապատիժն վերաբերող հանգամանքները երբեք չեն կարող առաջացնել 3-րդ հոդվածի խնդիր: Այն եղանակը, որով այն նշանակվում է կամ իրականացվում, դատապարտված անձի անձնական հանգամանքները և կատարված հանցագործության ծանրության հետ այդ պատժի անհամաչափությունը, ինչպես նաև նախքան մահապատժի ի կատար ածումն անազատության մեջ պահվելու հանգամանքն այնպիսի գործոններ են, որոնք կարող են դատապարտված անձի նկատմամբ դրսևորած վերաբերմունքը կամ պատիժը դիտարկել տալ 3-րդ հոդվածով նախատեսված արգելքների շրջանակում: Պայմանագրի կողմ հանդիսացող պետություններում

այսօրվա դրությամբ մահապատժի նկատմամբ մոտեցումները կարող են օգտագործվել որոշելու համար, թե տառապանքի կամ նվաստացման ընդունելի սահմանը խախտվա՞ծ է, թե՞ ոչ:

(բ) Առանձնահատուկ հանգամանքները

105. Դիմողի ասելով, եթե պետքարտուղարի՝ իրեն Միացյալ Նահանգներին վերադարձնելու որոշումն ի կատար ածվի, ապա ինքը ենթակա կլինի այնպիսի հանգամանքների ազդեցության (հատկապես «մահապատժի դատապարտվածների խցերում» ապրելու երևույթի ազդեցության), որոնց հանրագումարում դրսևորված վերաբերմունքը հանձնումը կդարձնի անհամատեղելի 3-րդ հոդվածի հետ: Նա նշել է, մասնավորապես, մահապատժի նշանակումից հետո բողոքարկման և վերանայման ընթացակարգերի երկար տևողությունը, որի ընթացքում նա կարող է ենթարկվել լուրջ լարվածության և հոգեբանական ցնցման: Նա նաև նշել է այն փաստը, որ դատավորը կամ ատենակալները պատիժը որոշելու ժամանակ պարտավոր չեն հաշվի առնել ամբաստանյալի տարիքը, ինչպես նաև հանցագործության կատարման ժամանակ նրա հոգեվիճակը: Նա նաև նշել է «մահվան դատապարտվածների հերթում» ընդգրկվելու հանգամանքների բերումով իրեն Մեկլենբուրգի ուղղիչ կենտրոնում տեղավորումը (որտեղ նա սպասում է, որ ենթարկվելու է բռնությունների և սեռական ոտնձգությունների իր երիտասարդ տարիքի, մաշկի գույնի և ազգության պատճառով) և մահապատժի ի կատար ածման մշտական սպառնալիքը, ներառյալ մահապատժի իրականացման արարողակարգը: Պետքարտուղարի որոշման անհամաչափությունը շեշտելու նպատակով նա նաև անդրադարձել է իրեն Գերմանիայի Դաշնային Հանրապետությանը հանձնելու կամ այդ երկիր արտաքսելու հարցին՝ ասելով, որ ինքն այդ քայլին դեմ չէ:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը պաշտպանել է այն տեսակետը, որ բոլոր հանգամանքների բերումով դիմողին Վիրջինիայում սպասող վերաբերմունքը գերազանցելու է մահապատժի նշանակումից և իրականացումից անխուսափելիորեն առաջացող վերաբերմունքը՝ այդպիսով ներկայացնելով 3-րդ հոդվածի իմաստով «անմարդկային» վերաբերմունք:

Մյուս կողմից՝ համաձայն հանձնաժողովի եզրակացության, 3-րդ հոդվածով ենթադրված դաժանության մակարդակ չի ապահովվում:

Միացյալ Թագավորության կառավարությունը համաձայն է այս տեսակետին: Մասնավորապես, նրանք վիճարկել են դիմողի մի շարք փաստական պնդումները, որոնք վերաբերում են Մեկլենբուրգի մահվան դատապարտվածների հերթի պայմաններին և այնտեղ իրեն սպասող ճակատագրին:

I. Նախքան մահապատժի ի կատար ածումն անազատության մեջ մնալու տևողությունը

106. Վիրջինիայում մահապատժի դատապարտվածների հերթի մեջ սպասելու տևողությունը մահապատժի դատապարտված յուրաքանչյուր դատապարտյալի դեպքում կազմում է միջինը վեցից ութ տարի: Ըստ հանձնաժողովի և Միացյալ Թագավորության կառավարության՝ սկզբունքորեն դատապարտյալներն իրենք են որոշում մահվանը սպասելու ժամկետի տևողությունը՝ ընտրելով Վիրջինիայի օրենքով իրենց մատչելի բողոքարկման բոլոր միջոցներն օգտագործելու տարբերակը: Ինքնին, Վիրջինիայի գերագույն դատարանին բողոք ներկայացնելու գործողությունը վեց ամսից ավելի չի տևում... Սնացած ժամանակահատվածը դատապարտյալներն օգտագործում են անձի կալանքի օրինականության [habeas corpus] վարույթի ընթացքում լրացուցիչ բողոքներ ներկայացնելու և վերադաս դատարանի կողմից գործը ստորադաս դատարանից պահանջելու [certiorari] վարույթի միջոցով մահապատժի վճիռը կասեցնելու պահանջով Միացյալ Նահանգների գերագույն դատարան դիմելու համար... Վիրջինիայի օրենքի շրջանակներում գործող իրավական պաշտպանության միջոցների նպատակն է երաշխավորել, որ մահվան ծայրահեղ սանկցիան օրենքին հակառակ և կամայական չի իրականացվել:

Այնուամենայնիվ, եթե պետք է ապահովվեն դատապարտված անձի բողոքարկման երաշխիքները, ապա դատավճռի և իրականացման միջև որոշակի ժամանակահատվածն անխուսափելի է, քանի որ միանգամայն մարդկային է, որ մարդը մինչև վերջ կառչելու է կյանքից և օգտագործելու է այդ երաշխիքները: Որքան էլ Վիրջինիայում դատավճռին հետևած համալիր ընթացակարգերի ապահովման մտադրությունը բարի կամքի արտահայտություն է և նույնիսկ հեռանկարում շահեկան, հետևանքն այն է, որ դատապարտյալը երկար տարիներ է անցկացնում՝ սպասելով իր հերթին մահապատժի ցուցակում և կրելով հետապնդող մահվան ստվերի տառապանքը և ահագնացող ճնշումը:

II. Մահապատժի դատապարտվածների խցերի պայմանները

107. Ինչ վերաբերում է Մեկլենբուրգի ուղղիչ կենտրոնի պայմաններին, որտեղ դիմողը կարող է պահվել մահապատժի դատապարտվելու դեպքում, ապա դատարանը հիմնվում է այն փաստերի վրա, որոնք չեն վիճարկվել Միացյալ Թագավորության կառավարության կողմից, և անհրաժեշտ չի համարում որոշել դիմողի ներկայացրած լրացուցիչ փաստերի արժանահավատությունը, այդ թվում նաև՝ մահապատժի դատապարտվածների խցերում ազատազրկվածների նկատմամբ համասեռամոլների ոտնձգությունների և ֆիզիկական բռնության ռիսկի հավաստիությունը...

... Այս կապակցությամբ Միացյալ Թագավորության կառավարությունը ուշադրություն է դարձրել սպանության մեղադրանքով մահապատժի դատապարտված անձանց ազատազրկման պայմանների անվտանգության երաշխավորման նպատակով արտակարգ անվտանգության հաստատման պարտադիր պահանջին: Չնայած սա սկզբունքորեն կարող է արդարացված պահանջ լինել, այսպիսի ռեժիմի խստությունը, ներառյալ՝ Մեկլենբուրգի մահվան դատապարտված անձանց խցերի նկատմամբ հաստատված ռեժիմի խստությունը, ավելի է բարդանում այն պատճառով, որ բանտարկյալները ենթարկվում են այդ ռեժիմին տևական՝ միջինը վեցից ութ տարի ժամանակահատվածի ընթացքում:

III. Դիմողի տարիքը և հոգեկան վիճակը

108. Սպանությունների ժամանակ դիմողը եղել է ընդամենը 18 տարեկան, և գոյություն ունեն նրա հոգեկան վիճակին վերաբերող որոշակի փաստեր, որոնք չեն վիճարկվել, ինչպես, օրինակ՝ «այնպիսի հոգեկան խանգարումը, ...որը զգալիորեն նվազեցրել է իր գործողությունների համար նրա գիտակցական պատասխանատվությունը»...

Ի տարբերություն կոնվենցիայի 2-րդ հոդվածի՝ 1966 թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածը և 1969 թ. Մարդու իրավունքների մասին ամերիկյան կոնվենցիան խստիվ արգելում են մահապատիժ նշանակել հանցագործության կատարման ժամանակ 18 տարին չլրացած անձանց: Անկախ այն հանգամանքից՝ այս արգելքն անխզելի՞ է Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի հակիրճ և ընդհանուր շարադրանքից, թե՞ ոչ, դրա հստակ ամրագրումն ավելի ուշ ընդունված այլ միջազգային փաստաթղթերում, որոնցից առաջինը վավերացվել է կոնվենցիայի անդամ պետությունների մեծ մասի կողմից, առնվազն ցույց է տալիս, որ, որպես ընդհանուր կանոն, անձի երիտասարդ տարիքն այնպիսի հանգամանք է, որը մահապատժին առնչվող միջոցների մասով առաջացնում է 3-րդ հոդվածի հետ համատեղելիության խնդիր:

109. Ինչպես շեշտվել է Միացյալ Թագավորության կառավարության և հանձնաժողովի կողմից, Վիրջինիայի օրենքը, ինչ խոսք, չի անտեսում այս երկու գործոնը: Համաձայն Վիրջինիայի օրենսգրքի՝ դատավճռի կայացման ժամանակ դատարանը պետք է հաշվի առնի ամբաստանյալի հոգեկան խանգարումները, որոնք, եթե բավարար են հիմնավորելու համար նրա ուղեղի բավարար մթագնումը, ապա պետք է հիմք ծառայեն ամբաստանյալին անմեղսունակ ճանաչելու համար: Նաև, որպես մեղմացուցիչ հանգամանք, դատարանը պետք է հաշվի առնի ամբաստանյալի տարիքը: ... Բացի այդ, մարդասպանության մեջ մեղադրվող աղքատ ամբաստանյալները համապատասխան որակավորում ունեցող նշանակված բժշկական խորհրդատուի իրավունք ունեն, որը կօգնի նրանց ներկայացնելու իրենց բացատրությունները դատապարտման նպատակով տեղի ունեցող առանձին վարույթի ժամանակ... Ինչպես նշել են ամերիկյան դատարանները, Վիրջինիայի օրենսգրքի այս դրույթները, անկասկած, ծառայում են այն նպատակին, որ բացառեն մահապատժի կամայական կամ քմահաճ նշանակումը և ճշգրտորեն ուղղորդեն վճիռ կայացնողների հայեցողությունները... Դրանք, այնուամենայնիվ, չեն վերացնում տարիքի և հոգեկան վիճակի նշանակությունը անձին մահապատժի դատապարտելուց հետո «մահապատժի դատապարտվածների խցերում պահելու» երևույթի՝ 3-րդ հոդվածի շրջանակներում ընդունելի լինելու առումով:

Թեպետ քրեական պատասխանատվության ենթարկելու հարցերի և համապատասխան դատավճռի վերաբերյալ եզրակացություններ անելն այս դատարանի խնդիրը չէ, հանցագործության կատարման ժամանակ դիմողի երիտասարդ տարիքը և այդ ժամանակ նրա հոգեկան վիճակը՝ հիմնավորված հոգեբույժի եզրակացություններով, պետք է ընդունվեն որպես հանգամանքներ, որոնք նպաստում են, որ մահապատժի դատապարտվածների խցերում պահվելու երևույթը մտնի 3-րդ հոդվածի շրջանակների մեջ:

IV. Գերմանիայի Դաշնային Հանրապետությանը հանձնելու հնարավորությունը

110. Միացյալ Թագավորության կառավարության և հանձնաժողովի մեծամասնության կարծիքով՝ դիմողին Գերմանիայի Դաշնային Հանրապետությանը հանձնելու կամ արտաքսելու հնարավորությունը և այդ երկրում, որտեղ մահապատիժը սահմանադրորեն վերացված է, նրա նկատմամբ դատական վարույթ անցկացնելը ... սույն նպատակների համար էական նշանակություն չունեն: Միացյալ Թագավորության կառավարության կարծիքով՝ ցանկացած այլ մոտեցում «կրկնակի ստանդարտի» դրսևորում կլինի՝ հնարավորություն տալով կոնվենցիայով պաշտպանելու հանձնման ենթակա այն անձանց, ովքեր մեկ այլ երկրի հանձնվելու բարեբախտություն ունեն, և մերժելու մյուսներին, ովքեր նվազ հաջողակ են:

Սա սնանկ փաստարկ չէ: Բացի այդ, դատարանը չի կարող անտեսել այդ սպանությունների (որոնց մեջ պրն Սերինգը մեղադրվում է) սահմռկեցուցիչ բնույթը, կամ հանցավորության դեմ պայքարի գործում հանձնման (էքստրադիցիայի) կարգադրությունների օրինական և բարենպաստ դերը: Այն նպատակը, որի համար Միացյալ Թագավորության և Միացյալ Նահանգների միջև գործող «Հանձնման մասին» համաձայնագրի շրջանակներում պահանջվել է նրան վերադարձնել Միացյալ Նահանգներ, անկասկած օրինական է: Այնուամենայնիվ, դատավարության անցկացման նպատակով պրն Սերինգին իր իսկ երկիր ուղարկելը կվերացնի փախուստի մեջ գտնվող քրեական հանցագործին անպատիժ թողնելու, ինչպես նաև նրան մահապատժի դատապարտվածների խցերում պահելու հետևանքով սաստիկ և տևական տառապանքների ենթարկելու ռիսկերը: Հետևաբար, այն 3-րդ հոդվածի շրջանակներում գնահատելու հետ կապ ունեցող հանգամանք է, քանի որ տվյալ դեպքում ձգտում է արդարացի հավասարակշռություն ստեղծել շահերի և վիճարկվող հանձնման որոշման միջև (տե՛ս վերը՝ պարբ. 9, 104):

(գ) Եզրակացություն

111. Մահապատժի դատապարտված յուրաքանչյուր բանտարկյալի դեպքում պատժի նշանակման և իրականացման միջև ժամանակային տարբերության որևէ տարր և պահանջվող խիստ ռեժիմով բանտարկության պայմաններն անխուսափելիորեն ցնցման առաջացման պատճառ են: Վիրջինիայի իրավական համակարգի ժողովրդավարական բնույթը և, մասնավորապես, Վիրջինիայում դատական վարույթի անցկացման, պատժի նշանակման և բողոքարկման ընթացակարգերի դրական կողմերը կասկածից վեր են: Դատարանը համակարծիք է հանձնաժողովի հետ, որ դիմողի նկատմամբ Միացյալ Նահանգներում կիրառման ենթակա արդարադատության մեխանիզմը ինքնին ո՛չ կամայական է,

ո՛չ էլ անողջամիտ, այլ, ավելի շուտ, հարգում է օրենքը և մահապատժի վարույթի ընթացքում ամբաստանյալներին հնարավորություն է տալիս օգտվելու ոչ փոքրաթիվ ընթացակարգային երաշխիքներից: Բանտարկյալներին օգնություն ցույց տալու նպատակով մահապատժի դատապարտված անձանց ազատազրկման բաժանմունքներում կան պայմաններ, մասնավորապես, հոգեբանական և հոգեբուժական ծառայությունների տրամադրման հնարավորություններ... Այնուամենայնիվ, հաշվի առնելով նման արտակարգ դրության պայմաններում մահապատժի դատապարտվածների ազատազրկման բաժանմունքում պահվելու չափից ավելի տևական ժամկետը, ինչպես նաև մահապատժի իրականացման սպասումներով պայմանավորված անհահանջ և ուժգնացող ցավը և դիմողի անձնական հանգամանքները (ներառյալ նրա տարիքը և հոգեկան վիճակը հանցագործությունը կատարելու ժամանակ), դատարանը կարծում է, որ դիմողին Միացյալ Նահանգներին հանձնումը կարող է նրա նկատմամբ այնպիսի վերաբերմունքի դրսևորումների առաջացման պատճառ դառնալ, որոնք դուրս են 3-րդ հոդվածի սահմաններից:

Տվյալ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հանձնման (էքստրադիցիայի) օրինական նպատակը կարող է ապահովվել այլ միջոցներով՝ առանց այսպիսի բացառիկ ուժգնության կամ տևողության տառապանքի պատճառման: Հետևաբար, եթե պետքարտուղարի՝ դիմողին Միացյալ Նահանգներին հանձնելու (էքստրադիցիայի ենթարկելու) որոշումն ի կատար ածվի, ապա այն կհանգեցնի 3-րդ հոդվածի խախտման: Այս եզրակացությունը որևէ կերպ կասկածի տակ չի դնում Միացյալ Թագավորության կառավարության ազնիվ մտադրությունները, որն այս վարույթի հենց սկզբից ցուցաբերել է կոնվենցիայով ստանձնած պարտավորություններին հավատարիմ մնալու ցանկություն՝ նախ և առաջ հարգելով կոնվենցիայի հաստատությունների կողմից սահմանված միջանկյալ միջոցները և կասեցնելով դիմողի հանձնումը Միացյալ Նահանգների կառավարությանը և ապա դատարանի որոշումը ձեռք բերելու նպատակով իր իսկ ձեռքով դատարանին ներկայացնելով...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

I. Որոշում է, որ եթե պետքարտուղարի՝ դիմողին Միացյալ Նահանգներին հանձնելու որոշումն իրականացվի, ապա տեղի կունենա 3-րդ հոդվածի խախտում ...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են նախագահ Ռիսդալը և դատավորներ Կրեմոնան, Տոիր Վիլջաուլմսոնը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Փեթիթին, Ուոլշը, Էվանսը, Մակդոնալդը, Ռուսոն, Բերնհարդտը, Շպիլմանը, Դե Մեյերը, Կարիլլո Սալսեդոն, Վալտիկոսը, Մարտենսը, Փալմը և Ֆոյգելը:

Սերինգը վերջին հաշվով հանձնվել է Միացյալ Նահանգներին, երբ ՄԹ-ն հավաստիացում է ստացել, որ նրան մահապատժի հանգեցնող մեղադրանքներ չեն առաջադրվի:

1998 թ. Բրիտանիայի խորհրդարանը վերացրել է մահապատիժը քաղաքացիների կողմից մնացած բոլոր օրինախախտումների, այդ թվում նաև՝ դավաճանության և ծովահենության («Հանցավորության և անկարգությունների մասին» 1998 թ. օրենք), ինչպես նաև խաղաղ և պատերազմի ժամանակ կատարված ռազմական հանցագործությունների համար (1998 թ. «Մարդու իրավունքների մասին» օրենք): Հետագայում՝ 1999 թ. մայիսի 20-ին, Միացյալ Թագավորությունը վավերացրել է խաղաղ ժամանակներում մահապատժի վերացման մասին թիվ 6 արձանագրությունը: 2003 թ. հոկտեմբերի 10-ին նա վավերացրել է բոլոր իրավիճակներում մահապատժի վերացման մասին թիվ 13 արձանագրությունը:

2 *Սերինգի* սկզբունքը դատարանը կիրառել է անդամ երկրներից օտարերկրացիներին արտաքսելու կամ վտարելու մասին վճիռ կայացնելու համար *«Կրուզ Վարասն ընդդեմ Շվեդիայի» (Cruz Varas v Sweden* A.201 (1991) 14 EHRR 1) գործում: Ի դեմս դիմողների հանդես էին գալիս Չիլիի քաղաքացիներ՝ ամուսինը, կինը և որդին: Ամուսինը Շվեդիա էր ժամանել 1987 թ. հունվարին և ներկայացրել քաղաքական ապաստան ստանալու դիմում: Սկզբում նա հայտարարել է, որ 1960-ական և 1970-ական թվականներին եղել է Չիլիի տարբեր ձախ քաղաքական խմբերի անդամ, սակայն մեկնել է Չիլիից ֆինանսական պատճառներով: Շվեդիայի ներգաղթի ազգային խորհուրդը և կառավարությունը մերժել են ապաստան տրամադրելու խնդրանքը: Ամիսներ անց նա տեղեկացրել է Շվեդիայի իշխանություններին, որ 1986 թ. Չիլիի անվտանգության ուժերի անդամներն իրեն ենթարկել են խոշտանգման: Շվեդիայի կառավարությունը որոշել է շարունակել նրան արտաքսելու գործընթացը, և

նա Շվեդիայից Չիլի է արտաքսվել 1989 թ. հոկտեմբերին: Նա բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ, ի թիվս այլոց, տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում:
Դատարանը որոշել է.

69. *Մերինգի* գործով 1989 թ. հուլիսի 7-ի վճռով դատարանը որոշել է, որ պայմանավորվող պետության՝ փախուստի մեջ գտնվող հանցագործին հանձնելու պարտավորությունը կարող է առաջացնել 3-րդ հոդվածի խնդիր, հետևաբար և կոնվենցիայի ներքո այդ պետության պատասխանատվություն, եթե լուրջ հիմքեր կան հավատալու, որ պահանջող երկրին հանձնվելու դեպքում անձը ենթարկվելու է խոշտանգման կամ անմարդկային վերաբերմունքի կամ պատժի (շարք A, թիվ 161, էջ 35, պարբ. 91):

Չնայած այսպիսի պատասխանատվության հաստատման համար անհրաժեշտ է 3-րդ հոդվածով գնահատել ընդունող պետության պայմանները, վերջինիս վերաբերյալ վճռի կայացման կամ նրա պատասխանատվության որոշման հարց չի առաջանում ո՛չ ընդհանուր միջազգային իրավունքի, ո՛չ կոնվենցիայի հիման վրա և ո՛չ էլ այլ հիմքերով: Կոնվենցիայի շրջանակներում առաջացող պարտավորությունը հանձնումն իրականացնող պայմանավորվող պետությանն է, քանի որ նա կատարում է գործողություն, որի ուղղակի հետևանքը կարող է լինել անձի նկատմամբ արգելված դաժան վերաբերմունքի դրսևորումը (նույն տեղում, էջ 36, պարբ. 91):

70. Չնայած տվյալ գործը վերաբերում է վտարման, ոչ թե հանձնման մասին որոշման կայացմանը, դատարանը կարծում է, որ վերոհիշյալ սկզբունքը կիրառելի է նաև վտարման վերաբերյալ որոշումների և *a fortiori* [առավել ևս] իրական արտաքսման դեպքերի նկատմամբ:

75. Որպեսզի որոշի, թե արդյոք ներկայացվե՞լ են արժանահավատ լուրջ հիմքեր, ըստ որոնց՝ 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի դրսևորման իրական ռիսկ կա, դատարանը պետք է հարցը գնահատի իրեն ներկայացված բոլոր նյութերի հիման վրա, իսկ անհրաժեշտության դեպքում՝ *proprio motu* [սեփական նախաձեռնությամբ] ձեռք բերված նյութերի հիման վրա (տե՛ս *«Խոլանդիան ընդդեմ ՄԹ»*, 1978 թ. հունվարի 18-ի վճիռ, շարք A, թիվ 25, էջ 64, պարբ.160):

76. Քանի որ 3-րդ հոդվածի շրջանակներում պայմանագրի կողմ հանդիսացող պետությունների պատասխանատվությունն այս կարգի գործերի դեպքում առաջ է գալիս այն պատճառով, որ անձը դրվում է դաժան վերաբերմունքի ենթարկվելու ռիսկի տակ, այդ ռիսկի գոյությունը սկզբունքորեն պետք է գնահատվի այն փաստերի հիման վրա, որոնք արտաքսման ժամանակ հայտնի են եղել կամ պետք է որ հայտնի լինեին պայմանագրի կողմ հանդիսացող պետություններին: Այնուամենայնիվ, դատարանի առջև արգելքներ չկան, որպեսզի հաշվի առնի այն տեղեկությունները, որոնք առաջ են գալիս արտաքսումից հետո: Սա կարող է կիրառվել պայմանավորվող կողմի կարծիքը կամ դրա հիմնավորվածությունը կամ դիմողի մտավախությունները հաստատելու կամ մերժելու համար:

Դատարանի մեծամասնությունը (տասնութ կողմ և մեկ դեմ ձայներով) որոշել է, որ տվյալ դեպքում այս սկզբունքի պահանջները չեն բավարարվել, քանի որ, ի թիվս այլոց, կասկածները Չիլիում դիմողի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքի, Չիլիում ժողովրդավարության վերածննդի և Շվեդիայի ներգաղթային մարմինների կողմից դիմողի գործի խորը ուսումնասիրության վերաբերյալ եղել են հիմնավոր: Այդ իսկ պատճառով 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

3 Դատարանը որոշել է, որ միայն այն հանգամանքը, որ քաղաքացիական բախման մեջ ներքաշված օտար երկրում անձը հարել է փոքրամասնության խմբին, դեռևս բավարար չէ *Մերինգի* սկզբունքին համապատասխանությունն ապահովելու համար: Փաստերը պետք է ցույց տան, որ կան հավատ ներշնչող լուրջ հիմքեր, որ հակամարտության երկիր արտաքսվելու դեպքում տվյալ դիմողը կենթարկվի արգելված վերաբերմունքի արժանանալու իրական վտանգի: *«Վիլվարաջահն ընդդեմ ՄԹ-ի» (Vilvarajah v UK*, A.215 (1991) 14 EHRR 248) գործով դիմողները Շրի Լանկայի քաղաքացիներ էին, որոնք ազգությամբ թամիլ էին: Թամիլները կազմում են Շրի Լանկայի ազգաբնակչության մոտ 20 տոկոսը: Ազգությամբ թամիլ փոքրամասնության և ազգությամբ սինհալ մեծամասնության միջև ազգամիջյան հակամարտությունը մի քանի տասնամյակների պատմություն ունի: Դիմողներին մերժել են քաղաքական ապաստանի տրամադրումը ՄԹ-ում և վերադարձրել Շրի Լանկա, որտեղ նրանցից մի քանիսը, ըստ նրանց հայտարարությունների, հանդիպել են անվտանգության ուժերի բիրտ վերաբերմունքի (դիմողներից մեկը հայտնել է, որ ոստիկանության աշխատողները մեկուկես ժամ իրեն գոտիներով ծեծել են և ոտքերով հարվածել): Այնուհետև Բրիտանիայի իշխանությունները թույլ են տվել նրանց վերադառնալ և մնալ ՄԹ-ում: Հանձնաժողովը՝ նախագահի որոշիչ ձայնով, պաշտպանել

է այն տեսակետը, որ ՄԹ-ի՝ դիմողներին արտաքսելու սկզբնական որոշումները 3-րդ հոդվածի խախտում չեն եղել: Դատարանը մեծամասնական կազմով՝ ութ կողմ և մեկ դեմ ձայներով, պաշտպանել է այդ եզրակացությունը:

111. Դիմողների ծագման, ինչպես նաև նրանց ընդհանուր իրավիճակի վերաբերյալ դատարանին ներկայացված փաստերը չեն ապացուցում, որ նրանց վիճակը եղել է թամիլների համայնքի անդամների ընդհանուր վիճակից կամ այդ երկիր վերադարձող երիտասարդ թամիլ տղամարդկանց վիճակից ավելի վատթար: Քանի որ այս իրավիճակը դեռևս կարգավորված չի եղել, հավանականություն է եղել, որ նրանք կարող են կալանավորվել և արժանանալ դաժան վերաբերմունքի, ինչպես որ ամենայն հավանականությամբ նախկինում տեղի է ունեցել դիմողների մի մասի նկատմամբ... Միայն դաժան վերաբերմունքի հավանականությունը, այնուամենայնիվ, այս հանգամանքներում ինքնին բավարար չէ 3-րդ հոդվածի խախտում առաջացնելու համար:

4 *«Չահալն ընդդեմ ՄԹ-ի» (Chahal v UK* (1996) 23 EHRR 413, 1996-V) գործի առնչությամբ դատարանը վճռել է, որ անձի վարքագիծը կապ չունի *Սերինգի* սկզբունքի կիրառման հետ: Պարոն Չահալը Հնդկաստանի քաղաքացի էր և ապօրինի ՄԹ էր եկել 1971 թ.: Երեք տարի անց ապօրինի երկիր ժամանած անձանց նկատմամբ հայտարարված համաներման արդյունքում նրան թույլ է տրվել անսահմանափակ ժամկետով մնալ երկրում: Այնուհետև նա ամուսնացել է Հնդկաստանի քաղաքացու հետ, որը տեղափոխվել է ՄԹ՝ այնտեղ բնակություն հաստատելու նպատակով: ՄԹ-ում նրանք ունեցել են երկու երեխա (երեխաներն ունեն Բրիտանիայի քաղաքացիություն): 1980-ական թվականներին պարոն Չահալն այցելել է Փենջաբի նահանգ և ընդունել սիկխիզմ: Այդ ժամանակաշրջանում Հնդկաստանի անվտանգության ուժերի և սիկխ անջատողականների միջև տեղի է ունենում լուրջ բախում: Սկսած 1984 թ՝. հակամարտության հետևանքով սպանվել է ավելի քան 20000 մարդ: Վերադառնալով ՄԹ՝ պարոն Չահալը դարձել է սիկխ համայնքի առաջատար դեմքերից և կազմակերպել բողոքներ Հնդկաստանի կառավարության դեմ: Նրան մի քանի անգամ ձերբակալել են՝ կասկածելով Հնդկաստանի վարչապետի և ՄԹ-ում չափավոր սիկխերի դեմ մահափորձեր նյութելու մեջ: Այնուամենայնիվ, նա ազատ է արձակվել՝ առանց մեղավոր ճանաչվելու: 1990 թ. ներքին գործերի քարտուղարը որոշել է, որ պարոն Չահալը պետք է արտաքսվի, քանի որ նրա ներկայությունը ՄԹ-ում ազգային անվտանգության և միջազգային ահաբեկչության դեմ պայքարի տեսանկյունից հակասում է հանրային շահին: Քարտուղարը պահանջել է կալանավորել Չահալին, որը, առանց հաջողության հասնելու, փորձել է բողոքարկել որոշումը խորհրդատվական խմբի առջև և դատական վերանայման վարույթի ընթացքում: Չահալը բողոք է ներկայացրել հանձնաժողովին, որը պահանջել է ՄԹ-ից կասեցնել դիմողի արտաքսումը: Ավելի ուշ հանձնաժողովը միաձայն կարծիք է հայտնել, որ, ի թիվս այլոց, դիմողին Հնդկաստան արտաքսելու դեպքում տեղի կունենա 3-րդ հոդվածի խախտում, ինչը պայմանավորված է դիմողի վատ համբավով և սիկխ անջատողականների դեմ երկրում տիրող բռնության մակարդակով: Դատարանում Բրիտանիայի կառավարությունը վիճարկել է, որ 3-րդ հոդվածի երաշխիքները բացարձակ չեն այն դեպքում, երբ դիմողը վտանգ է ներկայացնում անդամ պետության ազգային անվտանգությանը: Այնուամենայնիվ, դատարանի համար այս սահմանափակումն ընդունելի չի համարվել.

79. 3-րդ հոդվածն ամփոփում է ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներից մեկը (տե՛ս *Սերինգի* վճիռը, էջ 34, պարբ. 88): Դատարանը քաջատեղյակ է, թե մեր օրերում պետություններն ինչ հսկայական դժվարությունների են հանդիպում իրենց համայնքներին ահաբեկչական հանցագործություններից պաշտպանելու առումով: Այնուամենայնիվ, նույնիսկ այս հանգամանքների առկայության դեպքում, անկախ զոհի վարքագծից, կոնվենցիան բացարձակապես արգելում է խոշտանգումը կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը: Ի տարբերություն կոնվենցիայի և թիվ 1, թիվ 4 արձանագրությունների նյութական դրույթների մեծ մասի՝ 3-րդ հոդվածից 15-րդ հոդվածի շրջանակներում բացառություններ և շեղումներ չեն թույլատրվում նույնիսկ ազգի գոյությանը սպառնացող արտակարգ իրավիճակների դեպքերում (տե՛ս *«Իռլանդիան ընդդեմ ՄԹ-ի»,* 1978 թ. հունվարի 18-ի վճիռ, շարք A, թիվ 25, էջ 65, պարբ. 163 և *«Թոմասին ընդդեմ Ֆրանսիայի» [Tomasi v France],* 1992 թ. օգոստոսի 27-ի վճիռ, շարք A, թիվ 241-A, էջ 42, պարբ. 115):

80. Նմանապես, 3-րդ հոդվածով նախատեսված դաժան վերաբերմունքի նկատմամբ ամրագրված արգելքը բացարձակ է նաև արտաքսման դեպքերում: Այսպիսով, ամեն անգամ, երբ կան նյութական հիմքեր, որոնք հավատ են ներշնչում, որ

մեկ այլ պետություն փոխադրվելու դեպքում անձը ենթակա է լինելու 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունքի արժանանալու իրական ռիսկի, ապա անձի արտաքսման դեպքում պայմանագրի կողմ հանդիսացող պետության պարտավորությունն է պաշտպանել նրան այդպիսի վերաբերմունքի դրսևորումներից (տե՛ս ... *Վիլվարաջահի* վճիռը, էջ 34, պարբ. 103)։ Այս հանգամանքներում խնդրո առարկա անձի գործողությունները, որքան էր դրանք անցանկալի կամ վտանգավոր լինեն, չեն կարող համարվել նյութական նկատառում...

81. Այս տեսակետը հստակորեն արտահայտված է անձին Միացյալ Նահանգներին հանձնելու վերաբերյալ *Սերինգի* [*Soering*] գործով դատարանի կայացրած վերոհիշյալ վճռի 88-րդ պարբերությունում։ Ինչպես նշված է այնտեղ, դատարանի նկատառումները, որոնք վերաբերում են հանձնման հիմքերը սասանող վտանգին, չեն նշանակում, որ 3-րդ հոդվածի շրջանակներում պետության պատասխանատվությունը որոշելիս որևէ կերպ հնարավոր է դաժան վերաբերմունքի ենթարկվելու ռիսկը կշեռքի նժարին դնել անձին արտաքսելու պատճառների հետ։

82. Ելնելով վերոհիշյալից՝ հարկ չկա, որ դատարանն ուսումնասիրի կառավարության, թեպետ չստուգված, սակայն անկասկած *bona fide* [բարեխիղճ] փաստարկները, որոնք վերաբերում են դիմողի վարած ահաբեկչական գործունեությանը և դրանով իսկ ազգային անվտանգությանը սպառնացող վտանգին։

Գ. ՏՎՅԱԼ ԳՈՐԾԻ ԴԵՊՔՈՒՄ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

1. ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

83. Չնայած Հնդկաստանում և Փենջաբում տիրող իրավիճակի վերաբերյալ տարբեր կարծիքներին՝ ... համաձայնություն կա, որ այդ տարածաշրջանում բռնությունը և անկայունությունն իրենց գագաթնակետին են հասել 1992 թ. և դրանից հետո սկսել են նահանջել։ Չահալին սպառնացող վտանգի գնահատման նպատակով, հետևաբար, կարևոր նշանակություն ունի, թե որ ժամանակահատվածն է դատարանը դիտարկում նրան Հնդկաստան արտաքսելու համար։

84. Դիմողը պնդում է, որ դատարանի համար հիմք պետք է լինի 1992 թ. հունիս ամիսը, երբ ընդունվել է նրան արտաքսելու մասին վերջնական որոշումը... Հանձնաժողովի՝ արտաքսումը կասեցնելու պահանջի նպատակը ... եղել է կանխել անդառնալի կորուստը և թույլ չտալ բարձր պայմանավորվող կողմին առաջ տանել իր գործը։ Բացի այդ, նպատակահարմար չի դիտվել Ստրասբուրգի մարմիններին շարունակաբար ներգրավել փաստահավաք գործունեության մեջ։

85. Հանձնաժողովը համաձայնել է կառավարության բացատրությանը, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտաքսման դեպքերում 3-րդ հոդվածի շրջանակներում պետության պատասխանատվությունը կապված է այդ պետության կողմից անձին դաժան վերաբերմունքի ռիսկի տակ դնելու գործողության հետ, ապա ռիսկի գնահատման փաստացի ամսաթիվը պետք է լինի առաջարկվող արտաքսման օրվան համապատասխանող ամսաթիվը։ Քանի որ պրն Չահալը դեռևս արտաքսված չէ, նրան արտաքսելու ժամանակը պետք է համարվի դատարանի վարույթի իրականացման ժամանակը։

86….Ինչ վերաբերում է 3-րդ հոդվածի շրջանակներում դիմողի բերած բողոքին, ապա հարց է առաջանում՝ արդյոք հիմնավորվա՞ծ է այն փաստը, որ արտաքսման դեպքում պրն Չահալի կյանքը կհայտնվի վտանգի տակ, և նա կենթարկվի այդ հոդվածով արգելված վերաբերմունքի։ Քանի որ նա դեռևս արտաքսված չէ, որպես իրեղեն ժամանակ պետք է ընդունվի այն ժամանակը, որի ընթացքում գործը քննվում է դատարանում։ Դրանից հետևում է, որ պատմական անցքերը հետաքրքիր են այնքանով, որքանով դրանք լույս են սփռում ընթացիկ իրավիճակի և դրա հնարավոր զարգացումների վրա։ Այնուամենայնիվ, որոշիչ նշանակություն ունի ընթացիկ իրավիճակը...

Չայների մեծամասնությամբ՝ տասներկու կողմ և յոթ դեմ, դատարանը որոշել է, որ հիմք ընդունելով այն փաստերը, համաձայն որոնց՝ այդ ժամանակահատվածում Հնդկաստանի անվտանգության ուժերը ներգրավված են եղել Փենջաբում տեղի ունեցող սպանությունների և մարդու իրավունքների լուրջ խախտումների մեջ, կարելի է եզրակացնել, որ իրական վտանգ է եղել, որ Հնդկաստան արտաքսվելուց հետո պրն Չահալը ենթարկվելու է 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի։

Ուստի ներքին գործերի քարտուղարի արտաքսման պահանջը կատարելու դեպքում ՄԹ-ն թույլ կտա 3-րդ հոդվածի խախտում։

Հաստատելով 3-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների բացարձակ բնույթը՝ այս վճիռը նաև կարևոր ուղեցույց է, թե որը պետք է լինի դիմողին սպառնացող վտանգի գնահատման ժամանակը։ Եթե դիմողի հանձնումը կամ արտաքսումը ավարտված է, ապա որպես հիմք պետք է ծառայի նրա հանձնման/արտաքսման օրվա ամսաթիվը։ Սակայն եթե դիմողն արտաքսված չէ, ապա դատարանը

ռիսկը քննարկելու է այն ժամանակահատվածի սահմաններում, երբ գործը լսվում է Ստրասբուրգի դատարանում:

5 *Սերինգի* սկզբունքի մեջ մտնող արգելված վերաբերմունքի ձևերի բնույթը և աղբյուրները դատարանը բավական հանգամանորեն ձևակերպել է *«Դ-ն ընդդեմ ՄԹ-ի» (D v UK (1997*] 24 EHRR 423, 1997-III) գործում: Դիմողը Սենթ Քիթսի քաղաքացի էր և տառապում էր անբուժելի փուլի հասած ՋԻԱՀ-ով (ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ): 1993 թ. Միացյալ Թագավորություն մուտք գործելու ժամանակ նրա մոտ հայտնաբերվել է մեծ քանակությամբ կոկաին: Նրան պաշտոնապես մերժել են մուտք գործել ՄԹ, որից հետո ձերբակալել են: Այնուհետև նա մեղավոր է ճանաչվել Միացյալ Թագավորություն վերահսկվող դեղամիջոցների ներմուծման արգելքը գիտակցաբար և խարդախաբար խախտելու համար: Նա դատապարտվել է վեց տարվա ազատազրկման: Բանտում գտնվելու ընթացքում նրա մոտ հայտնաբերվել է ՄԻԱՎ (մարդու իմունային անբավարարության վարակ): Ամենայն հավանականությամբ, հիվանդությունը սկսել է զարգանալ նախքան Միացյալ Թագավորություն ժամանելը: Նա բուժում է ստացել և 1995 թ. կարեկցական հիմունքներով նրան արձակուրդ [compassionate leave] են տվել: Նախքան 1996 թ. հունվարին լավ վարքի արտոնագրի հիման վրա նրան բանտից վաղաժամկետ ազատ արձակելը ներգաղթի մարմինները նրան Սենթ Քիթս արտաքսելու վերաբերյալ ցուցումներ են տվել: Դիմողի փաստաբանները փորձել են նրա համար թույլտվություն ձեռք բերել, որպեսզի կարեկցական հիմունքներով մնա ՄԹ-ում, քանի որ, ըստ նրանց, Սենթ Քիթսում նա չէր կարողանա նույն բուժումը ստանալ, որը ստանում է ՄԹ-ում, ինչը կկրճատեր նրա կյանքի տևողությունը: Ներգաղթի գլխավոր պաշտոնակատարը մերժել է խնդրանքը: Դատական վերանայման գործընթացը նույնպես հաջողությամբ չի ավարտվել: Դիմողը բողոք է ներկայացրել հանձնաժողովին, որը պահանջել է չարտաքսել նրան ՄԹ-ից, քանի դեռ դատարանը լսում է նրա գործը: Հանձնաժողովը, տասնմեկ կողմ և յոթ դեմ ձայներով, կարծիք է հայտնել, որ դիմողին արտաքսելու դեպքում տեղի կունենա 3-րդ հոդվածի խախտում: Դատարանում դիմողի փաստաբաններն առարկել են, որ նրան Սենթ Քիթս ուղարկելը նշանակում է դատապարտել թշվառության և չքավորության մեջ ավելի վաղաժամ մահվան (քանի որ նա մտերիմ բարեկամներ և ընկերներ չուներ, որոնք կխնամեին նրան, իսկ ՄԻԱՎ/ՋԻԱՀ-ով հիվանդների համար թանկ դեղամիջոցները Սենթ Քիթսում գոյություն չունեին):

Բ. ԴԱՏԱՐԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

46. Նախ՝ դատարանը հիշում է, որ պայմանավորվող պետություններն իրավունք ունեն հսկողություն սահմանելու օտարերկրացիների մուտքի, բնակության և արտաքսման նկատմամբ՝ առաջնորդվելով խոր արմատավորված միջազգային իրավունքի նորմերով և պայմանավորվող պետությունների ստորագրած համաձայնագրերի, այդ թվում և՝ կոնվենցիայի դրույթներով: Դատարանը նաև անդրադառնում է դիմողի կատարած օրինախախտման ծանրությանը և արտասահմանից մատակարարվող թմրանյութերի պատճառով պայմանավորվող պետությունների հասարակություններին պատճառված վնասի հետ կապված խնդիրներին: Թմրանյութերի թրաֆիքինգի մեջ ներգրավված անձանց նկատմամբ լուրջ սանկցիաները, ներառյալ՝ թմրանյութերի օտարերկրացի մատակարարների (որոնց շարքն է դասվում նաև դիմողը) արտաքսումը, այս աղետին տրվող արդարացի հակահարված է:

47. Այնուամենայնիվ, նման օտարերկրացիներին արտաքսելու իրենց իրավունքի իրականացման ժամանակ պայմանավորվող պետությունները պետք է ուշադրություն դարձնեն կոնվենցիայի 3-րդ հոդվածին, որն ամփոփում է ժողովրդավարական հասարակությունների հիմնարար սկզբունքներից մեկը: Ճիշտ այս պատճառով է, որ անձանց այլ երկրներին հանձնման (էքստրադիցիայի), այլ երկրներ վտարման կամ արտաքսման առնչությամբ դատարանը շարունակ իր որոշումներում ընդգծել է, որ 3-րդ հոդվածը բացարձակապես արգելում է անձին խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելը, և այդ երաշխիքները ենթակա են կիրառման անկախ տվյալ անձի կատարած արարքի ծանրությունից...

48. Դատարանը նշում է, որ վերը նշված սկզբունքը տարածվում է 1971 թ. «Ներգաղթի մասին» օրենքի շրջանակներում դիմողին երկրից հեռացնելու գործողության վրա: Անկախ այն հանգամանքից՝ տեխնիկական առումով նա երբևէ մուտք գործել է Միացյալ Թագավորության տարածք, թե ոչ,... պետք է նկատել, որ նա ֆիզիկապես ներկա է եղել այնտեղ՝ սկսած 1993 թ. հունվարի 21-ից, և դրանով իսկ եղել է, կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով, պատասխանող պետության իրավազորության ներքո: Հետևաբար, պատասխանող պետության խնդիրն է երաշխավորել 3-րդ հոդվածի

շրջանակներում դիմողի իրավունքների պաշտպանությունը՝ անկախ նրա կատարած հանցագործության ծանրության աստիճանից:

49. Ճշմարիտ է, որ դատարանն այս սկզբունքը մինչ այս պահը կիրառել է այնպիսի համատեքստերում, որոնցում անձի նկատմամբ արգելված վերաբերմունքը դրսևորվել է ընդունող երկրում պետական մարմինների կամ, որտեղ պետական մարմիններն անկարող են ապահովելու պաշտպանության համապատասխան մակարդակ, ոչ պետական մարմինների մտածված գործողությունների հետևանքով... Հաշվի առնելով կոնվենցիայի համակարգում 3-րդ հոդվածի հիմնարար նշանակությունը՝ դատարանը պետք է բավարար ճկունություն վերապահի ինքն իրեն՝ այդ հոդվածը (3-րդ հոդվ.) նաև այլ համատեքստերում կիրառելու համար: Հետևաբար, արգելող հանգամանքներ չկան, որ նա ուսումնասիրի 3-րդ հոդվածի շրջանակներում դիմողի ներկայացրած գանգատը, համաձայն որի՝ ընդունող երկրում արգելված վերաբերմունքի վտանգն առաջանում է այնպիսի գործոններից, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապ չունեն այդ երկրի պետական մարմինների պատասխանատվության հետ և առանձին-առանձին չեն խախտում այդ հոդվածի չափորոշիչները: Այս կերպ 3-րդ հոդվածի կիրառության սահմանափակումը այդ պաշտպանության բացարձակ բնույթի խախտում կլիներ: Ուստի յուրաքանչյուր այսպիսի իրավիճակում դատարանը պետք է լրջորեն ուսումնասիրի գործին ուղեկցող բոլոր հանգամանքները և, հատկապես, վտարումն իրականացնող պետությունում դիմողի անձնական վիճակը:

50. Այս համատեքստում դատարանը որոշելու է՝ գոյություն ունի՞ իրական վտանգ, որ դիմողի հեռացումը կհակասի 3-րդ հոդվածի չափանիշներին: Այդ նպատակով գործը լսելիս դատարանը իրեն ներկայացված նյութերի (ներառյալ դիմողի առողջական վիճակի մասին ամենավերջին տեղեկությունների) հիման վրա իրականացնելու է ռիսկի գնահատում ...

51. Դատարանը նշում է, որ դիմողը տառապում է անբուժելի հիվանդությամբ, որը զարգացման անբուժելի փուլում է: Նիստի օրը նշվել է, որ նկատվել է նրա վիճակի զգալի վատթարացում, և նա պետք է հիվանդանոց տեղափոխվեր: Նրա վիճակը մտահոգությունների տեղիք է տվել... Նրա կյանքի սահմանափակ որակը ներկայումս ապահովվում է Միացյալ Թագավորությունում նրա ստացած բարդ բուժումների և դեղորայքի, ինչպես նաև բարեգործական կազմակերպության կողմից նրան տրամադրվող խնամքի և հոգատարության շնորհիվ: Նրան խորհուրդներ են տրվել, թե ինչպես վերաբերվի մահվանը: Եվ նա մտերմացել է իր խնամողների հետ:

52. Այս հարմարություններից կտրուկ զրկելը խիստ դրամատիկ հետևանքներ կունենա նրա համար: Չի վիճարկվում, որ նրա հեռացումը կարագացնի նրա մահը: Լուրջ վտանգ կա, որ Սենթ Քիթսում նրան սպասող բացասական պայմանները էլ ավելի կնվազեցնեն նրա սահմանափակ կյանքի տևողությունը և կենթարկեն նրան սուր հոգեկան ու ֆիզիկական տառապանքի: Որևէ բուժում, որ նա կարող է ակնկալել այնտեղ, չի կարող պայքարել այն վարակիչ հիվանդությունների դեմ, որոնցով նա, ամենայն հավանականությամբ, վարակվելու է ապաստանի և համապատասխան սննդի բացակայության պայմաններում, ինչպես նաև՝ առողջական և հիգիենիկ խնդիրների, որոնք ազդում են Սենթ Քիթսի ողջ ազգաբնակչության վրա... Թեպետ նա քեռորդի ունի Սենթ Քիթսում, ...փաստեր չեն բերվել ցույց տալու համար, որ այդ անձը ցանկանում է խնամել նրան կամ այնպիսի վիճակում է, որ ի վիճակի է խնամելու անբուժելի հիվանդ անձնավորությանը: Բարոյական կամ սոցիալական օժանդակության առկայության որևէ այլ փաստ չկա: Եվ ցույց չի տրվել՝ կղզում գտնվող հիվանդանոցներում դիմողին մահճակալ կտրամադրե՞ն, չնայած կառավարությունն ասել է, որ այնտեղ ուշադրություն են դարձնում ՁԻԱՀ-ով հիվանդ անձանց...

53. Այս բացառիկ հանգամանքների և դիմողի հիվանդության զարգացման ծայրահեղ փուլի պարագայում նրան Սենթ Քիթս ուղարկելու որոշման իրականացումը կարող է հավասար լինել պատասխանող պետության կողմից դրսևորված անմարդկային վերաբերմունքի՝ ի խախտումն 3-րդ հոդվածի:

Այս առումով դատարանը նաև նկատում է, որ պատասխանող պետությունը, սկսած 1994 թ., պատասխանատվություն է ստանձնել դիմողի բուժման համար: Վերջինս լիովին կախված է բուժմանը և հիվանդության նշանների մեղմացմանն ուղղված խնամքից, որը նրան ներկայումս տրամադրվում է: Կասկած չկա, որ նա հոգեբանորեն պատրաստ է ընդունելու մահն իրեն ծանոթ և մտերիմ միջավայրում: Թեպետ չի կարելի ասել, որ ընդունող երկրում նրան սպասող պայմաններն ինքնին առաջացնում են 3-րդ հոդվածի չափանիշների խախտում, նրա հեռացումը կառաջացնի ամենաթշվառ պայմաններում մահանալու վտանգ և հավասար կլինի անմարդկային վերաբերմունքի դրսևորման... .

54. Հիմք ընդունելով սա՝ դատարանը շեշտում է, որ ազատազրկման ժամկետի ավարտից հետո արտաքսման ենթակա օտարերկրացիները սկզբունքորեն չեն կարող պահանջել պայմանագրի կողմ հանդիսացող պետության տարածքում մնալու իրավունք, որպեսզի շարունակեն օգտվել արտաքսող երկրի բժշկական, սոցիալական կամ այլ կարգի օժանդակությունից, որից նրանք օգտվել են բանտում եղած ժամանակ:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով սույն գործի խիստ բացառիկ փաստերը և այն հանգամանքը, որ կշեռքի նժարին են դրված անհաղթահարելի մարդասիրական նկատառումները, պետք է եզրակացնել, որ դիմողին արտաքսելու որոշման կատարումը 3-րդ հոդվածի խախտում կլինի...

Եզրակացնելով, որ դիմողին իր ծննդյան երկիր արտաքսելը հավասար կլինի անմարդկային վերաբերմունքի, դատարանը հաշվի է առել դիմողի ծայրահեղ աղետալի վիճակը: Այնուամենայնիվ, մի շարք երկրներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեպքերի աճի պատճառով, ցավոք, զարմանալի չէ, որ այլ երկրների ՄԻԱՎ-ով վարակված քաղաքացիները վիճարկել են, որ անդամ պետությունների տարածքից իրենց արտաքսումը իրենց հայրենի երկրներ 3-րդ հոդվածի խախտում կլինի: Դատարանը պատասխանել է և շեշտել, որ *Դ-ի* գործն ունեցել է «խիստ բացառիկ հանգամանքներ»: Օրինակ՝ *«Ամենիգանը ընդդեմ Նիդեռլանդների»* (*Amegnigan v Netherlands*) գործով 2004 թ. նոյեմբերի 25-ի որոշմամբ դատարանը միաձայն որոշել է, որ դիմողի պահանջն անընդունելի է: Ամենիգանը Տոգոյի քաղաքացի էր, 24 տարեկան, որին Հոլանդիայի կառավարությունը երեք անգամ մերժել էր ապաստանի տրամադրումը: Այն ժամանակ, երբ նրա դիմումները գտնվում էին որոշման կայացման փուլում, դիմողի մոտ հայտնաբերվել է ՄԻԱՎ, և նա սկսել է ստանալ հակավիրուսային բուժում: Նրա վիճակը կայունացել է, սակայն նրա բժիշկը նկատել է, որ եթե բուժումը դադարեցվի, դիմողի հիվանդությունը կրկին գլուխ կբարձրացնի: Դիմողը բողոքել է, որ եթե ինքը վերադառնա Տոգո, ապա այնտեղ նպատակային բուժում ստանալու հետ կապված դժվարությունների պայմաններում իր կյանքի տևողությունը զգալիորեն կկրճատվի, ուստի իր արտաքսումը հավասար կլինի 3-րդ հոդվածի խախտման: Պալատը եզրակացրել է, որ.

Դատարանը դիմողի բացատրություններում չի գտել որևէ փաստ, որ նրա մոտ ՁԻԱՀ-ը զարգացած փուլում է, կամ նրա մոտ հայտնաբերվել է ՄԻԱՎ-ի հետ կապված որևէ հիվանդություն: Ընդունելով դիմողին բուժող բժշկի եզրակացությունը, ըստ որի՝ բուժումը դադարեցնելու դեպքում նրա վիճակը կվատթարանա, դատարանը նկատում է, որ համապատասխան բուժում առաջարկվում է նաև Տոգոյում, թեպետ հավանաբար շատ ավելի թանկ գնով:

Այս հանգամանքներից ելնելով՝ դատարանը կարծում է, որ, ի տարբերություն վերը մեջբերված *«Դ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (D. v the United Kingdom)* կամ *«Բ.Բ.-ն ընդդեմ Ֆրանսիայի» (B.B. v France) գործերի* (թիվ 39030/96, 1998 թ. մարտի 9-ի զեկույց, որը հետագայում 1998 թ. սեպտեմբերի 7-ի վճռով դատարանի կողմից հանվել է քննարկման ենթակա գործերի ցուցակից, Զեկույցներ 1998-VI, էջ 2595), չի թվում, որ դիմողի հիվանդությունը զարգացած կամ անբուժելի փուլում է, կամ նա Տոգոյում, որտեղ բնակվում են նրա մայրը և կրտսեր եղբայրը, բուժօգնության կամ ընտանիքի աջակցության հնարավորություն չունի: Փաստն այն է, որ դիմողի վիճակը Տոգոյում կլինի ևվազ բարենպաստ, քան Նիդեռլանդներում, ինչը, սակայն, չի կարող որոշիչ համարվել կոնվենցիայի 3-րդ հոդվածի տեսանկյունից:

Հետևաբար, թեպետ դատարանն ընդունում է դիմողի բժշկական վիճակի լրջությունը, չի համարում, որ նրա դրությանը բնորոշ են այնպիսի բացառիկ հանգամանքներ, որ նրա արտաքսումը հավասար լինի կոնվենցիայի 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունքի:

Սրանից բխում է, որ կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի շրջանակներում դիմումն ակնհայտորեն վատ է հիմնավորված և ենթակա է մերժման կոնվենցիայի 35-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա:

6 *«Դ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (D. v the United Kingdom)* գործով վճռից մեկ օր անց դատարանն էլ ավելի է լայնացրել *Սերինգի* սկզբունքի տիրույթը՝ հայտարարելով, որ 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունք կարող է ցուցաբերվել նաև մասնավոր անձանց՝ օրինակ, կազմակերպված հանցագործության խմբի անդամների կողմից: *«HLR -ն ընդդեմ Ֆրանսիայի» (HLR v France)* գործի (Վճիռների և որոշումների զեկույցներ 1997–111 758) դիմողը Կոլումբիայի քաղաքացի էր, որը ձերբակալվել էր Ֆրանսիայի օդանավակայաններից մեկում, երբ նրա մոտ 580 գրամ կոկաին էր հայտնաբերվել: Ոստիկանության կողմից հարցաքննության ժամանակ դիմողը տեղեկություններ է հայտնել այլ անձանց մասին, որոնք ներգրավված են եղել թմրանյութերի մաքսանենգ առևտրի մեջ: Այս տեղեկությունները հեշտացրել են Գերմանիա թմրանյութեր մաքսանենգ ճանապարհով բերող անձանց դատապարտման գործողությունները: Դիմողը մեղավոր է ճանաչվել թմրանյութերի հետ կապված հանցագործությունների համար, դատապարտվել հինգ տարվա ազատազրկման և Ֆրանսիայի տարածքից ընդմիշտ արտաքսման: Բանտում նշանակված պատիժը կրելուց հետո իշխանությունները միջոցներ են ձեռնարկել նրան արտաքսելու ուղղությամբ: Նա բողոքել է հանձնաժողովին՝ հայտնելով, որ եթե ինքը վերադառնա Կոլումբիա, ապա վտանգ կա, որ թմրանյութերի այն առևտրականները, որոնց մասին ինքը տեղեկություններ է հաղորդել, լրջորեն կվնասեն կամ կսպանեն իրեն: Հանձնաժողովը, տասնինը կողմ և տասը դեմ ձայներով, որոշել է, որ այդ հանգամանքներում Ֆրանսիայի կողմից դիմողի արտաքսումը հավասար կլինի 3-րդ հոդվածի խախտման: Դատարանը վճռել է.

40. Հաշվի առնելով երաշխավորվող իրավունքի բացարձակ բնույթը՝ դատարանը չի բացառում այն հնարավորությունը, որ կոնվենցիայի 3-րդ հոդվածը կարող է նաև կիրառվել, երբ վտանգն առաջանում է այնպիսի անձանցից կամ անձանց խմբերից, որոնք պետական ծառայողներ չեն: Այնուամենայնիվ, պետք է ցույց տրվի, որ ռիսկն իրական է, և ստացող պետության իշխանություններն ի վիճակի չեն ապահովելու համապատասխան պաշտպանություն և չեզոքացնելու այդ ռիսկը:

41. Ինչպես և հանձնաժողովը, դատարանը չի կարող անել այլ բան, քան նկատել, որ նպատակային երկրում ընդհանուր առմամբ բռնության մթնոլորտ է տիրում: Դատարանը կարծում է, սակայն, որ արտաքսման պարագայում այդ հանգամանքն ինքնին չի կարող 3-րդ հոդվածի խախտում առաջացնել:

42. Տարբեր աղբյուրներից ստացված փաստաթղթերը, որոնք պաշտպանում են դիմողի միջնորդությունը, ներկայացնում են Կոլումբիայում տիրող լարված մթնոլորտը, սակայն չեն նշում, որ գոյություն ունի այնպիսի իրավիճակ, որը կարող է համեմատվել նրա վիճակի հետ: Թեպետ թմրանյութերի թրաֆիքինգով զբաղվողները երբեմն վրեժ են լուծում մատնիչներից, *HLR-ի* գործում որևէ համապատասխան փաստ չկա, որը կմատնանշեր, որ ենթադրելի վտանգն իրական է: Նրա մորաքրոջ նամակներն ինքնին չեն կարող բավարար համարվել ցույց տալու համար, որ վտանգն իրական է: Բացի այդ, չկան փաստաթղթեր, որոնք կպաշտպանեին նրա պնդումը, ըստ որի՝ արտաքսվելու դեպքում դիմողի անձնական վիճակը շատ ավելի վատ կլինի, քան մյուս կոլումբիացիներինը:

«Միջազգային համաներում» (Amnesty International) կազմակերպության 1995 և 1996 թվականների զեկույցները տեղեկություններ չեն պարունակում այն իրավիճակի մասին, որը ներկայացնում է դիմողը: Դրանք նկարագրում են անվտանգության ուժերի և պարտիզանական շարժումների գործողությունները: Թմրանյութերի թրաֆիքինգով զբաղվող կազմակերպություններին վերագրելի գործողությունների մասին խոսվում է միայն 1995 թ. զեկույցի մեջ, սակայն դրա բովանդակությունը չի առնչվում սույն գործին:

43. Դատարանը նաև տեղյակ է, թե բռնության զսպման առումով ինչ դժվարությունների են հանդիպում Կոլումբիայի իշխանությունները: Դիմողը ցույց չի տվել, որ նրանք ի վիճակի չեն ապահովելու համապատասխան պաշտպանություն:

44. Հաշվի առնելով այս նկատառումները՝ դատարանը համարում է, որ արտաքսման դեպքում 3-րդ հոդվածում նշված անմարդկային կամ ստորացնող վերաբերմունքի ենթարկվելու նյութական հիմքերը բերված չեն: Սրանից բխում է, որ եթե դիմողին արտաքսելու կարգադրությունն ի կատար ածվի, ապա 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունենա:

Վեց դատավոր առարկել է, քանի որ նրանց կարծիքով՝ դիմողին սպառնացող վտանգը բավարար է *Սերինգի* սկզբունքին համապատասխանելու համար:

Արտասահմանցիների արտաքսումը կարող է հարցեր առաջացնել նաև կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում (ընտանեկան կյանքը հարգելու իրավունք, տե՛ս ստորև՝ էջ 552):

7 Պալատը միաձայն տարբերել է *«Դ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (D. v the United Kingdom)* գործը *«Բենսեդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Bensaid v United Kingdom)* գործից, 2001 թ. փետրվարի 6-ին կայացված վճիռ: Դիմողն Ալժիրի քաղաքացի էր, որին իշխանությունները որոշել էին արտաքսել 1997թ., երբ հարցումների միջոցով պարզվել է, որ նա Միացյալ Թագավորությունում մնալու թույլտվություն է ստացել խաբեությամբ՝ հաշվենկատ ամուսնության միջոցով: Սկսած 1994 թվականից՝ նա տառապել է շիզոֆրենիա հիվանդությամբ և ազգային առողջապահության ծառայությունից ստացել հոգեմետ դեղամիջոցներով բուժում: Բենսեդը առարկել է, որ եթե ինքն ուղարկվի Ալժիր, ապա չի ստանա նույն մակարդակի բուժօգնություն, ինչ Միացյալ Թագավորությունում և, հետևաբար, կենթարկվի հիվանդության կրկնության իրական վտանգի: Բրիտանիայի կառավարությունը ներկայացրել է փաստեր, որ այդ ժամանակ դիմողի ընդունած դեղերն անվճար տրամադրվում են Ալժիրի ազգային սոցիալական ապահովագրության հիմնադրամի կողմից նրա բնակության գյուղից 75 կմ հեռավորության վրա գտնվող հիվանդանոցում:

38. Դատարանը նկատում է, այնուամենայնիվ, որ դիմողը ենթակա է հիվանդության կրկնության ռիսկի, եթե նույնիսկ մնա Միացյալ Թագավորությունում, քանի որ նա տառապում է տևական հիվանդությամբ, որը պահանջում է շարունակական հսկողություն: Վիճելի է, որ նրան երկրից հանելը կամ անձնական օժանդակության ու բուժման մատչելիության տարբերությունները մեծացնում են ռիսկը: Դիմողը վիճարկել է, մասնավորապես, որ այլ դեղամիջոցները կարող են նվազ չափով օգտակար լինել իր դեպքում, և հիվանդանոցային հիվանդ դառնալու տարբերակը պետք է մնա որպես ամենավերջին տարբերակ: Այն փաստը, որ դիմողի պայմաններն Ալժիրում նվազ բարենպաստ են լինելու, քան Միացյալ Թագավորությունում, կոնվենցիայի 3-րդ հոդվածի տեսանկյունից վճռորոշ նշանակություն չունի:

39. Դատարանը համարում է, որ Ալժիր վերադառնալուց հետո դիմողի վիճակի վատանալու և համապատասխան մակարդակի օժանդակություն կամ խնամք չստանալու վտանգը հիմնականում շահարկվում է: Նրա մահմեդական, ընտանիքի նվիրյալ լինելու հանգամանքը, ինչպես նաև Բլիդա ճամփորդելու դժվարությունը [որտեղ գտնվում է ամենամոտակա հիվանդանոցը] և նրա առողջության վրա այս գործոնների ազդեցությունը նույնպես շահարկվում են: Կողմերի տրամադրած տեղեկությունները չեն հիմնավորում, որ հիվանդանոցի այցերը միանշանակորեն անհնարին են դառնում տարածաշրջանում տիրող իրավիճակի պատճառով: Դիմողն ինքը ահաբեկչական գործողությունների թիրախ չի հանդիսանում: Եթե նույնիսկ նրա ընտանիքը մեքենա չունի, դա դեռևս չի նշանակում, որ այդ խնդիրն այլ կերպ կարգավորելու հնարավորություններ չկան:

40. Դատարանը համաձայն է, որ դիմողի առողջական վիճակը լուրջ է: Առաջնորդվելով, այնուամենայնիվ, 3-րդ հոդվածով սահմանված բարձր շեմով՝ դատարանը չի կարծում, որ այն դեպքերում, երբ պայմանավորվող պետությունն ուղղակի պատասխանատվություն չի կրում վնաս պատճառելու համար, բավականաչափ իրական ռիսկ կա, որ դիմողին իր երկիր ուղարկելը կհակասի 3-րդ հոդվածի չափանիշներին: Այս գործում ի հայտ չեն գալիս *«Դ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (D. v the United Kingdom)* գործի (մեջբերված է վերը) բացառիկ հանգամանքները: Այն դեպքում դիմողը տառապել է մահացու հիվանդությամբ (ՁԻԱՀ-ի զարգացման վերջին փուլ) և Սենք Քիթս վերադարձվելու դեպքում բուժօգնության կամ ընտանիքի աջակցության որևէ հեռանկար չի ունեցել:

41. Ուստի դատարանը կարծում է, որ դիմողին Ալժիր ուղարկելու որոշումը կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում է:

Բենսեդի գործում որպես որոշիչ գործոններ են դիտարկվել նրա հիվանդությունը (որը թեպետ լուրջ է, սակայն մահացու չէ) և սեփական պետությունում պատշաճ բժշկական օգնություն ու ընտանեկան աջակցություն ստանալու հնարավորությունը:

8 *«Դ-ն և այլք ընդդեմ Թուրքիայի»* գործի 2006 թ. հունիսի 22-ի վճռով պալատը միաձայն վճռել է, որ ամուսնացած կնոջ արտաքսումը (ամուսնու և երեխայի հետ) իր երկիր (Իրան), որտեղ նա արտաամուսնական կապի համար դատապարտվել էր մտրակի 100 հարվածի (նա ամուսնացել էր սուննի արարողակարգի հիման վրա՝ առանց իր շիա հոր համաձայնության), անմարդկային վերաբերմունք կլինի: Պալատը կարծիք է հայտնել, որ այնտեղ, որտեղ իրավական համակարգը նման բռնության հնարավորություն է տալիս, եթե անգամ դա նախատեսված է որպես խորհրդանշական պատիժ, որի դեպքում օգտագործվում է հատուկ մտրակ, որն ունի 100 ելունդ, պատիժն «անմարդկային» է:

Ֆիզիկական պատժին վերաբերող նախադեպային իրավունքի ավելի վաղ շրջանի գործերը տե՛ս «Նվաստացնող պատիժ» բաժնում:

Նվաստացնող վերաբերմունք

«Յանկովն ընդդեմ Բուլղարիայի» (Yankov v Bulgaria)

2003 թ. դեկտեմբերի 11-ի վճիռ
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը 1943 թ. ծնված Բուլղարիայի քաղաքացի էր, որն ունեցել է տնտեսագիտության դոկտորի աստիճան և եղել է գյուղատնտեսական ներդրումային հիմնադրամի և ֆինանսական ընկերության գործադիր տնօրեն: 1996 թ. մարտին նա ձերբակալվել է և կալանավորվել՝ իր աշխատանքում քրեական բնույթի խախտում թույլ տալու համար: Այնուհետև նրա նկատմամբ կիրառվել է նախնական կալանքի սանկցիա: 1998 թ. մարտի 10-ին, նախքան իր փաստաբանների հետ բանտում հանդիպելը, դիմողը ենթարկվել է խուզարկության: Ծառայողները դիմողի մոտ հայտնաբերել և առգրավել են ձեռագիր տետր: Դրա ընթերցումից պարզ է դարձել, որ այն բովանդակել է դիմողի քրեական հետապնդմանը և իշխանությունների կողմից նրա ձերբակալությանը վերաբերող անցքերի

նկարագրություններ: Գրառումների որոշ մասեր խիստ քննադատության են ենթարկել ծառայողների վարքագիծը: Օրինակ. «[Բնակարանում] խուզարկությունն իրականացնում էր ոստիկանության ծառայող [Բ.-ն]: Դատելով նրա պահվածքից՝ ակնհայտ էր, որ նա փորձ չունի: Իսկական գավառական լածիրակ... [Բանտի] հսկիչները, որոնց մեծ մասը շարքային գյուղացիներ են, «աշխատելով» 24 ժամ, 72 ժամ հանգստանում են և ավելի շատ աշխատավարձ ստանում, քան ուսուցիչները, բժիշկները և ճարտարագետները...»: Նույն օրը բանտի պետը կարգադրել է պետական պաշտոնյաների հասցեին վիրավորական արտահայտություններ անելու համար որպես պատիժ դիմողին յոթ օր տեղավորել մեկուսարանում: Դիմողը վիճարկում է, որ իր ձեռագիրը ապագա գրքի նախագիծ էր, որից նա ընդամենը որոշ հատվածներ մտադիր էր ընթերցել իր փաստաբանների համար: Մինչդեռ բանտի ծառայողը, որն առգրավել է տետրը, հայտնել է, որ դիմողը ծրագրել էր այն փոխանցել իր փաստաբաններին: Նախքան դիմողին մեկուսարանում տեղավորելը նրա գլուխը սափրել են (բանտում գտնվող այլ ազատազրկված անձինք սրան ականատես չեն եղել): Մեկուսարանից նրան տեղափոխելուց երկու օր անց կայացել է դիմողի գործով բաց դատական նիստը: Նկատելի է եղել, որ նրա գլուխը սափրած է: Ուստի դիմողը 3-րդ հոդվածի շրջանակներում բողոք է ներկայացրել Ստրասբուրգի դատարանին՝ հայտնելով, որ, ի թիվս այլոց, իր գլուխը սափրելը 3-րդ հոդվածի խախտում է:

105. Քննարկելով այն հարցը՝ 3-րդ հոդվածի իմաստով սա «նվաստացնող» վերաբերմո՞ւնք է, թե՞ ոչ, դատարանը պետք է պարզի՝ արդյոք նպատակ եղե՞լ է ստորացնել և նվաստացնել տվյալ անձին, և հետևանքների առումով այն այնպիսի՞ բացասական ազդեցություն է թողել նրա անհատականության վրա, որը չի կարող համատեղելի լինել 3-րդ հոդվածի հետ (տե՛ս, օրինակ, *«Պիրսն ընդդեմ Հունաստանի» (Peers v Greece)* թիվ 28524/95, պարբ. 74, ECHR 2001-III և *«Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի» (Kalashnikov v Russia)*, թիվ 47095/99, պարբ. 101, ECHR 2002-VI):

106. Բռնությունը պետք է նվազագույն ուժգնության մակարդակ ունենա, որպեսզի դիտարկվի 3-րդ հոդվածի շրջանակներում: Այս նվազագույն ուժգնության մակարդակի գնահատումը հարաբերական է: Այն կախված է գործի հանգամանքներից, ինչպես, օրինակ՝ բռնության տևողությունից, դրա ֆիզիկական և հոգեբանական ազդեցությունից և, որոշ դեպքերում, զոհի սեռից ու տարիքից (տե՛ս *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ireland v the United Kingdom)* գործով 1978 թ. հունվարի 18-ի վճիռը, շարք A, թիվ 25, էջ 65, պարբ. 162):

107. Դատարանը հետևողականորեն շեշտել է, որ տառապանքը և ստորացումը պետք է անցնեն տառապանքի կամ ստորացման այն անխուսափելի բաղկացուցիչ տարրի սահմանից, որն առաջանում է օրենքով նախորոշված վերաբերմունքից կամ պատժից: Անձի ազատազրկման միջոցառումները հաճախ կարող են այսպիսի տարր պարունակել: Պետությունը պետք է երաշխավորի, որ անձը պահվում է այնպիսի պայմաններում, որոնք չեն խոցում նրա մարդկային արժանապատվությունը, ինչպես նաև, սանկցիայի իրականացման ձևը և մեթոդը չեն ենթարկում նրան այնպիսի ուժգնության տառապանքի կամ դժվարության, որն անցնում է ազատազրկումից անխզելի տառապանքի սահմանը, և հաշվի առնելով բանտարկության նկատմամբ գործնական պահանջները՝ պետք է նաև երաշխավորի նրա առողջության և բարեկեցության ապահովման պատշաճ մակարդակ (*«Կուդլան ընդդեմ Լեհաստանի» (KudlÐa v Poland)* [GC], թիվ 30210/96, պարբ. 93–4, ECHR 2000-XI):

2. Այս սկզբունքների կիրառությունը տվյալ գործում

108. Դատարանը նկատում է, որ դիմողի մազերը խուզել են նախքան նրան մեկուսարան տանելը:

109. Դատարանը առիթ չի ունեցել որոշելու՝ արդյոք բանտարկյալի մազերը նրա կամքին հակառակ խուզելը կարո՞ղ է ստորացնող վերաբերմունք լինել և այդպիսով հակասել կոնվենցիայի 3-րդ հոդվածին:

…

112. Բողոքարկվող վերաբերմունքի առանձնահատուկ բնույթը՝ բանտարկյալի կամքին հակառակ նրա մազեր խուզելու գործողությունը, մազերը խուզելու միջոցով անձի արտաքինը նրա կամքին հակառակ փոխելու գործողություն է: Նման վերաբերմունքին արժանացող անձը, ամենայն հավանականությամբ, կունենա նվաստացման զգացողություն, քանի որ նրա արտաքին տեսքը փոխվում է նրա կամքին հակառակ:

113. Բացի այդ, առնվազն որոշ ժամանակ բանտարկյալը, ում մազերը խուզել են, կրում է այդ վերաբերմունքի հետքերը: Այդ հետքն անմիջականորեն տեսանելի է մյուսներին, ներառյալ՝ բանտի աշխատակիցներին, այլ ազատազրկված անձանց և հանրությանը, եթե բանտարկյալն ազատ է արձակվում կամ դրանից հետո բերվում է հանրային

նշանակության վայր: Անձը, որի մասին խոսվում է, ամենայն հավանականությամբ, զգալու է ստորացված արժանապատվության ցավը միայն այն փաստի պատճառով, որ կրում է տեսանելի ֆիզիկական նշան:

114. Դատարանն այսպիսով կարծում է, որ ազատազրկված անձանց գլխի մազերը հարկադիր խուզելն այնպիսի գործողություն է, որը սկզբունքորեն կարող է ունենալ նրանց մարդկային արժանապատվությունը նսեմացնող ազդեցություն կամ կարող է նրանց մեջ առաջացնել ստորացմանը և նվաստացմանը հավասար ստորակարգության զգացողություններ: Այն հարցը, թե նվազագույն ուժգնության սահմանը հատվա՞ծ է, թե՞ ոչ, և, հետևաբար, այս բողոքարկվող վերաբերմունքը կոնվենցիայի 3-րդ հոդվածին հակասող նվաստացնող վերաբերմո՞ւնք է, թե՞ ոչ՝ կախված է գործի առանձնահատուկ հանգամանքներից, ներառյալ զոհի անձնական հանգամանքներից և վիճարկվող գործողության իրականացման համատեքստից, ինչպես նաև դրա նպատակից:

115. Կառավարության բացատրությունը, ըստ որի՝ դիմողի մազերը խուզվել են հիգիենիկ նկատառումներից ելնելով, դատարանը համարում է անհիմն, ուստիև մերժում այն: Չի նշվել, որ տվյալ քրեակատարողական հաստատությունում վարակի աղբյուր է եղել: Հասկանալի չէ նաև, թե ինչո՞ւ մեկուսարան տեղափոխվելու հիգիենիկ պահանջները պետք է տարբերվեն նույն քրեակատարողական հիմնարկի այլ խցերին վերաբերող պահանջներից:

116. Կառավարությունն այլ բացատրություն չի ներկայացրել: Հետևաբար, եթե նույնիսկ ընդունվի, որ գոյություն է ունեցել մի գործելակերպ, որով մեկուսարան տեղափոխելուց առաջ ազատազրկված անձանց մազերը, որպես պատիժ, խուզել են, ... բողոքարկվող գործողությունը իրավական հիմքից կամ հավաստի հիմնավորումից զուրկ է:

117. Դատարանն այսպիսով կարծում է, որ եթե անգամ ստորացնելու նպատակ չի եղել, առանց հատուկ հիմնավորման դիմողի մազերի խուզումը ինքնըստինքյան պարունակել է կամայական պատժի տարր և, այդ իսկ պատճառով, իր աչքում կարող է թվալ նրան նվաստացնող կամ ենթարկեցնող գործողություն:

118. Բացի այդ, տվյալ դեպքում դիմողը պետք է որ պատճառներ ունենար մտածելու, որ իրեն ստորացնելու նպատակ է եղել, քանի որ բանտի ղեկավարությունը նրա մազերը խուզել է նրան նշանակված պատժի համատեքստում, նաև այն բանի համար, որ նա բանտի աշխատողների հասցեին քննադատական և վիրավորական գրառումներ է կատարել:

119. Լրացուցիչ գործոնները, որոնք պետք է հաշվի առնվեն տվյալ գործի հանգամանքներում, ներառում են խնդրո առարկա ժամանակահատվածում դիմողի տարիքը (55 տարեկան) և այն փաստը, որ նա ներկայացել է բաց դատական նիստին իր մազերը խուզելուց հինը օր անց:

120. Ուշադրություն դարձնելով վերոհիշյալի վրա՝ դատարանը համարում է, որ տվյալ գործի հանգամանքներում բանտի և պետական մարմինների հասցեին քննադատական և վիրավորական գրառումներ անելու համար դիմողի մազերը խուզելը նրան մեկուսարան տեղափոխելու պատժի համատեքստում բավարար ուժգնություն ունեցող չարդարացված վերաբերմունք է, որը կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով պետք է որակվի որպես ստորացնող վերաբերմունք:

121. Սույնից հետևում է, որ դիմողի գլխի մազածածկույթի հարկադիր հեռացումը կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում է:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

1. Որոշում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են նախագահ Ռոզակիսը և դատավորներ Թուլկենսը, Վայիչը, Լևիցը, Բոտուչարովան և Զագրեբելսկին:

2 *Յանկովը* (*Yankov*) բացահայտում է, որ նվաստացնող վերաբերմունքը կարող է դրսևորվել միտումնավոր ստորացման նպատակ ունեցող գործողությունների կամ անձին ստորացնող պայմանների մեջ դնելու միջոցով: Վճռի՝ 10-րդ հոդվածի մասով նկատառումները ներկայացված են ստորև՝ էջ 683-ում:

3 Պետական պաշտոնյաների կողմից անձին միտումնավոր ստորացման ենթարկելու երևույթ արձանագրվել է *«Իվանչուկն ընդդեմ Լեհաստանի» (Iwanczuk v Poland)* գործում (2001 թ. նոյեմբերի 15-ի վճիռ): Դիմողը, որ մեղադրվում էր ապօրինի հափշտակության մեջ, նախնական կալանքի տակ էր: 1993 թ. սեպտեմբերի 19-ին՝ երեկոյան ժամը 9:30-ին, նա Վրոցլավի բանտի ղեկավարությանը խնդրել է թույլ տալ իրեն այցելել բանտի ընտրատեղամաս և մասնակցել խորհրդարանական ընտրությունների քվեարկությանը: Բանտի աշխատակիցը նրան տարել է հսկիչների սենյակ: Չորս հսկիչները հայտնել են, որ որպեսզի նրան թույլ տրվի մասնակցել քվերակությանը, նա պետք է մերկանա և ենթարկվի ֆիզիկական խուզարկության: Դիմողը հանել է իր ողջ հագուստը, բացառությամբ վարտիքի, հսկիչները հայհոյել են նրան՝ նաև ստորացուցիչ ակնարկներ անելով նրա ֆիզիկական կազմվածքի հասցեին: Հսկիչները պահանջել են, որ նա լրիվ մերկանա:

Դիմողը մերժել է: Նա նաև մերժել է ենթարկվել ֆիզիկական խուզարկության: Հետևաբար, հսկիչները մերժել են քվեարկելու հնարավորությունը և հետ տարել իր խուց: Իվանչուկն այնուհետև բողոք է ներկայացրել Ստրասբուրգի մարմիններին՝ հայտնելով, որ ի թիվս այլոց, հսկիչների վերաբերմունքը եղել է ստորացնող, ըստ այդմ՝ 3-րդ հոդվածի խախտում: Դատարանը որոշել է, որ հսկիչների՝ որպես ընտրատեղամաս մուտք գործելու նախապայման նրան ֆիզիկական խուզարկության ենթարկելու կարգադրությունը եղել է անհարկի: Որպես գործին վերաբերող գործոններ դիտարկվել են կալանքի ողջ ժամանակահատվածում դիմողի խաղաղ վարքագիծը, նրա դեմ հարուցված մեղադրանքի բնույթը (որը բռնարարք չի պարունակել) և նախկինում նրա դատապարտած չլինելու հանգամանքը: Դատարանը որոշել, որ.

59 ...թեպետ մերկացնելով խուզարկությունները կարող են անհրաժեշտ լինել որոշ իրավիճակներում, այսինքն՝ բանտում անվտանգությունն ապահովելու կամ քրեակատարողական հիմնարկներում անկարգությունները կանխելու նպատակով, դրանք պետք է անցկացվեն համապատասխան կարգով: Տվյալ դեպքում բանտի հսկիչները հայհոյել և ծաղրել են դիմողին: Նրանց վարքագծի նպատակը եղել է ստիպել դիմողին ապրել նվաստացման և ստորադասության զգացումներ: Սա, դատարանի կարծիքով, ցույց է տալիս դիմողի մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքի պակասը:

Այդ իսկ հիմքերով, վեց կողմ և մեկ դեմ ձայներով, դատարանը որոշել է, որ դիմողը ենթարկվել է ստորացնող վերաբերմունքի: Այս դեպքում հսկիչների վերաբերմունքը եղել է չհիմնավորված, ոչ արհեստավարժ և ցույց է տալիս, որ նրանք մտադիր են եղել ստորացնել նրան, քանի որ նա ցանկանում էր ուշ երեկոյան մասնակցել քվեարկությանը: Կանոնավոր մերկ խուզարկություններ ընդգրկող խստացված անվտանգության ռեժիմի վերաբերյալ դատարանի նկատառումներին ծանոթանալու համար տե՛ս *«Վան դեր Վենն ընդդեմ Նիդեռլանդների» (Van Der Ven v Netherlands)* գործը (վերը՝ էջ 193):

4 Վերջին տարիներին դատարանը ընդունել է վճիռներ, ըստ որոնց՝ մի շարք պետություններում կալանքի վատ ֆիզիկական պայմանները ստորացնող վերաբերմունքի դրսևորումներ են եղել, եթե անգամ որևէ մտադրություն չի եղել ստորացնելու կալանավորվածներին: Որպես օրինակ կարող է նշվել *«Դուգոզն ընդդեմ Հունաստանի» (Dougoz v Greece)* գործով 2001 թ. մարտի 6-ի վճիռը, երբ թմրանյութերի հետ կապված հանցագործություն կատարելու համար դատապարտված օտարերկրացի անձնավորությունը տասն ամիս շարունակ պահվել է Դրապետսոնա կալանավորման կենտրոնում և ութ ամիս՝ Ալեքսանդրաս պողոտայի ոստիկանական կենտրոնում (երկու տարածքներն էլ եղել են մարդկանցով գերծանրաբեռնված և չեն ունեցել մահճակալներ, ներքնակներ կամ ծածկոցներ): Դատարանը միաձայն որոշել է, որ.

46... կալանքի պայմանները կարող են երբեմն հավասար լինել անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի: *Հունական* գործում (Greek case) (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տարեգիրք, թիվ 12, 1969 թ.) հանձնաժողովը նման եզրակացություն է արել բանտերի գերծանրաբեռնվածության, ջեռուցման, հիգիենիկ համակարգերի ոչ պատշաճ սարքավորման, քնելու ոչ պատշաճ հարմարությունների, սննդի, հանգստի և արտաքին աշխարհի հետ շփման առումներով: Կալանքի պայմանների գնահատման ժամանակ ուշադրություն պետք է դարձվի այդ պայմանների ընդհանուր ազդեցության և դիմողի կողմից արված հայտարարությունների վրա: Տվյալ դեպքում թեպետ դատարանը տեղամասային այց չի կատարել, նկատում է, որ դիմողի հայտարարությունները հաստատվում են ԽԿԿ-ի [Խոշտանգման

կան նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխման եվրոպական կոմիտեի]՝ 1994 թ. նոյեմբերի 29-ին Ալեքսանդրաս պողոտայի ոստիկանական կենտրոն այցի վերաբերյալ զեկույցով: Իր զեկույցի մեջ ԽԿԿ-ն շեշտել է, որ խցերի հարմարությունները և ազատազրկման ռեժիմն աննպատակահարմար են եղել անձանց մի քանի օրից ավելի այդտեղ պահելու համար, ինչպես նաև արձանագրել է չափից ավելի բարձր թվաքանակ և սահմռկեցուցիչ սանիտարական պայմաններ: Թեպետ ԽԿԿ-ն չի այցելել Դրապետսոնա քրեակատարողական կենտրոն, դատարանը նկատում է, որ համաձայն կառավարության նկարագրության՝ Ալեքսանդրասի և Դրապետսոնայի պայմանները նույնն են, և դիմողն ինքն էլ խոստովանել է, որ դրանցից առաջինը մի փոքր ավելի լավ պայմաններ է ունեցել բնական լույսի, խցերում օդի և տաք ջրի մատակարարման շնորհիվ:

47. Բացի այդ, դատարանի ուշադրությունից չի վրիպում այն փաստը, որ 1997 թ. ԽԿԿ-ն այցելել է ինչպես Ալեքսանդրասի ոստիկանական կենտրոն, այնպես էլ Դրապետսոնայի քրեակատարողական կենտրոն, և հարկ է համարել կրկին այցելել երկու կենտրոնն էլ 1999 թ.: Դիմողը պահվել է այդ վայրերում այս այցերի միջև ընկած ժամանակահատվածում՝ 1997 թ. հուլիսից մինչև 1998 թ. դեկտեմբերը:

48. Ելնելով վերոհիշյալից՝ դատարանը եզրակացնում է, որ դիմողի ազատազրկման պայմանները Ալեքսանդրասի ոստիկանական կենտրոնում և Դրապետսոնայի քրեակատարողական կենտրոնում, մասնավորապես՝ այդ հիմնարկների գերծանրաբեռնվածությունը, դրանցում քնելու հարմարությունների բացակայությունը, ինչպես նաև այդ պայմաններում նրան պահելու չափից ավելի երկար տևողությունը, համատեղ հավասար են 3-րդ հոդվածին հակասող նվաստացնող վերաբերմունքի:

Դրանից քիչ անց *«Պիրս ընդդեմ Հունաստանի» (Peers v Greece)* գործի վերաբերյալ 2001 թ. ապրիլի 19-ի վճռով որոշվել է, որ Կորիդալլոսի բանտի առանձնացված (մեկուսարանների) բաժանմունքը չի համապատասխանել 3-րդ հոդվածի այս պայմանին: Դիմողը բրիտանացի թմրամոլ էր, որը մեղավոր էր ճանաչվել թմրանյութերին առնչվող հանցագործություն կատարելու մեջ: Երկու ամիս շարունակ, քանի դեռ նա ունեցել է թմրանյութերի գործածման դադարեցման հետ կապված ախտանիշներ, պահվել է մեկուսարանների բաժանմունքում: Այդ ժամանակահատվածում նա ստիպված է եղել մեկ հոգու համար նախատեսված խուցը կիսել մեկ այլ ազատազրկված անձի հետ: Նրանք երկուսով պետք է օգտվեին նույն բաց զուգարանից, որը անջատված չէր իրենց խցում քնելու համար նախատեսված հատվածից: Դատարանը միաձայն եզրակացրել է, որ.

74....տվյալ դեպքում փաստեր չկան, թե եղել է դիմողին ստորացնելու կամ նվաստացնելու հատուկ մտադրություն: Այնուամենայնիվ, դատարանը նկատում է, որ թեպետ պետք է հաշվի առնել այն հարցը, թե տվյալ վերաբերմունքի հիմքում եղե՞լ է անձին ստորացնելու և նվաստացնելու մտադրություն, թե՞ ոչ, դրա բացակայությունը դեռևս հստակ չի նշանակում, որ 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել *(«V-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (V. v the United Kingdom)* [GC], թիվ 24888/94, պարբ. 71, ECHR-IX):

75. Իրոք, տվյալ դեպքում փաստ է, որ իրավասու մարմինները քայլեր չեն ձեռնարկել դիմողի կալանքի՝ օբյեկտիվորեն անընդունելի պայմանները բարելավելու ուղղությամբ: Դատարանի կարծիքով, այս բացթողումը բացահայտում է դիմողի նկատմամբ հարգանքի բացակայությունը: Դատարանը հատկապես հաշվի է առնում այն հանգամանքը, որ առնվազն երկու ամիս դիմողը օրվա 24 ժամի մեծ մասը փաստորեն անց է կացրել առանց պատուհանի և չօդափոխվող խցի իր անկողնում: Երբեմն խցում անտանելի շոգ է եղել: Նա նաև պետք է զուգարանից օգտվեր մեկ այլ բանտարկյալի ներկայությամբ և ներկա գտնվեր, երբ վերջինս էր օգտվում զուգարանից: Դատարանին չի բավարարում կառավարության բացատրությունը, որ այս պայմանների ազդեցությունը դիմողի վրա 3-րդ հոդվածի խախտում չեն եղել: Հակառակը, դատարանն այն համոզման է, որ բանտային պայմանները, որոնց մասին բողոք է ներկայացվել, ստորացրել են դիմողի մարդկային արժանապատվությունը և նրա մեջ առաջացրել ցավի և ստորադասության զգացում, որ կարող է ստորացնել և նվաստացնել նրան և ամենայն հավանականությամբ կոտրել նրա ֆիզիկական կամ բարոյական դիմադրությունը: Հանրագումարում, դատարանը համարում է, որ կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակներում դիմողի կալանքի պայմանները Կորիդալլոսի բանտի Դելտա թևի առանձնացված բաժանմունքում հավասար են եղել նվաստացնող վերաբերմունքի:

«Փրայսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Price v United Kingdom) գործով 2001 թ. հուլիսի 10-ին վճռվել է, որ լուրջ հաշմանդամություն ունեցող տվյալ անձի կալանավորման դեպքն առաջացրել է այս դրույթի խախտում: Դիմողը, որ թալիդոմիդ դեղի զոհերից էր, զուրկ էր բոլոր չորս վերջույթներից: 1995 թ. քաղաքացիական վարույթի ժամանակ նա հրաժարվել է պատասխանել իր ֆինանսական դրությանը վերաբերող հարցերին: Դատավորը որոշել է, որ նա անհարգալից վերաբերմունք է

դրսևորել դատարանի նկատմամբ և պահանջել, որ նա յոթ օր ազատազրկվի: Այդ գիշեր նա պահվել է Լինքոլնի ոստիկանական բաժնի խցերում, քանի որ արդեն ուշ էր նրան բանտ ուղարկելու համար: Փրայսը ստիպված է եղել քնել իր անվասայլակի մեջ (նա հայտնել է, որ փայտե մահճակալի վրա պառկելը կարող էր խիստ ցավ առաջացնել ազդրերի մասում) և մրսել (նրան տվել են լրացուցիչ ծածկոցներ, և բժիշկը եկել է նրան տեսնելու): Հաջորդ օրը նրան տեղափոխել են Վեյքֆիլդի «Նյու Հալլ» կանանց բանտի բժշկական կենտրոն: Նրա խցի դուռն ավելի մեծ բացվածք ուներ անվասայլակի համար, այնտեղ կար հիդրավլիկական հիվանդանոցային մահճակալ և հենարաններով զուգարանակոնք: Նրան տրամադրվել է նաև մշտական քույրական օգնություն: Փրայսին զուգարանակոնքի վրա նստեցնելու և բարձրացնելու համար պահանջվել է տղամարդ աշխատակիցների օգնությունը: Չորս օր անց նրան բաց են թողել (պատժի ներման կանոնների համաձայն): Փրայսը պնդել է, որ իր նկատմամբ կալանքի ժամանակ ցուցաբերված վերաբերմունքը 3-րդ հոդվածի խախտում է: Դատարանը միաձայն որոշել է, որ.

30. Այս գործում չկան փաստեր, որ գոյություն է ունեցել դիմողին ստորացնելու կամ նվաստացնելու մտադրություն: Այնուամենայնիվ, դատարանը կարծում է, որ ծանր հաշմանդամություն ունեցող անձի կալանավորումն այնպիսի վայրում, որտեղ նրա համար վտանգավորության աստիճանի ցուրտ է եղել, և նրա մոտ կարող էին վերքեր առաջանալ այն պատճառով, որ նրա մահճակալը եղել է խիստ կոշտ կամ անհասանելի, նա չի կարողացել օգտվել զուգարանից կամ առանց մեծագույն դժվարություններ կրելու պահպանել մաքրություն, նվաստացնող վերաբերմունք է՝ ի խախտումն 3-րդ հոդվածի:

Փրայսի վճիռը ցույց է տալիս, որ պետությունները պետք է երաշխավորեն, որ հաշմանդամ կալանավորների համար ստեղծված են նրանց կալանքի տակ պահելու համապատասխան պայմաններ: (Դատարանը քննադատության է ենթարկել ազգային դատարանի դատավորին, որը նախքան Փրայսի ազատազրկման մասին կարգադրություն անելը չի ստուգել և չի համոզվել, որ այնտեղ եղել են Փրայսի խնամքի համար անհրաժեշտ հարմարություններ:)

Ռուսաստանում մարդկանց ազատազրկման մեջ պահելու զարհուրելի պայմաններն առաջին անգամ քննարկվել են *«Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի» (Kalashnikov v Russia)* գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2002 թ. հուլիսի 15-ին: Դիմողը խարդախության մեջ մեղադրվող գործարար անձնավորություն էր, որը նախնական կալանքի տակ վերցվելուց հետո չորս տարի պահվել է Մագադանի բանտում: Նրա խուցն այն աստիճան գերծանրաբեռնված է եղել բանտարկյալներով, որ խցում տեղավորված անձինք ստիպված են եղել մի մահճակալը կիսել երեք հոգու միջև՝ սահմանելով ութժամանոց հերթափոխային գրաֆիկ: Խցում լույսը միշտ եղել է վառ, իսկ անկյունում գտնվող զուգարանից օգտվել է տասնմեկից մինչև քսանչորս բանտարկյալ: Բացի այդ, խցում վխտացել են մակաբույծ միջատներ, իսկ բանտարկյալների մի մասն ունեցել է լուրջ վարակիչ հիվանդություններ (օրինակ՝ թոքախտ): Հետևաբար, դատարանը միաձայն որոշել է, որ.

102….դիմողի կալանքի պայմանները, մասնավորապես՝ ծայրահեղ գերծանրաբեռնվածությունը, հակահիգիենիկ իրավիճակը և դրանց քայքայիչ ազդեցությունը դիմողի առողջության և ինքնազգացողության վրա, գումարվելով այն ժամանակային տևողությանը, որի ընթացքում դիմողը պահվել է այս պայմաններում, կազմել են նվաստացնող վերաբերմունք:

Անչափ հետաքրքիր է, որ Ստրասբուրգում տեղի ունեցող վարույթի ժամանակ պատասխանող կառավարությունը ստիպված է եղել ընդունել, որ դիմողի կալանքի պայմաններն ավելի վատը չեն եղել, քան Ռուսաստանում ազատազրկման մեջ գտնվող այլ անձանց մեծ մասի պայմանները, և տնտեսական դժվարությունների պատճառով այդ պայմանները Եվրոպայի խորհրդի կողմից ընդունելի չափանիշներից շատ ավելի ցածր մակարդակում են:

Հետագա՝ *«Պոլտորացկին ընդդեմ Ուկրաինայի» (Poltoratskiy v Ukraine)* գործում, որի վերաբերյալ վճիռն ընդունվել է 2003 թ. ապրիլի 29-ին, դատարանը հաստատել է, որ պետության տնտեսական խնդիրները չեն կարող օգտագործվել 3-րդ հոդվածի խախտում ներկայացնող կալանքի անբավարար պայմաններն արդարացնելու նպատակով: 1995 թ. դեկտեմբերին, մեղավոր ճանաչվելով չորս հոգու սպանության համար, դիմողը դատապարտվել է մահապատժի: 1996 թ. փետրվարին նա

տեղափոխվել է Իվանո-Ֆրանկովսկի բանտի խցերից մեկը, որտեղ պահվել են իրենց մահապատժի ի կատար ածմանը սպասող բանտարկյալներ: 1997 թ. Ուկրաինայի նախագահը մահապատժի մորատորիում է հայտարարել, և 1999 թ. դեկտեմբերին Ուկրաինայի սահմանադրական դատարանը որոշել է, որ մահապատիժը հակասում է սահմանադրությանը: 2000 թ. հունիսին դիմողի պատիժը փոխարինվել է ցմահ բանտարկությամբ: Ստրասբուրգի մարմինների առջև նա պնդել է, որ տեղի են ունեցել կոնվենցիայի դրույթների մի շարք խախտումներ:

145. Դատարանը հատկապես մտահոգված է այն փաստով, որ մինչև 1998 թ. մայիսը դիմողը, որ այլ մահապատժի դատապարտվածների հետ պահվել է այդ բանտում, 24 ժամ շարունակ փակված է մնացել սահմանափակ բնակելի մակերես ունեցող խցում, որի պատուհանները եղել են ծածկված՝ բացառելով ցերեկային լույսի ներթափանցումը, ինչպես նաև դրսում վարժանքներ չեն կազմակերպվել, և նա ինչ-որ բանով զբաղվելու կամ մարդկանց հետ շփվելու հնարավորություն գրեթե չի ունեցել: Համաձայնելով Ուկրաինայում մահվան դատապարտվածների խցերում գտնվող անձանց նկատմամբ այսպիսի վերաբերմունքի դրսևորումների վերաբերյալ ԽԿԿ նկատառումներին՝ դատարանը համարում է, որ դիմողի ազատազրկումը նման անընդունելի պայմաններում հավասար է եղել նվաստացնող վերաբերմունքի և փաստորեն կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում է: Տվյալ դիմողի պարագայում դրությունն ավելի է վատթարացել այն պատճառով, որ 1998 թ. փետրվարի 24-ից մինչև մարտի 24-ն ընկած ժամանակահատվածում նա պահվել է մի խցում, որտեղ ջրի ծորակ և լվացարանակոնք չի եղել, փոխարենը եղել է միայն զուգարանի պատի մոտից բացվող մի փոքր խողովակ, որից ջրի հոսքը կարգավորվել է միջանցքից, խցի պատերը պատված են եղել կղանքով, իսկ զուգարանը ջրով ողողելու համար նախատեսված դույլը այդտեղից հանված է եղել: Դիմողի դրությունն ավելի է ծանրացել այն պատճառով, որ նա այս ողջ ժամանակահատվածում ենթակա է եղել մահապատժի, չնայած ... մորատորիումն ուժի մեջ է մտել 1997 թ. մարտի 11-ից:

146. Դատարանը կարծում է, որ տվյալ գործում չկան փաստեր, թե եղել է դիմողին ստորացնելու կամ նվաստացնելու հատուկ մտադրություն: Այնուամենայնիվ, դատարանը նկատում է, որ թեպետ պետք է հաշվի առնել այն հարցը՝ տվյալ վերաբերմունքի հիմքում եղե՞լ է անձին ստորացնելու և նվաստացնելու մտադրություն, թե՞ ոչ, դրա բացակայությունը դեռևս չի նշանակում, որ 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել (տե՛ս *«V-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (V. v the United Kingdom)* [GC], թիվ 24888/94, պարբ. 71, ECHR 1999-IX և *Կալաշնիկովի* գործից մեջբերումը, վերը՝ պարբ. 101): Դատարանը համարում է, որ ազատազրկման այս պայմանները, որոնք դիմողը ստիպված է եղել հանդուրժել մինչև 1998 թ. մայիսը, պետք է որ նրան զգալի հոգեկան տառապանք պատճառած լինեն՝ նսեմացնելով նրա մարդկային արժանապատվությունը:

147. Դատարանն ընդունում է, որ 1998 թ. մայիսից հետո տեղի են ունեցել զգալի առաջադիմական փոփոխություններ ինչպես դիմողին պահելու ընդհանուր պայմանների, այնպես էլ բանտում կիրառվող ընդհանուր ռեժիմի առումով: Մասնավորապես, խցերի պատուհաններից հեռացվել են ծածկերը, կազմակերպվել են մաքուր օդում ամենօրյա զբոսանքներ, ամրապնդվել են այցելուներ ունենալու և նամակագրություն վարելու իրավունքները: Այնուամենայնիվ, դատարանը կարծում է, որ մինչ այս բարեփոխումների իրականացումը դիմողն այս ողբալի պայմաններում գտնվել է մոտ 30 ամիս, որից 8-ը՝ կոնվենցիայի ընդունումից հետո:

148. Դիմողին պահելու նյութական պայմանների և նրան առաջարկված զբաղմունքի քննարկման ժամանակ դատարանը չի մոռացել, որ անցումային շրջանում Ուկրաինան բախվել է լուրջ սոցիալ-տնտեսական խնդիրների, և մինչև 1998 թ. ամառը բանտի ղեկավարությունը, զբաղված նոր ազգային օրենսդրության և հարակից կանոնակարգերի կիրառումով, միաժամանակ եղել է ծանր տնտեսական պայմաններում: Այնուամենայնիվ, դատարանը նկատում է, որ առկա ռեսուրսների պակասը սկզբունքորեն չի կարող արդարացնել այս աստիճանի թշվառ բանտային պայմանների առկայությունը, որոնք հասնում են կոնվենցիայի 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի շեմին: Բացի այդ, Ուկրաինայի տնտեսական խնդիրները որևէ պարագայում չեն կարող ընդունվել որպես բացատրություն կամ հարգելի պատճառ ազատազրկման այսպիսի պայմանների գոյությունն արդարացնելու համար, որոնք, համաձայն 145-րդ պարբերության, համարվել են անընդունելի:

149. Հետևաբար, այս առումով տեղի է ունեցել կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

Եթե դատարանը թույլ տար, որ այս առարկությունը, համաձայն որի՝ պետության տնտեսական խնդիրներն արդարացնում են ծայրաստիճան թշվառ բանտային պայմանները, ընդունելի լիներ, ապա այն ողջ Եվրոպայի տարածքով մեկ կսասաներ 3-րդ հոդվածի շրջանակներում բազմաթիվ ազատազրկված անձանց պոտենցիալ պաշտպանությունը և կնվազեցներ պետությունների՝ կալանքի պայմանները բարելավելու արտաքին ազդակները:

Կարելի է նկատել, որ բանտային պայմանների վերաբերյալ շատ գործեր արտացոլում են ազատազրկված անձանց՝ կոնվենցիայով սահմանված իրավունքների իրացման և մեկնաբանության առնչությամբ դատարանի դերի և նրա քույր կազմակերպության՝ Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) աշխատանքի միջև եղած խորհրդանշական կապը: Վերջինիս առանձին քրեակատարողական հիմնարկներ կատարած այցերի վերաբերյալ զեկույցները մեծապես օգնում են դատարանին հաստատելու այդ հիմնարկներում կոնվենցիայի իրավունքների՝ դիմողների նշած խախտումների վերաբերյալ փաստերը: Նաև այդ հաստատությունների մասին ԽԿԿ-ի բացասական դիտողությունները կարող են ազդակ լինել դատարանի համար, որպեսզի եզրակացնի (հիմք ընդունելով այդ պայմաններից տուժած ազատազրկված անձի բերած բողոքը կոնվենցիայի շրջանակներում), որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում:

5 Կալանավորին նախնական կալանքի հաստատությունից դատարանի շենք տեղափոխելու պայմանները դատարանը որակել է որպես 3-րդ հոդվածի խախտում *«Խուդոյորով ընդդեմ Ռուսաստանի» (Khudoyorov v Russia)* գործում, որի վերաբերյալ վճիռն ընդունվել է 2005 թ. նոյեմբերի 8-ին: Դիմողին 205 անգամ տարածքային դատարան և հակառակ ուղղությամբ տեղափոխել են բանտի փակ մեքենայով, որտեղ նա զբաղեցրել է մոտ մեկ քառակուսի մետր մակերես: Ամեն անգամ ճանապարհը տևել է մեկ ժամ, և դիմողն իրեն հատկացված տարածքը ստիպված կիսել է այլ բանտարկյալի հետ: Այնտեղ եղել է միայն մեկ նստարան, և նրանք ստիպված հերթով նստել են մեկը մյուսի գիրկը: Տարածքային դատարան տանելու օրերին դիմողին ո՛չ ուտելիք են տվել, ո՛չ էլ դրսում՝ մաքուր օդում գտնվելու հնարավորություն: Պալատն ուշադրություն է դարձրել ԽԿԿ-ի հրապարակած կարծիքներին, ըստ որոնց՝ 0.8 քմ մակերես ունեցող ֆուրգոնների բաժանմունքները, որոնք նախատեսված են առանձին բանտարկյալներին տեղից տեղ փոխադրելու համար, հարմար չեն՝ անկախ ճամփորդության տևողությունից: Ուստի հաշվի առնելով այն տարածքի մակերեսը՝ որը հատկացվել է դիմողին մեկ այլ բանտարկյալի հետ տեղափոխելու համար, համապատասխան նստարանների բացակայությունը, վերջինիս առանց սննդի և առանց բացօթյա զբոսանքի թողնելը, պալատը եզրակացրել է, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում: Դատարանը չի մատնանշել, թե հոդվածի որ տարրն է խախտվել: Դարձյալ տեսնում ենք, որ 3-րդ հոդվածը կիրառելիս դատարանն առաջնորդվել է ԽԿԿ-ի նշանակալի փորձով:

6 *«Ֆարբտուհսն ընդդեմ Լատվիայի» (Farbtuhs v Latvia)* գործով 2004 թ. դեկտեմբերի 2-ի վճռով պալատը, վեց կողմ և մեկ դեմ ձայներով, վճռել է, որ խիստ հիվանդ, տարեց դատապարտյալի ազատ արձակման հետաձգումը նվաստացնող վերաբերմունք է: 2000 թ.՝ 84 տարեկան հասակում, դիմողը մեղավոր է ճանաչվել մարդկության դեմ գործած ցեղասպանության և այլ հանցագործությունների մեջ, որոնք նա, որպես պաշտոնատար անձ, կատարել է 1940 թ. հետո, երբ Լատվիան միացվել է Խորհրդային Միությանը: Նախքան բանտարկությունը նա անցել է բժշկական քննություն, որի արդյունքում որոշվել է, որ նա տառապում է ծայրանդամների լուծանքով և մի շարք այլ լուրջ առողջական խնդիրներ ունի: Վատառողջ լինելու պատճառով նա տեղավորվել է բանտի հիվանդանոցում: 2001 թ. փետրվարին բժիշկները խորհուրդ են տվել պայմանականորեն ազատ արձակել նրան՝ հաշվի առնելով նրա վատառողջությունը և տարիքը: Երեք օր անց բանտի կառավարիչը միջնորդություն է ներկայացրել շրջանային դատարան՝ դիմողին ազատ արձակելու պահանջով: Նրա պահանջը մերժվել է: 2002 թ. մարտին տարածաշրջանային դատարանը թույլատրել է ազատ արձակել դիմողին՝ հաշվի առնելով այն փաստերը, որ բանտում գտնվելու ժամանակ նրա մոտ ի հայտ է եկել երկու այլ հիվանդություն, այդ թվում՝ շաքարախտ: Դրանից հետո դիմողը ազատ է արձակվել: Պալատը խորին մտահոգություն է հայտնել, որ դիմողի արձակումը բանտից ավելի քան մեկ տարի հետաձգվել է, չնայած, բժշկական եզրակացության համաձայն, նրա վատթարացող առողջական վիճակը պահանջում էր անմիջապես ազատ արձակել նրան: Բացի այդ, պալատը քննադատել է ազատազրկման մեջ գտնվելու ժամանակ Ֆարբտուհսին սահմանափակ մասնագիտական բժշկական խնամքի տրամադրումը: Աշխատանքային ժամերից դուրս նա կախված է եղել

իր բանտակից ընկերներից, որոնք երբեմն կամավոր հոգ են տարել նրա մասին: Այս վճիռը ցույց է տալիս, որ պետությունները չպետք է շարունակեն անձանց ազատազրկման մեջ պահել, եթե անկախ բժշկական եզրակացությամբ առաջարկվում է, որ նրանք պետք է անհապաղ ազատ արձակվեն:

7 *«Մոիսեևներն ընդդեմ Լատվիայի» (Moisejevs v Latvia)* գործի վերաբերյալ 2006 թ. հունիսի 15-ի վճռով պալատը միաձայն եզրակացրել է, որ նախնական կալանքի տակ գտնվող անձին իր դատական նիստերի օրը բավարար սնունդ չտալը եղել է նվաստացնող վերաբերմունք: Դատական նիստերին մասնակցելու համար դիմողը յոթանասուներկու օր դատարան է տարվել: Այդ օրերին նրան կարգին ճաշ չեն տվել, այլ ընդամենը մի կտոր հաց, սոխ և մի կտոր ձուկ կամ միս: Պալատը որոշել է, որ այսպիսի սնունդը նրա կարիքները բավարարելու համար թերի է եղել, հատկապես՝ դատական նիստերի ժամանակ նրան սպասող հոգեկան ապրումների պարագայում: Բացի այդ, դատական նիստերի օրերին բանտ բերելուց հետո նրան հաճախ ճաշի փոխարեն տվել են ընդամենը մի կտոր հաց:

8 *«Հուրթադոն ընդդեմ Շվեյցարիայի» (Hurtado v Switzerland)* գործում (A.280A (1994), վերը՝ էջ 195-96) խլացուցիչ ռռնակի ազդեցության և ծերբակալության ժամանակ ոստիկանության կողմից դիմողի նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրման հետևանքով դիմողը կեղտոտել է իր տաբատի մեջ: Ավելի քան 24 ժամ, որի ընթացքում նա հարցաքննվել է ոստիկանությունում և ներկայացվել հետաքննությանը մասնակցող դատավորին, նրան հնարավորություն չեն տվել փոխել շորերը: Հանձնաժողովը՝ տասնհինգ կողմ և մեկ դեմ ձայներով, որոշել է, որ այդ վերաբերմունքը հավասար է նվաստացնող վերաբերմունքի՝ ի խախտումն 3-րդ հոդվածի:

67. Հանձնաժողովը կրկին նշում է, որ վերաբերմունքը համարվում է «նվաստացնող», եթե այն իր զոհի մեջ առաջացնում է վախի, ցավի և ընկճվածության զգացում, որը կարող է ստորացնել և նվաստացնել նրան և ամենայն հավանականությամբ կոտրել նրա ֆիզիկական կամ բարոյական դիմադրությունը *(«Իռլանդիան ընդդեմ ՄԹ-ի» (Ireland v UK)* գործով դատարանի վճիռ, էջ 66, պարբ. 100 և *«Սերինգն ընդդեմ ՄԹ-ի» (Soering v UK)*, էջ 39, պարբ. 100):

68. Հանձնաժողովը համարում է, որ իշխանությունների կողմից հիգիենայի ամենատարրական միջոցներ չձեռնարկելը, դիմողին մաքուր հագուստ չտալը, որպեսզի նա փոխի իրենց գործողությունների հետևանքով կեղտոտած հագուստը, եղել են ստորացնող և նվաստացնող դիմողի համար և այդ իսկ պատճառով՝ 3-րդ հոդվածի իմաստով նվաստացուցիչ վերաբերմունք են:

9 *«Արևելյան Աֆրիկայի ասիացիներն ընդդեմ ՄԹ-ի»* (*East African Asians v UK* (1973) 3 EHRR 76) գործի կապակցությամբ հանձնաժողովը որոշել է, որ անձանց Բրիտանիա ներգաղթի սահմանափակումները հավասար են եղել նվաստացնող վերաբերմունքի: 1960-ական թվականների դրությամբ Արևելյան Աֆրիկայում բնակվել է Միացյալ Թագավորության և գաղութների մի քանի հարյուր հազար քաղաքացի, որոնց զգալի մասն ունեցել է ասիական ծագում: Տարածաշրջանի բրիտանական գաղութների անկախացումից հետո նրանց նոր ազգային կառավարությունները սկսել են վարել «աֆրիկանացման» տարբեր քաղաքականություններ: Դրանց հետևանքով բազմաթիվ ասիացիներ զրկվել են իրենց ապրուստի միջոցից (օրինակ՝ նրանց առևտրային արտոնագրերը չեղյալ հայտարարելու հետևանքով) և մատնվել թշվառության: Այնուհետև զգալի թվով ասիացիներ փորձել են մուտք գործել և հաստատվել Միացյալ Թագավորությունում: 1968 թ. խորհրդարանն ընդունել է «Համագործակցության պետությունները մուտք գործող ներգաղթյալների մասին մասին» օրենքը, որով արգելվել է Արևելյան Աֆրիկայից ժամանող ասիացիներին մուտք գործել և բնակություն հաստատել Միացյալ Թագավորությունում: Քսանհինգ այսպիսի անձ, որոնց ՄԹ-ն մերժել է ՄԹ մուտք գործելու հնարավորության ընձեռումը, բողոքել են հանձնաժողովին՝ պնդելով, որ, ի թիվս այլոց, տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում: Իր զեկույցում հանձնաժողովը եզրակացրել է, որ.

207 ...Այս գործի կապակցությամբ կիրառված օրենսդրությունը խտրական մոտեցում է դրսևորել դիմողների նկատմամբ՝ նրանց մաշկի գույնի կամ ռասայական պատկանելության հիման վրա: Հանձնաժողովը նաև հաստատել է ընդունելիության որոշման փուլում արտահայտված այն տեսակետը, թե ռասայական պատկանելության հիման վրա

դրսևորված խտրականությունը որոշ հանգամանքներում ինքնին կարող է կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով նվաստացնող վերաբերմունք համարվել: Հանձնաժողովն այս կապակցությամբ նշում է, որ ինչպես և ընդհանրապես ընդունված է, հարկ է հատուկ ուշադրություն դարձնել ռասայական պատկանելության հատկանիշով խտրականության վրա, ինչպես նաև այն հանգամանքի վրա, որ ռասայական պատկանելության հիման վրա անձանց խմբի նկատմամբ դրսևորված խտրական վերաբերմունքը հրապարակայնացնելը [sic.] մարդկային արժանապատվությունը վիրավորելու ուրույն ձև է, և այդ իսկ պատճառով անձանց խմբի նկատմամբ ռասայական պատկանելության հիման վրա խտրական վերաբերմունք դրսևորելը նվաստացնող վերաբերմունք որակվելու հատկանիշներ ունի այն դեպքում, երբ որոշ այլ հիմքերով տարբերակված վերաբերմունքի դրսևորումը նման հարցի տեղիք չի տալիս:

208. Հանձնաժողովը համարում է, որ ռասայական խտրականությունը, որին դիմողները բացահայտորեն ենթարկվել են ներգաղթի մասին տվյալ օրենսդրության կիրառկման հետևանքով, մարդկային արժանապատվության ոտնահարում է, որը վերը նշված առանձնահատուկ հանգամանքներում հավասար է կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով «նվաստացնող վերաբերմունքի»:

209. Ուստի հանձնաժողովը եզրակացնում է, վեց կողմ և երեք դեմ ձայներով, որ տվյալ դեպքում տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում: [Բացի այդ, հանձնաժողովի երկու այլ անդամ, որոնք քվեարկությանը ներկա չեն գտնվել, հայտնել են, որ համաձայն են մեծամասնության հետ:]

Հանձնաժողովի բացահայտած առանձնահատուկ հանգամանքներն են. այն փաստը, որ ըստ բրիտանական օրենքի՝ դիմողները օտարերկրացիներ չէին, սակայն 1968 թ. օրենքով նրանց մուտքը Միացյալ Թագավորություն արգելված էր, ինչպես նաև այն դժվարին իրավիճակը, որում դիմողները հայտնվել էին Արևելյան Աֆրիկայում տեղի ունեցող տեղական «աֆրիկանացման» ծրագրերի պատճառով: Դրանից հետո Բրիտանիայի կառավարությունը թույլատրել է դիմողներին մուտք գործել ՄԹ և շրջանառության մեջ է դրել հատուկ վաուչերների համակարգ, որը հնարավորություն էր տալիս այլ անձանց, որոնք գտնվում էին նույնպիսի բարդ վիճակում, մուտք գործել երկիր: 1977 թ. այս [օրենքի] կիրառության վերաբերյալ որոշում կայացնելու համար Նախարարների կոմիտեն չի ապահովել ձայների երկու երրորդի մեծամասնություն, ուստի որոշել է, որ հետագա գործողությունների անհրաժեշտություն չկա (բանաձև DH(77)2): 1994 թ., Բրիտանիայի կառավարության պահանջով, Նախարարների կոմիտեն վերջապես որոշել է պաշտոնապես հրապարակել հանձնաժողովի վերոհիշյալ զեկույցը (բանաձև DH(94)30): Նախարարների կոմիտեի՝ գործի առնչությամբ վերջնական որոշման հասնելու անկարողությունը վեր է հանում այն վիճելի դերը, որ այդ հաստատությունն ունեցել է Ստրասբուրգի նախկին վերահսկողական համակարգում:

10 *«Աբդուլազիզը, Կաբալեսը և Բալկանդալին ընդդեմ ՄԹ-ի» (Abdulaziz, Cabales and Balkandali v UK* A.94 (1985) 7 EHRR 471) գործում (տե՛ս նաև ստորև՝ էջ 550) դատարանը 3-րդ հոդվածի խախտումով ռասայական կամ սեռական խտրականության վերաբերմունքի դրսևորման դեպք չի հայտնաբերել: ՄԹ-ի օրինական ռեզիդենտներ հանդիսացող դիմողները, որոնք օտար պետությունների քաղաքացիներ էին, ներգաղթի գործող կանոնների համաձայն՝ չեն կարողացել մուտք գործել ՄԹ իրենց օտարերկրացի ամուսինների պատճառով: Դատարանը, միաձայն վճռել է, որ «... տարբերակված վերաբերմունքը, որի վերաբերյալ ներկայացվել է բողոքը, չի պարունակել արհամարհանք կամ դիմողների անձի նկատմամբ հարգանքի բացակայություն, այն նախատեսված չի եղել դրա համար և չի ստորացրել կամ նվաստացրել...» (պարբ. 91): Այսպիսով, որպեսզի գնահատի՝ տարբերակված վերաբերմունքը նվաստացնող վերաբերմունք է, թե ոչ, դատարանը քննության է առնելու գանգատարկվող յուրաքանչյուր խտրական գործողության հիմնավորումները և ազդեցությունները:

11 *«Մոլդովանը և այլք ընդդեմ Ռումինիայի» (Moldovan and Others v Romania)* (թիվ 2) գործի վերաբերյալ 2005 թ. հուլիսի 12-ի վճռով մշտապես գործող դատարանի պալատը միաձայն որոշել է, որ գնչու փոքրամասնական համայնքի հասցեին ազգային դատարանների և պետական պաշտոնյաների կողմից արված ռասայական խտրականության բնույթի արտահայտությունները նպաստել են, որ վերջիններս ենթարկվեն նվաստացնող վերաբերմունքի: Յոթ գնչու դիմողների տները և անձնական գույքը փչացրել է ամբոխը, նաև՝ ոստիկանության աշխատակիցները, որոնք նաև սպանել են այն երեք գնչուներին, որոնք կռվի մեջ են մտել ոչ գնչու գյուղացիների հետ, ինչի հետևան-

քով սպանվել է մեկ գյուղացի: Իրենց տները քանդելուց շատ տարիներ անց դիմողները ստիպված են եղել լքել իրենց հավաբները, խոզանոցները և նկուղները: Գյուղացիների դեմ ընթացող քրեական վարույթի ժամանակ դատարանը նշել է, որ, ի թիվս այլոց, գյուղում բնակվող գնչուները «... մերժել են բնակչության մյուս մասի կողմից ընդունված բարոյական արժեքները... Գնչուների մեծ մասը զբաղմունք չունի և դրամ է վաստակում պատահական աշխատանքներով և ամեն տեսակ անօրինական գործունեությամբ»: Դիմողները բողոքել են Ստրասբուրգ: Պալատը վճռել է, որ.

111. Բացի այդ, դիմողի ազնվության և կենցաղի վերաբերյալ նրանց խնդիրներով զբաղվող որոշ մարմինների արած դիտողությունները, ... առանց հիմնավորումների ներկայացման, զուտ խտրական դիտողություններ են: Այս կապակցությամբ դատարանը կրկնում է, որ ռասայական պատկանելության վրա հիմնված խտրականությունն ինքնին չի կարող համարվել նվաստացնող վերաբերմունք կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով (տե՛ս *«Արևելյան Աֆրիկայի ասիացիների ընդդեմ Միացյալ Թագավորության» (East African Asians v the United Kingdom)*, հաննձնաժողովի զեկույց, 1973 թ. դեկտեմբերի 14, DR 78, էջ 5, պարբ. 62):

Դիմողների բողոքը կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակներում քննարկելիս այս նկատառումները, հետևաբար, պետք է հաշվի առնվեն որպես ծանրացուցիչ հանգամանքներ:

... .

113. Ելնելով վերոհիշյալից՝ դատարանը համարում է, որ դիմողների կենցաղային պայմանները և նրանց նկատմամբ ռասայական խտրականության դրսևորումները, որոնց նրանք բացահայտորեն ենթարկվել են տարբեր պետական ատյանների կողմից իրենց խնդիրների քննարկման ժամանակ, սույն գործի առանձնահատուկ դեպքում նրանց մարդկային արժանապատվության վիրավորանք են և կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով հավասար են «նվաստացնող վերաբերմունքի»:

114. Հետևաբար, տեղի է ունեցել նաև կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

12 Ներառելով սեռական ուղղություն՝ 3-րդ հոդվածի պոտենցիալ խախտում համարվող խտրականության ձևերն ընդլայնվել են *«Սմիթը և Գրեյդին ընդդեմ ՄԹ-ի»* (*Smith and Grady v UK* (1999) 29 EHRR 493) գործում, որը մեջբերված է և ներկայացված ստորև՝ էջ 511-ում: Դատարանը միաձայն որոշել է, որ.

121….Բացի այդ, դատարանը չի բացառում, որ հետերոսեքսուալ մեծամասնության կողմից հոմոսեքսուալ փոքրամասնության նկատմամբ այսպիսի վերաբերմունքը, որը կանխակալ մոտեցումների վրա հիմնված վերաբերմունք է՝ ըստ վերը բերված նկարագրության, կարող է, սկզբունքորեն, դիտարկվել 3-րդ հոդվածի շրջանակներում (տե՛ս mutatis mutandis *«Աբդուլազիզը, Կաբալեսը և Բալկանդալին ընդդեմ ՄԹ-ի» (Abdulaziz, Cabales and Balkandali v UK, A.94)* էջ 42, պարբ. 90–1):

122. Այնուամենայնիվ, թեպետ դատարանն ընդունում է, որ այդ քաղաքականությունը և քննության ու արդարացման գործընթացները՝ միասին վերցրած, հաստատ ցնցել են և ստորացրել դիմողներից յուրաքանչյուրին, հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները, չի կարծում, որ այդ վերաբերմունքը հասել է ուժգնության նվազագույն մակարդակի, որպեսզի դիտարկվի կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակներում:

Նվաստացնող պատիժ

……

«Թայրերն ընդդեմ ՄԹ-ի» (Tyrer v UK A.26 (1978) 2 EHRR 1)

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը ծնվել է 1956 թ. Մեն կղզում, որը Միացյալ Թագավորությունից կախյալ տարածք է՝ իր առանձին կառավարությամբ, օրենսդիր մարմնով և դատարաններով: 1972 թ. մարտի սկզբին նա մեղավոր է ճանաչվել անօրինական հարձակում կատարելու համար, որի ժամանակ մարմնական վնասվածք է հասցրել դպրոցում իր հետ սովորող աշակերտին: (Այս աշակերտն ավելի վաղ հաղորդել

է, որ դիմողը գարեջուր էր բերել դպրոց): Անչափահասների դատարանը նրան նշանակել է մտրակի երեք հարվածի պատիժ (համաձայն գործող տեղական կանոնակարգերի՝ մտրակը պետք է ունենար առավելագույնը 40 դյույմ երկարություն և 6 դյույմից ոչ ավելի հաստություն): Դիմողը բողոքարկել է այս վճիռը Մեն կղզու արդարադատության բարձր դատարանում: 1972 թ. ապրիլի 28-ին դատարանը պահանջել է, որ Թայրերը ստուգվի բժշկի կողմից՝ որոշելու համար՝ նա պատրա՞ստ է կրել իր պատիժը: Բժիշկը հայտնել է, որ նա առողջ է: Այդ օրը դատարանը մերժել է Թայրերի վերաքննիչ բողոքը: Նույն օրը Թայրերը որոշ ժամանակ սպասել է ոստիկանության բաժնում մինչև բժշկի գալը, որից հետո նրան մտրակել են: Ներկա են գտնվել բժիշկը և Թայրերի հայրը: Թայրերին ստիպել են հանել իր տաբատը և վարտիքը և կռանալ սեղանի վրա: Երկու ոստիկան բռնած պահել են նրան, իսկ երրորդը մտրակել է: Թայրերի մտրակումն այնքան ուժգին է եղել, որ մտրակն առաջին հարվածից կոտրվել է: Դիմողի հայրն այնուհետև «հարձակվել» է ոստիկաններից մեկի վրա, սակայն նրան զսպել են: Մտրակման հետևանքով դիմողի մաշկը չի խախտվել, սակայն դրանից հետո մոտ մեկուկես շաբաթ նա ցավեր է ունեցել: Անգլիայում, Ուելսում և Շոտլանդիայում 1948 թվականից և Հյուսիսային Իռլանդիայում 1968 թվականից դատարանով չափահասներին և անչափահասներին ֆիզիկական պատիժ նշանակելը վերացված է: 1972 թ. դիմողը բողոքել է հանձնաժողովին այն կապակցությամբ, որ, ի թիվս այլոց, իր պատիժը եղել է 3-րդ հոդվածի խախտում: 1976 թ. հունվարին դիմողը փորձել է հետ վերցնել իր դիմումը, սակայն հանձնաժողովը մերժել է նրան, քանի որ «գործը բարձրացրել է կոնվենցիայի կատարմանը վերաբերող ընդհանուր բնույթի հարցեր, հետևաբար, հետագա քննության կարիք կար»: Այնուհետև դիմողը վարույթի հետագա ընթացքում մասնակցություն չի ունեցել: Իր 1976 թ. զեկույցի մեջ հանձնաժողովը, տասնչորս կողմ և մեկ դեմ ձայներով, որոշել է, որ այդ պատիժը եղել է նվաստացնող և առաջացրել է 3-րդ հոդվածի խախտում:

II. 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

29. Դատարանը համամիտ է հանձնաժողովին, որ պրն Թայրերի պատիժը 3-րդ հոդվածի իմաստով «խոշտանգում» չէ: Դատարանը չի կարծում, որ այս առանձին գործի փաստերով բացահայտվում է, թե դիմողը ենթարկվել է այն աստիճանի լուրջ տառապանքի, որը համապատասխանում է դատարանի՝ 1978 թ. հունվարի 18-ի վճռում (*«Իռլանդիան ընդդեմ ՄԹ-ի» (Ireland v UK)*, շարք A, թիվ 25, էջ 66–67 և 68, պարբ. 167 և 174) այդ հասկացությանը տված մեկնաբանությանը և կիրառությանը:

Այդ վճիռը նաև պարունակում է «անմարդկային վերաբերմունքի» և «նվաստացնող վերաբերմունքի» մասին տարբեր ցուցումներ, սակայն միտումնավոր անդրադարձ չկա «անմարդկային պատիժ» և «նվաստացնող պատիժ» հասկացություններին, որոնք վերաբերում են սույն գործին (նույն տեղում, էջ 65, պարբ. 164): Հետևաբար, այդ ցուցումներն այս դեպքում կիրառվել չեն կարող: Այնուամենայնիվ, ճիշտ է, որ հասցված տառապանքը պետք է որոշակի մակարդակի լինի որոշելու համար, որ նշանակված պատիժը եղել է 3-րդ հոդվածի իմաստով «անմարդկային» պատիժ: Հետևաբար, միակ հարցը, որի վերաբերյալ պետք է որոշում ընդունվի, այն է, թե արդյոք նա 3-րդ հոդվածին հակառակ ենթարկվե՞լ է «նվաստացնող պատժի»:

30. Նախ՝ դատարանը նկատում է, որ անձի համար արդեն իսկ ստորացում է, որ նա դատապարտվել է քրեական արարք գործելու համար: Այնուամենայնիվ, 3-րդ հոդվածի իմաստով նշանակություն ունի ոչ թե այն հանգամանքը, որ նա ստորացվել է՝ դատապարտվելով իր կատարած արարքի համար, այլ ստորացվել է իրեն նշանակված պատժի իրականացման հետևանքով: Սկզբունքորեն, դա դատարանի նշանակած եթե ոչ բոլոր պատիժների, ապա դրանց մեծ մասի հետևանքներից մեկն է, քանի որ պատիժն անձին հարկադրում է իր կամքին հակառակ կատարել քրեական համակարգի պահանջները:

Այնուամենայնիվ, ինչպես դատարանը նշել է *«Իռլանդիան ընդդեմ ՄԹ-ի»* (*Ireland v UK*) 1978 թ. հունվարի 18-ի վճռում (շարք A, թիվ 25, էջ 65, պարբ. 163), կոնվենցիայի 3-րդ հոդվածն ամրագրում է բացարձակ արգելք, որից բացառություններ չեն կարող արվել, և 15(2) հոդվածի շրջանակներում 3-րդ հոդվածից շեղում չի նախատեսվում: Հաշվի առնելով դատարանի նշանակած պատժին բնորոշ ստորացման սովորական և գրեթե միշտ անխուսափելի տարրը՝ անհեթեթ կլինի որոշել, որ դատարանի նշանակած պատիժը, ընդհանուր առմամբ, 3-րդ հոդվածի իմաստով «նվաստացնող» պատիժ է: Այս շարադրանքի մեջ պետք է մտցվի նոր չափանիշ: Իրոք, 3-րդ հոդվածը, հստակորեն արգելելով «անմարդկային» և «ստորացնող» պատիժը, նշանակում է, որ այդպիսի պատժի և ընդհանրապես պատժի միջև տարբերություն կա:

Դատարանի կարծիքով, որպեսզի պատիժը «նվաստացնող» լինի և առաջացնի 3-րդ հոդվածի խախտում, այն պետք է որոշակի մակարդակի լինի և, բոլոր դեպքերում, պետք է առաջացնի նախորդ ենթապարբերությունում նշված ստորացումից տարբեր ստորացում: Գնահատումը, հանգամանքների բերումով, հարաբերական է: Այն կախված է գործի

հանգամանքներից և, մասնավորապես, պատժի բնույթից ու համատեքստից, ինչպես նաև դրա կատարման ձևից և բնույթից:

31. Մեծ կղզու գլխավոր դատախազը վիճում է, որ խնդրո առարկա ֆիզիկական պատիժը կոնվենցիայի խախտում չէ, քանի որ այն կղզում չի առաջացրել ընդվզման տրամադրություն: Այնուամենայնիվ, եթե նույնիսկ ընդունենք, որ տեղի հանրության կարծիքը կարող է ազդեցություն ունենալ 3-րդ հոդվածի շրջանակներում «նվաստացնող պատիժ» հասկացության մեկնաբանության վրա, դատարանն ապացուցված չի համարում, որ Մեծի ազգաբնակչության նույնիսկ այն հատվածը, որը կողմնակից է, որ ֆիզիկական պատժի ձևը պահպանվի, չի համարում, որ այն նվաստացնող պատիժ չէ: Շատ հնարավոր է, որ նրանք արդյունավետ են համարում պատիժը, քանի որ այն նվաստացնող ազդեցություն ունի: Ինչ վերաբերում է նրանց հավատին, որ դատարանի կողմից նշանակված ֆիզիկական պատիժը կասեցնում է հանցագործներին, ապա պետք է նշել, որ պատժի նվաստացնող բնույթը չի անհետանում միայն այն պատճառով, որ համոզմունք կա, թե այն կասեցնում է կամ օժանդակում հանցավորության վերահսկմանը: Ամենից առավել դատարանը պետք է շեշտի, որ 3-րդ հոդվածին հակասող պատժամիջոցների կիրառությունը, անկախ դրանց կանխարգելիչ ազդեցությունից, երբևէ ընդունելի չեն:

Դատարանը պետք է նաև հաշվի առնի, որ կոնվենցիան գործող փաստաթուղթ և, ինչպես շատ դիպուկ նշել է հանձնաժողովը, պետք է մեկնաբանվի ըստ այսօրվա հանգամանքների: Գործը քննարկելու ժամանակ դատարանը չի կարող չենթարկվել Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների քրեադատավարական քաղաքականության ոլորտում տեղի ունեցող զարգացումների և ընդհանուր առմամբ ընդունված չափորոշիչների ազդեցություններին: Հիրավի, Մեծ կղզու գլխավոր դատախազը նշել է, որ տարիներ շարունակ դատարանի նշանակած ֆիզիկական պատժի մասին Մեծի օրենսդրական դրույթները եղել են վերանայման փուլում:

32. Ինչ վերաբերում է պրն Թայրերին ձաղկելու եղանակին և մեթոդին, Մեծ կղզու գլխավոր դատախազը հատուկ ուշադրություն է հրավիրել այն փաստի վրա, որ պատիժն իրականացվել է մեկուսի պայմաններում և առանց օրինազանցի անունը հրապարակելու:

3-րդ հոդվածի շրջանակներում պատժի «նվաստացնող» բնույթի մասին որոշում կայացնելու ժամանակ հրապարակայնությունը դիտարկվում է որպես ուշադրության արժանի գործոն, սակայն դատարանը չի կարծում, որ այդպիսի հրապարակայնության բացակայությունը բավարար է, որպեսզի պատիժը չվերագրվի այդ կատեգորիային: Բավական է այն, որ զոհը ստորացված է հենց իր աչքում, եթե նույնիսկ նա ստորացված չէ մյուսների աչքում:

Դատարանը նկատում է, որ Մեծ կղզու համապատասխան օրենսդրությունը, ինչպես նաև նշանակված պատժի դեմ օրենքի խախտում թույլ տված անձին բողոք ներկայացնելու իրավունքով օժտելը որոշակի երաշխիքներ են ապահովում: Այսպիսով, նախապես տեղի է ունենում բժշկական քննություն, հարվածների քանակը և մտրակի չափսերը կանոնակարգված են, բժիշկը ներկա է գտնվում և կարող է պահանջել դադարեցնել պատիժը, փոքր երեխայի կամ պատանիների դեպքում ցանկության դեպքում ծնողը նույնպես կարող է ներկա գտնվել, մտրակում է ոստիկանության կոնստաբլը ավելի բարձրաստիճան գործընկերոջ ներկայությամբ:

33. Այնուամենայնիվ, դատարանը պետք է հաշվի առնի, թե արդյոք դիմողի պատժին առնչվող մյուս հանգամանքներն այնպիսի՞ն են, որ պատիժը 3-րդ հոդվածի իմաստով համարվի «նվաստացնող» պատիժ:

Դատարանի նշանակած ֆիզիկական պատժի բուն էությունն այն է, որ մի մարդ արարածը ֆիզիկական բռնություն է գործադրում մեկ այլ մարդ արարածի նկատմամբ: Բացի այդ, սա ինստիտուցիոնալ, տվյալ դեպքում՝ օրենքով թույլատրված բռնություն է, որի վերաբերյալ կարգադրությունն իջեցվել է պետության դատական ատյանների կողմից, և իրականացվել է պետության ոստիկանական մարմինների կողմից... Այսպիսով, թեպետ դիմողը լուրջ կամ տևական ֆիզիկական ազդեցություն չի կրել, նրան նշանակված պատիժը, որով նրան վերաբերվել են որպես իշխանությունների իրավազորության ներքո գտնվող օբյեկտի, եղել է բռնություն մարդու արժանապատվության և ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ, որոնք 3-րդ հոդվածի պաշտպանության հիմնական առարկաներն են: Եվ հնարավոր չէ բացառել, որ պատիժը կարող էր հոգեբանական բացասական ազդեցություն թողած լինել նրա վրա:

Բացի այդ, այս բռնության ինստիտուցիոնալ բնույթն ավելի է խորանում՝ պայմանավորված պատիժը ստանալու համար պաշտոնական ընթացակարգի էությամբ և այն փաստով, որ պատիժն ի կատար ածողները անձանոթ էին օրինազանցին:

Ինչ խոսք, որ համաձայն համապատասխան օրենսդրության՝ մտրակումը չի կարող իրականացվել ավելի ուշ, քան պատժի նշանակումից վեց ամիս անց: Այնուամենայնիվ, սա չի փոխում այն փաստը, որ անչափահասների դատարանի վճիռ կայացնելու համար պահանջվել է մի քանի շաբաթ, և պատժի ի կատար ածումը ոստիկանության բաժնում զգալիորեն հետաձգվել է: Հետևաբար, բացի կրած ֆիզիկական ցավից, պարոն Թայրերը ենթարկվել է նաև հոգեկան տառապանքի՝ սպասելով, թե երբ է իր նկատմամբ բռնություն կիրառվելու:

34. Սույն գործում դատարանն աննպատակահարմար է համարում, որ բռնարարք համարվող հանցագործության համար դատարանը նշանակել է ֆիզիկական պատիժ: Ոչ էլ արժանահավատ է համարում, որ պրն Թայրերի համար մտրակումը եղել է կալանավորման այլընտրանքային լուծում: Այն փաստը, որ որևէ պատժի ձև կարող է նախապատվելի լինել կամ

նվազ բացասական ազդեցություն ունենալ և կամ նվազ լուրջ լինել, քան մեկ այլ պատիժը, ինքնին չի նշանակում, որ առաջին պատիժը 3-րդ հոդվածի իմաստով «նվաստացնող» պատիժ չէ:

35. Հետևաբար, ամբողջության մեջ դիտարկելով այս հանգամանքները, դատարանը կարծում է, որ դիմողը ենթարկվել է այնպիսի պատժի, որի մեջ ստորացման տարրը հասել է «նվաստացնող պատժի» մակարդակի, ինչը բացատրված է վերը՝ պարբ. 30: Մերկ հետույքի վրա կիրառված պատժի անպատվաբերությունը որոշ չափով խորացրել է դիմողի պատժի նվաստացնող բնույթը, սակայն դա չի եղել միակ կամ որոշիչ գործոնը:

Հետևաբար, դատարանը եզրակացնում է, որ դատարանի կողմից ֆիզիկական պատժի նշանակումը դիմողին հավասարազոր է կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով նվաստացնող պատժի...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

...

2. Վեց կողմ և մեկ դեմ ձայներով որոշել է, որ դատարանի կողմից պրն Թայրերին ֆիզիկական պատժի նշանակումը հավասարազոր է 3-րդ հոդվածի իմաստով նվաստացնող պատժի:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են նախագահ Բալլադորե Պալիերին և դատավորներ Կրեմոնան, Պեդերսենը, Վիլջաուլմսոնը, Թայթգենը և Մաթշերը:

Դատավոր Ֆիտցմորիսը առարկել է, քանի որ չի համարել, որ դատարանի՝ ֆիզիկական պատիժ նշանակումը նվաստացնող պատիժ է, երբ դա կիրառվում է անչափահասների նկատմամբ: Բացի այդ.

9. «Մյուս» հանգամանքների առնչությամբ (վճռի 33-րդ պարբ. և հաջորդները). ես նշել եմ հետևյալը.
(i) 33-րդ պարբերությունում խիստ շեշտադրվում է այն փաստը, որ «բռնությունը» «ինստիտուցիոնալ» է, այսինքն՝ «թույլատրված է օրենքով» և «իրականացվում է պետական մարմինների կողմից»: Ես անձամբ չեմ տեսնում, թե որքանով է տեղին այն չափանիշը, ըստ որի՝ պատիժը «նվաստացնող» է կամ նույնիսկ ավելի նվաստացնող, քանի որ «ինստիտուցիոնալ» է:

«Ինստիտուցիոնալ» լինելը կարգապահ հասարակությունում անբաժանելի է ցանկացած հանցավոր արարքի համար նախատեսված պատժից, քանի որ ոչ ինստիտուցիոնալ պատիժը, բացառությամբ նրանցից, որոնք հանդուրժելի են օրենքի տեսանկյունից, պետք է լինի անօրեն պատիժ: Ուստի ես չեմ ըմբռնում (և դա չի բացատրվում), թե ինչու է ինստիտուցիոնալ բռնությունը պարտադիր նվաստացնող, երբ ոչ ինստիտուցիոնալ բռնությունն այդպիսին չէ, կամ ինչու է այն ավելի նվաստացնող, քան վերջինս: Իրոք լրիվ պարզ չէ, թե ինստիտուցիոնալ բռնության որ ձևը, ըստ դատարանի, համեմատական կարգով նվաստացնող չի համարվի այդ պատիժը կրողի համար: Հնարավոր է, որ դատարանը նկատի է ունեցել (թեպետ դրա մասին չի նշվել), որ, օրինակ, ծնողի ծեծելը երեխային չի նվաստացնում վերջինիս, մինչդեռ «դատարանի» նշանակած ծեծը նվաստացնում է: Ես հավատ չեմ ընծայում այս նուրբ տարբերություններին: Իմ կարծիքով՝ երբ խոսքն անչափահասի մասին է, պատիժը (այնքանով, որքանով այն իրականացվել է առանց կողմնակի անձանց ներկայության) չի կարող համարվել իր բնույթով նվաստացնող պատիժ, եթե գոյություն չունենա ծեծին գերազանցող և ծեծից առավել այլ գործոններ: Պետությունը, որոշ իմաստով, in loco parentis [ծնողի փոխարեն] նման վիճակում է:

(ii) Հաջորդը (33-րդ պարբերության երրորդ բաժին)՝ ասվում է, որ ինստիտուցիոնալացման ենթադրյալ ազդեցությունն «ավելի է խորանում՝ պայմանավորված պատիժը կրելու պաշտոնական ընթացակարգի բուն էությամբ», սակայն ինչպե՞ս կարող է ընթացակարգը չլինել պաշտոնական, եթե ինստիտուցիոնալացում կա: Մեկն առաջացնում է մյուսը: Նաև, ասվում է, որ այդ ազդեցությունն ավելի է խորանում, քանի որ «պատիժն ի կատար ածողներն անծանոթ էին օրինազանցին»: Այս վերջին առարկության առումով, մի կողմ թողնելով այն հարցը, թե Մեն կղզում գտնվող Քասլթաունի փոքր համայնքում ոստիկանության աշխատակիցները որքանով էին «անծանոթ» տղային, ես անձամբ չեմ հասկանում, թե ինչպես կարող է անծանոթների ծեծելն ավելի նվաստացնող լինել, քան ծանոթներինը: Կարծում եմ, որ քչերը հակված կլինեն այդպես մտածելու:
...

11….Ֆիզիկական պատիժը ժամանակակիցների կարծիքով պատժի անցանկալի ձև է՝ անկախ օրինազանցի տարիքից: Սակայն այն փաստը, որ պատժի տվյալ ձևն անցանկալի պատիժ է, այն մեքենայորեն նվաստացնող չի դարձնում: Պատիժը կարող է նաև անցանկալի բնույթ ունենալ՝ միաձգամայն նվաստացնող չլինելով կամ լինելով ոչ ավելի նվաստացնող, քան ցանկացած այլ պատիժ: Մինչ այս պահը, ինչպիսին էլ որ եղել է ֆիզիկական պատժի նկատմամբ

վերաբերմունքը, համարվել է կանխարգելիչ, կոպտացնող թե բացասական հոգեբանական ազդեցություն ունեցող, անչափահաս և պատանի օրինազանցների նկատմամբ կիրառվելու դեպքում, ի տարբերություն այն դեպքերի, երբ կիրառվել է մեծահասակների նկատմամբ, ընդհանուր առմամբ, նույն ձևով նվաստացնող չի համարվել: Այս առնչությամբ կա երկու հանգամանք, որոնք երբեք չեն համարվել նույն կարգի կամ նույն հարթության վրա գտնվող: Այս վերջինն է, որ իրական խնդիր է, քանի որ, օգտագործելով դատարանի ընդունած չափանիշը և ընդունելով, որ ֆիզիկական պատիժը ներառում է որոշակի նվաստացում, երբեք չի համարվել, որ անչափահասի նկատմամբ կիրառվելու դեպքում այն որևէ կերպ կամ որևէ չափով մոտենում է մեծահասակների նկատմամբ կիրառված ֆիզիկական պատժին: Ուստի կոնվենցիայի սահմանումներով և դատարանի չափանիշներով այս պատիժը, երբ այն կիրառվում է անչափահասների նկատմամբ, երբեք չի հասնում նվաստացման այն մակարդակին, որի դեպքում այն կհամարվեր 3-րդ հոդվածի խախտում, իհարկե եթե չկան ծանրացուցիչ հանգամանքներ, որոնք շատ ավելին են, քան պատժի ֆիզիկական բնույթ ունենալու փաստը: Սա է պատճառը, որ ինձ համար հասկանալի կլիներ, եթե դատարանը մերկ հետույքին հասցվող հարվածներին նայեր որպես նվաստացման բավարար մակարդակ ունեցող երևույթի: Պարտադիր չէ, որ ես համաձայնեի այդ տեսակետին, սակայն դա կլիներ կուռ տեսակետ: Այնուամենայնիվ, դատարանը վճռել է, որ որոշիչը դա չէ: Պատիժն ամեն դեպքում համարվել է նվաստացնող: Արդյունքում ստացվում է, որ դատարանի նշանակած ցանկացած ֆիզիկական պատիժ անչափահասին նվաստացնող է և խախտում է 3-րդ հոդվածը: Այս տեսակետին ես չեմ կարող համաձայնել (իմ կարծիքով՝ սա չափից ավելի դոգմատիկ է և լայն): Այն, որ նման պատիժներն անցանկալի են և ավելի շուտ պետք է վերացվեն, ինչպես ասել եմ, միանգամայն այլ հարց է: Դրանք ipso facto նվաստացնող չեն անչափահաս օրինազանցների պարագայում:

12. Ես պետք է ընդունեմ, որ իմ տեսակետը կարող է ազդեցություն կրած լինել այն փաստից, որ ես ինքս մեծացել եմ և դաստիարակվել մի համակարգում, որտեղ դպրոցական տղաների ֆիզիկական պատիժը (երբեմն ավագ աշակերտների՝ պրեֆեկտների կամ տեսուչների և երբեմն տնօրենների կողմից) համարվում էր նորմալ սանկցիա վարքի լուրջ խախտումների և որոշ դեպքերում նույնիսկ նվազ լուրջ խախտումների համար: Ընդհանուր առմամբ, և կախված հանգամանքներից, հաճախ դա տղաների համար ավելի նախընտրելի պատիժ էր համարվում, քան ամռան երեկոներին պահվելը և 500 տող արտագրություն անելը և կամ Շեքսպիրի «Վիրգիլիոսն» անգիր սովորելը կամ էլ տոներին արձակուրդից զրկվելը: Ավելին, ծեծը տեղի էր ունենում առանց պրոն Թայրերի դեպքում առկա երաշխիքների: Ծնողներ, դայակներ կամ բժիշկներ նույնիսկ ներկա չեն եղել: Դրանք նույնիսկ հաճախ տեղի են ունեցել այնպիսի պայմաններում, որոնք շատ ավելի լուրջ ստորացում են առաջացրել, քան այս դեպքը: Այնուամենայնիվ, ես չեմ կարող հիշել, որ որևէ տղա իրեն նվաստացած կամ ստորացած զգար: Այդ միտքը կարող էր ծիծաղ հարուցել: Համակարգը նույնն էր բոլորի համար, մինչև որ նրանք կհասնեին ավագության որոշակի տարիքի: Եթե տղան դրանից հետո փոխվում էր և որոշում, որ էլ չի կրկնելու խախտումը, որի պատճառով քոթակվել էր, ապա դա տեղի էր ունենում միայն այն պատճառով, որ նա ցավ է զգացել, ոչ թե նսեմացվել կամ իր ընկերների կողմից ընկալվել որպես նսեմացված: Իրավամբ, երիտասարդ մարդու համառությունն այնպիսին է, որ այս առիթները հաճախ դիտվում էին որպես հպարտության և շնորհավորանքի առիթներ, որով և նմանվում էին հին գերմանական համալսարանների ուսանողներին, որոնք հպարտանում էին իրենց մենամարտերի սպիներով (թեպետ, ինչ խոսք, այլ տեսանկյունից դիտարկելու դեպքում դա բոլորովին այլ երևույթ էր):

13. Եզրափակելով կրկին շեշտում եմ, որ նպատակս չէ հաստատել, որ այն, ինչ նկարագրեցի, անպայման եղել է դրական երևույթ, թեպետ ունեցել է և այժմ էլ ունի բազմաթիվ սատարողներ: Ես չեմ քարոզում ֆիզիկական պատժի կիրառման օգտին: Ընդամենն ասում եմ, որ անչափահաս օրինազանցների դեպքում դա չի առաջացնում այնպիսի նվաստացման մակարդակ, որը պահանջվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով խախտում համարվելու համար, եթե ավանդաբար նշանակվում է որոշ տեսակի օրինախախտումների համար այն համայնքի օրենքի և հանրային կարծիքի հիման վրա, որին պատկանում է օրինազանցը, և կիրառվում է ճիշտ սահմանափակումների և երաշխիքների շրջանակներում կանոնավոր դատական որոշման արդյունքում: Որևէ անչափահաս չի «նվաստացվում» կամ չպետք է «նվաստացած» զգա իրեն այս հանգամանքներում...

Այս չհամընկնող կարծիքը նշանակալի է այն անկեղծության համար, որով սըր Ջերալդ Ֆիտցմորիսը ներկայացնում է իր դպրոցական տարիների դաստիարակության ազդեցությունը նվաստացնող պատժի սեփական ընկալումների վրա: Ֆիզիկական պատժի հետևանքների միանգամայն հակառակ (և ավելի ժամանակակից) մոտեցման համար բրիտանական մասնավոր դպրոցներում տե՛ս *Կոստելլո-Ռոբերտսը* (Costello-Roberts) ստորև՝ ծնթ. 3:

1993 թ. Մեն կղզու (Թինվալդ) խորհրդարանն ընդունել է նոր օրենք, որով վերացրել է դատական կարգով նշանակվող մարմնական պատիժը:

Թայրերի գործով դատարանի վճիռը նաև երկարաժամկետ նշանակություն ունի, քանի որ անցնում է 3-րդ հոդվածի սահմաններից՝ շրջանառելով կոնվենցիայով երաշխավորված իրավունքների մեկնաբանությանը և կիրառությանը վերաբերող «գործող փաստաթղթի» ուսմունքը: Այս էվոլյուցիոն մոտեցումը հնարավորություն է տալիս հաշվի առնելու սոցիալական և տնտեսական հարաբերություն-

ներում, մշակութային արժեքներում և պետական կառույցներում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, այսինքն՝ կոնվենցիան մշակելուց հետո արված փոփոխությունները:

Վերլուծելով այս սկզբունքը՝ նկատել եմ, որ այն օգտագործվել է դատարանի կողմից

... ստեղծագործաբար՝ կոնվենցիայի մի շարք հոդվածների մեկնաբանությունը տարբեր իրավիճակներում թարմացնելու համար: Այս վճիռները, ի թիվս այլոց, արգելել են դատարանի կողմից ֆիզիկական պատժի նշանակումը *(«Թայրերն ընդդեմ ՄԹ-ի», Tyrer v UK)*, սահմանափակել պետական նախարարի դերը դատապարտյալին բանտից ազատ արձակելու որոշման ընդունման գործում (*«Ստեֆորդն ընդդեմ ՄԹ-ի»*, (*Stafford v UK*)), ներդրում ունեցել Եվրամիությունում «ժողովրդավարության դեֆիցիտի» նվազեցման մեջ (*«Մեթյուսն ընդդեմ ՄԹ-ի», (Matthews v UK)*), ճանաչել արհմիությանը/գործատուների ընկերակցությանը չպատկանելու իրավունքը (*«Սիգուրյոնսոնն ընդդեմ Իսլանդիայի», (Sigurjonsson v Iceland)*) և պահանջել իրավաբանորեն ճանաչել տրանսսեքսուալ անձանց հետվիրահատական ինքնությունը (*«Քրիսթին Գուդվինն ընդդեմ ՄԹ-ի»* (*Christine Goodwin v UK*)): Կիրառելով այս սկզբունքը՝ դատարանն ուշադրություն է դարձրել լայն տիրույթի գործոնների վրա, որպեսզի որոշի, թե ինչ են անհրաժեշտաբար պահանջում ժամանակակից պայմանները: Անդամ պետությունների ընդհանուր մոտեցումը կիրառվել է, օրինակ, *«Թայրերն ընդդեմ ՄԹ-ի»* և «Փրեթթին ընդդեմ ՄԹ-ի» գործերում, մինչդեռ համանման զարգացումները մի շարք ոչ անդամ պետություններում հիշատակվել են *Քրիստին Գուդվինի* (*Christine Goodwin*) գործում: Այլ միջազգային կառույցների որոշումներին հղում է արվել պաշտպանելու համար դատարանի՝ 11-րդ հոդվածի մեկնաբանությունը *Սիգուրյոնսոնի (Sigurjonsson)* գործի վերաբերյալ: (The Creativity of the European Court of Human Rights (2005) 5:1 *Human Rights Law Review* 57, էջ 69):

2 Պետական ֆինանսավորում ունեցող դպրոցներում ֆիզիկական պատժի կիրառումը բողոքարկել են երկու շոտլանդացի մայրեր *«Քեմփբելը և Քոզանսն ընդդեմ ՄԹ-ի» (Campbell and Cosans v UK)* գործում (A.48 (1982) 4 EHRR 293): Տիկին Քեմփբելի որդին, որը հանձնաժողով բողոք ներկայացնելու ժամանակ ընդամենը վեց տարեկան էր, հաճախել է կաթոլիկ տարրական դպրոց Սթրաթքլայդի շրջանի կրթության բաժնի տարածքում: Որպես կարգապահական սանկցիա՝ դպրոցում ընդունված է եղել աշակերտների նկատմամբ կիրառել ֆիզիկական պատիժ. կաշվե երկծայր գոտիով, որ անվանում են «թոզ» (tawse), հարվածել են աշակերտների ձեռքերի ափերին: Դպրոց հաճախելու ընթացքում տիկին Քեմփբելի որդին երբևէ այդպիսի պատժի չի ենթարկվել, սակայն կրթության բաժինը երաշխիքներ չի տվել, որ այս պատիժը երբեք նրա նկատմամբ չի կիրառվի: Տիկին Քոզանսի որդին՝ Ձեֆրին, ծնվել է 1961 թ. և միջնակարգ դպրոց հաճախել Ֆայֆ շրջանի կրթական բաժնի տարածքում: 1976 թ. սեպտեմբերին Ձեֆրիից պահանջել են ներկայանալ դպրոցի տնօրենի օգնականին՝ «թոզով» ֆիզիկական պատիժ ստանալու համար, քանի որ նա փորձել էր դպրոցից տուն գնալ արգելված ճանապարհով՝ գերեզմանոցի միջով: Իր հոր խորհրդով՝ Ձեֆրին ներկայացել է տնօրենի տեղակալին, սակայն մերժել է պատիժը կրելը: Ձեֆրիին անմիջապես հեռացրել են դպրոցից, և նա այլևս չի վերադարձել, քանի դեռ նրա ծնողները պայքարում էին նրա նկատմամբ ֆիզիկական պատժի կիրառման երևույթի դեմ (1977 թ. մայիսին նա արդեն դուրս էր եկել պարտադիր դպրոցահասակության տարիքից): Երկու մայրերն էլ բողոքել են հանձնաժողովին՝ հայտնելով, որ իրենց տղաների հաճախած դպրոցներում ֆիզիկական պատժի կիրառումը 3-րդ հոդվածի խախտում է: Դատարանը միաձայն որոշել է, որ դիմողների գործերի փաստերի հիման վրա այդ դրույթի խախտում տեղի չի ունեցել:

25. Ե՛վ Գորդոն Քեմփբելը, և՛ Ջեֆրի Քոզանսն իրականում «թոզով» չեն գանահարվել: Հետևաբար, դատարանը չպետք է այս գործը դիտարկի որպես 3-րդ հոդվածի շրջանակներում ֆիզիկական պատժի կիրառման դեպք:

26. Այնուամենայնիվ, դատարանն այն կարծիքին է, որ 3-րդ հոդվածով արգելված վարքագիծ դրսևորելու բավարար և անմիջական սպառնալիքն արդեն իսկ կարող է հակասել այդ դրույթին: Այսպիսով, անձին խոշտանգմամբ սպառնալը որոշ հանգամանքներում կարող է առնվազն «անմարդկային վերաբերմունք» համարվել:

27. Թեպետ ֆիզիկական պատժի համակարգը կարող է որոշ վախի զգացում առաջացնել այն անձանց մեջ, որոնք կարող են ենթակա լինել դրան, դատարանը, այնուամենայնիվ, համամիտ է հանձնաժողովի հետ, որ դիմողների որդիների դրությունը 3-րդ հոդվածի իմաստով հավասար չէ «խոշտանգման» կամ «անմարդկային վերաբերմունքի»: Որևէ փաստ չկա, որ նրանք ենթարկվել են այն աստիճանի լուրջ տառապանքի, որը համապատասխանում է դատարանի 1978 թ. հունվարի 18-ի վճռում (*«Իռլանդիան ընդդեմ ՄԹ-ի» (Ireland v UK)*, շարք A, թիվ 25, էջ 66–67 և 68, պարբ. 167 և 174) արված այդ հասկացության մեկնաբանությանը և կիրառությանը:

28. *Թայրերի (Tyrer)* գործով 1978 թ. ապրիլի 25-ի դատարանի վճիռը չի սահմանում «նվաստացնող պատժին» վերաբերող որոշակի չափանիշներ (շարք A, թիվ 26, էջ 15, պարբ. 30): Սույն գործում, փաստորեն, «պատիժ» չի էլ կիրառվել: Այնուամենայնիվ, այդ վճռից բխում է, որ «վերաբերմունքն» ինքնին չի կարող լինել «նվաստացնող», եթե անձը, որին դա վերաբերում է, չի ենթարկվել ուրիշների և իր աչքում (նույն տեղում, էջ 16, պարբ. 32) բավարար աստիճանի ստորացման կամ նվաստացման: Այդ աստիճանը պետք է գնահատվի՝ հաշվի առնելով գործի հանգամանքները (տե՛ս վերը՝ *«Իռլանդիան ընդդեմ ՄԹ-ի» (Ireland v UK)* վճիռը, էջ 65, պարբ. 162, էջ 66, պարբ. 167 և էջ 69–70, պարբ. 179–181):

29. Կարգապահական բնույթի ֆիզիկական պատիժն ավանդական բնույթ ունի շոտլանդական դպրոցներում և, իրավամբ, կարծես խրախուսվում է ծնողների մեծ մասի կողմից... Բայց միայն այն պատճառով, որ այդ միջոցը երկար ժամանակ եղել է գործածության մեջ կամ նույնիսկ, ընդհանուր առմամբ, խրախուսվել, դեռևս չի նշանակում, որ դատարանին ներկայացված որոշակի միջոցառման սպառնալիքն արդեն բացառվում է 3-րդ հոդվածի իմաստով «նվաստացնող» համարվելուց (տե՛ս mutatis mutandis, վերը նշված *Թայրերի* գործով վճիռը, էջ 15, պարբ. 31):

Այնուամենայնիվ, հաշվի առնելով հատկապես Շոտլանդիայում առկա հանգամանքները, հիմնավորված չէ, որ այսպիսի պատիժ կիրառող դպրոցների աշակերտները համապատասխան չափով ստորացված կամ նվաստացած են մյուսների աչքում կամ առհասարակ ստորացված կամ նվաստացած են:

30. Արդյոք դիմողների տղաները ստորացված կամ նվաստացա՞ծ էին իրենց աչքում: Այս կապակցությամբ դատարանն առաջին հերթին նկատում է, որ անզգայուն անձին ուղղված սպառնալիքը կարող է ազդեցություն չունենալ նրա վրա, սակայն անվիճելիորեն նվաստացնող լինել, և հակառակը. չափից ավելի զգայուն մարդու վրա սպառնալիքը կարող է լուրջ ազդեցություն թողնել այն դեպքում, երբ այն նվաստացնող կարող է համարվել միայն այդ բառի իմաստի աղավաղման առումով: Ամեն դեպքում, այս երկու երեխաների կապակցությամբ դատարանը, ինչպես նաև հանձնաժողովը, նկատում են, որ բժշկական տեղեկանքներով կամ որևէ այլ կերպ չի հիմնավորվել, որ նրանք կրել են բացասական հոգեբանական կամ այլ ազդեցություն...

Ջեֆրի Քոզանսը կարող էր վախի և անհանգստության զգացում ունենալ, երբ մոտենում էր «թոզով» նրան պատժելու ժամանակը, ... սակայն այդ զգացումները բավարար չեն, որպեսզի 3-րդ հոդվածի իմաստով նվաստացնող վերաբերմունք համարվեն:

Նույնը, *a fortiori*, վերաբերում է Գորդոն Քեմփբելին, քանի որ նրան ուղղակիորեն չեն սպառնացել ֆիզիկական պատժով... Ճիշտ է, նրա մոր փաստաբանը դատական նիստերի ժամանակ հայտարարել է, որ խմբային լարվածությունը և աշակերտի մեջ օտարության զգացումը պայմանավորված են միայն այդ գործելակերպի գոյությամբ, սակայն եթե անգամ այդպես է, այդ ազդեցությունը վերագրվում է ստորացման և արժանապատվության նսեմացման բոլորովին այլ կատեգորիայի:

31. Ամփոփելով՝ 3-րդ հոդվածի խախտումը չի ապացուցվել...

Ուստի այն փաստը, որ դիմողների տղաներից ոչ ոք փաստացի ֆիզիկական պատիժ չի ստացել, որոշիչ դեր է խաղացել դատարանի համար, երբ որոշել է, որ 3-րդ հոդվածի նվազագույն շեմն այս հանգամանքներում չի խախտվել (դիմողի՝ թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածին արած տեղին հղումը քննարկված է ստորև՝ 1015-րդ էջում):

Այնուհետև, ծնողների և նրանց երեխաների մի շարք այլ բողոքներ են ներկայացվել հանձնաժողովին, որոնք վերաբերել են պետական ֆինանսավորում ունեցող դպրոցներում ֆիզիկական պատժի կիրառմանը: Այն գործերը, որոնք ընդունելի են համարվել, կարգավորվել են բարեկամական կարգավորման ճանապարհով: Բարեկամական կարգավորման խոշոր բաղադրիչներից մեկը 1986 թ. «Կրթության մասին» (թիվ 2) օրենքն էր, որով վերջ է տրվել պետական ֆինանսավորում ունեցող դպրոցներում ֆիզիկական պատժի կիրառմանը, և վերացվել է այդպիսի դպրոցներում ուսուցիչների կողմից ֆիզիկական պատժի կիրառման դեմ ուղղված քրեական կամ քաղաքացիական վարույթների ժամանակ ողջամիտ պատժի պաշտպանության հնարավորությունը (reasonable punishment defence): Տե՛ս, օրինակ՝ *«Դուրայրաջը, Թաունենդը և Բրանտն ընդդեմ ՄԹ-ի» (Durairaj, Townend and Brant v UK*, 1987), (European Commission of Human Rights, Stock-taking on the ECHR: Supplement) 1987 թ., էջ 26:

3 Ոչ պետական վճարովի դպրոցներում ֆիզիկական պատժի կիրառումը դատարանը քննարկել է *«Կոստելլո-Ռոբերտսն ընդդեմ ՄԹ-ի»* ((*Costello-Roberts v UK*), A.247-C (1993) 19 EHRR 112) գործով: 1985 թ. սեպտեմբերին տկն Կոստելլո-Ռոբերտսն իր տղային՝ յոթամյա Ջերեմիին, ուղարկել է անկախ

գիշերօթիկ նախապատրաստական դպրոց (դպրոցը կախում չի ունեցել պետական ֆինանսավորումից): Դպրոցի մասին ուղեցույցում նշված է եղել, որ այնտեղ հետևում են խիստ կարգապահության պահպանմանը, սակայն ոչինչ ասված չի եղել ֆիզիկական պատժի կիրառման մասին: Իրականում դպրոցում գործել է վարքի գնահատականների վրա հիմնված համակարգ. ամեն անգամ, երբ աշակերտը խախտել է դպրոցի կարգուկանոնը, նրա վարքը գնահատվել է անբավարար: Վարքից հինգ անբավարար գնահատական ունենալու դեպքում աշակերտին ենթարկում էին ֆիզիկական պատժի: 1985 թ. հոկտեմբերի սկզբին Ձերեմիի ստացած անբավարար գնահատականների թիվը հասել է հինգի, որոնք նա ստացել է միջանցքում կանգնած խոսելու և ուշ քնելու համար: Դպրոցի տնօրենը հարցը քննարկել է իր գործընկերների հետ և որոշել պատժել Ձերեմիին: Երեք օր անց դպրոցի տնօրենը ռետինե ներբան ունեցող մարզական կոշիկով երեք անգամ «շրմփացրել» է Ձերեմիի հետույքին նրա կարճ տաբատի վրայից: Նրան պատժելու ժամանակ որևէ այլ անձ ներկա չի եղել: Դրանից հետո Ձերեմին նամակ է գրել մորը՝ մի քանի անգամ բողոքելով «կոշիկով» ծեծից: Նոյեմբերի սկզբին տիկին Կոստելլո-Ռոբերտսը նամակ է գրել դպրոցի հոգաբարձուներին՝ արտահայտելով իր «խոր մտահոգությունը» նման «բարբարոսական գործելակերպի» կապակցությամբ: Նա նաև տեղեկացրել է տնօրենին, որ չի ցանկանում՝ իր որդուն այդուհետև ենթարկեն ֆիզիկական պատժի: Նրան պատասխանել են, որ եթե ցանկանում է՝ մյուս ծնողների համար ընդունելի «կարգապահության և պատժի այդ կարգը» չազդի Ձերեմիի վրա, ապա ճիշտ կլինի, որ կիսամյակի ավարտից հետո Ձերեմին այլևս չհաճախի այդ դպրոց: Ձերեմիին պատժի ենթարկելու մասին տկն Կոստելլո-Ռոբերտսը բողոքել է նաև ոստիկանությանը, սակայն նրան ասել են, որ որևէ գործողություն չեն կարող ձեռնարկել, քանի որ հետույքի վրա կապտուկների հետքեր չկան: 1985 թ. նոյեմբերին Ձերեմիի մայրը նրան հանել է դպրոցից: Տիկին Կոստելլո-Ռոբերտսը և Ձերեմին բողոքել են հանձնաժողովին՝ ասելով, որ, ի թիվս այլոց, տնօրենի պատիժը եղել է 3-րդ հոդվածի խախտում: Հանձնաժողովը հայտարարել է, որ տիկին Կոստելլո-Ռոբերտսի դիմումն անընդունելի է, Ձերեմին չի ենթարկվել 3-րդ հոդվածի խախտման (ինը կողմ, չորս դեմ ձայներով): Դատարանը վճռել է, որ կառավարությունը կոնվենցիայի շրջանակներում պատասխանատվություն է կրում դպրոցի գործողությունների համար, քանի որ, ի թիվս այլոց, պետությունները պարտավոր են (թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածով) երաշխավորել երեխաների կրթության իրավունքը և չեն կարող իրենք իրենց ազատել պատասխանատվությունից՝ փոխանցելով այն մասնավոր անձանց կամ մարմինների: Այնուամենայնիվ, հինգ դատավոր, որոնք մեծամասնություն են կազմել, որոշել են, որ 3-րդ հոդվածի խախտում չի եղել:

31. Դիմողի պատժի հանգամանքները կարելի է տարբերել պրն Թայրերի պատժի հանգամանքներից, որոնք համարվել են նվաստացնող՝ 3-րդ հոդվածի իմաստով: Պրն Կոստելլո-Ռոբերտսը փոքրիկ տղա էր և պատժի էր ենթարկվել իր հաճախած դպրոցում գործող կարգապահական կանոնների հիման վրա: Դա եղել է մեկուսի սենյակում դպրոցի տնօրենի կողմից ռետինե ներբան ունեցող կոշիկով նրա հետույքին տաբատի վրայից երեք աքացի... Պրն Թայրերը, սակայն, պատանի էր, որին տեղական անչափահասների դատարանը դատապարտել էր մերկ հետույքին մտրակի երեք հարված հասցնելու պատժի: Նրա պատիժն իրականացվել է մոտ երեք շաբաթ անց, ոստիկանության բաժնում, որտեղ նրան բռնել են երկու ոստիկաններ, իսկ երրորդ ոստիկանը ճիպոտով հարվածներ էր հասցրել նրան: Ընդ որում, ճիպոտը կոտրվել է հենց առաջին հարվածից հետո:

32. Բացի այս զուտ կարգապահական միջոցների սպասելի հետևանքներից, դիմողը որևէ այլ փաստ չի ներկայացրել, որ այդ վերաբերմունքը նրա վրա տևական և դաժան ազդեցություն է թողել: Պատիժը, որը նման ազդեցություններ չունի, կարող է մտնել 3-րդ հոդվածի շրջանակների մեջ (տե՛ս *Թայրերի (Tyrer)* վճիռը, շարք A, թիվ 26, էջ 16–17, պարբ. 33), եթե այդ գործի առանձնահատուկ հանգամանքներից ելնելով՝ կարելի է ասել, որ այն հասել է սաստկության նվազագույն մակարդակին: Թեև դատարանը որոշակի վերապահումներ ունի պատժի մեխանիկական բնույթի և եռօրյա ընդմիջումից հետո իրականացվելու վերաբերյալ, կարծում է, որ այս դեպքում սաստկության նվազագույն մակարդակը չի եղել:

Հետևաբար, 3-րդ հոդվածի խախտումը չի ապացուցվել:

Թայրերի և սույն գործի համատեքստի ու բնույթի վերաբերյալ դատարանի մտցրած տարբերակումը համոզի՞չ է, թե՞ ոչ: Չորս դատավոր չի համաձայնել այս տեսակետին:

Այնուամենայնիվ, սույն գործում ֆիզիկական պատժի կատարման արարողակարգային բնույթը ցնցող է: Եռօրյա ընդմիջումից հետո դպրոցի տնօրենը «շրմփացրել» է միայնակ և անպաշտպան յոթամյա տղային: Դնգստոցը այդ ժամանակ դեռևս կարող էր ընդունելի լինել, սակայն, իմ կարծիքով, հասցված պատժի պաշտոնական և կարգավորված բնույթը, այն էլ, առանց մոր համաձայնության, նվաստացուցիչ է եղել դիմողի համար և խախտել 3-րդ հոդվածի պահանջը:

«Դպրոցական չափորոշիչների և կանոնակարգերի մասին» 1998 թ. օրենքով ֆիզիկական պատիժը բոլոր դպրոցներում վերացվել է:

4 Յուտակա Արայ-Տակահաշին մեկնաբանել է, որ.

Նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը, որը ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի բացարձակ իրավունքի բռնության սանդղակում սահմանված է որպես «ամենաթույլ» բռնության ձև, գործնական առավելություններ շղթա է ստեղծում Ստրասբուրգի մարմինների որոշումների կայացման քաղաքականության համար: Նախ՝ թույլ ուժգնության պահանջի պատճառով նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը հնարավորություն են տալիս դատարանին տարբեր դաշտերում կարգավորելու տարբեր խնդիրներ, որոնց մի մասը կարող է երբեք դատափետման արժանի այն հատկանիշները չունենալ, որոնք ունեն խոշտանգման երևույթները: Երկրորդ՝ քանի որ ուժգնության նվազագույն շեմի հաստատումը հարաբերական գործընթաց է և կարող է ներառել մարդու իրավունքների եվրոպական չափանիշների ընդհանուր ընկալումները, նվաստացնող վերաբերմունքի համեմատական չափանիշը (benchmark) կարող է հարմարեցվել և ընդգրկել մի շարք պահանջներ, այդ թվում նաև այնպիսիք, որոնք նախկինում սկզբնական վերանայման փուլում հայտարարվել են անընդունելի ratione materiae [իրավախախտման օբյեկտի գործոն]... Երրորդ՝ լայն անդրադարձը նվաստացնող վերաբերմունք կատեգորիայի տակ ընկնող հարցերին կարող է իրականացվել՝ առանց խաթարելու 3-րդ հոդվածի շեղումների ենթակա չլինելու բնույթը: (Grading Scale of Degradation: Identifying the Threshold of Degrading Treatment or Punishment Under Article 3 ECHR, (2003) 21 (3) *Netherlands Quarterly of Human Rights* 385, էջ 420–1):

6 ՀՈԴՎԱԾ 4 ՍՏՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԳԵԼՔ

.....

«Վան դեր Մեսելն ընդդեմ Բելգիայի»
***(Van der Mussele v Belgium A.70** (1983) 6 EHRR 163)*
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Փաստաբանական գործունեությունը Բելգիայում կարգավորվում է իշխանության գործադիր ճյուղից անկախ, հանրային իրավաբանական կազմակերպության՝ փաստաբանների կոլեգիայի (Ordre des avocats-ի) կողմից: Կոլեգիան որոշում է կայացնում բավարար որակավորում ունեցող մասնագետներին որպես փաստաբան գրանցելու վերաբերյալ: Փաստաբանները, ներառյալ ստաժոր-փաստաբանները, դատարաններում ներկա գտնվելու բացառիկ իրավունք ունեն: Նկարագրվող դեպքերի ժամանակ Բելգիայի դատավարական օրենսգիրքը պարտավորեցրել էր կոլեգիային հիմնել իրավաբանական խորհրդատվության և պաշտպանության գրասենյակ, որը պետք է ծառայեր աղքատ մարդկանց օժանդակություն տրամադրելու նպատակին: Քրեական վարույթների դեպքում դատական նիստերից առնվազն երեք օր առաջ գրասենյակը պետք է պաշտոնական (pro Deo) փաստաբան նշանակեր բոլոր չունևոր և փաստաբանի պահանջ ներկայացրած ամբաստանյալներին: Որպես կանոն՝ գրասենյակը նշանակում էր ստաժոր-փաստաբաններին, որոնք եռամյա գործնական ուսումնառության ընթացքում իրենց աշխատանքային ժամանակի մեկ քառորդը տրամադրում էին այս գործերի վարույթին: Աղքատ անձանց համար նշանակված դատապաշտպանների գործունեությունը և դրանց հետ կապված ծախսերը փոխհատուցման ենթակա չէին: Եթե ստաժոր-փաստաբանը չէր մասնակցում բավարար թվով գործերի, որոնցում նա հանդես էր գալիս որպես ամբաստանյալների պաշտոնապես նշանակված դատապաշտպան, ապա կոլեգիան մերժում էր նրա՝ որպես համապատասխան որակավորում ունեցող փաստաբանի գրանցումը:

Դիմողը ձևակերպվել է որպես ստաժոր-փաստաբան 1976 թ. սեպտեմբեր ամսին: 1979 թ. հուլիսին Անտվերպենի փաստաբանների միության րավական խորհրդատվության և պաշտպանության գրասենյակը նրան նշանակել է Գամբիայի քաղաքացի էբրիմայի պաշտպան: Վերջինս ձերբակալվել էր գողության կասկածանքով: Դիմողը ներկայացրել է էբրիմայի շահերը նրա դատավարության և դատավճռի բողոքարկման փուլերում: Դիմողի կողմից էբրիմայի շահերը ներկայացնելուց հետո վերջինս 1979 թ. դեկտեմբերին ազատ է արձակվել բանտից, որից հետո գրասենյակն ազատել է դիմողին այդ գործի հետ կապված հետագա պարտականություններից: Դիմողը մոտ տասնութ ժամ ծախսել է էբրիմայի գործի վրա, սակայն, թեպետ էբրիման եղել է անվճարունակ, գրասենյակը պաշտպանի հոնորար կամ ծախսերի փոխհատուցում չի նախատեսել: Ըստ դիմողի հաշվարկների՝ եղել են հետևյալ ծախսերը. գործի նյութերի պատրաստման՝ 250 բելգիական ֆրանկ, նամակագրության՝ 1800 բելգիական ֆրանկ, բանտից դատարան և դատարանից բանտ գնալու՝ 1300 բելգիական ֆրանկ և դատական ծախսեր՝ 50 բելգիական ֆրանկ: 1979 թ. հոկտեմբերին կոլեգիան դիմողին գրանցել է որպես համապատասխան որակավորում ունեցող փաստաբան: Իր եռամյա ստաժորության տարիների ընթացքում վերջինս վարել է 250 գործ, որոնցից 50-ի դեպքում նա աշխատել է որպես պաշտոնապես նշանակված փաստաբան:

1980 թ. ընդունված օրենքի համաձայն՝ կառավարությունը պետք է վճարեր ստաժոր-փաստաբաններին բոլոր այն գործերի համար, որոնք նրանք վարել են որպես Իրավական խորհրդատվության և

պաշտպանության գրասենյակի կողմից նշանակված պաշտոնական դատապաշտպաններ: Այնուամենայնիվ, բյուջետային խնդիրների պատճառով դատարանի կողմից որոշման կայացման պահին օրենքը դեռևս չէր կիրառվում:

Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ գրասենյակի կողմից իրեն էբրիմայի շահերի ներկայացուցիչ նշանակելը, սակայն կատարված աշխատանքի համար վարձահատույց չլինելը և իր կարիերայի նկատմամբ սանկցիաներ կիրառելը, եթե ինքը հրաժարվեր գործը վերցնելուց, հավասար է եղել հարկադիր կամ պարտադիր աշխատանքի՝ հակասելով 4-րդ հոդվածի պահանջին:

II. ԲԵԼԳԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

28. Հանձնաժողովին և դատարանին ներկայացրած իր բացատրություններում կառավարությունը հայտնել է, որ չկան այնպիսի հիմնական օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, որոնց հիման վրա փաստաբանները պարտավոր են ընդունել Իրավաբանական խորհրդատվության և պաշտպանության գրասենյակի կողմից իրենց հանձնարարված աշխատանքները: Նրա կարծիքով՝ աղքատ անձանց ծառայություններ մատուցելու նրանց պարտականությունը բխել է Ordres des avocats-ի (փաստաբանների կոլեգիայի) ընդունած մասնագիտական գործունեության կանոններից: Ըստ կառավարության՝ Բելգիա պետությունը չի սահմանել, թե ինչպես պետք է [պաշտպանի] նշանակումներն արվեին, կամ որոնք պետք է լինեին դրանց հետևանքները: Ուստի պատասխանատվություն չի կրում կոնվենցիայի մասնագիտական կանոնների իրականացման հետևանքով առաջացած խախտումների համար:

29. Այս փաստարկը, որին դատարանի նիստերի ընթացքում կառավարության խորհրդատուն կրկին անդրադարձ չի արել, չի ընդունվել ո՛չ դիմողի, ո՛չ էլ հանձնաժողովի կողմից: Ոչ էլ այն համոզիչ է դատարանի համար:

Քրեական գործերի կապակցությամբ կոնվենցիայի շրջանակներում անվճար իրավաբանական օժանդակություն տրամադրելու պարտավորություն առաջանում է 6(3)(գ) հոդվածի սահմաններում: Քաղաքացիական գործերի դեպքում այն երբեմն 6(1) հոդվածով երաշխավորված արդար դատաքննության ապահովման միջոցներից մեկն է (տե՛ս 1979 թ. հոկտեմբերի 9-ի *Էյրփի* (Airey) վճիռը, շարք A, թիվ 32, էջ 14-16, պարբ. 26): Այս պարտավորությունը պարտադիր է պայմանագրի կողմ հանդիսացող բոլոր պետությունների համար: Բելգիա պետությունն օրենքով այս պարտավորությունը դնում է Ordres des avocats-ի վրա՝ ապահովելով գործերի կարգավորման երկարաժամկետ կայուն մակարդակ, ինչը չի էլ վիճարկվում կառավարության կողմից: Համաձայն դատական օրենսգրքի 455-րդ հոդվածի 1-ին կետի՝ Ordres-ի խորհուրդները պետք է ապահովեն աղքատ անձանց օժանդակության տրամադրումը իրավաբանական խորհրդատվության և պաշտպանության գրասենյակներ ստեղծելով... Ինչպես նշել է դիմողը, խորհուրդները «սկզբունքի առնչությամբ հայեցողություններ չունեն», և «պետք է պարտավորեցնել» փաստաբանների միության անդամներին օրենսդրության հիման վրա «պաշտպանել աղքատ մարդկանց շահերը»: Նման լուծումը չի կարող ազատել Բելգիա պետությանն իր պատասխանատվությունից, որոնք կառաջանային կոնվենցիայի շրջանակներում, եթե պետությունը որոշած լիներ կառավարել այս համակարգը:

Բացի այդ, նիստերի ժամանակ կառավարությունն ընդունել է, որ ստաժոր-փաստաբանների «Իրավաբանական խորհրդատվության և պաշտպանության գրասենյակի կողմից նշանակված գործերում որպես դատապաշտպան հանդես գալու պարտավորությունն» առաջացել է դատական օրենսգրքի 455-րդ հոդվածից: Իրենց բացատրությունների 21-րդ պարբերությունում նրանք արդեն ընդունել են, որ Բելգիայի օրենքը, որը ստաժոր-փաստաբանների վոխհատուցման վերաբերյալ դրույթ չի պարունակում, առնվազն անուղղակիորեն ընդունում է, որ վերջիններս իրենք պետք է կատարեն այդ գործերի հետ կապված ծախսերը:

Բացի այդ, Բելգիայի փաստաբանական միությունները, որոնք արդարադատության իրականացման հետ կապ ունեցող մարմիններ են, ենթակա են օրենքի պահանջներին՝ առանց համայնքին իրենց կարևոր ծառայությունը մատուցելու համար անհրաժեշտ անկախության սկզբունքի խախտման: Համապատասխան օրենսդրությունն ամրագրում է նրանց նպատակները և ստեղծում նրանց ինստիտուցիոնալ մարմինները: Հանրային իրավունքի շրջանակներում այն իրավական անձի կարգավիճակ է շնորհում քսանյոթ տեղական կոլեգիաներին և ազգային կոլեգիայի գլխավոր խորհրդին...

30. Այսպիսով, սույն գործի առնչությամբ Բելգիայի պետության պատասխանատվությունն այն է, որ պետք էր հավաստիանալ՝ արդյոք պետությունը պահպանե՞լ է պրն Վան դեր Մեսելի կողմից վկայակոչված կոնվենցիայի և թիվ 1 արձանագրության 4-րդ հոդվածի պահանջները:

III. 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԵՐՑՐԱԾ

31. Դիմողը հայտնել է, որ ինքը պետք է աներ հարկադիր կամ պարտադիր աշխատանք, որը համատեղելի չէ կոնվենցիայի 4-րդ հոդվածի հետ...

Հանձնաժողովի չորս անդամ որոշել է, որ դա իրոք այդպես է, սակայն նրանց տասը գործընկերներ հանգել են հակառակ եզրակացության: Կառավարության հիմնական առարկությունն այն էր, որ այս աշխատանքը «հարկադիր կամ պարտադիր» չի եղել, այլ եղել է դիմողի «սովորական քաղաքացիական պարտականությունը»:

32. 4-րդ հոդվածը «հարկադիր կամ պարտադիր» աշխատանքի սահմանումը չի տալիս: Միևնույն ժամանակ, Եվրոպական կոնվենցիայի նախապատրաստական աշխատանքներին վերաբերող Եվրոպայի խորհրդի տարբեր փաստաթղթերը որևէ ուղղություն այս կետի վերաբերյալ ցույց չեն տալիս:

Ինչպես նշել են հանձնաժողովը և կառավարությունը, ակնհայտ է, որ Եվրոպական կոնվենցիայի հեղինակները, հետևելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 8-րդ հոդվածի հեղինակներին, մեծապես հիմնվել են Աշխատանքի միջազգային կազմակերպության ավելի վաղ ընդունած համաձայնագրի՝ Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին թիվ 29 կոնվենցիայի վրա:

Այս վերջին կոնվենցիայի շրջանակներում, որն ընդունվել է 1930 թ. հունիսի 28-ին և ուժի մեջ մտել 1932 թ. մայիսի 1-ին, և որի եզրափակիչ դրույթները փոփոխվել են 1946 թ., պետությունները պարտավորվել են ամենակարճ ժամանակահատվածում» «զսպել հարկադիր կամ պարտադիր աշխատանքի օգտագործումը» իր բոլոր դրսևորումներով (հոդված 1, կետ 1): Թեև նպատակը եղել է «լիովին վերացնել» այսպիսի աշխատանքը, պետություններին թույլ է տրվել անցումային ժամանակահատվածում, որպես բացառիկ միջոց, դիմել այդ աշխատանքի օգտագործմանը, սակայն «միայն հանրային նպատակների համար և ելնելով 4-րդ և հաջորդ հոդվածներում ամրագրված պայմաններից և երաշխիքներից» (հոդված 1, կետ 2): Կոնվենցիայի սկզբնական նպատակն էր վերջ դնել այդ ժամանակ դեռևս բազմաթիվ գաղութներում գոյություն ունեցող աշխատանքի շահագործմանը: 1957 թ. հունիսի 25-ի թիվ 105 կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 1959 թ. հունվարի 17-ին, լրացրել է թիվ 29 կոնվենցիան՝ ամրագրելով, որ նշված առանձնահատուկ դեպքերում «հարկ է անհապաղ և լիովին վերջ տալ հարկադիր կամ պարտադիր աշխատանքին»:

Համաձայն 4-րդ հոդվածի 3-րդ կետի՝ Եվրոպական կոնվենցիան իր հերթին ընդհանրական և բացարձակ արգելք է դնում հարկադիր կամ պարտադիր աշխատանքի վրա:

Դատարանը, այնուամենայնիվ, հաշվի է առնելու ԱՄԿ-ի վերոհիշյալ կոնվենցիաները, հատկապես թիվ 29 կոնվենցիան, որոնք ենթակա են պարտադիր կատարման Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններում, այդ թվում՝ Բելգիայում: Իրականում, Եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի և թիվ 29 կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետի միջև ակնհայտ և ամենևին ոչ պատահական նմանություն կա: Վերջինիս 1-ին պարբերությունում նշվում է, որ տվյալ կոնվենցիայի «նպատակների համար» «հարկադիր կամ պարտադիր աշխատանք» հասկացությունը նշանակելու է «ամբողջ աշխատանքը կամ ծառայությունը, որի համար այդ անձը կամավոր չի առաջարկել իրեն, և որը նա պետք է կատարի պատժի սպառնալիքի տակ»: Եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդվածի մեկնաբանության համար այս սահմանումը կարող է ելակետ լինել: Այնուամենայնիվ, չպետք է անտեսել կոնվենցիայի առանձնահատկությունները կամ այն փաստը, որ այն գործում փաստաթուղթ է, որը պետք է ընթերցվի «ներկայումս ժողովրդավարական պետություններում գերակշռող ըմբռնումներին համահունչ» (տե՛ս, ի թիվս այլոց, *Գուցարդիի* (Guzzardi) գործով 1980 թ. նոյեմբերի 6-ի վճիռը, շարք A, թիվ 39, էջ 34, պարբ. 95):

33. Դատարան ներկայացած կողմերի համար ընդհանուր է այն, որ պրն Վան դեր Մեսելի կողմից պրն Էբրիմային մատուցած ծառայությունները հավասար են եղել 4-րդ հոդվածի 2-րդ կետում նշված «աշխատանքին»: Ճիշտ է, անգլերեն labour «աշխատանք» բառը հաճախ օգտագործվում է «ձեռքով արվող/ֆիզիկական աշխատանքի» նեղ իմաստով, սակայն այն արտահայտում է նաև ֆրանսերեն travail բառի լայն իմաստը, և այս վերջինն է, որ պետք է ընդունելի լինի այս համատեքստում: Դատարանը սրա հաստատումը գտնում է թիվ 29 կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետում տրված սահմանման («ամբողջ աշխատանքը կամ ծառայությունը» tout travail ou service), Եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի և Աշխատանքի միջազգային կազմակերպության (որի գործունեությունը ոչ մի կերպ չի սահմանափակվում ձեռքի աշխատանքի ոլորտով) անվան մեջ:

34. Մնում է պարզել, թե արդյոք կատարվե՞լ է «հարկադիր կամ պարտադիր» աշխատանք: Այս մակդիրներից առաջինը մտածել է տալիս ֆիզիկական կամ մտավոր լարման մասին, մի գործոն, որն անշուշտ բացակայում է սույն գործում: Ինչ վերաբերում է երկրորդ ածականին, այն չի կարող սոսկ վերաբերել իրավական հարկադրանքի կամ պարտադրանքի որևէ ձևի: Օրինակ՝ ազատ բանակցությունների արդյունքում ստորագրված պայմանագրի հիման վրա կատարվող աշխատանքը չի կարող մտնել 4-րդ հոդվածի ազդեցության շրջանակների մեջ միայն այն պատճառով, որ դրա մի կողմը, որը պայմանավորվել է մյուս կողմի հետ կատարել այդ աշխատանքը, իր խոստումը չհարգելու դեպքում ենթակա կլինի պատժամիջոցների: Այս կետի վերաբերյալ հանձնաժողովի փոքրամասնությունը համաձայնել է մեծամասնության հետ: Դա պետք է լինի աշխատանք, « ... որը կատարվել է պատժի սպառնալիքի տակ» և նաև իրականացվել տվյալ անձի կամքին հակառակ: Այսինքն՝ դա պետք է լինի աշխատանք, որի համար նա «ինքն իրեն կամավոր չի առաջարկել»:

35. Առաջնորդվելով ԱՄԿ-ի թիվ 29 կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետում տրված սահմանմամբ՝ դատարանը նախ պետք է հարց տա, թե արդյոք տվյալ գործի հանգամանքներում կա՞ «պատժի սպառնալիք»:

Եթե պրն Վան դեր Մեսելն առանց հարգելի պատճառի մերժեր պրն Էբրիմային պաշտպանելը, ապա նրա մերժումը ենթակա չէր լինի քրեական բնույթի սանկցիայի կիրառման: Մյուս կողմից՝ նա կենթարկվեր ռիսկի, որ կոլեգիայի խորհուրդը հանելու է նրա անունն ստաժորների ցուցակից կամ մերժելու է փաստաբան գրանցվելու նրա դիմումը... Այս հեռանկարը բավականին խնդրահարույց է, որպեսզի լինի «պատժի սպառնալիք՝ հաշվի առնելով ինչպես «որևէ» ածականի գործածությունը այդ սահմանման մեջ, այնպես էլ ԱՄԿ-ի որդեգրած չափորոշիչը այս առնչությամբ

(«Հարկադիր աշխատանքի վերացում». կոնվենցիաների և առաջարկների կիրառության վերաբերյալ փորձագետների կոմիտեի ընդհանուր ուսումնասիրությունը, 1979, 21-րդ պարբ.):

36. Ապա պետք է որոշվի, թե արդյոք դիմողը «կամավո՞ր է առաջարկել իր ծառայությունը» տվյալ աշխատանքի համար:

Հանձնաժողովի մեծ մասի կարծիքով՝ դիմողը նախօրոք համաձայնել է այն իրադրությանը, որի վերաբերյալ բողոք է ներկայացրել, որի պատճառով նրա հետագա առարկությունը դարձել է անպատեհ: Նրանց փաստարկը հետևյալն էր: Նախքան իր մասնագիտական գործունեությամբ զբաղվելը ապագա փաստաբանը պետք է կատարի ինչ-որ «հեռանկարային գնահատում»: Նա պետք է ծանրութեթև անի թեր և դեմ կողմերը՝ համադրելով մասնագիտության «առավելությունները» «թերությունների» հետ: Եվ թերությունները «հստակ կանխատեսելի են եղել» ապագա փաստաբանի համար, քանի որ նա տեղյակ է եղել հաճախորդներին անհատույց ծառայություն մատուցելու պարտավորություններին, որոնք սահմանափակված են եղել ինչպես «ծավալով» (տարեկան մոտ տասնչորս գործ), այնպես էլ ժամկետով (ստաժորության ընթացքում): Նա նաև տեղյակ է եղել համապատասխան առավելություններին, որոնց թվում է այն ազատությունը, որով նա կարող էր իրականացնել իր պարտականությունները, ինչպես նաև դատարանի առօրյա աշխատանքներին ծանոթանալու և «վճարելու պատրաստ հաճախորդներ ձեռք բերելու» հնարավորությունները:

Այս փաստարկը, որը պաշտպանել է կառավարությունը, ճշտորեն վերարտադրում է իրավիճակի մի կողմը: Այնուամենայնիվ, դատարանը չի կարող որոշիչ նշանակություն վերագրել դրան: Պրն Վան դեր Մեսելն անկասկած որոշել էր դառնալ փաստաբան, որը Բելգիայում ազատ մասնագիտություն է, հասկանալով, որ համաձայն այդ կանոնների և երկար ժամանակ արդեն գոյություն ունեցող ավանդույթի, պարտավոր է որոշ դեպքերում իր ծառայություններն անվճար մատուցել և չակնկալել կատարած ծախսերի փոխհատուցում: Այնուամենայնիվ, անկախ այն հանգամանքից՝ ցանկանում էր նա դա, թե ոչ, փաստաբան դառնալու համար պետք է ընդուներ այս պահանջը, և նրա համաձայնությունը կախված է եղել այդ ժամանակ տվյալ մասնագիտությամբ զբաղվելու սովորական պայմաններից: Չպետք է նաև անտեսել, որ այդպիսով նա իր համաձայնությունն է տվել ընդհանուր բնույթի իրավական ռեժիմին:

Դիմողի նախնական համաձայնությունը, հետևաբար, չի պաշտպանում այն եզրակացությունը, որ նրա վրա դրված իրավաբանական օգնություն տրամադրելու պարտականությունները, համաձայն կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետի, պարտադիր աշխատանք չեն եղել: Անհրաժեշտ է, որ այլ գործոններ նույնպես հաշվի առնվեն:

37. Հիմք ընդունելով իր 1963 թ. որոշումը (դիմումի ընդունելիության մասին որոշում թիվ 1468/62, *«Իվերսենն ընդդեմ Նորվեգիայի»* (Iversen v Norway), Կոնվենցիայի տարեգիրք, 6-րդ հտ., էջ 327-9), որն այն հետագայում կրկին հաստատել է, հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ Եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով հարկադիր կամ պարտադիր աշխատանք գոյություն կունենա այն դեպքում, եթե բավարարվի երկու պայման. աշխատանքը ոչ միայն պետք է իրականացված լինի անձի կամքին հակառակ, այլև այն իրականացնելու պարտավորությունը պետք է «անարդար» լինի կամ «կեղեքիչ», կամ էլ դրա իրագործումը պետք է կապված լինի «այնպիսի դժվարությունների հետ, որոնք հնարավոր էր շրջանցել»: Այլ կերպ ասած՝ այն պետք է «պատճառի անհարկի ցավ» կամ «լինի ինչ-որ կերպ ուժասպառող»: Խնդիրը որպես «լրացուցիչ քննարկման թեմա» դիտարկելուց հետո հանձնաժողովի մեծ մասը եզրակացրել է, որ երկրորդ պայմանն ավելի շատ չի բավարարվել, քան առաջինը:

Դատարանը նկատել է, որ կիրառված երկրորդ չափանիշն ամրագրված չէ ԱՄԿ-ի թիվ 29 կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետում: Ավելի շուտ, դա չափանիշ է, որը բխում է 4-րդ հոդվածից և այդ կոնվենցիայի հաջորդ հոդվածներից, որոնք թեպետ չեն անդրադառնում հարկադիր կամ պարտադիր աշխատանք հասկացությանը, սակայն շարադրում են այն պահանջները, որոնք պետք է բավարարվեն 1-ին հոդվածի 2-րդ կետում հատկորոշված անցումային ժամանակահատվածում հարկադիր կամ պարտադիր աշխատանքի օգտագործման դեպքերում (տե՛ս ԱՄԿ-ի արձանագրությունը, 1966 թ. հունվար, պարբ. 2):

Ամեն դեպքում դատարանը նախընտրում է հետևել այլ մոտեցման: Որոշելով, որ գոյություն է ունեցել «պատժի սպառնալիքի» ռիսկի հետ համեմատելի ռիսկ (տե՛ս վերը՝ պարբ. 35), ինչպես նաև հարաբերական կշիռ պետք է տրվի դիմողի «նախնական համաձայնությանը» վերաբերող փաստարկին, դատարանը դիտարկելու է գործի բոլոր հանգամանքները Եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդվածի նպատակների շրջանակներում, որպեսզի որոշի՝ արդյոք պրն Վան դեր Մեսելից պահանջված ծառայությունը մտնո՞ւմ է արգելված հարկադիր աշխատանքի տիրույթի մեջ: Դա հավանական է, եթե որոշակի մասնագիտությամբ զբաղվելու թույլտվության համար պահանջվում է մատուցել ծառայություն, որը, համեմատած հետագայում այդ մասնագիտությամբ զբաղվելու առավելությունների հետ, անհամամասն է կամ չափազանց մեծ, որպեսզի հնարավոր լինի համարել, որ այն նախապես ընդունվել է կամավոր հիմունքներով (դա կարող է լինել ծառայություն, որը որևէ աղերս չունի խնդրո առարկա մասնագիտության հետ):

38. Այս առումով, բովանդակալից է 4-րդ հոդվածի կառուցվածքը: 3-րդ կետը նպատակ չունի սահմանափակել 2-րդ կետով երաշխավորված իրավունքի ապահովումը, այլ՝ տալ այդ իրավունքի բուն էության «սահմանները», քանի որ 2-րդ կետի հետ այն կազմում է մեկ ամբողջություն և ցույց տալիս, թե ինչը «չի մտնում» «հարկադիր կամ պարտադիր աշխատանք» հասկացության մեջ (ce qui ‘n’est pas considere comme ‘travail force ou obligatoire’): Ուստին, 3-րդ կետն օգնում է մեկնաբանելու 2-րդ կետը:

3-րդ կետի չորս ենթակետերը (4(3)(ա), 4(3)(բ), 4(3)(գ), 4(3)(դ)), չնայած դրանց տարբերություններին, հիմնված են ընդհանուր շահ, սոցիալական համերաշխություն և սովորական դրություն հասկացությունների վրա: Վերջին ենթակետը (4(3)(դ)), որը հարկադիր կամ պարտադիր աշխատանքի համատեքստից բացառում է «սովորական քաղաքացիական պարտավորությունների մաս կազմող ցանկացած աշխատանքը կամ ծառայությունը», սույն գործի համատեքստում հատուկ նշանակություն ունի:

39. Վերոհիշյալ նկատառումներով դիտարկվելու դեպքում այն հանգամանքները, որոնց առնչությամբ բողոք է ներկայացվել, ի հայտ են բերում մի քանի առանձնահատկություններ, որոնցից յուրաքանչյուրը գնահատման չափորոշիչ է:

Այն ծառայությունները, որոնք պետք է մատուցվեին, դուրս չեն փաստաբանի բնականոն գործունեության շրջանակներից. դրանք չեն տարբերվել փաստաբանների միության այլ անդամների աշխատանքից ո՛չ իրենց բնույթով, ո՛չ էլ գործը վարելու որևէ սահմանափակումով:

Երկրորդ՝ այս մասնագիտության առավելություն կարելի է համարել փոխհատուցման գործոնը, որը ներառում է դատավարության ժամանակ ելույթի և ներկայացուցչության բացառիկ իրավունքը, որով փաստաբաններն օժտված են թե՛ Բելգիայում և թե՛ մի շարք այլ երկրներում...

Բացի այդ, այդ ծառայություններն իրենց նպաստն են ունեցել դիմողի մասնագիտական պատրաստման մեջ, ինչպես նպաստ են ունեցել այն գործերը, որոնց դեպքում նա պետք է հանդես գար սեփական հաճախորդների կամ իր վերադասի վճարող հաճախորդների ցուցումներով: Սրանք նրան հնարավորություն են տվել ամրապնդելու իր փորձը և բարձրացնելու իր վարկանիշը: Այս իմաստով որոշ աստիճանի անձնական օգուտը զուգորդվել է ընդհանուրի շահի հետ, որը եղել է ամենագլխավորը:

Միաժամանակ, այն պարտավորությունը, որին պրն Վան դեր Մեսելն ընդդիմացել է, եղել է պրն Էբրիմայիին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետով տրամադրվող արտոնության ապահովման միջոց: Սրանով այն հիմնված է եղել սոցիալական համերաշխության սկզբունքի վրա և չի կարող համարվել ոչ ողջամիտ: Նույն կերպ՝ այն եղել է 4-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետում նշված «սովորական քաղաքացիական պարտականությունների» նման պարտականություն: Տվյալ դեպքում դատարանից չի պահանջվում որոշում կայացնել հանձնաժողովի փոքրամասնության այն փաստարկի ճշտության վերաբերյալ, համաձայն որի գրեթե բոլոր pro-Deo [հանրային պաշտպանության] գործերն ստաժոր-փաստաբաններին հանձնարարելը չի կարող լիովին համահունչ լինել անվճարունակ անձանց արդյունավետ իրավաբանական օժանդակություն տրամադրելու գաղափարին (տե՛ս *Արտիկոյի* (Artico) վճիռը, 13 մայիսի 1980 թ., շարք A, էջ 15-16, պարբ. 33):

Վերջապես, դիմողի վրա դրված բեռն անհամաչափ չի եղել: Համենայն դեպս, սեփական վկայությունների համաձայն՝ պրն Էբրիմայից աշխատանքը պահանջել է ընդամենը տասնյոթ-տասնութ աշխատանքային ժամ... Սրանից կարելի է եզրակացնել, որ նա բավարար չափով ժամանակ է ունեցել իր վարձատրվող աշխատանքը կատարելու համար (մոտավորապես երկու հարյուր գործ):

40. Փաստորեն, որպես այդպիսին, դիմողը դեմ չի եղել խնդրո առարկա պարտավորության սկզբունքին: Նրա գանգատը սահմանափակվել է պարտավորության իրականացման երկու առանձին կողմերով, որոնք են՝ հոնորարի բացակայությունը և մասնավորապես կատարած ծախսերը չփոխհատուցելը... Նա համարել է, որ անարդարացի է (և այս հարցում հանձնաժողովի փոքրամասնությունը համաձայնել է նրա հետ) ամենակարիքավոր քաղաքացիներին ներկայացնելու գործը վստահել ստաժոր-փաստաբաններին, որոնք իրենք էլ անբավարար միջոցներ ունեն, և ստիպել, որ նրանք հոգան օրենքով սահմանված հանրային ծառայության ծախսերը: Նա ուշադրություն է հրավիրել այն փաստի վրա, որ տարիներ շարունակ Բելգիայում Ordre des avocats-ի նախագահներն այսպիսի իրադրությունը համարել են անհանդուրժելի:

Իր կողմից կառավարությունն ընդունել է, որ այն գործելակերպը, որի դեմ գանգատ է ներկայացվել, եղել է «հնաոճ» և «նահապետական»: Նրանք հավաստիացրել են, որ այն հանգամանքը, որ Բելգիան 1980 թ. ապրիլի 9-ի օրենքի միջոցով հետաձգել է այս ոլորտում «չափորոշիչներն այլ երկրների և հատկապես եվրոպական երկրների չափորոշիչների մակարդակին» հասցնելու ուղղությամբ «ջանքերի գործադրումը», բացատրվում է իր անկախությունը պաշտպանող մասնագիտական միության ավանդական և պատվախնդիր դիրքորոշմամբ: Մինչև վերջերս, համաձայն կառավարության, փաստաբանների միությունը թերահավատությամբ է մոտեցել ստաժոր-փաստաբաններին պետության կողմից արվող վճարումներին, իսկ պաշտոնական սանդղակավորված վճարների գաղափարը լուրջ դժգոհություն է առաջացրել նրա անդամների շրջանում:

Հանձնաժողովն անբարենպաստ է համարել այն իրավական իրավիճակը, որը, չնայած իր կարծիքով, համատեղելի է 4-րդ հոդվածի հետ, այլևս «չի համապատասխանում ժամանակակից կյանքի» պահանջներին: Մատնանշելով, որ եթե ստաժոր-փաստաբանները վճարվեին, ապա նրանց մասնագիտական պատրաստումը ոչ մի կերպ չէր տուժի, հանձնաժողովը ցանկություն է հայտնել, որ 1980 թ. ապրիլի 9-ի օրենքն արդյունավետորեն իրականացվի:

Դատարանը չի անտեսել խնդրի այս կողմը: Թեև վարձատրվող աշխատանքը նույնպես կարող է իր բնույթով հարկադիր կամ պարտադիր աշխատանք լինել, վարձատրության և ծախսերի հատուցման բացակայությունն այնպիսի գործոն է, որը պետք է հաշվի առնվի, երբ որոշվում է, թե ինչն է համաչափ կամ ինչն է սովորական դրություն: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ բազմաթիվ բարձր պայմանավորվող պետություններում ընդունվել կամ ընդունվում են

համապատասխան օրենքներ, համաձայն որոնց՝ անվճարունակ հաճախորդների համար փաստաբանների կամ ուսումնառություն անցնող փաստաբանների ծախսերի հատուցումը պետք է կատարվի պետության միջոցների հաշվին: 1980 թ. ապրիլի 9-ի Բելգիայի օրենքը նման զարգացման օրինակ է: Կիրառվելուց հետո այդ օրենքը զգալի փոփոխություններ կառաջացնի՝ առանց սպառնալու փաստաբանների միության անկախությանը:

Գանգատում նշված իրադրությունը, երբ աշխատանքը և ծախսերը չեն փոխհատուցվել, անկասկած, որոշակի վնաս է պատճառել պրն Վան դեր Մեսելին: Սակայն այդ վնասից բացի, եղել են նաև մի շարք օգուտներ (տե՛ս վերը՝ պարբ. 39): Նաև՝ ցույց չի տրվել, որ այն [այդ վնասը] չափից ավելի մեծ է: Դիմողի վրա աշխատանքի անհամաչափ բեռ չի դրվել (նույն տեղում) և գործերի հետ ուղղակիորեն կապված ծախսերը եղել են համեմատաբար փոքր...

Դատարանը նշել է, որ պրն Վան դեր Մեսելը փաստաբանի մասնագիտությունն ընտրել է իր կամքով՝ տեղյակ լինելով գանգատում ներկայացված գործելակերպին: Ուստիև, եթե փաստաբան դառնալու նպատակի և փաստաբան դառնալու նպատակով ստանձնած պարտավորությունների միջև զգալի և անողջամիտ անհավասարակշռություն կա, ապա այս փաստն ինքնին կարող է հանգեցնել այն եզրակացության, որ պրն Վան դեր Մեսելի համար իրավաբանական օժանդակության տրամադրումը եղել է պարտադիր՝ անկախ նրա տված համաձայնությունից: Դատարանին ներկայացված փաստերը նման անհավասարակշռություն չեն բացահայտել, թեպետ անձը չի վարձատրվել, և նրա կատարած ծախսերը չեն հատուցվել, դա դեռևս հեռու է բավարար լինելուց:

Բացի այդ, ուշադրություն դարձնելով այն չափանիշներին, որոնք դեռևս ընդհանուր առմամբ ճնավորվում են Բելգիայում և մյուս ժողովրդավարական հասարակություններում, կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով պարտադիր աշխատանք գոյություն չի ունեցել:

41. Հաշվի առնելով այս եզրակացությունը, դատարանը կարիք չունի որոշելու՝ արդյոք խնդրո առարկա աշխատանքը որպես այդպիսին արդարացվա՞ծ էր 4-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի շրջանակներում և, մասնավորապես, արդյոք «սովորական քաղաքացիական պարտավորություններ» հասկացությունը վերաբերում է միայն որոշակի կատեգորիայի մեջ մտնող քաղաքացիների պարտավորությունների՞ն՝ հաշվի առնելով նրանց զբաղեցրած դիրքը, թե՞ այն գործառույթներին, որոնք նրանք պետք է իրականացնեն համայնքում:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՊԸ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԵՏ

42. Դիմողը նաև վկայակոչել է 14-րդ հոդվածը՝ 4-րդ հոդվածի համակցությամբ:

. . .

43. 14-րդ հոդվածը լրացնում է կոնվենցիայի և արձանագրությունների այլ նյութական դրույթները: Այն կարող է կիրառվել լրիվ առանձին, քանի որ 14-րդ հոդվածի խախտումը չի ենթադրում, որ այս մյուս դրույթները նույնպես խախտվել են: Մյուս կողմից՝ այն անկախ գոյություն չունի, քանի որ ազդեցություն ունի միայն այլ նյութական դրույթներով երաշխավորված «իրավունքների և ազատությունների կիրառության վրա» (տե՛ս, ի թիվս այլոց, *Մարքսի* վճիռը, 13 հունիսի 1979 թ., շարք A, թիվ 31, էջ 15-16, պարբ. 32): Քանի որ դատարանը որոշել է, որ 4-րդ հոդվածի իմաստով հարկադիր կամ պարտադիր աշխատանք գոյություն չի ունեցել, հարց է ծագում, թե արդյոք խնդրո առարկա փաստերը լրի՞վ են դուրս մնում այդ հոդվածի (4-րդ հոդված) շրջանակներից: Այնուամենայնիվ, նման տրամաբանությունը կարող է հանդիպել մի լուրջ առարկության: Այն չափանիշները, որոնք ծառայում են պարտադիր աշխատանքի հայեցակարգի շրջանակների որոշման համար, ընդգրկում են նորմալ իրադրության գաղափարը (տե՛ս վերը՝ պարբ. 38): Այն աշխատանքը, որն ինքնին նորմալ աշխատանք է, կարող է դառնալ ոչ նորմալ, եթե խմբերի կամ համապատասխան անձանց՝ դրանք կատարելու ընտրությունը պայմանավորված է խտրական գործոններով, ինչը հենց, դիմողի ասելով, առկա է ներկա հանգամանքներում:

Հետևաբար, սա այն դեպքը չէ, երբ պետք է որոշվի, որ 14-րդ հոդվածը կիրառելի չէ, մանավանդ որ կառավարությունը չի վիճարկել այդ կետը:

44. 1980 թ. հոկտեմբերի 27-ին հանձնաժողովին ներկայացրած տեղեկանքով պրն Վան դեր Մեսելը նշել է, որ բողոք չունի ստաժոր-փաստաբանների և գրանցված փաստաբանների միջև գոյություն ունեցող խտրական դրսևորումների վերաբերյալ: Նա չի փոխել իր կարծիքը դատարանում, և դատարանը որևէ պատճառ չի տեսնում, որ սեփական նախաձեռնությամբ չքննարկի այդ հարցը:

45. Մյուս կողմից՝ դիմողի ներկայացմամբ՝ քննարկվող խնդիրների առումով բելգիացի փաստաբաններն արժանանում են նվազ նպաստավոր վերաբերմունքի, քան մի շարք այլ մասնագիտություններով զբաղվող անձինք: Իրավաբանական օգնության տրամադրման դեպքերում դատարանը հատուցում է դատավորներին և մատենավարներին, վճարում թարգմանիչների հոնորարները (քրեական դատավարության օրենսգրքի 184-2 հոդված, դատական օրենսգրքի 691-րդ հոդված) և «իրավաբանական օգնություն ստացած անձի անունից» փոխանցում «դատական, պետական կամ պետության կողմից նշանակված անձանց ուղեվարձերը, փորձագետների ծախսերը և հոնորարները, վկաներին դուրս գրվող գումարները ... դատական կարգադրիչների ծախսերը և աշխատավարձի մեկ քառորդը, ինչպես նաև այլ

պետական կամ պետության կողմից նշանակված անձանց ծախսերը (տե՛ս դատավարական օրենսգրքի 692-րդ հոդված)... Բժշկության ոլորտի մասնագետների, անասնաբույժների, դեղագործների և ատամնաբույժների նկատմամբ անվճարունակ անձանց պահանջ սահմանված չէ, համաձայն որի՝ նրանք իրենց ծառայությունները պետք է անվճար տրամադրեն: Ըստ դիմողի՝ այս ամենը կամայական անհավասարության օրինակներ են, որոնք զուրկ են «օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորումից» (տե՛ս 1968 թ. *Բելգիայի լեզվաբանականի* գործը, շարք A, թիվ 6, էջ 34, պարբ. 10): Դրանով իսկ դրանք հակասել են 14-րդ և 4-րդ հոդվածներին միասին: Հանձնաժողովի փոքրամասնությունը պաշտպանել է այս տեսակետը՝ գոնե զգալի չափով:

46. 14-րդ հոդվածը համանման իրավիճակներում հայտնված անձանց պաշտպանում է խտրականության դրսևորումներից (տե՛ս վերը նշված *Մարքսի* վճիռը, շարք A, թիվ 31, էջ 15, պարբ. 32): Այնուամենայնիվ, փաստաբանության և տարբեր մասնագիտական ոլորտների, այդ թվում նույնիսկ դատական և արտադատական մասնագիտությունների միջև, որոնք դիմողը նշել է, կան հիմնարար տարբերություններ, որոնց վրա կառավարությունը և հանձնաժողովի մեծամասնությունը արդարև ուշադրություն են հրավիրում: Դրանք են, մասնավորապես, իրավական կարգավիճակի տարբերությունները, մասնագիտական գործունեություն սկսելու պայմանները, գործառույթների բնույթը, այդ գործառույթների իրականացման ձևը և այլն: Դատարանին ներկայացված փաստերը խնդրո առարկա տարբեր ոլորտների գործունեության միջև որևէ նմանություն չեն բացահայտում: Դրանցից յուրաքանչյուրը բնորոշվում է մի շարք իրավունքներով և պարտականություններով, որոնցից որևէ կողմի առանձնացումն արհեստական կլինի:

Դիմողի գանգատների հիման վրա դատարանը համապատասխանաբար չի հայտնաբերել 14-րդ և 4-րդ հոդվածների, համակցված, որևէ խախտում:

. . .

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

Որոշում է, որ կոնվենցիայի 4-րդ հոդվածի խախտում չի եղել առանձին կամ 14-րդ հոդվածի համակցությամբ...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմը բաղկացած էր նախագահ Վիարդայից և դատավորներ Ռիսդալից, Տոիր Վիլջաուլմսոնից, Գանսհոֆ վան դեր Մերշից, Բինդշեդլեր-Ռոբերտից, Էվրիգենիսից, Լագերգրենից, Լիշից, Գյոլչյուքլուից, Մաթշերից, Գարսիա դե Էնտեռիայից, Փեթիթիից, Ուոլշից, Էվանսից, Ռուսոյից և Ջերսինգից:

Վճիռը շատ կարևոր է 4-րդ հոդվածում օգտագործված հասկացությունների ծագումը և դրանց մեկնաբանության եղանակը բացատրելու առումով: Դատարանը նաև ցույց է տվել հոդվածի բաղկացուցիչ պարբերությունների միջև եղած կապը: Դատավորները ցանկություն չեն ունեցել հետևելու 4(2) հոդվածի առնչությամբ հանձնաժողովի մոտեցմանը և որպես անձանց՝ պետությունների պահանջած աշխատանքի կատարման ծանրաբեռնվածության չափի և դրա օրինականության որոշման տարր՝ ներմուծել են համաչափության թեստ:

2 «Ստրկության» գաղափարը, որը ներառված է 4(1) հոդվածի մեջ, դիտարկվել է *«Վան Դրուգենբրեքն ընդդեմ Բելգիայի»* (Van Droogenbroeck v Belgium A.44 (1982) 4 EHRR 443) գործում: Դիմողը կրկնահանցագործ էր, որը մեղավոր է ճանաչվել մի շարք գողություններ անելու մեջ: 1970 թ. նա գողության մեղադրանքով դատապարտվել է երկու տարվա ազատազրկման և նաև տասը տարի ժամկետով դրվել «կառավարության հայեցողության տակ»՝ համաձայն 1964 թ. «Սոցիալական պաշտպանության մասին» օրենքի: Վերջինս որակվել է որպես պատիժ, սակայն նպատակ է ունեցել ռեաբիլիտացիայի ենթարկել բազմիցս օրինախախտումներ կատարած անձանց: Երբ դիմողի ազատազրկման ժամկետը լրացել է, իշխանությունները մի քանի առիթով փորձել են նրան ընդգրկել ուսումնական ծրագրերում և աշխատանքի տեղավորել, սակայն նա շարունակել է զբաղվել հանցավոր գործողություններով և այս ընթացքում մի քանի անգամ հետ է կանչվել բանտ: Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ, ի թիվս այլոց, նրան պահել են ստրկության մեջ և ստիպել աշխատել հակառակ 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում ամրագրված դրույթների: Հանձնաժողովը (միաձայն) 4-րդ հոդվածի խախտում չի հայտնաբերել: Նմանապես, դատարանը համակարծիք էր, երբ մերժում էր այս հոդվածի շրջանակներում դիմողի ներկայացրած գանգատը:

58. Դիմողի առաջին պնդումը եղել է այն, որ գտնվելով կառավարության հայեցողության տակ՝ նա, հակառակ 1-ին կետի, պահվել է «ստրկության» մեջ, քանի որ ենթարկվել է «ղեկավարության քմահաճույքներին»:

Գանգատում ներկայացված իրավիճակը 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չի եղել [քանի որ 5(1)(ա) հոդվածի շրջանակներում հիմնավորվել է, որ այն հանդիսացել է իրավասու դատարանի կողմից անձին մեղավոր ճանաչելուց հետո նշանակված օրինական ազատազրկում]: Հետևաբար, այն կարող էր համարվել «ստրկություն», եթե պարունակեր «ազատության մերժման» «հատկապես լուրջ» ձև (տե՛ս հանձնաժողովի հաշվետվության 79-80-րդ պարբերությունները), մինչդեռ ընթացիկ գործում այդպես չի եղել:

59. Պրն Վան Դրուգենբրեքն այնուհետև բողոքել է, որ հակառակ 4-րդ հոդվածի 2-րդ կետի՝ նրան «ստիպել» են աշխատել, որպեսզի խնայի 12000 բելգիական ֆրանկ: Համաձայն կառավարության՝ նրան պարզապես «առաջարկել» են աշխատել:

Դատարանը կարծում է, որ կարող է այս փաստի հարցը բաց թողնել: Գործնականում, երբ անձի ազատ արձակումը կախված է այն խնայողություններից, որոնք արվել են բանտում կատարված աշխատանքի դիմաց ստացած վճարումներից, ... շատ հեռու չէ պարտավորությունից՝ այդ հասկացության ամենախիստ իմաստով:

Այնուամենայնիվ, դրանից դեռ չի բխում, որ բողոքը լավ է հիմնավորված... այս վերջին հոդվածի 3(ա) կետով անձին նշանակված ազատազրկման սովորական ընթացքի ժամանակ (ինչպես և եղել է տվյալ դեպքում) պահանջվող աշխատանքի կատարումը թույլատրվում է այնպիսի եղանակով, որը չի հակասում 5-րդ հոդվածի 1-ին կետին: Բացի այդ, այն աշխատանքը, որը պրն Վան Դրուգենբրեքից պահանջվել է կատարել, այս համատեքստում չի անցել «սովորականի» սահմաններից, քանի որ նպատակ է ունեցել օգնել նրան կրկին ինտեգրվելու հասարակությանը՝ որպես իրավական հիմք ունենալով այնպիսի դրույթներ, որոնց համարժեքները հանդիպում են նաև Եվրոպայի խորհրդի որոշ անդամ պետություններում...

60. Հետևաբար, Բելգիայի իշխանությունները չեն թերացել 4-րդ հոդվածի պահանջների կատարման մեջ:

Այսպիսով, պատժի և բանտային աշխատանքի այն ձևերը, որոնք համապատասխանում են ժամանակակից եվրոպական փորձին, չեն առաջացնում 4-րդ հոդվածի խախտում:

3 *«Սիլիադինն ընդդեմ Ֆրանսիայի» (Siliadin v France)* գործի վերաբերյալ 2005 թ. հուլիսի 26-ի վճռով մշտական գործող դատարանի պալատը միաձայն որոշել է, որ պետություններն ունեն դրական պարտավորություն, այն է՝ ընդունել և արդյունավետորեն կիրառել 4-րդ հոդվածում թվարկված գործողություններն արգելող քրեական իրավունքի դրույթներ: 1994 թ. 15 տարեկանում դիմողին, որը Տոգոյի քաղաքացի էր, Ֆրանսիա է բերել նրա հոր ազգականը: Ազգականը, որը ստացել էր Ֆրանսիայի քաղաքացիություն, պարտավորվել էր կարգավորել դիմողի կացության կարգավիճակը և լուծել նրա կրթության հարցերը: Դրա փոխարեն դիմողը պետք է աշխատեր ազգականի տանը, քանի դեռ չէր հատուցել իրեն Ֆրանսիա բերելու համար ինքնաթիռի տոմսի արժեքը: Բարեկամն առգրավել է դիմողի անձնագիրը: Ֆրանսիա գալուց տասն ամիս անց ազգականը դիմողին «վարձով տվել է» իրեն մտերիմ մի զույգի, որպեսզի նա կատարեր նրանց տան կենցաղային աշխատանքները: Մոտ չորս տարի զույգը դիմողին պահել է՝ որպես «ամեն տեսակ տնային աշխատանքներ կատարող աղախնի»: Այդ ընթացքում նա աշխատել է առանց հանգստյան օրերի և առանց վարձատրության՝ առավոտյան ժամը 7.30-ից մինչև գիշերվա 10.30-ը (կիրակի օրերի համար նա ունեցել է եկեղեցի հաճախելու թույլտվություն): Նա քնել է գետնին գցված ներքնակի վրա և հին շորեր է հագել: Ի վերջո, դիմողը տեղեկացրել է հարևանին իր վիճակի մասին, որից հետո հարցը ներկայացվել է հանրային մեղադրողին: Զույգի դեմ մեղադրանք է հարուցվել, և նրանք մեղավոր են ճանաչվել, իմիջիայլոց, խոցելի անձից անվճար ծառայություններ ստանալու մեջ: Զույգը բողոքարկել է իր նկատմամբ կայացված մեղադրական վճիռը՝ հասնելով դրական արդյունքի: Այնուամենայնիվ, նրանց կարգադրվել է դիմողին վճարել 15000 եվրո վնասի փոխհատուցում: Ավելի ուշ աշխատանքային տրիբունալը նրան [դիմողին] նշանակել է 31000 եվրոյի կուտակված աշխատավարձային պարտքի փոխհատուցում: Պալատը դիմողի նկատմամբ վերաբերմունքը բնութագրել է որպես հարկադիր աշխատանքի դրսևորում, քանի որ նրանից պահանջվել է իր կամքին հակառակ և առանց վարձատրության տարիներ շարունակ աշխատել այդ զույգի համար: Բացի այդ, հաշվի առնելով դիմողի անչափահաս լինելը և նրա նկատմամբ զույգի գործադրած բռնությունը (անձնագրի առգրավումը, կացության կարգավիճակը, որն այդպես էլ երբեք չի կարգավորվել և նրա վախը, որ մի օր ոստիկանությունը

ձերբակալելու է իրեն), պալատը նաև եզրակացրել է, որ նրան պահել են ստրկության մեջ: Հաշվի առնելով զույգին արդարացնելու փաստը, որից հետո Ազգային ժողովը քննադատության է ենթարկել քրեական օրենքի համապատասխան դրույթները, պալատը եզրակացրել է, որ պատասխանող պետությունը թույլ է տվել 4-րդ հոդվածի խախտում, քանի որ նրա օրենքը համապատասխան պաշտպանություն չի ապահովել դիմողի համար: Այս գործի սոսկալի փաստերը շատ հստակ ցույց են տալիս, թե ինչի համար է անհրաժեշտ, որ պետությունները համապատասխան քայլեր ձեռնարկեն և երաշխավորեն, որ իրենց իրավազորության ներքո գտնվող խոցելի մարդիկ չեն շահագործվում այլ անձանց կողմից:

4 *«Յոհանսենն ընդդեմ Նորվեգիայի»* (Johansen v Norway) գործում (44 DR 155 (1985)) հանձնաժողովը քննել է պետության՝ քաղաքացիներին պարտադիր զինվորական կամ քաղաքացիական ծառայության կանչելու իրավունքը: Նորվեգիայի սահմանադրության համաձայն՝ արական սեռի քաղաքացիները պարտավոր են անցնել զինվորական ծառայություն: Այնուամենայնիվ, 1922 թ. հետո ճանաչվում է նաև կրոնական և այլ համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը: Եթե անձը, ելնելով կրոնական կամ այլ համոզմունքներից, հրաժարվում է զինվորական ծառայությունից, պետք է անցնի քաղաքացիական ծառայության, որի մեջ սովորաբար մտնում են առողջապահական կամ սոցիալական սպասարկման աշխատանքներ: Եթե անձը հրաժարվում է քաղաքացիական ծառայությունից, ապա նրա գործն ուղարկվում է դատարան: Եթե պարզվում է, որ նա թույլ է տվել իր օրինական պարտականությունների խախտում, ապա նրան կարող են կարգադրել իր քաղաքացիական ծառայության ժամանակահատվածում աշխատել հատուկ ճամբարում՝ կատարելով վարչական կամ գյուղատնտեսական աշխատանքներ: Եթե այս անձը չի գնում ճամբար կամ հրաժարվում է իրեն հանձնարարված աշխատանքը կատարելուց, ապա իր քաղաքացիական ծառայության մնացած հատվածը անց է կացնում բանտում: Դիմողը պացիֆիստ էր և դեմ էր ոչ միայն զինվորական, այլև քաղաքացիական ծառայությանը, քանի որ կարծում էր, որ այս վերջինը նպատակ ունի պահպանելու հարգանքը զինվորական ծառայության նկատմամբ: Իշխանություններն ընդունել են, որ նա հրաժարվում է զինվորական ծառայությունից՝ ելնելով իր համոզմունքներից, և պահանջել են, որ նա անցնի քաղաքացիական ծառայության: Դիմողը հրաժարվել է ցանկացած տեսակի քաղաքացիական ծառայություն կատարելուց: Նրա գործն ուղարկվել է շրջանային դատարան, որը որոշել է, որ նա թույլ է տվել իր օրինական պարտավորությունների խախտում: Դիմողն այնուհետև բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ խախտվել են կոնվենցիայով ամրագրված մի շարք իրավունքներ: Հանձնաժողովը նրա դիմումը հայտարարել է անընդունելի, քանի որ քաղաքացիական ծառայություն կատարելու պարտականությունը

… կոնվենցիային լիովին համատեղելի պարտավորություն է: Կոնվենցիան չի պարտավորեցնում պայմանավորվող պետություններին, որ նրանք կրոնական և այլ համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց առաջարկեն զինվորական ծառայության փոխարեն անցնել քաղաքացիական ծառայության: Սա պարզ է կոնվենցիայի 4(3)(բ) հոդվածի շարադրանքից, որը, մասնավորապես, ամրագրում է, որ համոզմունքների հիմնավորմամբ ծառայությունից հրաժարվող անձանցից պահանջվող ծառայությունները չեն համարվում «հարկադիր կամ պարտադիր աշխատանք»(էջ 162):

Ինչ վերաբերում է դիմողի փաստարկին, որ պարտադիր քաղաքացիական ծառայությունը խախտել է 9-րդ հոդվածով ամրագրված իր խղճի ազատությունը, ապա հանձնաժողովը հայտարարել է հետևյալը.

Այս դրույթը մեկնաբանելիս հանձնաժողովը հաշվի է առել կոնվենցիայի 4(3)(բ) հոդվածը... Քանի որ կոնվենցիան հստակորեն ընդունում է, որ համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվող անձանցից կարող է պահանջվել, որ նրանք անցնեն քաղաքացիական ծառայության, ապա պարզ է, որ կոնվենցիան չի երաշխավորում քաղաքացիական ծառայությունից ազատվելու իրավունք... Կոնվենցիան չի արգելում պետությանը ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնց նպատակն է հարկադրել քաղաքացիական ծառայության կատարումը կամ սանկցիաներ կիրառել նրանց նկատմամբ, ովքեր հրաժարվում են այդ ծառայությունից (էջ 165):

Կրոնական կամ այլ համոզմունքների հիմնավորմամբ մեկ այլ բնույթի քաղաքացիական պարտավորությունից հրաժարվելու վերաբերյալ *«Ֆադինին ընդդեմ Շվեյցարիայի»* (Fadini v Switzerland) գանգատը չհաջողված դիմումի մեկ այլ օրինակ է և ներկայացված է ստորև՝ 638-րդ էջում:

5 *«Շմիդտն ընդդեմ Գերմանիայի»* (Schmidt v Germany, A.291-B (1994) 18 EHRR 513) գործի առնչությամբ դատարանը մեկնաբանել է 4(3)(դ) հոդվածը որպես արական սեռի ներկայացուցիչների համար տեղական հրշեջ խմբերում ծառայելու կամ ծառայության փոխարեն դրամական մուծում կատարելու պարտականություն ներառող դրույթ:

23. Վարույթի մասնակիցների նման դատարանը նույնպես գտնում է, որ պարտադիր հրշեջ ծառայությունը, որ գոյություն ունի Բադեն Վուրթեմբերգում, 4-րդ հոդվածի 3(դ) կետով նախատեսված «սովորական քաղաքացիական պարտավորություն» է: Դատարանն այնուհետև նկատում է, որ ծառայության փոխարեն վճարման ենթակա դրամական մուծումը, համաձայն դաշնային սահմանադրական դատարանի, ... «փոխհատուցման կարգով արվող գանձում» է: Ուստին, դատարանը եզրակացնում է, որ հաշվի առնելով ծառայելու պարտավորության հետ ունեցած սերտ առնչությունները, մուծում անելու պարտավորությունը ևս մտնում է 4-րդ հոդվածի 3-րդ կետի շրջանակների մեջ:

Վճռելով, որ ֆինանսական վճարման պարտավորությունը ևս մտնում է 4-րդ հոդվածի մեջ, դատարանն այնուհետև կարողացել է շարունակել և բացահայտել 14-րդ հոդվածի խախտում՝ անօրինական սեռական խտրականության իրավիճակ, քանի որ այդ պարտավորությունը վերաբերել է միայն արական սեռի ներկայացուցիչներին (տե՛ս ստորև՝ էջ 861-62):

6 4-րդ հոդվածի 3-րդ կետի մեկնաբանության առումով *Շմիդտի (Schmidt)* գործում նորաստեղծ դատարանի դրսևորած մոտեցումն իր շարունակությունն է ունեցել *«Զարբ Ադամին ընդդեմ Մալթայի» (Zarb Adami v Malta)* գործի վերաբերյալ 2006 թ. հունիսի 20-ի վճռում: Այս վերջին գործով դիմողը բողոքել էր, որ երդվյալ ատենակալի ծառայության կանչվելու հավանականությունն ավելի մեծ էր տղամարդկանց, քան թե կանանց համար: (1996 թ. ատենակալների ցուցակում եղել է 147 կին, մինչդեռ ցուցակում ընդգրկված տղամարդկանց թիվը եղել է 4298): Պալատը վեց կողմ և մեկ դեմ ձայներով որոշել է, որ

46.…Ուստին, այն փաստը, որ այդ իրավիճակը համապատասխանում է 3-րդ կետի շրջանակներում սահմանված սովորական քաղաքացիական ծառայության հասկացությանը, խոչընդոտ չէ, որ կոնվենցիայի 4-րդ հոդվածն ընթերցվի 14-րդ հոդվածի հետ միասին:

47. Վարույթի մասնակիցների նման դատարանը կարծում է, որ Մալթայում գործող պարտադիր ատենակալական ծառայությունը 4-րդ հոդվածի 3(դ) կետին համահունչ «սովորական քաղաքացիական պարտավորություն» է: Այնուհետև նկատում է, որ դիմողը կամավոր չի առաջարկել իրեն ատենակալի ծառայության համար, և չներկայանալու պատճառով նրա նկատմամբ կիրառվել է տուգանք, որը կարող է վերափոխվել ազատազրկման տեսքով պատժի: Հաշվի առնելով ծառայելու պարտավորության հետ ունեցած սերտ աղերսները, տուգանք վճարելու պարտավորությունը նույնպես մտնում է 4-րդ հոդվածի 3(դ) կետի շրջանակների մեջ (տե՛ս mutatis mutandis *Կարլհայնց Շմիդտի (Karlheinz Schmidt)* գործի վերաբերյալ վերը մեջբերված վճիռը, էջ 32, պարբ. 23):

. . .

49. Սրանից բխում է, որ խնդրո առարկա փաստերն ընկնում են 4-րդ հոդվածի ազդեցության ոլորտի մեջ: Հետևաբար, կոնվենցիայի 14-րդ հոդվածը կիրառելի է:

Պալատն այնուհետև որոշել է, որ կառավարությունը չի կարողացել համապատասխան հիմնավորում ներկայացնել ատենակալների ցուցակներում ընդգրկված կանանց սակավության վերաբերյալ, և, հետևաբար, խախտվել է 14-րդ հոդվածը՝ 4(3)(դ) հոդվածի համակցությամբ: Այնուամենայնիվ, մի քանի դատավորներ տարբեր չափով անհանգստություն են հայտնել 4-րդ հոդվածի տիրույթի մեկնաբանության վերաբերյալ: Իր համընկնող կարծիքում դատավոր Բրատցան նշել է, որ *Շմիդտի (Schmidt)* գործի պատճառաբանությունները, իր կարծիքով, «լիովին համոզիչ կամ բավարար չեն»:

Մինչդեռ, դատավոր Գառլիչկին իր համընկնող կարծիքում հայտնել է, որ ավելի վաղ ներկայացված պատճառաբանություններն իր համար համոզիչ չեն: Նա հավատացել է, որ.

…Ավելի լայն իմաստով 4-րդ հոդվածն ամբողջությամբ հնարավոր է ընթերցել ոչ միայն որպես որևէ ձևի հարկադիր կամ պարտադիր աշխատանքն արգելող հոդված, այլև որպես պետության՝ պարտադիր աշխատանքներ և ծառայություններ սահմանելու բացառիկ իրավունքը կարգավորող հոդված: Այլ կերպ ասած՝ 4-րդ հոդվածը կարող է ընթերցվել որպես դրույթ, որը սահմանում է այն պարտականությունների ընդհանուր շրջանակը, որոնք կարող են դրվել անձանց վրա: 4-րդ հոդվածն օժտում է պետությանն այսպիսի պարտականություններ և ծառայություններ սահմանելու իրավասությամբ, սակայն, քանի որ այն նաև թվարկում է դրանք, 4-րդ հոդվածը միևնույն ժամանակ ներառում է դրանք կոնվենցիայի շրջանակների մեջ: Դրանք ներառելու հետևանքներից մեկն այն է, որ այդ պարտականությունները կամ ծառայությունները պետք է ձևակերպվեն կոնվենցիայի, ներառյալ դրա 14-րդ հոդվածի հետ համատեղելի եղանակով: Չպետք է մոռանալ, որ 4-րդ հոդվածը կազմված է հատուկ ձևով. կոնվենցիայի որևէ այլ նյութական դրույթ այս կարգի թվարկումներ չի ընդգրկում: Սա կարող է նշանակել, որ կոնվենցիայի հեղինակները նախատեսել են, որ 4-րդ հոդվածը կարող է մեկնաբանվել առանձնահատուկ եղանակով:

Մի քանի փաստարկներ կարող են ապահովել 4-րդ հոդվածի նման լայն մեկնաբանությունը: Առաջին՝ այն ցույց է տալիս 4-րդ հոդվածի՝ որպես «ժողովրդավարական հասարակությունների հիմնարար արժեքներից մեկի» առանձնակի դիրքը: Երկրորդ՝ այն ավելի լավ է համապատասխանում պետության դրական պարտավորությունների հայեցակարգին. պետությանը ոչ միայն արգելվում է ներմուծել որևէ հարկադիր կամ պարտադիր աշխատանք, այլև պահանջվում է, որ պետությունը կարգավորի մյուս աշխատանքների և ծառայությունների շրջանակը և ձևը, որոնք կարող են դրվել առանձին քաղաքացիների վրա: Վերջապես, այն համապատասխանում է ժամանակակից հասարակություններում զարգացող միտումներին, թեև այժմ շատ դժվար է գտնել հարկադիր աշխատանքի կամ ստրկության «դասական» դեպքեր *(«Սիլիադինն ընդդեմ Ֆրանսիայի» (Siliadin v France (2005))* գործը մի այսպիսի թարմ օրինակ է), 4-րդ հոդվածի 3-րդ կետում թվարկված պարտավորությունների վերաբերյալ կարող են գոյություն ունենալ ավելի մեծ թվով վեճեր:

Դատավոր Կասադեվալն առարկել է.

2. Ինչպես և *Կարլհայնց Շմիդտի (Karlheinz Schmidt)* վճռի (որն ընդունվել է տասներկու տարի առաջ) առնչությամբ չհամընկնող կարծիք հայտնած դատավորները, ես չեմ պատկերացնում, թե ինչպես կարելի է 14-րդ հոդվածը, որը կախում ունի հռչակված իրավունքներից (տե՛ս վճռի 42-րդ պարբերությունը), կապել 4-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետին հետևյալ պատճառներով.

(ա) (դ) ենթակետը փաստորեն շեղում է հարկադիր կամ պարտադիր աշխատանքն արգելող ընդհանուր սկզբունքից,
(բ) 4-րդ հոդվածում նշված «հարկադիր կամ պարտադիր աշխատանքը չի ներառում «որևէ աշխատանք կամ ծառայություն, որը մտնում է սովորական քաղաքացիական պարտավորությունների մեջ» (տե՛ս վճռի 43-րդ պարբերությունը) և
(գ) ընդունված է, որ Մալթայում որպես ատենակալ ծառայելու պարտավորությունը մտնում է «սովորական քաղաքացիական պարտավորությունների» մեջ (տե՛ս վճռի 47-րդ պարբերությունը):

3. Շատ հստակ է, որ պրն Ջարբ Ադամիից 4-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով չի պահանջվել կատարել հարկադիր կամ պարտադիր աշխատանք, և այն ծառայությունը, որը նրանից պահանջել են իրականացնել, եղել է քաղաքացիական պարտավորություն, ինչպիսին է քրեական արդարադատությանը ծառայելը: Քանի որ դիմողն անկարող է մատնանշել կոնվենցիայով պաշտպանվող որևէ նյութական իրավունք (4-րդ հոդվածով չեն արգելվում այս կարգի քաղաքացիական պարտավորությունները), 14-րդ հոդվածի խնդիր չի կարող առաջ գալ:

Բացի այդ, նրա կարծիքով՝ դիմողի գանգատը եղել է «մակերեսային»: Հաշվի առնելով պալատի այս տարաբնույթ կարծիքները՝ մեծ պալատը կարող է հետագայում վերանայել 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի մեկնաբանությունները:

7 ՀՈԴՎԱԾ 5 ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ներածություն

Ազատության գաղափարը

.....

«Գուցարդին ընդդեմ Իտալիայի» (Guzzardi v Italy) A.39 (1980) 3 EHRR 333
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողին ոստիկանությունը կասկածում էր շատ լուրջ ապօրինի գործողությունների և մաֆիայի հրոսակախմբի անդամ լինելու մեջ: «Անվտանգությանը և հանրային բարոյականությանը վտանգ ներկայացնող անձանց» դեմ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ օրենսդրության շրջանակներում Միլանի տարածաշրջանային դատարանը հանձնարարել էր, որ դիմողը վերցվի հատուկ հսկողության տակ կղզու (Ասինարա) հարկադիր ռեզիդենտներին հատկացված հատվածում: Ուստիև, տասնվեց ամիս շարունակ դիմողը կցվել է մոտ 2,5 քառ. կմ մակերես ունեցող հատուկ տարածքի, որը կղզու վրա գտնվող փոքրիկ բնակավայրում է (Կալա Ռեալե) և բաղկացած էր նախկինում որպես բժշկական հաստատություն ծառայած մի շենքից, մի քանի ուրիշ շենքերից և ոստիկանության բաժնից, որտեղ նա պետք է օրը երկու անգամ ներկայանար: Երեկոյան ժամը 10-ից մինչև առավոտյան ժամը 7-ը նրա նկատմամբ գործել է պարետային ժամ: Այնուամենայնիվ, առկա են եղել մի շարք այլ տարրեր, որոնք այսպիսի ազատազրկումը դարձրել էին բանտում սովորական ազատազրկումից տարբեր:

Դիմողը պնդել է, որ խախտվել են 3-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածները և թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածը: Սեփական նախաձեռնությամբ հանձնաժողովն ուսումնասիրել է գործը 5-րդ հոդվածի տեսանկյունից: Այն միաձայն եզրակացրել է, որ տեղի է ունեցել 5(1) հոդվածի խախտում, սակայն այլ հոդվածների խախտում տեղի չի ունեցել:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

92. Դատարանը նշում է, որ «ազատության իրավունքի» հոչակմամբ 5-րդ հոդվածի 1-ին կետը նկատի ունի անձի ֆիզիկական ազատությունը: Այն նպատակ ունի երաշխավորել, որ որևէ մեկը կամայականորեն չի զրկվում այս ազատությունից: Ինչպես նշել են դատարանում հանդես եկող անձինք, այդ կետը չի վերաբերում միայն տեղաշարժվելու ազատության սահմանափակումներին: Այդ սահմանափակումներին անդրադարձ է արված Իտալիայի կողմից դեռևս չվավերացված թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածում: Որպեսզի հնարավոր լինի որոշել, թե արդյոք որևէ անձ 5-րդ հոդվածի իմաստով իրոք «զրկվե՞լ է իր ազատությունից», որպես ելակետ պետք է ընդունել նրա տվյալ իրավիճակը, ինչպես նաև պետք է ուշադրություն դարձնել մի շարք չափանիշների, ներառյալ՝ խնդրո առարկա միջոցառման ձևին, տևողությանը, ազդեցություններին և իրականացման եղանակիը (տե՛ս *Էնգելի* (Engel) վճիռը, 8 հունիսի 1976, շարք A, թիվ 22, էջ 24, պարբ. 58-9):

93. Ազատազրկման և ազատության սահմանափակման միջև տարբերությունը, այնուամենայնիվ, ինտենսիվության և ոչ թե բուն էության մեջ է: Այսուհանդերձ դասակարգման գործընթացը երբեմն դյուրին չէ, քանի որ որոշ սահմանային դեպքեր զուտ կարծիքի խնդիր են: Այնուամենայնիվ, դատարանը չի կարող խուսափել ընտրություն կատարելուց, ինչից էլ կախված է 5-րդ հոդվածի կիրառելիության հարցը:

94. Ինչպես և ամրագրված է 1956 թ. օրենքում ... հատուկ վերահսկողությունը, որն ուղեկցվում է նշված տարածքում պարտադիր բնակություն հաստատելու մասին կարգադրությամբ, ինքնին չի մտնում 5-րդ հոդվածի շրջանակների մեջ: Հանձնաժողովն ընդունել է սա. նա ուշադրություն է դարձել Կալա Ռեալեում պրն Գուցարդիի «իրական կացության վրա»... և նշել, որ 1977 թ. հոկտեմբերի 5-ին ինքն անընդունելի է համարել նույն դիմողի ներկայացրած թիվ 7960/77 գանգատը, որը վերաբերում էր Ֆորսում նրա կյանքի պայմաններին...

[Այնուամենայնիվ], սրանից չի բխում, որ նման միջոցառման իրականացումը երբեք չի կարող հանգեցնել «ազատազրկման», և տվյալ դեպքում իրականացման եղանակը միակ հարցն է, որը ենթակա է քննության...

95. Կառավարության պատճառաբանությունն անհիմն չէ: Այն հստակ ցույց է տալիս Ասինարայում դիմողի նկատմամբ դրսևորված վերաբերմունքի և դասական բանտային պայմաններում ազատազրկման կամ զինծառայողի խիստ ձերբակալության տարբերությունների աստիճանը (տե՛ս *Էնգելի* (Engel) վերը նշված վճիռը, էջ 26, պարբ. 63): Ազատազրկումը կարող է, այնուամենայնիվ, ունենալ տարբեր ձևեր: Դրանց քանակն ավելանում է իրավական չափորոշիչների և մոտեցումների զարգացման արդյունքում: Եվ կոնվենցիան պետք է մեկնաբանվի ներկայումս ժողովրդավարական հասարակություններում գերակշռող հասկացություններին համապատասխան (տե՛ս հատկապես *Թայրերի* (Tyrer) 1978 թ. ապրիլի 25-ի վճիռը, շարք A, թիվ 26, էջ 15-16, պարբ. 31):

Թեպետ այն տարածքը, որտեղով դիմողը կարող էր տեղաշարժվել, բանտախցի չափսերից շատ ավելի մեծ էր և ֆիզիկական արգելքով սահմանափակված չէր, ընդգրկում էր ընդամենը կղզու չնչին հատվածը, որին հասնելը դժվար էր, և որի ինը տասներորդ մասը զբաղեցրել էր բանտը: Պրն Գուցարդին բնակեցվել է Կալա Ռեալե գյուղակի այն հատվածում, որտեղ հիմնականում գտնվում էին նախկին բժշկական հաստատության շենքերը (որոնք անխնամ և վթարային վիճակում էին), կարաբինների կայանը, դպրոցը և ժամատունը: Նա այնտեղ ապրել է սկզբունքորեն նույն ռեժիմի տակ գտնվող այլ անձանց և ոստիկանների հետ: Ասինարայի հիմնական բնակչությունը ապրում էր Կալա դ'Օլիվիայում, ուր պրն Գուցարդին չէր կարող այցելել: Թվում է, թե նա երբևէ չի օգտագործել Կալա Ռեալե գնալու իր իրավունքը: Հետևաբար, բացի ընտանիքի անդամների, նույն վիճակում գտնվող այլ «ռեզիդենտների» և հսկիչ անձնակազմի հետ շփումներից, դիմողը սոցիալական այլ շփումների խիստ սահմանափակ հնարավորություններ է ունեցել: Վերահսկողությունն իրականացվել է խստորեն և գրեթե մշտապես: Այսպիսով, առանց իրավասու մարմիններին ճիշտ ժամանակին տեղեկացնելու, պրն Գուցարդին չէր կարող լքել իր կացարանը գիշերվա ժամը 10-ից մինչև առավոտվա ժամը 7-ը: Նա օրը երկու անգամ պետք է ներկայանար իրավասու մարմիններին և հայտներ նրանց իր անունը, իսկ ամեն անգամ, երբ ցանկանում էր օգտվել հեռախոսից, նաև՝ իր զրուցակցի համարը: Սարդինիա կամ մայրցամաք մեկնելու համար նա ամեն անգամ պետք է ստանար իրավասու մարմինների համաձայնությունը: Սրանք [ուղևորությունները], սակայն, հազվադեպ էին և, հասկանալի է, կարաբիներների խիստ հսկողության տակ: Իր պարտականությունների կատարման մեջ թերանալու դեպքում նա ենթարկվել է պատժի, որը ունեցել է «ձերբակալության» բնույթ: Վերջապես, Կալա Ռեալե նրա գալուց հետո մինչև Ֆորս մեկնելու ժամանակն անցել է տասնվեց ամիս...

Ամենայն հավանականությամբ, «ազատազրկման մասին» խոսք լինել չի կարող, եթե այս գործոնները դիտարկվեն առանձին-առանձին, սակայն միասին անշուշտ առաջացնում են 5-րդ հոդվածի տեսանկյունից դասակարգման խնդիր: Որոշ առումներով գանգատում ներկայացված վերաբերմունքը նմանվում է «բաց բանտում» բանտարկության կամ անձին կարգապահական հաստատությունում պահելուն (տե՛ս *Էնգելի* (Engel) վերը նշված վճիռը, էջ 26, պարբ. 64)...

Դատարանը հանրագումարում որոշում է, որ տվյալ դեպքը պետք է համարվի ազատազրկում…

96. Մնում է որոշել, թե արդյոք սա այն իրավիճակներից մե՞կն է, որը մանրամասն ներկայացված է կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետում (տե՛ս *Վինտերվերպի* (Winterwerp) 1979 թ. հոկտեմբերի 24-ի վճիռը, շարք A, թիվ 33, էջ 16, պարբ. 37), և որի դեպքում պայմանավորվող պետություններն անձանց ձերբակալելու կամ կալանավորելու իրավունք ունեն...

[Դատարանը մերժել է կառավարության փաստարկը, համաձայն որի դիմողը 5(1)(ե) հոդվածի իմաստով հանդիսանում էր «թափառական»]:

100. Ճիշտ վերլուծելու դեպքում պրն Գուցարդիի պարտադիր բնակեցումը ոչ թե կատարած օրինախախտման դիմաց նրան նշանակված պատիժ է, այլ կասեցնող միջոցառում՝ հիմք ընդունելով հանցագործություն կատարելու նրա ընդունակության վերաբերյալ եղած ցուցմունքների ծանրակշռությունը...

Դատարանի կարծիքով՝ 5(1)(ա), 6(2) և 7(1) հոդվածների համեմատությունը ցույց է տալիս, որ մինչև օրենքով չհիմնավորվի, որ կատարվել է օրինախախտում, լինի դա քրեական թե կարգապահական բնույթի օրինախախտում, կոնվենցիայի նպատակների համար condamnation [դատապարտում] (անգլերեն տեքստում՝ conviction) չի կարող գոյություն ունենալ (տե՛ս վերը նշված *Էնգելի (Engel)* վճիռը, էջ 27, պարբ. 68): Բացի այդ, որպես կանխարգելիչ կամ անվտանգության միջոցառում՝ «դատապարտումը» չի բխում ո՛չ այս ոլորտում պահպանման ենթակա նեղ մեկնաբանության սկզբունքից (տե՛ս պարբ. 98), ո՛չ էլ այն փաստից, որ այդ բառը ենթադրում է, որ մեղավորությունն ապացուցված է...

101. Ազատազրկումը, որի վերաբերյալ գանգատ է ներկայացվել, ընդգրկված չէ (բ) ենթակետում:

Հայտնի է, որ 1956 թ. օրենքով հաստատված ընթացակարգի համաձայն՝ դատական որոշումները սանկցիաներ են, որոնք կիրառվում են նախազգուշացմանը (deffida) չհետևելու պատճառով, սակայն նախազգուշացումը պարտադիր չէ, եթե ինչպես սույն գործում, հղում է կատարվում 1965 թ. օրենքին: Բացի այդ, նախազգուշացում տալիս է ոստիկանության բաժնի պետը, և այն «դատարանի կարգադրություն» չէ...

Ինչ վերաբերում է «ապահովել օրենքով նախատեսված պարտականության կատարումը» արտահայտությանը, ապա դրանք վերաբերում են միայն այն դեպքերին, երբ «առանձնահատուկ և կոնկրետ» պարտավորության հարկադրական կատարումն ապահովելու համար օրենքը թույլ է տալիս հրաժարվող անձին կալանավորել (տե՛ս վերը նշված *Էնգելի (Engel)* վճիռը, էջ 28, պարբ. 69): Այնուամենայնիվ, հանձնաժողովն իրավացիորեն շեշտել է, որ 1956 և 1965 թթ. օրենքները նախատեսում են ընդհանրական պարտավորություններ...

102. Դիմողը չի էլ եղել (գ) ենթակետում ներկայացված իրավիճակներից որևէ մեկում:

Ճիշտ է, որ գոյություն է ունեցել «ողջամիտ կասկած, որ [նա] կատարել է հանցավոր արարք», և այն ողջ ժամանակահատվածում, որ նա գտնվել է Ասինարայում, արժանացել է մեղադրանքների, սակայն տարածքային դատարանի (30 հունվարի, 1975 թ.), վերաքննիչ դատարանի (12 մարտի, 1975 թ.) և վճռաբեկ դատարանի (6 հոկտեմբերի, 1975 թ.) որոշումները [որոնք թույլատրել են նրան կալանավորել Ասինարայում] օրենքով որևէ կապ չեն ունեցել նրա նկատմամբ հետաքննության հետ: Դրանք հիմնված են եղել 1956 և 1965 թթ. օրենքների վրա, որոնք կիրառելի են անկախ այն հանգամանքից՝ մեղադրանք հարուցվա՞ծ է, թե՞ ոչ, և հետագայում «իրավասու իրավական ատյանին» ներկայանալու պահանջ չեն դնում...

Առաջին հայացքից ավելի հավանական է այն վարկածը, որ գանգատում ներկայացված միջոցը ձեռնարկվել է, քանի որ «ողջամտորեն անհրաժեշտ է համարվել կանխել [պրն Գուցարդիի] հանցագործություն կատարելը կամ, առավելագույնը, «դա անելուց հետո փախուստի դիմելը»: Այնուամենայնիվ, այդ դեպքում ևս հարց է ծագում միջոցառման «օրինականության» վերաբերյալ, քանի որ միայն 1956 և 1965 թթ. օրենքների հիման վրա [նրա վրա դրված պարտադիր բնակության] պահանջը, մի կողմ թողնելով դրա իրականացման ձևը, ինքնին ազատազրկում չէ (տե՛ս վերը՝ պարբ. 94): Հարկ է նաև ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե արդյոք պահպանվե՞լ է 5-րդ հոդվածի 3-րդ կետը (տե՛ս *Լոլեսի (Lawless)* վճիռը, 1 հուլիսի, 1961 թ., շարք A, թիվ 3, էջ 51-3, պարբ. 13-14): Ամեն դեպքում, ուսումնասիրվող արտահայտությունը չի հարմարեցվում անձի կամ անձանց կատեգորիայի (ինչպես, օրինակ՝ հանցագործություն կատարելու շարունակական ընդունակության պատճառով սպառնալիք ներկայացնող «մաֆիոզիների») դեմ ուղղված կանխարգելիչ քաղաքականությանը: Անդամ պետությունների համար այն ավելին չէ, քան կոնկրետ և առանձնահատուկ հանցագործությունը կանխելու միջոց: Սա անկնհայտ է, ինչպես գործածված եզակի թվից (an offence [հանցագործություն], ֆրանսերեն տեքստում՝ celle-ci՝, տե՛ս *Մաթցներների (Matznetter)* 1969 թ. նոյեմբերի 10-ի վճիռը, շարք A, թիվ 10, էջ 40 և 43, պրն Բալլադորե Պալիերիի և պրն Զեքիայի առանձին կարծիքները), այնպես էլ 5-րդ հոդվածի առարկայից, որը երաշխավորում է, որ որևէ անձ կամայական ձևով չպետք է զրկվի իր ազատությունից (տե՛ս վերը նշված *Վինտերվերպի* (Winterwerp) վճիռը, էջ 16, պարբ. 37)...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ...

4. Վճռում է տասնմեկ կողմ և յոթ դեմ ձայներով, որ տվյալ դեպքում տեղի է ունեցել ազատազրկում՝ համաձայն կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստի:

5. Միաձայն վճռում է, որ նշված ազատազրկումն արդարացված չի եղել 5-րդ հոդվածի 1-ին կետի (ե) ենթակետի կամ (բ) ենթակետի շրջանակներում:

6. Տասնվեց կողմ և երկու դեմ ձայներով վճռում է, որ այդ ազատազրկումը նաև արդարացված չի եղել (ա) ենթակետի շրջանակներում:

7. Տասներկու կողմ և վեց դեմ ձայներով վճռում է, որ նշված ազատազրկումն արդարացված չի եղել նաև (գ) ենթակետի շրջանակներում:

8. Վճռում է ամփոփում է, տասը կողմ և ութ դեմ ձայներով, որ 1975 թ. փետրվարի 8-ից մինչև 1976 թ. հուլիսի 22-ը դիմողը հանդիսացել է 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտման զոհ...

Սըր Զերալդ Ֆիտցմորիսի չհամընկնող կարծիքը.

8. Սկզբունքորեն, դիմողը ոչ թե գտնվել է բանտարկության մեջ կամ պահվել փակի տակ, այլ արտաքսված է եղել մի կղզի, որտեղ նրան տրամադրել են կացարան (սովորական տուն) և սահմանափակել նրան բավականին մեծ տարածքում, որպեսզի նա կարողանա ապրել նորմալ կյանքով: Բացառությունը եղել է այն, որ նա չէր կարող առանց թույլտվության դուրս գալ այդտեղից և գտնվել է (և այդ նպատակով պետք է գտնվեր) հսկողության տակ: Ինձ համար այս ամենն ավելի կարևոր է [թիվ 4] արձանագրության 2-րդ հոդվածի, քան թե կոնվենցիայի 5-րդ հոդվածի շրջանակներում, թեպետ որոշ

կասկած կարող է մնալ: Սակայն նույնիսկ այդ դեպքում մի՞թե ավելի ճիշտ է քննադատել կառավարությանը կոնվենցիայի խախտում թույլ տալու մեջ, երբ միանգամայն ողջամիտ կասկած կա, թե արդյո՞ք նման բան տեղի է ունեցել ...

11. Այս կապակցությամբ և ընդհանրապես ես կարծում եմ, որ դատարանը չի կարողացել պատշաճ նշանակություն տալ (եթե առհասարակ նշանակություն տրվել է) այն փաստին, որ դիմողը եղել է ահաբեկիչ և մաֆիոզի (mafioso): Բնականաբար, այս գործոնները չեն արդարացնում նրա նկատմամբ այնպիսի վերաբերմունքի դրսևորումը, որը հստակորեն կամ զգալի չափով հակասում է կոնվենցիային: Սակայն, եթե հիմքեր կան կասկածելու, որ տեղի է ունեցել փաստացի խախտում, ապա այս գործոնները, թեպետ որոշիչ չեն, կարող են օրինականորեն հաշվի առնվել (և ես սրանց ավելի մեծ նշանակություն չեմ տալիս), երբ որոշվում է, թե ինչպես փարատել այդ կասկածը: Կրկնում եմ, ես սա ավելի բարձր չեմ դասում: Տվյալ դեպքում, այնուամենայնիվ, դատարանը լիովին անտեսել է Իտալիայի կառավարության հայտարարությունը, համաձայն որի՝ քաղաքական ահաբեկչության և մաֆիայի սպառնալիքների պատճառով այդ ժամանակ Իտալիայում հասարակական կարգի պահպանությունը վտանգված էր, և իշխանությունները հայտնվել էին լուրջ ճնշման տակ՝ պայքարել այդ չարիքի դեմ շատ խիստ միջոցներով: Ճնշումը, որին նրանք մինչ այդ պահը դիմադրել են, ակնհայտ է *Գուցարդիի* գործից. սկզբում նրա նկատմամբ վերաբերմունքը եղել է խիստ մեղմ, ինչպես նկարագրված է վերը՝ 8-րդ պարբերությունում...

12. Ամբողջ համատեքստը սկզբունքորեն անտեսելու գործընթացը, այն դեպքում, երբ տվյալ դեպքը կապված է դրա հետ, անպայման հանգեցնելու է անարդարությունների և անհեթեթությունների... Սույն գործը, փաստորեն, լի է անհեթեթություններով: Սրա մեկ այլ դրսևորումն այն է, որ ինչպես նշել է Իտալիայի կառավարությունը, եթե կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (ե) ենթակետի համաձայն՝ թափառաշրջիկը կարող է կալանավորվել միայն այն բանի համար, որ թափառաշրջիկ է, և սա չի հակասի կոնվենցիային, ապա հայտնի ահաբեկչի տեղաշարժերը չեն կարող սահմանափակվել այնպիսի պայմաններում, որոնք կիրառվել են Գուցարդիի նկատմամբ, առանց նման խախտում առաջացնելու, եթե դատարանի վճիռը ճիշտ է: Ինչ խոսք, ժամանակին, երբ կոնվենցիայի հեղինակները գրում էին կոնվենցիան, ահաբեկչությունն այն չարիքը չէր: Կրկնում եմ, ճիշտ է, որ այս թերությունը կառավարությունները պետք է շտկեն. դատարանը չի կարող այդպես վարվել՝ համարելով, որ ահաբեկիչը թափառաշրջիկ է, չնայած փաստացի նա շատ ավելի վատն է, քան թափառաշրջիկը (որը, ի տարբերություն ահաբեկչի, կարող է լինել անվնաս անձնավորություն): Սակայն սա չի փոխում այն իրողությունը, որ դատարանի վճռից առաջացած այսպիսի իրադրության դեպքում ահաբեկիչը կարող է շատ ավելի լավ վիճակում լինել, քան թափառաշրջիկը: (Նրան կարող են նույնիսկ վճարել մեկ միլիոն լիրա): Այս բոլոր անհեթեթությունները կարող էին շրջանցվել, եթե գործի բնույթի նկատմամբ դրսևորվեր ավելի մեծ իրատեսություն, ինչը կհանգեցներ այն եզրակացության, որ այդ գործը սկզբունքորեն տեղաշարժվելու և բնակության վայրի վրա դրված սահմանափակում է (որը լրջորեն հիմնավորվում է առկա փաստերով), և ոչ կոնվենցիայի 5-րդ հոդվածի շրջանակներում ազատության սահմանափակում, և պետք է մեկնաբանվի թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Վիարդան և դատավորներ Բալլադորե Պալիերին, Զեքիան, Վիլջաուլմսոնը, Ռիսդալը, Վան դեր Մերշը, սըր Զերալդ Ֆիտցմորիսը, Բինդշեդլեր-Ռոբերտը, Թայթգենը, Լագերգրենը, Լիշը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Պինեյրո Ֆարինան, Գարսիա դե Էնտեռիան և Ուոլշը: Դատավոր Ֆիտցմորիսից բացի, չհամընկնող կարծիք են ներկայացրել դատավորներ Բալլադորե Պալիերին, Զեքիան, Կրեմոնան, Բինդշեդլեր-Ռոբերտը, Թայթգենը, Գարսիա դե Էնտեռիան և Պինեյրո Ֆարինան:

Դատավոր Մաթշերը ներկայացրել է մասնակի չհամընկնող կարծիք:

2 Ինչպես ցույց է տալիս *Գուցարդիի* (Guzzardi) գործը, ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի իմաստով ազատազրկման և տեղաշարժվելու ազատության սահմանափակումը, որը կախում ունի միայն ՄԻԵԿ-ի թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածից, բանտարկության «աստիճանի և ուժգնության» խնդիր է: Դատարանի կողմից վկայակոչվող թիվ 7960/77 դիմումի համաձայն՝ նույն դիմողը սահմանափակված է եղել մեծ կղզում գտնվող գյուղում, որտեղ նա ունեցել է կյանքի նույն պայմանները, ինչ մյուս բնակիչները: Հանձնաժողովը որոշել է, որ 5-րդ հոդվածի կիրառության համար այս գործում բավական խիստ կալանք չի եղել:

3 Կան այլ գործեր, որոնցում խնդիրը եղել է ազատության սահմանափակման խստությունը: *«Էնգելն ընդդեմ Նիդեռլանդների» (Engel v Netherlands, A 22 (1976) 1 EHRR 647)* գործում կարգապահական օրինախախտումներ կատարելու համար փակ խցում զինվորին կալանքի տակ պահելը («ուղղակի ձերբակալություն») մտել է 5-րդ հոդվածի շրջանակների մեջ, իսկ զորանոցներում ոչ ծառայողական ժամերին չկողպված շենքում պահելը («խստացված ձերբակալություն»)՝ ոչ:

4 *«Ամուրն ընդդեմ Ֆրանսիայի» ((Amuur v France) (1996) 22 EHRR 533, 1996-III 826)* գործով դիմողները, որոնք Սոմալիի քաղաքացիներ էին, հեղափոխությունից հետո, վախենալով իրենց կյանքի համար, փախել էին Սոմալիից՝ Փարիզի «Օռլի» օդանավակայան ժամանելով Սիրիայից: Նրանց թույլ չեն տվել մուտք գործել Ֆրանսիա, քանի որ նրանք ունեցել են կեղծ անձնագրեր: Մինչ նրանց ապաստան ստանալու դիմումները եղել են քննարկման փուլում, նրանց պահել են օդանավակայանի միջազգային տարանցիկ գոտում: 20 օր անց նրանց դիմումները մերժվել են, և նրանց ինքնաթիռով հետ են ուղարկել Սիրիա: Այս ողջ ընթացքում նրանք իրենց ընտրած թռիչքով ազատորեն կարող էին մեկնել օդանավակայանից որևէ այլ պետություն, որը պատրաստ էր ընդունելու նրանց: Եվրոպական դատարանը միաձայն որոշել է, որ դիմողները 20 օր շարունակ գտնվել են 5-րդ հոդվածի իմաստով կալանքի տակ: Դատարանը հայտարարել է.

43. Օտարերկրացիներին միջազգային գոտում պահելն իրոք ներառում է ազատության սահմանափակում, որը բոլոր առումներով չէ, որ համադրելի է նախքան արտաքսումը օտարերկրացիների համար նախատեսված կալանավորման կենտրոններում անձանց ազատության սահմանափակման հետ: Այսպիսի տարածքային սահմանափակումը, որն ուղեկցվում է խնդրո առարկա անձանց տրամադրվող համապատասխան երաշխիքներով, ընդունելի է միայն պետություններին անօրինական ներգաղթի կանխման հնարավորություններ տալու տեսանկյունից, ընդ որում՝ այդ պետությունները պետք է պահպանեն իրենց միջազգային պարտավորությունները և հատկապես 1951 թ. Փախստականների կարգավիճակի մասին Ժնևի կոնվենցիայով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները: Պետությունների օրինական մտահոգությունը, այն է՝ կասեցնել ներգաղթի սահմանափակումները շրջանցելու ավելացող փորձերը, չպետք է զրկի ապաստան փնտրող անձանց այս կոնվենցիաներով նրանց տրամադրվող պաշտպանությունից:

Այս պայմաններում անձին պահելը չպետք է լինի չափից ավելի երկարատև, այլապես վտանգ կա, որ այն կվերածվի զուտ ազատության սահմանափակման, ինչն անխուսափելի է՝ հաշվի առնելով օտարերկրացիների հայրենադարձության կազմակերպման գործնական մանրամասները, կամ էլ՝ ազատազրկման, երբ նա ապաստան է խնդրում, և երկրի տարածք մուտք գործելու նրա դիմումը դեռևս քննարկման փուլում է: Այս առումով պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ այս միջոցառումը կիրառվում է ոչ թե քրեական արարքներ կատարած անձանց, այլ օտարերկրացիների նկատմամբ, որոնք, ավելի շուտ իրենց կյանքի համար ունեցած վախից ելնելով, դիմել են իրենց երկրից փախուստի:

Թեպետ հանգամանքների բերումով նրանց կասեցնելու կարգադրության մասին որոշումը պարտադիր պետք է ընդունվի վարչական կամ ոստիկանական մարմինների կողմից, դրա երկարացման համար պահանջվում է, որ դատարանները (որոնք անձի ազատությունների ավանդական պահապաններն են) իրականացնեն արագացված վերանայման գործընթաց: Նախ և առաջ, այսպիսի ազատազրկումը չպետք է զրկի ապաստան փնտրողին փախստականի կարգավիճակի մասին որոշում կայացնելու ընթացակարգից արդյունավետորեն օգտվելու իրավունքից...

45. Դատարանը նկատում է, որ այդ ժամանակահատվածի [20 օր] զգալի մասը դիմողները, որոնք հայտարարել են, որ իրենք փախստականներ են, մատնված են եղել ինքնահոսի: Նրանք գտնվել են ոստիկանության խիստ և մշտական հսկողության տակ և մինչև մարտի 24-ը չեն ստացել որևէ իրավաբանական և սոցիալական օժանդակություն (մասնավորապես, քաղաքական ապաստան փնտրող փախստականների կարգավիճակին վերաբերող փաստաթղթերի լրացման առումով), մինչև ինչ-որ մարդասիրական ընկերակցություն տեղեկացել է միջազգային գոտում նրանց գտնվելու մասին և կապ ստեղծել նրանց փաստաբանի հետ: Բացի այդ, մինչև մարտի 26-ը դատարանի կողմից չի վերանայվել ո՛չ փակ տարածքում նրանց պահելու անհրաժեշտությունը, ո՛չ էլ դրա տևողությունը...

48. Միայն այն փաստը, որ ապաստան փնտրողները կարող են կամավոր թողնել երկիրը և մեկնել այլ երկիր, որտեղ նրանք ցանկանում են ապաստան փնտրել, չի կարող բացառել ազատության սահմանափակումը, իսկ երկիրը թողնելու իրավունքը, ներառյալ սեփական երկիրը թողնելու իրավունքը, երաշխավորված է նաև կոնվենցիայի թիվ 4 արձանագրությամբ: Բացի այդ, այս հնարավորությունը դառնում է տեսական հնարավորություն, եթե որևէ այլ երկիր, որը կարող է առաջարկել նրանց այնպիսի պաշտպանություն, որը համեմատելի է նրանց ակնկալած պաշտպանության հետ, մտադիր չէ կամ պատրաստ չէ ընդունել նրանց:

Մի կողմ թողնելով ճամփորդության հետ կապված գործնական խնդիրները՝ դիմողներին Սիրիա հետ ուղարկելը հնարավոր է դարձել միայն Ֆրանսիայի և Սիրիայի կառավարությունների միջև բանակցությունների արդյունքում: Վերջինիս հավաստիացումները կախված են եղել դիվանագիտական հարաբերությունների հնարքներից՝ նկատի ունենալով այն փաստը, որ Սիրիան Փախստականների կարգավիճակի մասին Ժնևի կոնվենցիայի անդամ չէ:

49. Դատարանը եզրակացնում է, որ դիմողներին Փարիզի «Օռլի» օդանավակայանի տարանցիկ գոտում պահելը գործնականում հավասարազոր է եղել ազատազրկման՝ հաշվի առնելով նրանց վրա դրված սահմանափակումները: Այդ իսկ հիմքեր, տվյալ դեպքում 5-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է...

Այնուհետև, դատարանը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել 5(1) հոդվածի խախտում: Նա հայտարարել է.

50. … Ամրագրելով, որ ամեն անգամ ազատազրկումը պետք է իրականացվի «օրենքով սահմանված կարգով», 5(1) հոդվածը նախ պահանջում է, որ ցանկացած ձերբակալություն կամ կալանավորում բխի ներպետական օրենսդրության մեջ ամրագրված օրինական հիմքից: Այնուամենայնիվ, այս բառերը զուտ ներպետական օրենսդրությանն արվող հղում չեն: Ինչպես և 8-11-րդ հոդվածների 2-րդ կետերում հանդիպող «նախատեսված են օրենքով» և «սահմանված են օրենքով» արտահայտությունները, դրանք ևս վերաբերում են օրենքի որակին՝ պահանջելով, որ այն համահունչ լինի օրենքի գերակայության սկզբունքին, որը մի հայեցակարգ է, որը հանդիպում է կոնվենցիայի բոլոր հոդվածներում:

Որպեսզի դատարանը հավաստիանա, որ ազատազրկումը համապատասխանել է ներպետական օրենսդրության սկզբունքին, պետք է գնահատի ոչ միայն տվյալ ոլորտում գործող օրենսդրությունը, այլև այդ անձանց նկատմամբ գործող այլ իրավական կանոնների որակը: Այս առումով որակը նշանակում է, որ այն դեպքերում, երբ ազատազրկումը և հատկապես՝ օտարերկրացի ապաստան փնտրողների ազատազրկումը թույլատրված է ներպետական օրենսդրությամբ, այն պետք է բավականաչափ մատչելի և հստակ լինի, որպեսզի բացառի կամայականության վտանգը: Այս առանձնահատկությունները հիմնարար կարևորություն ունեն օդանավակայաններում ապաստան փնտրողների առումով, մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա է հիմնարար ազատությունները և պետությունների ներգաղթի քաղաքականության պահանջները ներդաշնակեցնելու անհրաժեշտություն...

52. Դատարանը նկատում է, որ թեպետ 1945 թ. նոյեմբերի 2-ի հրամանագրի իմաստով դիմողները չեն գտնվել Ֆրանսիայում, Փարիզի «Օռլի» օդանավակայանի միջազգային գոտում պահվելու արդյունքում նրանք դարձել են Ֆրանսիայի օրենքի սուբյեկտ:

Իր անվանը հակառակ, միջազգային գոտին արտատարածքային (extraterritorial) կարգավիճակ չունի: 1992 թ. փետրվարի 25-ի որոշման մեջ Սահմանադրական խորհուրդը չի վիճարկել, որ օրենսդիր մարմինն իրավունք ունի սահմանելու կանոններ, որոնք վերաբերում են օտարերկրացիներին այդ գոտում պահելուն: Օրինակ՝ 1992 թ. հուլիսի 6-ի օրենքը սահմանում է, ի թիվս այլոց, որ սովորական դատարանները կարող են միջամտել և թույլատրել, որ նրանք պահվեն չորս օրից ավելի, օգտվեն բժշկի, թարգմանչի օժանդակությունից և փաստաբանի հետ հաղորդակցվելու հնարավորությունից: 1992 թ. դեկտեմբերի 15-ի հրամանը ... սահմանում է այդ օրենքի շրջանակներում սկսված վարույթի նկատմամբ կիրառելի ընթացակարգային կանոնները: 1995 թ. մայիսի 2-ի որոշումը ... հնարավորություն է տալիս ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարին կամ նրա ներկայացուցիչներին և մարդասիրական կազմակերպություններին մշտապես մուտք գործելու տարածք:

Այնուամենայնիվ, այս կանոնները, որոնք ընդունվել են ավելի ուշ, քան տեղի է ունեցել այս դեպքը, դիմողների նկատմամբ այդ ժամանակ կիրառելի չեն եղել:

53. Դատարանը շեշտում է, որ 1992 թ. մարտի 9-ից մինչև մարտի 29-ը դիմողները եղել են ապաստան փնտրողների վիճակում, և նրանց դիմումը դեռևս քննարկված չի եղել: Այդ կապակցությամբ ո՛չ 1982 թ. մայիսի 27-ի որոշումը, ո՛չ էլ 1990 թ. հունիսի 26-ի չհրապարակված շրջաբերականը (տվյալ ժամանակ եղած միակ տեքստը, որը որոշակի ձևով անդրադարձել է օտարերկրացիներին տարանցիկ գոտում պահելու գործելակերպին) դատարանի նախադեպային իրավունքի իմաստով բավարար «որակ» ունեցող «օրենք» չեն եղել. ներպետական օրենսդրությունը պետք է ապահովեր հանրային մարմինների կամայական միջամտություններից կոնվենցիայով երաշխավորված իրավունքների պատշաճ իրավական պաշտպանությունը (տե՛ս *«Մալոունն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Malone v UK)* վճիռը, 1984 թ. օգոստոսի 2, շարք A, թիվ 82, էջ 32, պարբ. 67): Ամեն դեպքում, 1982 թ. մայիսի 27-ի որոշումը չի վերաբերում օտարերկրացիներին միջազգային գոտում պահելուն: Նշված շրջաբերականն ըստ էության բաղկացած է եղել ներքին գործերի նախարարի կողմից պրեֆեկտներին և գլխավոր կոնստաբլներին տրված հրահանգներից, որոնք վերաբերել են սահմանն անցնելու թույլտվություն չստացած օտարերկրացիներին: Այն նպատակ է ունեցել նավահանգիստներում և օդանավակայաններում ծառայել որպես ներգաղթի հսկողության ուղեցույց: Բացի այդ, նրա մեջ ընդգրկված բաժինը, որը նվիրված է միջազգային գոտում պահելուն և օտարերկրացիների իրավունքներին, չի բովանդակում երաշխիքներ, որոնք համեմատելի են 1992 թ. հուլիսի 6-ի օրենքի հետ: Տվյալ ժամանակահատվածում այս տեքստերից ոչ մեկը հնարավորություն չի տվել սովորական դատարաններին վերանայելու օտարերկրացիներին պահելու պայմանները կամ,

անհրաժեշտության դեպքում, սահմանափակում դնելու վարչական մարմինների վրա՝ նրանց պահելու ժամկետների առումով: Դրանք չեն ապահովել իրավական, մարդասիրական կամ սոցիալական օժանդակություն և ոչ էլ սահմանել են նման օժանդակությունից օգտվելու ընթացակարգերը և ժամանակի սահմանափակումները, որպեսզի ապաստան փնտրողները կարողանան անհրաժեշտ քայլեր ձեռնարկել:

54. Ֆրանսիայի գործող իրավական կանոնները այն ձևով, որով որ նրանք կիրառվել են ներկա դեպքում, բավականաչափ չեն երաշխավորել դիմողների ազատության իրավունքը:

Հետևաբար, տեղի է ունեցել 5(1) հոդվածի խախտում:

5 *«Նիլսենն ընդդեմ Դանիայի» (Nielsen v Denmark, A.144 (1988) 11 EHRR 175)* գործի դեպքում 12 տարեկան տղան մոր պահանջով (որը երեխայի նկատմամբ ուներ միայնակ ծնողի իրավունքներ) հինգ ամիս շարունակ պահվել է մանկական հոգեբուժական բաժանմունքում, երբ բժիշկն ասել է, որ երեխան «նյարդային» է մեծանում: Նրա ծնողներն ապրում էին առանձին, և երեխան հայտնել է, որ ինքը կցանկանար ապրել հոր հետ: Ինը կողմ և հինգ դեմ ձայներով Եվրոպական դատարանը որոշել է, որ 5-րդ հոդվածը կիրառելի չէ: Նա հայտարարել է.

72. Դատարանը, ինչպես և կառավարությունը, ընդունում է, որ ծնողական իրավունք ունեցող անձի իրավունքները չեն կարող են լինել անսահմանափակ, և պետությունը պարտավորություն ունի ապահովելու երաշխիքներ, որոնք ուղղված են չարաշահումների դեմ: Այնուամենայնիվ, դրանից չի բխում, որ տվյալ գործը մտնում է 5-րդ հոդվածի շրջանակների մեջ:

Դիմողի վրա դրված սահմանափակումները այնպիսի բնույթի կամ աստիճանի սահմանափակումներ չեն եղել, որոնք նման են 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված ազատազրկման դեպքերին: Մասնավորապես, նա չի պահվել որպես հոգեկան հիվանդ անձ, ինչի արդյունքում այս գործը կմտներ 1(ե) կետի շրջանակների մեջ: 1938 թ. օրենքի համաձայն՝ երեխան ոչ միայն հոգեկան հիվանդ չէր, այլև հիվանդանոցի հոգեբուժական բաժանմունքը փաստորեն չէր օգտագործվում 1938 թ. օրենքի համաձայն պսիխոտիկ բնույթի հոգեկան հիվանդություններ ունեցող անձանց բուժման նպատակով: Իրավամբ, այն սահմանափակումները, որոնց ենթակա է եղել դիմողը, չեն եղել ավելին, քան հիվանդանոցում բուժվող 12 տարեկան երեխայի խնամքի նորմալ պահանջները: Այն պայմանները, որոնցում դիմողը պահվել է, այսպիսով, սկզբունքորեն չեն տարբերվել այն պայմաններից, որոնք գոյություն ունեն բազմաթիվ այլ հիվանդանոցային բաժանմունքներում, որտեղ իրականացվում է ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների բուժումը:

Ինչ վերաբերում է իրեն հիվանդանոցում տեղավորելու վերաբերյալ դիմողի տեսակետներին տրվելիք նշանակությանը, ապա դատարանը կարծում է, որ նա եղել է դեռևս այն տարիքում, երբ նորմալ է համարվում, որ նրա համար որոշում կայացներ նրա ծնողը, եթե նույնիսկ դա երեխայի ցանկություններին հակառակ որոշում է: Որևէ փաստ չկա մորն անբարեխղճության մեջ կասկածելու համար: Նրա կողմից հոսպիտալացման մասին որոշումը կայացվել է մասնագիտական բժշկական խորհրդատվության հիման վրա: Դիմողի երեխային հիվանդանոցում տեղավորելու համար ծնողական իրավունքներն իրականացնող անձի պահանջը պետք է բավարար լինի, ինչն անվերապահորեն այնպիսի գործ չէ, որը մտնում է 5-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակների մեջ:

Դրա մեջ չի մտնում նաև ոստիկանության միջամտությունը, ինչը նպատակահարմար է փախուստի դիմած այդ տարիքի երեխային ծնողի խնամակալությանը վերադարձնելու համար և միանգամայն այլ լույս է սփռում այս իրավիճակի վրա:

73. Դատարանը եզրակացնում է, որ դիմողի հոսպիտալացումը 5-րդ հոդվածի իմաստով հավասար չի եղել ազատազրկման, այլ եղել է երեխայի մոր կողմից երեխայի շահերից ելնելով իր խնամակալական իրավունքների պատասխանատու կիրառում: Համապատասխանաբար, 5-րդ հոդվածն այս գործին չի վերաբերում:

Դատարանի համար կարևոր գործոններ են երեխայի նկատմամբ կիրառված սահմանափակումների բնույթը, նրա տարիքը և առողջության վերաբերյալ բժիշկների կարծիքը:

6 *«Շտորքն ընդդեմ Գերմանիայի» (Storck v Germany)* գործի կապակցությամբ մշտական գործող դատարանի պալատը միաձայն վճռել է, որ 5-րդ հոդվածի շրջանակներում ազատազրկումն ունեցել է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ տարրեր (2005 թ. հունիսի 16-ի վճիռ): 1977 թ., երբ դիմողը եղել է ընդամենը 18 տարեկան, նրան իր հոր պահանջով տեղավորել են Բրեմենում գտնվող մասնավոր հոգեբուժական կլինիկայում: Նրան ստիպել են մոտ երկու տարի մնալ և բուժվել կլինիկայում: Այդ ժամանակահատվածում նա դիմել է փախուստի, սակայն ոստիկանները նրան վերադարձրել են կլինիկա: Նա բողոքել է, որ կլինիկայում գտնվելու ընթացքում իրեն տվել են հոգեմետ դեղորայք, և իրեն կապել են մահճակալներին, աթոռներին ու մարտկոցներին: Այնուհետև նա

ստացել է երկարատև բուժում մի շարք հիվանդանոցներում և Բրեմենի կլինիկայում: 1980 թ. մինչև 1991 թ. նա ձեռք է բերել մասնագետ հոգեբույժների կողմից նրան տրված երկու տեղեկանք, համաձայն որոնց՝ նա երբեք շիզոֆրենիայով հիվանդ չի եղել և 1970-ականներին ունեցել է «անձի ճգնաժամ»: Այն ժամանակ, երբ նրա գործը դատարանի վարույթում էր, նա արդեն ճանաչված էր որպես 100 տոկոսով հաշմանդամ անձ և ստանում էր հաշմանդամության թոշակ: Ստորին ատյանի դատարաններում մի շարք վարույթներից հետո Գերմանիայի սահմանադրական դատարանը որոշել է, որ նա ցույց չի տվել, թե մասնավոր կլինիկայում նրա բուժումը ինչպես է խախտել նրա սահմանադրական իրավունքները: Պալատը որոշել է, որ.

74. Այնուամենայնիվ, 5-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված ազատազրկման գաղափարը ներառում է ոչ միայն անձին զգալի ժամանակահատվածով սահմանափակ տարածքում փակի տակ պահելու օբյեկտիվ տարր: Անձը կարող է համարվել իր ազատությունից զրկված միայն այն դեպքում, եթե, որպես լրացուցիչ սուբյեկտիվ տարր, նա օրինականորեն չի տվել իր համաձայնությունը, որպեսզի իրեն պահեն փակի տակ (տե՛ս mutatis mutandis *«Հ.Մ.-ն ընդդեմ Շվեյցարիայի» (H.M. v Switzerland) գործ, [ECHR 2002-II], պարբ. 46)*: Դատարանը նկատում է, որ տվյալ դեպքում կողմերի միջև վեճի առարկան այն է, թե արդյոք դիմողը տվե՞լ է իր համաձայնությունը կլինիկայում մնալու համար:

75. Ուշադրություն դարձնելով ազգային դատարանների փաստական եզրակացություններին և այն գործոններին, որոնք կողմերի միջև վեճի առարկա չեն, դատարանը նկատում է, որ դիմողը կլինիկա ընդունվելիս եղել է չափահաս և խնամակալության տակ չի եղել: Հետևաբար, համարվել է, որ նա ունակ է եղել համաձայնություն տալու կամ առարկելու իրեն հիվանդանոց ընդունելու և բուժելու գործողություններին: Անվիճելի է, որ իրեն կլինիկա ընդունելու օրը նա չի ստորագրել կլինիկա ընդունվելու կապակցությամբ կազմված ձևը: Ճիշտ է, որ նա կլինիկա է եկել հոր ուղեկցությամբ: Այնուամենայնիվ, ժողովրդավարական հասարակությունում ազատության իրավունքը չափից ավելի բարձր է դասվում, որպեսզի անձը կորցնի կոնվենցիայով երաշխավորված պաշտպանության արտոնությունը միայն այն պատճառով, որ ինքն իրեն կարող է հանձնել կալանավորման (տե՛ս *«Դե Վիլդեն, Օոմսը և Վերսիփն ընդդեմ Բելգիայի» (De Wilde, Ooms and Versyp v Belgium),* 1971 թ. հունիսի 18-ի վճիռ, շարք A, թիվ 12, 15 36, պարբ. 65, *«Հ.Լ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (H.L. v the United Kingdom* [ECHR 2004-IX], պարբ. 90):

76. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողը շարունակաբար գտնվել է կլինիկայում, դատարանը կարծում է, որ տվյալ գործում որպես հիմնական գործոն հանդես է գալիս այն հանգամանքը (և սա չի վիճարկվում), որ դիմողը մի քանի անգամ փորձել է կլինիկայից փախչել: Մի քանի անգամ նրան կապել են, որպեսզի կանխեն նրա փախուստը, իսկ մի անգամ, երբ նրա փախուստն ավարտվել է հաջողությամբ, ոստիկանությունը հետ է բերել նրան: Այս հանգամանքներում դատարանն անկարող է առանձնացնել որևէ փաստացի հիմք, համաձայն որի՝ դիմողը (ենթադրելով, որ նա ունեցել է համաձայնություն տալու ունակություն) համաձայնել է շարունակել մնալ կլինիկայում: Այլընտրանքային տարբերակում, նույնիսկ ենթադրելով, որ դիմողն այլևս չի ունեցել ուժեղ դեղամիջոցներով բուժմանը համաձայնություն տալու ունակություն, չի կարող համարվել, որ նա օրինականորեն համաձայնել է մնալ կլինիկայում:

77. Իրավամբ, այս գործի փաստերի համեմատությունը վերը մեջբերված *«Հ.Լ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (H.L. v the United Kingdom)* գործի (մեջբերված է վերը) փաստերի հետ չի կարող չպաշտպանել այսպիսի եզրակացությունը: Այդ գործը վերաբերում էր համաձայնություն տալու ունակությունից զուրկ չափահաս անձի պահելուն հոգեբուժական հաստատությունում: Ընդ որում, այդ անձը երբեք չի փորձել լքել այդ հաստատությունը: Դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել ազատազրկում: Տվյալ դեպքում, *a fortiori*, պետք է եզրակացնել, որ տեղի է ունեցել ազատազրկում: Դիմողի համաձայնության բացակայությունը պետք նաև է համարվի սույն գործը *«Հ.Մ.-ն ընդդեմ Շվեյցարիայի» (H.M. v Switzerland)* (մեջբերված է վերը՝ պարբ. 46) գործից տարբերող վճռորոշ առանձնահատկություն: Այդ գործի կապակցությամբ որոշվել էր, որ մեծահասակ անձնավորության խնամքը կազմակերպելու նպատակով նրան ծերանոցում տեղավորելը հավասար չի եղել ազատազրկման: Այդ դիմողը, որն իրավաբանորեն ունակ էր, սեփական կարծիք ունենալու որոշում չի կայացրել՝ ուզո՞ւմ է մնալ ծերանոցում, թե՞ ոչ: Հետևաբար, սրա հիման վրա կլինիկան կարող էր հանգել եզրակացության, որ նա առարկություն չի ունեցել:

78. Այդ իսկ հիմքերով դատարանը եզրակացնում է, որ կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով դիմողը զրկված է եղել իր ազատությունից:

Պալատն այնուհետև եզրակացրել է, որ դիմողին մասնավոր կլինիկայում փակելու առումով 5-րդ հոդվածի շրջանակներում պետության պատասխանատվությունն առաջանում է մի քանի հիմքերից: Նախ՝ սա վերաբերում է պետական մարմինների միջամտությանը, երբ ոստիկանությունը փախուստի դիմելուց հետո վերադարձրել է նրան կլինիկա: Երկրորդ՝ Գերմանիայի դատարանները դիմողի կողմից

սկսված վարույթում չեն կարողացել մեկնաբանել քաղաքացիական օրենքը 5-րդ հոդվածի «ոգով»: Երրորդ՝ պետությունը չի կատարել իր դրական պարտավորությունը, քանի որ չի պաշտպանել դիմողի ազատությունը երրորդ անձանց միջամտությունից:

101. Դատարանը հետևողականորեն վճիռներ է ընդունել, համաձայն որոնց՝ պետության պատասխանատվությունն առաջանում է այն դեպքերում, երբ տեղի է ունենում կոնվենցիայով սահմանված իրավունքներից և ազատություններից որևէ մեկի խախտում այն պատճառով, որ պետությունը չի կատարել 1-ին հոդվածում ամրագրված իր իրավազորության ներքո գտնվող բոլոր անձանց իրավունքները և ազատությունները ներպետական օրենսդրության միջոցով պաշտպանելու իր պարտավորությունը (տե՛ս, ի թիվս այլոց, *«Կոստելլո-Ռոբերթսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Costello-Roberts v the United Kingdom)*, 1993 թ. մարտի 25-ի վճիռ, շարք A, թիվ 247-C, էջ 57, պարբ. 26, *«Վոսն ընդդեմ Լեհաստանի» (Wos´ v Poland)* (որոշում), թիվ 22860/02, պարբ. 60, 1 մարտի, 2005 թ.): Հետևաբար, դատարանը եզրակացրել է, որ 2-րդ հոդվածը (տե՛ս, ի թիվս այլոց, *«LCB-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (LCB v the United Kingdom),* 1998 թ. հունիսի 9-ի վճիռ, Վճիռների և որոշումների զեկույցներ 1998-III, էջ 1403, պարբ. 36), 3-րդ հոդվածը (տե՛ս, ի թիվս այլոց, վերը մեջբերված *Կոստելլո-Ռոբերթսի (Costello-Roberts)* գործը, էջ 57-8, պարբ. 26 և 28) և կոնվենցիայի 8-րդ հոդվածը (տե՛ս, ի թիվս այլոց, *«X-ը և Y-ն ընդդեմ Նիդեռլանդների» (X and Y v The Netherlands)* գործը, 1985 թ. մարտի 26-ի վճիռ, շարք A, թիվ 91, էջ 11, պարբ. 23, *Կոստելլո-Ռոբերթսը (Costello-Roberts)* նույն տեղում) հանձնարարում են պետությանը ոչ միայն զերծ մնալ իր ներկայացուցիչների կողմից նշված իրավունքների խախտումներից, այլև համապատասխան քայլեր ձեռնարկել պետական պաշտոնյաների կամ մասնավոր անձանց կողմից այդ իրավունքների խախտումից համապատասխան պաշտպանություն ապահովելու համար:

102. Հաշվի առնելով սա՝ դատարանը կարծում է, որ 5-րդ հոդվածի 1-ին կետի առաջին նախադասությունը պետք է հավասարապես ընդունվի որպես պետությունների կողմից իրենց քաղաքացիների ազատությունը պաշտպանելու դրական պարտավորության ամրագրում: Ցանկացած եզրակացություն, համաձայն որի՝ դա տեղի չի ունեցել, ոչ միայն կհակասի դատարանի նախադեպային իրավունքի համակարգին և հատկապես կոնվենցիայի 2-րդ, 3-րդ և 8-րդ հոդվածներին, այլև լուրջ բաց կառաջացնի անձանց կամայական կալանքից պաշտպանության ոլորտում, ինչը անհամատեղելի կլինի ժողովրդավարական հասարակությունում անձի ազատությանը տրվող կարևորությանը: Ուստիև, պետությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել (ներառյալ ազատազրկումը կանխելու նպատակով ողջամիտ քայլերը), որոնք ուղղված լինեն խոցելի անձանց (որոնց մասին իշխանությունները տեղյակ են կամ պետք է տեղյակ լինեն) արդյունավետ պաշտպանությանը (տե՛ս mutatis mutandis «*Զ-ն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (Z and Others v the United Kingdom)* [GC], թիվ 29392/95, պարբ. 73, ECHR 2001-V, *«Իլաշկուն և այլք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի» (Ilascu and Others v Moldova and Russia)* [GC], թիվ 48787/99, պարբ. 332-52, 464, ECHR 2004-VII):

103. Ինչ վերաբերում է այն անձանց, որոնք հոգեբուժական բուժման կարիք ունեն, դատարանը, մասնավորապես, նշում է, որ կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում պետությունը պարտավորություն ունի ապահովելու իր քաղաքացիների ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը: Այդ նպատակով գոյություն ունեն պետական հիվանդանոցներ, որոնք գործում են մասնավոր հիվանդանոցներին զուգահեռ: Պետությունը չի կարող լրիվ ազատել իրեն իր պատասխանատվությունից՝ իր պարտականություններն այդ ոլորտում մասնավոր կազմակերպություններին կամ անձանց պատվիրակելու միջոցով (տե՛ս mutatis mutandis *«Վան դեր Մեսելն ընդդեմ Բելգիայի» (Van der Mussele v Belgium)*, 1983 թ. նոյեմբերի 23-ի վճիռ, շարք A, թիվ 70, էջ 14-15, պարբ. 28-30, վերը մեջբերված *Վոսի (Wos)* գործի պարբ. 60): Դատարանը նշում է, որ *Կոստելլո-Ռոբերթսի (Costello-Roberts)* գործում (մեջբերված է վերը, էջ 58, պարբ. 27-8) պետությունը պատասխանատու է ճանաչվել անկախ դպրոցի տնօրենի գործողությունների համար, քանի որ պարտավորություն ուներ երաշխավորելու կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածներով ամրագրված իրավունքներն աշակերտների համար: Դատարանը որոշում է, որ այս դեպքում նմանապես պետությունն ունեցել է պարտավորություն իրականացնելու մասնավոր հոգեբուժական հաստատությունների նկատմամբ հսկողություն և վերահսկողություն: Այս հաստատությունների և, մասնավորապես, նրանց համար, որտեղ մարդիկ պահվել են առանց դատարանի կարգադրության, պահանջվում է ոչ միայն արտոնագիր, այլև կանոնավոր վերահսկողության իրականացում, որի նպատակն է հիմնավորել անձի ազատության սահմանափակման և բուժման անհրաժեշտությունը:

105. Վերադառնալով սույն գործին՝ դատարանը նկատում է, որ համաձայն Գերմանիայի օրենքի, անձին հոգեբուժական հիվանդանոցում փակելու համար պահանջվում է դատավորի կարգադրություն, եթե տվյալ անձը չի տվել իր համաձայնությունը կամ ունակ չէ համաձայնություն տալու: Այս դեպքում իրավասու առողջապահական մարմինը նաև ունեցել է դատարանի կարգադրությունների իրականացմանը հետևող մարմնի լիազորություններ: Այնուամենայնիվ, դիմողի պարագայում, թեպետ կլինիկան չի ունեցել դիմողի համաձայնությունը, դատարանից համապատասխան կարգադրություն ձեռք չի բերել: Հետևաբար, պետության առողջապահության ոլորտի ներկայացուցիչը երբևէ չի գնահատել, թե արդյոք դիմողը լուրջ վտա՞նգ է ներկայացրել (ինչը խիստ կասկածելի է) հասարակության անվտանգությանը կամ հասարակական կարգին՝ համաձայն «Հոգեկան հիվանդություններ, խելացնորություն ունեցող անձանց և թմրամոլներին կալանքի տակ պահելու մասին» Բրեմեն-լենդի օրենքի 2-րդ հոդվածի: Հետևաբար, պետու-

թյունը դիմողին մոտ քսան ամիս կլինիկայում պահելու գործողության օրինականության նկատմամբ վերահսկողություն չի իրականացրել:

106. Ճիշտ է, իհարկե, որ ազատազրկումը համարելով մինչև տասը տարվա բանտարկությամբ պատժելի արարք՝ Գերմանիայի օրենքը հետադարձաբար ապահովել է կանխարգելիչ ազդեցություն ունեցող սանկցիաներ: Բացի դա, զոհը, Գերմանիայի քաղաքացիական օրենքի շրջանակներում, կարող էր ներկայացնել անօրինական կալանքի պատճառած վնասի փոխհատուցման քաղաքացիական հայց: Այնուամենայնիվ, ուշադրություն դարձնելով ազատության իրավունքի կարևորությանը, դատարանը չի կարծում, որ միայն այս հետադարձ միջոցառումները կարող են դիմողի նման խոցելի դրության մեջ գտնվող անձանց համար երաշխավորել արդյունավետ պաշտպանություն: Դատարանը նշում է, մասնավորապես, որ խելացնորություն, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց և թմրամոլներին կալանքի տակ պահելու մասին Բրեմեն-լենդի օրենքում եղել են դատարանի կարգադրության հիման վրա հոգեբուժական հաստատություններում կալանավորված անձանց վերաբերող բազմաթիվ երաշխիքներ: Պետք է հիշել, որ դիմողը կալանավորվելուց և ուժեղ հոգեմետ դեղերով բուժվելուց հետո այլևս ի վիճակի չի եղել անկախ օգնություն ստանալու դրսից:

106. Պետության արդյունավետ վերահսկողության բացակայությունն ամենացայտուն ձևով երևում է 1979 թ. մարտի 4-ի դեպքով, երբ ոստիկանությունը, դիմողի նկատմամբ ուժ գործադրելով, նրան հետ է բերել իր կալանավորման վայրը, որտեղից նա փախուստի էր դիմել: Այդպիսով, պետական մարմինները, ինչպես ցույց է տրվել վերը, մասնակցել են դիմողին կլինիկայում կալանքի տակ պահելու գործողությանը, քանի որ նրա փախուստը և վերադառնալու ակնհայտ դժկամությունը չեն հանգեցրել կլինիկայում նրան հարկադրաբար պահելու գործողության օրինականության նկատմամբ վերահսկողության սահմանման: Սա բացահայտում է, որ այս ոլորտում գոյություն ունի չարաշահման մեծ վտանգ, հատկապես այնպիսի դեպքերում, որոնց շարքն է դասվում նաև դիմողի դեպքը, երբ ընտանեկան բախումները և անձի ճգնաժամը ընկած են եղել նրա խնդիրների և տևական ժամանակահատվածով հոգեբուժական հիվանդանոցում նրան փակելու իրողության հետ: Հետևաբար, դատարանը համոզված չէ, որ պետական մարմինների կողմից իրականացված վերահսկողությունը, որը սահմանափակվել է միայն, ըստ «Առևտրային գործունեության վարման մասին» օրենքի 30-րդ բաժնի, մասնավոր կլինիկային արտոնագիր տրամադրելու հետ կապված ստուգումներ իրականացնելով, բավարար է եղել նման կլինիկայում ազատազրկման նկատմամբ իրավասու և կանոնավոր վերահսկողություն ապահովելու համար:

107. Դատարանը նկատում է, որ մասնավոր կլինիկայում դիմողի կալանքի դադարեցումից հետո «Հոգեկան խանգարումների կապակցությամբ օգնության և պաշտպանության միջոցառումների մասին» օրենքի 34-րդ բաժնում մտցվել են հոգեբուժական հաստատություններում պահվող անձանց տրամադրվող լրացուցիչ երաշխիքներ, ինչն ուղղված է եղել այս դաշտում պաշտպանության բացի կարգավորմանը: Մասնավորապես, ստեղծվել են շրջիկ հանձնաժողովներ, որոնք պետք է տեսչական ստուգումներ իրականացնեին հոգեբուժական հաստատություններում՝ նպատակ ունենալով հսկել, որ հիվանդների իրավունքները հարգվեն, և հիվանդներն ունենան բողոքելու հնարավորություններ: Այնուամենայնիվ, դիմողի պարագայում այս մեխանիզմները չափից ավելի ուշ են ստեղծվել:

108. Ուստին, դատարանը եզրակացնում է, որ 1977 թ. հուլիսից մինչև 1979 թ. ապրիլն ընկած ժամանակահատվածում պատասխանող պետությունը խախտել է իր դրական պարտավորությունը՝ պաշտպանել դիմողին իր ազատության նկատմամբ կատարած ոտնձգություններից: Հետևաբար, տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի առաջին նախադասության խախտում:

Պալատը եզրակացրել է, որ դիմողին մասնավոր կլինիկայում կալանքի տակ պահելը չի կարող արդարացվել 5(1)(ե) հոդվածի շրջանակներում, քանի որ այն «օրինական» չի եղել այն պատճառով, որ դիմողը չի տվել իր համաձայնությունը, և գոյություն չի ունեցել դատարանի կարգադրություն (ինչպես պահանջվում է Լենդերի (Lander) օրենքով):

Շտորքի (Storck) գործով դատավճիռը ողջունելի է, քանի որ պալատն ընդունել է ազատության իրավունքը պաշտպանելու հաստատ դիրքորոշում: Հատկապես ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ պալատը վճռականորեն մերժել է կառավարության բացատրությունը, թե «հարցական» է՝ արդյոք պետությունները պարտավո՞ր են պաշտպանել անձանց մասնավոր անձանց կողմից ազատազրկման ենթարկվելուց: Վճռի 102-րդ պարբերությունը ձևավորում է այս դրական պարտավորության շրջանակը՝ տալով նույնպիսի սահմանումներ, որպիսիք օգտագործվել են այլ հոդվածներում համանման պարտավորությունների սահմանման համար և, հետևաբար, այն չպետք է անհարկի բեռ համարվի պետությունների համար:

Կալանքի տակ վերցված անձի համար հաշվետու լինելու պարտավորությունը

.....

«Քյուրտն ընդդեմ Թուրքիայի» (Kurt v Turkey) 1998-III 1187, (1998) 27 EHRR 91
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Այս գործին վերաբերող փաստերը ներկայացված են վերը՝ 184-րդ էջում:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

122. Նախ՝ դատարանը նշում է, որ 5-րդ հոդվածում ամրագրված երաշխիքները հիմնարար կարևորություն ունեն ժողովրդավարական հասարակությունում անձանց՝ իշխանությունների կողմից կամայական կալանքի չենթարկվելու իրավունքի երաշխավորման առումով: Հենց այս պատճառով է, որ դատարանն իր նախադեպային իրավունքի մեջ շարունակաբար շեշտել է, որ ազատազրկման ցանկացած դեպք պետք է ոչ միայն իրականացվի ազգային նյութական և ընթացակարգային կանոնների համապատասխանությամբ, այլև հավասարապես պետք է հիմնվի 5-րդ հոդվածում ամրագրված անձին կամայականություններից պաշտպանելու նպատակի վրա (տե՛ս մի շարք աղբյուրների շարքում նաև *«Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Chahal v UK)* գործով 1996 թ. նոյեմբերի 15-ի վճիռը, Հաշվետվություններ, 1996-IV, էջ 1864, պարբ. 118): Պաշտոնեական դիրքի չարաշահման ցանկացած դրսևորումներից անձին պաշտպանելու հաստատակամությունը պարզ է այն փաստից, որ 5-րդ հոդվածի 1-ին կետը սահմանափակում է այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում անձինք կարող են օրինականորեն զրկվել ազատությունից, ինչպես նաև շեշտում, որ այդ հանգամանքները պետք է խստորեն մեկնաբանվեն և անձի հիմնարար ազատություններից արվող բացառություններ են (տե՛ս mutatis mutandis *«Քուինն ընդդեմ Ֆրանսիայի» (Quinn v France)* գործով 1995 թ. մարտի 22-ի վճիռ, շարք A, թիվ 311, էջ 17, պարբ. 42):

123. Հարկ է նաև շեշտել, որ կոնվենցիայի հեղինակներն ամրապնդել են կամայականորեն ազատազրկման ենթարկվելուց անձի պաշտպանության իրավունքը՝ երաշխավորելով բազմաթիվ նյութական իրավունքներ, որոնք ուղղված են կամայականության ռիսկի նվազեցմանը (քանի որ թույլ են տալիս, որ ազատազրկման գործողությունը ենթարկվի անկախ դատական վերանայման) և նախատեսելով այդ գործողության համար համապատասխան կառավարական մարմինների պատասխանատվությունը: Այս համատեքստում հատուկ կարևորություն ունեն 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի պահանջները, որոնց շեշտը դրված է արագության և դատական վերահսկողության վրա: Արագ դատական միջամտությունը կարող է հանգեցնել կյանքին սպառնացող միջոցառումների կամ խիստ դաժան վերաբերմունքի, այսինքն՝ կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների հիմնարար երաշխիքների խախտումներ հանդիսացող դեպքերի բացահայտմանը և կանխմանը (տե՛ս mutatis mutandis վերը մեջբերված *Ակսոյի (Aksoy)* վճիռը, էջ 2282, պարբ 76): Այն, ինչը դրված է նժարին, ներառում է ինչպես անձանց ֆիզիկական ազատությունը, այնպես էլ նրանց անձնական անվտանգության պաշտպանությունն այնպիսի համատեքստում, որը, համապատասխան երաշխիքների բացակայության պայմաններում, կարող է հանգեցնել օրենքի գերակայության խաթարման և ազատազրկված անձանց կանգնեցնել այն փաստի առջև, որ իրենք զուրկ են իրավական պաշտպանության ամենատարրական ձևերից:

124. Այս առումով դատարանը շեշտում է, որ անձի չհայտարարված կալանավորումը այս երաշխիքների կատարյալ ժխտում է և 5-րդ հոդվածի խիստ կոպիտ խախտում: Իշխանությունները, որոնք հսկողության տակ են վերցրել անձին, պարտավոր են հաշիվ տալ նրա գտնվելու վայրի մասին: Այդ պատճառով 5-րդ հոդվածը պետք է դիտարկվի որպես հոդված, որն իշխանություններից պահանջում է արդյունավետ միջոցներ ձեռնարկել անձի անհետացման ռիսկից երաշխիքներ տրամադրելու համար և հետաքննել վիճելի բողոքը, համաձայն որի՝ կալանավորվելուց հետո անձին տեսնող չի եղել:

125. Այս ֆոնի վրա դատարանը հիշեցնում է, որ ընդունել է հանձնաժողովի այն եզրակացությունը, համաձայն որի՝ Ուզեյիր Քյուրտը պահվել է զինվորների և գյուղի պահակազորայինների կողմից 1993 թ. նոյեմբերի 25-ի առավոտյան: Նրա կալանավորումն այդ ժամանակ չի գրանցվել և նրա գտնվելու վայրի կամ ճակատագրի վերաբերյալ պաշտոնական ցուցումներ գոյություն չունեն: Այս փաստն ինքնին պետք է դիտվի որպես խիստ լուրջ թերացում, քանի որ այն հնարավորություն է տալիս ազատազրկման գործողությունների համար պատասխանատու անձանց թաքցնել իրենց մասնակցությունը հանցագործությանը, ծածկել իրենց հետքերը և խուսափել կալանավորված անձի ճակատագրի համար պատասխանատվությունից: Դատարանի կարծիքով՝ այսպիսի գրանցումների բացակայությունը, ներառյալ՝ կալանավորման օրվա, վայրի և ժամանակի, կալանքի տակ վերցնելու պատճառի, կալանավորվող անձի անուն/ազգանվան

վերաբերյալ գրանցումներ չկատարելու հանգամանքները պետք է դիրտվեն որպես կոնվենցիայի 5-րդ հոդվածի բուն նպատակին հակասող երևույթներ:

126. Բացի այդ, դատարանը կարծում է, որ հաշվի առնելով դիմողի պնդումները, որ իր որդին վերցվել է կալանքի գյուղում, հանրային մեղադրողը պետք է զգոնություն դրսևորեր առ այն, որ առկա է բողոքի ավելի խորը ուսումնասիրություն կատարելու անհրաժեշտություն: Քրեական դատավարության օրենսգրքի շրջանակներում նա ունի այդպես վարվելու իրավասություններ ... Այնուամենայնիվ, նա չի պահանջել նրան [մորը] բացատրել, թե ինչու է նա այդքան վստահ, որ որդին վերցվել է կալանքի տակ: Նրանից ո՛չ պահանջել են գրավոր հայտարարություն ներկայացնել, ո՛չ էլ բանավոր հարցաքննել են: Եթե մեղադրողն այդպես վարված լիներ, նա կարող էր առերեսվել գյուղում ռազմական գործողությունների մեջ ներգրավված զինվորական կազմի հետ՝ առաջնորդվելով դիմողի՝ որպես վկայի տված ցուցմունքներով: Այնուամենայնիվ, հարցումներ երբեք չեն արվել և գյուղում այդ ժամանակ ներկա գտնված որևէ զինվորականից կամ գյուղի պահակազորայիններից զեկուցագրեր չեն պահաջվել: Հանրային մեղադրողը ցանկություն չի ունեցել չսահմանափակվելու ժանդարմական բաժնի պնդումով, համաձայն որ՝ կալանավորումների վերաբերյալ գրառումները ցույց են տալիս, որ Ուզեյիր Քյուրտը ո՛չ պահվել է գյուղում, ո՛չ էլ վերցվել է կալանքի տակ: Նա ընդունել է այն բացատրությունը, որ Ուզեյիր Քյուրտն ամենայն հավանականությամբ առևանգվել է ՔԱԿ-ի կողմից ռազմական գործողությունների ժամանակ, և այս բացատրությունները ձևավորել են հետագա հարցումների ժամանակ նրա դրսևորած մոտեցումը՝ հիմք ծառայելով նրա կողմից գործ չհարուցելու մասին հետագա որոշման կայացման համար:

127. Հանձնաժողովի նման դատարանը նույնպես կարծում է, որ այն հանգամանքը, որ ՔԱԿ-ը ներգրավված է եղել դիմողի որդու անհետացման մեջ, հիմնված չէ ամուր և արժանահավատ փաստական հիմքի վրա: Հաստատող փաստերի բացակայության պայմաններում ժանդարմական գրասենյակը խիստ շտապել է այն ներկայացնել որպես բացատրություն: Ոչ էլ կարելի է պնդել, որ երեք գյուղացիների կողմից 1994 թ. փետրվարի 28-ին ժանդարմներին տված ցուցմունքները հավատ են ներշնչում առ այն, թե իրականում ինչ ճակատագրի է արժանացել Ուզեյիր Քյուրտը: Գյուղացիներին տված հարցերի մասին կարելի է ասել, որ դրանք ունեցել են այնպիսի ձևակերպումներ, որոնց տված պատասխանները պետք է որ ամրապնդեին ՔԱԿ-ի կողմից առևանգված լինելու վարկածի արժանահավատությունը ... Բացի այդ, և ինչպես նշվել է ավելի վաղ ... Կառավարության մյուս պնդումը, որ դիմողի որդին լքել է գյուղը ՔԱԿ-ին միանալու նպատակով, որևէ հստակ փաստական հիմք չի ունեցել:

128. Հաշվի առնելով այս նկատառումները՝ դատարանը եզրակացնում է, որ իշխանությունները չեն ներկայացրել վստահելի և հիմնավորված բացատրություն դիմողի որդուն գյուղում կալանավորելուց հետո նրա գտնվելու վայրի և ճակատագրի վերաբերյալ, ինչպես նաև՝ դիմողի հայտարարությունների հիման վրա, որ իր որդին կալանքի տակ է, և ինքը մտահոգված է նրա կյանքի համար, բովանդակալից հետաքննություն չի սկսվել: Նրանք չեն կատարել հաշվետու լինելու իրենց պարտականությունը, և պետք է ընդունել, որ նա պահվել է չհայտարարված կալանքի տակ 5-րդ հոդվածում նշված երաշխիքների բացարձակ բացակայության պայմաններում:

129. Հետևաբար, դատարանը, ինչպես և հանձնաժողովը, կարծում է, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածով երաշխավորված անձի ազատության և անվտանգության իրավունքի լուրջ խախտում, ինչը Ուզեյիր Քյուրտի ողջ լինելու վերաբերյալ լուրջ հարցերի տեղիք է տալիս...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ . . .

5. Վեց կողմ և երեք դեմ ձայներով որոշում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում,...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Բերնհարդտը և դատավորներ Ֆոյգելը, Մորինիյան, Բոնիչին, Յունգվիրթը և Լոհմուսը: Դատավորներ Մաթշերը, Գյոլչյուքլուն և Փեթիթին ներկայացրել են չհամընկնող կարծիքներ, համաձայն որոնց՝ դիմողը չի ապացուցել իր պնդումների ճշմարտացիությունը՝ ողջամիտ կասկածից վեր:

2 5-րդ հոդվածի շրջանակներում բերված գործերի հիմնական մասի դեպքում պետությունն ընդունել է այն փաստը, որ տվյալ անձը գտնվում է իր կողմից նշանակված կալանքի տակ: Քյուրտի դեպքում դատարանն ընդունել է հանձնաժողովի փաստական եզրակացությունը, որ որդին կալանավորել է պետության գործակալների կողմից, թեպետ պետությունը հերքել է սա: Այս իրավիճակում խնդիրը ոչ

թե 5-րդ հոդվածում ամրագրված առանձնահատուկ երաշխիքների համապատասխանության, այլ կալանավորված անձի համար հաշվետու լինելու, այսինքն՝ 5-րդ հոդվածից անկապտելի պետության պարտավորության ստուգումն է: Այս ընդհանրական պարտավորությունից բխում են կալանավորված անձանց մասին գրանցումներ կատարելու և կալանքի վերաբերյալ դիմումները հետաքննելու ենթադրվող պարտավորությունները:

3 *«Անգելովան ընդդեմ Բուլղարիայի» (Anguelova v Bulgaria)* գործի առնչությամբ (2002 թ. հունիսի 13-ի վճիռ) պալատը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել գրանցումներ կատարելու *քյուրտի* պարտավորության խախտում (այս գործի 2-րդ հոդվածին վերաբերող ասպեկտների համար տե՛ս վերը՝ էջ 123-24): Ոստիկանության բաժնի գրանցամատյանը չի պարունակել դիմողի որդուն կալանավորելու սկզբնական գրանցում, իսկ ավելի ուշ ավելացվել է կեղծված գրանցում: Հետևաբար, պալատը որոշել է, որ տեղի է ունեցել «157… կոնվենցիայի 5-րդ հոդվածից անկապտելի պահանջների՝ ազատազրկման մասին գրանցումներ կատարելու» խախտում:

4 Թուրքիայում ժանդարմական բաժնի կողմից կալանքի վերաբերյալ գրանցումներ կատարելու կոպիտ և համակարգային խախտումներ նկարագրվել են *«Օրհանն ընդեմ Թուրքիայի» (Orhan v Turkey)* գործի վերաբերյալ 2002 թ. հունիսի 18-ի վճռում: Դիմողը բողոքել է, որ 1994 թ. ժանդարմները տարել են իր երեք մտերիմ ազգականներին, որից հետո այդ անձանց տեսնողներ այլևս չեն եղել: Պալատը միաձայն եզրակացրել է, որ ժանդարմական բաժիններում ազատազրկման գրանցումների վարման գործելակերպի մեջ եղել են լուրջ թերություններ:

372. … Առաջին հիմնավորված թերությունը, այն է՝ տարբեր պատճառներով, առանց կալանավորման վերաբերյալ գրանցումներ անելու, անձանց ժանդարմական բաժիններում պահելու փորձը, թույլատրված չէ ներպետական օրենսդրությամբ: Երկրորդ և երրորդ թերությունները ընդգծում են կալանավորման գրանցումների անհուսալիությունը, քանի որ այդ գրառումները չեն բացահայտում, որ անձը ձերբակալվել է ռազմական ուժերի կողմից, ինչպես նաև ցույց չեն տալիս ժանդարմական բաժնից ազատ արձակվելու օրը: Այս երեք թերությունները վկայում են, որ կալանքի տակ գտնվող անձանց անհետացման վտանգի դեմ ուղղված արդյունավետ միջոցները բացակայում են:

Հետևաբար, դատարանը եզրակացրել է, որ դիմողի երկու եղբայրները և որդին պահվել են չհայտարարված կալանքի տակ՝ ի խախտումն 5-րդ հոդվածի: Վերոհիշյալ եզրակացությունները բացահայտում են անձանց կալանավորելու վերաբերյալ ազգային մակարդակով գրանցումներ անելու առկա թերությունները և գոյություն ունեցող պահանջների նկատմամբ զինվորական կազմի արհամարհանքը:

5 *«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի» (Cyprus v Turkey)* գործի վերաբերյալ 2001 թ. մայիսի 10-ի վճռով մեծ պալատը եզրակացրել է, որ պետության գործակալների կողմից անձանց կալանավորումից հետո նրանց անհետացման մասին վիճելի բողոքների կապակցությամբ նրանց գտնվելու վայրը և ճակատագիրը պարզելու նպատակով պետությունների արդյունավետ հետաքննություն սկսելու ենթադրվող պարտավորությունը շարունակական է (և գործի 2-րդ հոդվածի ասպեկտների վերաբերյալ տե՛ս վերը՝ էջ 129): Դիմող կառավարությունը պնդել է, որ ինչպես շրջափակված Հյուսիսային Կիպրոսում, այնպես էլ Թուրքիայում Թուրքիայի իշխանությունները թերացել են արդյունավետորեն հետաքննել 1974 թ. ռազմական ներխուժման ժամանակ մի քանի հարյուր հույն կիպրոսցիների կալանավորումները և հետագա անհետացումը: Մեծ պալատը, նկատի ունենալով թուրք հատուկ դատավորի առարկությունը, որոշել է, որ «150. ... տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի շարունակական խախտում, քանի որ պատասխանող պետության իշխանությունները չեն իրականացրել արդյունավետ հետաքննություն, որպեսզի պարզեն անհետ կորած կիպրոսցի հույների գտնվելու վայրը և ճակատագիրն այն դեպքում, երբ նրանց վերաբերյալ վիճելի բողոքներ են ներկայացվել, համաձայն որոնց՝ անհետացման ժամանակ նրանք եղել են կալանքի տակ»: Սա կարևոր պարզաբանում է, որը վերաբերում է արդյունավետ հետաքննության պարտականության աստիճանին

և պետք է որ որոշ չափով բավարարեր «անհետացած» անձանց ազգականներին, որոնց օրինական նպատակը՝ պարզել իրենց ընտանիքի անդամների ճակատագիրը, շարունակական է:

6 2005 թ. աշնանն ամերիկյան մամուլը, հատկապես «Վաշինգտոն փոստը», սկսել է տպագրել նյութեր, որոնք վերաբերում էին եվրոպական պետություններում (նշվել են Ռումինիան և Լեհաստանը) գործող Կենտրոնական հետախուզական գործակալության գաղտնի կենտրոններին, որտեղ պահվել և հարցաքննվել են Միացյալ Նահանգների «ահաբեկչական պատերազմի» մասնակցության մեջ կասկածվող անձինք: Եվրոպայի խորհրդի իրավական գործերի կոմիտեն նշանակել է սենատոր, նախկին դատախազ Դիկ Մարտիին, որպեսզի նա իրականացնի անդամ պետություններում տեղի ունեցած ենթադրյալ գաղտնի կալանավորման դեպքերի քննությունը: Կասկածներն առաջ են եկել նաև ԿՀԳ ինքնաթիռների գաղտնի թռիչքներից, որոնք, օգտագործելով եվրոպական օդանավակայանները և օդային տարածքը, «արտակարգ հանձնման» [extraordinary rendition] գլոբալ ամերիկյան ծրագրի շրջանակներում տեղափոխել են կալանավորների, որոնք, որպես ահաբեկչական գործողությունների մեջ կասկածվող անձինք, ուղարկվել են այդ երկրներ (որտեղ նրանց իրավունքների պաշտպանությունն ամերիկյան օրենքից դուրս էր) և հարցաքննվել պաշտոնատար անձանց կողմից այդ պետություններում: 2005 թ. նոյեմբերին Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թերի Դևիսը, վկայակոչելով ՄԻԵԿ-ի 52-րդ հոդվածի շրջանակներում իրեն վերապահված և հազվադեպ կիրառված իրավունքը, պահանջել է բոլոր անդամ պետություններից իրազեկել իրեն, թե ինչպես են նրանց ազգային օրենսդրությունները կանխում չհայտարարված ազատազրկման դեպքերը և օտարերկրյա գործակալներին նման գործողություններ կատարելու մեջ աջակցության տրամադրումը: 52-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր բարձր պայմանավորվող կողմ, ի պատասխան Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի պահանջի, ներկայացնում է պարզաբանումներ այն կարգի վերաբերյալ, որով իր ներպետական իրավունքն ապահովում է կոնվենցիայի ցանկացած դրույթի արդյունավետ իրականացումը»: Ստացված պատասխանների հիման վրա գլխավոր քարտուղարը հրապարակել է հաշվետվությունը (2006 թ. մարտի 1): Նա հայտարարել է.

… Ես լրջորեն պաշտպանում եմ բոլոր հարցերի և հատկապես ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում Եվրոպայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև համագործակցությունը, սակայն նաև պնդում եմ, որ եվրոպական կառավարությունները պետք է բավարար վստահություն ունենան, որպեսզի մասնակցեն այդ համագործակցությանը որպես հավասար գործընկերներ, այլ ոչ թե խաղան առակի երեք պղնձե կապիկների դերը [որոնք չեն կարող լսել, տեսնել կամ խոսել]:

…Ներկա պահի դրությամբ ստացված պատասխանների վերլուծությունից պարզ է, որ առկա են ընդհանուր մտահոգության մի քանի ոլորտներ: Նախ՝ տպավորությունն այնպիսին է, որ Եվրոպայի մեծ մասն արտասահմանյան անվտանգության ծառայությունների համար հաջող որսորդության տարածք է: Մինչ մեր անդամ պետությունների մեծ մասն ունի մեխանիզմներ, որոնցով կարող են վերահսկել իրենց ազգային հետախուզական գործակալությունների գործունեությունը, ինչպես նաև արտասահմանյան ոստիկանական պաշտոնյաների ներկայությունն իրենց տարածքում, դժվար թե որևէ երկրում, Հունգարիայից բացի, գոյություն ունեն օրենսդրական դրույթներ, որոնք երաշխավորում են իրենց տարածքում արտասահմանյան անվտանգության ծառայությունների նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը…

Երկրորդ մտահոգությունն այն է, որ Եվրոպայի օդային տարածքները, ամենայն հավանականությամբ, չափից ավելի բաց են: Գրեթե չկան երկրներ, որոնք ընդունել են վերահսկողություն իրականացնելու պատշաճ և արդյունավետ ձև, որի միջոցով կվերահսկեն, թե ով և ինչ է փոխադրում օդանավակայաններով և օդային տարածքով: Իրոք, որևէ անդամ պետություն որևէ ընթացակարգ չի ստեղծել, որպեսզի գնահատի՝ արդյոք քաղաքացիական օդանավերն օգտագործվո՞ւմ են այնպիսի նպատակների համար, որոնք անհամատեղելի են միջազգայնորեն ընդունված մարդու իրավունքների չափորոշիչների հետ: Սա անհանգստացնող է, քանի որ այն բացատրությունները, որոնք տրվել են ենթադրաբար հանձնման [rendition] նպատակներով օգտագործված օդանավերի հսկման կետերի վերաբերյալ, ցույց են տալիս, որ գոյություն ունեցող ընթացակարգերը չարաշահումների դեմ ուղղված համապատասխան երաշխիքներ չեն ներառում:

Երրորդ ընդհանուր մտահոգությունը, որը բացահայտվել է պատասխանների վերլուծությունից, վերաբերում է պետությունների իրավազորության և պետության անձեռնմխելիության վերաբերյալ կանոններին, որոնք զգալի արգելքներ են ստեղծում օտարերկրյա գործակալների և հատկապես որպես դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալներ հավատարմագրված անձանց գործունեության նկատմամբ օրենքի արդյունավետ կիրառումը…

Գլխավոր քարտուղարը համարել է, որ Բոսնիայի և Հերցեգովինայի, Իտալիայի, Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության և Լեհաստանի պատասխանները բավարար չեն եղել:

Նա մտադիր է եղել շարունակել այդ պետությունների վերաբերյալ հարցումները և, ընդհանուր առմամբ, մտածել, թե ի՞նչ գործողություններ պետք է ձեռնարկի Եվրոպայի խորհուրդը հաշվետվության մեջ բացահայտված խնդիրները լուծելու համար:

2006 թ. հունիսի 7-ին իրավական գործերի կոմիտեի հանդիպման ժամանակ պրն Մարտին զեկուցել է, որ իր հետաքննությունների արդյունքում բացահայտվել են «համընկնող տարրեր», որոնք ցույց են տալիս, որ «Ռումինիայում և Լեհաստանում վայրէջքի կետերը ծառայել են որպես կալանավորներին իջեցնելու կետեր և գտնվել գաղտնի կալանավորման վայրերից ոչ հեռու»: Նրա կարծիքով՝ «... մի շարք եվրոպական երկրների կառավարություններն ակտիվորեն մասնակցել են ԿՀԳ-ի այս ապօրինի գործողություններին: Մյուս երկրները գիտակցաբար անտեսել են դրանք կամ էլ դրանց մասին ինչ-որ բան իմանալու ցանկություն չեն ունեցել»: Իսպանիան, Թուրքիան, Գերմանիան և Կիպրոսը հանդես են եկել որպես հանձնման օպերացիաների «հավաքակայաններ» և Միացյալ Թագավորությունը, Պորտուգալիան, Իռլանդիան և Հունաստանը կալանավորներին տեղափոխելու ընթացքում հանդես են եկել որպես «կանգառներ»: Իտալիան, Շվեդիան, Մակեդոնիան և Բոսնիա-Հերցեգովինան թույլ են տվել, որ ամերիկացիներն իրենց տարածքներից առևանգեն անձանց: Նույն օրը «ԲիԲիՍի»-ի լրատվությամբ հայտնվել է, որ անհավանական է, որ Եվրոպայում դեռևս գործում են գաղտնի ամերիկյան կալանատեղեր, և դրանք ամենայն հավանականությամբ տեղափոխվել են Հյուսիսային Աֆրիկա:

Այս լուրջ մեղադրանքների հետաքննության վարման առումով առ այս պահին առաջատար դեր են խաղացել Եվրոպայի խորհրդի խորհրդարանական և վարչական հաստատությունները: Ենթադրաբար, ամերիկացիների կողմից անձանց կալանավորելու ձևը և առանձին կալանավորների նկատմամբ դրսևորած վերաբերմունքն առաջացրել են գործնական խոչընդոտներ, որոնք հնարավորություն չեն տալիս կիրառելու ՄԻԵԿ-ով ամրագրված դատական պաշտպանության միջոցները:

Համաձայն օրենքով սահմանված ընթացակարգի

5-րդ հոդվածը պահանջում է, որ անձին ազատազրկելու բոլոր դեպքերը բավարարեն այս պայմանը: Մշտական գործող դատարանի մեծ պալատը միաձայն բացատրել է այս պահանջի իմաստը *«Օջալանն ընդդեմ Թուրքիայի» (Ocalan v Turkey)* գործի վերաբերյալ վճռում (տե՛ս վերը՝ 134-35-րդ էջ): Հետևյալ մեջբերումներն անդրադառնում են դիմողի գանգատին, որում նա հայտնել է, որ Քենիայում նրան կալանքի տակ պահելը հավասար է եղել Թուրքիայի պաշտոնատար անձանց կողմից իրեն առևանգելուն՝ ի խախտումն միջազգային իրավունքի նորմերի:

83. … Արդյոք կալանքն «օրինակա՞ն» է և արդյոք այն համապատասխանո՞ւմ է «օրենքով սահմանված կարգին» հարցին պատասխանելու համար կոնվենցիան հղում է կատարում ազգային օրենսդրությանը և հաստատում դրա նյութական և ընթացակարգային դրույթներին հետևելու պարտավորություն: Այնուամենայնիվ, այն լրացուցիչ պահանջում է, որ ազատազրկման ցանկացած դեպք համապատասխանի 5-րդ հոդվածի նպատակին, այն է՝ անձանց կամայականությունից պաշտպանելու նպատակին: Այս դեպքում կշեռքի նժարին դրված է ոչ միայն «ազատության իրավունքը», այլև «անձի անվտանգության իրավունքը» (տե՛ս, ի թիվս այլոց, *«Բոզանոն [ընդդեմ] Ֆրանսիայի» (Bozano [v France,* A.111 (1986)], էջ 23, պարբ. 54 և *«Վասսինքն ընդդեմ Նիդեռլանդների» (Wassink v The Netherlands),* 1990 թ. սեպտեմբերի 27-ի վճիռ, շարք A, թիվ 185-A, էջ 11, պարբ. 24):

84. Ազգային մարմինները և հատկապես դատարաններն առաջին հերթին պետք է մեկնաբանեն և կիրառեն ներպետական օրենսդրությունը: Այնուամենայնիվ, քանի որ 5-րդ հոդվածի 1-ին կետով ներպետական օրենսդրությունը չկատարելն առաջացնում է կոնվենցիայի խախտում, ապա ստացվում է, որ դատարանը կարող է և պետք է ունենա որոշակի լիազորություն և վերահսկի, թե արդյոք այդ օրենքը պահպանվե՞լ է (տե՛ս *«Բենհեմն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Benham v the United Kingdom),* 1996 թ. հունիսի 10-ի վճիռ, Վճիռների և որոշումների զեկույցներ և *«Բուամարն ընդդեմ Բելգիայի» (Bouamar v Belgium),* 1988 թ. փետրվարի 29-ի վճիռ, շարք A, թիվ 129, էջ 21, պարբ. 49):

85. Մեկ պետության մարմինների կողմից մեկ այլ պետության տարածքում կատարված ձերբակալությունը, որը տեղի է ունեցել առանց վերջինիս համաձայնության, 5-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում ազդում է տվյալ անձի անձնական

անվտանգության իրավունքի վրա (տե՛ս նույն նպատակով *«Շտոքեն ընդդեմ Գերմանիայի» (Stocke v Germany)*, 1989 թ. հոկտեմբերի 12-ի վճիռ, շարք A, թիվ 199, Հանձնաժողովի կարծիքը, էջ 24, պարբ. 167):

86. Փախուստի մեջ գտնվող հանցագործներին արդարադատության առջև կանգնեցնելու նպատակով կոնվենցիան չի կանխում հանձնման (էքստրադիցիայի) մասին համաձայնագրերի շրջանակներում կամ արտաքսման բնագավառում կողմերի համագործակցությունը՝ պայմանով, որ այն չի բախվում կոնվենցիայով ճանաչված որևէ առանձին իրավունքին (տե՛ս *Շտոքեն* [Stocke], Հանձնաժողովի կարծիքը, մեջբերված է վերը՝ էջ 24-5, պարբ. 169):

87. Ինչ վերաբերում է պետությունների միջև հանձնման համաձայնություններին, երբ այդ պետություններից մեկը կոնվենցիայի անդամ է, իսկ մյուսը՝ ոչ, ապա հանձնման համաձայնագրով սահմանված կանոնները կամ, նման համաձայնագրի բացակայության դեպքում, խնդրո առարկա պետությունների միջև համագործակցությունը, նույնպես համապատասխան գործոններ են, որոնք պետք է հաշվի առնվեն, երբ որոշում է կայացվում՝ դատարանի առջև գանգատարկվող ձերբակալությունն օրինակա՞ն է, թե՞ ոչ: Այն փաստը, որ պետությունների միջև համագործակցությունը հանգեցրել է փախուստի մեջ գտնվող անձի հանձնմանը, ինքնին ձերբակալությունը չի դարձնում անօրինական, հետևաբար՝ չի առաջացնում 5-րդ հոդվածի խնդիր (տե՛ս *«Ֆրեդա ընդդեմ Իտալիայի» (Freda v Italy)*, թիվ 8916/80, 1980 թ. հոկտեմբերի 7-ի հանձնաժողովի որոշում, DR 21, էջ 250, *«Կլաուս Ալթմանն (Բարբին) ընդդեմ Ֆրանսիայի» (Klaus Altmann (Barbie) v France),* N 10689/83, 1984 թ. հուլիսի 4-ի հանձնաժողովի որոշում, DR 37, էջ 225, *«Լուկ Ռեյնետտ ընդդեմ Ֆրանսիայի» (Luc Reinette v France)*, թիվ 14009/88, 1989 թ. հոկտեմբերի 2-ի հանձնաժողովի որոշում, DR 63, էջ 189):

88. Համայնքի ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների պահանջների միջև արդարացի հավասարակշռություն փնտրելն անկապտելի է ողջ կոնվենցիայից: Աշխարհում տեղաշարժի դյուրացմանը և միջազգային մակարդակով հանցավորության չափերի ահագնացմանը զուգահեռ, ազգերի շահագրգռվածությունը, որ արտասահմանում փախուստի մեջ գտնվող կասկածյալ հանցագործները կանգնեցվեն արդարադատության առջև, հետզհետե ավելի է մեծանում: Դրան հակառակ, փախուստի մեջ գտնվող հանցագործների համար ապահով ապաստանի ստեղծումը ոչ միայն վտանգավոր է այն պետության համար, որը պարտավորվում է պատսպարել պաշտպանության տակ գտնվող անձին, այլև միտված է սասանելու հանձնման (էքստրադիցիայի) հիմունքները (տե՛ս *«Սերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Soering v the United Kingdom)*, 1989 թ. հուլիսի 7-ի վճիռ, շարք A, թիվ 161, էջ 35, պարբ. 89):

89. Կոնվենցիան չի պարունակում դրույթներ, որոնք կանդրադառնային այն հանգամանքներին, երբ հանձնումը (էքստրադիցիան) կարող է բավարարվել: Նույնիսկ սովորականից տարբերվող հանձնումը (էքստրադիցիան) չի կարող համարվել կոնվենցիային հակասող գործողություն, եթե այն խնդրո առարկա պետությունների միջև համագործակցության արդյունք է, և փախուստի մեջ գտնվող հանցագործի ձերբակալության կարգադրության իրավական հիմքը փախուստի մեջ գտնվող անձի ծագման երկրի կողմից տրված ձերբակալության սանկցիան է (տե՛ս *«Իլիչ Ռամիրես Սանչեսն ընդդեմ Ֆրանսիայի», Illich Ramirez Sanchez [v France, 1996 թ. հունիսի 24-ի Հանձնաժողովի որոշում, DR 86]*, էջ 155):

90. Անկախ այն հանգամանքից՝ ձերբակալությունը եղե՞լ է այն պետության օրենքի խախտում, որտեղ պատսպարվել է փախուստի մեջ գտնվող անձը (ինչը մի հարց է, որը ենթակա է քննության դատարանի կողմից, եթե ապաստան տվող պետությունը կոնվենցիայի անդամ պետություն է), դատարանը պահանջում է համոզիչ հետևությունների տեսքով ապացույցներ, որ այն պետության իշխանությունները, որոնց հանձնվել է դիմողը, գործել են արտատարածքային կարգով, ինչը համատեղելի չէ ապաստան տվող պետության ինքնիշխանության սկզբունքի հետ և, հետևաբար, հակասում է միջազգային իրավունքին (տե՛ս mutatis mutandis *«Շտոքեն ընդդեմ Գերմանիայի»* (Stocke v Germany), 1991 թ. մարտի 29-ի վճիռ, շարք A, թիվ 199, էջ 19, պարբ. 54): Միայն այս դեպքում ապացույցի բեռը, որ ապաստան տվող պետության ինքնիշխանությունը և միջազգային իրավունքը պահպանվել են, կանցնի պատասխանող կառավարությանը: Այնուամենայնիվ, ինչպես առաջարկվել է պալատի կողմից, այս կետի առնչությամբ դիմողից չի պահանջվում ներկայացնել «ողջամիտ կասկածից վեր» ապացույց (2003 թ. մարտի 12-ի վճիռ, պարբ. 92):

(բ) ՍՈՒՅՆ ԳՈՐԾԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

(i) Արդյոք ձերբակալությունը համահո՞ւնչ է եղել Թուրքիայի օրենքին

91. Դատարանը նկատում է, որ դիմողը ձերբակալվել է Թուրքիայի անվտանգության ուժերի կողմից օդանավի ներսում, որը գրանցված է եղել Թուրքիայում՝ Նայրոբիի օդանավակայանի միջազգային գոտում:

Ընդհանուր հիմք է, որ Քենիայի պաշտոնատար անձանց կողմից Թուրքիայի պաշտոնատար անձանց հանձնվելուց հետո դիմողը եղել է գործող թուրքական իշխանությունների իրավասության տակ, հետևաբար, ըստ կոնվենցիայի 1-ին հոդվածի նպատակի, այդ պետության «իրավազորության» ներքո, չնայած այս դեպքում Թուրքիան իր իրավասություններն իրականացրել է ոչ իր տարածքում: Ճիշտ է, որ Թուրքիայի պաշտոնատար անձինք ֆիզիկապես

ստիպել են դիմողին վերադառնալ Թուրքիա, և նա մնացել է նրանց հսկողության և իրավասության տակ իր ձերբակալությունից և Թուրքիա վերադառնալուց հետո (այս կապակցությամբ տե՛ս *«Իլիչ Ռամիրես Սանչեսն ընդդեմ Ֆրանսիայի» (Illich Ramirez Sanchez v France)* և *«Ֆրեդան ընդդեմ Իտալիայի» (Freda v Italy)* գործերի վերաբերյալ վերոնշյալ որոշումները և հակառակ ազդեցությամբ՝ *«Բանկովիչը և այլք ընդդեմ Բելգիայի և այլ 16 պայմանավորվող պետությունների»* որոշումը (*Bankovic´ and Others v Belgium and 16 Other Contracting States* (dec.) [GC], թիվ 52207/99, ECHR 2001-XII)):

92. Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք ձերբակալությունը համապատասխանե՞լ է Թուրքիայի ազգային օրենսդրությանը, դատարանը նկատում է, որ Թուրքիայի քրեական դատարանները դիմողին ձերբակալելու համար տվել են յոթ սանկցիա, մինչդեռ Ինտերպոլը շրջանառության մեջ էր դրել խուզարկության ծանուցագիրը («կարմիր ծանուցագիր»): Այս փաստաթղթերից յուրաքանչյուրում դիմողը մեղադրվել է Թուրքիայի քրեական օրենսգրքի շրջանակներում կատարած հանցագործությունների մեջ, մասնավորապես, պետության տարածքային ամբողջականությունը խախտելու նպատակով զինված հրոսակախմբի ստեղծման, մի շարք ահաբեկչական գործողությունների հրահրման մեջ, որոնց հետևանքով տեղի է ունեցել մահվան դեպք: Դիմողին ձերբակալելուց հետո նրան ներկայացրել են դատարան՝ ոստիկանությունում կալանքի տակ պահելու օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո: Այնուհետև նրա դեմ հարուցվել են մեղադրանքներ, տեղի է ունեցել դատավարություն, և նա մեղավոր է ճանաչվել քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածում նշված հանցագործությունների կատարման մեջ: Ստացվում է, որ նրա ձերբակալությունը և կալանավորումը համապատասխանել են Թուրքիայի դատարանների կողմից տրված կարգադրություններին, որոնք արվել են «նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով՝ հանցագործության կատարման վերաբերյալ ողջամիտ կասկածներ ունենալու պատճառով:

(ii) Քենիայի գործակալների կողմից բռնելը

93. Կողմերի ներկայացրած փաստարկների հիման վրա դատարանը պետք է որոշի, թե արդյոք դիմողին բռնելը նրան Նայրոբիի օդանավակայանի ինքնաթիռում գտնվող Թուրքիայի պաշտոնատար անձանց հանձնելուց անմիջապես առաջ եղե՞լ է Թուրքիայի պաշտոնյաների կողմից Քենիայի ինքնիշխանությունը և միջազգային իրավունքի նորմերը խախտող գործողությունների հետևանք՝ ինչպես ներկայացրել է դիմողը, թե՞ Թուրքիայի և Քենիայի կառավարությունների միջև հանձնման մասին համաձայնագրի բացակայության պայմաններում պաշտոնական ընթացակարգ սահմանող համագործակցության արդյունք, ինչպես ներկայացրել է կառավարությունը:

94. Դատարանը սկսելու է փաստերն ուսումնասիրել տվյալ դեպքում այն դերից, որը խաղացել են Քենիայի իշխանությունները: Դիմողը Քենիա է մուտք գործել առանց սահմանի ծառայողների մոտ իր ինքնությունը բացահայտելու: Այնուամենայնիվ, հենց որ նրանք տեղեկացվել են, որ դիմողը գտնվում է Հունաստանի դեսպանատանը, Քենիայի իշխանությունները հրավիրել են Հունաստանի դեսպանին, որի հետ դիմողը մնում էր Նայրոբիում, որպեսզի կարգավորեն դիմողին Քենիայի տարածք թողնելու հարցը: Քենիայից մեկնելուց անմիջապես առաջ, ավելի ճիշտ, երբ նա Հունաստանի դեսպանատնից տեղափոխվում էր օդանավակայան, Քենիայի պաշտոնատար անձինք միջամտել են և առանձնացրել դիմողին Հունաստանի դեսպանից: Մեքենայի ղեկի մոտ, որտեղ գտնվում էր դիմողը, նստած էր քենիացի պաշտոնատար անձ, որը հասցրել է նրան այն ինքնաթիռ, որտեղ Թուրքիայի պաշտոնատար անձինք սպասում էին, որ ձերբակալեն նրան:

95. Քենիայի իշխանությունները չեն կարծում, որ Նայրոբիի օդանավակայանում գտնվող օդանավում Թուրքիայի պաշտոնատար անձանց կողմից դիմողի ձերբակալությունը որևէ կերպ միջամտություն է եղել Քենիայի անկախությանը: Արդյունքում, ո՛չ դիմողի կալանքի տակ վեցնելը (ներառյալ Քենիայի իշխանությունների կողմից նախքան օդանավակայան տեղափոխելը նրան բռնելը), ո՛չ էլ Թուրքիայի պաշտոնատար անձանց կողմից ինքնաթիռի մեջ նրա ձերբակալությունը չեն հանգեցրել Քենիայի և Թուրքիայի միջև միջազգային վեճի առաջացման կամ դիվանագիտական հարաբերությունների վատացման: Քենիայի իշխանությունները բողոք չեն ներկայացրել Թուրքիայի իշխանություններին այս կետերի առնչությամբ կամ չեն պահանջել Թուրքիայից իրավիճակի շտկում, ինչպես, օրինակ՝ դիմողի վերադարձ կամ փոխհատուցում:

96. Քենիայի իշխանությունները, այնուամենայնիվ, պաշտոնապես բողոք են ներկայացրել Հունաստանի կառավարությանը՝ պահանջելով անմիջապես հետ կանչել Հունաստանի դեսպանին, քանի որ դիմողը Քենիայի տարածք էր մտել ապօրինաբար՝ Հունաստանի պաշտոնյաների օժանդակությամբ և այնտեղ գտնվում էր անօրինական: Դիմողը ցանկալի հյուր չէր Քենիայում, և Քենիայի իշխանություններն անհանգստանում էին, թե նա երբ պետք է լքի երկիրը:

97. Հաշվի առնելով գործի այս կողմերը՝ դատարանն ընդունում է իրադարձությունների վերաբերյալ կառավարության ներկայացրած տարբերակը. դատարանը կարծում է, որ տվյալ ժամանակ Քենիայի իշխանությունները որոշել են կա՛մ դիմողին հանձնել Թուրքիայի իշխանություններին, կա՛մ էլ հեշտացնել նրան հանձնելու գործողությունը:

98. Դիմողը փաստեր չի բերել, որոնք հիմնավոր եզրակացությունների հնարավորություն կտային (տե՛ս պարբ. 90), որ տվյալ դեպքում Թուրքիան չի հարգել Քենիայի ինքնիշխանությունը կամ էլ չի հետևել միջազգային իրավունքի նորմերին: Մեծ պալատը պաշտպանում է պալատի եզրակացությունները, որ.

> « … Քենիայի արտաքին գործերի նախարարի 1999 թ. փետրվարի 16-ի հայտարարությունը չի համոզում դատարանին, որ հակառակ դիմողի պնդումներին՝ Քենիայի իշխանությունները որևէ կապ չեն ունեցել դիմողի ձերբակալության կամ տեղափոխման հետ.. Թեպետ ճիշտ է, որ դիմողը չի ձերբակալվել Քենիայի իշխանությունների կողմից, դատարանին ներկայացված փաստերը ցույց են տալիս, որ Քենիայի պաշտոնատար անձինք դեր են խաղացել դիմողին Հունաստանի դեսպանից բաժանելու և ինքնաթիռում նրա ձերբակալությունից անմիջապես առաջ նրան օդանավակայան փոխադրելու գործում (տե՛ս պալատի վճռի 100-րդ պարբերությունը):

99. Հետևաբար, 1999 թ. փետրվարի 15-ին դիմողի ձերբակալությունը և կալանավորումը կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների առումով համապատասխանել են «օրենքով սահմանված կարգին»:

Այսպիսով, այդ արտահայտությամբ պահանջվում է, որ պետությունները հետևեն ներպետական օրենսդրության և միջազգային իրավունքի նորմերին (օրինակ՝ երբ նրանք կատարում են անձանց հանձնում), այդ թվում նաև, հարկ եղած դեպքում, անձանց կալանավորելու կապակցությամբ: Նաև, պետությունները չպետք է գործեն «կամայական» եղանակով, այսինքն՝ չպետք է գործեն 5-րդ հոդվածով երաշխավորված ազատության իրավունքի բնույթին հակառակ (տե՛ս *Բոզանոն (Bozano)* ստորև՝ էջ 301): Համաձա՞յն եք մեծ պալատի հետ, որ Թուրքիայի իշխանությունները չեն խախտել այս չափորոշիչները *Օջալանի (Ocalan)* գործում:

Հոդված 5(1). Ձերբակալության և կալանավորելու թույլատրելի հիմքերը

Հոդված 5(1)(ա). Իրավասու դատարանի կողմից դատապարտումը

……

«Վան Դրուգենբրեքն ընդդեմ Բելգիայի»
(Van Droogenbroeck v Belgium A. 50 (1982) 4 EHRR 443)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Բրուգեսի քրեական դատարանի կողմից դիմողը մեղավոր էր ճանաչվել գողություն կատարելու մեջ և դատապարտվել երկու տավա ազատազրկման: Հաշվի առնելով նրա նախկին դատվածությունները՝ դատարանը կարգադրել էր նաև, որ նա 1964 թ. «Սոցիալական պաշտպանության մասին» օրենքի հիման վրա որպես կրկնահանցագործ հաջորդ 10 տարվա ընթացքում «դրվի կառավարության տրամադրության տակ»: Առաջին ատյանի դատարանի որոշումը հաստատվել է Գենտի վերաքննիչ դատարանի կողմից: Իր երկու տարվա ազատազրկման ժամկետի ավարտից հետո դիմողն ազատ է արձակվել: Այնուհետև, նշանակված տասը տարվա ժամանակահատվածում արդարադատության նախարարը դատարանի կարգադրությունների հիման վրա մի քանի անգամ կալանավորել և ազատ է արձակել նրան գողության նոր հանցագործություններ կատարելու և վերականգնողական միջոցառումներին չենթարկվելու պատճառով:

Դիմողը պնդել է, որ, ի թիվս այլոց, տեղի են ունեցել 5(1) և 5(4) հոդվածների խախտումներ, որոնք առաջացել են արդարադատության նախարարի կարգադրությամբ նրա նկատմամբ կիրառված կալանքի ժամկետների և դրանց բողոքարկման համար անհրաժեշտ համապատասխան դատական պաշտպանության միջոցների բացակայության պատճառով: Հանձնաժողովը միաձայն կարծիք է

հայտնել, որ տեղի է ունեցել 5(4) հոդվածի խախտում, սակայն, տասը կողմ և երկու դեմ ձայներով, որոշել է, որ 5(1)(ա) հոդվածի համաձայն՝ կալանքը եղել է արդարացված:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

35. Դատարանը պետք է որոշի՝ կալանավորումը տեղի է ունեցել Գենտի վերաքննիչ դատարանի կողմից «դատապարտումից հետո՞, թե՞ ոչ»:

Համաձայն ֆրանսերեն տեքստի՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի (ա) ենթակետի նպատակների համար «դատապարտում» բառը պետք է հասկացվի թե՛ որպես «օրենքի համաձայն հանցագործության կատարման փաստի ապացուցումից հետո» «մեղավորության հաստատում» (տե՛ս 1980 թ. նոյեմբերի 6-ի Գուցարդիի (Guzzardi) վճիռը, շարք A, թիվ 39, էջ 37, պարբ. 100), թե՛ որպես պատժի կամ ազատազրկման տարր պարունակող այլ միջոցառման նշանակում:

Այս պայմանները սույն գործում բավարարված են:

«Հետո» բառը չի նշանակում միայն, որ ժամանակի առումով «կալանավորումը» պետք է հետևի «դատապարտամանը»: Բացի այդ, «կալանավորումը» պետք է առաջանա, «հետևի և կախված լինի» կամ տեղի ունենա որպես «դատապարտման արդյունք» (տե՛ս *«X-ի ընդդեմ Միացյալ Թագավորության» (X v UK)* գործով 1981 թ. նոյեմբերի 5-ի վճիռը, շարք A, թիվ 46, էջ 17, պարբ. 39, *Էնգելի (Engel)* գործով 1976 թ. հունիսի 8-ի վճիռը, շարք A, թիվ 22, էջ 27, պարբ. 68)…

37. Նախարարի որոշումները, …որոնք չեղյալ են հայտարարել պրն Վան Դրուգենբրեքի պայմանական ազատ արձակումը, կարգադրել են, որ նա վերցվի «կալանքի» տակ . . .

38. Ամեն դեպքում, հարկ է վերանալ արտաքին կողմերից և օգտագործված լեզվից և կենտրոնանալ իրական դրության վրա (տե՛ս հատկապես mutatis mutandis *Դեվեերի (Deweer)* վճիռը, շարք A, թիվ 35, էջ 23, պարբ. 44):

Սա մի խնդիր է, որի առնչությամբ կառավարությունն ունի հայեցողության լայն սահման: Նախադեպային իրավունքը և պրակտիկան անշուշտ հաստատում են 1964 թ. օրենքի 25-րդ բաժնում ամրագրված տեքստի («եթե անհրաժեշտ է) և «տրամադրության տակ դնել» փաստացի արտահայտության իմաստը: 1978 թ. ապրիլի 4-ի վճռով Բելգիայի վճռաբեկ դատարանը որոշել է, որ խնդրո առարկա «պատժի իրականացումը մեծավ մասամբ» արդարադատության նախարարի «հայեցողության խնդիրն» է (Pasicrisie 1978, I, էջ 861): Կարելի է եզրակացնել, որ փախստականների հանձնման համակարգի ոլորտում «Սոցիալական պաշտպանության մասին» օրենքը կիրառելու մասին դատարանի որոշումը նախարարական որոշումների համար «կառավարության հայեցողության» շատ ավելի նեղ սահմաններ է նախատեսում (1891 թ. նոյեմբերի 27-ի օրենք, տե՛ս *Դե Վիլդենի, Օոմսի և Վերսիփի (De Wilde, Ooms and Versyp)* վճիռը, 1971 թ. հունիսի 18, շարք A, թիվ 12, էջ 24-25, պարբ. 37 և էջ 33-34, պարբ. 61): Կարճ ասած՝ օգտագործելով հանձնաժողովի պատվիրակի լեզուն՝ «դատարանի որոշումը չի կարգադրում կալանավորել» կրկնահանցագործներին և սովորության ուժով իրավախախտումներ կատարող անձանց: Այդ որոշումը «թույլատրում» է դա:

39. Այս հանգամանքներում դատարանը պետք է քննարկի, թե արդյոք 5-րդ հոդվածի իմաստով բավարար կապ կա՞ հիշատակված վերջին որոշման և ազատազրկման սույն դեպքի միջև:

Այս հարցին պետք է տրվի հաստատական պատասխան, քանի որ նախարարի հայեցողությունը պայմանավորվում է ինչպես օրենքով, այնպես էլ «իրավասու դատարանի» հրապարակած վճռով: Այս առումով դատարանը նկատում է, որ համաձայն Բելգիայի նախադեպային իրավունքի՝ վճիռը, որը տվյալ անձին դատապարտում է ազատազրկման և 1964 թ. օրենքի 22-րդ կամ 23-րդ բաժինների հիման վրա լրացուցիչ կամ զուգակցվող պատժի միջոցով նրան դնում կառավարության հայեցողության տակ, «մեկ անտրոհելի ամբողջություն» է (վճռաբեկ դատարան, 1975 թ. հունիսի 17, Pasicrisie 1975, I, էջ 999)): Այս վճիռն ունի երկու բաղկացուցիչ մաս: Առաջինը ազատազրկման տեսքով պատիժն է, որին իրավախախտում կատարած անձը պետք է ենթակա լինի դատարանի կողմից սահմանված ժամկետի ընթացքում: Երկրորդը դիմողին կառավարության հայեցողության տակ դնելն է, որի իրականացումը կարող է ունենալ տարբեր ձևեր՝ ազատության մեջ գտնվելու ժամանակ նրա նկատմամբ հսկողության սահմանումից մինչև կալանավորում:

Այս ձևերի ընտրությունը կախված է արդարադատության նախարարի հայեցողությունից: Այնուամենայնիվ, նա որոշումներ կայացնելու անսահմանափակ լիազորություն չունի: Օրենքում ամրագրված սահմանների շրջանակներում նա պետք է գնահատի տվյալ անձի ներկայացրած վտանգի աստիճանը և նրան հասարակությանն հնտեգրելու հեռանկարները՝ կարճաժամկետից մինչև միջնաժամկետ:

40. Փաստորեն, չպետք է անտեսել, որ 1964 թ. օրենքի վերնագիրը և ընդհանուր կառուցվածքը, նախագծման պատմությունը և Բելգիայի նախադեպային իրավունքը ցույց են տալիս, որ այս օրենքի նպատակներն են ինչպես «հասարակությանը կրկնահանցագործների և սովորության ուժով իրավախախտումներ կատարող անձանց ներկայացրած վտանգից պաշտպանելը», այնպես էլ «[կառավարությանը] [նրանց] վերափոխվելու հնարավորություն տալը» (վճռաբեկ դատարան, 1933 թ. դեկտեմբերի 11, Pasicrisie 1934, I, էջ 99): Այս նպատակներին հասնելու փորձերի համար պահանջվում է հաշվի առնել այն հանգամանքները, որոնք, ըստ իրենց բնույթի, գործից գործ տարբերվում են և

կարող են փոփոխվել: Որոշում ընդունելիս դատարանը չի կարող անձի հետագա զարգացումը գնահատելուց ավելին անել: Արդարադատության նախարարը կարող է իր ենթակաների միջոցով և օժանդակությամբ շատ ավելի մոտիկից և շատ ավելի հաճախակի վերահսկել այդ զարգացումը, սակայն այս փաստն արդեն իսկ նշանակում է, որ որքան շատ ժամանակ է անցնում, այնքան ավելի է թուլանում ազատ արձակելու կամ կրկին կալանավորելու և սկզբնական որոշման միջև կապը: Այս կապը կարող է վերջնականապես խզվել, եթե ընդունվի այնպիսի դիրքորոշում, որի դեպքում այդ որոշումները կբխեն այնպիսի հիմքերից, որոնք որևէ կապ չեն ունենա օրենսդիր մարմնի կամ դատարանի նպատակների հետ կամ էլ հիմված կլինեն այնպիսի գնահատման վրա, որն այդ նպատակների տեսանկյունից անողջամիտ է: Այս հանգամանքներում կալանքը, որն օրինական էր սկզբում, կարող է վերածվել կամայական ազատազրկման և, հետևաբար, լինել անհամատեղելի 5-րդ հոդվածի հետ (տե՛ս հատկապես վերը նշված *«X-ի ընդդեմ Միացյալ Թագավորության» (X v UK)* վճիռը, շարք A, թիվ 46, էջ 19, պարբ. 43):

Տվյալ դեպքում այսպիսի իրավիճակ չի ձևավորվել: Բելգիայի իշխանությունները պրն Վան Դրուգենբրեքի նկատմամբ ցուցաբերել են համբերատարություն և հավատ: Չնայած նրա դրսևորած վարքագծին՝ նրանք նրան ուղղվելու մի քանի հնարավորություն են ընձեռել... Իրենց հայեցողությունը նրանք իրականացրել են այնպիսի եղանակով, որը համահունչ է եղել կոնվենցիայի պահանջներին, որոնք թույլ են տալիս, որ դատապարտումն ունենա անորոշության տարր, և չեն պարտավորեցնում պայմանավորվող պետություններին, որ նրանք դատավճիռների իրականացման ընդհանուր վերահսկողությունը հանձնարարեն դատարաններին...

42. Հետևաբար, 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել . . . .

[Դատարանն այնուհետև դիտարկել է պահանջը 5(4) հոդվածի շրջանակներում, որի վերաբերյալ նկատառումները ներկայացված են 227-րդ էջում]:

. . .

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

1. Վճռում է, որ կոնվենցիայի 5(1) հոդվածի խախտում չի եղել:

2. Վճռում է, որ եղել է 5(4) հոդվածի խախտում . . .

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Վիարդան և դատավորներ Ձեքիան, Կրեմոնան, Վան դեր Մերշը, Բինդշեդլեր-Ռոբերտը, Էվրիգենիսը, Լագերգրենը, Լիշը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Պինեյրո Ֆարինան, Գարսիա դե Էնտեռիան, Փեթիթին, Ուոլշը, սըր Վինսենթ Էվանսը, Ռուսոն, Բերնհարդտը և Ձերսինգը:

2 Դատարանի կողմից «բավարար կապի» ցուցանիշը, որն ընդունվել է *Վան Դրուգենբրեքի (Van Droogenbroeck)* գործում, իր շարունակությունն է ունեցել *«Ուիքսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Weeks v UK)* գործում, որին վերաբերող փաստերն ամփոփված են ստորև՝ 340-րդ էջում (որտեղ այդ գործը քննարկվում է 5(4) հոդվածի տեսանկյունից): *Ուիքսի* գործը վերաբերում է ըստ հայեցողության ցմահ բանտարկության դատապարտված անձին ներքին գործերի նախարարի կողմից բանտ հետկանչմանը: Վճռելով, որ 5(1) հոդվածի խախտում չի եղել, դատարանը հայտարարել է.

46….[Նրան ըստ հայեցողության ցմահ պատիժ նշանակելու] նպատակը եղել է դիմողի (որն ինչպես առաջին ատյանի դատավորի, այնպես է վերաքննիչ դատարանի կողմից ճանաչվել է որպես «վտանգավոր երիտասարդ անձնավորություն») նկատմամբ շարունակաբար անվտանգության միջոցառման սահմանումը՝ հօգուտ հասարակության անվտանգության:

…Սկզբունքորեն, պրն Ուիքսը դրվել է պետության հայեցողության տակ, քանի որ այս դեպքում պահանջվել է շարունակաբար և անսահման ժամանակով խնամակալական վերահսկողություն նրա նկատմամբ և, ըստ այդմ, կատարել կանոնավոր վերագնահատումներ՝ վստահ լինելու համար, որ նրա հետ վարվում են ամենանպատակահարմար ձևով:

Այն հիմքերը, որոնք ծառայել են վճիռը կայացնող դատարաններին (որոնք կարգադրել են պրն Ուիքսի ազատազրկումը), իրենց բնույթով ժամանակի ընթացքում ենթակա են փոփոխության, մինչդեռ միջոցառումն ուժի մեջ պետք է մնա նրա ողջ կյանքի ընթացքում: Սրանով նրա վճիռը տարբերվում է ցմահ բանտարկության պատժից, որը նշանակվում է անձին՝ ելնելով նրա կատարած արարքի ծանրությունից:

47. Այս իմաստով պրն Ուիքսի նկատմամբ կիրառված միջոցառումը համեմատելի է Բելգիայի Վան Դրուգենբրեքի դեպքում կիրառված միջոցառման հետ, որը կրկնահանցագործին կամ սովորության ուժով իրավախախտումներ կատարող անձին կառավարության տրամադրության տակ դնելն էր, թեպետ այս դեպքում այդ միջոցառումն ընդգրկում է կյանքի ողջ տևողությունը (շարք A, թիվ 50, հատկապես էջ 21-2, պարբ. 40): Սկզբունքորեն, երկու դեպքում էլ դատապարտված անձի նկատմամբ կիրառված այս միջոցառման և դրա ազդեցությունների միջոցով հետապնդվում է իրավախախտումներ կատարած անձանց սոցիալական պաշտպանության և վերականգնման օրինական նպատակը...

49. Կիրառելով *Վան Դրուգենբրեքի* վճռում նշված սկզբունքները՝ 1966 թ. պրն Ուիքսի դատապարտման և մոտ տասը տարի անց նրան բանտ հետկանչման միջև առկա պաշտոնական իրավական կապն ինքնին բավարար չէ 5-րդ հոդվածի 1(ա) կետի շրջանակներում վիճարկվող կալանքն արդարացնելու համար: (ա) ենթակետով պահանջվող պատճառական կապը ... կարող է վերջնականապես խզվել, եթե որդեգրվել է այնպիսի մոտեցում, համաձայն որի՝ ազատ չարձակելու կամ կրկին կալանավորելու որոշումը հիմնված է եղել այնպիսի փաստերի վրա, որոնք համատեղելի չեն պատիժը նշանակած դատարանի նպատակների հետ: «Այս հանգամանքներում կալանքը, որն սկզբում օրինական էր, կարող է վերածվել կամայական ազատազրկման և, հետևաբար, լինել անհամատեղելի 5-րդ հոդվածի հետ» (շարք A, թիվ 50, էջ 21-2, պարբ. 40)....

Մնում է վերլուծել, թե արդյոք այն հիմքերը, որոնցով նա կալանավորվել է 1977 թ. հունիսին և դրանից հետո, բավարա՞ր են եղել: Պետք է ընդունել, որ այս, ինչպես և մի շարք այլ ասպարեզներում ազգային մարմինները որոշակի հայեցողություններ ունեցող մարմիններ են, քանի որ տվյալ գործի փաստերի գնահատման առումով նրանք շատ ավելի լավ դիրքում են, քան միջազգային դատավորը (տե՛ս, ի թիվս այլոց, *«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (X v UK)*, 1981 թ. նոյեմբերի 5-ի վճիռ, շարք A, թիվ 46, էջ 20, պարբ. 43 և *Լուբերտիի (Luberti)* վճիռը, 1984 թ. փետրվարի 23, շարք A, թիվ 75, էջ 12, պարբ. 27):

51….Հաշվի առնելով [նրա] անկայուն, խանգարված և հարձակողական վարքագիծը, ներքին գործերի քարտուղարը հիմքեր է ունեցել կարծելու, որ դիմողի շարունակական ազատության մեջ մնալը վտանգավոր է հանրության և հենց իր համար: Նախարարի որոշումը նրան կրկին կալանավորելու համար վերահաստատվել է:

Դատարանի կարծիքով՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի (ա) ենթակետի նպատակների առումով բավարար կապ է եղել նրա՝ 1966 թ. դատապարտման և 1977 թ. բանտ հետկանչման միջև:

3 *«Մոնելը և Մորիսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Monnell and Morris v UK, A.115 (1987) 10 EHRR 205)* գործում վերաքննիչ դատարանը վճռել է, որ դատապարտման և անհիմն վերաքննիչ բողոքի մերժման պահի միջև ընկած ժամանակահատվածը չպետք է պատժի մաս լինի: Եվրոպական դատարանը վճռել է, որ բողոքարկման ժամանակ անձին կալանքի տակ պահելը տվյալ դեպքում արդարացված է 5(1)(ա) հոդվածի շրջանակներում, քանի որ այն հետևել է դատապարտմանը:

4 *«Ծիրլիսը և Կուլումպասն ընդդեմ Հունաստանի» (Tsirlis and Kouloumpas v Greece, 1997-III 909, (1997) 25 EHRR 198)* գործով դիմողները «Եհովայի վկաներ» կազմակերպության բարձրաստիճան հոգևոր առաջնորդներ էին, որոնք զինվորական ծառայությունից հրաժարվելու համար ռազմական տրիբունալի կողմից դատապարտվել էին չորս տարվա ազատազրկման՝ ենթակայության (սուբորդինացիայի) կարգը խախտելու մեղադրանքով, քանի որ տրիբունալը որոշել է, որ «Եհովայի վկաների» դավանած կրոնն անհայտ կրոն է: Դիմողներին դատապարտելու ժամանակ տրիբունալն անտեսել է Հունաստանի դատական որոշումները, համաձայն որոնց՝ «Եհովայի վկաները» հայտնի կրոնական կազմակերպություն է, և, հետևաբար, նրանց հոգևոր առաջնորդները ենթակա էին զինվորական ծառայությունից ազատման: Ի վերջո, դիմողներին նշանակված պատիժը չեղյալ է հայտարարվել գերագույն վարչական դատարանի կողմից, և դիմողներին ազատ են արձակել համապատասխանաբար տասներեք և տասներկու ամիս կալանքի տակ պահելուց հետո: Վճռելով, որ դիմողների կալանքը 5(1)(ա) հոդվածով օրինական չի եղել, Եվրոպական դատարանը հայտարարել է.

56. Հետևաբար, հարկ է հիմնավորել, թե արդյոք պրն Ծիրլիսին 1990 թ. ապրիլի 30-ից մինչև 1991 թ. մայիսի 30-ը, իսկ պրն Կուլումպասին՝ 1990 թ. մայիսի 30-ից մինչև 1991 թ. մայիսի 29-ն ընկած ժամանակահատվածում կալանքի տակ պահելը «համապատասխանե՞լ է օրենքով սահմանված կարգին» և կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով եղե՞լ է «օրինական»: Այս իմաստով դատարանը կրկնում է, որ այս դեպքում կոնվենցիան սկզբունքորեն վկայակոչում է ներպետական օրենսդրությունը և ամրագրում դրա նյութական և ընթացակարգային կանոնները պահպանելու պարտավորությունը, սակայն, բացի այդ, պահանջում է նաև, որ ազատազրկման ցանկացած դեպք համապատասխանի 5-րդ հոդվածի նպատակին, որն անձանց կամայականություններից պաշտպանությունն է (տե՛ս, ի թիվս այլոց, *«Բոզանոն*

ընդդեմ Ֆրանսիայի» (Bozano v France) գործի վերաբերյալ 1986 թ. դեկտեմբերի 18-ի վճիռը, շարք A, թիվ 111, էջ 23, պարբ. 54 և *«Լուկանովն ընդդեմ Բուլղարիայի» (Lukanov v Bulgaria)* գործի վերաբերյալ 1997 թ. մարտի 20-ի վճիռ, Վճիռների և որոշումների զեկույցներ, 1997-II, էջ 543-4, պարբ. 41):

57. Նախ՝ ազգային մարմինները և հատկապես դատարանները պետք է մեկնաբանեն և կիրառեն ազգային օրենսդրությունը: Այնուամենայնիվ, քանի որ համաձայն 5-րդ հոդվածի 1-ին կետի՝ ներպետական օրենսդրությանը չհետևելն առաջացնում է կոնվենցիայի խախտում, ստացվում է, որ դատարանը կարող է կամ պետք է ունենա որոշակի իրավասություններ, որպեսզի պարզի, թե արդյոք օրենքը պահպանվե՞լ է (տե՛ս *«Բուամարն ընդդեմ Բելգիայի» (Bouamar v Belgium),* 1988 թ. փետրվարի 29-ի վճիռ, շարք A, թիվ 129, էջ 21, պարբ. 49):

58. Սկզբունքորեն, կալանավորումն օրինական է, եթե այն տեղի է ունենում դատարանի կարգադրության հիման վրա: Դրանից հետո կատարված եզրակացությունը, որ կարգադրություն անելիս դատարանը թույլ է տվել ներպետական օրենսդրության սխալ, կալանավորման միջանկյալ ժամկետի օրինականության վրա հետադարձ ազդեցություն չպետք է ունենա: Ուստի Ստրասբուրգի մարմինները հետևողականորեն մերժել են պաշտպանել քրեական հանցագործությունների մեջ մեղավոր ճանաչված և դատապարտված անձանցից ստացված գանգատները, որոնցում նրանք բողոքել են, որ վերաքննիչ դատարանների վճիռների հիման վրա որոշվել է, որ նրանց դատապարտումները կամ պատիժը հիմնված են եղել փաստի կամ օրենքի սխալի վրա (տե՛ս *«Բենհեմն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Benham v UK)* 1996 թ. հունիսի 10-ի վճիռը, Զեկույցներ, 1996-III, էջ 753, պարբ. 42):

59. Դատարանը նկատում է, որ 1988 թ. օրենքի 6-րդ բաժինը վերաբերում է բոլոր «հայտնի կրոնների» հոգևոր առաջնորդներին: Դեռևս 1975 թ. գերագույն վարչական դատարանն ընդունել է, որ «Եհովայի վկաները» կարող են համարվել որպես այդպիսին, և կասկածից վեր է, որ 1990 թ. դրությամբ այս նախադեպային իրավունքը հաստատված է եղել…. Ներպետական մակարդակով դատական վարույթների ընթացքում չի վիճարկվել, որ դիմողները եղել են այդ հավատքի հոգևոր առաջնորդներ: Այնուամենայնիվ, դիմողների քրեական պատասխանատվության և, այդպիսով, նրանց կալանքի օրինականության հարցի մասին որոշում կայացնելիս ռազմական մարմինները թույլ են տվել նախադեպային իրավունքի կոպիտ խախտում: Ի հետևանք՝ պրն Ծիրլիսը և պրն Կուլումպասը տասներեք և տասներկու ամիս անցկացրել են ազատազրկման մեջ:

60. Բացի այդ, համապատասխան մարմինների կողմից համառորեն «Եհովայի վկաներին» որպես «հայտնի կրոն» չճանաչելը և, այնուհետև, դիմողների ազատության իրավունքն անտեսելը եղել են խտրականության դրսևորումներ՝ համեմատած [զինվորական ծառայությունից] ազատման այն կարգի հետ, որը կիրառվել է Հունաստանի ուղղափառ եկեղեցու հոգևորականների նկատմամբ...

61. Կառավարության տեսակետը, որ դիմողների՝ հոգևոր առաջնորդ լինելու փաստը ռազմական դատարանին ներկայացրած գործի շրջանակներից դուրս է, քանի որ այդ դատարանի իրավասությունը տարածվում է միայն ենթակայության կարգի ենթադրյալ խախտման վրա, չի բացատրում այս սխալը... Նախ՝ այն փաստից, որ «Եհովայի վկաների» զինապարտ լինելու հանգամանքը պարզաբանելու նպատակով վերաքննիչ ռազմական դատարանը բազմիցս հետաձգել է դիմողների գործերը, պարզ է, …որ բողոքներն առանցքային նշանակություն են վերագրել այս հարցին: Երկրորդ՝ վերաքննիչ դատարաններն արդարացրել են դիմողներին անմիջապես այն բանից հետո, երբ գերագույն վարչական դատարանը չեղյալ է հայտարարել զինկոմի որոշումը, համաձայն որի՝ դիմողները ենթակա չեն եղել զինվորական ծառայությունից ազատման, քանի որ հանդիսացել են «անհայտ կրոնի» հոգևոր առաջնորդներ:

62. Սրա հիման վրա դատարանը եզրակացնում է, որ դիմողների ազատազրկումը, որը հետևել է ներպետական օրենսդրությամբ սահմանված ենթակայության կարգը խախտելու համար նրանց դատապարտմանը, եղել է անհիմն և կամայական: Հետևաբար, 5-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների համար այն չի կարող համարվել «օրինական»:

5 *«Իլաշկուն և այլք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի» (Ilascu and Others v Moldova and Russia)* գործի վերաբերյալ 2004 թ. հուլիսի 8-ի վճռով մեծ պալատը եզրակացրել է, որ դիմողների ազատազրկումը նրանց «դատապարտումից» հետո, որը միջազգային համայնքի կողմից չճանաչված անջատողական վարչակարգի կողմից ստեղծված «դատարանի» կամայական դատական վարույթի հետևանք է եղել, եղել է 5(1)(ա) հոդվածի խախտում (այս գործի 3-րդ հոդվածի ասպեկտները ներկայացված են վերը՝ 176-րդ էջում):

461. 5-րդ հոդվածի 1-ին կետի (ա) ենթակետով սահմանված օրինականության («օրենքով սահմանված կարգով» կարգադրված օրինական կալանքի) պահանջը չի բավարարվում միայն ներպետական օրենսդրությանը համապատասխանելու միջոցով: Ազգային օրենքը, ներառյալ դրանում արտահայտված կամ ենթադրվող սկզբունքները և, հատ-

կապես, օրենքի գերակայության սկզբունքը (որը հստակորեն շարադրված է կոնվենցիայի նախաբանում) պետք է համապատասխանեն կոնվենցիային: «Օրենքով սահմանված կարգով» արտահայտության հիմքում ընկած է արդար և պատշաճ ընթացակարգի գաղափարը, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր միջոց, որն անձին զրկում է իր ազատությունից, պետք է կարգադրված լինի և իրականացվի իրավասու մարմնի կողմից և չպետք է լինի կամայական (տե՛ս, ի թիվս այլոց, *«Վինտերվերպն ընդդեմ Նիդեռլանդների (Winterwerp v The Netherlands),* 1979 թ. հոկտեմբերի 24-ի վճիռ, շարք A, թիվ 33, պարբ. 45):

Բացի այդ, քանի որ 5-րդ հոդվածը նպատակ ունի անձին պաշտպանել կամայականություններից (տե՛ս, ի թիվս այլոց, *«Ստեֆորդն ընդդեմ Միացյալ Թագավորության ((Stafford v the United Kingdom)* [GC], թիվ 46295/99, պարբ. 63, ECHR, 2002-IV)), «դատապարտումը չի կարող լինել արդարադատության կոպիտ ժխտման արդյունք» (տե՛ս mutatis mutandis *«Դրոզդը և Յանուսեկն ընդդեմ Ֆրանսիայի և Իսպանիայի (Drozd and Janousek v France and Spain),* 1992 թ. հունիսի 26-ի վճիռ, շարք A, թիվ 240, պարբ. 110):

Դատարանը նաև վկայակոչում է կոնվենցիայի 3-րդ հոդվածով իր արած եզրակացությունները, որոնք վերաբերում են «Մոլդովայի Մերձդնեստրյան Հանրապետության գերագույն դատարանի» վարույթի բնույթին:

462. Հետևաբար, դատարանը կարծում է, որ դիմողներից ոչ ոք չի դատապարտվել «դատարանի» կողմից, և ազատազրկման վճիռը, որն ընդունվել է այնպիսի դատական մարմնի կողմից, ինչպիսին «Մոլդովայի Մերձդնեստրյան Հանրապետության գերագույն դատարանն» է, այնպիսի վարույթի արդյունքում, ինչպիսին սույն գործի վարույթն է, չի կարող համարվել «օրենքով սահմանված կարգով» պահանջվող «օրինական կալանավորում»:

463. Ըստ այդմ, դիմողների կողմից կրած ազատազրկումն այն ժամանակահատվածում, որի ընթացքում դատարանը *ratione temporis* [իրավախախտման ժամանակի գործոն] իրավասություն է ունեցել պատասխանող պետության նկատմամբ (մասնավորապես՝ պրն Իլաշկուի դեպքում՝ 1997 թ. սեպտեմբերի 12-ից մինչև 2001 թ. մայիսի 5-ը Մոլդովայի նկատմամբ և 1998 թ. մայիսի 5-ից մինչև 2001 թ. մայիսի 5-ը՝ Ռուսաստանի նկատմամբ և մյուս դիմողների դեպքում՝ սկսած պատասխանող պետության կողմից կոնվենցիայի վավերացման օրվանից), չեն կարող բավարարել 5-րդ հոդվածի 1(ա) կետում նշված պայմանները:

Ստացվում է, որ պրն Իլաշկուի նկատմամբ տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում մինչև 2001 թ. մայիս ամիսը [երբ նրան բաց են թողել], և այդ դրույթը խախտվել է ու շարունակում է խախտվել դեռևս ազատազրկման մեջ գտնվող մյուս երեք դիմողների նկատմամբ:

464. Ուշադրություն դարձնելով այն հանգամանքին, որ Ռուսաստանի Դաշնությունում կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ժամանակ դիմողները եղել են կալանքի տակ և հաշվի առնելով վերը նշված եզրակացությունները՝ ... դատարանը համարում է, որ բոլոր դիմողների նկատմամբ Ռուսաստանի Դաշնությանը վերագրելի է 5-րդ հոդվածի խախտումը:

Հաշվի առնելով իր վերոհիշյալ եզրակացությունը, ... որ Մոլդովայի Հանրապետության պատասխանատվությունն իր դրական պարտավորությունների մասով առաջանում է 2001 թ. մայիսից, դատարանը կարծում է, որ պրն Իլաշկուի նկատմամբ Մոլդովան 5-րդ հոդվածի խախտում թույլ չի տվել: Մյուս կողմից՝ Մոլդովան խախտել է այս դրույթը մյուս երեք դիմողների նկատմամբ:

Հետևաբար, այն մարմինների կողմից դատավարությունները և «դատապարտումները», որոնք չեն համապատասխանում կոնվենցիայի սահմանադրական և ընթացակարգային նորմերին, դատարանի կողմից չեն ճանաչվելու որպես 5-րդ հոդվածի շրջանակներում անձանց կալանավորումը հիմնավորող վարույթներ:

5(1)(բ) հոդված. դատարանի կարգադրությանը չենթարկվելը կամ օրենքով սահմանված պարտավորությունը չկատարելը

……

«Մակվեյը, Օ'Նիլը և Էվանսը ընդդեմ Միացյալ Թագավորության»
(McVeigh, O'Neill and Evans v UK) . 31-րդ հոդվածի հաշվետվություն, 25 DR 15 1981)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Նավով Իռլանդիայից Լիվերպուլ հասնելուց հետո դիմողները ձերբակալվել են, քանի որ կասկածվել են ահաբեկչական գործողությունների մեջ ներգրավված լինելու մեջ: Մոտ 45 ժամ պահելուց հետո

նրանց բաց են թողել և թույլ տվել մուտք գործել Մեծ Բրիտանիայի տարածք: Նրանց ձերբակալել են 1976 թ. «Ահաբեկչության կանխման մասին (ժամանակավոր դրույթներ)» օրենքով և 1976 թ. «Ահաբեկչության կանխման մասին (լրացուցիչ ժամանակավոր դրույթներ)» կարգով վերապահված իրավասությունների շրջանակում: Կարգի 10(1) հոդվածը հնարավորություն է տալիս «քննությամբ զբաղվող պաշտոնյային վերապահված լիազորությունների շրջանակում, քննության իրականացման ժամանակ անձին պահելու կալանքի տակ: Սա այն բացատրությունն է, որը ներկայացվել է դիմողներին նրանց կալանավորելիս, ընդ որում՝ կալանքի պաշտոնական ծանուցման մեջ նշվել է, որ նրանք կալանքի տակ են պահվելու, «քանի դեռ քննությունն ընթացքի մեջ է»: Կարգի 5(1) հոդվածով թույլատրվում է անձին վերցնել կալանքի տակ՝ որոշելու համար. (ա) արդյոք քննության ենթարկվող անձը կապ ունի՞ ահաբեկչության հետ, (բ) արդյոք նրա նկատմամբ գործե՞լ է [ՄԹ-ից կամ Մեծ Բրիտանիայից կամ Հյուսիսային Իռլանդիայից] հեռացման կարգադրություն (exclusion order), (գ) արդյոք եղե՞լ են հիմքեր կասկածելու համար, որ նա կատարել է հանցագործություն, որը կապված է եղել տարածքից հեռացման կարգադրությունների չկատարման և ահաբեկչության վերաբերյալ տեղեկությունների չբացահայտման հետ: Ազգային օրենքով չի պահանջվել, որ վերը նշված կետերի վերաբերյալ կասկածներ լինեն: Կալանքի նպատակը եղել է թույլ տալ «քննության» իրականացում՝ հավաստիանալու համար, թե արդյոք գոյություն ունե՞ն կասկածի բավարար հիմքեր, որոնք կհիմնավորեին քրեական մեղադրանքը կամ տարածքից հեռացման կարգադրությունը: Կալանքի տակ գտնվելու ժամանակ դիմողներին խուզարկել և հարցաքննել են: Նրանց լուսանկարել են և վերցրել մատնահետքերը:

Որևէ փաստ հանձնաժողովին չի ներկայացվել: Ոչ էլ պատասխանող կառավարությունն է հայտարարել, որ դիմողները փաստորեն ներգրավված են եղել ահաբեկչական գործողությունների մեջ:

Դիմողները պնդել են, որ, ի թիվս այլոց, տեղի է ունեցել 5(1) հոդվածի խախտում: 31-րդ հոդվածի շրջանակներում գործի վերաբերյալ հանձնաժողովի կազմած զեկույցը ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, թե արդյոք կալանավորումն արդարացվա՞ծ է եղել 5(1)(բ) հոդվածի շրջանակներում «օրենքով նախատեսված պարտավորության կատարման ապահովման նպատակով»:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑԸ

170… .Միակ հարցն այն է, թե արդյոք ... օրենքով սահմանված պարտավորությունը կատարելու համար կատարվե՞լ է օրինական ձերբակալություն կամ կալանավորում. . .

171. Ինչպես և երկու կողմերն էլ նշել են, *Էնգելի* (Engel) գործի կապակցությամբ դատարանը վճռել է, որ այս բառերը «վերաբերում են միայն այն դեպքերին, երբ օրենքը թույլ է տալիս կալանավորել անձին՝ նպատակ ունենալով պարտադրել նրան կատարել որևէ առանձին կամ որոշակի պարտավորություն, որը նա մինչ այդ պահը չի կատարել» (վճիռ, պարբ. 69): Ինչպես հանձնաժողովը, այնպես էլ դատարանը հետևողականորեն մերժել են այս արտահայտության լայն մեկնաբանությունը, որը, օրինակ՝ կլիազորեր վերցնել քաղաքացուն վարչական կալանքի տակ՝ նպատակ ունենալով ստիպել նրան, որ նա կատարի քրեական իրավունքից բխող իր ընդհանուր պարտավորությունները (տե՛ս *Լոլեսի (Lawless)* գործը, Հանձնաժողովի զեկույց, շարք B, էջ 64, *Էնգելի* (Engel) գործը, դատարանի վճիռ, sup cit, *Գուզարդիի (Guzzardi)* գործը, Հանձնաժողովի զեկույց, պարբ. 103, դատարանի վճիռ, պարբ. 101):

172. Թեև «պարտավորությունը պետք է լինի «առանձնահատուկ և կոնկրետ», 5(1)(բ) հոդվածով չի պահանջվում, որ այն պետք է առաջանա դատարանի կարգադրությունից...

173. Դիմողները ներկայացնում են, … որ խնդրո առարկա պարտավորությունը պետք է լինի նախկին պարտավորություն և պետք է առկա լինի ինքնակամորեն այն չկատարելու ինչ-որ իրողություն՝ մինչ հնարավոր կլինի արդարացնել դրա կատարման նպատակով անձին կալանավորելու հանգամանքը: Հանձնաժողովը կարծում է, որ այս փաստարկը լուրջ իմաստ ունի, որը պաշտպանվում է վերը մեջբերված *Էնգելի* գործի վերաբերյալ դատարանի կարծիքով (dicta) և, մասնավորապես, դատարանի կողմից վերը նշված պարբերություններում neglige . . . de remplir և failed to satisfy [«չի բավարարել»] արտահայտությունների կիրառմամբ: Հանձնաժողովի կարծիքով՝ 5(1)(բ) հոդվածի այս մասը հիմնականում վերաբերում է այն դեպքերին, երբ օրենքը թույլ է տալիս կալանքը կիրառել որպես հարկադիր միջոցառում՝

նպատակ ունենալով ստիպել անձին կատարել որևէ առանձնահատուկ պարտավորություն, որը նա ինքնակամ չի կատարել մինչ այդ պահը կամ որի կատարումը մինչ այդ պահը նա անտեսել է:

174. Այնուամենայնիվ, 5(1)(բ) հոդվածի շարադրանքը բառացիորեն չի պահանջում, որ կալանավորված անձը թույլ տված լինի այսպիսի միտումնավոր կամ զանցառու խախտում: Այն միայն պահանջում է, որ կալանքի նպատակը լինի պարտականության կատարման ապահովումը: Սա հստակ չի բացառում անձին կալանավորելու հնարավորությունն այն դեպքում, երբ նախկին իրավական պարտավորության խախտում գոյություն չունի: Այնուամենայնիվ, հանձնաժողովի կարծիքով՝ չկատարված պարտականության (եթե նույնիսկ այն վերաբերում է «առանձնահատուկ և կոնկրետ» պարտականության) և համապատասխան նպատակի զուգակցությունը 5(1)(բ) հոդվածի նպատակների համար բավարար չէ: Եզրակացնել, որ այն բավարար է, նշանակում է անձանց կամայական կալանավորելու համար հստակ հնարավորություններ ստեղծել՝ անտեսելով 5(1) հոդվածի խնդիրը և նպատակը ու ժողովրդավարական հասարակություններում ազատության իրավունքի կարևորությունը (համեմատի՛ր *Վինտերվերպի (Winterwerp)* գործի հետ, շարք A, հատոր 33, էջ 16, պարբ. 37):

175. Հետևաբար, հանձնաժողովի կարծիքով, թեև 5(1)(բ) հոդվածի շրջանակներում այս հիմքով կալանավորումն արդարացված կլինի, պետք է գոյություն ունենան առանձնահատուկ հանգամանքներ, որոնք կերաշխավորեն, որ կալանքն այս պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է: Այս առումով հանձնաժողովը հետևում է *Վինտերվերպի (Winterwerp)* գործի նկատմամբ դատարանի մոտեցմանը, որի դեպքում այն վճռել է, որ անձի հոգեկան խանգարման բնույթը և աստիճանը, թեև 5(1)(զ) հոդվածի հիման վրա հնարավոր կլինի որպես «հոգեկան հիվանդ» անձի՝ նրան կալանավորելը, պետք է լինեն այնպիսին, որ արդարացնեն նրա կալանավորումը (sup cit, էջ 18, պարբ 39): Հոգեկան խանգարման փաստը բավարար չէ: Նմանապես, միայն այն փաստը, որ անձն ունի չկատարված պարտավորություն, դեռևս բավարար չէ այդ պարտավորության կատարումը երաշխավորելու նպատակով նրա կալանավորումն արդարացնելու համար: Հանձնաժողովի կարծիքով՝ հանգիստ խղճով ասելու համար, որ անձին կալանավորելը պարտավորության կատարումո «ապահովելու նպատակ ունի», տվյալ անձը, որպես կանոն, պետք է նախկինում իր վրա դրված «առանձնահատուկ և կոնկրետ» պարտավորությունը կատարելու հնարավորություն ունեցած լինի, որը, սակայն, նա անտեսել է: Այնուամենայնիվ, հանձնաժողովի կարծիքով՝ կարող են լինել այլ սահմանափակ, սակայն բնույթով հրատապ հանգամանքներ, որոնք կարող են երաշխավորել պարտականության կատարումն ապահովելու նպատակով անձի կալանավորումը:

176. Վերջապես, մեկնաբանության ընդհանուր հարցի առումով հանձնաժողովը նկատում է, որ այն պարտավորության բնույթը, որի կատարումը ձգտում են ապահովել, ինքնին պետք է համատեղելի լինի կոնվենցիայի հետ: Խնդրո առարկա պարտավորությունը չի կարող, մասնավորապես, սկզբունքորեն բաղկացած լինել միայն կալանքի ենթարկվելու պարտավորությունից:

177. Ինչ վերաբերում է սույն գործին, հանձնաժողովն առաջին հերթին ուսումնասիրել է համապատասխան օրենսդրությունից առաջացող «պարտավորությունները»...

178. Հանձնաժողովի կարծիքով՝ նշված հանգամանքներում այս դրույթները ստեղծում են «քննության» ընդհանուր պարտավորություն: Այն դեպքերում, երբ անձը քննվում է, դառնում է տեղեկությունների տրամադրման, խուզարկության և այլ օժանդակ պարտավորությունների առարկա:

179. «Քննություն» հասկացությունը բառացիորեն սահմանված չէ օրենսդրությունում: Այնուամենայնիվ, կարգի 5(1) հոդվածի (ա)-(գ) ենթակետերում նշված հարցերը որոշելու համար այն հստակորեն ներառում է քննության ենթարկվող անձին հարցաքննելու և խուզարկելու գործողություններ: Եթե քննության ենթարկվող անձը վերցվում է կալանքի տակ, քննությունը կարող է նաև ներառել այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են մատնահետքեր վերցնելը և լուսանկարելը: Գործնականում, այն նաև ընդգրկում է դատվածության ստուգումներ և այլ տվյալների որոնումներ: Այսպիսով, սա իր բնույթով հետաքննության գործընթաց է կամ անվտանգության ստուգման ձև, որը սահմանափակված է, ի թիվս այլոց, կարգի 5(1) հոդվածում նշված նպատակներով...

. . .

181. Հանձնաժողովը կարծում է, որ այս դիմողներին «քննության ... ընթացքում» կալանքի տակ պահելը սկզբունքորեն նպատակ է ունեցել ապահովել քննությանը ներկայանալու նրանց ընդհանուր պարտավորության կատարումը: Այն հիմնված չի եղել նրանց վրա դրված իրավական պարտավորությունների կատարման որոշակի թերացման վրա, որը կապ է ունեցել նրանց նախաքննության հետ: Ձերբակալության հիմքերը, օրինակ, չեն եղել հարցերին պատասխանելուց կամ նրանց ինքնության վերաբերյալ փաստեր ներկայացնելուց հրաժարվելու հանգամանքները: Քննությունն իրականացնող պաշտոնատար անձը կարող է կասկածել, որ նրանք ճիշտ չեն պատասխանել իր նախնական հարցերին, սակայն նա իրավասու չէր վստահաբար ասելու, որ դա իրոք այդպես է եղել: Նրանց ձերբակալության նպատակը չի եղել պարտադրել նրանց, որ նրանք ուղղեն նախկին չկատարած օրինական պարտավորությունների խախտումը: Դրա նպատակը եղել է

ստիպել նրանց ներկայանալ հետագա քննությանը, ինչն անհրաժեշտ է համարել քննությունն իրականացնող պաշտոնատար անձը:

182. Այս հանգամանքներում հանձնաժողովը պետք է նախ հաշվի առնի՝ արդյոք այդ պարտավորությունը եղե՞լ է բավականաչափ «կոնկրետ և առանձնահատուկ», որպեսզի սկզբունքորեն մտներ 5(1)(բ) հոդվածի շրջանակների մեջ, և եթե այո, արդյոք եղե՞լ են բավարար հանգամանքներ, որոնք արդարացրել են դիմողներին կալանքի տակ վերցնելը դրա կատարումն ապահովելու համար…

184. Հանձնաժողովի կարծիքով՝ քննությանը ներկայանալու պարտավորությունը, որպես ձևական և նյութական խնդիր, տարբերվում է կալանքի ենթարկվելու պարտավորությունից: Ինչպես հանձնաժողովն արդեն նշել է, կալանքը քննությունից անբաժանելի առանձնահատկություն չէ (տե՛ս վերը՝ պարբ. 176):

185. Դիմողների՝ քննության ներկայանալու պարտավորությունը քրեական կամ կարգապահական օրենքից բխող ընդհանուր պարտավորություն չի եղել, որը համեմատելի է դատարանի և հանձնաժողովի կողմից այլ գործերի կապակցությամբ դիտարկված պարտավորությունների հետ (տե՛ս, օրինակ՝ *Գուցարդիի (Guzzardi)* գործի և այլ գործերի վերաբերյալ հանձնաժողովի հաշվետվության 103-րդ պարբերությունը, որոնք վկայակոչված են վերը՝ պարբ. 171): Այն առաջացել է միայն օրենքում նշված հանգամանքներում, այս դեպքում՝ դիմողների՝ Մեծ Բրիտանիա մուտք գործելուց հետո, քննությունն իրականացնող պաշտոնատար անձի պահանջով: Որոշ չափով այն կարող է իր բնույթով համեմատելի լինել ինքնությունը հաստատելու, մաքսային կամ հարկային հայտարարագրեր կազմելու կամ երդման տակ՝ կառավարության կողմից պահանջված գրավոր ցուցմունք տալու պարտավորությունների հետ: Մյուս կողմից՝ սույն գործում տրամադրման ենթակա տեղեկությունները հստակ սահմանված չեն վերը նշված գործերին համեմատելի ձևով: Բացի այդ, հանձնաժողովն արդեն նշել է, որ «քննությունը» ներառում է հետաքննության գործընթաց, որը դուրս է հարցաքննության և քննության ենթարկվող անձից տեղեկությունների ստացման շրջանակներից (վերը՝ պարբ. 179): Պարզ է, որ գործընթացի կարևոր բաղադրիչներից է անձնական գործի և քննության ենթարկվող անձի տված տեղեկությունների ճշտության ստուգումը: Ուստին, որոշակի նմանություն կա կալանավորելու սույն լիազորության և հարցաքննության ու հետաքննության նպատակներով *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ireland v UK)* գործում նշված նախնական ձերբակալության և կալանքի տակ վեցնելու լիազորությունների միջև (տե՛ս հանձնաժողովի զեկույց, էջ 88), ինչը և վկայակոչվել է դիմողի կողմից: Այնուամենայնիվ, սույն գործում խնդրո առարկա լիազորությունները շատ ավելի խիստ են սահմանված, ի թիվս այլոց, նաև՝ իրենց նպատակի առումով, և հետևաբար, որևէ զուգահեռ ճիշտ չէ:

186. Քննությանը ներկայանալու պարտավորությունը հավասար չէ ցանկացած առիթով կամ նպատակով հարցման կամ հարցաքննության ներկայանալու ընդհանուր պարտավորության... Այն սկզբունքորեն Մեծ Բրիտանիա մուտք գործելուց կամ դուրս գալուց առաջ անվտանգության նպատակներով ստուգման ենթարկվելու (եթե նման բան պահանջվում է) պարտավորություն է: Ստուգման նպատակը սահմանափակված է 1976 թ. կարգի 5-րդ հոդվածում նշված հարցերի որոշումով: Այդ պարտավորության շրջանակը փաստացիորեն էլ ավելի է սահմանափակված է 1976 թ. կարգի 10-րդ հոդվածի շրջանակներում կալանքի տևողության սահմանափակմամբ: Առավելագույն ժամկետը, որն այդ ժամանակ կարող էր կիրառվել քննությունն իրականացնող պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում, կազմել է յոթ օր: Չնայած այս ժամկետը կարող էր երկարացվել պետական քարտուղարի կողմից, նման բան չի արվել: Բոլոր դեպքերում սա վերաբերում էր միայն 45 ժամին: Տվյալ դեպքում հանձնաժողովից միայն պահանջվում է կարծիք հայտնել խնդրո առարկա փաստացի ժամկետի վերաբերյալ…

188. Համենայն դեպս, հանձնաժողովը կարծում է, որ այս դիմողների վրա դրված՝ քննության ներկայանալու պարտավորությունը առանձնահատուկ և որոշակի է եղել, և ՄԹ իշխանությունները, այդ իսկ պատճառով, դրա կատարումն ապահովելու նպատակով սկզբունքորեն իրավունք ունեին 5(1)(բ) հոդվածի շրջանակներում դիմելու կալանքի կիրառման: Այս եզրակացությունն անելիս հանձնաժողովը հատկապես հաշվի է առել այն հանգամանքը, որ խնդրո առարկա պարտավորությունն առաջանում է միայն սահմանափակ հանգամանքներում, այն է՝ հստակ աշխարհագրական կամ քաղաքական սահման անցնելու համատեքստում: Բացի այդ, քննության նպատակը սահմանափակված և ուղղված է հասարակության համար կարևորություն ունեցող, կազմակերպված հանցավորությունից առաջացող լուրջ և շարունակական սպառնալիքի վերացմանը:

189. Այնուամենայնիվ, ինչպես հանձնաժողովն արդեն դիտարկել է, միայն պարտավորությունը չկատարելու փաստը (նույնիսկ «առանձնահատուկ և որոշակի») ինքնին բավարար չէ 5(1)(բ) հոդվածի շրջանակներում ձերբակալությունը կամ կալանավորումն արդարացնելու համար: Պետք է գոյություն ունենան առանձնահատուկ հանգամանքներ, որոնք արդարացնում են կալանքը որպես այդ պարտավորության կատարումն ապահովող միջոց...

190. Հանճնաժողովն արդեն նկատել է, որ դիմողների կալանավորումը չի բխել իրենց նախկին պարտավորություններն կամայականորեն չկատարելու (ինչպես, օրինակ՝ նախաքննության ընթացքում օժանդակություն ցույց տալուց հրաժարվելու) հանգամանքից: Հանճնաժողովը կրկնում է, որ նման հանգամանքների բացակայության պայմաններում 5(1)(բ) հոդվածով կալանքը, որպես կանոն, չի կարող արդարացված լինել: Սկզբունքորեն, միայն պարտավորության կատարումից հրաժարվելու կամ պարտավորության կատարումն անտեսելու հանգամանքները կարող են արդարացնել դրանց կատարման ապահովման նպատակով անձին կալանքի տակ վերցնելը: Այնուամենայնիվ, ինչպես հանճնաժողովն նշել է վերը, հնարավորությունը, որ կարող են գոյություն ունենալ կալանքն արդարացնող այլ հանգամանքներ, բացառված չէ 5(1)(բ) հոդվածի շարադրանքից և, նրա կարծիքով, կարող են գոյություն ունենալ այլ սահմանափակ հրատապ հանգամանքներ, որոնք կարող են արդարացնել նման կալանքը:

191. Հանճնաժողովի կարծիքով՝ որոշելու համար, թե գոյություն ունե՞ն արդյոք նման հանգամանքներ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այդ պարտավորության բնույթի վրա: Անհրաժեշտ է հաշվի առնել, թե արդյոք դրա իրագործումն անհետաձգելի՞ անհրաժեշտություն է և արդյոք ողջամտության սահմաններում չկա՞ն այլ գործնական միջոցներ, որոնք կապահովեին դրա կատարումը: Հարկ է ժողովրդավարական հասարակությունում խնդրո առարկա պարտավորության անմիջական կատարման կարևորությունը հավասարակշռել ազատության իրավունքի կարևորության հետ: Այսպիսի հավասարակշռություն ստեղծելու առումով կալանքի տևողությունը նույնպես տեղին գործոն է:

192. Հանճնաժողովն արդեն նկատել է, որ այս դեպքում դիմողների վրա դրված պարտավորությունը Մեծ Բրիտանիա մուտք գործելու ժամանակ ընդհանուր առմամբ հակաահաբեկչական անվտանգության ստուգման ենթարկվելու պարտավորություն է եղել: Ահաբեկիչների միջազգային տեղաշարժը վերահսկելու ժամանակակից պայմանների կարևորությունը լայնորեն ճանաչված է Արևմտյան Եվրոպայի և, մասնավորապես, Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի կողմից (տե՛ս Քաղաքական գործերի կոմիտեի զեկույցը, 1978 թ. դեկտեմբերի 5, փաստաթուղթ 4258, պարբ. 17, Հանճնարարական 852 (1979), պարբ. 15 (ix)): ՄԹ-ի առանձնահատուկ համատեքստում կարևորվում է ոչ միայն ՄԹ-ի և Իռլանդիայի Հանրապետության միջև ահաբեկիչների տեղաշարժի, այլև Մեծ Բրիտանիայի և ողջ Իռլանդիայի (ներառյալ Հյուսիսային Իռլանդիայի) միջև այսպիսի տեղաշարժի հսկողությունը և բացահայտումը: Ակնհայտորեն, պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ սահմանափակումներ, երբ տվյալ անձը մուտք է գործում կամ դուրս է գալիս խնդրո առարկա տարածքից, և օրինական անհրաժեշտություն կա հասնելու այսպիսի ստուգման ենթարկվելու պարտավորության անհապաղ կատարման:

193. Հանճնաժողովն այնուհետև նկատում է, որ իրեն ներկայացված տեղեկություններից պարզ է, որ քննություն անցկացնելու լիազորությունները, այն դեպքում, երբ դա ողջամտության սահմաններում կիրառելի է, իրականացվում են առանց կալանքի կիրառման, և այս դեպքում անձանց մեծամասնությունը մուտքի կամ ելքի անցակետում ենթարկվում է համեմատաբար կարճատև զննության: Ճիշտ է, կալանքը կիրառվում է բոլոր այն դեպքերում, երբ իշխանությունների կարծիքով ավելի երկարատև քննություն իրականացնելու անհրաժեշտություն կա: Որևէ դրույթ չկա, որը վերաբերի քննության ժամանակ կալանքը գրավով փոխարինելուն՝ հակառակ ՄԹ-ի ներգաղթին վերաբերող սովորական օրենսդրության մոտեցմանը (1971 թ. «Ներգաղթի մասին» օրենք, հավելված 2, հոդված 22(1)): Այնուամենայնիվ, գրավի դիմաց անձին ազատ արձակելը հազիվ թե տվյալ դեպքում համատեղելի է արդյունավետ սահմանափակ անվտանգության ստուգում իրականացնելու գործողության հետ:

194. Այնուհետև հանճնաժողովն ուշադրություն է դարձնում այն գործելակերպին, համաձայն որի՝ քննությունն իրականացնող պաշտոնատար անձի կողմից ձերբակալելու կամ կալանավորելու լիազորությունը չի կիրառվում, քանի դեռ նա որոշ կասկածներ չունի՝ կապված կարգի 5(1)(ա)-(գ) հոդվածներում հատկորոշված հարցերի հետ: Անվտանգության ստուգման այսպիսի համատեքստում ակնհայտ է, որ ահաբեկչական գործունեության մեջ ներգրավված անձը դժվար թե բացահայտորեն հրաժարվի հարցերին պատասխանելուց կամ որևէ այլ կերպ իր վրա եղած պարտավորությունները կատարելուց: Այնուամենայնիվ, նա հաջողությամբ կարող է տալ կեղծ և ոչ լրիվ տեղեկություններ: Հետևաբար, այս պարտավորության արդյունավետ կատարումն ապահովելու նպատակով կարող է անհրաժեշտ լինել կիրառել կալանք, եթե նույնիսկ վստահաբար չի կարելի ասել, որ կալանավորը թույլ է տվել իր վրա դրված պարտավորության կատարման հանցավոր խախտում:

195. Հանճնաժողովը եզրակացնում է, որ որևէ ցուցում չկա, համաձայն որի՝ այս դիմողների կալանքը եղել է կամայական կամ կիրառվել է անտեղի: Հանճնաժողովն ընդունում է, որ կալանքը հիմնված է եղել քննությունն իրականացնող պաշտոնատար անձի գնահատականի վրա, որի համար հիմք են ծառայել նրա տրամադրության տակ եղած տեղեկությունները, ըստ որոնց՝ նրանց ավելի մանրազնին քննության ենթարկելու անհրաժեշտություն կար, քան մուտքի անցակետերում կիրառվող քննությունը: Գործի բացառիկ համատեքստում հանճնաժողովը եզրակացնում է, որ, այսպիսով, գոյություն են ունեցել բավարար հանգամանքներ, որոնք արդարացրել են մոտ 45 ժամով նրանց ձերբակալությունը և կալանավորումը՝ նրանց վրա դրված քննությանը ներկայանալու պարտավորության կատարումն ապահովելու նպատակով:

196. Անվիճելի է, որ ձերբակալությունը և կալանավորումը կատարվել են ներպետական օրենսդրությանը համապատասխան, և հանձնաժողովը որևէ բան չի գտնում, որը ցույց կտար, որ դրանք «օրենքով սահմանված կարգով» և «օրինական» չեն եղել՝ համաձայն 5(1) հոդվածի այս հայեցակետերի առումով դատարանի կատարած մեկնաբանության (տե՛ս, օրինակ՝ *Վինտերվերպի (Winterwerp)* գործը, sup cit, պարբ. 39 և 45): Հանձնաժողովը եզրակացնում է, որ նրանց ձերբակալությունը և կալանավորումը 5(1)(բ) հոդվածի շրջանակներում եղել են արդարացված՝ օրենքով սահմանված պարտավորության կատարումն ապահովելու նպատակով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *«Բենհեմն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Benham v UK (1996)* 22 EHRR 293, 1996 III 738) գործում մագիստրատների դատարանը (magistrates court) պահանջել է, որ դիմողը դատապարտվի մեկ ամսվա ազատազրկման, քանի որ իր հանցավոր անփութության պատճառով նա չէր վճարել համայնքային հարկը: Բողոքարկման ժամանակ պրովինցիալ վերաքննիչ դատարանը վճռել է, որ մագիստրատների դատարանը սխալվել է, քանի որ չեն եղել փաստեր, որոնց հիման վրա նրանք կարող էին ըստ պատշաճի հիմնավորել, որ տեղի է ունեցել հանցավոր անփութություն: Եվրոպական դատարանը վճռել է, որ դատարանի կարգադրության հիման վրա դիմողին կալանքի տակ պահելու կարգադրությունը 5(1)(բ) հոդվածի շրջանակներում եղել է արդարացված, նույնիսկ այն պարագայում, երբ այդ կարգադրությունը չեղյալ էր համարվել վերաքննիչ բողոքի արդյունքում: Հանձնաժողովը հայտարարել է.

42. Կալանքի ժամկետը սկզբունքորեն օրինական է, եթե անձը կալանքի տակ է պահվում դատարանի կարգադրության համաձայն: Դրանից հետո կատարված եզրակացությունը, որ կարգադրություն անելիս դատարանը թույլ է տվել ներպետական օրենսդրության սխալ, կալանավորման միջանկյալ ժամկետի օրինականության վրա հետադարձ ազդեցություն չպետք է ունենա: Այդ իսկ պատճառով Ստրասբուրգի մարմինները հետևողականորեն մերժել են պաշտպանել քրեական հանցագործությունների մեջ մեղավոր ճանաչված և դատապարտված անձանցից ստացված գանգատները, որոնցում նրանք բողոքել են, որ վերաքննիչ դատարանների վճիռների հիման վրա որոշվել է, որ նրանց դատապարտումները կամ պատիժը հիմնված են եղել փաստի կամ օրենքի սխալի վրա (տե՛ս *«Բոզանոն ընդդեմ Ֆրանսիայի» (Bozano v France)* գործի վերաբերյալ 1986 թ. դեկտեմբերի 18-ի վճիռը, շարք A, թիվ 111, էջ 23, պարբ. 55, և թիվ 7629/76 դիմումի վերաբերյալ հանձնաժողովի 1978 թ. մարտի 9-ի զեկույցը, *«Կրժիցկին ընդդեմ Գերմանիայի» (Krzycki v Germany),* Որոշումներ և զեկույցներ, 13, էջ 60-1):

43. Դատարանին ներկայացած կողմերը համաձայնել են, որ Անգլիայի օրենքի սկզբունքները, որոնք պետք է հաշվի առնվեն այս դեպքում, տարբերակում են մագիստրատների դատարանի այն գործողությունները, որոնք մտնում են նրա իրավասության շրջանակի մեջ, այն գործողություններից, որոնք նրա իրավասության շրջանակից դուրս են: Առաջիններն օրինական են և գործող, քանի դեռ դրանք չեն բեկանվել ավելի բարձր ատյանի դատարանի կողմից, մինչդեռ երկրորդները օրենքի ուժ չունեն ի սկզբանե...

46. Հնարավոր չէ որոշ վստահությամբ ասել, որ ... Անգլիայի օրենքի իմաստով մագիստրատները գործել են իրենց իրավասության շրջանակից դուրս: Հետևաբար, դատարանն ապացուցված չի համարում, որ կալանավորելու կարգադրությունն օրինական ուժ չի ունեցել և, այսպիսով, դրան հետևած կալանավորումը, համաձայն ներպետական օրենսդրության, եղել է անօրինական (տե՛ս վերը նշված *Բուամարի (Bouamar)* վճիռը, էջ 21, պարբ. 49): Միայն այն փաստը, որ վերաքննիչ բողոքի արդյունքում այս կարգադրությունը չեղյալ է հայտարարվել, ինքնին ազդեցություն չունի կալանքի օրինականության վրա (տե՛ս վերը՝ պարբ. 42):

47. Դատարանը նաև կարծում է, որ կալանավորումը եղել է կամայական: Չի ենթադրվում, որ մագիստրատները, որոնք կարգադրել են կալանքի տակ վերցնել պրն Բենհեմին, գործել են անբարեխղճորեն կամ էլ չեն փորձել համապատասխան օրենսդրությունը ճիշտ կիրառել (տե՛ս վերը նշված *Բոզանոյի (Bozano)* վճիռը, էջ 25-6, պարբ. 59)...

Հետևաբար, դատարանը կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չի գտնում:

Ավելի ուշ լսված *«Բիթը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (Beet and Others v UK)* գործի վերաբերյալ 2005 թ. մարտի 1-ի վճռով պալատը միաձայն որոշել է, որ նախքան համայնքի հարկերի գծով պարտքերը չմարելու համար դիմողին կալանավորելը մագիստրատները համապատասխան ստուգումներ չեն արել պարզելու համար, թե դիմողն արդյոք ի՞նչ միջոցներ է ունեցել: Այս թերացումը

հանգեցրել է նրան, որ մագիստրատների [կալանքի] կարգադրությունն անցել է նրանց վերապահված իրավասությունների սահմանը: Հետևաբար, այն եղել է անօրինական, և դիմողը կալանքի տակ է վերցվել 5(1) հոդվածի խախտմամբ:

2 2003 թ. սեպտեմբերի 25-ի վճռով մշտական գործող դատարանի պալատը որոշել է, որ այս դրույթը խախտվել է *«Վասիլևան ընդդեմ Դանիայի» (Vasileva v Denmark)* գործի կապակցությամբ: Դիմողը 67 տարեկան Բուլղարիայի քաղաքացի էր: 1995 թ. օգոստոսի 11-ին ավտոբուսում նա վեճի մեջ է մտել տոմսավաճառ-տեսուչի հետ: Տեսուչը մեղադրել է նրան, որ նա օգտվել է տրանսպորտից՝ առանց ուժի մեջ տոմս ունենալու, և փորձել է նրան տուգանել: Սակայն նա հրաժարվել է բացահայտել իր ինքնությունը, որից հետո նրան ոստիկանություն են կանչել, որը պահանջել է, որ նա բացահայտի իր ինքնությունը «Արդարադատության իրականացման մասին» օրենքի 750-րդ բաժնի հիման վրա, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ոստիկանության պահանջով պարտավոր է բացահայտել իր անունը, հասցեն և ծննդյան տարեթիվ/ամսաթիվը: Այդ պահանջին չենթարկվելու դեպքում անձը ենթակա է տուգանքի: Նա հրաժարվել է տեղեկությունները տրամադրել ոստիկանությանը, հետևաբար, օրենքի հիման վրա, երեկոյան ժամը 21:30-ին ձերբակալվել է: Նրան տեղափոխել են ոստիկանության բաժին և տեղավորել սպասասրահում: Վասիլևան շարունակել է հրաժարվել իր ինքնությունը բացահայտելուց, քանի որ ձեռքի տակ չի ունեցել փաստաթղթեր, որոնք կպարունակեին այդ տեղեկությունները: Ժամը 23-ին նրան տեղափոխել են խուց: Հաջորդ օրը՝ առավոտյան ժամը 6:30-ից, ոստիկանությունը փորձել է համոզել դիմողին, որ նա բացահայտի իր ինքնությունը: Նա վերջապես արել է դա առավոտյան ժամը 10.45-ին, որից հետո առավոտյան ժամը 11-ին նրան բաց են թողել: Ազատ արձակվելուց անմիջապես հետո նա ուշաթափվել է և տեղափոխվել հիվանդանոց, որտեղ մնացել է երեք օր՝ արյան բարձր ճնշում ախտորոշմամբ: Նրա դեմ մեղադրանք չի հարուցվել իր ինքնության տվյալները ոստիկանությանը չհայտնելու համար: Նրան չի հաջողվել ազգային դատարանների միջոցով ոստիկանությունից փոխհատուցում ստանալ, որից հետո նա գանգատ է ներկայացրել Ստրասբուրգի դատարան՝ պնդելով, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի խախտում: Կառավարությունը փորձել է արդարացնել նրա կալանավորումը 5(1)(բ) հոդվածի շրջանակներում՝ հայտնելով, որ դրա նպատակը եղել է ապահովել Դանիայի օրենքով նախատեսված ոստիկանության պահանջով ինքնությունը բացահայտելու առանձնահատուկ իրավական պարտավորության կատարումը: Դատարանը վճռել է, որ.

36. …Կալանավորումը թույլատրվում է 5-րդ հոդվածի 1-ին կետի (բ) ենթակետի շրջանակներում միայն օրենքով սահմանված պարտավորության «կատարումն ապահովելու» նպատակով: Սրանից բխում է, որ տվյալ անձը պետք է ունենա առնվազն չկատարված պարտավորություն, և ձերբակալությունն ու կալանքը պետք է ուղղված լինեն պարտավորության կատարման ապահովմանը՝ առանց պատժիչ բնույթ ունենալու: Համապատասխան պարտավորության կատարումից հետո 5-րդ հոդվածի 1-ին կետի (բ) ենթակետով անձին կալանքի տակ պահելու հիմքը դադարում է գոյություն ունենալուց:

37. Վերջապես, պետք է հավասարակշռել ժողովրդավարական հասարակությունում խնդրո առարկա պարտավորության անհապաղ կատարման ապահովման և ազատության իրավունքի կարևորությունը... Կալանքի տևողությունը նույնպես տեղին գործոն է այսպիսի հավասարակշռություն ստեղծելու համար (տե՛ս *«Մակվեյը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (McVeigh and Others v the United Kingdom)*, դիմումներ 8022/77, 8025/77, 8027/77, 1981 թ. մարտի 18-ի հանձնաժողովի որոշում, DR 25, էջ 37-8 և 42, *«Յոհանսենն ընդդեմ Նորվեգիայի» (Johansen v Norway)*, դիմում թիվ 10600/83, 1985 թ. հոկտեմբերի 14-ի հանձնաժողովի որոշում, DR 44, էջ 162):

. . .

41. … Սույն գործում դիմողը տասներեք և կես ժամով զրկված է եղել իր ազատությունից: Դատարանը նկատում է, որ 1995 թ. օգոստոսի 11-ին՝ երեկոյան ժամը 21.30-ից մինչև 23.00-ը, և 1995 թ. օգոստոսի 12-ին՝ առավոտյան 6.30-ից մինչև 10.45-ը, ոստիկանությունը մի քանի անգամ ապարդյուն պահանջել է, որ նա բացահայտի իր ինքնությունը: Հիմք ընդունելով ազգային դատարանների եզրակացությունները՝ դատարանը բավարարված է, որ դիմողը չի ունեցել փաստաթղթեր, որոնք կբացահայտեին նրա ինքնությունը: Նաև նկատում է, որ ընդհանուր հիմք է այն, որ երեկոյան ժամը 23:00-ից մինչև առավոտյան 6:00-ը նրա ինքնության բացահայտման ուղղությամբ որևէ ջանք չի գործադրվել: Կառավարությունը պնդում է, որ դրա պատճառը կարելի է վերագրել դիմողի քնելու կարիքներին նշանակություն տալուն:

Համաձայնելով, որ որոշ հանգամանքներում այսպիսի նկատառումները կարող են ընդունելի լինել, դատարանը չի կարծում, որ տվյալ դեպքում դրանք հիմնավորված են: Բացի այդ, դատարանը չի ընդունում, որ այսպիսի նկատառումները պետք է ընդհանուր առմամբ ավելի բարձր դասվեն, քան կալանքի ժամկետի և կալանքի պատճառի համաչափությունը երաշխավորելու պարտավորությունը: Ուշադրություն դարձնելով այն փաստին, որ Օրհուսի գլխավոր կոնստաբլը 1996 թ. հուլիսի 18-ին ափսոսանք է հայտնել, որ կալանքի տակ գտնվելու ժամանակ բժիշկը, ինչպես խոստացվել էր, չի այցելել դիմողին, դատարանը նկատում է, որ նրա՝ որպես երրորդ անձի միջամտություն, կարող էր օգնել դուրս գալ այն փակուղուց, որը ստեղծվել էր դիմողի և ոստիկանության միջև հաղորդակցության ոլորտում: Բացի այդ, ուշադրություն դարձնելով իր վերոհիշյալ եզրակացություններին, որոնք վերաբերում են դիմողին և այն հանգամանքներին, որոնք հանգեցրել են նրա կալանավորմանը և այն փաստին, որ «Արդարադատության իրականացման մասին» օրենքի 750-րդ բաժնում շարադրված պարտավորության խախտումը փոքր խախտում էր, որը կարող էր առաջացնել միայն տուգանքի նշանակում, դատարանը կարծում է, որ նրան կալանքի տակ պահելը բոլոր դեպքերում չպետք է լիներ չափից ավելի երկարատև: Դատարանը կարծում է, որ տասներեք և կես ժամով դիմողի ազատազրկումը գերազանցել է նրա կալանքի պատճառի համար համամասն ժամկետը:

42. Հաշվի առնելով վերոհիշյալ տարրերը՝ դատարանը կարծում է, որ դիմողի կալանքը հասցնելով տասներեք և կես ժամի՝ իշխանությունները չեն ապահովել պարտավորության կատարման և ազատության իրավունքի միջև արդարացի հավասարակշռությունը:

43. Հետևաբար, տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

Ոստիկաններին իր ինքնությունը բացահայտելու դիմողի պարտավորությունը 5(1)(բ) հոդվածով պայմանավորված առանձնահատուկ պարտավորության պարզորոշ օրինակ է: Այնուամենայնիվ, այս պարտավորության կատարումն ապահովելու նպատակով կիրառված կալանքի ժամկետի համաչափությունը գնահատելու համար դատարանը, ի թիվս այլոց, ուսումնասիրել է այդ պարտավորության բնույթը/նպատակը, կալանքի տակ գտնվելու ժամանակ այդ պարտավորության կատարումն ապահովելու նպատակով ոստիկանության ձեռնարկած գործողությունները կամ անգործությունը և կալանքի տևողությունը: Այս դեպքում դատարանը եզրակացրել է, որ դիմողի ենթադրյալ թեթև քրեական արարքը, ոստիկանության կողմից նրա ինքնությունը գիշերվա ընթացքում չպարզելու հանգամանքը և կալանքի տևողությունը միասին հավասար են եղել 5-րդ հոդվածի խախտման: Համաձա՞յն եք դատարանի գնահատականին, որ ոստիկանները սխալ են վարվել՝ չփորձելով գիշերը բացահայտել դիմողի ինքնությունը և թույլ տալով նրան քնել:

Հոդված 5(1)(գ). Քրեական հանցագործություն կատարած լինելու ողջամիտ կասկածը և այլն

.....

«Ք-Ֆ-ն ընդդեմ Գերմանիայի» (K-F v Germany 1997-VII 2657, (1997) 26 EHRR 390)

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

1991 թ. հուլիսի 4-ին՝ երեկոյան ժամը 21:45-ին, դիմողին ձերբակալել են՝ հիմք ընդունելով այն հաղորդումները, որ նա փորձել է առանց վճարելու մեկնել հանգստյան տնից, և նախնական հարցումներով առաջացել են կասկածներ նրա բնակության հասցեի վերաբերյալ, ինչպես նաև պարզվել է, որ նախկինում նա խարդախության համար եղել է հետախուզման մեջ: Նրան տեղափոխել են տեղական ոստիկանության բաժին՝ հարցաքննելու և ինքնությունը պարզելու նպատակով: Այդ գիշեր ոստիկանությունը կազմել է արձանագրություն, որի մեջ կարծիք է հայտնվել, որ առկա է գույքի վարձակալության հետ կապված խարդախության լուրջ կասկած և մտավախություն, որ նա դիմելու է փախուստի: Թեպետ դիմողը գիշերը լուսացրել է ոստիկանության բաժնում, առավոտյան՝ 1991 թ. հուլիսի 5-ին, ժամը 9.25-ին, հանրային մեղադրողը իրազեկել է ոստիկանությանը, որ մտադրություն չի ունեցել դիմողին ձերբակալելու կարգադրություն տալ: Նրան բաց են թողել առավոտյան ժամը 10.30-ին:

Դիմողը պնդել է, որ, ի թիվս այլոց, նրա կալանավորումը եղել է «անօրինական», քանի որ այն գերազանցել է Գերմանիայի օրենքով սահմանված տասներկուժամյա սահմանը, ուստիև արդարացված չի եղել 5(1)(գ) հոդվածի շրջանակներում: Յոթ կողմ և վեց դեմ ձայներով հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ 5(1) հոդվածի խախտում չի եղել, քանի որ անձին օրենքով սահմանված ժամկետի ուշացումով ազատ արձակելը կարող է գործնական պատճառներով ներելի լինել:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

63. Վերջապես, դատարանը պետք է որոշի, թե արդյոք դիմողի ձերբակալությունը և կալանքը «օրինակա՞ն» են եղել, ներառյալ՝ դրանք իրականացվե՞լ են «օրենքով նախատեսված կարգով»: Դատարանը կրկնում է, որ այս դեպքում կոնվենցիան սկզբունքորեն հղում է կատարում ազգային օրենսդրությանը և սահմանում դրա նյութական և ընթացակարգային դրույթները կատարելու պարտավորություն, սակայն նաև պահանջում է, որ ցանկացած միջոցառում, որն անձին զրկում է իր ազատությունից, համատեղելի լինի անձին կամայականություններից պաշտպանելու 5-րդ հոդվածի նպատակի հետ (տե՛ս, օրինակ՝ *«Լուկանովն ընդդեմ Բուլղարիայի» (Lukanov v Bulgaria)* 1997 թ. մարտի 20-ի վճիռը, Զեկույցներ, 1997-II, էջ 543-4, պարբ. 41, և *«Ջուլիա Մանձոնին ընդդեմ Իտալիայի» (Giulia Manzoni v Italy)*, 1997 թ. մարտի 20-ի վճիռը, Զեկույցներ, 1997-IV, էջ 1190, պարբ. 21): Այդ հարցը լուծելու համար դատարանն իր հերթին դիտարկելու է ձերբակալության և կալանքի տարբեր հիմքերը, որոնք առաջ են քաշվել կառավարության կողմից...

67. Դատարանը նախ նկատում է, որ ներպետական օրենսդրությանը համապատասխանությունը պարզելու առումով վերաքննիչ դատարանը շատ ավելի լավ պայմաններում է, քան կոնվենցիայի հաստատությունները, և եզրակացրել է, որ դիմողի ձերբակալությունը և կալանավորումը եղել են օրինական... դատարանը որևէ պատճառ չի տեսնում, որ հանգի հակառակ եզրակացության:

68. Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հարցը, թե արդյոք դիմողին մինչև մյուս առավոտ պահելու անհրաժեշտություն եղե՞լ է, «քանի որ, գոնե դիտավորության հիմքերով պոտենցիալ ամբաստանյալների դատապարտումը անհիմն մեղադրանքով եղել է անհավանական»: Այնուամենայնիվ ապացուցվել է, որ գիշերվա ընթացքում և մինչև դիմողին ազատ արձակելու պահը ոստիկանությունը շարունակել է հարցումներ անել, որպեսզի մասամբ ստուգի, թե արդյոք ստորագրվե՞լ է նրան ձերբակալելու կարգադրություն... Ուշադրություն դարձնելով այս հանգամանքներին՝ դատարանը եզրակացնում է, որ հուլիսի 4-ին՝ երեկոյան ժամը 21.45-ից մինչև հաջորդ օրվա առավոտյան 9.45-ը, դիմողին կալանքի տակ պահելը եղել է արդարացված:

69. Մյուս կողմից՝ նկատում է, որ դիմողի կալանքի ժամկետը գերազանցել է քրեական դատավարության օրենսգրքի 163(գ)(3) հոդվածով թույլատրված [կալանքի] առավելագույն ժամկետը. . . Կոբլենցի վերաքննիչ դատարանը նույն եզրակացությանն է հանգել 1993 թ. նոյեմբերի 30-ի վճռով ... «Անձը, որն իր սեփական անձի ինքնության ստուգման նպատակով ենթարկվում է 163-րդ հոդվածի շրջանակներում ձեռնարկված միջոցի, չի կարող տասներկու ժամից ավելի զրկվել իր ազատությունից»: Դիմողը կալանքի տակ է վերցվել 1991 թ. հուլիսի 4-ի երեկոյան ժամը 21.45-ին (...) և ազատ արձակվել 1991 թ. հուլիսի 5-ի առավոտյան ժամը 10.30-ին (…): Այս կալանքի համար, որը տևել է ավելի քան տասներկու ժամ, պատասխանատու է ոստիկանության ավագ ծառայող [Superintendent] Բլանգը»:

70. Այս կապակցությամբ դատարանը կրկնում է, որ ազատության իրավունքից արվող բացառությունները, որոնք նշված են 5-րդ հոդվածի 1-ին կետում, սպառիչ են, ինչպես նաև, անձին կամայական ազատազրկումից պաշտպանելու այդ դրույթի բուն նպատակի հետ համատեղելի է միայն այս բացառությունների նեղ մեկնաբանությունը (որպես ամենավերջին աղբյուր՝ տե՛ս *Ջուլիա Մանձոնիի (Giulia Manzoni)* վերը նշված վճիռը, էջ 1191, պարբ. 25):

71. Ճիշտ է, որ դատարանն ընդունել է, որ որոշ հանգամանքներում կալանավորված անձի ազատ արձակումը կարող է շատ քիչ ուշանալ: Այնուամենայնիվ, նման բան տեղի է ունեցել այն դեպքերում, երբ կալանքի տակ գտնվելու ժամանակը նախօրոք չի սահմանվել օրենքով և ավարտվել է դատարանի կարգադրության հիման վրա: Դատարանների աշխատանքին և առանձնահատուկ պաշտոնական գործողությունների ավարտին վերաբերող գործնական նկատառումները նշանակում են, որ դատարանի նման կարգադրության իրականացումը կարող է տևել որոշակի ժամանակ (տե՛ս *«Քուինն ընդդեմ Ֆրանսիայի» (Quinn v France)*, 1995 թ. մարտի 22-ի վճիռ, շարք A, թիվ 311, էջ 17, պարբ. 42, և *Ջուլիա Մանձոնիի (Giulia Manzoni)* վերը մեջբերված վճիռը, էջ 1191, պարբ. 25):

72. Այնուամենայնիվ, ընթացիկ գործի դեպքում անձի ինքնությունը պարզելու նպատակով կալանքի առավելագույնը տասներկուժամյա տևողությունը եղել է օրենքով սահմանված և բացարձակ: Քանի որ կալանքի առավելագույն ժամկետը նախօրոք հայտնի էր, դրա համար պատասխանատու մարմինները պարտավոր էին համապատասխան նախազգուշական միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու համար, որ թուլատրելի ժամկետը չի գերազանցվում: Սա վերաբերում է նաև

պրն Ք-Ֆ-ի անձնական տվյալների գրանցմանը, որոնք, ներառված լինելով ինքնության ստուգման միջոցառումների մեջ, պետք է իրականացվեին կալանքի համար նախատեսված ժամկետում:

73. Ուշադրություն դարձնելով այս գործոններին՝ դատարանը վճռում է, որ եղել է 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի խախտում, քանի որ դիմողին կալանքի տակ պահելու օրենքով սահմանված առավելագույն ժամկետը գերազանցվել է:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

. . .

2. Միաձայն վճռում է, որ առկա է կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի խախտում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Ռիսդալը և դատավորներ Բերնհարդտը, Ռուսոն, Վալտիկոսը, Փալմը, Բոնիչին, Ռեպիկը, Յունգվիրթը և Լոմուսը:

2 «Ք.-Ֆ.»-ի գործի այս հատվածը վերաբերում է 5(1)(գ) հոդվածի պահանջին, համաձայն որի՝ ձերբակալությունը կամ կալանքը պետք է լինեն «օրինական»: Նույն պահանջը եղել է *«Լուկանովն ընդդեմ Բուլղարիայի» (Loukanov v Bulgaria, (1997) 24 EHRR 121, 1997-II 529)* գործի խնդրո առարկան: Այդ դեպքում գլխավոր դատախազը քրեական վարույթ էր սկսել դիմողի դեմ՝ նրան ներկայացնելով 1980-ական թվականներին բարձր պաշտոն զբաղեցնելու ընթացքում հանրային ֆոնդերի յուրացման մեղադրանք: Դատարանը միաձայն վճռել է, որ դիմողի կալանքը չի կարող արդարացվել 5(1)(գ) հոդվածով, քանի որ Բուլղարիայի օրենքով այն «օրինական» չի եղել: Դատարանը հայտարարել է, որ.

42. Անդրադառնալով գործի առանձին հանգամանքներին, դատարանը նշում է, որ կասկածից վեր է, որ դիմողը՝ որպես Բուլղարիայի կառավարության անդամ, մասնակցել է որոշ զարգացող երկրներին օժանդակության կարգով օգնության ֆոնդեր և վարկեր տրամադրելու որոշումների կայացմանը, ինչը հանգեցրել է նրա դեմ մեղադրանքներ հարուցելուն:

43. Այնուամենայնիվ, կալանքը հիմնավորելու համար քրեական օրենսգրքի որևէ դրույթ չի վկայակոչվել: Դրա 201-րդ, 203-րդ, 219-րդ, 282-րդ հոդվածները հատկորոշել են և նույնիսկ ենթադրել, որ այսպիսի բնույթի կոլեկտիվ որոշումների մասնակցելու համար յուրաքանչյուր անձ կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության: Բացի այդ, փաստեր չեն ներկայացվել՝ ցույց տալու համար, որ այդ որոշումները եղել են անօրինական, այսինքն՝ հակասել են Բուլղարիայի սահմանադրությանը կամ օրենսդրությանը, կամ էլ՝ ավելի կոնկրետ, այդ որոշումներն ընդունվել են լիազորությունների գերազանցմամբ կամ հակասել են ազգային բյուջեի մասին օրենքին:

Ելնելով վերոհիշյալից՝ դատարանը համոզած չէ, որ այն վարքագիծը, որի համար դիմողը ենթարկվել է քրեական հետապնդման, խնդրո առարկա ժամանակահատվածում Բուլղարիայի օրենքով եղել է քրեական արարք:

……

«Ֆոքսը, Քեմփբելը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Fox, Campbell and Hartley v UK) A.182 (1990) 13 EHRR 157

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողները ձերբակալվել են Հյուսիսային Իռլանդիայում՝ ոստիկանական կոնստաբլի կողմից, որն իրականացրել է իր օրինական լիազորությունները («առանց թույլտվության ձերբակալել ցանկացած անձի, որին նա կասկածում է ահաբեկիչ լինելու մեջ»)՝ համաձայն 1978 թ. «Հյուսիսիային Իռլանդիայի (արտակարգ դրության մասին)» օրենքի 11-րդ բաժնի: Այս լիազորությունը մեկնաբանվել է *«Մակքին ընդդեմ Հյուսիսային Իռլանդիայի գլխավոր կոնստաբլի» (McKee v Chief Constable for Northern Ireland [1984] 1 WLR 1358, HL)* գործում որպես սուբյեկտիվ ստուգում ներառող գործ, քանի որ ձերբակալությունը հնարավոր է եղել այն դեպքում, երբ ոստիկանն ունեցել է հիմնավոր կասկած: Ձերբակալության ժամանակ դիմողներին ասել են միայն, որ նրանց ձերբակալում են 11-րդ բաժնի

հիման վրա, քանի որ նրանց կասկածում են ահաբեկչության մեջ: Սակայն որևէ փաստ չէին ներկայացրել, որոնք կհիմնավորեին կասկածները: Դիմողները հայտարարել են, որ, ի թիվս այլոց, խախտվել են 5(1)(գ) և 5(2) հոդվածները: Յոթ կողմ և հինգ դեմ ձայներով հանձնաժողովն իր զեկույցում կարծիք է հայտնել, որ երկու դրույթներն էլ խախտվել են բոլոր երեք դիմողների դեպքում:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

32. Կասկածի «ողջամտությունը», որի վրա պետք է հիմնված լինի ձերբակալությունը, կամայական ձերբակալության և կալանքի դեմ ուղղված կարևոր երաշխիք է, որն ամրագրված է 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետում: Դատարանը համաձայն է հանձնաժողովի և կառավարության հետ, որ «ողջամիտ կասկածը» ենթադրում է բավարար փաստերի կամ տեղեկությունների առկայություն, ինչը կարող է բավարարել օբյեկտիվ դիտորդին, որ հանցագործությունը կատարվել է տվյալ անձի կողմից: Այնուամենայնիվ, այն, ինչը կարող է համարվել «ողջամիտ», կախված է բոլոր հանգամանքներից:

Այս իմաստով ահաբեկչական հանցագործությունը պատկանում է հատուկ կատեգորիայի: Քանի որ այն ուղեկցվում է մահվան և մարդկային տառապանքի ռիսկով, ոստիկանությունը պարտավոր է առավելագույն արագաշարժություն ցուցաբերել բոլոր տեղեկություններին, այդ թվում նաև՝ գաղտնի աղբյուրներից ստացված տեղեկություններին հետևելու առումով: Բացի այդ, հաճախ ոստիկանությունը ձերբակալում է կասկածյալ ահաբեկչին՝ առաջնորդվելով այնպիսի տեղեկություններով, որոնք թեպետ վստահելի են, սակայն առանց տեղեկատվության աղբյուրին վտանգի ենթարկելու չեն կարող ներկայացվել կասկածյալին կամ դատարանին՝ մեղադրանքները պաշտպանելու համար:

Ինչպես նշել է կառավարությունը, հաշվի առնելով Հյուսիսային Իռլանդիայում ահաբեկչական հանցագործությունների հետաքննության և քրեական հետապնդումների հետ կապված դժվարությունները, «այս ձերբակալություններն արդարացնող կասկածի ողջամտությունը միշտ չէ, որ կարող է որոշվել նույն չափանիշների հիման վրա, որոնք կիրառվում են սովորական հանցագործությունների դեպքում»: Այնուամենայնիվ, ահաբեկչական հանցագործությունների բացահայտման հրատապությունը չի կարող արդարացնել «ողջամտություն» հասկացության այնքան ընդլայնումը, որ խախտվի 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետով ապահովված երաշխիքի բուն էությունը:

. . .

34. Անշուշտ, կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետը չպետք է կիրառվի այնպիսի ձևով, որ պայմանավորվող պետությունների ոստիկանական մարմիններին կանգնեցնի կազմակերպված ահաբեկչության դեմ պայքարի արդյունավետ քայլերի ձեռնարկման հետ կապված անհամաչափ դժվարությունների առջև (տե՛ս mutatis mutandis *Կլաասի* (Klaas) վճիռը, 1978 թ. սեպտեմբերի 6-ի վճիռ, շարք A, թիվ 28, էջ 27 և 30-1, պարբ. 58 և 68): Սրանից հետևում է, որ պայմանավորվող պետություններից չի կարող պահանջվել հիմնավորել կասկածյալ ահաբեկչի ձերբակալության հիմքում ընկած ողջամիտ կասկածը՝ բացահայտելով համապատասխան տեղեկությունների գաղտնի աղբյուրները կամ այն փաստերը, որոնք կարող են մատնանշել այդ աղբյուրները կամ նրանց ինքնությունը:

Այնուամենայնիվ, դատարանը պետք է հնարավորություն ունենա պարզելու, թե արդյոք 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետով ամրագրված երաշխիքն ապահովվե՞լ է: Հետևաբար, պատասխանող կառավարությունը պետք է առնվազն որոշ փաստեր կամ տեղեկություններ տրամադրի, որոնք կարող են բավարարել դատարանին, որ ձերբակալված անձի նկատմամբ եղել են տվյալ հանցագործությունը կատարելու առումով ողջամիտ կասկածներ: Սա ավելի քան անհրաժեշտ է, երբ, ինչպես և սույն գործում, ներպետական օրենսդրությունը չի պահանջում ողջամիտ կասկած, այլ սահմանում է ավելի ցածր շեմ՝ պահանջելով միայն, որ գոյություն ունենա հիմնավոր կասկած:

35. Դատարանն ընդունում է, որ այս դիմողներից յուրաքանչյուրի ձերբակալությունը և կալանավորումը հիմնված են եղել *bona fide* կասկածի վրա, որ նրանք ահաբեկիչներ են, և նրանցից յուրաքանչյուրը, ներառյալ պրն Հարթլին, կալանքի տակ գտնվելու ժամանակ հարցաքննվել է՝ կապված առանձին ահաբեկչական գործողությունների մեջ նրանց մասնակցության վերաբերյալ կասկածների հետ:

Այն փաստը, որ պրն Ֆոքսը և տկն Քեմփբելը նախկինում մեղադրվել են ԻՀԲ-ի հետ կապված ահաբեկչական գործողություններ կատարելու մեջ, … թեպետ կարող է ամրապնդել կասկածը, որ նրանք կապ ունեն ահաբեկչական բնույթի հանցագործությունների կատարման հետ, չի կարող լինել որպես կասկածի բացառիկ հիմք, որը մոտ յոթ տարի անց՝ 1986 թ., հիմնավորում է նրանց ձերբակալությունը:

Այն փաստը, որ բոլոր դիմողները կալանքի տակ գտնվելու ժամանակ հարցաքննվել են առանձին ահաբեկչական գործողությունների կապակցությամբ, միայն հաստատում է, որ ձերբակալությունն իրականացնող պաշտոնատար անձինք հիմնավոր կասկածներ են ունեցել, որ նրանք ներգրավված են եղել այդ գործողությունների կատարման մեջ, սակայն սա չի կարող համոզել օբյեկտիվ դիտորդին, որ այդ գործողությունները կարող են դիմողները կատարած լինել:

Վերոնշյալ տարրերն ինքնին անբավարար են «ողջամիտ կասկածի» եզրակացությունը պաշտպանելու համար: Այլ նյութեր, որոնց վրա հիմնված է եղել դիմողների նկատմամբ եղած կասկածը, կառավարությունը չի ներկայացրել: Հետևաբար, նրանց բացատրությունները չեն բավարարում անձին ձերբակալելու համար կասկածի ողջամտության նվազագույն չափորոշիչը՝ սահմանված 5(1)(գ) հոդվածով ...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Չորս կողմ և երեք դեմ ձայներով վճռում է, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի խախտում . . .

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՍԸՐ ՎԻՆՍԵՆԹ ԷՎԱՆՍԻ, ԲԵՐՆՀԱՐԴՏԻ ԵՎ ՓԱԼՄԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Մենք անկարող ենք համաձայնել դատարանի մեծ մասի եզրակացությանը, որ այս դեպքում եղել է 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի խախտում...

Մեծ մասն ընդունում է, և սրան մենք համաձայն ենք, որ դիմողներից յուրաքանչյուրի ձերբակալությունը և կալանավորումը հիմնված են եղել bona fide կասկածի վրա, որ նա ահաբեկիչ է, և նրանցից յուրաքանչյուրը կալանքի տակ գտնվելու ժամանակ հարցաքննվել է՝ կապված այն առանձնահատուկ ահաբեկչական գործողությունների հետ, որոնց մեջ կասկածվել է: Սակայն, համաձայն մեծ մասի կարծիքի, այս վերջին փաստն առավել քան հաստատում է, որ ձերբակալությունն իրականացնող պաշտոնատար անձինք հիմնավոր կասկած են ունեցել, և այդ հիմնավոր կասկածը համարժեք չէ ողջամիտ կասկածին:

Մեր կարծիքով՝ ձերբակալությունն իրականացնող պաշտոնատար անձանց «հիմնավոր կասկածը», որ դիմողները ներգրավված են եղել որոշակի ահաբեկչական գործողությունների մեջ (որոնց կապակցությամբ նրանց հարցաքննել են), պետք է որոշ չափով հիմնված լիներ նրանց կողմից ստացված տեղեկությունների վրա, որոնք, ըստ կառավարության, անվտանգության նկատառումներից ելնելով, չեն կարող բացահայտվել: Հյուսիսային Իռլանդիայի դեպքում ոստիկանությունը պետք է պատասխանատու լինի ահաբեկչական գործողություններին մասնակցության մասին տեղեկությունները ճշտելու, և եթե հանգամանքները պահանջում են, հետագա քննություն անցկացնելու համար կասկածյալին ձերբակալելու և կալանավորելու համար:

Այնպիսի դեպքերում, ինչպիսին սա է, հնարավոր չէ հստակ տարբերակում մտցնել հիմնավոր կասկածի և ողջամիտ կասկածի միջև: Հաշվի առնելով դատարանին ներկայացրած բոլոր հանգամանքները և տեղեկությունները, ներառյալ նաև պրն Ֆոքսին և տկն Քեմփբելին վերաբերող այն փաստը, որ նախկինում նրանք ներգրավված եղել ահաբեկչական գործողությունների մեջ և դատապարտվել դրա համար, մենք բավարարված ենք, որ առկա են ողջամիտ կասկածի հիմքեր, որոնք արդարացնում են դիմողների ձերբակալությունը և կալանավորումը 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի շրջանակներում...

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Ռիսդալը և դատավորներ Կրեմոնան, Պինեյրո Ֆարինան, սըր Վինսենթ Էվանսը, Բերնհարդտը, Մարտենսը և Փալմը:

2 *Ֆոքսի, Քեմփբելի և Հարթլիի* (Fox, Campbell and Hartley) գործերը տալիս են 5(1)(գ) հոդվածում օգտագործված «ողջամիտ կասկած» հասկացության իմաստը: Այն օբյեկտիվ թեստը, որը նրանք սահմանում են, գործի փաստերով չի բավարարվել՝ նույնիսկ հաշվի առնելով այն հատուկ բացառությունը, որ դատարանը պատրաստ էր անել ահաբեկչական հանցագործությունների առանձնահատուկ համատեքստում: Թեստը կիրառվել է ավելի ուշ լսված *«Մյուրեյը (Մարգարեթ) ընդդեմ Միացյալ Թագավորության» գործում (Murray (Margaret) v UK) A.300 (1994) 19 EHRR 193) գործում, որում* զինված ուժերի ներկայացուցիչը ձերբակալել է առաջին դիմողին՝ առաջնորդվելով 1978 թ. «Հյուսիսիային Իռլանդիայի (արտակարգ դրության մասին) օրենքի» 14-րդ բաժնով՝ ժամանակավոր ԻՀԲ-ի համար ֆինանսական միջոցներ հավաքելու հանցարարք կատարելու կասկածով: Հաստատելով այն մոտեցումը, որը նա որդեգրել է *Ֆոքսի, Քեմփբելի և Հարթլիի (Fox, Campbell and Hartley)* գործում և ավելացնելով, որ այն ժամանակահատվածը, որի ընթացքում անձը կարող է մնալ կալանքի տակ (14-րդ բաժնի համաձայն՝ առավելագույնը 14 ժամ), պայմանավորված է եղել կասկածի մակարդակով, դատարանը հայտարարել է.

61. Չի կարելի բացառել, որ կասկածի հիմնավորության վերաբերյալ ազգային դատարաններին ներկայացված բոլոր կամ որոշ փաստերը, որոնց հիման վրա տկն Մյուրեյը ձերբակալվել է, կարող են նաև վերաբերել այն հարցին, թե արդյոք կոնվենցիայի 1(գ) հոդվածի շրջանակներում կասկածը եղե՞լ է «ողջամիտ»: Նվազագույնը՝ ազնվությունը և կասկածի bona fides-ը կազմում են ողջամտության անբաժանելի տարրերից մեկը:

Անհիմն ձերբակալության և այլ քաղաքացիական իրավախախտումների վերաբերյալ պաշտպանության նախապարության դեմ տկն Մյուրեյի բողոքի կապակցությամբ բարձր դատարանի դատավորը, վկաներին լսելուց և նրանց արժանահավատությունը գնահատելուց հետո, որոշել է, որ նա իրոք կամ հիմնավոր կերպով կասկածվել է ԱՄՆ-ից ժամանակավոր ԻՀԲ-ի համար զենք գնելու նպատակով ֆինանսական միջոցներ հայթայթելու գործունեության մեջ... Դատավորը հավատացել է ձերբակալությունն իրականացրած ծառայողի՝ կապրալ Դ.-ի (որը ներկայացվել է որպես «քացահայտ ազնիվ վկա») ցուցմունքին, թե ինչ է ասվել նրան [տիկին Մյուրեյին] նախքան ձերբակալությունը՝ բացատրական զրույցի ժամանակ... Նմանապես, ինչպես որոշվել է դատավորի կողմից, թեպետ բանակի կենտրոնում հարցաքննությունը տեղի է ունեցել ավելի ուշ, քան ձերբակալությունը, զրույցը վարողի հարցերի ուղղությունը ևս խոսում է հօգուտ այն եզրակացության, որ տիկին Մյուրեյը կասկածվում էր որոշակի քրեական հանցագործություն կատարելու մեջ . . .

62. Իր ձերբակալությունից մի քանի շաբաթ առաջ տիկին Մյուրեյի երկու եղբայրներն ԱՄՆ-ում դատապարտվել են ժամանակավոր ԻՀԲ-ի համար զենք գնելու մեղադրանքով... Քանի որ իր ցուցմունքներում նա բարձր դատարանին հայտնել է, որ այցով գտնվել է ԱՄՆ-ում և այնտեղ շփում ունեցել իր եղբայրների հետ .... Այն հանցագործությունները, որոնցում նրա եղբայրները մեղավոր են ճանաչվել, այնպիսի հանցագործություններ են, որոնք ենթադրում են, որ Հյուսիսային Իռլանդիայում նրանք համագործակցել են «վստահելի» մարդկանց հետ:

63. Հաշվի առնելով կասկածի գոյության փուլում փաստական հիմնավորման պահանջվող մակարդակը և այն առանձնահատուկ հրատապությունը, որը հարկ է դրսևորել ահաբեկչական հանցագործությունների հետաքննության անցկացման ժամանակ, դատարանը, այս նկատառումներով, կարծում է, որ գոյություն են ունեցել ճշմարտանման և օբյեկտիվ կասկածի հիմք ստեղծող բավարար փաստեր կամ տեղեկություններ, որ տիկին Մյուրեյը զբաղվել է ժամանակավոր ԻՀԲ-ի համար ֆինանսական միջոցներ հայթայթելու ապօրինի գործունեությամբ: Հետևաբար, թեև ներպետական օրենսդրությամբ սահմանված ցածր չափորոշիչին, սույն գործի առանձնահատուկ փաստերը բավարարում են դատարանին՝ ասելու, որ տիկին Մյուրեյը ձերբակալվել և կալանավորվել է 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի իմաստով քրեական բնույթի հանցագործություն կատարելու «ողջամիտ կասկածով»:

3 «Ողջամիտ կասկածը» հանդիսացել է նաև *«Լուկանովն ընդդեմ Բուլղարիայի (Loukanov v Bulgaria)* գործի (ներկայացված է վերը՝ 280-րդ էջում) խնդրո առարկան: Այդ դեպքում դատարանը հայտարարել է.

44. … հանրային մեղադրողի 1992 թ. հուլիսի 9-ի կալանքի կարգադրությունը և գերագույն դատարանի կարգադրության հաստատման մասին հուլիսի 13-ի որոշումը վկայակոչել են քրեական օրենսգրքի 201-րդ և 203-րդ հոդվածները... Ինչպես երևում է դատարանին ներկայացված նախադեպային իրավունքից, քրեական օրենսգրքի 201-203-րդ հոդվածներով նախատեսված հափշտակության արարքի բաղկացուցիչ տարր է եղել օրինախախտ անձնավորության կողմից անձամբ օգուտ ստանալու կամ երրորդ անձանց օգուտ տալու հանգամանքը... Բացի այդ, հուլիսի 9-ի կարգադրությունը վկայակոչել է նաև 282-րդ հոդվածը՝ դարձնելով այն պետական ծառայողների կողմից սեփական լիազորությունների չարաշահման միջոցով օգուտ ստանալու նպատակով կատարված հանցագործություն…

Այնուամենայնիվ, դատարանին չի ներկայացվել որևէ փաստ կամ տեղեկություն, որը ցույց կտար, որ դիմողն այդ ժամանակ ողջամտորեն կասկածվել է խնդրո առարկա ֆոնդերի բաշխման գործընթացին մասնակցելով իր կամ երրորդ անձի համար օգուտ ձեռք բերելու մեջ (տե՛ս, օրինակ՝ *«Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Murray v UK)*, 1994 թ. հոկտեմբերի 28-ի վճիռ, շարք A, թիվ 300-A, էջ 25, պարբ. 51): Այս կապակցությամբ պետք է նկատել, որ կառավարության բացատրությունը, որ առկա են եղել որոշ «գործարքներ», հանձնաժողովը համարել է չհիմնավորված և կրկին չի ներկայացվել դատարան: Իրավամբ, կոնվենցիայի հաստատությունների առջև չի վիճարկվել, որ այն պետությունները, ում հասցեագրված են եղել այդ ֆինանսական միջոցները, չեն ստացել դրանք:

45. Այդ հանգամանքներում դատարանը չի համարում, որ դիմողի ազատազրկումը խնդրո առարկա ժամանակահատվածում եղել է «օրինական կալանավորում», որը «հիմնված է եղել հանցագործության կատարման ողջամիտ կասկածի վրա»:

4 Ստորև բերված *«Բրոգանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Brogan v UK)* գործում (ստորև՝ էջ 312) կայացվել է վճիռ, համաձայն որի, ձերբակալությունը կամ կալանավորումը կարող է արդարացված լինել, եթե ձերբակալության ժամանակ «ողջամիտ կասկած» կա, որ տեղի է ունեցել հանցագործություն, նույնիսկ այն դեպքում, երբ վերջին հաշվով քրեական վարույթ չի սկսվում:

5 5(1)(գ) հոդվածի շրջանակներում անձին ձերբակալելու կամ կալանավորելու «հանցագործության կանխման» հիմքը չի թույլատրում կիրառել կանխարգելիչ կալանք (տե՛ս *Գուցարդիի (Guzzardi)* գործը վերը՝ 249-րդ էջ և *«Լոլեսն ընդդեմ Իռլանդիայի» (Lawless v Ireland)*, A 1 (1961)):

6 «Խաղաղության խախտումը» 5(1)(գ) հոդվածի նպատակների շրջանակներում «հանցագործություն» է, թեպետ Անգլիայի օրենքներով այն քրեական հանցագործություն չէ (*«Ստիլն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Steel v UK (1998) 28 EHRR 603, 1998 VII 2719)*:

7 Մշտական գործող դատարանը քննել է ահաբեկչության մեջ կասկածվող մեկ այլ հյուսիս-իռլանդացու՝ «*Օ'Հարան ընդդեմ Միացյալ Թագավորության» (O'Hara v United Kingdom)* գործը, որի վերաբերյալ վճիռ կայացվել է 2001 թ. հոկտեմբերի 16-ին: Դիմողը «Սին ֆեյնի» (Sinn Fein) քաջ հայտնի անդամ էր: 1985 թ. նոյեմբերին Գերմանիայի քաղաքացի Կուրտ Քյոնիգը, որն աշխատում էր սնունդ մատակարարող կազմակերպության համար և սնունդ էր մատակարարում Լոնդոնդերրիի ոստիկանության բաժիններին, սպանվել է: (ժամանակավոր ԻՀԲ-ն սպանության պատասխանատվությունը վերցրել է իր վրա): Հյուսիսիային Իռլանդիայի հատուկ բաժինը ստացել է հետախուզական տվյալներ, որոնք տրամադրվել են չորս իրազեկողների կողմից (որոնցից ոչ մեկը քրեական հանցագործության մեղադրանքով երբևէ դատապարտված չի եղել, և նրանց նախկինում տրամադրած տեղեկությունները եղել են հուսալի), համաձայն որոնց՝ Քյոնիգի սպանության մեջ մեղավոր են դիմողը և երեք այլ անձ: Հատուկ բաժինը քննել է Օլսթերի թագավորական ոստիկանության դետեկտիվ, ոստիկանության ավագ սպա Ռ-ին, որը հայտնել է, որ դիմողը եղել է ժամանակավոր ԻՀԲ-ի անդամ և մասնակցել է սպանությանը: Ոստիկանության ավագ սպա Ռ.-ն, այնուհետև, պատասխանել է դետեկտիվ կոնստաբլ Ս-ի հարցերին: 1985 թ. դեկտեմբերի 28-ին վերջինս գնացել է դիմողի տուն և ձերբակալել նրան: Դիմողին Ս-ն տեղեկացրել է, որ նրան ձերբակալել են 1984 թ. «Ահաբեկչության կանխման (ժամանակավոր դրույթներ)» օրենքի 12(1)(բ) բաժնի հիման վրա, որը թույլ է տալիս ոստիկանության ծառայողին ձերբակալել անձին, որին նա ողջամիտ հիմքերով կասկածում է ահաբեկչական գործողությունների կատարման, պատրաստման կամ հրահրման մեջ: Դիմողին տեղափոխել են Քեսլգրաֆի քրեակատարողական կենտրոն, որտեղ նրան պահել են վեց օր և տասներեք ժամ, այդ ընթացքում նրան երեսունչորս անգամ հարցաքննել են, և նա ոչ մի հարցի չի պատասխանել: Նրան ազատ են արձակել՝ առանց նրա դեմ գործ հարուցելու: Դիմողը բողոքել է գլխավոր կոնստաբլի դեմ, ի թիվս այլոց, նշելով, որ նա առգրավել է փաստաթղթեր և կատարել անօրինական ձերբակալություն: Հյուսիսային Իռլանդիայի բարձր դատարանը լսել է դետեկտիվ կոնստաբլ Ս.-ի ցուցմունքը, համաձայն որի՝ տեսուչ Բ.-ն, նախքան դիմողին ձերբակալելը, հայտնել է իրեն, որ դիմողին Քյոնիգի սպանության մեջ կասկածելու համար ողջամիտ հիմքեր կան: Գործը քննող դատավորը որոշել է, որ իր ձեռքի տակ գտնվում են միայն «աղքատիկ» փաստեր, որոնք ներկայացվել են դետեկտիվ կոնստաբլ Ս.-ին, սակայն նա «ընդամենը բավարարված» է եղել ձերբակալության օրինականությամբ: Բողոքարկման ժամանակ ինչպես վերաքննիչ դատարանը, այնպես էլ Լորդերի պալատը հաստատել են, որ ձերբակալությունը եղել է օրինական: Դատարանի առջև դիմողը վիճարկել է, որ ինքը երբեք չի եղել ԻՀԲ-ի անդամ և ներգրավված չի եղել Քյոնիգի սպանության մեջ, ուստիև ոստիկանությունը չէր կարող դրա վերաբերյալ վստահելի տեղեկություններ ստացած լինել:

34. Դատարանը շեշտում է, որ կասկածի «ողջամտությունը», որի վրա պետք է հիմնված լինի ձերբակալությունը, կազմում է կոնվենցիայի 5(1)(գ) հոդվածում կամայական ձերբակալության կամ կալանքը բացառող երաշխիքի կարևոր մասը: Սա պահանջում է, որ գոյություն ունենան որոշակի փաստեր կամ տեղեկություններ, որոնք կբավարարեն օբյեկտիվ դիտորդին, որ այդ հանցագործությունը կատարել է տվյալ անձնավորությունը, թեպետ այն, ինչ կարող է համարվել ողջամիտ, կախում ունի գործի բոլոր հանգամանքներից *(տե՛ս «Ֆոքսը, Քեմփբելը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Fox, Campbell and Hartley v the United Kingdom)* 1990 թ. օգոստոսի 30-ի վճիռ, շարք A, թիվ 182, էջ 16, պարբ. 32):

35. Այդ համատեքստում ահաբեկչական հանցագործությունը ներկայացնում է հատուկ դժվարություններ, քանի որ ոստիկանությունից կարող է պահանջվել, հասարակության անվտանգության շահից ելնելով, ձերբակալել կասկածյալ ահաբեկչին այնպիսի տեղեկությունների հիման վրա, որոնք թեպետ վստահելի են, սակայն չեն կարող տրվել կասկածյալին կամ ներկայացվել դատարան՝ առանց տեղեկատվությունը տրամադրած անձին վտանգի ենթարկելու: Այնուամենայնիվ, չնայած պայմանավորվող պետություններից չի կարող պահանջվել, որ նրանք ապացուցեն կասկածի ողջամտությունը՝ տեղեկությունների գաղտնի աղբյուրների բացահայտման միջոցով հիմնավորելով կասկածյալ ահաբեկչի ձերբակալությունը, դատարանը վճռել է, որ ահաբեկչության դեմ պայքարի հրատապությունը չի կարող արդարացնել «ողջամտության» չափազանցումն այն աստիճան, որ տեղի ունենա 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետով ապահովված երաշխիքի խաթարում: Նույնիսկ այդ հանգամանքներում պատասխանող կառավարությունը պետք է առնվազն որոշ փաստեր կամ տեղեկություններ ներկայացնի, որոնք կարող են բավարարել դատարանին, որ ձերբակալված անձնավորությունը ողջամտորեն կասկածվել է տվյալ հանցագործությունը կատարելու մեջ (տե՛ս վերը մեջբերված *«Ֆոքսը, Քեմփբելը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Fox, Campbell and Hartley v the United Kingdom)*, էջ 16-18, պարբ. 32-4):

36. Կարելի է նաև նկատել, որ 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետով ստեղծված չափորոշիչը չի ենթադրում, որ ձերբակալության ժամանակ ոստիկանությունը պետք է բավարար ապացույցներ ունենա մեղադրանք հարուցելու համար: 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի համաձայն՝ կալանքի տակ պահելու ընթացքում անձին հարցաքննելու նպատակը քրեական հետաքննության շարունակումն է՝ ձերբակալության համար հիմք ծառայած կասկածները հաստատելու կամ ժխտելու նպատակով: Այսպիսով, կասկածի տեղիք տվող փաստերը պարտադիր չէ, որ գտնվեն նույն մակարդակի վրա, ինչ դատապարտման հիմնավորման համար կամ նույնիսկ քրեական հետաքննության գործընթացի հաջորդ փուլի՝ մեղադրանքի հարուցման համար անհրաժեշտ փաստերը (տե՛ս *«Բրոգանը և մյուսները ընդդեմ Միացյալ Թագավորության» (Brogan and Others v the United Kingdom)*, 1988 թ. նոյեմբերի 29-ի վճիռ, շարք A, թիվ 145-B, էջ 29, պարբ. 53, և *«Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Murray v the United Kingdom)*, 1994 թ. հոկտեմբերի 28-ի վճիռ, շարք A, թիվ 300-A, էջ 27, պարբ. 55):

. . .

42. Սույն գործում կասկածը հիմնված է եղել այն տեղեկությունների վրա, որոնք ոստիկանական հարցման ժամանակ տրամադրել են իրազեկողները, որոնք, որոշակի ահաբեկչական գործողության՝ պրն Քյոնիգի սպանության մեջ մասնակից մի քանի այլ անձանց թվում մատնացույց են արել նաև դիմողին: Այս կետի վերաբերյալ կառավարության ներկայացրած բացատրությունները մերժելու որևէ հիմք դատարանը չուներ: Այս ձերբակալությունը, հետևաբար, նախապես ծրագրված գործողություն է եղել և ավելի շատ նման է Մյուրեյի ձերբակալությանը, ինչպես նաև հիմնված է մի փոքր ավելի առանձնահատուկ մանրամասների վրա, քան *Ֆոքսի, Քեմփբելի և Հարթլիի (Fox, Campbell and Hartley)* դեպքում: Այս հանգամանքներում... դատարանը կարծում է, որ ազգային դատարանների մոտեցումը, որ դատավորն իրավունք ուներ իր ձեռքի տակ եղած սակավ նյութերի հիման վրա եզրակացնել կասկածի ողջամիտ հիմքերի գոյության մասին, չի հակասում կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետով սահմանված չափորոշչին:

43. Դիմողը վիճարկել է, որոշ չափով համոզիչ, որ ոստիկանության պաշտոնյաները չպետք է հնարավորություն ունենան թաքնվելու անանուն իրազեկողների թիկունքում՝ նպատակ ունենալով արդարացնել ձերբակալություն իրականացնելու լիազորության չարաշահումը: Այնուամենայնիվ, դատարանը կրկնում է, որ ազգային վարույթում դիմողը չի փորձել անբարեխղճության կամ ճնշման վերաբերյալ բողոք բարձրացնել: Նրա հայտարարությունը հիմնվել է նեղ իրավական փաստարկի վրա, որը վերաբերում է 1984 թ. օրենքի 12(1)(բ) բաժնի շրջանակներում ձերբակալությունն իրականացնող պաշտոնատար անձի մտադրությանը: Դատարանի համար նաև համոզիչ չէ, որ ազգային դատարանների եզրակացության արդյունքում, համաձայն որի՝ ձերբակալություն իրականացնող պաշտոնատար անձն ունեցել է համապատասխան աստիճանի կասկած, ոստիկանության մյուս ծառայողներն օժտվել են անձեռնմխելիությամբ: Եթե հարցում կատարած ծառայողը կամ նրա վերադասը ձերբակալությունն իրականացնող ոստիկանին միտումնավոր տրամադրել են մոլորեցնող կամ ոչ ճիշտ տեղեկություններ, ապա այս վարքագծով պայմանավորված սխալ բանտարկության համար պատասխանատուն ոստիկանական մարմիններն են:

44. Հետևաբար, դատարանը չի կարծում, որ կասկածի չափորոշչի նկատմամբ ազգային դատարանների մոտեցումը այս դեպքում վերացրել է կամայական ձերբակալություն կատարելու համար ոստիկանության պատասխանատվությունը կամ էլ ոստիկանությանն օժտել է գաղտնի տեղեկությունների հիման վրա կատարած ձերբակալությունների համար անձեռնմխելիությամբ: Այս հանգամանքներում դիմողի դեմ կասկածը հասել է պահանջվող մակարդակի, քանի որ այն հիմնված է եղել որոշակի տեղեկությունների վրա, ըստ որոնց՝ նա ներգրավված է եղել Կուրտ Քյոնիգի սպանության մեջ, և նրան ազատազրկման մեջ պահելու նպատակն էր կա՛մ հաստատել, կա՛մ էլ ժխտել այդ կասկածը: Հետևաբար, կարելի է ասել, որ դիմողը ձերբակալվել է և կալանավորվել 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի իմաստին համապատասխան քրեական հանցագործություն կատարելու «ողջամիտ կասկածով»:

Հետևաբար, այդ դրույթը չի խախտվել:

Դատավոր Լուկայդեսն առարկել է, քանի որ համարել է, որ

. . . այս գործն ավելի մոտ է *Ֆոքսի, Քեմփբելի և Հարթլիի (Fox, Campbell and Hartley)*, քան *Մյուրեյի (Murray)* գործին, քանի որ ինչպես այս գործում, այնպես էլ առաջին գործում ազգային դատարանների ուշադրությունը չի հրավիրվել կասկածի ողջամտությանը վերաբերող հիմքերի վրա, մինչդեռ *Մյուրեյի (Murray)* գործում իրավասու ազգային դատարաններին ներկայացվել են կասկածը հիմնավորող որոշ փաստեր:

Օ'Հարայի (O'Hara) վճիռը ցույց է տալիս, որ դատարանը բարակ բաժանարար գիծ է անցկացնում՝ պահանջելով տրամադրել տեղեկություններ, որոնք արդարացնում են պետությունների կողմից կասկածյալ ահաբեկչի ձերբակալության ողջամտությունը, և ճանաչելով այդպիսի բացահայտումների անվտանգության հետևանքներն ահաբեկչության բոլոր ձևերի դեմ պետությունների՝ առավել կարևոր դարձող պայքարի վրա: Համաձա՞յն եք դատարանի գնահատականին, որը վերաբերում է Օ'Հարայի դեմ ուղղված բավարար տեղեկությունների առկայությանը:

8 Դատարանը դիտարկել է 5(1)(գ) հոդվածը և 18-րդ հոդվածը *«Գուսինսկին ընդդեմ Ռուսաստանի» (Gusinskiy v Russia)* քաղաքական և տնտեսական հայտնի գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2004 թ. մայիսի 19-ին (տե՛ս ստորև՝ էջ 912):

Հոդված 5(1)(դ). Անչափահասների կրթության վերահսկողություն և այլն

.....

«Բուամարն ընդդեմ Բելգիայի» Bouamar v Belgium A.129 (1988) 11 EHRR 1

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը լուրջ հոգեկան խնդիրներ ունեցող 16 տարեկան օրինազանց էր, որը դատարանի կարգադրությամբ կալանքի տակ է պահվել նախնական կալանքի քրեակատարողական հիմնարկում, որտեղ մեկ տարվա ընթացքում ամենաշատը ընդամենը 119 օր (ընդմիջումներով) նրա համար ուսումնառության հնարավորություններ չեն ապահովվել: Կարգադրություններն արվել են 1965 թ. օրենքի հիման վրա, համաձայն որի՝ քրեական հանցագործություն կատարած անչափահասները քրեական դատարանով դատվելու և դատապարտվելու փոխարեն պետք է տարվեն անչափահասների ուղղիչ գաղութներ, որտեղ գործում են կրթական հաստատություններ: Օրենքով թույլատրվում է, որ հանցագործություն կատարած անչափահասները նախնական կալանքի տակ մնան 15 օր, երբ գործնականում հնարավոր չէ նրանց համար անմիջապես տեղ գտնել ուղղիչ գաղութում: Ինչ վերաբերում է դիմողին, ապա որևէ բաց ուղղիչ հաստատություն չի ցանկացել ընդունել նրան՝ նրա հոգեկան խնդիրների պատճառով, իսկ հարմար փակ ուղղիչ հաստատություն Ֆրանսիախոս տարածքում չի եղել: Այս հանգամանքներում նրան նախնական կալանքի տակ 15 օր պահելու կարգադրություններն անընդհատ թարմացվել են:

Դիմողը պնդել է, որ իր կալանավորումը 5(1) հոդվածի խախտում է, որը հնարավոր չէ արդարացնել 5(1) հոդվածի (դ) ենթակետով: Համարելով, որ նրան կալանքի տակ պահելը չի հակասել Բելգիայի օրենքին (քանի որ «գործնական անհնարինությունը» մեկնաբանվել է որպես անչափահասի վարքագծի վրա տարածվող նկատառում), հետևաբար, հակառակ 5(1) հոդվածի այս հիմքով անօրինական չի եղել, դատարանը շարունակել է հետևյալ կերպ:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

50. «Օրինականությունը», այնուամենայնիվ, ենթադրում է, որ ազատազրկումը համապատասխանում է կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետով թույլատրվող սահմանափակումների նպատակին...

Դատարանը նկատում է, որ անչափահասին նախնական կալանքի համար նախատեսված բանտում պահելը պարտադիր չէ, որ հակասի (դ) ենթակետին, եթե նույնիսկ այն որպես այդպիսին չի կարող ապահովել անձի «դաստիարակչական վերահսկողությունը»: Ինչպես ակնհայտ է «նպատակի համար» (pour) բառերից, տեքստում վկայակոչված «կալանավորումը» միջոց է, որով երաշխավորվում է, որ տվյալ անձը վերցված է «դաստիարակչական վերահսկողության տակ», թեպետ պարտադիր չէ, որ վերահսկողության տակ վերցվի անմիջապես: Ինչպես և 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) և (ա) ենթակետերում ընդունվում է նախնական կալանքի և դատապարտումից հետո կալանքի միջև եղած տարբերությունը, այնպես էլ (դ) ենթակետը չի բացառում, որ որպես վերահսկվող դաստիարակչական ռեժիմի նախնական միջոցառում՝ կարող է իրականացվել միջանկյալ կալանք, որի մեջ վերահսկվող դաստիարակությունը չի մտնում: Այս հանգամանքներում, այնուամենայնիվ, բանտարկությունը պետք է արագ կերպով փոխարինվի այդ [վերահսկվող դաստիարակություն] ռեժիմի փաստացի կիրառությամբ այնպիսի միջավայրում (բաց կամ փակ [ուղղիչ գաղութներում]), որը նախատեսված է այդ նպատակի համար և ունի դրա իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներ:

51. Տվյալ դեպքում դիմողը Լանքինում գտնվող կալանքի հաստատությունից տեղափոխվել է իր տուն և հակառակը: Միայն 1980 թ. անչափահասների դատարանները տվել են 9 սանկցիա՝ նրան կալանավորելու համար, սակայն օրենքով նախատեսված կալանքի առավելագույնը տասնհինգօրյա ժամկետը լրանալուց առաջ նրան բաց են թողել: Այսպիսով, 1980 թ. հունվարի 18-ից մինչև նոյեմբերի 4-ը՝ 291 օրվա ընթացքում նա 119 օր զրկված է եղել իր ազատությունից...

52. Կառավարության բացատրությամբ՝ նրա կալանքը (որի մասին գանգատ է ներկայացվել) կազմել է դատարանների կողմից սկսված դաստիարակչական ծրագրի մաս, և պրն Բուամարի վարքագիծն այդ ժամանակահատվածում հնարավորություն է տվել ավելի հստակ պատկերացում կազմելու նրա անհատականության մասին:

Դատարանը համաձայն չէ այս տեսակետին: Բելգիայի պետությունն ընտրել է դաստիարակչական վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով իրականացնել անչափահասների հանցավորության գծով իր քաղաքականությունը: Հետևաբար, կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (դ) ենթակետի պահանջները բավարարելու համար նա ունեցել է 1965 թ. օրենքում ամրագրված անվտանգության և դաստիարակության նպատակներին բավարարող համապատասխան ինստիտուցիոնալ հաստատություններ ստեղծելու պարտավորություն (տե՛ս, ի թիվս այլոց, mutatis mutandis *Գինչոյի (Guincho)* 1984 թ. հուլիսի 10-ի վճիռ, շարք A, թիվ 81, էջ 16, պարբ. 38 և *Դե Կուբերի (De Cubber)* 1984 թ. հոկտեմբերի 26-ի վճիռ, շարք A, թիվ 86, էջ 20, պարբ. 35): Այնուամենայնիվ, փաստերի մեջ չկա որևէ բան, որը ցույց կտար, որ նման բան տեղի է ունեցել:

Այն ժամանակ, երբ տեղի են ունեցել խնդրո առարկա իրադարձությունները, Բելգիայում կամ առնվազն նրա ֆրանսիալեզու տարածքներում, որտեղ ապրել է դիմողը, չի գործել որևէ փակ ռեժիմով հաստատություն, որը կարող էր ընդունել լուրջ հոգեկան խնդիրներ ունեցող պատանիներին (տե՛ս վերը՝ պարբ. 28): Հնարավոր չէ համաձայնել, որ փաստացի մեկուսացման պայմաններում երիտասարդ անձնավորությանը նախնական կալանքի հաստատությունում պահելը, որտեղ նա աշխատակիցների կողմից կրթական օժանդակություն չի ստացել, հետապնդում է դաստիարակչական նպատակներ ...

53. Հետևաբար, դատարանը եզրակացնում է, որ կալանքի ինը սանկցիաները, միասին վերցրած, հակասել են (դ) ենթակետին: Դրանց անօգուտ կրկնության հետևանքով (դ) ենթակետի շրջանակներում դրանք հետզհետե դարձել են նվազ «օրինական», մանավանդ որ թագավորական խորհրդատուն երբեք քրեական վարույթ չի հարուցել դիմողի դեմ՝ նրա կողմից կատարված ենթադրյալ արարքների կապակցությամբ:

Ուստիև տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Միաձայն վճռում է, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Ռիսդալը և դատավորներ Վիլջաուլմսոնը, Ուոլշը, սըր Վինսենթ Էվանսը, Մակդոնալդը, Ռուսոն և Դե Մեյերը:

2 Մշտական գործող դատարանը հետևել է *Բուամարի (Bouamar)* մոտեցմանը *«Դ.Գ.-ն ընդդեմ Իռլանդիայի» (D.G. v Ireland)* գործի վերաբերյալ 2002 թ. մայիսի 16-ի վճռում: Դիմողը երկու տարեկանից գտնվել է հանրային մարմինների խնամքի տակ, քանի որ նրա հայրը դատապարտված է եղել ցմահ ազատազրկման, իսկ մայրն ի վիճակի չի եղել խնամելու նրան և նրա քույրերին ու

եղբայրներին: Դիմողը կատարել է մի շարք հանցագործություններ և մի քան անգամ բանտ նստելուց հետո ազատ է արձակվել 1997 թ. մարտին՝ 16 տարեկանում: Գործի կապակցությամբ հրավիրված խորհուրդը որոշել է, որ նա պետք է ապրի 16-18 տարեկան անձանց համար նախատեսված լուրջ օժանդակության թերապևտիկ բաժանմունքում, սակայն նման հաստատություն Իռլանդիայում գոյություն չի ունեցել: Հաջորդ ամիս նրա խնամակալը ad litem [երեխայի անունից] իշխանությունների դեմ սկսել է դատական վերանայման գործընթաց՝ ասելով, որ նրան համապատասխան խնամք և պայմաններ չտրամադրելով՝ նրանք խախտել են նրա սահմանադրական իրավունքները: Բարձր դատարանը նախ պահանջել է, որ դիմողը տեղավորվի հանրակացարանում, սակայն այդ տարբերակն ի չիք է դարձել, երբ դիմողը բռնություն գործելու սպառնալիքներ է տեղացել: Դրանից հետո բարձր դատարանը եզրակացրել է, որ եթե դիմողն ունի անձի լուրջ խնդիրներ, որը նշանակում է, որ նա կարող էր վտանգավոր լինել իր կամ մյուսների համար, և եթե Իռլանդիայում ապահով թերապևտիկ բաժանմունք գոյություն չի ունեցել, նա պետք է կալանավորվեր «Սբ Պատրիկ» հաստատությունում, որը 16-21 տարեկան անձանց նախնական կալանքի և ազատազրկման հաստատություն է: Դիմողը «Սբ Պատրիկ» հաստատությունում կալանքի տակ մնացել է 1997 թ. հունիսի 27-ից մինչև հուլիսի 28-ը, երբ նրան տեղավորել են հատուկ կացարանում, որտեղ նա գտնվել է քսանչորսժամյա հսկողության տակ: Դիմողը բողոքել է Ստրասբուրգ՝ հայտնելով, որ «Սբ Պատրիկ» հաստատությունում իրեն կալանքի տակ պահելը եղել է 5(1)(դ) հոդվածի խախտում: Կառավարությունը պատասխանել է, որ նրան այդտեղ կալանավորելը հետապնդել է «դաստիարակչական վերահսկողության» օրինական նպատակ: Դատարանը միաձայն վճռել է, որ.

80. Ընդունվում է նաև, որ անչափահասների կալանավորման համատեքստում «դաստիարակչական հսկողություն» բառերը չպետք է հավասարեցվեն փաստորեն դպրոցական ուսուցում հասկացության հետ. տեղական իշխանությունների խնամքի տակ գտնվող երիտասարդ անձնավորության դեպքում դաստիարակչական հսկողությունը պետք է ընդգրկի տեղական իշխանությունների կողմից ծնողական իրավունքների օգտագործման բազմաթիվ եզրեր՝ ի շահ և ի բարօրություն տվյալ անձնավորության ...

81. Այնուամենայնիվ, դատարանը չի կարծում, որ «Սբ Պատրիկը» «դաստիարակչական վերահսկողություն» [իրականացնող հաստատություն] է: Եվ, իրոք, թվում է, որ կառավարությունը չի էլ վիճարկում սա: Ինչպես նշվել է վերը, այն եղել է պատժիչ հաստատություն, և դիմողը ենթակա է եղել դրա կարգապահական ռեժիմին: Կրթական և այլ վերականգնողական ծառայությունները դրված են եղել բացարձակապես կամավորական հիմունքների վրա, և դիմողի պատմությունը ցույց է տալիս իշխանությունների հետ համագործակցելու դժկամություն: Կառավարությունն իրավամբ ընդունում է, որ նա չի օգտվել կրթական հնարավորություններից: Դիմողի «բանտային» թղթապանակում ներկայացված բժշկական կամ հոգեբուժական տեղեկանքներում գրանցումներ չկան: Ոչ էլ կառավարությունը առանձին բացատրություն է ներկայացրել, որը վերաբերեր «Սբ Պատրիկ» հաստատությունում գտնվելու ժամանակ դիմողի՝ ինչ-որ դասընթացների մասնակցությանը: Վերականգնողական ծրագրերին մասնակցելու վերաբերյալ արված միակ համառոտ նշումը, համաձայն որի՝ նա ֆուտբոլ է խաղացել, հանդիպում է նրա բժշկական փաստաթղթերում: Ամենակարևորն այն է, որ բարձր դատարանն էլ համոզված էր, որ «Սբ Պատրիկ» հաստատությունը չէր կարող երաշխավորել նրա՝ սահմանադրությամբ երաշխավորված կրթական իրավունքը կամ ապահովել նրան պահանջվող հատուկ խնամքով: Բարձր դատարանը, որը հատուկ պայմաններ է սահմանել նրա նկատմամբ, որոշել է, որ գոյություն ունեցող չորս վատ տարբերակներից ամենաբարվոքը «Սբ Պատրիկ» հաստատությունն էր, և այնուհետև, որ նրա կալանքն այդ հաստատությունում պետք է լիներ ժամանակավոր:

Հետևաբար, դիմողի կալանքը հակասում է 5(1)(դ) հոդվածին:

Այս վճիռը կրկին ցույց է տալիս, որ պետությունները պետք է ստեղծեն մասնագիտացած հաստատություններ լուրջ հոգեկան խնդիրներ ունեցող երիտասարդների խնամքի և կրթության կազմակերպման համար:

Հոդված 5(1)(ե). Վարակիչ հիվանդություններ, հոգեկան խանգարումներով անձինք, ալկոհոլամոլներ, թափառաշրջիկներ և այլն

.....

«Էնհորնն ընդդեմ Շվեդիայի» Enhorn v Sweden 25 հունվարի 2005 թվական Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը, որը ծնվել էր 1947 թ., համասեռամոլ էր: 1994 թ. նրա մոտ հայտնաբերվել է ՄԻԱՎ-ի հարուցիչ: Պարզվել է, որ նա վարակել է նաև 19 տարեկան մի անձնավորության, որի հետ առաջին անգամ սեռական հարաբերություն է ունեցել 1990 թ.: 1994 թ. սեպտեմբերին կոմսության համապատասխան բժշկական պաշտոնյան 1988 թ. «Վարակիչ հիվանդությունների մասին» օրենքի շրջանակներում դիմողին տվել է համապատասխան ցուցումներ, որոնց նպատակն էր նվազեցնել դիմողի կողմից վարակն այլ անձանց փոխանցելու ռիսկը: Մասնավորապես, նա չպետք է սեռական հարաբերություն ունենար՝ առանց իր կենակցին զգուշացնելու, որ իր մոտ հայտնաբերվել է ՄԻԱՎ-ի հարուցիչ, պետք է պահպանակ օգտագործեր, հեռու մնար այնպիսի քանակությամբ ոգելից խմիչքներից, որը կարող էր ազդել նրա սթափության վրա, վիրահատության ենթարկվելու դեպքում բուժանձնակազմին տեղյակ պահեր իր հիվանդության մասին և ներկայանար բժշկական ստուգումների, որոնք նշանակվում են կոմսության բժշկական պաշտոնյայի կողմից: Սկզբում դիմողը ներկայանում էր իր կանոնավոր բուժզննումներին, 1994 թ. հոկտեմբերին և նոյեմբերին նա հինգ այց բաց է թողել: 1995 թ. փետրվարին կոմսության բժշկական պաշտոնյան, վկայակոչելով 1988 թ. օրենքը, դիմել է կոմսության վարչական դատարան՝ պահանջելով, որ դիմողը հարկադրաբար երեք ամսով մեկուսացվի հիվանդանոցում՝ այն հիմքով, որ չի կատարել իրեն տրված գործնական ցուցումները, որոնք ուղղված էին «հասարակության համար վտանգավոր հիվանդության» տարածումը կանխելուն, ինչպես նաև, առկա էր «հիվանդության տարածման արտահայտված ռիսկ»: Վարչական դատարանը բավարարել է պահանջը: Դիմողը չի գնացել հիվանդանոց: Մի քանի շաբաթ անց նա ձերբակալվել է ոստիկանության կողմից և տարվել ոստիկանություն: Մինչև 2001 թ. դեկտեմբեր ազգային դատարանները կանոնավորապես վերանայել են հարկադիր մեկուսացման հրամանները: Այնուամենայնիվ, այս տարիների ընթացքում դիմողը մի քանի անգամ հիվանդանոցից դիմել է փախուստի: Փաստորեն, նա ընդամենը մեկուկես տարի է անցկացրել հարկադիր մեկուսացման մեջ: Մնացած ժամանակը, երբ նա առանց թույլտվության բացակայել է հիվանդանոցից, հայտնել է, որ սեռական հարաբերություններ չի ունեցել, և չեն եղել փաստեր, որ նա վարակել է այլ անձանց: Եվրոպական դատարան ներկայացրած իր գանգատում դիմողը վիճարկել է, որ կարգադրությունների հիման վրա իրեն հարկադիր մեկուսացման մեջ պահելը չի եղել իրադրությանը համաչափ միջոցառում: Կառավարությունը պատասխանել է, որ կարգադրություններն արվել են, որպեսզի օգնեն վտանգավոր վարակ ունեցող անձին փոխելու իր կենսակերպը, և հիվանդանոցում մեկուսացված լինելու ժամանակ դիմողին հարկադրական բուժում չի նշանակվել:

43. Բացի այդ, կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (ե) ենթակետում հիշատակվում են անձանց մի քանի կատեգորիաներ. այն է՝ վարակիչ հիվանդություններ և հոգեկան խանգարումներ ունեցող անձինք, գինեմոլներ, թմրամոլներ և թափառաշրջիկներ: Այս բոլոր անձանց միջև կապ կա, քանի որ բուժում ստանալու նպատակով կամ սոցիալական քաղաքականության նկատառումներից ելնելով կամ էլ բուժական և սոցիալական հիմքերով՝ նրանք կարող են զրկվել իրենց ազատությունից: Հետևաբար, այս համատեքստից ճիշտ է եզրակացնել, որ գլխավոր պատճառը, որ կոնվենցիան 5-րդ հոդվածի 1(ե) ենթակետում թույլ է տալիս նշված անձանց զրկել ազատությունից, ոչ միայն այն է, որ նրանք վտանգ են ներկայացնում հանրային անվտանգությանը, այլև, որ նրանց սեփական շահերը կարող են պահանջել, որ նրանք պահվեն կալանքի տակ (տե՛ս *«Գուցարդին ընդդեմ Իտալիայի» (Guzzardi v Italy)*, 1980 թ. նոյեմբերի 6-ի վճիռ, շարք A, թիվ 39, էջ 36-7, պարբ. 98 վերջում և «*Վիտոլդ Լիտվան [ընդդեմ Լեհաստանի»] Witold Litwa [v Poland ECHR 2000-III]*, պարբ. 60):

44. Հաշվի առնելով վերը նշված սկզբունքները՝ դատարանը կարծում է, որ «վարակիչ հիվանդությունները կանխելու նպատակով» անձին կալանավորելու «օրինականությունը» գնահատելիս կարևոր չափանիշները հետևյալն են. վարակիչ հիվանդությունը վտանգավո՞ր է հանրային առողջության կամ անվտանգության համար, կամ վարակված անձին կալանքի տակ վերցնելը հիվանդության տարածումը կանխելու այն վերջի՞ն միջոցն է, որը պետք է կիրառվի, քանի որ նվազ ծայրահեղ միջոցները քննարկվել են և համարվել անբավարար հանրային շահի պաշտպանության տեսանկյունից: Եթե այս չափանիշները չեն բավարարվում, ապա ազատությունից զրկելու հիմքը դադարում է գոյություն ունենալուց:

45. Վերադառնալով ընթացիկ գործին, անվիճելի է, որ առաջին չափանիշը բավարարվել է, քանի որ ՄԻԱՎ-ի հարուցիչը եղել և մնում է վտանգավոր հանրային առողջության և անվտանգության համար:

46. Այսպիսով, մնում է ուսումնասիրել, թե արդյոք դիմողի կալանքի մասին կարելի՞ է ասել, որ դա ամենավերջին միջոցն էր, որը պետք է կիրառվեր վարակի տարածումը կանխելու համար, քանի որ հանրային շահի պաշտպանության տեսանկյունից նվազ խիստ միջոցառումները համարվել են անբավարար:

47. 1995 թ. փետրվարի 16-ի վճռով կոմսության վարչական դատարանը պահանջել է, որ 1988 թ. օրենքի 38-րդ բաժնի հիման վրա դիմողը մինչև երեք ամիս ժամկետով մնա հարկադիր մեկուսացման մեջ: Դրանից հետո նրա ազատազրկման ժամկետները երկարացնելու նպատակով վեց ամիսը մեկ տրվել են նրա կալանքի երկարացման կարգադրություններ մինչև 2001 թ. դեկտեմբերի 12-ը, երբ կոմսության վարչական դատարանը մերժել է նրա կալանքը երկարացնելու մասին կոմսության բժշկական պաշտոնյայի միջնորդությունը: Հետևաբար, դիմողի ազատազրկման սանկցիան ուժի մեջ է եղել մոտ յոթ տարի:

Քանի որ դիմողը մի քանի անգամ դիմել է փախուստի, նրա փաստացի ազատազրկումն ընդգրկել է 1995 թ. մարտի 16-ից մինչև 1995 թ. ապրիլի 25-ը, 1995 թ. հունիսի 11-ից մինչև 1995 թ. սեպտեմբերի 27-ը, 1996 թ. մայիսի 28-ից մինչև 1996 թ. նոյեմբերի 6-ը, 1996 թ. նոյեմբերի 16-ից մինչև 1997 թ. փետրվարի 26-ը և 1999 թ. փետրվարի 26-ից մինչև 1999 թ. հունիսի 12-ն ընկած ժամանակահատվածները՝ կազմելով ընդամենը մոտ մեկուկես տարի:

48. Կառավարությունը ներկայացրել է, որ նպատակ ունենալով երաշխավորել, որ դիմողի վարքագիծը չի նպաստելու ՄԻԱՎ հարուցիչի տարածմանը, 1994 թ. սեպտեմբերից մինչև 1995 թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում ապարդյուն փորձեր են արվել իրականացնելու մի շարք կամավոր միջոցառումներ: Նաև նշվել են գործի առանձնահատուկ հանգամանքները, հատկապես դիմողի անհատականության և վարքագծի վերաբերյալ թերապևտների և հոգեբույժների տված բնութագրերը, անչափահաս տղաների նկատմամբ նրա հակումը, այն փաստը, որ նա ՄԻԱՎ-ով վարակել է երիտասարդ անձնավորության, մի քանի անգամ դիմել է փախուստի և մերժել համագործակցել հիվանդանոցի բուժանձնակազմի հետ: Այսպիսով, կառավարությունը որոշել է, որ դիմողին իր կամքին հակառակ հիվանդանոցում տեղավորելը եղել է համաչափ այդ միջոցառման նպատակին, այն է՝ կանխել նրա կողմից վարակիչ հիվանդության տարածումը:

49. Դատարանը նկատում է, որ կառավարությունը չի ներկայացրել նվազ ծայրահեղ միջոցառումների օրինակներ, որոնք 1995 թ. փետրվարի 16-ից մինչև 2001 թ. դեկտեմբերի 12-ը կարող էին քննարկվել դիմողի համար, սակայն ակնհայտորեն համարվեին անբավարար հանրային շահի պաշտպանության տեսանկյունից:

50. Անվիճելի է, որ 1994 թ. սեպտեմբերի 1-ին դիմողը չի կատարել կոմսության բժշկության գծով պաշտոնյայի կողմից նրան տրված հրահանգը, համաձայն որի՝ նա պետք է այցելեր թերապևտ-խորհրդատուին և ներկայանար կոմսության բժշկական պաշտոնյայի նշանակած ստուգումներին: Թեպետ նա ներկայացել է կոմսության բժշկական պաշտոնյայի կողմից նշանակած ստուգումներին 1994 թ. սեպտեմբերին և նոյեմբերին, ինչպես նաև վերջինս երկու անգամ տնային այց է կատարել նրան, 1994 թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին դիմողը հինգ անգամ ըստ պահանջի չի ներկայացել:

51. 1994 թ. սեպտեմբերի 1-ին խորհրդի բժշկի կողմից տրված այլ գործնական հրահանգների համաձայն, ֆիզիկական զննության, վիրահատության, պատվաստման, արյան հետազոտման ենթարկվելու, ինչպես նաև որևէ պատճառով արյունահոսելու դեպքում դիմողը պարտավոր էր համապատասխան բուժաշխատողին տեղեկացնել իր վարակիչ հիվանդության մասին: Միաժամանակ ՄԻԱՎ-ով վարակված լինելու մասին նա պետք է տեղյակ պահեր նաև ատամնաբույժին: 1999 թ. ապրիլին կոմսության վարչական դատարանում կոմսության բժշկության գծով պաշտոնյան հայտնել է, որ վերջին երկու տարվա ընթացքում դիմողը, որը գտնվել է փախուստի մեջ, երկու անգամ դիմել է բուժում ստանալու համար և երկու անգամ էլ տեղյակ է պահել, որ վարակված է ՄԻԱՎ-ի հարուցիչով՝ ի տարբերություն 1995 թ. մայիս և սեպտեմբեր ամիսների, երբ դիմողը երեք տարբեր առիթներով տեղյակ չի պահել բուժանձնակազմին իր վարակի մասին:

52. Այնուամենայնիվ, 1994 թ. սեպտեմբերի 1-ին կոմսության բժշկության գծով պաշտոնատար անձի մեկ այլ գործնական հրահանգով պահանջվել է, որ դիմողը զերծ մնա այնպիսի քանակությամբ ալկոհոլի սպառումից, որը կարող է մթագնել նրա դատողությունը և մյուսներին դնել ՄԻԱՎ-ով վարակվելու ռիսկի տակ: Այնուամենայնիվ, առհասակ ալկոհոլ

չօգտագործելու կամ ալկոհոլամոլության դեմ բուժում ստանալու հրահանգներ նրան չեն տրվել: Ոչ էլ ազգային դատարանները դիմողին ազատությունից զրկելը հիմնավորել են նրա 5-րդ հոդվածի 1-ին կետի (ե) ենթակետի իմաստով «հոգեկան հիվանդ» լինելու հանգամանքով և այդ դրույթից բխող պահանջներով:

53. Բացի այդ, չնայած կոմսության բժշկական գծով պաշտոնյան կոմսության վարչական դատարանում 1995 թ. փետրվարին հայտնել է, որ, իր կարծիքով, կարիք կա, որ դիմողի վարքագիծը փոխելու համար նա խորհրդակցի հոգեբույժի հետ, կոմսության բժշկական գծով պաշտոնյայի կողմից 1994 թ. սեպտեմբերի 1-ի գործնական հրահանգների շարքում հոգեբուժական միջամտություն չի նշվել: Ոչ էլ ազգային դատարանները դիմողին ազատությունից զրկելը հիմնավորել են նրա 5-րդ հոդվածի 1-ին կետի (ե) ենթակետի իմաստով «ալկոհոլամոլ» լինելու հանգամանքով և այդ դրույթից բխող պահանջներով:

54. 1994 թ. դիմողին տրված հրահանգների համաձայն՝ նրան արգելվել է սեռական հարաբերության մեջ մտնել առանց, նախևառաջ, իր զուգընկերոջը տեղեկացնելու ՄԻԱՎ-ով վարակված լինելու մասին: Բացի այդ, նա պետք է օգտագործեր պահպանակ: Դատարանն այս առնչությամբ նկատում է, որ թեև 1995 թ. փետրվարի 16-ից մինչև 2001 թ. դեկտեմբերի 12-ը դիմողը մեծ մասամբ գտնվել է ազատության մեջ, որևէ փաստ կամ ցուցում չկա, որ այդ ժամանակահատվածում դիմողը ՄԻԱՎ-ի հարուցիչը փոխանցել է մեկ այլ անձի, կամ որ նա սեռական հարաբերություն է ունեցել առանց իր զուգընկերոջը տեղեկացնելու, որ վարակված է ՄԻԱՎ-ով, կամ որ նա չի գործածել պահպանակ, կամ որ նա առհասարակ սեռական հարաբերություն է ունեցել: Ճիշտ է՝ դիմողը վարակել է 19-ամյա երիտասարդի, որի հետ նա առաջին անգամ սեռական հարաբերություն է ունեցել 1990 թ.: Սա բացահայտվել է 1994 թ., երբ դիմողն ինքն է տեղյակ դարձել իր վարակի մասին: Այնուամենայնիվ, որևէ ցուցում չկա, որ դիմողը միտումնավոր կամ կոպիտ անտեսման հետևանքով է ՄԻԱՎ-ով վարակել այդ երիտասարդին, որը պայմանավորվող բազմաթիվ պետություններում, ներառյալ Շվեդիայում, քրեական օրենսգրքի շրջանակներում կհամարվեր քրեական հանցագործություն:

55. Այս հանգամանքներում դատարանը կարծում է, որ դիմողի հարկադիր մեկուսացումը վերջին միջոցը չէր, որը պետք է կիրառվեր ՄԻԱՎ-ի վարակի տարածումը կանխելու համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նվազ ծայրահեղ միջոցառումները քննության են առնվել, և պարզվել է, որ դրանք անբավարար են համարվել հանրային շահի պաշտպանության տեսանկյունից: Բացի այդ, դատարանը կարծում է, որ դիմողի հարկադիր մեկուսացման կարգադրությունը երկարացնելով մինչև մոտ յոթ տարի ժամկետով (որից ընդհանուր առմամբ մոտ մեկուկես տարին դիմողն իր կամքին հակառակ անց է կացրել հիվանդանոցում)՝ իշխանությունները չեն կարողացել արդար հավասարակշռություն հաստատել ՄԻԱՎ հարուցչի տարածումը կանխելու անհրաժեշտության երաշխավորման և դիմողի ազատության իրավունքի միջև:

56. Հետևաբար, տեղի էր ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

. . .

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

1. Վճռում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 5(1) հոդվածի խախտում:

. . .

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Կոստան և դատավորներ Բական, Կաբրալ Բարետոն, Թուրմենը, Ուգրեխելիձեն, Ֆուրա-Սանդստրոմը և Ժոսիենը:

2 Սա առաջին դեպքն էր, երբ դատարանը մանրամասն քննության է առել կալանքի տակ պահելու վարակիչ հիվանդությունների հիմքը: Վճիռը հստակորեն ցույց է տալիս, որ նույնիսկ լուրջ վարակիչ հիվանդության դեպքում, ինչպիսին ՄԻԱՎ-ն է, հարկադիր հոսպիտալացումը պետք է կիրառվի ծայրահեղ դեպքում: Նման մոտեցումը համահունչ է 1998 թ. ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մարդու իրավունքների միջազգային ուղենիշներին, որոնցում ամրագրված է, որ «112. Ազատության վրա սահմանափակումներ կարող են դրվել բացառիկ դեպքերում՝ հիմք ընդունելով միտումնավոր և վտանգավոր վարքագծի մասին օբյեկտիվ դատողությունները: Այսպիսի բացառիկ դեպքերը պետք է ենթակա լինեն հանրային առողջության ընդհանուր դրույթների կամ քրեական օրենքների կիրառությանը՝ ապահովելով համապատասխան ընթացակարգերով պաշտպանություն»:

«Ջոնսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության»
(Johnson v UK 1997-VII 2391, (1997) 27 EHRR 296)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողի մոտ «հոգեկան խանգարում» ախտորոշելուց հետո 1983 թ. «Հոգեկան առողջության մասին» օրենքի համապատասխան ընթացակարգերի կիրառմամբ նա Լեյքաստերի բանտից տեղափոխվել է Ռեմփթոնի հիվանդանոց, որը հատկապես խիստ անվտանգության ռեժիմով հոգեբուժական հաստատություն է:

Դիմողի ազատազրկման հարցը կանոնավորապես վերանայվել է Հոգեկան առողջության վերանայման տրիբունալի կողմից: Հոգեբույժի եզրակացությունների հիման վրա 1989 թ. տրիբունալը որոշել է, որ թեպետ դիմողն այլևս չի տառապում հոգեկան խանգարմամբ, հինգ տարի շարունակ լինելով Ռեմփթոնի ռեզիդենտ, իրական պատկերացում չունի ինքնուրույն կյանք վարելու վերաբերյալ և հանրակացարանային պայմաններում նորից բժշկական հսկողության տակ վերցվելու կարիք ունի: Դիմողը պայմանականորեն ազատ է արձակվել՝ ելնելով իր և հասարակության շահերից: Ազատ արձակման պայմաններից մեկն այն էր, որ նա պետք է բնակվեր համապատասխան հանրակացարանում և գտնվեր հոգեբույժի հսկողության տակ:

Թեև զգալի ջանքեր են գործադրվել համապատասխան հանրակացարան գտնելու ուղղությամբ, նրան Ռեմփթոնից ազատ արձակել այդպես էլ հնարավոր չի եղել: Փորձնական շրջանն ավելի մեղմ անվտանգության ռեժիմով հիվանդանոցում սկսել է 1990 թ. սեպտեմբերին, սակայն վեց շաբաթ անց դիմողը վերադարձվել է Ռեմփթոն, քանի որ սաստիկ հարբելուց հետո նա հարձակվել է մի հիվանդի վրա և ահաբեկել խնամող անձնակազմին: Դրանից հետո, համապատասխան հանրակացարանի բացակայության պայմաններում, դիմողը պահվել է Ռեմփթոնում, մինչև տրիբունալը որոշել է, որ 1993 թ. նա պետք է ազատ արձակվի և վերադառնա համայնք:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

50. Դիմողը բողոքել է, որ 1989 թ. հունիսի 15-ից (այն օրվանից, երբ տրիբունալն առաջին անգամ որոշել է, որ նա այլևս հոգեկան խանգարմամբ չի տառապում) մինչև 1993 թ. հունվարի 12-ը (այն օրը, երբ պահանջվել է անվերապահորեն ազատ արձակել նրան) իր կալանավորումը կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է...

58. Սկզբում դատարանը որոշում է, որ նպատակահարմար է կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (ե) ենթակետի շրջանակներում ուսումնասիրել 1989 թ. հունիսի 15-ից հետո դիմողին շարունակաբար կալանքի տակ պահելու երևույթի օրինականությունը, եթե նույնիսկ նրան կալանքի տակ պահելու օրինականությունը, գոնե մինչև այդ օրը, կարող է, ամենայն հավանականությամբ, արդարացվել 5-րդ հոդվածի 1-ին կետի (ա) ենթակետով, քանի որ կալանքը հետևել է այդ ենթակետի իմաստով «իրավասու դատարանի» կողմից անձին «դատապարտելու» գործողությանը: Թեպետ պարտադիր չէ, որ 5-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված մեկ հիմքի կիրառելիությունը բացառի մյուսի կիրառելիությունը, և կալանքը կարող է արդարացված լինել այդ դրույթի մեկից ավելի ենթակետերի շրջանակներում (տե՛ս *«Էրիկսենն ընդդեմ Նորվեգիայի» (Eriksen v Norway)* 1997 թ. մայիսի 27-ի վճիռ, Վճիռների և որոշումների զեկույցներ, 1997-III, էջ 861-2, պարբ. 76) և պետք է նկատել, որ դիմողը պահվել է Ռեմփթոնի հիվանդանոցում 1983 թ. «Հոգեկան առողջության մասին» օրենքի հիման վրա տրված անորոշ ժամկետով հիվանդանոցային և տեղաշարժը սահմանափակելու մասին կարգադրության շրջանակներում՝ հոգեկան հիվանդությունից բուժվելու նպատակով...

59. Դատարանը նաև նկատում է, որ հաշվի առնելով 1983 թ. օրենքի 73(2) և (7) բաժիններով տրիբունալին վերապահված իրավասությունները, որոնց շրջանակներում օրենքի 1(2) բաժնի իմաստով այլևս հոգեկան հիվանդություններից չտառապող անձանց ազատ արձակման նկատմամբ նա կարող է պայմաններ սահմանել և հետաձգել նրանց ազատ արձակումը մինչև այդ պայմանների բավարարումը, դատարանի առջև հանդես եկող կողմերը չեն վիճարկել, որ դիմողի շարունակական կալանավորումը ներպետական օրենսդրության շրջանակներում եղել է օրինական…

60. Դատարանը շեշտում է, այնուամենայնիվ, որ ազգային օրենսդրության շրջանակներում դիմողին շարունակական անազատության մեջ պահելու օրինականությունն ինքնին որոշիչ չէ: Պետք է նաև ապացուցել, որ 1989 թ. հունիսի 15-ից հետո նրան կալանքի տակ պահելը համապատասխանել է կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի՝ անձանց կամայական հիմքերով ազատազրկումը կասեցնելու (բազմաթիվ աղբյուրների շարքում տե՛ս *«Վասսինքն ընդդեմ Նիդեռլանդների»*

((Wassink v Netherlands), 1990 թ. սեպտեմբերի 27-ի վճիռ, շարք A, թիվ 185-A, էջ 11, պարբ. 24)) և (ե) ենթակետում վկայակոչված սահմանափակումների նպատակներին (տե՛ս վերոհիշյալ *Վինտերվերպի (Winterwerp)* վճիռը, էջ 17, պարբ. 39): Այս վերջին առնչությամբ դատարանը նշում է, որ համաձայն գործող նախադեպային իրավունքի՝ անձը չի կարող համարվել «հոգեկան հիվանդ» և զրկվել իր ազատությունից, եթե չեն բավարարվում հետևյալ երեք նվազագույն պայմանները. նախ՝ պետք է հիմնովին ցույց տրվի, որ նա ունի անառողջ դատողություն: Երկրորդ՝ հոգեկան խանգարումը պետք է լինի այնպիսի կամ այն աստիճանի խանգարում, որ երաշխավորի անձին հարկադիր ազատազրկման տակ պահելը, և երրորդ՝ շարունակական ազատազրկման օրինականությունը պետք է կախված լինի այս խանգարման շարունակականությունից (տե՛ս վերը նշված *Վինտերվերպի (Winterwerp)* վճիռը, էջ 21-2, պարբ. 40 և *«Լուբերտիի ընդդեմ Իտալիայի» (Luberti v Italy)* 1984 թ. փետրվարի 23-ի վճիռը, շարք A, թիվ 75, էջ 12-13, պարբ. 27):

61. Հանդես գալով այն տեսակետից, որ 1989 թ. տրիբունալը բավարարված է եղել, որ նա այլևս չի տառապում հոգեկան հիվանդությամբ, որի արդյունքում նա տեղավորվել էր Հեմփթոնի հիվանդանոցում, պրն Ջոնսոնն առարկում է, որ վերը նշված երրորդ պայմանը, որը վերաբերում է հոգեկան խանգարման շարունակականությանը, չի պահպանվել, և դրա արդյունքում նա պետք է անհապաղ և անվերապահորեն ազատ արձակվեր կալանքից:

Դատարանը չի կարող ընդունել այդ բացատրությունը: Նրա կարծիքով՝ մասնագիտական մարմնի եզրակացությունից մեխանիկորեն չի հետևում, որ հոգեկան խանգարումը, որի հիման վրա հիվանդի հարկադրական ազատազրկումը եղել է արդարացված, այլևս չի շարունակվում, և վերջինս անհապաղ և անվերապահորեն պետք է ազատ արձակվի [և մուտք գործի] համայնք . . .

62. Այս կապակցությամբ պետք է հիշել, որ դատարանն իր *Լուբերտիի* (Luberti) վճռում (մեջբերված է վերը՝ էջ 13-15, պարբ. 29) ընդունել է, որ նախկինում դատարանի կողմից որպես հոգեկան խանգարում ունեցող և հասարակության համար վտանգավոր անձ ճանաչված անձի ազատազրկման դադարեցումն այնպիսի հարց է, որը վերաբերում է ինչպես այդ անձին, այնպես էլ այն հասարակությանը, որտեղ նա ապրելու է ազատ արձակվելու դեպքում: Հաշվի առնելով կշեռքի նժարին դրված շահերի անհետաձգելի բնույթը և, մասնավորապես, հոգեկան հիվանդ եղած ժամանակ պրն Լուբերտիի կատարած հանցագործության հատկապես լուրջ բնույթը՝ այս դեպքում ընդունվել է, որ պատասխանատու մարմինն իրավասու էր զգուշությամբ վարվելու, ինչպես նաև ունեցել է որոշակի ժամանակի կարիք, որպեսզի որոշի, թե արդյոք այն պե՞տք է վերջ տա նրան մեկուսի պայմաններում պահելուն, նույնիսկ եթե բժշկական փաստերը ցույց են տվել, որ նա առողջացել է:

63. Դատարանի կարծիքով՝ պետք է նաև ընդունվի, որ պատասխանատու մարմինն իրավունք ունի ձեռնարկելու համանման զգուշավոր միջոցառում, որպեսզի որոշի՝ համապատասխան հանգամանքների և կշեռքի նժարին դրված շահերի պայմաններում իրականում ճի՞շտ է կարգադրել, որ հոգեկան խանգարման պատճառով անազատության մեջ պահված անձը, որն այլևս հոգեկան խանգարումից չի տառապում, անհապաղ և անվերապահորեն ազատ արձակվի: Մարմինը պետք է կարողանա անձին հասարակություն մուտք գործել թողնելուց հետո ինչ-որ ձևով վերահսկողություն սահմանել նրա նկատմամբ և այդ նպատակով նրա ազատ արձակումը կախման մեջ դնել որոշակի պայմաններից: Միաժամանակ, չի կարելի բացառել, որ որոշակի պայման դնելը որոշ հանգամանքներում կարող է արդարացնել կալանքից ազատ արձակման հետաձգումը՝ հաշվի առնելով այդ պայմանի բնույթը և պատճառները: Այնուամենայնիվ, անչափ կարևոր է, որ առկա լինեն համապատասխան երաշխիքներ, որոնք կապահովեն, որ ազատ արձակման ցանկացած հետաձգում համահունչ է 5-րդ հոդվածի 1-ին կետի նպատակի և (ե) ենթակետում նշված սահմանափակմանը (տե՛ս վերը՝ պարբ. 60), մասնավորապես, որ անձին ազատ արձակելու գործողությունն անողջամտորեն չի հետաձգվում:

64. Հաշվի առնելով վերը նշված նկատառումները՝ դատարանն այն կարծիքին է, որ 1989 թ. տրիբունալը կարող էր իր վճռի կայացման ժամանակ եզրակացնել, որ դեռ վաղ է կարգադրել պրն Ջոնսոնին անվերապահորեն և անհապաղ ազատ արձակել Ռեմփթոնի հիվանդանոցից...

Հաշվի առնելով դոկտոր Վիլսոնի և դոկտոր Կամերոնի կարծիքները՝ տրիբունալի համար անողջամիտ չի եղել կարծել, որ դիմողը պետք է մնա հոգեբույժի և սոցիալական աշխատողի հսկողության տակ, ինչպես նաև, որ նա պետք է հանրակացարանային պայմաններում անցնի վերականգնողական շրջան, քանի որ «չի կարելի բացառել հոգեկան հիվանդության կրկնությունը, որի դեպքում կպահանջվի նրան տեղափոխել հիվանդանոց» ... Տրիբունալի կողմից դիմողի ազատ արձակման հետաձգումն սկզբունքորեն արդարացված է այն հանգամանքով, որ նպատակ է ունեցել հնարավորություն տալ իրավասու մարմիններին գտնելու հանրակացարան, որը լավագույնս կհամապատասխաներ նրա կարիքներին և կապահովեր նրան համապատասխան պայմաններով բարեհաջող վերականգնման համար...

66. Այնուամենայնիվ, թեպետ տրիբունալը դիմողի առջև հանրակացարանում բնակվելու պահանջ է դրել և հետաձգել նրա ազատ արձակումը մինչև համապատասխան կարգադրություններ արվելը, նա իրավասություն չի ունեցել երաշխավորելու, որ ազատ արձակվելուց հետո դիմողը ողջամիտ ժամկետում տեղավորվելու է համապատասխան հանրակացարանում: Դիմողին ընդունել ցանկացող հանրակացարան գտնելու հոգսը վերագրվել է իշխանություններին: Պետք է նկատել, որ նրանցից ակնկալվում էր, որ նրանք գործելու են ողջամիտ արագությամբ, որպեսզի ավարտեն դիմողի տեղավորման հետ կապված կարգադրությունները... Թեպետ իրավասու մարմիններն այս նպատակով զգալի ջանքեր են

գործադրել, դրանք հաջողությամբ չեն ավարտվել, քանի որ որոշ հանրակացարաններ չեն ցանկացել ընդունել դիմողին, ինչպես նաև դիմողը բացասական վերաբերմունք է ունեցել առկա տարբերակներին... Նրանք նաև նրան տեղավորելու սահմանափակ հնարավորություններ են ունեցել: Ճիշտ է, հնարավոր էր ողջամիտ ժամկետում գտնել համապատասխան հանրակացարան, եթե դիմողն իր վերականգնման նկատմամբ ունենար ավելի դրական վերաբերմունք: Այնուամենայնիվ, սա չի կարող հերքել այն եզրակացությունը, որ ո՛չ տրիբունալը, ո՛չ էլ համապատասխան իրավասու մարմինները չեն ունեցել ողջամիտ ժամկետում այդ պայմանի ապահովումը երաշխավորելու համար անհրաժեշտ լիազորություններ...

67. Այս հանգամանքներում պետք է եզրակացնել, որ 1989 թ. հունիսի դրությամբ տրիբունալի կողմից դիմողի վրա դրված հանրակացարանում բնակություն հաստատելու պայմանը հանգեցրել է Ռեմփթոնի հիվանդանոցից դիմողի ազատ արձակման անվերջ հետաձգումների, մանավանդ որ 1990 թ. հոկտեմբեր ամսից դիմողը չի ցանկացել համագործակցել իրավասու մարմինների հետ հանրակացարան գտնելու գործում, ինչի հետևանքով բացառվել է այդ պայմանի բավարարման ցանկացած հնարավորություն: Թեպետ 1990 և 1991 թթ. տրիբունալները նորից քննել են դիմողի գործը, նրանք պարտավորված են եղել կարգադրել, որ նա մնա շարունակական կալանքի տակ, քանի որ 1989 թ. տրիբունալի սահմանած ազատ արձակման պայմանը դեռևս բավարարված չէր:

Հաշվի առնելով վերջին տրիբունալի ընդունած որոշումով պայմանավորված իրավիճակը, ինչպես նաև համապատասխան երաշխիքների բացակայությունը, ներառյալ դիմողի կալանքից ազատ արձակումն անողջամտորեն չհետաձգելու հարցում դատական վերանայման ապահովումը, պետք է ընդունել, որ 1989 թ. հունիսի 15-ից նրան շարունակաբար անազատության մեջ պահելը չի կարող արդարացվել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (ե) ենթակետի շրջանակներում (տե՛ս վերը՝ պարբ. 63):

Այդ հիմքերով դատարանը եզրակացնում է, որ դիմողին 1989 թ. հունիսի 15-ից հետո շարունակաբար կալանքի տակ պահելը կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է եղել...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

1. Վճռում է, որ խախտվել է կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը. . . .

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Ռիսդալը, դատավորներ Գյոլչյուքլուն, Շպիլմանը, Վալտիկոսը, սըր Զոն Ֆրիլենդը, Բական, Կուրիսը, Լևիցը և Վան Դիժկը:

2 «Հոգեկան խանգարում» ունեցող անձանց կալանքն արդարացնող պահանջները (տե՛ս պարբ. 60, վճիռ) դատարանի կողմից առաջին անգամ սահմանվել են *Վինտերվերպի (Winterwerp)* գործի կապակցությամբ (տե՛ս ստորև՝ էջ 331):

3 Թեև 5(1) հոդվածը չի երաշխավորում բուժման իրավունքը (տե՛ս *Վինտերվերպի (Winterwerp)* գործը, ստորև՝ էջ 331), «հոգեկան հիվանդ» անձը պետք է կալանավորվի համապատասխան հաստատությունում: *«Աերցն ընդդեմ Բելգիայի» (Aerts v Belgium (1998) 29 EHRR 50, 1998 V 1939)* գործում խախտվել է 5(1) հոդվածը, երբ դիմողի համար համապատասխան հիվանդանոց գտնելը ձգձգվել է: Դատարանը հայտարարել է, որ.

46. …Պետք է գոյություն ունենա որոշակի կապ կիրառված ազատազրկման հիմքի և կալանքի վայրի ու պայմանների միջև: Սկզբունքորեն հոգեկան խանգարում ունեցող անձի «կալանքը» «օրինական» կլինի 1-ին կետի (ե) ենթակետի իմաստով, եթե այն իրականացվի հիվանդանոցում, կլինիկայում կամ այլ համապատասխան հաստատությունում (տե՛ս *«Աշինգդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ashingdane v UK)*, 1985 թ. մայիսի 28-ի վճիռ, շարք A, թիվ 93, էջ 21, պարբ. 44):

47. Տվյալ դեպքում 1993 թ. հունվարի 15-ին կալանքի հանձնման պալատը որոշում է կայացրել պրն Աերցին կալանքի տակ վերցնելու վերաբերյալ՝ նշելով, որ նախքան Հոգեկան առողջության խորհրդի կողմից կալանքի հաստատության հաստատման մասին որոշման ընդունումը նա պետք է պահվեր Լանքինի բանտի հոգեբուժական բաժանմունքում: 1993 թ. մարտի 22-ին Հոգեկան առողջության խորհուրդը հաստատել է «Փայֆվե» սոցիալական պաշտպանության կենտրոնը որպես դիմողին կալանքի տակ պահելու հաստատություն, սակայն դրանից հետո դիմողին պահել Լանքինի բանտում ևս յոթ ամիս, և նրա տեղափոխումը չի իրականացվել մինչև 1993 թ. հոկտեմբերի 27-ը...

48. Դատարանը նշում է, որ պայմանական կալանքի ժամկետները որևէ օրենքով կամ դրույթով սահմանված չեն: Այնուամենայնիվ, այն պետք է որոշում կայացնի, թե արդյոք պայմանական կալանքի տակ անձին շարունակաբար այդքան երկար ժամանակ պահելը կարո՞ղ է համարվել օրինական՝ հաշվի առնելով կալանքի կարգադրության նպատակը:

49. 1990 թ. հունվարի 10-ի և 15-ի զեկույցները, որոնք անդրադառնում են 1990 թ. առաջացող իրադրությանը, … ԽԿԿ-ի [Խոշտանգումների կանխման կոմիտեի] զեկույցը ... և այդ զեկույցի վերաբերյալ Բելգիայի կառավարության նկատառումները ... բավական հստակ ցույց են տալիս, որ Լանթինի հոգեբուժական բաժանմունքը չէր կարող համարվել այնպիսի հաստատություն, որտեղ նպատակահարմար էր պահել հոգեպես անառողջ անձանց այն դեպքում, երբ վերջիններս չեն ստացել կանոնավոր բժշկական խնամք կամ չեն գտնվել համապատասխան թերապևտիկ միջավայրում: 1993 թ. օգոստոսի 2-ին պրն Աերցի ներկայացրած ազատման դիմումին ի պատասխան Հոգեկան առողջության խորհուրդը կարծիք է հայտնել, որ նման իրադրությունը վնասակար է դիմողի համար, որը չի ստացել իր վիճակին համապատասխան բուժում, որի պատճառով նա կալանքի տակ էր վերցվել: Բացի այդ, կառավարությունը չի հերքել, որ բժշկական տեսանկյունից դիմողի բուժումը Լանթինում եղել է անբավարար: Ուստիև կալանքի տակ պահելու նպատակի և առկա պայմանների փոխադարձ կապը թույլ է եղել:

Տե՛ս նաև «հոգեկան հիվանդ» անձանց վերաբերյալ *«Աշինգդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ashingdane v UK, A.93 (1985)* 7 EHRR 528) գործը:

4 *«Հ.Լ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (H.L. v UK)* 2004 թ. հոկտեմբերի 5-ի վճռով պալատը միաձայն որոշել է, որ Անգլիայի՝ հոգեկան հիվանդության պատճառով անմեղսունակ անձանց որպես «ոչ պաշտոնական» հիվանդներ պահելու փորձը չի համապատասխանում 5(1) հոդվածից անբաժանելի ընթացակարգային երաշխիքներին: Դիմողն ի ծնե (1949 թ.) տառապել է աուտիզմով: Նա չէր կարողանում խոսել և ընկալման սահմանափակ կարողություն ուներ: Ուստիև անկարող էր համաձայնել կամ առարկել իր բուժմանը: Նա հաճախակի բորբոքվում էր և կարող էր ինքն իրեն վնաս հասցնել: Ավելի քան երեսուն տարի նրա խնամքն իրականացվել է ազգային առողջապահական ծառայության հիվանդանոցում՝ Բուռնեվուդում: 1977 թ. նրա բուժման համար պատասխանատու բժշկական պաշտոնյան եղել է հոգեբույժ-խորհրդատու դոկտոր Մ.-ն: 1994 թ. նա ազատ է արձակվել, որպեսզի շարունակի ապրել խնամողների հետ, որոնք նրա խնամքի դիմաց ստացել են վարձատրություն, թեպետ նրա խնամքի և բուժման պատասխանատուն շարունակել է մնալ հիվանդանոցը: Հ.Լ.-ն շաբաթը մեկ անգամ այցելել է գործող ցերեկային խնամքի կենտրոն, որը կազմակերպվել է տեղական իշխանությունների կողմից: 1997 թ. հուլիսի 22-ին ցերեկային խնամքի կենտրոնում գտնվելու ժամանակ նա խիստ գրգռվել է՝ իր գլուխը հարվածելով պատին և բռունցքներով գլխին խփելով: Նրա խնամողներին գտնել հնարավոր չի եղել, ուստիև կենտրոնը զանգահարել է տեղացի բժշկին, որը Հ.Լ.-ին հանգստացնող դեղամիջոց է ներարկել: Այնուհետև նրան տեղափոխել են հիվանդանոցի պատահարների և արտակարգ դեպքերի բաժանմունք, որտեղ հոգեբույժ-խորհրդատուի պաշտոնակատարը եզրակացրել է, որ Հ.Լ.-ի վիճակը պահանջում է հիվանդանոցային բուժում: Հ. Լ.-ն երկու աշխատակիցների ֆիզիկական օգնությամբ տեղափոխվել է հիվանդանոցի ինտենսիվ հոգեկան խնամքի բաժին: Հ.Լ.-ն բաժանմունքից դուրս գալու որևէ փորձ չի արել: Դոկտոր Մ.-ն որոշել է չպահանջել, որ Հ.Լ.-ի ազատությունը պարտադիր կարգով սահմանափակվի 1983 թ. «Հոգեկան առողջության մասին» օրենքի հիման վրա, քանի որ Հ. Լ.-ն չի դիմադրել իրեն հիվանդանոց ընդունելուն: Ուստի, նա ընդունվել էր որպես «ոչ պաշտոնական» հիվանդ: Դոկտոր Մ.-ն որոշել է չխրախուսել Հ.Լ.-ի խնամողների այցերը՝ նպատակ ունենալով կանխել նաև վերջիններիս ցնցումը: 1997 թ. օգոստոսին դոկտոր Մ.-ն հաշվետվություն է ներկայացրել տեղական առողջապահության մարմնին, համաձայն որի հիվանդանոցը հանգել է այն կարծիքին, որ Հ.Լ.-ն հոգեվիճակի խանգարում և աուտիզմ ունի, և նրան անհապաղ ազատ արձակելը կհակասի բժշկական կարծիքին: Մեկ այլ հոգեբույժ-խորհրդատու, որը զննել է Հ.Լ.-ին նրա խնամողների անունից, հանգել է նման եզրակացությունների, սակայն խորհուրդ է տվել, որ ավելի սերտ համագործակցություն հաստատվի Հ.Լ.-ի բժիշկների և խնամողների միջև: 1997 թ. սեպտեմբերին դիմողն իր զարմիկի միջոցով պահանջել է, որ հուլիսին նրան հիվանդանոցում տեղավորելու հիվանդանոցի որոշումը ենթարկվի դատական վերանայման: Բարձր դատարանը մերժել է դիմումը՝ որոշելով, որ Հ.Լ.-ն հիվանդանոց է ընդունվել ոչ

պաշտոնապես, և նախադեպային իրավունքի անհրաժեշտության սկզբունքը բավարարված է: Բողոքարկման ժամանակ վերաքննիչ դատարանը որոշել է՝ քանի որ դիմողն անկարող է եղել տալու իր համաձայնությունը իրեն հիվանդանոց ընդունելու ժամանակ, նա պահվել է անօրինականորեն: Նույն օրը բժիշկը կարգադրել է, որ Հ.Լ.-ն պաշտոնապես վերցվի կալանքի տակ՝ համաձայն 1983 թ. «Հոգեկան առողջության մասին» օրենքի: Երկու օր անց այդ որոշումը հաստատվել է երկու այլ բժիշկների կողմից՝ օրենքով նախատեսված ընթացակարգի համաձայն: 1997 թ. նոյեմբերի սկզբին նրան հիվանդանոց ընդունելուց հետո Հ.Լ.-ի խնամողներին առաջին անգամ թույլ են տվել այցելել նրան: 1997 թ. դեկտեմբերին հիվանդանոցը պաշտոնապես դուրս է գրել Հ.Լ.-ին և հանձնել նրան իր խնամողներին: Այնուհետև Լորդերի պալատը բավարարել է առողջապահական մարմնի բողոքն ընդդեմ վերաքննիչ դատարանի վճռի:

Դատարանում դիմողը վիճարկել է, որ 1997 թ. հուլիսից մինչև օգոստոս իրեն հիվանդանոցում որպես «ոչ պաշտոնական» հիվանդ կալանքի տակ պահելը հակասել է 5(1) հոդվածին, քանի որ ինքը մթագնած բանականության վիճակում չի եղել, նախադեպային իրավունքի անհրաժեշտության սկզբունքին պակասել է ստույգությունը, և գոյություն են ունեցել կամայական հիմքերով անձին կալանքի տակ պահելու կանխմանն ուղղված ոչ համապատասխան երաշխիքներ: Կառավարությունը պատասխանել է, որ ոչ պաշտոնական անկարողունակ հիվանդների տեղավորումը հարգել է նրանց արժանապատվությունը, և իշխանությունները ցանկացել են որքան հնարավոր է խուսափել օրենքով նախատեսված պաշտոնական պարտադիր հանձնման ընթացակարգերի կիրառումից: Դատարանը որոշել է, որ Հ.Լ.-ն զրկված է եղել իր ազատությունից 5(1) հոդվածի նպատակների համար, քանի որ.

91. … 1997 թ. հուլիսի 22-ից մինչ 1997 թ. հոկտեմբերի 29-ը հարկադրաբար պահվելու ընթացքում դիմողի բուժումը և հսկողությունն իրականացնող բուժաշխատողները նրա խնամքի և տեղաշարժման նկատմամբ իրականացրել են լիարժեք և արդյունավետ վերահսկողություն:

Կիրառելով *«Վինտերվերպն ընդդեմ Նիդեռլանդների» (Winterwerp v Netherlands)* գործի շրջանակներում լավ հիմնավորված թեստը, դատարանը որոշել է, որ նա առողջ բանականություն չի ունեցել, ինչպես և փաստերով ցույց է տրվել Հ.Լ.-ի գործում:

101. … տառապել է այնպիսի կամ այն աստիճանի հոգեկան խանգարումից, որը ենթադրում է պարտադիր մեկուսացում, որը շարունակվել է նրա կալանքի ընթացքում՝ 1997 թ. հուլիսի 22-ից մինչև դեկտեմբերի 5-ը:

Անդրադառնալով դիմողի փաստարկին՝ դատարանը չի եզրահանգել, որ նախադեպային իրավունքի անհրաժեշտության սկզբունքը խիստ անորոշ է 5(1) հոդվածի ողջամիտ կանխատեսելիության պահանջը բավարարելու համար, քանի որ դատավորները գտել են, որ նախադեպային իրավունքը տվել է անբավարար երաշխիքներ՝ ուղղված կամայական հիմքերով ոչ պաշտոնական հիվանդներին կալանքի տակ պահելու դեմ:

120. Վերջինի առնչությամբ դատարանն ապշեցուցիչ է համարում, որ գոյություն չունեն ամրագրված ընթացակարգային կանոններ, որոնցով կիրականացվեին չդիմադրող անկարողունակ անձանց հիվանդանոց ընդունումը և կալանավորումը: Դատարանի կարծիքով՝ հոգեկան հիվանդներին կալանքի հանձնելու առումով զգալի տարբերություն կա 1983 թ. [«Հոգեկան առողջության մասին»] օրենքով նախատեսված ընդարձակ երաշխիքների և դրանց կատարման կանոնակարգերի միջև:

Մասնավորապես, դատարանը պարզորոշ նկատում է, որ գոյություն չունեն պաշտոնապես հաստատված ընթացակարգեր, որոնք ցույց կտային, թե ում կողմից, ինչ պատճառներով և ինչ բժշկական եզրակացությունների և այլ գնահատումների հիման վրա կարող է ներկայացվել հիվանդանոց ընդունելու հայտը: Չկա ընդունման հստակ նպատակը (օրինակ՝ գնահատման կամ բուժման նպատակը) ամրագրելու պահանջ, և, հավասարապես, այդ ընդունման նկատմամբ չեն գործում ժամանակի, բուժման կամ խնամքի սահմանափակումներ: Ոչ էլ գոյություն ունի առանձնահատուկ դրույթ, որը կպահանջեր շարունակական կլինիկական գնահատում իրականացնել՝ որոշելու համար՝ խանգարումը շարունակվո՞ւմ է: Հիվանդի անունից որոշակի առարկություններ կամ դիմումներ ներկայացնելու նպատակով նրան ներկայացուցիչ նշանակելը 1983 թ. օրենքի հիման վրա իրենց կամքից անկախ կալանավորված բոլոր անձանց տրամադրվող ընթացակարգային պաշտպանություն է և հավասարապես կարևոր է այն հիվանդների համար, որոնք

օրենքով անկարողունակ են կամ, ինչպես սույն դեպքում, խիստ սահմանափակ հաղորդակցության կարողություններ ունեն:

121. Դատարանը նկատում է, որ ընթացակարգային կարգավորման և շրջանակների բացակայության հետևանքով հիվանդանոցի բուժանձնակազմը ստանձնել է խոցելի անկարողունակ անձնավորության ազատության և բուժման լիակատար հսկողությունը միայն սեփական կլինիկական գնահատումների հիման վրա, որոնք կատարվել են, երբ և ինչպես նպատակահարմար են համարվել… Թեև դատարանը հարցականի տակ չի դնում այս մասնագետների բարեխղճությունը կամ այն, որ նրանք գործել են, իրենց կարծիքով, ելնելով դիմողի լավագույն շահերից, ընթացակարգային երաշխիքների բուն նպատակն այն է, որ դրանք պաշտպանեն անձանց «սխալ վճիռներից և մասնագիտական սայթաքումներից (լորդ Սթեյն [Լորդերի պալատի վճռում]):

. . .

123. Կառավարության բացատրությունը, որ 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով կալանքը չէր կարող կամայական լինել, քանի որ դրա օրինականությունն ավելի ուշ վերանայելու հնարավորություն կար, անտեսում է այս հստակ և ընդհանուր պաշտպանությունը, որն առաջարկվում է կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերով: Սրանցից առաջինը խստորեն կարգավորում է այն հանգամանքները, որոնց դեպքում անձը կարող է զրկվել իր ազատությունից, իսկ վերջինը պահանջում է այնուհետև վերանայել դրա օրինականությունը:

124. Ուստի դատարանը կարծում է, որ ընթացակարգային երաշխիքների նման բացակայությունը չի պաշտպանում անձանց անհրաժեշտության հիմքերով կամայական ազատազրկումներից և, հետևաբար, չի համապատասխանում կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի բուն նպատակին: Այս հիմքով դատարանը կարծում է, որ խախտվել կոնվենցիայի 5(1) հոդվածը:

Խոցելի անձանց իրավունքներն ազգային մակարդակով ամրապնդվել են «Մտավոր կարողության մասին» 2005 թ. օրենքով: Բացի այդ, 2006 թ. հունիսին առողջապահության դեպարտամենտը հրապարակել է առաջարկներ, որոնք վերաբերում են Հ.Լ.-ի հանգամանքներին նման հանգամանքներում հայտնված անձանց պաշտպանության նպատակով հետագա օրենսդրական միջոցառումների համալրմանը (Բուռնեվուդի ճեպազրույցների թերթիկ):

……

«Վիտոլդ Լիտվան ընդդեմ Լեհաստանի»
(Witold Litwa v Poland) (2000 թ. ապրիլի 4-ի վճիռ)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Ընկերոջ ուղեկցությամբ և իր առաջնորդող շան հետ դիմողը, որը խիստ թույլ տեսողություն ուներ, գնացել է փոստատուն՝ իր փոստարկղը ստուգելու նպատակով: Պարզելով, որ այն բաց է և դատարկ, նա բողոքել է փոստատան աշխատակիցներին, որոնք այնուհետև կանչել են ոստիկանություն՝ պնդելով, որ դիմողը հարբած է և դրսևորել է անվայելուչ վարքագիծ: Քանի որ դիմողի վրայից ալկոհոլի հոտ է եկել, ոստիկանությունը տարել է նրան սթափարան՝ Կրակովի «Սոբերինգ ափ» [Sobering-up] կենտրոն: Բժշկական զննության արդյունքում որոշվել է, որ դիմողը «չափավոր հարբած» է: Նա վեց և կես ժամ պահվել է կենտրոնում: Քսանմեկ կողմ և հինգ դեմ ձայների հարաբերակցությամբ հանձնաժողովը եզրակացրել է, որ նրա կալանավորումը եղել է արդարացված 5(1)(ե) հոդվածի հիմքերով, և որ որպես ալկոհոլամոլի՝ դիմողին կալանքի տակ պահելը օրինական է եղել:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

57. Դատարանը հաստատում է, որ կոնվենցիայի «ալկոհոլամոլ» հասկացության իմաստի ստուգաբանման նպատակով առաջնորդվելու է 1969 թ. մայիսի 23-ի Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 31-33-րդ հոդվածներով, ինչպես բազմիցս արվել է այլ դեպքերում, երբ պահանջվել է կոնվենցիայի մեկնաբանությունը (տե՛ս, օրինակ՝ *«Ջոնսթընն ընդդեմ Իռլանդիայի» (Johnston v Ireland)* 1986 թ. դեկտեմբերի 18-ի վճիռը, շարք A, թիվ 112, էջ 24, պարբ. 51 և հաջորդիվ և *«Լիթգոուն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Lithgow v UK)* 1986 թ. հուլիսի 8-ի վճիռը, շարք A, թիվ 102, էջ 48, պարբ. 114 վերջը և էջ 49, պարբ. 117):

58. Այս կապակցությամբ դատարանը կրկին նշում է, որ այն ձևով, ինչպես ներկայացված է Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի մեկնաբանության ընդհանուր կանոնում, կոնվենցիայի հասկացությունների բուն իմաստի բացահայտումը և հաստատումը մեկ ամբողջական միասնական գործողություն են: Այս ընդհանուր կանոնը նույն հարթության վրա է դնում այդ հոդվածի չորս կետերում թվարկված տարբեր տարրերը (տե՛ս *«Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Golder v UK),* 1975 թ. փետրվարի 21-ի վճիռ, շարք A, թիվ 18, էջ 14, պարբ. 29-30):

59. Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածում այդ տարրերի թվարկման հաջորդականությունը պայմանավորում է, այնուամենայնիվ, այն կարգը, որով պետք է ընթանա կոնվենցիայի մեկնաբանությունը: Այդ գործողությունը պետք է սկսվի կոնվենցիայի հասկացությունների հաստատումից դրանց համատեքստում և 31-րդ հոդվածի 1-ին պարբերությունում շարադրված դրա առարկայի և նպատակի դիրքերից: Սա հատկապես ճիշտ է այն դրույթների համար, որոնք, ինչպես կոնվենցիայի 5(1) հոդվածը, վերաբերում են ընդհանուր կանոններից արվող բացառություններին և որոնց, այդ իսկ պատճառով, չի կարող վերագրվել լայն մեկնաբանություն (տե՛ս *«Դե Վիլդեն, Օոմսը և Վերսիփն ընդդեմ Բելգիայի» (De Wilde, Ooms and Versyp v Belgium)*, 1971 թ. հունիսի 18-ի վճիռ, շարք A, թիվ 12, էջ 37, պարբ. 68 և *«Վինտերվերպն ընդդեմ Նիդեռլանդների» (Winterwerp v Netherlands)* 1979 թ. հոկտեմբերի 24-ի վճիռը, շարք A, թիվ 33, էջ 16, պարբ. 37):

60. Դատարանը նկատում է, որ «ալկոհոլամոլ» բառն իր սովորական գործածությամբ նշանակում է ալկոհոլ չարաշահող անձ: Մյուս կողմից՝ կոնվենցիայի 5(1) հոդվածում այս հասկացությունը հանդիպում է այնպիսի համատեքստում, որն ընդգրկում է այլ կատեգորիայի անձանց. այն է՝ անձինք, որոնք տարածում են վարակիչ հիվանդություններ, անձինք, որոնք հոգեկան խանգարում ունեն, թմրամոլներ և թափառաշրջիկներ: Այս բոլոր անձանց միջև կապ կա, որն է՝ նրանք կարող են զրկվել իրենց ազատությունից կա՛մ բուժում ստանալու նպատակով, կա՛մ սոցիալական քաղաքականության նկատառումներից ելնելով, կա՛մ էլ միաժամանակ բժշկական և սոցիալական նկատառումներով: Ուստի այս համատեքստից ճիշտ է եզրակացնել, որ այն հիմնական պատճառը, թե ինչու է կոնվենցիան թույլ տալիս 5-րդ հոդվածի 1(ե) կետում նշված անձանց զրկել ազատությունից ոչ միայն այն է, որ նրանք սպառնում են հասարակական անվտանգությանը, այլև նրանց շահերը կարող են պահանջել, որ վերցվեն կալանքի տակ (տե՛ս *«Գուցարդին ընդդեմ Իտալիայի» (Guzzardi v Italy)*, 1980 թ. նոյեմբերի 6-ի վճիռ, շարք A, թիվ 39, էջ 37, պարբ. 98 վերջը):

61. Այս ratio legis-ը ցույց է տալիս, թե կոնվենցիայի 5(1)(ե) հոդվածի առարկայի և նպատակի դիրքերից ինչպես պետք է հասկանալ «ալկոհոլամոլ» արտահայտությունը: Այն ցույց է տալիս, որ այս հոդվածի առարկան և նպատակը չեն կարող մեկնաբանվել որպես կալանքը թույլատրող միայն կլինիկական «ալկոհոլամոլության» նեղ իմաստով «ալկոհոլամոլ» համարվող անձանց: Դատարանը կարծում է, որ կոնվենցիայի 5(1)(ե) հոդվածով այն անձինք, որոնք չեն ախտորոշվել որպես «ալկոհոլամոլ», սակայն նրանց վարքագիծը վտանգ է ներկայացնում հանրության և հենց իրենց համար, կարող են վերցվել կալանքի տակ՝ ելնելով հանրության պաշտպանության կամ նրանց իսկ շահերի պաշտպանության նկատառումներից (ինչպես օրինակ՝ նրանց առողջությունը կամ անձնական անվտանգությունը):

62. Սա չի նշանակում, որ կարելի է մեկնաբանել, որ կոնվենցիայի 5(1)(ե) հոդվածը թույլատրում է անձին կալանքի տակ վերցնել միայն այն պատճառով, որ նա ալկոհոլ է ընդունել: Այնուամենայնիվ, դատարանը կարծում է, որ 5-րդ հոդվածի տեքստում ոչինչ չի նշվում, որ պետությունը չի կարող կիրառել այս դրույթն ալկոհոլը չարաշահող անձի նկատմամբ, որպեսզի սահմանափակի ալկոհոլի պատճառով նրա և հասարակության համար առաջացած վնասը կամ կանխի խմելուց հետո նրա կողմից վտանգավոր վարքագծի դրսևորումը: Այս կապակցությամբ դատարանը նկատում է, որ որևէ կասկած չի կարող լինել, որ ալկոհոլի վնասակար գործածությունը վտանգավոր է հասարակության համար, և անձը՝ հարբած վիճակում, կարող է վտանգավոր լինել թե՛ իր, թե՛ մյուսների համար՝ անկախ այն հանգամանքից՝ նա ալկոհոլից մշտապես կախում ունեցող ա՞նձ է, թե՞ ոչ:

63. Դատարանն այնուհետև նշում է, որ «ալկոհոլամոլ» հասկացության այս իմաստը հաստատվում է կոնվենցիայի մշակման գործընթացներով... Այդ առումով դատարանը նկատում է, որ կոնվենցիայի նախնական նախագծի մեկնաբանությունում արձանագրված է, որ համապատասխան հոդվածի տեքստը վերաբերում է պայմանագիրը ստորագրած կողմերի իրավունքին, այն է՝ միջոցներ ձեռնարկել թափառաշրջիկության և «հարբեցողության» դեմ պայքարելու համար (l'alcoolisme՝ ֆրանսերեն): Այնուհետև արձանագրված է, որ փորձագետների կոմիտեն կասկած չունի, որ դա կարող է համաձայնեցվել, «քանի որ նման սահմանափակումներն արդարացված են եղել հասարակական բարոյականության և կարգի պահանջներով»:

64. Սրա հիման վրա դատարանը եզրակացնում է, որ դիմողի կալանավորումը համահունչ է եղել կոնվենցիայի 5(1)(ե) հոդվածին...

72. Դատարանը կրկնում է, որ կոնվենցիայի 5-րդ հոդվածի շրջանակներում ազատազրկման ցանկացած դեպք պետք է լինի «օրինական», ինչը ներառում է «օրենքով սահմանված կարգի համաձայն» կատարման պահանջ: Այս կետի

կապակցությամբ կոնվենցիան սկզբունքորեն վկայակոչում է ներպետական օրենսդրությունը և սահմանում դրա նյութական և ընթացակարգային դրույթները պահպանելու պարտավորություն:

73. Դատարանը նաև պահանջում է, որ անձին ազատազրկելու յուրաքանչյուր միջոցառում համահունչ լինի 5-րդ հոդվածի նպատակին. այն է՝ պաշտպանել անձանց կամայականությունից (տե՛ս *«Ք-Ֆ-ի ընդդեմ Գերմանիայի» (K-F v Germany)* 1997 թ. նոյեմբերի 27-ի վճիռը, Զեկույցներ, 1997-VII, էջ 2674, պարբ. 63):

74. Սույն գործում դատարանը նկատում է, որ անվիճելի է, որ դիմողին ձերբակալելու և սթափարան տեղափոխելու ժամանակ ոստիկանությունը հետևել է 1982 թ. հոկտեմբերի 26-ի օրենքի 40-րդ բաժնին: Հետևաբար, դատարանը կարծում է, որ դիմողի կալանավորումը Լեհաստանի օրենքի շրջանակներում օրինական հիմք է ունեցել:

75. Դատարանն այնուհետև նկատում է, որ 1982 թ. հոկտեմբերի 26-ի օրենքի 40-րդ բաժնի դրույթների կիրառման համար օրենքով սահմանված էական պայմանները նախևառաջ վերաբերում են այն փաստին, որ անձը, որի մասին է խոսքը, հարբած է, և երկրորդ՝ նրա վարքագիծն անվայելուչ է, կամ նրա վիճակն այնպիսին է, որ վտանգում է սեփական կամ այլոց կյանքը կամ առողջությունը...

76. Դատարանի խնդիրը չէ վերանայել, թե արդյոք Լեհաստանի օրենքի շրջանակներում ազգային մարմինները ճի՞շտ որոշումներ են ընդունել: Նրա խնդիրն է որոշել, թե արդյոք դիմողի կալանքը կոնվենցիայի ուրույն իմաստով «ալկոհոլամոլի» «օրինական կալա՞նք» է եղել, ինչպես դատարանը բացատրել է վերը՝ 57-63-րդ պարբերություններում:

77. Այս իմաստով դատարանը լուրջ կասկածներ ունի՝ արդյոք կարելի՞ է ասել, որ դիմողը, լինելով ոգելից խմիչքի ազդեցության տակ, իրեն պահել է այնպես, որ վտանգ է ներկայացրել իր կամ հասարակության համար, կամ նրա առողջությունը, բարեկեցությունը կամ անձնական անվտանգությունը վտանգի տակ են հայտնվել: Դատարանի կասկածներն ամրապնդվում են կալանքի սովորական փաստական հիմքով և այն փաստով, որ դիմողը գրեթե կույր է:

78. Դատարանը կրկնում է, որ 5(1)(ե) հոդվածի իմաստով կալանքի վերցնելու «օրինականության» անհրաժեշտ տարրը կամայականության բացակայությունն է: Անձին կալանավորելն այնպիսի լուրջ միջոցառում է, որ արդարացված է միայն այն դեպքում, երբ անձի կամ հանրային շահի պաշտպանության համար ավազ խիստ միջոցառումներն անբավարար են եղել, ինչի հետևանքով կարող է պահանջվել, որ տվյալ անձը կալանքի տակ վերցվի: Դա նշանակում է, որ միայն այն հանգամանքը, որ ազատազրկումը տեղի է ունենում ներպետական օրենսդրության հիման վրա, դեռևս բավարար չէ: Պետք է, որ այն նաև անհրաժեշտ լինի տվյալ հանգամանքներում:

79. Այնուամենայնիվ, դիմողի պարագայում տպավորություն չի ստեղծվում, որ որևէ կերպ հաշվի է առնվել այն փաստը, որ 1982 թ. հոկտեմբերի 26-ի օրենքի 40-րդ բաժնում ամրագրված են մի քանի տարբեր միջոցառումներ, որոնք կարող են կիրառվել հարբած անձի նկատմամբ, և որոնց շարքում անձի կալանավորումը սթափարանում ամենածայրահեղ միջոցն է: Իսկապես, այդ բաժնի դրույթների համաձայն՝ պարտադիր չէ ազատազրկման ենթարկել հարբած անձին, քանի որ նա կարող է ոստիկանության կողմից տարվել հանրային խնամքի հաստատություն կամ իր տուն...

80. Թեպետ այս նկատառումները հստակ արտացոլված են օրենքում, սույն գործում դրանք բացակայում են, ինչը վերջնականապես համոզում է դատարանին, որ դիմողի կալանավորումը չի կարող 5(1)(ե) հոդվածով «օրինական» համարվել: Ուստի առկա է այդ դրույթի խախտում...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

Վեց կողմ և մեկ դեմ ձայների հարաբերակցությամբ վճռում է, որ խախտվել է կոնվենցիայի 5(1)(ե) հոդվածը:

. . .

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին պալատի նախագահ Ֆիշբախը և դատավորներ Կոնֆորտին, Բոնելլոն, Ստրաժնիչկան, Ցացա-Նիվոլովսկան, Բական և Լևիցը: Դատավոր Բական ունեցել է չհամընկնող կարծիք, որով նա համաձայնել է «ալկոհոլամոլ» արտահայտության դատարանի մեկնաբանությանը, սակայն համարել է, որ գոյություն են ունեցել դիմողին կալանքի տակ վերցնելու համապատասխան հիմքեր (նա պատճառում էր հանրային անհանգստություն և, համաձայն բժշկի ախտորոշման, չափավոր հարբած էր):

2 *Լիտվայի (Litwa)* գործի «ալկոհոլամոլ» հասկացությունն այնուհետև կիրառվել է *«Հիլդա Հաֆշտայնսդոտիրն ընդդեմ Իսլանդիայի» (Hilda Hafsteinsdottir v Iceland)* գործում, 2004 թ. հունիսի 8-ի վճիռ: Դիմողը 40-ն անց կին էր, որը սովորություն էր դարձրել հարբած վիճակում գնալ ոստիկանության բաժին և հայհոյել ու խփել ոստիկանության աշխատողներին: Ամեն անգամ նրան ձերբակալում էին, պահում գիշերը, որից հետո, առանց մեղադրանք հարուցելու, ազատ արձակում: Նա վիճարկել է, որ տուժել է 5(1) հոդվածի խախտման հետևանքով, քանի որ իր ազատազրկումը հիմնավորված չի եղել օրենքի դրույթներով: Դատարանը եզրակացրել է.

42. … դատարանը հաստատել է, որ դիմողի վարքագիծը պայմանավորված է եղել ալկոհոլի ուժեղ ազդեցությամբ, և ողջամտորեն կարող են համարվել որպես հասարակական կարգի համար վտանգավոր: Դատարանն այնուհետև բավարարված է, որ միջոցառումների նպատակը եղել է կանխել այդ սպառնալիքը: Այլ կերպ ասած՝ հարցը համահունչ է (ե) ենթակետում նշված «ալկոհոլամոլ» հասկացությանը, ուստի, դառնում է կիրառելի:

Այն հարցի վերաբերյալ, թե արդյոք նրա կալանքը եղե՞լ է «օրինական», դատարանը հայտարարել է, որ.

51. … այն դեպքում, երբ խոսքն ազատազրկման մասին է, հատկապես կարևոր է, որ իրավական որոշակիության սկզբունքը բավարարված լինի: Հետևաբար, կարևոր է, որ ներպետական օրենսդրության շրջանակներում ազատազրկման պայմանները հստակորեն սահմանված լինեն, և օրենքն ինքնին գործնականում կանխատեսելի լինի՝ այդպիսով ապահովելով կոնվենցիայով սահմանված «օրինականության» չափորոշիչը: Սա չափորոշիչ է, որը պահանջում է, որ ողջ օրենքը լինի բավականաչափ մատչելի և ճշգրիտ՝ անձին հնարավորություն տալով անհրաժեշտության դեպքում համապատասխան խորհրդի շնորհիվ տվյալ հանգամանքներում ողջամտության սահմաններում կանխատեսելու այդ գործողության առաջացրած հետևանքները. . .

Դատարանի մեծամասնությունը՝ հինգ կողմ և երկու դեմ ձայներով, որոշել է, որ.

56. …վեց վիճարկվող միջադեպերում կարևոր հանգամանք է այն, որ կալանավորման համապատասխան ձևի տևողությունը, շրջանակը և ոստիկանության գործողությունների ազատությունները կարգավորվել են միայն վարչական փորձով, որը ստույգ օրենսդրական դրույթների կամ նախադեպային իրավունքի բացակայության պայմաններում անհրաժեշտ կանոնակարգիչ դաշտ չի ունեցել (տե՛ս *«Կրուսլինն ընդդեմ Ֆրանսիայի» (Kruslin v France)* և *«Հուվին ընդդեմ Ֆրանսիայի» (Huvig v France)* 1990 թ. ապրիլի 24-ի վճիռները, շարք A, թիվ 176-A և –B, համապատասխանաբար պարբ. 35 և 34): Բացի այդ, թվում է, որ 1988 թ. հունվարին տեղի ունեցած առաջին միջադեպի ժամանակ, նախքան 1988 թ. կանոնների ուժի մեջ մտնելը 1988 թ. հուլիսի 1-ին, ոչ միայն կալանքի տևողությունը, այլև կալանավորելու որոշումը տուժել են այս թերության պատճառով:

Բացի այդ, դատարանը համոզված չէ, որ վերը նշված հրահանգների ավելի մանրամասն դրույթները մատչելի են եղել հանրության համար:

Այդ իսկ պատճառով դատարանը բավարարված չէ, որ օրենքը, ինչպես որ այն կիրառելի է եղել այդ ժամանակաշրջանում, բավականաչափ ճշգրիտ և մատչելի է եղել կամայականության ամբողջ ռիսկից խուսափելու համար: Հետևաբար, դատարանը կարծում է, որ կոնվենցիայի 5(1) հոդվածի ինքնուրույն իմաստով դիմողի ազատազրկումը «օրինական» չի եղել, հետևաբար, այդ հոդվածը խախտվել է:

Լիտվայի (Litwa) և *Հաֆշտայնսդոտիրի (Hafsteinsdottir)* վճիռները ցույց են տալիս, որ դատարանն ընդունում է «ալկոհոլամոլ» հասկացության նպատակային մեկնաբանությունը, սակայն դա հակակշռվում է անձանց «օրինական» կալանավորելու հարցի խստիվ քննությամբ: Այսինքն՝ այն եղե՞լ է համարժեք պատասխան այն վտանգին, որ այդ անձինք ներկայացրել են իրենք իրենց կամ ուրիշներին, և ներպետական օրենսդրությունը բավականաչափ հստակ կամ մատչելի՞ է եղել: Սա լավ հավասարակշռված վերլուծական շրջանակ է, որը ձգտում է պաշտպանել ինչպես հասարակության, այնպես էլ հարբած անձանց շահերը:

3 Թափառաշրջիկների 5(1)(ե) հոդվածի շրջանակներում կալանավորման վերաբերյալ տե՛ս թափառաշրջիկության վերաբերյալ գործերը ստորև՝ 324-րդ էջում:

Հոդված 5(1)(զ): Արտաքսում կամ հանձնում

.....

«Բոզանո ընդդեմ Ֆրանսիայի» Bozano v France A.111 (1986) 9 EHRR 297
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողն Իտալիայի քաղաքացի էր, որն Իտալիայի դատարանի կողմից առևանգման և սպանության մեղադրանքով in absentia [իր բացակայությամբ] մեղավոր է ճանաչվել և դատապարտվել ցմահ բանտարկության: Երեք տարի անց Ֆրանսիայում ոստիկանությունը նրան ձերբակալել է: Նրան հանձնելու պաշտոնական պահանջը Լիմոժի վերաքննիչ դատարանը մերժել է, քանի որ in absentia դատապարտումն անհամատեղելի է համարվել Ֆրանսիայի պետական քաղաքականության հետ:

Դիմողը շարունակել է բնակվել Լիմոժի տարածքում՝ սպասելով կատարած այլ հանցագործությունների համար Ֆրանսիայի դատարաններում կայանալիք դատին: Այն օրը, երբ կարգադրություն է արվել նրա նկատմամբ դատավարություն սկսելու վերաբերյալ, ֆրանսիացի ոստիկաններն առևանգել են դիմողին, ցույց տվել մեկ ամսվա վաղեմության արտաքսման կարգադրությունը և ուժով տեղափոխել նրան Շվեյցարիայի սահման, որտեղ և նա հանձնվել է Շվեյցարիայի մարմիններին: Շվեյցարիայում տեղի ունեցած դատից հետո նա հանձնվել է Իտալիային՝ երկու երկրների միջև գործող համաձայնագրի հիման վրա: Այստեղ նրան ուղարկել են բանտ՝ հիմք ընդունելով Իտալիայի դատարանների կայացրած վճիռը: Առևանգումից հետո դիմողի փաստաբանները Ֆրանսիայի դատարաններում փորձել են կիրառել իրավունքի պաշտպանության տարբեր միջոցներ: Ներառյալ՝ նրանք պահանջել են, որ ներքին գործերի նախարարը ներկայանա Փարիզի վերին ատյանի դատարան, որտեղ նրանք ձգտել են ստանալ դատարանի արգելքը, որի հիման վրա նա պետք է հետ պահանջեր դիմողին: Թեպետ տրիբունալը որոշել է, որ իրավասու չէ բավարարելու այս միջնորդությունը, նկատել է, որ «Շվեյցարիայի ոստիկանությանը հանձնելու նախապես ծրագրված գործողությունը, որը նման էր արտաքսման կարգադրության վրա հիմնված անուղղակի վտարման....», ուղեկցվել է «ակնհայտ և անչափ լուրջ խախտումներով»: Լիմոժի վարչական դատարանն այնուհետև չեղյալ է հայտարարել արտաքսման կարգադրությունն այն հիմքով, որ ներքին գործերի նախարարը թույլ է տվել «եզրահանգման ակնհայտ սխալ», իսկ վարչական մարմինները՝ «լիազորությունների չարաշահում»:

Տասնմեկ կողմ և երկու դեմ ձայների հարաբերակցությամբ հանձնաժողովը որոշել է, որ խախտվել է 5(1) հոդվածը:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

58. Երբ կոնվենցիան, ինչպես և 5-րդ հոդվածում, ուղղակիորեն վկայակոչում է ազգային օրենսդրությունը, ապա այդ օրենսդրության համապատասխանության ապահովումը դառնում է պայմանավորվող պետությունների «պարտավորությունների» անբաժանելի մասը, և անհրաժեշտության դեպքում դատարանն իրավասություն ունի համոզվելու, որ այդ համապատասխանությունն ապահովվել է (19-րդ հոդված): Այնուամենայնիվ, այս առումով նրա գործողությունների շրջանակը ենթակա է պաշտպանության եվրոպական համակարգի տրամաբանությամբ ենթադրվող սահմանափակումների, քանի որ ներպետական օրենսդրության մեկնաբանությունը և կիրառությունը նախևառաջ ազգային մարմինների և հատկապես դատարանների խնդիրն է (տե՛ս, ի թիվս այլոց և *mutatis mutandis* 1976 թ. հոկտեմբերի 24-ի *Վինտերվերպի (Winterwerp)* վճիռը, շարք A, թիվ 33, էջ 20, պարբ. 46):

Սույն գործում վիճարկվել են Ֆրանսիայի օրենքի մի քանի կետեր: Թեպետ դատարանի առջև հանդես եկող անձանց փաստարկները և գործին կցված այլ տեղեկությունները, դատարանի կարծիքով, բացարձակ առումով համոզիչ չեն, դրանք բավարար նյութեր են պարունակում, որպեսզի դատարանի մոտ ձևավորվի լուրջ կասկած, որ վիճարկվող ազատազրկման դեպքը բավարարել է պատասխանող երկրի իրավական պահանջները:

59. «Օրինականությունը» ցանկացած դեպքում ենթադրում է կամայականության բացակայություն... Այս առումով դատարանը լուրջ նշանակություն է տալիս դիմողին ուժով Շվեյցարիայի սահման տեղափոխելու հանգամանքներին:

Առաջին՝ նախքան 1979 թ. սեպտեմբերի 17-ի արտաքսման կարգադրության կատարումը համապատասխան մարմինները սպասել են ավելի քան մեկ ամիս, թեպետ նրան [դիմողին] Լիմոժում գտնելը, որտեղ նա մինչև սեպտեմբերի

19-ը գտնվել է նախնական կալանքի, իսկ այնուհետև դատական վերահսկողության տակ, որևէ դժվարություն չի ներկայացրել... Իշխանություններն այսպիսով կանխել են տեսականորեն մատչելի իրավական պաշտպանության միջոցների արդյունավետ կիրառումը:

Շատ ավելի լուրջ է, որ իշխանություններն այնպիսի տպավորություն են թողնում, որ նրանք ցանկացել են ամեն բան անել, որպեսզի պրն Բոզանոն տեղյակ չլինի իր դեմ ձեռնարկվող գործողության մասին՝ նրան ավելի գործուն կերպով fait accompli [կատարված փաստի] առջև կանգնեցնելու համար …

Սրան պետք է ավելացնել այն, որ հոկտեմբերի 26-ի երեկոյան դիմողը ոստիկանության կողմից ձերբակալվել է հանկարծակի, և ներքին գործերի նախարարի որոշումը կատարվել է ավելի զարմանալի եղանակով: Համաձայն նրանց իսկ գործակալի ցուցմունքի՝ կառավարությունը կապի մեջ է եղել միայն Շվեյցարիայի հետ. պետություն, որը հանձնման համաձայնագիր ունի Իտալիայի հետ, և որտեղ դիմողին հանձնելու նպատակով ձերբակալության սանկցիան, ըստ Շվեյցարիայի ոստիկանական պարբերականի (Moniteur suisse de police) հրապարակման, գոյություն է ունեցել 1976 թ. ապրիլից. …Պրն Բոզանոն չի կարողացել խոսել նույնիսկ իր կնոջ կամ փաստաբանի հետ, և ոչ մի անգամ նրան չի ասվել, որ իրեն արտաքսելու են, եթե անհրաժեշտություն լինի, վերահսկողության ներքո, իր կողմից ընտրված սահմանով կամ նույնիսկ ամենամերձավոր սահմանով՝ Իսպանիայի սահմանով: Հակառակը՝ նա ձեռնաշղթաներով և ոստիկանների ուղեկցությամբ ստիպված է եղել Լիմոժից մեկնել դեպի Մոյսուլազի սահմանակետ (որը գտնվել է մոտ 12 ժամ կամ մի քանի հարյուր կիլոմետր հեռավորության վրա), որտեղ ոստիկանները, ըստ կարգի, հանձնել են նրան իրենց շվեյցարացի գործընկերներին... Սա այն է, ինչ ներկայացվում է պրն Բոզանոյի կողմից իրաղարձությունների հստակ և մանրամասն նկարագրության միջոցով: Հակառակ ապացույցների կամ բացատրությունների բացակայության պայմաններում նրա բացատրությունը թվում է ճշմարտանման...

60. Գործի հանգամանքները որպես մեկ ամբողջություն դիտարկելով և հաշվի առնելով նույն քնույթի նյութի ծավալը՝ դատարանն այնուհետև եզրակացնում է, որ դիմողի ազատազրկումը 1975 թ. հոկտեմբերի 26-ի գիշերից մինչև հոկտեմբերի 27-ը 5(1)(գ) հոդվածի իմաստով ո՛չ «օրինական», ո՛չ էլ համատեղելի է եղել «անձի անվտանգության իրավունքի» հետ: Այս ձևով պրն Բոզանոյին իր ազատությունից զրկելը հավասար է եղել հանձնման սքողված գործողության, ոչ թե «կալանքի», որն անհրաժեշտ է եղել «արտաքսման նպատակով ձեռնարկված ... գործողության» սովորական իրականացման համար և մտածված է եղել Լիմոժի վերաքննիչ դատարանի մեղադրական եզրակացությունների բաժանմունքի 1979 թ. մայիսի 15-ի բացասական որոշման շրջանցման նպատակով: Փարիզի վերին ատյանի դատարանի նախագահող դատավորի եզրակացությունները, եթե նույնիսկ դրանք եղել են obiter [ոչ որոշիչ, ոչ պարտադիր], և Լիմոժի վարչական դատարանի եզրակացությունները, եթե նույնիսկ այդ դատարանը միայն պետք է որոշեր 1979 թ. սեպտեմբերի 17-ի սանկցիայի օրինականության հարցը, դատարանի կարծիքով, լուրջ նշանակություն ունեն: Դրանք ցույց են տալիս Ֆրանսիայի դատարանների դրսևորած զգոնությունը...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

. . .

Վճռում է, որ խախտվել է կոնվենցիայի 5(1) հոդվածը:

. . .

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Ռիսդալը, դատավորներ Կրեմոնան, Պինեյրո Ֆարինան, Փեթիթին, սըր Վինսենթ Էվանսը, Ռուսոն և Ձերսինգը:

2 *Բոզանոյի* (Bozano) գործը վերաբերում էր նախքան արտաքսումն անձին կալանքի տակ պահելու գործողության օրինականությանը: Թեպետ նախքան արտաքսելը կալանքի տակ գտնվող անձին արտաքսելու կամ հանձնելու հիմքերը չեն կարող բողոքարկվել 5-րդ հոդվածի շրջանակներում, արտաքսման կամ հանձնման գործողության անողջամիտ երկար վերջնաժամկետը կարող է նշանակել, որ կալանքն արդարացված չէ 5(1)(գ) հոդվածով: *«Քուինն ընդդեմ Ֆրանսիայի» (Quinn v France, A.311 (1995) 21 EHRR 529)* գործի դիմողը կալանքի տակ է գտնվել մոտ երկու տարի, մինչ նրա հանձնման վարույթը գտնվել է ընթացքի մեջ: Դիմողը պնդել է, որ դրա պատճառն այն էր, որ իր դեմ հարուցված քրեական վարույթի ընթացքում Ֆրանսիայի դատարանները թույլ են տվել, որ նախքան դատավարության ավարտն ինքը գրավի դիմաց ազատ արձակվի: Վարույթի ավարտին նա մեղավոր է ճանաչվել և դատապարտվել ազատազրկման: Նրա հանձնումն իրականացվել է ազա-

տազրկման պատիժը կրելուց հետո: Դատարանը որոշել է, որ խախտվել է 5(1) հոդվածը: Վճռելով, որ կալանքն արդարացված չէ 5(1)(զ) հոդվածի շրջանակներում, դատարանը հայտարարել է.

47.…Ի տարբերություն հանձնաժողովի, դատարանը չի նկատում սույն գործում փաստեր, որոնք ցույց կտային, որ նախքան հանձնումը կալանքի տակ պահելը հետապնդել է այլ նպատակ, քան այն, որի համար տրվել է կարգադրությունը, և այն եղել է քողարկված նախնական կալանք: Պրն Քուինի ձերբակալության այս ուրույն հանգամանքները և այն փաստը, որ վարույթներն անցկացվել են զուգահեռաբար, չեն կարող ինքնին երաշխավորել այն եզրակացությունը, որ ներպետական օրենսդրության նպատակների տեսանկյունից տեղի է ունեցել հանձնման ընթացակարգի խախտում, և, հետևաբար, Ժնևի հետաքննող դատավորի կալանքի կարգադրությունը եղել է անօրինական:

48. Դատարանն այնուամենայնիվ նկատում է, որ հանձնելու նպատակով դիմողի կալանքը եղել է արտասովոր երկար: Հանձնման վարույթի առնչությամբ նա կալանքի տակ է գտնվել 1989 թ. օգոստոսի 4-ից մինչև 1991 թ. հուլիսի 10-ը՝ գրեթե երկու տարի… Դրանից հետո նա կրել է Փարիզի վերաքննիչ դատարանի նշանակած պատիժը մինչև 1992 թ. սեպտեմբերի 24-ը, երբ հանձնվել է Շվեյցարիայի իշխանություններին՝ համաձայն 1991 թ. հունվարի 24-ի կարգադրության:

5(1)(զ) հոդվածի թե՛ ֆրանսերեն, թե՛ անգլերեն ձևակերպումներից պարզ է, որ այս ենթակետով ազատազրկումն արդարացված է միայն այնքան ժամանակ, քանի դեռ տեղի է ունենում հանձնման վարույթ: Սրանից բխում է, որ եթե նման վարույթը հավուր պատշաճի տեղի չի ունենում, կալանքը դադարում է 5(1)(զ) հոդվածով արդարացված լինելուց: Դատարանը նկատում է, որ հանձնման վարույթի տարբեր փուլերում նիստերը բավական լրջորեն հետաձգվել են, ինչի հետևանքով այս վարույթի ընդհանուր տևողությունը եղել է չափազանց երկար: Այսպես, [գործի] հատկանիշների վերաբերյալ առաջին որոշումը, որը եղել է նախնական որոշում, կայացվել է 1989 թ. նոյեմբերի 2-ին՝ դիմողին հանձնման նպատակով կալանավորելուց հետո երեք ամիս անց, մինչդեռ հանձնման կարգադրությունը պատրաստվել է մեղադրական եզրակացությունների բաժնի դրական կարծիքից տասն ամիս անց՝ 1991 թ. հունվարի 24-ին … Իրավական պաշտպանության այն միջոցները, որոնցից օգտվել է պրն Քուինն այս ժամանակաընթացքում (իրեն ազատ արձակելու միջնորդությունների մերժման կապակցությամբ օրենքի կետերի վերաբերյալ բերված երեք բողոք և մեղադրական եզրակացությունների բաժնի կարծիքի դեմ ուղղված մեկ վերաքննիչ բողոք)… վարույթը զգալիորեն չեն երկարացրել:

Հանձնման նպատակով անձի կալանքը շարունակվել է մինչև 1991 թ. հուլիսի 10-ը՝ հանձնման կարգադրության ընդունումից հետո բավական երկար ժամանակ, քանի որ դիմողին Շվեյցարիայի իշխանություններին հանձնելու գործողությունը հետաձգվել է համաձայն «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի 19-րդ հոդվածի 1-ին կետի՝ հաշվի առնելով Ֆրանսիայում նրա դեմ միաժամանակյա ընթացող քրեական վարույթը: Դատարանի խնդիրը չէ որոշել, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկեին ազգային մարմիններն այս հանգամանքներում, որպեսզի հանձնման նպատակով անձի վրա դրված կալանքը, որը 1991 թ. հունվարի 24-ի դրությամբ արդեն գերազանցել էր ողջամտության սահմանը, չշարունակվեր նույնիսկ մի քանի ժամ ևս այն բանից հետո, երբ մեղադրական եզրակացությունների բաժինը հրաժարվել է «անմիջապես» ազատ արձակել նրան, որի վերաբերյալ նա չի ծանուցվել կամ որի իրականացման ուղղությամբ որևէ քայլ չի արվել:

1989 թ. օգոստոսի 4-ին պրն Քուինի ընթացիկ կալանքը միանշանակորեն չի տեղավորվում 5-րդ հոդվածի 1-ին կետի (զ) ենթակետի և այդ դրույթի մյուս ենթակետերի շրջանակներում:

3 Սրան հակառակ, դիմողին երեք և կես տարի շարունակ կալանքի տակ պահելու հանգամանքը հետ չի պահել դատարանին, որպեսզի *«Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Chahal v UK (1996) 23 EHRR 413, 1996-IV 1864)* գործում եզրակացնի, որ 5(1)(զ) հոդվածի շրջանակներում կալանքը եղել է արդարացված: Այս դեպքում, այնուամենայնիվ, տեղի է ունեցել 5(4) հոդվածի խախտում (տե՛ս ստորև՝ 328-րդ էջ): Այս գործին առնչվող փաստերը ներկայացված են վերը՝ 211-րդ էջում: 5(1)(զ) հոդվածին համապատասխանելու առումով դատարանը հայտարարել է.

115.…Ինչ վերաբերում է պետքարտուղարի՝ ապաստանի տրամադրումը մերժելու որոշմանը, դատարանը չի կարծում, որ այդ ժամկետները (այսինքն՝ 1990 թ. օգոստոսի 16-ից մինչև 1991 թ. մարտի 27-ը և 1991 թ. դեկտեմբերի 2-ից մինչև 1992 թ. հունիսի 1-ը) եղել են չափազանց երկար՝ հաշվի առնելով այն մանրամասն և ստույգ քննությունը, որը պահանջվում էր իրականացնել դիմողի քաղաքական ապաստան տրամադրելու պահանջի առնչությամբ, ինչպես նաև՝ բացատրություններ և տեղեկություններ տրամադրելու մատչելի հնարավորությունները...

116. Ազգային դատարանների կողմից դատական վերանայման վարույթի կապակցությամբ նշվել է, որ պրն Չահալի առաջին դիմումը ներկայացվել է 1991 թ. օգոստոսի 9-ին, և դրա վերաբերյալ դատավոր Փոփլվելը որոշում է կայացրել 1991 թ. դեկտեմբերի 2-ին: Երկրորդ դիմումը նա ներկայացրել 1992 թ. փետրվարի 12-ին: 1993 թ. հոկտեմբերի 22-ին այս

որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը չի բավարարվել վերաքննիչ դատարանի կողմից, որը նաև մերժել է Լորդերի պալատում բողոքարկելու թույլտվությունը: 1994 թ. մարտի 3-ին Լորդերի պալատը նույնպես մերժել է նրան բողոքարկելու թույլտվությունը…

117. Ինչպես դատարանը նշել է 3-րդ հոդվածի համատեքստում, պրն Չահալի գործը ներառում է խիստ լուրջ և ծանրակշիռ բնույթի նկատառումներ: Այս որոշումների հապճեպ ընդունումը՝ առանց բոլոր համապատասխան հարցերին և փաստերին պատշաճ ուշադրություն դարձնելու, չի բխում ո՛չ անհատ դիմողի շահերից, ո՛չ էլ արդարադատության իրականացման հանրության ընդհանուր շահից:

Այս պայմաններում և հաշվի առնելով, թե դիմողի համար ինչն է դրված եղել հարցականի տակ, ինչպես նաև նրա շահագրգռությունը, որ նրա ներկայացրած պահանջները դատարանների կողմից ենթարկվեն հիմնովին ուսումնասիրության, չի կարելի համարել, որ բողոքարկվող ժամանակահատվածները, առանձին-առանձին կամ միասին վերցրած, եղել են չափազանց երկար: Հետևաբար, ազգային վարույթի կարգի բարեխղճության կամ բարեխղճության պակասի հետ կապված՝ կոնվենցիայի 5(1)(զ) հոդվածի խախտում չի եղել:

118. Հատկապես ազգային համակարգի ապահոված երաշխիքները վկայակոչելու միջոցով դատարանը նաև պետք է ուսումնասիրի, թե արդյոք պրն Չահալի կալանքն «օրինակա՞ն» էր 5(1)(զ) հոդվածի իմաստով...

119. Կասկած չկա, որ ազգային օրենսդրությամբ պրն Չահալի կալանքը եղել է օրինական և իրականացվել «օրենքով սահմանված կարգով»... Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն երկար ժամանակահատվածը, որի ընթացքում պրն Չահալը գտնվել է կալանքի տակ, նաև անհրաժեշտ է ուսումնասիրել, թե արդյոք գոյություն ունեցե՞լ են կամայականության դեմ ուղղված նշանակալի երաշխիքներ:

120. Այս համատեքստում դատարանը նկատում է, որ դիմողը կալանքի տակ է գտնվել 1990 թ. օգոստոսի 16-ից գլխավորապես այն հիմքով, որ իրար հաջորդած պետքարտուղարները պնդել են, որ ազգային անվտանգությանը ներկայացրած վտանգի պատճառով նա չի կարող անվտանգ կերպով ազատ արձակվել... Այնուամենայնիվ, դիմողը հետևողականորեն հերքել է, որ ինքը սպառնալիք է ներկայացնում ազգային անվտանգությանը՝ ներկայացնելով իր հերքումը պաշտպանող պատճառներ…

121. Դատարանն այնուհետև նկատում է, որ քանի որ պետքարտուղարները պնդել են, որ ազգային անվտանգության խնդիր կա, ազգային դատարանները, որոնց չի տրամադրվել նրան կալանավորելու որոշումներին վերաբերող ամբողջական նյութը, ի վիճակի չեն եղել արդյունավետ հսկողություն սահմանելու այս որոշումների նկատմամբ…

122. Այնուամենայնիվ, կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի համատեքստում խորհրդատվական կոլեգիայի ընթացակարգը ... կամայականության դեմ ուղղված կարևոր երաշխիք է եղել: Այս կոլեգիան, որի մեջ մտել են փորձառու դատական գործիչներ, … ի վիճակի է եղել լիովին վերանայելու դիմողի՝ ազգային անվտանգությանը ներկայացրած սպառնալիքին վերաբերող փաստերը: Թեպետ նրա զեկույցը երբեք չի բացահայտվել, դատարանում նիստի ժամանակ կառավարությունը նշել է, որ կոլեգիան համաձայնել է ներքին գործերի քարտուղարի հետ, որ պրն Չահալը պետք է արտաքսվի ազգային անվտանգության հիմքերով: Դատարանը կարծում է, որ այս ընթացակարգը համապատասխան երաշխիք է եղել առ այն, որ առնվազն գոյություն են ունեցել prima facie [առաջին հայացքից] հիմքեր՝ հավատալու, որ եթե պրն Չահալը մնա ազատության մեջ, ապա դա սպառնալիք կլինի ազգային անվտանգությանը: Հետևաբար, գործադիր մարմինները չեն գործել կամայականորեն, երբ պահանջ են ներկայացրել նրան կալանքի տակ պահելու վերաբերյալ:

123. Ամփոփելով՝ դատարանը նշում է, որ պրն Չահալն անկասկած կալանքի տակ է գտնվել այնքան երկար ժամանակ, որն անշուշտ պետք է լուրջ մտահոգությունների տեղիք տար: Այնուամենայնիվ, հաշվի առնելով գործի բացառիկ հանգամանքները և այն փաստերը, համաձայն որոնց՝ արտաքսման վարույթի ողջ ընթացքում ազգային մարմինները նրա նկատմամբ գործել են բարեխղճորեն, ինչպես նաև գոյություն են ունեցել կամայական ազատազրկման դեմ գործող բավարար երաշխիքներ, այս կալանավորումը համապատասխանել է 5(1)(զ) հոդվածի պահանջներին:

4 *«Չոնկան ընդդեմ Բելգիայի» (Conka v Belgium)* գործի վերաբերյալ 2002 թ. փետրվարի 5-ի վճռով մշտական գործող դատարանի պալատը միաձայն հաստատել է, որ հանրային մարմինների խաբեության միջոցով ապօրինի ներգաղթյալներին ոստիկանության բաժին բերման ենթարկելը՝ նախքան ձերբակալելու և կալանավորելու նպատակով նրանց արտաքսումը, եղել է 5(1) հոդվածի խախտում: Դիմողները Սլովակիայի քաղաքացիություն ունեցող գնչու ընտանիք էին: Թեպետ նրանց՝ Բելգիայում քաղաքական ապաստան ստանալու պահանջը մերժվել էր, նրանք շարունակել են մնալ երկրում: Այսպիսով, իշխանությունները ծրագրել են լայնածավալ օպերացիա, որպեսզի Գենտում ապօրինաբար բնակվող Սլովակիայից եկած բազմաթիվ գնչուների արտաքսեն Սլովակիա: Յուրա-

քանչյուր գնչուի ուղարկվել է նամակ, որով նրանց առաջարկվել է ներկայանալ ոստիկանության բաժին՝ նրանց գործերն ավարտելու նպատակով: Ոստիկանության բաժնում գնչուները ձերբակալվել են: Այնուհետև նրանց մի մասը բաց է թողնվել, իսկ յոթանասուն մարդ, այդ թվում նաև՝ դիմողները, պահվել են կալանքի տակ և մի քանի օր անց արտաքսվել:

38. Դատարանը նշում է, որ երկու կողմի համար էլ ընդհանուր հիմքն այն է, որ դիմողները ձերբակալվել են Բելգիայից արտաքսվելու նպատակով: Հետևաբար, կոնվենցիայի 5(1)(զ) հոդվածը կիրառելի է վարույթում գտնվող գործի նկատմամբ: Ակնհայտ է, որ դիմողները վիճարկում են այդ նպատակով իրենց ձերբակալության անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, 5(1)(զ) հոդվածով չի պահանջվում, որ արտաքսման միջոցառումների ենթակա անձին կալանավորելը ողջամտորեն անհրաժեշտ համարվի, օրինակ՝ նրա կողմից հանցագործության կատարումը կասեցնելու կամ փախուստը կանխելու նպատակով: Այս իմաստով 5(1)(զ) հոդվածն ամրագրում է 5(1)(գ) հոդվածից տարբեր պաշտպանության մակարդակ. (զ) ենթակետով միայն պահանջվում է, որ «միջոցներ են ձեռնարկվում նրան արտաքսելու նպատակով» (տե՛ս *«Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Chahal v the United Kingdom)*, 1996 թ. նոյեմբերի 16-ի վճիռ, Վճիռների և որոշումների զեկույցներ, 1996-V, էջ 1862, պարբ. 112):

39. Երբ հարցը վերաբերում է կալանքի «օրինականությանը», ներառյալ «օրենքով սահմանված կարգի» պահպանմանը, կոնվենցիան սկզբունքորեն վկայակոչում է ներպետական օրենսդրության նյութական և ընթացակարգային դրույթները պահպանելու պարտավորությունը, սակայն, ի լրումն, պահանջում է, որ յուրաքանչյուր ազատազրկման դեպք համահունչ լինի 5-րդ հոդվածի՝ անձին կամայականություններից պաշտպանելու նպատակին (տե՛ս, ի թիվս այլոց, *«Բոզանոն ընդդեմ Ֆրանսիայի» (Bozano v France)*, 1986 թ. դեկտեմբերի 18-ի վճիռ, շարք A, թիվ 111, էջ 23, պարբ. 54 և վերը մեջբերված *Չահալի (Chahal)* գործը, էջ 1864, պարբ. 118):

40. Սույն գործում դիմողները գրավոր ծանուցում են ստացել 1999 թ. սեպտեմբերի վերջին, որով նրանց առաջարկվել է հոկտեմբերի 1-ին ներկայանալ Գենտի ոստիկանության բաժին, «որպեսզի հնարավոր լինի լրացնել ապաստան ստանալու վերաբերյալ դիմումը»: Ոստիկանության բաժին գալուց հետո նրանց ցույց են տվել 1999 թ. սեպտեմբերի 29-ով թվագրված տարածքից դուրս գալու կարգադրությունը և նրանց Սլովակիա ուղարկելու և այդ նպատակով նրանց ձերբակալելու որոշումը: Մի քանի ժամ անց նրանց տեղափոխել են Սթիինոկկերզիլում գտնվող փակ տարանցման կենտրոն:

41. Դատարանը նկատում է, որ ըստ կառավարության՝ թեպետ ծանուցագրում անհաջող ձևակերպում է եղել, ինչը և իրոք ներքին գործերի նախարարն ընդունել է ... դա բավարար չէ, որ ձերբակալության ողջ ընթացակարգը համարվի սխալ կամ լիազորությունների չարաշահում:

Մինչ դատարանը վերապահումներ ունի այս գործողությունների՝ Բելգիայի օրենքին համապատասխանելու առումով, մասնավորապես, հաշվի առնելով այն փաստը, որ տվյալ դեպքում այս գործելակերպը իրավասու ազգային դատարանը վերանայման չի ենթարկել, կոնվենցիայով պահանջվում է, որ անձին ազատությունից զրկող յուրաքանչյուր միջոցառում համապատասխանի 5-րդ հոդվածի՝ անձին կամայականություններից պաշտպանելու նպատակին (տե՛ս վերը՝ պարբ. 39): Թեպետ դատարանը որևէ կերպ չի բացառում, որ ոստիկանության կարգադրություններում հնարքների կիրառումը (օրինակ՝ հանցավոր գործողությունների դեմ ավելի արդյունավետ պայքարելու նպատակով) օրինական է, սակայն այնպիսի գործողությունները, որոնցով իշխանությունները ձգտում են ձեռք բերել ապաստան փնտրող անձանց վստահությունը՝ նպատակ ունենալով ձերբակալել և այնուհետև արտաքսել նրանց, կարող են կոնվենցիայի հստակ արտահայտված կամ ենթադրվող ընդհանուր սկզբունքների հետ հակասության մեջ լինել:

Այդ կապակցությամբ ամեն հիմք կա համարելու, որ թեպետ ծանուցման մեջ օգտագործված ձևակերպումները «անհաջող» են եղել, դրանք անփութության հետևանք չեն եղել: Հակառակը՝ դրանք ընտրվել են մտածված կերպով, որպեսզի հնարավոր լիներ երաշխավորել, որ անձանց մեծ մասը, ում դրանք հասցեագրված են եղել, կատարելու են այն: Նիստի ժամանակ կառավարության խորհրդականը այդ առումով հղում է կատարել «փոքրիկ հնարքին», որը իշխանությունները գիտակցաբար գործադրել են, որպեսզի երաշխավորեն «կոլեկտիվ» հայրենադարձության (որի վերաբերյալ նրանք որոշում էին կայացրել) հաջողությունը:

42. Դատարանը կրկնում է, որ 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված ազատության իրավունքից արվող բացառությունների ցուցակը վերջնական է, և այդ բացառությունների միայն շատ նեղ մեկնաբանությունն է համատեղելի այդ դրույթի նպատակին (տե՛ս mutatis mutandis *«Ք.-Ֆ.-ի ընդդեմ Գերմանիայի» (K.-F. v Germany),* 1997 թ. նոյեմբերի 27-ի վճիռը, Զեկույցներ, 1997-VII, էջ 2975, պարբ. 70): Դատարանի կարծիքով՝ այդ պահանջը պետք է նաև արտահայտվի նամակագրության (այդ թվում նաև՝ դիմողներին ուղարկված նամակագրության) հուսալիության մեջ, անկախ այն հանգամանքից՝ դրանք ստացողները օրինականորե՞ն են գտնվում երկրում, թե՞ ոչ: Սրանից բխում է, որ նույնիսկ ժամկետանց մնացողների առումով իշխանությունների ողջամիտ որոշումը ծանուցման նպատակի վերաբերյալ, այն է՝

նրանց մոլորեցնելու միջոցով հեշտացնել նրանց ազատազրկումը և ապահովել օտարերկրացիների արտաքսման օպերացիայի արդյունավետությունը, հակասում է 5-րդ հոդվածին:

. . .

Հետևաբար, կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է եղել:

Վերոհիշյալ վճիռը նաև բացահայտում է, որ պետությունները ծերբակալության կամ կալանավորելու ավելի լայն լիազորություններ ունեն այն անձանց նկատմամբ, որոնք ծերբակալվում կամ կալանավորվում են 5(1)(գ) հոդվածով, քան կասկածյալ քրեական հանցագործների նկատմամբ, որոնք ծերբակալվում կամ կալանավորվում են 5(1)(գ) հոդվածով:

5 *«Սաադին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Saadi v United Kingdom)* գործի վերաբերյալ 2006 թ. հուլիսի 11-ի վճռով պալատը որոշել է, որ պետություններից չի պահանջվում ապացուցել ապաստան խնդրող անձանց կալանքի տալ վերցնելու անհրաժեշտությունը, մինչ նրանց պահանջը քննության էր ենթարկվում արագացված կարգով: Դիմողը յոթ օրով կալանքի տակ է վերցվել Օուքինգտոնի ընդունման կենտրոնում, մինչ նրա միջնորդությունը լսվում էր արագացված կարգով:

44. …Հետևաբար, այս եզրակացությունը ավելին չի անում, քան 5(1)(գ) հոդվածի առաջին մասի նկատմամբ այդ դրույթի երկրորդ մասի վերաբերյալ դատարանի ընդունած որոշումը, համաձայն որի՝ 5(1)(գ) հոդվածում գոյություն չունի պահանջ, որի հիման վրա անձի ապօրինի մուտքը երկիր կանխելու նպատակով ողջամտորեն անհրաժեշտ համարվի կալանքի տալ վերցնել նրան, օրինակ՝ նրան հանցագործություն կատարելուց կամ փախուստի դիմելուց զերծ պահելու համար: Ամբողջ պահանջն այն է, որ կալանքն իրոք պետք է լինի անձին երկիր մուտք գործելու և/կամ ապաստան տրամադրելու գործընթացի մասը և չպետք է լինի կամայական, օրինակ՝ տևողության առումով:

Չորս հոգուց բաղկացած մեծամասնությունը որոշել է, որ դիմողի կալանքը անհարկի չի եղել, ուստի 5(1)(գ) հոդվածի խախտում չի եղել: Մինչդեռ երեք առարկողները հավատացել են, թե քանի որ Օուքինգտոնում կալանավորվելուց մի քանի օր առաջ դիմողին թույլ է տրվել ժամանակավորապես մուտք գործել Միացյալ Թագավորություն որպես անօրինականորեն երկիր մուտք գործող անձնավորություն, նա այլևս ենթակա չի եղել կալանավորվելու 5(1)(գ) հոդվածով:

Հոդված 5(2). Կալանքի հիմքերը

……

«Ֆոքսը, Քեմփբելը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության»
*(Fox, Campbell and Hartley v UK A.*182 (1990) 13 EHRR 157)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Այս գործի փաստական հանգամանքները ներկայացված են վերը՝ 282-րդ էջում, 5(1)(գ) հոդվածի վերաբերյալ բաժնում:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

40. 5-րդ հոդվածի 2-րդ կետը ներառում է տարրական երաշխիք, համաձայն որի՝ յուրաքանչյուր ծերբակալված անձնավորություն պետք է իմանա իրեն ազատությունից զրկելու պատճառը: Այս դրույթը 5-րդ հոդվածով ապահովվող պաշտպանության բաղկացուցիչ մասն է: Համաձայն հոդվածի 2-րդ կետի՝ ծերբակալության իրավական և փաստացի հիմքերը պետք է պարզ, ոչ տեխնիկական լեզվով բացատրվեն յուրաքանչյուր ծերբակալված անձի՝ մատչելի լինելով նրան, որպեսզի նպատակահարմար գտնելու դեպքում նա կարողանա դատական կարգով բողոքարկել դրանց օրինականության դեմ՝ համաձայն 4-րդ կետի... Թեև այս տեղեկությունը պետք է փոխանցվի «անհապաղ» [promptly] (ֆրանսերեն՝ dans le plus court delai), պարտադիր չէ, որ այն հայտնվի ծերբակալության իրականացման պահին, այն իրականացնող պաշտոնատար անձի կողմից: Այն հանգամանքը, թե արդյոք փոխանցված տեղեկությունների

բովանդակությունը և արագությունը եղե՞լ են բավարար, պետք է գնահատվի՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր գործի ուրույն առանձնահատկությունները...

41. Կալանքի տակ վերցվելու ժամանակ պրն Ֆոքսին, տկն Քեմփբելին և պրն Հարթլիին ձերբակալությունն իրականացնող պաշտոնատար անձն ընդամենը տեղյակ է պահել, որ նրանց ձերբակալում են որպես կասկածյալ ահաբեկիչների՝ 1978 թ. օրենքի 11(1) բաժնի համաձայն …Ձերբակալության իրավական հիմքի այս զուտ վկայակոչումն անբավարար է 5(2) հոդվածի նպատակների համար, ինչին կառավարությունը համաձայնել է:

Այնուամենայնիվ, ձերբակալությունից հետո հանցավոր գործողությունների մեջ նրանց ենթադրյալ ներգրավման և արգելված կազմակերպություններին նրանց կասկածվող անդամակցության կապակցությամբ բոլոր դիմողները հարցաքննվել են ոստիկանության կողմից: …Որևէ հիմք չկա ենթադրելու, որ այս հարցաքննությունները այնպիսի հարցաքննություններ չեն եղել, որոնք հնարավորություն կտային դիմողներին հասկանալու իրենց ձերբակալության պատճառը: Այն պատճառները, որոնց հիման վրա նրանք կասկածվում էին ահաբեկիչ լինելու մեջ, այսպիսով, հարցաքննության ժամանակ ներկայացվել են նրանց:

42. Պրն Ֆոքսը և տկն Քեմփբելը ձերբակալվել են 1986 թ. փետրվարի 5-ին՝ ժամը 15.40-ին, Վուդբուռնի ՕԹՈ-ի [Օլսթերի թագավորական ոստիկանություն] բաժնում և այնուհետև առանձին հարցաքննվել են նույն օրը՝ ժամը 20.15-ից մինչև 22.00-ը Քեսլռեյի (Castlereagh) ոստիկանության բաժնում... Պրն Հարթլին, իր հերթին, ձերբակալվել է իր տանը՝ 1986 թ. օգոստոսի 18-ին՝ առավոտյան ժամը 7.55-ին, և տեղափոխվել Անթրիմի ոստիկանության բաժին, որտեղ նրան հարցաքննել են առավոտյան ժամը 11.05-ից մինչև կեսօրվա ժամը 12.15-ը... Սույն գործի համատեքստում մի քանի ժամվա այս տարբերությունները չեն կարող համարվել 5(2) հոդվածում ամրագրված «անմիջապես» հասկացությամբ մտցված ժամանակային սահմաններից դուրս...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ...

Միաձայն վճռում է, որ 5-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում չի եղել …

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմը ներկայացված է վերը՝ 282-րդ էջում:

2 Ձերբակալված անձանց տեղեկություններ տրամադրելու մասին *Ֆոքսի, Քեմփբելի և Հարթլիի (Fox, Campbell and Hartley)* գործին հաջորդել է *Մյուրեյի (Մարգարեթի) (Murray (Margaret))* գործը (վերը՝ էջ 283), որը Հյուսիսային Իռլանդիայում ահաբեկչությանը վերաբերող մեկ այլ գործ է: Այս դեպքում ձերբակալված անձին ձերբակալության ժամանակ միայն տեղյակ են պահել, թե 1978 թ. օրենքի որ բաժնի հիման վրա են նրան ձերբակալել, սակայն մոտ երկու ժամ անց հարցաքննության ժամանակ նրան տրված հարցերը նշանակել են, որ, ընդհանուր առմամբ, 5(2) հոդվածը չի խախտվել: Դատարանը հայտարարել է.

Դատարանի կարծիքով՝ պետք է որ տիկին Մյուրեյին ակնհայտ լիներ, որ իրեն հարցաքննել են, որպեսզի պարզեն իր եղբայրների կողմից ժամանակավոր ԻՀԲ-ի համար Միացյալ Նահանգներում զենք գնելու նպատակով ֆինանսական միջոցների հայթայթման մեջ իր հնարավոր ներգրավվածությունը: Օգտագործելով գործը լսող առաջին ատյանի դատավորի բառերը՝ ակնհայտ է, որ «գումար հավաքելու գործողություններին նրա մասնակցության կապակցությամբ մանրամասն հետաքննություն այդպես էլ երբեք չի արվել», սակայն ինչպես նկատել են ազգային դատարանները, դրա պատճառն այն էր, որ տիկին Մյուրեյը, իր անունը հայտնելուց բացի, հրաժարվել է որևէ այլ հարցի պատասխանելուց: Ուստի դատարանը կարծում է, որ նրան ձերբակալելու պատճառները բավականաչափ ներկայացվել են նրա հարցաքննության ժամանակ:

3 Այնպես, ինչպես դատարանն է թույլատրում *Ֆոքսի, Քեմփբելի և Հարթլիի (Fox, Campbell and Hartley)* գործում, պե՞տք է բավարար համարվի, որ հարցաքննության ժամանակ ասվածների հիման վրա անձը պետք է կարողանա եզրակացություններ անել 5(2) հոդվածով պահանջվող տեղեկությունների վերաբերյալ: Հնարավոր է, որ 5(2) հոդվածի ընդհանուր կիրառությունը մեկնաբանելու ժամանակ դատարանի վրա անցանկալի ներգործություն է ունեցել գործի ահաբեկչական բնույթը:

4 Նորաստեղծ դատարանը զգալիորեն լայնացրել է այս պարտավորության շրջանակը՝ այն տարածելով նաև քաղաքացիական օրենսդրությամբ վերապահված իրավասությունների շրջանակներում կալանաւորված անձանց վրա *«Վան դեր Լեերն ընդդեմ Նիդեռլանդների» (Van der Leer v Netherlands, A.170 (1990))* գործում: Տեղի բուրգոմիստրի կարգադրության հիման վրա դիմողը պահվել է հոգեբուժական հիվանդանոցում: Մի քանի օր անց շրջանային դատարանը մերժել է հաստատել բուրգոմիստրի կարգադրությունը: Այնուամենայնիվ, դիմողը շարունակել է մնալ հիվանդանոցում որպես իր կամքով հիվանդանոց ընդունված հիվանդ: Երկու ամիս անց մեկ այլ դատարան դիմողի ամուսնու պահանջով կարգադրել է, որ նա վեց ամիս պարտադիր կարգով պահվի հիվանդանոցում: Դիմողին ոչինչ չեն հայտնել կարգադրության մասին, նա տեղյակ է դարձել միայն տասը օր անց՝ նրան հիվանդանոցում մեկուսացնելուց հետո: Նա անմիջապես կապվել է իր փաստաբանի հետ: Դատական մի շարք վարույթներից հետո մի քանի ամիս անց այդ կարգադրությունը չեղյալ է հայտարարվել: Կառավարությունը ներկայացրել է դատարանին, որ 5(2) հոդվածը վերաբերում է միայն քրեական օրենսդրությամբ անձանց կալանավորելու դեպքերին: Դատարանը միաձայն վճռել է, որ.

> 27. Դատարանը չի անտեսում, որ 5(2) հոդվածում օգտագործված բառերն օգտագործված են քրեական օրենսդրության իմաստով: Այնուամենայնիվ այն համաձայն է հանձնաժողովի հետ, որ դրանք պետք է մեկնաբանվեն «անկախ», մասնավորապես՝ 5-րդ հոդվածի՝ անձանց կամայական ազատազրկումից պաշտպանելու նպատակին համահունչ: Այսպիսով, 5-րդ հոդվածի 2-րդ կետում նշված «ձերբակալություն» հասկացությունը դուրս է քրեական օրենսդրությամբ նախատեսված միջոցառումների շրջանակից: Նմանապես, այս դրույթի մեջ օգտագործելով «յուրաքանչյուր մեղադրանք» (tout accusation) բառակապակցությունը, հեղինակները մտադրություն են ունեցել ոչ միայն դնել դրա կիրառելիության պայմանը, այլև ցույց տալ հնարավոր պատահականությունները, որոնք այն հաշվի է առնում:
>
> 28. 5-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերի միջև առկա սերտ կապերը պաշտպանում են այս մեկնաբանությունը: Ցանկացած անձ, որն իրավունք ունի վարույթ սկսելու և պահանջելու արագ որոշում կայացնել իրեն կալանքի տակ պահելու օրինականության մասին, չի կարող արդյունավետորեն կիրառել այդ իրավունքը, եթե նրան անհապաղ և հավուր պատշաճի տեղյակ չեն պահել այն պատճառների մասին, որոնց հիման վրա նա պահվում է անազատության մեջ...
>
> 4-րդ կետով տարբերություն չկա ազատազրկված անձանց միջև այն բանի հիման վրա, թե արդյոք նրանք ձերբակալվա՞ծ են, թե՞ կալանավորված: Ուստին, հիմքեր չկան վերջինս 2-րդ կետի տիրույթից բացառելու համար:

Դատարանը եզրակացրել է, որ կարգադրության մասին դիմողին իրազեկելու ձևը և ժամկետները երկուստեք չեն բավարարել 5(2) հոդվածի պահանջները: Այս վճռի միջոցով տեղի է ունեցել այս դրույթի շրջանակների կարևոր ընդլայնում՝ տարածելով այն քաղաքացիական օրենսդրության շրջանակներում կալանավորված խոցելի անձանց վրա:

5 *«Սաադին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Saadi v United Kingdom)* գործի առնչությամբ մշտական գործող դատարանի պալատը միաձայն որոշել է, որ այս պարտավորությունը խախտվել է, քանի որ ներգաղթի մարմիններից պահանջվել է յոթանասունվեց ժամ, որպեսզի նրանք ապաստան խնդրողին իրազեկեն նրա հայցի արագ քննության նպատակով նրան հատուկ ներգաղթային կենտրոնում պահելու պատճառների մասին (տե՛ս վերը՝ էջ 306):

Հոդված 5(3). Նախնական կալանք և ողջամիտ ժամկետում դատաքննություն

«Ասենովը և այլք ընդդեմ Բուլղարիայի»
(Assenov and others v Bulgaria 1998-VIII 3264)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը պնդել է, ի թիվս այլոց, որ նա անհապաղ չի «տարվել դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնել դատական իշխանություն», ինչպես պահանջվում է 5(3) հոդվածով: Գործի փաստերը, որոնք առնչվում են այս պնդմանը, ներկայացված են ստորև:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

32. 1995 թ. հունվարին մի շարք գողությունների և թալանի դեպքերի հետաքննության կապակցությամբ պրն Ասենովին հարցաքննել է Շումենի դատախազությունը:

33. Նա ձերբակալվել է 1995 թ. հուլիսի 27-ին և հաջորդ օրը, նրա փաստաբանի և դատախազի («Կ») ներկայությամբ քննիչը նրան հարցաքննել է և պաշտոնապես մեղադրել է 10 կամ ավելի կողոպուտների և թալանի 6 դեպքերի մեջ, որոնք նա ենթադրաբար կատարել է 1995 թ. սեպտեմբերի 10-ից մինչև 1995 թ. հուլիսի 24-ն ընկած ժամանակահատվածում և բոլոր դեպքերում հարձակումներ է գործել փողոցի անցորդների վրա: Պրն Ասենովն ընդունել է, որ կատարել է կողոպուտների մեծ մասը, սակայն ժխտել է թալանի մեջ ներգրավվածությունը:

Կայացվել է նրա նախնական կալանքի որոշում: Որոշումը հաստատվել է նույն օրը մեկ այլ դատախազի՝ «Ա»-ի կողմից ...

144. Կառավարությունը ներկայացրել է, որ տարբեր դատախազներ, որոնք քննարկել են պրն Ասենովի ազատ արձակման միջնորդությունները, 5-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով եղել են «պաշտոնատար անձինք, որոնք օրենքով լիազորված են եղել իրականացնելու դատական իշխանություն», քանի որ, համաձայն Բուլղարիայի օրենսդրության, դատախազն օժտված է կատարյալ անկախությամբ, պարտավոր է պաշտպանել հանրային շահը և իրավասու է որոշում կայացնել քրեական վարույթում առաջացող մի շարք հարցերի, այդ թվում նաև՝ մեղադրյալին նախնական կալանքի տակ վերցնելու կամ չվերցնելու հարցերի վերաբերյալ:

145. Հանձնաժողովը, որի հետ դիմողը համաձայնել է, նկատել է, որ չնայած Բուլղարիայի օրենսդրության համաձայն քննիչներն ունեցել են ինստիտուցիոնալ անկախություն, գործնականում հետաքննության ընթացքին վերաբերող ցանկացած խնդրի կապակցությամբ նրանք ենթակա են եղել դատախազների վերահսկողությանը, ներառյալ այն խնդիրը, թե արդյոք կասկածյալը պե՞տք է վերցվի նախնական կալանքի տակ, թե՞ ոչ: Հետևաբար, գոյություն է ունեցել հստակ օբյեկտիվ պատկեր, որ պրն Ասենովի գործով զբաղվող քննիչն օժտված չի եղել դատախազական մարմիններից անկախությամբ այն պարագայում, երբ այս մարմինները քրեական վարույթի ժամանակ այնուհետև պետք է հանդես գային որպես հակառակ կողմ:

146. Դատարանը կրկնում է, որ գործադիր մարմինների կողմից անձի ազատության միջամտության նկատմամբ դատական վերահսկողությունը 5-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված երաշխիքի կարևոր առանձնահատկությունն է (տե՛ս վերը նշված *Աքսոյի (Aksoy)* վճիռը, էջ 2282, պարբ. 76): Մինչ հնարավոր լինի «պաշտոնատար անձի» մասին ասել, որ այդ դրույթի իմաստով նա իրականացնում է «դատական իշխանություն», նա պետք է ապահովի որոշակի պայմաններ, որոնք կամայական կամ չհիմնավորված ազատազրկումից պաշտպանող երաշխիք են (տե՛ս *«Շիեսերն ընդդեմ Շվեյցարիայի» (Schiesser v Switzerland)*, 1979 թ. դեկտեմբերի 4-ի վճիռ, շարք A, թիվ 34, էջ 13, պարբ. 31):

Այսպիսով, «պաշտոնատար անձը» պետք է լինի անկախ գործադիր մարմիններից և կողմերից (նույն տեղում): Այս կապակցությամբ կալանքի վերաբերյալ որոշման ընդունման ժամանակ օբյեկտիվ պատկերն ունի նյութական նշանակություն: Եթե այդ ժամանակ պարզվում է, որ պաշտոնատար անձը կարող է ավելի ուշ դատախազության աուունից միջամտել քրեական վարույթին, ապա նրա անկախությունը և անաչառությունը կարող են կասկածի տեղիք տալ (տե՛ս *«Հուբերն ընդդեմ Շվեյցարիայի» (Huber v Switzerland)*, 1990 թ. հոկտեմբերի 23-ի վճիռ, շարք A, թիվ 188, էջ 18, պարբ. 43

և *«Բրինկատ ընդդեմ Իտալիայի» (Brincat v Italy)*, 1992 թ. նոյեմբերի 26-ի վճիռ, շարք A, թիվ 249-A, էջ 12, պարբ. 21): «Պաշտոնատար անձը» պետք է անձամբ լսի իր մոտ բերված անձին և իրավական չափանիշների վկայակոչմամբ վերանայի՝ արդյոք նրա նկատմամբ կիրառված կալանքն արդարացվա՞ծ է, թե՞ ոչ: Եթե դա չի արդարացվում, «պաշտոնատար անձը» պետք է կալանավորին բաց թողնելու վերաբերյալ պարտադիր կատարման ենթակա կարգադրություն անելու իրավասություն ունենա (տե՛ս վերը նշված *Շիեսերի (Schiesser)* վճիռը, էջ 13-14, պարբ. 31 և *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ireland v UK)*, 1978 թ. հունվարի 18-ի վճիռը, շարք A, թիվ 25, էջ 76, պարբ. 199):

147. Նախ՝ դատարանը նկատում է, որ պրն Ասենովի ազատ արձակման մասին միջնորդությունը դատավորը չի քննել մինչև 1995 թ. սեպտեմբերի 19-ը ... երբ նա արդեն երեք ամիս գտնվում էր կալանքի տակ: 5-րդ հոդվածի 3-րդ կետի նպատակների համար սա, անկասկած, բավարար չափով «անհապաղ» չէ (տե՛ս, օրինակ՝ *«Բրոգանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Brogan v UK)* 1988 թ. նոյեմբերի 29-ի վճիռը, շարք A, թիվ 145, էջ 33, պարբ. 62): Եվ իրոք, նույնիսկ չի վիճարկվել, որ այս ընթացակարգը բավարար է եղել այդ դրույթի պահանջները բավարարելու համար:

148. Դատարանը նշում է, որ 1995 թ. հուլիսի 28-ին պրն Ասենովը ներկայացվել է քննիչին, որը հարցաքննել է և պաշտոնապես մեղադրանք առաջադրել՝ նրան կալանքի տակ վերցնելու որոշում ընդունելով... Դատարանը նկատում է, որ Բուլղարայի օրենքի համաձայն՝ քննիչներն իրավասու չեն կասկածյալին կալանավորելու կամ ազատ արձակելու վերաբերյալ ընդունել օրենքով պարտադիր որոշումներ: Ընդհակառակը՝ քննիչի կայացրած ցանկացած որոշում կարող է բեկանվել դատախազի կողմից, որը, եթե դժգոհ է քննիչի մոտեցումից, կարող է նաև գործը վերցնել նրանից … Սրանից բխում է, որ քննիչը բավականաչափ անկախ չի եղել, որպեսզի ներկայացվի որպես «օրենքով լիազորված պաշտոնատար անձ՝ իրականացնելու դատական իշխանությունը»:

149. Դատախազ Ա-ն, որը հաստատել է քննիչի որոշումը, կամ հաջորդ դատախազները, որոնք որոշել են, որ նա պետք է պահվի կալանքի տակ, անձամբ չեն լսել պրն Ասենովին: Ամեն դեպքում, քանի որ այս դատախազներից յուրաքանչյուրը քրեական վարույթ սկսելուց հետո կարող էր հանդես գալ որպես դիմողին հակառակ կողմ, ... 5-րդ հոդվածի 3-րդ կետի նպատակների համար բավականաչափ անկախ կամ անկանխակալ չի եղել:

150. Հետևաբար, դատարանը կարծում է, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում այն հիմքերով, որ դիմողը չի ներկայացվել «պաշտոնատար անձի, որը օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն»...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ . . .

Միաձայն վճռում է, որ խախտվել է կոնվենցիայի 5(3) հոդվածը այն առումով, որ պրն Ասենովն անհապաղ չի ներկայացվել դատավորին կամ այլ պաշտոնատար անձի, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Բերնհարդտը և դատավորներ Փեթիթին, Փալմը, Բական, Բոնիչին, Մակարչիկը, Գոտչևը, Վան Դիժկը և Թումանովը:

2 *Ասենովի* գործում քննարկված Բուլղարիայի քրեական հետաքննության համակարգում հանցագործությունների հետաքննությունը պետության կողմից ֆինանսավորվող հետաքննչական ծառայության կամ իրավասու տարածքային քննչական բաժնի քննիչների պատասխանատվությունն է, որոնք ոստիկանությունից և դատախազության վարչությունից անկախ մարմիններ էին: Այնուամենայնիվ, ինչպես նշվում է Եվրոպական դատարանի վճռում, հետաքննություն կատարելու և նախնական կալանքի տակ անձանց վերցնելու որոշումների ընդունման առումով քննիչները ենթակա էին դատախազության վարչության վերահսկողությանը: Բուլղարիայի օրենքը բարեփոխվել է, և այժմ նախնական կալանքի տակ վերցնելու որոշումները կայացնում է դատավորը:

3 *«Հուդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Hood v UK (1999)* The Times, մարտի 11) դատարանը վճռել է, որ հրամանատարի կողմից զինվորականին նախնական կալանավորելու կարգադրությունը եղել է 5(3) հոդվածի խախտում: Դատարանը հայտարարել է.

57. Ինչ վերաբերում է 4-րդ կանոնի համատեքստում դիմողի ըստ էության բողոքի կապակցությամբ որոշում կայացնող հրամանատարի անկանխակալությանը, ապա ըստ կոնվենցիայի մարմինների նախադեպային իրավունքի՝ եթե անձին նախնական կալանքի տակ վերցնելու որոշումն ընդունելու ժամանակ պարզվում է, որ «օրենքով դատական իշխանություն իրականացնելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձը» պարտավոր է միջամտել հետագա վարույթին որպես դատախազական մարմնի ներկայացուցիչ, ապա նախնական դատավարության փուլում նա չի կարող համարվել կողմերից անկախ անձ, քանի որ ավելի ուշ նա կարող է դառնալ [դատավարության] կողմերից մեկը (տե՛ս *«Հուբերն ընդդեմ Շվեյցարիայի» (Huber v Switzerland)*, 1990 թ. հոկտեմբերի 23-ի վճիռ, շարք A, թիվ 188, էջ 18, պարբ. 42-3 և *«Բրինկատն ընդդեմ Իտալիայի» (Brincat v Italy)*, 1992 թ. նոյեմբերի 26-ի վճիռ, շարք A, թիվ 249-A, էջ 11-12, պարբ. 20-1):

Մասնավորապես, 23-րդ, 27-րդ, 28-րդ, 32-րդ և 34-րդ պարբերություններում դատարանն անդրադարձել է որոշում կայացնող հրամանատարի այն լիազորություններին և պարտականություններին, որոնք առաջանում են 1972 թ. Կանոնագրքում ընդգրկված 4-րդ կանոնի շրջանակներում այդ պաշտոնյայի կողմից դատավարություն իրականացնելու ժամանակ: Այսպիսով, դիմողի դեմ բացված գործի հետագա հետապնդման մեջ հրամանատարը պարտավոր է եղել առանցքային դեր խաղալ: Թեպետ հրամանատարի գործառույթների որոշ մասը, ինչպես և այս դեպքում, հաճախ կատարվում է զորամասի համհարզի կողմից, պարզ է, որ համհարզը դա անում է հրամանատարի անունից, որին նա ուղղակիորեն ենթակա է իր կարգավիճակով: Բացի այդ, դիմողի ռազմական դատավարության ժամանակ դատավոր-փաստաբանը հաստատել է, որ զորամասի համհարզը սովորաբար նշանակվում է որպես մեղադրող պաշտոնյա կամ մեղադրող պաշտոնյայի օգնական և սույն գործի պարագայում նա կատարել է այս վերջին գործառույթը:

Այս հանգամանքներում դատարանը եզրակացնում է, որ որոշում կայացնող հրամանատարի անաչառության վերաբերյալ դիմողի մտավախությունները պետք է ընդունվեն որպես օբյեկտիվորեն հիմնավորված:

58. Ինչպես և հանձնաժողովը, դատարանը նույնպես կարծում է, որ այն հանգամանքը, որ որոշում կայացնող հրամանատարը զուգահեռաբար պատասխանատվություն է կրել զորամասի կարգուկանոնի համար, ևս մեկ լրացուցիչ պատճառ է, որը դիմողի մեջ կարող էր առաջացնել ողջամիտ կասկած, որ իր իրավասության տակ գտնվող մեղադրյալին նախնական կալանքի տակ վերցնելու որոշում կայացնելու ժամանակ այդ հրամանատարը եղել է անկանխակալ: Այս տեսակետն ամրապնդվում է *«Թագուհու կանոնագրքի»* 6.005 պարբերությամբ (տե՛ս վերը՝ պարբ. 36), համաձայն որի հրամանատարները կարող են նախքան դատը մերժել անձին ազատ արձակել, եթե նրանք այն կարծիքին են, որ «կարգապահության շահերից ելնելով՝ անցանկալի է», որ մեղադրյալը գտնվի հիմնականում իր ընկերների շրջապատում կամ շփվի նրանց հետ:

.....

«Բրոգանն ընդդեմ Միացյալ Թագավորության»
*(Brogan v UK A.*145 (1988) 11 EHRR 117)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Հյուսիսային Իռլանդիայում «Ահաբեկչության կանխման (ժամանակավոր դրույթներ) մասին» 1984 թ. օրենքի 12-րդ բաժնի հիման վրա ոստիկանությունը ձերբակալել է չորս դիմողներին, որոնք ողջամիտ հիմքերով կասկածվում էին Հյուսիսային Իռլանդիայում «ահաբեկչական գործողությունների կատարման, նախապատրաստման և հրահրման մեջ»: Այնուհետև նրանց հարցաքննել են ահաբեկչական բնույթի որոշակի քրեական հանցագործությունների և արգելված կազմակերպություններին անդամակցելու կապակցությամբ: Բոլոր չորս դիմողներն ավելի ուշ ազատվել են՝ առանց նրանց դեմ որևէ արարք կատարելու համար գործ հարուցելու՝ կալանքի տակ մնալով չորս օր վեց ժամից մինչև վեց օր և տասնվեցուկես ժամ: 1984 թ. օրենքի համաձայն՝ անձը կարող էր նախնական կալանքի տակ վերցվել 48 ժամով և, Հյուսիսային Իռլանդիայի պետքարտուղարի թույլտվությամբ, նրա կալանքը լրացուցիչ կարող էր երկարացվել մինչև հինգ օր ժամկետով, որի դեպքում առանց մագիստրատին ներկայացվելու նա կարող է կալանքի տակ մնալ ընդամենը յոթ օր: Այս դեպքում դիմողը պնդել է, որ, ի թիվս այլոց, տեղ են գտել ՄԻԵԿ-ի 5(1)(գ), 5(3), 5(4) և 5(5) հոդվածների խախտումներ: Ինչ վերաբերում է 5(4) հոդվածին, դատարանը միաձայն վճռել է, որ habeas corpus-ը [անձին կալանքից ազատելու օրինական միջոցը] պահանջվում է 5(4) հոդվածով: Դատարանի վճռից հետևյալ հատվածը վերաբերում է 5(3), 5-րդ հոդվածին: Իր զեկույցում հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ 5(3) հոդվածը խախտվել է երկու դիմողների նկատմամբ, որոնք կալանքի տակ են

պահվել ավելի քան հինգ օր (քանի որ նրանք «անհապաղ չեն ներկայացվել» դատավորին), սակայն ոչ մյուս երկուսի նկատմամբ, որոնք կալանքի տակ են պահվել չորսից հինգ օր: Հանձնաժողովը նաև կարծիք է հայտնել, որ 5(5) հոդվածը խախտվել է առաջին երկու դիմողների առնչությամբ:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

57. Հանձնաժողովն իր հաշվետվության մեջ վկայակոչել է հաստատված նախադեպային իրավունքը, համաձայն որի սովորական քրեական հանցագործությունների դեպքում քառօրյա ժամկետը, իսկ բացառիկ դեպքերում՝ հնգօրյա ժամկետը կարող են համարվել 5-րդ հոդվածի 3-րդ կետի անհապաղության պահանջին համապատասխան (տե՛ս, համապատասխանաբար, դիմումների ընդունելիության հետևյալ որոշումները. թիվ 2864/66՝ *«X-ն ընդդեմ Նիդեռլանդների» (X v Netherlands)* (Կոնվենցիայի տարեգիրք, հտ. 9, էջ 568 [1966]) և թիվ 4960/71՝ *«X-ն ընդդեմ Բելգիայի» (X v Belgium),* Որոշումների ժողովածու, հտ. 42, էջ 54-5 [1973]): Հանձնաժողովի կարծիքով՝ հաշվի առնելով դիմողներին ձերբակալելու համատեքստը և այն հատուկ խնդիրները, որոնք առնչվում են ահաբեկչական հանցագործությունների հետաքննությանը, կալանքի սովորականից որոշ չափով ավելի տևողությունը եղել է արդարացված: Հանձնաժողովը եզրակացրել է, որ պրն Մակֆադդենի չորս օր և վեց ժամ և պրն Թրեյսիի չորս օր և տասնմեկ ժամ կալանքը բավարարել են անհապաղության պահանջը, մինչդեռ պրն Բրոգանի հինգ օր և տասնմեկ ժամ և պրն Քոյլի վեց օր և տասնվեցուկես ժամ կալանքը՝ չեն համապատասխանել:

58. Այն փաստը, որ կալանքի տակ գտնվող անձին մեղադրանք ներկայացված չէ, կամ որ նա չի բերվել դատարան, ինքնին 5-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին մասի խախտում չէ: 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում չի կարող առաջանալ, եթե ձերբակալված անձնավորությունը «անհապաղ» ազատ է արձակվում, մինչև իրապես հնարավոր է դատական վերահսկողություն սահմանել նրա կալանքի նկատմամբ (տե՛ս *Դե Յոնգի, Բալյեի և վան դեն Բրինքի (Jong, Baljet and van den Brink)* 1984 թ. մայիսի 22-ի վճիռը, շարք A, թիվ 77, էջ 25, պարբ. 52): Եթե ձերբակալված անձնավորությունն անհապաղ ազատ չի արձակվում, ապա նա ունի դատավորին կամ դատական պաշտոնյային անհապաղ ներկայացվելու իրավունք:

«Անհապաղության» գնահատումը պետք է կատարվի ըստ 5-րդ հոդվածի առարկայի և նպատակի:

…Դատարանն ուշադրություն է դարձնում կոնվենցիայի համակարգում այս հոդվածի կարևորությանը: Նրանում ամփոփված է մարդու հիմնարար իրավունք. այն է՝ անձի ազատությունը պետության կամայական միջամտությունից (տե՛ս *Բոզանոյի (Bozano)* 1986 թ. դեկտեմբերի 18-ի վճիռը, շարք A, թիվ 111, էջ 23, պարբ. 54): Անձի ազատության իրավունքի մեջ գործադիր մարմինների կողմից միջամտության նկատմամբ դատական վերահսկողությունը 5-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված երաշխիքի կարևոր առանձնահատկությունն է, որը նպատակ ունի նվազեցնելու կամայականության ռիսկը...

59. Այս պարտավորությունը, որ անգլերենում արտահայտված է promptly [«անհապաղ»] և ֆրանսերենում՝ aussitot [«անմիջապես»] բառերով, հստակ տարբերվում է 3-րդ կետի երկրորդ մասում ամրագրված նվազ խիստ պահանջից (reasonable time/delai raisonnable [ողջամիտ ժամկետ]) և նույնիսկ 5-րդ հոդվածի 4-րդ կետից (speedily/a bref dela) [«արագ»]: Promptly բառը նաև հանդիպում է անգլերեն տեքստի 2-րդ կետում, երբ ֆրանսերեն տեքստն օգտագործում է dans le plus court delai բառերը: Ինչպես նշվել է *«Խոլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործի վերաբերյալ վճռում (1978 թ. հունվարի 18, շարք A, թիվ 25, էջ 76, պարբ. 199), 3-րդ կետում promptly բառը կարող է հասկացվել ավելի լայն իմաստով, քան aussitot-ը, որը բառացիորեն նշանակում է անհապաղ: Այսպիսով, ունենալով օրինաստեղծ համաձայնագրի տարբերակները, որոնք հավասարապես ճիշտ են, սակայն ոչ լիովին նույնը, դատարանը պետք է մեկնաբանի դրանք այնպես, որ հնարավորինս հաշտեցնի նրանց և առավել նպատակահարմար լինի համաձայնագրի նպատակի և առարկայի իրագործման տեսանկյունից (տե՛ս, ի թիվս այլոց, *Սանդի Թայմզի (Sunday Times)* 1979 թ. ապրիլի 26-ի վճիռը, շարք A, թիվ 30, էջ 30, պարբ. 48 և 1969 թ. մայիսի 23-ի Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 4-րդ կետը):

Ֆրանսերեն տեքստում aussitot բառը, ունենալով «անմիջապես» սահմանափակ իմաստ, հաստատում է, որ promptness [«անհապաղություն»] բառին վերագրվելիք տիրույթը սահմանափակ է, եթե նույնիսկ առնչվող հանգամանքները երբեք չեն կարող անտեսվել 3-րդ հոդվածի շրջանակներում գնահատում իրականացնելու համար: Մինչ promptness-ը պետք է գնահատվի յուրաքանչյուր գործի առանձնահատկությունների հիման վրա (տե՛ս վերը նշված *Դե Յոնգի, Բալյեի և վան դեն Բրինքի (de Jong, Baljet and van den Brink)* վճիռը, շարք A, թիվ 77, էջ 25, պարբ. 52), այս առանձնահատկություններին վերագրվելիք նշանակությունը երբեք չի կարող հասցվել այն աստիճանի, որ այն խախտի 5-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված երաշխիքի բուն գաղափարը: Այսինքն՝ այն չի կարող հասցվել այն աստիճանի, որ անձին արագ ազատ արձակելու կամ նրան արագ դատական մարմնին ներկայացնելու պետության պարտավորությունն ի չիք դարձվի:

60. Սույն գործը բացառապես վերաբերում է Հյուսիսային Իռլանդիայում ահաբեկչական գործողության մեջ կասկածվող անձանց ձերբակալությանը և կալանքին, որոնք կիրառվում են հատուկ օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակներում....

Դիմողներից ոչ ոք, փաստորեն, իր կալանքի տակ գտնվելու ժամանակ չի ներկայացվել դատավորին կամ դատական ատյանի պաշտոնյային: Հետևաբար, հարցը, որի վերաբերյալ որոշում պետք է կայացվի, այն է, թե արդյոք 5-րդ հոդվածի 3-րդ կետի նպատակների համար յուրաքանչյուր դիմողն անհապաղ ազա՞տ է արձակվել՝ հաշվի առնելով այն առանձնահատկությունները, որոնք մատնանշվում են կառավարության կողմից:

61. Ահաբեկչական հանցագործությունների հետաքննությունը, անկասկած, իշխանությունների համար լի է առանձնահատուկ խնդիրներով: Ճիշտ է նաև, որ Հյուսիսային Իռլանդիայում ոստիկանության՝ կալանքի ժամկետը երկարացնելու պահանջները պետքարտուղարին ներկայացնելը և նախարարի կողմից յուրաքանչյուր ոստիկանական պահանջի առանձին ուսումնասիրությունը գործադիր մարմնի կողմից վերահսկողության ձև են... Բացի այդ, հատուկ լիազորությունների շարունակության անհրաժեշտությունն անընդհատ վերահսկվել է խորհրդարանի կողմից, և դրա կիրառումը կանոնավորապես վերանայվել է անկախ անձանց կողմից: … Դատարանն ընդունում է, որ պայմանով, որ գոյություն են ունեցել համապատասխան երաշխիքներ, Հյուսիսային Իռլանդիայում տիրող ահաբեկչության համատեքստն ուներ այս ժամկետը երկարացնելու հետևանք, որի դեպքում իշխանությունները կարող էին, առանց 5-րդ հոդվածի 3-րդ կետը խախտելու, լուրջ ահաբեկչական հանցագործությունների մեջ կասկածվող անձին պահել կալանքի տակ նախքան նրան դատավորին կամ այլ դատական պաշտոնյային ներկայացնելը:

Կասկածյալ ահաբեկիչներին ձերբակալելու և կալանավորելու որոշումների նկատմամբ դատական վերահսկողություն սահմանելու դժվարությունները, որոնք նշում է կառավարությունը, կարող են ազդել 5-րդ հոդվածի 3-րդ կետի իրականացման եղանակի վրա, օրինակ՝ պահանջելով համապատասխան ընթացակարգային նախազգուշական միջոցներ՝ հաշվի առնելով ենթադրվող հանցագործությունների բնույթը: Այնուամենայնիվ, 5-րդ հոդվածի 3-րդ կետով դրանք չեն կարող արդարացնել հսկողությունից անհապաղ լրիվ հրաժարվելու հանգամանքը:

62. Ինչպես նշվել է վերը (պարբ. 59), promptness հասկացության մեկնաբանության և կիրառության շրջանակը սահմանափակ տիրույթ ունի: Դատարանի կարծիքով՝ չորս ժամկետներից նույնիսկ ամենակարճը, այն է՝ պրն Մակֆադենի չորս օր և վեց ժամ ոստիկանական կալանքը, դուրս է մնում այն սեղմ ժամկետային սահմանափակումներից, որոնք թույլատրվում են 5-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին մասով: Այս գործի առանձնահատկություններին նման կարևորություն վերագրելը, որպեսզի արդարացվի առանց դատավորին կամ այլ դատական պաշտոնյային ներկայացնելու կալանքի երկար տևողությունը, «անհապաղ» բառի անընդունելի լայն մեկնաբանություն կլինի: Ի վնաս անձի նման մեկնաբանությունը լրջորեն կթուլացներ 5-րդ հոդվածի 3-րդ կետի ընթացակարգային երաշխիքը՝ առաջացնելով այս դրույթով պաշտպանվող իրավունքի բուն էությունը խախտող հետևանքներ: Այսպիսով, դատարանը պետք է եզրակացնի, որ դիմողներից ոչ ոք անհապաղ չի ներկայացվել դատական մարմիններին կամ ձերբակալվելուց հետո անհապաղ ազատ չի արձակվել: Որևէ կասկած չկա, որ դիմողների ձերբակալության և կալանքի հիմքում եղել է համայնքը՝ որպես ամբողջություն, ահաբեկչությունից պաշտպանելու օրինական նպատակը, սակայն դա ինքնին բավարար չէ երաշխավորելու համար 5-րդ հոդվածի 3-րդ կետի առանձնահատուկ պահանջների հետ համապատասխանությունը:

Այսպիսով, բոլոր չորս դիմողների նկատմամբ խախտվել է 5-րդ հոդվածի 3-րդ կետը...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ . . .

Վճռում է, տասներկու կողմ և յոթ դեմ ձայներով, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում բոլոր դիմողների նկատմամբ...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Ռիսդալը և դատավորներ Կրեմոնան, Վիլջաուլմսոնը, Բինդշեդլեր-Ռոբերտը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Պինեյրո Ֆարինան, Փեթիթին, Ուոլշը, Էվանսը, Մակդոնալդը, Ռուսոն, Բերնհարդտը, Շպիլմանը, Մեյերը, Կարիլո Սալսեդոն, Վալտիկոսը, Մարտենսը և Փալմը: Դատավորներ Վիլջաուլմսոնը, Բինդշեդլեր-Ռոբերտը, Գյոլչյուքլուն, Մաթշերը և Վալտիկոսը հրապարակել են միասնական չհամընկնող կարծիք, որում հայտնել են, որ Հյուսիսային Իռլանդիայում տիրող բացառիկ իրավիճակը հանձնաժողովի հաստատված նախադեպային իրավունքի դիրքերից գնահատելուց հետո հանգել են այն եզրակացության, որ դիմողների կալանքի ժամկետներն արդարացված են եղել:

2 *Բրոգանի* գործի վերաբերյալ որոշմանն ի պատասխան՝ Միացյալ Թագավորությունը թույլտվություն է խնդրել 15-րդ հոդվածի շրջանակներում իր պարտավորություններից, այդ թվում՝ 5(3) հոդվածից շեղում անելու համար՝ վկայակոչելով արտակարգ դրությունը, որը, նրա կարծիքով, տիրում էր Հյուսիսային Իռլանդիայում: Հյուսիսային Իռլանդիայի առնչությամբ նախկինում Միացյալ Թագավորությունը մի քանի անգամ դիմել է 15-րդ հոդվածի շրջանակներում բացառություն անելու հնարավորությանը: *Բրոգանի* գործի ժամանակ բացառություն անելու ուժի մեջ գտնվող թույլտվություն գոյություն չի ունեցել: *Բրոգանի* դեպքում Միացյալ Թագավորության այս պատասխանը պայմանավորված էր նրանով, որ նրան չի հաջողվել գտնել տարբերակ, որով իր օրենքը կհամապատասխանեցներ այս վճռին, որը համահունչ էր իր ավանդույթներին և նաև թույլ էր տալիս նրան հակադրվել Հյուսիսային Իռլանդիայում առկա ահաբեկչության սպառնալիքին: *«Բրենիգանը և Մակբրայդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Brannigan and McBride v UK A.258-B (1993))* (այդ որոշման 15-րդ հոդվածի ասպեկտների վերաբերյալ տե՛ս ստորև՝ էջ 892), դատարանը վճռել է, որ Միացյալ Թագավորության շեղման մասին ծանուցումն ուժի մեջ է, այնպես որ դիմողները չեն կարող բողոքել, որ ահաբեկչության մեջ կասկածվող անձանց կալանավորումը նույն լիազորությունների շրջանակներում և նույն ժամանակահատվածում եղել է 5(3) հոդվածի խախտում:

2001 թ. փետրվարին Եվրոպայի խորհրդում ՄԹ-ի մշտական ներկայացուցիչը ուղարկել է բանավոր ծանուցում [Note Verbale] գլխավոր քարտուղարին՝ հրաժարվելով այս բացառությունից: Այս հրաժարումը պայմանավորված էր 2000 թ. «Ահաբեկչության մասին» օրենքի կիրառումով, համաձայն որի, ի թիվս այլոց, ոստիկանության պաշտոնյաները մինչև քառասունութ ժամով կարող էին ձերբակալել և կալանավորել ցանկացած անձի, որը ողջամտորեն կասկածվում էր ահաբեկչական գործողությունների կատարման, կազմակերպման և հրահրման մեջ: Դրանից հետո դատական մարմինը կարող էր երկարացնել կալանքի ժամկետը ևս հինգ օրով (համաձայն «Քրեական արդարադատության մասին օրենքի» 306-րդ բաժնի՝ այս ժամկետը երկարացվել է՝ կազմելով առավելագույնը տասնչորս օր և բուռն քննարկումներից հետո «Ահաբեկչության մասին» 2006 թ. օրենքի 23-րդ բաժնի համաձայն կրկին երկարացվել՝ կազմելով քսանութ օր):

3 *«Աքսոյն ընդդեմ Թուրքիայի» (Aksoy v Turkey (1996) 23 EHRR 553, 1996 VI 2260)* գործում դատարանը վճռել է, որ 15-րդ հոդվածի շեղման մասին ծանուցումը չի կարող արդարացնել դիմողին տասնչորս օր կալանքի տակ պահելու հանգամանքը՝ առանց նրան դատական պաշտոնյայի ներկայացնելու: Նման բան «դրության լրջությամբ» չէր պահանջվում (հոդված 15(1)): Դատարանը հայտարարել է.

78. Թեպետ դատարանը պաշտպանում է այն տեսակետը, որը նախկինում էլ առիթ է ունեցել մի քանի անգամ հայտնել (տե՛ս, օրինակ՝ վերը նշված *Բրոգանի և այլոց (Brogan and Others)* վճիռը), և համաձայն որի՝ ահաբեկչական հանցագործությունների հետաքննությունն անկասկած իշխանություններին կանգնեցնում է առանձնահատուկ խնդիրների առջև, չի կարող ընդունել, որ անհրաժեշտ է կասկածյալին տասնչորս օր պահել առանց դատական միջամտության: Այս ժամանակահատվածը չափից դուրս երկար է, և դրա հետևանքով դիմողը հայտնվել է խոցելի վիճակում ոչ միայն իր ազատության իրավունքի կամայական միջամտության, այլև խոշտանգման ենթարկվելու առումով (վերը՝ պարբ. 64): Բացի այդ, կառավարությունը չի ներկայացրել մանրամասն պատճառներ դատարանին, որպեսզի բացատրի, թե ինչո՛ւ է Հարավարևելյան Թուրքիայում ահաբեկչության դեմ պայքարը դատական միջամտությունը դարձրել անկիրառելի…

82. Իր վերոհիշյալ *Բրենիգանի և Մակբրայդի (Brannigan and McBride)* վճռով... դատարանն ընդունել է, որ Հյուսիսային Իռլանդիայում գոյություն են ունեցել կամայական վարքագծի և մեկուսի կալանքի դեմ գործող արդյունավետ երաշխիքներ: Օրինակ՝ նախնական ձերբակալության և կալանքի օրինականությունը փորձարկելու համար կարող էր օգտագործվել habeas corpus, ձերբակալությունից քառասունութ ժամ անց գործել է փաստաբանի հետ խորհրդակցելու բացարձակ և օրենքով ամրագրված իրավունք, և կալանավորներն իրավունք են ունեցել տեղեկացնելու իրենց բարեկամին կամ ընկերոջը իրենց կալանքի տակ գտնվելու մասին և տեսակցելու բժշկի հետ (op cit էջ 55-6, պարբ. 62-3):

83. Դրան հակառակ, այնուամենայնիվ, դատարանը կարծում է, որ այս դեպքում դիմողը, որը երկար ժամանակ պահվել է կալանքի տակ, ունեցել է անբավարար երաշխիքներ: Մասնավորապես՝ փաստաբանի, բժշկի, ազգականի կամ ընկերոջ հետ հաղորդակցության արգելքը և կալանքի օրինականությունը ստուգելու համար դատարան բերվելու իրական

հնարավորության բացակայությունը նշանակում են, որ նա լիովին գտնվել է այն անձանց հայեցողության տակ, ովքեր պահել են նրան:

4 Մշտական գործող դատարանը կիրառել է իր նախորդի մոտեցումը, այն է՝ գնահատելու համար կասկածվող ահաբեկչին բաց թողնելու արագությունը *«Օ'Հարան ընդդեմ Միացյալ Թագավորության» (O'Hara v United Kingdom)* գործում (տե՛ս վերը՝ էջ 284):

46. Դատարանը նկատում է, որ կառավարությունը չի վիճարկել, որ նախքան վերջնականապես ազատ արձակվելը դիմողը պահվել է վեց օր և տասներեք ժամ, և սա չի համապատասխանել ձերբակալված անձին անհապաղ համապատասխան դատական պաշտոնյային ներկայացնելու պահանջին: Անդրադառնալով իր նախադեպային իրավունքին (մասնավորապես, *Բրոգանը և այլք (Brogan and Others)* գործին ..., որի դեպքում ահաբեկիչների համար չորս օրից ավելի կալանքի ժամկետները չեն համարվել համատեղելի անհապաղ դատական վերահսկողության իրականացման հետ), դատարանը կարծում է, որ տվյալ դեպքում եղել է կոնվենցիայի 5(3) հոդվածի խախտում:

5 *«T.W.-ն ընդդեմ Մալթայի» (T.W. v Malta)* 1999 թ. ապրիլի 29-ի վճռով մեծ պալատը բացատրել է ձերբակալված կասկածյալ քրեական հանցագործների նկատմամբ 5(3) հոդվածով լիազորված ազգային դատական քննության նպատակը և պահանջները: Դիմողը ձերբակալությունից մեկ օր անց ներկայացվել է մագիստրատին: Նա մեղավոր չի ճանաչվել իր աղջկան ֆիզիկական և սեռական շահագործման ենթարկելու մեջ: Մագիստրատը նրան ազատ արձակելու կարգադրություն արձակելու լիազորություններ չի ունեցել: Տասնութ օր անց նա վերջապես գրավի դիմաց ազատ է արձակվել մեկ այլ մագիստրատի կողմից: Դիմողը վիճարկել է, որ առաջին մագիստրատի՝ իր շարունակական կալանքի հատկանիշները վերանայելու և նպատակահարմարության դեպքում իրեն գրավի դիմաց ազատ արձակելու կարգադրման անկարողությունը 5(3) հոդվածի խախտում է եղել: Մեծ պալատը միաձայն վճռել է.

41. Ինչպես դատարանը մի քանի առիթով նշել է, կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը երաշխավորում է քրեական հանցագործություն կատարելու մեջ կասկածվող ձերբակալված կամ կալանավորված անձանց կամայական ձերբակալությունից կամ չհիմնավորված ազատազրկումից զերծ մնալու իրավունքը (տե՛ս, ի թիվս այլոց, *«Ասենովը և այլք ընդդեմ Բուլղարիայի» (Assenov and Others v Bulgaria)* 1998 թ. հոկտեմբերի 28-ի վճիռ, Վճիռների և որոշումների հաշվետվություններ, 1998-VIII, էջ 3187, պարբ. 146): Սկզբունքորեն 1(գ) պարբերության հետ մեկ ամբողջություն կազմող 5-րդ հոդվածի 3-րդ կետի նպատակն այն է, որ կալանքը, երբ այն դադարում է ողջամիտ լինելուց, փոխարինվի պայմանական ազատ արձակմամբ: Այն փաստը, որ ձերբակալված անձը մուտք ունի դատական ատյաններ, բավարար չէ 5-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին մասի հետ համապատասխանություն ապահովելու համար: Այս դրույթով պահանջվում է, որ դատական պաշտոնյան, ում մոտ է տարվում ձերբակալված անձը, վերանայի այն հանգամանքները, որոնք պաշտպանում են կամ չեն պաշտպանում նրան կալանքի տակ պահելու հանգամանքը և, վկայակոչելով իրավական չափանիշները, որոշի, թե արդյոք կա՞ն պատճառներ, որոնք արդարացնում են կալանքը, իսկ նման պատճառների բացակայության դեպքում ազատ արձակի նրան … Այլ կերպ ասած՝ 5-րդ հոդվածի 3-րդ կետը դատական պաշտոնյայից պահանջում է քննության առնել կալանքի հատկանիշները:

42. 5-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխանելու համար դատական վերահսկողությունը պետք է անհապաղ կատարվի: Անհապաղության գնահատման համար պետք է հաշվի առնվեն յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունները … Այնուամենայնիվ, «անհապաղություն» հասկացության մեկնաբանության և կիրառման տիրույթը խիստ սահմանափակ է (տե՛ս *«Բրոգանը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»,* 1988 թ. նոյեմբերի 29-ի վճիռ, շարք A, թիվ 145-B, էջ 33-4, պարբ. 62):

43. Կալանքի նկատմամբ դատական վերահսկողությունը, բացի այն, որ պետք է իրականացվի անհապաղ, պետք է լինի նաև ինքնաբերաբար... Այն չի կարող կախման մեջ դրվել կալանավորված անձի նախորդ դիմումից: Այս պահանջը կարող է ոչ միայն փոխել 5-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված երաշխիքի բնույթը, երաշխիք, որը տարբերվում է 5-րդ հոդվածի 4-րդ կետի՝ կալանքի օրինականության նկատմամբ դատարանի կողմից վերանայման վարույթ սկսելու իրավունքի երաշխիքից ... Այն կարող է նույնիսկ ի չիք դարձնել 5-րդ հոդվածի 3-րդ կետի երաշխիքի նպատակը, որը անձին կամայական կալանքից պաշտպանելն է՝ ապահովելով, որ ազատազրկման գործողությունը ենթակա լինի անկախ դատական քննության (տե՛ս mutatis mutandis *«Քյուրտն ընդդեմ Թուրքիայի» (Kurt v Turkey)* 1998 թ. մայիսի 25-ի վճիռը, Հաշվետվություններ, 1998-III, էջ 1185, պարբ. 123): Կալանքի անհապաղ դատական վերանայումը նաև կարևոր է երաշխավորելու համար, որ կալանավորված անձը չի ենթարկվում բռնության (տե՛ս *«Աքսոյն ընդդեմ Թուրքիայի» (Aksoy v Turkey)* 1996 թ. դեկտեմբերի 18-ի վճիռը, Հաշվետվություններ, 1996-VI, էջ 2282, պարբ. 76): Բացի այդ, ձերբակալված

անձինք, որոնք արժանանում են այդպիսի վերաբերմունքի, հնարավոր է, որ չկարողանան միջնորդություն ներկայացնել՝ իմանալու համար իրենց կալանքի տակ պահելու հանգամանքը: Նույնը կարող է ճիշտ լինել ձերբակալված անձանց խոցելի խմբերի, ինչպես, օրինակ՝ մտավոր հետամնացների կամ դատական պաշտոնյայի լեզվով չխոսող անձանց համար:

44. Վերջապես, 5-րդ հոդվածի 3-րդ կետի հիման վրա դատական պաշտոնյան նախքան համապատասխան որոշում ընդունելը անձամբ պետք է ունկնդրի կալանավորված անձին...

Հետևաբար, քանի որ առաջին մագիստրատը լիազորություն չի ունեցել սկսելու այսպիսի վերանայման գործընթաց, տեղի է ունեցել 5(3) հոդվածի խախտում: Այս վճիռը հստակորեն բացահայտում է ազգային մարմինների վրա դրված պարտավորությունների շրջանակը, որն ընդգրկում է ձերբակալված անձին մեքենայորեն և անհապաղ դատական ատյանին (որը լիազորություն ունի վերանայելու նրան շարունակական կալանքի տակ պահելու հատկանիշները կամ կարգադրելու, որ նա ազատ արձակվի, եթե կալանքի տակ պահելն այլևս ողջամիտ չէ) ներկայացնելու պարտավորությունը: Այսպիսով, այս գործընթացը պետք է արդյունավետ երաշխիքներ ապահովի՝ ուղղված ձերբակալված անձանց կալանքի անհարկի երկարացման դեմ:

.....

«Վեմհոֆն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության»
Wemhoff v Federal Republic of Gemany A.7 (1968) 1 EHRR 55
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը, որն Արևմտյան Գերմանիայի քաղաքացի էր, ձերբակալվել է 1961 թ. նոյեմբերի 9-ին՝ վստահությունը խախտելու հանցարարքի մեջ մեղսակցություն ունենալու կասկածանքով: Արևմտյան Բեռլինի դատախազությունը գործի հետաքննությունն ավարտել է 1964 թ. փետրվարի 24-ին: Մեղադրական եզրակացությունը պատրաստվել է 1964 թ. ապրիլի 23-ին, և 1964 թ. հուլիսի 17-ին դիմողի գործն ուղարկվել է դատարան: Դատն սկսվել է Բեռլինի տարածքային դատարանում 1964 թ. նոյեմբերի 9-ին: 1965 թ. ապրիլի 7-ին դիմողը մեղավոր է ճանաչվել «վստահության խախտման հատկապես լուրջ արարքի տևական հրահրման» մեջ՝ դատապարտվելով վեց և կես տարվա ազատազրկման: Նախնական կալանքի տակ գտնվելու ժամանակը հաշվանցվել է նշանակված պատժի ժամկետին: Դատավճռի դեմ դիմողի վերաքննիչ բողոքը մերժվել է 1965 թ. դեկտեմբերի 17-ին: Առաջին անգամ ձերբակալվելուց հետո դիմողը շարունակաբար մնացել է կալանքի տակ: Սա մի խճճված գործ էր, որի մեջ ներգրավված էին նաև 12 այլ մեղադրյալներ, և պահանջվել է բանկային հաշիվների և գործարքների բազմաթիվ ստուգումներ: Հանձնաժողովն ընդունել է դիմումը, որպեսզի քննության առնի Արևմտյան Գերմանիայի կողմից 5(3) և 6(1) հոդվածների ենթադրյալ խախտման հատկանիշները: Իր հաշվետվության մեջ հանձնաժողովը՝ յոթ կողմ և երեք դեմ ձայներով, կարծիք է հայտնել, որ տեղի է ունեցել 5(3) հոդվածի խախտում, քանի որ դիմողի դատը տեղի չի ունեցել «ողջամիտ ժամկետում», և միաձայն որոշել, որ տեղի չի ունեցել 6(1) հոդվածում ամրագրված «ողջամիտ ժամկետի» երաշխիքի խախտում: Հանձնաժողովը գործն ուղարկել է դատարան: Հետևյալ հատվածները վերաբերում են 5(3) հոդվածին: Դատարանը միաձայն վճռել է, որ 6-րդ հոդվածը չի խախտվել:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

4. ... Քանի որ «ողջամիտ» բառը կիրառվում է այն ժամկետի նկատմամբ, որի ընթացքում անձն ունի դատաքննության իրավունք, դրա զուտ բառացի մեկնաբանությունը դատական իշխանություններին կկանգնեցներ վարույթը մինչև վճռի կայացումը ողջամիտ ժամկետում անցկացնելու կամ մեղադրյալին որոշակի երաշխիքների դիմաց ազատ արձակելու երկու պարտավորությունների միջև ընտրություն կատարելու առջև:

5. Դատարանը բավականաչափ վստահ է, որ այսպիսի մեկնաբանությունը չի համապատասխանում բարձր պայմանավորվող կողմերի մտադրությանը: Հնարավոր չէ պատկերացնել, որ նրանք կարող էին հակված լինել թույլ տալ դատական իշխանություններին, որ մեղադրյալին բաց թողնելու գնով երկարացնեն դատական վարույթի տևողությունն ավելի քան ողջամիտ ժամկետը: Բացի այդ, սա անկասկած կհակասեր վերը մեջբերված 6(1) հոդվածին…

5-րդ հոդվածը, որը սկզբում հաստատում է բոլոր անձանց ազատության և անվտանգության իրավունքը, այնուհետև սահմանում է այն իրավիճակները և պայմանները, որոնց դեպքում այս սկզբունքից կարող են շեղումներ արվել:

…Այսպիսով, ազգային դատարանները, որոնցից հետո հնարավոր է նաև Եվրոպական դատարանը, հիմնականում քրեորեն հետապնդվող անձի կալանքի տակ գտնվելու փաստի շրջանակներում պետք է որոշում կայացնեն այն հարցի վերաբերյալ, թե արդյոք նախքան մեղադրյալի նկատմամբ վճռի կայացումն անցած ժամանակը, ինչ էլ լինի պատճառը, որոշակի փուլում անցե՞լ է ողջամտության սահմանը, ասել է թե՝ տեղի՞ք է տվել ավելի մեծ զրկանքի, քան այդ գործի հանգամանքներում կարող էր ակնկալվել անմեղ համարվող անձից:

Այլ կերպ ասած՝ համաձայն 5(3) հոդված՝ մեղադրյալների պայմանական կալանքը չպետք է անցնի ողջամիտ ժամկետի սահմանները…

6. 5(3) հոդվածի մեկնաբանությանը վերաբերող մեկ այլ հարցը ... կալանքի տևողության նկատմամբ գործող «ողջամիտ ժամկետի» պահանջն է:

Գերմանիայի կառավարության ներկայացուցիչը շարադրել է այն պատճառները, որոնց հիման վրա պաշտպանել է հանձնաժողովի զեկույցում նշված մեկնաբանությունը, որ 5(3) հոդվածում նշված ժամկետն ավարտվում է այն պահին, երբ անձը ներկայացվում է գործը լսող դատարանին:

7. Դատարանը չի կարող ընդունել այս սահմանափակող մեկնաբանությունը: Ճիշտ է, որ կոնվենցիայի անգլերեն տեքստը նման մեկնաբանության տեղիք տալիս է ...

Սակայն մինչ անգլերեն տարբերակը թույլ է տալիս կատարել երկու մեկնաբանություն, ֆրանսերեն տարբերակը, որն ունի հավասար իրավազորություն, թույլ է տալիս միայն մեկ մեկնաբանություն: Համաձայն դրա՝ մեղադրվող անձին ողջամիտ ժամկետում ազատելու պարտավորությունը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ անձը jugee է, այսինքն՝ մինչև այն օրը, երբ նրա նկատմամբ կայացված վճռով դատավարությունն ավարտվում է: Բացի այդ, նա պետք է արձակվի pendant la procedure-ի ընթացքում, որը ընդգրկուն հասկացություն է և ներառում է դատավարության և հետաքննության գործընթացները:

8. Այսպիսով, ունենալով պայմանագրի երկու տարբերակ, որոնք հավասարազոր են, սակայն լիովին նույնը չեն, դատարանը, հետևելով հաստատված միջազգային իրավունքի նախադեպերին, պետք է մեկնաբանի դրանք այնպես, որ հնարավորինս մոտեցնի դրանք: Քանի որ այն օրինաստեղծ պայմանագիր է, անհրաժեշտ է նաև փնտրել այնպիսի մեկնաբանություն, որն ամենանպատակահարմարն է պայմանագրի նպատակի և առարկայի իրագործման տեսանկյունից, ոչ թե առավելագույնս սահմանափակում է կողմերի ստանձնած պարտավորությունները: Հնարավոր չէ տեսնել, թե ինչու հանցագործությունների մեջ կասկածվող անձանց չափից ավելի երկար նախնական կալանքի տակ մնալու դեմ 5-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունը չպետք է շարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ դատավճիռը կայացված չէ, այլ պետք է դադարի այն պահին, երբ սկսվում է դատավարությունը:

9. Մնում է հավաստիանալ, թե արդյոք 5(3) հոդվածում նշված կալանքի ժամկետի ավարտն այն օ՞րն է, երբ դատապարտումը դառնում է վերջնական, կամ պարզապես այն օրը, երբ որոշում է կայացվում մեղադրանքի մասին, թեկուզ միայն առաջին ատյանի դատարանի կողմից:

Դատարանը պաշտպանում է այս վերջին մեկնաբանությունը:

Կա մեկ նկատառում, որը, ըստ նրա, որոշիչ է: Դա այն է, որ անձը, որը մեղավոր է ճանաչվել առաջին ատյանի դատարանի կողմից, անկախ նրանից՝ գտնվել է թե չի գտնվել կալանքի տակ մինչև այդ պահը, ենթակա է 5(1)(2)(ա) հոդվածի ազդեցությանը, համաձայն որի after conviction [ապացուցումից հետո] անձը կարող է ազատազրկվել: Այս վերջին արտահայտությունը չի կարող մեկնաբանվել որպես միայն վերջնական դատապարտման վրա ազդեցություն ունեցող արտահայտություն, քանի որ այս դեպքում կբացառեր նիստի ժամանակ դեռևս ազատության մեջ գտնվող դատապարտված անձանց ձերբակալությունը՝ անկախ այն հանգամանքից, թե նրանք դատական պաշտպանության ինչ միջոցներից դեռ կարող են օգտվել: Ներկայումս նման փորձը հաճախ կիրառվում է մի շարք անդամ պետություններում, և հնարավոր չէ հավատալ, որ նրանք մտադրություն են ունեցել հրաժարվելու դրանից: Չի կարելի նաև անտեսել, որ բողոքարկման կամ վերանայման վարույթների ժամանակ կալանքի տակ գտնվող անձի մեղավորությունն ապացուցվել է [առաջին ատյանի դատարանում] տեղի ունեցած դատավարության ընթացքում՝ պահպանելով 6-րդ հոդվածի պահանջները … Անձը, որը բողոքում է, որ դատապարտումից հետո իր կալանքը շարունակվում է, քանի որ իր [վերաքննիչ] բողոքի վերաբերյալ որոշումը ձգձգվում է, չի կարող վկայակոչել 5(3) հոդվածը, սակայն ամենայն հավանականությամբ կարող է պնդել, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածում նշված «ողջամիտ ժամկետի» անտեսում:

10. Մեղադրվող անձին կալանքի տակ պահելու ողջամտությունը պետք է գնահատվի՝ յուրաքանչյուր դեպքում հիմք ընդունելով գոյություն ունեցող առանձնահատկությունները: Կարող են հաշվի առնվել խիստ տարաբնույթ գործոններ: Հետևաբար, տվյալ կալանքի ողջամտության գնահատման ժամանակ հնարավոր են կարծիքների մեծ տարբերություններ...

13. Վեմհոֆի անունով 1961 թ. նոյեմբերի 9-ին ստացված ձերբակալության սանկցիայի հիմքում ընկած է եղել այն մտավախությունը, որ ազատության մեջ մնալու դեպքում նա կդիմի փախուստի և կոչնչացնի իր դեմ գոյություն ունեցող բոլոր փաստերը, մասնավորապես՝ կապի մեջ մտնելով այն անձանց հետ, որոնք կարող էին իր մեղսակիցները լինել… Մինչև 1963 թ. օգոստոսի 5-ը դատարանների որոշումները, որոնք մերժել են Վեմհոֆի՝ նախքան դատավարության ավարտը կալանքից ազատ արձակվելու մասին բազմաթիվ միջնորդությունները, շարունակել են վկայակոչել այս երկու պատճառը:

Թեպետ այդ օրվա դրությամբ հետաքննությունը դեռևս չէր ավարտվել, վերաքննիչ դատարանն ընդունել է, որ որոշակի կասկած կա, որ փաստերը թաքցնելու վտանգ դեռևս գոյություն ունի, սակայն վճռել է, որ մյուս պատճառը դեռ ուժի մեջ է ... և նույն պատճառաբանությունը կրկնվել է ավելի ուշ որոշումներում, որոնցով մերժել են դիմողի բողոքները [միջնորդությունները]:

14. Ինչ վերաբերում է փաստերը թաքցնելու վտանգին, ապա դատարանը կարծում է, որ հաշվի առնելով այն հանցագործությունների բնույթը, որոնցում Վեմհոֆը կասկածվում էր, ինչպես նաև գործի խիստ բարդությունը, Գերմանիայի դատարանների այս անհանգստությունն արդարացված էր:

Փախուստի վտանգի առումով դատարանն այն կարծիքին է, որ դատապարտվելու դեպքում մեղադրյալի կողմից սպասելի պատժի խստությունը կարող է ճշմարտացիորեն համարվել նրա փախուստը խրախուսող գործոն: Սակայն այս մտավախության ազդեցությունը կալանքի շարունակմանը զուգահեռ թուլանում է, հետևաբար, մեղադրյալի կողմից սպասելի պատժի ազդեցությունը նվազում է: Այնուամենայնիվ, այս առումով խիստ պատժի հավանականությունը բավարար չէ: Բացի այդ, Գերմանիայի դատարանները մեծ զգուշավորություն են դրսևորել փախուստի վտանգի վերաբերյալ իրենց պնդումները հիմնավորելիս՝ վարույթի վաղ փուլերում վկայակոչելով որոշակի հանգամանքներ, որոնք վերաբերել են մեղադրյալի էական դիրքորոշմանը և վարքագծին…

15. Դատարանը ցանկանում է, այնուամենայնիվ, շեշտել, որ կոնվենցիայի 5(3) հոդվածի եզրափակիչ բառերը ցույց են տալիս, որ երբ անձին շարունակական կալանքի տակ պահելու միակ պատճառն այն մտավախությունն է, որ մեղադրյալը կարող է դիմել փախուստի և, հետևաբար, խուսափել դատավարությանը ներկայանալուց, նրան դատավարության ընթացքում ազատ արձակելու վերաբերյալ կարգադրություն պետք է արվի, եթե հնարավոր է նրանից ստանալ իր ներկայությունն ապահովող երաշխիքներ:

Կասկածից վեր է, որ այնպիսի ֆինանսական գործում, որպիսին այս գործն է, որի մեջ ներգրավված է եղել Վեմհոֆը, նման երաշխիքների էական հատկանիշը պետք է լինի նրա կողմից գրավի հանձնումը կամ մեծ չափի ավանդի տրամադրումը: Այս հարցի կապակցությամբ նրա կողմից ընդունած և հաջողություն ապահոված մոտեցումը (փաստերի շարադրանքը, պարբ. 5 և 14) [1962 թ. օգոստոսին դիմողն առաջարկել է 200.000 գերմանական մարկի ավանդ, սակայն երկու օր անց՝ ակնհայտորեն մինչ դատարանը կքննարկեր այն, հետ է կանգնել իր առաջարկից: Նրան դատապարտելուց հետո դատարանն ընդունել է 100.000 գերմանական մարկի առաջարկը, որն այնուհետև փոխարինվել է շատ ավելի նվազ գումարով, որը դատարանի համար ընդունելի չի համարվել] ցույց չեն տվել, որ նա պատրաստ է եղել ներկայացնելու այդ երաշխիքները:

16. Այս հանգամանքներում դատարանը չի կարող եզրակացնել, որ տեղի է ունեցել 5(3) հոդվածով ամրագրված պարտավորությունների խախտում, եթե 1961 թ. նոյեմբերի 9-ից մինչև 1965 թ. ապրիլի 7-ը Վեմհոֆի պայմանական կալանքը պայմանավորված չի եղել (ա) քննության (որն ավարտվել է միայն 1964 թ. փետրվարի վերջին) դանդաղությամբ, կամ (բ) հետաքննության ավարտման և մեղադրական եզրակացության առաջադրման (1964 թ. ապրիլ) կամ մեղադրական եզրակացության առաջադրման և դատական վարույթի (1964 թ. նոյեմբերի 9) միջև ընկած ժամանակային տարբերություններով, կամ (գ) դատավարության տևողությամբ (որը տևել է մինչև 1965 թ. ապրիլի 7-ը): Կասկած չի կարող լինել, որ եթե մեղադրյալը հանրային շահի պատճառաբանությամբ ողջամտորեն կալանքի տակ է վերցվում այս ժամանակահատվածների ընթացքում, ապա կարող է տեղի ունենալ 5(3) հոդվածի խախտում, եթե վարույթը, ինչպիսին էլ լինի պատճառը, տևում է զգալի երկար:

17. Այս առումով դատարանը համամիտ է հանձնաժողովի հետ, որ դատական մարմինների կողմից գործը վարելու վերաբերյալ որևէ քննադատություն չի կարող հնչել: Քննության և դատավարության բացառիկ տևողությունն արդարացված են գործի բացառիկ բարդությամբ և հետաձգման անխուսափելի պատճառներով. . .

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

Վեց կողմ և մեկ դեմ ձայներով վճռում է, որ կոնվենցիայի 5(3) հոդվածի խախտում չի եղել. . .

ԴԱՏԱՎՈՐ ՋԵՔԻԱՅԻ ՄԱՍՆԱԿԻ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Դատավարությունն ավարտելու ժամանակի վրա մեծապես ազդել է նախնական վարույթի (որի մեջ են մտնում նախնական հարցաքննությունները, հետաքննությունը և մեղադրանքի հարուցումը), գործը դատարանին ներկայացնելու և դատարանի կողմից հետաքննությունը վերսկսելու լիազորությունների վերաբերյալ քրեական իրավունքի և ընթացակարգի վրա գերակայող երկրի իրավական համակարգը . . .

[Նախադեպային իրավունքի] համակարգում ... հարցումները և փաստերի հավաքումն իրականացվում են ոստիկանության և դատախազության կողմից: Նրանք գործը ներկայացնում են դատարան դատավարության նպատակով, իսկ մեղադրական ակտերով հետապնդվող հանցագործությունների դեպքում՝ երդվյալ ատենակալների ժողովին ներկայացնելուց առաջ նախնական դատաքննության անցկացման նպատակով: [Քաղաքացիական օրենքի] ... համակարգերում քննությունն իրականացնում է դատավորը, և մեղադրյալի դատը սկսվում է այն բանից հետո, երբ դատական քննությունն ավարտված է, և կայացված է որոշում, որ գործը պետք է մտնի դատավարության փուլ ...

Մինչ առաջին համակարգում կասկածյալի դեմ prima facie գործ սկսելու համար բավարար փաստերը պետք է սովորաբար գոյություն ունենան նախքան նրա դեմ մեղադրանք հարուցելը և նրան կալանավորելը, այս երկրորդ՝ մայրցամաքային իրավունքի համակարգում տպավորությունն այնպիսին է, որ այդ փաստերի առկայությունը վաղ փուլում էական նշանակություն չունի: Թվում է, թե դատական պաշտոնյաներին գոհացնող տեղեկությունները բավարար են կասկածյալին ձերբակալելու և կալանավորելու համար:

Այս երկու համակարգերի հիմնարար տարբերությունների հետևանքով կասկածվող անձինք, որպես կանոն, կալանքի տակ են պահվում շատ ավելի երկար ժամանակ մայրցամաքում, քան Անգլիայում կամ այլ երկրներում, որտեղ գերիշխում է նախադեպային իրավունքի համակարգը:

… Իմ նպատակն այս երկու համակարգերի արժանիքներին կամ թերություններին անդրադառնալը չէ: Առարկելով ընդհանուր ուղղությանը՝ ես ցանկանում եմ շեշտել այն փաստը, որ եթե Անգլիայում, որը Եվրոպայի խորհրդի անդամ է, «ողջամիտ ժամկետի» հայեցակարգը դատավարությանը սպասող չդատապարտված անձի կալանքի ժամկետի առումով թույլ չի տալիս այս ժամկետը վեց ամսից ավելի երկարացնել նույնիսկ բացառիկ դժվար և բարդ գործերի դեպքում, կարո՞ղ ենք ասել, որ մայրցամաքում համանման գործի դեպքում կալանքի ժամկետը կարող է վեց անգամ ավելի երկար լինել և դեռևս համարվել ողջամիտ և, հետևաբար, կոնվենցիային համահունչ:

…Արդարացիորեն կարելի է եզրահանգել, որ կոնվենցիան ստորագրած պետությունները նպատակ են ունեցել, ի թիվս այլոց, ստեղծել ազատության իրավունքի ընդհանուր չափորոշիչ, որի շրջանակը չի կարող երկրից երկիր խիստ տարբեր լինել...

Եթե ենթադրաբար անմեղ մարդը տարիներ շարունակ պահվում է կալանքի տակ, ապա դա կործանարար ազդեցություն կունենա նրա համար: Ճիշտ է, *Վեմհոֆի* գործում դատավարությունն ավարտվել է դատապարտումով, սակայն այն կարող էր ավարտվել նաև արդարացումով...

Ես հավատում եմ, որ բոլոր համակարգերում միշտ գոյություն ունեն տարբերակներ և միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս խուսափելու անողջամտորեն երկար դատավարություններից . . .

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Ռոլինը և դատավորներ Ռոդենբերգը, Ուոլդը, Մոզլերը, Զեքիան, Ֆավրեն և Բիլջը:

2 Որոշելով, որ 5(3) հոդվածի «ողջամիտ ժամկետի» երաշխիքը հնարավորություն է տալիս վերանայելու այն հիմքերը, որոնցով 5(1)(գ) հոդվածի շրջանակներում նախքան դատավարության ավարտը կալանավորված անձը շարունակում է կալանքի տակ մնալ, ինչպես նաև վերահսկողություն սահմանելու նախքան դատավարության ավարտը կալանքի տակ պահվող անձի դեմ սկսված վարույթի ժամկետի նկատմամբ, դատարանն իմաստ է հաղորդել անհստակ տեքստին՝ հստակորեն լրացնելով այն բացը, որն այլապես գոյություն կունենար կոնվենցիայում:

3 *«Շտոգմյուլլերն ընդդեմ Ավստրիայի» (Stögmüller v Austria A.9 (1969))* գործում դատարանը հետևյալ կերպ ի ցույց է դրել այն ընդհանուր թեստը, որը պետք է կիրառվի, երբ որոշվում է, թե արդյոք մեղադրվող անձի անհետացման վտանգը չափից ավելի մե՞ծ է, որպեսզի թույլատրվի նրա ազատ արձակումը.

Պետք է գոյություն ունենան մի ամբողջ խումբ հանգամանքներ ... որոնք ենթադրել են տալիս, որ փախուստի հետևանքները և վտանգները նրան [մեղադրյալին] կթվան շատ ավելի փոքր չարիք, քան նրա շարունակական բանտարկությունը:

Բացի փախուստի վտանգներից և փաստերի կոծկումից, *«Մացնեթերն ընդդեմ Ավստրիայի» (Matznetter v Austria A.10 (1969))* գործում դատարանը նաև չորս կողմ և երեք դեմ ձայներով ընդունել է, որ «գործի առանձնահատուկ հանգամանքներում» հանցագործության կանխումը կալանքի համար ընդունելի հիմք է: Սա կարող է տեղի ունենալ այն դեպքում, երբ լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ ազատ արձակվելու դեպքում մեղադրյալը կկատարի նույն կարգի հանցագործություն, որի մեջ մեղադրվում է, կամ էլ՝ ավելի լուրջ հանցագործություն կամ հանցագործություններ, թեպետ այն ժամանակ, երբ առաջացել է նրան ազատ արձակելու հարցը, չի կարող նշվել որևէ առանձնահատուկ հանցագործություն, որը նա կկատարեր ազատ արձակվելու դեպքում:

4 Հասարակական կարգին սպառնացող վտանգը նույնպես կարող է հիմք լինել գրավի մերժումն արդարացնելու համար: *«Լետելիեն ընդդեմ Ֆրանսիայի» (Letellier v France, A.207 (1991) 14 EHRR 83)* գործում դիմողը Լա Վարենն Սենտ Հիլայրում՝ Փարիզի արվարձանում, բար-ռեստորան ուներ: Նա մեղադրվում էր իր երկրորդ ամուսնու սպանությանը մասնակցելու մեջ: Սպանությունը կատարած անձը և նրա հանցակիցը հայտարարել են, որ դիմողը հրահանգներ է տվել իրենց և վճարել սպանության կատարման համար: Թեպետ դիմողը մի անգամ մեկ ամիս ժամկետով ազատ է արձակվել գրավի դիմաց, դատարանի կարգադրության հիման վրա կրկին կալանքի տակ է վերցվել այն հիմքով, որ նրան կալանքի տակ պահելն «անհրաժեշտ է հասարակական կարգը հանցագործության պատճառով առաջացած հուզումներից պաշտպանելու համար» (քրեական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդված): Դատարանը վճռել է, որ կալանքը հակասել է 5(3) հոդվածին, քանի որ չեն եղել փաստեր, որոնք ցույց կտային, որ դիմողի ազատ արձակումը, փաստորեն, ներկայացրել է հասարակական կարգի խնդիր: Դատարանը հայտարարել է.

> 51. Դատարանն ընդունում է, որ որոշ հանցագործություններ, որոնք կարող են իրենց առանձնահատուկ ծանրության և հասարակության վերաբերմունքի պատճառով առաջացնել սոցիալական հուզումներ, կարող են արդարացնել նախնական կալանքը՝ առնվազն միառժամանակ: Հետևաբար, բացառիկ հանգամանքներում այս գործոնը կարող է հաշվի առնվել կոնվենցիայի նպատակների համար, սակայն բոլոր դեպքերում այնքանով, որքանով դա ճանաչվում է ներպետական օրենսդրությամբ, ինչպես, օրինակ՝ քրեական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածով, որն անդրադառնում է հանցագործության պատճառով առաջացած հասարակական հուզումներ հասկացությանը:
>
> Այնուամենայնիվ, այս հիմքը կարող է համարվել տեղին և բավարար միայն այն դեպքում, երբ այն հիմնված է այնպիսի փաստերի վրա, որոնք ցույց են տալիս, որ մեղադրյալի ազատ արձակումը կարող է գործնականում առաջ բերել հասարակական հուզումներ: Բացի այդ, կալանավորումը կշարունակի մնալ օրինական, եթե հասարակական կարգը փաստացի մնում է սպառնալիքի տակ: Դրա շարունակականությունը չի կարող օգտագործվել անձի ազատազրկման պատժի ժամանակից շուտ ի կատար ածման համար:
>
> Այս դեպքում այս պայմանները բավարարված չեն եղել: Մեղադրական ակտերի կազմման բաժանմունքները գնահատել են ազատազրկումը շարունակելու անհրաժեշտությունը զուտ վերացական տեսանկյունից՝ հաշվի առնելով կատարված հանցագործության ծանրությունը: Սա տեղի է ունեցել հակառակ այն փաստին, որ դիմողը նշել է իր 1986 թ. հունվարի 16-ի և 1987 թ. ապրիլի 10-ի բացատրություններում, որ զոհի մայրը և քույրը որևէ դիտողություն չեն արել ազատ արձակվելու մասին նրա միջնորդությունների վերաբերյալ...

5 *«Կաբալերոն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Caballero v UK [2000] Crim LR 587)* Եվրոպական դատարանն ընդունել է Միացյալ Թագավորության կառավարության խոստովանությունը, որ 1994 թ. «Քրեական արդարադատության և հասարակական կարգի մասին» օրենքի 25-րդ բաժնի՝ բռնաբարության մեջ մեղադրվող անձին գրավի դիմաց մեքենայորեն ազատ արձակման մերժումը եղել է 5(3) հոդվածի խախտում: Ըստ 25-րդ բաժնի՝ սպանության, չկանխամտածված մարդասպանության կամ բռնաբարության, կամ սպանության կամ բռնաբարության փորձի մեջ մեղադրվող անձը «չի կարող գրավի դիմաց ազատ արձակվել ... միայն այն դեպքում, եթե նախկինում դատապարտվել է ... այդպիսի հանցագործություն կամ անզգույշ սպանություն կատարելու համար և նախկին դատապարտման ժամանակ ենթարկվել ազատազրկման պատժի կամ երկարաժամկետ կալանքի, եթե նա այն ժամանակ եղել է երեխա կամ երիտասարդ անձնավորություն [պատանի]»:

Դրանից հետո, *«S.C.B.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (S.C.B. v United Kingdom)* 2001 թ. հունիսի 19-ի վճռում դատարանն ուսումնասիրել է 5(3) հոդվածի պահանջներին 25-րդ բաժնի

համապատասխանությունը, երբ անձին, որը հետագայում արդարացվել է իր դեմ առաջադրված բոլոր մեղադրանքներից, վեց ամիս շարունակ մերժել են գրավի դիմաց ազատ արձակվելու հնարավորությունից: Թեպետ կառավարությունն ընդունել է, որ եղել է 5(3) հոդվածի խախտում, դատարանը որոշել է, որ պետք է քննության առնի դիմողի բողոքները:

21. Ինչ վերաբերում է այս բողոքների հատկանիշներին, ապա դատարանը նշում է, որ *Կաբալերոյի (Caballero)* գործի առնչությամբ կառավարությունը համաձայնել է, երբ այդ գործի կապակցությամբ հանձնաժողովն իր զեկույցում եզրակացրել է, որ 1994 թ. օրենքի 25-րդ բաժինը հակասում է կոնվենցիայի 5-րդ հոդված 3-րդ և 5-րդ կետի դրույթներին:

22. Այդ զեկույցում հանձնաժողովի պատճառաբանությունը կարող է ընդհանրացվել հետևյալ կերպ: Հանձնաժողովը նկատել է, որ գործադիր մարմինների կողմից անձի ազատության իրավունքի մեջ կատարվող միջամտության նկատմամբ դատական վերահսկողությունը 5-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված երաշխիքների էական հատկանիշն է և նպատակ ունի մեղադրվող անձանց նախնական կալանքի շրջանում նվազեցնել կամայականության ռիսկը: Այդ դատական վերահսկողությունն ապահովվում է որոշ ընթացակարգային և նյութական երաշխիքների միջոցով. դատավորը (կամ այլ պաշտոնատար անձը), որին «անհապաղ ներկայացվում է» մեղադրյալը, պետք է ընդունվի որպես գործադիր մարմիններից և վարույթի կողմերից անկախ անձ: Դատավորը, որն անձամբ լսել է մեղադրյալին, պետք է քննության առնի հանրային շահի իրական պահանջի առկայության բոլոր կողմ և դեմ փաստերը, որոնք արդարացնում են մեղադրյալի ազատությունը հարգելու կանոնից արվող բացառությունը՝ պատշաճ ուշադրություն դարձնելով անմեղության կանխավարկածին: Եվ այդ դատավորը պետք է իրավասություն ունենա կարգադրելու ազատ արձակել մեղադրյալին: Անվիճելի է, որ պրն Կաբալերոյի վրա տարածվել է 1994 թ. օրենքի 25-րդ բաժինը: Հանձնաժողովը համարել է, որ մագիստրատի կողմից նրան նախնական կալանքից գրավի դիմաց ազատ արձակելը բացառվել է ի սկզբանե օրենսդրի կողմից 1994 թ. օրենքի 25-րդ բաժնի միջոցով: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով պահանջվող դատական վերահսկողության վերացումը հանձնաժողովը համարել է այդ հոդվածի խախտում...

23. Դատարանը որևէ պատճառ չի տեսնում, որ չհամաձայնի *Կաբալերոյի* գործով 5-րդ և 13-րդ հոդվածների առնչությամբ հանձնաժողովի արած եզրակացություններին և, այդ համատեքստում կարծում է, որ Կաբալերոյի և սույն դիմողի գործերի համապատասխան փաստերի միջև էական տարբերություններ չկան: Դատարանը կարծում է, որ 1994 թ. օրենքի 25-րդ բաժինը կիրառվել է դիմողի գործի նկատմամբ և այդպիսով՝ վերացրել նախնական կալանքի նկատմամբ դատական վերահսկողությունը, ինչը պահանջվում է կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով:

24. Հետևաբար, դատարանը եզրակացնում է, որ տեղի են ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերի խախտումներ:

1998 թ. խորհրդարանը բարեփոխել է 25-րդ բաժինը «Հանցավորության և անկարգությունների մասին» օրենքի 56-րդ բաժնով, համաձայն որի՝ նշված մեղադրանքների դեպքում «գրավի դիմաց ազատ արձակումը… թույլատրվում է միայն այն դեպքում, երբ դատարանը, կամ, հարկ եղած դեպքում կոնստաբլը, որոնք քննության են առնում գրավի դիմաց ազատ արձակման հարցը, եզրակացնում են, որ կան բացառիկ հանգամանքներ, որոնք արդարացնում են այն»:

……

«Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի»
(Kalashnikov v Russia) 2002 թ. հուլիսի 15-ի վճիռ
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

1995 թ. դիմողը զբաղեցրել է բանկի նախագահի պաշտոն: Այդ տարվա փետրվարին նրա դեմ սկսվել է քրեական վարույթ բանկի ֆոնդերի յուրացման և մասնաբաժինների ապօրինի օգտագործման կապակցությամբ: 1995 թ. հունիսին դատախազի կարգադրության հիման վրա նա ձերբակալվել է և վերցվել նախնական կալանքի տակ, քանի որ ասվել է, որ Կալաշնիկովը խանգարել է քրեական հետաքննությանը: Այնուհետև դիմողի փաստաբանը բազմաթիվ ապարդյուն միջնորդություններ է ներկայացրել դատարաններ՝ պահանջելով, որ Կալաշնիկովը գրավի դիմաց ազատ արձակվի: 1999 թ. օգոստոսին Մագադանի քաղաքային դատարանը նրա նկատմամբ կայացրել է մեղադրական վճիռ

օրենքի մեկ կետով և արդարացրել նրան երկու կետով առաջադրված մեղադրանքների մասով: Դատարանը նրան դատապարտել է հինգ և կես տարվա ազատազրկման (որի սկիզբը համարվել է 1995 թ. նրան կալանավորելու ժամանակը): 2000 թ. մայիսին հայտարարված համաներման արդյունքում նա ազատ է արձակվել բանտից:

Դիմողը բողոքել է դատարանին, որ, ի թիվս այլոց, իր տևական նախնական կալանքը եղել է 5(3) հոդվածի խախտում:

114. Դատարանը նշում է, որ այն հարցը, թե արդյոք կալանքի ժամկետը ողջամի՞տ է, չի կարող գնահատվել վերացականորեն: Մեղադրյալի՝ կալանքի տակ մնալու ողջամտությունը պետք է քննության առնվի յուրաքանչյուր դեպքում՝ համաձայն յուրաքանչյուր գործի առանձնահատկությունների: Շարունակական կալանքը կարող է արդարացված լինել տվյալ դեպքում, եթե միայն առկա են առանձնահատուկ ցուցումներ, համաձայն որոնց, անկախ անմեղության կանխավարկածից, առկա է իրական հանրային շահի պահանջ, որն առավել է, քան կոնվենցիայի 5-րդ հոդվածում ամրագրված անձի ազատությունը հարգելու կանոնը...

Նախ՝ ազգային դատական մարմինների խնդիրն է երաշխավորել, որ տվյալ դեպքում մեղադրվող անձի նախնական կալանքը չի գերազանցում ողջամիտ ժամկետը: Պատշաճ ուշադրություն դարձնելով անմեղության կանխավարկածին՝ նրանք պետք է քննարկեն վերը նշված հանրային շահի առկայությանը վերաբերող բոլոր կողմ և դեմ փաստերը, որոնք արդարացնում են 5-րդ հոդվածից արվող բացառությունը՝ դրա մասին նշում անելով ազատ արձակելու միջնորդություն-ների վերաբերյալ կայացված որոշումներում: Սկզբունքորեն, այդ որոշումներում նշված պատճառների և դիմողի կողմից բողոքում նշված լավ հիմնավորված փաստերի հիման վրա է, որ դատարանից պահանջվում է որոշում կայացնել՝ արդյոք եղե՞լ է 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում…

Մնայուն ողջամիտ կասկածը, որ ձերբակալված անձը կատարել է հանցագործություն, sine qua non [անհրաժեշտ] պայման է շարունակվող կալանքի օրինականության համար, սակայն որոշակի ժամանակ անց այն դառնում է անբավարար: Այնուհետև, դատարանը պետք է հիմնավորի, թե արդյոք դատական մարմինների կողմից ներկայացված այլ հիմքերը շարունակե՞լ են արդարացնել ազատազրկումը: Այն դեպքում, երբ նման հիմքերը եղել են «տեղին» և «բավարար», դատարանը պետք է բավարարված լինի, որ ազգային մարմինները վարույթի անցկացման առումով ցուցաբերել են «հատուկ բարեխղճություն»: Այս առումով հետաքննության բարդությունը և առանձնահատուկ բնույթը պետք է հաշվի առնվեն. . .

(ii) Սույն գործի նկատմամբ վերը նշված սկզբունքների կիրառությունը

(α) Կալանքի հիմքերը

115. Դատարանի ընդդատությանը ենթակա իրավախախտման ժամանակահատվածում Մագադանի քաղաքային դատարանը *ratione temporis* [ժամանակային հանգամանքների չափանիշով] մերժել է ազատ արձակել դիմողին՝ հիմնվելով նրա դեմ հարուցված մեղադրանքի ծանրության և նրա կողմից ճշմարտության հաստատմանը խանգարելու վտանգի վրա: Դատարանը նկատում է, որ դիմողի շարունակվող կալանքն արդարացնելու համար քաղաքային դատարանի կողմից նման հիմքեր վկայակոչվել են ավելի վաղ՝ 1996 թ. դեկտեմբերի 27-ին և 1997 թ. օգոստոսի 8-ին:

Դատարանն այնուհետև նկատում է, որ սկզբունքային պատճառը, որի հիման վրա 1995 թ. հունիսի 29-ին որոշվել է, որ դիմողը պետք է վերցվի նախնական կալանքի տակ, այն է, որ նա խանգարել է գործի հետաքննությանը՝ մերժելով տրամադրել որոշ բանկային փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ էին հետաքննության անցկացման համար, ինչպես նաև ճնշում գործադրելով վկաների վրա և ենթադրաբար կեղծելով փաստերը: Որոշումը նաև վերաբերել է մեղադրանքների ծանրությանը:

116. Դատարանը նշում է, որ թեպետ լուրջ կասկածի առկայությունը, որ անձը ներգրավված է եղել ծանր հանցագործությունների կատարման մեջ, համապատասխան գործոն է, չի կարող ինքնին արդարացնել տևական նախնական կալանքը... Ինչ վերաբերում է Մագադանի քաղաքային դատարանի վկայակոչած մյուս հիմքին՝ գործի քննությանը խանգարելու հանգամանքին, դատարանը նկատում է, որ ի տարբերություն 1995 թ. հունիսի 29-ի քննիչի կարգադրության, քաղաքային դատարանը չի նշել իր եզրակացությունները պաշտպանող այլ փաստական հանգամանքներ, որոնք համանման են եղել 1996 թ., 1997 թ. և 1999 թ.: Նրա որոշումների մեջ հղում չի արվում որևէ գործոնի, որը կարող է ցույց տալ, որ այդ վկայակոչվող ռիսկը շարունակել է գոյություն ունենալ համապատասխան ժամանակահատվածում:

117. Դատարանն ընդունում է, որ միջամտությունը հետաքննությանը՝ կասկածի հետ մեկտեղ, որ դիմողը կատարել է հանցագործություններ, որոնց առնչությամբ նրա դեմ մեղադրանք է հարուցվել, սկզբում կարող էին բավարար համարվել նրան կալանքի տակ պահելու համար: Այնուամենայնիվ, որքան վարույթն առաջ է գնացել, և փաստեր ամբողջացվել են, այնքան ավելի է այդ հիմքը դարձել նվազ արդիական:

118. Ի վերջո, դատարանը կարծում է, որ այն պատճառները, որոնց վրա իշխանությունները հիմնվել են դիմողի կալանքն արդարացնելու համար, թեպետ սկզբում եղել են տեղին և բավարար, ժամանակի հետ կորցրել են իրենց նշանակությունը:

(β) Վարույթի անցկացումը

119. Ինչ վերաբերում է քրեական հետաքննության տևողությանը, դատարանը վկայակոչում է ազգային դատարանների եզրակացությունները, համաձայն որոնց՝ այն առանձնապես բարդ գործ չի եղել, սակայն հետաքննությունը կատարվել է ոչ պատշաճ մակարդակով՝ նպաստելով վարույթի ձգձգմանը: Դատարանը որևէ պատճառ չի գտնում, որ հանգի այլ եզրակացության: Նա նաև նկատում է, որ համաձայն ազգային դատարանների՝ հետաքննիչներն անարդարացիորեն փորձել են ավելացնել մեղադրական հոդվածները (որ արժանի է կշտամբանքի), ինչը ցույց է տրվում այն փաստով, որ 1999 թ. օգոստոսի 3-ին Մագադանի քաղաքային դատարանը դիմողի դեմ բերված ինը մեղադրանքներից միայն մեկն է համարել հիմնավորված:

120. Ինչ վերաբերում է հետագա դատական վարույթին, դատարանը նկատում է, որ Մագադանի քաղաքային դատարանում գործի վարույթը տեղի է ունեցել զգալի ձգձգումներով: Դատավարությունը, որն սկսվել է 1996 թ. նոյեմբերի 11-ին, հետաձգվել է 1997 թ. մայիսի 7-ին նախագահող դատավորի պաշտոնից հեռացման պատճառով: Այն չի վերսկսվել մինչև 1999 թ. ապրիլի 15-ը, թեպետ որոշ ընթացակարգային քայլեր ձեռնարկվել են 1997 թ. հուլիս-օգոստոս ամիսներին (նոր դատավորի և դատական նիստի նշանակում), 1998 թ. մայիս և հուլիս ամիսներին (գործի փոխանցումը մեկ այլ դատարանի), 1998 թ. նոյեմբերին (դատական նիստի նշանակում), 1998 թ. հունվարին և մարտին (հետագա հետաքննություն անցկացնելու անհրաժեշտության մասին որոշումների կայացում):

Թեպետ ճիշտ է, որ 1997 թ. օգոստոսի 8-ին նշանակված նիստը հետաձգվել է դիմողի փաստաբանի բացակայության պատճառով, և դիմողն առարկել է, որ իր գործն ուղարկվի մեկ այլ դատարան (որի նպատակը վարույթն արագացնելն էր), դատարանը կարծում է, որ դիմողը զգալիորեն չի ազդել վարույթի տևողության վրա երկու դատավարական շրջանների միջև ընկած ժամանակահատվածում, երբ գործում առաջընթաց տեղի չի ունեցել:

Այսպիսով, ակնհայտ է, որ ձգձգված վարույթը վերագրելի չէ ո՛չ գործի բարդությանը, ո՛չ էլ դիմողի վարքագծին: Հաշվի առնելով հետաքննության առանձնահատկությունները և դատական վարույթի զգալի ձգձգումները՝ դատարանը կարծում է, որ իշխանությունները չեն գործել պատշաճ արագությամբ:

(γ) Եզրակացություն

121. Այս պայմաններում դատարանը կարծում է, որ դիմողի կալանքի տակ գտնվելու ժամկետները գերազանցել են «ողջամիտ ժամկետը»: Այսպիսով, տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

. . .

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

. . .

2. Վճռում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 5(3) հոդվածի խախտում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Կոստան, դատավորներ Ֆուրմանը, Լուկայդեսը, Բրատցան, Գրիվը, Թրաժան և Կովլերը:

2 Վճիռն ի ցույց է դնում մշտական գործող դատարանի ներկայիս մոտեցումը, երբ այն գնահատում է, թե արդյոք նախնական կալանքի (տևական) ժամկետը ողջամի՞տ է 5(3) հոդվածի շրջանակներում: Ազգային դատական ատյանների կողմից անձին կալանքի տակ պահելու պատճառները դատարանը ենթարկելու է մանրամասն և խիստ գնահատման: Եթե չկան հանրային շահով հիմնավորված համոզիչ հիմքեր, որոնք արդարացնում են նախնական կալանքը, ապա ազգային մարմինները կալանքի տակ վերցված անձանց գրավի դիմաց պետք է ազատ արձակեն: Նման հիմքերի առկայության դեպքում ազգային դատարանները պետք է հետևեն դրանց շարունակմանը և կարգադրեն, որ դրանք դադարելուց հետո կալանավորներն անմիջապես ազատ արձակվեն: Բացի այդ, դատախազությունը և դատական մարմինները պետք է գործերը վարեն ողջամիտ արագությամբ:

3 Կալաշնիկովի գործի 3-րդ հոդվածի ասպեկտները ներկայացված են վերը՝ 223-րդ էջում:

Հոդված 5(4). Կալանավորման օրինականությունը վիճարկելու միջոցը

«Դե Վիլդեն, Օոմսը և Վերսիփն ընդդեմ Բելգիայի» (De Wilde, Ooms and Versyp v Belgium) («թափառաշրջիկության» գործեր) A.12 (1971) 1 EHRR 373
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողները հոժարակամ ներկայացել են ոստիկանություն և հայտնել, որ իրենք անօթևան և չքավոր անձնավորություն են: Նրանց բերել են ոստիկանության դատարան, որի կազմի մեջ մտել է միայն մեկ մագիստրատ: Վերջինս ճշտել է այդ անձանց «ինքնությունը, տարիքը, ֆիզիկական և հոգեկան վիճակը և կենսակերպը»: Հնարավորություն տալով նրանց պատասխանելու իր հարցերին՝ նա որոշել է, որ Բելգիայի օրենքով նրանք «թափառաշրջիկ» են: Հետևաբար, համաձայն «Թափառաշրջիկության և մուրացկանության վերացմանն ուղղված» 1891 թ. օրենքի դրույթների՝ մագիստրատը պարտավոր էր դիմողներին դնել «կառավարության հայեցողության տակ»: Դե Վիլդեի և Վերսիփի նկատմամբ մագիստրատը կիրառել է նվազագույն պահանջը՝ կարգադրելով, որ նրանք «երկու տարով պահվեն թափառաշրջիկության կենտրոնում»: Ինչ վերաբերում է Օոմսին, ապա առաջնորդվելով «Ալկոհոլամոլության և մուրացկանության մասին» օրենքի առանձնահատուկ դրույթներով, նա կարգադրել է, որ նա «հսկողության տակ վերցվի աջակցության կենտրոնում»: Թեպետ նրանց դատվածության գործի մեջ արվել է համապատասխան նշում, ներպետական օրենսդրության շրջանակներում դատարանի որոշումը չի համարվել քրեական դատապարտում:

Այդ իսկ պատճառով այդ որոշումը ենթակա չէր վիճարկման կամ բողոքարկման, քանի որ օրենքի տեսանկյունից մագիստրատների որոշումը համարվել է վարչական ակտ, ոչ թե դատավճիռ: Նրանց կալանքի կարգադրություններից կարճ ժամանակ անց դիմողները մի շարք անհաջող դիմումներ են ներկայացրել արդարադատության նախարարին՝ բողոքելով, ի թիվս այլոց, այն աշխատանքային ռեժիմից և պայմաններից, որոնց նրանք ենթարկվել են, և պահանջելով ազատ արձակել իրենց, քանի որ, ի թիվս այլոց, նրանց հանգամանքները (ներառյալ համայնքում աշխատելու հեռանկարը և նրանց կողմից կալանքի տակ գտնվելու ժամանակ վաստակած գումարը) փոխվել են: Համաձայն 1891 թ. օրենքի՝ նրանք կարող էին ազատ արձակվել իրենց ժամկետը լրանալուց հետո կամ արդարադատության նախարարի հայեցողությամբ, կամ միայն օգնության կենտրոններում պահվող անձանց դեպքում (այսինքն՝ Օոմսի դեպքում), երբ արվել են արդարադատության նախարարի կողմից հաստատված գումարի չափով խնայողություններ:

Դիմողները պնդել են, որ, ի թիվս այլոց, տեղի են ունեցել նաև 5(1) և (4) հոդվածների խախտումներ: Հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ, ի թիվս այլոց, տեղի է ունեցել 5(4) հոդվածի խախտում (ինը կողմ և երկու դեմ ձայներ), սակայն 5(1) հոդվածի խախտում չի եղել (տասը կողմ և մեկ դեմ ձայներ):

Հետևյալ պարբերություններում դատարանն առաջին հերթին հաշվի է առել, թե արդյոք դիմողների կալանքը կարո՞ղ է արդարացվել 5(1)(ե) հոդվածով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նրանք եղել են «թափառաշրջիկներ»: Ապա ուսումնասիրել է, թե ինչպես պետք է կիրառվի 5(4) հոդվածն այնպիսի գործում, որում կալանքը պահանջվել է ոչ թե ոստիկանի կամ վարչական պաշտոնյայի կողմից, այլ մի մարմնի կողմից, որը 5(4) հոդվածի իմաստով համարվում է դատարան:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

64. Կառավարությունը շեշտել է, որ դիմողները ոստիկանություն են ներկայացել իրենց կամքով և Վորթել ու Մերքսփլաս են ընդունվել իրենց «բացահայտ կամ անուղղակի պահանջի» հիման վրա: Այդ պահանջը եղել է բացահայտ Վերսիփի և Օոմսի դեպքում և անուղղակի՝ Դե Վիլդեի դեպքում: Համաձայն կառավարության՝ այսպիսի «կամավոր հանձնվելու գործողությունը» հազիվ թե համարվի 5-րդ հոդվածի իմաստով ազատազրկում: Ուստի դատարանը եզրակացրել է, որ

պետք է անմիջապես բացառի այն միտքը, որ «բուն կալանքի» և «կալանքի պայմանների» առումով տեղի է ունեցել կոնվենցիայի պահանջների խախտում:

65. Դատարանի համար փաստարկման այս տրամաբանությունը համոզիչ չէ:

Ժամանակավոր դժվարությունները կամ թշվառությունը կարող են մղել անձին, որ նա հանձնվի ոստիկանությանը՝ կալանքի տակ վերցվելու համար: Պարտադիր չէ, որ սա նշանակի, որ այդպիսի խնդրանք ներկայացնող անձը թափառաշրջիկ է կամ առնվազն արհեստավարժ մուրացկան կամ զբաղվում է թափառաշրջիկությամբ պարապության, հարբեցողության կամ անբարոյականության հանգամանքներից որևէ մեկի պատճառով, որոնց դեպքում 1891 թ. Բելգիայի օրենքի 13-րդ բաժնով նախատեսվում է կալանքի էլ ավելի խիստ միջոցառում:

Որքան էլ դիմողների ցանկությունները հաշվի են առնվել, դրանք չեն կարող վերացնել կամ թաքցնել բողոքարկվող որոշումների պարտադիր, ոչ թե պայմանագրային բնույթը: Այն, որ դրանք պարտադիր են, պարզ է իրավական տեքստերի ամերկիմաստ բովանդակությունից (1891 թ. օրենքի 8-րդ, 13-րդ, 15-րդ, 16-րդ և 18-րդ բաժիններ) և դատարանին ներկայացված փաստաթղթերից:

Ի վերջո և ամեն ինչից առավել, ազատության իրավունքը վերին աստիճանի կարևոր է կոնվենցիայի իմաստով «ժողովրդավարական հասարակությունում», որպեսզի անձը կորցնի կոնվենցիայով պաշտպանված լինելու առավելությունը միայն այն պատճառով, որ իր հոժար կամքով ներկայացել է և կալանավորվել: Կալանքը կարող է 5-րդ հոդվածի խախտում լինել, եթե նույնիսկ տվյալ անձը համաձայնություն տված լինի: Այն դեպքում, երբ խնդիրը վերաբերում է Եվրոպայի խորհրդի անդամ երկրների ordre public-ին [հասարակական կարգին], անհրաժեշտ է, որ կոնվենցիայի մարմիններն իրականացնեն իրենց կողմից երաշխավորված բոլոր իրավունքների և ազատությունների խիստ վերահսկողություն: Բացի այդ, 1891 թ. օրենքի 12-րդ բաժինն ընդունում է ազգային մակարդակով այսպիսի վերահսկողություն սահմանելու անհրաժեշտությունը: Այն պարտավորեցնում է մագիստրատներին «պարզել թափառաշրջիկության համար ոստիկանության դատարանին ներկայացված անձանց ինքնությունը, տարիքը, ֆիզիկական և հոգեկան վիճակը և կենսակերպը»: Եվ այն փաստը, որ դիմողներն «ինքնակամ են հանձնվել», որևէ կերպ չի ազատում դատարանին իր պարտավորությունից՝ համոզվել, որ եղել է կոնվենցիայի խախտում...

67. Ոստիկանության ավագ սպան, որին դիմողները ներկայացել են, պայմանականորեն ազատազրկել է նրանց և 24 ժամվա ընթացքում, համաձայն 1849 թ. մայիսի 1-ի օրենքի, ներկայացրել մագիստրատին, որը նրանց դրել է կառավարության հայեցողության տակ...

Ոստիկանության ղեկավարների գործողության օրինականությունը չի վիճարկվել, քանի որ այդ անձինք հանձնվել են հոժար կամքով և նշել, որ իրենք զբաղվել են թափառաշրջիկությամբ: Սովորական երևույթ էր, որ նրանք պետք է ներկայացվեին մագիստրատին՝ որոշման համար: Այնուամենայնիվ, սա եղել է զուտ նախնական բնույթի քայլ:

Նրանք կալանավորվել են միայն մագիստրատների կարգադրությունների հիման վրա: Ուստի երեք դիմողների կալանքի օրինականությունը պետք է գնահատվի այս կարգադրություններին հղում անելու միջոցով:

68. Կոնվենցիան չի տալիս «թափառաշրջիկ» հասկացության սահմանումը: Բելգիայի քրեական օրենսգրքի 347-րդ հոդվածում ներկայացված բացատրության համաձայն՝ «թափառաշրջիկ են համարվում այն անձինք, որոնք մշտական կացարան, գոյության միջոցներ, կանոնավոր զբաղմունք կամ մասնագիտություն չունեն»: Եթե այս երեք պայմանները բավարարված են, ապա իրավասու մարմինները կարող են կարգադրություն անել, որի հիման վրա տվյալ անձինք՝ որպես թափառաշրջիկներ, պետք է դրվեն կառավարության հայեցողության տակ: Մեջբերված սահմանման տպավորությունն այնպիսին չէ, որ այն անհամատեղելի է «թափառաշրջիկ» հասկացության սովորական իմաստների հետ, և դատարանը կարծում է, որ 347-րդ հոդվածի շրջանակներում թափառաշրջիկ հանդիսացող անձի վրա սկզբունքորեն տարածվում է կոնվենցիայի 5(1)(ե) հոդվածում ամրագրված բացառությունը:

Սույն գործերում մշտական կացարան և գոյության միջոցներ ունենալու կարիքը բխել է ոչ միայն տվյալ անձանց գործողություններից, այլ նաև այդ ժամանակ նրանց հայտարարություններից: Երեքն էլ հայտարարել են, որ աշխատանք չունեն... Ինչ վերաբերում է սովորույթի ուժով գործազուրկ լինելու հանգամանքին, ապա Շառլեռոյում, Նամուռում և Բրյուսելում մագիստրատները կարող էին եզրակացություն անել սրա մասին համապատասխան դիմողների վերաբերյալ ներկայացված տեղեկություններից...

69. Այսպիսով, ունենալով «թափառաշրջիկի» բնորոշում՝ դիմողները կարող էին կոնվենցիայի 5(1)(ե) հոդվածով ենթակա լինել կալանքի՝ պայմանով, որ այդ կալանքը նրանց վրա դրվեր իրավասու մարմինների կողմից՝ համաձայն Բելգիայի օրենքով նախատեսվող ընթացակարգի:

[Դատարանն այնուհետև ուսումնասիրել է կիրառված ընթացակարգերը և եզրակացրել, որ Բելգիայի օրենքին համապատասխանությունն ապահովվել է]:

70. Հետևաբար, երեք դիմողներին կառավարության հայեցողության տակ դնելու առումով դատարանը չի հայտնաբերել կարգազանցության կամ կամայականության որևէ դրսևորում և որևէ հիմք չունի եզրակացնելու, որ հետևած կալանքը հակասել է կոնվենցիայի 5(1)(ե) հոդվածին...

73. Թեպետ դատարանը տվյալ գործերում չի հայտնաբերել 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում... այս եզրակացությունը չի ազատում նրան 4-րդ կետի խախտման վերաբերյալ քննություն սկսելուց: Այս վերջինն ըստ էության առանձին դրույթ է, և դրա համապատասխանության ապահովումը eo ipso [ըստ այդմ] չի բխում այն փաստից, որ նախորդ դրույթը պահպանվել է. «յուրաքանչյուր ոք, որը զրկված է իր ազատությունից», օրինականորեն կամ ոչ, ունի դատարանի կողմից դրա օրինականության վերահսկողության իրավունք: Հետևաբար, խախտումը կարող է առաջ գալ կա՛մ 1-ին կետի խախտումով կալանքից, կա՛մ 4-րդ կետին համապատասխանող վարույթի բացակայությունից, կա՛մ նույնիսկ՝ երկուսից միաժամանակ...

75. Դիմողները վերցվել են կալանքի տակ ի կատարումն մագիստրատների կարգադրությունների. ոստիկանության կողմից նրանց ձերբակալությունը եղել է զուտ պայմանական գործողություն, և որևէ մեկ այլ մարմին չի միջամտել երեք գործերից և ոչ մեկին... Հետևաբար, ծագում է առաջին հարցը: Արդյոք 5(4) հոդվածով պահանջվո՞ւմ է, որ այդ հոդվածին վերաբերող գործերով զբաղվի երկու մարմին. այսինքն՝ մի մարմինը պետք է տա կալանքի կարգադրությունը, իսկ երկրորդը, որն ունի դատարանի հատկանիշներ, պետք է քննության առնի այդ միջոցառումը տվյալ անձանց նկատմամբ կիրառելու օրինականությունը: Կամ, ընդհակառակը. արդյոք բավարա՞ր է, որ կալանքը կարգադրվի այնպիսի մարմնի կողմից, որին բնորոշ են 5(4) հոդվածի իմաստով «դատարան» հասկացության տարրերը:

76. Առաջին հայացքից, 5(4) հոդվածի շարադրանքի տպավորությունն այնպիսին է, որ այն երաշխավորում է կալանավորների իրավունքն առ այն, որ նրանց կալանավորելու նախորդ որոշման օրինականությունը մշտապես վերահսկվի դատարանի կողմից: Երկու պաշտոնական թեստերը, այնուամենայնիվ, չեն գործածում միևնույն հասկացությունները, քանի որ անգլերեն տեքստում խոսվում է proceedings [վարույթ], այլ ոչ թե appeal [բողոք], recourse [օգնություն] կամ remedy [դատական պաշտպանության միջոց] հասկացությունների մասին (համեմատի՛ր 13-րդ և 26-րդ հոդվածները): Բացի այդ, պարզ է, որ 5(4) հոդվածը նպատակ ունի երաշխավորելու ձերբակալված և կալանքի տակ գտնվող անձանց նկատմամբ կիրառված միջոցառման օրինականության դատական ստուգումը: Այնտեղ «դատարան» («տրիբունալ») բառը հանդես է գալիս եզակի, այլ ոչ թե հոգնակի թվով: Այն դեպքում, երբ անձին ազատազրկելու մասին որոշումն ընդունվում է վարչական մարմնի կողմից, կասկած չկա, որ 5(4) հոդվածը պարտավորեցնում է պայմանավորվող պետություններին կալանքի տակ գտնվող անձին հնարավորություն տալ դիմելու դատարանի օգնությանը: Սակայն որևէ ցուցում չկա, որ նույն բանը կիրառելի է դատական վարույթի փակման ժամանակ դատարանի կողմից հայտարարված որոշման նկատմամբ: Այս վերջին դեպքում 5(4) հոդվածով պահանջվող ստուգումը ներառված է որոշման մեջ: Դա տեղ ունի, օրինակ, երբ «իրավասու դատարանի կողմից դատապարտումից հետո» հայտարարվում է անձին ազատազրկման ենթարկելու մասին դատավճիռը (կոնվենցիայի 5(1)(ա) հոդված): Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ 5(4) հոդվածի համապատասխանությունն ապահովված է, եթե (1)(ե) կետի համաձայն՝ թափառաշրջիկի ձերբակալությունը կամ կալանքը կարգադրված է 4-րդ կետի իմաստով «դատարանի» կողմից:

Այնուամենայնիվ, 5-րդ հոդվածի նպատակից և առարկայից, ինչպես նաև 4-րդ կետում օգտագործված հասկացություններից (proceedings/recours) [վարույթ] բխում է, որ այսպիսի «դատարան» կազմավորելու համար տվյալ մարմինը պետք է ապահովի ազատազրկման հարցերում կիրառվող ընթացակարգի հիմնարար երաշխիք....

77. Հետևաբար, դատարանը հարցում է արել, թե արդյոք տվյալ գործում մագիստրատն ունեցե՞լ է 5(4) հոդվածի իմաստով «դատարանի» հատկանիշ, և, հատկապես, արդյոք դիմողները, երբ նրանք ներկայացել են նրան, օգտվե՞լ են վերը նշված երաշխիքներից: Կասկած չկա, որ կազմակերպչական տեսանկյունից մագիստրատը «դատարան» է... Մագիստրատն անկախ է ինչպես գործադիր մարմիններից, այնպես էլ գործի կողմերից...

78. …Կոնվենցիայով պահանջվող ընթացակարգի ձևերը պետք է, այնուամենայնիվ, անհրաժեշտաբար լինեն նույնը յուրաքանչյուր դեպքում, երբ պահանջվում է դատարանի միջամտությունը: Որպեսզի որոշվի, թե արդյոք վարույթն ապահովո՞ւմ է համապատասխան երաշխիքներ, ուշադրություն պետք է դարձվի հանգամանքների առանձնահատուկ բնույթին, որոնց պայմաններում տեղի է ունեցել այս վարույթը: Այսպիսով, *Նյումեյսթերի* (Neumeister) գործում դատարանը որոշել է, որ իրավասու դատարանները մնացել են որպես «դատարաններ»՝ հակառակ մեղադրող կողմի և պայմանական ազատ արձակում պահանջող անձի միջև «զենքերի հավասարության» բացակայությանը (նույն տեղում): Այնուամենայնիվ, նույնը չի կարող ճիշտ լինել այլ համատեքստում, օրինակ՝ այլ իրավիճակներում, որոնք ևս պատկանում են 5(4) հոդվածի տիրույթին:

79. …Դե Վիլդեի, Օոմսի և Վերսիփի ազատազրկումը նման է քրեական դատարանների կողմից նշանակվող ազատազրկմանը: Հետևաբար, կիրառելի ընթացակարգը չպետք է առաջարկեր այնպիսի երաշխիքներ, որոնք զիջում են Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների քրեական ոլորտում գործող երաշխիքներին:

Համաձայն Բելգիայի օրենքի՝ ցանկացած անձ, որին բացահայտում են թափառաշրջիկությամբ զբաղվելու վիճակում, ձերբակալվում է և, այնուհետև, որպես կանոն, քսանչորս ժամում ներկայացվում է ոստիկանության դատարան (1891 թ. օրենքի 8-րդ բաժին և 1849 թ. մայիսի 1-ի օրենքի 3-րդ բաժին): Ինչ վերաբերում է այս անձի հարցաքննությանը, ապա 1891 թ. օրենքը սահմանափակվում է 12-րդ բաժնում շարադրված դրույթով, համաձայն որի՝ մագիստրատը պարզում է իրեն ներկայացված անձի ինքնությունը, տարիքը, ֆիզիկական և հոգեկան վիճակը և կենսակերպը: Ինչ վերաբերում է պաշտպանության իրավունքին, միակ համապատասխան դրույթն ամփոփված է 1849 թ. մայիսի 1-ի օրենքի 3-րդ բաժնում, համաձայն որի՝ այդ անձին նրա պահանջով տրամադրվում է եռօրյա ընդմիջում: Համաձայն կառավարության տրամադրած տեղեկատվության՝ քրեական դատավարության օրենսգիրքը չի վերաբերում թափառաշրջիկների կալանքին:

Խնդրո առարկա ընթացակարգի վրա ազդում է ընդունվելիք որոշման վարչական բնույթը: Այն չի ապահովում երաշխիքներ, որոնք համեմատելի են քրեական գործերով կալանքի դեպքում գործող երաշխիքների հետ՝ անկախ այն փաստից, որ թափառաշրջիկների կալանքը շատ առումներով բավական նման է դրան: Դժվար է հասկանալ, թե ինչո՞ւ զուտ թափառաշրջիկության համար ձերբակալված անձինք պետք է բավարար համարեն այսպիսի պարզեցված ընթացակարգը:

…Այս ընթացակարգը, անկասկած, որոշակի դատարանական առանձնահատկություններ ունի, ինչպես, օրինակ՝ այն, որ նիստը տեղի է ունենում և որոշումը կայացվում հրապարակային ընթացակարգով, սակայն սա բավարար չէ մագիստրատին 5(4) հոդվածի իմաստով «դատարանի» բնորոշում տալու համար, երբ համապատասխան ուշադրություն է դարձվում կշեռքի նժարին դրված հարցի լրջությանը, որը պայմանավորված է բազմաթիվ ամոթալի հետևանքներով ուղեկցվող տևական ազատազրկմամբ: Հետևաբար, այն ինքնին չի բավարարում 5(4) հոդվածի պահանջները, և հանձնաժողովը շատ ճիշտ է եղել, երբ նկատել է, որ դիմողները պետք է ունենային դատական պաշտպանության միջոցի հնարավորություն: Դատարանը, այնուամենայնիվ, արդեն վճռել է, որ Դե Վիլդեն, Օոմսը և Վերսիփը հնարավորություն չեն ունեցել դիմելու ավելի բարձր ատյանի դատարան կամ, առնվազն, գործնականում, Conseil d'Etat [պետության խորհուրդ] …

80. Հետևաբար, դատարանը հանգում է այն եզրակացության, որ քննության առնվող տվյալ կետի առնչությամբ եղել է 5(4) հոդվածի խախտում, քանի որ երեք դիմողները չեն ունեցել այն երաշխիքները, որոնք ամփոփված են այդ կետում:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

միաձայն վճռում է, որ դիմողների կողմից «ինքնակամ հանձնվելու» իրողությունը բավարար չէ հիմնավորելու համար, որ կոնվենցիայի խախտում չի եղել:

միաձայն վճռում է, որ 5(1) հոդվածի խախտում չի եղել:

Վճռում է ինը կողմ և յոթ դեմ ձայներով, որ եղել է 5(4) հոդվածի խախտում, քանի որ դիմողները չեն ունեցել նրանց կալանքի տակ վերցնելու որոշման դեմ դատարան գանգատ ներկայացնելու համար պահանջվող դատական պաշտպանության միջոցներ...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին սըր Հեմֆրի Ուոլդոկը և դատավորներ Ռոլինը, Քեսինը, Հոլմբեքը, Վերդրոսը, Ռոդենբըրըն, Ռոսը, Ուոլդը, Բալլադորե Պալիերին, Մոզլերը, Զեքիան, Ֆավրեն, Կրեմոնան, Բիլջը, Վիարդան և Սիգուրյոնսոնը: Դատավորներ Բալլադորե Պալիերին և Վերդրոսը գրել են միասնական չհամընկնող կարծիք, համաձայն որի՝ դիմողների՝ մագիստրատների ընդունած որոշումը Conseil d'Etat-ին բողոքարկելու հնարավորությունը բավարարել է 5(4) հոդվածի պահանջները: Համանման եզրակացություն արվել է դատավորներ Հոլմբեքի, Ռոդենբըրի, Ռոսի, Ֆավրեի և Բիլջի միասնական չհամընկնող կարծիքում:

2 Թափառաշրջիկության գործերն ապացուցում են, որ եթե անձին կալանավորելու որոշումը կայացվում է դատարանի, ոչ թե ոստիկանի կամ վարչական պաշտոնյայի կողմից, ապա 5(4) հոդվածով պահանջվող կալանքի օրինականության վերաբերյալ դատական որոշումը մտնում է կալանքի տակ առնելու սկզբնական որոշման մեջ: Այս «ներառման» կանոնի նպատակով և, ընդհանուր առմամբ, 5(4) հոդվածի համաձայն, «դատարանը» մի մարմին է, որն «անկախ է ինչպես գործադիր մարմիններից, այնպես էլ գործի կողմերից». *«Նյումեյսթերն ընդդեմ Ավստրիայի»*

(Neumeister v Austria, A.8 (1968) 1 EHRR 91): Այն պետք է նաև կարողանա ընդունել պարտադիր կատարման ենթակա որոշում: Այս վերջին պահանջը և կալանքի հիմնավորման բոլոր կողմերն ընդգրկելու նպատակով իրավական պաշտպանության միջոցի անհրաժեշտությունը *«Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Chahal v UK (1996) 23 EHRR 413, 1996-IV 1864)* գործում հանգեցրել են այն եզրակացության, որ խախտվել 5(4) հոդվածը: Դատարանը հայտարարել է, որ.

129. 5(1)(q) հոդվածի «օրինականության» գաղափարը չի տարածվում միայն ներպետական օրենսդրության նյութական և ընթացակարգային կանոնների պահպանման պահանջի վրա: Այն պահանջում է նաև, որ յուրաքանչյուր ազատազրկման դեպք համահունչ լինի 5-րդ հոդվածի նպատակին … Հետևաբար, հարց է առաջանում, թե արդյոք պրն Չահալի կալանքի օրինականությունը վիճարկելու և գրավով փոխարինելու վարույթներն ապահովե՞լ են ազգային դատարանների կողմից համապատասխան հսկողություն:

130. Դատարանը նշում է, որ քանի որ եղել է ազգային անվտանգության հարց, ազգային դատարաններն իրավասու չեն եղել վերանայելու, թե արդյոք պրն Չահալին կալանավորելու և կալանքի տակ պահելու որոշումները հիմնավորվա՞ծ են եղել ազգային անվտանգության հիմքերով... Բացի այդ, թեպետ խորհրդատվական ժյուրիին դիմելու ընթացակարգն անկասկած ապահովել է հսկողության որոշակի մակարդակ, սակայն, հաշվի առնելով, որ պրն Չահալը երդվյալ ատենակալների դատարանում իրավական ներկայացուցչություն ունենալու իրավունք չի ունեցել, հիմքերը նրան ներկայացվել են սոսկ ընդհանուր գծերով, որպեսզի հաղորդեն արտաքսելու մտադրությունը, ինչպես նաև ժյուրիին որոշում կայացնելու իրավասություն չի ունեցել, իսկ ներքին գործերի քարտուղարին տրամադրած նրա խորհրդատվությունը ենթակա չի եղել պարտադիր կատարման և չի բացահայտվել... ժյուրիին չի կարող համարվել 5-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով «դատարան» (տե՛ս mutatis mutandis *«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (X v UK)* 1981 թ. նոյեմբերի 5-ի վճիռը, շարք A, թիվ 46, էջ 26, պարբ. 61):

131. Դատարանն ընդունում է, որ ազգային անվտանգության խնդիրների դեպքում հնարավոր չէ խուսափել գաղտնի նյութերի օգտագործումից: Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ ազգային մարմինները կարող են ազատվել ազգային դատարանների կողմից արդյունավետ վերահսկողության ենթարկվելուց, երբ նախընտրում են հայտարարել, որ խնդիրը կապված է ազգային անվտանգության և ահաբեկչության հետ (տե՛ս mutatis mutandis *«Ֆոքսը, Քեմփբելը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Fox, Campbell and Hartley v UK)* գործով 1990 թ. օգոստոսի 30-ի վճիռը, շարք A, թիվ 182, էջ 17, պարբ. 34 և *«Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Murray v UK),* 1994 թ. հոկտեմբերի 28-ի վճիռ, շարք A, թիվ 300-A, էջ 27, պարբ. 58): Դատարանը կարևորություն է տալիս այն փաստին, որ 13-րդ հոդվածի կապակցությամբ կամավոր պաշտպանները նշել են, որ ... այս կարգի գործերի համար Կանադայում ձևավորվել է դատական հսկողության ավելի արդյունավետ ձև: Այս օրինակը ցույց է տալիս, որ գոյություն ունեն մեթոդներ, որոնք կարող են օգտագործվել՝ բավարարելու համար օրինական անվտանգության մտահոգությունները՝ կապված հետախուզական տվյալների բնույթի և աղբյուրների հետ, սակայն միաժամանակ կարող են նաև անձի համար ապահովել ընթացակարգային արդարադատության լայն հնարավորություն:

132. Ստացվում է, որ դատարանը համարում է, որ ո՛չ habeas corpus-ի և ազգային դատարաններում պրն Չահալին կալանավորելու դատական վերանայման վարույթը, ո՛չ էլ խորհրդատվական ժյուրիի ընթացակարգը չեն բավարարել 5-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները: Այս բացթողումը շատ ավելի լուրջ է, եթե հաշվի առնվի այն հանգամանքը, որ պրն Չահալն անտարակույս զրկվել է իր ազատությունից այնպիսի ժամկետով, որը պետք է լուրջ մտահոգությունների տեղիք տար...

3 Ինչպես հիմնավորվել է թափառաշրջիկությանը վերաբերող գործերում և, ի թիվս այլոց, հաստատվել *Չահալի* գործում, «դատարանը», որի առջև կալանավորված անձը պետք է ունենա դատական պաշտպանության միջոցի կիրառման հնարավորություն, պետք է ապահովի համապատասխան ընթացակարգային երաշխիքներ, որոնք կարող են տարբերվել ըստ կալանքի ձևի (մեղադրյալի, «հոգեկան հիվանդի», արտաքսվող անձի և այլն): *«Սանչես-Ռեյեսն ընդդեմ Շվեյցարիայի» (Sanchez-Reisse v Switzerland A 107 (1986) 9 EHRR 71)* գործում, որը վերաբերում է նախքան անձին հանձնելը նրան կալանքի տակ պահելուն, դիմողը վիճարկել է, որ իրեն պետք է տրվեր ազատ արձակելու վերաբերյալ դաշնային ոստիկանության գրասենյակի կարծիքին պատասխանելու և անձամբ ներկայանալու հնարավորություն: Վճռելով, որ եղել է 5(4) հոդվածի խախտում, դատարանը հայտարարել է.

51. Դատարանի կարծիքով՝ 5-րդ հոդվածի 4-րդ կետը սույն դեպքում պահանջել է, որ պրն Սանչես-Ռեյեսին այս կամ այն կերպ տրամադրվեր մրցակցային ընթացակարգից օգտվելու հնարավորություն:

Գրասենյակի կարծիքի վերաբերյալ գրավոր մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորությունը այդպիսի համապատասխան միջոց կլիներ, սակայն չկան փաստեր, որոնք ցույց կտային, որ նման հնարավորություն նրան առաջարկվել է: Ճիշտ է, որ իր միջնորդության մեջ նա արդեն նշել էր այն հանգամանքները, որոնք, իր կարծիքով, արդարացնում էին իր ազատ արձակումը, սակայն սա ինքնին չի ապահովել «զենքերի հավասարություն», որը պարտադիր է. այդ կարծիքը կարող էր մատնանշած լինել նոր փաստեր կամ օրենքի կետեր, որոնք կարող էին առաջացնել արձագանք կամ քննադատություն կամ նույնիսկ հարցեր, որոնք դաշնային դատարանը պետք է քննարկեր նախքան որոշում կայացնելը:

Դիմողի պատասխանը, այնուամենայնիվ, չպետք է անհրաժեշտաբար գրավոր լիներ: 5-րդ հոդվածի 4-րդ կետով պահանջվող արդյունքին կարելի էր նաև հասնել, եթե նա անձամբ ներկայանար դաշնային դատարան:

Ձերբակալված անձի համար «անձամբ լսվելու կամ, անհրաժեշտության դեպքում, ներկայացուցչի միջոցով լսվելու» հնարավորությունները (տե՛ս վերը նշված *Վինտերվերպի (Winterwerp)* վճիռը, շարք A, թիվ 33, էջ 24, պարբ. 60) որոշ առումներով «ընթացակարգի հիմնարար երաշխիքներ են, որոնք կիրառվում են ազատազրկման դեպքերում» (տե՛ս *Դե Վիլդեի, Օոմսի և Վերսիպի (De Wilde, Ooms and Versyp)* վճիռը, 1971 թ. հունիսի 18-ի վճիռ, շարք A, թիվ 12, էջ 41, պարբ. 76): Թեև 5-րդ հոդվածի 3-րդ կետի (դատավորին կամ այլ պաշտոնատար անձին ներկայացվելու իրավունք) և 4-րդ կետի (վարույթ սկսելու իրավունք) շարադրանքի միջև առկա տարբերություններին, այս երկու կետերին վերաբերող դատարանի նախկին որոշումներն առ այս պահը ձգտել են ճանաչել դատական իշխանության առջև լսված լինելու անհրաժեշտությունը (տե՛ս, ի թիվս այլոց, ի լրումն վերը նշված *Վինտերվերպի (Winterwerp)* վճռի, *Շյեսերի (Schiesser)* վճիռը, 1979 թ. դեկտեմբերի 4, շարք A, թիվ 34, էջ 13, պարբ. 30-1): Այդ որոշումները, այնուամենայնիվ, վերաբերել են միայն այն հարցերին, որոնք մտնում են 1-ին կետի վերջում (գ) և (ե) ենթակետերի մեջ: Եվ, փաստորեն, «Կոնվենցիայով պահանջվող ընթացակարգի ձևերը… պարտադիր չէ, որ նույնը լինեն յուրաքանչյուր գործի դեպքում, երբ պահանջվում է դատական միջամտություն» (տե՛ս վերը նշված *Դե Վիլդեի, Օոմսի և Վերսիպի* վճիռը, շարք A, թիվ 12, էջ 41-2, պարբ. 78):

Սույն գործում դաշնային դատարանը հաշվի է առել, որ տեղի է ունեցել դիմողի առողջական վիճակի վատացում, ինչը մի գործոն է, որը կարող էր խանգարել, որ նա անձամբ ներկայանար: Սակայն նրա [դատարանի] տրամադրության տակ եղել են բժշկական տեղեկանքներ, որոնք կցվել են կալանքից պայմանականորեն ազատ արձակվելու երրորդ միջնորդությանը (տե՛ս վերը՝ պարբ. 28): Արժանահավատ որևէ պատճառ չկա, որ դիմողի ներկայությունը կարող էր համոզել դաշնային դատարանին, որ նա պետք է ազատ արձակվի:

Այնուամենայնիվ, իրողությունն այն է, որ պրն Սանչես-Ռեյեսը չի օգտվել իսկական մրցակցային ընթացակարգի առավելություններից:

Մշտական գործող դատարանը վճռել է, որ համաներման խորհուրդը պարտադիր պետք է կազմակերպեր բանավոր լսում, երբ ցմահ բանտարկյալի վտանգավորության մասին որոշում կայացնելու նպատակով քննում էր նրա անհատականության հարցը: *«Ուեյթն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Waite v UK)* գործում (2002 թ. դեկտեմբերի 10-ի վճիռ) դիմողը դատապարտվել էր 1981 թ.՝ 16 տարեկանում իր տատի սպանության մեղադրանքով: 1994 թ. նրան տրվել է կյանքի արտոնագիր [life licence, ցմահ բանտարկյալին պայմանականորեն ազատ արձակելու թույլտվություն]: Նա ազատ է արձակվել, սակայն հետ է կանչվել 1997 թ. հուլիսին, երբ ձերբակալվել է վերահսկվող դեղամիջոցներ պահելու կասկածանքով: Նա կատարել է ինքնասպանության փորձ: Համաներման խորհուրդը քննարկել է նրա հետկանչումը 1997 թ. սեպտեմբերին՝ ունենալով դիմողի ներկայացրած գրավոր բացատրությունները (թեպետ վարչական կարգադրությունների համաձայն՝ նրա համար պետք է կազմակերպվեր բանավոր լսում): Խորհուրդը որոշել է, որ նա վտանգ է ներկայացնում իր և համայնքի համար և հաստատել նրա հետկանչումը: 1998 թ. հոկտեմբերին համաներման խորհուրդը կրկին քննել է նրա գործը բանավոր լսման ժամանակ, երբ դիմողը անձամբ ներկա է եղել և ներկայացուցիչ ունեցել: Խորհուրդը եզրակացրել է, որ նա պետք է ազատ արձակվի արտոնագրի հիման վրա, ինչը և տեղի է ունեցել 1998 թ. նոյեմբերին: Դիմողը պնդել է, որ, ի թիվս այլոց, տեղի է ունեցել 5(4) հոդվածի խախտում, քանի որ 1997 թ. սեպտեմբերին նրա համար համաներման խորհուրդը բանավոր լսում չի կազմակերպել: Դատարանը միաձայն վճռել է, որ.

59. …Դատարանի նախադեպային իրավունքը ցույց է տալիս, որ այնպիսի հույժ կարևորություն ունեցող դեպքերում, որոնց շարքն է դասվում ազատազրկումը, ինչպես նաև այն դեպքերում, երբ առաջանում են, օրինակ՝ դիմողի բնավորության կամ հոգեկան վիճակի գնահատմանը վերաբերող հարցեր, վարույթի արդարության տեսանկյունից կարող է էական նշանակություն ունենալ այն հանգամանքը, որ դիմողն անձամբ ներկա գտնվի բանավոր լսմանը: Այնպիսի գործում, ինչպիսին տվյալ գործն է, որտեղ դիմողի անհատականության կամ հասունության կամ հուսալիության վերաբերող բնութագրերը կարևոր են նրա վտանգավորությունը որոշելու համար, 5-րդ հոդվածի 4-րդ կետով պահանջվում

է, որ մրցակցային ընթացակարգի համատեքստում իրականացվի բանավոր լսում, որն ընդգրկում է իրավաբանական ներկայացուցչություն, վկաներին կանչելու և հարցաքննելու հնարավորություն:

Քանի որ այս ընթացակարգը չի պահպանվել, տեղի է ունեցել 5(4) հոդվածի խախտում:

4 *«Կամպանիսն ընդդեմ Հունաստանի» (Kampanis v Greece, A.325 (1995)* 21 EHRR 43) գործում դատախազին թույլ է տրվել ներկա գտնվել դատարանում նախնական կալանքի երկարացման վերաբերյալ որոշում կայացնելիս, երբ մեղադրյալին նման հնարավորություն չի տրվել: Եվրոպական դատարանը վճռել է, որ «զենքերի հավասարության» այս բացակայությունը խախտել է 5(4) հոդվածը: Դատարանը հայտարարել է.

56. Դատարանը պետք է հիշի, որ քրեական վարույթի ժամանակ դատախազը սկզբունքորեն ներկայացնում է հասարակության շահերը: Սույն միջնորդության կապակցությամբ նրա խնդիրը եղել է առաջարկել մեղադրական ակտերի բաժնին կամ երկարացնել մեղադրյալի կալանքը, կամ ազատ արձակել նրան: Սույն գործում նա միշտ հանդես է եկել կալանքը երկարացնելու օգտին:

57. Երկրորդ՝ դատարանն ընդունում է, որ դիմողը ներկայացրել է մի շարք միջնորդություններ, որոնցով պահանջել է ազատ արձակել իրեն և հօգուտ դրանց ունեցել մի շարք պաշտպանական ելույթներ ինչպես հետաքննության փուլում, այնպես և դրա ավարտից հետո: Նրա փաստարկները, որոնք հիմնականում վերաբերել են այն հանցագործությունների իրավաբանական դասակարգմանը, որոնց մեջ նա մեղադրվում էր, և այն պատճառներին, որոնց հիման վրա նա պահվում էր կալանքի տակ, անկասկած, հայտնի էին դատախազին և մեղադրական ակտերի բաժնին:

Այնուամենայնիվ, այն ժամանակ, երբ նա ներկայացրել է խնդրո առարկա դիմումը, պրն Կամպանիսը բանտում է եղել 25 ամիս և 10 օր կալանքի երեք հաջորդական կարգադրությունների հիման վրա, որոնցից յուրաքանչյուրը նշել է նրա նախնական կալանքի հաշվարկի տարբեր մեկնակետեր: Դրանցից երկուսի դեպքում կալանքը երկարացվել է սահմանադրությամբ թույլատրված առավելագույն չափով: Բացի այդ, սույն դիմումով, ի թիվս այլոց, նա քննադատել է նաև իր կալանքի տևողության անհամապատասխանությունը սահմանադրությանը և կոնվենցիային:

58. Հաշվի առնելով այս նկատառումները, դատարանն այն կարծիքին է, որ զենքերի հավասարության ապահովման համար անհրաժեշտ էր դիմողին դատախազի հետ միաժամանակ ներկա գտնվելու հնարավորություն տալ, որպեսզի նա կարողանար պատասխանել վերջինիս փաստարկներին:

5 *«Ռայնփրեխտն ընդդեմ Ավստրիայի» (Reinprecht v Austria)* գործի վերաբերյալ 2005 թ. նոյեմբերի 15-ի վճռում պալատը միաձայն որոշել է, որ 5(4) հոդվածում ամրագրված չէ ընդհանուր պահանջ, համաձայն որի՝ նախնական կալանքի օրինականության վերանայմանը նվիրված դատական նիստերը պետք է դռնբաց լինեն: Դիմողը մի քանի բողոք էր ներկայացրել տարածքային դատարան, որոնք անդրադարձել էին նրան նախնական կալանքի տակ պահելու հարցին: Դատարանի հրավիրած նիստերին ներկա են գտնվել դիմողը և նրա փաստաբանը: Նիստերի ավարտից հետո տարածքային դատարանը կարգադրել է, որ դիմողի կալանքը շարունակվի: Վերջինս բողոքել է Ստրասբուրգ՝ վիճարկելով, որ համաձայն 5(4) հոդվածի, դատական նիստերը պետք է դռնբաց լինեն: Որպես երրորդ կողմ՝ Մարդու իրավունքների հելսինկյան հիմնադրամը պաշտպանել է նրա պահանջը՝ հավատացած լինելով, որ այդ նիստերի նկատմամբ հանրային հսկողությունը կօգնի համոզվելու դատարանի անկանխակալության մեջ և երաշխավորելու կամայականության բացակայությունը: Կառավարությունը վիճարկել է, որ այս նիստերի նկատմամբ հրապարակայնության պահանջը կարող է հանգեցնել ձգձգումների, քանի որ այդ նիստերը հաճախ անց են կացվում նախնական կալանքի հաստատություններում, քանի որ այս նպատակով կալանավորին դատարանի նիստերի դահլիճ բերելու պատճառով կարող են ձգձգումներ լինել: Պալատը եզրակացրել է, որ դատարանի առկա նախադեպային իրավունքը չի պարտավորեցնում, որ այդ նիստերը լինեն հրապարակային, և կառավարության փաստարկը, թե հրապարակային նիստերը կարող են բացասաբար անդրադառնալ վերանայման արագության վրա, ունեցել է «որոշակի ուժ»: Հետևաբար, 5(4) հոդվածի խախտում չի եղել:

6 Կալանքի օրինականության վերաբերյալ կալանավորի բողոքի առնչությամբ դատարանի որոշման արագությունը դատարանը լիարժեք ուսումնասիրել է *«Ռեհբոկն ընդդեմ Սլովենիայի» (Rehbock v Slovenia)* գործում, որի վերաբերյալ դատարանի վճիռը կայացվել է 2000 թ. նոյեմբերի 28-ին (գործի 3-րդ հոդվածի կողմերի վերաբերյալ տե՛ս վերը՝ էջ 182-83): Թմրամիջոցների մաքսանենգ առևտրով զբաղվելու կասկածանքով 1995 թ. սեպտեմբերի 8-ին Սլովենիայի ոստիկանությունը ձերբակալել է դիմողին: Սեպտեմբերի 20-ին Սլովեն Գրադեկի տարածքային դատարանի հետաքննող դատավորը կարգադրել է նրան վերցնել նախնական կալանքի տակ: Հոկտեմբերի 3-ին դիմողը, իր փաստաբանի միջոցով, ներկայացրել է կալանքը գրավով փոխարինելու միջնորդություն՝ առաջարկելով 50.000 գերմանական մարկի գրավ: Սլովեն Գրադեկի տարածքային դատարանը հոկտեմբերի 26-ին մերժել է նրա միջնորդությունը, քանի որ դատարանը չի որոշել, որ դիմողի գրավի առաջարկը եղել է դատավարությանը նրա ներկայությունն ապահովող բավարար երաշխիք: Ստրասբուրգի դատարանը միաձայն եզրակացրել է, որ տարածքային դատարանի կողմից քսաներեք օրվա ժամկետը, որը պահանջվել է դիմողի ազատ արձակման մասին որոշում կայացնելու համար, չի բավարարել 5(4) հոդվածի արագության պահանջը:

.....

«Վինտերվերպն ընդդեմ Նիդեռլանդների»
(Winterwerp v Netherlands A.33 (1979) 2 EHRR 387)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

1968 թ., համաձայն Հոլանդիայի օրենքով նախատեսված արտակարգ նախադեպերի ընթացակարգի, տեղի բուրգոմիստրի ցուցումով դիմողը կարճ ժամկետով տեղավորվել է հոգեբուժական հիվանդանոցում, երբ որոշ իրադարձություններից հետո պարզ է դարձել, որ նա հոգեկան ցնցման մեջ է: Վեց շաբաթ անց դիմողի կնոջ դիմումի և բժշկական արձանագրության հիման դիմողը եղել է այդ նույն հիվանդանոցում ավելի երկար ժամանակով, այս դեպքում արդեն ոչ թե արտակարգ նախադեպերի ընթացակարգի, այլ շրջանային դատարանի կարգադրության հիման վրա: Դրանից հետո դիմողը կանոնավորապես պահանջել է, որ իրեն ազատ արձակեն: Հիվանդանոցի ղեկավարությունը նրա պահանջները փոխանցել է դատախազին: 1969 թ. իր հայեցողական գործառույթների իրականացման շրջանակում դատախազը դիմողի առաջին միջնորդությունն ուղարկել է տարածքային դատարան, որը տարածքային դատարանը մերժել է: Քանի որ օրենքը նման բան թույլ է տվել, դատախազը մերժել է 1971, 1972 և կրկին 1973 թթ. դիմողի բերած միջնորդություններն ուղարկել տարածքային դատարան՝ գտնելով, որ առկա փաստերի հիման վրա անհնարին է, որ տարածքային դատարանը բավարարի նրա միջնորդությունը:

Հանձնաժողովը հայտնել է միաձայն կարծիք, որ 5(1) հոդվածի խախտում չի եղել, սակայն տեղի է ունեցել 5(4) հոդվածի խախտում: Հետևյալ հատվածում դատարանը քննել է, թե արդյոք դիմողի կալանքը կարո՞ղ էր արդարացվել 5(1)(ե) հոդվածով, այն հիմքով, որ նա եղել է «հոգեկան խանգարման» վիճակում, և արդյոք 1969 թ. հետո դիմողի ազատ արձակելու միջնորդությունները դատարանին չուղղելը եղե՞լ են 5(4) հոդվածի խախտում այն դեպքում, երբ կալանքն արդարացնող փաստերը կարող էին ենթարկվել փոփոխության:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

37. Կոնվենցիան չի անդրադառնում այն հարցին, թե ինչպես պետք է հասկանալ «հոգեկան հիվանդներ» արտահայտությունը: Սա այնպիսի հասկացություն չէ, որին կարելի է տալ որոշակի մեկնաբանություն. ինչպես նշել են հանճնաժողովը, կառավարությունը և դիմողը, սա մի հասկացություն է, որի իմաստն անընդհատ զարգանում է հոգեբուժության ոլորտում գիտահետազոտական առաջընթացին, բուժման կատարելագործմանը և հոգեկան հիվանդությունների նկատմամբ հասարակության վերաբերմունքի փոփոխությանը, մասնավորապես՝ հոգեկան հիվանդություն ունեցող անձանց խնդիրների ավելի լայն ըմբռնմանը զուգահեռ:

Համենայն դեպս, 5(1)(ե)-ն անկասկած չի կարող ընկալվել որպես այնպիսի դրույթ, որը թույլ է տալիս անձին կալանավորել միայն այն պատճառով, որ նրա տեսակետները կամ վարքը շեղվում են տվյալ հասարակությունում գերիշխող նորմերից: Այլ կերպ վճռելու դեպքում հակասություն կառաջանա 5-րդ հոդվածի 1-ին կետի տեքստի հետ, որը սահմանում է նեղ մեկնաբանություն պահանջող (տե՛ս mutatis mutandis *Կլասի (Klass)* 1978 թ. սեպտեմբերի 6-ի վճիռը, շարք A, թիվ 28, էջ 21, պարբ. 42 և *«Սանդի թայմզի» (Sunday Times)* 1979 թ. ապրիլի 26-ի վճիռը, շարք A, թիվ 30, էջ 41, պարբ. 65) բացառությունների համապարփակ ցանկ (տե՛ս *Էնգելի* (Engel) 1976 թ. հունիսի 8-ի վճիռ, շարք A, թիվ 22, էջ 24, պարբ. 57 և *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ireland v UK)* 1978 թ. հունվարի 18-ի վճիռը, շարք A, թիվ 25, էջ 74, պարբ. 194): Ո՛չ էլ կիամապատասխանի 5-րդ հոդվածի 1-ին կետի առարկային և նպատակին, այն է՝ երաշխավորել, որ որևէ անձ կամայականորեն չզրկվի իր ազատությունից (տե՛ս *Լոուսի (Lawless)* 1961 թ. հուլիսի 1-ի վճիռը, շարք A, թիվ 3, էջ 52 և վերը նշված *Էնգելի* (Engel) վճիռը, էջ 25, պարբ. 58): Բացի այդ, այն ժողովրդավարական հասարակությունում ազատության իրավունքի կարևորության անտեսում կլիներ (տե՛ս *Դե Վիլդեի, Օոմսի և Վերսիփի (De Wilde, Ooms and Versyp)* 1971 թ. հունիսի 18-ի վճիռը, շարք A, թիվ 12, էջ 36, պարբ. 65 և վերը նշված *Էնգելի (Engel)* վճիռը, էջ 35, պարբ. 82, վերջում):

38. Ինչպես կոնվենցիան չի տալիս «հոգեկան հիվանդ» արտահայտության որևէ սահմանում, այնպես էլ Նիդեռլանդների օրենսդրությունը չի սահմանում «հոգեկան հիվանդ անձինք» հասկացությունը (krankzinnige): Օրենսդրությունը պետք է սահմանի այդ անձանց հոգեբուժական հիվանդանոցներին հանձնելու հիմքերը...

[Դատարանն ուսումնասիրել է Հոլանդիայի համապատասխան օրենքը և փորձը:]

Ուշադրություն դարձնելով վերը նշված փորձի վրա, չի թվում, որ ուժի մեջ գտնվող օրենքը որևէ ձևով անհամատեղելի է կոնվենցիայում կիրառված «հոգեկան հիվանդներ» հասկացության իմաստի հետ: Հետևաբար, դատարանը կարծում է, որ 5(1)(ե) հոդվածը սկզբունքորեն տարածվում է Նիդեռլանդների «Հոգեկան հիվանդ անձանց մասին» օրենքի հիման վրա կալանավորված անձի վրա:

39. Հաջորդ հարցը, որ պետք է ուսումնասիրվի, 5(1)(ե) հոդվածի նպատակների շրջանակներում կալանքի «օրինականությունն» է: Այսպիսի «օրինականությունը», նախ, ենթադրում է, որ ներպետական օրենսդրության համապատասխան հոդվածին և նաև, ինչպես հաստատվել է 18-րդ հոդվածով, 5(1)(ե) հոդվածի սահմանափակումների նպատակին համապատասխանություն կա: Սա պահանջվում է թե՛ ազատազրկման միջոցառումների կարգադրման, թե՛ դրանց կատարման առումով (տե՛ս վերը նշված *Էնգելի և այլոց* (Engel and others) վճիռը, էջ 28, պարբ. 68, վերջում):

Ինչ վերաբերում է ներպետական օրենսդրությանը համապատասխանությանը, ապա դատարանը մատնանշում է, որ «օրինական» հասկացությունը վերաբերում է թե՛ ընթացակարգային և թե՛ նյութական կանոններին: Այսպիսով, գոյություն ունի որոշակի համընկնում այս հասկացության և 5-րդ հոդվածի 1-ին կետի սկզբում շարադրված «օրենքով սահմանված կարգին» հետևելու ընդհանուր պահանջի միջև...

Իրոք, այս երկու արտահայտություններն արտացոլում են 5(1) հոդվածի հիմքում ընկած նպատակի կարևորությունը (տե՛ս վերը՝ պարբ. 37). ժողովրդավարական հասարակությունում, որն ընդունում է օրենքի գերակայությունը (տե՛ս *Գոլդերի (Golder)* վճիռը, 1975 թ. փետրվարի 21, շարք A, թիվ 18, էջ 16-17, պարբ. 34 և վերը նշված *Կլասի (Klass)* վճիռը, էջ 25, պարբ. 55), ո՛չ մի կամայական կալանքի դեպք երբևէ չի կարող համարվել «օրինական»:

Հանձնաժողովը նաև շեշտում է, որ չպետք է գոյություն ունենա կամայականության տարր: Նրա եզրակացությունն այն է, որ «հոգեկան հիվանդ» որևէ անձի ազատությունը չի կարող սահմանափակվել առանց բժշկական փաստերի առկայության, որոնք հիմնավորում են, որ նրա հոգեկան վիճակը պահանջում է պարտադիր կարգով հոսպիտալացում... Ե՛վ դիմողը, և՛ կառավարությունը հայտնել են համանման կարծիքներ:

Դատարանը լիովին համաձայն է այս տրամաբանությանը: Դատարանի կարծիքով՝ բացառությամբ արտակարգ դեպքերի, անձը չպետք է զրկվի իր ազատությունից, եթե չկա լուրջ հիմնավորում, որ նա «հոգեկան հիվանդություն» ունի: Այն, ինչը պետք է հիմնավորվի իրավասու մարմնի առջև, այսինքն՝ հոգեկան խանգարումը, պահանջում է օբյեկտիվ բժշկական փորձաքննություն: Ինչը որ առավել է, ազատության շարունակական սահմանափակման հիմնավորությունը կախված է այդ խանգարման շարունակականությունից (տե՛ս mutatis mutandis *Շտոգմյուլլերի (Stogmuller)* վճիռը, 1969 թ. նոյեմբերի 10, շարք A, թիվ 9, էջ 39-40, պարբ. 4 և վերը նշված *Դե Վիլդեի, Օոմսի և Վերսիփի* (*De Wilde, Ooms and Versyp)* վճիռը, էջ 43, պարբ. 82):

40. Դատարանն անշուշտ ունի կալանքի «օրինականությունը» ստուգելու իրավազորություն (տե՛ս վերը նշված *Էնգելի (Engel)* վճիռը, էջ 29, պարբ. 69): Պրն Վինտերվերպը, փաստորեն, պնդում է, որ քննարկման ընթացքում գտնվող կալանավորման կարգադրությունների ընթացակարգային թերությունների պատճառով տեղի է ունեցել օրինականության խախտում: Այս պնդումներին անդրադարձ է արվում ստորև՝ կապված սերտորեն դրան առնչվող «օրենքով սահմանված կարգի» համապատասխանության հարցի հետ: Սույն համատեքստում բավարար է ավելացնել հետևյալը: Քանի որ առաջինն ազգային մարմիններն են գնահատում որոշակի գործով նրանց ներկայացված փաստերը, ապա նրանք պետք է ընդունվեն որպես որոշակի հայեցողություն ունեցող մարմիններ, երբ որոշում է կայացվում, թե արդյոք տվյալ անձը

պե՞տք է կալանավորվեր որպես «հոգեկան հիվանդ» անձնավորություն: Դատարանի խնդիրն է կոնվենցիայով վերանայել այդ մարմինների որոշումները (տե՛ս հատկապես *mutatis mutandis Հենդիսայդի (Handyside)* վճիռը, 1976 թ. դեկտեմբերի 7, շարք A, թիվ 24, էջ 22 և 23, պարբ. 48 և 50 և վերը նշված *Կլասսի (Klass)* վճիռը, էջ 23, պարբ. 49 և վերը նշված «*Սանդի Թայմզի» (Sunday Times)* վճիռը, էջ 36, պարբ. 59):

41. Ինչ վերաբերում է սույն գործի փաստերին, ապա դատարաններին ներկայացված բժշկական ապացույցները սկզբունքորեն ցույց են տվել, որ դիմողը դրսևորել է շիզոֆրենիկ և պարանոիկ ռեակցիաներ, անտեղյակ է եղել իր ախտաբանական վիճակից և մի քանի անգամ կատարել բավական լուրջ գործողություններ՝ առանց դրանց հետևանքները գնահատելու: Բացի այդ, նրան աստիճանաբար վերականգնելու և հասարակություն վերադարձնելու տարբեր փորձերը ձախողվել են...

42. Պրն Վինտերվերպը քննադատում է բժշկական արձանագրությունները՝ համարելով, որ 5(1)(ե) հոդվածի նպատակների համար դրանք անբավարար են: Բացի այդ, նա հարց է տալիս, թե արդյոք բուրգոմիստրի սկզբնական ցուցումը, որ իրեն կալանքի տակ վերցնեն, հիմնվա՞ծ է եղել հոգեբուժական փաստերի վրա:

Դատարանի կարծիքով՝ այն իրադարձությունները, որոնց հիման վրա 1968 թ. մայիսին բուրգոմիստրը ցուցում է տվել… եղել են այնպիսի բնույթի, որ արդարացնում են «արտակարգ նախադեպով պայմանավորված» ազատության սահմանափակումը՝ համաձայն Նիդեռլանդների օրենքի 14-րդ բաժնի: Չնայած դիմողի քննադատությանը՝ դատարանը որևէ պատճառ չունի կասկածի տակ դնելու բժշկական փաստերի օբյեկտիվությունը և հուսալիությունը, որոնց հիման վրա Նիդեռլանդների դատարանները, սկսած 1968 թ., թույլ են տվել նրան կալանքի տակ պահել որպես հոգեկան հիվանդ անձ: Ո՛չ էլ որևէ ցուցում կա, որ վիճարկվող ազատազրկումն իրականացվել է հակաօրինական նպատակի համար:

43. Հետևաբար, դատարանը եզրակացնում է, որ քննության ենթարկվող տարբեր ժամանակահատվածներում պրն Վինտերվերպի ազատության սահմանափակումը «անառողջ բանականություն ունեցող [անձի] օրինական կալանք» է եղել՝ համաձայն 5-րդ հոդվածի 1-ին կետի (ե) ենթակետի...

51. Պրն Վինտերվերպը վիճարկում է, որ որպես «անառողջ բանականություն տեր անձ» կալանքի տակ վերցված ցանկացած անձի համար 5(1)(ե) հոդվածից հետևում է համապատասխան բուժում ստանալու իրավունքը, որը երաշխավորում է, որ նրա կալանքի տևողությունն ավելին չէ, քան բացարձակապես անհրաժեշտ է: Ինչ վերաբերում է նրա դրությանը, նա բողոքում է, որ իր հոգեբույժի հետ հանդիպումը եղել է խիստ կարճատև և ոչ հաճախակի, և բուժումն անհարկիորեն ներառել է միայն հոգեմետ դեղամիջոցներ (տրանկվիլիզատորներ):

Կառավարությունը կտրուկ հերքում է այս պնդումները:

Հանձնաժողովի նման՝ դատարանը ևս կարծում է, որ հոգեկան հիվանդի համապատասխան բուժում ստանալու իրավունքը, որպես այդպիսին, չի կարող բխեցվել 5(1)(ե) հոդվածից: Բացի այդ, բուժման առումով փաստերը ցույց չեն տալիս, որ տեղի է ունեցել կոնվենցիայի որևէ այլ դրույթի խախտում. . . .

53. Դիմողը նաև վկայակոչում է 5-րդ հոդվածի 4-րդ կետը.…

55. 1971 թ. հունիսի 18-ի *Դե Վիլդեի, Օոմսի և Վերսիփի* (De Wilde, Ooms and Versyp) գործով դատարանի վճռում (էջ 40, պարբ. 76) դատարանը հայտարարել է.

> «Այն դեպքում, երբ անձին ազատազրկելու մասին որոշումն ընդունվում է վարչական մարմնի կողմից, կասկած չկա, որ 5(4) հոդվածը պարտավորեցնում է պայմանավորվող պետություններին կալանքի տակ գտնվող անձին հնարավորություն տալ դիմելու դատարանի օգնությանը: Սակայն որևէ ցուցում չկա, որ նույնը կիրառելի է դատական վարույթի փակման ժամանակ դատարանի կողմից հայտարարված որոշման նկատմամբ: Այս վերջին դեպքում 5(4) հոդվածով պահանջվող ստուգումը ներառված է որոշման մեջ...»

Մեջբերելով սեփական նախադեպային իրավունքը՝ հանձնաժողովը կարծիք է հայտնում, որ դատարանի այս եզրակացությունը նման ձևով չի կարող կիրառվել այն դեպքում, երբ խոսքն «անառողջ բանականություն» ունեցող անձանց ազատության սահմանափակման մասին է, հատկապես երբ դա վերաբերում է այդ անձին անսահմանափակ ժամկետով կալանքի տակ պահելուն (տե՛ս զեկույցի պարբ. 95):

Ինչպես ավելի վաղ նշվել է սույն վճռի մեջ … այն պատճառները, որոնք սկզբում երաշխավորում են անձի ազատության սահմանափակումը, կարող են դադարել գոյություն ունենալուց... Հետևաբար, 5-րդ հոդվածի խնդրին և նպատակին հակառակ կլինի … մեկնաբանել դրա 4-րդ կետը (որն ընթերցվում է այս համատեքստում) որպես այս կարգի ազատազրկումը օրինականության հետագա վերանայումներից անձեռնմխելի պահող դրույթ միայն այն պատճառով, որ սկզբնական որոշումը կայացվել է դատարանի կողմից: Այս կարգի ազատազրկման բուն էությունը պահանջում է, որ օրինականությունը վերանայվի ողջամիտ պարբերականությամբ: Այնուամենայնիվ, իր զեկույցի 95-րդ պարբերությունում հանձնաժողովը նշում է, որ այս հարցի հետագա քննությունը մակերեսային կլինի առանց նախ որոշելու, թե արդյոք պրն

Վինտերվերպի վրա ազդող համապատասխան որոշումները, փաստորեն, ընդունվե՞լ են 5-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով «դատարանի վարույթից հետո» (recours devant un tribunal):

56. Ո՛չ բուրգոմիստրը, որը տվել է կալանքի վերցնելու նախնական ցուցումը, ո՛չ էլ դատախազը, որը երկարացրել է դրա գործողության ժամկետը, չեն կարող համարվել «դատարանի» հատկանիշներ ունեցող մարմին: Հակառակը, որևէ կասկած չկա, որ շրջանային դատարանը և տարածքային դատարանները, որոնք տվել են կալանքի տարբեր կարգադրություններ, կազմակերպչական տեսանկյունից «դատարաններ» են: Նրանք «անկախ են ինչպես գործադիր մարմիններից, այնպես գործի մասնակից կողմերից» (տե՛ս վերը նշված *Դե Վիլդեի, Օոմսի և Վերսիպի* (De Wilde, Ooms and Versyp) վճիռը, էջ 41, պարբ. 77):

57. Այնուամենայնիվ, այսպիսի մարմնի միջամտությունը կբավարարի 5-րդ հոդվածի 4-րդ կետը, եթե «ընթացակարգը, որին այն հետևում է, ունի դատական բնույթ և տվյալ անձնավորությանը տալիս է նրա ազատազրկման ձևի համար նպատակահարմար երաշխիքներ»: «Որպեսզի հնարավոր լինի որոշել, թե արդյոք վարույթն ապահովո՞ւմ է համապատասխան երաշխիքներ, ուշադրություն պետք է դարձվի այն հանգամանքների առանձնահատուկ բնույթին, որոնցում այդպիսի վարույթը տեղի է ունենում» (տե՛ս վերջում նշված վճիռը, էջ 41 և 42, պարբ. 76, վերջում և 78):

Ինչպես արդարացիորեն նշվում է կառավարության կողմից, «հոգեկան հիվանդ անձանց կալանքը» (հոդված 5(1)(ե)) առանձնահատուկ կատեգորիա է...»:

60. Ճիշտ է, որ դատական վարույթը, որի մասին խոսվում է 5-րդ հոդվածի 4-րդ կետում, միշտ պետք է ուղեկցվի նույն երաշխիքներով, ինչպիսիք 6-րդ հոդվածի 1-ին կետով քաղաքացիական և քրեական դատավարությունների համար պահանջվող երաշխիքներն են (տե՛ս վերը նշված *Դե Վիլդեի, Օոմսի և Վերսիպի վճիռը (De Wilde, Ooms and Versyp)* էջ 42, պարբ. 78, վերջում): Այնուամենայնիվ, էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ տվյալ անձն ունենա դատարան մտնելու հնարավորություն և անձամբ, կամ անհրաժեշտության դեպքում, ներկայացուցչության որոշ ձևի միջոցով լսվելու հնարավորություն, որոնց բացակայության դեպքում նրան տրամադրված չեն լինի «ընթացակարգային այն հիմնարար երաշխիքները, որոնք կիրառվում են ազատազրկման դեպքերում» (տե՛ս վերջում զետեղված վճիռը, էջ 41, պարբ. 76): Հոգեկան հիվանդությունը կարող հանգեցնել այս իրավունքի կիրառման սահմանափակմանը կամ ձևափոխմանը (6-րդ հոդվածի 1-ին կետի առնչությամբ տե՛ս վերը նշված *Գոլդերի (Golder)* վճիռը, էջ 19, պարբ. 39), սակայն չի կարող արդարացնել այդ իրավունքի բուն էության խաթարումը: Իրոք, կարող են պահանջվել առանձնահատուկ ընթացակարգային երաշխիքներ, որոնք հնարավորություն կտան պաշտպանելու այն անձանց շահերը, որոնք հոգեկան խանգարման պատճառով լիովին ունակ չեն ներկայացնելու իրենց:

61. «Հոգեկան հիվանդություններ ունեցող անձանց մասին» գործող օրենքի 17-րդ, 23-րդ և 24-րդ բաժինների շրջանակներում համապատասխան ժամանակահատվածում ո՛չ շրջանային դատարանը, ո՛չ էլ տարածքային դատարանը պարտավորություն չեն ունեցել լսելու այն անձին, որին կալանավորելու պահանջ էր ներկայացվել . . .

Ինչ վերաբերում է առանձնահատուկ փաստերին, ապա դիմողը երբեք անձամբ կամ ներկայացուցչի միջոցով չի առնչվել այդ վարույթներին, որոնց արդյունքում արվել են նրան կալանավորելու տարբեր կարգադրություններ: Նրան երբեք տեղյակ չեն պահել վարույթի և դրա արդյունքի մասին, ո՛չ էլ նրան դատարաններում լսվելու կամ իր գործը պաշտպանելու հնարավորություն է տրվել:

Այս սկզբունքային առումով կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետով պահանջվող երաշխիքները բացակայել են ինչպես օրենքից, այնպես էլ գործնական փորձից: Թեպետ շրջանային և տարածքային դատարանների կողմից կիրառված ընթացակարգերն ունեցել են դատարանին բնորոշ որոշ առանձնահատկություններ, դրանք իրավունք չեն տվել սրն Վինտերվերպին 5-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով «վարույթ սկսել ... դատարանում (տե՛ս վերը՝ պարբ. 57): Առանց որևէ կերպ թերագնահատելու «Հոգեկան հիվանդություններ ունեցող անձանց մասին» օրենքի տրամադրած մի շարք երաշխիքների կարևորությունը, դատարանը կարծում է, որ նշված ընթացակարգը չի բավարարել 5-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները:

62. Ինչ վերաբերում է ազատ արձակվելու մասին դիմողի պահանջներին, կառավարությունը ճշմարտացիորեն պնդում է, որ անհրաժեշտ է համակողմանիորեն նայել այն ամբողջական համակարգին, որը ստեղծվել է «Հոգեկան հիվանդություններ ունեցող անձանց մասին» օրենքով: Հետևաբար, դեռևս պետք է որոշել, թե արդյոք դատարանի կողմից հաստատված վերը նշված թերությունը շտկվա՞ծ է ազատ արձակման պահանջները կարգավորող ընթացակարգերով...

63. Օրենքի 29-րդ բաժինը թույլ է տալիս, որ տվյալ անձնավորությունը պահանջի վերանայել իրեն կալանքի տակ պահելու հանգամանքը, այնուամենայնիվ, նրան ազատ արձակելու մասին միջնորդության վերաբերյալ որոշումը պարտադիր չէ, որ կայացվի դատարանի կողմից: Միջնորդությունը պետք է ներկայացվի հիվանդանոցի ղեկավարությանը, որն անբարենպաստ բժշկական կարծիք ունենալու դեպքում այն փոխանցում է դատախազին: Սկզբունքորեն, դատախազն այս միջնորդությունն ուղարկում է տարածքային դատարան, սակայն որոշ դեպքերում նա պարտավոր չէ այդպես վարվել, հատկապես երբ առերես ակնհայտ է, որ պահանջը չի կարող բավարարվել: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի նպատակների համար դատախազի որոշումը չի կարող որևէ ձևով համարվել դատարանի որոշում: Պարզ է, որ

ազատ արձակման միջնորդությունների ներկայացման պարբերականության սահմանափակումները, ըստ հանգամանքների, կարող են հոգեկան հիվանդ անձանց դատարան մտնելու օրինական սահմանափակում լինել (տես վերը՝ պարբ. 60): Այնուամենայնիվ, ամեն անգամ, երբ դատախազը մերժում է միջնորդությունը փոխանցել տարածքային դատարանին այն հիմքով, որ այն ակնհայտորեն վատ է հիմնավորված, նա ոչ միայն սահմանափակում է, այլև արդյունավետորեն մերժում 5-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դատական վարույթի իրավունքը:

Այն դեպքում, երբ որոշում կայացնելու նպատակով միջնորդությունը ներկայացվում է տարածքային դատարանին, վերջինս կատարյալ ազատություն ունի որոշելու՝ արդյոք ցանկալի է լսել կալանքի տակ գտնվող անձնավորությանը: Այսպիսի լիազորությունը չի ապահովում ազատազրկման գործերում կիրառման ենթակա հիմնարար ընթացակարգային երաշխիքներ (տե՛ս վերը՝ պարբ. 60 և 61):

64. Պրն Վինտերվերպը փաստացի ունկնդրության է արժանացել տարածքային դատարանում 1969 թ. փետրվարին, երբ վերջինս ուսումնասիրել է ազատ արձակելու մասին նրա առաջին միջնորդությունը…Այսքանով նա ի վիճակի է եղել վարույթ սկսելու դատարանում, որպեսզի ստուգվի իր ազատության սահմանափակման օրինականությունը:

Դրան հակառակ, 1971 թ. ապրիլին, 1972 թ. հուլիսին և 1973 թ. փետրվարին նրա հետագա միջնորդությունները չեն տրվել տարածքային դատարանին, քանի որ դատախազը մերժել է դրանք՝ համարելով, որ դրանք բավարարվելու որևէ հեռանկար չունեն… Ամեն անգամ դատախազն ունկնդրել է պրն Վինտեվերպին, և նրա որոշումները կարող էին լավ հիմնավորված լինել նրա տրամադրության տակ եղած տեղեկությունների հիման վրա, սակայն դրանք չեն կարող որակվել որպես 5-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով «դատարանի» կողմից կայացված որոշումներ:

67. Ամփոփելով՝ պրն Վինտերվերպի կալանքի կարգադրության կամ թույլտվության մասին տարբեր որոշումները կայացվել են այնպիսի մարմինների կողմից, որոնք չեն ունեցել «դատարանին» բնորոշ հատկանիշներ, կամ, այլ պարագայում, չեն ապահովել 5-րդ հոդվածի 4-րդ կետով պահանջվող երաշխիքները: Ո՛չ էլ դիմողն է «դատարան» մտնելու հնարավորություն ունեցել կամ էլ օգտվել է այդ երաշխիքներից, երբ նրա միջնորդությունը 1969 թ. մերժվել է տարածքային դատարանի կողմից: Հետևաբար, պրն Վինտերվերպը հանդիսացել է 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման զոհ:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

Վճռում է, որ 5(1) հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Վճռում է, որ տեղի է ունեցել 5(4) հոդվածի խախտում: . . .

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Պեդերսենը և դատավորներ Վիարդան, էվրիգենիսը, Թայթգենը, Լագերգրենը, Լիշը և Գյոլչյուքլուն:

2 *Վինտերվերպի (Winterwerp)* գործում դատարանն ընդունել է, որ որոշ դեպքերում 5(4) հոդվածը պահանջում է ողջամիտ պարբերականությամբ շարունակական դատական պաշտպանության միջոցի առկայություն՝ ստուգելու համար՝ արդյոք այն պատճառները, որոնք արդարացնում են անձի կալանքը, դեռևս գոյություն ունե՞ն: Այս բաժնում ներկայացված մյուս բոլոր գործերը վերաբերում են շարունակական դատական պաշտպանության միջոցի ապահովման պահանջին:

……

«X -ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (X v UK) A.46 (1981) 4 EHRR 188

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիտավորյալ ծանր մարմնական վնասվածք հասցնելու մեղադրանքով 1968 թ. դիմողը մեղավոր է ճանաչվել Շեֆֆիլդի ժյուրիի կողմից, որից հետո դատարանը պահանջել է, որ նա կալանքի տակ վերցվի Բրոուդմուռի հիվանդանոցում որպես սահմանափակ ազատություն ունեցող օրինախախտ հիվանդ՝ համաձայն 1959 թ. «Հոգեկան առողջության մասին» օրենքի 85-րդ բաժնի: Առաջնորդվելով 1959 թ. օրենքի 66-րդ բաժնով, 1971 թ. ներքին գործերի քարտուղարը կարգադրել է X-ին պայմանա-

կանորեն ազատ արձակել՝ հաշվի առնելով նրա վիճակի բարելավումը: Մոտ երեք տարի սովորական կյանքով ապրելուց հետո X-ն իր վիճակի վատթարացման պատճառով ներքին գործերի քարտուղարի կողմից հետ է կանչվել Բրոուդմուռ՝ համաձայն 1959 թ. օրենքի 66-րդ բաժնի: Habeas corpus-ի նպատակով X-ը միանգամից դիմել է բարձր դատարան, սակայն նրա միջնորդությունը մերժվել է: Հետկանչումից հետո վեց ամիս կալանքի տակ մնալուց հետո X-ն իրավունք է ունեցել 1959 թ. օրենքի 66-րդ բաժնի հիման վրա դիմելու հոգեկան առողջության տրիբունալ և պահանջելու ազատման հանձնարարագիր, ինչը և նա արել է, սակայն առանց հաջողության հասնելու: Եթե տրիբունալը նրա օգտին հանձնարարագիր տար, ապա ներքին գործերի քարտուղարը կունենար հայեցողական իրավունք ընդունելու կամ մերժելու այդ հանձնարարագիրը:

Դիմողի կարծիքով, ի թիվս այլոց, տեղի են ունեցել 5(1) և (4) հոդվածի խախտումներ: Հանձնաժողովը կարծիք է հայտնել՝ տասնչորս կողմ և երկու դեմ ձայներով, որ հետկանչումը 5(1) հոդվածի խախտում չի եղել: Դատարանը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել 5(4) հոդվածի խախտում, քանի որ X-ը չի կարողացել վարույթ սկսել, որը հնարավորություն կտար, որ հիվանդանոց հետկանչելուց հետո իրեն կալանքի տակ վերցնելու օրինականության վերաբերյալ դատարանն արագ որոշում կայացներ: Մասնավորապես, հոգեկան առողջության տրիբունալին ներկայացրած բողոքը, որն ուղղված էր հետկանչման դեմ, հնարավոր էր միայն հետկանչումից հետո վեց ամիս անց:

Դատարանը միաձայն վճռել է, որ 5(1) հոդվածի խախտում տեղի չի ունեցել: Իր վճռի հաջորդ պարբերությունում դատարանը քննարկել է, թե արդյոք տեղի ունեցե՞լ է 5(4) հոդվածի խախտում:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

50. Որպես իր հիմնական բացատրություն՝ կառավարությունն առարկել է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները բավարարվել են Շեֆֆիլդի ժյուրիի առջև 1968 թ. տեղի ունեցած վարույթով: Այս կապակցությամբ նրանք հիմնվել են *Դե Վիլդեի, Օմսի և Վերսիփի (De Wilde, Ooms and Versyp)* 1971 թ. հունիսի 18-ի վճռի պարբերության վրա (շարք A, թիվ 12, էջ 40, պարբ. 76):

> «Առաջին հայացքից, 5(4) հոդվածի շարադրանքից տպավորությունն այնպիսին է, որ այն երաշխավորում է կալանավորների իրավունքն առ այն, որ նրանց կալանավորելու նախորդ որոշման օրինականությունը մշտապես վերահսկվի դատարանի կողմից … Այն դեպքում, երբ անձին ազատազրկելու մասին որոշումն ընդունվում է վարչական մարմնի կողմից, կասկած չկա, որ 5(4) հոդվածը պարտավորեցնում է պայմանավորվող պետություններին կալանքի տակ գտնվող անձին հնարավորություն տալ դիմելու դատարանի օգնությանը: Սակայն որևէ ցուցում չկա, որ նույնը կիրառելի է դատական վարույթի փակման ժամանակ դատարանի կողմից հայտարարված որոշման նկատմամբ: Այս վերջին դեպքում 5(4) հոդվածով պահանջվող ստուգումը ներառված է որոշման մեջ: Այդպես է, օրինակ, երբ «իրավասու դատարանի կողմից դատապարտումից հետո» հայտարարվում է անձին ազատազրկելու մասին դատավճիռը (կոնվենցիայի 5(1)(ա) հոդված)»:

51. Հարցի փաստական մասով այս պարբերությունը խոսում է միայն «անձին իր ազատությունից զրկող որոշման մասին»: Այն նպատակաուղղված չէ կալանքին հաջորդող ժամանակաշրջանին, երբ այնուհետև կարող են առաջանալ կալանքի օրինականության վրա ազդող նոր հարցեր: 5-րդ հոդվածի 4-րդ կետի նպատակներից ելնելով՝ 1971 թ. հունիսի 18-ի վճռով անդրադարձել է ոչ միայն թափառաշրջիկությամբ զբաղվելու հիմքով երեք դիմողների նկատմամբ կալանքի կարգադրություն անելու սկզբնական որոշումներին (նույն տեղում, էջ 40, 43, պարբ. 74-80), այլև այդ դիմողների ազատ արձակման մասին միջնորդությունների ուսումնասիրության ընթացակարգին (նույն տեղում, էջ 43-4, պարբ. 81-4):

52. Բացի այդ, ինչպես կառավարությունն է նշել, պայմանավորվող պետությունների վրա 5-րդ հոդվածի 4-րդ կետով դրված պարտավորության բնույթը ոչ բոլոր դեպքերում է, որ անհրաժեշտաբար պետք է նույնը լինի, և ինչ վերաբերում է ազատազրկման յուրաքանչյուր կատեգորիային (տե՛ս mutatis mutandis վերը նշված *Դե Վիլդեի Օմսի և Վերսիփի (De Wilde, Ooms and Versyp)* վճիռը, էջ 41-2, պարբ. 78),

X-ի կալանքի վրա տարածվել է 5-րդ հոդվածի 1-ին կետի (ե) ենթակետն առնվազն այնքանով, որքանով նրա վրա տարածվել է (ա) ենթակետը … «Անառողջ բանականություն ունեցող անձանց կալանքն առանձնահատուկ կատեգորիա է՝ իր առանձնահատուկ խնդիրներով (տե՛ս Վինտերվերպի *(Winterwerp)* վճիռը, էջ 23-24, պարբ. 57 և 60): Մասնավորապես, «այն հիմքերը, որոնք ամենասկզբում երաշխավորում են անձի ազատության սահմանափակումը, կարող են դադարել գոյություն ունենալուց…»: Սա հանգեցնում է, ինչպես նշվել է *Վինտերվերպի (Winterwerp)* վճռում, որոշակի կարևորություն ունեցող հետևանքի (էջ 23, պարբ. 55):

«…Հետևաբար, 5-րդ հոդվածի խնդրին և նպատակին անհարիր է…դրա 4-րդ կետի (որն ընթերցվում է այս համատեքստում) այնպիսի մեկնաբանությունը, ըստ որի՝ այս կատեգորիայի ազատազրկումը ենթակա չէ օրինականության հետագա վերանայումների միայն այն պատճառով, որ սկզբնական որոշումը կայացվել է դատարանի կողմից: Այս կարգի ազատազրկման բուն էությունը պահանջում է, որ օրինականությունը վերանայվի ողջամիտ պարբերականությամբ»:

Այսպիսով, շնորհիվ 5-րդ հոդվածի 4-րդ ենթակետի, հոգեկան հիվանդ անձը, որն անորոշ կամ տևական ժամկետով հարկադրաբար կցված է հոգեբուժական հաստատությանը, այն դեպքում, երբ ինքնաբերաբար դատական վերանայում չի իրականացվում, սկզբունքորեն իրավունք ունի ողջամիտ պարբերականությամբ սկսելու դատական վարույթի գործընթաց՝ բարձրացնելով կոնվենցիայի իմաստով իր կալանքի «օրինականության» հարցը (տե՛ս ստորև՝ պարբ. 57), անկախ այն հանգամանքից՝ այդ կալանքը կարգադրվել է քաղաքացիակա՞ն, թե՞ քրեական դատարանի կամ որևէ այլ մարմնի կողմից:

53. Դատարանի գործառույթների մեջ չի մտնում պարզել, թե այս բնագավառում որն է դատական վերանայման լավագույն կամ ամենանպատակահարմար համակարգը, քանի որ պայմանավորվող պետություններն ազատ են ընտրելու իրենց պարտականությունների կատարման տարբեր մեթոդները: Այսպիսով, 5-րդ հոդվածի 4-րդ կետում «դատարան» բառը պարտադիր չէ, որ հասկացվի որպես դասական դատարան, որն ինտեգրված է երկրի ստանդարտ դատական համակարգին: Այնպես, ինչպես այն օգտագործվել է կոնվենցիայի մի քանի հոդվածներում, ներառյալ 5-րդ հոդվածի 4-րդ կետում, այս հասկացությունը նշանակում է «մարմիններ, որոնք ոչ միայն ցուցաբերում են ընդհանուր հիմնարար բնույթի առանձնահատկություններ, որոնցից ամենակարևորն են գործադիր մարմիններից և վարույթի կողմերից անկախությունը … այլև դատական ընթացակարգի երաշխիքներ», որոնք «ամենանպատակահարմարն են խնդրո առարկա ազատազրկման ձևի համար» և որոնք կարող են տարբեր ոլորտների համար տարբեր լինել (տե՛ս վերը նշված *Դե Վիլդեի, Օոմսի և Վերսիփի (De Wilde, Ooms and Versyp)* վճիռը, էջ 41-2, պարբ. 76 և 78):

54. Ամփոփելով՝ 1974 թ. ապրիլին կրկին Բրոուդմուռի հիվանդանոց ընդունվելուց և կալանքի տակ վերցվելուց հետո X-ը պետք է վարույթ սկսելու հնարավորություն ունենար, որը պետք է ուղեկցվեր այս «երաշխիքներով»: Այդ փուլում այն վարույթը, որը տեղի է ունեցել Շեֆֆիլդի ժյուրիի առջև 1968 թ., բավարար չի եղել 5-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին համապատասխանելու համար...

55. Սրան հակառակ կառավարությունը պնդել է, որ նշված կալանքի «օրինականությունը», փաստորեն, «արագ դատավարության ընթացակարգով» վճռվել է դատարանի՝ Թագուհու նստարանի վարչական դատարանի բաժանմունքի կողմից, երբ լսվում էր X-ի habeas corpus-ի վերաբերյալ հայցը. ...

56. X-ի կողմից սկսված habeas corpus-ի վարույթը նկարագրված է վերը... Գործը քննության է առնվել Թագուհու նստարանի բաժանմունքի վերաքննիչ դատարանի կողմից՝ հիմք ընդունելով երդման տակ տված գրավոր ցուցմունքները, ներառյալ նաև նրանք, որոնք տվել է դիմողը: X-ի փաստաբանները ձեռք են բերել այն փաստերը … որոնք ներկայացվել են բաժանմունքի վերաքննիչ դատարան: Ներքին գործերի քարտուղարը X-ի կալանքի նյութական հիմնավորումներն անձամբ ներկայացնելու որևէ պարտավորություն չի ունեցել:

Այս ամենը, ամեն դեպքում, համապատասխանել է ապահովված դատական պաշտպանության բնույթին: Habeas corpus-ի վարույթում կալանավորելու վարչական որոշումն ուսումնասիրելու ժամանակ դատարանի խնդիրն է պարզել, թե արդյոք կալանքը բխե՞լ է համապատասխան օրենսդրությունում ամրագրված պահանջներից և նախադեպային իրավունքի գործող ընդհանուր սկզբունքներից: Ըստ այդ սկզբունքների՝ այդպիսի որոշումը, եթե նույնիսկ այն ակներևաբար տեխնիկական տեսանկյունից օրինական է, կարող է բեկանվել, ի թիվս այլոց, եթե կալանքն իրականացնող մարմինը չարաշահել է իր լիազորությունները՝ գործելով անբարեխղճորեն կամ կամայականորեն կամ սխալ նպատակից ելնելով, կամ եթե որոշումը հիմնավորված չի եղել բավարար փաստերով, կամ եթե դա եղել է այնպիսի որոշում, որն այդ հանգամանքներում ողջամիտ անձնավորության կողմից չէր կարող կայացվել: Այդ իսկ պատճառով դատարանը չի կարող վերանայել վարչական մարմնի ընդունած որոշման հիմքերը կամ հատկանիշներն այնքանով, որ խնդրո առարկա օրենսդրության շրջանակներում դրանք բացառապես այդ մարմնի որոշմանը ենթակա խնդիր են:
Ինչպես ցույց է տալիս X-ի գործը, այն դեպքում, երբ օրենքի պայմանները գործադիր մարմիններին օժտում են հայեցողական իրավասությամբ՝ անկախ նրանից՝ դրա շրջանակները լա՞յն են, թե՞ նեղ, habeas corpus-ի վարույթում դատարանների կողմից սկսված վերանայման վարույթը կարող է անդրադառնալ միայն այն հանգամանքի վրա, թե որքանո՛վ է այդ հայեցողական իրավասությունը համապատասխանում այն սահմանող օրենքին:

Տվյալ դեպքում 1959 թ. օրենքի 66-րդ բաժնի 3-րդ կետի շրջանակներում սանկցիայի հիման վրա X-ի հետկանչման օրինական պահանջները բավարարված են եղել, քանի որ հիմնավորվել է, որ X-ը եղել է պայմանականորեն ազատ արձակված հիվանդ, որը ենթակա է եղել սահմանափակող կարգադրության ազդեցությանը: Այս դեպքում գործնականում խնդիրը եղել է Անգլիայի օրենքի շրջանակներում ցույց տալ որևէ պատճառ, որն ակնհայտորեն օրինական կալանքը դարձնում է անօրինական: X-ի ներկայացրած այս փաստերը չեն բացահայտել որևէ նման պատճառ, և շրջանային դատարանին այլ բան չէր մնում, քան մերժել բողոքը:

57. Թեպետ X-ը մտել է դատարան, որը որոշում է կայացրել է, որ Անգլիայի օրենքի շրջանակներում նրա կալանքը եղել է «օրինական», սա ինքնին չի կարող որոշիչ լինել եզրակացնելու համար, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի նպատակների շրջանակներում տեղի է ունեցել «օրինականության» բավարար վերանայում: Համաձայն 5-րդ հոդվածի 1(ե) կետի դատարանի մեկնաբանության (տե՛ս վերը նշված *Վինտերվերպի (Winterwerp)* վճիռը, էջ 17-18, պարբ. 39)… կոնվենցիան ևս որոշակի պահանջներ է սահմանում ազատազրկման այս ձևի (որին ենթարկվել է X-ը) «օրինականության» նկատմամբ, և այս պահանջներն առավել են, քան ներպետական օրենսդրությանը համապատասխանությունը: 5-րդ հոդվածը պետք է ընթերցվի ամբողջապես, և որևէ պատճառ չկա ենթադրելու, որ մեկ և միևնույն ազատազրկման «օրինականության» կարևորությունը 1(ե) կետից մինչև 4-րդ կետ նույնը չէ:

58. Չնայած 1959 թ. օրենքի 66-րդ բաժնի 3-րդ կետի շրջանակներում ընդունված որոշումները վերանայելու սահմանափակ հնարավորությանը՝ այս ոլորտում habeas corpus-ը որոշ դեպքերում կարող է ծառայել որպես կամայականությունների դեմ ուղղված արդյունավետ զսպամիջոց: Անառողջ դատողություն ունեցող անձանց կալանավորելու արտակարգ միջոցառումները կարող են նպատակահարմար համարվել 5-րդ հոդվածի 4-րդ կետի տեսանկյունից: Այդ միջոցառումները՝ պայմանով, որ դրանք կարճատև են (տե՛ս վերը նշված *Վինտերվերպի (Winterwerp)* վճիռը), կարող են 5(1)(ե) հոդվածի շրջանակներում համարվել «*օրինական*», եթե նույնիսկ չեն ուղեկցվում սովորական երաշխիքներով, որոնց թվին է պատկանում լիարժեք բժշկական զննությունը (տե՛ս վերը՝ պարբ. 41): Նման կալանքի կարգադրություն անելու լիազորություն ունեցող մարմինը, բնականաբար, օժտված է լայն հայեցողություններով, և սա անխուսափելիորեն նշանակում է, որ դատարանների դերը նվազեցվելու է:

Մյուս կողմից՝ դատարանի կարծիքով, դատական վերանայումը, որն այնքան սահմանափակ է, որքան տվյալ habeas corpus-ի վարույթը, բավարար չէ ազատության այնպիսի շարունակական սահմանափակման դեպքի համար, ինչպիսին X-ի դեպքն է: Կառավարությունը շատ ճիշտ է, երբ պնդում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետը չի պարունակում այս ծավալի դատական վերահսկողության իրավունք, որը կլիազորեր դատարանին գործի բոլոր առումներով որոշում կայացնող մարմնի հայեցողությունը փոխարինել սեփական հայեցողությամբ: Այնուամենայնիվ, վերանայումը պետք է բավականաչափ լայն լինի, որպեսզի ընդգրկի այն բոլոր պայմանները, որոնք, ըստ կոնվենցիայի, էական նշանակություն ունեն անառողջ դատողություն ունեցող անձին «օրինական» կալանքի տակ պահելու համար, և թեպետ հնարավոր է, որ դրանք արդարացնեն նրա կալանքն ամենասկզբում, կարող են դադարել գոյություն ունենալուց… Սա նշանակում է, որ տվյալ դեպքում 5-րդ հոդվածի 4-րդ կետով պահանջվել է համապատասխան ընթացակարգի առկայություն, որը թույլ կտար դատարանին քննելու, թե արդյոք հիվանդի խանգարումը դեռևս շարունակվե՞լ է, և արդյոք ներքին գործերի քարտուղարն իրավո՞ւնք է ունեցել մտածելու, որ ազատության պարտադիր սահմանափակման անհրաժեշտությունը դեռևս զգացվում է՝ ելնելով հասարակական անվտանգության շահից (տե՛ս mutatis mutandis *Դե Վիլդեի, Օոմսի և Վերսիփի (De Wilde, Ooms and Versyp)* վճիռը, էջ 43-4, պարբ. 82-3):

59. X-ի կողմից 1974 թ. սկսված habeas corpus-ի վարույթն այսպիսով նրա համար չի ապահովել 5-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված իրավունքի կիրառությունը: Դա տեղի չէր ունենա, եթե ավելի ուշ նա ներկայացրած լիներ նոր դիմում...

61. Կառավարությունը դատարանի ուշադրությունը հրավիրել է այն չորս եղանակների վրա, որոնց միջոցով կալանքի շարունակման անհրաժեշտությունը կարող է վերանայվել ներքին գործերի գրասենյակի կողմից: Դրանց մեջ մտնում են հիվանդին ազատ արձակելու վերաբերյալ պատասխանատու բժշկական պաշտոնյայի կողմից տրված հանձնարարականը, խորհրդարանի անդամի կողմից ներքին գործերի քարտուղարին ներկայացրած միջնորդությունը, ներքին գործերի քարտուղարին հիվանդի կողմից իրեն ազատ արձակելու վերաբերյալ ուղղակիորեն ներկայացված միջնորդությունը կամ էլ հիվանդի կողմից ներկայացված միջնորդությունը ներքին գործերի քարտուղարին իր գործը հոգեկան առողջության տրիբունալ ուղարկելու մասին...

Առաջին երեքը, այնուամենայնիվ, դեր չեն վերապահում դատական կամ վարչական բնույթի ինչ-որ մի անկախ վերանայման ընթացակարգի:

Չորրորդը պահանջում է ավելի մանրակրկիտ ուսումնասիրություն, քանի որ 1959 թ. օրենքը հնարավորություն է ընձեռում համապարփակ փաստական բազայի հիման վրա հոգեկան առողջության տրիբունալում պարբերաբար վերանայելու սահմանափակված հիվանդներին անազատության մեջ պահելու խնդիրը: Չկա որևէ հանգամանք, որը խոչընդոտ կլիներ այս կարգի մասնագիտացված մարմինը 5(4) հոդվածի իմաստով «դատարան» անվանելը՝ պայմանով, որ այդ մարմինն ունեցել է պահանջվող անկախություն և ապահովել բավարար ընթացակարգային երաշխիքներ, որոնք համապատասխանել են խնդրո առարկա ազատազրկման կատեգորիային (տե՛ս վերը՝ պարբ. 59 և վերը նշված *Վինտերվերպի (Winterwerp)* գործը, էջ 24, պարբ. 20): Այնուամենայնիվ, եթե նույնիսկ ենթադրենք, որ հոգեկան առողջության վերանայման տրիբունալները բավարարել են այս պայմանները, նրանք, միևնույն է, չեն ունեցել «կալանքի օրինականությունը» որոշելու, ինչպես նաև՝ անձի կալանքն անօրինական համարելու դեպքում նրան կալանքից ազատելու կարգադրություն անելու իրավասություն, քանի որ նրանք օժտված են եղել զուտ խորհրդատվական գործառույթներով...

Ուստին, առանց թերագնահատելու դրանց ապահոված երաշխիքների անվիճելի արժեքը, դատարանը չի կարծում, որ կառավարության վկայակոչած այդ միջոցները ծառայել են 5(4) հոդվածի նպատակների համար habeas corpus-ի վարույթի անհամապատասխանության շտկմանը. …

62. Ամփոփելով՝ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում ...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ ...

Վճռում է, որ տեղի է ունեցել 5(4) հոդվածի խախտում ...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Վիարդան և դատավորներ Զեքիան, էվրիգենիսը, Մաթշերը, Պինեյրո Ֆարինան, Ուոլշը և Զենինգսը (*ad hoc* դատավոր):

2 Որպեսզի դատական պաշտպանության միջոցը համապատասխանի 5(4) հոդվածին, այն պետք է անձին իր կալանքի հիմքերը և օրինականությունը վիճարկելու հնարավորություն ընձեռի: Այսպիսով, *«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (X v UK)* գործում habeas corpus-ը բավարար պաշտպանության միջոց չի եղել, ինչպես և չի եղել հոգեկան առողջության տրիբունալին դիմելու հնարավորություն, քանի որ, ինչպես նշել է դատարանը, տրիբունալը կարող էր միայն առաջարկություն ներկայացնել ներքին գործերի քարտուղարին, որը պետք է կայացներ վերջնական որոշումը: Այս գործի վերաբերյալ իր հաշվետվությունում հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ տրիբունալի պաշտպանական միջոցն անբավարար է եղել նաև այն պատճառով, որ դրան դիմելու հնարավորություն եղել է միայն անձին կալանավորելուց հետո վեց ամիս անց: Այնպես որ, անձի ազատ արձակման հարցն «արագ» չի լուծվել: 1982 թ. «Հոգեկան առողջության մասին» օրենքով Անգլիայի օրենքը համապատասխանեցվել է *«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (X v UK) վճռին:

3 *Վինտերվերպի (Winterwerp)* գործից հետո *«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (X v UK)* գործը նույնպես ցույց է տվել, որ 5(4) հոդվածով պահանջվում է, որ այն դեպքերում, երբ կալանքի տակ գտնվող անձի պայմանները կամ հանգամանքները կարող են փոփոխվել՝ ընդհուպ մինչև նրան կալանքի տակ պահելու հիմքերի վերացումը, անձը պետք է շարունակաբար, ողջամիտ պարբերականությամբ ապահովվի 5(4) հոդվածի պահանջներին համապատասխանող դատական պաշտպանության միջոցով: Ինչպես *«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (X v UK)* և *Վինտերվերպի (Winterwerp)* գործերի դեպքում, կալանքի այսօրինակ հիմք է անձի հոգեկան խանգարումը:

……

«Ուիքսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Weeks v UK) A.114 (1987) 10 EHRR 293

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

1966 թ. 17 տարեկան հասակում դիմողը, օգտագործելով մեկնարկն ազդարարող ատրճանակ, խանութից գողացել է 35 պենս, որից հետո զինված կողոպուտ կատարելու մեղադրանքով դատապարտվել է հայեցողական ցմահ բանտարկության: Նրա համար ընտրվել է այսպիսի պատիժ, քանի որ դրա այլընտրանքը մի քանի տարվա բանտարկությունն էր. դատավորը որոշել է, որ նրան հայեցողական ցմահ պատիժ նշանակելը շատ ավելի բարեգութ մոտեցում է, քանի որ այս դեպքում հոգեպես թերզարգացած դիմողը հնարավորություն կունենար արտոնագրի հիման վրա ազատ արձակվելու այն ժամանակ, երբ դա նպատակահարմար կլիներ (այսինքն՝ այն ժամանակ, երբ նա բավական պատասխանատվություն կրած կլիներ), ինչը կարող էր տեղի ունենալ շատ ավելի վաղ, քան որոշակի ժամկետով պատժի դեպքում: Իրականում, ներման խորհրդի առաջարկով դիմողն ազատ է արձակվել ներքին գործերի քարտուղարի կողմից միայն 1976 թ.՝ տասը տարի անընդմեջ

ազատազրկման մեջ գտնվելուց հետո: 1977 թ. փոքր իրավախախտում կատարելուց հետո Ներման խորհուրդը հաստատել է ներքին գործերի քարտուղարի կողմից ներկայացված դիմողի հետկանչման կարգադրությունը: Դրանից հետո կատարած փոքր իրավախախտումների համար դիմողը երկու անգամ ազատ է արձակվել և հետ կանչվել՝ անցնելով նույն ընթացակարգերով: Դատարանը վճռել է, որ հետկանչումները կարող էին 5(1)(ա) հոդվածով արդարացված լինել (տե՛ս վերը՝ էջ 268-69): Այս հատվածում ներկայացվում է դատարանի կարծիքն առ այն, թե հետկանչման օրինականությունը բողոքարկելու առկա դատական պաշտպանության միջոցները բավարարե՞լ են 5(4) հոդվածի պահանջները:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

58. 5-րդ հոդվածի 1(ա) պարբերության համատեքստում դատարանն արդեն վճռել է [տե՛ս վերը՝ էջ 169], որ պրն Ուիքսին «անժամկետ» պատիժ նշանակելու սոցիալական պաշտպանության և վերականգնման ամրագրված նպատակը և իրավախախտման (որի համար նա դատապարտվել է) առանձնահատուկ հանգամանքները միասին վերցրած պատիժը դնում են առանձնահատուկ կատեգորիայի մեջ … Ի տարբերություն այն դեպքի, երբ անձը դատապարտվում է ցմահ բանտարկության իր կատարած արարքի ծանրության համար, այն հիմքերը, որոնցով առաջնորդվել են ազատազրկման վճիռ կայացնող դատավորները, երբ նրանք որոշել են, որ պրն Ուիքսի ազատ արձակումը նրա ողջ կյանքի ընթացքում պետք է կախված լինի գործադիր մարմնի հայեցողությունից, իրենց բնույթով ժամանակի ընթացքում են փոփոխության: Սրանից դատարանը եզրակացնում է, որ եթե նրան ազատ արձակելու կամ կրկին կալանավորելու որոշումները հիմնված են եղել այնպիսի նպատակների վրա, որոնք չեն համապատասխանել վճիռը կայացնող դատարանի նպատակներին, ապա համաձայն 5-րդ հոդվածի 1-ին կետի (ա) ենթակետի՝ պրն Ուիքսի կալանքն այլևս օրինական համարվել չի կարող:

Սրանից հետևում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի շնորհիվ պրն Ուիքսն իրավունք է ունեցել դիմելու իրավասու «դատարան», որը պետք է «արագ» որոշեր, թե արդյոք նրա ազատազրկումն այդ առումով դարձե՞լ է «անօրինական»: Դիմողը պետք է հնարավորություն ունենար կիրառելու այս իրավունքն այն պահին, երբ ազատության մեջ գտնվելուց հետո վերադարձվել է բանտ, ինչպես նաև՝ ողջամիտ պարբերականությամբ, բանտարկության մեջ գտնվելու ընթացքում (տե՛ս mutatis mutandis վերը նշված *Վան Դրուգենբրեքի (Van Droogenbroeck)* վճիռը, շարք A թիվ 50, էջ 26, պարբ. 48 վերջում):

59. 5-րդ հոդվածի 4-րդ կետը չի երաշխավորում այս ծավալի դատական վերահսկողության իրավունք, որը «դատարանին» լիազորություններ է տալիս գործի բոլոր կողմերի (այդ թվում նաև՝ արագության) առնչությամբ որոշում կայացնող մարմնի հայեցողությունը փոխարինել սեփական հայեցողությամբ: Վերանայումը, այնուամենայնիվ, պետք է բավականաչափ լայն լինի, որպեսզի ընդգրկի այն բոլոր պայմանները, որոնք, ըստ կոնվենցիայի, էական նշանակություն ունեն այնպիսի հատուկ ձևի ազատազրկման ենթարկված անձի օրինական կալանքի համար, որը կիրառվել է պրն Ուիքսի նկատմամբ (նույն տեղում, էջ 26, պարբ. 49). ...

60. Այլընտրանքային տարբերակում կառավարությունը բացատրել է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները բավական ապահովվել են Ներման խորհրդի որոշման մեջ և և համալրվել բարձր դատարանի առջև դատական վերանայման միջոցով: Ինչպես դիմողը, այնպես էլ հանձնաժողովը չեն համաձայնել այս վերլուծությունը. ...

61. 5-րդ հոդվածի 4-րդ կետում վկայակոչված «դատարանը» պարտադիր չէ, որ լինի դասական դատարան, որն ինտեգրված է երկրի ստանդարտ դատական համակարգին (տե՛ս վերը նշված *«X-ն ընդդեմ ՄԲ-ի» (X v UK)* վճիռը, շարք A, թիվ 46, էջ 23, պարբ. 53): «Դատարան» հասկացությունը նշանակում է «մարմիններ, որոնք ոչ միայն ցուցաբերում են ընդհանուր հիմնարար բնույթի առանձնահատկություններ, որոնցից ամենակարևորներն են գործադիր մարմիններից և վարույթի կողմերից անկախությունը … այլև դատական ընթացակարգի երաշխիքները», որոնք «ամենանպատակահարմարն են խնդրո առարկա ազատազրկման ձևի համար» և կարող են տարբեր ոլորտների համար տարբեր լինել (տե՛ս վերը նշված *Դե Վիլդեի, Օոմսի և Վերսիպի (De Wilde, Ooms and Versyp)* վճիռը, էջ 41-2, պարբ. 76 և 78): Բացի այդ, 5-րդ հոդվածի 4-րդ կետի շարադրանքից պարզ է, որ խնդրո առարկա մարմինը պետք է ունենա ոչ միայն խորհրդատվական գործառույթներ, այլև՝ իրավասություն՝ «որոշելու» կալանքի «օրինականությունը» և կարգադրելու անձին ազատ արձակել, եթե կալանքն անօրինական է:

Այսպիսով, խանգարող հանգամանքներ չկան Ներման խորհրդի նման մասնագիտացված մարմնին 5-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով «դատարան» համարելու համար, եթե այն բավարարում է վերը նշված պայմանները (տե՛ս վերը նշված *«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (X v UK)* վճիռը, շարք A, թիվ 46, էջ 26, պարբ. 61)...

62. Դիմողը պնդել է, որ Ներման խորհուրդն անկախ չէ ներքին գործերի քարտուղարից հիմնականում այն պատճառով, որ նա է նշանակում խորհրդի անդամներին, ապահովում խորհրդին աշխատակազմով և ընդունում կանոններ, որոնց շրջանակներում այն իրականացնում է իր վարույթները:

Ներման խորհուրդը հրավիրում է փոքրակազմ կոլեգիաների նիստեր: Սրանցից յուրաքանչյուրի կազմի մեջ մտնում է բարձր դատարանի դատավոր և հոգեբույժ, այն դեպքում, երբ խոսքը ցմահ բանտարկյալների մասին է... Խորհրդի անդամների նշանակման կարգը, դատարանի կարծիքով, չի ապացուցում նրա անդամների անբավարար անկախությունը (տե՛ս mutatis mutandis *Քեմփբելի և Ֆելի (Campbell and Fell)* 1984 թ. հունիսի 28-ի վճիռը, շարք A, թիվ 80, էջ 40, պարբ. 79): Բացի այդ, դատարանը բավարարված է, որ խորհրդի դատավոր-անդամը և մյուս անդամները պահպանում են գործադիր մարմիններից իրենց կատարյալ անկախությունը և իրենց պարտականությունների կատարման անկանխակալությունը:

Մնում է պատասխանել այն հարցին, թե արդյոք խորհուրդը թողնո՞ւմ է անկախ տպավորություն հատկապես այն անձանց վրա, որոնց ազատության հարցն է ուսումնասիրում (նույն տեղում, էջ 39-41, պարբ. 78 և 81): Այս կապակցությամբ կառավարությունը հայտարարել է, որ խորհրդի գործառույթները չեն առնչվում բանտի պաշտոնյաների կամ ներքին գործերի քարտուղարի հետ այն ձևով, որ հնարավոր լինի նույնականացնել նրան բանտի կամ ներքին գործերի գրասենյակի ղեկավարության հետ:

Հետևաբար, դատարանը չի տեսնում որևէ պատճառ, որ եզրակացնի, թե Ներման խորհուրդը և նրա անդամներն անկախ և անաչառ չեն:

63. Ինչպես և դիմողը, այնպես էլ հանձնաժողովն ընդունել են այն տեսակետը, որ 5(4) հոդվածի նպատակների համար խորհուրդը չի ունեցել անհրաժեշտ լիազորություններ և ընթացակարգային երաշխիքներ: Դիմողն այնուհետև վիճարկել է, որ խորհրդի վարույթը «արագ» վարույթ չի եղել: Նա նշել է, որ թեպետ իր արտոնագիրը չեղյալ է համարվել 1977 թ. հունիսին, խորհուրդը որոշում չի կայացրել մինչև 1977 թ. դեկտեմբեր...

64. Համաձայն 1967 թ. «Քրեական արդարադատության մասին» օրենքի՝ ներման խորհրդի պարտականությունն է «խորհուրդներ տալ» ներքին գործերի քարտուղարին արտոնագրի հիման վրա բանտարկյալներին ազատ արձակելու կամ բանտարկյալներին տրված արտոնագրերի չեղյալ հայտարարման վերաբերյալ, որոնց հիման վրա վերջինս կատարում է իր իրավասությունները: Խորհրդի որոշումներն ունեն ներքին գործերի քարտուղարին ուղղված «առաջարկների» ձև (բաժին 59(3), 61(1) և 62(1) և (5))...

Ինչ վերաբերում է ցմահ ազատազրկման դատապարտված անձին արտոնագրի հիման վրա բաց թողնելու հնարավորության պարբերական վերանայմանը, ապա կասկածից վեր է, որ համաձայն օրենքի և իր բնույթի՝ խորհուրդն օժտված է զուտ խորհրդատվական գործառույթներով (1967 թ. օրենքի բաժին 61(1)): Ճիշտ է նաև, որ ներքին գործերի քարտուղարը չի կարող արտոնագրի հիման վրա ազատ արձակել ցմահ բանտարկյալին, եթե Ներման խորհրդի կողմից նրան նման առաջարկ չի ներկայացվել (նույն տեղում): Այնուամենայնիվ, եթե խորհուրդն առաջարկում է ազատ արձակել այսպիսի բանտարկյալներին, ապա ինչպես երևում է Ուիքսի գործից, ներքին գործերի քարտուղարն առաջին ատյանի դատավորի հետ (եթե այդպիսին կա) պետք է խորհրդակցի նաև լորդ-գլխավոր դատավորի հետ (նույն տեղում) … Հիմք ընդունելով իրեն ներկայացված ամբողջ նյութը՝ ներքին գործերի քարտուղարը խորհրդի առաջարկը մերժելու ազատություն ունի: Հետևաբար, այս կարգի գործերի կապակցությամբ, ընթացակարգային երաշխիքների ուսումնասիրությունից զատ, խորհուրդը 5-րդ հոդվածի 4-րդ կետով պահանջվող որոշում կայացնելու իրավասություն չունի:

Մյուս կողմից՝ խորհրդի ազատ արձակման առաջարկությունը պարտադիր է ներքին գործերի քարտուղարի համար, երբ խորհուրդը, ինչպես արել է պրն Ուիքսի նկատմամբ 1977 թ., քննարկում է բանտի հետկանչման հարցը, երբ անձն արտոնագրի հիման վրա ազատ է արձակվել (1967 թ. օրենքի 62(5) բաժին)…Հետևաբար, պետք է քննության առնել այն ընթացակարգը, որը կիրառվում է հետկանչման դեպքում ...

65. 5-րդ հոդվածի 4-րդ կետում խոսվում է այն մասին, որ կալանքի տակ գտնվող անձը վարույթ սկսելու իրավունք ունի: Թեպետ ցմահ բանտարկյալներին ներում շնորհելու բրիտանական համակարգով գործը խորհրդին կարող է հղվել միայն ներքին գործերի քարտուղարի կողմից, հղումը պարտադիր է հետկանչման դեպքերում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ խորհրդի առաջարկով հետ կանչված անձը նախընտրում է գրավոր բացատրություններ չտրամադրել (1967 թ. օրենքի 62(4) բաժին)... Կարող է համարվել, որ այդ հանգամանքներում հետ կանչված անձը 5(4) հոդվածի նպատակների համար բավարար հնարավորություն է ունեցել մտնելու խորհուրդ (տե՛ս վերը նշված *«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (X v UK)* վճիռը, շարք A, թիվ 46, էջ 23, պարբ. 52):

66. Խորհուրդը զբաղվում է առանձին գործերով՝ ուսումնասիրելով ներքին գործերի քարտուղարի կողմից իրեն տրամադրված փաստաթղթերը և այլ հաշվետվություններ, տեղեկություններ կամ տվյալ անձնավորության հետ իր պահանջով անցկացված հարցազրույցներ (1967 թ. օրենքի 59(4) և (5) բաժիններ)… Նման բացատրություններ պատրաստելու ժամանակ անձը իրավաբանական խորհրդատվությունից օգտվելու ազատություն ունի: Բացի այդ, որպեսզի նա կարողանա հիմնավոր բացատրություններ ներկայացնել, պետք է բավականաչափ տեղեկացված լինի իրեն հետ կանչելու պատճառների մասին (տե՛ս 1967 թ. օրենքի 62(3) բաժինը և *Գաննելի* (Gunnell) և *Վիլսոնի* (Wilson) գործերով վճիռները, նույն տեղում):

Թեպետ այս երաշխիքները չնչին չեն, հետ կանչված բանտարկյալների դեպքում որոշակի ընթացակարգային թերություն կա: Այսպիսով, վերաքննիչ դատարանը *Գաննելի (Gunnell)* գործով ապացուցել է, որ խորհրդի բարեխղճորեն գործելու պարտականությունը, որը բնական արդարադատության սկզբունքների համաձայն պահանջվում է Անգլիայի

օրենքի շրջանակներում, չի առաջացնում խորհրդի տրամադրության տակ եղած բացասական ազդեցություն ունեցող տեղեկությունների բացահայտման իրավունք… Ընդունված ընթացակարգը, հետևաբար, թույլ չի տալիս, որ վիճարկվող որոշման բացասական ազդեցությանը ենթարկվող անձնավորությունը պատշաճ մասնակցություն ունենա այն դեպքում, երբ կոնվենցիայի նպատակների համար դա դատական ընթացակարգի սկզբունքային երաշխիքներից մեկն է և, հետևաբար, չի կարող համարվել բնույթով դատական (տե՛ս mutatis mutandis *Սանչես-Ռեյեսի* (Sanchez-Reisse) 1986 թ. հոկտեմբերի 21-ի վճիռը, շարք A, թիվ 107, էջ 19, պարբ. 51):

67. Հաշվի առնելով այս եզրակացությունը՝ դատարանը չի համարում, որ դիմողի և հանձնաժողովի կողմից բարձրացված մյուս կետերի վերաբերյալ որոշում կայացնելու անհրաժեշտություն կա: Այսինքն՝ նախ՝ պրն Ուիքսի նկատմամբ կիրառված ազատազրկման հատուկ կատեգորիային վերաբերող պատշաճ ընթացակարգով գրավոր բացատրություններից բացի պահանջվո՞ւմ է բանավոր լսումների կազմակերպում (տե՛ս mutatis mutandis *Սանչես-Ռեյեսի (Sanchez-Reisse)* 1986 թ. հոկտեմբերի 21-ի վճիռը, շարք A թիվ 107, էջ 19, պարբ. 51) և երկրորդ՝ արդյոք խորհրդի իրականացրած վարույթը եղե՞լ է «արագ»...

68. Հետևաբար, ո՛չ պրն Ուիքսին 1977 թ. բանտ հետ կանչելու, ո՛չ նրան արտոնագրով ազատ արձակելու համար նրա կալանքի պարբերական ուսումնասիրությամբ չի կարող համարվել, որ Ներման խորհուրդը բավարարել է 5-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները...

69. Նախկին գործերում դատարանն ընդունել է, որ անհրաժեշտ է համակողմանիորեն մոտենալ իր քննարկմանը ներկայացված համակարգին, քանի որ մեկ ընթացակարգի ակնհայտ կարճաժամկետ թերությունները կարող են շտկվել այլ ընթացակարգերով ապահովվող երաշխիքներով (տե՛ս, օրինակ՝ վերը նշված *«X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (X v UK)* վճիռը, շարք A, թիվ 46, էջ 26, պարբ. 60): Այս կապակցությամբ դատական վերանայում պահանջող դիմումն անկասկած Ներման խորհրդի ընթացակարգի կարևոր լրացումն է: Այն հնարավորություն է տալիս տվյալ անձնավորությանը սովորական դատարանների միջոցով ապահովելու ինչպես Ներման խորհրդի որոշումների (տե՛ս, օրինակ՝ Թագուհու նստարանի բաժանմունքի վերաքննիչ դատարանի *Վիլսոնի* (Wilson) գործի վերաբերյալ վճիռը), այնպես էլ ներքին գործերի քարտուղարի որոշումների վերահսկողությունը:

Դիմողը, ընդունելով հանձնաժողովի հաշվետվության մեջ արված եզրակացությունները, բողոքել է, որ դատական վերանայման պաշտպանության միջոցը չի բավարարել 5-րդ հոդվածի 4-րդ կետում ամրագրված մատչելիության և արդյունավետության պահանջները (տե՛ս վերը նշված *Վան Դրուգենբրոեքի (Van Droogenbroeck)* վճիռը, շարք A, թիվ 50, էջ 30, պարբ. 54):

Ինչպես ամփոփել է լորդ Դիփլոքը *«Քաղծառայողների միությունների խորհրդի»* (Civil Service Unions) գործի կապակցությամբ արտասանած ճառում, «անօրինականությունը», «իռացիոնալությունը» և «ընթացակարգային անճշտությունը» այն հիմքերն են, որոնց հիման վրա տեղի է ունենում դատական վերանայումը: «Անօրինականության» տակ հասկացվում է որոշումների կայացման լիազորությունների վրա ազդող օրենքի սխալ կիրառությունը: «Իռացիոնալությունը» վերաբերում է այնպիսի որոշմանը, որն այնքան զայրացնող է իր անտրամաբանական լինելու կամ ընդունված բարոյական չափորոշիչների պատճառով, որ որևէ բանական մարդ, որը մտածել է որոշման ենթակա հարցի մասին, երբևէ չէր կարող հանգել նման եզրակացության: Եվ «ընթացակարգային անճշտությունը» հստակ շարադրված ընթացակարգային կանոններից շեղումն է, բնական արդարադատության մերժումը կամ ընթացակարգային արդարության բացակայությունը...

Ինչպես նշել է հանձնաժողովը, հնարավոր հսկողության շրջանակը, այսպիսով, բավականաչափ լայն չի եղել, որպեսզի ընդգրկի կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով պրն Ուիքսի կալանքի «օրինականության» վրա ազդեցություն ունեցող պայմանները. ասել է թե [այն պայմանները, որոնք հնարավորություն կտային պարզելու]՝ նրա կալանքը համապատասխանե՞լ է և, հետևաբար, արդարացվա՞ծ է եղել նրան նշանակված անժամկետ պատժի տեսանկյունից (տե՛ս վերը՝ պարբ. 58 և 59): Դատարանի կարծիքով, հիմք ընդունելով իր կողմից թույլատրված հսկողության բնույթը, դատական վերանայման պաշտպանության միջոցը չէր կարող ապահովել ո՛չ 5-րդ հոդվածի 4-րդ կետով պահանջվող վարույթի [իրականացումը], ո՛չ էլ ծառայել որպես Ներման խորհրդի ընթացակարգի անհամապատասխանության շտկման միջոց...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ...

Տասներեք կողմ և չորս դեմ ձայներով վճռում է, որ տեղի է ունեցել 5(4) հոդվածի խախտում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Ռիսդալը և դատավորներ Կրեմոնան, Տոիր Վիլջաուլմսոնը, Բինդշեդլեր-Ռոբերտը, Լագերգրենը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Պինեյրո Ֆարինան, Փեթիթին, Ուոլշը, սըր

Վինսենթ էվանսը, Մակդոնալդը, Ռուսոն, Բերնհարդտը, Ձերսինգը, Շպիլմանը և Դե Մեյերը: Դատավորներ Վիլջաուլմսոնը, Լագերգրենը, էվանսը և Ձերսինգն հայտնել են միասնական մասնակի համընկնող/չհամընկնող կարծիք, որում նրանք տեսակետ են հայտնել, որ Ուիքսի սկզբնական դատավարությունը՝ դատական վերանայման գործընթացի միջոցով հետկանչումը բողոքարկելու հնարավորության հետ բավարարել է 5(4) հոդվածի պահանջները:

2 *Ուիքսի* (Weeks) գործը մի շարք գործերի շարքում առաջինն էր, երբ Եվրոպական դատարանը կիրառել է 5(4) հոդվածի շարունակական դատական պաշտպանության միջոցի պահանջը Անգլիայում կիրառվող հայեցողական կամ անժամկետ ցմահ պատժի կարգադրությունների, պարտադիր ցմահ բանտարկության պատժի և «անորոշ ժամկետով» անչափահասների կալանքի առնչությամբ: Ինչպես դեռ ցույց կտրվի, ներքին գործերի քարտուղարի միջամտությունը, երբ վերջինս անկասկած դատարան չէ, համաձայն դատարանի վճիռների, խիստ խնդրահարույց է և անհարկի:

.....

«Թինը, Ուիլսոնը և Գաներն ընդդեմ Միացյալ Թագավորության»
*(Thynne, Wilson and Gunnell v UK A.*190 (1990) 13 EHRR 666)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողները, որոնք մեղավոր են ճանաչվել սեռական բնույթի ծանր հանցագործություններ կատարելու մեջ, ենթակա կլինեին երկարաժամկետ ազատազրկման, եթե նրանց նկատմամբ կիրառվեին ազատազրկման հստակ ժամկետներ: Քանի որ դիմողները համարվել են անկայուն բնավորության տեր անձինք, որոնք ազատության մեջ գտնվելու դեպքում ունակ են այլ հանցագործությունների կատարման, նրանց նշանակվել է հայեցողական ցմահ պատիժ՝ համաձայն պատիժների նշանակման գործող քաղաքականության: Հանցագործներին պատժելու և հանրային շահը վտանգավոր քրեական հանցագործներից պաշտպանելու նպատակով այն ընդգրկել է մի քանի տարվա պարտադիր ազատազրկման ժամկետ (the tariff period), որը նախատեսվել է որպես պատիժ և արդարացված է եղել հանրային շահը վտանգավոր քրեական հանցագործներից պաշտպանելու հիմքերով: Բոլոր երեք գործերում դիմողներն անցում են կատարել ցմահ պատժի բանտարկության փուլից անվտանգության փուլ և կարող էին Ներման խորհրդի առաջարկությամբ ներքին գործերի քարտուղարի արտոնագրի հիման վրա ազատ արձակվել, եթե նրանց մասին ձևավորվեր այնպիսի կարծիք, որ այլևս վտանգ չեն ներկայացնում հասարակության համար: Տասը կողմ և երկու դեմ ձայներով հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ շարունակվող կալանքը բողոքարկելու համար դիմողների տրամադրության տակ եղած դատական պաշտպանության միջոցները պարտադիր ժամկետի ավարտից հետո չեն բավարարել 5(4) հոդվածը:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

68. *Դե Վիլդեի, Օոմսի և Վերսիփի (De Wilde, Ooms and Versyp)* 1971 թ. հունիսի 18-ի վճռով որոշվել է, որ այն դեպքում, երբ բանտարկությունը նշանակվել է «իրավասու դատարանի կողմից դատապարտվելուց հետո», 5-րդ հոդվածի 4-րդ կետով պահանջվող վերահսկողությունն ընդգրկված է դատարանի որոշման մեջ (շարք A, թիվ 12, էջ 40, պարբ. 76): Հետագա գործերում դատարանը հստակեցրել է, որ այս եզրակացությունը վերաբերում է միայն «անձին ազատությունից զրկելու սկզբնական որոշմանը» և նպատակ չի ունեցել «ընդգրկել նրա կալանքի հետագա ժամանակահատվածը, որի ընթացքում կարող են առաջանալ կալանքի օրինականության վրա ազդող նոր հարցեր» (տե՛ս, ի թիվս այլոց, վերը նշված *Ուիքսի* վճիռը, շարք A թիվ 114, էջ 28, պարբ. 56): Այս կապակցությամբ 5-րդ հոդվածի 4-րդ կետի օրինականության հայեցակարգը պահանջում է, որ կալանքը համապատասխանի ոչ միայն ներպետական օրենսդրությանը, այլև կոնվենցիայի տեքստին, դրանում ամփոփված ընդհանուր սկզբունքներին և 5-րդ հոդվածի 1-ին կետով թույլատրված սահմանափակումներին (նույն տեղում՝ էջ 23, պարբ. 42 և էջ 28, պարբ. 57):

69. 5(1)(ե) հոդվածով անառողջ բանականություն ունեցող անձանց կալանքին վերաբերող գործերի դեպքում, երբ կալանքն ամենասկզբում երաշխավորող պատճառները կարող են դադարել գոյություն ունենալուց, դատարանը վճռել է, որ «5-րդ հոդվածի առարկային և նպատակին անհարիր է ... դրա 4-րդ կետի … այնպիսի մեկնաբանությունը, ըստ որի՝ այս կատեգորիայի ազատազրկումը ենթակա չէ օրինականության հետագա վերանայումների միայն այն պատճառով, որ սկզբնական որոշումը կայացվել է դատարանի կողմից (տե՛ս *«X-ի ընդդեմ Միացյալ Թագավորության» (X v UK)* 1981 թ. նոյեմբերի 5-ի վճիռը, շարք A թիվ 46, էջ 22-3, պարբ. 52): 5(4) հոդվածի այս մեկնաբանությունը նաև որոշ հանգամանքներում կիրառվել է 5(1)(ա) հոդվածով «իրավասու դատարանի կողմից դատապարտումից հետո» տեղի ունեցած կալանքի նկատմամբ (տե՛ս, ի թիվս այլոց, 1982 թ. հունիսի 24-ի *Վան Դրուգենբրեքի (Van Droogenbroeck)* 1982 թ. հունիսի 24-ի վճիռը, շարք A, թիվ 50, էջ 23-7, պարբ. 44-9, վերը նշված *Ուիքսի* (Weeks) վճիռը, շարք A, թիվ 114, էջ 28-9, պարբ. 55-9 և *«E-ի ընդդեմ Նորվեգիայի» (E v Norway)* 1990 թ. օգոստոսի 29-ի վճիռը, շարք A, թիվ 181-A, էջ 21-2, պարբ. 50): Այս համատեքստում կարևորություն ունեն խնդրո առարկա կալանքի բնույթը և նպատակը, որոնք դիտարկվում են դատավճիռը կայացրած դատարանի նպատակների, այլ ոչ թե 5(1) հոդվածի կալանքի կատեգորիայի դիրքերից (տե՛ս վերը նշված *Վան Դրուգենբրեքի (Van Droogenbroeck)* վճիռը, էջ 24, պարբ. 47):

70. Պրն Ուիքսին հայեցողական ցմահ պատիժ նշանակվել էր ոչ թե նրա գործած իրավախախտման ծանրության, այլ նրա վտանգավորության և անկայուն անհատականության պատճառով, ինչպես նաև ներքին գործերի քարտուղարին նրա զարգացմանը հետևելու և նրան ազատ արձակելու հնարավորություն տալու նպատակով, երբ նա համայնքի համար արդեն վտանգ չէր ներկայացնի (տե՛ս շարք A, թիվ 114, հատկապես էջ 10-11, պարբ. 14-15):

Դատարանը որոշել է, որ նրա դեմ կարգադրված միջոցառումը համեմատելի է եղել *Վան Դրուգենբրեքի* գործում [դատապարտյալին] կառավարության տրամադրության տակ դնելու միջոցառման հետ և նաև, ցմահ պատժի հիմքում ընկած պաշտպանական նպատակը, իրավախախտման (որի համար նա դատապարտվել էր) առանձնահատուկ հանգամանքների հետ մեկտեղ, այդ պատիժը դարձրել են հատուկ կատեգորիայի պատիժ, որի նկատմամբ կիրառելի է 5-րդ հոդվածի 4-րդ կետը (նույն տեղում՝ էջ 24-5, պարբ. 46-7, և, էջ 28-9, պարբ. 58): Այս կատեգորիայի կարևոր առանձնահատկությունն այն է, որ պատիժը նշանակող դատավորների կողմից օգտագործված հիմքերը, ինչպես և պրն Ուիքսի դեպքում հոգեկան անկայունության և վտանգավորության համար ցմահ պատիժ նշանակելու հիմքը իրենց բնույթով ժամանակի ընթացքում ենթակա են փոփոխության: Սրանից դատարանը եզրակացրել է, որ եթե ազատ չարձակելու կամ կրկին կալանավորելու որոշումները բխել են այնպիսի հիմքերից, որոնք չեն համապատասխանել պատիժը նշանակող դատարանի նպատակներին, ապա նրա կալանքը դադարել է 5(1)(ա) հոդվածի նպատակների շրջանակներում օրինական լինելուց: Դատարանը նաև եզրակացրել է, որ պրն Ուիքսն իրավունք է ունեցել, շնորհիվ 5(4) հոդվածի, դիմելու դատարան՝ պահանջելով, որ որոշում կայացվի նրա ազատազրկման օրինականության մասին այն պահին, երբ ազատ արձակվելուց հետո նա կրկին վերցվել է կալանքի տակ, և ողջամիտ պարբերականությամբ՝ նրա բանտարկության ընթացքում (նույն տեղում՝ էջ 29, պարբ. 58):

71. Սույն գործում դատարանն ուշադրություն է դարձրել դատարանների կողմից դիմողներից յուրաքանչյուրին նշանակված պատժի պատճառաբանություններին, ինչպես նաև Անգլիայի օրենքի համակարգում հայեցողական ցմահ բանտարկության բնույթին և նպատակին:

72. Պրն Թինի մոտ հայտնաբերվել է հոգեկան խանգարում, որի դեպքում պահանջվել է հսկողության սահմանում և, հավանաբար, նաև վիրաբուժական միջամտություն: Սակայն, պատիժը նշանակող դատավորը նշել է, որ եթե չլինեին հոգեբույժի եզրակացությունները, ինքը կնշանակեր շատ երկարատև ազատազրկման պատիժ… Այնուամենայնիվ, վերաքննիչ դատարանը հայտարարել է, որ «այս դեպքում չի կարծում, որ ցմահ պատիժն անհրաժեշտաբար պետք է ընդգրկի վերահսկողության պայմաններում անձի կալանավորում»: Այն ավելացրել է, որ այս գործը վերաբերել է շատ ծանր հանցագործության, և անհրաժեշտություն կա հասարակությանը պաշտպանելու «նրա բնավորության բռնկումներից, որոնց հետևանքով մարդիկ կարող են լրջորեն տուժել». . .

[Դատարանը համանման վերլուծություններ է արել մյուս երկու դիմողների գործերի կապակցությամբ:]

Դիմողներից յուրաքանչյուրը, այսպիսով, դատապարտվել է ցմահ բանտարկության, քանի որ, բացի այն, որ պատիժն անհրաժեշտ է համարվել, դատարանները որոշել են նաև, որ նրանք տառապում են հոգեկան կամ անձի խանգարումներից, վտանգավոր են և ունեն բուժման կարիք: Այդ հանգամանքներում որոշվել է, որ ցմահ բանտարկությունն ամենանպատակահարմար պատիժն է, քանի որ պետքարտուղարին հնարավորություն է տալիս գնահատելու նրանց հետագա առաջընթացը և համապատասխանաբար գործելու: Այսպիսով, այս դեպքում դատարանների պատժի նշանակման նպատակները նման են եղել Ուիքսին նշանակված պատժի նպատակներին, սակայն դրանցում նաև հաշվի են առնվել կատարված հանցագործությունների ծանրության ավելի խիստ աստիճանը:

73. Ինչ վերաբերում է Անգլիայի օրենքով հայեցողական ցմահ պատժի բնույթին և նպատակին, ըստ կառավարության ներկայացրած հիմնական բացատրության, անհնարին է տարանջատել այս պատիժների պատժիչ և անվտանգության

տարրերը: Դատարանի համար այս փաստարկը համոզիչ չէ: Հայեցողական ցմահ պատիժը հստակ ձևավորվել է Անգլիայի օրենքում որպես հոգեպես անկայուն և վտանգավոր անձանց դեմ ուղղված միջոցառում: Բազմաթիվ դատական արձանագրություններ ճանաչել են ցմահ պատժի այս ձևի պաշտպանական նշանակությունը (տե՛ս, մասնավորապես, լորդ-գլխավոր դատավոր Լեյնի և լորդ-դատավոր Ստյուարտ-Սմիթի նկատառումները *«R-ն ընդդեմ Ուիլքինսոնի» (R v Wilkinson)* և *«R-ն [Թագուհին] ընդդեմ պետքարտուղարի Բրեդլիի առնչությամբ» (R v Secretary of State, ex p Bradley)*): Թեպետ որոշ դեպքերում բաժանարար գիծ անցկացնելը կարող է դժվար լինել, պարզ է, որ ի տարբերություն ոչ հայեցողական/պարտադիր ցմահ բանտարկության պատժի, այս պատիժների հիմքում ընկած սկզբունքները, ունենալով որոշակի զարգացում, ընդգրկում են պատժիչ և անվտանգության տարրեր, որոնք նպատակ ունեն օժտել պետքարտուղարին այս բանտարկյալներին ազատ արձակելու պատասխանատվությամբ այն դեպքում, երբ նրանց ազատ արձակումը թույլատրելի է հանրային շահի տեսանկյունից: Այս տեսակետն ամրապնդվում է tariff-ի [պատժի պարտադիր ժամկետի] դատական նկարագրությամբ, համաձայն որի՝ դա կալանքի այն հատվածն է, որն անհրաժեշտ է համարվում հատուցման և կասեցման պահանջները բավարարելու համար»....

75. Պատիժ նշանակող դատարանների վճիռներից պարզ է, որ, նրանց կարծիքով, երեք դիմողներն էլ, ի տարբերություն պրն Ուիքսի, կատարել են վերին աստիճանի ծանր հանցագործություններ, որոնք ունեցել են տևական ժամանակով անձանց ազատազրկման ենթարկելու հատկանիշներ: Այնուամենայնիվ, դատարանը համարում է, որ յուրաքանչյուրի դեպքում հայեցողական ցմահ պատժի պատժիչ ժամանակաշրջանը ավարտվել է ....

76. Հաշվի առնելով վերոհիշյալը՝ դատարանը կարծում է, որ ցմահ պատժի պատժիչ շրջանի ավարտից հետո դիմողների կալանքը համեմատելի է *Վան Դրուգենբրոեքի (Van Droogenbroeck)* և *Ուքսի (Weeks)* գործերով նշանակված պատիժներին. հոգեկան անկայունության և վտանգավորության գործոնները ժամանակի ընթացքում ենթակա են փոփոխության և, հետևաբար, կալանքի ժամանակ կարող են առաջանալ [կալանքի] օրինականության նոր հարցեր: Դրանից հետևում է, որ համաձայն 5(4) հոդվածի՝ իրենց պատժի իրագործման այդ փուլում դիմողներն իրավունք ունեին ողջամիտ պարբերականությամբ վարույթ սկսելու, որի արդյունքում իրենց շարունակվող կալանքի, իսկ կրկին կալանքի վերցվելու դեպքում՝ իրենց կալանքի օրինականությունը կորոշվեր դատարանի կողմից:

77. Դիմողների և հանճնաժողովի ներկայացմամբ՝ «պարտադիր» ժամկետի մասին դիմողներն ուղղակիորեն չեն իրազեկվել, և դրա անորոշության պատճառով 5(4) հոդվածը վերաբերում է դիմողների բանտարկության ողջ ժամանակահատվածին: Բացի այդ, դիմողները նշանակություն են տվել այն փաստին, որ tariff-ը կամ պատժիչ ժամանակահատվածը չի հրապարակվել բաց դատարանում և ենթակա չի եղել սովորական բողոքարկման գործընթացի:

Կառավարությունն առարկել է, որ ցմահ բանտարկյալը չպետք է դրվի ավելի լավ վիճակում, քան այն բանտարկյալը, որին նշանակվել է որոշակի ժամկետով պատիժ: Tariff-ի տևողության մասին կարելի է եզրակացություն անել առաջին վերանայման համար սահմանված օրվանից: Եթե 5(4) հոդվածը պետք է կիրառվի, ապա միայն tariff-ի ավարտից հետո

78. Դատարանը չի կարծում, որ ներկա գործում անհրաժեշտ է որոշել այս հարցը, քանի որ պարզ է, որ երեք դիմողների ցմահ պատժի պատժիչ ժամանակահատվածն ավարտված է (տե՛ս վերը՝ պարբ. 75): Հետևաբար, դիմողներն ունեին հետագա դատական հսկողության իրավունք, որը երաշխավորվում է 5(4) հոդվածով . . .

79. 5(4) հոդվածը չի երաշխավորում այսպիսի ծավալի դատական վերահսկողության իրավունք, որը «դատարանին» լիազորություններ է տալիս գործի բոլոր կողմերի (այդ թվում նաև՝ արագության) առնչությամբ որոշում կայացնող մարմնի հայեցողությունը փոխարինել սեփական հայեցողությամբ: Վերանայումը, այնուամենայնիվ, պետք է հնարավորինս լայն լինի, որպեսզի ընդգրկի բոլոր այն պայմանները, որոնք, ըստ կոնվենցիայի, էական նշանակություն ունեն այնպիսի հատուկ ձևի ազատազրկման ենթարկված անձի օրինական կալանքի համար, որը կիրառվել է այս երեք դիմողների նկատմամբ (տե՛ս, ի թիվս այլոց, վերը նշված *Ուիքսի (Weeks)* վճիռը, շարք A թիվ 114, էջ 29, պարբ. 59 և վերը նշված *«E-ն ընդդեմ Նորվեգիայի» (E v Norway)* վճիռը, շարք A, թիվ 181-A, էջ 21-2, պարբ. 50):

80. Դատարանը որևէ պատճառ չի տեսնում, որ հրաժարվի *Ուիքսի* (Weeks) վճռում արած իր եզրակացություններից (էջ 29-33, պարբ. 60-9), ըստ որոնց՝ ո՛չ Ներման խորհուրդը, ո՛չ դատական վերանայման գործընթացը չեն կարող բավարարել 5(4) հոդվածի պահանջները, եթե երեք դիմողների տրամադրության տակ չեն եղել դատական բնույթի այլ պաշտպանական միջոցներ: Իրոք, սա չի վիճարկվել կառավարության կողմից...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

Տասնութ կողմ և մեկ դեմ ձայներով վճռում է, որ բոլոր երեք դիմողների նկատմամբ տեղի է ունեցել 5(4) հոդվածի խախտում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Ռիսդալը և դատավորներ Կրեմոնան, Վիլջաուլմսոնը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Պինեյրո Ֆարինան, Փեթիթին, Ուոլշը, սըր Վինսենթ Էվանսը, Մակդոնալդը, Ռուսոն, Բերնհարդտը, Շպիլմանը, Դե Մեյերը, Վալտիկոսը, Մարտենսը, Փեքանենը, Լուազուն, Մորինիյա Ռոդրիգեսը: Դատավոր Վիլջաուլմսոնը ներկայացրել է չհամընկնող կարծիք, որում նա հայտնել է, որ իր համոզմամբ՝ դիմողների սկզբնական դատավարություններն ապահովել են 5(4) հոդվածով պահանջվող դատական վերանայումը:

2 *«Օլդհեմն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Oldham v UK)* (2000 թ. սեպտեմբերի 20-ի վճիռ) գործով դիմողը, որի հայեցողական ցմահ բանտարկության պատժիչ շրջանը եղել է ավարտված, պնդել է, որ իր կալանքի վերանայումների միջև ընկած երկու տարվա ժամանակահատվածը չի բավարարել 5(4) հոդվածի պահանջները: 1970 թ. Օլդհեմը դատապարտվել է ալկոհոլ օգտագործած լինելու պատճառով ոչ նորմալ հոգեվիճակում գտնվելու ժամանակ կատարած ոչ կանխամտածված սպանության համար: 1980-ականների վերջից նա մի քանի անգամ ազատ է արձակվել և հետ կանչվել բանտ: 1996 թ. հուլիսին նա հետ է կանչվել ներքին գործերի քարտուղարի կողմից, այն հիմքով, որ չափից ավելի շատ խմելուց հետո վնաս է հասցրել իր ընկերակցին: Ներման խորհրդի հայեցողական դատապարտյալների կոլեգիան քննարկել է նրա հետկանչումը և կարծիք հայտնել, որ նա պետք է մնա կալանքի տակ, քանի որ վտանգ է ներկայացնում հանրության համար, ինչպես նաև, նա պետք է ջանքեր գործադրի ալկոհոլի չարաշահումը և իր զայրույթը զսպելու ուղղությամբ: Ներքին գործերի քարտուղարը տեղյակ է պահել Օլդհեմին, որ Ներման խորհուրդը նրա կալանավորման հարցը վերանայելու է երկու տարուց: Հետկանչումից հետո ութ ամսվա ընթացքում Օլդհեմն ավարտել է նշված խնդիրներին վերաբերող դասընթաց: 1998 թ. դիմողն ունեցել է մեկ այլ լսում հայեցողական բանտարկյալների կոլեգիայի կողմից, որն առաջարկել է նրան բաց թողնել (ներքին գործերի քարտուղարը արտոնագրի հիման վրա ազատ է արձակել նրան): Օլդհեմը վիճարկել է, որ իր կալանքի վերանայման հետաձգումը եղել է անողջամիտ և, այդպիսով, խախտել է 5(4) հոդվածը: Դատարանը հայտարարել է, որ.

> 31. Ճիշտ է, որ ժամկետների պահանջներին համապատասխանության հարցը, ինչպես և 5(3) և 6(1) հոդվածների ողջամիտ ժամկետի պայմանի դեպքում, յուրաքանչյուր դեպքում պետք է որոշվի առանձին՝ հաշվի առնելով այդ գործի հանգամանքները (տե՛ս *«Սանչես-Ռեյեսն ընդդեմ Շվեյցարիայի» (Sanchez-Reisse v Switzerland)* 1986 թ. հոկտեմբերի 21-ի վճիռ, շարք A, թիվ 107, էջ 55, պարբ. 55): Հետևաբար, այս դատարանի խնդիրը չէ փորձել որոշում կայացնել ցմահ բանտարկյալների նկատմամբ ինքնաբերաբար վերանայումների միջև ընկած առավելագույն ժամկետների վերաբերյալ: Դատարանը նկատում է, որ այս գործում կիրառվող համակարգը ճկուն է և պետք է արտացոլի իրական վիճակը, այն է՝ նշանակալի տարբերություններ կան բանտարկյալների անձնական հանգամանքների միջև:

Նկատելով, որ նախորդ վերանայումից հետո ութ ամսվա ընթացքում Օլդհեմն ավարտել է դասընթացներ, դատարանը եզրակացրել է, որ ողջամիտ չի եղել, որ նա պետք է սպասեր ևս տասնվեց ամիս, մինչև իր գործը կվերանայվեր ցմահ հայեցողական բանտարկյալների կոլեգիայի կողմից: Հետևաբար, ինչպես սահմանվում է 5(4) հոդվածով, նրա շարունակվող կալանքի վերաբերյալ «արագ» որոշում չի կայացվել: Այս վճիռը ցույց է տալիս, որ ազգային վերանայման գործընթացներն առաջին հերթին հաստատված ժամանակացույցներով առաջնորդվելու փոխարեն, պետք է առաջնորդվեն առանձին բանտարկյալների անձնական հանգամանքներով:

3 *Թինի, Ուիլսոնի և Գանելի (Thynne, Wilson and Gunnell)* գործերում (պարբ. 73) Եվրոպական դատարանը հստակ տարբերակում է դրել Անգլիայի համակարգում գոյություն ունեցող հայեցողական և պարտադիր ցմահ պատիժների միջև: Ըստ այդմ՝ վերջինի դեպքում 5(4) հոդվածի շրջանակներում շարունակական պաշտպանական միջոցի առկայություն չի պահանջվում: Տասնութ կողմ և մեկ դեմ ձայներով նախկին դատարանը հաստատել է այս տեսակետը *«Ուինն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (Wynne v UK A.294 (1994) 19 EHRR 333) գործի վերաբերյալ իր վճռով, որի

փաստերը վերաբերում էին ոչ հայեցողական/պարտադիր ցմահ պատժին: Դատարանը հայտարարել է.

35. … Այնուամենայնիվ փաստ է, որ պարտադիր պատիժը պատկանում է լրիվ այլ կատեգորիայի, քան հայեցողական պատիժը, քանի որ այն մեխանիկորեն նշանակվում է մարդասպաններին՝ անկախ հանցագործի վտանգավորությանը վերաբերող նկատառումներից... Այն հանգամանքը, որ ոչ հայեցողական/պարտադիր կարգով ցմահ բանտարկյալները փաստացի իրենց կյանքի մնացած մասը չեն անցկացնում բանտում, և տեսական պատժիչ ժամանակահատված (tariff period) սահմանվում է նաև այս դեպքերում, փաստեր են, որոնցից դատարանը լիովին տեղյակ է *Թինի, Ուիլսոնի և Գաների* գործերից (loc cit, էջ 29, պարբ. 74), սակայն դրանք չեն փոխում ցմահ պատժի այս երկու ձևերի այս կարևոր տարբերակումը: Ինչպես նշվել է Լորդերի պալատի կողմից *«R-ն [Թագուհին] ընդդեմ պետքարտուղարի Դուդիի առնչությամբ» (R v Secretary of State, ex p Doody)* գործում, թեև հնարավոր է, որ ներկայումս տեղի է ունենում ցմահ բանտարկության այս երկու ձևերի միաձուլում, օրենսդրական դաշտում գործող տեսությունը և ընթացիկ գործնական փորձը դեռևս նույնն են, ինչը նրանց միջև զգալի ճեղքվածք է առաջացնում ...

Սա հաստատվում է հենց այն փաստերով, որոնց վրա, ի թիվս այլոց, իր գործը պաշտպանելու համար հիմնվել է նաև դիմողը: Այսպես, պարտադիր ցմահ բանտարկության դեպքերում բանտարկյալի ազատ արձակումը լիովին պետքարտուղարի հայեցողության հարց է, որի համար պատժիչ ժամանակահատվածի վերաբերյալ դատական առաջարկությունը պարտադիր կատարման ենթակա չէ, և Անգլիայի օրենքի շրջանակներում ազատ է՝ պատժիչ ժամանակահատվածի ավարտից հետո բանտարկյալին ազատ արձակելու նպատակով նրա վտանգավորությունից բացի հաշվի առնելու նաև այլ հանգամանքներ … Այն, այնուհետև արտացոլված է խորհրդարանական որոշման մեջ, համաձայն որի՝ 1991 թ. օրենքով նախատեսված նոր ընթացակարգերի կիրառությունը պետք է սահմանափակվի միայն պայմանական ցմահ պատիժներով, նույնիսկ այն դեպքում, երբ բանտարկյալը, ինչպես այս դեպքում, կրում է ինչպես պայմանական, այնպես էլ ոչ հայեցողական/պարտադիր պատիժ...

36. Այս պայմաններում դատարանը համոզիչ պատճառներ չի տեսնում, որպեսզի ձեռնպահ մնա *Թինի, Ուիլսոնի և Գաների (Thynne, Wilson and Gunnell)* գործում կատարած եզրակացությունից, համաձայն որի՝ ոչ հայեցողական/պարտադիր ցմահ բանտարկության պատժի դեպքում 5(4) հոդվածի երաշխիքը բավարարվում է սկզբնական և բողոքարկման դատավարությունների միջոցով և չի տալիս շարունակվող կալանքի կամ կյանքի արտոնագրի բեկանումից հետո կրկնակի կալանքի օրինականությունը վիճարկելու լրացուցիչ իրավունք (տե՛ս mutatis mutandis *«Քոսին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Cossey v UK)* 1990 թ. սեպտեմբերի 27-ի վճիռ, շարք A, թիվ 184, էջ 14, պարբ. 35): Հետևաբար, սույն գործի հանգամանքներում չկան օրինականության նոր հարցեր, որոնք դիմողին կտային իր ոչ հայեցողական/պարտադիր բանտարկության համատեքստում շարունակվող կալանքի վերանայման իրավունք ...

Այնուամենայնիվ, 2002 թ. մշտական գործող դատարանի մեծ պալատը մերժել է հետևել *Ուինի (Wynne)* մոտեցմանը *«Ստեֆորդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Stafford v UK)* 1967 թ. սպանության մեղադրանքով դատապարտված անձի գործով 2002 թ. մայիսի 28-ի վճռում: Վերջինս արտոնագրի հիման վրա պայմանականորեն ազատ է արձակվել 1979 թ., սակայն մեկնելով երկրից՝ խախտել իր ներման պայմանները: 1989 թ. նա վերադարձել է ՄԹ կեղծ անձնագրով և ձերբակալվել: Նա տուգանվել է և շարունակել մնալ կալանքի տակ, քանի որ նրա արտոնագիրը չեղյալ է համարվել: Տասնութ ամիս բանտարկության տակ գտնվելուց հետո Ներման խորհուրդն առաջարկել է արտոնագրի հիման վրա ազատ արձակել նրան: Ներքին գործերի քարտուղարը թույլատրել է ազատ արձակել Ստեֆորդին: 1994 թ. նա դատապարտվել է ճամփորդական չեկեր և անձնագրեր կեղծելու մեղադրանքով և դատապարտվել վեց տարվա ազատազրկման: Նրա արտոնագիրը կրկին չեղյալ է համարվել: 1996 թ. Ներման խորհուրդն առաջարկել է ազատ արձակել նրան, քանի որ որոշել է, որ նրա՝ կրկին հանցագործություն կատարելու ռիսկը ցածր է եղել: Սակայն ներքին գործերի քարտուղարը հաստատել է նրա ազատ արձակումն արտոնագրի հիման վրա միայն 1998 թ. դեկտեմբերին: Ստեֆորդը վիճարկել է, որ դատարանը պետք է վերանայի *Ուինի* վճիռը և եզրակացնի, որ 5(4) հոդվածով պահանջվում է, որ ցմահ բանտարկյալին կալանքի տակ պահելու շարունակվող անհրաժեշտությունը որոշի դատական մարմինը:

78. … 1965 թ. մահապատժի վերացումը և դատապարտված մարդասպաններին ազատ արձակելու լիազորությամբ պետքարտուղարին օժտելն այդ ժամանակվա համար խոշոր և առաջադիմական բարեփոխում էր: Այնուամենայնիվ, պարտադիր ցմահ բանտարկյալների նկատմամբ անկախության, արդարության և հրապարակայնության չափանիշներն ավելի լավ արտացոլող դատավարական ընթացակարգեր մշակելու և կիրառելու անհրաժեշտության ավելի լայն ճանաչմանը զուգահեռ, պատժիչ ժամկետի (tariff period) հաստատման և այդ ժամկետը լրանալուց հետո բանտարկյալին

ազատ արձակելու մասին որոշման կայացման մեջ պետքարտուղարի շարունակվող դերը գնալով ավելի անհամատեղելի է դառնում գործադիր և դատական իշխանությունների միջև իշխանությունների բաժանման սկզբունքի հետ. գաղափար, որը դատարանի նախադեպային իրավունքի մեջ ստացել է հարաճուն կարևորություն (տե՛ս mutatis mutandis *«Ինջալն ընդդեմ Թուրքիայի» (Incal v Turkey),* 1998 թ. հունիսի 9-ի վճիռ, Հաշվետվություններ, 1998–IV):

79. Դատարանը կարծում է, որ պատժիչ շրջանի հաստատման առումով այժմ կարելի է համարել, որ ներպետական օրենսդրությունը որևէ տարբերություն չի դնում պարտադիր ցմահ բանտարկյալների, հայեցողական ցմահ բանտարկյալների և անչափահաս մարդասպանների միջև: Դա ընդամենը պատժի նշանակման գործողություն է: Պարտադիր ցմահ պատժի դեպքում ցմահ բանտարկությունը պատիժ չէ: Պատժիչ շրջանը, որն արտացոլում է հանցագործության և հանցագործի անձնական հանգամանքները, պատժի տարր ունի: Դատարանը եզրակացնում է, որ *Ուիննի (Wynne)* գործի վերաբերյալ արած եզրակացությունը, համաձայն որի՝ պարտադիր ցմահ բանտարկությունը ողջ կյանքի ընթացքում նշանակված պատիժ է, չի կարող այլևս համարվել այնպիսի դիրքորոշում, որն արտացոլում է ցմահ բանտարկյալների նկատմամբ ազգային քրեադատավարական համակարգի իրական դիրքորոշումը:

Բացի այդ, մեծ պալատը որոշել է, որ պատժիչ շրջանի ավարտից հետո ցմահ դատապարտյալների շարունակվող կալանքը կախված է.

87….վտանգավորության տարրերից և սկզբնական սպանության պատժի նպատակներին առնչվող ռիսկից: Այս տարրերը կարող են ժամանակի ընթացքում փոխվել և, այսպիսով, առաջացնել օրինականության նոր հարցեր, որոնք պահանջում են, որ 5(4) հոդվածի պահանջներին բավարարող մարմինը որոշում կայացնի դրանց վերաբերյալ: Այլևս չի կարելի պնդել, որ սկզբնական դատավարությունը և բողոքարկման վարույթը բավարար են (մեկընդմիշտ և բոլորի համար), եզրակացնելու համար, որ պարտադիր ցմահ դատապարտյալների հետագա կալանքը համապատասխանում է կոնվենցիայի 5(1) հոդվածի դրույթներին:

Հետևաբար, մեծ պալատը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել 5(4) հոդվածի խախտում, քանի որ Ստեֆորդն այսպիսի դատական մարմին մուտք չի ունեցել:

Արտադատական կարգով նախագահ Վիլդհաբերը նկատել է, որ Ստեֆորդի գործում.

Դատարանը ցմահ պատիժների նկատմամբ Բրիտանիայի դատարանների ձևավորվող դիրքորոշումը հաշվի է առել հետաքրքիր երկկողմ գործընթացի օրինակով, երբ ազգային իրավական համակարգն ազդեցություն է ունեցել Ստրասբուրգի նախադեպային իրավունքի փոփոխության վրա, որն իր հերթին հանգեցրել է ազգային մակարդակով էվոլյուցիայի ամրապնդմանը: Սա կարելի է անվանել իրավագիտական օսմոս (նախագահ Լյուցիուս Վիլդհաբերի դատական տարվա մեկնարկն ազդարարող ճառը, Ստրասբուրգ, 2003 թ. հունվարի 23):

Ստեֆորդի գործում դատարանի որոշումը ողջունելի է ինչպես սահմանադրական, այնպես էլ հանրային քաղաքականության առումներով, քանի որ անձի պատժի վերաբերյալ որոշումները պետք է թողնվեն անկախ դատարանի, ոչ թե քաղաքական ճնշումների ենթակա նախարարի հայեցողությանը:

2003 թ. «Քրեական արդարադատության մասին» օրենքը ստեղծել է պարտադիր ցմահ բանտարկության ենթակա չափահասներին պատժի նշանակման նոր համակարգ, համաձայն որի՝ բանտարկության նվազագույն ժամկետը որոշվում է առաջին ատյանի դատարանի կողմից՝ օրենսդրական չափանիշներով ուշադրություն դարձնելով գնահատվող հանցագործության ծանրության աստիճանին (օրենքի 7-րդ գլուխ և 21-րդ ժամանակացույց):

……

«Հուսեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Hussain v UK 1996-I 252, (1996) 22 EHRR 1)

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

16 տարեկանում դիմողը դատապարտվել է իր 2 տարեկան եղբոր սպանության մեղադրանքով: Քանի որ նա եղել է անչափահաս, նրան մեքենայորեն նշանակվել է պարտադիր ազատազրկման պատիժ անորոշ ժամկետով համաձայն «Երեխաների և երիտասարդների մասին» 1933 թ. օրենքի 53(1) բաժնի:

Այդպիսով՝ նա «ենթակա է եղել կալանքի տակ մնալու այնպիսի վայրում և այնպիսի պայմաններում, որոնք կթելադրվեին [ներքին գործերի քարտուղարի] կողմից»: Այս կարգի կալանքի նկատմամբ գործել է ազատ արձակման նույն ընթացակարգը, ինչ գործել է ցմահ բանտարկության դատապարտված չափահասների համար. այսինքն՝ պատժիչ շրջանի (տվյալ դեպքում, համաձայն ներքին գործերի քարտուղարի որոշման՝ տասնհինգ տարվա) ավարտից հետո և ներքին գործերի քարտուղարի որոշմամբ: Դիմողին արտոնագրի հիման վրա պայմանականորեն ազատ արձակելու նպատակով Ներման խորհուրդն իրականացրել է նրա վիճակի պարբերական վերանայումներ, սակայն կարողացել է միայն առաջարկներ ներկայացնել ներքին գործերի քարտուղարին: Հետևելով Անգլիայի դատարանի որոշմանը մեկ այլ գործում՝ դիմողին թույլ է տրվել ծանոթանալ իրեն վերաբերող զեկույցներին, որոնք ներկայացվել են Ներման խորհուրդ, սակայն նրան հնարավորություն չի տրվել անձամբ հանդես գալու նրա առջև: Այն ժամանակ, երբ գործը հասել է Եվրոպական դատարան, դիմողը կալանքի տակ է գտնվել տասնյոթ տարի:

ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ

50. Նախ՝ դատարանը նկատում է, որ ինչպես ընդհանուր առմամբ ընդունված է, սույն գործում առանցքային հարցն այն է, թե արդյոք կոնվենցիայի նախադեպային իրավունքի համակարգում անորոշ ժամկետով նշանակված կալանքը, հաշվի առնելով դրա բնույթը և նպատակը, պե՞տք է նմանեցվի պարտադիր ցմահ ազատազրկման պատժին, թե՞ ավելի շուտ ցմահ ազատազրկման հայեցողական պատժին: Անդրադառնալով այս հարցին՝ դատարանը, հետևաբար, պետք է որոշի, թե արդյոք 53-րդ բաժնով ազատազրկման պատիժն ավելի նման է *«Ուիքսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Weeks v UK)* (1987 թ. մարտի 2-ի վճիռ, շարք A, թիվ 114) և *Թինի, Ուիլսոնի և Գաննելի (Thynne, Wilson and Gunnell)* գործերի հիմքում ընկած կալանքի՞ն, թե՞ վերջերս լսված *Ուինի (Wynne)* գործի հիմքում ընկած կալանքին ... .

51. Ճիշտ է, որ ինչպեսև ներկայացվել է կառավարության կողմից, «անորոշ ժամկետով» նշանակված ազատազրկման պատիժը պարտադիր է. այն ամրագրված է օրենքով և մեքենայորեն նշանակվում է բոլոր դեպքերում, երբ մինչև 18 տարեկան անձինք դատապարտվում են սպանություն կատարելու մեղադրանքով, որի դեպքում առաջին ատյանի դատավորը որևէ հայեցողություն չունի: Ինչ վերաբերում է արտոնագրի հիման վրա պայմանական ազատ արձակման կամ հետկանչման վարույթներին, ճիշտ է նաև, որ 1991 թ. օրենքը, ինչպես նաև վերջերս ընդունված քաղաքական հայտարարությունները սույն գործի հիմքում ընկած պատժին վերաբերում են նույն ձևով, ինչպեսև պարտադիր ցմահ պատժին. ...

Մյուս կողմից՝ անվիճելի է, որ իր օրենսդրական ծագումով «անորոշ ժամկետով» արտահայտությունն ունի հստակ կանխարգելիչ նպատակ, և, ի տարբերություն ցմահ վերահսկողության կամ ցմահ բանտարկության, «ցմահ» բառը պատժի նկարագրության մեջ նշված չէ:

52. Այնուամենայնիվ, որքան էլ այս փաստարկները կարող են կարևոր լինել Անգլիայի օրենքի 53-րդ բաժնով կալանքի պատիժը հասկանալու համար, սույն համատեքստում որոշիչ հարցն այն է, թե արդյոք պատժի բնույթը և, ամենից առավել, դրա նպատակն այնպիսի՞ն են, որ պահանջում են 5(4) հոդվածի պահանջներին բավարարող դատարանի կողմից շարունակվող կալանքի օրինականության վերանայում:

53. Պետք է հիշել, որ դիմողը դատապարտվել է ազատազրկման անորոշ ժամկետով՝ հաշվի առնելով հանցագործության կատարման ժամանակ նրա երիտասարդ տարիքը: Այն դեպքում, երբ երիտասարդ անձինք դատապարտվում են լուրջ հանցագործություններ կատարելու համար, համապատասխան պատիժն անշուշտ կրում է պատժիչ տարր, և, հետևաբար, նրանց նշանակվում է պատժիչ շրջան, որն արտացոլում է հատուցման և կանխարգելման պահանջները: Սակայն կալանքի անժամկետ տևողությունը դատապարտված երիտասարդ անձնավորության համար, որը կարող է ընդգրկել այդ երիտասարդի ողջ կյանքի տևողությունը, կարող է միայն արդարացվել հանրությանը պաշտպանելու անհրաժեշտությամբ:

Այս նկատառումները, կենտրոնացած լինելով երիտասարդ օրինազանցի բնավորության, հոգեկան վիճակի և դրանցով պայմանավորված նրա հասարակական վտանգավորության վրա, անհրաժեշտաբար պետք է հաշվի առնեն նրա անհատականության և վերաբերմունքի մեջ տարիքին զուգընթաց տեղի ունեցող փոփոխությունները: Հասունացման հետ տեղի ունեցող փոփոխությունների անտեսումը կնշանակեր, որ 53-րդ բաժնի շրջանակներում ազատազրկված պատանիները ողջ կյանքի ընթացքում զրկված են լինելու իրենց ազատությունից: Ինչպես նշել է հանձնաժողովի պատվիրակը, սա մի իրավիճակ է, որը կարող է առաջացնել կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետ կապված հարցեր:

54. Այս պայմաններում դատարանը եզրակացնում է, որ պատժիչ շրջանի ավարտից հետո դիմողի պատիժն ավելի նման է հայեցողական ցմահ պատժին: Թեպետ այլ համատեքստում, սակայն համանման կարծիք է հայտնվել նաև օկրուգային

դատարանի (Թագուհու նստարանի) 1993 թ. ապրիլի 20-ի վճռում (*«R-ն [Թագուհին] ընդդեմ ներքին գործերի պետքարտուղարի Փրեմ Սինգհի առնչությամբ» (R v Secretary of State for the Home Department, ex p Prem Singh))*...

Դիմողին շարունակական կալանքի տակ պահելու որոշիչ հիմքը եղել է հասարակությանը ներկայացրած նրա վտանգավորությունը, ինչը ժամանակի ընթացքում փոփոխության ենթակա հատկանիշ է: Հետևաբար, կալանքի ընթացքում կարող էին առաջանալ օրինականության նոր հարցեր, և 5(4) հոդվածի շրջանակներում դիմողն իրավունք ուներ ողջամիտ պարբերականությամբ վարույթներ սկսել՝ պահանջելով այս հարցերի վերաբերյալ դատարանի որոշումները (տե՛ս mutatis mutandis վերը նշված *Թինի, Ուիլսոնի և Գաներլի (Thynne, Wilson and Gunnell)* վճիռը, էջ 30, պարբ. 76)…

58. *Թինի, Ուիլսոնի և Գաներլի (Thynne, Wilson and Gunnell)* գործում (էջ 30, պարբ. 80) և հակառակ 1933 թ. օրենքի 53-րդ բաժնի շրջանակներում ազատազրկված անձանց Ներմաև խորհրդին ներկայացված նյութերին ծանոթանալու հնարավորություն տալու նոր քաղաքականությանը,... դատարանը որևէ պատճառ չի տեսնում, որ ձեռնպահ մնա *Ուիքսի* գործով իր վճռից (մեջբերված է վերը՝ էջ 29-33, պարբ. 60-69), որ Ներմաև խորհուրդը չի բավարարում 5(4) հոդվածի պահանջները: Իրոք, սա կառավարությունը չի էլ վիճարկում այնքանով, որքանով Ներմաև խորհուրդը չի կարող անել բանտարկյալին ազատ արձակելու վերաբերյալ կարգադրություններ: Այնուամենայնիվ, Ներմաև խորհրդի շրջանակներում մրցակցային վարույթների բացակայությունը նաև չի թողնում, որպեսզի այն համարվի 5(4) հոդվածի նպատակներին համապատասխանող դատարան կամ դատարանի նման մարմին:

59. Այս համատեքստում դատարանը նկատում է, որ այնպիսի հույժ կարևորություն ունեցող դեպքերում, որոնց շարքն է դասվում ազատազրկումը, ինչպես նաև այն դեպքերում, երբ առաջանում են, օրինակ՝ դիմողի բնավորության կամ հոգեկան վիճակի գնահատմանը վերաբերող հարցեր, վարույթի արդարության տեսանկյունից կարող է էական նշանակություն ունենալ այն հանգամանքը, որ դիմողն անձամբ ներկա գտնվի բանավոր լսմանը (տե՛ս mutatis mutandis *«Կրեմզովն ընդդեմ Ավստրիայի» (Kremzow v Austria)* 1993 թ. սեպտեմբերի 21-ի վճիռ, շարք A, թիվ 268-B, էջ 45, պարբ. 67):

60. Դատարանը կարծում է, որ դիմողի իրավիճակում, երբ կշեռքի նժարին դրված է բանտարկության երկար տևողությունը, և երբ նրա վտանգավորությունը որոշելու նպատակով կարևոր նշանակություն ունեն նրա հասունության աստիճանը և բնավորության գծերը, մրցակցային վարույթի համատեքստում 5(4) հոդվածը պահանջում է կազմակերպել բանավոր լսումներ՝ իրավաբանական ներկայացուցչության ներգրավման, ինչպես նաև վկաներին կանչելու և հարցաքննելու հնարավորության ապահովմամբ:

61. Այս պահանջի առումով ընդունելի չէ այն պատասխանը, որ դատական վերանայման վարույթ սկսելու դեպքում դիմողը կարող էր արժանանալ բանավոր լսման: Նախևառաջ՝ 5(4) հոդվածը ենթադրում է, որ իր պահանջներից բխող ընթացակարգը պետք է գոյություն ունենա առանձին դատական վարույթ սկսելու անհրաժեշտությունից անկախ, և այդ պահանջների կատարումը չպետք է կախված լինի այդ վարույթից: Երկրորդ՝ ինչպես և հանձնաժողովի պատվիրակը, դատարանը ևս համոզված չէ, որ դատական վերանայման վարույթ սկսելու միջոցով դիմողի բանավոր լսման արժանանալու հնարավորությունը եղել է բավականաչափ որոշակի, որպեսզի համարվի, որ այն բավարարել է կոնվենցիայի 5(4) հոդվածի պահանջները...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

Վճռում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 5(4) հոդվածի խախտում, քանի որ դիմողը, իր պատժիչ շրջանի ավարտից հետո ի վիճակի չի եղել իր կալանքի շարունակման հարցը ներկայացնել դատարան ...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում ընդգրկված են եղել նախագահ Ռիսդալը և դատավորներ Գյոլչյուքլուն, Մակդոնալդը, Շպիլմանը, Վալտիկոսը, Փալմը, Բիջին, սըր Զոն Ֆրիլենդը և Զեմբրեկը:

2 *Հուսեյնի* (Hussain) գործն անդրադարձել է ցմահ դատապարտված անձին նշանակված պատժի ժամկետի ավարտից հետո 5(4) հոդվածով նախատեսված իրավական պաշտպանության միջոցներին (տե՛ս նաև *«Սինգհն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Singh v UK (1996),* The Times, 26 փետրվարի, 1996-I 280) համանման գործը): *«Թ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (T v UK)* գործի վերաբերյալ 1999 թ. դեկտեմբերի 16-ի վճռով դատարանը եզրակացրել է, որ 5(4) հոդվածով նաև պահանջվում է, որ «անորոշ ժամկետով» ազատազրկված անչափահասների համար շարունակական իրավական

պաշտպանության միջոց ապահովվի նաև նրանց պատժիչ շրջանի ընթացքում, քանի որ պատժիչ շրջանը նշանակվել է ոչ թե դատարանի, այլ ներքին գործերի քարտուղարի կողմից: Դատարանը հայտարարել է.

118. Դատարանը նշում է, որ այն դեպքում, երբ ազգային դատարանը դատապարտում է անձին քրեական հանցագործություն կատարելու համար և նրան նշանակում ազատազրկման որոշակի ժամկետով պատիժ, ապա 5(4) հոդվածով նախատեսված վեահսկողությունը մտնում է այդ դատարանի որոշման մեջ (տե՛ս *«Դե Վիլդեն, Օոմսը և Վերսիփն ընդդեմ Բելգիայի» (De Wilde, Ooms and Versyp v Belgium)* 1971 թ. հունիսի 18-ի վճիռ, շարք A, թիվ 12, էջ 40-1, պարբ. 76 և *Ուինի (Wynne)* վերը մեջբերված վճիռը, էջ 15, պարբ. 36): Սա, այնուամենայնիվ, չի վերաբերում դրան հետևած կալանքի ընթացիկ ժամանակահատվածին, որի ընթացքում կարող են առաջանալ կալանքի օրինականության վրա ազդող նոր հարցեր (տե՛ս *Ուիքսի (Weeks)* վերը մեջբերված վճիռը, էջ 28, պարբ. 56, և *«Թինը, Ուիլսոնը և Գաննելն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Thynne, Wilson and Gunnell v UK)* 1990 թ. հոկտեմբերի 25-ի վճիռը, շարք A, թիվ 190-A, էջ 26-7, պարբ. 68): Այսպիսով, *Հուսեյնի (Hussain)* գործի վերաբերյալ վճռում (op cit, էջ 269-70, պարբ. 54) դատարանը որոշել է, որ «անորոշ ժամկետով» ազատազրկված երիտասարդ հանցագործի պարտադիր պատժիչ շրջանի ավարտից հետո 5(4) հոդվածը պահանջում է, որ նա պարբերաբար հնարավորություն ունենա վիճարկելու իր կալանքի օրինականությունը, որի միակ արդարացումն այս դեպքում կարող էր լինել [նրա] վտանգավորությունը: Սա այնպիսի բնութագրական գիծ է, որը ենթակա է փոփոխության: *Հուսեյնի* գործում դատարանից չի պահանջվել 5(4) հոդվածով քննարկել իրավիճակը նախքան պատժիչ շրջանի ավարտը (op cit, էջ 266, պարբ. 44):

119. Դատարանն արդեն որոշել է, որ 6(1) հոդվածի իմաստով դիմողի պատժիչ շրջանի վերաբերյալ անկախ տրիբունալի կողմից որոշում չկայացնելն առաջացնում է այդ դրույթի խախտում (տե՛ս վերը՝ պարբ. 113): Հետևաբար, հաշվի առնելով, որ «անորոշ ժամկետով» կալանքը և պատժիչ շրջանն ի սկզբանե նշանակվել է ներքին գործերի քարտուղարի, այլ ոչ թե պատիժ նշանակող դատավորի կողմից, չի կարելի ասել, որ 5(4) հոդվածով պահանջվող վերահսկողությունն ընդգրկված է եղել առաջին ատյանի դատարանի վճռում (համեմատի՛ր *«Դե Վիլդեն, Օոմսը և Վերսիփն ընդդեմ Բելգիայի» (De Wilde, Ooms and Versyp v Belgium)* և *Ուինի (Wynne)* վճիռները, որոնք մեջբերված են վերը՝ պարբ. 118):

120. Բացի այդ, ներքին գործերի քարտուղարի որոշումը, որ սահմանել է պատժիչ ժամանակաշրջանը, չեղյալ է հայտարարվել Լորդերի պալատի կողմից 1997 թ. հունիսի 12-ին, որից հետո նոր պատժիչ շրջան չի նշանակվել: Նոր պատժիչ շրջան սահմանելու թերացումը նշանակում է, որ դիմողի՝ կալանքի շարունակվող օրինականության պարբերական վերանայման պահանջով տրիբունալ մտնելու իրավունքը մնացել է անկատար:

121. Սրանից հետևում է, որ դիմողը 1993 թ. նոյեմբերին դատապարտվելուց հետո զրկված է եղել իր կալանքի օրինականությունը 5(4) հոդվածում նշված դատական մարմնի կողմից վերանայման ենթարկելու հնարավորությունից: Այս պայմաններում դատարանը կարծում է, որ տեղի է ունեցել այդ հոդվածի խախտում:

Տե՛ս նաև հարակից *«V-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (V v UK (1999) 30 EHRR 121)* գործը:

Հոդված 5(5). Փոխհատուցման իրավունք

.....

«Բրոգանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Brogan v UK) A.145 (1988))

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Ինչպես վերլուծել ենք վերը (էջ 312), լիակազմ դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել 5(3) հոդվածի խախտում: Այնուհետև դիմողները վիճարկել են, թե քանի որ իրենք չեն կարողացել ներպետական օրենսդրության շրջանակներում փոխհատուցում պահանջել, ապա տեղի է ունեցել նաև 5(5) հոդվածի խախտում:

VI. 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

66. Դիմողն այնուհետև բողոքել է, որ տեղի է ունեցել 5(5) հոդվածի խախտում, համաձայն որի՝

«Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»:

Անօրինական ազատազրկման առումով Միացյալ Թագավորությունում կարող է ներկայացվել ներպետական օրենսդրության խախտման հետևանքով առաջացած փոխհատուցման պահանջ: Քանի որ 5-րդ հոդվածը չի համարվում Միացյալ Թագավորության ներպետական օրենսդրության մաս, ապա փոխհատուցման պահանջը չի կարող առաջացնել 5-րդ հոդվածի խախտում, եթե այն միևնույն ժամանակ չի առաջացնում Միացյալ Թագավորության օրենքի խախտում:

Կառավարությունն առարկել է, ի թիվս այլոց, որ 5-րդ կետի նպատակն է երաշխավորել, որ «անօրինական» ձերբակալության կամ կալանքի զոհը հայցի ուժով փոխհատուցման իրավունք ունի: Այս կապակցությամբ նրանք նաև վիճարկել են, որ 5-րդ հոդվածի տարբեր կետերի նպատակների համար «օրինականը» պետք է մեկնաբանվի որպես սկզբունքորեն ներպետական օրենսդրությանն արվող հղում և, բացի այդ, որպես կամայականության ցանկացած տարրի բացառում: Նրանք եզրակացրել են, որ եթե նույնիսկ հայտնաբերվել են առաջին չորս պարբերությունների խախտումներ, միևնույն է, 5-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել, քանի որ Հյուսիսային Իռլանդիայի օրենքով դիմողների կալանքը եղել է օրինական և ոչ կամայական:

67. Ինչպես հանճնաժողովը, դատարանը կարծում է, որ նման սահմանափակ մեկնաբանությունն անհամատեղելի է 5-րդ կետում օգտագործված արտահայտությունների հետ, որոնք վկայակոչում են «այդ հոդվածի դրույթներին հակասող» ձերբակալությունը կամ կալանքը:

Տվյալ դեպքում դիմողները ձերբակալվել և ազատազրկման մեջ են պահվել օրինականորեն՝ համաձայն ներպետական օրենսդրության դրույթների, սակայն ի խախտումն 5-րդ հոդվածի 3-րդ կետի: Սույն վճռով Եվրոպական դատարանի արած եզրակացություններից ո՛չ առաջ և ո՛չ հետո այս խախտումը չէր կարող հանգեցնել զոհերի կողմից ազգային դատարանների միջոցով հայցի ուժով փոխհատուցման իրավունքի առաջացման: Սա կառավարության կողմից չի վիճարկվել:

Հետևաբար, այս գործում նաև տեղի է ունեցել 5-րդ կետի խախտում բոլոր չորս դիմողների նկատմամբ:

. . .

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

. . .

4. Տասներեք կողմ և վեց դեմ ձայներով վճռում է, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում բոլոր չորս դիմողների նկատմամբ:

. . .

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կողմից 5(5) հոդվածի կառավարության նեղ մեկնաբանության մերժումը նպաստավոր է այս հոդվածի առաջին մասերի խախտումների զոհերի համար և համապատասխանում է 5-րդ հոդվածի լեզվին:

2 Այնուամենայնիվ, *«Վասսինքն ընդդեմ Նիդեռլանդների» (Wassink v Netherlands), A.185-A (1990))* գործում Դանիայի կառավարությունը հաջողության է հասել, երբ առարկել է, որ վնասի փոխհատուցում պահանջող դիմողները պետք է կարողանան ցույց տալ, որ 5-րդ հոդվածում ամրագրված իրավունքների խախտման պատճառով վնաս են կրել: Քաղաքային բուրգոմիստրը, օգտվելով արտակարգ իրավիճակներում իր ունեցած լիազորություններից, կարգադրել է սահմանափակել դիմողի ազատությունը՝ նրան հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելով: Վերջինս հարձակում էր գործել իր ընտանիքի անդամների և հարևանի վրա: Մի քանի օր անց շրջանային դատարանի նախագահը դատական նիստից հետո թույլատրել է, որ դիմողը շարունակի մնալ հիվանդանոցային կալանքի տակ: Այս նիստին ներկա են գտնվել դիմողը և նրա ներկայացուցիչը: Այնուհետև դիմողը բողոքարկել է շրջանային դատարանի որոշումը Ստրասբուրգի մարմինների առջև՝ պնդելով, որ տեղի է ունեցել 5(1) հոդվածի խախտում, քանի որ վարույթն արձանագրող քարտուղարը ներկա չի գտնվել, ինչը պահանջվում է Դանիայի օրենքով: Գերակշիռ մեծամասնությամբ (վեց կողմ և մեկ դեմ ձայներ) Ստրասբուրգի դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել 5(1) հոդվածի խախտում:

36. Դիմողը պնդել է, որ տեղի է ունեցել 5(5) հոդվածի խախտում, համաձայն որի՝

> «Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»:

Նրա կարծիքով՝ Նիդեռլանդների օրենքի միակ դրույթը, որի վրա նա կարող էր հիմնվել փոխհատուցում ստանալու համար, քաղաքացիական օրենսգրքի 1401-րդ հոդվածն էր, որը կիրառելի էր միայն այն դեպքում, երբ վնասը ցույց տրվեր: Տվյալ դեպքում գրեթե անհնարին կլիներ ապացուցել վնասի առկայությունը, քանի որ հնարավոր չէ բացարձակ վստահությամբ պնդել, որ այն դեպքում, եթե վարույթն ընթանար կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն, ապա այն կհանգեցներ ցանկալի արդյունքի:

37. Ի տարբերություն հանձնաժողովի՝ կառավարությունն այս տեսակետին չի համաձայնել: Նրա կարծիքով՝ 5-րդ հոդվածի 5-րդ կետով երաշխավորված փոխհատուցման իրավունքը վերաբերում է միայն այն անձանց, որոնք այդ հոդվածի այլ դրույթների խախտման պատճառով նյութական կամ ոչ նյութական վնաս են կրել: Սա, մասնավորապես, պարզ է օգտագործված «զոհ» բառից: Ուստի քաղաքացիական օրենսգրքի 1401-րդ հոդվածը լիովին համահունչ էր կոնվենցիային:

38. Դատարանի կարծիքով՝ 5-րդ հոդվածի 5-րդ կետը կիրառվում է այն դեպքերում, երբ հնարավոր է փոխհատուցման պահանջ ներկայացնել՝ կապված 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերի խախտումով ազատազրկման դեպքերի հետ: Այն չի արգելում պայմանավորվող պետություններին փոխհատուցումը կատարել՝ կախված տվյալ անձի՝ դրանից առաջացած վնասը ցույց տալու կարողությունից: 5(5) հոդվածի առումով, 25-րդ հոդվածում (տե՛ս, ի թիվս այլոց, *«Հուվիգ [ընդդեմ Ֆրանսիայի»] (Huvig [v France])* 1990 թ. ապրիլի 24-ի վճիռը, շարք A, թիվ 176-B, էջ 56-7, պարբ. 35), «զոհի» կարգավիճակը կարող է գոյություն ունենալ նույնիսկ այն դեպքում, երբ վնաս չի առաջացել, սակայն «փոխհատուցման» հարց չի կարող լինել, եթե գոյություն չունի փոխհատուցման ենթակա նյութական կամ ոչ նյութական վնաս:

Ընդհանուր առմամբ, դատարանին ներկայացված փաստերը չեն հանգեցնում այն եզրակացության, որ Նիդեռլանդների քաղաքացիական օրենսգրքի 1401-րդ հոդվածի վրա հիմնված գործողությունը չի բավարարում կոնվենցիայի 5(5) հոդվածի պահանջները:

Հետևաբար, դատարանը միաձայն եզրակացրել է, որ 5(5) հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

3 Մշտական գործող դատարանը եզրակացրել է, որ 5(5) հոդվածի խախտում է տեղի ունեցել *«Բիթը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (Beet and Others v UK)* գործում (վերը՝ էջ 277): Կառավարությունը ներկայացրել է, որ 2000 թ. հոկտեմբերի 2-ից, երբ ուժի մեջ է մտել 1998 թ. «Մարդու իրավունքների մասին» օրենքը, յուրաքանչյուր ոք, որն ազատազրկվել է ի խախտումն 5(1) հոդվածի, ներպետական օրենսդրության շրջանակներում թագավորական իշխանությունից փոխհատուցում պահանջելու իրավունք ունի:

8 ՀՈԴՎԱԾ 6 ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 6(1)

Քաղաքացիական իրավունքներ և պարտավորություններ

.....

«Ռինգայզենն ընդդեմ Ավստրիայի» (Ringeisen v Austria A.13 (1971) 1 EHRR 455)

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

1958 թ. մինչև 1963 թ. դիմողը եղել է ապահովագրական գործակալ և զբաղվել նաև անշարժ գույքի գործարքներով: 1961 թ. Վերին Ավստրիայում գյուղատնտեսական հանդակի սեփականատերեր տեր և տիկին Ռոթերը նրան տվել են ընդհանուր բնույթի լիազորագիր, իսկ ավելի ուշ՝ նույն տարվա ընթացքում՝ հողը գնելու իրավունք: 1962 թ. փետրվարին նա Ռոթերի հետ ստորագրել է հողի առքուվաճառքի պայմանագիր: 1962 թ. սկզբից Ռինգայզենը համապատասխան հողակտորի մի հատվածը սկսել է վաճառել շինարարության նպատակով հողակտորներ գնող տարբեր անձանց: 1962 թ. մարտին Ռինգայզենը Ռոթերի հողակտորի առքուվաճառքի պայմանագիրը ներկայացրել է հանրային մարմին (շրջանային հանձնաժողով), որը պետք է հաստատեր, որ գյուղատնտեսական հողի վաճառքը չի հակասել հանրային շահին՝ համաձայն «Վերին Ավստրիայի անշարժ գույքի գործառնությունների մասին» օրենքի: Շրջանային հանձնաժողովը 1962 թ. սեպտեմբերին այն չի հաստատել, քանի որ, ըստ նրա, վաճառքը տեղի է ունեցել սպեկուլյատիվ շինարարության [առանց վերջնական գնորդներ ունեցող շենքի շինարարության] նպատակով: Ռինգայզենն այնուհետև բողոքել է Անշարժ գույքի գործառնությունների տարածքային հանձնաժողովին, որի կազմի մեջ մտել են նիստերը վարող դատավորը և յոթ այլ նշանակված անձինք: 1963 թ. մայիսին տարածքային հանձնաժողովը մերժել է նրա բողոքը: Քանի որ հանձնաժողովի որոշ անդամներ լիարժեք չեն մասնակցել հանձնաժողովի բոլոր նիստերին, Ռինգայզենը բողոք է ներկայացրել սահմանադրական դատարան և շահել դատը: Ռինգայզենի բողոքն այնուհետև հետ է ուղարկվել տարածքային հանձնաժողով: Այս անգամ նա բացարկ է հայտնել հանձնաժողովի կազմին՝ համարելով, որ հանձնաժողովն անաչառ չէ, քանի որ նրա կազմի մեջ մտնող որոշ անդամներ մասնակցել են նախորդ հայցի քննությանը: Ռինգայզենի բացարկները մերժվել են: 1965 թ. փետրվարին տարածքային հանձնաժողովը մերժել է նրա բողոքը:

1963 թ. սկզբին Ռինգայզենի կատարած ինչ-ինչ գույքային գործարքների կապակցությամբ որոշ անձինք, այդ թվում նաև՝ Ռոթերը, քրեական մեղադրանքներ են առաջ քաշել նրա դեմ: Ռինգայզենն առաջին անգամ հետաքննող դատավորի կողմից հարցաքննվել է այդ տարվա փետրվարին: 1965 թ. ապրիլին նրան ներկայացվել է մեղադրական եզրակացություն, ըստ որի՝ նա մեղադրվել է լուրջ մեքենայություն և խաբեությամբ գույքին տիրանալու իրավախախտումներ կատարելու մեջ: Դատավարությունը սկսվել է 1965 թ. դեկտեմբերին և ավարտվել 1966 թ. հունվարին: Ռինգայզենը մեղավոր է ճանաչվել խաբեության յոթանասունութ կետով և դատապարտվել երեք տարվա խիստ ռեժիմով ազատազրկման: Մի քանի բողոքներից հետո 1968 թ. փետրվարին գերագույն դատարանը հաստատել է նրա նկատմամբ կայացված դատավճիռները:

Ռինգայզենը բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ, ի թիվս այլոց, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի խախտում ինչպես իշխանությունների կողմից Ռոթերի հետ ստորագրած իր պայմանագրի հաստատումը մերժելու կապակցությամբ սկսված քաղաքացիական վարույթի, այնպես էլ իր դեմ հարուցված քրեական վարույթի առնչությամբ: Յոթ կողմ և հինգ դեմ ձայներով հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ 6(1) հոդվածը չի վերաբերում պայմանագրի հաստատման վարույթին, քանի որ այդ վարույթը կապ չի ունեցել «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների» հետ: Հանձնաժողովը միաձայն եզրակացրել է, որ Ռինգայզենի դեմ քրեական վարույթն ավարտվել է ողջամիտ ժամկետում:

(Գ) ԱՐԴՅՈՔ ՍՈՒՅՆ ԲՈՂՈՔԸ ՆԵՐԱՌՈ՞ՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԽՆԴԻՐ

94. Պարտադիր չէ, որ գործի (contestation [վեճ (ֆրանսերեն)]) նկատմամբ 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի լինի միայն այն դեպքերում, երբ վարույթի երկու կողմն էլ մասնավոր անձինք են (ինչը հանձնաժողովի և կառավարության մեծամասնության տեսակետն է): 6-րդ հոդվածի 1-ին կետի շարադրանքը շատ ավելի լայն է: Ֆրանսերեն contestations sur (des) droits et obligations de caractere civil արտահայտությունն ընդգրկում է բոլոր վարույթները, որոնց արդյունքը որոշիչ է մասնավոր իրավունքների և պարտավորությունների համար: Անգլերեն determination of ... civil rights and obligations [«...որոշվում են ... քաղաքացիական իրավունքները և պարտավորությունները»] արտահայտությունը հաստատում է այդ մեկնաբանությունը:

Որոշման ենթակա հարցին վերաբերող օրենսդրության բնույթը (քաղաքացիական, առևտրային, վարչական օրենքներ և այլն), ինչպես նաև այդ ոլորտում իրավասությունների օժտված մարմնի ձևը (սովորական դատարան, վարչական մարմին և այլն), հետևաբար, առանձնապես ազդեցություն չունեն:

Սույն գործում Ռինգայզենը գնել է Ռոթ ամուսինների գույքը: Եթե նա, ինչպես հայտարարել էր, կատարած լիներ ակտի կամ օրենքի մեջ ամրագրված պայմանները, ապա կունենար նրանց հետ ստորագրած առքուվաճառքի պայմանագրի հաստատման իրավունք: Թեպետ տարածքային հանձնաժողովը կիրառել է վարչական օրենքի դրույթներ, նրա կայացրած որոշումը որոշիչ է եղել Ռինգայզենի և Ռոթ ամուսինների միջև քաղաքացիական իրավունքից առաջացող հարաբերությունների համար (de caractere civil): Սա բավարար է, որ դատարանն անհրաժեշտ համարի որոշել, թե արդյոք այս գործի վարույթը համապատասխանե՞լ է կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

(Դ) ԱՐԴՅՈՔ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԽԱԽՏՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈՂՈՔԸ ԼԱ՞Վ Է ՀԻՄՆԱՎՈՐՎԵԼ

95. Դատարանը չի հայտնաբերել այնպիսի փաստեր, որոնք կհիմնավորեին, որ Ռինգայզենի նկատմամբ «արդար դատաքննություն» չի եղել: Բացի այդ, դատարանը նկատում է, որ լինելով գործադիր իշխանությունից և դատավարության կողմերից անկախ մարմին՝ տարածքային հանձնաժողովը կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով հանդիսացել է որպես «տրիբունալ»: Նրա անդամները նշանակվում են հինգ տարի ժամկետով, և նրա դատավարություններն ապահովում են անհրաժեշտ երաշխիքներ (տե՛ս *mutatis mutandis Նյումեյստերի (Neumeister)* 1968 թ. հունիսի 27-ի վճիռը, շարք A, էջ 44, պարբ. 24 և *Դե Վիլդի, Օոմսի և Վերսիպի (De Wilde, Ooms and Versyp)* 1971 թ. հունիսի 18-ի վճիռը, պարբ. 78):

96. Դիմողը, այնուամենայնիվ, մեղադրել է տարածքային հանձնաժողովի վեց անդամներին կանխակալ վերաբերմունքի մեջ: Սահմանադրական դատարանը հրաժարվել է քննարկել ներկայացված բողոքների բուն բովանդակությունը, քանի որ, ըստ նրա, 1965 թ. սեպտեմբերի 27-ի վճռի, կանխակալության հարցը կապ չունի տարածքային հանձնաժողովի իրավասության հետ (ինչը եղել է վերանայման նպատակով նրան ներկայացված միակ հարցը)...

97. Եվրոպական դատարանի գործառույթների մեջ չի մտնում ո՛չ այս վճռի հիմքում ընկած Ավստրիայի օրենքի մեկնաբանությունը, ո՛չ էլ դրա հիմնավորման ձևի մասին կարծիք հայտնելը: Մյուս կողմից՝ դատարանը պարտավոր է ուսումնասիրել Ռինգայզենի վկայակոչած հիմքերը և որոշել՝ տարածքային հանձնաժողովը հարգե՞լ է 6-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված անաչառության սկզբունքը:

Դատարանը կարծում է, որ Ռինգայզենի պնդումները նույնիսկ ճիշտ լինելու դեպքում չէին հիմնավորի այն եզրակացությունը, որ տարածքային հանձնաժողովը դրսևորել է կանխակալ մոտեցում: Քաղաքացիական ծառայողներից, շահագրգիռ մարմինների ներկայացուցիչներից և նախագահող դատավորից բաղկացած այս խորհրդին ներկայացված մեղադրանքը կանխակալ վերաբերմունքի առնչությամբ չի կարող հիմնավորված համարվել զուտ այն պատճառով, որ նրա անդամներից մեկին բողոք է ներկայացվել՝ վերջինիս Վերին Ավստրիայի գյուղատնտեսության պալատի անդամության թեկնածու լինելու պատճառով: Նույնը կարելի է ասել նաև այն անդամի դեմ բերված բողոքի մասին, որի

արած հայտարարության հնչերանգն ուղղելու համար, ըստ Ռինգայզենի, տարածքային հանձնաժողովը մեծ ջանքեր է գործադրել…. Ինչ վերաբերում է երկրորդ փաստին, որ 1964 թ. տարածքային հանձնաժողովի նախագահը այդ մարմինը ներկայացրել է սահմանադրական դատարանում, և [հանձնաժողովի] մյուս անդամը հանդես է եկել որպես վկա, ապա սրանք, ակնհայտորեն, որևէ նշանակություն չունեն: Վերջապես, օրինական կասկածի որևէ հիմք չի առաջանում այն փաստից, որ մյուս երկու անդամները մասնակցել են տարածքային հանձնաժողովի առաջին որոշման կայացմանը, քանի որ, որպես կանոն, չի կարելի ասել, թե անաչառության պարտավորությունից բխում է, որ վարչական կամ դատական որոշումը չեղյալ հայտարարող վերին ատյանի դատարանը պարտավոր է գործն ուղարկել դատավարական իրավասություններ ունեցող այլ մարմին կամ այդ մարմնի այլ կազմ ունեցող մասնաճյուղի:

98. Այնուամենայնիվ, 6-րդ հոդվածի 1-ին կետը չի սահմանափակվում միայն նրանով, որ երաշխավորում է ողջամիտ ժամկետում քաղաքացիական իրավունքներին և պարտավորություններին վերաբերող գործերի արդար դատաքննության իրականացում: Որպես կանոն՝ այն նաև պահանջում է, որ գործը լսվի և որոշումը հայտարարվի հրապարակայնորեն:

Կախված այդ գործի դատավարության վերաբացումից՝ դատարանը կարող է նույնիսկ proprio motu [սեփական նախաձեռնությամբ] ստուգել, թե արդյոք շրջանային և տարածքային հանձնաժողովները հետևե՞լ են այս կանոնին և արդյոք նրանք դրանից շեղվելու իրավունք ունեցե՞լ են:

Դատարանը նման քննություն չի իրականացրել, քանի որ Ավստրիայի կողմից կոնվենցիայի վավերացումը ենթակա է եղել հետևյալ վերապահմանը.

> « . . . Կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթները կիրառվելու են այն ձևով, որը չի խախտում բաց դատական նիստերի վերաբերյալ Դաշնային սահմանադրական օրենքի 1929-րդ տարբերակի 90-րդ հոդվածում (im gerichtlichen Verfahren) շարադրված սկզբունքները...»:

Վերը նշված 90-րդ հոդվածը շարադրված է հետևյալ կերպ.

> «Առաջին ատյանի դատարանում քաղաքացիական և քրեական գործերի դատավարությունը (in Zivil- und Strafrechtssachen) լինելու է բանավոր և դռնբաց: Օրենքով կարող են նախատեսվել բացառություններ ...»:

Այս վերապահումը բառացիորեն չի վերաբերում վարչական վարույթին, այլ միայն քաղաքացիական և քրեական գործերին: Այսինքն՝ կասկածից վեր է, որ այն վերաբերում է քաղաքացիական և քրեական դատարանների վարույթում գտնվող գործերին: Այնուամենայնիվ, պետք է ընդունել, որ այս վերապահումն a fortiori [առավել ևս] ընդգրկում է վարչական մարմինների վարույթներում եղած գործերը, քանի որ այդ ատյաններում որոշվում են անձանց քաղաքացիական իրավունքները: Հետևաբար, 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով դրանք տրիբունալներ են: Սա վերաբերում է Ռինգայզենի կողմից 1962 թ. մարտի 30-ին հաստատման պահանջով սկսված վարույթին:

99. Այդ հիմքերով դատարանը եզրակացնում է, որ այդ պահանջին վերաբերող վարույթի կապակցությամբ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չի եղել:

. . .

III. ԱՐԴՅՈՔ ՌԻՆԳԱՅԶԵՆԻ ԴԵՄ ՍԿՍՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐԱԶԱՆՑԵ՞Լ Է 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

110. Դատարանը հավանություն է տալիս հանձնաժողովի կարծիքին, որ խաբեության մեղադրանքով վարույթի տևողությունը (որի նախնական հետաքննությունը սկսվել է 1963 թ. փետրվարի 21-ին, և որի վերաբերյալ վերջնական որոշումը կայացվել 1968 թ. ապրիլի 24-ին) պայմանավորված է եղել ինչպես գործի բարդությամբ, այնպես էլ Ռինգայզենի՝ իրեն ազատ արձակելու, իրավասու դատավորներից շատերին բացարկ հայտնելու և վարույթը դատարանի այլ մասնաճյուղեր տեղափոխելու մասին բազմաթիվ միջնորդություններով և բողոքներով... Դատարանը, հետևաբար, հանգում է եզրակացության, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

I. Ինչ վերաբերում է այն հարցին, թե իր սկսած վարույթում, որը վերաբերում է գյուղատնտեսական հանդակի անշարժ գույքի օտարմանը, Ռինգայզենը հանդիսացե՞լ է 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման զոհ, թե՞ ոչ ...

3. Վճռում է միաձայն, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը տարածվում է խնդրո առարկա վարույթի վրա:

4. Միաձայն վճռում է, որ խնդրո առարկա վարույթում տեղի չի ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

III. Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք Ռինգայզենի դեմ սկսված քրեական վարույթի ժամկետները գերազանցե՞լ են 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված ողջամիտ ժամկետի սահմանները.

8. Միաձայն վճռում է, որ խնդրո առարկա վարույթում տեղի չի ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում ընդգրկված են եղել նախագահ Ռոլինը և դատավորներ Հոլմբեքը, Վերդրոսը, Ուոլդը, Զեքիան, Ֆավրեն և Սիգուրյոնսոնը:

2 Վերոհիշյալ վճիռը կարևոր է նրանով, որ ներկայացնում է, թե դատարանի կարծիքով ո՛ր իրավունքները և պարտավորություններն են վերագրվում կոնվենցիայում վկայակոչված «քաղաքացիական իրավունքներ ու պարտավորություններ» և «մասնավոր իրավունքներ և պարտավորություններ» հասկացություններին: Դատարանը կենտրոնանում է խնդրո առարկա իրավունքների և պարտավորությունների (ինչպես, օրինակ՝ Ռինգայզենի կողմից պաշտպանվող պայմանագրային և սեփականության իրավունքների) վրա: Բացի այդ, դատարանը վճռել է, որ դատական վարույթի բոլոր ձևերը, ներառյալ նրանք, որոնք տեղի են ունենում վարչական մարմինների և հանրային իրավունքի ոլորտում իրավասություն ունեցող դատարաններում, կարող են մտնել 6(1) հոդվածի տիրույթի մեջ, եթե այդ դատարանների կայացրած որոշումները վճռորոշ են այս կարգի իրավունքների և պարտավորությունների համար (տե՛ս ստորև՝ ծնթ. 9):

3 Դատարանը «քաղաքացիական իրավունքներ և պարտավորություններ» հասկացության իր ըմբռնումը զարգացրել է *«Քյոնիգն ընդդեմ Գերմանիայի» (König v Germany*, A.27 (1978) 2 EHRR 170) գործում: Դիմողը Բադ Հոմբուրգում 1960 թ. բացել է կլինիկա, որտեղ կատարում էր պլաստիկ վիրահատություններ: 1962 թ. տարածքային բժշկական միությունը վարույթ է սկսել դոկտոր Քյոնիգի դեմ նրա ոչ արհեստավարժ պահվածքի պատճառով: 1964 թ. նա հայտարարվել է անպատրաստ բժշկական գործունեությամբ զբաղվելու համար: 1967 թ. ապրիլին Վիսբադենի նահանգային կառավարության ավագ պաշտոնյան (regierungsprasident) տարածքային բժշկական միության պահանջով չեղյալ է հայտարարել դիմողի կլինիկայի արտոնագիրը (տեսչական ստուգմամբ բացահայտվել են բազմաթիվ խախտումներ, ներառյալ՝ բժշկական գրանցումների ոչ պատշաճ վարումը և վիրահատական սրահի անմաքուր վիճակը): Դիմողն առարկել է, սակայն նրա առարկությունը մերժվել է, որից հետո նա 1967 թ. նոյեմբերին նահանգային կառավարության ավագ պաշտոնյայի որոշման դեմ բողոք է ներկայացրել Ֆրանկֆուրտի վարչական դատարան: Բողոքը մերժվել է 1977 թ. հունիսին: Եվրոպական դատարանի վճռի հայտարարման ժամանակ Քյոնիգի բողոքը դեռևս ընթացքի մեջ է եղել Հեսսենի վարչական վերաքննիչ դատարանում: 1971 թ. մայիսին Դարմշտադտի նահանգային կառավարության ավագ պաշտոնյան չեղյալ է հայտարարել Քյոնիգի բժշկությամբ զբաղվելու թույլտվությունը: Այդ որոշման կապակցությամբ Քյոնիգի առարկությունը մերժվել է 1971 թ. հունիսին, որից հետո նա բողոք է ներկայացրել Ֆրանկֆուրտի վարչական դատարան (այս բողոքն ուղարկվել է Ֆրանկֆուրտի վարչական դատարանի մեկ այլ բաժանմունք): Քյոնիգը բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ Ֆրանկֆուրտի վարչական դատարանի վարույթի դանդաղ ընթացքի հետևանքով խախտվել է ողջամիտ ժամկետում իր քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ որոշում ունենալու իր իրավունքը՝ երաշխավորված 6-րդ հոդվածի 1-ին կետով: Հանձնաժողովը՝ ինը կողմ, վեց դեմ և մեկ ձեռնպահ ձայներով որոշել է, որ տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:

(Ա) ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

86. Հանձնաժողովի մեծամասնության կարծիքով՝ 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է Ֆրանկֆուրտի վարչական դատարան ներկայացված հայցում արծարծված իրավունքների նկատմամբ: Դրանք ներառում են նրա [դիմողի] կողմից

կլինիկայի վարման իրավունքը և նրա՝ բժշկությամբ զբաղվելու իրավունքը: Հանձնաժողովը համարում է, որ դրանք «քաղաքացիական» իրավունքներ են...

Կառավարությունը վիճարկում է այս կարծիքի ճշտությունը:

87. Նախ և առաջ դատարանը նկատում է, որ վեճի թեմա չէ, որ Գերմանիայի օրենսդրությամբ այդ պետության դատարաններ դիմողի ներկայացրած հայցերը վերաբերել են «իրավունքներին»: Հանձնաժողովը և կառավարությունը տարակարծիք են միայն այն հարցի կապակցությամբ, թե արդյոք սույն գործը վերաբերո՞ւմ է կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով քաղաքացիական հարցեր համարվող հարցերի շուրջ առաջացած վեճերին (contestations):

88. Ինչպես հանձնաժողովը, այնպես էլ կառավարությունը համաձայն են, որ «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների» հայեցակարգը չի կարող մեկնաբանվել միայն համապատասխան պետության ազգային օրենքի վկայակոչմամբ:

Կոնվենցիայում օգտագործված արտահայտությունների իմաստի «անկախության» խնդիրը՝ ազգային օրենքներում դրանց ունեցած իմաստի համեմատությամբ, արդեն մի քանի առիթով բարձրացվել է դատարանի առջև: Այսպիսով, դատարանը որոշել է, որ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում օգտագործված «մեղադրանք» բառը պետք է ընկալվի «կոնվենցիայում օգտագործված իմաստով» (*Նյումեյսթերի* (*Neumeister*) գործով 1968 թ. հունիսի 27-ի վճիռ, շարք A, թիվ 8, էջ 41, պարբ. 18՝ համեմատած 28-րդ էջի երկրորդ ենթապարբերության և 35-րդ էջի առաջին ենթապարբերության հետ, տե՛ս նաև *Վեմհոֆի* (*Wemhoff*) 1968 թ. հունիսի 27-ի վճիռը, շարք A, թիվ 7, էջ 26–7, պարբ. 19, *Ռինգայզենի* (*Ringeisen*) 1971 թ. հուլիսի 16-ի վճիռը, շարք A, թիվ 13, էջ 45, պարբ. 110, *Էնգելի* (*Engel*) 1976 թ. հունիսի 8-ի վճիռը, շարք A, թիվ 22, էջ 34, պարբ. 81): *Էնգելի* գործի համատեքստում դատարանը նաև ճանաչել է 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով «քրեական» հասկացության «անկախությունը» (վերը նշված Էնգելի վճիռը, էջ 34, պարբ. 81): Արդեն ոչ ուղղակիորեն, սակայն դատարանն ընդունել է, որ «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների» հայեցակարգն անկախ է (վերը նշված *Ռինգայզենի* վճիռը, էջ 39, պարբ. 94):

Տվյալ դեպքում դատարանը հաստատում է այս նախադեպային իրավունքը: Այսպիսով, նա համարում է, որ խնդրո առարկա հայեցակարգի վրա տարածվում է անկախության միևնույն սկզբունքը: Որևէ այլ լուծում կարող է հանգեցնել կոնվենցիայի խնդրին և նպատակին հակասող արդյունքների (տե՛ս *mutatis mutandis* վերը նշված *Էնգելի* վճիռը, էջ 34, պարբ. 81):

89. Այսպիսով, թեպետ դատարանը եզրակացնում է, որ «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների» հայեցակարգն անկախ է, այնուամենայնիվ, չի համարում, որ այս համատեքստում խնդրո առարկա պետության օրենսդրությունն անկարևոր է: Որպեսզի որոշվի՝ այդ իրավունքը կոնվենցիայում օգտագործված արտահայտության իմաստով քաղաքացիական իրավունք է, թե ոչ, հարկ է համապատասխան պետության ազգային օրենքի շրջանակներում հղում կատարել այդ իրավունքի նյութական բովանդակությանը և ազդեցությանը, ոչ թե դրա իրավական դասակարգմանը: Իր վերահսկողական գործառույթները կատարելիս դատարանը պետք է նաև ուշադրություն դարձնի կոնվենցիայի և անդամ պետությունների ազգային իրավական համակարգերի առարկային և նպատակին (տե՛ս *mutatis mutandis* վերը նշված *Էնգելի* և մյուսների վճիռները, էջ 35, պարբ. 82):

90. Ըստ կառավարության՝ 6-րդ հոդվածի 1-ին կետը վերաբերում է ավանդական իմաստով մասնավոր իրավունքի շուրջ առաջացած վեճերին, այսինքն՝ անձանց միջև առաջացած վեճերին կամ անձի և պետության միջև առաջացած վեճերին, որտեղ վերջինս հանդես է գալիս որպես մասնավոր անձ և ենթակա է մասնավոր իրավունքի ազդեցությանը: Ի թիվս այլոց, անձի և իր ինքնիշխան դերում հանդես եկող պետության միջև առաջացած վեճերը պետք է բացառվեն այդ հոդվածի (հոդվ. 6(1) շրջանակներից:

Ինչ վերաբերում է 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման ոլորտին, *Ռինգայզենի* 1971 թ. հուլիսի 16-ի վճռով դատարանը որոշել է. «Պարտադիր չէ, որ գործի (contestation [վեճ (ֆրանսերեն)]) նկատմամբ 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի լինի միայն այն դեպքերում, երբ վարույթի երկու կողմն էլ մասնավոր անձինք են... 6-րդ հոդվածի 1-ին կետի շարադրանքը շատ ավելի լայն է: Ֆրանսերեն contestations sur (des) droits et obligations de caractere civil արտահայտությունն ընդգրկում է բոլոր վարույթները, որոնց արդյունքը որոշիչ է մասնավոր իրավունքների և պարտավորությունների համար: Անգլերեն determination of . . . civil rights and obligations [«... որոշվում են . . . քաղաքացիական իրավունքները և պարտավորությունները»] արտահայտությունը հաստատում է այդ մեկնաբանությունը: Ուստի խնդրի որոշման վրա ազդեցություն ունեցող օրենսդրության, … ինչպես նաև այդ հարցում իրավասություն ունեցող գերատեսչության բնույթն... առանձնապես նշանակություն չունի (շարք A, թիվ 13, էջ 39, պարբ. 94):

Հետևաբար, վեճը վերաբերում է քաղաքացիական իրավունքի որոշմա՞նը, թե՞ ոչ՝ պայմանավորված է միայն խնդրո առարկա իրավունքի բնույթով:

91. Առաջին հերթին, դատարանը հիշում է, որ դիմողի՝ Գերմանիայի վարչական դատարաններին ներկայացրած բողոքը կլինիկան վարելու կամ բժշկությամբ զբաղվելու թույլտվություն ունենալու իրավունքին չի վերաբերել, ... դոկտոր Քյոնիգը, վիճարկելով իրավասու մարմինների կարգադրության հիման վրա իր ունեցած թույլտվությունների չեղյալ հայտարարումը, պահանջել է իր մասնագիտական գործունեությունը շարունակելու իրավունքը, որով զբաղվելու համար նա ունեցել

է պահանջվող թույլտվությունները: Վարչական դատարաններում սկսված վարույթների բարեհաջող ավարտի դեպքում դիմողին նոր թույլտվություններ չէին տրվելու: Դատարանն ընդամենը չեղյալ էր հայտարարելու Վիսբադենի և Դարմշտադտի նահանգային կառավարության ավագ պաշտոնյաների՝ թույլտվությունը չեղյալ հայտարարելու մասին որոշումները...

Հետևաբար, մնում է հավաստիանալ՝ դոկտոր Քյոնիգի՝ կլինիկան վարելու և բժշկական գործունեությունը շարունակելու իրավունքները 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով քաղաքացիական իրավունքնե՞ր են, թե՞ ոչ:

92. Դատարանը նկատում է, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում մասնավոր կլինիկա վարելը որոշ առումներով շահույթ հետապնդող առևտրային գործունեություն է, որը Գերմանիայի օրենքով դասակարգվում է որպես Gewerbe [առևտրային գործունեություն]: Այս գործունեությունը տեղի է ունենում [տնտեսության] մասնավոր հատվածում՝ կլինիկայի և հիվանդների միջև կնքված պայմանագրի հիման վրա և որոշ չափով հիշեցնում է սեփականության իրավունքին նման մասնավոր իրավունքի կիրառություն: Ելնելով հանրային շահից և առողջության պահպանության նպատակից՝ մասնավոր կլինիկաները պարտադիր ենթակա են պետական վերահսկողության: Հանրային շահի նպատակով իրականացվող վերահսկողությունը, որը, որպես կանոն, իրականացվում է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ երկրների ամեն մի մասնագիտական գործունեության նկատմամբ, չի կարող ինքնին եզրակացության տեղիք տալ, թե մասնավոր կլինիկայի վարումը հանրային իրավունքի ոլորտին առնչվող գործունեություն է: Տվյալ պետության օրենքի շրջանակներում մասնավոր համարվող գործունեությունը չի կարող ինքնաբերաբար վերածվել հանրային իրավունքի ոլորտին վերագրվող գործունեության սոսկ այն պատճառով, որ ի բարօրություն հանրային կարգի և հանրային առողջության՝ օրենքով ենթակա է վարչական կարգով արտոնման և վերահսկողության (ներառյալ արտոնության չեղյալ հայտարարումը): Այս համատեքստում դատարանը հիշում է *Ռիճգայզե*ն գործը, որում համապատասխան պետական մարմինների կողմից վերահսկողությունը վերաբերել է մասնավոր անձանց միջև վաճառքի պայմանագրին. դատարանը, այնուամենայնիվ, եզրակացրել է, որ քննարկվող հարցը քաղաքացիական բնույթ ունի (վերը նշված վճիռը, էջ 39, պարբ. 94):

93. Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում բժշկի մասնագիտությունը համարվում է ավանդական ազատական մասնագիտություն... Նույնիսկ ազգային առողջապահության համակարգի ներսում բժշկի մասնագիտությունը չի համարվում պետական ծառայություն. թույլտվություն ստանալուց հետո բժիշկն ազատ է զբաղվելու իր մասնագիտությամբ կամ չզբաղվելու դրանով: Իր հիվանդներին նա բուժում է նրանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա: Անշուշտ, իր հիվանդներին բուժելուց բացի, բժիշկը, համաձայն վերոհիշյալ օրենքի, «ընդհանուր առմամբ պետք է հոգ տանի համայնքի առողջության մասին»: Այս պատասխանատվությունը, որը դրված է բժշկի մասնագիտության վրա ընդհանրապես հասարակության նկատմամբ, այնուամենայնիվ, չի փոխում բժշկական գործունեության մասնավոր բնույթը: Թեպետ սոցիալական տեսանկյունից այն մեծ նշանակություն ունի, այդ պատասխանատվությունը բխում է նրա գործունեությունից, և դրա համարժեքը հանդիպում է այլ մասնագիտությունների դեպքում, որոնք իրենց բնույթով անկասկած մասնավոր են:

94. Այս պայմաններում առանձնապես նշանակություն չունի այն հանգամանքը, որ տվյալ գործերը վերաբերում են հանրային իշխանության իրականացման նպատակով իրավասու մարմինների ձեռնարկած վարչական միջոցառումներին: Ոչ էլ նշանակություն ունի այն հանգամանքը, որ ըստ տվյալ պետության օրենքի՝ այս գործերի վերաբերյալ որոշումները կայացնում են վարչական դատարաններն այնպիսի վարույթի արդյունքում, որում դատարանը պատասխանատու է հետաքննության և դատավարության իրականացման համար: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի առումով նշանակալի է միայն այն փաստը, որ այս բոլոր գործերի խնդիրը մասնավոր բնույթի իրավունքների վերաբերյալ որոշման կայացումն է:

95. Քանի որ, այսպիսով, դատարանը համարում է, որ թույլտվության չեղյալ հայտարարման հետևանքով ազդեցություն կրած և վարչական դատարաններում քննության առարկա դարձած իրավունքները մասնավոր իրավունքներ են, դատարանը եզրակացնում է, որ տվյալ դեպքում 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է՝ առանց այն հարցը որոշելու անհրաժեշտության, թե արդյոք այդ դրույթի իմաստով «քաղաքացիական իրավունքները և պարտավորությունները» դո՞ւրս են մասնավոր բնույթ ունեցող այս իրավունքների շրջանակից:

96. Ի տարբերություն սրա, դիմողը հայտնել է հանձնաժողովին, որ ելնելով բողոքների բնույթից (որոնց արդյունքում կայացված որոշումները նա վիճարկում է)՝ իրականում իրեն առաջադրվել է «քրեական մեղադրանք»՝ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով... Համենայն դեպս, դատարանը չի կարծում, որ պետք է ուսումնասիրի, թե արդյոք այս դեպքում 6-րդ հոդվածի 1-ին կետը վերաբերո՞ւմ է նաև «քրեական մեղադրանքի» հոդվածին: Եվ սա այն պատճառով, որ թեպետ 6-րդ հոդվածը քաղաքացիական իրավունքներին (contestations – ֆր.) վերաբերող գործերի համար նախատեսում է պահանջներ, որոնք խստությամբ զիջում են քրեական մեղադրանքներին վերաբերող գործերի համար նախատեսված պահանջներին, այդ տարբերությունը որևէ դեր չի խաղում այս դեպքում, քանի որ բոլոր այն վարույթները, որոնց վրա տարածվում է 6-րդ հոդվածի 1-ին կետը, ենթակա են «ողջամիտ ժամկետի» պահանջին, որը Գերմանիայի դատարանները պետք է քննության առնեն:

(Բ) ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

97. Ըստ հանճնաժողովի՝ վարչական դատարաններ դիմողի ներկայացրած գործերի կապակցությամբ այդ դատարաններում տեղի ունեցած քննությունը գերազանցել է 6-րդ հոդվածի 1-ին կետի «ողջամիտ ժամկետի» պայմանը: Դատարանի առջև կառավարության գործակալն ընդունել է, որ այդ վարույթների տևողությունը լուրջ խնդիր է: Բացի այդ, նա վկայակոչել է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում քննարկման փուլում գտնվող որոշ առաջարկներ, համաձայն որոնց՝ վարչական դատարաններում վարույթի իրականացումը պետք է ունենա ավելի արագ ընթացք: Թեպետ, ըստ նրա, հարց է, թե արդյոք տվյալ գործի պայմաններում կարո՞ղ է խոսք լինել կոնվենցիայի խախտման մասին, նա դատարանի հայեցողությանն է թողել այն հարցի որոշումը, թե որքանով է վարույթի տևողությունը ողջամիտ եղել:

98. Որոշում կայացնելու համար դատարանը, առաջին հերթին, պետք է հատկորոշի այն ժամանակահատվածը, որը պետք է հաշվի առնվի 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման առումով:

Ըստ կառավարության և հանճնաժողովի՝ ժամանակը մեկնարկում է առաջին ատյանի վարչական դատարանին բողոքը ներկայացնելու պահից: Դատարանը համաձայն չէ այս տեսակետին: Ինչպես դատարանը նշել է 1975 թ. փետրվարի 21-ին *Գոլդերի* վճռում, «... քաղաքացիական գործերի դեպքում հնարավոր է, որ առկա լինեն այնպիսի հանգամանքներ, որոնց պատճառով ողջամիտ ժամկետի սկիզբը համընկնի ավելի վաղ ժամանակային պահի, քան դատարանում դիմողի ներկայացրած հայցի վերաբերյալ վարույթ սկսելու մասին ծանուցման պահը» (շարք A, թիվ 18, էջ 15, պարբ. 32): Այս իրավիճակը վերաբերում է դիմողի գործին, քանի որ նախքան վարչական մարմնի կողմից վարչական ակտերի օրինականությունը և նպատակահարմարությունը պարզելու նպատակով սկսված նախնական վարույթների ավարտը (Vorverfahren), նա չէր կարող մտնել իրավասու դատարան: ... Հետևաբար, սույն գործի պարագայում 6-րդ հոդվածի 1-ին կետի մեջ ամրագրված ողջամիտ ժամկետը սկսվում է այն օրվանից, երբ դոկտոր Քյոնիգն առարկություն է ներկայացրել իր թույլտվությունների չեղյալ հայտարարման դեմ:

Ինչ վերաբերում է այն ժամանակահատվածին, որի նկատմամբ կիրառելի է 6-րդ հոդվածը, դատարանը վճռել է, որ քրեական գործերի դեպքում այդ ժամանակահատվածն ընդգրկում է խնդրո առարկա վարույթի, ներառյալ՝ բողոքարկման վարույթի ողջ տևողությունը (վերը նշված *Վեմհոֆի* (*Wemhoff*) վճիռը, էջ 26 և 27, պարբ. 18 և 20, վերը նշված *Նյումեյստերի (Neumeister)* վճիռը, էջ 41, պարբ. 19, *Դելկուրի (Delcourt)* վճիռը, 1970 թ. հունվարի 17, շարք A, թիվ 11, էջ 13–15, պարբ. 25-26): Այս դիրքորոշումը, ինչպես հատկապես ընդունվում է կառավարության կողմից, ենթակա չէ փոփոխության քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների շուրջ առաջացած վեճերի (contestations) դեպքում, որոնց համար 6-րդ հոդվածի 1-ին կետը նույն կերպ պահանջում է, որ որոշում լինի առաջին ատյանում, վերաքննիչ կամ վճռաբեկ փուլերում:

99. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի մեջ մտնող վարույթի տևողության ողջամտությունը պետք է յուրաքանչյուր դեպքում գնահատվի՝ առաջնորդվելով այդ գործի հանգամանքներով: Երբ հարցում է արվում քրեական վարույթի տևողության ողջամտության վերաբերյալ, դատարանը հաշվի է առնում, ի թիվս այլոց, գործի բարդությունը, դիմողի վարքագիծը և վարչական ու դատական մարմինների հարցին ընթացք տալու ձևը (վերը նշված *Նյումեյստերի (Neumeister)* վճիռը, էջ 42–43, պարբ. 20–21, վերը նշված *Ռինգայզենի (Ringeisen)* վճիռը, էջ 45, պարբ. 110): Ինչպես և դատավարության կողմերը, դատարանը համարում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում վարչական վարույթի ողջամտության ժամկետի խախտման քննության հիմքում պետք է ընկած լինեն այս նույն չափանիշները:

100. Նախքան այս քննությունը սկսելը դատարանը ցանկանում է շեշտել, որ իր գործառույթը չէ կարծիք հայտնել Գերմանիայի վարչական դատարանների դատական ընթացակարգի վերաբերյալ, որը, ինչպես նշել է կառավարության գործակալը, ունի տևական ավանդույթ: Պարզ է, որ ներկա համակարգը կարող է բարդ թվալ, եթե հաշվի առնվեն դատարանների քանակը և իրավական պաշտպանության միջոցների առկայությունը, սակայն դատարանը տեղյակ է, որ այս իրավիճակը պայմանավորված է անճանց իրավունքների երաշխիքներն ամրապնդելու չափազանց գնահատելի մոտեցումով: Եթե այս ջանքերը հանգեցնում են ընթացակարգային խառնաշփոթի, ապա միայն պետությունը պետք է եզրակացություններ անի և անհրաժեշտության դեպքում պարզեցնի համակարգը՝ կոնվենցիային 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխանելու նպատակով:

(i) Կլինիկայի գործունեության թույլտվությունը չեղյալ հայտարարելու վարույթը

101. Այս վարույթն սկսվել է 1967 թ. հուլիսի 13-ին, երբ դիմողն առարկություն է ներկայացրել թույլտվությունը չեղյալ հայտարարելու կապակցությամբ... և դեռևս չի ավարտվել. Հեսսենի վերաքննիչ վարչական դատարանը դեռևս որոշում չի կայացրել Ֆրանկֆուրտի վարչական դատարանի չորրորդ պալատի 1977 թ. հունիսի 22-ի վճռի դեմ դոկտոր Քյոնիգի ներկայացրած բողոքի վերաբերյալ:

102. Լուրջ մտահոգության տեղիք է տալիս այն (և սրան կառավարությունը համաձայն է), որ գործի հատկանիշների վերաբերյալ որոշում չի կայացվել տասը տարի և տասն ամիս շարունակ, և անհրաժեշտ է եղել սպասել մոտ տասը տարի մինչև առաջին ատյանի դատարանի կողմից որոշման կայացումը:

Ճիշտ է, որ դատարանը համամիտ է կառավարությանը, որ վկաներին գտնելու առումով վարչական դատարանի չորրորդ պալատը հանդիպել է լուրջ դժվարությունների, քանի որ այդ ժամանակ վկաների մի մասը փոխել էր անունը կամ հասցեն...

105. Ամբողջապես գնահատելով առկա գործոնները՝ դատարանը եզրակացնում է, որ քննության դժվարություններով և դիմողի վարքագծով պայմանավորված հետաձգումներն ինքնին չեն արդարացնում վարույթի տևողությունը: Առանց որոշիչ կարևորություն տալու չորրորդ պալատի այս կամ այն գործողությանը, դատարանը փաստորեն այն կարծիքին է, որ վարույթի երկար տևողության սկզբունքային պատճառը պետք է փնտրել գործը վարելու [ձևի] մեջ: Դատարանը համարում է, որ չորրորդ պալատը կարող էր գործի վարույթն ավարտել շատ ավելի վաղ: Հաշվի առնելով այն փաստը, որ վարույթն սկսվել է 1967 թ. հուլիսի 13-ին և ավարտվել 1977 թ. հունիսի 22-ին, դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված «ողջամիտ ժամկետի» խախտում:

Կառավարությունը շեշտել է, որ դոկտոր Քյոնիգի ներկայացրած բողոքի արդյունքում նրա կլինիկայի գործունեության թույլտվությունը չեղյալ հայտարարելու որոշման կիրառումը սառեցվել է, ... և վարույթի այս առանձնահատկությունը կարող էր լինել ի նպաստ նրա: Դատարանն ընդունում է, որ այս կասեցնող ազդեցությունը կապ ունի «ողջամիտ ժամկետ» հասկացության մեկնաբանության հետ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով վարույթի ընդհանուր տևողությունը և այն անորոշությունը, որի մեջ հայտնվել է դիմողը, դատարանը չի կարող հետ կանգնել վերը նշված եզրահանգումից միայն այն պատճառով, որ բողոքն ունեցել է կասեցնող ազդեցություն:

(ii) Գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը չեղյալ հայտարարելու կապակցությամբ վարույթը

106. Այս վարույթը սկսվել է 1971 թ. մայիսի 18-ին, երբ դիմողը ներկայացրել է գործունեությամբ զբաղվելու իր թույլտվությունը չեղյալ հայտարարելու որոշման դեմ ուղղված առարկություն: Ֆրանկֆուրտի վարչական դատարանի երկրորդ պալատի վճիռը կայացվել է 1976 թ. հունիսի 9-ին (այսինքն՝ վարույթն սկսելուց ավելի քան հինգ տարի անց), իսկ Հեսսենի վերաքննիչ վարչական դատարանինը՝ 1978 թ. մայիսի 2-ին:

107. Թեպետ այս առանձին վարույթների տևողությունն այնքան երկար չէ, որքան կլինիկայի գործունեության թույլտվությունը չեղյալ հայտարարելու վերաբերյալ հայցի կապակցությամբ սկսված վարույթինը, դատարանին չի թվում, որ այն նվազ լուրջ է:

Այդ հայցը նվազ բարդ է թվում, քան այն հայցը, որը ներկայացվել է վարչական դատարանի չորրորդ պալատի առջև. երկրորդ պալատը ոչ միայն ավելի քիչ դժվարությունների է հանդիպել դատարան կանչված վկաներից ցուցմունք վերցնելու առումով, այլև այս դեպքում քննությունը եղել է ավելի դյուրին շնորհիվ այն հանգամանքի, որ արդեն 1970 թ. հոկտեմբերի 14-ին մասնագիտական բժշկական տարածքային տրիբունալը դոկտոր Քյոնիգին հայտարարել է անպատրաստ մասնագիտական գործունեությամբ զբաղվելու համար...

111. Ամբողջովին գնահատելով առկա գործոնները և հաշվի առնելով, որ վարույթի ընթացքում որոշման ենթակա խնդիրը եղել է դոկտոր Քյոնիգի ողջ մասնագիտական կյանքը՝ դատարանը կարծում է, որ անկախ դիմողի վարքագծին վերագրելի ձգձգումներից՝ գործի քննությունը տեղի չի ունեցել պահանջվող արագությամբ...

Հետևաբար, դատարանը կարծում է, որ այս դեպքում 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ողջամիտ ժամկետը գերազանցվել է:

...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Տասնհինգ կողմ և մեկ դեմ ձայներով վճռում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է դիմողի կլինիկայի գործունեության թույլտվությունը չեղյալ հայտարարելու կապակցությամբ սկսված վարույթի նկատմամբ:

2. Վճռում է, տասնչորս կողմ և երկու դեմ ձայներով, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է դիմողի գործունեությամբ [բժշկությամբ] զբաղվելու թույլտվությունը չեղյալ հայտարարելու կապակցությամբ սկսված վարույթի նկատմամբ:

3. Տասնհինգ կողմ և մեկ դեմ ձայներով վճռում է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում կլինիկայի գործունեության թույլտվությունը չեղյալ հայտարարելու կապակցությամբ սկսված վարույթի մասով:

4. Տասնհինգ կողմ և մեկ դեմ ձայներով վճռում է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը չեղյալ հայտարարելու կապակցությամբ սկսված վարույթի մասով...

Այս վճռի կայացման ժամանակ դատարանը բացահայտ ցանկացել է հաղորդել, որ «քաղաքացիական իրավունքները և պարտավորություններն» անկախ հասկացություն են («քրեական մեղադրանք»

հասկացության նկատմամբ համանման մոտեցումը տե՛ս այս գլխի հետագա մասերի մեջբերումներում):

4 Դատարանի կարծիքով՝ արտոնագիր ունենալու իրավունքի որոշմանը վերաբերող ազգային վարույթները նույնպես կարող են մտնել 6(1) հոդվածի շրջանակների մեջ: *«Բենթեմն ընդդեմ Նիդեռլանդների»* (*Benthem v Netherlands*, A.97 (1985) 8 EHRR 1) գործում դիմողն ունեցել է մեքենաների տեխնիկական սպասարկման կենտրոն: 1976 թ. ընթացքում սպասարկման կենտրոնում հեղուկ գազի սարքավորում տեղադրելու և շահագործելու արտոնագիր ստանալու նպատակով նա դիմել է քաղաքային մարմնին: Քաղաքային մարմինը նրան արտոնագիր է տվել, սակայն տարածքային առողջապահական տեսուչը Թագի (այսինքն՝ կենտրոնական կառավարության) հետ բողոք է ներկայացրել արտոնագրի տրամադրման դեմ: Բողոքը քննարկել է Պետական խորհրդի վարչական դատավարությունների բաժինը, որը փորձել է տեղեկություններ ստանալ առողջապահության նախարարից, նաև հրավիրել է նիստ՝ լսելով դիմողին: 1979 թ. հունիսին վարչական դատավարությունների բաժինը կարծիք է ուղարկել առողջապահության նախարարին, համաձայն որի՝ արտոնագրի տրամադրումը պետք է մերժվի: Մի քանի շաբաթ անց Թագը հրապարակել է որոշում, որով չեղյալ է հայտարարել քաղաքային մարմնի որոշումը Բենթեմին արտոնագիր տրամադրելու մասին: Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ իր քաղաքացիական իրավունքներին և պարտավորություններին վերաբերող այս վեճը չի քննվել անկախ և անկողմնակալ տրիբունալի կողմից՝ ի խախտումն 6(1) հոդվածի: Ինը կողմ և ութ դեմ ձայներով՝ հանձնաժողովը որոշել է, որ այդ դրույթը կիրառելի չէ Բենթեմի գործում: Դատարանը կիրառել է *Ռինգայզենի* և *Քյոնիգի* գործերի սկզբունքները այդ վարույթների փաստերի նկատմամբ:

36. Դիմողը հայտնել է, որ ինքն արտոնագիր ստանալու իրավունք է ունեցել, որը նրա՝ որպես ձեռներեցի համար տնտեսական գործունեությամբ զբաղվելու պայմաններից մեկն է: Այն սերտորեն կապված է օրենքի պահանջներին համապատասխան սեփական ունեցվածքի օգտագործման իրավունքի հետ: Բացի այդ, այս ձևի արտոնագիրն ունի սեփականության բնորոշում, ինչը, ի թիվս այլոց, ակնհայտ է նաև այն փաստից, որ կարող է փոխանցվել երրորդ անձանց:

Ըստ կառավարության՝ պրն Բենթեմին թույլ չեն տվել հեղուկ նավթային գազի կայանը շահագործել միայն իր ընտրած տարածքում, նա կարող էր արտոնագիր ձեռք բերել մեկ այլ տարածքում այն տեղադրելու համար: Դատարանի համար այս փաստարկը համոզիչ չէ, քանի որ նման փոփոխությունը (որը բոլոր դեպքերում առաջացնելու էր պատահականության տարր, քանի որ այս պարագայում պահանջվելու էր ներկայացնել նոր դիմում, որի հաստատումը հնարավոր չէր կանխավ երաշխավորել) կարող էր բացասաբար ազդել տնտեսական գործունեության, բարյացակամության արժեքի, ինչպես նաև պրն Բենթեմի և նրա հաճախորդների ու մատակարարների պայմանագրային հարաբերությունների վրա: Սա հաստատում է արտոնագրի տրամադրման և դիմողի ողջ առևտրային գործունեության ուղղակի կապի առկայությունը:

Հետևաբար, խնդրո առարկան եղել է 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով «քաղաքացիական» իրավունքը: Ուստիև այդ դրույթը կիրառելի էր Թագին ներկայացված վարույթի նկատմամբ:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻՆ

37. Որպեսզի որոշվի՝ բողոքում ներկայացված վարույթը համապատասխանե՞լ է 6-րդ հոդվածի 1-ին կետին, թե՞ ոչ, անհրաժեշտ է քննության շրջանակների մեջ ներառել երկու հաստատություն: Դրանք են՝ Պետական խորհրդի վարչական դատավարության բաժինը և Թագը:

Ա. ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆԸ

38. Դիմողը հիմնվել է այն փաստի վրա, որ այս բաժինն ընդամենը տրամադրել է խորհրդատվություն, որը ենթակա չի եղել պարտադիր կատարման: Բացի այդ, համաձայն նրա բացատրությունների՝ դա անկախ և անկողմնակալ տրիբունալ չի եղել: Բաժինը տեխնիկական հարցերի վերաբերյալ խորհրդակցել է իրավասու նախարարի վարչության հետ: Վերջինս կարող էր բաժնից պահանջել վերանայել իր որոշման նախագիծը և, վերջին հաշվով, իրավունք ուներ նաև չհաստատել այն: Բացի այդ, բաժինը չի ունեցել սահմանված ժամկետներում տեսակետ հայտնելու պարտավորություն, մինչդեռ նրա տված խորհրդի տեքստը պահվել է գաղտնի՝ չծանուցվելով ո՛չ գանգատարկուին, ո՛չ արտոնագրի տիրոջը և ո՛չ էլ այն տրամադրող մարմնին:

39. Ըստ կառավարության, որպեսզի որոշվի՝ արդյոք Թագին ներկայացված բողոքի վարույթը բավարարե՞լ է 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, անհրաժեշտ է նայել շատ ավելի հեռուն, քան իրերի առերևույթ դրությանը: Թեպետ բաժինը չի ունեցել վեճը որոշելու իրավասություն, ի գիտություն է ընդունել ոչ միայն իրավունքի, այլև գործի բոլոր կողմերը: Իրականում նա գործել է դատարանի նման և միայն շատ հազվադեպ իրավասու նախարարը լիովին չի հետևել բաժնի ներկայացրած առաջարկներին:

40. Դատարանը համաձայն չէ այս փաստարկին: Ճիշտ է, որպեսզի որոշվի՝ կոնվենցիայի իրավունքները խախտվել են, թե ոչ, անհրաժեշտ է իրերի առերևույթ դրությունից և օգտագործված լեզվից ավելի հեռուն նայել՝ կենտրոնանալով բուն իրավիճակի վրա (5-րդ հոդվածի 1-ին կետի մասով տե՛ս, ի թիվս այլոց, *Վան Դրուգենբրեքի* (*Van Droogenbroeck*) 1982 թ. հունիսի 24-ի վճիռը, շարք A, թիվ 50, էջ 20, պարբ. 38): Այնուամենայնիվ, կոնվենցիայի իմաստով որոշում կայացնելու լիազորությունը բնորոշ է «տրիբունալի» բուն գաղափարին (տե՛ս *Սրամեկի* (*Sramek*) 1984 թ. հոկտեմբերի 22-ի վճիռը, շարք A, թիվ 84, էջ 17, պարբ. 36): Այնուամենայնիվ, բաժինը միայն խորհրդատվություն է տրամադրում: Պետք է նշել, որ այդ խորհրդատվությունը որպես հիմք է ընդունվել ինչպես այս, այնպես էլ գործերի մեծ մասի դեպքում, սակայն այդ խորհրդատվությունը պարտադիր կատարման ենթակա չի եղել, և Թագն ամեն պահի կարող էր շեղումներ կատարել դրանից: Պետական խորհրդի վարչական դատավարության բաժնի սկսած վարույթը, այսպիսով, չի ապահովում «վեճի առարկա հարցերի շուրջ տրիբունալի որոշման կայացում», ինչը պահանջվում է 6-րդ հոդվածի 1-ին կետով (տե՛ս հատկապես *Ալբերի և Լե Կոմպտի* (*Albert and Le Compte*) վճիռը, շարք A, թիվ 58, էջ 16, պարբ. 29, վերջը:

Բ. ԹԱԳԸ

41. Ըստ դիմողի՝ Թագին ներկայացված բողոքի վարույթն ունեցել է վարչական, ոչ թե դատական բնույթ, քանի որ տեղի է ունեցել վիճարկվող որոշումների ոչ միայն օրինականության, այլև նպատակահարմարության վերաանայում:

Սույն գործում բողոքող կողմը եղել է տարածքային առողջապահության տեսուչը: Նրա վերադասը շրջակա միջավայրի պաշտպանության գլխավոր տնօրենն էր, որը նաև պատասխանատու էր Թագի բողոքների բաժնի համար: Այս դեպքում Թագավորական որոշումը հիմնվել է նախարարության, ոչ թե անկախ և անկողմնակալ փորձագետների նախնական տեսակետներն արտահայտող տեխնիկական կարծիքի վրա:

42. Մյուս կողմից՝ այս դեպքում կառավարության համար Թագն իրականացրել է բավական դատավարական բնույթ ունեցող գործառույթ: Բացի խիստ բացառիկ դեպքերից, նա հետևել է Պետական խորհրդի վարչական դատավարության բաժնի խորհրդին՝ այդպես վարվելով նաև այս դեպքում: Ինչ վերաբերում է տարածքային տեսուչին, բողոք ներկայացնելու ժամանակ նա գործել է նախարարից անկախ:

43. Ճիշտ է, որ Թագը, ի տարբերություն վարչական դատավարության բաժնի, ունի վեճի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն, սակայն կոնվենցիան պահանջում է ավելին, քան դա՝ «տրիբունալ» բառով նկատի ունենալով «այն մարմիններին, որոնք դրսևորում են ... ընդհանուր հիմնարար առաքելահատկություններ», որոնցից ամենակարևորներն են անկախությունը և անաչառությունը և «դատական ընթացակարգերի երաշխիքները»: Այս առումով դատարանը հղում է անում իր հաստատված նախադեպային իրավունքին և հատկապես *Դե Վիլդի, Օոմսի և Վերսիփի (De Wilde, Ooms and Versyp)* գործով 1971 թ. հունիսի 17-ի վճռին (շարք A, թիվ 12, էջ 41, պարբ. 78):

Այնուամենայնիվ, թագավորական որոշումը, որի միջոցով Թագը՝ որպես գերագույն գործադիր ճյուղ, ընդունել է իր որոշումը, պաշտոնական առումով եղել է վարչական ակտ և կազմվել նախարարի կողմից, որը դրա համար պատասխանատվություն է կրել խորհրդարանի առջև: Բացի այդ, հիերարխիական սանդղակում նախարարն ավելի բարձր դիրք է զբաղեցնում, քան տարածքային առողջապահության տեսուչը, որը բերել էր բողոքը, և նախարարության գլխավոր տնօրենը, որը տեխնիկական հաշվետվությունը ներկայացրել էր բաժնին:

Վերջապես, թագավորական որոշումը ենթակա չի եղել դատական մարմնի վերանայման, ինչպես պահանջվում է 6-րդ հոդվածի 1-ին կետով:

Գ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

44. Հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում...

5 Անշարժ գույքի սեփականությունը, որը եղել է նաև *Բենթեմի* գործին բնորոշ տարր, որոշվել է, որ «քաղաքացիական իրավունք» է *«Զանդերն ընդդեմ Շվեդիայի»* (*Zander v Sweden*, A.279-B (1993) 18 EHRR 175) գործում: Դիմողները հողակտոր ունեին, որտեղ գտնվող ջրհորից խմելու ջուր էին ստանում: 1986 թ. Շրջակա միջավայրի պաշտպանության ազգային արտոնագրման խորհուրդը ինչ-որ մասնավոր ընկերության թույլ է տվել մեծացնել իր կենցաղային-արդյունաբերական աղբանոցը, որը գտնվում էր դիմողների սեփականության հարևանությամբ: Շվեդիայի օրենքի շրջանակներում դիմող-

ները որևէ հնարավորություն չեն ունեցել ազգային դատարաններում բողոքարկելու այդ որոշումը: Ուստի դիմողները դիմել են Ստրասբուրգ՝ պնդելով, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում: Ինչպես հանձնաժողովը, այնպես էլ դատարանը միաձայն եզրակացրել են, որ տեղի է ունեցել այդ դրույթի խախտում: Դատարանը վճռել է, որ «6(1) հոդվածի իմաստով սեփականության իրավունքն անվերապահորեն «քաղաքացիական իրավունք» է ...» (պարբ. 27):

6 Դատարանը վճռել է, որ ըստ 6-րդ հոդվածի նպատակների՝ սոցիալական ապահովագրության և անապահովության նպաստների աճող շարքը կարող է որակվել որպես «քաղաքացիական իրավունքներ»: Այս ուղղությունը սկզբնավորվել է *«Ֆելդբրուգգեն ընդդեմ Նիդեռլանդների»* (*Feldbrugge v Netherlands*, A.99 (1986) 8 EHRR 425) գործով: 1978 թ. մարտին դիմողի մասնագիտական ապահովագրական ընկերությունը որոշել է, որ նա առողջ է և կարող է կրկին աշխատանքի անցնել, որի պատճառով դադարեցրել է նրա հիվանդության նպաստը: Դիմողը բողոքել է սրա դեմ, սակայն բողոքարկման խորհրդի նախագահը նրա բժշկական փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո մերժել է նրա բողոքը: Տիկին Ֆելդբրուգգեն տանուլ է տվել նաև իր ներկայացրած հաջորդ բողոքը: Նա բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում, քանի որ բողոքների կապակցությամբ տեղի չի ունեցել արդար դատաքննություն: Հանձնաժողովը՝ ութ կողմ և վեց դեմ ձայներով, վճռել է, որ նրա գործը այդ հոդվածի շրջանակներից դուրս է: Մեջբերումներ անելով նախկին *Ոինգայզենի* և *Քոնիգի* գործերից՝ դատարանը հայտարարել է, որ.

27. Ինչպես և նախորդ գործերի դեպքում, դատարանը չի կարծում, որ տվյալ դեպքում պետք է տա «քաղաքացիական իրավունքներ և պարտավորություններ» հայեցակարգի վերացական սահմանումը:

Քանի որ սա առաջին դեպքն է, երբ դատարանը գործ է ունենում սոցիալական ապահովության ոլորտի հետ և, ավելի որոշակի, Նիդեռլանդների՝ հիվանդությունների ապահովագրման համակարգի հետ, պետք է վեր հանի այնպիսի գործոններ, որոնք կարող են պարզաբանել կամ ընդլայնել վերը նշված սկզբունքները:

(Բ) ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

28. Նիդեռլանդների օրենսդրությամբ խնդրո առարկա իրավունքը հանրային իրավունքին վերաբերող օրենքի խնդիր է... Այս դասակարգումը, այնուամենայնիվ, զուտ մեկնարկի կետ է (տե՛ս հատկապես, mutatis mutandis *Էնգելի* (*Engel*) 1976 թ. հունիսի 8-ի վճիռը, շարք A, թիվ 22, էջ 35, պարբ. 82): Այն չի կարող սպառիչ նշանակություն ունենալ հարցի համար, մինչև չհաստատվի այլ գործոններով: *Քոնիգի* 1978 թ. հունիսի 28-ի վճռով դատարանը մասնավորապես հայտարարել է.

> «Արդյոք իրավունքը պե՞տք է համարվի քաղաքացիական իրավունք, ... պե՞տք է որոշվի իրավունքի նյութական բովանդակությանը և ազդեցությանը (և ոչ իր իրավաբանական դասակարգմանը) հղում կատարելով: Որպեսզի որոշվի՝ այդ իրավունքը՝ կոնվենցիայում օգտագործված արտահայտության իմաստով, քաղաքացիակա՞ն իրավունք է, թե՞ ոչ, հարկ է համապատասխան ներպետական օրենքի շրջանակներում հղում կատարել այդ իրավունքի նյութական բովանդակությանը և ազդեցությանը, ոչ թե դրա իրավական դասակարգմանը (շարք A, թիվ 27, էջ 30, պարբ. 89):

29. Սոցիալական ապահովության համակարգով առողջության ապահովագրության նպաստների իրավունքի իրավաբանական դասակարգման առումով (այսինքն՝ իրավունքի այն կատեգորիայի առումով, որին վերագրվում են այդ իրավունքները), Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների օրենսդրության և նախադեպային իրավունքի միջև կան մեծ տարբերություններ: Որոշ պետություններ, ներառյալ Նիդեռլանդները, ընդունում են, որ այդ իրավունքները պատկանում են հանրային իրավունքի ոլորտին, մինչդեռ մյուսները, դրան հակառակ, ընդունում են, որ այդ իրավունքը պատկանում է մասնավոր իրավունքի ոլորտին: Կան նաև պետություններ, որոնք դեռևս կիրառում են խառը համակարգ: Ավելին՝ միևնույն իրավական կարգի ներքո նախադեպային իրավունքի մեջ կարող են հանդիպել մոտեցման տարբերություններ: Այսպիսով, որոշ պետություններում, որտեղ նախապատվությունը տրվում է հանրային իրավունքի հայեցակետին, որոշ դատական որոշումներով, այնուամենայնիվ, վճռվել է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է այնպիսի պահանջների նկատմամբ, որոնք նման են սույն գործում արծարծվող պահանջներին (օրինակ՝ Բրյուսելի աշխատանքային դատարանի 1984 թ. մայիսի 11-ի վճիռը, *Journal des Tribunaux*, 1985, էջ 168-169):

Հետևաբար, գոյություն չունի ընդհանուր չափորոշիչ, ըստ որի՝ այս առումով Եվրոպայում ընդհանուր պատկերացում լիներ:

30. Նիդեռլանդների առողջության սոցիալական ապահովագրության համակարգի առանձնահատկությունների վերլուծությունը բացահայտում է, որ պահանջվող իրավունքն ունի ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր իրավունքի տարրեր:

(i) Հանրային իրավունքին բնորոշ առանձնահատկությունները

31. Առկա են մի շարք գործոններ, ըստ որոնց՝ խնդրո առարկա վեճը պետք է վերագրվի հանրային իրավունքի ոլորտին:

(1) Օրենսդրության բնույթը

32. Նման առաջին գործոնը օրենսդրության բնույթն է: Առողջության ապահովագրության համատեքստում սոցիալական ապահովության նպաստներին վերաբերող իրավական կանոնները մի շարք առումներով տարբերվում են այն կանոններից, որոնք քաղաքացիական իրավունքի մաս են և ընդհանրապես տարածվում են ապահովագրության վրա: Նիդեռլանդները պատասխանատվություն է ստանձնել կարգավորել առողջության ապահովագրության համակարգի [իրավական] դաշտը և վերահսկել այդ համակարգի գործունեությունը: Այդ նպատակով տվյալ պետությունը որոշում է նպաստառուների կատեգորիաները, տրամադրվող պաշտպանության սահմանները, ինչպես նաև հաստատում ներդրումների և նպաստների չափերը և այլն:

Մի քանի գործերում (տե՛ս հատկապես *Քյոնիգը, Լե Կոմպտը, Վան Լյովեն և Դե Մեյերը*, *Բենթեմը*) օրենքի կամ գերատեսչական որոշումների միջոցով պետության միջամտությունը, այնուամենայնիվ, դատարանին հետ չի պահել եզրահանգելուց, որ խնդրո առարկա իրավունքը մասնավոր և, հետևաբար, քաղաքացիական բնույթ ունի: Տվյալ դեպքում այսպիսի միջամտությունը չի կարող բավարար համարվել դիմողի հարցը հանրային իրավունքի ոլորտի մեջ մտցնելու համար:

(2) Ապահովագրության պարտադիր բնույթը

33. Երկրորդ գործոնը հիվանդությունից ապահովագրված լինելու պարտավորությունն է, կամ, ավելի ճիշտ, օրենքով նախատեսված պայմանների կատարման դեպքում ապահովագրական ծածկույթ ունենալու փաստը (տե՛ս ստորև՝ պարբ. 38): Այլ կերպ ասած՝ այն անձինք, որոնց վրա դա տարածվում է, չեն կարող որոշել չօգտվել այդ նպաստներից կամ էլ խուսափել համապատասխան [ապահովագրական] վճարներ կատարելուց:

Համանման պարտավորություններ գործում են նաև այլ ոլորտներում: Որպես օրինակ՝ կարելի է նշել որոշ գործունեության (օրինակ՝ ավտոմեքենա վարելու կամ տնատերերի) համար պարտադիր կարգով ապահովագրական ծածկույթ ունենալու կանոնները: Այնուամենայնիվ, այս կարգի ապահովագրական պայմանագրի վրա հիմնված նպաստի արտոնությունը չի կարող համարվել հանրային իրավունքի ոլորտին պատկանող իրավունք: Դատարանը, հետևաբար, չի տարբերակում, թե ինչու առողջության ապահովագրական սխեմային անդամակցելու պարտավորությունը պետք է փոխի համապատասխան իրավունքի բնույթը:

(3) Պետության կողմից սոցիալական ապահովության պատասխանատվության ստանձնումը

34. Քննարկման ենթակա վերջին հայեցակետը վերաբերում է պետական կամ հանրային կամ կիսապետական հաստատությունների՝ սոցիալական պաշտպանության ապահովման լրիվ կամ մասնակի պատասխանատվություն ստանձնելուն: Տվյալ դեպքում դա տեղի է ունեցել Ամստերդամի «Բանկերի և ապահովագրության, մեծածախ առևտրի և ինքնազբաղվածության ոլորտի մասնագիտական ընկերակցության» կիրառած ապահովագրության սխեմայի միջոցով: Անկախ այն հանգամանքից՝ սա ընդունվում է որպես պետության վերջնական դեր կամ այդ դերի զարգացման փուլ, այսպիսի գործոնը *prima facie* [առաջին հայացքից] ենթադրում է հանրային իրավունքի ազդեցության ոլորտի ընդլայնում:

Մյուս կողմից, և դատարանը այս կետին կանդրադառնա ավելի ուշ (տե՛ս ստորև՝ պարբ. 39), սույն գործը վերաբերում է մի խնդրի, որը նմանություն ունի սովորական օրենքի շրջանակներում տրամադրվող ապահովագրությանը, ինչն ավանդաբար կարգավորվում է մասնավոր իրավունքի շրջանակներում: Այսպիսով, պետության միջամտության հետևանքներից դժվար է հստակ եզրակացություն անել խնդրո առարկա իրավունքի բնույթի վերաբերյալ:

35. Արդյունքում, եթե նույնիսկ վերը նշված երեք գործոնները վերլուծվեն համատեղ, հնարավոր չէ եզրակացնել, որ 6-րդ հոդվածը կիրառելի չէ:

(ii) Մասնավոր իրավունքի առանձնահատկությունները

36. Ի հակադրություն՝ տարբեր նկատառումներ պաշտպանում են հակառակ եզրակացությունը:

(1) Վերապահվող իրավունքի անձնական և տնտեսական բնույթը

37. Պետք է սկսել նրանից, որ տիկին Ֆելդբրուգգեն տուժել է ոչ թե հանրային մարմինների՝ հայեցողական լիազորությունների իրականացման հետևանքով, այլ որպես մասնավոր անձ: Նա տուժել է միջամտության հետևանքով՝ զրկվելով գոյատևման միջոցներից և պահանջել է գործող օրենսդրության առանձնահատուկ դրույթներից բխող իր իրավունքը:

Այս իրավունքը հաճախ վճռորոշ նշանակություն ունի այն պաշտպանող անձի համար: Սա հատկապես վերաբերում է առողջության ապահովագրության նպաստին, երբ հիվանդության պատճառով անաշխատունակ աշխատողը եկամտի այլ աղբյուր չունի: Կարճ ասած՝ խնդրո առարկա իրավունքը մասնավոր կյանքի, տնտեսական և անձնական իրավունք է, մի գործոն, որը մոտեցրել է նրան քաղաքացիական ոլորտին:

(2) Աշխատանքային պայմանագրի հետ կապը

38. Երկրորդ՝ տիկին Ֆելդբրուգեի դիրքորոշումը սերտորեն կապված է եղել այն փաստի հետ, որ որպես աշխատավարձ ստացող աշխատող՝ նա աշխատող ազգաբնակչության մասն է կազմել: Համապատասխան ժամանակահատվածում դիմողն ակնհայտորեն եղել է գործազուրկ, սակայն օգտվել է հիվանդության նպաստից, որը տրամադրվել է նրան նրա նախկին աշխատանքային պայմանագրի և այդ պայմանագրի վրա տարածվող օրենսդրության հիման վրա:

Նրա կատարած աշխատանքի համար իրավական հիմք է ծառայել նրա աշխատանքային պայմանագիրը, ինչը ենթակա է կարգավորման մասնավոր իրավունքի օրենքներով: Թեպետ ճիշտ է, որ ապահովագրության դրույթներն ուղղակիորեն բխել են ոչ թե պայմանագրի մեջ մտցված հստակ դրույթից, այլ օրենքից, դրանք ինչ-որ չափով արտացոլված են եղել պայմանագրի մեջ: Այդքանով դրանք աշխատողի և գործատուի միջև հարաբերությունների մասն են կազմել:

Բացի այդ, տիկին Ֆելդբրուգեի պահանջած հիվանդության նպաստը փոխարինել է նրան պայմանագրի հիման վրա վճարվող աշխատավարձին այն դեպքում, երբ աշխատավարձի քաղաքացիական բնույթը վեր է որևէ կասկածից: Այս նպաստն ունեցել է նույն բնույթը, ինչ պայմանագիրը: Հետևաբար, կոնվենցիայի նպատակների տեսանկյունից նույնպես ունեցել է քաղաքացիական բնույթ:

(3) Սովորական օրենքի շրջանակներում տրամադրվող ապահովագրության հետ նմանությունները

39. Վերջապես, առողջության ապահովագրությունը Նիդեռլանդներում մի քանի առումներով նման է սովորական օրենքի շրջանակներում կատարվող ապահովագրությանը: Այսպես, օրինակ՝ Նիդեռլանդների առողջության ապահովագրության սխեմայի շրջանակներում օգտագործվում են ռիսկի ծածկույթի և կառավարման այն մեթոդները, որոնք առաջացել են մասնավոր ապահովագրության ոլորտում կիրառվող մեթոդներից: Նիդեռլանդներում մասնագիտական ընկերակցություններն իրենց գործերը և հատկապես ապահովագրված անձանց հետ կապված գործերը (օրինակ՝ վճարների հավաքումը, ռիսկերի հաշվարկը, նպաստի տրամադրման պայմանների ստուգումը և նպաստի վճարումը) իրականացնում են ճիշտ նույն ձևով, ինչ սովորական օրենքի շրջանակներում ապահովագրություն իրականացնող ընկերությունները:

Կա նաև սրան վերաբերող մեկ այլ առանձնահատկություն: Լրացուցիչ ապահովագրական պոլիսները, որոնք կարող են գնվել բարեկամ ընկերություններում կամ մասնավոր ապահովագրական ընկերություններում, հնարավորություն են տալիս աշխատակիցներին բարելավել իրենց սոցիալական պաշտպանության մակարդակը նոր կամ հավելյալ ծախսեր անելու միջոցով: Այս ապահովագրական պոլիսները հանրագումարում պարտադիր ապահովագրության շարունակությունն են: Դրանց հետ կապված վարույթներն անվիճելիորեն քաղաքացիական վարույթներ են: Այնուամենայնիվ, երկու դեպքում էլ ապահովագրված ռիսկը (օրինակ՝ վատառողջությունը) նույնն է: Թեպետ ապահովագրության ծածկույթը մեծանում է, դրա բնույթը չի փոխվում:

Այսպիսի տարբերությունները, որոնք գոյություն ունեն ապահովագրության մասնավոր հատվածի և սոցիալական ապահովության ապահովագրության միջև, ներգործություն չունեն ապահովագրված և ապահովագրող անձանց միջև կապի բուն էության վրա: Վերջապես, դատարանն ուշադրություն է դարձնում այն փաստին, որ Նիդեռլանդներում, ինչպես և որոշ այլ երկրներում, ապահովագրված անձինք իրենք են մասնակցում սոցիալական ապահովության որոշ կամ բոլոր սխեմաների ֆինանսավորմանը: Պահումներն արվում են նրանց աշխատավարձերից՝ հաստատելով պահանջվող վճարների և տրամադրվող նպաստների միջև սերտ առնչությունը: Այսպիսով, այն ժամանակ, երբ տիկին Ֆելդբրուգեն աշխատել է, նրա գործատուն պահումներ է արել նրա աշխատավարձից՝ վճարելով դրանք մասնագիտական ընկերակցությանը... Բացի այդ, ապահովագրական վճարների մի մասը կատարել է նրա գործատուն: Այդ վճարներն ընդգրկվել են ընկերության հաշվապահության մեջ՝ «սոցիալական ապահովագրության ծախսեր» հոդվածի տակ: Նիդեռլանդներ պետությունն, իր կողմից, այս սխեմաների ֆինանսավորմանը չի մասնակցել:

(Գ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

40. Գնահատելով սույն գործում առկա հանրային իրավունքի և մասնավոր իրավունքի առանձնահատկությունների հարաբերական կարևորությունը՝ դատարանը համարում է, որ գերակշռում է երկրորդը: Մասնավոր իրավունքի այս տարբեր առանձնահատկություններից ոչ մեկն ինքնին որոշիչ չէ, սակայն հանրագումարում դրանք այս հաստատված իրավունքին տալիս են քաղաքացիական իրավունքի բնորոշում կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում, որը, հետևաբար, կիրառելի էր...

Այս տեսակետը պաշտպանել է տասը դատավոր, սակայն յոթն առարկել են, որ դիմողի իրավունքը «քաղաքացիական իրավունք» չէ: Մեծամասնությունը համարել է, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում, քանի որ բողոքարկման խորհրդի նախագահը թույլ չի տվել տիկին Ֆելդբրուգգեին բանավոր կամ գրավոր միջնորդություններով մասնակցել վարույթին: Ավելի ուշ *«Սալեզին ընդդեմ Իտալիայի»* (*Salesi v Italy*,A.257-E (1990)) գործում պալատը միաձայն կիրառել է *Ֆելդբրուգգեի* գործում մեծամասնության մշակած վերլուծական մոտեցումը ոչ ներդրումային անապահովության նպաստի իրավունքի նկատմամբ: Կառավարությունը մերժել էր տիկին Սալեզիին հաշմանդամության ամսական թոշակի վճարումը: 1986 թ. փետրվարին այս որոշումը բողոքարկելու նպատակով վերջինս սկսել է դատական վարույթ Հռոմի մագիստրատների դատարանում: Վճռաբեկ դատարանը գործի վերաբերյալ որոշում է կայացրել 1992 թ. մարտին: Նա բողոք է ներկայացրել հանձնաժողովին՝ պնդելով, որ ազգային դատարաններն իր «քաղաքացիական իրավունքների» մասին 6(1) հոդվածով պահանջվող ողջամիտ ժամկետում որոշում չեն կայացրել: Տասներեք կողմ և ութ դեմ ձայներով՝ հանձնաժողովը բավարարել է բողոքը:

19. Այս դեպքում դատարանը մեկ անգամ ևս հանդիպում է սոցիալական ապահովության վեճերի նկատմամբ 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիության խնդրին: Այս հարցն առաջացել է ավելի վաղ լսված *«Ֆելդբրուգգեն ընդդեմ Նիդեռլանդների» (Feldbrugge v the Netherlands)* և *«Դոյմելանդն ընդդեմ Գերմանիայի» (Deumeland v Germany)* գործերից, որոնցից [վերջինի] վերաբերյալ վճիռ է կայացրել 1986 թ. մայիսի 29-ին (շարք A, nos 99 և 100): Այդ ժամանակ դատարանը նշել է, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների օրենսդրությունը և պրակտիկան տարբերվում են սոցիալական ապահովության սխեմաների շրջանակներում վճարվող ապահովագրական նպաստների իրավունքի բնորոշմամբ: Այնուամենայնիվ, այդ վճիռներով և հավասար մոտեցման սկզբունքով սկզբնավորված օրենքի զարգացումը այսօր արդեն երաշխավորում է սոցիալական ապահովագրության ոլորտի վրա 6-րդ հոդվածի 1-ին կետի տարածման ընդհանուր կանոնը:

Սույն գործում, այնուամենայնիվ, հարցն առաջանում է անապահովության նպաստի ոլորտում, ոչ թե, ինչպես արդեն մեջբերված գործերում, սոցիալական ապահովագրության ոլորտում: Անշուշտ, երկուսի միջև առկա են տարբերություններ, սակայն սոցիալական ապահովագրության օրենքի զարգացման ներկա փուլում դրանք չեն կարող համարվել հիմնարար: Անապահովության նպաստների իրավունքի առումով սա արդարացնում է այդ վճիռներից բխող կարծիքը, համաձայն որի՝ սոցիալական ապահովագրության նպաստների իրավունքի դասակարգումը, պետության միջամտությունն անվանապես բավարար չեն հիմնավորելու համար, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի չէ:

Ինչպես երկու նախորդ գործերում, կան այլ նկատառումներ, որոնք վարույթում գտնվող գործի նկատմամբ 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիության օգտին են: Սրանցից ամենակարևորն այն է, որ թեպետ կառավարությունը մատնանշել է հանրային իրավունքի օրենքից բխող առանձնահատկությունները, տիկին Սալեզին չի տուժել հանրային մարմինների՝ հայեցողական լիազորությունների իրականացման հետևանքով: Նա տուժել է գոյության միջոցների վրա ազդող միջամտության հետևանքով և պահանջել է սահմանադրության ուժ ունեցող օրենքում ամրագրված դրույթներից բխող անձնական, տնտեսական իրավունք...

Բացի այդ, այս հիմնարար իրավունքի պաշտպանությունը կազմակերպված է այնպիսի եղանակով, որ դատական փուլում դրա շուրջ առաջացած վեճերը մտնում են ընդհանուր իրավասության դատարանի, աշխատանքային գործերով հաշտարար դատարանի (pretore del lavoro) իրավասությունների մեջ:

Ամփոփելով՝ դատարանը որևէ համոզիչ պատճառ չի տեսնում, որպեսզի տարբերակում մտցնի տկն Սալեզիի անապահովության նպաստի իրավունքի և տկն Ֆելդբրուգգեի և պրն Դոյմելանդի սոցիալական ապահովագրության նպաստի իրավունքների միջև:

Հետևաբար, 6-րդ հոդվածի 1-ին կետը տարածվում է վարույթում գտնվող սույն գործի վրա...

Քանի որ ներպետական դատավարությունը բարդ չի եղել և դիմողը որևէ դեր չի խաղացել դրա հետաձգման հարցում, դատարանը որոշել է, որ այն չի ավարտվել «ողջամիտ» ժամկետում: Ինչ վերաբերում է սույն գործերում «քաղաքացիական իրավունքներ» հասկացության կիրառությանը դատարանում, որոշիչ նշանակությունը եղել է այն, որ մասնավոր իրավունքի գործոնները գերակշռել են հանրային իրավունքի գործոնների նկատմամբ: Ձեր կարծիքով՝ որքանո՞վ է ազդեցիկ այն հանգամանքը, որ ինչպես տկն Ֆելդբրուգգեն, այնպես էլ տկն Սալեզին ազգային օրենքի շրջանակներում օժտված են եղել սոցիալական ապահովագրության և անապահովության նպաստների իրավունքով, որն էլ նրանք պահանջել են: *Ֆելդբրուգգեի* վերլուծության մեթոդը դատարանը կիրառել է նաև *«Շուտենը և Մելդրումն ընդդեմ Նիդեռլանդների» (Schouten and Meldrum v Netherlands)*, A.304 (1994) 19 EHRR 432) գործի դեպքում, որպեսզի որոշի՝ սոցիալական ապահովագրության պարտադիր

մուծումները կարո՞ղ են դասակարգվել որպես «քաղաքացիական իրավունքներ և պարտավորություններ»: Դիմողները ֆիզիոթերապևտներ էին, որոնց մասնագիտական ապահովագրական ընկերությունը պահանջել էր նրանցից առողջության և հաշմանդամության ապահովագրական մուծումներ կատարել իրենց շենքն օգտագործող մյուս ֆիզիոթերապևտների համար: Ըստ դիմողների՝ ազգային տրիբունալների կողմից նրանց ներկայացրած բողոքի վերաբերյալ որոշման կայացման ժամանակահատվածն առաջացրել է 6(1) հոդվածի խախտում: Դատարանը միաձայն որոշել է, որ վարույթի տևողությունը (չորս տարի երեք ամիս և երեք տարի երեք ամիս) խախտել է այդ դրույթով սահմանված «ողջամիտ ժամկետի» պահանջը:

«Ստեքը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (Stec and Others v United Kingdom) (ստորև՝ էջ 965) գործում մշտական գործող դատարանն անապահովության նպաստի դասակարգման առումով որդեգրել է համապարփակ մոտեցում՝ համարելով դրանք «ունեցվածք»՝ համաձայն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի:

7 Որոշ պետական ծառայողների և պետական մարմինների միջև առաջացած վեճերը դուրս են «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների» կատեգորիայից: Այս հարցի նկատմամբ դատարանի ներկայիս մոտեցումը բացատրված է *«Պելլեգրին ընդդեմ Ֆրանսիայի» (Pellegrin v France,* (8/12/1999)) գործում: Մինչև 1989 թ. դիմողն աշխատել է մասնավոր հատվածում որպես կառավարման/հաշվապահության խորհրդատու: Այնուհետև՝ 1989 թ. մարտին Ֆրանսիայի համագործակցության և զարգացման նախարարությունը նրա հետ պայմանագիր է ստորագրել, համաձայն որի՝ նա նշանակվել է Հասարակածային Գվինեայի կառավարության տնտեսական խորհրդատու (նրա պարտականությունների մեջ մտնելու էր պետական ներդրումների բյուջեի նախագծերի կազմումը): Գվինեայի կառավարության հետ տարաձայնություններ ունենալուց հետո դիմողը 1990 թ. վերադարձել է Ֆրանսիա: Նույն տարվա մարտ ամսին նախարարությունը տեղյակ է պահել նրան, որ նա հեռացվել է նրա հաստիքացուցակից, քանի որ, համաձայն բժշկական արձանագրությունների, նա այլևս չէր կարող աշխատել արտասահմանում: Դիմողը փորձել է բողոքարկել այս որոշումը Ֆրանսիայի դատարաններում: 1999 թ. դրությամբ նրա հայցը դեռևս գտնվել է Փարիզի վերաքննիչ վարչական դատարանում: Այնուհետև նա գանգատ է ներկայացրել հանձնաժողով՝ պնդելով, որ իր գործը չի վճռվել ողջամիտ ժամկետում: Տասնութ կողմ և տասնչորս դեմ ձայներով՝ հանձնաժողովը բավարարել է նրա բողոքը:

58. Սույն գործի փաստերը բարձրացնում են պետական ծառայողների՝ իրենց ծառայության պայմանների վերաբերյալ հարուցած վեճերի նկատմամբ 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիության խնդիրը:

1. ԱՌԿԱ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

59. Ինչպես դատարանը նկատել է նախորդ գործերում, Եվրոպայի խորհրդի մի շարք անդամ երկրների օրենքները հստակ տարբերակում են մտցնում քաղաքացիական ծառայողների և մասնավոր իրավունքին ենթակա աշխատողների միջև: Սրա արդյունքում դատարանը վճռել է, որ «քաղաքացիական ծառայողների աշխատանքի ընդունմանը, պաշտոնեական առաջխաղացմանը և ծառայության դադարեցմանը վերաբերող վեճերը, որպես ընդհանուր կանոն, 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներից դուրս են» (տե՛ս, օրինակ՝ *«Մասսան ընդդեմ Իտալիայի» (Massa v Italy)* 1993 թ. օգոստոսի 24-ի վճիռը, շարք A, թիվ 265-B, էջ 20, պարբ. 26):

Բացառման այս ընդհանուր սկզբունքը, այնուամենայնիվ, սահմանափակվել է և պարզաբանվել մի շարք վճիռներում: Այսպիսով, *Մասսայի* (*Massa*) գործում (նույնը) իր կնոջ (որն աշխատել է որպես դպրոցի տնօրեն) մահվանից հետո դիմողը դիմել է ռեվերսիոն թոշակ [որը շարունակում է վճարվել սկզբնական նպաստառուի մահվանից հետո] ստանալու համար: *Ֆրանչեսկո Լոմբարդոյի* գործում [*«Լոմբարդոն ընդդեմ Իտալիայի» (Lombardo v Italy)* A.249-B (1992)] կարաբինները, որը հաշմանդամության պատճառով ծառայության համար ոչ պիտանի է համարվել և պնդել, որ իր հաշմանդամությունն առաջացել է իր ծառայության ընթացքում, դիմել է «ընդլայնված սովորական թոշակ» ստանալու համար: Դատարանը որոշել է, որ դիմողների բողոքները ո՛չ «աշխատանքի ընդունմանը», ո՛չ էլ քաղաքացիական ծառայողի «կարիերային» են վերաբերել, այլ միայն անուղղակիորեն նրանց «ծառայության դադարեցմանն» այն պատճառով, որ դրանք շոշափել են զուտ նյութական իրավունքներ, որոնք օրենքով առաջանում են ծառայության դադարեցումից հետո: Այդ հանգամանքներում և հաշվի առնելով այն փաստը, որ Իտալիայի պետությունը թոշակներ վճարելու իր պարտականությունը կատարելու ժամանակ չի կիրառել «հայեցողական լիազորություններ» և կարող էր

համեմատվել մասնավոր իրավունքի օրենքով առաջնորդվող աշխատանքային պայմանագրի կողմ հանդիսացող գործատուի հետ, դատարանը վճռել է, որ դիմողների պահանջները բնույթով եղել են 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակների մեջ մտնող քաղաքացիական պահանջներ:

Մյուս կողմից՝ *Նեյժելի* գործում [*«Նեյժելն ընդդեմ Ֆրանսիայի» (Neigel v France)* 1997-II 411] դիմողի կողմից քաղաքացիական ծառայության մշտական պաշտոնում վերականգնվելու մասին դիմումը մերժող և նրա կողմից վիճարկվող որոշման կապակցությամբ դատարանը վճռել է, որ դա վերաբերել է նրա «աշխատանքի ընդունմանը», «կարիերային» և «ծառայության դադարեցմանը»: Դատարանը շարունակել է՝ ասելով, որ դիմողի ներկայացրած աշխատավարձի (որը նա կստանար, եթե վերականգնվեր իր աշխատանքում) վճարման պահանջը 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառության հարց չի առաջացնում, քանի որ վարչական դատարանը համարել է, որ այդպիսի փոխհատուցման վճարումը «ուղղակիորեն հիմնված է նախկին եզրակացության վրա, որ նրան վերականգնելու մերժումը եղել է անօրինական» (վերը մեջբերված *Նեյժելի* վճիռը, էջ 411, պարբ. 44): Հետևաբար, դատարանը որոշել է, որ վեճը չի վերաբերում 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով «քաղաքացիական» իրավունքի: Պետք է նշել, որ նրան պաշտոնում վերականգնելու դիմումի մերժումը վարչական մարմինների կողմից նրանց հայեցողական իրավասությունների կիրառություն չէ, քանի որ, համաձայն համապատասխան ազգային օրենքի, կա՛մ պետք է գոյություն ունենար թափուր պաշտոն, որի դեպքում դիմողը կունենար պաշտոնում վերականգնվելու իրավունք, կա՛մ այդպիսի թափուր պաշտոն կարող էր գոյություն չունենալ, որի դեպքում իշխանությունները չէին կարող վերականգնել նրան:

Ըստ այլ վճիռների՝ 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառվում է այն դեպքում, երբ խնդրո առարկա պահանջը շոշափում է «զուտ տնտեսական» իրավունք, ինչպես, օրինակ, աշխատավարձի վճարումը (տե՛ս *«Դե Սանտան ընդդեմ Իտալիայի» (De Santa v Italy), «Լապալորչիան ընդդեմ Իտալիայի» (Lapalorcia v Italy)* և *«Աբենավոլին ընդդեմ Իտալիայի» (Abenavoli v Italy)* 1997 թ. սեպտեմբերի 2-ի վճիռները, Զեկույցներ 1997-V, համապատասխանաբար էջ 1663, պարբ. 18, էջ 1677, պարբ. 21 և էջ 1690, պարբ. 16) կամ՝ «էականորեն տնտեսական» իրավունք (տե՛ս *«Նիկոդեմոն ընդդեմ Իտալիայի» (Nicodemo v Italy)* 1997 թ. սեպտեմբերի 2-ի վճիռը, Զեկույցներ 1997-V, էջ 1703, պարբ. 18), որը հիմնականում «իշխանությունների հայեցողական լիազորությունների վերաբերյալ» հարց չի առաջացնում (տե՛ս հետևյալ վճիռները. *«Բենկեսիուրն ընդդեմ Ֆրանսիայի» (Benkessiouer v France)*, 1998 թ. օգոստոսի 24, Զեկույցներ 1998-V, էջ 2287, պարբ. 29–30, *«Կուեն ընդդեմ Ֆրանսիայի» (Couez v France)* 1998 թ. օգոստոսի 24, Զեկույցներ 1998-V, էջ 2265, պարբ. 25 ...):

2. ԱՅՍ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

60. Դատարանը համարում է, որ ըստ 6-րդ հոդվածի 1-ին կետի անդամ պետությունների պարտավորությունների տեսանկյունից պետական ծառայողների՝ իրենց ծառայության պայմանների վերաբերյալ հարուցած վեճերին վերաբերող վերը նշված նախադեպային իրավունքը անորոշության սահման ունի:

Նեյժելի գործում հայեցողական լիազորության բացակայության չափանիշը որոշիչ չի համարվել 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիության համար (տե՛ս վերը՝ պարբ. 59):

Վեճի տնտեսական բնույթին վերաբերող չափանիշը, իր հերթին, որոշակի կամայականության հնարավորություն է տալիս, քանի որ քաղաքացիական ծառայողի «աշխատանքի ընդունման», «կարիերայի» կամ «ծառայության դադարեցման» մասին որոշումները գրեթե միշտ նյութական հետևանքներ ունեն: Այդ իսկ պատճառով դժվար է տարբերակում մտցնել «զուտ» կամ «էականորեն» տնտեսական շահերին վերաբերող վարույթների կամ այլ վարույթների միջև...

61. Ուստի դատարանը ցանկանում է վերջ տալ պետության և նրա ծառայողների միջև առաջացած վեճերի նկատմամբ 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման այդ անորոշությանը:

62. Սույն գործում կողմերի միջև առաջացած վեճը վերաբերել է պետական ծառայողների երկու կատեգորիաների՝ պայմանագրով աշխատող ծառայողների և մշտական հաստիքով աշխատող քաղաքացիական ծառայողների տարբերությանը, որը գոյություն ունի ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ մի քանի այլ անդամ պետություններում... Ճիշտ է, որ որոշ պետություններում պայմանագրային հիմունքներով աշխատող պետական պաշտոնյաների վրա տարածվում է մասնավոր իրավունքի օրենքը, մինչդեռ մշտական հաստիքացուցակում ընդգրկված քաղաքացիական ծառայողների վրա՝ հանրային իրավունքի օրենքը: Այնուամենայնիվ, դատարանը նկատում է, որ համաձայն անդամ պետություններում հաստատված ընթացիկ գործելակերպի, քաղաքացիական ծառայողները և պայմանագրով աշխատող պաշտոնյաները կատարում են համարժեք կամ համանման պարտականություններ: Համաձայն դատարանի հաստատված նախադեպային իրավունքի՝ այն հարցը՝ կիրառելի իրավական դրույթները կազմում են ազգային հանրային իրավունքի օրենքի՞, թե՞ մասնավոր իրավունքի օրենքի մաս, ինքնին չի կարող որոշիչ լինել և կարող է, ամեն դեպքում, հանգեցնել տարբեր պետությունների և պետության ծառայության մեջ գտնվող համարժեք պարտականություններ կատարող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքի դրսևորման:

63. Հետևաբար, դատարանը համարում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիության առումով կարևոր է ներմուծել «քաղաքացիական ծառայություն» հասկացության անկախ մեկնաբանություն, ինչը հնարավորություն կտա կոնվենցիայի

անդամ պետություններում համարժեք կամ համանման պարտականություններ կատարող հանրային ծառայողների նկատմամբ դրսևորել հավասար մոտեցում՝ անկախ աշխատանքի ազգային համակարգից և, մասնավորապես, պաշտոնյայի և վարչական մարմնի միջև գործող իրավահարաբերություններից (որոնք շարադրված են կա՛մ պայմանագրում, կա՛մ ծառայությանը վերաբերող օրենսդրական կամ կանոնակարգիչ պայմաններում): Բացի այդ, այս մեկնաբանությունը պետք է հաշվի առնի այն թերությունները, որոնք առկա են դատարանի նախադեպային իրավունքում (տե՛ս վերը՝ պարբ. 60):

3. ՆՈՐ ՉԱՓԱՆԻՇԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

64. Հանրային ծառայողների (լինեն դրանք մշտական կամ պայմանագրային հիմունքով աշխատողներ) նկատմամբ 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիության առնչությամբ դատարանը համարում է, որ պետք է ընդունի աշխատողի պարտականությունների և պատասխանատվության վրա հիմնված գործառնական չափանիշ: Դա անելով, համաձայն կոնվենցիայի խնդրի և նպատակի, 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսվող երաշխիքների առնչությամբ պետք է որդեգրի նեղ մեկնաբանություն:

65. Դատարանը նկատում է, որ յուրաքանչյուր երկրում հանրային ծառայության որոշ պաշտոններ նախատեսում են ընդհանուր շահին վերաբերող պատասխանատվություն կամ մասնակցություն հանրային իրավունքով նախատեսված լիազորությունների կատարմանը: Այսպիսով, պաշտոններ զբաղեցնող անձինք օժտված են պետության ինքնիշխան լիազորությունների մասով: Հետևաբար, պետությունն այս ծառայողներից վստահության և հավատարմության որոշակի պարտավորություն պահանջելու օրինական շահ ունի: Մյուս կողմից՝ այլ պաշտոնների առնչությամբ, որոնց բնորոշ չէ «հանրային կառավարման» այս հայեցակետը, նման շահ գոյություն չունի:

66. Հետևաբար, դատարանը որոշում է, որ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներից դուրս են միայն այն վեճերը, որոնք բարձրացվել են իրենց պարտականությունների բերումով հանրային ծառայությանը բնորոշ գործունեություն իրականացնող հանրային ծառայողների կողմից, այնքանով, որքանով նրանք հանդես են գալիս որպես հանրային իշխանության կրողներ՝ պատասխանատու պետության կամ այլ հանրային մարմինների ընդհանուր շահերի պաշտպանության համար: Այսպիսի գործունեության հստակ օրինակներ են ոստիկանությունը և զինված ուժերը: Գործնականում յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է հավաստիանա՝ արդյոք դիմողի պաշտոնը, հաշվի առնելով այդ պաշտոնին համապատասխանող պարտականությունների և պատասխանատվության բնույթը, առաջացնո՞ւմ է հանրային իրավունքով պատվիրակված լիազորությունների և պետության կամ այլ հանրային մարմինների ընդհանուր շահերի պաշտպանությանն ուղղված պարտականությունների ուղղակի կամ անուղղակի մասնակցություն: Այդ ժամանակ դատարանն առաջնորդվելու է Եվրոպական հանձնաժողովի 1988 թ. մարտի 18-ի հաղորդումով և Եվրահամայնքների արդարադատության դատարանի թվարկած գործունեության և պաշտոնների կատեգորիաներով...

67. Հետևաբար, քանի որ դատարանի նպատակն է ստեղծել գործառույթների վրա հիմնված չափանիշ (տե՛ս վերը՝ պարբ. 64), ապա 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառության խնդիր չի առաջանում այնպիսի վեճերի դեպքում, որոնք ծագում են վարչական մարմինների և այնպիսի պաշտոններ զբաղեցնող անձանց միջև, որոնք պարտականությունների բերումով մասնակցում են հանրային իրավունքով երաշխավորված լիազորությունների իրականացմանը: Թոշակներին վերաբերող բոլոր վեճերը մտնում են 6-րդ հոդվածի 1-ին կետի մեջ, քանի որ թոշակի անցնելու դեպքում աշխատակիցները խզում են իրենց և իշխանությունների միջև եղած հատուկ կապը: Այս դեպքում նրանք և *a fortiori* նրանց միջոցով լիազորված անձինք հայտնվում են այնպիսի իրավիճակում, որը ճշտորեն համընկնում է մասնավոր իրավունքին ենթակա աշխատակիցների իրավիճակի հետ, քանի որ նրանց և պետության միջև գործող վստահության և հավատարմության կապը դադարում է, և աշխատակիցն այլևս օժտված չէ և չի կարող իրականացնել պետության ինքնիշխան լիազորությունների մասը (տե՛ս վերը՝ պարբ. 65):

4. ԱՅՍ ՉԱՓԱՆԻՇԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ԳՈՐԾՈՒՄ

68. Դատարանը նկատում է, որ տվյալ ժամանակամիջոցում դիմողն աշխատել է համագործակցության և զարգացման նախարարությունում: Որպես օտար երկրում պաշտոնավարող քաղաքացիական համագործակցության աշխատակազմի անդամ՝ նա ունեցել է հատուկ պարտավորություններ, որոնք, մասնավորապես, համաձայն օտարերկրյա պետություններում նշանակված քաղաքացիական, մշակութային, գիտական և տեխնիկական պաշտոնների վերաբերյալ 1973 թ. հուլիսի 13-ի օրենքի 3-րդ բաժնի սահմանման, «անխզելի են հանրային ծառայության բնույթից»: ... Ինչպես փաստվում է այդ պարտականություններով, պետական նախարարության ենթակայության տակ մտնող այդպիսի գործունեությունը, որը կազմում է արտաքին հարաբերությունների վարման մասը, վերը սահմանված պետական ծառայությանը բնորոշ գործունեություն է (տե՛ս վերը՝ պարբ. 66):

69. Դատարանին մնում է ուսումնասիրել պաշտոնավարման ընթացքում դիմողի պարտականությունների և պատասխանատվության առանձնահատուկ բնույթը: Այդ առնչությամբ դատարանի համար համոզիչ չէ դիմողի բացատրությունը, ... որտեղ լոկ նշված է, որ իր պարտականությունները չեն ընդգրկել հանրային իրավունքով պատվիրակված լիազորություններ, քանի որ դրանք կարող էին վստահվել նաև մասնավոր խորհրդատուի: Այն ընդունում է կառավարության փաստարկը, քանի որ այդ փաստարկը հիմնված է դիմողի կողմից խնդրո առարկա պետությունում կատարված աշխատանքի բնույթի վրա...

70. Գործի փաստերը ցույց են տալիս, որ դիմողին հանձնարարված առաջադրանքները ... նրան օժտել են հանրային ֆինանսների ոլորտում մեծ պատասխանատվությամբ: Սա par excellence [գերազանցապես] մի ոլորտ է, որտեղ պետությունները կիրառում են իրենց ինքնիշխան լիազորությունները: Սա առաջացրել է մասնակցություն հանրային իրավունքի շրջանակներում երաշխավորված լիազորությունների և պետության ընդհանուր շահերի պաշտպանությանն ուղղված պարտականությունների ուղղակի իրականացմանը:

71. Հետևաբար, սույն գործի վրա 6-րդ հոդվածի 1-ին կետը չի տարածվում...

Այս վճիռը հաստատել է տասներեք դատավոր, մինչդեռ չորս դատավոր անհամաձայնություն են հայտնել: Այժմ արդեն պարզ է, որ այն հարցում, թե որքանով են հանրային ծառայողների առանձնահատուկ վեճերը մտնում են 6(1) հոդվածի շրջանակների մեջ, որոշիչ չափանիշն այն պարտականություններն են, որոնք իրականացնում են նրանք: Եթե տվյալ անձնավորությունն իրականացնում է կառավարության «ինքնիշխան լիազորությունների» մեջ մտնող գործառույթներ, ապա աշխատանքային հարցերի շուրջ նրա վեճերը ենթակա չեն 6(1) հոդվածի պահանջներին: Այս վճիռը հետաքրքիր է նրանով, որ 6(1) հոդվածի առնչությամբ այն դատարանի՝ հանրային ծառայողների դասակարգումը կապում է Եվրամիության հանրային ծառայողների ազատ տեղաշարժի նկատմամբ ունեցած մոտեցման հետ (տե՛ս վերոհիշյալ վճռի պարբ. 66): Իր 1988 թ. զեկույցում Եվրահանձնաժողովը նշել է, որ «հանրային իրավունքով երաշխավորված լիազորությունների կատարմանը մասնակցելու և պետության ընդհանուր շահերը պաշտպանելու առումով ունեցած պարտավորությունների» պատճառով հանրային ծառայողների մի շարք խմբեր առնչվում են «Հռոմի համաձայնագրի» 48(4) հոդվածին (աշխատողների ազատ տեղաշարժի սկզբունքից արվող բացառություններ): Նշված խմբերն ընդգրկում են դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներին, հարկային մարմինների, իրավական ակտերի պատրաստմանը մասնակցող և ենթակա մարմինների նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական պաշտոնյաներին: Եվրոպական դատարանը վճռել է, որ ուսուցիչները և հանրային կոմունալ ծառայության (ջրամատակարարման և այլն) ոլորտի մի շարք աշխատողներ չեն պատկանում այն խմբերին, որոնց համար կարող են բացառություններ արվել (*«ԵՀ հանձնաժողովն ընդդեմ Լյուքսեմբուրգի» (EC Commission v Luxembourg*, (C-473/93) [1997] ECR I-3207)): *Պելլեգրինի (Pellegrin)* վերաբերյալ որոշումը նաև նշանակալից է նրանով, որ այն հստակ ցույց է տալիս մշտական գործող դատարանի՝ իր նախորդի մեկնաբանություններից հեռանալու ցանկություն այն դեպքում, երբ այդ նոր մարմինը համարում է, որ առկա իրավագիտությունը թերի է: Հետագա գործերում դատարանը վճռել է, որ Իսպանիայի արտաքին գործերի նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներն իրականացրել են հանրային իրավունքով նրանց տրված կարևոր լիազորություններ և, հետևաբար, չէին կարող իրենց անդրծովյան թոշակի հետ կապված հարցերը ներկայացնել՝ վկայակոչելով 6-րդ հոդվածի շրջանակները (*«Մարտինես-Կարո Դե Լա Կոնչա Կաստանեդան ընդդեմ Իսպանիայի» (Martinez-Caro De La Concha Castaneda v Spain)*, որոշում 7/3/2000), մինչդեռ դպրոցի տնտեսվարը նման լիազորություններ չի իրականացրել և իր աշխատանքային վեճի կապակցությամբ կարող էր վկայակոչել 6-րդ հոդվածը (*«Պրոկաչինին ընդդեմ Իտալիայի» (Procaccini v Italy)* 30/3/2000թ. որոշում), ինչը և կարող է քաղաքացիական ծառայության մեջ վարչական օգնականի պաշտոն (ամենաստորին դասի պաշտոնը) զբաղեցնող դիմողը (*«Դեվլինն ընդդեմ ՄԹ-ի» (Devlin v UK)*, 2001 թ. հոկտեմբերի 30-ի վճիռ):

8 *«Ֆերրաձինին ընդդեմ Իտալիայի» (Ferrazzini v Italy)* 2001 թ. հուլիսի 12-ի վճռով մեծ պալատը, տասնմեկ կողմ և վեց դեմ ձայներով, հաստատել է Ստրասբուրգի հաստատությունների ընդունած մոտեցումը, համաձայն որի՝ հարկային վարույթները չեն մտնում են «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների» շրջանակի մեջ: Դիմողը բողոքել է, որ, ի թիվս այլոց, իր կապիտալ հասույթի նկատմամբ հարկային պարտավորությունները ազգային մարմինների կողմից ողջամիտ ժամկետում չեն որոշվել՝ խախտելով 6(1) հոդվածի պահանջը:

21. Կառավարությունն առարկել է, որ 6-րդ հոդվածը կիրառելի չէ խնդրո առարկա վարույթի դեպքում, քանի որ այն «քաղաքացիական իրավունք» չի արծարծում: Անհատի՝ իր պետության նկատմամբ ունեցած հարկային պարտավորությունը, ըստ նրանց, պատկանում է բացառապես հանրային իրավունքի ոլորտին: Ժողովրդավարական հասարակությունում այդ պարտավորությունը մտնում է քաղաքացիական պարտավորությունների մեջ, և հանրային իրավունքի բնագավառի օրենքի առանձնահատուկ դրույթների նպատակը եղել է ազգային տնտեսական քաղաքականության իրականացումը:

22. Դիմողն իր կողմից շեշտել է իր պահանջների նյութական բնույթը և առարկել, որ վարույթն այդ իսկ պատճառով վերաբերում է «քաղաքացիական իրավունքներին և պարտավորություններին»:

23. Քանի որ որպես ընդհանուր հիմք եղել է «վեճ» [dispute – անգլ.] (contestation – [ֆր.]), ապա դատարանի խնդիրն է ընդամենը որոշել՝ դա «քաղաքացիական իրավունքներից և պարտավորություններից» դուրս եկող [վե՞ճ] է եղել, թե՞ ոչ:

24. Համաձայն դատարանի նախադեպային իրավունքի՝ «քաղաքացիական իրավունքները և պարտավորությունները» չեն կարող մեկնաբանվել՝ սոսկ պատասխանող պետության ազգային օրենքը վկայակոչելով: Մի քանի առիթով դատարանը հաստատել է այն սկզբունքը, որ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով այս հայեցակարգն «անկախ» է (տե՛ս, այլ հեղինակավոր աղբյուրների թվում, *«Քյոնիգն ընդդեմ Գերմանիայի» (Konig v Germany)*, 1978 թ. հունիսի 28-ի վճիռ, շարք A, թիվ 27, էջ 29-30, պարբ. 88-9, և *«Բարաոնան ընդդեմ Պորտուգալիայի» (Baraona v Portugal)* 1987 թ. հուլիսի 8-ի վճիռ, շարք A, թիվ 122, էջ 17-18, պարբ. 42): Սույն գործում դատարանը հաստատում է այդ նախադեպայի իրավունքը: Դատարանը համարում է, որ ցանկացած այլ լուծում հանգեցնելու է այնպիսի արդյունքների, որոնք հակասում են կոնվենցիայի առարկային և նպատակին (տե՛ս mutatis mutandis *Քյոնիգի* վերը բերված մեջբերումը, էջ 29–30, պարբ. 88 և *«Մաաուիան ընդդեմ Ֆրանսիայի» (Maaouia v France* [GC], թիվ 39652/98, պարբ. 34, ECHR 2000-X)):

25. Նյութական շահերը հստակորեն հարկային վարույթների խնդրո առարկան են: Սակայն 6-րդ հոդվածի 1-ին կետի «քաղաքացիական» մասի կիրառության համար ինքնին բավարար չէ միայն ցույց տալ, որ վեճն իր բնույթով «նյութական» է (տե՛ս *«Պիեռ-Բլոշն ընդդեմ Ֆրանսիայի» (Pierre-Bloch v France)*, 1997 թ. հոկտեմբերի 21-ի վճիռ, Վճիռների և որոշումների զեկույցներ 1997-VI, էջ 2223, պարբ. 51 և *«Պելլեգրին ընդդեմ Ֆրանսիայի» (Pellegrin v France* [GC], թիվ 28541/95, պարբ. 60, ECHR 1999-VIII): Համեմատի՛ր *«Էդիշընզ Փերիսկոպն ընդդեմ Ֆրանսիայի» (Editions Periscope v France)*, 1992 թ. մարտի 26-ի վճիռ, շարք A, թիվ 234-B, էջ 66, պարբ. 40): Մասնավորապես, համաձայն կոնվենցիայի հաստատությունների ավանդական նախադեպային իրավունքի.

> «Պետության կամ նրա ենթակա մարմինների նկատմամբ կարող են գոյություն ունենալ «նյութական» պարտավորություններ, որոնք 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով համարվում են բացառապես հանրային իրավունքի ոլորտի մեջ մտնող իրավունքներ և, համապատասխանաբար, չեն ընդգրկվում «քաղաքացիական իրավունքներ և պարտավորություններ» հասկացության մեջ: Բացի «քրեական պատժամիջոցների» միջոցով կիրառված տուգանքներից, սա գործում է, մասնավորապես, այն դեպքում, երբ բնույթով նյութական պարտավորությունն առաջանում է հարկային օրենսդրությունից կամ, այլ կերպ, կազմում ժողովրդավարական հասարակությունում նորմալ քաղաքացիական պարտավորությունների մասը»: (Այլ աղբյուրների շարքում տե՛ս *«Շուտենը և Մելդրումն ընդդեմ Նիդեռլանդների» (Schouten and Meldrum v The Netherlands)*, 1994 թ. դեկտեմբերի 9-ի վճիռ, շարք A, թիվ 304, էջ 21, պարբ. 50, *«S. ընկերությունը և T.-ն ընդդեմ Շվեդիայի» (Company S. and T. v Sweden)* թիվ 11189/84 Հանձնաժողովի 1986 թ. դեկտեմբերի 11-ի որոշում, Որոշումներ և հաշվետվություններ 50, էջ 121, պարբ. 140, *«Կուստաննուս օյ Վապաա Այատելիյա ԱԲ-ն, Վապաա-Այատելիյաին Լիիտտո-Ֆրիտանկարնաս Ֆորբունդ r.y.-ն և Կիմմո Սունդստրոմն ընդդեմ Ֆինլանդիայի» (Kustannus oy Vapaa Ajattelija AB, Vapaa-Ajattelijain Liitto—Fritankarnas Forbund r.y. and Kimmo Sundstrom v Finland)* թիվ 20471/92, Հանձնաժողովի 1996 թ. ապրիլի 15-ի որոշում, DR 85-A, էջ 29, պարբ. 46):

26. Կոնվենցիան, այնուամենայնիվ, գործող փաստաթուղթ է և պետք է մեկնաբանվի ըստ տվյալ ժամանակի պայմանների (այլ հեղինակավոր աղբյուրների շարքում տե՛ս *«Ջոնսթընը և այլք ընդդեմ Իռլանդիայի» (Johnston and Others v*

Ireland), 1986 թ. դեկտեմբերի 18-ի վճիռ, շարք A թիվ 112, էջ 24-5, պարբ. 53), և հաշվի առնելով հասարակության փոխված վերաբերմունքը պետության կողմից անձանց տրամադրվող իրավական պաշտպանության նկատմամբ, դատարանը պետք է քննի, թե արդյոք 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակները չպե՞տք է ընդլայնվեն և տարածվեն ազգային օրենքի շրջանակներում հարկային մարմինների կայացրած որոշումների օրինականության շուրջ քաղաքացիների և հանրային մարմինների միջև առաջացած վեճերի վրա:

27. Կոնվենցիայի ընդունումից հետո հիսուն տարվա ընթացքում անձի և պետության միջև հստակ հարաբերություններ առաջացել են մի շարք ոլորտներում, ինչպես նաև մեծացել է մասնավոր իրավունքի ոլորտում հարաբերությունների պետական կարգավորումը: Հետևաբար, դատարանը եզրակացրել է, որ ազգային օրենքի շրջանակներում «հանրային իրավունքի» տակ դասակարգված ընթացակարգերը չեն կարող մտնել 6-րդ հոդվածի «քաղաքացիական» խորագրի տակ, եթե դրանց արդյունքը որոշիչ նշանակություն ունի այնպիսի մասնավոր իրավունքների և պարտականությունների համար, ինչպիսիք են, օրինակ՝ հողի վաճառքը, մասնավոր կլինիկայի գործունեությունը, գույքային շահերը, մասնագիտական գործունեության իրականացման համար վարչական թույլտվության տրամադրումը կամ ալկոհոլային խմիչքներ առաջարկելու համար տրվող արտոնագիրը (այլ հեղինակավոր աղբյուրների շարքում տե՛ս *«Ռինգայզենն ընդդեմ Ավստրիայի» (Ringeisen v Austria)*, 1971 թ. հուլիսի 16-ի վճիռ, շարք A, թիվ 13, էջ 39, պարբ. 94, *Քյոնիգի* վերը մեջբերված վճիռը, էջ 32, պարբ. 94–5, *«Սպորոնգը և Լյոնրոթն ընդդեմ Շվեդիայի» (Sporrong and Lonnroth v Sweden)*, 1982 թ. սեպտեմբերի 23-ի վճիռ, շարք A, թիվ 52, էջ 29, պարբ. 79, *«Ալան Յակոբսոնն ընդդեմ Շվեդիայի» (Allan Jacobsson v Sweden)* (թիվ 1), 1989 թ. հոկտեմբերի 25-ի վճիռ, շարք A, թիվ 163, էջ 20-1, պարբ. 73, *«Բենթեմն ընդդեմ Նիդեռլանդների» (Benthem v The Netherlands)*, 1985 թ. հոկտեմբերի 23-ի վճիռ, շարք A, թիվ 97, էջ 16, պարբ. 36 և *«Թրե Թրակտորեր ԱԲ-ն ընդդեմ Շվեդիայի» (Tre Traktorer AB v Sweden),* 1989 թ. հուլիսի 7-ի վճիռ, շարք A, թիվ 159, էջ 19, պարբ. 43): Բացի այդ, անձի առօրյա կյանքի մեջ (օրինակ՝ բարեկեցության ապահովման նպատակով) պետության հարաճուն միջամտության տեսանկյունից դատարանից պահանջվել է մինչ եզրակացնելը, որ պահանջվող իրավունքը կարող է դասակարգվել որպես «քաղաքացիական» իրավունք, կատարել հանրային իրավունքի և մասնավոր իրավունքի առանձնահատկությունների գնահատում (տե՛ս, այլ հեղինակավոր աղբյուրների շարքում, *«Ֆելդբրուգգեն ընդդեմ Նիդեռլանդների» (Feldbrugge v The Netherlands*), 1986 թ. մայիսի 29-ի վճիռ, շարք A, թիվ 99, էջ 16, պարբ. 40, *«Դոյմելանդն ընդդեմ Գերմանիայի» (Deumeland v Germany)* 1986 թ. մայիսի 29-ի վճիռ, շարք A, թիվ 100, էջ 25, պարբ. 74, *«Սալեզին ընդդեմ Իտալիայի» (Salesi v Italy)*, 1993 թ. փետրվարի 26-ի վճիռ, շարք A, թիվ 257-E, էջ 59-60, պարբ. 19 և վերը մեջբերված *Շտեներ և Մելդրումը*, էջ 24, պարբ. 60):

28. Այնուամենայնիվ, անձի գոյություն ունեցող իրավունքները և պարտականությունները պարտադիր չէ, որ բնույթով լինեն քաղաքացիական իրավունքներ: Այսպիսով, քաղաքական իրավունքները և պարտականությունները, օրինակ՝ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու իրավունքը (տե՛ս վերը մեջբերված *Պիեռ-Բլոշի* գործը, էջ 2223, պարբ. 50), բնույթով քաղաքացիական չեն, թեպետ դրանց հետ կապված վարույթներում շոշափվում են դիմողի նյութական շահերը (նույնը, պարբ. 51): Հետևաբար, 6-րդ հոդվածի 1-ին կետը դրանց վրա չի տարածվում: Եվ այդ դրույթը չի վերաբերում վարչական մարմինների և հանրային իրավունքով պատվիրակված լիազորություններ կատարմանը մասնակցող դրանց աշխատակիցների միջև առաջացած վեճերին (տե՛ս վերը մեջբերված *Պելլեգրինի* գործը, պարբ. 66-7): Նմանապես, օտարերկրացիներին արտաքսելու հետևանքով կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների հետ կապված վեճեր (contestations) չեն առաջանում: Հետևաբար, 6-րդ հոդվածի 1-ին կետը չի կիրառվում (տե՛ս *Մաաուիայի* վերը մեջբերված գործը, պարբ. 37-8):

29. Ժողովրդավարական հասարակություններում հարկային դաշտի հնարավոր զարգացումները, այնուամենայնիվ, ազդեցություն չունեն անհատների կամ ընկերությունների հարկեր մուծելու հիմնարար պարտավորության վրա: Համեմատած կոնվենցիայի ընդունման ժամանակ առկա դիրքորոշման հետ՝ այդ զարգացումները չեն հանգեցրել պետության միջամտությունների անձի կյանքի «քաղաքացիական» ոլորտին: Դատարանը կարծում է, որ հարկային խնդիրները դեռևս մտնում են պետական մարմինների խիստ սկզբունքային բացառիկ իրավասությունների մեջ, և հարկատուի ու համայնքի միջև հարաբերություններում գերակշռում է հանրային բնորոշումը: Չմոռանալով, որ կոնվենցիան և դրա արձանագրությունները պետք է մեկնաբանվեն որպես մեկ ամբողջություն, դատարանը նաև նկատում է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, որը վերաբերում է գույքի պահպանմանը, պետություններին իրավունք է վերապահում ընդունելու այնպիսի օրենքներ, որոնք նրանք անհրաժեշտ են համարում ընդունել հարկերի վճարումներն ապահովելու նպատակներով (տե՛ս *mutatis mutandis «Գասուս Դոսիեր ունդ Ֆորդերտեքնիկ» ԲԲԸ-ն ընդդեմ Նիդեռլանդների» (Gasus Dosier und Fordertechnik GmbH v The Netherlands),* 1995 թ. փետրվարի 23-ի վճիռ, շարք A, թիվ 306-B, էջ 48-9, պարբ. 60): Թեպետ դատարանը որոշիչ նշանակություն չի վերագրում այս գործոնին, այնուամենայնիվ, հաշվի է առնում դա: Դատարանը համարում է, որ հարկային վեճերը չեն մտնում քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների շրջանակի մեջ, թեպետ դրանք անպայման նյութական ազդեցություն են ունենում հարկատուների վրա:

30. Այն սկզբունքը, ըստ որի՝ կոնվենցիայի անկախ հայեցակարգերը ժողովրդավարական հասարակություններում պետք է մեկնաբանվեն տվյալ իրավիճակին համահունչ, դատարանին լիազորություն չի տալիս 6-րդ հոդվածի 1-ին կետին տալ այնպիսի մեկնաբանություն, ըստ որի՝ «քաղաքացիական» ածականը (և այն սահմանափակումը, որն այդ ածականը դնում է տվյալ հոդվածի շրջանակների մեջ մտնող «իրավունքներ և պարտավորություններ» կատեգորիայի վրա) տեքստում բացակայում է:

31. Հետևաբար, կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը սույն գործի վրա չի տարածվում:

Իհարկե, եթե քրեական հարկային վարույթը բավարարում է *Էնգելի* չափանիշը (տե՛ս ստորև՝ էջ 380), ապա այն կարող է դասակարգվել որպես «քրեական մեղադրանք» ընդգրկող վարույթ և այդպիսով մտնել 6-րդ հոդվածի շրջանակների մեջ (տե՛ս, օրինակ՝ *«Բենդենունն ընդդեմ Ֆրանսիայի» (Bendenoun v France)*, 1994 թ. փետրվարի 24-ի վճիռը, երբ դատարանը եզրակացրել է, որ վարույթը, որը շոշափել է զգալի հարկային հավելավճարների (ընդամենը 100.000 ֆունտ ստեռլինգ) խնդիր, պետք է դասակարգվի այդ կերպ):

9 Որպեսզի դիմողները կարողանան վկայակոչել 6(1) հոդվածի այս հայեցակետը, նրանք պետք է ցույց տան դատարանին, որ contestation (dispute) [վեճ] կա (կամ եղել է), որը վերաբերում է իրենց պետությունների ներսում իրենց «քաղաքացիական իրավունքներին և պարտավորություններին»: Դատարանը զարգացրել է այս պահանջի իր ըմբռնումը *«Լե Կոմպտը, Վան Լյովեն և Դե Մեյերն ընդդեմ Բելգիայի» (Le Compte, Van Leuven and De Meyere v Belgium*, A.43 (1981) 4 EHRR 1) գործում: Դիմողները եղել են բժիշկներ, որոնց առնչությամբ Ordre des medecins-ի (Բելգիական բժշկական ընկերության) տարածքային խորհուրդը և բողոքարկման խորհուրդը որոշել են, որ նրանք խախտել են մասնագիտական կազմակերպության (Ordre) և գործընկեր բժիշկների նկատմամբ արհամարհանքի դրսևորումներին վերաբերող դրույթները: Այս եզրակացությունների և այնուհետև մասնագիտական գործունեությամբ զբաղվելու իրենց իրավունքների կասեցման դեմ դիմողները բողոքել են դատարաններ, սակայն նրանց բողոքները չեն բավարարվել: Նրանք բողոքել են հանձնաժողովին, ի թիվս այլոց, պնդելով, որ ներպետական դատարանների վարույթների ժամանակ խախտվել է 6(1) հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքը: Ութ կողմ և երեք դեմ ձայներով՝ հանձնաժողովը եզրակացրել է, որ տեղի է ունեցել այդ դրույթով նախատեսված հրապարակային դատավարության իրավունքի խախտում:

1. «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՎԵՃԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

44. Որոշ առումներով, «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների» վերաբերյալ վեճեր (contestations (ֆր.)/disputes (անգլ.)) բառերի իմաստը պարզաբանվել է *Ռինգայզենի* 1971 թ. հուլիսի 16-ի վճռում և *Ջոնիգի* 1978 թ. հունիսի 28-ի վճռում:

Ըստ առաջին վճռի՝ խնդրո առարկա արտահայտությունը վերաբերում է «բոլոր վարույթներին, որոնց արդյունքը որոշիչ է մասնավոր իրավունքների և պարտավորությունների համար», եթե նույնիսկ վարույթը վերաբերում է անձի և իր ինքնիշխան դերում հանդես եկող պետական մարմնի միջև առաջացած վեճին: «Որոշման ենթակա խնդրի վրա ազդող օրենսդրությունը» և այդ հարցում իրավասությամբ օժտված «մարմինն» առանձնապես դեր չեն խաղում (շարք A, թիվ 13, էջ 39, պարբ. 94):

«Քաղաքացիական իրավունքներ և պարտավորություններ» հասկացության բուն գաղափարն ընկած է *Ջոնիգի* գործի հիմքում: Խնդրո առարկա իրավունքները ներառել են որպես բժիշկ «մասնագիտական գործունեությունը շարունակելու» իրավունքը, «որի համար նա ձեռք էր բերել պահանջվող թույլտվությունը»: Հաշվի առնելով այդ գործի հանգամանքները՝ դատարանն այդ իրավունքը դասակարգել է որպես մասնավոր իրավունք, հետևաբար՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակով որպես քաղաքացիական [իրավունք] (նշված հղումը, էջ 29-32, պարբ. 88-91 և 93-5):

Այս լիազորության ազդեցությունը կրկին զգալիորեն ընդլայնվել է *Գոլդերի* 1975 թ. փետրվարի 21-ի վճռի արդյունքում: Դատարանը եզրակացրել է, որ «6-րդ հոդվածի 1-ին կետը բոլորի համար երաշխավորում է նրանց քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ պահանջները դատարանին կամ տրիբունալին ներկայացնելու հնարավորությունը» (շարք A, թիվ 18, էջ 18, պարբ. 36): Սրա հետևանքներից մեկն այն է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը ոչ միայն կարող է կիրառվել արդեն ընթացքի մեջ գտնվող վարույթների նկատմամբ, այլև յուրաքանչյուր անձի կողմից, ով կարծում է, որ անօրինական միջամտություն է եղել իր որևէ (քաղաքացիական)

իրավունքին, և բողոքում է, որ իր պահանջը 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին բավարարող դատարան ներկայացնելու հնարավորություն չի ունեցել:

45. Սույն գործում անհրաժեշտ է առաջին հերթին որոշել հետևյալ հարցը. կարելի՞ է ասել, որ գոյություն է ունեցել «երկու բախվող պահանջների կամ դիմումների» առկայությամբ իսկական contestation (վեճ) (կառավարության խորհրդատուի բանավոր բացատրությունները):

Համապատասխանությունը կոնվենցիայի ոգուն պահանջում է, որ այս բառը մեկնաբանվի խիստ տեխնիկապես, և նրան վերագրվի ավելի շուտ նյութական, քան պաշտոնական իմաստ: Բացի այդ, այն որևէ համարժեք չունի 6-րդ հոդվածի 1-ին կետի անգլերեն տեքստում (In the determination of his civil rights and obligations, համեմատի՛ր 49-րդ հոդվածի հետ՝ dispute/«վեճ»):

Եթե նույնիսկ ֆրանսերեն contestation բառը ենթադրում է անհամաձայնություն, ապա փաստերը հստակ ցույց են տալիս, որ դա առկա է սույն գործում: Ordre des medecins-ը պնդել է, որ դիմողները թույլ են տվել մասնագիտական վարքագծի թերացումներ, որոնց հետևանքով ենթարկվել են պատժամիջոցների, և նրանք մերժել են այս պնդումները: Նրանց մեղավոր ճանաչելով վարքագծի թերացման մեջ՝ իրավասու տարածքային խորհուրդը կարգադրել է, որ նրանց գործունեությունը դադարեցվի: Դոկտոր Լե Կոմպտի (Արևմտյան Ֆլանդրիա) նկատմամբ որոշում է կայացվել նրա բացակայությամբ, իսկ դոկտոր Վան Լյովեի և դոկտոր Դե Մեյերի (Արևելյան Ֆլանդրիա) նկատմամբ՝ փաստերի և իրավունքի կետերի վերաբերյալ նրանց գործերը լսելուց հետո, որից հետո դիմողները դիմել են բողոքարկման խորհուրդ: Նրանք ներկա են գտնվել այդ խորհրդում և օգտվել տրամադրված իրավաբանական օգնությունից: Այլ հարցերի թվում նրանք վիճարկել են 6-րդ հոդվածի 1-ին կետի և 11-րդ հոդվածի հետ կապված հանգամանքները: Մի շարք առումներով նրանց բողոքները չեն բավարարվել, որից հետո նրանք դիմել են վճռաբեկ դատարան՝ կրկին, ի թիվս այլոց, վկայակոչելով կոնվենցիան...

46. Բացի այդ, պետք է ցույց տրվի, որ contestation-ը (վեճը) վերաբերել է «քաղաքացիական իրավունքներին և պարտավորություններին», այլ կերպ ասած՝ «վարույթի արդյունքը» եղել է «որոշիչ այդպիսի իրավունքի համար (տե՛ս վերը նշված *Ռինգայզենի* վճիռը):

Համաձայն դիմողների, նրանք ունեցել են մասնագիտական գործունեությունը շարունակելու խնդիր: Նրանք պնդել են, որ *Քյոնիգի* 1978 թ. հունիսի 28-ի վճռի համաձայն՝ դա ճանաչվել է որպես «քաղաքացիական» իրավունք (նշված մեջբերումը, էջ 31-2, պարբ. 91 և 93):

Ըստ կառավարության՝ տարածքային և վերաքննիչ խորհուրդների որոշումներն այս դեպքում ունեցել են միայն «անուղղակի» ազդեցություն: Նրանք վիճել են, որ այս մարմինները, ի տարբերություն *Քյոնիգի* դեպքում Գերմանիայի վարչական դատարանների, չեն վերանայել մասնագիտական գործունեությամբ զբաղվելու իրավունքի ավելի վաղ չեղյալ հայտարարման միջոցառումը: Նրանք բավարարվել են միայն այնքանով, որ տեղի են ունեցել կարգապահական սանկցիաների կիրառությունն արդարացնող մասնագիտական վարքականոնների խախտումներ: Նրանց ասելով, եթե նույնիսկ բժշկական մասնագիտական գործունեությունը շարունակելու շուրջ contestation (վեճ) առաջացել է, ապա ավելի ուշ փուլում: Ավելի ճիշտ, այն ժամանակ, երբ դոկտոր Լե Կոմպտը, դոկտոր Վան Լյովեն և դոկտոր Դե Մեյերը վճռաբեկ դատարանում վիճարկել են իրենց նկատմամբ կիրառված միջոցառումների օրինականությունը: Կառավարությունն այնուհետև ներկայացրել է, որ այս իրավունքը «քաղաքացիական» չի եղել և առաջարկել է դատարանին չհետևել *Քյոնիգի* վճռում ընդունված մոտեցմանը:

47. Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք վեճը վերաբերե՞լ է վերը նշված իրավունքին, դատարանը կարծում է, որ պաշտոնական տարբերակներից և ոչ մեկի շրջանակներում (contestation sur, determination of) խիստ աննշան կապը կամ հեռավոր հետևանքները բավարար չեն 6-րդ հոդվածի 1-ին կետի համար. քաղաքացիական իրավունքները և պարտավորությունները պետք է լինեն contestation-ի (վեճի) առարկան կամ առարկաներից մեկը: Վարույթի արդյունքը պետք է ուղղակիորեն որոշիչ նշանակություն ունենա այդ իրավունքի համար:

Եթե այս կետի առնչությամբ դատարանը համաձայն է կառավարության հետ, ապա համաձայն չէ, որ տվյալ դեպքում այս վարույթի և բժշկի մասնագիտական գործունեությունը շարունակելու իրավունքի միջև կապ չի եղել: Տարածքային խորհրդի [գործունեության] կասեցման կարգադրությունները, որոնք դոկտոր Լե Կոմպտի նկատմամբ ընդունվել են 1971 թ. հունիսի 30-ին, իսկ դոկտոր Վան Լյովեի և դոկտոր Դե Մեյերի նկատմամբ՝ 1973 թ. հոկտեմբերի 24-ին, ունեցել են նրանց իրենց մասնագիտական գործունեությամբ զբաղվելու իրավունքից ժամանակավորապես զրկելու նպատակ: Այս իրավունքն ուղղակիորեն բարձրացվել է վերաքննիչ խորհրդում և վճռաբեկ դատարանում: Եվ այդ մարմինները պետք է ուսումնասիրեին դիմողների բերած բողոքները, որոնք վերաբերում էին իրենց դեմ ընդունված որոշումներին:

48. Բացի այդ, մասնավոր բժշկական գործունեությամբ զբաղվող մասնագետներն իրենց գործունեությունը շարունակելու իրավունքից օգտվում են իրենց հաճախորդների կամ հիվանդների հետ մասնավոր հարաբերությունների արդյունքում: Բելգիայի օրենքում այս հարաբերությունները սովորաբար պայմանագրային կամ կիսով չափ պայմանագրային բնույթ ունեն և ամեն դեպքում ուղղակիորեն հաստատվում են անձնական հիմքի վրա՝ առանց պետական մարմնի զգալի կամ

որոշիչ միջամտության: Հետևաբար, քննարկվող հարցը, անկախ բժշկական մասնագիտության առանձնահատուկ բնույթից (մասնագիտություն, որն իրականացվում է ի շահ ընդհանուրի և [ի կատարումն] այդ մասնագետների վրա դրված առանձնահատուկ պարտավորությունների), մասնավոր իրավունքի հարց է:

Դատարանն այսպիսով եզրակացնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է: Ինչպես և *Քյոնիգի* գործում (տե՛ս վերը նշված վճիռը՝ էջ 32, պարբ. 95), նրանից չի պահանջվում որոշել՝ «քաղաքացիական իրավունքների» հայեցակարգը դո՞ւրս է մասնավոր բնույթ ունեցող իրավունքների շրջանակից, թե՞ ոչ:

49. Հանձնաժողովի երկու անդամ՝ պրն Ֆրոեյնը և պրն Պոլակը, իրենց չհամընկնող կարծիքում շեշտել են, որ, ի տարբերություն *Քյոնիգի* գործի, ներկա վարույթը չի վերաբերել մասնագիտական գործունեությամբ զբաղվելու թույլտվության չեղյալ հայտարարմանը: Այն ընդամենը վերաբերել է համեմատաբար կարճ ժամանակահատվածով՝ երեք ամսով, դոկտոր Լե Կոմպտի և տասնհինգ օրով՝ դոկտոր Վան Լյովեի և դոկտոր Դե Մեյերի [մասնագիտական գործունեությամբ զբաղվելու իրավունքի] կասեցմանը: Այս անդամները պնդել են, որ այդպիսի կասեցումը ոչ թե քաղաքացիական իրավունքի խախտում է, այլ ընդամենը այդ իրավունքի բնական սահմանափակում:

Դատարանին չի բավարարում կառավարության հուշագրի 19-րդ պարբերությունում ներկայացված հաջորդ փաստարկը: Ի տարբերություն կարգապահական որոշ այլ սանկցիաների (նախազգուշացում, պարսավանք կամ նկատողություն...), որոնք կարող էին կիրառվել դիմողների նկատմամբ, նրանց կողմից վիճարկվող կասեցման սանկցիան անկասկած նյութական միջամտություն է եղել բժշկական գործունեությամբ զբաղվելու իրավունքին: Այն փաստը, որ կասեցումը եղել է ժամանակավոր, չի կանխել այդ իրավունքի խախտումը (տե՛ս mutatis mutandis վերը նշված *Գոլդերի* վճիռը, էջ 13, պարբ. 26): Իհարկե, 6-րդ հոդվածի 1-ին կետի մեջ նշված contestations-ում (վեճերում) խնդրո առարկա կարող է լինել «քաղաքացիական» իրավունքի փաստացի գոյությունը, սակայն նույն կերպ կարող են խնդրո առարկա լինել այդ իրավունքի շրջանակները կամ այն ձևը, որի միջոցով անձը կարող է օգտվել այդ իրավունքից:

50. Քանի որ դիմողների դեմ ընդունված այդ որոշումների շուրջ առաջացած վեճը պետք է համարվի «քաղաքացիական իրավունքներին և պարտավորություններին վերաբերող» վեճ, ուրեմն նրանք իրավունք ունեին, որ նրանց գործը (ֆրանսերենում՝ cause) լսվեր 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պայմաններին բավարարող «տրիբունալի» կողմից (տե՛ս վերը նշված *Գոլդերի* վճիռը, էջ 18, պարբ. 36):

51. Իրականում այս գործը լսվել է երեք մարմինների՝ տարածքային խորհրդի, վերաքննիչ խորհրդի և վճռաբեկ դատարանի կողմից: Հետևաբար, հարց է առաջանում՝ արդյոք այս մարմինները բավարարե՞լ են 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները:

(ա) Դատարանը չի համարում, որ տարածքային խորհրդի դեպքում այս կետին հետևելը պարտադիր անհրաժեշտություն է: Թեև 6-րդ հոդվածի 1-ին կետը մարմնավորում է «դատարանի իրավունքը» (տե՛ս վերը՝ պարբ. 44), այն, այնուամենայնիվ, չի պարտավորեցնում անդամ պետություններին, որ «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների շուրջ» առաջացած contestations-ի (վեճերի) յուրաքանչյուր փուլը ենթակա լինի այդ հոդվածի տարբեր պահանջները բավարարող «տրիբունալում» անցկացվելու ընթացակարգի: Ճկունության և արդյունավետության պահանջները, որոնք լիովին համատեղելի են մարդու իրավունքների պաշտպանության հետ, կարող են արդարացնել վարչական կամ մասնագիտական մարմինների ավելի վաղ միջամտությունը, a fortiori ոչ բոլոր տեսանկյուններից նշված պահանջները բավարարող դատական մարմինների միջամտությունը: Այսպիսի համակարգը պաշտպանելու նպատակով կարելի է վկայակոչել Եվրոպայի խորհրդի մի շարք անդամ երկրների իրավական ավանդույթները...

(բ) Երբ տարածքային մարմինը ժամանակավոր արգելք է կիրառել դոկտոր Լե Կոմպտի, դոկտոր Վան Լյովեի և դոկտոր Դե Մեյերի մասնագիտական գործունեությամբ զբաղվելու [իրավունքի] նկատմամբ, նրանք բողոքարկել են վերաքննիչ խորհուրդ, որը պետք է որոշում կայացներ խնդրո առարկա հարցի վերաբերյալ:

Ըստ կառավարության՝ վերաքննիչ խորհուրդը, այնուամենայնիվ, պարտավոր չէր համապատասխանել 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված պայմաններին, քանի որ օրենքի կետի առնչությամբ վերջինիս կայացրած որոշումը բողոքարկվել է վճռաբեկ դատարանում, որի ընթացակարգն անկասկած բավարարել է այդ պայմանները:

Դատարանը համաձայն չէ: Ինչպես քրեական մեղադրանքների, այնպես էլ քաղաքացիական գործերի դեպքում (տե՛ս *Դևլեների* 1980 թ. փետրվարի 27-ի վճիռը, շարք A, թիվ 35, էջ 24-5, պարբ. 48), 6-րդ հոդվածի 1-ին կետը որևէ տարբերություն չի դնում փաստերի և օրենքի հարցերի միջև: Հարցի երկու կատեգորիաներն էլ հավասարապես կարևոր են «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների» վարույթի արդյունքի համար: Հետևաբար, «դատարանի իրավունքը» (տե՛ս վերը նշված *Գոլդերի* վճիռը, էջ 18, պարբ. 36) և վեճի դատական կարգով որոշման իրավունքը (տե՛ս վերը նշված *Քյոնիգի* վճիռը, էջ 34, պարբ. 98 վերջում) հավասարապես վերաբերում են փաստերի և օրենքի հարցերին: Այնուամենայնիվ, վճռաբեկ դատարանի իրավասությունը չէ շտկել փաստական սխալները կամ քննել, թե արդյոք սանկցիան համաչա՞փ է եղել իրավախախտմանը... Սրանից հետևում է, որ եթե 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները չեն բավարարվել վերաքննիչ խորհրդի կողմից, ապա դրանք բավարարված չեն...

54. Ուշադրություն դարձնելով 51-րդ պարբերությունում արված եզրակացությանը՝ պետք է որոշել, թե վերաքննիչ խորհուրդը և վճռաբեկ դատարանն իրենց իրավասություններն իրականացնելիս բավարարե՞լ են 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված պայմանները: Որովհետև առաջինը եղել է միակ մարմինը, որը լիովին քննության է առել քաղաքացիական իրավունքի վրա ազդող միջոցները, և երկրորդը վերջնական վերանայել է այդ միջոցների օրինականությունը...

59. 1970 թ. փետրվարի 6-ի թագավորական որոշման համաձայն՝ ինչպես հայցի քննարկման, այնպես էլ որոշման հայտարարման փուլերում վերաքննիչ խորհրդի հրապարակայնությունն ընդհանրապես և բացարձակապես բացառվում է ...

Ակնհայտ է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը, կախված որոշ պայմանների առկայությունից, առնվազն դատավարական գործընթացի առումով, տալիս է հրապարակայնության կանոնից բացառություններ անելու հնարավորություն: Այնուամենայնիվ, չկան փաստեր, որոնք ցույց կտային, որ սույն գործում այդ պայմաններից որևէ մեկը բավարարվել է: Դիմողների վարքագծի խախտումներ թույլ տալու մեղադրանքի և նրանց կողմից Ordre-ի դեմ ներկայացրած բողոքների բուն էությունը չի վերաբերել նրանց հիվանդների բուժմանը: Հետևաբար, մասնագիտական գաղտնիքի կամ այս բժիշկների կամ նրանց հիվանդների մասնավոր կյանքի պաշտպանությանը վերաբերող հարցեր չեն եղել: Դատարանը համամիտ չէ կառավարության՝ հակառակը պնդող փաստարկի հետ: Բացի այդ, չկան ապացույցներ, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասությունում թվարկված այլ հիմքեր են եղել, որոնց դեպքում դռնփակ վարույթը կարող էր արդարացված լինել: Բացի այդ, կառավարությունը չի հիմնվել այդպիսի որևէ հիմքի վրա:

Դոկտոր Լե Կոմպտը, դոկտոր Վան Լյովեն և դոկտոր Դե Մեյերը, այսպիսով, ունեցել են հրապարակային վարույթի իրավունք: Ակնհայտ է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի ո՛չ տառը, ո՛չ ոգին չէին կասեցնի նրանց, որպեսզի իրենց հոժար կամքով, բացահայտորեն կամ ծածուկ հրաժարվեին այս իրավունքից (համեմատի՛ր վերը նշված *Դելվեների* վճռի հետ, էջ 26, պարբ. 49): Մասնավոր կարգով այսպիսի կարգապահական վարույթի անցկացումը չի հակասում կոնվենցիային, պայմանով, որ առկա է սուբյեկտ հանդիսացող անձի համաձայնությունը: Տվյալ դեպքում, այնուամենայնիվ, դիմողներն ակնհայտորեն ցանկություն են հայտնել և պահանջել, որ տեղի ունենա դռնբաց վարույթ: Համաձայն 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ նրանց այսպիսի վարույթ ունենալու հնարավորության մերժումը թույլատրելի չի եղել, քանի որ երկրորդ նախադասությունում նշված հանգամանքներից և ոչ մեկը չի եղել:

60. Բելգիայի վճռաբեկ դատարանում սկսված վարույթի հրապարակային բնույթը չի կարող բավարար լինել այս կարգի թերության շտկման համար: Փաստորեն, վճռաբեկ դատարանը «գործերի հատկանիշներին ուշադրություն չի դարձնում» (թիվ 79 թագավորական որոշման 23-րդ հոդված և սահմանադրության 95-րդ հոդված): Սա նշանակում է, որ contestations-ներում (վեճերում) շոշափվող «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների» բազմաթիվ հարցեր դուրս են մնում նրա իրավասությունների շրջանակներից...
... Սույն գործում այս բնույթի հարցերի կապակցությամբ դռնբաց վարույթ տեղի չի ունեցել և կայացված որոշումը հրապարակայնորեն չի հայտարարվել, ինչպես պահանջվում է 6-րդ հոդվածի 1-ին կետով:

61. Ամփոփենք. դիմողի գործը (ֆրանսերեն՝ cause) հրապարակայնորեն չի լսվել գործի բոլոր կողմերի առումներով որոշման իրավասություն ունեցող դատարանի կողմից: Հետևաբար, այս առանձնահատուկ հանգամանքներում տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում...

Տասնվեց դատավոր համաձայնել է այս եզրակացությանը, իսկ չորսը՝ առարկել: Դատարանը ցանկացել է բացահայտել «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների» շուրջ ծագած contestation-ի (վեճի) առկայությունը, որի դեպքում որոշիչ նշանակություն ունեն այդ իրավունքների և պարտավորությունների առնչությամբ ազգային մակարդակով տեղի ունեցող վարույթները (ներառյալ դրանց վերաբերող դրույթների շրջանակը և առկայությունը): Այս գործի 11-րդ հոդվածին վերաբերող կողմերը քննարկված են ստորև՝ 787-րդ էջում:

10 *«Լուկշըն ընդդեմ Ավստրիայի» (Luksch v Austria)* գործում (2001 թ. դեկտեմբերի 13-ի վճիռ) մշտական գործող դատարանը միաձայն որոշել է, որ 6(1) հոդվածի՝ քաղաքացիական իրավունքներին վերաբերող բաժնի դրույթները տարածվել են դիմողի (նախկին հաշվապահի) դեմ Հաշվապահների պալատի սկսած կարգապահական վարույթի վրա, և այդ վարույթը, որը տևել է մոտ տասնմեկ ամիս, ընթացել է ողջամիտ ժամկետի երաշխիքի խախտմամբ:

11 *«Պերեն ընդդեմ Ֆրանսիայի» (Perez v France)* գործի վերաբերյալ 2004 թ. փետրվարի 12-ի վճռով մեծ պալատը միաձայն ընդունել է 6(1) հոդվածի վերլուծության նոր մոտեցում, որը կիրառվում է

մայրցամաքային երկրների արդարադատության համակարգում քրեական վարույթի զոհերի՝ որպես քաղաքացիական կողմի փոխհատուցման հայցերով սկսված վարույթների դեպքում: Դիմողը քրեական բողոք էր ներկայացրել տեղական ժանդարմական գրասենյակ, որում հայտնել էր, որ իր որդին և դուստրը իրեն հանգստացնող դեղամիջոց (վալիում) են ներարկել: Հետագա դատական քննության ժամանակ նա [այդ կինը] ներկայացրել է գործին որպես քաղաքացիական կողմ միանալու պահանջ: Հետաքննությունն անցկացնող դատավորը որոշել է, որ նրա բողոքի կապակցությամբ քրեական պատասխանատվության հարցեր չկան, քանի որ գոյություն չունեն հանցագործության կատարումը փաստող բավարար ապացույցներ: Առանց հաջողության հասնելու՝ դիմողը դատավորի որոշումը բողոքարկել է վճռաբեկ դատարանում: Դրանից հետո նա գանգատ է ներկայացրել Ստրասբուրգ՝ համարելով, որ վճռաբեկ դատարանի ընթացակարգը և վճիռն առաջացրել են 6(1) հոդվածի խախտում: Մեծ պալատը վճռել է, որ.

56. Դատարանը, այսպիսով, ցանկանում է վերջ դնել քաղաքացիական կողմի սկսած վարույթների նկատմամբ 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիությանն ուղեկցող անորոշությանը, մասնավորապես, ելնելով այն հանգամանքից, որ կոնվենցիայի մի շարք բարձր պայմանավորվող կողմեր ունեն նման համակարգեր:

iii. Նոր մոտեցում

57. Դատարանը նկատում է, որ թեպետ եզրակացրել է, որ «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների» հայեցակարգն անկախ է, այս համատեքստում նաև վճռել է, որ խնդրո առարկա պետության օրենսդրությունը նույնպես կարևոր նշանակություն ունի (տե՛ս *«Քյոնիգն ընդդեմ Գերմանիայի» (Konig v Germany)*, 1987 թ. հունիսի 28-ի վճիռը, շարք A, թիվ 27, էջ 30, պարբ. 89): Այն հարցը, թե արդյոք իրավունքը կոնվենցիայում գործածված հասկացության իմաստին համահո՞ւնչ քաղաքացիական իրավունք է, պետք է որոշվի ոչ միայն տվյալ պետության ազգային օրենքով հաստատված իրավական դասակարգման հիման վրա, այլև ելնելով [այդ իրավունքի] նյութական բովանդակությունից և ազդեցությունից: Բացի այդ, ունենալով վերահսկիչ գործառույթներ, դատարանը պետք է նաև հաշվի առնի կոնվենցիայի առարկան և նպատակը:

58. Դատարանը հարկ է համարում ուսումնասիրել Ֆրանսիայի քրեական դատարաններում քաղաքացիական կողմերի հայցերին վերաբերող ազգային օրենսդրությունը:

59. Ըստ Ֆրանսիայի օրենքի՝ հանցագործության զոհերը, առաջնորդվելով քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին կետով, քրեական գործից անկախ, կարող են ներկայացնել քաղաքացիական հայց: Նրանք կարող են նաև հետամուտ լինել դրան քրեական դատարաններում՝ քրեական հետապնդմանը զուգահեռ՝ համաձայն նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի: 3-րդ հոդվածի 2-րդ կետը նշում է, որ քաղաքացիական հայցն ընդունելի է վարույթում գտնվող քրեական հանցագործության առաջացրած ողջ վնասի համար:

60. Քրեական հանցագործության զոհին Ֆրանսիայի օրենքը հնարավորություն է տալիս ընտրություն կատարել քաղաքացիական և քրեական վարույթների միջև: Քաղաքացիական տարբերակի շրջանակներում այն փաստը, որ վնասը պատճառվել է քրեական հանցագործության հետևանքով, նշանակում է, որ քաղաքացիական ընթացակարգի կիրառությունը ենթակա է որոշակի կանոնների, այն է՝ ընտրության անփոփոխության սկզբունքին (քրեական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդված), համաձայն որի՝ «քաղաքացիական վարույթը պետք է մի կողմ դրվի մինչև քրեական վարույթի արդյունքի հայտնի դառնալը» և «քրեական գործով վերջնական վճիռը գերիշխում է քաղաքացիական հայցի նկատմամբ»:

61. Քրեական տարբերակը, որի հետ այս դեպքում դատարանը գործ ունի, տեղի է ունենում քաղաքացիական կողմի գանգատի միջոցով: Այդ գանգատը ենթակա է որոշակի պայմանների և հանգեցնում է որոշակի հետևանքների: Քաղաքացիական կողմի վարույթ սկսվում է կա՛մ «միջամտությամբ», երբ դատական կարգով հետապնդում սկսելուց հետո հետաքննող դատավորին կամ դատաքննությունն իրականացնող դատարանին ներկայացվում է վարույթին միանալու դիմում, կա՛մ «հրահրմամբ», երբ քաղաքացիական կողմը գանգատ կամ ուղղակի հայց է ներկայացնում դատաքննությունն իրականացնող դատարան: Թեպետ քաղաքացիական կողմի զոհը հանդիպում է որոշակի սահմանափակումների այնքանով, որքանով այլևս չի կարող ցուցմունք տալ և ենթակա է սանկցիայի իր անհաջողության կամ թույլ տված չարաշահման համար, քրեական վարույթում որպես կողմ հանդես գալու արտոնություն ունի, տեղեկացված է վարույթի քայլերից, կարող է ներկայացնել փաստաթղթերի պահանջ, գանգատ ներկայացնել և մանավանդ քրեական դատարաններից փոխհատուցում պահանջել իր կրած վնասի համար:

62. Նկատի ունենալով վերոհիշյալը՝ կասկած չի կարող լինել, որ Ֆրանսիայի օրենքի շրջանակներում քաղաքացիական կողմի վարույթը հանցագործության պատճառով առաջացած վնասի փոխհատուցման քաղաքացիական գործ է: Այս հանգամանքներում դատարանը որևէ պատճառ չի տեսնում, որպեսզի a priori քննարկի այն կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման նպատակներով:

Մեծ պալատը շարունակել է և որոշում կայացրել, որ ընդհանուր առմամբ, բացի այն դեպքերից, երբ դիմողը ձգտել է վարույթ սկսել «անձնական վրեժխնդրության» նպատակներով կամ որպես action popularis, քաղաքացիական կողմի վարույթը պետք է որակվի 6(1) հոդվածի «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների» շարքում: Այնուամենայնիվ, դիմողի դեպքում 6(1) հոդվածի պահանջների խախտում վճռաբեկ դատարանի կողմից տեղի չի ունեցել: Այս վճիռը ցույց է տալիս անդամ պետություններում քաղաքացիական իրավունքների և քրեական վարույթի բարդ խաչաձևումները:

12 *«Վոսն ընդդեմ Լեհաստանի» (Wos v Poland*) գործում (2006 թ. հունիսի 8-ի վճիռ) պալատը միաձայն վճռել է, որ նացիստական Գերմանիայում հարկադիր աշխատանքի ազգությամբ լեհ զոհերը, որոնք փորձել են փոխհատուցում ստանալ Լեհ-գերմանական հաշտեցման հիմնադրամից (հիմնվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Լեհաստանի միջև ստորագրված 1991 թ. համաձայնագրի արդյունքում), առաջնորդվել են իրենց քաղաքացիական իրավունքով: Քանի որ Լեհաստանի դատարանները մերժել են հիմնադրամի որոշումների վերանայումը (որի վճիռ կայացնող մարմինները չեն բավարարել 6(1) հոդվածի պահանջները), պալատը վճռել է, որ դիմողը զրկված է եղել դատարան մտնելու իրավունքից՝ ի խախտումն 6(1) հոդվածի:

Քրեական մեղադրանք

.....

«Էնգել ընդդեմ Նիդեռլանդների»
(Engel v The Netherlands A.22 (1976) 1 EHRR 647)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Հինգ դիմողները Նիդեռլանդների զինված ուժեր զորակոչված զինվորներ էին: Համաձայն 1903 թ. «Զինվորական կարգապահության մասին» օրենքի՝ նրանք ենթակա են եղել կարգապահական օրենքի դրույթների կատարման: Այդ օրենքը զինվորական քրեական օրենքի մաս չի կազմել: Երեք դիմողները մեղավոր են ճանաչվել կարգապահական օրենքի խախտման համար և համապատասխան ռազմական մարմինների կողմից պատժի ենթարկվել: Գերագույն ռազմական դատարանը պրն Էնգելին դատապարտել է երկու օրվա «խիստ ձերբակալության» (այսինքն՝ փակել է խցում)՝ նախկինում առանց թույլտվության բացակայելու պատճառով նշանակված նվազ խիստ պատիժներին չենթարկվելու համար: Պարոն վան դեր Վիելին գերագույն ռազմական դատարանը դատապարտել է «մեղմ ձերբակալության» (այսինքն՝ պահվել է զորանոցներում, սակայն ոչ ծառայողական ժամերին հնարավորություն է ունեցել ազատորեն տեղաշարժվելու դրա տարածքով և օգտվելու առկա հնարավորություններից, օրինակ՝ զորամասի կինոթատրոնից), քանի որ նա ծառայության էր ներկայացել չորս ժամ ուշացումով: Նույն դատարանը պրն դե Վիթին դատապարտել է տասներկու օրվա «խստացված բանտարկության» (այսինքն՝ ոչ ծառայողական ժամերին փակել է նրան զորանոցներում՝ հատուկ նախատեսված, սակայն չկողպված տեղում) կարգապահությանը չհետևելու համար, ներառյալ ռազմական «Զիփ» մեքենան անպատասխանատու կերպով վարելու համար: Պարոնայք Դոնան և Շուլը հանձնվել են կարգապահական գնդին, որը խիստ կարգապահական ռեժիմի առանձին զորամիավորում է եղել: Երեք ամիս շարունակ նրանք գիշերներն անցկացրել են փակ խցերում: Գերագույն ռազմական դատարանը նրանց այսպիսի պատիժ է նշանակել զորակոչված զինծառայողների ըն-

կերակցության անունից թերթ լույս ընծայելու համար՝ համարելով, որ դրանով նրանք թույլ են տվել զինվորական կարգապահության խախտում: Դիմողները բողոքել են հանձնաժողովին՝ պնդելով, որ գերագույն ռազմական դատարանում վարույթի ընթացքում խախտվել են կոնվենցիայով նախատեսված մի շարք հոդվածներ, այդ թվում նաև՝ 6-րդ հոդվածը: Տասը կողմ և մեկ դեմ ձայներով՝ հանձնաժողովը եզրակացրել է, որ 6-րդ հոդվածը կիրառելի չէ դիմողների նկատմամբ սկսված կարգապահական վարույթներից և ոչ մեկի դեպքում:

79... . Դատարանն առաջին հերթին քննելու է՝ սույն տեքստի առումով տվյալ վարույթը «քրեական մեղադրանքի» կապակցությամբ սկսված վարո՞ւյթ է եղել, թե՞ ոչ: Չնայած Նիդեռլանդների օրենքի համաձայն՝ այն եղել է կարգապահական վարույթ, հետապնդել է տույժերի միջոցով դիմողների կատարած հանցավոր արարքները զսպելու նպատակ, ինչը համապատասխանում է քրեական օրենքի ընդհանուր նպատակին:

1. 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Ա) «ՔՐԵԱԿԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ» ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

80. Բոլոր պայմանավորվող պետություններն ունեն կարգապահական և քրեական վարույթների տարբերակման երկարաժամկետ փորձ, թեպետ նրանց տարբերակման աստիճանը և ձևերը կարող են տարբեր լինել: Ընդհանուր առմամբ, պատժի ենթակա անձանց տեսանկյունից սրանցից առաջինն ունի զգալի առավելություններ երկրորդի նկատմամբ: Կարգապահական պատիժները, ընդհանուր առմամբ, նվազ խիստ են և չեն գրանցվում անձի դատվածության պատմության մեջ, ինչով և ունեն ավելի սահմանափակ հետևանքներ: Կարող է, այնուամենայնիվ, հակառակը լինել, եթե հաշվի առնենք հատկապես այն հանգամանքը, որ քրեական վարույթները, որպես կանոն, ուղեկցվում են ավելի լիարժեք երաշխիքներով:

Այսպիսով, հարց է առաջանում՝ ներպետական մակարդակով ընդունված լուծումը կոնվենցիայի առումով որոշի՞չ է, թե՞ ոչ: Արդյո՞ք 6-րդ հոդվածը դադարում է կիրառելի լինելուց միայն այն պատճառով, որ անդամ պետության իրավասու մարմինները արարքին կամ թերացմանը և դրանք կատարած անձի դեմ սկսված վարույթին տալիս են կարգապահական բնորոշում: Կամ՝ արդյոք, դրան հակառակ, անկախ այս բնորոշումից, որոշ հանգամանքներում այն կիրառելի՞ է: Իրավամբ, այս խնդիրը բարձրացվել է հանձնաժողովի կողմից, և կառավարությունն ընդունել է դրա կարևորությունը: Նման բան, մասնավորապես, առաջանում է, երբ պատասխանող պետության ազգային օրենքի շրջանակներում արարքը կամ թերացումը համարվում են քրեական և կարգապահական բնույթի խառը իրավախախտում, և երբ հնարավորություն կա ընտրություն կատարելու դրանց միջև, կամ նույնիսկ՝ համատեղել քրեական վարույթը և կարգապահական վարույթը:

81. Դատարանն ուշադրություն է դարձրել «քրեական մեղադրանքի» հայեցակարգի «անկախության» վերաբերյալ դիմողների, կառավարության և հանձնաժողովի համապատասխան բացատրություններին...

1968 թ. հունիսի 27-ի *Նյումեյստերի* (*Neumeister*) վճռի միջոցով դատարանն արդեն որոշել էր, որ «մեղադրանք» բառը պետք է հասկացվի «կոնվենցիայի իմաստին համահունչ» (շարք A, թիվ 8, էջ 41, պարբ. 18 ...)...

«Քրեական» հասկացության «անկախության» հարցը չի պահանջում ճիշտ նույն պատասխանը:

Կոնվենցիան, անկասկած, թույլ է տալիս պետություններին՝ որպես հանրային շահի պահապանների, իրենց գործառույթն իրականացնելու ժամանակ պահպանել քրեական և կարգապահական օրենքների տարբերակումը կամ տարբերակում մտցնել և բաժանարար գիծ անցկացնել դրանց միջև, սակայն որոշակի պայմանների առկայության դեպքում: Կոնվենցիայի շրջանակներում պետություններն օժտված են որևէ արարք կամ բացթողում որպես քրեական իրավախախտում որակելու լիազորությամբ, եթե այդ արարքը կամ բացթողումը իր կողմից պաշտպանվող որևէ իրավունքի նորմալ կատարում չէ: Սա հատկապես հստակ երևում է 7-րդ հոդվածից: Այսպիսի ընտրությունը, որը կիրառելի է դարձնում 6-րդ և 7-րդ հոդվածները, սկզբունքորեն դուրս է մնում դատարանի վերահսկողությունից:

Հակառակ ընտրությունը, իր հերթին, ենթակա է ավելի խիստ կանոնների: Եթե պայմանագրի անդամ պետությունները կարողանային իրենց հայեցողությամբ հանցագործությունը դասակարգել որպես կարգապահական, այլ ոչ թե քրեական, կամ քրեորեն հետապնդել «խառն» արարք կատարած անձին կարգապահական, այլ ոչ թե քրեական հիմքերով, ապա 6-րդ և 7-րդ հոդվածները կենթարկվեին նրանց ինքնիշխան կամքին: Այս հեռանկարը կարող է հանգեցնել կոնվենցիայի նպատակի և առարկայի հետ անհամատեղելի արդյունքների: Դատարանը, հետևաբար, իրավասություն ունի 6-րդ հոդվածի շրջանակներում և նույնիսկ, առանց 17-րդ և 18-րդ հոդվածների վկայակոչման, համոզվելու, որ կարգապահականն անհարկի չի ներխուժում քրեական ոլորտ:

Կարճ ասած՝ «քրեական» հասկացության «անկախությունը» գործում է, ինչպես և գործել է, միայն մեկ ուղղությամբ:

82. Հետևաբար, սահմանափակվելով զինվորական ծառայության ոլորտով, դատարանը պետք է սահմանի, թե ինչպես է որոշելու՝ տվյալ մեղադրանքը, որին, ինչպես այս դեպքում, պետությունը տվել է «կարգապահական» բնորոշում, 6-րդ հոդվածի շրջանակներում, այնուամենայնիվ, «քրեակա՞ն» է համարվում, թե՞ ոչ:

Այս կապակցությամբ նախ անհրաժեշտ է իմանալ, թե համաձայն պատասխանող պետության իրավական համակարգի, հարուցված մեղադրանքը պատկանում է քրեակա՞ն օրենքին, կարգապահակա՞ն օրենքին, թե՞ երկուսին միասին: Սա, այնուամենայնիվ, բավարար է միայն սկզբի համար: Այդ բնորոշումներն ունեն զուտ պաշտոնական և հարաբերական արժեք և պետք է քննության առնվեն՝ հաշվի առնելով տարբեր պայմանավորվող պետությունների համապատասխան օրենսդրությունների ընդհանուր առանձնահատկությունները:

Հանցագործության զուտ բնույթն ավելի մեծ կարևորություն ունեցող գործոն է: Երբ զինծառայողը հայտնվում է այնպիսի իրավիճակում, որ նրան մեղադրում են քրեական արարքի կամ թերացման համար, որը ենթադրաբար հակասում է զինված ուժերի վրա տարածվող օրենսդրական կանոններին, պետությունը սկզբունքորեն կարող է գործել նրա դեմ ավելի շուտ կարգապահական, քան քրեական օրենքի շրջանակներում: Այս առումով դատարանն իր համաձայնությունն է հայտնում կառավարության դիրքորոշմանը:

Այնուամենայնիվ, դատարանի վերահսկողությունն այս դեպքում չի դադարում: Այսպիսի վերահսկողությունը, ընդհանուր առմամբ, կարող է լինել խաբուսիկ, եթե նաև հաշվի չի առնում պատժի խստության աստիճանը, որը կրելու ռիսկին է ենթարկվում տվյալ անձը: Օրենքի գերակայությամբ առաջնորդվող հասարակությունում ազատազրկմամբ նշանակվող պատիժը վերագրվում է «քրեական» ոլորտին, բացառությամբ այն պատիժների, որոնք բնույթով, տևողությամբ կամ իրականացման ձևով չեն կարող զգալի վնաս պատճառել: Խնդրո առարկայի լրջությունը, պայմանավորվող պետությունների ավանդույթները և այն կարևորությունը, որը կոնվենցիան վերագրում է անձի ֆիզիկական ազատությանը, պահանջում են, որ դա այդպես լինի (տե՛ս mutatis mutandis *Դե Վիլդի, Օոմսի և Վերսիփի* (*De Wilde, Ooms and Versyp*)1971 թ. հունիսի 18-ի վճիռը, շարք A, թիվ 12, էջ 36, վերջին ենթապարբերությունը և էջ 42 վերջը):

83. Այս չափանիշների հիման վրա է, որ դատարանը որոշում է, թե արդյոք այս դիմողների որոշ մասի կամ բոլորի նկատմամբ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով առաջադրվե՞լ է «քրեական մեղադրանք»:

Այս դեպքում մեղադրանքը, որը կարող է համապատասխանել սրան, շարադրված է եղել հրամանատար սպայի որոշման մեջ, ինչպես որ այն հաստատվել է կամ մեղմացվել բողոքն ընդունող սպայի կողմից: Անշուշտ, այս որոշումը մեկընդմիշտ և բոլորի համար լուծել է խնդիրը, քանի որ վճիռ կայացնող տրիբունալը՝ գերագույն ռազմական դատարանը, չի ունեցել ավելի խիստ տույժ նշանակելու իրավասություն...

84. Նիդեռլանդների օրենսդրության շրջանակներում պրն Էնգելի, պրն վան դեր Վիելի, պրն դե Վիթի, պրն Դոնայի և պրն Շուլի կատարած իրավախախտումները համապատասխանել են կարգապահական օրենքի դրույթներին (1903 թ. օրենք և Զինվորական կարգապահության կանոնակարգեր), թեպետ այն իրավախախտումները, որոնց համար պատասխան պետք է տային պրն Դոնան և պրն Շուլը (ռազմական քրեական օրենսգրքի 147-րդ հոդված) և միգուցե նաև պրն Էնգելը և պրն դե Վիթը (ըստ պրն վան դեր Շանսի՝ նույն օրենսգրքի 96-րդ և 114-րդ հոդվածներ, 1975 թ. հոկտեմբերի 28-ի դատական նիստ) հարմար էին քրեական վարույթի համար: Բացի այդ, ռազմական մարմինների կարծիքով, բոլոր իրավախախտումները հավասար են եղել նաև Նիդեռլանդների զինված ուժերի գործունեության վրա տարածվող օրենսդրական դրույթների խախտումների: Այս տեսանկյունից կարգապահական վարույթի ընտրությունը եղել է արդարացված:

85. Առավելագույն պատիժը, որ գերագույն ռազմական դատարանը կարող էր նշանակել, պրն վան դեր Վիելի դեպքում եղել է չորս օրվա թեթև ձերբակալություն, պրն Էնգելի դեպքում՝ երկու օրվա խիստ ձերբակալություն (երրորդ պատիժը) և պրն դե Վիթի, պրն Դոնայի և պրն Շուլի դեպքում՝ երեք-չորս ամիս ժամկետով հանձնում կարգապահական զորամասին:

Պարոն վան դեր Վիելը, հետևաբար, ենթակա է եղել միայն թեթև պատժի, որն ազատազրկում չի առաջացնում...

Իր հերթին, պրն Էնգելին տեսականորեն սպառնացող ազատազրկման պատիժն ունեցել է չափից ավելի կարճ ժամկետ, որպեսզի մտներ «քրեական» իրավունքի ոլորտ: Բացի այդ, իր կողմից գերագույն ռազմական դատարանում սկսած վարույթի ավարտման պահին՝ 1971 թ. ապրիլի 7-ին, նա այդ պատիժը կրելու ռիսկին չէր ենթարկվում, քանի որ արդեն կրել էր այն մարտի 20-22-ն ընկած ժամանակահատվածում...

Մյուս կողմից՝ պրն դե Վիթի, պրն Դոնայի և պրն Շուլի «մեղադրանքներն» իրոք մտել են «քրեական» ոլորտ, քանի որ հետամուտ են եղել նրանց նկատմամբ ազատազրկում ներառող լուրջ պատժի կիրառմանը... Անկասկած, գերագույն ռազմական դատարանը դատապարտել է պրն դե Վիթին ընդամենը տասներկու օրվա խստացված ձերբակալության, այսինքն՝ նշանակել է պատիժ, որն ազատազրկում չի ներառել, ... սակայն բողոքի վերջնական արդյունքը չի կարող նսեմացնել ամենասկզբում կշեռքի նժարին դրված հարցի կարևորությունը:

Կոնվենցիան, անշուշտ, չի ստիպել, որ իրավասու մարմինները ռազմական քրեական օրենսգրքի հիման վրա ռազմական դատարանում քրեորեն հետապնդեն պրն դե Վիթին, պրն Դոնային և պրն Շուլին, ... լուծում, որը կարող էր նվազ բարենպաստ համարվել դիմողների կողմից: Այնուամենայնիվ, համաձայն կոնվենցիայի, իշխանություններն պարտավոր էին տրամադրել 6-րդ հոդվածի երաշխիքները:

...

88. Կարճ ասած՝ դատարանը պարտավոր է 6-րդ հոդվածի շրջանակներում քննության առնել պրն դե Վիթի, պրն Դոնայի և պրն Շուլի նկատմամբ դրսևորած վերաբերմունքը, սակայն ոչ պրն Էնգելի, պրն վան դեր Վիելի կողմից բողոքարկվող վերաբերմունքը:

2. 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

89. Գերագույն ռազմական դատարանը, որի առջև հանդես են եկել պրն դե Վիթը, պրն Դոնաև և պրն Շուլը, «օրենքով ստեղծված անկախ և անկողմնակալ տրիբունալ» է... և չկա որևէ բան, որը կմատնանշեր, որ այն չի ապահովել նրանց «արդար դատաքննության» իրականացումը: Իր հերթին, «մեղադրանքի» և վերջնական որոշման միջև անցած «ժամանակը» թողնում է «ողջամիտ» տպավորություն: Պրն Դոնայի և պրն Շուլի դեպքում այն չի կազմել վեց շաբաթ (1971 թ. հոկտեմբերի 8-ից մինչև նոյեմբերի 17-ը), իսկ պրն դե Վիթի դեպքում՝ չի գերազանցել երկու ամսվա ժամանակահատվածը (1971 թ. փետրվարի 22-ից ապրիլի 28-ը): Բացի այդ, վճիռը «հայտարարվել է հրապարակայնորեն»:

Սրան հակառակ, համաձայն կարգապահական գործերի նկատմամբ գերագույն ռազմական դատարանի հաստատված գործելակերպի, կողմերի մասնակցությամբ դատական նիստերն անցկացվել են դռնփակ... Իրականում, չի ստեղծվում այնպիսի տպավորություն, որ սրա արդյունքում դիմողները տուժել են: Իրոք, նշված դատարանը մեղմացրել է երկու հոգու՝ պրն Շուլի և ավելի մեծ չափով՝ պրն դե Վիթի պատժի ժամկետները: Այնուամենայնիվ, 6-րդ հոդվածի 1-ին կետն ընդհանուր առմամբ պահանջում է, որ իր շրջանակների մեջ մտնող դատավարությունները լինեն դռնբաց: 6-րդ հոդվածը, իհարկե, նախատեսում է բացառություններ: Այս բացառությունները թվարկված են, սակայն կառավարությունը չի անդրադարձել դրանց, ինչպես նաև գործից չի երևում, որ դրա հանգամանքները համապատասխանել են այն իրավիճակներից մեկին, որոնց առկայության դեպքում հոդվածը թույլ է տալիս «հեռացնել մամուլին և հանրությանը»: Հետևաբար, այս առանձին կետի առնչությամբ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

... Տասնմեկ կողմ և երկու դեմ ձայներով վճռում է, որ «քրեական մեղադրանքի» հիմքով 6-րդ հոդվածը պրն Էնգելի նկատմամբ կիրառելի չի եղել:

Միաձայն վճռում է, որ այն կիրառելի չի եղել նաև պրն վան դեր Վիելի նկատմամբ:

Տասնմեկ կողմ և երկու դեմ ձայներով վճռում է, որ պրն դե Վիթի, պրն Դոնայի և պրն Շուլի դեպքում տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, քանի որ գերագույն ռազմական դատարանում նիստերը եղել են դռնփակ...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են նախագահ Մոզլերը և դատավորներ Վերդրոսը, Վիարդան, Վիլջաուլմսոնը, Պետրենը, Բոզերը, Գանսհոֆ վան դեր Մերշը, Բինդշեդլեր Ռոբերտը և Էվրիգենիսը: Դատավորներ Օ'Դոնոգին և Պեդերսենը հայտնել են առանձին կարծիք, ըստ որի՝ բոլոր դիմողների դեմ սկսված վարույթները «գերակշիռ մասով» եղել են կարգապահական խախտումներին վերաբերող վարույթներ և, հետևաբար, դուրս են մնում 6-րդ հոդվածի քրեական մեղադրանքների շրջանակից: Դատավորներ Զեքիան և Կրեմոնան նույնպես հայտնել են առանձին կարծիք՝ հայտարարելով, որ 6(1) հոդվածը կիրառելի է բոլոր այն վարույթների նկատմամբ, որոնցում զինվորները մեղադրվում են այնպիսի զանցանք կատարելու մեջ, որի համար նախատեսվում է ազատազրկման (նույնիսկ կարճաժամկետ) պատիժ:

2 *Էնգելի* (*Engel*) գործով դատարանի վճիռը մեծ նշանակություն ունի, քանի որ հաստատել է կոնվենցիայի «քրեական» հասկացության անկախ բնույթը: Ինչպես դատարանը բացատրել է 81-րդ պարբերությունում, այն հանգամանքը, որ ազգային օրենքի շրջանակներում առաջադրված մեղադրանքը քրեական չէ, ինքնին 6-րդ հոդվածի կիրառության առնչությամբ վճռորոշ չէ Ստրասբուրգի հսկիչ համակարգի համար: Այս դեպքերում դատարանը կատարելու է իր գնահատումը, որպեսզի որոշում կայացնի, թե արդյոք ազգային վարույթը պե՞տք է դասակարգվի որպես քրեական վարույթ, թե՞ ոչ: Սրա վերաբերյալ որոշում կայացնելու համար դատարանն ուշադրություն է դարձնելու վերոհիշյալ վճռի 82-րդ պարբերությունում նշված երեք չափանիշների: Սրանցից առաջինը վերաբերում է համապատասխան իրավախախտումն ընդգրկող ազգային օրենքի բնույթին և համանման իրավախախտումներին մյուս անդամ պետությունների իրավական համակարգերի տված

բնորոշումներին: Երկրորդը վերաբերում է իրավախախտմամբ պայմանավորված արգելված վարվելակարգին: Եվ վերջին չափանիշը վերաբերում է իրավախախտման նկատմամբ կիրառելի պատժի խստությանը (եթե դատարանը որոշում է, որ իրավախախտումը քրեական բնորոշում ունի, ապա հնարավոր է, որ ազատազրկման պատիժը գերազանցի ազատության նվազագույն կորստի սահմանը): Հաշվի առնելով այս չափանիշները և, հատկապես, վերջին չափանիշը, արդյոք համաձա՞յն եք մեծամասնության որոշմանը, որ *Էնգելի* դեմ հարուցված վարույթը չի ներառել քրեական մեղադրանք: *Էնգելի* գործի 10-րդ հոդվածի հայեցակետերը քննարկված են ստորև՝ 744-րդ էջում:

3 Հետագա գործերում դատարանը կիրառել է *Էնգելի* չափանիշները, որպեսզի որոշի, թե արդյոք տվյալ ազգային վարույթը մտնո՞ւմ է 6-րդ հոդվածի «քրեական» կարգի մեջ: *«Օզթուրքն ընդդեմ Գերմանիայի»* (*Öztürk v Germany*, A.73 (1984) 6 EHRR 409) գործում դատարանը կատարել է Գերմանիայի ճանապարհային երթևեկության փոքր իրավախախտումների ապաքրեականացման ծրագրի գնահատում, որի ժամանակ ավելի մեծ նշանակություն է տվել երկրորդ չափանիշին, քան առաջինին: Դիմողը Թուրքիայի քաղաքացի էր, որն ապրում և աշխատում էր Գերմանիայում: Իր մեքենան վարելու ժամանակ նա հարվածել է մեկ այլ մեքենայի՝ պատճառելով 5000 գերմանական մարկի վնաս: Մյուս մեքենայի տերը զանգահարել է ոստիկանություն, և նրանք միջադեպի մասին զեկույց են ուղարկել Հեյլբրոննի տեղական կառավարման մարմին: Երկու ամիս անց՝ 1978 թ. ապրիլին, համաձայն 1968/1975 թթ. «Կարգավորվող իրավախախտումների մասին» օրենքի, վարչական մարմինները դիմողին նշանակել են 60 գերմանական մարկի տուգանք մեքենան անփույթ վարելու համար: Փաստաբանի միջոցով դիմողն առարկություն է ներկայացրել իր նկատմամբ վարչական մարմնի կայացրած որոշման դեմ: 1978 թ. օգոստոսին Հեյլբրոննի շրջանային դատարանը թարգմանչի օգնությամբ ունկնդրել է դիմողին: Դատարանն ունկնդրել է նաև գործով հանդես եկող երեք վկաներին: Դրանից հետո դիմողը հետ է վերցրել իր առարկությունը: Շրջանային դատարանը կարգադրել է դատական ծախսերը (185 գերմանական մարկ, որից 64-ը՝ թարգմանչի հոնորարը) վճարել դիմողի միջոցների հաշվին: Հիմք ընդունելով կոնվենցիայի 6(3)(ե) հոդվածը՝ դիմողն առարկել է թարգմանչի հոնորարն անձամբ վճարելու պարտավորության դեմ: Նրա բողոքը, այնուամենայնիվ, մերժվել է: Դատական ծախսերը, ներառյալ թարգմանչի հոնորարը, վճարել է դիմողի ապահովագրական ընկերությունը: Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ թարգմանչի հոնորարը վճարելու կարգադրությունը խախտել է քրեական վարույթի ժամանակ անվճար թարգմանությունից օգտվելու իր իրավունքը՝ երաշխավորված 6-րդ հոդվածով: Հանձնաժողովի մեծամասնությունը՝ ութ կողմ և հինգ դեմ ձայներով, որոշել է, որ տեղի է ունեցել (3)(ե) ենթապարբերության խախտում: Դատարանում կառավարությունը վիճարկել է, որ պարոն Օզթուրքի նկատմամբ 6-րդ հոդվածը կիրառելի չէ, քանի որ նրա դեմ չի հարուցվել քրեական մեղադրանք: Ճանապարհային երթևեկության փոքր իրավախախտումների ապաքրեականացման արդյունքում նրա կատարած իրավախախտումը եղել է «կանոնակարգային իրավախախտում» [կանոնակարգող մարմինների իրավասության մեջ մտնող իրավախախտում], որի նկատմամբ կիրառվում են այլ ընթացակարգեր, և որը քրեական բնույթի իրավախախտումներից տարբեր հետևանքներ ունի:

48. Դատարանը հանդիպել է համանման խնդրի *Էնգելի* և մյուսների գործում, որը որպես փաստարկ վկայակոչվել է ներկայացուցիչների կողմից: Ինչպես հայտնի է, այդ գործի փաստերը վերաբերել են բանակ զորակոչված զինվորներին նշանակված տույժերին, որոնք, համաձայն Նիդեռլանդների օրենքի, համարվել են կարգապահական տույժեր: Այդ գործի վերաբերյալ 1976 թ. հունիսի 8-ի վճռում դատարանը դրսևորել է զգուշավորություն և հայտարարել, որ իր ուշադրությունն ուղղված է եղել միայն զինվորական ծառայության ոլորտին (շարք A, թիվ 22, էջ 34, պարբ. 82): Այնուամենայնիվ, դատարանը համարում է, որ այդ վճռում նշված սկզբունքները (նույնը, պարբ. 80-2) mutatis mutandis վերաբերում են նաև սույն գործին:

49. Կոնվենցիան դեմ չէ, որ ի կատարումն հանրային շահի պաշտպանության իրենց խնդրի, պետությունները, համաձայն իրենց ազգային օրենքների նպատակների, սահմանեն և կիրառեն իրավախախտման տարբեր կատեգորիաներ և գծեն դրանց միջով անցնող բաժանարար գիծը: Սակայն սրանից չի հետևում, որ պետությունների արած դասակարգումը կոնվենցիայի նպատակների համար որոշիչ նշանակություն ունի:

Վարքագծի որոշ ձևեր ազգային օրենքով սահմանված քրեական հանցագործությունների կատեգորիայից հանելով՝ օրինաստեղծ մարմինը կարող է ծառայել անհատի շահերին (տե՛ս mutatis mutandis վերը նշված *Էնգելի և այլոց* գործով վճիռը, նույն տեղում, էջ 33, պարբ. 80) և պատշաճ մակարդակով ապահովել արդարադատության իրականացման կարիքները, մասնավորապես, այնքանով, որքանով այն ազատում է դատական մարմիններին ճանապարհային երթևեկության կանոնների մեծաքանակ, սակայն փոքր իրավախախտումները քրեորեն հետապնդելու և պատժելու խնդրից: Կոնվենցիան չի հակադրվում Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում խիստ տարբեր ձևերով տեղի ունեցող «ապաքրեականացման» գործողություններին: Կառավարության դիտողությունն այս կետի առնչությամբ շատ ճիշտ է: Այնուամենայնիվ, եթե պայմանավորվող պետությունները կարողանային իրենց հայեցողությամբ իրավախախտումը որակել որպես «կանոնակարգային», ոչ թե քրեական իրավախախտում՝ բացառելով 6-րդ և 7-րդ հոդվածների կիրառությունը, ապա կստացվեր, որ այս դրույթների կիրառությունը ենթակա կլիներ նրանց ինքնիշխան կամքին: Այսքան հեռու գնացող հայեցողությունը կարող է հանգեցնել կոնվենցիայի հետ անհամատեղելի արդյունքների:

50. Այսպիսով, վերահաստատելով «քրեական» հասկացության «անկախությունը», ինչպես այն ընկալվում է 6-րդ հոդվածով, դատարանը պետք է որոշի՝ արդյոք դիմողի կատարած «կանոնակարգային իրավախախտումն» այդ հոդվածի իմաստով եղե՞լ է «քրեական» իրավախախտում: Այս նպատակով դատարանը հիմնվելու է վերը նշված *Էնգելի և այլոց* վճռում որդեգրած չափանիշների վրա (նույն տեղում, էջ 34–5, պարբ. 82): Հաշվի առնելով 6-րդ հոդվածի առարկան և նպատակը, այդ հոդվածի հասկացությունների սովորական իմաստը և պայմանավորվող պետությունների օրենքները՝ նախ պետք է ճշտել՝ արդյոք իրավախախտումը սահմանող տեքստը, համաձայն պատասխանող պետության իրավական համակարգի, սկզբունքորեն պատկանո՞ւմ է քրեական իրավունքի ճյուղին, այնուհետև անհրաժեշտ է քննել իրավախախտման բնույթը և, վերջապես, տույժի խստության աստիճանը, որը կրելու ռիսկին ենթարկվում էր իրավախախտում կատարած անձը:

51. Գերմանիայի օրենքով պրն Օզթուրքին ներկայացված «Ճանապարհային երթևեկության կանոնակարգի» 1-ին կանոնի 2-րդ կետի խախտման փաստերն առաջացրել են «կանոնակարգային իրավախախտում» (նույն կանոնակարգի 49-րդ կանոն, կետ 1, թիվ 1): Դրանց վրա տարածվել է ոչ թե քրեական օրենքը, այլ Ordnungswidrigkeitengesetz-ի 17-րդ բաժնի և «Ճանապարհային երթևեկության մասին» օրենքի 24-րդ բաժնի 2-րդ կետը... Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում փոքր իրավախախտումների «ապաքրեականացման» գործընթացում 1968/1975 թթ. օրենսդրությունը կարևոր քայլ է նշանավորել: Թեպետ չի թվում, որ Գերմանիայում օրենսդրության մեկնաբանները համակարծիք են, որ «կանոնակարգային իրավախախտումներն» իրականում այլևս չեն մտնում քրեական օրենքի մեջ, 1968/1975 թթ. օրենքի պատմությունը, այնուամենայնիվ, հստակ ցույց է տալիս, որ այդ օրենքի միջոցով խնդրո առարկա հանցագործությունները հանվել են քրեական օրենքից (տե՛ս Deutscher Bundestag, Drucksache V/1269 և, ի թիվս այլոց, սահմանադրական դատարանի 1969 թ. հուլիսի 16-ի վճիռը, Entscheidungen des Bundesverfassungsgerichts, հտ. 27, էջ 18-36):

Թեև դատարանն այսպիսով ընդունում է կառավարության փաստարկներն այս կետի վերաբերյալ, իր տեսադաշտից չի կորցնում այն փաստը, որ որևէ բացարձակ բաժանում Գերմանիայի քրեական օրենքի և «կանոնակարգային իրավախախտումների» միջև գոյություն չունի, մասնավորապես այն դեպքերում, երբ քրեական հանցագործության և «կանոնակարգային իրավախախտումների» միջև սերտ կապ կա... Ոչ էլ դատարանն է անտեսում, որ քրեական վարույթի վրա տարածվող սովորական օրենքի դրույթները համանմանության սկզբունքով տարածվում են նաև «կանոնակարգային իրավախախտումներին» վերաբերող վարույթների, ... հատկապես այդ վարույթների դատական փուլերի վրա:

52. Ամեն դեպքում, պատասխանող պետության ազգային օրենքով տրված բնորոշումները զուտ հարաբերական արժեք ունեն: Վերը նշված երկրորդ չափանիշը՝ իրավախախտման բուն էությունը, որը դիտարկվում է նաև համապատասխան պատժի ձևի համատեքստում, գնահատման ավելի ծանրակշիռ գործոն է:

Հանձնաժողովի (բացի նրա հինգ անդամներից) և պրն Օզթուրքի կարծիքով՝ նրա կատարած իրավախախտումն իր բնույթով եղել է քրեական:

Ընդհակառակը, կառավարության կարծիքով, խնդրո առարկա իրավախախտումն անկասկած քիչ կարևորություն ունեցող իրավախախտում է (Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում տարեկան արձանագրվում է մոտ հինգ միլիոն այդպիսի դեպք), որն այսպիսով մտնում է քրեական հանցագործություններից միանգամայն տարբեր կարգի մեջ: Կառավարության բացատրությունները կարող են ամփոփվել հետևյալ կերպ: Քրեական օրենքի միջոցով հասարակությունը ձգտում է պաշտպանել իր բուն հիմքերը, ինչպես նաև համայնքի համար էական նշանակություն ունեցող իրավունքները և շահերը: Ordnungswidrigkeiten-ի օրենքը, մյուս կողմից, ձգտում է ամենից առավել պահպանել հասարակական կարգը: Որպես ընդհանուր կանոն, այդ թվում նաև տվյալ դեպքում, «կանոնակարգային իրավախախտումը» չի առաջացրել բարոյական արժեզրկման այնպիսի աստիճան, որն այդ արարքը կատարողին արժանի է դարձնում նրան քննադատող բարոյական արժեքային վճռի (Unwerturteil), ինչը բնորոշ է քրեական պատժին (Strafe): «Կանոնակարգային իրավախախտումների» և քրեական իրավախախտումների տարբերությունն արտահայտվում է ինչպես ընթացակարգերով, այնպես էլ դրանք ուղեկցող պատժով և այլ իրավական հետևանքներով:

Շարունակելով իր փաստարկը՝ կառավարությունն առաջին հերթին նշել է, որ «կանոնակարգային իրավախախտումները» Գերմանիայի օրենսդրության քրեական օրենքից հանելով՝ ներդրվել է վարչական մարմինների կողմից

քրեական հետապնդման և պատժի պարզեցված ընթացակարգ, բացառությամբ այն դեպքերի, երբ հետագայում բողոք է ներկայացվում դատարան: Թեպետ համաձայնության սկզբունքով քրեական դատավարության վրա տարածվող ընդհանուր օրենքները սկզբունքորեն կիրառելի են եղել, 1968/1975 թթ. օրենքով սահմանված ընթացակարգը շատ առումներով տարբերվել է քրեական դատավարության ընթացակարգերից: Օրինակ՝ Ordnungswidrigkeiten-ի հետապնդումը մտել է իրավասու մարմինների հայեցողական լիազորությունների մեջ: Միաժամանակ 1968/1975 թթ. օրենքը զգալիորեն նեղացրել է նախնական հետաքննության փուլում անձի ազատությունը սահմանափակելու հնարավորությունները ...

Երկրորդ՝ պատժիչ տուգանքը (Geldstrafe) և բանտարկությունը օրենսդիրը փոխարինել է զուտ «կանոնակարգային» տուգանքով (Geldbusse ...): Վերջինիս դեպքում, ինչպես առաջինի դեպքում, որպես պատժի այլընտրանքային ձև (Ersatzfreiheitsstrafe) բանտարկություն չի կարող նշանակվել, և անձը ենթակա չէ հարկադիր բանտարկության (Erzwingungshaft)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ իրեն նշանակված տուգանքը չվճարելու դեպքում նա չի հիմնավորում, որ անկարող է եղել վճարել այն... Բացի այդ, «կանոնակարգային իրավախախտումը» դատարանի քրեական արձանագրություններում չի գրանցվում, այլ բացառապես և միայն որոշ հանգամանքներում՝ ճանապարհային երթևեկության կենտրոնական գրանցամատյանում...

Կառավարությունը եզրակացրել է, որ 1968/1975 թթ. իրականացված բարեփոխումներն արտացոլել են ոչ միայն թեթև իրավախախտումները ի շահ անձի «ապաքրեականացնելու» գաղափարը (իրավախախտումներ, որոնք կատարելու դեպքում անձն այլևս քրեական պատասխանատվության ենթակա չէ և կարող է խուսափել դատական վարույթներից), այլև դատարանների արդյունավետ գործունեության գաղափարը, քանի որ սույնով դատարանները սկզբունքորեն ազատվել են նման բազում իրավախախտումներով զբաղվելու խնդրից:

53. Դատարանը չի թերագնահատում այս փաստարկի հիմնավորվածությունը: Դատարանն ընդունում է, որ խնդրո առարկա օրենսդրությունը Գերմանիայի քրեական օրենքի բարեփոխման պատմության մեջ նշանավորել է կարևոր փուլ, և 1968/1975 թթ. նորարարություններն ավելին են, քան սոսկ եզրույթների փոփոխությունը:

Այնուամենայնիվ, դատարանն առաջին հերթին պետք է նկատի, որ դատելով բառերի սովորական իմաստից, դրանք, ընդհանուր առմամբ, քրեական իրավախախտումներ են, և դրանք գործած անձը ենթարկվում է տուգանքների, որոնք, ի թիվս այլոց, ունեն կանխարգելիչ բնույթ և բաղկացած են տուգանային վճարներից ու անձին իր ազատությունից զրկելու միջոցառումներից:

Բացի այդ, անդամ պետությունների մեծամասնությունում սույն Օգթուրքի կատարած իրավախախտումը շարունակում է դեռևս դասակարգվել քրեական օրենքի շրջանակներում, ինչպես արվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում մինչև 1968/1975 թթ. օրենսդրության ուժի մեջ մտնելը: Այսպիսի ոչ ճիշտ վարքագիծը, այդ պետություններում համարվելով հակաօրինական և պախարակելի, պատժվում է քրեական տուգանքներով:

Բացի այդ, 1968/1975 թթ. օրենսդրությամբ պայմանավորված փոփոխությունները սկզբունքորեն ընդգրկում են ընթացակարգային հարցեր և պատժամիջոցներ, հետևաբար, սահմանափակված են Geldbussen-ով: Թեև այս վերջին տույժը, կարծես թե, որոշ առումներով նվազ խիստ է, քան Geldstrafen-ը, այն, այնուամենայնիվ, պահպանել է իր պատժիչ բնորոշումը, ինչը քրեական պատիժների առանձնահատկությունն է: Դիմողի խախտած օրենքի գերակայությունը, իր հերթին, բովանդակային փոփոխության չի ենթարկվել: Դա կանոն է, որը կարգապահական օրենքի միջոցով ընդգրկում է որպես ճանապարհային օգտագործողներ հանդես եկող բոլոր քաղաքացիներին, ոչ թե առանձին կարգավիճակ ունեցող ինչ-որ մի խմբի: Այն թույլատրում է որոշ վարքագիծ՝ դրանից բխող պահանջը ենթակա դարձնելով պատժիչ բնույթի սանկցիայի կիրառության: Իրոք, կառավարությունը չի էլ վիճարկում, որ սանկցիան ձգտում է ինչպես պատժել, այնպես էլ կասեցնել: Առանձնապես նշանակություն չունի այն հանգամանքը՝ սույն Օգթուրքի խախտած օրենքի դրույթը նպատակ է ունեցել պաշտպանե՞լ այլ անձանց իրավունքները և շահերը, թե՞ բավարարել զուտ ճանապարհային երթևեկության գործող պահանջները: Այս երկու նպատակները փոխբացառող չեն: Կանոնի ընդհանուր բնույթը և տույժի նպատակը, երկուսն էլ լինելով կանխարգելիչ և պատժիչ, բավարար են ցույց տալու համար, որ խնդրո առարկա իրավախախտումը կոնվենցիայի 6-րդ հոդվածի շրջանակներում քրեական իրավախախտում է:

Փաստորեն, չկա որևէ բան, որը ցույց տար, որ կոնվենցիայում վկայակոչված քրեական իրավախախտումը պարտադիր ենթադրում է լրջության որոշակի աստիճան: Այս կապակցությամբ մի շարք պայմանավորվող պետություններ, ինչպես և Դաշնային Հանրապետությունն այն ժամանակ, երբ կոնվենցիան բացվել է ստորագրությունների համար, դեռևս տարբերություն են դնում ծանր հանցագործությունների, միջին ծանրության հանցագործությունների և փոքր իրավախախտումների միջև, թեպետ դրանց բոլորին տալիս են քրեական իրավախախտումներ անվանումը: Բացի այդ, «քրեական հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր անձի»՝ դատարանի և արդար դատաքննության իրավունքը երաշխավորող 6-րդ հոդվածի առարկային և նպատակին անհարիր կլիներ, եթե պետություններին թույլ տրվեր այդ հոդվածի շրջանակներից հանել իրավախախտումների մի ամբողջ կարգ միայն այն պատճառով, որ դրանք փոքր իրավախախտումներ են: Ոչ էլ Դաշնային Հանրապետությունն է զրկում Ordnungswidrigkeiten-ը [նյութական և ընթացակարգային օրենքները] ենթադրաբար խախտած անձանց այս իրավունքից, քանի որ հնարավորություն է տալիս վարչական որոշման դեմ բողոք ներկայացնել դատարան, ինչից օգտվել է նաև դիմողը:

54. Քանի որ պարոն Օզթուրքի կատարած փոքր իրավախախտումը կոնվենցիայի 6-րդ հոդվածի նպատակներով եղել է քրեական իրավախախտում, անհրաժեշտություն չկա ուսումնասիրելու այն վերը նշված (պարբ. 50) վերջնական չափանիշների դիրքերից: Նախատեսվող պատժի համեմատական թեթև բնույթը ... չի կարող վերացնել իրավախախտման անքակտելի քրեական բնույթը:

55. Կառավարությունն այնուհետև դիտարկել է, որ դիմողը չի ունեցել «քրեական հանցագործության համար մեղադրվող» անձի կարգավիճակ, քանի որ 1968/1975 թթ. օրենքը չի նախատեսում որևէ Beschuldigung («մեղադրանք») և չի գործածում Angeschuldigter («մեղադրվող անձ») կամ Angeklagter («մեղադրյալ») հասկացությունները: Այս կետի վերաբերյալ դատարանը պարզապես պետք է վկայակոչի իր ամուր հաստատված նախադեպային իրավունքը՝ վճռելով, որ 6-րդ հոդվածի նպատակներով «մեղադրանքը» կարող է ընդհանուր առմամբ սահմանվել որպես «իրավասու մարմնի կողմից անձին տրված պաշտոնական ծանուցում առ այն, որ նա մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու համար», թեպետ «որոշ դեպքերում այն կարող է կրել այլ միջոցառումների բնույթ, որոնք ունեն այս պնդման ազդեցությունը և նմանապես զգալիորեն ազդում են կասկածյալի դրության վրա» (տե՛ս, ամենավերջին աղբյուրների շարքում, *Ֆոտիի* (*Foti*) 1982 թ. դեկտեմբերի 10-ի վճիռը, շարք A, թիվ 56, էջ 18, պարբ. 52 և *Կորիլյանոյի* (*Corigliano*) նույն օրվա վճիռը, շարք A, թիվ 57, էջ 13, պարբ. 34): Սույն գործում դիմողը «մեղադրվել» է ոչ ուշ, քան 1978 թ. ապրիլին, երբ Հեյլբրոննի վարչական մարմինների որոշումը փոխանցվել է նրան...

56. 6-րդ հոդվածի 3(ե) կետը, այսպիսով, տարածվել է սույն գործի վրա: Դատարանը ցանկանում է հստակ նշել, որ սրանից ոչ մի կերպ չի հետևում, որ հարցականի տակ է դրվում Գերմանիայի օրենսդիր մարմնի ընդունած բուն համակարգը: Հաշվի առնելով փոքր իրավախախտումների և հատկապես ճանապարհային երթևեկության իրավախախտումների մեծ քանակը՝ պայմանավորվող պետությունը կարող է լավ պատճառ ունենալ իր դատարաններին քրեական հետապնդման և պատժման առաջադրանքից ազատելու համար: Փոքր իրավախախտումների քրեական հետապնդումը և պատժի նշանակումը վարչական մարմիններին հանձնարարելը չի հակասում կոնվենցիային, պայմանով, որ անձը, որի մասին է խոսքը, օժտված է իր դեմ ընդունված ցանկացած որոշում 6-րդ հոդվածի երաշխիքները բավարարող տրիբունալում բողոքարկելու հնարավորությամբ...

II. 6-րդ ՀՈԴՎԱԾԻ 3(Ե) ԿԵՏԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

57. Վկայակոչելով վերը հիշատակված *Լյուդիքեի, Բելկաչեմի և Կոչի (Luedicke, Belkacem and Koc)* 1978 թ. նոյեմբերի 28-ի վճիռը [(A.29)], դիմողը հայտնել է, որ Հեյլբրոննի շրջանային դատարանի որոշումը, որը պարտավորեցրել է նրան վճարել թարգմանչի ծառայության ծախսերը, 6-րդ հոդվածի 3(ե) կետի խախտում է:

Հանձնաժողովի կարծիքը եղել է նույնը: Կառավարությունը, իր կողմից, պնդել է, որ խախտում տեղի չի ունեցել, սակայն իր փաստարկները հիմնականում կապել է 6-րդ հոդվածի 3(ե) կետի կիրառելիության հետ՝ առանց քննարկելու այն եղանակը, որով դատարանը 1978 թ. մեկնաբանել է այս տեքստը:

58. Վերը նշված վճռի հիման վրա դատարանը համարում է, որ Հեյլբրոննի շրջանային դատարանի վիճարկվող որոշումը խախտել է կոնվենցիան. «6-րդ հոդվածի 3(ե) կետով պաշտպանվող իրավունքն առաջացնում է թարգմանչի անվճար օժանդակություն ստանալու իրավունք, եթե անձը չի տիրապետում դատարանի լեզվին կամ չի խոսում դատարանի լեզվով, սակայն առանց հետագայում այդ անձին ծախսերը վճարելու պահանջի ներկայացման» (շարք A, թիվ 29, էջ 19, պարբ. 46):

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

...

Տասներկու կողմ և վեց դեմ ձայներով վճռել է, որ տեղի է ունեցել նշված (6(3)(ե)) հոդվածի խախտում ...

Վճիռը ցույց է տալիս, որ *Էնգելի (Engel)* երկրորդ չափանիշի (իրավախախտման բնորոշումը) կիրառման դեպքում դատարանն ամենայն հավանականությամբ եզրակացնելու է, որ այդ վարույթները «քրեական» են, եթե այդ դրույթը վերաբերում է հասարակության լայն շերտերին, և համապատասխան սանկցիան պատժիչ նպատակ ունի: Ավելի լայն քաղաքական առումով դատարանը 56-րդ պարբերությունում հաստատել է, որ պետությունները կարող են իրականացնել ապաքրեականացման ծրագրեր, որոնք վերաբերում են նվազ լուրջ իրավախախտումների որոշմանը և պատժմանը, եթե դրանց ազդեցությանը ենթարկվող անձինք ունեն 6-րդ հոդվածում ամրագրված ինստիտուցիոնալ և ընթացակարգային երաշխիքներին համապատասխանող մարմնին դիմելու հստակ իրավունք: Սրա

միջոցով ապահովվում է կառավարությունների նպատակների արդյունավետության և անձանց ընթացակարգային իրավունքների արդար հավասարակշռություն:

4 *«Դեմիկոլին ընդդեմ Մալթայի» (Demicoli v Malta*, A.210 (1991) 14 EHRR 47) գործի դեպքում դատարանը, այնուամենայնիվ, միաձայն որոշել է, որ խորհրդարանի կողմից լրագրի ծաղրանկարչի դեմ հարուցված արտոնյալ կարգավիճակի խախտմանը վերաբերող վարույթը «քրեական» վարույթ է եղել: Դիմողը քաղաքական հանդեսի խմբագիր է եղել, այդ պարբերականի համարներից մեկում խորհրդարանական բանավեճի վերաբերյալ երգիծական նյութ է տպագրել: Հոդվածը՝ «Խորհրդարանական ծաղրածուն» վերնագրով, ծանակել է Մալթայի Ներկայացուցիչների պալատի երկու անդամի՝ պրն Դեբոնո Գրեչի և պրն Բարտոլոյի ելույթները: Վերջիններս պալատի ուշադրությունն են հրավիրել այս հոդվածի վրա, և խոսնակը համարել է, որ դա խորհրդարանի անդամի արտոնության prima facie խախտում է: Նույն օրը պալատը, պրն Դեբոնո Գրեչի առաջարկությամբ, որոշել է, որ այդ հոդվածը խախտել է խորհրդարանական արտոնությունը: Մի քանի շաբաթ անց պալատն ընդունել է պրն Դեբոնո Գրեչի միջնորդությունը, որով դիմողից պահանջվել է ներկայանալ պալատին, «...որպեսզի բացատրի, թե ինչու պետք է մեղավոր չճանաչվի խորհրդարանի անդամների արտոնության խախտման համար...»: Դիմողը ներկայացել է պալատին իր փաստաբանի հետ: Այնուամենայնիվ, նա հրաժարվել է պատասխանել՝ մեղավո՞ր է, թե՞ ոչ: Պալատը նրան մեղավոր է ճանաչել: Սահմանադրական դատարանը հաստատել է պալատի վարույթը և Դեմիկոլիին նշանակել 250 մալթական լիրա տուգանք՝ պահանջելով նրանից պալատի եզրակացությունների մանրամասները հրապարակել իր հանդեսում: Քննադատության արժանացած երկու խորհրդարանականները մասնակցել են Դեմիկոլիի դեմ պալատի վարույթին: Հանձնաժողովը միաձայն կարծիք է հայտնել, որ Մալթայում անցկացված վարույթները խախտել են դիմողի՝ 6(1) հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը: Դատարանն այս դեպքում կիրառել է *Հնգելի* չափանիշները:

32. Նախ՝ պետք է համոզվել՝ տվյալ իրավախախտումը սահմանող դրույթները, պատասխանող պետության իրավական համակարգի համաձայն, մտնո՞ւմ են քրեական, կարգապահական օրենքների մեջ կամ երկուսի մեջ միաժամանակ:

Պարոն Դեմիկոլիի դեմ սկսված վարույթի իրավական հիմքն ամրագրված է կարգի 11-րդ բաժնում... Դիմողն առարկել է՝ պնդելով, որ խորհրդարանական արտոնության մասին օրենք գոյություն չունի Միացյալ Թագավորության օրենսդրությունում, և այդ արտոնության խախտումներն օրենքին վերաբերող որոշ դասագրքերում չեն համարվում հանցագործություններ: Ինչպես նշել են հանձնաժողովը և կառավարությունը, խորհրդարանական արտոնության խախտումը Մալթայի օրենքում պաշտոնապես չի որակվում որպես հանցագործություն... Սահմանադրական դատարանն իր 1986 թ. հոկտեմբերի 13-ի վճռով անհրաժեշտ չի համարել որոշել՝ «արհամարհանք կամ արտոնության խախտում կազմող արարքը քրեակա՞ն արարք է, թե՞ ոչ»:

33. Այնուամենայնիվ, ազգային օրենքի ցուցումը 6-րդ հոդվածի նպատակի համար որոշիչ չէ: Շատ ավելի մեծ նշանակություն ունեցող գործոն է խնդրո առարկա «իրավախախտման բուն էությունը» (տե՛ս, ի թիվս այլոց, *Քեմփբելի և Ֆելի* (*Campbell and Fell*)) վճիռը, շարք A, թիվ 80, էջ 36, պարբ. 71 ...

Այս համատեքստում դիմողը մեջբերում է արել 1986 թ. մարտի խորհրդարանի 4-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ նիստերի արձանագրություններից, որպեսզի ցույց տա, որ պալատի որոշ անդամների՝ իր դեմ սկսած վարույթը հավասարեցվել է քրեական վարույթի...

Կառավարությունը, մյուս կողմից, ներկայացրել է, որ թեպետ արտոնության որոշ խախտումներ կարող են բնույթով քրեական իրավախախտումներ լինել, խորհրդարանական արտոնությունը, վերաբերելով պալատի արժանապատվության նկատմամբ հարգալից վերաբերմունքին, հետապնդել է քրեական իրավունքի նպատակից տարբեր նպատակ. . .

Պարոն Դեմիկոլին պալատի անդամ չի եղել: Դատարանի կարծիքով՝ պալատից դուրս կատարած արարքի համար նրա դեմ սկսված սույն գործի վարույթը պետք է տարբերվի արտոնության այլ կարգի խախտման վարույթներից, որոնց մասին կարելի է ասել, որ բնույթով կարգապահական են, քանի որ վերաբերում են պալատի ներքին կանոնակարգին և պատշաճ գործունեությանը: 11(1)(ի) բաժինը տարածվում է ողջ ազգաբնակչության վրա, քանի որ այն կիրառվում է անկախ այն հանգամանքից՝ իրավախախտում կատարած անձը հանդիսանո՞ւմ է պալատի անդամ, թե՞ ոչ, և անկախ այն հանգամանքից, թե որտեղ է Մալթայում հրապարակվել զրպարտությունը: Կարգում սահմանված իրավախախտման համար նախատեսվում է պատժամիջոց, ոչ թե վնասի փոխհատուցման քաղաքացիական հայց: Հետևաբար, այս տեսանկյունից խնդրո առարկա արտոնության խախտումը նման է քրեական իրավախախտման...

34. Երրորդ չափանիշը վերաբերում է տույժի սաստկության աստիճանին, որի ռիսկին է ենթարկվել տվյալ անձը: Դատարանը նկատում է, որ ներկա գործում, թեպետ պալատը դիմողին նշանակել է ընդամենը 250 մալթական լիրայի տուգանք (որը դեռևս չի վճարվել կամ կիրառվել), այն առավելագույն պատիժը, որը կարող էր նշանակվել նրան, 60 օրվա ազատազրկում է կամ 500 մալթական լիրայից ոչ ավելի տուգանք, կամ և՛ մեկը, և՛ մյուսը: Այսպիսով, սա արդեն բավականաչափ կարևոր է, որպեսզի այն իրավախախտումը, որի մեջ մեղադրվել է դիմողը, կոնվենցիայի շրջանակներում համարվի քրեական բնույթի իրավախախտում:

35. Այսպիսով, 6-րդ հոդվածը տարածվել է այս գործի վրա:

Բ. 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՀԵՏ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

36. Ըստ դիմողի՝ Ներկայացուցիչների պալատում տեղի ունեցած վարույթի դեպքում նա չի օգտվել արդար և անաչառ դատաքննության իր իրավունքից: Այն քաղաքական համատեքստը, որում ընթացել է նրա դեմ սկսված վարույթը, «դատական համակարգի անկախության և անաչառության սկզբունքի ծաղր է»: Նրա ասելով՝ սա ակներև է խորհրդարանական նիստերի պաշտոնական գրանցամատյանում իր գործի կապակցությամբ պալատի անդամների գրանցված արձանագրություններից... Նա նշել է, որ արտոնության խախտմանը վերաբերող վարույթներում խորհրդարանի անդամները հանդես են գալիս որպես զոհեր, մեղադրողներ, վկաներ և դատավորներ: Իր դեպքում խոսքը առանձին անդամների արտոնության մասին է եղել, ոչ թե, ինչպես ներկայացնում է կառավարությունը, ամբողջ պալատի արտոնության իրավունքի մասին: Նրա կարծիքով՝ եթե այս կետի կապակցությամբ ընդունվի կառավարության տեսակետը, ապա դա կնշանակեր, որ «Ներկայացուցիչների պալատի ցանկացած և յուրաքանչյուր անդամ հանդիսանում է judex causa sua»:

37. Կառավարությունն առարկել է, որ պարոն Դեմիկոլիի դեմ հարուցված կարգապահական մեղադրանքը քննելու առումով Ներկայացուցիչների պալատը հանդես չի եկել որպես «օրենքով ստեղծված անկախ և անաչառ տրիբունալ»: Մալթայի Ներկայացուցիչների պալատը եղել է par excellence [գերազանցապես] անկախ մարմին: Պալատն անկախ է եղել գործադրից և մյուս կողմերից: Նրա անդամներն ընտրվել են հինգ տարի ժամկետով, և նրա վարույթները տրամադրել են անհրաժեշտ երաշխիքներ: Հետևաբար, այն բավարարել է 1971 թ. հուլիսի 16-ի *Ռինգայզենի* վճռով սահմանված պահանջները (շարք A, թիվ 13, էջ 39, պարբ. 95): Բացի այդ, հոդվածում ուղղակիորեն ծաղրի ենթարկված անդամները միջամտել են, որպեսզի պաշտպանեն ոչ միայն իրենց, այլև ողջ պալատի արժանապատվությունը:

38. Հանձնաժողովը համարել է, որ Ներկայացուցիչների պալատը չէր կարող համարվել դատարան և չի բավարարել կոնվենցիայի անկախության կամ անաչառության պահանջները:

39. Ինչպես և հանձնաժողովը, դատարանը նույնպես նշում է, որ Մալթայի խորհրդարանի՝ կարգապահական միջոցառումներ կիրառելու և իր ներքին գործերը կառավարելու իրավասությունը այս խնդրից դուրս է: Բացի այդ, դատարանի խնդիրը չէ վերացականորեն վերանայել համապատասխան օրենքը և գործելակերպը: Դատարանի խնդիրն այն է, որ որոշի, թե արդյոք պրն Դեմիկոլիի դեմ սկսված վարույթի ձևը 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման տեղիք տվե՞լ է:

Համաձայն իր նախադեպային իրավունքի՝ բառի նյութական իմաստով «տրիբունալը» բնութագրվում է իր դատարանային գործառույթով, ասել է թե՝ օրենքով սահմանված կանոնների հիման վրա և նախատեսված կարգով վարույթի իրականացումից հետո իր իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ որոշման կայացմամբ... Այն պետք է բավարարի նաև մի շարք այլ պահանջներ, մասնավորապես՝ գործադիր մարմիններից անկախության, անաչառության, անդամների պաշտոնավարման տևողության, իր ընթացակարգով ապահոված երաշխիքների առումներով: Սրանց մի մասը հանդիպում է 6-րդ հոդվածի 1-ին կետի տեքստում (տե՛ս 1988 թ. ապրիլի 29-ի *Բելիլոսի (Belilos)* վճիռը, շարք A, թիվ 132, էջ 29, պարբ. 64):

40. Սույն գործի հանգամանքներում Ներկայացուցիչների պալատը, անկասկած, դիմողի մեղավորության հարցը որոշելիս իրականացրել է դատարանի գործառույթ: Այս գործում բարձրացված առանցքային հարցն այն է, թե արդյոք անաչառության պահանջն ըստ պատշաճի հարգվե՞լ է: 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների տեսանկյունից սա պետք է որոշվի սուբյեկտիվ թեստի հիման վրա, (այսինքն՝ տվյալ գործում որպես դատավոր հանդես եկող անձի անձնական համոզմունքի կամ շահի թեստի հիման վրա), ինչպես նաև օբյեկտիվ թեստի հիման վրա (որը պետք է հիմնավորի, որ դատավորն առաջարկել է այնպիսի երաշխիքներ, որոնք այս դեպքում բավարար են ճշմարտացի կասկածների բացառման համար): Այս համատեքստում ընթացող քրեական վարույթի առումով կարող է կարևոր նշանակություն ունենալ նաև իրերի արտաքին դրությունը (տե՛ս, այլ հեղինակավոր աղբյուրների շարքում, *Հոյշիլդի (Hauschildt)* 1989 թ. մայիսի 24-ի վճիռը, շարք A, թիվ 154, էջ 21, պարբ. 46-8):

41. Պալատի երկու անդամ, որոնց դրսևորած վարքագիծը խորհրդարանում քննադատվել է վիճարկվող հոդվածում, և որոնք պալատում բարձրացրել են արտոնության խախտման հարցը ...մասնակցել են վարույթին, ներառյալ մեղա-

վորության հաստատմանը և, բացի մեկից, որն այդ ժամանակ մահացել էր, պատժի նշանակմանը, որպես մեղադրյալի հակառակ կողմ:

Արդեն իսկ այս պատճառով տվյալ վարույթում դատական որոշում կայացնող մարմնի անաչառությունը դրվում է կասկածի տակ, և դիմողի մտավախություններն այս կապակցությամբ արդարացված են...

42. Հետևաբար, քննարկվող կետի առնչությամբ տեղի է ունեցել կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: Ուստի անհրաժեշտություն չկա անդրադառնալու այդ դրույթի մյուս հայեցակետերին...

Այս վարույթը որպես «քրեական» վարույթ դասակարգելու նպատակով դատարանի համար որոշիչ գործոններ են եղել արտոնության նորմերի համընդհանուր կիրառելիությունը (այսինքն՝ այն հանգամանքը, որ այդ նորմերն ընդգրկել են պալատից դուրս գտնվող հանրությանը, ոչ թե անդամների վարքագծին վերաբերող ներքին սկզբունքներ) և առկա պատժի պոտենցիալ սաստկությունը (առավելագույնը երկու ամսվա բանտարկություն):

5 Դատարանը նաև որոշել է, որ «մեղադրանք» բառն անկախ իմաստ ունի (այսինքն՝ դատարանը պարտավոր չէ ընդունել այս հասկացության ազգային մեկնաբանությունները): Այս հասկացության ինքնուրույն սահմանումը տրվել է *«Դեվեերն ընդդեմ Բելգիայի» (Deweer v Belgium*, A.35 (1980) 2 EHRR 439) գործում: 1935 թվականից դիմողը Լուվենում ունեցել է մսամթերքների խանութ: 1974 թ. սեպտեմբերի 18-ին գլխավոր տնտեսական տեսչության պաշտոնյան այցելել է խանութ: Տեսուչը եզրակացրել է, որ դիմողը իր խանութում վաճառքի դրված խոզի մսի գինը 6,5 տոկոսով չի իջեցրել, ինչպես պահանջվել է մի քանի շաբաթ առաջ ընդունված նախարարի որոշմամբ: Դիմողը պնդել է, որ առանց հետին մտքեր ունենալու՝ ինքը սխալ է գործել և անմիջապես իջեցրել գինը: Տեսուչն ավելի ուշ պաշտոնական հաշվետվություն է կազմել իր այցելության (որն անվանվում է projustitia) վերաբերյալ և ուղարկել Լուվենի առաջին ատյանի դատարանի procureur du Roi-ին [թագավորական դատախազին]: Սեպտեմբերի 30-ին procureur-ը կարգադրել է, որ դիմողի խանութը պայմանականորեն փակվի նրան ծանուցում ուղարկելուց հետո քառասունութ ժամվա ընթացքում՝ համաձայն 1945 թ. «Տնտեսական կարգավորման և գների մասին» օրենքի: Նույն օրը procureur-ը նամակ է գրել դիմողին՝ տեղեկացնելով նրան խանութի փակման կարգադրության մասին: Նամակում նա նշել է, որ եթե խնդրի բարեկամական կարգավորման նպատակով դիմողը վճարի 10.000 ֆրանկ, ապա փակման կարգադրության գործողությունը կդադարեցվի: Ոստիկանությունը նամակն ուղարկել է դիմողին հոկտեմբերի 1-ին և նրանից պատասխան ստացել հոկտեմբերի 3-ին: Դիմողը տեղեկացրել է, որ նախքան գործի քրեական դատավարության կայացումը վճարում է գումարը՝ նպատակ ունենալով խուսափել իր գործունեության դադարեցման հետ կապված ծախսերից: Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ procureur-ի կողմից իր խանութը պայմանականորեն փակելու կարգադրությունը, ֆինանսական կարգավորման առաջարկի հետ միասին, խախտել է իրեն առաջադրված քրեական մեղադրանքի որոշման համար 6(1) հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը: Հանձնաժողովը միաձայն եզրակացրել է, որ այդ իրավունքը խախտվել է: Դատարանը վճռել է.

46. …6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների համար «մեղադրանքը» կարող է սահմանվել որպես իրավասու մարմնի կողմից անձին տրված պաշտոնական ծանուցում, որում հայտնվում է, որ նա կատարել է քրեական հանցագործություն: Մի քանի որոշումներում և կարծիքներում հանձնաժողովը որդեգրել է մի թեստ, որը բավականին մոտ է սրան: Այն պարզում է, թե «[կասկածյալի] վիճակը կրե՞լ է զգալի ազդեցություն» (*Նյումեյստերի (Neumeister*) գործը, շարք B, թիվ 6, էջ 81, *«Հուբերն ընդդեմ Ավստրիայի» (Huber v Austria*) գործը, Կոնվենցիայի տարեգիրք, հտ. 18, էջ 356, 67, *«Հաթթին ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության» (Hatti v Federal Republic of Germany),* նույն տեղում, հտ. 19, էջ 1064, 50 և այլն): Այս հանգամանքներում դատարանը համարում է, որ 1974 թ. սեպտեմբերի 30-ից դիմողը եղել է «քրեական մեղադրանքի» տակ:

Բացի այդ, դատարանը միաձայն որոշել է, որ procureur-ի գործողությունները զրկել են դիմողին արդար դատաքննության իր իրավունքից՝ դրանով իսկ առաջացնելով 6(1) հոդվածի խախտում: Գերմանիայի ճանապարհային երթևեկության խախտումներին վերաբերող վարույթի օրինակով (*Օզթուրքի* գործը, պարբ. 55 (վերը)) արդեն տեսել ենք, թե ինչպես է դատարանը կիրառում քրեական «մեղադրանք» հասկացությունը:

6 *«V-ն ընդդեմ ՄԹ-ի» (V v UK)* գործում դատարանը վճռել է, որ քրեական գործերի դեպքում 6(1) հոդվածը տարածվում է ամբողջ վարույթի, ներառյալ պատժի վերաբերյալ որոշման կայացման գործընթացի վրա: Դատարանը, հետևաբար, եզրակացրել է, որ անչափահաս մարդասպանների անորոշ ժամկետով պատժի պարտադիր ժամկետի (այսինքն՝ հանցագործության հատուցման և կանխման նպատակով նշանակված բանտարկության նվազագույն ժամկետի) որոշման առումով ներքին գործերի քարտուղարի դերն առաջացրել է 6(1) հոդվածով նախատեսված «անկախ դատարանի» պայմանի խախտում: Ինչպես դատարանը նկատել է, ներքին գործերի քարտուղարը միանշանակորեն գործադիր մարմիններից անկախ անձնավորություն չի եղել» (պարբ. 114):

7 *«Իզեն և Քոննորզն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ezeh and Connors v United Kingdom)* գործում (պալատի 2002 թ. հուլիսի 15-ի վճիռ և մեծ պալատի 2003 թ. հոկտեմբերի 9-ի վճիռ) երկու դատապարտված բանտարկյալներ հաջողությամբ վիճարկել են, որ Անգլիայի բանտերի կառավարիչների «կարգապահական» խախտումների վերաբերյալ որոշում կայացնելու և մեղավոր ճանաչված բանտարկյալներին կալանքի լրացուցիչ օրեր նշանակելու (այսինքն՝ ազատ արձակման վերջնական ժամկետը հետաձգելու) լիազորությունը 6(1) հոդվածի իմաստով հավասարազոր է եղել նրանց կողմից «քրեական մեղադրանքի» վերաբերյալ որոշման կայացման: Առաջին դիմողը բանտում իր պայմանական պատիժը վերահսկող պաշտոնյայի հետ հանդիպման ժամանակ ենթադրաբար սպառնացել է սպանել նրան: Նրա գործը լսվել է բանտի կառավարչի կողմից, որը մերժել է դիմողի իրավաբանական ներկայացուցիչ ունենալու պահանջը: Կառավարիչը նրան մեղավոր է ճանաչել սպառնալից արտահայտություններ օգտագործելու համար: Սա եղել է դիմողի՝ աշխատակազմի անդամին սպանելու յոթերորդ սպառնալիքը, որի համար կառավարիչը, ի թիվս այլոց, դատապարտել է նրան քառասուն օրվա լրացուցիչ կալանքի: Երկրորդ դիմողը մեղադրվել է բանտի աշխատակցի վրա հարձակում գործելու համար: Բանտի կառավարիչը մերժել է նաև նրա՝ իրավաբանական ներկայացուցիչ ունենալու պահանջը: Կառավարիչը նրան մեղավոր է ճանաչել (ի դեպ, դա Քոննորզի երեսունյոթերորդ կարգապահական խախտումն էր) և նշանակել լրացուցիչ յոթ օրվա պատիժ: Երկու դիմողն էլ բողոքել են Ստրասբուրգ՝ պնդելով, որ տեղի է ունեցել 6(3)(գ) հոդվածով նախատեսված քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձանց իրավաբանական ներկայացուցիչ ունենալու իրավունքի խախտում: Կառավարությունն առաջարկել է մեծ պալատին կրկին լսել գործը 43-րդ հոդվածի շրջանակներում՝ գտնելով, որ 6-րդ հոդվածն այս վարույթի հետ որևէ կապ չունի: Մեծ պալատում կառավարությունն առարկել է, որ էնգելի չափանիշները կիրառելու ժամանակ պալատը բավարար նշանակություն չի տվել բանտերում արդյունավետ կարգապահություն պահպանելու անհրաժեշտությանը: Տասնմեկ կողմ և վեց դեմ ձայներով՝ դատարանը վճռել է, որ.

85.…Ինչպես *Քեմփբելը և Ֆելն [ընդդեմ ՄԹ-ի] (Campbell and Fell [v U.K.* A.80 (1984)]) վճռում մեծ պալատը համաձայն է պալատին, որ որոշելու համար, թե ինչ բաժանարար գիծ պետք է անցնի «քրեականի» և «կարգապահականի» միջև, սույն գործի փաստերի նկատմամբ ճիշտ է կիրառել «Էնգելի չափանիշները»: Դատարանը դա անելու է այնպիսի եղանակով, որը համապատասխանում է կոնվենցիայի 6-րդ հոդվածի առարկային և նպատակին՝ միաժամանակ «բավարար տեղ հատկացնելով» բանտային համատեքստին և «գործնական ու քաղաքականության պատճառներին», որոնք պաշտպանում են հատուկ բանտային կարգապահական ռեժիմի սահմանումը:

86. Բացի այդ, դատարանի հաստատված օրենքի համաձայն՝ *Էնգելի* վճռում շարադրված երկրորդ և երրորդ չափանիշներն այլընտրանքային են և ոչ անհրաժեշտաբար կուտակային. որպեսզի 6-րդ հոդվածը կիրառելի լինի, բավարար է, որ իրավախախտումը, որի մասին է խոսքը, իր բնույթով համարվի կոնվենցիայի տեսանկյունից «քրեական» իրավախախտում, կամ որպեսզի իրավախախտումն անձին ենթակա դարձնի այնպիսի սանկցիայի կիրառության, որն իր բնույթով և ուժգնության աստիճանով, ընդհանուր առմամբ, «քրեական» սանկցիա է (*«Օզթուրքն ընդդեմ Գերմանիայի» (Ozturk v Germany)* 1984 թ. փետրվարի 21-ի վճիռ, շարք A, թիվ 73, պարբ. 54 և *«Լուցն ընդդեմ Գերմանիայի» (Lutz v Germany),* 1987 թ. օգոստոսի 25-ի վճիռ, շարք A, թիվ 123, պարբ. 55): Սա չի բացառում, որ այն դեպքում, երբ քրեական մեղադրանքի յուրաքանչյուր չափանիշի առանձին վերլուծության հիման վրա հնարավոր չէ հանգել հստակ եզրակացության, ապա կարող է կիրառվել կուտակային մոտեցումը (*«Բենդենունն ընդդեմ Ֆրանսիայի» (Bendenoun v France)* 1994 թ. փետրվարի 24-ի վճիռ, շարք A, թիվ 284, պարբ. 47, *«Բենհեմն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Benham v the United Kingdom)* 1996 թ. հունիսի 10-ի վճիռ, Վճիռների և որոշումների զեկույցներ 1996-III, պարբ. 56, *«Գարֆալու ԱԻԲԻ-ն ընդդեմ Հունաստանի» (Garyfallou AEBE v Greece),* 1997 թ. սեպտեմբերի 24-ի վճիռ, Զեկույցներ

1997-V, պարբ. 33, *«Լաուկոն ընդդեմ Սլովակիայի» (Lauko v Slovakia*), 1998 թ. սեպտեմբերի 2-ի վճիռ, Զեկույցներ 1998-VI, պարբ. 57):

87. Դատարանը նաև որոշ դիտարկումներ է կատարելու, որոնք վերաբերում են բանտային միջավայրում *Էնգելի* չափանիշների կիրառության կողմերի ներկայացրած ավելի ընդհանուր բացատրություններին:

88. Առաջին՝ դատարանը նկատում է, որ կառավարության հիմնական փաստարկն այն է, որ քրեականի և կարգապահականի միջև ջրբաժան անցկացնելու համար պետք էր լրջորեն կշռադատել բանտում արդյունավետ կարգապահական ռեժիմ պահպանելու անհրաժեշտությունը: Ինչպես *Քեմփբելի և Ֆելի (Campbell and Fell)* վճռում, դատարանը հարցականի տակ չի դնում բանտում արդյունավետ կարգի և վերահսկողության համակարգի պահպանման կարևորությունը: Այնուամենայնիվ, համոզիչ չի համարում կառավարության փաստարկը, համաձայն որի՝ կառավարչի կողմից «լրացուցիչ օրեր» նշանակելու լիազորության կորուստը կհարվածեր Անգլիայում և Ուելսում բանտային կարգապահության ռեժիմի [պահպանությանը]:

Այս կապակցությամբ դատարանը նկատում է, որ համապատասխան ժամանակահատվածում կառավարիչն ունեցել է նաև այլ սանկցիաներ կիրառելու հնարավորություններ (ներառյալ՝ արտոնություններից և համատեղ աշխատանքի մասնակցությունից զրկումը, մեկուսի բանտարկությունը), ինչպես նաև լրացուցիչ օրեր նշանակելու սանկցիայից տարբեր սանկցիաների շարքը և սաստկությունն ընդլայնվել են և ավելացվել դիմողների նկատմամբ 2002 թ. օգոստոսի ամենավերջին վարույթից հետո: Դատարանը կարծում է, որ ներկայացված բացատրությունները, ըստ որոնց՝ բանտի կարգապահական համակարգի արդյունավետության, ներառյալ բանտի ղեկավարության հեղինակության պահպանման առումներով այս մյուս սանկցիաները լրացուցիչ օրեր նշանակելու սանկցիային համարժեք ազդեցություն չէին ունենա, համոզիչ չեն: Այս առումով կառավարությունը չի անդրադարձել այն հարցին, թե ինչպես կարող է անմիջական կիրառման ենթակա սանկցիան նվազ արդյունավետ լինել, քան լրացուցիչ օրերի նշանակման սանկցիան, որը չի կիրառվում ավելի վաղ, քան բանտարկյալի ազատ արձակման ամենավաղ հնարավոր ժամկետը (որը հաստատվում է ըստ 1991 թ. [Քրեական արդարադատության մասին] օրենքի 33-րդ բաժնի), և որը, հետևաբար, պետք է կրել դատից [կարգապահական վարույթից] հետո որոշ ժամանակ և նույնիսկ տարիներ անց: Բացի այդ, դատարանը չի համարում, որ կառավարությունը համոզիչ ձևով ցույց է տվել, թե որոնք են Շոտլանդիայի բանտերի (որտեղ լրացուցիչ օրեր նշանակելու փորձը դադարեցվել է մոտ երկու տարի առաջ) ու Անգլիայի և Ուելսի բանտերի միջև գոյություն ունեցող զգալի տարբերությունները:

...

Էնգելի առաջին չափանիշը. իրավախախտումների ներպետական դասակարգումը

90. Այդ իրավախախտումների կապակցությամբ դիմողներին առաջադրված մեղադրանքները, համաձայն ազգային օրենքի, կարգապահական իրավախախտումների [համար առաջադրված մեղադրանքներ] են: Համաձայն 47-րդ կանոնի 1-ին և 17-րդ պարբերությունների՝ բանտարկյալի համապատասխան վարքագծի դրսևորումները «կարգապահական խախտումներ» են: Բանտային կանոնակարգերը սահմանում են, թե բանտի կարգապահական ռեժիմի պայմաններում կառավարչի վարույթում ինչ պատասխան պետք է տրվի այդ խախտումներին:

Այսպիսով, պալատը նկատել է, որ այս խախտումների առնչությամբ տեղի ունեցող դատական վարույթները համարվում են կարգապահական խախտումների վարույթներ և նպատակաուղղված են բանտի ներսում կարգապահության ապահովմանը: Կառավարությունը մատնանշել է, որ կառավարչի եզրակացությունները չեն կազմում դիմողների դատվածության պատմության մասը, սակայն այս փաստը իրավախախտումը որպես զուտ կարգապահական իրավախախտում դասակարգելու հետևանք է:

91. Այնուամենայնիվ, ազգային օրենքի տված ցուցումները զուտ պաշտոնական և հարաբերական արժեք ունեն: Իրավախախտման բնույթն ավելի մեծ նշանակություն ունեցող գործոն է (վերը մեջբերված *Էնգելի և այլոց* վճիռը, պարբ. 82):

Էնգելի երկրորդ չափանիշը. մեղադրանքի բնույթը

...

103. Դատարանը նկատում է, որ սույն գործերում, նախ, խնդրո առարկա իրավախախտումները վերաբերել են ոչ թե բոլոր քաղաքացիներին, այլ հատուկ կարգավիճակ ունեցող անձանց՝ բանտարկյալներին: Այնուամենայնիվ, դատարանը չի ընդունում կառավարության բացատրությունը, որ այս փաստի շնորհիվ իրավախախտումները դառնում են prima facie կարգապահական իրավախախտումներ: Այն ոչ այլ ինչ է, քան իրավախախտումների բնույթի գնահատման «համապատասխան ցուցանիշներից» մեկը (տե՛ս *Քեմփբելի և Ֆելի (Campbell and Fell)* վերը մեջբերված վճիռը, պարբ. 71):

104. Երկրորդ՝ մեծ պալատի առջև վիճարկվել է առաջին դիմողին ներկայացված մեղադրանքի համապատասխանությունը սովորական քրեական օրենքով սահմանված իրավախախտմանը ([«Հասարակական կարգի մասին»] 1986 թ.

օրենքի 4-րդ և 5-րդ բաժիններ): Նաև պարզ է, որ երկրորդ դիմողին ներկայացված հարձակման մեղադրանքը [ևս] սահմանված է ինչպես քրեական օրենքով, այնպես էլ բանտային կանոնակարգերով: Ճիշտ է, որ այս վերջին մեղադրանքը վերաբերել է բանտի աշխատակցի հետ միտումնավոր ընդհարման ոչ լուրջ միջադեպի, որը պարտադիր չէ, որ բանտի պատերից դուրս հանգեցներ քրեական հետապնդման գործընթացի: Ճիշտ է նաև, որ ինչպես նշվել է *Քեմփբելի և Ֆելի (Campbell and Fell)* վճռում, իրավախախտման ծայրահեղ լրջությունը կարող է մատնանշել, որ այն քրեական բնույթ ունի: Այնուամենայնիվ, սա բնավ չի նշանակում, որ իրավախախտման թեթև բնույթը կարող է ինքնին այն դուրս թողնել 6-րդ հոդվածի տիրույթից, քանի որ կոնվենցիայում որևէ նշում չկա առ այն, որ *Էնգելի* երկրորդ չափանիշի իմաստով իրավախախտման քրեական բնույթը պարտադիր պայմանավորված է [իրավախախտման] լրջության որոշակի աստիճանով (վերը նշված *Օզթուրքի* վճիռը, պարբ. 53): *Քեմփբելի և Ֆելի* վճռում տույժի սաստկության աստիճանը (պարբ. 72) վերաբերել է Էնգելի երրորդ չափանիշին, ոչ թե իրավախախտման բնույթը սահմանող գործոնին:

Առաջնորդվելով կոնվենցիայի նախադեպային իրավունքով՝ կառավարությունը վիճարկել է այս համընթաց քրեական և կարգապահական պատասխանատվությանը վերագրվող նշանակությունը: Այնուամենայնիվ, նույնիսկ սրան ամենաուղղակի ձևով վերաբերող *Քեմփբելի և Ֆելի* գործի վերաբերյալ վճռում (պարբ. 71), իրավախախտման բնույթը գնահատելու համար որպես համապատասխան գործոն դատարանը վկայակոչել է վիճարկվող իրավախախտումների միաժամանակ քրեական և կարգապահական վարույթի ենթակա լինելու «տեսական» հնարավորությունը՝ չկապելով դա խնդրո առարկա իրավախախտման ծանրության հետ: Հետևաբար և նույնիսկ նշելով մեղադրանքների բանտային համատեքստը՝ զուգահեռ քրեական և կարգապահական պատասխանատվության տեսական հնարավորությունը, առնվազն նպատակահարմար է այս երկու իրավախախտումներին տալ «խառը» բնույթի իրավախախտումների բնորոշում:

105. Երրորդ՝ կառավարությունը ներկայացնում է, որ բանտի կարգապահական կանոնները և սանկցիաներն ունեն վաղաժամկետ ազատ արձակման համակարգի հաջող կիրառությունը երաշխավորելու նպատակ, այնպես որ, համեմատած անկարգության «կանխման» առաջնային նպատակի հետ, իրավախախտման «պատժիչ» տարրը երկրորդական նշանակություն ունի: Դատարանը համարում է, որ բոլոր դեպքերում լրացուցիչ օրերի նշանակումները հետևել են մեղավորության մասին եզրակացություններին (վերը մեջբերված *«Բենհեմն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Benham v the United Kingdom)* վճիռը, պարբ. 56) և ունեցել կատարված իրավախախտումների համար դիմողներին պատժելու, նրանց և այլ բանտարկյալների կողմից հետագա իրավախախտումները կանխելու նպատակներ: Դատարանը համոզիչ չի համարում կառավարության այն փաստարկը, որը տարբերություն է դնում է խնդրո առարկա իրավախախտումների պատժիչ և կանխարգելիչ նպատակների միջև, այն դեպքում, երբ այս նպատակները փոխբացառող չեն (վերը մեջբերված *Օզթուրքի* վճիռը, պարբ. 53) և ճանաչվում են որպես քրեական պատիժների բնութագրական առանձնահատկություններ:

106. Հետևաբար, դատարանն այն համոզման է, որ այս գործոնները, եթե նույնիսկ ինքնին բավարար էլ չեն եղել դիմողներին վերագրվող իրավախախտումներին կոնվենցիայի շրջանակներում «քրեական» բնորոշում տալու համար, անկասկած ունեցել են այնպիսի երանգավորում, որը լիովին չի համապատասխանում զուտ կարգապահական բնույթի խնդիրներին:

107. Հետևաբար, ինչպես և պալատը, դատարանը նույնպես կարծում է, որ երրորդ չափանիշին՝ պատժի բնույթին և սաստկությանն անցնելու անհրաժեշտություն կա, որին դիմողները կարող էին ենթարկվել (*Էնգելի և այլոց* (*Engel and Others*) վճիռը, պարբ. 82 և *Քեմփբելի և Ֆելի (Campbell and Fell)* վճիռը, պարբ. 72, երկուսն էլ մեջբերված են վերը):

էնգելի երրորդ չափանիշը. պատժի բնույթը և սաստկությունը

...

123. ...Սկզբնական դատապարտման և պատժի հետ որևէ իրավական կապ չունեցող առանձին կարգապահական վարույթների արդյունքում բանտարկյալներին լրացուցիչ օրերի նշանակման իրողությունն այն է, որ բանտարկյալները պահվել են բանտում այն օրվանից հետո, երբ այլ պարագայում պետք է ազատ արձակվեին:

124. Հետևաբար, դատարանը կարծում է, որ լրացուցիչ պատժի օրեր նշանակելով՝ կառավարիչը պատժիչ նպատակներով մեղավորության մասին եզրակացություն անելուց հետո նշանակել է նոր ազատազրկում (տե՛ս վերը՝ պարբ. 105): Այս տեսակետի հետագա պաշտպանությունը դատարանը գտնում է Բանտային կանոնների 54(1) կանոնի դրույթներում, որոնք թույլ են տալիս մեղադրյալի նախնական կալանքի ընթացքում՝ նախքան նրա դատապարտումը, նրան նշանակել լրացուցիչ օրերի պատիժ, որը, սակայն, չի գործում մեղադրյալի արդարացման պարագայում:

125. Այսպիսով, կառավարության կողմից շեշտված այն փաստը, որ կառավարչի որոշումը կայացնելիս դիմողները եղել են իրենց օրինական պատիժը կրող բանտարկյալներ, դատարանի կարծիքով, չի ծառայում նրանց գործն ազատության մեջ գտնվող քաղաքացիների և զինվորական անձնակազմի գործերից տարբերելու նպատակին: Առավել ևս, այս պատճառով է, որ բանտային վարույթի ընթացակարգային պաշտպանության հարցը հավուր պատշաճի նկատի է առնված կոնվենցիայի 6-րդ հոդվածում և, ինչպես ներկայացնում է կառավարությունը, 5-րդ հոդվածի դրույթներում:

Ճշմարիտ է, որ *Քեմփբելի և Ֆելի (Campbell and Fell)* վճռում դատարանը եզրակացրել է, որ նշանակված պատիժը «եթե նույնիսկ տեխնիկապես ազատազրկում չի եղել, ապա մոտ է եղել» դրան: Այնուամենայնիվ, դատարանը ստիպված է եղել իր եզրակացությանը տալ նման ձևակերպում, քանի որ քննության է առել «ազատազրկման պատժի նվազեցման կորուստը»՝ ի տարբերություն «լրացուցիչ օրերի նշանակման, որը հաստատվել է ավելի ուշ՝ 1991 թ. ընդունված օրենքով:

126. Դատարանը նշում է, որ *Էնգելի և այլոց* վճռում որոշել է (պարբ. 82-ում) հետևյալը.

> «Օրենքի գերակայությամբ առաջնորդվող հասարակություններում ազատազրկման ձևով նշանակվող պատիժը դասվում է «քրեական» պատիժների շարքը, բացառությամբ այն պատիժների, որոնք բնույթով, տևողությամբ կամ իրականացման ձևով չեն կարող զգալիորեն վնաս պատճառել: Խնդրո առարկայի լրջությունը, պայմանավորվող պետությունների ավանդույթները և այն նշանակությունը, որը կոնվենցիան վերագրում է անձի ֆիզիկական ազատությանը, միասին պահանջում են, որ դա այդպես լինի»:

Հետևաբար, ելնելով այն ազատազրկումներից, որոնք կարող էին նշանակվել և փաստացի նշանակվել են այս դիմողներին, կանխավարկած է առաջադրվել, որ նրանց դեմ ներկայացված մեղադրանքները 6-րդ հոդվածի իմաստով եղել են քրեական մեղադրանքներ: Այս կանխավարկածը կարող է ամբողջովին հերքվել բացառապես և միայն այն դեպքում, եթե հնարավոր չլինի այս ազատազրկումները համարել «զգալիորեն կորստաբեր»՝ հաշվի առնելով դրանց բնույթը, տևողությունը և կատարման եղանակը:

127. Այն հարցի վերաբերյալ, թե արդյոք սույն գործերի դեպքում այս կանխավարկածը կարո՞ղ է հերքվել, պալատը չի կարողացել լուրջ օգուտ քաղել դատարանի *Քեմփբելի և Ֆելի* գործով կայացրած վճռից, ինչին մեծ պալատը համաձայն է: Այդ վճռում դատարանը եզրակացրել է, որ պրն Քեմփբելի «կորցրած ներման/պատժի նվազեցման ժամկետը» (570 օր) «նրա ազատազրկման տևողության առումով ունեցել է այնպիսի լուրջ հետևանքներ», որ կոնվենցիայի 6-րդ հոդվածի նպատակների համար այդ պատիժը պետք է համարվեր «քրեական»: Հետևաբար, *Քեմփբելի և Ֆելի* դեպքում նպատակահարմար չի եղել կիրառել «զգալիորեն կորստաբեր» լինելու թեստը:

128. Սույն գործերի կապակցությամբ պետք է նկատել, որ յուրաքանչյուր դիմողին կառավարչի կողմից նշանակվելիք լրացուցիչ օրերի առավելագույն քանակը կարող էր յուրաքանչյուր իրավախախտման համար կազմել 42 օր (Բանտային կանոնների 50-րդ կանոն): Առաջին դիմողին նշանակվել է 40 լրացուցիչ օր: Սա նրա քսաներկուերորդ կարգապահական և բռնության սպառնալիք ընդգրկող յոթերորդ խախտումն է եղել: Երկրորդ դիմողին նշանակվել է 7 լրացուցիչ օրվա կալանք: Սա եղել է նրա երեսունյոթերորդ կարգապահական խախտումը: 1991 թ. օրենքի 33(1) բաժնի համաձայն՝ 40 և 7 օրվա լրացուցիչ կալանքի տակ պահվելու ժամկետները համարժեք են եղել համապատասխանաբար ազգային դատարանների կողմից նշանակվող 11 և 2 շաբաթվա բանտարկության ժամկետների:

Դատարանը նաև նկատում է, որ պալատի ձեռքի տակ չեն եղել փաստեր և այդպիսիք չեն ներկայացվել մեծ պալատին, որ լրացուցիչ նշանակված օրերի պատիժը դիմողները կրելու են այլ տեղում, ոչ թե բանտում և նույն բանտային ռեժիմով, որը պետք է կիրառվեր մինչև 1991 թ. օրենքի 33-րդ բաժնի համաձայն սահմանված ազատ արձակման սովորական օրը:

129. Այս հանգամանքներում դատարանը եզրակացնում է, որ ազատազրկումները, որոնք պետք է նշանակվեին և փաստացի նշանակվել են դիմողներին, չեն կարող համարվել բավարար չափով անկարևոր կամ անհետևանք, որպեսզի վերացնեին նրանց ներկայացված մեղադրանքի քրեական բնույթը:

Դատարանը նկատում է, որ *պրն Էնգելին* առավելագույն նշանակվելիք և փաստացի նշանակված պատիժը համապատասխանել է երկու օրվա խիստ բանտարկության, ինչը եղել է չափից ավելի կարճատև, որպեսզի մտներ քրեական ոլորտ: Այնուամենայնիվ, նկատում է, որ տվյալ դեպքում նույնիսկ նշանակված ամենամեղմ պատիժը զգալիորեն գերազանցել է *պրն Էնգելին* նշանակված պատժից:

Դատարանի եզրակացությունը

130. Ինչպես և պալատը, ելնելով այս հանգամանքներից, դատարանը եզրակացնում է, որ մեղադրանքի բնույթը և դրա դիմաց նշանակված պատիժների բնույթը և սաստկությունը եղել են այնպիսին, որ դիմողների դեմ բերված մեղադրանքները՝ նրանց վարույթների նկատմամբ կիրառման ենթակա կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով, իրենց բնույթով քրեական մեղադրանքներ են եղել:

Շարունակելով՝ դատարանը եզրակացրել է, որ դիմողների դեմ կառավարչի սկսած վարույթում տեղի է ունեցել 6(3)(գ) հոդվածի խախտում:

Իր չհամընկնող կարծիքում դատավոր Պելոնպաան, որին միացել են նախագահ Վիլդհաբերը և դատավորներ Փալմը և Քաֆլիշը, հայտնել է.

... Ես նաև համաձայն չեմ մեծամասնության կարծիքին, որ «զուտ այն փաստը», որ «դիմողները եղել են օրինականորեն նրանց նշանակված պատիժը կրող բանտարկյալներ, հիմք չէ ... նրանց գործը ազատության մեջ գտնվող քաղաքացիների կամ զինծառայողների գործերից տարբերելու համար» (պարբ. 125): Իմ կարծիքով, սա հիմնարար տարբերություն է: Սա նույնպես ինձ ստիպում է եզրակացնել, որ նշանակված լրացուցիչ օրերը՝ *Էնգելի* վճռի 82-րդ պարբերության իմաստով, չեն կարող համարվել «զգալիորեն կորստաբեր»: Ես նշում եմ, որ նույնիսկ առավելագույն 42 օրվա պատիժը նախքան լրանալը չէր հանգեցնի դիմողների ազատ արձակման խիստ (մի քանի տարվա) հետաձգման:

Բրիտանիայի կառավարությունն արագ արձագանքել է *Իզենի և Քոննորզի* գործով պալատի կայացրած վճռին՝ 2002 թ. սահմանելով նոր բանտային կարգապահության համակարգ, ինչը խրախուսանքի արժանի քայլ է: Եթե կառավարիչը կարծում է, որ բանտարկյալին ներկայացված մեղադրանքը բավականին լուրջ է, որպեսզի այդ մեղադրանքի հիմնավորման դեպքում նրան լրացուցիչ օրերի պատիժ նշանակվի, ապա կառավարիչը պետք է գործը փոխանցի անկախ դատավորին (շրջանային դատավորին), որին նշանակում է ներքին գործերի նախարարը: Բանտարկյալներին տրվում է դատավորների (արբիտրների) առջև իրավաբանական ներկայացուցիչներ ունենալու իրավունք: Դատավորները կարող են նշանակել մինչև 42 օրվա լրացուցիչ ազատազրկման պատիժ՝ համատեղելով այն կառավարիչների տրամադրության տակ եղած այլ պատիժների, օրինակ՝ արտոնությունների կորստի հետ, եթե նրանք մեղավոր են ճանաչում բանտարկյալին: Այն մեղադրանքները, որոնց կապակցությամբ ազատազրկման լրացուցիչ օրերի պատիժ չի նախատեսվում, շարունակում են որոշվել կառավարիչների կողմից:

8 *«Մատյեկն ընդդեմ Լեհաստանի» (Matyjek v Poland)* գործով 2006 թ. հունիսի 29-ի վճռով պալատը միաձայն որոշել է, որ բարոյական զտման վարույթները (lustration proceedings), որոնք նպատակ են ունեցել որոշելու, թե արդյոք կոմունիստական բռնատիրության շրջանում անձը համագործակցե՞լ է պետության անվտանգության ուժերի հետ, մտնում են 6-րդ հոդվածի շրջանակների մեջ: Դիմողը, որը Լեհաստանի խորհրդարանի նախկին անդամ էր, համաձայն 1997 թ. օրենսդրության, ներկայացրել է «բարոյական զտման» հայտարարություն, որով նա տեղեկացրել է, որ չի համագործակցել կոմունիստական անվտանգության ծառայությունների հետ: Ավելի ուշ Վարշավայի վճռաբեկ դատարանը որոշել է, որ «բարոյական զտման» կապակցությամբ ներկայացրած հայտարարության մեջ նա ստել է և, հիմք ընդունելով 1997 թ. օրենսդրությունը, արգելել է նրան տասը տարի ժամկետով զբաղեցնել պետական պաշտոններ: Հաշվի առնելով դիմողին նշանակված պատժի բնույթը և սաստկությունը՝ պալատը որոշել է, որ 6-րդ հոդվածով այն պետք է որակվի որպես քրեական պատիժ՝ որոշելով, որ ազգային դատարանների արդարությանը վերաբերող նրա բողոքներն ընդունելի են: Մեկ այլ նախկին կոմունիստական տերությունում տեղի ունեցած բարոյական զտման վարույթի նկատմամբ 8-րդ հոդվածի կիրառումը ներկայացված է ստորև՝ *«Թուրեկն ընդդեմ Սլովակիայի» (Turek v Slovakia)* (տե՛ս էջ 527) գործում:

Անաչառ դատական քննություն

Դատաքննության իրավունք

……..

«Գոլդերն ընդդեմ ՄԹ-ի» (Golder v UK A.18 (1975) 1 EHRR 524)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

1965 թ. դիմողը թալանի մեղադրանքով դատապարտվել է 15 տարվա ազատազրկման: 1969 թ. հոկտեմբերին Փարկհուրստի բանտում, որտեղ Գոլդերը կրում էր իր պատիժը, տեղի է ունեցել բանտարկյալների խռովություն: Երբ ղեկավարությունը բանտում կարգուկանոն է հաստատել, բանտի աշխատակիցներից մեկը՝ Լեյըրդը, արձանագրություն է կազմել, որում նշել է, որ Գոլդերը մասնակցել է բանտարկյալների բարձրացրած խռովությանը: Մի քանի օր անց այդ պաշտոնյան մեղմացրել է Գոլդերին ներկայացրած իր մեղադրանքը, իսկ մեկ այլ պաշտոնյա զեկուցել է, որ Գոլդերը չի մասնակցել բանտարկյալների բարձրացրած խռովությանը: Ղեկավարությունը Գոլդերի նկատմամբ կարգապահական բնույթի մեղադրանք առաջ չի քաշել: Դրանից հետո նա դիմել է ներքին գործերի քարտուղարին, որպեսզի թույլտվություն ստանա փաստաբանի հետ խորհրդակցելու իրեն զրպարտելու համար Լեյըրդին հետապնդելու նպատակով: Ներքին գործերի քարտուղարը մերժել է Գոլդերի պահանջը: Դիմողն այնուհետև բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, ի թիվս այլոց, որ ներքին գործերի քարտուղարի մերժումով տեղի է ունեցել 6(1) հոդվածով երաշխավորված դատաքննության իրավունքի խախտում: Հանձնաժողովը միաձայն պաշտպանել է նրա գանգատը:

27. Հարցականի տակ չի դրվում և դատարանի համար ինքնին ընդունելի է, որ այն «իրավունքը», որը Գոլդերը ցանկացել է Անգլիայի դատարաններում ճիշտ կամ սխալ ձևով պաշտպանել Լեյըրդից, 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով «քաղաքացիական իրավունք» է եղել:

28. 6-րդ հոդվածի 1-ին կետը դարձյալ հստակ չի սահմանում դատարաններ կամ տրիբունալներ դիմելու իրավունքը: Այն հռչակում է իրավունքներ, որոնք տարբեր են, սակայն առաջանում են նույն հիմնական գաղափարից և միասին վերցրած՝ կազմավորում են առանձին իրավունք, որն առանձնահատուկ ձևով և ավելի նեղ իմաստով սահմանված չէ: Դատարանի պարտականությունն է համոզվել մեկնաբանությունների միջոցով, որ դատարաններ մտնելու իրավունքը կազմում է այդ իրավունքի մեկ գործոնը կամ մասը:

29. Դատարանին ներկայացված բացատրությունները, առաջին հերթին, անդրադարձել են այն ձևին, որով պետք է մեկնաբանվեն կոնվենցիան և, մասնավորապես, 6-րդ հոդվածի 1-ին կետը: Կառավարության և հանձնաժողովի պես դատարանը պատրաստ է ընդունելու, որ պետք է առաջնորդվի 1969 թ. մայիսի 23-ի Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 31-33-րդ հոդվածներով: Այդ կոնվենցիան դեռևս ուժի մեջ չի մտել և, ըստ դրա 4-րդ հոդվածի, այն հետադարձ ուժ չունի, սակայն նրա 31-33-րդ հոդվածները սկզբունքորեն հռչակում են միջազգային իրավունքի ընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներ, որոնց դատարանը երբեմն հղումներ է արել...

30. Համաձայն Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածում շարադրված «ընդհանուր կանոնի»՝ համաձայնագրի մեկնաբանությունն ամբողջական գործընթաց է՝ մեկ ընդհանուր գործողություն...

31. Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պայմանները, դրանց իսկ համատեքստում, մտածելու տեղիք են տալիս, որ այս իրավունքն ընդգրկված է ամրագրված երաշխիքներում:

32. Ամենահստակ ցուցումներն ամփոփված են ֆրանսերեն տեքստի առաջին նախադասությունում: Քաղաքացիական հայցերի contestations civiles (civil claims) առումով յուրաքանչյուր անձ իրավունք ունի, որ նրա կողմից կամ նրա դեմ հարուցված վարույթն իրականացվի որոշակի սկզբունքով՝ equitablement («արդար»), publiquement («դռնբաց»), dans un delai raisonnable («ողջամիտ ժամկետում») և այլն: Սակայն նախ և առաջ a ce que sa cause soit entendue («որ նրա գործը լսվի») ոչ թե իշխանություն ունեցող ինչ-որ մարմնի, այլ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով par un tribunal-ի (դատարանի կամ տրիբունալի) կողմից (*Ռինգայզենի* 1971 թ. հուլիսի 16-ի վճիռը, շարք A, թիվ 13, էջ 39, պարբ. 95): Կառավարությունը, այնուամենայնիվ, իրավացիորեն շեշտել է, որ ֆրանսերեն cause բառը կարող է նշանակել proces qui se plaide [դատավարության ընթացքում գտնվող գործ] (Littre, Dictionnaire de la langue francaise, հտ. I, էջ 509, 5): Սա,

այնուամենայնիվ, այս գոյականի միակ սովորական իմաստը չէ: Շարունակելով նույն գիծը՝ այն նաև նշանակում է l'ensemble des interets a soutenir, a faire prevaloir [բոլոր պաշտպանվող գերակա շահերը] (Paul Robert, Dictionnaire alphabetique et analogique de la langue francaise, հտ. I, էջ 666, II–2): Նմանապես, contestation-ը (claim-ը/պահանջը) ընդհանուր առմամբ գոյություն ունի նախքան դատավարությունը և դրանից անկախ հասկացություն է: Ինչ վերաբերում է tribunal independant et impartial etabli par la loi (օրենքով ստեղծված անկախ և անաչառ տրիբունալ) արտահայտությանը, այն ավելի շուտ անդրադառնում է կազմակերպության և հաստատության, քան գործունեության կամ ընթացակարգերի գաղափարներին:

Իր հերթին անգլերեն տեքստն անդրադառնում է independent and impartial tribunal established by law-ին («օրենքով ստեղծված անկախ և անաչառ տրիբունալին»): Բացի այդ, «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների որոշման ժամանակ» արտահայտությունը, որը կառավարությունը վկայակոչել է իր առարկությունը հիմնավորելու համար, պարտադիր չէ, որ վերաբերի միայն ընթացքի մեջ գտնվող դատավարություններին: Ինչպես նկատել է հանձնաժողովը, այն կարող է համարվել, «երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտավորությունները» արտահայտության համարժեքը (Զեկույցի պարբ. 52): Այս դեպքում այն ևս նշանակում է դատարանի կամ «տրիբունալի»՝ քաղաքացիական իրավունքներին և պարտավորություններին վերաբերող վեճերի քննության իրավունք:

Կառավարությունը ներկայացրել է, որ «արդար և հրապարակային դատավարություն» և «ողջամիտ ժամկետում» արտահայտությունները, 1-ին կետի երկրորդ նախադասությունը («դատավճիռ», «դատավարություն») և 6-րդ հոդվածի 3-րդ կետը հստակորեն ենթադրում են դատարանում ընթացքի մեջ գտնվող քննության առկայություն:

Եթե արդար, հրապարակային և արագ դատական ընթացակարգը վստահաբար կարող է կիրառվել միայն գոյություն ունեցող վարույթների պարագայում, այնուամենայնիվ, դա անպայման չի նշանակում, որ այդ պատճառով բացառվում է բուն այդ վարույթներն իրականացնող հաստատությունների նկատմամբ իրավունքը... Բացի այդ, քրեական գործերում «ողջամիտ ժամկետը» կարող է սկսվել ավելի վաղ, քան գործի դատավարությունը «քրեական մեղադրանքի վերաբերյալ ... որոշում կայացնելու» լիազորություն ունեցող առաջին ատյանի դատարանում՝ «տրիբունալում» (*Վեմհոֆի* (*Wemhoff*) 1968 թ. հունիսի 27-ի վճիռ, շարք A, թիվ 7, էջ 26–7, պարբ. 19, *Նյումեյստերի (Neumeister)* 1968 թ. հունիսի 27-ի վճիռ, շարք A, թիվ 8, էջ 41, պարբ. 18, *Ռինգայզենի (Ringeisen)* 1971 թ. հուլիսի 16 -ի վճիռ, շարք A, թիվ 13, էջ 45, պարբ. 110): Հնարավոր է նաև, որ քաղաքացիական գործերի դեպքում լինեն որոշ հանգամանքներ, որոնց դեպքում ողջամիտ ժամկետը սկսվի նախքան հայցն ընդունած դատարանի կողմից դատական վարույթ սկսելու վերաբերյալ ծանուցում տալը...

34. Ինչպես նշվել է Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 2-րդ կետում, յուրաքանչյուր համաձայնագրի նախաբանը նրա բովանդակության անբաժանելի մասն է: Բացի այդ, նախաբանը շատ կարևոր է որոշելու համար մեկնաբանվող փաստաթղթի «առարկան» և «նպատակը»:

Սույն գործի դեպքում Եվրոպական կոնվենցիայի նախաբանի ամենակարևոր մասում ստորագրող կողմերը հռչակել են, որ որպես «սույն կոնվենցիան ստորագրած և միասնական հայացքներ և քաղաքական ավանդույթների, իդեալների, ազատության և իրավական պետության ընդհանուր ժառանգություն ունեցող եվրոպական երկրների կառավարություններ՝ ձեռնարկել են առաջին քայլերը 1948 թ. դեկտեմբերի 10-ի Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հռչակած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված որոշ իրավունքների հավաքական իրականացման ճանապարհին»... Ինչ վերաբերում է քաղաքացիական խնդիրներին, ապա դժվար է պատկերացնել, որ գոյություն ունի օրենքի գերակայություն՝ առանց դատարաններ դիմելու հնարավորության:

35….Քաղաքացիական հայցը դատավորին ներկայացնելու սկզբունքը համարվում է իրավունքի համընդհանուր «ճանաչում ունեցող» հիմնարար սկզբունքներից մեկը: Նույնը վերաբերում է նաև միջազգային իրավունքի այն սկզբունքին, որն արգելում է արդարադատության մերժումը: 6-րդ հոդվածի 1-ին կետը պետք է ընթերցվի այս սկզբունքների դիրքերից:

Եթե 6-րդ հոդվածի 1-ին կետը պետք է հասկացվեր միայն որպես դատարանում արդեն սկսված վարույթի վրա ազդեցություն ունեցող դրույթ, ապա պայմանավորվող պետությունները կարող էին, առանց տեքստը խախտելու, շրջանցել իրենց դատարանները կամ նրանցից վերցնել որոշ կարգի քաղաքացիական հայցերի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությունը՝ հանձնելով այն կառավարությունից կախման մեջ եղող մարմիններին: Այսպիսի ենթադրությունները, որոնք հնարավոր չէ տարանջատել կամայական լիազորությունների վտանգից, լուրջ հետևանքներ կունենային՝ հակասելով վերը նշված սկզբունքներին, ինչը դատարանը չի կարող անտեսել (*Լոլեսի (Lawless)* 1961 թ. հուլիսի 1-ի վճիռը, շարք A, թիվ 3, էջ 52, *Դելկուրի (Delcourt)* 1970 թ. հունվարի 17-ի վճիռը, շարք A, թիվ 11, էջ 14-15):

Դատարանի կարծիքով՝ հնարավոր չէ ըմբռնել, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը պետք է մանրամասն նկարագրի ընթացիկ դատական գործում կողմերին տրամադրվող ընթացակարգային երաշխիքները, սակայն չպետք է առաջին հերթին պաշտպանի դատարան մտնելու իրավունքը, ինչի միջոցով է միայն, որ կողմերը կարող են օգտվել այդ երաշխիքներից: Եթե դատավարություն տեղի չի ունենում, ապա այդ վարույթի արդար, հրապարակային և արագ բնորոշումներն առհասարակ արժեզրկվում են:

36. Եթե ի մի բերենք բոլոր նախորդ նկատառումները, կստացվի, որ դատարան դիմելու իրավունքը 6-րդ հոդվածի 1-ին կետի նշված իրավունքի բաղկացուցիչ մասն է: Սա պայմանավորվող պետությունների վրա նոր պարտավորություններ դնող լայն մեկնաբանություն չէ: Այն հիմնված է 6-րդ հոդվածի 1-ին կետի առաջին նախադասության սահմանումների վրա, որոնք ընթերցվում են իրենց համատեքստում, և հաշվի առնելով կոնվենցիայի՝ որպես օրինաստեղծ համաձայնագրի առարկան և նպատակը (տե՛ս *Վեմհոֆի (Wemhoff)* 1968 թ. հունիսի 27-ի վճիռը, շարք A, թիվ 7, էջ 23, պարբ. 8)՝ նաև իրավունքի ընդհանուր սկզբունքների վրա:

Այսպիսով, առանց Վիեննայի կոնվենցիայի 32-րդ հոդվածով նախատեսված «մեկնաբանության լրացուցիչ» միջոցներին դիմելու անհրաժեշտություն զգալու՝ դատարանը եզրակացնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը բոլորի համար երաշխավորում է իրենց քաղաքացիական իրավունքներին և պարտավորություններին վերաբերող յուրաքանչյուր հայց դատարանին կամ տրիբունալին ներկայացնելու իրավունք: Այս կերպ հոդվածն ամփոփում է «դատարանի իրավունքը», դատարան մտնելու իրավունքը (այսինքն՝ քաղաքացիական հայցերով դատարանում վարույթ սկսելու իրավունքը) դրա ընդամենը մեկ կողմն է: Ինչ վերաբերում է դատարանի ձևավորմանը, կազմին և քննության կարգին, ապա սրան ավելացվում են նաև 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված երաշխիքները: Արդյունքում՝ սրանց ամբողջությունը կազմավորում է արդար դատաքննության իրավունքը: Դատարանը սույն գործում կարիք չունի պարզելու, թե արդյոք և որքանով է 6-րդ հոդվածի 1-ին կետն այնուհետև պահանջում վեճի բուն էության վերաբերյալ որոշման կայացում (անգլերեն՝ determination, ֆրանսերեն՝ decidera):

Բ. «ԵՆԹԱԴՐՅԱԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ» ՄԱՍԻՆ

37. Քանի որ դատարան մտնելու խոչընդոտները... ազդել են 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքի վրա, մնում է որոշել, թե արդյոք բոլոր դեպքերում դա արդարացվա՞ծ է եղել այդ իրավունքի նկատմամբ որոշակի օրինական սահմանափակման հիմքերով:

38. Ընդունելով հանձնաժողովի տեսակետները և կառավարության այլընտրանքային բացատրությունը՝ դատարանը կարծում է, որ դատարաններ դիմելու իրավունքը բացարձակ իրավունք չէ: Քանի որ սա իրավունք է, որը կոնվենցիան շարադրում է (տե՛ս 13-րդ, 14-րդ, 17-րդ և 25-րդ հոդվածները) առանց այդ հասկացության ավելի նեղ սահմանումը տալու, բացի բուն իրավունքի բովանդակության նկատմամբ կիրառելի սահմանափակումներից, կա նաև անուղղակի սահմանափակումների կիրառման հնարավորություն...

39. Կառավարությունը և հանձնաժողովը հղում են արել պետությունների ազգային օրենքների՝ դատարան մտնելու մասին դրույթներին՝ հատկապես անդրադառնալով դիմելու սահմանափակումներին, որոնք, օրինակ, վերաբերում են անչափահասներին և հոգեկան հիվանդ անձանց: Գոլդերի կողմից բողոքարկվող սահմանափակումը այդպիսի սահմանափակման մի օրինակ է, թեպետ շատ ավելի քիչ է կիրառվում և միանգամայն ուրիշ բնույթ ունի:

Դատապարտված բանտարկյալների դեպքում ընդունելի ընդհանուր սահմանափակումների տեսություն մշակելը կամ կոնվենցիայի հետ 1964 թ. «Բանտային կանոնակարգերի» ... համապատասխանության վերաբերյալ վերացական (in abstracto) որոշում կայացնելը դատարանի գործառույթը չէ: Ունենալով գործ, որը սկսել է անհատի բերած հայցից, դատարանից պահանջվում է արտահայտվել միայն այն հարցի վերաբերյալ, թե արդյոք այդ [բանտային] կանոնների կիրառությունը տվյալ դեպքում կոնվենցիայի խախտո՞ւմ է եղել՝ ի վնաս Գոլդերի (*Դե Բեկերի (De Becker)* 1962 թ. մարտի 27-ի վճիռ, շարք A, թիվ 4, էջ 26):

40. Այս կապակցությամբ դատարանը սահմանափակվում է՝ նշելով հետևյալը:

Ներքին գործերի քարտուղարին փաստաբանի հետ խորհրդակցելու միջնորդություն ներկայացնելով՝ Գոլդերը նպատակ է ունեցել հետապնդել Էյլըրդին զրպարտության համար և արդարացնել իրեն՝ վերացնելով այն մեղադրանքը, որը ներկայացվել էր նրա բանտի աշխատակցի կողմից 1969 թ. հոկտեմբերի 25-ին և նրա համար ունեցել էր տհաճ հետևանքներ... Բացի այդ, քննարկվող դատական քննությունը պետք է անդրադառնար բանտային կյանքի հետ կապված մի միջադեպի, որը տեղի է ունեցել դիմողի՝ բանտում գտնվելու ժամանակ: Վերջապես, այդ դատաքննությունը պետք է ուղղված լիներ բանտի աշխատակազմի անդամի դեմ, որը մեղադրանքն առաջադրել էր իր պարտականություն-յունների կատարման ժամանակ և ենթակա էր ներքին գործերի քարտուղարին:

Այդ հանգամանքներում դատական վարույթ սկսելու նպատակով Գոլդերը կարող էր փաստաբանի հետ խորհրդակցելու արդարացի ցանկություն ունենալ: Այս հայցի հեռանկարների գնահատումը ներքին գործերի քարտուղարի խնդիրը չէր: Յուրաքանչյուր բարձրացված հայցի վերաբերյալ որոշման կայացումը անկախ և անաչառ դատարանի գործն էր: Մերժելով այս խնդրանքը՝ ներքին գործերի քարտուղարը չի հարգել Գոլդերի՝ 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված դատարան մտնելու իրավունքը...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

Ինը կողմ և երեք դեմ ձայներով՝ վճռում է, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում ...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Բալլադորե Պալիերին և դատավորներ Մոզլերը, Ռոդենբըրգը, Կրեմոնան, Պեդերսենը, Վիլջաուլմսոնը, Ռիսդալը, Բոզերը և Գանսհոֆ վան դեր Մերշը: Դատավորներ Վերդրոսը, Զեքիան և Ֆիտցմորիսն արտահայտել են չհամընկնող կարծիք՝ եզրակացնելով, որ եթե պայմանավորվող պետությունները նպատակ ունենային կոնվենցիայի մեջ մտցնել քաղաքացիական դատարաններ մտնելու իրավունքը, դա հստակ կշարադրեին կոնվենցիայի տեքստում:

2 Վերը նշված վճիռը նշանակալից է մի շարք պատճառներով: Նախ՝ բացահայտել է այն ընդհանուր սկզբունքները և մեթոդաբանությունը, որը դատարանը պետք է կիրառի, որպեսզի մեկնաբանի կոնվենցիայում ամփոփված իրավունքները, մասնավորապես՝ առաջնորդվելով Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայում մշակված ուղենիշներով: Երկրորդ՝ 6(1) հոդվածի մեկնաբանությամբ դատարանը ցուցաբերել է ազատական մոտեցում, որը հեշտացրել է արդար դատաքննության/դատալսման ենթադրյալ, ինչպես նաև հստակ արտահայտված իրավունքների պաշտպանությունը: Երրորդ՝ որոշումն արտացոլում է դատարանի մտահոգությունը բանտարկյալների իրավունքների պաշտպանության առնչությամբ: Սա մի խումբ է, որ պատմականորեն ազգային օրենքով սահմանված իրավունքներ չի ունեցել այնպիսի երկրներում, որոնց շարքն է դասվում նաև Միացյալ Թագավորությունը (բանտարկյալներին վերաբերող այլ գործերի վերաբերյալ տե՛ս ստորև՝ էջ 593, գլուխ 10):

3 Դատարանն իր հետագա վճիռներում հստակեցրել է ազգային դատարան մտնելու իրավունքը՝ որոշելով, որ 6(1) հոդվածը երաշխավորում է դատարաններ արդյունավետորեն մտնելու հնարավորությունը: Իրավունքի այսպիսի զարգացումը կարող է առաջացնել անձանց դիմելն ազգային դատարաններ հեշտացնելու ուղղությամբ պետությունների դրական քայլերի ձեռնարկման անհրաժեշտություն: *«Էյրին ընդդեմ Իռլանդիայի» (Airey v Ireland*, A.32 (1979) 2 EHRR 305) գործի դիմողը համեստ ծագում և միջոցներ ունեցող ամուսնացած կին էր (նրա շաբաթական աշխատավարձը կազմել է 40 ֆունտ ստեռլինգ), որ մի քանի տարի շարունակ փորձել էր դատարանի որոշման միջոցով առանձնանալ իր նկատմամբ բռնություն գործադրելու համար մեղավոր ճանաչված ամուսնուց: Ըստ Իռլանդիայի օրենքի՝ այդպիսի որոշում կարող էր կայացնել միայն բարձր դատարանը: Նման որոշում ձեռք բերելու հետ կապված իրավաբանական ծախսերը կարող էին կազմել 500-1200 ֆունտ ստեռլինգ: Քանի որ Իռլանդիայում քաղաքացիական գործերի համար իրավաբանական օգնություն տրամադրելու համակարգ չի գործել, դիմողն ի վիճակի չի եղել գտնել փաստաբան, որը կցանկանար վերցնել նրա գործը: Դրանից հետո նա բողոքել է հանձնաժողովին՝ հայտնելով, ի թիվս այլոց, որ Իռլանդիայի իրավական համակարգն իրեն գործնականում զրկել է դատարան մտնելու իրավունքից: Հանձնաժողովը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում: Հինգ կողմ և երկու դեմ ձայներով՝ դատարանը բավարարել է նրա հայցը:

24. Կառավարությունն առարկում է, որ դիմողը բարձր դատարանի դիմելու իրավունք ունի և ազատ կարող է գնալ այդ դատարան՝ առանց փաստաբանից աջակցություն ստանալու:

Այս հնարավորությունը դատարանն ինքնին վճռորոշ չի համարում: Կոնվենցիան նպատակ ունի երաշխավորել ոչ թե տեսական կամ վերացական, այլ գործնական և գործող իրավունքներ (տե՛ս mutatis mutandis *«Բելգիայի լեզվաբանականի»* 1968 թ. հուլիսի 23-ի վճիռը, շարք A, թիվ 6, էջ 31, պարբ. 3, վերջին մասը և 4, վերը նշված *Գոլդերի* վճիռը, էջ 18, պարբ. 35)... Սա հատկապես վերաբերում է դատարանների մատչելիության իրավունքին, քանի որ ժողովրդավարական հասարակությունում մեծ դեր ունի արդար դատաքննության իրավունքը... Հետևաբար, հարկ է պարզել, թե արդյոք առանց փաստաբանի բարձր դատարան ներկայանալը տկն Էյրիի համար արդյունավետ կլինե՞ր այն առումով, որ նա կարողանար իր գործը ներկայացնել պատշաճ և բավարար մակարդակով:

Այս հարցի վերաբերյալ բանավոր լսումների ժամանակ կառավարությունը և հանձնաժողովը արտահայտել են իրարամերժ տեսակետներ: Դատարանին հավաստի է թվում, որ դիմողը կհայտնվեր անբարենպաստ իրավիճակում, եթե նրա ամուսինը դատարանում ներկայացվեր փաստաբանի միջոցով, իսկ ինքը՝ ոչ: Դատարանի կարծիքով, այս հնարավորությունը մի կողմ թողնելով, իրատեսական չէ ենթադրել, որ այս կարգի դատավարությունում դիմողը կարող էր

արդյունավետորեն վարել իր գործը՝ անկախ դատավորի կողմից ներկայացուցիչներ չունեցող կողմերին տրամադրվող օժանդակությունից, ինչը շեշտվել է կառավարության կողմից:

Իռլանդիայում հնարավոր չէ [ամուսնական զույգերի] ապահարզանի մասին դատական որոշում ձեռք բերել շրջանային դատարանից, որտեղ ընթացակարգը համեմատաբար պարզ է: Այդ որոշումը կարող է ձեռք բերվել միայն բարձր դատարանից: Իռլանդիայի ընտանեկան օրենսդրության մասնագետ պրն Ական Ջ. Շաթթերը կարծում է, որ բոլոր դատարաններից ամենաքիչ մատչելին բարձր դատարանն է և ոչ միայն այն պատճառով, որ «այնտեղ ներկայացվելու համար սահմանված են շատ բարձր վճարներ», այլ որովհետև «վարույթ սկսելու ընթացակարգը, ... մասնավորապես այն վարույթների դեպքում, որոնք պետք է սկսվեն հայց ներկայացնելուց հետո», և որոնց թվին են պատկանում [ամուսնական զույգերի] ամուսնալուծության գործերը, շատ բարդ է (Family Law in the Republic of Ireland, Dublin 1977, p. 21):

Բացի այդ, այս կարգի վարույթներում, օրենքի բարդ հոդվածներ վկայակոչելուց բացի, պահանջվում են անհավատարմության, անբնական գործողությունների կամ, ինչպես տվյալ գործում, բռնության վերաբերյալ ապացույցներ: Փաստերն ապացուցելու համար կարող է փորձագիտական ապացույցներ ներկայացնելու, վկաներին գտնելու, կանչելու և հարցաքննելու անհրաժեշտություն ծագել: Մանավանդ որ ընտանեկան վեճերը հաճախ առաջացնում են այնպիսի զգացմունքներ, որոնք դժվար թե հնարավոր լինի համատեղել դատարանում պահանջվող փաստաբանական օբյեկտիվության հետ:

Այս հիմքերով դատարանը համարում է խիստ անհավանական, որ տկն Էյրիի վիճակում գտնվող անձնավորությունն ... ի վիճակի է արդյունավետորեն ներկայացնել իր գործը: Այս տեսակետը հիմնավորվում է դատարանի առաջադրած հարցերին կառավարության տված պատասխաններով: Այդ պատասխանները բացահայտում են, որ 1972 թ. հունվարից մինչև 1978 թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում Իռլանդիայում դատական կարգով ամուսնալուծության 255 վարույթներից յուրաքանչյուրի դեպքում հայցվորը ներկայացված է եղել փաստաբանի միջոցով...

Դատարանը եզրակացնում է վերոհիշյալից, որ բարձր դատարանում անձամբ ներկայանալու հնարավորությունը դիմողի համար չի ապահովում մատչելիության արդյունավետ իրավունք...

25. Կառավարությունը փորձում է ցույց տալ, որ *Գոլդերի (Golder)* գործը տարբերվում է սրանից, քանի որ այդ դեպքում փաստաբանի հետ ներքին գործերի քարտուղարի խորհրդակցությունն արգելելու դրական խոչընդոտի միջոցով պետությունը խանգարել է դիմողին մտնել դատարան: Կառավարությունը պնդում է, որ ի տարբերություն այդ գործի՝ սույն գործում պետության կողմից կիրառված դրական արգելք չկա, ինչպես նաև դատարան դիմելը խոչընդոտելու նպատակով պետությունը որևէ միտումնավոր փորձ չի արել: Դատարան մտնելու հնարավորության բացակայությունն առաջացել է ոչ թե իշխանությունների կատարած որևէ գործողությունից, այլ տկն Էյրիի անձնական հանգամանքներից, որոնց համար Իռլանդիան կոնվենցիայի շրջանակներում չի կարող պատասխանատվություն կրել:

Անշուշտ, ճիշտ է, որ այս երկու գործերի փաստերի միջև նման տարբերություն կա, սակայն դատարանը համաձայն չէ դրանից կառավարության արած հետևությանը: Նախ՝ իրականում խոչընդոտը կարող է հակասել կոնվենցիային ճիշտ նույն կերպ, ինչ իրավական արգելքը (վերը նշված *Գոլդերի* վճիռը, էջ 13, պարբ. 26): Բացի այդ, կոնվենցիայով նախատեսված պարտավորության կատարումը երբեմն պահանջում է, որ պետությունները [դրա ուղղությամբ] ձեռնարկեն որոշ դրական քայլեր, և այդ դեպքում պետությունը չի կարող սոսկ չեզոք լինել, մինչդեռ «հնարավոր չէ ... գործողությունները տարբերել բացթողումներից» (տե՛ս mutatis mutandis, վերը նշված *Մարքսի (Marckx)* վճիռը, էջ 15, պարբ. 31)... Դատարանի մատչելիության արդյունավետ իրավունքի ապահովումը դասվում է այս պարտավորությունների շարքը:

26. Ըստ կառավարության՝ իր սկզբունքային առարկությունն առաջացել է հանձնաժողովի արտահայտած կարծիքից հետո, համաձայն որի՝ «քաղաքացիական իրավունքի» հարցերին վերաբերող որոշումներ կայացնելու բոլոր դեպքերում պետությունը պետք է ապահովի անվճար իրավաբանական օգնություն: Իրականում անվճար իրավաբանական օգնության տրամադրման մասին հստակ խոսվում է միայն կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(գ) կետում, որը վերաբերում է քրեական վարույթներին և ենթակա է սահմանափակումների: Ավելին, համաձայն հանձնաժողովի սահմանած նախադեպային իրավունքի՝ 6-րդ հոդվածի 1-ին կետը, որպես այդպիսին, չի երաշխավորում անվճար իրավաբանական օգնության տրամադրում: Կառավարությունն ավելացնում է, թե քանի որ Իռլանդիան կոնվենցիան վավերացնելու ժամանակ քրեական գործերով իրավաբանական օգնություն տրամադրելու ոլորտում իր պարտավորությունները սահմանափակելու նպատակով վերապահում է արել 6-րդ հոդվածի 3(գ) կետի առնչությամբ, ապա *a fortiori* հնարավոր չէ ասել, որ նա համաձայնել է քաղաքացիական գործերով անսահմանափակ իրավաբանական օգնություն տրամադրել: Վերջապես, համաձայն կառավարության բացատրության, կոնվենցիան չպետք է մեկնաբանվի որպես պայմանավորվող պետություններում սոցիալական և տնտեսական զարգացումների ապահովմանն ուղղված փաստաթուղթ: Այդ զարգացումները կարող են ունենալ միայն աստիճանական բնույթ:

Դատարանին հայտնի է, որ սոցիալական և տնտեսական իրավունքների հետագա իրականացումը մեծապես կախված է տվյալ պետության իրավիճակից (հատկապես՝ ֆինանսական իրավիճակից): Մյուս կողմից՝ կոնվենցիան պետք է մեկնաբանվի ներկա դրության պայմաններում (վերը նշված *Մարքսի* վճիռը, էջ 19, պարբ. 41) և նախատեսված է դրանում ընդգրկված ոլորտներում անձին իրատեսական և գործնական պաշտպանություն ցույց տալու համար (տե՛ս վերը, պարբ. 24): Կոնվենցիայում շարադրված է, թե սկզբունքորեն որոնք են քաղաքացիական և քաղաքական իրավունքներ: Այդ իրավունքներից շատերը, սակայն, առաջացնում են սոցիալական և տնտեսական բնույթի ազդեցութ-

յուններ: Հետևաբար, ինչպես հանձնաժողովը, դատարանը նույնպես կարծում է, որ միայն այն փաստը, որ կոնվենցիայի մեկնաբանությունը կարող է տարածվել սոցիալական և տնտեսական իրավունքների ոլորտի վրա, չպետք է լինի այս մեկնաբանության դեմ ուղղված որոշիչ գործոն. այս ոլորտը հնարավոր չէ հստակ տարանջատել կոնվենցիայի մեջ ընդգրկված ոլորտից:

Բացի այդ, դատարանը հավանություն չի տալիս հանձնաժողովի կարծիքի պատճառով առաջացած հետևանքների վերաբերյալ կառավարության տեսակետին:

Սխալ կլիներ ընդհանրացնել այն եզրակացությունը, ըստ որի՝ բարձր դատարանում անձամբ ներկայանալու հնարավորությունը տկն Էյրիի համար դատարանի մատչելիության արդյունավետ իրավունք չի ապահովում: Նման եզրակացությունը ճիշտ չէ «քաղաքացիական իրավունքներին և պարտավորություններին» վերաբերող բոլոր գործերի առնչությամբ կամ այդպիսի գործերի մեջ ներգրավված բոլոր անձանց համար: Որոշ դեպքերում դատարանում անձամբ և նույնիսկ առանց փաստաբանի աջակցության ներկայանալու հնարավորությունը կարող է բավարարել 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները: Որոշ դեպքերում այդպիսի հնարավորություն կարող է ապահովել նույնիսկ բարձր դատարան մտնելու պատշաճ հնարավորությունը: Իրավամբ, շատ բան կախված է առանձնահատուկ հանգամանքներից:

Բացի այդ, թեպետ 6-րդ հոդվածի 1-ին կետը դատավարության կողմերի համար երաշխավորում է իրենց «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների» որոշման համար դատարաններ արդյունավետ մտնելու իրավունքը, սակայն պետությունների հայեցողությանն է թողնում այդ նպատակին հասնելու համար միջոցների ազատ ընտրությունը: Ընտանեկան իրավունքի ոլորտում Իռլանդիայում նախատեսվող իրավաբանական օգնության համակարգի ստեղծումն ...այդպիսի միջոցներից մեկն է, սակայն կան այլ միջոցներ, որոնց շարքն է դասվում, օրինակ, ընթացակարգերի պարզեցումը: Ամեն դեպքում դատարանի գործառույթը չէ նշել, կամ, առավել ևս, թելադրել, թե ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն: Կոնվենցիայի պահանջն այն է ընդամենը, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ հակասության մեջ չգտնվող պայմաններում անձը պետք է կարողանա օգտվել դատարան մտնելու իր գործուն իրավունքից...

Հետևաբար, 24-րդ պարբերությունում արված եզրակացությունը չի նշանակում, որ պետությունը պետք է անվճար իրավաբանական օգնություն տրամադրի «քաղաքացիական իրավունքին» վերաբերող յուրաքանչյուր գործի դեպքում:

Դատարանը համաձայն է, որ այսքան հեռուն գնացող պարտավորության առկայության մասին վճռի կայացումը չի համապատասխանում այն իրողությանը, որ կոնվենցիայում ամրագրված չէ այս վեճերի համար իրավաբանական օգնություն տրամադրելու դրույթ, իսկ 6-րդ հոդվածի 3(գ) կետը վերաբերում է միայն քրեական գործերով վարույթներին: Այնուամենայնիվ, թեպետ քաղաքացիական վարույթի առնչությամբ նման դրույթ գոյություն չունի, 6-րդ հոդվածի 1-ին կետը երբեմն կարող է դրդել պետություններին, որ իրավաբանական օգնություն ապահովեն այն դեպքերում, երբ այդպիսի օգնությունն անբաժանելի է դատարան գործնականում մտնելու հանգամանքից, կամ երբ իրավաբանական ներկայացուցչությունը պարտադիր է՝ համաձայն մի շարք պայմանավորվող պետությունների՝ տարբեր բնույթի դատական վարույթների համար նախատեսված ազգային օրենքի, կամ ինչը պայմանավորված է գործի վարույթի բարդությամբ:

Ինչ վերաբերում է 6-րդ հոդվածի 3(գ) կետի առնչությամբ Իռլանդիայի արած վերապահմանը, ապա չի կարելի մեկնաբանել, որ այն տարածվում է 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված պարտավորությունների վրա: Հետևաբար, այն կապ չունի սույն համատեքստի հետ:

27. Դիմողը չի կարողացել փաստաբան գտնել, որը կցանկանար դատական կարգով ամուսնալուծվելու դատավարությունում ներկայացնել նրա շահերը: Հանձնաժողովը եզրակացրել է, թե ինչու այն փաստաբանները, որոնց նա դիմել է, պատրաստ չեն եղել դրան. նա ի վիճակի չի եղել վճարելու դրա հետ կապված ծախսերը: Կառավարությունը հարցականի տակ է դնում այս կարծիքը, սակայն դատարանը կարծում է, որ սա մոտ է ճշմարտությանը: Բացի այդ, փաստեր, որոնք կհերքեին սա, չեն ներկայացվել:

28. Հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները՝ դատարանը եզրակացնում է, որ ամուսնուց դատական կարգով ամուսնալուծվելու հայց բերելու համար տկն Էյրին չի օգտվել բարձր դատարան դիմելու արդյունավետ իրավունքից:
Հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում...

Անչափ ողջունելի զարգացում է, որ դատարանը նման ուշադրություն է նվիրում անձանց դատարան դիմելու իրավունքի գործնական հնարավորությանը: Մշտական գործող դատարանի կողմից այն հանգամանքների վերլուծությունը, որոնց դեպքում պետությունները պարտավոր են իրավաբանական օժանդակություն տրամադրել անվճարունակ քաղաքացիական դիմողներին, ակնհայտ է *«Ստիլը և Մորիսն ընդդեմ ՄԹ-ի» (Steel and Morris v UK)* գործից, որը ներկայացված է ստորև՝ էջ 424:

4 Անձի՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակումների նկատմամբ դատարանի մոտեցումը բացատրված է *«Ստաբբինգսն ընդդեմ ՄԹ-ի» (Stubbings v UK* (1996) 23 EHRR 213, 1996-IV) գործում: Օրիորդ Ստաբբինգսը ծնվել է 1957 թ. և որդեգրվել 3 տարեկան հասակում: 1976 թ. նա լուրջ

հոգեբանական խնդիրներ է ունեցել: 1984 թ. ընտանեկան հոգեբույժի մոտ բուժում ստանալուց հետո նա հասկացել է, որ հավանաբար կապ կա հոգեկան առողջության խնդիրների և մանուկ տարիքում կրած սեռական բռնության միջև, որին, իր ասելով, ենթարկվել է իրեն որդեգրած ընտանիքում: 1987 թ. նա քաղաքացիական վարույթ է սկսել իրեն որդեգրած հոր և եղբոր դեմ՝ նպատակ ունենալով նրանցից ստանալ վնասի փոխհատուցում: Պաշտպանյալները ձգտել են, որ նրա հայցը վաղեմության ժամկետի հիմքերով մերժվի՝ համաձայն 1980 թ. «Վաղեմության ժամկետի մասին» օրենքի: Ի վերջո, Լորդերի պալատը որոշել է, որ նրա հայցը ենթակա է վեց տարվա վաղեմության ժամկետի՝ սկսած նրա տասնութ տարին լրանալու օրվանից: Քանի որ նա իր հայցը ներկայացրել էր 1987 թ., այն մերժվել էր որպես վաղեմության ժամկետն անցած հայց (*«Ստաբբինգսն ընդդեմ Վեբբի» (Stubbings v Webb* [1993] 1), բոլորը ER 322): Յոթ կողմ և երկու դեմ ձայներով՝ դատարանը հայտարարել է, որ.

47. Համաձայն դիմողների՝ չափահասության տարիքից հետո նրանց նկատմամբ կիրառված վեց տարվա վաղեմության ժամկետի սահմանափակումը հակասել է դատարան դիմելու իրավունքի բուն էությանը: Դիմողների սեռական բռնության ենթարկվելու հետևանքներից մեկը եղել է այն, որ նախքան վաղեմության ժամկետի լրանալը նրանք ի վիճակի չեն եղել գիտակցելու, որ դա է իրենց հոգեբանական խնդիրների պատճառը... Փորձագիտական փաստերը ցույց են տվել, որ սովորաբար սեռական բռնության ենթարկված երեխաներն առանց բժշկական միջամտության անկարող են գիտակցել բռնության և իրենց հոգեբանական խնդիրների միջև եղած կապը: Այսպիսով, յուրաքանչյուր դիմողի՝ բռնության ենթարկվելու պատճառով առաջացած վնասի փոխհատուցման պահանջի վաղեմության ժամկետն ավելի շուտ է լրացել, քան նա կկարողանար գիտակցել, որ գործ հարուցելու հիմք ուներ ...

50. Դատարանը նշում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է «դատարանի իրավունքը», որից դատարան դիմելու իրավունքը, այսինքն՝ քաղաքացիական հարցերով դատական քննություն սկսելու իրավունքը ընդամենը դրա մի կողմն է:

Այնուամենայնիվ, այս իրավունքը բացարձակ իրավունք չէ, այլ ենթակա է սահմանափակումների, որոնք թույլատրվում են անուղղակիորեն, քանի որ դիմելու իրավունքն իր բնույթով պետական կարգավորում է պահանջում: Այս առումով պայմանավորվող պետություններն օժտված են հայեցողության որոշակի սահմանով, թեպետ վերջնական որոշումը, որը վերաբերում է կոնվենցիայի պահանջների պահպանմանը, ընդունվում է դատարանի կողմից: Վերջինս պետք է համոզվի, որ կիրառված սահմանափակումները չեն նվազեցնում անձին վերապահված դիմելու հնարավորությունը այնպիսի եղանակով կամ այնքանով, որը հակասում է իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը չի կարող համատեղելի լինել 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն օրինական նպատակ չի հետապնդում, և օգտագործված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն չկա...

51. Հարկ է նշել, որ անձնական վնասին վերաբերող գործերի առնչությամբ բոլոր պայմանավորվող պետություններում գործում են սահմանափակող ժամկետներ: Դրանք ծառայում են մի քանի կարևոր նպատակների, ներառյալ՝ իրավական որոշակիության և վերջնականության ապահովումը, պոտենցիալ պաշտպանյալների պաշտպանությունը հնացած պահանջներից, որոնց հակադրվելը կարող է դժվար լինել, անարդարությունների կանխումը, որոնք կարող են ծագել, եթե դատարաններից պահանջվի որոշում կայացնել այնպիսի իրադարձությունների մասին, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում, ընդ որում, հիմք ընդունելով այնպիսի փաստեր, որոնք ժամանակին զուգընթաց գուցե անհուսալի և թերի են դարձել:

52. Սույն գործում Անգլիայի օրենքով ամրագրված ժամանակային սահմանափակումը հնարավորություն է տվել դիմողներին իրենց տասնութ տարին լրանալուց հետո վեց տարվա ընթացքում քաղաքացիական դատավարություն սկսել: Բացի այդ, կախված բավարար փաստերի առկայությունից՝ ցանկացած ժամանակ կարող է սկսվել քրեական հետապնդում, որի հաջող ավարտի դեպքում կարող է արվել նաև փոխհատուցման կարգադրություն... Այսպիսով, դիմողների՝ դատարան դիմելու իրավունքի բուն էությունը խախտված չի եղել:

53. Խնդրո առարկա ժամանակային սահմանն անհարկի փոքր չէ: Իրոք, այն շատ ավելի երկար է եղել, քան անձնական վնասի առնչությամբ որոշ միջազգային համաձայնագրերով սահմանված մարման ժամկետները... Բացի այդ, եթե դիմողներն իրենց հայցերը ներկայացնեին վաղեմության ժամկետը լրանալուց անմիջապես առաջ, ապա դատարաններից պահանջվելու էր վճիռ կայացնել մոտ քսան տարի առաջ տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ, հետևաբար կիրառված կանոնները համաչափ են եղել հետապնդվող նպատակներին (տե՛ս պարբ. 50):

54. Դիմողների նկատմամբ վաղեմության ժամկետի գործողությունը սկսվել է նրանց չափահասության տարիքից և չէր կարող հանվել կամ երկարացվել... Դատարանին ներկայացված նյութից պարզ է, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում միասնական դիրքորոշում գոյություն չունի քաղաքացիական գործերի նկատմամբ գործող վաղեմության ժամկետի կամ այն ժամանակային պահի առումով, որից սկսած պետք է կատարվի այդ ժամկետների

հաշվարկը: Շատ պետություններում այդ ժամկետի հաշվարկը սկսվում է հայցի պատճառի առաջացման օրվանից, մինչդեռ մյուս իրավական համակարգերում ժամկետը մեկնարկում է միայն այն օրվանից, երբ գործի նյութական փաստերը հայտնի են դառնում կամ պետք է հայտնի դարձած լինեին դիմողին: Այս երկրորդ սկզբունքը վերաբերում է Անգլիայում և Ուելսում անտեսման (negligence) վրա հիմնված քաղաքացիական հայցերին (1980 թ. օրենքի 11(4)(բ) և 14-րդ բաժիններ ...): Այնուամենայնիվ, ներկա պահի դրությամբ չի կարելի ասել, որ այնպիսի գործերի դեպքում, ինչպիսին այս գործն է, այս սկզբունքն ընդհանուր առմամբ ընդունվում է եվրոպական պետություններում:

55. Պայմանագրային պետությունները հայեցողության որոշ սահման ունեն՝ որոշելու համար, թե ինչպես պետք է սահմանափակվի դատարան դիմելու իրավունքը: Պարզ է, որ Միացյալ Թագավորության օրենսդիր մարմինը զգալի ժամանակ է տրամադրել և ուսումնասիրել այս հարցերը: 1936 թվականից հետո ընդունվել են չորս օրենսդրական ակտեր, որոնք լրացրել են և բարեփոխել «Վաղեմության ժամկետի մասին» օրենքը: Վեց պաշտոնական մարմիններ վերանայել են դրա ասպեկտները... Լորդերի պալատի որոշումը (որի վերաբերյալ բողոք է բերվել), ... համաձայն որի՝ կանխամտածված անձնական վնասին վերաբերող գործերի նկատմամբ պետք է կիրառվի անփոփոխ վեց տարվա ժամկետ, կամայական չի եղել, այլ ավելի շուտ հիմնված է եղել 1980 թ. «Վաղեմության ժամկետի մասին» օրենքի հիմքում ընկած Թաքերի կոմիտեի հաշվետվության համաձայն այդ օրենքի մեկնաբանության վրա ...

56. Վերջին տարիներին հետզհետե ավելանում է երեխաների նկատմամբ տեղի ունեցող բռնությունների և զոհերի վրա այդ բռնությունների հոգեբանական ազդեցության մասին իմացությունը: Հնարավոր է, որ այս խմբի գանգատարկուների համար հատուկ վերապահում անելու նպատակով մոտ ապագայում Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում կիրառվող հայցի վաղեմության ժամկետները փոփոխության ենթարկվեն:

Այնուամենայնիվ, քանի որ դիմողների մատչելիության իրավունքի բուն էությունը խախտված չի եղել և խնդրո առարկա սահմանափակումները օրինական նպատակ են հետապնդել և համաչափ են եղել, դատարանի խնդիրը չէ պետության մարմինների կարծիքը փոխարինել սեփական կարծիքով, թե այս առումով որն է ամենանպատակահարմար քաղաքականությունը:

57. Հետևաբար, հաշվի առնելով, մասնավորապես, այն օրինական նպատակները, որոնց ծառայել են խնդրո առարկա վաղեմության ժամկետի կանոնները և դատարան դիմելու իրավունքի կարգավորման հարցերում պետությունների ունեցած հայեցողության սահմանները (տե՛ս վերը՝ պարբ. 50-51), դատարանը համարում է, որ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում առանձնապես տեղի չի ունեցել ...

Ութ կողմ և մեկ դեմ ձայներով՝ դատարանը նաև որոշել է, որ տեղի է ունեցել 14-րդ հոդվածի խախտում 6(1) հոդվածի համակցությամբ: Ձեր կարծիքով՝ որքանո՞վ է այս որոշման վրա ազդել անդամ պետությունների միջև համաձայնության բացակայությունը վաղեմության ժամկետի սկզբի և տևողության առնչությամբ: Հյուսիսային Իռլանդիայում կրոնական/քաղաքական խտրականությանը վերաբերող գործի կարճման նպատակով տրված նախարարական հավաստագրերը գնահատելիս դատարանը միաձայն կիրառել է *Ստաբբինգսի (Stubbings)* վճռի 50-րդ պարբերությունում նկարագրված չափանիշները: «*Թինելլի և որդիներ» ՍՊԸ-ն և Մակէլդաֆն ընդդեմ Մեծ-ի» (Tinnelly & Sons Ltd and McElduff v UK* (1998) 27 EHRR 249, 1998-IV) գործով դիմողները բողոքել են ազատ աշխատանքի հանձնաժողովին/ազատ աշխատանքի տրիբունալին, որ կրոնական/քաղաքական խտրական վերաբերմունքի պատճառով պետական կազմակերպություններն իրենց հետ կա՛մ պայմանագիր չեն կնքել, կա՛մ մերժել են անվտանգության նպատակներով ինքնության ստուգում անցկացնելը: Պետքարտուղարը ստորագրել է վկայականներ՝ առաջնորդվելով «Ազատ աշխատանքի մասին» Հյուսիսային Իռլանդիայի 1976 թ. օրենքի 42-րդ բաժնով, համաձայն որի՝ դիմողների նկատմամբ ձեռնարկված քայլերն արվել են «ի բարօրություն ազգային անվտանգության նպատակների»: Վկայականների պատճառով դիմողները զրկվել են ազգային տրիբունալներ/դատարաններ դիմելու հնարավորությունից: Հանձնաժողովը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում: Դատարանը վճռել է, որ.

61….1976 թ. օրենքը երաշխավորել է կրոնի կամ քաղաքական համոզմունքների պատճառով աշխատանքի շուկայում խտրականությունից զերծ մնալու իրավունքը: Սա ընդգրկում է և առնչվում սույն գործին, որի դեպքում մրցութային հայտ է ներկայացվել պետական շինարարական աշխատանքների պայմանագրի կամ ենթակապալառուական պայմանագրի ձեռք բերման համար: Դատարանի կարծիքով՝ այդ հստակ սահմանված օրինական իրավունքը կոնվենցիայի 6(1) հոդվածի իմաստով կարող է դասակարգվել որպես քաղաքացիական իրավունք՝ հաշվի առնելով այն համատեքստը, որին այն վերաբերում է, և դրա նյութական բնույթը...

77.…Անօրինական խտրականության զոհեր լինելու մասին դիմողների ներկայացրած բողոքի հատկանիշների վերաբերյալ դատական որոշման կայացումը կասեցվել է, քանի որ 42-րդ բաժնի վկայականներն ունեն որոշիչ նշանակություն: Դատարանը նկատում է, որ նույնիսկ ազգային անվտանգության նկատառումների առկայության և գործի մեջ այդ նկատառումների զգալի նյութական մաս կազմելու դեպքում այսպիսի բողոքը կարող էր պատշաճորեն ներկայացվել անկախ դատական որոշման կայացման համար: Դիմողներին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված վեճը դատարանին կամ որևէ տրիբունալի ներկայացնելու և օրենքի ու փաստերի ուժով որոշման կայացման իրավունքը չի կարող փոխարինվել գործադիր մարմինների ipse dixit-ով [մերկապարանոց պնդումներով]:

Հետևաբար, վկայականները դիմողների՝ դատարան դիմելու հնարավորության նկատմամբ կիրառված անհամաչափ սահմանափակում են: Ակնհայտորեն, դատարանի որոշման մեջ վճռորոշ նշանակություն է տրվել այն հանգամանքին, որ վկայականներն անվիճարկելի բացարձակ ազդեցություն են ունեցել դիմողների գործի ազգային վարույթի վրա: Դատարանը համանման եզրակացության է հանգել Անգլիայում ոստիկանության ոլորտում գործող ոստիկանության անձեռնմխելիության հանրային քաղաքականության վերաբերյալ, համաձայն որի՝ հանցագործությունների հետաքննության և կասեցման ընթացքում դրսևորած անփութության համար ոստիկաններն ազատվում են պատասխանատվությունից (օժտված են անձեռնմխելիությամբ): *«Օսմանն ընդդեմ ՄԹ-ի» (Osman v UK)* գործում (տե՛ս վերը՝ էջ 64) դատարանը միաձայն եզրակացրել է, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում:

150. Ուղղված լինելով ոստիկանական ծառայության արդյունավետության պահպանմանը և, հետևաբար, անկարգության և հանցագործության կանխմանը՝ այս կանոնի նպատակը կոնվենցիայի շրջանակներում կարող է օրինական համարվել: Սակայն համաչափության հարցի քննարկման ժամանակ դատարանը հատուկ ուշադրություն պետք է դարձնի դրա գործողության շրջանակին և հատկապես՝ տվյալ գործում դրա կիրառությանը: Թեև կառավարությունն առարկել է, որ օրենքի առջև պատասխանատու լինելու կանոնից արվող բացառությունը բացարձակ բնույթ չունի, ... և դրա կիրառությունը կարող է ենթակա լինել հանրային քաղաքականության այլ նկատառումների ազդեցության, դատարանն այնպիսի տպավորություն է ունեցել, որ տվյալ դեպքում վերաքննիչ դատարանը գործել է՝ ելնելով զուտ այն հիմքից, որ այս կանոնը անձեռնմխելի պաշտպանություն է ապահովում ոստիկանությանը, և հանցագործությունների հետաքննության ու կանխման բնագավառում ոստիկանության գործողությունների ու թերացումների համար ոստիկանության դեմ քաղաքացիական հայցեր հարուցելու նպատակով հնարավոր չէ հասնել այս անձեռնմխելիության վերացմանը:

151. Դատարանը նկատում է, որ այս կանոնի նման կիրառությունը, առանց մրցակցող հանրային շահի առկայության պարզման, ծառայում է միայն հանցագործությունների հետաքննությանը և կանխմանն ուղղված ոստիկանական գործողությունների և թերացումների նկատմամբ ընդհանուր բնույթի անձեռնմխելիություն կիրառելու նպատակին և հավասար է դիմողի՝ ոստիկանության դեմ հարուցված համապատասխան գործերի հատկանիշների վերաբերյալ դատական որոշում ունենալու իրավունքի անարդարացի սահմանափակման...

Դատարանը դարձյալ որոշել է, որ տեղի է ունեցել դիմողի՝ դատարան դիմելու իրավունքի անհամաչափ սահմանափակում՝ ելնելով անձեռնմխելիության համապարփակ բնույթից:

5 2001 թ. նոյեմբերի նույն օրը մեծ պալատները կայացրել են երեք կարևոր վճիռ, որոնք վերաբերել են միջազգային իրավունքի կանոնների և պետության ինքնիշխան անձեռնմխելիության ու դատարան դիմելու ածանցյալ իրավունքի փոխհարաբերությանը: *«Ալ Ադսանին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Al-Adsani v United Kingdom)* (2001 թ. նոյեմբերի 21-ի վճիռ) գործով դիմողը ունեցել է Բրիտանիայի և Քուվեյթի երկքաղաքացիություն: Նա հայտնել է, որ 1991 թ. մեկնել է Քուվեյթ, որպեսզի մասնակցի Իրաքի ներխուժման դեմ կազմակերպված պաշտպանությանը: Անդամակցելով դիմադրության շարժմանը՝ նա մնացել է Քուվեյթում, երբ Իրաքը ներխուժել է այդ երկրի տարածք: Ինչ-որ ձևով նա ձեռք է բերել շեյխ Ջաբեր Ալ Սաբահին (որը Քուվեյթի էմիրի ազգականն էր) վերաբերող սեռական բնույթի տեսաժապավեններ: Այդ ժապավենները, այնուհետև, ինչ-որ կերպ տարածվել են: Դրանց տարածման համար շեյխը մեղադրել է դիմողին: 1991 թ. մայիսին, երբ իրաքցիները տեղահանվել են երկրից, շեյխը երկու այլ անձանց հետ մուտք է գործել դիմողի տուն, ծեծի ենթարկել նրան և ստիպել, որ նա հետևի իրենց և նստի կառավարության մեքենան: Նրան տեղափոխել են Քուվեյթի պետական անվտանգության բանտ, որտեղ նա մի քանի օրվա ընթացքում բազմիցս ենթարկվել է բանտի աշխատողների ծեծին: Ազատ արձակվելուց կարճ ժամանակ անց դիմողը կրկին ստիպված է եղել շեյխի հետ կառավարական մեքենայով գնալ էմիրի եղբոր պալատ: Դիմողի գլուխն ընկղմել են

լողավազանի ջրի մեջ, որտեղ եղել են դիակներ: Այնուհետև Ալ Ադսանիին տեղափոխել են մի սենյակ, որտեղ շեյխը, այրելով սենյակում գտնվող կահույքը, նրան պատճառել է նրա մարմնի մեկ քառորդ մասի այրվածքներ: Ավելի ուշ՝ այդ ամիս, դիմողը վերադարձել է ՄԹ՝ բուժում ստանալու նպատակով: 1992 թ. Քուվեյթում իր կրած վնասի փոխհատուցման պահանջով նա քաղաքացիական վարույթ է սկսել շեյխի և Քուվեյթի կառավարության դեմ: Այդ տարվա դեկտեմբերին Ալ Ադսանին հեռակա կարգով շահել է շեյխի դեմ սկսած գործը: Ինքնությունը պարզված երկու անձի՝ որպես ամբաստանյալների ներգրավելու նպատակով 1993 թ. դատավարությունը վերսկսվել է: Օգոստոսին բարձր դատարանը դիմողին թույլտվություն է տվել, որ նա գործ հարուցի անունները հայտնի դարձած երկու պաշտպանյալների, բայց ոչ Քուվեյթի կառավարության դեմ: Այնուհետև վերաքննիչ դատարանը դիմողին թույլատրել է հայց ներկայացնել Քուվեյթի կառավարության դեմ: Այնուամենայնիվ, վկայակոչելով պետության անձեռնմխելիության հիմքերը, Քուվեյթի կառավարությունը պահանջել է գործը կարճելու մասին կարգադրություն անել: Յոթ այլ պետությունների շարքում ՄԹ-ն ևս վավերացրել է 1972 թ. Պետության անձեռնմխելիության մասին եվրոպական կոնվենցիան (Բազելի կոնվենցիան), համաձայն որի՝ պայմանավորվող պետություններն օժտված են անձեռնմխելիությամբ, բացառությամբ այն գործերի, որոնք վերաբերում են թվարկված բացառություններին: 1996 թ. ընթացքում վերաքննիչ դատարանը վճռել է, որ Քուվեյթի կառավարությունն իրավունք է ունեցել 1978 թ. օրենքով պահանջել [հարգել] իր պետական անձեռնմխելիությունը:

Ավելի ուշ դիմողը գանգատ է ներկայացրել Ստրասբուրգ՝ պնդելով, որ Քուվեյթի կառավարության դեմ ներկայացրած իր հայցի մերժումը կոնվենցիայի 6(1) հոդվածով երաշխավորված իր քաղաքացիական իրավունքների խախտում է: Դատարանը վճռել է, որ հայցը ներկայացվել է կրած անձնական վնասի փոխհատուցման համար, որն Անգլիայում հայց ներկայացնելու բավական կայացած հիմք է համարվում: Հետևաբար, 6(1) հոդվածի իմաստով գոյություն է ունեցել «քաղաքացիական իրավունքների» առնչությամբ առաջացած իրական վեճ: Բրիտանիայի կառավարությունը առարկել է, որ դիմողի՝ դատարան դիմելու իրավունքի նկատմամբ կիրառված սահմանափակումը հետապնդել է Բազելի կոնվենցիայում ամփոփված պետության անձեռնմխելիությանը վերաբերող միջազգային հանրային իրավունքի համընդհանուր կիրառման ենթակա սկզբունքներից բխող օրինական նպատակ:

53. Դատարան դիմելու իրավունքը, այնուամենայնիվ, բացարձակ չէ և կարող է սահմանափակումներ ունենալ, որոնք անուղղակիորեն թույլատրվում են, քանի որ դիմելու իրավունքն իր բնույթով պահանջում է պետական կարգավորում: Այս առումով պայմանավորվող պետություններն օժտված են հայեցողության որոշակի սահմաններով, թեպետ կոնվենցիայի պահանջների կատարման վերաբերյալ վերջնական որոշումը դատարանն է կայացնում, որը պետք է համոզվի, որ կիրառված սահմանափակումները չեն նվազեցնում անձին թույլատրված մուտքն այնպես կամ այնքանով, որ խախտվում է իրավունքի բուն էությունը: Բացի այդ, սահմանափակումը համատեղելի չի լինի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն օրինական նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն չկա...

Ձայների չնչին տարբերությամբ (ինը կողմ և ութ դեմ) որոշվել է, որ Անգլիայի դատարանների կողմից դիմողի հայցը վերադարձնելու գործողությունը հետապնդել է օրինական նպատակ և այդ նպատակին համաչափ է եղել: Նախորդ չափանիշը բավարարված է եղել, քանի որ «54. …քաղաքացիական գործերի կապակցությամբ մեկ այլ պետության ինքնիշխանությունը հարգելու միջոցով նրան ինքնիշխան անձեռնմխելիությամբ օժտելը հետապնդում է պետությունների միջև բարյացակամության և լավ հարաբերությունների հաստատման միջազգային իրավունքի օրինական նպատակ»: Ինչ վերաբերում է վերջինին, ապա դատարանը որոշել է, որ.

55. …Որքան հնարավոր է, կոնվենցիան պետք է մեկնաբանվի միջազգային իրավունքի մյուս նորմերին (որոնց մասն է կազմում նաև այդ կոնվենցիան), ներառյալ պետության անձեռնմխելիությանը վերաբերող նորմերին համահունչ:

56. Սրանից հետևում է, որ բարձր պայմանավորվող կողմի ձեռնարկած միջոցները, որոնք վեր են հանում պետության անձեռնմխելիությանը վերաբերող միջազգային հանրային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող նորմերը, սկզբունքորեն չեն կարող համարվել 6-րդ հոդվածի 1-ին կետում ձևակերպված դատարան դիմելու իրավունքն անհարկի խոչընդոտող միջոցներ: Ինչպես դատարան դիմելու իրավունքն է այդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության

երաշխիքի բաղկացուցիչ մասը համարվում, այնպես էլ դիմելու որոշ սահմանափակումներ (ինչպես, օրինակ՝ ազգերի համայնքի կողմից համընդհանուր ճանաչման արժանացած պետությունների անձեռնմխելիության սկզբունքի մաս կազմող սահմանափակումները) պետք է համարվեն դրա մասը:

Մեծամասնությունը, այնուամենայնիվ, մերժել է դիմողի տեսակետը, ըստ որի՝ հանրային ոլորտի ընդհանուր միջազգային իրավունքի շրջանակներում ներկայումս գործում են հիմնական սկզբունքներ (jus cogens), որոնք թույլ չեն տալիս պետությանն իր տարածքում կատարված խոշտանգման գործողությունների կապակցությամբ մեկ այլ պետության տարածքում հարուցված քաղաքացիական գործերի առնչությամբ անձեռնմխելիություն պահանջել:

61. Հիմք ընդունելով այս հեղինակավոր աղբյուրները՝ դատարանն ընդունում է, որ միջազգային իրավունքի ոլորտում խոշտանգման արգելքը հասել է բացարձակ նորմի կարգավիճակի, սակայն նկատում է, որ տվյալ գործը, ի տարբերություն [*«Դատախազն ընդդեմ] Ֆուրունձիյայի» ([Prosecutor v] Furundzija* [ICTY: (1999) 38 ILM 317]) և [*«R-ն [Թագուհին] ընդդեմ Բոու սթրիթի քաղաքային վարձատրվող մագիստրատի և այլոց Պինոչետ Ուգարտեի առնչությամբ»*] ([*R. v Bow Street Metropolitan Stipendiary Magistrate and Others, ex parte Pinochet Ugarte* (թիվ 3) [2000] AC 147]) գործերի որոշումների, ոչ թե վերաբերում է խոշտանգման ենթադրյալ գործողությունների համար անձի քրեական պատասխանատվությանը, այլ տվյալ պետության տարածքում խոշտանգման վնասի փոխհատուցման քաղաքացիական գործերում այդ պետության անձեռնմխելիությանը: Չնայած միջազգային իրավունքի շրջանակներում խոշտանգման արգելքի առանձնահատուկ բնույթին՝ դատարանը չի կարող իր առջև գտնվող միջազգային փաստաթղթերի, դատական կամ այլ նյութերի մեջ գտնել որևէ ամուր հիմք, որպեսզի եզրակացնի, որ միջազգային իրավունքի շրջանակներում քաղաքացիական հայցերի առումով պետությունն այլևս օժտված չէ անձեռնմխելիությամբ: Մասնավորապես, դատարանը նկատում է, որ նշված հիմնական փաստաթղթերից (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 5-րդ հոդված, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ և 4-րդ հոդվածներ, Միավորված ազգերի կազմակերպության Խոշտանգման դեմ կոնվենցիա) ոչ մեկը չի վերաբերում քաղաքացիական վարույթներին կամ պետության անձեռնմխելիությանը:

62. Ճիշտ է, որ Միջազգային իրավունքի հանձնաժողովի աշխատանքային խումբը «Պետությունների իրավասությունների անձեռնմխելիության և դրա առանձնահատկությունների մասին» զեկույցում որպես պետությունների գործելակերպի և օրենսդրության վերջին շրջանի զարգացում նշել է, որ աստիճանաբար ավելի շատ է շոշափվում այն հարցը, որ պետությունը չպետք է անձեռնմխելիություն ունենա, երբ պետության՝ jus cogens-ի բնույթ ունեցող մարդու իրավունքների, մասնավորապես, խոշտանգման արգելքի խախտումներով ուղեկցվող գործողությունները հանգեցնում են մահվան կամ անձնական վնասի առաջացման: Այնուամենայնիվ, ինչպես աշխատանքային խումբն է ընդունել, թեև ազգային դատարանները որոշ դեպքերում ըմբռնում են դրսևորել այս փաստարկի նկատմամբ, համաձայն որի՝ jus cogens-ի բնույթ ունեցող մարդու իրավունքների նորմերի խախտումների դեպքում պետություններն անձեռնմխելիություն վկայակոչելու իրավունք չունեն, գործերի մեծ մասի դեպքում (ներառյալ այն [խախտումների] դեպքում, երբ դիմողը վկայակոչել է ազգային վարույթների ընթացքում և դատարանի առջև) պետական ինքնիշխանության անձեռնմխելիության վերաբերյալ բերված միջնորդությունն ավարտվել է հաջողությամբ:

66. Դատարանը նկատում է, որ խոշտանգման արգելման գերակա կարևորության ըմբռնումը հետզհետե խորանում է, սակայն հիմնավորված չի համարում, որ միջազգային իրավունքի ոլորտում արդեն իսկ համաձայնություն կա առ այն, որ դատավարության երկրի սահմաններից դուրս տեղի ունեցած խոշտանգման պատճառով առաջացած վնասի փոխհատուցման քաղաքացիական հայցերի նկատմամբ պետություններն անձեռնմխելիության իրավունք չունեն: 1978 թ. օրենքը, համաձայն որի՝ անձնական վնասին վերաբերող բոլոր հայցերի նկատմամբ պետություններն օժտված են անձեռնմխելիությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ վնասն առաջացել է Միացյալ Թագավորությունում, ընդհանուր առմամբ չի հակասում պետության անձեռնմխելիության սկզբունքի մաս ճանաչված սահմանափակումներին՝ արված ազգերի համայնքի կողմից:

67. Այս հանգամանքներում չի կարելի է ասել, որ Քուվեյթի անձեռնմխելիության պահանջի բավարարման նպատակով Անգլիայի դատարաններում 1978 թ. օրենքի դրույթների կիրառումը հավասար է եղել դիմողի՝ դատարան դիմելու իրավունքի անարդարացի սահմանափակման:

Սրանից հետևում է, որ այս դեպքում 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

Դատավորներ Ռոզակիսը և Քաֆլիշը, որոնց միացել են դատավորներ Վիլդհաբերը, Կոստան, Կաբրալ Բարետոն և Վայիչը, ներկայացրել են չհամընկնող կարծիք, որում անհամաձայնություն են հայտնել դատարանի մեծամասնության՝ պետության կողմից անձանց խոշտանգման գործերն ըստ քաղաքացիական և քրեական դատավարության տարբերակելու կարծիքին: Առարկողները կարևորու-

թյուն են տվել այն հանգամանքին, որ Բրիտանիայի դատարանները չեն հիմնվել այդ տարբերակման վրա: Բացի այդ.

... մեծամասնության կողմից խոշտանգումն արգելող կանոնի կիրառման առումով քաղաքացիական և քրեական վարույթների միջև տարբերություն դնելը չի համապատասխանում jus cogens-ի կանոնների կիրառման բուն էությանը: Jus cogens-ի կանոնի ազդեցությունը միջազգային իրավունքի մեկ այլ կանոնի վրա պայմանավորված չէ վարույթի բնույթով, այլ այդ կանոնի՝ որպես բացարձակ նորմի հատկությամբ և հիերարխիական կարգով ավելի ցածր կանոնի հետ դրա փոխազդեցությամբ: Խոշտանգման արգելքը միջազգային ասպարեզում գործող jus cogens-ի կանոն է, և այդ ասպարեզում ազգային անձեռնմխելիության կանոնը զրկում է իր բոլոր իրավական ազդեցություններից: Ազգային վարույթի քրեական կամ քաղաքացիական բնույթն էական նշանակություն չունի: Դատավարական արգելքը վերաբերում է համապատասխան միջազգային կանոնների փոխազդեցության արդյունքում, և ազգային դատարանի դատավորը չի կարող պատասխանող պետության անձեռնմխելիության պահանջն ընդունել որպես այնպիսի հանգամանք, որը կանխում է գործի հատկանիշներն ուսումնասիրելը և ենթադրյալ վնասի վերաբերյալ հայցին ընթացք տալը: Այսպիսով, մենք հավատացած ենք, որ Միացյալ Թագավորության դատարանները սխալ են թույլ տվել, երբ կարծել են, որ պետության անձեռնմխելիության ընթացակարգային արգելքի և 1978 թ. օրենքի հետագա կիրառության պատճառով դիմողի հայցին ընթացք տալու իրավասություն չեն ունեցել: Հետևաբար, Քուվեյթում խոշտանգման ենթարկվելու պատճառով վնասի փոխհատուցման հայց ներկայացնելու առումով դիմողը զրկված է եղել Բրիտանիայի դատարաններ դիմելու իր իրավունքից, և մենք կարծում ենք, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

Դատավոր Պելոնպաան, որին միացել է դատավոր Բրատցան, գրել է համընկնող կարծիք, որում նա ներկայացրել է այն գործնական դժվարությունները, որոնց անդամ պետությունները կարող են հանդիպել, եթե պարտավորություն ունենային մերժել իրենց տարածքներից դուրս տեղի ունեցած խոշտանգման դեպքերի առնչությամբ հարուցված քաղաքացիական գործերում պետության անձեռնմխելիության պահանջը:

Եթե փոքրամասնության կարծիքն ընդունվեր, ապա ինչ-որ չափով առեղծվածային արդյունք կլիներ, որով հենց այն պետությունները, որոնք առ այսօր ամենաազատականն են եղել փախստականներին և ապաստան փնտրողներին ընդունելու առումով, կհայտնվեին խոշտանգման վնասի փոխհատուցման գործերով որոշում ունենալու նպատակով գուցեև հարյուրավոր փախստականների՝ դատարան դիմելու իրավունքի երաշխավորման լրացուցիչ բեռան տակ: Եթե նույնիսկ 6-րդ հոդվածի խախտումն այս դեպքում չկասեցներ անդամ պետությունների՝ փախստականներ ընդունելու պատրաստակամությունը (մի հետևանք, որը ես լիովին չեմ բացառում), անշուշտ, այդ հանգամանքներում դատարան դիմելու արդյունավետության խնդրի առաջացումն .... անխուսափելի է:

Նա նշել է, որ 6(1) հոդվածին վերաբերող դատարանի վճիռները պահանջել են ոչ միայն դատարան դիմելու հնարավորություն, այլև «քաղաքացիական իրավունքների» վերաբերյալ որոշում պահանջող վճիռների իրագործում: Հետևաբար, չհամընկնող կարծիք հայտնողների կողմից առաջարկվող խոշտանգման 6(1) jus cogens-ի արգելքը վերջին հաշվով կպահանջեր անդամ պետություններից կիրառել օտար պետությունների (որոնք հավանական է՝ ընդգրկեն դեսպանատները) իրավազորության ներքո գտնվող գույքի վերաբերյալ ընդունված քաղաքացիական վճիռներ, ինչը կարող է շատ լուրջ հետևանքներ ունենալ դիվանագիտական հարաբերությունների վրա:

Թեպետ խոշտանգման արգելքին բացարձակ գերակա նշանակություն տալն առաջին հայացքից կարող է շատ «առաջադեմ» թվալ, ավելի զգույշ վերլուծությունից պարզ է դառնում, որ այսպիսի քայլը ենթակա է նաև պյուրոսյան հաղթանակ դառնալու վտանգին: Միջազգային համագործակցությունը, ներառյալ՝ խոշտանգման կանխարգելման ոլորտում, ենթադրում է միջազգային հարաբերությունների վարման համար անհրաժեշտ որոշ հիմքերի առկայություն: Պետության անձեռնմխելիությանը վերաբերող սկզբունքները մտնում են կանոնակարգիչ շրջանակի մեջ, և ես հավատացած եմ, որ միջազգային հարաբերությունների կանոնավոր ընթացքի համար ավելի նպաստավոր է ոչ թե փոխել ուղղությունը, այլ չխաթարել այս շրջանակը:

Իմ կարծիքով՝ այս գործից մենք կարող ենք առնվազն երկու կարևոր դաս քաղել: Առաջին՝ թեպետ տվյալ կանոնի մեկնաբանությունը չպետք է կախված լինի միայն դրա հետևանքներից, այնուամենայնիվ, չպետք է աչքաթող անել այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ այն առանձնահատուկ մեկնաբանությունից, որը մոտ է ընդունվելուն: Երկրորդ՝ երբ շոշափվում են ընդհանուր միջազգային իրավունքի առանցքային հարցեր, այս դատարանը պետք է շատ մեծ զգուշություն դրսևորի մինչև ամենաառաջինը լինելու դերակատարություն ստանձնելը:

Վերը քննարկված գործը ցույց է տալիս, որ դատարանը խիստ մասնատված է պետական խոշտանգման հարցերի առնչությամբ պետության անձեռնմխելիության պահանջին վերաբերող միջազգային հանրային իրավունքի ներկա պահանջների իր գնահատականներում: Ինչպես նախազգուշացրել է դատավոր Պելոնպաան, չհամընկնող կարծիք հայտնած դատավորները խոշտանգման jus cogens-ի արգելքի միջոցով անդամ պետություններին վերագրում են ծավալուն և ծանր պոտենցիալ բեռ: Բացի գործնական նկատառումներից, մեծամասնության կողմից դատարան դիմելու իրավունքի զգուշավոր կիրառության արդարացումն այն է, որ դա ածանցյալ իրավունք է և, հետևաբար, որպես դատարանի ստեղծած, պետք է անդամ պետությունների օրինական կարիքների նկատմամբ կիրառվի առանձնահատուկ զգուշավորությամբ:

Արտասահմանյան դեսպանատան աշխատակցի քաղաքացիական հայցի կապակցությամբ պետության անձեռնմխելիության կանոնները գնահատելու մեկ այլ դեպքում նույն մեծ պալատը շատ ավելի մեծ համախմբվածություն է դրսևորել: *«Ֆոգարթին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Fogarty v United Kingdom)* գործի (2001 թ. նոյեմբերի 21-ի վճիռ) դիմողը եղել է Իռլանդիայի քաղաքացի: 1993 թ. նոյեմբերից մինչև 1995 թ. փետրվարը Լոնդոնում գտնվող Միացյալ Նահանգների դեսպանատան արտասահմանյան հեռարձակման տեղեկատվական ծառայությունում (որը հանդիսանում էր Կենտրոնական հետախուզական գործակալության դուստր կազմակերպություն) նա աշխատել է որպես վարչական օգնական: Աշխատանքից հեռացվելուց հետո նա արդյունաբերական տրիբունալ հայց է ներկայացրել Միացյալ Նահանգների կառավարության դեմ՝ հայտնելով, որ ինքն աշխատանքից ազատվել է իր նկատմամբ սեռական խտրականության դրսևորման հետևանքով՝ հակառակ 1975 թ. «Սեռական խտրականության մասին» օրենքի: Նա պնդել է, որ շարունակաբար սեռական ոտնձգությունների է ենթարկվել իր վերադասի կողմից: 1995 թ. հունիսին նա՝ որպես վարչական օգնական, տասներկու ամսվա աշխատանքային պայմանագիր է կնքել Միացյալ Նահանգների դեսպանատան արտասահմանյան շենքերի շահագործման բաժնի հետ: 1996 թ. մայիսին Միացյալ Նահանգների կառավարությունը արդյունաբերական տրիբունալում չի վկայակոչել իր անձեռնմխելիությունը: 1996 թ. մայիսին տրիբունալը բավարարել է դիմողի պահանջը: Կողմերի միջև համաձայնություն է ձեռք բերվել 12.000 ֆունտ ստեռլինգի փոխհատուցման վերաբերյալ: 1996 թ. հունիսին և օգոստոսին դիմողը, առանց հաջողության հասնելու, դիմել է Միացյալ Նահանգների դեսպանատան քարտուղարի պաշտոնի համար: 1996 թ. սեպտեմբերին դիմողը հաջորդ դիմումն է ներկայացրել արդյունաբերական տրիբունալ՝ պնդելով, որ դեսպանատանն իրեն կրկին աշխատանքի չընդունելու իրողությունը իր ավելի վաղ ներկայացրած և բավարարված սեռական խտրականության հետապնդման պահանջի հետևանք և, հետևաբար, խտրականության և հալածանքի հետագա գործողություն է՝ հակառակ 1975 թ. օրենքի: Միացյալ Նահանգներին պաշտպանող փաստաբանները տեղեկացրել են տրիբունալին, որ հետագա վարույթների առնչությամբ կառավարությունը մտադրություն է ունեցել պահանջել իր անձեռնմխելիությունը՝ երաշխավորված 1978 թ. «Պետության անձեռնմխելիության մասին» օրենքով, ըստ որի՝ օտարերկրյա առաքելություններում և հյուպատոսություններում անձանց աշխատանքի կապակցությամբ պետություններն օժտված են անձեռնմխելիությամբ: Նույն կերպ Բազելի կոնվենցիան դիվանագիտական առաքելություններին հստակ օժտում է արտոնություններով և անձեռնմխելիությամբ: Սրանից հետո փաստաբանը բացատրել է դիմողին, որ Միացյալ Նահանգների կառավարությունն իրավունք է ունեցել պահանջելու իր անձեռնմխելիությունը, և ազգային օրենքի շրջանակներում նա այլ իրավական պաշտպանության միջոց չի ունեցել:

Դիմողը բողոքել է դատարանին, որ պետության անձեռնմխելիության սկզբունքը, որը ճանաչվում է Անգլիայի օրենքով, ի խախտումն 6(1) հոդվածի՝ հնարավորություն չի տվել իրեն մտնելու դատարան: Հետևելով *Ալ Ադսանիի (Al-Adsani)* գործում կիրառված վերլուծության մեթոդին՝ դատարանն առաջին հերթին ուսումնասիրել է՝ արդյունաբերական տրիբունալի վարույթով դիմողը հետամո՞ւտ է եղել իր «քաղաքացիական իրավունքի» բավարարմանը, թե՞ ոչ:

26. 1975 թ. «Սեռական խտրականության մասին» օրենքի 6-րդ բաժնում ամրագրված օրինական իրավունքն առաջանում է այն ժամանակ, երբ գործատուն, դրսևորելով սեռական խտրականություն, աշխատանքի չի ընդունում իգական սեռի ներկայացուցչին կամ չի վերցնում նրան աշխատանքի այն պատճառով, որ նա արդեն 1975 թ. օրենքի շրջանակներում

վարույթ է սկսել: Այսպիսով, իր սկսած վարույթի միջոցով դիմողը հետամուտ է եղել Անգլիայի օրենքին քաջ հայտնի պատճառներով փոխհատուցում ստանալու նպատակին: Դատարանի համար ընդունելի չէ կառավարության բացատրությունը, ըստ որի՝ պետության անձեռնմխելիության պատճառով ազգային օրենքի շրջանակներում նա նյութական իրավունք չի ունեցել...

Երկրորդ՝ դատարանն ուսումնասիրել է, թե արդյոք դիմողի՝ Միացյալ Նահանգների կառավարության դեմ վարույթ սկսելու իրավունքի սահմանափակումն օրինակա՞ն նպատակ է ունեցել: Դատարանը վճռել է, որ այո, քանի որ

34. … ինքնիշխան անձեռնմխելիությունը միջազգային իրավունքի գաղափար է, որը մշակվել է par in parem non habet imperium [հավասարը հավասարի նկատմամբ առավելություն չունի] սկզբունքի հիման վրա, համաձայն որի՝ մի պետությունը ենթակա չէ մյուսի ընդդատությանը: Դատարանը կարծում է, որ քաղաքացիական դատավարությունների առնչությամբ պետություններին ինքնիշխան անձեռնմխելիությամբ օժտելը միջազգային իրավունքին համապատասխանելու օրինական նպատակ ունի և մի պետության կողմից մյուսի ինքնիշխան անկախությունը հարգելու միջոցով նպաստում է քաղաքավարի և բարեկամական հարաբերությունների հաստատմանը:

Երրորդ՝ անհրաժեշտ էր որոշել, թե արդյոք այդ սահմանափակումը համաչա՞փ միջոցառում է եղել: Ճնշող մեծամասնության (տասնվեց կողմ և մեկ դեմ) կարծիքով՝ այո:

38.…Առաքելությունների և դեսպանատների աշխատակիցների ընտրության հարցերը կարող են կապված լինել զգայուն և գաղտնիություն պահանջող խնդիրների հետ, որոնք, ի թիվս այլոց, վերաբերում են օտարերկրյա պետության դիվանագիտական և կազմակերպչական քաղաքականությանը: Դատարանին հայտնի չեն միջազգային իրավունքի այնպիսի զարգացումներ, որոնց շնորհիվ արտասահմանյան առաքելությունների կադրային համալրման առումով տեղի ունենար պետության անձեռնմխելիության թուլացում...

39. Այս հանգամանքներում դատարանը որոշում է, որ չի կարելի է ասել, թե տվյալ դեպքում 1978 թ. օրենքի հիման վրա Միացյալ Թագավորության կողմից Միացյալ Նահանգներին անձեռնմխելիության վերագրումը անցել է հայեցողության այն սահմանը, որով պետություններն օժտված են անձի՝ դատարան դիմելու իրավունքի ոլորտում:

Սրանից հետևում է, որ այս դեպքում 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

Դատավոր Լուկայդեսն առարկել է՝ համարելով, որ դիմողի սեռական խտրականության վերաբերյալ հայցի նկատմամբ պետության անձեռնմխելիության սկզբունքի կիրառումը՝ առանց հայցի էությանն ուշադրություն դարձնելու կամ հարակից շահերը հավասարակշռելու, արգելակել է նրա կողմից սկսած դատավարությունը: Նրա կարծիքով՝ վարույթի նկատմամբ կիրառված այսպիսի բացարձակ արգելքը դատարան դիմելու իրավունքի համաչափ սահմանափակում չէ:

Ֆոգարթիի (Fogarty) և *Ալ Ադսանիի (Al-Adsani)* գործերի տարբերությունն այն է եղել, որ առաջինի դեպքում դեսպանատան աշխատակիցների աշխատանքի առնչությամբ պետության անձեռնմխելիությանը վերաբերող միջազգային իրավունքի համապատասխան կանոնները շատ ավելի որոշակի են եղել: Հետևաբար, դատարանը գրեթե միաձայն վճռել է, որ տեղի է ունեցել դատարան դիմելու իրավունքի օրինական և համաչափ սահմանափակում:

«Մակէլհինի ընդդեմ Իռլանդիայի» (McElhinney v Ireland) գործի դեպքում (2001 թ. նոյեմբերի 21-ի վճիռ) դատարանի առջև որպես պատասխանող հանդես է եկել Բազելի կոնվենցիայի անդամ չհանդիսացող պետությունը: Դիմողը եղել է Իռլանդիայի ոստիկանության աշխատակից: 1991 թ. մարտյան մի օր՝ ուշ երեկոյան, երբ դիմողը ծառայության մեջ չի եղել, իր մեքենայի կցավագոնը կանգնեցրել է Միացյալ Թագավորության Դերրի կոմսության (Հյուսիսային Իռլանդիա) անցակետի պարսպի անմիջական հարևանությամբ: Անցակետը համալրված է եղել զինված բրիտանացի զինվորներով: Ռազմական ոստիկանության կապրալը մոտեցել է դիմողի մեքենային, սակայն մեքենայի կցավագոնը դիպել է նրան: Դիմողն իր մեքենան վարել է Իռլանդիայի ուղղությամբ: Այդ ժամանակ զինվորը բարձրացել է դիմողի մեքենայի կցավագոնի առեղի վրա: Զինվորը վեց կրակոց է արձակել՝ վնասելով մեքենայի արտանետման փողրակը և դիմողի մեքենայի հետևի ապակին: Դիմողը հայտնել է, որ կրակոցները լսելուց հետո մտածել է, որ հայտնվել է ահաբեկչական գրոհի տակ: Ուստի մեքենան վարել է մոտ երկու մղոն, մինչև հասել է Իռլանդիայի ոստիկանության բաժին: Երբ կանգնել

է, զինվորը կարգադրել է նրան և նրա մեքենայի մեջ գտնվող ուղևորներին ձեռքերը վեր բարձրացրած շարվել պատի մոտ: Ըստ դիմողի՝ զինվորը փորձել է կրակել իր վրա, սակայն վրիպել է: Իռլանդիայի ոստիկանությունը ձերբակալել է դիմողին չափից ավելի ոգելից խմիչք օգտագործած վիճակում մեքենան վարելու կասկածանքով: Նա հրաժարվել է արյան կամ մեզի նմուշներ հանձնել և ավելի ուշ դատապարտվել դրա համար: Դիմողը հայտնել է, որ զինվորի գործողությունների հետևանքով ինքն ունեցել է լուրջ հետտրավմատիկ շոկ: 1993 թ. դիմողն այդ զինվորի և Հյուսիսային Իռլանդիայում Մեծ Բրիտանիայի պետքարտուղարի դեմ վնասի փոխհատուցման հայց է ներկայացրել Իռլանդիայի բարձր դատարան: 1994 թ. պետքարտուղարը պահանջել է բողոքը հանել վարույթից՝ նկատի ունենալով պետության ինքնիշխան անկախության հիմքերը: Բարձր դատարանը բավարարել է քարտուղարի պահանջը: Վերաքննիչ բողոքի վերանայման արդյունքում գերագույն դատարանը հաստատել է ստորին ատյանի դատարանի վճիռը՝ համարելով, որ այդ ժամանակ զինվորը կատարել է պետական/սուվերեն գործողություններ, հետևաբար, անցակետում նրա կատարած գործողությունները պետք է համարվեին de jure imperii: Բացի այդ, չի հիմնավորվել, որ միջազգային հանրային իրավունքի ոլորտում պետությունների սուվերեն անկախության de jure imperii սկզբունքներն այլևս չեն տարածվում օտարերկրյա գործակալի վնասի առաջացման պատճառ համարվող գործողությունների վրա: Դիմողն իր հայցը կապրալի դեմ չի ներկայացրել: Ոչ էլ քաղաքացիական վարույթ է սկսել Հյուսիսային Իռլանդիայի դատարաններում:

Ստրասբուրգում դատարանը վճռել է, որ Բրիտանիայի կառավարության դեմ սկսած դատավարությունում դիմողը ձգտել է հաստատել իր «քաղաքացիական իրավունքները», քանի որ անձի նկատմամբ բռնության, անձի ոտնահարման և պարտականության խախտման վերաբերյալ նրա պահանջները եղել են Հյուսիսային Իռլանդիայում հայցերի հարուցման քաջ հայտնի հիմքեր: Այնուամենայնիվ, նրա կողմից հարուցված գործի կարճումը հետապնդել է միջազգային իրավունքին համապատասխանելու օրինական նպատակ: Դատարանի ճնշող մեծամասնությունը (տասներկու կողմ և հինգ դեմ ձայներով) նույնպես եզրակացրել է, որ պետության անձեռնմխելիության սկզբունքի հիման վրա Իռլանդիայի դատարանների կողմից վարույթի դադարեցումը համաչափ միջոցառում է եղել:

38. Դատարանը նկատում է, որ իրեն ներկայացված նյութից... ստացվում է այնպիսի տպավորություն, որ միջազգային և համեմատական իրավունքի ոլորտում պետության անձեռնմխելիությունը սահմանափակելու միտում կա այն դեպքերում, որոնք վերաբերում են դատավարության երկրում տեղի ունեցած գործողության կամ թերացման պատճառով առաջացած անձնական վնասին, սակայն այդ գործելակերպը բնավ համընդհանուր բնույթ չունի: Բացի այդ, ստացվում է, որ ... այս միտումը կարող է հիմնականում վերաբերել «ապահովագրելի» անձնական վնասին (այսինքն՝ այնպիսի միջադեպերին, որոնց պատճառը սովորական ճանապարհային պատահարներն են), ոչ թե բուն պետության ինքնիշխանության ոլորտին վերաբերող հարցերին (ինչպես, օրինակ՝ օտար երկրի տարածքում զինվորի կատարած գործողություններին), որոնք իրենց բնույթով կարող են ներառել պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների և ազգային անվտանգության վրա ազդող զգայուն հարցեր: Անշուշտ, չի կարելի ասել, որ Իռլանդիան այն միակ երկիրն է, որը համարում է, որ պետության անկախ ինքնիշխան գործողություններից (acta jure imperii) առաջացած քաղաքացիական իրավախախտումների առումով օժտված է անձեռնմխելիությամբ կամ էլ, նշանակություն տալով այդ անձեռնմխելիությանը, Իռլանդիան դուրս է մնում ներկայումս ընդունված միջազգային չափորոշիչներից: Տվյալ դեպքում դատարանը համաձայն է գերագույն դատարանի հետ, …որ ելնելով միջազգային իրավունքի զարգացման ներկայիս մակարդակից՝ հնարավոր չէ եզրակացնել, որ Իռլանդիայի օրենքը դրա ընդհանուր սկզբունքների հետ հակասության մեջ է:

40. Այդ պարագայում չի կարելի ասել, որ Իռլանդիայի դատարանների որոշումները, որոնք հաստատել են Միացյալ Թագավորության անձեռնմխելիության պահանջը և սահմանափակել անձի՝ դատարան դիմելու իրավունքը, անցել են պետություններին թույլատրված հայեցողության սահմանները:

Սրանից հետևում է, որ տվյալ դեպքում 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

Դատավորներ Քաֆլիշը, Կաբրալ Բարետոն և Վայիչը գրել են չհամընկնող կարծիք, համաձայն որի՝ պետությունների ինքնիշխան անձեռնմխելիության պահանջի սահմանափակման առումով միջազգային իրավունքի զարգացումը շատ ավելի հեռուն է գնացել, քան դա ընդունվել է դատարանի մեծամասնության կողմից:

... Սա բավական ցայտուն համընկնում է, համենայն դեպս, որ ցույց է տալիս՝ ներկայումս պետությունները այլ պետությունների գործակալների կողմից կատարված քաղաքացիական իրավախախտումների համար այդ պետություններին անձեռնմխելիությամբ օժտելու միջազգային *պարտավորություն* չունեն:

Հետևաբար, [պետությունների] ինքնիշխան անձեռնմխելիության միջազգային իրավունքի և կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված դատարան դիմելու իրավունքի միջև բախում գոյություն չունի: Սրանից հետևում է, որ դատարանը, մեր կարծիքով, պետք է վճռած լիներ հօգուտ սույն գործում 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման: Դրանից հետո կեզրակացներ, որ Իռլանդիայի Հանրապետությունը պետք է թույլ տար դիմողին դիմել իր դատարաններ: Այդպես չվարվելով՝ դատարանն անհամաչափորեն սահմանափակել է դիմողի՝ կոնվենցիայով երաշխավորված իրավունքները:

Իր չհամընկնող կարծիքում դատավոր Լուկայդեսը շեշտել է կոնվենցիայի իրավական ռեժիմի հստակ բնույթը և փորձել տարանջատել այն միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներից:

Դատարանում քննվող այս գործի և համանման գործերի դեպքում lex specialis-ը [հատուկ օրենք] Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան է: Միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներն ընդգրկված չեն կոնվենցիայում, բացառությամբ այն դեպքերի, երբ կոնվենցիան ուղղակի հղում է կատարում դրանց (տե՛ս, օրինակ՝ կոնվենցիայի 15-րդ, 35(1) և 53-րդ հոդվածները և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը): Հետևաբար, յուրաքանչյուրի համար դժվար կլինի համակերպվել կոնվենցիայի իրավունքների սահմանափակումների հետ, որոնք առաջանում են միջազգային իրավունքի սկզբունքներից, այդ թվում և անձեռնմխելիությանը վերաբերող սկզբունքներից, որոնք նույնիսկ չեն կազմում jus cogens-ի նորմերի մաս:

Վերոհիշյալ երեք գործերում դատարանի մեծամասնության և փոքրամասնության հարաբերակցության փոփոխականությունը պայմանավորված է եղել ինչպես այն տարբեր համատեքստերով, որոնցում վկայակոչվել է պետության/ինքնիշխան անձեռնմխելիությունը, այնպես էլ ժամանակակից միջազգային իրավունքի պահանջների հետ դատավորների անհամաձայնությամբ: Այն փաստը, որ իրավունքի այս խումբն առաջ է գալիս պետության/ինքնիշխանության անձեռնմխելիության հայցերի նկատմամբ իր մոտեցմամբ, էլ ավելի է բարդացնում դատարանին բաժին հասած առաջադրանքը: Այնուամենայնիվ, հարկ է արժանին մատուցել դատարանի ստեղծագործական ունակություններին, քանի որ դատարանի առաջին բեկումնային վճիռը *Գոլդերի (Golder)* գործով անդրադարձել է 6(1) հոդվածի հիմքով դատարան դիմելու ածանցյալ իրավունքի վրա, որի հիման վրա է, որ այս երեք դիմողները կարողացել են բողոք ներկայացնել վերազգային (supra-national) դատարանին ազգային վարույթների առումով պետության/ինքնիշխանության անձեռնմխելիության վերաբերյալ: Թեպետ դատարանը չի բավարարել դիմողների բողոքները, դրանց նկատմամբ մի խումբ դատավորների դրսևորած պաշտպանությունը (հատկապես *Ալ Ադսանիի (Al-Adsani)* գործով չհամընկնող կարծիք հայտնած զգալի թվով դատավորներ) ցույց է տալիս, որ ապագայում պետությունների/ինքնիշխանության ոչ բոլոր հայցերը կարող են համարվել 6(1) հոդվածին համահունչ: Տե՛ս նաև E. Bates, The Al-Adsani Case, State Immunity and the International Legal Prohibition on Torture, 3(1) *Human Rights Law Review* 193 (2003):

6 *«Ա-ն ընդդեմ ՄԹ-ի» (A. v UK)* գործում (2002 թ. դեկտեմբերի 17-ի վճիռ) վիճարկվել է 1689 թ. Իրավունքների օրինաշարի 9-րդ հոդվածով Համայնքների պալատի վիճաբանությունների նկատմամբ կիրառելի բացարձակ առավելությունը: Ըստ դիմողի՝ խորհրդարանականը հանրային հատվածի բնակելի տարածքի վերաբերյալ վեճ է սկսել, որում դիմողին և նրա ընտանիքը ներկայացրել է որպես «Դժոխքի հարևաններ»՝ մանրամասն նկարագրելով նրա ընտանիքի ենթադրյալ հակասոցիալական վարքագիծը: Խորհրդարանի անդամը մատնանշել է դիմողին և իր ելույթի մեջ նշել նրա հասցեն: Ելույթը լայնորեն հրապարակվել է տեղական մամուլում, որից հետո դիմողը ստացել է ատելությամբ լի նամակ և այն աստիճան հալածվել, որ ստիպված է եղել տեղափոխվել: Նա բողոքել է, որ խորհրդարանականի դեմ քաղաքացիական հետապնդում սկսելու իր անկարողությունը խախտել է դատարան դիմելու իր իրավունքը: Պալատը, վեց կողմ և մեկ դեմ ձայներով, վճռել է, որ.

77. Դատարանը եզրակացնում է, որ սույն գործում խորհրդարանի անդամի խորհրդարանական անձեռնմխելիությունը հետապնդել է խորհրդարանում նրա ազատ խոսքը պաշտպանելու և իշխանությունը օրենսդիր և դատական ճյուղերի միջև բաշխելու օրինական նպատակ:

78. Դատարանը, այնուհետև, պետք է գնահատի խորհրդարանի անդամի անձեռնմխելիության համաչափությունը: Այս կապակցությամբ դատարանը նկատում է, որ խնդրո առարկա անձեռնմխելիությունն իր բնույթով եղել է բացարձակ և տարածվել ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական դատավարությունների վրա: Դատարանը համաձայն է դիմողի բացատրությանը, որ որքան ավելի լայն է անձեռնմխելիությունը, այնքան ավելի համոզիչ պետք է լինի դրա հիմնավորումը, որպեսզի հնարավոր լինի ասել, որ այն համահունչ է կոնվենցիային: Այնուամենայնիվ, ... դրա բացարձակ բնույթը չի կարող վճռորոշ նշանակություն ունենալ: Այսպիսով, օրինակ՝ վերը նշված *Ալ Ադսանիի (Al-Adsani)* գործում դատարանը նշել է, որ պայմանավորվող պետության ձեռնարկած միջոցները, որոնք անդրադարձրել են ընդհանուր առմամբ պետության անձեռնմխելիության վերաբերյալ հանրային ոլորտի միջազգային իրավունքի ընդհանուր կանոնները, սկզբունքորեն չեն կարող համարվել 6-րդ հոդվածի 1-ին կետում ձևակերպված դատարան դիմելու իրավունքի անհամաչափ սահմանափակումներ նախատեսող կանոններ (տե՛ս նաև *«Ֆոգարթին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Fogarty v the United Kingdom)* [GC], թիվ 37112/97, պարբ. 36, ECHR 2001-XI, *«Մակէլհինին ընդդեմ Իռլանդիայի» (McElhinney v Ireland)* [GC], թիվ 31253/96, պարբ. 37, ECHR 2001-XI):

79. Նաև հիշատակվում է, որ *«Երուսաղեմն ընդդեմ Ավստրիայի» (Jerusalem v Austria)*, թիվ 26958/95, պարբ. 36 և 40, ECHR 2001-II)) վերջերս լսված գործում դատարանը նշել է, որ թեպետ խոսքի ազատությունը կարևոր է բոլորի համար, դա հատկապես կարևոր է մարդկանց կողմից ընտրված ներկայացուցիչների համար: Վերջիններս ներկայացնում են իրենց ընտրազանգվածը, ուշադրություն դարձնում նրանց մտահոգություններին և պաշտպանում նրանց շահերը: Ժողովրդավարության պայմաններում խորհրդարանը կամ համանման մարմինները քաղաքական քննարկումների հիմնական ասպարեզ են: Նրանց՝ խոսքի ազատությանը միջամտելու համար շատ լուրջ հիմքեր պետք է լինեն:

80. Դատարանը նկատում է, որ կոնվենցիան ստորագրած պետությունների մեծ մասը, եթե ոչ բոլորը, իրենց ազգային օրենսդիր մարմինների ներկայացուցիչներին տրամադրում են որոշ անձեռնմխելիություն: Մասնավորապես, սույն գործին որպես երրորդ կողմ միջամտող ութ անդամ պետություններից յուրաքանչյուրի ազգային օրենքով նման անձեռնմխելիություն նախատեսվում է, ... թեպետ խնդրո առարկա անձեռնմխելիությանը վերաբերող ճշգրիտ մանրամասները տարբեր են:

81. Ի թիվս այլոց, գոյություն ունեն միջոցներ, որոնք արտոնություններով և անձեռնմխելիությամբ են օժտում Եվրոպայի խորհրդի Խորհրդակցական վեհաժողովի/Խորհրդարանական վեհաժողովի և Եվրոպական խորհրդարանի անդամներին: ...

83. Ելնելով վերոհիշյալից՝ դատարանը հավատացած է, որ խորհրդարանական անձեռնմխելիության կանոնը, որը համահունչ է և անդրադարձնում է անդամ պետությունների, Եվրոպայի խորհրդի և Եվրամիության կողմից ընդհանուր առմամբ ճանաչված կանոնները, չի կարող համարվել որպես 6-րդ հոդվածի 1-ին կետում ամփոփված դատարան դիմելու իրավունքի անհամաչափ սահմանափակում (տե՛ս mutatis mutandis վերը նշված *Ալ Ադսանիի (Al-Adsani)* վճիռը, պարբ. 56): Ինչպես դատարան դիմելու իրավունքն է համարվում այդ հոդվածով երաշխավորվող արդար դատաքննության երաշխիքի անբաժանելի մաս, այնպես էլ դիմելու որոշ սահմանափակումները, որոնց շարքն են դասվում անդամ պետությունների կողմից ընդհանուր առմամբ որպես խորհրդարանական անձեռնմխելիության դոկտրինի մաս ընդունված սահմանափակումները (նույն տեղում), պետք է համարվեն դրա անբաժանելի մասը:

84. Բացի այդ, Միացյալ Թագավորությունում խորհրդարանի անդամներին տրամադրված անձեռնմխելիությունը, դատարանի կարծիքով, մի քանի առումներով ավելի նեղ է, քան այլ պայմանագրային պետությունների օրենսդրությամբ իրենց ազգային օրենսդիր մարմիններին տրամադրված, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի Խորհրդակցական վեհաժողովի և Եվրոպական խորհրդարանի անդամների անձեռնմխելիությունը: Մասնավորապես, անձեռնմխելիությունը տարածվում է միայն Համայնքների պալատի կամ Լորդերի պալատի ամբիոնից խորհրդարանական քննարկումների ժամանակ հնչած ելույթների վրա: Խորհրդարանի պատերից դուրս ելույթների վրա, եթե նույնիսկ այդ ելույթները հանրային շահին վերաբերող հարցերի շուրջ խորհրդարանական քննարկումների ընթացքում արված հայտարարությունների կրկնություններ են, անձեռնմխելիությունը չի տարածվում: Ոչ էլ տարածվում է խորհրդարանի անդամի՝ նախքան խորհրդարանական քննարկումները հրապարակվող մամլո հաղորդագրությունների վրա, եթե նույնիսկ դրանց բովանդակությունն այնուհետև կրկնվում է քննարկման ընթացքում:

85. Բացի այդ, խորհրդարանի անդամների բացարձակ անձեռնմխելիությունը նպատակ ունի պաշտպանելու ողջ խորհրդարանի, ոչ թե խորհրդարանի առանձին անդամների շահերը: Սա ակնհայտ է այն փաստից, որ անձեռնմխելիությունը չի տարածվում խորհրդարանի պատերից դուրս: Միևչդեռ խորհրդարանական քննարկումները լուսա-

բանող անձանց և տեղական մարմինների ընտրված ներկայացուցիչների վրա տարածվող անձեռնմխելիությունը համապատասխանում է պահանջներին:

86. Դատարանը նկատում է, որ ճիշտ չէ, որ զրպարտող հայտարարությունների խորհրդարանական զոհերն առհասարակ ուղղիչ միջոցներ կիրառելու հնարավորություն չունեն: Մասնավորապես այն դեպքում, երբ վիրավորական հայտարարություններն արվում են նույն խորհրդարանականի կողմից, անձը ռեպլիկի հնարավորություն ստանալու համար կարող է խորհրդարանի մեկ այլ անդամի միջոցով միջնորդություն ներկայացնել պալատին: Ծայրահեղ դեպքերում միտումնավոր ապակողմնորոշող ելույթները՝ որպես անհարգալից վերաբերմունքի դրսևորումներ, կարող են պատժվել խորհրդարանի կողմից: Քննարկումների նկատմամբ ընդհանուր վերահսկողությունն իրականացվում է պալատի խոսնակի կողմից: Դատարանը կարծում է, որ տվյալ դեպքում այս գործոնները կապ ունեն խորհրդարանի անդամի անձեռնմխելիության համաչափության հարցի հետ:

87. Սրանից հետևում է, որ այս գործի բոլոր հանգամանքներից ելնելով՝ չի կարելի ասել, որ բացարձակ խորհրդարանական անձեռնմխելիության կանոնի կիրառումն անցել է պետություններին թույլատրված հայեցողության շրջանակները և սահմանափակել անձի՝ դատարան դիմելու իրավունքը:

88. Դատարանը համաձայն է դիմողի բացատրություններին, ըստ որոնց՝ խորհրդարանում քաղաքային բնակարանային քաղաքականության քննարկման համատեքստում նրա վերաբերյալ արված հայտարարությունները եղել են շատ լուրջ և անկասկած անհարկի: Հատկապես ցավալի իրողություն է, որ խորհրդարանականը երկու անգամ շեշտել է դիմողի անունը և հասցեն: Դատարանը կարծում է, որ խորհրդարանականի մեկնաբանությունների ցավալի հետևանքը դիմողի և նրա երեխաների կյանքի վրա եղել է միանգամայն կանխատեսելի: Այնուամենայնիվ, այս գործոնները չեն կարող փոխել դատարանի եզրակացությունը խնդրո առարկա խորհրդարանի անձեռնմխելիության համաչափության վերաբերյալ, քանի որ այդ անձեռնմխելիության բացառությունների սահմանումը, որի արդյունքում դրանց կիրառումը պետք է կախված լինի յուրաքանչյուր առանձին գործի առանձնահատուկ հանգամանքներից, լուրջ վնաս կհասցներ հետապնդվող օրինական նպատակներին:

89. Հետևաբար, խորհրդարանի անդամների անձեռնմխելիության առնչությամբ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

Դատարանի եզրափակիչ մեկնաբանությունները ցույց են տալիս, որ հավանություն չի տվել խորհրդարանում խորհրդարանի անդամի՝ Մայքլ Ստերնի կիրառած խոսքի ազատության ձևին:

Դատարանը ոչ բոլոր դեպքերում է բավարարել խորհրդարանական անձեռնմխելիության պահանջները: Օրինակ՝ այս գործից հետո դատարանը լսել է *«Կորդովան (թիվ 1) ընդդեմ Իտալիայի» (Cordova (No 1) v Italy)* գործը (2003 թ. հունվարի 30-ի վճիռ), որում դիմողը եղել է Իտալիայի նախկին նախագահի և ցմահ սենատոր Ֆրանչեսկո Կոսիգայի հետ կապված մի անձնավորության գործի հետաքննությամբ զբաղվող դատախազ: Կոսիգան դիմողին է ուղարկել մի քանի ծաղրական նամակներ և խաղալիքներ: Պետական պաշտոնյային վիրավորանք հասցնելու մեղադրանքով դիմողը Կոսիգայի դեմ ներկայացրել է քաղաքացիական և քրեական բողոքներ: Այնուամենայնիվ, Սենատը համարել է, որ Կոսիգայի գործողությունները պաշտպանվել են սահմանադրական անձեռնմխելիությամբ, քանի որ նա իր կարծիքը հայտնել է ի կատարումն իր խորհրդարանական պարտականությունների: Հետևաբար, դատարանը վճռել է, որ տվյալ գործով Կոսիգան չպետք է ենթարկվի պատասխանատվության: Ստրասբուրգի դատարանը միաձայն որոշել է, որ Կոսիգայի գործողությունների և խորհրդարանական գործունեության միջև ակնհայտ կապի բացակայությունը նշանակում է, որ Սենատի բանաձևը և դատարանի որոշումը, համաձայն որոնց՝ այս գործով նա չպետք է պատասխան տար, խախտել է համայնքի շահերի և դիմողի իրավունքների միջև արդար հավասարակշռությունը, և, հետևաբար, տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում: Հետևաբար, դատարանի կողմից բացարձակ անձեռնմխելիության արժանի պետք է համարվեն միայն այն մեկնաբանությունները/գործողությունները, որոնք ուղղակի կապ ունեն խորհրդարանական գործունեության հետ:

7 *«Ռոշն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Roche v United Kingdom)* 2005 թ. հոկտեմբերի 19-ի վճռով մեծ պալատը հաստատել է քաղաքացիական դատարան դիմելու իրավունքի 6(1) հոդվածով պայմանավորված «նյութական» և «ընթացակարգային» սահմանափակումները: Առաջինը վերաբերում է ազգային օրենքի շրջանակներում «քաղաքացիական իրավունքների» գոյությանը և

շրջանակին, մինչդեռ երկրորդը վերաբերում է «քաղաքացիական իրավունքների» իրականացման համար դատավարության կողմերի՝ ազգային դատարաններում վարույթ սկսելու կարողությանը: Մեծ պալատը կրկնել է, որ 6(1) հոդվածը չի երաշխավորում, որ «քաղաքացիական իրավունքները» պետք է ունենան որևէ առանձնահատուկ բովանդակություն, ինչը ազգային օրենքի խնդիրն է: Հետևաբար, ազգային օրենքը, որը սահմանափակում է որևէ առանձնահատուկ «քաղաքացիական իրավունքի» շրջանակը, դատարան դիմելու իրավունքի խախտում չէ: Մինչդեռ ճանաչված «քաղաքացիական իրավունքի» իրականացման ընթացակարգային սահմանափակումները կարող են խախտել 6(1) հոդվածը, ինչպես *Թինելլիի (Tinnelly)* գործում, որը մեջբերված է վերը՝ ծնթ. 4: Ռոշը բողոքել է, որ 1947 թ. «Թագավորական լսումների մասին» օրենքի 10-րդ բաժինը, համաձայն որի՝ զինվորական անձնակազմն իրավունք չի ունեցել ենթադրյալ քաղաքացիական իրավախախտումների մեղադրանքով գործեր հարուցել Թագի դեմ, դատարան դիմելու իր իրավունքի խախտում է: Մեծ պալատի անդամների կարծիքները, թե արդյոք 10-րդ բաժինը պե՞տք է մեկնաբանվեր որպես նյութական կամ ընթացակարգային սահմանափակում, զգալիորեն տարբեր են եղել: Ինը դատավորից բաղկացած մեծամասնությունը լուրջ նշանակություն է տվել *«Մեթյուսն ընդդեմ պաշտպանության նախարարության» (Matthews v Ministry of Defence* [2003] UKHL 4) գործով Լորդերի պալատի միաձայն որոշմանը, համաձայն որի՝ 10-րդ բաժինը նյութական սահմանափակում է, որը չի խախտում 6(1) հոդվածը:

120. Հետևաբար, քաղաքացիական «իրավունքի» առկայությունը գնահատելիս և վիճարկվող սահմանափակման բնույթը (նյութական կամ ընթացակարգային) որոշելիս ելակետը պետք է լինեն համապատասխան ազգային օրենքի դրույթները և ազգային դատարանների կողմից դրանց տրված մեկնաբանությունը...

Հետևաբար, մեծամասնությունը 6(1) հոդվածի խախտում չի հայտնաբերել: Մինչդեռ ութ չհամընկնող կարծիք ունեցողները հավատացած են եղել, որ 10-րդ բաժինը պետք է որակվի որպես ընթացակարգային սահմանափակում, որը խախտել է 6(1) հոդվածը, քանի որ այն մերժել է Ռոշի՝ դատարան դիմելու իրավունքը թունավոր գազի փորձարկումների օրինականությունը վիճարկելու համար, որոնց ազդեցությանը նա ենթարկվել է բրիտանական բանակում 1960-ականներին ծառայելիս:

Պետքարտուղարի կողմից վկայականի տրամադրման պահանջի, ոչ թե բացառությունների սահմանումը, որոնց պարագայում յուրաքանչյուր դեպքում դրանց գոյության հարցը պետք է որոշեին դատարանները, պաշտպանում է այն տեսակետը, որ դատարան դիմելու իրավունքի համապատասխան սահմանափակումն իր բնույթով ընթացակարգային է:

Ռոշը հստակ ցույց է տվել, թե գործնականում որքան դժվար կարող է լինել նյութական և ընթացակարգային սահմանափակումների տարբերակումը: Դատավոր Զուպանչիկը, որը չհամընկնող կարծիք ունեցողներից էր, նկարագրել է այն որպես «արհեստական անջատում»:

8 Որոշվել է, որ չափից ավելի բարձր դատական տուրքերը դատարան դիմելու իրավունքի խախտում են: Օրինակ՝ *«Կրոյզն ընդդեմ Լեհաստանի» (Kreuz v Poland)* գործի (2001 թ. հունիսի 19-ի վճիռ) դիմողը եղել է գործարար, նա դատական կարգով հետապնդել է տեղական խորհրդին, որը հրաժարվել է հաստատել մեքենաների լվացակայանի կառուցման հատակագծի թույլտվությունը: Տեղական դատարանը պահանջել է, որ նա դատարան հայց ներկայացնելու համար վճարի 100 միլիոն լեհական զլոտի, որը համապատասխանել է այդ ժամանակ Լեհաստանի միջին տարեկան աշխատավարձին: Նա չի վճարել այդ գումարը, որից հետո նրա հայցը մերժվել է: Ի պատասխան նրա պնդման, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում, դատարանը միաձայն վճռել է, որ.

60. … քաղաքացիական դատարաններին նրանց կողմից որոշման ենթակա քաղաքացիական հայցերի դիմաց մուծումներ կատարելու պահանջը չի կարող սահմանափակել դատարան դիմելու իրավունքը, ինչը անհամատեղելի է կոնվենցիայի 6(1) հոդվածի հետ: Այն կրկնում է, այնուամենայնիվ, որ սույն գործի առանձնահատուկ հանգամանքների շրջանակներում դիտարկված վճարների չափը, ներառյալ դրանք վճարելու դիմողի կարողությունը և վարույթի այն փուլը,

երբ այդ սահմանափակումը կիրառվել է, գործոններ են, որոնք նյութական նշանակություն ունեն, երբ որոշվում է, թե արդյոք անձը կարողացե՞լ է կամ չի՞ կարողացել օգտվել դատարան դիմելու իր իրավունքից...

66. Ամբողջականորեն գնահատելով գործի փաստերը և հաշվի առնելով այն նշանակալից դերը, որը խաղում է ժողովրդավարական հասարակություններում դատարանի իրավունքը, դատարանը կարծում է, որ դատական մարմինները չեն կարողացել համապատասխան հավասարակշռություն ապահովել, մի կողմից, պետության՝ հայցերին ընթացք տալու նպատակով դատական տուրքեր հավաքելու շահի և, մյուս կողմից, դիմողի՝ իր հայցը դատարանով ապացուցելու շահի միջև:

Հայցին ընթացք տալու համար դիմողից պահանջված տուրքը եղել է չափից ավելի բարձր: Այդ պատճառով դիմողը հետ է կանգնել իր հայցից, և նրա գործն այլևս երբեք դատարանի կողմից չի լսվել: Սա, դատարանի կարծիքով, խաթարել է նրա՝ դատարան դիմելու իրավունքի բուն էությունը:

67. Այդ հիմքերով դատարանը եզրակացնում է, որ տվյալ դատական ծախսերը դիմողի վրա դնելը դատարան դիմելու նրա իրավունքի անհամաչափ սահմանափակում են եղել: Հետևաբար, դատարանը համարում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 6(1) հոդվածի խախտում:

Անտարակույս Լեհաստանի դատարանները տուրքերի չափի մասին որոշում կայացնելիս չեն կարողացել բավարար նշանակություն տալ Կրոյզի իրական ֆինանսական հնարավորություններին:

9 Դատարանի վճիռների կատարման ուղղությամբ պետական մարմինների կողմից համապատասխան քայլեր չձեռնարկելը խախտման մեկ այլ օրինակ է: Օրինակ՝ *«Սիրբուն և այլք ընդդեմ Մոլդովայի» (Sirbu and Others v Moldova)* գործով (2004 թ. հունիսի 15-ի վճիռ) վեց դիմողները եղել են քաղաքացիական ծառայողներ, որոնք շահել են ներքին գործերի նախարարության դեմ սկսած իրենց դատը և ստացել դատարանի վերջնական վճիռները, համաձայն որոնց՝ ներքին գործերի նախարարությունը պետք է նրանց վճարեր պահանջվող նպաստների գումարները: Թեպետ նրանց տրվել են կիրակման օրդերներ, նախարարությունը մերժել է նպաստների վճարումը՝ պատճառաբանելով, որ համապատասխան ֆինանսական միջոցներ գոյություն չեն ունեցել: Նախարարությունը վճիռները կատարել է միայն Ստրասբուրգ դիմողների գանգատ ներկայացնելուց հետո, այսինքն՝ ազգային դատարանների վճիռների կայացումից ավելի քան հինգ տարի հետո: Դատարանը միաձայն վճռել է, որ.

23. … 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է բոլոր անձանց քաղաքացիական իրավունքներին և պարտավորություններին վերաբերող յուրաքանչյուր հայց դատարանին և տրիբունալին ներկայացնելու իրավունքը: Այսպիսով, այն մարմնավորում է «դատարանի իրավունքը», որի մեջ՝ մուտքի իրավունքը, այսինքն՝ քաղաքացիական հայցերով դատարանում քննություն սկսելու իրավունքը դրա մի կողմն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը երևակայական կլիներ, եթե պայմանավորվող պետության իրավական համակարգը թույլ տար, որ ի վնաս կողմերից որևէ մեկի՝ վերջնական և պարտադիր կատարման ենթակա դատական որոշումը մնար անկատար: Անընդունելի կլիներ, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը, որը պետք է մանրամասն նկարագրի դատավարության կողմերին տրամադրվող արդար, հրապարակային և արագ դատավարության ընթացակարգային երաշխիքներ, չպետք է պաշտպանի դատարանի կայացրած որոշումների կատարումը: 6-րդ հոդվածի այսպիսի մեկնաբանությունը, համաձայն որի՝ այն զուտ դատարան դիմելու և վարույթի անցկացմանը վերաբերող դրույթ է, ամենայն հավանականությամբ կհանդիսանար այնպիսի իրավիճակների առաջացման պատճառ, որոնք անհամատեղելի են անդամ պետություններում օրենքի գերակայության սկզբունքի հետ, թեպետ կոնվենցիայի վավերացումով անդամ պետությունները պարտավորվել են հարգել այն: Ցանկացած դատարանի կայացրած դատավճռի կատարումը, հետևաբար, պետք է համարվի 6-րդ հոդվածի նպատակների համար տեղի ունեցող «դատավարության» բաղկացուցիչ մասը (տե՛ս *«Հորնսբին ընդդեմ Հունաստանի» (Hornsby v Greece)* 1997 թ. մարտի 19-ի վճիռը, Զեկույցներ, 1997-II, էջ 510, պարբ. 40):

24. Վճռի չկատարումն արդարացնելու համար որևէ պետական մարմին չի կարող վկայակոչել ֆինանսական միջոցների բացակայությունը: Պարզ է, որ որոշ հանգամանքներում վճռի իրականացման հետաձգումը կարող է արդարացված լինել: Սակայն սա չի կարող լինել այնպիսի հետաձգում, որը խաթարում է կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով պաշտպանվող իրավունքի բուն էությունը (տե՛ս *«Իմմոբիլիարե Սաֆֆին ընդդեմ Իտալիայի» (Immobiliare Saffi v Italy)* [GC], թիվ 22774/93, պարբ. 74, ECHR 1999-V): Վարույթում գտնվող գործի պարագայում դիմողներին չպետք է խանգարեին ստանալ իրենց շահած դատի օգուտը (փոխհատուցման վճարները):

25. Դատարանը նկատում է, որ Սենտրու շրջանային դատարանի 1997 թ. օգոստոսի 1-ի և 18-ի վճիռները չեն իրականացվել ավելի քան հինգուկես տարի: Դրանք կիրառվել են միայն այս գործերի վերաբերյալ դատարանի վճիռները 2003 թ. մայիսի 15-ին կառավարությանը տրամադրելուց հետո:

26. Այս գործի դեպքում Մոլդովայի իշխանությունների կողմից վերջնական վճիռները կատարելու ուղղությամբ անհրաժեշտ քայլեր չձեռնարկելու հետևանքով կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը զրկվել է օգտակար ազդեցություն ունենալու հատկությունից:

27. Հետևաբար, տեղի է ունեցել կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: Ուշագրավ է, որ դատարանը կտրուկ մերժել է այն միտքը, որ հանրային ֆինանսական միջոցների բացակայությունը արդարացնում է ազգային մարմինների դեմ կայացված ֆինանսական վճիռներ չիրագործելը:

ՋԵՆՔԵՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

.....

«Ռոուվը և Դեյվիսն ընդդեմ ՄԹ-ի» (Rowe and Davis v UK [2000] Crim LR 584)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

1988 թ. դեկտեմբերի 15-ի լույս 16-ի գիշերը Սարրիում կատարվել են ծանր հանցագործություններ: Գիշերվա ժամը 1.30-ին Ֆիքլշելի մոտ գտնվող հանդակում հարձակում է կատարվել երկու տղամարդու վրա, տղամարդկանցից մեկը՝ Հարբուրգը, սպանվել է: Զոհի մեքենան առևանգել են: Երկու ժամ անց դանակով և հրացանով զինված դիմակներով երեք տղամարդիկ մտել են Օքսթեդում գտնվող մի տուն, գողացել տանտերերի ոսկեղենը, դանակահարել բնակիչներից մեկին՝ Թիմոթի Նափիերին և առևանգել նրա մեքենան: Հարբուրգի մեքենան թողել են Նափիերի տան դիմաց: Մի քանի ժամ անց դիմակներով երեք տղամարդիկ ներխուժել են Ֆեթչամում գտնվող մի տուն, կապկպել տանտերերին, գողացել նրանց ոսկեղենը և առևանգել մեքենան՝ նրանց տան մոտ թողնելով Թիմոթիի մեքենան: Այս հանցագործությունները լայնորեն լուսաբանվել են մամուլում: Հանցագործների վերաբերյալ տեղեկություններ հաղորդող անձին նշանակվել է 25.000 ֆունտ ստեռլինգի խոշոր պարգևատրում: Դեկտեմբերի 18-ին ոստիկանությունը հաղորդում է ստացել, որ հանցագործները բնակվում են Լոնդոնի հարավում գտնվող ինչ-որ տանը: Ոստիկանությունը ձեռք է բերել խուզարկության կարգադրություններ և դեկտեմբերի 19-ին խուզարկել տարածքը (բնակարանները): Այդ տարածքում ապրելիս են եղել Ռոուվը, Դեյվիսը (երկուսն էլ սևամորթ) և Զոբբինսի խմբի անդամները՝ Զոբբինսը, Դունքանը և Գրիֆֆինը (բոլորն էլ սպիտակամորթ էին և նախկինում դատված): Ռոուվի թղթազամբյուղի մեջ հայտնաբերվել է Ֆեթչամի տան թալանի ընթացքում գողացած կանացի կրծքազարդը և արյան հետքերով բաճկոնը: Ռոուվը, Դեյվիսը, Զոբբինսը և Գրիֆֆինը ձերբակալվել են ծանր կողոպուտ կատարելու կասկածանքով: Ռոուվի 16 տարեկան ընկերուհին ոստիկանությանն է վերադարձրել Ֆեթչամից գողացված մնացած ոսկեղենը, որը, ըստ նրա, նրան տվել էր Ռոուվը: Զոնսոնը մի քանի շաբաթ անց հրացանը ձեռքին ձերբակալվել է և ընդունել, որ այն օրը, երբ կատարվել են հանցագործությունները, ինքը գտնվել է հարավային Լոնդոնում գտնվող տանը, սակայն հերքել է իր մասնակցությունը հանցագործություններին: Ռոուվի, Դեյվիսի և Զոնսոնի դատը տեղի է ունեցել 1990 թ. Օլդ Բեյլիի դատարանում: Մեղադրող կողմը մեծապես հիմնվել է հանցագործությունների կատարման գիշերը ամբաստանյալներին օգնած Զոբբինսի խմբի անդամների ցուցմունքների վրա: Ամբաստանյալները հերքել են իրենց մասնակցությունը հանցագործություններին: Երդվյալ ատենակալները միաձայն ամբաստանյալներին մեղավոր են ճանաչել մարդասպանություն կատարելու, ծանր մարմնական վնասվածքներ հասցնելու և թալան կատարելու մեջ: Նրանց բոլորին նշանակվել է ցմահ ազատազրկման պատիժ: Բողոքարկման ժամանակ մեղադրող կողմը դատարանին ներկայացրել է մի փաստաթուղթ, սակայն ամբաստանյալներին/գանգատարկուներին դրան ծանոթանալու հնարավորություն չի տրվել: Վճռաբեկ դատարանը, որը մերժել է բողոքը, մերժել է նաև հրապարակել փաստաթուղթը: 1997 թ. նորաստեղծ Քրեական գործերի հանձնաժողովը կարգադրել է հետաքննել գործը և պարզվել է, որ Զոբբինսի խմբի մի անդամը՝ Դունկանը, երկար

տարիներ եղել է ոստիկանության իրազեկիչ և ոստիկանությանը տեղեկություններ է տրամադրել դիմողների վերաբերյալ: Դունկանը ստացել է 10.000 ֆունտ ստեռլինգ պարգևատրում և անձեռնմխելիություն հանցագործություններին մասնակից լինելու կասկածանքով հետապնդումից: Այս փաստերը չեն բացահայտվել պաշտպանության կողմի համար՝ ելնելով հանրային շահի անձեռնմխելիությունից: Քրեական գործերի հանձնաժողովը դիմողների դատապարտման վճիռները ուղարկել է վճռաբեկ դատարանին: Դիմողները բողոքել են Եվրոպական դատարանին, որ մեղադրողի կողմից Դունկանի վերաբերյալ տեղեկությունները չբացահայտելը խախտել է արդար դատաքննության իրենց իրավունքը: Հանձնաժողովը միաձայն եզրակացրել է, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում՝ կապված 6(3) հոդվածի (բ) և (դ) ենթակետերի հետ:

59. Դատարանը նշում է, որ 6-րդ հոդվածի 3-րդ կետի երաշխիքները 1-ին կետում ամրագրված արդար դատաքննության իրավունքի առանձնահատուկ կողմերն են... Այս գործի հանգամանքներից ելնելով՝ դատարանը համարում է, որ կարիք չկա դիմողների պնդումները քննության առնել առանձին 3(բ) և (դ) ենթակետերի տեսանկյունից, քանի որ դրանք ներկայացնում են գանգատ առ այն, որ դիմողների նկատմամբ դատաքննությունն արդար չի եղել: Հետևաբար, դատարանն իր քննությունը սահմանափակելու է այն հարցով, թե արդյոք վարույթն ամբողջապես արդա՞ր է եղել...

60. Այն, որ քրեական դատավարությունները, ներառյալ դրանց ընթացակարգերին վերաբերող առանձնահատկությունները պետք է մրցակցային լինեն, ինչպես նաև մեղադրող և պաշտպանական կողմերի միջև պետք է զենքերի հավասարություն լինի, արդար դատաքննության իրավունքի հիմնարար կողմն է: Մրցակցային դատավարության իրավունք նշանակում է, որ քրեական գործում ինչպես մեղադրող, այնպես էլ պաշտպանության կողմերին պետք է հնարավորություն տրվի ծանոթանալու մյուս կողմի ռեպլիկներին ու ներկայացրած փաստերին և մեկնաբանելու դրանք (տե՛ս *«Բրանդշտեթթերն ընդդեմ Ավստրիայի» (Brandstetter v Austria)* գործով 1991 թ. օգոստոսի 28-ի վճիռը, շարք A, թիվ 211, պարբ. 66, 67): Բացի այդ, 6-րդ հոդվածի 1-ին կետը, ինչպես իրավամբ նաև Անգլիայի օրենքը, պահանջում են, ...որ դատախազական մարմինները պաշտպանության կողմին տեղեկացնեն մեղադրյալի օգտին կամ մեղադրյալի դեմ իրենց տրամադրության տակ եղած ողջ փաստական նյութերը...

61. Այնուամենայնիվ, ինչպես ընդունել են դիմողները, ...համապատասխան փաստերի բացահայտման իրավունքը բացարձակ իրավունք չէ: Ցանկացած քրեական վարույթում կարող են լինել մրցակցող շահեր (ինչպես, օրինակ՝ ազգային անվտանգության շահը, վրեժխնդրության ռիսկի ենթակա վկաներին պաշտպանելու կամ հանցագործության հետաքննության ոստիկանական մեթոդները գաղտնի պահելու անհրաժեշտությունը), որոնք պետք է հակադրվեն մեղադրյալի իրավունքներին (տե՛ս, օրինակ՝ *«Դուրսոնն ընդդեմ Նիդեռլանդների» (Doorson v Netherlands)* 1996 թ. մարտի 26-ի վճիռը, Վճիռների և որոշումների զեկույցներ, 1996-II, պարբ. 70): Որոշ դեպքերում այլ անձանց հիմնարար իրավունքները կամ կարևոր հանրային շահը պաշտպանելու նպատակով կարող է պաշտպանության կողմից որոշ փաստեր թաքցնելու անհրաժեշտություն զգացվել: Այնուամենայնիվ, 6-րդ հոդվածի 1-ին կետով թույլատրվում են միայն պաշտպանության կողմի իրավունքները սահմանափակող այսպիսի միջոցները, որոնք խստորեն անհրաժեշտ են (տե՛ս *«Վան Մեխելենն ընդդեմ Նիդեռլանդների» (Van Mechelen v Netherlands*) գործի վերաբերյալ 1997 թ. ապրիլի 23-ի վճիռը, Զեկույցներ 1997-III, պարբ. 58): Բացի այդ, մեղադրյալի նկատմամբ արդար դատաքննությունը երաշխավորելու համար պաշտպանական կողմի իրավունքի սահմանափական հետևանքով առաջացած դժվարությունները պետք է բավարար չափով հակակշռվեն դատական մարմինների որդեգրած ընթացակարգերի միջոցով (տե՛ս վերը նշված *Դուրսոնի (Doorson)* վճիռը, պարբ. 72 և վերը նշված *Վան Մեխելենի (Van Mechelen)* վճիռը, պարբ. 54):

62. Դատարանի խնդիրը չէ որոշել, թե արդյոք փաստերի բացահայտման/տրամադրման մերժումը խիստ անհրաժե՞շտ է եղել, քանի որ, որպես ընդհանուր կանոն, այն դեպքերում, երբ պաշտպանության կողմից փաստերը թաքցնելու հանգամանքը պայմանավորված է հանրային շահով, ապա ազգային դատարանների խնդիրն է գնահատել նրանց ներկայացված փաստերը... Դրա փոխարեն Եվրոպական դատարանի խնդիրն է հավաստիանալ, թե արդյոք կիրառված որոշումը կայացնելու ընթացակարգը յուրաքանչյուր դեպքում հնարավորինս համապատասխանե՞լ է մրցակցային վարույթի և զենքերի հավասարության պահանջներին և ընդգրկել մեղադրյալների իրավունքների պաշտպանության համապատասխան երաշխիքներ:

63. Առաջին ատյանի դատարանում դիմողների դատավարության ժամանակ, առանց դատավորին ծանուցելու, մեղադրող կողմը որոշել է թաքցնել գործին վերաբերող որոշ փաստեր՝ ելնելով հանրային շահի նկատառումներից: Այս ընթացակարգը, որով դատախազությունն ինքն է փորձում գնահատել թաքցվող տեղեկությունների կարևորությունը պաշտպանության կողմի համար և հակադրել այդ հանգամանքը տեղեկությունը գաղտնի պահելու հանրային շահին, չի կարող համապատասխանել 6-րդ հոդվածի 1-ին կետի վերը նշված պահանջներին: Իրոք, այս սկզբունքը ճանաչվում է Անգլիայի նախադեպային իրավունքով, որը սկզբնավորվել է վերաքննիչ դատարանի կողմից *Ուորդի (R v Ward* [1993] 2 All ER 577) գործով կայացված վճռով և այլ վճիռներով...

64. Ճիշտ է, որ դիմողի վերաքննիչ բողոքի ներկայացման ժամանակ մեղադրող կողմի խորհրդատուն ծանուցել է պաշտպանության կողմին, որ որոշ տեղեկություններ գաղտնի են պահվել, սակայն նա չի բացահայտել դրանց բնույթը: Ճիշտ է նաև, որ երկու տարբեր առիթներով վերաքննիչ դատարանը վերանայել է չբացահայտված փաստերը և, ex parte [միակողմանի] նիստերի ժամանակ, առաջնորդվելով Թագի ներկայացրած նյութով, պաշտպանության կողմի բացակայության պայմաններում որոշում է կայացրել, որ նյութը չպետք է բացահայտվի:

65. Այնուամենայնիվ, դատարանը համաձայն չէ, որ վերաքննիչ դատարանում այս ընթացակարգի կիրառումը բավարար է եղել դատավարության ընթացքում գործը քննող դատավորի կողմից գաղտնի պահված տեղեկությունները չքննելու հետևանքով առաջացած անարդարությունը շտկելու համար: Ի տարբերություն վերջինի, որի առջև վկաները ցուցմունքներ են տվել, և որը լիարժեքորեն տիրապետել է գործին վերաբերող բոլոր փաստերին և հարցերին, վերաքննիչ դատարանի դատավորները կախված են եղել չբացահայտված նյութերի վերաբերյալ թագավորական դատարանի նիստերի արձանագրության իրենց ըմբռնումից և այդ հարցերի կապակցությամբ մեղադրող կողմի խորհրդատուի ներկայացրած բացատրություններից: Բացի այդ, առաջին ատյանի դատարանի դատավորը պետք է լիազորություն ունենար ողջ դատավարության ընթացքում հսկողություն իրականացնելու բացահայտման անհրաժեշտության նկատմամբ՝ գնահատելով չբացահայտված փաստերի կարևորությունն այն ժամանակ, երբ առաջ էին գալիս նոր հարցեր, երբ կարող էր հնարավոր լինել խաչաձև հարցաքննության միջոցով լրջորեն սասանել հիմնական վկաների ցուցմունքները, և երբ գործի պաշտպանությունը դեռևս կարող էր ընդունել տարբեր ուղղություններ կամ ձեռք բերել տարբեր շեշտադրումներ: Մինչդեռ վերաքննիչ դատարանը պարտավոր էր իր գնահատումն իրականացնել ex post facto և կարող էր նույնիսկ ակամա որոշ չափով ենթարկվել երդվյալ ատենակալների՝ մեղավորության ճանաչման դատավճռի ազդեցությանը՝ թերագնահատելով չբացահայտված տեղեկությունների կարևորությունը:

66. Ամփոփենք՝ քանի որ դատախազությունն այս փաստերն առաջին ատյանի դատավորին չի ներկայացրել և նրան տեղեկությունների չբացահայտման մասին որոշում կայացնելու հնարավորություն չի տվել, դիմողներն արդար դատաքննության հնարավորություն չեն ունեցել... Սրանից հետևում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:
...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

Վճռում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 6(1) հոդվածի խախտում...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Վիլդհաբերը և դատավորներ Փալմը, Ֆերարի Բրավոն, Քաֆլիշը, Կոստան, Բուհրմանը, Յունգվիրթը, Ֆիշբախը, Զուպանոյոն, Վայոն, Հեդիգանը, Թոմասենը, Ցացա-Նիկոլովսկան, Պանտիրուն, Լևիցը, Թրաժան և Լոզը:

2 «Քրեական դատավարության և հետաքննության մասին» 1996 թ. օրենքը Անգլիայում և Ուելսում ներմուծել է մեղադրող կողմի բացահայտումների և պաշտպանական միջնորդությունների նոր համակարգ: Ըստ այդ օրենքի՝ մեղադրող կողմի տեղեկությունների չբացահայտման մասին որոշումները պաշտպանության կողմը կարող է վիճարկել, և վերանայել կարող է առաջին ատյանի դատավորը:

3 2000 թ. հուլիսին վերաքննիչ դատարանը չեղյալ է հայտարարել Ռոուվի, Դեյվիսի և Ջոնսոնի դատապարտումները: Դատարանը որոշել է, որ ոստիկանության և Դունկանի համագործակցությունն այն երեք «նյութական անկանոնություններից» մեկն է, որոնք երդվյալ ատենակալների վճիռները դարձնում են անհուսալի: Այնուամենայնիվ, դատարանը հաստատել է, որ երեքի դեմ հարուցված գործը եղել է «սահմռկեցուցիչ», և, մասնավորապես, Ռոուվի դեմ թալանի մեղադրանքի փաստերը եղել են «վերին աստիճանի լուրջ»: Արդարադատության լորդերը կարծիք են հայտնել, որ դատարանի վճիռը «անմեղության եզրակացություն չէ և շատ հեռու է դրանից»: Դատարանը նաև հաշվի է առել Անգլիայում տեղի ունեցած այս քրեական գործի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եզրակացությունը 6(1) հոդվածի խախտման վերաբերյալ և վերաքննիչ դատարանի՝ դատապարտման վճռի «հուսալիությունը» որոշելու պարտականությունը: Արդարադա-

տության լորդ Մանթելլը եզրակացրել է, որ «... 6(1) հոդվածի խախտման մասին եզրակացությունը չի նշանակում, որ դատապարտման վճիռն անպայման պետք է չեղյալ հայտարարվի: Դատապարտման վճռի հուսալիության վրա որևէ անարդարության ազդեցությունը պետք է տարբերվի ըստ դրա բնույթի և աստիճանի»: *«R-ն ընդդեմ Դեյվիսի» (R v Davis)*, *«R-ն ընդդեմ Ռոուվի» (R v Rowe)* և *«R-ն ընդդեմ Ջոնսոնի» (R v Johnson)* (2000), The Times, 25 հուլիսի:

4 *«Էդվարդսը և Լյուիսն ընդդեմ ՄԹ-ի» (Edwards and Lewis v UK)* գործում (2003 թ. հուլիսի 22-ի վճիռ) երկու անձ, որոնք դատապարտվել են, երբ առաջին ատյանի դատարանի դատավորները բավարարել են մեղադրող կողմի ex parte միջնորդությունները, համաձայն որոնց՝ մեղադրական կողմի ձեռքի տակ եղած տեղեկությունները, հանրային շահի նկատառումներից ելնելով, չպետք է տրամադրվեն պաշտպանության կողմին, հաջողությամբ վկայակոչել են 6(1) հոդվածը, որպեսզի վիճարկեն իրենց անկարողությունը դատավարությունների ընթացքում, քանի որ ենթադրյալ իրավախախտումների մեջ ոստիկանության գործակալների ներգրավումը իրենց դեմ հարուցված վարույթը դարձրել է անարդար: Առաջին դիմողը ձերբակալվել է 5 կգ հերոինով բեռնատար վագոնում, որտեղ նրա հետ միևնույն ժամանակ գտնվել է ոստիկանության գաղտնի գործակալ «Գրահամը»: Այնուհետև, էդվարդսի մեջ կասկածներ են առաջացել, որ թմրանյութերի գործարքներին մասնակցած մի շարք այլ անձինք ևս եղել են ոստիկանության գաղտնի աշխատակիցներ կամ ոստիկանության մատնիչներ: Նա դատապարտվել է ինը տարվա ազատազրկման՝ վաճառքի նպատակով Ա կարգի թմրանյութ պահելու մեղադրանքով: Երկրորդ դիմողը ձերբակալվել է, երբ ոստիկանության երկու գաղտնի գործակալներին ցույց է տվել կեղծ թղթադրամներ, որոնք տարածելու մտադրություն է ունեցել: Լյուիսը դատապարտվել է չորս և կես տարվա ազատազրկման: Պալատի առջև դիմողները պնդել են, որ իրենց դատավարությունները եղել են անարդար, և առաջին ատյանի դատավորները, որոնք պետք է որոշեին՝ դիմողները ծուղա՞կն են ընկել, թե՞ ոչ, անսացել են մեղադրող կողմի տեղեկատվությունը գաղտնի պահելու պահանջին՝ առանց մրցակցային գործընթացի ապահովման:

49. Դիմողները պնդում են, որ իրենք հանդիսանում են ոստիկանության սարքած ծուղակի զոհերը: Դատարանը նշում է, որ թեպետ ապացույցների ընդունելիությունը հիմնականում ազգային օրենքի կարգավորմանը ենթակա խնդիր է, 6-րդ հոդվածի՝ արդար քրեական դատավարության պահանջներից բխում է, որ հանցավորության դեմ պայքարի հանրային շահը չի կարող արդարացնել այնպիսի ապացույցների օգտագործումը, որոնք ձեռք են բերվել ոստիկանության հրահրիչ գործողությունների արդյունքում... *«Թեյշեյրա դե Կաստրոն [ընդդեմ Պորտուգալիայի]» (Teixeira de Castro [v Portugal])*, Զեկույցներ 1998-IV] գործի կապակցությամբ դատարանը որոշել է, որ ոստիկանության երկու պաշտոնյաների գործողությունները անցել են գաղտնի գործակալների գործողությունների սահմանը, քանի որ «դրանք չեն սահմանափակվել դիմողի քրեական բնույթի գործողությունները սկզբունքորեն պասիվ եղանակով ուսումնասիրելով», այլ «ունեցել են այնպիսի ազդեցություն, որը հանգեցրել է հանցագործության կատարմանը»: Նրանց գործողություններն անցել են «գաղտնի գործակալների գործողությունների սահմաններից, քանի որ նրանք հրահրել են հանցագործության կատարումը, և չկան այլ փաստեր, որոնք ցույց տային, որ առանց նրանց միջամտության այն կատարվելու էր» (նույնը, պարբ. 39):

Նման եզրակացության հանգելով՝ դատարանը շեշտը դրել է իրեն ներկայացված գործի մի շարք հատկանիշների վրա, մասնավորապես՝ այն փաստերի վրա, որ երկու պաշտոնյաների միջամտությունը դատարանի կողմից վերահսկված գործողության մաս չի եղել, և ազգային մարմինները կասկածի որևէ հիմնավոր պատճառ չեն ունեցել, որ դիմողը նախկինում ներգրավված է եղել թմրանյութերի վաճառքի մեջ. նա դատվածություն չի ունեցել, և չկան այլ փաստեր, որոնք կմատնանշեին, որ մինչ այն պահը, երբ նրան մոտեցել է ոստիկանությունը, նա հակված է եղել ներգրավվելու թմրանյութերի առևտրի մեջ (նույնը, պարբ. 37-8):

50. Թեպետ Անգլիայի օրենքով ոստիկանական ծուղակի կիրառումը քրեական մեղադրանքի դեմ ուղղված նյութական պաշտպանություն չէ, այն դատավորին պարտավորեցնում է կա՛մ գործընթացի չարաշահման հիմքով կասեցնել վարույթը, կա՛մ բացառել այն փաստերը, որոնք ձեռք են բերվել ոստիկանության ծուղակը լարելու հետևանքով, քանի որ դրանց ընդունումը վարույթի արդարության վրա այնպիսի բացասական ազդեցություն կունենա, որ դատարանը չի կարողանա ընդունել դրանք (տե՛ս *«R-ն ընդդեմ Լուսլիի» (R. v Looseley)* [[2001] UKHL 53] և այնտեղ վկայակոչված ավելի վաղ շրջանի նախադեպային իրավունքը):

51. Ինչպես նշում են դիմողները, այս դատարանի համար անհնարին է որոշել, թե արդյոք, 6-րդ հոդվածին հակառակ, դիմողը եղե՞լ է ծուղակի զոհ, քանի որ մեղադրող մարմինները համապատասխան տեղեկությունները չեն բացահայտել:

Հետևաբար, որպեսզի դատարանը համոզվի, որ պաշտպանության կողմի իրավունքները հավուր պատշաճի պաշտպանվել են, պետք է ուսումնասիրի այն ընթացակարգը, որի հիման վրա որոշում է կայացվում ոստիկանական ծուղակներին վերաբերող հայցերի վերաբերյալ...

52. Ամեն դեպքում, այն, որ քրեական դատավարությունները, ներառյալ դրանց ընթացակարգերին վերաբերող տարրերը պետք է լինեն մրցակցային, և պետք է գոյություն ունենա զենքերի հավասարություն մեղադրող և պաշտպանության կողմերի միջև, արդար դատաքննության իրավունքի հիմնարար առանձնահատկությունն է: Քրեական գործերի դեպքում մրցակցային դատավարության իրավունքը նշանակում է, որ ինչպես մեղադրող, այնպես էլ պաշտպանող կողմերին պետք է հնարավորություն տրվի ծանոթանալու ներկայացված փաստարկներին և մյուս կողմի ապացույցներին, ինչպես նաև մեկնաբանելու դրանք... Բացի այդ, 6-րդ հոդվածի 1-ին կետը պահանջում է, որ մեղադրող մարմինները պաշտպանության կողմին ներկայացնեն իրենց տրամադրության տակ եղած բոլոր նյութական փաստերը մեղադրյալի դեմ...

53. Համապատասխան ապացույցների վերաբերյալ իրազեկ լինելու իրավունքը, այնուամենայնիվ, բացարձակ իրավունք չի համարվում: Ցանկացած քրեական վարույթում կարող են լինել մրցակցող շահեր, ինչպես, օրինակ՝ ազգային անվտանգության կամ վրեժխնդրությունից վկաներին պաշտպանելու կամ հանցագործության հետաքննության ոստիկանական մեթոդների գաղտնիության պահպանման անհրաժեշտությունը, որոնք պետք է հակակշռվեն մեղադրյալի իրավունքների հետ: Երբեմն մեկ այլ անձի հիմնարար իրավունքները կամ կարևոր հանրային շահը պաշտպանելու նպատակով կարող է որոշ փաստեր պաշտպանության կողմից գաղտնի պահելու անհրաժեշտություն զգացվել: Այնուամենայնիվ, 6-րդ հոդվածի 1-ին կետով նման միջոցները, որոնք սահմանափակում են պաշտպանության կողմի իրավունքները, թույլատրելի են միայն խիստ անհրաժեշտության դեպքում: Բացի այդ, մեղադրյալի նկատմամբ արդար դատաքննության իրականացումը երաշխավորելու համար հարկ է, որ պաշտպանության կողմին իրավունքների սահմանափակման հետևանքով պատճառված ցանկացած դժվարություն բավարար չափով հակակշռվի դատական մարմինների կողմից կիրառվող ընթացակարգերով...

54. Այն դեպքերում, երբ հանրային շահի նկատառումներից ելնելով ապացույցները գաղտնի են պահվում պաշտպանության կողմից, դատարանի խնդիրը չէ որոշել, թե այդ չբացահայտումը եղե՞լ է խիստ անհրաժեշտություն, թե՞ ոչ, քանի որ, որպես կանոն, փաստերի գնահատումը ազգային դատարանների խնդիրն է: Ամեն դեպքում, շատ գործերում, ներառյալ սույն գործում, երբ խնդրո առարկա փաստերը երբեք չեն բացահայտվել, դատարանը չի կարող տեղեկությունները չբացահայտելու հանրային շահը հակակշռել մեղադրյալի՝ նյութին ծանոթանալու շահի հետ: Հետևաբար, որպեսզի հնարավորինս երաշխավորի, որ ընթացակարգը համահունչ է եղել մրցակցային վարույթի և զենքերի հավասարության պահանջներին և ընդգրկել մեղադրյալի շահերի պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ, դատարանը պետք է մանրամասն ուսումնասիրի որոշում կայացնելու գործընթացը...

57. Տվյալ դեպքում, այնուամենայնիվ, տպավորությունն այնպիսին է, որ չբացահայտված փաստերը վերաբերել են կամ գուցե վերաբերել են առաջին ատյանի դատավորի որոշած փաստական հարցին: Դիմողներից յուրաքանչյուրը բողոքել է, որ ներքաշվել է հանցավոր գործողությունների մեջ մեկ կամ մեկից ավելի գաղտնի ոստիկանական աշխատակիցների կամ մատնիչների կողմից և պահանջել դատաքննությունն իրականացնող դատավորից քննության առնել այն հարցը, թե արդյոք այդ հիմքով մեղադրող կողմի ապացույցները պե՞տք է բացառվեն: Որպեսզի եզրակացներ, թե մեղադրյալն իրո՞ք եղել է ոստիկանության կողմից անհարկի հանցավոր արարքի դրդման զոհ, թե ոչ, առաջին ատյանի դատավորը պետք է ուսումնասիրեր մի շարք գործոններ, այդ թվում նաև՝ ոստիկանության գործողության պատճառը, հանցագործությանը ոստիկանության մասնակցության բնույթը և աստիճանը, ոստիկանության կողմից օգտագործված խթանները կամ կիրառված ճնշումը... Եթե պաշտպանության կողմին հաջողվեր համոզել դատավորին, որ ոստիկանությունը գործել է անհարկի, ապա դիմողների քրեական հետապնդումը պետք է դադարեցվեր: Հետևաբար, խնդրո առարկա միջնորդությունները որոշիչ նշանակություն են ունեցել դիմողների դատավարությունների համար, և հանրային շահի անձեռնմխելիության հետ կապված ապացույցները կարող էին կապ ունենալ այս դիմումների հետ կապված փաստերի հետ:

58. Սինչդեռ դիմողներին մերժել են փաստերին ծանոթանալը: Հետևաբար, պաշտպանության կողմի ներկայացուցիչները հնարավորություն չեն ունեցել դատարանում լիարժեք վիճարկելու անօրինական ճանապարհով հանցավոր արարքի դրդվելու վերաբերյալ գործը: Բացի այդ, յուրաքանչյուր գործի դեպքում ապօրինաբար հանցավոր արարքի դրդման վերաբերյալ պաշտպանության կողմի բացատրությունները մերժած դատավորն արդեն ծանոթ է եղել մեղադրող կողմի փաստարկներին, որոնք կարող էին կապ ունենալ հարցի հետ...

59. Այս հանգամանքներից ելնելով՝ դատարանը չի համոզվում, որ փաստերի բացահայտման և ապօրինաբար հանցավոր արարքի դրդման հարցերի վերաբերյալ որոշման կայացման ընթացակարգը համապատասխանել է մրցակցային վարույթի ապահովման և զենքերի հավասարության պահանջներին և ներառել է մեղադրյալի շահերի պաշտպանության պատշաճ երաշխիքներ: Սրանից հետևում է, որ այս դեպքում տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

Միաձայն վճռով դատարանը մեկ անգամ ևս բարձրաձայնել է ապացույցների բացահայտմանը վերաբերող նախադեպային իրավունքի ընթացակարգի քննադատությունը: 43-րդ հոդվածով կառավարությունը պահանջել է *Էդվարդսի և Լյուիսի (Edwards and Lewis)* գործը կրկնակի դատաքննության համար փոխանցել մեծ պալատին: Վերջինիս թույլտվությունը ստացվել է 2003 թ. դեկտեմբերին: Այնուամենայնիվ, 2004 թ. ապրիլին կառավարությունը գրել է մեծ պալատին, որ.

Այժմ, ունենալով պալատի 2003 թ. հուլիսի 22-ի վճիռը և դրա ազդեցությունն ավելի համապարփակ ուսումնասիրելու հնարավորություն, կառավարությունը կայացրել է որոշում, որով այլևս չի ցանկանում հետամուտ լինել մեծ պալատում կառավարության պահանջով 2002 թ. դեկտեմբերի 3-ին ընդունված դիմումին ընթացք տալուն:

Այս հանգամանքներից ելնելով՝ կառավարությունը հայտնում է, որ պատրաստ է, որ Մեծ պալատը հավանություն տա պալատի 2003 թ. հուլիսի 22-ի վճռին, ինչպես նաև հաստատում, որ իրեն լիովին բավարարում է մեծ պալատի այդ վարվելաձևը:

Այնուհետև մեծ պալատը միաձայն որոշել է, որ.

48. Պալատի վճռի տեսանկյունից մոտենալով գործի շրջանակներում բարձրացված հարցերին՝ մեծ պալատը, պալատի եզրակացություններից հետ կանգնելու որևէ պատճառ չի տեսնում: Հետևաբար, եզրակացնում է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում այն հիմքերով, որոնք ներկայացրել է պալատը:

Մենք կարող ենք մտածել, որ կառավարությունը որոշել է ընթացք չտալ գործի կրկնակի քննությանը *«R-ն ընդդեմ Հ-ի» (R. v H.)* և *«R-ն ընդդեմ C-ի» (R. v C.)* [2004] UKHL գործերով Լորդերի պալատի 2004 թ. փետրվարի 5-ի վճռի պատճառով: 3. Պալատը միաձայն հավանություն է տվել, որ այսպիսի քրեական վարույթներում, որոնց դեպքում մեղադրող կողմը ձգտում է հասնել ամբաստանյալներից կամ նրանց սովորական փաստաբաններից զգայուն տեղեկատվությունը գաղտնի պահելուն, ամբաստանյալների շահերը պաշտպանելու նպատակով նշանակվի հատուկ փաստաբան-խորհրդատու:

22 ...Նման նշանակումը գրեթե միշտ պետք է լինի բացառիկ, ոչ թե ինքնաբերաբար, և լինի վերջին, ոչ թե առաջին միջոց: Նման կարգադրություն պետք է արվի միայն այն դեպքում, եթե դատաքննությունն իրականացնող դատավորը համարի, որ այլ ձևով հնարավոր չէ բավարարել արդարության առումով ամբաստանյալի գերակա պահանջը...»:

Քրեական ապացույցների առնչությամբ երկու գիտնականներ նկատել են, որ.

Ո՛չ նախադեպային իրավունքի, ո՛չ էլ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի շրջանակներում դատավարությունը մեղադրյալի նկատմամբ չի կարող արդար լինել, եթե նրան մերժում են վճռորոշ նշանակություն ունեցող տեղեկությունների տրամադրումը: Այն դեպքերում, երբ խնդրո առարկա տեղեկությունների բացառիկ զգայնությունը համարվում է բացարձակապես անհաղթահարելի խոչընդոտ դրանց հրապարակային բացահայտման համար, մեղադրող կողմի վերջնական պահեստային տարբերակը պետք է լինի քրեական հետապնդման ամբողջական դադարեցումը: Անցանկալի արդյունք է, եթե սա նշանակում է, որ քրեական հանցագործության զոհերը մնում են առանց պաշտպանական միջոցի կիրառման հնարավորության, իսկ օրինախախտում կատարած անձը՝ անպատիժ: Սակայն սա կարող է լինել չարյաց փոքրագույնը, երբ մեղադրյալի արդար դատաքննության իրավունքի անհաղթահարելի ուժը խաչվում է հանրային շահի անձեռնմխելիության անխախտ նպատակի հետ (P. Roberts and A. Zuckerman, Criminal Evidence (2004), էջ 241):

5 Զենքերի հավասարության սկզբունքը վերաբերում է ոչ միայն դատարանի ընթացակարգի, այլև ինստիտուցիոնալ կարգադրությունների հարցերին: Օրինակ՝ *«Բորգերսն ընդդեմ Բելգիայի» (Borgers v Belgium,* A.214-A (1991) 15 EHRR 92) գործում դիմողը բողոքել է Բելգիայի վճռաբեկ դատարանում քննության առնվող գործերի վերաբերյալ վճիռներ կայացնելու գործընթացում գլխավոր փաստաբանի [վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում հանդես եկող գլխավոր դատախազի օգնականի] դերի դեմ: Գլխավոր փաստաբանը դատարանին խորհուրդներ է տվել առանձին բողոքները բավարարելու կամ չմերժելու վերաբերյալ և մասնակցել դատարանի խորհրդակցություններին: Կեղծիք կատարելու համար իրեն նշանակված պատժի դեմ դիմողի բողոքը հանդիպել է գլխավոր փաստաբանի դիմադրությանը և մերժվել վճռաբեկ դատարանի կողմից: Դրանից հետո նա պնդել է, որ գլխավոր

դատախազի գործառույթները զենքերի հավասարության սկզբունքի խախտում են (տասնչորս կողմ և մեկ դեմ ձայներով հանձնաժողովը որոշել է, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում): Դատարանի մեծամասնությունը, տասնութ կողմ և չորս դեմ ձայներով, նույնպես որոշել է, որ տեղի է ունեցել խախտում:

26. Որևէ մեկը հարցականի տակ չի դնում այն օբյեկտիվությունը, որով վճռաբեկ դատարանին կից գլխավոր դատախազի բաժինն իրականացնում է իր գործառույթները: Սա ակներև է այն համաձայնությունից, որը դրա ստեղծման օրվանից գոյություն է ունեցել Բելգիայում, ինչպես նաև այն փաստից, որ բազմիցս այն արժանացել է խորհրդարանի հավանությանը:

Այնուամենայնիվ, վճռաբեկ վարույթի կողմերի տեսանկյունից գլխավոր դատախազի բաժնի կարծիքը չի կարող չեզոք համարվել: Գլխավոր դատախազի բաժնի պաշտոնյան, որը խորհուրդ է տալիս բավարարել կամ մերժել մեղադրյալի բողոքը, օբյեկտիվորեն դառնում է նրա բարեկամը կամ հակառակորդը: Այս վերջին դեպքում 6-րդ հոդվածի 1-ին կետը պահանջում է հարգել պաշտպանության կողմի իրավունքները և զենքերի հավասարության սկզբունքը:

27. Տվյալ դեպքում գլխավոր փաստաբանի ներկայացրած բացատրությունների հիման վրա 1985 թ. հունիսի 18-ին վճռաբեկ դատարանում նիստի ժամանակ որոշվել է, որ պարոն Բորգերի բողոքը պետք է մերժվի... Նա ներկայացված փաստարկներին պատասխանելու որևէ հնարավորություն չի ունեցել. նախքան դրանք լսելը նա տեղյակ չի եղել դրանց բովանդակությանը, քանի որ դրանց մասին նախօրոք ծանուցում չի ստացել: Դրանից հետո նրան օրենքով արգելել են դա անել: Համաձայն դատավարական օրենսգրքի 1107-րդ հոդվածի՝ գլխավոր դատախազի բաժնի անդամի միջամտությունից հետո արգելվում է նույնիսկ գրավոր նշումներ ներկայացնել...

Դատարանը պաշտպանության իրավունքների նման սահմանափակման արդարացում չի տեսնում: Երբ գլխավոր փաստաբանը դիմողի համար անբարենպաստ նյութեր է ներկայացնում, վերջինս նախքան վիճաբանությունները ավարտվելը դրանց վերաբերյալ իր նկատառումները ներկայացնելու հստակ շահ ունի: Այն փաստը, որ վճռաբեկ դատարանի իրավասություններն ընդգրկում են զուտ իրավունքի հարցեր, այս առումով որևէ տարբերություն չի մտցնում:

28. Բացի այդ և ամենից առավել անհավասարությունն էլ ավելի է մեծացել այն պատճառով, որ գլխավոր փաստաբանը, ունենալով խորհրդատվական դեր, մասնակցել է դատարանի խորհրդակցություններին: Կատարելապես օբյեկտիվ լինելու դեպքում այս կարգի օժանդակությունը կարող է որոշակիորեն նպաստել վճիռների ձևակերպման գործընթացին, որը, այնուամենայնիվ, առաջին հերթին վճռաբեկ դատարանի պարտականությունն է: Ամեն դեպքում, դժվար է տեսնել, թե ինչպե՞ս կարող է այսպիսի օժանդակությունը սահմանափակվել ոճական նկատառումների շրջանակում, որոնք հաճախ անբաժանելի են նյութական խնդիրներից և, ըստ կառավարության, ամեն ինչից զատ, նպատակ ունեն նպաստելու նախադեպային իրավունքի հետևողականության պահպանմանը: Եթե նույնիսկ տվյալ գործում այդ օժանդակությունը եղել է այդքան սահմանափակ, ողջամտորեն կարելի է մտածել, որ խորհրդակցությունները գլխավոր փաստաբանին լրացուցիչ հնարավորություն են ընձեռել առանց դիմողի դիմադրությանը հանդիպելու մտավախության առաջ տանել իր փաստարկները, ըստ որոնց՝ բողոքը պետք է մերժվի:

29. Վերջապես, պաշտպանության կողմի իրավունքների և զենքերի հավասարության սկզբունքի պահանջների, ինչպես նաև ներկա գտնվելու նշանակության պահպանման առումներով դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում... .

«Դելկուրն ընդդեմ Բելգիայի» (Delcourt v Belgium, A.11 (1970) 1 EHRR 355) վաղ անցյալի գործում դատարանը հաստատել է վճռաբեկ դատարանի և նրա գլխավոր դատախազի բաժնի անկախությունը և անաչառությունը: Այնուամենայնիվ, *Բորգերսի (Borgers)* գործում դատարանն ընդունել է ավելի խիստ մոտեցում, քանի որ արդար դատաքննության հայեցակարգը «... և հատկապես այն կարևորությունը, որը տրվում է արտաքին ձևին և արդարադատության արդար իրականացման նկատմամբ հանրության մեծացած զգայունությանը, դատարանի նախադեպային իրավունքի համակարգում ենթարկվել են զգալի էվոլյուցիայի...» (պարբ. 24):

6 Դատարանը վճռել է, որ զենքերի հավասարության սկզբունքը տարածվում է քաղաքացիական վարույթների վրա: *«Դոմբո Բիհիր ԲՎ-ն ընդդեմ Նիդեռլանդների» (Dombo Beheer BV v Netherlands*, A.274 (1993) 18 EHRR 213) գործի շրջանակներում դիմող ընկերությունը հայց է ներկայացրել իր բանկի դեմ այն բանից հետո, երբ բանկը սառեցրել է *Դոմբոյի* հաշիվները: Բանկը վիճարկել է ընկերության հայցը: Ազգային դատարաններում Դոմբոն փորձել է որպես վկա ներգրավել իր նախկին կառավարիչ տնօրենին, որն ուղղակիորեն ներգրավված է եղել ընկերության կողմից բանկի հետ կատարած գործարքների մեջ: Բանկն առարկություն է ներկայացրել այս փաստերի ընդունելիության

առնչությամբ (քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ դատավարության կողմ հանդիսացող անձը մեծ մասամբ իր սեփական գործում չի կարող ներկայանալ որպես վկա): Դատարանը համաձայնել է բանկի հետ և մերժել նախկին կառավարիչ տնօրենի ցուցմունք տալը: Այնուամենայնիվ, բանկը կարողացել է կանչել իր տեղական բանկի կառավարչին, որը ցուցմունք է տվել իր անունից: Նիդեռլանդների դատարանների վճիռը եղել է հօգուտ բանկի: Դոմբոն այնուհետև բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ տեղի է ունեցել զենքերի հավասարության սկզբունքի խախտում: Տասնչորս կողմ և հինգ դեմ ձայներով՝ հանձնաժողովը պաշտպանել է գանգատը: Դատարանը որոշել է, որ.

32. «Արդար դատաքննության» հայեցակարգից անբաժանելի պահանջներն անհրաժեշտաբար նույնը չեն քաղաքացիական իրավունքներին և պարտավորություններին վերաբերող և քրեական գործերի վարույթների դեպքում: Սա հաստատվում է առաջին խմբի գործերի նկատմամբ 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի նման գործող մանրամասն դրույթների բացակայությամբ: Այսպիսով, թեպետ զուտ քրեական իրավունքի շրջանակներից դուրս այս դրույթները որոշակի նշանակություն ունեն (տե՛ս mutatis mutandis *«Ալբերը և Լե Կոմպտն ընդդեմ Բելգիայի» (Albert and Le Compte v Belgium)* 1983 թ. փետրվարի 10-ի վճիռը, շարք A, թիվ 58, էջ 20, պարբ. 39), քաղաքացիական իրավունքներին և պարտավորություններին վերաբերող գործերի դեպքում պայմանագրի կողմերն ավելի մեծ ազատություն ունեն, քան քրեական գործերի դեպքում:

33. Այնուամենայնիվ, դատարանի նախադեպային իրավունքը բացահայտում է քաղաքացիական իրավունքներին և պարտավորություններին վերաբերող գործերի «արդար դատաքննությանը» վերաբերող որոշ սկզբունքներ: Ակնհայտ է, որ սույն գործի առումով ամենանշանակալիցն այն է, որ կողմերի միջև «արդար հավասարակշռության» պահպանման նպատակով «զենքերի հավասարության» պահանջը սկզբունքորեն գործում է ինչպես այս կարգի, այնպես էլ քրեական գործերի նկատմամբ...

Դատարանը համաձայն է հանձնաժողովի հետ, որ բախվող մասնավոր շահերին վերաբերող գործերի դատական վարույթների առումով «զենքերի հավասարությունը» ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմին տրված է նրա գործը, ներառյալ նրա փաստարկները ներկայացնելու ողջամիտ հնարավորություն այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի համեմատությամբ չեն դնում զգալիորեն անբարենպաստ իրավիճակի մեջ:

Յուրաքանչյուր առանձին դեպքում «արդար դատաքննության» երաշխավորումը ազգային մարմինների խնդիրն է:

34. Սույն գործի առնչությամբ դիմող ընկերության խնդիրը եղել է ապացուցել, որ իր և այդ բանկի միջև գոյություն է ունեցել որոշակի վարկային գծերի տրամադրման վերաբերյալ բանավոր համաձայնություն: Ասվել է, որ այս համաձայնության ընդունման ժամանակ ներկա են եղել միայն երկու առանցքային անձինք՝ դիմող ընկերությունը ներկայացնող նախկին կառավարիչ տնօրեն պրն վան Ռեյջենդամը և պրն վան Վ-ն, որը հանդես է եկել բանկի անունից: Այս երկու առանցքային անձանցից մեկին՝ բանկի ներկայացուցչին, արժանացրել են ունկնդրության: Դիմող ընկերությանը մերժել են հնարավորություն տալ կանչելու այն անձին, որը ներկայացրել է նրան, քանի որ վերաքննիչ դատարանը նույնականացրել է նրան դիմող ընկերության հետ:

35. Համապատասխան բանակցությունների ժամանակ պրն վան Ռեյջենդամը և պրն վան Վ-ն գտնվել են հավասար պայմաններում, քանի որ երկուսն էլ իրավասու են եղել բանակցելու իրենց համապատասխան կողմերի անունից: Հետևաբար, դժվար է տեսնել, թե ինչու պետք է նրանց երկուսին էլ ցուցմունք տալու հնարավորություն չտրվեր:

Ուստին դիմող ընկերությունը դրվել է զգալիորեն ավելի անբարենպաստ վիճակում, քան բանկը: Հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում ...

Չորս դատավոր առարկել է՝ համարելով, որ ազգային դատարաններում տեղի ունեցած վարույթների ընթացքում դիմող ընկերությունն ունեցել է գրավոր և բանավոր փաստեր ներկայացնելու հավասար հնարավորություն: *Դոմբոյի* բողոքը գերագույն դատարանի մերժելուց երկու ամիս անց Հոլանդիայի քաղաքացիական օրենսգիրքը ենթարկվել է փոփոխության՝ հնարավորություն տալով կողմերին իրենց գործերում հանդես գալու որպես վկաներ:

7 Մշտական գործող դատարանը հետևել է *Դոմբո Բհհիրի (Dombo Beheer)* գործում որդեգրած մոտեցմանը, օրինակ՝ *«Կոմանիցկին ընդդեմ Սլովակիայի» (Komanicky v Slovakia)* գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2002 թ. հունիսի 4-ին: Դիմողը ներգրավված է եղել իր նախկին աշխատանքին առնչվող ձգձգված դատավարության մեջ: Թեպետ դիմողը նախապես տեղյակ է պահել դատարանին, որ վատառողջ լինելու պատճառով չի կարող ներկա գտնվել, ազգային դատարանները

հրավիրել են մի քանի նիստ, որոնց ընթացքում դիմողը ներկա չի գտնվել: Պալատը միաձայն վճռել է, որ.

45. Դատարանը նշում է, որ զենքերի հավասարության սկզբունքը, որը արդար դատաքննության ավելի լայն հայեցակարգի տարրերից մեկն է, պահանջում է, որ յուրաքանչյուր կողմին տրվի ողջամիտ հնարավորություն ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնում զգալիորեն ավելի անբարենպաստ վիճակի մեջ (տե՛ս *«Դոմբո Բիհիր ԲՎ-ն ընդդեմ Նիդեռլանդների» (Dombo Beheer B.V. v The Netherlands)* 1993 թ. հոկտեմբերի 27-ի վճիռ, շարք A, թիվ 274, էջ 19, պարբ. 33, *«Անկերլն ընդդեմ Շվեյցարիայի» (Ankerl v Switzerland)* 1996 թ. հոկտեմբերի 23-ի վճիռ, Վճիռների և որոշումների զեկույցներ, 1996-V, էջ 1567-8, պարբ. 38):

46. Արդար դատաքննության հայեցակարգը ենթադրում է նաև մրցակցային վարույթի իրավունք, համաձայն որի՝ կողմերը պետք է հնարավորություն ունենան ոչ միայն հրապարակելու ցանկացած փաստ, որն անհրաժեշտ է նրանց պահանջների հաջողության ապահովման համար, այլև, նպատակ ունենալով ազդել դատարանի որոշման վրա, իմանալ և մեկնաբանել բոլոր ներկայացված փաստերը կամ դիտողությունները (տե՛ս *«Նիդերոստ-Հուբերն ընդդեմ Շվեյցարիայի» (Niderost-Huber v Switzerland)* 1997 թ. փետրվարի 18-ի վճիռ, Զեկույցներ 1997-I, էջ 108, պարբ. 24 և *«Մանտովանելլին ընդդեմ Ֆրանսիայի» (Mantovanelli v France)* 1997 թ. մարտի 18-ի վճիռ, Զեկույցներ 1997-II, էջ 436, պարբ. 33):

47. Դատարանի խնդիրն է հավաստիանալ, թե արդյոք վարույթներն ամբողջությամբ արդա՞ր են եղել, ինչպես պահանջվում է 6-րդ հոդվածի 1-ին կետով: Այս համատեքստում նշանակություն է տրվում արդարադատության արդար իրագործման արտաքին ձևին: Այնուամենայնիվ, դատարանի գործառույթը չէ մեկնաբանել ազգային դատարանի կողմից ենթադրաբար թույլ տրված փաստական կամ օրենքի սխալները, որոնք չեն առաջացնում կոնվենցիայով պաշտպանվող իրավունքների և ազատությունների խախտում: Բացի այդ, թեև կոնվենցիայի 6-րդ հոդվածը երաշխավորում է արդար դատաքննության իրավունքը, այն փաստերի ընդունելիության կամ դրանց գնահատման վերաբերյալ կանոններ չի սահմանում, որոնք, հետևաբար, սկզբունքորեն ազգային օրենքի և ազգային դատարանների կարգավորման ենթակա հարցեր են (տե՛ս mutatis mutandis *«Շենկն ընդդեմ Շվեյցարիայի» (Schenk v Switzerland)* 1988 թ. հուլիսի 12-ի վճիռ, շարք A, թիվ 140, էջ 29, պարբ. 46, *«Բորգերսն ընդդեմ Բելգիայի» (Borgers v Belgium)* 1991 թ. հոկտեմբերի 30-ի վճիռ, շարք A, թիվ 214-B, էջ 31, պարբ. 24 և *«Գարսիա Ռուիսն ընդդեմ Իսպանիայի» (Garcia Ruiz v Spain)* 1999 թ. հունվարի 21-ի վճիռ, Զեկույցներ 1999-I, էջ 98–9, պարբ. 28):
...

55. Այս պայմաններում, ինչպես նաև հաշվի առնելով զենքերի հավասարության սկզբունքի և արտաքին ձևի պահպանման պահանջների կատարումը, դատարանը համարում է, որ ընդունված ընթացակարգը դիմողին հնարավորություն չի տվել պատշաճորեն մասնակցելու վարույթներին և այդպիսով զրկել է նրան կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով արդար դատաքննության հնարավորությունից: Այսպիսով, տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:

8 Քաջ հայտնի *«Ստիլը և Մորիսն ընդդեմ ՄԹ-ի» (Steel and Morris v UK)* գործի (բրիտանական մամուլում այս գործը հաճախ անվանում են McLibel-ի գործ) վերաբերյալ 2005 թ. փետրվարի 15-ի վճռով պալատը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել զենքերի հավասարության սկզբունքի խախտում: Դիմողները եղել են անբավարար եկամուտ ունեցող անձանց նպաստի/պետական նպաստի ոլորտում քարոզչությամբ զբաղվող անձինք, նրանք, ըստ բարձր դատարանի, տպագրել են մի քանի հազար օրինակ թռուցիկներ, որոնք, ի թիվս այլոց, լուրջ մեղադրանքներ են պարունակել «Մակդոնալդ» ընկերության սննդի առողջական և բնապահպանական հետևանքների և աշխատանքային մթնոլորտի վերաբերյալ: Թռուցիկները տարածվել են ՄԹ-ում, որից հետո 1990 թ. «Մակդոնալդի» ամերիկյան և ՄԹ մասնաճյուղերը դիմողների դեմ սկսել են զրպարտության դատավարություն՝ պահանջելով թռուցիկների տպագրության և տարածման հետևանքով առաջացած 100.000 ֆունտ ստեռլինգի վնասի փոխհատուցում: Անգլիայի քաղաքացիական իրավունքի ոլորտում զրպարտության վարույթների դեպքում իրավաբանական օգնություն տրամադրելու փորձ գոյություն չունի: Հետևաբար, այս գործում (որն Անգլիայի քրեաքաղաքացիական իրավունքի պատմության մեջ եղել է ամենաերկար դատավարությունը) իրենց պաշտպանությունն ապահովելու համար դիմողները պետք է օգտվեին տարբեր իրավաբանների տրամադրած pro bono [հասարակական կարգով] օժանդակությունից: Բարձր դատարանում քննությունը տևել է 313 դատարանային օր՝ ընդգրկելով 40.000 էջ փաստական նյութ և 130 վկայի բանավոր ցուցմունք: Ըստ հաշվարկների՝ այս գործի համար «Մակդոնալդի» փաստաբանական ծախսերը կազմել են ավելի քան 10 միլիոն ֆունտ ստեռլինգ: 1997 թ. հունիսին՝

վեց ամիս խորհրդակցելուց հետո, դատավորը հրապարակել է 762 թերթանոց վճիռ՝ որոշելով, որ թռուցիկների բովանդակած մի շարք պնդումներ ճշմարտությանը չեն համապատասխանել: Դատարանը «Մակդոնալդին» նշանակել է վնասի փոխհատուցում՝ 60.000 ֆունտ ստեռլինգ: Թեպետ «Մակդոնալդը» կարող էր պահանջել դիմողներից փոխհատուցել իր փաստաբանական ծախսերը, դա չի արել: Դիմողները բողոք են ներկայացրել վերաքննիչ դատարան, և քսաներեք օրվա դատավարությունից հետո 1999 թ. մարտին վերաքննիչ դատարանը ընդունել է 301 թերթից բաղկացած վճիռ: Վերաքննիչ դատարանը բավարարել է դիմողների բողոքի որոշ կետեր: Եվրոպական դատարանում դիմողները վիճարկել են, ի թիվս այլոց, որ «Մակդոնալդից» պաշտպանվելու համար իրենց իրավաբանական օգնություն տրամադրելու մերժման պատճառով դատավարությունը եղել է անարդար: Դատարանը վճռել է, որ.

61. Այն հարցը, թե արդյոք արդար դատաքննության ապահովման համար անհրաժե՞շտ է տրամադրել իրավաբանական օգնություն, պետք է որոշվի յուրաքանչյուր գործի առանձին փաստերի և հանգամանքների հիման վրա և պետք է կախված լինի, ի թիվս այլոց, վարույթում գտնվող գործից, համապատասխան օրենքի և ընթացակարգի բարդությունից և դիմողի՝ իրեն արդյունավետորեն ներկայացնելու կարողությունից...

«Մակդոնալդը» ձգտել է դիմողներից նյութական վնասի փոխհատուցում ստանալ: Գործը ներառել է բարդ փաստական և իրավական բնույթի հարցեր: Թեպետ դիմողները եղել են բանիմաց և պատրաստված.

69. ...դիմողների և «Մակդոնալդի» համապատասխան իրավաբանական օգնության միջև եղել է այն աստիճանի անհամաչափություն, որ նման բացառիկ պահանջված գործում այն անշուշտ հանգեցնելու էր անարդարության՝ անկախ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների գործադրած լավագույն ջանքերի:
...

72. Ամփոփելով՝ հետևաբար, դատարանը կարծում է, որ դիմողներին իրավաբանական օգնության տրամադրման մերժումը զրկել է նրանց իրենց գործը դատարանում արդյունավետորեն ներկայացնելու հնարավորությունից և նպաստել դիմողների ու «Մակդոնալդի» միջև զենքերի անընդունելի անհավասարության ձևավորմանը: Հետևաբար, տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում:

Թեև վերոհիշյալ վճռում պահպանված է սկզբնական դատարանի մոտեցումը, համաձայն որի՝ 6-րդ հոդվածով պետությունները քաղաքացիական իրավունքի գծով ընդհանուր իրավաբանական օգնության սխեմաներ ստեղծելու պարտավորություն չունեն, այն ցույց է տալիս, որ կողմերի ռեսուրսների միջև գոյություն ունեցող խիստ անհավասարությունը կարող է պահանջել իշխանություններից առանձնահատուկ դեպքերում իրավաբանական օգնություն տրամադրել անվճարունակ պաշտպանյալներին:

ԼՌՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ/ՍԵՓԱԿԱՆ ԱՆՁԻ ԴԵՄ ՑՈՒՑՄՈՒՆՔ ՉՏԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

.....

«Ջոն Մյուրեյն ընդդեմ ՄԹ-ի» (John Murray v UK (1996) 22 EHRR 29)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը ձերբակալվել է 1990 թ. հունվարի 7-ին ժամը 17.40-ին Հյուսիսային Իռլանդիայի ոստիկանության աշխատակիցների կողմից: Նա նախազգուշացվել է, որ կարող է ոչինչ չասել, սակայն նրա դատավարության ժամանակ կարող են հակառակ եզրակացություններ արվել, եթե այդ ժամանակ իրեն պաշտպանելու նպատակով որոշի օգտագործել այնպիսի փաստեր, որոնց վերաբերյալ ոչինչ չի ասել: Ոստիկանության բաժին գալուն պես նա հայտնել է, որ ցանկանում է խորհրդակցել փաստաբանի հետ: Կես ժամ անց ոստիկանության ավագ սպա դետեկտիվը արտակարգ իրավիճակների մասին օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում կարգադրել է քառա-

սունութ ժամով հետաձգել դիմողի հանդիպումը փաստաբանի հետ: Այնուհետև ոստիկանությունը տասն անգամ հարցաքննել է Մյուրեյին: Նա չի պատասխանել իրեն առաջադրված հարցերին: Քառասունութ ժամ հետո նրան թույլ են տվել հանդիպել իր փաստաբանի հետ: Դրանից հետո նա շարունակել է հրաժարվել ոստիկանության հարցերին պատասխանելուց: 1991 թ. մայիսին Հյուսիսային Իռլանդիայի արդարադատության գլխավոր լորդի առջև կայացել է Մյուրեյի դատավարությունը, որի ընթացքում, ի թիվս այլոց, նրան առաջադրվել են սպանության դավադրությանը մասնակցելու և անձանց անօրինականորեն բանտարկության մեջ պահելու մեղադրանքներ: Մյուրեյը ցուցմունք չի տվել, և նրա կողմից վկաներ չեն կանչվել: Մեղադրող կողմը պնդել է, որ Մյուրեյը հանդիսացել է ԻՀԲ-ի կասկածյալ մատնիչին ձերբակալած խմբի անդամներից մեկը: Վերջիններս հարցաքննել են նրան և նրան սպանելու մտադրություն են ունեցել: Մյուրեյը ձերբակալվել է այն տան մեջ, որտեղ ոստիկանությունը հայտնաբերել է նաև զոհին: Արդարադատության գլխավոր լորդը Մյուրեյին մեղավոր է ճանաչել անձին անօրինական բանտարկության մեջ պահելու մեջ, ընդսմին «նրա դեմ շատ լուրջ եզրակացություններ արել»՝ ելնելով այն հանգամանքից, որ նա ոստիկանությանը բացատրություններ չի տվել այդ տանն իր գտնվելու վերաբերյալ և հօգուտ իր պաշտպանության փաստեր չի ներկայացրել: «Քրեական ապացույցների մասին» Հյուսիսային Իռլանդիայի 1988 թ. կարգի համաձայն՝ ամբաստանյալը չի կարող դատապարտվել միայն իր պահպանած լռությունից արված հակառակ եզրակացությունների հիման վրա, սակայն առաջին ատյանի դատարանները կարող են որոշակի հանգամանքներում հաշվի առնել այդպիսի եզրակացությունները (օրինակ՝ երբ ամբաստանյալը չի կարողացել բացատրել որոշակի տեղում իր գտնվելու փաստը): Մյուրեյը դատապարտվել է ութ տարվա ազատազրկման: Ավելի ուշ նա բողոքել է հանձնաժողովին, որ ի խախտումն 6(1) հոդվածի՝ զրկված է եղել լռություն պահպանելու իր իրավունքից, և փաստաբանի հետ խորհրդակցելու իր իրավունքի հետաձգումը 6(3) հոդվածի խախտում է եղել: Հանձնաժողովը մերժել է առաջին գանգատը տասնհինգ կողմ և երկու դեմ ձայներով, սակայն բավարարել վերջինը՝ տասներեք կողմ և չորս դեմ ձայներով:

45. Թեպետ դրա մասին առանձին չի նշվում կոնվենցիայի 6-րդ հոդվածում, կասկած չի կարող լինել, որ ոստիկանության հարցաքննության ժամանակ լռություն պահպանելու իրավունքը և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու առավելությունն ընդհանուր առմամբ ճանաչված միջազգային չափանիշներ են, որոնք ընկած են 6-րդ հոդվածի արդար դատաքննության գաղափարի հիմքում (տե՛ս *«Ֆունկն ընդդեմ Ֆրանսիայի» (Funke v France)* վճիռը [A.256-A (1993)]): Անձեռնմխելիության այս իրավունքները, մեղադրյալին պաշտպանելով իշխանությունների անհարկի հարկադրանքից, նպաստում են սխալ արդարադատության իրագործումից խուսափելուն և 6-րդ հոդվածի նպատակներն ապահովելուն:

46. Դատարանը չի համարում, որ իրենից պահանջվում է վերացականորեն վերլուծել այս անձեռնմխելիության շրջանակները, և, մասնավորապես, վերլուծել, թե այս համատեքստում ինչ է «անհարկի հարկադրանքը»: Սույն գործում խնդրո առարկան այն է, թե արդյոք անձեռնմխելիության այս իրավունքներն այնքա՞ն բացարձակ են, որ մեղադրյալի լռություն պահպանելու իրավունքի կիրառումը դատավարության ժամանակ որևէ պարագայում չի կարող օգտագործվել նրա դեմ, կամ, այլ կերպ ասած, այն փաստը, որ նա նախօրոք զգուշացվել է, որ իր պահպանած լռությունը կարող է օգտագործվել իր դեմ, արդյո՞ք «անհարկի հարկադրանք» է:

47. Մի կողմից՝ ինքնընստինքյան պարզ է, որ զուտ կամ հիմնականում մեղադրյալի լռություն պահպանելու կամ հարցերին պատասխանելուց կամ ցուցմունք տալուց հրաժարվելու հանգամանքների վրա հիմնված դատապարտումը անհամատեղելի է նշված անձեռնմխելիության հետ: Մյուս կողմից՝ դատարանը կարծում է, որ նույնքան պարզ է, որ մեղադրող կողմի ներկայացրած փաստերի հիմնավորությունը գնահատելիս այս անձեռնմխելիությունը չի կարող և չպետք է խանգարի մեղադրյալի լռությունը հաշվի առնելուն այն դեպքերում, երբ ակնհայտ է, որ նրա բացատրությունների անհրաժեշտություն կա:

Այն դեպքերում, երբ պետք է բաժանարար գիծ անցկացվի այս երկու բևեռների միջև, «լռություն պահպանելու» իրավունքի ընբռնումից հետևում է, որ այն հարցին, թե որքանով է այս իրավունքը բացարձակ, պետք է տրվի բացասական պատասխան:

Հետևաբար, չի կարելի ասել, որ այն ժամանակ, երբ քրեական դատավարության ժամանակ առաջին ատյանի դատարանը փորձում է գնահատել ներկայացված փաստերը, մեղադրյալի լռությունը պարտադիր կարգով որևէ հետևանք չի ունենալու: Մասնավորապես, ինչպես նշել է կառավարությունը, թեպետ այս ոլորտում միջազգային հաստատված չափորոշիչները երաշխավորում են լռություն պահպանելու իրավունքը և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու արտոնությունը, այս կետի առնչությամբ դրանք լռում են:

Այն հարցը, թե արդյոք մեղադրյալի լռությունից հակառակ եզրակացություններ անելը 6-րդ հոդվածի խախտո՞ւմ է, թե՞ ոչ, պետք է որոշվի գործի բոլոր հանգամանքների հիման վրա՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն իրավիճակներին, երբ կարող են արվել անուղղակի եզրակացություններ, այն կշռին, որ պետք է տրվի դրանց, երբ ազգային դատարանները գնահատում են փաստերը, ինչպես նաև այդ իրավիճակներից անկապտելի հարկադրանքի աստիճանին:

48. Ինչ վերաբերում է սույն գործում առկա հարկադրանքի աստիճանին, ապա պետք է նշել, որ դիմողը փաստորեն ի վիճակի է եղել լռություն պահպանելու: Չնայած կրկնվող նախազգուշացումներին, թե նրա լռությունից կարող են հետևություններ արվել, նա որևէ հայտարարություն ոստիկանությանը չի արել և իր դատավարության ժամանակ ցուցմունք չի տվել: Բացի այդ, կարգի 4(5) հոդվածով նա մնացել է որպես հարկադրանքի ոչ ենթակա վկա... Այսպիսով, լռություն պահպանելու նրա համառությունը քննության ողջ ընթացքում հավասար չի եղել քրեական հանցագործության կամ դատարանի նկատմամբ արհամարհական վերաբերմունքի: Բացի այդ, ինչպես շեշտվել է ազգային դատարանների որոշումներում, լռությունն ինքնին չի կարող համարվել մեղավորության նշան...

49. Սույն գործի փաստերը, հետևաբար, պետք է տարբերվեն *Ֆունկի* գործի փաստերից, ...որում դիմողի դեմ քրեական վարույթը սկսվել էր այն բանից հետո, երբ մաքսային մարմինները ստիպել էին նրան ցուցմունք տալ այն հանցագործությունների վերաբերյալ, որոնք նա ենթադրաբար կատարել էր: Հարկադրանքի այսպիսի աստիճանն այդ դեպքում դատարանը համարել է 6-րդ հոդվածի հետ անհամատեղելի, քանի որ, արդյունքում, այն փոշիացրել է սեփական անձի դեմ ցուցմունք չտալու արտոնության բուն գաղափարը:

50. Ակնհայտորեն, այն համակարգը, որը զգուշացնում է մեղադրյալին (որը, հնարավոր է, ինչպես և այս դիմողը, չի օգտվում իրավաբանական օգնությունից), որ քրեական հանցագործության վայրում գտնվելու վերաբերյալ ոստիկանությանը բացատրություններ կամ դատավարության ժամանակ ցուցմունքներ տալուց հրաժարվելու փաստից կարող են արվել հակառակ եզրակացություններ, ներառում է որոշակի աստիճանի անուղղակի հարկադրանք:

Այնուամենայնիվ, քանի որ, ինչպես նշված է վերը, դիմողին չի կարելի ստիպել, որ նա խոսի կամ ցուցմունք տա, այս գործոնն ինքնին չի կարող որոշիչ լինել: Դատարանը պետք է ավելի շուտ կենտրոնացնի իր ուշադրությունը այն անուղղակի եզրահանգումների վրա, որոնք արվել են ի վնաս դիմողի, հատկապես նրա դատապարտման ժամանակ:

51. Այս համատեքստում հիշվում է, որ սրանք եղել են առանց երդվյալ ատենակալների վարույթներ, երբ փաստեր ստուգողի դերում հանդես է եկել փորձառու դատավորը: Բացի այդ, կարգի շրջանակներում անուղղակի եզրակացություններ կարող են կատարվել մի շարք կարևոր երաշխիքների առկայության դեպքում, որոնք մտածված են պաշտպանության կողմի իրավունքների պաշտպանության և անուղղակի եզրակացությունների վրա հիմնվելու աստիճանի սահմանափակման համար:

Նախ՝ մինչև 4-րդ հոդվածով և 6-րդ հոդվածով անուղղակի եզրակացություններ անելը մեղադրյալը պետք է հավուր պատշաճի նախազգուշացվի, թե ինչ են լինելու իր լռության իրավական հետևանքները... Յուրաքանչյուր առանձին դեպքում հարցն այն է, թե արդյոք մեղադրող կողմի ներկայացրած փաստերը բավականաչափ ուժե՞ղ են, որպեսզի պատասխան պահանջեն: Ազգային դատարանը չի կարող եզրակացնել, որ մեղադրյալը մեղավոր է միայն այն պատճառով, որ նախընտրում է լռություն պահպանել: Բացատրություն տալուց հրաժարվելը «ողջամտորեն կարող է հնարավորություն տալ կատարելու անուղղակի եզրակացություններ, որ որևէ բացատրություն չկա, և մեղադրյալը մեղավոր է», եթե նրա դեմ եղած փաստերը «պահանջում» են նրա բացատրությունները, որոնք նա պետք է որ ի վիճակի լինի տալու: Սրան հակառակ, եթե մեղադրող կողմի ներկայացրած գործն այնքան քիչ փաստական արժեք ունի, որ պատասխան չի պահանջում, ապա դրան պատասխանելուց հրաժարվելը չի կարող արդարացնել մեղավորության վերաբերյալ անուղղակի եզրակացությունը... Այսինքն՝ կարգի համաձայն՝ դատավորը ճիշտ է համարում միայն խելամիտ եզրակացությունները՝ հիմք ընդունելով մեղադրյալի դեմ ներկայացրած փաստերը:

Բացի այդ, առաջին ատյանի դատավորն իրավասություն ունի որոշելու, թե արդյոք առանձին գործի փաստերի առնչությամբ պե՞տք է անուղղակի եզրակացություններ արվեն: Ինչպես սույն գործի առնչությամբ նշվել է վերաքննիչ դատարանի կողմից, եթե դատավորն ընդուներ, որ մեղադրյալը չի հասկացել նախազգուշացումը, կամ եթե կասկածներ ունենար դրա վերաբերյալ, «մենք վստահ ենք, որ դատավորը մեղադրյալի դեմ չէր գործադրի 6-րդ հոդվածը»... Բացի այդ, Հյուսիսային Իռլանդիայում, որտեղ առաջին ատյանի դատավորները նիստերը վարում են առանց երդվյալ ատենակալների, դատավորը պետք է բացատրի որոշման կայացման նպատակով անուղղակի եզրակացություններ անելու պատճառները և դրանց տրվող նշանակությունը: Հայեցողության կիրառումն այս առումով ենթակա է վերանայման վերաքննիչ դատարաններում:

52. Սույն գործում դիմողի դեմ մեղադրող կողմի ներկայացրած փաստերը վերաքննիչ դատարանը համարել է նրա դեմ ներկայացված «խիստ հիմնավոր» գործ... Հիշվում է, որ երբ դուռը ծեծելուց որոշ ժամանակ անց ոստիկանները մուտք են գործել այն տուն, որտեղ ԻՀԲ-ն որպես գերի պահում էր Լ.-ին, նրանք տեսել են դիմողին, որն այդ ժամանակ աստիճաններով իջնելիս է եղել: Պարոն Լ.-ն ցուցմունք է տվել (այս ցուցմունքը գործը քննող դատավորի կարծիքով եղել է հիմնավոր), համաձայն որի՝ հարկադրանքի միջոցով նրան ստիպել են ձայնագրվող խոստովանություն անել, և

ոստիկանության գալուց և նրա աչքերի կապը հանելուց հետո նա աստիճանների վրա տեսել է դիմողին: Վերջինս նրան ասել է, որ նա աստիճաններով իջնի և հեռուստացույց դիտի: Դիմողը հանել է ժապավենը: Ավելի ուշ տանը հայտնաբերվել են խճճված ժապավենը և ձայնագրիչը: Դիմողի հետ միաժամանակ որպես մեղադրյալ հանդես եկող այլ անձի ցուցմունքը, ըստ որի՝ նա նոր էր տուն մտել, հաշվի չի առնվել՝ համարվելով անվստահելի տեղեկություն...

53. Գործը քննող դատավորը, ելնելով կարգի 6-րդ հոդվածից, անուղղակի խիստ եզրակացություններ է արել դիմողի դեմ՝ կապված ձերբակալվելուց և ոստիկանությունում հարցաքննվելուց հետո այդ տանն իր ներկայությունը բացատրելուց հրաժարվելու հանգամանքի հետ: Նա նաև անուղղակի լուրջ եզրակացություններ է արել՝ ելնելով կարգի 4-րդ հոդվածից, այն հիմքով, որ դիմողը հրաժարվել է ցուցմունք տալ հօգուտ իր պաշտպանության, երբ դատարանը նման պահանջ է ներկայացրել նրան...

54. Դատարանի կարծիքով՝ նկատի ունենալով դիմողի դեմ վերը ներկայացված փաստերի ճշանակությունը, ձերբակալության, ոստիկանության և դատական քննության ժամանակ այդ տանը գտնվելու վերաբերյալ բացատրություններ տալուց հրաժարվելու հանգամանքները, որոնք ներկայացվեցին վերը, նրա դեմ արված անուղղակի եզրահանգումները եղել են խելամիտ և չեն կարող համարվել անարդար կամ անողջամիտ:

57. Այս պայմաններում և հաշվի առնելով կարգի շրջանակներում կատարված անուղղակի եզրակացությունների դերը՝ դատարանը չի համարում, որ քրեական դատաքննությունները եղել են անարդար, կամ տեղի է ունեցել անմեղության կանխավարկածի խախտում ...

58. Հետևաբար, կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի խախտում տեղի չի ունեցել:

Բ. ՓԱՍՏԱԲԱՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

59. Դիմողը ներկայացրել է, որ նրա դեմ սկսված քրեական դատավարության վճռորոշ փուլում նրան զրկել են փաստաբան ունենալու հնարավորությունից: Նա նշել է, որ Հյուսիսային Իռլանդիայում քրեական դատավարության համատեքստում ընդհանրապես կալանքի առաջին փուլը վճռորոշ նշանակություն ունի, քանի որ կարգի 3-րդ, 4-րդ և 6-րդ հոդվածներով անուղղակի եզրակացություններ անելու հնարավորություն գոյություն ունի...

62. Դատարանը նկատում է, որ կառավարությունը չի վիճարկել, որ 6-րդ հոդվածը գործում է նույնիսկ ոստիկանությունում հանցագործության նախնական քննության փուլում: Այս կապակցությամբ դատարանը հիշում է *«Իմբրիոսիան ընդդեմ Շվեյցարիայի» (Imbrioscia v Switzerland)* 1993 թ. նոյեմբերի 24-ի իր վճիռը, համաձայն որի՝ 6-րդ հոդվածը և հատկապես դրա 3-րդ կետը կարող են կիրառելի լինել նախքան գործը դատաքննության ուղարկելը, եթե դատաքննության արդար ընթացքը կարող է լրջորեն խաթարվել ամենասկզբում այդ դրույթի խախտման հետևանքով (շարք A, թիվ 275, էջ 13, պարբ. 36): Ինչպես նշվել է այդ դատավճռում, այն ձևը, որով 6-րդ հոդվածի 3(գ) կետը պետք է կիրառվի նախնական քննության ժամանակ, կախված է դատավարության առանձնահատկություններից և գործի հանգամանքներից (նշված տեղում, էջ 14, պարբ. 38):

63. Նախնական փուլում ոստիկանության հարցաքննության ժամանակ մեղադրյալի դրսևորած վերաբերմունքի առնչությամբ ազգային օրենքները կարող են նախատեսել հետևանքներ, որոնք որոշիչ են հետագա քրեական դատավարության ընթացքում պաշտպանության հեռանկարների համար: Այս հանգամանքներում 6-րդ հոդվածը սովորաբար պահանջում է, որ արդեն իսկ ոստիկանության կողմից հարցաքննության սկզբնական փուլերում մեղադրյալին թույլ տրվի օգտվել փաստաբանի օժանդակությունից: Այնուամենայնիվ, բավարար պատճառների առկայության դեպքում այդ իրավունքը, որը բառացիորեն շարադրված չէ կոնվենցիայում, կարող է սահմանափակումների ենթարկվել: Յուրաքանչյուր դեպքում հարցն այն է, թե արդյոք նման սահմանափակումը դատավարության ամբողջականության տեսանկյունից մեղադրյալին զրկե՞լ է արդար դատավարության հնարավորությունից:

64. Սույն գործում դիմողի՝ փաստաբան ունենալու իրավունքը սահմանափակվել է ոստիկանական կալանքի տակ գտնվելու առաջին 48 ժամվա ընթացքում՝ «Հյուսիսային Իռլանդիայի (արտակարգ դրության մասին)» 1987 թ. օրենքի 15-րդ բաժնի համաձայն, քանի որ ոստիկանությունն ունեցել է ողջամիտ հիմքեր հավատալու, որ փաստաբան ունենալու հնարավորությունը, ի թիվս այլոց, կխաթարի ահաբեկչական գործողությունների վերաբերյալ տեղեկությունների հավաքմանը կամ ավելի կբարդացնի նման գործողությունների կանխումը...

66. Դատարանը կարծում է, որ կարգում ամփոփված սխեման այնպիսին է, որ պաշտպանության կողմի իրավունքների համար հսկայական կարևորություն ունի այն հանգամանքը, որ մեղադրյալը փաստաբան ունենալու հնարավորություն ունենա ոստիկանության կողմից հարցաքննվելու նախնական փուլերում: Այս համատեքստում դատարանը նկատում է, որ համաձայն կարգի՝ ոստիկանության կողմից հարցաքննության սկզբում մեղադրյալը կանգնում է իր պաշտպանությանը վերաբերող հիմնարար երկընտրանքի առջև: Եթե նա նախընտրում է լռություն պահպանել, ապա նրա

դեմ, համաձայն կարգի դրույթների, կարող են արվել անբարենպաստ անուղղակի եզրակացություններ: Մյուս կողմից, եթե հարցաքննության ընթացքում մեղադրյալը նախընտրում է խախտել լռությունը, ապա ենթարկվում է իր պաշտպանությունը խափանելու վտանգի՝ ամենևին չվերացնելով իր դեմ անուղղակի եզրահանգումներ անելու հավանականությունը:

Այս պայմաններում 6-րդ հոդվածում ամրագրված արդարության սկզբունքը պահանջում է, որ արդեն իսկ նախնական փուլերում, երբ ոստիկանությունը հարցաքննում է մեղադրյալին, օգտվի փաստաբանի օժանդակությունից: Ոստիկանության հարցաքննության առաջին 48 ժամվա ընթացքում փաստաբան ունենալու հնարավորության մերժումն այն պարագայում, երբ պաշտպանության կողմի իրավունքները կարող են անդառնալի վնաս կրել, անկախ այդպիսի մերժման հիմնավորումից, հակասում է մեղադրյալի իրավունքներին՝ ամրագրված 6-րդ հոդվածում...

70. Հետևաբար, ինչ վերաբերում է դիմողին ոստիկանական կալանքի տակ վերցնելուց հետո առաջին 48 ժամվա ընթացքում փաստաբան ունենալու իրավունքից զրկելուն, ապա կապված կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(գ) կետի հետ, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:
...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

Տասնչորս կողմ և հինգ դեմ ձայներով՝ վճռում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 6(1) և (2) դրույթների խախտում՝ կապված դիմողի լռությունից նրա դեմ արված անբարենպաստ եզրահանգումների հետ:

Տասներկու կողմ և յոթ դեմ ձայներով վճռում է, որ ոստիկանության կալանքի առաջին 48 ժամվա ընթացքում դիմողի՝ փաստաբան ունենալու հնարավորության բացակայության առնչությամբ, ըստ 6(3)(գ) հոդվածի, տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են դատավորներ Բերնհարդտը, Փեթիթին, Ուոլշը, Վալտիկոսը, Մարտենսը, Փեքանենը, Լուազոն, Բիջին, Լոպես Ռոշան, Մակարչիկը, Գոտչևը և Լոհմուսը: Նախագահ Ռիսդալը և դատավորներ Մաթշերը, Փալմը, Ֆոյգելը, Ֆրիլենդը, Վիլդհաբերը և Յունգվիրթը ընդունել են միասնական մասնակի չհամընկնող կարծիք. ըստ նրանց հայտնած տեսակետի՝ հաշվի առնելով 1990-ական թթ. Հյուսիսային Իռլանդիայում տիրող ահաբեկչական մթնոլորտը, անողջամիտ չի եղել, որ օրենքի շրջանակներում ոստիկանության ավագ պաշտոնյաներն իրավունք են ունեցել ոչ ավելի, քան 48 ժամով հետաձգել ահաբեկչության մեջ կասկածվող անձանց փաստաբան ունենալու հնարավորությունը:

2 *Մյուրեյի (Murray)* գործով դատարանի վճիռն անդրադարձնում է հավասարակշռության հաստատման նպատակով դատարանի ճկուն մոտեցումը: Կասկածյալի/ամբաստանյալի լռությունից որոշ հանգամանքներում կարող են արվել անբարենպաստ եզրահանգումներ (համապատասխան գործոնները ներկայացված են 77-րդ պարբերությունում): Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ ոստիկանության առաջադրած հարցերին կասկածյալի չպատասխանելու հետևանքով ազգային օրենքը թույլ է տալիս նման եզրահանգումներ անել, ապա անուղղակիորեն երաշխավորում է կասկածյալների՝ փաստաբան ունենալու իրավունքը (պարբ. 63):

3 Նախ՝ դատարանը ճանաչել է լռություն պահպանելու իրավունքը կամ սեփական անձի դեմ ցուցմունք չտալու արտոնությունը *«Ֆունկն ընդդեմ Ֆրանսիայի» (Funke v France,* A.256-A (1993) 16 EHRR 297) գործում: Ֆրանսիայի դատարանները կարգադրել էին պրն Ֆունկին արտասահմանյան բանկային հաշվի վերաբերյալ տվյալներ ներկայացնել մաքսային մարմիններին, քանի որ նա կասկածվում էր անօրինական արտասահմանյան ֆինանսական գործարքներ անելու մեջ՝ նրան նշանակելով օրական 50 ֆրանկ տուգանք այնքան ժամանակ, քանի դեռ նա այդ փաստաթղթերը չէր ներկայացնի իշխանություններին: Ութ կողմ և մեկ դեմ ձայներով՝ դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում:

44. Դատարանը նկատում է, որ մաքսային մարմինները հասել են պրն Ֆունկի դատապարտմանը որոշ փաստաթղթեր ձեռք բերելու նպատակով: Նրանք կարծել են, որ այդ փաստաթղթերը պետք է գոյություն ունենան, թեպետ վստահ չեն եղել: Անկարող լինելով կամ չցանկանալով այլ ճանապարհով ձեռք բերել դրանք՝ նրանք փորձել են ստիպել դիմողին, որ նա անձամբ ներկայացնի այն իրավախախտմանն առնչվող փաստերը, որը նա ենթադրաբար կատարել էր: 6-րդ հոդվածի ինքնուրույն իմաստի տեսանկյունից մաքսային օրենքի առանձնահատկությունները ... չեն կարող արդարացնել «քրեական հանցագործության մեջ մեղադրվող» որևէ անձի լռություն պահպանելու և սեփական անձին հանցարարք չմեղսագրելու իրավունքի այսպիսի խախտումը:

Ուշագրավ է, որ այս անուղղակի իրավունքների/արտոնությունների ճանաչման համար դատարանը *Ֆունկի (Funke)* գործում հստակ հիմնավորում չի ներկայացրել: Սակայն անուղղակի երաշխիքների ծագման և նպատակների առումով այն շատ ավելի շիտակ է եղել *Մյուրեյի (Murray)* գործում (տե՛ս պարբ. 45):

4 Ավելի ուշ քննված *«Սոնդերսն ընդդեմ ՄԹ-ի» (Saunders v UK* (1996) 23 EHRR 313, 1996-VI) գործում դատարանը հղում է արել սեփական անձի դեմ ինքնամեղադրանքով հանդես չգալու «իրավունքին» և մշակել այդ դրույթով պաշտպանվող նպատակները: Երբ «Գինես» բաց բաժնետիրական ընկերությունը ձեռք է բերել խմիչքներ արտադրող մեկ այլ ընկերություն (Distillers Company plc), դիմողը եղել է «Գինեսի» տնօրենը: Ձեռք բերման գործարքի ժամանակ դիրքի չարաշահման ասեկոսեների հետևանքով առևտրի և արդյունաբերության պետական քարտուղարը գործն ուսումնասիրելու նպատակով տեսուչներ է նշանակել: Օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում տեսուչներն իրավունք են ունեցել պահանջելու, որ վկաները պատասխանեն իրենց հարցերին: Փաստաբանների ներկայությամբ տեսուչներն ինն անգամ հարցաքննել են դիմողին: Այնուհետև նրա դեմ ներկայացվել են մի շարք ֆինանսական բնույթի մեղադրանքներ: Երդվյալ ատենակալները նրան դատապարտել են դավադրության հոդվածի տասներկու կետով, սխալ հաշվապահության և գողության հոդվածներով: Նա դատապարտվել է հինգ տարվա ազատազրկման: Տասնչորս կողմ և մեկ դեմ ձայներով՝ հանձնաժողովը 6(1) հոդվածի շրջանակներում բավարարել է ներկայացված գանգատը: Տասնվեց կողմ և չորս դեմ ձայներով՝ դատարանը նույնպես որոշել է, որ տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:

68. Դատարանը նշում է, որ թեպետ լռության պահպանման իրավունքը և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը հատուկ նշված չեն կոնվենցիայի 6-րդ հոդվածում, դրանք, ընդհանուր առմամբ, ընդունված միջազգային չափորոշիչներ են և ընկած են 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության հիմքում: Դրանք, ի թիվս այլոց, նպատակ ունեն պաշտպանելու մեղադրյալին իշխանությունների կողմից անհարկի ճնշման ենթարկվելուց, ինչն իր նպաստն է բերում արդարադատության սխալ իրականացումից խուսափելուն և 6-րդ հոդվածի նպատակների իրականացմանը (տե՛ս *...Ջոն Մյուրեյի (John Murray)* վճիռը, էջ 49, պարբ. 45 և ... *Ֆունկի (Funke)* վճիռը, էջ 22, պարբ. 44): Սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը, մասնավորապես, ենթադրում է, որ քրեական գործում մեղադրող կողմը ձգտում է ապացուցել մեղադրյալի կատարած արարքը՝ առանց դիմելու ստիպողական կամ ճնշման մեթոդներով մեղադրյալի կամքին հակառակ ձեռք բերված փաստերի օգտագործմանը: Այս առումով, այդ իրավունքը սերտորեն առնչվում է կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետում նշված անմեղության կանխավարկածի հետ:

69. Այնուամենայնիվ, սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը, նախ և առաջ, վերաբերում է մեղադրյալի՝ լռություն պահպանելու ցանկությունը հարգելուն: Ինչպես ընդհանուր առմամբ հասկացվում է կոնվենցիայի պայմանագրի կողմերի իրավական համակարգերից և այլ հանգամանքներից, սա չի տարածվում քրեական դատավարության ընթացքում այնպիսի նյութի օգտագործման վրա, որը մեղադրյալից կարող է ստացված լինել հարկադրանքի ուժով, սակայն որը գոյություն ունի կասկածյալի կամքից անկախ և ընդգրկում է, ի թիվս այլոց, այն փաստաթղթերը, որոնք ձեռք են բերվել սանկցիայի հիման վրա, ինչպես նաև շնչառության, արյան և մեզի նմուշները և ԴՆԹ փորձաքննության նպատակով վերցված մարմնի հյուսվածքը:

Սույն գործում դատարանից պահանջվում է միայն որոշել, թե արդյոք մեղադրողի կողմից տեսուչների միջոցով դիմողից ստացված ցուցմունքների օգտագործումը հավասարազո՞ր է իրավունքի անհիմն խախտման: Այս հարցը պետք է դատարանը քննության առնի՝ ելնելով գործի բոլոր հանգամանքներից: Մասնավորապես, պետք է որոշել, թե արդյոք ցուցմունք ստանալու նպատակով դիմողը ենթարկվե՞լ է հարկադրանքի, և արդյոք ստացված ցուցմունքների օգտագործումը նրա դատավարության ժամանակ առաջացրե՞լ է 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված արդար դատաքննությունից անկապտելի սկզբունքների (որոնց մասն է կազմում նաև սեփական անձին հանցագործություն չմեղսագրելու իրավունքը) խախտում:

70. Կառավարությունը չի առարկել, որ տեսուչներին ցուցմունք տալու համար դիմողը ենթարկվել է իրավական հարկադրանքի: 1985 թ. «Քարոզարշավների մասին» օրենքի 434-րդ և 436-րդ բաժինների համաձայն՝ նա պարտավոր է եղել ... ինը երկարատև հարցաքննությունների ժամանակ պատասխանել տեսուչների հարցերին, որոնցից յոթը՝ որպես ապացույցներ, ընդունելի են եղել նրա դատավարության ժամանակ: Եթե դիմողը հրաժարվեր հարցերին պատասխանելուց, ապա կարող էր եզրակացություն արվել, որ նա անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ, ինչի հետևանքով նրան կնշանակվեր տուգանք կամ մինչև երկու տարվա ազատազրկում, ...և նման մերժման դեմ չէր կարող պաշտպանություն դիտվել այն հանգամանքը, որ հարցերն ինքնամեղադրման բնույթի էին...

Այնուամենայնիվ, կառավարությունը շեշտել է դատարանի առջև, որ հարցաքննությունների ժամանակ դիմողի ասածից ոչինչ ինքնամեղադրման բնույթ չի ունեցել, նա ընդամենը տվել է ինքնաարդարացման պատասխաններ կամ պատասխաններ, որոնք, եթե ճիշտ են եղել, ապա պետք է ծառայեին հօգուտ նրա պաշտպանության: Համաձայն կառավարության բացատրության՝ սեփական անձի դեմ ցուցմունք չտալու արտոնության տեսանկյունից կարող են դիտարկվել միայն ինքնամեղադրման բնույթ ունեցող ցուցմունքները:

71. Այս կետի առնչությամբ դատարանը կառավարության տեսակետը չի ընդունում, քանի որ դիմողի որոշ պատասխաններ փաստորեն մեղադրման բնույթ են ունեցել. դիմողը խոստովանել է, որ ունեցել է այնպիսի տեղեկություններ, որոնց պատճառով արարքը կարող էր մեղադրվել իրեն... Ամեն դեպքում, հաշվի առնելով 6-րդ հոդվածի արդարության հայեցակարգը, սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը չի կարող ողջամտորեն սահմանափակվել արարքի վերաբերյալ խոստովանական ցուցմունքներով կամ այնպիսի նշումներով, որոնք ուղղակիորեն ինքնամեղադրող են: Հարկադրանքի միջոցով ձեռք բերված ցուցմունքները, որոնք արտաքուստ ինքնամեղադրող ցուցմունքի տպավորություն չեն թողնում (ինչպես, օրինակ՝ ինքնաարդարացնող ցուցմունքները կամ փաստական հանգամանքներին վերաբերող տեղեկությունները), կարող են ավելի ուշ՝ քրեական դատավարության ընթացքում, օգտագործվել մեղադրող կողմին օգնելու նպատակով, օրինակ՝ մեղադրյալի այլ ցուցմունքներին կամ դատաքննության ժամանակ մեղադրյալի տված ցուցմունքներին հակադրվելու կամ դրանք կասկածի տակ դնելու համար կամ այլ կերպ՝ դրանց արժանահավատությունը կասկածի տակ դնելու համար: Այն դեպքում, երբ երդվյալ ատենակալները պետք է գնահատեն մեղադրյալի ցուցմունքների արժանահավատությունը, այսպիսի ցուցմունքի օգտագործումը կարող է հատկապես վնասակար լինել: Սրանից հետևում է, որ տվյալ համատեքստում կարևոր է այն, թե ինչպես են ստիպողաբար ստացված ցուցմունքներն օգտագործվում քրեական դատավարության ժամանակ:

72. Այս կապակցությամբ դատարանը նկատում է, որ հակառակ դիմողի առարկություններին, նրա տված պատասխանների արձանագրությունների մի մասը մեղադրողի խորհրդատուն երեք օր շարունակ ընթերցել է երդվյալ ատենակալներին: Այն փաստը, որ հարցաքննություններն ունեցել են նման լայն ընդգրկում, ակներևաբար ցույց է տալիս, որ մեղադրող կողմը հավատացած է եղել, որ արձանագրությունների ընթերցումն օգնում է իրեն ապացուցելու դիմողի անազնվությունը: Նյութերի նպատակային ազդեցության վերաբերյալ այս մեկնաբանությունը պաշտպանվում է վկաների և երդվյալ ատենակալների նախնական քննության ժամանակ ութերորդ և իններորդ հարցաքննությունների առնչությամբ գործը քննող դատավորի կողմից արված ռեպլիկներով, համաձայն որոնց՝ «Ոստիկանության և քրեական ապացույցների մասին» 1984 թ. օրենքի 82(1) բաժնի շրջանակներում դիմողի յուրաքանչյուր հայտարարությունը կարող է համարվել «խոստովանություն»... Նմանապես, վերաքննիչ դատարանը որոշել է, որ հարցաքննությունները կազմել են դիմողի դեմ մեղադրող կողմի բերած գործի «զգալի մասը»... Բացի այդ, եղել են պարզ իրավիճակներ, երբ մեղադրող կողմը ցուցմունքներն օգտագործել է արարքի մեղադրման նպատակով, մասնավորապես, որպեսզի ցույց տա, որ դիմողը տեղյակ է եղել բաժնեմասերի գործարքին մասնակցած անձանց կատարած վճարումներից, և հարցականի տակ դնի նրա ազնվությունը... Իրադարձությունների զարգացման դիմողի տարբերակի վրա ստվեր գցելու նպատակով դրանք նաև օգտագործվել են դիմողի հետ որպես մեղադրյալ հանդես եկող մյուս անձանց իրավունքների փաստաբանի կողմից...

Արդյունքում՝ դատարանի տրամադրության տակ եղած ապացույցները պաշտպանում են այն պնդումը, որ դիմողի պատասխանների արձանագրությունները, անկախ այն հանգամանքից՝ դրանք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ունեցել են ինքնամեղադրական բնո՞ւյթ, թե՞ ոչ, դատավարության ժամանակ օգտագործվել են այնպես, որ նպատակը եղել է արարքը մեղադրել դիմողին...

74. Հաշվի առնելով դատավարության ընթացքում հարցաքննությունների օգտագործմանը տված վերոհիշյալ գնահատականները, դատարանը բնավ անհրաժեշտ չի համարում որոշել՝ սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը բացարձա՞կ իրավունք է, թե՞ ոչ, կամ՝ որոշ հանգամանքներում դրա խախտումները կարո՞ղ են արդարացված լինել:

Դատարանը չի ընդունում կառավարության այն փաստարկը, թե կորպորատիվ խարդախության բարդությունը և հանրային կենսական շահը (որն այդպիսի խարդախության հետաքննությունը և մեղավորներին պատժելն է) կարող են արդարացնել արդար դատաքննության սկզբունքներից այնպիսի զգալի շեղումը, որպիսին տեղի է ունեցել տվյալ գործում: Ինչպես և հանձնաժողովը, դատարանը նույնպես կարծում է, որ 6-րդ հոդվածում շարադրված արդարության ընդհանուր պահանջները, ներառյալ՝ սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը, վերաբերում են անխտիր ամեն տեսակի քրեական հանցագործությունների կապակցությամբ ընթացող քրեական դատավարություններին՝ ամենապարզերից մինչև ամենաբարդերը: Ոչ դատավարական քննության ընթացքում հարկադրաբար ստացված պատասխանները, որոնց

նպատակն է դատավարության ընթացքում արարքի կատարումը մեղադրյալին, չեն կարող արդարացվել հանրային շահի վկայակոչմամբ: Այս առումով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ համապատասխան օրենսդրության շրջանակներում լուրջ խարդախություններով զբաղվող գերատեսչության հարկադրանք գործադրելու լիազորությունների հիման վրա ձեռք բերված ցուցմունքները չեն կարող, որպես կանոն, տվյալ անձի դատաքննության ընթացքում ներկայացվել որպես ապացույց: Բացի այդ, այն փաստը, որ դիմողը ցուցմունքներ է տվել նախքան իր դեմ մեղադրանք հարուցվելը, չի կանխում, որ ավելի ուշ տեղի ունեցող քրեական դատավարությունում դրանց օգտագործումը համարվի այդ իրավունքի խախտում:

75. Վերը ներկայացված վերլուծությունից, ինչպես նաև գործը քննող առաջին ատյանի դատարանի դատավորի և վերաքննիչ դատարանի կողմից նշված այն փաստից, որ «Քարոզարշավների մասին» 1985 թ. օրենքի 434(5) բաժինը թույլ է տալիս տեսուչների կողմից ձեռք բերված ցուցմունքները օգտագործել հետագա քրեական դատավարության ընթացքում, հետևում է, որ պատասխանող կառավարության վկայակոչած տարբեր ընթացակարգային երաշխիքները ... սույն գործում չեն կարող պաշտպանություն լինել, քանի որ դրանք չեն գործել հետագա քրեական դատավարության ընթացքում այդ ցուցմունքների օգտագործումը կանխելու նպատակով:

76. Հետևաբար, սույն գործում տեղի է ունեցել սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքի խախտում:

Վատառողջության պատճառով պրն Սոնդերսը կասկածելիորեն ժամկետից շուտ է ազատ արձակվել բանտից, որից հետո վերսկսել է իր աշխատանքը գործարար աշխարհում: 2000 թ. Սոնդերսի հետ մեղադրյալի աթոռին նստած երեք այլ անձինք նույնպես հասել են հաջողության՝ պնդելով, որ մեղադրող կողմին ներկայացնող առևտրի և արդյունաբերության դեպարտամենտի տեսուչներին ստիպողաբար տված իրենց ցուցմունքներն արդար դատաքննության իրենց իրավունքի խախտում են եղել (*«IJL-ն, GMR-ն և AKP-ն ընդդեմ ՄԹ-ի» (IJL, GMR and AKP v UK*, (19/9/2000)): «Թայմզի» 2000 թ. սեպտեմբերի 20-ի համարում դիմողները ներկայացվել են որպես Զեք Լիոնս, Զերալդ Ռոնսոն և Էնթոնի Փարնս: Համաձայն մեղադրող կողմի պնդումների՝ դիմողները, որոնք եղել են գործարար անձինք, «Դիսթիլլերսը» ձեռք բերելու հարցում «Գինեսին» օգնելու նպատակով մասնակցել են բաժնեմասերի անօրինական օժանդակության գործառնությանը: Առաջնորդվելով *Սոնդերսի* գործով դատարանի ավելի վաղ կայացրած որոշմամբ՝ Բրիտանիայի կառավարությունն ընդունել է, որ մեղադրողի կողմից ցուցմունքների օգտագործումը եղել է 6(1) հոդվածի խախտում: Դատարանը մերժել է դիմողների մյուս բողոքները: Նշանակալից է, որ դատարանը դիմողներին փոխհատուցում չի նշանակել կրած նյութական կամ ոչ նյութական վնասի համար: «Անչափահասների նկատմամբ արդարադատության և քրեական ապացույցների մասին» 1999 թ. օրենքի թիվ 3 հավելվածի համաձայն (ուժի մեջ է մտել 2000 թ. ապրիլին)՝ մեղադրող կողմին սկզբունքորեն արգելվում է ընկերությունների նկատմամբ և գործարարության ոլորտում հարկադրանք գործադրելու լիազորությունների շրջանակներում օգտագործել ամբաստանյալներից ձեռք բերված ցուցմունքները:

5 Դատարանը միաձայն որոշել է, որ ցուցմունք չտալու իրավունքի խախտում տեղի է ունեցել նաև այն ժամանակ, երբ անգլիացի դատավորը թերացել է հրահանգավորել երդվյալ ատենակալներին, որպեսզի նրանք զգուշորեն մոտենան ոստիկանության հարցաքննության ժամանակ երկու կասկածյալների լռությունից անբարենպաստ եզրակացություններ անելու խնդրին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցաքննության ժամանակ կասկածյալները եղել են հերոինի օգտագործման դադարեցման հետևանքով առաջացած ախտանշանների ազդեցության տակ: *«Քոնդրոնն ընդդեմ ՄԹ-ի» (Condron v UK)* (2000 թ. մայիսի 2) գործով դիմող ամուսինները կասկածվել են արգելված թմրանյութերի մատակարարման գործում իրենց հարևանին օժանդակելու մեջ (ոստիկանության կատարած տեսագրություններից երևացել է, թե ինչպես են նրանք կասկածելի իրեր փոխանցում իրենց հարևան բնակարանների բնակիչներին): Դիմողները ձերբակալվել են: Նրանց բնակարաններում հայտնաբերվել է հերոինի տասնվեց առանձին «փաթեթ» (առանձին տուփեր): Մի քանի ժամ անց, երբ ոստիկանությունն առաջարկել է ոստիկանության բաժնում հարցաքննել դիմողներին, նրանց փաստաբանի կարծիքով՝ դիմողների մոտ նկատվել են հերոինի օգտագործման ընդհատումից առաջացած ախտանշաններ (երկուսն էլ եղել են հերոինից կախում ունեցող թմրամոլներ), ինչի հետևանքով նրանք ի վիճակի չեն եղել մասնակցելու հարցաքննությանը: Այնուամենայնիվ, ոստիկանության բաժնի բժիշկը զննել է նրանց և որոշել, որ նրանք ի վիճակի են պատասխանելու

հարցերին: Դիմողներից յուրաքանչյուրին ոստիկանությունը զգուշացրել է, որ «պարտավոր չեն արտահայտվել, սակայն եթե չնշեն ինչ-որ փաստեր, որոնք ավելի ուշ վկայակոչելու են դատարանում, ապա դա կարող է վնաս հասցնել նրանց պաշտպանությանը....»: Ոստիկանությունը նաև հայտնել է, որ հարցաքննությունների ժամանակ վատ զգալու դեպքում նրանք կարող են խնդրել, որ դրանք դադարեցվեն: Դիմողների փաստաբանները ներկա են գտնվել յուրաքանչյուր դիմողի առանձին հարցաքննության ժամանակ: Երբ դիմողներին հարցրել են նրանց հարևանի հետ ունեցած կապերի մասին, երկուսն էլ պատասխանել են, որ մեկնաբանություններ չունեն: Հերոին պահելու և մատակարարելու մեղադրանքով նրանց դեմ հարուցվել է դատական գործ: Իրենց դատավարության ժամանակ դիմողները ցուցմունք են տվել, որ իրենց բնակարանում եղած հերոինը նախատեսված է եղել սեփական օգտագործման համար, և իրենք չեն օգնել իրենց հարևանին թմրանյութեր մատակարարելու հարցում: Նրանք հայտնել են, որ չեն պատասխանել ոստիկանության հարցերին, քանի որ իրենց փաստաբանն ասել է, որ իրենք ի վիճակի չեն դա անելու: Դատավորը հրահանգավորել է երդվյալ ատենակալներին, որ 1994 թ. «Քրեական արդարադատության և հասարակական կարգի մասին» օրենքի համաձայն՝ «օրենքն այն է, որ ... եթե ամբաստանյալը համապատասխան հարցաքննությունների ժամանակ ... այդ կետերի վերաբերյալ բացատրություններ չի տալիս, դուք, ըստ նպատակահարմարության, կարող եք համապատասխան անուղղակի եզրակացություններ անել... Պարտադիր չէ, որ դրա արդյունքում դուք կայացնեք նրանց դեմ ուղղված վճիռ: Դա ձեր որոշելու հարցն է, թե որքանով է նպատակահարմար է այդպես վարվել: Հարցաքննության ժամանակ ինչ-որ կետերի մասին չնշելը չի կարող ինքնին հիմնավորել մեղավորության փաստը, սակայն, կախված հանգամանքներից, նրանց մեղավորության վերաբերյալ որոշում ընդունելիս դուք կարող եք կայացնել նրանց դեմ ուղղված վճիռ...»: Դատարանի մեծամասնությունը (ինը կողմ և մեկ դեմ ձայներով) դիմողներին դատապարտել է համապատասխանաբար չորս և երեք տարվա ազատազրկման: Թեպետ վերաքննիչ դատարանը որոշ քննադատություն է արել դատավորի ուղղորդման առնչությամբ, հաստատել է դիմողների դատապարտումները: Եվրոպական դատարանը կրկին հաստատել է լռություն պահպանելու իրավունքի վերաբերյալ *Մյուրեյի (Murray)* գործում հայտնած իր տեսակետը:

57. Դատարանը նկատում է, որ դիմողների գործում կան առանձնահատկություններ, որոնք տարբերում են այս գործը դիմող Ջոն Մյուրեյի գործից: Մասնավորապես, ի տարբերություն Ջոն Մյուրեյի, դիմողներն իրենց դատաքննության ժամանակ ցուցմունք են տվել, և նրանց գործը լսվել է երդվյալ ատենակալների կողմից, որոնք պահանջել են, որ գործը քննող դատավորը հրահանգավորի իրենց, թե ինչպես մոտենալ ոստիկանության հարցաքննության ժամանակ նրանց դրսևորած լռությանը: Մյուս կողմից, ի տարբերություն Ջոն Մյուրեյի, դիմողներն իրենց դատավարության ժամանակ բացատրություններ են տվել ոստիկանության բաժնում լռություն պահպանելու վերաբերյալ: Դատարանի կողմից այս և գործի մյուս առանձնահատկությունները պետք է դիտարկվեն «գործի բոլոր հանգամանքների դիտակետից»... Հետևաբար, այն փաստը, որ դիմողները ոստիկանության բաժնում օգտագործել են իրենց չխոսելու իրավունքը, կապ ունի արդարության հարցի որոշման հետ: Այնուամենայնիվ, այդ փաստն ինքնին չի բացառում անբարենպաստ եզրակացությունների կատարումը, մանավանդ որ Ջոն Մյուրեյի վճռում ներառված սկզբունքները վերաբերել են այն հանգամանքին, որ «(Հյուսիսային Իռլանդիայի) Քրեական ապացույցների մասին» 1988 թ. կարգի երկու՝ 4-րդ և 6-րդ հոդվածների համաձայն՝ կարող են կատարվել անուղղակի եզրակացություններ: Նմանապես, այն փաստը, որ դիմողների լռության հարցը թողնվել է երդվյալ ատենակալներին, ինքնին չի կարող համարվել անհամատեղելի արդար դատաքննության պահանջների հետ: Այն, ավելի շուտ, մեկ այլ տեղին նկատառում է, որը պետք է դրվի կշեռքի նժարին, երբ գնահատվում է, թե արդյոք այդ հանգամանքներում արդարացի՞ է եղել նման վարմունքը, թե՞ ոչ...

60. Պետք է նաև նկատել, որ դիմողների փաստաբանը ներկա է գտնվել նրանց հարցաքննությունների ողջ ընթացքում և կարող էր խորհուրդ տալ նրանց հոժարակամ չպատասխանել առաջադրված հարցերին: Այն փաստը, որ նախազգուշացվելուց հետո հարցաքննության ենթարկվող մեղադրվող անձին երաշխավորվում է իրավաբանական խորհրդատվության տրամադրումը և, ինչպես դիմողների դեպքում, փաստաբանի ֆիզիկական ներկայությունը ոստիկանության հարցաքննության ժամանակ, պետք է համարվեն առանձնակի կարևոր երաշխիք, որը վերացնում է խոսելու որևէ հարկադրանք, որը կարող է անքակտելի լինել նախազգուշացման պայմաններից...

61. Պետք է նկատել, որ դիմողների՝ լռություն պահպանելու հարցի կապակցությամբ դատաքննությունն իրականացնող դատավորն ուղղություն է ցույց տվել երդվյալ ատենակալներին՝ համաձայն այդ ժամանակվա օրինակելի հրահանգների սահմանումների... Այնուամենայնիվ, դատարանը նկատում է, որ չի կարելի ասել, որ դատաքննությունն իրականացնող

դատավորի կողմից կիրառված ձևակերպումներն անդրադարձրել են այն հավասարակշռությունը, որին դատարանը փորձել է հասնել *Ջոն Մյուրեյի (John Murray)* գործով վճռում լռության պահպանման իրավունքի և այդ լռությունից անբարենպաստ անուղղակի եզրակացություններ անելու (ներառյալ նաև երդվյալ ատենակալների կողմից) միջև: Դատարանն այդ վճռում շեշտել է, որ համապատասխան երաշխիքների առկայության դեպքում մեղադրյալի լռության պահպանումն այնպիսի իրավիճակներում, որոնք հստակորեն պահանջում են նրա բացատրությունը, կարող է հաշվի առնվել նրա դեմ մեղադրող կողմի ներկայացրած ապացույցները գնահատելու համար... «(Հյուսիսային Իռլանդիայի) Քրեական ապացույցների մասին» 1988 թ. կարգի 4-րդ և 6-րդ հոդվածների առնչությամբ դատարանը, այնուհետև, նկատել է, որ համաձայն այդ դրույթների՝ դատավորը կարող էր կատարել տրամաբանական անուղղակի եզրահանգումներ, որոնք նա նպատակահարմար կհամարեր կատարել՝ հիմք ընդունելով մեղադրյալի դեմ ներկայացված փաստերը... Այնուամենայնիվ, վարույթում գտնվող գործի դեպքում դիմողները բացատրություն են ներկայացրել, թե ինչու ոստիկանության հարցաքննության ժամանակ չեն նշել, որ իրենք որոշակի իրեր են փոխանակել իրենց հետ ամբաստանյալի աթոռին նստած պրն Քուրթիսի հետ... Նրանք ցուցմունք են տվել, որ գործել են իրենց փաստաբանի խորհրդով, որը լուրջ կասկածներ է ունեցել, թե իրենք ի վիճակի են եղել մասնակցելու ոստիկանության անցկացրած քննությանը... Նրանց փաստաբանը հաստատել է սա երդվյալ ատենակալների և վկաների դատական հարցաքննության (voir dire proceedings) ժամանակ ... Պարզ է, որ քննությունն իրականացնող դատավորը երդվյալ ատենակալների ուշադրությունն է հրավիրել այդ բացատրության վրա: Այնուամենայնիվ, թեպետ նա կարող էր բավարարվել բացատրությունների ճշմարտանմանությամբ, դա արել է այնպիսի ձևակերպումներով, որոնք երդվյալ ատենակալներին ազատություն են տվել անելու անբարենպաստ անուղղակի եզրակացություններ: Պետք է նկատել, որ վերաքննիչ դատարանը որոշել է, որ դատաքննությունը վարող դատավորի արտահայտություններն այս առումով թերի են եղել... Դատարանի կարծիքով, ինչ վերաբերում է արդարությանը, ապա երդվյալ ատենակալներին պետք է ասվեր, որ եթե կարծում են, որ ոստիկանության բաժնում դիմողների պահպանած լռությունը չի կարելի վերագրել այն հանգամանքին, որ նրանք պատասխան չեն ունեցել, ոչ էլ այն հանգամանքին, որ նրանց ոչ մի պատասխանը չէր դիմանա խաչաձև հարցաքննությանը, ապա չպետք է անբարենպաստ անուղղակի եզրակացություն անեին...

Վճիռը ցույց է տալիս, որ սակավաթիվ հանգամանքներում, երբ երդվյալ ատենակալներին թույլատրվում է անբարենպաստ անուղղակի եզրակացություններ անել ամբաստանյալների պահպանած լռությունից, դատարանը պահանջում է, որ դատաքննությունն իրականացնող դատավորները հստակ ուղղություն ցույց տան երդվյալ ատենակալներին: Հաշվի առնելով 1994 թ. օրենքի հիման վրա վերաքննիչ դատարանի զարգացող նախադեպային իրավունքը՝ Անգլիայի դատական հետազոտությունների խորհուրդը (Judicial Studies Board) պատրաստում է ուղենիշային ցուցումներ, որոնք դատավորները պետք է օգտագործեն այն դեպքերում, երբ երդվյալ ատենակալները պետք է քննության առնեն տվյալ ամբաստանյալի լռություն պահպանելու հանգամանքը:

6 *«Հենին և Մակգինեսն ընդդեմ Իռլանդիայի» (Heaney and McGuinness v Ireland)* գործի վերաբերյալ (2000 թ. դեկտեմբերի 21-ի վճիռ) մշտական գործող դատարանը միաձայն մերժել է կառավարության պաշտպանական դիրքորոշումը, համաձայն որի՝ ձերբակալված անձանցից սահմանված ժամկետում նրանց վարքագծի վերաբերյալ բացատրություններ պահանջելու հարկադրանքն արդարացված է եղել Իռլանդիայում ահաբեկչության դեմ մղվող պայքարով: Դիմողները ձերբակալվել են Հյուսիսային Իռլանդիայի սահմանի վրա գտնվող անցակետի մոտ տեղի ունեցած պայթյունի կապակցությամբ, որի ժամանակ սպանվել են մի շարք մարդիկ: Դիմողները մերժել են պատասխանել ոստիկանության հարցերին, որից հետո ոստիկանությունը վկայակոչել է «Պետության դեմ հանցագործությունների մասին» 1939 թ. օրենքի 52-րդ բաժինը, համաձայն որի, եթե օրենքի շրջանակներում կալանքի տակ վերցված անձինք սահմանված ժամկետներում հրաժարվում են հաշիվ տալ իրենց տեղաշարժերի և գործողությունների վերաբերյալ, ապա նրանք մեղավոր են ճանաչվում մինչև վեց ամիս ազատազրկմամբ պատժվող իրավախախտման մեջ: Դիմողները պահանջվող տեղեկությունները չեն տրամադրել, որից հետո նրանց նշանակվել է բանտարկության առավելագույն ժամկետը: Ի պատասխան դիմողների արտահայտած անհամաձայնության, որ 6(1) հոդվածով նրանց լռություն պահպանելու իրավունքը խախտվել է, կառավարությունը ներկայացրել է, որ ահաբեկչությունից առաջացող սպառնալիքի համար 52-րդ բաժինը համաչափ պատասխան է եղել: Այնուամենայնիվ, դատարանը վճռել է, որ.

55. ...1939 թ. օրենքի 52-րդ բաժնի համաձայն՝ դիմողների նկատմամբ կիրառված «հարկադրանքի աստիճանն» իրականում ի չիք է դարձրել նրանց՝ սեփական անձի դեմ ցուցմունք չտալու արտոնությունը և լռություն պահպանելու իրավունքը:
...

58. Հետևաբար, դատարանը համարում է, որ կառավարության անվտանգության և հասարակական կարգի հետ կապված մտահոգությունները չեն կարող արդարացնել այնպիսի դրույթի [գոյությունը], որը վերացնում է դիմողների՝ կոնվենցիայի 6(1) հոդվածով երաշխավորվող լռություն պահպանելու իրավունքի և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու արտոնության բուն գաղափարը:

59. Հետևաբար, դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել դիմողների՝ լռություն պահպանելու իրավունքի և կոնվենցիայի 6(1) հոդվածով երաշխավորված սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքի խախտում:

Վերը նշված գործը կարող է տարբերվել *Ջոն Մյուրեյի* (John Murray) գործից, քանի որ այդ գործում դիմողները դատապարտվել և պատժվել են լռություն պահպանելու համար, ոչ թե նրանց լռությունից որոշակի հանցագործության վերաբերյալ անուղղակի նյութական եզրահանգումներ անելու հետևանքով:

7 Պալատի կարծիքները գրեթե հավասարապես բաժանվել են *«Վեհն ընդդեմ Ավստրիայի» (Weh v Austria)* գործում (2004 թ. ապրիլի 8-ի վճիռ), որի դեպքում մեքենայի օրինական գրանցված սեփականատերը դատապարտվել է այն բանի համար, որ տեղեկություններ չի տրամադրել որոշակի վայրում/պահին իր մեքենայի ղեկի առաջ եղած վարորդի վերաբերյալ: Ինչ վերաբերում է դիմողի անունով գրանցված մեքենայի ղեկի առաջ եղած անձնավորությանը, որը ենթադրաբար գերազանցել է մեքենայի թույլատրելի արագությունը, ապա Բրեգենցի շրջանային մարմինը քրեական վարույթ է սկսել անհայտ օրինախախտների դեմ: Առաջնորդվելով օրենքով՝ մարմինը դիմողին՝ մեքենայի տիրոջը, կարգադրել է բացահայտել մեքենայի ղեկի առաջ եղած անձի ինքնությունը: Վերջինս պատասխանել է՝ որպես անձի անուն և հասցե նշելով «ԱՄՆ/Տեխասի համալսարան»: Մարմինն այնուհետև դիմողի նկատմամբ արել է տուգանքի կարգադրություն՝ պահանջելով, որ նա վճարի 900 ավստրիական շիլինգի տուգանք: Եթե նա 24 ժամվա ընթացքում չվճարեր տուգանքը, ապա պետք է բանտարկվեր ոչ ճիշտ տեղեկություններ տալու մեղադրանքով: Մասնագիտությամբ իրավաբան դիմողն այնուհետև դիմել է Վորալբերգի անկախ վարչական խորհրդին, որը նրան լսելուց հետո մերժել է նրա բողոքը՝ նշելով, որ դիմողը ճիշտ պատասխան չի տվել, քանի որ Տեխասի համալսարանը ամբողջ Տեխասում տասներեք մասնաճյուղ ունի: Մեքենայի արագությունը գերազանցելու համար դիմողի դեմ հետապնդում չի սկսվել: Նա բողոքել է դատարանին՝ պնդելով, որ օրենքով իր վրա դրված պարտավորությունը՝ բացահայտել վարորդի ինքնությունը, խախտել է լռություն պահպանելու/ սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իր իրավունքը: Պալատի չնչին մեծամասնությունը (չորս կողմ և երեք դեմ) որոշել է, որ.

41. Դատարանի նախադեպային իրավունքի ուշադիր ընթերցումից պարզ է, որ գործերի երկու տեսակ կա, որոնց դեպքում որոշվել է, որ տեղի են ունեցել լռություն պահպանելու իրավունքի և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու արտոնության խախտումներ:

42. Նախ՝ դրանք այն գործերն են, որոնք վերաբերում են հարկադրանքի կիրառության միջոցով այնպիսի տեղեկությունների ձեռքբերմանը, որոնք կարող են անձի դեմ արդեն սկսված քրեական վարույթի ընթացքում կամ դրանից առաջ նրան մեղսագրել այն արարքը, որի մեջ նա «մեղադրվում» է 6-րդ հոդվածի 1-ին կետի անկախ իմաստով (տե՛ս *Ֆունկի (Funke)* վճիռը, էջ 22, պարբ. 44, *Հենին և Մակգինեսը (Heaney and McGuinness),* պարբ. 55–9, J.B., պարբ. 66-71):

43. Երկրորդ՝ դրանք այն գործերն են, որոնք վերաբերում են ավելի ուշ սկսված քրեական հետապնդման ընթացքում քրեական վարույթի համատեքստից դուրս հարկադրանքով ձեռք բերված մեղսագրող տեղեկությունների օգտագործմանը (*Սոնդերս (Saunders)*, մեջբերված է վերը՝ էջ 2064, պարբ. 67, *«I.J.L.-ի և այլք ընդդեմ ՄԹ-ի» (I.J.L. and Others v the United Kingdom)*, թիվ 29522/95, պարբ. 82-3, 2000-IX):

44. Այնուամենայնիվ, դատարանի նախադեպային իրավունքից հետևում է, որ սեփական անձի դեմ ցուցմունք չտալու արտոնությունը՝ որպես այդպիսին, չի արգելում, որ տվյալ անձի դեմ սկսված քրեական վարույթի համատեքստից դուրս հարկադրական լիազորությունների կիրառման միջոցով տեղեկություններ ձեռք բերվեն:
…

50. Համաձայն դիմողի բերած բողոքի՝ նրան պատիժ է նշանակվել այն բանի համար, որ նա հրաժարվել է մեքենայի թույլատրելի արագության գերազանցման պատճառով հարուցված գործի վարույթում տալ մեղսագրական բնույթի տեղեկություններ: Համենայն դեպս ո՛չ այն ժամանակ, երբ դիմողից պահանջվել է բացահայտել նրա մեքենայի վարորդի ինքնությունը, ո՛չ էլ դրանից հետո դա նրա դեմ սկսված վարույթ չի եղել:

51. Այսպիսով, սույն գործը չի վերաբերում հետագա քրեական դատավարության ընթացքում հարկադրանքի տակ ձեռք բերված տեղեկությունների օգտագործմանը (տե՛ս վերը նշված գործերը, պարբ. 43):

52. Բացի այդ, սույն գործը տարբերվում է մի շարք գործերից, որոնցում այն անձինք, որոնց նկատմամբ հարուցված քրեական վարույթներն ընթացքի մեջ են կամ սպասվում են, տուգանքի ենթարկվելու վախի տակ ստիպված են եղել տրամադրել պոտենցիալ մեղսագրող բնույթի տեղեկություններ... *Ֆունկի (Funke)*, *Հենիի և Մակգիննեսի (Heaney and McGuinnes)* գործերում (երկուսն էլ մեջբերված են վերը), չնայած երբ համապատասխան դիմողներից պահանջվել են պոտենցիալ մեղսագրող բնույթի տեղեկություններ, քրեական դատավարությունները դեռևս չէին սկսվել, սպասվում էր, որ սկսվելու են: *Ֆունկի (Funke)* դեպքում մաքսային մարմիններն առանձնահատուկ կասկածներ են ունեցել դիմողի նկատմամբ, *Հենիի և Մակգիննեսի (Heaney and McGuinnes)* դեպքում դիմողները ձերբակալվել են ահաբեկչական հանցագործությունների մասնակցելու կասկածանքով:

53. Տվյալ դեպքում, երբ իշխանությունները «Մարդատար ավտոմեքենաների մասին» օրենքի 103-րդ բաժնի 2-րդ կետով դիմողից պահանջել են բացահայտել, թե ով է եղել նրա մեքենայի ղեկի մոտ 1995 թ. մարտի 5-ին, մեքենայի արագության գերազանցման վերաբերյալ դատավարությունը տեղի է ունեցել անհայտ իրավախախտների նկատմամբ: Միանշանակ է, որ դիմողի դեմ քրեական դատավարություն չի եղել, և նույնիսկ չի կարելի ասել, որ սպասվում էր, քանի որ իշխանությունները նրա դեմ կասկածի նշույլ չեն ունեցել:

54. Չկա որևէ բան, որը ցույց կտար, որ դիմողը «էական ազդեցության է ենթարկվել», որպեսզի 6-րդ հոդվածի 1-ին կետի ինքնուրույն իմաստով համարվի, որ նա մեղադրվել է մեքենայի արագության գերազանցման համար (տե՛ս *Հենիի և Մակգիննեսի (Heaney and McGuinnes)* գործը, մեջբերված է վերը՝ պարբ. 41)... Նրանից պահանջվել է պատասխանել հարցերին որպես մեքենայի գրանցված սեփականատեր: Բացի այդ, նրանից պահանջվել է նշել ընդամենը շատ պարզ փաստ. ո՞վ է այն անձնավորությունը, որը եղել է նրա մեքենայի ղեկի առաջ, ինչն ինքնին մեղսագրող տեղեկություն չէ»:
…

56. Դատարանը կրկնում է, որ իրենից չի պահանջվում արտահայտվել կոնվենցիայի խախտումների մասին՝ կատարված կամ պոտենցիալ (տե՛ս mutatis mutandis *«Սերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Soering v the United Kingdom)*, 1989 թ. հուլիսի 7-ի վճիռ, շարք A, թիվ 161, էջ 35, պարբ. 90): Դատարանը համարում է, որ տվյալ դեպքում դիմողի՝ «Մարդատար ավտոմեքենաների մասին» օրենքի 103-րդ բաժնի 2-րդ կետով ամրագրված պարտավորության (համաձայն որի նա պետք է բացահայտեր, թե ով է եղել նրա մեքենայի ղեկի առաջ) և մեքենայի արագության գերազանցման համար նրա նկատմամբ հնարավոր քրեական վարույթի միջև կապը մնում է հեռավոր և հիպոթետիկ: Այնուամենայնիվ, հարկադիր լիազորությունների կիրառումը, առանց քրեական վարույթի հետ կոնկրետ կապի, չի առաջացնում դիմողի՝ լռության պահպանման իրավունքի և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու արտոնության խնդիր:

57. Հետևաբար, կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

Այնուամենայնիվ, երեք չհամընկնող կարծիք հայտնած դատավորներն ազգային մարմինների առջև դիմողի վիճակի վերաբերյալ որդեգրել են տրամագծորեն հակառակ մոտեցում.

1….Նայելով իրերի բուն դրությանը՝ կարելի է ասել, որ որոշ հավանականությամբ դիմողի դեմ մեքենայի արագության գերազանցման դատավարություն սկսելու մտադրություններ եղել են:
…

4. Վերջապես, մեզ համար համոզիչ չէ կառավարության այն փաստարկը, որ մեքենայի օրինական տիրոջ պարտականությունը՝ արագության գերազանցման դատավարությունում բացահայտել մեքենայի ղեկի առաջ եղած անձի ինքնությունը, եղել է հանրային շահից բխող համաչափ պատասխան, որն ավելի բարձր պետք է դասվեր, քան նման իրավախախտում կատարելու դեպքում մեքենայի սեփականատիրոջ արարքը սեփական անձին չվերագրելու շահը: 6-րդ

հոդվածում առկա արդարության ընդհանուր պահանջները, ներառյալ սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը, վերաբերում են ամեն տեսակ քրեական հանցագործությունների կապակցությամբ հարուցված քրեական վարույթներին՝ ամենապարզերից մինչև ամենաբարդերն անխտիր (տե՛ս *Սոնդերսը (Saunders)*, մեջբերված է վերը՝ էջ 2066, պարբ. 74): Անշուշտ, չպետք է անտեսել, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների, այդ թվում նաև՝ արագության գերազանցման պատճառով սկսված հետապնդումները, թեպետ բնույթով փոքր իրավախախտումներ են, ծառայում են ճանապարհային երթևեկության պատահարների և, այդպիսով, մահվան դեպքերի կանխման նպատակներին: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ այնպիսի դրույթը, ինչպիսին «Մարդատար ավտոմեքենաների մասին» օրենքի 103-րդ բաժնի 2-րդ կետն է, տուգանքի սպառնալիքի տակ մեքենայի տիրոջը պարտավորեցնի ընդունել, որ տվյալ իրավախախտման կատարման ժամանակ մեքենայի ղեկի առաջ եղել է անձամբ ինքը: Նա այդպիսով պարտավոր է դառնում մեղադրող կողմին տրամադրել նշանակալի ապացույցի տարր, ինչը հետագա քրեական դատավարության ժամանակ նրան թողնում է պաշտպանության սահմանափակ հնարավորություններ: Այս դիրքերից նայելու դեպքում լռություն պահպանելու իրավունքի խախտումը անհամաչափ տպավորություն չի թողնում: Հետևաբար, կենսական հանրային շահը, որը ճանապարհային երթևեկության խախտումների հետապնդումն է, մեր կարծիքով՝ չի կարող արդարացնել հրաժարումն արդար դատաքննության հիմնարար սկզբունքներից մեկից (տե՛ս mutatis mutandis վերը մեջբերված կորպորատիվ խարդախության վերաբերյալ *Սոնդերսի (Saunders)* գործը, պարբ. 74 և ահաբեկչական հանցագործություններին վերաբերող *Հենիի և Մակգիննեսի (Heaney and McGuinness)* գործը, պարբ. 58):

75. Ամփոփելով՝ կարծում ենք, որ տեղի է ունեցել դիմողի՝ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված լռություն պահպանելու և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքների խախտում:

Վերոհիշյալ վճիռը բացահայտում է, որ դատարանում լուրջ անհամաձայնություն կա առ այն, թե որքանով է 6(1) հոդվածով ընդունելի պոտենցիալ մեղսագրող տեղեկություններ չբացահայտելու պարտավորության կիրառումը մեքենաների գրանցված սեփականատերերի նկատմամբ:

8 *«Յալոհն ընդդեմ Գերմանիայի» (Jalloh v Germany)* գործով (տե՛ս վերը՝ էջ 182) մեծ պալատի զգալի մեծամասնությունը՝ տասնմեկ կողմ և վեց դեմ ձայներով, որոշել է, որ դիմողի դատի ժամանակ այնպիսի ապացույցների կիրառումը, որոնք ձեռք են բերվել լուծողական դեղամիջոցների ստիպողական կիրառմամբ (նրա կողմից կուլ տված կոկաինի տուփը), ինչպես արդար դատաքննության իրավունքի, այնպես էլ սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքի խախտում է:

105. Ինչպես նշվել է վերը, 3-րդ հոդվածի խախտմամբ ձեռք բերված ապացույցների կիրառումը լուրջ հարցեր է առաջացնում է նման դատաքննության արդարության վերաբերյալ: Այս դեպքում դատարանը չի համարել, որ դիմողը ենթարկվել է խոշտանգման: Նրա կարծիքով՝ մեղսագրող ապացույցները (լինեն դրանք խոստովանություններ թե իրեղեն ապացույցներ), որոնք ձեռք են բերվել բռնության կամ վայրագության կամ այլ միջոցներով և կարող են համարվել խոշտանգում, երբեք չպետք է ընդունվեն որպես զոհի մեղավորության ապացույցներ՝ անկախ դրանց հետաքննչական արժեքից: Ցանկացած այլ եզրակացություն կնշառայի սոսկ բարոյական տեսանկյունից նախատինքի արժանի վարքի օրինականացմանը, ինչը կոնվենցիայի 3-րդ հոդվածի հեղինակները փորձել են կասեցնել, կամ, ինչպես շատ լավ ձևակերպվել է ԱՄՆ Գերագույն դատարանի *«Ռոչինն ընդդեմ [Կալիֆոռնիայի»] (Rochin [v California* (342 U.S. 165 (1952)]) գործում, «թույլ կտար օրենքի անունից բռնություն գործադրել»: Այս կապակցությամբ դատարանը նկատում է, որ ՄԱԿ-ի Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիան ամրագրում է, որ այն ցուցմունքները, որոնց առնչությամբ հիմնավորվում է, որ դրանք ձեռք են բերվել անձին խոշտանգման ենթարկելու միջոցով, չպետք է որպես ապացույց օգտագործվեն խոշտանգման զոհի դեմ սկսված դատավարություններում:

106. Թեպետ այս պարագայում դիմողի դեմ դրսևորված վերաբերմունքը չի բնորոշվել այնպիսի անպատվությամբ, որը վերագրելի է խոշտանգման գործողություններին, այն ունեցել է ուժգնության կամ սաստկության այնպիսի նվազագույն մակարդակ, որի մասին խոսվում է 3-րդ հոդվածում շարադրված արգելքում: Առանձին գործի փաստերի հիման վրա չի կարելի բացառել, որ խոշտանգում չհամարվող վատ վերաբերմունքի միտումնավոր գործողությունների միջոցով ձեռք բերված ապացույցների կիրառումը զոհի դեմ սկսված վարույթը կդարձնի անարդար՝ անկախ կատարված հանցագործության ենթադրվող լրջությունից, ապացույցներին վերագրվող կշռից և այն հնարավորություններից, որոնք դիմողն ունենալու է իր դատի ժամանակ դրանց ընդունելիությունը և կիրառությունը վիճարկելու համար:

107. Տվյալ դեպքում ընդհանուր հարցն այն է, թե արդյոք այն, որ անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կիրառումը դատավարությունն ինքնըստինքյան դարձնում է անարդար, կարո՞ղ է անպատասխան թողնվել: Դատարանը նկատում է, որ եթե նույնիսկ իշխանությունները մտադրություն չեն ունեցել ցավ և տառապանք պատճառել դիմողին,

ապացույցները ձեռք են բերվել մի ձևով, որը խախտել է կոնվենցիայով երաշխավորվող հիմնարար իրավունքներից մեկը: Բացի այդ, կողմերը երկուստեք ընդունում են, որ դիմողին մեղավոր ճանաչելու առումով որոշիչ նշանակություն են ունեցել վիճելի միջոցով ձեռք բերված թմրանյութերը: Ավելին, երկու կողմերն էլ գիտեին, որ վիճելի ճանապարհով ձեռք բերված թմրանյութերը դիմողին դատապարտելու համար վճռական հանգամանք են եղել: Այնուամենայնիվ, ազգային դատարանների կողմից փաստերը բացառելու հայեցողությունը չէր կարող օգտագործվել, քանի որ նրանք որոշել են, որ լուծողական միջոցների կիրառումը թույլատրված է եղել ազգային օրենքով: Բացի այդ, դիմողի դատապարտումն ապահովելու հանրային շահը չի կարող դիտարկվել որպես այնպիսի կշիռ ունեցող շահ, որը թույլ է տալիս, որ այդ ապացույցներն օգտագործվեն դատավարության ժամանակ: Ինչպես նշվել է վերը, այս միջոցառումը կիրառվել է համեմատաբար փոքր չափերի թմրանյութերի փողոցային վաճառքով զբաղվող անձնավորության նկատմամբ, որին վերջին հաշվով նշանակվել է վեց ամսվա պայմանական ազատազրկում՝ փորձաշրջանով:

108. Այս հանգամանքներում դատարանը որոշում է, որ թմրանյութերի վերաբերյալ ապացույցները, որոնք ձեռք են բերվել դիմողին ստիպողաբար լուծողական դեղեր տալու միջոցով, նրա նկատմամբ սկսված վարույթը որպես այդպիսին դարձրել են անարդար:

Ինչ վերաբերում է ինքնամեղսագրմամբ հանդես չգալու սկզբունքին, ապա մեծամասնությունը համարել է, որ դիմողի նկատմամբ կիրառված ուժը «118. ...եղել է զգալի միջամտություն նրա ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությանը»: Նա միայն կասկածվել է փոքր քանակի թմրանյութեր իրացնելու մեջ, և լուծողական դեղեր տալու միջոցով նրանից ստացված տեղեկությունները որոշիչ դեր են խաղացել նրան դատապարտելու համար: Հետևաբար, այս ապացույցների ձեռք բերումը կարող է տարբերակվել հարկադրաբար արյան և այլ նմուշներ ձեռք բերելու թույլատրելի փորձից, որի մասին խոսվում է վերը՝ *Սոնդերսի (Saunders)* գործի 69-րդ պարբերությունում: Ինչպես 3-րդ հոդվածի առնչությամբ արդեն պարզել ենք *Յալոհի (Jalloh)* գործից, Գերմանիայի որոշ շրջաններում կասկածյալների մարմնից ֆիզիկական ապացույցներ ստանալու նպատակով լուծողական դեղամիջոցների հարկադրական կիրառումը հակասել է անդամ պետությունների գերակշիռ մասում ընդունված փորձին:

ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼՆԵՐԻ՝ ԻՐԵՆՑ ԴԵՄ ՍԿՍՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՐԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

.....

«V-ն ընդդեմ ՄԹ-ի» (V v UK (1999) 30 EHRR 121)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Այս գործի փաստերն արդեն շարադրվել են վերը՝ 186-րդ էջում: Դիմողներից մեկի գանգատներից մեկը եղել է այն, որ նրա նկատմամբ չի իրականացվել արդար դատաքննություն: Հանձնաժողովը, տասնհինգ կողմ և չորս դեմ ձայներով, համաձայնել է, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում:

85. Դատարանը նկատում է, որ 6-րդ հոդվածի ամբողջական ընթերցումը երաշխավորում է մեղադրյալի՝ իր դեմ սկսված քրեական դատավարությանն արդյունավետորեն մասնակցելու իրավունքը (տե՛ս *Ստենֆորդի* վճիռը ([*Stanford v UK*, A.282-A (1994)]): Մինչ այս պահը նրանից չի պահանջվել քննության առնել, թե ինչպես է 6-րդ հոդվածի 1-ին կետի երաշխիքը կիրառվում երեխաների դեմ սկսված քրեական դատավարությունում և, մասնավորապես, արդյոք այն ընթացակարգերը (ինչպես, օրինակ՝ հրապարակայնությունը), որոնք ընդհանուր առմամբ համարվում են, որ դատավարության ժամանակ պաշտպանում են չափահասների իրավունքները, պե՞տք է արգելվեն երեխաների նկատմամբ սկսված դատավարությունների ժամանակ՝ նրանց ըմբռնումը և մասնակցությունը խթանելու համար...

86. Դատարանը նշում է վերոհիշյալ վճիռները, համաձայն որոնց՝ ներկա փուլում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջև դեռևս քրեական պատասխանատվության նվազագույն տարիքին վերաբերող ընդհանուր չափորոշիչ չկա, և դիմողին քրեական պատասխանատվություն վերագրելն ինքնին կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման տեղիք չի տալիս... Նմանապես, չի կարելի ասել, որ երեխայի, նույնիսկ ընդամենը տասնմեկ տարեկան երեխայի նկատմամբ հարուցված քրեական մեղադրանքի հիման վրա սկսված դատավարությունն առաջացնո՞ւմ է կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված արդար դատաքննության երաշխիքի խախտում: Դատարանը,

այնուամենայնիվ, համաձայն է հանճնաժողովի հետ, որ կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ հանցագործության մեջ մեղադրվող երեխայի նկատմամբ վերաբերմունքը հիմնված լինի նրա տարիքի, հասունության մակարդակի, մտավոր և զգայական կարողությունների վրա՝ ներառելով նաև քայլեր, որոնք խրախուսում են նրա՝ դատավարությունն ըմբռնելու և դատավարությանը մասնակցելու կարողությունը:

87. Սրանից հետևում է, որ ծանր հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անչափահաս երեխայի նկատմամբ տեղի ունեցող դատավարության նիստերը, որոնք լրատվության և հանրության համար լուրջ հետաքրքրություն են առաջացնում, անհրաժեշտ է անցկացնել այնպես, որ որքան հնարավոր է նվազի ահաբեկվելու և ճնշվելու նրա զգացողությունը: Այս կապակցությամբ կարելի է նշել, որ Անգլիայում և Ուելսում նվազ ծանր հանցագործությունների մեջ մեղադրվող երեխաների գործերը լսվում են հատուկ անչափահասների դատարանում, որտեղ հասարակության ներկայացուցիչների ներկայությունն արգելվում է: Այս գործերի կապակցությամբ մամուլի նկատմամբ կիրառվում է նյութեր տպագրելու ինքնաբերաբար սահմանափակում... Բացի այդ, դատարանն արդեն վկայակոչել է ամբաստանյալ երեխաների մասնավոր կյանքի պաշտպանության առնչությամբ արդի միջազգային միտումը... Դատարանը զգուշորեն քննության է առել կառավարության այն փաստարկը, ըստ որի՝ հրապարակային դատավարությունները արդարադատության բաց իրագործման միջոցով ծառայում են ընդհանուրի շահին ...և նկատել, որ որտեղ նպատակահարմար է, հաշվի առնելով երեխայի տարիքը կամ այլ բնութագրերը կամ քրեական վարույթին ուղեկցող այլ հանգամանքները, այս ընդհանուր շահի համար կարող է բավարար լինել ձևափոխված ընթացակարգի կիրառումը, որն ապահովում է հայեցողական ներկայության իրավունքներ և ողջամիտ հաշվետվողականություն:

88. Դատարանը նկատում է, որ դիմողի դատավարությունը տեղի է ունեցել թագավորական դատարանում և տևել երեք շաբաթ: Հաշվի առնելով դիմողի երիտասարդ տարիքը և դատավարության նկատմամբ նրա ըմբռնումը խրախուսելու անհրաժեշտությունը՝ ձեռնարկվել են հատուկ միջոցներ: Օրինակ՝ նրան բացատրել են դատավարության ընթացակարգը և նախօրոք ցույց տվել դատավարության նիստերի դահլիճը, ինչպես նաև դատական նիստերի տևողությունը կարճացվել է, որպեսզի ամբաստանյալը չափից ավելի չհոգնի: Այնուամենայնիվ, թագավորական դատարանի պաշտոնական-ությունը և արարողակարգը երբեմն պետք է որ անհասկանալի լինեին և ահաբեկեին տասնմեկ տարեկան երեխային, և կան փաստեր, որ դատարանի նիստերի դահլիճի որոշ ձևափոխությունները, մասնավորապես, ամբաստանյալների բարձրացված աթոռը, որի նպատակն է եղել հնարավորություն տալ ամբաստանյալներին տեսնելու, թե ինչ է կատարվում, ավելացրել է դատավարության ընթացքում դիմողի անհարմարության զգացումը, քանի որ նա եղել է մամուլի և հանրության տեսադաշտում: Դատավարությունն առաջացրել է չափից ավելի մեծ հետաքրքրություն մամուլի և հանրության շրջանում ինչպես դատական նիստերի դահլիճի ներսում, այնպես էլ դրանից դուրս, որի պատճառով իր եզրափակիչ խոսքում դատավորը նշել է այն խնդիրները, որոնք առաջացել են վկաների մեջ հրապարակայնության ալիքի պատճառով, և խնդրել երդվյալ ատենակալներին հաշվի առնել այդ հանգամանքը փաստերը գնահատելիս:

89. Զգալի թվով հոգեբուժական բնույթի փաստեր կան, որոնք վերաբերում են դիմողի՝ վարույթին մասնակցելու կարո-ղությանը: Այսպես օրինակ՝ դոկտոր Սյուզան Բեյլին, որը ներքին գործերի գրասենյակի անչափահասների գործերի դատաքննության ծառայությունում աշխատում է որպես հոգեբույժ-խորհրդատու, 1993 թ. նոյեմբերին ցուցմունք է տվել, որ ամեն անգամ, երբ ինքը դատական նիստից առաջ տեսել է դիմողին, նա հեկեկացել է՝ ի վիճակի չլինելով կապակցված խոսել հանցագործության հետ կապված հանգամանքների մասին... Դոկտոր Բենթովիմը, որը «Գրեյթ Օրմոնդ Սթրիթ» մանկական հիվանդանոցի դատական պաշտպանության գծով խորհրդատու է, իր 1993 թ. սեպտեմբերի հաշվետվությունում նույնպես եզրակացրել է, որ դիմողը տառապել է հետտրավմատիկ բարդություններից և համարել, որ խնդրո առարկա իրադարձություններից խոսելը եղել է շատ դժվար և ցավագին, որն անհնարին է դարձնում գործի որոշ կողմերի մասին հավաստի տեղեկություն քաղելու հնարավորությունը... Դատավարությունից հետո՝ 1995 թ. հունվարին, դիմողն ասել է դոկտոր Բենթովիմին, որ սարսափել է դատարանում իրեն ուղղված հայացքներից և հաճախ անհանգստացել, թե մարդիկ ի՛նչ են մտածում իր մասին: Նա ի վիճակի չի եղել հետևելու վարույթին և ամբողջ ընթացքում մտքում միայն հաշվել է կամ կոշիկներով գետնի վրա պատկերներ գծել: Դոկտոր Բենթովիմը որոշել է՝ քանի որ Վ-ն տկարամիտ է, «խիստ կասկածելի» է, որ հասկացել է իրավիճակը և ի վիճակի եղել գիտակցված ցուցմունքներ տալու իր փաստաբաններին... Դոկտոր Բեյլիի հաշվետվությունը թվագրված է եղել 1997 թ. նոյեմբերով և վերաբերել է դատավարության ժամանակ դիմողի ցրվածությանը, լսելու անկարողությանը և տվայտանքներին՝ առաջացած վարույթի հրապարակային բնույթից…

90. Այդ հանգամանքներից ելնելով՝ դատարանը չի համարում, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների համար բավարար է, որ դիմողը ներկայացված է եղել հմուտ և փորձառու իրավաբանների կողմից: Այս գործը տարբեր է *Ստենֆորդի (Stanford)* գործից, ... որում դատարանը որոշել է՝ այն հանգամանքը, որ մեղադրյալն ի վիճակի չի եղել լսելու դատաքննության ժամանակ տրված որոշ ցուցմունքները, խախտում չի առաջացրել, քանի որ նրա փաստաբանը, որը կարող էր լսել այն ամենը, ինչ ասվել է, և ողջ ժամանակաընթացքում կարող էր ցուցումներ ստանալ իր հաճախորդից, մարտավարական նկատառումներով գերադասել է, որ մեղադրյալը չնստի վկաներին մոտ հեռավորության վրա: Այստեղ, թեպետ կառավարության ասելով՝ դիմողի իրավաբանական ներկայացուցիչները նստած են եղել նրանից «շշուկի հեռավորության վրա», խիստ անհավանական է, որ դատական նիստերի դահլիճի շիկացած մթնոլորտում, գտնվելով

հանրության ուշադրության կենտրոնում, դիմողն առհասարակ զերծ լիներ վախից, որպեսզի դատավարության ընթացքում խորհրդակցեր նրանց հետ, կամ, իրավամբ, իր անհասունության և խախտված հոգեվիճակի պատճառով ի վիճակի լիներ նիստերի դահլիճից դուրս համագործակցելու իր փաստաբանների հետ և իր պաշտպանության նպատակով տեղեկություններ հաղորդելու նրանց:

91. Ամփոփելով՝ դատարանը որոշում է, որ դիմողը չի կարողացել արդյունավետորեն մասնակցել իր դեմ սկսված քրեական դատավարությանը և, հետևաբար, ի խախտումն 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ զրկված է եղել արդար դատաքննությունից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են նախագահ Վիլդհաբերը և դատավորներ Փալմը, Ռոզակիսը, Պաստոր Ռիդրուեխոն, Ռեսը, Մակարչիկը, Կուրիսը, Թուրմենը, Կոստան, Թուլքենսը, Բիրսանը, Լորենցենը, Ֆիշբախը, Բուտկևիչը, Կասադեվալը և Ռիդը: Դատավոր Բական առարկել է, քանի որ, նրա կարծիքով, հաշվի առնելով դիմողի դեռահաս տարիքը՝ իշխանությունները բավական թեթևացրել են դատարանի սովորական ընթացակարգերը:

2 Լուրջ քրեական հանցագործությունների մեջ մեղադրվող անչափահաս ամբաստանյալների դատավարություններին վերաբերող ինստիտուցիոնալ կարգադրությունների և ընթացակարգերի փոփոխությունները ներկայացվել են 3-րդ հոդվածի շրջանակներում, սույն գործի վերը կատարված վերլուծությունում: *«Տ.Շ.-ն ընդդեմ ՄԹ-ի» (T.C. v UK)* գործում (2004 թ. հունիսի 15-ի վճիռ) պալատը, հինգ կողմ և երկու դեմ ձայներով, որոշել է, որ ձևափոխված ընթացակարգը չի ապահովել 11 տարեկան սահմանափակ մտավոր կարողություններ ունեցող անձնավորության արդյունավետ մասնակցության իրավունքը: Դիմողը իր 14 տարեկան հանցակցի հետ փորձել է խլել տարեց կնոջ պայուսակը, ինչի հետևանքով վերջինիս թևը կոտրվել է: Դիմողը մեղադրվել է թալանի փորձ կատարելու համար: Հաշվի առնելով նրա նախկին քրեական պատմությունը (ներառյալ թալանի, կողոպուտի և հրկիզման դեպքերը)՝ անչափահասների դատարանը նրա գործն ուղարկել է թագավորական դատարան: Կազմվել են երկու փորձագիտական հաշվետվություններ: Ըստ դրանցից մեկի՝ նա ի վիճակի է եղել մասնակցելու դատավարությանը, մինչդեռ ըստ երկրորդի՝ նա ունեցել է սովորելու զգալի դժվարություններ (6-8 տարեկան անձնավորության ճանաչողական կարողություններ): Դատավորը որոշել է, որ նրա դատը թագավորական դատարանում պետք է տեղի ունենա ոչ պաշտոնական ընթացակարգերի կիրառումով (Տ. Շ.-ն չի նստել ամբաստանյալների աթոռին: Նրան ուղեկցել է իր սոցիալական աշխատողը: Թիկնոցներ և կեղծամներ չեն օգտագործվել, և դատարանը հաճախակի ընդմիջում է հայտարարել): Դատավարությունը տևել է մեկ օր, և դիմողը ցուցմունք է տվել (նա ունեցել է իրավաբանական ներկայացուցիչ): Նա մեղավոր է ճանաչվել և դատապարտվել երկուսուկես տարվա ազատազրկման: Պալատը վճռել է, որ.

29. Դատարանն ընդունում է կառավարության փաստարկը, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը չի պահանջում, որ քրեական հանցագործության համար դատվող երեխան պետք է հասկանա կամ ի վիճակի լինի հասկանալու օրենքի յուրաքանչյուր կետը կամ ապացուցողական մանրամասները: Ժամանակակից իրավական համակարգերի բարդության պայմաններում նորմալ զարգացած շատ չափահաս անձինք ի վիճակի չեն լիովին ըմբռնելու դատական նիստերի դահլիճում բոլոր նրբությունները ու մտքերի փոխանակությունը: Սա է պատճառը, որ կոնվենցիան իր 6-րդ հոդվածի 3(գ) կետում շեշտում է իրավաբան ներկայացուցչի կարևորությունը: Այնուամենայնիվ, «արդյունավետ մասնակցությունն» այս համատեքստում ենթադրում է, որ մեղադրյալը պետք է ընդհանուր պատկերացում ունենա իր նկատմամբ տեղի ունեցող դատական գործընթացի վերաբերյալ և հասկանա, թե ինչն է իր համար դրված կշեռքի նժարին, այդ թվում նաև՝ ցանկացած պատիժ, որ կարող է նշանակվել նրան: Սա նշանակում է, որ անհրաժեշտության դեպքում նա, օրինակ, թարգմանչի, իրավաբանի, սոցիալական աշխատողի կամ ընկերոջ միջոցով պետք է կարողանա հասկանալ դատարանում ասվածի ընդհանուր էությունը: Ամբաստանյալը պետք է կարողանա հետևել, թե ինչ են ասում մեղադրող կողմի վկաները և, եթե ներկայացուցչություն ունի, ապա նաև բացատրել իր փաստաբաններին իրադարձությունների սեփական ընկալումը և նշել այն ցուցմունքները, որոնց հետ համաձայն չէ՝ տրամադրելով ցանկացած փաստ, որը պետք է օգտագործվի հօգուտ իր պաշտպանության...

35. Դատարանը կարծում է, որ այն դեպքում, երբ կայացվող որոշումը վերաբերում է երեխային (որպիսին է նաև դիմողը), և ոչ արդյունավետ մասնակցության ռիսկ կա վերջինիս փոքր տարիքի և սահմանափակ մտավոր կարողությունների պատճառով, և երբ այդ որոշումը կայացվում է քրեական վարույթի, ոչ թե առկա այլ տարբերակներով, որոնք սկզբունքորեն ուղղված են երեխայի և համայնքի լավագույն շահերին, կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ նրա դատաքննությունը տեղի ունենա մասնագիտական տրիբունալում, որն ունակ է լիարժեքորեն քննության առնելու և համապատասխան նշանակություն վերագրելու այն մտավոր սահմանափակումներին, որոնք նա փորձում է հաղթահարել, ինչպես նաև ունակ է համապատասխանաբար հարմարեցնելու իր ընթացակարգը:

36….Դոկտոր Բրեննանը համարել է, որ «արդյունքում» դիմողը ամենայն հավանականությամբ ունեցել է բավարար մտավոր կարողություններ, որպեսզի հասկանա, որ կատարել է սխալ արարք, և, հետևաբար, նաև՝ բավարար մտավոր կարողություններ դատաքննությանը մասնակցելու համար: Սույն գործի պարագայում դատարանի համար, այնուամենայնիվ, համոզիչ չէ, որ դիմողն ի վիճակի է եղել արդյունավետորեն մասնակցելու իր դատաքննությանն այնքանով, որ նախատեսված է 6(1) հոդվածով:

37. Հետևաբար, տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:

Դատավորներ Պելոնպաան և Բրատցան առարկել են, քանի որ, նրանց կարծիքով, դիմողի փոքր տարիքին կամ մտավոր զարգացման մակարդակին հարմարվելու համար ձեռնարկվել են բավարար նախազգուշական միջոցներ: Թեև S. C.-ի դատավարության նկատմամբ մամուլի հետաքրքրություն կամ հասարակական զայրույթ չի եղել, որոնք առկա են եղել Վ-ի գործում, առաջինի չափից ավելի ցածր մտավոր զարգացման մակարդակը որոշիչ գործոն է եղել, որպեսզի մեծամասնությունը եզրակացնի, որ S. C.-ի համար չի ապահովվել նրա արդյունավետ մասնակցությունը երաշխավորող դատական ընթացակարգ: Իրատեսակա՞ն է սպասել, որ փոքր տարիքի երեխաները/պատանիները կարող են որպես ամբաստանյալ արդյունավետորեն հանդես գալ սովորական դատարաններում:

3 *«Ստենֆորդն ընդդեմ ՄԹ-ի» (Stanford v UK*, A.282-A (1994)) ավելի վաղ լսված գործում դատարանը շարադրել է ենթադրվող իրավունքի հիմքը և շրջանակը՝ օգտագործելով հետևյալ ձևակերպումները:

Չի էլ վիճարկվում, որ 6-րդ հոդվածը՝ ամբողջովին ընթերցված, երաշխավորում է մեղադրյալի՝ քրեական դատավարությանն արդյունավետորեն մասնակցելու իրավունքը: Ընդհանուր առմամբ, սա ընդգրկում է, ի թիվս այլոց, ոչ միայն նրա ներկա գտնվելու իրավունքը, այլև դատավարությունը լսելու և հետևելու իրավունքը: Այս իրավունքները ենթադրվում են բուն մրցակցային դատավարության գաղափարով և կարող են բխեցվել 6-րդ հոդվածի 3-րդ կետի (գ), (դ) և (ե) ենթակետերից (պարբ. 26):

Ստենֆորդի դատավարությունը տեղի է ունեցել Նորվիչի թագավորական դատարանում մի շարք լուրջ սեռական բնույթի և բռնությամբ ուղեկցվող հանցագործությունների կապակցությամբ: Իր դատավարության ընթացքում նա նստած է եղել ապակեպատ միջնորմի հետևում գտնվող մեղադրյալների աթոռին և ի վիճակի չի եղել լսելու բոլոր վկաների ցուցմունքները: Նա վատ ակուստիկայի առնչությամբ բողոքել է իր փաստաբանին և փաստաբան-խորհրդատուին, սակայն նրանք նրա մտահոգությունը չեն հաղորդել դատաքննությունը վարող դատավորին: Ստենֆորդը մեղադրվել է բռնաբարության, առևանգման, ինչպես նաև սպանության սպառնալիքներ անելու համար՝ դատապարտվելով տասը տարվա ազատազրկման: Դատարանը միաձայն որոշել է, որ 6-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել, որովհետև, ի թիվս այլոց, նա ներկայացված է եղել է փորձառու փաստաբան-խորհրդատուով, որը լսել է ցուցմունքը և կարող էր քննարկել այն նրա հետ, մինչդեռ փորձագիտական հաշվետվություններից պարզ է, որ ապակե միջնորմը գրեթե չի ազդել դատական նիստերի դահլիճում ձայնի լսելիության վրա: Վճռի գործնական նշանակությունն այն է, որ դատարանը թույլ չի տալու, որպեսզի ազգային քրեական դատարանների դատական նիստերի դահլիճներում անվտանգության ապահովման ավելի զարգացած առանձնահատկությունները վտանգեն ամբաստանյալների անձամբ կամ իրավական ներկայացուցիչների միջոցով մասնակցության հիմնարար իրավունքը:

Ընդհանուր գնահատումը

Արդար դատաքննության իրավունքի խախտման վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը գնահատում է ազգային վարույթի ողջ ընթացքի արդարությունը: Օրինակ՝ *«Բարբերան, Մեսեգեն և Խաբարդոն ընդդեմ Իսպանիայի» (Barberà, Messegué and Jabardo v Spain*, A.146 (1988) 11 EHRR 360) գործով դիմողները բողոքել են իրենց դատավարությունից, որի արդյունքում ահաբեկչական բնույթի սպանությանը մասնակցելու մեղադրանքով դատապարտվել են ազատազրկման: Դատարանը որոշել է, որ.

89. Հաշվի առնելով դիմողներին Բարսելոնից և Մադրիդից ուշ տեղափոխելու հանգամանքը, նախքան դատական նիստի սկսվելը դատարանի կազմի անսպասելի փոփոխությունը, դատավարության կարճ ընթացքը և, ամենից առավել, այն փաստը, որ ապացույցների ամենակարևոր մասերը դատավարության ընթացքում պատշաճ կարգով չեն ներկայացվել և քննարկվել դիմողների ներկայությամբ և հասարակության զգոն հսկողության ներքո, դատարանը եզրակացնում է, որ խնդրո առարկա դատավարությունը, ընդհանուր առմամբ, չի բավարարել արդար և հրապարակային դատավարության պահանջները: Հետևաբար, տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում:

Այս մոտեցումը նաև հնարավորություն է տալիս դատարանին հաշվի առնելու, թե արդյոք առաջին ատյանի դատարանում տեղի ունեցած դատավարության թերությունները կարո՞ղ են շտկվել հետագա բողոքարկման դատավարության ընթացքում: *«Էդվարդսն ընդդեմ ՄԹ-ի» (Edwards v UK,* A.247-B (1992) 15 EHRR 417) գործում դիմողը թալանի և կողոպուտի մեղադրանքներով դատապարտվել է Շեֆֆիլդի դատարանում: Այնուհետև էդվարդսը այս հանցագործությունների կապակցությամբ ոստիկանության կատարած հետաքննությունից բողոքել է ներքին գործերի քարտուղարին: Ներքին գործերի քարտուղարն էդվարդսի գործը կրկին հետ է ուղարկել վերաքննիչ դատարան: Վերջինս որոշել է, որ ոստիկանության՝ էդվարդսի գործով ցուցմունք տված պաշտոնյաները չեն նշել, որ մեկ այլ անձի՝ նրա հարևանի մատնահետքերը նույնպես հայտնաբերվել են հանցագործության կատարման վայրում: Այնուամենայնիվ, դատարանը համարել է, որ դիմողի դատապարտումն «անվստահելի և անբավարար» չի եղել: Էդվարդսն այնուհետև Ստրասբուրգի մարմնին հայտնել է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի խախտում: Դատարանը խախտում չի բացահայտել, քանի որ «սկզբնական դատավարության թերությունները շտկվել են վերաքննիչ դատարանում տեղի ունեցած դատավարության միջոցով...» (պարբ. 39):

4 Պալատը միաձայն որոշել է, որ այս պահանջը խախտվել է *«Ցիլիբերբերգն ընդդեմ Մոլդովայի» (Ziliberberg v Moldova)* գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2005 թ. փետրվարի 1-ին: Դիմողը, որ եղել է ուսանող, «Ցենտրու» շրջանային դատարանի կողմից դատապարտվել է չարտոնված ցույցին մասնակցելու համար: Նա բողոքարկել է այս որոշումը: Այնուամենայնիվ, իր վերաքննիչ բողոքի կապակցությամբ դատավարության կայացման ամիս-ամսաթվի վերաբերյալ նա ծանուցում ստացել է միայն դրա ավարտից հետո: Հետևաբար, նա չի կարողացել ներկա գտնվել դատական նիստին: Վերաքննիչ դատարանը քննության է առել նրա բողոքը նրա բացակայությամբ և մերժել այն: Պալատը որոշել է, որ դրանով դիմողին զրկել են իր բողոքարկման գործընթացին մասնակցելու հնարավորությունից, և որ դա 6(1) հոդվածի խախտում է:

Հրապարակային դատաքննություն

Մենք արդեն ուսումնասիրել ենք մի քանի գործ, որոնք վերաբերել են այս իրավունքին: Դատարանը համարել է, որ այս դրույթի խախտում տեղի է ունեցել *«Լե Կոմպտը, Վան Լյովեն և Դե Մեյերն ընդդեմ Բելգիայի» (Le Compte, Van Leuven and De Meyere v Belgium)* (վերը՝ էջ 375) գործում, քանի որ նահանգային խորհրդում և վերաքննիչ խորհրդում Բելգիայի բժշկական ընկերության կազմակերպած կարգապահական դատավարությունները եղել են դռնփակ: Դատարանը նկատել է, որ եթե կար-

գապահական մեղադրանքներն ընդգրկեին հիվանդների նկատմամբ սխալ գործելակերպի դրսևորումներ (ոչ թե ընկերակցության նկատմամբ արհամարհական վերաբերմունքի մեղադրանքներ), ապա նպատակահարմար կլիներ վկայակոչել 6(1) հոդվածի հրապարակային դատաքննության բացառությունը հիվանդների «մասնավոր կյանքի պաշտպանության» նպատակով: Դրան հակառակ՝ *«Քեմփբելը և Ֆելն ընդդեմ ՄԹ-ի» (Campbell and Fell v UK* A.80 (1984)) գործում դատարանը վճռել է, որ «հասարակական կարգի և անվտանգության» պահպանման նկատառումներով բանտի ղեկավարությունը ճիշտ է վարվել, որ բանտարկյալներին վերաբերող և բանտում անցկացված կարգապահական դատավարությունների ժամանակ արգելել է մամուլի և հասարակության ներկայությունը: Պետք է նաև նկատենք, որ հանրության և մամուլի՝ անչափահասի դատավարությանը ներկա գտնվելու լայն հնարավորությունը *«V-ն ընդդեմ ՄԹ-ի» (V v UK)* (վերը՝ էջ 438) գործում այն գործոններից մեկն է, որոնց շնորհիվ դատարանը եզրակացրել է, որ նա ի վիճակի չի եղել արդյունավետորեն մասնակցելու իր դատավարությանը:

Քրեական հանցագործությունների մեջ մեղադրվող բանտարկյալների հրապարակային դատաքննության իրավունքի առումով մշտական գործող դատարանն իր նախորդի համեմատությամբ շատ ավելի լուրջ պաշտպանական մոտեցում է որդեգրել *«Ռյեփան ընդդեմ Ավստրիայի» (Riepan v Austria)* գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2001 թ. փետրվարի 14-ին: Դիմողը դատապարտվել է սպանություն կատարելու համար: Այնուհետև բանտում պատիժը կրելու ժամանակ ասվել է, որ նա մի շարք սպառնալիքներ է տեղացել բանտի աշխատակիցների վրա: Ի պատասխան՝ ղեկավարությունը մեղավոր է ճանաչել նրան վտանգավոր սպառնալիքներ տեղալու համար: Տեղական տարածքային դատարանը որոշել է դիմողի դատավարությունն անցկացնել բանտի փակ տարածքում, որտեղ նա կրում էր իր պատիժը: Ինչպես միշտ, դատավարությանը նախորդած շաբաթվա ընթացքում տարածքային դատարանի հանրային մեղադրողի գրասենյակը մամուլին և հանրությանն է ներկայացրել առաջիկա գործերի ցուցակը (որի մեջ նշված է եղել նաև դիմողի գործը) և դրանց դատավարության կայացման վայրերը: Դատավարությունը տեղի է ունեցել բանտում գտնվող փոքր սենյակում: Դիմողը, որը ներկայացված է եղել իր փաստաբանի կողմից, չի ընդունել իր մեղքը: Բանտի համապատասխան պաշտոնյաներին լսելուց հետո դատավորը դիմողին մեղավոր է ճանաչել և նշանակել տասն ամսվա ազատազրկում: Դատավարությունը տևել է մոտ կես ժամ՝ առանց մամուլի և հասարակայնության ներկայացուցիչների: Դատարանի առջև դիմողը բողոքել է, որ տվյալ դատավարությունը խախտել է 6(1) հոդվածի հրապարակային դատաքննության պարտավորությունը: Դատարանը միաձայն վճռել է, որ.

27. ...Դատավարության հրապարակային բնույթը հատկապես կարևոր է դառնում տվյալ գործի նման գործերում, որտեղ քրեական դատավարությունում հանդես եկող ամբաստանյալը բանտարկյալ է, մեղադրանքները վերաբերում են բանտի պաշտոնյաների հասցեին արված սպառնալիքներին, և վկաները այն նույն բանտի պաշտոնյաներն են, որտեղ կալանավորված է ամբաստանյալը:

28. Սույն գործի դեպքում չի վիճարկվել, որ դատաքննության հրապարակայնությունը պաշտոնապես բացառված չի եղել: Այնուամենայնիվ, փաստացի խոչընդոտը կարող է հակասության մեջ լինել կոնվենցիայի հետ նույն կերպ, ինչ և օրենսդրական խոչընդոտը (տե՛ս *«Էյրին ընդդեմ Իռլանդիայի» (Airey v Ireland)* 1979 թ. հոկտեմբերի 9-ի վճիռ, շարք A, թիվ 32, էջ 14, պարբ. 25): Դատարանը կարծում է, որ միայն այն փաստը, որ դատավարությունը տեղի է ունեցել Գարսթենի բանտի տարածքում, անհրաժեշտաբար չի հանգեցնում այնպիսի եզրակացության, որ բավարար հրապարակային չի եղել: Եվ եթե պոտենցիալ դիտորդների ինքնությունը պետք է ստուգվեր, ինչպես նաև անվտանգությունը, դրանից դատաքննությունը բնավ չէր կորցնի հրապարակային բնույթը...

29. Այնուամենայնիվ, պետք է հիշել, որ կոնվենցիան նպատակ ունի երաշխավորել ոչ թե տեսական կամ վերացական, այլ գործնական իրավունքները (տե՛ս *«Արտիկոն ընդդեմ Իտալիայի» (Artico v Italy)* 1980 թ. մայիսի 13-ի վճիռ, շարք A, թիվ 37, էջ 16, պարբ. 33): Դատարանը կարծում է, որ դատաքննությունը համապատասխանում է հրապարակայնության պահանջին միայն այն դեպքում, երբ հասարակայնությունը կարող է դրա կայացման օրվա և վայրի մասին տեղեկություններ ձեռք բերել, և եթե այդ վայրը հեշտորեն հասանելի է հասարակայնության համար: Շատ դեպքերում այս պայմանները բավարարվում են այն պարզ փաստով, որ դատավարությունը տեղի է ունեցել սովորական նիստերի դահլիճում, որը բավականին մեծ է, որպեսզի տեղավորի ներկաներին: Այնուամենայնիվ, դատարանը նկատում է, որ սովորական դատական նիստերի դահլիճից դուրս դատավարության իրականացումը, մասնավորապես, դրա

իրականացումն այնպիսի վայրում, որպիսին բանտն է, որտեղ հասարակությունը մուտք չունի, խոչընդոտում է դրա հրապարակայնությունը: Նման դեպքերում պետության պարտավորությունն է ձեռնարկել փոխհատուցող միջոցներ, որոնց նպատակն է երաշխավորել, որ հասարակայնությունը և մամուլը հավուր պատշաճի տեղեկացված լինեն դատավարության վայրի մասին և կարողանան արդյունավետորեն մուտք գործել:

Դատարանը չի համարել, որ ձեռնարկվել են այդպիսի միջոցներ, ինչպես, օրինակ՝ պետական մեղադրողի կողմից հանրությանը և մամուլին ուղղված հատուկ ծանուցման մեջ բանտ հասնելու վերաբերյալ ուղղություն տալը և մուտք գործելու պայմանները ներկայացնելը: Հետևաբար, դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածով պահանջվող հրապարակային դատաքննության պահանջի խախտում: Թեպետ *Ռյեփանի (Riepan)* գործը վերաբերել է բանտում տեղի ունեցած դատավարությանը, իսկ *Քեմփբելինը և Ֆելինը*՝ «քրեական» բնույթի կարգապահական մեղադրանքներին, մշտական գործող դատարանին իրավամբ մտահոգել են բանտարկյալի ոչ ճիշտ վարքագծի կապակցությամբ սկսված դատաքննության պատշաճ հրապարակայնությունը և դրան ներկա գտնվելու նպատակով մուտքի հնարավորությունը:

Մշտական գործող դատարանի կողմից հրապարակային քաղաքացիական դատավարության իրականացումը քննության է առնվել *«Բ-ն և Փ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (B. and P. v United Kingdom)* գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2001 թ. հուլիսի 24-ին: Դիմողները հայրեր էին, որոնց երեխաներն ապրում էին իրենց մայրերի հետ: Երկու դիմողն էլ դիմել են դատարաններ՝ իրենց որդիների համար բնակության կարգադրություններ ստանալու նպատակով: Դիմողները պահանջել են, որ տեղի ունենա հրապարակային դատաքննություն, այնուամենայնիվ, նրանց պահանջները մերժվել են, քանի որ 1989 թ. «Երեխաների մասին» օրենքն այդպիսի դատավարությունները դռնփակ անցկացնելու հնարավորություն է տալիս: Դիմողները բողոքել են, որ նման հնարավորությունը խախտել է 6(1) հոդվածով նախատեսված հրապարակային դատաքննության իրավունքը: Դատարանը բացատրել է հրապարակային դատաքննության պարտավորությունը որպես.

36. …Դատավարության հրապարակային բնույթը դատավարության մասնակից կողմերին պաշտպանում է արդարադատության գաղտնի իրականացումից, որը հանրային վերահսկողության ենթակա չէ: Այն նաև այնպիսի միջոց է, որը դատարանների նկատմամբ վստահություն է ձևավորում: Արդարադատության իրականացումը տեսանելի դարձնելը, հրապարակայնությունը նպաստում են 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված նպատակի՝ արդար դատաքննության ապահովմանը, որի երաշխավորումը ժողովրդավարական հասարակության հիմնասյուներից է...

Դատարանը միասնական չի եղել այն կապակցությամբ, թե արդյոք պետությունները կարո՞ղ են հրապարակային դատաքննության պարտավորությունից նախապես սահմանված բացառություններ անել: Դատարանի մեծամասնությունը՝ հինգ կողմ և երկու դեմ ձայներով, վճռել է, որ.

39….Թեև դատարանը համաձայն է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետն ամփոփում է ընդհանուր կանոն առ այն, որ քաղաքացիական դատավարությունը, ի թիվս այլոց, պետք է լինի հրապարակային, չի համարում, որ այս դրույթին հակասում է, եթե պետությունը, ելնելով բարոյականության, հասարակական կարգի և ազգային անվտանգության կամ անչափահասների շահերից և կամ կողմերի մասնավոր կյանքը պաշտպանելու նպատակից, բացառության կարգով սահմանի գործերի մի ամբողջ դաս ... թեպետ այդպիսի միջոցառման անհրաժեշտությունը միշտ պետք է ենթակա լինի դատարանի հսկողությանը... Հետևաբար, Անգլիայի ընթացակարգային իրավունքը կարող է դիտվել որպես 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ընդհանուր բացառության առանձնահատուկ արտացոլում:

Այս տեսանկյունից դիմողի հրապարակային դատաքննության իրավունքի խախտում տեղի չի ունեցել: Այնուամենայնիվ, չհամընկնող կարծիք ունեցողները՝ դատավորներ Լուկայդեսը և Թուլքենսը, հավատացած են եղել, որ «...հրապարակային դատաքննության դեմ գործող ընդհանուր իրավական կանոնը, որը կիրառվել է այդ գործերի նկատմամբ, անհամատեղելի է ոչ միայն շարադրանքի, այլ նաև 6-րդ հոդվածով պահանջվող հրապարակային դատաքննության պահանջի նպատակի և փիլիսոփայության հետ...»: Մեծամասնության մոտեցումը պետություններին զգալի ազատություն է տալիս սահմանելու հրապարակային դատաքննությունների պարտավորությունից արվող բացա-

ռությունների ընդարձակ շրջանակ, սակայն անհատները պետք է ի վիճակի լինեն դիմելու ազգային դատարաններ և պահանջելու, որ իրենց գործերը լսվեն հրապարակայնորեն (ինչպես որ դիմողները կարողացել են անել տվյալ դեպքում): Եթե անհատները կարծում են, որ ազգային դատական ընթացակարգերին վերաբերող որոշումները համատեղելի չեն 6(1) հոդվածի հետ (այսինքն՝ նրանց գործերը չեն մտնում այդ հոդվածում նշված բացառությունների շրջանակի մեջ), ապա նրանք հնարավորություն ունեն գանգատ ներկայացնելու Ստրասբուրգ:

Ողջամիտ ժամկետում

1 Այն չափանիշները, որոնք դատարանը կիրառում է, երբ գնահատում է՝ քաղաքացիական կամ քրեական դատարաններն իրենց որոշումները կայացրել են ողջամիտ ժամկետում, թե ոչ, բացատրված են *Քյոնիգի (Konig)* վճռի 99-րդ պարբերությունում (վերը՝ էջ 358): Այդ գործով նաև հաստատվել է, որ եթե ազգային իրավական համակարգերն ընդգրկում են նաև վերաքննիչ դատարաններ, որոնք իրավասու են որոշում կայացնելու «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների» կամ «քրեական մեղադրանքների» վերաբերյալ, ապա այդ դատարանների վարույթները ևս մտնում են սույն կոնվենցիայի իրավունքի շրջանակների մեջ:

2 *«Ռոբինսն ընդդեմ ՄԹ-ի» (Robins v UK* (1997) 26 EHRR 527, 1997-V) գործում դատարանը որոշել է, որ իրավաբանական ծախսերի վերաբերյալ դատական որոշումները, որոնք կայացվել են էական վեճի կարգավորումից հետո, կարող են ենթակա լինել այս իրավունքին: 1991 թ. մայիսին էքսետեր կոմսության դատարանը մերժել է դիմողների հայցը, որով նրանք բողոքել են, որ իրենց հարևանները կոյուղաջրերով կեղտոտել են տարածքը: Դրանից հետո տեղի ունեցած դատական նիստերի ժամանակ որոշվել է, որ դիմողները պաշտպանյալների իրավաբանական ծախսերը վճարելու պարտավորություն ունեն: 1992 թ. նոյեմբերին կոմսության դատարանը պահանջել է դիմողներից պաշտպանյալներին վճարել մոտ 10.000 ֆունտ ստեռլինգ: Դիմողները բողոքել են վերաքննիչ դատարան, որը 1995 թ. հունիսին հաստատել է ծախսերի նշանակման պահանջը: Դիմողները բողոքել են, որ իրենց ծախսերը վճարելու կարողությունը ողջամիտ ժամկետում չի որոշվել: Միաձայն վճռով.

28. Դատարանը հիշում է, որ 6(1) հոդվածը պահանջում է, որ «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների ... որոշման համար» դատավարության բոլոր փուլերը (ներառյալ գործի հատկանիշների վերաբերյալ դատավճռի կայացմանը հետևած փուլերը) տեղի ունենան ողջամիտ ժամկետում...

29. Դատարանը նկատում է, որ տվյալ դեպքում վարույթի հետ կապված իրավաբանական ծախսերը կատարվել են հարևանների միջև տեղի ունեցած վեճի կարգավորման ժամանակ, որն անտարակույս ներառել է «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների ... որոշում»... Դատարանը համարում է, որ ծախսերի վերաբերյալ վարույթը, թեպետ տեղի է ունեցել անջատ, պետք է դիտարկվի որպես նյութական վարույթի շարունակություն և, հետևաբար, որպես «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների ... որոշման» մաս...

Դատարանը շարունակել է և գտել, որ բողոքի վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշում կայացնելուց առաջ պետական մարմինների դրսևորած անգործության պատճառով երկու ժամանակահատվածների առումով (որոնցից առաջինը տևել է 10 ամիս, իսկ երկրորդը՝ 16) տեղի է ունեցել այս իրավունքի խախտում:

3 Ինչ վերաբերում է պայմանավորվող պետությունների պարտավորությանը, համաձայն որի՝ նրանք պետք է ունենան արդյունավետ դատական համակարգեր, դատարանն ասել է հետևյալը.

51. ...Դատարանը նշում է, որ կոնվենցիան պարտավորեցնում է պայմանավորվող պետություններին այնպես կազմակերպել իրենց իրավական համակարգերը, որ նրանց դատարանները կարողանան համապատասխանել 6(1) հոդվածի պահանջներին, ներառյալ «ողջամիտ ժամկետում» դատավարության իրականացման պահանջին:

Այնուամենայնիվ, գործերի ժամանակավոր կուտակման պատճառով պայմանավորվող պետությունների պատասխանատվության հարց չի առաջանում, եթե նրանք բավական շուտափույթ շտկող քայլ են ձեռնարկում այսպիսի բացառիկ իրավիճակի կարգավորման ուղղությամբ (*«Բուխհոլցն ընդդեմ Գերմանիայի» (Buchholz v Germany*, A.42 (1981)):

Այդ դեպքում դատարանը միաձայն գտել է, որ այդ իրավունքի խախտում տեղի չի ունեցել, թեպետ դիմողի՝ աշխատանքից անարդարացիորեն հեռացվելու վերաբերյալ պահանջի մերժման համար Գերմանիայի աշխատանքային դատարաններից պահանջվել է հինգ տարի: Դատարանը հաշվի է առել այն հանգամանքը, որ 1970-ական թվականների կեսին, երբ դիմողը ներկայացրել է իր հայցը, տեղի է ունեցել անսպասելի տնտեսական ճգնաժամ, որը հանգեցրել է աշխատանքային դատարաններում սկսված գործերի 60 տոկոսի աճի: Բացի այդ, հետաձգված գործերին ընթացք տալու նպատակով այս ժամանակահատվածում կառավարությունը նշանակել է 30 տոկոսով ավելի դատավորներ: Թեպետ մյուս պետությունները փորձել են վիճարկել, որ իրենց դատական համակարգերում տեղի ունեցած հետաձգումները եղել են ժամանակավոր բնույթի, դատարանը շատ խիստ մոտեցում է դրսևորել, երբ գնահատել է, թե նրանք ինչ համապատասխան շտկող քայլեր են ձեռնարկել խնդիրը լուծելու համար: Օրինակ՝ *«Ցիմերմանը և Շտայներն ընդդեմ Շվեյցարիայի» (Zimmermann and Steiner v Switzerland*, A.66 (1983) 6 EHRR 17) գործում դաշնային դատարանից պահանջվել է առնվազն երեքուկես տարի, որպեսզի որոշում կայացնի հանրային օգնականությունում աղմուկի անհարմարավետության դիմաց դիմողի՝ փոխհատուցում ստանալու պահանջի վերաբերյալ: Կառավարությունը ներկայացրել է փաստեր, համաձայն որոնց՝ 1970-ական թթ. հանրային ոլորտի իրավունքին վերաբերող բողոքներն ավելացել են 86 տոկոսով: Շվեյցարիայի դատարաններում նշանակվել են որոշ լրացուցիչ դատավորներ, սակայն դատարանը միաձայն վճռել է, որ.

31. ...թեպետ այս ընթացքում (որն ավարտվել է [այն օրը, երբ դիմողների գործերի վերաբերյալ վճիռ է կայացվել]) ձեռնարկվել են այնպիսի քայլեր, որոնք ցույց են տվել խնդիրը կարգավորելու ճշմարիտ ցանկությունը, նրանք բավականաչափ նշանակություն չեն տվել կառուցվածքային կողմին և, հետևաբար, ունեցել են միայն այնպիսի արդյունքներ, որոնք բնավ բավարար չեն:

Հետևաբար, դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել ողջամիտ ժամկետի երաշխիքի խախտում: Նմանապես, *«Գինչոն ընդդեմ Պորտուգալիայի» (Guinchov Portugal*, A.81 (1984) 7 EHRR 223) գործում կառավարությունը փորձել է վիճարկել, որ բացառիկ հանգամանքներում (որը պայմանավորված էր նաև 1974 թ. ժողովրդավարության վերականգնումով և գաղութարարների հայրենադարձությամբ) քառամյա ժամանակահատվածը, որը պահանջվել է դիմողի քաղաքացիական հայցի (ճանապարհային պատահարի հետևանքով կրած վնասի հայցի) լուծման համար, եղել է ներելի: Միաձայն վճռով դատարանը հայտնել է, որ «ելնելով արդարադատության պատշաճ իրականացման նպատակից՝ դատարանը կրկին ուշադրություն է հրավիրում այս պահանջի խիստ կարևորության վրա» (պարբ. 38): Բացի այդ, դատարանը եզրակացրել է, որ կառավարության՝ լրացուցիչ դատավորներ նշանակելու քայլերը եղել են «անբավարար և ուշացած»: Հետևաբար, դիմողի բողոքը 6(1) հոդվածի խախտման մասին բավարարվել է:

4 Ողջամիտ ժամկետի պահանջն ամենահաճախ խախտող պետությունը եղել է Իտալիան: *«Բոտտացին ընդդեմ Իտալիայի» (Bottazzi v Italy,* ECHR 1999-V) գործի վերաբերյալ մեծ պալատը որոշել է, որ Իտալիայի դատարանների՝ շարունակաբար ողջամիտ ժամկետներում որոշում չկայացնելու փորձը հավասար է եղել կոնվենցիայի խախտումով տեղի ունեցած «գործունեության»: Դիմողը բողոքել է, որ թոշակի մասին իր գործի վերաբերյալ որոշում կայացնելու համար աուդիտի դատարանից պահանջվել է մոտավորապես յոթ տարի:

22. Սկզբում դատարանը նկատում է, որ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը պայմանավորվող պետությունների վրա պարտավորություն է դնում նրանց դատական համակարգերը կազմակերպել այնպիսի եղանակով, որը դատարաններին հնարավորություն է տալիս բավարարել այդ դրույթի պահանջները (տե՛ս *«Սալեզին ընդդեմ Իտալիայի» (Salesi v Italy)* 1993 թ. փետրվարի 26-ի վճիռը, շարք A, թիվ 257-E, էջ 60, պարբ. 24): Դատարանը ցանկանում է վերահաստատել

առանց ձգձգումների արդարադատության իրականացման կարևորությունը, քանի որ ձգձգումները կարող են վտանգել դրա արդյունավետությունը և արժանահավատությունը (տե՛ս *«Կատտ Կլիտշե դե լա Գրանջեն ընդդեմ Իտալիայի» (Katte Klitsche de la Grange v Italy)* 1994 թ. հոկտեմբերի 27-ի վճիռը, շարք A, թիվ 293-B, էջ 39, պարբ. 61): Բացի այդ, նշվում է, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն իր 1997 թ. հուլիսի 11-ի DH (97) 336 բանաձևում («Քաղաքացիական դատավարության տևողությունն Իտալիայում. ընդհանուր բնույթի լրացուցիչ միջոցառումներ») համարել է, որ «արդարադատության իրականացման չափազանց ձգձգումները լրջորեն վտանգում են հատկապես հարգանքը օրենքի գերակայության նկատմամբ»:

Դատարանն այնուհետև ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ սկսած 1987 թ. հունիսի 25-ից, որն այն օրն է, երբ կայացվել է *«Կապուանոն ընդդեմ Իտալիայի» (Capuano v Italy)* գործի վերաբերյալ վճիռը (շարք A, թիվ 119), արդեն ընդունել է 65 վճիռ, որոնց դեպքում որոշել է, որ Իտալիայի տարբեր շրջաններում քաղաքացիական դատարանների դատավարությունները տեղի են ունեցել ոչ «ողջամիտ ժամկետներում»՝ առաջացնելով 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: Նմանապես, կոնվենցիայի նախկին 31-րդ և 32-րդ հոդվածների շրջանակներում հանձնաժողովի կազմած ավելի քան 1400 հաշվետվությունների արդյունքում Նախարարների կոմիտեն ընդունել է բանաձևեր, համաձայն որոնց՝ նույն պատճառով Իտալիան խախտել է 6-րդ հոդվածը:

Այն հաճախականությունը, որով տեղի են ունեցել խախտումները, ցույց են տալիս, որ գոյություն ունի նույնական խախտումների բավական մեծ թվով կուտակում, հետևաբար, այս գործերը չեն կարող համարվել զուտ առանձին միջադեպեր: Նման խախտումները ցույց են տվել շարունակվող իրավիճակ, որը դեռևս չի շտկվել, և որի առումով բողոքարկողները ազգային մակարդակով դատական պաշտպանության միջոցի հնարավորություն չունեն:

Խախտումների այսպիսի կուտակումը, հետևաբար, գործելակերպ է, որն անհամատեղելի է կոնվենցիայի հետ:

Հետևաբար, դատավորները միաձայն եզրակացրել են, որ դիմողը տուժել է 6(1) հոդվածի խախտման հետևանքով: Ցավոք, ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական դատավարությունների առնչությամբ այս երաշխիքի խախտումների վերաբերյալ Իտալիայի դեմ ներկայացված բողոքների քանակը շարունակել է աճել: Համաձայն գնահատող խմբի, որը ստեղծվել է դատարանի աշխատանքային գերծանրաբեռնվածության ճգնաժամը գնահատելու համար, 2001 թ. հուլիսի դրությամբ Իտալիայի դեմ դատարան ներկայացված է եղել 10000 նախնական դիմում (Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերյալ Նախարարների կոմիտեի գնահատման խմբի զեկույցը, սեպտեմբեր, 2001 թ., պարբ. 22): Այս համակարգային խնդրի կարգավորման նպատակով Նախարարների կոմիտեն, 2002 թ. սկսած, կատարել է ամենամյա ուսումնասիրություններ, որոնց նպատակն է եղել պարզել, թե Իտալիան ի՞նչ ընդհանուր քայլեր է ձեռնարկել դատավարությունների ձգձգման խնդրի կարգավորման ուղղությամբ: 2001 թ. Իտալիայում ուժի մեջ է մտել «Պինտոյի ակտը», համաձայն որի՝ այն անձինք, որոնց գործերը Իտալիայի դատարաններում ձգձգվել են, կարող են փոխհատուցում պահանջել: Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռների և դատավարությունների չափից ավելի երկար տևողության պատճառով Իտալիայի դեմ ներկայացված 2183 գործերի վերաբերյալ Նախարարների կոմիտեն կազմել է թիվ 114 միջանկյալ բանաձևը (ResDH (2005)), որում նկատել է, որ.

... չնայած ձեռնարկված ջանքերին, բազմաթիվ հանգամանքներ կան, որոնք ցույց են տալիս, որ այս խնդրի լուծումը մոտ ապագայում դեռևս չի գտնվելու: Սա, մասնավորապես, պարզ է ինչպես վիճակագրական տվյալներից, այնպես էլ ազգային դատարաններում և Եվրոպական դատարանում գտնվող նոր գործերից, կառավարության կողմից կոմիտեին ներկայացված տարեկան զեկույցներում ամփոփված տեղեկություններից և վճռաբեկ դատարանին կից գլխավոր դատախազի զեկույցներից...

Շեշտելով այն կարևորությունը, որը կոնվենցիան վերագրում է ժողովրդավարական հասարակությունում արդարադատության արդար իրականացմանը, հիշելով, որ չափից ավելի երկար դատավարությունների շարունակվող գործելակերպը և քանակը իրական վտանգ են Իտալիայում օրենքի գերակայության համար, ... հանձնաժողովը ՊԱՀԱՆՋՈՒՄ է, որ Իտալիայի կառավարությունն ամրապնդի իր քաղաքական հանձնառությունը և ընդունի, որ կոնվենցիայի շրջանակներում և դատարանի վճիռներով հաստատված Իտալիայի պարտավորությունը՝ իր իրավազորության ներքո գտնվող բոլոր անձանց համար ողջամիտ ժամկետում արդար դատաքննության իրավունքի իրականացման ապահովումը, ճանաչվի որպես գործնական գերակայություն...

Իտալիայի ձգձգվող դատավարություններին առնչվող խնդիրների շարունակական բնույթն արտացոլվել է մեծ պալատի *«Ռիկարդի Պիձատին ընդդեմ Իտալիայի» (Riccardi Pizzati v Italy)* գործի վերաբերյալ 2006 թ. մարտի 29-ի վճռում (մեծ պալատի «Պինտոյի ակտին» վերաբերող ինը համատեղ վճիռներից մեկը): Դատարանն առնչվել է 82 տարեկան տարեց դիմողի, որը ստիպված է եղել սպասել

քսանվեց տարի, մինչև առաջին ատյանի դատարանը որոշում կկայացներ նրա՝ հարևանի կողմից կեղտաջրերով աղտոտման մասին հայցի վերաբերյալ: 2001 թ. հոկտեմբերին նա դիմել է «Պինտոյի ակտի» շրջանակներում ոչ նյութական վնասի դիմաց 103.000 եվրոյի փոխհատուցում ստանալու պահանջով: 2002 թ. հունվարին վերաքննիչ դատարանը որոշել է, որ առաջին ատյանի դատավարությունը չափից ավելի երկար է եղել, որի դիմաց նրան վճարվել է 5000 եվրոյի փոխհատուցում: Փոխհատուցման գումարի չափի վերաբերյալ նա բողոքել է վճռաբեկ դատարան, սակայն վերջինս մերժել է բողոքը դրա վաղեմության ժամկետն անցած լինելու պատճառով (բողոքը ներկայացվել է 2002 թ. նոյեմբերին): Իշխանությունները նրան փոխհատուցում չեն վճարել մինչև 2003 թ. դեկտեմբերը: Մեծ պալատի առջև կառավարությունը վիճարկել է Իտալիայում դատավարությունների անողջամիտ հետաձգումների գործելակերպի գոյությունը՝ վկայակոչելով Իտալիայում արդեն գործողության մեջ դրված «Պինտոյի ակտը»: Մեծ պալատը միաձայն վճռել է, որ.

115.…Ինչպես և դիմողը, դատարանը նույնպես չի տեսնում, թե «Պինտոյի» ուղղիչ միջոցառումն ինչպես է ազգային մակարդակով լուծել չափից ավելի երկարատև դատավարության խնդիրը: Պարզ է, որ այն հնարավորություն է տվել դատարանին ջանքեր չթափել այդ խախտումները բացահայտելու համար: Դրա փոխարեն, սակայն, առաջադրանքը պարզապես փոխանցվել է այլ բողոքարկման դատարաններ, որոնք արդեն իսկ գերծանրաբեռնված են եղել ...

116. Դատարանը կրկին շեշտում է, որ կոնվենցիայի 6(1) հոդվածը պարտավորեցնում է պայմանավորվող պետություններին իրենց իրավական համակարգերն այնպես կազմակերպել, որ դատարանները հնարավորություն ունենան համապատասխանել այդ տարբեր պահանջներին: Դատարանը ցանկանում է վերահաստատել առանց ձգձգումների արդարադատության իրականացման կարևորությունը, քանի որ ձգձգումները կարող են վտանգել դրա արդյունավետությունը և արժանահավատությունը (տե՛ս *Բոտտացիի (Bottazzi)* գործը, պարբ. 22): Այս կապակցությամբ Իտալիայի դիրքորոշումը այնքան չի փոխվել, որ հարցականի տակ դնի այն եզրակացությունը, ըստ որի՝ խախտումների այս կուտակումը կոնվենցիային հակասող գործելակերպ է:

Ինչ վերաբերում է երկարատև դատավարությունների դիմաց նշանակվող փոխհատուցման վճարներին, մեծ պալատը վճռել է, որ.

88.…Դատարանը կարող է ընդունել, որ վճարում անելու համար իշխանություններից ժամանակ է պահանջվել: Այնուամենայնիվ, չափից ավելի երկարատև դատավարությունների հետևանքները շտկելու համար նախատեսված փոխհատուցման գումարի վճարման ժամկետն ընդհանուր առմամբ չպետք է անցնի վեց ամսից՝ սկսած այն օրից, երբ ընդունվել է փոխհատուցման նշանակման մասին վերջնական որոշումը:

Ընդհանուր առմամբ, մեծ պալատը եզրակացրել է, որ գանգատարկուի առաջին ատյանի դատավարությունը ողջամիտ ժամկետում չի իրականացվել, և 6(1) հոդվածի խախտումը խորացել է «Պինտոյի ակտի» հիման վրա նշանակված (ոչ համապատասխան) փոխհատուցման գումարի վճարումն ուշացնելու պատճառով: Քանի որ «Պինտոյի ակտի» շրջանակներում փոխհատուցում ստանալու նպատակով դատարանին ներկայացվել են հարյուրավոր գործեր, մեծ պալատն առաջարկել է Իտալիային «ձեռնարկել բոլոր միջոցները, որոնք պահանջվում են երաշխավորելու համար, որ ազգային որոշումները ոչ միայն համապատասխանում են դատարանի նախադեպային իրավունքին, այլև կատարվում են գրանցամատյանում մուտքագրվելուց հետո վեց ամսվա ընթացքում»:

Հետևաբար, մեծ պալատը որոշել է, որ Իտալիայի կիրառած ուղղիչ միջոցը, որը նախատեսված է եղել չափից ավելի երկարատև դատավարությունների պատճառով տուժած անձանց կրած վնասը փոխհատուցելու համար, լուրջ թերություններ է ունեցել: Դիմողի կրած ոչ նյութական վնասի հաշվարկները, ըստ դատարանի, ներկայացված են ստորև՝ 928-րդ էջում:

Անկախ և անաչառ տրիբունալ

«Մակգոնելն ընդդեմ ՄԹ-ի» *(McGonnell v UK* (2000) The Times), 22 փետրվարի
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

1982 թ. դիմողը գնել է Գերնսիում գտնվող Կալեի խաղողի այգին: Մի քանի տարի անց նա սկսել է ապրել այդ տարածքում գտնվող ձևափոխված փաթեթավորման պահեստում: 1988 թ. նա փաստաբանի միջոցով շինարարական աշխատանքներ կատարելու վերաբերյալ հարցում է ներկայացրել շինարարական նախագծերի տեսչությանը, որն այդ ժամանակ քննարկում էր թիվ 6 մանրամասն գլխավոր հատակագծի նախագիծը: Տեսուչը մերժել է դիմողի՝ հողամասում շինարարական աշխատանքների կատարմանը վերաբերող փաստարկները: 1990 թ. Գերնսիի խորհրդարանը՝ Նահանգները, կառավարչի տեղակալ պարոն Գրեհեմ Դորիի գլխավորությամբ (կառավարիչը հանդիսանում է Նահանգների նախագահը, կղզու թագավորական դատարանի նախագահը և Գերնսիի կառավարության կազմում բարձր պաշտոն զբաղեցնող անձնավորություն), ընդունել է ՄԳՀ 6-ը և շարունակել դասակարգել դիմողի հողը՝ որպես գյուղատնտեսական նշանակության հող: 1995 թ. դիմողը դատական վարույթ է սկսել, որպեսզի վիճարկի շինարարական աշխատանքների իրականացումն արգելող իշխանությունների որոշումը: Նրա բողոքը լսվել է թագավորական դատարանում, որը բաղկացած է եղել նախագահից (նոր կառավարչից՝ սըր Գրեհեմ Դորիից) և քաղաքապետարանի յոթ ավագ անդամներից, որոնք համապատասխան մասնագիտացում չեն ունեցել: Նրա բողոքը միաձայն մերժվել է: Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ կառավարչի մասնակցության պատճառով իր բողոքի քննությունը տեղի չի ունեցել անկախ և անաչառ տրիբունալում: Քսանհինգ կողմ և հինգ դեմ ձայներով՝ հանձնաժողովը որոշել է, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում:

46. Դիմողն ուշադրություն է հրավիրել կառավարչի ոչ դատական բնույթի գործառույթների վրա՝ վիճարկելով, որ դրանք այնպիսի սերտ առնչություններ են առաջացրել կառավարչի դատական պաշտոնի և օրենսդիր ու գործադիր գործառույթների միջև, որ նա այլևս 6-րդ հոդվածով պահանջվող անկախությունը և անաչառությունը չի ունեցել...

48. Դատարանը հիշում է, որ *«Ֆինդլին ընդդեմ ՄԹ-ի» (Findlay v UK)* վճռում (1997 թ. փետրվարի 25-ի վճիռ, Զեկույցներ 1997-I, էջ 198, պարբ. 73) որոշել է, որ.

> Որպեսզի որոշվի, թե արդյոք տրիբունալը կարո՞ղ է համարվել «անկախ» տրիբունալ, ուշադրություն պետք է դարձվի, ի թիվս այլոց, նրա անդամների նշանակման ձևի և պաշտոնավարման ժամկետի, արտաքին ճնշումից պաշտպանող երաշխիքների առկայության և այն հարցի վրա, թե արդյոք ունի՞ այդ մարմինն անկախ մարմնի ձև...
>
> Ինչ վերաբերում է «անաչառության» հարցին, այս պահանջը երկու կողմ ունի: Նախ՝ տրիբունալը պետք է զերծ լինի անձնական նախապաշարումից կամ կողմնապահությունից: Երկրորդ՝ այն պետք է անաչառ լինի նաև օբյեկտիվ տեսանկյունից. այսինքն՝ այս կապակցությամբ առաջացող որևէ օրինական կասկած բացառելու նպատակով պետք է ապահովի բավարար երաշխիքներ... Անկախության և անկողմնակալության հայեցակարգերը սերտ առնչության մեջ են...

49. Տվյալ դեպքում նույնպես անկախության և օբյեկտիվ անկողմնակալության հայեցակարգերը սերտորեն կապված են, և դատարանը դիտարկելու է դրանք համատեղ:

50. Դատարանը նախ նկատում է, որ սույն գործում որևէ ցուցում չկա առ այն, որ 1995 թ. հունիսին, երբ կառավարիչը քննության է առել դիմողի՝ շինարարական հատակագծին վերաբերող բողոքը, եղել է նախապաշարված կամ կողմնապահ: Չեն եղել հայտարարություններ, համաձայն որոնց՝ [այն ժամանակ] կառավարչի տեղակալի պաշտոնում հանդես եկող կառավարչի մասնակցությունը ՄԳՀ6-ի ընդունման գործընթացին առաջացնում է նրա կողմնապահությանը վերաբերող հարցեր: Դիմողի կարծիքով՝ կառավարչի զբաղեցրած բազմաթիվ պաշտոնների պատճառով հնարավոր չէ համոզված լինել՝ իրականում նա դրսևորե՞լ է կողմնապահություն կամ նախապաշարվածություն, թե՞ ոչ:

51. Դատարանը կարող է համաձայնել կառավարության հետ, որ ո՛չ 6-րդ հոդվածը, ո՛չ կոնվենցիայի որևէ այլ դրույթ՝ որպես այդպիսին, պետություններից չեն պահանջում համապատասխանել տեսական սահմանադրական հայեցակարգերին: Խնդիրը միշտ այն է, թե արդյոք տվյալ դեպքում կոնվենցիայի պահանջները բավարարվա՞ծ են: Տվյալ դեպքում, հետևաբար, Գերնսիի իրադրության նկատմամբ չի պահանջվում կիրառել սահմանադրական իրավունքի ինչ-որ առանձնահատուկ սկզբունք: Դատարանը պետք է միայն պատասխանի այն հարցին, թե արդյոք կառավարիչն ունեցե՞լ է «անկախության» պահանջվող ձևը կամ պահանջվող «օբյեկտիվ» անկողմնապահությունը:

52. Այս կապակցությամբ դատարանը նկատում է, որ կառավարչի գործառույթները չեն սահմանափակվում դատական գործերով, այլ նա նաև ակտիվորեն ներգրավված է կղզու ոչ դատավարական գործառույթների իրականացման մեջ: Դատարանի համար ընդունելի չէ կառավարության այն վերլուծությունը, համաձայն որի՝ կառավարիչը դատական պաշտոնից դուրս հանդես է գալիս որպես զուտ պաշտոն զբաղեցնող, ոչ թե գործառույթներ իրականացնող անձնավորություն. նույնիսկ զուտ արարողակարգային բնույթ ունեցող սահմանադրական պաշտոնը պետք է դասակարգվի որպես «գործառույթ»: Դատարանի խնդիրն է որոշել՝ դատարանից դուրս կառավարչի զբաղեցրած պաշտոնների գործառույթները համատեղելի՞ են 6-րդ հոդվածի անկախության և անաչառության պահանջների հետ, թե՞ ոչ:

53. Դատարանը նկատում է, որ տվյալ դեպքում կառավարիչը երկու անգամ անձամբ ներգրավված է եղել դիմողի բողոքի բուն թեման հանդիսացող շինարարական նախագծման խնդիրների մեջ: Առաջին անգամ դա եղել է 1990 թ., երբ նա ՄԳՀ6-ի ընդունման ժամանակ որպես կառավարչի տեղակալ նախագահել է խորհրդարանում: Երկրորդ անգամ դա եղել է 1995 թ. հունիսի 6-ին, երբ նախագահել է թագավորական դատարանում, որը որոշում է կայացրել շինարարական հատակագծի բողոքի վերաբերյալ:

55. …Ինչպես դատարանը նշել է վերը, կառավարչի՝ սահմանադրությամբ նախատեսված ոչ դատավարական գործառույթները չեն կարող համարվել զուտ արարողակարգային բնույթի գործառույթներ: Ինչ վերաբերում է, մասնավորապես, այն հանգամանքին, որ նա 1990 թ., լինելով կառավարչի տեղակալ, նախագահել է խորհրդարանում, ապա դատարանը կարծում է, որ օրենսդրության կամ գործադիր կանոնակարգերի ընդունման մեջ անձի որևէ ուղղակի մասնակցություն կարող է բավարար լինել, որպեսզի կասկածի տակ դնի այս անձի՝ որպես դատական պաշտոնյայի անկողմնապահությունը, եթե նա այնուհետև հրավիրվել է, որպեսզի որոշում կայացնի, թե պատճառներ կա՞ն օրենսդրության կամ կանոնակարգերի այս կամ այն ձևակերպումներից շեղում անելու համար...

57. Այսպիսով, դատարանը կարծում է՝ լոկ այն փաստը, որ 1990 թ. ՄՀԳ6-ի ընդունման ժամանակ կառավարչի տեղակալը նախագահել է խորհրդարանում, արդեն բավարար է, որ կասկածի տակ դնի նրա անկողմնապահությունն այն ժամանակ, երբ նա, որպես գործը լսող միանձնյա դատավոր, որոշում է կայացրել դիմողի՝ շինարարական հատակագծի բողոքի վերաբերյալ: Դիմողը, հետևաբար, օրինական հիմքեր է ունեցել կասկածելու, որ կառավարիչը կարող է ՄՀԳ6-ի ընդունմանն իր մասնակցության ազդեցության տակ լինել: Այդ կասկածն ինքնին, որքան էլ թույլ լինի դրա արդարացումը, բավարար է, որպեսզի կասկածի տակ դնի թագավորական դատարանի անաչառությունը: Հետևաբար, դատարանը չի համարում, որ գանգատի այլ կողմերն ուսումնասիրելու անհրաժեշտություն կա: Սրանից հետևում է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Կոստան և դատավորներ Կուրիսը, Թուլքենսը, Ֆուրմանը, Յունգվիրթը, Գրիվը և Լոզը, որոնք միաձայն որոշում են ընդունել:

2 Նախքան 1998 թ. «Մարդու իրավունքների մասին» օրենքի լիարժեք կիրառումը լորդ կանցլեր Իրվին Լեյրգցին հայտարարել է, որ այլևս չի մասնակցելու Լորդերի պալատի դատական կոմիտեի նիստերին, երբ այդ կոմիտեն քննության է առնում օրենսդրությանը (որի ընդունմանը նա անմիջականորեն մասնակցել է) վերաբերող գործեր կամ այնպիսի գործեր, որոնք ուղղակիորեն առնչվում են կառավարությանը (HL Deb, hտ. 610, սյուն. WA33: 23 փետրվարի 2000): 2005 թ. «Սահմանադրական բարեփոխումների մասին» օրենքը նախատեսել է նաև, որ Միացյալ Թագավորությունում ստեղծվելու է գերագույն դատարան, որը փոխարինելու է Լորդերի պալատի դատական կոմիտեին: Լորդ կանցլերը, որի համար պարտադիր չէ արդեն իրավաբանի որակավորում ունենալ, նոր գերագույն դատարանի անդամ չի լինելու: Բացի այդ, լորդ կանցլերը («Գործառույթների փոխանց-

ման և լրացուցիչ դրույթներ»), 2006 թ. թիվ 2 հրամանագրով (2006 SI 1016/2006) չեղյալ է հայտարարել լորդ կանցլերի կողմից զբաղեցվող բողոքարկումները քննող լորդի պաշտոնը:

3 *Մակգոնելի (McGonnell)* գործը վկայակոչվել է *«Պաբլա Կյուն ընդդեմ Ֆինլանդիայի» (Pabla Ky v Finland)* գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2004 թ. հունիսի 22-ին: Վերաքննիչ դատարանի հատուկ բնակարանային դատարանի բաժանմունքում դիմող ընկերությունը, առանց հաջողության հասնելու, բողոք է ներկայացրել իր կողմից վարձակալած տարածքի սեփականատիրոջ դեմ: Դատարանի կազմում եղել են երկու փորձագետ և երեք պրոֆեսիոնալ դատավոր: Դիմող ընկերությունը, այնուհետև, վիճարկել է վերաքննիչ դատարանի փորձագետ անդամներից մեկի անկողմնակալությունը, քանի որ վճռի կայացման ժամանակ վերջինս եղել է Ֆինլանդիայի խորհրդարանի անդամ: Ստրասբուրգի դատարանը, վեց կողմ և մեկ դեմ ձայներով, վճռել է, որ.

29. Այս գործը նաև հարցեր է առաջացնում դատարանում օրենսդիր մարմնի անդամի ունեցած դերի առնչությամբ: Թեպետ կառավարության քաղաքական մարմինների և դատարանի միջև իշխանության բաշխման հայեցակարգը դատարանի նախադեպային իրավունքում հետզհետե ավելի մեծ նշանակություն է ստացել (տե՛ս *«Ստեֆորդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Stafford v the United Kingdom* [GC], թիվ 46295/99, պարբ. 78, ECHR 2002-IV)), ո՛չ 6-րդ հոդվածը, ո՛չ էլ կոնվենցիայի որևէ այլ դրույթ չեն պահանջում պետություններից, որ բավարարեն իշխանությունների տարբեր ճյուղերի փոխազդեցության թույլատրելի սահմաններին վերաբերող տեսական սահմանադրական հայեցակարգերը: Հարցը միշտ այն է, թե տվյալ դեպքում կոնվենցիայի պահանջները բավարարվա՞ծ են, թե՞ ոչ: Ինչպես և դատարանի կողմից քննության առնված մյուս գործերի, այնպես էլ սույն գործի դեպքում սահմանադրական իրավունքի որևէ առանձնահատուկ սկզբունքի կիրառում չի պահանջվում: Դատարանը կանգնած է սոսկ այն հարցի առջև, թե արդյոք այս պարագայում վերաքննիչ դատարանն ունեցե՞լ է անկախության պահանջվող «ձևը» կամ պահանջվող «օբյեկտիվ» անկողմնապահությունը (տե՛ս *«Մակգոնելն ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործը *(McGonnell v the United Kingdom*, թիվ 28488/95, ECHR 2000-II, պարբ. 51))...

31. Նախ՝ դատարանը նկատում է, որ չկա որևէ ցուցում, որ վերաքննիչ դատարանում գործի քննությանը մասնակցելու ժամանակ խորհրդարանի անդամը փաստացի կամ սուբյեկտիվորեն կողմնապահ վերաբերմունք է դրսևորել դիմողի նկատմամբ: Միակ հարցն այն է, թե արդյոք օրենսդիր մարմնի անդամ լինելու պատճառով նրա մասնակցությունը օրինական կասկած առաջացնո՞ւմ է դիմողի բողոքի վերաբերյալ որոշում կայացնող դատարանի օբյեկտիվ կամ կառուցվածքային անկողմնապահության առնչությամբ:

32. Դատարանի որոշման կայացմանը մասնակցող փորձագետ ոչ իրավաբան անդամների առումով առարկություններ, որպես այդպիսիք, չկան: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ազգային օրենսդրությունները նախատեսում են բազմաթիվ տրիբունալներ, որտեղ պրոֆեսիոնալ դատավորները նիստերը վարում են տվյալ ոլորտի մասնագետների հետ, որոնց գիտելիքը ցանկալի է և նույնիսկ էական վեճերի հանգուցալուծման համար (տե՛ս, օրինակ՝ *«Էթլն ընդդեմ Ավստրիայի» (Ettl v Austria)*, 1994 թ. ապրիլի 23-ի վճիռը, շարք A, թիվ 117, պարբ, 38–40, *«Դեբլեն ընդդեմ Բելգիայի» (Debled v Belgium)*, 1994 թ. սեպտեմբերի 22-ի վճիռ, շարք A, թիվ 292-B, պարբ. 36): Դատարանը նշում է, որ խորհրդարանի անդամը՝ որպես վարձակալության հարցերով փորձագետ, մասնակցել է վերաքննիչ դատարանի դատավարություններին՝ սկսած 1974 թվականից և, կառավարության կարծիքով, կուտակել է զգալի փորձ, որն արժեքավոր է այս կարգի գործերի վերաբերյալ որոշում կայացնելու համար: Այս առումով դատարանը նկատում է, որ նման գործերում երկու փորձագետ անդամները նիստերին մասնակցել են վերաքննիչ դատարանում մեծամասնություն կազմող երեք դատավորի հետ:

33. Թեպետ դիմողը շեշտը դնում է խորհրդարանի անդամի քաղաքական պատկանելության վրա, դատարանը չի կարծում, որ սույն գործում ցուցումներ կան այն մասին, որ խորհրդարանականի կուսակցական պատկանելությունը որևէ կապ է ունեցել գործի կողմերից որևէ մեկի կամ վերաքննիչ դատարանի վարույթում գտնվող գործի էության հետ (mutatis mutandis *«Հոլմն ընդդեմ Շվեդիայի» (Holm v Sweden)*, 1995 թ. նոյեմբերի 25-ի վճիռ, շարք A, թիվ 279-A, պարբ. 32-3): Ոչ էլ որևէ ցուցում կա առ այն, որ խորհրդարանականը որևէ դեր է խաղացել տվյալ գործին վերաբերող օրենսդրության ընդունման մեջ: «Առևտրային վարձակալության մասին» օրենքի [նախագիծը] կառավարության կողմից խորհրդարանին է ներկայացվել 1994 թ. նոյեմբերի 21-ին և ընդունվել 1995 թ. փետրվարի 17-ին՝ նախքան 1995 թ. մարտի 19-ին խորհրդարանի անդամի երկրորդ անգամ վերընտրվելը: Հետևաբար, նույնիսկ ենթադրելով, որ ընդհանուր օրենսդրական միջոցառմանը խորհրդարանականի մասնակցությունը կարող էր ստվեր գցել նրա հետագա դատական գործառույթների վրա, այս դեպքում հնարավոր չէ պնդել, որ որպես խորհրդարանի անդամ՝ նա [սրանից բացի] որևէ այլ կերպ մասնակցել է դիմողի գործին:

34. Հետևաբար, դատարանը եզրակացնում է, որ ի տարբերություն *«Պրոկոլան ընդդեմ Լյուքսեմբուրգի» (Procola v Luxembourg)* (1985 թ. սեպտեմբերի 28-ի վճիռ, շարք A, թիվ 326) և *«Մակգոնելն ընդդեմ Միացյալ Թագավորության» (McGonnell v the United Kingdom)* վերը մեջբերված գործերում քննարկված իրավիճակի, խորհրդարանի անդամը նախկին օրենսդրական, գործադիր կամ խորհրդատվական գործառույթ չի իրականացրել, որը կապ ունենար վերաքննիչ դատարանում դիմողի բողոքի բուն թեմայի կամ իրավական հարցի հետ: Ուստիև դատական վարույթի մասին չի կարելի ասել, որ այս իմաստով վերաբերել է «նույն գործին» կամ «նույն որոշմանը», որոնք, այս երկու վճիռների համաձայն, առաջացրել են 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: Դատարանի համար համոզիչ չէ, որ դատարանի անկախությունը և անկողմնակալությունը կասկածի տակ դնելու համար բավարար է միայն այն փաստը, որ այն ժամանակ, երբ խորհրդարանի անդամը մասնակցել է բողոքի վերանայման դատական նիստին, եղել է օրենսդիր մարմնի ներկայացուցիչ: Իշխանությունների բաժանման տեսությունը, որի վրա է հիմնվում դիմողը, չի կարող որոշիչ նշանակություն ունենալ վերացական համատեքստում:

35. Այդ հանգամանքներում դատարանն այն կարծիքին է, որ դիմողի՝ փորձագետ անդամի մասնակցության պատճառով վերաքննիչ դատարանի անկախության և անկողմնապահության նկատմամբ ունեցած մտավախությունը չի կարող օբյեկտիվորեն արդարացված լինել: Հետևաբար, կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

Չհամընկնող կարծիք հայտնած դատավոր Բոռեգո Բոռեգոն նշել է.

Այստեղ ես մեջբերում եմ կատարում Մոնտեսքյոյից, ով հանդիսանում է իշխանության ճյուղերի տարանջատման տեսության հայրը.

> «Չկա ազատություն, եթե դատական իշխանությունն անջատ չէ օրենսդիր և գործադիր իշխանություններից: Եթե այն միացվի օրենսդիր իշխանությանը, մարդկանց կյանքի և ազատության նկատմամբ իշխանությունը կլինի կամայական, քանի որ դատավորը օրենսդիր կլինի: Եթե այն միացվի գործադիր իշխանությանը, ապա դատավորը կեղեքիչի ուժ կունենա»:

Ես կարծում եմ, որ սա առաջին դեպքն է, երբ դատարանի քննության առած բողոքը վերաբերել է օրենսդրական և դատավարական գործառույթների համաժամանակյա կատարմանը: Խոր հավատով, սակայն համեստաբար, ինչպես և վայել է փոքրամասնության ներկայացուցչին, կարծում եմ, որ սույն գործում օրենսդիր մարմնից դատարանների անկախ լինելու մեր նախադեպային իրավունքով ամրագրված պահանջը չի կատարվել:

Արդյոք համամի՞տ եք մեծամասնության պրագմատիկ մոտեցմանը:

4 Ռազմական դատարանի «նիստեր հրավիրող պաշտոնյաների» հակասող գործառույթներն ընկած են եղել *«Ֆինդլին ընդդեմ ՄԹ-ի» (Findlay v UK* (1997) 24 EHRR 221, 1997-I) գործի հիմքում: Դիմողը եղել է նախկին կրտսեր լեյտենանտ, որը 1990 թ., մեծ քանակությամբ ալկոհոլ օգտագործելուց հետո նշան է բռնել իր զորամասի անդամների վրա և սպառնացել սպանել նրանց մի մասին և ինքն իրեն: Հետագա հոգեբուժական զննության փաստերից պարզ է դարձել, որ նա տառապել է հետտրավմատիկ խանգարումից, որի պատճառը եղել է Ֆոլկլենդյան պատերազմին նրա մասնակցությունը: Լոնդոնի շրջանի ընդհանուր հրամանատարական պաշտոնյան՝ գեներալ-մայորը, ստանձնել է դատական նիստ գումարող պաշտոնյայի պարտականությունները՝ ութ տարբեր մեղադրական հոդվածների հիմքով կալանքի տակ վերցնելով դիմողին, նշանակելով ռազմական դատարանի անդամներին, մեղադրող և պաշտպանության կողմերի ներկայացուցիչներին և ավելի ուշ՝ սահմանելով նրա պատիժը: Դիմողն ընդունել է յոթ հոդվածներով իրեն առաջադրված մեղադրանքները (ներառյալ սպանության սպառնալիք գործելու մեղադրանքը) և ռազմական դատարանի կողմից դատապարտվել, ի թիվս այլոց, երկու տարվա ազատազրկման: Գեներալ-մայորը հաստատել է այս պատիժը: Դիմողը բողոքել է, որ այն ազդեցության պատճառով, որ դատական նիստերը գումարող պաշտոնատար անձն ունեցել է ռազմական դատարանի վրա, իր նկատմամբ արդար, անկախ և անաչառ տրիբունալում դատավարություն տեղի չի ունեցել: Հանձնաժողովը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում: Դատարանը նույնպես բավարարել է բողոքը, քանի որ.

76. Դատարանի անկախության և անաչառության նկատմամբ վստահությունը պահպանելու առումով կարևոր նշանակություն է տրվում ձևական կողմին: Քանի որ պարոն *Ֆինդլիի* գործով որոշում կայացրած ռազմական դատարանի բոլոր անդամներն իրենց կոչումով եղել են ավելի ցածր, քան դատական նիստերը գումարող պաշտոնյան, և ենթակա են

եղել նրա հրամանատարությանը, ապա տրիբունալի անկախության և անաչառության վերաբերյալ պարոն Ֆինղլիի կասկածները կարող են օբյեկտիվորեն արդարացված լինել...

77. Բացի այդ, դատարանը կարևոր է համարում, որ դատական նիստերը գումարող պաշտոնյան հանդես է եկել նաև որպես [վճիռը] «հաստատող պաշտոնյա»: Այսպիսով, ռազմական դատարանի որոշումն առանց նրա վավերացման չէր կարող ուժի մեջ մտնել, և նա ունեցել է իր հայեցողությամբ պատիժը փոփոխելու լիազորություն... Սա հակասում է այն լավ կայացած սկզբունքին, համաձայն որի՝ «տրիբունալի» գաղափարից անկապտելի է այն, որ պարտադիր կատարման ենթակա որոշում ընդունելու լիազորությունը չի կարող փոփոխվել ոչ դատական մարմնի կողմից և կարող է նաև դիտարկվել որպես 6-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվող «անկախության» բաղկացուցիչ մաս...

80. Այս հիմքերով և, մասնավորապես, ռազմական դատարանի կազմակերպման հարցում դատական նիստերը գումարող պաշտոնյայի ունեցած կենտրոնական դերի պարագայում դատարանը կարծում է, որ պրն Ֆինղլիի՝ իր գործով զբաղվող տրիբունալի անկախության և անաչառության վերաբերյալ մտավախությունն օբյեկտիվորեն արդարացված է եղել...

«Զինված ուժերի մասին» 1996 թ. օրենքը վերացրել է դատական նիստեր գումարող զինվորական սպայի դերը՝ նրա գործառույթները բաշխելով ռազմական համակարգում գործող առանձին մարմինների միջև («բարձր ատյանը» որոշում է՝ գործը պե՞տք է փոխանցվի Ծառայության իրավաբանական ճյուղերի մեջ մտնող մեղադրող մարմնին, իսկ ռազմական դատարանի առանձին նիստերի կազմակերպման համար պատասխանատու են դատական վարչարարության պաշտոնյաները, որոնք կախված չեն բարձր ատյանից և մեղադրող մարմնից):

4 Հետագա գործերի քննության ժամանակ բարեփոխված ռազմական դատարանների համակարգերն արժանացել են Ստրասբուրգի դատարանի խառը վերաբերմունքին: *«Մորիսն ընդդեմ ՄԹ-ի» (Morris v UK)* գործի վերաբերյալ 2002 թ. փետրվարի 26-ի վճռով պալատը միաձայն եզրակացրել է, որ զինված ուժերի համակարգում տեղի է ունեցել 6(1) հոդվածի կառուցվածքային խախտում, քանի որ դիմողի ռազմական դատավարությանը լրացուցիչ անդամի կարգավիճակով մասնակցած երկու լրացուցիչ սպաների անկախությունն ապահովող բավարար երաշխիքներ գոյություն չեն ունեցել: «72. Մասնավորապես, նշվում է, որ այդ երկու սպաները չեն ունեցել իրավաբանական կրթություն, ենթակա են եղել զինվորական կարգապահությանը և հաշվետվողականությանը, և գոյություն չի ունեցել օրենքով սահմանված կամ որևէ այլ արգելք, որը նրանց հեռու կպահեր գործի դատավարության ընթացքում զինված ուժերի արտաքին ազդեցությունից»: Այնուամենայնիվ, հաջորդ տարի *«Քուփերն ընդդեմ ՄԹ-ի» (Cooper v UK)* գործի վերաբերյալ 2003 թ. դեկտեմբերի 16-ի վճռով մեծ պալատը միաձայն որոշել է, որ թագավորական օդուժում տեղի ունեցած ռազմական դատավարության ընթացքում 6(1) հոդվածի խախտում տեղի չի ունեցել: Մեծ պալատը հաշվի է առել կառավարության ներկայացրած նոր բացատրությունները և եզրակացրել, որ այն պետք է մի կողմ թողնի *Մորիսի (Morris)* գործով կատարված եզրակացությունները: Ինչ վերաբերում է լրացուցիչ սպաների անկախությանը, մեծ պալատը որոշել է, որ նախքան դատավարությունը սկսելը նրանց տրամադրվել են մանրամասն գրավոր ցուցումներ նրանց դերակատարության վերաբերյալ, և դատավարության ընթացքում իրենց պահվածքի համար նրանք չէին կարող ենթակա լինել կարգապահական հաշվետվության: «126. Այդ հիմքերով դատարանը համարում է, որ դիմողի նկատմամբ իրականացված ռազմական դատավարության ընթացքում եղել են շարքային անդամների անկախությունն ապահովող բավարար երաշխիքներ»: Սակայն միևնույն մեծ պալատը *«Գրիվսն ընդդեմ ՄԹ-ի» (Grieves v UK)* գործում (2003 թ. դեկտեմբերի 16-ի վճիռ) միաձայն որոշել է, որ թագավորական նավատորմի ռազմական տրիբունալը թույլ է տվել 6(1) հոդվածի խախտում: Դիմողը, որը եղել է թագավորական նավատորմի նախկին անդամ, ռազմական դատարանի կողմից դատապարտվել է երեք տարվա ազատազրկման և ազատվել ծառայությունից դիտավորյալ մարմնական վնասվածք հասցնելու համար:

74. Տվյալ դիմողը բարձրացրել է նույն բողոքը, ինչ բարձրացվել է *Քուփերի* գործում, սակայն այս դեպքում բողոքը վերաբերում է ծովային նավատորմի ռազմական դատարանին: Ծովային նավատորմի ռազմական դատարանները մի քանի կարևոր առումներով տարբերվում են օդուժի համակարգի դատարաններից, որոնք քննության են առնվել *Քուփերի*

(Cooper) գործում: Դատարանը դիտարկել է, թե արդյոք դրանք այնպիսի տարբերություններ են, որոնք տվյալ դեպքում կարող են հանգեցնել *Քուփերի* վճռից տարբերվող եզրակացության:
...

80. Չորրորդ՝ ռազմական դատարանի մշտական նախագահի (ՌԴՄՆ) պաշտոն նավատորմի համակարգում գոյություն չունի: Ռազմածովային դատարանի նախագահ նշանակվում է ամեն անգամ, երբ կազմավորում է ռազմական տրիբունալ: Դիմողը նշել է, որ արդյունքում ողջ ռազմական տրիբունալը կազմավորվել է ըստ անհրաժեշտության՝ հատուկ (ad hoc) նպատակով: Կառավարությունը բացատրել է, թե քանի որ ռազմածովային տրիբունալները շատ ավելի սակավաթիվ են, անհրաժեշտություն չի եղել ունենալու հատուկ սպաներ, որոնք կզբաղվեին զուտ ՌԴՄՆ-ի գործառույթով՝ գտնելով, որ ռազմածովային տրիբունալը համապատասխանել է 6-րդ հոդվածի 1-ին կետին նույնիսկ առանց ՌԴՄՆ-ի:

81. Դատարանը կարծում է, որ մշտական ՌԴՄՆ-ի բացակայությունը, որը պաշտոնեական առաջխաղացման հույս ու պաշտոնից հեռացվելու վախ չունի և պարտավոր չէ իր կայացրած դատական որոշումների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնել (*Քուփերի (Cooper)*, պարբ. 118), զրկում է ռազմածովային տրիբունալներն այն բանից, ինչն օդուժի համատեքստում համարվում է հատուկ նպատակով կազմավորված (ad hoc) տրիբունալի անկախության կարևոր գրավականը:

82. Հինգերորդ և ամենակարևորը՝ դատավոր-փաստաբանը [ռազմական դատարանի իրավաբանական փորձագետը] ռազմածովային նավատորմի սպա է, որը երբ չի մասնակցում ռազմական տրիբունալի նիստերին, կատարում է ծովային նավատորմին առնչվող սովորական պարտականություններ: Սրան հակառակ՝ օդուժի տրիբունալում դատավոր-փաստաբանը քաղաքացիական անձ է, լրիվ դրույքով աշխատում է գլխավոր դատավոր-փաստաբանի աշխատակազմում, որը նույնպես հանդիսանում է քաղաքացիական անձ:

83. Դիմողը համարել է, որ այս տարբերակումն ինքնին բավարար է եզրակացնելու համար, որ ռազմածովային նավատորմի ռազմական տրիբունալներն անկախ չեն: Նա պնդել է, որ նավատորմի դատավոր-փաստաբանի (ՆԴՓ) կողմից ռազմական դատարանի դատավոր-փաստաբանի մասին արված մեկնաբանություններն անպայման հաշվի են առնվում պաշտոնի բարձրացման նպատակով այդ ծառայողի կատարողական ցուցանիշների ավելի լայն գնահատման ժամանակ: Անկախ այն հանգամանքից՝ այդ ժամանակ գոյություն ունեցել կամ գոյություն չի ունեցել կանոնակարգ, որը կնախատեսեր, որ ծառայության ներսում դատավոր-փաստաբանի կողմից դատական որոշումների կայացման վերաբերյալ հաշվետվություններ չեն կազմվում, նա պնդել է, որ, իր կարծիքով, անհավանական է, որ ծառայությունը իրավամբ կարող էր տարանջատել իր դատավարական և այլ ծառայողական գործառույթները...

84. Կառավարությունը պնդել է, որ ծառայության մեջ գտնվող դատավոր-փաստաբանը պակաս երաշխիք չէ, քան քաղաքացիական դատավորը, որը լսում է օդուժի ռազմական դատարաններին ներկայացրած գործերը, ի թիվս այլոց, հետևյալ պատճառներով. դատավոր-փաստաբանը նշանակվում է միայն քաղաքացիական դատավոր հանդիսացող ՆԴՓ-ի համաձայնությամբ: Նա կարող է հեռացվել ՆԴՓ-ի կողմից նույն հիմքերով, ինչ քաղաքացիական դատավորները: Որպես դատավոր-փաստաբան հանդես գալու համար նա լրացուցիչ վարձատրություն չի ստանում, ոչ էլ որպես դատավոր-փաստաբան նրա կատարողական ցուցանիշներն անդրադառնում են նրա աշխատավարձի կամ պաշտոնեական առաջխաղացման վրա: Դիմողի ռազմական դատավարության ընթացքում դատավոր-փաստաբանի կատարողական ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացվել (այս գործելակերպը ներկայումս ամփոփված է թիվ 3630 «Թագուհու կանոնակարգում»), ... նա դե ֆակտո պաշտոնավարման ապահովություն ունի, քանի որ նշանակված դատավոր-փաստաբանը մնում է այդ պաշտոնում անժամկետ: Դատավոր-փաստաբանը տալիս է հատուկ երդում: Նա նստում է ռազմական տրիբունալի անդամներից առանձին, և նրա միակ շփումը նրանց հետ, բացառությամբ պատժի վերաբերյալ խորհրդակցություններից, տեղի է ունենում բաց դատարանում...

85. Դատարանը նկատում է, որ ինչպես և օդուժում, նավատորմի դատավոր-փաստաբանը նույնպես առանցքային դեր է խաղում ռազմական տրիբունալում, սակայն, ի տարբերություն օդուժի համանման պաշտոն զբաղեցնող անձի, հանդիսանում է նավատորմում ծառայության մեջ գտնվող սպա, որը կարող է զբաղեցնել ինչպես իրավաբանի, այնպես էլ ոչ իրավաբանի պաշտոն և թեպետ նշանակվել է անժամկետ, ռազմական տրիբունալում լինում է միայն ժամանակ առ ժամանակ: Ինչ վերաբերում է կառավարության հիմնավորմանը, որ ներգրավված է եղել քաղաքացիական ՆԴՓ, դատարանը նկատում է, որ ՆԴՓ-ն որևէ ներդրում չունի նավատորմի ռազմական տրիբունալի վարույթի մեջ, և նրա սկզբունքային դերը վերանայող մարմնին այդ վարույթի մասին հաշվետվություն ներկայացնելն է: Այնուհետև դատավոր-փաստաբանի սկզբնական նշանակման համար պատասխանատու է ոչ թե ՆԴՓ-ն, այլ ՆԳԴՓ-ն [նավատորմի գլխավոր դատավոր-փաստաբանը] (նավատորմի սպա), եթե նույնիսկ այդ նշանակումն արվում է ՆԴՓ-ի համաձայնությամբ:

86. Բացի այդ, դատարանը որոշակի մտահոգությամբ նշում է համապատասխան ժամանակահատվածում հաշվետվություններ ներկայացնելու որոշակի գործելակերպի գոյությունը: ՆԴՓ-ն կարող էր ռազմական դատարանի դատավոր-փաստաբանի կատարողական ցուցանիշների վերաբերյալ մեկնաբանություններ ներկայացնել ՆԳԴՓ-ին:

Հնարավոր է, որ ՆԳԴՓ-ն որևէ ազդեցություն չի ունեցել պաշտոնեական առաջխաղացման վրա, սակայն ՆԳԴՓ-ն մնացել է որպես ծառայության մեջ գտնվող ավագ սպա, որի հիմնական գործառույթների մեջ մտել են իրավաբանական կրթություն ստացած սպաներին ծառայության իրավաբանական պաշտոններում նշանակելը, և նա այդ պարտավորությունների առումով հաշվետու է եղել ավագ ծովակալին, որն էլ իր հերթին պատասխանատու է եղել կաղրային քաղաքականության համար: Բացի այդ, համապատասխան ժամանակահատվածում դատավոր-փաստաբանի դատարանում ունեցած կատարողական ցուցանիշների մասին ՆԴՓ-ի հաշվետվությունը կարող էր հղվել դատավոր-փաստաբանի ծառայության զեկուցող սպային: Թեպետ տվյալ դեպքում նման բան կարող է և տեղի ունեցած չլինել, դիմողի ռազմական դատավարության ընթացքում դատավոր-փաստաբանն իր պարտավորությունները ստանձնել է այն ժամանակ, երբ այս դատավարությունում նրա կատարողական ցուցանիշները կարող էին սկզբունքորեն ծառայության գնահատող սպային ներկայացվող զեկույցի թեմա լինել ...

87. Այդ հիմքերով դատարանը համարում է, որ եթե նույնիսկ դիմողի ռազմական դատավարության իրականացման համար նշանակված նավատորմային դատավոր-փաստաբանը կարող է համարվել անկախ, չնայած նախորդ պարբերությունում ներկայացված զեկուցմանն առնչվող խնդիրներին, նավատորմի դատավոր-փաստաբանի դիրքը չի կարող համարվել որպես նավատորմային ռազմական դատարանում նրա անկախության հուսալի երաշխիք:

88. Բացի այդ, դատարանը համոզիչ չի համարում կառավարության բացատրությունները, թե ինչու պետք է նավատորմի ռազմական տրիբունալներում ծառայության մեջ գտնվող սպան ավելի նախընտրելի համարվի դատավոր-փաստաբանի պաշտոնի համար, երբ օդուժի ռազմական դատարաններում ԳԴՓ-ն [գլխավոր դատավոր-փաստաբանը] և դատավոր-փաստաբանները քաղաքացիական անձինք են:

Նախ՝ կառավարությունը վկայակոչել է նավատորմի ռազմական տրիբունալների փոքրաթիվությունը: Այնուամենայնիվ, դատարանը համարում է, որ սա նշանակում է միայն, որ ավելի քիչ նավատորմային դատավոր-փաստաբաններ պետք է պահանջվեին: Նրանք նաև վկայակոչել են, որ նավատորմի սպան թագավորական նավատորմի յուրահատուկ լեզվին, բարքերին և միջավայրին վերաբերող գիտելիքներ ունի: Այնուամենայնիվ, քանի որ դատավոր-փաստաբանի կարևոր գործառույթը ռազմական տրիբունալի օրինականությունն ու արդարությունը երաշխավորելն է և ուղղորդելը դատարանին օրենքի կետերի առնչությամբ, դժվար է հասկանալ, թե ինչու է պահանջվում նավատորմի կյանքի և լեզվի մանրամասն իմացությունը, մասնավորապես, այս դեպքին նման դեպքերում, երբ կատարված իրավախախտումը դիտավորյալ մարմնական վնասվածք հասցնելու շարքային հանցագործություն է: Ամեն դեպքում, դատարանի համար համոզիչ չէ, որ նավատորմի լեզվին կամ բարքերին հետևելու առումով քաղաքացիական դատավոր-փաստաբանն ավելի մեծ դժվարությունների կհանդիպեր, քան առաջին ատյանի դատարանի դատավորը, որն իր գործունեության ընթացքում առնչվում է բարդ մասնագիտական փաստերի:

Կառավարությունն այնուհետև հղում է կատարել նավատորմի ռազմական տրիբունալների «ճկունության» և «շարժողունակության» պահանջին, ինչը պայմանավորված է նավատորմի շարժական բնույթով: Հետևաբար, շատ ավելի գերադասելի է ունենալ նավատորմի դատավոր-փաստաբաններ, քանի որ նրանք «պատրաստի մուտք» կարող են ունել խնդրո առարկա տարածք և ավելի պատրաստ կլինեն ծովում աշխատելու դժվարություններին և վտանգներին: Այնուամենայնիվ, դատարանն այն կարծիքին չէ, որ սա կապ ունի բանավոր նիստի ժամանակ կառավարության տված բացատրության հետ, համաձայն որի՝ 1986 թ. ի վեր նավատորմի ռազմական տրիբունալները տեղի են ունեցել Պորթսմութում և Պլիմութում՝ ցամաքում գտնվող երկու դատավարական կենտրոններում՝ անկախ աշխարհի այն անկյունից, որտեղ տեղի է ունենում ենթադրվող հանցագործությունը:

89. Հետևաբար, դատավոր-փաստաբանի առանցքային պաշտոնում քաղաքացիական անձի բացակայությունը զրկում է նավատորմի ռազմական տրիբունալին անկախության ամենազգալի երաշխիքներից մեկից, որոնք առկա են այլ ծառայությունների ռազմական դատարաններում (այն դեպքում, երբ զինված ուժերի և օդուժի ռազմական տրիբունալների համակարգերը բոլոր համապատասխան նպատակների համար նույնն են. *Քուփերի (Cooper)* վճիռը, պարբ. 107), և դրա վերաբերյալ կառավարությունը որևէ համոզիչ բացատրություն չի ներկայացրել:

90. Եվ վերջապես, վեցերորդ՝ դատարանը կարծում է, որ նավատորմի ռազմական տրիբունալների անդամներին ուղղված ճեպազրույցի արձանագրությունները պարունակել են զգալիորեն ավելի քիչ մանրամասներ և եղել են շատ ավելի քիչ հստակ, քան CMAU (RAF) ճեպազրույցինը, որոնք մանրամասն քննության են առնվել վերը նշված Քուփերի գործում (տե՛ս վճռի պարբ. 45-62): Հետևաբար, դատարանը համարում է, որ դրսի անցանկալի ազդեցություններից ռազմական տրիբունալների շարքային անդամների անկախությունը երաշխավորելու առումով դրանք նվազ արդյունավետ են:

91. Հետևաբար, դատարանը որոշում է, որ վերոհիշյալ *Քուփերի* (Cooper) գործում նշված օդուժի ռազմական տրիբունալների և խնդրո առարկա նավատորմի ռազմական տրիբունալների միջև առկա տարբերություններն այս դեպքում եղել են այնպիսին, որ 1996 թ. օրենքով կազմավորված նավատորմի ռազմական տրիբունալի անկախության և անաչառության մասին դիմողի մտավախությունները կարող են համարվել օբյեկտիվորեն արդարացված: Ռազմական տրիբունալում նրա նկատմամբ տեղի ունեցած դատավարությունը, հետևաբար, եղել է անարդար (տե՛ս, օրինակ՝ *«Սմիթը և Ֆորդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Smith and Ford v the United Kingdom)* թիվ 37475/97 և 39036/97, պարբ. 25, 1999 թ.

սեպտեմբերի 29 և *«Մուրը և Գորդոնն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Moore and Gordon v the United Kingdom)* թիվ 36529/97 և 37393/97, պարբ. 24, 1999 թ. սեպտեմբերի 29):

Հետևաբար, տեղի է ունեցել կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

5 Առանձին դատավորի/տրիբունալի անկանխակալության գնահատման սուբյեկտիվ և օբյեկտիվ մոտեցումները բացատրվել են մայրցամաքային քրեական դատավարության համատեքստում՝ *«Պիերսաքն ընդդեմ Բելգիայի» (Piersack v Belgium*, A.53 (1982) 5 EHRR 169) գործում: Դիմողը ձերբակալվել է սպանության կասկածանքով: Նրա քրեական հետապնդումը կազմակերպել է Բրյուսելի պետական մեղադրողի գրասենյակի առանձին բաժանմունքը: Պարոն Վան դե Վալլեն եղել է այդ բաժանմունքի վարիչը: Այնուհետև, պարոն Վան դե Վալլեն նշանակում է ստացել Բրյուսելի վերաքննիչ դատարանում և հանդես եկել որպես նախագահող դատավոր դիմողի նկատմամբ ընթացած դատավարության ժամանակ: Յոթ կողմ և հինգ դեմ ձայներով՝ երդվյալ ատենակալները նրան մեղավոր են ճանաչել: Դատավոր Վան դե Վալլեն դիմողին դատապարտել է տասնութ տարվա տաժանակիր աշխատանքի: Հանձնաժողովը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել անկախ և անաչառ տրիբունալի երաշխիքի խախտում: Դատարանը միաձայն վճռել է, որ.

30. Թեև անաչառությունը սովորաբար ենթադրում է նախապաշարումների և կանխակալության բացակայություն, դրանց առկայությունը, հատկապես կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով, կարող է ստուգվել տարբեր եղանակներով: Սույն գործի համատեքստում տարբերակում կարող է մտցվել տվյալ դատավորի անձնական համոզմունքների պարզմանն ուղղված սուբյեկտիվ և օբյեկտիվ մոտեցումների միջև, որի նպատակն է պարզել, թե արդյոք օրինական կասկածները բացառելու նպատակով ապահովվե՞լ են բավարար երաշխիքներ:

(ա) Ինչ վերաբերում է առաջին մոտեցմանը, դատարանը նկատում է, որ դիմողը բարեհաճորեն է արտահայտվում պարոն Վան դե Վալլեի անձնական անկողմնակալության մասին: Այս առումով նա կասկածի որևէ հիմք չունի, և, իրավամբ, հակառակ ապացույցների բացակայության պայմաններում նախապատվությունը պետք է տրվի անձնական անկողմնակալության կանխավարկածին (տե՛ս *Լե Կոմպտի, Վան Լյովեի և Դե Մեյերի (Le Compte, Van Leuven and De Meyere)* 1981 թ. հունիսի 23-ի վճիռը, շարք A, թիվ 43, էջ 25, պարբ. 58):

Այնուամենայնիվ, անհնար է սահմանափակվել միայն զուտ սուբյեկտիվ ստուգմամբ: Այս ոլորտում նույնիսկ ձևական կողմը որոշակի կարևորություն ունի (տե՛ս *Դելկուրի (Delcourt)* 1970 թ. հունվարի 17-ի վճիռը, շարք A, թիվ 11, էջ 17, պարբ. 31): Ինչպես նկատել է Բելգիայի վճռաբեկ դատարանն իր 1979 թ. փետրվարի 21-ի վճռում, ... յուրաքանչյուր դատավոր, որի առնչությամբ օրինական կասկած կա, թե նա անաչառ չէ, պետք է ինքնաբացարկ հայտնի: Կշեռքի նժարին այս դեպքում դրված է այն վստահությունը, որ պետք է ներշնչեն դատարանները հանրությանը ժողովրդավարական հասարակությունում:

(բ) Հակառակ ծայրահեղություն է այն պնդումը, համաձայն որի՝ պետական մեղադրողի գրասենյակում նախկինում աշխատած դատական պաշտոնյաները չեն կարող զբաղեցնել դատավորի պաշտոնն այն գործերի դատաքննությունների ժամանակ, որոնց նախաքննությունը կատարվել է այդ բաժնի կողմից, եթե նույնիսկ նրանք անձամբ երբևէ այդ գործերի հետ որևէ կապ չեն ունեցել: Այսպիսի արմատական լուծումը, որը հիմնված է պետական մեղադրողի բաժնի միասնության և անբաժանելիության պաշտոնական և հստակ ըմբռնման վրա, սկզբունքորեն անհաղթահարելի պատնեշ կստեղծեր այդ բաժնի և դատավորների միջև: Որոշ պայմանավորվող պետություններում, որտեղ այդ պաշտոնյաների տեղափոխումը մի գրասենյակից մյուսը հաճախ է տեղի ունենում, դա կհանգեցներ ավելի բարձր դիրք ունեցող դատական համակարգի ձևավորմանը: Ամենից առավել, միայն այն փաստը, որ դատավորը նախկինում եղել է պետական մեղադրողի գրասենյակի անդամ, հիմք չէ նրա անաչառությունը կասկածի տակ դնելու համար: Այս առումով դատարանը համամիտ է կառավարության հետ...

31….Այնուամենայնիվ, նախկինում և մինչև 1977 թ. նոյեմբերը պրն Վան դե Վալլեն եղել է Բրյուսելի պետական մեղադրողի գրասենյակի բաժանմունքի վարիչը: Այս բաժանմունքը պատասխանատու է եղել պրն Պիերսաքի դեմ սկսված քրեական գործի վարման համար: Որպես սույն գործի մեջ ընդգրկված իր տեղակալների՝ տկն դել Կարրիլի և այնուհետև պրն Դե Նոնի գերատեսչական վերադաս, նա իրավունք է ունեցել վերանայելու դատարանների կողմից նրանց ներկայացրած նյութերը, նրանց հետ քննարկելու գործի նկատմամբ որդեգրած մոտեցումը և խորհուրդներ տալու նրանց օրենքի կետերի առնչությամբ... Բացի այդ, հանձնաժողովի և դատարանի ձեռք բերած տեղեկությունները ... միտված են հաստատելու, որ պարոն Վան դե Վալլեն իրականում որոշակի դերակատարություն է ունեցել դատավարությունում... Բավական է համարել, որ «տրիբունալի» անաչառությունը, որը պետք է որոշում կայացներ մեղադրանքի հատկանիշների (ֆրանսերեն տեքստում՝ bien-fonde) վերաբերյալ, կասկածի տեղիք է տվել:

32. Հետևաբար, այս առումով դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում...

Կոնվենցիայի շրջանակներում ազգային դատախազական ծառայությունից դատավարական ծառայության անցնելու թույլատրելիությունը, պայմանով, որ դատավորները չեն լսում այն գործերը, որոնց մեջ նրանք ներգրավված են եղել որպես դատախազներ, խիստ կարևոր նշանակություն ունի այն անդամ պետությունների համար, որոնք կիրառում են մասնագիտական դատական համակարգեր, որոնց դեպքում այս կազմակերպությունների միջև կադրային տեղաշարժերը սովորական երևույթ են:

6 Սուբյեկտիվ կանխակալությունը հաստատելու դժվարությունը ցույց է տրվել *«Սանդերն ընդդեմ Մեծ-ի» (Sander v UK* (2000) The Times) մայիսի 12-ի գործում: Դիմողը եղել է ասիացի, որը դրամաշորթության դավադրություն կազմակերպելու մեղադրանքով քրեական հետանդման է ենթարկվել Բիրմինգհեմի թագավորական դատարանի դատավորի և երդվյալ ատենակալների կողմից: Դատավորի եզրակացության ժամանակ երդվյալ ատենակալներից մեկը դատավորին երկտող է ուղարկել, որով զգուշացրել է դատավորին, որ երկու երդվյալ ատենակալներ ենթադրաբար կատարել են ռասիստական բնույթի կատակներ: Երկտողի հեղինակն առանձնացվել է մյուս ատենակալներից: Դատավորն այնուհետև սկսել է քննությունը և հարցրել երդվյալ ատենակալներին, թե չե՞ն կարող գործն արդար քննել: Հաջորդ օրը բոլոր երդվյալ ատենակալները ընդհանուր գրությամբ հավաստիացրել են դատարանին, որ գործը քննելու են առանց ռասիստական բնույթի կանխակալ վերաբերմունքի դրսևորման: Երդվյալ ատենակալներից մեկն ուղարկել է մեկ այլ գրություն, որով ներողություն է հայտնել վիրավորանք հասցնելու համար և հայտարարել, որ կանխակալ ռասիստական վերաբերմունք չունի: Դատավորը, ելնելով վերը նշված իրադարձություններից, եզրակացրել է, որ «... ինձ համար միանգամայն պարզ է, որ ձեզանից յուրաքանչյուրը գիտակցում է այն երդումը կամ հավաստիացումը, որը տվել եք և որին ի պաշտոնե պարտավոր եք հետևել»: Երդվյալ ատենակալները դատապարտել են դիմողին, սակայն արդարացրել են մյուս ամբաստանյալին, որը նույնպես ծագումով ասիացի է եղել: Դիմողը բողոքել է, որ իր դատն անաչառ տրիբունալում տեղի չի ունեցել: Դատարանի մեծամասնությունը (չորս ձայնով) եզրակացրել է, որ.

22. Դատարանը նշում է, որ ժողովրդավարական հասարակությունում հիմնարար նշանակություն ունի այն հանգամանքը, որը դատարանները վստահություն ներշնչեն հասարակությանը և, ամենից առավել, քրեական հետապնդման առումով, մեղադրյալին: Այդ նպատակով շարունակաբար շեշտել է, որ տրիբունալը, ներառյալ երդվյալ ատենակալները, պետք է անաչառ լինեն ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ տեսանկյուններից...

23. Դատարանը նաև նշում է, որ սույն գործը վերաբերում է հստակ և որոշակի պնդումների, համաձայն որոնց՝ ասիական ծագում ունեցող մեղադրյալին քննելու համար հրավիրված երդվյալ ատենակալներն արել են ռասիստական մեկնաբանություններ: Հաշվի առնելով, որ բազմամշակութային եվրոպական հասարակություններում ռասիզմի վերացումը դարձել է անդամ պետությունների ընդհանուր առաջնահերթ նպատակը, դատարանը համարում է, որ սա շատ լուրջ խնդիր է (տե՛ս, ի թիվս այլոց, Եվրոպայի խորհրդի Վիեննայի և Ստրասբուրգի գագաթնաժողովների հռչակագրերը):

24. Դատարանը նկատում է, որ խնդրո առարկա պնդումները դիմողին հանգեցրել են այն եզրակացության, որ նրա նկատմամբ քննությունը տեղի է ունեցել ռասիստական միտում ունեցող երդվյալ ատենակալների կողմից: Դիմողի գանգատը, հետևաբար, այն է, որ որոշ երդվյալ ատենակալներ ունեցել են սուբյեկտիվ կանխակալ վերաբերմունք:

25. Դատարանը նշում է, որ այն դեպքում, երբ հակառակ ապացույցներ չկան, պետք է ենթադրվի, որ դատավորն ունեցել է անձնական անկանխակալ մոտեցում (տե՛ս *«Պիերսաքն ընդդեմ Բելգիայի» (Piersack v Belgium)* 1982 թ. հոկտեմբերի 1-ի վճիռ, շարք A, թիվ 53, էջ 14-15, պարբ. 30):

Նույնը վերաբերում է նաև երդվյալ ատենակալներին:

26. Դիմողի գործի պարագայում երդվյալ ատենակալը ներկայացրել է գրություն, որում հայտնել է, որ իր գործընկերները բացահայտ ռասիստական դիտողություններ և կատակներ են արել, և նա մտավախություն է ունեցել, որ «նրանք պատրաստվում [էին] դատապարտել ամբաստանյալներին ոչ թե փաստերի, այլ նրանց ասիական ծագման հիման վրա»: Մեկ այլ երդվյալ ատենակալ այս պնդումների առումով ընդունել է, «որ կարող էր այդպես վարված լիներ» և նշել, որ «որ ինքը ներողություն է խնդրում, եթե վիրավորանք է հասցրել»: Հետևաբար, դատարանն ապացուցված է համարում, որ առնվազն մեկ երդվյալ ատենակալ արել է այնպիսի մեկնաբանություններ, որոնք կարող էին ընկալվել որպես ասիացիների հասցեին արված կատակներ: Դատարանի տեսանկյունից սա ինքնին դեռևս չի ապացուցում, որ խնդրո առարկա երդվյալ ատենակալն իրոք կանխակալ մոտեցում է ունեցել դիմողի նկատմամբ: Բացի այդ, դատարանը նկատում է, որ դատավարությունն անցկացնող դատավորի համար հնարավոր չէր հարցաքննել երդվյալ ատենա-

կալներին այդ մեկնաբանությունների իսկական բնույթի և այն բուն համատեքստի մասին, որոնցում արվել են դրանք: Սրանից հետևում է, որ սուբյեկտիվ տեսանկյունից ապացուցված չէ, որ դիմողի դատաքննությունն իրականացրած դատարանն անաչառ չի եղել:

27. Սրանով, այնուամենայնիվ, դատարանի կողմից դիմողի բողոքի քննությունը չի ավարտվում: Դատարանը պետք է նաև քննության առնի, թե արդյոք դատարանն անաչա՞ռ է եղել օբյեկտիվ տեսանկյունից: Այսինքն՝ այդ հանգամանքներում եղե՞լ են բավարար երաշխիքներ, որոնք կբացառեին դատարանի անաչառությանը վերաբերող օբյեկտիվորեն արդարացված կամ իրավացի կասկածները: Թեպետ այս կապակցությամբ մեղադրյալի տեսակետը կարևոր է, այն չի կարող որոշիչ լինել...

34. Դատարանն ընդունել է, որ թեպետ երդվյալ ատենակալներին ներկայացված բացարկը միշտ չէ, որ կարող է համարվել արդար դատաքննության ապահովման միջոց, որոշ հանգամանքներում դա պահանջվում է կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով... Սույն գործում դատավորը բախվել է լուրջ հայտարարության, ըստ որի՝ դիմողը ենթարկվել է դատապարտման ռիսկի իր ազգային պատկանելության պատճառով: Բացի այդ, երդվյալ ատենակալներից մեկը խոստովանել է, որ ռասիստական մեկնաբանություններ է արել: Հաշվի առնելով այն նշանակությունը, որ անդամ պետությունները վերագրում են ռասայական խտրականության դեմ պայքարին՝ ... դատարանը համարում է, որ դատավորը պետք է հակազդեր շատ ավելի խստորեն, ոչ թե ընդամենը ձգտեր ստանալ երդվյալ ատենակալների անորոշ հավաստիացումները, թե կարող են մի կողմ թողնել իրենց նախապաշարումները և քննության առնել գործը զուտ փաստերի հիման վրա: Չվարվելով այս կերպ՝ դատավորը չի ապահովել դատարանի անաչառության նկատմամբ որևէ օբյեկտիվորեն հիմնավորված կամ օրինական կասկած բացառող բավարար երաշխիքներ: Սրանից հետևում է, որ օբյեկտիվ տեսանկյունից դիմողին դատապարտած դատարանը անաչառ չի եղել:

35. Հետևաբար, տեղի է ունեցել կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

Երեք դատավոր առարկել է, քանի որ, ըստ նրանց, 6(1) հոդվածի օբյեկտիվության պահանջները բավարարելու առումով դատավորը ձեռնարկել է բավարար գործողություններ: Բացի այն, որ վճիռը բացահայտում է սուբյեկտիվ կանխակալ վերաբերմունքի բացահայտման առումով դատարանի զգուշավոր մոտեցումը, վճիռն ունի էլ ավելի դրական կողմ, քանզի հաստատում է, որ 6-րդ հոդվածի այդ մասը տարածվում է երդվյալ ատենակալների վրա: Պրոֆեսոր Զանդերը, այնուամենայնիվ, խիստ քննադատաբար է մոտեցել մեծամասնության որոշմանը.

Սանդերի (Sander) գործով որոշումն անհանգստացնող է, քանի որ ցույց է տալիս, որ Ստրասբուրգի դատարանը բավականաչափ չի հասկանում երդվյալ ատենակալների համակարգի արժեքը: Համակարգի խիստ ուժեղ կողմն այն է, որ ընդհանուր առմամբ տասներկու շարքային քաղաքացիների կողմից կայացված վճիռը հասկանալի է ապացույցների կամ երդվյալ ատենակալների հավասարության ըմբռնման տեսանկյունից: Եվ սա հակառակ այն փաստին, որ երդվյալ ատենակալների մեծ մասը, ամենայն հավանականությամբ, նախապաշարումներ ունի: Դա չենթադրելը միամտություն կլիներ: Սակայն երդվյալ ատենակալների խորհրդակցական սենյակում քննարկումը նպատակ ունի չեզոքացնել անձնական նախապաշարումները: Մեծամասնության վճռի հնարավորությունը լրացուցիչ պաշտպանություն է ապահովում նախապաշարման ազդեցության դեմ, սակայն իրականում գործերի գերակշիռ մասի դեպքում վճիռը կայացվում է միաձայն: ... *Սանդերի* գործի վերաբերյալ դատարանի որոշումը, թվում է թե, ավելի շատ պարտական է քաղաքական ճշտությանը, քան իրական ռիսկի կամ կառուցվածքային կանխակալ մոտեցման լուրջ գնահատմանը: [M Zander, The Complaining Juror (2000) New Law Journal 723.]

7 *«Սիգուրդսոնն ընդդեմ Իսլանդիայի» (Sigurdsson v Iceland)* գործով 2003 թ. ապրիլի 10-ի վճռում պալատը միաձայն որոշել է, որ բանկի և դատավորի ամուսնու միջև ֆինանսական լուրջ գործարքների գոյությունն այն ժամանակ, երբ դատավորը լսել է այդ բանկի դեմ հարուցված գործը, հավասար է եղել օբյեկտիվ ստուգման խախտման: Մասնագիտությամբ իրավաբան դիմողը բողոք է ներկայացրել Իսլանդիայի ազգային բանկի դեմ: Մինչ Սիգուրդսոնի գործը գտնվել է գերագույն դատարանում, բանկը համաձայնության է եկել դատավոր տկն էռլենդսդոտտիրի ամուսնու հետ, որի արդյունքում բանկը չեղյալ է հայտարարել բանկին ունեցած նրա պարտքի 75 տոկոսը (190.000 եվրո) և հիփոթեքային վարկ տրամադրել դատավորին պատկանող երկու տների համար: Դատավոր տկն էռլենդսդոտտիրը քվեարկել է գերագույն դատարանի մեծամասնության կազմում (երեք կողմ և երկու դեմ ձայներ) բանկի դեմ դիմողի հայցը մերժելու օգտին: Սիգուրդսոնը դատարանում առարկել է, որ բանկի կողմից մեծ պարտքի ներումը նշանակել է, որ այդ դատավորը և նրա ամուսինը ողջ կյանքի

ընթացքում պարտավորություն ունեն բանկի նկատմամբ, ինչի հետևանքով նրա գործի վերաբերյալ որոշումը անկախ և անաչառ տրիբունալ չի կայացրել:

37. Դատարանը համարում է, որ սույն գործում սկզբունքորեն կշեռքի նժարին դրված է «անկանխակալության» պահանջը... Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների համար անկանխակալության գոյությունը պետք է որոշվի սուբյեկտիվ ստուգման հիման վրա (այսինքն՝ տվյալ գործում տվյալ դատավորի անձնական համոզմունքի հիման վրա), ինչպես նաև օբյեկտիվ ստուգման հիման վրա (այսինքն՝ հավաստիանալով, որ դատավորն առաջարկել է երաշխիքներ, որոնք բավարար են այս առումով օրինական կասկածը բացառելու համար)...

Ինչ վերաբերում է սուբյեկտիվ ստուգմանը, հակառակն ապացուցող փաստերի բացակայության դեպքում դատավորի անձնական անկանխակալությունը պետք է համարվի երաշխավորված: Դիմողը որևէ փաստ չի ներկայացրել, որպեսզի ցույց տա, որ դատավոր Գուդրուն Էռլենդսդոտտիրն ունեցել է անձնական նախապաշարումներ...

Օբյեկտիվ ստուգման դեպքում պետք է որոշվի, թե դատավորի անձնական պահվածքից բացի կա՞ն արժանահավատ փաստեր, որոնք կարող են կասկածներ առաջացնել նրա անկանխակալության վերաբերյալ: Այս առումով նույնիսկ ձևական կողմը կարող է որոշակի կարևորություն ունենալ: Խնդրո առարկա տվյալ դեպքում այն վստահությունն է, որը ժողովրդավարական հասարակություններում դատարանները պետք է ներշնչեն հասարակությանը: Հետևաբար, յուրաքանչյուր դատավոր, որի անկանխակալությունը կասկածի տակ դնելու հիմքեր կան, պետք է ինքնաբացարկ հայտնի: Սա ենթադրում է, որ այն ժամանակ, երբ որոշվում է, թե արդյոք տվյալ դեպքում կա՞ այնպիսի օրինական պատճառ, որը կասկածի տեղիք է տալիս, թե դատավորն անկանխակալության կարիք ունի, ապա տվյալ կողմի տեսակետը կարևոր է, սակայն ոչ վճռորոշ: Որոշիչ է այն, թե կարելի՞ է ասել, որ այս մտավախությունն օբյեկտիվորեն արդարացված է...

43. Դատարանը գնահատում է, որ պարոն Օրն Քլոսենի [դատավորի ամուսնու] 1996 թ. դժվարությունները չեն առաջացել ուղղակիորեն իր անձնական ֆինանսական դրությունից, այլ անվճարունակ երրորդ անձի՝ պարոն Էդվարդ Լովդալի (որի համար նա հանդես է եկել որպես երաշխավոր) դրությունից, ինչպես նաև այլ երաշխավորների իրենց երաշխիքները կատարելու անկարողությունից:

Այնուամենայնիվ, պրն Օրն Քլոսենն ունեցել է իրավական պարտավորություն՝ բավարարելու քսանմեկ պարտապանների՝ ընդհանուր հաշվով 50.000.000 իսլանդական կրոն կազմող պահանջը, ընդ որում՝ 16.000.000 իսլանդական կրոնը (մոտ 190.000 եվրո)՝ ազգային բանկին... Սրա հետևանքով 1997 թ. ապրիլին պրն Օրն Քլոսենի՝ ազգային բանկի պարտքերը հասել են սովորական մակարդակի, ինչը չի կարող ցույց չտալ, որ սա կապված է ազգային բանկի հետ 1996 թ. ձեռք բերված համաձայնության հետ:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ դատարանի համար համոզիչ չէ կառավարության փաստարկը, որ պարոն Օրն Քլոսենի և ազգային բանկի, ինչպես նաև այլ պարտապանների միջև պարտքի կարգավորման համաձայնությունը, որի արդյունքում մնացել է սկզբնական պարտքի 25%-ը, նրանց համար եղել է ավելի գրավիչ այլընտրանք, քան նրան սնանկ հայտարարելը, և դա չի կարող դիտվել որպես անձամբ նրան արված լավություն: Հակառակը, նույնիսկ ենթադրելով, որ այս լուծումը հարմար է եղել պարտապանների համար, դատարանը համարում է, որ այսպիսի մեծ պարտքը 75%-ով չեղյալ հայտարարելը պետք է համարվի պրն Օրն Քլոսենի նկատմամբ դրսևորված բարենպաստ վերաբերմունք:

44. Պետք է նաև նկատել, որ երբ Լանդսբրեֆը միջնորդություններ է ներկայացրել չորս հիփոթեքային վկայագրերի համար, և ազգային բանկի հետ կնքվել է պարտքի կարգավորման համաձայնություն, դիմողի գործը, որում ազգային բանկը հանդես է եկել որպես հակառակ կողմ, արդեն եղել է գերագույն դատարանում:

45. Այս պարագայում առնվազն ձևական կապ կա դատավոր տկն Գուդրուն Էռլենդսդոտտիրի կողմից իր ամուսնու օգտին ձեռնարկված քայլերի և այն արտոնությունների միջև, որոնք նրան [ամուսնուն] տրամադրել է ազգային բանկը: Դատարանը չի քննելու, թե արդյոք նա անձնական շահ ունեցե՞լ է այս գործարքից, և որևէ հիմք չի տեսնում, որ հավատա, թե նա կամ նրա ամուսինը ուղղակի շահագրգռություն են ունեցել դիմողի և ազգային բանկի միջև գործի ելքի մեջ: Այնուամենայնիվ, պարտքերի կարգավորման մեջ դատավորի ներգրավումը, նրա ամուսնու ստացած օգուտը և ազգային բանկի հետ ունեցած նրա կապերն այնպիսի բնույթ և չափեր են ունեցել ու ժամանակի առումով այնքան մոտ են այն ժամանակին, երբ տեղի է ունեցել գերագույն դատարանի կողմից այս գործի քննությունը, որ դիմողը կարող էր ողջամիտ մտավախություն ունենալ, որ դատարանը պահանջվող անկանխակալություն չի ունեցել (տե՛ս mutatis mutandis *«Հոլմն ընդդեմ Շվեդիայի» (Holm v Sweden)*, 1993 թ. նոյեմբերի 25-ի վճիռ, շարք A, թիվ 279-A, էջ 15-16, պարբ. 32-3):

46. Հետևաբար, դատարանը համարում է, որ սույն գործում տեղի է ունեցել կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

8 *«Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի» (Kyprianou v Cyprus)* գործի (2005 թ. դեկտեմբերի 15-ի վճիռ) կապակցությամբ վճռվել է, որ պաշտպանության կողմի փաստաբանին դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու մեջ մեղավոր ճանաչելու ժամանակ քրեական դատարանի

դատավորները սուբյեկտիվ տեսանկյունից անաչառ չեն եղել: Քրեական դատարանը հարցականի տակ է դրել այն ձևը, որով դիմողը խաչաձև հարցաքննել է մեղադրող կողմի վկային, ինչին նա առարկել է և պատասխանել, որ դատավորները ravasakia (սիրային նամակներ) էին փոխանցում իրար: Կարճ դադարից հետո դատավորները որոշել են, որ դիմողը, որը քառասուն տարի զբաղվել էր փաստաբանական գործունեությամբ և ունեցել անբիծ մասնագիտական համբավ, մեղավոր է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար և դատապարտել է հինգ օրվա բանտարկության, որի կատարումը պետք է սկսվեր անմիջապես: Սա եղել է առաջին դեպքը, երբ Կիպրոսում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար փաստաբանը բանտարկվել է: Այնուհետև, մեծ պալատի առջև դիմողը վիճարկել է, որ իրեն դատապարտելիս դատավորները ցուցաբերել են կանխակալ վերաբերմունք:

130. Դիմողի գանգատի այս մասը, հետևաբար, ուղղված է դատավորների անձնական վարքագծի դեմ: Հետևաբար, դատարանը քննության է առնելու դատավորների վարքի այն կողմերը, որոնք կարող են սուբյեկտիվ ստուգման շրջանակներում հարցեր առաջացնել:

Նախ՝ դիմողին դատապարտելու իրենց որոշմամբ դատավորները ցույց են տվել, որ «որպես անձ» իրենք «լրջորեն վիրավորված» են եղել դիմողի վարքագծից: Եթե նույնիսկ դատավորները չեն հապաղել հայտնել, որ դա եղել է նրանց ամենավերջին մտահոգությունը, դատարանի կարծիքով՝ այդ հայտարարությունն արդեն իսկ ցույց է տալիս դատավորների՝ դիմողի խոսքերի և պահվածքի պատճառով առաջացած անձնական վիրավորանքը և շփոթմունքը:

Երկրորդ՝ դատավորների ընդունած որոշման մեջ օգտագործված կտրուկ ոճը ցույց է տալիս, որ նրանք եղել են զայրացած և ցնցված, ինչը չի համապատասխանում դատարանի հայտարարություններից ակնկալվող անաչառությանը: Մասնավորապես, դատավորները հայտարարել են, որ իրենք «չեն կարող նույնիսկ հիշել որևէ անձի (առավել ևս՝ փաստաբանի) կողմից դատարանի նկատմամբ այսպիսի անընդունելի անհարգալից վերաբերմունքի դրսևորման դեպք», և «եթե դատարանի արձագանքը չլինի անհապաղ և կտրուկ, կարծում ենք, արդարադատությունը աղետալի հարված կկրի»:

Երրորդ՝ դատարանը նրան նշանակել է հնգօրյա ազատազրկում, որի կիրառումը սկսվել է անհապաղ, քանի որ դատարանը դա համարել է «միակ պատշաճ պատասխանը»: Դատավորների կարծիքով՝ «դատարանի կողմից հաստատված օրինական և քաղաքակիրթ կարգի նկատմամբ ոչ համապատասխան վերաբերմունքը դատարանների իշխանության ևսեմացման նշան է»:

Չորրորդ՝ դիմողի հետ ավելի վաղ տեղի ունեցած քննարկումների ընթացքում դատավորները կարծիք են հայտնել, որ նա մեղավոր է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու մեջ: Երբ նրանք արդեն որոշած են եղել, որ դիմողը կատարել է նման խախտում, նրան հնարավորություն են տվել կա՛մ հաստատել իր հայտարարությունները և պարզաբանել, թե ինչու նրան չպետք է պատիժ նշանակվի, կա՛մ հրաժարվել իր արած հայտարարություններից: Փաստորեն նրանից պահանջել են մեղմել «այն վնասը, որ պատճառել է նա իր պահվածքով», ոչ թե պաշտպանել ինքն իրեն:

131. Դատարանը կասկած չունի, որ դատավորների մտահոգության առարկան եղել է արդարադատության իրականացման գործընթացի և դատարանի ամբողջականության պաշտպանությունը, և այս նպատակի համար նրանք հարկ են համարել ակնթարթային արագ դատավարություն սկսել: Սակայն, հաշվի առնելով վերոհիշյալ նկատառումները, դատարանը համարում է, որ նրանց չի հաջողվել անձնական անտարբերություն դրսևորել այս իրավիճակի նկատմամբ:

132. Դատավարության արագ ընթացքը և դատավորների ու պրն Կիպրիանուի միջև մտքերի համառոտ փոխանակությունն ամրապնդում են այս եզրակացությունը:

132. Այս պայմաններում և, մասնավորապես, ուշադրություն դարձնելով դատավորների պահվածքի առանձին դրսևորումների ամբողջական պատկերին՝ դատարանը համարում է, որ սուբյեկտիվ ստուգման շրջանակներում Լիմասսոլի դատարանի նկատմամբ պրն Կիպրիանուի մտահոգություններն արդարացած են եղել:

Սա այն հազվադեպ գործերից է, երբ դատարանը եզրակացրել է, որ կանխակալ մոտեցումը հիմնավորված է սուբյեկտիվ տեսանկյունից: Իրոք, մեծ պալատը նկատել է, որ «119. .... Դատարանն ընդունել է, որ սուբյեկտիվ տեսանկյունից կանխակալ վերաբերմունքի հիմնավորումը 6-րդ հոդվածով խրթին գործ է, այդ իսկ պատճառով կանխակալ վերաբերմունքի հարցեր շոշափող գործերում ծանրացել է օբյեկտիվ ստուգման վրա»: *Կիպրիանուի* գործում մեծ պալատը վճռել է նաև, որ քրեական դատարանի դատավորները խախտել են անկանխակալության օբյեկտիվ չափորոշիչը: Այնուամենայնիվ, մեծ պալատը շեշտել է, որ որոշում է կայացրել միայն այս գործի փաստերի վերաբերյալ, և « 125. ... Դատարանն անհրաժեշտ կամ ցանկալի չի համարում վերանայել անհար-

գալից վերաբերմունքին վերաբերող օրենքը և արագ դատավարության գործելակերպը Կիպրոսում և առհասարակ նախադեպային իրավունքի մյուս երկրներում»: Սրա արդյունքում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի որոշ դրսևորումների (օրինակ՝ վկայի ցուցմունք տալուց հրաժարվելու) դեպքում դատաքննությունն իրականացնող դատավորների կողմից արագ դատավարություն իրականացնելու փորձի պոտենցիալ օրինականությունը, ըստ 6-րդ հոդվածի, մնացել է առկախ:

9 Բոլոր դատավորները միաձայն որոշել են, որ ներքին գործերի քարտուղարի կողմից անչափահաս մարդասպաններին պարտադիր փորձաշրջանի (հատուցման և կանխման նպատակով սահմանված ազատազրկման ժամկետի) նշանակումը խախտել է «անկախ» տրիբունալի պահանջը *«V-ն ընդդեմ ՄԹ-ի» (V v UK)* գործում (վերը՝ էջ 438):

114. Դատարանը նկատում է, որ, ի թիվս այլոց, 6(1) հոդվածը երաշխավորում է «արդար ... դատաքննություն... անկախ և անաչառ տրիբունալի կողմից...»: «Անկախ» բառն այս համատեքստում ենթադրում է անկախություն գործի կողմերից և գործադիր իշխանությունից: Ստացվում է, որ տեղի է ունեցել 6(1) հոդվածի խախտում:

10 Դատարանի մեծամասնությունը՝ տասներկու կողմ և ութ դեմ ձայներով, որոշել է, որ անկախ և անաչառ տրիբունալի իրավունքի խախտում է տեղի է ունեցել *«Ինջալն ընդդեմ Թուրքիայի» (Incal v Turkey)* գործում, երբ քրդերի նկատմամբ իշխանությունների վերաբերմունքը քննադատող թռուցիկներ տարածելու համար ընդդիմադիր քաղաքական գործչի դեմ հարուցված գործը լսվել է երկու քաղաքացիական և մեկ ռազմական դատավորից կազմված հատուկ դատարանում (տե՛ս ստորև՝ էջ 678):

67. Դատարանը նկատում է, որ ազգային անվտանգության դատարանների կազմի մեջ մտնող ռազմական դատավորների կարգավիճակն ապահովում է անկախության և անաչառության որոշ երաշխիքներ: Օրինակ՝ ռազմական դատավորներն անցնում են նույն մասնագիտական ուսուցումը, ինչ նրանց քաղաքացիական գործընկերները, և դրա շնորհիվ նրանք ձեռք են բերում ռազմական իրավաբանական ծառայության մշտական անդամի կարգավիճակ: Որպես ազգային անվտանգության դատարանների անդամ՝ ռազմական դատավորներն ունեն նույն սահմանադրական երաշխիքները, ինչ քաղաքացիական դատավորները, ... որպես ազգային անվտանգության դատարանի լիարժեք անդամ՝ նրանք նիստերին մասնակցում են որպես այնպիսի անձինք, որոնք, համաձայն սահմանադրության, պետք է լինեն անկախ, և որևէ պետական գերատեսչություն չի կարող հրահանգներ տալ նրանց դատավարական գործողությունների վերաբերյալ կամ ազդեցություն ունենալ նրանց աշխատանքային պարտականությունների կատարման վրա:

68. Մյուս կողմից՝ այս դատավորների կարգավիճակի այլ կողմեր հարցականի տակ են դնում սա: Նախ՝ նրանք ծառայության մեջ գտնվող անձինք են և պատկանում են բանակին, որն իր կարգադրությունները ստանում է գործադիր մարմնից: Երկրորդ՝ նրանք ենթակա են ռազմական կարգապահության, որը գնահատելու նպատակով զինված ուժերը կազմում են նրանց կատարողական ցուցանիշների հաշվետվություններ... Նրանց նշանակմանը վերաբերող որոշումները մեծ մասամբ ընդունվում են զինված ուժերի վարչական մարմինների կողմից... Վերջապես, ազգային անվտանգության դատարանում որպես դատավոր նրանք պաշտոնավարում են չորս տարի, և այս ժամկետը կարող է նորոգվել:

72. …Դատարանը մեծ նշանակություն է տալիս այն փաստին, որ քաղաքացիական անձը կանգնել է այնպիսի դատարանի առջև, որի կազմը, թեկուզ միայն մասամբ, բաղկացած է եղել զինված ուժերի անդամներից: Սրանից հետևում է, որ դիմողը կարող էր արդարացված մտավախություններ ունենալ, որ Իզմիրի ազգային անվտանգության դատարանի դատավորներից մեկը, լինելով ռազմական դատավոր, կարող էր ենթակա լինել այնպիսի նկատառումների ազդեցության, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեն գործի հետ...

73. Ամփոփելով՝ դիմողն ունեցել է օրինական պատճառ, որպեսզի կասկածի տակ դնի Իզմիրի ազգային անվտանգության դատարանի անկախությունը և անաչառությունը...

Կարծո՞ւմ եք, որ դիմողին ներկայացված մեղադրանքների բնույթի պատճառով ռազմական դատավորի մասնակցությունն էլ ավելի է վտանգել ազգային անվտանգության դատարանի անկախությունը և անաչառությունը:

Այս գործից հետո Թուրքիայի անվտանգության դատարանների կողմից մեղավոր ճանաչված մի շարք այլ անձինք Եվրոպական դատարանի առջև հաջողությամբ վկայակոչել են 6-րդ հոդվածի այս կողմը: *«Օջալանն ընդդեմ Թուրքիայի» (Ocalan v Turkey)* գործում (տե՛ս վերը՝ էջ 135) դիմողը բողոքել է, որ գնդապետի կոչում ունեցող դատավորն ազգային անվտանգության դատարանի կազմում մասնակցել է իր գործի դատավարությանը և մեղադրական վճռի կայացմանը: Կառավարությունը պատասխանել է, որ դատավարության ընթացքում ռազմական դատավորը փոխարինվել է քաղաքացիական դատավորով: Մեծ պալատը, տասնվեց կողմ և վեց դեմ ձայներով, որոշել է, որ դիմողի դատավարությունը տեղի է ունեցել ոչ անկախ և անաչառ տրիբունալում:

112. Դատարանը կայացրել է հետևողական վճիռներ, համաձայն որոնց՝ պետական անվտանգության դատարաններում ռազմական դատավորների կարգավիճակով մասնակցող անդամները հարցականի տակ են դնում գործադրից իրենց անկախությունը (տե՛ս *«Ինջալն ընդդեմ Թուրքիայի» (Incal v Turkey)* 1998 թ. հունիսի 9-ի վճիռը, Զեկույցներ 1998-IV, պարբ. 68 և *«Չիրաքլարն ընդդեմ Թուրքիայի» (Ciraklar v Turkey)* 1998 թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, Վճիռների և որոշումների զեկույցներ 1998-VII, պարբ. 39):

113. Հասկանալի է՝ դիմողը, որ մեղադրվել է ազգային անվտանգությանն առնչվող լուրջ հանցագործությունների մեջ և այդ պատճառով դատական կարգով հետապնդվել ազգային անվտանգության դատարանի կողմից, պետք է անհանգստացած լիներ այն փաստից, որ նրա գործը լսող դատարանի կազմի մեջ մտել է ռազմական իրավաբանական ծառայությունում աշխատող սովորական բանակային սպա: Այդ առումով նա կարող էր օրինական մտավախություն ունենալ, որ պետական անվտանգության դատարանը հայտնվել է այնպիսի նկատառումների անհարկի ազդեցության տակ, որոնք որևէ առնչություն չունեն գործի բնույթի հետ (այլ հեղինակավոր աղբյուրների շարքում տե՛ս «*Իփրահիմ Յուլգերն ընդդեմ Թուրքիայի» (Iprahim Ulger v Turkey,* թիվ 57250/00) վճիռը, 29 հուլիսի, 2004):

114. Ինչ վերաբերում է այն հանգամանքին՝ դատավարության ընթացքում՝ նախքան վճռի կայացումը, ռազմական դատավորին քաղաքացիական դատավորով փոխարինելը շտկե՞լ է իրավիճակը, թե՞ ոչ, ապա դատարանը կարծում է, որ այն հարցը, թե դատարանը կարո՞ղ է համարվել անկախ, նախ և առաջ կախված չէ միայն վճիռն ընդունելու ժամանակ նրա կազմից: 6-րդ հոդվածի անկախության պահանջները բավարարելու համար տվյալ դատարանը վարույթի երեք՝ հետաքննության, դատաքննության և վճռի կայացման փուլերից (համաձայն կառավարության, սրանք Թուրքիայում գոյություն ունեցող քրեական վարույթի երեք փուլերն են) յուրաքանչյուրում պետք է դիտվի որպես գործադրից և օրենսդրից անկախ մարմին:

115. Երկրորդ՝ այն դեպքում, երբ ռազմական դատավորը մասնակցում է մեկ կամ մեկից ավելի նախնական որոշումների կայացմանը, որոնք շարունակում են ազդեցություն գործել քրեական վարույթի վրա, ապա մեղադրյալը վարույթի օրինականությամբ մտահոգված լինելու ողջամիտ պատճառ ունի, եթե չի հիմնավորվում, որ դրանից հետո պետական անվտանգության դատարանը որդեգրել է այնպիսի ընթացակարգ, որը լիովին փարատել է այդ մտահոգությունը: Ավելի ստույգ՝ այն դեպքում, երբ ռազմական դատավորը մասնակցում է քաղաքացիական անձի դեմ սկսված վարույթի ամբողջական մասը կազմող մեկ կամ մեկից ավելի միջանկյալ որոշումների կայացմանը, ապա ողջ դատավարությունը զրկվում է անկախ և անաչառ դատարանի կողմից վարված լինելու տպավորությունից:

116. Իր նախորդ վճիռներում դատարանը կարևոր նշանակություն է վերագրել այն փաստին, որ քաղաքացին պատասխան է տվել այնպիսի դատարանի առջև, որը կազմված է եղել, թեկուզ միայն մասամբ, զինված ուժերի ներկայացուցիչներից (տե՛ս այլ հեղինակավոր աղբյուրների շարքում, *Ինջալի (Incal)* վճիռը, մեջբերված է վերը, պարբ. 72): Այսպիսի իրավիճակը լրջորեն ազդում է այն վստահության վրա, որը դատարանները պետք է ներշնչեն ժողովրդավարական հասարակություններում (տե՛ս mutatis mutandis *«Պիերսաքն ընդդեմ Բելգիայի» (Piersack v Belgium)* 1982 թ. հոկտեմբերի 1-ի վճիռ, շարք A, թիվ 53, էջ 14-15, պարբ. 30):

117. Վարույթում գտնվող սույն գործի կապակցությամբ դատարանը նկատում է, որ նախքան 1999 թ. հունիսի 23-ին ռազմական դատավորի փոխարինումը, նա ներկա է գտնվել երկու նախնական և վեց դատական նիստերի, որոնց ժամանակ քննարկվել են գործի հատկանիշները և ընդունվել միջանկյալ որոշումներ: Դատարանն այնուհետև նկատում է, որ ռազմական դատավորի փոխարինումից հետո այդ որոշումներից որևիցե մեկը չի վերանայվել, և բոլորը հաստատվել են նրան փոխարինած դատավորի կողմից:

118. Այս հանգամանքներում դատարանը չի կարող ընդունել, որ նախքան վարույթի ավարտը ռազմական դատավորի փոխարինումը վերացրել է դատաքննությունն իրականացնող դատարանի անկախության և անաչառության առումով դիմողի ունեցած ողջամիտ մտահոգությունը: Մեծ պալատը չպետք է հետևի *«Իմրեքն ընդդեմ Թուրքիայի»* որոշմանը

(Imrek v Turkey [(որոշում) թիվ 57175/00, 28 հունվարի, 2003 թ.]) կամ դրա պատճառաբանությանը, այնքանով, որքանով դրանք հակասում են այս եզրակացությանը:

Հետևաբար, այս առումով տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

Նախագահ Վիլդհաբերը և նրան միացած դատավորներ Կոստան, Քաֆլիշը, Թուրմենը, Գառլիչկին և Բոռեգո Բոռեգոն ընդունել են միասնական մասնակի չհամընկնող կարծիք, որում նրանք հայտնել են հետևյալ տեսակետը.

1. Դատարանի մեծամասնությունը որոշել է, որ սույն գործում Անկարայի ազգային անվտանգության դատարանը անկախ և անաչառ դատարան չի հանդիսացել, քանի որ դատարանի կազմում ընդգրկված է եղել նաև ռազմական դատավոր: Մենք համաձայն չենք այս եզրակացությանը հետևյալ պատճառներով:

2. Ճշմարիտ է, որ *Ինջալի* (1998 թ. հունիսի 9-ի վճիռ, Զեկույցներ 1998-IV, էջ 1548) գործից հետո այս կարգի գործերում դատարանը որդեգրել է մի սկզբունք, ըստ որի՝ դիմողն ազգային անվտանգության դատարանի անկախությունը և անաչառությունը կասկածի տակ դնելու օրինական հիմք ունի, եթե այդ ռազմական դատավորը լսում է նրա գործը երկու այլ քաղաքացիական դատավորների հետ միասին: *Ինջալի* գործի կապակցությամբ դատարանը միասնական չի եղել և որոշում է կայացրել տասներկու կողմ և ութ դեմ ձայներով (հակառակ տեսակետին ծանոթանալու համար տե՛ս դատավորների փոքրամասնության կարծիքը՝ Զեկույցներ 1998-IV, էջ 1578 և 1579):

3. Նմանապես ճիշտ է, որ *Ինջալի* նախադեպն օգտագործվել է մի շարք այլ վճիռներում (ներառյալ *«Սյուրեքն ընդդեմ Թուրքիայի» (Surek v Turkey)* (թիվ 1) [GC], թիվ 26682/95, ECHR 1999-IV: Տե՛ս նաև պրն Վիլդհաբերի հայտարարությունը և պրն Գյոլչյուքլուի չհամընկնող կարծիքը):

4. Այնուամենայնիվ, իրադրությունը փոխվել է: *Ինջալի* վճռից հետո շատ կարճ ժամանակահատվածում Թուրքիան ձեռնարկել է շտկիչ միջոցներ և առանց հապաղելու փոփոխություններ կատարել իր սահմանադրությունում և ապա օրենսդրությունում, որպեսզի այդուհետ պետական անվտանգության դատարաններում (որոնք դրանից հետո վերացվել են) դատավարություններն իրականացնեն միայն քաղաքացիական դատավորները: 1999 թ. հունիսի 18-ի դրությամբ սահմանադրությունն արդեն բարեփոխված էր: Դրանից ընդամենը չորս օր անց հետևել են անմիջական ազդեցություն ունեցող օրենսդրական փոփոխությունները (տե՛ս սույն գործի վերաբերյալ վճռի պարբ. 53 և 54): Ցանկալի է, որ կոնվենցիայի մասնակից բոլոր պետությունները դատարանի վճիռները կատարեն այսպիսի ողջամիտ ժամկետում:

5. Բարեփոխված օրենսդրությունն անմիջապես կիրառվել է դիմողի դատավարությունում, և զինվորական դատավորը փոխարինվել է երրորդ քաղաքացիական դատավորով: Պետք է նկատել, որ ողջ դատավարության ընթացքում նրան փոխարինած դատավորը ներկա է գտնվել դատարանում՝ մասնակցելով ազգային անվտանգության դատարանում տեղի ունեցած բոլոր դատական նիստերին: Ազգային անվտանգության դատարանը նաև նշել է, որ ծանոթացել է գործին և արձանագրություններին (տե՛ս վճռի պարբ. 44): Վերջապես, նա ունեցել է լրացուցիչ փաստեր կամ քննություն պահանջելու ազատություն:

6. Այսպիսով, ազգային անվտանգության դատարանի վճիռը և պատիժը հայտարարվել են մի դատարանի կողմից, որն ամբողջապես կազմված է եղել քաղաքացիական դատավորներից, և երեքն էլ մասնակցել են ողջ դատավարությանը: Ասել, որ ռազմական դատավորի ներկայությունը (որը փոխարինվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին համապատասխանելու նպատակով ընդունված նոր կանոններն ուժի մեջ մտնելուց հետո) չի ապահովել ազգային անվտանգության դատարանի անկախության և անաչառության ձևական կողմը, նշանակում է խիստ ընդլայնել ձևական կողմի «տեսությունը»: Սա, մեր կարծիքով, առնվազն, ո՛չ իրատեսական է, ո՛չ էլ նույնիսկ արդար:

7. Ուստի կարծում ենք, որ *Իմրեքի (Imrek)* գործում դատարանը դրսևորել է շատ ավելի իմաստուն մոտեցում: Այդ դեպքում եղել է նույն իրավիճակը. դատարանը հաշվի է առել *Ինջալի* վճռի նկատմամբ Թուրքիայի մարմինների դրական արձագանքը և վճռել, որ բողոքն ակնհայտորեն վատ է հիմնավորված, քանի որ խնդիրը կարգավորվել է դատավարության ընթացքում ռազմական դատավորին քաղաքացիական դատավորով փոխարինելու միջոցով (տե՛ս դիմումի անընդունելիության վերաբերյալ 2003 թ. հունվարի 28-ի որոշումը, դիմում թիվ 57175/00):

8. Բացի այդ, առանց Ինջալի վճռով սահմանված սկզբունքներից հրաժարվելու՝ դժվար է համաձայնել պրն Օջալանին վերաբերող վճռի 116-րդ պարբերությանը: Դիմողն այնտեղ ներկայացված է որպես քաղաքացիական անձնավորություն կամ հավասարեցված է քաղաքացիական անձնավորության: Այնուամենայնիվ, նա մեղադրվել է լուրջ ահաբեկչական հանցագործություններ կատարելու մեջ, որի հետևանքով տեղի են ունեցել հազարավոր մահեր (մեղադրանքներ, որոնք նա ընդունել է գոնե մասամբ): Նա հավասարապես կարող է նկարագրվել որպես

պատերազմի հրծիգ, հետևաբար, դա արդեն պետք է բավարար լիներ, որ նրա դատավարության ամենասկզբում դատարանի երեք անդամներից մեկը լիներ զինված ուժերի ներկայացուցիչ:

9. Համալրման սկզբունքի վրա հիմնված համակարգը հավատարիմ է վերազգային (supranational) դատական մարմնի (ինչպիսին դատարանն է) և այդ համակարգին միացած պետությունների միջև համագործակցությանը: Մեզ չի թվում, որ չափից ավելի բարձր չափորոշիչների սահմանումն այս համագործակցությունը խթանելու և դրան մասնակից պետությունների հասցեին բավարարվածություն հայտնելու լավագույն ճանապարհն է:

Համաձա՞յն եք հակառակ կարծիքին, որ դատարանի մեծամասնությունը չափից ավելի խիստ մոտեցում է դրսևորել անկախության և անաչառության պահանջներն ազգային դատարանի նկատմամբ կիրառելու առումով:

11 Այս դրույթի նպատակների համար որպես «տրիբունալներ» դասակարգվող մարմինների շարքը լայնորեն ներկայացվել է դատարանի կողմից: Օրինակ՝ արդեն տեսել ենք, որ *«Դեմիկոլին ընդդեմ Մալթայի» (Demicoli v Malta)* (վերը՝ էջ 388) գործում դատարանը որոշել է, որ Մալթայի Ներկայացուցիչների պալատը, որը ձգտել է պատժել լրագրողին, անաչառ չի եղել (վերը՝ էջ 388): «Տրիբունալ» հասկացության դատարանի ըմբռնումը բացատրվել է այդ վճռի 39-րդ պարբերությունում:

Վճռի հրապարակային ընթերցումը

1 *«Պրետտոն ընդդեմ Իտալիայի» (Pretto v Italy*, A.71 (1983) 6 EHRR 182) գործում դատարանը միաձայն որոշել է, որ Իտալիայի վճռաբեկ դատարանի՝ վճիռները դատական մատյանում գրանցելու ընթացակարգն այս պահանջի խախտում չի առաջացրել: Առաջին դիմողը, որը վարձակալությամբ վերցված տարածքում զբաղվել է գյուղատնտեսությամբ, վարույթ է սկսել Վիչենցայի տարածքային դատարանում և Վենետիկի վերաքննիչ դատարանում, որպեսզի ձեռք բերի իր մշակած հողը: Այս վերջին դատարանը վճիռ է կայացրել հօգուտ հողի սեփականատիրոջ, որից հետո պրն Պրետտոն օրենքի հարցերով բողոք է ներկայացրել վճռաբեկ դատարան: Նրա բողոքը մերժվել է, և վճռաբեկ դատարանն իր վճիռն ամբողջությամբ ընդգրկել է դատարանի գրանցամատյանում: Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, ի թիվս այլոց, որ տեղի է ունեցել այդ իրավունքի խախտում: Տասներկու կողմ և երեք դեմ ձայներով՝ հանձնաժողովը որոշել է, որ այս դրույթի խախտում տեղի չի ունեցել: Դատարանը վճռել է, որ.

21. Դատական մարմիններում սկսված վարույթի հրապարակային բնույթը՝ վկայակոչված 6-րդ հոդվածի 1-ին կետում, դատավարության կողմերին պաշտպանում է հասարակության հսկողությունից դուրս գտնվող արդարադատության գաղտնի իրականացումից: Սա նաև այն միջոցներից է, որոնցով կարող է պահպանվել վստահությունը ինչպես վերին, այնպես էլ ստորին ատյանի դատարանների նկատմամբ: Արդարադատության իրականացումը դարձնելով տեսանելի՝ հրապարակայնությունը նպաստում է 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված նպատակի՝ արդար դատաքննության իրականացմանը, որի երաշխիքը՝ կոնվենցիայի իմաստով, ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկն է (տե՛ս *Գոլդերի (Golder)* 1975 թ. փետրվարի 21-ի վճիռը, շարք A, թիվ 18, էջ 18, պարբ. 36, նաև *Լոլեսի (Lawless)* 1960 թ. նոյեմբերի 14-ի վճիռը, շարք A, թիվ 1, էջ 13):

22. Թեև Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետություններն ընդունել են այս հրապարակայնության սկզբունքը, նրանց՝ դատական նիստերի կազմակերպմանը և դատավճիռների «հրապարակմանը» վերաբերող օրենսդրական համակարգերի և դատական գործելակերպի շրջանակը և ձևը բացահայտում են որոշ տարբերություններ: Այնուամենայնիվ, խնդրի ձևական կողմը, համեմատած 6-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվող հրապարակայնության պահանջի հետ, երկրորդական նշանակություն ունի: Ժողովրդավարական հասարակությունում արդար դատաքննության նշանակությունը դրդում է դատարանին այս ոլորտում իրականացվելիք վերանայման նպատակով քննության առնել խնդրո առարկա ընթացակարգին առնչվող իրողությունները...

24. Համաձայն քաղաքացիական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի՝ վճռաբեկ դատարանի 1976 թ. հոկտեմբերի 19-ին ընդունած վճիռը դռնբաց դատական նիստի ժամանակ չի հայտարարվել, այլ ընդամենը մուտքագրվել

է դատարանի գրանցամատյանում՝ դրա օպերատիվ դրույթների մասին գրավոր ծանուցումներ ուղարկելով կողմերին... Հետևաբար, պետք է որոշվի՝ իրերի այսպիսի դրությունն առաջացրե՞լ է կոնվենցիայի խախտում, ինչպես պնդում են դիմողը և հանճնաժողովի փոքրամասնությունը:

25. 6-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասության մեջ օգտագործված արտահայտությունները judgment shall be pronounced publicly, le jugement sera rendu publiquement [«դատավճիռը պետք է հայտարարվի հրապարակայնորեն] կարող են նշանակել, որ պահանջվում է վճռի բարձրաձայն ընթերցում: Պարզ է, որ ֆրանսերեն տեքստում օգտագործված է rendu (given) [տրվում է] բառը, մինչդեռ անգլերեն համարժեքում օգտագործված է pronounced (prononce) [արտասանվում է] բառը, սակայն այս չնչին տարբերությունը բավարար չէ սույն դրույթի շարադրման լեզվի թողած տպավորությունը ցրելու համար. ֆրանսերենում rendu publiquement արտահայտությունը, համեմատած rendu public (made public) [հրապարակային դարձնել] արտահայտության հետ, կարող է միանգամայն համարվել prononce publiquement-ի համարժեքը:

Առաջին հայացքից Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետն այս առումով կարող է շատ ավելի խիստ տպավորություն թողնել, քան 1966 թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետը, համաձայն որի՝ որոշումը «պետք է լինի հրապարակային» [shall be made public, sera public]:

26. Այնուամենայնիվ, Եվրոպայի խորհրդի շատ անդամ պետություններ իրենց բոլոր կամ որոշ տեսակի դատարանների, հատկապես վճռաբեկ դատարանի որոշումները հրապարակային դարձնելու համար որոշման բարձրաձայն ընթերցումից բացի ունեն այլ միջոցների կիրառության տևական ավանդույթ, օրինակ՝ գրանցելով դրանք մատյանում, որը մատչելի է հանրության համար: Կոնվենցիայի հեղինակները չեն կարող անտեսել այս փաստը, եթե նույնիսկ դա հաշվի առնելու մտահոգությունը հեշտ չի բացահայտվում նրանց աշխատանքային փաստաթղթերում, ինչպես 1966 թ. դաշնագրի Նախապատրաստական փաստաթղթերում (տե՛ս, օրինակ՝ 1959 թ. դեկտեմբերի 3-ի A/4299 փաստաթուղթը, էջ 12, 15 և 19, պարբ. 38 (բ), 53 և 63 (գ) վերջում):

Հետևաբար, դատարանը պարտավորված չի զգում տալ բառացի մեկնաբանություն: Նա համարում է, որ յուրաքանչյուր դեպքում անդամ պետության ազգային օրենքի շրջանակներում «դատավճռին» վերագրվող հրապարակայնությունը պետք է գնահատվի՝ ելնելով խնդրո առարկա վարույթի առանձնահատուկ հատկանիշներից և հղում կատարելով 6-րդ հոդվածի 1-ին կետի առարկային և նպատակին:

27. ...Վճռաբեկ դատարանն ընդունել է իր որոշումը հրապարակային դատաքննությունից հետո, և թեպետ օրենքի կետերի վերաբերյալ բողոքի մերժման մասին որոշումը չի հայտարարվել դռնբաց դատարանում, յուրաքանչյուր ոք կարող էր խորհրդակցել կամ ըստ պահանջի դրա օրինակը ձեռք բերել դատարանի մատենավորման բաժնից...

Դատարանի կարծիքով՝ այս համատեքստում 6-րդ հոդվածի 1-ին կետով հետապնդվող նպատակը (որը արդար դատաքննության երաշխավորման նպատակով դատարանի նկատմամբ հանրային հսկողություն սահմանելն է) վճռաբեկ դատարանում տեղի ունեցած դատավարության առնչությամբ, վճիռը դատարանի գրանցամատյանում գրանցելու և դրա տեքստը բոլոր ցանկացողներին մատչելի դարձնելու միջոցով, ապահովվել է ոչ նվազ չափով, քան կապահովվեր, եթե բողոքի մերժման կամ նախկին վճռի բեկանման մասին որոշումն ընթերցվեր դռնբաց դատական նիստի ժամանակ, մանավանդ որ այդ ընթերցումը հաճախ սահմանափակվում է զուտ օպերատիվ դրույթների հրապարակումով:

28. Հետևաբար, վճռաբեկ դատարանում որոշումը հրապարակային չհայտարարելը տվյալ դեպքում չի հակասել կոնվենցիային...

Հետևաբար, դատարանը խելամտորեն ուշադրությունը կենտրոնացրել է դատարանի հիմնավորումը և որոշումը հանրային հսկողության տակ դնելու նյութական նպատակի ապահովման վրա:

2 *«Բ-ն և Փ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (B. and P. v United Kingdom)* գործի վերաբերյալ 2001 թ. հուլիսի 24-ի վճռում մշտական գործող դատարանի մեծամասնությունը՝ հինգ կողմ և երկու դեմ ձայներով, որոշել է, որ երեխաների վերաբերյալ քաղաքացիական վճիռների սահմանափակ մատչելիությունը համապատասխանում է վճիռների հրապարակայնության ապահովման պարտավորությանը (գործի հրապարակային դատավարության առանձնահատկությունները ներկայացված են վերը՝ 444-րդ էջում): Ընդհանուր առմամբ, դատարանի՝ երեխաներին վերաբերող կարգադրությունները և որոշումները հրապարակայնորեն չեն կայացվում, սակայն օրինական շահ ունեցող յուրաքանչյուր անձ կարող է դիմել համապատասխան դատարան՝ կարգադրությունների և որոշումների տեքստը տեսնելու և պատճենը ձեռք բերելու թույլտվություն ստանալու համար: Նաև իրավաբանական կարևորություն ունեցող վճիռները, առանց անունների բացահայտման, հրապարակվում են իրավաբանական հաշվետվություններում: Այս գործելակերպի կապակցությամբ դատարանը վճռել է, որ.

48. ....6-րդ հոդվածի 1-ին կետի՝ վճիռների հրապարակմանը վերաբերող սահմանումների բառացի մեկնաբանությունը հանրային հսկողության նպատակների համար ոչ միայն անտեղի է, այլև կարող է նույնիսկ վնասել 6-րդ հոդվածի 1-ին կետի առաջնային նպատակին, այն է՝ արդար դատաքննության ապահովմանը...

49. Այսպիսով, դատարանը եզրակացնում է, որ կոնվենցիան չի պահանջում այս գործերի դեպքում բնակության վայրին վերաբերող վճիռները մատչելի դարձնել հանրությանը, և տվյալ դեպքում 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

Դատավորներ Լուկայդեսը և Թուլքենսն առարկել են, քանի որ համարել են, որ վճիռները հայտարարելու պարտավորությունը 6-րդ հոդվածի 1-ին կետում տրվել է ոչ համապատասխան սահմանումներով:

Կատարյալ աշխարհում բոլոր դատավճիռները պետք է ընդհանուր առմամբ մատչելի լինեն հանրությանը (տեխնիկապես սա շատ ավելի հնարավոր է ժամանակակից թվային աշխարհում)՝ դրանցից ջնջելով համապատասխան անձնական տեղեկությունները (օրինակ՝ ընտանեկան վեճերի դեպքում՝ անձանց ինքնությունը):

Հոդված 6(2)

.....

«Մինելլիի ընդդեմ Շվեյցարիայի» (Minelli v Switzerland A.62 (1983) 5 EHRR 554)

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը լրագրող է եղել, 1972 թ. հունվարին շվեյցարական թերթում հոդված է հրապարակել՝ «Tele-Repertoire SA» ընկերությանը և նրա տնօրեն պրն Վասսին մեղադրելով խաբեության մեջ: Մեղադրանքի հիմքում ընկած են եղել նույն պնդումները, որոնք մի քանի օր առաջ արծարծվել են մեկ այլ թերթում մեկ այլ լրագրողի՝ պրն Ֆուրսթի կողմից: Ընկերությունը և պրն Վասսը զրպարտության մեղադրանքով քրեական բողոք են ներկայացրել երկու լրագրողների դեմ: 1974 թ. հուլիսին պարոն Վասսի պահանջով դիմողի դեմ սկսված վարույթը կասեցվել է մինչև պարոն Ֆուրսթի դեմ սկսված դատավարության ավարտը: 1975 թ. սեպտեմբերին պարոն Ֆուրսթը մեղավոր է ճանաչվել: Նրան նշանակվել է տուգանք և ներկայացվել ծախսերը վճարելու պահանջ: 1976 թ. Ցյուրիխի քրեական դատարանը (Assize Court) վճռել է, որ չի կարող ընթացք տալ դիմողի դեմ բերված բողոքին, որովհետև չորս տարվա վաղեմության ժամկետն անցած է եղել: Այնուամենայնիվ, դատարանը կարգադրել է նրան վճարել դատական ծախսերի երկու երրորդը և բողոքարկողների կատարած 1200 շվեյցարական ֆրանկի ծախսը, քանի որ եթե վաղեմության ժամկետի սահմանափակումը չլիներ, ապա բողոքն «ամենայն հավանականությամբ կհանգեցներ մեղադրյալի դատապարտմանը...»: Դիմողը բողոքել է հանձնաժողովին, որ դատարանի ծախսերը վճարելու կարգադրությունը 6(2) հոդվածի բովանդակած անմեղության կանխավարկածի խախտում է: Հանձնաժողովը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել այդ իրավունքի խախտում:

30. Դատարանի կարծիքով՝ 6-րդ հոդվածի 2-րդ կետը տարածվում է ոչ միայն մեղադրանքի հատկանիշների քննության, այլև ողջ քրեական դատավարության վրա՝ անկախ մեղադրող կողմի ունեցած արդյունքից ...

Ցյուրիխի կանտոնում ծախսերի բաշխման մասին որոշումը զրպարտության մեղադրանքով սկսված վարույթի նորմալ մասն է և դրա որոշ հետևանքները կարգավորելու նպատակ ունի: Այս կապակցությամբ առանձնապես նշանակություն չունի այն հանգամանքը, որ [դրա վերաբերյալ] որոշումը կայացվել է գործի հատկանիշների վերաբերյալ որոշումից հետո, կամ դրա տեքստը շարադրված է առանձին փաստաթղթում:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻՆ

Ա. ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

34. Դիմողը և կառավարությունը համաձայն են, որ գործը շոշափում է սկզբունքի հարց: Արդյոք անմեղության կանխավարկածի հետ համահունչ է կարգադրել անձին, որ նա մուծի դատական ծախսերը և փոխհատուցի կատարված ծախսերը, եթե նա արդարացվել է, կամ եթե գործը դադարեցվել է, կարճվել կամ, ինչպես այս դեպքում, կարճվել վաղեմության ժամկետի պատճառով:

Ինչպես շեշտել է կառավարությունն այլընտրանքային բացատրության մեջ, այս համակարգը, որը որոշ դեպքերում թույլ է տալիս ընդունել նման որոշում, խորապես արմատացած է Շվեյցարիայի իրավական ավանդույթներում. այն ամրագրված է դաշնային օրենսդրության, ինչպես նաև կանտոնների մեծ մասի, ներառյալ Ցյուրիխի կանտոնի օրենքների մեջ և ձևավորվել է նախադեպային իրավունքի հիման վրա: Մյուս կողմից՝ համաձայն պրն Միներլիի, ինչպես ապացույցների, այնպես էլ ծախսերի մասով քրեական վարույթի բոլոր ռիսկերը կրողը պետք է պետությունը լինի:

Հանձնաժողովի կարծիքով՝ խնդրո առարկա համակարգն ինքնին չի կարող հակասել կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետին: Այնուամենայնիվ, խնդիր առաջանում է, եթե դատարանի որոշման պատճառները կամ այլ որոշակի և վճռական փաստեր ցույց են տալիս, որ ծախսերի բաշխումն առաջացել է մեղադրյալի մեղքի գնահատումից:

35. Դատարանը սկզբունքորեն համամիտ է հանձնաժողովի հետ: Այնուամենայնիվ, այն նաև նշում է, որ իր օրենսդրության համաձայն, առանձին դիմումի կապակցությամբ սկսված վարույթի դեպքում այն պետք է սահմանափակի իրեն, որքան հնարավոր է, իրեն ներկայացված որոշակի գործի քննարկումով... Հետևաբար, նա պետք է ոչ թե վերացական որոշում կայացնի Ցյուրիխի օրենսդրության և գործելակերպի, այլ զուտ այն ձևի վերաբերյալ, որով դրանք կիրառվել են դիմողի նկատմամբ:
...

37. Դատարանի կարծիքով՝ անմեղության կանխավարկածը խախտված կլինի, եթե մեղադրյալին վերաբերող դատական որոշումն արտացոլում է նրա մեղավորության մասին կարծիքն այն դեպքում, երբ մեղադրյալը նախկինում օրենքով մեղավոր չի ճանաչվել և, հատկապես, չի ունեցել պաշտպանությունից օգտվելու հնարավորություն: Դա կարող է լինել նույնիսկ պաշտոնական եզրակացության բացակայության պայմաններում: Բավարար է, որ գոյություն ունի որոշակի պատճառաբանություն, ըստ որի՝ մեղադրյալը մեղավոր է: Դատարանը պետք է հավաստիանա, թե արդյոք սա տեղի՞ է ունեցել 1976 թ. մայիսի 12-ին:

38. Քրեական դատարանի պալատի որոշման հիմքում ընկած է եղել Ցյուրիխի քրեական օրենսգրքի 293-րդ հոդվածը, համաձայն որի՝ զրպարտության մասնավոր գործերում որոշակի հանգամանքներում թույլատրվում է հեռանալ այն կանոնից, ըստ որի՝ դատական ծախսերը և մյուս կողմի ծախսերի փոխհատուցումը պետք է վճարվեն պարտվողի կողմից... Առաջնորդվելով Ցյուրիխի նախադեպային իրավունքով՝ պալատը որոշել է, որ սույն գործում «ծախսերի չափը պետք է կախված լիներ այն վճռից, որը կկայացվեր», եթե վաղեմության ժամկետը լրացած չլիներ: Այս կետի առնչությամբ որոշում կայացնելու համար պալատն ուշադրություն է դարձրել չորս հարցի վրա, ... այն փաստի վրա, որ գործը սկզբունքորեն եղել է նույնը, ինչ լրագրող Ֆուրսթի դեմ բացված գործը, որն ավարտվել է 1975 թ. սեպտեմբերի 2-ին նրա դատապարտումով ... պրն Վասսին դիմողի կողմից ներկայացված մեղադրանքների լրջության, դիմողի՝ նրա պնդումները ստուգելու անկարողության և 1972 թ. պրն Վասսի դեմ սկսված հետապնդման բացասական արդյունքի վրա...

Այս պատճառներով, որոնք ներկայացվել են մանրամասն և չեն կարող անջատվել օպերատիվ դրույթներից, ... քրեական դատարանի պալատը եզրակացրել է, որ վաղեմության ժամկետը լրացած չլինելու դեպքում National Zeitung-ի հոդվածը, որը եղել է բողոքի առարկան, ամենայն հավանականությամբ կհանգեցներ դիմողի դատապարտման: Շարադրելով այս պատճառները՝ պալատն ապացուցված է համարել մասնավոր հետապնդողների կողմից դատապարտելի համարված վարքագիծը: Բացի այդ, տվյալ պատճառները հիմնված են եղել երկու այլ գործերով կայացված որոշումների վրա, որոնք թեպետ վերաբերել են միևնույն փաստերին, որպես կողմ չեն ընդգրկել պրն Միներլիին և, ըստ օրենքի, եղել են նրա գործից տարբեր գործեր:

Այս կերպ քրեական դատարանի պալատը ցույց է տվել, որ բավարարված է եղել, որ պրն Միներլին մեղավոր է. մեղադրյալ, որն ինչպես և կառավարությունն է ընդունել, չի օգտվել 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերում նշված երաշխիքներից: Չնայած պաշտոնական եզրակացության բացակայությանը և որոշ զգուշավոր արտահայտությունների գործածությանը («ամենայն հավանականությամբ», «շատ հավանական է»), պալատը տվել է այնպիսի գնահատականներ, որոնք հակասել են անմեղության կանխավարկածին:
...

41. Հետևաբար, տեղի է ունեցել 6(2) հոդվածի խախտում...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են նախագահ Վիարդան և դատավորներ Բինդշեդլեր-Ռոբերտը, Լագերգրենը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Մակդոնալդը և Ռուսոն:

2 Դրանից հետո դատարանը կայացրել է վճիռ, ըստ որի՝ պետական պաշտոնյաների հայտարարությունները դատարանի որոշումների նման կարող են այս իրավունքի խախտում առաջացնել: *«Ալենե դը Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի» (Allenet de Ribemont v France*, A.308 (1995)) գործը վերաբերել է դիմողի տան դիմաց 1976 թ. դեկտեմբերի 24-ին Ֆրանսիայի խորհրդարանի անդամի սպանությանը: Դիմողը զոհի հետ եղել է ֆինանսական գործարքների մեջ: Դեկտեմբերի 29-ին Փարիզի ոստիկանությունը ձերբակալել է դիմողին՝ կապված սպանության հետ: Նույն օրվա ընթացքում ներքին գործերի նախարարը հրավիրել է մամլո ասուլիս, որի ընթացքում խոսել է ոստիկանության բյուջեին առնչվող հարցերից: Նրա կողքին եղել են սպանության հետաքննության մեջ ներգրավված ավագ ոստիկանական պաշտոնյաներ: Ասուլիսի ժամանակ լրագրողը հարցրել է, թե ով է գործի մեջ առանցքային դեմքը, պրն Դուկրեն՝ Փարիզի քրեական հետախուզության բաժնի պետը, պատասխանել է. «Հրահրիչը՝ պրն դը Վարգան, և նրա օգնականը՝ պրն դը Ռիբեմոնը, եղել են սպանության հրահրիչները»: 1977 թ. հունվարի 14-ին դիմողը մեղադրվել է կանխամտածված մարդասպանությանն օժանդակելու և այն հրահրելու մեջ: Երեք տարի անց նրան տրվել է արդարացման օրդեր: Դիմողը պնդել է, որ մամլո ասուլիսի ժամանակ արված հայտարարությունը խախտել է 6(2) հոդվածը: Հանձնաժողովը միաձայն քվեարկել է հօգուտ նրա բողոքի:

32. Կառավարությունը, սկզբունքորեն, վիճարկել է 6-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառելիության հարցը՝ հիմնվելով *«Մինելլին ընդդեմ Շվեյցարիայի» (Minelli v Switzerland)* 1983 թ. մարտի 25-ի վճռի վրա (շարք A, թիվ 62): Նրանք պնդել են, որ անմեղության կանխավարկածը կարող է խախտվել միայն դատական մարմնի կողմից, և հնարավոր է ցույց տալ, որ խախտվել է միայն այն դեպքում, երբ դատապարտման վճռի հանգած դատավարության ավարտին դատարանի պատճառաբանությունից հետևում է, որ նա ամբաստանյալին մեղավոր է ճանաչել նախօրոք:

33. Հանձնաժողովն ընդունել է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը ամենից առավել քրեական վարույթի ընթացակարգային երաշխիք է, սակայն ընդունել է նաև այն տեսակետը, որ դրա շրջանակը շատ ավելի լայն է, քանզի պարտավորություններ է դնում ոչ միայն քրեական մեղադրանքի վերաբերյալ որոշում կայացնող դատարանների, այլև իշխանության այլ մարմինների վրա:

34. Դատարանի խնդիրն է որոշել, թե արդյոք այս դեպքում եղած իրավիճակը ներգործություն ունեցե՞լ է դիմողի՝ 6-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված իրավունքի վրա...

35. 6-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված անմեղության կանխավարկածը 1-ին կետով նախատեսված արդար քրեական դատավարության տարրերից մեկն է (այլ աղբյուրների շարքում տե՛ս նախկինում մեջբերված *Մինելլիի (Minelli)* վճիռը, էջ 15, պարբ. 27): Այն խախտված կլինի, եթե քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձին վերաբերող դատական որոշումն անդրադարձնում է այնպիսի կարծիք, ըստ որի՝ նա մեղավոր է ճանաչվել նախքան ապացուցելը, որ մեղավոր է օրենքով: Նույնիսկ պաշտոնական եզրակացության բացակայության պայմաններում բավարար է լոկ այն, որ գոյություն ունի որոշակի պատճառաբանություն, որի հիման վրա դատարանը մեղադրյալին համարում է մեղավոր (տե՛ս *Մինելլիի (Minelli)* արդեն մեջբերված վճիռը, էջ 18, պարբ. 37):

Այնուամենայնիվ, 6-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակը չի սահմանափակվում կառավարության կողմից նշված հնարավորությամբ... Բացի այդ, դատարանը կրկնում է, որ կոնվենցիան պետք է մեկնաբանվի այն ձևով, որը երաշխավորի գործնական և գործող, ոչ թե տեսական և վերացական իրավունքները...

36. Դատարանը համարում է, որ անմեղության կանխավարկածը կարող է խախտվել ոչ միայն դատավորի կամ դատարանի, այլև այլ պետական մարմինների կողմից:

37. 1976 թ. դեկտեմբերի 29-ին տեղի ունեցած մամլո ասուլիսը ժամանակի առումով համընկել է պրն Ալենե դը Ռիբեմոնի՝ ոստիկանության կողմից ձերբակալվելու պահի հետ... Թեպետ նրան դեռևս կանխամտածված մարդասպանությանն օժանդակելու և այն հրահրելու մեղադրանքներ ներկայացված չեն եղել, ... նրա ձերբակալությունը և ոստիկանական կալանքը կազմել են մի քանի օր առաջ Փարիզի հետաքննիչ դատավորի կողմից սկսված դատական քննության մասը, որի արդյունքում նա դարձել է 6-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով «քրեական հանցագործություն կատարելու մեջ

մեղադրվող» անձնավորություն: Ներկա եղած երկու բարձրաստիճան ոստիկանական պաշտոնյաները կատարել են գործի քննությունը: Դատական հետաքննությանը զուգահեռ արված նրանց դիտողությունները, որոնք պաշտպանվել են ներքին գործերի նախարարի կողմից, բացատրվել են այդ հետաքննության գոյությամբ և ուղղակի կապ են ունեցել դրա հետ: Հետևաբար, այս գործի վրա տարածվում է 6-րդ հոդվածի 2-րդ կետը:

Բ. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻՆ

1. Մամլո ասուլիսի ժամանակ գործի հիշատակումը

38. Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորվող խոսքի ազատությունն ընդգրկում է տեղեկություններ ստանալու և տարածելու ազատությունը: 6-րդ հոդվածի 2-րդ կետը չի կարող, հետևաբար, արգելել իշխանություններին տեղյակ պահել հանրությանը տեղի ունեցող քրեական հետաքննության մասին, սակայն պահանջում է, որ նրանք դա անեն անհրաժեշտ շրջահայացությամբ և զգուշավորությամբ, եթե անմեղության կանխավարկածը պետք է հարգվի:

2. Գանգատում ներկայացված հայտարարությունների բովանդակությունը

39. Ինչպես դիմողը, այնպես էլ հանձնաժողովը համարել են, որ ներքին գործերի նախարարի, ինչպես նաև նրա ներկայությամբ և նրա թույլտվությամբ գործի քննությամբ զբաղվող ոստիկանության ավագ պաշտոնյայի և քրեական հետախուզության բաժնի պետի կողմից արված դիտողությունները չեն համապատասխանել անմեղության կանխավարկածին: Հանձնաժողովը նկատել է, որ ըստ դրանց՝ պրն Ալենե դը Ռիբեմոնը համարվել է պրն դը Բրոգլիի սպանության հրահրիչներից մեկը:

40. Կառավարությունը պնդել է, որ ընթացքի մեջ գտնվող քրեական վարույթի այդ տեղեկությունները եղել են տեղեկատվության բաժնի պետի տրամադրության տակ և այնպիսի տեղեկություններ չեն եղել, որոնք կխախտեին անմեղության կանխավարկածը, քանի որ դրանք չեն պարտադրվել դատարաններին և հետագա հետաքննության արդյունքում կարող էին հերքվել: Գործի փաստերը հիմնավորել են սա, քանի որ դիմողին պաշտոնական մեղադրանք առաջադրվել է մամլո ասուլիսից երկու շաբաթ հետո, և հետաքննիչ դատավորն ի վերջո եզրակացրել է, որ անձին պատասխանատվության ենթարկելու հիմքեր չկան:

41. Դատարանը նկատում է, որ սույն գործում Ֆրանսիայի ոստիկանության ամենաբարձրաստիճան պաշտոնյաներից ոմանք, առանց սահմանափակումներ կամ վերապահումներ անելու, որպես սպանության հրահրիչներից և, այդպիսով, որպես սպանության մասնակիցներից մեկի, տվել են պրն Ալենե դը Ռիբեմոնի անունը... Սա դիմողի մեղավորության մասին հստակ հայտարարություն է, որը, նախ և առաջ, դրդել է հանրությանը մտածել, որ նա մեղավոր է և, երկրորդ, առաջ է անցել իրավասու դատական մարմնի կողմից փաստերի գնահատումից: Հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում...

Ինչ եք կարծում, դատարանը խախտում կհայտնաբերե՞ր, եթե հայտարարություններն արված լինեին ոստիկանության կրտսեր սպաների կողմից:

3 *«Բուտկևիչիուսն ընդդեմ Լիտվայի» (Butkevicius v Lithuania)* գործի (2002 թ. մարտի 26-ի վճիռ) կապակցությամբ որոշվել է, որ Լիտվայի Սեյմասի (խորհրդարանի) նախագահի կողմից արված մեկնաբանություններն առաջացրել են այս դրույթի խախտում: Դիմողը եղել է պաշտպանության նախարար և Սեյմասի անդամ 1996-2000 թթ.: 1997 թ. նրան ձերբակալել են հետախուզության ծառայողները, երբ գործարար աշխարհի ներկայացուցչից վերցնելիս է եղել 15000 դոլարի գումար: Բուտկևիչիուսի դեմ քրեական վարույթ սկսելուց հետո նախագահը մամուլում որոշ մեկնաբանություններ է արել նրա հասցեին՝ նաև անվանելով նրան «կաշառակեր»: Խաբեությամբ սեփականության տիրանալու փորձ անելու մեղադրանքով դիմողն ավելի ուշ դատապարտվել է հինգ տարվա ազատազրկման: Դատարանը միաձայն ընդունել է, որ.

50. …Այն հանգամանքը, որ այդ հանցագործության կատարման ժամանակ դիմողը եղել է կարևոր քաղաքական գործիչ, պահանջել է պետական պաշտոնյաներից, ներառյալ գլխավոր դատախազից և Սեյմասի նախագահից, որ տեղյակ պահեն հանրությանը տեղի ունեցած հանցագործության և դրան հետևած քրեական վարույթի մասին: Այնուամենայնիվ, դատարանը չի կարող համաձայնել կառավարության այն փաստարկին, որ այս հանգամանքը կարող է արդարացնել պաշտոնյաների՝ մամուլին տված հարցազրույցներում օգտագործած բառերը:

...

53. ...Թեև Սեյմասի նախագահի վիճելի դիտողություններն ամեն անգամ համառոտ են եղել և արվել առանձին առիթներով, դատարանի կարծիքով, դրանք հավասար են եղել պետական պաշտոնյայի կողմից դիմողի մեղավորության

մասին արված հայտարարության, որը ծառայել է հանրության մեջ նրա մեղավորության մասին կարծիք ստեղծելու նպատակին և առաջ է անցել իրավասու դատական մարմնի կողմից փաստերի գնահատումից:

54. Հետևաբար, տեղի է ունեցել կոնվենցիայի 6(2) հոդվածի խախտում:

Հստակ է, որ նախագահի դիրքորոշումը, լինելով պետական պաշտոնյայի դիրքորոշում, նրան ենթակա է դարձրել 6(2) հոդվածի ազդեցությանը: Դիմողի քաղաքական ընդդիմախոսների կողմից համանման մեկնաբանություններն այս դրույթի խախտում չէին առաջացնի:

4 Դատարանը նաև որոշել է, որ սահմանված հանգամանքներում ազգային քրեական օրենքի դրույթների համաձայն՝ անձանց նկատմամբ կիրառված օրենքի կամ փաստերի կանխավարկածները կարող են համատեղելի լինել 6(2) հոդվածի հետ: Օրինակ՝ *«Սալաբիակուն ընդդեմ Ֆրանսիայի» (Salabiaku v France*, A.141-A (1988) 13 EHRR 379) գործում դիմողը գնացել է «Ռոյսսի» օդանավակայան՝ ծանրոց ստանալու: Նա չի կարողացել գտնել իր ծանրոցը, սակայն նրան ցույց են տվել մի ճամպրուկ (որը ոչ ոք չէր վերցրել, և որի վրա անուն չկար): Ավիաուղիների աշխատակիցը խորհուրդ է տվել նրան թողնել ճամպրուկն այնտեղ, որտեղ դրված է եղել: Այնուամենայնիվ, դիմողը վերցրել է ճամպրուկը և անցել «կանաչ» (մաքսային հայտարարագրման ոչ ենթակա ուղեբեռի համար նախատեսված) մաքսային ելքով: Օդանավակայանի շենքից դուրս նրան կանգնեցրել են մաքսատան աշխատակիցները, բացել նրա ճամպրուկը և հայտնաբերել կրկնակի գրպան՝ այնտեղից հանելով 10 կգ հաշիշ: Ի վերջո, դիմողը դատապարտվել է արգելված ապրանքների մաքսանենգ տեղափոխման համար, քանի որ «... յուրաքանչյուր անձ, ով տիրապետում է այնպիսի ապրանքների, որոնք նա Ֆրանսիա է բերել առանց դրանց համար մաքսային հայտարարագիր ներկայացնելու, պատասխանատվություն է կրում օրենքի առջև, եթե չի կարողանում ապացուցել սեփական անձն արդարացնող անհաղթահարելի ուժի (force majeure) առկայությունը: Անհաղթահարելի ուժ կարող է առաջանալ միայն մարդու վերահսկողությունից դուրս գտնվող իրադարձության պատճառով, որը ո՛չ հնարավոր էր կանխատեսել, ո՛չ էլ կանխել...»: Դիմողը բողոքել է, որ մաքսային օրենսգրքի հիման վրա իր դատապարտումը 6(2) հոդվածի խախտում է: Հանձնաժողովը, ինը կողմ և չորս դեմ ձայներով, որոշել է, որ այս իրավունքի խախտում տեղի չի ունեցել: Դատարանը միաձայն մերժել է դիմողի գանգատը:

27. Ինչպես նշել են կառավարությունը և հանձնաժողովը, պայմանավորվող պետությունները սկզբունքորեն ազատ են կիրառելու քրեական օրենքն այնպիսի արարքի նկատմամբ, որը չի կատարվել կոնվենցիայով պաշտպանվող իրավունքներից որևէ մեկի սովորական կիրառմամբ (տե՛ս 1976 թ. հունիսի 8-ի *Էնգելի* վճիռը, շարք A, թիվ 22, էջ 34, պարբ. 81) և, հետևաբար, ազատորեն կարող են սահմանել դրա հետևանքով տեղի ունեցած իրավախախտման բաղկացուցիչ տարրերը: Մասնավորապես, և դարձյալ սկզբունքորեն, որոշակի հանգամանքներում հասարակ կամ օբյեկտիվ եղելությունները պայմանավորվող պետություններում կարող են ենթակա լինել տուգանքի կիրառման՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք առաջացել են քրեական մտադրությունի՞ց, թե՞ անբաւհիմացությունից: Այսպիսի իրավախախտումների օրինակներ հանդիպում են անդամ պետությունների օրենքներում:
...

28. ...Փաստական կամ օրենքի կանխավարկածներ գործում են յուրաքանչյուր իրավական համակարգում: Հստակ է, որ կոնվենցիան սկզբունքորեն դեմ չէ այս կանխավարկածներին: Քրեական օրենքի առումով այն, այնուամենայնիվ, պահանջում է, որ պայմանավորվող պետությունները դուրս չգան որոշակի շրջանակներից: Եթե, ինչպես և կարծել է հանձնաժողովը (զեկույցի պարբ. 64), 6-րդ հոդվածի 2-րդ կետում շարադրված երաշխիքը հաշվի առնվեր սոսկ դատարանների կողմից, դատական վարույթի ընթացքում, ապա կստացվեր, որ դրա պահանջները գործնականում համընկնում են 1-ին կետով սահմանված անաչառության պարտավորության հետ: Ամենից առավել, եթե «համաձայն օրենքի» բառերը մեկնաբանվելու լինեին այնպես, որ դրանք վերաբերում են բացառապես ազգային օրենքին, ապա ազգային օրենսդրությունը ազատորեն կարող էր զրկել դատավարությունն իրականացնող դատարանին գնահատում կատարելու իրական իշխանությունից և իմաստազրկել անմեղության կանխավարկածը: Այսպիսի իրավիճակը չի կարող համապատասխանել 6-րդ հոդվածի առարկային և նպատակին, որոնք, ուղղված լինելով արդար դատաքննության իրավունքի և, մասնավորապես, կանխավ անմեղ համարվելու իրավունքի պաշտպանությանը, նպատակ ունեն պահպանել օրենքի գերակայության այս հիմնարար սկզբունքը (տե՛ս, ի թիվս այլոց, *«Սանդի թայմզի»* (Sunday Times) 1979 թ. ապրիլի 26-ի վճիռը, շարք A, թիվ 30, էջ 34, պարբ. 55):

6-րդ հոդվածի 2-րդ կետում, հետևաբար, կարևորվում է քրեական օրենքով նախատեսված փաստական կամ օրենքի կանխավարկածների հարցը: Այն պահանջում է, որ պետություններն ամփոփեն դրանք ողջամիտ սահմաններում՝ հաշվի առնելով խնդրո առարկայի կարևորությունը և պահպանելով պաշտպանության կողմի իրավունքը: Դատարանն առաջարկում է քննության առնել՝ այդ սահմանները խախտվե՞լ են ի վնաս պարոն Սալաբիակուի:

...

30. ...1981 թ. մարտի 27-ի և 1982 թ. փետրվարի 9-ի վճիռներից պարզ է, որ խնդրո առարկա դատարանները զգուշավորություն են դրսևորել, որպեսզի չդիմեն մաքսային օրենսգրքի 392-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված կանխավարկածի ինքնաշխատ կիրառությանը: Ինչպես նկատել է վճռաբեկ դատարանն իր 1983 թ. փետրվարի 21-ի վճռում, նրանք կիրառել են իրենց գնահատման լիազորությունները «կողմերի ներկայացրած փաստերի հիման վրա»: [Ճամպրուկին] տիրապետելու փաստի հիման վրա նրանք առաջ են քաշել «կանխավարկած, որն այնուհետև որևէ փաստով չի հերքվել, ինչպես և չի հերքվել որևէ իրադարձությամբ, որի պատասխանատվությունը չի կարող վերագրվել իրավախախտումը կատարած անձին, կամ որից նա չէր կարող խույս տալ»... Բացի այդ, ինչպես ասել է կառավարությունը, գործի հանգամանքներից ելնելով՝ ազգային դատարանները բացահայտել են որոշակի «մտադրության տարր», թեպետ օրենքով նրանք պարտավորություն չեն ունեցել այդպես վարվել դիմողին դատապարտելու համար:

Սրանից հետևում է, որ այս դեպքում Ֆրանսիայի դատարանները չեն կիրառել մաքսային օրենսգրքի 392-րդ հոդվածի 1-ին կետն այնպիսի եղանակով, որը հակասել է անմեղության կանխավարկածին...

Հետևաբար, խիստ պատասխանատվության (strict liability) ենթակա արարքները պարտադիր չէ, որ անհամատեղելի լինեն կոնվենցիայի հետ:

5 *«Թելֆներն ընդդեմ Ավստրիայի» (Telfner v Austria)* (2001 թ. մարտի 20-ի վճիռ) գործը մի դեպք է, երբ դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել ապացույցի բեռի անընդունելի վերաբաշխում պաշտպանական կողմի վրա: Մեքենայի հարվածից անձը ստացել է թեթև մարմնական վնասվածք: Զոհը նկատել է մեքենայի համարանիշը, սակայն չի կարողացել հաստատել վարորդի ինքնությունը: Հաջորդ առավոտ ոստիկանությունը գտել է դիմողի մոր անունով գրանցված մեքենան, որը կայանված է եղել ընտանիքին պատկանող տան դիմաց: Մայրը տեղեկացրել է ոստիկանությանը, որ ինքը չի եղել մեքենայի ղեկի մոտ, և դիմողը դեռ տանը չէ: Նա ասել է, որ մեքենայից հաճախ օգտվում են իրենց ընտանիքի մյուս անդամները: Դրանից հետո դիմողը մեղադրվել է անփութության պատճառով մարմնական վնասվածք պատճառելու համար: Նա իր մեղքը չի ընդունել և պնդել է, որ պատահարի ժամանակ մեքենայի ղեկի առաջ չի եղել: Նրա մայրը և քույրն օգտվել են ցուցմունք չտալու իրենց իրավունքից: Շրջանային դատարանը մեղավոր է ճանաչել դիմողին այն հիմքով, որ համաձայն տեղական ոստիկանության տրամադրած տեղեկության՝ «...հայտնի է, որ այդ մեքենայի ղեկի առաջ սովորաբար լինում է մեղադրյալը...»: Ուստիև շրջանային դատարանը նրան նշանակել է 24.000 ավստրիական շիլինգի տուգանք: Նրա բողոքը տարածքային դատարանը մերժել է: Եվրոպական դատարանը միաձայն որոշել է, որ.

18. Տվյալ դեպքում ինչպես շրջանային, այնպես էլ տարածքային դատարանը սկզբունքորեն հիմնվել են տեղական ոստիկանության բաժնի հաշվետվության վրա, համաձայն որի՝ դիմողը եղել է մեքենայի հիմնական վարողը և պատահարի ժամանակ տանը չի եղել: Այնուամենայնիվ, դատարանը չի կարող եզրակացնել, որ ապացույցների այս տարրերը, որոնք առավել ևս չեն հաստատվել մրցակցային ձևով տեղի ունեցած դատավարության ընթացքում ներկայացված ապացույցներով, հիմնավորել են դիմողի մեղավորությունը, որի դեպքում կպահանջվեր, որ նա նույնպես բացատրություններ տար: Այս համատեքստում դատարանը նկատում է, մասնավորապես, որ պատահարի զոհն ի վիճակի չի եղել ճանաչելու մեքենայի վարորդին, ոչ էլ նույնիսկ ի վիճակի է եղել ասելու՝ վարորդը կի՞ն է եղել, թե՞ տղամարդ, բացի այդ, տարածքային դատարանը վարույթի մեջ նոր նյութեր ընդգրկելուց հետո եզրակացրել է, որ մեքենան վարել է նաև դիմողի քույրը: Առանց նրա դեմ համոզիչ և բավարար ապացույցներ ներկայացնելու, նրանից բացատրություններ պահանջելով՝ դատարաններն ապացույցի բեռը մեղադրական կողմից փոխանցել են պաշտպանության կողմին:

...

20. Ամփոփելով՝ դատարանը համարում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 6(2) հոդվածի խախտում:

6 Չգալի մեծամասնությամբ՝ հինգ կողմ և երկու դեմ ձայներով, *«Ֆիլիպսն ընդդեմ Մեծ Բ-ի» (Phillips v UK)* գործում (որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2001 թ. հուլիսի 5-ին) դատարանը եզրակացրել է, որ

6(2) հոդվածը չի վերաբերում թմրանյութերի մաքսանենգությամբ զբաղվելու համար դատապարտված անձի դեմ սկսված ֆինանսական միջոցների բռնագրավման վարույթին: Դիմողը մեղավոր է ճանաչվել մեծ քանակությամբ հաշիշի խեժ ՄԹ ներմուծելու համար և դատապարտվել ինը տարվա ազատազրկման: Իր դատապարտումից քիչ ժամանակ անց՝ 1996 թ. հունիսին, համաձայն 1994 թ. «Թմրանյութերի ապօրինի շրջանառության մասին» օրենքի, մաքսային և ակցիզային գերատեսչությունները նրա դեմ սկսել են բռնագրավման վարույթ: Ըստ այդ օրենքի՝ քրեական վարույթ սկսելուց առաջ վեց տարվա ընթացքում թմրանյութերի առևտրով զբաղված և դատապարտված անձի ձեռք բերած ողջ ունեցվածքը և համարժեք վճարումներն առաջացել են թմրանյութերի առևտրի հասույթից: Ունեցվածքի/համարժեք վճարումների արժեքը ենթակա է դատական կարգով բռնագրավման այն դատարանի կողմից, որը քննել է օրինազանցի գործը, եթե վերջինս, կրելով հավանականությունների հիման վրա ապացույցի հիմնավորման բեռը, չի հիմնավորում, որ ունեցվածքը/կատարված համարժեք վճարումների գումարները ձեռք են բերվել այլ ճանապարհով: 1996 թ. դեկտեմբերին դատավարությունն իրականացնող դատարանը կարգադրել է դիմողին վճարել 91.400 ֆունտ ստեռլինգ՝ որպես թմրանյութերի վաճառքից գոյացած միջոցների հաշվին ձեռք բերված ունեցվածքի փոխհատուցում, իսկ չվճարելու դեպքում կրել ևս երկու տարվա ազատազրկման պատիժ: Եվրոպական դատարանում դիմողը վիճարկել է, որ օրենսդրական կանխավարկածը, որը կիրառվել է դատաքննությունն իրականացնող դատարանի կողմից, խախտել է իր անմեղության կանխավարկածը: Դատարանը վճռել է, որ.

34. ...1994 թ. օրենքով սահմանված ընթացակարգի նպատակն է հնարավորություն տալ ազգային դատարանին գնահատելու այն գումարը, որը պետք է ընդգրկվի բռնագրավման կարգադրության մեջ: Դատարանը կարծում է, որ այս ընթացակարգը համարժեք է եղել դատարանի կողմից հավուր պատշաճի դատապարտված օրինազանց անձի նկատմամբ կիրառվելիք տուգանքի չափի կամ ազատազրկման տևողության որոշման ընթացակարգին...

35. ...Երբ մեղադրյալի մեղքը հավուր պատշաճի ապացուցվում է, ապա պատժի որոշման գործընթացի շրջանակներում 6(2) հոդվածը չի կարող կիրառվել դիմողի բնավորության և պահվածքի վերաբերյալ արվող հայտարարությունների նկատմամբ, եթե այդ մեղադրանքները բնույթով և աստիճանով այնպիսին չեն, որոնք կոնվենցիայի անկախ իմաստով առաջացնում են նոր «մեղադրանք»...

36. Հետևաբար, ամփոփելով, դատարանը վճռում է, որ 6(2) հոդվածը չի տարածվել դիմողի դեմ սկսված բռնագրավման վարույթի վրա:

Թմրանյութերի հանցագործների ունեցվածքի նկատմամբ ավելի վաղ կիրառված բռնագրավման իրավասությունները քննարկված են 7-րդ հոդվածի առնչությամբ՝ 503-րդ էջում:

7 Նույն միջադեպի կապակցությամբ սկսված քրեական և փոխհատուցման վարույթների միջև կապն ուսումնասիրվել է *«Y-ն ընդդեմ Նորվեգիայի» (Y. v Norway)* գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2003 թ. փետրվարի 11-ին: Դիմողը 18 տարեկանում կասկածվել է իր 17 տարեկան զարմուհու նկատմամբ բռնի սեռական հանցագործություն կատարելու մեջ, որի հետևանքով վերջինս մահացել է: Շրջանային դատարանը նրան մեղավոր է ճանաչել սպանության համար և դատապարտել տասնչորս տարվա ազատազրկման: Ըստ «Վնասի փոխհատուցման մասին» 1969 թ. օրենքի՝ շրջանային դատարանը կարգադրել է, որ նա զոհի ծնողներին վճարի փոխհատուցում՝ 100.000 նորվեգական կրոն: Օրենքում ամրագրված է, որ այլ անձանց թվում մահացած անձի ծնողները կարող են կանխամտածված կամ կոպիտ անփութության պատճառով չկանխամտածված սպանություն գործած ենթադրյալ հանցագործից պահանջել նյութական/ոչ նյութական վնասի փոխհատուցում: Անկախ ենթադրյալ օրինազանցի դեմ բերված քրեական վարույթի արդյունքից՝ փոխհատուցման վարույթում հավանականությունների հիման վրա ապացույցի հիմնավորման բեռն ընկել է պահանջատերերի վրա: Դիմողը բողոք է ներկայացրել բարձր դատարանին և արդարացվել երդվյալ ատենակալների կողմից: Այնուամենայնիվ, զոհի ծնողների փաստաբանի և դիմողի բացատրություններից հետո բարձր դատարանը վճռել է, որ շրջանային դատարանի փոխհատուցման որոշումը պետք է հաստատվի: Դիմողի՝ գերագույն դատարան ներկայացրած բողոքը մերժվել է: Այնուհետև նա գանգատ է ներկա-

յացրել Ստրասբուրգ՝ պնդելով, որ իրեն ներկայացված փոխհատուցման պահանջի հաստատումը խախտել է 6(2) հոդվածի շրջանակներում իր անմեղության կանխավարկածը: Պալատը միաձայն վճռել է, որ.

39. Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի «քրեական մեղադրանքի» հայեցակարգն անկախ հայեցակարգ է: Համաձայն դատարանի կողմից հաստատված նախադեպային իրավունքի՝ գոյություն ունեն երեք չափանիշներ, որոնք պետք է հաշվի առնվեն, երբ 6-րդ հոդվածի նպատակով անձը «մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու համար»: Դրանք են՝ ազգային օրենքի շրջանակներում վարույթի դասակարգումը, դրա բուն էությունը և պատժի սաստկությունը, որը կրելու ռիսկին է ենթարկվում դիմողը (տե՛ս *«Ֆիլիպսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Phillips v the United Kingdom)*...): Բացի այդ, 6-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակը չի ընդգրկում միայն անավարտ քրեական վարույթը (տե՛ս *«Ալենե դը Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի» (Allenet de Ribemont v France)* 1995 թ. փետրվարի 10-ի վճիռ, շարք A, թիվ 308, էջ 16, պարբ. 35): Որոշ դեպքերում դատարանը նաև որոշել է, որ այդ դրույթը տարածվում է այդպիսի վարույթների դադարեցումից հետո ընդունված դատական որոշումների վրա (տե՛ս, մասնավորապես, հետևյալ վճիռները. *«Մինելլին ընդդեմ Շվեյցարիայի» (Minelli v Switzerland)*, 1983 թ. մարտի 25-ի վճիռ, շարք A, թիվ 62, և *«Լուցը, Էնգլերտը և Նոլկենբոկհոֆն ընդդեմ Գերմանիայի» (Lutz, Englert and Nolkenbockhoff v Germany)*, 1987 թ. օգոստոսի 25-ի վճիռ, շարք A, թիվ 123) կամ արդարացումից հետո... Այդ վճիռները վերաբերել են մեղադրյալի կողմից դատական և մեղադրող կողմի ծախսերի հատուցման, նրա կամ նրա հետնորդների անհրաժեշտ ծախսերի վճարման կամ նախնական կալանքի տակ պահվելու դիմաց փոխհատուցում ստանալու հարցերին, որոնց առնչությամբ որոշվել է, որ դրանք քրեական վարույթի հետևանքներ են և ընթանում են դրան զուգահեռ:

Հետևաբար, դատարանը քննության է առնելու, թե տվյալ դեպքում փոխհատուցման վարույթն առաջացել է դիմողի դեմ ուղղված «քրեական մեղադրանքի՞ց», և եթե ոչ, ապա փոխհատուցման գործն ամեն դեպքում այնպիսի՞ կապ է ունեցել քրեական վարույթի հետ, որ նրա վրա տարածվում է 6-րդ հոդվածի 2-րդ կետը:

40. Անդրադառնալով նշված չափանիշներից առաջինին՝ ազգային օրենքի շրջանակներում վարույթի դասակարգմանը, դատարանն ուշադրություն է դարձնում դիմողի փաստարկի վրա, որ ձևական տեսանկյունից նա համարվել է «մեղադրյալ» այնքան ժամանակ, քանի դեռ նրա արդարացումն իրավաբանական ուժ չի ստացել: Այնուամենայնիվ, սա վերաբերել է միայն նախնական քրեական մեղադրանքներին (նա արդարացվել է) և որևէ կապ չի ունեցել փոխհատուցման պահանջի հետ: Դատարանը նկատում է, որ վերջինիս իրավական հիմքն ամփոփված է 1969 թ. «Վնասի փոխհատուցման մասին» օրենքի 3-րդ բաժնում, որը սահմանում է անձնական վնասի մասին քաղաքացիական իրավախախտումների վերաբերյալ ազգային օրենքի ընդհանուր սկզբունքները: 3-5-րդ հոդվածի շարադրանքից և Նորվեգիայի նախադեպային իրավունքից պարզ է, որ քրեական պատասխանատվությունը փոխհատուցում վճարելու պատասխանատվության նախապայման չէ: Եթե նույնիսկ, ինչպես այս դեպքում, զոհը որոշել է փոխհատուցման հայցը միացնել քրեական դատավարությանը, համաձայն քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի, պահանջը, միևնույն է, համարվելու է «քաղաքացիական» պահանջ: Այսպիսով, դատարանը համարում է, որ համապատասխան ազգային օրենքի շրջանակներում խնդրո առարկա փոխհատուցման պահանջը չի դիտարկվել որպես «քրեական մեղադրանք»:

41. Ինչ վերաբերում է երկրորդ և երրորդ չափանիշներին, որոնք են վարույթի բնույթը և պատժի սաստկությունը (այսինքն՝ տվյալ դեպքում պատժիչ բնույթի փոխհատուցման ենթադրյալ նշանակումը), դատարանը նկատում է, որ թեպետ հանգամանքների բերումով քաղաքացիական պատասխանատվության պայմանները որոշ դեպքերում կարող են համընկնել քրեական պատասխանատվության պայմանների հետ, միևնույն է, քաղաքացիական պահանջը պետք է որոշվի այն սկզբունքների հիման վրա, որոնք համապատասխանում են իրավախախտումների քաղաքացիական օրենքին: Փոխհատուցման գործի համար քրեական վարույթի արդյունքը որոշիչ նշանակություն չի ունեցել: Ջոհն ունեցել է փոխհատուցում պահանջելու իրավունք՝ անկախ այն հանգամանքից, որ ամբաստանյալը դատապարտվել է կամ, ինչպես այս դեպքում, արդարացվել, և փոխհատուցման հարցը պետք է ենթակա լիներ առանձին իրավական գնահատման՝ հիմք ընդունելով չափանիշները և փաստական չափորոշիչները, որոնք որոշ կարևոր կողմերով տարբերվել են քրեական պատասխանատվության նկատմամբ կիրառվող չափանիշներից և փաստական չափորոշիչներից:

Դատարանի կարծիքով՝ այն փաստը, որ արարքը, որն իրավախախտումների քաղաքացիական օրենքի սահմաններում կարող է առաջացնել քաղաքացիական փոխհատուցման պահանջ, ընդգրկված է նաև հանցագործության օբյեկտիվ բաղկացուցիչ տարրերի մեջ, չի կարող, անկախ դրա ծանրությունից, հիմք լինել քաղաքացիական իրավախախտման համատեքստում արարքի կատարման համար ենթադրաբար պատասխանատու անձին «քրեական արարքի մեջ մեղադրվող անձ» համարելու համար: Այն փաստը, որ քրեական դատավարության ապացույցներն օգտագործվել են արարքի քաղաքացիական իրավունքի հետևանքները որոշելու համար, նույնպես չի պաշտպանում այսպիսի բնորոշումը: Այլ պարագայում, ինչպես ճշմարտացիորեն նշել է կառավարությունը, 6-րդ հոդվածի 2-րդ կետը քրեական արդարացմանը կտա իրավախախտումների քաղաքացիական օրենքով զոհի փոխհատուցում պահանջելու իրավունքի կանխման անցանկալի ազդեցություն՝ առաջացնելով կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված

դատարան մուտք գործելու նրա իրավունքի կամայական կամ անհամաչափ սահմանափակում: Սա կրկին անցանկալի առավելություն կտա արդարացված մեղադրյալին, որը կարող է պատասխանատու համարվել քաղաքացիական ապացույցների հիման վրա և խուսափել իր գործողությունների համար պատասխանատվություն կրելուց: Այսպիսի լայն մեկնաբանումը չի կարող պաշտպանվել ո՛չ 6-րդ հոդվածի 2-րդ կետի շարադրանքով, ո՛չ էլ կոնվենցիայի մասնակից երկրների ազգային իրավական համակարգերով: Հակառակը, բազմաթիվ պայմանավորվող պետություններում արդարացումը չի բացառում նույն փաստի առնչությամբ քաղաքացիական պատասխանատվության հաստատումը:

Այսպիսով, դատարանը որոշում է, որ թեպետ արդարացումը քրեական պատասխանատվությունից պետք է պահպանվի փոխհատուցման վարույթում, այն չպետք է խանգարի նույն հանգամանքներից, սակայն նվազ խիստ ապացույցների բեռի հիման վրա առաջացած փոխհատուցում վճարելու քաղաքացիական պատասխանատվության հաստատմանը (տե՛ս *mutatis mutandis «X-ի ընդդեմ Ավստրիայի» (X v Austria)* թիվ 9295/81, 1992 թ. հոկտեմբերի 6-ի հանձնաժողովի որոշում), Որոշումներ և զեկույցներ (D.R.) 30, էջ 227, *«Մ. Ս.-ի ընդդեմ Միացյալ Թագավորության» (M.C. v the United Kingdom)*, թիվ 11882/85, 1987 թ. հոկտեմբերի 7-ի որոշում, D.R. 54, էջ 162):

42. Այնուամենայնիվ, եթե փոխհատուցման մասին ազգային որոշումը ներառում է այնպիսի նկատառում, որը քրեական պատասխանատվություն է վերագրում պատասխանող կողմին, այն կարող է առաջացնել կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակների մեջ մտնող խնդիր:

43. Հետևաբար, վարույթի նկատմամբ 6-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառությունն արդարացնելու համար դատարանը քննության է առնելու այն հարցը, թե արդյոք ազգային դատարանները գործե՞լ են այնպիսի եղանակով կամ արդյոք իրենց պատճառաբանության մեջ օգտագործե՞լ են այնպիսի լեզու, որն ուղիղ կապ է ստեղծում քրեական գործի և դրան հետևած փոխհատուցման վարույթի միջև:

44. Դատարանը նկատում է, որ բարձր դատարանն իր վճիռը սկսել է հետևյալ եզրակացությամբ.

> «Հաշվի առնելով ընդհանրապես գործում ներկայացված փաստերը, բարձր դատարանը **խիստ հավանական է համարում, որ [դիմողը] օրիորդ Թ-ի նկատմամբ հանցագործություններ է կատարել**, որոնց համար էլ մեղադրվել է, և «Վնասի փոխհատուցման մասին» օրենքի 3-5(2) հոդվածով նրա [օրիորդ Թ.-ի] ծնողներին պետք է փոխհատուցում վճարվի...» (*ընդգծումն ավելացված է):*

45. Այս վճիռը, թեպետ ավելի զգուշավոր ձևակերպմամբ, բայց և այնպես հաստատվել է գերագույն դատարանի մեծամասնության կողմից: Չբեկանելով նախկին վճիռը, տվյալ վճիռը չի շտկել խնդիրը, որը, դատարանի կարծիքով, ծագում է հենց դրանից:

46. Դատարանը զգուշավոր մոտեցում է ցուցաբերում այն փաստի նկատմամբ, որ ազգային դատարանները հաշվի են առել, որ դիմողին ներկայացված քրեական մեղադրանքները չեն հաստատվել: Այնուամենայնիվ, ձգտելով պաշտպանել ենթադրյալ զոհի օրինական շահերը, դատարանը կարծում է, որ բարձր դատարանի կիրառած ձևակերպումը, որն այնուհետև հաստատվել է գերագույն դատարանում, խախտել է քաղաքացիական դաշտի սահմանները՝ դրանով իսկ կասկած գցելով այդ արդարացման ճշմարտացիության վրա: Հետևաբար, բավարար կապ է եղել նախորդած քրեական վարույթի հետ, ինչն անհամատեղելի է անմեղության կանխավարկածի հետ:

47. Հաշվի առնելով այս հանգամանքները՝ դատարանը եզրակացնում է, որ 6-րդ հոդվածի 2-րդ կետը կիրառելի է եղել տվյալ դիմողի դեմ սկսված փոխհատուցման վարույթի նկատմամբ, և սույն գործում տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:

Հետևաբար, այն քաղաքացիական հայցերը, որոնք հիմնվում են այն նույն իրադարձությունների վրա, որոնց վրա է հիմնվում քրեական վարույթը, 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում չեն առաջացնի, եթե քաղաքացիական պահանջների վերաբերյալ որոշում կայացնող դատարանները քրեական պատասխանատվություն չվերագրեն քրեական դատարաններում դատապարտված կողմերին: 2003 թ. փետրվարի 11-ին զուգահեռ ընթացող *«O-ի ընդդեմ Նորվեգիայի» (O. v Norway)* և *«Համմերնն ընդդեմ Նորվեգիայի» (Hammern v Norway)* գործերով դատարանը կայացրել է համանման վճիռներ:

Հոդված 6(3)

Հոդված 6(3)(ա)

.....

«Բրոզիչեկն ընդդեմ Իտալիայի» (Brozicek v Italy) A.167 (1989) 12 EHRR 371
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը ծնվել էր նախկին Չեխոսլովակիայում և այնուհետև ստացել Գերմանիայի քաղաքացիություն՝ բնակություն հաստատելով այդ երկրում: 1975 թ. օգոստոսին Սավոնայում քաղաքական կուսակցության բարձրացրած դրոշները պատռելու կասկածանքով Իտալիայի ոստիկանությունը ձերբակալել է նրան: Դիմողը ենթադրաբար մարմնական վնասվածք է հասցրել իրեն կալանավորած պաշտոնյաներից մեկին: 1976 թ. փետրվարին Սավոնայի պետական մեղադրողի գրասենյակը դիմողի Գերմանիայի հասցեով գրանցված նամակ է ուղարկել՝ գրված իտալերեն: Նամակում դիմողին տեղյակ է պահվել, որ նրա դեմ քրեական վարույթ է սկսվել, ի թիվս այլոց, ոստիկանությանը դիմադրելու և ոստիկանության աշխատակցին մարմնական վնասվածք հասցնելու համար: Դիմողը նամակը վերադարձրել է դատախազին՝ դրան կցելով գերմաներեն գրված նամակ, որով պահանջել է իրեն նամակ գրել իր մայրենի լեզվով կամ Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական լեզուներից որևէ մեկով: Պետական մեղադրողը չի պատասխանել և շարունակել է իտալերեն նամակներ ուղարկել դիմողին: 1981 թ. հուլիսին դիմողը դատապարտվել է in absentia [բացակայությամբ] Սավոնայի տարածքային դատարանի կողմից: Հանձնաժողովի մեծամասնությունը պաշտպանել է դիմողի գանգատը՝ հաստատելով, որ տեղի է ունեցել 6(3)(ա) հոդվածի խախտում:

41. Դատարանի կարծիքով՝ անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ փաստերով: Դիմողն իտալացի չի եղել և չի բնակվել Իտալիայում: Նա աներկիմաստորեն տեղեկացրել է Իտալիայի համապատասխան մարմիններին, որ քանզի բավարար չափով չի տիրապետում իտալերենին, ապա դժվարանում է հասկանալ նամակի բովանդակությունը: Նա խնդրել է նրանց նամակն ուղարկել իրեն կա՛մ իր մայրենի լեզվով, կա՛մ Միավորված ազգերի կազմակերպության լեզուներից մեկով:

Իտալիայի դատական մարմինները պետք է հիմնավորեին, որ դիմողը բավականաչափ տիրապետել է իտալերենին, որպեսզի ծանուցումից հասկանար նամակի իմաստը, որով նա տեղյակ էր պահվում իր դեմ հարուցված քրեական մեղադրանքի մասին, եթե ոչ, մնացած դեպքերում 6-րդ հոդվածի 3(ա) կետի կատարումն ապահովելու համար այս խնդրանքը ստանալուց հետո Իտալիայի դատական մարմինները պետք է քայլեր ձեռնարկեին այն բավարարելու ուղղությամբ:

1989 թ. ապրիլի 23-ին լսված գործի փաստաթղթերից կամ վկաների հայտարարություններից այսպիսի փաստեր չեն երևում... Այս առնչությամբ, հետևաբար, տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 3(ա) կետի խախտում:

42. Մյուս կողմից՝ դատարանը համարում է, որ այն պնդումը, թե 1976 թ. փետրվարի 23-ի ծանուցումը չի պարզաբանել «մանրամասնորեն ... մեղադրանքի բնույթը և պատճառը», անհիմն է: Այս նամակը նպատակ է ունեցել տեղեկացնել պրն Բրոզիչեկին նրա դեմ սկսված քրեական վարույթի մասին: Նամակում թվարկվել են այն իրավախախտումները, որոնց համար նա մեղադրվել է, նշվել են դրանց կատարման վայրը և ամիս/ամսաթիվը՝ հղում կատարելով քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներին և նշելով զոհի անունը...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են նախագահ Ռիսդալը և դատավորներ Կրեմոնան, Բինդշեդլեր-Ռոբերտը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Պինեյրո Ֆարինան, Ուոլշը, Էվանսը, Մակդոնալդը, Բերնհարդտը, Շպիլմանը, Կարիլյո Սալսեդոն, Մարտենսը, Փալմը և Ֆոյգելը:

2 Դատավորներ Տոիր Վիլջաուլմսոնը, Փեթիթին, Ռուսոն, Դե Մեյերը և Վալտիկոսը հրապարակել են միասնական չհամընկնող կարծիք, որում հայտնել են այն տեսակետը, որ դիմողը չի սպառել Իտալիայում առկա դատական պաշտպանության միջոցները:

Հոդված 6(3)(բ)

Մեծ պալատը միաձայն այս դրույթի խախտման դրամատիկ օրինակ է հայտնաբերել *«Օջալանն ընդդեմ Թուրքիայի» (Ocalan v Turkey)* գործում (տե՛ս վերը՝ էջ 135): Մեծ պալատը որոշել է, ի թիվս այլոց, որ դիմողին/ամբաստանյալին հնարավորություն է տրվել ծանոթանալու 17000 էջից բաղկացած գործի նյութին 1999 թ. հունիսի 4-ին, մինչդեռ նրա դատավարությունն ավարտվել է 1999 թ. հունիսի 29-ին: Բացի այդ, Օջալանի փաստաբանները հնարավորություն են ունեցել ծանոթանալու գործի նյութերին 1999 թ. մայիսի 7-ին (մինչև 1999 թ. մայիսի 15-ը պատճենահանման նպատակով գործը նրանց չի տրամադրվել):

Հոդված 6(3)(գ)

.....

«Արտիկոն ընդդեմ Իտալիայի» (Artico v Italy) A.37 (1980) 3 EHRR 1
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը հաշվապահ է եղել և դատապարտվել է խարդախության տարբեր հանցագործություններ կատարելու համար: Նա բողոքել է իր դատապարտումների դեմ և պահանջել վճռաբեկ դատարանից իրեն անվճար իրավաբանական օգնություն տրամադրել: 1972 թ. օգոստոսին դատարանի երկրորդ քրեական բաժանմունքի նախագահն ընդունել է նրա պահանջը և որպես անվճար իրավաբանական օգնություն տրամադրող փաստաբան նշանակել պրն Դելլա Ռոկկային: Հաջորդ ամսվա ընթացքում պրն Դելլա Ռոկկան տեղեկացրել է դիմողին, որ չի կարող ընդունել այդ նշանակումը այլ պարտականություններ ունենալու պատճառով: Դրանից հետո պրն Դելլա Ռոկկան հայտնել է, որ առողջական վիճակի պատճառով չի կարող ստանձնել դիմողին ներկայացնելու դժվար պարտականությունը: Չնայած դիմողը վճռաբեկ դատարանին բազմաթիվ միջնորդություններ է ներկայացրել՝ խնդրելով նշանակել մեկ այլ փաստաբան, նրա համար այդպես էլ փաստաբան չի նշանակվել: Հանձնաժողովը միաձայն բավարարել է դիմողի՝ 6(3)(գ) հոդվածի շրջանակներում բերված գանգատը:

32. 6-րդ հոդվածի 3-րդ կետը պարունակում է 6-րդ հոդվածի 1-ին կետի ընդհանուր սկզբունքի առանձնահատուկ կիրառությունների թվարկումներ: Տարբեր իրավունքներ, որոնց ոչ սպառիչ ցանկը ներկայացվում է 3-րդ կետում, անդրադարձնում են քրեական դատավարության արդար դատաքննության գաղափարի որոշ կողմերը... 3-րդ կետի համապատասխանությունը վերանայելիս չպետք է մոռանալ և արմատներից կտրել նրա հիմնական նպատակը:

33. … Պարոն Արտիկոն հայտարարել է, որ ինքն այդ պարտավորության խախտման զոհ է: Կառավարությունը, մյուս կողմից, համարել է, որ այս պարտավորությունը բավարարվել է անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով փաստաբանի առաջադրմամբ՝ պնդելով, որ այն, ինչ տեղի է ունեցել դրանից հետո, որևէ կերպ չի վերաբերում Իտալիայի Հանրապետությանը: Ըստ կառավարության՝ թեպետ պրն Դելլա Ռոկկան մերժել է 1972 թ. օգոստոսի 8-ին վճռաբեկ դատարանի երկրորդ քրեական բաժանմունքի նախագահի առաջադրանքը, մինչև վերջև «բոլոր նպատակների համար» մնացել է դիմողի փաստաբանը: Կառավարության կարծիքով՝ պրն Արտիկոն, կարճ ասած, բողոքել է այն պատճառով, որ փոխարինող չի նշանակվել, սակայն դա հավասար է չերաշխավորված իրավունքի նկատմամբ պահանջի ներկայացման:

Դատարանը նշում է, որ կոնվենցիան նպատակ ունի երաշխավորելու ոչ թե տեսական կամ վերացական, այլ գործնական և գործող իրավունքներ: Սա հատկապես վերաբերում է պաշտպանության իրավունքներին, քանի որ հաշվի է առնվում այն զգալի տեղը, որ զբաղեցնում է արդար դատաքննության իրավունքը ժողովրդավարական հասարակությունում, որից էլ սերում են դրանք (տե՛ս *Էյրփի (Airey)* 1979 թ. հոկտեմբերի 9-ի վճիռը, շարք A, թիվ 32, էջ 12-13, պարբ. 24 և վերը՝ պարբ. 32): Ինչպես իրավացիորեն նկատել են հանձնաժողովի պատվիրակները, 6-րդ հոդվածի 3(գ) կետը խոսում է «օժանդակության», ոչ թե «առաջադրման» մասին: Ջուտ առաջադրումը արդյունավետ օժանդակություն չի ապահովում, քանի որ իրավաբանական օգնություն տրամադրելու համար նշանակված փաստաբանը կարող է

մահանալ, ծանր հիվանդանալ, տևական ժամանակով հեռացվել գործունեությունից կամ խուսափել իր պարտականությունների կատարումից: Նման իրավիճակի մասին տեղյակ պահվելու դեպքում իշխանությունները կա՛մ պետք է փոխարինեն նրան, կա՛մ ստիպեն նրան կատարել իր պարտականությունները: Կառավարության սահմանափակ մեկնաբանության ընդունումը կհանգեցնի անողջամիտ և անհամապատասխան արդյունքների ինչպես (գ) ենթակետի շարադրանքին, այնպես էլ ամբողջությամբ վերցված 6-րդ հոդվածի կառուցվածքին. շատ դեպքերում անվճար իրավաբանական օգնությունը կարող է արժեք չունենալ:

Սույն գործում պրն Արտիկոն երբևէ չի օգտվել պրն Դելլա Ռոկկայի ծառայություններից: Հենց սկզբից փաստաբանը հայտարարել է, որ ի վիճակի չէ վերցնելու գործը: Նա նախ վկայակոչել է իր ուրիշ պարտականությունները, իսկ դրանից հետո՝ նաև առողջական վիճակը... Դատարանից չի պահանջվել պարզել այս բացատրությունների նպատակահարմարությունը: Ինչպես և հանճնաժողովը, դատարանը կարծում է, ... որ դիմողը վճռաբեկ դատարանում արդյունավետ օգնություն չի ստացել, նմանապես այդ խնդրին առնչվող վերոհիշյալ 1972 թ. օգոստոսի 8-ի որոշումը մնացել է որպես թղթի կտոր:

34. 6-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետը, այնուամենայնիվ, երաշխավորում է այդ իրավունքը՝ երկու պայմանով: Եթե առաջին պայմանի վերաբերյալ փաստարկ չի բերվել, թե ինչու քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձը բավարար միջոցներ չի ունեցել, ապա կառավարությունը մերժել է երկրորդ պայմանի բավարարումը: Նրա կարծիքով՝ «արդարադատության շահերը» չեն պահանջել, որ պրն Արտիկոյին անվճար իրավաբանական օգնություն տրամադրվի: Ըստ կառավարության՝ վճռաբեկ դատարանի վարույթի առարկան ձևավորվել է դիմումները բեկանելու օգտին ներկայացված հիմքերով. հիմքեր, որոնք ներկայացրել է դիմողը 1971 թ. դեկտեմբերին իր իսկ ընտրած փաստաբանի՝ պրն Ֆերրիի օգնությամբ: Կառավարությունը շարունակել է, որ խնդրին (դատարան ներկայանալու մասին ծանուցումների կանոնավորությանը) վերաբերող հիմքերը խիստ պարզունակ են եղել, այնպես որ 1973 թ. հուլիսին պետական մեղադրողը հայտարարել է, որ դիմումները եղել են ակնհայտորեն վատ հիմնավորված ... հետևաբար, փաստաբանը կարող էր միայն «համեստ» դեր ունենալ, ընդամենը այն, որ նրան ծանուցում էր տրվելու, որ վճռաբեկ դատարանն իր որոշումը կայացնելու է խորհրդակցական սենյակում...

Ամեն դեպքում արդարադատության շահերը պահանջել են, որ տրամադրվի արդյունավետ օգնություն: Սա, համաձայն պրն Դելլա Ռոկկայի, եղել է շատ խիստ և խրթին առաջադրանք... Ամեն դեպքում գրավոր կարգը, որն առաջնային կարևորություն ունի Իտալիայի վճռաբեկ դատարանում, մինչև 1972 թ. օգոստոսի 8-ը չի սահմանվել: Որակավորված փաստաբանը կկարողանար պարզաբանել պրն Արտիկոյի ներկայացրած հիմքերը և, մասնավորապես, պահանջվող շեշտը դնել օրենսդրական սահմանափակման վճռորոշ հարցի վրա, որը գրեթե չի շոշափվել 1972 թ. մարտի 14/15-ի «մեծածավալ և երկարաշունչ» հայտարարություններում... Բացի այդ, միայն փաստաբանը կարող էր ընդդիմանալ պետական մեղադրողի բաժանմունքի հայտարարություններին՝ ստիպելով վճռաբեկ դատարանին հրավիրել բաց նիստ, որը, ի թիվս այլոց, նվիրված կլիներ այս հարցի խոր քննարկմանը...

36. ...Իրականում, պրն Արտիկոն համառորեն փորձել է շտկել իր դրությունը. նա բազմապատկել է իր պաշտոնական փաստաբանին ներկայացրած բողոքները և բացատրությունները, այնքան, որ հոգնեցրել է և նույնիսկ զայրացրել նրան ու վճռաբեկ դատարանին... Պարզ է, պետությունը չի կարող պատասխանատու լինել իրավաբանական օգնություն ցույց տվող փաստաբանի յուրաքանչյուր թերացման համար, սակայն տվյալ դեպքում Իտալիայի իրավասու մարմինները պետք է քայլեր ձեռնարկեին՝ երաշխավորելու համար, որ դիմողն արդյունավետորեն օգտվի այն իրավունքից, որը նրանք ճանաչել են: Կառավարությունն ունեցել է երկու տարբերակ. կա՛մ փոխարինել պրն Դելլա Ռոկկային, կա՛մ, եթե նպատակահարմար էր, ստիպել նրան կատարել իր պարտականությունները... Պասիվ մնալով՝ նրանք ընտրել են երրորդ տարբերակը, մինչդեռ կոնվենցիային համապատասխանելու համար պետք է ձեռնարկեին դրական քայլեր (տե՛ս վերը նշված *Էյրփի (Airey)* վճիռը, էջ 14, պարբ. 25, վերջում):

37. Դատարանը, այսպիսով, եզրակացնում է, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 3(գ) կետի խախտում...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են նախագահ Վիարդան և դատավորներ Բալլադորե Պալիերին, Զեքիան, Բինդշեդլեր-Ռոբերտը, Լիշը, Գյոլչյուքլուն և Պինեյրո-Ֆարինան: Խրախուսանքի է արժանի այն ուշադրությունը, որով դատարանը մոտեցել է դիմողին արդյունավետ իրավաբանական օգնություն տրամադրելու հարցին: Եթե պետություններն այս դրույթի պահանջները բավարարեն սոսկ իրավաբանական օժանդակություն տրամադրող փաստաբան նշանակելով՝ երաշխիքը գործնականում կարող է արժեզրկվել, ինչպես և տեղի է ունեցել տվյալ դիմողի դեպքում:

2 *«Բենհեմն ընդդեմ ՄԹ-ի» (Benham v UK*, 1996 III 738) (տե՛ս վերը՝ էջ 276) գործի առնչությամբ մեծ պալատը միաձայն վճռել է, որ «61. ...երբ խնդիրը վերաբերում է ազատազրկմանը, արդարադատության շահը սկզբունքորեն պահանջում է, որ գոյություն ունենա իրավաբանական ներկայացուցչություն»: Քանի որ համայնքային հարկը (շնչահարկը) չմուծելու համար Բենհեմը ենթակա է եղել ազատազրկման, մեծ պալատը եզրակացրել է, որ նա պետք է ապահովվեր իրավաբանական ներկայացուցիչով» և, հետևաբար, մագիստրատների առջև այդպիսի ներկայացուցչության բացակայությունը հանգեցրել է 6(3)(գ) հոդվածի խախտման: Մշտական գործող դատարանի պալատը համանման եզրակացության է հանգել *«Բիթը և այլք ընդդեմ ՄԹ-ի» (Beet and Others v UK)* գործի վերաբերյալ 2005 թ. մարտի 1-ի վճռով: Այս կարգի վարույթների համար իրավաբանական օգնության տրամադրումը հնարավոր է դարձել 1997 թ. հունիսի 1-ից:

3 Ինչպես արդեն տեսել ենք *«Ջոն Մյուրեյն ընդդեմ ՄԹ-ի» (John Murray v UK)* գործից (վերը՝ էջ 425), հարցաքննության (և կալանքի) առաջին 48 ժամվա ընթացքում փաստաբան ունենալու հնարավորության մերժումը (առնվազն այն դեպքերում, երբ կալանավորի լռությունից կարող են արվել բացասական անուղղակի եզրակացություններ) նույնպես առաջացրել է այդ դրույթի խախտում:

4 Ավելի ուշ քննության առնված *«Ավրիլն ընդդեմ ՄԹ-ի» (Averill v UK)* գործում (6 հունիսի 2000 թ.) դատարանը կիրառել է *Ջոն Մյուրեյի* գործի իր պատճառաբանությունը և վճռել, որ կալանքի տակ վերցված կասկածյալ ահաբեկչին 24 ժամ փաստաբանի հետ հաղորդակցվել թույլ չտալն այդ իրավունքի խախտում է:

5 Նախքան դատավարությունը տեղի ունեցող կարևոր իրադարձությունների նկատմամբ 6(3)(գ) հոդվածի կիրառելիությունը հաստատվել է *«Բեռլինսկին ընդդեմ Լեհաստանի» (Berlinski v Poland)* գործի վերաբերյալ 2002 թ. հունիսի 20-ի վճռով: Մարմնակազմությամբ զբաղվող երկու դիմողները չեն ցանկացել դուրս գալ մարզական ակումբից, որից հետո ոստիկանություն է կանչվել: Ոստիկանության ձերբակալելու ժամանակ տեղի է ունեցել դաժան պայքար, որի հետևանքով դիմողները տարբեր վնասվածքներ են ստացել: Երկու օր անց դիմողները քրեական հետապնդում իրականացնող մարմիններից պահանջել են իրենց օգնելու նպատակով անվճար փաստաբան նշանակել: Երկու տարի անց նրանք մեղավոր են ճանաչվել, և նշանակվել է պայմանական ազատազրկում: Դիմողները հայտարարել են, որ, ի թիվս այլոց, իրենք տուժել են 6(3)(գ) հոդվածի խախտման հետևանքով: Պալատը միաձայն վճռել է, որ.

> 75. Դատարանը նշում է, որ նույնիսկ եթե քրեական բնույթի խնդիրների դեպքում 6-րդ հոդվածի առաջնային նպատակը «քրեական մեղադրանքի» վերաբերյալ որոշում կայացնելու համար իրավասու «տրիբունալի» կողմից արդար դատաքննության ապահովումն է, դրանից դեռևս չի հետևում, որ կոնվենցիայի այդ դրույթն ազդեցություն չունի նախնական վարույթի վրա: Այսպիսով, 6-րդ հոդվածը, հատկապես դրա 3-րդ կետը, կարող է տեղին լինել նախքան գործը դատաքննության ուղարկելը և այնքան ժամանակ, քանի դեռ հավանականություն կա, որ դատաքննության արդարությունը կարող է խաթարվել այդ դրույթներին ամենասկզբում չհամապատասխանելու հետևանքով: Այն ձևը, որով 6-րդ հոդվածի 1-ին և 3(գ) կետերը պետք է կիրառվեն նախաքննության ժամանակ, կախված է տվյալ վարույթի առանձնահատկություններից և գործի հանգամանքներից...
>
> 77. Դատարանը նկատում է՝ այն հանգամանքը, որ իրենց դեմ սկսված քրեական հետապնդման համատեքստում դիմողները մասնավոր ներկայացուցիչ վարձելու միջոցներ չեն ունեցել, անվիճելի է: Անվիճելի է նաև, որ դիմողների՝ պաշտոնական փաստաբան ունենալու պահանջն անտեսվել է իշխանությունների կողմից, ինչի հետևանքով ավելի քան մեկ տարի նրանք մնացել են առանց փաստաբանի: Հաշվի առնելով, որ այդ տարվա ընթացքում տեղի են ունեցել մի շարք ընթացակարգային գործողություններ, ներառյալ հայցվորների հարցաքննությունը և նրանց բժշկական քննությունը, ... դատարանը որևէ արդարացում չի գտնում այս սահմանափակման համար, որի հետևանքով դիմողները զրկված են եղել իրենց քննության և դատավարության ժամանակ հավուր պատշաճի պաշտպանվելու իրավունքից:

Հետևաբար, տեղի է ունեցել 6(3)(գ) հոդվածի խախտում: Որքան ավելի մեծ է նախաքննության ժամանակ անվճարունակ կասկածյալի պաշտպանությանը հասցված պոտենցիալ վնասը, այնքան ավելի ուժեղ է տվյալ դրույթով այդ անձի իրավաբանական օգնություն ստանալու պահանջը:

6 *«Կրոմբախն ընդդեմ Ֆրանսիայի» (Krombach v France)* գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2001 թ. փետրվարի 13-ին (տե՛ս ստորև՝ էջ 1055), պատասխանող կառավարությունն առաջարկել է, որ «օգնություն» հասկացությանը տրվի խիստ մեկնաբանություն, և այն տարբերվի «ներկայացուցիչ» հասկացությունից, քանի որ դիմողը զրկվել է իր բացակայության ժամանակ փաստաբանի միջոցով ներկայացված լինելու իրավունքից: Պալատը միաձայն մերժել է այս նեղ մեկնաբանությունը.

89. ...Թեպետ ոչ բացարձակ, սակայն քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի՝ փաստաբանի միջոցով արդյունավետորեն պաշտպանվելու իրավունքը, որն անհրաժեշտության դեպքում նշանակվում է պաշտոնապես, արդար դատաքննության հիմնարար առանձնահատկություններից մեկն է: Անձը, որը մեղադրվում է քրեական հանցագործության համար, չի կորցնում իր իրավունքի ապահոված օգուտն այն պատճառով, որ ներկա չէ դատավարությանը: Եթե նույնիսկ օրենսդիր մարմինը պետք է կարողանա կանխել անհարգելի բացակայությունները, չի կարող պատժել իրավաբանական օգնության իրավունքից բացառություններ անելու միջոցով:

Դատարանը եզրակացրել է, որ դատական նիստերին բացակայելու պատճառով դիմողին պատժելը՝ արգելելով նրա փաստաբանին նրա անունից բացատրություններ տալը, եղել է «ակնհայտորեն անհամաչափ» և կազմել 6(1) հոդվածի խախտում՝ համակցված 6(3)(գ) հոդվածի հետ:

7 «*Իզեն և Քոննորզն ընդդեմ ՄԹ-ի» (Ezeh and Connors v UK)* 2003 թ. հոկտեմբերի 9-ի վճռում մեծ պալատը՝ տասնմեկ կողմ և վեց դեմ ձայներով, եզրակացրել է, որ տեղի է ունեցել 6(3)(գ) հոդվածի խախտում, քանի որ բանտի ղեկավարությունը մերժել է բանտարկյալ-դիմողներին նրանց նկատմամբ սկսված կարգապահական վարույթի ժամանակ իրավաբանական ներկայացուցիչներ ունենալ: Այնուամենայնիվ, մեծ պալատը մերժել է դիմողների գանգատի քննությունը, համաձայն որի՝ արդարադատության շահը պահանջել է, որ այդ դրույթի համաձայն նրանց տրամադրվեր անվճար իրավաբանական օժանդակություն:

8 *«Օջալանն ընդդեմ Թուրքիայի» (Ocalan v Turkey)* գործում (տե՛ս վերը՝ էջ 135) մեծ պալատը շեշտել է ամբաստանյալի և նրա փաստաբանների միջև արտոնյալ հաղորդակցության կարևորությունը:

132….Մեծ պալատը հաստատում է պալատի եզրակացությունները.

> « ... դիմողի փաստաբաններն առաջին անգամ այցելել են նրան հսկիչների ուղեկցությամբ և գտնվել անվտանգության ուժերի և դատավորի տեսադաշտում և լսելիության սահմաններում: Վերջիններս գտնվել են նույն սենյակում, որտեղ եղել են դիմողը և նրա փաստաբանները: Անվտանգության ուժերը նրանց այցի տևողությունը քսան րոպեով սահմանափակել են: Այցի արձանագրություն ուղարկվել է ազգային անվտանգության դատարան:
>
> « ... Ինչ վերաբերում է հետագա այցերին..., դատարանն ընդունում է, որ դիմողի և նրա փաստաբանների միջև տեղի ունեցած հանդիպումներն առաջին այցից հետո լսվել են անվտանգության ուժերի անդամների կողմից, թեպետ այդ անվտանգության պաշտոնյաները չեն գտնվել այն սենյակում, որտեղ տեղի են ունեցել հանդիպումները»:

133. Մեծ պալատը համաձայն է դիմողի՝ իր փաստաբանների հետ առանց երրորդ կողմի անձանց ներկայության մեկուսի հաղորդակցվելու անկարողության կապակցությամբ պալատի տված գնահատականին.

> « ... մեղադրյալի՝ իր իրավաբանական ներկայացուցչի հետ երրորդ անձանցից մեկուսի պայմաններում հաղորդակցվելու իրավունքը ժողովրդավարական հասարակությունում արդար դատաքննության հիմնական պահանջներից մեկն է և բխում է կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(գ) կետից: Եթե փաստաբանը չի կարող առանց այսպիսի վերահսկողության խորհրդակցել իր պաշտպանյալի հետ և նրանից ստանալ գաղտնի հրահանգներ, ապա նրա օժանդակությունը զգալիորեն կզրկվի օգտակարությունից, մինչդեռ կոնվենցիան նպատակ ունի երաշխավորել գործնական և գործուն իրավունքները (*«S-ի ընդդեմ Շվեյցարիայի» (S. v Switzerland)*, 1991 թ. նոյեմբերի 28-ի վճիռ, շարք A, թիվ 220, էջ 16, պարբ. 48): Պաշտպանության կողմի՝ մեղադրյալի և նրա փաստաբանների միջև հանդիպումների գաղտնիության երաշխավորման իրավունքների կարևորությունը հաստատվել է բազմաթիվ միջազգային փաստաթղթերում, ներառյալ եվրոպական փաստաթղթերում (տե՛ս *«Բրեննանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Brennan v the United Kingdom)*, թիվ 39846/98, պարբ. 38-40, ECHR 2001-X): Այնուամենայնիվ, ինչպես նշվել է վերը, ... մեղադրյալի հաղորդակցությունն իր փաստաբանի հետ կարող է սահմանափակվել, եթե

հիմնավոր պատճառ կա: Համապատասխան հարցն այն է, թե արդյոք, ամբողջության մեջ դիտարկելով վարույթը, կարելի՞ է ասել, որ այդ սահմանափակումը զրկել է մեղադրյալին արդար դատաքննությունից:

« ... Սույն գործում դատարանն ընդունում է... որ դիմողը և նրա փաստաբանները որևէ փուլում չեն կարողացել խորհրդակցել իշխանություններից մեկուսի պայմաններում: Դատարանը համարում է, որ նախաքննության և դատավարության վրա այդ սահմանափակման անխուսափելի հետևանքը եղել է այն, որ դիմողը չի կարողացել ազատորեն շփվել իր փաստաբանների հետ և տալ նրանց հարցեր, որոնք կարող էին կարևոր լինել նրա պաշտպանության պատրաստման համար: Այսպիսով, պաշտպանության իրավունքները զգալի ազդեցություն են կրել:

« ... Այդ կապակցությամբ դատարանը նկատում է, որ այն ժամանակ, երբ դիմողը խորհրդակցել է իր փաստաբանների հետ, արդեն արած է եղել հայտարարություններ, որոնք, նրանց հետ խորհրդակցելուց հետո, նա շարունակել է անել ազգային անվտանգության դատարանում: Եթե նրան ներկայացված լուրջ մեղադրանքների դեմ նրա պաշտպանությունը պետք է արդյունավետ լիներ, ապա կարևոր է, որ այդ հայտարարությունները հետևողական լինեին: Հետևաբար, դատարանը կարծում է, որ դիմողին անհրաժեշտ է եղել զրուցել իր փաստաբանների հետ երրորդ անձանցից մեկուսի պայմաններում:

« ... Ինչ վերաբերում է կառավարության պնդմանը, որ դիմողի և նրա փաստաբանների միջև հանդիպումների վերահսկողությունն անհրաժեշտ է եղել դիմողի անվտանգությունը երաշխավորելու նպատակով, դատարանը նկատում է, որ փաստաբանները հրավիրվել են անձամբ դիմողի կողմից, և որևէ կասկած չի կարող լինել, որ նրանք սպառնալիք են ներկայացրել իրենց հաճախորդի կյանքին: Առանց մի շարք խուզարկությունների նրանց թույլ չեն տվել հանդիպել դիմողի հետ: Դիմողի անվտանգության երաշխավորման համար բավարար կլիներ բանտի աշխատակիցների կողմից սահմանված և այլ միջոցառումներով ուղեկցվող զուտ տեսողական վերահսկողությունը»:

Հետևաբար, դատարանը որոշել է՝ այն փաստը, որ դիմողը հնարավորություն չի ունեցել խորհրդակցելու իր փաստաբանների հետ առանց անվտանգության ուժերի կողմից լսվելու, առաջացրել է պաշտպանական իրավունքների խախտում: Մեծ պալատը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել 6(3)(գ) հոդվածի խախտում:

Հոդված 6(3)(դ)

.....

«Վան Մեխելենն ընդդեմ Նիդեռլանդների»
(Van Mechelen v The Netherlands 1997-III, (1997) 25 EHRR 647)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Ոստիկանությունը տեղեկություններ է ստացել, որ չորս դիմողները ներգրավված են եղել զինված թալանի մի շարք գործողությունների մեջ: Կասկածյալներին հսկողության տակ պահելու համար գործի են դրվել ոստիկանության ծառայողական խմբեր: Աշխատակիցները տեսել են, թե ինչպես են դիմողները երեք մեքենայով մեկնել փոստատուն, որտեղ և տեղի է ունեցել թալանը: Դրանից հետո ոստիկանությունը սկսել է հետապնդման գործողություն: Հանցագործներն ինքնաձիգներից կրակ են բացել ոստիկանների վրա՝ վիրավորելով նրանցից մի քանիսին: Այնուհետև դիմողները ձերբակալվել են և մեղադրվել մահափորձ/չկանխամտածված մահափորձ և թալան կատարելու համար: Քրեական հետապնդումը հիմնվել է անանուն ոստիկանության ծառայողների գրավոր ցուցմունքների վրա, որոնցում դիմողները ճանաչվել են որպես թալանի և հրաձգության մեջ ներգրավված անձնավորություններ: Դիմողներից յուրաքանչյուրը դատապարտվել է տասը տարվա ազատազրկման: Դիմողները վճիռը բողոքարկել են Հերթոգենբոշի վերաքննիչ դատարանում: Դատարանը կարգադրել է, որ ձայնային կապի միջոցով ոստիկանության անանուն ծառայողները պատասխանեն պաշտպանության և մեղադրող կողմերի հարցերին (ոստիկանության վկան եղել է հետաքննությունն իրականացնող դատավորի հետ միևնույն սենյակում, իսկ նրանց փաստաբանները և մեղադրողները եղել են մեկ այլ

սենյակում): Անանուն ծառայողներից յուրաքանչյուրը կրկնել է իր տված ցուցմունքը, որ դիմողները մասնակցել են թալանի և հրաձգության գործողություններին: Հետաքննությունն իրականացնող դատավորը հայտարարել է, որ ծառայողների ասածները ճշմարտանման են: Վերաքննիչ դատարանը դատապարտել է դիմողներին մահափորձ և թալան կատարելու մեղադրանքներով և նրանցից յուրաքանչյուրին նշանակել տասնչորս տարվա ազատազրկում: Դիմողները բողոքել են իրենց դատապարտումների դեմ, որոնք մեծ մասամբ հիմնված են եղել ոստիկանության անանուն ծառայողների ցուցմունքների վրա. նրանք պնդել են, որ տեղի է ունեցել 6(1) և 6(3)(դ) հոդվածների խախտում: Քսան կողմ և ութ դեմ ձայներով՝ հանձնաժողովը որոշել է, որ կոնվենցիայի խախտում տեղի չի ունեցել:

49. Քանի որ 6-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները պետք է դիտարկվեն որպես 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի առանձնահատուկ կողմեր, դատարանը քննության է առնելու բողոքները միաժամանակ 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի (դ) ենթակետի ներքո (տե՛ս, մի շարք հեղինակային աղբյուրների շարքում, վերը նշված *Դուրսոնի (Doorson)* վճիռը, էջ 469-70, պարբ. 66):

50. Դատարանը կրկնում է, որ փաստերի ընդունելիությունը հիմնականում ազգային օրենքով կարգավորման ենթակա խնդիր է, և ընդհանուր կանոնն այն է, որ ներկայացված փաստերը պետք է գնահատեն ազգային դատարանները: Ըստ կոնվենցիայի՝ դատարանի խնդիրը չէ որոշել՝ վկաների ցուցմունքներն իրավացիորե՞ն են համարվել ապացույց, թե՞ ոչ, այլ հավաստիանալ՝ վարույթն ընդհանուր առմամբ, ներառյալ ցուցմունք վերցնելու ձևը, արդա՞ր են եղել, թե՞ ոչ:
(տե՛ս, այլ հեղինակային աղբյուրների շարքում, ...*Դուրսոնի* վճիռը [*«Դուրսոնն ընդդեմ Նիդեռլանդների» (Doorson v The Netherlands)*, 1996-II], էջ 470, պարբ. 67):

51. Բացի այդ, առհասարակ բոլոր փաստերը պետք է ներկայացվեն մեղադրյալի մասնակցությամբ տեղի ունեցող դռնբաց նիստի ժամանակ՝ մրցակցային վիճաբանություն ապահովելու նպատակով: Այս սկզբունքից նախատեսվում են բացառություններ, որոնք, սակայն, չպետք է խախտեն պաշտպանության կողմի իրավունքները: Որպես ընդհանուր կանոն՝ 6-րդ հոդվածի 1-ին և 3 (դ) կետերը պահանջում են, որ ամբաստանյալին վիճարկելու և իր դեմ հանդես եկող վկային նրա ցուցմունք տալու ժամանակ կամ ավելի ուշ հարցեր տալու պատշաճ և համապատասխան հնարավորություն տրվի...

52. Ինչպես դատարանը հայտարարել է *Դուրսոնի (Doorson)* վճռում (նույնը, էջ 470, պարբ. 69), մեղավորությունը հիմնավորելու համար անանուն վկաների կողմից տրված ցուցմունքները ոչ մի պարագայում անհամատեղելի չեն կոնվենցիայի հետ:

53. Նույն վճռում դատարանը նկատել է հետևյալը.

> Ճիշտ է, որ 6-րդ հոդվածը բառացիորեն չի պահանջում, որ ընդհանուր առմամբ վկաների և մասնավորապես զոհերի շահերը հաշվի առնվեն, երբ նրանց կանչում են ցուցմունք տալու: Այնուամենայնիվ, նրանց կյանքը, ազատությունը կամ անվտանգությունը կարող են դրվել հարցականի տակ, ինչպես և կարող են հարցականի տակ դրվել այն շահերը, որոնք առաջանում են կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում: Վկաների և զոհերի այս շահերը պաշտպանվում են կոնվենցիայի այլ նյութական դրույթներով, ինչը ենթադրում է, որ պայմանավորվող պետությունները իրենց քրեական դատավարությունները պետք է կազմակերպեն այնպես, որ անարդարացիորեն չվտանգեն այդ շահերը: Այս պայմաններում արդար դատաքննության սկզբունքները նույնպես պահանջում են, որ համապատասխան դեպքերում պաշտպանության կողմի շահերը հավասարակշռվեն ցուցմունք տալու նպատակով կանչված վկաների կամ զոհերի շահերի հետ (տե՛ս վեր նշված *Դուրսոնի* վճիռը, էջ 470, պարբ. 70):

54. Այնուամենայնիվ, մեղադրող կողմի վկայի ինքնությունը գաղտնի պահելու դեպքում պաշտպանության կողմը քրեական վարույթի ընթացքում կհանդիպի այնպիսի դժվարությունների, որոնք սովորաբար բացակայում են քրեական վարույթում: Հետևաբար, դատարանը ճանաչել է, որ այդ դեպքերում կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, 6-րդ հոդվածի 3(դ) կետի համակցությամբ, պահանջում է, որ այն դժվարությունները, որոնք պաշտպանության կողմը փորձում է հաղթահարել այս դեպքերում, հավասարակշռվեն դատական մարմինների կողմից կիրառվող ընթացակարգերով (նույն տեղում, էջ 471, պարբ. 72):

55. Վերջապես, պետք է հիշել, որ դատապարտումը չպետք է հիմնված լինի զուտ կամ մեծ մասամբ անանուն հայտարարությունների վրա (նույն տեղում, էջ 472, պարբ. 76):

2. ՎԵՐԸ ՆՇՎԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

56. Դատարանի կարծիքով՝ պաշտպանության կողմի շահերի հավասարակշռումը վկաների գաղտնիության պահպանման օգտին գոյություն ունեցող փաստարկների հետ առաջացնում է առանձնահատուկ խնդիրներ, եթե վկաները, որոնց մասին է խոսքը, տվյալ պետության ոստիկանական ուժերի ծառայողներ են: Թեպետ նրանց շահերը և, իրավամբ, նաև նրանց ընտանիքի շահերը նույնպես արժանի են կոնվենցիայի պաշտպանությանը, պետք է ընդունել, որ նրանց դիրքորոշումը որոշ չափով տարբեր է չշահագրգռված վկայի կամ զոհի դիրքորոշումից: Նրանք ունեն պետության գործադիր իշխանությանը ենթարկվելու ընդհանուր պարտավորություն և սովորաբար նաև՝ կապեր մեղադրող կողմի հետ: Ուստի նրանց՝ որպես անանուն վկաներ հանդես գալու հնարավորությունը պետք է կիրառվի միայն բացառիկ հանգամանքներում: Բացի այդ, բնական է, որ նրանց և, մասնավորապես, ձերբակալությունն իրականացրած ծառայողների պարտականությունները կարող են ներառել դռնբաց դատարանում ցուցմունք տալը:

57. Մյուս կողմից՝ դատարանը սկզբունքորեն ճանաչել է, որ նպատակ ունենալով պաշտպանել գաղտնի գործակալին և նրա ընտանիքին, ինչպես նաև չվտանգել հետագա գործողություններին նրա մասնակցելու օգտակարությունը, ոստիկանության մարմինները կարող են օրինականորեն պաշտպանել գաղտնի գործողությունների մեջ ներգրավված գործակալների անանունությունը՝ պայմանով, որ հարգվեն պաշտպանության կողմի իրավունքները...

58. Հաշվի առնելով այն դերը, որ ունի արդար դատաքննության իրավունքը ժողովրդավարական հասարակությունում, պաշտպանության կողմի իրավունքները սահմանափակող ցանկացած միջոց պետք է պայմանավորված լինի խիստ անհրաժեշտությամբ: Եթե նվազ խիստ միջոցը կարող է բավարար համարվել, ապա պետք է կիրառվի նվազ խիստ միջոցը:

59. Տվյալ դեպքում ոստիկանության ծառայողները հետաքննությունն իրականացնող դատավորի հետ գտնվել են առանձին սենյակում, որտեղ ներկա չեն եղել ո՛չ մեղադրյալները և ո՛չ էլ նրանց փաստաբանը: Ողջ հաղորդակցությունը տեղի է ունեցել ձայնային կապի միջոցով: Պաշտպանության կողմը, այսպիսով, ոչ միայն անտեղյակ է եղել, թե ովքեր են ոստիկան վկաները, այլև հնարավորություն չի ունեցել ուղղակի հարցաքննության պայմաններում հետևելու նրանց պահվածքին և, այդպիսով, ստուգելու նրանց հուսալիությունը...

60. Ներկայացված բացատրություններից դատարանի համար պարզ չի եղել, թե ինչու է մեղադրյալների իրավունքը, ըստ որի՝ նրանց դեմ ցուցմունքները պետք է տրվեն նրանց ներկայությամբ, ծայրաստիճան սահմանափակվել, կամ ինչու նվազ խիստ միջոցները հաշվի չեն առնվել:

Հետագա տեղեկությունների բացակայության պայմաններում դատարանը չի կարող եզրակացնել, որ ոստիկանության օպերատիվ կարիքները հիմնականում արդարացնում են սա...

61. Դատարանի համար համոզիչ չէ նաև, որ վերաքննիչ դատարանը բավարար ջանքեր է գործադրել, որպեսզի գնահատի ոստիկանության ծառայողներին կամ նրանց ընտանիքներին սպառնացող վրեժխնդրության ռիսկը: Դատարանի վճռից պարզ չէ, որ նրանք փորձել են պատասխան տալ այն հարցին, թե արդյոք դիմողներն իրոք կարո՞ղ էին այդպիսի սպառնալիքներ իրականացնել կամ հրահրել, որ կողմնակի անձինք դա անեն իրենց փոխարեն: Այս կապակցությամբ պետք է նշել, որ պրն Էնգելենը, ով եղել է քաղաքացիական վկա, վարույթի վաղ փուլերում ցուցմունք է տվել ու որպես հանցագործությանը մասնակցած անձ՝ ճանաչել դիմողներից մեկին, անանունությամբ չի պաշտպանվել, ինչպես և չի ասվել, որ որևէ պահի նա ենթակա է եղել սպառնալիքների:

62. Ինչպես նկատել են կառավարությունը և հանձնաժողովը, ճիշտ է, որ ոստիկանության անանուն ծառայողները հարցաքննվել են հետաքննությունն իրականացնող դատավորի առջև, որն անձամբ պարզել է նրանց ինքնությունը և իր եզրակացությունների շատ մանրամասն պաշտոնական հաշվետվության մեջ հայտնել է իր կարծիքը նրանց հուսալիության և արժանահավատության, ինչպես նաև անհայտ մնալու պատճառների մասին:

Այնուամենայնիվ, պաշտպանության կողմի համար սրանք չեն կարող համարվել այնպիսի միջոցներ, որոնք իր ներկայությամբ վկաներին հարցաքննելու և վերջիններիս պահվածքի ու հուսալիության վերաբերյալ սեփական դատողություններ անելու միջոցներին փոխարինող են: Այսպիսով, չի կարելի ասել, որ այն խոչընդոտները, որոնք պաշտպանության կողմը փորձել է հաղթահարել, հակակշռվել են վերը նշված ընթացակարգերով:

63. Բացի այդ, միակ ապացույցները, որոնց վրա հիմնվել է վերաքննիչ դատարանը, եղել են ոստիկանության անանուն ծառայողների կողմից տրված ցուցմունքները, որոնցում նրանք դիմողներին ճանաչել են որպես հանցագործությունները կատարած անձանց: Հետևաբար, դիմողների դատապարտումը «որոշ չափով» հիմնված է եղել այս անանուն ցուցմունքների վրա:

64. Դատարանի կարծիքով՝ սույն գործը պետք է զանազանվի *Դուրսոնի (Doorson)* գործից. այս վերջին գործի կապակցությամբ որոշվել է, որ գործի նյութերում առկա տեղեկությունների հիման վրա Y.15 և Y.16 վկաները, որոնք եղել

են քաղաքացիական անձինք և անձամբ ճանաչել մեղադրյալին, ունեցել են բավարար պատճառներ, որպեսզի հավատային, որ նա կարող է դիմել բռնության, և նրանց հարցաքննել են պաշտպանի ներկայությամբ (տե՛ս վերը նշված *Դուրսոնի (Doorson)* վճիռը, էջ 454-5, պարբ. 25, էջ 455-6, պարբ. 28, և էջ 470-1, պարբ. 71 և 73):

Բացի այդ, այս գործում անանուն վկաների հետ կապ չունեցող այլ աղբյուրները նույնպես ցուցմունք են տվել՝ մեղադրյալների մեջ ճանաչելով հանցագործությունը կատարած անձանց (նույնը, էջ 458-9, պարբ. 34 և էջ 472, պարբ. 76):

65. Այս պարագայում դատարանը չի կարող եզրակացնել, որ դիտարկված դատաքննությունն ամբողջովին արդար է եղել:

Գ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

66. Տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 3(դ) կետի համակցությամբ... .

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են նախագահ Բերնհարդտը և դատավորներ Ռուսոն, Ֆոյգելը, Ռեպիկը, Յունգվիրթը և Լևիցը: Դատավորներ Մաթշերը և Վալտիկոսը գրել են միասնական չհամընկնող կարծիք, որում տեսակետ են հայտնել, որ սա եղել է «սահմանային» գործ: Այնուամենայնիվ, նրանք չեն եզրակացրել, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի խախտում, քանի որ «...սա եղել է զինված թալանի դեպք, և հասկանալի է, որ վկաները, թեպետև եղել են ոստիկանության ծառայողներ, պետք է ահաբեկված լինեին վրեժխնդիր կրակոցների հեռանկարից, որոնք երջանիկ կդարձնեին հանցագործներին»: Իր առանձին կարծիքում դատավոր Վան Դիժկը եզրակացրել է, որ դիմողների նկատմամբ տեղի է ունեցել արդար դատաքննություն, քանի որ, ի թիվս այլոց, ոստիկանության աշխատակիցներին հարցաքննել է հետաքննությունն իրականացնող դատավորը, և վերաքննիչ դատարանը գնահատել է ծառայողներին սպառնացող վրեժխնդրության ռիսկը:

2 Արդյոք առհասարակ ոստիկանության ծառայողները պե՞տք է բացահայտեն իրենց ինքնությունը և ցուցմունք տան դատարանի դռնբաց նիստի ժամանակ:

3 Դատարանի կողմից սույն վճռում կիրառված հիմնարար չափանիշը շարադրվել է 55-րդ պարբերությունում:

4 Ավելի վաղ լսված *«Դուրսոնն ընդդեմ Նիդեռլանդների» (Doorson v Netherlands,* 1996-II) գործը վերաբերել է Ամստերդամում թմրանյութերի թրաֆիքինգի՝ ոստիկանության հետաքննությանը: Թմրանյութեր օգտագործողները համաձայնել են տեղեկություններ հաղորդել իրենց մատակարարների մասին՝ իրենց ինքնությունը գաղտնի պահելու պայմանով: Ոստիկանությանը հաղորդված տեղեկությունների հիման վրա դիմողը ձերբակալվել է: Ի վերջո, Ամստերդամի տարածքային դատարանը նրան դատապարտել է թմրանյութերի թրաֆիքինգով զբաղվելու մեղադրանքով՝ հիմք ընդունելով ինքնությունը պարզված և դատարանում պաշտպանության և մեղադրական կողմերից հարցաքննված վկայի խիստ երկիմաստ ցուցմունքը, ինչպես նաև անանուն երկու վկաների՝ Y.15-ի և Y.16-ի ցուցմունքները: Վերջիններիս դատավորը հարցաքննել է այն ժամանակ, երբ դիմողի փաստաբանը նիստերի դահլիճում չի եղել, քանի որ ցուցմունք տալու համար վկաները ուշացած են եկել: Դիմողը բողոքել է Ամստերդամի վերաքննիչ դատարան, որից հետո նրա փաստաբանը Y.15-ին և Y.16-ին քննությունն իրականացնող դատավորի ներկայությամբ հարցաքննելու հնարավորություն է ունեցել: Այնուամենայնիվ, նրանց ինքնությունը չի բացահայտվել: Այս երկու վկաներն էլ հայտնել են, որ դիմողն իրենց թմրանյութեր է վաճառել: Դիմողները բողոքել են, որ տեղի է ունեցել 6(1) և 6(3)(դ) հոդվածի խախտում, ինչը հանձնաժողովը մերժել է տասնհինգ կողմ և տասներկու դեմ ձայներով: Դատարանի մեծամասնությունը՝ յոթ կողմ և երկու դեմ ձայներով, որոշել է, որ այս դրույթների խախտում չի եղել:

73. Սույն գործում վերաքննիչ դատավարության փուլում անանուն վկաներին հարցաքննել են փաստաբանի ներկայությամբ, քննությունն իրականացնող դատավորի կողմից, որն իմացել է նրանց ինքնությունը, ... եթե նույնիսկ պաշտպանության կողմը տեղյակ չի եղել: 1990 թ. նոյեմբերի 19-ի իր եզրակացությունների պաշտոնական արձանագրությունում նա նշել է այն հանգամանքները, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը կարողացել է եզրակացություն անել նրանց տված ցուցմունքների հուսալիության վերաբերյալ... Փաստաբանը ներկա չի գտնվել, սակայն նա ի վիճակի է եղել վկաներին առաջադրելու պաշտպանության կողմի շահերից բխող ցանկացած հարց, բացառությամբ այն հարցերի, որոնք կարող էին հանգեցնել նրանց ինքնության բացահայտմանը (և այս բոլոր հարցերին տրվել են պատասխաններ)...

74. Ակնհայտ է, որ դիմողն անպայման կգերադասեր ներկա գտնվել վկաների հարցաքննությանը, սակայն, վերջին հաշվով, դատարանը գտնում է, որ Ամստերդամի վերաքննիչ դատարանը իրավունք է ունեցել կարծելու, որ դիմողի շահերից առավել նախապատվությունը պետք է տրվի վկաների անվտանգության ապահովմանը: Եվ, ընդհանուր առմամբ, 6-րդ հոդվածի 3(դ) կետի նպատակների տեսանկյունից կոնվենցիան չի բացառում փաստաբանի կողմից մեղադրյալի ինքնության պարզումը...

75. Բացի այդ, թեպետ ընդհանուր առմամբ ցանկալի է, որ լուրջ հանցագործությունների մեջ կասկածվող անձանց ինքնությունը վկաներն անձամբ տեսնելով ճանաչեն, եթե նրանց ինքնության վերաբերյալ կասկածներ կան, հարկ է նշել, որ այս դեպքում Y.15-ը և Y.16-ը դիմողին ճանաչել են նկարով, որի վերաբերյալ դիմողն ասել է, որ դա իր նկարն է, ... բացի այդ, երկուսն էլ նկարագրել են նրա արտաքին տեսքը և հագուստը... Այս նկատառումներից հետևում է, որ դատական մարմինների կողմից պահպանված «հավասարակշռման» ընթացակարգի պայմաններում Y.15 և Y.16 վկաներից ստացված ցուցմունքները պետք է բավարար համարվեն, որպեսզի պաշտպանության կողմին հնարավորություն տան վիճարկելու անանուն վկաների ցուցմունքները և փորձելու կասկած ներել դրանցում արված հայտարարությունների հուսալիության վրա, ինչն էլ նա արել է դռնբաց դատական նիստի ժամանակ՝ ուշադրություն հրավիրելով այն փաստի վրա, որ երկու վկան էլ եղել են թմրամոլ...

Այս նկատառումներից հետևում է, որ դատական մարմինների կողմից Y.15 և Y.16 վկաներից ցուցմունք վերցնելու ժամանակ պահպանված «հակակշռող» ընթացակարգը պետք է համարվի բավարար այն առումով, որ հնարավորություն է տվել պաշտպանության կողմին վիճարկելու անանուն վկաների ցուցմունքները և փորձելու կասկածի տակ առնել նրանց տված ցուցմունքների արժանահավատությունը: Եվ սա այն է, ինչ նրանք արել են դռնբաց դատական նիստի ժամանակ՝ ուշադրություն հրավիրելով այն հանգամանքի վրա, որ նրանք երկուսն էլ եղել են թմրամոլ:

76. Վերջապես, պետք է հիշել, որ նույնիսկ երբ «հավասարակշռման» ընթացակարգերը փոխհատուցում են այն դժվարությունները, որոնք պաշտպանության կողմը փորձում է հաղթահարել, դատապարտումը չպետք է հիմնված լինի բացառապես կամ մեծապես անանուն վկաների ցուցմունքների վրա: Սա ամեն դեպքում չի վերաբերում սույն գործին. բավական պարզ է, որ ազգային դատարանը մեղավորության մասին իր եզրակացությունը չի հիմնավորել զուտ կամ զգալի աստիճանով Y.15-ի և Y.16-ի ցուցմունքների հիման վրա...

Բացի այդ, վկաների կողմից այնպիսի պայմաններում տրված ցուցմունքները, երբ հնարավոր չէ պաշտպանության կողմի իրավունքներն ապահովել այնքանով, որքանով նախատեսված է կոնվենցիայով, պետք է արժանանան խիստ զգուշավոր վերաբերմունքի: Դատարանը բավարարված է, որ այդպես էլ արվել է այս քրեական դատավարությունում, որը հանգեցրել է դիմողի դատապարտմանը, ինչպես արտացոլված է վերաքննիչ դատարանի հստակ հայտարարության մեջ, որ Y.15-ի և Y.16-ի ցուցմունքներին մոտեցել է «անհրաժեշտ զգուշությամբ և խոհեմությամբ». . .

Այս գործի դիմողն իր փաստաբանի միջոցով անվերապահորեն ավելի շատ հնարավորություն է ունեցել վիճարկելու անանուն վկաների՝ Y.15-ի և Y.16-ի ցուցմունքները և դրանց արժանահավատությունը, քան *Վան Մեխելենի* գործով դիմողներն անանուն ոստիկանության ցուցմունքների դեպքում:

5 1997 թ. Նախարարների կոմիտեն հրապարակել է «Վկաների ահաբեկման և պաշտպանության կողմի իրավունքների մասին» (R (97) 13) հանձնարարականը, որն ուղղված է եղել անդամ պետություններին և նպատակ է ունեցել ուղղորդել նրանց ազգային քաղաքականության և օրենսդրության մշակումը քրեական ոլորտում: Հանձնարարականում ամրագրված է, որ.

... 10. Եթե նման բան նախատեսվում է, ապա համաձայն ազգային օրենքի՝ ցուցմունք տվող անձանց ինքնությունը գաղտնի պահելը պետք է մնա որպես բացառիկ միջոց: Երբ այդ անձինք պահանջում են ինքնության գաղտնիության երաշխիք, կամ երբ իրավասու մարմինները ժամանակավորապես նրանց տրամադրում են այդպիսի երաշխիք, քրեական դատավարության օրենքը պետք է ապահովի քրեական վարույթի կարիքների և պաշտպանության կողմի իրավունքների միջև արդար հավասարակշռության ապահովմանն ուղղված ստուգման ընթացակարգ: Այս ընթացակարգի միջոցով

պաշտպանության կողմը պետք է հնարավորություն ունենա վիճարկելու վկայի ինքնությունը գաղտնի պահելու ենթադրյալ անհրաժեշտությունը, նրա արժանահավատությունը և տեղեկությունների ծագումը:

11. Ինքնության գաղտնի պահելը պետք է թույլ տրվի միայն այն դեպքում, երբ իրավասու դատական մարմինը կողմերին լսելուց հետո համարում է, որ (1) ներգրավված անձի կյանքը կամ ազատությունը, իսկ գաղտնի գործակալի դեպքում՝ նրա պոտենցիալ հետագա աշխատանքը հայտնվել են լուրջ վտանգի տակ, (2) ամենայն հավանականությամբ տրվելու են նշանակալի ցուցմունքներ, և անձը վստահելի տպավորություն է թողնում:

12. Անհրաժեշտության դեպքում պետք է լինեն ցուցմունք տվող վկաների պաշտպանության այլ միջոցներ, ներառյալ՝ պաշտպանության կողմի համար վկայի ինքնության բացահայտումը կանխող էկրանները, դեմքը թաքցնելու և ձայնը աղավաղելու համապատասխան միջոցները:

13. Ինքնությունը չբացահայտելու թույլտվության առկայության դեպքում անձի դատապարտումը/մեղավորության հաստատումը չպետք է հիմնված լինի զուտ կամ որոշիչ աստիճանով այդ անձանց տրամադրած ցուցմունքների վրա:

14. Ըստ նպատակահարմարության՝ պետք է գործեն հատուկ ծրագրեր, ինչպես, օրինակ՝ պաշտպանության կարիք ունեցող վկաների պաշտպանության ծրագրերը: Այդ ծրագրերի հիմնական նպատակը պետք է լինի վկաների, նրանց հարազատների և այլ մտերիմ անձանց կյանքի պաշտպանությունը և անձնական անվտանգության ապահովումը:

15. Վկաների պաշտպանության ծրագրերը պետք է ընդգրկեն պաշտպանության տարբեր մեթոդներ: Դրանք կարող են ներառել վկաներին և նրանց հարազատներին կամ նրանց մտերիմ այլ անձանց ինքնությունը և բնակության վայրը փոխելու հնարավորությունները, նոր աշխատանք գտնելու ուղղությամբ տրամադրվող օժանդակությունը, թիկնապահների և այլ ֆիզիկական պաշտպանության միջոցների տրամադրումը...

6 Մշտական գործող դատարանը հետևել է 6(3)(դ) հոդվածի նկատմամբ իր նախորդի ունեցած մոտեցմանը, օրինակ՝ *«Բիրուտիսը և այլք ընդդեմ Լիտվայի» (Birutis and Others v Lithuania)* գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2002 թ. հունիսի 28-ին: Երեք դիմողները/բանտարկյալները մեղադրվել են բանտում խռովություն կազմակերպելու և խռովությանը մասնակցելու մեջ: Առաջին դիմողի դեմ ուղղված ապացույցները եղել են գրավոր ցուցմունքներ, որոնք հետաքննությունն իրականացնող մարմինները վերցրել են տասնյոթ անանուն վկաներից (հիմնականում բանտարկյալներ), երեք մեղսակիցների ցուցմունքներ և դատավարության ժամանակ բանտի հինգ աշխատակիցների կողմից տրված ցուցմունքներ: Երկրորդ դիմողի դեմ ուղղված փաստերը սկզբունքորեն եղել են նույնը, սակայն երրորդ դիմողի դեպքում միակ ապացույցը եղել է վեց անանուն վկաների տված գրավոր ցուցմունքները: Դատաքննությունն իրականացնող դատարանը դատապարտել է դիմողներին՝ նշանակելով երկարատև բանտարկության պատիժ: Եվրոպական դատարանը վճռել է, որ.

28. ...որպես ընդհանուր կանոն՝ 6-րդ հոդվածի 1-ին և 3(դ) կետերը պահանջում են, որ ամբաստանյալին տրվի վիճարկելու և նրա դեմ ցուցմունք տվող վկային հարցաքննելու համապատասխան և պատշաճ հնարավորություն...

Դատավորները միաձայն եզրակացրել են, որ միայն անանուն վկաների ցուցմունքների հիման վրա երրորդ դիմողի դատապարտումն առաջացրել է *Դուրսոնի (Doorson)* սկզբունքի խախտում: Բացի այդ, դատավարությունն իրականացնող դատարանը չի ձեռնարկել հավասարակշռող միջոցներ (ինչպես, օրինակ՝ անանուն վկաների հարցաքննությունը կամ նրանց կողմից ցուցմունքների ստացման եղանակի ստուգումը), որոնք կերաշխավորեին առաջին և երկրորդ դիմողների պաշտպանության իրավունքները: Հետևաբար, դատարանը որոշել է, որ յուրաքանչյուր ամբաստանյալի նկատմամբ տեղի է ունեցել 6(3)(դ) հոդվածի խախտում:

Հոդված 6(3)(ե)

.....

«Լյուդիքեն, Բելկաչեմը և Կոչն ընդդեմ Գերմանիայի»
(Luedicke, Belkacem and Koc v Germany A.29 (1978) 2 EHRR 149)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Երեք դիմողները Գերմանիայի քաղաքացիներ չեն եղել (համապատասխանաբար՝ Բրիտանիայի, Ալժիրի և Թուրքիայի քաղաքացիներ), Գերմանիայի դատարանների կողմից դատապարտվել են տարբեր իրավախախտումներ (ճանապարհային երթևեկության խախտում, հարձակում և ծանր մարմնական վնասվածքի պատճառում) կատարելու համար: Նրանք գերմաներենին վարժ չեն տիրապետել, ուստի դատաքննության ժամանակ տրամադրվել են թարգմանիչներ: Դատապարտումից հետո դատարանները կարգադրել են դիմողներին վճարել թարգմանության ծախսերը: Դիմողները բողոքել են հանձնաժողովին, որը միաձայն եզրակացրել է, որ տեղի է ունեցել 6(3)(ե) հոդվածի խախտում:

38. ... Իր հաշվետվության մեջ հանձնաժողովը հայտնել է միաձայն կարծիք, որ դիմողների կողմից վիճարկվող որոշումները խախտել են 6-րդ հոդվածի 3(ե) կետը: Հանձնաժողովն ընդունում է, որ այս դրույթը նշանակում է, որ յուրաքանչյուր մեղադրյալ, որը «չի կարող հասկանալ կամ խոսել դատարանի լեզվով», պետք է ստանա թարգմանչի անվճար ծառայություն, և հետագայում այդ ծառայությունից առաջացած ծախսերի վճարումը չպետք է պահանջվի նրանից:

Կառավարությունը վիճարկում է այս կարծիքի իսկությունը: Նա պատճառաբանում է, որ եթե 6-րդ հոդվածի 3(ե) կետն ազատում է մեղադրյալին թարգմանչի ծառայության դիմաց ծախսերը կանխավ փոխհատուցելուց, դա չի նշանակում, որ դատապարտվելուց հետո նա ազատվում է այդ ծախսերը կրելուց:

39. 6-րդ հոդվածի 3(ե) կետը մեկնաբանելու համար դատարանն առաջնորդվելու է, ինչպես և առաջնորդվել են կառավարությունը և հանձնաժողովը, 1969 թ. մայիսի 23-ի Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայով (տե՛ս 1975 թ. փետրվարի 21-ի *Գոլդերի (Golder)* վճիռը, շարք A, թիվ 18, էջ 14, պարբ. 29): Վարույթից առաջացած հարցը, հետևաբար, դատարանը պետք է որոշի 6-րդ հոդվածի 3(ե) կետի «սահմանումներին վերագրվելիք սովորական իմաստը» «դրանց համատեքստում և դրանց առարկայի և նպատակի դիրքերից» (Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին կետ):

40. Ինչպես և հանձնաժողովը, դատարանը նույնպես կարծում է, որ 6-րդ հոդվածի 3(ե) կետում գործածված gratuitement/free [անվճար] բառերն ամփոփում են հստակ և որոշակի իմաստ: Ֆրանսերեն gratuitement նշանակում է d'une maniere gratuite, qu'on donne pour rien, sans retribution (Littre, Dictionnaire de la langue francaise), dont on jouit sans payer' (Hatzfeld et Darmesteter, Dictionnaire general de la langue francaise), 'a titre gratuit, sans avoir rien a payer, a titre onereux-ի (Larousse, Dictionnaire de la langue francaise) հակառակը, d'une maniere gratuite; sans retribution, sans contrepartie (Robert, Dictionnaire alphabetique et analogique de la langue francaise): Նմանապես, free անգլերեն նշանակում է not costing or charging anything, given or furnished without cost or payment [առանց որևէ բան տալու կամ վերցնելու, անվճար կամ անվարձահատույց տրված] (Webster's Third New International Dictionary):

Հետևաբար, դատարանին մնում է միայն gratuitement և free բառերին վերագրել այն բացարձակ իմաստը, որոնք նրանք սկզբունքորեն ունեն դատարանի երկու պաշտոնական լեզուներում: Այս հասկացությունները ցույց են տալիս ո՛չ վճարումից պայմանական ազատում, ո՛չ էլ կասեցում, այլ վճարումից իսպառ ազատում կամ վճարների ներում: Այնուամենայնիվ, դեռևս պետք է որոշել, թե արդյոք, ինչպես վիճարկում է կառավարությունը, այդ դրույթի համատեքստը, առարկան և նպատակը մերժո՞ւմ են տառացի մեկնաբանությունը:

41. Ըստ կառավարության՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետում թվարկված բոլոր իրավունքները վերաբերում են քրեական վարույթներին և իմաստից զրկվում են, երբ այդ վարույթները, որոնց արդար ընթացքը նրանք պետք է երաշխավորեն, դադարեցվում են վերջնական և պարտադիր կատարման ենթակա վճռով: Կառավարությունը ներկայացրել է, որ ներգրավված են որոշ նվազագույն իրավունքներ, որոնք, մանրամասնելով 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված արդար դատաքննության իրավունքը, տրամադրվում են միայն մեղադրյալին (everyone charged with a criminal offence, tout accuse [«յուրաքանչյուր անձի, որը մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ»]): Նմանապես, կառավարությունը հիմնվում է անմեղության կանխավարկածի վրա, որը հռչակված է 6-րդ հոդվածի 2-րդ կետում և

հերքվում է մեղադրյալի վերջնական և պարտադիր կատարման ենթակա դատապարտումով: Նրա պատճառաբանությունն այն է, որ արդար դատաքննության տարբեր երաշխիքները, նպատակ ունենալով հնարավորություն տալ մեղադրյալին պաշտպանելու անմեղության կանխավարկածը, ավարտվում են այն պահին, երբ այդ կանխավարկածը դադարում է գոյություն ունենալուց: Կառավարության բացատրությունների համաձայն՝ վարույթի ծախսերը դատապարտման հետևանք են, հետևաբար, ամբողջովին դուրս են մնում 6-րդ հոդվածի տիրույթից:

42. Դատարանը նշում է, որ արդար դատաքննության երաշխավորման նպատակով 6-րդ հոդվածի 3-րդ կետը թվարկում է որոշակի իրավունքներ (minimum rights/notamment/ [«նվազագույն իրավունքներ»]), որոնք տրամադրվում են մեղադրյալին՝ քրեական հանցագործություն կատարելու համար մեղադրվող անձին: Այնուամենայնիվ, այնքանով, որքանով դա վերաբերում է (ե) ենթակետին, դրանից չի բխում, որ մեղադրյալ անձնավորությանը մեղավոր ճանաչելուց հետո կարող է պահանջվել վճարել թարգմանական ծախսերը: 6-րդ հոդվածի 3(ե) կետի այսպիսի ընթերցումը, համաձայն որի՝ ազգային դատարանները կարող են ստիպել, որ այս ծախսերն արվեն դատապարտված անձի կողմից, հավասարազոր է այդ հոդվածի ընձեռած հնարավորության ժամանակային սահմանափակման և գործնականում, ինչպես ճշմարտացիորեն նշվել է հանձնաժողովի անդամների կողմից, այդ իրավունքը մերժելուն դատապարտվող յուրաքանչյուր մեղադրյալի դեպքում: Այսպիսի մեկնաբանությունը 6-րդ հոդվածի 3(ե) կետը կզրկի իր ազդեցության զգալի մասից, քանի որ այն թույլ կտա, որ ամբաստանյալը, որը չի հասկանում կամ չի խոսում դատարանի լեզվով, հայտնվի շատ ավելի անբարենպաստ դիրքում, քան այդ լեզվին ծանոթ մեկ այլ մեղադրյալ: Սրանք այն բացասական ազդեցություններն են, որոնք մեղմելու համար է հատկապես նախատեսված 6-րդ հոդվածի 3(ե) կետը:

Բացի այդ, չի կարելի բացառել, որ դատապարտված անձի՝ թարգմանական ծախսերը վճարելու պարտավորությունը ազդեցություն կունենա նրա՝ 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի վրա (տե՛ս *Գոլդերի (Golder)* վճիռը 1975 թ. փետրվարի 21, շարք A, թիվ 18, էջ 18, պարբ. 36), եթե նույնիսկ, ինչպես Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, յուրաքանչյուր մեղադրյալի, որը չի տիրապետում դատարանի լեզվին, ինքնաբերաբար թարգմանիչ նշանակվի: Այսպիսի նշանակումն ակներևաբար վերացնում է այն լուրջ թերությունները, որոնք ավելի շուտ առաջ կգային, եթե մեղադրյալը ստիպված լիներ պաշտպանել իրեն մի լեզվով, որին կա՛մ չի տիրապետում, կա՛մ վարժ չի տիրապետում, քան եթե նա լրացուցիչ ծախսեր կատարեր: Այնուամենայնիվ, ինչպես նշվել է հանձնաժողովի անդամների կողմից, վտանգ կա, որ որոշ սահմանային գործերում թարգմանչի նշանակումը կամ նրա նշանակման բացակայությունը կարող են կախված լինել մեղադրյալի դիրքորոշումից, որն իր հերթին կարող է պայմանավորված լինել ֆինանսական հետևանքները կրելու մտավախությամբ:

Հետևաբար, քանի որ 6-րդ հոդվածով երաշխավորվող արդար դատաքննության իրավունքն էլ բացասական ազդեցություն կկրեր, ապա free/gratuitement սահմանումների սովորական իմաստին, ինչպես նաև 6-րդ հոդվածի առարկային և նպատակին և, մասնավորապես, դրա 3(ե) կետին հակառակ կլիներ, եթե այս վերջին կետն այնքան նեղացվեր, որ ընդգրկեր միայն վճարումից պայմանական ազատման իրավունքի երաշխիք և չկանխեր ազգային դատարաններին, որպեսզի չպահանջեին դատապարտված անձանցից թարգմանական ծախսերի վճարումը...

48. Դատարանում կառավարության և հանձնաժողովի կարծիքները տարբերվել են այն հարցի շուրջ, թե որ ծախսերն են մտնում 6-րդ հոդվածի 3(ե) կետի մեջ: Կառավարության բացատրության համաձայն՝ 6-րդ հոդվածի 3(ե) կետը «միանշանակորեն և հստակորեն նախատեսում է թարգմանական օժանդակության տրամադրում բանավոր նիստերի ժամանակ (audience), սակայն չի տարածվում այլ թարգմանական ծախսերի վրա»:

Կառավարության տեսակետը, որի ճշտությունը վիճարկում են հանձնաժողովի անդամները, դատարանը չի կարող ընդունել: 6-րդ հոդվածի 3(ե) կետը չի ասում, որ բանավոր նիստի ժամանակ (a l'audience) յուրաքանչյուր մեղադրյալ թարգմանչի անվճար օժանդակության իրավունք ունի: Այն ասում է, որ այս իրավունքը տրամադրվում է նրան if he canÏÏt understand or speak the language used in court (s'il ne comprend pas ou ne parle pas la langue employee a l'audience) [եթե նա չի կարող հասկանալ կամ խոսել դատարանի օգտագործած լեզվով]: Ինչպես նշել են հանձնաժողովի անդամները, վերջին բառերն ընդամենը ցույց են տալիս այն պայմանները, որոնց առկայության դեպքում պետք է թարգմանչի անվճար օժանդակություն ապահովվի:

Բացի այդ, անգլերեն տեքստի used in court [օգտագործվում է դատարանի կողմից] արտահայտությունը, լինելով ավելի լայն, քան ֆրանսերեն employee a l'audience-ը (բառացիորեն թարգմանվում է որպես «դատական նիստի ժամանակ օգտագործվող»), այս առումով լրացուցիչ փաստարկ է: Մեկնաբանվելով 6-րդ հոդվածի արդար դատաքննության իրավունքի համատեքստում՝ 3(ե) կետը ցույց է տալիս, որ մեղադրյալը, եթե չի կարող հասկանալ կամ խոսել դատարանի օգտագործած լեզվով, ունի անվճար թարգմանչի ծառայություններից օգտվելու հնարավորություն կամ նրա դեմ ներկայացված վարույթի փաստաթղթերի կամ արձանագրությունների թարգմանության իրավունք, քանի որ որպեսզի կարողանա օգտվել արդար դատաքննության իրավունքից, պետք է կարողանա հասկանալ:

49. Այս տեսանկյունից տվյալ երեք գործերի միջև գոյություն ունեն որոշակի տարբերություններ:

Պարոն Լյուդիքեն թարգմանչական ծառայությունների համար պետք է վճարեր 225.40 գերմանական մարկ, որից 154.60-ը՝ բանավոր դատական նիստերի ժամանակ տրամադրած ծառայությունների համար... Մնացած ծախսերի մասին դատարանում հանդես եկող ներկայացուցիչները մանրամասներ չեն տրամադրել: Հետևաբար, դատարանը չի կարող եզրակացնել, որ այդ ծախսերը դուրս են մնում 6-րդ հոդվածի 3(ե) կետի երաշխիքի շրջանակներից:

Ինչ վերաբերում է պրն Կոչին, ապա նրա թարգմանական ծախսերն առաջացել են բացառապես Աախենի տարածքային դատարանին կից քրեական դատարանում (Assize Court) տեղի ունեցած երեք դատական նիստերի արդյունքում և կազմել, համապատասխանաբար, 311.50, 510.50 և 112.50 գերմանական մարկ:

Պարոն Բելկաչեմին նշանակված թարգմանական ծախսերն առաջացել են հստակ ընթացակարգային քայլերից, ինչպես, օրինակ՝ մեղադրյալի՝ դատավորին ներկայանալու (33.25 գերմանական մարկ), նրա նախնական կալանքի որոշման վերանայման (67.60 գերմանական մարկ), մեղադրական եզրակացության թարգմանության (90.20 գերմանական մարկ) գործողություններից և դատական նիստերից (130.90 գերմանական մարկ) (տե՛ս վերը՝ պարբ. 22): Դատարանի կարծիքով՝ 6-րդ հոդվածի 3(ե) կետը տարածվում է այս բոլոր ծախսերի վրա:

50. Հետևաբար, դատարանը եզրակացնում է, որ Գերմանիայի դատարաններում վիճարկվող որոշումները խախտել են 6-րդ հոդվածի 3(ե) կետը...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են նախագահ Վիարդան և դատավորներ Մոզլերը, Պեդերսենը, Բինդշեդլեր-Ռոբերտը, էվրիգենիսը, Թայթգենը և Լագերգրենը:

2 Դատարանի կողմից այս իրավունքի նեղ ըմբռնման Գերմանիայի հայեցակարգի մերժումն արժանի է գովասանքի: Դատարանի վճռում այդ իրավունքն ընդգրկում է թարգմանական ծառայություններ, որոնք չեն բավարարվում քրեական դատավարության զուտ բանավոր կողմով (պարբ. 48) և կախված չեն ամբաստանյալի արդարացվելու հանգամանքից (պարբ. 42): Ավելին, դատարանի վճիռը ձգտել է կոնվենցիայի իրավունքները գործնականում արդյունավետ դարձնել:

3 *Oqթուրքի (Öztürk)* գործի առնչությամբ (վերը՝ էջ 384) դատարանը նույնպես եզրակացրել է, որ Գերմանիայում տեղի է ունեցել այս իրավունքի խախտում:

4 Մշտական գործող դատարանը շեշտել է այն հիմնարար դերը, որ ունեն դատաքննությունը վարող դատավորները դատարանի լեզուն չհասկացող ամբաստանյալների համար արդյունավետ թարգմանական ծառայություններ ապահովելու առումով: *«Կուսկանին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Cuscani v United Kingdom)* գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2002 թ. սեպտեմբերի 24-ին, դիմողը եղել է Իտալիայի քաղաքացի և անգլերենի խիստ սահմանափակ իմացություն է ունեցել: Նա եղել է Նյուքասլ Թինում գտնվող ռեստորանի կառավարիչը: Իշխանությունները մեղադրել են նրան տարբեր իրավախախտումների մեջ, որոնք կապված են եղել հարյուրհազարավոր ֆունտ ստեռլինգի հասնող հարկերից խուսափելու հետ: Նրան տրամադրվել է իրավաբանական օգնություն, և նա ներկայացվել է թագավորական փաստաբանի, կրտսեր փաստաբանի և սոլիսիթորների կողմից: Դատաքննության ընթացքում Կուսկանին իր դատապաշտպանի խորհրդով մեղավոր է ճանաչել իրեն: Դատավարության ժամանակ նրա դատապաշտպանը տեղեկացրել է դատավորին, որ Կուսկանին լավ չի տիրապետում անգլերենին, և խնդրել է դատարանին, որ հաջորդ դատական նիստերին ապահովվի թարգմանչի ներկայությունը: Դատարանն արել է համապատասխան կարգադրություն: Այնուամենայնիվ, երբ մի քանի շաբաթ անց դատավարությունը պատժի որոշման համար վերսկսվել է, թարգմանիչը ներկա չի եղել: Կուսկանիի փաստաբանը համաձայնել է, որ դատական նիստը տեղի ունենա առանց թարգմանչի: Դատավորը հարցրել է, թե արդյոք դատարանում կա՞ն անձինք, որոնք ճանաչում են ամբաստանյալին և վարժ տիրապետում են անգլերենին և իտալերենին: Կուսկանիի փաստաբանը, առանց նրա հետ խորհրդակցելու, պատասխանել է, որ հարկ եղած դեպքում Կուսկանիի եղբայրը, որը ներկա է դատական նիստին, կարող է թարգմանել: Իրականում, հետագա դատական նիստի ժամանակ, երբ Կուսկանին դատապարտվել է չորս տարվա ազատազրկման, նրա եղբորը երբեք այդպես էլ չեն խնդրել թարգմանել: Եվրոպական դատարանը միաձայն որոշել է, որ այդ դատավարությունը տեղի է ունեցել 6(3)(ե) հոդվածի խախտումով:

38. …Դատարանի կարծիքով՝ դիմողի՝ թարգմանական ծառայությունների կարիքը այնպիսի հարց է, որի մասին դատավորը պետք է որոշում կայացներ դիմողի հետ քննարկելուց հետո, մանավանդ որ վերջինիս դատապաշտպանը զգուշացրել էր նրան, որ անձամբ դժվարանում է շփվել դիմողի հետ:

9 ՀՈԴՎԱԾ 7 ՊԱՏԻԺ՝ ԲԱՑԱՌԱՊԵՍ ՕՐԵՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Հոդված 7(1)

.....

«CR-ն ընդդեմ ՄԹ-ի» *(CR v UK* A.335-C (1995) 21 EHRR 363)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողն իր կնոջ հետ ամուսնացել է 1984 թ.: 1987 թ. նրանք կարճ ժամանակով հեռացել են միմյանցից, հետո հաշտվել: 1989 թ. հոկտեմբերի 21-ին դիմողի կինը որդու հետ դուրս է եկել տնից և գնացել իր ծնողների տուն՝ այնտեղ ապրելու նպատակով: Նա գրություն է թողել դիմողին՝ տեղեկացնելով նրան, որ մտադիր է դիմել ամուսնալուծության: 1989 թ. նոյեմբերի 12-ին դիմողը գնացել է իր կնոջ ծնողների տուն և փորձել կնոջ կամքին հակառակ սեռական հարաբերություն ունենալ նրա հետ: Այդ ժամանակ դիմողը հարվածել է կնոջը՝ ձեռքերի մեջ սեղմելով նրա վիզը: Դիմողը մեղադրվել է բռնաբարության փորձի, հարձակում գործելու և դրա հետևանքով մարմնական վնասվածք պատճառելու համար: (Համաձայն 1976 թ. «Սեռական հանցագործությունների մասին» (լրացված) օրենքի 1(1) բաժնի, «բռնաբարությունը» կնոջ կամքին հակառակ տղամարդու անօրինական սեռական հարաբերությունն է այդ կնոջ հետ...»): 1990 թ. ամռանը տեղի ունեցած իր դատավարության ժամանակ դիմողը փաստարկել է, որ բռնաբարության մեղադրանքը օրենքով դատապարտելի չէ, քանի որ զոհը իր կինն է: Նա հիմնվել է գլխավոր դատավոր սըր Մեթյու Հեյլի «Պետական կարևորության դատական գործե-րի պատմություն» (Sir Matthew Hale CJ, History of the Pleas of the Crown) աշխատության վրա, որը հրապարակվել է 1736 թ.: Այդ աշխատությունում, մասնավորապես, գրված է. «Սակայն ամուսինը չի կարող մեղավոր ճանաչվել իր օրինական կնոջ բռնաբարության մեջ, քանի որ նրանց ամուսնական համաձայնությամբ և պայմանագրով կինը տրվել է իր ամուսնուն, որից նա չի կարող հրաժարվել»: Այնուամենայնիվ, դատավարությունն իրականացնող դատավորը՝ Օուենը, մեջբերումներ է արել ավելի ուշ քննված գործերից, որոնք պաշտպանում են այն տեսակետը, որ որոշ դեպքերում կանայք կարող են չեղյալ հայտարարել իրենց ամուսինների հետ սեռական հարաբերություններ ունենալու համաձայնությունը: Նա նշել է, որ դա կարող է տեղի ունենալ (ա) դատարանի կարգադրության, (բ) կողմերի համաձայնության և (գ) կողմերից որևէ մեկի համակեցությունից հրաժարվելու հիման վրա, որի դեպքում այդ կողմը հստակ հասկացնում է, որ սեռական հարաբերություններ ունենալու համաձայնությունը դադարեցված է: Դատավորը որոշել է, որ (բ) և (գ) կետերը վերաբերում են դիմողի կնոջը: Այս որոշման հիման վրա դիմողը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել երեք տարվա ազատազրկման: Նրա բողոքը միաձայն մերժվել է վերաքննիչ դատարանում: Լորդերի պալատը նույնպես միաձայնական է եղել նրա վերջնական բողոքը (R v R [1991] 4 All ER 481) մերժելու հարցում: Պալատի անունից Քինքելի լորդ Քեյթը հայտարարել է, որ.

Հեյլի աշխատության հրապարակումից հետո ավելի քան 150 տարվա ընթացքում չի եղել որևէ արձանագրված գործ, որով նրա տեսությունն արժանանար դատական վերանայման: Առաջինը եղել է *«R-ն ընդդեմ Կլարենսի» (R v Clarence) գործը* [1888] 22 Queen's Bench Division 23, [1886–90] All England Law Reports 133 ... Կարելի է ընդունել, որ այդ տեսությունը ճշտորեն արտացոլում է Անգլիայում գոյություն ունեցող նախադեպային իրավունքը: Նախադեպային իրա-վունքը, այնուամենայնիվ, զարգանալու միտում ունի, որը պայմանավորված է փոփոխվող սոցիալական, տնտեսական և մշակութային զարգացումներով: Այս տեսանկյունից Հեյլի տեսությունը վեր է հանում տվյալ ժամանակաշրջանի իրողությունները: Դրանից հետո կանանց և հատկապես ամուսնացած կանանց կարգավիճակը կտրուկ փոխվել է

այնպիսի միջոցներով, որոնք քաջ հայտնի են, և որոնց մասին առանձնապես մանրամասն խոսելու անհրաժեշտություն չկա: Բացի գույքային խնդիրներից և ամուսինների դատական պաշտպանության միջոցների առկայությունից, ամենակարևոր փոփոխություններից մեկն այն է, որ ամուսնությունն արդի ժամանակներում ընկալվում է որպես հավասարների միություն, ոչ թե այնպիսի միություն, որում կինը համարվում է իր ամուսնուն ենթակա շարժական գույք: Հեյլի հայեցակարգի համաձայն՝ կինն ամուսնության միջոցով իր ամուսնուն տալիս է անբեկանելի համաձայնություն, ըստ որի՝ բոլոր հանգամանքներում և անկախ իր առողջական վիճակից կամ ինքնազգացողությունից, սեռական հարաբերություն է ունենալու նրա հետ: Արդի ժամանակներում ցանկացած ողջամիտ անձ այդ ըմբռնումը կհամարի բավական անընդունելի...

Բացի այդ, բանն այն է, որ մի շարք վճռված գործերի հիմքում ընկած չի եղել Հեյլի տեսության այն հատվածը, ըստ որի՝ կինը չի կարող հրաժարվել սեռական հարաբերություններ ունենալու իր ամուսնական համաձայնությունից: Սկզբունքորեն, գոյություն չունի որևէ լուրջ պատճառ, որը կհիմնավորեր, թե ինչու չպետք է այս ամբողջ տեսությունը կիրառելի չհամարվի ներկա ժամանակներում: Միակ հարցն այն է, թե արդյոք 1976 թ. օրենքի 1(1) բաժինը այսպիսի խելամիտ զարգացման համար անհաղթահարելի՞ խոչընդոտ է: Վեճի տեղիք է տալիս այն, որ այդ ենթաբաժնի համաձայն՝ «անօրինական» բառն օգտագործվում է «ամուսնական կապից դուրս» իմաստով:

... Փաստ է, որ առանց որևէ կնոջ համաձայնությունն ունենալու նրա հետ սեռական հարաբերության մեջ մտնելը միանշանակորեն անօրինական է, և այդ ենթաբաժնում այդ բառի կիրառությունը ոչինչ չի ավելացնում: Իմ կարծիքով՝ որևէ ռացիոնալ հիմք չկա առաջարկվող մեկնաբանությունն այդ բառի նկատմամբ կիրառելու համար, և այս օրենքում այն պետք է համարվի զուտ ավելորդություն...

Հետևաբար, ես այն կարծիքին եմ, որ 1976 թ. օրենքի 1(1) բաժինը խոչընդոտ չէ, որպեսզի այս պալատը հայտարարի, որ արդի ժամանակներում բռնաբարությունից արվող ենթադրյալ ամուսնական բացառությունը Անգլիայի օրենքի մաս չի կազմում: [Այս գործի կապակցությամբ] վերաքննիչ դատարանի քրեական բաժինն արտահայտել է համանման տեսակետ: Այդ դատարանում գործի վերաբերյալ վճռի կայացման վերջում գլխավոր դատավոր լորդ Լեյնն ասել է...

> Մյուս և ոչ նվազ խրթին հարցն այն է, թե հակառակ այդ տեսակետին, սա այն ոլո՞րտն է, որտեղ դատարանը պետք է մի կողմ քաշվի և խնդիրը թողնի խորհրդարանի կարգավորմանը: Սա ոչ թե նոր իրավախախտման ձևակերպում է, այլ հնացած և վիրավորական նախադեպային իրավունքի հնարանքի վերացում, և այս ուղղությամբ քայլ անելու նպատակով մեր պարտականությունն է կատարել այս եզրակացությունը:

Ամենայն հարգանքով հայտնում եմ համաձայնությունս (էջ 483–490):

Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ տեղի է ունեցել 7-րդ հոդվածի խախտում, քանի որ նա դատապարտվել է իր կնոջը բռնաբարելու փորձ անելու համար, որը, ըստ նրա, այդ ժամանակ քրեական հանցագործություն չի համարվել: Տասնչորս կողմ և երեք դեմ ձայներով հանձնաժողովը որոշել է, որ 7-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել: Դատարանը վճռել է, որ.

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

32. 7-րդ հոդվածում ամփոփված և օրենքի գերակայության էական տարր համարվող երաշխիքը նշանակալի տեղ է զբաղեցնում կոնվենցիայի պաշտպանության համակարգում, ինչն ակնառու է այն փաստից, որ պատերազմական կամ արտակարգ իրավիճակների դեպքում 15-րդ հոդվածի շրջանակներում դրանից բացառություններ արվել չեն կարող: Ինչպես հետևում է դրա առարկայից և նպատակից, այն պետք է մեկնաբանվի և կիրառվի այնպիսի եղանակով, որն արդյունավետ երաշխիքներ է ապահովում կամայական հետապնդման, դատապարտման և պատժման դեմ:

33. Հետևաբար, ինչպես դատարանը վճռել է *«Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի» (Kokkinakis v Greece)* 1993 թ. մայիսի 25-ի վճռում (շարք A, թիվ 260-A, էջ 22, պարբ. 52), 7-րդ հոդվածը չի սահմանափակվում միայն քրեական օրենքի՝ ի վնաս մեղադրյալի հետադարձ կիրառման արգելքով: Ավելի ընդհանուր գծերով այն նաև մարմնավորում է այն սկզբունքը, որ իրավախախտումը և պատժի նշանակումը կարող են սահմանվել միայն օրենքով (nullum crimen, nulla poena sine lege - չկա հանցանք, չկա պատիժ առանց օրենքի)՝ ներառելով նաև այն սկզբունքը, որ քրեական օրենքը չպետք է լայնորեն մեկնաբանվի (օրինակ՝ համանմանության սկզբունքով)՝ ի վնաս մեղադրյալի: Այս սկզբունքներից հետևում է, որ իրավախախտումը պետք է հստակ սահմանված լինի օրենքով: Իր վերը նշված վճռով դատարանն ավելացրել է, որ այս պահանջը բավարարված կլինի այն դեպքում, երբ համապատասխան դրույթի և, հարկ եղած դեպքում, դրա՝ դատարանների մեկնաբանության միջոցով անձը կարող է իմանալ, թե որ ակտերը և թերացումները նրան կկանգնեցնեն քրեական պատասխանատվության առջև: Դատարանը, այսպիսով, ցույց է տվել, որ «օրենքի» մասին խոսելիս 7-րդ հոդվածը հիմնվում է նույն հայեցակարգի վրա, ինչի վրա է հիմնվում կոնվենցիան այդ սահմանմանն այլ հոդվածներում

անդրադառնալիս. սա հայեցակարգ է, որն ընդգրկում է գրված և չգրված օրենքներ և ենթադրում է որակական ու հատկապես մատչելիության և կանխատեսելիության պահանջներ (տե՛ս, որպես թարմ աղբյուր, *«Տոլստոյ Միլոսլավսկին ընդդեմ ՄԹ-ի» (Tolstoy Miloslavsky v UK)* 1995 թ. հուլիսի 13-ի վճիռ, շարք A, թիվ 316-B, էջ 71–2, պարբ. 37):

34. Որքան էլ որ ցանկացած իրավունքի, ներառյալ քրեական իրավունքի համակարգում օրենքի դրույթը հստակ շարադրված լինի, անխուսափելիորեն գոյություն ունի դատական մեկնաբանության տարր: Միշտ գոյություն է ունենալու կասկածելի կետերի բացատրության և փոփոխվող հանգամանքներին համապատասխանելու անհրաժեշտություն: Իրոք, ինչպես Միացյալ Թագավորությունում, այնպես էլ կոնվենցիայի անդամ մյուս պետություններում դատարանի օրինաստեղծ գործունեության միջոցով քրեական իրավունքի աստիճանական զարգացումը իրավական ավանդույթի լավ հաստատված և անհրաժեշտ մասն է: Կոնվենցիայի 7-րդ հոդվածը չի կարող ընթերցվել որպես գործից գործ դատական մեկնաբանությունների միջոցով քրեական պատասխանատվության կանոնների աստիճանական պարզաբանման օրինականության ժխտում՝ պայմանով, որ զարգացումները համապատասխանեն իրավախախտման էությանը և ողջամտորեն կանխատեսվեն:

Բ. ՎԵՐԸ ՆՇՎԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

35. Դիմողը պնդել է, որ նախադեպային իրավունքի ընդհանուր սկզբունքը, ըստ որի՝ ամուսինը չի կարող մեղավոր ճանաչվել իր կնոջ բռնաբարության համար, թեպետ ենթակա է եղել որոշակի սահմանափակումների, սակայն գործել է 1989 թ. նոյեմբերի 12-ին, երբ նրա կատարած գործողությունները տեղիք են տվել նրան բռնաբարության փորձի մեջ մեղադրելու համար... Դրանից առաջ և դրանից հետո դատարանի կողմից ընդունած մի շարք որոշումներ … հաստատել են անձեռնմխելիության ընդհանուր սկզբունքը: Կասկածից վեր է, որ 1989 թ նոյեմբերի 12-ի դրությամբ օրենքի մեջ որևէ փոփոխություն չի մտցվել, թեպետ նման փոփոխությունը քննարկվել է: 1991 թ. մարտի 14-ին վերաքննիչ դատարանի և 1991 թ. հոկտեմբերի 23-ին Լորդերի պալատի կողմից անձեռնմխելիության վերացումը տեղի է ունեցել այն ուղղակիորեն չեղյալ հայտարարելու, ոչ թե օրենքի պարզաբանման միջոցով:

Երբ 1976 թ. Համայնքների պալատը քննարկել է «Սեռական հանցագործությունների մասին (լրամշակված)» օրենքի նախագիծը ... արտահայտվել են ամուսնական անձեռնմխելիության մասին տարբեր տեսակետներ: Այս փոփոխությունը, որը կվերացներ անձեռնխելիությունը, հանվել է և երբեք քվեարկության չի դրվել պետական նախարարի խորհրդի հիման վրա, որն առաջարկել է սպասել քրեական իրավունքի վերանայման կոմիտեի զեկույցին: Զեկույցում, որը մինչև 1984 թ. չի ներկայացվել, քրեական իրավունքի վերանայման կոմիտեն խորհուրդ է տվել պահպանել անձեռնմխելությունը և նախատեսել նոր բացառություն:

1988 թ., երբ քննարկվել են 1976 թ. օրենքի փոփոխությունները, խորհրդարանը հնարավորություն է ունեցել 1(1)(ա) բաժնից հանել «անօրինական» բառը ... կամ ներմուծել ամուսնական հարաբերություններին վերաբերող նոր դրույթ, սակայն որևէ քայլ այս ուղղությամբ չի ձեռնարկել:

1990 թ. սեպտեմբերի 17-ին օրենսդրական հանձնաժողովը նախնական առաջարկություն է ներկայացրել անձեռնմխելիության կանոնի վերացման մասին... Այնուամենայնիվ, վերաքննիչ դատարանի և Լորդերի պալատի որոշումներն ընդունվել են ավելի վաղ, քան տեղի կունենային այս քննարկումները... Համաձայն դիմողի բացատրության՝ այդ որոշումները հետադարձ ուժով փոփոխության են ենթարկել օրենքը, որը տեղի չէր ունենա, եթե խորհրդարանը կատարեր օրենսդրական հանձնաժողովի առաջարկությունը: Հետևաբար, նա եզրակացրել է, որ երբ 1994 թ. խորհրդարանը հանել է 1976 թ. օրենքի 1-ին բաժնից «անօրինական» բառը ... սոսկ չի վերաշարադրել օրենքն այն ձևով, ինչպես այն գոյություն է ունեցել 1976 թ.:

36. Դիմողն այնուհետև վիճարկել է, որ իր բողոքը կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետով քննարկելիս դատարանը չպետք է իր վարքագիծը քննության առնի անձեռնմխելիության կանոնից արվող որևէ բացառության համատեքստում: Խնդիրը երբեք չի կարգավորվել ազգային դատարանների կողմից, քանի որ միակ պատճառը, որի հիման վրա դիմողը դատապարտվել է, եղել է վերաքննիչ դատարանի և Լորդերի պալատի կողմից նախադեպային իրավունքի հնարանքի վերացումը:

37. Ըստ դիմողի, եթե այս գործի նկատմամբ կիրառվեր 10-րդ հոդվածի 2-րդ կետի ստուգման նման կանխատեսելիության ստուգում, ապա այն չէր բավարարվի: Թեպետ վերաքննիչ դատարանը և Լորդերի պալատը նոր իրավախախտում չեն նախատեսել կամ չեն փոխել բռնաբարության հիմնական բաղկացուցիչները, ընդլայնել են գոյություն ունեցող իրավախախտումը՝ ներառելով այնպիսի վարքագիծ, որը մինչ այդ պահը բացակայել է նախադեպային իրավունքից: Չի կարելի ասել, որ նրանք օրենքը համապատասխանեցրել են վարքագծի նոր ձևի: Ավելի շուտ այն համապատասխանեցրել են գոյություն ունեցող նոր սոցիալական մոտեցումներին: Նախկինում օրինական համարված այսպիսի վարքագծի վրա քրեական օրենքի տարածումը զուտ այս հիմքի վրա հենց այն է, ինչը կոչված է կանխելու կոնվենցիայի 7-րդ հոդվածը: Բացի այդ, դիմողը շեշտել է, որ անհնարին է ճշգրիտ որոշել, թե երբ է խնդրո առարկա փոփոխությունը տեղի ունեցել: 1989 թ. նոյեմբերին դատական մեկնաբանությամբ առաջացած փոփոխությունը նախատեսված չի եղել օրենսդրական հանձնաժողովի կողմից, որը եզրակացրել է, որ զգացվում է խորհրդարանական գործողության անհրաժեշտություն:

38. Կառավարությունը և հանձնաժողովը պաշտպանել են այն տեսակետը, որ 1989 թ. նոյեմբերի դրությամբ ամուսնական բռնաբարության անձեռնմխելիության հիմնավորվածության վերաբերյալ նշանակալի կասկած է եղել: Սա այն ոլորտն է, որտեղ օրենքը աստիճանական զարգացում է ունեցել, և եղել են հստակ ցուցումներ առ այն, որ անձեռնմխելիության հասցեին հնչող քննադատություններն ամենայն հավանականությամբ դատարանի կողմից արժանանալու են ավելի լայն մեկնաբանության: Մասնավորապես, հաշվի առնելով ամուսնության մեջ և դրանից դուրս տղամարդկանց հետ կանանց հավասար կարգավիճակի և իրենց մարմնի նկատմամբ նրանց անկախության ճանաչումը, պատշաճ իրավաբանական օժանդակության միջոցով դիմողը ողջամտորեն կարող էր կանխատեսել բռնաբարության բաղկացուցիչ տարրերի փոփոխությունը: Նա չի դատապարտվել այնպիսի վարքագծի համար, որը դրա կատարման ժամանակ քրեական հանցագործություն չի համարվել:

Բացի այդ, կառավարությունը նշել է, որ հիմք ընդունելով համաձայնեցված փաստերը՝ դատավոր պրն Օուենը եզրակացրել է, որ դիմողի և նրա կնոջ միջև եղել է միմյանցից բաժանվելու և հարաբերությունից հրաժարվելու ենթադրյալ համաձայնություն: Նրա գործի հանգամանքները, այսպիսով, կազմել են անձեռնմխելիության կանոնի բացառություն, ինչն արդեն հայտարարվել է Անգլիայի դատարանների կողմից:

39. Դատարանը նկատում է, որ բռնաբարության փորձի համար դիմողի դատապարտումը հիմնված է եղել բռնաբարության հոդվածի վրա, որը շարադրվել է 1956 թ. օրենքի 1-ին բաժնում և այնուհետև 1976 թ. օրենքի 1(1) բաժնում ... Դիմողը չի վիճարկում, որ այն վարքագիծը, որի համար ինքը դատապարտվել է, օրենքով «բռնաբարություն» բառին տրվող իմաստի համաձայն հավասար կլիներ բռնաբարության փորձի, եթե զոհը չլիներ իր կինը: Կոնվենցիայի 7-րդ հոդվածի շրջանակներում բերած նրա գանգատը վերաբերում է զուտ այն փաստին, որ նախադեպային իրավունքի շրջանակներում նա չի կարողացել օգտվել իր ամուսնական անձեռնմխելիությունից, քանի որ, ըստ նրա, այն հետադարձ ուժով չեղյալ է հայտարարվել:

40. Պետք է նկատել, որ վերաքննիչ դատարանի որոշման մեջ վճռորոշ հարցը ... վերաբերել է 1976 թ. օրենքի 1(1)(ա) բաժնում «բռնաբարությանը» տրված սահմանմանը. այն է՝ «անօրինական սեռական հարաբերություն կնոջ հետ, որն այդ հարաբերության ժամանակ չի տվել իր համաձայնությունը»: Հարցը եղել է այն, թե արդյոք ամուսնական անձեռնմխելիության «վերացումը» հակասո՞ւմ է բռնաբարության սահմանմանը՝ տրված օրենքով, և, մասնավորապես, արդյոք «անօրինական» բառը կկանխե՞ր այն: Այս կապակցությամբ դատարանը հիշում է, որ ազգային իշխանությունների, հատկապես դատարանների առաջնահերթ խնդիրն է մեկնաբանել և կիրառել ազգային օրենքը (տե՛ս, օրինակ՝ *«Կեմմաշն ընդդեմ Ֆրանսիայի» (Kemmache v France* (No 3)) 1994 թ. նոյեմբերի 24-ի վճիռ, շարք A, թիվ 296-C, էջ 86–7, պարբ. 37): Դատարանը որևէ պատճառ չի տեսնում չհամաձայնելու վերաքննիչ դատարանի եզրակացությանը, որը, այնուհետև, հաստատվել է Լորդերի պալատի կողմից ... որ «անօրինական» բառը բռնաբարության սահմանման մեջ եղել է զուտ ավելորդություն և չի խանգարել «հեռացնել հնացած և վիրավորական դարձած նախադեպային իրավունքի հնարանքը» և հայտարարել, որ «բռնաբարություն կատարած անձը մնում է բռնաբարություն կատարած անձ և ենթակա է քրեական օրենքին՝ անկախ իր զոհի հետ հարաբերություններից»...

41. Վերաքննիչ դատարանի, այնուհետև Լորդերի պալատի որոշումներն ընդամենը շարունակել են նախադեպային իրավունքի շոշափելի զարգացման գիծը՝ զրկելով ամուսնուն կնոջը բռնաբարելու համար քրեական հետապնդման չենթարկվելու անձեռնմխելիությունից... Համաձայն այն օրենքի, որը գործել է 1989 թ. նոյեմբերի 12-ի դրությամբ, որևէ կասկած չի եղել, որ իր կնոջ հետ բռնի ուժով սեռական հարաբերության մեջ մտած ամուսինը տարբեր հանգամանքներում կարող է մեղավոր ճանաչվել բռնաբարություն կատարելու մեջ: Բացի այդ, դատարանի մեկնաբանությունների միջոցով, որոնք այսպիսի վարքագիծն ընդհանուր առմամբ վերագրել են բռնաբարության հոդվածին, տեղի է ունեցել ակնառու էվոլյուցիա, որը համահունչ է հանցագործության բնույթին: Այդ էվոլյուցիան հասել է այնպիսի մակարդակի, որ դատարանի կողմից անձեռնմխելիության բացակայության ճանաչումը դարձել է ողջամտորեն կանխատեսելի իրավական զարգացում...

42. Բռնաբարության սկզբունքորեն ստորացնող բնույթն այնքան ակնհայտ է, որ վերաքննիչ դատարանի և Լորդերի պալատի որոշումների արդյունքի մասին (ըստ որի՝ դիմողը կարող է դատապարտվել բռնաբարության փորձի համար՝ անկախ իր զոհի հետ հարաբերություններից) չի կարելի ասել, որ այն չի համապատասխանում կոնվենցիայի 7-րդ հոդվածի առարկային և նպատակին. այն է՝ երաշխավորել, որ ոչ ոք չի ենթարկվում կամայական հետապնդման, դատապարտման կամ պատժի (տե՛ս վերը՝ պարբ. 32): Նույնիսկ ավելին, այն անընդունելի գաղափարի վերացումը, որ ամուսինն անձեռնմխելի է իր կնոջը բռնաբարելու համար քրեական հետապնդման ենթարկվելուց, համահունչ է եղել ոչ միայն ամուսնության քաղաքակիրթ հայեցակարգին, այլև, ամենից առավել, կոնվենցիայի հիմնարար նպատակներին, որոնց բուն էությունը մարդկային արժանապատվության և մարդկային ազատության պաշտպանությունն է:

43. Հասնելով այս եզրահանգման՝ դատարանն անհրաժեշտ չի համարում պարզել՝ դիմողի գործի փաստերը անձեռնմխելիության կանոնից բացառություն կազմե՞լ են, թե՞ ոչ. մի բան, որն արդեն արել են Անգլիայի դատարանները նախքան 1989 թ. նոյեմբերի 12-ը:

44. Կարճ ասած՝ դատարանը, ինչպես և կառավարությունը և հանձնաժողովը, համարում է, որ ազգային դատարանների որոշումները, որ իր կնոջը բռնաբարելու փորձի համար դատապարտումից և պատժից խուսափելու համար դիմողը չէր կարող հիմնվել անձեռնմխելիության վրա, կոնվենցիայի 7-րդ հոդվածի շրջանակներում նրա իրավունքների խախտման հարց չի առաջացնում:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

Վճռում է, որ կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չի եղել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են նախագահ Ռիսդալը և դատավորներ Գյոլչյուքլուն, Ռուսոն, Դե Մեյերը, Մարտենսը, Բիջին, Ֆրիլենդը, Զեմբրեկը և Լոհմուսը:

2 Նույն օրը, երբ ընդունվել է վերոհիշյալ վճիռը, դատարանն ընդունել է համանման որոշում *«S W-ն ընդդեմ Մեծ-ի» (S W v UK*, A.335-C (1995) 21 EHRR 363) գործի կապակցությամբ: 1990 թ. սեպտեմբերին դիմողը բռնաբարել է իր կնոջը, երբ վերջինս տեղյակ է պահել նրան իր հեռանալու որոշման մասին: 1991 թ. ապրիլի դատավարության ժամանակ երդվյալ ատենակալները դիմողին մեղավոր են ճանաչել, ի թիվս այլոց, բռնաբարություն կատարելու մեջ և դատապարտել նրան հինգ տարվա ազատազրկման:

3 1994 թ. «Քրեական արդարադատության և հասարակական կարգի մասին» օրենքում խորհրդարանն ընդունել է բռնաբարության նոր՝ ավելի լայն սահմանում. «1(1) Այն տղամարդու կողմից կնոջը կամ մեկ այլ տղամարդու բռնաբարելու հանցագործություն է: (2) Տղամարդը բռնաբարություն է կատարում, եթե (ա) սեռական հարաբերություն է ունենում անձի հետ..., որն այդ հարաբերության ժամանակ չի համաձայնում դրան...»:

4 CR-ի և SW-ի գործերով դատարանի վճիռները հաստատել են, որ քրեական պատասխանատվության կանոնների «աստիճանական պարզաբանումը»՝ պայմանով, որ այդ էվոլյուցիան «համապատասխանի հանցագործության բնույթին և կարող է ողջամտորեն կանխատեսվել», համահունչ է 7(1) հոդվածի պահանջներին: Այնուամենայնիվ, հեշտ խնդիր չէ որոշել՝ այդ էվոլյուցիան մտնո՞ւմ է տվյալ լայն չափանիշների շրջանակի մեջ, թե՞ ոչ: Ձեր կարծիքով, որքանո՞վ են վերը նշված գործերում դատարանի եզրակացությունները պայմանավորված եղել բռնաբարության գործողության նկատմամբ նրա հակակրանքով:

5 *«Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի» (Kokkinakis v Greece)* գործը քննարկված է ստորև՝ էջ 627: Դատարանը, ութ կողմ և մեկ դեմ ձայներով, որոշել է, որ անձանց կրոնափոխ անելու հանցարարքը, որը սահմանված է թիվ 1363/1938 օրենքում, չի առաջացրել 7(1) հոդվածի որոշակիության պահանջի խախտում:

.....

«Շտրելեցը, Քեսլերը և Քրենզն ընդդեմ Գերմանիայի» (Streletz, Kessler and Krenz v Germany) *2001 թ. մարտի 22*

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողներից առաջինը 1979-1989 թթ. եղել է Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության պաշտպանության փոխնախարար, մյուսները՝ համապատասխանաբար պաշտպանության նախարար (1985-1989 թթ.) և պետության անվտանգության խորհրդի և պաշտպանության խորհրդի նախագահ

(1989 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր): 1949 թ. մինչև 1961 թ., երբ կառուցվել է Բեռլինի պատը, մոտ երկուսուկես միլիոն մարդ Արևելյան Գերմանիայից փախել է Գերմանիայի Դաշնային Հանրապետություն: Դրանից հետո Արևմտյան Գերմանիայի սահմանի վրա ԳԴՀ իշխանությունները հաստատել են խիստ մշակված անվտանգության համակարգ, ներառյալ ականապատ դաշտերի ստեղծումը և ավտոմատ կրակահերթ բացող սարքավորումների տեղադրումը: Արևելյան Գերմանիայի սահմանապահներն իրենց ուսուցման և քաղաքական հրահանգավորման արդյունքում ենթակա են եղել «սահմանի հատումները թույլ չտալու, սահմանը խախտող անձանց ձերբակալելու կամ նրանց սպանելու և պետության սահմանները ցանկացած գնով պաշտպանելու...» քաղաքական հրահանգին (վճռի 19-րդ պարբերություն): ԳԴՀ իշխանությունների կողմից այս իրադարձությունները գաղտնի պահելու պատճառով սահմանը հատելու փորձերի ժամանակ սպանված անձանց թիվը Արևմուտքի հաշվարկներով տատանվում է 264-ից 938-ի միջև: ԳԴՀ փլուզումից հետո՝ 1989 թ. աշնանը, նորընտիր խորհրդարանը պահանջել է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից, որ Արևելյան Գերմանիայի կոմունիստական կուսակցության օրոք անարդարություններ գործած մարդկանց նկատմամբ սկսվեն քրեական հետապնդումներ: 1990 թ. հոկտեմբերին Գերմանիան միավորվել է (որպես Գերմանիայի Դաշնային Հանրապետություն): Այնուհետև՝ 1993 թ. ընթացքում, Բեռլինի տարածքային դատարանը առաջին և երկրորդ դիմողներին համատեղ պատասխանատվության հիմքերով դատապարտել է համապատասխանաբար հինգ և յոթ տարվա ազատազրկման՝ 1971-1989 թթ. կանխամտածված մարդասպանության գործողություններ սադրելու համար, ինչի հետևանքով մի շարք երիտասարդ անձինք զոհվել են ականապատ դաշտերում կամ սահմանապահների կրակահերթից: Դիմողների մեղավորությունը որոշելու համար տարածքային դատարանը սկզբում կիրառել է նախկին ԳԴՀ-ի քրեական օրենսգիրքը, այնուհետև անցել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգրքին, քանի որ այն ավելի մեղմ է եղել: Դատապարտումները հաստատվել են արդարադատության դաշնային դատարանի և դաշնային սահմանադրական դատարանի կողմից: Հիմք ընդունելով 1984-1986 թթ. քաղբյուրոյի և Ազգային պաշտպանության խորհրդի՝ սահմանապահական ռեժիմին վերաբերող որոշումների ընդունմանը երրորդ դիմողի մասնակցությունը և դրա հետևանքով սահմանը հատելու և արևմտյան կողմն անցնելու փորձ անող չորս երիտասարդ անձանց գնդակահարության փաստը, նա՝ որպես անուղղակի ղեկավար, միտումնավոր մարդասպանության մեղադրանքով դատապարտվել է վեց տարվա ազատազրկման: Բեռլինի տարածքային դատարանի որոշումը հաստատվել է նաև վճռի բողոքարկման փուլում:

Դիմողները գանգատ են ներկայացրել նախորդ հանձնաժողովին՝ պնդելով, որ այն ժամանակ իրենց գործողությունները հանցագործություն չեն համարվել ո՛չ ազգային (այսինքն՝ ԳԴՀ-ի), ո՛չ էլ միջազգային իրավունքի շրջանակներում, և իրենց դատապարտումները Գերմանիայի Դաշնային Հանրապետության դատարանների կողմից խախտել է, ի թիվս այլոց, նաև 7-րդ հոդվածը (պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա): Դիմումները փոխանցվել են նոր դատարանին, որտեղ պալատը, առանց կողմերից որևէ մեկի առարկությանը հանդիպելու, փոխանցել է դրանք մեծ պալատին: Դատարանում դիմողները վիճարկել են, որ տեղի է ունեցել 7-րդ հոդվածի խախտում, քանի որ, ի թիվս այլոց, (1) իրենց դատապարտումները [երկու Գերմանիաների] միավորումից հետո կանխատեսելի չեն եղել, (2) իրենց գործողությունները հանցագործություն չեն համարվել ԳԴՀ քրեական օրենքով, և (3) իրենց գործողությունները հանցագործություն չեն համարվել միջազգային իրավունքի շրջանակներում (պետությունների մեծ մասում սահմանի մուտքն արգելված է կամ խստորեն կառավարվում է, և սահմանապահների կողմից հրազենային զենքի կիրառությունը թույլատրելի է):

51....Դատարանը նկատում է, որ սույն գործի մեկ առանձնահատուկ հատկանիշն այն է, որ արծարծում է տարբեր իրավական համակարգերով առաջնորդվող երկու պետությունների անցումային շրջանը, և միավորումից հետո Գերմանիայի դատարանները դիմողներին դատապարտել են այն հանցագործությունների համար, որոնք նրանք կատարել են իրենց պաշտոնավարման ընթացքում՝ որպես ԳԴՀ առաջնորդներ:

...

(Ա) ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՔԸ

73. Դատարանը համարում է, որ ականապատ դաշտերի և ինքնաձիգ համակարգերի կիրառությունը՝ հաշվի առնելով դրանց ինքնաբերական և անխտրական ազդեցությունը, ինչպես նաև սահմանապահներին տրված կարգադրությունների խիստ բնույթը՝ «ոչնչացնել սահմանը խախտողներին (Grenzverletzer) և ամեն գնով պաշտպանել սահմանը», կոպտորեն խախտել է ԳԴՀ սահմանադրության 19-րդ և 20-րդ հոդվածներում ամփոփված հիմնարար իրավունքները, որոնք սկզբունքորեն հաստատվել են ԳԴՀ-ի քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով և սահմանների վերաբերյալ ԳԴՀ մյուս օրենքներով (1968 թ. «Ժողովրդական ոստիկանության մասին» օրենքի 17(2) բաժին և 1982 թ. «Պետական սահմանների մասին» օրենքի 27(2) բաժին): Այս պետական գործելակերպը նաև առաջացրել է ԳԴՀ ստանձնած մարդու իրավունքներին վերաբերող և այլ միջազգային պարտավորությունների խախտումներ ... քանի որ ԳԴՀ քաղաքացիները երկրից դուրս գալու գրեթե ոչ մի օրինական ճանապարհ չեն ունեցել, այն դեպքում, երբ ԳԴՀ-ն 1974 թ. նոյեմբերի 8-ին վավերացրել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը՝ բացահայտորեն ճանաչելով կյանքի և տեղաշարժվելու ազատության իրավունքը... Թեպետ ականապատ դաշտերի և ինքնաձիգ կրակող սարքավորումների կիրառումը դադարեցվել է 1984 թ., սահմանապահների կարգադրությունները փոփոխության չեն ենթարկվել մինչև 1989 թ. Բեռլինի պատի քանդումը:

74. Դատարանն այնուհետև նկատում է, որ իրենց արդարացնելու համար դիմողները հիմնվել են իրենց կողմից սահմանապահներին տրված կրակ բացելու կարգադրության, ինչպես նաև դրա արդյունքում ձևավորված գործելակերպի վրա, որոնց համար էլ նրանք մեղավոր են ճանաչվել: Այնուամենայնիվ, համաձայն օրենքի ընդհանուր սկզբունքների, ամբաստանյալներին իրավունք չի վերապահվում ընդամենը ցույց տալով, որ նման վարքագիծն իրոք գոյություն է ունեցել և, հետևաբար, կազմել գործելակերպի մաս, արդարացնել այն վարքագիծը, որը հանգեցրել է նրանց դատապարտման:

75. Բացի այդ, անկախ ԳԴՀ-ի՝ որպես պետության պատասխանատվությունից, դիմողների՝ որպես անհատների գործողությունները սահմանված են եղել ԳԴՀ քրեական օրենսգրքի 95-րդ հոդվածում, որի 1977 թ. տարբերակը կրկնել է 1968 թ. տարբերակում օգտագործված սահմանումները. «Յուրաքանչյուր անձ, ում վարքագիծը խախտում է մարդու հիմնարար իրավունքները ... դա արդարացնելու համար չի կարող վկայակոչել գրված օրենքը, կարգը կամ գրավոր հրահանգները և պատասխանատվություն է կրում օրենքի առջև»:

76. Հետևաբար, կասկած չկա, որ խնդրո առարկա գործողությունների համար դիմողներն ունեցել են անձնական պատասխանատվություն:

77. Այնուամենայնիվ, դիմողներն առարկել են, որ հաշվի առնելով ԳԴՀ-ում տիրող իրավիճակը, իրենց դատապարտումը Գերմանիայի դատարանների կողմից չէր կարող կանխատեսելի լինել, և որ իրենց համար բացարձակապես անհնար է եղել կանխատեսել, որ հանգամանքների փոփոխության պատճառով մի օր իրենցից հաշիվ է պահանջվելու քրեական դատարանի առջև:

78. Դատարանի համար այս փաստարկը համոզիչ չէ: ԳԴՀ օրենսդրության և գործելակերպի միջև եղած մեծ անջրպետը մեծ մասամբ եղել է հենց դիմողների ձեռքի գործը: Հաշվի առնելով այն բավական բարձր պաշտոնները, որ զբաղեցրել են նրանք պետական ապարատում, ակնհայտորեն չէին կարող անտեղյակ լինել ԳԴՀ սահմանադրությունից և օրենսդրությունից կամ նրա միջազգային պարտավորություններից և նրա սահմանի պահպանման կարգի առումով ողջ աշխարհում հնչեցված միջազգային քննադատությունից... Բացի այդ, նրանք իրենք են իրականացրել կամ պահպանել այդ կարգը՝ նախատեսելով նոր օրենսդրական դրույթներ (որոնք հրապարակվել են ԳԴՀ պաշտոնաթերթում)՝ սահմանի ամրապնդման և սահմանի պաշտպանության սարքավորումների բարելավման և հրազենի կիրառման վերաբերյալ գաղտնի կարգադրություններ և ծառայողական հրահանգներ: Սահմանապահներին ուղղված կրակ բացելու մասին կարգադրություններում նրանք ընդգծել են «ամեն գնով» ԳԴՀ սահմանները պաշտպանելու և «սահմանը խախտողներին» ձերբակալելու կամ «ոչնչացնելու» անհրաժեշտությունը... Հետևաբար, դիմողներն ուղղակիորեն պատասխանատու են եղել այն իրավիճակի համար, որը 1960-ական թթ. սկզբից մինչև Բեռլինի պատի քանդումը ձևավորվել է երկու գերմանական տերությունների սահմանի վրա:

79. Բացի այդ, այն փաստը, որ նախքան միավորումը ԳԴՀ-ում այդ իրեղեն ժամանակահատվածում գործող իրավական դրույթների հիման վրա դիմողները հետապնդման չեն ենթարկվել և չեն դատապարտվել Գերմանիայի դատարանների կողմից, որևէ կերպ չի նշանակում, որ ԳԴՀ օրենքի շրջանակներում նրանց գործողությունները հանցագործություններ չեն եղել:

80. Այդ կապակցությամբ դատարանը նկատում է, որ նախկին վարչակարգի պայմաններում հանցագործություններ կատարած անձանց հետ կապված այնպիսի խնդիր, որը Գերմանիան պետք է կարգավորեր միավորումից հետո, առաջացել է նաև ժողովրդավարական վարչակարգի անցած մի շարք այլ պետություններում:

80. Դատարանը համարում է, որ օրենքի գերակայության սկզբունքներով առաջնորդվող պետության համար օրինական է քրեական վարույթ սկսել այն անձանց դեմ, որոնք հանցագործություններ են կատարել նախկին վարչակարգի օրոք: Նմանապես, այդ պետության դատարանները, գրավելով նախկին դատարանների տեղը, չեն կարող քննադատության ենթարկվել այն բանի համար, որ օրենքի գերակայությամբ առաջնորդվող պետության սկզբունքներով կիրառում և մեկնաբանում են այդ պահին գործող իրավական դրույթները ...

84. Պետք է նաև նշել, որ ԳԴՀ խորհրդարանը, որը ժողովրդավարական սկզբունքներով ընտրվել է 1990 թ., բացահայտ պահանջել է Գերմանիայի օրենսդիր մարմնից երաշխավորել, որ SED-ի [Արևելյան Գերմանիայի կոմունիստական կուսակցության] կատարած անարդարությունների կապակցությամբ սկսվելու են քրեական հետապնդումներ: Սա ողջամտորեն ենթադրել է տալիս, որ եթե նույնիսկ Գերմանիայի միավորումը տեղի ունեցած չլիներ, ապա ԳԴՀ-ում SED-ի վարչակարգին փոխարինելու եկած ժողովրդավարական վարչակարգը կիրառելու էր ԳԴՀ օրենսդրությունը և հետապնդելու դիմողներին. մի բան, որը Գերմանիայի դատարանները արել են միավորումից հետո:

85. Բացի այդ, հաշվի առնելով մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող բոլոր միջազգային փաստաթղթերում, ներառյալ կոնվենցիայում (որում կյանքի իրավունքը երաշխավորվում է 2-րդ հոդվածով) կյանքի իրավունքին տրվող գերակա նշանակությունը, ... դատարանը կարծում է, որ սույն գործում Գերմանիայի դատարանների կողմից ԳԴՀ օրենսդրության խիստ մեկնաբանությունը համահունչ է կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի հետ...

87. Դատարանը համարում է, որ պետական այնպիսի գործելակերպը (ինչպես, օրինակ՝ ԳԴՀ սահմանի վերահսկողության քաղաքականությունը), որը կոպտորեն խախտում է մարդու իրավունքները և ամենից առավել՝ մարդու իրավունքների միջազգային հիերարխիայում գերագույն արժեք համարվող կյանքի իրավունքը, չի կարող ընդգրկվել կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի պաշտպանության շրջանակներում: Այդ գործելակերպը, որը թոթափել է այն օրենսդրությունը, որի վրա պետք է հիմնված լիներ և պարտադրվել է ԳԴՀ բոլոր մարմիններին, ներառյալ դատական մարմիններին, կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով չի կարող ներկայացվել որպես «օրենք»:

88. Հետևաբար, դատարանն այն կարծիքին է, որ դիմողները չեն կարող վկայակոչել կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսվող պաշտպանությունը, քանի որ նրանք եղել են ԳԴՀ առաջնորդներ, ԳԴՀ օրենսդրական համակարգի միջոցով ստեղծել են օրինականության պատրանք, սակայն իրականացրել կամ շարունակել են իրականացնել այնպիսի գործելակերպ, որը կոպտորեն անտեսել է այդ համակարգի բուն սկզբունքները: Այլ կերպ պատճառաբանելը հակառակ կլիներ այդ դրույթի առարկային և նպատակին, ըստ որոնց՝ որևէ անձ չպետք է ենթարկվի կամայական քրեական հետապնդման, դատապարտման կամ պատժի:

89. Հաշվի առնելով այս բոլոր նկատառումները՝ դատարանը որոշում է, որ դիմողների գործողությունները դրանք կատարելու ժամանակ եղել են հանցագործություններ, որոնք բավականաչափ մատչելի և կանխատեսելի են եղել ԳԴՀ օրենքով:

(Բ) ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

i. Կիրառելի կանոնները

90. Դատարանը կարծում է, որ իր պարտականությունն է ընթացիկ գործը քննության առնել նաև միջազգային իրավունքի, ներառյալ՝ մարդու իրավունքների միջազգային պաշտպանությանը վերաբերող իրավական դրույթների տեսանկյունից, հատկապես այն պատճառով, որ Գերմանիայի դատարանների օգտագործած փաստարկները հիմնված են եղել այդ սկզբունքների վրա...

91. Հետևաբար, անհրաժեշտ է քննարկել, թե արդյոք դիմողների գործողությունները դրանք կատարելու ժամանակ համարվե՞լ են հանցագործություններ, որոնք բավական մատչելի և կանխատեսելի սահմանված են եղել միջազգային իրավունքի դրույթներով, մասնավորապես՝ մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող կանոններով:

ii. Կյանքի իրավունքի միջազգային պաշտպանությունը

92. Նախ՝ դատարանը նկատում է, որ այդ պաշտպանության զարգացման ընթացքում համապատասխան կոնվենցիաները և այլ փաստաթղթերը մշտապես հաստատել են կյանքի իրավունքին տրվող գերակա նշանակությունը:

93. 1948 թ. դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, օրինակ, ասված է. «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք»: Այդ իրավունքը հաստատվել է 1966 թ. դեկտեմբերի 16-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով, որը ԳԴՀ-ն վավերացրել է 1974 թ. նոյեմբերի 8-ին, և որի 6-րդ հոդվածում ասված է. «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի անօտարելի իրավունք» և «Ոչ ոքի չի կարելի կամայականորեն զրկել կյանքից»: Այն ընդգրկված է նաև կոնվենցիայի մեջ, որի 2-րդ հոդվածի 1-ին կետում ասված է.

«Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը»:

94. Վերը նշված այս երկու փաստաթղթերի միջև էական ընդհանրություն կա, ինչը ցույց է տալիս, որ կյանքի իրավունքն անքակտելի է մարդ արարածից և մարդու իրավունքների հիերարխիայում գերագույն արժեք է:

95. Այնուամենայնիվ, դիմողները պնդել են, որ իրենց գործողություններն արդարացված են եղել կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետում նշված բացառություններով, քանի որ գրված է.

«Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝

ա. ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,
բ. օրինական ձերբակալում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,
գ. խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար»:

96. Դատարանը, հաշվի առնելով վերը նշված փաստարկները, կարծում է, որ, փախուստի դիմած անձանց մահերը որևէ կերպ այնպիսի ուժի գործադրման հետևանք չեն, որը «բացարձակապես անհրաժեշտ» է եղել: Դիմողների կողմից ԳԴՀ-ում իրականացված պետական գործելակերպը որևէ անձի չի պաշտպանել անօրինական բռնությունից, ուղղված չի եղել այնպիսի ձերբակալությունների կատարմանը, որոնք ԳԴՀ օրենքի շրջանակներում կարող են նկարագրվել որպես «օրինական» ձերբակալություններ և որևէ ընդհանրություն չի ունեցել բռնկման կամ ապստամբության ճնշման հետ, քանի որ փախուստի դիմած անձանց միակ նպատակը եղել է դուրս գալ այդ երկրից:

97. Սրանից հետևում է, որ դիմողների գործողությունները որևէ կերպ արդարացված չեն եղել կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում:

iii. Տեղաշարժվելու ազատության միջազգային պաշտպանությունը

98. Ինչպես և կոնվենցիայի թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի 2-րդ կետը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրում է. «Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած, ներառյալ իր սեփական երկրից մեկնելու իրավունք»: Այդ իրավունքի նկատմամբ սահմանափակումները թույլատրվում են միայն այն դեպքում, երբ դրանք ամրագրված են օրենքով, անհրաժեշտ են ազգային անվտանգության, հանրային կարգի պահպանման, հանրային առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար և համահունչ են դաշնագրով ճանաչված մյուս իրավունքներին:

99. ԳԴՀ սահմանապահական կարգի ստեղծումը և շարունակական կիրառումն արդարացնելու նպատակով դիմողները հիմնվել են այդ սահմանափակումների վրա:

100. Այնուամենայնիվ, դատարանը համարում է, որ սույն գործում վերը նշված բացառություններից ոչ մեկը չի գործել: Նախ՝ խնդրո առարկա ակտերը եղել են հրամաններ, որոնք տրվել են ու կատարվել և չեն բխել ո՛չ սահմանադրությունից, ո՛չ էլ հիմնական օրենքներից: Երկրորդ՝ հնարավոր չէ պնդել, որ պետության ողջ ազգաբնակչության մեկնումը կանխող այսպիսի ընդհանուր բնույթի միջոցն անհրաժեշտ է եղել այդ ազգաբնակչության անվտանգության պահպանման կամ վերը նշված այլ շահերի պաշտպանության համար: Եվ, վերջապես, այն եղանակը, որով ԳԴՀ-ն իրականացրել է արգելքի այս միջոցը՝ թույլ չտալով իր քաղաքացիներին դուրս գալ երկրից և պատժելով այդ քաղաքականության հակադրվողներին, զոհերի դեպքում հակասել է դաշնագրում ամփոփված մեկ այլ իրավունքի ևս՝ 6-րդ հոդվածում ամրագրված կյանքի իրավունքին:

101. Այնուամենայնիվ, կապված տեղաշարժվելու ազատության իրավունքի հետ, դատարանը նշում է, որ երբ 1989 թ. սեպտեմբերի 11-ին Հունգարիան բացել է իր և Ավստրիայի սահմանը, չեղյալ է հայտարարել իր և ԳԴՀ-ի միջև կնքված երկկողմ համաձայնագիրը՝ հողում կատարելով միջազգային դաշնագրի 6-րդ և 12-րդ հոդվածներին և Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 62-րդ հոդվածին (հանգամանքների կատարյալ փոփոխություն):

iv. ԳԴՀ-ի պետական պատասխանատվությունը և դիմողների անձնական պատասխանատվությունը

102. Այսպիսով, սահմանի վրա ականներ և ինքնաձիգ համակարգեր տեղադրելով և սահմանապահներին կարգադրելով «ոչնչացնել սահմանը խախտողներին և ամեն գնով պաշտպանել սահմանը», ԳԴՀ-ն հաստատել է սահմանի հսկողության այնպիսի կարգ, որն անվերապահորեն անտեսել է մարդկային կյանքը պահպանելու անհրաժեշտությունը (մի բան, որն ամրագրված է եղել ԳԴՀ սահմանադրության և օրենսդրության մեջ) և վերը նշված միջազգային փաստաթղթերով պահանջվող կյանքի իրավունքը: Այդ կարգը նմանապես խախտել է տեղաշարժվելու ազատության իրավունքը, որի մասին նշվում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածում:

103. Պետության այսպիսի գործելակերպը սկզբունքորեն եղել է դիմողների ձեռքի գործը, որոնք՝ որպես քաղաքական առաջնորդներ, չէին կարող անտեղյակ լինել սեփական երկրի օրենսդրությունից, հետևաբար գիտեին կամ պետք է իմանային, որ այն խախտում է և՛ հիմնարար իրավունքները, և՛ մարդու իրավունքները: Ինչպես ամրագրված է եղել համապատասխանաբար սահմանադրության 8-րդ հոդվածում և 19-րդ հոդվածի 2-րդ կետում. «Միջազգային իրավունքի ընդհանուր ճանաչում ունեցող կանոնները պարտադիր են պետության և յուրաքանչյուր քաղաքացու համար և նպատակ ունեն նպաստելու խաղաղությանը, ինչպես նաև խթանելու ժողովուրդների միջև խաղաղ համագործակցությունը», և «անձի արժանապատվության և ազատության նկատմամբ հարգանքը և պաշտպանությունը պարտադիր են բոլոր պետական մարմինների, հասարակական բոլոր ուժերի և յուրաքանչյուր քաղաքացու համար»: Բացի այդ, դեռևս 1968 թ. քրեական օրենսգիրքն ընդգրկել է հատուկ բաժին, որի ներածությունում ասված է. «Մարդկության և մարդու իրավունքների ... դեմ կատարված հանցագործությունների անողոք պատժումն ... աշխարհում խաղաղության շարունակական պահպանման, մարդու հիմնարար իրավունքների և մարդու արժանապատվության ու արժեքի, ինչպես նաև բոլոր անձանց իրավունքների պահպանման անկապտելի նախապայմանն է»:

Նմանապես, ինչպես նշվել է վերը (պարբ. 78), դիմողները չէին կարող անտեսել ԳԴՀ-ի ստանձնած միջազգային պարտավորությունները կամ սահմանի հսկողության կարգի հասցեին չդադարող միջազգային քննադատությունը:

104. Եթե ԳԴՀ-ն դեռևս գոյություն ունենար, ապա միջազգային իրավունքի առումով, միևնույն է, պատասխանատու էր լինելու խնդրո առարկա գործողությունների համար: Մնում է հիմնավորել, որ տվյալ ժամանակահատվածում, պետական պատասխանատվությունից բացի, դիմողները կրում էին նաև անձնական քրեական պատասխանատվություն: Եթե նույնիսկ ենթադրենք, որ այդ պատասխանատվությունը չէր կարող արտածվել վերը նշված մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող միջազգային համաձայնագրերից, դա կարող էր արվել այդ համաձայնագրերի և ԳԴՀ քրեական օրենսգրքի 95-րդ հոդվածի համակցությամբ, ըստ որի՝ դեռևս 1968 թ. այն անձինք, ովքեր խախտել են ԳԴՀ-ի ստանձնած միջազգային պարտավորությունները կամ մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, ենթակա են եղել անձնական քրեական պատասխանատվության:

105. Հաշվի առնելով վերոհիշյալ նկատառումները՝ դատարանը կարծում է, որ այն ժամանակ, երբ դրանք տեղի են ունեցել, դիմողների գործողությունները հանցագործություն են եղել, որոնք բավական մատչելի և կանխատեսելի սահմանված են եղել մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավունքի դրույթներում:

106. Բացի այդ, դիմողների վարքագիծը նմանապես կարող է քննության առնվել կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի և միջազգային իրավունքի այլ դրույթների հիման վրա, որոնք, մասնավորապես, վերաբերում են մարդկության դեմ գործած հանցագործություններին: Այնուամենայնիվ, դատարանի եզրակացությունը (տե՛ս վերը՝ պարբ. 105) անհարկի է դարձնում այդ կետի դիտարկումը:

(Գ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

107. Հետևաբար, միավորումից հետո Գերմանիայի դատարանների կողմից դիմողների դատապարտումը 7-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չի եղել:

108. Հաշվի առնելով այդ եզրակացությունը՝ դատարանից չի պահանջվում քննարկել՝ նրանց դատապարտումներն արդարացվա՞ծ են եղել կոնվենցիայի 7-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում, թե՞ ոչ:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

1. *Վճռում է,* որ կոնվենցիայի 7(1) հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Մեծ պալատի կազմում եղել են նախագահ Վիլդհաբերը և դատավորներ Փալմը, Ռոզակիսը, Ռեսը, Կոստան, Ֆերարի Բրավոն, Քաֆլիշը, Լուկայդեսը, Կաբրալ Բարետոն, Յունգվիրթը, Բրատցան, Զուպանչիկը, Վային, Պելոնպաան, Ցացա-Նիկոլովսկան, Լևիցը և Կովլերը:

2 Դատավոր Լուկայդեսը տվել է մեծամասնության հետ համընկնող կարծիք, որում արտահայտել է իր համոզմունքը, որ դիմողների գործողություններն առաջացրել են նաև միջազգային քրեական իրավունքի խախտում: «Ես կարծում եմ, որ դիմողների վարքագիծը, որի համար նրանք դատավճռի հիման վրա մեղավոր են ճանաչվել, առավել հատկանշական է միջազգային իրավունքի դեմ կատարած հանցագործության, որը հայտնի է որպես «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» անվամբ և այդ վարքագծի դրսևորման ժամանակ արդեն սովորութային միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների մասն է կազմել»: Նա հղում է կատարել Եվրոպական առանցքի երկրների գլխավոր պատերազմական հանցագործների դատական հետապնդման և պատժման միջազգային (Նյուրնբերգյան) ռազմական տրիբունալին և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1973 թ. դեկտեմբերի 3-ի թիվ 3074 բանաձևին, որը հռչակել է պատերազմի հանցագործների և մարդկության դեմ հանցագործությունների համար մեղավոր ճանաչված անձանց պատժելու նպատակով միջազգային համագործակցության անհրաժեշտությունը:

3 Դատավորներից երկուսը, որոնք անձամբ ապրել են կոմունիստական ամբողջատիրական վարչակարգերի պայմաններում, առանձին համընկնող կարծիքներում քննադատել են այդ վարչակարգերի օրոք գործող «իրավական համակարգերի տեսությունները և գործելակերպը»: Սլովենիացի դատավոր Զուպանչիկը նկատել է.

«Ինչ վերաբերում է նրանց սեփական [երկրի] քրեական օրենքին, դիմողները՝ որպես մեծ և հետևողական գաղտնի դավադրության կազմակերպիչներ, դավադրաբար անտեսել են օրենսդրական ակտերի գրքում ամրագրված օրենքի օբյեկտիվ իմաստը: Այսինքն՝ նրանք միասին գաղտնաբար համաձայնության են եկել ստեղծել և պահպանել այնպիսի երկերեսանի իրավիճակ, որում այսպես կոչված անպատժելիության և նույնիսկ այլ դավադիրների քրեական վարքագծի խրախուսման «պետական գործելակերպը» բացարձակ հակասության մեջ է եղել համապատասխան քրեական օրենքների ձևակերպումների հետ: Այս գործի առանձնահատկությունն այն է, որ դիմողներն անձամբ եղել են «պետական պաշտոնյաներ կամ հանցագործությունը սահմանող օրենքի մեկնաբանության, կառավարման կամ իրականացման համար պատասխանատու անձինք»:

Այստեղ գոյություն է ունեցել այնպիսի իրավիճակ, երբ օրենքի մեկնաբանության, կառավարման կամ կիրառման պատասխանատվություն ունեցող միևնույն անձինք դրել են այն «պետական գործելակերպի» հիմքը, որն այժմ, ըստ նրանց, եղել է այդ օրենքի ընկալման սեփական հիմքը, հետևաբար, օրենքի շրջանակներում նրանց արդարացնող հիմքը: Նույնիսկ ավելին, դիմողները պնդում են, որ ԳԴՀ-ի պետական գործելակերպը կազմել է այդ ժամանակաշրջանի անպատժելիության նպատակի մասը: Ուստին անընդունելի է հետին թվով բարձրացնել այդ արարքների առումով նրանց քրեական պատասխանատվության հարցը:

Հստակ է, որ սա առաջացնում է օրենքի գերակայության խնդիր և ավելի որոշակի՝ քրեական նյութական իրավունքի խնդիր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից այս «պետական գործելակերպը»՝ որպես 7-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների համար «հանցագործությունը սահմանող օրենքի» մաս ընդունելը կամ օրենքի սխալի պաշտպանությունն ընդունելը կլիներ այս շրջանցող ինքնաարդարացման օգտին՝ ի խախտումն օրենքի գերակայության սկզբունքի:

Լատվիայից դատավոր Լևիցը նույնպես մտահոգված շեշտել է, որ նոր ժողովրդավարական պետությունների համար նրանց նախկինների իրավական կառույցները չպետք է խոչընդոտ լինեն մարդու իրավունքների ենթադրյալ խախտումների քննության ժամանակ:

10. Հետևաբար, ժողովրդավարական համակարգի տեսանկյունից սոցիալիստական կամ այլ ոչ ժողովրդավարական մեթոդաբանության վրա հիմնված ազգային կամ միջազգային իրավական նորմերի այսպիսի մեկնաբանությունը և կիրառումը պետք է համարվեն սխալ, քանի որ ժողովրդավարական համակարգի համար անհանդուրժելի հետևանքներ ունեն: Սա վերաբերում է ինչպես նախկին ոչ ժողովրդավարական վարչակարգի իրավական գործելակերպի ex post

facto [հետին թվով] գնահատմանը (ինչպես տեղի է ունեցել այս դեպքում, թեպետ ակնհայտ է, որ նույն իրավիճակը կարող է առաջանալ նոր ձևավորված այլ ժողովրդավարական վարչակարգերում), այնպես էլ այսօրվա ոչ ժողովրդավարական վարչակարգերի իրավական գործելակերպի (օրինակ՝ դաշնագրի մասով) գնահատմանը: Այդ գործելակերպը պետք է համարվի օրենքի սխալ կիրառում: Ժողովրդավարական քաղաքական կարգի անցնելուց հետո պատասխանատու անձինք չեն կարող իրենց վարքագծի արդարացման համար հղում կատարել այն «առանձնահատուկ» ձևին, որով մեկնաբանել են օրենքը ոչ ժողովրդավարական վարչակարգերը:

11. Իմ կարծիքով, սա համոզիչ եզրակացություն է, որը բխում է մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների համընդհանուր բնույթից. արժեքներ, որոնք պետք է պահպանեն բոլոր ժողովրդավարական հաստատությունները: Գոնե Նյուրնբերգյան դատավարությունից հետո ժողովրդավարական կարգի այդ պատկերացումը լավ է ըմբռնվել աշխարհում և, հետևաբար, կանխատեսելի է բոլորի կողմից...

…

13. Վճռի 107-րդ պարբերությունը հաստատում է, որ կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետով դիմողների վարքագիծը կարող էր նաև քննության առնվել միջազգային իրավունքի այլ դրույթների, մասնավորապես՝ մարդկության դեմ գործած հանցագործություններին վերաբերող միջազգային իրավունքի դրույթների տեսանկյունից, սակայն այս հարցը քննարկելու անհրաժեշտություն չկա, քանի որ առկա են նախկին ԳԴՀ ազգային օրենքի նկատմամբ մարդու իրավունքների միջազգային նորմերը կիրառելուց հետո դատարանի արած եզրակացությունները:

14. Սկզբունքորեն ես համաձայն եմ այդ մոտեցմանը: Այնուամենայնիվ, ներկա դատավճռի եզրակացությունների հիմքում հիմնականում ընկած են եղել ԳԴՀ սահմանադրությունը և այլ օրենքներ, որոնց ձևակերպումների լեզուն նման է եղել օրենքի գերակայության սկզբունքներով (ինչպես, օրինակ՝ մարդու իրավունքների սահմանադրական դրույթներով) առաջնորդվող ժողովրդավարական պետությունների սահմանադրության և այլ օրենքների լեզվին: Սա չի եղել ԳԴՀ ոչ ժողովրդավարական վարչակարգի իսկական մտադրությունը: Մարդու իրավունքների մասին դրույթները նախկին սոցիալիստական պետությունների սահմանադրություններում ավելի շուտ քարոզչական բնույթ են ունեցել: Այնուամենայնիվ, Գերմանիայի ազգային դատարանները և այս դատարանը, իմ կարծիքով, համոզիչ պատճառների հիման վրա, որոնք բացատրվել են վերը, «լուրջ են ընդունել այս իրավունքները» (Ռոնալդ Դվորկին)՝ տալով դրանց այն իմաստը, որը բխում է տարբեր իրավական նորմերի ձևակերպումներից՝ ըստ ժողովրդավարական համակարգում օրենքի կիրառման մեթոդաբանության հիման վրա արված մեկնաբանության:

15. Ես կարծում եմ, որ դատարանների՝ նոր հաստատված ժողովրդավարական երկրների նախկին ոչ ժողովրդավարական վարչակարգերի «ժառանգությամբ» զբաղվելու կարողությունը չպետք է կախված լինի միայն ոչ ժողովրդավարական վարչակարգերի իրավական նորմերի ձևակերպումներից, որոնք կազմվել են նախևառաջ քարոզչական, ոչ թե իրավական նպատակներով:

16. Վճիռը նաև տեղ է թողել, որ դիմողների վարքագծին նման վարքագծի հետագա քննությունների ժամանակ դատարանն անդրադառնա նաև միջազգային իրավունքի քրեական հանցագործությունների բաժնին (պարբ. 107):

17. Այս կապակցությամբ կցանկանայի շեշտել միջազգային իրավունքի ասպարեզում վերջերս արձանագրված զարգացումները, որոնք վերաբերում են մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդմանը և ներառում նաև մարդկության դեմ ուղղված հանցագործություններին վերաբերող նորմեր: Անկախ այն փաստից, որ այս դաշտում շատ իրավական խնդիրներ դեռևս լիովին կարգավորված չեն, այս զարգացումների ուղղությունն ակնհայտ է:

18. Ես, հետևաբար, հաստատում եմ դատավոր Լուկայդեսի առանձին կարծիքում ներկայացված համոզիչ վերլուծությունը, որ տվյալ ժամանակահատվածում դիմողների վարքագիծը ոչ միայն քրեական հանցագործություն է եղել ազգային օրենքի շրջանակներում, այլև կարող է համարվել հանցագործություն միջազգային իրավունքի շրջանակներում:

4 Մեծ պալատի վճիռը, որն ընդունվել է Բեռլինի պատի կառուցման քառասուներորդ տարվա ընթացքում, հստակ քննադատել է նախկին ԳԴՀ վարչակարգի՝ միջազգային, տարածաշրջանային և ազգային իրավական նորմերում ամրագրված մարդու հիմնարար իրավունքները գործնականում անտեսելու փորձը: Դիմողների բողոքի զավեշտն այն է, որ նրանք վիճարկել են իրենց քրեական մեղավորությունը որոշելու համար սեփական վարչակարգի պաշտոնական օրենքների կիրառումը (հետադարձորեն): Իհարկե, ինչպես վճիռը հստակ ցույց է տվել, Արևելյան Եվրոպայի կոմունիստական վարչակարգերի մեծ ստերից մեկը եղել է այն, որ այն իրավական դրույթները, որոնք պաշտոնապես ընդունել են այդ պետությունները, և նրանք, որոնք գործնականում կիրառվել են, հիմնավորապես տարբերվել են միմյանցից: Սրան հակառակ, Ստրասբուրգի համակարգի արժեքն այն

է, որ այն ձգտում է երաշխավորել, որ անդամ պետությունները գործնական ուժ են հաղորդում կոնվենցիայում ամփոփված իրավունքներին, որոնք այդ պետությունները պարտավորվել են երաշխավորել իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի: Հետևաբար, դատարանը գործող մեխանիզմ է, որը երաշխավորում է, որ անդամ կառավարությունները չեն ձևավորի մարդու իրավունքների հրապարակային հռչակման և գործնականում այդ իրավունքների անտեսման կամ միտումնավոր խախտման քայքայիչ երկվություններ:

5 Նույն մեծ պալատը համանման վճիռ է ընդունել *«Կ-Հ. Վ.-ն ընդդեմ Գերմանիայի» (K-H.W. v Germany)* 2001 թ. մարտի 22-ի վճռում: Այս դեպքում դիմողը եղել է նախկին ԳԴՀ սահմանապահ, որը 1972 թ. 20 տարեկանում կրակել է և սպանել մի անձնավորության, որը լողալով փորձում էր անցնել Արևելյան Բեռլինի սահմանը: Իր գործողությունների համար դիմողը պարգևատրվել է «Պատվո շքանշանով» և ստացել 150 մարկ պարգևատրում: Գերմանիայի միավորումից հետո Բեռլինի տարածքային դատարանի կողմից նա դատապարտվել է 1993 թ. կանխամտածված մարդասպանություն գործելու համար և մեկ տարի և տասն ամսով դատապարտվել անչափահասների պայմանական ազատազրկման: Մեծ պալատը, տասնչորս կողմ և երեք դեմ ձայներով, մերժել է դիմողի բողոքը, համաձայն որի՝ նրա դատապարտումը եղել է 7-րդ հոդվածի խախտում: Չհամընկնող կարծիք հայտնած դատավորներ Կաբրալ Բարետոն, Պելոնպաան և Զուպանչիկը համարել են, որ դիմողը եղել է կրտսեր սպա և կեղեքիչ կոմունիստական վարչակարգի զոհ: Իր մասնակի չհամընկնող կարծիքում դատավոր Կաբրալ Բարետոն հայտնել է, որ.

6. Ամփոփելով՝ գտնում եմ, որ սույն գործում 1972 թ. փետրվարին դիմողի կատարած գործողությունների առումով տեղի է ունեցել կոնվենցիայի 7-րդ հոդվածի խախտում:

Վերջապես, ես մնում եմ այն համոզմունքին, որ դիմողը, որ այդ ժամանակ եղել է երիտասարդ անձնավորություն, չի ունեցել հասունություն կամ անկախություն, կրթվել է համաձայն այդ ժամանակվա գերիշխող գաղափարախոսության, ավելի շուտ եղել է վարչակարգի և համակարգի զոհ, որը դատարանը, ունենալով նաև իմ օժանդակությունը, քննաղատել է այսօր *Շտրելեցի, Քեսլերի և Քրենզի* (Streletz, Kessler and Krenz) վճռում:

.....

«Ուելչն ընդդեմ ՄԹ-ի» (Welch v UK A.307-A (1995) 20 EHRR 247)

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը ձերբակալվել է 1986 թ. նոյեմբերին, քանի որ կասկածվել է թմրանյութերի հետ կապված հանցագործություն կատարելու մեջ: Նրա ձերբակալության հաջորդ օրը նրան պաշտոնապես մեղադրել են մեծ քանակությամբ հաշիշ ներմուծելու համար: Այնուհետև՝ 1987 թ. փետրվարին, նա մեղադրվել է վաճառքի նպատակով կոկաինի տիրապետման համար (ենթադրաբար, վաճառքը տեղի է ունեցել 1986 թ. նոյեմբերի 3-ին): 1987 թ. մայիսին նա նաև մեղադրվել է 1986 թ. հունվարից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում վաճառքի նպատակով կոկաին ձեռք բերելու գաղտնի ծրագրերին մասնակցելու մեջ: 1987 թ. օգոստոսին նա մեղավոր է ճանաչվել հինգ կետով և դատապարտվել քսաներկու տարվա ազատազրկման: Համաձայն 1986 թ. «Թմրանյութերի ապօրինի շրջանառության մասին» օրենքի՝ դատավորը նաև տվել է առգրավման կարգադրություն, որով նրան նշանակել է տուգանք՝ 66.914 ֆունտ ստեռլինգ, որը չվճարելու դեպքում դիմողը պետք է լրացուցիչ ազատազրկման մեջ մնար ևս երկու տարի: Օրենքն ուժի մեջ է մտել 1987 թ. հունվարի 12-ին և հնարավորություն տվել թագավորական դատարանին կատարելու բռնագանձման կարգադրություններ 1987 թ. հունվարի 12-ից հետո թմրանյութերի ապօրինի շրջանառության մեղադրանքով դատապարտված անձի՝ օրենքի՝ ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո «ստացած վճարների և այլ պարգևատրումների նկատմամբ»: Դրանից հետո վերաքննիչ դատարանը ոչ զգալիորեն նվազեցրել է նրա պատիժը և բռնագանձման կարգադրության մեջ նշված գումարը: Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ իր նկատմամբ արված բռնագանձման կարգադրությունը օրենքի հետադարձ

ուժով իրեն նշանակված քրեական պատիժ է՝ ի խախտումն 7(1) հոդվածի: Ձայների հավասար (յոթը յոթի) հարաբերակցությամբ և քվեարկությանը գործող նախագահի մասնակցությամբ հանձնաժողովն այդ հոդվածի խախտում չի արձանագրել: Դատարանը որոշել է, որ.

26. Նախ՝ դատարանը նկատում է, որ այս գործի կապակցությամբ վեճի թեմա չէ այն, որ բռնագանձման կարգադրությունը նշանակվել է հետադարձ կարգով: Կարգադրությունն արվել է նախքան 1986 թ. օրենքի ուժի մեջ մտնելը անձի կատարած թմրանյութերի վաճառքի մեջ նրան մեղավոր ճանաչելուց հետո... Միակ հարցը, որը պետք է որոշվի, հետևաբար, այն է, թե 7-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասության իմաստով կարգը պատի՞ժ է, թե՞ ոչ:

27. Ինչպես և 6-րդ հոդվածի 1-ին կետի «քաղաքացիական իրավունքների և պարտականությունների» և «քրեական մեղադրանքի» հայեցակարգերը, այս դրույթում ամրագրված «պատժի» հայեցակարգը նույնպես կոնվենցիայի անկախ հայեցակարգ է... Որպեսզի 7-րդ հոդվածով առաջարկվող պաշտպանությունը գործուն դառնա, դատարանը պետք է առաջ անցնի արտաքին ձևական կողմից և գնահատի՝ տվյալ միջոցն այս դրույթի բուն իմաստով հավասա՞ր է եղել «պատժի, թե՞ ոչ»...

28. 7-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասությունը ցույց է տալիս, որ պատժի գոյության գնահատման համար առաջին հերթին պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, թե արդյոք խնդրո առարկա միջոցը հարկադրվե՞լ է անձին «քրեական հանցագործության մեջ» դատապարտվելուց հետո: Այս կապակցությամբ ազդեցություն ունեցող գործոններ կարող են համարվել խնդրո առարկա միջոցի բնույթը և նպատակը, ազգային օրենքի շրջանակներում դրա բնութագրումը, միջոցի հաստատման և իրականացման ընթացակարգերը և սաստկությունը:

29. Ինչ վերաբերում է քրեական հանցագործության հետ կապին, ապա պետք է նկատել, որ մինչև 1986 թ. օրենքով [առգրավման մասին] կարգադրություն անելը մեղադրյալը պետք է մեղավոր ճանաչվեր թրաֆիքինգի հանցագործություններին վերաբերող մեկ կամ մեկից ավելի հոդվածներով (տե՛ս 1986 թ. օրենքի 1(1) բաժինը)... Այս կապը որևէ կերպ չի ևվազեցվում այն փաստով, որ թրաֆիքինգից ստացված հասույթի չափին վերաբերող օրենսդրական կանխավարկածների կիրառման արդյունքում դատարանի կարգադրությունը կարող էր ազդել այնպիսի հասույթի կամ գույքի վրա, որոնք ուղղակիորեն ընկած չեն եղել քրեական արարքի մեջ մեղավոր ճանաչելուն առնչվող փաստերի հիմքում: Թեպետ այս միջոցի կիրառումն անհրաժեշտ է եղել 1986 թ. օրենքի նպատակների ապահովման համար, այն չի փոխում այն փաստը, որ դրանց նշանակումը կախված է եղել այն հանգամանքից՝ անձը մեղավոր է ճանաչվել, թե ոչ:

30. Գնահատելով միջոցի բնույթը և նպատակը՝ դատարանն ուշադրություն է դարձնում 1986 թ. օրենքի վրա, որն ընդունվել է գոյություն ունեցող առգրավման լիազորությունների անկատարությունը հաղթահարելու և հասույթն այլ ակտիվների վերածելուց հետո դատարաններին այդ հասույթն առգրավելու լիազորություններով օժտելու համար... Գույքի առգրավման միջոցով հետագայում թմրանյութերի թրաֆիքինգը կանխելու և հանցագործությունը երբևէ չարդարացնելու առումով երաշխիքներ ունենալու նպատակներն ակնհայտորեն երևում են նախարարի հայտարարություններից, որոնք արվել են խորհրդարանում այս օրենսդրության ներկայացման ժամանակ... Այնուամենայնիվ, չի կարելի բացառել, որ օրենսդրությունը, որը դատարաններին օժտում է առգրավում կատարելու այսպիսի լայն լիազորություններով, նաև հետապնդում է օրինազանցին պատժելու նպատակ: Իրոք, կանխման և հատուցման նպատակները սերտորեն կապված են պատժիչ նպատակի հետ և կարող են դիտվել որպես բուն պատժի գաղափարի բաղկացուցիչ մասեր:

31. Այս դեպքում առգրավման կարգադրությունները Միացյալ Թագավորության որոշ դատարաններ բնութագրել են որպես «տույժեր», ուրիշները՝ պատժին հակառակ հատուցման նպատակ հետապնդող կարգադրություններ... Թեպետ վերջին հաշվով այս ձևակերպումներն ավելի շուտ ցույց են տալիս, որ առգրավումը բնույթով մնում է որպես պատժիչ միջոց, դատարանը դրանք առանձնապես օգտակար չի համարում, քանի որ դրանք ոչ թե արվել են 7-րդ հոդվածի խնդրի առնչությամբ, այլ ավելի շուտ ազգային օրենքին և ընթացակարգին վերաբերող հարցերի քննարկման ժամանակ:

32. Դատարանը համաձայն է կառավարության և հանձնաժողովի հետ, որ կարգի սաստկությունն ինքնին որոշիչ չէ, քանի որ գոյություն ունեն տուգանքից տարբեր շատ այլ կանխարգելիչ բնույթի միջոցներ, որոնք զգալի ազդեցություն են գործում տվյալ անձի վրա:

33. Այնուամենայնիվ, 1986 թ. օրենքով նախատեսված կարգադրությունների որոշ կողմեր խստորեն համապատասխանում են տույժի վերաբերյալ ընդհանուր պատկերացումներին, թեպետ դրանք կարող են նաև կարևոր համարվել 1986 թ. օրենքից անկապտելի կանխարգելիչ սխեմայի շրջանակներում: 1986 թ. օրենքի 2(3) բաժնի սկզբունքային օրենսդրական կանխավարկածը, ըստ որի՝ հանցագործի վերջին վեց տարիների ընթացքում ձեռք բերած ունեցվածքը թմրանյութերի վաճառքով զբաղվելու արդյունք է, եթե նա չի հիմնավորում, որ դա այդպես չէ, ... այն փաստը, որ առգրավման կարգադրությունն ուղղված է թմրանյութերի վաճառքից գոյացած հասույթին և չի սահմանափակվում

փաստացի հարստացման չափով կամ շահույթով (տե՛ս 1986 թ. օրենքի 1-ին և 2-րդ բաժինները...), դատաքննությունն իրականացնող դատավորի հայեցողությունը, որը կարգադրությամբ պահանջվող գումարի չափը որոշելու ժամանակ պետք է հաշվի առնի մեղադրյալի մեղավորության աստիճանը ... և օրինազանցի կողմից վճարում չկատարելու դեպքում բանտարկության հավանականությունը, ... տարրեր են, որոնք համատեղ դիտարկվելու դեպքում լրջորեն վկայում են պատժիչ ռեժիմի առկայության մասին:

34. Վերջապես, եթե վերանանք արտաքին ձևական կողմից և ծանրանանք գոյություն ունեցող իրավիճակի վրա, ինչպիսին էլ լիներ առգրավման միջոցի բնորոշումը, փաստն այն է, որ այդ կարգադրության հետևանքով դիմողը ենթակա է եղել շատ ավելի հեռուն գնացող վնասի, քան այն միջոցի հետևանքով, որը տարածվել է նրա վրա այդ հանցագործությունների կատարման ժամանակ, որոնց պատճառով նա դատապարտվել է (տե՛ս mutatis mutandis *«Քեմփբելը և Ֆելն ընդդեմ ՄԹ-ի» (Campbell and Fell v UK)* 1984 թ. հունիսի 28-ի վճիռ, շարք A, թիվ 80, էջ 38, պարբ. 72):

35. Հաշվի առնելով վերը ներկայացված պատժիչ տարրերի համախումբը, սույն գործի հանգամանքներում առգրավման կարգադրությունը հավասար է եղել տուգանքի [կարգադրության]: Հետևաբար, տեղի է ունեցել 7-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

36. Այնուամենայնիվ, դատարանը պետք է շեշտի, որ այս եզրակացությունը վերաբերում է միայն համապատասխան օրենսդրության հետադարձ կիրառությանը և հարցականի տակ չի դնում առգրավում իրականացնելու լիազորությունը, որը տրվել է դատարաններին որպես թմրանյութերի թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված գործիք:

...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

1. Վճռում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են նախագահ Ռիսդալը և դատավորներ Մաթշերը, Մակդոնալդը, Դե Մեյերը, Ֆոյգելը, Փեքանենը, Ֆրիլենդը, Վիլդհաբերը և Յունգվիրթը:

2 Առանձին վճռով *(«Ուելչն ընդդեմ ՄԹ-ի» (Welch v UK*, 1996-II)), որը վերաբերում էր դիմողների՝ արդար բավարարում ստանալու պահանջներին, դատարանը նկատել է, որ Բրիտանիայի իշխանությունները չեն ունեցել և չէին պատրաստվում Ուելչի դեմ կիրառել փոխհատուցման կարգադրություն: Դատարանը մերժել է դիմողի նյութական և ոչ նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցը:

3 *«Աշուրն ընդդեմ Ֆրանսիայի» (Achour v France)* գործի դիմողը (2006 թ. մարտի 29-ի վճիռ) բողոքել է, որ կրկնահանցագործության (ռեցիդիվիզմի) նոր օրենսդրական կանոնների կիրառումը առաջացրել է 7-րդ հոդվածի խախտում: 1984 թ. նա դատապարտվել է երեք տարվա ազատազրկման թմրանյութերի վաճառքով զբաղվելու համար: 1994 թ. քրեական օրենսգրքում կատարվել է փոփոխություն, համաձայն որի՝ եթե անձը դատապարտվում է լուրջ հանցագործություն կատարելու համար և սկզբնական պատժի ժամկետը լրանալուց հետո հետագա տասը տարվա ընթացքում կրկին դատապարտվում է համանման հանցագործություն կատարելու համար, ապա կրկնված հանցագործության համար առավելագույն պատժի չափը պետք է կրկնապատկվի: 1997 թ. դիմողը մեղադրվել է թմրանյութերի հետագա հանցագործությունների մեջ և փոփոխված քրեական օրենսգրքի հիման վրա դատապարտվել տասներկու տարվա ազատազրկման: Մեծ պալատը, տասնվեց կողմ և մեկ դեմ ձայներով, որոշել է, որ Ֆրանսիայի վճռաբեկ դատարանը 7-րդ հոդվածի խախտում թույլ չի տվել, քանի որ ավելի քան 100 տարվա ընթացքում հետևել է այն մոտեցմանը, որ կրկնահանցագործության (ռեցիդիվիզմի) վերաբերյալ նոր օրենսդրական կանոնները կիրառվում են անմիջապես, և, համապատասխանաբար, նոր կանոնների ուժի մեջ մտնելուց հետո ամբաստանյալները կատարած կրկնակի հանցագործությունների համար կարող են պատժվել նոր կանոնների

հիման վրա: Բացի այդ, օրենքի հետադարձ կիրառում դիմողի դեպքում չի եղել, քանի որ նա ուղղակիորեն պատժվել է հաջորդած օրենքի հիման վրա:

Հոդված 7(2)

Կոնվենցիայի հեղինակները նախատեսել են այս դրույթը, որպեսզի պաշտպանեն Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո ընդունված ազգային օրենքը՝ պատերազմի հանցագործներին և պատերազմի ժամանակ կատարված այլ լուրջ հանցագործությունները պատժելու համար:

10 ՀՈԴՎԱԾ 8 ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՀԱՐԳԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 8(1)

Անձնական կյանք

.....

«Նյեմեցն ընդդեմ Գերմանիայի» (Niemietz v Germany A.251B (1992) 16 EHRR 97)

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Եկեղեցու հարկի շրջանցման վերաբերյալ գործը քննող շրջանային դատարանի դատավորի անունով Ֆրեյբուրգի փոստատնից ֆաքս է ուղարկվել, որում վերջինս մեղադրվել է հարկային գործը վարելու ընթացքում իր պաշտոնեական դիրքի չարաշահման մեջ: Ֆաքսն ուղարկվել է «Ֆրեյբուրգի Բունտ Լիստի» (տեղական քաղաքական կուսակցության) անդամ Կլաուս Վեգների անունից: Վեգների դրսևորած վիրավորական վարքագծի պատճառով Մյունխենի պետական մեղադրողի գրասենյակը քրեական վարույթ է սկսել նրա դեմ, սակայն վերջինիս հնարավոր չի եղել դատարան կանչել, քանի որ նրա գտնվելու վայրը անհայտ է եղել, և նաև նրա ինքությունը կարող էր կեղծ լինել: Ուստիև դատախազը դատարանից թույլտվություն է ստացել տեղացի փաստաբան և «Բունտ Լիստի» նախագահ պրն Նյեմեցի փաստաբանական գրասենյակում խուզարկություն անցկացնելու համար, քանի որ կուսակցության հասցեով նամակներն ուղարկվել են նրա գրասենյակ, և կարծիք կար, որ Նյեմեցի մոտ կարող էին գտնվել Վեգների ինքնությունը բացահայտող փաստաթղթեր: Մեկ ժամից քիչ ավելի տևած խուզարկությունն իրականացրել են ոստիկանության պաշտոնյաները և պետական դատախազի գրասենյակի աշխատակիցները: Խուզարկության ժամանակ զննվել են մի շարք փաստաթղթերի դարակներ և հաճախորդների ցուցակը: Վեգների վերաբերյալ նյութեր պարունակող փաստաթղթեր չեն հայտնաբերվել, և իշխանությունները ոչինչ չեն առգրավել: Ավելի ուշ Վեգների դեմ սկսված քրեական վարույթը դադարեցվել է ապացույցների բացակայության պատճառով: Նյեմեցը բողոքել է հանձնաժողովին, որ ինքը տուժել է 8-րդ և 13-րդ հոդվածներով և առաջին արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված իրավունքների խախտման հետևանքով: Նա նաև ընդունել է, որ ինքը թաքցրել է և այնուհետև ոչնչացրել Վեգներին բացահայտող փաստաթղթերը: Հանձնաժողովը միաձայն կարծիք է հայտնել, որ տեղի է ունեցել Նյեմեցի՝ 8-րդ հոդվածով ամրագրված անձնական կյանքը և բնակարանը հարգելու իրավունքի խախտում: Հանձնաժողովը հարկ չի համարել քննության առնել մյուս բողոքները:

Ա. ԱՐԴՅՈՔ ՏԵՂԻ՞ Է ՈՒՆԵՑԵԼ «ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ»

29. Դատարանն այն համոզման չէ, որ հնարավոր է կամ անհրաժեշտ է տալ «անձնական կյանք» հասկացության սպառիչ սահմանումը: Այնուամենայնիվ, այդ հասկացությունը չափից ավելի նեղ կլիներ, եթե սահմանափակվեր այն «ներքին շրջանակների մեջ», որտեղ անձն ապրում է սեփական կյանքով ինչպես կամենում է և լիովին բացառել արտաքին աշխարհը: Անձնական կյանքի նկատմամբ հարգանքը պետք է որոշ չափով ընդգրկի նաև այլ անձանց հետ հարաբերություններ հաստատելու և զարգացնելու իրավունքը:

Բացի այդ, թվում է, որ չկա սկզբունքային պատճառ, թե ինչու «անձնական կյանք» հասկացության այս ըմբռնումը պետք է բացառի մասնագիտական կամ գործնական բնույթի գործունեությունը, քանի որ, ի վերջո, արտաքին աշխարհի

հետ հարաբերություններ զարգացնելու զգալի, եթե ոչ ամենալուրջ հնարավորությունները մարդիկ ունենում են իրենց աշխատանքային կյանքի ընթացքում: Այս տեսակետը պաշտպանվում է այն փաստով, որ միշտ չէ, որ հնարավոր է հստակորեն տարբերակել, թե անձի որ գործունեությունն է կազմում նրա մասնագիտական կամ գործնական կյանքի մասը, և որը՝ ոչ. ինչի վրա էլ հանճնաժողովն իրավացիորեն ուշադրություն է հրավիրել: Այսպիսով, այս համատեքստում հատկապես ազատական մասնագիտությամբ զբաղվող անձի համար նրա աշխատանքը կարող է կազմել նրա կյանքի մասը, քանի որ հնարավոր չէ իմանալ, թե որպես ով է նա հանդես գալիս տվյալ պահին:

Մերժել 8-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունը (ինչպես և առաջարկվում է կառավարության կողմից) միայն այն հանգամանքի հիման վրա, որ բողոքարկվող միջոցը վերաբերում է միայն մասնագիտական գործունեությանը, նշանակում է պաշտպանության ապահովման առումով անհավասար վերաբերմունք դրսևորել այն անձանց նկատմամբ, որոնց մասնագիտական և ոչ մասնագիտական գործունեություններն այնքան միահյուսված են, որ դժվար է դրանք միմյանցից անջատել: Իրականում դատարանը դրանից առաջ այսպիսի տարբերակումներ չի մտցրել. դատարանը եզրակացրել է, որ միջամտություն է եղել անձնական կյանքին նույնիսկ այն դեպքում, երբ հեռախոսային զրույցների գաղտնալսումն ընդգրկել է ինչպես աշխատանքային, այնպես էլ մասնավոր խոսակցություններ (տե՛ս *«Հուվիգ ընդդեմ Ֆրանսիայի» (Huvig v France)* 1990 թ. ապրիլի 24-ի վճիռը, շարք A, թիվ 176-B, էջ 41, պարբ. 8 և էջ 52, պարբ. 25): Դատարանը չի ընդունել, որ եթե կատարված խուզարկությունը վերաբերել է զուտ աշխատանքային գործունեությանը, ապա դա հիմք է «անձնական կյանք» հասկացության շրջանակներում 8-րդ հոդվածի կիրառելիությունը բացառելու համար (տե՛ս *«Չապպելն ընդդեմ ՄԹ-ի» (Chappell v UK)* 1989 թ. մարտի 30-ի վճիռը, շարք A, թիվ 152-A, էջ 12–13, պարբ. 26 և էջ 21–2, պարբ. 51):

30. Ինչ վերաբերում է 8-րդ հոդվածի անգլերեն տեքստում նշված home («տուն») բառին, դատարանը նկատում է, որ որոշ պայմանավորվող պետություններ, և հատկապես Գերմանիան, … ընդունել են, որ այն տարածվում է նաև աշխատանքային գործունեության վրա: Բացի այդ, այդպիսի մեկնաբանությունը լիովին համահունչ է ֆրանսերեն տեքստին, քանի որ domicile բառն ունի ավելի լայն իմաստ, քան home բառը և կարող է տարածվել, օրինակ՝ մասնագետ անձնավորության գրասենյակի վրա:

Այս համատեքստում նաև միշտ չէ, որ հնարավոր է հստակ տարբերակում մտցնել, քանի որ անձը կարող է մասնագիտական կամ աշխատանքային գործունեությունն իրականացնել նաև իր բնակության վայրում և դրա հետ այնքան էլ կապ չունեցող գործունեությունը՝ գրասենյակում կամ առևտրային հաստատություններում: Հետևաբար, ինչպես և «անձնական կյանք» հասկացության, այնպես էլ home և domicile [«տուն»] բառերի նեղ մեկնաբանությունը կարող է անհավասար վերաբերմունքի ռիսկի առաջացման տեղիք տալ (տե՛ս վերը՝ պարբ. 29):

31. Ավելի ընդհանրացված ձևով, private life [«անձնական կյանք»] և home [«տուն»] բառերի այնպիսի մեկնաբանությունը, ըստ որի՝ դրանք ներառում են նաև մասնագիտական կամ աշխատանքային գործունեությունը կամ շենքերը, համահունչ է 8-րդ հոդվածի սկզբունքային առարկային և նպատակին, այն է՝ անձին պաշտպանել պետական մարմինների կամայական միջամտություններից (տե՛ս, օրինակ՝ *«Մարքսն ընդդեմ Բելգիայի» (Marckx v Belgium)* 1979 թ. հունիսի 13-ի վճիռը, շարք A, թիվ 31, էջ 15, պարբ. 31): Այսպիսի մեկնաբանությունն անհարկի խոչընդոտներ չի ստեղծում պայմանավորվող պետությունների համար, որոնք այս դեպքում պահպանում են 8-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում իրենց վերապահված «միջամտության» իրավունքը: Համեմատած այլ դեպքերի հետ՝ այդ իրավունքը կարող է լինել շատ ավելի հեռուն գնացող, երբ խոսքը մասնագիտական կամ աշխատանքային գործունեության կամ շինության մասին է:

...

33. Վերոհիշյալ պատճառները հանրագումարում դատարանին հանգեցնում են այն եզրակացության, որ դիմողների գրասենյակի խուզարկությունը միջամտություն է 8-րդ հոդվածով ամրագրված նրանց իրավունքին:

...

Դ. ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆ «ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԵՂԵԼ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ»

37. Դիմողի և հանճնաժողովի նման, [դատարանը] նույնպես պաշտպանում է այն տեսակետը, որ բողոքարկվող միջոցը համաչափ չի եղել այդ նպատակներին:

Ճիշտ է, որ խնդրո առարկա իրավախախտումը, ներառելով ոչ միայն դատավորի հասցեին հնչած վիրավորանք, այլև ճնշման սպառնալիք, չի կարող դասակարգվել որպես զուտ չնչին իրավախախտում: Մյուս կողմից՝ կարգադրության ձևակերպումները լայն են եղել և պահանջել են, որ վիրավորական նամակի հեղինակի ինքնությունը պարզելու նպատակով առանց սահմանափակման «փաստաթղթեր» խուզարկվեն և առգրավվեն: Այս կետը հատուկ նշանակություն ունի այն դեպքերում, երբ, ինչպես Գերմանիայում, փաստաբանի գրասենյակի խուզարկությունը չի ուղեկցվում առանձնահատուկ ընթացակարգային երաշխիքներով, օրինակ՝ անկախ դիտորդի ներկայությամբ, որն առավել կարևոր է: Ուշադրություն դարձնելով այն նյութերի վրա, որոնք փաստացի ենթարկվել են ստուգման, կարելի է եզրակացնել, որ խուզարկությունը ոտնահարել է մասնագիտական գաղտնիությունն այն աստիճան, որ այս հանգամանքներում այն թվում է անհամաչափ: Այս կապակցությամբ պետք է հիշել, որ փաստաբանի մասնագիտական գաղտնիքի խախտումը կարող է

ազդել արդարադատության պատշաճ իրականացման և, հետևաբար, կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների վրա: Բացի այդ, դրան ուղեկցած հրապարակայնությունը պետք է որ բացասական ազդեցություն թողած լիներ դիմողի մասնագիտական վարկանիշի, նրա հաճախորդների և ընդհանրապես հասարակության վրա:

...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ [9-0]

1. Վճռում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում...

...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Պալատի կազմում եղել են նախագահ Ռիսդալը և դատավորներ Բերնհարդտը, Փեթիթին, Ուոլշը, Ռուսոն, Շպիլմանը, Վալտիկոսը, Լուազուն և Ֆրիլենդը:

2 Թեպետ *Նյեմեցի* գործում դատարանը հստակ ցույց է տվել, որ չի պատրաստվել տալու «անձնական կյանք» հասկացության համապարփակ սահմանումը, այս գործերն օգնում են գծելու այս առաձգական հասկացության լայն սահմանները:

3 *«X-ը և Y-ն ընդդեմ Նիդեռլանդների» (X and Y v Netherland*, A.191 (1985) 8 EHRR 235) գործի դեպքում դատարանը միաձայն վճռել է, որ «...մասնավոր կյանքի» հայեցակարգը տարածվում է անձի ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիության, ներառյալ նրա սեռական կյանքի վրա» (պարբ. 22): Այդ դեպքում վճռվել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում, քանի որ Դանիայի քրեական օրենքի շրջանակներում հնարավոր չի եղել ապահովել լուրջ սեռական ոտնձգության ենթարկված 16 տարեկան մտավոր հետամնաց անձնավորության արդյունավետ պաշտպանությունը: Այս գործի հետագա մանրամասները ներկայացված են 596-րդ էջում:

4 Նմանապես, *«Դաջենն ընդդեմ ՄԹ-ի» (Dudgeon v UK*, A.45 (1981) 4 EHRR 149) գործում դատարանը որոշել է, որ անձի սեռական կյանքը զգալի տեղ է զբաղեցնում նրա մասնավոր կյանքում: Մեծամասնությունը (տասնհինգ կողմ և չորս դեմ ձայներով) որոշել է, որ փոխադարձ համաձայնությամբ սեռական կապի մեջ մտնող անձանց համասեռական վարքագծի նկատմամբ Հյուսիսային Իռլանդիայում գործող քրեական արգելքը «... շարունակական միջամտություն է դիմողի անձական կյանքի, ներառյալ 8(1) հոդվածի իմաստով նրա սեռական կյանքի հարգման իրավունքին» (պարբ. 41): Բացի այդ, մեծամասնությունը չի եզրակացրել, որ այդ միջամտությունը կարող է արդարացված լինել 8(2) հոդվածի շրջանակներում: Ուստի *«Նորիսն ընդդեմ Իռլանդիայի» (Norris v Ireland* A.142 (1988) 13 EHRR 186) և *«Մոդինոսն ընդդեմ Կիպրոսի» (Modinos v Cyprus,* A.259 (1993) 16 EHRR 485) գործերի դեպքում դատարանը որոշել է, որ համանման քրեական օրենքներն առաջացնում են համասեռամոլների մասնավոր կյանքի հարգման իրավունքի խախտում:

Բացի այդ, *«Սադերլենդն ընդդեմ ՄԹ-ի» (Sutherland v UK* (1997) 24 EHRR CD22) գործի դեպքում հանձնաժողովի առջև դիմողը հաջողությամբ վիճարկել է տղամարդ համասեռամոլների սեռական կապի մեջ մտնելու առնչությամբ Անգլիայում գործող համաձայնության տարիքը: Սադերլենդը ծնվել է 1977 թ. և 12 տարեկան հասակում գիտակցել, որ իրեն գրավում են տղաները: Իր առաջին սեռական հարաբերությունը ունեցել է 16 տարեկանում նույն տարիքի անձնավորության հետ: 1967 թ. «Սեռական հանցագործությունների մասին» օրենքի համաձայն՝ արվամոլների միջև տեղի ունեցող սեռական հարաբերությունները ապաքրեականացվել են, եթե հարաբերության մեջ մտնող տղամարդիկ 21 և ավելի տարեկան են և կապի մեջ են մտնում մեկուսի պայմաններում: Շնորհիվ ավելի վաղ՝ 1956 թ. «Սեռական հանցագործությունների մասին» օրենքի՝ հետերոսեքսուալ հարաբերությունների համար համաձայնության տարիքը եղել է 16 տարեկանը, ինչը նաև տարածվել է լեսբոսուհիների հարաբերությունների վրա: 1981 թ. սեռական հանցագործությունների քաղաքականության խորհրդատվական կոմիտեն խորհուրդ է տվել ներքին գործերի քարտուղարին արվամոլ տղամարդկանց սեռական

հարաբերությունների մեջ մտնելու համաձայնության տարիքը նվազեցնել և սահմանել 18 տարեկանը՝ հաշվի առնելով տղամարդկանց սեռահասունության տարիքի վերաբերյալ բժշկական խորհուրդները: Այնուամենայնիվ, 1994 թ. Բրիտանական բժշկական ընկերակցությունը, հիմք ընդունելով նոր հետազոտությունների արդյունքները, ըստ որոնց՝ անձի սեռական հակումը սովորաբար ի հայտ է գալիս արբունքի տարիքից առաջ, ինչպես նաև ի պատասխան հարաճուն մտահոգության, որ երիտասարդ տղամարդ համասեռամոլները հատկապես ենթակա են սեռական ճանապարհով տարածվող հիվանդություններով, այդ թվում նաև ՄԻԱՎ-ով վարակվելու վտանգին, խորհուրդ է տվել, տղամարդ համասեռամոլներին թույլ տալ համաձայնության հիման վրա սեռական կապի մեջ մտնել 16 տարեկանից: Այդ տարի 1994 թ. «Քրեական արդարադատության և հանրային կարգի մասին» օրենքի միջոցով Համայնքների պալատը ոչ կուսակցական քվեարկության հիման վրա՝ 427 կողմ և 162 դեմ ձայներով նվազեցրել է տղամարդ համասեռամոլների սեռական կապի մեջ մտնելու համաձայնության տարիքը՝ հասցնելով այն 18-ի: Դիմողը բողոքել է հանձնաժողովին, որ 1994 թ. օրենքի համաձայն՝ հետերոսեքսուալների և կին համասեռամոլների համաձայնության նվազագույն՝ 16 տարեկան հասակի համեմատությամբ՝ համասեռամոլների համար կամովի սեռական հարաբերությունների մեջ մտնելու համար սահմանվել է խտրական նվազագույն տարիք: Ուստի տեղի է ունեցել 8-րդ և 14-րդ հոդվածների շրջանակներում նրա իրավունքների խախտում: Թեպետ Սադերլենդին քրեական հետապնդում չի սպառնացել, կիրառելով *Դաջենի* գործի կապակցությամբ դատարանի արած հիմնավորումը, հանձնաժողովը եզրակացրել է, որ դիմողի վրա ուղղակիորեն ազդել է սեռական կապի մեջ մտնելու համաձայնության տարիքին վերաբերող օրենսդրությունը, ինչը միջամտություն է նրա մասնավոր կյանքի հարգման իրավունքին: Հետևաբար, անհրաժեշտ է եղել ուսումնասիրել՝ արդյոք այդ օրենսդրությունը համահո՞ւնչ է 8-րդ հոդվածի 2-րդ կետին և 14-րդ հոդվածին: Հանձնաժողովի կարծիքով՝ հետերոսեքսուալ և համասեռամոլ անձանց կամովի սեռական կապի մեջ մտնելու նվազագույն տարիքները՝ հիմնված լինելով «սեռի» կամ «այլ կարգավիճակի» վրա, ենթակա են եղել 14-րդ հոդվածի ազդեցությանը, և քանի որ այսպիսի տարբերակված մոտեցումը «...դիպչում է դրանց ազդեցությանը ենթարկված անձանց մասնավոր կյանքի ամենաինտիմ կողմերին, հայեցողության սահմանը պետք է համեմատաբար նեղ լինի» (պարբ. 57): Թեպետ հանձնաժողովը չի ժխտել, որ *«X-ն ընդդեմ ՄԹ-ի» (X v UK)* 19 DR 66 (1975)) գործում ընդունել է, որ համասեռամոլները կամավոր սեռական հարաբերությունների մեջ կարող են մտնել 21 տարեկանից, որոշել է, որ հաշվի առնելով ներկայիս հանգամանքները՝ ժամանակն է վերանայել իր կողմից ավելի վաղ սահմանված նախադեպային իրավունքը: Ի թիվս այլոց, հաշվի առնելով նաև Բրիտանական բժշկական ընկերակցության կարծիքը և այն փաստը, որ «...կամավոր սեռական հարաբերությունների մեջ մտնելու տարիքի առումով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծամասնությունը համաձայն է, որ ներկայումս հավասար մոտեցում դրսևորելու անհրաժեշտություն է զգացվում» (պարբ. 59), տասնչորս կողմ և չորս դեմ ձայներով հանձնաժողովի մեծամասնությունը որոշել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում՝ 14-րդ հոդվածի համակցությամբ: Մեծամասնության կարծիքով՝ «...համասեռամոլ տղամարդկանց համար հետերոսեքսուալ անձանց կամավոր սեռական հարաբերությունների մեջ մտնելու նվազագույն տարիքից [սահմանված] ավելի բարձր տարիքի պահպանումը որևէ օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում չունի, և համաձայն կոնվենցիայի 8-րդ հոդվածի՝ դրա կիրառումն առաջացնում է դիմողի անձնական կյանքի հարգման իրավունքի նկատմամբ խտրական վերաբերմունք (պարբ. 66): Ըստ չհամընկնող կարծիք ունեցողների՝ 1994 թ. համասեռամոլ տղամարդկանց կամավոր սեռական հարաբերությունների մեջ մտնելու նվազագույն տարիքը սահմանվել է պետության ազգային հայեցողության սահմաններում՝ առանց հաշվի առնելու ընդհանուր եվրոպական չափորոշչի գոյությունը: 1998 թ. հունիսին Բրիտանիայի կառավարությունը համաձայնության է եկել Սադերլենդի հետ, որից հետո Համայնքների պալատին հնարավորություն է տրվել ազատ ապակուսակցական քվեարկությամբ ընդունել «Հանցագործությունների և անկարգությունների մասին» օրինաշարում առաջարկվող փոփոխությունները, համաձայն որոնց՝ համասեռամոլ տղամարդիկ կարող են կամավոր սեռական կապի մեջ մտնել՝ սկսած 16 տարեկան հասակից: Փոփոխությունն ընդունվել է Համայնքների պալատում, սակայն մերժվել Լորդերի պալատում: Այնուհետև՝ 1998 թ. դեկտեմբերին, կառավարությունը ներկայացրել է «Սեռական հանցագործությունների մասին» (բա-

րեփոխված) օրինաշարը, որն, ի թիվս այլոց, ձգտել է ներդաշնակեցնել Անգլիայում, Ուելսում և Շոտլանդիայում կամավոր սեռական հարաբերությունների մեջ մտնելու տարիքը՝ ինչպես համասեռամոլ, այնպես էլ հետերոսեքսուալ անձանց համար սահմանելով նվազագույն 16 տարեկան հասակը: Օրինաշարում ամրագրված է, որ Հյուսիսային Իռլանդիայում համասեռամոլների կամավոր սեռական հարաբերությունների մեջ մտնելու թույլատրելի տարիքը 17 տարեկանն է, քանի որ Հյուսիսային Իռլանդիայում հետերոսեքսուալ անձանց համար նույնպես սեռական կապի մեջ մտնելու համաձայնության տարիքը եղել է 17-ը: Այնուամենայնիվ, Լորդերի պալատը կրկին մերժել է օրինաշարը:

Ի պատասխան՝ կառավարությունը վկայակոչել է հազվադեպ կիրառվող 1911 թ. խորհրդարանական օրենքները և 1949 թ. կանոնակարգը, համաձայն որոնց՝ Լորդերի պալատի [կողմից հաստատվելու] ընթացակարգը կարող է շրջանցվել: Թագուհու համաձայնությամբ Համայնքների պալատը 2000 թ. ընդունել է «Սեռական հանցագործությունների մասին» բարեփոխված օրենքը, որը համասեռամոլների կամավոր սեռական հարաբերությունների մեջ մտնելու նվազագույն տարիքի մեջ կատարել է վերը նշված փոփոխությունները: Ակտի ուժի մեջ մտնելուց հետո 2001 թ. հունվարին Սադերլենդը դիմել է դատարանին, որպեսզի իր գործը հանվի: Մեծ պալատն այդպես էլ վարվել է. *«Սադերլենդն ընդդեմ ՄԹ-ի» (Sutherland v UK)* 2001 թ. մարտի 27-ի վճռում դատարանը բավարար է համարել, որ բողոքը լուծված է՝ հաշվի առնելով, որ տեղի են ունեցել օրենսդրական փոփոխություններ, և այն փաստը, որ կառավարությունը վճարել է դիմողի իրավաբանական ծախսերը:

Մշտական գործող դատարանը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել 14-րդ հոդվածի խախտում՝ 8-րդ հոդվածի համակցությամբ, երբ 1998 թ. 41-ամյա անձնավորությունը քրեական հետապնդման է ենթարկվել 16-ամյա արական սեռի ներկայացուցչի նկատմամբ սադիզմի ակտ կատարելու համար, ընդ որում, այն ժամանակ, երբ հանձնաժողովն արդեն կարծիք էր հայտնել *Սադերլենդի (Sutherland)* գործի վերաբերյալ: *«Բ.Բ.-ն ընդդեմ ՄԹ-ի» (B.B. v UK)* գործում (2004 թ. փետրվարի 10-ի վճիռ) դիմողը բողոքել է ոստիկանությանը, որ ինքը հարձակման է ենթարկվել 16 տարեկան արական սեռի ներկայացուցչի կողմից (նա պաշտոնապես արդարացվել է 1999 թ., երբ երիտասարդ անձնավորությունը հրաժարվել է ցուցմունք տալուց): Դատարանը գտել է, որ «25,.... օրենսդրության գոյությունը և կիրառման ենթակա օրենսդրության շրջանակներում դիմողի քրեական հետապնդումը համապատասխան ժամանակահատվածում առաջացրել են կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում՝ 8-րդ հոդվածի համակցությամբ»:

5 Դատարանը միաձայն որոշել է, որ *«Սմիթը և Գրեյդին ընդդեմ ՄԹ-ի» (Smith and Grady v UK* (1999) 29 EHRR 493) և այդ նույն ժամանակահատվածում քննության առնված *«Լյուսթիգ-Փրինը և Բեքեթն ընդդեմ ՄԹ-ի» (Lustig-Prean and Beckett v UK* (1999) 29 EHRR 548) գործերում, որոնք վերաբերել են Բրիտանիայի զինված ուժերի մի շարք անդամների սեռական կողմնորոշման կապակցությամբ իրականացված քննություններին և, այնուհետև, անձնակազմի մի շարք կին և տղամարդ համասեռամոլ անդամներին ազատելուն, տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում: 1989 թ. Ջանեթ Սմիթը՝ որպես բուժքույր, ինննամյա ծառայության է անցել թագավորական օդային նավատորմում՝ հասնելով ավիացիայի ավագ կին-ծառայողի կոչման: 1994 թ. հունիսին օդային նավատորմի ոստիկանական և անվտանգության ծառայության (ծառայողական ոստիկանության) բաժինը հեռախոսազանգ է ստացել մի կնոջից, որը հայտնել է, որ միս Սմիթը համասեռամոլ է և հետապնդում է իրեն: Այնուհետև Սմիթը հարցաքննվել է ծառայողական ոստիկանության կողմից: Սմիթն ընդունել է, որ ինքը համասեռամոլ է և լեսբոսուհի կենակցի հետ իր առաջին սեռական հարաբերությունն ունեցել է օդային նավատորմում ծառայության անցնելու առաջին տարվա ընթացքում: Նա նաև ասել է, որ այդ ժամանակ միասեռական կապի մեջ է եղել նաև ոչ զինվորական ծառայության մեջ գտնվող կնոջ հետ, որի հետ հարաբերություններ է սկսել տասնութ ամիս առաջ: Ծառայողական ոստիկանությունն այնուհետև հարցաքննել է Սմիթին նրա համասեռական հարաբերության ինտիմ կողմերի առնչությամբ: Ոստիկանությունը հայտնել է, որ իրենք պետք է ստուգեն Սմիթի սեռական կողմնորոշման վերաբերյալ տված ցուցմունքը, որպեսզի վստահ լինեն, որ նա նպատակ չի ունեցել վաղաժամկետ զորացրվել ծառայությունից: Նրանից հարցրել են նաև նրա նախկին զուգընկերուհիների անունները, նրա և զուգընկերուհու

հարաբերությունների խորությունը, արդյոք նա և իր զուգընկերուհին սեռական հարաբերություններ են ունենում նաև իրենց որդեգրած աղջկա հետ, արդյոք նա մտածե՞լ է ՄԻԱՎ-ի մասին և արդյոք սիրո՞ւմ է «աղջկական խաղեր», օրինակ՝ հոկեյ: Իր հոժար կամքով նրա զուգընկերուհին նույնպես ենթարկվել է հարցաքննության և հաստատել, որ իրենք լիարժեք սեռական կապի մեջ են: Մի քանի ամիս անց, հիմք ընդունելով զինված ուժերի գործող քաղաքականությունը, ըստ որի՝ տղամարդկանց և կանանց համասեռամոլությունն անհամատեղելի է այդ ուժերում ծառայության հետ, Սմիթը, վարչական կարգի համաձայն, ազատվել է ծառայությունից: Օդային նավատորմը բարձր է դասել Սմիթի մասնագիտական հմտությունները և անձնական հատկանիշները՝ նրա վարքը գնահատելով օրինակելի: Գրաեմ Գրեյդին թագավորական նավատորմում ծառայության է անցել 1980 թ.: 1993 թ., ունենալով սերժանտի կոչում, նա արդեն աշխատելիս է եղել Վաշինգտոնում (Կոլումբիայի շրջան) տեղակայված Բրիտանիայի պաշտպանական հետախուզության կապի ծառայությունում որպես ավագ քարտուղար: 1994 թ. հունիսին կապի ծառայության տնօրենի կնոջ դայակը հայտարարություններ է արել, որոնց հետևանքով սերժանտ Գրեյդին հետ է ուղարկվել Բրիտանիայի ռազմական բազա և հարցաքննվել ծառայողական ոստիկանության կողմից: Իր առաջին հարցաքննության ժամանակ Գրեյդին ժխտել է իր համասեռամոլությունը: Հաջորդ օրն իրավաբանական խորհրդատվություն ստանալուց և վարչական կարգով ազատվելու դեպքում իր ֆինանսական դրությունը պարզելուց հետո նա ընդունել է իր համասեռամոլությունը՝ ասելով, որ համասեռական հարաբերությունների մեջ է եղել նախորդ տարվանից: Ոստիկանությունը մի շարք ինտիմ բնույթի հարցեր է տվել նրան, այդ թվում նաև՝ արդյոք նրա կինը տեղյա՞կ է, որ նա համասեռամոլ է, ովքե՞ր են եղել նրա զուգընկերները, և նրանց հետ հարաբերություններն ի՞նչ բնույթ են ունեցել: 1994 թ. դեկտեմբերին պրն Գրեյդին վարչական կարգով ազատվել է ծառայությունից: Նրա ծառայողական գործում նշվել է, որ իր ծառայության ընթացքում նա ցուցաբերել է բարձր անձնական հատկանիշներ և շիտակություն: Դատական վերանայման ընթացակարգերի միջոցով դիմողները փորձել են վիճարկել իրենց պաշտոնանկությունը, սակայն բարձր դատարանը և վերաքննիչ դատարանը որոշել են, որ իշխանությունների գործողությունները չեն խախտել օրինականության սկզբունքները, ներառյալ *Վեդնեսբերիի (Wednesbury)* անողջամտությունը/իռացիոնալությունը *(«R-ն [Թագուհին] ընդդեմ պաշտպանության նախարարության Սմիթի առնչությամբ» (R v Ministry of Defence, ex p Smith* [1996] 1 All ER 257)): Դիմողներն այնուհետև գանգատ են ներկայացրել Ստրասբուրգի հաստատություններին՝ պնդելով, որ տեղի է ունեցել իրենց՝ կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական կյանքի հարգման իրավունքի խախտում: Կառավարությունն ընդունել է, որ նման միջամտություններ եղել են:

... Այս պարագայում դատարանն այն կարծիքին է, որ ռազմական ոստիկանության կողմից դիմողների համասեռամոլության պարզման նպատակով իրականացված քննությունը (որը բաղկացած է եղել նրանցից յուրաքանչյուրի, ինչպես նաև կողմնակի անձանց հետ նրանց սեռական կողմնորոշման և գործողությունների վերաբերյալ մանրամասն հարցաքննություններից), զինված ուժերի ղեկավարության համար այդ քննությունների վերաբերյալ հաշվետվությունների կազմման հետ միասին, ուղղակի միջամտություն է եղել դիմողների անձնական կյանքի հարգման իրավունքին: Միայն նրանց սեռական կողմնորոշման պատճառով նրանց ազատումը ծառայությունից վարչական կարգով նույնպես միջամտություն է այդ իրավունքին (տե՛ս *«Դաջենն ընդդեմ ՄԹ-ի» (Dudgeon v UK)*, 1981 թ. հոկտեմբերի 22-ի վճիռ, շարք A, թիվ 45, էջ 18–19, պարբ. 41 և *mutatis mutandis «Ֆոգթն ընդդեմ Գերմանիայի» (Vogt v Germany)* 1995 թ. սեպտեմբերի 26-ի վճիռը, շարք A, թիվ 323, էջ 23, պարբ. 44), (պարբ. 71):

Քանի որ զինված ուժերից համասեռամոլ անձանց ազատման քաղաքականությունը հիմնված է եղել 1994 թ. «Քրեական արդարադատության և հանրային կարգի մասին» օրենքի 146-րդ բաժնի վրա, դատարանը որոշել է, որ այդ միջամտություններն արվել են «համաձայն օրենքի»: Բացի այդ, իշխանությունների գործողությունները հետամուտ են եղել 8(2) հոդվածում նշված «ազգային անվտանգության շահերի» ապահովման և «անկարգությունների կանխման» օրինական նպատակներին, քանի որ, ինչպես ներկայացրել է կառավարությունը, զինված ուժերում համասեռամոլությանը վերաբերող իր քաղաքականության նպատակը ծառայող անձնակազմի բարոյականությունը պահպանելն է եղել, հետևաբար, նաև՝ զինված ուժերի մարտունակությունը: Վիճելի հարցն այն է, թե արդյոք այդ միջամտություններն «անհրաժե՞շտ են եղել ժողովրդավարական հասարակությունում»:

Հիմք ընդունելով, մասնավորապես, 1996 թ. համասեռամոլության քաղաքականության գնահատման խմբի (ՀՔԳԽ) անցկացրած ներքին հետազոտության արդյունքները՝ կառավարությունը պատճառաբանել է, որ ներկա ժամանակներում համասեռամոլ անձանց մուտքը զինված ուժեր զգալի և բացասական ազդեցություն կունենա այդ ուժերում ծառայող անձնակազմի բարոյականության վրա, և անձնական կյանքի նկատմամբ նման սահմանափակումների կիրառումը պետություններին վերապահված հայեցողության սահմաններում է եղել: Դիմողներն առարկել են, որ կառավարությունը, ի թիվս այլոց, իր պնդումը պաշտպանելու համար օբյեկտիվ փաստեր չի վկայակոչել, որոնք կհիմնավորեին, որ համասեռամոլ անձանց նկատմամբ քաղաքականության փոփոխության արդյունքում վնաս կհասցվի ծառայող անձնակազմի բարոյականությանը:

(Գ) ԴԱՏԱՐԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

(I) ԿԻՐԱՌԵԼԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

87. Օրինական նպատակի համար արված միջամտությունը կհամարվի «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում», եթե այն ձեռնարկվել է ի պատասխան հրատապ սոցիալական կարիքի և, մասնավորապես, համաչափ է հետապնդվող օրինական նպատակին (տե՛ս *Նորիս» (Norris)* վճիռը, էջ 18, պարբ. 41): Հաշվի առնելով տվյալ գործում առկա խնդիրները՝ դատարանն ընդգծելու է «անհրաժեշտության» և «ժողովրդավարական հասարակության» միջև եղած կապը, որի չափանիշներն են բազմակարծությունը, հանդուրժողականությունը և լայնախոհությունը (Vereinigung Demokratischer Soldaten Osterreichs and Gubi-ի վճիռը ... վերը, էջ 17, պարբ. 36 և *Դաջենի (Dudgeon)* վճիռը ... էջ 21, պարբ. 53).

88. Դատարանն ընդունում է, որ անհրաժեշտության նախնական գնահատումը պետք է անեն ազգային մարմինները, թեպետ վերջնական գնահատումը, թե որքանով են վկայակոչված միջամտության պատճառները տեղին եղել, պետք է դատարանը կատարի: Այս գնահատման համատեքստում պայմանավորվող պետություններն օժտված են հայեցողության սահմաններով, որոնք տարբերվում են ըստ սահմանափակված գործունեության բնույթի և այդ սահմանափակումներով հետապնդվող նպատակների (տե՛ս *Դաջենի (Dudgeon)* վճիռը, էջ 21 և 21, պարբ. 52 և 59):

89. Հետևաբար, այն դեպքում, երբ համապատասխան սահմանափակումները վերաբերում են «մարդու անձնական կյանքի ամենաինտիմ կողմին», որպեսզի այդպիսի միջամտությունը բավարարի կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները, պետք է «հատկապես լուրջ հիմքեր» լինեն (տե՛ս *Դաջենի (Dudgeon)* վճիռը... էջ 21, պարբ. 52): Այն դեպքում, երբ ազգային անվտանգության բուն նպատակը զինված ուժերի օպերատիվ արդյունավետության ապահովումն է, ապա ընդունված է, որ զինվորական կարգապահության համակարգերի կազմակերպման իրավասությունները վերապահվեն առանձին պետություններին, որոնք այս առումով օժտված են որոշակի հայեցողական սահմաններով (տե՛ս *Էնգելի (Engel)* վճիռը, էջ 25, պարբ. 59): Դատարանը նաև համարում է, որ պետությունն իրավասու է սահմանափակել մարդու անձնական կյանքի հարգման իրավունքը, եթե զինված ուժերի օպերատիվ անվտանգությանը լուրջ իրատեսական վտանգ է սպառնում, քանի որ զինված ուժերի ճիշտ աշխատանքն անհնարին է պատկերացնել առանց համապատասխան իրավական կանոնների, որոնք կանխում են զինվորական անձնակազմի՝ դրա դեմ ուղղված գործողությունները: Այնուամենայնիվ, ազգային մարմինները չեն կարող հիմնվել այդ կանոնների վրա՝ զինված ուժերի առանձին անդամների՝ անձնական կյանքի հարգման իրենց իրավունքից օգտվելը կասեցնելու նպատակով, քանի որ այդ իրավունքը տարածվում է ծառայող անձնակազմի վրա նույն կերպ, ինչ այդ պետության իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր այլ անձի վրա: Բացի այդ, օպերատիվ արդյունավետության ռիսկի վերաբերյալ պնդումները պետք է հիմնավորվեն առանձին օրինակներով» (տե՛ս *mutatis mutandis* Vereinigung Demokratischer Soldaten Osterreichs and Gubi-ի վճիռը ... , էջ 17, պարբ. 36 և 38 և *Գրիգորիադեսի (Grigoriades)* վճիռը ... էջ 2589–90, պարբ. 45):

(II) ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

90. Ընդհանուր համաձայնություն կա, որ քննությունների անցկացման և դիմողների ազատման միակ պատճառը եղել է նրանց սեռական կողմնորոշումը: Այն վերաբերել է մարդու անձնական կյանքի ամենաինտիմ կողմին և դրա արդարացման համար, մասնավորապես, պահանջվել են հատկապես լուրջ հիմքեր (տե՛ս վերը՝ պարբ. 89): Տվյալ դիմողների դեպքում դատարանը կարծում է, որ միջամտությունները եղել են հատկապես լուրջ հետևյալ պատճառներով:

91. Նախ՝ քննության գործընթացը ...ունեցել է չափից ավելի ներխուժողական բնույթ: Միս Սմիթին և ծառայողական ոստիկանությանը հասցեագրված անանուն զանգերը, իսկ պրն Գրեյդիի դեպքում՝ հրամանատարի դայակի տրամադրած տեղեկությունները հուշել են քննությանը նրանց սեռական կողմնորոշման մասին, ինչը մինչ այդ պահը դիմողներից յուրաքանչյուրը գաղտնի է պահել: Քննություններն անցկացվել են ծառայողական ոստիկանության կողմից, որի

հետաքննչական մեթոդները, համաձայն ՀՔԳԽ-ի, հիմնված են եղել քրեական ընթացակարգերի վրա, և որի ներկայությունը, ըստ ՀՔԳԽ-ի, լայնորեն լուսաբանվել է և հանդիպել զինված ուժերի լուրջ դիմադրությանը: ... Երբ այս խնդիրը ներկայացվել է ծառայողական մարմինների ուշադրությանը, պրն Գրեյդիից պահանջվել է անմիջապես վերադառնալ Միացյալ Թագավորություն առանց կնոջ և երեխաների: Այն ժամանակ, երբ նա գտնվել է Միացյալ Թագավորությունում, Միացյալ Նահանգներում լուրջ քննություն է սկսվել նրա համասեռականության հարցի կապակցությամբ, որ ներառել է նրա անձնական կյանքի մասին մանրամասն և աննրբանկատ զրույցներ նրա կնոջ, գործընկերոջ, վերջինիս ամուսնու և նրա հրամանատարի ընտանիքի դայակի հետ: Երկու դիմողն էլ հարցաքննվել են և պարտավոր են եղել պատասխանել խիստ ինտիմ բնույթի հարցերի, որոնք վերաբերել են նրանց առանձին սեռական հարաբերություններին և նախասիրություններին: Դատարանի կարծիքով՝ երկու դիմողների հարցաքննության որոշ մասերը եղել են հատկապես ներխուժողական և վիրավորական: Իսկապես, կառավարությունն ընդունել է, որ նրանք չեն կարող պաշտպանել միս Սմիթին նրան առաջադրված հարցից, թե արդյոք սեռական հարաբերություններ ունեցե՞լ է իր որդեգիր դստեր հետ: Միս Սմիթի զուգընկերուհին նույնպես հարցաքննվել է: Պարոն Գրեյդիի բնակարանը խուզարկվել է: Մի շարք անձնական իրեր առգրավվել են, այդ թվում՝ նրա համասեռամոլ զուգընկերոջը հասցեագրված նամակը: Ավելի ուշ նա հարցաքննվել է այդ իրերի բովանդակության վերաբերյալ: Հարցաքննություններից հետո ծառայողական ոստիկանությունը յուրաքանչյուր դիմողի համասեռամոլության և հարակից հարցերի վերաբերյալ պատրաստել է հաշվետվություն, որն ուղղված է եղել օդային նավատորմի ղեկավարությանը:

92. Երկրորդ՝ վարչական կարգով դիմողներին ազատելը, ըստ դատական արխիվի տնօրեն Թոմաս Բինգհեմի, հսկայական ազդեցություն է ունեցել նրանց կարիերայի և հեռանկարների վրա: Խնդրո առարկա իրադարձություններից առաջ երկու դիմողն էլ իրենց բնագավառներում ունեցել են համեմատաբար հաջողակ ծառայողական կարիերա: Միս Սմիթը հինգ տարուց ավելի ծառայելիս է եղել օդուժում: Նրա թեկնածությունը ներկայացվել է պաշտոնեական առաջխաղացման համար, որի համար նա ընդգրկվել է մասնագիտական դասընթացների ծրագրում և գրեթե մոտ էր դասընթացների ավարտին և ավարտական քննությունները հանձնելուն: Նրան ազատելուց առաջ և հետո նա արժանացել է շատ դրական գնահատականների: Պարոն Գրեյդին ծառայել է օդուժում տասնչորս տարի՝ հասնելով սերժանտի աստիճանի և 1991 թ. Վաշինգտոնում ստանալով անվտանգության բարձր պաշտոն: Նրան ազատելուց առաջ և հետո տրված գնահատականները նույնպես եղել են խիստ դրական և ներառել ծառայության մեջ առաջխաղացման հանձնարարականներ: Իր դիտարկումներում կառավարությունն ընդունել է, որ դիմողներին վերաբերող ծառայողական գրավոր բնութագրերը և վարքագիծը բողոքի տեղիք չեն տվել, ավելին, համաձայն բարձր դատարանի, նրանց տրված գրավոր ծառայողական բնութագրերը եղել են «օրինակելի»: Այս կապակցությամբ դատարանը նշում է զինված ուժերի առանձնահատուկ բնույթը (որը շեշտվել է կառավարության՝ դատարանին ներկայացրած միջնորդություններում) և, հետևաբար, սկզբունքորեն զինվորական բնույթի որակավորումները և փորձը անմիջականորեն քաղաքացիական կյանքին փոխանցելու դժվարությունը: Դատարանը հիշում է այս կապակցությամբ, որ սա եղել է այն մի քանի պատճառներից մեկը, որի հիման վրա եզրակացրել է, որ դպրոցի ուսուցչի պաշտոնից տիկին Ֆոգթի ազատումը եղել է «շատ խիստ միջոց», քանի որ նրա իրավիճակում հայտնված ուսուցիչներն ամենայն հավանականությամբ զրկվելու են իրենց միակ մասնագիտությունը կիրառելու հնարավորությունից, որին կոչված են նրանք, որի համար ստացել են համապատասխան կրթություն, և որի ոլորտում ձեռք են բերել հմտություններ ու փորձ (*Ֆոգթի (Vogt)* վճիռը ... էջ 29, պարբ. 60): Այս առումով դատարանն ընդունում է, որ դիմողների կրթությունը և փորձը կարող էին օգտակար լինել քաղաքացիական կյանքում: Այնուամենայնիվ, պարզ է, որ իրենց մասնագիտացման բնագավառներում, քաղաքացիական պաշտոններ ձեռք բերելու առումով, դիմողները պետք է որ դժվարությունների հանդիպեին, ինչն անդրադառնալու էր այն աստիճանի և կարգավիճակի վրա, որին նրանք հասել էին օդուժում:

93. Երրորդ՝ խնդրո առարկա միջամտությանը հանգեցրած քաղաքականության բացարձակ և ընդհանուր բնույթը ցնցող է (տե՛ս *Դաջենի (Dudgeon)* վճիռը ... էջ 24, պարբ. 61 և *Ֆոգթի (Vogt)* վճիռը ... էջ 28, պարբ. 59): Համաձայն այդ քաղաքականության՝ անձի համասեռականությունը հաստատվելուց հետո նա անմիջապես ազատվում է զինված ուժերից՝ անկախ ծառայությունում դրսևորած վարքագծից կամ ծառայողական բնութագրերից: Ինչ վերաբերում է կառավարության կողմից *Կալաջի (Kalac)* գործին արված հղմանը, դատարանը կարծում է, որ հարկ է տարբերել վարքի պատճառով սրն Կալաջի հարկադիր պաշտոնաթողությունը անձնական հատկանիշների պատճառով դիմողների ազատմանը վերաբերող սույն գործից:

94. Հետևաբար, դատարանը պետք է քննի, թե արդյոք, հաշվի առնելով ազգային անվտանգության հարցերում պետությունների ունեցած հայեցողության սահմանները, կա՞ն հատկապես համոզիչ և ծանրակշիռ պատճառներ, որոնք արդարացնում են միջամտությունները դիմողների անձնական կյանքի հարգման իրավունքին:

95. Կառավարության՝ հօգուտ այս քաղաքականության բերած հիմնական փաստարկն այն է, որ զինված ուժերում բացահայտ կամ կասկածվող համասեռական վարք ունեցող անձանց ներկայությունը զգալի և բացասական ազդեցություն ունի բարոյականության, հետևաբար՝ զինված ուժերի մարտունակության և օպերատիվ արդյունավետության վրա: Այս առումով կառավարությունն առաջնորդվում է ՀՔԳԽ-ի հաշվետվության և, մասնավորապես, դրա «Ջ» բաժնի վրա: Թեպետ դատարանն ընդունում է ՀՔԳԽ-ի սկսած ուսումնասիրության բարդությունը, սույն նպատակների

կապակցությամբ որոշ կասկածներ ունի ՀՔԳԽ-ի հաշվետվության ճշանակության առնչությամբ: Հարցեր են առաջանում զեկույցում արտացոլված գնահատումների անկախության վերաբերյալ, քանի որ ուսումնասիրությունն իրականացվել է պաշտպանության նախարարության կազմի մեջ մտնող քաղաքացիական ծառայողների և [զինվորական] ծառայության մեջ գտնվող անձնակազմի կողմից ... Բացի այդ, զեկույցի և կիրառված մեթոդների յուրաքանչյուր ընթերցումից պարզ է, ... որ զինվորական կազմի շատ փոքր հատվածն է մասնակցել գնահատմանը: Առավել ևս, գնահատման մեթոդներից շատերը, ներառյալ պաշտպանության նախարարության հետ քաղաքականություն մշակողների խորհրդակցությունները, առերեսումները և ֆոկուսային խմբերով քննարկումներն անանուն չեն եղել: Նաև տպավորություն է ստեղծվում, որ վերաբերմունքի ուսումնասիրության նպատակով կազմված հարցերը հուշել են այնպիսի պատասխաններ, որոնք սատարել են [գործող] քաղաքականությանը:

96. Նույնիսկ ընդունելով, որ խնդրի վերաբերյալ ՀՔԳԽ-ի զեկույցում արտացոլված տեսակետները կարող են ներկայացուցչական տեսակետներ լինել, դատարանը կարծում է, ՀՔԳԽ-ի զեկույցում շոշափված խնդիրները, որոնք ներկայացվել են որպես զինված ուժերի մարտունակությանը և օպերատիվ անվտանգությանը սպառնացող վտանգներ, հիմնված են եղել զուտ անձնակազմի համասեռական կողմնորոշում ունեցող անդամների նկատմամբ հետերոսեքսուալ անձնակազմի բացասական վերաբերմունքի վրա: Այս առումով դատարանը նկատում է, որ համասեռականության վերաբերյալ քաղաքականությունը զերծ է բարոյականության վերաբերյալ դատողություններից: Մի բան, որը հաստատվել է պաշտպանության նախարարության աշխատակազմի նախագահի երդումով տված գրավոր ցուցմունքով... Կառավարությունը նաև ընդունում է, որ քաղաքականությունն ընդհանուր առմամբ հարցականի տակ չի դնում ո՛չ դիմողների վերաբերյալ առկա գրավոր բնութագրերը, ո՛չ նրանց վարքագիծը, ո՛չ նրանց ֆիզիկական կարողությունը և ո՛չ էլ համասեռական կողմնորոշում ունեցող անձանց համարձակությունը, հուսալիությունը և հմտությունները:

97. Դատարանը պետք է պարզի այն հարցը, թե արդյոք վերը նշված բացասական մոտեցումները արդարացնո՞ւմ են այսպիսի միջամտությունները: Հիմնվելով ՀՔԳԽ-ի զեկույցի վրա՝ դատարանը նկատում է, որ այս մոտեցումները, եթե նույնիսկ արտացոլել են դրանք արտահայտած անձանց անկեղծ վերաբերմունքը, ներառել են համասեռական կողմնորոշում ունեցող անձանց նկատմամբ կարծրատիպային թշնամանքի արտահայտություններից մինչև այդպիսի կողմնորոշում ունեցող գործընկերների ներկայության պատճառով առաջացած անորոշ անհարմարավետության զգացողությունները բացահայտող արտահայտություններ: Դրսևորելով համասեռական կողմնորոշում ունեցող փոքրամասնության նկատմամբ հետերոսեքսուալ մեծամասնության կանխակալ վերաբերմունքը, այդ բացասական մոտեցումները՝ որպես այդպիսին, դատարանի կողմից չեն կարող համարվել բավարար արդարացում դիմողների վերը նշված իրավունքներին միջամտելու համար. ավելի, քան կհամարվեին այլ ռասայի, ծագման կամ մաշկի գույն ունեցող անձանց նկատմամբ նմանատիպ բացասական մոտեցումները:

98. Կառավարությունը շեշտել է, որ ՀՔԳԽ-ի զեկույցում արտահայտված տեսակետները ծառայել են ի ցույց դնելու համար, որ քաղաքականության յուրաքանչյուր փոփոխություն զգալի վնաս է հասցնելու բարոյականությանը և օպերատիվ արդյունավետությանը: Դիմողների կարծիքով՝ սրանք հիմնավորված բացատրություններ չեն եղել:

99. Դատարանը նկատում է, որ քաղաքականության փոփոխության դեպքում բարոյականությանը և մարտունակությանը հասցվելիք ենթադրյալ վնասը հիմնավորող որոշակի փաստեր չկան: Վերաքննիչ դատարանում արդարադատության լորդ Թոուրփը հայտարարել է, որ իրական կամ զգալի փաստեր չկան, որ զինված ուժերում համասեռական կողմնորոշում ունեցող անձանց ներկայությունն առաջացրել է այդպիսի վնաս, ... և դատարանն այնուհետև գտնում է, որ դրան հետևած ՀՔԳԽ-ի գնահատումը, ինչպիսին էլ լինի դրա նշանակությունը, քաղաքականության փոփոխության դեպքում այդպիսի վնասի առաջացմանը վերաբերող փաստեր չի ներկայացրել: Հաշվի առնելով տվյալ ժամանակահատվածում զինված ուժերից հեռացված համասեռական կողմնորոշում ունեցող անձանց թիվը [30 սպա և 331 շարքային], չի կարելի ասել, որ զինված ուժերում համասեռական կողմնորոշում ունեցող անձանց թիվը չնչին է եղել: Եթե նույնիսկ, ինչպես պնդում է կառավարությունը, այս փաստերի բացակայությունը կարող է բացատրվել քաղաքականության հետևողական իրականացմամբ, դատարանին չի բավարարում, որ այդ քաղաքականության բացակայության պարագայում կարող են առաջ գալ այս կարգի և չափերի օպերատիվ արդյունավետության խնդիրներ (տե՛ս Vereinigung Demokratischer Soldaten Osterreichs and Gubi վճիռը... էջ 17, պարբ. 38):

100. Այնուամենայնիվ, հաշվի առնելով ՀՔԳԽ զեկույցում ամփոփված որոշ պատասխանների զգացմունքային ուժգնությունը, ինչպես նաև զինված ուժերի առանձնահատուկ, փոխկապակցված և սերտորեն միահյուսված միջավայրը, դատարանը կարծում է, որ ողջամիտ է ենթադրել, որ արդեն երկար պատմություն ունեցող այս քաղաքականության փոփոխությունից կարող են առաջանալ որոշ դժվարություններ: Իրոք, թվում է, որ բանակում կանանց և էքզիկական փոքրամասնությունների ներկայությունը հանգեցրել է շփման որոշակի դժվարությունների, որոնք այն նույն կարգի դժվարություններ են, ինչ կարող են ծագել համասեռական կողմնորոշում ունեցող անձանց ընդունելու դեպքում...

101. Դիմողները հայտարարել են, որ հետերոսեքսուալ անձանց բացասական վերաբերմունքի պատճառով առաջացող պոտենցիալ դժվարությունները կարող են կարգավորվել անձնակազմի նկատմամբ կիրառվող վարքագծի խիստ

կանոնների միջոցով: Թեպետ կառավարությունը կտրականապես չի ժխտել այս հնարավորությունը, շեշտել է զգուշավորություն դրսևորելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով խնդրո առարկան և այն հանգամանքը, որ այս քաղաքականությունը վերաբերել է զինված ուժերին: Նա նաև նշել է, որ սա գոյություն ունեցող այն տարբերակներից մեկն է, որոնք վերանայվելու են 2001 թ. խորհրդարանական հաջորդ հատուկ կոմիտեում:

102. Նախ՝ դատարանը կարևոր է համարում նշել ռասայական խտրականության, ռասայական և սեռական բռնության ու հալածանքի առնչությամբ զինված ուժերի կողմից արդեն իսկ որդեգրված մոտեցումը... Անպատշաճ վարքագծի և պահվածքի դրսևորումները կանխելու նպատակով 1996 թ. հունվարի հրահանգը, օրինակ՝ կարգապահական կանոններին զուգահեռ յուրաքանչյուր զինվորի համար սահմանել է վարքագծի խիստ կանոններ: Այս երկկողմ մոտեցումը համալրվել է տեղեկատվական թերթիկներով և ուսումնական ծրագրերով, նաև բանակը շեշտել է անձնական վարքագծի և այլ անձանց հարգելու բարձր չափորոշիչների անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, կառավարությունը շեշտել է, որ անձանց «համասեռական կողմնորոշման մասին իմացությունը կամ կասկածը» կարող են առաջացնել ոչ թե վարքագծի, այլ բարոյականության խնդիրներ: Հետևաբար, պոտենցիալ դժվարությունները չեն կարող լուծվել վարքագծի կանոնների միջոցով: Այնուամենայնիվ, այնքանով, որքանով համասեռամոլության նկատմամբ բացասական վերաբերմունքն ինքնին անբավարար է այս քաղաքականությունն արդարացնելու համար (տե՛ս վերը՝ պարբ. 97), նույնքան էլ անբավարար է առաջարկվող այլընտրանքի մերժումն արդարացնելու համար: Համենայն դեպս, դատական նիստի ժամանակ կառավարությունն ընդունել է, որ վարքագծի կանոնների և քաղաքականության պահպանման միջև ընտրությունը կախված է սույն գործի վերաբերյալ ընդունվելիք վճռից: Սա նաև համահունչ է կառավարության՝ ՀՔԳԽ-ի զեկույցի «Զ» բաժնի վրա հիմված փաստարկներին, ըստ որոնց՝ վեր հանված բարոյական ռիսկի խնդիրները գրեթե բացառապես եղել են պահվածքի և վարքագծի խնդիրներ... Կառավարությունը պնդել է, որ համասեռամոլությունն առաջացնում է խնդիրներ, որոնք իրենց բնույթով և ուժգնությամբ տարբեր են էթնիկական և միջսեռական խնդիրներից: Այնուամենայնիվ, եթե նույնիսկ կարելի է ենթադրել, որ համասեռական կողմնորոշում ունեցող անձանց ինտեգրումը կարող է խնդիրներ առաջացնել, որոնք չեն առաջացել կանանց և ռասայական փոքրամասնությունների ներգրավման արդյունքում, դատարանը բավարարված չէ, որ կանոնագրքերը և կանոնները, որոնք արդյունավետ են առաջինների դեպքում, հավասարապես արդյունավետ չեն լինի վերջինների դեպքում: Արտասահմանում միավորված ուժերում ծառայության մեջ գտնվող բրիտանական զինված ուժերի ներկայացուցիչների «խիստ անտարբերությունը» համասեռական կողմնորոշում ունեցող անձանց նկատմամբ (ինչին անդրադարձ է արված նաև ՀՔԳԽ-ի զեկույցում) միայն հաստատում է, որ ինտեգրման ընկալվող խնդիրներն անհաղթահարելի չեն ...

103. Կառավարությունը շեշտել է այն առանձնահատուկ խնդիրները, որոնք կարող են առաջանալ զինված ուժերում գոյություն ունեցող համատեղ կենցաղային հարմարությունների օգտագործումից: Նիստի ժամանակ ներկայացվել են մանրամասն բացատրություններ, սակայն կողմերն այդպես էլ համաձայնության չեն եկել նույն սեռի ներկայացուցիչների միջև կենցաղային և այլ հարմարությունների համատեղ օգտագործման պոտենցիալ հետևանքների շուրջ: Դատարանը նկատում է, որ ՀՔԳԽ-ն ինքն էլ եզրակացրել է, որ համասեռական կողմնորոշում ունեցող անձանց համար առանձին հարմարություններ չեն ապահովվելու, կամ դրանց ապահովումը խելամիտ չէ, և, հետևաբար, դրա հետ կապված զգալի ծախսեր չեն արվելու: Այնուամենայնիվ, դատարանը մնում է այն կարծիքին, որ չի հիմնավորվել, որ վերը նշված վարքագծային կանոնադրությունները և կարգապահական կանոնները չեն կարող հավուր պատշաճի լուծել ինչպես հետերոսեքսուալ, այնպես էլ համասեռական կողմնորոշում ունեցող անձանց առաջացրած վարքագծային խնդիրները:

104. Հղում կատարելով ՀՔԳԽ-ի զեկույցի համապատասխան վերլուծությանը, կառավարությունն առարկել է, որ հնարավոր չէ օգտակար դասեր քաղել համասեռական կողմնորոշում ունեցող անձանց կապակցությամբ վերջերս արտասահմանյան զինված ուժերում տեղի ունեցած իրավական փոփոխություններից: Դատարանը սրա հետ համաձայն չէ և նկատում է, որ ազգային դատարաններում ներկայացվել են փաստեր, ըստ որոնց՝ այն եվրոպական երկրները, որոնք բացարձակ իրավական արգելք են կիրառում զինված ուժերում ծառայող համասեռական կողմնորոշում ունեցող անձանց նկատմամբ, այժմ խիստ փոքրաթիվ են: Դատարանը հաստատում է, որ չի կարող անտեսել այդ հարցի հետ կապված համընդհանուր և հետևողականորեն զարգացող տեսակետները (եթե նույնիսկ դրանք համեմատաբար նոր տեսակետներ են), ինչպես նաև փոփոխությունները պայմանավորվող պետությունների ազգային իրավական նորմերում՝ պայմանավորված դրանցով (տե՛ս *Դաջենի (Dudgeon)* վճիռը... էջ 23–4, պարբ. 60):

105. Հետևաբար, դատարանը եզրակացնում է, որ կառավարությունը չի ներկայացրել համոզիչ և ծանրակշիռ հիմքեր, որոնք կարդարացնեին զինված ուժերում համասեռական կողմնորոշում ունեցող անձանց դեմ գործող քաղաքականությունը, հետևաբար նաև՝ այդ ուժերից դիմողների հետագա ազատումը:

106. Թեև դիմողների վարչական կարգով հեռացումները եղել են նրանց համասեռական կողմնորոշման անմիջական հետևանքը, դատարանը կարծում է, որ դիմողների համասեռական կողմնորոշումը պարզելու նպատակով սկսված ծառայողական քննությունների հիմնավորվածության հարցը պետք է քննարկվի առանձին, քանի որ այդ քննությունները շարունակվել են այն բանից հետո, երբ դիմողներն ընդունել են իրենց համասեռական կողմնորոշումը: Միս Սմիթն այդ

փաստն ընդունել է անմիջապես: Պարոն Գրեյդին ընդունել է իր համասեռական կողմնորոշումը 1994 թ. մայիսի 26-ին, երբ սկսվել է նրա հարցաքննությունը:

107. Կառավարությունը պնդել է, որ քննությունը, ներառյալ հարցաքննությունները և խուզարկությունները, անհրաժեշտ են եղել պարզելու համար, որ այդ անձինք վարչական կարգով զինված ուժերից վաղաժամկետ ազատվելու նպատակով կեղծ ցուցմունքներ չեն տվել իրենց համասեռական կողմնորոշման վերաբերյալ: Որպես օրինակ կառավարությունը նշել է հինգ անձի, որոնք համեմատաբար վերջերս տվել են նման ցուցմունքներ՝ նպատակ ունենալով ազատվել ծառայությունից: Այնուամենայնիվ, թեպետ և պրն Գրեյդիի ընտանեկան կյանքը կարող էր կասկածի տեղիք տալ նրա համասեռական կողմնորոշմանը վերաբերող տեղեկությունների իսկության վերաբերյալ, դատարանի կարծիքով, կասկածի տեղիք չի տալիս այն փաստը, որ ինչպես միս Սմիթը, այնպես էլ պրն Գրեյդին ցանկացել են մնալ զինված ուժերում: Հետևաբար, դատարանն այն կարծիքին չէ, որ համասեռական կողմնորոշման մասին կեղծ ցուցմունքներ տալու պատրվակն այս դիմողների դեպքում կարող էր արդարացնել նրանց շարունակվող հարցաքննությունները:

108. Կառավարությունն այնուհետև հայտնել է, որ ՀՔԳԽ-ի կողմից ներկայացված բժշկական, անվտանգության և կարգապահական խնդիրներն արդարացրել են դիմողներին առաջադրված հարցերի որոշակի ուղղվածությունը: Այնուամենայնիվ, դատարանը նկատում է, որ ՀՔԳԽ-ի զեկույցում շոշափված համասեռական կողմնորոշում ունեցող անձանց առնչվող անվտանգության հարցերը, որպես այդ քաղաքականության պահպանման հիմք, չեն դիմացել խոր քննադատությանը: Այդ իսկ պատճառով դատարանի համար համոզիչ չէ, որ շանտաժի ռիսկը, որը եղել է կառավարության կողմից մատնանշված անվտանգության հիմնական փաստարկը, արդարացրել է այս դիմողների հարցաքննությունը շարունակելը: Նմանապես, դատարանը համարում է, որ կլինիկական ռիսկերը (որոնց ՀՔԳԽ-ն քաղաքականության պահպանման առումով այսպես թե այնպես զգալի նշանակություն չի տվել) նույնպես չեն արդարացրել դիմողների հարցաքննությունների խորության աստիճանը: Բացի այդ, դիմողներից ոչ մեկի գործը չի ներառել կարգապահական բնույթի որևէ հարց:

109. Վկայակոչելով հարցաքննությունների սկզբում դիմողներին տրված նախազգուշացումները, կառավարությունն այնուհետև առարկել է, որ դիմողները պարտավոր չեն եղել մասնակցել հարցաքննությանը: Բացի այդ, միս Սմիթը նաև համաձայնություն է տվել, որ իր զուգընկերուհին նույնպես հարցաքննվի, իսկ պրն Գրեյդին համաձայնել է իր բնակարանի խուզարկությանը և էլեկտրոնային օրագրի հանձնմանը: Այնուամենայնիվ, դատարանը կարծում է, որ գործընթացի իրականացման ժամանակ համագործակցելուց բացի, դիմողներն այլ իրական ընտրություն չեն ունեցել: Պարզ է, որ հարցաքննությունները կազմել են «ապացույցների բարձր չափորոշչի» հիման վրա դիմողների սեռական կողմնորոշումը պարզելուն ուղղված քննությունների կարևոր մասը... Դատարանը կարծում է, որ եթե դիմողները չհամագործակցեին հարցաքննության գործընթացի, ներառյալ այդ գործընթացի վերը նշված լրացուցիչ մասերի ժամանակ, ապա, ամենայն հավանականությամբ, իշխանությունները դիմողների համասեռական կողմնորոշումը պարզելու համար կիրառելու էին այլ նվազ բացահայտ միջոցներ: Երկու դիմողներին էլ, իսկ պրն Գրեյդիին՝ նաև անթաքույց, հստակ հայտնվել է, որ չհամագործակցելու դեպքում սա լինելու էր այլընտրանքային տարբերակը:

110. Այս պարագայում դատարանը կարծում է, որ կառավարությունը համոզիչ և ծանրակշիռ պատճառներ չի ներկայացրել, որոնք կարդարացնեին դիմողների սեռական կողմնորոշումը պարզելու ուղղությամբ կատարված քննությունն այն բանից հետո, երբ օդային նավատորմի ղեկավարության առջև նրանք հաստատել են, որ իրենք ունեն համասեռական կողմնորոշում:

111. Այսպիսով՝ դատարանը որոշում է, որ ոչ՛ դիմողների սեռական կողմնորոշումը պարզելու նպատակով քննությունը, ո՛չ էլ պաշտպանության նախարարության քաղաքականության հիման վրա համասեռական կողմնորոշման պատճառով նրանց հեռացումը արդարացված չեն կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում:

112. Հետևաբար, տեղի է ունեցել կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

Հստակ է, որ դատարանը չի ենթադրել, որ զինված ուժերում համասեռական կողմնորոշում ունեցող անձնակազմի նկատմամբ վերաբերմունքն արդարացնելու համար կառավարությունը տրամադրել է արժանահավատ բացատրություններ: Այդ եզրակացությանը հասնելու առումով դատարանի վրա կարող էին նաև ազդել ազգային դատարաններում մի շարք դատավորների հայտարարությունները, այդ թվում նաև արդարադատության լորդեր Սայմոն Բրաունի և Թորփի հայտարարությունները, որոնցով նրանք կասկածի են ենթարկել զինված ուժերում համասեռամոլ անձանց նկատմամբ առկա քաղաքականության նպատակահարմարությունը: Դատարանի վճռի կայացումից մի քանի ժամ անց պաշտպանության քարտուղար լորդ Ռոբերտսոնը հայտարարել է, որ զինված ուժերը սառեցնելու են համասեռամոլ անձնակազմի նկատմամբ ընթացքի մեջ գտնվող գործողությունները: 2000 թ.

հունվարին պաշտպանության նոր քարտուղար Ջեֆրի Հունը խորհրդարանում հայտարարել է, որ Բրիտանիայի զինված ուժերում ծառայող համասեռամոլների նկատմամբ գործող արգելքն այլևս վերացված է: Հրամանատարական կազմի մեջ մտնող սպաներն ունեն իրենց ենթակաների անձնական կյանքը ստուգելու պարտավորություն միայն այն դեպքում, երբ վերջիններիս գործողությունները կամ վարքագիծը «հակառակ ազդեցություն են ունեցել ... ծառայության արդյունավետության կամ օպերատիվ արդյունավետության վրա»: Կանոններն ընդգրկում են սեռական բնույթի գործողությունների բոլոր ձևերը և հստակորեն արգելում, ի թիվս այլոց, «ի ցույց դնել հրապուրվածությունը, որը կարող է վիրավորական լինել մյուսների համար» կամ «սեռական չարաշահման ենթարկել ենթականերին»: Նույն օրը, երբ պաշտպանության նախարարն արել է այս հայտարարությունը, պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավար, գեներալ սըր Չարլզ Գութրին հարցազրույց է տվել «Թայմզ» թերթին՝ հայտնելով իր լիակատար համաձայնությունը այդ նոր քաղաքականությանը: Ըստ նրա՝ վարքագծի նորմերը եղել են «զգայուն և պրագմատիկ»: Նա ընդունել է, որ ռազմական ոստիկանության կողմից ծառայող անձնակազմի սեռական կյանքի քննությունները «չափն անցել են»: 2000 թ. դատարանը միս Սմիթին և պրն Գրեյդիին նշանակել է 19000 ֆունտ ստեռլինգի ոչ նյութական վնասի փոխհատուցում՝ համարելով, որ նրանց նկատմամբ կազմակերպված քննությունների և ծառայությունից հեռացման արդյունքում նրանք ենթարկվել են «բացարձակապես ապակայունացնող իրադարձությունների» ազդեցությանը: Սմիթին նաև նշանակվել է 59000 ֆունտ ստեռլինգի նյութական վնասի փոխհատուցում՝ կորցրած նախկին և հեռանկարային աշխատավարձերի, ծառայողական թոշակի և շահույթի կորստի փոխհատուցման նպատակով, մինչդեռ Գրեյդիին նույն հիմունքներով նշանակվել է 40000 ֆունտ ստեռլինգի նյութական վնասի փոխհատուցում: Զինվորական անձնակազմի նկատմամբ կոնվենցիայի կիրառմանը վերաբերող հաջորդ գործերը ներկայացված են ստորև՝ 744-րդ էջում:

6 Այնուամենայնիվ, դատարանը ոչ պաշտոնական կարծիքում նշել է, որ սեռական վարքագծի ձևերը, որոնք պահպանվում են «անձնական կյանքի» հայեցակարգում, սահմաններ ունեն: *«Լասկին, Ջագգարդը և Բրաունն ընդդեմ ՄԹ-ի» (Laskey, Jaggard and Brown v UK* (1997) 24 EHRR 39, 1997-I 120) գործի դեպքում մի շարք համասեռական կողմնորոշում ունեցող տղամարդիկ դատապարտվել են այն բանի համար, որ 10 տարի շարունակ ավելի քան 40 համասեռամոլ տղամարդկանց հետ «համաձայնեցված» սադոմազոխիստական շփումների ժամանակ կատարել են հարձակումներ, ինչի հետևանքով պատճառել են փաստացի մարմնական վնասվածքներ:

Դատարանը նկատում է՝ պարտադիր չէ, որ փակ դռների հետևում տեղի ունեցող բոլոր սեռական բնույթի գործողությունները համապատասխանեն 8-րդ հոդվածի շրջանակներին: Կասկած չի կարող լինել, որ սեռական կողմնորոշումը և գործունեությունը վերաբերում են անձնական կյանքի ինտիմ կողմին (տե՛ս *«Դաջենն ընդդեմ ՄԹ-ի» (Dudgeon v UK*, A45 (1981)): Այնուամենայնիվ, խնդրո առարկա գործողությունների մեջ ներգրավված են եղել զգալի թվով մարդիկ: Դրանք, ընդսմին, ներառել են նաև նոր «անդամների» հավաքագրում, հատուկ կահավորված «սենյակների» հատկացում և բազմաթիվ տեսաերիզների պատրաստում, որոնք բաժանվել են «անդամների» միջև: Այսպիսով, հարց է առաջանում, թե արդյոք այս գործի առանձնահատուկ հանգամանքներում դիմողների սեռական գործողությունները լիովին մտե՞լ են «անձնական կյանք» հասկացության շրջանակների մեջ (պարբ. 36):

Սակայն, քանի որ ո՛չ Բրիտանիայի կառավարությունը, ո՛չ հանձնաժողովը չեն բարձրացրել այս հարցը, դատարանը ցանկություն չի հայտնել սեփական նախաձեռնությամբ քննության առնել այս կետը: Ընդհակառակը, դատարանը միաձայն որոշել է, որ միջամտությունը դիմողների անձնական կյանքին, որը հանգեցրել է նրանց դատապարտմանը, կարող է արդարացված լինել 8(2) հոդվածի շրջանակներում որպես ժողովրդավարական հասարակությունում առողջության պահպանման համար անհրաժեշտ քայլ (դիմողների վարքը հանգեցրել է արյունահոսությունների և սպիների գոյացման): Դատարանի վճիռն արժանացել է Մորանի քննադատությանը. «Վերջում որոշումը թողնում է այնպիսի տպավորություն, որ առանձնահատուկ բարդության գործերի դեպքում, երբ խոսքը բարոյականության կամ խոցելի անձանց պաշտպանության մասին է, Ստրասբուրգի դատարանը դժկամությամբ է

միջամտում՝ դրանով իսկ զգալիորեն մարդու իրավունքներին առնչվող օրինականության փայլ հաղորդելով պետության նահապետական քաղաքականությանը և որոշումներին» ((1998) 61 MLR 82):

«ADT-ն ընդդեմ ՄԹ-ի» (ADT v UK [2000] 2 FLR 697) ավելի ուշ լսված գործում դատարանի պալատը որոշել է, որ դիմողի տանը հինգ չափահաս տղամարդկանց միջև կամավոր համասեռական գործողությունը անձնական սեռական վարքագծի խնդիր է եղել և 8-րդ հոդվածի պաշտպանության տակ է: Դիմողի տանն օրինական խուզարկություն անցկացնելուց հետո ոստիկանությունը հայնաբերել է տեսաժապավեններ, որոնք ցույց են տվել դիմողներին և չորս այլ տղամարդկանց օրալ սեռական հարաբերությունների և փոխադարձ ձեռնաշարժության (մաստուրբացիայի) վիճակում, որը, սակայն, չի ուղեկցվել միմյանց ֆիզիկական վնասվածքներ հասցնելու գործողություններով: Դիմողն այնուհետև մեղավոր է ճանաչվել 1956 թ. «Սեռական հանցագործությունների մասին» օրենքի 13-րդ բաժնով ծանր բնույթի անառակություն կատարելու համար և դատապարտվել երկու տարվա պայմանական ազատազրկման, որն ուղեկցվել է նյութերի առգրավմամբ և ոչնչացմամբ: 1967 թ. «Սեռական հանցագործությունների մասին» օրենքի 1-ին բաժնի համաձայն, եթե տղամարդկանց միջև իրենց հոժար կամքով տեղի ունեցող սեռական հարաբերություններին ներկա է ավելի քան երկու անձ, ապա համարվում է, որ այդ ակտերը տեղի են ունեցել ոչ մեկուսի պայմաններում և քրեական բնույթի գործողություններ են: Անգլիայի օրենքը չի քրեականացնում մեկուսի պայմաններում տեղի ունեցող միասեռական գործողությունները, եթե տեղի են ունենում չափահաս կանանց փոխհամաձայնության հիման վրա: Եվ ոչ էլ քրեականացնում է չափահասների փոխհամաձայնության վրա հիմնված հետերոսեքսուալ հարաբերությունները: Ի պատասխան դիմողի բողոքների, որ 1956 թ. օրենքի 13-րդ բաժինը՝ 1967 թ. օրենքի 1-ին բաժնի համակցությամբ և իր դատապարտումը հակասել են իր՝ 8-րդ հոդվածում ամրագրված անձնական կյանքի հարգման իրավունքին, կառավարությունը պնդել է, որ *Լասկիի (Laskey)* գործի վճռով առաջնորդվելու դեպքում դիմողի սեռական գործողությունները դուրս են մնում «անձնական կյանքի» շրջանակներից: Դատարանը միաձայն մերժել է կառավարության փաստարկը.

25. Ինչ վերաբերում է կառավարության՝ կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով «անձնական կյանքի» շրջանակների վերաբերյալ մեկնաբանություններին, դատարանը հիշում է, որ միջամտության առումով *«Լասկիի, Ջագգարդի և Բրաունի» (Laskey, Jaggard and Brown)* գործում կողմերի միջև վեճ չի եղել... Այդ դեպքում դատարանի մեկնաբանություններն ավելի հեռու չեն գնացել, քան այն հարցը բարձրացնելը, թե «արդյոք դիմողների սեռական գործողությունները լիովին տեղավորվե՞լ են «անձնական կյանք» հասկացության շրջանակներում»: Սույն գործում միակ տարրը, որ կարող է կասկած առաջացնել այն կապակցությամբ, թե այս գործն ինչ կապ ունի դիմողների անձնական կյանքի հետ, վերաբերում է նրանց հարաբերությունների տեսաձայնագրությանը: Դատարանին չեն ներկայացվել փաստեր, որոնք ցույց կտային, որ ժապավենների բովանդակությունը դիտմամբ կամ անզգուշորեն հրապարակայնացնելու իրական հավանականություն է եղել: Մասնավորապես, դիմողի դատապարտումը վերաբերել է ոչ թե ժապավենների պատրաստմամբ կամ տարածմամբ ուղեկցվող իրավախախտմանը, այլ զուտ նրանց միջև տեղի ունեցող գործողություններին: Դատարանի կարծիքով՝ հատկապես անհավանական է, որ դիմողը, որը որոշակի ջանքեր է գործադրել, որպեսզի չբացահայտի իր սեռական կողմնորոշումը և դատարանի առջև հաստատել է իր ինքնությունը չբացահայտելու ցանկությունը, կարող էր գիտակցաբար մասնակցել այդպիսի հրապարակայնացմանը:

26. Այսպիսով, դատարանը եզրակացնում է, որ երկուսից ավելի տղամարդկանց միջև մեկուսի պայմաններում փոխհամաձայնեցված սեռական հարաբերություններն արգելող օրենսդրության գոյության և դիմողին ծանր անառակության կատարման մեղադրանքների արդյունքում դիմողը դարձել է անձնական կյանքի հարգման իրավունքի խախտման զոհ:

Շարունակելով դատարանը եզրակացրել է, որ ո՛չ օրենսդրությունը, ո՛չ դիմողի դատապարտումը «անհրաժեշտ չեն եղել ժողովրդավարական հասարակությունում»:

37. Դատարանը կարող է համաձայնել կառավարության հետ, որ որոշ դեպքերում սեռական հարաբերությունները կարող են այնպիսի բնույթ ունենալ, որ պետության միջամտությունը արդարացված լինի՝ չվերածվելով միջամտության անձնական կյանքի հարգման իրավունքին կամ արդարացված լինելով, օրինակ, առողջության և բարոյականության պաշտպանության հիմքերով: Սույն գործի փաստերը, սակայն, երևան չեն հանում նման հանգամանքներ: Դիմողը զբաղվել է սեռական բնույթի գործողություններով սահմանափակ թվով ընկերների հետ և այնպիսի պայմաններում, որոնց դեպքում չափազանց անհավանական է, որ կողմնակի անձինք իմանային, թե ինչ է տեղի ունենում: Ճիշտ է, որ այդ գործողությունները տեսագրվել են, սակայն դատարանը նկատում է, որ դիմողը հետապնդվել է գործողությունների, ոչ թե

տեսաձայնագրության համար կամ տեսաձայնագրության հրապարակային դառնալու վտանգի համար: Գործողությունները, հետևաբար, ունեցել են իսկևիսկ «անձնական» բնույթ: Հետևաբար, դատարանը պետք է որդեգրի նույնպիսի նեղ հայեցողական սահմաններ, որոնք կիրառելի է համարել անձնական կյանքի ինտիմ կողմերին վերաբերող այլ գործերում (ինչպես, օրինակ՝ *Դաջենի (Dudgeon)* վճռում, էջ 21, պարբ. 52):

38. Հաշվի առնելով այս գործի առումով ազգային մարմիններին թողնված հայեցողության նեղ սահմանները, ինչպես նաև ներկա գործում հանրային առողջությանը վերաբերող նկատառումների բացակայությունը և դրսևորված վարքագծի զուտ անձնական բնույթը, դատարանը եզրակացնում է, որ այն պատճառները, որոնք ներկայացվել են ի պաշտպանություն մեկուսի պայմաններում տղամարդկանց միջև տեղի ունեցող համասեռական գործողությունների քրեականացման և առավել ևս սույն գործով քրեական հետապնդման և դատապարտման, բավարար չեն օրենսդրությունը և հետապնդումն արդարացնելու համար:

39. Հետևաբար, տեղի է ունեցել կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

Ուշագրավ է այն, որ կառավարությունը չի վիճարկել դիմողի 20000 ֆունտ ստեռլինգի արդար փոխհատուցման պահանջը, որից 10000 ֆունտ ստեռլինգը պահանջվել է կրած ոչ նյութական վնասի փոխհատուցման համար: Դատարանը որոշել է, որ նրա պահանջը ողջամիտ է, և բավարարել է այն լրիվ գումարի չափով: Մի քանի առումներով, ինչպես, օրինակ՝ սեռական հարաբերությունների բնույթով և ներգրավված անձանց թվով, այս գործը կարող է տարբերվել *Լասկիի (Laskey)* գործից: ADT-ի վերաբերյալ դատարանի վճռի հրապարակումից մի քանի օր առաջ կառավարությունը հրապարակել է «Հաստատելով սահմանները» զեկույցը, որը պատրաստել է սեռական հանցագործությունների մասին օրենքի վերանայման համար նշանակված մասնագետների խումբը: Զեկույցում ներկայացվել է փոփոխությունների վաթսուներկու առաջարկություն, ներառյալ կոպիտ անպարկեշտության իրավախախտման վերացումը: 2003 թ. «Սեռական հարաբերությունների մասին» օրենքի միջոցով այս առաջարկությունների մեծ մասը, ներառյալ կոպիտ անպարկեշտության իրավախախտման վերացումը, կյանքի են կոչվել:

«Կ.Ա.-ն և Ա.Դ.-ն ընդդեմ Բելգիայի» (K.A. and A.D. v Belgium) գործի վերաբերյալ 2005 թ. փետրվարի 17-ի վճռով պալատը միաձայն որոշել է, որ եղել են «հատկապես լուրջ պատճառներ», որոնք արդարացրել են պետության միջամտությունը սեռական հարաբերությանն առնչվող հարցերում: Առաջին դիմողը, որ դատավոր է եղել, միջնորդել է, որ իր կինը սադոմազոխիստական ակումբում բռնի և խիստ դաժան սադոմազոխիստական գործողությունների կատարման համար օգտագործվի որպես «ստրուկ», և դատապարտվել է մարմնական վնասվածք հասցնելու, ֆիզիկական բռնություն գործադրելու և պոռնկություն/անբարոյականություն հրահրելու համար: Երկրորդ դիմողը եղել է բժիշկ, որը դատապարտվել է այդ ակումբում առաջին դիմողի կնոջ հետ սադոմազոխիստական հարաբերությունների ընթացքում վերջինիս նկատմամբ մարմնական վնասվածք առաջացնող ֆիզիկական բռնություն գործադրելու համար: Ազգային դատարանը նկատել է, որ տեսաժապավենային փաստերը բացահայտել են, որ դիմողներն անտեսել են կնոջ՝ բռնի վերաբերմունքին վերջ տալու աղերսները: Պալատը վճռել է, որ դիմողների սեռական ազատությունը և վարքը պետք է հիմնված լինեին գործողությունների «զոհերի» ցանկությունների նկատմամբ հարգանքի վրա, ինչը տեղի չի ունեցել առաջին դիմողի կնոջ նկատմամբ դրսևորված բռնի վերաբերմունքի դեպքում: Հետևաբար, դիմողների դատապարտումներն անհամաչափ միջամտություններ չեն նրանց անձնական կյանքի հարգման իրավունքին:

7 Հանձնաժողովը ձեռնպահ է մնացել հստակ ցուցումներ տալուց, թե որքանով է կանանց արհեստական վիժում անելու իրավունքը ներառվում կոնվենցիայով նախատեսված «անձնական կյանքի» հարգման իրավունքի շրջանակներում: *«Բրյուգեմանը և Շոյթենն ընդդեմ Գերմանիայի» (Bruggemann and Scheuten v Germany* (1977) 10 DR 100) գործում երկու կին պնդել են, որ Գերմանիայի՝ հղիության ընդհատումը կարգավորող օրենքն առաջացրել է 8-րդ հոդվածով երաշխավորված իրենց իրավունքների խախտում: 1974 թ. օրենքի համաձայն՝ առանց որևէ լուրջ պատճառի հղիությունը կարող էր ընդհատվել հղիության առաջին տասներկու շաբաթների ընթացքում: Սակայն 1975 թ. դաշնային սահմանադրական դատարանն ուժը կորցրած է ճանաչել օրենքի այս

մասը՝ համարելով, որ այն չի համապատասխանում չծնված երեխայի պաշտպանության սահմանադրական իրավունքին: Դրանից հետո՝ 1976 թ., ընդունվել է նոր օրենք, որը թույլատրում է կնոջն ընդհատել իր հղիությունը նաև այն դեպքում, երբ « ... հղիության ընդհատումը խորհուրդ է տրվում բժշկական գիտելիքի հիման վրա, նրա կյանքին կամ ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը սպառնացող լուրջ վտանգը կանխելու համար, պայմանով, որ այդ վտանգը չի կարող կանխվել որևէ այլ ձևով, որին նա ողջամտորեն կարող է դիմանալ»: Դիմողները բողոքել են, որ սահմանադրական դատարանի վճիռը և 1976 թ. օրենքը զրկել են իրենց անձնական ինքնորոշման ազատությունից, ինչը երաշխավորված է եղել 1974 թ. օրենքով, և դրանով իսկ առաջացրել են միջամտություն 8(1) հոդվածով երաշխավորված իրենց իրավունքին: Հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ.

... չի կարելի ասել, որ հղիությունը զուտ անձնական կյանքի ոլորտ է: Կնոջ հղիության ժամանակ նրա կյանքը սերտորեն կապված է զարգացող պտղի հետ:

Այս համատեքստում հանձնաժողովը հարկ չի համարում որոշել, թե արդյոք կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով չծնված երեխան պե՞տք է համարվի «կյանք», կամ կարո՞ղ է համարվել այնպիսի օբյեկտ, որը 8(2) հոդվածով կարող է արդարացնել «մյուսներին պաշտպանելու նպատակով» կատարվող միջամտությունը: Որևէ կասկած չի կարող լինել առ այն, որ հղիությանն առնչվող որոշ շահեր պաշտպանվում են օրենքով, ինչը պարզ է դարձել 13 բարձր պայմանավորվող պետություններում կատարված հետազոտությունների արդյունքներից: Ըստ այդմ, որոշ իրավունքներ, մասնավորապես ժառանգելու իրավունքը, առանց բացառության, վերագրվում են բեղմնավորված, սակայն դեռևս չծնված երեխային: Հանձնաժողովը նաև նկատում է, որ Միավորված ազգերի կազմակերպության Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6(5) հոդվածն արգելում է հղի կանանց նկատմամբ ի կատար ածել մահապատժի վճիռը:

Ուստի հանձնաժողովը կարծում է, որ անցանկալի հղիությունների դադարեցմանը վերաբերող ոչ բոլոր կանոնները են միջամտություն մոր անձնական կյանքի հարգման իրավունքին: 8(1) հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես մի դրույթ, որը հղիությունը և դրա դադարեցումը սկզբունքորեն դիտում է որպես զուտ մոր անձնական կյանքի իրավունքի խնդիր: Այս առումով հանձնաժողովը նկատում է, որ չկա կոնվենցիային անդամակցած որևէ անդամ պետություն, որն այս կամ այն կերպ չի սահմանում այս խնդրին վերաբերող իրավական կանոնները (պարբ. 59-61):

Հաշվի առնելով այն հանգամանքները, որոնց դեպքում 1976 թ. օրենքով հղիության ընդհատումները թույլատրելի են եղել, հանձնաժողովը եզրակացրել է, որ 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել: Պարոն Ձես Ֆոսեթը գրել է առանձին կարծիք, որում նա արտահայտել է հետևյալ տեսակետը.

8(1) հոդվածի «անձնական կյանքի» մեջ, իմ կարծիքով, պետք է մտնի նաև հղիությունը, դրա սկիզբը և ավարտը: Իրոք, դժվար է նախատեսել կյանքում սկզբունքորեն ավելի անձնական բնույթի իրադարձություն: Սակայն հղիությունը նաև մոր պատասխանատվությունն է չծնված երեխայի (առնվազն, երբ այդ երեխան ունի անկախ կյանքի կարողություն) և այդ երեխայի հոր նկատմամբ, ինչպես նաև հոր պատասխանատվությունը այս երկուսի նկատմամբ: Սակայն հղիությունը, դրա սկիզբը և ավարտը, ինչպես և դրանք համարվում են, դեռևս կազմում են 8(1) հոդվածով նախատեսված հարգանքը պահանջող անձնական և ընտանեկան կյանքի մասը: Հետևաբար, ես չեմ կարող հետևել հանձնաժողովին, որը, եթե ես ճիշտ եմ հասկանում նրա հիմնավորումը, վճռել է, որ հղիությունը և դրա ավարտը որպես անձնական կյանքի մաս դիտարկելու առումով անխզելի սահմանափակումներ ունեն: Բացի արդեն նշվածներից, այդպիսի սահմանափակումները, որոնք կրում են առնվազն օրենսդրական միջամտության բնույթ, պետք է առկա լինեն և արդարացվեն 8(2) հոդվածով: Այդպիսի սահմանափակումների բացակայության դեպքում հղիությունն ընդհատելու որոշումը մնում է որպես անձնական կյանքի ազատ մաս (1-ին կետ):

Այս գործը չի ուղարկվել դատարան, և Նախարարների կոմիտեն համաձայնել է հանձնաժողովի կարծիքին, ըստ որի՝ կոնվենցիայի խախտում տեղի չի ունեցել (բանաձև DH (78)1): Մենք պետք է նաև նկատենք, որ այս հարցի կապակցությամբ դատարանը կարծիք չի հայտնել նաև *«Բաց դուռը» և «Դուբլինի տատմերն» ընդդեմ Իռլանդիայի» (Open Door and Dublin Well Woman v Ireland)* (1992) A.246) գործում, որը քննարկված է ստորև՝ 749-րդ էջում: Մշտական գործող դատարանը կիրառել է *Բրյուգեմանը և Շոյթենը (Bruggemann and Scheuten)* նախադեպը, երբ անընդունելի է հայտարարել ամուսնու բողոքն առ այն, որ Իտալիայի օրենքի շրջանակներում նա անկարող է եղել վիճարկել իր կնոջ հղիությունն ընդհատելու որոշումը (*«Բոզո ընդդեմ Իտալիայի» (Boso v Italy)*, 2002 թ. սեպտեմբերի 5-ի որոշում): Դատարանը որոշել է.

... որ երբ մայրը մտադիր է ընդհատել հղիությունը, կոնվենցիայի 8-րդ հոդվածի ներքո պոտենցիալ հոր իրավունքների մեկնաբանությունն առաջին հերթին պետք է հաշվի առնի մոր իրավունքները, քանի որ մայրն է այն անձնավորությունը, որին մտահոգում են հղիությունը, դրա շարունակությունը կամ դադարեցումը:

Ինչպես դատարանը նշել է վերը, այս դեպքում հղիության ընդհատումը կատարվել է Իտալիայի օրենսդրության համաձայն և այդպիսով հետապնդել մոր առողջությունը պահպանելու նպատակ:

Հետևաբար, սույն գործի հանգամանքներում կարելի է ենթադրել, որ միջամտությունը 8-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքին արդարացված է եղել այլ անձի իրավունքները պաշտպանելու անհրաժեշտությամբ...

Պտղի/չծնված երեխայի նկատմամբ մշտական գործող դատարանի զգուշավոր մոտեցմանը ծանոթանալու համար տե՛ս *«Վոն ընդդեմ Ֆրանսիայի» (Vo v France)* գործը (վերը՝ էջ 106):

8 Դատարանը որոշել է, որ անձնական կյանքի «ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիության» հեռանկարը նաև վերաբերում է ազատության կորստին: *«Ռանինենն ընդդեմ Ֆինլանդիայի» (Raninen v Finland* (1997) 26 EHRR 563, 1997-VIII 2804) գործում այն հայտարարել է, որ.

Դատարանն այնուհետև ընդունում է, որ հայեցակարգի այս կողմերը տարածվում են ազատազրկման իրավիճակների վրա: Բացի այդ, չի բացառում, որ հնարավոր է, որ լինեն այնպիսի հանգամանքներ, երբ 8-րդ հոդվածի պաշտպանությունը տարածվի կալանքի պայմանների վրա այն ժամանակ, երբ այդ պայմանները չեն հասնում 3-րդ հոդվածով պահանջվող խստության մակարդակին (պարբ. 63):

Դիմողը եղել է երիտասարդ անձնավորություն, հրաժարվել է զինվորական կամ քաղաքացիական ծառայությունից և մի քանի անգամ դատապարտվել զինվորական ծառայությունից հրաժարվելու համար: Մի անգամ դատական նիստի ավարտից հետո նա տեղափոխվել է բանտ, որպեսզի ազատ արձակվի: Բանտում նրան սպասելիս է եղել զինվորական ոստիկանության ջոկատը: Բանտի բակում, որը գտնվել է դիմողին սատարող անձանց տեսադաշտում, նրան ձեռնաշղթաներ են հագցրել: Դիմողն այնուհետև տեղափոխվել է զինվորական հոսպիտալ և ազատվել իր ձեռնաշղթաներից: Բժշկական զննության նա չի ենթարկվել: Հաջորդ առավոտյան նրան հարցաքննել է զինվորական անձնակազմը: Դիմողը կրկին հրաժարվել է զինվորական ծառայությունից, որից հետո ձերբակալվել է: Դատարանը միաձայն որոշել է, որ դիմողին բանտից զինվորական հոսպիտալ տեղափոխելն առաջացրել է 5(1) հոդվածի խախտում, քանի որ նրա ձերբակալությունը և կալանքն այդ ժամանակ հակասել են ազգային օրենքին և այդ հոդվածի շրջանակներում չեն եղել «օրինական»: Դատարանի մեծամասնությունը, յոթ կողմ և երկու դեմ ձայներով, որոշել է, որ դիմողին ձեռնաշղթա հագցնելը, ըստ 8(1) հոդվածի, չի առաջացրել նրա անձնական կյանքի հարգման իրավունքի խախտում, քանի որ ցույց չի տրվել, որ այդ գործողությունը ֆիզիկապես կամ հոգեպես ազդել է նրա վրա: Հետևաբար, որպեսզի բավարարեն դատարանին, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում, դիմողները պետք է ցույց տան, որ իրենց կալանքի պայմանների հետևանքով իրենք շոշափելի ֆիզիկական կամ հոգեբանական վնաս են կրել:

9 Անձնական կյանքի մեկ այլ կողմն անձի անունն է: *«Բուրգարցն ընդդեմ Շվեյցարիայի» (Burghartz v Switzerland,* A.280B (1994)18 EHRR 101) գործում դիմողը բողոքել է, որ 8-րդ և 14-րդ հոդվածներով նախատեսված իր իրավունքները խախտվել են Շվեյցարիայի իշխանությունների կողմից, որոնք մերժել են գրանցել իրեն Շնայդեր-Բուրգարց ազգանունով, երբ արդեն գրանցված է եղել Բուրգարց ազգանունով, որը եղել է իր կնոջ ազգանունը: Դատարանի մեծամասնությունը (6–3) վճռել է, որ.

Ի տարբերություն մի շարք այլ միջազգային փաստաթղթերի, այդ թվում նաև՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (հոդված 24(2)), 1989 թ. նոյեմբերի 20-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (7-րդ և 8-րդ հոդվածներ) կամ Մարդու իրավունքների մասին ամերիկյան կոնվենցիայի (18-րդ հոդված)՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը ուղղակիորեն անուններին վերաբերող դրույթներ չի պարունակում: Սակայն անձի անունը վերաբերում է նրա անձնական և ընտանեկան կյանքին՝ լինելով անձի ինքնության հաստատման և նրան իր ընտանիքին կապող միջոցը: Այն փաստը, որ հասարակությունը և պետությունն ունեն անունների կիրառությունը կարգավորելու շահ, չի բացառում սա, քանի որ հանրային իրավունքի այս կողմերը համատեղելի են անձնական կյանքի այն պատկերացումների հետ, որ այն որոշ աստիճանով ներառում է մասնա-

գիտական կամ առևտրային կամ այլ ասպարեզներում մարդկանց միջև հարաբերություններ հաստատելու և զարգացնելու իրավունք (տե՛ս *«Նյեմեցն ընդդեմ Գերմանիայի» (Niemietz v Germany)* A.251B (1992)): Վարույթում գտնվող գործի դեպքում դիմողի ազգանվան պահպանումը, որի միջոցով, ըստ նրա, նա հայտնի է դարձել ակադեմիական շրջանակներում, զգալիորեն կարող էր անդրադառնալ նրա կարիերայի վրա: Հետևաբար, 8-րդ հոդվածը կիրառելի է (պարբ. 24):

Չայների չնչին տարբերությամբ (հինգը չորսի) դատարանը որոշել է, որ Շվեյցարիան խախտել է դիմողի՝ 14-րդ հոդվածում ամրագրված իրավունքները՝ 8-րդ հոդվածի համակցությամբ, քանի որ գոյություն չի ունեցել օբյեկտիվ և ողջամիտ բացատրություն, թե ինչու տղամարդիկ չեն կարող միավորել իրենց ազգանուններն իրենց կանանց ազգանունների հետ, երբ Շվեյցարիայի օրենքը թույլ էր տալիս, որ ամուսնացած կանայք իրենց ազգանուններին միացնեն ամուսնու ազգանունը: Ավելի ուշ լսված գործում դատարանը չի եզրակացրել, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում, երբ տղամարդ անձնավորությանը թույլ չեն տվել փոխել իր ազգանունը, չնայած այլ անձինք հաճախ սխալ են տառադարձել նրա ազգանունը: Դատարանը միաձայն հանգել է այն կարծիքին, որ անունների փոփոխությունը կարգավորելու առումով պետություններն օժտված են հայեցողության լայն շրջանակով, քանի որ անդամ պետությունների գործելակերպում կան փոքրաթիվ ընդհանրություններ (տե՛ս *«Ստյերնան ընդդեմ Ֆինլանդիայի» (Stjerna v Finland*, A.299B (1994) 24 EHRR 195)): *«Գիյոն ընդդեմ Ֆրանսիայի» (Guillot v France,* 1996-V 1593) գործում դատարանը վճռել է, որ անունները տեղավորվում են «անձնական կյանքի» շրջանակներում: Այնուամենայնիվ, դատարանի մեծամասնությունը (յոթ կողմ, երկու դեմ) որոշել է, որ ծնողական իրավունքների մասով Ֆրանսիան չի խախտել 8-րդ հոդվածի կանոնները, երբ մերժել է, որ աղջկա անունը գրանցվի որպես Ֆլոր դը Մարի (Fleur de Marie), որը սուրբ օրերի ոչ մի օրացույցում նշված չի եղել: Դրա փոխարեն՝ իշխանությունները երեխային գրանցել են Ֆլոր-Մարի (Fleur-Marie) անվամբ, և մեծամասնությունը համարել է, որ սա բավարար անհարմարություն չի պատճառել դիմողներին, որպեսզի հավասար լինի կոնվենցիայի իրավունքների խախտման: *«Ունալ Թեքելին ընդդեմ Թուրքիայի» (Unal Tekeli v Turkey)* գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2004 թ. նոյեմբերի 16-ին, մշտական գործող դատարանի պալատը միաձայն որոշել է, որ ամուսնացած կանանց կողմից ընտանեկան միությունը ցույց տալու համար իրենց ամուսինների ազգանունն ընդունելու ավանդույթն այլևս համատեղելի չէ կոնվենցիայի հետ: Դիմողն ամուսնացել է 1990 թ. և վերցրել իր ամուսնու ազգանունը՝ համաձայն Թուրքիայում գործող օրենքի: 1995 թ. նա դիմել է ազգային դատարաններ, որպեսզի իր օրիորդական Ունալ ազգանունն օգտագործելու թույլտվություն ստանա: Նրա դիմումը մերժվել է: 1997 թ. Թուրքիայի քաղաքացիական օրենսգիրքը փոփոխվել է՝ հնարավորություն տալով ամուսնացած կանանց իրենց ցանկությամբ օրիորդական ազգանունները դնել ամուսնու ազգանունից առաջ (այս դրույթը կրկին ուժի մեջ է մտել 2001 թ.): Այդ բարեփոխումը չի բավարարել դիմողին, որ ցանկացել է օգտագործել միայն իր օրիորդական ազգանունը: Նա բողոքել է դատարանին՝ պնդելով, որ տեղի է ունեցել 8-րդ և 14-րդ հոդվածների խախտում: Պալատը վճռել է, որ.

61. Բացի այդ, դատարանը նկատում է, որ Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում ձևավորվել է համաձայնություն առ այն, որ ամուսինները հավասարապես կարող են ընտրել մեկը մյուսի ազգանունը:

Եվրոպայի խորհրդի անդամ պետություններից Թուրքիան միակ երկիրն է, որն օրենքով պարտադրում է (նույնիսկ այն դեպքում, երբ զույգը նախընտրում է այլընտրանքային տարբերակ), որ ամուսնու ազգանունը լինի զույգի ազգանունը, և, հետևաբար, ամուսնանալուց հետո տեղի ունենա կնոջ ազգանվան ինքնաբերական կորուստ: Թուրքիայում ամուսնացած կանայք չեն կարող օգտագործել միայն իրենց օրիորդական ազգանունը, եթե նույնիսկ ամուսինները երկուսն էլ համաձայն են: Թեպետ 2001 թ. նոյեմբերի 22-ին Թուրքիայի օրենսդիր մարմինը հնարավորություն է տվել օրիորդական ազգանունը գրել ամուսնու ազգանունից առաջ, սա իրականում փոփոխություն չի առաջացրել: Ամուսնացած կանանց շահերը, որոնք չեն ցանկանում, որ իրենց ամուսնությունն ազդեցություն ունենա իրենց անվան վրա, մնացել են անտեսված:

62. Բացի այդ, դատարանը նկատում է, որ Թուրքիան իրեն չի դասում ընդհանուր միտումից դուրս, համաձայն որի՝ տղամարդիկ և կանայք հավասար տեղ են զբաղեցնում ընտանիքում: Նախքան համապատասխան օրենսդրական փոփոխությունները և մասնավորապես 2001 թ. նոյեմբերի 22-ի փոփոխությունները, համաձայն Թուրքայի օրենսդրության, ընտանիքում գերիշխող դերը վերապահվել է տղամարդուն: Ընտանեկան միության պահպանումը

ամուսնու ազգանվան միջոցով համապատասխանել է Թուրքիայի օրենսդիր մարմնի՝ ընտանիքի ավանդական ընկալմանը: 2001 թ. նոյեմբերի բարեփոխումների նպատակը եղել է ամուսնացած կանանց վերապահել իրենց ամուսիններին հավասար դեր՝ զույգին ներկայացնելու, տնտեսական գործունեության և ընտանիքի ու երեխաների վրա ազդող որոշումների ընդունման առումով: Ի թիվս այլոց, տղամարդու՝ որպես ընտանիքի գլխավորի դերը վերացվել է: Երկու ամուսնացած զուգընկերներն էլ օժտվել են ընտանիքը ներկայացնելու լիազորությամբ: Հակառակ 2001 թ. քաղաքացիական օրենսգրքի կիրառման, այնուամենայնիվ, ամուսնությունից հետո ընտանիքի անվանը վերաբերող դրույթները, ներառյալ նրանք, որոնք պարտավորեցնում են ամուսնացած կանանց վերցնել իրենց ամուսնու ազգանունը, մնացել են անփոփոխ:

63. Դատարանի համար առաջին հարցն այն է, թե տվյալ գործում ընտանեկան միությունը ամուսնու ազգանվան միջոցով ներկայացնելու ավանդույթը կարո՞ղ է համարվել որոշիչ գործոն: Պարզ է, որ ավանդույթը բխում է ընտանիքում տղամարդու առաջնային և կնոջ երկրորդային դերից: Ներկայումս Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում, ներառյալ Թուրքիայում սեռերի իրավահավասարության մոտեցման տարածումը և, մասնավորապես, այն կարևորությունը, որ տրվում է խտրականություն չդրսևորելու սկզբունքին, թույլ չեն տալիս, որ պետություններն այդ ավանդույթը հարկադրեն ամուսնացած կանանց:

64. Այս համատեքստում պետք է հիշել, որ թեև ընտանեկան միությունը կարող է արտահայտվել ամուսնու անունն ընտրելու միջոցով՝ որպես ընտանիքի անուն, այն կարող է նմանապես արտահայտվել կնոջ ազգանվան կամ ընտանիքի կողմից միացյալ անվան ընտրության միջոցով (տե՛ս *Բուրգարցի (Burghartz)* գործը, մեջբերված է վերը, պարբ. 28):

65. Երկրորդ հարցը, որին դատարանը պետք է պատասխանի, այն է, թե ընտանեկան միությունը պե՞տք է արտացոլվի ընդհանուր ընտանեկան անվան միջոցով, և արդյոք ամուսնական զույգի միջև տարաձայնության առկայության դեպքում նրանցից մեկի ազգանունը կարո՞ղ է պարտադրվել մյուսին:

66. Այս կապակցությամբ դատարանը նկատում է, որ պայմանավորվող պետությունների գործելակերպից շատ պարզորոշ ընկալվում է, որ ընտանեկան միությունը կարող է պահպանվել և ամրապնդվել, երբ ամուսնացած զույգը նախընտրում է չկրել ընդհանուր ընտանեկան ազգանուն: Եվրոպայում կիրառվող համակարգերի ուսումնասիրությունը հաստատում է այս եզրակացությունը: Սույն գործի դեպքում կառավարությունը ցույց չի տվել, որ ընտանեկան միությունն ընդհանուր ընտանեկան անվան միջոցով ի ցույց չդնելու պատճառով կոնկրետ կամ զգալի դժվարություններ են հասցվում ամուսիններին և/կամ երրորդ անձանց կամ հանրային շահին: Այս հանգամանքներում դատարանը կարծում է, որ ամուսնացած կանանց վրա դրված պարտավորությունը, համաձայն որի՝ ի շահ ընտանեկան միության նրանք պետք է կրեն իրենց ամուսինների ազգանունը, նույնիսկ պայմանով, որ նրանք իրենց օրիորդական ազգանունը կարող են դնել դրանից առաջ, որևէ օբյեկտիվ և ողջամիտ արդարացում չունի:

67. Դատարանը չի թերագնահատում ամուսնու անվան վրա հիմնված ընտանեկան անվան ավանդական համակարգից ամուսինների ազգանունները պահպանելու կամ ազատորեն ընդհանուր ազգանուն ընտրելու համակարգերի անցման շոշափելի և անխուսափելի ազդեցությունները ծնունդների, ամուսնությունների և մահերի գրանցումների վրա: Այնուամենայնիվ, դատարանը համարում է, որ անձանց իրենց անվանը ներդաշնակ արժանապատվորեն ապրելու հնարավորություն տալու առումով կարելի է ողջամտորեն ակնկալել, որ հասարակությունը հանդուրժելու է առաջացած որոշակի անհարմարությունները (տե՛ս *mutatis mutandis «Քրիսթին Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Christine Goodwin v the United Kingdom* [GC], թիվ 28957/95, պարբ. 91, ECHR 2002-VI)):

68. Հետևաբար, ընդհանուր ընտանեկան անվան միջոցով ընտանեկան միության արտահայտման նպատակը չի կարող արդարացնել սեռային պատկանելության վրա հիմնված տարբերակված մոտեցումը, ինչի մասին խոսվում է այս գանգատում:

Հետևաբար, խնդրո առարկա վերաբերմունքների տարբերությունը հակասում է 14-րդ հոդվածին՝ 8-րդ հոդվածի համակցությամբ:

69. Հաշվի առնելով այս եզրակացությունը՝ դատարանը հարկ չի համարում որոշել՝ նաև 8-րդ հոդվածի առանձին խախտում տեղի՞ է ունեցել, թե՞ ոչ:

Այս վճիռը ցույց է տալիս, որ ընտանեկան անունների ընտրությունը կարգավորելու առումով անդամ պետություններին վերապահված հայեցողության սահմաններն այլևս չեն գործում այն դեպքում, երբ ազգային կարգավորումները հիմնված են սեռական խտրականության վրա:

10 Պետական մարմինների կողմից անձանց վերաբերյալ գաղտնի գործերի պահպանումը և օգտագործումը համարվում են միջամտություն այդ անձանց անձնական կյանքին: *«Լինդերն ընդդեմ*

Շվեդիայի» (Leander v Sweden, A.116 (1987) 9 EHRR 433) գործի դեպքում դիմողին արգելվել է շարունակել աշխատել ծովային նավատորմի թանգարանում: Երբ ազգային ոստիկանական վարչությունում նրա վերաբերյալ գոյություն ունեցող գաղտնի գործի բովանդակությանը ծանոթանալուց հետո զինվորական իշխանությունները թույլ չեն տվել նրան իրականացնել անձնակազմի վերահսկողությունը, այդ աշխատանքի բերումով նա կապի մեջ է եղել հարևան նավատորմային բազայի հետ: Հակառակ իշխանություններին ուղղված Լինդերի բողոքների՝ նրան թույլ չի տրվել տեսնել կամ մեկնաբանել իրեն վերաբերող գործը: Հանձնաժողովում ընթացող վարույթի ժամանակ Լինդերը բացատրել է, որ մի քանի տարի առաջ եղել է Շվեդիայի կոմունիստական կուսակցության անդամ: Նա նաև ակտիվ մասնակցություն է ունեցել զինվորների արհմիությունում և համեմատաբար վերջերս դարձել է նաև Շվեդիայի շինարարների ընկերակցության անդամ: Նրա միակ քրեական դատապարտումը կապված է եղել ռազմական շքերթից ուշանալու հետ: Դատարանը վճռել է, որ.

Անվիճելի է, որ ոստիկանության գաղտնի գրանցամատյանում ամփոփված են եղել պրն Լինդերի անձնական կյանքին վերաբերող տեղեկություններ: Այդ տեղեկությունների պահպանությունը և տրամադրումը, ներառյալ պրն Լինդերին հերքման հնարավորություն տալու մերժումը, հավասար են եղել միջամտության 8(1) հոդվածով երաշխավորված անձնական կյանքի հարգման իրավունքին (պարբ. 48):

Այնուամենայնիվ, դատարանը միաձայն որոշել է, որ Շվեդիայի գաղտնի ոստիկանական գրանցամատյանն անհրաժեշտ է եղել ազգային անվտանգության պաշտպանության նպատակով և բավարար ընթացակարգային երաշխիքներ է ունեցել (ներառյալ խորհրդարանի անդամների ներգրավումը), որպեսզի բավարարի 8(2) հոդվածի պահանջները:

Հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ.

... գաղտնի վերահսկման գործունեությունը, որն ուղղված է անձի անձնական կյանքի մասին տեղեկություններ հավաքելուն և առանձին գործում պահելուն, նույնպես միջամտություն է այդ իրավունքին» (*«Հյուիթը և Հարմանն ընդդեմ ՄԹ-ի» (Hewitt and Harman v UK* 14 EHRR 657) 663-րդ էջ):

Դիմողները, որոնք ավագ պաշտոններ են զբաղեցրել Քաղաքացիական ազատությունների ազգային խորհրդում, բողոքել են, որ Բրիտանիայի անվտանգության ծառայությունն իրենց նկատմամբ գաղտնի վերահսկողություն է սահմանել և իրենց վերաբերյալ գործեր պահել՝ որպես «կոմունիստների համակիրների» և «ընդհատակյա գործիչների»: Հանձնաժողովի մեծամասնությունը (տասներեք կողմ և երկու դեմ) եզրակացրել է, որ անվտանգության ծառայության ենթադրվող գործողությունները խախտել են դիմողների իրավունքները՝ նախատեսված 8(1) հոդվածով, և չեն կարող դասվել 8(2) հոդվածի բացառությունների շարքը, քանի որ անվտանգության ծառայությունը չի գործել «օրենքին համապատասխան» իրավական դաշտում: Նախարարների կոմիտեն համաձայնել է հանձնաժողովի կարծիքին: Այնուամենայնիվ, նկատել է, որ Բրիտանիայի խորհրդարանն այնուհետև ընդունել է «Անվտանգության ծառայության մասին» 1989 թ. օրենքը, որը ծառայությունը դրել է օրենսդրական հիմքերի վրա՝ ծառայության դեմ բերված բողոքների վերաբերյալ որոշում կայացնելու համար ստեղծելով անկախ հանձնակատարի պաշտոն և տրիբունալ: Ուստի հանձնաժողովի կողմից հետագա գործողություններ չեն պահանջվել: *«Քրիսթին ընդդեմ ՄԹ-ի» (Christie v UK* 78A DR E Com HR 119 (1994)) գործի դեպքում հանձնաժողովն անընդունելի է համարել Արևելյան Եվրոպայի նախկին կոմունիստական կառավարությունների հետ կապեր ունեցած արհմիության անդամի ներկայացրած գանգատը, որում նա հայտնել էր, որ Բրիտանիայի անվտանգության ծառայությունն իր նկատմամբ հսկողություն է սահմանել: Հանձնաժողովը որոշել է, որ նրա դեպքում 1989 թ. օրենքի դրույթները բավարարել են 8(2) հոդվածի պահանջները: 1998 թ. հուլիսին Բրիտանիայի կառավարությունն առաջին անգամ հրապարակել է Բրիտանիայի անվտանգության ծառայության կողմից պահվող գործերի քանակը: Ներքին գործերի քարտուղարը հայտարարել է, որ ծառայությունը պահել է ընդամենը 440.000 գործ, որից 290.000-ը վերաբերել են այն անձանց, որոնք երբևէ ծառայության կողմից հարցաքննության կամ հետաքննության են ենթարկվել: 75.000 գործ վերաբերել է այն անձանց

կամ խմբերին, որոնք չեն հետախուզվել ծառայության կողմից, սակայն որևէ առնչություն են ունեցել նրա աշխատանքի հետ (օրինակ՝ անվտանգության վերաբերյալ խորհրդատվություն են ստացել ծառայությունից): 40.000-ը եղել են ծառայության կողմից ուսումնասիրված կազմակերպություններ և սուբյեկտներ: Մոտ 20.000-ը եղել են ակտիվ գործեր, որոնց մեկ երրորդը վերաբերել է արտասահմանյան քաղաքացիներին (ինչպես, օրինակ՝ արտասահմանյան հետախուզական ծառայությունների անդամներին) և մնացածը՝ Բրիտանիայի քաղաքացիներին (որոնց կեսից ավելին կասկածյալ ահաբեկիչներ էին). (1998) «Թայմզ», 30 հուլիսի:

«Ամանն ընդդեմ Շվեյցարիայի» (Amann v Switzerland, (16/2/2000)) գործի դեպքում որոշվել է, որ Շվեյցարիայի Դաշնային կառավարության՝ անձանց, այդ թվում և՝ նախկին Խորհրդային Միության դեսպանատան աշխատակազմի հետ կապ ունեցած անձանց վերաբերյալ քարտադարան պահելու գործելակերպն առաջացրել է 8-րդ հոդվածի խախտում: Դիմողը եղել է գործարար, վաճառել է մազեր հեռացնող սարքավորումներ: 1981 թ. ընթացքում նա հեռախոսազանգ է ստացել Բեռնում գտնվող նախկին Խորհրդային Միության դեսպանատան մի կին աշխատակցից, որը նրա սարքավորումները գնելու պատվեր է տվել: Հեռախոսազանգը ծածուկ լսվել է դաշնային պետական դատախազի գրասենյակի կողմից, որն այնուհետև հետաքննություն է սկսել դիմողի և նրա գործունեության նկատմամբ: Հետախուզության արդյունքում ազգային անվտանգության քարտադարանում դիմողի անունով բացվել է առանձին քարտ: Քարտում նշված է եղել «Ցյուրիխի հետախուզական ծառայությունից. Ա. Բացահայտվել է Ռուսաստանի դեսպանատան հետ կապը համաձայն ...»: 1990 թ. դիմողը տեղեկացել է քարտադարանի մասին և փորձել ստանալ իր քարտի պատճենը: Այնուհետև նա դատական վարույթ է սկսել կառավարության դեմ՝ իր մասին քարտային տվյալներ կազմելու և պահելու համար, սակայն դաշնային դատարանը մերժել է նրա հայցերը: Դրանից հետո նա բողոքել է հանձնաժողովին, որը ինը կողմ և ութ դեմ ձայներով եզրակացրել է, որ տեղի է ունեցել դիմողի 8-րդ հոդվածով ամրագրված իրավունքների խախտում: Դատարանը միաձայն եզրակացրել է, որ.

... Պետական դատախազի գրասենյակի կողմից վիճարկվող քարտի բացումը և համադաշնության քարտադարանում դրա պահպանությունը հավասար են եղել միջամտության ղիմողի անձնական կյանքին, որը չի կարող համարվել «օրենքին համապատասխան», քանի որ խնդրո առարկա ոլորտում Շվեյցարիայի օրենքը բավարար հստակությամբ չի նշում իշխանությունների հայեցողական լիազորությունների սահմանը և դրանց կիրառման պայմանները: Սրանից հետևում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում (պարբ. 80):

Հետևաբար, պետական մարմինների կողմից անձանց և նրանց գործունեության վերաբերյալ տեղեկությունների պահպանումը համարվում է «միջամտություն» նրանց անձնական կյանքի հարգման իրավունքին, որը պետությունները պետք է արդարացնեն 8(2) հոդվածում ամրագրված պայմաններով:

Պալատը վճռել է, որ այն դեպքում, երբ անդամ պետությունները կյանքի են կոչել այնպիսի ծրագրեր, որոնց նպատակն է բացահայտել նախկին տոտալիտար ռեժիմների հետ անձանց համագործակցությունը («զտման միջոցառումներ»), ապա նրանց ուշադրության կենտրոնում հայտնված անձանց ընդհանուր առմամբ պետք է հնարավորություն տրվի ծանոթանալու այն գաղտնի գործերին, որոնց հիման վրա ընդունվել են այդպիսի որոշումները: *«Թուրեկն ընդդեմ Սլովակիայի» (Turek v Slovakia)* գործում, որի վերաբերյալ վճիռ է կայացվել 2006 թ. փետրվարի 14-ին, դիմողին տրամադրվել է վկայական առ այն, որ նա համագործակցել է Չեխոսլովակիայի նախկին անվտանգության ծառայության գործակալության հետ: Նա վիճարկել է վկայականը Սլովակիայի դատարաններում, սակայն վճռվել է, որ նա չի ապացուցել, որ չի համագործակցել այդ գործակալության հետ: Պալատը որոշել է, որ.

115. Դատարանը ճանաչում է, մասնավորապես, որ պետական անվտանգության գործակալությունների աշխատանքին վերաբերող վարույթների դեպքում կարող են լինել փաստաթղթերի և այլ նյութերի նկատմամբ մատչելիությունը սահմանափակող օրինական հիմքեր: Այնուամենայնիվ, զտման վարույթների կապակցությամբ այս նկատառումը կորցնում է իր իմաստի զգալի մասը: Նախ՝ զտման վարույթներն իրենց բնույթով ուղղված են այնպիսի փաստերի հաստատմանը, որոնք վերաբերում են կոմունիստական շրջանին և ուղղակի կապ չունեն անվտանգության ծառայությունների ներկա գործառույթների և աշխատանքի հետ: Այսպիսով, եթե առանձնահատուկ գործի փաստերով

հակառակը չի հիմնավորվում, չի կարելի ենթադրել, որ նախկին վարչակարգերի կողմից որպես գաղտնի որակված նյութերի հասանելիությունը սահմանափակելու համար գոյություն ունի հարատևող և գործնական հանրային շահ: Երկրորդ՝ զտման վարույթներն անխուսափելիորեն կախված են նախկին կոմունիստական վարչակարգի անվտանգության մարմինների գործառնություններին վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրությունից: Եթե կողմը, որին վերաբերում են դասակարգված նյութերը, զրկված է այդ բոլոր նյութերին կամ դրանց մեծ մասին ծանոթանալու իրավունքից, ապա անվտանգության գործակալության տեսակետին հակադրվելու համար նրա հնարավորությունները չափից ավելի թույլ կլինեն: Վերջապես, համաձայն համապատասխան օրենքների, սովորաբար նյութերի դասակարգումը և դասակարգման ժամկետները մտնում են անվտանգության գործակալության որոշմանը ենթակա իրավասությունների մեջ: Քանի որ զտման վարույթների խնդրո առարկան գործակալության գործողությունների օրինականությունն է, այսպիսի իրավասությունների գոյությունը համահունչ չէ վարույթի արդարության, ներառյալ՝ զենքերի հավասարության սկզբունքի հետ: Այսպիսով, եթե պետությունը պետք է ձեռնարկի զտման միջոցառումներ, ապա պետք է երաշխավորի, որ այդ միջոցառումներին ենթակա անձինք կօգտվեն կոնվենցիայով նախատեսված այն բոլոր ընթացակարգային երաշխիքներից, որոնք վերաբերում են այդ միջոցառումների կիրառմանը:

Զգալի մեծամասնությամբ, վեց կողմ և մեկ դեմ ձայներով, պալատը եզրակացրել է, որ դիմողի վրա դրվել է ոչ իրատեսական բեռ, այն է՝ հիմնավորել, որ ինքը չի համագործակցել պետական անվտանգության գործակալության հետ: Բացի այդ, նա չի ունեցել այնպիսի ընթացակարգից օգտվելու հնարավորություն, որը կերաշխավորեր նրա անձնական կյանքի հարգման իրավունքի պաշտպանությունը: Այս վճռի էական նշանակությունն այն է, որ երաշխավորում է զտման ծրագրեր իրականացնող պետությունների կողմից համապատասխան ընթացակարգային երաշխիքների ապահովումն այն անձանց համար, ովքեր ընկնում են այդ ծրագրերի ազդեցության տակ:

Դատարանը վճռել է, որ եթե պետությունները մարդկանց վերաբերյալ գաղտնի գործեր են վարում, այդպիսի տեղեկությունների պահպանումը պետք է հիմնավորվի պատշաճ և բավարար պատճառներով: Շվեդական համակարգին վերաբերող զուգահեռ գործի կապակցությամբ պալատը միաձայն որոշել է, որ, ի թիվս այլոց, այնպիսի արձանագրության պահպանումը, որը վերաբերում է անձի մասնակցությանը 1967 թ. Լեհաստանում քաղաքական ցույցին, ազգային անվտանգության տեսանկյունից այլևս արդարացված չէ և առաջացրել է 8-րդ հոդվածի խախտում. *«Սեգերստեդտ-Վիբերգը և այլք ընդդեմ Շվեդիայի» (Segerstedt-Wiberg and Others v Sweden)* 2006 թ. հունիսի 6-ի վճիռ:

11 Պետական մարմինների կողմից հիվանդներին վերաբերող բժշկական արձանագրությունների և տեղեկությունների բացահայտումը սկզբունքորեն հավասար է մարդու «անձնական կյանքի» հարգման իրավունքի խախտման և կարող է արդարացվել այն միայն դեպքում, երբ 8(2) հոդվածի պայմանները բավարարված են: *«Զ-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (Z v Finland* (1997) 25 EHRR 371, 1997-I 323) գործում դիմողն ամուսնացած է եղել մի մարդու հետ (X), որը դրանից առաջ մեղադրվել է մի շարք սեռական հանցագործություններ կատարելու համար: Ավելի ուշ դատախազները մեղադրել են նրան նաև մարդասպանություն կատարելու փորձերի մեջ՝ հիմք ընդունելով այն փաստը, որ սեռական հանցագործություններ կատարելու ժամանակ նա իմացել է/պարտավոր էր իմանալ, որ վարակված է եղել ՄԻԱՎ-ի հարուցիչով: Դատավարության հիմնական խնդիրը վերաբերել է այն հարցին, թե երբ է X-ը տեղեկացել, որ ինքը վարակված է ՄԻԱՎ-ով: Դիմողն օգտագործել է Ֆինլանդիայի օրենքով իր ամուսնու դեմ ցուցմունք չտալու իր իրավունքը: Դրանից հետո դատարանը կարգադրել է, որ Z-ի բժիշկը ցուցմունքներ տա նրա առողջական վիճակի մասին: Վերջինս հայտնել է, որ նա նույնպես եղել է ՄԻԱՎ-ով վարակված: (Բոլոր դատաքննություններն անցկացվել են դռնփակ): Ավելի ուշ դատախազությունը կարգադրել է առգրավել և պատճենահանել դիմողի բժշկական արձանագրությունները: Դատարանը մեղավոր է ճանաչել X-ին մարդասպանության փորձի երեք հոդվածով և բռնաբարության մեկ հոդվածով՝ դատապարտելով նրան յոթ տարվա ազատազրկման: Դատարանը կարգադրել է, որ դատավարության արձանագրությունները գաղտնի պահվեն տասը տարի ժամկետով: Բողոքարկման ժամանակ Հելսինկիի վերաքննիչ դատարանը վճիռ է ընդունել, համաձայն որի՝ X-ը մեղավոր է ճանաչվել մարդասպանության փորձի հինգ հոդվածներով: Փաստորեն դատարանն ավելացրել է նրա պատիժը՝ նրան նշանակելով տասնմեկ և կես տարվա ազատազրկում: Վճռի օրինակը տրամադրվել է մամուլին: Դատավճռում նշվել է դիմողի անունը և ՄԻԱՎ-ով վարակված

լինելու հանգամանքը: Այս տեղեկությունը հրապարակվել է մի քանի թերթերում: Նա բողոքել է հանձնաժողովին, որը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում: Դատարանը նաև որոշել է, որ տեղի են ունեցել այդ հոդվածի խախտումներ: Վճիռը կենտրոնացել է այն հանգամանքի վրա, թե արդյոք Ֆինլանդիայի մարմինները կարո՞ղ էին 8(2) հոդվածով արդարացնել միջամտությունը դիմողի մասնավոր կյանքի հարգման իրավունքին:

Այս կապակցությամբ դատարանը պետք է հաշվի առնի, որ կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձի անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի տեսանկյունից հիմնարար նշանակություն է տրվում անձնական տվյալների և հատկապես բժշկական տվյալների պաշտպանությանը: Բժշկական տվյալների գաղտնիության նկատմամբ հարգանքը կոնվենցիայի անդամ պետությունների իրավական համակարգերի հիմքում ընկած կենսական սկզբունք է: Կարևոր է ոչ միայն հարգել հիվանդի անձնական անձեռմխելիության զգացումը, այլև առհասարակ պահպանել նրա վստահությունը բժշկի մասնագիտության և բժշկական ծառայությունների նկատմամբ:

Առանց այդպիսի պաշտպանության, բժշկական օգնության կարիք ունեցող անձինք կարող են հետ կանգնել բուժման համար անհրաժեշտ անձնական և ինտիմ բնույթի տեղեկություններ բացահայտելուց և նույնիսկ բժշկական օգնություն փնտրելուց՝ դրանով իսկ վտանգելով իրենց առողջությունը, իսկ վարակիչ հիվանդությունների դեպքում՝ նաև հասարակության առողջությունը:

Հետևաբար, կոնվենցիայի 8-րդ հոդվածի երաշխիքներին հակասող այդպիսի հաղորդումները կամ անձնական բնույթի առողջական տվյալների բացահայտումը կանխելու համար ազգային օրենքը պետք է համապատասխան երաշխիքներ ապահովի: Այս դիտարկումները հատկապես ճիշտ են, երբ խոսքը ՄԻԱՎ հարուցիչով անձի վարակված լինելու տեղեկությունների գաղտնիության մասին է: Այդպիսի տվյալների բացահայտումը կարող է կտրուկ ազդեցություն ունենալ նրա անձնական և ընտանեկան կյանքի, ինչպես նաև սոցիալական և աշխատանքային դրության վրա՝ ենթարկելով նրան անպատվության և հալածանքի վտանգի...

Քանի որ անձի ՄԻԱՎ-ով վարակված լինելու վերաբերյալ տեղեկությունները խիստ ինտիմ և զգայուն բնույթ ունեն, յուրաքանչյուր պետական միջոցառում, որն առանց հիվանդի համաձայնության պարտադրում է այդպիսի հաղորդումների կամ այդպիսի տեղեկությունների բացահայտում, ներառյալ նախատեսված արդյունավետ պաշտպանության երաշխիքները, պահանջում է դատարանի խիստ զգուշավոր քննություն:

Միաժամանակ, դատարանն ընդունում է, որ հիվանդի և ընդհանրապես համայնքի՝ բժշկական տեղեկությունների գաղտնիությունը պահպանելու շահերը կարող են գերազանցել հանցագործության հետաքննության, քրեական հետապնդման և դատական վարույթի հրապարակայնության շահերը (պարբ. 95-7):

Դատարանի մեծամասնությունը (ութ կողմ և մեկ դեմ) վճռել է, որ (ա) Ֆինլանդիայի դատարանի պահանջը, որ Զ-ի բժիշկները ցուցմունքներ տան նրա առողջական վիճակի մասին և (բ) դատախազության կողմից Զ-ի բժշկական արձանագրությունների առգրավումը և պատճենահանումը, ըստ 8(2) հոդվածի, համաչափ միջոցառումներ են, որոնք ուղղված են եղել «հանցագործության կանխմանը» և «մյուսների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը»: Այնուամենայնիվ, դատարանը միաձայն վճռել է, որ (գ) դատավարությունն անցկացնող դատարանի արձանագրությունների գաղտնիության նկատմամբ սահմանված 10 տարվա ժամկետը և (դ) վերաքննիչ դատարանի հրապարակային վճիռը չեն կարող արդարացվել 8(2) հոդվածով: X-ի քրեական վարքագծի բացառիկ հանգամանքները և դռնփակ դատական նիստերը անկասկած նշանակալի գործոններ են, որոնց հիման վրա այս գործի նկատմամբ դատարանը կիրառել է 8-րդ հոդվածը: Իրոք, դատարանը նկատել է, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն հրապարակել է անդամ երկրներին ուղղված հրահանգ, որում ընդգծված է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ բժշկական տվյալները գաղտնի պահելու կարևորությունը (հանձնարարական թիվ R(89)14. «ՄԻԱՎ վարակին վերաբերող էթիկական հարցերը առողջապահական և սոցիալական համատեքստում»/The ethical issues of HIV infection in the health care and social settings): Պետությունները պետք է նաև հիմնավորեն 8(2) հոդվածի ներքո առողջապահական մարմինների կողմից այլ պետական մարմիններին բժշկական արձանագրությունների տրամադրումը: *«ՄՍ-ն ընդդեմ Շվեդիայի» (MS v Sweden* (1997) 28 EHRR 313, 1997-IV 1437) գործի դիմողն աշխատանքի ընթացքում վնասել էր իրեն և փորձել է բուժում ստանալ տարածքային հիվանդանոցում: Լուրջ մեջքացավերի պատճառով նա չի կարողացել աշխատանքի վերադառնալ և ավելի ուշ ստացել է հաշմանդամության թոշակ: 1991 թ. նա դիմել է պետական սոցիալական ապահովագրության գրասենյակ՝ «Արտադրական վնասվածքների ապահովագրության մասին» օրենքի շրջանակներում փոխհատուցում ստանալու համար: Գրասենյակը հիվանդանոցից ձեռք է բերել նրա բժշկական արձանագրությունները, որոնք ընդգրկել են նրա հետագա բուժումների,

ներառյալ հղիության արհեստական ընդհատման մասին մանրամասն տվյալներ: Դիմողը գանգատ է ներկայացրել հանձնաժողովին, համաձայն որի՝ առանց իր հստակ համաձայնության հիվանդանոցի կողմից սոցիալական ապահովագրության գրասենյակին իր բժշկական տվյալների տրամադրումը հավասար է իր անձնական կյանքի հարգման իրավունքի խախտման: Հանձնաժողովը, քսաներկու կողմ և հինգ դեմ ձայներով, որոշել է, որ խախտում չի եղել: Դատարանը նույնպես միաձայն մերժել է նրա գանգատը: Այնուամենայնիվ, դատարանը վճռել է, որ նրա առողջական տվյալներն ավելի մեծ թվով պետական ծառայողների տրամադրելը (եթե նույնիսկ նրանք ունեցել են արձանագրությունների գաղտնիության պահպանման համանման պարտավորություններ) և սոցիալական ապահովագրության գրասենյակի կողմից այդ տվյալների տարբեր կիրառությունները՝ միասին վերցրած, հավասար են 8(1) հոդվածով դիմողի անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտման: Սակայն Շվեդիայի իշխանությունները կարողացել են հիմնավորել, որ միջամտությունը պահանջվել է 8(2) հոդվածով երկրի տնտեսական բարեկեցությունը երաշխավորելու համար, քանի որ նպատակ են ունեցել երաշխավորել, որ պետության գումարները տրամադրվում են միայն այն անձանց, որոնք արժանի են դրանք ստանալու: Դատարանը որոշել է, որ գրասենյակին տրամադրված բոլոր բժշկական արձանագրությունները կապ են ունեցել այն որոշման հետ, որը պետք է կայացվեր դիմողի պահանջի առնչությամբ: Ենթադրաբար, անձը կկարողանա հայտարարել, որ տեղեկությունների բացահայտումը համաչափ միջոցառում չի եղել և չի համապատասխանել 8(2) հոդվածին այն դեպքում, երբ գաղտնի բժշկական տեղեկությունների տիրապետող պետական մարմիններն այդ տեղեկությունները տրամադրեն այլ պետական մարմինների, որոնց որևէ կերպ այդ տեղեկությունները չեն վերաբերում: Սեփական սոցիալական կամ բժշկական արձանագրություններին ծանոթանալու իրավունքը ներկայացված է *Գասկինի (Gaskin)* և *Մակգինլիի ու Էգանի (McGinley and Egan)* գործերի միջոցով (ստորև՝ էջ 604-605):

12 *«P.G.-ն և J.H.-ն ընդդեմ ՄԹ-ի» (P.G. and J.H. v UK)* գործում (2001 թ. սեպտեմբերի 25-ի վճիռ) ծրագրված թալանին դիմողների մասնակցությունը պարզելու նպատակով նրանց ձայները ենթարկվել են գաղտնի ձայնագրության և ձայնային վերլուծության, ինչը համարվել է միջամտություն նրանց անձնական կյանքին: Դիմողների ձայները գաղտնի ձայնագրվել են այն ժամանակ, երբ նրանք պատասխանել են պաշտոնական մեղադրանքներին և զրուցել իրենց խցերում: Նրանք այնուհետև մեղավոր են ճանաչվել զինված թալան կազմակերպելու համար և դատապարտվել տասնհինգ տարվա ազատազրկման: Պալատը միաձայն վճռել է, որ.

59. Դատարանի նախադեպային իրավունքը բազմիցս հաստատել է, որ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումները 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի շրջանակներում են երկու առումով՝ անձնական կյանքի և նամակագրության հարգման: Թեպետ ընդհանուր առմամբ ընդունված է, որ ձայնագրություններն արվել են խոսակցությունների բովանդակությունը որոշ ձևով օգտագործելու համար, դատարանի համար համոզիչ չէ, որ ձայնի նմուշներն օգտագործելու նպատակով արված ձայնագրությունները դուրս են մնում 8-րդ հոդվածով երաշխավորված պաշտպանության շրջանակներից: Բոլոր դեպքերում, անձի ձայնը հաշվի է առնվել՝ ենթակա լինելով այնպիսի վերլուծության, որն ուղղակիորեն կապված է այլ անձնական տվյալների համատեքստում անձի ինքնության բացահայտման հետ: Թեպետ ճիշտ է, որ դիմողներին մեղադրանքներ առաջադրելու ժամանակ նրանք պաշտոնական հարցերի պատասխաններ են տվել ոստիկանության պաշտոնյաների ներկայությամբ, նրանց ձայների ամրագրումը և վերլուծությունը, միևնույն է, այս դեպքում պետք է համարվեն դիմողների անձնական տվյալների վերամշակում:

60. Հետևաբար, դատարանը եզրակացրել է, որ դիմողներին մեղադրանքներ ներկայացնելու և իրենց ոստիկանական խցերում գտնվելու ժամանակ նրանց ձայների ամրագրումը վկայում են կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով նրանց անձնական կյանքի հարգման իրավունքի խախտման մասին:

Որևէ որոշակի ազգային օրենք, որը ոստիկանությանը հնարավորություն կտար ձայնագրություններ կատարել, գոյություն չի ունեցել, և, հետևաբար, պալատը որոշել է, որ միջամտությունը դիմողների կյանքին չի համապատասխանել օրենքին, ինչը 8(2) հոդվածի պահանջն է: 2000 թ. «Հետաքննչական լիազորությունների կանոնակարգման մասին» օրենքի II մասը փորձել է լրացնել այս բացը՝ ստեղծելով ոստիկանական ավագ պաշտոնյաների և անկախ վերահսկողական հանձնակատարների (անձինք,

որոնք զբաղեցնում են կամ զբաղեցրել են բարձր դատական պաշտոններ) կողմից նպատակային վերահսկողության այսպիսի ձևերի կիրառման թույլտվությունների օրենքով նախատեսված կարգ: Հեռախոսային խոսակցությունների գաղտնալսմանը վերաբերող նախադեպային իրավունքը քննարկված է ստորև՝ 584-րդ էջում:

13 *«Փեկն ընդդեմ ՄԹ-ի» (Peck v UK)* գործի վերաբերյալ պալատը 2003 թ. հունվարի 28-ի վճռով միաձայն որոշել է, որ քաղաքի կենտրոնում տեղադրված և քաղաքային մարմիններին պատկանող փակ հեռուստատեսային ցանցի միջոցով ստացված լուսանկարների տրամադրումը լրատվության միջոցներին հանգեցրել է այդ նկարներում ինքնասպանության փորձ կատարելու ժամանակ պատկերված անձի անձնական կյանքի հարգման իրավունքի խախտման: Քաղաքային խորհրդին պատկանող հեռուստատեսային համակարգի օպերատորը տեսել է, թե ինչպես է մի տղամարդ դանակը ձեռքին քայլում փողոցով: Նա ահազանգել է ոստիկանությանը, որից հետո ոստիկանները վերցրել են այդ անձնավորության (դիմողի) մոտ գտնվող դանակը, բուժօգնություն ցույց տվել նրան և ուղեկցել ոստիկանության բաժին, որտեղ նա պահվել է՝ համաձայն 1983 թ. «Հոգեկան առողջության մասին» օրենքի դրույթների: Բժշկական օգնություն ստանալուց հետո նա ազատ է արձակվել: Նրա դեմ որևէ մեղադրանք չի հարուցվել: Քաղաքային խորհրդի՝ փակ հեռուստատեսային համակարգի արդյունավետությունը լուսաբանելու քաղաքականության համաձայն՝ տեղական իշխանությունները թույլատրել են հրապարակել համակարգի տեսախցիկների միջոցով ստացված նկարները, որոնք պատկերել են դիմողին (թեպետ ոչ այն ժամանակ, երբ նա կտրատում էր իր երակները) և ոստիկանությանը պատասխան քայլեր ձեռնարկելիս: Այդ նկարները հրապարակվել են երկու տեղական թերթերում և ցուցադրվել տարածքային ու ազգային հեռուստատեսային ծրագրերով: Այս բոլոր լուսաբանումներում դիմողի դեմքը ծածկված չի եղել, և նրան ճանաչող անձինք կարող էին նկարներից ճանաչել նրան: Բարձր դատարանը որոշել է, որ քաղաքային խորհուրդը գործել է օրենքի շրջանակներում՝ առաջնորդվելով 1994 թ. «Քրեական արդարադատության մասին» և 1972 թ. «Տեղական կառավարման մասին» օրենքներով: Պալատը որոշել է որ.

59. Հասարակական վայրում նկարահանող սարքավորումների միջոցով անձի գործողությունների նկատմամբ վերահսկողության սահմանումը, որը չի ուղեկցվում այդ գործողությունների տեսագրությամբ, որպես այդպիսին, միջամտության խնդիր չի առաջացնում անձի անձնական կյանքին (տե՛ս, օրինակ՝ *«Հերբեքը և «Լիգ դը դրուա դը լոմ» ընկերակցությունն ընդդեմ Բելգիայի» (Herbecq and the association ‘Ligue des droits de l’homme’ v Belgium)* դիմումներ թիվ 32200/96 և 32201/96, 1998 թ. հունվարի 14-ի հանձնաժողովի որոշում, DR 92-B, էջ 92): Մյուս կողմից՝ տվյալների ամրագրումը և ամրագրման կանոնավոր կամ մշտական բնույթը կարող են նման մտորումների տեղիք տալ: Հետևաբար, ինչպես *Ռոտարուի (Rotaru)*, այնպես էլ *Ամաննի (Amann)* գործում, որոնց հողում է կատարվել *«PG-ն և JH-ն [ընդդեմ ՄԹ-ի (PG and JH v UK)*, ECHR 2001-IX] գործում, անվտանգության ծառայությունների կողմից առանձին անձանց վերաբերյալ տվյալների հավաքումը, նույնիսկ առանց գաղտնի վերահսկողական մեթոդների կիրառման, հավասար է համարվել միջամտության դիմողների անձնական կյանքին (*«Ռոտարուն ընդդեմ Ռումինիայի» (Rotaru v Romania [GC])*, թիվ 28341/95, պարբ. 43–4, ECHR 2000-V և *«Ամանն ընդդեմ Շվեյցարիայի» (Amann v Switzerland [GC])*, թիվ 27798/95, պարբ. 65–7, ECHR 2000-II): PG-ի և JH-ի ձայների ամրագրումը կատարվել է այն ժամանակ, երբ նրանք ոստիկանության խցերում ոստիկանների ներկայությամբ պատասխանել են իրենց առաջադրած հարցերին: Այնուամենայնիվ, հետագա վերլուծության համար նրանց ձայների ամրագրումը համարվել է նրանց անձնական տվյալների վերամշակում, որը հավասար է եղել միջամտության նրանց անձնական կյանքի հարգման իրավունքին (տե՛ս վերը մեջբերված *P.G.-ն և J.H.-ն,* պարբ. 59–60):

60. Այնուամենայնիվ, դատարանը նկատում է, որ սույն դիմողը չի բողոքել, որ փակ հեռուստատեսային ցանցի տեսախցիկի միջոցով իր շարժումների հսկողությունը և դրանց ամրագրումը միջամտություն են եղել իր անձնական կյանքին: Իրոք, նա ընդունել է, որ փակ հեռուստատեսային համակարգի շահագործումը և դրա արդյունքում ոստիկանության կողմից կատարված միջամտությունը հնարավոր է, որ փրկել են իր կյանքը: Նա ավելի շուտ վիճել է, որ իր շարժումների տեսագրության այնպիսի եղանակով հրապարակային բացահայտումը, որը երբեք չէր կարող կանխատեսվել իր կողմից, տեղիք է տվել նման միջամտության առաջացման:

61. Այս կապակցությամբ դատարանը նշում է հանձնաժողովի կողմից *Լուփկերի (Lupker)* և *Ֆրիդլի (Friedl)* գործերի վերաբերյալ կայացված որոշումները, որոնք վերաբերել են նախկինում կառավարությանը հոժարակամ տրամադրված լուսանկարների (*«Լուփկերն ընդդեմ Նիդեռլանդների» (Lupker and Others v The Netherlands)* թիվ 18395/91,

հանձնաժողովի 1992 թ. դեկտեմբերի 7-ի որոշում, դատական զեկույցներում ընդգրկված չէ) և կառավարության կողմից հրապարակային ցույցի ժամանակ արված լուսանկարների (*«Ֆրիդլն ընդդեմ Ավստրիայի» (Friedl v Austria)*, 1995 թ. հունվարի 31-ի վճիռ, շարք A, թիվ 305-B, հանձնաժողովի կարծիք, էջ 21, պարբ. 49–52) չնախատեսված օգտագործմանը: Այդ դեպքերում հանձնաժողովը կարևորություն է տվել այն հանգամանքին, թե այն լուսանկարները, որոնք, օրինակ, նկարահանվել են տվյալ անձի տուն մուտք գործելուց հետո, հավասարազո՞ր են եղել ներխուժման դիմողի անձնական կյանք, և այդ լուսանկարները վերաբերել են անձնակա՞ն, թե՞ հանրային բնույթի հարցերին, ինչպես նաև այդ եղանակով ձեռք բերված նյութը նախատեսվել է սահմանափակ օգտագործման համա՞ր, թե՞ հավանաբար հանրամատչելի էր դարձվելու հանրային օգտագործման նպատակով: *Ֆրիդլի (Friedl)* դեպքում հանձնաժողովը նկատել է, որ դիմողի անձնական կյանքի «ներքին շրջանակի» մեջ ներխուժում տեղի չի ունեցել և հրապարակային ցույցի ժամանակ արված լուսանկարները վերաբերել են տեղի ունեցող իրադարձությանը և օգտագործվել են զուտ այդ օրը ցույցի նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով: Այդ համատեքստում հանձնաժողովը կարևորություն է տվել այն փաստին, որ լուսանկարները մնացել են անանուն. անուններ չեն նշվել, ամրագրված անձնական տվյալները և ստացված լուսանկարները չեն մտել տվյալների վերամշակման համակարգ, և որևէ գործողություն չի արվել տվյալների վերամշակման համակարգի միջոցով նկարում պատկերված անձանց ինքնությունը որոշելու ուղղությամբ (նույն տեղում): Նմանապես, *Լուիկերի* գործում հանձնաժողովը հատկապես շեշտել է, որ ոստիկանությունը լուսանկարներն օգտագործել է միայն քրեական վարույթի ժամանակ իրավախախտում կատարած անձանց ինքնության որոշման նպատակով, և չկա որևէ հիմք, որը մատնացույց կաներ, որ լուսանկարները տրամադրվել են հասարակայնությանը կամ կարող էին օգտագործվել որևէ այլ նպատակով:

62. Սույն գործի դեպքում դիմողը գտնվել է փողոցում, սակայն նա այնտեղ չի գտնվել որևէ հրապարակային միջոցառմանը մասնակցելու նպատակով, ոչ էլ հանրային գործիչ է հանդիսացել: Եղել է ուշ գիշեր, նա խիստ հոգեկան խռովքի և ցնցման վիճակում է եղել: Թեպետ նա հասարակական վայրերում քայլել է՝ ձեռքին ունենալով դանակ, նրա դեմ ավելի ուշ քրեական գործ չի հարուցվել: Փաստացի ինքնասպանության փորձը ո՛չ տեսագրվել է, ո՛չ էլ բացահայտվել: Այնուամենայնիվ, դրանից անմիջապես հետո տեղի ունեցող իրադարձությունները նկարահանվել են և ցուցադրվել խորհրդի կողմից հանրությանը «Փակ հեռուստատեսային ցանցի նորություններ» ռեպորտաժի ընթացքում: Բացի այդ, տեսանյութը տրամադրվել է լրատվության միջոցներին հետագա հեռարձակման և հրապարակման համար: Լրատվության միջոցների շարքում եղել են տեսաձայնային հեռարձակման լրատվական միջոցներ: «Անգլիա» հեռուստատեսությունը նյութը հեռարձակել է մոտ 350.000 հեռուստաղիտողից բաղկացած լսարանի համար, «ԲիԲիՍի»-ն (BBC)՝ ողջ երկրում: Նաև «ընդհանուր առմամբ ընդունված է, որ տեսաձայնային լրատվամիջոցները հաճախ ավելի անմիջական և ավելի խոր ազդեցություն ունեն, քան տպագիր մամուլը» (*«Երսիլդն ընդդեմ Դանիայի» (Jersild v Denmark)* 1994 թ. սեպտեմբերի 23-ի վճիռ, շարք A, թիվ 298, էջ 23-4, պարբ. 31): «Յելլոու ադվերթայզերը» (Yellow Advertiser) դիմողի բնակության վայրում ունեցել է մոտ 24000 ընթերցող: Դիմողի ինքնությունը պատշաճորեն չի թաքցվել, իսկ որոշ դեպքերում՝ հրապարակված կամ հեռարձակված լուսանկարներում և տեսանյութերում առհասարակ չի թաքցվել: Նրան ճանաչել են նրա ընտանիքի անդամները, ընկերները, հարևանները և գործընկերները:

Փաստորեն, փողոցում գտնվող հնարավոր անցորդներից և անվտանգության համակարգի վերահսկիչներից բացի, այդ իրադարձությանն ականատես են եղել զգալիորեն ավելի մեծ թվով մարդիկ (ինչպես վերը մեջբերված *«Հերբեքը և «Լիգ դը դրուա դը լոմ» ընկերակցությունն ընդդեմ Բելգիայի» (‘Ligue des droits de l’homme’ v Belgium))* գործի դեպքում), և ականատեսների այս բազմությունը զգալիորեն գերազանցել է այն կանխատեսումները, որոնք դիմողը հավանաբար կարող էր ունենալ Բրենթվուդով 1995 թ. օգոստոսի 20-ին քայլելու ընթացքում:

63. Հետևաբար, դատարանը որոշում է, որ քաղաքային խորհրդի կողմից համապատասխան տեսանյութի բացահայտումը եղել է լուրջ միջամտություն դիմողի անձնական կյանքի հարգման իրավունքին:

Պալատը որոշել է, որ խորհրդի բացահայտումը համապատասխանել է օրենքին, քանի որ ունեցել է օրենսդրական հիմք և կանխատեսելի է եղել: Նաև, ըստ 8(2) հոդվածի, այն ունեցել է հանրային անվտանգությունը պահպանելու, անկարգությունը և հանցագործությունը կանխելու և այլ անձանց իրավունքները պաշտպանելու օրինական նպատակ: Այնուամենայնիվ, պալատը չի համարել, որ այդ բացահայտումը եղել է անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում:

85. Արդյունքում դատարանը չի համարում, որ այս գործի հանգամանքներում գոյություն են ունեցել տեղին կամ բավարար պատճառներ, որոնք կարդարացնեին առանց դիմողի համաձայնության կամ առանց նրա ինքնությունը թաքցնելու խորհրդի «Փակ հեռուստատեսության ցանցի նորություններով» տեսանյութից ստացված պատկերների ցուցադրությունը, կամ որոնք կարդարացնեին լրատվության միջոցներին այս նյութերի տրամադրումը՝ առանց համապատասխան քայլեր ձեռնարկելու, որոնք կերաշխավորեին, որ լրատվական միջոցները թաքցնելու են տվյալ անձի ինքնությունը: Սույն գործում հանցավորության կանխման նպատակը և բացահայտումների համատեքստն այս առումով պահանջել են հատուկ զգուշավորության և հոգածության դրսևորում:

...

87. Հետևաբար, դատարանը որոշում է, որ խորհրդի կողմից փակ հեռուստատեսության ցանցի միջոցով ստացված նյութը «Փակ հեռուստատեսության ցանցի նորություններով» թողարկումը և «Յելլոու Ադվերթայզերին», «Անգլիա» հեռուստատեսությանը, «ԲիԲիՍի»-ին (BBC) նյութերի տրամադրումը չեն ուղեկցվել բավարար երաշխիքներով, որոնք կկանխեին այնպիսի բացահայտումները, որոնք չեն բխել 8-րդ հոդվածի շրջանակներում դիմողի անձնական կյանքի առնչությամբ գործող երաշխիքներից: Որպես այդպիսին՝ բացահայտումը եղել է անհամաչափ և, հետևաբար, անարդարացի միջամտություն նրա անձնական կյանքին՝ այդպիսով առաջացնելով 8-րդ հոդվածի խախտում:

Պալատը նշանակել է դիմողին 11,800 եվրո փոխհատուցում հասցված ոչ նյութական վնասի համար:

Փեկի (Peck) գործով վճիռը կարևոր նշանակություն ունի, քանի որ վեր է հանում դատարանի մոտեցումը փակ հեռուստատեսային ցանցերի տեխնոլոգիաների մոնտաժման և օգտագործման առնչությամբ, ինչը հատկապես կարևոր է վերջին տարիներին հանրային և մասնավոր ընկերություններում այս տեխնոլոգիաների արագ տարածման պայմաններում: Հստակ է, որ այդպիսի համակարգերի միջոցով պատկերների ամրագրումը և պահպանումը կամ տարածումը սկզբունքորեն համապատասխան անձանց անձնական կյանքի տիրույթում են: Այդ հանգամանքներում դատավճիռը պահանջում է, որ, ի թիվս այլոց, ձեռնարկվեն համապատասխան ընթացակարգային քայլեր այս անձանց ինքնությունը անհարկի հանրային բացահայտումից պաշտպանելու համար:

Այնուհետև, մեկ այլ պալատ *«Փերրին ընդդեմ ՄԹ-ի» (Perry UK)* գործի վերաբերյալ 2003 թ. հուլիսի 17-ի վճռում անդրադարձել է ոստիկանության բաժնում տեղադրված փակ հեռուստատեսային համակարգից ստացված պատկերների ձևափոխման և օգտագործման հարցին: Դիմողը ձերբակալվել է մի շարք զինված թալաններ կատարելու կասկածանքով: Ոստիկանությունը կարգադրություններ է արել, որ կալանքի խցերից մեկում տեղադրվի վերահսկողական խցիկ, որը նախատեսված էր մանրամասն պատկերներ տեսագրելու համար: Դիմողն այնուհետև բերվել է կալանքի տեղամաս և նրա պատկերը տեսագրվել է տեսախցիկի միջոցով: Տեսագրությունն օգտագործվել է ոստիկանության կողմից նրա ինքնությունը հաստատելու համար: Այս փաստն ավելի ուշ օգտագործվել է դատարանում նրա դատավարության ժամանակ: Նա մեղավոր է ճանաչվել երեք հոդվածով և դատապարտվել հինգ տարվա ազատազրկման: Դատարանում նա վիճարկել է, որ իրեն այդ հանգամանքներում նկարահանելը իր անձնական կյանքի հարգման իրավունքի խախտում է: Պալատը միաձայն վճռել է, որ.

40. Ինչպես նշվել է վերը, փողոցում կամ հասարակական վայրերում, այդ թվում՝ առևտրի կենտրոններում կամ ոստիկանության բաժիններում անվտանգության խցիկների քննականոն կիրառումը, որպես այդպիսին, ծառայում է օրինական և կանխատեսելի նպատակի և չի առաջացնում կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետի խնդիր: Այս դեպքում, այնուամենայնիվ, ոստիկանությունը կարգադրություններ է արել անվտանգության խցիկն այնպես մոնտաժել, որ հնարավոր լինի խցում ստանալ դիմողի պատկերը՝ այն հետագայում այլ անձանց պատկերների հետ ֆիլմի մեջ մոնտաժելու և ճանաչման նպատակով վկաներին ցույց տալու համար, որպեսզի որոշվի՝ հանձին դիմողի վերջիններս ճանաչո՞ւմ են քննության տակ գտնվող կողոպուտները կատարած անձին: Տեսանյութը նաև ցույց է տրվել դիմողի դատավարության ժամանակ՝ դռնբաց դատական նիստում: Հարցն այն է, թե արդյոք տեսախցիկի և տեսանյութի այսպիսի կիրառումը անձնական տվյալների այնպիսի՞ վերամշակում կամ կիրառություն է, որը հանգեցնում է անձնական կյանքի հարգման իրավունքի խախտման:

41. Դատարանը հիշում է, որ դիմողը բերվել է ոստիկանության բաժին, որպեսզի մասնակցի առերես հարցաքննության, և նա չի համաձայնել մասնակցել այդ հարցաքննությանը: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, թե արդյոք նա իմացե՞լ է խցում տեղադրված անվտանգության տեսախցիկների մասին, ապա որևէ ցուցում չկա, որ դիմողը սպասել է, որ ոստիկանության բաժնում իրեն նկարահանելու են՝ տեսագրության միջոցով ճանաչման ընթացակարգ կազմակերպելու և, հավանաբար, նաև այդ տեսագրությունը որպես իր դեմ ուղղված ապացույց դատավարության ժամանակ օգտագործելու համար: Ոստիկանության կողմից որդեգրված այս հնարքն անցել է այս կարգի տեսախցիկների քննականոն կամ սպասելի կիրառության սահմաններից, ինչը, իրոք, ցույց է տրվում այն փաստով, որ տեսախցիկը մոնտաժելու համար ոստիկանությունը պետք է ստանար համապատասխան թույլտվություն և հրավիրեր այն տեղադրող ճարտարագետ: Տեսանյութի ամրագրումը և հետագա օգտագործման նպատակով դրա ընդգրկումը մոնտաժված ժապավենի մեջ, հետևաբար, պետք է համարվեն դիմողի վերաբերյալ անձնական տվյալների վերամշակում կամ հավաքում:

42. Կառավարությունն առարկել է, որ տեսանյութի օգտագործումը նման է եղել ինքնության պարզման նպատակով կազմված ալբոմներում ընդգրկված լուսանկարների օգտագործմանը, որի առնչությամբ հանձնաժողովը հաստատել է, որ խնդիր չի առաջացել այն կապակցությամբ, որ դրանք օգտագործվել են քրեական վարույթի ժամանակ հանցագործներին

ճանաչելու նպատակով (*«Լուփկերն ընդդեմ Նիդեռլանդների» (Lupker v The Netherlands*, թիվ 18395/91) հանձնաժողովի 1992 թ. դեկտեմբերի 7-ի որոշում, զեկույցներում ընդգրկված չէ): Այնուամենայնիվ, հանձնաժողովը շեշտել է, որ այդ դեպքում լուսանկարները չեն հայտնվել ոստիկանության տրամադրության տակ անձնական կյանք ներխուժում կատարելու միջոցով, այլ լուսանկարները ներկայացվել են իշխանություններին կամավորապես՝ անձնագրերի դիմումների հետ միասին կամ ոստիկանության կողմից նախկին ձերբակալությունների ժամանակ: Տվյալ դեպքում խնդրո առարկա տեսանյութը ձեռք չի բերվել կամավոր հիմունքներով կամ այնպիսի հանգամանքներում, երբ կարելի էր ողջամտորեն սպասել, որ այն ձայնագրվելու է և օգտագործվելու ճանաչման նպատակներով:

43. Դատարանը որոշում է, հետևաբար, որ դիմողին վերաբերող տեսանյութի ամրագրումը և կիրառումն այս դեպքում վեր են հանում անձնական կյանքի հարգման իրավունքի խախտում:

Քանի որ ոստիկանության գործողությունները խախտել են «Գործելակարգի օրենսգիրքը», որն ընդունվել է «Ոստիկանության և քրեական ապացույցների մասին» 1984 թ. օրենքին համապատասխան և անդրադարձել ինքնությանը վերաբերող տեսանյութերին, պալատը եզրակացրել է, որ դիմողի դեմ ձեռնարկված միջոցները չեն համապատասխանել օրենքին և, հետևաբար, առաջացրել են 8-րդ հոդվածի խախտում: Փերրիին նշանակվել է 1,500 եվրո փոխհատուցում նրան հասցված ոչ նյութական վնասի համար:

Այսպիսով, թեև ոստիկանության բաժիններում վերահսկողության տեսախցիկների բնականոն կիրառման վրա 8(1) հոդվածը չի տարածվում, և այն կարող է նպաստել, որ բանտի աշխատակիցները, տեղյակ լինելով իրենց գործողությունների տեսագրման մասին, համապատասխան վերաբերմունք դրսևորեն կալանավորների նկատմամբ և նաև կարողանան պաշտպանվել կալանավորների կեղծ մեղադրանքներից, սակայն դրանց գաղտնի կիրառումը, ինչպես Փերրիի դեպքում, կարող է առաջացնել այդ հոդվածի խախտում:

14 *«Միկուլիչն ընդդեմ Խորվաթիայի» (Mikulic v Croatia)* գործի վերաբերյալ 2002 թ. փետրվարի 7-ի վճռում մշտական գործող դատարանը որոշել է, որ վիճելի հայրության հարցերի կարգավորումը մտնում է երեխայի անձնական կյանքի շրջանակների մեջ: Դիմողը ծնվել է արտաամուսնական կապի արդյունքում 1996 թ.: Երկու ամիս անց նա և նրա մայրը հայրության ճանաչման գործ են հարուցել մի մարդու դեմ, որը ենթադրաբար եղել է նրա հայրը: Վեց անգամ Զագրեբի քաղաքային դատարանն այդ մարդու ԴՆԹ-ն ստուգելու և երեխայի նկատմամբ նրա հայրությունը պարզելու համար նրան հատուկ օրեր և ժամեր է նշանակել: Այնուամենայնիվ, այդ անձնավորությունը ոչ մի անգամ չի ներկայացել դատարանի նշանակած օրերին և ժամերին, որպեսզի ստուգման համար ԴՆԹ-ի նմուշ հանձնի: 2001 թ. նոյեմբերին, հիմնվելով ԴՆԹ ստուգմանը ներկայանալուց անընդհատ խուսափելու իրողության և դիմողի մոր տված ցուցմունքի վրա, քաղաքային դատարանը վճիռ է կայացրել, համաձայն որի՝ այդ անձնավորությունը հանդիսանում է դիմողի հայրը: Այդ անձավորությունն այնուհետև այս վճռի դեմ բերել է վերաքննիչ բողոք: Դիմողը բողոքել է Ստրասբուրգի դատարան՝ պնդելով, ի թիվս այլոց, որ Խորվաթիայի դատական համակարգը հայրության հայցի վերաբերյալ որոշում կայացնելու համար թերի է եղել և, հետևաբար, իրեն թողել է անորոշության մեջ իր անձի ինքնության հարցում, ինչը մտնում է 8-րդ հոդվածով երաշխավորվող իր անձնական կյանքը հարգելու իրավունքի շրջանակների մեջ: Դատարանն ընդունել է, որ նրա հայցն այդ իրավունքի շրջանակներում է:

53….Բացի այդ, թվում է, որ սկզբունքային պատճառ չկա, թե ինչու «անձնական կյանքի» հասկացությունը պետք է ընդունվի որպես արտաամուսնական կապից ծնված երեխայի և նրա կենսաբանական հոր միջև իրավաբանական կապի որոշումը բացառող հասկացություն:

Դատարանն այնուհետև քննության է առել, թե արդյոք Խորվաթիան կատարե՞լ է 8-րդ հոդվածով ստանձնած իր դրական պարտավորությունը: Հաշվի առնելով անդամ պետություններում հայրության ճանաչման և փաստական կանոնների առումով առկա բազմազանությունը՝ դատարանը եզրակացրել է, որ 8-րդ հոդվածը չի պահանջել պետություններից, որ նրանք ստիպեն ենթադրյալ հայրերին ենթարկվել ԴՆԹ-ի ստուգման: Այնուամենայնիվ, եթե այդպիսի ստուգումը պարտադիր չի եղել որևէ առանձին պետությունում, իրավական համակարգը պետք է ապահովի «64... այլընտրանքային միջոց-

ներ, որոնք հնարավորություն են տալիս անկախ մարմնին արագ որոշում կայացնելու հայրության ճանաչման վերաբերյալ բերված հայցի կապակցությամբ»: Դա չի արվել դիմողի դեպքում: Հետևաբար, տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում:

Այնուհետև, անձի «անձնական կյանքին» վերաբերող *Միկուլիչի (Mikulic)* վճիռը պալատը միաձայն կիրառել է *«Շոֆմանն ընդդեմ Ռուսաստանի» (Shofman v Russia)* գործի նկատմամբ (2005 թ. նոյեմբերի 24-ի վճիռ), որի դեպքում անձը վիճարկել է իր նախկին կնոջ երեխայի նկատմամբ իր հայրությունը: Նախկին Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության օրենքով, որը, այնուհետև, ենթարկվել է համապատասխան փոփոխությունների, հայրությունը վիճարկող հայցերը ենթակա են եղել մեկ տարվա ժամանակային սահմանափակման՝ սկսած այն օրվանից, երբ անձը տեղյակ է պահվել, որ գրանցվել է որպես հայր: Դիմողը որպես երեխայի հայր գրանցվելուց հետո երկու տարվա ընթացքում տեղյակ չի պահվել, որ իր կնոջ երեխայի հայրն ինքը չէ: Նա, այնուհետև, վիճարկել է իր հայրությունը դատարաններում: Չնայած ԴՆԹ-ի ստուգումները ցույց են տվել, որ դիմողը երեխայի հայրը չէ, դատարանը կիրառել է ժամանակային սահմանափակումը, որպեսզի մերժի դիմողի հայցը: Պալատը որոշել է, որ տեղի է ունեցել դիմողի անձնական կյանքի հարգման իրավունքի խախտում, քանի որ Ռուսաստանում գործող խորհրդային իրավունքը չի ապահովել արդար հավասարակշռություն նրա շահի և ընտանեկան հարաբերությունների իրավական որոշակիության ընդհանուր շահի միջև:

Անձանց կողմից իրենց կենսաբանական ծնողների վերաբերյալ հանրային մարմինների տիրապետության տակ գտնվող տեղեկությունների բացահայտմանը վերաբերող գործերը ներկայացված են ստորև՝ 604-րդ էջում:

15 *«Փրեթիի ընդդեմ ՄԹ-ի» (Pretty v UK)* 2002 թ. ապրիլի 29-ի վճռում (տե՛ս վերը՝ էջ 115), պալատը հաստատել է.

61. Ինչպես որ դատարանը նախկինում առիթ է ունեցել նշելու, «անձնական կյանքի» հայեցակարգը շատ լայն հասկացություն է, որը ենթակա չէ սպառիչ ձևակերպման... Թեպետ որևէ նախկին գործ, որպես այդպիսին, չի հաստատել ինքնորոշման իրավունքը որպես կոնվենցիայի 8-րդ հոդվածի մեջ մտնող իրավունք, դատարանը համարում է, որ անձնական ինքնիշխանության գաղափարն իր երաշխիքների մեկնաբանության հիմքում ընկած կարևոր սկզբունք է:

Հետևաբար, դատավորները չեն ցանկացել բացառել, որ Անգլիայի օրենքով դիմողի ամուսնու վրա դրված սահմանափակումները, համաձայն որոնց՝ նա չէր կարող օգնել դիմողին ինքնասպանություն գործելու հարցում, տիկին Փրեթիի անձնական կյանքի հարգման իրավունքի խախտում է: Այնուամենայնիվ, այդ սահմանափակումները եղել են օրենքին համապատասխան և ունեցել են օրինական նպատակ՝ պաշտպանել այլ խոցելի անձանց իրավունքները: Բացի այդ.

76. Դատարանը չի եզրակացնում, հետևաբար, որ կողմնակի օժանդակությամբ ինքնասպանություն գործելու նկատմամբ գործող ընդհանուր արգելքն անհամաչափ է: Կառավարությունը հայտնել է, որ առանձին գործերի դեպքերում ճկունությունն ապահովվում է այն փաստի միջոցով, որ քրեական հետապնդում սկսելու համար պահանջվում է պետական մեղադրանքների տնօրենի (ՊՄՏ) համաձայնությունը, ինչպես նաև այն փաստի միջոցով, որ նախատեսվում է առավելագույն պատիժ, սակայն նպատակահարմար լինելու դեպքում թույլ է տրվում նշանակել ավելի մեղմ պատիժներ: Համաձայն հատուկ ստեղծված կոմիտեի զեկույցի, 1981-1992 թթ. լսված «բարեգութ սպանության» 22 գործերի դեպքում ցմահ բանտարկություն նշանակվել է միայն մի դեպքում, մինչդեռ ավելի նվազ չափերի հանցագործությունների պարագայում պատիժները մեղմացվել են, և ավելի հաճախ նշանակվել է փորձաշրջան կամ պայմանական պատիժ... Դատարանն այնպիսի տպավորություն չի ստանում, որ այն հանգամանքը, որ օրենքն արտացոլում է կյանքի իրավունքի կարևորությունը՝ միաժամանակ արգելելով կողմնակի օգնությամբ ինքնասպանությունը և ապահովելով կիրառման և դատավարության այնպիսի համակարգ, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր առանձին գործի առնչությամբ քրեական հետապնդում սկսելիս հաշվի առնել հանրային շահը, ինչպես նաև հատուցման և կասեցման պատշաճ պահանջները, կամայականություն է:

77. Ոչ էլ այդ հանգամանքներում որևէ անհամաչափություն կա, որ ՊՄՏ-ն հրաժարվել է կանխավ պարտավորվել, որ դիմողի ամուսնու դեմ համապատասխան հետապնդում չի սկսելու: Գործադիրը միշտ կարող է վկայակոչել օրենքի գերակայության վրա հիմնված ամրակուռ փաստարկներ, որպեսզի ազատի անձանց կամ անձանց խմբերին օրենքի

կիրառումից: Ամեն դեպքում, հաշվի առնելով այն գործողության լրջությունը, որի համար ներկայացվել է անձեռնմխելիության պահանջ, չի կարելի ասել, որ ՊՄՏ-ի՝ պահանջված պարտավորությունը չստանձնելու մասին որոշումը եղել է կամայական կամ անողջամիտ:

78. Դատարանը եզրակացնում է, որ այս գործում կատարված միջամտությունը կարող է արդարացվել որպես «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»՝ այլոց իրավունքները պաշտպանելու համար և, հետևաբար, եզրակացնում է, որ կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

16 *«Y.F.-ն ընդդեմ Թուրքիայի» (Y.F. v Turkey)* գործի կապակցությամբ 2003 թ. հուլիսի 22-ին պալատը միաձայն որոշել է, որ կալանավորված անձի ցանկությանը հակառակ նրա գինեկոլոգիական հետազոտությունը միջամտություն է եղել նրա անձնական կյանքին: Դիմողը և նրա կինը ձերբակալվել են ոստիկանության կողմից՝ ՔԱԿ-ին [Քրդստանի աշխատավորական կուսակցություն] օգնելու կասկածանքով: Չորս օր կալանքի տակ պահելուց հետո ոստիկանությունը դիմողի կնոջը ցույց է տվել գինեկոլոգին և պահանջել զննել նրան, որպեսզի պարզվի՝ կալանքի տակ գտնվելու ժամանակ նա սեռական հարաբերություն ունեցե՞լ է, թե՞ ոչ: Կինը հրաժարվել է զննություն անցնել, սակայն ոստիկանության պաշտոնյաները պնդել են, որ զննությունը կատարվի և մնացել են շենքում այնքան ժամանակ, քանի դեռ զննությունը չի ավարտվել (այն կատարվել է մեկուսի պայմաններում): Բժիշկը հայտնել է, որ որևէ հիմք չկա կարծելու, որ կալանքի տակ գտնվելու ժամանակ նա սեռական հարաբերություն է ունեցել: Իր կնոջ անունից դիմողը գանգատ է ներկայացրել դատարանին: Դատարանը վճռել է.

33….Այս կապակցությամբ դատարանը կրկնում է, որ որևէ անձի մարմինը վերաբերում է նրա անձնական կյանքի ամենաինտիմ կողմին: Այսպիսով, պարտադրված բժշկական միջամտությունը, եթե նույնիսկ այն եղել է նվազ կարևորության միջամտություն, նշանակում է, որ տեղի է ունեցել այդ իրավունքի խախտում...

43….Վերջապես, թեև դատարանն ընդունում է կառավարության բացատրությունը, որ դատական բժշկի կողմից կալանավորների բժշկական քննությունը կարող է սեռական հալածանքի կամ վատ վերաբերմունքի դեմ ուղղված նշանակալի երաշխիք լինել, այնուամենայնիվ կարծում է, որ անձի ֆիզիկական անձեռնմխելիության դեմ ուղղված յուրաքանչյուր միջամտություն պետք է նախատեսված լինի օրենքով և պահանջի այդ անձի համաձայնությունը: Այլապես խոցելի իրավիճակում գտնվող անձը, ինչպես, օրինակ՝ կալանավորը, զուրկ է կամայական գործողությունների դեմ ուղղված իրավական երաշխիքներից: Վերոհիշյալ փաստերի հիման վրա դատարանը որոշում է, որ խնդրո առարկա միջամտությունը «օրենքին համապատասխան» կատարված միջամտություն չի եղել:

44. Այդ եզրակացությունը բավարար է դատարանի համար, որպեսզի վճռի, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում:

Սա ակնհայտորեն ազատազրկման մեջ գտնվող անձանց արժանապատվության պահպանմանն ուղղված կարևոր որոշում է: *«Շտորքն ընդդեմ Գերմանիայի» (Storck v Germany)* ավելի ուշ լսված գործի կապակցությամբ (գործի փաստերի շարադրանքը և 5-րդ հոդվածի կողմերը ներկայացված են վերը՝ 254-րդ էջում) պալատը որոշել է, որ մասնավոր կլինիկայում դիմողի կամքին հակառակ նրա բուժումը նույնպես առաջացրել է նրա անձնական կյանքի հարգման իրավունքի խախտում:

17 *«Սլիվենկոն ընդդեմ Լատվիայի» (Slivenko v Latvia)* գործի վերաբերյալ 2003 թ. հոկտեմբերի 9-ի վճռում մեծ պալատը կիրառել է 8-րդ հոդվածը խիստ զգայուն քաղաքական համատեքստում՝ կապված նախկինում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ մտած անկախ պետության տարածքից Խորհրդային Միության զինված ուժերի դուրսբերման հետ: Առաջին դիմողը՝ Տատյանա Սլիվենկոն, ծնվել է 1959 թ. Էստոնիայում՝ ԽՍՀՄ զինված ուժերում ծառայող զինվորականի ընտանիքում: Նրա ծնվելուց մեկ ամիս անց նրանց ընտանիքը տեղափոխվել է Լատվիա, քանի որ նրա հայրը նոր նշանակում է ստացել այդ հանրապետությունում: 1970-ական թթ. վերջերին Տատյանան Լատվիայում հանդիպել է ապագա ամուսնուն և ամուսնացել նրա հետ 1980 թ.: Նրա ամուսինը որպես սպա ծառայության մեջ է եղել Լատվիայում տեղակայված ԽՍՀՄ զինված ուժերում: Նրանց դուստրը՝ Կարինան (երկրորդ դիմողը), ծնվել է 1981 թ. Լատվիայում: 1986 թ. Տատյանայի հայրը թոշակի է անցել զինվորական ծառայությունից և շարունակել բնակվել Լատվիա-

յում: 1991 թ. Լատվիան վերականգնել է իր անկախությունը, և 1992 թ. հունվարի 28-ին Ռուսաստանի Դաշնությունը ստանձնել է նախկին ԽՍՀՄ զինված ուժերի վերահսկողությունը: 1993 թ. մարտին դիմողները և Տատյանայի ծնողները Լատվիայի ռեզիդենտների գրանցամատյանում գրանցվել են որպես «նախկին ԽՍՀՄ քաղաքացիներ»: 1990 թթ. սկզբին (ճշգրիտ տարեթիվն ու օրը նշված չի եղել) Տատյանայի ամուսինը ստացել է Ռուսաստանի քաղաքացիություն և մինչև 1994 թ. զորացրվելը շարունակել ծառայել Լատվիայում տեղակայված Ռուսաստանի բանակում: 1994 թ. ապրիլի 30-ին Լատվիայի և Ռուսաստանի միջև կնքվել է համաձայնագիր, համաձայն որի՝ մինչև 1994 թ. օգոստոսը Ռուսաստանի զինված ուժերը և նրանց ընտանիքներն ամբողջովին պետք է դուրս բերվեին այդ երկրի տարածքից: Ըստ համաձայնագրի՝ 1992 թ. հունվարի 28-ին Ռուսաստանի կողմից ԽՍՀՄ զինված ուժերի վերահսկողությունը ստանձնելուց հետո զինված անձնակազմի զորացրումը չպետք է համարվեր նրանց Լատվիայից դուրսբերում:

1994 թ. հոկտեմբերին Տատյանայի ամուսինը դիմել է Լատվիայի քաղաքացիության և միգրացիայի մարմնին՝ Լատվիայի քաղաքացու հետ ամուսնացած լինելու հիմքով Լատվիայում ժամանակավոր կացության թույլտվություն ստանալու համար: Քաղաքացիության և միգրացիայի մարմինը մերժել է նրա դիմումը, քանի որ որոշել է, որ նա Ռուսաստանի զինված ուժերի սպա է և, հետևաբար, այդ համաձայնագրի պայմանների համաձայն պարտավոր է դուրս գալ Լատվիայի տարածքից: Դրանից քիչ ժամանակ անց Տատյանայի ամուսնու կարգավիճակի պատճառով քաղաքացիության և միգրացիայի մարմինը մերժել է Լատվիայի ռեզիդենտների գրանցամատյանում դիմողների գրանցումը: Ժամանակավոր կացություն տալու վերաբերյալ քաղաքացիության և միգրացիայի գործակալության որոշման դեմ նա բողոք է ներկայացրել Լատվիայի դատարաններ: Ի վերջո, 1996 թ. Ռիգայի տարածքային դատարանը հաստատել է քաղաքացիության և միգրացիայի գործակալության որոշումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև 1994 թ. հունիս ամիսը նա եղել է Ռուսաստանի զինված ուժերում ծառայության մեջ գտնվող սպա և, հետևաբար, համաձայն համաձայնագրի, պարտավոր է եղել դուրս գալ Լատվիայի տարածքից: 1996 թ. օգոստոսին Լատվիայի ներգաղթի մարմինները դիմողների անունով արտաքսման կարգադրություն են տվել, որից ընդամենը երկու օր անց տեղական գործակալությունը նրանց իրենց վարձակալած բնակարանից վտարելու կարգադրություն է արել, որն այդպես էլ երբեք չի իրականացվել: 1996 թ. (օրը նշված չէ) Տատյանայի ամուսինը տեղափոխվել է Ռուսաստան:

Դիմողները դատական վարույթ են սկսել Լատվիայի դատարաններում՝ բողոքելով, որ իրենք եղել են մշտական ռեզիդենտներ և չեն կարող արտաքսվել: Նրանց պահանջները բավարարվել են Ռիգայի շրջանային և տարածքային դատարաններում, սակայն մերժվել են գերագույն դատարանի կողմից այն հիմքով, որ դիմողներին բնակարան է հատկացվել Ռուսաստանում, և նրանք ենթակա են եղել 1994 թ. համաձայնագրի դրույթների կիրառմանը: 1998 թ. հոկտեմբերի սկզբին Տատյանան իրեն և իր դստերը՝ Կարինային արտաքսելու կարգադրության դեմ բողոք է ներկայացրել միգրացիայի մարմիններին: Այնուամենայնիվ, այդ նույն օրը (հոկտեմբերի 28-ին) ուշ երեկոյան ոստիկանությունը ձերբակալել է դիմողներին իրենց բնակարանում այն հիմքով, որ նրանք չեն ունեցել Լատվիայում իրենց գտնվելու հանգամանքը հիմնավորող օրինական փաստաթղթեր: Նրանց ազատ են արձակել հաջորդ օրը՝ միգրացիայի գործակալության տնօրենի միջամտությունից հետո: Վերջինս 1999 թ. փետրվարի սկզբին գրավոր տեղեկացրել է դիմողներին, որ նրանց ներկայացվում է Լատվիայի տարածքն անհապաղ լքելու պահանջ: 1999 թ. մարտի 16-ին ոստիկանությունը ձերբակալել է Կարինային նրա տատի և պապի տանը, որից հետո նա երեսուն ժամ պահվել է ապօրինի ներգաղթյալների կենտրոնում: 1999 թ. հուլիսի 11-ին դիմողները տեղափոխվել են Ռուսաստան՝ Տատյանայի ամուսնուն/Կարինայի հորը միանալու համար: 2001 թ. նրանք ընդունել են Ռուսաստանի քաղաքացիություն: Տատյանայի ծնողները շարունակել են օրինականորեն բնակվել Լատվիայում: 2001 թ. վերջին Լատվիայի իշխանությունները վիզա են տվել դիմողներին՝ թույլ տալով նրանց այցելել իրենց ծնողներին (տատին և պապին):

Դիմողները բողոքել են դատարանին, որ, ի թիվս այլոց, Լատվիայի տարածքից իրենց արտաքսումն առաջացրել է իրենց անձնական/ընտանեկան կյանքի և ընտանեկան տան [օջախի] հարգման իրավունքի խախտում, որը երաշխավորված է 8-րդ հոդվածով: Նրանք վիճարկել են, որ

իրենք լիովին ինտեգրված են եղել Լատվիայի հասարակությանը, ինչպես, օրինակ՝ Տատյանան բնակվել է այնտեղ մեկ ամսականից և 17 տարին լրանալուց հետո նաև աշխատել է: Կարինան ծնվել և կրթություն է ստացել Լատվիայում: Համաձայն կոնվենցիայի 36-րդ հոդվածի՝ Ռուսաստանի կառավարությունն այս վարույթին միացել է որպես կողմնակի միջնորդ: Վկայակոչելով 30-րդ հոդվածը՝ պալատը որոշել է գանգատի վերաբերյալ որոշման կայացման իրավասությունը թողնել մեծ պալատին:

Լատվիայի կառավարությունը ներկայացրել է, որ դիմողների արտաքսումը պետք է դիտարկվի «76... Ռուսական զորքերի դուրսբերումով Խորհրդային Միության կողմից Լատվիայի տարածքի ապօրինի օկուպացիայի հետևանքների վերացման համատեքստում»: Բացի այդ, նրանց արտաքսումը համահունչ է եղել Ռուսաստանի զորքերի դուրսբերմանը վերաբերող 1994 թ. ռուս-լատվիական համաձայնագրին, և միջամտությունները դիմողի իրավունքներին հետապնդել են կոնվենցիայի 8(2) հոդվածով Լատվիայի ազգային անվտանգությունը պաշտպանելու, հանցագործությունը կամ անկարգությունը կանխելու օրինական նպատակ: Կառավարությունը պնդել է, որ դիմողները երբեք ինտեգրված չեն եղել Լատվիայի հասարակությանը, քանի որ նրանք ապրել են Լատվիայում ոչ թե սեփական ընտրությամբ, այլ իրենց ընտանիքի անդամների զինվորական ծառայության մեջ լինելու հանգամանքների բերումով: Իրենց առօրյա կյանքում նրանք գործ չեն ունեցել տեղացի ազգաբնակչության/ մարմինների հետ, քանի որ նրանց հիմնական ծառայությունները, ինչպես, ասենք, բժշկական ծառայությունները, ապահովել են ԽՍՀՄ պաշտպանության մարմինները, և դիմողները չեն տիրապետել լատիշերենին: Ռուսաստանի կառավարությունը պնդել է, որ դիմողները լիովին ինտեգրված են եղել Լատվիայի հասարակությանը, քանի որ նրանք եղել են Լատվիայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության քաղաքացիներ և գրեթե իրենց ողջ կյանքը բնակվել այդ երկրում:

Մեծ պալատը սկսել է վճռի կայացման գործընթացը՝ քննարկելով, թե արդյոք դիմողները կարո՞ղ էին հայտարարել, որ Լատվիայում ունեցել են «անձնական կյանք», «ընտանեկան կյանք» կամ «ընտանեկան տուն»:

96. …Անվիճելի է, որ Լատվիայից դիմողները դուրս են եկել իրենց կամքին հակառակ՝ Լատվիայում իրենց կացության օրինականության վերաբերյալ վարույթի անհաջող ելքի հետևանքով: Այսպիսով, նրանք հեռացվել են մի երկրից, որտեղ անընդմեջ զարգացել են ծնվելուց հետո, որտեղ ունեցել են յուրաքանչյուր մարդ արարածի անձնական կյանքից անբաժանելի անձնական, սոցիալական և տնտեսական հարաբերությունների շրջանակ: Բացի այդ, արտաքսվելու հետևանքով դիմողները կորցրել են Ռիգայի այն բնակարանը, որտեղ ապրել են: Այս հանգամանքներում դատարանը չի կարող կատարել այլ եզրակացություն, քան այն, որ կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով Լատվիայից դիմողների արտաքսումը եղել է միջամտություն նրանց «անձնական կյանքին» և «ընտանեկան տանը»:

Այնուամենայնիվ, մեծ պալատը չի համարել, որ դիմողներին Լատվիայից հեռացնելը հավասար է եղել «նրանց ընտանեկան կյանքի» խաթարման, քանի որ ողջ ընտանիքը՝ ամուսինը, կինը և աղջիկը արտաքսվել են ռուս-լատվիական համաձայնագրի հետևանքով:

97. …Բացի այդ, ինչ վերաբերում է առաջին դիմողի տարեց ծնողներին, ապա դիմողները չեն կարող հիմնվել նրանց հետ «ընտանեկան կյանքի» առկայության վրա, քանի որ վերջիններս եղել են չափահաս մարդիկ, չեն պատկանել նրանց բուն ընտանիքին, չեն գտնվել դիմողների ընտանիքի խնամքի տակ, և դիմողների փաստարկներն այս առումով բավարար հիմնավորում չեն ունեցել: Այնուամենայնիվ, ընտանիքի վրա վիճարկվող միջոցների և հատկապես Ռուսաստանի Դաշնություն ստիպողական արտագաղթի թողած ազդեցությունը բավարար գործոն է դատարանի համար, որպեսզի գործը գնահատի 8-րդ հոդվածի շրջանակներում: Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով դիմողի «անձնական կյանքի» շրջանակներում դատարանը նաև հաշվի է առնելու դիմողների կապն առաջին դիմողի ծնողների հետ, որոնք նաև երկրորդ դիմողի տատը և պապն են:

Մեծ պալատը շարունակել է և եզրակացրել, որ 8(2) հոդվածով դիմողների արտաքսումը համապատասխանել է օրենքին, քանի որ որոշում կայացնելու ժամանակ Լատվիայի դատարանները կիրառել են ռուս-լատվիական համաձայնագիրը: Այն հարցի կապակցությամբ, թե 8(2) հոդվածով

նրանց արտաքսումը տեղի է ունեցել Լատվիայի ազգային անվտանգությունը պաշտպանելու օրինական նպատակով, թե ոչ.

111. Դատարանը համարում է, որ դիմողների նկատմամբ ձեռնարկված առանձնահատուկ միջոցները չեն կարող անջատվել 1991 թ. Լատվիայի անկախացումից հետո սահմանադրական և միջազգային իրավունքի կարգադրությունների ավելի լայն համատեքստից: Այս համատեքստում հարկ չկա անդրադառնալու միջազգային իրավունքով Լատվիայի նախկին իրավիճակին: Բավարար է նկատել, որ ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին խորհրդային զինված ուժերը մնացել են Լատվիայում և գտնվել Ռուսաստանի իրավասության տակ, այն դեպքում, երբ թե՛ Լատվիան, թե՛ Ռուսաստանը հանդիսացել են անկախ պետություն: Հետևաբար, դատարանն ընդունում է, որ ռուսական զորքի դուրսբերման մասին ռուս-լատվիական համաձայնագրի և դրա իրականացման միջոցներով Լատվիայի իշխանությունները ձգտել են պաշտպանել այդ երկրի ազգային անվտանգության շահը:

Հետևաբար, դատարանի համար առանցքային հարցը եղել է այն, թե արդյոք դիմողների հեռացումը եղե՞լ է «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»:

116. Դատարանի կարծիքով՝ մի անկախ պետության զինված ուժերի դուրսբերումը մեկ այլ անկախ պետության տարածքից, երբ փլուզվել է այն պետությունը, որի կազմի մեջ երկուսն էլ մտել են, կոնվենցիայի տեսանկյունից օրինական միջոց է, որն ուղղված է այդ լուծարումից առաջացած տարբեր քաղաքական, սոցիալական և տնտեսական խնդիրների լուծմանը: Կոնվենցիայի և հատկապես 8-րդ հոդվածի տեսանկյունից որևէ վեճ չկա, որ սույն գործի դեպքում ռուս-լատվիական համաձայնագիրն ապահովել է 1992 թ. հունվարի 28-ից հետո Ռուսաստանի իրավասության տակ գտնված զինված ուժերի, ներառյալ նախքան համաձայնագրի ուժի մտնելը զինվորական ծառայությունից ազատված անձնակազմի դուրսբերումը (և այս պատճառով համաձայնագիրն ունեցել է հետադարձ ազդեցության ուժ), ինչպես նաև պարտավորեցրել է ընտանիքներին լքել երկիրը: Իրոք, կարելի է ասել, որ այս համաձայնությունը հարգել է խնդրո առարկա անձանց ընտանեկան կյանքը, քանի որ չի միջամտել ընտանեկան միավորին և պարտավորեցրել է, որ Ռուսաստանն իր տարածքում ընդունի ողջ ընտանիքը՝ անկախ ընտանիքի առանձին անդամների ծագումից կամ ազգությունից:

117. Եթե ուշադրություն դարձվի զինվորական սպաների ծառայության պայմանների վրա, ապա ռուսական զորքերի դուրսբերման պատճառով առաջացած միջամտությունն անձանց անձնական կյանքին և տանը ընդհանուր առմամբ անհամաչափ միջամտության տպավորություն չի թողնում: Սա հատկապես վերաբերում է բուն ծառայության մեջ գտնվող անձանց և նրանց ընտանիքներին: Նրանց դուրսբերումը նման է ծառայության մի վայրից մյուսը տեղափոխման, ինչի վերաբերյալ նրանք կարող էին կարգադրություն ստանալ իրենց սովորական ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում: Բացի այդ, ակնհայտ է, որ արտասահմանյան բանակում ծառայության մեջ գտնվող անձանց և նրանց ընտանիքների շարունակական ներկայությունը կարող է անհամատեղի լինել անկախ պետության ինքնիշխանության գաղափարի հետ և սպառնալ այդ երկրի ազգային անվտանգությանը: Այդ տարածքից գործող զինծառայողների և նրանց ընտանիքների հեռացման հանրային շահը, հետևաբար, ընդհանուր առմամբ գերազանցում է այդ տարածքում անհատի մնալու շահին: Այնուամենայնիվ, նույնիսկ այսպիսի անձանց դեպքում չպետք է բացառել, որ կարող են լինել այնպիսի առանձնահատուկ հանգամանքներ, որոնց դեպքում նրանց դեմ ձեռնարկված միջոցները կոնվենցիայի տեսանկյունից չեն կարող համարվել արդարացված:

118. Հեռացման միջոցների հիմնավորումը նույն չափով չի վերաբերում թոշակի անցած նախկին զինվորական ծառայողներին և նրանց ընտանիքներին: Զինված ուժերում ծառայությունից ազատվելուց հետո, որպես կանոն, նրանք այլևս ենթակա չեն ծառայության բերումով տեղից տեղ տեղափոխվելու պահանջին: Թեև համաձայնագրում նրանց ընդգրկումը, որպես այդպիսին, առարկելի տպավորություն չի գործում (տե՛ս վերը՝ 116-րդ պարբերություն), դատարանի կարծիքով՝ ազգային անվտանգության շահերը նվազ ծանրակշիռ են այս կարգի անձանց դեպքում, մինչդեռ նրանց օրինական անձնական շահերին ավելի մեծ ուշադրություն պետք է դարձվի:

Մեծ պալատը նկատել է, որ դիմողների ամուսինը/հայրը ազատվել է ռուսական բանակում ծառայությունից 1994 թ. կեսերին: Նաև Լատվիայի կառավարությունը թույլ է տվել, որ 900 անձ, որոնք ունեցել են Լատվիայի քաղաքացիություն/Լատվիայի քաղաքացիների հետ սերտ ազգակցական կապեր, մնան Լատվիայում, թեպետ նրանք եղել են ռուսական բանակի ծառայողների ընտանիքի անդամներ և պետք է դուրս գային երկրից՝ համաձայն ռուս-լատվիական համաձայնագրի պայմանների:

122. Դատարանը կարծում է, որ արտասահմանյան զորքերի և նրանց ընտանիքների դուրսբերման այսպիսի ծրագրերը, հիմնվելով այն ընդհանուր եզրակացության վրա, որ այդ զորքերի հեռացումն անհրաժեշտ է ազգային անվտանգության նկատառումներից ելնելով, չեն կարող, որպես այդպիսին, համարվել կոնվենցիայի 8-րդ հոդվածին հակասող ծրագրեր: Այնուամենայնիվ, այսպիսի ծրագրի կիրառումը, երբ հնարավորություններ չկան հաշվի առնելու այն անձանց առանձին հանգամանքները, որոնք ազգային օրենքով ազատված չեն հեռացման կարգին ենթարկվելուց, դատարանի տեսանկյունից համատեղելի չէ այդ հոդվածի պահանջների հետ: Անձի և համայնքի մրցակցող շահերի միջև արդար հավասարակշռություն հաստատելու տեսանկյունից անձի հեռացման պահանջը չպետք է կիրառվի այն դեպքում, երբ այդ միջոցն անհամաչափ է հետապնդվող օրինական նպատակի հետ: Տվյալ դեպքում հարցն այն է, թե արդյոք դիմողների առանձնահատուկ դրությունը, որպես այդպիսին, գերազանցե՞լ է ազգային անվտանգությանը սպառնացող վտանգը՝ հաշվի առնելով նրանց ընտանեկան կապերը արտասահմանյան բանակի նախկին զինվորականների հետ:

Մեծ պալատի մեծամասնությունը՝ տասնմեկ կողմ և վեց դեմ ձայներով, եզրակացրել է, որ Լատվիայի իշխանությունները այսպիսի հավասարակշռություն չեն ապահովել, երբ ստիպել են դիմողներին դուրս գալ Լատվիայից: Մեծամասնությունը որոշել է, որ դիմողները ինտեգրված են եղել Լատվիայի հասարակությանը (նրանք զորամասերում չեն ապրել և չեն աշխատել կամ սովորել ռազմական հաստատությունում, իսկ լատիշերենի իմացությունը եղել է բավարար, որպեսզի կարողանային մասնակցել առօրյա կյանքին): Լատվիայի կառավարությունը մերժել է դիմողներին հեռացնելու առումով բացառություն անելը, քանի որ նրանք եղել են նախկին ԽՍՀՄ բանակի սպայի աղջիկ և թոռնիկ: Հետևաբար, մեծամասնությունը որոշել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի անձնական կյանքի/տան հարգման իրավունքի խախտում, քանի որ դիմողների հեռացումն «անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում»:

Դիմողները պահանջել են 400.000 եվրոյի ոչ նյութական վնասի փոխհատուցում, որը պատճառվել է նրանց իրենց հայրենիքից բռնի հեռացման հետևանքով: Ռուսաստանի կառավարությունը պաշտպանել է այս պահանջը, մինչդեռ Լատվիայի կառավարությունը հայտնել է, որ դա չափազանցված պահանջ է: Դատարանը, տասնմեկ կողմ և վեց դեմ ձայներով, դիմողներից յուրաքանչյուրին նշանակել է զգալիորեն ավելի փոքր գումարի՝ 10.000 եվրոյի փոխհատուցում:

Վեց չհամընկնող կարծիք ունեցողները՝ նախագահ Վիլդհաբերը և դատավորներ Ռեսը, Բրատցան, Կաբրալ Բարետոն, Գրիվը և Մարուստեն, ընդունել են միասնական առանձին կարծիք, որում կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում դիմողների դեմ կիրառված հեռացման միջոցների համաչափության գնահատման համար որպես որոշիչ գործոններ շեշտել են ռուս-լատվիական համաձայնագրի ծագումը և պայմանները:

4. Նախ՝ մենք նկատում ենք այն առանձնահատուկ պատմական համատեքստը և նպատակը, որի համար ստորագրվել է այդ համաձայնագիրը: Այն է՝ վերացնել Լատվիայում խորհրդային իշխանության թողած հետևանքները: Համաձայնագրի նախաբանում դրա երկու կողմերը՝ Լատվիան և Ռուսաստանը, ընդունել են, որ ռուսական զորքերի դուրսբերումը նպատակ ունի «վերացնել իրենց ընդհանուր պատմության բացասական հետևանքները»: Համաձայնագրի այս նպատակի օրինականությունը, մեր կարծիքով, առաջնային նշանակություն ունի համաձայնագրով հեռացման ենթակա զինված ուժերի ներկայացուցիչների և նրանց ընտանիքների առանձին անդամների իրավունքներին պատճառված միջամտության արդարացիությունը գնահատելու համար:

Կարևոր է նաև նշել, որ համաձայնագիրն ինքնին Լատվիայի մարմինների վրա այնպիսի պարտավորություն չի դրել, ըստ որի՝ նրանք պետք է հիմնավորեին առանձին անձի և, մասնավորապես, զինվորական ծառայության մեջ չգտնվող ընտանիքի անդամների կողմից ազգային անվտանգությանը ներկայացրած իրական վտանգը: Արտասահմանյան զորքերի և նրանց ընտանիքների դուրսբերման ընդհանուր ծրագրերում, այդ թվում նաև այս ծրագրում հեշտ չէ տեղ հատկացնել յուրաքանչյուր դեպքի հատկանիշների վրա հիմնված առանձնահատուկ բնույթի անհատական հիմնավորումներին (տե՛ս *mutatis mutandis «Ջեյմսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (James and Others v the United Kingdom)* 1986 թ. փետրվարի 21-ի վճիռը, շարք A, թիվ 98, էջ 41–2, պարբ. 68): Մեր կարծիքով՝ հիմնական փաստաթղթում զինվորականների և նրանց ընտանիքների անդամների լայն կատեգորիաների սահմանումը՝ առանց նրանց անձնական պատմությունների համար վերապահումներ անելու, արդար հավասարակշռություն է ստեղծում անձի և համայնքի մրցակցող շահերի միջև:

Չհամընկնող կարծիք հայտնողները նաև շեշտել են դիմողների կապերը Ռուսաստանի հետ, ներառյալ այն փաստերը, որ նրանք ունեցել են ռուսական ծագում, խոսել են ռուսերեն, հաճախել ռուսական կրթական հաստատություններ և, ի վերջո, դարձել են Ռուսաստանի քաղաքացիներ:

11. Այս հանգամանքներում մենք անկարող ենք եզրակացնել, որ, մասնավորապես, Լատվիայի տարածքում մոտ 50 տարի տեղակայված Ռուսաստանի խորհրդային զինված ուժերի դուրսբերման առումով Լատվիայի իշխանությունները գերազանցել են կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում իրենց վերապահված հայեցողության սահմանները: Լատվիայի կառավարությունը, մեր կարծիքով, իրավունք ուներ համարելու, որ միջամտությունը դիմողների անձնական կյանքի և տան հարգման իրավունքին եղել է «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»:

Չհամընկնող կարծիք ունեցողները ռուսական զինված ուժերի ներկայացուցիչների և նրանց ընտանիքների անդամների Լատվիայից փոխհամաձայնեցված հեռացումն ավելի բարձր են դասել, քան դիմողների՝ Լատվիայում մնալու իրավունքը: Նրանց կարծիքն արժանի է մեր հարգանքին, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ նրանցից շատերը, ներառյալ դատարանի նախագահը և երկու բաժանմունքների նախագահները, դատարանի հիերարխիական սանդղակում զբաղեցրել են ավագ պաշտոններ: Սակայն հնարավոր է, որ նրանց կարծիքը չափից ավելի է անտեսում այն կապերը, որոնք դիմողներն ունեցել են Լատվիայի հետ (առաջին դիմողը, բացի մեկ ամսից, իր մնացած կյանքն անցկացրել է Լատվիայում, մինչդեռ երկրորդ դիմողը ծնվել է այնտեղ և իր ողջ կյանքն ապրել այդ երկրում): Նախքան նրանց հեռացնելը (ինչը նրանք մի քանի տարի շարունակ հետևողականորեն վիճարկել են Լատվիայի դատարաններում), դիմողները որևէ ցանկություն չեն հայտնել Ռուսաստան տեղափոխվելու վերաբերյալ: Եթե նրանց կապերը Ռուսաստանի հետ եղել են այնքան ամուր, որքան կարծում են առանձին կարծիքի հեղինակները, ապա մի՞թե դիմողներն ավելի սիրով չէին վերաբերվի իրենց իրական հայրենիք տեղափոխվելու մտքին:

18 *«Գլասն ընդդեմ ՄԹ-ի» (Glass v UK)* 2004 թ. մարտի 9-ի վճռում պալատը միաձայն որոշել է, որ մոր ցանկությանը հակառակ բժիշկների կողմից 12 տարեկան լուրջ մտավոր և ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխայի նկատմամբ դիամորֆինի կիրառումն առաջացրել է այդ երեխայի «70... անձնական կյանքի հարգման իրավունքի և հատկապես ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի խախտում»: Երեխան հիվանդանոց է բերվել շնչահեղձությունից հետո: Բժիշկները որոշել են, որ նա մահանում է թոքերի հիվանդությունից: Նրա ցավը մեղմելու համար բժիշկները որոշել են դիամորֆին նշանակել: Հաջորդ օրը երեխայի վիճակը վատացել է: Մայրը վերակենդանացրել է երեխային, մինչդեռ ընտանիքի անդամները հարձակվել են բժիշկների վրա: Երեխայի վիճակն այնուհետև բարելավվել է, և այդ նույն օրը՝ ավելի ուշ, նա դուրս է գրվել հիվանդանոցից: Պալատը որոշել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում, քանի որ հիվանդանոցի ղեկավարությունը երեխային նրա մոր կամքին հակառակ դիամորֆինով բուժելու համար չի փորձել ազգային դատարանից որոշում ստանալ:

83. Ուշադրություն դարձնելով գործի հանգամանքների վրա՝ դատարանը համարում է, որ ղեկավարության որոշումը, որ չպետք է անսալ առաջարկված բուժման նկատմամբ մոր արտահայտած առարկությանն այն դեպքում, երբ դատարանի թույլտվություն գոյություն չի ունեցել, հանգեցրել է կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտման:

Գլասի գործից հետո եղել են մի քանի այլ քաջ հայտնի ներպետական գործեր, որոնք վերաբերել են ծնողների և բժիշկների վեճերին, ներառյալ նույն Ազգային առողջապահական ծառայության (Փորթմութի հիվանդանոցներ) կողմից *Շառլոտ Կյաթթի (Charlotte Wyatt)* բուժմանը վերաբերող գործը:

19 Անձնական կյանքի այնպիսի մեկնաբանությունը, համաձայն որի՝ այն ընդգրկում է անձի վարած մասնագիտական/մասնավոր գործունեությունը, տրվել է *Նյեմեցի (Niemietz)* գործում և զարգացել ու կիրառվել է մշտական գործող դատարանի պալատի կողմից *«Սիդաբրասը և Ջյաուտասն ընդդեմ Լիտվայի» (Sidabras and Dziautas v Lithuania)* գործի վերաբերյալ 2004 թ. հուլիսի 27-ին կայացված վճռում: Դիմողները 1980-ական թվականներին, երբ Լիտվան մտել է ԽՍՀՄ կազմի մեջ, եղել են Պետական անվտանգության կոմիտեի (ՊԱԿ) (խորհրդային անվտանգության ծառայության) Լիտվայի մասնաճյուղի աշխատակիցներ: Լիտվայի անկախացումից հետո դիմողներից մեկը դարձել է հարկային տեսուչ, իսկ մյուսը՝ դատախազ: 1998 թ. Լիտվայի խորհրդարանն օրենք է ընդունել, որով արգելել է նախկին ՊԱԿ-ի անդամներին 1998 թ. սկսած տասը տարվա ընթացքում աշխատել որպես քաղծառայող կամ բանկի, վարկային հաստատությունների, անվտանգության ընկերությունների և մի շարք այլ

մասնավոր ձեռնարկությունների աշխատող: Դիմողներն ազատվել են իրենց պետական պաշտոններից՝ համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգի: Նրանք այնուհետև բողոքել են դատարանին, որ օրենքով սահմանված արգելքը, որը թույլ չի տվել իրենց աշխատել նշված մասնավոր հատվածի ձեռնարկություններում և մասնագիտական պաշտոններում, առաջացրել է 8-րդ հոդվածի խախտում՝ 14-րդ հոդվածի համակցությամբ: Դատարանը վճռել է, որ.

47. Այնուամենայնիվ, ուշադրություն դարձնելով հատկապես այն գաղափարներին, որոնք ներկայումս գերիշխում են ժողովրդավարական պետություններում, դատարանը համարում է, որ մասնավոր հատվածում աշխատանքի անցնելու այսքան հեռուն գնացող արգելքն ազդում է «անձնական կյանքի» վրա: Այս առումով դատարանը հատկապես նշանակություն է տալիս Եվրոպական սոցիալական խարտիայի 1-ին հոդվածի 2-րդ կետի տեքստին և Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի տված մեկնաբանությանը, ինչպես նաև ԱՄԿ-ի [Աշխատանքի միջազգային կազմակերպության] ընդունած տեքստերին: Դատարանն այնուհետև հիշում է, որ կոնվենցիայում հստակ սահման չկա, որը կտարանջատեր սոցիալական և տնտեսական իրավունքները (տե՛ս *«Էյրին ընդդեմ Իռլանդիայի» (Airey v Ireland),* 1979 թ. հոկտեմբերի 9-ի վճիռ, շարք A, թիվ 32, պարբ. 26):

Դատարանի մեծամասնությունը՝ հինգ կողմ և երկու դեմ ձայներով, որոշել է, որ տեղի է ունեցել 14-րդ հոդվածի խախտում՝ 8-րդ հոդվածի հետ համակցված, քանի որ դիմողի աշխատանքի վրա դրված սահմանափակումները համաչափ չեն եղել Լիտվայում ազգային անվտանգության պահպանության և տնտեսական բարեկեցության օրինական նպատակներին:

57. Նույնիսկ ենթադրելով, որ դիմողների հավատարմության բացակայությունը վեճի թեմա չի եղել, պետք է նկատել, որ դիմողների աշխատանքային հեռանկարները սահմանափակվել են ոչ միայն պետական ծառայության, այլև մասնավոր ծառայության հատվածներում: Դատարանը կրկնում է, որ պետության նկատմամբ հավատարմության պահանջը պետական մարմիններում աշխատելու համար կիրառվող անբաժանելի պահանջ է, քանի որ պետությունը պատասխանատվություն է կրում ընդհանուր շահի պաշտպանության և ապահովման համար: Այնուամենայնիվ, այսպիսի պահանջը մասնավոր ընկերություններում աշխատելու համար անխուսափելի պահանջ չէ: Թեպետ մասնավոր հատվածի ընկերությունների տնտեսական գործունեությունն անկասկած ազդում է և ներդրում ունենում պետության համար, այդ ընկերություններն օժտված չեն այնպիսի ինքնիշխան լիազորություններով, որոնցով օժտված է պետությունը: Բացի այդ, մասնավոր ընկերությունները կարող են օրինականորեն զբաղվել գործունեությամբ և հատկապես ֆինանսական ու տնտեսական գործունեությամբ, որը մրցակցում է պետական մարմինների կամ պետական ընկերությունների հաստատած նպատակների հետ:

58. Դատարանը կարծում է, որ պետության կողմից անձի՝ մասնավոր ընկերություններում աշխատանք գտնելու հնարավորությունների սահմանափակումները, որոնք հիմնավորվում են պետության նկատմամբ այդ անձանց հավատարմության բացակայությամբ, կոնվենցիայի տեսանկյունից չեն կարող արդարացվել այնպես, ինչպես այն սահմանափակումները, որոնք վերաբերում են հանրային ծառայությունում նրանց աշխատանքին՝ անկախ այն կարևորությունից, որ այդ մասնավոր ընկերություններն ունեն պետության տնտեսական, քաղաքական և անվտանգության շահերի ապահովման առումով:

Մեծամասնությանը նաև մտահոգել է այն հանգամանքը, որ օրենսդրությունն ընդունվել է Լիտվայի անկախացումից հետո ութ տարի անց միայն: Դատարանը յուրաքանչյուր դիմողին նշանակել է 7000 եվրոյի ոչ նյութական և նյութական վնասի փոխհատուցում: Երկու չհամընկնող կարծիք ունեցողները՝ դատավորներ Լուկայդեսը և Թոմասենը, համոզված են եղել, որ խախտվել է միայն 8-րդ հոդվածը:

Մի շարք անդամ պետություններ, որոնք նախկինում մտել են ԽՍՀՄ ճամբարի մեջ (ներառյալ Բուլղարիան, Չեխիայի Հանրապետությունը և Լատվիան) ընդունել են օրենքներ, որոնցով փորձել են սահմանափակել նախկին վարչակարգի պաշտոնյաների աշխատանքային հեռանկարները: *«Սիդաբրասի և Ջիաուտասի» (Sidabras and Dziautas)* գործի վերաբերյալ կայացված վճռից հետո նրանք մասնավոր հատվածում աշխատանքի անցնելու սահմանափակումների շրջանակներն ուսումնասիրելու կարիք են զգալու, որպեսզի երաշխավորեն, որ դրանք բավականաչափ հստակ են, սահմանափակ և համապատասխանում են կոնվենցիայի համաչափության պահանջին:

Եվրոպական սոցիալական խարտիայի 1(2) հոդվածում, որը վկայակոչվել է վերը նշված վճռում, ասված է, որ «Նպատակ ունենալով երաշխավորել աշխատելու իրավունքի արդյունավետ կիրառու-

թյունը, կողմերը ձեռնամուխ են եղել ... արդյունավետորեն պաշտպանել աշխատողի ապրուստ հայթայթելու իրավունքն իր կողմից ազատորեն ձեռք բերված աշխատանքի միջոցով»:

20 *«Զնամենսկայան ընդդեմ Ռուսաստանի» (Znamenskaya v Russia)* գործի վերաբերյալ 2005 թ. հունիսի 2-ի վճռով պալատը որոշել է, որ մոր և նրա մեռելածին երեխայի միջև կապը մտնում է մոր «անձնական կյանքի» շրջանակների մեջ: Այնուամենայնիվ, պալատը խիստ տարակարծիք է եղել պետության՝ մոր անձնական կյանքը հարգելու պարտավորության չափի առնչությամբ: 1997 թ. օգոստոսին՝ իր հղիության երեսունհինգերորդ շաբաթում, դիմողը ծննդաբերել է մահացած տղա երեխա: 1994 թ. ի վեր նա ապրել է մի մարդու հետ (Գ), որը, նրա ասելով, երեխայի հայրն էր: 1997 թ. մարտին նա և նրա նախկին ամուսինը բաժանվել են: Քաղաքացիական ակտերի գրանցման մարմինը գրանցել է մեռելածնությունը և ծննդյան վկայականում ու ծննդյան գրանցամատյանում 1997 թ. օգոստոսին որպես երեխայի հայր նշել դիմողի ամուսնու անունը: Գ-ն մահացել է կալանքի տակ գտնվելու ընթացքում՝ 1997 թ. հոկտեմբերին: 2000 թ. դիմողը դիմել է շրջանային դատարան, որպեսզի Գ-ն ճանաչվի իր մեռելածին երեխայի հայրը, և երեխան ունենա Գ-ի ազգանունը և հայրանունը: Շրջանային դատարանը կարգադրել է դադարեցնել վարույթը, քանի որ պահանջը «նպատակահարմար չէ քննության համար»: Դիմողը բողոքել է Եվրոպական դատարանին՝ պնդելով, որ ազգային մարմինները չեն կատարել իր անձնական և ընտանեկան կյանքը հարգելու դրական պարտավորությունը: Դատարանը վճռել է, որ.

27.…Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողը պետք է որ ամուր կապ զարգացրած լիներ իր սաղմի հետ, որին նա կրել է գրեթե մինչև իր հղիության բնական ժամկետի ավարտը, և նա ցանկություն է հայտնել անուն տալ և թաղել նրան, նրա ծագման հաստատումն անկասկած ազդեցություն է ունեցել նրա «անձնական կյանքի» վրա, որի նկատմամբ հարգանքը երաշխավորված է 8-րդ հոդվածով: Հետևաբար, այդ դրույթը տարածվում է սույն գործի վրա:

...

31. Համաձայն դատարանի նախադեպային իրավունքի՝ այն իրավիճակը, երբ թույլ է տրվում, որ առանց հաստատված փաստերը և ազդեցության ենթարկված անձանց ցանկությունները հաշվի առնելու և գործնականում առանց որևէ մեկին օգուտ տալու իրավական կանխավարկածը գերիշխի կենսաբանական և սոցիալական իրականության նկատմամբ, համատեղելի չէ անձնական և ընտանեկան կյանքի արդյունավետ «հարգանքի» ապահովման պարտավորության հետ՝ նույնիսկ հաշվի առնելով պետություններին վերապահված հայեցողության սահմանները *(«Քրոոնն [ընդդեմ Նիդեռլանդների» (Kroon [v The Netherlands* A.297-C (1994)]), պարբ. 40):

32. Հետևաբար, տեղի է ունեցել կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

Այնուամենայնիվ, երեք դատավոր առարկել է:

Մենք պատրաստ ենք ընդունելու այն փաստարկը, որ մոր ամուր կապն իր մեռելածին երեխայի հետ կարող է համարվել մոր անձնական կյանքի մաս: Այնուամենայնիվ, դժվարանում ենք ընդունել, որ 8-րդ հոդվածում ամրագրված անձնական կյանքի երաշխավորման առումով պետության դրական պարտավորության շրջանակներում նրա անձնական կյանքն ընդգրկում է մեռելածին երեխայի հայրության ճանաչումը պահանջելու իրավունք: Այս առնչությամբ մենք մտահոգված ենք մոր, ոչ թե երեխայի անձնական կյանքով, որը, եթե կենդանի ծնվեր, ապա օրինական ակնկալիք կունենար, որ ճանաչվելու է իր կենսաբանական հոր կողմից որպես նրա ընտանիքի և անձնական կյանքի մաս: Եվ մենք գործ ունենք ոչ միայն այն պահանջի հետ, որ փոխվի մեկ այլ անձնավորության անունը, այլ որպեսզի այն ճանաչվի երրորդ անձի կողմից:

Եթե Գ-ի մահը միայն ավելի է բարդացրել իրավիճակը, ապա, ենթադրաբար, ԴՆԹ ստուգման միջոցով հնարավոր կլիներ որոշել դիմողի մեռելածին երեխայի հոր ինքնությունը, եթե Գ-ի կամ նրա նախկին ամուսնու (որը մահացել է 2000 թ.) ընտանիքները վիճարկեին դիմողի հայրության պնդումները: *Քրոոնի* գործը քննարկված է ստորև՝ էջ 549-ում:

21 *«Իլեթմիսն ընդդեմ Թուրքիայի» (Iletmis v Turkey)* գործի վերաբերյալ 2005 թ. դեկտեմբերի 6-ի վճռի համաձայն՝ քաղաքացու դեմ սկսված և տարիներ տևած քրեական վարույթի ընթացքում նրա անձնագիրը վերցնելը և պահելը առաջացնում են 8-րդ հոդվածի խախտում: 1975 թ. դիմողը որպես

ուսանող գրանցվել է Գերմանիայում գտնվող մի համալսարանում: 1979 թ. ամուսնացել է Թուրքիայի քաղաքացու հետ: Նրանք ունեցել են երկու երեխա, որոնք նրանց հետ ապրել են Գերմանիայում: 1984 թ. թուրքական մարմինները սկսել են դատավարական հետաքննություն՝ պարզելու համար դիմողի քաղաքական գործունեությունը: Երբ 1992 թ. իր ընտանիքին տեսակցելու նպատակով դիմողն այցելել է Թուրքիա, ձերբակալվել է, որից հետո վերցվել է նրա անձնագիրը: Նա մեղադրվել է անջատողական գործունեությանը սատարելու մեջ և մի քանի շաբաթ անց գրավի դիմաց ազատ արձակվել: Այնուամենայնիվ, իշխանությունները չեն վերադարձրել նրա անձնագիրը: 1999 թ. նա ազատ է արձակվել, և նրան տրվել է նոր անձնագիր: Պալատը միաձայն որոշել է, որ դիմողի անձնագիրը վերցնելը հավասար է եղել միջամտության դիմողի անձնական կյանքի հարգման իրավունքին, և այդ քայլն անհամաչափ գործողություն է եղել, քանի որ նա նախկինում դատված չի եղել, երբեք չեն եղել այնպիսի փաստեր, ըստ որոնց՝ նա վտանգ է ներկայացնում ազգային անվտանգությանը, և նրա ընտանիքն ապրել է Գերմանիայում:

22 *«Էվանսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Evans v United Kingdom)* գործի վերաբերյալ 2006 թ. մարտի 7-ին պալատի կայացրած վճռի համաձայն՝ անձի անձնական կյանքի հարգման իրավունքն «ընդգրկում է ինչպես ծնող դառնալու, այնպես էլ ծնող չդառնալու որոշումները»: Մեծամասնությունը՝ հինգ կողմ և երկու դեմ ձայներով, եզրակացրել է, որ արհեստական բեղմնավորման կարգավորման շուրջ միջազգային համաձայնության բացակայության պայմաններում օրենսդիր մարմնի կողմից հստակ կանոնի ընդունումը, որ նախքան բեղմնավորումն ինչպես տղամարդ, այնպես էլ կին զուգընկերները կարող են հետ կանգնել սաղմի իմպլանտացիայի համաձայնությունից, չի առաջացրել 8-րդ հոդվածի խախտում այն դեպքում, երբ կինը չի կարողացել ունենալ իր կենսաբանական երեխային այն պատճառով, որ նրա նախկին զուգընկերը հետ է կանգնել արհեստական բեղմնավորման ճանապարհով երեխա ունենալու համաձայնությունից: (Ուշադրություն դարձրեք, որ 2006 թ. հուլիսին մեծ պալատն ընդունել է դիմողի՝ 43-րդ հոդվածի շրջանակներում գործը լսելու պահանջը:) Մի քանի շաբաթ անց *«Դիքսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Dickson v United Kingdom)* գործի (2006 թ. ապրիլի 18-ի վճիռ) կապակցությամբ մեկ այլ պալատ զգալի տարակարծություն է դրսևորել բանտում գտնվող ամուսնու կողմից իր կնոջն արհեստականորեն բեղմնավորելու հարցի շուրջ: Չորս հոգուց բաղկացած մեծամասնությունը որոշել է, որ սա ևս մի հարց է, որի վերաբերյալ Եվրոպայում ընդհանուր համաձայնություն գոյություն չունի, և, հետևաբար, պետությունները պետք է օժտված լինեն հայեցողության լայն սահմաններով: Բացի այդ, մեծամասնությունը եզրակացրել է, որ կառավարության որոշումն այս դեպքում կամայական կամ անողջամիտ չի եղել: Երեք չհամընկնող կարծիք հայտնածները որոշել են, որ միայն բացառիկ դեպքերում բանտարկյալներին արհեստական բեղմնավորման թույլտվություն տալու ազգային քաղաքականությունը «նահապետական» է և չի համապատասխանում դիմողների՝ 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքներին:

23 Պրոֆեսոր Ֆելդմանը զգուշացրել է անձնական կյանք հասկացության չափից ավելի ընդլայնման կապակցությամբ.

... Անձնական կյանքի գաղափարը չպետք է այն աստիճան ձգվի, որ կլանի անկախությանը վերաբերող այլ իրավունքները և կորցնի իր իմաստը... Հարկ է հարգել տարբեր հոդվածներով պաշտպանվող շահերի միջև առկա տարբերությունները և յուրաքանչյուրի համար կոնվենցիայով երաշխավորված տարբեր աստիճանի պաշտպանությունը, ինչպես արվում է 3-րդ և 8-րդ հոդվածների համընկնման դեպքում (D Feldman, The Developing Scope of Article 8 of theEuropean Convention on Human Rights [1997] European Human Rights Law Review 265, էջ 273):

Ընտանեկան կյանք

X-ը, Y-ը և Z-ն ընդդեմ ՄԹ-ի (X, Y and Z v UK 1997-II 619 (1997) 24 EHRR 143)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

X-ը ծնվել է 1955 թ. և իգական սեռն արականով փոխած տրանսսեքսուալ անձնավորություն է: 1975 թ. նա ստացել է հորմոնալ բուժում և սկսել ապրել որպես տղամարդ: 1979 թ. նա սկսել է ապրել Y-ի՝ 20-ամյա կնոջ հետ և մի քանի ամիս անց ենթարկվել է սեռափոխության վիրահատության: Դրանից հետո X-ը և Y-ը ապրել են մշտական և կայուն միության մեջ: 1990 թ. X-ը և Y-ը դիմել են հիվանդանոցի էթիկայի կոմիտե, որպեսզի թույլտվություն ստանան Y-ին արհեստական դոնորական բեղմնավորման ենթարկելու համար: Բողոքարկումից հետո կոմիտեն թույլատրել է բեղմնավորումը և պահանջել, որ X-ը ճանաչի երեխայի նկատմամբ իր հայրությունը՝ համաձայն 1990 թ. «Մարդու ֆերտիլության և սաղմնաբանության մասին» օրենքի 28-րդ բաժնի, որում ասված է, որ երբ չամուսնացած կինը ծննդաբերում է արհեստական դոնորական բեղմնավորմամբ հղիանալու արդյունքում, և երբ այդ գործընթացի մեջ ներգրավված է լինում նրա տղամարդ զուգընկերը, ապա իրավաբանական տեսանկյունից երեխայի հայրը նա է, ոչ թե սերմի դոնորը: 1992 թ. Y-ն ունեցել է աղջիկ (դիմող Z): X-ը փորձել է Z-ի ծննդյան վկայականում գրանցվել որպես երեխայի հայր: Այնուամենայնիվ, գլխավոր մատենավարը մերժել է նրա խնդրանքը, քանի որ համարել է, որ որպես հայր կարող է գրանցվել միայն երեխայի կենսաբական հայրը: Գրանցամատյանում Z-ը գրանցվել է X-ի ազգանունով, մինչդեռ նրա հոր ինքնության մասը մնացել է ազատ: Դիմողները դիմել են Եվրոպական հանձնաժողով՝ պնդելով, որ X-ին որպես Z-ի հայր գրանցելու մերժումը հավասար է եղել 8-րդ հոդվածի խախտման և անօրինական խտրականության (14-րդ և 8-րդ հոդվածներ): Հանձնաժողովը որոշել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում (տասներեք կողմ և հինգ դեմ), և անհրաժեշտություն չի եղել քննության առնելու 14-րդ հոդվածը:

...

Ա. «ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ» ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

33. Դիմողները ներկայացրել են, որ Z-ի ծնվելուց հետո իրենք վարել են «ընտանեկան կյանք»՝ 8-րդ հոդվածի իմաստով: Նրանք շեշտել են, որ համաձայն հանձնաժողովի և դատարանի որոշումների՝ որոշիչ նշանակությունը տրվում է ո՛չ թե իրավաբանական կարգավիճակին, այլ սոցիալական իրականությանը: Այսպիսով, կարևոր է նշել, որ X-ը անդառնալիորեն փոխել է իր բազմաթիվ ֆիզիկական հատկանիշները և ֆիզիանսական ու հոգեբանական օժանդակություն ցույց տվել Y-ին և Z-ին: Ելնելով այս ամենից՝ դիմողներն ապրել են ավանդական ընտանիքում:

34. Կառավարությունը չի ընդունել, որ «ընտանեկան կյանքի» հայեցակարգը վերաբերել է X-ի և Y-ի կամ X-ի և Z-ի հարաբերություններին: Նրանք պատճառաբանել են, որ X-ին և Y-ին պետք է նայել որպես համատեղ ապրող երկու կանանց, քանի որ համաձայն ազգային օրենքի՝ X-ը դեռևս կին է եղել, և բժշկական միջամտությամբ բացարձակ սեռափոխությունը հնարավոր չէ: Համաձայն հանձնաժողովի նախադեպային իրավունքի՝ «ընտանիքը» չի կարող ձևավորվել նույն սեռի երկու իրար հետ չկապված անձանցից, այդ թվում նաև՝ լեսբոսական զույգերից (տե՛ս *«X-ը և Y-ն ընդդեմ ՄԹ-ի» (X and Y v UK)* թիվ 9369/81 դիմումի ընդունելիության մասին հանձնաժողովի որոշումը, Որոշումներ և զեկույցներ 32, էջ 220 և *«Կերկիովենն ընդդեմ Նիդեռլանդների» Kerkhoven v Netherlands,* թիվ 15666/89 դիմումի ընդունելիության մասին հանձնաժողովի որոշումը): Բացի այդ, չի կարելի ասել, որ X-ն ունեցել է «ընտանեկան կյանք» Z-ի հետ, քանի որ նա երեխայի հետ արյունակցական կապ չի ունեցել ամուսնության կամ որդեգրության միջոցով:

Դատարանում դատական նիստի ժամանակ կառավարության խորհրդատուն ընդունել է, որ քանի որ X-ը և Y-ը դիմել են և ստացել Z-ի հետ համատեղ բնակություն հաստատելու օրդեր..., ապա դժվար է պնդել, որ 8-րդ հոդվածի նպատակների համար «ընտանեկան կյանք» գոյություն չի ունեցել:

35. Հանձնաժողովը որոշել է, որ X-ի և Y-ի հարաբերությունները չեն կարող հավասարեցվել լեսբոսական զույգերի հարաբերություններին, քանի որ սեռափոխության վիրահատության ենթարկվելուց հետո X-ն ապրել է հասարակությունում որպես տղամարդ: Բացի այն փաստից, որ X-ը ծնունդով գրանցված է եղել որպես կին և, հետևաբար,

իրավաբանորեն անկարող է եղել ամուսնանալու Y-ի հետ կամ գրանցվելու որպես Z-ի հայր, դիմողների իրավիճակը հնարավոր չէ տարբերել «ընտանեկան կյանքի» ավանդական իմաստից:

36. Դատարանը հիշեցնում է, որ 8-րդ հոդվածում ամրագրված «ընտանեկան կյանք» հասկացությունը չի սահմանափակվում միայն ամուսնության հիման վրա ստեղծված ընտանիքներով, այլ կարող է դե ֆակտո ներառել նաև այլ հարաբերություններ (տե՛ս *«Մարքսն ընդդեմ Բելգիայի» (Marckx v Belgium)*, 1979 թ. հունիսի 13-ի վճիռը, շարք A, թիվ 31, էջ 14, պարբ. 31, *«Կիգանն ընդդեմ Իռլանդիայի» (Keegan v Ireland)* 1994 թ. մայիսի 26-ի վճիռը, շարք A, թիվ 290, էջ 17, պարբ. 44 և *«Քրոնն ընդդեմ Նիդերլանդների» (Kroon v Netherlands)* 1994 թ. հոկտեմբերի 27-ի վճիռը, շարք A, թիվ 297-C, էջ 55–6, պարբ. 30): Մի շարք գործոններ (այդ թվում՝ զույգը համատե՞ղ է ապրում, թե՞ ոչ, ինչքա՞ն ժամանակ են նրանք միմյանց հետ հարաբերությունների մեջ, և ցուցաբերե՞լ են միմյանց նկատմամբ պարտավորություններ երեխաներ ունենալու միջոցով կամ որևէ այլ կերպ) կարող են տեղին լինել, երբ որոշվում է, թե արդյոք տվյալ հարաբերության մասին կարելի՞ է ասել, որ այն հավասար է «ընտանեկան կյանքի» (տե՛ս, օրինակ՝ վերը նշված *Քրոնի (Kroon)* վճիռը, նշվ. տեղում):

37. Տվյալ դեպքում դատարանը նկատում է, որ X-ը հանդիսանում է տրանսսեքսուալ անձնավորություն, որը ենթարկվել է սեռափոխության վիրահատության: 1979 թ. նա ապրել է Y-ի հետ, ըստ ամենայնի, որպես նրա տղամարդ զուգընկեր: Զույգը համատեղ դիմել է Y-ին արհեստական դոնորական բեղմնավորման ենթարկելու համար և թույլտվություն ստացել դրա համար: X-ը ներգրավված է եղել այդ ողջ գործընթացի մեջ և Z-ի ծնվելուց հետո հանդես է եկել որպես նրա «հայր»... Այս հանգամանքներում դատարանը կարծում է, որ դե ֆակտո երեք դիմողները միմյանց հետ կապված են ընտանեկան կապով:

Սրանից հետևում է, որ 8-րդ հոդվածը կիրառելի է:

Բ. 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԵՏ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

...

2. ԴԱՏԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՏԵՑՈՒՄԸ

44. Դատարանը նկատում է, որ տրանսսեքսուալ անձանց ծնողական իրավունք տալու առումով համընդհանուր եվրոպական չափորոշիչ գոյություն չունի: Բացի այդ, դատարանում չի հիմնավորվել, որ բարձր պայմանավորվող կողմերի միջև առկա է ընդհանուր մոտեցում, թե ինչպես պետք է արհեստական դոնորական բեղմնավորման ճանապարհով սաղմնավորված երեխայի և նրա հոր դերը կատարող անձի հարաբերություններն ամրագրվեն օրենքում: Իրոք, համաձայն դատարանի ունեցած տեղեկությունների, թեպետ մի քանի տասնամյակ շարունակ բժշկական ճանապարհով վերարտադրողության տեխնոլոգիան Եվրոպայում գոյություն է ունեցել, դրա առաջացրած մի շարք հարցերը, այդ թվում նաև՝ հայրության հարցը, դեռևս վիճելի թեմա է: Օրինակ՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջև համաձայնություն չկա այն հարցի վերաբերյալ, թե արդյոք այդ ճանապարհով սաղմնավորված երեխայի շահերը լավագո՞ւյն ձևով են սպասարկվում սերմի դոնորի անունը գաղտնի պահելու միջոցով, կամ արդյոք այդ երեխան պե՞տք է ունենա դոնորի ինքնությունն իմանալու իրավունք:

Քանի որ այս գործում շոշափված հարցերը վերաբերում են այնպիսի ոլորտների, որտեղ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջև ընդհանրությունները քիչ են, և, ընդհանուր առմամբ, թվում է, թե օրենքն անցումային փուլում է, պատասխանող պետությանը պետք է վերապահվեն հայեցողության լայն սահմաններ:

3. ԱՐԴՅՈՔ ՍՈՒՅՆ ԳՈՐԾՈՒՄ ՊԱՀՊԱՆՎԵ՞Լ Է ԱՐԴԱՐԱՑԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆԸ

45. Դիմողները վիճել են, որ X-ի հոր դերի իրավաբանական ճանաչման բացակայության պատճառով առաջացել են մի շարք հետևանքներ, ինչի հետ հանձնաժողովը համաձայնել է: Միգուցե ամենից առավել սրանից տուժել է երեխայի՝ ընտանիքում պաշտպանված լինելու զգացումը: Բացի այդ, նրա ծննդյան վկայականում X-ի անվան բացակայությունը կարող է անախորժ հետևանքներ ունենալ այն դեպքերում, երբ պահանջվում է ներկայացնել ամբողջական վկայական, օրինակ՝ բժշկի մոտ կամ դպրոցում գրանցվելու, կյանքի ապահովագրության վկայական կամ անձնագիր ստանալու համար: Թեպետ Z-ը եղել է ծնունդով Բրիտանիայի քաղաքացի և իմիգրացիայի և ազգության հարցերի ոլորտում իր կապերը կարող էր ճշտել իր մոր միջոցով, խնդիրներ կարող էին առաջանալ այն դեպքում, երբ X-ը փորձեր աշխատանք գտնել արտասահմանում: Օրինակ՝ նա արդեն ստիպված է եղել հրաժարվել Բոտսվանայում աշխատելու հնարավորությունից, որովհետև նրան տեղեկացրել են, որ Y-ը և Z-ը չեն կարող ճանաչվել որպես «իր խնամակալության տակ գտնվող» անձինք և, հետևաբար, ենթակա չեն որոշակի արտոնությունների (տե՛ս վերը՝ պարբ. 19): Բացի այդ, ի տարբերություն ծնող-երեխա օրենքով ճանաչված հարաբերությունների, X-ի մահվան դեպքում Z-ը չէր կարող Y-ից ժառանգել առանց կտակի թողնված ունեցվածքը և այլ գույքը: X-ի կողմից Z-ի համար բնակության կարգադրություն ստանալու հնարավորությունը ... չի բավարարել հարգանքի պահանջը, քանի որ դա առաջացրել է դատական ծախսեր և

բարեկեցության հարցերով զբաղվող դատական պաշտոնյայի կողմից քննության կատարում, ինչը կարող էր հետք թողել երեխայի վրա:

Համաձայն նրանց բացատրության՝ ակնհայտ է, որ այն իրավաբանական ճանապհումը, որին նրանք ձգտել են հասնել, միջամտություն չէր առաջացնելու այլ անձանց իրավունքներին կամ Միացյալ Թագավորության ծնունդների գրանցման համակարգի հիմնարար վերակազմակերպում չէր պահանջելու, քանի որ 1990 թ. «Մարդու ֆերտիլության և սաղմնաբանության մասին» օրենքով նախատեսվել է, որ ոչ տրանսսեքսուալ տղամարդը կարող է գրանցվել որպես արհեստական դոնորական բեղմնավորման միջոցով իր զուգընկերուհուց ծնված երեխայի հայր:

46. Կառավարությունը նշել է, որ որպես «ընտանիք» համատեղ ապրելու առումով դիմողների նկատմամբ որևէ կերպ սահմանափակումներ չեն կիրառվել, և նրանք հայտնել են, որ իրենց արտահայտած մտահոգությունները մեծ մասամբ տեսական բնույթ են ունեցել: Բացի այդ, բնակության կարգադրություն ստանալու, Z-ի նկատմամբ ծնողական իրավունքներ և պարտավորություններ ձեռք բերելու համար X-ը և Y-ը կարող էին ներկայացնել համատեղ դիմում...

47. Նախ՝ դատարանը նկատում է, որ համայնքը՝ որպես այդպիսին, ընտանեկան իրավունքի ներդաշնակ համակարգի պահպանման շահ ունի, որտեղ առաջնահերթությունը տրվում է երեխայի կենսական շահերին: Այդ առնչությամբ դատարանը նկատում է, որ թեպետ չեն եղել այնպիսի պնդումներ, ըստ որոնց՝ օրենքի այն փոփոխությունները, որոնց դիմողները ձգտել են հասնել, ուղղված են լինելու Z-ի կամ ընդհանրապես արհեստական դոնորական բեղմնավորման արդյունքում ծնված երեխաների շահերի դեմ, պարզ չէ, որ դրանք անհրաժեշտաբար լինելու են հօգուտ այդ երեխաների:

Այս հանգամանքներում դատարանը կարծում է, որ պետությունը կարող է արդարացիորեն զգուշանալ իր օրենքում փոփոխություն կատարելուց, քանի որ հնարավոր է, որ այդ փոփոխությունն անցանկանալի կամ անկանխատեսելի հետևանքներ ունենա Z-ի իրավիճակում գտնվող երեխաների համար: Բացի այդ, անհետևողական լինելու պատճառով այդ օրենքը բաց կլինի քննադատության համար, քանի որ այն հնարավորություն կտա իգական սեռն արականով փոխած տրանսսեքսուալ անձանց օրենքով գրանցվել որպես «հայր», այն դեպքում, երբ այլ իրավաբանական նպատակների համար նրանք դեռևս կմնան որպես կին և կկարողանան ամուսնական միություն կնքել արական սեռի ներկայացուցչի հետ:

48. X-ին օրենքով Z-ի «հայր» չճանաչելու հետևանքով դիմողների կրած վնասը դատարանը պետք է համադրի այս ընդհանուր շահերի հետ:

Դիմողները մատնանշում են հայրության չճանաչման հետևանքով առաջացած մի շարք իրավական հետևանքներ (տե՛ս վերը՝ պարբ 45): Օրինակ՝ նրանք նշում են այն փաստը, որ եթե X-ը մահանա առանց կտակի, ապա Z-ն ինքնաբերաբար ժառանգության իրավունք չի ունենա: Դատարանը նկատում է, այնուամենայնիվ, որ գործնականում այս խնդիրը հնարավոր է կարգավորել X-ի՝ կտակ գրելու միջոցով: Որևէ փաստ չի ներկայացվել, որը ցույց կտար, որ X-ը հանդիսանում է նշված փոխանցելի գույքի նման գույքի սեփականատեր: Նմանապես, Z-ը հանդիսանում է Բրիտանիայի քաղաքացի և իմիգրացիայի և ազգության հարցերի ոլորտում իր կապերը կարող էր ճշտել իր մոր միջոցով: Այս առումով, նա չի տուժի X-ի հետ իրավաբանական հարաբերության բացակայության պատճառով:

Հետևաբար, հաշվի առնելով սույն գործի առնչությամբ ներկայացված փաստերը, դատարանը անհավանական է համարում, որ այս իրավաբանական հետևանքներն անցանկալի դժվարություններ կառաջացնեն:

49. Բացի այդ, դիմողները նշել են, որ Z-ը կարող է տուժել տարբեր սոցիալական և զարգացման դժվարությունների հանդիպելու հետևանքով: Այսպիսով, վիճարկվել է, որ այն իրավիճակները, որոնց դեպքում պահանջվում է ցույց տալ ծննդյան վկայական, կարող էին զգալի մտահոգությունների տեղիք տալ նրան:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ ծննդյան վկայականի մեջ X-ի անունը նշված չի եղել, դատարանն առաջին հերթին նկատում է, որ ո՛չ երեխան, ո՛չ էլ որևէ կողմնակի անձ երբևէ չէր իմանա, որ այդ բացակայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ X-ը ծնունդով պատկանել է իգական սեռին, եթե X-ը և Y-ն իրենք չորոշեին հրապարակել այդ տեղեկությունը: Սրանից հետևում է, որ դիմողները նույնպիսի իրավիճակում են, ինչ ցանկացած այլ ընտանիք, որտեղ «հոր» դերը կատարող անձը ինչ-որ պատճառով գրանցված չէ: Դատարանն ապացուցված չի համարում, որ նման հանգամանքներում երեխաներին կամ ընտանիքներին վերագրվում է առանձնակի խարան:

Երկրորդ՝ դատարանը հիշում է, որ Միացյալ Թագավորությունում վարչական կամ ինքնության հաստատման նպատակներով ծննդյան վկայականն առանձնապես չի կիրառվում և շատ քիչ դեպքերում է, երբ պահանջվում է ներկայացնել ամբողջական ծննդյան վկայականը...

50. Դիմողներին նաև ավելի ընդհանրական գծերով մտահոգել է այն հանգամանքը, որ ընտանիքում Z-ի անձնական ինքնությունը և անվտանգությունը կարող են տուժել X-ին որպես նրա իրավաբանական հայր չճանաչելու հետևանքով:

Այս կապակցությամբ դատարանը նկատում է, որ սոցիալական առումով որևէ հանգամանք չկա, որը կխանգարեր X-ին հանդես գալ որպես Z-ի հայր: Այսպիսով, նա բնակվում է Z-ի հետ՝ Z-ին և Y-ին տրամադրելով զգացմունքային և ֆինանսական օժանդակություն և որպես Z-ի «հայր» ազատ կարող է ներկայանալ ինչպես Z-ին, այնպես էլ մյուսներին, ինչպես նաև Z-ին տալ իր ազգանունը... Բացի այդ, Y-ի հետ միասին նա կարող է դիմել Z-ի համար համատեղ

բնակության կարգադրություն ստանալու համար, որն Անգլիայի օրենքի համաձայն՝ նրան ինքնաբերաբար կօժտի Z-ի նկատմամբ ծնողական պատասխանատվությամբ...

51. Անհնարին է կանխատեսել այն չափը, որով X-ի և Z-ի միջև իրավաբանական կապի բացակայությունն ազդելու է վերջինիս զարգացման վրա: Ինչպես արդեն նշվել է, ներկայումս անորոշություն կա, թե ինչպես կարելի է պաշտպանել Z-ի վիճակում գտնվող երեխաների իրավունքները (տե՛ս վերը՝ պարբ. 44), և դատարանը չպետք է որդեգրի կամ պարտադրի միայն մեկ տեսակետ:

52. Ամփոփենք. հաշվի առնելով, որ տրանսսեքսուալությունն առաջացնում է բարդ գիտական, իրավաբանական, բարոյական և սոցիալական խնդիրներ, որոնց առումով պայմանավորվող պետություններում համընդհանուր մոտեցում չկա, դատարանն այն կարծիքին է, որ այս համատեքստում պատասխանող պետության համար 8-րդ հոդվածը չի կարող նշանակել այնպիսի պարտավորություն, որ պաշտոնապես որպես երեխայի հայր ճանաչի մի անձնավորության, որը չի հանդիսանում նրա կենսաբանական հայրը: Հետևաբար, այն փաստը, որ Միացյալ Թագավորության օրենքը չի նախատեսում X-ի և Z-ի միջև առկա կապի հատուկ իրավաբանական ճանաչում, հավասար չէ այդ դրույթի իմաստով ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի խախտման:

Սրանից հետևում է, որ կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում չի եղել:
...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Միաձայն վճռում է, որ կոնվենցիայի 8-րդ հոդվածը կիրառելի է սույն գործի նկատմամբ:

2. Տասնչորս կողմ և վեց դեմ ձայներով վճռում է, որ 8-րդ հոդվածի խախտում չի եղել...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 8-րդ հոդվածին վերաբերող սույն գործի դեպքում մեծ պալատի մեծամասնությունը կազմում էին նախագահ Ռիսդալը և դատավորներ Բերնհարդտը, Մաթշերը, Փեթիթին, Շպիլմանը, Դե Մեյերը, Վալտիկոսը, Ֆրիլենդը, Բական, Լոպես Ռոշան, Յունգվիրթը, Կուրիսը, Լոհմուսը և Լևիցը: Վեց դատավոր տարբեր պատճառներով չհամընկնող կարծիք է ունեցել: Դատավոր Կասադեվալը, որին միացել են դատավորներ Ռուսոն և Մակարչիկը, համարել է, որ Միացյալ Թագավորությունը թույլ է տվել 8-րդ հոդվածի խախտում, քանի որ համաձայնություն է տվել և ֆինանսավորել X-ի սեռափոխությունը և Y-ի արհեստական դոնորական բեղմնավորումը, ուստի «պետք է ընդունի հետևանքները և ձեռնարկի բոլոր միջոցները, որպեսզի հնարավորություն տա դիմողներին առանց խտրականության իրենց նոր ինքնությանը համապատասխան և իրենց անձնական ու ընտանեկան կյանքի իրավունքի պահպանմամբ ապրել բնականոն կյանքով»: Դատավոր Տոիր Վիլջաուլմսոնի չհամընկնող կարծիքի հիմքում ընկած է եղել այն նկատառումը, համաձայն որի՝ ծնունդների գրանցամատյանում չեն կարող օրինականորեն ընդգրկվել արձանագրություններ, որոնք չեն համապատասխանում կենսաբանական փաստերին (օրինակ՝ արհեստական դոնորական բեղմնավորման արդյունքում ծնված երեխայի «հոր» ինքնությունը): Հետևաբար, նա համարել է, որ X-ին որպես Z-ի «հոր» գրանցման մերժումը հավասար է եղել դիմողների ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի բացակայության: Դատավոր Ֆոյգելը հավատացած է եղել, որ կառավարությունը չի կարողացել բացատրել X-ին գրանցելու մերժումը. մի գործողություն, որը օգուտ կբերեր X-ին, սակայն վնաս չէր պատճառի կողմնակի որևէ անձի: Դատավոր Գոտչևը որոշել է՝ քանի որ դիմողների միջև փաստացի եղել են ընտանեկան կապեր, կառավարությունը պարտավոր էր օժանդակել, որ Z-ն ինտեգրվեր այդ ընտանիքում, և այդ նպատակով X-ին պետք է ճանաչեր որպես նրա օրինական հայր:

2 Դատարանի՝ դե ֆակտո հարաբերությունների լայն սպեկտրը 8-րդ հոդվածով պաշտպանվող «ընտանեկան կյանք» կատեգորիայի մեջ մտցնելու պատրաստակամությունը վկայում է այն մասին, որ այս հայեցակարգի առնչությամբ դատավորների մեկնաբանությունները հիմնվում են սոցիալական վարքագծի մեջ տեղի ունեցող զարգացումների վրա: Դինամիկ մեկնաբանությունն օգնում է երաշխա-

վորելու, որ ամրագրված իրավունքներն ավելորդ չեն դառնում տեղի ունեցող սոցիալական փոփոխության արդյունքում: Այնուամենայնիվ, այս էվոլյուցիոն մոտեցումը հակակշռվում է դատարանի կողմից պետություններին հայեցողության լայն սահմանների տրամադրմամբ (այս դատական միավորը քննարկված է ստորև՝ 663-րդ էջում) այն դեպքերում, որոնք վերաբերում են սոցիալական բարքերին, քանի որ այս հարաբերությունների իրավական և վարչական կարգավորման վերաբերյալ համաձայնություն գոյություն չունի: Այս դեպքում հայեցողության սահմանը եղել է հատկապես լայն, քանի որ խոսքը ինչպես տրանսսեքսուալության, այնպես էլ արագ զարգացող բժշկական տեխնոլոգիայի՝ արհեստական ճանապարհով դոնորական բեղմնավորման մասին է եղել: Դատարանի՝ տրանսսեքսուալ անձնավորություններին վերաբերող նախադեպային իրավունքը ներկայացված է ստորև՝ 601-րդ էջում:

3 Իր մասնավոր կարծիքում հանձնաժողովի անդամը մեկնաբանել է, որ.

Ինչպես և ընդունվել է մի քանի չհամընկնող կարծիք հայտնած դատավորների կողմից, X-ի, Y-ի և Z-ի գործը հստակ առաջացնում է բարոյականության և էթիկայի խնդիրներ: Վերջնական արդյունքն այն է, որ թեպետ ծնողի դերը կատարող անձնավորության և երեխայի միջև արյունակցական, ամուսնական կամ որդեգրման կապերի վրա հիմնված «ընտանեկան կյանքի» շրջանակն ընդլայնվել է և ընդգրկել որոշակի տևողության և պարտավորությունների վրա հիմնված հարաբերություններ, ընտանեկան կյանքի հարգման հայեցակարգով նախատեսված միջոցառումները կենսաբանական և ոչ կենսաբանական ծնողների դեպքում տարբերվում են, ինչպես, օրինակ՝ ժառանգության կամ ինքնաբերական ազդեցությունների առումներով կամ, այլ կերպ ասած, այն իրավական միջոցների առումով, որոնք հոր դերը կատարող անձնավորությանը խնամակալության հարցերում վերապահում են իրավական անվտանգության որոշակի աստիճան [Jane Liddy, The Concept of Family Life under the ECHR [1998] EHRLR 15, էջ 23-4.]

4 *«Քրոնն ընդդեմ Նիդեռլանդների» (Kroon v Netherlands*, A.297-C (1994) 19 EHRR 263) գործում դիմողները վիճարկել են Հոլանդիայի ծնունդների գրանցման համակարգը: Առաջին դիմողը՝ տիկին Քրոնը, 1979 թ. ամուսնացել է մարոկկացի քաղաքացու՝ պրն Օմար Մ'Հալլեմ-Դրիսսի հետ: 1980 թ. վերջին ամուսնությունը խզվել է, և տիկին Քրոնը սկսել է ապրել իր ամուսնուց առանձին: Ըստ պաշտոնական գրանցումների՝ նրա նախկին ամուսինը դուրս է եկել Ամստերդամից 1986 թ.: Դրանից հետո նրա գտնվելու վայրի մասին տեղեկություններ չեն եղել: Երկրորդ դիմողը՝ պրն Ալի Զերրուկը, որը նույնպես Մարոկկոյի քաղաքացի է, դիմողի հետ ծևավորել է կայուն հարաբերություններ, թեպետ նրանք միասին չեն ապրել: 1987 թ. նրանց կապից ծնվել է երրորդ դիմողը՝ Սամիր Մ'Հալլեմ-Դրիսսը: Նա ծննդյան գրանցամատյանում գրանցվել է որպես տիկին Քրոնի և պրն Մ'Հալլեմ-Դրիսսի որդի: Տիկին Քրոնը և պրն Զերրուկը դիմել են գանցումների մատենավարին՝ պահանջելով, որ Սամիրը գրանցվի իր կենսաբանական հոր՝ պրն Զերրուկի անունով: Այնուամենայնիվ, նրանց դիմումը մերժվել է, քանի որ, համաձայն Հոլանդիայի օրենքի, միայն օրինական ամուսինը կարող է վարույթ սկսել իր կնոջից ծնված երեխայի հայրությունից հրաժարվելու վերաբերյալ: Դիմողները պնդել են, որ այս որոշումը չի համապատասխանում 8-րդ հոդվածով երաշխավորված իրենց ընտանեկան կյանքի հարգման իրավունքին: Տասներկու կողմ և վեց դեմ ձայների հարաբերակցությամբ հանձնաժողովը որոշել է, որ տեղի է ունեցել խախտում: Դատարանը մերժել է կառավարության փաստարկը, որ համաձայն 8(1) հոդվածի, դիմողների հարաբերությունները հավասարազոր չեն եղել «ընտանեկան կյանքի»:

Թեպետ, որպես կանոն, համակեցությունը կարող է լինել այդպիսի հարաբերության պարտադիր պայման, բացառիկ դեպքերում կարող են օգտագործվել նաև այլ գործոններ, որոնք ցույց են տալիս, որ հարաբերությունը բավական հաստատուն է, որպեսզի առաջացնի դե ֆակտո «ընտանեկան կապեր»: Այդպես է տվյալ դեպքում, քանի որ 1987 թ. ի վեր տիկին Քրոնը և պրն Զերրուկն ունեցել են չորս երեխա (պարբ. 30):

Մեծամասնությունը (յոթ կողմ և երկու դեմ) վճռել է հօգուտ դիմողների, քանի որ.

Դատարանի կարծիքով՝ «ընտանեկան կյանքի» նկատմամբ հարգանքը պահանջում է, որ կենսաբանական և սոցիալական իրականությունը զերիշխի իրավական կանխավարկածի նկատմամբ, որը, ինչպես սույն գործում, առանց

որևէ մեկին օգուտ տալու՝ ակնհայտորեն հակասության մեջ է թե՛ հաստատված փաստերի, թե՛ խնդրո առարկա անձանց ցանկությունների հետ: Հետևաբար, դատարանը եզրակացնում է, որ նույնիսկ հաշվի առնելով պետությանը վերապահված հայեցողության սահմանները, Նիդեռլանդները չի կարողացել երաշխավորել դիմողներին կոնվենցիայով նախատեսված «հարգանքն» ընտանեկան կյանքի նկատմամբ (պարբ. 40):

5 *«Մարքսն ընդդեմ Բելգիայի» (Marckx v Belgium,* A31 (1979) 2 EHRR 330) գործի դեպքում չամուսնացած մայրը և նրա նորածին աղջիկը, ի թիվս այլոց, բողոքել են Բելգիայի օրենքով ապօրինի երեխաների կարգավիճակից: Ապօրինի երեխաները ճանաչվել են միայն որպես իրենց մոր երեխաներ, եթե վերջիններս պաշտոնապես ճանաչել են իրենց մայրությունը, և օրենքով այսպիսի երեխաները իրենց ծնողների ընտանիքներում մնացել են որպես օտարներ: Դատարանը վճռել է, որ.

Երաշխավորելով ընտանեկան կյանքի հարգման իրավունքը՝ 8-րդ հոդվածը ենթադրում է, որ գոյություն ունի ընտանիք: Այս կարևոր կետի առնչությամբ դատարանը լիովին համաձայն է հանճնաժողովի հաստատած նախադեպային իրավունքին, ըստ որի՝ 8-րդ հոդվածը տարբերություն չի դնում «օրինական» և «անօրինական» ընտանիքների միջև: Այսպիսի տարբերակումը համահունչ չէ «բոլորը» բառի հետ, ինչը հաստատվում է 14-րդ հոդվածով, համաձայն որի՝ «ծննդյան» փաստի հիման վրա կոնվենցիայում ամրագրված իրավունքների և ազատությունների խտրականությունն արգելվում է: Բացի այդ, դատարանը նկատում է, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն միայնակ կնոջը և նրա երեխային վերաբերվում է որպես ընտանիքի, որը ոչնչով չի զիջում մյուս ընտանիքներին (բանաձև (70) 15, 1970 թ. մայիսի 15)… Դատարանի կարծիքով՝ 8-րդ հոդվածի իմաստով «ընտանեկան կյանքը» ներառում է առնվազն մտերիմ ազգականների, օրինակ՝ տատ-պապի և թոռնիկների միջև կապեր, քանի որ այս ազգականները կարող են զգալի դեր խաղալ ընտանեկան կյանքում (պարբ. 31 և 45):

Տարբեր մեծամասնական կազմերով դատարանն այնուհետև վճռել է, որ Բելգիայի օրենքի՝ ազգակցական կապերին և ընտանեկան հարաբերություններին վերաբերող դրույթները խախտել են 8-րդ հոդվածով դիմողների իրավունքները: Համանման մոտեցում է դրսևորվել *«Ջոնսթընն ընդդեմ Իռլանդիայի» (Johnston v Ireland* A.112 (1986) 9 EHRR 203) գործի նկատմամբ: Առաջին դիմողը բաժանվել է իր կնոջից, սակայն չի կարողացել պաշտոնապես ամուսնալուծվել, քանի որ ամուսնալուծությունն արգելված է եղել Իռլանդիայի սահմանադրությամբ: 1971 թ. հետո նա ապրել է երկրորդ դիմողի հետ: Երրորդ դիմողը՝ նրանց դուստրը, ծնվել է 1978 թ.: Դիմողները բողոքել են, որ, ի թիվս այլոց, Իռլանդիայի օրենքով երրորդ դիմողի կարգավիճակի (օրինակ՝ նրա նկատմամբ առաջին դիմողի ծնողական իրավունքների բացակայության, երրորդ դիմողի համար իր երկու ծնողների կողմից որդեգրվելու անհնարինության, իր ծնողներից ժառանգելու նրա սահմանափակ իրավունքի) պատճառով ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքը բացակայել է, ինչը նշանակում է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում: Դատարանը միաձայն վճռել է, որ.

Ինչպես դատարանը նշել է վերոհիշյալ Մարքսի (Marckx) վճռում, ընտանեկան կյանքի նկատմամբ «հարգանքն» այն դեպքում, երբ ընտանեկան կյանքն ընկալվում է որպես մտերիմ ազգականների միջև կապերն ընդգրկող կյանք, ենթադրում է, որ պետությունները պետք է այնպես գործելու պարտավորություն ունենան, որն այս կապերին նորմալ զարգանալու հնարավորություն է տալիս: Դատարանի կարծիքով՝ սույն գործում առաջին և երկրորդ դիմողների և նրանց դստեր միջև բնական ընտանեկան կապերի նորմալ զարգացումը պահանջել է, որ նա իրավաբանորեն և սոցիալապես ունենա նույն կարգավիճակը, ինչ ունի օրինական ամուսնությունից ծնված երեխան: Երրորդ դիմողի ներկա իրավաբանական կարգավիճակի քննությունն ամբողջությամբ ցույց է տալիս, որ այն զգալիորեն տարբերվում է օրինական ամուսնությունից ծնված երեխայի կարգավիճակից: Բացի այդ, ցույց չի տրվել, որ նա կամ նրա ծնողներն այս տարբերությունները վերացնելու կամ նվազեցնելու հնարավորություններ են ունեցել: Ուշադրություն դարձնելով գործի առանձնահատուկ հանգամանքներին, ինչպես նաև անկախ այս ոլորտում Իռլանդիայի ունեցած հայեցողության լայն սահմաններից ... երրորդ դիմողի բնական ընտանեկան կապերն արտացոլող համապատասխան իրավական ռեժիմի բացակայությունը հավասարազոր է ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի բացակայության: Բացի այդ, մտերիմ և ինտիմ հարաբերությունները երրորդ դիմողի և նրա ծնողների միջև այնպիսին են, որ անխուսափելիորեն առաջանում է նաև նրանցից յուրաքանչյուրի ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի խախտում:

Հետևաբար, երեք դիմողների դեպքում տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում... (պարբ. 74-6):

Այնուամենայնիվ, ինչպես մենք տեսել ենք վերը (էջ 535) *«Սլիվենկոն ընդդեմ Լատվիայի» (Slivenko v Latvia)* գործի վերաբերյալ 2003 թ. հոկտեմբերի 9-ի վճռում, մշտական գործող դատարանի մեծ պալատը շատ ավելի նեղ է մոտեցել ընտանեկան կյանքին: Մեծ պալատը մերժել է ընդունել, որ

աղջկա/թոռան և ծնողների/տատ-պապի միջև կապերը հավասար են ընտանեկան կյանքի, քանի որ վերջիններս չեն եղել առաջինների խնամքի տակ (տե՛ս վճռի պարբ. 97): Ազգությամբ ռուս դատավոր Կովլերն իր մասնակի համընկնող և մասնակի չհամընկնող կարծիքում չի համաձայնել մեծամասնության սահմանափակող մոտեցման հետ:

Իմ համեստ կարծիքով՝ իր վճռի 97-րդ պարբերությամբ դատարանը ներգացրել է «ընտանեկան կյանքի» հայեցակարգը՝ որոշելով, որ այն ընդգրկում է միայն «բուն ընտանիքի» միջև կապերը: Այլ կերպ ասած, դատարանը նախընտրել է ընտանիքի ավանդական՝ ամուսնական համաձայնության վրա հիմնված հայեցակարգը, համաձայն որի՝ ամուսնական ընտանիքը բաղկացած է հորից, մորից և նրանց անչափահաս երեխաներից, մինչդեռ չափահաս երեխաները և տատ-պապերն այս շրջանակից դուրս են: Եվրոպական երկրների քաղաքացիական օրենսդրություններում գործածվող այդ հասկացության խիստ իրավաբանական իմաստով սա կարող է ճիշտ լինել, սակայն իր նախադեպային իրավունքի շրջանակներում 8-րդ հոդվածի 1-ին կետին դատարանի տված մեկնաբանությունը բացում է նոր հորիզոններ՝ շեշտը դնելով ավելի լայն ընտանեկան կապերի վրա:

Մարքսի (Marckx) վճռի փաստացի տեքստում, որը մեջբերվել է սույն գործում, դատարանը նկատել է, որ 8-րդ հոդվածի իմաստով «ընտանեկան կյանքն» առնվազն ներառում է կապեր մտերիմ ազգականների միջև, ինչպես օրինակ՝ տատ-պապերի և թոռնիկների միջև, քանի որ այս ազգականները կարող են զգալի դեր խաղալ «ընտանեկան կյանքում»: Դատարանը եզրակացրել է, որ այնպես, ինչպես ըմբռնվում է ընտանեկան կյանքի «հարգման» իրավունքը, այն ենթադրում է, որ պետությունը պարտավոր է գործել այնպես, որը հնարավորություն տա այս կապերին նորմալ զարգանալու» (տե՛ս *«Մարքսն ընդդեմ Բելգիայի» (Marckx v Belgium)*, 1979 թ. հունիսի 13-ի վճիռ, շարք A, թիվ 31, էջ 21, պարբ. 45, տե՛ս նաև *«Սկոցարին և Ջունտան ընդդեմ Իտալիայի» (Scozzari and Giunta v Italy* [GC]), թիվ 39221/98 և 41963/98, պարբ. 221, ECHR 2000-VIII): Այլ կերպ ասած՝ դատարանը կարող էր առնվազն ավելի զգույշ տարբերակում մտցնել խիստ իրավաբանական իմաստով օգտագործվող «ընտանիք» հասկացության և *Մարքսի (Marckx)* վճռում ներկայացված «ընտանեկան կյանք» ավելի լայն հասկացության միջև:

Հետևաբար, սույն վճռում այն պնդումը, որ դիմողները չեն կարող վկայակոչել «ընտանեկան կյանքի» գոյությունը առաջին դիմողի տարեց ծնողների հետ, որոնք չեն մտնում բուն ընտանիքի մեջ, հեռանում է վերը նշված նախադեպային իրավունքից և հաշվի չի առնում ժամանակակից եվրոպական ընտանիքների սոցիոլոգիական և մարդկային կողմերը: (Ես միտումնավոր չեմ հիշատակում մահմեդական և աֆրիկյան ընտանիքները, քանի որ իմ պատճառաբանությունը վերաբերում է այն աշխարհագրական տարածքին, որի վրա տարածվում է դատարանի իրավասությունը:) Հղում կարող է արվել, օրինակ՝ Littre Dictionnaire de la langue francaise-ին, որում famille («ընտանիք») բառը բացատրված է որպես l'ensemble des individus de meme sang qui vivent les uns a cote des autres («միասին ապրող և արյունակցական կապ ունեցող անձանց խումբ»): Եթե նույնիսկ այդ հայեցակարգը անհրաժեշտաբար իրավաբանական հայեցակարգ չէ, արտացոլում է այն անձանց ընկալումները, որոնք ենթակա են մեր դատարանների իրավասությանը:

«Ամուսնական ընտանիքի» նեղ հայեցակարգը (որն իրավաբանական անտրոպոլոգիայում հայտնի է «նուկլեար ընտանիք» անվամբ) դառնում է հնաոճ՝ հաշվի առնելով այն փոփոխությունները, որոնք անդամ պետությունները կատարել են իրենց ընտանեկան օրենսգրքերում: Միաժամանակ, «ընդլայնված ընտանիքների» ավանդույթը, որը խոր արմատներ ունի Արևելյան և Հարավային Եվրոպայի երկրներում, ամփոփված է այդ երկրների հիմնարար օրենքներում: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության (որի քաղաքացիներն են դիմողները) սահմանադրությունում ամրագրված է, որ «տասնութ տարեկանից մեծ երեխաները, որոնք կարող են աշխատել, պետք է հոգ տանեն իրենց ծնողների մասին, որոնք չեն կարող աշխատել» (38-րդ հոդվածի 3-րդ կետ): Համանման դրույթներ հանդիպում են նաև Ուկրաինայի սահմանադրության (51-րդ հոդվածի 2-րդ կետ), Մոլդովայի սահմանադրության (48-րդ հոդվածի 4-րդ կետ) և այլ երկրների սահմանադրությունների մեջ: Սա նշանակում է, որ այդ երկրներում տարեց ծնողներին օգնելու ավանդույթը դրված է ամուր հիմքերի վրա և որպես բարոյական հրամայական՝ ամրագրված սահմանադրության մեջ: Սրանք են եղել այն նկատառումները, որոնց հիման վրա դիմողները, առանց որևէ հաջողության հասնելու, դիմել են Լատվիայի մարմիններին՝ պահանջելով, որ իրենց չբաժանեն ծեր և հիվանդ ծնողներից: Նրանք անկասկած չէին կարող պատկերացնել «ընտանեկան կյանքը», եթե իրենց պետք է մերժեին այդ ազգականների նկատմամբ հոգ տանելու հնարավորությունը: Ի՞նչը կարող է լինել ավելի բնական կամ ավելի մարդկային:

Իմ կարծիքով՝ սրանից հետևում է, որ դիմողների հեռացումը հավասար է եղել չարդարացված միջամտության ոչ միայն նրանց «անձնական կյանքին» և «տանը», այլև առավելապես նրանց «ընտանեկան կյանքին»:

6 *«Աբդուլազիզը, Կաբալեսը և Բալկանդալին ընդդեմ ՄԹ-ի» (Abdulaziz, Cabales and Balkandali v UK,* A.94 (1985) 7 EHRR 471) գործով դիմողները հայտնել են, որ Բրիտանիայի ներգաղթի մարմինների կողմից իրենց օտարերկրացի ամուսիններին ՄԹ մուտք գործելու թույլտվություն չտալը, ի թիվս այլոց, առաջացրել է 8-րդ հոդվածով երաշխավորված իրենց ընտանեկան կյանքի իրավունքի խախտում: Բրիտանիայի կառավարությունը, ի պաշտպանություն իրեն, պնդել է, որ տիկին Կաբալեսի ամուսնությունն օրենքի ուժ չի ունեցել Ֆիլիպիններում (այն երկրում, որտեղ տեղի է ունեցել նրանց ամուս-

նության արարողությունը), քանի որ չի հաստատվել վկայականով: Այնուամենայնիվ, դատարանը վճռել է, որ.

... երաշխավորելով ընտանեկան կյանքի հարգման իրավունքը՝ 8-րդ հոդվածը «ենթադրում է ընտանիքի գոյություն»: Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ ծրագրված ողջ ընտանեկան կյանքն ամբողջովին դուրս է մնում դրա շրջանակներից: Ինչպիսի այլ նշանակություն էլ որ ունենա «ընտանիք» բառը, այն ամեն դեպքում պետք է ընդգրկի հարաբերություններ, որոնք առաջանում են օրինական և իսկական ամուսնությունից, որպիսին կնքվել է պրն և տիկին Աբդուլազիզների ու պրն և տիկին Բալկանդալիների միջև... Պրն և տիկին Կաբալեսների միությունը կնքվել է ամուսնական արարողության միջոցով, և դատարանին ներկայացված փաստերը ցույց են տալիս, որ նրանք հավատում են, որ ամուսնացած են և անկեղծորեն ցանկանում են համատեղ ապրել՝ վարելով բնականոն ընտանեկան կյանք: Եվ իրոք, նրանք այդպես էլ հետագայում վարվել են: Այդ հանգամանքներում, այսպիսով, ստեղծված հարաբերությունները բավարար են 8-րդ հոդվածի կիրառության համար (պարբ. 62 և 63):

Հետևաբար, դատարանին ավելի հետաքրքրել է հարաբերությունների բովանդակությունը, քան դրանց պաշտոնական կարգավիճակը: Դատարանը միաձայն որոշել է, որ դիմողների՝ 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները չեն խախտվել, քանի որ «չի կարելի համարել, որ 8-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը ներառում է պայմանավորվող պետության ընդհանուր պարտավորություն՝ հարգելու ամուսնացած զույգերի՝ բնակության երկրի ընտրությունը, ինչպես և չի ներառում պարտավորություն՝ տվյալ երկրում ընդունելու այդ երկրի քաղաքացի չհանդիսացող նրանց ամուսիններին» (պարբ. 68): Սակայն ՄԹ-ն խախտել է 14-րդ հոդվածը՝ 8-րդ հոդվածի համակցությամբ, քանի որ նրա ներգաղթի կանոնները անարդարացիորեն սեռի հատկանիշով խտրական վերաբերմունք են դրսևորել դիմողների նկատմամբ (տղամարդկանց համար ավելի հեշտ է մուտքի թույլտվություն ստանալ իրենց կանանց համար):

7 Բաժանված ծնողի և նրա երեխայի միջև հարաբերությունների բնույթը և «ընտանեկան կյանքի» հայեցակարգը դատարանն ուսումնասիրել է *«Բերեհաբն ընդդեմ Նիդեռլանդների» (Berrehab v Netherlands* A.138 (1988) 11 EHRR 322) գործում: Դիմողը եղել է Մարոկկոյի քաղաքացի, 1977 թ. ամուսնացել է Հոլանդիայի քաղաքացու՝ տիկին Կոստերի հետ: Ամուսնությունից հետ Հոլանդիայի կառավարությունը թույլ է տվել, որ նա մուտք գործի և աշխատի երկրում՝ «Նիդեռլանդներում իր կնոջ հետ ապրելու միակ նպատակով»: 1979 թ. նրանք բաժանվել են, որից քիչ ժամանակ անց կինը ծննդաբերել է նրա դստերը: Դիմողը տեսակցել է իր դստերը շաբաթական չորս օր, մի քանի ժամով և հոգացել նրա ուսման և ապրուստի ծախսերը: 1983 թ. դիմողն արտաքսվել է Նիդեռլանդներից, քանի որ երկրում նրա գտնվելու միակ թույլատրելի պատճառն այլևս գոյություն չի ունեցել: Երկու տարի անց նա կրկին ամուսնացել է տիկին Կոստերի հետ, որից հետո նրան կրկին թույլատրվել է իր կնոջ հետ միասին ապրել Նիդեռլանդներում: Պարոն Բերեհաբը պնդել է, որ իր արտաքսումը հավասար է եղել իր և իր աղջկա ընտանեկան կյանքի հարգման իրավունքի խախտման: Իր վճռում դատարանը.

... համակեցությունը չի դիտում որպես ծնողների և նրանց անչափահաս երեխաների միջև ընտանեկան կյանքի sine qua non [պարտադիր պայման]: Դատարանը վճռել է, որ ամուսինների միջև օրինական և ճշմարիտ ամուսնական միության (որպիսին կնքվել էր պրն և տիկին Բերեհաբների միջև) միջոցով ստեղծված հարաբերությունը պետք է համարվի «ընտանեկան կյանք» (տե՛ս *«Աբդուլազիզն ընդդեմ ՄԹ-ի» (Abdulaziz v UK* A.94 (1985)): 8-րդ հոդվածի հիմքում ընկած ընտանիքի հայեցակարգից բխում է, որ այդ միությունից ծնված երեխան ipso jure [օրենքի ուժով] հանդիսանում է այդ հարաբերության մասը: Հետևաբար, երեխայի ծննդյան պահից և միայն ծննդյան փաստով նրա և ծնողների միջև կապ կա, որը հավասար է «ընտանեկան կյանքի», եթե նույնիսկ ծնողները միասին չեն ապրում: Հետագա իրադարձությունները, իհարկե, կարող են առաջացնել այդ կապի խզում, սակայն տվյալ դեպքում նման բան տեղի չի ունեցել:

... Պրն Բերեհաբը տեսակցել է իր դստերը շաբաթվա մեջ չորս անգամ... նրա հետ հանդիպման հաճախականությունը և կանոնավորությունը ցույց են տալիս, որ նա մեծ նշանակություն է տվել դրանց: Հետևաբար, չի կարելի ասել, որ նրանց միջև «ընտանեկան կապերը» եղել են խզված (պարբ. 21):

Դատարանի մեծամասնությունը՝ վեց կողմ և մեկ դեմ ձայների հարաբերակցությամբ, եզրակացրել է, որ պրն Բերեհաբի և նրա դստեր միջև սերտ կապի պարագայում նրա արտաքսումը Հոլանդիայի

կառավարության կողմից տրված համաչափ պատասխան չի եղել, և նրա գործողությունները չեն կարող արդարացվել 8(2) հոդվածով որպես Նիդեռլանդների տնտեսական բարեկեցության համար անհրաժեշտ քայլ:

8 Դատարանն առնչվել է նաև մի շարք համանման գործերի, որոնց դեպքում քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղավոր ճանաչված օտարերկրացիները պնդել են, որ իրենց տրված արտաքսման կարգադրությունները և այդ երկրից իրենց հեռացումը խախտում են կամ կխախտեն իրենց ընտանեկան և անձնական կյանքի հարգման իրավունքը: Օրինակ՝ *«Մուստաքիմն ընդդեմ Բելգիայի» (Moustaquim v Belgium* (1991) 13 EHRR 802, A.193) գործում դիմողը եղել է Մարոկկոյի քաղաքացի, որը մոտ երկու տարեկան հասակում իր մոր հետ Բելգիա է ժամանել, որպեսզի միանա այդ երկիր ներգաղթած իր հորը, որն այնտեղ մսի խանութ ուներ: Նրա յոթ քույրերից և եղբայրներից երեքը ծնվել են Բելգիայում, և նրա ավագ եղբայրներից մեկն ունեցել է Բելգիայի քաղաքացիություն: Մինչև իր արտաքսման օրը դիմողն ունեցել է կացության թույլտվություն: Թեպետ դիմողը դեռևս անչափահաս է եղել (մինչև 1981 թ. սեպտեմբեր ամիսը), Լիեժի անչափահասների դատարանը նրան ներկայացրել է 147 մեղադրանք, որոնցից 82-ը՝ ծանր գողություն կատարելու համար: Այս մեղադրանքների կապակցությամբ նրա համար արվել են տարբեր վերահսկողական բնույթի կարգադրություններ: 1982 թ. Լիեժի վերաքննիչ դատարանը Մուստաքիմին մեղավոր է ճանաչել քսաներկու տարբեր հանցագործություններ կատարելու մեջ, այդ թվում նաև՝ ծանրացուցիչ հանգամանքներում գողություն կատարելու չորս դեպքի և ծանրացուցիչ հանգամանքներում գողության տասներկու փորձերի մեջ՝ դատապարտելով նրան երկու տարուց ավելի տևողությամբ ազատազրկման: 1983 թ. ընթացքում արդարադատության նախարարությունը դիմողի գործը հղել է Օտարերկրացիների հարցերով խորհրդատվական խորհրդին: Խորհուրդը եզրակացրել է, որ դիմողի արտաքսումն արդարացված է օրենքով, սակայն «աննպատակահարմար»՝ նրա տարիքի և այն փաստի պատճառով, որ նրա ողջ ընտանիքը, ներառյալ հայրը, մայրը, քույրերը և եղբայրները բնակվելիս են եղել Բելգիայում: Այնուամենայնիվ, 1984 թ. ընդունվել է թագավորական կարգադրություն, համաձայն որի՝ Մուսթաքիմին պահանջ է ներկայացվել դուրս գալ Բելգիայից և տասը տարվա ընթացքում այդ երկիր չվերադառնալ: Վերջին հաշվով, Conseil d'Etat- ը [Պետական խորհուրդը] հաստատել է, որ այդ կարգի ընդունումը բխել է հանրային անվտանգության շահից: Դիմողը բողոքել է հանձնաժողովին, որ Բելգիայից նրա արտաքսումը, ի թիվս այլոց, խախտել է 8-րդ հոդվածով նրա ընտանեկան և անձնական կյանքի հարգման իրավունքը: Հանձնաժողովը, տասը կողմ և երեք դեմ ձայներով, կարծիք է հայտնել, որ տեղի է ունեցել այդ հոդվածի խախտում: Դատարանը որոշել է, որ.

Պարոն Մուստաքիմն ապրել է Բելգիայում, որտեղ բնակվել են նաև նրա ծնողները և յոթ քույրերն ու եղբայրները: Այն միջոցառումը, որից նա բողոքում է, բաժանել է նրան նրանցից ավելի քան հինգ տարով, թեպետ նա փորձել է կապի մեջ մնալ նրանց հետ նամակագրության միջոցով: Հետևաբար, հանրային մարմինը միջամտել է ընտանեկան կյանքի հարգման իրավունքին, որը երաշխավորված է 8-րդ հոդվածի 1-ին կետով (պարբ. 36):

Արտաքսման կարգադրությունը «համապատասխանել է օրենքին» և իրականացվել օրինական նպատակով՝ կանխելով անկարգությունը: Այնուամենայնիվ, դատարանի մեծամասնությունը՝ յոթ կողմ և երկու դեմ ձայներով, որոշել է, որ դա «անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում»:

Դատարանը որևէ ձևով չի թերագնահատում պայմանավորվող պետությունների հասարակական կարգը պահպանելու, մասնավորապես՝ լավ հաստատված միջազգային իրավունքի և պայմանավորվող պարտավորությունների շրջանակներում օտարերկրացիների մուտքի, կացության և արտաքսման ոլորտում իրենց իրավունքներն իրականացնելու մտահոգությունը... Բելգիայում պրն Մուստաքիմի կատարած ենթադրյալ իրավախախտումները բնորոշվում են մի շարք առանձնահատկություններով: Դրանք վերաբերում են այն ժամանակահատվածին, երբ դիմողը դեռևս եղել է անչափահաս... Բացի այդ, այն ժամանակ, երբ տրվել է արտաքսման կարգադրությունը, դիմողի մոտ ազգականները ... միաժամանակ արդեն բնակվելիս են եղել Լիեժում... Պարոն Մուստաքիմն ինքը երկու տարեկան էլ չի եղել, երբ տեղափոխվել է Բելգիա: Այդ ժամանակից ի վեր նա բնակվել է այնտեղ մոտ քսան տարի իր ընտանիքի հետ կամ

նրանցից ոչ հեռու: Նա Մարոկկո է վերադարձել միայն երկու անգամ՝ արձակուրդներին: Իր ողջ ուսումը նա ստացել է ֆրանսերեն: Նրա ընտանեկան կյանքը, այսպիսով, լրջորեն խաթարվել է նրա դեմ ձեռնարկված միջոցառման հետևանքով, որն Օտարերկրացիների հարցերով խորհրդատվական խորհուրդը համարել է «աննպատակահարմար»: Հաշվի առնելով այս տարբեր հանգամանքները, տպավորություն է ստեղծվում, որ դիմողների ընտանեկան կյանքի հարգման առումով չի ապահովվել շահերի համապատասխան հավասարակշռություն, և այդպիսով ձեռնարկված միջոցն անհամաչափ է եղել հետապնդվող օրինական նպատակին: Հետևաբար, տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում (պարբ. 43-6):

Սրան հակառակ, *«Էլ Բուժահդին ընդդեմ Ֆրանսիայի» (El Boujaidi v France* (1997) 30 EHRR 223, 1997-VI 1980) գործում դատարանը որոշել է, որ արտաքսումը չի խախտել դիմողի 8-րդ հոդվածով սահմանված իրավունքները: Այս դիմողը նույնպես ծնվել էր Մարոկկոյում, 1967 թ. և հանդիսացել այդ պետության քաղաքացի: 1974 թ. նա իր մոր և չորս քույրերի ու եղբայրների հետ մեկնել է Ֆրանսիա՝ իրենց ընտանիքի հորը միանալու նպատակով: 1987 թ. Աննեքիի քրեական դատարանը դատապարտել է նրան երեսուն ամսվա բանտարկության՝ հերոինի վաճառքով զբաղվելու համար: 1989 թ. Լիոնի վերաքննիչ դատարանը դատապարտել է նրան վեց տարվա ազատազրկման՝ մեղավոր ճանաչելով նրան հերոինի վաճառքով և ապօրինի մաքսանենգությամբ զբաղվելու մեջ: Դրանից բացի, դատարանը հաստատել է դիմողին ընդմիշտ արտաքսելու կարգադրությունը: Դիմողը ազատ է արձակվել բանտից 1991 թ., սակայն շարունակել անօրինականորեն մնալ Ֆրանսիայում: Այդ ժամանակահատվածում ձերբակալվել է թալանի փորձ կատարելու կասկածանքով: Նա դատապարտվել է մեկ տարվա ազատազրկման այդ հանցագործության կատարման համար: 1993 թ. նա խնդրել է Լիոնի վերաքննիչ դատարանին չեղյալ հայտարարել իր արտաքսման կարգադրությունը, քանի որ ապրել է ֆրանսիացի կնոջ՝ տիկին Մ-ի հետ, որը 1993 թ. հուլիսի 6-ին ծննդաբերել է իր երեխային: Դատարանը մերժել է դիմողի պահանջը, և կարգադրությունն ուժի մեջ է դրվել 1993 թ. օգոստոսին: Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ Ֆրանսիայի տարածքից իր արտաքսումն առաջացրել է 8-րդ հոդվածի խախտում: Հանձնաժողովը՝ տասնմեկ կողմ և երկու դեմ ձայներով, որոշել է, որ խախտում տեղի չի ունեցել: Ինչ վերաբերում է այն հարցին՝ եղե՞լ է միջամտություն դիմողի անձնական և ընտանեկան կյանքին, թե՞ ոչ, դատարանը վճռել է, որ այդ հարցը.

... որոշելու համար դատարանը պետք է հիմք ընդունի իրերի այն դրությունը, որը գոյություն է ունեցել այն օրը, երբ արտաքսման կարգադրությունը դարձել է վերջնական... Այսինքն՝ 1989 թ. սկզբին... Հետևաբար, պրն Էլ Բուժահդին չէր կարող վկայակոչել տիկին Մ.-ի հետ իր հարաբերությունները և այն փաստը, որ ինքը հանդիսանում է նրա երեխայի հայրը, քանի որ այդ հանգամանքներն առաջացել են այդ օրվանից շատ ժամանակ անց... Այնուամենայնիվ, դատարանը նկատում է, որ նա Ֆրանսիա է եկել 1974 թ., երբ եղել է ընդամենը յոթ տարեկան և բնակվել այնտեղ մինչև 1993 թ. օգոստոսի 26-ը: Իր ուսումը նա հիմնականում ստացել է այնտեղ և այնտեղ էլ աշխատել է: Բացի այդ, նրա ծնողները, երեք քույրը և եղբայրը, որոնց հետ նրա կապի պահպանումը վեճի առարկա չէ, բնակվում են այնտեղ... Հետևաբար, դատարանը կասկած չունի, որ արտաքսման կարգադրության կիրառումը հավասար է եղել միջամտության դիմողի անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքին (պարբ. 33):

Դատարանը որոշել է, որ կարգադրությունը եղել է «օրենքին համապատասխան» և ունեցել «անկարգության և հանցագործության կանխման» օրինական նպատակ: Դատարանը որոշել է, թե արդյոք կարգադրությունն անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում հետևյալ կերպ.

... մինչ նա պնդել է, որ մերձավոր ընտանիք չունի Մարոկկոյում, չի հայտնել, որ չի տիրապետում արաբերենին և նախքան արտաքսման կարգադրության կիրառումը երբեք չի վերադարձել Մարոկկո: Թվում է նաև, որ նա երբևէ ցանկություն չի հայտնել ձեռք բերելու Ֆրանսիայի քաղաքացիություն: Հետևաբար, թեպետ նրա ընտանիքի մեծամասնությունը և սոցիալական կապերը գտնվում են Ֆրանսիայում, չի հիմնավորվել, որ նա կորցրել է իր ծագման երկրի հետ բոլոր կապերը... Բացի այդ, դիմողը դատապարտված է եղել նախկինում՝ ... 1987 թ. հերոինի վաճառքով զբաղվելու համար, երբ Լիոնի վերաքննիչ դատարանը դատապարտել է նրան վեց տարվա ազատազրկման և թմրանյութերի գործածության և թմրանյութերի մաքսանենգությամբ զբաղվելու համար կարգադրել Ֆրանսիայի տարածքից նրա ընդմիշտ արտաքսումը: Ազատ արձակվելուց հետո և այն ժամանակաընթացքում, երբ նա օրենքին հակառակ գտնվել է Ֆրանսիայում, շարունակել է ապրել հանցավոր կյանքով՝ կատարելով թալանի փորձ: Այդ հանցագործության լրջությունը, որի համար

դիմողի նկատմամբ կիրառվել է այդ միջոցը, և նրա հետագա վարքագիծը նրա դեմ ուղղված էական հանգամանքներ են (պարբ. 40):

Հետևաբար, դատարանի մեծամասնությունը՝ ութ կողմ և մեկ դեմ ձայներով, վճռել է, որ դիմողի նկատմամբ ընդմիշտ արտաքսման կարգադրության կարգի կիրառումը անհամաչափ միջոց չի եղել: Դատավոր Ֆոյգելը գրել է առանձին կարծիք, որում միանգամայն այլ մոտեցում է շարադրել դիմողի իրավիճակում գտնվող անձանց վերաբերյալ.

Պարոն Էլ Բուժաիդին պատկանում է «ինտեգրված օտարերկրացիների» կամ «երկրորդ սերնդի ներգաղթյալների» դասին: Որպես այդպիսին՝ նա իր բնակության երկիրն իր ազատ կամքով չի ընտրել ու դաստիարակություն, կրթություն և այլն ստացել է նույն պայմաններում, ինչ Ֆրանսիայի քաղաքացիները:

... օտարերկրացիները, որոնք իրենց ողջ կամ գրեթե ողջ կյանքն անց են կացրել տվյալ պետությունում, իրենց արտաքսման առումով սկզբունքորեն պետք է արժանանան նույն մոտեցմանը, որին արժանանում են այդ երկրի քաղաքացիները... Այս սկզբունքի գործուն հետևանքը կլիներ այն, որ բացի արտակարգ դեպքերից, ինտեգրված օտարերկրացիները ենթակա չէին լինի արտաքսման:

... Բնակության երկրի քրեական օրենքն ընդհանուր առմամբ պետք է բավարար լինի քրեական հանցագործություններ կատարած ինտեգրված օտարերկրացիներին պատժելու համար, ինչպես որ այն բավարար է համարվում քրեական հանցագործություններ կատարած այդ երկրի քաղաքացիներին պատժելու համար (պարբ. 2-4):

Հստակ է, որ եթե դատարանը որդեգրեր այս մոտեցումը, այն զգալի պոտենցիալ ազդեցություն կունենար աշխարհամասի այն պետությունների վրա, որտեղ բնակվում են օտարերկրացի «հրավիրյալ աշխատողների» հոծ համայնքներ:

Դատարանի վճիռներն այս գործերում բացահայտում են, որ դիմողների «անձնական և ընտանեկան կյանքի» աստիճանը և նրանց արտաքսման համաչափությունը որոշելու համար դատարանն օգտագործել է գործոնների համալիր մատրից: «Ընտանեկան կյանքի» վրա ազդող հարցերը ներառում են դիմողի ծնողների, ինչպես նաև նրա քույրերի և եղբայրների բնակության վայրը, նրանց և դիմողի միջև շփման աստիճանը և այն ժամանակը, որի ընթացքում նրանք և դիմողը ապրել են ընդունող երկրում: Սակայն համաչափությունը որոշելու համար հաշվի առնվող գործոններն ընդգրկում են դիմողի տարիքն այն ժամանակ, երբ նա կատարել է հանցագործությունը/ հանցագործությունները, նրա կատարած հանցագործության/ հանցագործությունների թիվը և բնույթը, դիմողի՝ իր քաղաքացիության երկիր այցերի հաճախականությունը, դիմողի՝ իր ազգային պատկանելության երկրի լեզվի իմացության աստիճանը, որի քաղաքացին նա հանդիսանում է, և դիմողի՝ ընդունող երկրի քաղաքացիություն ստանալու ցանկությունը: Շերլոքը նկատել է, որ որոշակի անհարմարություն կա «... դատարանի որդեգրած գործից գործ մոտեցման պատճառով, որը հավասարակշռում է նրան ներկայացված գործի բոլոր առանձնահատուկ հանգամանքները» (A Sherlock, Deportation of Aliens and Article 8 of the ECHR (1998) 23 EL Rev HR62, էջ70):

Այնուամենայնիվ, մշտական գործող դատարանը շարունակել է կիրառել վերոհիշյալ մեթոդաբանությունը: 8-րդ հոդվածի խախտման մեկ այլ օրինակ է *«Ռադովանովիչն ընդդեմ Ավստրիայի» (Radovanovic v Austria)* գործը, որի վերաբերյալ վճիռն ընդունվել է 2004 թ. հուլիսի 22-ին: Դիմողը եղել է Սերբիայի և Մոնտենեգրոյի քաղաքացի, ծնվել է Վիեննայում 1979 թ., նրա ծնողները, լինելով նախկին Հարավսլավիայի քաղաքացիներ, օրինականորեն բնակվել են Ավստրիայում: Նա իր ծնողների հետ Վիեննայում ապրել է յոթ ամիս, որից հետո մեկնել է Հարավսլավիա՝ տատի և պապի հետ բնակվելու համար: Նա մնացել է այդ երկրում մինչև 10 տարեկան դառնալը, որից հետո վերադարձել է Ավստրիա՝ ծնողների հետ բնակվելու նպատակով: Միջնակարգ կրթությունը ստացել է Ավստրիայում: 1997 թ. Վիեննայի անչափահասների դատարանը նրան մեղավոր է ճանաչել ծանրացուցիչ հանգամանքներում կողոպուտ և թալան կատարելու համար՝ դատապարտելով երեսուն ամսվա բանտարկության, որից քսանչորս ամիսը կասեցվել է: Այնուհետև, Վիեննայի դաշնային ոստիկանության գրասենյակը դիմողին տվել է կացության մերժման օրինական կարգադրություն, որն անսահմանափակ ժամկետով արգելել է նրան մնալ/բնակվել Ավստրիայում: Ազգային դատարանները հաստատել են կարգադրության օրինականությունը, և 1998 թ. դիմողը արտաքսվել է Սերբիա և Չեռնոգորիա: Պալատը միաձայն եզրակացրել է հետևյալը.

33. Դատարանը նկատում է, որ իր արտաքսման ժամանակ դիմողը եղել է չամուսնացած երիտասարդ անձնավորություն, որը թեպետև ծնվել է Ավստրիայում, չի պատկանել ներգաղթյալների երկրորդ սերնդին և մշտապես չի բնակվել այնտեղ մինչև տասը տարեկան դառնալը: Հաշվի առնելով երկիր գալու ժամանակ նրա փոքր տարիքը՝ դատարանը գնահատելու է միջամտության անհրաժեշտությունը՝ կիրառելով այն նույն չափանիշները, որոնք սովորաբար կիրառում է ընդունող երկրում իրենց ընտանիքը դեռևս չկազմած երկրորդ սերնդի ներգաղթյալների նկատմամբ: Այդ չափանիշները այնքանով, որքանով նյութական են, ներառում են դիմողի կատարած արարքի բնույթն ու ծանրության աստիճանը, ինչպես նաև ընդունող երկրում նրա գտնվելու տևողությունը: Բացի այդ, պետք է հաշվի առնվեն ընդունող երկրում դիմողի ընտանեկան և ուսման, ինչպես նաև պատանեկության որոշիչ տարիներն այդտեղ անցկացնելու միջոցով հաստատած սոցիալական կապերը (տե՛ս *«Բենհեբան ընդդեմ Ֆրանսիայի» (Benhebba v France)*, թիվ 53441/99, պարբ. 32–3, 15 հունիսի, 2003 թ.):

34. Դատարանը կարծում է, որ ներկա գործը պետք է տարբերակվի երկրորդ սերնդի ներգաղթյալներին վերաբերող մի շարք այլ գործերից, որոնց դեպքում դատարանը որոշել է, որ կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում չի եղել (տե՛ս *«Բուժլիֆան ընդդեմ Ֆրանսիայի» (Boujlifa v France)* 1997 թ. հոկտեմբերի 21-ի վճիռը, Զեկույցներ 1997-VI, էջ 2264, պարբ. 42, *«Բուշելկիան ընդդեմ Ֆրանսիայի» (Bouchelkia v France)* 1997 թ. հունվարի 29-ի վճիռը, Զեկույցներ 1997-I, էջ 65, պարբ. 50–1, *«Էլ Բուժաիդին ընդդեմ Ֆրանսիայի» (El Boujaidi v France)* 1997 թ. սեպտեմբերի 26-ի վճիռը, Զեկույցներ 1997-I, էջ 63, պարբ. 40–1 և *«Դալիան [ընդդեմ Ֆրանսիայի»* 1998-I] *(Dalia [v France* 1998-I]), էջ 92, պարբ. 53–4): Այս բոլոր գործերը վերաբերել են երկրորդ սերնդի ներգաղթյալներին, որոնք ընդունող երկիր են եկել վաղ տարիքում և լուրջ հանցագործություններ կատարելու համար դատապարտվել երկարատև ոչ պայմանական ազատազրկումների: Բացի այդ, դրանք վերաբերել են թմրանյութերի հետ կապված իրավախախտումներին, որոնք այն կարգի հանցագործություններ են, որոնց առնչությամբ դատարանն ըմբռնումով է մոտեցել ազգային մարմինների կողմից դրանց տարածմանն ակտիվորեն մասնակցած անձանց նկատմամբ դրսևորած անողոք վերաբերմունքին (տե՛ս *«Ս-ն ընդդեմ Բելգիայի» (C. v Belgium)* 1996 թ. օգոստոսի 7, Զեկույցներ 1996-III, էջ 924, պարբ. 35, վերը մեջբերված *Դալիայի (Dalia)* գործը, էջ 92, պարբ. 54, *«Բաղլին ընդդեմ Ֆրանսիայի» (Baghli v France)*, թիվ 34374/97, 30 նոյեմբերի 1999, պարբ. 48 վերջում, ECHR 1999-VIII և *«Յիլմազն ընդդեմ Գերմանիայի» (Yilmaz v Germany),* թիվ 52853/99, պարբ. 46, 17 ապրիլի 2003 թ.): Սույն գործի դեպքում, չնայած դիմողի՝ Ավստրիայում գտնվելու կարճ տևողությանը, դատարանը զգալի նշանակություն է տալիս այն փաստին, որ նա մեղավոր չի ճանաչվել ծանրացուցիչ հանգամանքներում թալան կատարելու մեջ և դատապարտվել է միայն վեց ամսվա ոչ պայմանական ազատազրկման, մինչդեռ քսանչորս ամսվա պատիժը պայմանականորեն կասեցվել է:

35. Դիմողի դեպքում Ավստրիայի իշխանությունները հավասարակշռել են նրա անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքը հանրային շահի հետ և նախապատվությունը տվել վերջինին՝ անկարգությունը և հանցագործությունը կանխելու նպատակով: Առանց անտեսելու իրավախախտումների լրջությունը, դատարանը նկատում է, այնուամենայնիվ, որ դիմողը կատարել է դրանք անչափահաս տարիքում, չի ունեցել դատվածության պատմություն, և նրան նշանակված համեմատաբար խիստ պատժի մեծ մասն անչափահասների դատարանի կողմից պայմանականորեն կասեցվել է: Հետևաբար, դատարանի համար համոզիչ չեն կառավարության այն փաստարկը և վարչական մարմինների այն գնահատականը, ըստ որոնց՝ դիմողը այնպիսի լուրջ վտանգ է ներկայացրել հասարակական կարգին, որ առաջացել է նրա նկատմամբ վերոհիշյալ միջոցը կիրառելու անհրաժեշտություն (տե՛ս *mutatis mutandis «Էզուհի ընդդեմ Ֆրանսիայի» (Ezzouhdi v France)*, թիվ 47160/99, պարբ. 34, 13 փետրվարի 2001 թ.):

36. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողը ծնվել է Ավստրիայում, որտեղ և ավելի ուշ բնակություն է հաստատել իր ընտանիքի հետ և ստացել միջնակարգ և պրոֆեսիոնալական կրթություն, ինչպես նաև նրա ընտանիքն արդեն երկար ժամանակ օրինականորեն գտնվել է Ավստրիայում, և իրավախախտումը կատարելու ժամանակ դիմողը ինքն էլ ունեցել է անսահմանափակ կացության կարգավիճակ, միաժամանակ նկատի ունենալով, որ Սերբիայում և Չեռնոգորիայում նրա տատի և պապի մահվանից հետո նա որևէ այլ ազգական այդ երկրում չի ունեցել, դատարանը կարծում է, որ նրա ընտանեկան և սոցիալական կապերն Ավստրիայի հետ եղել են շատ ավելի ամուր, քան Սերբիայի և Չեռնոգորիայի հետ:

37. Հետևաբար, դատարանը կարծում է, որ սույն գործի հանգամանքներում նրա կացության վրա անսահմանափակ տևողությամբ արգելք դնելը եղել է չափից ավելի խիստ միջոց: Շատ ավելի նվազ ուժգնություն ունեցող միջոցը, օրինակ՝ սահմանափակ ժամկետով կացության արգելումը, կարող էր համարվել բավարար: Դատարանն այսպիսով եզրակացնում է, որ դիմողի նկատմամբ կիրառելով անսահմանափակ ժամկետով կացության արգելք՝ Ավստրիայի իշխանությունները չեն ապահովել գոյություն ունեցող շահերի հավասարակշռությունը, և կիրառված միջոցները եղել են անհամաչափ այդ հանգամանքներում հետապնդվող նպատակներին (տե՛ս *mutatis mutandis Էզուհիի (Ezzouhdi)* վճիռը պարբ. 35 և վերը մեջբերված *Յիլմազի (Yilmaz)* վճիռը, պարբ. 48–9):

38. Հետևաբար, տեղի է ունեցել կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

Թեպետ կարգադրության անսահմանափակ ժամկետի առումով դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել խախտում, վճռից պարզ է, որ ավելի կարճատև ժամկետով արտաքսումը չէր հակասի 8-րդ հոդվածին նույնիսկ այն դեպքում, երբ դիմողը, որն իր դատապարտման ժամանակ եղել է չափահաս երիտասարդ անձնավորություն, Սերբիայում բնակվող ընտանիքի անդամներ չի ունեցել:

9 Մի շարք դիմողներ գանգատ են բերել իրենց երեխաներին պետության խնամակալության տակ վերցնելու վերաբերյալ պետական մարմինների կայացրած որոշումների տարբեր կողմերի առնչությամբ: *«W-ն ընդդեմ Մեծ-ի» (W v UK,* A.121-A (1987) 10 EHRR 29) գործի դեպքում դիմողը վիճարկել է տեղական կառավարման մարմինների որոշման կայացման գործընթացը, որի արդյունքում տեղական ինքնակառավարման մարմինները որոշել են ստանձնել իր և իր կնոջ կրտսեր երեխայի՝ Ս-ի ծնողական իրավունքները և, այնուհետև, Ս-ին երկար ժամանակով տեղավորել ծնող-խնամակալների տանը և արգելել W-ին և նրա կնոջը տեսակցել Ս-ի հետ: Դիմողը և իր կինն ունեցել են ամուսնական և ֆինանսական լուրջ դժվարություններով անցյալ: Ս-ն ծնվել է 1978 թ. հոկտեմբերին, և 1979 թ. մարտին նրա ծնողները կամավոր նրան հանձնել են տեղական մարմինների խնամքին, քանի որ նրա մայրը տառապել է հետծննդաբերական դեպրեսիայից և ալկոհոլիզմից: 1979 թ. օգոստոսին տեղական մարմիններն ընդունել են որոշումներ, համաձայն որոնց՝ ստանձնել են Ս-ի նկատմամբ ծնողական իրավունքները: Այնուամենայնիվ, դիմողը և նրա կինը տեղյակ չեն պահվել, որ նման որոշումներն ընթացքի մեջ են եղել: 1980 թ. սկզբին Սոցիալական ծառայությունների դեպարտամենտի անհայտ աշխատակիցը որոշել է, որ Ս-ն որդեգրման նպատակով պետք է երկար ժամանակով տեղավորվի ծնող-խնամակալների տանը: 1980 թ. մարտին այդ մարմնի որդեգրման և որդեգրված երեխաների խնամքի կոմիտեն, առանց դիմողի կամ նրա կնոջ հետ խորհրդակցելու, հաստատել է Ս-ին երկար ժամանակով ծնող-խնամակալների տանը տեղավորելու որոշումը և սահմանափակել կենսաբանական ծնողների հետ տեսակցելու հնարավորությունը: Հաջորդ ամիս սոցիալական ծառայությունների տարածքային տնօրենը որոշել է, որ W-ին և նրա կնոջը չպետք է թույլ տրվի տեսակցել Ս-ի հետ, որպեսզի Ս-ի և նրա ծնող-խնամակալների միջև լավ հարաբերությունները չենթարկվեն բացասական ազդեցության: W-ն և իր կինը դատական վարույթ են սկսել՝ վիճարկելով տեղական մարմնի գործողությունները, սակայն 1981 թ. հունիսին բարձր դատարանը վճռել է, որ Ս-ին նրանց խնամքին վերադարձնելը չի բխի Ս-ի էական շահերից: Վերաքննիչ դատարանը 1981 թ. հոկտեմբերին հաստատել է այս որոշումը: Տարածքային օմբուդսմանը բավարարել է դիմողների ներկայացրած բողոքը, որը վերաբերել է տեղական մարմինների որոշումների կայացման գործընթացի սխալ վարչարարությանը: 1984 թ. բարձր դատարանը հաստատել է Ս-ին որդեգրելու նպատակով ծնող-խնամակալների ներկայացրած դիմումը: W-ն բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ, ի թիվս այլոց, տեղական մարմնի ընթացակարգերը խախտել են իր ընտանեկան կյանքի հարգման իրավունքը: Տասներեք կողմ և մեկ դեմ ձայներով հանձնաժողովը որոշել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում: Լիակազմ դատարանը սկսել է վճիռը՝ նկատելով, որ.

> Ծնողների և երեխաների՝ միմյանց ընկերակցությունը վայելելը ընտանեկան կյանքի հիմնարար տարր է: Բացի այդ, բնականոն ընտանեկան հարաբերությունները չեն ավարտվում միայն այն փաստի պատճառով, որ երեխան վերցվել է պետության խնամքի տակ: Սրանից հետևում է, և սա չի վիճարկվել կառավարության կողմից, որ նշված ընթացակարգերի հիման վրա տվյալ իրավասու մարմնի ընդունած որոշումները եղել են միջամտություն դիմողի ընտանեկան կյանքի հարգման իրավունքին (պարբ. 59):

Դատարանը որոշել է, որ միջամտությունները տեղի են ունեցել «օրենքի համաձայն» և ունեցել այլոց (օրինակ՝ Ս-ի) առողջությունը կամ իրավունքները պաշտպանելու օրինական նպատակ: Հետևաբար, վիճելի հարցը եղել է այն, թե արդյոք իրավասու մարմնի վարքագիծն «անհրաժե՞շտ է եղել ժողովրդավարական հասարակությունում»:

> Դատարանն ընդունում է, որ այսպիսի զգայուն ոլորտում որոշումներ կայացնելու առումով տեղական կառավարման մարմինները բախվում են չափից ավելի դժվար խնդրի: Ոչ ճկուն մոտեցում դրսևորելու դեպքում նրանց խնդիրները միայն կավելանան: Հետևաբար, այս հարցի առումով նրանք պետք է ունենան որոշակի հայեցողություն:

Մյուս կողմից՝ սույն գործի այս կողմի քննության առումով զգալի կշիռ ունի այն հանգամանքը, որ որոշումները կարող են լինել անշրջելի: Այսպիսով, այն դեպքերում, երբ երեխան վերցվել է իր ծնողներից և տեղավորվել ուրիշ խնամակալների մոտ, նա կարող է ժամանակի ընթացքում նրանց հետ ձևավորել նոր կապեր, և ծնողների հետ կապի սահմանափակման կամ խզման մասին նախկին որոշման բեկանման միջոցով միջամտությունը կամ անհանգստության պատճառումը կարող է չբխել նրա շահերից: Հետևաբար, սա մի ոլորտ է, որտեղ կամայական միջամտություններից պաշտպանելու ավելի մեծ պահանջ կա:

Ճիշտ է, որ 8-րդ հոդվածում գոյություն չունեն բացահայտ ընթացակարգային պահանջներ, սակայն սա վճռական նշանակություն չունի այս խնդրի համար: Տեղական կառավարման մարմնի որոշման կայացման գործընթացն ակնհայտորեն չի կարող ազդեցություն չթողնել որոշման բովանդակության վրա, մասնավորապես՝ երաշխավորելով, որ այն հիմնված է համապատասխան նկատառումների վրա, միակողմանի չէ և, հետևաբար, նաև կամայական չէ: Ուստի դատարանն իրավասու է ուշադրություն դարձնելու այդ գործընթացի վրա, որպեսզի որոշի՝ այն տեղի է ունեցել այնպիսի՞ եղանակով, որը բոլոր դեպքերում արդար է և ապահովում է 8-րդ հոդվածով պաշտպանվող շահերի նկատմամբ պատշաճ հարգանքը... .

Տեղական կառավարման մարմիններն իրենց խնամքի տակ գտնվող երեխաների վերաբերյալ որոշումներ կայացնելիս պետք է կշռադատեն համապատասխան նկատառումները, որոնք անհրաժեշտաբար պետք է ընդգրկեն կենսաբանական ծնողների կարծիքները և շահերը: Ուստի, դատարանի կարծիքով, որոշման կայացման գործընթացը պետք է երաշխավորի, որ նրանց կարծիքները և շահերը հայտնի են և հավուր պատշաճի հաշվի են առնվել տեղական մարմնի կողմից, և նրանք համապատասխան ժամանակ իրենց տրամադրության տակ եղած իրավական պաշտպանության միջոցները կիրառելու հնարավորություն ունեցել են...

Գոյություն ունի խնդրի գործնական կողմերի վրա ազդող երեք գործոն: Առաջին, ինչպես նշել է հանձնաժողովը, անպայման կլինեն իրավիճակներ, երբ կենսաբանական ծնողների մասնակցությունը որոշման կայացման գործընթացին կարող է լինել ո՛չ հնարավոր, ո՛չ էլ իմաստավորված, ինչպես, օրինակ՝ այն դեպքում, երբ նրանց գտնելն անհնարին է, կամ երբ նրանք ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամություն ունեն, կամ երբ առաջանում է արտակարգ իրավիճակ: Երկրորդ՝ թեպետ այս ոլորտում որոշումները հաճախ ընդունվում են գործերի վերանայման կամ խորհրդակցությունների հիման վրա, դրանք կարող են հավասարապես ընդունվել տեղական կառավարման մարմնի պաշտոնյաների կողմից սահմանված անընդմեջ վերահսկողության գործողությունների արդյունքում: Երրորդ՝ պատասխանատու սոցիալական աշխատողների և ծնողների միջև շփումները հաճախ ծառայում են որպես պատշաճ խողովակ վերջիններիս տեսակետները մարմնին փոխանցելու համար:

Դատարանը կարծում է, որ պետք է որոշում կայացնի այն հարցի վերաբերյալ, թե հաշվի առնելով գործի առանձնահատուկ հանգամանքները և հատկապես՝ ընդունվելիք որոշումների լրջությունը՝ իրենց շահերը պահանջվող մակարդակով պաշտպանելու համար ծնողները, ընդհանուր առմամբ, բավարա՞ր չափով են ներգրավված եղել որոշման կայացման գործընթացում: Եթե ոչ, ապա տեղի է ունեցել նրանց ընտանեկան կյանքի հարգման իրավունքի խախտում, և որոշումից առաջացած միջամտությունը չի կարող համարվել 8-րդ հոդվածի իմաստով անհրաժեշտ միջամտություն... Դատարանը կարծում է, որ կատարելով իր վերանայումը 8-րդ հոդվածի շրջանակներում, կարող է նաև հաշվի առնել տեղական մարմնի որոշման կայացման և այլ հարակից դատական վարույթների գործընթացները: Ինչպես ճշմարտացիորեն նշել է հանձնաժողովը, այս կարգի գործերում միշտ վտանգ կա, որ նախքան դատավարությունը սկսելը որևէ ընթացակարգային հետաձգում առաջացնելու է դատարանին ներկայացված հարցի դե ֆակտո լուծում: Եվ ընտանեկան կյանքի նկատմամբ արդյունավետ հարգանքը պահանջում է, որ ծնողի և երեխայի միջև հետագա կապերը որոշվեն միայն առկա նկատառումների, ոչ թե անցած ժամանակի լույսի ներքո (պարբ. 62-65):

Դատարանը կիրառել է այս սկզբունքները և հանգել այն հետևության, որ 1980 թ. սկզբին տեղական կառավարման մարմինը բավարար չափով չի ներգրավել դիմողին Ս-ի վերաբերյալ իր կողմից կայացված որոշումների մեջ: Ազգային դատարանների վարույթների տևողությունը եղել է մեկ այլ օժանդակ գործոն, ուստի դատարանը որոշել է կիրառել 8-րդ հոդվածը: Հետևաբար, դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել այդ դրույթի խախտում: Դատարանի վճիռը եղել է խիստ նշանակալից, քանի որ այն պահանջել է պետական մարմիններից որդեգրել արդար ընթացակարգեր և ապահովել, որ ծնողները հավուր պատշաճի ներգրավվեն իրենց երեխաների խնամքի հարցերին վերաբերող որոշումների կայացման գործընթացներում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն տարաբնույթ իրավիճակները, որոնցում պետական մարմինները պետք է կայացնեն երեխաների խնամքին վերաբերող որոշումները, դատարանը չի արտոնել ընթացակարգի առանձնահատուկ ձև, այլ ընդամենը կենտրոնացել է համապատասխան պետական գործակալությունների պարտավորության վրա, այն է՝ երաշխավորել, որ ծնողների կարծիքները հավուր պատշաճի հաշվի առնվեն: Դատարանը եզրակացել է, որ այս պահանջի խախտումներ են տեղի ունեցել նաև *«Բ-ն ընդդեմ ՄԹ-ի» (B v UK,* A.121-B (1987)) և *«R-ն ընդդեմ ՄԹ-ի» (R v UK*, A.121-C (1987) 10 EHRR 74) գործերում: 1989 թ. «Երեխաների մասին» օրենքի միջոցով Անգլիայում և Ուելսում օրենքը ենթարկվել է լուրջ

բարեփոխումների, համաձայն որոնց՝ տեղական կառավարման մարմինները խնամակալության կարգադրություններ ձեռք բերելու համար պետք է դիմեն դատարաններ, և այդ կարգադրությունները պետք է ինքնաբերաբար ընդգրկեն դրույթներ, որոնք տալիս են ծնողների հետ ողջամիտ շփման հնարավորություն: Ինչ վերաբերում է շփումների դադարեցման մասին վեճերին, ապա դրանք պետք է լուծվեն դատական կարգով: Շոտլանդիայում երեխաների բարեկեցության պաշտպանության համակարգի ընթացակարգային առանձնահատկությունները քննարկվել են *«Մակմայքլն ընդդեմ Մեծ-ի» (McMichael v UK*, A.307-B (1995) 20 EHRR 205) գործում: Առաջին և երկրորդ դիմողներն ամուսնացել են 1990 թ. և երկուսն էլ ունեցել հոգեկան հիվանդության պատմություն: 1987 թ. նոյեմբեր ամսին երկրորդ դիմողն ունեցել է որդի (Ա-ին), սակայն հայտարարել է, որ տղայի հայրն առաջին դիմողը չի եղել, թեպետ այդ ժամանակ երկու դիմողները միասին են ապրել: Քանի որ երկրորդ դիմողի բժիշկները եզրակացրել են, որ նրա մոտ տեղի է ունենում հոգեկան հիվանդության սրացում, Ա-ին հարկադիր խնամքի տակ վերցնելու հարցը քննարկելու համար տարածքային մանկական խորհրդի զեկուցողը կազմակերպել է երեխաների խորհրդի նիստ՝ խորհրդի անկախ անդամներից կազմված տրիբունալի առջև: 1988 թ. փետրվարին երեխաների հարցերով ժյուրին հրավիրել է նիստ, որին ներկա է գտնվել երկրորդ դիմողը: Առաջին դիմողը ևս ներկա է եղել որպես ներկայացուցիչ: Երեխաների հարցերով ժյուրիի տրամադրության տակ եղել է տարածքային սոցիալական աշխատանքի բաժնի կողմից Ա-ի վերաբերյալ կազմած զեկույցը: Համաձայն 1986 թ. «Երեխաներին վերաբերող գործերի քննարկման (Շոտլանդիայի) կանոնների», զեկույցների օրինակները կամ ժյուրիին ներկայացված այլ փաստաթղթերը դիմողներին չեն տրամադրվել, սակայն նախագահը տեղեկացրել է նրանց համապատասխան փաստաթղթերի բովանդակության մասին: Երեխաների գործերով նիստը որոշել է, որ պահանջվում է Ա-ի հարկադիր խնամք: 1993 թ. շերիֆը բավարարել է Ա-ին խնամակալության վերցրած ծնողների որդեգրման դիմումը: Դիմողները բողոքել են հանձնաժողովին՝ պնդելով, ի թիվս այլոց, որ երեխաների հարցերին նվիրված նիստի ժամանակ արդար լսում չի եղել, ինչն առաջացրել է 8-րդ հոդվածի խախտում: Հանձնաժողովը միաձայն բավարարել է այդ հայցը: Մեջբերելով *«W-ն ընդդեմ Մեծ-ի» (W v UK)* գործով իր վճիռը, դատարանը փորձել է ներկայացնել 6(1) և 8-րդ հոդվածներով երաշխավորված տարբեր ընթացակարգային իրավունքները:

> Այսպիսով, «քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների» որոշման առումով 6(1) հոդվածն ապահովում է «դատարանի իրավունքի» ընթացակարգային երաշխիք (տե՛ս *«Գոլդերն ընդդեմ Մեծ-ի» (Golder v UK* A.18), մինդեռ 8-րդ հոդվածից անկապտելի ընթացակարգային պահանջն ընդգրկում է ոչ միայն վարչական ընթացակարգերը, այլև դատական վարույթները, սակայն դրանք, ի թիվս այլոց, ենթակա են ընտանեկան կյանքի պատշաճ հարգման ավելի լայն նպատակին ... 6(1) և 8-րդ հոդվածներով նախատեսված երաշխիքներով հետապնդվող նպատակների միջև տարբերությունը համապատասխան հանգամանքների առկայության դեպքում կարող է արդարացնել միևնույն փաստերի ուսումնասիրությունն այդ երկու հոդվածներով...» (պարբ. 91):

Քանի որ դիմողները հնարավորություն չեն ունեցել ծանոթանալու երեխաների հարցերով հրավիրված նիստին ներկայացված որոշ փաստաթղթերի, ապա դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել նրանց ընտանեկան կյանքի հարգման իրավունքի խախտում (միաձայն՝ երկրորդ դիմողի դեպքում և վեց կողմ և երեք դեմ ձայներով՝ առաջին դիմողի դեպքում):

Որքան պետական մարմիններն ավելի շատ սահմանափակումներ են կիրառում երեխաների նկատմամբ նրանց կենսաբանական ծնողների ունեցած իրավաբանական իրավունքների նկատմամբ, այնքան ավելի շատ հիմնավորումներ է դատարանը պահանջելու այդ պետությունից: *«Յոհանսենն ընդդեմ Նորվեգիայի» (Johansen v Norway* (1996) 23 EHRR 33, 1996-III) գործում դիմողը 16 տարեկանում լքել է տունը և իր առաջին երեխային ծննդաբերել 1977 թ.՝ 17 տարեկան հասակում: Նա ապրել է սոցիալական ծառայությունների հատկացրած նպաստով: 1989 թ. ունեցել է աղջիկ (Ս-ին), և տեղական մարմինները որոշել են խնամակալություն սահմանել Ս-ի համար, քանի որ որոշվել է, որ ֆիզիկական և մտավոր առողջական վիճակի պատճառով դիմողը անկարող է հոգ տանել Ս-ի մասին: 1990 թ. մայիսին կոմիտեն ուսումնասիրել է դիմողի գործը (ներկա են եղել դիմողը և նրա փաստաբանը) և չորս կողմ և երկու դեմ ձայներով որոշել դիմողին զրկել Ս-ի նկատմամբ ծնողական

պատասխանատվությունից, ինչպես նաև Ս-ին տեղավորել խնամակալ ընտանիքում՝ նրան այնուհետև որդեգրության տալու նպատակով և արգելել դիմողի շփումը Ս-ի հետ: Այնուհետև դիմողը տեղափոխվել է Դանիա, իսկ Ս-ն մնացել իր խնամակալ ծնողների հետ: Դիմողը պնդել է, որ, ի թիվս այլոց, Ս-ի նկատմամբ իր ծնողական իրավունքներից զրկելը հավասար է եղել 8-րդ հոդվածի խախտման: Տասնմեկ կողմ և երկու դեմ ձայներով հանձնաժողովը համաձայնել է սրան: Դատարանը բացատրել է իր մոտեցումը հետևյալ կերպ.

... երեխային խնամքի տակ վերցնելու անհրաժեշտությունը գնահատելու առումով իշխանություններն օժտված են հայեցողության լայն սահմաններով: Այնուամենայնիվ, որևէ հետագա սահմանափակում (օրինակ՝ իշխանությունների կողմից ծնողական իրավունքների և շփումների սահմանափակումը), ինչպես նաև ծնողների և երեխաների ընտանեկան կյանքի հարգման իրավունքի պաշտպանության իրավական երաշխիքներն ավելի խոր ուսումնասիրության կարիք ունեն: Այսպիսի հետագա սահմանափակումները վտանգ են առաջացնում, որ ծնողների և փոքր երեխայի միջև ընտանեկան հարաբերություններն ամենայն հավանականությամբ կխզվեն (պարբ. 64):

Այս գործով իշխանությունների կայացրած որոշման առնչությամբ.

Այս միջոցները եղել են հատկապես հեռուն գնացող, քանի որ լրիվ զրկել են դիմողին իր երեխայի հետ ընտանեկան կյանքից և հակասել նրանց միավորման նպատակին: Այսպիսի միջոցները պետք է կիրառվեն միայն բացառիկ դեպքերում և կարող են արդարացվել, եթե առաջացել են երեխայի կենսական շահերին վերաբերող գերակա պահանջից... (պարբ. 78):

Ութ կողմ և մեկ դեմ ձայներով դատարանի մեծամասնությունը չի համարել, որ երեխայի կենսական շահերը պահանջել են պետության կողմից այսպիսի կոպիտ միջամտություն, հետևաբար, Նորվեգիայի իշխանությունները գերազանցել են իրենց հայեցողության սահմանները՝ դրանով իսկ խախտելով դիմողի՝ 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները:

Մշտական գործող դատարանի մեծ պալատը միաձայն վճռել է, որ պետական մարմինների տրամադրության տակ եղած տեղեկությունները, որոնք վերաբերել են պետության վերահսկողության տակ գտնվող երեխային, պետք է, որպես կանոն, տրամադրվեին ծնողներին՝ առանց վերջիններիս կողմից այդ տեղեկությունների տրամադրման պաշտոնական պահանջի ներկայացման: *«Թ.-Փ.-ն և Կ.Մ.-ն ընդդեմ ՄԹ-ի» (T.P. and K.M. v UK)* գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2001 թ. մայիսի 10-ին, առաջին դիմողը եղել է երիտասարդ միայնակ մայր, որի աղջիկն այդ ժամանակ եղել է մոտ 5 տարեկան (երկրորդ դիմողը): Տեղական իշխանությունների մեջ կասկածներ են առաջացել, որ աղջիկը ենթարկվել է սեռական չարաշահումների: 1987 թ. տարածքային առողջապահական գերատեսչությունում աշխատող մանկական հոգեբուժության գծով խորհրդատուն և տարածքային սոցիալական ծառայությունների գրասենյակում աշխատող սոցիալական աշխատողը զրուցել են աղջկա հետ: Զրույցի ընթացքում առաջին դիմողը ներկա չի գտնվել, և զրույցը տեսագրվել է տեսաժապավենի վրա: Երեխան հայտնել է, որ X անունով մարդը բռնացել է իր նկատմամբ: Առաջին դիմողի զուգընկերն ունեցել է նույն անունը (X.Y.): Ավելի ուշ այդ օրվա ընթացքում տեղական մարմինը դիմել է մագիստրատների դատարան՝ պահանջելով, որ վերջինս աղջկան անվտանգ կացարան հատկացնելու մասին կարգադրություն անի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա իրենց տանը X.Y.-ի կողմից ենթարկվել է ոտնձգության: Դատարանը բավարարել է այդ պահանջը, որից հետո աղջիկը վերցվել է պետության խնամքի տակ: Հաջորդ տարվա ընթացքում առաջին դիմողին թույլ է տրվել միայն շատ սահմանափակ շփում ունենալ իր աղջկա հետ: Դրան հետևած դատական վարույթի ընթացքում խորհրդատուն և առողջապահական գերատեսչությունը դեմ են եղել, որ երկրորդ դիմողի զրույցի տեսագրությունը տրամադրվի առաջին դիմողին: 1988 թ. նոյեմբերին առաջին դիմողի փաստաբաններին տրամադրվել է նրա աղջկա հետ զրույցի արձանագրությունը, և պարզ է դարձել, որ այն անձը, որին նա նշել է որպես իրեն չարաշահած անձ, X.Y.-ը չի եղել: Այնուհետև բարձր դատարանը թույլ է տվել երկրորդ դիմողին, որ նա վերադառնա և բնակվի առաջին դիմողի հետ: Դիմողները բողոքել են Ստրասբուրգ, որ, ի թիվս այլոց, երկրորդ դիմողին առանց հիմքերի պետության խնամակալության տակ վերցնելն առաջացրել է իրենց ընտանեկան կյանքի հարգման իրավունքի խախտում: Դատարանի առջև կառավարությունն առարկել է՝ պնդելով, որ առաջին դիմողը կարող էր

դիմել բարձր դատարան, որի տված կարգադրության հիման վրա երկրորդ դիմողին խնամքի տակ վերցնելուց հետո ցանկացած պահի տեղական մարմինը պարտավոր կլիներ ցույց տալ նրան զրույցի տեսաժապավենը: Այնուամենայնիվ, դատարանը որոշել է, որ այս հնարավորությունը բավարար չի եղել ազգային մարմինների վրա դրված պարտավորությունների կատարման համար:

82.…Պայմանավորվող պետության՝ ընտանիքի շահերը պաշտպանելու դրական պարտավորությունը պահանջել է, որ տվյալ նյութը տրամադրվեր այդ ծնողին, եթե նույնիսկ ծնողն այդպիսի պահանջ չի ներկայացրել: Եթե կասկածներ են եղել առ այն, որ դա վտանգ է ներկայացնում երեխայի բարօրությանը, ապա տեղական մարմինը խնդրին լուծում տալու նպատակով դատական վարույթի սկզբում այն պետք է ներկայացներ դատարանին:

Հետևաբար, տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում: Թ.Փ.-ի գործով որոշումը՝ 8-րդ հոդվածով, էլ ավելի է ամրապնդել ծնողական իրավունքները, քանի որ համաձայն այդ գործի վերաբերյալ վճռի՝ տեղեկությունների բացահայտման առաջնահերթ պատասխանատվությունը դրված է պետական մարմինների վրա, որոնք և տիրապետում են համապատասխան նյութերի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շատ ծնողներ, որոնց երեխաներին հարկադրաբար տանում են նրանցից, կարող են հայտնվել շոկային վիճակում, պետական մարմիններից պահանջելը, որ նրանք իրենց վրա վերցնեն նախաձեռնությունը և բացահայտեն համապատասխան տեղեկությունները, կնվազեցնի ծնողների բեռը և միգուցե հնարավորություն կտա նրանց ավելի լավ ըմբռնելու իրավիճակը:

Անդամ պետությունների դատական մարմիններից ևս պահանջվում է, որ նրանք համապատասխան փաստերը ցույց տան ծնողներին: Օրինակ՝ *«Բուխբերգերն ընդդեմ Ավստրիայի» (Buchberger v Austria)* գործով (2001 թ. դեկտեմբերի 20-ի վճիռ) դիմողը եղել է երկու մանկահասակ երեխաներ ունեցող միայնակ մայր: Նա աշխատել է որպես առավոտյան թերթերի առաքիչ: Մի օր, երբ նա աշխատանքից տուն է վերադարձել քառասունհինգ րոպե ուշացումով (հետո նա ասել է, որ լավ չի զգացել իրեն), հարևանը նկատել է, որ նրա որդին շրջում է իր պարտեզում՝ հագին միայն ննջազգեստ, թեպետ օրը ցուրտ է եղել: Դրանից հետո նա զանգահարել է և այդ մասին տեղյակ պահել ոստիկանությանը: Երեխաների բարօրության հարցերով զբաղվող տարածքային գրասենյակը դիմողի երկու որդիներին վերցրել է պայմանական խնամքի տակ և դիմել շրջանային դատարան, որպեսզի տղաների խնամքը հանձնվի գրասենյակին: Դատական նիստից հետո, որի ընթացքում դիմողն օգտվել է փաստաբանի օժանդակությունից, շրջանային դատարանը կարգադրել է, որ տղաներն անհապաղ վերադարձվեն դիմողին: Հետագա վերաքննիչ վարույթի ընթացքում գրասենյակը տարածքային դատարանին զեկույց է ներկայացրել: Տարածքային դատարանը նաև ձեռք է բերել մի քանի դատական գործերի նյութեր, որոնք վերաբերել են դիմողի դեմ սկսված քաղաքացիական և քրեական վարույթներին: Այլ փաստերի գոյության մասին նրան տեղյակ չեն պահել: Տարածքային դատարանը տղաների խնամքը հանձնել է գրասենյակին, որը կարծիք է հայտնել, որ դիմողի տանը նրանց բնակվելու պայմանները եղել են թշվառ և քաոսային: Եվրոպական դատարանը միաձայն որոշել է, որ տարածքային դատարանի կիրառած ընթացակարգն առաջացրել է դիմողի ընտանեկան կյանքի հարգման իրավունքի խախտում:

43.…Անվիճելի է, որ դիմողի ուշադրությունը չի հրավիրվել այս լրացուցիչ փաստերի վրա: Այնուամենայնիվ, այս գործի հանգամանքներում տարածքային դատարանը չպետք է որոշում կայացներ՝ առանց դիմողին արտահայտվելու հնարավորություն տալու: Լրացուցիչ փաստերը վարույթի համար հատուկ նշանակություն են ունեցել, քանի որ տարածքային դատարանը դրանք բավական ազդեցիկ է համարել, որպեսզի չեղյալ հայտարարի առաջին ատյանի դատարանի որոշումը: Տարածքային դատարանը ոչ թե հիմնվել է զուտ նախորդ դատական վարույթի արդյունքի վրա, այլ քննության է առել գործի մեջ ընդգրկված մյուս նյութերի բովանդակությունը:

44. Դատարանի կարծիքով՝ տարածքային դատարանի կողմից բողոքարկման վարույթի ընթացքում ձեռք բերված լրացուցիչ փաստերի մասին դիմողին տեղյակ չպահելը զրկել է նրան դրանց կապակցությամբ բացատրություններ տալու հնարավորությունից և ցույց է տալիս, որ նա անբավարար է ներգրավված եղել որոշման կայացման գործընթացում:

«Կ.-ն և Թ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (K. and T. v Finland) գործի վերաբերյալ 2001 թ. հուլիսի 12-ի վճռում մշտական գործող դատարանի մեծ պալատը մանրամասնել է ծնողների՝ երեխաների խնամակալության և խնամքի վերաբերյալ պաշտոնական որոշումների կայացման գործընթացին

մասնակցելու իրավունքների սահմանափակումները: Սա եղել է նաև առաջին դեպքը, երբ մեծ պալատը կիրառել է 43-րդ հոդվածը՝ պալատի կայացրած վճռի հիմքում ընկած նույն փաստական հիմքերի վրա կրկնակի որոշում կայացնելու համար: Կ-ն ունեցել է երկու երեխա, որոնց հայրերը եղել են տարբեր անձնավորություններ: Փ-ն ծնվել է 1986 թ. և Մ-ն՝ 1988 թ.: 1991 թ. ամռանից նա ապրել է Թ-ի հետ: Կ-ն ունեցել է լուրջ հոգեկան հիվանդության պատմություն, որի պատճառով նա մի քանի անգամ իր իսկ կամքով կամ հարկադրաբար հոսպիտալացվել է: 1993 թ. մարտին, երբ Կ-ն հղի է եղել Թ-ի երեխայով, նրա մայրը տեղեկացրել է սոցիալական մարմիններին, որ Կ-ի հոգեկան առողջությունը վատ վիճակում է: Նրա ասելով՝ Կ-ն փչացրել էր ընտանեկան լուսանկարները՝ ծակելով այդ նկարներում պատկերված անձանց աչքերը: Կ-ն այնուհետև իր կամքով մի քանի շաբաթով տեղավորվել է հոգեբուժական կլինիկայում: Այդ ժամանակ Մ-ի մոտ նկատվել են վարքի խնդիրներ, և սոցիալական մարմինները որոշել են երեք ամսով նրան տեղավորել մանկատանը, ինչին Կ-ն և Թ.-ն չեն առարկել: 1993 թ. հունիսի 18-ին Կ-ն գնացել է հիվանդանոց և ծննդաբերել աղջիկ երեխա (Զ-ին): Տարածքային սոցիալական ծառայության տնօրենը, իրականացնելով օրենքով իրեն վերապահված լիազորությունները, արտակարգ խնամքի վերաբերյալ կարգադրություն է արել՝ Զ-ին վերցնելով պետության վերահսկողության տակ: 1993 թ. հուլիսին տարածքային սոցիալական խորհուրդն ընդունել է Մ-ին և Զ-ին պետության «նորմալ» խնամքի տակ վերցնելու կարգադրություններ: Կ-ին թույլ են տվել տեսակցել երեխաների հետ միայն անձնական բուժքրոջ ուղեկցությամբ: Ինչպես Կ-ն, այնպես էլ Թ-ն ի վիճակի են եղել ներկայացնելու այս կարգադրությունների կապակցությամբ իրենց առարկությունները, նախքան խորհուրդը կընդուներ իր որոշումները: 1993 թ. ամռանը Թ-ն շատ ժամանակ է անցկացրել Զ-ի հետ՝ խնամելով նրան հիվանդանոցում և ավելի ուշ՝ ընտանեկան կենտրոնում: 1993 թ. աշնանը շրջանային վարչական դատարանը հաստատել է Զ-ին և Մ-ին խնամքի տակ վերցնելու կարգադրությունները: 1994 թ. սկզբին խորհուրդը Զ.-ին և Մ-ին տեղավորել է խնամակալ ծնողների ընտանիքում, որը բնակվել է մի քաղաքում, որը դիմողի տնից գտնվել է 120 կմ հեռավորության վրա: Ամիսը մեկ անգամ դիմողներին թույլ է տրվել այցելել իրենց երեխաներին: 2001 թ. հունվարից Մ-ին և Զ-ին թույլ է տրվել առանց վերահսկողության ամիսը մեկ անգամ այցելել դիմողներին և ընդունել նրանց:

1994 թ. դիմողները բողոքել են նախկին հանձնաժողովին: 1998 թ. նրանց գործն ուղարկվել է նոր կազմավորված դատարան: Իր 2000 թ. ապրիլի 27-ի վճռով պալատը միաձայն որոշել է, որ Ֆինլանդիայի մարմինների՝ Մ-ին և Զ-ին խնամքի տակ վերցնելու որոշումների և ընտանիքի միավորման ուղղությամբ համապատասխան միջոցներ չձեռնարկելու հետևանքով, ի թիվս այլոց, տեղի է ունեցել 8-րդ հոդվածով երաշխավորված ընտանեկան կյանքի հարգման իրավունքի խախտում: 43-րդ հոդվածով մեծ պալատին հղում անելու վերջնաժամկետը լրանալուց հետո պատասխանող պետությունը ձգտել է վերաքննել այն հարցերը, որոնց առնչությամբ պալատը հայտնաբերել է կոնվենցիայի խախտումներ: Դիմողներն այս պահանջի նկատմամբ առարկություններ չեն ունեցել: 2000 թ. հոկտեմբերին մեծ պալատի հինգ անդամից բաղկացած ժյուրին ընդունել է Ֆինլանդիայի պահանջը, և 2001 թ. գարնանը մեծ պալատը հրավիրել է դատական նիստ:

8-րդ հոդվածի կիրառման առումով մեծ պալատը որդեգրել է ավելի հստակ վերլուծության շրջանակ, քան այն, որն օգտագործել էր պալատը: Վերջինս Մ-ին և Զ-ին խնամքի տակ վերցնելու հարցերը քննության է առել ընդհանուր գծերով: Մինչդեռ.

160. Մեծ պալատն իր հերթին նպատակահարմար է համարում յուրաքանչյուր երեխայի համար առանձին քննության առնել արտակարգ խնամքի և սովորական խնամքի կարգադրությունները, քանի որ դրանք եղել են տարբեր տեսակի որոշումներ և ունեցել են տարբեր հետևանքներ: Այսպես, արտակարգ խնամքի կարգադրությունն ունեցել է կարճ սահմանափակ ժամկետ, մինչդեռ սովորական խնամքի կարգադրությունը՝ ավելի մշտական բնույթ: Սրանք եղել են առանձին որոշման կայացման գործընթացների արդյունք, թեպետ մի միջոցառումն անմիջապես հետևել է մյուսին: Մեծ պալատի կարծիքով՝ հարկ է հաշվի առնել առկա նյութական և ընթացակարգային տարբերությունները և այս երկու որոշումների քննությունն իրականացնել առանձին-առանձին:

Տասնչորս կողմ և երեք դեմ ձայներով մեծ պալատի մեծամասնությունը որոշել է, որ ժողովրդավարական հասարակությունում Զ-ի ծնվելուց անմիջապես հետո արտակարգ կարգադրության հիման

վրա նրան խնամքի տակ վերցնելը եղել է անհարկի միջոցառում և, հետևաբար, հակասել է 8-րդ հոդվածին:

168….նորածին երեխային նրա ծնվելու պահին պետության խնամակալության տակ վերցնելը վերին աստիճանի ծայրահեղ միջոց է: Պետք է գոյություն ունենան չափազանց արտակարգ պատճառներ ծնվելուց անմիջապես հետո երեխային մոր կամքին հակառակ նրա խնամակալությունից հեռացնելու համար՝ առաջնորդվելով մի ընթացակարգով, որի մեջ ներգավված չի եղել ո՛չ նրա մայրը և ո՛չ էլ նրա զուգընկերը: Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի ցնցման և շփոթության մեջ կհայտնվեր նույնիսկ լիարժեք առողջ մայրը... Ազգային մարմինների վկայակոչած պատճառները տեղին են եղել, սակայն, դատարանի կարծիքով, ոչ բավարար, որպեսզի արդարացնեն լուրջ միջամտությունը դիմողների ընտանեկան կյանքին: Նույնիսկ հաշվի առնելով ազգային մարմիններին վերապահված հայեցողության սահմանները՝ դատարանը կարծում է, որ Ջ-ի նկատմամբ արտակարգ խնամքի կարգադրությունը և այդ որոշման իրականացման նպատակով կիրառված մեթոդներն իրենց ազդեցությամբ անհամաչափ են եղել դիմողների՝ նոր ծնված երեխայի հետ նրա ծնվելու պահից ընտանեկան կյանք վայելելու հեռանկարի հետ… Հետևաբար, թեև կարող է Ջ-ին՝ երեխային պաշտպանելու ուղղությամբ որոշակի նախազգուշական քայլեր ձեռնարկելու «անհրաժեշտություն» լինել, Ջ-ին արտակարգ խնամքի տակ վերցնելու կարգադրության միջոցով միջամտությունը դիմողների ընտանեկան կյանքին չի կարող համարվել «անհրաժեշտ» ժողովրդավարական հասարակությունում:

Դատավոր Փալմը, որին միացել է դատավոր Գաուկուր Յորունդսոնը, առարկել է, քանի որ համարել է, որ երեխաների պաշտպանությանն ուղղված պատասխանատվությունն իրականացնելիս Ֆինլանդիայի իշխանություններն առաջնորդվել են պետություններին վերապահված հայեցողության սահմաններով:

Փաստորեն, ավելի վաղ կայացված վճիռներում, որոնք վերաբերել են երեխաների նկատմամբ պետության խնամակալության հաստատմանը, դատարանը համաձայնել է ազգային մարմինների՝ խնամքի կարգադրության անհրաժեշտությանը վերաբերող գնահատականներին: Սույն վճռում դատարանն առաջին անգամ մերժել է այն ըմբռնումը, որ իրավասու ազգային մարմիններն ունեցել են համապատասխան ժամանակահատվածում իրենց կիրառած միջոցի անհրաժեշտության վերաբերյալ...

Եթե նույնիսկ հետադարձ հայացք նետելու դեպքում նորածին երեխային իր մորից բաժանելը կարող է խիստ ծայրահեղ քայլ թվալ, այդ ժամանակ իշխանությունները ստիպված են եղել առանց հապաղելու որոշում կայացնել, որ հոգեկան հիվանդ և բացարձակապես անկանխատեսելի մոր հետ մնալը վտանգավոր է երեխայի համար, երբ այդպիսի որոշում չընդունելու դեպքում նրա մայրը կարող էր ազատ դուրս գրվել հիվանդանոցից նրա հետ միասին:

Այս հանգամանքներում և հաշվի առնելով պետության հայեցողության սահմանը, ես կարծում եմ, որ Ֆինլանդիայի իշխանությունները միանգամայն հիմնավոր իրավունք ունեին մտածելու, որ անհրաժեշտ է Ջ.-ին տեղափոխել պետության խնամքի ներքո:

Դատավոր Բոնելլոն նույնիսկ ավելի հստակ է արտահայտվել հօգուտ տեղական մարմինների գործողությունների.

Ֆինլանդիայի կառավարությունը կանգնած է եղել մի իրավիճակի առջև, որում խոցելի նորածին երեխան պետք է կախված լիներ հոգեկան խանգարման սրացման վիճակում գտնվող անձի գթասրտությունից. մի անձ, որի վերաբերյալ միակ կանխատեսելի բանը եղել է նրա անկանխատեսելիությունը, անձ, որը որքան ընդունակ է եղել դրսևորելու անկառավարելի ռեակցիաներ, նույնքան էլ ընդունակ է եղել գործադրելու կործանարար բռնություն: Նորածնի նկատմամբ պատասխանատվությունը անպատասխանատու անձին հանձնելը դժվար թե բխեր նրա կենսական շահերից, եթե այդ հոդվածի նկատմամբ հավատն առհասարակ պետք է պահպաներ իր իմաստը: Լիովին «նորմալ» մայրերը, լինելով հետծննդաբերական ցնցման ազդեցության տակ, իրենց լավագույն մայրական բնազդներն ուղղել են իրենց երեխաների ոչնչացմանը: Ես կարծում եմ, որ դեռևս պետք է բացատրել այն, թե ինչպե՞ս է ստացվում, որ այդ հնարավորությունը հաշվի է առնվում այն դեպքում, երբ խոսքը նորմալ մայրերի մասին է, սակայն անտեսվում այն դեպքում, երբ խոսքն անկասկած հոգեկան խանգարում ունեցող անձանց մասին է:

Ինչ վերաբերում է Մ-ի նկատմամբ արտակարգ խնամքի կարգադրությանը, մեծ պալատը՝ տասներեք կողմ և չորս դեմ ձայներով, որոշել է, որ 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել: Մեծամասնությունը համարել է, որ այս կարգադրությունը դիմողների ընտանեկան կյանքի վրա չի ունեցել նույն ազդեցությունը, ինչ Ջ-ի համար արված կարգադրությունը: Կամավոր հիմունքներով գտնվելով մանկատանը՝ Մ-ն արդեն առանձնացված է եղել իր ընտանիքից, սակայն առանց կարգադրության նա

չէր կարող դիմողների կողմից դուրս բերվել այդ ապահով միջավայրից: Չհամընկնող կարծիք ունեցող դատավորներ Ռեսը, Ֆուրմանը, Պանտիրուն և Կովլերը որոշել են, որ.

Նախքան պետական մարմիններն այսքան զգայուն հարցերի առնչությամբ կդիմեն արտակարգ միջոցների՝ խնամակալական կարգադրությունների, հարկ է իսկապես ապացուցել այսպիսի վտանգի գոյությունը: Եթե դեռևս հնարավոր է լսել երեխայի ծնողներին և նրանց հետ քննարկել միջոցը կիրառելու անհրաժեշտությունը, ապա դեռևս չպետք է դիմել արտակարգ միջոցի ձեռնարկման:

Մ.-ն անմիջական վտանգի ենթակա չի եղել, քանի որ արդեն տեղավորված է եղել մանկատանը: Ամբողջ ընթացակարգը թողնում է coup de force-ի [բռնության ակտի] տպավորություն: Ծնողների մասնակցության վրա հիմնված ընթացակարգը և դրա արդյունքում պատրաստված նորմալ խնամքի կարգադրությունները այդ հանգամանքներում ողջամիտ կլինեին և լիովին բավարար տարբերակ:

Մեծ պալատը միաձայն որոշել է, որ ինչպես Զ-ի, այնպես էլ Մ-ի դեպքում նորմալ խնամքի կարգադրությունները 8-րդ հոդվածի խախտում չեն առաջացրել:

173. Այս դեպքում, երբ համաձայն բժշկական և սոցիալական զեկույցների՝ երեխաների մայրն ունեցել է լուրջ հոգեկան հիվանդություն, ընտանիքում եղել են սոցիալական խնդիրներ և խնամակալների մոտ երեխաների առողջ զարգացման հեռանկարները եղել են ավելի դրական, քան իրենց կենսաբանական ծնողների մոտ նրանց հետագա զարգացման հեռանկարները, իշխանությունները կարող էին իրենց վիճարկվող որոշումները ողջամտորեն հիմնավորել երեխաների կենսական շահերից բխող պահանջների գնահատմամբ: Ինչ վերաբերում է 8-րդ հոդվածից անբաժանելի ընթացակարգային երաշխիքին, փաստերը ցույց են տալիս, որ դիմողները հավուր պատշաճի ընդգրկված են եղել այն որոշման կայացման գործընթացի մեջ, որի արդյունքում ընդունվել են նորմալ խնամքի կարգադրությունները, ինչպես նաև նրանք ապահովվել են իրենց շահերի համապատասխան պաշտպանությամբ...

Կ-ի և Թ-ի գործով դատավորների մեծամասնությունը պաշտպանել է ծնողների և նրանց երեխաների շահերի միջև արդար հավասարակշռություն պահպանելու դիրքորոշումը: Այն դեպքում, երբ երեխաներին ծնողների հետ թողնելու հետևանքով առաջանում է երեխաների բարօրությանը սպառնացող լուրջ վտանգ, իշխանություններն իրավունք ունեն երեխաներին պաշտպանելու նպատակով ձեռնարկել միակողմանի արտակարգ խնամքի միջոցառումներ: Այնուամենայնիվ, իշխանությունները պարտավոր են ցույց տալ, որ նման խիստ որոշումը և դրա հիմքում ընկած խիստ ընթացակարգերը համատեղելի են 8-րդ հոդվածով նախատեսված ծնողական իրավունքների հետ:

10 Պետությունների՝ բաժանված ծնողների և նրանց երեխաների միջև շփումներն ապահովելու դրական պարտավորության բնույթը և ընդգրկումը քննարկված է *«Գլեյսերն ընդդեմ ՄԹ-ի» (Glaser v UK* [2000] 3 FCR 193) գործում:

65. Դատարանի նախադեպային իրավունքը հետևողականորեն հաստատել է, որ համաձայն 8-րդ հոդվածի՝ ծնողն իրավունք ունի, որ իրեն իր երեխայի հետ միավորելու համար ձեռնարկվեն համապատասխան միջոցներ, իսկ ազգային մարմինները նման միջոցներ ձեռնարկելու պարտավորություն ունեն: Սա վերաբերում է ոչ միայն երեխաներին հարկադրաբար պետության խնամքի տակ վերցնելու միջոցառումներին և խնամքի միջոցառումների իրականացմանը (տե՛ս, ի թիվս այլոց, *«Օլսոնն ընդդեմ Շվեդիայի» (Olsson v Sweden* (թիվ 2)) վճիռը, 1992 թ. նոյեմբերի 27-ի վճիռ, շարք A, թիվ 250, էջ 35–6, պարբ. 90), այլև այն գործերին, երբ ծնողների և/կամ ընտանիքի այլ անդամների միջև առաջանում են երեխաների շփմանը և բնակությանը վերաբերող վեճեր (օրինակ՝ *«Հոկկանենն ընդդեմ Ֆինլանդիայի» (Hokkanen v Finland),* 1994 թ. սեպտեմբերի 23-ի վճիռ, շարք A, թիվ 299, էջ 20, պարբ. 55):

66. Ազգային մարմինների պարտավորությունը, այն է՝ ձեռնարկել միջոցներ, որոնք ուղղված են ամուսինների բաժանությունից հետո խնամակալության իրավունք չունեցող ծնողի հետ երեխաների հետ շփման հեշտացմանը, այնուամենայնիվ, բացարձակ չէ (տե՛ս *mutatis mutandis* վերը մեջբերված *Հոկկանենի* վճիռը, էջ 22, պարբ. 58): Գուցե անմիջապես հնարավոր չլինի շփում հաստատել, ինչպես նաև կարող են պահանջվել նախապատրաստական կամ փուլային միջոցառումներ: Բոլոր շահագրգիռ կողմերի միջև համագործակցությունը և փոխըմբռնումը միշտ էլ կարևոր հանգամանքներ են: Ազգային մարմինները պետք է առավելագույն ջանքեր գործադրեն, որպեսզի դյուրացնեն այս համագործակցությունը, սակայն այս ոլորտում հարկադրանք կիրառելու յուրաքանչյուր պարտավորություն պետք է սահմանափակ լինի, քանի որ պետք է հաշվի առնվեն բոլոր շահագրգիռ անձանց իրավունքները և ազատությունները և հատկապես՝ երեխայի կենսական շահերն ու 8-րդ հոդվածով նրա համար երաշխավորված իրավունքները: Այն դեպքում,

երբ ծնողի հետ շփումները կարող են վտանգել այս շահերը կամ միջամտել այս իրավունքներին, ազգային մարմինների խնդիրը պետք է լինի արդար հավասարակշռություն հաստատել դրանց միջև (տե՛ս վերը մեջբերված *«Հոկկանենն ընդդեմ Ֆինլանդիայի» (Hokkanen v Finland)* գործը, պարբ. 58, վերը մեջբերված *«Օլսոնն ընդդեմ Շվեդիայի» (Olsson v Sweden* (թիվ 2)) գործը, էջ 35–6, պարբ. 90): Հիմնական մտահոգության առարկան այն է, թե արդյոք այս մարմինները ձեռնարկե՞լ են բոլոր անհրաժեշտ քայլերը, որպեսզի հեշտացնեն յուրաքանչյուր գործի առանձնահատուկ հանգամանքներում պահանջվող շփումը (տե՛ս *mutatis mutandis* վերը մեջբերված *«Հոկկանենն ընդդեմ Ֆինլանդիայի» (Hokkanen v Finland)* գործը, պարբ. 58): Քանի որ միշտ վտանգ կա, որ ընթացակարգային հետաձգումների հետևանքով դատարանին ներկայացված հարցը կստանա դե ֆակտո լուծում, երեխաներին վերաբերող վարույթում առանձնահատուկ նշանակություն է տրվում ժամանակին *(«Հ.-ն ընդդեմ ՄԹ-ի» (H. v UK),* 8 հուլիսի, 1987 թ., շարք A, թիվ 120, էջ 63–64, պարբ. 89–90) և որոշման կայացման գործընթացում ծնողների շահերի պահանջվող պաշտպանությանը *[«W-ն ընդդեմ ՄԹ-ի» (W v UK)* 1987 թ. հուլիսի 8-ի վճիռ, շարք A, թիվ 121, էջ 28–9, պարբ. 62–4]:

Դատարանը միաձայն եզրակացրել է, որ Անգլիայի և Շոտլանդիայի մարմինները ամուսինների բաժանությունից առաջացած շատ բարդ իրավիճակի առումով պահպանել են արդար հավասարակշռություն դիմողի, նրա նախկին կնոջ և երեխաների մրցակցող շահերի միջև: Վճիռը նաև հստակ ցույց է տալիս դատարանի՝ ազգային մարմինների գործողությունները կամ անգործությունը ստուգելու սահմանափակ կարողությունը:

64. Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ խնդրո առարկա հարցը վերաբերում է ծնողների՝ իրենց երեխաների շուրջ վեճերին, դատարանը ոչ թե պետք է հանդես գա որպես [երեխաների և ծնողների] շփումների կարգավորման հարցերով զբաղվող ազգային իրավասու մարմիններին փոխարինող մարմին, այլ ավելի շուտ որպես իրեն վերապահված հայեցողության սահմաններում այդ մարմինների կայացրած որոշումները կոնվենցիայով վերանայող մարմին: Այդպես վարվելով՝ դատարանը պետք է որոշի, թե արդյոք այն պատճառները, որոնք ներկայացվում են դիմողի ընտանեկան կյանքի հարգման իրավունքի ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցներն արդարացնելու համար, տեղին և բավարա՞ր են...»:

«Ինյակկոլո-Զենիդն ընդդեմ Ռումինիայի» (Ignaccolo-Zenide v Romania) գործը (2000 թ. հունվարի 25-ի վճիռ) մի օրինակ է, որի առնչությամբ դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել վերամիավորման պարտավորության խախտում: Դիմողն ունեցել է Ֆրանսիայի քաղաքացիություն և 1980 թ. ամուսնացել է Ռումինիայի քաղաքացիություն ունեցող անձի՝ Դ. Զ.-ի հետ: Նրանք ունեցել են երկու դուստր, որոնք ծնվել են 1981 և 1984 թթ.: Ֆրանսիայի դատարանը բաժանել է դիմողին և Դ. Զ.-ին 1989 թ.: Դատարանը հաստատել է նախկին ամուսինների միջև համաձայնությունը, որ նրանց երեխաների նկատմամբ պատասխանատվությունը տրվի Դ. Զ.-ին, և դիմողը ձեռք է բերել շփվելու և մնալու իրավունքներ: Հաջորդ տարի Դ.Զ.-ն տեղափոխվել է Միացյալ Նահանգներ, որից հետո դիմողը բողոքել է Ֆրանսիայի դատարաններին, որ Դ. Զ.-ն զրկել է իրեն իր աղջիկների հետ շփվելու հնարավորությունից: 1991 թ. մայիսին Մեցի վերաքննիչ դատարանը ծնողական պատասխանատվությունը դրել է երկու ծնողների վրա և կարգադրել, որ երեխաներն ապրեն դիմողի հետ: Դիմողն այնուհետև մի շարք հայցեր է ներկայացրել Միացյալ Նահանգների տարբեր դատարաններին, որոնք պահանջել են, որ Դ. Զ.-ն աղջիկներին վերադարձնի դիմողին, սակայն վերջինս անտեսել է դատարանի վճիռները: 1994 թ. Դ. Զ.-ն և նրա աղջիկները բնակություն հաստատելու նպատակով մեկնել են Ռումինիա: Ինչպես Միացյալ Նահանգների, այնպես էլ Ֆրանսիայի կառավարությունները պահանջել են Ռումինիայի կառավարությունից երեխաներին վերադարձնել դիմողին՝ համաձայն 1980 թ. Հաագայի Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական կողմերի մասին կոնվենցիայի: Հաագայի կոնվենցիայի 2-րդ հոդվածով դիմողը նաև հրատապ դիմում է ներկայացրել Ռումինիայի դատարաններին՝ նպատակ ունենալով դատական կարգով ստանալ կարգադրություն, որով Դ.-Զ.-ից կպահանջվեր հարգել 1991 թ. Մեցի վերաքննիչ դատարանի կայացրած վճիռը: Բուխարեստի առաջին ատյանի դատարանն այդպիսի կարգադրություն տվել է 1994 թ. դեկտեմբերին: Դիմողն այնուհետև ութ անգամ այցելել է Ռումինիա, որպեսզի հանդիպի իր աղջիկների հետ, սակայն, հակառակ Ռումինիայի իշխանությունների մի քանի փորձերին՝ կիրառելու Բուխարեստի դատարանի կարգադրությունը, դիմողը կարողացել է իր աղջիկներին տեսնել միայն մեկ անգամ՝ 1997 թ., այն էլ՝ ընդամենը մի քանի րոպեով: Հանդիպումը լավ ընթացք չի ունեցել, և աղջիկներն ասել են, որ այլևս երբեք նրան տեսնել չեն

ցանկանում: Դատարանում դիմողը հայտնել է, որ Ռումինիայի իշխանությունները բավարար քայլեր չեն ձեռնարկել, որպեսզի օժանդակեն իր աղջիկներին վերադարձնելուն: Պալատի վճռում.

94... . Ինչ վերաբերում է պետության՝ դրական քայլեր ձեռնարկելու պարտավորությանը, դատարանը շարունակաբար վճռել է, որ 8-րդ հոդվածն ընդգրկում է ծնողի իրավունքը, որպեսզի քայլեր ձեռնարկվեն իրեն իր երեխայի հետ միավորելու համար կամ այդպիսի քայլեր ձեռնարկելու ազգային մարմինների պարտավորությունը (տե՛ս, օրինակ՝ հետևյալ վճիռները. *«Էրիկսոնն ընդդեմ Շվեդիայի» (Eriksson v Sweden),* 1989 թ. հունիսի 22, շարք A, թիվ 156, էջ 26–27...): Այնուամենայնիվ, միավորմանն օժանդակելու համար միջոցներ ձեռնարկելու ազգային մարմինների պարտավորությունը բացարձակ չէ, քանի որ ծնողի և միառժամանակ երկրորդ ծնողի հետ ապրած երեխաների վերամիավորումը չի կարող տեղի ունենալ անմիջապես և կարող է պահանջել նախապատրաստական միջոցառումներ: Այսպիսի նախապատրաստության բնույթը և չափերը պետք է կախված լինեն յուրաքանչյուր գործի հանգամանքներից, սակայն բոլոր ներգրավված կողմերի միջև ըմբռնումը և համագործակցությունը միշտ կարևոր հանգամանքներ են: Մինչ ազգային մարմինները պետք է իրենց առավելագույն ջանքերը գործադրեն, որպեսզի օժանդակեն այս համագործակցությանը, այս ոլորտում հարկադրանք կիրառելու ցանկացած պարտավորություն պետք է լինի սահմանափակ, քանի որ պետք է հաշվի առնվեն բոլոր շահագրգիռ կողմերի իրավունքները և ազատությունը ու հատկապես, երեխայի կենսական շահերն ու կոնվենցիայի 8-րդ հոդվածով նրան երաշխավորված իրավունքները: Այն դեպքում, երբ ծնողի հետ շփումները կարող են վտանգել այս շահերը կամ միջամտել այս իրավունքներին, ազգային մարմինների խնդիրը պետք է լինի արդար հավասարակշռություն հաստատել դրանց միջև...

95. Վերջապես, դատարանը կարծում է, որ կոնվենցիայի 8-րդ հոդվածով ծնողին իր երեխաների հետ միավորելու առումով պետությունների վրա դրված դրական պարտավորությունը պետք է մեկնաբանվի համաձայն 1980 թ. հոկտեմբերի 25-ի «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական կողմերի մասին» Հաագայի կոնվենցիայի («Հաագայի կոնվենցիա»): Սա հատկապես վերաբերում է այս գործին, քանի որ պատասխանող պետությունն այդ համաձայնագրի անդամ է, որի 7-րդ հոդվածում նշված են մի շարք միջոցներ, որոնք պետք է ձեռնարկեն պետությունները երեխաների անհապաղ վերադարձն ապահովելու համար:

96. Հետևաբար, այս գործում որոշիչ է այն, թե արդյոք ազգային մարմինները ձեռնարկե՞լ են բոլոր քայլերը, որոնք կարող էին ողջամտորեն պահանջվել 1994 թ. դեկտեմբերի 14-ի կարգադրության կատարմանն օժանդակելու համար,...

Վեց կողմ և մեկ դեմ ձայներով դատարանի ճնշող մեծամասնությունն ընդունել է, որ Ռումինիայի իշխանությունները չեն ձեռնարկել «համապատասխան և արդյունավետ» միջոցներ, որպեսզի երաշխավորեն դիմողի՝ իր աղջիկներին հետ միավորվելու իրավունքի իրականացումը: Դատարանը շեշտել է, որ առևանգման գործերում «102 ... միջոցառման համապատասխանությունը պետք է գնահատվի նրա իրականացման արագությամբ», քանի որ վտանգ կա, որ անցնող ժամանակը կարող է նպաստել առևանգված երեխաների և նրանց նկատմամբ օրինական խնամակալության իրավունք ունեցող ծնողի միջև հարաբերությունների վատացմանը: Այս դեպքում դատարանի որոշումների հարկադիր կատարողները 1995 թ. մի քանի անգամ հետաձգել են երեխաներին գտնելու նպատակով Դ. Զ.-ի տուն այցելությունները, իսկ 1995 թ. դեկտեմբերից մինչև 1997 թ. հունվարն ընկած ժամանակահատվածում իշխանությունները մատնված են եղել կատարյալ անգործության: Հետևաբար, այս թերությունները ցույց են տալիս, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում:

Ինյակկոլո-Զենիդի (Ignaccolo-Zenide) գործով վճիռը բացահայտել է, որ հստակ ըմբռնում կա առ այն, թե ինչ կործանարար հետևանք կարող է ունենալ անցնող ժամանակը ծնողից հեռացված երեխայի և նրա ծնողի հարաբերությունների վրա:

12 Պետության կողմից երեխաների որդեգրման կանոնակարգման խնդիրները դատարանն ուսումնասիրել է *«Կիգանն ընդդեմ Իռլանդիայի» (Keegan v Ireland*, A.290 (1994) 18 EHRR 342) գործի կապակցությամբ: Դիմողը հանդիպել է իր նախկին ընկերուհուն՝ միս Վ-ին 1986 թ. մայիսին: 1987 թ. փետրվարից նրանք սկսել են իրենց համատեղ կյանքը: 1987 թ. Սուրբ Ծննդյան տոների նախօրեին նրանք որոշել են երեխա ունենալ: 1988 թ. փետրվարի 14-ին կայացել է նրանց նշանադրությունը: Դրանից մեկ շաբաթ անց հաստատվել է, որ Վ-ն հղի է: Այնուամենայնիվ, կարճ ժամանակ անց Վ-ի և դիմողի միջև հարաբերությունները խզվել են, և նրանք այլևս համատեղ չեն ապրել: 1988 թ. սեպտեմբերին Վ-ն աղջիկ է ունեցել՝ Ս-ին, որի հայրը եղել է դիմողը: Դիմողը տեսել է Ս-ին, երբ նա եղել է մեկ օրական, սակայն Վ-ն և նրա ծնողները թույլ չեն տվել, որ նա կրկին տեսնի երեխային: 1988

թ. նոյեմբերին Վ-ն Ս-ին որդեգրելու կարգադրություններ է արել: Իռլանդիայի օրենքով դիմողը որևէ իրավունք չի ունեցել արտահայտվելու որդեգրման ենթակա երեխաների հարցերով զբաղվող որդեգրման խորհրդի առջև: Դիմողն արել է ամեն ինչ, որ դատարաններն իրեն նշանակեն Ս-ի խնամակալ, որ կարողանա բողոքարկել նրա որդեգրումը, սակայն որևէ հաջողության չի հասել: Այնուհետև, Ս-ին որդեգրել են: Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, ի թիվս այլոց, որ Իռլանդիայի օրենքը չի հարգել ընտանեկան կյանքի հարգման իր իրավունքը՝ թույլ տալով, որ իր աղջիկը որդեգրվի առանց իր գիտության կամ համաձայնության: Հանձնաժողովը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում: Մեջբերելով *«Ջոնսթընն ընդդեմ Իռլանդիայի» (Johnston v Ireland)* և *«Բերեհաբն ընդդեմ Նիդեռլանդների» (Berrehab v Netherlands)* նախկին գործերը (քննարկված են վերը), դատարանը հայտարարել է, որ.

> Սույն գործում դիմողի և երեխայի մոր հետ հարաբերությունները տևել են երկու տարի, ընդ որում՝ առաջին տարվա ընթացքում նրանք համատեղ են ապրել: Բացի այդ, նրանց երեխայի սաղմնավորումը մտածված գործողության արդյունք է եղել, և նրանք նաև ունեցել են ամուսնանալու մտադրություն: Նրանց հարաբերություններն այդ ժամանակ, հետևաբար, 8-րդ հոդվածի նպատակների համար ունեցել են ընտանեկան կյանքի հատկանիշներ: Այն փաստը, որ հարաբերությունները խզվել են դրանից հետո, չի փոխում այս եզրակացությունն ավելի, քան այն կփոխեր օրենքով ամուսնացած և նման իրավիճակում հայտնված ամուսնական զույգի համար: Սրանից հետևում է, որ երեխայի ծննդյան պահից դիմողի և նրա աղջկա միջև գոյություն է ունեցել կապ, որը հավասար է եղել ընտանեկան կյանքի (պարբ. 45):

Շարունակելով բոլոր դատավորները եզրակացրել են, որ միջամտությունը դիմողի ընտանեկան կյանքի հարգման իրավունքին «անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում», քանի որ Իռլանդիայի կառավարությունը չի ներկայացրել Ս-ի կարիքներից բխող հիմնավորումներ: Ուստի որպեսզի դատարանը եզրակացնի, որ որդեգրումը համապատասխանում է 8-րդ հոդվածի նպատակներին, պահանջելու է տվյալ երեխայի կարիքներից բխող ծանրակշիռ հիմքեր: Դատարանը չի անդրադարձել այն ընթացակարգին, որին հարկ է հետևել 8-րդ հոդվածով որդեգրման գործընթացի ժամանակ, քանի որ որոշել է, ու Ս-ի որդեգրման հարցերում դիմողի որևէ կարգավիճակ չունենալը և Իռլանդիայի դատարաններում նրան որդեգրելու որոշման դեմ բողոք ներկայացնելու անկարողությունն առաջացրել են 6(1) հոդվածի խախտում:

«Սոդերբեքն ընդդեմ Շվեդիայի» (Söderbäck v Sweden) (1998) 29 EHRR 95, 1998-VII) ավելի ուշ լսված գործում դատարանը միաձայն որոշել է, որ երեխայի հարաբերություններն իրեն որդեգրած հոր հետ, որը տևել է ավելի քան վեց տարի, եղել են բավականաչափ ծանրակշիռ, որպեսզի արդարացնեն երեխայի որդեգրումը՝ հակառակ երեխայի կենսաբանական հոր առարկությանը: 1982 թ. Կ. Վ.-ն աղջիկ է ծննդաբերել (Մ-ին), որի հայրը եղել է դիմողը: Դիմողը Մ-ին հազվադեպ է տեսել, քանի որ ալկոհոլային խնդիրներ է ունեցել: 1983 թ. Կ.Վ.-ն հանդիպել է Մ.Վ.-ին, և ավելի ուշ այդ տարի նրանք սկսել են համատեղ կյանք վարել: 1989 թ. նրանք ամուսնացել են: Դրանից մի քանի ամիս անց Մ. Վ.-ն դիմել է շրջանային դատարան, որպեսզի Մ-ին որդեգրելու թույլտվություն ստանա: Շրջանային դատարանը լսել է որդեգրման պահանջի վերաբերյալ դիմողի առարկությունը, սակայն որոշել է հաստատել որդեգրումը, քանի որ դատարանը որոշել է, որ Մ.Վ.-ն մասնակցել է Մ-ի խնամքին այն ժամանակից, երբ աղջիկը եղել է ութ ամսական, և աղջիկը նրան ճանաչել է որպես իր հոր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մերժել է դիմողի բողոքն առ այն, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում.

> ... հաշվի առնելով ազգային դատարանի՝ երեխայի կենսական շահերի գնահատումը, ինչպես նաև այն սահմանափակ հարաբերությունները, որ դիմողն ունեցել է Մ-ի հետ համապատասխան ժամանակահատվածում, դատարանը բավարարված է, որ այդ որոշումը կայացվել է [պետություններին վերապահված] հայեցողության սահմաններում: Հաշվի առնելով որդեգրման նպատակները՝ չի կարելի ասել, որ դիմողի և երեխայի հարաբերությունների վրա դրա հակադարձ ազդեցությունները եղել են անհամաչափ (պարբ. 34):

Այսպիսով, դատարանն ընդունել է, որ երեխայի և նրան որդեգրող ծնողի միջև կապերը կարող են ունենալ բավարար տևողություն և որակ և համարվեն առավել, քան այն կապերը, որոնք գոյություն ունեն երեխայի և նրա կենսաբանական ծնողի միջև:

Տուն

.....

Գիլլոուներն ընդդեմ ՄԹ-ի (Gillow v UK A.109 (1986) 11 EHRR 335)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողները՝ պրն և տիկին Գիլլոուները, 1956 թ. Անգլիայից տեղափոխվել են Գերնսի կղզի, որտեղ պրն Գիլլոուն պետք է աշխատանքի անցներ: 1957 թ. թույլտվություն ստանալուց հետո պրն Գիլլոուն «Վայթնայթս» (Whiteknights) ավանում տուն կառուցելու նպատակով գնել է կղզում գտնվող հողակտոր: Մինչև 1960 թ., երբ պրն Գիլլոուն ստացել է արտասահմանում աշխատելու առաջարկ, և ընտանիքը դուրս է եկել Գերնսիից, Գիլլոուներն օգտագործել են այդ տունը որպես իրենց ընտանեկան բնակարան: Հետագա տարիների ընթացքում նրանք տունը վարձակալության են հանձնել Գերնսիի Նահանգների բնակարանային ֆոնդի մարմնից համապատասխան թույլտվություն ստացած անձանց: 1979 թ. տունը բնակիչներ չի ունեցել, ուստի Գիլլոուները թոշակի անցնելուց հետո դիմել են այդ տանը («Վայթնայթսում») բնակվելու թույլտվություն ստանալու համար: Իշխանությունները մերժել են դիմողներին ապրել «Վայթնայթսում» և հաջողությամբ կարողացել են դատական կարգով հետապնդել նրանց, երբ նրանք առանց թույլտվության բնակություն են հաստատել այդ տանը: Դրանից հետո վերջիններս բողոքել են հանձնաժողովին, որ, ի թիվ այլոց, բնակարանային ֆոնդի մարմնի դրսևորած վարքագիծն առաջացրել է 8-րդ հոդվածով ամրագրված տան (բնակարանի) հարգման իրենց իրավունքի խախտում: Հանձնաժողովը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել այդ իրավունքի խախտում:

...

Ա. ԱՐԴՅՈՔ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՄԱՍՏՈՎ «ՎԱՅԹՆԱՅԹՍԸ» ԵՂԵ՞Լ Է ՊԱՐՈՆ ԵՎ ՏԻԿԻՆ ԳԻԼԼՈՈՒՆԵՐԻ ՏՈՒՆԸ (ԲՆԱԿԱՐԱՆԸ)

46. Համաձայն դիմողների՝ նրանք «Վայթնայթսը» դարձրել են իրենց տունը 1958 թ.: Թեպետ նրանք այնուհետև մեկնել են Գերնսիից, նրանք պահպանել են տան նկատմամբ սեփականության իրավունքը, միշտ մտադիր են եղել վերադառնալ այնտեղ և պահել են տանը եղած իրենց կահույքը: 1979 թ. վերադառնալուց հետո նրանք ապրել են այդ տանը՝ նպատակ ունենալով այն դարձնել իրենց մշտական կացարանը բնակարանային ֆոնդի մարմնի հետ իրենց կացության կարգավիճակի որոշումից և համապատասխան վերանորոգման աշխատանքներ կատարելուց հետո:

Այս հայտարարությունները, որոնց ճշտությունը կասկածի ենթարկելու համար դատարանը որևէ պատճառ չունի, պաշտպանվում են այն փաստով, որ դիմողները վաճառել են Լանքաշիրի իրենց նախկին տունը և Գերնսի տեղափոխել իրենց ընտանիքը և կահույքը: Բացի այդ, դատարանն ընդունում է, որ Միացյալ Թագավորությունում որևէ այլ տեղ նրանք տուն չեն ստեղծել: Թեպետ դիմողները մոտ տասնհինը տարի բացակայել են Գերնսիից, շարունակել են պահպանել «Վայթնայթսի» հետ ունեցած իրենց կապերը, որոնց բերումով էլ կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներով վիճարկվող միջոցառումների ժամանակ «Վայթնայթսը» կարող էր համարվել նրանց տունը:

Բ. ԱՐԴՅՈՔ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԸ ՄԻՋԱՄՏԵ՞Լ Է ԴԻՄՈՂԻ ՏԱՆ (ԲՆԱԿԱՐԱՆԻ) ՀԱՐԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ

47. 1969 թ. «Բնակարանների մասին» օրենքի և 1975 թ. «Բնակարանների մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի համաձայն՝ «Վայթնայթսում» բնակվելու համար դիմողները պարտավոր են եղել ձեռք բերել համապատասխան թույլտվություն, քանի որ նրանք կորցրած են եղել այնտեղ բնակություն հաստատելու իրենց որակավորումը (բարեփոխված օրենքում այս դրույթը մնացել է նույնը): Դատարանի կարծիքով՝ այն փաստը, որ գտնվելով դատական կարգով հետապնդման վտանգի տակ՝ նրանք պարտավոր են եղել թույլտվություն ձեռք բերել, որպեսզի 1979 թ. վերադառնալուց հետո կարողանան բնակվել Գերնսիում գտնվող իրենց տանը, ինչպես նաև նրանց թույլտվություն տալու մերժումը, այդ տունն ապօրինաբար զբաղեցնելու համար նրանց դեմ քրեական վարույթի հարուցումը և պրն Գիլլոուի դեպքում՝ նրա դատապարտումը և նրա նկատմամբ տուգանքի նշանակումը եղել են միջամտություն դիմողների տան հարգման իրավունքին:

Գ. ԱՐԴՅՈՔ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԱՐԱՑՎԱ՞Ծ ԵՆ ԵՂԵԼ

48. Որպեսզի որոշվի՝ 8-րդ հոդվածի 2-րդ կետով այս միջամտությունները արդարացված են եղել, թե ոչ, դատարանը պետք է իր հերթին քննարկի՝ դրանք համապատասխանե՞լ են օրենքին, ունեցե՞լ են այնպիսի նպատակ, որը, համաձայն այդ կետի, եղել է օրինական նպատակ, և դրանք անհրաժե՞շտ են եղել ժողովրդավարական հասարակությունում այդ նպատակի ապահովման համար:

...

2. ՕՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

54. Դատարանը հղում է կատարում Գերնսիի ազգաբնակչության և ազատ տների քանակի վերաբերյալ կառավարության և դիմողների կողմից տրամադրված վիճակագրական տվյալներին: Թեպետ կարելի է ասել, որ 1976-1981 թթ. իրավիճակը որոշակիորեն բարելավվել է, սա չի փոխում այն իրողությունը, որ կղզին ունեցել է շատ սահմանափակ տարածք: Հետևաբար, իշխանությունների այն քայլը, որով նրանք փորձել են ազգաբնակչության թիվը պահել այնպիսի սահմաններում, որի դեպքում հնարավոր կլիներ ապահովել կղզու հավասարակշռված տնտեսական զարգացումը, եղել է օրինական: Այս կապակցությամբ օրինական է նաև կղզու տները (բնակարանները) համեստ վարձավճարի դիմաց վարձակալության հանձնելու առնչությամբ որոշակի նախապատվությունն այն անձանց նկատմամբ, որոնք կղզու հետ ամուր կապեր ունեն կամ համայնքի կենսագործունեության համար աշխատանքներ են կատարում: Համապատասխան օրենսդրությունը, այսպիսով, նախատեսված է եղել կղզու տնտեսական բարեկեցության զարգացման համար: Դատարանը հիմնավորված չի համարում, որ օրենսդրությունը հետապնդել է որևէ այլ նպատակ:

...

3. ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

56... . Ընդունելով դիմողների ներկայացրած փաստերի նպատակահարմարությունը՝ դատարանը կարծում է, որ տների նկատմամբ վերահսկողության ցանկացած մեղմացման ազդեցությունը գնահատելու առումով Գերնսիի օրենսդիր մարմինը շատ ավելի լավ պայմաններում է, քան միջազգային դատավորը: Բացի այդ, բնակարանային ֆոնդի գերատեսչությունը թույլտվություն տալու առնչությամբ կարող է առաջնորդվել իր հայեցողությամբ, որպեսզի առանձին գործերի դեպքում խուսափի անհամաչափության դրսևորումներից: Սրանից հետևում է, որ օրենքով դիմողի վրա դրված պարտավորությունը, որ նա պետք է ստանա թույլտվություն, որպեսզի իր տանը ապրի, չի կարող համարվել հետապնդվող օրինական նպատակին անհամաչափ:

Հետևաբար, այնքանով, որքանով խոսքը վիճարկվող օրենսդրության մասին է, 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

57. Մնում է, այնուամենայնիվ, այն հարցը, թե արդյոք այն ձևը, որով բնակարանային ֆոնդի մարմինը դիմողների դեպքում առաջնորդվել է իր հայեցողությամբ՝ մերժելով նրանց տալ մշտական կամ ժամանակավոր բնակության թույլտվություն և քրեական հետապնդում սկսելու նպատակով հարցը հղելով օրենքը կիրառող մարմիններին, համապատասխանե՞լ է հրատապ սոցիալական կարիքին և, մասնավորապես, որքանո՞վ է համաչափ եղել հետապնդվող օրինական նպատակին:

Դատարանին ներկայացրած վիճակագրական տվյալներից երևում է, որ 1979-1989 թթ. ժամանակահատվածում կղզու ազգաբնակչությունը պահպանվել է նախորդ տարիների մակարդակով և նույնիսկ աննշան չափով պակասել է, մինչդեռ ազատ տների քանակն առանձնապես չի նվազել: Այս պարագայում, առանց անուշադրության մատնելու այն փաստը, որ այլ երկրների համեմատությամբ մեկ մղոնի վրա ընկնող կղզու ազգաբնակչության միջին թվաքանակը դեռևս բարձր է եղել, դատարանը կարծում է, որ դիմողների առանձնահատուկ հանգամանքներին պատշաճ նշանակություն չի տրվել: Նրանք կառուցել են «Վայթնայթսը» որպես իրենց և իրենց ընտանիքի կացարան: Այդ ժամանակ նրանք ունեցել են բնակության թույլտվություն և շարունակել են պահպանել այն մինչև 1969 թ. «Բնակարանների մասին» օրենքի ընդունումը, այնպես որ այդ ժամանակահատվածում նրանք իրավունք են ունեցել առանց թույլտվության զբաղեցնելու տունը: Նախքան 1960 թ. Գերնսիից դուրս գալը տունը երկու տարի շարունակ եղել է պրն և տիկին Գիլլոուների կացարանը: Դրանից հետո նրանք պահպանել են տան նկատմամբ սեփականության իրավունքը և այնտեղ թողել իրենց կահույքը: Տասնութ տարի շարունակ տունը վարձակալության հանձնելով այն անձանց, ովքեր ունեցել են բնակարանային ֆոնդի մարմնի համաձայնությունը, նրանք իրենց նպաստն են ունեցել Գերնսիի բնակարանային ֆոնդի մեջ: Երբ 1979 թ. նրանք վերադարձել են, Միացյալ Թագավորությունում կամ որևէ այլ վայրում տուն չեն ունեցել: «Վայթնայթսը» եղել է դատարկ, և հեռանկարային վարձակալներ չեն եղել: Ինչ վերաբերում է բնակվելու ժամանակավոր թույլտվության մերժմանը, բնակարանային մարմնի որոշումները, հակառակ որոշակի արտոնյալ ժամկետի տրամադրման, եղել են ավելի ապշեցուցիչ: Տասնութ տարվա վարձակալությունից հետո «Վայթնայթսը» վերաանորոգման կարիք է ունեցել, այնպես որ այդ ժամանակ այն արդեն չէր կարող զբաղեցվել դիմողներից բացի որևէ այլ անձի կողմից:

Վերջապես, ինչ վերաբերում է քրեական հետապնդում սկսելու նպատակով գործն իրավապահ մարմիններին հանձնելուն, կառավարությունը հայտնել է, որ բնակարանային մարմինը մի քանի անգամ հետաձգել է այսպիսի քայլերի

իրականացումը: Սա, այնուամենայնիվ, դատարանի կարծիքով՝ սկզբունքորեն չի թեթևացրել պրն և տիկին Գիլլոուների առանց այն էլ բարդ իրավիճակը:

58. Հետևաբար, դատարանը եզրակացնում է, որ բնակարանային ֆոնդի մարմնի՝ դիմողներին «Վայթնայթսում» ապրելու համար մշտական կամ ժամանակավոր բնակության թույլտվություն չտրամադրելու մասին որոշումները, ինչպես նաև պրն Գիլլոուի դատապարտումը և տուգանքը միջամտություններ են նրա տան հարգման իրավունքին, որոնք անհամաչափ են եղել հետապնդվող օրինական նպատակին:

Հետևաբար, օրենսդրության կիրառման առումով դիմողների դեպքում տեղի է ունեցել կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանը միաձայն որոշել է, որ թույլտվության օրենքի կիրառման առումով Գիլլոուների նկատմամբ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում: Այնուամենայնիվ, 6-րդ, 14-րդ հոդվածների և թիվ 1 և թիվ 4 արձանագրությունների առումներով նրանց բողոքները մերժվել են: Դատարանի կազմում եղել են նախագահ Վիարդան և դատավորներ Ռիսդալը, Վիլջաուլմսոնը, Լագերգրենը, Փեթիթին, Էվանսը և Մակդոնալդը:

2 Բրիտանիայի կառավարությունը փորձել է առարկել, որ «տուն» բառը վերաբերել է միայն ազգային օրենքի համաձայն օրինականորեն հաստատված տանը *(«Բաքլին ընդդեմ ՄԹ-ի» (Buckley v UK* (1996) 23 EHRR 101, 1996-II 483)): Դիմողը եղել է գնչու, որը գնել է հողակտոր և այնուհետև երեք վագոն-տնակով տեղափոխվել և մի քանի տարի շարունակ բնակվել է այդտեղ ընտանիքի հետ: Շինարարության պլանավորման տարածքային մարմինը մերժել է նրանց օգտագործել այդ հողակտորը բնակություն հաստատելու նպատակով: Երբ նա հրաժարվել է այդտեղից հանել իր վագոն-տնակները, նրա դեմ սկսվել է քրեական վարույթ՝ հարկադիր կատարման ծանուցմանը չենթարկվելու հիմքով: Նա հայտնել է, որ իշխանության գործողությունները խախտել են իր տունը հարգելու իրավունքը: Դատարանը միաձայն մերժել է կառավարության «տուն» բառի նեղ մեկնաբանությունը:

Թեպետ *Գիլլոուի (Gillow)* գործում դիմողների տունն ամենասկզբում ստեղծվել է օրինականորեն, համանման նկատառումները վերաբերում են նաև սույն գործին: Դատարանը բավարարված է, որ դիմողը գնել է հողը, որպեսզի այնտեղ բնակություն հաստատի: Սկսած 1988 թ. նա գրեթե անընդմեջ ապրել է այնտեղ ... և ցույց չի տրվել, որ ստեղծել է այլ տուն կամ մտադրություն է ունեցել բնակություն հաստատել որևէ այլ տեղ: Հետևաբար, գործը վերաբերում է դիմողի «տան» հարգման իրավունքին (պարբ. 54):

Հետևաբար, այն ժամանակ, երբ դատարանը որոշում է կայացրել առ այն, թե արդյոք դիմողը կարո՞ղ էր պնդել տան գոյության փաստը, որը 8(1) հոդվածով պետք է ենթակա լիներ ազգային մարմինների հարգմանը, կենտրոնացել է բուն իրավիճակի, ոչ թե դիմողների կացարանի՝ ազգային օրենքով ունեցած կարգավիճակի վրա: Սակայն դատարանի մեծամասնությունը (6 կողմ 3 դեմ ձայներով) վճռել է, որ դիմողի նկատմամբ իշխանությունների դրսևորած վերաբերմունքը կարող է արդարացվել 8(2) հոդվածով որպես երկրի տնտեսական բարեկեցության և այլ անձանց առողջության և իրավունքների պաշտպանության շահերից բխող անհրաժեշտություն:

3 *«Նյեմեցն ընդդեմ Գերմանիայի» (Niemietz v Germany* A 251B) գործում (վերը՝ էջ 507) դատարանը «տուն» հասկացությունը մեկնաբանել է լայնորեն՝ ընդգրկելով նաև մասնագիտական/գրասենյակային հաստատությունները, ինչպես, օրինակ՝ փաստաբանական գրասենյակները: Այդպես է եղել, քանի որ կոնվենցիայի ֆրանսերեն տեքստում domicile հասկացությունն ավելի լայն իմաստ ունի, քան անգլերեն տեքստում օգտագործված համարժեք հասկացությունը: Բացի այդ, լայն մեկնաբանությունը համահունչ է եղել 8-րդ հոդվածի հիմքում ընկած նպատակի, այն է՝ անձանց՝ պետական մարմինների

կամայական միջամտություններից պաշտպանելու հետ: Այնուամենայնիվ, դատարանը կարծիք է հայտնել, որ պետությունները կարող են, համեմատած բնակելի շենքերի հետ, մասնագիտական/ գրասենյակային հաստատություններին միջամտելու ավելի մեծ իրավունք ունենալ, եթե կարողանան արդարացնել իրենց գործողությունները 8(2) հոդվածով:

«Սոսիետե Կոլաս Էստը» և այլք ընդդեմ Ֆրանսիայի» (Societe Colas Est and Others v France) գործի վերաբերյալ 2002 թ. ապրիլի 16-ի վճռով պալատը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել ընկերությունների տան հարգման իրավունքի խախտում: Երեք դիմողները եղել են խոշոր շինարարական ընկերություններ: Ֆրանսիայի մրցակցության պաշտպանության մարմիններին բողոքները ներկայացրել է արհմիությունը, համաձայն որոնց դիմողները զբաղվել են ապօրինի գործունեությամբ՝ կապված ճանապարհային շինարարական աշխատանքների իրականացման համար մրցութային հայտերի ներկայացման հետ: Ազգային տեսչական գրասենյակը, որն իրականացրել է 1945 թ. որոշմամբ իրեն տրված լիազորությունները, թույլատրել է տեսուչների կողմից հիսունվեց ընկերությունների, ներառյալ դիմողների ընկերության խուզարկությունը, որպեսզի առգրավի նշված ապօրինի գործողություններին վերաբերող փաստաթղթերը: Այնուհետև ազգային դատարանները մերժել են դիմողների՝ տեսչական ստուգումների և փաստաթղթերի առգրավման գործողությունների օրինականությանը վերաբերող բողոքները: Ապօրինի գործունեության համար ընկերություններից յուրաքանչյուրին նշանակվել է 3-6 միլիոն ֆրանկի տուգանք: Դատարանում դիմողները վիճարկել են, որ հանցանքը փաստող փաստաթղթեր առգրավելու նպատակով իրենց գրասենյակներ տեսուչների ներխուժումով տեղի է ունեցել իրենց տների հարգման իրավունքի խախտում: Պալատը վճռել է, որ.

41. Դատարանը կրկնում է, որ կոնվենցիան գործող փաստաթուղթ է, որը պետք է մեկնաբանվի ներկա պայմաններին համահունչ (տե՛ս *mutatis mutandis «Քոսսի ընդդեմ Միացյալ Թագավորության» (Cossey v the United Kingdom)* 1990 թ. սեպտեմբերի 27-ի վճիռը, շարք A, թիվ 184, էջ 14, պարբ. 35 վերջում): Ինչ վերաբերում է կոնվենցիայով ընկերություններին վերապահված իրավունքներին, պետք է նշել, որ 41-րդ հոդվածով դատարանն արդեն ճանաչել է ընկերությունների կողմից 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման հետևանքով կրած ոչ նյութական վնասի փոխհատուցման իրավունքը (տե՛ս *«Կոմինգերսոլլն ընդդեմ Պորտուգալիայի» (Comingersoll v Portugal* [GC], թիվ 35382/97, պարբ. 33–5, ECHR 2000-IV)): Հիմնվելով կոնվենցիայի իր դինամիկ մեկնաբանության վրա՝ դատարանը կարծում է, որ պահն է վճռելու, որ որոշ հանգամանքներում կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները կարող են մեկնաբանվել որպես ընկերության գրանցված գրասենյակի, մասնաճյուղերի կամ այլ գործնական շենքերի հարգման իրավունքը ներառող իրավունքներ (տե՛ս *mutatis mutandis* վերը մեջբերված *Նյեմեցի (Niemietz)* գործը, էջ 34, պարբ. 30):

...

49…Տվյալ էական ժամանակահատվածում (և դատարանը չպետք է կարծիք հայտնի 1986 թ. օրենսդրական այն բարեփոխումների վերաբերյալ, համաձայն որոնց՝ տեսուչների՝ ստուգումներ անցկացնելու լիազորությունը ենթակա է դատական կարգով հաստատման), համապատասխան մարմիններն օժտված են եղել շատ լայն լիազորություններով, որոնք, հիմք ընդունելով 1945 թ. կարգը, նրանց տվել են բացառիկ իրավասություն՝ որոշել ստուգումների նպատակահարմարությունը, քանակը, տևողությունը և ծավալը: Բացի այդ, խնդրո առարկա տեսչական ստուգումները տեղի են ունեցել առանց նախապես դատական սանկցիա ձեռք բերելու և ոստիկանության ավագ պաշտոնյայի ներկայության: Այդ իսկ պատճառով, նույնիսկ ենթադրելով, որ իրավաբանական անձի մասնավոր գործունեության շենքերին միջամտելու իրավունքը կարող է շատ ավելի հեռուն գնացող միջամտություն լինել (տե՛ս *mutatis mutandis* վերը մեջբերված *Նյեմեցի* գործը, էջ 34, պարբ. 31), ուշադրություն դարձնելով վերը ներկայացված գործելակերպին, դատարանը կարծում է, որ տնտեսական մրցակցության ոլորտում իրականացված և վիճելի գործողությունները չեն կարող համարվել հետապնդվող օրինական նպատակին ճշտորեն համաչափ միջոցառումներ...

50. Ամփոփելով՝ տեղի է ունեցել կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

Այսպիսով, ընկերությունների գործավարական շենքերը կարող են մտնել 8-րդ հոդվածի շրջանակների մեջ: Այնուամենայնիվ, *Կոլասի (Colas)* գործի վերաբերյալ կայացված վճռից պարզ է, որ դատարանը կարող է շատ ավելի պաշտպանողական դիրքորոշում ունենալ ոչ կորպորատիվ անձանց (ինչպես, օրինակ՝ *Նյեմեցի* գործի դեպքում փաստաբանի) գործավարական տարածքների նկատմամբ: Արդյոք իմաստ ունի՞ այսպիսի տարբերակում մտցնել, թե ինչ աստիճանի պաշտպանության պետք է ենթակա լինեն ընդամենը մի քանի բաժնետերեր ունեցող փոքր ընկերությունները:

4 «Տուն» հասկացության դատարանի լայն մեկնաբանության որոշ սահմանափակումներն արծարծվել են *«Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի» (Loizidou v Turkey* (1996) 23 EHRR 513, 1996-VI 2216) գործում: Դիմողը, որ հասակ էր առել Հյուսիսային Կիպրոսում, կղզու այդ հատվածում սեփականության կարգով ունեցել է մի քանի հողակտորներ: 1972 թ. ընթացքում իր ամուսնու հետ նա տեղափոխվել է կղզու մեկ այլ մաս: Նախքան 1974 թ. Թուրքիայի կողմից Հյուսիսային Կիպրոսի շրջափակումը, նրա ասելով, իր հողակտորներից մեկի վրա սկսվել է բնակելի շենքի շինարարություն, և իր ընտանիքը մտադրություն է ունեցել հաստատվել այդ շենքի բնակարաններից մեկում: Տիկին Լոիզիդուն պնդել է, որ թուրքական ուժերի կողմից Հյուսիսային Կիպրոսի ռազմական շրջափակման հետևանքով հնարավորություն չի ունեցել մուտք գործելու իր սեփականության տարածք, ինչի հետևանքով առաջացել է 8-րդ հոդվածով երաշխավորված իր տունը հարգելու և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված գույքն անարգել վայելելու իրավունքների խախտումներ: Դատարանը միաձայն ժխտել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում, քանի որ.

... դիմողը խնդրո առարկա հողատարածքի վրա տուն/բանակարան չի ունեցել: Դատարանի կարծիքով՝ 8-րդ հոդվածի «տուն» հասկացության իմաստը վերին աստիճանի կընդլայներ, եթե ընդգրկեր այն սեփականության տարածքը, որի վրա նախատեսվում է բնակություն հաստատելու նպատակով տուն կառուցել: Ոչ էլ այդ հասկացությունը կարող է մեկնաբանվել որպես տարածք, որն ընդգրկում է այն պետության տարածքը, որտեղ որևէ մեկը հասակ է առել, որտեղ ընտանիքն ունի արմատներ, սակայն որտեղ այդ անձնավորությունն այլևս չի ապրում (պարբ. 66):

Այնուամենայնիվ, մեծամասնությունը (տասնմեկ կողմ և վեց դեմ) որոշել է, որ տեղի է ունեցել դիմողի թիվ 1 արձանագրությամբ նախատեսված սեփականության իրավունքների խախտում (տես ստորև՝ էջ 974): Որոշելու համար, թե արդյոք «տան» մեջ տեղի՞ է ունեցել պետական միջամտություն, դատարանը կրկին առաջնորդվել է դիմողի բնակության պայմանների փաստական կողմերով: Հարց է առաջանում, թե շինարարության ո՞ր փուլում կարող է համարվել, որ սեփականությունն անձի տունն է:

5 *«Դեմադեսն ընդդեմ Թուրքիայի» (Demades v Turkey)* գործի առնչությամբ 2003 թ. հուլիսի 31-ին մշտական գործող դատարանը վճռել է, որ անձի երկրորդ սեփականությունը կարող է դասակարգվել որպես նրա տուն: Դիմողը վիճարկել է, որ Նիկոսիայում գտնվող իր հիմնական տնից բացի, նաև տուն է ունեցել Կիրենիայում, սակայն սկսած 1974 թ. Թուրքիայի զինված ուժերը խոչընդոտել են իրեն մուտք գործել Կիրենիայի և իր սեփականության տարածք:

31. Դատարանը նկատում է, որ դիմողի՝ Կիրենիայում գտնվող տունը եղել է լիովին կահավորված և սարքավորված, որը նա և նրա ընտանիքը կանոնավորապես օգտագործել են և այնտեղ նրանք տարվա ընթացքում բավական երկար ժամանակ ապրել են: Դիմողի և նրա ընտանիքի համար այդ տունը եղել է որպես ընտանեկան օջախ: Այդ թվում, այն ծառայել է նաև որպես ամառանոց և ազգականների, ընկերների և դիմողի գործարար շրջապատի անձանց համար հյուրասիրությունների կազմակերպման վայր:

32. Այս համատեքստում դատարանը նկատում է, որ միշտ չէ, որ հնարավոր է որոշել հստակ տարբերությունները, քանի որ անձը կարող է իր ժամանակը բաշխել երկու տների միջև կամ զգացմունքային ամուր կապվածություն ունենալ իր երկրորդ տան հետ՝ վերաբերվելով դրան որպես իր ընտանեկան կացարանի: Հետևաբար, «տուն» բառի նեղ մեկնաբանությունը կարող է առաջացնել անհավասար վերաբերմունքի նույն վտանգը, ինչ «մասնավոր կյանք» հասկացության մեկնաբանությունը՝ բացառելով այն անձանց, որոնք գտնվում են վերը նշված իրավիճակներում:

33. Դատարանը նկատում է, որ կոնվենցիան գործող փաստաթուղթ է, որը պետք է մեկնաբանվի տեղի ունեցող սոցիալական փոփոխությունների և տվյալ դրության տեսանկյունից (տե՛ս *«Քոսսիի ընդդեմ Միացյալ Թագավորության» (Cossey v the United Kingdom),* 1990 թ. սեպտեմբերի 27-ի վճիռ, շարք A, թիվ 184, էջ 14, պարբ. 35): Բացի այդ, դատարանը նկատում է, որ իր համապատասխան նախադեպային իրավունքում ընդունել է «տուն» հասկացության լայն մեկնաբանություն (տե՛ս, ի թիվս այլոց, *«Սոսիետ Կոլաս Էստը և այլք ընդդեմ Ֆրանսիայի» (Societe Colas Est and Others v France* թիվ 37971/97, պարբ. 40–2, ECHR 2002-II) և *«Նյեմեցն ընդդեմ Գերմանիայի» (Niemietz v Germany),* 1992 թ. դեկտեմբերի 16-ի վճիռ, շարք A, թիվ 251-B, պարբ. 29–30):

34. Հետևաբար, սույն գործի պարագայում դատարանը համարում է, որ այն ժամանակ, երբ տեղի են ունեցել բողոքում ներկայացված գործողությունները, դիմողի տունը համապատասխանել է կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված «տուն» հասկացության իմաստին:

35. Դատարանը նկատում է, որ այս գործը տարբերվում է *Լոիզիդուի (Loizidou)*, գործից, քանի որ. ի տարբերություն տիկին Լոիզիդուի, դիմողը փաստացի տուն է ունեցել Կիրենիայում, թեկուզև այդ տունը եղել է օժանդակ տուն:

36. Դատարանը նկատում է, որ սկսած 1974 թ. դիմողը ի վիճակի չի եղել մուտք գործելու այնտեղ և օգտագործելու այն որպես տուն: Այս կապակցությամբ դատարանը հիշեցնում է, որ *«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի» (Cyprus v Turkey* ([ECHR 2001-IV] պարբ. 172–5)) գործի վերաբերյալ իր կայացրած վճռում եզրակացրել է, որ 1974 թ. հետո տեղահանված հույն կիպրոսցու՝ Հյուսիսային Կիպրոսում գտնվող տան իրավունքի նկատմամբ հարգանքի բացարձակ բացակայությունը կոնվենցիայի 8-րդ հոդվածի շարունակական խախտում է եղել: Դատարանը պատճառաբանել է հետևյալ կերպ.

> «172. Դատարանը նկատում է, որ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության իշխանությունների պաշտոնական քաղաքականությունը, որը մերժում է տեղահանված անձանց՝ սեփական տները վերադառնալու իրավունքը, երևում է այն վերին աստիճանի խիստ սահմանափակումներից, որոնք այդ իշխանությունները կիրառում են հարավում ապրող հույն կիպրոսցիների՝ Հյուսիսային Կիպրոս այցելությունների նկատմամբ: Հետևաբար, տեղահանված անձինք այդ տները կրկին զբաղեցնելու համար ոչ միայն չեն կարող դիմել իշխանություններին, այլև ֆիզիկապես չեն կարող այցելել այնտեղ:
>
> «173. Դատարանն այնուհետև նկատում է, որ դիմող կառավարության կողմից վիճարկվող իրավիճակը ստեղծվել է 1974 թ.՝ Հյուսիսային Կիպրոսի իրադարձություններից հետո: Ինչպես երևում է, դա երբևէ չի արտացոլվել «օրենսդրության» մեջ և, ինչպես ասվել է, կիրառվում է երկգոտի համաձայնությունն առաջ տանելու քաղաքականության համատեքստում՝ նպատակ ունենալով նվազեցնել Կիպրոսի թուրքական և հունական համայնքների միախառնման պատճառով գոյություն ունեցող հակամարտության վտանգը: Երկգոտի համաձայնությունը միջնորդավորվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից և իրականացվում է միջհամայնքային երկխոսության շրջանակում (տե՛ս վերը՝ պարբ.16):
>
> «174. Այս կապակցությամբ դատարանը պետք է հետևյալ դիտարկումներն անի: Առաջին՝ տեղահանված անձանց տները հարգելու իրավունքի բացարձակ մերժումը կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով որևէ օրենսդրական հիմնավորում չունի (տե՛ս վերը՝ պարբ 173): Երկրորդ՝ միջհամայնքային երկխոսությունները չեն կարող վկայակոչվել կոնվենցիայի խախտման օրինականացման նպատակով: Երրորդ՝ խնդրո առարկա խախտումը գոյություն է ունեցել 1974 թ. վարվող քաղաքականության արդյունքում, և պետք է համարել, որ այն շարունակում է գոյություն ունենալ:
>
> «175. Հաշվի առնելով այս նկատառումները՝ դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել և շարունակում է տեղի ունենալ կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, քանի որ տեղահանված որևէ հույն կիպրոսցու թույլ չի տրվել վերադառնալ Հյուսիսային Կիպրոսի իր տունը»:

37. Այս պարագայում դատարանը որևէ պատճառ չի տեսնում, որ այս գործի դեպքում հրաժարվի արդեն մեջբերված *«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի» (Cyprus v Turkey)* գործի հիմքում ընկած պատճառաբանություններից և եզրակացություններից: Հետևաբար եզրակացնում է, որ տեղի է ունեցել և շարունակում է տեղի ունենալ կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, քանի որ բացարձակապես չի ապահովվել դիմողի տան հարգման իրավունքը:

Ազգությամբ թուրք դատավոր Գյոլչյուքլուն առարկել է, քանի որ նա հավատացած է եղել, որ Հյուսիսային Կիպրոսի կարգավիճակի հարցը պետք է լուծվի միջազգային բանակցությունների և Կիպրոսի երկու համայնքների միջև երկխոսության ճանապարհով: Համաձայն պալատի վճռի՝ որքան ավելի շատ ժամանակ է անցկացվում երկրորդ տանը, այնքան ավելի հաստատ է այն պահանջը, որ 8-րդ հոդվածով այն պետք դասակարգվի որպես տուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս խիստ տարածված է, որ մարդիկ թե՛ իրենց երկրի, թե՛ անդամ պետությունների տարածքներում ունեն երկրորդ տներ, *Դեմադեսի* գործով վճռի կարևորությունն այն է, որ ցույց է տալիս այդ գույքը 8-րդ հոդվածով նախատեսվող պաշտպանության շրջանակների մեջ մտցնելու ներուժը, որի արդյունքը սեփականատերերի հետագա օրինական իրավունքների ամրապնդումն է, ինչը հատկապես ուրախալի իրողություն է օտարերկրյա քաղաքացիություն ունեցող անձանց համար:

6 8-րդ հոդվածով պետությունները կարող են պատասխանատվություն կրել շրջակա միջավայրի լուրջ աղտոտում առաջացնելու կամ ուրիշներին շրջակա միջավայրի աղտոտում առաջացնելու հնարավորություն տալու համար, քանի որ այդպիսի աղտոտումը միջամտություն է անձանց տունը հարգելու իրավունքին: *«Լոպես Օստրան ընդդեմ Իսպանիայի» (Lopez Ostra v Spain*, A.303C (1994) 20 EHRR 277) գործի դեպքում դիմողը հայտնել է, որ կաշվի երկրորդային վերամշակման մասնավոր գործարանի (որը կառուցվել է պետական սուբսիդիաներով իր բնակարանից տասներկու մետր հեռավորության վրա) արտանետած ծխագազերը և գարշահոտությունը լրջորեն աղտոտել են իր ընտանեկան տունը: Ախտահարումը տևել է մի քանի տարի, և, ի վերջո, դիմողի ընտանիքը ստիպված պետք է տեղափոխվեր տեղական կառավարման մարմինների տրամադրած տուն, քանի որ ախտահարումը բացասական ազդեցություն էր թողնում առողջության վրա: Դատարանը վճռել է, որ շրջակա միջավայրի սաստիկ աղտոտումը կարող է առաջացնել միջամտություն անձի տունը հարգելու իրավունքին նույնիսկ այն դեպքում, երբ այն լուրջ վտանգի չի ենթարկում բնակիչների առողջությունը: Իսպանիայի իշխանությունները փորձել են երկրորդային վերամշակման գործարանի արտադրությունը արդարացնել քաղաքի տնտեսական բարեկեցության նպատակից բխող անհրաժեշտությամբ, սակայն դատարանը վճռել է որ «... պետությանը չի հաջողվել արդար հավասարակշռություն պահպանել քաղաքի տնտեսական բարեկեցությունից բխող թափոնների վերամշակման գործարան ունենալու և դիմողի տան և անձնական ու ընտանեկան կյանքի հարգման իրավունքից արդյունավետորեն օգտվելու շահի միջև (պարբ. 58): Այսպիսով՝ դատարանը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել դիմողի 8-րդ հոդվածով ամրագրված իրավունքների խախտում և կրած նյութական ու ոչ նյութական վնասի համար նրան նշանակել 4 միլիոն պեսետի փոխհատուցում: Սա առաջին դեպքն է, երբ շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ հայցը դատարանը որոշել է բավարարել 8-րդ հոդվածի շրջանակներում: Այնուամենայնիվ, ավելի վաղ լսված *«Փաուելը և Ռայներն ընդդեմ ՄԹ-ի» (Powell and Rayner v UK*, A.172 (1990) 12 EHRR 355) գործում դատարանն անուղղակիորեն ընդունել է, որ շրջակա միջավայրին վերաբերող հայցերը համապատասխան հանգամանքների առկայության դեպքում կարող են մտնել 8-րդ հոդվածի շրջանակների մեջ: «Հիթրոու» օդանավակայանի թռիչքային ուղեծրի տարածքում բնակվող երկու անձինք հայտնել են, որ ռեակտիվ շարժիչների արձակած ձայները միջամտություն են իրենց տների հարգման իրավունքին: Այնուամենայնիվ, հանձնաժողովը և դատարանը եզրակացրել են, որ օդանավակայանը պահանջվել է ՄԹ-ի տնտեսական բարեկեցության համար, և համապատասխան մարմինները բավականաչափ քայլեր են ձեռնարկել (ինչպես, օրինակ՝ հատկապես ուժեղ ազդեցության տակ հայտնված տներում ձայնամեկուսացման աշխատանքները), որպեսզի ապահովեն հարգանքը դիմողների՝ 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների նկատմամբ: Տե՛ս ստորև (էջ 596), որտեղ քննարկված է պետությունների՝ 8(1) հոդվածով անձանց իրավունքները «հարգելու» դրական պարտավորությունը:

Դատարանի մեծ պալատը *Լոպես Օստրայի (Lopez Ostra)* գործում մշակել է այն սկզբունքները, որոնց հիման վրա պետությունը պետք է 8-րդ հոդվածով պատասխանատու ճանաչվի այն դեպքերում, երբ չի զգուշացրել տեղացի ազգաբնակչությանը շրջակայքում գտնվող մասնավոր քիմիական գործարանի ներկայացրած վտանգի և այն անվտանգության ընթացակարգերի մասին, որոնց նրանք պետք է հետևեին գործարանում վթար տեղի ունենալու դեպքում (*«Գուերրան ընդդեմ Իտալիայի» (Guerra v Italy* (1998) 26 EHRR 357, 1998-I 210)): Քառասուն կին դիմողները բնակվել են Մանֆրեդոնիա քաղաքում՝ քիմիական գործարանից մեկ կիլոմետր հեռավորության վրա: Նրանք պնդել են, և կառավարությունը չի առարկել, որ երկար տարիների ընթացքում գործարանն արտանետել է մեծ քանակությամբ աղտոտող նյութեր, ներառյալ՝ բռնկվող գազեր, ծծմբի երկօքսիդ և ազոտի օքսիդ: 1976 թ. գործարանում տեղի է ունեցել պայթյուն, որի հետևանքով արտանետվել են մկնդեղ պարունակող նյութեր, և 150 մարդ սուր թունավորումով տեղափոխվել է հիվանդանոց: Սևեստոյում գտնվող մեկ այլ գործարանում տեղի ունեցած վթարի հետևանքով այլ խիստ թունավոր քիմիական նյութերի արտանետումներից հետո նախկին Եվրոպական տնտեսական համայնքն ընդունել է արդյունաբերական տեղամասերում անվտանգության հարցերին վերաբերող հրահանգ: 1988 թ. հրահանգը մտցվել է Իտալիայի օրենքի մեջ, որի արդյունքում տեղի քաղաքապետները, ի թիվս այլոց, պարտավորություն են ունեցել տեղեկացնելու իրենց բնակիչներին այդ տարածքում

վտանգավոր արդյունաբերական գործողությունների և արտակարգ իրավիճակներում կիրառման ենթակա ընթացակարգերի մասին: 1989 թ. փորձագետների պաշտոնական խումբը Մանֆրեդոնիայում գտնվող գործարանի վերաբերյալ առաջարկներ է ներկայացրել կենտրոնական կառավարությանը, սակայն 1995 թ. վերջում տեղացի ազգաբնակչությանն անվտանգությանը վերաբերող տեղեկություններ դեռևս տրամադրված չեն եղել: Այնուհետև դիմողները բողոք են ներկայացրել ՄԻԵԿ-ով: Դատարանը միաձայն եզրակացրել է, որ տեղի է ունեցել նրանց անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքների խախտում, քանի որ նրանք ստիպված են եղել այդքան երկար տարիներ սպասել «... կարևոր տեղեկությունների համար, որոնք նրանց հնարավորություն կտային գնահատել այն վտանգները, որոնց իրենք և իրենց ընտանիքները շարունակելու էին ենթարկվել, եթե մնային Մանֆրեդոնիայում, որը հատկապես վտանգի տակ էր լինելու, եթե գործարանում վթար տեղի ունենար» (պարբ. 60): Յուրաքանչյուր դիմողին դատարանը նշանակել է 10 միլիոն լիրա ոչ նյութական վնասի փոխհատուցում: Մենք կարող ենք ենթադրել, որ այս առանձին գործարանի շրջակա միջավայրն աղտոտելու տևական պատմությունը որոշիչ գործոն է եղել, որի շնորհիվ դատարանը պատրաստակամություն է դրսևորել ընդունելու, որ իշխանությունները պատասխանատվություն են կրում ազգաբնակչությանը համապատասխան խորհրդատվություն չտրամադրելու համար:

Պալատի և մեծ պալատի միջև լուրջ տարաձայնություն է եղել 8-րդ հոդվածը «Հիթրոու» օդանավակայանից գիշերային թռիչքների նկատմամբ կիրառելու առումով: *«Հեթթոնը և այլք ընդդեմ ՄԹ-ի» (Hatton and Others v UK)* (2001 թ. հոկտեմբերի 2-ի վճիռ) գործով դիմողները բնակվել են օդանավակայանի մերձակայքում կամ օդանավակայանից թռիչքներ կատարող օդանավերի թռիչքային ուղեծրի տիրույթում: Նրանք բողոքել են, որ տրանսպորտի վարչության՝ գիշերային թռիչքները կարգավորելու համակարգը, որը հիմնված է եղել աղմուկի քվոտաների և թռիչքների քանակների վրա, չի առաջնորդվել բնակիչների քնի խանգարման կամ գիշերային թռիչքների տնտեսական օգուտների վերաբերյալ խելամիտ ուսումնասիրությունների վրա: Պալատի մեծամասնությունը (հինգ կողմ և երկու դեմ) վճռել է, որ.

97. Դատարանը, այնուամենայնիվ, շեշտում է, որ համապատասխան հավասարակշռությունն ապահովելու համար պետությունները պետք է ուշադրություն դարձնեն մի շարք նյութական նկատառումների վրա: Բացի այդ, հատկապես բնապահպանական զգայուն ոլորտում զուտ երկրի բարեկեցության վկայակոչումը բավարար չէ, որ երկրի բարեկեցությունն ավելի բարձր դասվի, քան անձանց իրավունքները: Դատարանը հիշում է, որ վերը նշված *«Լոպես Օստրան ընդդեմ Իսպանիայի» (Lopez Ostra v Spain)* գործում, թեպետ խնդրո առարկա կաշվի վերամշակման գործարանի ապահոված ազգային տնտեսական շահը կասկածի ենթակա չի եղել, դատարանը բավական մանրամասն ուսումնասիրել է, թե «արդյոք ազգային մարմինները ձեռնարկե՞լ են այնպիսի միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են եղել դիմողի տան և անձնական ու ընտանեկան կյանքի հարգման իրավունքների պաշտպանության համար...» (1994 թ. դեկտեմբերի 9-ի վճիռ, էջ 55, պարբ. 55): Դատարանը կարծում է, որ այնքանով, որքանով հնարավոր է, պետություններից պահանջվում է նվազեցնել միջամտությունն այս իրավունքներին՝ ձգտելով գտնել այլընտրանքային լուծումներ և, ընդհանուր առմամբ, իրենց նպատակների ապահովման այնպիսի տարբերակներ, որոնք նվազ ծանր ազդեցություն ունեն մարդու իրավունքների վրա: Այդ նպատակով համապատասխան ծրագրի իրականացումից առաջ անհրաժեշտ է կատարել տեղին և լրիվ ուսումնասիրություններ և հետազոտություններ, որոնք կօգնեն գտնելու լավագույն լուծումը և, այդպիսով, ճշմարիտ հավասարակշռության ապահովումը:

Մեծամասնությունն այնուհետև եզրակացրել է, որ կառավարությունը չի կատարել գիշերային թռիչքների ռեժիմի համապատասխան ծախսարդյունավետության վերլուծություն, ինչը 8-րդ հոդվածի խախտում է: Դրան ի պատասխան՝ կառավարությունը գործը 43-րդ հոդվածով ուղղել է մեծ պալատին՝ առարկելով, որ պալատի կիրառած թեստը չի համապատասխանել դատարանի կողմից հաստատված իրավունքին, համաձայն որի՝ բնապահպանական/շինարարական նախագծման որոշումների կայացման ոլորտում պետություններն օժտված են հայեցողության լայն սահմաններով, որոնք ներառում են նաև մրցակցող շահերի միջև համալիր հավասարակշռության հաստատումը:

«Հեթթոնը և մյուսներն ընդդեմ ՄԹ-ի» (Hatton and Others v UK) գործի վերաբերյալ 2003 թ. հուլիսի 8-ի վճռով մեծ պալատն ընդունել է, որ թեպետ կոնվենցիայի նախադեպերը, ներառյալ *«Փաուելը և Ռայներն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Powell and Rayner v United Kingdom)* և *«Լոպես Օստրան ընդդեմ Իսպանիայի» (Lopez Ostra v Spain)* նախադեպերը, չեն երաշխավորել մաքուր և անաղմուկ շրջակա միջավայրի նկատմամբ հստակ իրավունքը, սակայն հաստատում է, որ.

98. 8-րդ հոդվածը կարող է կիրառվել շրջակա միջավայրին վերաբերող գործերում՝ անկախ այն հանգամանքից՝ աղտոտումը պատճառվել է ուղղակիորեն պետության կողմի՞ց, թե՞ պետության պատասխանատվության խնդիր առաջանում է, որովհետև պետությունը չի կարողացել ճիշտ կարգավորել իր մասնավոր արդյունաբերությունը: Կիրառելի սկզբունքները զգալիորեն իրար նման են՝ անկախ այն հանգամանքից՝ գործն ուսումնասիրվում է 8-րդ հոդվածի 1-ին կետո՞վ, որը վերաբերում է պետության՝ դիմողների իրավունքները պաշտպանելու նպատակով ողջամիտ և համապատասխան քայլեր իրականացնելու դրական պարտավորությանը, թե՞ պետական մարմնի միջամտությունն արդարացնելու համար այն ուսումնասիրվում է 2-րդ կետի համաձայն: Երկու համատեքստում էլ պետք է հաշվի առնվի անձի և համայնքի ընդհանուր շահերի միջև արդար հավասարակշռության հաստատումը, և երկու դեպքում էլ պետությունն օժտված է հայեցողության որոշակի սահմաններով, որպեսզի որոշի այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն կոնվենցիայի համապատասխանությունը երաշխավորելու համար: Բացի այդ, նույնիսկ 8-րդ հոդվածի 1-ին կետից հետևող դրական պարտավորությունների առնչությամբ պահանջվող հավասարակշռությունը հաստատելու համար երկրորդ կետում նշված նպատակները որոշակի նշանակություն ունեն (տե՛ս վերը նշված *Փաուելի և Ռայների (Powell and Rayner)* վճիռը, պարբ. 41 և վերը նշված *Լոպես Օստրայի (Lopez Ostra)* վճիռը, պարբ. 51):

Սակայն մեծ պալատն ընդունել է ազգային մարմինների ժողովրդավարական լեգիտիմացումը և տեղական կարիքները գնահատելու և ընդհանուր քաղաքականության հարցերի շուրջ որոշում կայացնելու հարցերում նրանց ունեցած հիմնական դերը: Հետևաբար, շրջակա միջավայրի հարցերին վերաբերող ազգային մակարդակով արված որոշումների կապակցությամբ դատարանի ուսումնասիրությունը պետք է անդրադառնա նյութական հատկանիշներին, որպեսզի երաշխավորի, որ դրանք համապատասխանել են 8-րդ հոդվածի պահանջներին, որոնք ենթակա են կառավարություններին տրամադրված «հայեցողության լայն սահմաններին»: Բացի այդ, դատարանը պետք է ուսումնասիրի ազգային մակարդակով որոշման կայացման գործընթացը, որպեսզի երաշխավորի, որ դիմողի շահերն արժանացել են բավարար ուշադրության:

Ինչ վերաբերում է «Հիթրոուից» գիշերային թռիչքների համակարգի առավելություններին, ապա կառավարությունը պնդել է, որ Լոնդոնի տասնյակ հազարավոր բնակիչներ եղել են դիմողների նման իրավիճակում, անշարժ գույքի շուկան այդ տարածքում ծաղկել է, և դիմողներից ոչ ոք չի պնդել, որ ձայնային աղտոտման պատճառով իրենք ի վիճակի չեն եղել վաճառելու իրենց տները: Եվրոպայի այլ հանգուցային օդանավակայանները, ներառյալ Փարիզի «Շառլ դը Գոլ», Ամստերդամի «Շիպոլի» և Ֆրանկֆուրտի օդանավակայաններն ունեցել են գիշերային թռիչքների նկատմամբ սահմանված նվազ խիստ սահմանափակումներ, և եթե դեպի «Հիթրոու» կամ «Հիթրոուից» գիշերային թռիչքների նկատմամբ կիրառվեին հետագա սահմանափակումներ, ապա այն կհայտնվեր զգալիորեն անբարենպաստ իրավիճակում: Բացի այդ, «Հիթրոուի» միջոցով գիշերային չվերթերը տարբեր ավիաուղիների ցանցերի բաղկացուցիչ մասն են եղել: Կառավարությունն առարկում է՝ պնդելով, որ նախքան 1993 թ. գիշերային թռիչքների կանոնակարգեր մտցնելը մանրամասն ուսումնասիրություններ է կատարել, որպեսզի պարզի օդանավերի պատճառով բնակիչների մոտ առաջացած անհանգստությունը, ինչպես նաև այդ թեմայով հրավիրել է հանրային խորհրդակցություններ:

Դիմողները համաձայնել են պալատի վճռին և շեշտել, որ գիշերը թռչող նույնիսկ մի քանի օդանավերը կարող են լրջորեն խանգարել մարդկանց քունը: «Բրիտանական ավիաուղիները», արտահայտելով ավաուղիների արհմիությունների տեսակետները, պնդել է, որ «Հիթրոու» օդանավակայանից գիշերային թռիչքները կարևոր դեր են խաղում ՄԹ-ի տրանսպորտային ենթակառուցվածքի մեջ և զգալի ազդեցություն ունեն ՄԹ-ի տնտեսության և ՄԹ-ի քաղաքացիների կյանքի չափորոշիչների վրա:

Մեծ պալատը որոշել է, որ այս դիմումի մեջ ներկայացված իրավիճակը տարբերվում է շրջակա միջավայրին վերաբերող *Լոպես Օստրայի (Lopez Ostra)* և *«Գուերրան ընդդեմ Իտալիայի» (Guerra v Italy)* գործերից, որոնց կապակցությամբ դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում, քանի որ Իսպանիայի և Իտալիայի իշխանությունները չեն հետևել ազգային օրենքին, մինչդեռ «Հիթրոուի» գիշերային թռիչքների համակարգը համապատասխանել է Բրիտանիայի օրենքին: Մեծ պալատի մեծամասնությունը (տասներկու կողմ և հինգ դեմ ձայների հարաբերակցությամբ) մերժել է շրջակա միջավայրին վերաբերող գործերի նկատմամբ պալատի մոտեցումը.

122. Դատարանը պետք է հաշվի առնի, թե արդյոք կարելի՞ է ասել, որ կառավարությունը պահպանել է արդար հավասարակշռություն [ՄԹ-ի տնտեսական] շահերի և աղմուկի ազդեցությանը ենթարկված անձանց, ներառյալ դիմողների շահերի միջև: Շրջակա միջավայրի պաշտպանությունը պետք է հաշվի առնվի կառավարությունների կողմից, որոնք գործում են իրենց հայեցողության սահմաններում, ինչպես և պետք է հաշվի առնվի դատարանի կողմից, երբ նա կատարում է այդ հայեցողության սահմանների վերանայում: Սակայն դատարանի համար նպատակահարմար չէ այս կապակցությամբ ընդունել հատուկ մոտեցում՝ հիմք ընդունելով բնապահպանական ոլորտին առնչվող մարդու իրավունքների հատուկ կարգավիճակը: Այս համատեքստում այսպիսի քաղաքական որոշում ընդունելիս դատարանը պետք է վերադառնա պետության հայեցողության սահմանների ընդգրկմանը:

123. Դատարանը նկատում է, որ 1993 թ. գիշերային չվերքերի չվացուցակի հաստատումը եղել է ընդհանուր բնույթի միջոցառում, որն այս դեպքում առանձնահատուկ ձևով ուղղված չի եղել դիմողների դեմ, թեպետև ունեցել է ակնհայտ հետևանքներ նրանց և նույն իրավիճակում գտնվող այլ անձանց վրա: Համենայն դեպս, ինչ վերաբերում է պետությունների հայեցողության ավելի նեղ սահմանների կիրառման պահանջին, ապա դիմողների նշած քնի խանգարումը այնպիսի ներխուժում չէ անձնական կյանք, որ համեմատելի լինի *Դաջենի (Dudgeon)* գործում ներկայացված քրեական միջոցների հետ (տե՛ս *«Դաջենն ընդդեմ ՄԹ-ի» (Dudgeon v the United Kingdom*, [A.45] էջ 21, պարբ. 52 [(1981)])): Ավելի շուտ, թվում է, որ ընդհանուր քաղաքականության որոշումների նկատմամբ կիրառվող սովորական կանոնը տեղին է նաև այս դեպքում, առավել ևս, որ այդ կանոնը կարող է վկայակոչվել նույնիսկ ընդհանուր քաղաքականության շրջանակներում ձեռնարկված առանձին միջոցառումների նկատմամբ, ինչպես, օրինակ՝ վերը նշված *«Բաքլին [ընդդեմ Միացյալ Թագավորության»] (Buckley [v United Kingdom* 1996-IV 74]) գործի դեպքում: Թեպետ պետությունից պահանջվում է համապատասխան ուշադրություն դարձնել այն առանձնահատուկ շահերին, որոնք պարտավոր է երաշխավորել 8-րդ հոդվածի շրջանակներում, այդ պարտավորության կատարման համար տարբեր ձևերի և միջոցների ընտրությունը պետք է վերապահվի այդ պետությանը: Դատարանի վերահսկիչ գործառույթը, ունենալով օժանդակ բնույթ, սահմանափակվում է միայն այնպիսի վերանայումով, որի նպատակն է պարզել՝ ընդունված որևէ առանձնահատուկ լուծումը կարո՞ղ է համարվել արդար հավասարակշռություն հաստատող լուծում:

Մեծամասնությունը եզրակացրել է, որ գիշերային թռիչքները կարգավորելու նպատակով կառավարության որոշումը, այն է՝ ընդունել քվոտաների վրա հիմնված համակարգ՝ հաշվի առնելով տարբեր ինքնաթիռների առաջացրած աղմուկի մակարդակը, անհամատեղելի չէ 8-րդ հոդվածի հետ, ինչպես նաև ողջամիտ է ենթադրել, որ այդպիսի թռիչքները «գոնե որոշ չափով ներդրում են ունենում ընդհանուր տնտեսության մեջ»: Նաև, մեծամասնության կարծիքով, կարևոր է համարվել այն հանգամանքը, որ աղմուկի ազդեցությանը ենթարկված սահմանափակ թվով անձինք (1992 թ. կառավարության ուսումնասիրության արդյունքներով՝ անձանց ընդամենը 2-3 տոկոսը) կարող էին առանց ֆինանսական վնաս կրելու փոխել իրենց տները, քանի որ այն տարածքում, որտեղ դիմողներն ապրել են, անշարժ գույքի շուկան եղել է ծաղկուն վիճակում: Հետևաբար, մեծ պալատը չի համարել, որ կառավարությունն անցել է իրեն վերապահված հայեցողության սահմանը, երբ 1993 թ. ընդունել է «Հիթրոուից» գիշերային թռիչքների չվացուցակի վերաբերյալ որոշումը:

Ինչ վերաբերում է ազգային մակարդակով որոշումների կայացման ընթացակարգային կողմին, պալատը վճռել է, որ այն որոշումները, որոնք

128…ինչպես և սույն դեպքում վերաբերում են շրջակա միջավայրի և տնտեսական քաղաքականության բարդ հարցերին, պետք է անհրաժեշտաբար ներառեն համապատասխան հետազոտություններ և ուսումնասիրություններ, որոնք նրանց հնարավորություն կտան արդար հավասարակշռություն հաստատել կշեռքի նժարին դրված բախվող շահերի միջև: Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ որոշումները կարող են կայացվել միայն այն դեպքում, երբ որոշման ենթակա խնդրի բոլոր կողմերի վերաբերյալ լիարժեք և չափելի տվյալներ կան:

Սկսած 1962 թ.՝ յուրաքանչյուր հինգ տարին մեկ, կառավարությունը կանոնավորապես հսկել է «Հիթրոու» օդանավակայանի գիշերային թռիչքները: Նախքան 1993 թ. նոր չվացուցակի հաստատումը եղել են երկար տարիների ընթացքում անցկացված բազմաթիվ ուսումնասիրություններ և հետազոտություններ: 1993 թ. չվացուցակի հաստատումից առաջ դիմողները հնարավորություններ են ունեցել իրենց կարծիքը հայտնելու քննարկվող փաստաթղթի վերաբերյալ և այդ կարծիքների անտեսվելու դեպքում դատական կարգով պահանջելու, որ այդ փաստաթուղթը վերանայվի: Ուստի մեծամասնությունը չի համարել, որ 1993 թ. չվացուցակի կապակցությամբ տեղի են ունեցել լուրջ ընթացակարգային խախտումներ: Հետևաբար, դիմողները չեն ենթարկվել 8-րդ հոդվածի խախտումից առաջացած ազդեցությունների:

Հինգ դատավոր՝ Կոստան (սկզբնական որոշումն ընդունած պալատի նախագահը), Ռեսը, Թուրմենը, Զուպանչիկը և Ստեյներն ընդունել են միասնական չհամընկնող կարծիք, որում առաջարկել են դատարանին շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ բողոքներին պատասխանելու կապակցությամբ ստանձնել շատ ավելի լուրջ դերակատարություն: Նախ՝ նրանք շեշտել են մարդու իրավունքների պաշտպանության, ներառյալ առողջության պահպանության ամենահիմնարար մարդկային կարիքի և «շրջակա միջավայրի աղոտոտվածության վերացման հրատապ կարիքի» միջև կապը: Նշելով, որ կոնվենցիայի տեքստը («դեռևս») չի պարունակում աղտոտվածության մասին դրույթ, չհամընկնող կարծիք հայտնած դատավորները նկատել են, որ վերջին շրջանում ընդունվել են շրջակա միջավայրի աղտոտվածության մասին նոր դրույթներ, այդ թվում՝ «Հիմնարար իրավունքների մասին» եվրոպական խարտիան և Կիոտոյի արձանագրությունը: Հետևաբար, նրանք որոշել են, որ շրջակա միջավայրի աղտոտումը միջազգային իրավունքի խնդիր է: Նրանց կարծիքով՝ ավելի վաղ շրջանի նախադեպային իրավունքն անդրադարձել է կոնվենցիայի էվոլյուցիոն մեկնաբանությանը, ինչպես, օրինակ.

2... . Մարդու շրջակա միջավայրի իրավունքների ոլորտում, որը գործնականում անհայտ է եղել 1950 թ., հանճնաժողովը և դատարանը հիմնականում ընդունել են այնպիսի դիրքորոշում, համաձայն որի՝ 8-րդ հոդվածն ընդգրկում է առողջ շրջակա միջավայրի իրավունք և, հետևաբար, աղտոտումից ու վնասակար քիմիական նյութերի, վատ հոտերի, շնչառական հիվանդությունների հարուցիչների, աղմուկի և այլնի առաջացրած անհանգստությունից պաշտպանություն:

Այս տեսանկյունից մեծ պալատի որոշումը, համաձայն որի՝ 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել,

5... . մեր կարծիքով, շեղվում է նախադեպային իրավունքի ոլորտի վերը նշված զարգացումներից և նույնիսկ մեկ քայլ հետ է գնում: Դատարանը նախապատվությունը տալիս է տնտեսական նկատառումներին, առավել, քան առողջական նկատառումներին...

Չհամընկնող կարծիք հայտնած դատավորները եզրահանգել են, որ ինքնաթիռների աղմուկի պատճառով անձանց գիշերվա քնի խանգարման համատեքստում պետություններն ունեցել են դրական պարտավորություն՝ «հնարավորինս երաշխավորել, որ շարքային մարդիկ օգտվեն քնելու նորմալ պայմաններից»: Հետևաբար.

17….Քնելու իրավունքի հիմնարար բնույթի պատճառով պետության հայեցողության սահմանները նեղանում են և կարող են գերազանցվել միայն տվյալ պետության իրական և հրատապ, եթե չասենք՝ անհապաղ կարիքների պատճառով: Այս կապակցությամբ, երբ խոսքն այնպիսի հարաբերությունների մասին է, որպիսիք են, մի կողմից, անձնական անձեռնմխելիության և առողջության կողմ համարվող քնելու իրավունքը և, մյուս կողմից, շատ ընդհանուր բնույթի տնտեսական շահը, դատարանի օժանդակ դերը, որն արտահայտվում է «հայեցողության սահմանների» կիրառման մեջ, ինքնին դառնում է ավելի երկրորդական:

Կառավարության՝ գիշերային թռիչքների տնտեսական անհրաժեշտության գնահատականների հիմքում ընկած են ավիացիոն արդյունաբերության հաշվետվությունները, մինչդեռ նախքան 1993 թ. չվացուցակի ուժի մեջ մտնելը կառավարությունը լուրջ փորձեր չի արել դիմողների քնի վրա ինքնաթիռների առաջացրած աղմուկի ազդեցությունը գնահատելու համար: Հետևաբար, կառավարությունը չի կարողացել ապահովել արդար հավասարակշռություն ՄԹ-ի տնտեսական բարեկեցության և դիմողների քունը գիշերային թռիչքների առաջացրած աղմուկից պաշտպանելու միջև:

Մեծ պալատի վճիռն զգալի նշանակություն ունի, քանի որ դրանով դրվել է 8-րդ հոդվածով շրջակա միջավայրի վերաբերյալ բողոքների նկատմամբ դատարանի հեղինակավոր մոտեցման հիմքը: Թեպետ մեծամասնությունը հաստատել է սկզբնական դատարանի մոտեցումը, որ շրջակա միջավայրի աղտոտման լուրջ ձևերը կարող են առաջացնել մարդկանց անձնական կամ ընտանեկան կյանքի և տան հարգման իրավունքների խախտում, և պետությունները նման աղտոտում չառաջացնելու բացասական և մասնավոր հատվածի աղտոտման արդյունավետ կանոնակարգերի ընդունման դրական պարտավորություններ ունեն, աղտոտման վերահսկողության միջոցների

առումով մեծ պալատը չի ցանկացել կիրառել պալատի՝ ազգային քաղաքականության որոշումների վերլուծության խիստ մոտեցումը: Սա թեև եղել է առաջին դեպքը, երբ մեծ պալատի որոշման մեջ հիշատակվել են «մարդու շրջակա միջավայրի իրավունքները», կառավարության՝ շրջակա միջավայրին վերաբերող քաղաքական որոշումների նկատմամբ մեծամասնությունը կիրառել է հայեցողության լայն սահմանների սկզբունքը: Մեծ պալատը հաստատել է, որ ազգային մարմիններն առաջնային դեր ունեն շրջակա միջավայրն աղտոտող առանձին աղբյուրի պատճառով տուժած համայնքի և ազգաբնակչության կարիքների միջև հավասարակշռություն հաստատելու առումով: Բնապահպաններին կարող է և դուր չգալ, որ մեծ պալատը շեշտել է իր վերահսկողական դերը, սակայն նախադեպային իրավունքը ցույց է տալիս, որ դա անհիմն չէ: Բացի այդ, մեծ պալատի *«Հեթթոնի» (Hatton)* գործով կայացրած վճռից ակնհայտ է, որ 8-րդ հոդվածին համապատասխանությունը գնահատելու համար ներկայիս դատարանն ուսումնասիրելու է ինչպես ազգային քաղաքականության բնույթը, այնպես էլ ազգային մարմինների որոշումների կայացման հիմքում ընկած ընթացակարգերը, որպեսզի երաշխավորի, որ առանձին դիմողներն ունեցել են որոշումների կայացման գործընթացին մասնակցելու պատշաճ հնարավորություններ:

Շրջակա միջավայրին վերաբերող որոշումների կայացման նյութական և ընթացակարգային կողմերն ուսումնասիրելու առումով դատարանի մեթոդաբանությունը պալատի կողմից միաձայն կիրառվել է ավելի ուշ լսված *«Թասքինը և այլք ընդդեմ Թուրքիայի» (Taskin and Others v Turkey)* գործի վերաբերյալ 2004 թ. նոյեմբերի 10-ին կայացված վճռում: 1992 թ. տասը դիմողները բնակվել են մի տարածքում, որտեղ բնապահպանության նախարարությունը մասնավոր ընկերությանը թույլ էր տվել ոսկու հանքի շահագործում սկսել: Համաձայն թույլտվության՝ ոսկու արդյունահանման նպատակով թույլատրվել է ցիանիդ օգտագործել: Դիմողներն այս թույլտվության դեմ բողոք են ներկայացրել դատարաններին՝ պնդելով, որ ցիանիդացման գործընթացի հետևանքով առաջացել է ստորերկրյա ջրերի աղտոտման վտանգ: 1997 թ. գերագույն վարչական դատարանը բավարարել է նրանց բողոքը՝ եզրակացնելով, որ առկա բնապահպանական և մարդկային առողջության վտանգների պատճառով հանքարդյունահանման թույլտվությունը չի բխել ընդհանուրի շահերից: Տեղացի կառավարիչը 1998 թ. փետրվարին կարգադրել է փակել հանքը: 1999 թ. ընթացքում վարչապետը փորձել է ձեռք բերել հանքում ցիանիդի օգտագործման պատճառով առաջացած բնապահպանական հետևանքների վերաբերյալ Թուրքիայի գիտատեխնիկական հետազոտությունների ինստիտուտի զեկույցը: Զեկույցում նշված է եղել, որ գերագույն դատարանի վճռում նշված վտանգները ներկայումս վերացված են կամ նվազեցված: Հետևաբար, նախարարները թույլ են տվել վերաբացել հանքը: Դիմողները կրկին ազգային դատարաններում վիճարկել են այս որոշումները: 2002 թ. Թուրքիայի կառավարությունը որոշել է, որ հանքարդյունահանող ընկերությանը պետք է թույլ տրվի շարունակել ոսկու արդյունահանումը: Այդ որոշումը չի հրապարակվել: Եվրոպական դատարանում դիմողները ներկայացրել են, ի թիվս այլոց, որ ցիանիդի կիրառմամբ ոսկու արդյունահանման համար թույլտվության տրամադրումը առաջացրել է 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտում: Պալատը որոշել է, որ ինչ վերաբերում է թույլտվությունը տրամադրելու նյութական որոշմանը, գերագույն դատարանը համարել է, որ այն հակասում է հանրային շահին, հետևաբար, պալատն այլևս այս հարցի հետագա ուսումնասիրություն կատարելու կարիք չունի: Ինչ վերաբերում է հանքարդյունահանման թույլտվությանը վերաբերող որոշումների կայացման գործընթացներին, ապա պալատը որոշել է, որ վարչական մարմինները չեն հետևել ազգային օրենսդրության դրույթներին կամ դատարանների որոշումներին՝ դրանով իսկ զրկելով դիմողներին իրենց ընթացակարգային արդյունավետ պաշտպանությունից: Հետևաբար, տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում: Համանման եզրակացություններ արվել են *«Օչկանը և այլք ընդդեմ Թուրքիայի» (Ockan and Others v Turkey)* գործի վերաբերյալ 2006 թ. մարտի 28-ի վճռում, որտեղ 315 այլ տեղացի բնակիչներ հաջողությամբ վիճարկել են հանքի նկատմամբ կառավարման մարմինների գործողությունները:

«Մորենո Գոմեսն ընդդեմ Իսպանիայի» (Moreno Gomez v Spain) գործի վերաբերյալ 2004 թ. նոյեմբերի 16-ի վճռի համաձայն՝ Իսպանիայի տեղական կառավարման մարմինը չի կարողացել պաշտպանել անձի տունը վերին աստիճանի լուրջ աղմուկի աղտոտումից: 1970 թ. դիմողը բնակություն է հաստատել Վալենսիայի բնակելի թաղամասերից մեկում: Սկսած 1974 թ.՝ տեղական

խորհուրդը 120-ից ավելի բարերի, գինետների և դիսկոտեկների թույլ է տվել այդ տարածքում գործունեություն ծավալել: Չնայած դիմողի և այլ բնակիչների կողմից ներկայացված շարունակական բողոքներին, տեղական մարմինը ոչինչ չի արել թույլտվություն ունեցող հաստատությունների կողմից առաջացրած աղմուկի մակարդակը նվազեցնելու ուղղությամբ (համաձայն 1993 թ. խորհրդի մասնագիտական զեկույցի՝ գիշերվա ընթացքում աղմուկի մակարդակը եղել է անընդունելի և գերազանցել թույլատրելի սահմանները, իսկ 1995 թ. ոստիկանությունը հայտնել է խորհրդին, որ գիշերային ակումբները չեն փակվել նախատեսված ժամին):

Պալատը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում:

61. Թեպետ այս ոլորտում Վալենսիայի քաղաքային խորհուրդը կիրառել է իր լիազորությունները, որպեսզի ձեռնարկի այնպիսի միջոցներ (օրինակ՝ ընդունի աղմուկի և վիբրացիայի մասին ենթաօրենսդրական ակտեր), որոնք սկզբունքորեն պետք է բավարար լինեին այդ երաշխավորված իրավունքների պաշտպանության համար, նա հանդուրժել է և, այսպիսով, մասնակցել այդ ժամանակահատվածում իր իսկ հաստատած կանոնների շարունակական խախտմանը: Երաշխավորված իրավունքները պաշտպանելուն կոչված կանոնները չեն ծառայում նպատակին, եթե դրանք պատշաճորեն չեն կիրառում, և դատարանը պետք է կրկնի, որ կոնվենցիան նպատակաուղղված է գործող, ոչ թե վերացական իրավունքների պաշտպանությանը: Փաստերը ցույց են տալիս, որ դիմողի տան հարգման իրավունքը լրջորեն խախտվել է, քանի որ իշխանությունները քայլեր չեն ձեռնարկել գիշերային աղմուկը կանխելու համար:

62. Այս հանգամանքներում դատարանը կարծում է, որ պատասխանող պետությունը, ի խախտումն կոնվենցիայի 8-րդ հոդվածի, չի կատարել իր դրական պարտավորությունը, համաձայն որի՝ նա պետք է երաշխավորեր դիմողի տան և անձնական կյանքի հարգման իրավունքը:

Հետևաբար, պալատը կարգադրել է, որ 879 եվրո արժողությամբ ննջասենյակի կրկնակի ապակեպատման և հասցված ոչ նյութական վնասի համար Իսպանիան վճարի դիմողին 3884 եվրո արդար փոխհատուցում:

Պալատը միաձայն որոշել է, որ ազգային մարմինները հավուր պատշաճի չեն պաշտպանել Ռուսաստանի ամենախոշոր մետաղածուլական կոմբինատի «սանիտարական անվտանգության գոտում» քաղաքային խորհրդի կողմից հատկացված բնակարանում ապրող կնոջ իրավունքը: «Սևերստալ» պողպատածուլական գործարանը կառուցվել է խորհրդային ժամանակներում: 1965 թ., նպատակ ունենալով մեկուսացնել գործարանը մոտակա բնակավայրերից, կառավարությունը գործարանի շուրջը սահմանել է 5 կմ շառավղով սանիտարական գոտի: Այնուամենայնիվ, հազարավոր մարդիկ շարունակել են բնակվել այդ գոտում (գործարանն ունեցել է մոտ 60000 աշխատող): *«Ֆադեևան ընդդեմ Ռուսաստանի» (Fadeyeva v Russia)* գործով (2005 թ. հունիսի 9-ի վճիռ) դիմողը բնակվել է այդ գոտում սկսած 1982 թ.: «Սևերստալ» գործարանը մասնավորեցվել է 1993 թ.: Դիմողը գործ է հարուցել պողպատածուլական գործարանի և տեղական իշխանության մարմինների դեմ՝ բողոքելով, որ գործարանն առաջացրել է շրջակա միջավայրի չափից ավելի մեծ աղտոտվածություն (փոշու մակարդակը 1.6-1.9 անգամ գերազանցել է առավելագույն թույլատրելի արժեքները, և մթնոլորտ են արտանետվել չափից ավելի մեծ քանակությամբ վտանգավոր քիմիական նյութեր, ներառյալ՝ ծծմբաջրածին և ամոնիակ): Այս վարույթի արդյունքում դիմողի անունը գրանցվել է քաղաքային խորհրդի բնակարանային հերթացուցակի 6820-րդ համարի տակ: Դիմողը հայտնել է, որ ցուցակում առաջինը գրանցված անձը հերթի մեջ է եղել 1968 թ. ի վեր: Աղտոտման մակարդակի իջեցմանն ուղղված ընթացիկ ծրագրի համաձայն՝ «Սևերստալ» գործարանը նպատակ է ունեցել մինչև 2010-15 թթ. արտանետումների մակարդակը հասցնել նորմի: Դատարանը որոշել է, որ.

88. Վարույթում գտնվող գործի դեպքում անուղղակի փաստերի և կանխավարկածների շատ ուժեղ զուգակցությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ դիմողի առողջությունը վատացել է «Սևերստալ» պողպատածուլական գործարանից վտանգավոր արտանետումների ազդեցության պատճառով: Եթե նույնիսկ ենթադրենք, որ աղտոտումը զգալի վնաս չի պատճառել դիմողի առողջությանը, այն անխուսափելիորեն նրան ավելի խոցելի է դարձրել տարբեր հիվանդությունների նկատմամբ: Բացի այդ, կասկած չի կարող լինել, որ այն բացասական ազդեցություն է ունեցել սեփական տան մեջ նրա կյանքի որակի վրա: Հետևաբար, դատարանն ընդունում է, որ դիմողի առողջությանը և բարօրությանը հասցված փաստացի վնասն ընդունել է այնպիսի չափեր, որ ընկնի կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակների մեջ:

...

132. Արդյունքում՝ դատարանը կարծում է հետևյալը: Խիտ բնակեցված քաղաքի կենտրոնում պետությունը թույլատրել է աղտոտող ձեռնարկության գործունեությունը: Քանի որ այս ձեռնարկության թունավոր արտանետումների մակարդակը գերազանցել է ազգային օրենսդրությամբ սահմանված թույլատրելի չափերը և կարող էր վտանգի ենթարկել դրա մերձակայքում ապրող անձանց կյանքը, պետությունը գործարանի շուրջը սահմանել է որոշակի տարածք, որտեղ շենքեր չպետք է գոյություն ունենային: Այնուամենայնիվ, գործնականում այս օրենսդրական միջոցները չեն իրականացվել:

133. Չափազանց կլիներ պնդել, որ պետությունը կամ աղտոտող ձեռնարկությունն ունեցել են դիմողին անվճար բնակարան տրամադրելու պարտավորություն: Եվ, ամեն դեպքում, դատարանին վերապահված չէ այնպիսի դեր, որ նա պետություններին թելադրի կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում ստանձնած դրական պարտավորությունների կատարմանն ուղղված հստակ միջոցառումները: Այս դեպքում, թեպետ գործարանի շուրջը ստեղծված իրավիճակը պահանջել է, որ այդ գոտու տարածքում բնակվող մարդիկ արժանանան հատուկ վերաբերմունքի, այդ տարածքից տեղափոխվելու առումով պետությունը դիմողին արդյունավետ լուծում չի առաջարկել: Բացի այդ, թեպետ խնդրո առարկա աղտոտող ձեռնարկությունը գործել է ի խախտումն ազգային բնապահպանական չափորոշիչների, որևէ տեղեկություն չկա, որ պետությունն ընդունել է կամ կիրառել աղտոտման ազդեցությանը ենթարկվող տեղի ազգաբնակչության շահերից բխող արդյունավետ միջոցներ, որոնց շնորհիվ արդյունաբերական աղտոտվածությունը կհասցվեր թույլատրելի մակարդակի:

134. Դատարանը եզրակացնում է, որ թեպետ պատասխանող պետությանը վերապահված է եղել հայեցողության լայն սահմաններ, նա չի կարողացել արդար հավասարակշռություն ստեղծել համայնքի շահերի և դիմողի տան ու անձնական կյանքի իրավունքների կիրառման միջև: Հետևաբար, առկա է 8-րդ հոդվածի խախտում:

Պալատը որոշել է՝ քանի որ դիմողը տևական ժամանակով ենթարկվել է գործարանի արդյունաբերական աղտոտման ազդեցությանը, որը նրան պատճառել է «զգալի անհարմարություն, հոգեկան ցնցում և նույնիսկ որոշ չափով ֆիզիկական տառապանք», նրան պետք է նշանակվի 6000 եվրո փոխհատուցում՝ հասցված ոչ նյութական վնասի համար (այս գումարը նշանակելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ դատարանը չէր կարող փոխհատուցում նշանակել այն վնասի համար, որը հասցվել է նախքան 1998 թ. Ռուսաստանի՝ կոնվենցիայի անդամ դառնալը):

2-րդ հոդվածի շրջանակներում պետությունների՝ աղտոտման պատճառով առաջացած մահացու աղետներից մարդկանց պաշտպանելու դրական պարտավորությունները քննարկված են *«Օներյիլդիզն ընդդեմ Թուրքիայի» (Oneryildiz v Turkey)* գործում, տե՛ս վերը՝ էջ 125:

7 Մարդկանց տներին միջամտելու ծայրահեղ օրինակ է հանդիպում *«Աքդիվարն ընդդեմ Թուրքիայի» (Akdivar v Turkey* (1996) 1 BHRC 137, 1996-IV 1193) գործում, որի դեպքում դատարանի մեծ պալատը, տասնինը կողմ և երկու դեմ ձայների հարաբերակցությամբ, որոշել է, որ անվտանգության ուժերի կողմից դիմողների տան և գույքի միտումնավոր հրդեհումը լուրջ միջամտություն է նրանց ընտանեկան կյանքի և տան հարգման իրավունքին: Տները քանդվել էին, երբ ՔԱԿ-ի (Քրդստանի աշխատավորական կուսակցության, PKK) կատարած ահաբեկչական գրոհի հետևանքով մի զինվոր զոհվել է: Այնուհետև *«Մենթեշն ընդդեմ Թուրքիայի» (Mentes v Turkey* (1997) 26 EHRR 595, 1997-VIII 2689) գործում մեկ այլ մեծ պալատ պահանջել է բնակիչներից, ներառյալ դիմողներից, լքել Սագգոզե գյուղի ստորին մասում գտնվող իրենց տները, որից հետո զինվորները կրակի են մատնել դրանք և դրանցում գտնվող գույքը, ներառյալ՝ հացահատիկը և բնակիչների երեխաների կոշիկները: Այս գործողությունը կրկնվել է Թուրքիայի հարավ-արևելքում ՔԱԿ-ի ապստամբության դեմ անվտանգության ուժերի կազմակերպած գործողությունների շրջանակում: *«Սելջուկը և Ասկերն ընդդեմ Թուրքիայի» (Selcuk and Asker v Turkey* (1998) 26 EHRR 477, 1998-II) գործում դատարանի պալատը, ութ կողմ և մեկ դեմ ձայների հարաբերակցությամբ, որոշել է, որ անվտանգության ուժերի կողմից դիմողների (54 տարեկան կնոջ և 60 տարեկան տղամարդու) տների հրդեհումը հավասար է եղել, ի թիվս այլոց, «լուրջ և անարդարացի» միջամտության դիմողների տների հարգման իրավունքին:

8 *«Դոգանը և այլք ընդդեմ Թուրքիայի» (Dogan and Others v Turkey)* գործի վերաբերյալ 2004 թ. հունիսի 29-ի վճռի համաձայն՝ ՔԱԿ-ի դեմ Թուրքիայի անվտանգության ուժերի վարած պայքարի մեկ ուրիշ մարտավարություն նույնպես առաջացրել է անձանց տների հարգման իրավունքի խախտում:

Իշխանություններն արգելել են տասնհինգ դիմողներին վերադառնալ Թուրքիայի հարավարևելյան տարածքի գյուղերից մեկում գտնվող իրենց տները, քանի որ այդ գյուղն ինը տարի շարունակ եղել է ահաբեկչական գործողությունների թատերաբեմ: Պալատը միաձայն որոշել է, որ իշխանությունների կողմից դիմողներին գյուղ վերադառնալու հնարավորության մերժումը «159. ... լուրջ և անարդարացի միջամտություն է ընտանեկան կյանքի և տների հարգման իրավունքին»: Անվտանգության ուժերի այս ռազմավարության իրական ծավալների մասին կարելի է պատկերացում կազմել այն փաստից, որ այս վճռի ընդունման ժամանակ դատարանում գրանցված է եղել *Դոգանի* գործին նման մոտ 1500 դիմում (մատենավարի 2004 թ. հունիսի 29-ի մամլո հաղորդագրություն): Այնուհետև, 2004 թ. ընթացքում Թուրքիայի խորհրդարանն ընդունել է «Ահաբեկչական գործողությունների և ահաբեկչության դեմ պայքարի հետևանքով առաջացած կորստի փոխհատուցման մասին» օրենքը: Այս օրենքի համաձայն՝ ահաբեկչական կամ պետության կողմից ձեռնարկված հակաահաբեկչական գործողությունների հետևանքով տուժած յոթանասունվեց գավառներում ստեղծվել են փոխհատուցման հանձնաժողովներ, որոնց տուժածները կարող են դիմել փոխհատուցում ստանալու համար: 2006 թ. սկզբին այդ հանձնաժողովներում դիմումներ են ստացվել 170000 անձից: *«Իջլերն ընդդեմ Թուրքիայի» (Icyer v Turkey)* գործում (2006 թ. փետրվարի 9-ի որոշում) դիմողը բողոքել է դատարանին, որ 1994 թ. իրեն վտարել են իր տնից և այնուհետև արտաքսել գյուղից: Կառավարությունը պատասխանել է, որ տվյալ պահին նրա գյուղ վերադառնալու որևէ արգելք չի գործել, և թեպետ այդ ժամանակ նա դիմել է 2004 թ. օրենքի շրջանակներում փոխհատուցում ստանալու համար, չի սպառել ազգային մակարդակով առկա բոլոր պաշտպանական միջոցները: Դատարանը որոշել է, որ օրենքը դիմողին ապահովել է գործնական պաշտպանության միջոցներով, և նրա դիմումը պետք է համարվի անընդունելի այն հիմքով, որ նա չի կարողացել կիրառել իրավական պաշտպանության ազգային միջոցը: Ընդհանուր առմամբ, դատարանը նկատել է, որ 2004 թ. այդ օրենքի ընդունման միջոցով Թուրքիան լուծել է *Դոգանի* գործում բարձրացված համակարգային խնդիրը: Այնուհետև, դատարանը մերժել է մոտ 1500 համանման դիմումներ այն հիմքով, որ ազգային մակարդակով առկա պաշտպանական միջոցները մինչև վերջ սպառված չեն եղել:

9 *«Չեփմենն ընդդեմ ՄԹ-ի» (Chapman v UK)* գործի վերաբերյալ 2001 թ. հունվարի 18-ի վճռով մեծ պալատի մեծամասնությունը (տասը կողմ ձայնով) հաստատել է, որ.

> 99. Կարևոր է հիշել, որ 8-րդ հոդվածում բառացի ասված չէ, որ անձն ունի բնակարանի հատկացման իրավունք: Այս իրավունքը չի ճանաչվել դատարանի ձևավորած նախադեպային իրավունքով: Թեև խիստ ցանկալի է, որ յուրաքանչյուր մարդ արարած տանիք ունենա, որը նա կկարողանա համարել տուն և որտեղ կկարողանա ապրել արժանապատվորեն, սակայն պայմանագրի կողմ պետություններում, ցավոք, շատ են այնպիսի անձինք, որոնք տուն չունեն: Այն հանգամանքը, թե պետությունը տրամադրո՞ւմ է ֆինանսական միջոցներ, որպեսզի յուրաքանչյուր անձնավորության տա տուն/բնակարան ունենալու հնարավորություն, քաղաքական, ոչ թե դատական որոշման խնդիր է:

Այնուամենայնիվ, յոթ հոգուց բաղկացած փոքրամասնությունը գրել է միասնական առանձին կարծիք, որում տեսակետ է հայտնել, որ.

> 7. Մենք նաև համաձայն չենք, որ վճռի 99-րդ պարբերության շարադրանքը տեղին կամ ճիշտ է, 8-րդ հոդվածը չի երաշխավորում բնակարանով ապահովված լինելու իրավունք... Բացի այդ, դատարանի նախադեպային իրավունքից չի կարելի եզրակացնել, որ տնով ապահովված լինելու իրավունքը լիովին դուրս է մնում 8-րդ հոդվածի շրջանակներից: Դատարանն ընդունել է, որ կառավարության՝ բնակարանային խնդիրների կարգավորման ուղղությամբ քայլեր կատարելուց հրաժարվելը որոշ հանգամանքներում կարող է առաջացնել 8-րդ հոդվածի խնդիր, ինչպես, օրինակ՝ *«Մարցարին ընդդեմ Իտալիայի» (Marzari v Italy)* գործի դեպքում, երբ դատարանը վճռել է, որ կառավարության՝ լուրջ հիվանդություն ունեցող անձին տնային օժանդակություն տրամադրելու մերժումը որոշ հանգամանքներում կարող է հարցերի տեղիք տալ, քանի որ այդպիսի մերժումն ազդեցություն ունի անձի անձնական կյանքի վրա (թիվ 3644/97, 1999 թ. մայիսի 4-ի որոշում):

Դատարանը հստակ տարակարծիք է եղել այն հարցի շուրջ, թե արդյոք 8-րդ հոդվածը ներառո՞ւմ է պարտավորություն, որ պետությունները պետք է օգնեն անձանց ստեղծել իրենց տունը: *Չեփմենի* (Chapman) գործն այնուհետև քննարկված է ստորև՝ 614-րդ էջում:

10 *«Քոնորսն ընդդեմ ՄԹ-ի» (Connors v UK)* գործի վերաբերյալ 2004 թ. մայիսի 27-ի վճռով պալատը միաձայն որոշել է, որ տեղական իշխանությունների՝ գնչու ընտանիքին քաղաքային խորհրդին պատկանող վագոն տնակի տեղամասից վտարելու ընդհանուր լիազորությունները 8-րդ հոդվածի խախտում են եղել: Դիմողը և նրա ընտանիքը տարիներ շարունակ վարել են ավանդական թափառական կյանք: Այնուամենայնիվ, նրանք ենթարկվել են հալածանքի, որից հետո 1984 թ. նրանք բնակություն են հաստատել Լիդսի քաղաքային խորհրդի կողմից գնչուներին հատկացված տարածքում: Տասներեք տարի անց դիմողը և նրա ընտանիքը տեղափոխվել են այդ տարածքից, քանի որ նրանց վրա ազդել է այլ անձանց հակասոցիալական վերաբերմունքը: Նրանք չեն կարողացել համակերպվել բնակարանում ապրելու հանգամանքի հետ և 1998 թ. հոկտեմբերին վերադարձել են այդ տարածք: Խորհուրդը նրանց տվել է թույլտվություն, համաձայն որի՝ նրանք ունեցել են նշված հողատարածքը զբաղեցնելու իրավունք: Թույլտվության 18-րդ կետում նշված է եղել, որ «բնակիչը, նրա հյուրերը և ընտանիքի անդամները չպետք է անհանգստություն պատճառեն որևէ այլ անձի...»: 1998 թ. դեկտեմբերին խորհուրդը դիմողին տվել է գրավոր նախազգուշացում, որ այդ տարածքում չբնակվող, սակայն հաճախ այդտեղ գտնվող նրա չափահաս որդիների հակասոցիալական վարքագծի շարունակվող դրսևորումները կարող են վտանգել այդ տարածքը հետագայում էլ նրա կողմից զբաղեցնելու հանգամանքը: 2000 թ. հունվարին խորհուրդը դիմողին և նրա ընտանիքին ծանուցում է տվել, որով պահանջել է նրանց ազատել այդ տարածքը: Ծանուցման մեջ որևէ պատճառ նշված չի եղել: Դրանից հետո սկսված արագացված դատական գործընթացի ժամանակ խորհուրդը վկայակոչել է դիմողի թույլտվության 18-րդ կետը: 2000 թ. հունիսին կոմսության դատարանը խորհրդին տվել է տարածքի տիրապետման օրդեր: Խորհուրդը որոշել է կարգադրությունը մեկ ամիս չկիրառել: Դիմողը տարածքից կամավոր դուրս չի եկել, և 2000 թ. օգոստոսին նա և նրա ընտանիքն ուժով վտարվել են: Դատարանում դիմողը վիճարկել է, որ վտարումը եղել է միջամտություն իր անձնական կյանքին, ընտանեկան կյանքին և բնակարանին/տանը: Կառավարությունն ընդունել է այդ վիճարկումը, և կողմերը համաձայնել են, որ միջամտությունը տեղի է ունեցել օրենքի շրջանակներում և օրինական նպատակի համար. այն է՝ պաշտպանել տարածքի այլ բնակիչների և խորհրդի իրավունքները: Կողմերի միջև վեճի առարկա է եղել միջամտության անհրաժեշտությունը: Դիմողը բողոքել է, որ գույքի վերաբերյալ արագ դատավարությունը հնարավորություն չի տվել իրեն վիճարկելու իր ընտանիքին ներկայացված մեղադրանքները: Կառավարությունն առարկել է, որ տեղի է ունեցել դատական վերանայման վարույթ, որը երաշխավորել է, որ տեղական իշխանությունները գործել են ողջամտության և ընթացակարգերի սկզբունքներին համապատասխան:

93. Դատարանը չի թերագնահատում այն դժվարությունները, որոնց իշխանությունները հանդիպում են գնչուների և ճամփորդող ազգաբնակչության բնակարանային հարցերին գործնական լուծում տալու խնդրում, և ընդունում է, որ սա այն ոլորտն է, որտեղ ազգային մարմիններն օժտված են սոցիալական և բնակարանային քաղաքականության ընդունման և կատարման հայեցողություններով: Այս իրավիճակն էլ ավելի է բարդանում այն պատճառով, որ գնչու ազգաբնակչության սովորույթների մեջ տեղի են ունեցել տեղաշարժեր, այն դեպքում, երբ գնչուները, եթե ոչ իրենց իրական կամ մշտական ապրելաձևով, ապա ոգով մնում են քոչվոր: Իշխանություններից պահանջվում է հատուկ ուշադրություն դարձնել ազգաբնակչության մի հատվածի վրա, որին այլևս դժվար է բնորոշել քոչվոր հասկացությամբ, ինչն էլ հատուկ վերաբերմունքի raison d'etre [պատճառ] է:

94. Այնուամենայնիվ, նույնիսկ հաշվի առնելով այս հանգամանքներում պետություններին վերապահված հայեցողության սահմանները, դատարանը չի կարծում, որ կառավարությունը բավարար չափով հիմնավորել է վարձակալած սեփականության տարածքից դիմողին և նրա ընտանիքին վտարելու համար վտարման արագացված իրավական կարգ կիրառելու անհրաժեշտությունը: Համոզիչ լինելու աստիճան ցույց չի տրվել, որ առանց վտարման հիմքերի պատճառներն անկախ տրիբունալի քննությանը ներկայացնելու՝ անձանց վտարելու լիազորությունը պայմանավորված է եղել առանձնահատուկ նպատակով կամ առանձնահատուկ նպաստ է բերում գնչու համայնքին... Ավելի շուտ տպավորությունն այնպիսին է, որ Անգլիայում ձևավորված այս իրավիճակը, որի համար իշխանությունները պետք է ստանձնեն որոշակի պատասխանատվություն, զգալի խոչընդոտներ է ստեղծել այն գնչուների համար, որոնք վարել են ակտիվ քոչվոր կյանք, բայց և միաժամանակ ընթացակարգային հովանավորությունից բացառել է նրանց, ովքեր որոշել են ավելի նստակյաց կյանք վարել:

95. Ամփոփելով՝ դատարանը որոշում է, որ տեղական մարմիններին պատկանող տարածքից դիմողի և նրա ընտանիքի վտարումը հիմնված չի եղել պահանջվող ընթացակարգային երաշխիքների վրա, համաձայն որոնց՝ միջամտությունը նրա

իրավունքներին պետք է բխեր պատշաճ հիմնավորումից: Ուստի այդ միջամտությունը չի կարող համարվել արդարացված «հրատապ սոցիալական կարիքով» կամ համաչափ հետապնդվող օրինական նպատակին: Հետևաբար, առկա է կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

Հետևաբար, պետական մարմինների իրավասության տակ գտնվող ճամբարային տեղամասերում բնակվող գնչուների համար ազգային օրենքը պատշաճ պաշտպանություն չի ապահովել: Այնուհետև 2004 թ. «Բնակարանների մասին» օրենքի 209-րդ բաժինը օրենքով նախատեսված պաշտպանությունը տարածել է գնչուների զբաղեցրած և տեղական մարմիններին պատկանող տեղամասերի վրա:

11 *«Պրոկոպովիչն ընդդեմ Ռուսաստանի» (Prokopovich v Russia)* գործի վերաբերյալ 2004 թ. նոյեմբերի 18-ի վճռում մշտական գործող դատարանը հաստատել է, որ 8-րդ հոդվածում օգտագործված «տուն»-ն անկախ հասկացություն է:

36. Դատարանը հիշատակում է կոնվենցիայի մարմինների նախադեպային իրավունքը, համաձայն որի՝ «տան» հայեցակարգը 8-րդ հոդվածի իմաստով չի ընդգրկում միայն այն տները, որոնք զբաղեցված կամ ստեղծված են օրինականորեն: «Տունը» ինքնիշխան հայեցակարգ է, որը կախված չէ ազգային օրենքով դասակարգումից: Արդյոք որևէ առանձին կացարան «տո՞ւն» է, թե՞ ոչ, որի դեպքում առաջանում է 8-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պաշտպանության խնդիր՝ կախված է փաստական հանգամանքներից, այն է՝ առանձնահատուկ վայրի հետ բավարար և շարունակական կապերի առկայությունից (տե՛ս հետևյալ հեղինակային աղբյուրները. *«Բաքլին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Buckley v the United Kingdom)* 1996 թ. սեպտեմբերի 25-ի վճիռ, Որոշումներ և զեկույցներ 1996-IV, պարբ. 52-4 և հանձնաժողովի 1995 թ. հունիսի 11-ի զեկույց, պարբ. 63, *«Գիլլոուներն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Gillow v the United Kingdom)*, 1986 թ. նոյեմբերի 24-ի վճիռ, շարք A, թիվ 109, պարբ. 46, *«Ուիգինսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Wiggins v the United Kingdom)*, թիվ 7456/76, 1978 թ. փետրվարի 8-ի հանձնաժողովի որոշում, Որոշումներ և զեկույցներ (DR) 13, էջ 40):

Հետևաբար, պալատը միաձայն որոշել է, որ նրա մահացած տղամարդ զուգընկերոջ բնակարանը, որտեղ նա ապրել է տասը տարի, եղել է նրա տունը: Ոստիկանության պաշտոնյաների կողմից (որոնցից մեկը ստացել էր բնակարանի վարձակալության իրավունք) դիմողի վտարումը բնակարանից նրա զուգընկերոջ մահվանից մի քանի օր անց 8-րդ հոդվածի խախտում է եղել, քանի որ այն չի համապատասխանել Ռուսաստանի օրենքին (վտարումները պետք է կատարվեն դատական կարգադրության հիման վրա):

12 Պալատը միաձայն վճռել է, որ անձի տունը հարգելու իրավունքը տարածվում է պետությունների՝ պետական գործակալների կողմից տների անօրինական խուզարկության վերաբերյալ բողոքների արդյունավետ հետաքննություն կատարելու պարտավորության վրա: *«Հ.Մ.-ն ընդդեմ Թուրքիայի» (H.M. v Turkey,* 2006 թ. օգոստոսի 8-ի վճիռ) գործով դիմողը եղել է ուսուցիչ և արհմիության ներկայացուցիչ: Նա բողոքել է ոստիկանության բռնությունից, և անօրինական բողոքի ցույցերին մասնակցելու մեղադրանքը հանվել է: Նա այնուհետև բողոքել է դատախազին, համաձայն որի՝ իր տունը ենթարկվել է խուզարկության սովորական հագուստով անձանց կողմից, որոնք հայտնել են, որ ոստիկանության պաշտոնյաներ են և խուզարկության փաստաթուղթ չեն ունեցել: Դատախազն իր հետաքննությունն ավարտել է հինգ օրից, երբ ոստիկանությունը հայտնել է, որ տվյալ խուզարկության մեջ ընդգրկված չի եղել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատախազը ցուցմունք չի վերցրել դիմողի ընտանիքի անդամներից, որոնք պնդել են, որ ներկա են գտնվել անօրինական խուզարկության գործողությանը, պալատը եզրակացրել է, որ արդյունավետ հետաքննություն տեղի չի ունեցել: Հետևաբար, եղել է 8-րդ հոդվածի խախտում:

Նամակագրություն

.....

«Հելֆորդն ընդդեմ ՄԹ-ի» (Halford v UK 1997-III 1004 (1997) 24 EHRR 523)

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

1983 թ. էլիսոն Հելֆորդը նշանակվել է Մերսիսայդի ոստիկանական ուժերի գլխավոր կոնստաբլի օգնական: Այս նշանակման շնորհիվ նա դարձել է ՄԹ-ում ամենաբարձր ոստիկանական պաշտոն զբաղեցնող կին ծառայողը: Հաջորդ յոթ տարիների ընթացքում նա ութ անգամ, առանց հաջողության հասնելու, դիմել է Մերսիսայդի և այլ ուժերի գլխավոր կոնստաբլի տեղակալի պաշտոն ստանձնելու համար: էլիսոն Հելֆորդի կարծիքով՝ գլխավոր կոնստաբլը, որը եղել է իր վերադասը, դեմ է եղել իր պաշտոնեական առաջխաղացմանը, քանի որ դեմ է եղել կանանց և տղամարդկանց հավասար վերաբերվելու իր դիրքորոշմանը: 1990 թ. Հելֆորդը արդյունաբերական տրիբունալում գործ է հարուցել գլխավոր կոնստաբլի և ներքին գործերի քարտուղարի դեմ (քանի որ գլխավոր կոնստաբլների տեղակալի նշանակումները ենթակա են եղել նրա հաստատմանը)՝ պնդելով, որ նրանց կողմից ինքը ենթարկվել է անօրինական սեռական խտրականության: Դրանից հետո նրա մեջ կասկածներ են առաջացել, որ Մերսիսայդի ոստիկանության բաժնի որոշ աշխատակիցներ իր դեմ հակաքարոզչություն են սկսել՝ մամուլին տրամադրելով ավելորդ տեղեկություններ, գաղտնալսելով իր հեռախոսային խոսակցությունները և կարգապահական վարույթ սկսելով իր դեմ: 1991 թ. նրա հետագա պաշտոնավարումը կասեցվել է, և ոստիկանության վարչությունը որոշել է նրա դեմ կարգապահական մեղադրանք հարուցել: Սկսված կարգապահական վարույթի կապակցությամբ նա բողոք է ներկայացրել բարձր դատարանին, որը վճռել է, որ ոստիկանության վարչության նախագահի և նախագահի տեղակալի գործողությունները եղել են անարդարացի: Դիմողի՝ սեռական խտրականությանը վերաբերող հայցը քննվել է 1992 թ., որի արդյունքում գլխավոր կոնստաբլը ex gratia [հոժար կամքով] նրան վճարել է 10000 ֆունտ ստեռլինգ, իսկ ներքին գործերի քարտուղարը նրա անձնական ծախսերի համար վճարել է 5000 ֆունտ ստեռլինգ: Նաև համաձայնություն է ձեռք բերվել, որ նա ոստիկանությունում իր աշխատանքից պաշտոնաթող է լինելու առողջական վիճակի՝ ծնկի հին վնասվածքի պատճառով: Ներքին գործերի գրասենյակը վերանայել է ոստիկանության ավագ պաշտոնյաների ընտրության ընթացակարգերը՝ հաշվի առնելով Հավասար հնարավորություն-ների հանձնաժողովի առաջարկները: Միս Հելֆորդը պնդել է, որ իր գրասենյակի հեռախոսները, որոնցից մեկն իրեն տրամադրվել է անձնական օգտագործման համար, և որն ինքն իրավունք է ունեցել օգտագործելու սեռական խտրականության գործի կապակցությամբ, գաղտնալսվել է իր դեմ տեղեկություններ ձեռք բերելու և խտրականության վարույթում օգտագործելու նպատակով: Նա նաև կարծել է, որ նույն նպատակով գաղտնալսվել են նաև իր տան հեռախոսազանգերը: Նա բողոքել է հանձնաժողովին, որ այս հանգամանքները, ի թիվս այլոց, կազմել են միջամտություն 8-րդ հոդվածով նախատեսված իր նամակագրության իրավունքին: Հանձնաժողովը (քսանվեց կողմ և մեկ դեմ) որոշել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում, քանի որ եղել է նրա գրասենյակի հեռախոսից կատարված զանգերի գաղտնալսման ողջամիտ հավանականություն, սակայն միաձայն որոշել է, որ նրա տան հեռախոսի առումով 8-րդ հոդվածի խախտում չի առաջացել:

...

43. Կառավարությունը ներկայացրել է, որ միս Հելֆորդի աշխատատեղից կատարված հեռախոսազանգերը եղել են 8-րդ հոդվածի պաշտպանությունից դուրս, քանի որ դրանց առումով նա չէր կարող ունենալ անձնական անձեռնմխելիության ողջամիտ ակնկալիք: Դատարանում նիստի ժամանակ կառավարության խորհրդատուն տեսակետ է հայտնել, թե առանց աշխատակիցներին նախապես տեղյակ պահելու գործատուները պետք է կարողանան վերահսկել աշխատակիցների՝ իրենց կողմից տրամադրված հեռախոսներով կատարած զանգերը:

44. Ըստ դատարանի՝ իր նախադեպային իրավունքից պարզ է, որ գրասենյակներից, ինչպես նաև տնից կատարված հեռախոսազանգերը 8-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով կարող են ընդգրկվել «անձնական կյանք» և «նամակագրություն» հասկացությունների շրջանակների մեջ (տե՛ս վերը նշված *Կլասսի և այլոց (Klass and Others)* վճիռը,

[A.28 (1978)], *«Մալոունն ընդդեմ ՄԹ-ի» (Malone v UK)* վճիռը, 1984 թ. օգոստոսի 2, շարք A, թիվ 82, էջ 30, պարբ. 64, վերը նշված *Հուվիի (Huvig)* վճիռը [A176-B (1990)] և *mutatis mutandis* վերը նշված *Նյեմեցի (Niemietz)* վճիռը, [A.251-B (1992)], էջ 33–5, պարբ. 29–33):

45. Որևէ ապացույց չկա, որ միս Հելֆորդը, լինելով Մերսիսայդի ոստիկանության բաժնի ներքին հեռահաղորդակցային համակարգի օգտագործող, նախապես զգուշացվել է, որ այդ համակարգով արված հեռախոսազանգերը ենթակա են եղել գաղտնալսման: Դատարանը կարծում է, որ նման զանգերի համար նա պետք է որ ունենար գաղտնիության կամ անձնական անձեռնմխելիության ողջամիտ ակնկալիք, և այդ ակնկալիքն ամրապնդվել է մի շարք գործոններով: Որպես գլխավոր կոնստաբլի օգնական՝ նա ունեցել է առանձին գրասենյակ, որտեղ գտնվել է երկու հեռախոս, որոնցից մեկը հատկապես նախատեսված է եղել նրա անձնական օգտագործման համար: Բացի այդ, ի պատասխան հուշագրի, նրան հավաստիացրել են, որ նա կարող է օգտագործել գրասենյակի հեռախոսները սեռական խտրականությանը վերաբերող գործի նպատակներով...

46. Այս բոլոր հիմքերով, դատարանը եզրակացնում է, որ միս Հելֆորդի խոսակցություններն իր գրասենյակի հեռախոսներով մտել են 8-րդ հոդվածի «անձնական կյանք» և «նամակագրություն» հասկացությունների շրջանակների մեջ, հետևաբար 8-րդ հոդվածը կիրառելի է բողոքի այդ մասի նկատմամբ:

2. ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ

47. Կառավարությունը համաձայնել է, որ դիմողը ներկայացրել է բավարար նյութեր, որպեսզի հիմնավորի իր գրասենյակի հեռախոսներից կատարված զանգերի գաղտնալսման ողջամիտ հավանականությունը: Հանձնաժողովը նաև հաշվի է առել, որ դիմումի քննությունը բացահայտել է նման ողջամիտ հավանականություն:

48. Դատարանը համաձայն է: Փաստերը հիմնավորում են այն եզրակացությունը, որ գոյություն է ունեցել ողջամիտ հավանականություն, որ սեռական խտրականության գործում պաշտպանության կողմին օժանդակելու նպատակով միս Հելֆորդի հեռախոսազանգերը Մերսիսայդի ոստիկանությունը գաղտնալսել է... Գաղտնալսումը 8-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով եղել է «պետական մարմնի կողմից կատարված միջամտություն» միս Հելֆորդի անձնական կյանքի և նամակագրության հարգման իրավունքներին:

49. 8-րդ հոդվածի 2-րդ կետում այնուհետև ամրագրված է, որ միջամտությունը պետական մարմնի կողմից անձի անձնական կյանքի և նամակագրության հարգման իրավունքին պետք է «համապատասխանի օրենքին»:

Համաձայն դատարանի լավ հաստատված նախադեպային իրավունքի՝ այս արտահայտությունը պահանջում է, որ պահպանվի ազգային օրենքի տառը, սակայն պահանջում է նաև օրենքի որակական կողմի ապահովում, ինչը նշանակում է, որ օրենքը պետք է համահունչ լինի օրենքի գերակայության սկզբունքին: Պետական մարմինների կողմից հաղորդակցության հսկողության կամ գաղտնալսման միջոցառումների ոլորտում հանրային հսկողության բացակայության և իշխանության չարաշահման ռիսկի պատճառով ազգային օրենքը պետք է անձին որոշակի պաշտպանություն առաջարկի կամայական միջամտություններից 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին: Այսպիսով, ազգային օրենքի սահմանումները պետք է բավական հստակ լինեն, որպեսզի քաղաքացիներին ինչպես հարկն է ցույց տան, թե ինչ հանգամանքներում և ինչ պայմաններում է, որ պետական մարմիններն իրավունք ունեն դիմելու այսպիսի գաղտնի միջոցառումների (տե՛ս վերը նշված *Մալոունի (Malone)* վճիռը, էջ 32, պարբ. 67 և mutatis mutandis *«Լիներն ընդդեմ Շվեդիայի» (Leander v Sweden)* 1987 թ. մարտի 26-ի վճիռը, շարք A, թիվ 116, էջ 23, պարբ. 50–1):

50. Այս դեպքում կառավարությունն ընդունել է, որ եթե իր բացատրություններին հակառակ դատարանը եզրակացնի, որ եղել է միջամտություն դիմողի՝ 8-րդ հոդվածով ամրագրված իրավունքներին, ապա այդ միջամտությունը «չի եղել օրենքին համապատասխան», քանի որ օրենքը չի կարգավորում հանրային ցանցից դուրս հեռահաղորդակցային համակարգերով ստացված զանգերի գաղտնալսումները:

51. Դատարանը նկատում է, որ 1985 թ. օրենքը չի տարածվում պետական մարմինների (ինչպես, օրինակ՝ Մերսիսայդի ոստիկանության բաժնի) կողմից շահագործվող ներքին հեռահաղորդակցային համակարգերի վրա, և ազգային օրենսդրության մեջ չկան այլ դրույթներ, որոնք վերաբերեին այդ համակարգերով արված հեռախոսազանգերի գաղտնալսումներին... . Հետևաբար, չի կարելի ասել, որ կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի նպատակների առումով այդ միջամտությունը եղել է «օրենքին համապատասխան», քանի որ ազգային օրենքը միս Հելֆորդին չի ապահովել պատշաճ պաշտպանությամբ ոստիկանության միջամտությունից նրա անձնական և նամակագրության իրավունքներին:

Սրանից հետևում է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում՝ կապված միս Հելֆորդի գրասենյակում գտնվող հեռախոսների գաղտնալսման հետ:

1. ՏԱՆ ՀԵՌԱԽՈՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՈՂՈՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

52. Դատարանի նախադեպային իրավունքից պարզ է (տե՛ս վերը՝ պարբ. 44-ի մեջբերումները), որ տնից արվող հեռախոսային խոսակցությունները մտնում են կոնվենցիայի 8-րդ հոդվածում նշված «անձնական կյանք» և «նամակագրություն» հասկացությունների մեջ:

Հետևաբար, 8-րդ հոդվածը կիրառելի է միս Հելֆորդի բողոքի այս մասի նկատմամբ:

2. ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

53. Դիմողը պնդել է, որ սեռական խտրականության կապակցությամբ բացված վարույթում պաշտպանվելու նպատակներով Մերսիսայդի ոստիկանությունը գաղտնալսել է նաև իր տան հեռախոսից արված զանգերը: Նա հանձնաժողովի ուշադրությունը հրավիրել է գաղտնալսման փաստի վրա և դրա առնչությամբ հետագա մանրամասներ ներկայացրել դատարանին ...

Բացի այդ, առարկելով հանձնաժողովի մոտեցման դեմ, նա հայտնել է, որ իրենից չպետք է պահանջեին հիմնավորել իր տան հեռախոսից արված զանգերի գաղտնալսման «ողջամիտ հավանականությունը»: [Ըստ նրա]՝ այսպիսի պահանջն անհամատեղելի կլիներ վերը նշված *Կլասի և այլոց (Klass and Others)* գործով դատարանի վճռի հետ, որում ասված է, որ հսկողության սպառնալիքն արդեն կարող է միջամտություն համարվել 8-րդ հոդվածի իրավունքներին: Այլընտրանքային տարբերակում նա վիճարկել է, որ եթե դատարանն անգամ պահանջեր ներկայացնել որոշ հիմնավորումներ, ապա իր կողմից ներկայացված փաստերը բավարար կլինեին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք եղել են գաղտնի միջոցառումներ, ապացույցի շեմը շատ բարձր մակարդակի վրա սահմանելու դեպքում կասկածի տակ կդրվեր կոնվենցիայով երաշխավորված պաշտպանության արդյունավետությունը:

54. Ըստ կառավարության՝ նրանք չէին կարող բացահայտել՝ միս Հելֆորդի տան հեռախոսից արված զանգերը գաղտնալսվե՞լ են, թե՞ ոչ, քանի որ համաձայն 1985 թ. օրենքի՝ հաղորդակցությունների գաղտնալսման տրիբունալի եզրակացությունը մտածված կերպով պետք է շարադրված լիներ այնպիսի բառերով, որոնք չեն բացահայտում՝ եղե՞լ է 1985 թ. օրենքի հիման վրա պատշաճորեն թույլատրված հանրային հեռահաղորդակցային համակարգի գաղտնալսում, թե՞ առհասարակ գաղտնալսում չի եղել: Նրանք կարող են, այնուամենայնիվ, հաստատել, որ տրիբունալը եղել է բավարված, որ միս Հելֆորդի դեպքում 1985 թ. օրենքի 2-րդ և 5-րդ բաժինների խախտում տեղի չի ունեցել...

55. Կիրառելով իր նախադեպային իրավունքը՝ հանձնաժողովը պահանջել է դիմողից հիմնավորել, որ առկա է եղել նրա տան հեռախոսազանգերի գաղտնալսման «ողջամիտ հավանականություն» (տե՛ս, օրինակ՝ հանձնաժողովի թիվ 12175/86 դիմումի վերաբերյալ զեկույցը, *«Հյուիթը և Հարման ընդդեմ ՄԹ-ի» (Hewitt and Harman v UK),* 1989 թ. մայիսի 9, Որոշումներ և զեկույցներ 67, էջ 98–9, պարբ. 29–32): Բոլոր ապացույցները վերանայելուց հետո հանձնաժողովը չի եզրակացրել, որ այդ հավանականությունը հիմնավորվել է:

56. Դատարանը նկատում է, որ վերը նշված *Կլասի (Klass)* գործում նրանից պահանջվել է որոշել, ի թիվս այլոց, թե արդյոք այն օրենսդրությունը, որը լիազորել է իշխանություններին գաղտնի վերահսկողություն սահմանել դիմողների նամակագրության և հեռախոսային խոսակցությունների նկատմամբ, հավասա՞ր է եղել միջամտության դիմողների՝ 8-րդ հոդվածով երաշխավորված այդ իրավունքներին, երբ այդ դիմողները չեն կարողացել հիմնավորել՝ իրականում այս գործողությունները կիրառվե՞լ են իրենց նկատմամբ: Այդ գործի կապակցությամբ դատարանը վճռել է, որ «օրենսդրության զուտ գոյությամբ արդեն առկա է վերահսկողության վտանգ բոլոր նրանց համար, ում վրա այդ օրենսդրությունը տարածվում է: Այս վտանգը անշուշտ հարվածում է փոստային և հեռահաղորդակցային ծառայություններից օգտվողների ազատությանը և դրանով իսկ «պետական մարմնի կողմից կատարված միջամտություն» է դիմողի անձնական և ընտանեկան կյանքի և նամակագրության հարգման իրավունքին» (էջ 21, պարբ. 41):

Դատարանն այնուհետև նկատում է, որ վերը նշված *Մալոունի (Malone*) վճռում, բացի այն, որ եզրակացրել է, որ դիմողի հեռախոսային խոսակցությունը գաղտնալսվել է ոստիկանության պահանջով և ներքին գործերի քարտուղարի կարգադրության հիման վրա, նշել է նաև, որ «Անգլիայում և Ուելսում այնպիսի օրենքների և գործելակարգերի առկայությունը, որոնք թույլ են տալիս և ստեղծում հաղորդակցությունների նկատմամբ գաղտնի վերահսկողություն սահմանելու համակարգ», ինքնին «միջամտություն» է (էջ 30-31, պարբ. 64):

57. Այնուամենայնիվ, ի տարբերություն *Կլասի (Klass)* գործով (մեջբերված է վերը, էջ 20, պարբ. 38) դիմողների բողոքի, միս Հելֆորդը չի բողոքել, որ 8-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները վտանգվել են հենց միայն այն պատճառով, որ գոյություն է ունեցել այնպիսի օրենք և գործելակերպ, որոնք թույլ են տվել անձի նկատմամբ գաղտնի վերահսկողություն սահմանել, այլ բողոքել է, որ վերահսկողության միջոցառումները փաստացի կիրառվել են իր

նկատմամբ: Բացի այդ, նա պնդել է, որ Մերսիսայդի ոստիկանությունը անօրինականորեն գաղտնալսել է իր հեռախոսային խոսակցությունները այնպիսի նպատակի համար, որը թույլատրված չէ 1985 թ. օրենքով...

Այս պարագայում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի բողոքը վերաբերում է օրենքի շրջանակներից դուրս հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման առանձնահատուկ միջոցառումներին, դատարանը պետք է համոզվի, որ առկա է նրա նկատմամբ այդպիսի միջոցառում կիրառելու ողջամիտ հավանականություն:

58. Նախ՝ այս կապակցությամբ դատարանը նկատում է, որ հանձնաժողովը՝ այն մարմինը, որը կոնվենցիայի համակարգում փաստերի հաստատման և դրանց արդարացիության ստուգման պատասխանատվություն ունի (տե՛ս, օրինակ՝ *«Աքսոյն ընդդեմ Թուրքիայի» (Aksoy v Turkey)* 1996 թ. դեկտեմբերի 18-ի վճիռը, Վճիռների և որոշումների զեկույցներ 1996-VI, էջ 2272, պարբ. 38), համարել է, որ իրեն ներկայացված փաստերը չեն բացահայտել դիմողի տան հեռախոսազանգերի գաղտնալսման ողջամիտ հավանականություն (տե՛ս հանձնաժողովի զեկույցը, պարբ. 65):

59. Դատարանը նկատում է, որ միակ փաստը, որը մատնացույց է անում, որ գրասենյակի հեռախոսով արված զանգերից բացի, գաղտնալսվել են նաև միս Հելֆորդի տան հեռախոսի զանգերը, այն տեղեկության բացահայտումն է, համաձայն որի՝ Մերսիսայդի ոստիկանությունը ստուգել է նրա հեռախոսային խոսակցությունների արձանագրությունները: Դատարանի առջև դիմողը ներկայացրել է այս բացահայտմանը վերաբերող ավելի առանձնահատուկ մանրամասներ, համաձայն որոնց՝ այդ գաղտնալսումն իրականացվել է դիմողի ծառայողական պարտականությունները կասեցնելու օրվան հաջորդած օրվա ընթացքում... Այնուամենայնիվ, դատարանը նկատում է, որ սա կարող է լինել ոչ հավաստի տեղեկություն, քանի որ դրա աղբյուրը չի նշվել: Բացի այդ, եթե նույնիսկ ենթադրություն արվի, որ դա ճիշտ է, այն փաստը, որ դիմողին պաշտոնում կասեցնելուց հետո ոստիկանությանը տեսել են դիմողի հեռախոսային խոսակցությունների արձանագրությունները ստուգելիս, պարտադիր չէ, որ հանգեցնի եզրակացության, որ նրանք ստուգել են նրա տնից արված հեռախոսային խոսակցությունների արձանագրությունները:

60. Դիտարկելով բոլոր փաստերը՝ դատարանը հիմնավորված չի համարում, որ միս Հելֆորդի տան հեռախոսի առումով տեղի է ունեցել միջամտություն նրա անձնական կյանքի և նամակագրության հարգման իրավունքներին:

Հաշվի առնելով այս եզրակացությունը՝ դատարանը չի համարում, որ միս Հելֆորդի տան հեռախոսից արված զանգերի առնչությամբ տեղի է ունեցել կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. միաձայն վճռում է, որ կոնվենցիայի 8-րդ հոդվածը կիրառելի է գրասենյակային և հեռախոսային խոսակցություններին վերաբերող բողոքների նկատմամբ,

2. միաձայն վճռում է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում՝ կապված դիմողի գրասենյակի հեռախոսի զանգերի հետ,

3. միաձայն վճռում է, որ դիմողի տան հեռախոսի զանգերի կապակցությամբ 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել,

...

Միաձայն, որ պատասխանող պետությունը եռամսյա ժամկետում պետք է վճարի դիմողին 10.600 ֆունտ ստեռլինգ՝ որպես փոխհատուցում հասցված նյութական և ոչ նյութական վնասի...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Պալատի կազմում եղել են նախագահ Բերնհարդտը և դատավորներ Փեթիթին, Ռուսոն, Շպիլմանը, Ֆոյգելը, Մորինիյան, Ֆրիլենդը, Լոպես Ռոշան և Կուրիսը:

2 Այժմ պարզ է, որ երբ դիմողները պնդում են, որ պետական մարմիններն անօրինականորեն միջամտել են իրենց նամակագրությանը, ապա դատարանը պահանջելու է, որ նրանք ներկայացնեն բավարար հիմքեր, որպեսզի ապացուցեն դատարանին, որ «առկա է նման միջամտության ողջամիտ հավանականություն»: Ինչպես ստորև քննարկված *Կլասի (Klass)* գործում, դիմողների համար վիճարկման այլընտրանքային հիմք է նաև այն, որ նամակագրության նկատմամբ վերահսկողություն սահմանելու մասին ազգային իրավական ռեժիմը իրենց պարագայում հավասարազոր է 8-րդ հոդվածի

խախտման, քանի որ, օրինակ՝ այն չի ապահովում համապատասխան ընթացակարգային երաշխիքներ:

3 Կոնվենցիայի շրջանակներում փոստային նամակագրության գաղտնի բացումը և հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումն առաջին անգամ քննարկվել են *«Կլաասն ընդդեմ Գերմանիայի» (Klass v Germany,* A.28 (1978) 2 EHRR 214) գործում: Այդ դեպքում դատարանը վճռել է, որ Արևմտյան Գերմանիայի օրենքը, որը թույլ է տվել ազգային անվտանգությանը վերաբերող գործերում գաղտնի հետևել փոստային և հեռախոսային հաղորդակցությանը, համապատասխանել է 8-րդ հոդվածի պահանջներին: Թեպետ դա եղել է անձի «անձնական և ընտանեկան կյանքի ... և նրա նամակագրության հարգման իրավունքին» «պետական մարմինների կողմից միջամտություն», այն արդարացված է եղել «ազգային անվտանգության շահերի հիմքերով» և «անկարգության կամ հանցագործության կանխման» նպատակով: Դատարանն ընդունել է, որ լրտեսության և ահաբեկչության կանխման նպատակով գաղտնալսման կամ տեղեկությունների գաղտնի վերահսկողության որոշակի լիազորությունները թույլատրելի են և, հաշվի առնելով «հայեցողության սահմանների» սկզբունքը, եզրակացրել, որ չարաշահումները կանխելու նպատակով Արևմտյան Գերմանիայի համակարգի մեջ ներառված հսկողությունը եղել է բավարար: Այդ համակարգում հաղորդակցությունները գաղտնալսելու լիազորությունը տրվել է կառավարության նախարարի կողմից՝ կիրառելով որոշակի չափանիշներ, ինչպես, օրինակ՝ «ողջամիտ կասկածի» չափանիշը և այլն: Նախարարի որոշումները վերանայվել են և կարող էին չեղյալ համարվել անկախ հանձնաժողովի կողմից, որի նախագահը դատական պաշտոն զբաղեցնելու համար ունեցել է բավարար որակավորում: Խորհրդարանի, կառավարության և ընդդիմության ներկայացուցիչներից կազմված խորհուրդն ավելի ընդհանուր վերահսկողություն է սահմանել համակարգի նկատմամբ: Եթե ազգային անվտանգության շահերը թույլ են տվել, ապա անձի հաղորդակցությունը գաղտնալսելուց կամ գաղտնի վերահսկելուց հետո այդ անձը պետք է տեղյակ պահվի այդ մասին: Տվյալ անձը կարող է վիճարկել գաղտնալսման օրինականությունը Գերմանիայի դատարաններում: Թեպետ դատարանը հայտարարել է, թե «սկզբունքորեն ցանկալի է, որ վերահսկողությունը հանձնարարվի դատավորի», այն ամենը, ինչ ասվել է վերը, առնվազն ազգային անվտանգության համատեքստում բավարար է եղել:

4 *«Մալոունն ընդդեմ ՄԹ-ի» (Malone v UK,* A.82 (1984) 7 EHRR 14) գործով դիմողը ենթարկվել է քրեական հետապնդման ենթադրաբար գողացված ապրանք պահելու համար: Վերջին հաշվով, մի քանի հոդվածով նրա դեմ առաջ քաշված մեղադրանքներում նա արդարացվել է, և ատենակալներն իրենց անհամաձայնությունն են հայտնել մյուս հոդվածներով ներկայացված մեղադրանքներին: Նրա դատավարության ընթացքում մեղադրող կողմն ընդունել է, որ նրա հեռախոսը գաղտնալսվել է: Նա վիճարկել է գաղտնալսման օրինականությունը բարձր դատարանում, սակայն վերջինը վճռել է, որ գաղտալսումը չի առաջացրել Անգլիայի օրենքով ճանաչված նրա որևէ իրավունքի խախտում (տե՛ս *«Մալոունն ընդդեմ քաղաքային ոստիկանության» (Malone v Metropolitan Police Comr* (No 2) [1979] Ch 344): Դրանից հետո Մալոունը գանգատ է ներկայացրել հանձնաժողովին, որ գաղտնալսումը և ենթադրաբար իր տարբեր հեռախոսահամարներով կատարված զանգերի գրանցումներն առաջացրել են 8-րդ հոդվածով իր իրավունքների խախտում: Դատարանը որոշել է, որ անգլիական գործելակերպը, որի շրջանակներում ներքին գործերի քարտուղարն իրավունք է ունեցել ոստիկանությանը թույլտվություն տալու անձի հեռախոսները գաղտնալսելու համար, չի եղել «օրենքին համապատասխան», ինչպես պահանջվում է 8(2) հոդվածով, քանի որ.

> ... Դատարանին ներկայացված փաստերի հիման վրա չի կարելի որևէ ողջամիտ որոշակիությամբ ասել, թե գաղտնալսման իրավասությունների որ տարրերն են ընդգրկված օրենսդրության մեջ և որոնք են մնում գործադրի հայեցողության տակ: Հաշվի առնելով սրան ուղեկցող անհստակությունը և օրենքի կարգավիճակի անորոշությունը՝ այս կարևոր առումով դատարանը չի կարող հանգել այնպիսի եզրակացության, որը նման չէ հանձնաժողովի եզրակացությանը: Դատարանի կարծիքով՝ Անգլիայի և Ուելսի օրենքը ողջամիտ հստակությամբ ցույց չի տալիս պետական մարմիններին տրված համապատասխան հայեցողությունները և կիրառման ձևը: Այս կերպ իրավական

պաշտպանության այն նվազագույն մակարդակը, որի իրավունքը քաղաքացիներն ունեն ժողովրդավարական հասարակությունում, բացակայում է...» (պարբ. 79):

Ինչ վերաբերում է Մալոունի զանգերի ենթադրյալ գրանցումներին, դատարանը վճռել է, որ.

Ինչպես իրավացիորեն առաջարկել է կառավարությունը, չափիչ սարքավորման տպիչը գրանցում է այնպիսի տեղեկություններ, որոնք սկզբունքորեն կարող են օրինականորեն ձեռք բերվել հեռախոսային ծառայության մատակարարի կողմից հատկապես բաժանորդից ճիշտ գանձումները երաշխավորելու, բողոքներն ուսումնասիրելու և ծառայության հնարավոր չարաշահումներն ուսումնասիրելու նպատակներով: Այդ իսկ պատճառով, հաշվի առնելով հեռախոսազանգերի գրանցման բուն էությունը, այդ գործողությունը պետք է տարբերվի հաղորդակցության գաղտնալսումից, որը, եթե չի հիմնավորվում, ապա անցանկալի է և անօրինական ժողովրդավարական հասարակությունում: Դատարանը չի ընդունում, այնուամենայնիվ, որ զանգերի գրանցման միջոցով ձեռք բերված տեղեկությունները, ինչպիսին էլ լինեն դրանց ձեռքբերման հանգամանքները և նպատակները, չեն կարող հարցերի առաջացման տեղիք տալ 8-րդ հոդվածի շրջանակներում: Հեռախոսազանգերի գրանցումները պարունակում են տեղեկություններ, մասնավորապես, հավաքված համարի մասին, որը հեռախոսային հաղորդակցության հիմնական բաղկացուցիչ մասն է: Հետևաբար, առանց բաժանորդի համաձայնության ոստիկանությանն այդ տեղեկությունների տրամադրումը, դատարանի կարծիքով, հավասարազոր է միջամտության 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին... . Բացի այն հանգամանքից, որ պարզ արգելք գոյություն չունի, տպավորությունն այնպիսին է, որ գոյություն չունեն նաև օրենսդրական դրույթներ, որոնք վերաբերեին պետական մարմինների հայեցողության իրականացման շրջանակին և ձևին: Հետևաբար, ազգային օրենքի շրջանակներում լինելով օրինական, համաձայն 8-րդ հոդվածի 2-րդ կետի, խնդրո առարկա գործելակերպից առաջացող միջամտությունը «օրենքին համապատասխան» չի եղել...» (պարբ. 84 և 87):

Հետևաբար, դատարանը միաձայն որոշում է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում:

«P.G.-ն և J.H.-ն ընդդեմ Մեծ-ի» (P.G. and J.H. v UK) գործում (տե՛ս վերը՝ էջ 529), որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2001 թ. սեպտեմբերի 25-ին, մշտական գործող դատարանն անդրադարձել է կասկածյալների/հեռախոսային բաժանորդների զանգերի/վճարումների գրանցումների վերաբերյալ հեռախոսային ծառայություններ մատակարարող ընկերություններից գաղտնիորեն տեղեկություններ ձեռք բերելու ժամանակակից ձևին, որ կիրառում է ոստիկանությունը: Վերջինս կասկածել է, որ դիմողները ներգրավված են եղել ծրագրված թալանի գործողությունների մեջ, և ձեռք է բերել նաև նրանց գործընկեր կասկածյալ անձնավորության՝ Բ-ի հեռախոսազանգերի վերաբերյալ գրանցումները, որպեսզի բացահայտի և ապացուցի դիմողների մասնակցությունն այդ դավադրությանը: Դատարանը վճռել է, որ.

42. Անվիճելի է, որ ոստիկանության կողմից Բ-ի բնակարանում գտնվող հեռախոսի համարով ստացված կամ այդ հեռախոսի համարից զանգված զանգերի վերաբերյալ տեղեկությունների ձեռքբերումը միջամտություն է եղել այդ բնակարանում գտնվող հեռախոսից օգտված կամ այդ համարից զանգեր կատարած դիմողների անձնական կյանքին կամ նամակագրությանը (այս դեպքում՝ հեռախոսային հաղորդակցության): Դատարանը նկատում է, այնուամենայնիվ, որ զանգերի այնպիսի գրանցումները, որոնք, որպես այդպիսին, չեն խախտում 8-րդ հոդվածը, եթե, օրինակ՝ դրանք արվում են հեռախոսային ընկերության կողմից վճարների գանձման նպատակով, իրենց բնույթով պետք է տարբերվեն հաղորդակցությունների գաղտնալսումից, ինչը, եթե չի հիմնավորվում, ապա կարող է լինել անցանկալի և անօրինական ժողովրդավարական հասարակությունում (տե՛ս *Մալոունը (Malone),* վերը՝ էջ 37-38, պարբ. 83-84):

Բացի այդ, դատարանը համարել է, որ ոստիկանության կողմից զանգերի/վճարների գանձման տեղեկությունների ձեռքբերումը հիմնված է եղել 1984 թ. «Հեռահաղորդակցությունների մասին» օրենքի 45-րդ բաժնի և 1984 թ. «Տվյալների պաշտպանության մասին» օրենքի 28(3) բաժնի վրա և լուրջ հանցագործության հետաքննությանը տված համաչափ պատասխան է եղել: Հետևաբար, ոստիկանության գործողությունները մտել են 8(2) հոդվածի շրջանակների մեջ, և հեռախոսազանգերի գրանցումների առումով 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

1984 թ. օրենսդրության ընդունումը և կիրառումը տարբերակում է մտցրել *«P.G.-ի և J.H.-ի» (P.G. and J.H.)* գործում կիրառված զանգերի գրանցման և *Մալոունի (Malone*) գործում կիրառված վարչական գործելակերպի միջև:

5 *Հելֆորդի (Halford)* գործում վկայակոչված «Հաղորդակցությունների գաղտնալսման մասին» օրենքը Բրիտանիայի խորհրդարանն ընդունել է 1985 թ.՝ նպատակ ունենալով բավարարել *Մալոունի* վճռի պահանջները: Ակտը, ի թիվս այլոց, քրեական հանցագործություն է համարել փոստային կամ հանրային հեռահաղորդակցային համակարգերով փոխանցված հաղորդակցությունների մտածված հսկողությունը: Ներքին գործերի քարտուղարն օրենքով օժտվել է սահմանված հանգամանքներում (օրինակ՝ լուրջ հանցագործության բացահայտման նպատակով) հաղորդակցության գաղտնալսման համար թույլտվություն տալու հայեցողությամբ: Ստեղծվել է նաև տրիբունալ, որը պետք է որոշում կայացներ գաղտնալսումների օրինականությունը վիճարկող բողոքների վերաբերյալ: *«Քրիսթին ընդդեմ ՄԹ-ի» (Christie v UK* 78A DR E Com HR 119 (1994)) գործի դեպքում (տե՛ս վերը՝ էջ 526) հանձնաժողովը պաշտպանել է այն տեսակետը, որ Արևելյան Եվրոպայի հետ կապեր ունեցած արհմիության անդամի հաղորդակցությունների առումով 1985 թ. օրենքը բավարարել է 8-րդ հոդվածի ընթացակարգային և օրինականության պահանջները: Այնուամենայնիվ, *Հելֆորդի (Halford)* գործի վերաբերյալ դատարանի վճռից պարզ է, որ օրենքի բացթողում է այն հանգամանքը, որ չի ընդգրկել պետական մարմինների կողմից շահագործվող ներքին ցանցերում կատարվող հաղորդակցությունների գաղտնալսումներին վերաբերող դրույթներ: Միս Հելֆորդը նույնպես փորձել է առարկել, որ իր տան հեռախոսի ենթադրվող գաղտնալսման առումով 13-րդ հոդվածով պահանջվող արդյունավետ ազգային պաշտպանական միջոց չի ունեցել: Կառավարությունը պատասխանել է, որ 1985 թ. օրենքը մասամբ նրան ապահովել է պաշտպանական միջոցով, օրինակ՝ տրիբունալին դիմելու հնարավորությամբ: Դատարանը գնահատում չի կատարել, որպեսզի պարզի՝ այդ օրենքի շրջանակներում ստեղծված երաշխիքները բավարարե՞լ են 13-րդ հոդվածի պահանջները, քանի որ վճռել է, որ միս Հելֆորդը չի ապացուցել, որ ունեցել է «վիճելի պահանջ» առ այն, որ իր տան հեռախոսազանգերը, ի խախտումն 8-րդ հոդվածի, գաղտնալսվել են, որի դեպքում նա ենթակա կլիներ 13-րդ հոդվածի պաշտպանությանը: 1999 թ. ամռանը ներքին գործերի գրասենյակը լույս է ընծայել խորհրդատվական աշխատություն («Հաղորդակցությունների գաղտնալսումը ՄԹ-ում» (Interception of Communications in UK,Cm 4368)), որում առաջարկել է կոնվենցիային համապատասխանեցնելու համար փոփոխություններ կատարել 1985 թ. օրենքում և թարմացնել օրենքը՝ հաշվի առնելով ընթացիկ տեխնիկական զարգացումները, ինչպես, օրինակ՝ համացանցի զարգացումը: Կառավարությունն առաջարկել է կիրառել առանձին անձանց ուղղված թույլտվությունների նոր համակարգ և թույլատրել հատկորոշված անձանց կողմից օգտագործված ամեն տեսակի հաղորդակցությունների գաղտնալսումը: Հաշվի առնելով *Հելֆորդի* գործով դատարանի կայացրած վճիռը՝ աշխատությունը խորհուրդ է տվել ընդլայնել 1985 թ. օրենքի շրջանակները և դրանում ընդգրկել նաև ոչ հանրային հեռահաղորդակցությունների ցանցերը: Այնուամենայնիվ, «օրինական գործունեության վարման ընթացքում» գործատուները պետք է կարողանան ձայնագրել իրենց աշխատակիցների խոսակցությունները: Այս առաջարկություններն ընդհանուր առմամբ օգտագործվել են 2000 թ. «Հետաքննչական լիազորությունների կանոնակարգման մասին» օրենքում: Դրա 1-ին բաժնի համաձայն՝ ՄԹ-ի տարածքում ցանկացած անձի կողմից միտումնավոր և առանց օրինական թույլտվության հանրային կամ մասնավոր համակարգերի միջոցով տեղեկությունների փոխանցման գաղտնալսումը քրեորեն հետապնդելի արարք է: Այնուամենայնիվ, մասնավոր հեռահաղորդակցության համակարգի օգտագործումը կամ շահագործումը վերահսկելու իրավունք ունեցող անձինք, ինչպես, օրինակ՝ համակարգի սեփականատերերը, իրավունք ունեն հսկելու իրենց համակարգերով տեղի ունեցող հաղորդակցությունները: Բացի այդ, համաձայն 4-րդ բաժնի, տնտեսավարող սուբյեկտների գործունեության ընթացքում տեղի ունեցող հաղորդակցությունների վերահսկողության նպատակով ներքին գործերի քարտուղարն իրավասու է ընդունելու կանոնակարգեր, որոնք թույլ են տալիս այնպիսի վարքագծի դրսևորումը, որը թողնում է «օրինական գործելակերպի» տպավորություն: Քարտուղարի իրավասությունը՝ ամրագրված 5-րդ և 8-րդ բաժիններում, համաձայն որի՝ նա կարող է սանկցիաներ տալ տվյալ անձի կողմից կատարված կամ տվյալ անձի անունով ստացված ամեն տեսակի հաղորդակցությունները գաղտնալսելու/վերահսկելու համար, փոխարինում է նախկին իրավասություններին, որոնք սահմանված են եղել 1985 թ. օրենքով: Նաև վերահսկողության և բողոքներին ընթացք տալու նախկին համակարգը թարմացվում է հանձնակատարի կողմից, որին նշանակում է երկրի վարչապետը (57-րդ

բաժին)՝ վերանայելով քարտուղարի՝ թույլտվություն տրամադրելու լիազորությունները: Տրիբունալը, որի անդամները պետք է զբաղեցնեն կամ զբաղեցրել են դատավարական պաշտոններ և նշանակվում են միապետի կողմից, պետք է որոշումներ կայացնի հաղորդակցությունների գաղտնալսմանն առնչվող բոլոր բողոքների վերաբերյալ, որոնք բերվում են անվտանգության, հետախուզության ծառայությունների և այլ ուժային կառույցների դեմ (օրինակ՝ ոստիկանության):

6 *«Կրուսլինն ընդդեմ Ֆրանսիայի» (Kruslin v France,* A.176-A (1990) 12 EHRR 547) գործի կապակցությամբ որոշվել է, որ Ֆրանսիայի հեռախոսային գաղտնալսումների կարգավորումը չի «համապատասխանել օրենքին», քանի որ գաղտնալսումների վերաբերյալ կարգադրություններ անելու լիազորությունների շրջանակի անորոշություն և համապատասխան երաշխիքների բացակայություն է եղել: Գործը հետաքննող դատավորը ոստիկանությանը տվել է կասկածյալ տան հեռախոսը գաղտնալսելու լիազորագիր: Այնուհետև այդ հեռախոսով խոսելու ժամանակ Կրուսլինն այնպիսի բաներ է ասել, որոնք ակներև են դարձրել նրա մասնակցությունը լուրջ հանցագործություններին: Վերջին հաշվով, այս հանցագործությունները կատարելու համար նա դատապարտվել է տասնհինգ տարվա ազատազրկման: Կրուսլինը պնդել է, որ գաղտնալսումը 8-րդ հոդվածի խախտում է եղել: Դատարանը միաձայն ընդունել է Ֆրանսիայի վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը, համաձայն որի՝ «քրեական դատավարության օրենսգրքի առանձին դրույթների հիման վրա կարող են տրվել հեռախոսների գաղտնալսման լիազորագրեր»: Խիստ նշանակալից է, որ դատարանը որոշել է, որ այս նախադեպային իրավունքը բավարարում է ազգային օրենսդրական հիմքի «համաձայն օրենքի» պահանջը (տե՛ս ստորև՝ էջ 616):

Ինչ վերաբերում է կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի և այլ համանման դրույթներին, դատարանը միշտ հասկացել է «օրենք» բառն իր «նյութական», ոչ թե «պաշտոնական» իմաստով: Այն ընդգրկել է օրենքից ավելի ցածր կարգ ունեցող որոշումները, ... և չգրված օրենքը: «*Սանդի Թայմզի», Դաջենի և Չապպելի (Sunday Times, Dudgeon and Chappell)* վճիռներն ակնհայտորեն վերաբերել են Միացյալ Թագավորությանը, սակայն ինչպես իրավացիորեն նշել է կառավարությունը, սխալ կլինի չափազանցնել նախադեպային իրավունքի երկրների և մայրցամաքային երկրների միջև եղած տարբերությունները: Դրան հակառակ, նախադեպային իրավունքն ավանդաբար մեծ դեր է խաղացել մայրցամաքային երկրներում, այն աստիճանի, որ դրական իրավունքի ամբողջական ճյուղեր մեծ մասամբ առաջացել են դատարանների որոշումների արդյունքում... . Եթե դատարանն անտեսեր նախադեպային իրավունքը, ապա կխարխլեր մայրցամաքային երկրների իրավական համակարգը գրեթե նույնքան, որքան *Սանդի Թայմզի (Sunday Times)* վճիռը «վնաս կհասցներ» Միացյալ Թագավորության իրավական համակարգի «արմատներին», եթե «իրավունքի» հայեցակարգից այն բացառեր նախադեպային իրավունքը: Գրավոր իրավունքի/օրենքի մեջ ընդգրկված ոլորտներում «օրենք» նշանակում է ուժի մեջ գտնվող որոշում, ինչպես այն մեկնաբանվել է իրավասու դատարանների կողմից, անհրաժեշտության դեպքում, նաև ցանկացած նոր գործնական զարգացումների լույսի ներքո (պարբ. 29):

Սակայն դատարանը չի համարել, որ Ֆրանսիայի օրենքը համապատասխանել է կոնվենցիայի «բավարար հստակության» պահանջին:

Հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը և դրանց հետևելու այլ եղանակները լուրջ միջամտություն են անձնական կյանքին և նամակագրությանը և պետք է, հետևաբար, հիմնված լինեն հատկապես հստակ «օրենքի» վրա: Կարևոր է խնդրո առարկայի վերաբերյալ ունենալ հստակ, մանրամասն կանոններ, մանավանդ որ օգտագործման առկա տեխնոլոգիան ավելի ու ավելի է զարգանում:

... Ամենից առավել, ներկայումս այդ համակարգը տարբեր հնարավոր չարաշահումների դեմ ուղղված պատշաճ երաշխիքներ չի ապահովում: Օրինակ՝ անձանց այն կատեգորիաները, որոնց հեռախոսային խոսակցությունները կարող են գաղտնալսվել դատարանի կարգադրության հիման վրա, և հանցագործությունների բնույթը, որը կարող է տեղիք տալ նման կարգադրության ընդունմանը, որևէ տեղ սահմանված չեն: Չկա որևէ բան, որը կպարտավորեցներ դատավորին սահմանափակում դնել հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումների ժամկետների վրա: Նմանապես, նշված չեն այն ընթացակարգերը, որոնց հիման վրա կազմվում են գաղտնալսված հեռախոսային խոսակցությունների ընդհանուր հաշվետվությունները, ... նաև՝ այն հանգամանքները, որոնց դեպքում ձայնագրությունները կարող են կամ պետք է ջնջվեն, կամ ժապավենները ոչնչացվեն, մասնավորապես, երբ մեղադրյալն ազատ է արձակվել հետաքննող դատավորի կողմից կամ արդարացվել դատարանի կողմից (պարբ. 33 և 35):

Հետևաբար, Կրուսլինի դիմումը բավարարվել է: Այն գործոնները, որոնք դատարանն առաջարկել է հաշվի առնել հեռահաղորդակցությունների գաղտնալսումը կարգավորող ազգային օրենքում, պետք է օգտագործվեն 8-րդ հոդվածին այլ իրավական համակարգերի՝ գաղտնալսմանը վերաբերող դրույթների համապատասխանությունը գնահատելու համար: Նկատի ունեցե՛ք, որ նույն դատավորները համանման վճիռ են ընդունել հարկերի վճարումից խուսափելու մեջ կասկածվող անձի հեռախոսի գաղտնալսման վերաբերյալ *«Հուվին ընդդեմ Ֆրանսիայի» (Huvig v France*, A.176-B (1990) 12EHRR 528) վճռում:

7 *«Քոփին ընդդեմ Շվեյցարիայի» (Kopp v Switzerla nd*, 1998-III 524) գործի դեպքում որոշվել է, որ հեռախոսների գաղտնալսման մասին Շվեյցարիայի օրենքը և գործելակերպը նույնպես «չեն համապատասխանում օրենքին»: Դիմողը եղել է փաստաբան, որի կինը եղել է Շվեյցարիայի Դաշնային կառավարության անդամ՝ զբաղեցնելով արդարադատության և ոստիկանության դաշնային դեպարտամենտի տնօրենի պաշտոնը: Նրա կնոջը մեղադրանքներ են ներկայացվել, համաձայն որոնց՝ նա իր պաշտոնավարման ընթացքում գաղտնի պաշտոնական տեղեկություններ է տրամադրել դիմողին՝ հօգուտ նրա հաճախորդներից մեկի: Նրա կնոջ պաշտոնաթող լինելուց հետո սկսվել է ծառայողական ստուգում, որի արդյունքում հայտարարվել է, որ այդ պնդումներն անհիմն են եղել: Հարցման ընթացքում դաշնային դատարանը բավարարել է դաշնային գլխավոր փաստաբանի դիմումը, որով պահանջվել է թույլ տալ դիմողի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը, քանի որ համարվել է, որ նա՝ որպես երրորդ կողմ, կարող էր կապի մեջ լինել օրինազանցի հետ: Համաձայն Շվեյցարիայի օրենքի՝ փաստաբանների և նրանց հաճախորդների միջև հաղորդակցություններն օժտված են իրավաբանական անձեռնմխելիությամբ: Երեք շաբաթ անց գաղտնալսումը դադարեցվել է, որից հետո դիմողը տեղյակ է պահվել դրա, ինչպես նաև այն մասին, որ գաղտնալսման արդյունքում կատարված ձայնագրությունները ոչնչացվել են: Շվեյցարիայի դատարաններում նա վիճարկել է գաղտնալսման օրինականությունը, սակայն այդ դատարանները միայն հաստատել են, որ գաղտնալսումները եղել են օրինական: Հանձնաժողովը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում: Նմանապես, դատարանը միաձայն կիրառել է *Հելֆորդի (Halford)* գործը, որպեսզի եզրակացնի, որ դիմողի գործնական հեռախոսային խոսակցությունները մտնում են այս հոդվածի շրջանակների մեջ:

> Դատարանի կարծիքով՝ իր նախադեպային իրավունքից ակնհայտ է, որ աշխատանքի վայրից, ինչպես, օրինակ՝ փաստաբանական գրասենյակից արված հեռախոսային խոսակցությունները կարող են ընդգրկվել 8(1) հոդվածի իմաստով «անձնական կյանք» և «նամակագրություն» հասկացությունների շրջանակների մեջ ... (պարբ. 50)...

Դատարանի համար հիմնական խնդիր է եղել այն, թե արդյոք Շվեյցարիայի օրենքը բավականաչափ կանխատեսելի՞ է եղել և հնարավորությո՞ւն է տվել որոշելու, թե դիմողի վերահսկված խոսակցություններից որոնք են ենթակա եղել իրավաբանական անձեռնմխելիության, և որոնք՝ ոչ: Համաձայն դատարանի վճռի՝ այս հարցի վերաբերյալ ազգային օրենքը բավականաչափ հստակ չի եղել: Բացի այդ, դատարանը որոշել է, որ այն հանգամանքը, որ փոստային գրասենյակի իրավաբանական վարչության պաշտոնյան որոշում է կայացրել, թե վերահսկված զանգերից որոնք են ենթակա եղել իրավաբանական անձեռնմխելիության, «ապշեցուցիչ» գործելակերպ է եղել: Այն դեպքում, երբ առաջացած հարցերը վերաբերել են փաստաբանների և նրանց հաճախորդների հաղորդակցության իրավաբանական անձեռնմխելիությանը, դատարանը որոշել է, որ վերահսկված խոսակցությունների կարգավիճակի մասին որոշում կայացնելու առումով նախապատվությունը պետք է տրվի անկախ դատավորին, ոչ թե գործադիր մարմնի ներկայացուցչին: Հետևաբար, դիմողի հեռախոսազանգերի նկատմամբ սահմանված վերահսկողությունը չի բավարարել 8(2) հոդվածի պահանջները: Ինչպես և *Նյեմեցի (Niemietz)* գործում (վերը՝ էջ 507), այս դեպքում ևս փաստաբան/հաճախորդ հաղորդակցության անձեռնմխելիության առումով դատարանը դրսևորել է վճռական մոտեցում:

«Ամանն ընդդեմ Շվեյցարիայի» (Amann v Switzerland) գործի դեպքում որոշվել է, որ հարդարանքի պարագաներ գնելու նպատակով Բեռնի Խորհրդային Միության դեսպանատան աշխատակցուհու

կողմից մասնավոր ձեռներեցին արված հեռախոսազանգի գաղտնալսումը, որն իրականացվել է Շվեյցարիայի Դաշնության պետական դատախազության կողմից, հակասել է 8-րդ հոդվածին (տես վերը՝ էջ 526):

8 *«Դոերգան ընդդեմ Նիդեռլանդների» (Doerga v The Netherlands)* գործի վերաբերյալ 2004 թ. ապրիլի 27-ի վճռի համաձայն՝ Հոլանդիայում գործող բանտարկյալների հեռախոսային խոսակցությունների գրանցման կարգն առաջացրել է 8-րդ հոդվածի խախտում: 1995 թ. հունվարի սկզբին դիմողն իր պատիժն է կրել Մարվեյի քրեակատարողական հիմնարկում: Բանտի ղեկավարությունը կասկածել է, որ հեռախոսով նա ոստիկանությանը սխալ տեղեկություններ է հաղորդել իր բանտակիցների փախուստի պլանի վերաբերյալ: Ուստի բանտի ղեկավարությունը որոշել է գաղտնալսել, ձայնագրել և պահել դիմողի՝ բանտից արված հեռախոսային խոսակցությունները: 1995 թ. հոկտեմբեր ամսին դիմողի նախկին ընկերուհու մեքենայի մեջ պայթեցվել է պայթուցիկ սարք, որի հետևանքով վերջինիս որդին լրջորեն վիրավորվել է: Դրանից հետո դիմողը մեղավոր է ճանաչվել նաև պայթյուն առաջացնելու համար և դատապարտվել ևս ինը տարվա ազատազրկման: Դիմողի դեմ ներկայացված փաստերի մի մասը հիմնված է եղել գաղտնալսված հեռախոսային խոսակցության վրա, որի ընթացքում նա զգուշացրել է իր քրոջը երբեք չմոտենալ իր նախկին ընկերուհու մեքենային: Դիմողի կարծիքով՝ իր հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը խախտել է 8-րդ հոդվածը, քանի որ այն չի բխել հստակ իրավական դրույթներից: Կառավարությունը վիճարկել է, որ ազգային կարգը բավարարել է 8(2) հոդածով նախատեսված օրենքին համապատասխան լինելու պահանջը, քանի որ գաղտնալսման կարգադրությունները հիմնված են եղել արդարադատության փոխնախարարի հրապարակված շրջաբերականի և Մարվեյի քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգերի վրա: Պալատը միաձայն որոշել է, որ.

52. Դատարանը կարծում է, որ տվյալ գործին վերաբերող խնդրո առարկա կանոնները զուրկ են հստակությունից և մանրամասներից, քանի որ ո՛չ թիվ 1183/379 շրջաբերականը, ո՛չ Մարվեյի քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգերը հստակ ցուցումներ չեն պարունակում այն հանգամանքների վերաբերյալ, որոնց դեպքում բանտարկյալների հեռախոսային խոսակցությունները կարող են վերահսկվել, գրանցվել և պահվել քրեակատարողական հիմնարկների ղեկավարության կողմից, կամ այն ընթացակարգերի վերաբերյալ, որոնք ենթակա են պահպանման... .

53. Հաշվի առնելով բանտարկության առումով գործող սովորական և ողջամիտ պահանջները՝ դատարանն ընդունում է, որ կարող է անհրաժեշտություն զգացվել հետևել կալանավորների՝ արտաքին աշխարհի հետ ունեցած կապերին, այդ թվում նաև՝ հեռախոսային կապերին, սակայն չի կարծում, որ խնդրո առարկա կանոնները կարող են համարվել բավականաչափ հստակ և մանրամասն, որպեսզի թույլ տան պաշտպանել դիմողի անձնական կյանքի և նամակագրության հարգման իրավունքն իշխանությունների կամայական միջամտություններից:

54. Բողոքում արծարծված միջամտությունը, հետևաբար, չի եղել «օրենքին համապատասխան», ինչպես պահանջվում է 8-րդ հոդվածի 2-րդ կետով, և տեղի է ունեցել այդ դրույթի խախտում: Այդ հանգամանքներում միջամտության անհրաժեշտությունը պարզելու նպատակով քննության կարիք չկա:

9 Գրավոր նամակագրության նկատմամբ գաղտնի վերահսկողությունը հիմնականում վիճարկվել է բանտարկյալներին և բանտարկյալների կողմից ուղարկված նամակագրության համատեքստում: *«Գոլդերն ընդդեմ ՄԹ-ի» (Golder v UK*, A.18 (1975) 1 EHRR 524) գործում դատարանը որոշել է, որ այն հանգամանքը, որ բանտարկյալին հնարավորություն չի տրվել խորհրդակցելու նպատակով գրել իր փաստաբանին և պարզել բանտի պաշտոնյայի դեմ գործ հարուցելու հնարավորությունը, միջամտություն է եղել նամակագրության հարգման իրավունքին, որի մասին չի կարելի ասել, որ այն եղել է «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում» (այս հայեցակարգը ներկայացված է ստորև՝ 620-րդ էջում): *«Սիլվերն ընդդեմ ՄԹ-ի» (Silver v UK,* A.61(1983) 5 EHRR 347) գործում մի խումբ բանտարկյալներ բողոքել են, որ բանտի ղեկավարությունը կասեցրել է այն նամակագրությունը, որը նրանք փորձել են ուղարկել իրենց ընտանիքի անդամներին, փաստաբաններին և մամուլին:

Դատարանը վճռել է, որ բանտարկյալների նամակագրության նկատմամբ կիրառվող բազմաթիվ վարչական սահմանափակումները, որոնք մշակվել և կիրառվել են ներքին գործերի գրասենյակի կողմից, չեն բխել «օրենքին համապատասխանելու» չափանիշից (այս հայեցակարգը ներկայացված է ստորև՝ 617-րդ էջում): Սրան հակառակ, *«Շոնենբերգերը և Դուրմազն ընդդեմ Շվեյցարիայի» (Schönenberger and Durmaz v Switzerland*, A.137 (1988) 11 EHRR 202) գործում դատախազը պահել է պոտենցիալ հաճախորդին հասցեագրված փաստաբանի նամակը: Դատարանը վճռել է, որ միջամտությունը փաստաբանի նամակագրության հարգման իրավունքին պետության՝ հանցագործությունը կանխելու օրինական նպատակին համաչափ պատասխան եղել, և, հետևաբար, տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում: *«Քեմփբելն ընդդեմ ՄԹ-ի» (Campbell v UK*, A.233 (1992) 15 EHRR 137) գործում կառավարությունն ընդունել է, որ հանձնաժողովի կողմից բանտարկյալներին հասցեագրված նամակները բացվել են՝ համոզվելու համար, որ դրանք իրոք ուղարկվել են Ստրասբուրգի մարմինների կողմից, սակայն դրանք չեն ընթերցվել: Ութ կողմ և մեկ դեմ ձայների հարաբերակցությամբ դատարանը որոշել է, որ այդ գործելակերպն «անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում» և, հետևաբար, 8-րդ հոդվածի խախտում է:

> Իր կողմից դատարանը հայտնում է, որ կարևոր է հարգել հանձնաժողովի հետ վարվող նամակագրության գաղտնիությունը, քանի որ այն կարող է պարունակել բանտի ղեկավարության կամ բանտի պաշտոնյաների դեմ ուղղված արտահայտություններ... Հանձնաժողովի ուղարկած նամակները բացելու դեպքում, անկասկած, առաջանում է դրանք ընթերցելու հնարավորություն, և որոշ դեպքերում ենթադրաբար նաև բանտի աշխատակազմի կողմից տվյալ բանտարկյալից վրեժխնդիր լինելու ռիսկ:
>
> Բացի այդ, որևէ հիմնավոր պատճառ չկա, թե ինչու հանձնաժողովից ստացված նամակները պետք է բացվեն: Կառավարության կողմից նշված ռիսկը, որ հանձնաժողովի նամակագրական թղթերը կարող են կեղծվել բանտի տարածք անթույլատրելի նյութեր կամ նամակներ բերելու համար, այնքան չնչին է, որ պետք է անտեսվի (պարբ. 62):

«Պետրան ընդդեմ Ռումինիայի» (Petra v Romania, 1998-VIII) գործի դեպքում դիմողը պարտավոր է եղել հանձնաժողովին հասցեագրված իր նամակները ցույց տալ բանտի կառավարչին: Վերջինս այդ նամակներն ուղարկել է Բուխարեստի մարմիններին, որոնք էլ ուղարկել են դրանք Ստրասբուրգ: Հանձնաժողովի կողմից նրան ուղարկված նամակները նրան են հանձնվել բաց վիճակում և զգալի ուշացումներով: Կառավարությունն ընդունել է, որ դիմողը ենթարկվել է «պետական մարմնի կողմից կատարված միջամտության» նրա նամակագրության հարգման իրավունքին: Դատարանը միաձայն որոշել է, որ այդ միջամտությունները չեն «համապատասխանել օրենքին», և համապատասխան իրավական դրույթները շատ անորոշ են եղել, իսկ դրանց մի մասը՝ ոչ հանրամատչելի:

> ... բանտարկյալների նամակագրության վերահսկողությանը վերաբերող ազգային օրենսդրության գործող դրույթները ... չափից ավելի ազատություն են թողնում ազգային մարմիններին: Մասնավորապես, դրանք ընդամենը շատ ընդհանրական գծերով անդրադառնում են այն փաստին, որ դատապարտված անձինք ունեն նամակներ ստանալու և ուղարկելու իրավունք, ինչպես նաև օժտում են բանտի կառավարիչներին «բանտարկյալի ուղղման գործընթացի տեսանկյունից աննպատակահարմար» համարվող ցանկացած նամակ կամ թերթ, գիրք կամ լրագիր պահելու լիազորություններով: Հետևաբար, թվում է, որ նամակագրության վերահսկողությունը ինքնաբերական գործողություն է, որն անկախ է դատական մարմնի ցանկացած որոշումից և ենթակա չէ բողոքարկման:
>
> Կիրառման կանոնակարգերը չեն հրապարակվել, այնպես որ դիմողը հնարավորություն չի ունեցել ծանոթանալու դրանց» (պարբ. 37):

Դատարանի կարծիքով՝ *«Պիսկ-Պիսկովսկին ընդդեմ Լեհաստանի» (Pisk-Piskowski v Poland)* գործում (2005 թ. հունիսի 14-ի վճիռ), ի խախտումն ազգային օրենսդրության, բանտարկյալի նամակագրության գրաքննությունն առաջացրել է 8-րդ հոդվածի խախտում: Երբ դատարանը ստացել է դիմողի նամակը, դրա վրա եղել է կնիք, համաձայն որի՝ «Լեյնիկայի շրջանային դատարանն արգելել է այն 22.11.02 թ.»: Հետևաբար, դատարանը որոշել է, որ եղել է ողջամիտ հավանականություն, որ նամակը բացվել է իշխանությունների կողմից: 1997 թ. ընդունված օրենսդրությունը հստակ արգելել է բանտարկյալների և «Լեհաստանի Հանրապետության կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում վավերացված միջազգային պայմանագրերի շրջանակներում ստեղծված միջազգային կառույցների միջև նամակագրության գրաքննությունը»:

10 Դատարանը միաձայն եզրակացրել է, որ սնանկության գծով հոգաբարձուի կողմից սնանկ անձնավորությանն ուղարկված իրավաբանական նամակագրության ընթերցումը չի եղել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում» և, հետևաբար, առաջացրել է 8-րդ հոդվածի խախտում: *«Ֆոքսլին ընդդեմ ՄԹ-ի» (Foxley v UK* (2000) The Times) (2000 թ. հուլիսի 4) գործով դիմողը եղել է պաշտպանության նախարարությունում զինամթերքների գնումների համար պատասխանատու նախկին պաշտոնյա, որը 1993 թ. մեղավոր է ճանաչվել կոռուպցիայի մեջ և դատապարտվել չորս տարվա ազատազրկման: Դատարանը նաև որոշել է, որ այդ հանցագործությունների արդյունքում ձեռք բերած նրա հասույթը կազմել է 2 միլիոն ֆունտ ստեռլինգ: Ուստի, առաջնորդվելով 1988 թ. «Քրեական արդարադատության մասին» օրենքի դրույթներով, դատարանը Ֆոքսլիի դեմ ընդունել է նրա՝ 1.5 միլիոն ֆունտ ստեռլինգի արժողությամբ իրացման ենթակա ողջ գույքի բռնագրավման կարգադրություն: 1995 թ. նրա դեմ սկսվել է հարկադիր կատարման վարույթ, և միս Ս. Դ.-ն նշանակվել է որպես նրա պարտքի ստացման հարցերով զբաղվող կատարածու: 1996 թ. պաշտպանության նախարարության սկսած վարույթի ընթացքում Ֆոքսլին հայտարարվել է սնանկ, և միս Ս. Դ.-ն նշանակվել է նրա գործերի կառավարիչ: Նույն տարվա սեպտեմբեր ամսին նա Ռեդինգի դատարանից ձեռք է բերել ex parte [միակողմանի] կարգադրություն («Անվճարունակության մասին» 1986 թ. օրենքով), համաձայն որի՝ փոստատունը երեք ամիս շարունակ Ֆոքսլիի նամակագրությունը պետք է ուղարկեր իրեն: Ֆոքսլիի նամակագրության նկատմամբ գաղտնի վերահսկողություն սահմանելու նպատակը եղել է հնարավորություն տալ կառավարչին ստուգելու և վերահսկելու Ֆոքսլիի ակտիվները: Այդ ընթացքում 71 նամակ վերահասցեագրվել է կառավարչին: Այդ նամակների թվում են եղել նաև կոնվենցիայի շրջանակներում Ֆոքսլիի ներկայացրած դիմումի կապակցությամբ նրա իրավաբանական խորհրդատուների գրած երկու նամակը, Ֆոքսլիի մասնակցությամբ տեղի ունեցող քաղաքացիական վարույթի կապակցությամբ իրավաբանական օգնության խորհրդի նամակները և ոստիկանությունից ստացված մեկ նամակ: Այս նամակներից յուրաքանչյուրը կառավարիչը պատճենահանել է և դրանից հետո ուղարկել Ֆոքսլիին: Կարգադրության գործողության ժամկետի ավարտից հետո ևս երեք շաբաթ փոստային գրասենյակը շարունակել է նրա նամակների վերահասցեագրումը: Այդ ընթացքում ստացված նամակները նույնպես կառավարիչը պատճենահանել է: Դիմողը գանգատ է հղել Ստրասբուրգ, որ իր նամակագրության նկատմամբ գաղտնի հսկողության սահմանումը 8-րդ հոդվածի խախտում է: Դատարանը որոշել է, որ կարգադրության գործողության ժամկետի ավարտից հետո Ֆոքսլիի նամակագրությանը միջամտելու առումով տեղի է ունեցել խախտում, քանի որ.

35. … Կառավարությունը չի վիճարկում այն փաստը, որ կարգադրության ժամկետի ավարտից հետո փոստային գրասենյակը երկու անգամ նամակները վերահասցեագրել է սնանկի գործերի կառավարչին: Պետք է նկատել, որ անկախ կառավարության կողմից դիմողի նամակագրությունը վերահասցեագրելու վարչական կարգադրությունների կազմակերպումից, միևնույն է, սնանկի գործերի կառավարիչը կիրառել է նամակները բացելու և դրանց որոշ մասը պատճենահանելու իր հայեցողությունները: Դատարանի կարծիքով՝ սնանկության գծով կառավարիչը պետք է տեղյակ լիներ, որ վերահասցեագրման կարգադրությունը, որը նա ստացել է իր ներկայացրած դիմումի հիման վրա, այլևս իրավական հիմք չի եղել դիմողի նամակագրությանը միջամտելու համար: Այդ առումով, 1996 թ. դեկտեմբերի 27-ից հետո սնանկի գործերի կառավարչի գործողությունները չեն եղել օրենքին համապատասխան... .

Ինչ վերաբերում է կարգի գործողության ժամկետի ընթացքում Ֆոքսլիի իրավաբանական նամակագրության նկատմամբ գաղտնի հսկողության սահմանմանը.

43. Դատարանը հիշում է, որ անհրաժեշտության գաղափարը ենթադրում է, որ միջամտությունը պետք է պայմանավորված լինի հրատապ սոցիալական կարիքով և, մասնավորապես, համաչափ լինի հետապնդվող օրինական նպատակին: Այն ժամանակ, երբ որոշվում է, թե արդյոք միջամտությունն «անհրաժե՞շտ է ժողովրդավարական հասարակությունում», հարկ է հաշվի առնել պետության հայեցողության սահմանները (տե՛ս *«Քեմփբելն ընդդեմ ՄԹ-ի» (Campbell v UK)* 1992 թ. մարտի 25-ի վճիռը, շարք A, թիվ 233, էջ 18, պարբ. 44): Դատարանն այնուհետև նկատում է, որ խնդրո առարկա ոլորտում, որտեղ խոսքը սնանկացած անձի ակտիվներն ի վնաս պարտապանների թաքցնելու մասին է, իշխանությունները կարող են անհրաժեշտ համարել դիմել սնանկ անձի նամակագրությանը հետևելու քայլին, որպեսզի բացահայտեն և պարզեն նրա եկամտի աղբյուրները: Այնուամենայնիվ, միջոցառումների իրականացումը պետք է ուղեկցվի համապատասխան և արդյունավետ երաշխիքներով, որոնց շնորհիվ նամակագրության հարգման իրավունքը

տուժում է նվազագույնս: Սա հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ, ինչպես սույն դեպքում, վերահսկողություն կարող է սահմանվել սնանկ անձի և նրա իրավաբանական խորհրդատուների միջև վարվող նամակագրության նկատմամբ: Այս առումով դատարանը նկատում է, որ փաստաբան-հաճախորդ հարաբերությունը սկզբունքորեն անձեռնմխելի հարաբերություն է, և այդ համատեքստում նամակագրությունը, ինչպիսին էլ որ լինի դրա նպատակը, վերաբերում է անձնական և գաղտնի բնույթի հարցերին (վերը նշված *Քեմփբելի (Campbell)* վճիռը, էջ 18–19, պարբ. 46 և 48):

44. Ինչպես և նշել է կառավարությունը, իրոք, ծրարից կարող է դժվար լինել հասկանալ՝ նամակի բովանդակությունը կապ ունի՞ փաստաբանական անձեռնմխելիության հետ: Այնուամենայնիվ, կառավարությունը չի վիճարկել դիմողի պնդումների ճշտությունն առ այն, որ նամակները նախքան նրան ուղարկելը բացվել են, ընթերցվել, պատճենահանվել և կցվել գործին: Դատարանը չի կարող այս ընթացակարգն արդարացնող որևէ հիմք տեսնել և կարծում է, որ ձեռնարկված միջոցը չի բխել փաստաբանի և նրա հաճախորդի հարաբերությունների վրա տարածվող գաղտնիության և մասնագիտական անձեռնմխելիության սկզբունքներից: Այս կապակցությամբ նկատում է, որ կառավարության կողմից չեն արվել հակառակ պնդումներ, որ հաղորդակցության անձեռնմխելի խողովակի չարաշահում տեղի չի ունեցել: Ոչ էլ վկայակոչել է այլ բացառիկ հանգամանքներ, որոնք կարդարացնեին իր հայեցողության սահմաններում ձեռնարկված միջամտությունը:

45. Այնուհետև դատարանը նկատում է, որ այն փաստը, որ սնանկի գործերի կառավարիչը նաև դատարանի կողմից նշանակված է եղել որպես պարտքի ստացման գծով կատարածու, ավելի շատ է պարտավորեցրել, որ պարտքի ստացման վարույթի համատեքստում դիմողի փաստաբանների՝ նրան հասցեագրված նամակները ուղարկվեն չբացված վիճակում: Միևչդեռ կառավարությունը չի առարկել դիմողի այն պնդմանը, որ նախքան այդ նամակները դիմողին փոխանցելը սնանկության գծով կառավարիչը պատճենահանել է և պահել համապատասխան նամակների օրինակները:

46. Այս հիմքերով դատարանը եզրակացնում է, որ դիմողի և նրա իրավախորհրդատուների միջև նամակագրությունը բացելու, ընթերցելու և պատճենահանելու հրատապ սոցիալական կարիք գոյություն չի ունեցել, այսինքն՝ 8-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով միջամտությունը չի եղել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»: Հետևաբար, այս առումով եղել է 8-րդ հոդվածի խախտում...

Այս վճիռը նշանակալից է դատարանի՝ իրավաբանական նամակագրության նկատմամբ պաշտպանության առումով, որը տարբեր է բանտարկյալների նամակագրության միջամտության համատեքստից: Այս դեպքում 8-րդ հոդվածի խախտում արձանագրվել է քաղաքացիական դատավարության ոլորտում:

8(1)հոդվածով պաշտպանվող իրավունքների նկատմամբ հարգանքը

.....

X-ը և Y-ն ընդդեմ Նիդեռլանդների (X and Y v Netherlands A.91 (1985) 8 EHRR 235)

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Y-ը եղել է 16 տարեկան մտավոր հետամնաց աղջիկ և ապրել է հաշմանդամ երեխաների համար նախատեսված տանը: Մի գիշեր տնօրենի փեսան ստիպել է Y-ին սեռական հարաբերություն ունենալ իր հետ: X-ը, որ Y-ի հայրն է, դրա մասին տեղյակ է պահել ոստիկանությանը: Ավելի ուշ դատախազի գրասենյակը որոշել է քրեական հետապնդում չսկսել տնօրենի փեսայի դեմ: X-ը բողոքարկել է այս որոշումը վերաքննիչ դատարանում, սակայն այդ դատարանը հաստատել է դատախազի որոշումը, քանի որ 16 տարին լրացած անձանց բողոքները պետք է ներկայացվեին անձամբ նրանց կողմից (չնայած իր հաշմանդամության պատճառով Y-ն ի վիճակի չէր նման բողոք ներկայացնելու): Y-ի և իր անունից պրն X-ը գանգատ է ներկայացրել հանձնաժողովին՝ բողոքելով, որ Նիդեռլանդները, ի թիվս այլոց, չեն հարգել իրենց անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը: Հանձնաժողովը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում, սակայն եզրակացրել է, որ պրն X-ի ընտանեկան կյանքի հարգման իրավունքին վերաբերող առանձին հարց չի առաջացել:

...

22. 8-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ որևէ վեճ չի եղել: Հանճնաժողովին ներկայացված դիմումի հիմքում ընկած փաստերը վերաբերում են «անձնական կյանքի» հարցերին, որի հայեցակարգը ներառում է անձի ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիությունը և սեռական կյանքը:

23. Դատարանը հիշեցնում է, որ թեպետ 8-րդ հոդվածի առարկան սկզբունքորեն պետական մարմինների կամայական միջամտություններից անձի պաշտպանությունն է, այն չի պահանջում, որ պետություններն ընդհանրապես ձեռնպահ մնան այդպիսի միջամտության կատարումից: Սկզբունքորեն, բացասական բնույթի այս պարտավորությունից բացի կարող են գոյություն ունենալ դրական պարտավորություններ, որոնք անկապտելի են անձնական կամ ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի գործնական դրսևորումներից: Այս պարտավորությունները կարող են ներառել այնպիսի միջոցառումներ, որոնք ուղղված են անձնական կյանքի հարգման իրավունքի երաշխավորմանը նաև միջանձնային հարաբերությունների ոլորտում:

1. ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

24. Դիմողները բողոքել են, որ խնդրո առարկա ոտնձգությունից միս Y-ի նման երիտասարդ աղջկա դեպքում պահանջվող պաշտպանությունը հնարավոր կլիներ ապահովել միայն քրեական իրավունքի ոլորտի օրենքի միջոցով: Կառավարության կարծիքով՝ կոնվենցիան հնարավորություն է տվել պետություններին, որ հենց նրանք որոշում կայացնեն իրենց կողմից կիրառվելիք միջոցների վերաբերյալ, և չի արգելել, որ նրանք նախապատվությունը տան քաղաքացիական իրավունքին վերաբերող օրենքի դրույթների կիրառմանը:

Դատարանը, որն այս կետում սկզբունքորեն համաձայն է հանճնաժողովի կարծիքին, նկատում է, որ միջանձնային հարաբերությունների ոլորտում 8-րդ հոդվածի հետ համապատասխանությունն ապահովելու համար նախատեսված միջոցների ընտրությունը սկզբունքորեն պայմանավորվող պետությունների հայեցողության սահմանների մեջ մտնող խնդիր է: Այս կապակցությամբ գոյություն ունեն «անձնական կյանքի նկատմամբ հարգանքի» ապահովման տարբեր եղանակներ, և պետության պարտավորության բնույթը պետք է կախված լինի դիտակետում հայտնված անձնական կյանքի առանձնահատուկ կողմից: Պարտադիր չէ, որ միակ պատասխանը լինի քրեական իրավունքի կիրառումը:

25. Կառավարությունը վկայակոչել է այն դժվարությունը, որին օրենսդիր մարմինը հանդիպել է մտավոր հետամնաց անձանց ֆիզիկական անձեռնմխելիության լավագույն պաշտպանության ապահովման նպատակով քրեական իրավունքի դրույթներ մշակելիս: Այս ուղղությամբ չափից ավելի հեռու գնալու դեպքում կարելի է հասնել անընդունելի նահապետականության և առաջացնել անթույլատրելի միջամտություն պետության կողմից անձի սեռական կյանքի հարգման իրավունքին:

Կառավարությունը հայտնել է, որ քաղաքացիական օրենսգրքի 1401-րդ հոդվածով և 1407-րդ հոդվածի համակցությամբ հնարավոր էր միս Y-ի անունից Նիդեռլանդների դատարաններում.

— պրն Բ-ի դեմ ներկայացնել նյութական կամ ոչ նյութական վնասի փոխհատուցման հայց,
— դիմում ներկայացնել՝ պահանջելով, որ հանցագործության կրկնությունը բացառելու համար պրն Բ-ի դեմ կիրառվի դատական արգելք,
— համանման հայց կամ դիմում ներկայացնել մանկատան տնօրենի դեմ:

Դիմողները համարել են, որ քաղաքացիական իրավունքի պաշտպանության այս միջոցները եղել են անիպատակահարմար: Նրանք պնդել են, որ, ի թիվս այլոց, քրեական հետաքննության բացակայությունն էլ ավելի է դժվարացրել 1401-րդ հոդվածի շրջանակներում պահանջվող չորս կետերի՝ իրավախախտման, մեղավորության, վնասի և արարքի ու վնասի միջև պատճառական կապի առնչությամբ ապացույցներ ներկայացնելը: Բացի այդ, այսպիսի վարույթները եղել են երկարատև ու զոհի համար հուզիչ, քանի որ զոհը պետք է ակտիվ դերակատարություն ունենար դրանց ժամանակ:

26. Դատական նիստերի ժամանակ հանճնաժողովի պատվիրակը սկզբունքորեն ընդունել է դիմողների բացատրությունները: Նա նաև կասկած է հայտնել առ այն, թե արդյոք 1401-րդ հոդվածը կարո՞ղ է համապատասխան հիմք լինել ոչ նյութական վնասի փոխհատուցման համար: Նա ավելացրել է, որ գոյություն է ունեցել erga omnes [բոլորի] պաշտպանության կարիք, մինչդեռ դատական արգելքը կարող էր միայն ուղղվել սահմանափակ թվով անձանց: Վերջապես, քաղաքացիական օրենքը այն կասեցնող ազդեցությունը չի ունեցել, որը բնորոշ է քրեական օրենքին:

27. Դատարանը համարում է, որ այնպիսի իրավախախտման դեպքում, որի զոհն է եղել միս Y-ը, քաղաքացիական օրենքով նախատեսված պաշտպանությունն անբավարար է: Սա այնպիսի գործ է, որի դեպքում կշեռքի նժարին են դրված անձնական կյանքի հիմնարար արժեքները և էական կողմերը: Արդյունավետ կանխարգելումն անբաժանելի է այս ոլորտից, և դրան կարելի է հասնել միայն քրեական իրավունքի դրույթների միջոցով: Իրոք, այս հարցը սովորաբար կարգավորվում է հենց այդ դրույթների միջոցով:

Բացի այդ, ինչպես նշվել է հանճնաժողովի կողմից, սա փաստորեն այնպիսի ոլորտ է, որտեղ Նիդեռլանդները սովորաբար նախապատվությունը տվել է քրեական իրավունքի վրա հիմնված համակարգին: Առ այս պահը

հանձնաժողովին և դատարանին հայտնի դարձած միակ բացն այն է, որ միս Y-ի նման իրավիճակում հայտնված անձանց գործերում համակարգը հանդիպում է ընթացակարգային խոչընդոտի, որը Նիդեռլանդների օրենսդիր մարմինն ակնհայտորեն չի կանխատեսել:

28. Համաձայն կառավարության՝ այս բացը հնարավոր է եղել բացահայտել այս գործի փաստերի բացառիկ բնույթի շնորհիվ, և չի կարելի ասել, որ օրենսդիր մարմինն օրենսդրության առումով թերացել է: Ճիշտ է, քրեական օրենսգրքում չի եղել այնպիսի առանձնահատուկ դրույթ, ըստ որի՝ մտավոր հետամնացների նկատմամբ սեռական բնույթի գործողությունները հանցագործություն են համարվում: Այնուամենայնիվ, մտավոր հետամնաց անձնավորության սեռական անձեռնմխելիության դեմ ոտնձգություն կատարած անձի դեմ որոշ հանգամանքներում քրեական վարույթ կարող է սկսվել քրեական օրենսգրքի 239(2) հոդվածի հիման վրա՝ զոհի կողմից բողոքի առկայության կամ դրա բացակայության դեպքերում: Համաձայն այս հոդվածի՝ անպարկեշտ արարքի կատարումն «այն դեպքում, երբ իր կամքին հակառակ ներկա է մեկ այլ անձ», համարվել է իրավախախտում, ինչը գերագույն դատարանի մեկնաբանության համաձայն՝ տարածվել է նաև անպարկեշտ արարքի փաստացի զոհի վրա:

Մյուս կողմից, համաձայն դիմողների, ուժի մեջ գտնվող քրեական օրենսգրքով ապահովված պաշտպանության մակարդակը եղել է անբավարար:

29. Այս գործի նկատմամբ կիրառելի է քրեական օրենսգրքի երկու դրույթ, որոնք են 248^3 և 239(2) հոդվածները:

Համաձայն 248^3 հոդվածի, այս դրույթի դեմ մեղանչած անձի դեմ քրեական վարույթ սկսելու համար պահանջվում է փաստացի զոհի կողմից բերված բողոքի առկայություն: [Այս դրույթով պատիժ է նախատեսվում այն անձանց համար, որոնք, չարաշահելով իրենց գերիշխող դիրքը, անչափահաս անձանց ստիպում են կատարել անպարկեշտ արարքներ:] Արնհեմի վերաքննիչ դատարանը վճռել է, որ այդ նպատակով միս Y-ի գործի նման դեպքերում իրավաբանական ներկայացուցիչը չի կարող հանդես գալ զոհի անունից: Վերաքննիչ դատարանը չի կարծել, որ ի վիճակի է ավելի լայն մեկնաբանության միջոցով լրացնել օրենքի այս բացը ի վնաս պրն Բ-ի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առաջադրանքը բնավ չի եղել ազգային օրենքի մեկնաբանության առումով զբաղեցնել իրավասու ազգային դատարանների տեղը: Դատարանն ապացուցված է համարում, որ տվյալ դեպքում քրեական վարույթը կարող էր բացվել 248^3 հոդվածի հիման վրա:

Ինչ վերաբերում է 239(2) հոդվածին, այն ակնհայտորեն վերաբերել է սեփական անձի անպարկեշտ ցուցադրությանը, ոչ թե անպարկեշտ բնույթի ֆիզիկական ոտնձգությանը: Իրոք, որևէ մեկի, այդ թվում նաև՝ դատախազի գրասենյակի մտքով չի անցել տվյալ դրույթը կիրառել կամ գոնե վկայակոչել Ստրասբուրգում սկսված դատավարության ամենասկզբում:

30. Այսպիսով, ո՛չ քրեական օրենսգրքի 248^3 հոդվածը, ո՛չ էլ 139(2) հոդվածը միս Y-ին գործնական և արդյունավետ պաշտպանություն չեն ապահովել: Հետևաբար, հաշվի առնելով խնդրո առարկա իրավախախտման բնույթը, պետք է եզրակացնել, որ նա հանդիսացել է կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտման զոհ:

...

Այս հիմքերով ԴԱՏԱՐԱՆԸ միաձայն

1. Վճռում է, որ միս Y-ի առնչությամբ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում:

...

3. Վճռում է, որ համաձայն 50-րդ հոդվածի՝ պատասխանող պետությունը պետք է միս Y-ին վճարի երեք հազար (3,000) հոլանդական գիլդեր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են նախագահ Ռիսդալը և դատավորներ Վիարդան, Ուոլշը, Էվանսը, Ռուսոն, Բերնհարդտը և Ջերսինգը:

2 *«Մարքսն ընդդեմ Բելգիայի» (Marckx v Belgium* (1979) A.31) գործը (վերը՝ էջ 549) եղել է առաջինը, որի դեպքում դատարանն ընդունել է, որ համաձայն 8-րդ հոդվածի՝ պետությունները 8(1) հոդվածում նշված մարդու իրավունքները «հարգելու» դրական պարտավորություն ունեն:

3 Իրավունքի հարգման դրական պարտավորությանը վերաբերող մեկ այլ վաղ լսված գործի օրինակ է *«Էյրին ընդդեմ Իռլանդիայի» (Airey v Ireland*, A.32 (1979) 2 EHRR 305) գործը: Դիմողը եղել է աղքատ կին, որն իր ամուսնու կողմից ենթարկվել էր բռնության: Ամենասկզբում առանձնացման

համաձայնություն կնքելու համար նա փորձել է ստանալ իր ամուսնու համաձայնությունը, սակայն յոթ տարի շարունակ արդյունքի չհասնելուց հետո փորձել է ձեռք բերել դատական կարգով ամուսնուց առանձնանալու մասին որոշում: Այնուամենայնիվ, բարձր դատարանին այսպիսի դիմում ներկայացնելու դեպքում նրա ծախսերը կարող էին կազմել մինչև 1200 ֆունտ ստեռլինգ, որը վճարելու հնարավորություն նա չի ունեցել (նրա շաբաթական աշխատավարձը կազմել է 40 ֆունտ ստեռլինգ), մինչդեռ իրավաբանական օգնության հնարավորություն գոյություն չի ունեցել: Նա բողոքել է Ստրասբուրգին՝ պնդելով, որ, ի թիվս այլոց, տեղի է ունեցել իր ընտանեկան կյանքի հարգման իրավունքի խախտում, որն առաջացել է ընտանեկան իրավունքի ոլորտում մատչելի իրավական ընթացակարգերի բացակայությունից: Դատարանի մեծամասնությունը, չորս կողմ և երեք դեմ ձայների հարաբերակցությամբ, որոշել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում:

Դատարանը չի համարում, որ կարելի է ասել, թե Իռլանդիան «միջամտել» է տիկին Էյրիի անձնական կամ ընտանեկան կյանքին: Նրա բողոքը ոչ թե այն է, որ պետությունը գործել է, այլ այն, որ չի գործել: Այնուամենայնիվ, թեպետ 8-րդ հոդվածի առարկան ըստ էության պետական մարմինների կամայական միջամտություններից անձի պաշտպանությունն է, այն չի պահանջում, որ պետություններն ընդամենը ձեռնպահ մնան այդպիսի միջամտության կատարումից: Բացասական բնույթի այս պարտավորությունից բացի կարող են գոյություն ունենալ դրական պարտավորություններ, որոնք անկապտելի են անձնական կամ ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի գործնական դրսևորումներից...

Իռլանդիայում անձնական կամ ընտանեկան կյանքի շատ կողմեր կարգավորվում են օրենքով: Ինչ վերաբերում է ամուսնությանը, ամուսինը և կինը ըստ էության ունեն համատեղ ապրելու պարտավորություն, սակայն որոշ դեպքերում իրավունք ունեն միջնորդելու դատական կարգով ամուսնուց/կնոջից առանձնանալու համար: Սա հավասար է այն փաստի ճանաչմանը, որ նրանց անձնական կամ ընտանեկան կյանքի պաշտպանությունը երբեմն կարող է պահանջել, որ նրանք ազատվեն համատեղ ապրելու պարտավորությունից:

Անձնական կամ ընտանեկան կյանքի նկատմամբ գործնական հարգանքը պարտավորեցնում է Իռլանդիային անհրաժեշտության դեպքում ապահովել այս կարգի պաշտպանության մատչելիությունը յուրաքանչյուր անձի համար, ով կարող է ցանկություն ունենալ դիմել դրա կիրառությանը: Այնուամենայնիվ, դա գործնականորեն մատչելի չի եղել դիմողին. չունենալով բարձր դատարանին դիմելու հնարավորություն, նա չի կարողացել հասնել իր ամուսնուց դե ֆակտո առանձնացման պաշտոնական ճանաչմանը: Հետևաբար, նա հանդիսացել է 8-րդ հոդվածի խախտման զոհ (պարբ. 32-3):

Այս որոշումն ընտանեկան վեճերի դեպքում իրավաբանական օգնություն ստանալու ընդհանուր իրավունքի հիմքեր չի դնում, սակայն պարտավորեցնում է պետություններին կա՛մ պարզեցնել դատական ընթացակարգերը, որի արդյունքում հնարավոր կլինի անձամբ դիմումներ ներկայացնել, կա՛մ մասնագիտական իրավաբանական օգնություն տրամադրել այն անձանց, որոնք այս ոլորտում մասնագետներ չեն: Դատարանն ավելի ուշ մերժել է զարգացնել այս տրամաբանությունը և պետությունների վրա դնել ազգային ընտանեկան օրենսգրքերում ամուսնալուծության իրավունք նախատեսելու պարտավորություն: Պարոն Ջոնսթընը և նրա երկար տարիների զուգընկերուհին՝ Ջենիս Վիլյամս Ջոնսթընը, *«Ջոնսթընն ընդդեմ Իռլանդիայի» (Johnston v Ireland,* A.112 (1986) 9 EHRR 203) գործում (տես վերը՝ էջ 550) փորձել են առարկել, որ Իռլանդիայում ընտանեկան կյանքը հարգելու իրենց իրավունքն առաջացնում է նման պարտավորություն: Այնուամենայնիվ, դատարանի գերակշիռ մեծամասնությունը՝ տասնվեց կողմ և մեկ դեմ ձայներով, վճռել է, որ.

Այս հարցի կապակցությամբ ճիշտ է, որ 8-րդ հոդվածը, անորոշ հղում կատարելով ընտանեկան կյանքի «հարգման» հասկացությանը, կարող է ստեղծել այնպիսի տպավորություն, որ այն ավելի շատ է ենթակա էվոլյուցիոն մեկնաբանության, քան 12-րդ հոդվածը: Այնուամենայնիվ, կոնվենցիան պետք է ընթերցվի ամբողջությամբ, և դատարանը չի կարծում, որ ամուսնալուծության իրավունքը, որը համարել է, որ չի մտնում 12-րդ հոդվածի մեջ, կարող է հետևողականորեն բխեցվել 8-րդ հոդվածից, որը շատ ավելի ընդհանուր նպատակ է և շատ ավելի ընդհանրական շրջանակ ունեցող դրույթ: Դատարանը չի անտեսում այն դառնությունը, որին ենթարկվել են առաջին և երկրորդ դիմողները: Այնուամենայնիվ, դատարանն այն կարծիքին է, որ թեպետ անձնական կամ ընտանեկան կյանքի պաշտպանությունը երբեմն կարող է պահանջել միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ամուսիններին ձերբազատվելու համատեղ բնակվելու պարտավորությունից (տե՛ս *Էյրիի (Airey)* գործով վճիռը, A.32), չի կարող համարվել, որ 8-րդ հոդվածով Իռլանդիայի ստանձնած պարտավորությունները տարածվում են այնպիսի պարտավորության վրա, ըստ որի՝ այդ երկիրը պետք է նախատեսի ամուսնալուծության և կրկնակի ամուսնության միջոցառումներ, որոնց էլ դիմողները փորձել են հասնել (պարբ. 57-8): Այս կետի առնչությամբ, հետևաբար, առաջին և երկրորդ դիմողների ընտանեկան կյանքի հարգման թերացում տեղի չի ունեցել (պարբ. 57-58):

Հետևաբար, կոնվենցիայի այլ հոդվածների շրջանակները կարող են ուղղակի ազդեցություն ունենալ 8-րդ հոդվածում ամրագրված «հարգանք» բառի իմաստի վրա: 1995 թ. ձայների 0,6 տոկոս տարբերությամբ Իռլանդիայի ընտրողները որոշել են վերացնել երկրում ամուսնալուծության նկատմամբ գործող սահմանադրական արգելքը:

4 Անձանց իրավունքները հարգելու նպատակով պետությունների՝ դրական քայլեր ձեռնարկելու պարտավորությանը վերաբերող գործերի շարքն են դասվում վերը քննարկված *«X-ը, Y-ը և Z-ն ընդդեմ ՄԹ-ի»* (X, Y and Z v UK) գործը (տես վերը՝ էջ 545), որում, առանց հաջողության հասնելու, վիճարկվել է, որ ՄԹ-ն ունեցել է X-ին որպես Z-ի հայր գրանցելու պարտավորություն, ինչպես նաև *«Լոպես Օստրան ընդդեմ Իսպանիայի» (Lopez Ostra v Spain)* գործը (վերը՝ էջ 573), որում դիմողը հաջողության է հասել դատարանում՝ պնդելով, որ Իսպանիայի համապատասխան գերատեսչությունները չեն կարողացել պաշտպանել իրեն լուրջ արդյունաբերական աղտոտման ազդեցություններից: Դիմողների համար միշտ չէ, որ հեշտ խնդիր է եղել հիմնավորել հարգման դրական պարտավորության խախտումը, քանի որ այսպիսի գործերում դատարանը միտված է եղել պետություններին օժտելու «հայեցողության լայն սահմաններով» (այս հայեցակարգը ներկայացված է ստորև՝ 663-րդ էջում):

5 Տրանսսեքսուալները միայն վերջերս են կարողացել հաղթահարել պատմականորեն այդ անձանց իրավական և վարչական ճանաչման առումով դատարանի կողմից պետություններին տրվող հայեցողության լայն սահմանները: *«Ռիսն ընդդեմ ՄԹ-ի» (Rees v UK* (1986) 9 EHRR 56, A.106) գործում դատարանը, տասներկու կողմ և երեք դեմ ձայների հարաբերակցությամբ, որոշել է, որ ՄԹ-ն չի թերացել սեռափոխության վիրահատության ենթարկված տրանսսեքսուալ անձնավորության անձնական կյանքի իրավունքը հարգելու հարցում՝ մերժելով փոփոխություն կատարել ծնունդների գրանցման համակարգում և այդպիսով փոփոխություն կատարել դիմողի գրանցված սեռի մեջ: Տասը կողմ և ութ դեմ ձայներով համանման որոշում ընդունվել է *«Քոսսին ընդդեմ ՄԹ-ի» (Cossey v UK* (1990) 13 EHRR 622, A.184) գործում: Այնուամենայնիվ, *«Բ-ն ընդդեմ Ֆրանսիայի» (B v France* (1992) 16 EHRR 1, A.232-C) գործը դիմողը շահել է, քանի որ դատարանի մեծամասնությունը (տասնհինգ կողմ և վեց դեմ) որոշել է, որ Ֆրանսիայի իշխանությունների կողմից դիմողին մերժելը, որպեսզի նա վերցնի իգական սեռի ներկայացուցչի անուն, գումարվելով քաղաքացիական կացության գրանցամատյանում համապատասխան փոփոխություն անելու մերժմանը, դիմողի առօրյա կյանքում ստեղծել են այնպիսի դժվարություններ, որ կարելի է համարել, որ պետությունն անհրաժեշտ քայլեր չի ձեռնարկել 8-րդ հոդվածով նրա անձնական կյանքը հարգելու համար (տես նաև՝ A Mowbray, Transsexuals and Human Rights (1992) Journal of Forensic Psychiatry 531): *«Շեֆիլդը և Հորշեմն ընդդեմ ՄԹ-ի» (Sheffield and Horsham v UK* (1998) 27 EHRR 163, 1998-V) գործը կրկին արծարծել է այն խնդիրները, որոնց առնչվում են տրանսսեքսուալ անձնավորություններն անգլիական օրենքի շրջանակներում: Քրիստինա Շեֆիլդը 52 տարեկան սեռափոխության վիրահատության ենթարկված տրանսսեքսուալ անձնավորություն էր, որը ծննդով գրանցված է եղել որպես տղամարդ: Բուժում ստանալուց հետո նրան տրվել է նոր անձնագիր և վարորդական իրավունքի վկայական, որոնցում նշված է եղել նրա կողմից օրինականորեն փոխված նոր անունը: Սակայն նրա ծննդյան վկայականը, սոցիալական ապահովության համակարգի և ոստիկանական գրանցումները շարունակել են նշել նրա սկզբնական անունը և սեռը: Նաև, երբ նա ստորագրել է մեքենայի ապահովագրության պայմանագիր, պետք է նշեր, որ ինքն արական սեռի ներկայացուցիչ է: Բրիտանիայի քաղաքացի Ռեյչել Հորշեմը նույնպես 52 տարեկան սեռափոխության վիրահատության ենթարկված տրանսսեքսուալ անձնավորություն էր: 1974 թ. ի վեր նա բնակվել է Նիդեռլանդներում և 1993 թ. ձեռք բերել այդ երկրի քաղաքացիություն: 1992 թ. սեռափոխության վիրահատության ենթարկվելուց հետո նա Բրիտանիայի իշխանություններից պահանջել է նոր անձնագիր տալ իրեն: Այս պահանջը բավարարվել է միայն այն ժամանակ, երբ Հոլանդիայի դատարանների կարգադրության հիման վրա նրա կարգավիճակն արժանացել է պաշտոնական ճանաչման: Այնուամենայնիվ, Բրիտանիայի իշխանությունները փոփոխություն չեն կատարել նրա բրիտանական ծննդյան վկայականում՝ տեղեկացնելով նրան, որ նույնիսկ արտասահմանում տղամարդու հետ ամուսնանալու դեպքում նրա ամուսնությունը չի ճանաչվելու, եթե

նա բնակություն հաստատի ՄԹ-ում: Զույգ դիմողները պնդել են, ի թիվս այլոց, որ Բրիտանիայի իշխանությունները չեն հարգել 8-րդ հոդվածով ամրագրված իրենց անձնական կյանքի հարգման իրավունքը: Տասնհինգ կողմ և մեկ դեմ ձայների հարաբերակցությամբ հանձնաժողովը որոշել է, որ տեղի է ունեցել այդ իրավունքի խախտում: Դրանից հետո «Լիբերթի» մարդու իրավունքների ՀԿ-ին թույլ է տրվել գրավոր դատարանին ներկայացնել անդամ պետություններում տրանսսեքսուալ անձանց նկատմամբ համեմատական մոտեցումները: Դատարանի մեծամասնությունը՝ տասնմեկ կողմ և ինը դեմ ձայներով, կրկնել է, որ.

... ինչ վերաբերում է հայեցակարգից անբաժանելի դրական պարտավորություններին, ապա «հարգանք» հայեցակարգը հստակ եզրեր չունի: Հաշվի առնելով այդ ոլորտում պայմանավորվող պետությունների փորձի և իրավիճակների առկա տարբերությունները՝ այս հայեցակարգի պահանջները տարբեր գործերում զգալիորեն տարբեր են լինելու: Երբ որոշվում է՝ դրական պարտավորություն գոյություն ունի՞, թե՞ ոչ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել համայնքի ընդհանուր շահի և անձանց շահերի արդար հավասարակշռության հաստատմանը, որն ապահովելու ձգտումը բնորոշ է ողջ կոնվենցիային (տե՛ս ... *Ռիսի (Rees)* վճիռը, էջ 15:37, և *Քոսսիի (Cossey)* վճիռը, էջ15:37) (պարբ. 52.):

Հաշվի առնելով սա՝

... դիմողները ցույց չեն տվել որ 1990 թ. *Քոսսիի (Cossey)* գործով վճռի կայացման օրվանից հետո բժշկագիտության մեջ կատարվել են եզրակացություններ, որոնք միարժեքորեն ցրում են տրանսսեքսուալիզմի պատճառների վերաբերյալ կասկածները... Ինչ վերաբերում է այս ոլորտում իրավական զարգացումներին, դատարանն ուսումնասիրել է «Լիբերթի» ՀԿ-ի ներկայացրած համեմատական ուսումնասիրությունը: Այնուամենայնիվ, դատարանը լիովին բավարարված չէ, որ amicus-ի [տվյալ գործով դատարանում հանդես եկող կողմնակի խորհրդատուի] ներկայացրած օրենսդրական միտումները բավարար են հիմնավորելու համար, որ սեռափոխության վիրահատությունից հետո անձի կարգավիճակի ճանաչումից առաջացած խնդիրների կապակցությամբ Եվրոպայում ընդհանուր մոտեցում գոյություն ունի: Մասնավորապես, ուսումնասիրությունը ցույց չի տալիս, որ ընդհանուր մոտեցում կա առ այն, թե ինչպիսի լուծում պետք է տրվի այն հետևանքներին, որոնք սեռի փոփոխության իրավական ճանաչման արդյունքում կարող են առաջանալ իրավունքի պաշտպանության այլ ոլորտներում, այդ թվում՝ ամուսնության, հայրության, անձնական անձեռնմխելիության կամ տվյալների պաշտպանության ոլորտներում, կամ որոնք են այն հանգամանքները, երբ սեռափոխության վիրահատության անձից կարող է պահանջվել բացահայտել իր նախավիրահատական սեռը:

Դատարանը, հետևաբար, համոզված չէ, որ պետք է հեռանա *Ռիսի (Rees)* և *Քոսսիի (Cossey)* իր որոշումներից և եզրակացնի, որ հիմք ընդունելով զուտ գիտական և իրավական զարգացումները՝ պատասխանող պետությունը չի կարող այլևս վկայակոչել միայն հայեցողության սահմանը, որպեսզի արդարացնի տրանսսեքսուալ անձնավորությունների հետվիրահատական սեռն օրենքով ճանաչելու շարունակական մերժումը: Տրանսսեքսուալիզմը դատարանի համար դեռևս ներառում է բարդ գիտական, իրավական, բարոյական և սոցիալական հարցեր, որոնց առումով անդամ պետությունների միջև համընդհանուր մոտեցում չկա (տե՛ս *«X-ը, Y-ը և Z-ն ընդդեմ ՄԹ-ի» (X Y and Z v UK)* գործի վերաբերյալ վճիռը...):

Ոչ էլ դիմողների գործերի պատմություններն են համոզիչ կերպով ցույց տալիս դատարանին, որ իշխանությունների կողմից նրանց նոր սեռը ճանաչելու մերժման հետևանքով առաջանում է բավարար լրջության վնաս, որպեսզի այն համարվի առավել, քան այս ոլորտում պատասխանող պետության ունեցած հայեցողության սահմանը (համեմատի՛ր *«Բ-ն ընդդեմ Ֆրանսիայի» (B v France)*, պարբ. 56-9):

Հետևաբար, մեծամասնությունը համարել է, որ 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել: Սակայն Բրիտանիայում տրանսսեքսուալ անձնավորությունների իրավական կարգավիճակի իներցիան տպավորություն չի թողել դատարանի վրա:

...Դատարանը չի կարող չնկատել, որ հակառակ *Ռիսի և Քոսսիի* գործերի առնչությամբ արած իր հայտարարություններին, համաձայն որոնց, հաշվի առնելով առանձնահատուկ գիտական և սոցիալական զարգացումները, անհրաժեշտ է վերանայել այս ոլորտի համապատասխան իրավական միջոցները, այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ այդ ուղղությամբ պատասխանող պետությունը որևէ քայլ չի ձեռնարկել (պարբ. 60):

Այնուամենայնիվ, 2002 թ. մշտական գործող դատարանի մեծ պալատը միաձայն որոշել է, որ Բրիտանիայի վարչական մարմինների կողմից սեռափոխության վիրահատության ենթարկված տրանսսեքսուալ անձնավորությունների նոր ինքնության մասնակի ճանաչումը չի բավարարում 8-րդ հոդվածի պահանջները: *«Քրիսթին Գուդվինն ընդդեմ ՄԹ-ի» (Christine Goodwin v UK)* գործի դեպքում,

որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2002 թ. հուլիսի 11-ին, դիմողը ծնունդով եղել է արական սեռի ներկայացուցիչ, սակայն ազգային առողջապահության ծառայության կողմից ենթարկվել է սեռափոխության վիրահատության: Ի թիվս այլոց, նա պետք է հատուկ պայմանավորվածություններ ձեռք բերեր սոցիալական ապահովության դեպարտամենտի հետ (ներառյալ իր վաթսուն տարին լրանալուց հետո ազգային ապահովության անդամավճարներն ուղղակիորեն դեպարտամենտին վճարելու շուրջ), որպեսզի իր գործատուն հնարավորություն չունենար ուղղակիորեն բացահայտելու ի ծնե սեռը, քանի որ վճարումներ և թոշակ ստանալու առումով դեպարտամենտը շարունակել է նրան համարել տղամարդ: Դատարանում նա պնդել է, որ Բրիտանիայի կառավարությունը, չնայած դատարանի նախազգուշացումներին, չի ձեռնարկել հետագա քայլեր իր և սեռափոխության վիրահատության ենթարկված այլ տրանսսեքսուալ անձանց կրած առօրյա տառապանքները նվազեցնելու ուղղությամբ: Դատարանը հավանություն է տվել լավ հիմնավորված արդար հավասարակշռության թեստին, որպեսզի որոշի այս հոդվածով դրական պարտավորությունների գոյությունը: Մինչ մեծ պալատը հիշատակել է Բրիտանիայում տրանսսեքսուալներին վերաբերող ավելի վաղ ընդունված վճիռները, շեշտել է կոնվենցիայի իրավունքները գործնական և դինամիկ ձևով մեկնաբանելու կարևորությունը: Բացի այդ.

78. …Դատարանը ցնցված է այն փաստից, որ թեպետ սեռափոխությունը թույլատրվում է օրենքով, այն լիովին չի ճանաչվում օրենքով, երբ այսպիսի ճանաչումը կարող է համարվել տրանսսեքսուալ անձնավորության վերափոխման երկար և դժվար գործընթացի վերջնական և վճռորոշ քայլը: Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում գնահատում կատարելիս կարևոր գործոն պետք է համարվի ազգային համակարգում գործող վարչական և իրավական գործողությունների ներդաշնակությունը: Այն դեպքում, երբ պետությունը թույլատրել է տրանսսեքսուալ անձնավորության վիճակը թեթևացնող բուժումը և վիրահատական միջամտությունը, ֆինանսավորել վիրահատությունը կամ օժանդակել վիրահատությունների ֆինանսավորմանը և թույլատրել իգական սեռից արականի փոխված տրանսսեքսուալ անձի հետ ապրող կնոջ արհեստական բեղմնավորումը (ինչպես ցույց է տրվել *«X.-ը, Y.-ը և Z.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (X., Y. and Z. v the United Kingdom* [1997-II 619]) գործում), անտրամաբանական է թվում մերժել այն արդյունքի իրավական հետևանքների ճանաչումը, որին հանգեցրել է այս բուժումը:

Մեծ պալատը չի համարել, որ բժշկության զարգացման ներկա մակարդակից պարզ չէ, թե որքանով պետք է ճանաչվի սեռափոխության վիրահատության ենթարկված տրանսսեքսուալ անձնավորությունների իրավական կարգավիճակը: Ինչ վերաբերում է անդամ պետությունների և ավելի լայն միջազգային համայնքում առկա համաձայնությանը, «Լիբերթիի» կողմից կատարված և ներկայացված ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ գոյություն ունի այսպիսի անձանց նոր ինքնությունը իրավաբանորեն ճանաչելու շարունակվող միտում:
Շատ ուշագրավ է, որ մեծ պալատը նկատել է, որ.

85. …Վերջերս լսված *Շեֆիլդի և Հորշեմի (Sheffield and Horsham)* գործում դատարանն իր վճռում շեշտել է, որ գոյություն չունի ընդհանուր եվրոպական մոտեցում, թե ինչ լուծում պետք է տրվի այն հետևանքներին, որոնք սեռի փոփոխության իրավական ճանաչման արդյունքում կարող են առաջանալ իրավունքի պաշտպանության այլ ոլորտներում, այդ թվում՝ ամուսնության, հայրության, անձնական անձեռնմխելիության կամ տվյալների պաշտպանության ոլորտներում: Սա այն իրավիճակն է, որը շարունակում է գոյություն ունենալ ներկայումս, սակայն դժվար թե տարբեր իրավական համակարգեր և ավանդույթներ ունեցող քառասուներեք պայմանագրի կողմ պետությունների միջև այսպիսի ընդհանուր մոտեցման բացակայությունը զարմանք առաջացնի: Համաձայն օժանդակ լինելու սկզբունքի (principle of subsidiarity) [որով դատարանը քայլեր է ձեռնարկում միայն այն դեպքում, երբ պայմանագրի կողմերը չեն կարող ապահովել սահմանված առանձնահատուկ նպատակները], իրավամբ, դա առաջին հերթին պայմանագրի կողմ պետությունների գործն է որոշել այն միջոցները, որոնք անհրաժեշտ են իրենց իրավասությունների ներքո կոնվենցիայի իրավունքների երաշխավորման համար, և նրանք պետք է ունենան հայեցողության լայն սահմաններ սեռափոխության վիրահատության ենթարկված անձանց իրավական ճանաչման հետ կապված խնդիրներն իրենց ազգային իրավական համակարգերի շրջանակներում կարգավորելու համար: Դատարանը, հետևաբար, նվազ կարևորություն է տալիս այն հանգամանքին, որ առկա իրավական և գործնական խնդիրների լուծման համար գոյություն չունի ընդհանուր եվրոպական մոտեցում, քան այն հստակ և անվիճելի փաստերին, որ առկա է շարունակվող միջազգային միտում, որը բարենպաստ է տրանսսեքսուալ անձանց ոչ միայն ընդլայնված սոցիալական ընդունելիության, այլև սեռափոխության վիրահատության ենթարկված տրանսսեքսուալ անձնավորությունների նոր սեռական ինքնության իրավական ճանաչման համար:

Ներպետական իրավիճակի առումով մեծ պալատը նշել է, որ 2000 թ. գարնանը միջգերատեսչական աշխատանքային խումբը կազմել է զեկույց, որում անդրադարձել է սեռափոխության վիրահատության ենթարկված տրանսսեքսուալ անձանց հանդիպած դժվարությունների լուծմանը: *«Բելինգերն ընդդեմ Բելինգերի» (Bellinger v Bellinger* [2001] 3 FCR 1) գործի առնչությամբ վերաքննիչ դատարանը հայտնել է իր «հիասթափությունը», որ զեկույցի իրականացման ուղղությամբ գործնական քայլեր չեն ձեռնարկվել: Մեծ պալատը վճռել է, որ.

90.…Քսաներորդ դարում տրանսսեքսուալ անձանց անձնական զարգացման և ֆիզիկական ու բարոյական անվտանգության այնպիսի իրավունքը, որով օժտված է ողջ հասարակությունը, այլևս չի կարող համարվել վեճի առարկա, որի կարգավորումը պահանջում է ժամանակ՝ խնդրո առարկա հարցերի վրա ավելի հստակ լույս սփռելու համար: Մի խոսքով, այսպիսի անբավարար վիճակը, երբ սեռափոխության վիրահատության ենթարկված տրանսսեքսուալ անձինք ապրում են միջանկյալ գոտում, որպես ոչ մեկ կամ մյուս սեռի լիարժեք ներկայացուցիչ, այլևս չի կարող շարունակվել:

93. … Հաշվի առնելով վերը նշված նկատառումները՝ դատարանը կարծում է, որ պատասխանող կառավարությունը այլևս չի կարող պնդել, որ խնդիրը, բացառությամբ կոնվենցիայով պաշտպանվող իրավունքի ապահովման համապատասխան միջոցների ընտրության, մտնում է իր հայեցողության սահմանների մեջ: Քանի որ հանրային շահի լուրջ գործոններ չկան, որոնք հնարավոր կլիներ հակակշռել անհատ դիմողի սեռափոխությունն օրինականորեն ճանաչելու շահին, դատարանը եզրակացնում է, որ ներկայումս կոնվենցիայից անկապտելի արդար հավասարակշռությունը նշանակում է, որ կշեռքի նժարը թեքվում է դիմողի կողմը: Հետևաբար, նրա անձնական կյանքի հարգման իրավունքը չի իրականացվել՝ խախտելով կոնվենցիայի 8-րդ հոդվածը:

Այսպիսով, վերջին հաշվով համարվել է, որ բրիտանական մարմինների՝ սեռափոխության վիրահատության ենթարկված տրանսսեքսուալ անձանց նոր ինքնությունը օրենքով լիարժեքորեն ճանաչելու շարունակական չկամությունը չի կարող արդարացվել այս անձանց նկատմամբ առկա ընդհանուր միջազգային վերաբերմունքի լույսի ներքո: Բրիտանիայի կառավարությունը սրան տվել է կառուցողական պատասխան՝ 2004 թ. ընդունելով «Գենդերային իրավահավասարության ճանաչման մասին» օրենքը: Ակտը իրավունք է տվել տրանսսեքսուալ անձանց, որոնք (ա) ունեն սեռական դիսֆորիա, (բ) վերջին երկու տարում ապրել են որպես ձեռքբերովի սեռի ներկայացուցիչ և (գ) մտադիր են որպես այդ սեռի ներկայացուցիչ ապրել մինչև իրենց կյանքի վերջը, դիմել սեռերի ճանաչման խորհուրդներին, որոնց կազմի մեջ մտնում են առնվազն մեկ իրավաբան և մեկ գրացված բժիշկ/հոգեբան, և ստանալ վկայական, որը նրանց հնարավորություն կտա ստանալու իրենց նոր սեռին համապատասխան նոր ծննդյան վկայական և ամուսնանալու ձեռքբերված սեռին հակառակ սեռի ներկայացուցչի հետ: Այս օրենսդրական կարգի համաձայն՝ տրանսսեքսուալ անձինք պարտավոր չեն ենթարկվելու վիրահատության, որպեսզի ստանան վկայական: Ակտը չի գործել հետադարձ ուժով, հետևաբար, *«Գրանտն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Grant v United Kingdom)* գործի վերաբերյալ 2006 թ. մայիսի 23-ի վճռով պալատը որոշել է, որ Քրիսթին Գուդվինի գործով դատարանի վճռից հետո և նախքան 2005 թ. օրենքի ուժի մեջ մտնելը տղամարդուց կին դարձած տրանսսեքսուալ անձնավորությանը կենսաթոշակով ապահովելու մերժումը, նախքան նա կհասներ տղամարդկանց համար սահմանված կենսաթոշակային տարիքին, առաջացրել է 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտում: Այնուամենայնիվ, պալատը նկատել է, որ ընդունելով այս օրենքը, կառավարությունը գործել է «խրախուսելի արագությամբ»:

6 Թեև դատարանը զգուշավորություն է դրսևորել, որպեսզի չձևավորի այնպիսի իրավունք, համաձայն որի՝ անձն իրավունք ունի ծանոթանալու իր մասին պետության պահած տվյալներին, սակայն ճանաչել է, որ որոշ հանգամանքներում անձնական և ընտանեկան կյանքի հարգման համատեքստում անձինք կարող են օրինականորեն պահանջել, որ պետությունն օժանդակի իրենց այդպիսի տվյալների ձեռքբերման գործում: Սա վերաբերում է այն դեպքին, երբ պետությունն իր վրա է վերցրել երեխային մեծացնելու և դաստիարակելու պատասխանատվությունը: *«Գասկինն ընդդեմ ՄԹ-ի» (Gaskin v UK* (1989) 12 EHRR 36, A.160) գործի դեպքում դիմողը եղել է տղամարդ, որը կամավորապես հանձնվել է տեղական կառավարման մարմինների խնամակալությանը: Չափահասության տարիքի հասնելուց

հետո նա փորձել է ձեռք բերել տեղական կառավարման մարմնի կողմից պահվող իր մանկության վերաբերյալ տվյալներն ամփոփող գործին ծանոթանալու հնարավորություն: Գործը ներառել է նրա խնամակալ ծնողների, սոցիալական աշխատողների և բժիշկների կողմից գրված նյութեր: Դիմողը ցանկացել է ծանոթանալ իր գործին, որպեսզի կարողանա ավելի լավ պատկերացում կազմել իր անցյալի մասին և բողոք ներկայացնել տեղական կառավարման մարմնի դեմ՝ մանուկ տարիքում իր նկատմամբ ոչ պատշաճ խնամք տանելու համար: Համաձայն գործող ազգային վարչական քաղաքականության՝ տեղական կառավարման մարմինը թույլ է տվել Գասկինին ծանոթանալ միայն այն նյութերին, որոնց հեղինակները համաձայնել են, որ նա կարդա այդ նյութերը (352 փաստաթղթերից ընդամենը 65-ը): Նա պնդել է, որ բոլոր նյութերին ծանոթանալու մերժումը 8(1) հոդվածում ամրագրված իր անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի խախտում է: Հանձնաժողովը, գործող նախագահի վճռորոշ ձայնով, որոշել է, որ տեղի է ունեցել այդ իրավունքի խախտում: Դատարանը, տասնմեկ կողմ և վեց դեմ ձայների հարաբերակցությամբ, վճռել է, որ.

Դատարանի կարծիքով՝ դիմողի նման իրավիճակում հայտնված անձանց կենսական շահը, որը այնպիսի անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերելն է, որոնց հիման վրա նրանք կարող են գաղափար և պատկերացում կազմել իրենց մանկության տարիների և վաղ տարիքի զարգացման վերաբերյալ, պաշտպանվում է կոնվենցիայով: Մյուս կողմից՝ չպետք է մոռանալ, որ պետական գրանցումների այսպիսի գաղտնիությունը կարևոր է օբյեկտիվ և հուսալի տեղեկություններ ստանալու համար, և այդպիսի գաղտնիությունը կարող է նաև անհրաժեշտ լինել երրորդ անձանց պաշտպանելու նպատակով: Առաջնորդվելով այս վերջին նկատառումով և հաշվի առնելով պետությունների ունեցած հայեցողության սահմանները՝ գրառումների տրամադրման բրիտանական համակարգը, ըստ որի՝ դրանք կարող են տրամադրվել դրանք գրած անձանց համաձայնության առկայության դեպքում, կարող է սկզբունքորեն համահունչ համարվել 8-րդ հոդվածով ամրագրված պարտավորություններին: Այնուամենայնիվ, դատարանը կարծում է, որ այս համակարգով իր անձնական և ընտանեկան կյանքի վերաբերյալ գրառումներին ծանոթանալու հնարավորություն փնտրող անձի շահերը պետք է ապահովվեն այն դեպքում, երբ գրառումները հեղինակ չունեն, կամ երբ դրանք կատարած անձն անհարկի է մերժում համաձայնություն տալ: Այսպիսի համակարգը կհամապատասխանի համաչափության սկզբունքին միայն այն դեպքում, երբ գոյություն ունի անկախ իրավասու մարմին, որը որոշում է կայացնում՝ այն պե՞տք է թույլ տա դրանց ծանոթանալու իրավունք այն դեպքում, երբ դրանք գրած անձը հրաժարվում է պատասխանելուց կամ համաձայնություն տալուց: Ներկա գործի դեպքում դիմողն այդպիսի ընթացակարգից օգտվելու հնարավորություն չի ունեցել:

Ուստի ընդունված ընթացակարգերը չեն ապահովել պրն Գասկինի անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքը, ինչպես դա պահանջվում է կոնվենցիայի 8-րդ հոդվածով: Հետևաբար, տեղի է ունեցել այդ դրույթի խախտում (պարբ. 49):

Մշտական գործող դատարանը համանման եզրակացության է հանգել ավելի ուշ լսված *«Մ. Գ.-ն ընդդեմ ՄԹ-ի» (M.G. v UK)* գործի վերաբերյալ 2002 թ. սեպտեմբերի 24-ի վճռում: 1960-ական թթ., երեխա հասակում դիմողը կամավոր հանձնվել է տեղական մարմինների խնամակալությանը: 1995 թ. նա պահանջել է, որ իրեն թույլ տան ծանոթանալ իր մասին սոցիալական ծառայության արած գրառումներին: Պետական մարմինը նրան տրամադրել է տեղեկությունների քաղվածքներ, սակայն թույլ չի տվել ծանոթանալ ողջ նյութին: Իրավասու մարմինը տեղեկացրել է նրան, որ «Անձնական գործերին ծանոթանալու մասին» 1987 թ. օրենքը չի վերաբերել այնպիսի գրառումներին, որոնք, ինչպես և նրան վերաբերող գրառումները, կազմվել են 1989 թ. առաջ: Դատարանը միաձայն վճռել է.

30. …Որն ավելի կարևոր է, և ինչպես պրն Գասկինի դեպքում, դրանց ծանոթանալու մերժում ստանալու դեպքում նա որևէ անկախ մարմնի բողոք ներկայացնելու [հնարավորություն] չի ունեցել ...

31. Այս հանգամանքներում դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել դիմողի անձնական և ընտանեկան կյանքի պաշտպանության դրական պարտավորության խախտում, քանի որ 1995 թ. և դրանից հետո նրա ներկայացրած դիմումները, որոնցով նա պահանջել է իրեն տրամադրել սոցիալական ծառայությունների կողմից իր մասին վարած գրառումները, մերժվել են:

Ուշադրության է արժանի դատարանի այն նկատառումը, ըստ որի՝ 1998 թ. «Տվյալների պաշտպանության մասին» օրենքը դիմողին 2000 թ. մարտից հետո օրենքով օժտել է իր խնամակալությանը վերաբերող նյութերի/անձնական գործերի ձեռագիր և էլեկտրոնային տարբերակներին ծանոթանալու

իրավունքով՝ անկախ այդ նյութերի ստեղծման տարեթվից: Բացի այդ, օրենքն օժտել է նրան տվյալների պաշտպանության հանձնակատարի և ազգային դատարաններում դրանք կիրառելու իրավունքներով:

Գասկինի գործում, զարգացնելով այս տրամաբանությունը, դատարանը նաև որոշել է, որ այն դեպքում, երբ պետությունը զբաղվում է վտանգավոր գործունեությամբ, որի հետևանքով անձինք ենթարկվում են առանձնահատուկ առողջական ռիսկերի, ապա պետական մարմինների խնդիրն է օժանդակել ազդեցության ենթարկված անձանց ձեռք բերել պետության գործողությունների մասին համապատասխան տեղեկություններ: *«Մակգինլին և Էգանն ընդդեմ ՄԹ-ի» (McGinley and Egan v UK* (1998) 27 EHRR 1, 1998-III) գործում դիմողները եղել են նախկին զինծառայողներ, որոնք 1950-ական թթ. վերջին պաշտոններ են զբաղեցրել Խաղաղ օվկիանոսում տեղակայված Բրիտանիայի միջուկային զենքի մթնոլորտային փորձարկման տեղամասերում: Շատ տարիներ անց, երբ նրանք արդեն պաշտոնաթող էին, պահանջել են, որ իրենց նշանակվեն պատերազմի հաշմանդամի թոշակներ այն հիվանդությունների համար, որոնք, ըստ նրանց, իրենք ձեռք էին բերել միջուկային փորձարկման տեղամասերում ներկա լինելու հետևանքով: Պաշտպանության նախարարությունն առարկել է նրանց պահանջները՝ ասելով, որ դիմողների բժշկական գրանցումները որևէ կապ չեն բացահայտում փորձարկումների և նրանց ներկայիս հիվանդությունների միջև: Դիմողները բողոքել են հանձնաժողովին, որ, ի թիվս այլոց և ի խախտումն 8-րդ հոդվածի, իրենց թույլ չեն տվել ծանոթանալ փորձարկման տեղամասերում ճառագայթման մակարդակի վերաբերյալ պաշտոնական գրանցումներին: Քսաներեք կողմ և երեք դեմ ձայների հարաբերակցությամբ հանձնաժողովը որոշել է, որ տեղի է ունեցել այդ հոդվածի խախտում: Դատարանը հայտարարել է, որ.

> Այն դեպքերում, երբ կառավարությունը զբաղվում է վտանգավոր գործունեությամբ, որպիսին է սույն գործի քննության առարկան, որը կարող է ունենալ թաքնված բացասական հետևանքներ այն անձանց առողջության վրա, որոնք մասնակցում են այդ գործունեությանը, 8-րդ հոդվածով նախատեսված մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքը պահանջում է, որ ստեղծվի արդյունավետ և մատչելի ընթացակարգ, որը հնարավորություն կտա այդպիսի անձանց փնտրելու ողջ համապատասխան և տեղին տեղեկությունները (պարբ. 101):

Դատարանի մեծամասնությունը՝ հինգ կողմ և չորս դեմ ձայների հարաբերակցությամբ, եզրակացրել է, որ փաստաթղթերի օրինական բացահայտման այն ընթացակարգը, որից դիմողները կարող էին օգտվել Թոշակների բողոքարկման տրիբունալի առջև, բավարարել է կոնվենցիայի վերը նշված պահանջը, հետևաբար, 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Այնուամենայնիվ, *«Ռոշն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Roche v United Kingdom)* գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2005 թ. հոկտեմբերի 19-ին, մեծ պալատը միաձայն վճռել է, որ.

> 165. *Մակգինլիի և Էգանի (McGinley and Egan)* գործի վերաբերյալ դատարանի վճիռը չի նշանակում, որ դատական գործընթացի հիման վրա տեղեկությունների բացահայտման ընթացակարգն ըստ էության անձին (ինչպես օրինակ՝ դիմողին) տեղեկություններ տրամադրելու դրական պարտավորության կատարում է, երբ այդ անձը հետևողականորեն փորձում է առանց դատարանին դիմելու հասնել այն բանին, որ այդ տեղեկությունները բացահայտվեն իրեն:

Մեծ պալատը եզրակացրել է, որ կառավարության կողմից դիմողին 1960-ական թթ. սկզբին Պորտոն Դաունում տեղի ունեցած թունավոր գազի փորձարկումների մասին տեղեկությունների ուշացած և սահմանափակ տրամադրումը չի բավարարել 8-րդ հոդվածի պահանջները: Այսպիսով, վերը նշված գործերը ցույց են տալիս, որ այն դեպքերում, երբ պետական մարմինները սերտ հարաբերությունների մեջ են խոցելի անձանց, ինչպես, օրինակ՝ խնամքի տակ գտնվող երեխաների կամ ռազմական կարգապահության ենթակա անձնակազմի հետ, 8-րդ հոդվածով հարգանքի իրավունքը կարող է ընդգրկել նաև տեղեկատվական իրավունքներ:

Դատելով *«Օդիեվրն ընդդեմ Ֆրանսիայի» (Odievre v France)* գործի վերաբերյալ 2003 թ. փետրվարի 13-ին վճռից, մեծ պալատը եղել է բավական տարակարծիք, թե որքանով են իշխանությունները պարտավոր անձին տեղեկություններ տրամադրել իր կենսաբանական ծնողի մասին, որը ժամանակին լքել է նրան: Դիմողի կենսաբանական մայրը պաշտոնապես հրաժարվել է

նրանից՝ 1965 թ. թողնելով նրան առողջապահության և սոցիալական ծառայությունների դեպարտամենտում և պահանջելով գաղտնի պահել նրա ծնունդը: Այն ընթացակարգը, որի հիման վրա ծնողները կարող են հրաժարվել իրենց երեխայից, Ֆրանսիայում երկար պատմություն ունի: Այն սկզբնավորվել է 1638 թ. և նախատեսված է եղել որպես այլընտրանքային տարբերակ, որը կասեցնում է անօրինական վիժումները կամ մանկասպանությունը: 1969 թ. դիմողին որդեգրել են: 1990 թ. նա կարողացել է իշխանություններից ձեռք բերել իր կենսաբանական ծնողների վերաբերյալ ինքնությունը չբացահայտող տվյալներ, ասենք՝ նրանց ազգությանը, առողջական վիճակին և զբաղվածությանը վերաբերող տեղեկություններ: Այնուամենայնիվ, նա չի կարողացել իշխանություններից տեղեկություններ ձեռք բերել իր երկու քույրերի/եղբայրների վերաբերյալ, քանի որ նրա ծնվելու և նրանից հրաժարվելու մասին տեղեկությունները գաղտնի են պահվել: Դատարանի առջև նա բողոքել է, որ իշխանությունների տնօրինության տակ եղած իր ծննդյան և ընտանիքի մասին տեղեկությունների չբացահայտման հետևանքով տեղի է ունեցել իր անձնական կյանքի հարգման իրավունքի խախտում: Կառավարությունը պատասխանել է, որ փորձել է պաշտպանել դիմողի ծննդյան և մոր ինքնության հանգամանքների գաղտնիությունը՝ ելնելով նրա մոր հստակ պահանջից: Իշխանությունները որոշել են, որ այսպիսի համակարգը օրինական նպատակ է հետապնդում, քանի որ օժանդակում է իրենց երեխաներին մեծացնելու հնարավորությունից կամ կամքից զուրկ մայրերին և թեթևացնում այդ մայրերի ցնցումը: Ասվել է նաև, որ երեխաներից պաշտոնապես հրաժարվելու ընթացակարգը ներկայումս տարեկան կիրառվում է 600 կնոջ կողմից: Դատարանը վճռել է, որ.

28. …Ծնունդը և մասնավորապես այն հանգամանքները, որոնցում երեխան ծնվում է, կազմում են երեխայի և այնուհետև չափահաս անձի՝ կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական կյանքի մասը: Հետևաբար այդ դրույթը կիրառելի է սույն գործի նկատմամբ:

Սակայն դատավորների կարծիքները բաժանվել են այն հարցի շուրջ, թե արդյոք Ֆրանսիայի իշխանությունները կատարե՞լ են այդ հոդվածով ստանձնած պարտավորությունները: Տասը հոգուց բաղկացած մեծամասնությունը եզրակացրել է, որ.

47. Դատարանը կրկնում է, որ միջանձնային հարաբերությունների ոլորտում 8-րդ հոդվածի կատարումն ապահովելու համար միջոցների ընտրությունը պայմանագրի կողմ պետությունների հայեցողության սահմանների մեջ մտնող խնդիր է: Այս կապակցությամբ գոյություն ունեն «անձնական կյանքի նկատմամբ հարգանքի» ապահովման տարբեր եղանակներ, և պետության պարտավորության բնույթը պետք է կախված լինի խնդրո առարկա անձնական կյանքի առանձնահատուկ կողմից...

48. Դատարանը նկատում է, որ պայմանագրի կողմ պետությունների մեծ մասը չունի այնպիսի օրենսդրություն, որը համադրելի է Ֆրանսիայում կիրառվող օրենսդրության հետ առնվազն այնքանով, որքանով դա վերաբերում է երեխայի՝ մոր հետ ծնողական կապեր հաստատելու անհաղթահարելի անկարողությանը, եթե նրա մայրը շարունակում է իր ինքնությունը գաղտնի պահել այդ երեխայից, որին որ նա լույս աշխարհ է բերել: Այնուամենայնիվ, դատարանը նկատում է, որ որոշ երկրներ կենսաբանական ծնողների վրա չեն դնում նրանց երեխաների ծնվելուց հետո նրանց ինքնությունը հայտարարելու պարտավորություն, և այլ երկրներում նույնպես եղել են երեխաներից հրաժարվելու դեպքեր, որոնք նորացրել են առանց ինքնությունը բացահայտելու ծննդաբերելու իրավունքի շուրջ ծավալվող բանավեճը: Հաշվի առնելով ոչ միայն իրավական համակարգերին և ավանդույթներին բնորոշ գործելակերպի բազմազանությունը, այլև այն փաստը որ երեխաներից հրաժարվելու համար ներկայացվում են տարբեր պատճառներ, դատարանը եզրակացնում է, որ պետություններին պետք է տրվի հայեցողության սահմաններ՝ որոշելու, թե կոնվենցիայով նախատեսված իրավունքներն իրենց իրավազորության ներքո յուրաքանչյուր անձի երաշխավորելու համար ո՞ր միջոցներն են առավել նպատակահարմար:

48. Դատարանը նկատում է, որ սույն գործում դիմողին հնարավորություն է տրվել ծանոթանալու այնպիսի տեղեկությունների, որոնք զերծ են եղել նրա մոր և կենսաբանական ընտանիքի մասին ինքնություն բացահայտող տեղեկություններից և հնարավորություն են տվել նրան պարզելու իր որոշ արմատները՝ միաժամանակ պահպանելով կողմնակի անձանց շահերը:

49. Բացի այդ, պահպանելով այն սկզբունքը, համաձայն որի՝ մայրերը կարող են ծննդաբերել առանց իրենց ինքնության բացահայտման, վերջերս Ֆրանսիայում ստեղծված համակարգը բարելավում է նրանց կողմից գաղտնիության պայմանը չեղյալ հայտարարելու հեռանկարները, թեպետ հպանցիկ պետք է նշել, որ նույնիսկ նախքան 2002 թ. հունվարի 22-ի

օրենքի ընդունումը նրանք միշտ կարողացել են դա անել: Ստեղծելով Անձի ծագման մասին տեղեկությունների տրամադրման ազգային խորհուրդ, նոր օրենսդրությունը օժանդակելու է անձի կենսաբանական ծագմանը վերաբերող տեղեկությունների որոնմանը: Խորհուրդն անկախ մարմին է, որը բաղկացած է ազգային իրավաբանական ծառայության ներկայացուցիչներից, օրենքի այս բնագավառում շահեր ունեցող ընկերակցություններից և խոր գիտելիքներ ունեցող մասնագետներից: Օրենսդրությունն արդեն ուժի մեջ է, և դիմողը կարող է օգտագործել այն, որպեսզի պահանջ ներկայացնի իր մոր ինքնությունը բացահայտելու վերաբերյալ, և այն կբավարարվի, եթե լինի վերջինիս համաձայնությունն առ այն, որ պաշտպանության իր կարիքը և դիմողի օրինական պահանջը բավական համընկնում են: Իրոք, օրենսդիր մարմնի կողմից նոր ստեղծված խորհրդի միջոցով դիմողի՝ տեղեկություններ ստանալու հնարավորությունը չի կարելի բացառել, չնայած դա հավանական չէ:

Այսպիսով, Ֆրանսիայի օրենսդրությունը փորձում է հավասարակշռություն հաստատել և բավարար համաչափություն ապահովել մրցակցող շահերի միջև: Այս կապակցությամբ դատարանը նկատում է, որ այս շահերի համապատասխանեցումն ապահովելու համար ամենանպատակահարմար միջոցառումների ընտրությունը պետք է թողնվի պետություններին: Ընդհանուր առմամբ, դատարանը համարում է, որ Ֆրանսիան չի խախտել այն հայեցողության սահմանները, որոնցով նա պետք է օժտված լինի՝ հաշվի առնելով անձի ծագման մասին տեղեկությունների տրամադրման հարցի խրթին և զգայուն բնույթը: Սա մի հարց է, որը վերաբերում է անձի՝ սեփական պատմությունն իմանալու իրավունքին, կենսաբանական ծնողների նախապատվություններին, գոյություն ունեցող ընտանեկան կապերին և որդեգիր ծնողներին:

Հետևաբար, կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Մինչդեռ յոթ դատավոր՝ զգալի փոքրամասնությունը, համոզված է եղել, որ.

12. …այդ առաջարկությունը, համաձայն որի՝ ազգային օրենքների ընդհանուր հայտարարի բացակայության պատճառով պետություններին պետք է տրվեն հայեցողության սահմաններ, պարզապես չի համապատասխանում համեմատական իրավունքի այն դրույթներին, որոնց վրա էլ հենց հիմնվում է դատարանը: Այսպիսով, ինչպես հենց դատարանն էլ նկատել է, «Եվրոպայի երկրների ազգային օրենսդրությունները շատ հազվադեպ են մայրերին տալիս առանց ինքնության բացահայտման ծննդաբերելու իրավունք»...

13. Փաստորեն, չկա որևէ այլ օրենսդրական համակարգ, որն այսքան հակված է մոր ինքնության գաղտնիության պահպանմանը, գաղտնի ծննդաբերությանը և, այնուհետև, երեխայից գաղտնի հրաժարմանը, որքան այն համակարգը, որը պաշտոնապես գոյություն ունի և ինստիտուցիոնալացված է Ֆրանսիայում...

21. Հետևաբար, ի տարբերություն մեծամասնության, մենք կարծում ենք, որ տվյալ դեպքում Ֆրանսիայի օրենսդրությունը ներգրավված շահերի միջև արդար հավասարակշռություն չի ապահովել (տե՛ս պարբ. 49-րդ վերջին մասը), և տեղի է ունեցել կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

Մի՞թե կարծում եք, որ դատարանն անցանկալի տարբերակված մոտեցում է ցուցաբերել Ֆրանսիայի համակարգի նկատմամբ, որը կիրառել է երեխաներից պաշտոնապես հրաժարվելու գործընթացը, որպեսզի ապահովի ծնողների համար անցանկալի երեխաների բարօրությունը, և այդ նպատակով առաջնահերթությունը տվել է մոր ինքնության պահպանմանը, ոչ թե երեխայի (այժմ հասուն մարդու)՝ իր կենսաբանական մորը/ընտանիքը բացահայտելու ցանկություններին:

7 *«Բոտտան ընդդեմ Իտալիայի» (Botta v Italy* (1998) 26 EHRR 241, 1998-I 412) գործով դիմողը եղել է հաշմանդամ անձնավորություն, որը պնդել է, որ Իտալիայի իշխանությունները բավարար քայլեր չեն ձեռնարկել, որպեսզի կիրառեն ազգային օրենսդրության այն դրույթները, համաձայն որոնց՝ տնտեսավարող սուբյեկտները պետք է ապահովեն հաշմանդամների համար նախատեսված հատուկ օժանդակ հարմարությունների առկայությունը: 1991 թ. պրն Բոտտան բողոք է ներկայացրել ծովափնյա հանգստավայրի քաղաքապետին՝ հայտնելով նրան, որ մասնավոր լողափերի կապալառուներից ոչ ոք չի տեղադրել հաշմանդամ անձանց համար նախատեսված հարմարություններ, ինչպես, օրինակ՝ թեքահարթակներ և համապատասխան ձևով սարքավորված զուգարաններ, չնայած դա եղել է Իտալիայի օրենքի պահանջը: Նրա բողոքները մերժվել են: 1997 թ. նշված մասնավոր լողափերի մի մասում կառուցվել են թեքահարթակներ: Քաղաքային խորհուրդը հաստատել է բոլոր համապատասխան հարմարությունները մինչև 1999 թ. ամառ կառուցելու ծրագիրը: Դիմողը բողոքել է հանձնաժողովին, որ Իտալիայի պետական մարմինները չեն հարգել իր «անձնական կյանքը», քանի որ նրանք չեն կիրառել այն դրույթը, համաձայն որի՝ նրանք մասնավոր լողափերում

հաշմանդամ անձանց համար նախատեսված հատուկ օժանդակ հարմարություններ ապահովելու պարտավորություն են ունեցել: Քսանչորս կողմ և վեց դեմ ձայների հարաբերակցությամբ՝ հանձնաժողովը որոշել է, որ 8-րդ հոդվածի շրջանակներում այդ իրավունքների խախտում տեղի չի ունեցել: Դատարանը նաև միաձայն վճռել է, որ նրա բողոքը եղել է այդ հոդվածի շրջանակներից դուրս:

... իր սովորական բնակավայրից հեռու գտնվող վայրում արձակուրդի ժամանակ լողափից և ծովից օգտվելու իրավունքը, որ պահանջում է պրն Բոստան, վերաբերում է միջանձնային հարաբերությունների այնպիսի լայն և անորոշ շրջանակի, որ հնարավոր չէ ընկալելի ուղիղ կապ տեսնել այն միջոցների միջև, որոնք պետությունը պետք է ձեռնարկի մասնավոր լողափերի և դիմողի անձնական կյանքում առկա թերությունները շտկելու ուղղությամբ (պարբ. 35):

Հետաքրքիր է, որ դատարանում հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ պրն Բոստտայի հայցի սոցիալական բնույթի պատճառով շատ ավելի նպատակահարմար է, որ այդ հայցը լուծվի Եվրոպայի սոցիալական խարտիայի «ճկուն պաշտպանության մեխանիզմի» շրջանակներում (տես DJ Harris, The European Social Charter, 2nd edn (2001) Transnational Publishers Inc: Ardsley NY): Համաձայն դատարանի վճռի՝ դատարանին ներկայացված հաշմանդամների դիմումները կարող են բավարարվել այն դեպքում, երբ վերջիններս կարող են ցույց տալ, որ պետության կողմից պահանջվող գործողությունն ուղղակի նշանակություն ունի իրենց «ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության» համար: Սա կարող է ներառել կարևոր բժշկական կամ սոցիալական օժանդակության տրամադրումը:

8 Դատարանը նաև կարծիք է հայտնել, որ կոնվենցիայով անձի ընտանեկան կյանքը հարգելու պարտավորությունները չեն ներառում պետությունների կողմից անձանց սոցիալական օժանդակության վճարներ կատարելու պարտավորություն: *«Պետրովիչն ընդդեմ Ավստրիայի» (Petrovic v Austria*, 1998-II 579) գործով դիմողը եղել է փոքրիկ երեխայի հայր, որը դիմել է Ավստրիայի կառավարությանը՝ իր երեխային խնամելու համար ծնողական արձակուրդի նպաստ ստանալու համար, մինչ նրա կինը շարունակել է աշխատել: Ավստրիայի կառավարությունը և ավելի ուշ ազգային դատարանները որոշել են, որ այս կարգի նպաստ կարող է նշանակվել միայն կանանց: Պետրովիչն այնուհետև բողոքել է հանձնաժողովին, որ տեղի է ունեցել 14-րդ հոդվածի (ոչ խտրական վերաբերմունքի իրավունք) խախտում՝ 8-րդ հոդվածի (ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) համակցությամբ: Քսանհինգ կողմ և հինգ դեմ ձայների հարաբերակցությամբ՝ հանձնաժողովը խախտում չի հայտնաբերել: Դատարանի առջև կառավարությունն առարկել է, որ այդպիսի նպաստը որևէ ընդհանուր բան չունի 8-րդ հոդվածի հետ, քանի որ այդ դրույթը պետություններին չի պարտավորեցնում ֆինանսական օժանդակություն տրամադրել ընտանիքներին: Դատարանը վճռել է, որ.

Այս կապակցությամբ դատարանը, ինչպես և հանձնաժողովը, համարում է, որ պրն Պետրովիչին ծնողական արձակուրդի նպաստ չտրամադրելը չի կարող համարվել ընտանեկան կյանքի հարգման իրավունքի խախտում, քանի որ 8-րդ հոդվածը խնդրո առարկա ֆինանսական օժանդակությունը տրամադրելու առումով որևէ դրական պարտավորություն չի դնում պետությունների վրա (պարբ. 26):

Այնուամենայնիվ, եթե պետությունները որոշել են այսպիսի նպաստներ վճարել մայրերին, ապա այդ խնդիրն ինքնին հայտնվում է 8-րդ հոդվածի շրջանակների մեջ: Դատարանի մեծամասնությունը (յոթ կողմ և երկու դեմ ձայների հարաբերակցությամբ) վճռել է, որ դատելով այդ ժամանակվա (այսինքն՝ 1980-ական թթ. վերջի) չափորոշիչներով, երբ Պետրովիչը փորձել է նպաստ ստանալ, Ավստրիայի կողմից հայրերին այդպիսի վճարումներ կատարելու մերժումը չի առաջացրել պետությունների հայեցողության սահմանների խախտում: Այնուհետև՝ 1990 թ., Ավստրիայի խորհրդարանը բարեփոխել է իր օրենսդրությունը՝ հնարավորություն տալով հայրերին պահանջել, որ նրանց ևս նշանակվի ծնողական արձակուրդի նպաստ: Եվս մեկ անգամ մենք համոզվում ենք, որ 8-րդ հոդվածի շրջանակներում պետությունների վրա ֆինանսական պարտավորություններ դնելու առումով դատարանը որդեգրել է շատ զգուշավոր մոտեցում:

9 *«Կոմս Սպենսերը և կոմսուհի Սպենսերն ընդդեմ ՄԹ-ի» (Earl Spencer and Countess Spencer v UK)* (հունվար, 1998), դիմողների թիվ 28851/95 և 28852/95 [1998] EHRLR 348) գործում արքայադուստր Դիանայի եղբայրը և նրա նախկին կինը պնդել են, որ ՄԹ-ն խախտել է դիմողների անձնական կյանքը հարգելու դրական պարտավորությունը, քանի որ չի կարողացել ազգային օրենքով ապահովել իրենց անձնական անձեռնմխելիության ընդհանուր իրավունքը: Մի շարք բուլվարային թերթեր նյութեր են տպագրել, որոնցում պատմել են, որ անկանոն սննդակարգից և ալկոհոլիզմից տառապող կոմսուհին բուժման նպատակով հիվանդանոց է տեղափոխվել: Առանց կոմսուհու համաձայնությունը ստանալու՝ կլինիկայի տարածքում նրան լուսանկարել են, որից հետո այդ լուսանկարները տպագրվել են մամուլում: Իրենց անձնական կյանքին վերաբերող մանրամասները բացահայտելու համար դիմողներն իրենց երկու ծանոթներին մեղադրել են վստահության խախտման մեջ՝ հասնելով դատական կարգով իրենց հայցի բավարարման: Բրիտանիայի կառավարությունը պնդել է, որ (1) թերթերի կողմից վստահության խախտման առումով դիմողները չեն օգտագործել գոյություն ունեցող իրավունքի պաշտպանության միջոցները և, հետևաբար, մինչև վերջ չեն սպառել ազգային օրենքով իրենց տրամադրության տակ եղած իրավունքի պաշտպանության միջոցները, ինչը և պահանջվում է 26-րդ հոդվածով, և (2) վստահության ու անձնական անձեռնմխելիության խախտումների առումով ազգային օրենքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցները բավարար են եղել 8-րդ հոդվածով կառավարության պարտավորությունների կատարումն ապահովելու համար: Հանձնաժողովը լիագումար նիստում այս դիմումները հայտարարել է անընդունելի: Մեկնաբանելով այս որոշումը՝ բրիտանական մամուլը նշել է, որ այս որոշմամբ Եվրոպական հանձնաժողովն անուղղակիորեն ճանաչել է անհատների անձնական անձեռնմխելիության այն պաշտպանությունը, որն ապահովվում է ՄԹ-ի մամլո բողոքների հանձնաժողովի կողմից կիրառվող ինքնակարգավորվող համակարգի միջոցով:

10 *«Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի» (Von Hannover v Germany)* գործի վերաբերյալ 2004 թ. հունիսի 24-ի վճռով մշտական գործող դատարանի պալատը միաձայն որոշել է, որ Գերմանիայի դատարանները չեն կարողացել հավուր պատշաճի մամուլի ներխուժումներից պաշտպանել Մոնակոյի արքայազն Ռենե III-ի ավագ դստեր՝ արքայադուստր Կարոլինի անձնական կյանքը: Մոնակոյի պետության անունից դիմողը որևէ գործառույթ չի կատարել, թեպետ եղել է բազմաթիվ մշակութային հիմնադրամների նախագահ և թագավորական ընտանիքը ներկայացրել մի քանի սոցիալական միջոցառումների ժամանակ: Նա հիմնականում բնակվել է Փարիզում: 1990-ական թթ. սկզբից փորձել է կանխել իր և իր ընտանիքի առօրյա կյանքին վերաբերող «պապարացցի» լուսանկարիչների նկարահանած լուսանկարների տպագրությունը եվրոպական մամուլում՝ հաճախ դիմելով նաև դատարանների օգնությանը: 1993 թ. նա պահանջել է Գերմանիայի դատարաններից արգելել «Բուրդա» լրատվական ընկերությանը շարունակել վերատպել «Բունտե» ամսագրում տպագրված լուսանկարների շարքը, որոնցում նա պատկերված է եղել մի շարք անձանց հետ, այդ թվում՝ իր աղջկա հետ կանոեով թիավարելիս, մի տղամարդու հետ ռեստորանում ճաշելիս և իր թիկնապահի հետ գնումներ կատարելիս: Սահմանադրական դատարանը վճռել է, որ քանի որ նա par excellence [գերազանցապես] հանդիսացել է ժամանակակից հասարակական գործիչ, նա պետք է հանդուրժեր հասարակական վայրերում հանված իր լուսանկարների տպագրությունը, քանի որ հասարակությունը տեղյակ լինելու օրինական շահ ունի, թե ինչպես է նա իրեն դրսևորում հասարակության մեջ: Այնուամենայնիվ, նրա և նրա երեխաների լուսանկարների տպագրությունն առաջացրել է նրա ինքնության պաշտպանության իրավունքի խախտում: Վարույթի երկրորդ փուլում, որը սկսվել է 1997 թ., նա, առանց հաջողության հասնելու, պահանջել է Գերմանիայի դատարաններից արգելել, որ «Բուրդան» վերատպի իր լուսանկարները, որոնցում նա պատկերված է եղել դահուկներով սահելիս, իր ամուսնու՝ արքայազն Էռնստ Օգոստոս ֆոն Հաննովերի հետ՝ ձիերի ցուցահանդես այցելելիս և իր տնից դուրս գալիս:

Դատարանի առջև դիմողը վիճարկել է, որ «ժամանցային մամուլում» իր կենցաղը պատկերող «վուայերիստական» լուսանկարներ չհրապարակելու առումով Գերմանիայի օրենքը, ի խախտումն 8-րդ հոդվածի, իրեն ապահովել է իր անձնական կյանքի նվազագույն պաշտպանությամբ:

Կառավարությունը պատասխանել է, որ հասարակությունն իմանալու օրինական շահ ունի, թե ինչպես են ակնառու ժամանակակից հասարակական գործիչները դրսևորում իրենց հասարակության մեջ: Նաև՝ ազգային դատարանները արգելել են հրապարակել դիմողի այն լուսանկարները, որոնք հանվել են «ոչ հասարակական վայրերում»: Գերմանական ամսագրերի խմբագիրների ընկերակցությունն իր գրավոր բացատրության մեջ հայտնել է, որ հասարակությունը հասարակական, այդ թվում նաև քաղաքական գործիչների մասին տեղեկություններ ունենալու օրինական շահ ունի, և քաղաքական մեկնաբանության ու ժամանցի սահմանը հետզհետե ավելի ու ավելի աղոտ է դառնում: Պալատը վճռել է, որ.

50. Դատարանը կրկնում է, որ անձնական կյանքի հայեցակարգը տարածվում է անձի ինքնությանը վերաբերող կողմերի վրա, ինչպիսիք են անձի անունը (տե՛ս *«Բուրգարցն ընդդեմ Շվեյցարիայի» (Burghartz v Switzerland)* 1994 թ. փետրվարի 22-ի վճիռ, A. 280-B) կամ անձի նկարը (տե՛ս *«Շուսսելն ընդդեմ Ավստրիայի» (Schussel v Austria (dec.)* որոշումը թիվ 42409/98) 2002 թ. փետրվարի 21):

...

53. Տվյալ դեպքում որևէ կասկած չկա, որ տարբեր գերմանական ամսագրերում դիմողի անձնական կյանքը պատկերող լուսանկարների տպագրությունը, որոնցում դիմողը պատկերված է եղել կա՛մ մենակ, կա՛մ այլ անձանց ընկերակցությամբ, ընկնում է նրա անձնական կյանքի շրջանակների մեջ:

Ընդունելով, որ պետություններն անձնական և ընտանեկան կյանքը գործնականում հարգելու դրական պարտավորություններ ունեն, պալատը նկատել է, որ.

59. Թեպետ խոսքի ազատությունը տարածվում է նաև լուսանկարների տպագրության վրա, սա այն ոլորտն է, որտեղ հատուկ կարևորություն է ստանում այլ անձանց իրավունքների և համբավի պաշտպանությունը: Սույն գործը վերաբերում է ոչ թե «գաղափարների», այլ անձի մասին շատ անձնական կամ նույնիսկ ինտիմ «տեղեկություններ» պարունակող պատկերների տարածմանը: Բացի այդ, բուլվարային մամուլում տպագրվող լուսանկարները հաճախ նկարվում են անձին շարունակաբար անհանգստության մեջ պահելու մթնոլորտում, որը տվյալ անձի մեջ արթնացնում է սուր զգացողություն, որ տեղի է ունենում միջամտություն իր անձնական կյանքին և նույնիսկ՝ հետապնդում:

60. Այն գործերում, որոնցում դատարանից պահանջվել է անձնական կյանքի պաշտպանությունը հավասարակշռել խոսքի ազատության հետ, դատարանը միշտ շեշտել է այն ներդրումը, որ մամուլում տպագրված լուսանկարները կամ հոդվածներն ունենում են ընդհանուր հետաքրքրության առարկա բանավեճի մեջ (որպես թարմ հեղինակային աղբյուր տե՛ս՝ *«Նյուս Վերլագս ԲԲԸ-ի & CoKG-ի ընդդեմ Ավստրիայի» (News Verlags GmbH & CoKG v Austria*, թիվ 31457/96, պարբ. 52 et seq. ECHR 2000-I) և *«Քրոնե Ֆերլագ ԲԲԸ-ի & Co. KG-ի ընդդեմ Ավստրիայի» (Krone Verlag GmbH & Co. KG v Austria*, թիվ 34315/96, պարբ. 33 et seq. 2002 թ. փետրվարի 26): Այսպիսով, մի գործի դեպքում դատարանը համարել է, որ տվյալ անձնավորության անձնական կյանքին վերաբերող որոշ բառերի գործածությունը «չի հիմնավորվել ընդհանուր հասարակական մտահոգության առարկա լինելու նկատառումներով» և որևէ «կապ չի ունեցել ընդհանուր նշանակության խնդրի հետ» (տե՛ս *«Թամերն [ընդդեմ Էստոնիայի]» (Tammer [v Estonia*, ECHR 2001-I] պարբ. 68)) և եզրակացրել է, որ 10-րդ հոդվածի խախտում չի եղել: Մեկ այլ դեպքում, այնուամենայնիվ, դատարանը հատուկ կարևորություն է տվել այն փաստին, որ խնդրո առարկան եղել է «լուրջ հասարակական մտահոգության առարկա» լրատվական հաղորդում, և տպագրված լուսանկարները չեն բացահայտել տվյալ անձի «անձնական կյանքին վերաբերող մանրամասներ» (տե՛ս վերը մեջբերված *Քրոնե Ֆերլագի (Krone Verlag)* գործը, պարբ. 37) և վճռել, որ տեղի է ունեցել 10-րդ հոդվածի խախտում: Նմանապես, վերջերս նախագահ Միտերանի անձնական բժշկի կողմից նախագահի առողջական վիճակի մասին տվյալներ պարունակող գրքի հրատարակմանը վերաբերող գործի կապակցությամբ դատարանը վճռել է, որ «որքան ավելի շատ ժամանակ է անցել, այնքան ավելի է նախագահ Միտերանի երկու յոթնամյա նախագահական շրջանների նկատմամբ հասարակական հետաքրքրությունը գերիշխել բժշկական տվյալների գաղտնիության իրավունքների պաշտպանության պահանջների նկատմամբ» (տե՛ս *«Պլոն (Societe)-ն ընդդեմ Ֆրանսիայի» (Plon (Societe) v France*, թիվ 58148/00) 2004 թ. մայիսի 18), և վճռել է, որ եղել է 10-րդ հոդվածի խախտում:

...

61. Նախ դատարանը նշում է, որ սույն գործի դեպքում գերմանական տարբեր ամսագրերում տպագրված դիմողի լուսանկարները պատկերել են դրվագներ նրա առօրյա կյանքից, երբ նա, օրինակ, զբաղված է եղել անձնական բնույթի գործերով, այդ թվում՝ սպորտով, զբոսնելով, ռեստորանից դուրս գալով և արձակուրդ մեկնելով: Լուսանկարները, որոնցում դիմողը երբեմն պատկերված է եղել մենակ, իսկ երբեմն՝ մարդկանց ընկերակցությամբ, օգտագործվել են

այնպիսի հոդվածաշարերի պատկերազարդման համար, որոնք ունեցել են «Կատարյալ երջանկություն», «Կարոլին ... կյանք վերադարձող կինը» անմեղ վերնագրեր...

63. Դատարանը կարծում է, որ պետք է սկզբունքային տարբերություն դնել այն հաղորդումների (ներառյալ վիճելի հաղորդումների) միջև, որոնք, օրինակ՝ ժողովրդավարական հասարակությունում կարող են ներդրում ունենալ այն բանավեճի մեջ, որը վերաբերում է քաղաքական գործիչների կողմից իրենց գործառույթների կատարմանը, և այնպիսի մամլո հաղորդումների միջև, որոնք վերաբերում են անձի անձնական կյանքին, առավել ևս, եթե այդ անձը, ինչպես այս դեպքում, որևէ պաշտոնական գործառույթ չի կատարում: Մինչ առաջին դեպքում մամուլն իրականացնում է ժողովրդավարական հասարակությունում «հսկիչի» իր կենսական գործառույթը՝ ներդրում ունենալով հանրությանը հուզող հարցերի վերաբերյալ տեղեկությունների և գաղափարների տարածմանը *(«Օբզերվերը» և «Գարդիանն» ընդդեմ ՄԹ-ի» (Observer and Guardian [v UK*, A.216 (1991)), դա տեղի չի ունենում երկրորդ դեպքում:

64. Նմանապես, թեպետ հանրությունն իրազեկված լինելու իրավունք ունի, որը ժողովրդավարական հասարակությունում սկզբունքային իրավունք է և որոշ առանձնահատուկ հանգամանքներում կարող է տարածվել հասարակական գործիչների անձնական կյանքի վրա, սա չի վերաբերում սույն գործին: Այս դեպքում իրավիճակը որևէ կապ չունի քաղաքական կամ հասարակական բանավեճի հետ, քանի որ հրապարակված լուսանկարները և դրանց ուղեկցող մեկնաբանությունները բացառապես վերաբերել են դիմողի անձնական կյանքի մանրամասներին:

65. Ինչպես և իր կողմից քննության առնված այլ համանման գործերում, դատարանը համարում է, որ չի կարելի ասել, որ խնդրո առարկա լուսանկարները և հոդվածները, որոնց միակ նպատակը եղել է բավարարել դիմողի անձնական կյանքի նկատմամբ ընթերցողների առանձին խմբի հետաքրքրասիրությունը, ներդրում են ունեցել որևէ հասարակական բանավեճի մեջ՝ անկախ այն փաստից, որ դիմողն ինքը հայտնի է եղել հասարակությանը (տե՛ս *mutatis mutandis «Խայմե Կամպմանիի և Դիես դե Ռեվենգայի և Խուան Լուիս Լոպես-Գալիչոն Պերոնայի ընդդեմ Իսպանիայի»* (որոշում) *(Jaime Campmany y Diez de Revenga and Juan Luis Lopez-Galiacho Perona v Spain* (dec.), թիվ 54224/00) 2000 թ. դեկտեմբերի 12, *«Խուլիո Բու Խիբերտը և Էլ Օգարը և Լա Մոդա Խ.Ա.-ն ընդդեմ Իսպանիայի» (որոշում) (Julio Bou Gibert and El Hogar Y La Moda J.A. v Spain* (dec.), թիվ 14929/02) 2003 թ. մայիսի 13 և *«Պրիզմա Պրեսն» [ընդդեմ Ֆրանսիայի] (Prisma Presse [v France (*dec.), թիվ 66910/01 և 71612/01), 2003 թ. հուլիսի 1).

66. Այս պայմաններում խոսքի ազատությունը պահանջում է ավելի նեղ մեկնաբանություն (տե՛ս վերը մեջբերված *«Պրիզմա Պրեսը» (Prisma Presse)* և հակառակ նշանակություն ունեցող *«Քրոնեն Ֆերլագի» (Krone Verlag)* վերը մեջբերված գործը, պարբ. 37):

67. Այս կապակցությամբ դատարանը նաև հաշվի է առնում անձնական անձեռնմխելիության իրավունքի մասին Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի ընդունած բանաձևը, համաձայն որի՝ «խոսքի ազատության իրավունքի միակողմանի մեկնաբանություն» է այն, որ լրատվության որոշ միջոցներ իրենց կողմից 8-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքների խախտումներն արդարացնելու համար պնդում են, որ իրենց «ընթերցողներն ունեն հասարակական գործիչների մասին ամեն կարգի տեղեկություններ ունենալու իրավունք»:

68. Կա ևս մեկ նկատառում, որը դատարանի կարծիքով կարևոր է. թեպետ, ճիշտն ասած, սույն դիմումը վերաբերում է գերմանական լրագրերում զուտ լուսանկարների և հոդվածների տպագրությանը, հնարավոր չէ լիովին անտեսել այն համատեքստը, որ այդ լուսանկարները նկարվել են առանց դիմողի իմացության կամ համաձայնության, ինչպես նաև այն հետապնդումները, որոնք շատ հասարակական գործիչներ հանդուրժել են իրենց առօրյա կյանքում (տե՛ս վերը՝ պարբ. 59):

Սույն գործում այս նկատառումը հատկապես ցայտուն է երևում դիմողի այն լուսանկարներից, որոնցում նա պատկերված է Մոնտե Կառլոյի լողափնյա ակումբում սայթաքելու և ընկնելու պահին: Տպավորությունն այնպիսին է, որ այս լուսանկարները նկարվել են գաղտնի, մի քանի հարյուր մետր հեռավորությունից, հավանական է նաև՝ հարևան տնից, մինչդեռ լրագրողների և լուսանկարիչների մուտքն ակումբ եղել է խստիվ կարգավորված:

...

72. Դատարանը դժվարանում է համաձայնել «Հեղինակային իրավունքի (արվեստների ոլորտ) մասին» օրենքի 23(1) բաժնի կապակցությամբ ազգային դատարանների մեկնաբանության հետ, ըստ որի՝ այսպիսի անձնավորությանը ներկայացնում է որպես par excellence ժամանակակից հասարակական գործիչ: Քանի որ այդ սահմանումը անձին իր անձնական կյանքի կամ իր պատկերների վերահսկման իրավունքի նկատմամբ շատ քիչ պաշտպանություն է ապահովում, ողջամտորեն այն կարող է նպատակահարմար համարվել պաշտոնական պարտականություններ կատարող քաղաքական գործիչների համար: Այնուամենայնիվ, դիմողի նման «մասնավոր» անձի համար, որը պաշտոնական գործառույթներ չի իրականացնում, և որի նկատմամբ ընդհանուր հասարակության և մամուլի հետաքրքրությունը պայմանավորված է զուտ թագավորական ընտանիքին նրա պատկանելությամբ, չի կարող արդարացված համարվել:

Ամեն դեպքում, դատարանը կարծում է, որ պետությունների՝ կոնվենցիայով ստանձնած անձի անձնական կյանքը և սեփական կերպարի ներկայացումը հսկելու իրավունքը պաշտպանելու դրական պարտավորության կատարումը երաշխավորելու համար օրենքը պետք է մեկնաբանվի շատ ավելի նեղ իմաստով:

73. Վերջապես, ժամանակակից հասարակությունում par excellence և «հարաբերական» հասարակական գործիչների տարբերակումը պետք է լինի հստակ և ակնառու՝ օրենքի գերակայության սկզբունքներով առաջնորդվող պետությունում հնարավորություն տալով անձին հստակ պատկերացում կազմելու, թե որն է այն վարքագիծը, որը նա պետք է որդեգրի: Ամենից առավել, նրանք պետք է հստակ իմանան, թե երբ և որտեղ են նրանք գտնվում այնպիսի ոլորտում, որը ենթակա է պաշտպանության, կամ հակառակը, այնպիսի ոլորտում, երբ նրանք կարող են ակնկալել կողմնակի անձանց և հատկապես բուլվարային մամուլի միջամտությունը:

74. Դատարանը, հետևաբար, կարծում է, որ այն չափանիշները, որոնց վրա են ազգային դատարանները հիմնել իրենց որոշումները, բավականաչափ արդյունավետ չեն եղել դիմողի անձնական կյանքը պաշտպանելու համար: Որպես par excellence ժամանակակից հասարակության անդամ՝ նա չի կարող, հանուն մամուլի և հանրային հետաքրքրության, հիմնվել իր անձնական կյանքի պաշտպանության վրա, եթե նա չի գտնվում հասարակության աչքից հեռու մեկուսի վայրում և, բացի այդ, հաջողությամբ չի ապացուցում դա (ինչը կարող է լինել դժվար): Հակառակ դեպքում նա պետք է ընդունի, որ կարող է գրեթե ցանկացած պահի լուսանկարվել, և այդ լուսանկարներն այնուհետև կարող են լայնորեն տարածվել, եթե նույնիսկ, ինչպես այս դեպքում, այդ լուսանկարները և դրանց վերաբերող հոդվածները վերաբերում են բացառապես նրա անձնական կյանքի մանրամասներին:

75. Դատարանի կարծիքով՝ տարածքային մեկուսացման չափանիշը թեպետ նպատակահարմար է տեսության մեջ, իրականում խիստ անորոշ է և նախօրոք դժվարությամբ կարող է որոշվել տվյալ անձի կողմից: Սույն գործում դիմողին զուտ par excellence ժամանակակից հասարակության գործիչ սահմանելը բավարար չէ նրա անձնական կյանքին կատարված այսպիսի միջամտությունն արդարացնելու համար:

դ. Եզրակացություն

76. Ինչպես դատարանը նշել է վերը, համարում է, որ այն որոշիչ գործոնը, որը անձնական կյանքի պաշտպանությունը հավասարակշռում է խոսքի ազատության հետ, այն ներդրումն է, որ հրապարակված լուսանկարները և հոդվածներն ունենում են ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող բանավեճի մեջ: Վարույթում գտնվող գործի դեպքում պարզ է, որ դրանք որևէ ներդրում չեն ունեցել, քանի որ դիմողը պաշտոնական գործառույթներ չի իրականացրել, և լուսանկարներն ու հոդվածները վերաբերել են բացառապես նրա անձնական կյանքի մանրամասներին:

77. Բացի այդ, դատարանը կարծում է, որ հանրությունն օրինական շահ չունի իմանալու, թե որտեղ է գտնվում դիմողը և ինչպես է ընդհանուր առմամբ դրսևորում իրեն իր անձնական կյանքում, եթե նույնիսկ նա այցելում է այնպիսի վայրեր, որոնք հնարավոր չէ նկարագրել որպես մեկուսացած վայրեր, և հակառակ այն փաստին, որ նա քաջ հայտնի է հասարակությանը:

Այս դեպքում, եթե նույնիսկ այդպիսի հանրային հետաքրքրություն կա, ինչպես որ լրագրերում առևտրային հետաքրքրություն կա տպագրելու այդ լուսանկարները և հոդվածները, դատարանի կարծիքով, այդ հետաքրքրությունները պետք է ստորադասվեին դիմողի անձնական կյանքի արդյունավետ պաշտպանության իրավունքին:

78. Վերջապես, դատարանի կարծիքով, ազգային դատարանների կողմից հաստատված չափանիշները բավարար չեն եղել, որպեսզի երաշխավորեն դիմողի անձնական կյանքի պաշտպանությունը, և այս գործի հանգամանքներում նա պետք է ունենար իր անձնական կյանքի պաշտպանության «օրինական սպասելիք»:

79. Հաշվի առնելով վերը նշված այս բոլոր գործոնները և հակառակ այս ոլորտում պետություններին վերապահված հայեցողության սահմաններին՝ դատարանը կարծում է, որ Գերմանիայի դատարանները արդար հավասարակշռություն չեն ապահովել մրցակցող շահերի միջև:

80. Հետևաբար, տեղի է ունեցել կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

81. Հաշվի առնելով այդ եզրակացությունը՝ դատարանն անհրաժեշտ չի համարում վճիռ կայացնել դիմողի ընտանեկան կյանքի հարգման իրավունքի մասին գանգատի վերաբերյալ:

Իր համընկնող կարծիքում դատավոր Զուպանչիկը հայտնել է.

... Նա, ով կամավոր մուտք է գործում հանրային գործունեության ոլորտ, չի կարող պնդել, որ հանդիսանում է մասնավոր անձ, որն ունի ինքնության չբացահայտման իրավունք: Թագավորական ընտանիքի անդամները, դերասանները, ակադեմիկոսները, քաղաքական գործիչները և այլք, անկախ այն հանգամանքից, թե ինչ գործունեությամբ են զբաղվում, դրանցով զբաղվում են հրապարակայնորեն: Նրանք գուցեև չեն ձգտում հրապարակայնության, սակայն նրանց կերպարն իր բնույթով որոշ չափով հանրային սեփականություն է:

...

Բացի այդ, ես հավատում եմ, որ դատարանները, լինելով ամերիկյան ազդեցության տակ, մամուլի ազատությունը որոշ չափով վերածել են ֆետիշի: Personlichkeitsrecht-ի (անձնական իրավունքների վերաբերյալ Գերմանիայի քաղաքացիական իրավունքի հայեցակարգի) սկզբունքը վեր է հանում քաղաքակիրթ միջանձնային վարքագծի ավելի բարձր մակարդակ:

Ժամանակն է, որ ճոճանակը հետ պտտվի, և այլ կարգի հավասարակշռություն սահմանվի մասնավորի ու մեկուսացածի և հանրայինի ու չպաշտպանվածի միջև:

Հարցն այստեղ այն է, թե ինչպես պետք է ստուգել և գնահատել այս հավասարակշռությունը: Ես համաձայն եմ այս գործի վերջնական ելքին: Այնուամենայնիվ, ես կառաջարկեի այլ կարգի որոշիչ թեստ, այնպիսին, որպիսին մենք օգտագործել ենք *«Հելֆորդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Halford v United Kingdom)* գործում (1997 թ. հունիսի 25-ի վճիռ, Զեկույցներ 1997-III), որը խոսում է «անձնական անձեռնմխելիության ողջամիտ սպասելիքների մասին»:

Համաձայն դատարանի վճռի՝ անձի նկարը մտնում է 8(1) հոդվածում սահմանված անձնական կյանքի հայեցակարգի շրջանակների մեջ, և պետություններն այդ լուսանկարներն այլ անձանց չարաշահումներից պաշտպանելու դրական պարտավորություն ունեն: Մամուլը կարող է արդարացնել անձի լուսանկարների տպագրությունը միայն այն դեպքում, եթե դա ներդրում է ունենում ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմայի մեջ: Դատարանը չի ընդունել, որ թագավորական ընտանիքի անդամի ընտանեկան կյանքը պատկերող լուսանկարները մտել են այդ կատեգորիայի մեջ: Լուրջ հետաքննական լրագրությունը, որը օրինակ՝ անդրադառնում է քաղաքական կամ ֆինանսական կոռուպցիային, չպետք է վախենա այս վճռի հետևանքներից: Այնուամենայնիվ, անդամ պետությունները կարող են վերանայել իրենց ազգային կարգադրությունները, որպեսզի երաշխավորեն, որ «պապարացցիանման» լուսանկարներ տպագրողները կարող են արդարացնել իրենց հրապարակումների շարունակականությունը (օրինակ՝ ի ցույց դնելու համար այն հասարակական գործիչների կեղծավորությունը, որոնց նկատել են իրենց կանանց/ամուսիններին դավաճանելու ժամանակ):

11 *«Չեփմենն ընդդեմ ՄԹ-ի» (Chapman v UK)* գործում (2001 թ. հունվարի 18-ի վճիռ) մեծ պալատը բացահայտել է, որ պետությունները փոքրամասնությունների ավանդական կենսակերպերին օժանդակելու նոր սկզբնավորվող պարտավորություն ունեն: Ծնունդով գնչու դիմողը իր ընտանիքի հետ անընդհատ վագոն-տնակներով ճամփորդել և աշխատանք է փնտրել: Թեև նա և նրա ամուսինը ընդգրկված են եղել մշտական տեղամասում տեղավորման ենթակա անձանց հերթացուցակի մեջ, նրանք և նրանց երեխաները կանգ են առել բազմաթիվ ժամանակավոր և ոչ պաշտոնական ճամբարային տեղամասերում: Ոստիկանությունը և տեղական իշխանությունների պաշտոնյաները անընդհատ տեղափոխել են նրանց ոչ պաշտոնական ճամբարների տարածքից, ինչը բացասական ազդեցություն է ունեցել նրանց երեխաների կրթության վրա: Դրանից հետո 1985 թ. դիմողը հողակտոր է գնել Հերթֆորդշիրում՝ նպատակ ունենալով բնակություն հաստատել այնտեղ շարժական տան մեջ: Նա դիմել է, որ ստանա հողի պլանավորման թույլտվություն, որպեսզի կարողանա այդ հողն օգտագործել այնտեղ բնակություն հաստատելու նպատակով, սակայն տեղական կառավարման մարմինը մերժել է նրա խնդրանքը, քանի որ հողը գտնվել է «Կանաչ գոտու» տարածքում (տարածք, որտեղ բնակության նպատակով շինարարությունն արգելված է): Այնուհետև, առանց հողի պլանավորման թույլտվություն ունենալու այդ տարածքում շարունակաբար ապրելու պատճառով մագիստրատների դատարանը նրան նշանակել է մի քանի հարյուր ֆունտ ստեռլինգի տուգանք: Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, որ այդ որոշման հիման վրա ձեռնարկված հարկադիր կատարման գործողությունները եղել են միջամտություն 8-րդ հոդվածով պաշտպանվող իր տան, անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքին, ինչպես նաև զրկել են իրեն՝ որպես գնչուի,

շարժական տան մեջ ապրելու և դրա շնորհիվ ճամփորդելու հնարավորությունից: Տասնութ կողմ և ինը դեմ ձայներով՝ հանձնաժողովն այդ հոդվածի խախտում չի հայտնաբերել:

Մեծ պալատի մեծամասնությունը՝ տասը դատավոր, համարել է, որ.

93. …կարելի է ասել, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջև նոր ձևավորվող միջազգային համաձայնություն կա, որը ճանաչում է փոքրամասնությունների առանձնահատուկ կարիքները և նրանց անվտանգությունը, ինքնությունը և կենսակերպը պաշտպանելու պարտավորությունը ... ոչ միայն փոքրամասնությունների շահերը երաշխավորելու, այլև ողջ համայնքի համար արժեք հանդիսացող մշակութային բազմազանությունը պահպանելու նպատակով:

94. Այնուամենայնիվ, դատարանը համոզված չէ, որ առկա փոխհամաձայնությունը բավականին կոնկրետ է, որպեսզի հնարավորություն տա դրա հիման վրա մշակելու վարվելակերպի կամ չափորոշիչների վերաբերյալ այնպիսի ուղեցույցներ, որոնք պետությունները կցանկանային ունենալ կոնկրետ իրավիճակների համար: Ընդհանուր սկզբունքները և նպատակները, օրինակ, սահմանվել են [Ազգային փոքրամասնությունների պաշտպանության 1995 թ.] շրջանակային կոնվենցիայում, սակայն պայմանագրի կողմ պետություններն այդպես էլ չեն կարողացել համաձայնության գալ դրանց իրականացման միջոցների շուրջ: Սա ամրապնդում է դատարանի տեսակետն առ այն, որ ընդհանուր ազգաբնակչության շահերը հավասարակշռող քաղաքականության հարցերի բարդությունը և նրբությունը և, մասնավորապես, շրջակա միջավայրի պաշտպանության և փոքրամասնությունների, ամենայն հավանականությամբ, բախվող պահանջներ ունեցող շահերի հավասարակշռումը դատարանին հնարավորություն են տալիս հանդես գալու զուտ իր վերահսկողական դերով:

…

95. Այնուամենայնիվ, թեպետ հասարակության մեծամասնությունից տարբեր կենսակերպ ունեցող փոքրամասնության խմբի անդամ լինելու հանգամանքը այդ խմբի անդամներին չի օժտում ողջ հասարակությանը պատկանող ակտիվների, այդ թվում և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ընդհանուր օրենքների նկատմամբ անձեռնմխելիությամբ, սակայն կարող է ազդեցություն ունենալ այն եղանակի վրա, որով այդ օրենքներն իրականացվում են: Ինչպես նշվել է *«Բաքլին [ընդդեմ ՄԹ-ի]» (Buckley [v UK])* գործի վերաբերյալ կայացված վճռում, գնչուների՝ որպես փոքրամասնության խոցելի դիրքը նշանակում է, որ նրանց կարիքներին և տարբերվող կենսակերպին պետք է որոշ չափով առանձնահատուկ ուշադրություն դարձվի կանոնակարգիչ շինարարական պլանավորման նորմերում և առանձին դեպքերում կայացվող որոշումներում (loc cit, պարբ. 76, 80, 84): Այսքանով, հետևաբար, պայմանագրի կողմ պետությունները 8-րդ հոդվածով գնչուների կենսակերպին օժանդակելու դրական պարտավորություն ունեն...

Այնուամենայնիվ, մեծամասնությունը չի ցանկացել ընդունել դիմողի այն փաստարկը, թե քանի որ ՄԹ-ում գնչուների թիվը շատ ավելի մեծ է, քան գնչուներին հատկացված տարածքներում առկա տեղամասերի քանակը, ապա նրա դեմ ձեռնարկված քայլերը ինքնաբերաբար հարուցել են 8-րդ հոդվածի խախտում: Համաձայն դատարանի.

98. …Դա հավասարազոր կլիներ ինչպես Միացյալ Թագավորության, այնպես էլ այլ անդամ պետությունների վրա այնպիսի պարտավորություն դնելուն, ըստ որի՝ 8-րդ հոդվածի պատճառով նրանք պետք է գնչու համայնքին տրամադրեն համապատասխանաբար սարքավորված և համապատասխան քանակի տեղամասեր: Դատարանը համոզված չէ, չնայած այն անժխտելի էվոլյուցիային, որ տեղ է գտել, մի կողմից, միջազգային իրավունքում, ինչը փաստվում է Շրջանակային կոնվենցիայով, և մյուս կողմից՝ փոքրամասնությունների պաշտպանությանը վերաբերող ներպետական օրենսդրության մեջ, որ 8-րդ հոդվածը կարելի է մեկնաբանել այնպես, որ այն հանգեցնի պետությունների համար սահմանվող ընդհանուր սոցիալական քաղաքականության այդքան հեռուն գնացող դրական պարտավորության (տե՛ս վերը՝ պարբ. 93–94):

Հետևաբար, դատարանի խնդիրը որոշելն էր, թե արդյոք պատասխանող երկիրն ունեցե՞լ է «համապատասխան և բավարար» հիմքեր դիմողի նկատմամբ նման միջոցներ ձեռնարկելու համար: Մեծամասնությունը որոշել է, որ թեստը եղել է բավարարված՝ հաշվի առնելով, ի թիվս այլոց, շինարարական պլանավորման տեսուչների կողմից դիմողի բացատրությունների ունկնդրությունը և տեղամասային այցը, շինարարական պլանավորման պահանջներին համապատասխանելու համար դիմողին տրված լրացուցիչ ժամանակը և Հերթֆորդշիրից դուրս գտնվող թույլատրելի տարածքներում իր շարժական տան համար օրինական տեղամասեր փնտրելու դիմողի ազատությունը: Հետևաբար, 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Յոթ դատավոր հրապարակել են միասնական չհամընկնող կարծիք, որում նրանք չեն համաձայնել մեծամասնության գնահատման հետ, թե շինարարական պլանավորման հարցերով դիմողի դեմ

սկսված վարույթն անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում: Ըստ չհամընկնող կարծիքի՝ Եվրոպայում ձևավորվող «փոքրամասնությունների առանձնահատուկ կարիքները և նրանց անվտանգությունը, ինքնությունը և կենսակերպը պաշտպանելու» համաձայնությունը պահանջել են, որ դիմողին տրամադրվեր ավելի մեծ աստիճանի պաշտպանություն, քան այն պաշտպանությունը, որը տրամադրվել է նրան մեծամասնության կողմից:

3….Այս փոխհամաձայնությամբ ճանաչվում է, որ փոքրամասնությունների, ինչպես, օրինակ՝ գնչուների իրավունքների պաշտպանությունը պայմանավորվող պետություններից պահանջում է ոչ միայն զերծ մնալ այնպիսի քաղաքականությունից կամ գործելակերպից, որոնք խտրականության են ենթարկում նրանց, այլև, որտեղ անհրաժեշտ է, դրական քայլեր ձեռնարկել նրանց իրավիճակը բարելավելու ուղղությամբ, օրինակ՝ օրենսդրության կամ առանձնահատուկ ծրագրերի միջոցով: Հետևաբար, մենք չենք կարող համաձայնել մեծամասնության այն պնդմանը, որ այս փոխհամաձայնությունը բավականաչափ կոնկրետ չէ, կամ նրանց այն եզրակացությանը, որ մրցակցող շահերի բարդության պատճառով դատարանը կարող է զուտ վերահսկողական դեր ունենալ (տե՛ս պարբ. 93-94): Մեր կարծիքով՝ սա չի արտացոլում գնչուների կողմից իրենց իրավունքների արդյունավետ կիրառման պաշտպանության հստակ ճանաչված անհրաժեշտությունը և հարատև է դարձնում նրանց՝ որպես ընդհանուր համայնքից տարբեր կարիքներ և արժեքներ ունեցող փոքրամասնական խմբի խոցելիությունը: Հետևաբար, շինարարական պլանավորման և հարկադիր կատարման միջոցառումների ազդեցությունը գնչուների տան, անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի կիրառման վրա ընդունում է այնպիսի չափեր, որոնք անցնում են բնապահպանական մտահոգությունների սահմանները: Հաշվի առնելով այս միջամտության պոտենցիալ լրջությունը, որն արգելում է ծագումով գնչու անձնավորությանն իր կենսակերպին ներդաշնակ ապրել որևէ առանձին վայրում այն դեպքում, երբ շինարարական պլանավորման մարմիններն այդ անձին չեն առաջարկել այլընտրանքային և օրինական մեկ այլ տեղամաս, որտեղ ողջամտորեն կարելի է ակնկալել, որ նա կարող է տեղափոխվել, խնդրո առարկա միջոցառումների համար պետք է գոյություն ունենան խիստ հիմնավոր պատճառներ:

Այսպիսով, չհամընկնող կարծիք հայտնողները հավատացած են եղել, որ Եվրոպայի մակարդակով առկա փոխհամաձայնությունը պետություններից պահանջում է, որ դիմողի նման անձանց նկատմամբ ձեռնարկեն օժանդակության ավելի գործնական միջոցներ, քան դատավորների մեծամասնությունը ցանկացել է կոնվենցիայով պահանջել նրանցից: *Չեփմենի* գործի դեպքում չհամընկնող կարծիք հայտնած դատավորների համեմատաբար մեծ թիվը ցույց է տալիս, որ հետագայում դատարանը կարող է պետություններից պահանջել, որ փոքրամասնություններին օժանդակելու համար նրանք էլ առավել գործնական միջոցառումներ նախատեսեն:

12 Պալատը միաձայն վճռել է, որ անձանց նամակագրության հարգման իրավունքից բխում է, որ պետություններն ունեն բանտարկյալներին գրենական պիտույքներ և փակցված դրոշմանիշներով ծրարներ տրամադրելու դրական պարտավորություն: *«Կոտլեն ընդդեմ Ռումինիայի» (Cotlet v Romania)* գործի վերաբերյալ 2003 թ. հունիսի 3-ի վճռով պալատը որոշել է, որ այն բանտում, որտեղ պահվել է դիմողը, արտասահման նամակներ ուղարկելու համար գոյություն չեն ունեցել դրոշմանիշներով կնքված ծրարներ, ինչպես նաև դիմողը չի ստացել իրեն հասանելիք ամսական երկու անվճար ծրարը: Հետևաբար, տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում:

13 «Հարգման» դրական պարտավորության բացատրություն է եղել, որ.

8-րդ հոդվածի մեկնաբանության այսպիսի մոտեցումն արտացոլում է մարդու իրավունքների սոցիալական դիրքորոշումը: Մարդկային արժանապատվության և մարդու արժեքի ամրապնդման ուղղությամբ պահանջվող քայլերի ձեռնարկման առումով այն շատ ավելի մեծ դեր է վերապահում պետությանը, քան ազատական դիրքորոշումը: Այս վերջինի դեպքում անձին պետք է պաշտպանել պետությունից, մինչդեռ, համաձայն սոցիալական դիրքորոշման, անձի ազատությունը և արժանապատվությունն ապահովվում են պետության միջոցով: Այս դրական մոտեցումը հստակ կրում է սոցիալիստական փիլիսոփայության կնիքը և Արևմուտքում կապվում սոցիալական բարեկեցության զարգացման հետ (A M Connelly, Problems of Interpretation of Article 8 of the ECHR (1986) 35 International and Comparative Law Quarterly, 567 էջեր 574–5):

14 Հեղինակն ավելի ընդհանրացված եզրակացրել է, որ.

Մենք տեսել ենք, որ 8-րդ հոդվածով դատարանի կողմից պահանջվող դրական պարտավորությունների տեքստային հիմքը պետությունների՝ այդ դրույթի առաջին կետում շարադրված իրավունքները «հարգելու» պարտավորությունն է: Ըստ դատարանի՝ նախատեսելով այսպիսի պարտավորություններ, նա նպատակ է ունեցել ապահովել, որ [կոնվենցիայով] երաշխավորված իրավունքներն արդյունավետորեն պաշտպանվում են պետությունների կողմից: Ավելի վաղ ընդունված վճիռներում դատարանը հայտարարել է, որ դրական պարտավորությունների համատեքստում հարգանք հասկացությունը լավ սահմանված չէ, և, հետևաբար, կոնվենցիայի պարտավորություններին պետությունների համապատասխանությունը որոշելիս պետություններին պետք է տրվեն հայեցողության լայն սահմաններ: Այնուամենայնիվ, այս կամ այն դրական պարտավորության գոյությունը որոշելու առումով ժամանակի ընթացքում դատարանը սահմանափակել է հայեցողության սահմանների կիրառումը: Արդար հավասարակշռության թեստն առաջացել է որպես ընդհանուր դատական մեթոդ, որը կիրառվում է ինչպես առանձին դրական պարտավորությունների գոյությունը, այնպես էլ հաստատված դրական պարտավորության պահանջներին համապատասխանությունը պարզելու նպատակով (A. R. Mowbray, The Devlopment of Positive Obligations under the ECHR by the European Court of Human Rights (Oxford: Hart Publishing, 2004), էջ 186):

Հոդված 8(2)

Պետական մարմինների միջամտությունը 8-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքներին

Ընդհանուր առմամբ, դիմողները պարտավոր են հիմնավորել, որ պետության գործողությունը (ինչպես օրինակ՝ *«Շոնենբերգերը և Դուրմազն ընդդեմ Շվեյցարիայի» (Schonenberger and Durmaz v Switzerland)* (տես վերը՝ էջ 593) գործի դեպքում պետական պաշտոնյայի կողմից փաստաբանի նամակը դիմողից պահելու գործողությունը) իրենց պաշտպանվող իրավունքների խախտման պատճառ է դարձել: Այնուամենայնիվ, 8-րդ հոդվածին վերաբերող որոշ գործերի կապակցությամբ դատարանը եզրակացրել է որ դիմողի իրավունքների խախտումն առաջացել է առանձնահատուկ իրավական ռեժիմի առկայության պատճառով: *«Նորիսն ընդդեմ Իռլանդիայի» (Norris v Ireland)* գործի դեպքում (վերը՝ էջ 509) անձնական բնույթի փոխհամաձայնեցված համասեռական գործողությունների նկատմամբ քրեական օրենքով նախատեսված արգելքը հավասարազոր է համարվել «միջամտության» դիմողի անձնական կյանքի հարգման իրավունքին, թեպետ նա երբևէ ոստիկանության կողմից չի հարցաքննվել կամ հետապնդվել: Դատարանը վճռել է, որ.

Ճիշտ է, որ պրն Նորիսը, ինչպես Դաջենը, ոստիկանության հետաքննության տակ չի գտնվել: Այնուամենայնիվ, *Դաջենի (Dudgeon)* գործի դեպքում դատարանի կատարած եզրակացությունը, որ տեղի է ունեցել միջամտություն դիմողի անձնական կյանքի հարգման իրավունքին (վերը՝ էջ 509), կախում չի ունեցել այս լրացուցիչ գործոնից: Այդ գործի դեպքում վճռվել է, որ «վիճարկվող օրենսդրությունն ուժի մեջ թողնելը... շարունակաբար տեղի ունեցող միջամտություն է դիմողի՝ 8(1) հոդվածով նախատեսված անձնական կյանքի հարգման իրավունքին»... Դիմողի անձնական հանգամանքներում այս օրենսդրության բուն գոյությունը անընդհատ և ուղղակիորեն ազդում է նրա անձնական կյանքի վրա ... (պարբ. 41) (պարբ. 38):

Հետևաբար, դիմողները կարող են շահել 8-րդ հոդվածով բերված գործերը, եթե կարողանան հիմնավորել, որ տվյալ օրենքի գոյությունն առաջացնում է 8-րդ հոդվածով ամրագրված իրենց կարևոր իրավունքների խախտում և բացասական ազդեցություն գործում իրենց կյանքի վրա: Բացի այդ, այն դեպքում, երբ օրենսդրությունը թույլ է տալիս իրականացնել գաղտնի միջոցառումներ, որոնց շարքն է դասվում, օրինակ, հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը, դիմողները կարող են շահել դատը՝ հաջողությամբ փաստարկելով, որ այդ օրենքների գոյությունը հավասար է միջամտության իրենց պաշտպանվող իրավունքներին: *«Կլասն ընդդեմ Գերմանիայի» (Klass v Germany)* (տես վերը՝ էջ 588) գործի դեպքում դատարանը վճռել է, որ.

... միայն օրենսդրության գոյությունն արդեն իսկ իր մեջ պարունակում է վերահսկողության տակ հայտնվելու վտանգ բոլոր այն անձանց համար, որոնց վրա տարածվում է այդ օրենսդրությունը: Այս վտանգն անխուսափելիորեն հարվածում

է փոստային և հեռահաղորդակցային կապից օգտվողների ազատությանը և դրանով իսկ միջամտություն դառնում պետական մարմնի կողմից դիմողների անձնական, ընտանեկան կյանքի և նամակագրության հարգման իրավունքին (պարբ. 41):

Դատարանի կողմից «միջամտություն» հասկացության այսպիսի ընդլայնումը կարևոր նշանակություն ունի, քանի որ գաղտնի միջոցառումների արդյունավետ իրականացման դեպքում անհատները սովորաբար չեն էլ իմանա, որ իրենք փաստացի ենթակա են եղել այդպիսի միջոցառման: Տե՛ս նաև *«Հելֆորդն ընդդեմ ՄԹ-ի» (Halford v UK)* գործով դատարանի վճիռը (վերը՝ էջ 584):

Օրենքին համապատասխան

……

«Սիլվերն ընդդեմ ՄԹ-ի» (Silver v UK A.61 (1983) 5 EHRR 347)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Յոթ դիմողները, որոնցից վեցը եղել են բանտարկյալ, բողոքել են, որ բանտի ղեկավարության կողմից իրենց նամակագրական կապի կասեցման և նամակների ուղարկման/հանձնման ուշացման պատճառով տեղի է ունեցել նաև 8-րդ հոդվածի խախտում: Բանտարկյալների կողմից ուղարկվող և ստացվող նամակագրության վրա տարածվող կանոնները մանրամասն շարադրված են եղել գաղտնի մշտական հրամաններում և շրջաբերական հրահանգներում, որոնք ներքին գործերի քարտուղարի կողմից բանտերի կառավարիչներին տրված ներքին վարչական ուղեցույցների տեսակներ են: Խորհրդարանի անդամներն ունեցել են այս կանոններին ծանոթանալու ազատ հնարավորություն, մինչդեռ բանտարկյալները որոշ կանոնների մասին իմացել են բանտախցերում փակցված պաստառներից: Մեկ դեմ ձայնով հանձնաժողովը որոշել է, որ դիմողների մեծ մասի նամակագրության նկատմամբ սահմանված վերահսկողությունը 8-րդ հոդվածի խախտում է եղել:
...

Ա. ԱՐԴՅՈՔ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՕՐԵՆՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱ՞Ն» ԵՆ ԵՂԵԼ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

85. «Սանդի թայմզի» գործի վերաբերյալ իր վճռում [*«Սանդի թայմզն ընդդեմ ՄԹ-ի»/Sunday Times v UK* A.30 (1979)] դատարանը քննության է առել «օրենքով սահմանված» արտահայտության իմաստը՝ նկատելով, որ կոնվենցիայի 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի և թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի անգլերեն և ֆրանսերեն տարբերակների միջև կան որոշ տարբերություններ:

Կառավարությունն ընդունել է, որ վերոհիշյալ վճռում 10-րդ հոդվածի prescribed by law/prevues par la loi [սահմանված է օրենքով] արտահայտության վերաբերյալ ձևակերպված սկզբունքները կիրառելի են նաև 8-րդ հոդվածի in accordance with the law/prevue par la loi [համաձայն օրենքի] արտահայտությունների նկատմամբ: Իրոք, դա հենց այդպես էլ պետք է լինի, քանի որ, մասնավորապես, նամակագրության միջոցով իրականացվող խոսքի ազատության առումով այս երկու դրույթները համընկնում են, և եթե դրանց համարժեք մեկնաբանություն չտրվի, ապա կարող է պատահել, որ միևնույն միջամտության վերաբերյալ արվող եզրակացությունները տարբեր լինեն:

86. «*Սանդի թայմզի»* վճռում ձևակերպված առաջին սկզբունքի համաձայն՝ խնդրո առարկա միջամտությունը պետք է հիմնված լինի ազգային օրենքում ամրագրված որոշակի հիմքերի վրա: Տվյալ դեպքում կառավարությունը, հանձնաժողովը և դիմողները համաձայնել են, որ միջամտություն կատարելու համար հիմքերը պետք է ամրագրված լինեին «Բանտերի մասին» օրենքում և կանոններում, սակայն ոչ հրամաններում և հրահանգներում, որոնք օրենքի ուժ չունեն...

Նաև տարակարծություն չի եղել առ այն, որ բողոքում դիտարկված միջոցները համապատասխանել են Անգլիայի օրենքին:

87. Երկրորդ սկզբունքն այն է, որ «օրենքը պետք է ինչպես հարկն է հանրամատչելի լինի. այսինքն՝ քաղաքացին պետք է կարողանա տեղեկություններ ստանալ այդ հանգամանքներում տվյալ գործի վրա տարածվող իրավական կանոնների

մասին: Կասկածից վեր է, որ «Բանտերի մասին» օրենքը և կանոնները համապատասխանել են այս չափանիշին, սակայն հրամանները և շրջաբերական հրահանգները չեն հրապարակվել:

88. Երրորդ սկզբունքն այն է, որ «նորմը» չի կարող համարվել «օրենք», եթե քաղաքացուն իր վարքագիծը կարգավորելու հնարավորություն տալու նպատակով այն բավարար հստակ չի շարադրված: Նա պետք է կարողանա, անհրաժեշտության դեպքում, իրավաբանական խորհրդատվության միջոցով, ողջամտության սահմաններում կանխատեսել այդ հանգամանքներում տվյալ վարքագծի առաջացրած հետևանքները (նույն տեղում):

Հայեցողություն նախատեսող օրենքը պետք է սահմանի նաև այդ հայեցողության շրջանակները: Այնուամենայնիվ, դատարանն արդեն ընդունել է օրենքի բացարձակ որոշակիությունն ապահովելու անհնարինությունը, ինչպես նաև այն ռիսկը, որ որոշակիության որոնումը կարող է հանգեցնել ավելորդ կաղապարվածության (նույն տեղում): Տվյալ գործի «հանգամանքներում» այս դիտարկումներն առանձնահատուկ նշանակություն ունեն, քանի որ բանտարկության առանձնահատուկ համատեքստում տարածվում են տարեկան մոտ 10 միլիոն նամակների ստուգումների վրա... Դժվար թե հնարավոր լիներ ձևակերպել այնպիսի օրենք, որն ընդգրկեր դեպքերի զարգացման բոլոր հնարավոր տարբերակները: Իրոք, դիմողներն իրենք չեն ժխտում, որ իշխանություններն պետք է հայեցողության որոշ հնարավորություն ունենան:

Հաշվի առնելով այս նկատառումները՝ դատարանը մեկ անգամ ևս նշում է, որ «անխուսափելիորեն, բազմաթիվ օրենքների ձևակերպումներ համեմատաբար այս կամ այն չափով անորոշ են, և այդ ձևակերպումների մեկնաբանությունն ու կիրառումը գործելակերպի խնդիր են» (նույն տեղում): Եվ այս դեպքում նամակագրության հսկողության համակարգի կիրառությունը յուրաքանչյուր առանձին դեպքում դրսևորված տարբեր գործելակերպերի խնդիր չի եղել: Հրամանների և հրահանգների հիման վրա ստեղծվել է մի գործելակերպ, որից բացառություններ կարող էին արվել բացառիկ հանգամանքներում... Այս պայմաններում դատարանը կարծում է, որ թեպետ այդ հրահանգներն ինքնին օրենքի ուժ չեն ունեցել, կանոնների կիրառման կանխատեսելիության վերաբերյալ որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել այնքանով, որքանով դրանց բովանդակությունը ներկայացվել է շահագրգիռ անձանց:

89. Այդ իսկ պատճառով դատարանը չի կարող ընդունել դիմողի լրացուցիչ վիճարկումը, համաձայն որի՝ նամակագրության վերահսկմանը վերաբերող պայմանները և ընթացակարգերը և, մասնավորապես, հրամանում և հրահանգներում շարադրված ցուցումները պետք է ընդգրկված լինեին բուն նյութական օրենքում:

90. Այնուհետև դիմողները վիճարկել են, որ օրենքը որպես այդպիսին պետք է ապահովեր չարաշահման դեմ ուղղված երաշխիքներ:

Կառավարությունն ընդունել է, որ որպես այդպիսին, նամակագրության հսկողության բուն համակարգն էլ պետք է ենթակա լիներ վերահսկողության: Դատարանի կարծիքով՝ ակնհայտ է, որ ինչ-որ երաշխիքներ պետք է լինեին: Կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքներից մեկը օրենքի գերակայությունն է, որը ենթադրում է, որ իշխանությունների միջամտությունը անձի իրավունքներին պետք է ենթակա լինի արդյունավետ վերահսկողության (տե՛ս, ի թիվս այլոց, *«Կլասսն ընդդեմ Գերմանիայի» (Klass v Germany* A.28 (1978) գործը): Սա հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ ինչպես այս դեպքում, գործադիրն օժտված է հայեցողության լայն սահմաններով, որի կիրառումը հիմնված է այնպիսի գործելակերպի վրա, որը ենթակա է փոփոխության, սակայն ենթակա չէ խորհրդարանական հսկողության (տես վերը՝ պարբ. 26):

Այնուամենայնիվ, դատարանի մեկնաբանությամբ «օրենքի համաձայն» արտահայտությունը չի նշանակում, որ երաշխիքները պետք է ամրագրված լինեն հենց սահմանափակումները թույլատրող տեքստում...

[Դատարանն այնուհետև ուսումնասիրել է դիմողների նամակագրության նկատմամբ գրաքննության սահմանման և այդ նամակների ուղարկման/հանձնման ուշացման հետ կապված հանգամանքները: Դատարանը եզրակացրել է, որ դիմողների նամակագրության հարգման իրավունքի խախտումների մեծ մասը կանխատեսելի չի եղել և, հետևաբար, «համաձայն օրենքի» չի կատարվել:]

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

...

Վճռում է, որ բացառությամբ պրն Սիլվերի թիվ 7, պրն Նոեյի թիվ 10 և 12 և պրն Կուպերի թիվ 28 և 31 նամակների, յուրաքանչյուր դիմողի գրած կամ յուրաքանչյուր դիմողին հասցեագրված նամակների կասեցումը կամ այդ նամակների ուղարկման/հանձնման ուշացումը (սրանք այն խնդիրներն են, որոնք ընկած են այս գործի հիմքում) հարուցել են 8-րդ հոդվածի խախտում,...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են նախագահ Վիարդան և դատավորներ Տոիր Վիլջաուլմսոնը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Փեթիթին, Էվանսը և Ռուսոն:

2 «Սանդի Թայմզի» (Sunday Times) գործը քննարկված է ստորև՝ 667-րդ էջում:

3 Դատարանը «համաձայն օրենքի» արտահայտությունից բխող պահանջներն ավելի է մանրամասնել հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման վերաբերյալ *«Հելֆորդն ընդդեմ ՄԹ-ի» (Halford v UK)* գործում (տես վերը՝ էջ 584):

4 *«Խանն ընդդեմ ՄԹ-ի» (Khan v UK* (2000) The Times) գործի վերաբերյալ 2000 թ. մայիսի 23-ի վճռով դատարանը հաստատել է իրավապահ մարմինների կողմից բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված հսկիչ սարքավորումների կիրառումը կարգավորելու նպատակով ողջամտության սահմաններում հստակ շարադրված օրենսդրություն ունենալու անհրաժեշտությունը: 1992 թ. սեպտեմբերին դիմողը Պակիստանից ժամանել է Միացյալ Թագավորություն՝ վայրէջք կատարելով Մանչեստրի օդանավակայանում: Մաքսային ծառայողները խուզարկել են նրան, սակայն նրա մոտ թմրանյութեր չեն հայտնաբերվել: Առաջնորդվելով 1984 թ. ներքին գործերի գրասենյակի տված վարչական ուղենիշներով՝ 1993 թ. հունվարին հարավային Յորքշիրի գլխավոր կոնստաբլը թույլ է տվել, որ Բ-ի տանը լսող սարք տեղադրվի, քանի որ գլխավոր կոնստաբլը հավատացած է եղել, որ հսկողության սովորական միջոցներով հնարավոր չէ ապացույցներ ձեռք բերել, որ Բ-ն զբաղվել է թմրանյութերի վաճառքով: Լսող սարքի միջոցով ձայնագրվել է Բ-ի զրույցը Խանի հետ, որի ընթացքում նա հայտնել է, որ մասնակցել է թմրանյութերի ապօրինի ներմուծման գործարքներին: Այնուհետև դատաքննությունն իրականացնող դատավորը վճռել է, որ հսկիչ սարքի միջոցով Խանի խոսակցության ձայնագրությունը թույլատրելի է եղել: Դրանից հետո Խանը մեղավոր է ճանաչվել գիտակցաբար հերոինի ներկրման արգելքի շրջանցման համար: Նա դատապարտվել է երեք տարվա ազատազրկման: Վերջին հաշվով, Խանը բողոքարկել է Լորդերի պալատին (*«R-ն [Թագուհին] ընդդեմ Խանի (Սուլթանի)» (R v Khan (Sultan)* [1996] 3 All ER 289), որտեղ լորդ Նոլանն իր գործընկերների անունից արտասանած ճառում նշել է, որ Անգլիայի օրենքով անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք չի նախատեսվում, և ձայնագրության ընդունումը անօրինական կամ անարդար չի եղել: Դատարանը վճռել է, որ.

> 26. …Ազգային օրենքը պետք է պետական մարմինների, այս դեպքում՝ ոստիկանության կողմից գաղտնի վերահսկողության համատեքստում պաշտպանություն ապահովի անձի՝ 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքին կամայական միջամտության դեմ: Բացի այդ, օրենքը պետք է բավական հստակ լինի, որպեսզի անձանց հստակ ցուցումներ տա այն հանգամանքների և այն պայմանների վերաբերյալ, որոնց առկայության դեպքում պետական մարմիններն իրավունք ունեն կիրառելու նման գաղտնի միջոցներ (*«Մալոունն ընդդեմ ՄԹ-ի» (Malone v UK)*...):
>
> 27. Այն ժամանակ, երբ տեղի են ունեցել սույն գործում ներկայացված իրադարձությունները, գաղտնալսող սարքերի կիրառումը կարգավորող օրենսդրական համակարգ գոյություն չի ունեցել, սակայն ստեղծվել է 1997 թ. «Ոստիկանության մասին» օրենքի ընդունումից հետո: Համապատասխան ժամանակահատվածում ներքին գործերի գրասենյակի ուղենիշները պարտադիր կատարման ենթակա չեն եղել: Ինչպես նաև անմիջականորեն հասանելի չեն եղել հանրությանը: Դատարանը նաև նկատում է, որ ըստ Լորդերի պալատում լորդ Նոլանի կատարած մեկնաբանության՝ ընդհանուր առմամբ Անգլիայի օրենքով անձի անձնական կյանքի անձեռնմխելիության խախտումն անօրինաչափ չէ: Հետևաբար, համապատասխան ժամանակահատվածում գաղտնալսող սարքերի կիրառումը կարգավորող ազգային օրենք գոյություն չի ունեցել:

Հետևաբար, դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում: Սա ողջունելի վճիռ է, քանի որ ցույց է տալիս, թե ինչպես է դատարանը կիրառում 8-րդ հոդվածի՝ օրենքի գերակայության պահանջները նորագույն հսկիչ տեխնիկական միջոցների նկատմամբ: 1997 թ. «Ոստիկանության մասին» օրենքում (իրականացվել է 1999 թ.) թվարկված են այն հանգամանքները, որոնց դեպքում ոստիկանության ավագ պաշտոնյաները կամ հատուկ նշանակված հանձնակատարներն իրավունք ունեն թույլատրելու միջամտողական հսկիչ սարքերի կիրառումը: Անհատները կարող են բողոքել հանձնակատարներին, եթե կարծում են, որ այդպիսի սարքերի կիրառումը տեղի է ունեցել ի խախտումն այդ օրենսդրության:

2005 թ. Նախարարների կոմիտեն ընդունել է «Հատուկ հետաքննչական տեխնիկայի մասին» (2005)10 հանձնարարականը, որն անդրադառնում է լուրջ հանցագործությունների և ահաբեկչության

դեմ պայքարում այդ մեթոդի կիրառմանը: Հանձնարարականում նշված է, որ թեպետ այդպիսի միջոցները «բազմաթիվ են, բազմազան և անընդհատ զարգացող», ունեն ընդհանուր առանձնահատկություններ՝ դրանց գաղտնի բնույթը, և այն, որ կարող են հանգեցնել հիմնարար իրավունքների խախտման: Այնուամենայնիվ, կոմիտեն ընդունել է, որ այս միջոցները լուրջ հանցագործության դեմ պայքարի «կենսական գործիքներ» են: Հանձնարարականում տեսակետ է հայտնված, որ անդամ պետությունները պետք է, ի թիվս այլոց, «համապատասխան օրենսդրական միջոցներ ձեռնարկեն, որպեսզի երաշխավորեն հատուկ հսկիչ մեթոդների կիրառման նկատմամբ դատական մարմինների կամ այլ անկախ մարմինների վերահսկողությունը՝ նախապես թույլտվություն տալու, հետաքննության ժամանակ վերահսկողություն իրականացնելու կամ ex post facto կատարված գործողությունների վերանայում իրականացնելու միջոցով»: Հետևաբար, այս հանձնարարականը հիմնվում է *Խանի (Khan)* գործով ընդունված վճռի վրա:

5 Մայրցամաքային քաղաքացիական իրավունքի վրա հիմնված օրենսդրության նկատմամբ այս հայեցակարգի կիրառմանը ծանոթանալու համար տե՛ս *«Կրուսլին ընդդեմ Ֆրանսիայի» (Kruslin v France)* գործը (վերը՝ էջ 591):

Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում

1 *«Սիլվերն ընդդեմ ՄԹ-ի» (Silver v UK)* վերը քննարկված գործում նշվել է, որ.

Քանիցս դատարանը ներկայացրել է «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» հասկացության առնչությամբ իր ըմբռնումը, ինչպես նաև այդ հասկացությանը վերաբերող հարցերի քննության ժամանակ իր գործառույթների բնույթը և իրականացման ձևը: Այստեղ բավական է ամփոփել որոշակի սկզբունքներ.

(ա) «անհրաժեշտ» ածականը «անբաժանելի» ածականի հոմանիշը չէ և ոչ էլ ունի այնպիսի արտահայտությունների ճկունությունը, ինչպիսիք են «ընդունելի»-ն, «շարքային/սովորական»-ը, «օգտակար»-ը, «ողջամիտ»-ը կամ «ցանկալի»-ն (տե՛ս *«Հենդիսայդն ընդդեմ ՄԹ-ի» (Handyside v UK* A.24 (1976)).

(բ) այս ոլորտում պայմանավորվող պետություններն ունեն սահմանափակումների գնահատման որոշակի, բայց ոչ անսահմանափակ հնարավորություն, սակայն դատարանն է վերջնականապես որոշում՝ դրանք համապատասխանո՞ւմ են կոնվենցիային, թե՞ ոչ.

(գ) «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» արտահայտությունը նշանակում է, որ կոնվենցիային համահունչ լինելու համար միջամտությունը, ի թիվս այլոց, պետք է բխի «հրատապ սոցիալական կարիքից» և համաչափ լինի հետապնդվող օրինական նպատակին».

(դ) կոնվենցիայի հոդվածների այն կետերը, որոնք բացառություն են նախատեսում սահմանված իրավունքից, պետք է մեկնաբանվեն նեղ իմաստով (տես *«Կլասսն ընդդեմ Գերմանիայի» (Klass v Germany* A.28 (1978)) (պարբ. 97):

2 *Հենդիսայդի (Handyside)* գործը քննարկված է ստորև՝ 657-րդ էջում:

3 Այսպիսով, դատարանը որոշել է, որ պետության ձեռնարկած «անհրաժեշտ» գործողությունների շարքում են ազգային անվտանգությանը սպառնալիք ներկայացնող անձանց գաղտնի գրանցամատյանի վարումը (տե՛ս *«Լինդերն ընդդեմ Շվեդիայի» (Leander v Sweden)*, (վերը՝ էջ 525) և լրտեսության ու ահաբեկչության դեմ պայքարի նպատակով պաշտոնյաների հաղորդակցության գաղտնալսման/գաղտնի վերահսկողության թույլտվությունը (տե՛ս *«Կլասսն ընդդեմ Գերմանիայի» (Klass v Germany)* (վերը՝ էջ 588): *«Գիլլոուններն ընդդեմ ՄԹ-ի» (Gillow v UK)* (վերը՝ էջ 568) և *«Բաքլին ընդդեմ ՄԹ-ի» (Buckley v UK)* (վերը՝ էջ 570) գործերի դեպքում դատարանը վճռել է, որ բնակֆոնդի կանոնակարգումը «անհրաժեշտ» է եղել երկրի բարեկեցության ապահովման համար:

4 Մի շարք հանգամանքներում, որոնք ներառում են (ա) տեխնիկապես բարդ կանոնակարգման գործընթացներ (օրինակ՝ *«Փաուելը և Ռայներն ընդդեմ ՄԹ-ի» (Powell and Rayner v UK)* գործում արծարծված աղմուկի աղտոտման նկատմամբ վերահսկողությունը (վերը՝ էջ 574), (բ) ընդհանուր եվրոպական չափանիշներ չունեցող սոցիալական քաղաքականության խնդիրներ (օրինակ՝ *«Էվանսն ընդդեմ ՄԹ-ի» (Evans v UK)* գործում դիտարկված արհեստական բեղմնավորման հարցերի կանոնակարգումը (տե՛ս վերը՝ էջ 542)) և (գ) ազգային անվտանգության խնդիրներ (օրինակ՝ *«Լիմդերն ընդդեմ Շվեդիայի» (Leander v Sweden))*, դատարանն ազգային մարմիններին օժտել է «հայեցողության լայն սահմաններով»: Ըստ Օվիի՝ նախադեպային իրավունքը հայեցողության լայն սահմանների հստակ տարբերակումներ չի նախատեսում՝ կախված այն հանգամանքից՝ պետությունը դրակա՞ն, թե՞ բացասական պարտավորության տակ է (տե՛ս C Ovey, The Margin of Appreciation and Article 8 of the Convention (1998) 19 Human Rights Law Journal 10): Այս սկզբունքն ավելի մանրամասն ներկայացված է 663-րդ էջում:

5 *«Դաջենն ընդդեմ ՄԹ-ի»* և *«Նորիսն ընդդեմ Իռլանդիայի»* գործերում (վերը՝ էջ 509) դատարանը որոշել է, որ չափահաս մարդկանց փոխհամաձայնության հիման վրա տեղի ունեցող համասեռական գործողությունների նկատմամբ կիրառվող քրեական պատժամիջոցների «հրատապ սոցիալական անհրաժեշտություն» չի եղել: Երկու դեպքում էլ դատարանը հիմնականում հայտնվել է այն փաստի ազդեցության տակ, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծ մասն անհրաժեշտ կամ նպատակահարմար չի գտնում այս վարքագիծը համարել քրեական: Նաև վերը՝ 511-րդ էջում քննարկված *«Սմիթը և Գրեյդին ընդդեմ ՄԹ-ի» (Smith and Grady* v UK (1999)) գործի դեպքում դատարանը վճռել է, որ Բրիտանիայի զինված ուժերի կողմից անձանց անձնական կյանքի հետաքննությունը և համասեռամոլ անձնակազմի ազատումը 8(2) հոդվածով արդարացված չեն եղել:

6 Վերը՝ 507-րդ էջում քննարկված *«Նյեմեցն ընդդեմ Գերմանիայի» (Niemietz v Germany)* գործի կապակցությամբ որոշվել է, որ դիմողի փաստաբանական գրասենյակում խուզարկություն անցկացնելու համար համապատասխան կարգադրության ընդունումը և իրականացումը համաչափ միջամտություն չեն եղել դիմողի անձնական կյանքի հարգման իրավունքին: Թեպետ պետական մեղադրողին հետաքրքրել է կատարված նյութական հանցագործությունը, տրված կարգադրությունը սահմանված է եղել շատ լայնորեն և ոտնահարել մասնագիտական գաղտնիության պահանջը: *«Ֆունկն ընդդեմ Ֆրանսիայի» (Funke v France* A.256-A (1993) 16 EHRR 297) գործի կապակցությամբ դատարանը եզրակացրել է, որ առանց դատարանի սանկցիայի՝ Ֆրանսիայի մաքսային ծառայության՝ տներում/բնակարաններում խուզարկություն անցկացնելու լիազորությունը նույնպես առաջացրել է 8-րդ հոդվածի խախտում: Այդ դեպքում երեք մաքսային ծառայողներ և մեկ ավագ ոստիկան խուզարկել են դիմողի տունը՝ այնտեղից արտասահմանյան ֆինանսական գործարքների ենթադրյալ խախտումներին վերաբերող ապացույցներ գտնելու նպատակով: Դատարանը վճռել է, որ.

> Նախնառաջ դատական սանկցիայի պահանջի բացակայության պայմաններում օրենքում նշված սահմանափակումները և պայմանները, որոնք նաև շեշտվել են կառավարության կողմից, ... հետապնդվող օրինական նպատակին խստորեն համաչափ համարվելու համար չափից ավելի թույլ են և դիմողի իրավունքներին միջամտելու բազմաթիվ հնարավորություններ են տալիս (պարբ. 57):

«Կամենցինդն ընդդեմ Շվեյցարիայի» (Camenzind v Switzerland (1997) 28 EHRR 458, 1997-VIII 2880) գործի կապակցությամբ դատարանը կրկնել է, որ այն դեպքերում, երբ ազգային օրենսդրությունը թույլ է տալիս խուզարկություններ իրականացնել առանց դատարանի սանկցիայի, դատարանն առանձնապես մեծ զգոնություն պետք է դրսևորի 8-րդ հոդվածի պահանջների կատարումը երաշխավորելու համար: Այս դեպքում Բեռնի հեռահաղորդակցության մարմինը փաստեր է ունեցել, որ պրն Կամենցինդն առանց թույլտվություն ունենալու օգտագործել է անթել հեռախոս: Առաջնորդվելով 1974 թ. «Դաշնային վարչական քրեական օրենքի մասին» օրենքի դրույթներով՝ Բեռնի հեռահաղորդակցությունների մարմինը տվել է դիմողի տունը խուզարկելու սանկցիա՝ այնտեղից հեռախոսը

գտնելու և առգրավելու նպատակով: Դիմողի թույլտվությամբ պաշտոնատար անձն իրականացրել է խուզարկությունը: Վերջինս ստուգել է դիմողի տան բոլոր սենյակներում գտնվող բոլոր հեռախոսների և հեռուստացույցների համապատասխանությունը: Արգելված սարքեր չեն գտնվել, սակայն դիմողն ընդունել է, որ նախկինում այդպիսի հեռախոս փորձարկել է: Կահույքի որևէ մաս և որևէ փաստաթուղթ չի ստուգվել: Մեկ դեմ ձայնով դատարանը որոշել է, որ հաշվի առնելով խուզարկության սահմանափակ բնույթը, կարելի է եզրակացնել, որ այդ խուզարկությունը համաչափ է եղել իշխանությունների՝ անկարգությունը կամ հանցագործությունը կանխելու նպատակին: *«Չապպելն ընդդեմ Մեծ-ի» (Chappell v UK*, A.152 (1989) 12 EHRR 1) գործի դեպքում դատարանը վճռել է, որ Չապպելի տեսանյութերի վարձույթի սրահի տարածքից անպարկեշտ բովանդակության տեսանյութեր հայտնաբերելու համար դատական սանկցիայի և Անտոն Պիլլերի կարգադրության (որը տրվել էր քաղաքացիական դատարանների կողմից և թույլ տվել դիմողի դերում հանդես եկող նկարահանող ընկերություններին մուտք գործել Չապպելի տեսանյութերի վարձույթի սրահի տարածք և առգրավել նրանց ֆիլմերի անօրինական պատճենները) հիման վրա համապատասխանաբար տասնմեկ ոստիկանների և նկարահանող ընկերությունների հինգ աշխատակիցների և նրանց փաստաբանների կողմից այդ տարածքում խուզարկության զուգահեռ իրականացումն այդ հոդվածի խախտում չի առաջացրել: Թեպետ դատարանը քննադատել է խուզարկությունների զուգահեռ բնույթը և Չապպելի տարածքում խուզարկությանը մասնակցող մարդկանց ընդհանուր թիվը, վճռել է, որ դրանք եղել են հանցագործության կանխարգելմանը և նկարահանող ընկերությունների իրավունքների պաշտպանությանն ուղղված օրինական նպատակին համաչափ պատասխան: Դատարանի նախկին մատենավար Մարկ-Անդրե Էսսենը նկատել է, որ թեպետ կոնվենցիայի տեքստում համաչափություն բառն օգտագործված չէ, դատարանը որոշել է, որ դրա բովանդակությունը հստակ երևակվել է տարբեր հոդվածների շարադրանքում: Ինչ վերաբերում է «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» արտահայտությանը, որը հիշատակված է 8-11-րդ հոդվածների 2-րդ կետերում, նա նշել է, որ ««անհրաժեշտությունից» մինչև համաչափություն տիրույթի միջև ընկած է մի փոքր քայլ. որպեսզի միջոցը անհրաժեշտ լինի, անտարակույս այն պետք է բխի «հրատապ սոցիալական կարիքից»՝ ինչպես սկզբունքի, այնպես էլ ազդեցության, մասշտաբի և ընդգրկման առումներով» (էջ 126): Ավելի ընդհանուր առմամբ, նա եզրակացրել է.

> Տարիների ընթացքում համաչափությունը խոր արմատներ է գցել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում, և այս արմատներն ամենայն հավանականությամբ էլ ավելի խորն են ձգվելու՝ շարունակելով լայնացնել այս սկզբունքի տիրույթը և ընդգրկելով կոնվենցիայի էլ ավելի ասպեկտներ: Իրոք, այնքանով, որքանով այն գոյություն ունի ներկայումս, արդեն պարզ է, որ նույնիսկ հիմա կոնվենցիայի համակարգում ձեռք է բերել ընդհանուր սկզբունքի կարգավիճակ. կարգավիճակ, որ արդեն ունի բազմաթիվ իրավական համակարգերում և համայնքի իրավունքում (146-րդ էջ): [The Principle of Proportionality in the Case-Law of the European Court of Human Rights' in Macdonald, Matscher and Petzold (eds) The European System for the Protection of Human Rights (Dordrecht: Martinus Nijhoff, 1993).

Ավելի ուշ կատարված ուսումնասիրության ժամանակ դոկտոր Արայ-Տակահաշին եզրակացրել է.

> Պետք է հիշել, որ Ստրասբուրգի մարմինները շեշտել են, որ կոնվենցիայի ներքո գոյություն ունի համաչափության գնահատման երկու ձև: Նախ՝ նրանք պնդել են, որ «արդար հավասարակշռություն» պետք է հաստատվի առանձին դիմողների իրավունքի և հասարակության ընդհանուր շահերի միջև: Համարվում է, որ այդպիսի հավասարակշռության որոնումն «անկապտելի» է ողջ կոնվենցիայից: Իր երկրորդ իմաստով համաչափությունն առաջինի ձևափոխված և ավելի առանձնահատուկ տարբերակն է և սահմանվում է որպես ձեռնարկված միջոցների, ներառյալ դրանց ուժգնության ու տևողության և փնտրվող հանրային նպատակի միջև առկա ողջամիտ հարաբերությունը: Սա համապատասխանում է համաչափության ստուգման երրորդ տարրին, որը զարգացել է Եվրոպական համայնքային իրավունքի և Գերմանիայի վարչական իրավունքի շրջանակներում: [Y Arai-Takahashi, The Margin of Appreciation Doctrine and the Principle of Proportionality in the Jurisprudence of the ECHR (Antwerp: Intersentia, 2002), էջ 193]:

Միջամտության օրինական նպատակը

1 Համաձայն 8(2) հոդվածի վերջին պահանջի՝ 8(1) հոդվածով պաշտպանվող իրավունքների մեջ կատարված միջամտությունն արդարացնելու համար պետությունները պետք է ցույց տան, որ իրենց գործողությունները կատարվել են օրինական նպատակով: Պետությունները կարող են վկայակոչել միայն 8(2) հոդվածում թվարկված նպատակները, սակայն այդ նպատակները սահմանված են լայն ձևակերպումներով:

2 Ազգային անվտանգությունը հաջողությամբ վկայակոչվել է մի շարք գործերում, այդ թվում նաև՝ *«Լինդերն ընդդեմ Շվեդիայի» (Leander v Sweden)* (վերը՝ էջ 525) և *«Կլասսն ընդդեմ Գերմանիայի» (Klass v Germany)* (վերը՝ էջ 588) գործերում: Այնուամենայնիվ, դատարանը չի պաշտպանել համասեռամոլ անձանց նկատմամբ Բրիտանիայի զինված ուժերի դրսևորած վերաբերմունքը *«Սմիթը և Գրեյդին ընդդեմ ՄԹ-ի»* գործի դեպքում (վերը՝ էջ 511):

3 Դատարանն ընդունելի է համարել «հասարակական անվտանգության» պատճառաբանությունը, որի հիման վրա Բրիտանիայի շինարարական պլանավորման մարմիններն արգելել են Բաքլիին ապրել քաղաքից դուրս գտնվող սեփական հողամասում գտնվող իր վագոն-տնակում: Համաձայն կառավարության՝ ճանապարհային երթևեկությունը կհայտնվեր վտանգի տակ, եթե Բաքլիին թույլ տրվեր ապրել այդտեղ և փորձել օգտվել պետական ճանապարհներից: Տե՛ս *«Բաքլին ընդդեմ ՄԹ-ի» (Buckley v UK)* գործը (վերը՝ էջ 571):

4 *«Գիլլոուները ընդդեմ ՄԹ-ի» (Gillow v UK)* գործի դեպքում (վերը՝ էջ 568) Գերնսիի բնակարանային վերահսկողության քաղաքականությունն արդարացնելու առումով դատարանն ընդունելի է համարել «երկրի տնտեսական բարեկեցության» հիմքը:

5 *«Մալոունն ընդդեմ ՄԹ-ի» (Malone v UK)* գործի դեպքում (վերը՝ էջ 589) դատարանը որոշել է, որ հաղորդակցությունների գաղտնալսումը և գաղտնի վերահսկողությունը թույլատրող իրավական ռեժիմն ընդունելի է «անկարգության կամ հանցագործության կանխման նպատակով», եթե այն միաժամանակ պարփակում է 8(2) հոդվածի պահանջները բավարարող համապատասխան երաշխիքներ: Նաև, *«Մակլեոդն ընդդեմ ՄԹ-ի» (McLeod v UK* (1998) 27 EHRR 493, 1998-VII) գործի կապակցությամբ դատարանը վճռել է, որ խաղաղության խախտումը կանխելու նպատակով ոստիկանության՝ անձնական սեփականության տարածքներ մուտք գործելու լիազորությունը հետամուտ է եղել այդ օրինական նպատակին: Դիմողը և իր ամուսինը տևական և թեժ դատական վեճ են ունեցել իրենց նախկին տան շուրջ, որտեղ դիմողն ապրել է իր յոթանասունն անց հիվանդ մոր հետ և օգտագործել այնտեղ գտնվող գույքը: Նա չի ենթարկվել դատարանի կարգադրությանը, ըստ որի՝ նշված գույքը պետք է փոխանցեր իր նախկին ամուսնուն, և դատարանը նրան տվել է յոթ օր ժամանակ, որպեսզի կատարի կարգադրությունը կամ այդ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցույց տալու համար բանտարկվի: Նրա նախկին ամուսինն առաջարկել է, որ նշված ապրանքներն իրենց նախկին տնից տարվի որոշակի նշանակված ժամանակ: Երբ դիմողը, համաձայն իր փաստաբանների ձեռք բերած պայմանավորվածության, իր եղբոր, քրոջ և փաստաբանի օգնականի հետ գնացել է իր իրերը վերցնելու, այնտեղ ներկա են եղել նաև երկու ոստիկան: Ոստիկանության աշխատողներից մեկը ծեծել է դուռը: Դիմողի մայրը տեղեկացրել է, որ իր աղջիկը տանը չէ: Ըստ մոր խոսքի՝ ոստիկանության աշխատակիցը հայտնել է նրան, որ իրենց այցի նպատակը դատարանի կարգադրության կատարումն է: Դրանից հետո նա թույլ է տվել նրանց տուն մտնել: Ոստիկանության աշխատակիցները որևէ գույք չեն հանել այդտեղից, սակայն վերահսկել են, որ տնից հանվեն միայն այն ապրանքները, որոնք նշված են եղել ցուցակում: Ոստիկանները հիմնականում գտնվել են տան մուտքի հատվածում: Իրերը տնից հանելու ընթացքում դիմողը վերադարձել է տուն և խիստ վրդովվել տեղի ունեցածից: Ոստիկանությունը թույլ է տվել նրան

ընդամենը ստուգել հեռացող բեռնատար մեքենայի մեջ գտնվող իրերը, ոչ թե բեռնաթափել դրանք, քանի որ մտավախություն է ունեցել, որ կարող է իրարանցում առաջանալ: Այնուհետև իր գույքի նկատմամբ ոտնձգություն կատարելու համար դիմողը դատի է տվել իր ամուսնուն, սակայն վերաքննիչ դատարանը մերժել է ոստիկանության դեմ բերված նման բողոքը (տե՛ս *«Մակլեոդն ընդդեմ քաղաքային ոստիկանության» (McLeod v Metropolitan Police)* Comr [1994] 4 All ER 553): Այդ դատարանը վճռել է, որ ոստիկանության պաշտոնյաների գործողությունները կարող են արդարացվել *«Թոմասն ընդդեմ Սոկինսի» (Thomas v Sawkins* [1935] 2 KB 249) գործի նախադեպային իրավունքով հաստատված և 1984 թ. «Ոստիկանության և քրեական ապացույցների մասին» օրենքի 17(6) բաժնի դրույթներում ամրագրված կանխարգելիչ լիազորությունների շրջանակներում: Դիմողը բողոքել է հանձնաժողովին՝ պնդելով, ի թիվս այլոց, որ իր տուն ոստիկանության ներխուժումը և Անգլիայի դատարանների կողմից իրեն պաշտպանություն չառաջարկելը հավասար են եղել 8-րդ հոդվածի ներքո իր անձնական կյանքի և տան հարգման իրավունքի խախտման: Տասնչորս կողմ և երկու դեմ ձայներով հանձնաժողովը որոշել է, որ այդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել: Դատարանը եզրակացրել է, որ խախտված խաղաղությունը վերականգնելու կամ խաղաղության խախտումը կանխելու նպատակով ոստիկանության պաշտոնյաների՝ անձնական սեփականության տարածքներ մուտք գործելու լիազորությունը «օրենքին համաձայն» լինելու առումով սահմանված է եղել բավարար հստակությամբ: Այնուամենայնիվ, յոթ կողմ և երկու դեմ ձայներով՝ դատարանի մեծամասնությունը որոշել է, որ պաշտոնյաների՝ դիմողի տուն մուտք գործելու փաստը եղել է օրինականորեն հետապնդվող նպատակին անհամաչափ միջոց.

... երբ նրանք տեղյակ են պահվել, որ դիմողը տանը չէ, ոստիկանության պաշտոնյաները չպետք է մուտք գործեին նրա տուն, քանի որ նրանց համար պետք է պարզ լիներ, որ անկարգության կամ հանցագործության որևէ վտանգ կամ գրեթե ոչ մի վտանգ գոյություն չի ունեցել... Այն փաստը, որ նրա վերադառնալուց հետո վեճ է առաջացել, իր կարծիքով, էական չէ մինչ այդ սեփականության տարածք ոստիկանների մուտք գործելն արդարացնելու համար (պարբ. 57):

Դատավորներ Ֆրիլենդը և Միֆսուդ Բոնիցին գրել են մասնակի չհամընկնող կարծիք, համաձայն որի՝ ոստիկանությունը գործել է համաչափորեն: Նրանք նշել են.

... ընդհանուր առմամբ հայտնի է, որ ընտանեկան վեճերի ուժգնությունը և դառնությունը շատ հաճախ անկարգության կամ բռնության վերածվելու միտում ունեն, մասնավորապես, երբ խոսքը ունեցվածքի բաժանման հարցերի մասին է: Եվ Բրիտանիայի ոստիկանության համար արտասովոր չէ, որ նրանց կանչում են, որպեսզի միջամտեն և կանխեն նման զարգացումը (պարբ. 4):

Դատարանի վճիռը հաստատել է, որ սեփականության տարածք մուտք գործելու այս վիճելի լիազորությունը համահունչ է 8-րդ հոդվածին, բայց այն նաև ամրապնդել է ազգային դատարանների դատավորների հայտնած այն տեսակետը, որ ոստիկանությունն իր միջամտելու լիազորություններն իրականացնելիս պետք է զգուշություն դրսևորի:

Պալատը միաձայն հետևել է ավելի ուշ լսված *Մակլեոդի* գործի մոտեցմանը, որի դեպքում ոստիկանությունը թյուրիմացաբար ձեռք է բերել սխալ տարածքում խուզարկություն կատարելու կարգադրություն և ի կատար ածել: *«Կիգանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Keegan v United Kingdom)* գործով (2006 թ. հուլիսի 18-ի վճիռ) գանգատարկուները եղել են անմեղ ընտանիքի ներկայացուցիչներ, որոնց տունը ենթարկվել է ոստիկանության բռնի ներխուժման և խուզարկության, քանի որ ոստիկանությունը կարծել է, թե այդ տանն ապրում է զինված հանցագործ (թալանչի):

33….թեպետ ոստիկանությունը վատ մտադրությամբ չի գործել և, իրավամբ, ունեցել է բարի մտադրություններ, վաղ առավոտյան, երբ դիմողները դեռ քնած են եղել, նրանց դուռը կոտրելով տուն ներխուժելու որևէ ողջամիտ հիմք չի եղել: Կոնվենցիայի բառերով, միգուցե և իրոք գոյություն են ունեցել համապատասխան պատճառներ, սակայն քանի որ այդ դեպքում դրանք հիմնված են եղել թյուրըմբռնման վրա, որը կարող էր և պետք է շրջանցվեր համապատասխան նախազգուշական միջոցների ձեռնարկմամբ, դրանք չեն կարող համարվել բավարար (տե՛ս *mutatis mutandis Մակլեոդը (McLeod)* ...):

Հետևաբար, թեպետ ոստիկանությունն առաջնորդվել է անկարգության և հանցագործության կանխման օրինական նպատակով, պալատը որոշել է, որ եղել է 8-րդ հոդվածի խախտում:

6 *«Լասկին, Ջագգարդը և Բրաունն ընդդեմ ՄԹ-ի» (Laskey, Jaggard and Brown v UK)* գործում (վերը՝ էջ 517) դատարանը վճռել է, որ դիմողների հետապնդումը և դատապարտումը համապատասխանել է «առողջապահության» օրինական նպատակին:

7 Համասեռամոլ անձանց փոխհամաձայնության հիման վրա հարաբերությունների նկատմամբ գործող քրեական արգելքը, որը բարեհաջող բողոքարկվել է *«Դաջենն ընդդեմ ՄԹ-ի» (Dudgeon v UK)* (վերը՝ էջ 509) գործում, դատարանը որակել է որպես «բարոյականության... պաշտպանության» օրինական նպատակով կիրառված միջոց:
Դատարանը մանրամասնել է այս հիմնավորման շրջանակը՝ նկատելով, որ.

... կարող է նշանակել բարոյական առանձնահատկության կամ բարոյական չափորոշիչների պաշտպանություն, սակայն կարող է, ինչպես նշել է կառավարությունը, ընդգրկել նաև հասարակության առանձնահատուկ խմբի, օրինակ՝ դպրոցահասակ երեխաների բարոյական շահերի և բարեկեցության պաշտպանությունը:

8 *«Չապպելն ընդդեմ ՄԹ-ի» (Chappell v UK)* (վերը՝ էջ 622) գործում «այլ անձանց իրավունքների և ազատությունների» վկայակոչումն ունեցել է բարեհաջող ելք, քանի որ այս դեպքում Անտոն Պիլլերի կարգադրության շրջանակներում Չապպելի աշխատանքային տարածքի խուզարկությունը նպատակ է ունեցել պաշտպանել ֆիլմ արտադրողների մտավոր սեփականության իրավունքները և կանխել նրանց ֆիլմերի ապօրինի կրկնօրինակումը/տարածումը:

9 Մակիարգը տեսակետ է հայտնել, որ.

Մարդու իրավունքների և հասարակական շահի հիման վրա արվող բացառությունների հարաբերակցությունը ժամանակակից մարդու իրավունքների օրենսդրության կարևորագույն հարցերից է: Բացառությունների մեկնաբանությունը ոչ միայն առանցքային նշանակություն ունի իրավունքների գործնական օգտակարությունը որոշելու տեսանկյունից, այլև դա մի ոլորտ է, որտեղ դատարանն ակնհայտորեն կանգնած է քաղաքական կամ արժեքային ընտրություն կատարելու առջև, ինչը հարցեր է առաջացնում ոչ թե ժողովրդավարական, այլ դատական որոշման կայացման գործընթացի օրինականության առնչությամբ... Եվրոպական դատարանը և Մարդու իրավունքների հանձնաժողովը որոշել են, որ այդ հարաբերակցությունը խնդրահարույց է և ի վիճակի չէ զարգացնելու ստուգումների հետևողական շարք, որոնց հիման վրա հնարավոր կլինի որոշել, թե երբ են իրավունքները գերակայում հանրային շահի նկատմամբ և հակառակը: [A McHarg, Reconciling Human Rights and the Public Interest: Conceptual Problems and Doctrinal Uncertainty in the Jurisprudence of the European Court of Human Rights (1999) Modern Law Review 671 էջ 695]:

Արդյոք այս քննադատությունը համահո՞ւնչ է վերը նշված գործերի առնչությամբ ձեր ըմբռնմանը:

11 ՀՈԴՎԱԾ 9 ԽՂՃԻ, ՄՏՔԻ ԵՎ ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Դատարանի ընդհանուր մոտեցումը

«Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի»

(Kokkinakis v Greece A.260-A (1993) 17 EHRR 397)

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Պարոն Կոկինակիսը ծնվել է 1909 թ. և 1936 թ. հրաժարվելով ուղղափառ քրիստոնեությունից՝ անցել Եհովայի վկաների շարքերը: Այդ ժամանակից ի վեր Հունաստանի իշխանությունները մոտ 60 անգամ ձերբակալել են նրան՝ մարդկանց դավանափոխ անելու համար: Ինչի հետևանքով նա մի քանի անգամ մեկուսացվել և ազատազրկվել է: 1986 թ. պրն Կոկինակիսը և նրա կինը զանգահարել են տկն Կիրյակակիի տուն և զրուցել նրա հետ: Պարոն Կիրյակակին, որը եղել է տեղի ուղղափառ եկեղեցու երգիչը, զանգահարել է ոստիկանություն, որից հետո պրն և տկն Կոկինակիսները ձերբակալվել են: Նրանց դեմ մեղադրանքներ են հարուցվել թիվ 1363/1938 օրենքով, որում ասված է. «Դավանափոխությամբ զբաղվող յուրաքանչյուր անձ ենթակա է բանտարկության և տուգանքի... Դավանափոխություն ասելով՝ պետք է նկատի ունենալ, մասնավորապես, այլ կրոնական համոզմունքներ ունեցող անձի կրոնական համոզմունքները խարխլելու նպատակով նրա դավանանք ներխուժելու յուրաքանչյուր ուղղակի կամ անուղղակի փորձ, որը տեղի է ունենում անձին ինչ-որ ձևով շահագրգռելու կամ խոստում տալու կամ բարոյական օժանդակություն կամ նյութական օժանդակություն տրամադրելու կամ անձի անփորձությունը, վստահությունը, ցածր ինտելեկտը կամ պարզամտությունը չարաշահելու միջոցով»: Քրեական դատարանը մեղավոր է ճանաչել պրն և տիկին Կոկինակիսներին ուղղափառ քրիստոնյաների անփորձությունը, ցածր ինտելեկտը կամ պարզամտությունը չարաշահելու միջոցով դավանափոխությամբ զբաղվելու համար: Դատարանը շեշտել է, որ ամբաստանյալները գնացել են տկն Կիրյակակիի տուն և « ...ասել, որ լավ լուր ունեն հաղորդելու: Դրսևորելով աներես համառություն՝ նրանք կարողացել են մուտք գործել տուն, որից հետո սկսել են հատվածներ ընթերցել Աստվածաշնչից՝ մեկնաբանություններ անելով երկնային արքայի մասին, ... իրենց խելամիտ և վարժ բացատրություններով ... հորդորելով [տկն Կիրյակակիին], որ նա փոխի իր ուղղափառ քրիստոնեական հավատը: Ամբաստանյալներից յուրաքանչյուրը դատապարտվել է չորս ամսվա ազատազրկման: Նրանք վճիռը բողոքարկել են Կրետեի վերաքննիչ դատարանում, որը չեղյալ է հայտարարել տկն Կոկինակիսի նկատմամբ կայացված վճիռը, սակայն հաստատել է պրն Կոկինակիսի նկատմամբ կայացված վճիռը՝ նրա պատիժը հավասարեցնելով երեք ամսվա ազատազրկման: Այնուհետև վերջինս վճռաբեկ դատարանում վիճարկել է թիվ 1363/1938 օրենքի համապատասխանությունը սահմանադրությանը, սակայն վճռաբեկ դատարանը մերժել է նրա բողոքը: Այնուհետև պրն Կոկինակիսը դիմել է հանձնաժողովին՝ պնդելով, որ, ի թիվս այլոց, տեղի է ունեցել նաև 9-րդ հոդվածի խախտում: Հանձնաժողովը միաձայն որոշել է, որ առկա է այդ հոդվածի խախտում:

...

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

31. Ինչպես ամրագրված է 9-րդ հոդվածում, մտքի, խղճի և կրոնի ազատությունը կոնվենցիայի իմաստով «ժողովրդավարական հասարակության» անկյունաքարերից է: Դրա կրոնական ուղղությունը հավատացյալների ինքնության և կյանքի ընկալման մասը կազմող ամենակենսական տարրերից է, սակայն այն նաև արժեք է աթեիստների, ագնոստիկների, սկեպտիկների և անտարբերների համար: Բազմակարծությունը, որ անքակտելի է դարերի ընթացքում այնքան դժվարությամբ նվաճված ժողովրդավարական հասարակությունից, կախված է նրանից:

Կրոնական ազատությունը հիմնականում անձի խղճի հարց է, բայց այն նաև ենթադրում է, ի թիվս այլոց, «[սեփական] կրոնն ի ցույց դնելու» ազատություն: Խոսքով և գործով վկայելը ներհյուսված է կրոնական համոզմունքների գոյությանը:

Համաձայն 9-րդ հոդվածի՝ սեփական կրոնն արտահայտելու ազատությունը կարող է կիրառվել ոչ միայն համայնքում, «հասարակությունում» կամ միևնույն հավատքին պատկանող անձանց շրջանում, այլև՝ «առանձին» և «մեկուսի» պայմաններում: Բացի այդ, այն սկզբունքորեն ներառում է, օրինակ, «ուսուցանելու» միջոցով հարևանին համոզելու իրավունք, առանց որի 9-րդ հոդվածում ամրագրված «[սեփական] կրոնը կամ դավանանքը փոխելու ազատությունը», ամենայն հավանականությամբ, կմնա թղթի վրա:

...

33. 9-րդ հոդվածի 1-ին կետում երաշխավորված իրավունքների հիմնարար բնույթը արտացոլված է նաև դրանց նկատմամբ սահմանափակումներ նախատեսող կետի շարադրանքում: Ի տարբերություն 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների 2-րդ կետերի, որոնք վերաբերում են այդ հոդվածների 1-ին կետերում նշված իրավունքներին, 9-րդ հոդվածի համապատասխան կետը վերաբերում է միայն «անձի՝ կրոնը կամ դավանանքը ցուցադրելու* ազատությանը»: Այսպիսով, այն ճանաչում է, որ ժողովրդավարական հասարակություններում, որտեղ միևնույն ազգաբնակչությունը դավանում է տարբեր կրոններ, տարբեր խմբերի շահերը հաշտեցնելու և յուրաքանչյուր անձի դավանանքի նկատմամբ հարգանքը երաշխավորելու համար կարող է այս ազատությունը սահմանափակելու անհրաժեշտություն ծագել:

...

Բ. ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

36. Լասիթիի քրեական դատարանի նշանակած պատիժը, որը Կրետեի վերաքննիչ դատարանը նվազեցրել է, ... հավասար է միջամտության պրն Կոկինակիսի «կրոնը կամ դավանանքը ցուցադրելու ազատության» իրավունքի կիրառմանը: Այսպիսի միջամտությունը հակասում է 9-րդ հոդվածին, եթե այն «նախատեսված չէ օրենքով», ուղղված չէ 2-րդ կետում նշված օրինական նպատակներից մեկին և «անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում» դրանց ապահովման համար:

1. «ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՕՐԵՆՔՈՎ»

...

40. Դատարանն արդեն նկատել է, որ շատ օրենքներում օգտագործված ձևակերպումները բացարձակ հստակություն չունեն: Անհարկի խստությունից խուսափելու և փոփոխվող հանգամանքներին համընթաց քայլելու անհրաժեշտությունը նշանակում է, որ շատ օրենքներ անխուսափելիորեն շարադրված են այնպիսի ձևակերպումներով, որոնք այս կամ այն չափով զերծ չեն անորոշությունից (տե՛ս, օրինակ՝ *mutatis mutandis «Մյուլլերն ընդդեմ Շվեյցարիայի» (Muller v Switzerland)* 1988 թ. մայիսի 24-ի վճիռը, շարք A, թիվ 133, էջ 20, պարբ. 29): Դավանափոխության վերաբերյալ քրեական իրավունքի դրույթները պատկանում են այդ կատեգորիային: Այս օրենքների մեկնաբանությունը և կիրառումը կախված են գործելակերպից:

Այս դեպքում գոյություն է ունեցել ազգային մակարդակով հաստատված ամբողջական նախադեպային իրավունք... Այդ նախադեպային իրավունքը, որը հրապարակվել է և եղել հանրամատչելի, համալրել է 4-րդ բաժնի դրույթները և, որպես այդպիսին, հնարավորություն տվել պրն Կոկինակիսին այս առումով կարգավորել իր վարքագիծը:

Ինչ վերաբերում է թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժնի՝ սահմանադրությանը համապատասխան լինելու հանգամանքին, ապա դատարանը կրկնում է, որ ազգային օրենքի մեկնաբանությունը և կիրառումը նախ և առաջ ազգային մարմինների և, մասնավորապես, ազգային դատարանների խնդիրն են (տե՛ս, որպես ամենաթարմ աղբյուր, *«Հաջիանաստասիուն ընդդեմ Հունաստանի» (Hadjianastassiou v Greece)* 1992 թ. դեկտեմբերի 16-ի վճիռը, շարք A, թիվ 252, էջ 18, պարբ. 42): Հունաստանի դատարանները, որոնք զբաղվել են այս հարցով, որոշել են, որ նման անհամապատասխանություն գոյություն չունի...

---

* Կոնվենցիայի հայերեն տեքստում՝ «դավանելու» բառն անգլերեն «manifest» բառի ճիշտ թարգմանությունը չէ (ծնոթ. թարգմ.):

41. Հետևաբար, բողոքարկվող միջոցը կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով «նախատեսված է եղել օրենքով»:

2. ՕՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

42. Կառավարությունն առարկել է, որ ժողովրդավարական պետությունը պետք է երաշխավորի իր տարածքում ապրող բոլոր անձանց ազատությունների խաղաղ վայելքը: Եթե կառավարությունը, մասնավորապես, զգոնություն չդրսևորի անձի կրոնական դավանանքը և արժանապատվությունը անբարոյական և խաբեբայական միջոցներով ազդեցության ենթարկելու փորձերից պաշտպանելու համար, ապա 9-րդ հոդվածի 2-րդ կետը գործնականում կդառնա ոչ պիտանի:

43. Համաձայն դիմողի բացատրությունների՝ կրոնը «մարդկային մտքի հարափոփոխ հոսքի» մասն է, և հնարավոր չէ պատկերացնել, որ այն կարող է գոյություն ունենալ հասարակական բանավեճի շրջանակներից դուրս: Անձնական իրավունքների միջև արդար հավասարակշռություն պահպանելու համար անհրաժեշտ է, որ այլ անձանց մտքերի վրա կատարվող ներգործությունը նվազագույն լինի, այլապես արդյունքը կլինի «անասունների տարօրինակ հասարակություն», որը կկարողանա մտածել, բայց ... ոչ ինքնարտահայտվել, որը կկարողանա խոսել, բայց ... ոչ հաղորդակցվել, որը կկարողանա գոյատևել, բայց ոչ ... համատեղ գոյակցել»:

44. Հաշվի առնելով գործի հանգամանքները և համապատասխան դատարանների որոշումներում օգտագործված փաստացի արտահայտությունները՝ դատարանը կարծում է, որ վիճարկվող միջոցը համապատասխանել է այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությանը կոչված 9-րդ հոդվածի 2-րդ կետի օրինական նպատակին, որը և վկայակոչվել է կառավարության կողմից:

3. «ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ»

45. Պարոն Կոկինակիսը համարել է, որ համաքաղաքացու խոսելու իրավունքի սահմանափակումը (այն ժամանակ, երբ նա կրոնական թեմաներով զրույց վարելու համար գնացել է իր հարևանի մոտ) անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում: Նա ցանկացել է պարզել, թե ինչպես կարող է իր համոզմունքից բխած և բոլոր քրիստոնյաների համար ընդհանուր համարվող սուրբ գրքերի վրա հիմնված իր զրույցն առաջացնել այլ անձանց իրավունքների խախտում: Տիկին Կիրյակակին եղել է փորձառու և մտավոր կարողություններով օժտված չափահաս կին: Ուստի Եհովայի վկայի վարած զրույցը երգչի կնոջ հետ կարող էր քրեական հանցագործություն համարվել միայն մարդու հիմնարար իրավունքների անտեսման պարագայում: Բացի այդ, Կրետեի վերաքննիչ դատարանը, թեպետ ներկայացված փաստերը եղել են հստակ և բացարձակապես պարզ, չի կարողացել որոշում կայացնել գանգատարկուի կրոնական հավատքին Կոկինակիսի միջամտության փորձի ուղղակի կամ անուղղակի բնույթի վերաբերյալ: Նրա պատճառաբանությունից պարզ է, որ դատապարտել է դիմողին (Կոկինակիսին) «ոչ թե նրա կատարած արարքի, այլ ով լինելու համար»:

Հանձնաժողովը սկզբունքորեն ընդունել է այս փաստարկը:

46. Կառավարությունը պնդել է հակառակը, որ Հունաստանի դատարանները հիմնվել են դավանափոխության արարքի կատարումը փաստող պարզ ապացույցների վրա: Դրանք են՝ կեղծ պատրվակով տիկին Կիրյակակիի տուն մտնելու համար պրն Կոկինակիսի ցուցաբերած համառությունը, տիկնոջ վստահությունը շահելու համար նրա նկատմամբ դրսևորած մոտեցումը և Սուրբ Գրքի «հմուտ» վերլուծությունը, որը հետապնդել է «այդ դոկտրինի մասին պատշաճ պատկերացում» չունեցող հայցվորին «մոլորեցնելու» նպատակ (տե՛ս պարբ. 9-10): Նրանք նշել են, որ կրոնական հավատքի դեմ տեղի ունեցող արշավների նկատմամբ պետության կողմից անտարբերության դրսևորումը կարող էր հանգեցնել լուրջ խռովության, որ ամենայն հավանականությամբ կխախտեր սոցիալական խաղաղությունը:

47. Դատարանը հետևողականորեն վճռել է, որ միջամտության առկայությունը և անհրաժեշտության աստիճանը որոշելու առումով պետությունները պետք է ունենան հայեցողության որոշակի սահմաններ, սակայն այդ հայեցողության սահմանները պետք է ենթակա լինեն Եվրոպական [դատարանի] վերահսկմանը, ինչպես օրենսդրության, այնպես էլ դրանց վերաբերող որոշումների, այդ թվում՝ անկախ դատարանի կայացրած որոշումների մասով: Դատարանի խնդիրն է որոշել՝ ազգային մակարդակով ձեռնարկված միջոցները սկզբունքորեն արդարացված և համաչա՞փ են եղել:

Այս վերջին կետի վերաբերյալ որոշում կայացնելու համար դատարանը պետք է համադրի այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության պահանջներն այն վարքագծի հետ, որի համար մեղադրվում է դիմողը: Իր վերահսկիչ իրավասությունները կիրառելիս դատարանը պետք է վիճարկվող դատական որոշումներին նայի գործի բոլոր հանգամանքների տեսանկյունից (տե՛ս, ի թիվս այլոց, *mutatis mutandis* *«Բարֆոդն ընդդեմ Դանիայի» (Barfod v Denmark)* 1989 թ. փետրվարի 22-ի վճիռը, շարք A, թիվ 149, էջ 12, պարբ. 28):

48. Նախ՝ հարկ է տարբերակում մտցնել քրիստոնեական հավատքի վկայության և անպատշաճ դավանափոխության միջև: Առաջինը համապատասխանում է ճշմարիտ ավետարանականությանը, որը Եկեղեցիների համաշխարհային

խորհրդի հովանու ներքո 1956 թ. կազմած զեկույցի համաձայն՝ յուրաքանչյուր քրիստոնյայի և եկեղեցու բուն առաքելությունը և պատասխանատվությունն է: Երկրորդը կոռուպցիայի կամ աղավաղման արգասիք է: Ըստ այդ նույն զեկույցի՝ եկեղեցու նոր անդամներ հավաքագրելու նպատակով երկրորդի դեպքում կարող են կիրառվել նյութական կամ սոցիալական խթաններ, փորձության կամ կարիքի մեջ հայտնված մարդկանց վրա անհարկի ճնշում գործադրելու միջոցներ՝ ընդհուպ մինչև բռնության կամ ուղեղների լվացման միջոցները: Ավելի ընդհանրական ձևով սա համատեղելի չէ այլ անձանց մտքի, խղճի և կրոնի ազատության նկատմամբ հարգանքի հետ:

Թիվ 1363/1938 օրենքի 4-րդ բաժնի ուսումնասիրությունից պարզ է, որ Հունաստանի օրենսդրի ընդունած համապատասխան չափանիշները համադրելի են վերը թվարկվածների հետ միայն այն դեպքում և այնքանով, որքանով դրանք նախատեսված են անպատշաճ դավանափոխությունը պատժելու համար, որի ընդհանուր սահմանումն այս դեպքում դատարանը չպետք է տա:

49. Այնուամենայնիվ, դատարանը նկատում է, որ դիմողի պատասխանատվությունը հիմնավորելու համար Հունաստանի դատարաններն իրենց պատճառաբանության մեջ զուտ մեջբերումներ են կատարել 4-րդ բաժնի ձևակերպումներից և ըստ հարկի չեն մանրամասնել, թե ինչպես է մեղադրյալը, անպատշաճ միջոցների գործադրմամբ, փորձել համոզել իր հարևանին: Նրանց շարադրած փաստերից և ոչ մեկն այդպիսի եզրահանգման տեղիք չի տալիս:

Հետևաբար, չի ապացուցվել, որ այս գործի հանգամանքներում դիմողի դատապարտումն արդարացված է եղել հրատապ սոցիալական կարիքով: Ուստի վիճարկվող միջոցը չի եղել հետապնդվող օրինական նպատակին համաչափ կամ, հետևաբար, «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում ... այլ անձանց իրավունքները և ազատությունները պաշտպանելու համար»:

50. Ամփոփելով՝ տեղի է ունեցել կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում:

...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Վեց կողմ և երեք դեմ ձայներով վճռում է, որ տեղի է ունեցել 9-րդ հոդվածի խախտում:

...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի մեծամասնությունը կազմել են նախագահ Ռիսդալը և դատավորներ Բերնհարդտը, Փեթիթին, Դե Մեյերը, Մարտենսը և Լոպես Ռոշան:

Իր մասնակի համընկնող կարծիքում դատավոր Փեթիթին շեշտել է այս գործի կարևորությունը՝ որպես

... Եվրոպական դատարանի կողմից քննության առնված առաջին իրական գործ կրոնի ազատության վերաբերյալ...» (էջ 25): Այնուհետև նա հայտարարել է, որ մեծամասնության պատճառաբանությունը «...կարող էր ավելի լավ անդրադարձնել այն փաստը, որ 9-րդ հոդվածը տարածվում է նաև ոչ կրոնական բնույթի փիլիսոփայական հավատալիքների վրա, և դրա կիրառումը պետք է անձանց պաշտպանի տարբեր աղանդների չարաշահումներից: Սակայն պետության պատասխանատվությունը պետք է լինի ուղեղների լվացման փորձերի հանգեցող շեղումները կարգավորելու նպատակով օրենսդրության ընդունումը սովորական օրենքի շրջանակներում: Քրեական բնույթ չունեցող դավանափոխումը մնում է կրոնական ազատության հիմնական արտահայտությունը: Այլ անձանց դավանափոխ անելն ինքնին այդ անձանց ազատության և հավատքի դեմ կազմակերպված արշավ կամ նրանց իրավունքների խախտում չէ (պարբ. 27):

Նա եզրակացրել է, որ Հունաստանի օրենքը դավանափոխության մասին հակասել է կոնվենցիային, քանի որ միայն այն հանգամանքը, որ օրենքի կիրառման ժամանակ «անհարգելի դավանափոխում» արտահայտությունը եղել է Հունաստանի դատարանների կողմից կիրառվող չափանիշը, արդեն իսկ բավարար է, որ այդ օրենքը և դրան վերաբերող նախադեպային իրավունքը համարվեն 9-րդ հոդվածին հակասող» (էջ 25): Նման բան տեղի է ունեցել մեղադրանքի անհստակության և Հունաստանի օրենքում «դավանափոխություն» հասկացության հստակ սահմանման բացակայության պատճառով: Նրա տեսակետի գիտական հիմնավորման համար տե՛ս TJ Gunn, ‘Adjudicating Rights of Conscience Under the ECHR’ in JD van der Vyver and J Witte (ed), Religious Human Rights in Global Perspective (The Hague:Martinus Nijhoff, 1996):

Դատավոր Դե Մեյերը վկայակոչել է Le Petit Robert-ի բառարանում «դավանափոխություն» բառի սահմանումը, ըստ որի՝ դավանափոխությունը «դավանանքի տարածման նպատակով գործադրված եռանդը/ջանքն է»: Նա որոշել է, որ պրն Կոկինակիսը ցուցաբերել է այդպիսի եռանդ, սակայն չի գործել անբարեխղճորեն: Այսպես, օրինակ՝ տիկին Կիրյակակին թույլ է տվել նրան մտնել տան շեմից ներս և տնից դուրս չի հրավիրել նրան: Նմանապես, դատավոր Մարտենսը նկատել է, որ.

... այս վիճաբանության հիմքում ընկած երկու տարեց Եհովայի վկաների (դիմողն այդ ժամանակ եղել է 77 տարեկան) այցի նպատակը եղել է իրենց աղանդի գրականության տարածումը: Մինչդեռ այդ կինը, իր տան դուռը նրանց առջև փակելու փոխարեն, թույլ է տվել նրանց ներս մտնել, որովհետև կա՛մ չի կարողացել դիմադրել նրանց համառությանը, կա՛մ հավատացել է, որ նրանք լուրեր են բերել ցամաքում ապրող բարեկամներից: Բռնության որևէ հետք կամ որևէ այլ բան չկա, որը կարող է բնորոշվել որպես հարկադրանք: Վատագույն դեպքում դա եղել է շարքային սուտ: Այս դեպքում, եթե նույնիսկ քրեական վարույթ նախատեսվեր, ապա ամենախիստ տարբերակով այն կարող էր հարուցվել ընտանեկան անդորրը խախտելու հիմքով (էջ 33):

Որպես սկզբունքային հարց, նա նաև նշել է, որ 9-րդ հոդվածի հետ հակասություն է առաջանում նաև այն դեպքում, երբ անձանց կողմից այլ անձանց դավանափոխությանը նպաստելու հանգամանքը պետությունների կողմից դիտվում է որպես քրեական հանցագործություն: Նրա հետազոտությունները ցույց են տվել, որ Հունաստանը եղել է կոնվենցիայի անդամ միակ երկիրը, որը դավանափոխությունը, որպես այդպիսին, համարել է հանցագործություն:

Դատավոր Վալտիկոսը (ազգությամբ հույն ընտրված դատավորը) առարկել է մեծամասնության կարծիքին ինչպես 9-րդ հոդվածի շրջանակի, այնպես էլ փաստերի գնահատման առումով.

... նախատեսված է երաշխավորելու համար կրոնական խաղաղությունը և հանդուրժողականությունը, թույլ չտալու համար կրոնական բախումները և նույնիսկ պատերազմները, մասնավորապես, երբ այդքան շատ աղանդների հաջողվում է կասկածելի միջոցներով հաջողությամբ գրավել պարզ և պարզամիտ հոգիներին... . Ես կարող եմ ավելացնել, որ 9-րդ հոդվածում «ուսմունք» [կոնվենցիայի հայերեն տեքստում այս բառը չկա- ծան. թարգմ.] բառն անկասկած վերաբերում է դպրոցի կամ կրոնական հաստատությունների ծրագրում ընդգրկված կրոնական ուսմունքին և ոչ թե դռնեդուռ քարոզին, ինչը տեղի է ունեցել այս դեպքում (էջ 30):

Ինչ վերաբերում է Հունաստանի օրենքի՝ քրեական դավանափոխություն հասկացության սահմանմանը, նա համարել է, որ.

այս սահմանումը, կամ ինչպես կողմնակի անձը կարող է որակել այն, այլ անձանց հավատքի բռնաբարությունը, չի կարող որևէ կերպ համարվել կոնվենցիայի 9-րդ հոդվածին հակասող սահմանում: Հակառակը, այն որպես այդպիսին նպատակ ունի պաշտպանելու անձանց «կրոնական հավատի ազատությունը (էջ 31):

Փաստերին տված նրա գնահատականը եղել է հետևյալը.

... մենք ունենք մարտնչող Եհովայի վկա, որը դավանափոխության հմուտ գիտակ է, դավանափոխության մասնագետ և քրեական դատարանների զոհ, որի ավելի վաղ դատավճիռները միայն ավելացրել են նրա մարտունակությունը: Մյուս կողմից՝ մենք ունենք կատարյալ զոհ՝ ի դեմս ուղղափառ եկեղեցու երգչի պարզամիտ կնոջ: Եթե հաջողվեր դավանափոխել նրան, ապա ի՞նչ հաղթանակ: Եվ այդ անձը հարձակում է գործում այդ կնոջ վրա, շեփորում, որ լավ լուր ունի նրա համար (բառախաղն ակնհայտ է, սակայն, անկասկած, ոչ այդ կնոջ համար) [խոսքը անգլերեն triumph-հաղթանակ և trumpet-շեփորել բառերի մասին է], կարողանում է շեմից ներս մտնել: Որպես փորձառու վաճառական և հավատքի խորամանկ մատակարար՝ նա ցանկացել է տարածել և անխոնջ քարոզել համընդհանուր խաղաղության և ճառագող երջանկության սքեմով խորամանկորեն փաթեթավորված իր մտավոր ապրանքները: Իրոք, ո՞վ չի ցանկանա խաղաղություն և երջանկություն: Սակայն մի՞թե սա պրն Կոկինակիսի հավատքի զուտ ցուցադրություն է և մի՞թե եկեղեցու երգչի կնոջ պարզ հոգին մոլորության մեջ գցելու փորձ չէ: Արդյոք կոնվենցիան առաջարկո՞ւմ է պաշտպանություն այսպիսի նախաձեռնություններից: Անշուշտ ո՛չ (էջ 31):

Համադրե՛ք փաստերի այս շարադրանքը դատավոր Մարտենսի ներկայացրածների հետ: Դատավորներ Ֆոյգելը և Լուազոն նույնպես առարկել են: Ինչպես դատավոր Վալտիկոսը, նրանք վճռել են,

որ Հունաստանի՝ անօրինական դավանափոխության սահմանումը համապատասխանել է 9-րդ հոդվածին: Բացի այդ.

«ուսուցանել» բառը ենթադրում է բացություն և շիտակություն և այս դեպքում՝ անձի տուն մուտք գործելու, նրա քաղաքավարությունը և հյուրընկալությունը չարաշահելու, մասնագիտական կրթություն չունեցող այդ անձի՝ աստվածաբանական ուսմունքին ծանոթ չլինելու կամ այդ ուսմունքի հարցում անփորձ լինելու հանգամանքից օգտվելու միջոցով նրան դավանափոխ անելու համար կիրառված զարտուղի ու անպատշաճ միջոցների կամ կեղծ պատրվակների բացակայություն... Հարկադրանքի ազդեցություն ունեցող անընդունելի հոգեբանական միջոցների կիրառմամբ այլ անձանց դավանափոխելու որոշ մոլեռանդների համառ ջանքերը, մեր կարծիքով, չեն կարող մտնել այդ հոդվածի 1-ին կետում նշված «ուսուցանել» բառի սովորական իմաստի մեջ (էջ 40–1):

2 Կին ոստիկան էդջը նկատել է որ.

Այս դեպքում կրոնական ազատությունը հիմնավորելու համար մեծամասնությունը կիրառում է երկու հիմնավոր մոտեցում: Առաջինը սոցիալական մոտեցումն է, համաձայն որի՝ կրոնական ազատությունը նպաստում է այնպիսի բազմակարծ հասարակության ձևավորմանը, որտեղ բոլորն իրենց համարում են այդ պետության հասարակության մասը: Երկրորդ մոտեցումը որոշ չափով հիմնված է անձի անձեռնմխելիությանը նմանվող անձի զարգացման փաստարկի վրա, որն անձին օժտում է անձնական զարգացման և ինքնորոշման հնարավորություններով: [Current Problems in Article 9 of the ECHR) [1996] Juridical Review 42 at p 47.]

3 *Կոկինակիսի (Kokkinakis)* գործում ցուցաբերած մոտեցումը դատարանն այնուհետև կիրառել է *«Լարիսիսն ընդդեմ Հունաստանի» (Larissis v Greece*, 1998-I 362) գործում, որում շոշափվել են Հունաստանի զինված ուժերում ծառայող սպաների կողմից այլ հավատքի պատկանող անձանց դավանափոխ անելու գործողությունները: Երեք դիմողները եղել են օդուժում ծառայող սպաներ և տեղակայված են եղել մի վաշտում, որտեղ ծառայել են նաև հիսունականների եկեղեցուն (այս եկեղեցին իր բոլոր անդամներին պարտավորեցնում է զբաղվել դավանափոխությամբ) դավանող անձինք: Ըստ օդաչու Ա-ի՝ դիմողներից երկուսը յոթ տարբեր առիթներով նրան ներքաշել են կրոնական զրույցների մեջ, որոնց ընթացքում պնդել են, որ իրենց եկեղեցու անդամներից ոմանք ունեն օտար լեզվով խոսելու աստվածատուր կարողություն: Բազմիցս, երբ նա վերադարձել է արձակուրդից, վերջիններս շարունակաբար հարցրել են նրան, թե արդյոք նա այցելե՞լ է հիսունականների եկեղեցի: Օդաչու Կ-ն պնդել է, որ դիմողները մոտ ութսուն անգամ իրեն ներքաշել են աստվածաբանական քննարկումների մեջ: Օդաչու Ն. Կ.-ն, որը սկսել է հաճախել հիսունականների եկեղեցի, հայտնել է, որ ինքը դիմողներին դիմել է իր հոժար կամքով, սակայն նրա հայրը պնդել է, որ Ն. Կ.-ն եղել է խիստ ենթարկվող բնավորություն ունեցող երիտասարդ: Դիմողներից մեկը կանչվել է եղբայր հավատացյալներից մեկի տուն, որտեղ վերջինս սաղմոս էր կարդում՝ կոչ անելով ողջ ընտանիքին և հարևաններին միանալ հիսունականների եկեղեցուն: Տիկին Զ.-ն, որի ամուսինը սկսել է հաճախել հիսունականների եկեղեցի, այցելել է դիմողների տները, որտեղ նրանք թախանձել են նրան ընդունել իրենց հավատքը: Նա նաև հայտնել է, որ դիմողներն ասել են իրեն, որ ինքը և իր երեխաները գտնվում են սատանայի ազդեցության տակ: Նրա մոտ առաջացել են հոգեկան խնդիրներ, և նա որոշել է խզել բոլոր կապերը դիմողների և նրանց եկեղեցու հետ: Հունաստանի ռազմական դատարանները դատապարտել են դիմողներին այլ անձանց դավանափոխությամբ զբաղվելու համար (այն նույն օրենքի շրջանակներում, որը նրանք կիրառել էին *Կոկինակիսի (Kokkinakis)* դեպքում) և դատապարտել նրանց մոտ մեկ տարվա ազատազրկման, որը կարող էր փոխարինվել ֆինանսական տույժերով: Սակայն դատարանը կասեցրել է այս տույժերի վճարումը՝ պայմանով, որ երեք տարվա ընթացքում դիմողները նոր իրավախախտումներ չգործեն: Դիմողները բողոքել են հանձնաժողովին՝ պնդելով, որ, ի թիվս այլոց, տեղի է ունեցել 9-րդ հոդվածում ամրագրված իրենց իրավունքների խախտում: Քսանչորս կողմ և հինգ դեմ ձայներով՝ հանձնաժողովը որոշել է, որ քաղաքացիական անձանց [դավանափոխելու համար նշանակված պատիժը] առաջացրել է 9-րդ հոդվածի խախտում, սակայն վճռել է, որ կրտսեր զինվորական անձնակազմին [դավանափոխելու համար նշանակված պատիժը] այդ հոդվածի խախտում չի առաջացրել: Դատարանը վերահաստատել է *Կոկինակիսի* գործում արտահայտված «պատշաճ» և «անպատշաճ» դավանափոխության տարբերությունները: Այնուամե-

նայնիվ, դիմողների՝ իրենց ենթակաների և քաղաքացիական անձանց նկատմամբ դրսևորած վարքագծի հարցում հաշվի են առնվել տարբեր գործոններ: Առաջինի դեպքում.

... Դատարանը նկատում է, որ զինված ուժերի կյանքին բնորոշ հիերարխիական կառույցները կարող են երանգ հաղորդել զինվորական անձնակազմի հարաբերությունների յուրաքանչյուր կողմին և ենթակայի համար դժվարացնել ավելի բարձր կոչումով անձի նկրտումներին հակադրվելը կամ վերջինիս սկսած խոսակցությանը չմասնակցելը: Այսպիսով, այն, ինչ քաղաքացիական միջավայրում կարող է դիտվել որպես անմեղ մտքերի փոխանակություն, որն ունկնդիրը կարող է ընդունել կամ մերժել, զինվորական միջավայրում կարող է դիտվել որպես լիազորությունների չարաշահմամբ տեղի ունեցող հետապնդման ձև կամ անհարկի ճնշման գործադրում: Պետք է շեշտել, որ կոչումով ոչ հավասար անձանց միջև կրոնի կամ այլ զգայուն հարցերի մասին ոչ բոլոր ձևերի քննարկումներն են մտնում այս կատեգորիայի մեջ: Այնուամենայնիվ, հանգամանքների բերումով պետությունները կարող են արդարացնել զինված ուժերի ստորադաս անդամների իրավունքների պաշտպանությանն ուղղված հատուկ միջոցների ձեռնարկումը (պարբ. 51):

Դատարանի մեծամասնությունը՝ յոթ կողմ և երկու դեմ ձայներով, որոշել է, որ կրտսեր անձնակազմին դավանափոխելու համար դիմողների դատապարտումները չեն առաջացրել 9-րդ հոդվածի խախտում: Այնուամենայնիվ, յոթ կողմ և երկու դեմ ձայներով, դատարանը եզրակացրել է, որ քաղաքացիական անձանց դավանափոխելու համար նրանց նշանակված պատիժներն առաջացրել են 9-րդ հոդվածի խախտում, քանի որ դիմողներն անպատշաճ չեն վարվել, և քաղաքացիական անձինք նրանց պատասխանելու առումով չեն գտնվել նույնպիսի ճնշման և սահմանափակումների տակ, որոնց տակ գտնվել են օդուժի կրտսեր օդաչուները: Իր չհամընկնող կարծիքում դատավոր Վալտիկոսը, որին միացել է դատավոր Մորինիյան, որոշել է, որ «...սպայի հագուստի պատիվն ազդեցություն ունի նույնիսկ քաղաքացիական անձանց վրա...»: Դիմողների փաստաբանը քննադատել է այս որոշումը, քանի որ, նրա կարծիքով «...դատարանը հաճախ խիստ պահպանողական է և հարգալից անդամ պետություններում գործող օրենսդրության նկատմամբ»: (J.W.Montgomery, When is Evangelism Illegal? (1998) New Law Journal 524, էջ 525): Արդյոք դատարանի պատճառաբանությունը կիրառելի՞ է նաև հիերարխիական կառուցվածք ունեցող այլ պետական կազմակերպությունների, ինչպես, օրինակ՝ ոստիկանության նկատմամբ: Ի՞նչ կարծիք կարող է լինել ոչ հավասար մասնագիտական հարաբերությունների (օրինակ՝ բժիշկներ - հիվանդներ, ուսուցիչներ -աշակերտներ) համատեքստում դավանափոխության գործողությունների մասին:

Այն սահմանափակումները, որոնք զինվորական կարիերան կարող է դնել 9-րդ հոդվածով նախատեսված իրավունքների կիրառման վրա, արծարծվել են *Կալաջի (Kalac)* գործում, որը դիտարկված է ստորև՝ էջ 640:

4 Պետությունների և այդ պետությունների իրավական համակարգերի կողմից գեղարվեստական արտահայտման ոլորտում անձանց կրոնական հավատքն այլ անձանց զրպարտանքից և ծաղրից պաշտպանելու աստիճանի վերաբերյալ որոշում կայացնելիս հանձնաժողովը և դատարանը հանդիպել են որոշակի դժվարությունների՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ արվեստի գործիչները կարող էին վիճարկել՝ վկայակոչելով 10-րդ հոդվածով իրենց վերապահված խոսքի ազատության իրավունքը (տե՛ս ստորև՝ էջ 699): *«Չոուդհուրին ընդդեմ ՄԹ-ի» (Choudhury v UK* (1991) 12 HRLJ 172) գործի դեպքում դիմողը բողոքել է, որ Անգլիայի օրենքը չի կարողացել պաշտպանել 9-րդ հոդվածով վերապահված իր կրոնական ազատության իրավունքը: Լինելով մահմեդական՝ պրն Չոուդհուրին դիմել է բարձր դատարան՝ պահանջելով թույլատրել իրեն՝ որպես մասնավոր անձի հետապնդում սկսել Սալման Ռուշդիի և նրա «Սատանայական բանաստեղծություններ» գրքի հրատարակիչների դեմ, սակայն բարձր դատարանը մերժել է նրա դիմումը: Ըստ դիմողի՝ իսլամի առաջնորդների վերաբերյալ արտահայտած տեսակետների պատճառով այդ գործը սրբապիղծ ստեղծագործություն է: Բարձր դատարանը վճռել է, որ համաձայն Անգլիայի օրենքի՝ սրբապղծությունը՝ որպես հանցագործություն, վերաբերում է միայն քրիստոնեական հավատքի դեմ ուղղված հրապարակումներին (տե՛ս *«R-ն [Թագուհին] ընդդեմ գլխավոր վարձատրվող քաղաքային մագիստրատի Չոուդհուրիի առնչությամբ» (R v ChiefMetropolitan Stipendiary Magistrate, ex p*

Choudhury [1991] 1 All ER 306)): Հանձնաժողովը միաձայն հայտարարել է, որ դիմումն անընդունելի է, քանի որ.

[Պարոն Չոուդհուրին] չի պնդում, և ակնհայտ է, որ որևէ պետական մարմին կամ որևէ այլ մարմին, որի համար Միացյալ Թագավորության կառավարությունը կարող է կոնվենցիայով պատասխանատվություն կրել, ուղղակիորեն չի միջամտել դիմողի՝ իր կրոնը կամ հավատը ցուցադրելու ազատությանը:

Հետևաբար, խնդիրն այն է, թե արդյոք 9-րդ հոդվածով նախատեսված ազատությունը կարո՞ղ է նաև ներառել այնպիսի անձանց դեմ առանձնահատուկ վարույթ սկսելու իրավունք, որոնք իրենց հեղինակած գործերի կամ հրապարակումների միջոցով վիրավորել են անձի կամ անձանց խմբի զգացմունքները: Տվյալ գործում հանձնաժողովը չի գտնում որևէ ցուցում առ այն, որ կոնվենցիայի 9(1) հոդվածով սահմանված ազատություններին ուղղված միջամտությունից ազատ լինելու և դիմողի բողոքների միջև կապ կա:

Հետևաբար, դիմումի այս մասը պետք է հայտարարվի 27(2) հոդվածի իմաստով կոնվենցիայի դրույթների հետ անհամատեղի ratione materiae [իրավախախտման օբյեկտի գործոն] (էջ 172-3):

Քանի որ դիմողի ներկայացրած ըստ էության գանգատը չի մտել 9-րդ հոդվածի պաշտպանության ոլորտ, հանձնաժողովը նաև անընդունելի է համարել 14-րդ հոդվածով նրա ներկայացրած գանգատը, համաձայն որի՝ սրբապղծության մասին Անգլիայի օրենքը խտրականություն է դնում իսլամի և քրիստոնեության միջև: Այսպիսով, հանձնաժողովը չի ցանկացել 9(1) հոդվածին տալ այնպիսի մեկնաբանություն, որով այն հավատացյալներին իրավունք է վերապահում դատական կարգով հետապնդում սկսել այն անձանց դեմ, ովքեր վիրավորել են իրենց հավատը:

Այնուամենայնիվ, 10-րդ հոդվածի կիրառման համատեքստում դատարանը հայտարարել է, որ որոշակի հանգամանքներում պետությունները պարտավոր են պաշտպանել հավատացյալներին իրենց հավատի դեմ կատարվող ծայրահեղ գրոհներից: *«Օտտո Փրեմինգեր ինստիտուտն ընդդեմ Ավստրիայի» (Otto-Preminger Institute v Austria* (1994) 19 EHRR 34, A.295-A) գործի դեպքում դիմող կազմակերպությունն Ինսբրուկում տնօրինել է մշակույթի տուն-կինոթատրոն: 1985 թ. մայիսին նրանց կինոցանկում ընդգրկված է եղել Das Liebeskonzil («Երկնքի խորհուրդը») ֆիլմը, որը հիմնված է եղել տասնիններորդ դարի գրող Օսկար Պանիցայի նույնանուն պիեսի սյուժեի վրա: Ընդ որում, պիեսի տպագրության համար Գերմանիայի դատարանները 1895 թ. Պանիցային մեղավոր են ճանաչել սրբապղծություն կատարելու մեջ և նրան նշանակել ազատազրկման պատիժ: Ըստ դատարանի՝ ֆիլմում ... եբրայական, քրիստոնեական և մահմեդական կրոնների աստվածը ներկայացված է որպես ակնհայտորեն ծեր մարդ, որը փռված է սատանայի առջև և նրա հետ կրքոտ համբույր փոխանակելով՝ նրան անվանում է իր ընկերը... Ֆիլմի մեկ այլ տեսարանում կույս Մարիամը թույլ է տալիս, որ իր համար ընթերցեն անպատկառ պատմություններ: Կա նաև այնպիսի տեսարան, որտեղ ցուցադրվում է Մարիամի և սատանայի միջև զարգացող էրոտիկ լարվածությունը: Չափահաս Հիսուս Քրիստոսը ներկայացված է որպես մտավոր խիստ հետամնաց անձնավորություն... (22-րդ պարբ): Ֆիլմի ցուցադրության մասին դիմողը տեղեկացրել է իր 2700 հանդիսատես-անդամներին, նաև գովազդել այն Ինսբրուկում ընդհանուր հանրության շրջանում՝ գովազդային վահանակների և տեղական թերթում կարճ հայտարարություններ զետեղելով: Հայտարարություններում նշված է եղել նաև, որ մուտքն ազատ է միայն 17 տարին լրացած անձանց համար: Ինսբրուկի հռոմեական կաթոլիկ եկեղեցու համայնքը (տիրոլեացիների 87%-ը դավանել է կաթոլիկություն) պահանջել է դատախազից քրեական հետապնդում սկսել դիմողի դեմ՝ նրա առաջարկած ֆիլմի ցուցադրության կապակցությամբ: Դատախազը քրեական գործ է հարուցել դիմող կազմակերպության կառավարչի դեմ և «Լրատվության մասին» օրենքի հիման վրա դատարանից պահանջել թույլ տալ արգելք դնել ֆիլմի վրա: Տարածքային դատարանը կարգադրել է, որ ժապավենն անմիջապես արգելքի տակ դրվի: Այնուհետև տարածքային դատարանը հաստատել է ֆիլմի առգրավումը: Դիմողը վիճարկել է, որ այս կարգադրությունները հավասար են 10-րդ հոդվածով նախատեսված խոսքի ազատության իր իրավունքի խախտման: Ինը կողմ և հինգ դեմ ձայներով հանձնաժողովը եզրակացրել է, որ ժապավենն արգելքի տակ դնելու գործողությունն առաջացրել է 10-րդ հոդվածի խախտում: Նաև որոշել է (տասներեք կողմ և մեկ դեմ ձայներ), որ ժապավենի առգրավումը նույնպես տեղիք է տվել նման խախտման առաջացման: Ավստրիայի կառավարությունը դատարանի առջև առարկել է, որ դատարանի կարգադրություններն անհրաժեշտ են եղել «այլ անձանց իրավունքների պաշտպանության», մասնավորապես՝ տիրոլեա-

ցիների կրոնական դավանանքի իրավունքի պաշտպանության համար և, հետևաբար, կարող էին արդարացվել 10(2) հոդվածով (այս դրույթի հետագա մանրամասները ներկայացված են ստորև՝ էջ 754): Դատարանի մեծամասնությունը համաձայնել է այս փաստարկին.

Այն անձինք, ովքեր որոշել են օգտվել իրենց կրոնն ի ցույց դնելու ազատությունից, անկախ այն հանգամանքից՝ նրանք դա անում են որպես կրոնական մեծամասնություն թե փոքրամասնություն, չեն կարող ողջամտորեն ակնկալել, որ քննադատությունից դուրս են: Նրանք պետք է հանդուրժեն և ընդունեն, որ կողմնակի անձինք կարող են ժխտել իրենց դավանանքը և նույնիսկ տարածել այնպիսի ուսմունքներ, որոնք անհարիր են իրենց հավատին: Այնուամենայնիվ, այս կրոնական դավանանքին և ուսմունքներին հակադրվելու կամ այդ կրոնական դավանանքը և դոկտրինները մերժելու ձևն այնպիսի խնդիր է, որը կարող է տեղիք տալ պետության պատասխանատվության և հատկապես 9-րդ հոդվածով նախատեսված իրավունքների խաղաղ վայելքը երաշխավորելու նրա պատասխանատվության առաջացման: Իրոք, ծայրահեղ դեպքերում կրոնական հավատալիքներին հակադրվելու կամ դրանք ժխտելու նպատակով կիրառված առանձնահատուկ մեթոդները կարող են լինել այնպիսիք, որոնք խանգարում են այս հավատքին դավանող անձանց կիրառել այն դավանելու և արտահայտելու ազատությունը:

Կոկինակիսի (Kokkinakis) գործի վերաբերյալ վճռում դատարանը 9-րդ հոդվածի համատեքստում հայտարարել է, որ պետությունը կարող է օրինականորեն անհրաժեշտ համարել այնպիսի միջոցներ ձեռնարկել, որոնք ուղղվեն այլոց մտքի, խղճի և դավանանքի հետ անհամատեղի համարվող որոշակի վարքագծի, ներառյալ տեղեկությունների և գաղափարների տարածման կասեցմանը: Այն դեպքում, երբ տեղի է ունենում հավատացյալների կրոնական պաշտամունքի օբյեկտների սադրիչ արտապատկերում, կարող է օրինական հիմք գոյություն ունենալ՝ կարծելու համար, որ տեղի է ունեցել 9-րդ հոդվածով երաշխավորված հարգանքի խախտում: Միևչդեռ այդպիսի արտապատկերումը կարող է համարվել հանդուրժողականության ոգու (որը նույնպես պետք է լինի ժողովրդավարական հասարակության առանձնահատկությունը) չարամիտ խախտում:

Մեծամասնությունը, ներառյալ նախագահ Ռիսդալը և դատավորներ Գյոլչյուքլուն, Մաթշերը, Ուոլշը, Մակդոնալդը և Գոտչևը, այնուհետև վկայակոչել են հայեցողության սահմանի վիճելի սկզբունքը (տե՛ս ստորև՝ էջ 663) և որոշել, որ ժապավենը կալանքի տակ վերցնելը/առգրավումը «անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում, և 10-րդ հոդվածի խախտում չի եղել:

... Հասարակությունում կրոնի դերի մասին ընդհանուր ըմբռնում Եվրոպայում հնարավոր չէ հայտնաբերել: Նույնիսկ միևնույն երկրի տարածքում այդ ըմբռնումները կարող են տարբեր լինել: Այդ իսկ պատճառով հնարավոր չէ ընդհանրական ձևակերպում տալ, թե ինչն է խոսքի ազատության կիրառմանն ուղղված ընդունելի միջամտություն, երբ տվյալ արտահայտությունն ուղղված է այլ անձանց կրոնական զգացմունքների դեմ: Այդ է պատճառը, որ ազգային մարմիններին պետք է վերապահվեն հայեցողության որոշակի սահմաններ, երբ նրանք գնահատում են այսպիսի միջամտության գոյությունը և անհրաժեշտությունը (պարբ. 50):

Երեք չհամընկնող կարծիք հայտնած դատավորները՝ Փալմը, Փեքանենը և Մակարչիկը, որոշել են, որ.

Կոնվենցիան բառացի չի երաշխավորում կրոնական զգացմունքների պաշտպանության իրավունքը: Մասնավորապես՝ այսպիսի իրավունքը չի կարող բխեցվել կրոնի ազատության իրավունքից, որն արդյունքում ընդգրկում է այլ անձանց կրոնական կարծիքների մասին քննադատական տեսակետների արտահայտումը:

Այնուամենայնիվ, պետք է ընդունել, որ 10-րդ հոդվածի նպատակի համար հասարակության որոշ անդամների կրոնական զգացմունքները քննադատությունից և չարաշահումից պաշտպանելը կարող է որոշ չափով օրինական լինել: Հանդուրժողականությունը գործում է երկու ուղղությամբ, և հասարակության ժողովրդավարական բնույթը կխախտվի, եթե կրոնական խմբի համբավի վրա բռնի և վիրավորական գրոհներ թույլ տրվեն: Հետևաբար, պետք է ընդունվի նաև, որ «ժողովրդավարական հասարակությունում կարող է անհրաժեշտ լինել սահմանափակումներ կիրառել այսպիսի հանրային քննադատության կամ վիրավորանքի արտահայտման վրա: Այսքանով, սակայն սրանից ոչ ավելի չափով, մենք կարող ենք համաձայնել մեծամասնության կարծիքին (պարբ. 6):

Այնուամենայնիվ, հաշվի առնելով դիմողի նախազգուշացումները, որոնք նա արել է իր հնարավոր ունկնդիրներին ֆիլմի բնույթի վերաբերյալ, և այն փաստը, որ ֆիլմը կարող էին դիտել միայն չափահաս և դրա համար վճարող մեծահասակները, չհամընկնող կարծիք հայտնածները չեն համարել, որ ժապավենի առգրավումը Ավստրիայի իշխանությունների ձեռնարկած համաչափ միջոց է եղել:

Ավելի ուշ լսված *«Ուինգրոուվն ընդդեմ ՄԹ-ի» (Wingrove v UK* (1996) 24 EHRR 1, 1996-V 1937) գործի դեպքում դատարանի մեծամասնությունը հաստատել է, որ Ֆիլմերի դասակարգման բրիտանական խորհրդի կողմից դիմողի «էքստազի տեսիլքներ» վերնագրով տասնութրոպեանոց ֆիլմին դասակարգման վկայագիր չտալը եղել է օրինական քայլ: Դիմողի՝ ֆիլմի ռեժիսորի խոսքով, ֆիլմում երկխոսություններ չեն եղել, և դրա սյուժեի հիմքում ընկած է եղել Սուրբ Թերեզա Ավիլացու՝ տասնվեցերորդ դարի կարմելիացի կույսի կյանքի պատմությունը: Վերջինս Հիսուս Քրիստոսին առնչվող էքստազային տեսիլքներ է ունեցել: Ըստ դատարանի նկարագրության՝ ֆիլմում ցույց է տրվել « ... ի թիվս այլոց, մի կին, որը ոտքերը բացած նստած է խաչված Քրիստոսի վրա և ակնհայտորեն զբաղվում է սեռական բնույթի գործողությամբ» (պարբ. 61): Խորհուրդը և ավելի ուշ Տեսանյութերի բողոքարկման կոմիտեն եզրակացրել են, որ տեսանյութը եղել է սրբապիղծ, որի պատճառով նրան չպետք է վկայական տրվի: Դիմողը հայտնել է, որ այս որոշումները խախտել են 10-րդ հոդվածով նախատեսված իր խոսքի ազատության իրավունքը: Հանձնաժողովը, տասնչորս կողմ և երկու դեմ ձայներով, որոշել է, որ առկա է այդ հոդվածի խախտում: Կառավարությունը հիմնվել է *Օտտո Փրեմինգեր ինստիտուտի (Otto-Preminger Institute)* գործի վերաբերյալ դատարանի կայացրած վճռի վրա, որպեսզի վիճարկի, որ պետությունները կարող են սահմանափակել կրոնական պաշտամունքի առարկաների սադրիչ պատկերումները, որպեսզի երաշխավորեն հարգանքը տվյալ կրոնի հետևորդների կրոնական հավատքի նկատմամբ: Դատարանի մեծամասնությունը, ներառյալ նախագահ Բերնհարդտը և դատավորներ Տոիր Վիլջաուլմսոնը, Փեթիթին, Մորինիյան, Ֆրիլենդը, Միֆսուդ Բոնիչին և Գոտչևը, համաձայնել են, որ 10(2) հոդվածով պետությունները կարող են սահմանափակում կիրառել տեսանյութերի նկատմամբ, որպեսզի պաշտպանեն այլ քաղաքացիների կրոնական զգացմունքները չվիրավորելու իրավունքը:

Ճշմարիտ է, որ *«R-ն [Թագուհին] ընդդեմ գլխավոր վարձատրվող քաղաքային մագիստրատի Չոուդհուրիի առնչությամբ» (R v Chief Magistrate, ex p Choudhury)* գործի վերաբերյալ Թագուհու նստարանի դատարանը (Divisional Court) ճանաչել է, որ այն երևույթը, որ Անգլիայի բազմակրոն հասարակությունում սրբապղծության մասին օրենքը տարածվում է միայն քրիստոնեական հավատքի վրա, անոմալիա է: Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանի խնդիրը չէ վերացականորեն որոշում կայացնել կոնվենցիային ազգային օրենքի համապատասխանության վերաբերյալ: Դատարանի առջև բարձրացված հարցը չի վերաբերում նրան, թե ինչքանով է Անգլիայի օրենքը պաշտպանում այլ դավանանքները, և դատարանը պետք է իր ուշադրությունը կենտրոնացնի իրեն ներկայացված գործի վրա: Վեճի առարկա չհանդիսացող այն փաստը, որ սրբապղծության մասին օրենքը հավասար վերաբերմունք չի դրսևորում Անգլիայում դավանվող բոլոր կրոնների նկատմամբ, օրինականությունից չի զրկում է ներկա համատեքստում հետապնդվող նպատակը (պարբ. 50):

Հետևելով *Օտտո-Փրեմինգեր ինստիտուտի (Otto-Preminger Institute)* գործի դեպքում ցուցաբերված մոտեցմանը՝ դատարանը վճռել է, որ կրոնական դավանանքին վերաբերող արտահայտությունների առումով պետություններն օժտված են հայեցողության լայն սահմաններով:

Թեպետ կոնվենցիայի 10(2) հոդվածով քաղաքական ելույթի կամ հասարակության համար հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ տեղի ունեցող վիճաբանությունների նկատմամբ սահմանափակումների շրջանակ գրեթե չկա, բարոյականության և հատկապես կրոնի ոլորտում անձանց ինտիմ անձնական համոզմունքներին վերաբերող խոսքի ազատության կարգավորման առումով պետություններն օժտված են հայեցողության էլ ավելի մեծ աստիճանով: Բացի այդ, ինչպես և բարոյականության ոլորտում, այնպես էլ կրոնական համոզմունքները հարձակումից պաշտպանելու ոլորտում «այլ անձանց իրավունքների պաշտպանության» շուրջ եվրոպական համաձայնություն գոյություն չունի, և միգուցե գոյություն չունի էլ ավելի լայն առումով: Այն, ինչը կարող է զգալիորեն վիրավորել որոշակի կրոնական համոզմունքի դավանող անձանց, նայած ժամանակին և վայրին, տարբեր է, հատկապես մի դարաշրջանում, որը բնութագրվում է հավատքի և աղանդների բազմազանությամբ: Սկզբունքորեն, պետական մարմինները, որոնք ուղղակի և շարունակական կապ ունեն իրենց երկրների կարևոր ուժերի հետ, շատ ավելի լավ դիրքում են, քան միջազգային դատավորը, որպեսզի կարծիք հայտնեն այլ անձանց իրավունքներին վերաբերող պահանջների բուն բովանդակության, ինչպես նաև այդ նյութից այլ անձանց պաշտպանելու նպատակով «սահմանափակման անհրաժեշտության» վերաբերյալ, այն դեպքում, երբ այդ նյութը կարող է վիրավորել այդ մարդկանց ամենախոր զգացմունքները և համոզմունքները (պարբ. 58):

Դատավոր Դե Մեյերը, իր առանձին կարծիքում անդրադառնալով սրբապղծության մասին քրեական օրենքին, ասել է, որ «... այս կարգի օրենքների անհրաժեշտությունը հարցականի տակ է: Ես ավելի

շուտ միանում եմ պրն Պատտենի [ներքին գործերի նախկին նախարարի] դիտողությանը, որ հավատացյալների համար «ծաղրի և սրբապղծության դեմ ուղղված լավագույն զրահը նրանց հավատքի ուժն է» (պարբ. 4): Մեկ այլ չհամընկնող կարծիք հայտնող դատավոր Լոհմուսը մտահոգված է եղել, որ.

> Կանխավ սահմանափակման (գրաքննության) դեպքերում տեղի է ունենում իշխանությունների կողմից միջամտություն խոսքի ազատությանը, թեպետ հասարակության անդամները, որոնց զգացմունքները ձգտում են պաշտպանել, նման միջամտության պահանջ չեն ներկայացրել: Այդ միջամտությունը հիմնված է իշխանությունների կարծիքի վրա, ըստ որոնց՝ իրենք ճիշտ են ըմբռնում իրենց կողմից պաշտպանվող զգացմունքները: Բուն հավատացյալների կարծիքը մնում է անհայտ: Ես կարծում եմ, որ սա է պատճառը, թե ինչու չենք կարող եզրակացնել, որ միջամտությունը համապատասխանել է «հրատապ սոցիալական կարիքին»:
>
> Սրբապղծության մասին օրենքը միայն պաշտպանում է քրիստոնեական հավատքը, իսկ ավելի որոշակի՝ Անգլիկան եկեղեցին: Միջամտությունը, հետևաբար, նպատակ է ունեցել պաշտպանել քրիստոնեական հավատքը, ոչ թե այլ հավատքներ: Սա ինքնին հարց է առաջացնում, թե արդյոք միջամտությունը «անհրաժե՞շտ է եղել ժողովրդավարական հասարակությունում» (պարբ. 3-4):

Լորդ Լեսթերը, քննադատելով մեծամասնության կողմից *Ուինգրոուվի (Wingrove)* գործի վերաբերյալ կայացված վճիռը, որակել է այն որպես «վախվորած որոշում»: «Ես չեմ տարբերակում բավարար տրամաբանական, փիլիսոփայական կամ դատավարական հիմքը, համաձայն որի՝ քաղաքական արտահայտման և մամուլի ազատությունը պետք է ենթակա լինեն ավելի ուժեղ պաշտպանության, քան արվեստի և մշակույթի արտահայտությունները: Նրանց միջև տարբերակումները կամայական են և չգործող: Արվեստի, գրականության և երաժշտության բազմաթիվ հանրահայտ գործեր արգելվել են այն պատճառով, որ ցնցել են կամ վիրավորել քաղաքական, կրոնական, սեռական կամ տիրող ուղղափառության գեղագիտական բարքերը»: (‘Universality versus Subsidiarity: A Reply’ [1998] EHRLR 73 at 77.)

5 Բժշկության դոկտոր Էվանսը կարծիք է հայտնել, որ

> ... Ստրասբուրգի մարմինները հենց իրենք են կրոնի ազատությունը վերածել ոչ միայն կրոնների միջև, այլև կրոնի ազատության և այլ մարդու իրավունքների միջև փոխադարձ հարգանքի ընդհանուր խառնուրդի: Սրանից պարզ է, որ թեպետ միջազգային օրենքը կարող է նախատեսել որոշակի աստիճանի կրոնական ազատության պաշտպանություն, չի կարող այնքան հեռու գնալ, որքան անհրաժեշտ են համարում որոշ հավատացյալներ ...(Religious Liberty and International Law in Europe (Cambridge: Cambridge University Press, 1997), at 365).

Հոդված 9(1)

Մտքի, խղճի և կրոնի ազատություն. պաշտպանվող հավատներ

1 Պացիֆիզմը ճանաչվել է որպես 9(1) հոդվածով պաշտպանվող հավատ: *«Էրոուսմիթն ընդդեմ Մեծ-ի» (Arrowsmith v UK* (1978) 3 EHRR 218) գործի դեպքում «Անհնազանդության հրահրման մասին» 1934 թ. օրենքի համաձայն՝ դիմողը դատապարտվել է 18 ամսվա ազատազրկման՝ Անգլիայում գտնվող զինվորական բազայից դուրս թռուցիկների տարածման և զինվորական անձնակազմին Հյուսիսային Իռլանդիայում ծառայությունից հրաժարվելու կոչեր անելու համար: Նա պնդել է, որ նրա դատապարտումը և պատիժը 9(1) հոդվածով իր պացիֆիստական հավատն ի ցույց դնելու իրավունքի խախտում է: Կառավարությունն ընդունել է պացիֆիզմի սահմանումը որպես «անձի տեսական և գործնական պարտավորություն, համաձայն որի՝ իր քաղաքական կամ այլ նպատակներին հասնելու համար նա երբևէ մեկ այլ անձի դեմ որևէ պարագայում ուժ կամ ուժի սպառնալիք չի կիրառելու, նույնիսկ ի պատասխան ուժի սպառնալիքի կամ կիրառման»: Հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ.

... պացիֆիզմը որպես փիլիսոփայություն և, մասնավորապես, այն ձևով, որով այն սահմանված է վերը, մտնում է մտքի և խղճի ազատության ոլորտի մեջ: Պացիֆիզմն իր կարգավիճակով, հետևաբար, կարող է դիտվել որպես հավատ («համոզմունք»), որը պաշտպանվում է 9(1) հոդվածով (պարբ. 69):

Այդ ժամանակ հանձնաժողովը քննության է առել, թե արդյոք թռուցիկներ տարածելու միջոցով միս էրոուսմիթն ի ցո՞ւյց է դրել իր հավատքը (այս թեմայի ընդհանուր քննությունը ներկայացված է ստորև՝ էջ 451):

... 9(1) հոդվածում կիրառված «արտահայտելու» [practice] բառը չի վերաբերում կրոնի կամ հավատի վրա հիմնված կամ դրանց ազդեցության տակ արված յուրաքանչյուր գործողության: Ճիշտ է, որ ընդհանուր առմամբ պացիֆիզմի գաղափարը հռչակող հրապարակային հայտարարությունները, որոնք թախանձաբար կոչ են անում պարտավորվել երբևէ բռնություն չկիրառել, կարող են համարվել պացիֆիստական հավատի սովորական և ճանաչված ցուցադրություն: Այնուամենայնիվ, երբ անձանց գործողությունները փաստորեն չեն արտահայտում այդ հավատը, չեն կարող համարվել որպես 9(1) հոդվածով պաշտպանվող գործողություններ, եթե անգամ առաջացել են դրանից կամ արվել են դրա ազդեցությամբ (պարբ. 71):

էրոուսմիթի թռուցիկների բովանդակությունն ուսումնասիրելուց հետո հանձնաժողովը եզրակացրել է, որ դրանք չեն արտահայտել պացիֆիստական դիրքորոշումներ, այլ եղել են Հյուսիսային Իռլանդիայում բրիտանական զինված ուժերի գործունեությանը հակադրվելու քաղաքականություն: Հետևաբար, թռուցիկների տարածումը պաշտպանվող հավատի արտահայտություն չի եղել, և էրոուսմիթի դատապարտումը/բանտարկությունը 9-րդ հոդվածի խախտում չի առաջացրել: Այնուհետև, Նախարարների կոմիտեն համաձայնել է հանձնաժողովի կարծիքին (Res. DH(79)4):

2 *«C-ն ընդդեմ Մեծ-ի» (C v UK) (1983)* 37 D & R 142) գործով դիմողը եղել է քվակեր (Quaker): Պացիֆիզմն ընկած է քվակերների հավատի հիմքում: Ուստիև դիմողը հրաժարվել է վճարել իր եկամտահարկի 40%-ը, որը պետք է հատկացվեր պաշտպանության բյուջեին: Պետեկամուտների տեսչությունը դիմել է դատարան, որը հաստատել է C-ի հարկային պարտավորությունը՝ ողջ գումարի չափով: Նա բողոքել է հանձնաժողովին, որ Բրիտանիայի իշխանությունների հարկադրանքը, այն է՝ վճարել պաշտպանության ծախսերի համար նախատեսված հարկերը, հակասել է 9(1) հոդվածին՝ առաջացնելով իր խղճի կոպիտ ոտնահարում և խախտելով իր հավատը գործողությամբ ցուցադրելու իրավունքը: Հետևելով *էրոուսմիթի (Arrowsmith)* հիմնավորմանը՝ հանձնաժողովը հայտարարել է, որ.

9-րդ հոդվածը պաշտպանում է անձնական հավատալիքների և կրոնական դավանանքի ոլորտը, այսինքն՝ այն ոլորտը, որը երբեմն անվանվում է forum internum [խղճի իրավունքների շրջանակ]: Բացի այդ, այն պաշտպանում է այս մոտեցումների հետ խիստ սերտորեն կապված գործողությունները, այդ թվում նաև՝ երկրպագության կամ նվիրումի գործողությունները, որոնք դավանանքի կամ հավատքի արտահայտման ընդհանուր ճանաչում ունեցող ձևեր են: Կոնվենցիայի 9-րդ հոդվածը միշտ չէ, որ հանրային ոլորտում երաշխավորում է այդ հավատքի թելադրանքով վարվելու իրավունք: Օրինակ՝ այն չի պաշտպանում որոշ հարկերի վճարում կատարելուց հրաժարումն այն պատճառով, որ դրանց արդյունքում ձևավորված բյուջեի մի մասը տրամադրվելու է ռազմական ծախսերին...

Սրանից հետևում է, որ 9-րդ հոդվածը դիմողին չի օժտում իր համոզմունքների հիման վրա օրենսդրությունը խախտելու իրավունքով այն դեպքում, երբ այդ օրենսդրության կիրառումն ապահովվում է կոնվենցիայով, և երբ այդ օրենսդրությունը չեզոք է և ընդհանուր առմամբ կիրառվում է հանրային ոլորտում՝ չառաջացնելով 9-րդ հոդվածով երաշխավորված ազատությունների խախտում (էջ 147):

Ուստի հանձնաժողովը եզրակացրել է, որ դիմումն ակնհայտորեն վատ է հիմնավորված:

3 Քրիստոնեություն դավանող անձնավորությունը հրաժարվել է մասնակցել իր բնակության վայրի կանտոնի կազմակերպած քաղաքացիական պաշտպանության դասընթացներին, նրան նշանակվել է տուգանք և ազատազրկում՝ նշված դասընթացների մասնակցությունից հրաժարվելու համար: Նա կարծել է, որ դասընթացների նպատակը եղել է մասնակիցներին ներշնչել այն գաղափարը, որ քիմիական և միջուկային պատերազմները նորմալ երևույթներ են, ոչ թե մարդու հիմնարար իրավունքների խախտումներ. *«Ֆադինին ընդդեմ Շվեյցարիայի» (Fadini v Switzerland* (1993) 16 EHRR CD13):

Հանձնաժողովը վճռել է՝ քանի որ 4(3)(բ) հոդվածով պետությունները պարտավորություն չեն ունեցել ազատելու անձանց զինվորական կամ քաղաքացիական ծառայությունից, ապա հնարավոր չէ 9-րդ հոդվածը մեկնաբանել այնպես, որ այն քաղաքացիներին օժտում է նման իրավունքով: Հետևաբար, դիմումը եղել է ակնհայտորեն վատ հիմնավորված:

4 *«Վալսամիսն ընդդեմ Հունաստանի»* և *«Էֆստրատիուն ընդդեմ Հունաստանի» (Valsamis v Greece and Efstratiou v Greece* (1996) 24 EHRR 294, 1996-VI 2312 and 2347) գործերի դեպքում ծնողները պահանջել են, որ իրենց երեխաներն ազատվեն Հունաստանի Ազգային օրվա կապակցությամբ կազմակերպված շքերթի մասնակցությունից: Ծնողների առարկությունը պայմանավորված է եղել «Եհովայի վկաներ» կազմակերպությանը նրանց անդամակցությամբ, որոնց հավատքին անհարիր են պատերազմական կամ բռնի վարքագիծը և գործելակերպը: Եղել են փոքրաթիվ համայնքներ, որտեղ դպրոցական շքերթներին զուգահեռ տեղի են ունեցել զինվորական շքերթներ: Ուստի դիմողները խնդրել են, որ իրենց երեխաներին թույլ տրվի չմասնակցել համապատասխան շքերթներին, թեպետ այդ տոնակատարությունների ժամանակ զինվորականներ ներկա չեն եղել: Երեխաների դպրոցների տնօրենները մերժել են նրանց խնդրանքները՝ առաջնորդվելով կրթության և կրոնի հարցերի նախարարության թողարկած շրջաբերականով, համաձայն որի՝ որևէ երեխա չպետք է ազատվի ազգային տոնակատարություններին մասնակցելուց: Երեխաները չեն մասնակցել շքերթին, ինչի հետևանքով դպրոցի տնօրենները պատժել են նրանց՝ մեկ օրով հեռացնելով դպրոցից: Ծնողները բողոքել են հանձնաժողովին՝ պնդելով, որ, ի թիվս այլոց, տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի (պետությունները պետք է հարգեն կրթության և ուսուցման ոլորտում ծնողների կրոնական և փիլիսոփայական համոզմունքները) և 9-րդ հոդվածի խախտում: Յոթ դատավորից բաղկացած դատարանի մեծամասնությունը եզրակացրել է, որ.

> Թեպետ դատարանի խնդիրը չէ որոշում կայացնել դպրոցների ուսումնական ծրագրերի կառուցվածքի և պլանավորման առնչությամբ Հունաստանի որոշումների վերաբերյալ, զարմացած է, որ դպրոցից հեռացվելու (թեկուզ միայն մեկ օրով) վտանգի տակ աշակերտներից կարող է պահանջվել տոն օրերին դպրոցի տարածքում մասնակցել շքերթի: Այնուամենայնիվ, դատարանը չի կարող շքերթի նպատակի կամ դրա կազմակերպման մեջ հայտնաբերել որևէ բան, որը կարող է թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի երկրորդ նախադասության մեջ նշված չափով վիրավորել դիմողների պացիֆիստական համոզմունքները: Ազգային իրադարձությունների այսպիսի տոնակատարություններն ուրույն ձևով ծառայում են պացիֆիստական նպատակներին և հանրային շահին: Այդ օրը Հունաստանում տեղի ունեցող որոշ շքերթների ժամանակ զինվորականների ներկայությունն ինքնին չի փոխում շքերթի բնույթը (պարբ. 31):

Հետևաբար, արձանագրության կամ 9-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել: Դատավորներ Տոիր Վիլջաուլմսոնը և Զեմբրեկը չեն համաձայնել սրան: Նրանց կարծիքով.

> Վիկտորյա Վալսամիսը հայտնել է, որ շքերթը (որին նա չի մասնակցել) ունեցել է այնպիսի բնույթ և խորհրդանիշներ, որոնք ակնհայտորեն հակառակ են եղել իր չեզոք, պացիֆիստական և, այդպիսով, իր կրոնական հավատքին: Մենք այն կարծիքին ենք, որ դատարանը պետք է ընդունի, որ Վիկտորյայի մասնակցությունն այդ շքերթին անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում: Եվ մենք ինքներս որևէ հիմք չենք տեսնում, որ նրա մասնակցությունը եղել է անհրաժեշտ, եթե անգամ այդ հրապարակային միջոցառումը մարդկանց մեծ մասի համար եղել է ազգային արժեքների և միության արտահայտություն (էջ 32):

Չհամընկնող կարծիք հայտնած դատավորների համար Հունաստանի իշխանությունների գործողությունները հավասար են եղել թիվ 1 արձանագրությամբ ամրագրված ծնողների իրավունքների և 9-րդ հոդվածում ամրագրված երեխաների իրավունքների խախտման:

5 Եհովայի վկաների պացիֆիստական հավատալիքներն ընկած են եղել նաև *«Ծիրլիսը և Կուլումպասն ընդդեմ Հունաստանի» (Tsirlis and Kouloumpas v Greece* (1997) 25 EHRR 198, 1997-III 909) գործի հիմքում: Իրենց կրոնական դավանանքի պատճառով գործով հանդես եկող Եհովայի վկաները հրաժարվել են զինվորական ծառայությունից: Հակառակ այն փաստին, որ սկսած 1970 թ.՝ Հունաստանի գերագույն վարչական դատարանը «Եհովայի վկաներ» կազմակերպությունը ճանաչել է որպես «հայտնի կրոն», և 1988 թ. ընդունվել է օրենք, ըստ որի՝ բոլոր հայտնի կրոնների հոգևո-

րականներն ազատվում են զինվորական ծառայությունից, ռազմական դատարանները դիմողներին մեղավոր են ճանաչել ենթակայության կարգի խախտման համար՝ նշանակելով նրանց չորս տարվա ազատազրկման պատիժ: Դատարանը միաձայն վճռել է, որ ռազմական մարմինների կողմից դիմողների նկատմամբ դրսևորված վերաբերմունքը հակասել է 5(1) հոդվածով ամրագրված ազատության իրավունքին, քանի որ Հունաստանի օրենքը նախատեսել է, որ նրանց կարգի հոգևորական անձինք ազատվում են զինվորական ծառայությունից: Կատարելով այսպիսի եզրակացություն՝ դատարանը հարկ չի համարել քննության առնել 9-րդ հոդվածի խախտումը՝ վկայակոչված դիմողների կողմից:

6 Ոչ կրոնական բնույթի այլ դավանանքները, օրինակ՝ բուսապաշտությունը (վեգանիզմը), հանձնաժողովի կողմից ընդունվել են որպես այնպիսի դավանանքներ, որոնք ենթակա են 9(1) հոդվածի պաշտպանության: Օրինակ՝ *«Հ-ն ընդդեմ Մեծ-ի» (H v UK* (1993) 16 EHRR CD 44) գործով հանդես եկող դիմողը եղել է ազատազրկման դատապարտված բանտարկյալ, որը հրաժարվել է աշխատել բանտի տպարանում, քանի որ կարծել է, թե ներկերի մի մասն ունեցել է կենդանական ծագում, և, որպես բուսապաշտ՝ նա հայտնել է կենդանական ծագում ունեցող նյութերի հետ աշխատելու իր առարկությունը: Բանտի ղեկավարությունը նրան մեղավոր է ճանաչել կարգապահական խախտում կատարելու համար, որի հետևանքով նա տուգանվել է և կորցրել իր պատժի չափից ներված երկու օրը: Հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ «...կենդանական ծագում ունեցող ապրանքների նկատմամբ բուսապաշտների համոզմունքները մտնում են 9(1) հոդվածի շրջանակների մեջ... » (էջ 45): Այնուամենայնիվ, հանձնաժողովը որոշել է, որ կառավարությունը կարող է 9(2) հոդվածով արդարացնել իր գործողությունները որպես Հ-ի իրավունքների համաչափ միջամտություն, որը կատարվել է բանտային համակարգում կարգի պահպանության շահերից ելնելով: Հետևաբար, որոշվել է, որ նրա բողոքը եղել է ակնհայտորեն վատ հիմնավորված:

7 *«Բուսկարինին ընդդեմ Սան Մարինոյի» (Buscarini v San Marino* (1999) 30 EHRR 208) գործում դատարանը հստակ շարադրել է, որ 9-րդ հոդվածը վերաբերում է կրոնական հավատալիքներ չունենալու կամ կրոն դավանելու ազատությանը: 1993 թ. դիմողներն ընտրվել են Սան Մարինոյի Հանրապետության խորհրդարանի անդամ: Այնուամենայնիվ, նրանց թույլ չեն տվել ստանալ իրենց խորհրդարանական մանդատները, քանի դեռ նրանք չեն երդվի հետևյալ բառերով. «Սուրբ ավետարանով ... երդվում եմ հավատարիմ լինել և հետևել հանրապետության սահմանադրությանը...»: Երդման ձևակերպման առնչությամբ դիմողները հայտնել են իրենց առարկությունը, քանի որ համարել են, որ դա խախտում է 9-րդ հոդվածով իրենց վերապահված կրոնի և խղճի ազատությունը: Հանձնաժողովը միաձայն պաշտպանել է բողոքը: Դիմողի գործի նկատմամբ 9-րդ հոդվածի մեկնաբանության և կիրառման առումով դատարանը նույնպես դրսևորել է միաձայն մոտեցում: «Այդ ազատությունը ենթադրում է, ի թիվս այլոց, կրոնական համոզմունքներ ունենալու կամ չունենալու, կամ կրոնին դավանելու կամ չդավանելու ազատություն» (պարբ. 34): Կառավարությունը փորձել է առարկել, որ հաշվի առնելով Սան Մարինոյի պատմությունը, ավանդույթները և սոցիալական կառուցվածքը՝ խորհրդարանականներից երդում պահանջելն անհրաժեշտ է եղել հասարակական կարգի պահպանության համար: Սակայն դատարանը չի համարել, որ այդպիսի պարտավորությունն անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում:

> Դատարանը չի կասկածում, որ Սան Մարինոյի օրենքն ընդհանուր առմամբ երաշխավորում է խղճի և կրոնի ազատությունը: Տվյալ դեպքում, այնուամենայնիվ, դիմողներին այնպիսի պահանջ ներկայացնելը, որ նրանք պետք է երդում տային Ավետարանի վրա, հավասար է եղել բնակչության առանձին ներկայացուցիչներից կրոնին հավատարմության երդում տալու պահանջի, որը չի համապատասխանում 9-րդ հոդվածին: Ինչպես հանձնաժողովն իրավացիորեն նշել է իր զեկույցում, խորհրդարանի շրջանակներում տարբեր տեսակետներ ներկայացնելու համար նախատեսված մանդատի տրամադրումը հատկապես հավատքի առնչությամբ հավատարմության հայտարարություններից կախման մեջ դնելը տարակուսելի կլիներ (պարբ. 39):

Հետևաբար, դատարանի կարծիքով՝ տեղի է ունեցել 9-րդ հոդվածի խախտում:

Անձի՝ կրոնը կամ դավանանքն ի ցույց դնելու իրավունքը

.....

***«Կալաջն ընդդեմ Թուրքիայի» (Kalac v Turkey** 1997-IV 1199, (1997) 27 EHRR 552)*
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Կալաջը ծառայել է Թուրքիայի օդային ուժերում որպես դատավոր-փաստաբան: 1990 թ. նա ունեցել է ավիացիայի կապիտանի կոչում և ծառայել գերագույն հրամանատարությունում որպես իրավաբանական գործերի տնօրեն: 1990 թ. ընթացքում գերագույն ռազմական խորհուրդը, որի կազմում եղել են վարչապետը, պաշտպանության նախարարը, աշխատակազմի ղեկավարը և տասնմեկ գեներալներ, կարգապահական խախտումների և սկանդալային պահվածքի համար կարգադրել են ծառայությունից ազատել երեք սպայի, ներառյալ դիմողը, և քսանութ զինվորական կոչում չունեցող պաշտոնյաները: Դիմողը մեղադրվել է «անօրինական ֆունդամենտալիստական կարծիքներ ունենալու» մեջ: Այնուհետև հանրապետության նախագահը հաստատել է այդ կարգադրությունը: Դիմողը փորձել է վիճարկել այն զինված ուժերի գերագույն վարչական դատարանի առջև, սակայն այդ մարմինը որոշել է, որ կարգադրության նկատմամբ որևէ իրավասություն չունի: Հանձնաժողովի առջև դիմողը պնդել է, որ հեռացվել է իր պաշտոնից միայն իր կրոնական համոզմունքների պատճառով՝ ի խախտումն 9-րդ հոդվածի: Հանձնաժողովը միաձայն որոշել է, որ առկա է այդ հոդվածի խախտում:

...

25. Կառավարությունն առարկել է, որ դատարանին ներկայացված խնդրի հիմքում ընկած է եղել հետևյալ հարցը. պրն Կալաջին պե՞տք է թույլ տրվեր շարունակել ծառայությունը զինված ուժերում: Նրա հարկադիր պաշտոնաթողությունը միջամտություն չի եղել նրա խղճի, կրոնի կամ հավատի իրավունքին, այլ նպատակ է ունեցել ռազմական իրավաբանական ծառայությունից հեռացնել մի անձի, որն ի ցույց է դրել թուրք ազգի հիմնարար արժեքի՝ աշխարհիկության նկատմամբ իր հավատարմության բացակայությունը, այն դեպքում, երբ զինված ուժերի խնդիրն է եղել երաշխավորել այն: Դիմողը, եթե ոչ պաշտոնապես, ապա փաստացի պատկանել է «Սուլեյմանի» աղանդին և մասնակցել իր անօրինական ֆունդամենտալիստական ուղղվածությամբ հայտնի Սուլեյման համայնքի գործունեությանը: Դատարանին հասցեագրված հուշագրին կցված տարբեր փաստաթղթերը ցույց են տվել, որ դիմողը դրան իրավաբանական օժանդակություն է ցույց տվել, մասնակցել ուսումնական նիստերին և մի քանի անգամ միջամտողի դերում ներկայացել աղանդի անդամ հանդիսացող զինծառայողների նշանակումների ժամանակ: Այս փաստաթղթերի հիման վրա զինվորական ամենաբարձր էշելոններին պատկանող հինգ սպաներից բաղկացած կոմիտեն եզրակացրել է, որ աղանդի առաջնորդների հրահանգները ստանալով և կատարելով՝ ավիացիայի կապիտան Կալաջը խախտել է զինվորական կարգապահությունը և պետք է, հետևաբար, պաշտոնանկ արվեր համաձայն «Զինվորական անձնակազմի մասին» ակտի 50(գ) բաժնի: Գերագույն զինվորական խորհուրդն իր որոշումով հիմնվել է բարձր հրամանատարության և օդային նավատորմի աշխատակազմի ղեկավարի հաստատմանն արժանացած այս կարծիքի վրա:

Վերջապես, Թուրքիայում զինված ուժերում սեփական կրոնին դավանելու/սեփական կրոնն արտահայտելու համար ստեղծված են եղել պայմաններ ոչ միայն մահմեդականների, այլև այլ կրոնների դավանող անձանց համար: Այնուամենայնիվ, զինծառայողների դեպքում 9-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունը չի կարող տարածվել ֆունդամենտալիստական շարժման անդամակցության վրա, այնքանով, որքանով նրա անդամների գործունեությունը կարող է բացասաբար անդրադառնալ բանակի հիերարխիական հավասարակշռության վրա:

26. Հանձնաժողովը, ելնելով կառավարության ներկայացրած փաստաթղթերից, հայտնել է, որ դիմողի հարկադիր պաշտոնանկությունը միջամտություն է 9-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված նրա իրավունքին, և համարելով, որ համապատասխան դրույթները կամայական որոշումների դեմ համապատասխան պաշտպանություն չեն ապահովել, եզրակացրել է, որ տեղի է ունեցել այդ դրույթի խախտում, քանի որ համաձայն երկրորդ կետի իմաստի՝ այդ միջամտությունը նախատեսված չի եղել օրենքով: Պատվիրակը նկատել է, որ ի պաշտպանություն դատարանին ներկայացրած իր հուշագրի, կառավարությունը ներկայացրել է փաստաթղթեր, որոնց մասին ասվել է, որ «ազգային անվտանգության շահերի նկատառումներով դրանք գաղտնի փաստաթղթեր են»: Ամեն դեպքում, այդ փաստաթղթերը չեն պաշտպանել այն փաստարկը, որ պրն Կալաջը որևէ կապ է ունեցել տվյալ աղանդի հետ:

27. Դատարանը կրկնում է, որ եթե կրոնական ազատությունը անձի խղճին վերաբերող հարց է, այն նաև ենթադրում է, ի թիվս այլոց, սեփական կրոնը ոչ միայն այլ անձանց համայնքում, այլև հրապարակավ, ինչպես նաև նույն կրոնը

դավանող անձանց հետ համատեղ, առանձին և մեկուսի արտահայտելու ազատություն (տե՛ս *«Կոկկինակիսն ընդդեմ Հունաստանի» (Kokkinakis v Greece)* 1993 թ. մայիսի 25-ի վճիռը, շարք A, թիվ 260-A, էջ 17, պարբ. 31): 9-րդ հոդվածը թվարկում է այն ձևերը, որոնց միջոցով որևէ անձ կարող է ի ցույց դնել իր դավանանքը կամ հավատը: Դրանք են՝ երկրպագությունը, քարոզչությունը, [հավատքի] արարողակարգերի և ծեսերի պահպանումը: Այնուամենայնիվ, 9-րդ հոդվածը չի պաշտպանում դավանանքի կամ հավատքի անունով արված յուրաքանչյուր գործողություն: Բացի այդ, իր կրոնն ի ցույց դնելու ազատությունից օգտվելու ժամանակ անձից կարող է պահանջվել հաշվի առնել իր առանձնահատուկ դրությունը:

28. Ընտրելով ռազմական կարիերան՝ պրն Կալաջն իր հոժար կամքով համաձայնել է զինվորական կարգապահության համակարգին, որի միայն բնույթն արդեն նշանակում է, որ զինված ուժերում ծառայող անձանց որոշ իրավունքների և ազատությունների նկատմամբ կարող են կիրառվել սահմանափակումներ, որոնք, սակայն, չեն կարող կիրառվել քաղաքացիական անձանց նկատմամբ (տե՛ս *«Էնգելը և այլք ընդդեմ Նիդեռլանդների» (Engel and Others v Netherlands)* գործով 1976 թ. հունիսի 8-ի վճիռը, շարք A, թիվ 22, էջ 24, պարբ. 57): Իրենց զինված ուժերի համար պետությունները կարող են ընդունել այս կամ այն վարքագիծն արգելող և, մասնավորապես, զինվորական ծառայության պահանջներն անդրադարձնող հաստատված կարգի նկատմամբ քշնամական վերաբերմունքն արգելող կանոնակարգեր:

29. Անվիճելի է, որ դիմողը կարողացել է կատարել յուրաքանչյուր մահմեդականի կրոնական հավատքի արտահայտման նորմալ ձևեր համարվող իր պարտականություններն այն սահմաններում, որոնք գործել են՝ հաշվի առնելով զինվորական կյանքի պահանջները: Օրինակ՝ նրան թույլ է տրվել օրական հինգ անգամ աղոթել և կատարել իր այլ կրոնական պարտականությունները, այդ թվում նաև՝ Ռամադանի ժամանակ ծոմ պահել և աղոթքի համար ուրբաթ օրերին մզկիթ հաճախել:

30. Բացի այդ, գերագույն զինվորական խորհրդի կարգադրության հիմքում ընկած են եղել ոչ թե նրա կրոնական կարծիքները կամ հավատալիքները կամ այն ձևը, որով նա կատարել է իր կրոնական պարտավորությունները, այլ նրա վարքագիծը և պահվածքը: Ըստ Թուրքիայի իշխանությունների՝ նրա վարքագիծը խախտել է զինվորական կարգապահությունը և ոտնահարել աշխարհիկության սկզբունքը:

31. Հետևաբար, դատարանը եզրակացնում է, որ դիմողի հարկադիր պաշտոնաթողությունը հավասար չի եղել միջամտության 9-րդ հոդվածով երաշխավորված նրա իրավունքին, քանի որ դրա պատճառն այն ձևը չի եղել, որով դիմողն ի ցույց է դրել իր կրոնը:

Հետևաբար, 9-րդ հոդվածի խախտում չի եղել:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

...

Վճռում է, որ կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում չի եղել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում են եղել նախագահ Ռիսդալը և դատավորներ Գյոլչյուքլուն, Փեթիթին, Ռուսոն, Շպիլմանը, Ֆոյգելը, Ֆրիլենդը, Բական և Գոտչևը:

2 Դատարանի վճիռը ցույց է տալիս, որ անձի կրոնը կամ հավատքը ցուցադրելու իրավունքն ավելի սահմանափակ է, քան մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը: Դիմողը, որն իր մասնագիտական գործունեության ոլորտն ընտրել էր իր կամքով, պետք է ընդունած լիներ իր կրոնն ի ցույց դնելու այն անհրաժեշտ սահմանափակումները, որոնց կիրառումը պայմանավորված է եղել այդ մասնագիտությամբ:

3 *«Ահմադն ընդդեմ ՄԹ-ի» (Ahmad v UK* (1981) 4 EHRR 126) գործի քննության ժամանակ այս իրավունքի նկատմամբ հանձնաժողովը դրսևորել է համանման մոտեցում: Որպես նվիրյալ մահմեդական՝ պրն Ահմադն ունեցել է ամեն ուրբաթ մզկիթ հաճախելու կրոնական պարտավորություն, եթե գտնվեր մզկիթից ոտքի ճանապարհի հեռավորության վրա: 1968-1972 թթ. նա որպես ուսուցիչ լրիվ

դրույքով աշխատել է Ստորին Լոնդոնի կրթական գերատեսչությունում: Այդ ժամանակահատվածում Ահմադը չի փորձել ուրբաթ օրվա աղոթքին մասնակցելու համար մզկիթ հաճախելու թույլտվություն ստանալ: 1974 թ. նա տեղափոխվել է Լոնդոնի մեկ այլ տարածք և ընտրել այնպիսի դպրոց, որը գտնվել է մզկիթից ոտքի ճանապարհի հեռավորության վրա: Դրանից հետո նա պնդել է աղոթքի համար մզկիթ հաճախելու իր իրավունքը, չնայած այդ օրերին և ժամերին նա ունեցել է նշանակված դասաժամեր: Նրա գործատուները թույլ չեն տվել, որ նա ուրբաթ օրերը ցերեկվա ժամերին մզկիթ հաճախի, և հայտնել են նրան, որ եթե ցանկություն է ունեցել այդ ժամերին բացակայել աշխատանքից, ապա պետք է անցներ կես դրույքով աշխատանքի: Դրանից հետո նա ազատվել է աշխատանքից: Նա հայտնել է, որ աշխատանքից հեռացվել է գործատուի կողմից իր համար միտումնավոր անբարենպաստ աշխատանքային պայմաններ ստեղծելու պատճառով (constructive dismissal): Ի վերջո, երկու կողմ և մեկ դեմ ձայներով վերաքննիչ դատարանը մերժել է նրա հայցը (տե՛ս *Ahmad v ILEA* [1978] 1 All ER 574): Հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ «... ի կատարումն իր դավանանքը ցուցադրելու ազատության՝ անձը պետք է հաշվի առնի իր առանձնահատուկ մասնագիտական կամ աշխատանքային պայմանագրում նշված պաշտոնը» (էջ 133): Պարոն Ահմադի դեպքում համապատասխան գործոնները եղել են 1968 թ. կամավորապես ուսուցչի պայմանագրի ստորագրումը և վեց տարի շարունակ նրա կողմից իր գործատուներին տեղյակ չպահելը, որ մզկիթ հաճախելու նպատակով ուրբաթ օրերին կարող է բացակայել աշխատանքից: Հետևաբար, հանձնաժողովը հայտարարել է, որ դիմումը եղել է ակնհայտորեն վատ հիմնավորված:

4 Նմանապես, *«Ստեդմանն ընդդեմ ՄԹ-ի» (Stedman v UK* (1997) 23 EHRR CD 168) գործի քննության արդյունքում հանձնաժողովը, հիմք ընդունելով դիմողի աշխատանքային պայմանագրում նշված պարտավորությունները, եզրակացրել է, որ նրա բողոքներն անընդունելի են: Դիմողն իր գործատուի (մասնավոր ընկերության) կողմից ազատվել է աշխատանքից կիրակի օրերի հերթափոխային աշխատանքից հրաժարվելու պատճառով: Նա բողոքել է, որ այդ մասնավոր ընկերությունը, ի թիվս այլոց, խախտել է 9-րդ հոդվածով երաշխավորված իր քրիստոնեական հավատքը երկրպագելու, արտահայտման և արարողակարգերին մասնակցելու միջոցով ի ցույց դնելու ազատությունը: Այնուամենայնիվ, հանձնաժողովը հայտարարել է, որ.

> ... դիմողն ազատվել է, որովհետև չի համաձայնել աշխատել որոշակի ժամերի, ոչ թե իր կրոնական դավանանքի պատճառով: Դիմողը նաև ունեցել է իր դիմումի համաձայն աշխատանքը թողնելու ազատություն և, փաստորեն, ազատվել է աշխատանքից սեփական դիմումի համաձայն:
>
> Այսպիսով, հանձնաժողովը համոզված է, որ եթե դիմողի գործատուն լիներ պետությունը և նրան համանման հանգամանքներում ազատեր աշխատանքից, ապա 9(1) հոդվածով նրա իրավունքները խախտված չէին լինի: Անկասկած, Միացյալ Թագավորությունից չի կարելի ակնկալել այնպիսի օրենսդրություն, որը պաշտպանելու է աշխատավորներին մասնավոր գործատուների կողմից նման ձևով աշխատանքից ազատումներից (պարբ. 1):

5 Անձի հավատքը ցուցադրելու իրավունքի առանց պայմանագրի նախատեսված սահմանափակումների օրինակը քննարկված է *«C-ն ընդդեմ ՄԹ-ի» (C v UK)* գործում (տե՛ս վերը՝ էջ 638):

6 Դատարանը որոշել է, որ այս իրավունքի խախտում տեղի է ունեցել *«Սերիֆն ընդդեմ Հունաստանի» (Serif v Greece)* գործում (1999 թ. դեկտեմբերի 14): Դիմողը եղել է Հունաստանի քաղաքացի, Թրակիայի եղբայրակից մահմեդականների կողմից ընտրվել է որպես նրանց մուֆթի՝ կրոնական առաջնորդ: Այնուամենայնիվ, Հունաստանի նախագահն այդ պաշտոնում նշանակել է մեկ այլ անձի: Այնուհետև դիմողը մեղավոր է ճանաչվել «հայտնի կրոնի հոգևորականի պաշտոնին անօրինականորեն տիրանալու մեջ» և տուգանվել դրա համար: Դատարանը միաձայն եզրակացրել է, որ.

> Ինչպես երևում է համապատասխան ազգային դատարանների որոշումներից, դիմողը մեղավոր է ճանաչվել այն պատճառով, որ հայտարարություն է արել հոգևոր տոների կրոնական նշանակության մասին, ելույթ ունեցել կրոնական ժողովի ժամանակ, կրոնական տոնի կապակցությամբ մեկ այլ հայտարարություն արել և հասարակության մեջ երևացել հոգևոր առաջնորդի հագուստով: Այս հանգամանքներից ելնելով՝ դատարանը եզրակացնում է, որ դիմողի դատապար-

տումը հավասար է միջամտության կոնվենցիայի 9(1) հոդվածով երաշխավորված «այլոց հետ համատեղ կամ հրապարակավ իր կրոնական պաշտամունքը կամ ուսմունքը ցույց տալու» իրավունքին:

... Դատարանի կարծիքով՝ անձին զուտ այն փաստի հիման վրա պատժելը, որ նա հանդես է եղել որպես իր կամքով հետևած խմբի առաջնորդ, հազիվ թե կարելի է համահունչ համարել ժողովրդավարական հասարակությունում կրոնական բազմակարծության պահանջներին:

... Թեպետ դատարանն ընդունում է, որ այն դեպքերում, երբ կրոնական կամ որևէ այլ համայնքը պառակտվում է, ապա հնարավոր է լարվածության առաջացում, այնուամենայնիվ կարծում է, որ դա բազմակարծության անխուսափելի հետևանքներից է: Իշխանությունների դերն այսպիսի հանգամանքներում այն չէ, որ բազմակարծության վերացման ճանապարհով նրանք հեռացնեն լարվածության պատճառը, այլ երաշխավորեն, որ մրցակցող խմբերը հանդուրժեն միմյանց ... (պարբ. 39, 51 և 53):

Հետևաբար, պետությունները պետք է զգուշություն դրսևորեն, թե երբ և ինչպես են միջամտելու առանձին կրոնական խմբերի պայքարին:

Պալատը միաձայն համանման խախտում է բացահայտել ավելի ուշ լսված *«Ագգան ընդդեմ Հունաստանի» (Agga v Greece)* գործում, որի վերաբերյալ վճիռը կայացվել է 2002 թ. հոկտեմբերի 17-ին [նկատեք, որ միևնույն դիմողը հաջողությամբ վկայակոչել է այս իրավունքը երկու համանման գանգատներում. 2006 թ. հուլիսի 13-ի վճիռներ]:

Մշտական գործող դատարանը երկու անգամ եզրակացրել է, որ Բուլղարիայի կառավարությունն անօրինականորեն միջամտել է Բուլղարիայի մահմեդականների կազմակերպչական բնույթի կարգադրություններին: Մեծ պալատը միաձայն որոշել է, որ *«Հասանը և Չաուշն ընդդեմ Բուլղարիայի» (Hasan and Chaush v Bulgaria*, 2000-XI) գործի դեպքում տեղի է ունեցել 9-րդ հոդվածի խախտում: Բուլղարիայում ժողովրդավարության հաստատումից հետո որոշ մահմեդական հավատացյալներ և ակտիվիստներ փորձել են փոխել այդ երկրում հաստատված իրենց կրոնական առաջնորդներին, քանի որ կարծել են, որ իրենց առաջնորդները համագործակցել են նախկին կոմունիստական վարչակարգի հետ: 1991 թ. ընտրություններից հետո ձևավորվել է նոր կառավարություն (ժողովրդավարական ուժերի միությունը): 1992 թ. սկզբին Կրոնական ուսմունքների տնօրինությունը, որը Նախարարների խորհրդին կից գործող կառավարական մարմին էր, չեղյալ է հայտարարել 1988 թ. Բուլղարիայի մահմեդականների գլխավոր մուֆթի պրն Գենջևի ընտրությունը և հայտարարել այդ պաշտոնից նրա հեռացումը: 1992 թ. սեպտեմբերին Մահմեդականների ազգային համաժողովն ընտրել է առաջին դիմողին որպես գլխավոր մուֆթի և հաստատել իրենց կազմակերպության նոր կանոնադրությունը: Հաջորդ ամսին Կրոնական ուսմունքների տնօրինությունը գրանցել է կանոնադրությունը և նոր ղեկավարությանը: Պարոն Գենջևի աջակիցներն ընտրել են նրան որպես Գերագույն սուրբ խորհրդի նախագահ և հայտարարել, որ իրենք հանդիսանում են մահմեդական հավատացյալների օրինական ներկայացուցիչները: 1994 թ. վերջին ընտրություններում հաղթած Բուլղարիայի սոցիալիստական կուսակցությունը ձևավորել է նոր կառավարություն: 1995 թ. փետրվարին փոխվարչապետն ընդունել է որոշում, որով հաստատել է պրն Գենջևի կազմակերպության կանոնադրությունը: Ավելի ուշ նույն ամսվա ընթացքում Կրոնների տնօրինությունն ընդունել է որոշում պրն Գենջևին Բուլղարիայի մահմեդական համայնքի առաջնորդ գրանցելու մասին: Դրանից հետո նոր առաջնորդները, անվտանգությունն ապահովող անձնական թիկնապահների հետ միասին, մտել են Սոֆիայում գտնվող գլխավոր մուֆթիի տարածք և ուժով այնտեղից դուրս հանել աշխատողներին: Դիմողի կարծիքով՝ ոստիկանությունն աջակցություն է ցույց տվել տարածքը գրաված անձանց: Այնուհետև նոր առաջնորդը ստանձնել է Բուլղարիայի մահմեդականների կրոնական կազմակերպությունների գույքի վերահսկողությունը: Առաջին դիմողը գերագույն դատարանի առջև վիճարկել է Նախարարների խորհրդի գործողությունների օրինականությունը, սակայն 1995 թ. հուլիսին նրա բողոքը մերժվել է: Պարոն Հասանը կրկին ընտրվել է որպես գլխավոր մուֆթի իր աջակիցների համաժողովի կողմից, սակայն Նախարարների խորհուրդն անպատասխան է թողել նրան որպես առաջնորդ գրանցելու պահանջը: 1996 թ. գերագույն դատարանը որոշել է, որ լռելյայն մերժելով նրան որպես գլխավոր մուֆթի գրանցելը՝ Նախարարների խորհուրդը գործել է անօրինական: Նախարարների խորհուրդը հայցվորին չի գրանցել: Այնուհետև ժողովրդավարական ուժերի միությունը 1997 թ. ձևավորել է նոր կառավարություն, որը խրախուսել է դիմողին և նրան սատարողներին համաձայնության հասնելու նպատակով բանակցություններ սկսել պրն Գենջևի և նրա կազմակերպության հետ: 1997 թ.

հոկտեմբերին հրավիրվել է միավորման համաժողով, և այն ընտրել է առաջին դիմողի աջակիցներից և մյուսներից կազմված հոգևոր առաջնորդների նոր կազմ: Ավելի ուշ այդ ամսվա ընթացքում փոխվարչապետը գրանցել է նոր ընտրված առաջնորդներին: Պարոն Գենջևը շարունակել է պնդել, որ ինքը հանդիսանում է գլխավոր մուֆթի, սակայն նրա պաշտոնը չի ճանաչվել Բուլղարիայի դատարանների կողմից: Դիմողները պնդել են, որ 1995 թ. իրենց ղեկավարների բռնի փոխարինումը, որը պաշտպանել է կառավարությունը, իրենց կրոնն ի ցույց դնելու իրավունքի խախտում է: Մեծ պալատը վճռել է, որ.

62. Դատարանը նշում է, որ կրոնական համայնքներն ավանդականորեն և ամենուրեք գոյություն ունեն կազմակերպված կառույցների տեսքով: Նրանք ենթարկվում են այնպիսի կանոնների, որոնք հաճախ հավատացյալները համարում են աստվածային ծագում ունեցող: Կրոնական արարողությունները հավատացյալների համար իրենց իմաստը և սուրբ արժեքն ունեն, եթե իրականացվում են այդ կանոնների հիման վրա այդ նպատակով լիազորված հոգևորականների կողմից: Հոգևորականի անձն անկասկած կարևորություն ունի համայնքի յուրաքանչյուր անդամի համար: Համայնքի կյանքին մասնակցությունը, այսպիսով, հավասար է անձի կրոնի ցուցադրության, ինչը պաշտպանվում է կոնվենցիայի 9-րդ հոդվածով:

Երբ խոսքը կրոնական համայնքի կազմակերպման մասին է, կոնվենցիայի 9-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի 11-րդ հոդվածի համակցությամբ, որը երաշխավորում է պաշտպանություն հավաքական կյանքին պետության չարդարացված միջամտությունից: Այս տեսանկյունից նայելու դեպքում հավատացյալների կրոնական ազատության իրավունքի մեջ մտնում է նաև այն սպասելիքը, որ համայնքին թույլ է տրվելու գործել խաղաղաբար և զերծ մնալ պետության կամայական միջամտությունից: Իրավամբ, կրոնական համայնքների ինքնուրույն գոյությունը ժողովրդավարական հասարակությունում անբաժանելի է բազմակարծությունից և դրանով իսկ այնպիսի հարց է, որն ընկած է 9-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության բուն հիմքում: Այն ուղղակիորեն վերաբերում է ոչ միայն, որպես այդպիսին, համայնքի կազմակերպմանը, այլև դրա բոլոր ակտիվ անդամների կողմից կրոնական ազատության իրավունքի արդյունավետ կիրառմանը: Եթե համայնքի կազմակերպական կյանքը չպաշտպանվեր կոնվենցիայի 9-րդ հոդվածով, ապա անձի կրոնական ազատության մյուս բոլոր կողմերը կդառնային խոցելի:

...

78. Այնուամենայնիվ, ինչպես հանճնաժողովը, դատարանը նույնպես որոշում է, որ այս ոլորտում իշխանությունների՝ իրենց լիազորությունները կատարելիս չեզոքություն պահպանելու անկարողությունը բացահայտող փաստերը պետք է հանգեցնեն այն եզրակացության, որ պետությունը միջամտել է հավատացյալների՝ կոնվենցիայի 9-րդ հոդվածի իմաստով իրենց կրոնն ի ցույց դնելու ազատությանը: Դատարանը նշում է, որ բացառությամբ վերին աստիճանի արտակարգ դեպքերի, կոնվենցիայով երաշխավորված կրոնի ազատության իրավունքը բացառում է պետության հայեցողությունը՝ որոշելու՝ կրոնական հավատները կամ այդ հավատներն արտահայտելու համար օգտագործվող միջոցները օրինակա՞ն են, թե՞ ոչ: Պետության գործողությունը, որը բարենպաստ է պառակտված կրոնական համայնքի որևէ առաջնորդության համար կամ ձեռնարկվում է այն նպատակով, որ համայնքը հարկադրաբար միավորի մեկ առաջնորդության շուրջ, նույնպես միջամտություն է կրոնական ազատությանը: Ժողովրդավարական հասարակությունում պետությունը կարիք չունի ձեռնարկելու այնպիսի քայլեր, որոնց արդյունքում երաշխավորում է, որ կրոնական համայնքները ենթարկվեն մեկ միավորված ղեկավարության (տե՛ս *Սերիֆի (Serif)* վերը մեջբերված գործը, պարբ. 52):

...

82. Հետևաբար, հանճնաժողովի պես դատարանը կարծում է, որ Կրոնների տնօրինության 1995 թ. փետրվարի 23-ի R-12 որոշումը և Նախարարների խորհրդի հետագա մերժումը պրն Հասանի կողմից առաջնորդվող կազմակերպության գոյությունը ճանաչելու հարցում եղել են ավելին, քան պարզապես շարքային գրանցման կամ նախկին թերությունների շտկման ակտեր: Ինչպես օրենքով, այնպես էլ գործով իշխանությունների քայլերն ուղղված են եղել այն նպատակին, որ հեռացված առաջնորդները որևէ հնարավորություն չունենան ներկայացնելու մահմեդական համայնքի առնվազն մի հատվածը, ինչպես նաև կառավարել իրենց գործերը՝ համաձայն համայնքի այդ հատվածի ցանկության:

Հետևաբար, տեղի է ունեցել միջամտություն մահմեդական կրոնական համայնքի ներքին կառուցվածքին և դիմողների՝ կոնվենցիայի 9-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքին:

Մեծ պալատը շարունակել է և եզրակացրել, որ միջամտությունը «նախատեսված չի եղել օրենքով», քանի որ կամայական է եղել, մինչդեռ Նախարարների խորհրդի կողմից գերագույն դատարանի՝ դիմողներին վերաբերող վճիռների շարունակաբար անտեսումը օրենքի գերակայության սկզբունքի խախտում է:

Այնուհետև պրն Գենջևի առաջնորդած կազմակերպությունը վիճարկել է կառավարության կողմից 1997 թ. միավորման համաժողովի կազմակերպումը *«Մահմեդական համայնքի Գերագույն սուրբ*

խորհուրդն ընդդեմ Բուլղարիայի» (Supreme Holy Council of the Muslim Community v Bulgaria) գործում, որի վերաբերյալ վճիռն ընդունվել է 2004 թ. դեկտեմբերի 16-ին, դիմող կազմակերպությունը պնդել է, որ իշխանությունները «սարքել են» այդ համաժողովը՝ նպատակ ունենալով սատարել երկու հատվածներից մեկի առաջնորդներին: Պալատը միաձայն նկատել է, որ.

83. Դատարանը կարծում է, որ դիմող կազմակերպության պնդումն առ այն, որ մի շարք տեղամասերի քաղաքապետները և քաղաքական գործիչները չափից ավելի են ներգրավված եղել 1997 թ. հոկտեմբերի ժողովի համար պատվիրակների ընտրության մեջ, ոչ ճշմարտանման տպավորություն չի թողնում:

Պալատը շարունակել է և վճռել, որ.

80. …Հավատացյալների խմբերի միջև չեզոք միջնորդությունը սկզբունքորեն պետության կողմից միջամտություն չէ հավատացյալների՝ կոնվենցիայի 9-րդ հոդվածում ամրագրված իրավունքների, թեպետ պետական մարմինները պետք է զգուշավորություն դրսևորեն այս բավական խրթին ոլորտում:
...

94. Սույն գործի դեպքում համապատասխան օրենքը, գործելակերպը, ինչպես նաև 1997 թ. հոկտեմբերին իշխանությունների կատարած քայլերը ստիպել են պառակտված համայնքին ունենալ մեկ ընդհանուր առաջնորդություն՝ հակառակ երկու մրցակցող առաջնորդություններից մեկի կամքի:

95. Դրա արդյունքում նախապատվությունը տրվել է առաջնորդների մեկ խմբին, իսկ մյուս խումբը դուրս է մղվել և զրկվել իրեն սատարած համայնքի հատվածի գործերը և ունեցվածքն ինքնուրույն կառավարելու հնարավորությունից:
...

98. Հետևաբար, դատարանը որոշում է, որ Բուլղարիայի իշխանությունները, ըստ կոնվենցիայի 9(2) հոդվածի, խախտել են իրենց հայեցողության սահմանները:

99. Սրանից բխում է, որ 1997 թ. միջամտությունը կոնվենցիայի 9-րդ հոդվածով գանգատ ներկայացնող կազմակերպության իրավունքներին անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում հասարակական կարգի կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար և, հետևաբար, հակասել է այդ դրույթին:

Այս երկու գործերը բավական լրջորեն ցույց են տալիս, որ կառավարության՝ կրոնական առաջնորդների և նրանց կազմակերպությունների ճանաչմանը վերաբերող որոշումները ենթակա են քաղաքական նկատառումների ազդեցությանը: Բուլղարիայում երկու տարբեր կառավարություններ, որոնք կազմավորված են եղել տարբեր քաղաքական կուսակցություններից, միջամտել են այդ երկրի մահմեդական կազմակերպությունների կյանքին:

«Բեսարաբիայի մետրոպոլիտան եկեղեցին և այլք ընդդեմ Մոլդովայի» (Metropolitan Church of Bessarabia and Others v Moldova, 2001-XII) գործի քննության արդյունքում պալատը միաձայն որոշել է, որ Մոլդովայի կառավարության և դատարանների կողմից Մոլդովայի Ուղղափառ քրիստոնեական եկեղեցուց անջատված նոր կրոնական կազմակերպության՝ Մոլդովայի մետրոպոլիտան եկեղեցու (առաջին դիմողի) օրինական ճանաչման մերժումը չարդարացված միջամտություն է: Համաձայն Մոլդովայի օրենքի՝ չճանաչված կրոնական կազմակերպությունը չի կարող գործել, այսինքն՝ նրա հոգևորականները չեն կարող իրականացնել կրոնական ծառայություններ, իսկ կազմակերպության գույքը չի կարող դատական կարգով պաշտպանության տակ լինել: Հետևաբար, դատարանը եզրակացրել է, որ իշխանությունների մերժումը համաչափ պատասխան չի եղել հասարական կարգը և անվտանգությունը պահպանելու օրինական նպատակին: Ուստի պետությունները կարող են պատասխանատու համարվել կրոնական խմբերի կազմակերպմանը միջամտելու համար կամ այն դեպքում, երբ նրանք չեղյալ են հայտարարում այդ խմբերի պաշտոնական ճանաչումը (ինչպես *Հասանի և Չաուշի (Hasan and Chaush)* գործի դեպքում), կամ երբ նրանք մերժում են այդ խմբերին ճանաչելը (ինչպես *Մետրոպոլիտան եկեղեցու* գործի դեպքում):

7 *«Չաար Շալոմ վե Ցեդեկ» հրեական արարողակարգային ընկերակցությունն ընդդեմ Ֆրանսիայի» (The Jewish Liturgical Association Cha'are Shalom Ve Tsedek v France)* գործի կապակցությամբ 2000 թ. հունիսի 27-ի վճռով դատարանը որոշել է, որ կրոնական պահանջների համաձայն՝ կենդանիների ծիսական սպանդը մտնում է 9-րդ հոդվածի շրջանակների մեջ: Դիմող ընկերակցությունը ստեղծվել է 1980-ական թվականներին որպես Ֆրանսիայի հրեական միաբանություններից՝ հիմնական կենտրոնական կրոնական խորհրդից անջատված ուղղափառ խումբ: Կենդանիների ծիսական սպանդի (կենդանիների վզի մի մասն առանց նրանց շշմեցնելու կտրելու գործողության) և «Շուլխան Արուխի»/Shulchan Aruch (կոշերային մսի վերաբերյալ ցուցումների) համաձայն՝ մսի հավաստագրման համար կառավարությունը թույլատրել է կենտրոնական կրոնական խորհրդին կատարել համապատասխան անձանց նշանակումներ: Դիմող ընկերակցությունը ցանկացել է, որ կենդանիները մորթվեն ավելի խիստ կրոնական պահանջների համաձայն, քան կիրառվել են կենտրոնական խորհրդի կողմից: Ուստի, հիմնվելով կառավարության թույլտվության վրա, ընկերակցությունը նշանակել է սեփական արտոնագրված մսագործներին: Ներքին գործերի նախարարը մերժել է ընկերակցության պահանջը, քանի որ, ի թիվս այլոց, ընկերակցությունը անհրաժեշտ ներկայացվածություն չի ունեցել Ֆրանսիայի հրեական համայնքի շրջանակներում: Ընկերակցությունը գանգատ է ներկայացրել Ստրասբուրգ՝ պնդելով, որ տեղի է ունեցել հրեական կրոնին բնորոշ արարողակարգերի իրականացման միջոցով իրենց կրոնն ի ցույց դնելու իր 9-րդ հոդվածով ամրագրված իրավունքի խախտում: Դատարանը վճռել է, որ.

73. 9-րդ հոդվածը թվարկում է այն ձևերը, որոնց միջոցով որևէ անձ կարող է ի ցույց դնել իր դավանանքը կամ հավատը: Դրանք են՝ երկրպագությունը, քարոզչությունը, [հավատքի] արարողակարգերի և ծեսերի պահպանումը (տե՛ս *«Կալաջն ընդդեմ Թուրքիայի» (Kalac v Turkey)*, 1997 թ. հուլիսի 1-ի վճիռ, Զեկույցներ 1997-IV, էջ 1209, պարբ. 27): Անվիճելի է, որ ծիսական սպանդը, ինչպես և ցույց է տալիս դրա անվանումը, արարողություն է (rite) կամ rite (կոնվենցիայի ֆրանսերեն տեքստում անգլերեն observance բառի համարժեքը), որի նպատակն է հրեաներին մատակարարել այնպիսի կենդանիների միս, որոնք մորթվել են հրեական կրոնի արտահայտման նշանակալի կողմ համարվող կրոնական պատգամների համաձայն: Դիմող ընկերակցությունն իրականացնում է կենդանիների ծիսական սպանդ և աշխատեցնում կաշրուտի [kashrut] տեսուչներ [նրանք հետևում են սննդի մասին հրեական օրենքի պահպանությանը], որոնք մորթում են կենդանիներին համաձայն համապատասխան ցուցումների: Նաև, դիմող ընկերակցությունն իր անդամ մսագործների խանութներում վաճառվող մսին տալով «գլատ կոշերի» [ամենախիստ կոշերային] հավաստագիր, իրականացնում է ծիսական սպանդի նկատմամբ կրոնական վերահսկողություն:

74. Սրանից հետևում է, որ Ֆրանսիայի իշխանություններից գրանցման մերժում ստացած դիմող ընկերակցությունը կարող է հիմնվել կոնվենցիայի 9-րդ հոդվածի վրա, քանի որ պետք է համարել, որ կենդանիների ծիսական սպանդը մտնում է կոնվենցիայով երաշխավորված իրավունքի մեջ, որը սեփական կրոնը արարողակարգերի միջոցով (9-րդ հոդվածի իմաստով) ցուցադրելու իրավունք է:

Շարունակելով՝ դատարանի մեծամասնությունը, տասներկու կողմ և հինգ դեմ ձայներով, որոշել է, որ որպես կազմակերպություն՝ ընկերակցության իրավունքի խախտում տեղի չի ունեցել, և նրա անդամները առանց դժվարության կարող էին գլատ (glatt) մսի քանակություն ստանալ Բելգիայից կամ կարող էին փորձել համաձայնության գալ Կենտրոնական կրոնական խորհրդի հետ, որպեսզի այս վերջին մարմինը նշանակի իր ընկերակցության անդամներին՝ որպես արտոնված անասուն մորթողների: Ուշագրավ է, որ դատարանը հայտարարել է, որ «...կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված կրոնական ազատության իրավունքը չի կարող տարածվել ծիսական սպանդի իրականացմանն անձամբ մասնակցելու իրավունքի վրա...» (պարբ. 81): Բացի այդ, պետությունները կարող են նաև փորձել արդարացնել կենդանիների ծիսական սպանդի սահմանափակումները 9(2) հոդվածում ներկայացված բացառություններով, որոնց թվին են դասվում հասարակության անվտանգությունը կամ առողջությունը:

8 Ստամբուլի համալսարանում դասերի հաճախելու և քննությունների ընթացքում ուսանողուհիներին իրենց մազերը և կոկորդը ծածկող իսլամական գլխաշոր կրելն արգելելու առումով պալատը և մեծ պալատը *«Լեյլա Շահինն ընդդեմ Թուրքիայի» (Leyla Sahin v Turkey)* (2005 թ. նոյեմբերի 10-ի վճիռ) գործի կապակցությամբ վճռել են, որ 9-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել: 1997 թ. դիմողը

Թուրքիայի բժշկական համալսարաններից մեկում չորս տարի սովորելուց հետո ուսումը շարունակելու նպատակով ընդունվել է Ստամբուլի համալսարանի բժշկական ֆակուլտետ: 1998 թ. փետրվարի ընթացքում Ստամբուլի համալսարանի պրոռեկտորը հաստատել է շրջաբերական՝ հիմնված սահմանադրությամբ իրեն վերապահված իրավական լիազորությունների վրա, համաձայն որի՝ իսլամական գլխաշորով կամ մորուք պահող ուսանողների մուտքը լսարան արգելված է: Հետևաբար, դիմողին, որ իր կրոնական համոզմունքներից ելնելով՝ այդպիսի գլխաշոր է կապել, թույլ չի տրվել մասնակցել դասախոսություններին և քննություններին: Վարչական դատարանների առջև նա վիճարկել է շրջաբերականի օրինականությունը, սակայն նրա բողոքները մերժվել են: Համալսարանի՝ որոշակի համազգեստի պահանջները չկատարելու համար 1998 թ. մայիսին բժշկական ֆակուլտետի դեկանը նրան կարգապահական պաշտոնական նախազգուշացում է արել: 1999 թ. ապրիլին կարգապահական նիստից հետո նրան մեկ կիսամյակով հեռացրել են համալսարանից՝ համալսարանում հագնվելու կարգի դեմ ուղղված չարտոնված ցույցի մասնակցելու համար: Այդ որոշման կապակցությամբ նրա բողոքը վարչական դատարանը մերժել է: Ավելի ուշ՝ 1999 թ., նա թողել է Թուրքիայում ուսումը և գրանցվել Վիեննայի համալսարանում: Նա բողոքել է Ստրասբուրգին՝ պնդելով, որ, ի թիվս այլոց, տեղի է ունեցել իր կրոնն ի ցույց դնելու իրավունքի խախտում: Պալատը միաձայն որոշել է, որ կոնվենցիայի խախտում տեղի չի ունեցել: Նա այնուհետև փորձել է իր գործը կրկին ներկայացնել մեծ պալատին: Վերջինս որոշել է, որ դիմողի՝ գլխաշոր կապելու որոշումը պայմանավորված է եղել նրա կրոնով և հավատով (դատարանը չի որոշել՝ գլխաշոր կապելը նրա կրոնական պարտականությունն է եղել, թե ոչ), և համալսարանի որոշումը՝ թույլ չտալ, որ նա գլխաշոր կապի, միջամտություն է նրա՝ կրոնն ի ցույց դնելու իրավունքին: Այնուամենայնիվ, սահմանափակումները նախատեսված են եղել օրենքով և, հետևաբար, ունեցել են այլ անձանց իրավունքները և ազատությունները և հասարակական կարգը պաշտպանելու օրինական նպատակներ: Մեծ պալատը որոշել է, որ Թուրքիայի լավ հիմնավորված աշխարհիկության սկզբունքը եղել է

116…. զգալի նկատառում, որն ընկած է համալսարաններում կրոնական խորհրդանիշներ կրելու արգելքի հիմքում: Այս միջավայրում, որում ուսուցանվում են և գործնականում կիրառվում բազմակարծության արժեքները, այլոց իրավունքների նկատմամբ հարգանքը և, մասնավորապես, օրենքի առջև կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքը, հասկանալի է, որ համապատասխան մարմինները պետք է ցանկանային պահպանել խնդրո առարկա հաստատության աշխարհիկ բնույթը և այդ արժեքների հակասություն համարեին կրոնական հագուստի, ներառյալ, ինչպես սույն գործի դեպքում, իսլամական գլխաշոր կապելը:

117. Դատարանն այժմ պետք է որոշի՝ տվյալ դեպքում եղե՞լ է համամասնության ողջամիտ հարաբերություն ձեռնարկված միջոցների և միջամտության հետապնդվող նպատակների միջև:

118. Ինչպես և պալատը (տե՛ս վճռի 111-րդ պարբերությունը), մեծ պալատը նույնպես սկզբում նկատում է, որ ընդհանուր հիմք է այն, որ Թուրքիայի համալսարաններում ակտիվորեն մահմեդականություն դավանող ուսանողներն ազատ են՝ կիրառվող կրթակազմակերպական սահմանափակումների շրջանակներում ցուցադրելու իրենց կրոնը՝ համաձայն մահմեդականության արարողակարգերի սովորական ձևերի: Բացի այդ, 1998 թ. հուլիսի 9-ին Ստամբուլի համալսարանի ընդունած որոշումը ցույց է տալիս, որ կրոնական հագուստի այլ ձևերը նույնպես արգելված են համալսարանի ներսում [ուսանողներին թույլ չի տրվել կրել որևէ հագուստ, որը վեր է հանում կրոնական, հավատքի, ռասայական, քաղաքական/գաղափարախոսական պատկանելություն]:

119. Հարկ է նաև նկատել, որ 1994 թ., երբ Ստամբուլի համալսարանում բարձրացվել է բժշկական ֆակուլտետի ուսանողներին իսլամական գլխաշոր կապելու թույլտվություն տալու հարցը, պրոռեկտորը հիշեցրել է նրանց հագուստի նկատմամբ գործող կարգի պատճառների մասին: Վիճելով, որ իսլամական գլխաշոր կապելու թույլտվության կոչերը համալսարանում ճիշտ չեն ընկալվել և մատնացույց անելով բժշկական դասընթացների նկատմամբ գործող հասարակական կարգի սահմանափակումները՝ նա խնդրել է ուսանողներին հետևել այս կանոններին, որոնք համահունչ են ինչպես օրենսդրությանը, այնպես էլ բարձր ատյանի դատարանների նախադեպային իրավունքին:

120. Բացի այդ, այս կանոնակարգերի հիման վրա 1998 թ. հուլիսի 9-ի որոշումն ընդունվել է մի քանի տարի տևած գործընթացից հետո, որի ընթացքում տեղի են ունեցել լայն քննարկումներ Թուրքիայի հասարակության և ուսումնական համայնքի շրջանում: Երկու ամենաբարձր ատյանի դատարանները՝ գերագույն վարչական դատարանը և սահմանադրական դատարանը, այս հարցի կապակցությամբ կարողացել են հիմնավոր նախադեպային իրավունք հաստատել:

Բավական պարզ է, որ այդ որոշման կայացման գործընթացի ժամանակ համալսարանի ղեկավարությունը ձգտել է հարմարվել նոր առաջացող իրավիճակին և չարգելել գլխաշոր կապող ուսանողներին մասնակցել դասերին՝ շարունակաբար խոսելով այդ անձանց հետ և միաժամանակ երաշխավորելով, որ կարգը և, մասնավորապես, դասընթացի բնույթով պայմանավորված պահանջները պահպանվեն:

121. Այս կապակցությամբ դատարանը չի ընդունում դիմողի բացատրությունը, թե միայն այն փաստը, որ հագուստի նկատմամբ գործող կարգը չպահպանելու համար տույժեր չեն նշանակվել, արդեն պարզորոշ նշանակում է, որ կանոններ առհասարակ չեն եղել: Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչպե՞ս պետք է ապահովվեր ներքին կանոնների պահպանումը, դատարանը համարում է, որ իր խնդիրն այն չէ, որ ինքը համալսարանի ղեկավարության տեսակետը փոխարինի իր տեսակետով: Ուղղակի և շարունակվող շփում ունենալով կրթական համայնքի հետ՝ տեղական կարիքները և պայմանները կամ առանձնահատուկ դասընթացի նկատմամբ գործող պահանջները գնահատելու առումով համալսարանի ղեկավարությունը սկզբունքորեն ավելի լավ դիրքում է, քան միջազգային դատարանը (տե՛ս mutatis mutandis *«Վալսամիսն ընդդեմ Հունաստանի» (Valsamis v Greece)*, 1996 թ. դեկտեմբերի 18-ի վճիռը, Զեկույցներ 1996-VI, էջ 2325, պարբ. 32): Բացի այդ, որոշելով, որ կանոնները հետամուտ են եղել օրինական նպատակի, դատարանը չի կարող համաչափության չափանիշը կիրառել այնպես, որ հաստատության «ներքին կանոնները» իմաստազրկվեն: 9-րդ հոդվածը միշտ չէ, որ երաշխավորում է անձի այնպիսի վարվելակերպի իրավունքը, որը պայմանավորված է կրոնական հավատքով (*«Պիշոն և Սաժուն ընդդեմ Ֆրանսիայի») (Pichon and Sajous v France* (dec.), թիվ 49853/99, ECHR 2001-X), ինչպես նաև այդպես վարվող անձանց իրավունք չի վերապահում անտեսել այն կանոնները, որոնց արդարացվածությունը հիմնավորված է (տե՛ս հանձնաժողովի կարծիքի պարբ. 51, որն ընդգրկված է վերը նշված *Վալսամիսի (Valsamis)* (2337-րդ էջ) վճռին կցված 1995 թ. հուլիսի 6-ի զեկույցում):

122. Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները և այս ոլորտում պայմանավորվող պետությունների ունեցած հայեցողության սահմանները՝ դատարանը որոշում է, որ խնդրո առարկա միջամտությունը սկզբունքորեն եղել է արդարացված և հետապնդվող նպատակին համաչափ:

123. Հետևաբար, կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Դատավոր Թուլքենսն առարկել է: Նա չի ընդունել, որ դիմողի՝ համալսարանում իսլամական գլխաշոր կապելու ազատության նկատմամբ կիրառված սահմանափակումների հիմքում ընկած պատճառները եղել են տեղին և բավարար:

10. …Թեև յուրաքանչյուր ոք համաձայն է, որ անհրաժեշտ է կանխել արմատական իսլամիզմը, այս պատճառաբանության առնչությամբ, այնուամենայնիվ, կարող է լուրջ առարկություն արվել: Ջուտ գլխաշոր կապելը չի կարող համեմատվել ֆունդամենտալիզմի հետ, և կարևոր է տարբերություն դնել գլխաշոր կապող անձանց և այն անձանց միջև, ովքեր լինելով «ծայրահեղական», ձգտում են հարկադրել գլխաշորերը, ինչպես վարվում են այլ կրոնական խորհրդանիշների հետ: Գլխաշոր կապող ոչ բոլոր կանայք են ֆունդամենտալիստներ, և չկան ցուցումներ առ այն, որ դիմողն ունեցել է ֆունդամենտալիստական հայացքներ: Նա երիտասարդ չափահաս կին է, համալսարանի ուսանողուհի, և ողջամտորեն կարելի է սպասել, որ օժտված է ճնշումներին դիմադրելու ավելի քան բարձր կարողություններով, ինչի կապակցությամբ պետք է նշել նաև, որ վճիռը մատնացույց չի անում ճնշման որևէ որոշակի օրինակ: Դիմողի՝ իր կրոնական ազատության իրավունքը կիրառելու և իր կրոնական պատկանելությունն արտաքին խորհրդանիշների միջոցով ի ցույց դնելու անձնական շահագրգռվածությունը չի կարող ամբողջապես կլանել ծայրահեղության դեմ պայքարելու հանրային շահը:
...

12. ... Դիմողը, որ չափահաս և երիտասարդ անձնավորություն է՝ համալսարանի ուսանողուհի, ասել է, որ գլխաշորն իր հոժար կամքով է կապել: Որևէ փաստ չկա, որը մատնացույց կաներ, որ նրա ասածը ճշմարտություն չէ: Այս կապակցությամբ ես չեմ հասկանում, թե ինչպես կարող է սեռերի հավասարության սկզբունքն արդարացնել կնոջ նկատմամբ [իր կրոնը] արտահայտելու արգելքի կիրառումը, ինչը նա պետք է ազատորեն կարողանար անել՝ հակառակ ապացույցների բացակայության պայմաններում: Հավասարությունը և խտրականության բացակայությունը սուբյեկտիվ իրավունքներ են, որոնք պետք է մնան այն անձանց հսկողության տակ, որոնք օգուտ են ստանում դրանցից: Այս կարգի «հոգատարությունը» հակասում է դատարանի նախադեպային իրավունքին, որը 8-րդ հոդվածի հիման վրա զարգացրել է անձնական անկախության իրական իրավունք (*«Քինանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Keenan v the United Kingdom)*, 2001 թ. ապրիլի 3-ի վճիռ, պարբ. 92, *«Փրեթին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Pretty v the United Kingdom),* 2002 թ. ապրիլի 29-ի վճիռ, պարբ. 65-7, *«Քրիսթին Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Christine Goodwin v the United Kingdom)*, 2002 թ. հուլիսի 11-ի վճիռ, պարբ. 90): Վերջապես, եթե ամեն դեպքում գլխաշոր կապելը հակասում է տղամարդկանց և կանանց իրավահավասարությանը, պետությունը պետք է դա բոլոր վայրերում արգելելու դրական պարտավորություն ունենա, անկախ այն հանգամանքից՝ դրանք հասարակակա՞ն վայրեր են, թե՞ մասնավոր:

Մենք նաև ականատես ենք եղել, թե Թուրքիայում աշխարհիկությունը պահպանելու սահմանադրական սկզբունքն ինչպես է հաջողությամբ վկայակոչվել վերը քննարկված *Կալաջի (Kalac)* գործում: Եվ այդ սկզբունքը նաև առանցքային դեր է խաղացել «*Ռեֆահ Փարթիսի» (Refah Partisi)* կուսակցության լուծարման համար (տե՛ս ստորև՝ էջ 774):

Հոդված 9(2)

Անձի կրոնը կամ հավատն ի ցույց դնելու իրավունքի հստակ սահմանափակումներ

.....

«Մանուսակիսն ընդդեմ Հունաստանի»
(Manoussakis v Greece 1996-IV 1346 (1996) 23 EHRR 387)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողները եղել են Եհովայի վկաներ և բնակվել Կրետեում: Շենքերից մեկում նրանք վարձակալել են առանձին սենյակ, որտեղ մտադիր են եղել կազմակերպել իրենց կրոնական և այլ ժողովներն ու հանդիպումները: 1993 թ. հունիսին նրանք դիմում են ներկայացրել կրթության և կրոնի նախարարին, որպեսզի թույլտվություն ստանան այդ սենյակը որպես երկրպագության օբյեկտ օգտագործելու համար: Թիվ 1363/1938 օրենքի համաձայն՝ տաճարների (որոնք սահմանվում են որպես Աստծո երկրպագության համար նախատեսված և հասարակության առջև բաց ցանկացած տիպի կառույցներ) կառուցման և շահագործման համար ճանաչված եկեղեցական մարմինները ու կրթության և կրոնի նախարարությունը պետք է տային իրենց համաձայնությունը: Նրանց համաձայնության բացակայությունը հավասարեցվել է քրեական հանցագործության, որի հետևանքով պաշտամունքի վայրը ենթակա էր փակման, իսկ տաճարի համար պատասխանատու անձը՝ բանտարկության: Համաձայն 1939 թ. թագավորական որոշման, [երկրպագության վայր բացելու մասին] դիմումը բավարարելու իրավասությունը վերապահվել է կրթության և կրոնի նախարարին: 1983 թ. հուլիսին տեղի ուղղափառ ծխական եկեղեցին տեղեկացրել է ոստիկանությանը, որ դիմողների սենյակն օգտագործվում է որպես պաշտամունքի անօրինական վայր, և պահանջել պատժիչ միջոցներ ձեռնարկել այդ սենյակի համար պատասխանատվություն կրող անձանց դեմ: Հաջորդ երկու տարիների ընթացքում նախարարությունը տեղեկացրել է դիմողներին, որ իրավասու չէ որոշում կայացնել նրանց դիմումի վերաբերյալ: 1986 թ. պետական դատախազը քրեական վարույթ է սկսել դիմողների դեմ՝ համաձայն 1938 թ. օրենքի: Առաջին ատյանի քրեական դատարանն արդարացրել է դիմողներին, սակայն բողոքարկման ժամանակ նրանք դատապարտվել են և պատժվել երեք ամսվա բանտարկության, որը կարող էր վերածվել տուգանքի: Դիմողները բողոքել են հանձնաժողովին՝ պնդելով, որ, ի թիվս այլոց, խախտվել են 9-րդ հոդվածում ամրագրված նրանց իրավունքները: Հանձնաժողովը, այնուհետև, այս հոդվածի համաձայն, միաձայն բավարարել է դիմողների բողոքը:

...

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

Ա. ԵՂԵ՞Լ Է ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ

36. Դիմողների կողմից 1983 թ. մարտի 30-ին ստորագրված մասնավոր բնույթի պայմանագրի իսկությունը վեճի առարկա չէ:

Հերակլիոնի քրեական դատարանի կողմից բողոքարկման փուլում դիմողների դատապարտումն այն բանի համար, որ նրանք օգտագործել են խնդրո առարկա տարածքն առանց թիվ 1363/1938 օրենքին համապատասխան նախնական թույլտվություն ստանալու, հետևաբար, միջամտություն է եղել նրանց «պաշտամունքի և արարողությունների միջոցով ... կրոնն ի ցույց դնելու ... ազատությանը...»: Այսպիսի միջամտությունը խախտում է 9-րդ հոդվածը, եթե այն «նախատեսված չէ օրենքով», հետամուտ չէ 2-րդ կետում վկայակոչված մեկ կամ մեկից ավելի օրինական նպատակների

և «անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում» այդ նպատակին կամ նպատակներին հասնելու համար:

Բ. ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱՑՈՒՄԸ

1. «Նախատեսված է օրենքով»

37. Համաձայն դիմողների բացատրության՝ թիվ 1363/1938 օրենքը և դրա կիրառումն ապահովող որոշումը, որոնք ընդունվել են 1939 թ. մայիսի 20-ին և հունիսի 2-ին, ստեղծել են ընդհանուր և մշտական արգելք ցանկացած կրոնի (օրենքն օգտագործում է «հավատք» բառը) եկեղեցու կամ պաշտամունքի վայրի ստեղծման նկատմամբ, եթե դրանք չեն եղել ուղղափառ [քրիստոնեական] եկեղեցիներ: Նրանք պնդել են, որ այս արգելքը կարող էր միայն չեղյալ հայտարարվել պաշտոնական որոշմամբ կամ հատուկ հայեցողական միջոցառմամբ:

Նրանց կարծիքով՝ այս հայեցողական լիազորությունը հստակ բխել է թիվ 1363/1938 օրենքի 1-ին բաժնից, որը լիազորում է կառավարությանը թույլ տալ կամ մերժել թույլտվությունը, կամ համապատասխանաբար ներկայացված դիմումին ի պատասխան պահպանել լռություն՝ առանց ժամանակային սահմանափակումների կամ առանց որևէ մի նյութական պայմանի սահմանման:

Նրանք առարկել են, որ այն օրենքը, որը կրոնի ցուցադրությունը կախման մեջ է դնում դրա համար նախնական թույլտվության տրամադրումից, որի բացակայությունն առաջացնում է քրեական պատասխանատվություն, այդ կրոնի առջև դրված «խոչընդոտ» է և չի կարող համարվել օրենք, որը սահմանադրության 13-րդ հոդվածի իմաստով պաշտպանում է կրոնական ազատությունը: Ինչ վերաբերում է կրոնի և պաշտամունքի ազատությանը, սահմանադրությունը հռչակել է, որ այն ավելի մեծ պաշտպանություն է առաջարկում կամ առնվազն ավելի պակաս պաշտպանություն չի առաջարկում, քան կոնվենցիան, քանի որ «հասարակական կարգը» և «հասարակական բարոյականությունը» եղել են այն միակ հիմքերը, որոնց հիման վրա «հայտնի կրոնի» նկատմամբ կարող էին սահմանափակումներ կիրառվել:

Բացի այդ, պաշտամունքի վայրի կառուցման և շահագործման առումներով դիմողները նշել են, որ թիվ 1363/1938 օրենքն անսովոր բնույթ ունի ինչպես հանրային իրավունքի, այնպես էլ վարչական իրավունքի օրենքների տեսանկյունից: Սա եղել է միակ ընթացակարգը, որի առումով միջամտելու վերապահում է արվել երկու մարմինների (վարչական և կրոնական): Նրանք քննադատել են գերագույն վարչական դատարանի կողմից սահմանադրությամբ նախատեսված սահմանափակումների, առաջարկությունների և հրահանգների համատեքստում այս օրենքի մեկնաբանությունը և այն կարևորությունը, որն այդ դատարանը վերագրել է 1939 թ. մայիսի 20-ի/հունիսի 2-ի թագավորական որոշման մեջ ամրագրված պայմանների կատարմանը, ներառյալ այն հանգամանքը, որ այս պայմանների արդյունքում իրականացվել է ինկվիզիցիոն գործընթաց, և դրանք դժվարացրել են թույլտվության ձեռքբերումը: Այդ որոշման ձևակերպումները նախատեսել են տարբեր հայեցողական լիազորություններ, որոնցից յուրաքանչյուրը բավարար հիմք է եղել դիմումին բացասական պատասխան տալու համար:

38. Դատարանը նկատում է, որ գանգատում դիմողների նկատմամբ դրսևորված վերաբերմունքը (որի հետևանքով էլ նրանք տուժել են) շատ ավելի քիչ տեղ է զբաղեցնում, քան եկեղեցի կամ պաշտամունքի վայր հիմնելու առնչությամբ Եհովայի վկաների նկատմամբ գործող ընդհանուր խոչընդոտման քաղաքականությունը: Հետևաբար, սկզբունքորեն նրանք վիճում են համապատասխան ազգային օրենքի դրույթների շուրջ:

Այնուամենայնիվ, դատարանն անհրաժեշտ չի համարում որոշում կայացնել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք այս դեպքում խնդրո առարկա միջամտությունը «նախատեսվա՞ծ է եղել օրենքով», քանի որ ամեն դեպքում այն անհամատեղելի է կոնվենցիայի 9-րդ հոդվածի հետ այլ հիմքերով:

2. Օրինական նպատակը

39. Ըստ կառավարության՝ դիմողներին նշանակված տույժը նպատակ է ունեցել պաշտպանել հասարակական կարգը և այլ անձանց իրավունքներն ու ազատությունները: Նախ՝ թեպետ հասարակական կարգ հասկացությունն ունի առանձնահատկություններ, որոնք համընդհանուր են Եվրոպայի ժողովրդավարական հասարակությունների համար, սակայն ազգային առանձնահատկությունների պատճառով դրա բնույթը տարբեր է: Հունաստանում գրեթե ողջ ազգաբնակչությունը դավանել է ուղղափառ եկեղեցուն, որը սերտորեն առնչվել է հույն ժողովրդի պատմության կարևոր պահերին: Օտարերկրյա օկուպացիաների ժամանակ ուղղափառ եկեղեցին արթուն է պահել ազգային ինքնագիտակցությունը և հայրենասիրությունը: Երկրորդ՝ տարբեր աղանդները ձգտել են ցույց տալ իրենց գաղափարները և ուսմունքները՝ կիրառելով տարբեր «անօրինական և անազնիվ» միջոցներ: Պետության կողմից այս ոլորտը կարգավորելու համար արվող միջամտությունը, որի նպատակն է եղել պաշտպանել այն անձանց, որոնց իրավունքները և ազատությունները կրել են սոցիալապես վտանգավոր աղանդների գործունեության ազդեցությունը, անբաժանելի է եղել Հունաստանի տարածքում հասարակական կարգի պահպանումից:

40. Ինչպես և դիմողները, այնպես էլ դատարանը ընդունում են, որ պետություններն իրավունք ունեն ճշտելու, թե արդյոք շարժումը կամ միավորումը, հետևելով ակնհայտորեն կրոնական նպատակների, իրականացնո՞ւմ է այնպիսի գործունեություն, որը վնասակար է հասարակության համար: Այնուամենայնիվ, դատարանը նշում է, որ «Եհովայի

վկաները», համաձայն Հունաստանի օրենքի, մտնում են «հայտնի կրոն» սահմանման մեջ (տե՛ս *«Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի» (Kokkinakis v Greece)*): Սրան, ամեն դեպքում, համաձայնել է նաև կառավարությունը:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով գործի հանգամանքները, հետևելով այն նույն մոտեցմանը, որին հետևել է հանձնաժողովը, դատարանը կարծում է, որ վիճարկվող միջոցը հետապնդել է կոնվենցիայի 9(2) հոդվածին համահունչ օրինական նպատակ, որը հասարակական կարգի պաշտպանությունն է:

3. «Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»

41. Դիմողների բողոքի հիմնական առանցքն այն է, որ Հունաստանի կառավարության կողմից Եհովայի վկաների վրա դրված սահմանափակումներն արդյունավետորեն արգելել են նրանց իրականացնել իրենց կրոնական ազատության իրավունքը: Օրենսդրության և վարչական գործելակերպի առումով նրանց կրոնը, ինչպես նրանք հայտարարել են, Հունաստանում օժտված չի եղել նույնպիսի երաշխիքներով, որոնցով օժտված է եղել Եվրոպայի խորհրդի այլ անդամ երկրներում: «Բազմակարծությունը, հանդուրժողականությունը և լայնախոհությունը, առանց որոնց գոյություն չունի ժողովրդավարական հասարակություն», հետևաբար, Հունաստանում լրջորեն վտանգված են եղել:

Նրանք վիճարկել են, որ պետք էր ենթադրել, որ Եհովայի վկաների շարժումը հարգում է բարոյականության որոշակի կանոններ և ինքնին հասարակական կարգի համար վտանգ չի ներկայացնում, եթե նույնիսկ սա հերքելի ենթադրություն է: Այդ շարժման դոկտրինները և արարողակարգերը համապատասխանել են և գովերգել սոցիալական կարգը և անձի բարոյականությունը: Հետևաբար, քաղաքական մարմինները պետք է միջամտեին միայն չարաշահումների կամ այս ուսմունքների և արարողակարգերի աղավաղման դեպքում և պետք է դա անեին պատժի, ոչ թե կանխարգելման միջոցով:

Ավելի հատկանշական է, նրանց դատապարտումը հետապնդող բնույթ է ունեցել, չի եղել արդարացված և անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում, քանի որ «սարքվել է» պետության կողմից: Պետությունը ստիպել է դիմողներին կատարել հանցագործություն և կրել դրա հետևանքները միայն նրանց կրոնական հավատի պատճառով: Պաշտամունքի վայր ունենալու թույլտվության ակնհայտորեն անմեղ պահանջը զուտ պաշտոնական բնույթի միջոցառումից վերափոխվել է կրոնական ազատության իրավունքի դեմ ուղղված մահացու զենքի: «Դանդաղ» բառը, որը հանձնաժողովն օգտագործել է թույլտվություն ստանալու դիմումների առումով կրթության և կրոնի նախարարի վարքագիծը նկարագրելու համար, եղել է մեղմասացություն:

Արևելյան ուղղափառ եկեղեցուց դուրս որոշ կրոնական համայնքների և հատկապես Եհովայի վկաների գոյատևման պայքարը շարունակվել է պետության և գերիշխող եկեղեցու կողմից միջամտության և ճնշման պայմաններում, որի հետևանքով կոնվենցիայի 9-րդ հոդվածը վերածվել է չգործող սկզբունքի: Հոդվածը եղել է հաճախակի և աղաղակող խախտումների առարկա. խախտումներ, որոնք ուղղված են եղել կրոնական ազատության վերացմանը: Դիմողները հղում են արել Հունաստանում գոյություն ունեցող ընթացիկ գործելակերպին՝ պաշտպանելով իրենց վիճարկումները բազմաթիվ օրինակների միջոցով: Նրանք պահանջել են, որ դատարանը քննության առնի իրենց բողոքներն այս մյուս գործերի համատեքստում:

42. Համաձայն կառավարության՝ դիմողներին դատապարտելու անհրաժեշտության հարցի վերաբերյալ որոշում կայացնելու համար դատարանն առաջին հերթին պետք է քննության առնի նախնական թույլտվության պահանջի անհրաժեշտության հարցը, որն իր գոյությամբ պարտական է պատմական նկատառումներին: Նրանց կարծիքով՝ առաջինից բխել է երկրորդը: Դիմողների իրական նպատակը չի եղել բողոքել իրենց դատապարտման դեմ, այլ պայքարել այդ պահանջի վերացման դեմ:

Առկա են եղել հասարակական կարգին առնչվող զգալի հիմքեր, որոնք արդարացրել են պաշտամունքի վայրի ստեղծումը պետության հաստատումից կախման մեջ դնելը: Հունաստանում այս վերահսկողությունը տարածվել է բոլոր հավատքների վրա: Այլապես, այն կհակասեր սահմանադրությանը և կոնվենցիային: Եհովայի վկաներն ազատված չեն եղել օրենդրության այն պահանջներից, որոնք տարածվել են ողջ ազգաբնակչության վրա: Հունաստանում եկեղեցու կամ պաշտամունքի վայրի ստեղծումը, ինչպես հաստատել է կառավարությունը, հաճախ օգտագործվել է անձանց դավանափոխ անելու նպատակով, մասնավորապես, Եհովայի վկաների կողմից, որոնք զբաղվում են անձանց ինտենսիվ դավանափոխ անելու գործողություններով՝ դրանով իսկ խախտելով այն օրենքը, որը, դատարանի կարծիքով, համապատասխանում է կոնվենցիային (տե՛ս *«Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի» (Kokkinakis v Greece)*):

Դիմողների նկատմամբ կիրառված պատժամիջոցն իր բնույթով եղել է քեթև, որի հիմքում ընկած է եղել ոչ թե նրանց կողմից իրենց կրոնի ցուցադրության փաստը, այլ օրենքի նկատմամբ նրանց ցուցաբերած անհնազանդությունը և վարչական ընթացակարգերին չհամապատասխանելու հանգամանքը: Հունաստանի իրավական համակարգում գոյություն ունեցող իրավական պաշտպանության միջոցների կիրառությանը դիմելը դիմողների քրեական անփութության արդյունքն է եղել:

Վերջապես, կառավարությունը հղում է արել այն փաստին, որ կոնվենցիայի անդամ հանդիսացող պետություններն ունեն այնպիսի օրենքներ, որոնք այս ոլորտում նախատեսում են Հունաստանի կիրառած սահմանափակումներին նման սահմանափակումներ:

43. Հանձնաժողովը որոշել է, որ թիվ 1363/1938 օրենքով ներմուծված թույլտվության պահանջը բաց է քննադատության համար: Նախ՝ Հունաստանի ուղղափառ եկեղեցու կողմից միջամտությունը ընթացակարգին 9-րդ հոդվածի 2-րդ կետով

բարդ հարցի տեղիք է տվել: Երկրորդ՝ առանց իշխանությունների նախնական թույլտվության՝ պաշտամունքի վայրի օգտագործումը՝ որպես քրեական հանցագործություն դասակարգելն անհամաչափ է եղել հետապնդվող օրինական նպատակին, հատկապես, երբ, ինչպես այս դեպքում, դիմողների դատապարտման հիմքում ընկած պատճառը համապատասխան մարմինների ձգձգող մոտեցումն է եղել:

44. Նախադեպային իրավունքի շրջանակներում միջամտության անհրաժեշտության գոյության և չափի որոշման առումներով դատարանը հետևողականորեն թույլ է տվել պայմանավորվող պետություններին կիրառել հայեցողության որոշակի սահմաններ, սակայն օրենքների և դրանց ուղեկցող որոշումների մասով այդ [հայեցողության] սահմանները ենթակա են Եվրոպական [դատարանի] վերահսկողությանը: Դատարանի խնդիրն է որոշել, թե արդյոք ազգային մակարդակով ձեռնարկված միջոցառումներն արդարացվա՞ծ են եղել սկզբունքի տեսանկյունից և արդյո՞ք դրանք եղել են համաչափ:

Սույն գործում հայեցողության սահմանները նեղացնելու առումով դատարանը պետք է ուշադրություն դարձնի այն հանգամանքին, որ կշեռքի նժարին դրված է ճշմարիտ կրոնական բազմակարծության ապահովումը, որը ժողովրդավարական հասարակություն հասկացությունից անկապտելի առանձնահատկություն է: Բացի այդ, այդ անհրաժեշտությանը զգալի կշիռ պետք է վերագրվի այն ժամանակ, երբ 9-րդ հոդվածի 2-րդ կետով որոշվում է՝ հետապնդվող նպատակը համաչա՞փ է եղել հետապնդվող օրինական նպատակին, թե՞ ոչ: Թիվ 1363/1938 օրենքի և 1939 թ. մայիսի 20-ի/հունիսի 2-ի որոշման միջոցով կրոնի ցուցադրության ազատության վրա դրված սահմանափակումները պահանջում են դատարանի խիստ ուշադիր քննությունը:

45. Առաջին հերթին դատարանը նկատում է, որ թիվ 1363/1938 օրենքը և 1939 թ. մայիսի 20-ի/հունիսի 2-ի որոշումը, որոնք վերաբերում են Հունական ուղղափառ եկեղեցու մաս չկազմող եկեղեցիներին և պաշտամունքի վայրերին, թույլ են տալիս կրոնական ազատությունների մեջ կատարվող հեռուն գնացող միջամտություններ քաղաքական, վարչական և եկեղեցական մարմինների կողմից: Բացի որոշման 1(1) և (3) բաժիններով նախատեսված բազմաթիվ պաշտոնական պայմաններից, որոնց մի մասը շատ լայն լիազորություններ է տալիս ոստիկանությանը, քաղաքապետին կամ շրջանային խորհրդի նախագահին, գործնականում կրթության և կրոնի նախարարին հնարավորություն է տրվում անորոշ ժամանակով հետաձգել իր պատասխանը (քանի որ որոշումը որևէ ժամանակային սահմանափակում չի նախատեսում) կամ մերժել թույլտվությունը առանց բացատրություն ներկայացնելու կամ առանց հավաստի պատճառ նշելու: Այս առումով դատարանը նկատում է, որ, մասնավորապես, որոշումը լիազորում է նախարարին գնահատել՝ կա՞ «իրական կարիք», որ խնդրո առարկա կրոնական համայնքը հիմնի եկեղեցի, երբ նա որոշում է՝ արդյոք թույլտվության դիմում ներկայացնող անձանց թիվը համապատասխանո՞ւմ է որոշման մեջ նշված թվին: Այս չափանիշը կարող է ինքնին հիմք լինել մերժման համար՝ առանց սահմանադրության 13(2) հոդվածում ամրագրված պայմանների վկայակոչման:

46. Կառավարությունը պնդել է, որ կրթության և կրոնի նախարարի իրավասությունը՝ տրամադրել պահանջվող թույլտվությունը կամ մերժել, հայեցողական բնույթի իրավասություն չի եղել: Նա պարտավորություն է ունեցել տրամադրել թույլտվությունը, եթե կարծում է, որ սահմանադրության 13(2) հոդվածում նշված երեք պայմանները բավարարված են, այսինքն՝ այդ թույլտվությունը պահանջվում է հայտնի կրոնի համար, որ հասարակական կարգը կամ հասարակական բարոյականությունը վտանգող որևէ ռիսկ գոյություն չունի և անձանց դավանափոխ անելու վտանգ չկա:

47. Դատարանը նկատում է, որ թույլտվությունների տրամադրումը մերժելու որոշումների օրինականությունը վերանայելու ժամանակ գերագույն վարչական դատարանը ձևավորել է նախադեպային իրավունք, որը սահմանափակում է այս հարցի առնչության նախարարի լիազորությունները և տեղական եկեղեցական մարմնին վերապահում զուտ խորհրդատվական դեր:

Կրոնի ազատության իրավունքը, ինչպես այն երաշխավորված է կոնվենցիայով, բացառում է պետության կողմից ցանկացած հայեցողություն որոշելու, թե արդյոք կրոնական հավատը կամ այդ հավատն արտահայտելու համար օգտագործված միջոցները օրինակա՞ն միջոցներ են: Հետևաբար, դատարանն այն կարծիքին է, որ 1363/1938 օրենքի և 1939 թ. մայիսի 20-ի/հունիսի 2-ի որոշման մեջ նշված թույլտվության պահանջը համահունչ է կոնվենցիայի 9-րդ հոդվածի պահանջին միայն այնքանով, որքանով այն թույլ է տալիս նախարարին ճշտել, թե արդյոք այդ օրենքներում շարադրված պաշտոնական պայմանները բավարարվա՞ծ են:

48. Փաստերից և դիմողների կողմից մեջբերված բազմաթիվ գործերից պարզ է (և դա չի էլ վիճարկվում կառավարության կողմից), որ պետությունը միտում է ունեցել օգտագործել վերը նշված դրույթների ընձեռած հնարավորությունները, որպեսզի կիրառի կոշտ և, իրավամբ, արգելակող պայմաններ որոշ ոչ ուղղափառ շարժումների և, մասնավորապես, Եհովայի վկաների կրոնական հավատքի արտահայտման վրա: Պարզ է, որ պատճառների բացակայության պարագայում գերագույն վարչական դատարանը պետք է չեղյալ հայտարարի թույլտվություն տրամադրելու չարդարացված մերժումը, սակայն այս ոլորտում առկա հարուստ նախադեպային իրավունքը, թվում է, ցույց է տալիս վարչական և եկեղեցական մարմինների կողմից ցուցաբերված հստակ միտումը, այն է՝ կիրառել այս դրույթները, որպեսզի սահմանափակեն Ուղղափառ եկեղեցուց տարբեր այլ հավատքների գործունեությունը:

49. Վարույթում գտնվող գործի դեպքում դիմողները ենթարկվել են քրեական հետապնդման և դատապարտվել, քանի որ առանց օրենքով նախատեսված թույլտվությունը ձեռք բերելու՝ նրանք օգտագործել են պաշտամունքի վայր:

50. Իր հուշագրում կառավարությունը պնդել է, որ 1939 թ. մայիսի 20-ի/հունիսի 2-ի որոշման 1(1) բաժնի համաձայն՝ տեղի եպիսկոպոսի թույլտվությունը պահանջվել է միայն եկեղեցու կառուցման և շահագործման, ոչ թե, ինչպես այս դեպքում, պաշտամունքի վայրի համար: Կրթության և կրոնի նախարարին ուղղված դիմումը, որպիսին ներկայացվել էր դիմողների կողմից, եղել է բավարար:

51. Այնուամենայնիվ, դատարանը նկատում է, որ դիմողների դեմ վարույթ սկսելու ժամանակ Հերակլիոնի դատախազի գրասենյակը և վերաքննիչ բողոքը լսած Հերակլիոնի քրեական դատարանը (1990 թ. փետրվարի 15-ի վճռում) հստակորեն հիմնվել են եպիսկոպոսի, ինչպես նաև կրթության և կրոնի նախարարի թույլտվությունների բացակայության վրա: Վերջինս, ի պատասխան դիմողի հինգ պահանջների, որոնք ներկայացվել են 1983 թ. հոկտեմբերի 25-ից մինչև 1984 թ. դեկտեմբերի 10-ը, պատասխանել է, որ ուսումնասիրում է նրանց գործը: Առ այսօր, որքանով դատարանը տեղյակ է, դիմողները հստակ որոշում չեն ստացել: Բացի այդ, նիստի ժամանակ կառավարության ներկայացուցիչն ինքն է նկարագրել նախարարի վարքագիծը որպես անարդար և վերագրել դա այն դժվարությանը, որին վերջինս կարող էր հանդիպել թույլտվությունը մերժելու հստակ որոշումը հիմնավորող իրավական պատճառներ ներկայացնելու առումով, կամ՝ այն մտավախությանը, որ նա կարող է հիմքեր տալ դիմողներին, որպեսզի վարչական որոշման դեմ բողոք ներկայացնեն գերագույն վարչական դատարան:

52. Այս հանգամանքներից ելնելով՝ դատարանը եզրակացնում է, որ դիմողների դատապարտումն արդարացնելու համար կառավարությունը չի կարող հիմնվել նրանց կողմից պաշտոնական իրավական ձևականություններին չհամապատասխանելու հանգամանքի վրա: Այս սանկցիայի սաստկության աստիճանը նյութական նշանակություն չունի:

53. Հանձնաժողովի նման, դատարանը ևս այն կարծիքին է, որ վիճարկվող դատապարտումն ունեցել է այնպիսի ուղղակի ազդեցություն դիմողների կրոնի ազատության վրա, որ այն չի կարող համարվել հետապնդվող օրինական նպատակին համաչափ և անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում:

Ամփոփելով՝ տեղի է ունեցել 9-րդ հոդվածի խախտում:

...

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

...

Վճռում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում,

...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում եղել են նախագահ Բերնհարդտը և դատավորներ Մակդոնալդը, Վալտիկոսը, Մարտենսը, Լուազուն, Ֆրիլենդը, Վիլդհաբերը, Գոտչևը և Կուրիսը: Դատավոր Մարտենսը տվել է առանձին համընկնող կարծիք, որում նա տեսակետ է հայտնել, որ թիվ 1363/1938 օրենքը հակասել է 9-րդ հոդվածին, քանի որ այն ներառել է բազմաթիվ հայեցողական տարրեր (ինչպես, օրինակ՝ հաստատված կրոնական հաստատությունների «խորհրդատվական» դերը), որպեսզի բավարարի կոնվենցիայի «պահանջվում է օրենքով» պահանջներին (8-րդ հոդվածի համատեքստում սրա վերլուծության համար տե՛ս վերը՝ էջ 617):

2 Վերոհիշյալ վճռից պարզ է, որ պետությունները կարող են կիրառել նախնական գրանցման/հաստատման սխեմաներ: Այնուամենայնիվ, դատարանն ուշադիր քննության է առնելու, թե արդյոք ազգային սխեմայի կիրառումը հավատացյալների որոշակի խմբի նկատմամբ համապատասխանո՞ւմ է 9(2) հոդվածում շարադրված պայմաններին:

3 *«Պենտիդիան ընդդեմ Հունաստանի» (Pentidis v Greece*, 1997-III 983) գործով դիմողները եղել են Եհովայի վկաներ, որոնք դատապարտվել են թիվ 1363/1938 օրենքով առանց իրավասու մարմինների համաձայնության պաշտամունքի վայր (վարձակալությամբ վերցված սենյակ) ստեղծելու համար: Այս դեպքում հանձնաժողովը որոշել է, որ տեղի է ունեցել 9-րդ հոդվածի խախտում: Դատարանի առջև դիմողները հայտնել են, որ դիմել են 1997 թ. նախարարին այդ տարածքը որպես պաշտամունքի վայր օգտագործելու թույլտվություն ստանալու համար: 1997 թ. մայիսի սկզբին նախարարը նրանց թույլտվություն է տվել, և նրանք պահանջել են դատարանից դադարեցնել իրենց գործի քննությունը: Դատարանը համաձայնել է այս պահանջին:

4 *«Մարթինս Կասիմիրոն և Սերվեյրա Ֆերեյրան ընդդեմ Լյուքսեմբուրգի» (Martins Casimiro and Cerveira Ferreira v Luxembourg)* գործում (1999 թ. ապրիլի 27-ի որոշում) դիմողները և նրանց որդին՝ Ֆ-ն, եղել են յոթերորդ օրվա ադվենտիստներ (այս կրոնական խումբը հավատում է, որ շաբաթ օրերը պետք է լինեն լիարժեք ազատ օրեր): Նրանք փորձել են թույլտվություն ստանալ ազգային դատարաններից, որպեսզի իրենց որդին ազատվի շաբաթ օրերը դպրոց հաճախելու պարտականությունից: Իրենց պահանջը մերժվելուց հետո դիմողները բողոքել են դատարանին՝ պնդելով, որ տեղի է ունեցել իրենց կրոնն ազատորեն ի ցույց դնելու իրավունքի խախտում: Դատարանը հայտարարել է նրանց դիմումն անընդունելի, քանի որ.

Դիմողների կողմից պահանջված արտոնությունը տրամադրելու դեպքում երեխան կզրկվեր սովորական դպրոցական դասացուցակով նախատեսված դասերին մասնակցելուց, քանի որ շաբաթ օրը դպրոցական շաբաթվա օրերից մեկն է: Առաջին ատյանի դատարանը հայտարարել է, որ այդ կարգի թույլտվությունը կառաջացներ այլ աշակերտների իրավունքների խախտում, քանի որ պոտենցիալ վտանգ է ներկայացնում դպրոցական համակարգի համար: Պետությունները պարտավորություն ունեն երաշխավորելու, որ երեխաները կիրառում են կրթության իրենց իրավունքը: Բացի այդ, այն ժամանակ, երբ ծնողների կրոնական համոզմունքները հարգելու իրավունքը բախման մեջ է հայտնվում դրա հետ, ապա գերիշխում են երեխայի շահերը: Այս հանգամանքներում դատարանը վճռել է, որ օրենսդրական դրույթը, որը հնարավորություն չի տվել դիմողներին արտոնություն ստանալու այն պարտավորությունից, համաձայն որի նրանք իրենց անչափահաս որդուն շաբաթ օրերը պետք է դպրոց ուղարկեին, արդարացված է եղել այլ անձանց իրավունքների և ազատությունների, հատկապես՝ կրթության իրավունքի պաշտպանության տեսանկյունից...

12 ՀՈԴՎԱԾ 10 ԱԶԱՏ ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Դատարանի ընդհանուր մոտեցումը

«Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության»
(Handyside v United Kingdom, A.24 (1976) 1 EHRR 737),
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը հրատարակիչ էր, որը Մեծ Բրիտանիայում պաշտպանել է *The Little Red Schoolbook* («Կարմիր դպրոցական գրքույկ») գրքի հեղինակային իրավունքները: Այդ գրքի բնագիրն առաջին անգամ հրատարակվել է Դանիայում: Թարգմանությունից հետո գիրքը հրատարակել են այլ հրատարակչություններ մի շարք մասնակից պետություններում, այդ թվում՝ Բելգիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Հունաստանում, Իտալիայում և Շվեդիայում: Դիմողը երեխաների և ուսուցիչների օգնությամբ կազմակերպել է գրքի անգլերեն թարգմանությունը և այնուհետև պատրաստել դրա տպագրությունը Միացյալ Թագավորությունում: Գիրքը 208 էջից բաղկացած ուսումնական ձեռնարկ է, որն արժե 30 սենթ: Ի թիվս այլոց, գրքում ընդգրկված են գլուխներ՝ նվիրված կրթությանը, ուսուցիչներին և աշակերտներին, ընդ որում՝ այս վերջին գլուխներից մեկը բովանդակում է 26 էջ՝ նվիրված սեռական հարաբերություններին վերաբերող հարցերին (ընդգրկված թեմաներն են՝ աբորտ, համասեռամոլություն, սեռական հարաբերություններ և ձեռնաշարժություն): Տպագրությունից հետո դիմողը բաժանել է գրքի մի քանի հարյուր օրինակ և մասնագիտական կրթական պարբերականներում տվել մի շարք գովազդային հայտարարություններ: Այնուհետև առավել կարդացվող թերթերում գիրքն արժանացել է ինչպես դրական, այնպես էլ բազում քննադատական արձագանքների: Գրքի վերաբերյալ մի շարք բողոքներ են ուղղվել գլխավոր դատախազություն, որն էլ հարցը հետաքննելու խնդրանքով դիմել է քաղաքային ոստիկանությանը: Հիմնվելով «Անպարկեշտ հրատարակությունների մասին» 1959 թ. օրենքի դրույթների վրա՝ ոստիկանությանը դատարանի կողմից տրվել է դիմողի աշխատանքային տարածքում խուզարկություն անցկացնելու հրաման: Խուզարկության արդյունքում առգրավվել է գրքի մի քանի օրինակ: Դրանից կարճ ժամանակ անց հեղինակին ներկայացվել է մեղադրանք՝ 1959 թ. օրենքի դրույթներով՝ շահադիտական նպատակներով անպարկեշտ հրատարակության մի քանի հարյուր օրինակ իր մոտ պահելու համար: Մագիստրատների դատարանը նրան մեղավոր է ճանաչել և տուգանք նշանակել՝ 50 ֆունտ ստեռլինգ՝ հրահանգ տալով ոչնչացնել առգրավված գրքերը: Դիմողը վերաքննիչ բողոք է ներկայացրել Լոնդոնի ներքին տարածքային դատարան, բայց վերջինս հաստատել է մագիստրատների դատարանի վճիռը, և գրքերը ոչնչացվել են: Նախքան դիմողի հետապնդվելը գրքի մի քանի հազար օրինակ արդեն վաճառվել էր Միացյալ Թագավորության տարածքում: Հյուսիսային Իռլանդիայում, Նորմանդական կղզիներում և Մեն կղզում դիմողի դեմ դատական գործ չի հարուցվել, իսկ Շոտլանդիայում նրա դեմ դատական հետապնդման անհաջող փորձ է արվել: Հետագայում դիմողը հրատարակել է գրքի վերանայված տարբերակը, որում հաշվի է առնվել բնագրի վերաբերյալ դատախազության քննադատությունը: Դիմողը հանձնաժողովին գանգատ է ներկայացրել կոնվենցիայով նախատեսված իր մի շարք իրավունքների, այդ թվում և 10-րդ հոդվածով նախատեսված ազատ արտահայտվելու իրավունքի խախտման առնչությամբ: Ձայների մեծամասնությամբ (ութ կողմ, հինգ դեմ և մեկ ձեռնպահ ձայներով) հանձնաժողովը որոշել է, որ 10-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

…

43. Վիճարկվող տարբեր միջոցները՝ դիմողի քրեական դատապարտումը, «Կարմիր դպրոցական գրքույկի» հարյուրավոր օրինակների առգրավումը, դրանց և մատրիցայի ոչնչացումը, անկասկած, «պետական մարմնի միջամտություն» են դիմողի՝ վերոնշյալ հոդվածի 1-ի կետով երաշխավորված ազատ արտահայտվելու իրավունքին, ինչը պատասխանող պետությունը չի հերքել: Նման միջամտությունները ենթադրում են 10-րդ հոդվածի խախտում, եթե դուրս են մնում 2-րդ կետով նախատեսված բացառություններից որևէ մեկի շրջանակից, ինչը համապատասխանաբար վճռական նշանակություն ունի այս դեպքում:

44. Եթե այն սահմանափակումները և տուգանքները, որոնցից բողոքել էր պրն Հենդիսայդը, չեն խախտում 10-րդ հոդվածը, ապա դրանք պետք է նախ և առաջ նախատեսված լինեն օրենքով: Դատարանը կարծում է, որ այդպես էլ եղել է: Միացյալ Թագավորության իրավական համակարգում տվյալ դեպքում կիրառված միջոցների օրինական հիմքերը նախատեսված են 1959/1964 թթ. օրենքներով: Ընդ որում, այս իրողությունը չի վիճարկվել դիմողի կողմից, նա ընդունել է, որ լիազոր մարմինները ճիշտ են կիրառել այդ օրենքները:

45. Այսպիսով, հաստատելով, որ գանգատի առարկա միջամտությունները բավարարում են 10-րդ հոդվածի 2-րդ կետի պայմանները՝ դատարանն այնուհետև քննեց, թե արդյոք այդ միջամտությունները բավարարո՞ւմ են նախատեսված այլ պայմանները: Պետության և հանճնաժողովի մեծամասնության համաձայն՝ միջամտություններն անհրաժեշտ էին ժողովրդավարական հասարակությունում «բարոյականության պաշտպանության համար»:

46. Համամիտ լինելով պետության կարծիքին և հանճնաժողովի միաձայն կարծիքին՝ դատարանը նախ կարծում է, որ 1959 և 1964 թթ. օրենքները հետապնդում են 10-րդ հոդվածի 2-րդ կետով ընդունելի նպատակ, մասնավորապես՝ ժողովրդավարական հասարակությունում բարոյականության պաշտպանությունը:

47. Դատարանը պետք է նաև քննի, թե արդյոք ժողովրդավարական հասարակությունում բարոյականության պաշտպանությունը պահանջո՞ւմ է այն տարբեր միջոցները, որոնք 1959 և 1964 թթ. օրենքների դրույթներով ձեռնարկվել են դիմողի և «Դպրոցական գրքույկի» դեմ:

Հանճնաժողովի զեկույցից հետո և 1976 թ. հունիսին դրան հետևած դատական լսումների արդյունքում ի հայտ եկան միանգամայն տարբեր կարծիքներ առանցքային մի խնդրի շուրջ, մասնավորապես՝ ինչպե՞ս որոշել, թե դիմողի գանգատի առարկա դարձած «սահմանափակումները» և «տուգանքները» անհրաժեշտ էին «ժողովրդավարական հասարակությունում» «բարոյականության պաշտպանության համար»: Պետության և հանճնաժողովի մեծամասնության համաձայն՝ դատարանը պետք է միայն համոզվեր, որ Անգլիայի դատարանները գործել են ողջամտորեն, բարեխղճորեն և 10-րդ հոդվածի 2-րդ կետով մասնակից պետություններին վերապահված հայեցողության սահմաններում: Մյուս կողմից՝ հանճնաժողովի փոքրամասնության կարծիքով՝ դատարանը կոչված է ոչ թե վերանայելու Լոնդոնի ներքին տարածքային դատարանի որոշումը, այլ ուղղակիորեն քննելու «Դպրոցական գրքույկի» բովանդակությունը բացառապես կոնվենցիայի լույսի ներքո:

48. Դատարանը նշում է, որ կոնվենցիայով նախատեսված պաշտպանության մեխանիզմը երկրորդական դեր է խաղում մարդու իրավունքները երաշխավորող ազգային համակարգերի նկատմամբ (տե՛ս 1968 թ. հուլիսի 23-ի *Բելգիայի լեզվաբանական* (*Belgian Linguistic*) գործի դատահիրավական հիմքերի վերաբերյալ կայացրած վերջնական վճիռը, շարք A, թիվ 6, էջ 35, պարբ. 10): Նախ և առաջ կոնվենցիայով ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման գործառույթը վերապահված է յուրաքանչյուր մասնակից պետությանը: Կոնվենցիայով ստեղծված հաստատություններն «իրենց ներդրումն ունեն այս գործում, սակայն նրանք մասնակցում են միմիայն վիճարկելի ընթացակարգերով և իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները սպառելուց հետո» (հոդված 26):

Հատկանշական է, որ այս դիտարկումները կիրառելի են 10-րդ հոդվածի 2-րդ կետի պարագայում: Մասնավորապես, անհնար է մասնակից պետությունների ներպետական օրենսդրություններում գտնել բարոյականության միօրինակ գաղափար: Բարոյականության պահանջների վերաբերյալ համապատասխան օրենքներով ամրագրված պատկերացումները փոխվում են՝ կախված վայրից և ժամանակից, հատկապես մի դարաշրջանում, որը բնորոշվում է այս թեմայի շուրջ առկա կարծիքների արագընթաց և հեռահար զարգացումներով: Քանի որ պետական մարմինները գտնվում են իրենց երկրների կենսական ուժերի հետ ուղղակի և շարունակական կապի մեջ, դրանք սկզբունքորեն առավել նպաստավոր դիրքում են, քան միջազգային ատյանի դատարանը այդ պահանջների հստակ բովանդակության, ինչպես նաև դրանք բավարարելուն ուղղված «սահմանափակումների» և «տուգանքների» «անհրաժեշտության» վերաբերյալ կարծիք հայտնելիս: Դատարանն այս առնչությամբ նշում է, որ թեև «անհրաժեշտ» ածականը 10-րդ հոդվածի 2-րդ կետի սահմանած իմաստով «պարտադիր» բառի հոմանիշը չէ (համեմատիր 2-րդ հոդվածի 2-րդ կետում և 6-րդ հոդվածի 1-ին կետում «բացարձակապես անհրաժեշտ» և «խիստ անհրաժեշտ» բառերի, իսկ 15-րդ հոդվածի 1-ին կետում՝ իրավիճակի հրամայականների խիստ պահանջի չափով արտահայտության հետ), բայց և զուրկ է այնպիսի արտահայտությունների ճկունությունից, ինչպիսիք են «ընդունելի», «սովորական» (4-րդ հոդվածի 3-րդ կետ), «օգտակար» (թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետի ֆրանսերեն տարբերակը), «ողջամիտ» (5-րդ հոդվածի 3-րդ կետ և 6-րդ հոդվածի 1-ին կետ) կամ «ցանկալի» բառերը: Այնուհանդերձ, հենց ազգային մարմիններին է վերապահված «անհրաժեշտ» հասկացությամբ ենթադրվող գերակա սոցիալական կարիքի իսկության սկզբնական գնահատումը:

Հետևաբար, 10-րդ հոդվածի 2-րդ կետով մասնակից պետություններին վերապահված է հայեցողության սահման: Այս հայեցողության սահմանը տրվում է ինչպես ներպետական օրենսդրին («նախատեսված է օրենքով»), այնպես էլ դատական մարմիններին, որոնք կոչված են մեկնաբանելու և կիրառելու գործող օրենքները (*Էնգելի և այլոց* (*Engel and Others*) գործով 1976 թ. հունիսի 8-ի վճիռ, շարք A, թիվ 22, էջ 41-2, պարբ. 100): Համեմատիր 8-րդ հոդվածի 2-րդ կետ, *Դե Վիլդեի, Օոմսի և Վերսիփի* (*De Wilde, Ooms and Versyp*») գործով 1971 թ. հունիսի 18-ի վճիռը, շարք A, թիվ 12, էջ 45-6, պարբ. 93 և *Գոլդերի* (*Golder*) գործով 1975 թ. փետրվարի 21-ի վճիռը, շարք A, թիվ 18, էջ 21-2, պարբ. 45):

49. Այնուամենայնիվ, 10-րդ հոդվածի 2-րդ կետը մասնակից պետություններին սեփական հայեցողության անսահմանափակ լիազորություն չի տալիս: Դատարանը, որը հանձնաժողովի հետ միասին պատասխանատու է պետությունների կողմից այդ պարտավորությունների կատարումն ապահովելու համար (հոդված 19), լիազորված է վերջնական վճիռ կայացնել առ այն, թե արդյոք «սահմանափակումը» կամ «տուգանքը» համատեղելի՞ են 10-րդ հոդվածով պաշտպանված ազատ արտահայտվելու իրավունքի հետ: Այսպիսով, ներպետական դրույթի կիրառումը համատեղելի է եվրոպական վերահսկման համակարգի հետ: Այսպիսի վերահսկումը վերաբերում է ինչպես կիրառված միջոցի նպատակին, այնպես էլ դրա «անհրաժեշտությանը», այն ընդգրկում է ոչ միայն հիմնական օրենսդրությունը, այլև այն կիրառելու մասին կայացրած որոշումը, եթե նույնիսկ այդ որոշումը կայացվել է անկախ դատարանի կողմից: Այս առնչությամբ, դատարանը վկայակոչում է կոնվենցիայի 50-րդ հոդվածը («իրավական մարմնի կամ այլ իրավասու մարմնի կողմից կայացրած որոշումը կամ կիրառած միջոցը»), ինչպես նաև սեփական նախադեպային իրավունքը (*Էնգելի և այլոց* (*Engel and Others*) գործով 1976 թ. հունիսի 8-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 22, էջ, 41-2, պարբ. 100):

Դատարանի վերահսկիչ գործառույթները պարտադրում են նրան առավել մեծ ուշադրություն դարձնել «ժողովրդավարական հասարակությունը» բնութագրող սկզբունքներին: Ազատ արտահայտվելու իրավունքը նման հասարակության կարևորագույն հիմքերից է, որն ապահովում է այդ հասարակության առաջընթացը և յուրաքանչյուր մարդու զարգացումը: 10-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով այն վերաբերում է ոչ միայն այն «տեղեկություններին» կամ «գաղափարներին», որոնք արժանանում են դրական գնահատականի կամ անտարբեր վերաբերմունքի, կամ էլ դիտվում որպես ոչ վիրավորական, այլև այն հարցերին, որոնք վիրավորում, ցնցում կամ հուզում են պետությունը կամ ազգաբնակչության ցանկացած հատված: Սրանք են բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության պահանջները, առանց որոնց չի կարող գոյություն ունենալ «ժողովրդավարական հասարակությունը»: Ի թիվս այլոց, սա նշանակում է, որ այս բնագավառում պարտադրվող յուրաքանչյուր «ձևաբանություն», «պայման», «սահմանափակում» կամ «տուգանք» պետք է համաչափ լինի հետապնդվող նպատակին:

Այլ տեսանկյունից կարելի է պնդել, որ յուրաքանչյուր անձ, ով իրացնում է ազատ արտահայտվելու իր իրավունքը, ստանձնում է «պարտականություններ և պատասխանատվություն», որոնց աստիճանը կախված է իրավիճակից և օգտագործած տեխնիկական միջոցներից: Ինչպես տվյալ դեպքում, այնպես էլ ընդհանրապես դատարանը չի կարող անտեսել նման անձի «պարտականությունները» և «պատասխանատվությունը», երբ քննում է, թե «սահմանափակումները» կամ «տուգանքները» հանգեցրե՞լ են «քարոյականության պաշտպանության», որի համար և «անհրաժեշտ» է եղել դրանց կիրառումը «ժողովրդավարական հասարակությունում»:

50. Սրանից հետևում է, որ դատարանին ամենևին էլ վերապահված չէ ստանձնել իրավասու ազգային դատարանների գործառույթը, այլ փոխարենը՝ սեփական հայեցողության իրավունքի կիրառմամբ վերանայել վերջիններիս կայացրած որոշումներն ըստ 10-րդ հոդվածի:

Այդուհանդերձ, դատարանի վերահսկողությունը վերացական կլիներ, եթե միայն առանձին ուսումնասիրեր այս որոշումները. փոխարենը դատարանը պետք է ուսումնասիրի դրանք ողջ գործի համատեքստում, այդ թվում նաև՝ տվյալ հրատարակության պարագայում, ինչպես նաև պետք է ուսումնասիրի նախ ազգային, այնուհետև միջազգային մակարդակով դիմողի բերած փաստարկներն ու ապացույցները: Իր տրամադրության տակ եղած տարբեր տվյալների հիման վրա դատարանը պետք է որոշի, թե արդյոք ազգային մարմինների կողմից իրենց ձեռնարկած «միջամտության» փաստացի գործողությունները հիմնավորելու նպատակով ներկայացված պատճառաբանությունը տեղի՞ն է և բավարա՞ր է 10-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում (համեմատի՛ր 5-րդ հոդվածի 3-րդ կետը՝ *Վեմհոֆի* (*Wemhoff*) գործով 1968 թ. հունիսի 27-ին կայացրած վճռում, շարք A, թիվ 7, էջ 24-5, պարբ. 12, *Նյումեյսթերի* (*Neumeister*) գործով 1968 թ. հունիսի 27-ին կայացրած վճռում, շարք A, թիվ 8, էջ 37, պարբ. 5, *Շտոգմյուլլերի* (*Stogmuller*) գործով 1969 թ. նոյեմբերի 10-ին կայացրած վճռում, շարք A, թիվ 9, էջ 39, պարբ. 3, *Մացնեթերի* (*Mattznetter*) գործով 1969 թ. նոյեմբերի 10-ին կայացրած վճռում, շարք A, թիվ 10, էջ 31, պարբ. 3 և *Ռինգայզենի* (*Ringeisen*) գործով 1971 թ. հուլիսի 16-ին կայացրած վճռում, շարք A, թիվ 13, էջ 42, պարբ. 104):

51. Հետևելով վերը շարադրված մեթոդին՝ դատարանը մանրակրկիտ ուսումնասիրել է 10-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում գանգատի առարկա դարձած առանձին որոշումները, մասնավորապես՝ Լոնդոնի ներքին տարածքային դատարանի որոշումները:

52. Դատարանը հատուկ ուշադրություն է դարձնում այն գործոնին, որն ուշադրության է արժանացել 1971 թ. հոկտեմբերի 29-ի վճռում, ասել է թե՝ «Դպրոցական գրքույկի» ընթերցողների նախատեսված շրջանակին: Գիրքը նախ և առաջ ուղղված է եղել տասներկուսից տասնութ տարեկան երեխաներին և պատանիներին: Նյութը շարադրված է պարզ, փաս-

տերով ու զուտ ոճական փոփոխություններով և դրա շնորհիվ ըմբռնելի է նույնիսկ ամենաերիտասարդ ընթերցողների համար: Դիմողը պարզ նշել է, որ նախատեսում էր լայն տարածում տալ գրքին:

Տարածքային դատարանն ընդունեց, որ ըստ էության գիրքը բովանդակում է զուտ փաստական տեղեկություններ, որոնք ընդհանուր առմամբ ճշմարտացի և հաճախ օգտակար են: Այդուհանդերձ, դատարանը նաև նշել է, որ սեռական կյանքին նվիրված մասում և աշակերտներին նվիրված «Եղիր ինքդ» խորագիրը կրող հատվածում կան նախադասություններ կամ պարբերություններ, որոնք զարգացման կրիտիկական փուլում գտնվող երեխաները կարող էին մեկնաբանել որպես իրենց համար վնասակար գործունեությամբ զբաղվելու կամ նույնիսկ որոշակի քրեական հանցանքներ գործելու խրախուսանք: Նման հանգամանքներում, թեև Միացյալ Թագավորությունում էթիկայի և կրթության վերաբերյալ կարծիքներն անընդհատ զարգացում են ապրում, անգլիացի դատավորներն իրավասու էին իրենց հայեցողությամբ համարել, որ այդ ժամանակահատվածում «Դպրոցական գրքույկը» վնասակար ազդեցություն կունենար այն կարդացած շատ երեխաների և պատանիների բարոյականության վրա:

Այդուհանդերձ, դիմողն ըստ էության հայտարարել է, որ «բարոյականության պաշտպանության» հավակնությունները կամ օգտվելով 1959 և 1964 թթ. օրենքների ձևակերպումներից՝ «բարոյազրկելու և այլասերելու» միտում ունեցող հրատարակությունների դեմ «մղվող պատերազմն» իր դեպքում միայն պատրվակ է ծառայել: Ըստ նրա՝ իրականում փորձ է արվել լռեցնել փոքր հրատարակչին, ում քաղաքական հայացքները բախվել են հանրության մի հատվածի քննադատության հետ: Դատական գործը մեկնարկել է «հիստերիայից» քիչ տարբերվող մթնոլորտում, որը ստեղծվել էր ծայրահեղ պահպանողական տարրերի կողմից:

Դատարանն իր մասով գտնում է, որ «Դպրոցական գրքույկի» հակաավտորիտար հայեցակետերը, որպես այդպիսիք, չեն հակասել 1971 թ. հոկտեմբերի 29-ի վճռում արտացոլված 1959 և 1964 թթ. օրենքներին: Այս հայեցակետերը հաշվի են առնվել միայն այնքանով, որքանով վերաքննիչ դատարանը համարել է, որ խաթարելով ծնողների, ուսուցիչների, եկեղեցու և երիտասարդական կազմակերպությունների զսպող ազդեցությունը՝ այդ հայեցակետերը «բարոյազրկելու և այլասերելու» միտում են ունեցել, ինչը, դատարանի կարծիքով, այդ աշխատության այլ մասերի հետևանք է եղել: Հարկ է ավելացնել, որ վերանայված տարբերակը թույլատրվել է ազատ շրջանառության Մեծ Բրիտանիայի իշխանությունների կողմից, չնայած հակաավտորիտար հատվածներն այնտեղ կրկին ամբողջությամբ տեղ են գտել, իսկ որոշ դեպքերում՝ ավելի սուր ձևակերպումներով են ներկայացվել:

Ինչպես նշել է կառավարությունը, այս իրողությունը դժվար է համատեղել քաղաքական դավադրության տեսության հետ:

Դատարանը, այսպիսով, համարում է, որ 1971 թ. հոկտեմբերի 29-ի վճռի հիմնական նպատակն էր, կիրառելով 1959 և 1964 թթ. օրենքները, պաշտպանել երիտասարդների բարոյականությունը, ինչը 10-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում օրինական նպատակ է համարվում: Հետևաբար, 1971 թ. մարտի 31-ին և ապրիլի 1-ին՝ մինչև այդ պահը դեռևս չսկսված դատավարության արդյունքների հայտարարումը, կատարված առգրավումները նույնպես հետապնդում էին այս նպատակը:

53. Մնում է ուսումնասիրել վիճարկվող միջոցների «անհրաժեշտությունը»՝ սկսած վերոնշյալ առգրավումների պահից:

54. Դիմողը և հանձնաժողովը ներկայացրել են խորհելու տեղիք տվող մի շարք փաստարկներ, որոնք վերաբերում են դատավճռի և առգրավման «անհրաժեշտությանը»:

Նախ և առաջ նրանք ուշադրություն հրավիրեցին այն հանգամանքի վրա, որ «Դպրոցական գրքույկի» բնագրի հրատարակումը որևէ դատական հետապնդումների առարկա չի դարձել Հյուսիսային Իռլանդիայում, Մեն կղզում և Նորմանդական կղզիներում, իսկ Շոտլանդիայում որևէ դատավճիռ չի կայացվել, ընդ որում, նույնիսկ Անգլիայում և Ուելսում նախքան 1971 թ. հոկտեմբերի 29-ին կայացրած դատավճիռն անարգել շրջանառության մեջ են եղել գրքի հազարավոր օրինակներ: Հնարավոր է, որ Հյուսիսային Իռլանդիայի, Մեն կղզու և Նորմանդական կղզիների լիազոր մարմիններն ունեցել են գրքի և դրա հրատարակչի դեմ որևէ գործողություն չձեռնարկելու ծանրակշիռ պատճառներ՝ ելնելով տեղական պայմաններից: Գործողություններ չձեռնարկելու նրանց դիրքորոշումը, որը դատարանի քննության առարկա չէր և Անգլիայում ձեռնարկված միջոցների արդյունքում չի կանխել «Դպրոցական գրքույկի» վերանայումը, չի ապացուցում, որ 1971 թ. հոկտեմբերի 29-ի վճիռը չի եղել իրական անհրաժեշտության պատասխան՝ հաշվի առնելով ազգային մարմինների սեփական հայեցողությունը կիրառելու իրավունքը:

Այս դիտողությունները, *mutatis mutandis*, վերաբերում են Անգլիայում և Ուելսում գրքի բազում օրինակների շրջանառությանը:

…

57. Դիմողը և հանձնաժողովի փոքրամասնությունը շեշտը դնում էին նրա վրա, որ բացի Դանիայում հրատարակված բնագրից, «գրքույկի» թարգմանությունները հայտնվել և ազատ շրջանառվել են Եվրոպական խորհրդի անդամ պետությունների մեծ մասում:

Այստեղ կրկին հայեցողության ազգային սահմանը և «սահմանափակումների» ու «տուգանքների» կամընտիր բնույթը թույլ չեն տալիս դատարանին ընդունել այս փաստարկը: Մասնակից պետություններից յուրաքանչյուրն իր մոտեցումը ձևավորել է՝ հաշվի առնելով իր երկրի տարածքում տիրող իրավիճակը, ընդ որում պետությունները, ի թիվս այլոց, հաշվի են առել ժողովրդավարական հասարակությունում բարոյականության պաշտպանության վերաբերյալ տարածված տարբեր կարծիքները: Այն հանգամանքը, որ այդ պետությունների մեծ մասը թույլատրել է գրքի շրջանա-

ռությունը, չի նշանակում, որ Լոնդոնի ներքին տարածքային դատարանի կայացրած որոշումը 10-րդ հոդվածի խախտում էր: Բացի այդ, Միացյալ Թագավորությունից դուրս լույս տեսած հրատարակություններում չեն ընդգրկվել այն հատվածները կամ առնվազն ոչ բոլոր այն հատվածները, որոնք 1971 թ. հոկտեմբերի 29-ի դատավճռում մեջբերվում են որպես «բարոյազրկելու և այլասերելու» միտման վառ օրինակներ:

…

59. Այսպիսով, հիմք ընդունելով իր տրամադրության տակ եղած տվյալները, դատարանը եկել է այն եզրակացության, որ տվյալ գործի հանգամանքներում 10-րդ հոդվածի պահանջների խախտում չի արձանագրվել:
…

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

Տասներեք կողմ և մեկ դեմ ձայներով որոշել է, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:
…

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում ընդգրկված էին նախագահող դատավոր Բալլադորե Պալիերին և դատավորներ՝ Զեքիան, Վիարդան, Պեդերսենը, Տոիր Վիլջաուլմսոնը, Պետրենը, Ռիսդալը, Բոզերը, Գանսհոֆ վան դեր Մերշը, Ֆիտցմորիսը, Բինդշեդլեր-Ռոբերտը, Էվրիգենիսը և Դելվոն: Դատավոր Մոզլերը չհամընկնող կարծիք է հայտնել այն հիմնավորմամբ, որ 10-րդ հոդվածի 2-րդ կետի «անհրաժեշտություն» եզրույթը նա ընկալում էր այլ իմաստով: Նրա համար այդ արտահայտությունը նշանակում էր, որ ազգային մարմինների կողմից ձեռնարկված միջոցները պետք է «անհրաժեշտ լինեն» 10-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում «օրինական նպատակին հասնելու համար»: Նրա կարծիքով՝ Անգլիայի ձեռնարկած միջոցները համաչափ չեն դպրոցական տարիքի երեխաներին գրքի վնասակար ազդեցությունից պաշտպանելու նպատակին, քանի որ, նախ, գրքի բազում օրինակներ արդեն տարածվել էին նախքան Հենդիսայդի դեմ դատական գործի հարուցումը և երկրորդ՝ նա չէր կարող հասկանալ, թե ինչու գրքի հրատարակման դեմ դատական գործողություններ չեն ձեռնարկվել Միացյալ Թագավորության այլ մասերում, եթե իշխանությունները համարում էին, որ գիրքն այդքան մեծ վտանգ է ներկայացնում երիտասարդների բարոյականության համար:

2 «Ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» հասկացության այն մանրամասնումը, որը, ըստ մեծամասնության, ենթադրում է հրատապ սոցիալական անհրաժեշտության առկայություն, հետագա գործերում ընդունվել է որպես հեղինակավոր մեկնաբանություն:

3 10-րդ հոդվածին առնչվող գործեր ուսումնասիրելիս մի՞թե կարծում եք, որ դատարանի կայացրած վճիռներում դրսևորվում են «բազմակարծության արժեքներ, հանդուրժողականություն և լայնախոհություն» այն իրավիճակներում, երբ դատարանը գործ ունի «պետության կամ ազգաբնակչության որևէ հատվածի համար վիրավորական, վրդովեցնող կամ անհանգստացնող» հայացքներ արտահայտող անձանց հետ:

4 Դատարանը եզրակացրել է, որ որոշ իրավիճակներում 10-րդ հոդվածը, ինչպես նաև կոնվենցիայում զետեղված մի շարք այլ նյութական իրավունքներ, մասնակից պետությունների վրա դնում են դրական պարտավորություններ: *«Օզգյուր Գունդեմն ընդդեմ Թուրքիայի» (Ozgur Gundem v Turkey)* 2000 թ. մարտի 16-ի գործով բողոքարկող թերթը ներկայացված էր խմբագրի և սեփականատերերի կողմից: Թերթը հրատարակվում էր 1992-1994 թթ.: Թերթը պնդում է, որ այս ժամանակահատվածում դարձել է լուրջ հարձակումների և հետապնդումների առարկա, որոնց համար ուղղակի կամ անուղղակի պատասխանատվություն էին կրում Թուրքիայի իշխանությունները, և չնայած կրկնվող պահանջներին՝ կառավարությունը գրեթե ոչինչ չի արել թերթը կամ դրա անձնակազմը պաշտպանելու համար: Չէին վիճարկվում այն փաստերը, որ թերթի հետ առնչություն ունեցող յոթ անձ, այդ թվում՝ լրագրողներ, սպանվել են «անհայտ անձանց» կողմից, թերթը վաճառող գործակալների վրա կատարվել են զինված

հարձակումներ, իսկ թերթի խմբագրությունում պայթեցվել է երկու ռումբ: Թերթը, ի թիվս այլ փաստարկների, պնդում էր, որ պետության կողմից թերթն ու դրա աշխատակազմը չպաշտպանելու իրողությունը 10-րդ հոդվածի խախտում է: Միաձայն կայացրած վճռում.

Դատարանը հիշեցնում է ազատ արտահայտվելու իրավունքի՝ որպես ժողովրդավարության նախապայմաններից մեկի առանցքային նշանակության մասին: Այս իրավունքի իրական և արդյունավետ իրացումը կախված է ոչ միայն պետության չմիջամտելուց և պահանջում է պաշտպանության դրական միջոցներ, նույնիսկ անհատների միջև հարաբերությունների ոլորտում (տե՛ս *mutatis mutandis «X-ի ընդդեմ Նիդեռլանդների» (X and Y v The Netherlands)* գործը, A. 91 (1985): Որպեսզի որոշվի՝ պետությունների համար դրական պարտավորություն գոյություն ունի, թե ոչ, հարկ է հաշվի առնել այն հավասարակշռությունը, որին պետք է հանգեցվեն առհասարակ համայնքի և անհատի շահերը, ընդ որում, այդ հավասարակշռությանը հասնելու կոչերն առկա են կոնվենցիայի ողջ տեքստում: Այս պարտավորության աստիճանն անխուսափելիորեն փոխվում է՝ կախված մասնակից պետություններում ստեղծվող իրավիճակների բազմազանությունից և ժամանակակից հասարակություններում քաղաքավարության տեսանկյունից առաջացող դժվարություններից, ուստի հարկ է համապատասխան տարբերակներն ընտրել՝ հաշվի առնելով դրված առաջնությունները և առկա ռեսուրսները: Միաժամանակ նման պարտավորությունը չի կարելի մեկնաբանել իշխանությունների վրա անհամաչափ բեռ դնելու իմաստով (տե՛ս *«Ռիսն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Rees v UK*, A.106 1986) և *«Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Osman v UK*, Զեկույցներ 1998-VIII) գործերը):

Տվյալ պարագայում իշխանությունները տեղյակ էին, որ դիմող Օզգյուր Գունդեմը և նրա հետ կապված անձինք ենթարկվել են մի շարք բռնի գործողությունների, և դիմողները մտավախություն ունեին, որ իրենց որպես թիրախ ընտրելն արվել է դիտավորյալ՝ թերթի հրատարակումը և տարածումը կանխելու նպատակով: Այդուհանդերձ, թերթի և դրա անձնակազմի կողմից իրենց պաշտպանությունն ապահովելու մասին գրեթե ոչ մի խնդրագրին որևէ արձագանք չի տրվել: Կառավարությունը կարողացել է սահմանել պաշտպանության միայն մեկ միջոց՝ կապված թերթի տարածման հետ, որը ձեռնարկվել է, քանի դեռ թերթը գոյություն ուներ:

Դատարանը նշում է, որ պետությունը համոզված է եղել, որ դիմող Օզգյուր Գունդեմը և նրա աշխատակազմը սատարում են Քրդական աշխատավորական կուսակցությանը և հանդես են գալիս որպես վերջինիս քարոզչական գործիք: Այս իրողությունը, նույնիսկ ճշմարտացի լինելու դեպքում, միևնույն է, չի արդարացնում այն, որ պետությունն արդյունավետ քայլեր չի ձեռնարկել հետաքննելու և անհրաժեշտության դեպքում բռնության կիրառմամբ ապօրինի գործողություններից պաշտպանություն ապահովելու ուղղությամբ:

Դատարանը եզրակացնում է, որ տվյալ պարագայում Օզգյուր Գունդեմին և նրա ազատ արտահայտվելու իրավունքը պաշտպանելու իր դրական պարտավորությունը պատասխանող պետությունը չի կատարել (պարբ. 43–6):

Այն պարագաներում, երբ միջամտությունները անձանց ազատ արտահայտվելու իրավունքին պակաս ծայրահեղ բնույթ են կրում, քան վերոնշյալ գործում, պետությունների վրա դրված համապատասխան դրական պարտավորությունների չափը նույնպես նվազում է:

Օրինակ՝ *«Էփլբին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Appleby and Others v UK*) գործով 2003 թ. մայիսի 6-ին կայացրած վճռով պալատը հրաժարվեց ընդունել այն պնդումը, որ պետությունները քաղաքական ասպարեզում արտահայտվելու նպատակով մասնավոր սեփականության տիրույթ մուտք գործելու ընդհանուր իրավունք ապահովելու դրական պարտավորություն ունեն: Դիմողները փորձում էին մուտքի իրավունք ստանալ Վաշինգտոն քաղաքի Թայն և Ուեր թաղամասում (*Tyne and Wear, Washington*) գտնվող (և մասնավոր սեփականություն համարվող) գործարար կենտրոնում «Գելրիս» առևտրային և գրասենյակային համալիր՝ քաղաքի այլ մասում հանրային զբոսայգու առաջարկվող կառուցապատման դեմ իրենց բողոքը ներկայացնելու համար: «Գելրիսի» սեփականատեր հանդիսացող ընկերությունը թույլ չի տվել դիմողներին մուտք գործել իր սեփականության տարածք՝ նշելով, որ բոլոր քաղաքական և կրոնական հարցերում պահպանում է խիստ չեզոք քաղաքականություն: Դիմողները դատարան են դիմել այն պնդմամբ, որ 10-րդ հոդվածի համաձայն՝ կառավարությունը պարտավոր էր ապահովել «Գելրիս» համալիրի տարածքում ազատ արտահայտվելու իրավունքը: Ձայների մեծամասնությամբ՝ վեց կողմ և մեկ դեմ, դատարանը վճռել է հետևյալը.

47. 10-րդ հոդվածը ճանաչում է ազատ արտահայտվելու իրավունքի կարևորությունը, սակայն չի նախատեսում այդ իրավունքի իրացման համար հասարակական վայրում հավաքներ անցկացնելու իրավունքը: Թեև ճիշտ է, որ ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական և տեխնոլոգիական զարգացումները փոխում են մարդկանց տեղաշարժվելու և միմյանց հետ հաղորդակցվելու եղանակները, դատարանը համոզված չէ, որ դա ինքնըստինքյան պահանջում է երաշխավորել նոր իրավունքներ մասնավոր, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նույնիսկ պետական սեփականություն հանդիսացող տարածքներ (օրինակ՝ կառավարության գրասենյակներ և նախարարություններ) մուտք գործելու համար: Այդուհանդերձ, այն դեպքերում, երբ սեփականության տարածք մուտք գործելու արգելքի հետևանքով որևէ

կերպ խաթարվում է ազատ արտահայտվելու իրավունքի արդյունավետ իրացումը, կամ կարելի է պնդել, որ այդ իրավունքի էությունը ջնջվում է, ապա դատարանը չի բացառում, որ պետության համար կարող է դրական պարտավորություն առաջանալ կոնվենցիայով ամրագրված իրավունքների իրացումը սեփականության իրավունքի կարգավորման միջոցով պաշտպանելու համար: Որպես օրինակ կարող է ծառայել որևէ ընկերության պատկանող ավանը, որտեղ ողջ տարածքը վերահսկում է մասնավոր մարմինը:

48. Տվյալ դեպքում դիմողների՝ իրենց հայացքներն արտահայտելու կարողությունը սահմանափակվում էր «Գելրիս» համալիրի մուտքով և անցուղիներով: Դա չէր խանգարում դիմողներին «Գելրիս» համալիրում տեղակայված առանձին ընկերություններից թույլտվություն ստանալ (մեկ անգամ սուպերմարքեթի տնօրենը թույլատրել է իր խանութի տարածքում ցուցավահանակ տեղադրել) և իրենց թռուցիկները բաժանել այդ տարածք տանող հանրության համար բաց անցուղիներում: Նրանք նաև հնարավորություն ունեին իրենց քարոզարշավն իրականացնելու հին քաղաքային կենտրոնում և օգտագործելու այլընտրանքային միջոցներ, օրինակ՝ դռնեդուռ անհատական այցելությունների միջոցը կամ խնդիրը տեղական մամուլում, ռադիոյով կամ հեռուստատեսությամբ ներկայացնելու միջոցը: Դիմողները չեն հերքել, որ այս այլընտրանքային միջոցները նրանց համար մատչելի են եղել: Ըստ էության, նրանց փաստարկն այն է, որ մարդկանց հասնելու առավել դյուրին և արդյունավետ ճանապարհը «Գելրիս» համալիրի օգտագործումն էր: Այդուհանդերձ, դատարանը չի համարում, որ դիմողները կարող են պնդել, որ «Պոստել» մասնավոր ընկերության կողմից մերժում ստանալու հետևանքով նրանք գործնականում զրկվել են իրենց համաքաղաքացիներին սեփական հայացքները հաղորդելու հնարավորությունից: Առաջարկվող կառուցապատման դեմ դիմողների խնդրագրին ի պատասխան շուրջ 3200 նամակ է ուղարկվել: Արդյոք հնարավո՞ր էր ավելի մեծ արդյունքների հասնել, եթե ցուցավահանակը մնար «Գելրիս» համալիրի տարածքում, սա մի հարց է, որը բավարար չէ հիմնավորելու բերված փաստարկն առ այն, որ դիմողներն ի վիճակի չէին այլ նշանակալից ճանապարհով իրացնելու ազատ արտահայտվելու իրենց իրավունքը:

49. Հավասարակշռության բերելով քննարկվող իրավունքները և հաշվի առնելով այս դեպքում ուսումնասիրվող սահմանափակման բնույթն ու աստիճանը՝ դատարանը չի համարում, որ պատասխանող պետությունը չի կատարել դիմողների ազատ արտահայտվելու իրավունքը պաշտպանելու իր դրական պարտավորությունը:

50. Հետևաբար, կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում չի արձանագրվել:

Դատավոր Մարուստեն ներկայացրել է չհամընկնող կարծիք՝ արտահայտելով այն տեսակետը, որ.

...Առևտրային կենտրոնի սեփականատերերի սեփականության իրավունքները ստացել էին ավելի մեծ առաջնայնություն, քան դիմողների ազատ արտահայտվելու և հավաքներ անցկացնելու իրավունքները:

Այս գործը կարևոր հարց է արծարծում ժամանակակից ազատական հասարակությունում պետության դրական պարտավորությունների մասով, քանզի ավանդաբար պետության սեփականություն հանդիսացող բազում ծառայություններ, ինչպիսիք են՝ փոստը, փոխադրումները, էներգամատակարարումը, առողջապահությունը և կոմունալ ծառայությունները, կարող են մասնավորեցվել կամ արդեն մասնավորեցվել են: Այսպիսի իրավիճակում, եթե մասնավոր սեփականատերերի իրավունքները գերակայեն այլոց իրավունքների նկատմամբ, ապա պետությունը պատասխանատվություն կկրի՞ արդյոք մասնավոր և հանրային շահերի միջև հավասարակշռություն ապահովելու համար:

...Չի կարող պատահել, որ պետական իշխանությունները մասնավորեցման միջոցով ազատվեն սեփականության իրավունքներից, բացի այլ իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու իրենց ողջ պատասխանատվությունից: Պետական իշխանությունները դեռևս պարտավորություն են կրում՝ որոշելու, թե ինչպես պետք է օգտագործվեն իրենց կողմից ստեղծված ատյանները՝ ապահովելով հանրային շահերի և անհատների իրավունքների պահպանումը: Հանրության շահերից է բխում թույլատրել անձնական իրավունքների և ազատությունների, այդ թվում՝ մասնավոր սեփականություն հանդիսացող առևտրային կենտրոնի տարածքում խոսքի և հավաքներ անցկացնելու իրավունքի ողջամիտ իրացումը և չզրկել հանրությանն ու ցուցարարներին որոշ հանրային ծառայություններից և հաստատություններից օգտվելու իրավունքից: Դատարանը հետևողականորեն որոշել է, որ եթե իրավունքների և ազատությունների միջև բախում առաջանա, ապա առաջնային է համարվում ազատ արտահայտվելու իրավունքը: Սակայն այս դեպքում կարծես տեղի է ունեցել հակառակը. սեփականության իրավունքները գերակայություն են ստացել խոսքի ազատության նկատմամբ:

Իհարկե, չափազանց հեռահար պնդում կլիներ ասել, որ մասնավոր հողի կամ տարածքի վրա իրավունքների և ազատությունների իրացման որևէ սահմանափակում չի կարող դրվել: Այդ իրավունքներն ու ազատությունները պետք է իրացվեն՝ հարգելով նաև սեփականատերերի իրավունքները: Եվ հենց այս իրողությունը պալատը հաշվի չառավ տվյալ գործում: Պետական իշխանությունները չեն իրականացրել հավասարակշռման իրենց գործառույթը և չեն կարգավորել այն, թե ինչպես մասնավոր սեփականություն հանդիսացող հանրային ատյանը (forum publicum) պետք է օգտագործվի հանրային շահերի նկատառումով: Այն հին ավանդական կանոնը, որով մասնավոր սեփականատերն առանց հիմնավորման կամ ողջամիտ անհրաժեշտության իր հողից և տարածքից մարդկանց վտարելու անվիճարկելի իրավունք ունի, այլևս լիովին չի համապատասխանում ժամանակակից պայմաններին և հասարակությանը: Հետևաբար, պետությունը չի իրականացրել 10-րդ և 11-րդ հոդվածներով նախատեսված իր դրական պարտավորությունները:

Ի՞նչ եք կարծում, դիմողները, չունենալով «Գելրիս» համալիր մուտք գործելու իրավունք, ենթարկվե՞լ են ազատ արտահայտվելու իրենց իրավունքի նշանակալի սահմանափակման:

Հայեցողության սահման

Հենդիսայդի (*Handyside*) գործով դատարանի կայացրած վճռի մեկ այլ կարևոր հայեցակետն է այն, որ դրանում հղում է արվում «հայեցողության սահմանին»: Այս փոփոխական հայեցողության իրավունքը ազգային մարմիններին շնորհվում է դատարանի կողմից, երբ այն քննում է՝ պետությունը խախտե՞լ է դիմողի՝ կոնվենցիայի 8-11-րդ հոդվածներով ամրագրված իրավունքները, թե՞ ոչ: Հայեցողության սահմանը, պակաս հաճախականությամբ, կիրառվել է այլ իրավունքներին վերաբերող գործերում. օրինակ՝ 5-րդ հոդված *(«Վինտերվերպն ընդդեմ Նիդեռլանդների» (Winterwerp v Netherlands,* A.33 (1979) 2 EHRR 387), 14-րդ հոդված *(«Ռասմուսենն ընդդեմ Դանիայի» (Rasmussen v Denmark,* A.87 (1984) 7 EHRR 371) և թիվ 1 արձանագրության 1-ին հոդված *(«Ջեյմսն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*James v UK*, A.98 (1986) 8 EHRR 123): Այս գաղափարի առաջադրումն ու գործածումը դատարանում հակասական կարծիքների տեղիք է տվել (օրինակ տե՛ս ստորև՝ մեծամասնությունը և չհամընկնող կարծիքները *«Սանդի թայմզ» թերթն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*The Sunday Times v UK*) գործում) դատավորների շրջանում և այս մոտեցումը սատարող կամ քննադատող գիտնականների շրջանում:

1 Հովարդ Յուրոունը կոնվենցիայով ամրագրված իրավունքներին վերաբերող մի շարք գործերում դատարանի կողմից այս գաղափարի գործածմանն անդրադարձող իր ծավալուն ուսումնասիրության մեջ հետևյալ ձևակերպումներով է նկարագրում այս կառույցը.

Հայեցողության սահմանի մոտեցումը մի հնարք է, որի օգնությամբ կշռադատվում և հավասարակշռության են բերվում հայցապահանջները և պետության պաշտպանական փաստարկները, հատկապես այն ժամանակ, երբ որոշվում է պետության գործողությունների անհրաժեշտությունը 8-11-րդ հոդվածների սահմանափակող դրույթների շրջանակներում: Սա մի մեթոդ է, որի օգնությամբ և կոնսենսուսի չափանիշի համադրությամբ որոշվում են պետության՝ չափանիշներից շեղվող գործողությունները: Այս եղանակը պետության հայեցողության աստիճանը որոշելու առումով գործածվող առավել պաշտոնական չափանիշն է մի քանի տարբեր, սակայն փոխկապակցված կարգերում՝ Ստրասբուրգի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և մասնակից պետությունների միջև իշխանության ուղղահայաց տարանջատման ձևաչափում, ասել է թե՝ հարգանքը ժողովրդավարական օրենսդրության, անհատական գործերում պետության գործադիր և դատական փաստահավաք գործընթացի, պետության կողմից կոնվենցիայի մեկնաբանության, ինչպես նաև սուբսիդիարության սկզբունքով իրավական դրույթների իրագործման առումով պետության կողմից իր պատասխանատվության կատարման միջոցների ընտրության նկատմամբ: [H.C. Yourow, *The Margin of Appreciation Doctrine in the Dynamics of European Human Rights Jurisprudence* (Dordrecht: Martinus Nijhoff, 1996), էջեր 195–6.]C. Yourow, *The Margin of Appreciation Doctrine in the Dynamics of European Human Rights Jurisprudence* (Dordrecht: Martinus Nijhoff, 1996), pp 195–6.]

2 Նախադեպային իրավունքի վերլուծության վաղ շրջանում Թոմաս Օդոնելը բացատրում էր, որ «հայեցողության սահման» արտահայտությունը ֆրանսերեն՝ *marge d'appreciation*-ի թարգմանությունն է, ընդ որում՝ այս գաղափարը պետական խորհրդի (ֆր. *Conseil d'Etat*) մշակած դատական քննության մեթոդ է: Դրանից բխեցվում էր կոնվենցիայով ամրագրված իրավունքների նկատմամբ այս գաղափարը կիրառելիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից օգտագործող երեք չափանիշ: Առաջին՝ կոնսենսուսի չափանիշը, երբ մասնակից պետություններում ընդհանուր սովորույթի գոյությունը (օրինակ՝ արտաամուսնական երեխաների իրավաբանական կարգավիճակի վերաբերյալ, ինչպես *Մարքսի* (*Marckx*) գործում հանգեցրել է նրան, որ դատարանը պատասխանող պետության վարքագծի օրինականությունը որոշելիս որդեգրել է հայեցողության նեղ սահմանի սկզբունքը: Երկրորդ՝ հիմնարար իրավունքների պաշտպանություն, որով դատարանն առանձնահատուկ իրավունքները դասակարգել է որպես ժողովրդավարական համակարգի պահպանման համար անհրաժեշտ գործոն (օրինակ՝ մամուլի ազատությունը ստորև ներկայացված *«Սանդի թայմզ»* (*The Sunday Times*) թերթի գործում), ինչի արդյունքում դատարանը պետություններին օժտեց այս հիմնական ազատություններին միջամտելու հայեցողության նեղ սահմանով: Երրորդ՝ տարբեր գործերում սահմանի լայնությունը որոշելու նպատակով կոնվենցիայի դրույթների տեքստային վերլուծությունը (օրինակ՝ վերոնշյալ *Հենդիսայդի* (*Handyside*) գործում 10-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով

խրախուսվում էր հայեցողության ավելի լայն սահմանի վերագրում Բրիտանիայի իշխանություններին): Ընդհանուր առմամբ նա սատարում էր այս մեթոդը.

Հայեցողության սահմանի սկզբունքը կարևոր և թերևս շարունակական գաղափար է դատարանի նախադեպային բազայում: Հայեցողության սահմանը շարունակում է հնարավորություն տալ պետություններին որոշ ճկունություն ցուցաբերելու իրենց պարտավորությունները իրականացնելիս: Սակայն այս գաղափարը նաև դատարանին է ճկունություն ցուցաբերելու հնարավորություն տալիս: Եթե դատարանը հաստատում է այս գաղափարի գործածման պարզ և սկզբունքային չափանիշները, ապա հայեցողության սահմանի սկզբունքը կարող է դառնալ այն անհրաժեշտ իրավաբանական «քսուքը», որը կարող է գործածվել կոնվենցիայով նախատեսված իրագործման մեխանիզմներում [TA O'Donnell, The Margin of Appreciation Doctrine:Standards in the Jurisprudence of the European Court of Human Rights (1982) 4 *Human Rights Quarterly* 474 at 496]:

3 Հանձնաժողովի և դատարանի նախկին նախագահն արտահայտել է նմանատիպ տեսակետ՝ ասելով, որ հիմնարար ազատությունների պաշտպանության գործում հայեցողության սահմանի գաղափարն ազգային կառավարությունների և ստրասբուրգյան հաստատությունների համար սահմանազատող մեխանիզմի դեր է խաղում:

…շատ իրավունքներ և ազատություններ կոնվենցիայում սահմանված են չափազանց ընդհանուր ձևակերպումներով, որպեսզի «ինքնաբերաբար» կատարման ենթակա լինեն, մինչդեռ սոցիալական և բարոյական գաղափարների զարգացումը կարող է լրացուցիչ անորոշություն հաղորդել այդ իրավունքների և ազատությունների աստիճանի և նշանակության առումով: Հետևաբար, այսպես կոչված «վերահսկիչ գործառույթը» ներառում է ստեղծագործ օրենսդրական տարր, որը կարելի է համեմատել ընդհանուր իրավունքի համակարգով առաջնորդվող երկրների դատական իշխանության գործառույթի հետ: Այսպիսով, որոշ դեպքերում այդ գործառույթի իրացումը կարող է զսպել մասնակից պետությունների խանդավառությունը կոնվենցիայի նկատմամբ: «Հայեցողության սահմանի» սկզբունքը, իմ պատկերացմամբ, հանձնաժողովի և դատարանի մշակած այն կարևորագույն երաշխիքներից է, որն ուղղված է կոնվենցիայի գործողությունը և ինքնիշխանության ու ժողովրդավարական կառավարությունների պարտականությունների իրականացումը հաշտեցնելու նպատակին: Ավելին, այս սկզբունքն ուղեկցվում է հանձնաժողովի և դատարանի որդեգրած այն սկզբունքով, որ որոշ դեպքերում հարկ է հավասարակշռություն փնտրել անհատի կողմից իր երաշխավորված իրավունքի իրացման և հանրային շահերի պաշտպանության միջև: Վառ օրինակ է ծառայում *Կլասսի* (*Klass*) գործը, որում որոշ անհատների վերահսկումը օրինական միջամտություն է 8-րդ հոդվածով նախատեսված ազատ թղթակցելու նրանց իրավունքին, և դատարանը հաշվի առավ Եվրոպայի ժողովրդավարական հասարակություններում ահաբեկչության նկատմամբ վերաբերմունքի գաղափարական զարգացումը [Sir Humphrey Waldock, The Effectiveness of the System set up by the European Convention on Human Rights (1980) 1 *Human Rights Law Journal* 1 at 9)]:

Պրոֆեսոր Ջ. Գ. Մերիլսը նույնպես արձագանքում է այս գաղափարի դրական գնահատականին.

Հայեցողության սահմանը մի եղանակ է, որի միջոցով ճանաչվում է այն իրողությունը, որ մարդու իրավունքների միջազգային պաշտպանությունը և գործողությունների ազատության ինքնիշխան սկզբունքը ոչ թե հակասական, այլ փոխլրացնող հասկացություններ են: Մեկն ավարտվում է այնտեղ, որտեղ սկսվում է մյուսը: Հայեցողության սահմանի գաղափարն առանցքային դեր է խաղում, երբ հարկավոր է միջազգային դատավորին օգնել որոշելու, թե ինչպես և որտեղ պետք է անցկացնել այդ սահմանագիծը: [*The Development of International Law by the European Court of Human Rights*, 2nd edn (Manchester: Manchester University Press, 1993), էջ 174–5]:

4 Սակայն Թիմոթի Զոնսը քննադատաբար է վերաբերվում դատարանում այս «ոչ ճշգրիտ իրավաբանական սկզբունքի» կիրառմանը: Նա կարծում է, որ.

Թեև դատարանը հաճախ կրկնել է, որ կոնվենցիայով ամրագրված իրավունքների սահմանափակումները պետք է նեղ մեկնաբանության արժանանան, սակայն ազգային մարմիններին հայեցողության սահմանի վերագրումն առհասարակ կարող է հանգեցնել միայն նրան, որ կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները կարժեզրկվեն նախատեսվող սահմանափակումների հետևանքով [Timothy H Jones, The Devaluation of Human Rights Under the European Convention (1995) *Public Law* 430 էջ 449]:

5 Դատավոր Մակդոնալդը թերահավատություն է հայտնել այն իրեղեն հիմնավորման վերաբերյալ, որ տվյալ սկզբունքն անհրաժեշտ է պետությունների և դատարանի միջև վնասակար ընդհարումներից խուսափելու համար մի ժամանակաշրջանում, երբ կանգնած են Եվրոպայում մարդու իրավունքների պաշտպանության իսկապես համընդհանուր համակարգի շեմին:

Այս փաստարկը ենթադրում է, որ դեռևս մի այնպիսի իրատեսական հնարք գտնելու կարիք կա, որով մասնակից պետությունների մտահոգություններն իրենց ինքնիշխանության վերաբերյալ կբավարարվեն: Բայց գուցե կոնվենցիայի համակարգը ներկայումս բավականաչափ հասուն է, որպեսզի դուրս գա հայեցողության սահմաններից և առավել բացահայտ անդրադառնա համապատասխանության այն հարցերին, որոնք խնդրո առարկա միջոցի կիրառման հետևանքով անորոշ են դարձել: Հայեցողության սահմանի գաղափարը չպետք է հնարավորություն տա դատարանին խուսափելու իր պատասխանատվությունից, ասել է թե՝ իր որոշմանը տալ այնպիսի հիմնավորում, որով առանձին գործերով դատարանի միջամտությունը կարող է կամ չի կարող տեղին համարվել: Քանի դեռ այս պատասխանատվությունը լուրջ չի ընկալվում, դատարանի դերը հիմնավորող և միաժամանակ սահմանափակող սկզբունքային պատճառները թաղված կմնան հայեցողության սահմանի իրատեսության ծանրության տակ, իսկ տեսական պատկերացումը եվրոպական իրավակարգում դատարանի դերակատարման վերաբերյալ կշարունակի սահմանափակ մնալ [R St J Macdonald, The Margin of Appreciation in *The European System for the Protection of Human Rights*, eds Macdonald, Matscher and Petzold (Dordrecht: Martinus Nijhoff, 1993), at 124]:

6 Փոլ Մահոնին, որ հետագայում դարձավ դատարանի քարտուղարը, կարծում է, որ այս սկզբունքը «կոնվենցիայի մեկնաբանության օրինական սկզբունք է»: Նրա կարծիքով՝ այս գաղափարի առաջացման ակունքում այն հիմնական փիլիսոփայական արժեքներն են, որոնք ամփոփված են կոնվենցիայի համակարգում: Այդպիսի արժեքներ են՝ (1) մեկնաբանության զարգացումը, քանի որ դատարանը պարտավոր է մեկնաբանել կոնվենցիայի ընդհանուր ձևակերպումները, (2) սուբսիդիարությունը, քանի որ 1-ին հոդվածով կոնվենցիայում ամրագրված իրավունքները երաշխավորելու առաջնային պատասխանատվությունը դրվում է մասնակից պետությունների վրա, (3) ժողովրդավարությունը, քանի որ կոնվենցիայի համակարգն ընդունում է, որ մասնակից պետությունների խորհրդարանները մեծ պատասխանատվություն են կրում սոցիալական, տնտեսական և քաղաքական հակասական փոփոխությունները կարգավորելու համար, (4) մշակութային բազմազանությունը՝ ելնելով այն հանգամանքից, որ մասնակից պետություններում արտացոլված են մշակութային և գաղափարախոսական այլազան պատկերացումներ: Հետևաբար.

...Կոնվենցիայի շրջանակներում միջազգային գործադիր մարմինները պետք է իրենց հերթին հարգանք ցուցաբերեն մասնակից պետությունների հայեցողության սահմանի և ինքնիշխանության նկատմամբ: «Ինքնիշխանություն» գաղափարն այստեղ ընկալվում է ոչ այնքան լատիներեն «imperium» բառով բնութագրվող իմաստով (այսինքն՝ պետությունը գերակա է և ոչ մեկին հաշվետու չէ), որքան տարբեր հասարակությունների՝ իրենց անհամաձայնությունը հայտնելու ազատության, ըստ սեփական պատկերացումների և կարիքների (գուցե անգամ նույն երկրի տարբեր շրջաններում) տարբեր լուծումներ ընտրելու իմաստով, և կապված է մարդկային գործունեության այն լայն շրջանակների հետ, որոնց անդրադառնում է կոնվենցիան:

Ըստ նրա սահմանման՝ որպես հայեցողության սահմանի վրա անդրադարձող գործոններ՝ հանդես են գալիս հետևյալը. (1) կոնվենցիայով նախատեսված իրավունքի վերաբերյալ մասնակից պետությունների միջև ունեցած ընդհանուր դրույթներն առհասարակ կհանգեցնեն նրան, որ դատարանն այդ դրույթներից շեղվող պետություններին կվերապահի հայեցողության նեղ սահման, (2) իրավունքի բնույթը (օրինակ՝ հայեցողության լայն սահման է նախատեսվում սեփականության իրավունքին միջամտող պետության գործողությունների նկատմամբ), (3) պետության վրա դրված պարտականության բնույթը (այն դրական կամ բացասական է), (4) այդ իրավունքին միջամտելիս պետության կողմից հետապնդվող օրինական նպատակի բնույթը (օրինակ՝ բարոյականության պաշտպանությունը հնարավորություն է տալիս պետություններին հայցել հայեցողության առավել լայն սահման՝ հաշվի առնելով մշակութային բազմազանությունը), (5) կարգավորվող գործունեության բնույթը (օրինակ՝ կարևորությունը անհատի համար և նշանակությունն առհասարակ հասարակության համար), (6) գործի շուրջ եղած հանգամանքները (օրինակ՝ եթե պետությունն արտակարգ իրավիճակում է, ապա վերապահվում է հայեցողության ավելի լայն սահման) և (7) կոնվենցիայում տեղ գտած բուն ձևակերպումը (օրինակ՝ 5-րդ հոդվածում նախատեսված ազատության իրավունքի սահմանափակումները սպառիչ կերպով սահմանված են, հետևաբար պետությունների հայեցողությանը քիչ բան է թողնված): Հեղինակը եզրակացնում է, որ հայեցողության սահմանի սկզբունքը արժանի չէ այն քննադատությանը, որին ենթարկվել է (Marvellous Richness of Diversity or Invidious Cultural Relativism? (1998) 19. *Human Rights Law Journal* 1):

Կիրառելով վերոհիշյալ վերլուծությունը՝ Մահոնին բերում է այն փաստարկը, որ սուբսիդիարության սկզբունքը պահանջում է դատարանից 10-րդ հոդվածի սահմաններում ընկնող ազատ արտահայտվելու իրավունքի զանազան տեսակների պարագայում հայեցողության տարբեր սահմաններ կիրառել:

...այդ տրամաբանությամբ առաջնություն է ստանում 10-րդ հոդվածում ընդգրկված ազատ արտահայտվելու իրավունքի չափանիշի համընդհանրությունը քաղաքական և հանրային ոլորտում, սակայն սուբսիդիարության սկզբունքի ոլորտն առավել տարածված է ժողովրդավարական հայեցողության կիրառման տեղական մակարդակով՝ մշակութային և ստեղծագործ խոսքում: ...Այդ երկու պարզ բևեռների միջև գոյություն ունի մարդկային արտահայտման հսկայական տիրույթ՝ հանրային, մասնավոր, հավաքական, մասնագիտական, առևտրային, սոցիալական, գիտական և այլն, որտեղ ներառված են բազում շահեր: Թե որքանով կգերակայի դեպի համընդհանրություն կամ դեպի սուբսիդիարություն տանող սկզբունքը, պայմանավորվելու է համատեքստով և կողմերի շահերով: Լարվածությունը համընդհանրության և սուբսիդիարության սկզբունքների միջև միշտ ներկա է լինելու տարբեր չափերով խոսքի ազատությանը վերաբերող բոլոր գործերում (Universality versus Subsidiarity in the Strasbourg Case Law on Free Speech: Explaining Some Recent Judgments [1997] *European Human Rights Law Review* 364, 379):

Լորդ Լեսթերը քննադատել է արտահայտման զանազան ձևերի դեպքում հայեցողության սահմանի սկզբունքի այս տարբերակիչ կիրառումը:

7 Յերոն Շոկենբրեկը սահմանել է գործերի երեք կարգ, որոնցում դատարանը գործածում է հայեցողության սահմանի սկզբունքը: Առաջին՝ այն դեպքերում, երբ կոնվենցիայի համապատասխան դրույթները ներառում են շահերի հավասարակշռում (օրինակ՝ 8-11-րդ հոդվածների 2-րդ կետը): Երկրորդ՝ այն դեպքերում, երբ նշված հոդվածը պարունակում է անորոշ ձևակերպումներ (օրինակ՝ «ազգի գոյությանը սպառնացող արտակարգ իրավիճակ» արտահայտությունը 15-րդ հոդվածի 1-ին կետում): Երրորդ՝ այն դեպքերում, երբ դատարանը պետք է որոշի՝ պետությունը կատարե՞լ է կոնվենցիայով նախատեսված իրավունքը պաշտպանելու իր դրական պարտավորությունը (օրինակ՝ 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատարանի հասանելիության իրավունքը): Դատարանի կողմից հայեցողության սկզբունքի կիրառման հետևանքով նրա հասցեին հնչած հիմնական քննադատությունն այն է, որ այս գաղափարը միշտ չէ հետևողականորեն կիրառվել: Այս իրողությունը կարող էր պայմանավորված լինել դատարանի պալատների տարբեր կազմով: Ուստի, «խիստ ցանկալի կլիներ, եթե դատարանը որդեգրեր առավել հետևողական մոտեցում՝ պարզ նշելով իր վճիռներում այն սկզբունքները, որոնցով առաջնորդվել է հայեցողության սահմանին դիմելու որոշում կայացնելիս և այդ սահմանի լայնությունը որոշելիս» (The Basis, Nature and Application of the Margin of Appreciation Doctrine in the Case-Law of the European Court of Human Rights (1998) 19 *Human Rights Law Journal* 30 at p 36):

8 Նախադեպային իրավունքի մանրամասն վերլուծությունից հետո դոկտոր Յուտակա Արայ Տակահաշին եզրակացրել է հետևյալը.

Անդամ պետություններում նույնիսկ առավել ներդաշնակ սահմանադրական միջավայրում որդեգրված արժեքների բազմազանությունը դեռևս ստրասբուրգյան մարմինների համար գրեթե անհնար է դարձնում «բարոյականություն» կամ «հանրային շահ» հասկացությունների «ինքնուրույն» իմաստի սահմանումը: Միաժամանակ ցանկալի չէ կոնվենցիայի միօրինակ չափանիշները պարտադրել անդամ պետությունների տեղային լեգիտիմության և մշակութային արժեքների ու ավանդույթների հաշվին: Հայեցողության սահմանը պետք է ընկալվի որպես անհրաժեշտ սահմանադրական միջոց, որը կոչված է պաշտպանելու ազատական ժողովրդավարական հասարակության հիմնարար նախապայմանը և արժեքը, այն է՝ բազմակարծությունը: Ինտեգրման գործընթացի ժամանակ և դրանից հետո միակ պաշտպանելի հիմնավորումն այն է, որ Ստրասբուրգի մարդու իրավունքների դատարանին պետք է հնարավորություն ընձեռվի ապահովելու մշակութային բազմազանությունը, իսկ Եվրոպայի քաղաքացիներին լծակ տրվի բազմամշակութային ժողովրդավարության պայմաններում արտահայտել և կիրառել իրենց նախընտրած արժեքները [Y. Arai-Takahashi, *The Margin of Appreciation Doctrine and the Principle of Proportionality in the Jurisprudence of the ECHR* (Antwerp: Intersentia, 2002), p 249]:

«Սանդի Թայմզ» թերթն ընդդեմ Միացյալ Թագավորության»

(Sunday Times v UK) գործ, A. 30 (1979) 2 EHRR, 245

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

1950-ականների վերջին «Դիսթիլերզ» դեղագործական ընկերությունը վաճառքի հանեց թալիդոմիդ պարունակող նոր ցավազրկող դեղամիջոց, իսկ 1960-ականների սկզբին հայտնի դարձավ, որ հղիության որոշակի փուլերում թալիդոմիդ դեղանյութի ընդունումը կարող է երեխայի մոտ ծանր ֆիզիկական արատներ առաջացնել: Այսպիսով, ընկերությունը դադարեցրեց դեղամիջոցի վաճառքը: Ավելի ուշ հաշմանդամ դարձած երեխաների անունից ընկերության դեմ անփութության մեղադրանքով ներկայացվեցին քաղաքացիական հայցեր: 1968 թ. յոթանասուն գործերի մասով հաշտության համաձայնություն կնքվեց: Եվս մի քանի հարյուր գործ դիմողների շահերը ներկայացնող իրավաբանների և ընկերության միջև շարունակական բանակցությունների առարկա դարձավ: 1972 թ. «Սանդի թայմզ» շաբաթաթերթը տպագրեց մի հոդված, որում քննադատվում էր դեղագործական ընկերությունների պատասխանատվության մասին օրենքը և «Դիսթիլերզ» ընկերությանը կոչ էր արվում վերանայել թալիդոմիդից տուժած անձանց համար նախատեսած փոխհատուցման չափը: «Դիսթիլերզ» ընկերությունը դիմեց գլխավոր դատախազին «Սանդի թայմզ» շաբաթաթերթի դեմ դատարանի հանդեպ անհարգալից վերաբերմունքի համար դատական գործ հարուցելու պահանջով, սակայն մերժում ստացավ: Այդ միջադեպից հետո շաբաթաթերթի խմբագիրը գլխավոր դատախազին ուղարկեց մեկ այլ հոդվածի սևագիր տարբերակը, որը մտադիր էր տպագրել: Հոդվածում բերված էին համոզիչ ապացույցներ և փաստարկներ, ըստ որոնց՝ փորձարկման փուլում նախքան թալիդոմիդ դեղամիջոցի շուկա հանելը «Դիսթիլերզ» ընկերությունն անհրաժեշտ հոգատարություն չի ցուցաբերել: Դրանից հետո գլխավոր դատախազը դատարան դիմեց տվյալ հոդվածի հրապարակման վրա դատական արգելք դնելու միջնորդությամբ: Տարածքային դատարանն ([1972] 3 All E.R. 1136) ընդունեց դատական արգելք դնելու պահանջը, սակայն վերաքննիչ դատարանը ([1973] 1 All E.R 815) այն անվավեր ճանաչեց: Լորդերի պալատ ներկայացված վերաքննիչ բողոքի արդյունքում այդ արգելքը վերականգնվեց: Խմբագիրը, հրատարակիչը և մի խումբ լրագրողներ կոմիտեին բողոք ներկայացրին, ի թիվս այլոց, 10-րդ հոդվածով նախատեսված իրենց իրավունքների խախտման առնչությամբ: Ութ կողմ և հինգ դեմ ձայներով կոմիտեն որոշեց, որ այդ դատական արգելքով խախտվել է դիմողների ազատ արտահայտվելու իրավունքը:

…

I. 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

...

44. Ի սկզբանե արգելող որոշումը տարածքային դատարանի կողմից կայացվել է միայն «Սանդի թայմզ» թերթի հոդվածի սևագիր տարբերակի վերաբերյալ: Վերաքննիչ դատարանը չեղյալ է հայտարարել վերոնշյալ որոշումը, սակայն Լորդերի պալատը վերահաստատել է որոշումը և զգալիորեն ընդլայնել դրա տարածման շրջանակը՝ գերագույն դատարանին հրահանգելով արձակել հետևյալ կարգադրությունը.

> «Թայմզ նյուզփեյփերս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, դրա աշխատակիցներին, գործակալներին կամ ընկերության հետ կապված այլ անձանց արգելվում է հրապարակել, հրատարակման հանձնել կամ հրատարակման կամ տպագրության համար արտոնել այնպիսի հոդված կամ գրություն, որը բովանդակի նախնական դատողություններ հանցավոր անփութության, պայմանագրի խախտման կամ պարտականության զանցառության վերաբերյալ կամ «Դիսթիլերզ» ընկերության դեմ հարուցված կամ վարույթում գտնվող գործերից բխող թալիդոմիդ դեղամիջոցի մշակման, տարածման կամ գործածմանն առնչվող որևէ ապացույցներ:

45. Պետական մարմինները միանշանակ միջամտել են դիմողների՝ 10-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված ազատ արտահայտվելու իրավունքի իրացմանը: Եթե նման միջամտությունը նույն հոդվածի 2-րդ կետում տեղ գտած բացառություններից չէ, ապա այդ միջամտության հետևանքով խախտվում է 10-րդ հոդվածը (*Հենդիսայդի* (*Handyside*) գործով 1976 թ. դեկտեմբերի 7-ին կայացրած վճիռ, շարք A, թիվ 24, էջ 21, պարբ. 43): Ուստի դատարանը պետք է հերթականությամբ քննի հետևյալ հարցերը. ներկա գործում արձանագրված միջամտությունը «նախատեսվա՞ծ է օրենքով», հետապնդե՞լ է 10-րդ

հոդվածի 2-րդ կետով նախատեսված օրինական նպատակ կամ նպատակներ, և այն «անհրաժե՞շտ էր ժողովրդավարական հասարակության պայմաններում» նշված նպատակին կամ նպատակներին հասնելու համար:

Ա. ԱՐԴՅՈՔ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ «ՆԱԽԱՏԵՍՎա՞Ծ Է ԵՂԵԼ ՕՐԵՆՔՈՎ»

…

47. Դատարանն ընդգծում է, որ «օրենքով նախատեսված» արտահայտության մեջ «օրենք» բառով նշվում է ոչ միայն օրենսդրությունը, այլև նախադեպային իրավունքը: Համապատասխանաբար տվյալ դեպքում դատարանը չի կարևորում այն փաստը, որ «դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք» հասկացությունը ձևակերպվել է ընդհանուր իրավունքի, ոչ թե օրենսդրության հիման վրա: Այն որոշումը, որ ընդհանուր իրավունքով դրված սահմանափակումը նախատեսված չէ օրենքով զուտ օրենսդրությամբ ամրագրված չլինելու պատճառով, միանշանակ կհակասի կոնվենցիան մշակողների մտահղացմանը, քանզի ընդհանուր իրավունքով առաջնորդվող մասնակից պետությունը կզրկվի 10-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պաշտպանությունից, և մեծապես կխարխլվի այդ պետության իրավակարգի հիմքը:

…

48. «Օրենքով նախատեսված» արտահայտությունը տեղ է գտել կոնվենցիայի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների 2-րդ կետերում, իսկ ֆրանսերեն տեքստում գործածվել է prévues par la loi (օրենքով նախատեսված) համարժեք արտահայտությունը: Այնուհանդերձ, կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետում, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում և թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածում զետեղված նույն ֆրանսերեն արտահայտությունը անգլերեն տեքստում համապատասխանաբար թարգմանվում է որպես *«օրենքին համապատասխան» (անգլ. in accordance with the law),* «օրենքով սահմանված» (անգլ. provided for by law) և *«օրենքին համապատասխան» (անգլ. in accordance with law):* Այսպիսով, ունենալով համաձայնագրի մի քանի հավասարազոր, սակայն ոչ միանման օրինաստեղծ տարբերակ՝ դատարանը պետք է դրանք մեկնաբանի իրավիճակին հնարավորինս համապատասխանող եղանակով՝ համաձայնագրի առարկան իրացնելու նկատառումով (տե՛ս *Վեմհոֆի* (*Wemhoff)* գործով 1968 թ. հունիսի 27-ի վճիռը, շարք A, թիվ 7, էջ 23, պարբ. 8 և Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 4-րդ կետը):

49. Դատարանի կարծիքով՝ ներքոհիշյալ երկու պայմանները ներկայանում են որպես «օրենքով նախատեսված» արտահայտությունից բխող պահանջներ: Առաջին՝ օրենքը պետք է բավականին հասանելի լինի, այն է՝ քաղաքացին պետք է ի վիճակի լինի օգտվելու տվյալ դեպքում կիրառելի իրավական նորմերից: Երկրորդ՝ իրավական նորմը կարող է համարվել «օրենք» միայն բավարար հստակությամբ ձևակերպված լինելու դեպքում, որպեսզի քաղաքացին հնարավորություն ունենա կարգավորելու իր վարքագիծը, այսինքն՝ քաղաքացին պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ չափով կանխատեսել տվյալ արարքի հնարավոր հետևանքները, իսկ անհրաժեշտության դեպքում անել դա պատշաճ խորհրդատվություն ստանալուց հետո: Պարտադիր չէ, որ այդ հետևանքները լիովին հաստատ կանխատեսելի լինեն, քանզի փորձը վկայում է դրա անհնարինության մասին: Մյուս կողմից, թեև շատ ցանկալի է, որ կանխատեսելիությունը ճշգրիտ լինի, սակայն դա կարող է հանգեցնել խիստ կայուն իրավիճակի, իսկ օրենքը պետք է կարողանա զարգանալ փոփոխվող հանգամանքներին համընթաց: Համապատասխանաբար, բազում օրենքներ ձևակերպված են այս կամ այն չափով անորոշ դրույթներով, որոնց մեկնաբանությունն ու կիրառումը կատարելագործվում է փորձի արդյունքում:

50. Ներկա գործի շրջանակներում օրենքի մատչելիության և արարքի հետևանքների կանխատեսելիության պահանջների բավարարման հարցը բարդանում է այն հանգամանքով, որ հարցը քննող տարբեր օրենսդիրներ ընդունել են տարբեր սկզբունքներ: Տարածքային դատարանը կիրառել է այն սկզբունքը, որ դատավարության կողմերից մեկի վրա հանրային ճնշման գործադրմամբ դատական քննության ընթացքում գտնվող գործի կարգավորման վրա ազդելու դիտավորյալ փորձը հավասարազոր է դատարանի նկատմամբ անհարգալից, այն է՝ «ճնշման սկզբունքով» վերաբերմունքին: Լորդերի պալատի որոշ անդամներ նույնպես անուղղակի հիշատակել են այդ սկզբունքը, մինչդեռ մնացածները գերադասել են առաջնորդվել այն սկզբունքով, որ դատարանի նկատմամբ անհարգալից դրսևորում է եղել այնպիսի նյութերի հրապարակումը, որոնք կանխորոշում են վարույթում գտնվող գործերը կամ կարող են նպաստել հասարակության կողմից այդ գործերի կանխորոշմանը…):

51. Դիմողները չեն պնդում, որ իրենց չի տրվել «ճնշման սկզբունքի» հանգամանքներին համապատասխան ցուցում:

Դատարանը նաև պատճառ չի տեսնում կասկածելու, որ «ճնշման սկզբունքը» բավարար հստակ է ձևակերպվել, որպեսզի դիմողները կարողանային պատշաճ չափով կանխատեսել հոդվածի սևագիր տարբերակի տպագրման հնարավոր հետևանքները:

52. Մյուս կողմից՝ դիմողները հայտնել են, որ կանխորոշման սկզբունքը նորարարական էր, հետևաբար իրենք չէին կարող պատշաճ ցուցում ստանալ դրա գոյության մասին:

Ինչ վերաբերում է «կանխորոշման սկզբունքի» ձևակերպմանը, ապա դատարանը նշում է, որ Լորդերի պալատում վկայակոչվել են տարբեր իրավասու մարմիններ:

Ի մի բերելով փաստերը՝ դատարանը չի համարում, որ տվյալ հանգամանքներում դիմողներին «կանխորոշման սկզբունքի» գոյության մասին պատշաճ ցուցում չի տրվել: Գործին առնչվող ժամանակահատվածում նշված սկզբունքի

ձևակերպման ճշգրտության վերաբերյալ որևէ կասկած չունենալով՝ դատարանն այնուամենայնիվ համարում է, որ դիմողները կարող էին տվյալ հանգամանքներում ողջամիտ չափով կանխատեսել այն վտանգը, որ նշված հոդվածի տպագրումը կարող էր հակասել այդ սկզբունքին:

53. Ուստի 10-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով միջամտությունը դիմողների ազատ արտահայտվելու իրավունքին «նախատեսված էր օրենքով»:

Բ. ԸՍՏ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՕՐԻՆԱԿԱ՞Ն ԵՆ ԱՅՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՈՐ ՀԵՏԱՊՆԴԵԼ Է ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՄՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ

54. Դիմողների, պատասխանող պետության, ինչպես նաև հանձնաժողովի փոքրամասնության կարծիքով՝ «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մասին» օրենքը նախատեսված է ոչ միայն արդարադատության անկողմնակալությունն ու հեղինակությունը երաշխավորելու, այլև դատավարության կողմերի իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար:

Մյուս կողմից, թեև հանձնաժողովի մեծամասնությունն ընդունել է այն փաստը, որ «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մասին» օրենքն առհասարակ միտված է արդարադատության պատշաճ իրականացմանը, իսկ արդարադատության հեղինակությունն ու անկողմնակալությունը երաշխավորելու մասով՝ նաև 10-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված դրույթների պաշտպանությանը, սակայն եզրակացրել է, որ դատարանը կոչված չէ առանձին քննելու այն հարցը, թե արդյոք նշված օրենքով հետապնդվե՞լ է նաև այլ անձանց իրավունքները պաշտպանելու նպատակը:

55. Նախ՝ դատարանն ընդգծում է, որ «արդարադատության հեղինակություն և անկողմնակալություն» արտահայտությունը հարկ է հասկանալ «կոնվենցիայի իմաստով» (տե՛ս *mutatis mutandis Քյոնիգի* (*König*) գործով 1978 թ. հունիսի 28-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 27, էջ 29–30, պարբ. 88): Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ համատեքստում 6-րդ հոդվածի էական դերը, որի դրույթներով արտացոլվում է օրենքի գերակայության հիմնարար սկզբունքը (տե՛ս, օրինակ, *Գոլդերի* (*Golder*) գործով 1975 թ. փետրվարի 21-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 18, էջ 17, պարբ. 34):

«Դատական իշխանություն» (ֆր. *pouvoir judiciaire*) եզրույթը տարածվում է արդարադատություն իրականացնող համակարգի կամ պետական իշխանության դատական ճյուղի, ինչպես նաև դատավորների վրա՝ նրանց պաշտոնեական դիրքի բերումով: «Արդարադատության հեղինակություն» (անգլ. *authority of the judiciary*) ձևակերպումը մասնավորապես նշում է այն գաղափարը, որ դատարաններն իրականում և հասարակության մեծամասնության կարծիքով հանդես են գալիս որպես պատշաճ ատյան, որը կոչված է հաստատելու օրինական իրավունքները և պարտավորությունները, ինչպես նաև կարգավորելու դրանց հետ կապված դատական վեճերը: Բացի այդ, նշված արտահայտությունից հետևում է, որ հասարակության մեծ մասը հարգանք ու վստահություն է տածում դատարանի՝ վերոնշյալ գործառույթն իրականացնելու կարողության նկատմամբ:

56. Տվյալ դեպքում դատարանը համամիտ է հանձնաժողովի մեծամասնության հետ այն հարցում, որ թեև «Դատարանի նկատմամբ անհարգալից վերբերմունքի մասին» օրենքը կարող էր միտված լինել դատավարության կողմերի իրավունքների պաշտպանությանը, այնուհանդերձ տվյալ նպատակին արդեն իսկ ծառայել է «արդարադատության հեղինակություն և անկողմնակալության պահպանում» արտահայտությունը: Նշված արտահայտության շրջանակներում պաշտպանվում են դատավարության կողմ հանդիսացող, այսինքն՝ արդարադատության իրականացման համակարգում ներգրավված անձանց իրավունքները, իսկ այդ համակարգի հեղինակությունը չի կարող պահպանվել, եթե չպաշտպանվեն համակարգում ներգրավված կամ նրա օգնությանը դիմած յուրաքանչյուր անձի իրավունքները: Ուստի կարիք չկա առանձին քննելու այն հարցը՝ «այլ անձանց իրավունքների» պաշտպանությունը «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մասին» օրենքի հեռահար նպատա՞կն է, թե՞ ոչ:

57. Մնում է միայն պարզել, թե միջամտությունը դիմողների ազատ արտահայտվելու իրավունքին միտվա՞ծ էր արդարադատության հեղինակության և անկողմնակալության երաշխավորմանը:

Ստորև ամփոփվում են այն պատճառները, որոնց հիման վրա Լորդերի պալատը վիճահարույց է համարել հոդվածի սևագիր տարբերակը.

— անփույթ վերաբերմունքի կանխորոշում պարունակող հոդվածը կհանգեցներ օրենքի հետ կապված ընթացակարգերի անտեսմանը կամ կմիջամտեր արդարադատության իրականացմանը,

— հոդվածի հրապարակումը կհանգեցներ «Դիսքիլերզ» ընկերության գործի նյութահիրավական հիմքերը վնասող հասարակական քննարկումների, ընդ որում, գործի նման լուսաբանումը վիճահարույց է, քանի որ այդ դեպքում դիմողներն ընդհանուր առմամբ կզրկվեին դատարան դիմելու հնարավորությունից,

— հոդվածը տպագրելու արդյունքում «Դիսքիլերզ» ընկերությունը ճնշման կենթարկվեր, դատավարության առարկա դարձած հարցերը վնասակար հետևանքներով կկանխորոշվեին դատից առաջ, ընդ որում «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մասին» օրենքը նախատեսված է դատարան դիմելու իրավունքին միջամտությունը

կանխելու համար,

— մամուլում նախնական դատողություններն անխուսափելիորեն առաջ կբերեին դատավորության կողմերի արձագանքը՝ առաջացնելով «թերթային դատավարության» վտանգ, ինչը հակասում է արդարադատության պատշաճ իրականացման սկզբունքին,

— դատարանները պարտավոր են պաշտպանել դատավարության կողմերին իրենց գործի կանխորոշման վնասակար հետևանքներից, ինչի հետևանքով նրանք ստիպված կլինեն նախքան դատավարության ավարտը հրապարակել գործին առնչվող բազում տվյալներ:

Դատարանը կարծում է, որ այդ բոլոր հիմնավորումները համապատասխանում են վերոնշյալ 55-րդ պարբերության երկրորդ ենթապարբերությունում դատարանի կողմից մեկնաբանված «արդարադատության հեղինակությունը պահպանելու» նպատակին:

Հետևաբար, միջամտությունը դիմողների ազատ արտահայտվելու իրավունքին հետապնդել է 10-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված օրինական նպատակ:

Գ. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵ՞Շ ԷՐ ՄԻՋԱՄՏԵԼ ԴԻՄՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ

…

59. Վերոնշյալ *Հենդիսայդի* (*Handyside*) գործով վճիռ կայացնելիս դատարանն արդեն առիթ է ունեցել ներկայացնելու «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» արտահայտության, դրանից բխող հարցերը քննելու համար անհրաժեշտ իր գործառույթների բնույթի, ինչպես նաև այդ գործառույթներն իրականացնելու եղանակի իր ըմբռնումը:

Այս ամենը չի նշանակում, որ դատարանի վերահսկողության շրջանակը սահմանափակվում է միայն պարզելով, թե պատասխանող պետությունը որքանով է իր հայեցողության իրավունքից օգտվել խելամտորեն, ողջամտորեն և բարեխղճորեն: Դատարանի վերահսկողությունը տարածվում է նույնիսկ այն մասնակից պետությունների վրա, որոնք ճիշտ այդպես են օգտվում իրենց իրավունքներից, որպեսզի դատարանը պարզի, թե արդյոք տվյալ պետության վարքագիծը համահունչ է կոնվենցիայով ստանձնած նրա պարտավորություններին:

Երբ որոշվում է ձեռնարկված միջոցի համաչափությունը կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված յուրաքանչյուր նպատակին, կրկին տարբերվում է հայեցողության սահմանը: *Հենդիսայդի* (*Handyside*) գործում խոսքը «բարոյականության պաշտպանության» մասին է: Դատարանը նկատել է, որ բարոյականության պաշտպանության պահանջի առնչությամբ մասնակից պետությունների տեսակետը «փոփոխվում է ժամանակի ընթացքում, հատկապես՝ ներկա դարաշրջանում, և երկրից երկիր տարբերվում է», իսկ «ազգային մարմիններն սկզբունքորեն ավելի լավ դիրքում են, քան միջազգային դատական ատյանները, երբ պետք է կարծիք հայտնեն նշված պահանջների հստակ բովանդակության մասին» (48-րդ կետ):

Նույնը չի կարելի ասել «արդարադատության հեղինակություն» շատ ավելի օբյեկտիվ հասկացության մասին: Մասնակից պետությունների ներպետական օրենսդրությունն ու դատական գործելակերպը վկայում են տվյալ բնագավառում նույնանման ձևակերպման առկայության մասին: Այս ամենն արտացոլվում է կոնվենցիայի մի շարք դրույթներում, այդ թվում՝ 6-րդ հոդվածի դրույթներում, որոնք բարոյականության մասով չեն համապատասխանում ներպետական իրավական նորմերին: Հետևաբար, տվյալ դեպքում եվրոպական կառույցների վերահսկողության ընդլայնումը համապատասխանում է հայեցողության սահմանի նեղացմանը:

60. Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի փոքրամասնությունը, ինչպես նաև պատասխանող պետությունը կարևորում են այն փաստը, որ ընդհանուր իրավունքով առաջնորդվող երկրներին բնորոշ «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մասին» օրենքը ենթադրում է, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի եզրափակիչ բառերն իրենց ձևակերպմամբ ներառում են Եվրոպայի խորհրդի շատ այլ անդամ պետություններում համարժեքը չունեցող այս դրույթը:

Այնուհանդերձ, դատարանը կարծում է, որ նույնիսկ այդ դեպքում վերոնշյալ բառերն ընդգրկվել են այն իմաստով, որ հաստատեն, որ «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մասին» օրենքով հետապնդվող ընդհանուր նպատակները պետք է օրինական համարվեն 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, սակայն նշված օրենքը չպետք է վերածվի չափանիշի այս կամ այն միջոցի կիրառման «անհրաժեշտությունը» որոշելու հարցում: Եթե ընդունենք, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետը ոգեշնչված է «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մասին» Անգլիայի օրենքի հիմքում ընկած գաղափարներով կամ ներպետական այլ նման դրույթներով, ապա անհնար էր տվյալ դրույթները եղած ձևով կիրառել կոնվենցիայի համապատասխան հոդվածում, հետևաբար կոնվենցիայում դրանք բերվել են առանձին համատեքստում: Դատարանը պետք է կոնվենցիայի շրջանակներում որոշի տվյալ միջոցը կիրառելու «անհրաժեշտությունը»՝ վերահսկելով պետական օրենքների համապատասխանությունը կոնվենցիայի չափանիշներին:

61. Տվյալ դեպքում դատարանը չի կարող եզրակացնել, որ դրված արգելքն «անհրաժեշտ» չի եղել միայն այն պատճառով, որ այդ արգելքը չէր կարող սահմանվել մեկ այլ իրավակարգի հիման վրա: Ինչպես նշվել է *«Բելգիայի լեզվաբանական» (Belgian Linguistic)* գործով 1967 թ. փետրվարի 9-ին կայացված վճռում (շարք A, թիվ 5, էջ 19), կոնվենցիայի հիմնական նպատակն է

«սահմանել որոշակի միջազգային չափանիշներ, որոնցով պետք է առաջնորդվեն մասնակից պետություններն իրենց իրավազորության ներքո գտնվող անձանց հետ հարաբերություններում»: Այս ամենը չի նշանակում, որ բացարձակ միօրինականությունը պարտադիր է բոլոր պետությունների համար. և իսկապես, հաշվի առնելով այն փաստը, որ մասնակից պետություններն իրավունք ունեն ընտրելու իրենց կարծիքով պատշաճ միջոցներ, դատարանը չի կարող անտեսել տվյալ պետության ներպետական օրենսդրության հիմնական կամ ընթացակարգային առանձնահատկությունները (տե՛ս *mutatis mutandis «Բելգիայի լեզվաբանական» (Belgian Linguistic)* գործով 1968 թ. հուլիսի 23-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 6, էջ 34–5):

62. Այժմ մնում է որոշել, թե արդյոք գանգատի առարկա դարձած «միջամտությունը» համապատասխանե՞լ է հրատապ սոցիալական անհրաժեշտության պայմանին և «համաչա՞փ է եղել հետապնդվող օրինական նպատակներին»: Բացի այդ, հարկ է նաև պարզել, թե արդյոք նշված միջամտությունն արդարացնելու համար պետական իշխանությունների ներկայացրած հիմնավորումները «պատշաճ և բավարա՞ր են համարվում կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով», թե՞ ոչ (*Հենդիսայդի* (*Handyside*) գործով վերոնշյալ վճիռ, էջ 22-4, պարբ. 48–50):

…

Այնուհանդերձ, տվյալ դեպքում «Սանդի թայմզ» թերթի տպագրման պատրաստվող հոդվածը շարադրված էր չափավոր ձևակերպումներով, իսկ հեղինակները փաստերը միակողմանի չեն լուսաբանել կամ չեն պնդել, որ դատարանը պետք է միայն մեկ որոշում կայացնի: Թեև հեղինակները մանրամասն վերլուծել են «Դիսթիլերզ» ընկերության դեմ ապացույցները, սակայն միաժամանակ ներկայացրել են վերջինիս օգտին ծառայող փաստարկները և հոդվածը եզրափակել հետևյալ խոսքերով. «Թվում է, թե այս բոլոր հարցերի հստակ պատասխանները չեն պարզվել»: Ուստի դատարանը կարծում է, որ տպագրվելու դեպքում նշված հոդվածի գործած ազդեցությունն ընթերցողների վրա տարբեր կլիներ: Համապատասխանաբար, եթե նույնիսկ հոդվածի ազդեցությամբ որոշ ընթերցողների շրջանում կարծիք ձևավորվեր հանցավոր անփութության մասին, ապա դա «արդարադատության հեղինակության» համար բացասական հետևանքներ չէր ունենա, հատկապես այն պատճառով, որ, ինչպես արդեն նշվել է, այդ նույն ժամանակահատվածում վերոհիշյալ հարցը քննարկվում էր հասարակության լայն զանգվածների շրջանում:

…

Ինչպես դատարանը նկատել է *Հենդիսայդի* (*Handyside*) գործով վճիռ կայացնելիս, ազատ արտահայտվելու իրավունքը ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից է, որը, կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն, կիրառելի է ոչ միայն դրական կամ անտարբեր վերաբերմունքի արժանացած կամ էլ քաղաքավարի համարվող, այլև ինչպես իշխանությունների, այնպես էլ բնակչության ցանկացած մասի համար վիրավորական, ցնցող կամ անհանգստություն պատճառող տեղեկություններ կամ գաղափարներ տարածելու դեպքում (էջ 23, պարբ. 49):

Վերոնշյալ սկզբունքներն առանձնակի կարևորություն են ստանում, եթե խոսքը զանգվածային լրատվամիջոցների մասին է, և հավասարապես կիրառելի են արդարադատության իրականացման բնագավառում, որը ծառայում է հանրության շահերի պաշտպանությանը և իրազեկված հասարակության աջակցության կարիք ունի: Ընդհանուր առմամբ, ճանաչվել է այն փաստը, որ դատարանները չեն կարող գործել հասարակությունից դուրս: Թեև դատարանները հանդիսանում են վիճաբանություններ կարգավորող տրիբունալ, դա չի նշանակում, որ վիճաբանությունների նյութը չի կարող նախքան դատը քննարկվել այլուր, օրինակ՝ մասնագիտական ամսագրերում, ընդհանուր մամուլում կամ հասարակության լայն զանգվածների շրջանում: Ավելին, թեև զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները չպետք է անցնեն արդարադատության պատշաճ իրականացման նկատառումներով հաստատված սահմանները, սակայն պարտավոր են տեղեկություններ և գաղափարներ տրամադրել ինչպես հանրությանը հուզող այլ բնագավառների հարցերի, այնպես էլ դատական վարույթում գտնվող գործերի մասին: Զանգվածային լրատվամիջոցները պարտավոր են տրամադրել նման տեղեկություններ և գաղափարներ, իսկ հասարակությունն իր հերթին օգտվում է դրանք ստանալու իրավունքից (տե՛ս *mutatis mutandis Կյելդսենի, Բուսկ Մադսենի և Պեդերսենի* (*Kjeldsen, Busk Madsen and Pedersen*) գործով 1976 թ. դեկտեմբերի 7-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 23, էջ 26, պարբ. 52):

Ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ միջոց համարվելու համար գանգատի առարկա դարձած միջամտությունը պետք է «բավականաչափ» հիմնավորված լինի, ինչը պարզելու համար հարկավոր է հաշվի առնել տվյալ գործով հանրությանը հուզող յուրաքանչյուր հայեցակետ: Այդ կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նկատում է, որ ներգրավված կողմերի հակառակ շահերն արդար հավասարակշռության բերելու արդյունքում դատական գործառույթներ իրականացնող լորդերից մի քանիսը մշակել են բացարձակ կանոն, որի համաձայն՝ արգելվում է կանխորոշել դատական վարույթում գտնվող գործերը: Դատարանն ընդգծել է այն փաստը, որ ստիպված է տվյալ հարցում այլ մոտեցում որդեգրել, քանի որ գործ ունի ոչ թե երկու հակադիր սկզբունքների ընտրության, այլ մի շարք բացառություններ ունեցող ազատ արտահայտվելու իրավունքի սկզբունքի հետ, ընդ որում, նշված բացառությունները պետք է մեկնաբանվեն նեղ իմաստով (տե՛ս *mutatis mutandis Կլասի* (*Klass*) գործով 1978 թ. սեպտեմբերի 6-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 28, էջ 21, պարբ. 42): Տվյալ դեպքում բավարար հիմք չէ այն փաստը, որ միջամտությունը դիմողի իրավունքին դասվում է վերոհիշյալ 10-րդ հոդվածի 2-րդ կետում թվարկված բացառությունների շարքը, և միջամտության առարկան համահունչ է որոշակի կարգի պայմաններին, ինչպես նաև համապատասխանում է ընդհանուր առմամբ կամ լիովին ձևակերպված իրավական նորմին:

Դատարանը պետք է համոզվի, որ նշված միջամտությունն անհրաժեշտ միջոց է եղել իր քննությանը ներկայացված առանձնահատուկ գործով առկա փաստերի և հանգամանքների պայմաններում:

66. Անվիճարկելի է այն փաստը, որ թալիդոմիդ ցավազրկող դեղամիջոցի հետ կապված աղետալի իրավիճակն առաջ է բերել հասարակության մտահոգությունը: Հարց է ծագել, թե արդյոք դեղը վաճառող հզոր ընկերությունն իրավաբանական կամ բարոյական պատասխանատվություն կրե՞լ է անձնական մեծ ողբերգություն վերապրած հարյուրավոր անհատների նկատմամբ, կամ արդյոք դեղամիջոցն ընդունելու հետևանքով տուժածները կարո՞ղ էին պահանջել կամ հուսալ, որ փոխհատուցում կստանան տեղական իշխանություններից: Բարձրացվել են արմատական հարցեր՝ կապված գիտական նորարարությունների արդյունքում անհատներին հասցված վնասի փոխհատուցման պաշտպանության հետ, և վիճարկվել են այդ բնագավառը կարգավորող օրենքի բազում հայեցակետեր:

Ինչպես արդեն դատարանը նկատել է, 10-րդ հոդվածով երաշխավորվում է ոչ միայն լրատվամիջոցների՝ հասարակությանը տեղեկություններ տրամադրելու իրավունքը, այլև հասարակության իրազեկված լինելու իրավունքը:

Սույն գործի շրջանակներում այս ողբերգության զոհ դարձած բազում ընտանիքների անդամների համար, ովքեր չէին հասկանում գործի հետ կապված իրավաբանական հարցերի ողջ բարդությունը, կենսական կարևորություն ուներ գործի հիմքում ընկած բոլոր փաստերի, ինչպես նաև դրա տարբեր հնարավոր լուծումների իմացությունը: Նրանց համար կենսական նշանակություն ունեցող այս տեղեկությունները կարող էին թաքցվել նրանցից, եթե ստույգ հաստատվեր, որ այդ տեղեկությունների տարածումը կվտանգեր «արդարադատության հեղինակությունը»:

…

Ճիշտ է, որ եթե հոդվածը նշված ժամանակահատվածում տպագրվեր «Սանդի թայմզ» թերթում, ապա «Դիսթիլերզ» ընկերությունը կարող էր իրեն պարտավորված զգալ դատից առաջ հրապարակավ ներկայացնել իր փաստարկները գործի հանգամանքների մասին: Ամեն դեպքում, թեև սույն գործով դատավարությունը դեռևս չի ավարտվել, սակայն նշված փաստերը շարունակում են մնալ հանրության ուշադրության կենտրոնում: Որոշ փաստեր լուսաբանող հոդվածի միջոցով կարելի էր կանխել ոչ ստույգ փաստերի վրա հիմնված անտեղյակ սպեկուլյատիվ քննարկումները:

67. Հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները և առաջնորդվելով վերոնշյալ մոտեցմամբ՝ դատարանը եզրակացրել է, որ գանգատի առարկա դարձած միջամտությունն իրավունքին չի համապատասխանել բավականին հրատապ սոցիալական անհրաժեշտության պայմանին, որը կարող էր գերակշռել հանրության շահերի համեմատ կոնվենցիայի իմաստով ազատ արտահայտվելու հարցում: Ուստի դատարանը կարծում է, որ դիմողների իրավունքների սահմանափակումը բավականաչափ հիմնավորված չէր կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով, քանզի այն համաչափ չէր հետապնդվող օրինական նպատակին և արդարադատության հեղինակությունը պահպանելու համար անհրաժեշտ միջոց չի եղել ժողովրդավարական հասարակությունում:

68. Համապատասխանաբար, արձանագրվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

Տասնմեկ կողմ և ինը դեմ ձայներով արձանագրել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատական նիստին նախագահ Բալլադորե Պալիերիի գլխավորությամբ մեծամասնություն են կազմել դատավորներ Մոզլերը, Զեքիան, Օ'Դոնոգին, Պեդերսենը, Էվրիգենիսը, Թայթգենը, Լագերգրենը, Գյոլչյուքլուն, Պինեյրո Ֆարինան և Գարսիա դե Էնտեռիան: Չհամընկնող կարծիք են արտահայտել դատավորներ Վիարդան, Կրեմոնան, Տոիր Վիլջաուլմսոնը, Ռիսդալը, Գանսհոֆ վան դեր Մերշը, Ֆիտցմորիսը, Բինդշեդլեր-Ռոբերտը, Լիշը և Մաթշերը: Չհամընկնող կարծիք հայտնած դատավորների փոքրամասնությունը համամիտ չէ մեծամասնության հետ հետևյալ հարցերում. ա) «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մասին» օրենքի առումով Միացյալ Թագավորությանը վերապահված հայեցողության սահմանը, ինչպես նաև բ) դիմողների ազատ արտահայտվելու իրավունքին միջամտելու անհրաժեշտությունը: Վերոնշյալ դատավորների կարծիքով՝ արդարադատության հեղինակության պահպանման հետ կապված հարցերում պետությունը չպետք է օգտվի հայեցողության ավելի նեղ սահմանից, քան բարոյականության պաշտպանությանն առնչվող հարցերում:

Թեև մասնակից պետություններում ընդունված է կոնվենցիայի 6-րդ հոդվածի բուն էության մասով ընդհանուր կետերի բավականին մեծ շրջանակ, սակայն փաստ է մնում, որ դատական համակարգի հաստատությունները և ընթացակարգերը

կարող են տարբեր երկրներում նշանակալիորեն տարբեր լինել: Ուստի, դատարանի մեծամասնության կարծիքին հակառակ՝ արդարադատության հեղինակություն հասկացությունը ոչ մի դեպքում չի կարող առանձնացվել նշված պետություններում տիրող իրավիճակից և դիտարկվել միանման:

Չհամընկնող կարծիք արտահայտած դատավորները համոզված էին նաև, որ Լորդերի պալատն իրավունք ուներ քննարկելու արգելող որոշումը վերահաստատելու անհրաժեշտության հարցը, որպեսզի թույլ չտար դիմողներին խաթարել արդարադատության իրականացումը «Դիսթիլերզ» ընկերության դեմ հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում:

2 Դատարանի կայացրած վճռում ընդգրկվել են մի շարք կարևոր որոշումներ, այդ թվում՝ կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքների և նույն հոդվածի 2-րդ կետի դրույթներով թույլատրելի սահմանափակումների փոխհարաբերությունները կարգավորող որոշումներ: Դատարանի համաձայն՝ վերոնշյալ իրավունքներն օժտված են գերակայությամբ, իսկ սահմանափակումները պետք է մեկնաբանվեն նեղ իմաստով: Բացի այդ, դատարանը հակված էր ընդունելու այն փաստը, որ բավականաչափ հասկանալի ու հստակ ձևակերպված լինելու դեպքում ընդհանուր իրավունքի իրավասությունը կարող է բավարարել 10-րդ հոդվածի 2-րդ կետի պայմանները և «օրենքով նախատեսված» համարվել: Վերոնշյալ *«Կրուսլին ընդդեմ Ֆրանսիայի»* (*Kruslin v France*, 1990) գործի շրջանակներում ներկայացվել է դատարանի դրական վերաբերմունքը քաղաքացիական իրավունքի սկզբունքներով առաջնորդվող այն պետությունների նկատմամբ, որոնց նախադեպային իրավունքով բավարարվում են կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետով ներկայացված «օրենքին համապատասխան» հասկացության նմանօրինակ պահանջները:

3 «Սանդի թայմզ» թերթի գործը նշանակալի գործոն է եղել, որի ազդեցությամբ Բրիտանիայի կառավարությունը որոշում է կայացրել 1981 թ. «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մասին» օրենքում ընդհանուր իրավունքին առնչվող դրույթներն օրենքով սահմանված կարգով վերափոխելու մասին: Նշված օրենքի հայեցակետերը դատարանը քննարկել է ներքոհիշյալ *«Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության»* գործի շրջանակներում (*Goodwin v UK, Վճիռների և որոշումների զեկույցներ* (1996) 22 EHRR 123, 1996-II 483):

Հոդված 10(1)

Ազատ արտահայտվելու իրավունքի շրջանակը

Քաղաքական հարցերի շուրջ ազատ արտահայտվելու իրավունք

.....

«Լինգենսն ընդդեմ Ավստրիայի» (Lingens v Austria), A.103 (1986) 8 EHRR 407, Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Տվյալ գործով դիմում է ներկայացրել Ավստրիայում տպագրվող «Պրոֆիլ» ամսագրի խմբագիրը: 1975 թ. Ավստրիայում կայացած ընդհանուր ընտրություններից հետո կարճ ժամանակ անց Հրեական փաստագրական կենտրոնի նախագահ Սիմոն Վիզենթալը մեղադրել է Ավստրիայի Լիբերալ կուսակցության առաջնորդ Ֆրիդրիխ Փեթերին Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում գերմանական էսէսական հետևակային զորքում (գերմ. *Schutzstaffel*) ծառայելու համար: Պրն Փեթերն ընդունել է հետևակային զորքում ծառայելու փաստը, սակայն հերքել է անձնական մասնակցությունը քաղաքացիական բնակչության զանգվածային սպանություններին իր բրիգադի կողմից: Հաջորդ օրը պրն Փեթերը նոր կառավարության ձևավորման հարցը քննարկելու նպատակով հանդիպել է Ավստրիայի կանցլեր Բրունո Կրայսկու հետ: Այնուհետև պրն Կրայսկին

հարցազրույց է տվել հեռուստատեսությամբ, որի ընթացքում իր աջակցությունն է հայտնել պրն Փեթերին և քննադատել պրն Վիզենթալի կազմակերպությունը՝ այն անվանելով «քաղաքական մաֆիա»: Կարճ ժամանակ անց դիմողը երկու հոդված է տպագրել, որոնց մեջ խիստ քննադատության է ենթարկել պրն Կրայսկուն՝ ի թիվս այլ անարգանքների գործածելով հետևյալ վիրավորական արտահայտությունները. «ստորագույն օպորտունիզմ», «բարոյազուրկ» և «անարժան»: Այնուհետև պրն Կրայսկին անհատական հայց է ներկայացրել Լինգենսի դեմ՝ մեղադրելով նրան քրեորեն պատժելի զրպարտանքի համար: Թեև Վիեննայի շրջանային դատարանն ընդունել է, որ Լինգենսը բարեխիղճ էր տպագրել հոդվածը, սակայն հաշվի առնելով, որ վերջինս չէր կարողացել Ավստրիայի քրեական օրենսգրքի պահանջների համաձայն ապացուցել իր հայտարարությունների իսկությունը, մեղավոր է ճանաչել նրան: Դատարանը Լինգենսին տուգանել է 20000 շիլինգի չափով և պահանջել առգրավել անարգանք պարունակող հոդվածների օրինակները: Վիեննայի վերաքննիչ դատարանը հաստատել է Լինգենսին ներկայացրած մեղադրանքը, սակայն տուգանքի չափը նվազեցրել է մինչև 15000 շիլինգ: Լինգենսը գանգատ է ներկայացրել հանձնաժողովին այն առնչությամբ, որ իրեն դատապարտելով՝ Ավստրիայի ազգային մարմինները խախտել են կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված իր իրավունքները: Հանձնաժողովը միաձայն արձանագրել է նշված հոդվածի խախտում:

I. 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

…

36. Դատարանը համամիտ է հանձնաժողովի և պետության հետ այն հարցում, որ տվյալ դեպքում դիմողի դատապարտման հիմքում միանշանակ ընկած է Ավստրիայի քրեական օրենսգրքի 111-րդ հոդվածը (տե՛ս վերոնշյալ 21-րդ պարբերությունը): Ավելին, նշված միջոցը միտված է «այլ անձանց հեղինակության և իրավունքների» պաշտպանությանը, և որևէ պատճառ չկա ենթադրելու, որ այդ միջոցով այլ նպատակներ են հետապնդվել (տե՛ս կոնվենցիայի 18-րդ հոդված): Համապատասխանաբար, դիմողի դատապարտումը «նախատեսվել է օրենքով» և միտված է եղել կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված օրինական նպատակին:

37. Իրենց փաստարկները ներկայացնելիս հանձնաժողովը, պետությունը, ինչպես նաև դիմողը շատ են կարևորել այն հարցը, թե արդյոք վերոնշյալ նպատակն իրականացնելու համար «ժողովրդավարական հասարակությունում» անհրաժե՞շտ էր միջամտել դիմողի իրավունքին:

41. Այդ կապակցությամբ դատարանը ստիպված է հիշեցնել, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված ազատ արտահայտվելու իրավունքը ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից է և այդ համակարգի առաջընթացի ու յուրաքանչյուր անհատի ինքնակայացման էական նախապայմաններից մեկը: Վերոնշյալ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն կիրառելի է ոչ միայն դրական կամ անտարբեր վերաբերմունքի արժանացող կամ էլ քաղաքավարի համարվող, այլև վիրավորական, ցնցող կամ անհանգստություն պատճառող «տեղեկություններ» կամ «գաղափարներ» տարածելու հարցում: Նույն սկզբունքի վրա են հիմնված նաև բազմակարծությունը, հանդուրժողականությունը և լայնախոհությունը, առանց որոնց չի կարող գործել «ժողովրդավարական հասարակությունը» (տե՛ս վերոնշյալ *Հենդիսայդի (Handyside)* գործով վճիռը, շարք A, թիվ 24, էջ 23, պարբ. 49):

Վերոնշյալ սկզբունքները հատկապես մեծ կարևորություն են ներկայացնում մամուլի համար: Թեև մամուլը չպետք է անցնի սահմանները, այդ թվում՝ «այլ անձանց հեղինակության պաշտպանության» առումով, այնուհանդերձ, նա պարտավոր է տեղեկություններ և գաղափարներ հաղորդել ինչպես քաղաքական, այնպես էլ հանրությանը հուզող այլ հարցերի շուրջ: Մամուլը պարտավոր է նման տեղեկություններ և գաղափարներ հաղորդել, իսկ հասարակությունն իր հերթին օգտվում է դրանք ստանալու իրավունքից (տե՛ս *mutatis mutandis «Սանդի թայմզ»* (*Sunday Times*) վերոնշյալ գործով կայացված վճիռը, շարք A, թիվ 30, էջ 40, պարբ. 65): Այդ կապակցությամբ դատարանը չի կարող ընդունել Վիեննայի վերաքննիչ դատարանի վճռում արտահայտված այն կարծիքը, որի համաձայն՝ լրատվամիջոցները կոչված են միայն այնպիսի տեղեկություններ տրամադրելու, որոնց մեկնաբանումը հիմնականում վերապահված է ընթերցողին:

42. Բացի այդ, մամուլի ազատության իրավունքի շնորհիվ հասարակությունը հնարավորություն է ստանում օգտվելու լավագույն միջոցներից՝ քաղաքական գործիչների հայացքներն ու մոտեցումները բացահայտելու և դրանց մասին կարծիք կազմելու համար: Կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ, քաղաքական բանավեճի իրավունքն ամբողջ կոնվենցիայում որպես գերակա նպատակ արծարծվող ժողովրդավարական հասարակության անկյունաքարերից է:

Հետևաբար, քաղաքական գործչի դեմ ուղղված ընդունելի քննադատության շրջանակն ավելի լայն է, քան մասնավոր անձի քննադատության դեպքում: Ի տարբերություն մասնավոր անձի՝ քաղաքական գործչի արտասանած բոլոր բառերը և գործած արարքներն անխուսափելիորեն և գիտակցաբար ենթակա են ինչպես լրագրողների, այնպես էլ հասարակության լայն զանգվածների մանրազնին ուսումնասիրությանը, ուստի և քաղաքական գործիչը պետք է ավելի հանդուրժողական մոտեցում ցուցաբերի տվյալ հարցի նկատմամբ: Անշուշտ, կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով երաշխավորվում է այլ անձանց, այդ թվում՝ քաղաքական գործիչների հեղինակության պաշտպանությունը, եթե անգամ վերջիններս հանդես չեն գալիս

մասնավոր անձի կարգավիճակով: Այնուհանդերձ, նման դեպքերում հարկավոր է նշված անձանց պաշտպանության պայմանները դիտարկել քաղաքական հարցերի հրապարակավ քննարկումների տեսանկյունից:

43. Սույն գործի շրջանակներում դիմողը մեղավոր է ճանաչվել այն պատճառով, որ 1975 թ. հոկտեմբերի 14-ին և 21-ին Վիեննայի «Պրոֆիլ» ամսագրում հրապարակված երկու հոդվածներում որոշակի արտահայտություններ է գործածել դաշնային կանցլեր պրն Կրայսկու հասցեին, այն է՝ «ստորագույն օպորտունիզմ», «քարոյազուրկ» և «անարժան»: Վերոնշյալ հոդվածներն անդրադառնում էին Ավստրիայի հասարակությանը հուզող քաղաքական հարցերին, որոնք բազում թեժ քննարկումների տեղիք էին տվել: Ծավալված քննարկումների առարկա դարձավ առհասարակ երկրի քաղաքացիների և, մասնավորապես՝ կանցլերի դիրքորոշումը նացիոնալ-սոցիալիստական ուղղվածության կուսակցությունների, ինչպես նաև երկրի կառավարմանը նախկին նացիստների մասնակցության վերաբերյալ: Կարելի է ասել, որ վերոնշյալ հոդվածներն ընդհանուր առմամբ գրված էին բավական հավասարակշիռ ոճով, սակայն մասնավորապես վերոնշյալ արտահայտությունների գործածումը կարող էր բացասական հետևանքներ ունենալ պրն Կրայսկու հեղինակության համար:

Այնուհանդերձ, տվյալ դեպքում պրն Կրայսկին հանդես է գալիս քաղաքական գործչի իր կարգավիճակով, ուստիև հարկ է հաշվի առնել այն իրադրությունը, որի պայմաններում գրվել են վերոնշյալ հոդվածները: Հոդվածները տպագրվել են 1975 թ. կայացած ընդհանուր ընտրություններից կարճ ժամանակ անց: Նախքան ընտրությունները շատ ավստրիացիներ կանխատեսել են, որ պրն Կրայսկու կուսակցությունը կզրկվի իր բացարձակ մեծամասնությունից և ղեկավար դիրքը չկորցնելու համար ստիպված կլինի կոալիցիա կազմել պրն Փեթերսի կուսակցության հետ: Ընտրություններից հետո, երբ պրն Վիզենթալը մի շարք փաստեր բացահայտեց պրն Փեթերի նացիստական անցյալի մասին, կանցլերը պաշտպանեց վերջինիս և քննադատեց զրպարտչին՝ նրա գործողությունները որակելով որպես «մաֆիայի գործելաոճ»: Ահա այսպես է բացատրվում պրն Լինգենսի սուր արձագանքը:

Վերջինս օգտվել է ոչ թե տեղեկատվություն տարածելու իրավունքից, այլ կարծիք արտահայտելու և գաղափարներ տարածելու իրավունքներից, այնուհանդերձ, տվյալ դեպքում կիրառելի են կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված սահմանափակումները:

Դատարանի կարծիքով՝ հարկավոր է հստակորեն առանձնացնել փաստերը և սուբյեկտիվ գնահատականները: Ի տարբերություն սուբյեկտիվ գնահատականների իսկության՝ փաստերի առկայությունը կարելի է ապացուցել: Այդ կապակցությամբ դատարանը նշում է, որ պրն Լինգենսի սուբյեկտիվ գնահատականների հիմքում ընկած փաստերը, ինչպես նաև նրա բարեխղճությունը անվիճարկելի են:

Ավստրիայի քրեական օրենսգրքի 111-րդ հոդվածի 2-րդ կետի համակցությամբ 3-րդ կետի համաձայն՝ լրագրողները նման դեպքերում կարող են խուսափել նույն հոդվածի 1-ին կետում նշված արարքների համար դատապարտումից, եթե կարողանան ապացուցել իրենց հայտարարությունների իսկությունը:

Նշված պահանջն անհնար է կատարել, եթե խոսքը սուբյեկտիվ գնահատականների մասին է, ընդ որում նման պահանջով խախտվում է ինքնին կարծիք արտահայտելու իրավունքը, որը կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված իրավունքի հիմնարար բաղադրատարրն է:

47. Վերոնշյալ բազում նկատառումներից պարզ է դառնում, որ միջամտությունը պրն Լինգենսի ազատ արտահայտվելու իրավունքին «անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում այլ անձանց հեղինակությունը պաշտպանելու համար», և ավելին, այդ միջամտությունը համաչափ չէր հետապնդվող օրինական նպատակին: Հետևաբար, արձանագրվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

…

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

միաձայն արձանագրել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

…

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում ընդգրկվել են նախագահող դատավոր Ռիսդալը և դատավորներ՝ Գանսհոֆ վան դեր Մերշը, Կրեմոնան, Վիարդան, Տոիր Վիլջաուլմսոնը, Բինդշեդլեր-Ռոբերտսը, Լագերգրենը, Գյոլչյուքլյուն, Մաթշերը, Պինեյրո Ֆարինան, Փեթիթին, Ուոլշը, Էվանսը, Մակդոնալդը, Ռուսոն, Բերնհարդտը, Ջերսինզը և Շպիլմանը:

2 Վերոնշյալ գործով կայացված վճիռն ուշագրավ է քաղաքական հայացքներն ու գործիչների արարքները մեկնաբանելու առումով լրատվամիջոցներին դատարանի կողմից վերապահված հզոր պաշտպանությամբ: Այս վճռի հատկապես մեծ նշանակությունն այն է, որ պետություններին չի թույլատրվում պահանջել լրագրողներից ապացուցել քաղաքական գործիչների մասին իրենց արած սուբյեկտիվ գնահատականների բարեխղճությունը:

3 Դատարանը նույն սկզբունքներով է առաջնորդվել *«Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի» (Oberschlick v Austria,* A.204 1991, 19 EHRR 389) գործով վճիռ կայացնելիս: Նշված գործում խոսքը մեկ այլ ամսագրի խմբագրի մասին է, որը տպագրել է իրավասու մարմիններին տեղեկացրած մանրամասներն առ այն, որ Ավստրիայի Լիբերալ կուսակցության գլխավոր քարտուղարը, համապատասխան օրենքին հակառակ, որդեգրել է նացիստական քաղաքականության սկզբունքներին նմանվող հայացքներ: Բացի այդ, ամսագրում հրապարակված նշված հոդվածում մանրամասներ են հաղորդվել տվյալ գործով դիմողին ներկայացված քրեական մեղադրանքի բնույթի մասին: Ավստրիայի դատարանները Օբերշլիքին դատապարտել են նույն զրպարտության մասին օրենքով, որով դատապարտվել է վերոնշյալ գործով դիմող Լինգենսը: Տասնվեց կողմ և երեք դեմ ձայներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեծամասնությունը, հաշվի առնելով այն փաստը, որ Ավստրիայի դատարանները պահանջել էին դիմողից ապացուցել հոդվածի այն մասերի իսկությունը, որտեղ բերված են սուբյեկտիվ գնահատականներ, եզրակացրել է, որ խախտվել են դիմողի՝ 10-րդ հոդվածով սահմանված իրավունքները: Ավելի ուշ մեկ այլ գործում դիմողին հաջողվել է վիճարկել Ավստրիայի դատարանների կողմից հաստատված մեղադրանքն այն հոդվածը տպագրելու համար, որում ինքը մի առաջատար քաղաքական գործչի անվանել է «տխմար» *(«Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի»* (*Oberschlick v Austria*, թիվ 2, Վճիռների և որոշումների զեկույցներ 1997, 25 EHRR 357, 1997-IV 1266): Ավստրիայի «Ազատություն» կուսակցության առաջնորդ և Քարինթիայի երկրամասի կառավարիչ Յորգ Հայդերն իր ելույթում հայտարարել է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակցած երկու կողմերի զինվորներն էլ պայքարել են հանուն խաղաղության և ազատության, և արդի ժամանակներում միայն այդ մարդիկ կարող են օգտվել ազատ արտահայտվելու իրավունքից: Օբերշլիքը քննադատական հոդվածում Հայդերի ելույթը տպագրել է «Հետգրություն. Տխմարը նացիստի դերում» խորագրով: Ավստրիայի դատարաններն ընդունել են Հայդերի դիմումը, որով Օբերշլիքը մեղադրվել է զրպարտության համար: Տասնչորս կողմ և մեկ դեմ ձայներով հանձնաժողովն արձանագրել է 10-րդ հոդվածի խախտում: Դատարանի մեծամասնությունը յոթ կողմ և երկու դեմ ձայներով նույնպես վճռել է, որ դիմողին ներկայացված մեղադրանքը հակասել է նշված հոդվածով սահմանված իրավունքներին:

> Դատարանի կարծիքով, թեև, անշուշտ, կարելի է վիճահարույց համարել դիմողի հոդվածը և հատկապես՝ «տխմար» բառը, սակայն, տվյալ դեպքում հոդվածն ու նշված բառը անհիմն անձնական անարգանք չեն եղել, քանի որ պրն Հայդերի ելույթի հիման վրա հեղինակը տվել է օբյեկտիվորեն հասկանալի բնորոշում, ընդ որում՝ պրն Հայդերի վերոնշյալ ելույթն արդեն իսկ սադրիչ բնույթ էր կրում: Հաշվի առնելով այդ ամենը՝ կարելի է ասել, որ դիմողի հոդվածները պրն Հայդերի ելույթով դրդված քաղաքական քննարկումների մաս են կազմում և բնորոշվում որպես անձնական կարծիք, որի իսկությունը ենթակա չէ ապացուցման: Այնուհանդերձ, նման կարծիքը կարող է չափազանց խիստ համարվել, հատկապես փաստացի հիմքի բացակայության պայմաններում, սակայն տվյալ դեպքում իրավիճակն այլ է: Ճիշտ է, քաղաքական գործիչը կարող է վիրավորվել, եթե նրան հրապարակավ անվանեն «տխմար», այնուհանդերձ, տվյալ դեպքում նշված բառը չի կարելի անհամաչափ միջոց համարել՝ հաշվի առնելով այն վրդովմունքը, որին գիտակցաբար տեղիք է տվել պրն Հայդերը (պարբ. 33–34):

Ուստի Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրակացրել է, որ Ավստրիայի դատարանները չպետք է զրպարտության համար դատապարտեին դիմողին՝ պաշտպանելով Հայդերի հեղինակությունը կամ իրավունքները: Դատավորներ Մաթշերը և Տոիր Վիլջաուլմսոնը արտահայտել են չհամընկնող կարծիք այն հիմնավորմամբ, որ «վիրավորանքը երբեք չի կարող 10-րդ հոդվածի դրույթներով պաշտպանվող սուբյեկտիվ գնահատական համարվել»: Այնուհանդերձ, այս ամենից պարզ է դառնում, որ դատարանի մեծամասնությունը հակված էր պաշտպանելու քաղաքական մեկնաբանների կողմից չափազանց պախարակելի ոճ գործածելու իրավունքը, եթե դա հիմնավորված քննադատության մաս լիներ: Դատավոր Մակբրայդը նկատել է, որ «այն իրողության ճանաչումը, որ հասցված վիրավորանքը կարելի է պաշտպանել, անկասկած կարևոր է, սակայն հաճախ վիճահարույց կլինի որոշել՝ արդյոք այդ վիրավորանքը հիմնավորվա՞ծ է եղել, թե՞ ոչ» (Judges, Politicians and the Limits to Critical Comment (1998) 23 E L Rev HR 77 88):

Վերջին կետի նկարագրությունը տե՛ս ներքոհիշյալ *Վաբլի* (*Wabl*) գործում, ծնթ. 10:

Ինչպես պարզվել է *«Վիրթշաֆթս-Թրենդ Ցայթշրիֆթեն-Վերլագս» ընկերությունն ընդդեմ Ավստրիայի» (Wirtschafts-Trend Zeitschriften-Verlags GMBH v Austria)* գործում, «Պրոֆիլ» ամսագրի (տե՛ս վերոնշյալ *Լինգենսի* (*Lingens*) գործը) հրատարակիչներին հաջողվել է հիմնավորել, որ իրենց քաղաքացիական պատասխանատվության ենթարկելու մասին Ավստրիայի դատարանների որոշմամբ խախտվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածը: Ներկայացրած մեղադրանքի առարկան դիմողների՝ Հայդերի կողմից նացիստական համա-

կենտրոնացման ճամբարները որպես «պատժիչ ճամբարներ» բնութագրումը քննադատող գրախոսական է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պալատը միաձայն եզրակացրել է, որ Հայդերի՝ նշված բնութագրումը գործածելու փաստը բավարար հիմք է ամսագրում տեղ գտած սուբյեկտիվ գնահատականների համար:

4 *«Շարզախը և «Նյուզ ֆերլագզգեզելշաֆտ» ընկերությունն ընդդեմ Ավստրիայի» (Scharsach and News Verlagsgesellschaft v Austria)* գործով 2003 թ. նոյեմբերի 13-ին վճռում վեց կողմ և մեկ դեմ ձայներով պալատի ճնշող մեծամասնությունը որոշել է, որ աջ հայացքներին հարող քաղաքական գործչի հասցեին «քողարկված նացիստ» արտահայտությունն այնպիսի սուբյեկտիվ գնահատական է, որը կարող է հիմնավորված համարվել: Վերոնշյալ գործիչը, ի թիվս այլ հայտարարությունների, հրապարակավ քննադատել է օրենսդրական այն դրույթը, որով արգելվում էր Ավստրիայի նացիոնալ-սոցիալիստական ուղղվածության կուսակցությունների գործունեությունը: Ուստի պալատը կարծում է, որ հանրությանը հուզող հարցի մասին հոդված տպագրելով՝ լրագրողը չի խախտել իրադարձությունները բարեխղճորեն մեկնաբանելու պայմանը, իսկ զրպարտության համար նրա դատապարտումը, որն ուղեկցվել է 4360 եվրո կազմող տուգանքով, հակասել է 10-րդ հոդվածի դրույթներին:

5 *«Թամերն ընդդեմ Էստոնիայի» (Tammer v Estonia)* գործում, որով վճիռը կայացվել է 2001 թ. փետրվարի 6-ին, արձանագրվել է քաղաքական գործչի հասցեին արված մեկնաբանության ընդունելի սահմանների խախտում: Նշված գործով դիմում ներկայացրած լրագրողը հոդված է տպագրել, որի մեջ էստոներեն անարգանքի խոսքեր է ուղղել նախկին վարչապետի սիրուհու հասցեին՝ նրան բնութագրելով որպես այլ անձանց ամուսնությունը խարխլող, ինչպես նաև անպետք ու անհոգատար մայր: Հարկ է նշել, որ այդ կինը երեխա է ունեցել վարչապետից, որն այդ ժամանակ արդեն ամուսնացած էր, և բարձր պաշտոն է զբաղեցրել ու ակտիվ դերակատարում ունեցել վարչապետի քաղաքական կուսակցությունում: Մեկնաբանության թիրախը դարձած կինը դիմողի դեմ անհատական գանգատ է ներկայացրել իրեն վիրավորանք հասցնելու համար: Էստոնիայի ներպետական դատարանները մեղավոր են ճանաչել դիմող Թամերին և տուգանել նրան: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միաձայն մերժել է դիմողի գանգատը կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված իր իրավունքների խախտման առնչությամբ:

68. Դատարանը նկատում է, որ 1995 թ. հոկտեմբերին տկն Լանարուն հրաժարական է տվել և թողել իր պետական պաշտոնը: Թեև նա շարունակել է անդամակցել վերոնշյալ քաղաքական կուսակցությանը, սակայն դատարանը հիմնավորված չի համարում կնոջ անձնական կյանքի առնչությամբ գործածված վիճահարույց արտահայտությունների արդարացումը հասարակական մտահոգության, ինչպես նաև ընդհանուր կարևորություն ներկայացնող հարցին առնչվելու նկատառումներով: Մասնավորապես, չի հիմնավորվել այն փաստարկը, որ կնոջ անձնական կյանքը քննարկելու անհրաժեշտությունը դիմողի հոդվածի տպագրման ժամանակ՝ 1996 թ. ապրիլին, հանրությանը հուզող հարցերից մեկն էր: Ուստի հավանաբար չի կարելի համարել, որ դիմողի դիտողությունները միտված են եղել հանրության շահերին ծառայելուն:

Այսպիսով, քաղաքական գործչի անձնական կյանքի հայեցակետերի վերաբերյալ վիրավորական ձևակերպումներ գործածելով՝ հեղինակը խախտել է քաղաքական հարցերի շուրջ ազատ արտահայտվելու իրավունքի թույլատրելի սահմանները: Ի տարբերություն վերոշարադրյալ գործի՝ *«Կարհուվաարան և Իլտալեհտին ընդդեմ Ֆինլանդիայի» (Karhuvaara and Iltalehti v Finland)* գործով 2004 թ. նոյեմբերի 16-ին կայացրած վճռով դատարանը կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում է համարել բարձրաստիճան խորհրդարանականի ամուսնու դատապարտման մասին (գինովցած վիճակում ոստիկանության աշխատակցի վրա հարձակվելու համար) թերթում գրելու հետևանքով խորհրդարանականի անձնական կյանքի անձեռնմխելիության խախտման համար այդ թերթի խմբագրին և հրատարակչին դատապարտելու իրողությունը: Դատարանը նկատի է առել այն հանգամանքը, որ փաստացի անդրադարձը պատգամավորի ամուսնու դատվածությանը որոշ չափով ուղղված է եղել հանրության շահերին ծառայելու նպատակին:

45. Մյուս կողմից՝ հարկ է նշել, որ վիճարկված տեղեկատվության առարկան ոչ մի հատուկ առնչություն կամ անմիջական կապ չի ունեցել քաղաքական հարցերի կամ քաղաքական գործչի կարգավիճակով տկն Ա.-ի անձի հետ: Հետևաբար, նշված

հոդվածները չեն առնչվել տկն Ա-ի հետ կապված հանրությանը հուզող որևէ հարցի: Այնուհանդերձ, հանրությունը տեղեկացված լինելու իրավունք ունի, ինչը ժողովրդավարական հասարակության հիմնարար իրավունքներից է և հատուկ հանգամանքներում կարող է տարածվել նույնիսկ հասարակական, հատկապես՝ քաղաքական գործիչների անձնական կյանքի կողմերի վրա (տե՛ս *«Ֆոն Հանովերն ընդդեմ Գերմանիայի»* (*Von Hannover v Germany*) գործը, պարբ. 64): Այդ կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վկայակոչում է պատասխանող պետության շրջանային դատարանի այն կարծիքը, որ քաղաքական գործչի ամուսնու դատվածությունը կարող էր բացասաբար անդրադառնալ ընտրողների որոշման վրա: Դատարանի կարծիքով՝ վերոնշյալ փաստը վկայում է, որ խնդրո առարկա հրապարակումը որոշակի առնչություն է ունեցել հանրության շահերին:

Ուշագրավ է, որ թերթում տպագրված հոդվածներն այդ քաղաքական գործչի հասցեին որևէ քննադատություն չէին պարունակում:

6 Դատարանը վճռել է, որ քաղաքական հարցերի շուրջ ազատ արտահայտվելու իրավունքի շրջանակն էլ ավելի մեծ է, եթե խոսքը պետական մարմինների, ոչ թե առանձին գործիչների մասին է: *«Կաստելսն ընդդեմ Իսպանիայի» (Castells v Spain,* A.236, 1992, 14 EHRR 445) գործով դիմում է ներկայացրել Իսպանիայի սենատորներից մեկը, որը բասկերի երկրի անկախության ջատագով կուսակցության ներկայացուցիչ էր: 1979 թ. նա մի հոդված է գրել բասկերի երկրում տարածվող մի ամսագրում, որի մեջ մեղադրել է իշխանություններին մի շարք սպանություններ կազմակերպելու համար: Նա հայտարարել է հետևյալը. «Այս հանցագործությունները կարող էին կազմակերպել միայն իշխանությունները: Ինչպես գիտենք, նրանք գնալով ավելի հաճախ են որպես քաղաքական միջոց գործածում բասկ այլախոհների դաժան հետապնդումները և քաղաքական դաշտում նրանց վերացումը»: Որոշ ժամանակ անց գերագույն դատարանը եզրակացրել է, որ տվյալ դեպքում նման անարգանքը չէր կարելի հիմնավորել ճշմարտության պաշտպանությամբ, և դատապարտել է Կաստելսին պետության հասցեին վիրավորական հայտարարություններ անելու համար: Այնուհետև դիմողը գանգատ է ներկայացրել Ստրասբուրգի մարդու իրավունքների եվրոպական դատարան: Դատարանը միաձայն հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ.

Թեև յուրաքանչյուր ոք ազատ արտահայտվելու իրավունք ունի, սակայն այդ իրավունքը հատկապես կարևոր է ժողովրդի ընտրյալ ներկայացուցչի համար, քանի որ նա է ներկայացնում իր ընտրազանգվածը՝ լուսաբանելով և պաշտպանելով նրանց հոգսերն ու շահերը: Ուստի միջամտությունը ընդդիմադիր պատգամավորի ազատ արտահայտվելու իրավունքին պահանջում է դատարանից հանգամանալից քննության առնել դիմողի գործը: Այս պարագայում կառավարության անդամների հասցեին ուղղված քննադատության թույլատրելի շրջանակն ավելի լայն է, քան մասնավոր անձանց կամ նույնիսկ քաղաքական գործիչների հասցեին ուղղված քննադատության պարագայում: Ժողովրդավարական հասարակությունում պետության ցանկացած գործողություն կամ բացթողում պետք է հանգամանալից քննության առնվի ոչ միայն օրենսդիր և դատական մարմինների, այլև զանգվածային լրատվամիջոցների և հասարակության կողմից: Ավելին, իր գերակա դիրքի բերումով կառավարությունը պետք է զսպվածություն ցուցաբերի քրեական ընթացակարգերի դիմելիս, մասնավորապես այն դեպքերում, երբ հակառակորդների կամ լրատվամիջոցների անհիմն ոտնձգությունների կամ քննադատությանն ի պատասխան կարելի է այլ միջոցների դիմել» (պարբ. 42–6):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իսպանիայի դատարանները թույլ չեն տվել Կաստելսին փաստարկներ ներկայացնել նախկինում արված իր հայտարարությունների իսկությունն ապացուցելու համար, դատարանն արձանագրել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքների խախտում:

Լինգենսի (*Lingens*) և *Կաստելսի* (*Castells*) գործերով կայացրած վճիռների համադրության արդյունքում դատարանը 10-րդ հոդվածի շրջանակներում ստեղծեց լրատվամիջոցներում քաղաքական գործիչների հասցեին արված բարեխիղճ մեկնաբանությունների և պետական մարմինների վերաբերյալ ներկայացված փաստացի հայտարարությունների իսկությունը պաշտպանող լրացուցիչ եվրոպական մեխանիզմներ:

Ավելի ուշ *«Յուքրենիեն մեդիա գրուփ» ընկերությունն ընդդեմ Ուկրաինայի» (Ukrainian Media Group v Ukraine,* 2005 թ. մարտի 29-ի վճիռ) գործում լիակազմ դատարանը քննադատել է Ուկրաինայի «Զրպարտության մասին» օրենքը, որով սուբյեկտիվ գնահատականների և փաստացի հայտարարությունների միջև որևէ տարբերակում չի նախատեսվում:

7 *«Ինջալն ընդդեմ Թուրքիայի» (Incal v Turkey, Վճիռների և որոշումների զեկույցներ* 1998, 29 EHRR 449, 1998-IV 1569) գործում դատարանի մեծ պալատը ընդդիմադիր գործչի կողմից կառավարության քաղաքականությունը խիստ քննադատության ենթարկելու իրավունքը պաշտպանելու նպատակով կիրառել է *Կաստելսի* (*Castells*) գործով կայացրած վճիռը: Մասնագիտությամբ իրավաբան դիմողը Ժողովրդական աշխատավորական կուսակցության (HEP) Իզմիրի թևի գործադիր կոմիտեի անդամ է եղել: Կոմիտեն որոշել է թռուցիկներ տարածել, որոնցում խիստ քննադատության են ենթարկվել հիմնականում ազգությամբ քուրդ անօրինական առևտրականների և հողատերերի դեմ տեղական մարմինների կողմից ձեռնարկված միջոցները: Կոմիտեն թռուցիկի նմուշն ուղարկել է Իզմիր քաղաքի ոստիկանության վարչություն և թույլտվություն խնդրել այն տարածելու համար: Այնուհետև նմուշն ուղարկվել է անվտանգության ոստիկանություն, որի եզրակացությամբ այն պարունակում էր անջատողական ապօրինի քարոզչություն, և ելնելով դրանից՝ նմուշը փոխանցվել է դատախազություն: Դատախազության պահանջով ազգային անվտանգության դատարանն արձակել է թռուցիկներն առգրավելու կարգադրություն: Այնուհետև թռուցիկի 10000 օրինակներն առգրավվել են, իսկ դիմողին հանցանք գործելու ոչ հրապարակավ հրահրման համար դատապարտել են վեցամսյա ազատազրկման, ինչպես նաև արգելել տասնհինգ օր մեքենա վարել: Նշված մեղադրանքով դատապարտվելու հետևանքով դիմողը զրկվել է քաղաքացիական ծառայության անցնելու, ինչպես նաև քաղաքական կազմակերպությունների և արհմիությունների մի շարք գործողություններին մասնակցելու իրավունքից: Դիմողը գանգատ է ներկայացրել հանձնաժողովին՝ ի թիվս այլոց պնդելով, որ խախտվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածը: Հանձնաժողովը միաձայն հաստատել է գանգատը: Դատարանն ընդունել է այն փաստը, որ դիմողի դատապարտումը միտված է եղել հասարակական կարգը պահպանելու օրինական նպատակին:

Թռուցիկը սկսվում է բողոքի բառերով և արծարծում ծագումով քուրդ անձանց նկատմամբ Իզմիր քաղաքում տիրող քշնամական մթնոլորտը: Թռուցիկում ասվում է, որ ձեռնարկված միջոցներն ուղղված էին հենց քրդերի դեմ, մասնավորապես նրանց քաղաքից վտարելու նկատառումով: Տեքստում ներկայացվել են մի շարք խիստ դիտողություններ Թուրքիայի կառավարության քաղաքականության մասին և լուրջ մեղադրանքներ իշխանությունների հասցեին, որոնք, թռուցիկի հեղինակների կարծիքով, պատասխանատու էին իրավիճակի համար: Դիմելով «ժողովրդավարության ոգով տոգորված բոլոր հայրենասերներին»՝ հեղինակներն իշխանությունների գործողությունները որակել են որպես ահաբեկչություն և այն «հատուկ պատերազմի» ռազմավարություններից մեկը, որը տարվում է «երկրի տարածքում և ուղղված է քուրդ ժողովրդի դեմ»: Քաղաքացիներին կոչ էին անում «ընդդիմանալ» այդ իրավիճակին, հատկապես «տարածքային կոմիտեների» օգնությամբ: Անշուշտ, դատարանը հասկանում է, որ, ի թիվս այլ նախադասությունների, նշված արտահայտությունների միջոցով հեղինակները կոչ են արել քրդական ծագում ունեցող բնակիչներին միավորվել և որոշակի քաղաքական պահանջներ ներկայացնել: Թեև անհասկանալի է մնում «տարածքային կոմիտեներ» արտահայտության իմաստը, սակայն ամբողջական համատեքստում ընթերցվելու դեպքում նշված կոչերը չեն կարող դիտվել որպես երկու ազգերի քաղաքացիների նկատմամբ բռնի միջոցների դիմելու, քշնամական վերաբերմունք դրսևորելու կամ ատելություն սերմանելու հրահրում (պարբ. 50):

Թեև թռուցիկների նշանակությունը որոշելիս դատարանը հակված է հաշվի առնելու ահաբեկչության կանխման հետ կապված հիմնախնդիրները, սակայն «ոչ մի հիմք չի տեսնում եզրակացնելու, որ պրն Ինջալը որևէ պատասխանատվություն է կրել Թուրքիայում և հատկապես Իզմիր քաղաքում առկա ահաբեկչության հիմնախնդիրների համար» (պարբ. 58): Ուստի դատարանը միաձայն եզրակացրել է, որ դիմողի դատապարտումն անհամաչափ միջոց էր հետապնդվող նպատակի համեմատ, և, հետևաբար, արձանագրել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

Այսպիսով, դատարանը հակված է պաշտպանելու ընդդիմադիր քաղաքական գործիչների կողմից արտահայտված քննադատությունը այն պայմանով, որ վերջիններս հարգեն ժողովրդավարական սկզբունքները և զերծ մնան պետության կամ այլ քաղաքացիների դեմ բռնություն հրահրելուց (ի լրումն՝ տե՛ս A Mowbray, The Role of the European Court of Human Rights in the Promotion of Democracy (1999) *Public Law* 703):

Դատարանի լիակազմ մեծ պալատը նույն մոտեցումն է որդեգրել արհմիության մի առաջնորդի կողմից քրդերի դեմ ուղղված գործողությունների համար կառավարության հասցեին հնչեցրած մարքսիստական քննադատության հարցում: *«Ջեյլանն ընդդեմ Թուրքիայի* (*Ceylan v Turkey,* 1999 30 EHRR 73) գործով դիմողը նավթարդյունաբերական ընկերության աշխատակիցների արհմիության նախագահն էր և 1991 թ. գրել է մի հոդված հետևյալ խորագրով՝ «Բանվորնե՛ր, եկել է արտա-

հայտվելու ժամանակը, վաղը կարող է ուշ լինել»: Հոդվածը տպագրվել է Ստամբուլում հրատարակվող մի շաբաթաթերթում: Վիճարկվել է հոդվածի այն հատվածը, որի մեջ զետեղվել են հետևյալ հայտարարությունները. «Արևելյան և Հարավարևելյան Անատոլիայում շարունակաբար մոլեգնող ահաբեկչական գործողություններն ակնհայտորեն պայմանավորված են միջազգային մակարդակով քուրդ ժողովրդի նկատմամբ իրականացվող իմպերիալիստական-վերահսկողական քաղաքականությամբ: Թուրքիայում տեղի է ունեցել քրդերի ցեղասպանություն: Փորձեր են արվել խեղդել և լռեցնել քուրդ ժողովրդին»: Որոշ ժամանակ անց Ստամբուլի ազգային անվտանգության դատարանը դիմողին մեղավոր է ճանաչել ատելություն սերմանող և թշնամանք հրահրող գաղափարներ ոչ հրապարակավ տարածելու համար՝ նրան դատապարտելով մեկ տարի ութ ամիս ժամկետով ազատազրկման, ինչպես նաև նշանակելով տուգանք 100,000 թուրքական լիրայի չափով: Վիճահարույց հոդվածի հեղինակը կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման վերաբերյալ գանգատ է ներկայացրել հանձնաժողովին: Տասներեք կողմ և երկու դեմ ձայներով հանձնաժողովն արձանագրել է 10-րդ հոդվածի խախտում: Դատարանում չի վիճարկվել այն հարցը, որ թեև դիմողի դատապարտումը հակասել է նրա ազատ արտահայտվելու իրավունքին, սակայն նրա դատապարտումը «նախատեսված է եղել օրենքով»: Բացի այդ, դատարանը եզրակացրել է, որ անջատողական գաղափարներով պայմանավորված՝ Հարավարևելյան Թուրքիայում տիրող բռնության համատեքստում միջամտությունը դիմողի իրավունքին միտված է եղել «ազգային անվտանգությունը», «հասարակական կարգը» և «տարածքային ամբողջականությունը» պահպանելու օրինական նպատակներին: Այնուհանդերձ, տասնվեց կողմ և մեկ դեմ ձայներով դատարանը չի համարել, որ դիմողի դատապարտումն անհրաժեշտ միջոց էր «ժողովրդավարական հասարակությունում»:

Ամեն դեպքում, դատարանը նկատում է, որ քննադատական հոդվածը գրելիս դիմողը հանդես է եկել արհմիության առաջնորդի՝ Թուրքիայի քաղաքական ասպարեզում դերակատարի կարգավիճակով, ու թեև նշված հոդվածը խիստ պարսավանք է պարունակում, հեղինակը չի հրահրում ընթերցողներին բռնության դիմել, զինված դիմադրություն ցուցաբերել կամ ապստամբել: Դատարանի կարծիքով՝ վերոնշյալ հանգամանքը կարևոր գործոն է, որը պետք է անպայման հաշվի առնել (պարբ. 36):

Կարելի՞ է արդյոք բռնություն հրահրող գաղափարների տարածումն արդարացնել կոնվենցիայի 10-րդ հոդվածով: Ի՞նչ նշանակության ունի տվյալ պարագայում այն փաստը, որ մի շարք եվրոպական երկրներ տուժել են տարբեր խմբավորումների ահաբեկչական գաղափարների քարոզչությունից, որը նրանց գործողություններն արդարացնում է քաղաքական, իսկ վերջերս, նաև՝ կրոնական հիմնավորումներով: Այն դեպքում, եթե ի պատասխան ակնհայտ ահաբեկչական գաղափարների քարոզարշավի՝ պետությունը զինված ուժի գործադրմամբ խախտի կոնվենցիայով սահմանված իրավունքները, արդյոք պետական իշխանությանը բռնի միջոցներով հակադրման հրահրող քննադատությունը կհամարվի՞ արդարացված: Դատարանի մեծամասնությունը հակված չէր արձանագրելու կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում այն դեպքում, երբ պետությունը պատժել է ընդդիմադիր գործչին՝ համարելով, որ նա աջակցություն է հայտնել «ահաբեկչական կազմակերպությանը»: *«Զանան ընդդեմ Թուրքիայի»* (*Zana v Turkey,* 1997, 27 EHRR 667, 1997-VII 2539) գործով դիմում է ներկայացրել Դիարբեքիրի նախկին քաղաքապետը, որը 1987 թ. բանտում պատիժը կրելու ընթացքում հարցազրույց է տվել լրագրողներին և ասել հետևյալը. «Ես աջակցում եմ Քրդական աշխատավորական կուսակցության ազգային-ազատագրական շարժմանը, սակայն, մյուս կողմից, դեմ եմ զանգվածային սպանություններին: Բոլորը կարող են սխալներ գործել, իսկ Քրդական աշխատավորական կուսակցության անդամները կանանց և երեխաներին սպանում են սխալմամբ»: Որոշ ժամանակ անց հարցազրույցը տպագրվել է ազգային թերթերից մեկում: Ավելի ուշ դիմողի հայտարարության հիման վրա Դիարբեքիրի ազգային անվտանգության դատարանը մեղավոր է ճանաչել նրան «օրենքով պատժելի ծանր հանցագործությունը պաշտպանելու» համար և դատապարտել տասներկու ամիս ազատազրկման: Հանձնաժողովը նախագահի վճռորոշ քվեով մերժել է դիմողի՝ 10-րդ հոդվածի խախտման մասին գանգատը: Դատարանը եզրակացրել է, որ միջամտությունը դիմողի ազատ արտահայտվելու իրավունքին «նախատեսված է օրենքով» և միտված է տարածքային ամբողջականության, ազգային և հասարակական անվտանգության պահպանմանը, ինչպես նաև հանցագործությունների կանխմանը: Կառավարության տվյալներով՝

1985 թ. սկսած՝ Քրդական աշխատավորական կուսակցության և անվտանգության ուժերի միջև հակամարտության հետևանքով զոհվել են 4036 քաղաքացի և 3884 զինվորական: Բացի այդ, տասներկու կողմ և ութ դեմ ձայներով դատարանը վճռել է, որ դիմողի դատապարտումն «անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում»:

Իր կարծիքը հիմնավորելու համար դատարանն ասել է, որ հարցազրույցի ընթացքում դիմողի արած հայտարարությունը կարելի է մեկնաբանել մի քանի տեսանկյուններից, սակայն ամեն դեպքում հարկ է նշել, որ այդ հայտարարությունը հակասական է և երկիմաստ: Հայտարարությունը հակասական է նրանով, որ դժվար է միաժամանակ սատարել ահաբեկչական կազմակերպություն համարվող և իր նպատակներն իրագործելու համար բռնության դիմող Քրդական աշխատավորական կուսակցությանը և դրա հետ մեկտեղ արտահայտվել արյունահեղության դեմ: Հայտարարությունը երկիմաստ է նրանով, որ պրն Ջանան դատապարտում է կանանց և երեխաների զանգվածային սպանությունները, սակայն միաժամանակ դրանք որակում որպես այնպիսի «սխալ», որից ոչ ոք ապահովագրված չէ: Այնուհանդերձ, դիմողի հայտարարությունը պետք է դիտարկել ընդհանուր համատեքստում, քանի որ այն հատուկ նշանակություն է ունեցել տվյալ գործի հանգամանքներում, և դիմողը պետք է գիտակցեր իր բառերի կարևորությունը: Բանն այն է, որ նա հարցազրույց է տվել այն ժամանակ, երբ Քրդական աշխատավորական կուսակցության գրոհայինները զինված հարձակումներ են գործել խաղաղ բնակչության վրա Թուրքիայի հարավարևելյան շրջաններում, որտեղ այդ ժամանակահատվածում իրավիճակը խիստ լարված էր: Նման հանգամանքներում պարզ է դառնում, որ Հարավարևելյան Թուրքիայի կարևորագույն քաղաքի՝ Դիարբեքիրի նախկին քաղաքապետի հարցազրույցը՝ տպագրված ազգային օրաթերթում, որի մեջ նա իր աջակցությունն է հայտնել Քրդական աշխատավորական կուսակցությանը և այն բնութագրել որպես «ազգային-ազատագրական շարժում», կարող էր հանգեցնել նշված տարածաշրջանում արդեն իսկ վտանգավոր դրության վատթարացմանը (պարբ. 58-60):

Չհամընկնող կարծիք արտահայտած դատավորները համոզված են, որ միջամտությունը դիմողի ազատ արտահայտվելու իրավունքին անհամաչափ միջոց է եղել, և, ի թիվս այլ հիմնավորումների, բերել են հետևյալ փաստարկները:

Լոկ այն փաստը, որ իր հայտարարության մեջ դիմողն աջակցություն է հայտնել այն քաղաքական կազմակերպությանը, որի նպատակներն ու միջոցները պետությունը մերժում է և պայքարում դրանց դեմ, չի կարող ինքնին բավարար հիմք լինել դիմողին մեղադրանք ներկայացնելու և նրան դատապարտելու համար: Դիմողը պնդում է, որ պետությունը սխալ է մեկնաբանել իր խոսքը, և իրականում ինքը հայտնել է լրագրողներին, որ դեմ է բռնության դրսևորումներին: Պրն Ջանան հավելել է, որ 1960-ական թթ. ի վեր լինելով քրդական հարցի լուծման ջատագովներից մեկը՝ նա միշտ բռնության դեմ է արտահայտվել և նշել, որ ինքը նույնիսկ ձերբակալվել է «Ազատության ուղի» կազմակերպությանն անդամակցելու համար, որը միշտ պաշտպանել է հիմնախնդիրները խաղաղ միջոցներով լուծելու գաղափարը: Պատասխանող պետությունը, ինչպես նաև դատավորների մեծամասնությունը հաշվի չեն առել և չեն քննարկել խնդրո առարկա հայտարարության բովանդակության մասին դիմողի ներկայացրած փաստարկը ու նրա անցած ուղին, որոնց հիման վրա պետք է մեկնաբանվեին նրա խոսքերը:

Բռնության հրահրումը ենթադրաբար պաշտպանող արտահայտությունների վերաբերյալ հավելյալ դիտողություններին ծանոթանալու համար տե՛ս *«Քարաթան ընդդեմ Թուրքիայի»* (*Karata v Turkey*) գործի (վերը՝ պարբ. 666), ինչպես նաև *«Էրդողդու և Ինջեն ընդդեմ Թուրքիայի»* (*Erdogdu and Ince v Turkey*) գործի (վերը՝ պարբ. 688) նկարագրությունը:

8 Պալատը միաձայն որոշմամբ կասկածի տակ է առել այն հարցը, որ ընդդիմադիր քաղաքական գործչի ելույթը, որի շրջանակներում վերջինս երկրի նախագահին անվանել է խաբեբա և զրպարտիչ, կարելի էր արդարացնել քաղաքական բանավեճի ժամանակ կարծիք արտահայտելու իրավունքով: 2005 թ. փետրվարի 22-ին կայացրած վճռով *«Փեքդեմիրլին ընդդեմ Թուրքիայի»* (*Pakdemirli v Turkey*) գործը քննելիս պալատը եզրակացրել է, որ նշված դիտողություններում դիմողը անարգանքների տարափ է տեղացել նախագահի հասցեին, թեպետև դա արվել է երկու քաղաքական գործիչների միջև երկարատև հակասությունների համատեքստում: Ուստի ներպետական դատարանների այն որոշումը, որի համաձայն՝ դիմողի դիտողությունները համարվել են զրպարտություն, կարելի էր հիմնավորել 10-րդ հոդվածի 2-րդ կետով՝ հաշվի առնելով, որ որոշումը միտված էր երկրի նախագահի հեղինակության և իրավունքների պաշտպանությանը: Այնուհանդերձ, պալատը եզրակացրել է, որ դատարանի կարգադրությամբ դիմողի կողմից վճարվելիք փոխհատուցման գումարը, որը կազմել է մոտ 60000

եվրո և գերազանցել Թուրքիայի դատարանների կողմից երբևէ նշանակված փոխհատուցումը, անհամաչափ է տվյալ դեպքում և հանգեցրել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման:

9 Դատարանը հայտարարել է, որ անհրաժեշտ է հատուկ մեխանիզմներ սահմանել ժողովրդավարական ներկայացուցչական հանրային հաստատություններում քաղաքական հարցերի շուրջ արտահայտվելու իրավունքը պաշտպանելու համար: *«Երուսաղեմն ընդդեմ Ավստրիայի»* (*Jerusalem v Austria,* 2001 թ. փետրվարի 27-ի վճիռ) գործով դիմողը շրջանային խորհրդարանի գործառույթներ իրականացնող Վիեննայի քաղաքային խորհրդի անդամ էր: Աղանդների մասին բանավեճի ժամանակ դիմողը մի կազմակերպության մասին խոսելիս այն բնութագրել է որպես աղանդ: Որոշ ժամանակ անց կազմակերպության դիմումով դատարանը կարգադրություն է արձակել, որով դիմողին արգելվել է կրկնել նշված հայտարարությունը: Դատարանն ուսումնասիրել է դիմողի՝ 8-րդ հոդվածով սահմանված ազատ արտահայտվելու իրավունքի խախտման մասին գանգատը, և միաձայն վճռել է հետևյալը.

40. Անդրադառնալով դիմողի վիճարկված հայտարարություններին՝ դատարանը նկատել է, որ վերոնշյալ կազմակերպության մասին իր կարծիքը դիմողն արտահայտել է Վիեննայի քաղաքային խորհրդում ծավալված քաղաքական բանավեճի ընթացքում: Տվյալ դեպքում վճռորոշ չէ այն հանգամանքը, որ բանավեճի նիստի ժամանակ նշված մարմինը հանդես է եկել քաղաքային խորհրդի, ոչ թե շրջանային խորհրդարանի կարգավիճակով: Անկախ այն հանգամանքից՝ դիմողի հայտարարությունները պաշտպանված են եղել խորհրդարանի պատգամավորի անձեռնմխելիությամբ, թե ոչ, միևնույն է, դատարանը կարծում է, որ այդ հայտարարություններն արվել են այնպիսի ատյանում, որը, իր բնույթով խորհրդարանի հետ համեմատելի լինելով, ենթադրում է դրա անդամների հրապարակավ ազատ արտահայտվելու իրավունքի պաշտպանության հանրային շահը: Ժողովրդավարական համակարգում խորհրդարանը կամ հավասարազոր մարմինները քաղաքական բանավեճի առանցքային ատյաններ են: Այդ բնագավառում միջամտությունն ազատ արտահայտվելու իրավունքին հիմնավորելու համար պետք է բերել շատ ծանրակշիռ փաստարկներ:

Հաշվի առնելով այն փաստը, որ Ավստրիայի դատարանները պահանջել են, որ դիմողը հիմնավորի իր հայտարարությունների իսկությունը, և միաժամանակ նրան զրկել ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից, դատարանն արձանագրել է 10-րդ հոդվածի խախտում: Հարց է ծագում, թե ներկայացուցչական մարմինների ներպետական աստիճանակարգման ո՞ր մակարդակներում պետք է կիրառվի նշված սկզբունքը (ազգային և շրջանային խորհրդարաններ, քաղաքային խորհուրդներ և այլն): Քաղաքացու՝ իր հեղինակությունը զրպարտանքից պաշտպանելու իրավունքի և խորհրդարանային անձեռնմխելիության համատեղելիության հարցի նկատմամբ դատարանի մոտեցումը տե՛ս վերոնշյալ *«Ա-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (A. v UK)* գործում (վերը՝ էջ 411) [հոդվ. 6]:

10 2000 թ. մարտի 21-ին կայացված վճռով *«Վաբլն ընդդեմ Ավստրիայի» (Wabl v Austria)* գործում երևան են եկել լրատվամիջոցներում քաղաքական գործիչների հասցեին զրպարտչական հայտարարություններին հակահարված տալու թույլատրելի սահմանները: Դիմողը, որ հանդիսանում է Ավստրիայի խորհրդարանի Կանաչների խմբակցության անդամ, մասնակցել է Գրացի օդանավակայանի մոտ կործանիչ ինքնաթիռները տեղակայելու դեմ բողոքի ցույցին: Այդ ցույցի ընթացքում մի ոստիկան մեղադրել է դիմողին իր ձեռքը քերծելու համար, ընդ որում, հետագայում հրաժարվել է այդ բողոքից: Այնուհետև տեղական թերթերից մեկում տպագրվել է մի հոդված՝ «Ոստիկանը պահանջում է, որ Վաբլն անցնի ՋԻԱՀ-ի վարակակրության ստուգում» խորագրով, որում ոստիկանության ծառայողը պնդել է, որ դիմողը պետք է ՋԻԱՀ-ի վարակակրության ստուգում անցնի, որպեսզի պարզվի՝ նա վարակակիր է, թե ոչ և կարո՞ղ էր վարակը փոխանցել իրեն, թե՞ ոչ: Դիմողը թերթի հրատարակիչներից պահանջել է տպագրել հոդվածի հերքում, և մի քանի օր անց տպագրվել է հետևյալ հայտարարությունը. «Ներողություն ենք խնդրում մեր ազնվության չափանիշներին հակասող ցանկացած անպարկեշտ պահանջ տպագրելու համար»: Թերթի նույն համարում ներկայացվել է նաև տեղական բժիշկ փորձագետի ակնարկը, որում հանրությանը հայտնվում էր քերծվածքներից ՋԻԱՀ-ով վարակվելու անհնարինության մասին: Հերքումը տպագրվելու օրը դիմողը մամլո ասուլիս է անցկացրել և փաստերի լուսաբանումը տվյալ թերթում բնութագրել որպես «նացիստական լրագրություն»: Այնուհետև խմբագիրը դիմել է դատարան և պահանջել դիմողի վրա դատական արգելք դնել՝ թույլ չտալով նրան կրկնել այն հայտարարությունը, որ թերթը նացիստական լրագրությամբ է զբաղվում: Ի

վերջո, գերագույն դատարանն արգելող որոշում է կայացրել՝ հաշվի առնելով այն փաստը, որ թերթի հեղինակության նկատմամբ այդպիսի կոպիտ ոտնձգությունը չի կարելի հիմնավորել դիմողի ազատ արտահայտվելու իրավունքով: Դիմողն իր հերթին թերթի հրատարակիչների դեմ դատական հայց է ներկայացրել թերթի նախնական հոդվածում տեղ գտած զրպարտության համար և շահել գործը: Այնուհետև դիմողը գանգատ է ներկայացրել հանձնաժողովին՝ պնդելով, որ գերագույն դատարանի վերոնշյալ արգելքով խախտվել են կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված իրավունքները: Հանձնաժողովը նման խախտում չի արձանագրել: Վեց կողմ և մեկ դեմ ձայներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեծամասնությունը վճռել է, որ պատասխանող պետության գերագույն դատարանն իրավասու է եղել իր կողմից դրված դատական արգելքն «անհրաժեշտ» համարել «ժողովրդավարական հասարակությունում» այլ անձանց հեղինակությունն ու իրավունքները պաշտպանելու համար (պարբ. 45): Խախտում չարձանագրելու մեծամասնության որոշման հիմքում մասնավորապես ընկած էր դիմողի դիտողության ոչ միայն «վիճահարույց, այլև առանձնակի վիրավորական բնույթը»:

Դատավոր Գրիվն արտահայտել է հետևյալ չհամընկնող կարծիքը. «Ժողովրդավարական հասարակությունում քաղաքական բանավեճի սկզբունքի համաձայն՝ ոչ թե քաղաքական հայացքների համար, այլ զուտ անձնական առումով ոտնձգությունների ենթարկված գործիչները չպետք է ավելի անբարենպաստ դիրքում հայտնվեն, քան լրատվամիջոցները: Փոխարենը, նրանք պետք է օգտվեն ազատության բավականաչափ լայն շրջանակից լրագրողների քննադատությանն արձագանքելու համար»:

Ներքոհիշյալ *Լեհիդոյի* (*Lehideux*) գործում ներկայացվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հակակրանքը նացիստական գաղափարախոսության նկատմամբ: *Վաբլի* (*Wabl*) գործով կայացված վճռով դատարանը զգուշացնում է քաղաքական գործիչներին զսպվածություն ցուցաբերել լրատվամիջոցների նկատմամբ ոտնձգությունների հարցում և իրենց թույլ չտալ ի պատասխան վիրավորական հոդվածների՝ չկշռադատված մեղադրանքներ ներկայացնել:

11 Պաշտոնեական կարգավիճակով հանդես եկող քաղաքացիական ծառայողների նկատմամբ քննադատության պարագայում դատարանն անթույլատրելի է համարել ընդունելի քննադատության նույն սահմանները, ինչ քաղաքական գործիչների պարագայում: *«Յանովսկին ընդդեմ Լեհաստանի» (Janowski v Poland),* 1999, 29 EHRR 705) գործով դիմողը մի լրագրող էր, որը Լեհաստանի քաղաքներից մեկում ականատես է եղել հետևյալ տեսարանին. երկու անվտանգության աշխատակից կարգադրում են փողոցային առևտրով զբաղվող վաճառողներին լքել հրապարակը: Լրագրողն այն տպավորությունն է ստացել, որ անվտանգության աշխատակիցները գործում են ապօրինի, քանի որ քաղաքային խորհուրդը որոշում չէր կայացրել հրապարակը վաճառողներից ազատելու մասին: Լրագրողը մի քանի խոսք է փոխանակել անվտանգության աշխատակիցների հետ՝ նրանց հասցեին թույլ տալով «տխմարներ» և «հիմարներ» արտահայտությունները: Այնուհետև Յանովսկին դատապարտվել է «պաշտոնեական պարտականությունները կատարելիս և այդ պարտականությունների առնչությամբ քաղաքացիական ծառայողին վիրավորանք հասցնելու» մեղադրանքով և տուգանվել 1.500.000 զլոտի: Լրագրողը գանգատ է ներկայացրել հանձնաժողովին, որն ութ կողմ և յոթ դեմ ձայներով արձանագրել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռել է հետևյալը.

…Որոշ հանգամանքներում պաշտոնեական կարգավիճակով հանդես եկող քաղաքացիական ծառայողների հասցեին հնչած արտահայտությունների թույլատրելի սահմանները կարող են ավելի լայն լինել, քան մասնավոր անձանց դեպքում: Այնուհանդերձ, դա չի նշանակում, որ քաղաքական գործիչների նման քաղաքացիական ծառայողները գիտակցում են, որ իրենց արտասանած բոլոր բառերն ու գործած արարքները մանրազնին ուշադրության կենտրոնում են, ուստի քաղաքացիական ծառայողների արարքները քննադատելիս նրանց չարժե համեմատել քաղաքական գործիչների հետ» (համեմատիր՝ *«Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի»* գործ (*Oberschlick v Austria, (թիվ 2)* 1997, պարբ. 29):

Ավելին, անհարկի անհանգստացնող հանգամանքների բացակայության պայմաններում քաղաքացիական ծառայողները պետք է վայելեն հասարակության վստահությունը, որպեսզի կարողանան հաջողությամբ կատարել իրենց հանձնարարությունները, ուստի կարող է անհրաժեշտություն առաջանալ պաշտպանել նրանց պաշտոնեական պարտականությունները կատարելիս վիրավորական կամ անհարգալից արտահայտություններից (պարբ. 33):

Տասներկու կողմ և հինգ դեմ ձայներով դատարանի մեծամասնությունը վճռել է, որ դիմողի դատապարտումը համաչափ արձագանք է հասարակական կարգը պահպանելու օրինական նպատակին և չի հակասում կոնվենցիայի 10-րդ հոդվածին: Հատկանշական է, որ դատարանի մի շարք բարձրաստիճան անդամներ, այդ թվում՝ դատարանի նախագահը, փոխնախագահը, ինչպես նաև պալատի նախագահը չհամընկնող կարծիք են արտահայտել: Նախագահ Վիլդհաբերը դիմողին դատապարտելու կենսական անհրաժեշտություն չի տեսել՝ «հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս օրենքի տեսանկյունից ճիշտ դիրքորոշումը պաշտպանելու նպատակով ինքնաբուխ և աշխույժ բանավեճի ընթացքում գործածել է միայն երկու չափավոր վիրավորական բառ, ընդ որում՝ նշված դիրքորոշմամբ նա որևէ անձնական շահ չի հետապնդել»: Դատավորներ Բրատցան և Ռոզակիսը համարել են, որ դիմողի հայտարարություններն ընդգրկվել են հանրությանը հուզող հարցերի պաշտպանված կարգում, քանի որ, ըստ դիմողի, քաղաքացիական ծառայողները չարաշահում էին իրենց լիազորությունները: Նմանօրինակ եզրակացության է հանգել նաև դատավոր Բոնելլոն. «Հրատապ սոցիալական անհրաժեշտություն չեմ տեսնում դատապարտելու օրինախախտումները կանխելու փորձեր անող անձանց, նույնիսկ եթե նրանք ոչ չափավոր պարսավանք են թույլ տալիս: Պետությունն ավելի մեծ կարիք ունի լռեցնելու իշխանությունն ապօրինաբար զավթողներին, այլ ոչ թե այդ փաստն ազդարարողներին»: Հաշվի առնելով վերոնշյալ համոզիչ չհամընկնող կարծիքները՝ անշուշտ, թվում է, որ քաղաքացիական ծառայողներին պաշտպանելով՝ դատարանի մեծամասնությունը սխալ որոշում է կայացրել:

Դատավոր Ռոզակիսի նախագահությամբ պալատը *«Յանկովն ընդդեմ Բուլղարիայի» (Yankov v Bulgaria)* 2003, տե՛ս վերոնշյալ 3-րդ հոդված) հետագայում քննված գործը տարբերել է *Յանովսկու* (*Janowski*) գործից՝ հաշվի առնելով այն փաստը, որ տվյալ դեպքում պաշտոնյաների դեմ ուղղված դիմողի քննադատությունն արվել է գրավոր:

136. Սույն գործով դիմողը նաև դիտողություններ է արել բանտապահների հասցեին, ինչպես, օրինակ՝ «լավ բտած դատարկապորտներ» և «միամիտ գեղցիներ»: Բացի այդ, նա գործածել է «գավառաբարո դուրսպրծուկ» վիրավորական արտահայտությունը նշված ոստիկանի հասցեին, ինչպես նաև «այլասերված իշխանավորներ» արտահայտությունը, որը հավանաբար վերաբերում էր բոլոր դատախազներին և քննիչներին:

137. Թեև անվիճարկելի է այն փաստը, որ վերոնշյալ բառերը վիրավորական արտահայտություններ են, այնուհանդերձ, դրանք ամենևին էլ չեն կարող կոպիտ անարգանք համարվել: Դատարանը նշում է նաև, որ այդ արտահայտությունները տեղ են գտել ձեռագրում, որի մեջ դիմողը անձնական հուշագրությունների կամ նմանօրինակ գրական ոճով գրված հատվածում շարադրել է իր ձերբակալության և բանտարկման հետ կապված իրադարձությունները: Ընդհանուր առմամբ, դա մի շարադրանք էր, որում դիմողը միջադեպեր է նկարագրել բանտում անցկացրած կյանքից, և պարզաբանել սեփական կարծիքն իր դեմ հարուցված քրեական գործի մասին՝ քննադատելով պետական պաշտոնյաների ենթադրաբար անօրինական գործողությունները (համեմատիր՝ *Յանովսկին ընդդեմ Լեհաստանի* (*Janowski v Poland*) գործ, պարբ. 32):

138. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կարծում է, որ ազգային մարմինները պետք է զսպվածություն ցուցաբերեին իրենց պատասխան գործողություններում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիրավորական հայտարարությունները շարադրվել են գրական ոճով և արդարադատության իրականացման, ինչպես նաև այդ համակարգում ներգրավված պաշտոնյաների հասցեին հնչած խիստ քննադատության համատեքստում:

139. Եվ ավելին, դատարանին խիստ զարմացրել է այն փաստը, որ դիմողը պատժվել է իր իսկ մտքերը անձնական ձեռագրում շարադրելու համար, ընդ որում, ակնհայտ է, որ ձեռագրի առգրավումից առաջ նա ոչ ոքի ցույց չի տվել իր գրառումները: Նա ո՛չ «հնչեցրել», ո՛չ էլ «տարածել է» որևէ վիրավորական կամ զրպարտչական հայտարարություն: Մասնավորապես, պնդում չի արվել, որ դիմողն իր ձեռագիրը տարածել է այլ կալանավորների շրջանում:

140. Վերոշարադրյալ փաստերի տեսանկյունից ներկա գործում կարող են հարցեր ծագել կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված մտքի ազատության կամ 8-րդ հոդվածով սահմանված անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի մասով: Այնուհանդերձ, քանի որ ձեռագիրն առգրավվել է ճիշտ այն պահին, երբ դիմողը պատրաստվում էր այն փոխանցել իր փաստաբանին և այդպիսով «հաղորդել» ու այլ անձանց համար մատչելի դարձնել ձեռագրի բովանդակությունը, ուստի ըստ դատարանի՝ կարիք չկա որոշել, թե արդյոք ճիշտ կլինե՞ր քննել գործը այս դրույթների տեսանկյունից:

141. Ամեն դեպքում, այն փաստը, որ դիմողի դիտողությունները չեն հրապարակվել, հիմք է նրա իրավունքներին միջամտության համաչափությունը գնահատելու համար՝ կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված կարգով: Անդրադառնալով այդ հարցին՝ դատարանը հավելում է, որ ձեռագիրը պատրաստ չէր տպագրման, և նույնիսկ բանտից դուրս

հանվելու դեպքում ձեռագրի տարածման անմիջական վտանգ չկար:

142. Թեև դիմողից առգրավված ձեռագիրը կարդացած բանտի ղեկավարությունը միանշանակ անձնական վիրավորանք է ապրել իրեն վերաբերող որոշ դիտողությունների պատճառով, սակայն անընդունելի է, որ դա բավարար հիմք է դիմողին պատժելու համար: Իրենց լիազորություններն իրականացնելիս քաղաքացիական ծառայողները պետք է հաշվի առնեն միայն մասնագիտական պարտականությունները, ոչ թե անձնական զգացմունքները: Անհարկի անհանգստացնող հանգամանքների բացակայության պայմաններում դիմողի ազատ արտահայտվելու իրավունքին միջամտությունը կարելի է հիմնավորել քաղաքացիական ծառայողների նկատմամբ հասարակության վստահությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ միայն այն դեպքում, եթե լիներ այդ վստահությանը սպառնացող իրական վտանգ: Խնդրո առարկա ձեռագիրը նման վտանգ չէր ներկայացնում:

143. Հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները՝ դատարանը չի կարող համաձայնել, որ տվյալ դեպքում արդար հավասարակշռության են բերվել հակառակ կողմերի իրավունքներն ու շահերը, ասել է թե՝ դիմողի ազատ արտահայտվելու իրավունքը մի կողմից և արդարադատության, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների հեղինակությունը պաշտպանելու անհրաժեշտությունը մյուս կողմից: Արդարադատության համակարգի քննադատություն պարունակող անձնական ձեռագրում չափավոր վիրավորական արտահայտություններ գործածելու համար կալանավորված դիմողին մենախցում յոթնօրյա բանտարկության դատապարտելով՝ ազգային մարմինները խախտել են իրենց վերապահված հայեցողության սահմանը, ընդ որում, ինչպես նշվել է, դիմողի ձեռագիրը չի շրջանառվել բանտում:

144. Ուստի դատարանը համարում է, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով ժողովրդավարական հասարակությունում կարիք չկար միջամտելու դիմողի ազատ արտահայտվելու իրավունքին:

145. Հետևաբար, արձանագրվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

Պետական պաշտոնյաների մասին ազատ արտահայտվելու իրավունքի պաշտպանության ամրապնդման տեսանկյունից ողջունելի է հանձնաժողովի ներկայացրած այն պահանջը, որի համաձայն՝ վիրավորական հայտարարությունները կարող են պատժելի համարվել 10-րդ հոդվածի դրույթներով միայն այն դեպքում, եթե դրանք քաղաքացիական ծառայողների նկատմամբ հասարակության վստահությունը թուլացնելու «իրական սպառնալիք» ներկայացնեն (պարբ. 142):

12 *«Թորգեյրսոնն ընդդեմ Իսլանդիայի» (Thorgeirson v Iceland)* A.239 1992 14 EHRR 843) գործի շրջանակներում պատասխանող պետությունը փորձել է տարբերակում մտցնել քաղաքականությանը վերաբերող հարցերի և հանրությանը հուզող այլ հարցերի միջև: Պետության կարծիքով՝ քաղաքականության առնչվող հարցերի շուրջ ազատ արտահայտվելու իրավունքը պաշտպանելու համար կոնվենցիայի 10-րդ հոդվածն ավելի լայն սահմաններ է նախատեսում, քան հանրությանը հուզող այլ հարցերի պարագայում: Սույն գործով դիմող լրագրողն օրաթերթում երկու հոդված է տպագրել՝ ենթադրյալ հայտարարություններ անելով ոստիկանների կոպիտ պահվածքի մասին: Նկարագրելով «Ռեյկյավիկի գիշերային կյանքի ջունգլիները»՝ դիմողն իր գործընկեր լրագրողի վրա հարձակումը բնութագրելիս գործածել է հետևյալ արտահայտությունները՝ «համազգեստավոր գազաններ» և «ամենուր վխտացող համազգեստավոր վայրի գազաններ»: Ռեյկյավիկի ոստիկանների միավորման ներկայացրած դիմումի հիման վրա դատախազը մեղադրել է Թորգեյրսոնին ի դեմս ոստիկանների (որոնց անունները նշված չեն)՝ Ռեյկյավիկի ոստիկանության ուժերին զրպարտելու համար: Թորգեյրսոնը մեղավոր է ճանաչվել և տուգանվել 10000 կրոն: Ութ կողմ և մեկ դեմ ձայներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մերժել է այս հարցի կապակցությամբ պետության ներկայացրած տարբերակումը և հայտնել հետևյալը. «Դատարանի նախադեպային իրավունքով ոչ մի դեպքում չի կարելի հիմնավորել պատասխանող պետության կողմից առաջարկվող տարբերակումը քաղաքական ոլորտի և հանրությանը հուզող այլ հարցերի միջև» (պարբ. 64):

Դատարանը եզրակացրել է, որ դիմողի հոդվածներում լուսաբանվել են հանրությանը հուզող կարևոր հարցեր, և, հաշվի առնելով այդ հոդվածների համատեքստը՝ դրանց ձևակերպումները չի կարելի չափազանց կոպիտ համարել: Ուստի դիմողի դատապարտումը համաչափ արձագանք չէ և հակասում էր 10-րդ հոդվածի դրույթներին: Վերոնշյալ գործով կայացված վճիռը հաստատում է լրագրողների իրավունքների պաշտպանության մասով դատարանի որդեգրած մոտեցումը այն դեպքերում, երբ լրագրողները ձգտում են հասարակության ուշադրությունը հրավիրել հանրությանը մտահոգող օրինական հարցերի վրա: *«Ֆրեսոն և Ռուարն ընդդեմ Ֆրանսիայի» (Fressoz and Roire v France)* 1999-I) գործում քննելով մեծ ձեռնարկության գործարարի

հարկային պարտավորությունների հետ կապված հարցերը լուսաբանող երգիծական պարբերականի հոդվածը՝ դատարանը վկայակոչել է նշված հիմնավորումը: Տվյալ գործով դիմում են ներկայացրել ֆրանսիական «Լը Կանար անշեն» (ֆր. *Le Canard enchaine*) շաբաթաթերթի գլխավոր հրատարակիչը և լրագրողներից մեկը: 1989 թ. «Պեժո» մեքենաշինական գործարանի աշխատողները գործադուլ են հայտարարել աշխատավարձի բարձրացման կապակցությամբ, սակայն ընկերության նախագահ և գործադիր տնօրեն պրն Ժակ Կալվերը հրաժարվել է բավարարել նրանց պահանջները: Այնուհետև դիմողները հոդված են տպագրել, որի մեջ հայտարարել են, որ վերջին տարիների ընթացքում պրն Կալվերի աշխատավարձը բարձրացվել է ընդհանուր առմամբ 46 տոկոսով: Հոդվածում մեջբերվել են քաղվածքներ պրն Կալվերի եկամուտների հայտարարագրից, որը պարբերականին տրամադրվել է անանուն: Ի վերջո, դիմողները դատապարտվել են մասնագիտական գաղտնիքը խախտած անհայտ հարկային հսկիչի միջոցով ձեռքբերված հարկային հայտարարագրի պատճենների տվյալներից օգտվելու համար և տուգանվել 15000 ֆրանկ: Դիմողները գանգատ են ներկայացրել հանձնաժողովին՝ ի թիվս այլոց պնդելով, որ խախտվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածը: Քսանմեկ կողմ և տասնմեկ դեմ ձայներով հանձնաժողովն ընդունել է գանգատը: Դատարանը միաձայն եզրակացրել է, որ շաբաթաթերթի հոդվածում քննարկվող հարցը հասարակական հետաքրքրություն է ներկայացրել:

Հոդվածը տպագրվել է այն ժամանակ, երբ Ֆրանսիայի գլխավոր մեքենաշինական գործարաններից մեկում գործադուլ է սկսվել, որը, ի դեպ, մանրամասն լուսաբանվել է մամուլում: Գործարանի աշխատողները պահանջում էին բարձրացնել աշխատավարձերը, իսկ տնօրինությունը հրաժարվում էր ընդառաջել նրանց: Հոդվածում նշվել է, որ ընկերության նախագահը տվյալ ժամանակահատվածում մեծ աշխատավարձ է ստացել՝ միաժամանակ մերժելով աշխատավարձերի բարձրացման վերաբերյալ իր աշխատողների պահանջները: Նման հանգամանքներում համեմատության կարգով տրամադրելով նշված տեղեկությունները՝ հոդվածի լրագրողները նպաստել են հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցի քննարկմանը: Հոդվածի հեղինակների նպատակն էր ոչ թե վարկաբեկել պրն Կալվերին, այլ ընդլայնել հանրությանը հուզող հարցի քննարկման շրջանակները (պարբ. 50):

Քանի որ Ֆրանսիայում բնակվող հարկատուներին մատչելի են իրենց համերկրացիների եկամտահարկի մասին պաշտոնական ցուցակները, ուստի տնտեսական ամսագրերում հաճախ տեղեկություններ են տպագրվում մեծ ձեռնարկությունների գործարարների վարձատրության մասին: Հաշվի առնելով վերոշարադրյալ փաստերը, ինչպես նաև այն հանգամանքը, որ դիմողները բարեխղճորեն են տպագրել հոդվածը, դատարանը եզրակացրել է, որ դիմողների դատապարտումն անհամաչափ միջամտություն է նրանց ազատ արտահայտվելու իրավունքին և հակասել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի դրույթներին: Դատարանի այս որոշմամբ ընդլայնվում է նաև կոնվենցիայում ամրագրված ազատ արտահայտվելու իրավունքի կիրառման տիրույթը, որի շրջանակներում հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցեր են համարվում ոչ միայն պետական պաշտոնյաների վարքի, այլև մասնավոր հատվածում գործող մեծ ընկերությունների բարձրաստիճան անձնակազմի վարձատրության առնչությամբ արված մեկնաբանությունները: Հաշվի առնելով տնտեսական և սոցիալական ոլորտներում նման անձանց ունեցած լիազորությունները՝ նրանց վարձատրության հարցը կարելի է դասել հասարակության, ասել է թե՝ աշխատողների, բաժնետերերի կամ սպառողների օրինական մտահոգությունների շարքը (համեմատիր՝ 1990-ական թթ. վերջին բրիտանական մեծ ընկերություններից մեկի ղեկավարների չափազանց մեծ վարձատրության հարցի շուրջ ծավալված քննարկումը):

13 *«Երսիլդն ընդդեմ Դանիայի» (Jersild v Denmark)* A.298, 1994, 19 EHRR 1) գործով վճիռ կայացնելիս դատարանի մեծ պալատի մեծամասնությունը 10-րդ հոդվածի դրույթներով պաշտպանել է նաև մի հեռուստալրագրողի, որի հեռարձակած հաղորդման ընթացքում այլ անձինք ապօրինաբար ռասիստական բնույթի կարծիքներ են արտահայտել: Դիմողը վարել է Դանիայի հեռարձակման ընկերության «Կիրակնօրյա լրագիր» հաղորդումը, որը բավական լուրջ ծրագիր է, լուսաբանում է սոցիալական և քաղաքական բազմազան հարցեր և նախատեսված է իրազեկ հեռուստադիտողների համար: Ծրագրի խմբագիրները որոշել են դրա մի հատվածը նվիրել «կանաչ բաճկոնավորներ» (անգլ. Greenjackets) անվանմամբ հայտնի մի խումբ երիտասարդների, որոնք հայտնվել են տեղական թերթերի ուշադրության կենտրոնում իրենց ռասիստական հայտարարությունների պատճառով: Դիմողը մի քանի ժամ տևող հարցազրույցներ է ձայնագրել «կանաչ բաճկոնավորների» հետ, իսկ այնուհետև դրանց հիման վրա պատ-

րաստել մի քանի րոպեանոց հաղորդում: Հաղորդման նշված հատվածում տեղ են գտել «կանաչ բաճկոնավորների» մի շարք ռասիստական դիտողություններ, ներառյալ հարցազրույց տվող մի անձի հայտարարությունը. «Նեգրը մարդ չէ, անասուն է, նույնը վերաբերում է թուրքերին, հարավսլավացիներին ու դրանց նմաններին»: Այնուհետև դատախազը քրեական մեղադրանք է ներկայացրել «կանաչ բաճկոնավորներին»՝ ռասիստական բնույթի անօրինական հայտարարություններ անելու համար, իսկ դիմողին՝ նման անօրինական հայտարարությունների արտահայտման հարցում նրանց աջակցելու համար: Դիմողը մեղավոր է ճանաչվել և տուգանվել 1000 կրոն: «Կանաչ բաճկոնավորներ» կազմակերպության անդամները նույնպես մեղավոր են ճանաչվել: Հանձնաժողովը տասներկու կողմ և չորս դեմ ձայներով վճռել է, որ դիմողի դատապարտմամբ խախտվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածը: Դատարանն ընդգծել է «ռասայական խտրականության բոլոր ձևերի և դրսևորումների դեմ պայքարելու կենսական նշանակությունը» (պարբ. 30): Եվ իսկապես, դատարանը եզրակացրել է, որ «կանաչ բաճկոնավորների» կազմակերպության անդամների դատապարտման հիմքում ընկած հայտարարությունները վիրավորական են դրանց թիրախը դարձած խմբերի համար, ընդ որում՝ կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության շրջանակը նման հայտարարությունների վրա չի տարածվում» (պարբ. 35):

Այնուհանդերձ, հարցազրույցների վրա հիմնված խմբագրված կամ չխմբագրված տեղեկատվության տրամադրումը այն կարևոր հնարքներից մեկն է, որոնց օգնությամբ լրատվամիջոցները կատարում են «հանրային կյանքին հետևողի և այն լուսաբանողի» դերը: Այլ անձի կողմից հարցազրույցում արված հայտարարությունների տարածմանը նպաստելու համար լրագրողին պատժելը կհանգեցնի նրան, որ հանրությանը հուզող հարցերի քննարկման ոլորտում լրատվամիջոցների դերակատարումը կխաթարվի, ուստի բավական ծանրակշիռ փաստարկների բացակայության պարագայում այդ պատժամիջոցը քննելու կարիք չկա (պարբ. 35):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաղորդումը պատրաստելիս դիմողը չի հետապնդել ռասիստական գաղափարներ քարոզելու նպատակ, և ծրագրի նրա հատվածն առհասարակ միտված չի եղել նման գաղափարների տարածմանը, նրա դատապարտումն անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում: Չհամընկնող կարծիք արտահայտած դատավորները հանգել են այն եզրակացության, որ դատարանի մեծամասնությունը բավականաչափ իրավական պաշտպանություն չի սահմանել ռասայական ատելությունից տուժած անձանց համար: Բացի այդ, նրանց կարծիքով՝ դիմողն իր ծրագրում արտահայտված ռասիստական հայացքները հակակշռելու և մարտահրավեր նետելու համար բավարար միջոցներ չի ձեռնարկել: Դատարանի բոլոր անդամները համամիտ էին այն կարծիքին, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածի դրույթներով չի կարելի հիմնավորել ռասիստական հայացքների խրախուսումը միջազգային մակարդակով: *«Լեհիդոյն և Իզորնին ընդդեմ Ֆրանսիայի» (Lehideux and Isorni v France)* 1998-VII) գործը քննելիս դատարանը զարգացրել է վերոնշյալ մոտեցումը՝ հայտարարելով, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված պաշտպանության շրջանակը նացիստական քաղաքականությանը սատարող հայացքների վրա չի տարածվում: Երկու դիմողն էլ, ովքեր մահացել էին նախքան դատավճռի հրապարակումը, 1984 թ. հայտարարություն էին տպագրել Ֆրանսիայի «Լը մոնդ» պարբերականում հետևյալ խորագրով. «Օ, ֆրանսիացիներ, ինչ կարճ հիշողություն ունեք»: Հայտարարության մեջ պաշտպանվել են մարշալ Ֆիլիպ Պետենի արարքները, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գլխավորել է Ֆրանսիայի Վիշիի կառավարությունը և նացիստների հետ իր համագործակցության համար հետագայում մահվան դատապարտվել: Ի թիվս այլ հարցերի՝ հոդվածում նշվել է հետևյալը. «Մեծ դժվարությունների, ինչպես նաև նացիստների դաժանությունների և հետապնդումների պայմաններում, որոնց չի բախվել պետության ղեկին կանգնած որևէ այլ անձ, Պետենը ֆրանսիացիներին պաշտպանել է գերմանացիների ամենազորությունից և բարբարոսությունից՝ այսպիսով երաշխավորելով երկու միլիոն ռազմագերիների փրկությունը»: Դիմադրության շարժման նախկին անդամների միավորումը քրեական բողոք ու քաղաքացիական հայց է ներկայացրել դիմողների դեմ՝ նրանց մեղադրելով թշնամու հետ հանցավոր համագործակցությունը հրապարակավ պաշտպանելու համար: Ի վերջո, Փարիզի վերաքննիչ դատարանը մեղավոր է ճանաչել դիմողներին և սահմանել վնասների խորհրդանշական փոխհատուցում մեկ ֆրանկի չափով: Այնուհետև դիմողները գանգատ են ներկայացրել հանձնաժողովին՝ ի թիվս այլոց պնդելով, որ խախտվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածը: Հանձնաժողովը, քսաներեք կողմ և ութ դեմ ձայներով, արձանագրել է կոնվենցիայի նշված հոդվածի խախտում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդունել է, որ պատասխանող պետության դատարանները

միջամտել են դիմողների ազատ արտահայտվելու իրավունքին, և եզրակացրել, որ նշված միջամտությունն ուղղված էր այլ անձանց հեղինակության ու հասարակական կարգի պաշտպանությանը, ինչպես նաև հանցագործությունների կանխման օրինական նպատակին: Այնուհանդերձ, դատարանի կարծիքները բաժանվել են այն հարցի շուրջ, թե արդյոք նշված միջամտությունն անհրաժե՞շտ էր «ժողովրդավարական հասարակությունում»: Մեծամասնություն կազմող տասնհինգ դատավորները եզրակացրել են, որ «ժողովրդավարական հասարակությունում» նման միջոցի դիմելու կարիք չկար: Մեծամասնությունը տարբերակում է անցկացրել Պետենի իրականացրած քաղաքականության նպատակների շուրջ ծավալած բանավեճի և Հոլոքոստի պես միանշանակ հաստատված պատմական փաստերի կատեգորիայի միջև: Կոնվենցիայի 17-րդ հոդվածի դրույթներով նման պատմական փաստերի մերժումը կամ վերանայումը զրկվում է 10-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունից (պարբ. 47):

Ավելին, կասկած չկա, որ նացիստական հայացքներ սատարող քաղաքականության հիմնավորումը, ինչպես նաև կոնվենցիայի հիմքը կազմող արժեքների դեմ ուղղված որևէ այլ դիտողություն չի ընդգրկվում կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված պաշտպանության շրջանակում (տե՛ս *mutatis mutandis «Երսիլդն ընդդեմ Դանիայի»* (*Jersild v Denmark*) գործով կայացրած վճիռը): Այնուհանդերձ, տվյալ դեպքում դիմողները անթաքույց արտահայտել են «նացիստների դաժանությունների և հետապնդումների», ինչպես նաև «գերմանացիների ամենազորության և բարեբարոյության» իրենց դատապարտումը: Այսպիսով, դիմողները գովաբանում էին ոչ այնքան քաղաքականությունը, որքան անձին, և դրանով հետապնդում հատուկ նպատակ, այն է՝ ապահովել Ֆիլիպ Պետենի դատապարտման վերանայումը, ընդ որում՝ վերաքննիչ դատարանը ճանաչել էր առնվազն նրանց գործողությունների հետևողականությունն ու օրինականությունը, ինչը չի կարելի ասել դրված նպատակին հասնելու համար գործադրված միջոցների մասին (պարբ. 53):

Ուստի հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդրո առարկա հոդվածում արծարծվող իրադարձությունները տեղի են ունեցել ավելի քան քառասուն տարի առաջ, մեծամասնությունը եզրակացրել է, որ դիմողների դատապարտմամբ խախտվել են կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված իրավունքները: Չհամընկնող կարծիք արտահայտած վեց դատավորներն ընդգծել են, որ տվյալ դեպքում Ֆրանսիայի իշխանություններին հարկավոր էր հայեցողության ավելի լայն սահման վերապահել: Դատավորներ Ֆոյգելը, Լուազուն և Ֆրիլենդն արտահայտել են հետևյալ կարծիքը.

Այն դեպքերում, երբ խոսքը ազատ արտահայտվելու իրավունքի մասին է, դատարանը հայեցողության սահմանի նկատմամբ սովորաբար առանձնապես զսպող մոտեցում է ցուցաբերել, թեպետև կրոնական կամ բարոյական բնույթի անհատական հայացքները վիրավորող հարցերի առնչությամբ դատարանը պատրաստ է ընդլայնել հայեցողության սահմանները: Ըստ մեզ՝ կրոնական կամ բարոյական հարցերի այս կատեգորիան հիմնված է այն սկզբունքի վրա, որ հայեցողության սահմանն ավելի լայն է այն դեպքերում, երբ հետապնդվող նպատակը հնարավոր չէ եվրոպական մակարդակով օբյեկտիվորեն սահմանել, և չպետք է դիտվի որպես նշված հարցերով սահմանափակվող կարգ: Օրինակ՝ նշված կատեգորիայի մեջ կարելի է ընդգրկել այս գործում արծարծված հարցը, որի նպատակը պայմանավորված էր Ֆրանսիայի պատմական հանգամանքներով, և որի պարագայում տվյալ երկրի առավել ազդեցիկ ուժերի հետ ունեցած անմիջական ու շարունակական կապի բերումով ազգային մարմիններն առանձնապես նպաստավոր դիրքում էին այլ խմբերի իրավունքների պաշտպանության հետևանքները որոշելու, ինչպես նաև առհասարակ 1940-ական թթ. իրադարձություններից հետո ֆրանսիական հասարակության վերքերն ամոքելու ու երկպառակությունը վերացնելու համար (պարբ. 4): Վերոնշյալ խմբերից են նաև նախկին Դիմադրության շարժման մարտիկների և արտաքսյալների միավորումները, որոնք այս գործով ներպետական քաղաքացիական դատավարության կողմերից մեկն են եղել:

Սույն գործի շրջանակներում հաստատվում է *Երսիլդի (Jersild)* գործով կայացրած վճիռը և հստակեցվում են այն ոլորտները, որոնց վրա չի տարածվում կոնվենցիայի 10-րդ հոդվածի դրույթներով երաշխավորված ազատ արտահայտվելու իրավունքը: Այդ ոլորտներն ընդգրկում են ռասիստական բնույթի դիտավորյալ արտահայտությունները, նացիստական հայացքները սատարող հայտարարությունները և վերանայողական հայացքները, որոնցով ժխտվում են մարդու հիմնարար իրավունքների խախտումներին առնչվող ոտնահարման պատմական դեպքերը, օրինակ՝ Հոլոքոստը: Վերոնշյալ իրավունքի շրջանակը չի տարածվում նաև զրպարտիչ հայտարարությունների վրա (տե՛ս վերոհիշյալ *«Տոլստոյ Միլոսլավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Tolstoy Miloslavsky v UK)* գործը, վերը՝ պարբ. 694):

14 *«Բոումանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Bowman v UK)* 1998, 26 EHRR 1, 1998-I 175) գործը քննելիս մեծ պալատի մեծամասնությունը եզրակացրել է, որ սահմանափակելով լոբբիստական խմբի՝ խորհրդարանական ընտրություններին մասնակցող թեկնածուների հայացքներն ընտրողներին հայտնելու հնարավորությունները՝ Բրիտանիայի ազգային մարմինները խախտել են կոնվենցիայի 10-րդ հոդվածը: Գործով որպես դիմող հանդես է եկել «Չծնված երեխաների պաշտպանության միավորման» գործադիր տնօրենը: Կազմակերպությունն ուներ 50,000 անդամ և, ի թիվս այլ հիմնախնդիրների, աբորտի դեմ էր արտահայտվում և քարոզարշավներ կազմակերպում՝ «Աբորտի մասին» Միացյալ Թագավորության գործող օրենքում փոփոխություններ մտցնելու համար: Միացյալ Թագավորության հիմնական քաղաքական կուսակցություններն աբորտի վերաբերյալ պաշտոնական քաղաքականություն չեն մշակել՝ այդ հարցի կարգավորումը թողնելով երկրի խորհրդարանում իրենց առանձին անդամների խղճին: Ուստի դիմող կազմակերպությունը եզրակացրել է, որ եթե ընտրողներին հնարավորություն էր ընձեռվում իրենց ընտրյալ խորհրդարանականների միջոցով փոփոխություն մտցնելու աբորտը կարգավորող օրենքում, ապա նրանց անհրաժեշտ էր իմանալ աբորտի մասին տեղի թեկնածուների պատկերացումները: Այսպիսով, 1992 թ. կայացած ընդհանուր ընտրություններից անմիջապես առաջ դիմողի նախաձեռնությամբ տարածվել է առանձին թեկնածուների մասին այսպիսի տեղեկատվություն պարունակող 1.5 միլիոն թռուցիկ: Այդ թռուցիկներից 25 000-ը տարածվել է Հելիֆեքս քաղաքում: 1993 թ. դիմողը մեղադրվել է 1983 թ. «Ազգաբնակչության ներկայացվածության մասին» օրենքի 75-րդ բաժնի դրույթները խախտելու համար, որոնց համաձայն՝ ընտրությունների ժամանակահատվածում չլիազորված անձանց արգելվել է որևէ թեկնածուի ընտրությանը նպաստելու կամ խոչընդոտելու նկատառումով նյութեր տպագրելու վրա ծախսել հինգ ֆունտ ստեռլինգը գերազանցող գումար: Մեղավոր ճանաչվելու դեպքում դիմողի նկատմամբ կարող էին սահմանվել հետևյալ պատժամիջոցները՝ մինչև մեկ տարի ազատազրկում կամ մինչև 5000 ֆունտ ստեռլինգի չափով տուգանք կամ մինչև 5 տարի ժամկետով քվեարկության իրավունքից զրկում: Դատարանը կարգադրել է արդարացնել դիմողին, քանի որ դատական ծանուցագիրը նրան չի ներկայացվել սահմանված ժամկետում: Այնուամենայնիվ, 1979 թ. դիմողը դատապարտվել է նույնանման մեղադրանքով: Դիմողը գանգատ է ներկայացրել հանձնաժողովին կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված ազատ արտահայտվելու իրավունքի խախտման առնչությամբ, և հանձնաժողովի մեծամասնությունը՝ քսանութ կողմ ու մեկ դեմ ձայներով, արձանագրել է նշված իրավունքի խախտում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման համաձայն՝ վերոնշյալ օրենքի 75-րդ բաժնի դրույթներով խախտվել է դիմողի ազատ արտահայտվելու իրավունքը, քանզի սահմանափակվել է այն գումարի չափը, որը նա կարող էր կազմակերպության անունից ծախսել ընտրարշավի ընթացքում քարոզչական թռուցիկների պատրաստման վրա: Դատավարության բոլոր կողմերն էլ համակարծիք են, որ նշված սահմանափակումը «նախատեսված է եղել օրենքով», իսկ դատարանը եզրակացրել է, որ այն միտված է եղել «այլ անձանց», տվյալ դեպքում՝ ընտրություններին մասնակցող թեկնածուների և Հելիֆեքս քաղաքի ընտրողների իրավունքների պաշտպանությանը»: Ուստի դատարանի առջև դրված հիմնական հարցն այն էր, թե արդյոք օրենքի 75-րդ բաժնի դրույթներն անհրաժե՞շտ էին «ժողովրդավարական հասարակությունում»: Մեծամասնություն կազմող տասնչորս դատավորները նշել են, որ կոնվենցիային կից թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետություններն «ազատ ընտրություններ» անցկացնելու պարտավորություն են ստանձնել:

Ազատ ընտրությունները, ազատ արտահայտվելու իրավունքը և հատկապես քաղաքական բանավեճ անցկացնելու իրավունքը միասին վերցրած յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակությունում սերտորեն փոխկապակցված են և կոչված են ամրապնդելու միմյանց դրույթները: Այդ իսկ պատճառով հատկապես կարևոր է, որ ընտրություններին նախորդող ժամանակահատվածում զանազան կարծիքների և տեղեկատվության ազատ շրջանառություն թույլատրվի: Սակայն որոշ հանգամանքներում նշված երկու իրավունքների միջև կարող է հակասություն առաջանալ և անհրաժեշտ համարվել ընտրություններին նախորդող կամ ընթացիկ ժամանակահատվածում որոշ չափով սահմանափակել ազատ արտահայտվելու իրավունքը, ինչն անընդունելի կլիներ սովորական պայմաններում: Նման միջոցն ուղղված է ընտրող անձանց՝ կարծիք արտահայտելու իրավունքի երաշխավորմանը (նշում՝ այդպես է ձևակերպված թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը): Դատարանն ընդունում է այն փաստը, որ նշված իրավունքները հավասարակշռության բերելու հարցում մասնակից պետություններն օգտվում են հայեցողության սահմանից (պարբ. 42-43):

Այնուհետև դատարանը քննել է դիմողի՝ քարոզչական նյութեր տարածելու իրավունքի սահմանափակումների համաչափության հարցը և հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ.

…1983 թ. օրենքի 75-րդ բաժնի դրույթները փաստացի նկատառումներով եղել են բացարձակ արգելք, որով տկն Բռումանին չի թույլատրվել տպագրել նշված տեղեկատվությունը և այդ միջոցով քարոզել Հելիֆեքսի ընտրողներին քվեարկել աբորտի դեմ արտահայտվող թեկնածուների օգտին: Այդ առումով չի ապացուցվել այն փաստը, որ թեկնածուների համար հավասար պայմաններ երաշխավորելու օրինական նկատառումով անհրաժեշտ էր թռուցիկներ տպագրելու համար դիմողի ծախսվող գումարը սահմանափակել 5 ֆունտ ստեռլինգի չափով՝ հաշվի առնելով հատկապես այն հանգամանքը, որ չի խախտվել մամուլի՝ որևէ թեկնածուի ընտրվելուն աջակցելու կամ հակազդելու ազատությունը: Ընդ որում, չի սահմանափակվել նաև քաղաքական կուսակցությունների և նրանց աջակիցների՝ պետական կամ շրջանային մակարդակով քարոզարշավ կազմակերպելու իրավունքը այն պայմանով, որ նման ընտրարշավները միտված չլինեն որևէ ընտրաշրջանի թեկնածուի ապագա ընտրական ծրագրերին նպաստելուն կամ դրանք խափանելուն: Հետևաբար, դատարանը եզրակացրել է, որ դիմողի իրավունքի սահմանափակումը տվյալ դեպքում համաչափ չէ հետապնդվող նպատակին» (պարբ. 47):

Չհամընկնող կարծիք արտահայտած վեց դատավոր համոզված են, որ 1983 թ. օրենքի դրույթները չեն հակասել կոնվենցիայի 10-րդ հոդվածին: Դատավոր Վալտիկոսն արտահայտել է հետևյալ կարծիքը. «Փոքրինչ զավեշտալի է ընտրություններ անցկացնելու և ժողովրդավարական հասարակությունը պահպանելու մասով Մեծ Բրիտանիային դասեր տալու փորձը»: Լուազուն, Բական և Ձեմբրեկը համոզված էին, որ նշված սահմանափակումները համապատասխանել են Միացյալ Թագավորությանը վերապահված հայեցողության սահմանին և «հավասարակշռված ժողովրդավարական ընտրական համակարգի» մաս են կազմել: Դատավորներ Ֆրիլենդը և Լևիցը համարել են, որ նշված օրենքի 75-րդ բաժնի դրույթները կոչված են ապահովելու հավասար պայմաններ բոլոր թեկնածուների համար:

Օրենքի 75-րդ բաժնի դրույթներով սահմանված 5 ֆունտ ստեռլինգի կամ ավելի փոքր գումարի թույլատրելի ծախսերի շրջանակը կարծես դարձել է այն վճռորոշ գործոնը, որով առաջնորդվել է դատարանը դիմողի, ինչպես նաև ընտրարշավի կամ լոբբիստական խմբի այլ մասնակիցների նկատմամբ սահմանափակումների համաչափությունը որոշելու համար: 2000 թ. «Քաղաքական կուսակցությունների, ընտրությունների և հանրաքվեների մասին» օրենքի 131-րդ բաժնի դրույթներով խորհրդարանական ընտրություններին մասնակցող ցանկացած թեկնածուի վրա ծախսվող թույլատրելի գումարը բարձրացվել է մինչև 500 ֆունտ ստեռլինգ:

15 *«Ահմեդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ahmed v UK)* 1998-VI) գործում դատարանի մեծամասնությունը պաշտպանել է տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների որոշակի խմբերի՝ կուսակցությունների քաղաքական գործունեությանը մասնակցելու դատական արգելքը: Նախկին պահպանողական կառավարությունն ականավոր փաստաբան սըր Դեյվիդ Վիդիքոմի նախագահությամբ հիմնել էր կոմիտե, որը կոչված էր որոշելու տեղական ինքնակառավարման մարմիններում համայնքային խորհրդի անդամների և ծառայողների դերը: Կոմիտեն իր զեկույցում նշել է, որ Միացյալ Թագավորության տեղական ինքնակառավարման մարմինների ավանդույթի համաձայն՝ նշված բնագավառի պաշտոնյաները, անկախ իշխանության եկած կուսակցությունից, վարել են չեզոք քաղաքականություն: Այդ անկողմնակալ վերաբերմունքը պահպանելու համար կոմիտեն առաջարկել է կա՛մ աշխատանքային պայմանագրի առարկայով և պայմաններով, կա՛մ օրենսդրությամբ արգելել տեղական ինքնակառավարման մարմինների բարձրաստիճան պաշտոնյաներին մասնակցել նշված կուսակցության քաղաքական գործունեությանը: Կառավարությունը հավանություն է տվել այդ առաջարկին, ինչի շնորհիվ 1989 թ. ընդունվել է «Տեղական ինքնակառավարման մարմինների և ներքին քաղաքականության մասին» օրենքը, որի համաձայն՝ բնապահպանության նախարարը լիազորված էր կանոնակարգ ընդունել քաղաքականության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաների գործունեության շրջանակը սահմանափակելու մասին: 1990 թ. հաստատվել է մի կանոնակարգ, որն առնչվել է հետևյալ երեք խմբի պատկանող աշխատակիցներին. ա) տեղական ինքնակառավարման մարմինների բարձրաստիճան պաշտոնյաներ, օրինակ՝ գործադիր տնօրենները և վարչության պետերը, որոնց ընդհանուր թիվը կազմում է մոտ 12 000, բ) տարեկան մոտ 26000 ֆունտ ստեռլինգը գերազանցող աշխատավարձ ստացող ընդհանուր թվով 28000 պաշտոնյաներ, որոնց պաշտոնները չեն նախատեսում ազատում կանոնակարգով նշված սահմանափակումներից և գ) ավելի ցածր աշխատավարձ ստացող ընդհանուր թվով մոտ 7000 պաշտոնյաներ, որոնց

պարտականություններից, ի թիվս այլոց, բխում է պարբերաբար խորհուրդներ տալը տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարությանը և վերադաս իշխանությունների անունից հանդես գալը լրատվամիջոցների առջև: Ի թիվս այլ արգելքների՝ նշված խմբերում ընդգրկված պաշտոնյաներին չի թույլատրվել իրենց թեկնածությունը դնել կամ քարոզչական գործունեություն ծավալել Համայնքների պալատի, Եվրոպական խորհրդարանի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում, պաշտոն զբաղեցնել որևէ քաղաքական կուսակցությունում և որևէ քաղաքական կուսակցության նկատմամբ հասարակության աջակցության վրա ազդելու նպատակով գրավոր կամ գեղարվեստական ստեղծագործության տեսքով որևէ աշխատություն հրատարակել: Այնուհանդերձ, «քաղաքական հարցերի շուրջ ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակում նախատեսող պաշտոններում» նշանակվող աշխատակիցներին չէր արգելվում անդամակցել քաղաքական կուսակցություններին: Այդ աշխատակիցները կարող էին դիմել միջնորդ դատավորին՝ կանոնակարգով նշված սահմանափակումներից իրենց ազատելու հայտով: Ներկա գործով դիմող էին տեղական ինքնակառավարման մարմինների չորս աշխատակիցներ, ովքեր քաղաքական հարցերի շուրջ ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակում նախատեսող պաշտոններ են զբաղեցնում, այդ պատճառով նրանց արգելվում էր մասնակցել կուսակցական քաղաքական գործունեությանը: Դիմողներն իրենց արհմիության հետ միասին վիճարկել են կանոնակարգով ամրագրված դրույթները և պահանջել դատարանից դրանց վերանայումը: Գերագույն դատարանը և վերաքննիչ դատարանը մերժել են դիմումը: Այնուհետև դիմողները գանգատ են ներկայացրել հանձնաժողովին՝ պնդելով, որ կանոնակարգի դրույթներով խախտվել են կոնվենցիայի որոշ հոդվածներով սահմանված իրավունքները, այդ թվում՝ ազատ արտահայտվելու իրավունքը: Տասներեք կողմ և չորս դեմ ձայներով հանձնաժողովն արձանագրել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: Իշխանության գլուխ եկած լեյբորիստական կառավարությունը դատարանում չի ժխտել այն փաստը, որ կանոնակարգն ուղղված էր դիմողների՝ 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքների միջամտությանը, սակայն փորձել է ապացուցել, որ այդ միջամտությունը հիմնավորվել է նույն հոդվածի 2-րդ կետով: Դատարանը եզրակացրել է, որ կանոնակարգը «նախատեսվել է օրենքով» և ուղղված է եղել այլ անձանց՝ համայնքային խորհրդի անդամների և ընտրողների իրավունքները պաշտպանելու, ինչպես նաև տեղական մակարդակով ժողովրդավարության արդյունավետությունն ապահովելու օրինական նպատակին: Ըստ դատարանի՝ ժողովրդավարության արդյունավետ համակարգը պաշտպանելու նպատակը չէր սահմանափակվում միայն այն իրավիճակներով, երբ քաղաքական կուսակցության գործունեությունը սպառնալիք էր ներկայացնում սահմանադրական կարգի համար, ինչպես, օրինակ՝ ներքոհիշյալ *«Ֆոգթն ընդդեմ Գերմանիայի»* (*Vogt v Germany*) գործում (վերը՝ էջ 716):

> Միայն նման իրավիճակներով ժողովրդավարության արդյունավետ պաշտպանության հասկացությունը սահմանափակելու դեպքում կանտեսվեն ինչպես այն շահերը, որոնց պաշտպանությանն են ծառայում տեղական ինքնակառավարման մարմինների պես ժողովրդավարական հաստատությունները, այնպես էլ, անհրաժեշտության դեպքում, այդ շահերի պաշտպանությանն ուղղված նշված հաստատությունների պատշաճ աշխատանքը: Այդ կապակցությամբ դատարանը հիշեցնում է, որ ժողովրդավարությունը եվրոպական հասարակարգի հիմնարար սկզբունքներից է: Դատարանի կարծիքով՝ արդյունավետ քաղաքական ժողովրդավարություն հասկացությունը նույնքան կիրառելի է տեղական, որքան պետական մակարդակով՝ հաշվի առնելով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված որոշում կայացնելու լիազորության շրջանակը և այն փաստը, որ ընտրողներին հոգեհարազատ են տեղի քաղաքական գործիչների որդեգրած քաղաքական հայացքները (պարբ. 52):

Դատարանի մեծամասնությունը, վեց կողմ և երեք դեմ ձայներով, վճռել է, որ դիմողների նկատմամբ կիրառված կանոնակարգի դրույթներն «անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում»: Դատարանի կարծիքով՝ Վիդիքոմի զեկույցում նշվել է տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան աշխատակիցների քաղաքական չեզոքության պահպանման հրատապ սոցիալական անհրաժեշտությունը: Ավելին, կանոնակարգը համաչափ պատասխան միջոց է եղել, քանի որ դրա դրույթները վերաբերել են միայն տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների մոտ 2 տոկոսին, ընդ որում, քաղաքական հարցերի շուրջ ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակում նախատեսող պաշտոններ զբաղեցնող անձինք կարող էին անդամակցել քաղաքական կուսակցություններին և քաղաքական մեկնաբանություններ անել, պայմանով, որ նրանք այդ կուսակցությունների ակտիվ ջատագով չեն լինի: Ուստի դատարանը չի արձանագրել 10-րդ հոդվածով սահմանված իրավունքների, ինչպես նաև կոնվենցիայի այլ դրույթների խախտում: Չհամընկնող կարծիք արտահայտած դատավորները համոզված են, որ դիմողների

իրավունքների սահմանափակումը չէր բխում հրատապ սոցիալական անհրաժեշտությունից, քանի որ «այլ ժողովրդավարական հասարակությունները կարծես գործում են առանց նման ընդհանրական և հեռահար սահմանափակումների» (պարբ. 5): Բացի այդ, նրանց կարծիքով, դիմողների իրավունքի սահմանափակումը համաչափ միջոց չի եղել, քանի որ նշված պաշտոններ զբաղեցնող անձինք պետք է հրաժարվեին իրենց պաշտոնից խորհրդարանի կամ Եվրոպական խորհրդարանի ընտրություններում իրենց թեկնածությունը առաջադրելու իրավունքից օգտվելու համար: Պրոֆեսոր Մորիսը նշել է. «Միջամտությունը տվյալ իրավունքին հազիվ թե կարելի է ժողովրդավարության ամրապնդմանը միտված արդյունավետ միջոց համարել, քանի որ առողջ ժողովրդավարական հասարակությունը լավագույն և առավել փորձառու խորհրդարանականների կարիք ունի» (պարբ. 6): Բացի այդ, պրոֆեսոր Մորիսը քննադատել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռը.

Տվյալ դեպքում համաչափության հարցում դատարանի որդեգրած ընդհանրական մոտեցումն ակնհայտորեն տարբերվել է հանձնաժողովի մոտեցումից: Հանձնաժողովը, ի թիվս այլ հայտարարությունների, ընդգծել է, որ կանոնակարգի դրույթները կիրառելի են աշխատակիցների մեծ խմբի համար, և միայն առանձին դեպքերում են նախատեսում դրանցով ամրագրված սահմանափակումներից ազատվելու հնարավորություն: Դատարանը չի անդրադարձել դիմողների արծարծած այն հարցերին, որոնք վերաբերում էին աշխատակիցների պարտականությունները սահմանելու համար գործատուներին վերապահված հայեցողությանը, համաձայնագրային պարտավորությունների և գործնականում դրանք կատարելու հաճախականության հնարավոր տարբերությանը, ինչպես նաև զուտ մասնագիտական կամ տեխնիկական բնույթի պարտականություններ կրող անձանց իրավունքների սահմանափակմանը» [Gillian S Morris, The political activities of local government workers and the ECHR, 1999, PL 211 at 216]:

16 1999 թ. մայիսի 20-ին կայացրած վճռով *«Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի» (Rekvényi v Hungary)* գործում դատարանը նմանօրինակ դիրքորոշում է ցուցաբերել նաև ոստիկանության աշխատակիցների՝ քաղաքական ոլորտում գործունեություն ծավալելու իրավունքի սահմանափակումների նկատմամբ: 1993 թ. լրամշակվել է Հունգարիայի սահմանադրությունը, որի ուղղումների համաձայն՝ ոստիկանության, ինչպես նաև զինված ուժերի և ազգային անվտանգության ծառայության հաստիքային աշխատակիցներին արգելվել է «քաղաքական որևէ գործունեություն ծավալել» կամ անդամակցել որևէ քաղաքական կուսակցության: Կանոնակարգով մանրամասն սահմանվել են նշված ծառայողների համար թույլատրելի քաղաքական վարքի ձևերը: Այսպես, օրինակ՝ ոստիկանները կարող էին խորհրդարանական ընտրություններում առաջադրել իրենց թեկնածությունը միայն ընտրություններից վաթսուն օր առաջ ծառայությունից ազատվելու դեպքում: Ներկա գործով դիմողը՝ ոստիկանների անկախ արհմիության գլխավոր քարտուղարը, բողոք է ներկայացրել, որ նշված սահմանափակումներով, ի թիվս այլոց, խախտվել է իր ազատ արտահայտվելու իրավունքը: Քսանմեկ կողմ և ինը դեմ ձայներով՝ հանձնաժողովն արձանագրել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: Դատարանը միաձայն եզրակացրել է, որ վերոնշյալ կանոնակարգի դրույթներով պետությունը միջամտել է դիմողի՝ քաղաքական հարցերի շուրջ ազատ արտահայտվելու իրավունքին, սակայն այդ միջամտությունը կարելի է հիմնավորել 10-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով: Սահմանադրական այս արգելքի պատճառները բացատրելիս պետությունը վկայակոչել է Հունգարիայում կոմունիստական վարչակարգի օրոք ստեղծված պատմական իրադրությունը, երբ ոստիկանությունն իշխող քաղաքական կուսակցության «գործիքն» էր:

Դատարանը նշում է, որ Հունգարիայից բացի, մի շարք մասնակից պետություններում նույնպես սահմանափակվում է ոստիկանների՝ որոշակի քաղաքական գործունեություն ծավալելու իրավունքը: Ի վերջո, ոստիկանները պետության գործակալներ են, ուստիև նրանց հետ առնչվող քաղաքացիները պետք է հասկանան, որ նշված ծառայողները քաղաքականապես չեզոք են և հեռու են քաղաքական պայքարից:

Դատարանի կարծիքով՝ պետության՝ ոստիկանության ապաքաղաքականացումը և հասարակական կյանքում դրա կարևոր դերակատարումը պաշտպանելու ցանկությունը չի հակասում ժողովրդավարական սկզբունքներին: Այդ նպատակն իմաստավորվում է Հունգարիայի հատուկ պատմական իրադրությամբ, երբ բռնապետական վարչակարգի հիմքում ընկած էր ոստիկանության անմիջական ենթակայությունը իշխող կուսակցությանը:

Ուստի դատարանը եզրակացրել է, որ նշված սահմանափակմամբ հետապնդվել են կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով օրինական նպատակներ, այն է՝ ազգային և հասարակական անվտանգության պահպանումը, ինչպես նաև հասարակական կարգի խախտման կանխումը (պարբ. 41):

Հաշվի առնելով այն իրողությունը, որ կանոնակարգի դրույթներով ոստիկաններին թույլատրվում էր մի շարք ձևերով արտահայտել իրենց կարծիքը քաղաքական հարցերի շուրջ, դատարանը եզրակացրել է, որ դիմողի իրավունքի սահմանափակումը համաչափ արձագանք էր հրատապ սոցիալական անհրաժեշտությանը: Հարց է ծագում, թե արդյոք դատարանը նույն եզրակացության կհանգե՞ր, եթե քաղաքական գործունեություն ծավալելու սահմանադրական արգելքով սահմանափակումներ և բացառություններ չնախատեսվեին:

Ներքոհիշյալ *«Ֆոգթն ընդդեմ Գերմանիայի» (Vogt v Germany)* գործում դատարանը քննել է քաղաքացիական ծառայողների, մասնավորապես՝ ուսուցիչների ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները: Բացի այդ, դատարանը քննել է նաև զինվորականների նույն իրավունքի սահմանափակումները:

17 1999 թ. հոկտեմբերի 28-ին կայացված վճռով *«Վիլեն ընդդեմ Լիխտենշտեյնի» (Wille v Liechtenstein)* գործում պետության ղեկավարի բացասական արձագանքը դասախոսության ընթացքում վիճահարույց սահմանադրական հարցի վերաբերյալ ավագ դատավորի արտահայտած գիտական հայացքներին ոտնձգություն է կոնվենցիայի 10-րդ հոդվածի շրջանակներում: Դիմողը Լիխտենշտեյնի կառավարության անդամ էր 1992 թ., երբ պետության ղեկավար արքայազն Հանս-Ադամ Երկրորդի և կառավարության միջև հակասություններ ծագեցին հանրաքվեի նկատմամբ քաղաքական իրավասության հարցի շուրջ: Դիմողը խորհրդարանական ընտրություններին կրկին չդրեց իր թեկնածությունը, իսկ 1993 թ. խորհրդարանը նրան առաջադրեց Լիխտենշտեյնի վարչական դատարանի նախագահի պաշտոնի համար: Այնուհետև արքայազնը դիմողին սահմանված ժամկետով պաշտոնապես նշանակեց այդ պաշտոնին: 1995 թ. փետրվարին Լիխտենշտեյնի ինստիտուտի հետազոտությունների բաժնում դիմողը դասախոսություն կարդաց «Լիխտենշտեյնի սահմանադրական դատարանի բնույթը և գործառույթները» թեմայով: Դասախոսության ընթացքում դիմողը հայտնեց այն համոզմունքը, որ արքայազնի և խորհրդարանի միջև տարաձայնությունների առաջացման դեպքերում սահմանադրական դատարանն իրավասու է որոշում կայացնելու սահմանադրության մեկնաբանության առնչությամբ: Որոշ ժամանակ անց դիմողի դասախոսությունը լուսաբանվեց ազգային թերթերից մեկում: Տասն օր անց արքայազնը դրոշմաթղթի վրա գրություն ուղարկեց դիմողի տան հասցեով, որի մեջ ասվում էր. «Դոկտոր Վիլե, իմ կարծիքով՝ Ձեր մոտեցումը վկայում է, որ Դուք հարմար թեկնածու չեք պետական պաշտոն զբաղեցնելու համար: Ես հրապարակավ կամ դեմառդեմ Ձեզ հետ բանավիճելու մտադրություն չունեմ, սակայն կցանկանայի ժամանակին հայտնել, որ նույնիսկ խորհրդարանի կամ որևէ այլ մարմնի կողմից առաջադրվելու դեպքում ես Ձեզ պետական պաշտոնի այլևս չեմ նշանակի»: Այնուհետև խորհրդարանը միաձայն եզրակացրեց, որ դիմողի դասախոսության հետևանքով դատավորի պաշտոնը զբաղեցնելու նրա կարողությունը հարցականի տակ չի առնվել: Բացի այդ, դիմողը և արքայազնը հրապարակավ թղթակցել են: 1997 թ. ավարտվում էր դիմողի պաշտոնավարման ժամկետը, և խորհրդարանն առաջարկեց նրան կրկին նշանակել վարչական դատարանի նախագահի պաշտոնում: Սակայն արքայազնը հրաժարվեց հաստատել դիմողի թեկնածությունը: Որոշ ժամանակ անց դիմողը գանգատ ներկայացրեց հանձնաժողովին, ի թիվս այլոց, կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման առնչությամբ: Հանձնաժողովը, տասնհինգ կողմ և չորս դեմ ձայներով, ընդունեց գանգատը: Դատարանը մերժեց պատասխանող պետության բերած այն փաստարկը, որ արքայազնի վերոնշյալ գրությունը պարզապես մասնավոր նամակագրության մաս է կազմել: Ավելին.

46. Այդ կապակցությամբ դատարանը ևս մեկ անգամ կրկնել է, որ կոնվենցիայի համաձայն՝ պետությունը պատասխանատվություն է կրում իր բոլոր մարմինների, գործակալների և ծառայողների արարքների համար: Միջազգային իրավունքի համաձայն՝ տվյալ դեպքում առհասարակ հաշվի չի առնվում այդ անձանց դիրքը, քանի որ ի պաշտոնե գործած նրանց արարքների համար պատասխանատվությունը բոլոր դեպքերում վերագրվում է պետությանը: Մասնավորապես, հնարավոր է, որ պաշտոնեական գործառույթներով օժտված որևէ լիազորված անձ խախտի մասնակից պետության՝ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները (տե՛ս *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ireland v UK)* գործ, զեկույց 25.1.76, Տարեգիրք 19, էջ 512, էջ 758):

50. Վերոնշյալ նամակի բովանդակությունը քննելուց հետո դատարանը եզրակացրել է, որ ազգային մարմինները միջամտել են դիմողի ազատ արտահայտվելու իրավունքին: Ազգային մարմինները բողոքարկված միջոցառումը ձեռնարկել են այն ժամանակ, երբ դեռևս չէր լրացել դիմողի՝ վարչական դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետի առաջին շրջանը:

Ընդ որում, նշված միջոցառումը պայմանավորված չէր անձնական որակավորման գնահատում պահանջող հստակ աշխատանքային ընթացակարգերով: 1995 թ. փետրվարի 27-ի նամակի բովանդակությունից պարզ է դառնում, որ արքայազնը կանխորոշել էր դիմողի նկատմամբ իր հետագա վերաբերմունքը, որը պայմանավորված էր ինքնիշխանությամբ արքայազնին վերապահված պետական պաշտոնյաներ նշանակելու լիազորությամբ: Ավելին, ակնհայտ է, որ թեև նամակը դիմողի տան հասցեով է ուղարկվել, սակայն այն հղվել է դիմողին՝ որպես վարչական դատարանի նախագահի: Այսպիսով, գանգատի առարկա դարձած միջոցը ձեռնարկվել է մի այնպիսի մարմնի կողմից, որն իրավասու էր դիմել այդ քայլի, և որի գործողությունների համար պատասխանատու էր Լիխտենշտեյնը՝ որպես կոնվենցիան վավերացրած պետություն: Արքայազնը միջամտել է դիմողի ազատ արտահայտվելու իրավունքին այն պահին, երբ քննադատելով վերջինիս ելույթի բովանդակությունը՝ հայտնել է ազատորեն արտահայտած կարծիքի համար դիմողին պատժելու իր մտադրության մասին: Հայտնելով պետական պաշտոնին դիմողին կրկին չնշանակելու իր մտադրությունը՝ արքայազնը ոչ միայն վերջինիս հանդիմանել է ազատ արտահայտվելու իրավունքը նախկինում իրացնելու համար, այլև զսպիչ ազդեցություն է գործել դիմողի՝ հետագայում նշված իրավունքն իրացնելու հնարավորության վրա, քանի որ վերջինս հավանաբար ապագայում կխուսափեր նման կարգի հայտարարություններ անելուց:

51. Այս ամենից հետևում է, որ արքայազնը միջամտել է 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ազատ արտահայտվելու իրավունքին:

Այնուհետև դատարանը քննել է այն հարցը, թե արդյոք արքայազնի միջամտությունն «անհրաժե՞շտ էր ժողովրդավարական հասարակությունում»: Տասնվեց կողմ և մեկ դեմ ձայներով մեծամասնությունը վճռել է, որ նման միջոցի դիմելու կարիք չկար:

64. …Դատարանը պետք է հաշվի առնի այն փաստը, որ դիմողն այդ պահին բարձրաստիճան դատավոր էր, իսկ նման պաշտոնատար անձանց ազատ արտահայտվելու իրավունքի հարցը քննելիս առանձնակի կարևորություն են ստանում 10-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված պարտականություններն ու պարտավորությունները, քանզի բոլոր այն դեպքերում, երբ կարող է կասկածի տակ առնվել արդարադատության հեղինակությունն ու անկողմնակալությունը, դատական համակարգում ծառայող պետական պաշտոնյաներից ակնկալվում է նշված իրավունքն իրականացնելիս զսպվածություն ցուցաբերել: Այնուհանդերձ, դատարանը համոզված է, որ միջամտությունը դիմողի պես պաշտոն զբաղեցնող դատավորի ազատ արտահայտվելու իրավունքին պահանջում է դատարանից հանգամանալից հետաքննություն անցկացնել:

65. Անդրադառնալով 1995 թ. փետրվարի 16-ի դիմողի դասախոսությանը՝ դատարանը նկատում է, որ այդ դասախոսությունը Լիխտենշտեյնի հետազոտական ինստիտուտի սահմանադրական իրավասության և հիմնարար իրավունքների հարցերի շուրջ գիտական դասախոսությունների մաս է կազմել: Դիմողն իր ելույթում անդրադարձել է Լիխտենշտեյնի սահմանադրության 112-րդ հոդվածով ամրագրված սահմանադրական դատարանի իրավասությանը: Նրա այն կարծիքը, որ տվյալ հոդվածի դրույթներում գործածված «կառավարություն» եզրույթն ընդգրկում էր նաև արքայազնին, ենթադրաբար հակասում էր դատական իշխանությունից Լիխտենշտեյնի արքայազնի անձեռնմխելիության սկզբունքին:

66. Դիմողի կարծիքով՝ վերոնշյալ հայտարարությունը սահմանադրության 112-րդ հոդվածի դրույթների գիտական մեկնաբանություններից մեկն է: Կառավարությունը մյուս կողմից պնդել է, որ թեև դիմողի դասախոսությունը սքողված էր իրավաբանական տեսանկյունից չեզոք հայտարարությամբ, այնուհանդերձ այն, ըստ էության, խիստ քաղաքականացված է, միտված է առկա սահմանադրական կարգի քննադատությանը և չի համապատասխանում նշված ժամանակահատվածում դիմողի զբաղեցրած պետական պաշտոնի պահանջներին:

67. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի դասախոսությունն առնչվել է սահմանադրական իրավունքին, մասնավորապես՝ երկրի ղեկավար միապետի վրա սահմանադրական դատարանի իրավասության տարածմանը, դատարանն ընդունել է, որ դասախոսությունն անկասկած ունեցել է քաղաքական ենթատեքստ: Դատարանը վճռել է, որ սահմանադրական իրավունքի հետ կապված հարցերն իրենց բնույթով քաղաքական ենթատեքստ ունեն, սակայն միայն այդ հանգամանքի պատճառով դիմողին չպետք է արգելվի նշված հարցի վերաբերյալ հայտարարություններ անել: Բացի այդ, դատարանը նկատել է, որ 1991 թ. «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի լրամշակման նախագծին կից մեկնաբանություններում Լիխտենշտեյնի կառավարությունը հայտնել է նմանօրինակ կարծիք, որն արքայազնի առարկությունից անկախ՝ արժանացել է ազգային խորհրդարանի հավանությանը, թեպետ՝ միայն պատգամավորների ձայների մեծամասնությամբ: Ուստի դիմողի կարծիքը չի կարող անհիմն հայտարարություն համարվել, քանի որ Լիխտենշտեյնի բնակչության նշանակալի մասը համամիտ է դրան: Ավելին, գոյություն չունի որևէ ապացույց առ այն, որ դասախոսության ընթացքում դիմողի արած հայտարարությունները պարունակել են վարույթում գտնվող գործերի, անհատների կամ պետական հաստատությունների խիստ քննադատություն, ինչպես նաև վիրավորական արտահայտություններ բարձրաստիճան պաշտոնյաների կամ արքայազնի հասցեին:

68. Անդրադառնալով արքայազնի արձագանքին դիմողի կարդացած դասախոսությանը՝ դատարանը նկատել է, որ վերջինս հայտնել է նույնիսկ խորհրդարանի կամ որևէ այլ մարմնի կողմից դիմողի թեկնածության առաջադրվելու դեպքում նրան պետական պաշտոնում կրկին չնշանակելու իր մտադրությունը: Արքայազնը համարել է, որ դասախոսության ընթացքում արված հայտարարությամբ դիմողն ակնհայտորեն խախտել է Լիխտենշտեյնի սահմանադրությունը: Այդ կապակցությամբ արքայազնն անդրադարձել է նաև 1992 թ. Լիխտենշտեյնի կառավարության քաղաքական տարաձայնություններին և ի վերջո հանդիմանել նշված ժամանակահատվածում կառավարության անդամ հանդիսացող, իսկ 1993 թ. ի վեր Լիխտենշտեյնի վարչական դատարանի նախագահի պաշտոնը զբաղեցնող դիմողին սահմանադրությամբ ամրագրված պահանջները չկատարելու համար: Արքայազնի կարծիքով՝ սահմանադրության նկատմամբ դիմողի մոտեցումը վկայում էր այն մասին, որ վերջինս հարմար թեկնածու չէր պետական պաշտոնի համար:

69. Արքայազնի արձագանքի հիմքում ընկած էին դիմողի՝ կառավարության անդամ լինելու օրոք և մասնավորապես 1992 թ. քաղաքական տարաձայնությունների ընթացքում նրա դրսևորած մոտեցումը, ինչպես նաև դատարանի իրավասության հստակ, սակայն, վիճահարույց սահմանադրական հարցի վերաբերյալ մամուլում լուսաբանված նրա կարճ հայտարարությունից բխող եզրակացությունները: Պատասխանող պետությունը որևէ կերպ չի նշել, որ վիճահարույց հարցին նվիրված դասախոսության ընթացքում դիմողի արտահայտած տեսակետն ինչ-որ չափով առնչվել է նրա զբաղեցրած վարչական դատարանի նախագահի պաշտոնին կամ էլ վարույթում գտնվող կամ քննության ենթակա դատական գործերին: Բացի այդ, պետությունը չի հիշատակել որևէ դեպք, երբ դիմողը դատավորի պաշտոնում իրեն վերապահված գործառույթներն իրականացնելիս վարվել է պարսավանքի արժանի որևէ եղանակով:

70. Հաշվի առնելով տվյալ գործի փաստերը՝ դատարանը եզրակացրել է, որ թեև պետությունը նշանակալի հիմնավորումներ է ներկայացրել արդարացնելու համար միջամտությունը դիմողի ազատ արտահայտվելու իրավունքին, սակայն դրանք բավականաչափ ծանրակշիռ չեն եղել համոզելու համար, որ բողոքարկված միջամտությունն «անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում»: Նույնիսկ հաշվի առնելով պետության հայեցողության որոշակի սահմանը՝ արքայազնի արարքը հետապնդվող նպատակի համեմատ անհամաչափ է: Ուստի դատարանն արձանագրել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

Հաշվի առնելով դիմողին հասցված ոչ դրամական վնասը՝ դատարանը 10.000 շվեյցարական ֆրանկ փոխհատուցում է սահմանել նրա օգտին: Սույն գործով դատարանի կայացրած վճռում ընդգծվում է սահմանադրական իրավունքին և քաղաքականությանն առնչվող հարցերի սերտ փոխկապվածությունը: Դատարանը նաև կարևորել է այն դրույթը, որ կոնվենցիայի համաձայն՝ մասնակից պետությունները հնարավոր պարտավորություն են կրում իրենց բոլոր մարմինների, այդ թվում՝ պաշտոնեական կարգավիճակով հանդես եկող պետության ղեկավարի գործողությունների համար: Եվրոպական կառույցների իրավակարգով հաստատված այդ իրավաբանական պատասխանատվությունը մեծ կարևորություն է ներկայացնում անհատների համար, քանի որ նման դեպքերում ներպետական իրավական նորմերը կարող են նման պաշտոնատար անձանց համար դատական պատասխանատվություն չնախատեսել: Կարելի է օրինակ բերել Միացյալ Թագավորությունը, որի միապետն ունի քրեական կամ քաղաքացիական գործերով ներպետական դատարաններում անձնական անձեռնմխելիության իրավունք:

18 2001 թ. հունիսի 28-ին կայացրած վճռով *«Ֆերայն գեգեն թիերֆաբրիքեն (ՎԳԹ)» միավորումն ընդդեմ Շվեյցարիայի» (VGT Verein Gegen Tierfabriken v Switzerland)* գործում դատարանը քննել է քաղաքական գովազդի հարցը: Դիմող միավորումը զբաղվում էր կենդանիների պաշտպանությամբ: Ի պատասխան մսի արդյունաբերության ընկերությունների՝ Շվեյցարիայի հեռուստատեսությամբ հեռարձակվող գովազդների՝ դիմող կազմակերպությունը պատրաստել է նույնիսկ մեկ րոպե չտևող գովազդ: Նշված գովազդում նախ ցուցադրվել է անտառում խոճկորների համար բուն պատրաստող մի խոզ, իսկ հետո մի մեծ շինություն, որտեղ խոզերը պահվում են փոքր փակ տարածքներում: Գովազդն ավարտվում է հետևյալ բառերով. «Ավելի քիչ միս կերեք հանուն ձեր առողջության, կենդանիների և բնության»: Շվեյցարիայի ազգային հեռուստատեսությամբ հեռարձակվող գովազդներով զբաղվող ընկերությունը եզրակացրել է, որ դիմողի գովազդը քաղաքական բնույթ ունի, և հրաժարվել է հեռարձակել այն: Որոշ ժամանակ անց դաշնային դատարանը հաստատել է գովազդի ցուցադրումն արգելող որոշումը՝ հաշվի առնելով, որ քաղաքական գովազդը Շվեյցարիայի օրենսդրությամբ արգելված է: Դիմողը պնդել է, որ գովազդի հեռարձակման մերժմամբ իշխանությունները խախտել են ազատ արտահայտվելու իրավունքը: Պալատը միաձայն հաստատել է ներպետական դատարանների այն կարծիքը, որ գովազդը քաղաքական բնույթ ունի:

57. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կարծիքով՝ հեռուստաղիտողների շրջանում որևէ ապրանքի վաճառքը խթանելու տեսանկյունից վերոնշյալ գովազդը սովորական առևտրային գովազդի հատկանիշներից զուրկ է: Ընդհակառակը, կազմակերպության մտահոգությունը կենդանիների պաշտպանության վերաբերյալ, ինչպես նաև մսի սպառումը նվազեցնելու կոչերը տպավորիչ պատկերներով արտահայտող գովազդն արտացոլում է ընդհանրապես արդի հասարակությանը հուզող հարցերը և մասնավորապես՝ տարբեր քաղաքական քննարկումների հիմքում ընկած վիճահարույց կարծիքները:

Դատարանը որոշել է, որ Շվեյցարիայի օրենսդրությամբ քաղաքական գովազդի արգելքը հիմնավորված էր և հետապնդում էր կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված օրինական նպատակ՝ թույլ չտալով մեծահարուստ խմբերին քաղաքական ասպարեզում մրցակցային առավելություն ձեռք բերել: Անդրադառնալով «ժողովրդավարական հասարակությունում» դիմողի գովազդի հեռարձակումն արգելելու անհրաժեշտությանը՝ պալատը հայտնել է հետևյալը.

69. Գործի հանգամանքներից հետևում է, որ գովազդի հեռարձակումից հրաժարվելու համար հրատապ սոցիալական անհրաժեշտությունը որոշելու հարցում Շվեյցարիայի իրավասու մարմիններն իրենց վերապահել են հայեցողության որոշակի սահման: Նման հայեցողության սահմանը հատկապես կարևորվում է առևտրային հարցերի, մասնավորապես՝ գովազդի նման բարդ ու անկայուն բնագավառում (տե՛ս *«Մարքթ ինթերն ֆերլագ» ՍՊՀ-ն և Քլաուս Բեերմանն ընդդեմ Գերմանիայի» (Markt intern Verlag GmbH and Klaus Beermann v Germany)* գործով 1989 թ. նոյեմբերի 20-ի վճիռը, շարք A, թիվ 165, էջ 19–20, պարբ. 33, ինչպես նաև *«Յակուբովսկին ընդդեմ Գերմանիայի» (Jacubowski v Germany)* գործով 1994 թ. հունիսի 23-ի վճիռը, շարք A, թիվ 291-A, էջ 14, պարբ. 26):

70. Այնուհանդերձ, դատարանի վերոնշյալ եզրակացությունից հետևում է, որ դիմողների տեսահոլովակը, անշուշտ, զուրկ է գովազդի հատկանիշներից հեռուստաղիտողների շրջանում որևէ ապրանքի վաճառքը խթանելու իմաստով: Ընդհակառակը, նշված գովազդում արտացոլվել են արդի հասարակությանը հուզող հարցերի վերաբերյալ վիճահարույց կարծիքներ (տե՛ս վերոնշյալ պարբ. 57): «Ռադիոյի և հեռուստատեսության մասին» դաշնային օրենքի 18-րդ մասի 5-րդ կետի իմաստով Շվեյցարիայի իշխանությունները նույնպես դիմող կազմակերպության գովազդը «քաղաքական» են համարել: Եվ իսկապես, անհերքելի փաստ է, որ շատ եվրոպական երկրներում արդեն մեկնարկել և ներկայումս ընթանում են կենդանիների պաշտպանության և բուծման պայմանների շուրջ ծավալվող քննարկումները:

71. Վերոնշյալ փաստերը վկայում են, որ տվյալ դեպքում նեղանում է հայեցողության սահմանը, քանի որ վտանգվում են ոչ թե առանձին անհատի զուտ «առևտրային» շահերը, այլ այդ անհատի՝ հասարակությանը հուզող հարցերի քննարկմանը մասնակցելու իրավունքը (տե՛ս *«Հերթելն ընդդեմ Շվեյցարիայի» (Hertel v Switzerland)* գործ, 1998-VI):

72. Հետևաբար, դատարանը պետք է քննի՝ տվյալ դեպքում ձեռնարկված միջոցը համաչա՞փ էր հետապնդվող նպատակին, թե՞ ոչ: Այդ իսկ պատճառով դատարանը պետք է հավասարակշռության բերի դիմող կազմակերպության ազատ արտահայտվելու իրավունքը և Շվեյցարիայի իշխանությունների կողմից մեջբերվող քաղաքական գովազդի արգելքը հիմնավորող միջոցները, որոնք կոչված են ֆինանսապես ազդեցիկ խմբերի ճնշումից և անհարկի առևտրային ազդեցությունից պաշտպանելու հասարակական կարծիքը, հավասար հնարավորություններ ընձեռելու հասարակության տարբեր ուժերին, ինչպես նաև երաշխավորելու խմբագրական հարցերում հեռարձակողների անկախությունն ազդեցիկ հովանավորներից և սատարելու մամուլին:

73. Ճիշտ է, որ ֆինանսական ազդեցիկ խմբերը կարող են մրցակցային առավելություն ստանալ առևտրային գովազդների ոլորտում և դրանով իսկ ճնշում գործադրել լրատվամիջոցների վրա՝ ի վերջո հանգեցնելով ռադիո- և հեռուստաընկերությունների՝ գովազդներ հեռարձակելու իրավունքի սահմանափակմանը: Նման հանգամանքներում թուլանում է կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված ազատ արտահայտվելու իրավունքի հիմնարար դերը ժողովրդավարական հասարակությունում, հատկապես այն դեպքերում, երբ նշված իրավունքն ուղղված է հանրությանը հուզող հարցերի շուրջ տեղեկություններ և գաղափարներ հաղորդելու նպատակին, ընդ որում, հարկ է նշել, որ հասարակությունն իր հերթին նման տեղեկատվություն ստանալու իրավունք ունի: Վերոնշյալ նպատակն անհնար է լիովին իրագործել, եթե այն հիմնավորված չլինի բազմակարծության սկզբունքով, որի գլխավոր երաշխավորը պետությունն է: Այս դիտողությունը հատկապես կիրառելի է ռադիոյի և հեռուստատեսության լրատվամիջոցների հարցում, որոնց ծրագրերի հեռարձակման տիրույթը սովորաբար շատ լայն է (տե՛ս *«Ինֆորմաթիոնսֆերայն Լենթիա» միավորումը և այլք ընդդեմ Ավստրիայի» (Informationsverein Lentia and Others v Austria)* գործով (թիվ 1) 1993 թ. նոյեմբերի 24-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 276, էջ 16, պարբ. 38):

74. Տվյալ գործի շրջանակներում վիճարկված միջոցը, այսինքն՝ «Ռադիոյի և հեռուստատեսության մասին» դաշնային օրենքի 18-րդ մասի 5-րդ կետի դրույթներով սահմանված քաղաքական գովազդի հեռարձակման արգելքը, կիրառվել է միայն ռադիոյի և հեռուստատեսության, ոչ թե այլ լրատվամիջոցների, օրինակ՝ մամուլի նկատմամբ: 1997 թ. օգոստոսի 20-ի վճիռը կայացնելիս դաշնային դատարանն այդ իրողությունը մեկնաբանել է այն հիմնավորմամբ, որ հեռուստատեսությունը՝ որպես հեռարձակման լայն տիրույթ ունեցող, չմիջնորդավորված ու արագընթաց լրատվամիջոց, ավելի մեծ ազդեցություն է գործում

հասարակության վրա: Այնուհանդերձ, դատարանը կարծում է, որ թեև տվյալ հարցում ներպետական իշխանությունների դրսևորած կողմնակալ վերաբերմունքը կարող էր պատշաճ կերպով հիմնավորված լինել, այնուհանդերձ, միայն մեկ լրատվամիջոցով քաղաքական գովազդ հեռարձակելու արգելքը բավականաչափ հրատապ սոցիալական անհրաժեշտություն չի ներկայացրել:

75. Ավելին, պատասխանող պետությունը չի բերել այն փաստարկը, որ դիմողն իրենից ներկայացնում է ազդեցիկ ֆինանսական խումբ, որն առաջարկվող գովազդային հոլովակի միջոցով հետապնդում էր հեռարձակող ընկերության անկախությունը վտանգելու, հասարակական կարծիքի վրա անհարկի ազդեցություն գործելու կամ հասարակության տարբեր ուժերին հավասար հնարավորություններից զրկելու նպատակ: Փոխարենը՝ դիմող կազմակերպությունը ձգտել է գովազդի միջոցով ոչ թե չարաշահել իր մրցակցային առավելությունը, այլ միայն մասնակցել կենդանիների պաշտպանության և բուծման պայմանների շուրջ ընթացող բանավեճին: Դատարանը չի կարող բացառել այն տարբերակը, որ «քաղաքական գովազդի հեռարձակման» արգելքը որոշ դեպքերում կարող է համապատասխանել կոնվենցիայի 10-րդ հոդվածին: Այնուհանդերձ, նույն հոդվածով սահմանված իրավունքներին միջամտելու դեպքում արգելքի կիրառումը պետք է բխի «պատշաճ» և «բավարար» հիմնավորումներից: 1997 թ. օգոստոսի 20-ին տվյալ գործով կայացրած վճռում դաշնային դատարանը մանրամասն քննել է «քաղաքական գովազդի» արգելման ընդհանուր հիմնավորումները: Այնուհանդերձ, դատարանի կարծիքով, ազգային մարմինները «պատշաճ և բավարար» ապացույցներ չեն ներկայացրել առ այն, որ տվյալ գործի առանձնահատուկ հանգամանքներում քաղաքական գովազդի արգելման հարցում սովորաբար վկայակոչվող հիմնավորումներով կարելի էր արդարացնել միջամտությունը նաև դիմող կազմակերպության պարագայում:

76. Գովազդի հեռարձակումն արգելելիս ներպետական իշխանությունները չեն նշել, որ գովազդային տեսահոլովակի որևէ դրվագ կամ կից տեքստի որևէ բառ վրդովեցնող բնույթ է ունեցել: Ուստի նրանք չեն կարևորել այն փաստը, որ վերոնշյալ գովազդի ժամանակ գործածված պատկերները կամ խոսքերը կարող էին սադրիչ կամ նույնիսկ տհաճ լինել:

77. Անդրադառնալով պետության այն հայտարարությանը, որ դիմողները կարող էին այլ միջոցներով հեռարձակել վերոնշյալ տեղեկատվությունը՝ դատարանը նշում է, որ դիմող կազմակերպությունը, որի նպատակն էր տեղեկատվությունը հասցնել Շվեյցարիայի ամբողջ հանրությանը, իր տրամադրության տակ չուներ այլ միջոցներ, բացի Շվեյցարիայի ռադիո- և հեռուստաընկերության պետական ծրագրերից, քանզի միայն այդ ընկերության հաղորդումներն էին հեռարձակվում Շվեյցարիայի ողջ տարածքում: «Հեռուստագովազդային ընկերությունը» միակ մարմինն էր, որը պատասխանատու էր համազգային այդ հաղորդումներում գովազդային տեսահոլովակների հեռարձակման համար, իսկ շրջանային մասնավոր հեռուստաալիքների և արտասահմանյան հեռարձակման կայանների հաղորդումները չէին հեռարձակվում ամբողջ պետության տարածքում:

78. Պատասխանող պետությունը նշել է նաև, որ դիմող կազմակերպության պահանջի կատարումը հավասարազոր կլիներ այսպես կոչված հեռարձակելու իրավունքի ճանաչմանը, ինչն էլ իր հերթին էապես կմիջամտեր «Հեռուստագովազդային ընկերության» տեղեկատվություն հաղորդելու իրավունքին: Բացի այդ, նշվել է նաև գովազդների պատճառով անհարմար պահերին հեռուստահաղորդումների ընդհատումների մասին: Դատարանը հիշեցնում է, որ իր վճիռն ըստ էության դեկլարատիվ բնույթ ունի: Դատարանին առաջադրված խնդիրն է որոշել, թե արդյոք մասնակից պետություններն իրենց ձեռնարկած միջոցներով հասե՞լ են կոնվենցիայով պահանջվող արդյունքներին: Հեռուստատեսությամբ ցուցադրվող գովազդների հեռարձակման կազմակերպման հարցում ընդունելի են տարբեր մոտեցումներ: Համազգային հեռարձակմամբ ծրագրերում գովազդների հաղորդումը Շվեյցարիայի իշխանությունների կողմից վերապահվել է միայն մեկ մասնավոր ընկերության: Դատարանը կոչված չէ մատնանշելու այն միջոցները, որոնք պետք է ընտրեն մասնակից պետությունները կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորությունները կատարելու համար (տե՛ս *«Դե Կուբերն ընդդեմ Բելգիայի» (De Cubber v Belgium)* գործով 1984 թ. հոկտեմբերի 26-ի վճիռը, շարք A, թիվ 86, էջ 20, պարբ. 35):

79. Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը՝ տվյալ դեպքում միջամտությունը դիմողների իրավունքներին չի կարող «անհրաժեշտ համարվել ժողովրդավարական հասարակությունում»: Ուստի արձանագրվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

Վերոնշյալ վճռից պարզ է դառնում, որ զուտ գործնական և առևտրային շահեր հետապնդող գովազդների համեմատ՝ քաղաքական բնույթի գովազդային հայտարարությունները սահմանափակելու հարցում պետություններին վերապահված է հայեցողության ավելի նեղ սահման (գործնական և առևտրային շահեր հետապնդող գովազդների առնչությամբ տե՛ս ներքոհիշյալ *Քրոն Ֆերլագ* (*Krone Verlag*) գործը): 75-րդ կետը նաև չի բացառում այն հնարավորությունը, որ չհստակեցրած հանգամանքներում պետությունները կարող են 10-րդ հոդվածի 2-րդ կետով հիմնավորել քաղաքական գովազդի վրա դրված արգելքը: Այնուհանդերձ, այն փաստը, որ դատարանը ջերմեռանդորեն պաշտպանում է քաղաքական հարցերի շուրջ ազատ արտահայտվելու իրավունքը, վկայում է, որ պետությունները պետք է ծանրակշիռ փաստարկներով հիմնավորեն նման արգելքը: Վերոշարադրյալ փաստերից հետևում է, որ պետությունները կարող են օրինա-

կան ճանապարհով արգելել այնպիսի քաղաքական գովազդների հաղորդումը, որոնցում արտահայտված տեսակետները, օրինակ՝ նացիստական քաղաքականությունը պաշտպանող հայացքները, հակասում են կոնվենցիայով ամրագրված արժեքներին:

Ավելի ուշ՝ 2003 թ. հուլիսի 10-ին կայացրած վճռով *«Մերֆին ընդդեմ Իռլանդիայի» (Murphy v Ireland)* գործը քննելիս դատարանի պալատը մեկ այլ կազմով վճռել է, որ կրոնական բնույթի գովազդային հայտարարությունները կարգավորելու հարցում պետություններին հարկավոր է վերապահել հայեցողության ավելի լայն սահման: Սույն գործով որպես դիմող հանդես եկող քահանան ցանկանում էր տեղի մասնավոր ռադիոկայանով հայտարարություն տալ՝ հրավիրելով ունկնդիրներին մասնակցելու կրոնական կենտրոնում Քրիստոսի մասին պատմող տեսահոլովակի ներկայացմանը: Նշված ռադիոկայանի տնօրինությունը համաձայնել է հեռարձակել դիմողի հայտարարությունը, սակայն ռադիոյի և հեռուստատեսության հարցերով անկախ հանձնաժողովը թույլ չի տվել հեռարձակել նման հայտարարություն, քանի որ Իռլանդիայի օրենսդրությամբ արգելվում է պետական ռադիոկայաններով կամ հեռուստատեսությամբ հեռարձակել «կրոնական նպատակներին ուղղված» հայտարարություններ: Դատարանում պատասխանող պետությունը փորձել է արդարացնել դրված արգելքը այն հիմնավորմամբ, որ Իռլանդիայում կրոնական պառակտման երկար պատմության պարագայում խնդրո առարկա հայտարարությունը նուրբ հարց է: Դատարանը միաձայն վճռել է հետևյալը.

67. Պետության բերած փաստարկի վրա գրեթե չեն տարածվում կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի այն դրույթները, որոնցով կարելի է հիմնավորել հանրությանը հուզող հարցերին նվիրված քաղաքական ելույթ կամ բանավեճ հեռարձակելու իրավունքի սահմանափակումները (այլ աղբյուրների շարքում տե՛ս *mutatis mutandis «Լինգենսն ընդդեմ Ավստրիայի» (Lingens v Austria)* գործով 1986 թ. հուլիսի 8-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 103, պարբ. 42, *«Կաստելսն ընդդեմ Իսպանիայի» (Castells v Spain)* գործով 1992 թ. ապրիլի 23-ի վճիռը, շարք A, թիվ 236, պարբ. 43, ինչպես նաև *«Թորգեյր Թորգեյրսոնն ընդդեմ Իսլանդիայի» (Thorgeir Thorgeirson v Iceland)* գործով 1992 թ. հունիսի 25-ի վճիռը, շարք A, թիվ 239, պարբ. 63): Այնուհանդերձ, մասնակից պետություններին առհասարակ շնորհվում է հայեցողության ավելի լայն սահման բարոյական և հատկապես կրոնական բնույթի անձնական համոզմունքների համար վիրավորական հարցերի շուրջ ազատ արտահայտվելու իրավունքը կարգավորելիս: Բացի այդ, բարոյականության բնագավառում, նույնիսկ ավելի քան այլուր, գոյություն չունի համաեվրոպական միօրինակ պատկերացում այլ անձանց կրոնական համոզմունքների նկատմամբ ոտնձգություններից պաշտպանության պահանջների վերաբերյալ: Որոշակի կրոնական համոզմունքներ ունեցող անձանց համար թերևս վիրավորական հարցերն էապես փոխվում են ժամանակի ընթացքում և տարբերվում երկրից երկիր, հատկապես ներկա դարաշրջանում, որին բնորոշ է բազմազան կրոնների, ինչպես նաև աղանդների գոյությունը, ընդ որում՝ դրանց թիվն անընդհատ աճում է: Քանի որ ազգային մարմիններն ուղղակիորեն և շարունակաբար են առնչվում իրենց երկրներում կենսական դեր ունեցող ուժերի հետ, նրանք սկզբունքորեն ավելի նպաստավոր դիրքում են, քան միջազգային դատական ատյանները, երբ կարծիք են հայտնում նշված պահանջների հստակ իմաստի մասին այլ անձանց իրավունքների, ինչպես նաև նման տեղեկություններից թերևս խիստ վիրավորվող անձանց զգացմունքների ու խորին համոզմունքների պաշտպանությանն ուղղված ազատ արտահայտվելու իրավունքի «սահմանափակման» անհրաժեշտության առնչությամբ (տե՛ս *«Վինգրոուվն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Wingrove v UK)* 1996-V) գործով վճիռը, պարբ. 58):

Ուստի դատարանը նկատում է, որ հենց այս հայեցողության սահմանով է ներկա գործը տարբերվում *«Ֆերայն գեգեն թիերֆաբրիքեն (ՎԳԹ)» միավորումն ընդդեմ Շվեյցարիայի»* (*VGT Verein Gegen Tierfabriken v Switzerland*) գործից: Այս գործում դատարանը համարել է, որ արգելված հայտարարությունն առնչվել է հանրությանը հուզող այնպիսի հարցի, որի դեպքում պետությանը վերապահված էր հայեցողության ավելի նեղ սահման:

…

81. ..Դատարանը նշում է, որ մասնակից պետությունները ձեռք չեն բերել հստակ պայմանավորվածություն կրոնական բնույթ կրող հայտարարությունների հեռարձակումն օրենքով կարգավորելու մասին: Որոշ պետություններում, օրինակ՝ Հունաստանում, Շվեյցարիայում և Պորտուգալիայում, արգելվում է նմանօրինակ հայտարարությունների հեռարձակումը, այլ պետություններում, օրինակ՝ Իսպանիայում, չի թույլատրվում հեռարձակել վիրավորական համարվող կրոնական հայտարարություններ (տե՛ս նաև Council Directive 89/552/EEC): Բացի այդ, որոշ պետությունների, օրինակ՝ Նիդեռլանդների օրենսդրությամբ այդ բնույթի հայտարարություններ հեռարձակելու իրավունքի սահմանափակումներ չեն նախատեսվում: Ինչպես երևում է, կրոնական բնույթի հայտարարությունների հեռարձակումը կարգավորող օրենքների համատեքստում «այլ անձանց իրավունքները» պաշտպանելու պահանջների մասին միօրինակ պատկերացում գոյություն չունի (տե՛ս վերոնշյալ 67-րդ պարբերությունը):

82. Հաշվի առնելով տվյալ գործի հանգամանքները և նման հարցերում մասնակից պետություններին վերապահված հայեցողության սահմանը՝ դատարանը համարում է, որ պատասխանող պետությունն ապացուցել է, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածի իմաստով միջամտությունը դիմողի ազատ արտահայտվելու իրավունքին պատշաճ և բավականաչափ ծանրակշիռ փաստարկներով է հիմնավորվել:

Ուստի դատարանը կոնվենցիայի խախտում չի արձանագրել:

Կրոնական համոզմունքներն ազատ արտահայտելու իրավունքի ավելի ընդհանուր նկարագրությունը ներկայացվում է վերը՝ 601-րդ պարբերությունում *Չոուդհուրիի* (*Choudhury*) գործի կապակցությամբ (9-րդ հոդված):

Արվեստի միջոցով ազատ արտահայտվելու իրավունք

……

«Մյուլլերն ընդդեմ Շվեյցարիայի» (Müller v Switzerland) գործ, A.133 (1988) 13 EHRR 212
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Տվյալ գործով որպես դիմող հանդես եկող նկարիչ Յոզեֆ Մյուլլերի աշխատանքները բազմիցս ցուցադրվել են Շվեյցարիայի և այլ երկրների մասնավոր պատկերասրահներում և թանգարաններում: 1981 թ. նա հրավեր է ստացել մասնակցելու Շվեյցարիայի համադաշնությանը Ֆրիբուրգի կանտոնի միացման 500-րդ տարեդարձին նվիրված «Ֆրի-արտ-81» ժամանակակից արվեստի ցուցահանդեսին: Հետագայում ցուցահանդեսի կազմակերպիչները նրա հետ մեկտեղ դիմում են ներկայացրել տվյալ գործով: Ցուցահանդեսի բացմանը Մյուլլերը ներկայացել է երեք մեծ կտավով: Ցուցահանդեսի մասին ծանուցվել էր մամուլում և պաստառների վրա, ընդ որում՝ ցուցահանդեսի մուտքն ազատ էր: Մյուլլերի կտավները մի դեռատի աղջկա բուռն արձագանքն են հարուցել, և նրա հայրը բողոք է ներկայացրել տեղական դատախազություն: Դատախազը հայտնել է գործը հետաքննող դատավորին, որ Մյուլլերն իր կտավներով խախտում էր Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 204-րդ հոդվածը, որով արգելվում է անպարկեշտ հրապարակումներ անել: Այնուհետև դատավորն այցելել է ցուցահանդես, և նրա հրամանով ոստիկանները ցուցահանդեսից հեռացրել և բռնագրավել են Մյուլլերի կտավները: 1982 թ. Սարինե քաղաքի շրջանային քրեական դատարանը դիմողներին մեղավոր ճանաչեց անպարկեշտ հրապարակումներ անելու համար և 300 շվեյցարական ֆրանկ տուգանք նշանակեց յուրաքանչյուր կտավի համար, իսկ բռնագրավված կտավները դատավորի հրամանով տեղափոխվեցին կանտոնի արվեստի թանգարան: Ֆրիբուրգի կանտոնի դատարանը մերժեց դիմողների վերաքննիչ բողոքը և հայտնեց հետևյալը. «Մյուլլերի կտավներում սեռական հարաբերությունների մասին ակնարկվում է ոչ թե զսպված ձևով, որոշակի առարկայի կամ տեսարանի միջոցով, այլ՝ առաջնային նշանակությամբ, ընդ որում այդ հարաբերությունները պատկերված են ոչ թե կնոջ և տղամարդու գրկախառնության տեսքով, այլ արվամոլության, տղամարդկանց միջև բերանապղծության, անասնապղծության, կանգուն առնանդամների և ձեռնաշարժության պատկերների միջոցով»: Դաշնային դատարանը նույնպես մերժեց դիմողների բողոքը: 1988 թ. Սարինե քաղաքի շրջանային քրեական դատարանը բավարարեց բռնագրավված կտավները վերադարձնելու մասին Մյուլլերի դիմումը: Դիմողները գանգատ ներկայացրին հանձնաժողովին 10-րդ հոդվածով սահմանված իրավունքների խախտման մասին: Տասնմեկ կողմ և երեք դեմ ձայներով հանձնաժողովը հայտնել է այն կարծիքը, որ Մյուլլերի նկարները բռնագրավելով՝ ազգային մարմինները խախտել են նշված հոդվածի դրույթները, սակայն դիմողների դատապարտմամբ կոնվենցիայի որևէ դրույթ չի խախտվել:

ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

…

27. Անվիճարկելի է այն փաստը, որ դիմողներն իրացրել են ազատ արտահայտվելու իրավունքը: Այսպես, նշված իրավունքն իրացնելիս Մյուլլերը պատկերել և ցուցահանդեսում ներկայացրել է վերոնշյալ նկարները, իսկ մյուս ինը դիմողներն իրենց կազմակերպած «Ֆրի-արտ-81» ցուցահանդեսում հնարավորություն են տվել նկարչին հրապարակավ ցուցադրելու նշված աշխատանքները:

Հարկ է նշել, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածը չի նախատեսում արվեստի միջոցով ազատ արտահայտվելու խնդրո առարկա իրավունքը, սակայն այդ հոդվածը միաժամանակ տարբերակում չի դնում ազատ արտահայտվելու իրավունքի դրսևորման զանազան ձևերի միջև: Դատավարության կողմերն ընդունել են, որ 10-րդ հոդվածը նախատեսում է նաև արվեստի միջոցով ազատ արտահայտվելու իրավունք, մասնավորապես տեղեկություններ և գաղափարներ ստանալու և

տարածելու իրավունքի իմաստով, որի շնորհիվ անձինք հնարավորություն են ստանում մասնակցելու մշակութային, քաղաքական և սոցիալական հարցերին առնչվող տարբեր տեղեկությունների և գաղափարների փոխանակմանը: Անհրաժեշտության դեպքում կոնվենցիայի 10-րդ հոդվածի դրույթների մեկնաբանության ճշտությունը կարելի է հաստատել նույն հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասությամբ, որի մեջ խոսվում է «հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների», ասել է թե՝ այն լրատվամիջոցների մասին, որոնց գործունեությունն ընդգրկում է նաև արվեստի բնագավառը: Այն փաստը, որ «ազատ արտահայտվելու իրավունք» հասկացությունը ներառում է արվեստի միջոցով ազատ արտահայտվելու իրավունք, ամրագրված է նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով, որոնցում առանձնացվում է նաև «արվեստի միջոցով» տեղեկություններ և գաղափարներ տարածելու իրավունքը:

28. Դիմողներն իսկապես տուժել են իրենց ազատ արտահայտվելու իրավունքի իրացմանը ազգային մարմինների միջամտությունից, նախ՝ 1982 թ. փետրվարի 24-ին Սարիևե քաղաքի շրջանային քրեական դատարանի կայացրած վճռով, որը նույն թվականի ապրիլի 26-ին հաստատել է Ֆրիբուրգի կանտոնի դատարանը, իսկ 1983 թ. հունվարի 26-ին՝ նաև դաշնային դատարանը, և երկրորդ՝ դատարանի հրամանով Մյուլլերի կտավների բռնագրավման մասին որոշմամբ, որը որոշ ժամանակ անց անվավեր է ճանաչվել:

I. ԴԻՄՈՂՆԵՐԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ

1. «ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ»

29. Դիմողների կարծիքով՝ Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները, մասնավորապես «անպարկեշտ» բառը, «չափազանց անորոշ է, որպեսզի անհատները կարողանային կարգավորել իրենց վարքը, հետևաբար, ո՛չ նկարիչը, ո՛չ էլ ցուցահանդեսի կազմակերպիչներն ի վիճակի չեն եղել կանխատեսելու, որ իրենց գործողությունները հանցանքին հավասարազոր կլինեն: Պատասխանող պետությունը և հանձնաժողովը համաձայն չեն դիմողների այս կարծիքին:

Դատարանի նախադեպային բազայի համաձայն՝ «կանխատեսելիության» սկզբունքը կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված «օրենքով նախատեսված» ձևակերպմանը բնորոշ պահանջներից է: Իրավական նորմը կարող է «օրենք» համարվել, եթե միայն այն ձևակերպված լինի բավարար ճշգրտությամբ, որպեսզի քաղաքացիները կարողանան անհրաժեշտության դեպքում պատշաճ խորհրդատվության միջոցով տվյալ հանգամանքներին համապատասխան կանխատեսել այս կամ այն գործողության հետևանքները:

Տվյալ դեպքում հարկ է նաև նշել, որ դաշնային դատարանը մի շարք հետևողական որոշումներ է կայացրել «անպարկեշտ հրապարակումների» մասին: Այս որոշումները, որոնք հրապարակվելով մատչելի էին դարձել հանրությանը և կիրառվել ստորին ատյանի դատարանների կողմից, լրացրել են Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին կետի իմաստը: Ուստի կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դիմողների դատապարտումը «նախատեսված է եղել օրենքով»:

2. ՀԵՏԱՊՆԴՎՈՂ ՆՊԱՏԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

30. Պատասխանող պետությունը ներկայացրել է այն փաստարկը, որ գանգատի առարկա դարձած միջամտությունը դիմողների իրավունքներին միտված էր բարոյականության և այլ անձանց իրավունքների պաշտպանությանը: Վերջին փաստարկը հիմնավորելիս պետությունը նախ և առաջ վկայակոչել է «Ֆրի-արտ-81» ցուցահանդեսն այցելած տղամարդու և նրա դստեր արձագանքը:

Ուստի դիմողների դատապարտումը հետապնդել է 10-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված օրինական նպատակ:

3. «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ»

31. Դատավարության կողմերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում արված իրենց հայտարարություններում շեշտադրել են այն հարցը, թե վիճարկված միջամտությունը դիմողների ազատ արտահայտվելու իրավունքին անհրաժե՞շտ էր «ժողովրդավարական հասարակությունում» վերոնշյալ նպատակին հասնելու համար, թե՞ ոչ:

Դիմողների կարծիքով՝ արվեստի միջոցով ազատ արտահայտվելու իրավունքն այնպիսի կենսական կարևորություն է ներկայացրել, որ նկարչի աշխատանքների ցուցադրման արգելքը կամ հանցանք գործելու համար նրա դատապարտումը խաթարել է 10-րդ հոդվածով ամրագրված իրավունքի բուն էությանը և կործանարար հետևանքներ ունեցել ժողովրդավարական հասարակության համար: Վեճի առարկա դարձած նկարներում անկասկած արտացոլվել է սեքսուալություն հասկացությունը, որը հակասում էր արդի ժամանակներում գերակշռող հասարակության բարոյականությանը, սակայն դիմողները բերել են այն փաստարկը, որ հարկ է հաշվի առնել արվեստի գործ հանդիսացող վերոնշյալ կտավների խորհրդանշական իմաստը: Արվեստի միջոցով ազատ արտահայտվելու իրավունքը կկորցներ իր նշանակությունը, եթե ժամանակակից փորձարարա-

կան արվեստի ցուցահանդեսում անհնար լիներ արվեստասերներին ներկայացնել Յոզեֆ Ֆելիքս Մյուլլերի նման նկարիչների գործերը:

Մյուս կողմից՝ պատասխանող պետությունը հայտարարել է դիմողների իրավունքին միջամտելու անհրաժեշտության մասին՝ հիշատակելով մասնավորապես նկարների թեմատիկան և դրանց ցուցադրման առանձնահատուկ հանգամանքները:

Մյուլլերի նկարների գեղարվեստական կամ խորհրդանշական արժեքից անկախ, ելնելով նմանօրինակ պատճառաբանություններից՝ հանձնաժողովը համարել է, որ Շվեյցարիայի դատարանները բավականաչափ հիմքեր են ունեցել վերոնշյալ նկարներն անպարկեշտ համարելու, ինչպես նաև քրեական օրենսգրքի 204-րդ հոդվածով դիմողներին մեղավոր ճանաչելու համար:

32. Դատարանը եզրակացրել է, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետում «անհրաժեշտ» ածականը նշանակում է հրատապ սոցիալական անհրաժեշտության առկայությունը (ամենավերջին մեջբերումը տե՛ս *Լինգենսի* (*Lingens*) գործով 1986 թ. հուլիսի 8-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 103, էջ 25, պարբ. 39): Դիմողների իրավունքներին միջամտելու անհրաժեշտությունը որոշելիս մասնակից պետություններն օգտվում են հայեցողության որոշակի սահմանից, որը, սակայն, ուղեկցվում է եվրոպական կառույցների վերահսկողությամբ և ընդգրկում է այդ սահմանը կենսագործող օրենքներն ու որոշումները:

Վերահսկողության իրավասության շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը չի կարող սահմանափակվել ներպետական դատարանի կայացրած վիճարկվող որոշումների առանձին քննությամբ: Փոխարենը, դատարանը պետք է ամբողջ գործի համատեքստում ուսումնասիրի այդ որոշումները, ինչպես նաև՝ խնդրո առարկա կտավները և դրանց ցուցադրման համատեքստը: Դատարանը պետք է որոշի՝ տվյալ դեպքում գանգատի առարկա դարձած միջամտությունը դիմողների իրավունքներին համաչա՞փ էր հետապնդվող օրինական նպատակին, և արդյոք Շվեյցարիայի դատարաններն այդ միջամտությունը պատշաճ ու բավարար փաստարկներո՞վ են հիմնավորել, թե՞ ոչ (տե՛ս նույն վճիռը, պարբ. 40):

Արվեստի գործեր ստեղծող, տարածող կամ ցուցադրող անձինք նպաստում են գաղափարների և կարծիքների փոխանակմանը, ինչը բնորոշ է ժողովրդավարական հասարակությանը: Ուստի պատասխանող պետությունը պարտավոր է անհիմն չխախտել ազատ արտահայտվելու իրավունքը:

34. Նկարիչները, ինչպես նաև նրանց գործերը տարածող անձինք, անշուշտ, անձեռնմխելիություն չունեն կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված սահմանափակումներից: Ազատ արտահայտվելու իրավունքն իրացնող յուրաքանչյուր ոք նշված կետի պայմանների համաձայն՝ ստանձնում է յուրահատուկ «պարտականություններ և պատասխանատվություն», որոնց շրջանակը կախված է տվյալ անհատի դիրքից և նրա գործածած միջոցներից (տե՛ս *mutatis mutandis* վերոնշյալ *Հենդիսայդի* (*Handyside*) գործով կայացրած վճիռը, պարբ. 49): Քննելով «ժողովրդավարական հասարակությունում» դիմողների դեմ կիրառված պատժամիջոցի անհրաժեշտության հարցը՝ դատարանը չի կարող աչքաթող անել գործի նշված հայեցակետը:

33. Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 204-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝ դիմողների դատապարտումը միտված էր բարոյականության պաշտպանությանը: Տվյալ դեպքում, ինչպես նաև վերոնշյալ *Հենդիսայդի* (*Handyside*) գործով վճիռ (պարբ. 48) կայացնելիս մասնակից պետությունների իրավակարգերում և սոցիալական կարգում հնարավոր չէ բարոյականության մասին միօրինակ եվրոպական պատկերացում գտնել: Հատկապես մեր դարաշրջանում այս հարցի շուրջ հայացքների հեռահար զարգացման պայմաններում բարոյականության պահանջների մասին տեսակետը տարբերվում է ըստ ժամանակի և վայրի: Երկրում կենսական դերակատարում ունեցող ուժերի հետ անմիջական ու շարունակական կապի շնորհիվ ազգային մարմիններն սկզբունքորեն ավելի նպաստավոր դիրքում են, քան միջազգային դատական ատյանները, երբ կարծիք են հայտնում վերոնշյալ պահանջների հստակ նշանակության, ինչպես նաև դրանց բավարարման համար կիրառված «սահմանափակման» կամ «պատժամիջոցի» մասին:

36. Տվյալ դեպքում հարկ է ընդգծել այն փաստը, որ ինչպես Շվեյցարիայի Ֆրիբուրգի կանտոնի առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների, այնպես էլ դաշնային դատարանի համաձայն՝ վերոնշյալ կտավներում կոպիտ կերպով պատկերվել են սեռական հարաբերություններ, մասնավորապես մարդկանց և կենդանիների միջև: Կտավները պատկերվել են ցուցահանդեսի բացումից անմիջապես առաջ և արտահայտել ցուցահանդեսի նպատակները, ընդ որում, նախատեսվածի համաձայն, ցուցահանդեսը պետք է ինքնաբուխ բնույթ ունենար: Բացի այդ, նկարները մատչելի էին հանրության լայն շրջաններին, քանի որ ցուցահանդեսի կազմակերպիչները չեն սահմանել մուտքավճար կամ այցելուների տարիքի սահմանափակում: Եվ իսկապես, Մյուլլերի նկարները ներկայացվել են այնպիսի ցուցահանդեսում, որի մուտքն ազատ էր անխտիր բոլորի համար, և որի կազմակերպիչների նպատակն էր գրավել հանրության լայն զանգվածների ուշադրությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համամիտ է Շվեյցարիայի դատարանների հետ, որ սեռական բարոյականության ընկալումը փոխվել է վերջին տարիների ընթացքում: Այնուհանդերձ, Մյուլլերի կտավներն ուշադիր ուսումնասիրելուց հետո դատարանը հիմնավորված է համարել Շվեյցարիայի դատարանների այն կարծիքը, որ սեռականության առավել կոպիտ ձևերն ընդգծող այդ կտավները կարող են վիրավորել «սեռական պարկեշտության վերաբերյալ սովորական պատկերացում ունեցող անձանց զգացմունքները», ինչը համապատասխանում է Շվեյցարիայի օրենսդրությամբ

«անպարկեշտություն» բառի սահմանմանը: Հաշվի առնելով ներկա գործի հանգամանքներում կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով Շվեյցարիայի դատարաններին վերապահված հայեցողության սահմանը՝ այդ դատարաններն իրավունք ունեին անպարկեշտ հրապարակումների համար դիմողների տուգանքն անհրաժեշտ համարել բարոյականության պաշտպանության տեսանկյունից:

Դիմողները պնդել են, որ հանրությունը վերոնշյալ նկարների ցուցահանդեսի դեմ չի բողոքել, իսկ մամուլը հիմնականում արտահայտվել է նրանց օգտին: Նաև ճիշտ է, որ «Ֆրի-արտ 81» ցուցահանդեսից առաջ և հետո Յոզեֆ Ֆելիքս Մյուլլերը թերևս կարող էր ցուցադրել նույնանման կտավներ Շվեյցարիայի այլ մասերում և արտասահմանում: Այնուհանդերձ, դա չի նշանակում, որ տվյալ գործի բոլոր հանգամանքների համատեքստում Ֆրիբուրգում դիմողների դատապարտման հիմքում ընկած չի եղել իսկական սոցիալական անհրաժեշտությունը, որի առկայության փաստը հաստատել են գործը քննող Շվեյցարիայի բոլոր երեք դատարանները:

37. Դատարանը եզրակացրել է, որ դիմողների կողմից վիճարկված միջոցը կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում չի եղել:

II. ՆԿԱՐՆԵՐԻ ԱՌԳՐԱՎՈՒՄ

…

3. «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ»

40. Մարդու իրավունքների եվրոպական դատարանում անդրադառնալով նկարների առգրավման հարցին՝ դատավարության կողմերն իրենց հայտարարություններում կրկին շեշտադրել են դիմողների իրավունքներին միջամտելու «անհրաժեշտության» հարցը:

Դիմողները Մյուլլերի նկարների առգրավումը հետապնդվող նպատակին համաչափ չեն համարել: Նրանց կարծիքով՝ ներպետական դատարանները կարող էին դիմել պակաս խիստ միջոցների կամ մարդու իրավունքների պաշտպանության նկատառումներից ելնելով՝ կարող էին բացարձակապես ոչինչ չձեռնարկել: Դիմողները պնդել են, որ նկարներն առգրավելով՝ Ֆրիբուրգի իշխանությունները երկրի բոլոր քաղաքացիներին պարտադրել են բարոյականության մասին իրենց կարծիքը, ինչն անընդունելի է, վիճելի և հակասում է կոնվենցիայի դրույթներին, եթե նկատի է առնվում տվյալ հարցով արտահայտված կարծիքների հայտնի բազմազանությունը:

Պետությունը մերժել է դիմողների փաստարկները: Հրաժարվելով Մյուլլերի նկարները ոչնչացնելու խիստ պատժամիջոցից՝ Շվեյցարիայի դատարանները ձեռնարկել են նվազագույն անհրաժեշտ քայլը: 1988 թ. հունվարի 20-ին անվավեր է ճանաչվել նկարների առգրավման մասին որոշումը, ինչն ակնհայտորեն վկայում է այն մասին, որ նկարների առգրավումը չի հակասել հետապնդվող նպատակի համեմատ տվյալ միջոցի համաչափության սկզբունքին, այլ ընդհակառակը, ապացուցել է, որ ներպետական դատարաններն այդ սկզբունքով են առաջնորդվել: Ի դեպ, նկարիչը կարող էր ավելի վաղ ներկայացնել նկարների առգրավման մասին որոշումն անվավեր ճանաչելու դիմումը:

Հանձնաժողովը համարել է, որ նկարների առգրավումը հետապնդվող օրինական նպատակին համաչափ չի եղել: Հանձնաժողովի կարծիքով՝ դատական մարմիններն իրավասու չեն համեմատել դատավարության հակադիր կողմերի շահերը և սահմանել այնպիսի պատժամիջոցներ, որոնք ավելի մեղմ են, քան անորոշ ժամանակով նկարների առգրավումը:

…

42. Մասնակից պետություններում գործող միանման օրենքով սկզբունքորեն թույլատրվում է առգրավել «այնպիսի առարկաներ, որոնց տարածումն արգելված է օրենքով և սպառնում է հանրության շահերին» (տե՛ս *mutatis mutandis* վերոնշյալ *Հենդիսայդի* (*Handyside*) գործով կայացված վճիռը, շարք A, թիվ 24, էջ 30, պարբ. 63): Տվյալ դեպքում ներպետական դատարանները հետապնդել են նման հանցանքի կրկնությունից հանրության պաշտպանելու նպատակ:

43. Ուստի կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն՝ դիմողների դատապարտումը պայմանավորված էր իսկական սոցիալական անհրաժեշտությամբ (տե՛ս վերոնշյալ 36-րդ պարբերությունը): Դատարանի կարծիքով՝ նկարների առգրավման մասին միաժամանակ ընդունված որոշման հիմքում ընկած են նաև նշված միջոցի նույն պատճառները:

Ինչպես ճիշտ ընդգծել են դիմողները և հանձնաժողովը, նմանօրինակ պարագայում, անկասկած, հատուկ խնդիր է առաջանում, քանի որ առգրավվել են աշխատանքների բնօրինակները, որոնք նկարիչն այլևս իր հայեցողությամբ գործածել չի կարող:

Ուստի Յոզեֆ Ֆելիքս Մյուլլերը զրկվել է իր նկարներն այնպիսի վայրերում ցուցադրելու հնարավորությունից, որտեղ բարոյականության պաշտպանության պահանջները Ֆրիբուրգի համեմատ ավելի մեղմ են:

Այնուհանդերձ, պետք է նշել, որ առգրավված արվեստի գործերի հեղինակը կարող է առգրավման մասին որոշումն անվավեր ճանաչելու կամ փոխելու դիմում ներկայացնել կանտոնի դատարան, եթե տվյալ գործն այլևս վտանգ չի ներկայացնում հանրության համար, կամ եթե մեկ այլ ավելի մեղմ միջոցի կիրառումը բավարար կլինի հանրության կողմից ընդունված բարոյականությունը պաշտպանելու համար: 1988 թ. հունվարի 20-ին կայացրած որոշման մեջ Սարինե քաղաքի շրջանային քրեական դատարանը հայտնել է, որ նկարների առգրավումը «ոչ թե մշտական, այլ ժամանակավոր բնույթ ունի, ինչը դիմողին նշված որոշման վերանայում հայցելու հնարավորություն էր տալիս»: Դատարանը բավարարել է պրն Մյուլլերի

դիմումը, քանի որ «կանխիչ միջոցի գործառույթն արդեն իրագործվել է, ասել է թե՝ երաշխավորվել է, որ առանց նախնական թույլտվության նման նկարներն այլևս հրապարակավ չեն ցուցադրվի» (տե՛ս նույն տեղում):

Հարկ է նշել, որ առաջին դիմողը մոտ ութ տարի ժամկետով զրկվել է իր նկարներից, սակայն նրան որևէ կերպ չեն արգելել դրանք վերադարձնելու մասին դիմումն ավելի վաղ ներկայացնել: Հարկ է նաև նշել, որ հանրությանն արդեն մատչելի էր Բազելի վերաքննիչ դատարանի նմանօրինակ նախադեպը: Ավելին, հանձնաժողովի՝ 1985 թ. դեկտեմբերի 6-ին կայացած դատավճիռների ժամանակ պետության ներկայացուցիչն ինքն է այդ հարցի վրա ուշադրություն դարձրել: Ուստի Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ապացույցներ չունի, որ ներպետական դատարանները կմերժեին դիմողի նման դիմումը:

Հաշվի առնելով սույն գործի հանգամանքները և պետության հայեցողության սահմանը՝ Շվեյցարիայի դատարաններն իրավունք են ունեցել եզրակացնելու, որ դիմող Մյուլլերի նկարների առգրավումն «անհրաժեշտ» էր բարոյականությունը պաշտպանելու համար:

44. Ի վերջո, դատարանը եզրակացրել է, որ վիճարկված միջոցով կոնվենցիայի 10-րդ հոդվածը չի խախտվել:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

Վեց կողմ և մեկ դեմ ձայներով վճռել է, որ դիմողներին դատապարտելով՝ պատասխանող պետությունը չի խախտել կոնվենցիայի 10-րդ հոդվածը:

Հինգ կողմ և երկու դեմ ձայներով դատարանը վճռել է, որ Մյուլլերի նկարների առգրավումը չի հակասել կոնվենցիայի 10-րդ հոդվածին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Նախագահող դատավոր Ռիսդալի գլխավորությամբ մեծամասնություն են կազմել դատավորներ Կրեմոնան, Բինդշեդլեր-Ռոբերտը, Էվանսը և Բերնհարդտը: Դատավոր Շպիլմանը չհամընկնող կարծիք է հայտնել, քանի որ նա համոզված էր, որ դիմողների դատապարտման ու Մյուլլերի նկարների առգրավման հարցերը հարկավոր էր միասին դիտարկել: Դատավորը հայտնել է հետևյալ տեսակետը. «Ազատ արտահայտվելու իրավունքը կանոն է, իսկ այդ իրավունքին պետության ըստ հարկի հիմնավորված միջամտությունը պետք է մնա այդ կանոնի բացառություն»: Հաշվի առնելով այն փաստը, որ 1988 թ. նկարներն վերադարձվեցին դիմող Մյուլլերին, դատավոր Շպիլմանը կարծում է, որ 1981 թ. այդ նկարները առգրավելու կամ դիմողներին դատապարտելու կարիք չկար: Դատավոր Դե Մեյերը մասնակի չհամընկնող կարծիք է արտահայտել նկարներն առգրավելու որոշման վերաբերյալ՝ նշելով, որ 1981 թ. տեղի ունեցած ցուցահանդեսի համատեքստում ինքը նման միջոցի դիմելու անհրաժեշտություն չի տեսնում:

2 Որպես արվեստագետներին և ցուցահանդեսների կազմակերպիչներին դատապարտելու կամ արվեստի գործերն առգրավելու պատճառաբանություն 10-րդ հոդվածի 2-րդ կետը պետությունների կողմից վկայակոչելու փորձերը կանխելու համար բավարար չէ արվեստի գործերի հասանելիությունը սահմանափակել հասարակության որոշ հատվածներով: Այսպես, թեպետև *«Օտտո Փրեմինգեր ինստիտուտն ընդդեմ Ավստրիայի»* (*Otto Preminger Institute v Austria*, 1994, 19 EHRR 34, A.295-A) գործում նշվել է, որ մուտքը կինոթատրոն վճարովի էր և թույլատրվում էր միայն 17 տարին լրացած անձանց համար, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրակացրել է, որ Ավստրիայի ազգային մարմինների ձեռնարկած միջոցները, այդ թվում՝ ֆիլմի առգրավումը, օրինական էին 10-րդ հոդվածի 2-րդ կետով, քանզի դրանք անհրաժեշտ էին տեղի կաթոլիկ հավատացյալների զգացմունքները պաշտպանելու համար:

3 Տե՛ս նաև *«Ուինգրոուվն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Wingrove v UK) Որոշումների և վճիռների զեկույցներ* (1996) 24 EHRR 1, 1996-V, 1937) վերոնշյալ գործը, որով դիմողի՝ մի տեսահոլովակի տարածման արգելքով կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում ճանաչելու պահանջը նույնպես ձախողվել է:

4 Արվեստի գործերում կարող է արտահայտվել կարևոր քաղաքական հայտարարություն կամ ուղերձ:

«Քարաթան ընդդեմ Թուրքիայի» (*Karata v Turkey*), վճիռը կայացվել է 1999 թ. հուլիսի 8-ին) գործը քննելիս դատարանն ուսումնասիրել է ազատ արտահայտվելու իրավունքի այս երկակի ձևը: Տվյալ գործով դիմողը քրդական ծագում ունեցող մի թուրք է, որը 1991 թ. հրատարակել է իր բանաստեղծությունների ժողովածուն «Դերսիմ՝ ընդվզման երգը» խորագրով: Դերսիմը Թուրքիայի նախկին շրջաններից մեկի անվանումն է, որտեղ 1847-1938 թթ. հաճախ ընդհարումներ էին տեղի ունենում քրդական ցեղերի և պետության զինված ուժերի միջև: Բանաստեղծություններում կային հետևյալ տողերը.

…հազարամյակներ շարունակ
մեր կյանքից չի հեռացել աղետը,
հանուն մեր Քրդստանի,
հանուն մեր Դերսիմի
մենք պատրաստ ենք զոհաբերել մեր գլուխները՝
ապստամբության հրով ոգևորված:
…
Օսմանյան պռոնիկի լակոտները տրորում են մեր սարերը
և աղտոտում մեր առուների ջրերը:
…
Նրանք պատրաստում են ցեղասպանություն,
որ սահմաններ չունի:

Որոշ ժամանակ անց Ստամբուլի ազգային անվտանգության դատարանը մեղավոր է ճանաչել դիմողին պետության անբաժանելիության դեմ ուղղված գաղափարներ տարածելու համար, նրան դատապարտել մեկ տարի ութ ամիս ազատազրկման և տուգանել 41 միլիոն թուրքական լիրա: Հանձնաժողովը, քսանվեց կողմ և վեց դեմ ձայներով, մերժել է դիմողի գանգատը կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման առնչությամբ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշել է, որ միջամտությունը դիմողի ազատ արտահայտվելու իրավունքին «նախատեսված էր օրենքով» և ուղղված էր ազգային անվտանգության և տարածքային ամբողջականության պահպանման, ինչպես նաև անկարգությունների և հանցագործությունների կանխման օրինական նպատակներին: Սակայն դատարանի մեծամասնությունը՝ տասներկու կողմ և հինգ դեմ ձայներով, անհամաչափ արձագանք է համարել դիմողի դատապարտումը և նրա գործով կայացրած դատավճիռը:

Վերոնշյալ ժողովածուի բանաստեղծություններում, հաճախ դիմելով պաթոսի և փոխաբերությունների միջոցներին, հեղինակը կոչ է արել ընթերցողներին հանուն Քրդստանի զոհաբերել իրենց կյանքը և մի քանի պարբերություններում խիստ ագրեսիվ բնույթի հայտարարություններ է արել Թուրքիայի իշխանությունների հասցեին: Այդ բանաստեղծությունները բառացիորեն մեկնաբանելու դեպքում կարող է թվալ, որ հեղինակն ընթերցողներին ատելության, ապստամբության ու բռնության դիմելու կոչ է անում: Այդուհանդերձ, որոշելու համար՝ այդպես է, թե ոչ, հարկ է մտապահել, որ հեղինակը որպես միջոց ընտրել է բանաստեղծությունը, որն ունի ընթերցողների ավելի փոքր շրջանակ:

Տվյալ դեպքում բանաստեղծությունները միաձուլանակ ունեն քաղաքական ուղղվածություն: Պատկերավոր արտահայտությունների միջոցով հեղինակն իր խորին դժգոհությունն է հայտնում Թուրքիայում քուրդ բնակչության ճակատագրի առնչությամբ: Այդ կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հիշեցնում է, որ շատ չեն այն դեպքերը, երբ կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքական հայտարարությունների կամ հանրությանը հուզող հարցերի շուրջ բանավեճի իրավունքը կարող է սահմանափակվել:

Այնուհանդերձ, դատարանն ընդգծում է, որ դիմողը մասնավոր անձ է, որն իր հայացքներն արտահայտել է ըստ էության ընթերցողների շատ փոքր շրջանակին ուղղված բանաստեղծությունների միջոցով, ոչ թե զանգվածային լրատվամիջոցներով, ինչը վկայում է «ազգային անվտանգության», «հասարակական կարգի» և «տարածքային ամբողջականության» վրա դիմողի բանաստեղծությունների հնարավոր սահմանափակ ազդեցության մասին: Այսպիսով, թեև վերոնշյալ բանաստեղծությունների որոշ հատվածներ խիստ ագրեսիվ ոճով են գրված, և թվում է, թե հեղինակը բռնության դիմելու կոչեր է անում, սակայն դատարանը, հաշվի առնելով այդ բանաստեղծությունների գեղարվեստական բնույթը և ընթերցողների վրա գործած սահմանափակ ազդեցությունը, դրանք դիտարկել է ոչ այնքան որպես ապստամբության կոչ, որքան՝ որպես բարդ քաղաքական իրավիճակով պայմանավորված խորին ընկճվածության դրսևորում (պարբ. 49–52):

Այսպիսով, դատարանը քաղաքական հարցերի շուրջ ազատ արտահայտվելու ավելի մեծ իրավունք էր վերապահում արվեստի քիչ տարածված, թերևս բացառիկ բնագավառներում ստեղծագործող անհատ-

ներին: Սակայն դատարանի նախագահի գլխավորությամբ չորս դատավոր չհամընկնող կարծիք է արտահայտել և կարևոր գործոն համարել ոչ թե բանաստեղծությունների ձևը, այլ դրանց բովանդակությունը:

Այն դեպքերում, երբ խոսքը հակադիր կողմերի՝ կոնվենցիայով սահմանված շահերի մասին է, դատարանը պետք է կշռադատի դրանք գերակա շահը բացահայտելու նպատակով: Եթե ազատ արտահայտվելու իրավունքին հակադրվող շահն առնչվում է կյանքի իրավունքին կամ անձի անձեռնմխելիությանը, ապա նժարը թեքվում է դրանց կողմ, իսկ ազատ արտահայտվելու իրավունքը կորցնում է իր առաջնությունը (տե՛ս, օրինակ՝ *«Զանան ընդդեմ Թուրքիայի» (Zana v Turkey)* գործը, 1997):

Հետևաբար, սովորական պայմաններում թերևս համեմատաբար հեշտ է եզրակացնել, որ ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ է սահմանափակել խոսքի ազատությունը, եթե այն ներկայացնում է բռնություն հրահրում: Այդ կապակցությամբ հարկ է հիշել, որ բռնությունը՝ որպես քաղաքական հարցերի շուրջ արտահայտվելու միջոց, ժողովրդավարության հակապատկերն է՝ հետապնդվող նպատակներից անկախ, ուստի և բռնության հրահրումը միտված է ժողովրդավարության խաթարմանը: Այս ամենից հետևում է, որ բռնությունն իր էությամբ հակասում է կոնվենցիային: Ի տարբերություն գաղափարների ազատ հարթակ ջատագովող հայացքների՝ բռնության հրահրումը երկխոսության, տարբեր կարծիքներ և տեսություններ փորձելու մերժում է՝ նախապատվությունը տալով ուժի և իշխանության պայքարին: Բռնության հրահրումը դուրս է մնում կոնվենցիայի 10-րդ հոդվածի պաշտպանության շրջանակներից:

Դատարանի մեծամասնությունը պնդել է, որ բանաստեղծությունն արվեստի միջոցով ազատ արտահայտվելու իրավունքի այնպիսի ձևերից է, որի «ընթերցողները փոքրամասնություն են կազմում», և որի «ազդեցությունն ընթերցողների վրա սահմանափակ է»: Մենք համաձայն չենք մեծամասնության հետ: Թվում է, թե դատարանն ավելի շատ է կարևորել ստեղծագործությունների ձևը, քան բովանդակությունը, այսինքն՝ ոճը և իմաստը: Մեր կարծիքով՝ դատարանը պետք է զգուշանա իրականությունից կտրված այս մոտեցումը որդեգրելուց: Ջինված պայքարի չափածո կոչի օրինակ է «Մարսելյոզը» (դատավորներ Վիլդհաբերի, Պաստոր Ռիդրուեխոյի, Կոստայի և Բակայի համատեղ մասնակի չհամընկնող կարծիք):

Այնուհանդերձ, ավելի ուշ, *«Ալինակն ընդդեմ Թուրքիայի» (Alinak v Turkey)* գործում (վճիռը կայացվել է 1999 թ. հուլիսի 8-ին) ժողովրդավարական հասարակությունում հեղինակի բառերը գրաքննության ենթարկելու անհրաժեշտությունը որոշելիս պալատը, դատավոր Կոստայի նախագահությամբ, միաձայն հաշվի է առել այն հանգամանքը, որ հրատարակված գործը վեպ է: Նախկին խորհրդարանի անդամ դիմողը գրել է հնարովի կերպարներով մի վեպ, որի հիմքում, սակայն, ընկած են ներկայիս Թուրքիայի գյուղերի բնակչության նկատմամբ անվտանգության ծառայության աշխատակիցների վատ վերաբերմունքի մասին պատմող իրական պատմություններ: Գրքի որոշ հատվածներ հուզական մեծ լիցք ունեն և քննադատական խոսքեր են բովանդակում Թուրքիայի իշխանությունների հասցեին: Ստորև ներկայացված է նման հատվածներից մեկը.

Սատկացնելով՝ դրանց վերջը չես տա: Դրանք շատ-շատ են: Ում էլ սատկացնես, դա անիվի ատամներից միայն մեկն է: Եթե անգամ կոտրես ատամը, այնքան ստոր մարդ կա, որ սպասում է խցկվել դրա տեղը: Քանի դեռ կռիվ ես տալիս առաջին գծի դեմ, բռնակալության հին համակարգը շարունակում է գործել ու այդպես շարունակ: Այդ մեքենայի վերջը պետք է տանք:

Վեպի տպագրությունից մի քանի շաբաթ անց ազգային անվտանգության դատարանը կարգադրել է առգրավել գրքի օրինակները: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պալատը հաստատել է հետևյալը.

41. Դատարանը նշում է, որ գիրքը պարունակում է այնպիսի հատվածներ, որտեղ պատկերավոր մանրամասներով նկարագրվում են գյուղացիների նկատմամբ մտացածին վատ վերաբերմունքը և դաժանությունները, ինչն անկասկած ընթերցողի մեջ առաջացնում են սաստիկ թշնամություն: Վեպի որոշ հատվածներ բառացիորեն մեկնաբանելիս կարելի է ենթադրել, որ հեղինակն ընթերցողներին ատելության, ապստամբության ու բռնության դիմելու կոչ է անում: Այդուհանդերձ, որոշելու համար՝ այդպես է, թե ոչ, հարկ է մտապահել, որ հեղինակն իր հայացքները շարադրել է վեպում, իսկ վեպը գեղարվեստական արտահայտության այնպիսի միջոցներից է, որը, օրինակ, լրատվամիջոցների համեմատ ունի ընթերցողների բավական փոքր շրջանակ»:

…

45. Այսպիսով, թեև թվում է, թե գրքի որոշակի հատվածներ գրված են խիստ թշնամական տոնով, սակայն դատարանը կարծում է, որ դրանց գեղարվեստական բնույթն ու սահմանափակ ազդեցությունը վերածվում են ոչ թե բռնության դիմելու կոչի, այլ բարդ քաղաքական դրությամբ պայմանավորված խորին ընկճվածության դրսևորման:

Պալատը եզրակացրել է, որ դիմողի գրքի առգրավումն անհամաչափ է հետապնդվող նպատակին և հակասում է կոնվենցիայի 10-րդ հոդվածին:

Առևտրային հարցերի շուրջ ազատ արտահայտվելու իրավունք

……

«Մարքթ ինթերն ֆերլագ» ՍՊԸ-ն և Քլաուս Բեերմանն ընդդեմ Գերմանիայի» գործ (Markt intern Verlag GmbH and Klaus Beermann v Germany),

A.164 (1989) 12 EHRR 161

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Տվյալ գործով որպես դիմող հանդես եկող հրատարակչական ընկերությունը ներկայացնում էր մանրածախ առևտրի փոքր ու միջին ընկերությունների շահերը՝ դրանք պաշտպանելով մրցակից հանրախանութներից և փոստային պատվերներով մատակարար ընկերություններից: Պրն Բեերմանը զբաղեցնում էր գլխավոր խմբագրի պաշտոնը: Հրատարակչությունը տպագրել և իր պարբերականի բաժանորդներին է վաճառել ամենշաբաթյա տեղեկագիր՝ տեղեկացնելով նրանց գեղեցկության ու խնամքի պարագաների արտադրությամբ զբաղվող խոշոր ընկերությունների առևտրային գործունեության մասին: 1975 թ. Բեերմանը տեղեկագրում հոդված է տպագրել «Քասմեթիկ քլաբ ինթերնեյշնլ» (Cosmetic Club International) փոստային պատվերներով մատակարար անգլիական ընկերության մասին: Խմբագիրն իր հոդվածում արտատպել է գերմանացի մի քիմիկոսի այն հայտարարությունները, որ նշված անգլիական ընկերությունը չի հատուցել նրան վերադարձված ապրանքի գումարը: Ըստ հոդվածում բերված տեղեկությունների՝ փոստային պատվերներով մատակարար ընկերության տնօրինությունից հայտնել են, որ իրենք տեղյակ չեն եղել բողոքի մասին և խոստացել են արագ պարզել հարցը: Հարկ է նշել, որ հրատարակչության ամենշաբաթյա տեղեկագրում նախկինում հոդվածներ են հրատարակվել «Քասմեթիկ քլաբ ինթերնեյշնլ» ընկերության մասին, որոնցում մանրածախ առևտրականներին խորհուրդ էր տրվում այդ ընկերության հետ գործարքներ կնքելիս աչալրջություն ցուցաբերել: Ի վերջո, «Քասմեթիկ քլաբ ինթերնեյշնլ» ընկերությունը բողոք է ներկայացրել դիմողների դեմ Համբուրգի շրջանային դատարան, և դատարանն արգելել է տեղեկագրում կրկնել Բեերմանի 1975 թ. հոդվածում բովանդակող հայտարարությունները: Դիմողները դատական արգելքի դեմ բողոք են ներկայացրել Հանզեթիկի վերաքննիչ դատարան, որն էլ բավարարել է նրանց բողոքը: Այնուհետև ընկերությունը բողոք է ներկայացրել արդարադատության դաշնային դատարան, որի որոշմամբ դիմողներին արգելվել է կրկին տպագրել Բեերմանի 1975 թ. այդ հոդվածում բովանդակող հայտարարությունները, իսկ որոշումը խախտելու դեպքում սահմանվել է մոտ 500.000 գերմանական մարկ տուգանք կամ մինչև վեց ամիս ազատազրկում: Արդարադատության դաշնային դատարանն առաջնորդվում էր 1909 թ. «Անարդար մրցակցության մասին» օրենքով, ըստ որի՝ «գործարարության ոլորտում մրցակցության նպատակներով ազնիվ սովորույթներին հակասող միջոցների դիմած յուրաքանչյուր անձի կարող է արգելվել հետագայում նման միջոցներ ձեռնարկել, ընդ որում՝ նա կարող է պատասխանատու համարվել վնասի փոխհատուցման համար»: Դաշնային սահմանադրական դատարանը հրաժարվել է վերանայել վճիռը: Այնուհետև դիմողները գանգատ են ներկայացրել հանձնաժողովին, որը տասներկու կողմ և մեկ դեմ ձայներով արձանագրել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

…

ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

24. Դիմողները պնդել են, որ 1909 թ. «Անարդար մրցակցության մասին» օրենքի 1-ին բաժնով իրենց վրա արգելք դնելով և այդ օրենքը լայն իմաստով մեկնաբանելով՝ Գերմանիայի դատարանները խախտել են կոնվենցիայի 10-րդ հոդվածը:

Ա. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

25. Պատասխանող պետությունն սկզբից ևեթ վիճարկել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի կիրառելիությունը: Դատարանում պետությունը պնդում էր, որ դիմողների գործը 10-րդ հոդվածով քննելու դեպքում պարզ է դառնում, որ տվյալ գործում այդ հոդվածը միայն նվազագույն չափով է կիրառելի, ինչը պայմանավորված է 1975 թ. նոյեմբերի 20-ին հրապարակված հոդվածի բովանդակությամբ և «Մարքթ ինթերն ֆերլագ» (գերմ. *Markt intern Verlag)* ընկերության ծավալած գործունեության բնույթով: Հրատարակչության կողմից տպագրվող շաբաթական տեղեկագրի ձևակերպումը և նպատակները վկայում են, որ այն միտված է ոչ թե հասարակական կարծիքի վրա ազդելուն կամ դրա փոփոխմանը, այլ մանրածախ առևտրով զբաղվող մի խումբ ձեռնարկությունների տնտեսական շահերի պաշտպանությանը: Պատասխանող պետության կարծիքով՝ նման արարքը սահմանվում է առևտրային գործունեությամբ զբաղվելու և ազատ մրցակցության իրավունքով, որը կոնվենցիայով չի պաշտպանվում:

Դիմողները չեն հերքել, որ իրենք պաշտպանում էին մանրածախ առևտրով զբաղվող ընկերությունների շահերը: Սակայն հաստատել են, որ «Մարքթ ինթերն ֆերլագ» ընկերությունն անմիջապես չէր միջամտում առաջարկի և պահանջարկի գործընթացներին: Հրատարակչությունը ֆինանսավորվում էր միայն պարբերականից ստացվող բաժանորդավճարներով և ջանք չէր խնայում իր ընթերցողների պահանջմունքները բավարարելու համար, ում մտահոգող հարցերն անտեսվում էին հիմնական լրատվամիջոցների կողմից: Ազատ արտահայտվելու իրավունքը քաղաքական կամ մշակութային հարցերին առնչվող լրատվությամբ սահմանափակելու դեպքում հրատարակչությունների մեծ մասն առհասարակ կզրկվի պաշտպանությունից:

Վերոնշյալ փաստերից պարզ է դառնում, որ թեև վիճարկված հոդվածը նախատեսված էր առևտրականների սահմանափակ շրջանակի համար և ուղղակիորեն չէր վերաբերում ամբողջ հանրությանը, սակայն հոդվածը պարունակում էր առևտրային բնույթի տեղեկություններ: Ուստի նման բնույթի տեղեկությունները չի կարելի առանձնացնել կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակից, որը միայն որոշակի տեղեկությունների, գաղափարների կամ ազատ արտահայտվելու իրավունքի դրսևորումներով չի սահմանափակվում (տե՛ս *mutatis mutandis Մյուլլերի* (*Müller*) գործով 1988 թ. մայիսի 24-ի վճիռը, շարք A, թիվ 133, էջ 19, պարբ. 27):

Բ. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻՆ

27. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կարծիքով՝ ակնհայտ է, որ 1975 թ. նոյեմբերի 20-ին տեղեկագրի բովանդակած հայտարարությունների կրկնության վրա դրված արդարադատության դաշնային դատարանի արգելքով «ազգային մարմինները միջամտել են 10-րդ հոդվածով սահմանված իրավունքի իրացմանը»:

1. «ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ»

…

29. Դիմողները պնդել են, որ վիճահարույց միջամտությունը «նախատեսված չէր օրենքով», քանի որ այն կանխատեսելի չէր: Գերմանիայի համապատասխան օրենքով մամուլի ազատության և անարդար մրցակցության միջև սահմանագիծը չի հստակեցվում:

Մյուս կողմից՝ պետությունը հայտնել է, որ դիմողները նման հարցերի շուրջ դատավարության մեծ փորձ ունեին և նախքան վիճարկված հոդվածի հրապարակումը ծանոթ էին 1909 թ. «Անարդար մրցակցության մասին» օրենքին ու դրա մեկնաբանությանը: Տվյալ հարցում հանձնաժողովը համամիտ է պատասխանող պետությանը:

30. Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արդեն ընդունել է այն փաստը, որ օրենքների դրույթները միշտ չեն ձևակերպված բացարձակ ճշգրտությամբ: Նման օրենքները շատ են հատկապես մրցակցության բնագավառում, որտեղ իրավիճակն անընդհատ փոխվում է՝ կախված շուկայի և հաղորդակցության զարգացումից:

Տվյալ դեպքում արդարադատության դաշնային դատարանն իր տրամաղրության տակ ուներ վերոնշյալ գործին առնչվող բավական հետևողական նախադեպային բազա:

Հստակ ձևակերպված և դեպքերով հարուստ այդ նախադեպային բազան, որը շատ մեկնաբանությունների առարկա է դարձել, հնարավորություն էր տալիս առևտրային գործունեություն ծավալող անձանց ու նրանց խորհրդատուներին կարգավորելու համապատասխան բնագավառում իրենց վարքագիծը:

2. ՕՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

…

1980 թ. հունվարի 16-ի վճռի ձևակերպմամբ վիճարկված հոդվածի հետևանքով կարող էին անհիմն կասկածներ առաջանալ վերոնշյալ ակումբի առևտրային քաղաքականության վերաբերյալ, ինչը կհանգեցներ ակումբի գործերի վատթարացմանը:

Դատարանը եզրակացրել է, որ միջամտությունը դիմողների իրավունքներին միտված էր այլոց հեղինակության և իրավունքների պաշտպանությանը, ինչն էլ, 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, օրինական նպատակ է:

3. ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

32. Դիմողները պնդել են, որ տվյալ գործով ընդունված արգելող որոշումը «չի կարող անհրաժեշտ համարվել ժողովրդավարական հասարակությունում»: Հանձնաժողովը համամիտ է նրանց հետ:

Այդուհանդերձ, պատասխանող պետությունը վիճարկել է վերոնշյալ փաստարկը: Պետության կարծիքով՝ 1975 թ. նոյեմբերի 20-ին հրապարակված հոդվածը ոչ թե հանգեցրել է հանրությանը հուզող հարցերի քննարկմանը, այլ ապօրինի մրցակցային ռազմավարության մաս է կազմել, ինչը ծառայել է մասնագիտացված մանրածախ առևտրականների օգտին և ուղղվել է գեղեցկության ու խնամքի պարագաներ վաճառող անցանկալի մրցակցին շուկայից դուրս մղելու նպատակին:

33. Հետևաբար դատարանը վճռել է, որ իրավունքներին միջամտելու անհրաժեշտությունը և աստիճանը գնահատելու համար մասնակից պետությունները հայեցողության որոշակի սահման ունեն, որը, սակայն, ինչպես համապատասխան օրենքի, այնպես էլ նույնիսկ իրավունքներին միջամտելու մասին անկախ դատարանի կայացրած որոշման մասով ենթակա է եվրոպական կառույցների վերահսկողությանը:

Հայեցողության նման սահմանն էական դերակատարում ունի առևտրային գործունեության, մասնավորապես՝ անարդար մրցակցության նման բարդ և անկայուն բնագավառում: Հակառակ դեպքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ստիպված կլիներ վերաքննել յուրաքանչյուր գործի բոլոր փաստերն ու հանգամանքները: Գործը վերանայելիս դատարանը պետք է միայն պարզի՝ պետական մակարդակով ձեռնարկված միջոցներն սկզբունքորեն հիմնավորվա՞ծ և համաչա՞փ են օրինական նպատակին, թե՞ ոչ:

34. Տվյալ դեպքում իրավունքների միջամտության համաչափության հարցը պարզելու համար անհրաժեշտ է համեմատել այլոց հեղինակությունն ու իրավունքները պաշտպանելու պահանջները և խնդրո առարկա տեղեկությունները պարունակող հոդվածի հրապարակումը: Վիճարկված որոշումը վերանայելու լիազորության շրջանակներում դատարանը պետք է այդ որոշումը քննի ամբողջ գործի համատեքստում:

«Մարքթ ինթերն» (*Markt intern*) ընկերությունը տպագրել է մի քանի հոդված վերոնշյալ ակումբի մասին, որոնցում քննադատվում էր այդ հաստատության գործելակերպը: Ընդ որում, այդ հոդվածները, ներառյալ՝ 1975 թ. նոյեմբերի 20-ին լույս տեսած հոդվածը, հանգեցրել են որոշակի հետևանքների: Մյուս կողմից՝ ակումբը կատարել է դժգոհ սպառողներին նրանց գումարը վերադարձնելու մասին իր խոստումները, և 1975 թ. դրությամբ 11870 սպառող փոխհատուցում է ստացել:

Ազգային դատարաններն ամենայն խստությամբ են կշռադատել հակադիր կողմերի շահերը:

1980 թ. հունվարի 16-ին կայացրած վճիռը արդարադատության դաշնային դատարանը հիմնավորել է նրանով, որ վիճարկված հոդվածի տպագրությունը վաղաժամ էր և զուրկ տեղեկագրում եզակի միջադեպի հրապարակման բավականաչափ հիմքերից: Այս դեպքում դատարանը հաշվի է առել պաշտպանության արժանի իրավունքներն ու օրինական շահերը:

35. Շուկայական տնտեսության պայմաններում մրցակիցներն անխուսափելիորեն մանրազնին ուսումնասիրում են սկսնակ ձեռնարկության գործելակերպը: Նման ձեռնարկության ռազմավարությունը և սեփական պարտավորությունները կատարելու եղանակը կարող են հանգեցնել սպառողների և մասնագիտացված մամուլի քննադատության: Ուստի մասնագիտացված մամուլը պետք է ի վիճակի լինի բացահայտելու այնպիսի փաստեր, որոնք կհետաքրքրեն իր ընթերցողներին, և այդպիսով պետք է նպաստի առևտրային գործունեության թափանցիկությանը:

Այնուհանդերձ, որոշ հանգամանքներում կարող է արգելվել նույնիսկ ճիշտ և իրական տեղեկությունների վրա հիմնված հոդվածների տպագրումը, օրինակ՝ այլոց անձնական կյանքի իրավունքը հարգելու կամ որոշակի առևտրային տեղեկությունների գաղտնիությունը պահպանելու պարտավորության դեպքում: Բացի այդ, ճիշտ հայտարարությունը կարող է որակվել և հաճախ որակվում է հավելյալ դիտողություններով, սուբյեկտիվ գնահատականներով, ենթադրություններով կամ նույնիսկ ակնարկներով: Հարկ է նաև ընդունել այն իրողությունը, որ նախքան հրապարակվելը եզակի միջադեպը պետք է ավելի հանգամանալից ուսումնասիրվի, այլապես նման միջադեպերից մեկի ճշգրիտ նկարագրությունը կարող է թողնել այն սխալ տպավորությունը, որ մի դեպքով արտացոլվում է տվյալ ընկերության ամբողջ գործելակերպը: Բոլոր վերոնշյալ գործոնները կարող են օրինապես նպաստել առևտրային գործունեության համատեքստում արված հայտարարությունների գնահատմանը, ուստի ներպետական դատարանները պետք է նախ և առաջ որոշեն, թե որ հայտարարություններն են թույլատրելի:

36. Տվյալ հոդվածը գրվել է առևտրային համատեքստում: Թեև «Մարքթ ինթերն» ընկերությունն ինքը չէր հանդիսանում ակումբի մրցակից, սակայն զբաղվում էր դեղագործների և գեղեցկության ու խնամքի պարագաների մանրածախ առևտրականների շահերի օրինական պաշտպանությամբ: Նշված հոդվածում, անշուշտ, զետեղվել են ճշմարտությանը համապատասխանող մի քանի հայտարարություններ, սակայն հեղինակները կասկածի տակ են առել ակումբի վստահելիության հարցը և ընթերցողներին խնդրել հայտնել իրենց պատահած «նման դեպքերի մասին», մինչդեռ ակումբի տնօրինությունն արդեն խոստացել էր անհապաղ հետաքննել նշված միակ միջադեպը:

Ըստ արդարադատության դաշնային դատարանի՝ հոդվածի տպագրման ժամանակահատվածում բավականին հիմնավորված չէր վերոնշյալ միջադեպի մասին հայտնելու անհրաժեշտությունը: Ակումբի տնօրինությունը համաձայնել է անհապաղ հետաքննություն սկսել վերոնշյալ փաստարկների իսկությունը պարզելու համար: Ավելին, դիմողները տեղյակ

էին այն մասին, որ ակումբի քննադատությունը չի կարող լիովին հիմնավորված համարվել նախքան տվյալ գործի հանգամանքների հետագա ճշտումը, քանի որ հենց իրենք ակումբի տնօրինության պատասխանը դիտարկում էին որպես նախնական: Դաշնային դատարանի կարծիքով՝ դիմողները պետք է այսպիսով հաշվի առնեին, որ նման միջադեպի որևէ վաղաժամ հրապարակում անբարենպաստ հետևանքներ կունենա ակումբի աշխատանքի համար, քանի որ տպագրված հոդվածի միջոցով մանրածախ առևտրականներին կարևոր փաստարկ էր տրամադրվում, որը կարող էր գործածվել ի վնաս ակումբի և նրա սպառողների, եթե նույնիսկ հետագայում պարզվեր, որ վերոնշյալ միջադեպն ակումբի եզակի անհաջողություններից է, ինչից հնարավոր չէ եզրակացություններ անել կազմակերպության գործարար քաղաքականության վերաբերյալ:

37. Այս տվյալների հիման վրա հաշվի առնելով 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին առնչվող պարտականություններն ու պարտավորությունները՝ կարելի է ասել, որ դաշնային սահմանադրական դատարանի դրույթներով հաստատված վերջնական որոշումը կայացնելիս արդարադատության դաշնային դատարանը չի գերազանցել ազգային մարմիններին վերապահված հայեցողության սահմանը: Ակնհայտ է, որ կարող են տարբեր կարծիքներ արտահայտվել այն հարցերի շուրջ, թե արդյոք դաշնային դատարանի արձագանքը պատշա՞ճ է եղել, կամ արդյոք կարելի՞ է թույլատրել կամ հանդուրժել այս առանձին միջադեպի վերաբերյալ «Մարքք ինքերն» ընկերության հոդվածում հայտարարությունների տպագրումը, թե ոչ: Այնուհանդերձ, տվյալ դեպքում, երբ ազգային դատարանները հիմնավորված պատճառներով անհրաժեշտ են համարել դիմողների իրավունքների սահմանափակումները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը չպետք է այդ դատարանների գնահատումը փոխարինի սեփական գնահատմամբ:

38. Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը՝ դատարանը եզրակացրել է, որ տվյալ դեպքում 10-րդ հոդվածի դրույթների խախտում չի արձանագրվել:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

ինը կողմ և ինը դեմ ձայներով և նիստը նախագահող դատավորի վճռորոշ ձայնով («Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կանոններ» (Rules of Court), թիվ 20 կանոն, պարբ. 3) վճռել է, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածը չի խախտվել:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԳՅՈԼՉՅՈՒՔԼՈՒԻ, ՓԵԹԻԹԻԻ, ՌՈՒՍՈՅԻ, ՇՊԻԼՄԱՆԻ, ԴԵ ՄԵՅԵՐԻ, ԿԱՐԻՈՅԻ, ՍԱԼՄԵԴՈՅԻ ԵՎ ՎԱԼՏԻԿՈՍԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

…

Ազատ արտահայտվելու իրավունքը նույնքան կարևոր է երաշխավորել առևտրային ձեռնարկության գործելակերպի և կառավարության ղեկավարի վարքագծի առումով, ինչպես երևում է *Լինգենսի* (*Lingens*) գործից:

Ավելին, անձը չպետք է զրկվի ազատ արտահայտվելու իրավունքից միայն այն պատճառով, որ պաշտպանում է որևէ շահ, լինի դա տնտեսական թե որևէ այլ բնագավառում:

Առևտրային գործունեության թափանցիկությունն ապահովելու համար անհրաժեշտ է հնարավորություն ունենալ ազատ տարածելու նշված կազմակերպության կողմից սպառողներին առաջարկվող ապրանքների և ծառայությունների մասին տեղեկություններն ու գաղափարները: Սպառողները, ինչպես նաև մանրածախ առևտրականները, ովքեր հաճախ ապրանքների գովազդման և իրացման չափազանց արդյունավետ միջոցների են ենթարկվում, նույնպես պաշտպանության կարիք ունեն:

Տվյալ դեպքում դիմողներն անդրադառնում էին իրականում տեղի ունեցած ու չվիճարկված միջադեպին և խնդրում մանրածախ առևտրականներին իրենց լրացուցիչ տվյալներ հաղորդել:

Նրանք ընդունված եղանակով էին իրացնում ազատ արտահայտվելու իրենց հիմնարար իրավունքը:

Ուստի վիճարկված միջոցների կիրառմամբ խախտվել է դիմողների իրավունքը:

Այս ամենը հայտնելուց հետո անհրաժեշտ ենք համարում ևս երեք դիտողություն անել տվյալ դատավճռի կապակցությամբ:

Մեր կարծիքով՝ դատավճռում պետությունների «հայեցողության սահմանին» առնչվող հիմնավորումը լուրջ մտահոգության տեղիք է տալիս: Սույն գործում նշված հիմնավորման հետևանքով իրականում էապես սահմանափակվել է առևտրային հարցերի շուրջ դիմողի ազատ արտահայտվելու իրավունքը:

Հայտնելով գործի փաստերը և բոլոր հանգամանքները վերաքննելու ցանկության բացակայության մասին՝ դատարանը փաստորեն հրաժարվում է կատարել կոնվենցիայով իրեն վերապահված հանձնարարությունը, այն է՝ «եվրոպական կառույցների անունից վերահսկել» վիճարկված «միջոցների» համապատասխանությունը վերոնշյալ փաստաթղթի պահանջներին:

Ինչ վերաբերում է «հակադիր կողմերի վտանգված շահերը կշռադատելու» հարցին, բավական է նշել, որ տվյալ դեպքում ամենևին հաշվի չեն առնվել դիմողների կողմից օրինապես պաշտպանվող շահերը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Նախագահող դատավոր Ռիսդալի գլխավորությամբ մեծամասնություն են կազմել դատավորներ Կրեմոնան, Տոիր Վիլջաուլմսոնը, Մաթշերը, Ուոլշը, Էվանսը, Բերնհարդտը, Փալմը և Ֆոյգելը: Դատավոր Մարտենսը դատավոր Մակդոնալդի հավանությամբ մասնակի չհամընկնող կարծիք է հայտնել: Նրանք արտահայտել են այն տեսակետը, որ «սոցիալ-տնտեսական հարցեր արծարծող մամուլը նույնչափ կարևոր դեր է կատարում արդի հասարակության առաջընթացի և յուրաքանչյուր անհատի զարգացման գործում, որքան քաղաքական և մշակութային լրատվամիջոցները»: Բացի այդ, նրանք քննադատել են Գերմանիայի իրավական կարգը, քանի որ «Եվրոպայի խորհրդի մյուս անդամ պետություններում գոյություն չունի ի վնաս մամուլի ազատության՝ անարդար մրցակցությունն օրենքով կարգավորող կանոն, և որոշ առումով բոլոր թերթերը կարող են դիտվել որպես ինչ-որ առանձնահատուկ շահերի ջատագովներ»:

2 Դատարանի մեծամասնությունը հակված չէր կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված պաշտպանության նույն աստիճանը տարածելու առևտրային հարցերի շուրջ հրապարակումների վրա, եթե նույնիսկ դրանցում բերված լինեին փաստացի հայտարարություններ՝ քաղաքական կամ գեղարվեստական ձևակերպումներով: Անշուշտ, ներկայումս լրատվամիջոցների մեծ մասը պատկանում է մասնավոր հատվածում գործող ընկերություններին, որոնց առաջնային խնդիրներից մեկն ուղղված է սեփականատերերին շահույթ բերելու նպատակին: Ուստի քաղաքական կամ հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկման և արվեստի գործերի ստեղծման հիմքում կարող են ընկած լինել առևտրային գործոններ:

3 Վերոնշյալ գործը քննելուց առաջ Հանգայի միության վերաքննիչ դատարանը, 1909 թ. օրենքի համաձայն, արգելող որոշում ընդունեց, որով մի բուժակի չի թույլատրվել շարունակել ընդհանուր մամուլում տպագրել այնպիսի հայտարարություններ, որոնցում նա քննադատում էր իր գործընկերներին գիշերային հերթապահությունների ժամանակ շտապ բուժօգնությունն ըստ հարկի չկազմակերպելու համար: *«Բարթհոլդն ընդդեմ Գերմանիայի» (Barthold v Germany)*, A.90,1985, 7 EHRR 383) գործում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, հինգ կողմ և երկու դեմ ձայներով, վճռել է, որ նշված որոշմամբ խախտվել են դիմողի՝ կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված իրավունքները: Դատարանը կարծում է, որ «վերաքննիչ դատարանի մոտեցումը կարող է խոչընդոտել ազատ մասնագիտություններով զբաղվող անձանց մասնակցությունը հասարակական կյանքի վրա ազդող հարցերի շուրջ հանրային քննարկմանը, եթե նույնիսկ չնչին հավանականություն լինի, որ նրանց հայտարարությունները կարող են որոշ չափով որպես գովազդ դիտվել» (պարբ. 58): Նման արծագանքն անհամաչափ էր, ուստիև «անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում»: Հետևաբար, տվյալ գործը կարելի է տարբերակել *«Մարքթ ինթերն» ընկերության* (*Markt intern*) գործից, քանի որ ա) հոդվածը հրապարակվել էր սովորական թերթում, և բ) հոդվածը վերաբերում էր ամբողջ հանրությանը հուզող հարցին: Ավելի ուշ *«Հերթելն ընդդեմ Շվեյցարիայի»* (*Hertel v Switzerland*), 1998, 28 EHRR 534, 1998-VI) գործով դատարանի մեծամասնությունը, վեց կողմ և երեք դեմ ձայներով, վճռեց, որ այն դեպքերում, երբ առևտրային գործունեությանը վերաբերող խոսքում արծարծվում են նաև հանրությանը հուզող հարցեր, ապա պետություններին հարկ է վերապահել հայեցողության ավելի նեղ սահման:

Հայեցողության նման սահմանն առանձնապես կարևոր դեր ունի առևտրային գործունեության, հատկապես՝ անարդար մրցակցության նման բարդ և անկայուն բնագավառում: Այնուհանդերձ, այն դեպքերում, երբ խոսքը ոչ թե տվյալ անհատի՝ զուտ «առևտրային հայտարարություն» անելու իրավունքի, այլ ամբողջ հանրությանը հուզող հարցի, օրինակ՝ առողջապահության շուրջ բանավեճին մասնակցելու հնարավորության մասին է, ապա անհրաժեշտ է նեղացնել հայեցողության սահմանը: Ընդ որում, տվյալ դեպքում նման բանավեճի առկայությունն անհերքելի է: Այդ բանավեճի առարկան է դարձել մարդու առողջության վրա միկրոալիքների ազդեցությունը: Այդ առումով ներկա գործն էապես տարբերվում է ինչպես *«Մարքթ ինթերն» ընկերության* (*Markt intern*), այնպես էլ *Յակուբովսկու* (*Jacubowski*) գործերից (պարբ. 47):

Ուստի դատարանի մեծամասնությունը եզրակացրեց, որ էլեկտրական տեխնիկա արտադրողների շահերը ներկայացնող միավորման հայցով անկախ հետազոտողի վրա Շվեյցարիայի դատարանների դրված արգելքը «անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում»: Ընդ որում, նշված որոշմամբ դիմողին արգելվում էր կրկին արտահայտել իր կարծիքը առողջության համար միկրոալիքային վառարանում պատրաստված ուտելիքի վնասակարության մասին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հետևյալ կարծիքն է արտահայտել.

> Արգելող որոշման հետևանքով դիմողի կատարած աշխատանքը մասնակի գրաքննության է ենթարկվել, ինչն էապես սահմանափակում է նրա՝ իր հայացքները հրապարակավ հայտնելու կարողությունը, որոնք իրենց տեղն ունեն հասարակական բանավեճում, իսկ այդ բանավեճի գոյությունն անվիճարկելի է: Կարևոր չէ, որ սա փոքրամասնության կարծիքն է և կարող է արժեզուրկ թվալ, քանի որ նշված բնագավառում, որտեղ թերևս գոյություն չունի որևէ անտարակուսելի փաստ, չափազանց անիմաստ կլիներ ազատ արտահայտվելու իրավունքը սահմանափակել միայն ընդունելի գաղափարների վերաբերյալ կարծիք հայտնելու ազատությամբ (պարբ. 50):

Ուստի դատարանը ձգտում էր պաշտպանել հակասական, սակայն բարեխիղճ թերթի աշխատակիցների՝ հանրությանը հուզող հարցերով ծավալվող հասարակական բանավեճերին մասնակցելու կարողությունը:

4 1909 թ. օրենքն առանցքային նշանակություն է ունեցել նաև *«Յակուբովսկին ընդդեմ Գերմանիայի»* (*Jacubowski v Germany,* A.291-A, 1994, 19 EHRR 64) գործում: Դիմողը լրագրող էր, նաև առևտրային ընկերության կողմից ղեկավարվող լրատվական գործակալության գլխավոր խմբագիրը: 1984 թ. հուլիսին գործակալության սեփականատերերը նրան ազատել են աշխատանքից: Այնուհետև, մի քանի շաբաթվա ընթացքում գործակալությունը մամլո հաղորդագրություն է տպագրել՝ պարզաբանելով իր վերակազմավորումը և քննադատելով ղեկավար պաշտոնում դիմողի աշխատանքը: 1984 թ. հոկտեմբերին նրա դիմումի հիման վրա դատարանը կարգադրություն է արձակել՝ պարտադրելով գործակալությանը հրապարակել ևս մեկ մամլո հաղորդագրություն, որում դիմողը կկարողանար արձագանքել քննադատությանը: 1984 թ. սեպտեմբերին դիմողը նշված լրատվական գործակալության քառասուն հաճախորդներին ուղարկել է այդ գործակալությունը քննադատող հոդվածների ժողովածու և շրջաբերական նամակ, որում հայտնում էր հետագա զարգացումները քննարկելու իր ցանկությունը: Մի քանի ամիս անց դիմողը հիմնել է հասարակայնության հետ կապերի սեփական գործակալություն: Յակուբովսկու նախկին գործատուները 1909 թ. օրենքի հիման վրա բողոք են ներկայացրել նրա դեմ: Դյուսելդորֆի վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել *Յակուբովսկու* գործով՝ արգելելով նրան հետագայում նմանօրինակ նյութեր ուղարկել: Դաշնային սահմանադրական դատարանը մերժել է դատավճռին միջամտելը: Այնուհետև դիմողը գանգատ է ներկայացրել Ստրասբուրգի Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ պնդելով, որ խախտվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածը: Հանձնաժողովը միաձայն արձանագրել է նշված հոդվածի խախտում, սակայն դատարանը, վեց կողմ և երեք դեմ ձայներով, մերժել է դիմողի գանգատը: Դատարանը վճռել է, որ առևտրային հարցերում Գերմանիայի դատական ատյանները չեն գերազանցել պետության հայեցողության սահմանը: Դատարանը կարևորել է այն փաստը, որ Գերմանիայի բոլոր դատարանների եզրակացությամբ իր նոր գործի մեջ լրատվական գործակալության նախկին հաճախորդներին ներգրավելու նպատակով նրանց հասցեագրված շրջաբերական նամակի հրապարակմամբ Յակուբովսկին խախտել էր ընդունված բարոյական չափանիշները և արդար մրցակցության կանոնները: Այսպես, նա կարող էր այլ միջոցներով արտահայտել և պաշտպանել իր հայացքները: Ուստի դատարանը վճռել է, որ արգելող որոշումը դիմողի ազատ արտահայտվելու իրավունքին անհամաչափ միջամտություն չի եղել:

5 *«Կասադո Կոկան ընդդեմ Իսպանիայի»* (*Casado Coca v Spain*), 1994, 18 EHRR 1, A.285) գործով դատարանը միաձայն եզրակացրել է, որ իրավաբանի՝ գովազդային հայտարարություն տալու իրավունքը նախատեսված է կոնվենցիայի 10-րդ հոդվածով: Տվյալ գործով որպես դիմող հանդես եկող անձը Բարսելոնայում աշխատող իրավաբան էր, ով գովազդային հայտարարություններ է տպագրել տեղի սեփականատերերին պատկանող տեղեկագրում՝ նշելով իր անունը, իրավաբանի կարգա-

վիճակը, ինչպես նաև՝ գրասենյակի հասցեն և հեռախոսահամարը: Բարսելոնայի փաստաբանների կոլեգիայի խորհուրդը կարգապահական տույժ է նշանակել նրա նկատմամբ, քանի որ այդ ժամանակ կոլեգիայի անդամներին արգելվում էր գովազդային հայտարարություններ տալ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտարարությունում նշվում էր փաստաբանի գործունեության մանրամասների փոփոխության մասին: Դիմողը գրավոր նկատողություն է ստացել մասնագիտական հայտարարություն տալու արգելքն անտեսելու համար: Նա ներպետական դատարաններում բողոքարկել է իր նկատմամբ կիրառված պատժամիջոցը, սակայն սահմանադրական դատարանը մարդու հիմնարար իրավունքների խախտում չի արձանագրել: Նախագահի վճռորոշ ձայնով Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովն արձանագրել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: Թեև դատարանում Իսպանիայի պետությունը պնդել է, որ գովազդային հայտարարություն տալու իրավունքը սահմանված չէ կոնվենցիայի 10-րդ հոդվածով, սակայն այդ հավակնոտ պնդումը մերժվել է:

Դատարանը նախ ցանկանում է նշել, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորվում է «յուրաքանչյուրի» ազատ արտահայտվելու իրավունքը՝ անկախ այն հանգամանքից՝ անհատը հետապնդո՞ւմ է շահույթ ստանալու նպատակ, թե՞ ոչ: *«Բարթհոլդն ընդդեմ Գերմանիայի» (Barthold v Germany)* վերոնշյալ գործով կայացրած վճռում դատարանը չի պատասխանել այն հարցին, թե արդյոք կոնվենցիայի 10-րդ հոդվածի երաշխիքներով ինքնին նախատեսվո՞ւմ է առևտրային գովազդը, սակայն այդ հարցի վերաբերյալ ցուցումներ են ներկայացվում հետագա նախադեպային պրակտիկայում: Կոնվենցիայի 10-րդ հոդվածը չի վերաբերում բացառապես տեղեկությունների, գաղափարների կամ արտահայտվելու այլ ձևերին, մասնավորապես քաղաքական բնույթի հայտարարություններին (տե՛ս *«Մարքթ ինթերն ֆերլագ» ընկերությունն ու Քլաուս Բեերմանն ընդդեմ Գերմանիայի»* (*Markt intern Verlag GmbH and Klaus Beermann v Germany*) գործով վերոնշյալ վճիռը), այլ ներառում է նաև արվեստի միջոցով ազատ արտահայտվելու իրավունք (տե՛ս *«Մյուլլերն ընդդեմ Շվեյցարիայի»* (*Muller v Switzerland*) գործով կայացված վերոնշյալ վճիռը) և, ինչպես իրավացիորեն ընդգծել է հանձնաժողովը, առևտրային բնույթի տեղեկություններ (տե՛ս *«Մարքթ ինթերն» ընկերության* (*Markt intern*) գործը), նույնիսկ՝ լարային հեռարձակմամբ հաղորդվող թեթև երաժշտություն և գովազդային հոլովակներ (տե՛ս *«Գրոպերա ռադիո» բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Շվեյցարիայի» (Groppera Radio AG v Switzerland)* գործով կայացված վճիռը, 1990, A.173): Սույն գործում վիճարկված հայտարարություններում նշվել են միայն դիմողի անունը, մասնագիտությունը, հասցեն և հեռախոսահամարը: Ակնհայտ է, որ հայտարարությունները գովազդման նպատակով են տպագրվել, սակայն դրանցով իրավաբանական օգնության կարիք ունեցող անձանց տրամադրվել է այնպիսի տեղեկատվություն, որը նախատեսված էր կիրառման որոշակի շրջանակի համար և թերևս մատչելի կդարձներ իրավաբանական աջակցությունը նրանց համար: Հետևաբար կոնվենցիայի 10-րդ հոդվածը կիրառելի է (պարբ. 35–7):

Դատարանը որոշել է, որ գովազդային հայտարարություններ տալու հարցում փաստաբանների կոլեգիայի անդամների իրավունքի սահմանափակումները «նախատեսված էին օրենքով» և միտված էին հանրության շահերը պաշտպանելու և կոլեգիայի անդամների նկատմամբ հարգանք ներշնչելու օրինական նպատակին. «Այս կապակցությամբ հարկ է հաշվի առնել կոլեգիայի անդամների մասնագիտության յուրահատուկ բնույթը, քանի որ դատական համակարգի աշխատակից լինելով՝ նրանք օգտվում են դատարանում ելույթ ունենալու բացառիկ իրավունքից, ինչպես նաև դատարանում գործերը բանավոր ներկայացնելու առումով անձեռնմխելիության իրավունքից: Այնուհանդերձ, նրանք պետք է շրջահայաց, ազնիվ և արժանապատիվ վարքագիծ դրսևորեն» (պարբ. 46): Բացի այդ, դատավորների մեծամասնությունը՝ վեց կողմ և երկու դեմ ձայներով, համարել է, որ դիմողի՝ իր ծառայությունները գովազդելու իրավունքի սահմանափակումները «անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում»: Մեծամասնությունը հատկապես կարևորել է գովազդի հարցը կարգավորելու համար պետություններին վերապահվող հայեցողության սահմանը և հավելել է հետևյալը.

Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում ընդունված կանոնների լայն շրջանակը և փոփոխությունների տարբեր աստիճանը վկայում են տվյալ հարցի բարդության մասին: Փաստաբանների խորհրդի անդամների հետ իրենց անմիջական և շարունակական կապի բերումով կոլեգիայի ղեկավարությունը և ազգային դատարանները միջազգային դատարանի համեմատ ավելի նպաստավոր դրության մեջ են տվյալ դեպքում տարբեր շահերն արդար հավասարակշռության բերելու միջոց գտնելու առումով: Այդ շահերից են՝ արդարադատությունը պատշաճ կարգով իրականացնելու պահանջները, տվյալ մասնագիտությանը բնորոշ արժանապատվությունը, յուրաքանչյուրի՝ իրավաբանական օգնության մասին տեղեկատվություն ստանալու իրավունքը և կոլեգիայի անդամներին իրենց ծառայությունները գովազդելու հնարավորության ընձեռումը (պարբ. 55):

Դատավորների մեծամասնությունը նշել է, որ դիմողի վրա դրված պատժամիջոցի բնույթը «գրեթե խորհրդանշական» էր, ուստի իշխանությունների գործողությունները համաչափ միջամտություն էին դիմողի իրավունքներին, ինչը կարող էր հիմնավորվել կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով:

2003 թ. դեկտեմբերի 11-ին կայացրած վճռով *«Քրոն Ֆերլագ» ԲԲԸ & Co KG-ն ընդդեմ Ավստրիայի» (Krone Verlag GmbH & Co KG (No 3) v Austria)* գործով լիակազմ դատարանի պալատը միաձայն հրաժարվել է թերթերում գովազդի տեղադրումը կարգավորելու հարցում պետությանը վերապահել հայեցողության «լայն» սահման: Դիմող կազմակերպությունն օրաթերթ էր հրատարակում: 1994 թ. դեկտեմբերին այդ կազմակերպության Զալցբուրգում հրատարակվող թերթի մի համարում տպագրվել են մի քանի հայտարարություններ, որոնցում համեմատվում էին այդ օրաթերթի և մեկ այլ տեղական թերթի բաժանորդավճարները: Դրան ի պատասխան՝ տեղական թերթը դիմել է երկրի դատարաններին «Անարդար մրցակցության մասին» օրենքով արգելող որոշում կայացնելու հայցով, որպեսզի տվյալ կազմակերպությանն արգելվի կրկին տպագրել նշված հայտարարությունը: Ի վերջո, Ավստրիայի դատարաններն արգելել են այդ կազմակերպությանն իր օրաթերթի և այլ թերթերի գների համեմատության մասին հայտարարություններ տպագրել, բացառությամբ այն դեպքերի, երբ նմանօրինակ հայտարարություններում այլ հարցերի թվում մանրամասն ներկայացվում է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության, տնտեսական և մշակութային հարցերի՝ երկու թերթերի տարբեր լուսաբանումը: Դիմողը գանգատ է ներկայացրել առ այն, որ արգելող որոշմամբ խախտվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված ազատ արտահայտվելու իրավունքը: Ստրասբուրգի դատարանը վճռել է հետևյալը.

30. Դատարանը կրկնում է, որ իր նախադեպային պրակտիկայի համաձայն՝ դիմողի իրավունքին միջամտելու անհրաժեշտությունը գնահատելու հարցում կոնվենցիայի մասնակից պետություններին վերապահված է հայեցողության որոշակի սահման, սակայն, համապատասխան կանոնների և դրանք կիրառելու որոշումների մասով այդ սահմանը ենթակա է եվրոպական կառույցների վերահսկողությանը (տե՛ս *«Մարքթ ինթերն ֆերլագ» ՍՊԸ-ի և Քլաուս Բեերմանի* (*Markt intern Verlag GmbH and Klaus Beermann*) գործը, պարբ. 33): Նման հայեցողության սահմանը հատկապես կարևոր է անարդար մրցակցության բարդ և անկայուն բնագավառում, ինչպես նաև՝ գովազդային հայտարարությունների ոլորտում: Ուստի դատարանը կոչված է միայն որոշելու՝ պետական մակարդակով ձեռնարկված միջոցները կարո՞ղ են սկզբունքորեն հիմնավորվել և համաչափ դիտվել, թե՞ ոչ (տե՛ս *«Կասադո Կոկան ընդդեմ Իսպանիայի»* (*Casado Coca v Spain*) գործով 1994 թ. փետրվարի 24-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 285-A, էջ 28, պարբ. 50, և *«Յակուբովսկին ընդդեմ Գերմանիայի»* (*Jacubowski v Germany*) գործով 1994 թ. մայիսի 26-ին կայացված վճիռը, թիվ 15088/89, պարբ. 26):

31. Հանրության համար գովազդը միջոց է՝ բացահայտելու նրան առաջարկվող ծառայությունների և ապրանքների բնույթը: Այնուհանդերձ, գովազդը կարող է երբեմն սահմանափակվել: Որոշ հանգամանքներում նույնիսկ իրական և ճշմարտացի գովազդային հայտարարությունների տպագրումը կարող է սահմանափակվել այլ անձանց իրավունքների նկատմամբ հարգանք երաշխավորելու նպատակով կամ հաշվի առնելով որոշ առևտրային գործունեության և մասնագիտությունների առանձնահատկությունները: Այնուհանդերձ, դատարանը պետք է հանգամանալից քննի բոլոր նմանօրինակ սահմանափակումները և համեմատի այդ առանձնահատկությունների ու տվյալ գովազդի պահանջները: Այդ իսկ պատճառով դատարանը պետք է քննի վիճարկված պատժամիջոցը ամբողջ գործի համատեքստում (տե՛ս վերոնշյալ *Կասադո Կոկայի (Casado Coca)* գործը, պարբ. 51):

32. Անդրադառնալով ներկա գործի հանգամանքներին՝ դատարանը համարում է, որ ներպետական դատարաններն իրենց որոշումը հիմնավորել են նախ և առաջ այն փաստարկով, որ հնարավոր չէր համեմատել երկու թերթերի որակը, ուստի դրանց գների համեմատությունը բյուրիմացության տեղիք կտար: Մյուս կողմից՝ դատարանները նաև հայտնել են, որ երկու թերթերն էլ մրցակցել են նույն շուկայում և նախատեսված էին ընթերցողների նույն շրջանակի համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այս երկու հայտարարություններն անհետևողական է համարել:

33. Հանգամանալից ուսումնասիրելով դիմող կազմակերպության համար արգելող որոշման ունեցած հետևանքները՝ դատարանը նկատում է, որ որևէ պատժամիջոց չի կիրառվել: Այնուհանդերձ, խնդրո առարկա միջոցը կարող է բավականին հեռահար հետևանքներ ունենալ գների համեմատություն պարունակող հետագա գովազդների համար, քանի որ դիմող կազմակերպությունը ստիպված կլինի նաև տեղեկություններ հաղորդել արտաքին և ներքին քաղաքականության, տնտեսության, մշակույթի, գիտության, առողջապահության, բնապահպանական հարցերի և օրենքի հետ կապված նյութերի լուսաբանման իր յուրահատուկ ոճի մասին: Դատարանը համարում է, որ արգելող որոշումը չափազանց լայնհմաստ է, ինչը խոչընդոտում է գների համեմատության բուն էությունը: Ավելին, դատական արգելքի գործնական կիրառումը չափազանց դժվար կլինի դիմող կազմակերպության համար, քեպետև ընդհանրապես դա անհնարին չէ: Բացի այդ, արգելքի դրույթները խախտելու համար կազմակերպության վրա կարող է տուգանք դրվել:

34. Դատարանը նշում է, որ ներպետական դատարանները տվյալ դեպքում առաջնություն են տվել մյուս մրցակցի հեղինակության և սպառողների իրավունքների պաշտպանությանը, այլ ոչ թե՝ թյուրիմացության տեղիք տվող գովազդային հայտարարությանը: Այնուհանդերձ, հավասարակշռության բերելով գործում ներգրավված կողմերի հակադիր շահերը և հաշվի առնելով դիմող կազմակերպության՝ հետագայում գների համեմատություն պարունակող գովազդային հայտարարություններ տալու հնարավորությունների վրա արգելող որոշման գործած ազդեցությունը՝ դատարանը համարում է, որ Ավստրիայի դատարանները տվյալ դեպքում գերազանցել են հայեցողության սահմանը, և վիճարկվող միջոցն անհամաչափ էր, ուստի և կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով՝ «անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում»:

35. Համապատասխանաբար, արձանագրվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

Այս դեպքում դատարանը համարել է, որ թեպետև ազգային մարմիններին վերապահված է հայեցողության «որոշակի» սահման, սակայն դիմողի՝ իր թերթի համեմատական գինը գովազդելու իրավունքի վրա դրված սահմանափակումները չափազանց խիստ էին:

6 Լիակազմ դատարանը վճռել է, որ որոշ դեպքերում պետություններից կարող է պահանջվել իրավաբանական օգնություն տրամադրել այն կարիքավոր ամբաստանյալներին, որոնց դեմ զրպարտության մեղադրանքով գործ է հարուցվել տնտեսապես հզոր ընկերությունների կողմից: *«Ստիլը և Մորիսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Steel and Morris v UK)* գործով պալատը վճռեց հետևյալը.

94. Դատարանը չի համարում, որ տվյալ գործով որպես դիմող մեծ բազմազգ ընկերության հանդես գալու հանգամանքի բերումով այդ ընկերությունը սկզբունքորեն պետք է զրկվի զրպարտիչ ակնարկներից պաշտպանվելու իրավունքից, կամ դիմողներից չպետք է պահանջել ապացուցել արված հայտարարությունների իսկությունը: Ճիշտ է, որ մեծ բաց բաժնետիրական ընկերությունները գիտակցում են, որ իրենց գործողություններն անխուսափելիորեն ենթակա են մանրազնին ուսումնասիրության, և նման ընկերությունների, ինչպես նաև դրանք ղեկավարող գործարարների դեպքում ընդունելի քննադատության սահմանները շատ ավելի լայն են (տե՛ս *«Ֆեյիդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Fayed v the United Kingdom)* գործով 1994 թ. սեպտեմբերի 21-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 294-B, պարբ. 75): Այնուհանդերձ, հասարակությունը շահագրգռված է ձեռնարկությունների գործելակերպի վերաբերյալ բաց բանավեճում: Բացի այդ, ընկերությունների առևտրային հաջողության և կենսունակության պահպանման հարցում գոյություն ունեն նաև մրցակից շահեր, որոնք ծառայում են բաժնետերերին և աշխատողներին, ինչպես նաև տնտեսական բարիքների մեծացմանը: Հետևաբար, պետությունն օգտվում է հայեցողության սահմանից այն միջոցների մասով, որոնք նա ամրագրում է ներպետական օրենսդրությամբ՝ հնարավորություն տալով յուրաքանչյուր ընկերության վիճարկել իր հեղինակությունը վտանգող հայտարարությունների իսկությունը և սահմանափակել դրանց հասցրած վնասը (տե՛ս «*Մարքթ ինթերն ֆերլագ» ՍՊԸ-ն և Քլաուս Բեերմանն ընդդեմ Գերմանիայի»* (*Markt intern Verlag GmbH and Klaus Beermann v Germany*) գործով 1989 թ. նոյեմբերի 20-ի վճիռը, շարք A, թիվ 165, պարբ. 33–38):

95. Սակայն եթե պետությունը որոշի իրավական պաշտպանության նման միջոց վերապահել ընկերությանը, ապա ազատ արտահայտվելու իրավունքի և բաց բանավեճի տեսանկյունից շահերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով շատ կարևոր է ապահովել ընթացակարգային արդարությունը և իշխանության ճյուղերի հավասարությունը: Դատարանն արդեն եզրակացրել է, որ իրավաբանական օգնության պակասի հետևանքով զրպարտության գործերով դատավարություններն անարդար ընթացք են ստանում՝ խախտելով 6-րդ հոդվածի 1-ին կետը: Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ միջամտության համաչափությունը գնահատելու հարցում էական դեր ունեն նաև իշխանության ճյուղերի անհավասարությունը և այն դժվարությունները, որոնց բախվել են դիմողները: Անգլիայում և Ուելսում գործող օրենքի համաձայն՝ դիմողները կարող էին կա՛մ դադարեցնել թռուցիկների տպագրումը և ներողություն խնդրել Macdonald's ընկերությունից, կա՛մ էլ առանց իրավաբանական օգնության ստանձնել թռուցիկներում եղած պնդումների իսկությունն ապացուցելու բեռը: Հաշվի առնելով նման նախաձեռնության ծանրությունն ու բարդությունը՝ դատարանը չի համարում, որ դիմողների ազատ արտահայտվելու իրավունքը՝ մի կողմից և մյուս կողմից՝ «Macdonald's» ընկերության իրավունքներն ու հեղինակությունը պաշտպանելու անհրաժեշտությունը բերվել են արդար հավասարակշռության: Մտապահելով հասարակական քննարկումները խթանելու հարցում քարոզչական խմբերի օրինական և առանցքային դերը՝ հարկ է կարևոր գործոններ համարել նաև տվյալ համատեքստում հզոր առևտրային կազմակերպությունների գործունեության մասին տեղեկությունների և գաղափարների ազատ տարածումը խթանելու ավելի ընդհանուր շահն ու այլոց վրա հնարավոր «անբարենպաստ» ազդեցությունը (տե՛ս, օրինակ, «*Լինգենսն ընդդեմ Ավստրիայի»* (*Lingens v Austria*) գործով 1986 թ. հուլիսի 8-ի վճիռ, շարք A, թիվ 103, պարբ. 44, *Բլադեթ Թրոմսոյի* (*Bladet Tromsø*) գործ, պարբ. 64, *Թորգեյր Թորգեյրսոնի* (*Thorgeir Thorgeirson*) գործ, պարբ. 68): Հետևաբար, տվյալ դեպքում ընթացակարգային արդարության և հավասարության սկզբունքի բացակայությունը հանգեցրել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտմանը:

7 Պրոֆեսոր Մուևրոն արել է հետևյալ դիտողությունը.

Առևտրային հարցերի շուրջ խոսքի ազատության կատեգորիայի ճանաչման նախադեպը կարելի է գտնել դեռևս Եվրոպական կոնվենցիայի վավերացմանը նախորդող Միացյալ Նահանգների սահմանադրության առաջին ուղղման մեջ: Եվ իսկապես, չափազանցություն չի լինի ասել, որ ազատ արտահայտվելու իրավունքի հետ կապված հարցերը կատեգորիաների բաժանելու մոտեցման ծագումը կարելի է առհասարակ վերագրել Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենսդրական ակունքներին:

Շուկայական տնտեսության ընդունումից բխում է այն ընդհանուր համոզմունքը, որ այդ համակարգում իր պարտադիր տեղն ունի գովազդը: Ավելի հստակ, ճիշտ է պնդել, որ գովազդը սոցիալական և կրթական տեսանկյունից կարևոր գործառույթ է կատարում:

> *«Վիրջինիայի դեղագործների խորհուրդն ընդդեմ Վիրջինիայի սպառողների քաղաքացիական խորհրդի» (Virginia State Board of Pharmacy v Virginia Citizens Consumer Council)* գործում Միացյալ Նահանգների գերագույն դատարանի դատավորների մեծամասնությունը ներկայացնող դատավոր Բլեքմունը հայտարարել է հետևյալը. «Քանի դեռ մենք վարում ենք առավելապես ազատ ձեռներեցության տնտեսություն, մեր ռեսուրսները մեծ մասամբ բաշխվում են անհատ ձեռներեցների բազում որոշումների միջոցով: Հանրության շահերից է բխում, որ այդ որոշումներն իրենց հանրագումարում խելամիտ և արդիական լինեն: Այդ իսկ պատճառով առևտրային տեղեկատվության ազատ հոսքն առանցքային դեր ունի»:
>
> Ինչ վերաբերում է առևտրային տեղեկատվության ազատ հոսքի հարցում որևէ սպառողի շահերին, ապա դրա նկատմամբ սպառողի հետաքրքրվածությունը կարող է նույնչափ, եթե ոչ ավելի մեծ լինել, քան օրվա առավել կենսական քաղաքական բանավեճի հարցում [425 U.S. 748, 763 (1976)]:

Եթե գովազդն իրենից ներկայացնում է անհատների գեղարվեստական ստեղծագործության դրսևորում, ապա այն կարելի է հիմնավորել ինքնաարտահայտման նույն փաստարկներով, ինչ այլ արվեստի գործերի պարագայում: Կարելի է նույնիսկ բերել այն փաստարկը, որ ընկերություններն ունեն ինքնաարտահայտման իրավունք, քանզի այն ունի տնտեսական, ինչպես նաև անձնական և քաղաքական կիրառում:

Եթե գովազդը կարելի է հիմնավորել հասարակության համար դրա օգտակարությամբ, ապա առևտրային հայտարարությունների այլ տեսակները, օրինակ՝ ընկերությունների հայտարարությունների պաշտպանությունը նույնպես չպետք է խնդրահարույց լինի: Ձեռներեցությամբ և առևտրով զբաղվող կազմակերպությունների գործունեությունն առհասարակ բխում է հանրության շահերից, ուստի և առևտրային հարցերի շուրջ խոսքի ազատությունը թերևս չի կարող դիտվել որպես «ցածրարժեք խոսք», ինչպես, օրինակ՝ հանցավոր տարր պարունակելու պարագայում (Colin R Munro, The Value of Commercial Speech 62(1) [2003] *Cambridge Law Journal* 134, էջ 135 և 156–7):

8 Օգտվելով հանրային ընտրության տեսության տնտեսական վերլուծությունից՝ Մայա Հերթիգ Ռանդալը ներկայացրել է հետևյալ առաջարկը.

Առևտրային գովազդը «բարձրարժեք» կամ «ցածրարժեք» ձևակերպումներով որակելու փոխարեն ավելի օգտակար կլիներ ուշադրություն դարձնել ոչ թե աստիճանակարգման, այլ տարբերության վրա: Մենք պետք է պատասխանենք այն հարցին, թե արդյոք նման խոսքի առանձնահատկությունները կիրառելի՞ են ըստ ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումը հիմնավորելու համար վկայակոչվող կարգավորման (Commercial Speech under the European Convention on Human Rights: Subordinate or Equal? *Human Rights Law Review* (2006) 6(1) 53, էջ 85):

Կարծիք արտահայտելու իրավունք

Քաղաքական հայացքների և գործունեության պատճառով պետական ծառայողին աշխատանքից ազատելը ճանաչվել է որպես կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքների խախտում: *«Ֆոգթն ընդդեմ Գերմանիայի»* (*Vogt v Germany,* 1995, 21 EHRR 205, A.323) գործով դիմողը աշխատանքի էր ընդունվել որպես լեզվի ուսուցչուհի միջնակարգ դպրոցներից մեկում Ստորին Սաքսոնիայի երկրամասի իշխանությունների նշանակմամբ: 1970-ական թթ. սկզբին՝ ուսանելու տարիներին, նա միացել է Գերմանիայի կոմունիստական կուսակցությանը և որպես ուսուցչուհի փորձաշրջան անցնելու ընթացքում շարունակել է անդամակցել այդ կուսակցությանը: 1979 թ., նախքան փորձաշրջանի ավարտը, նրան շնորհվել է քաղաքացիական ծառայողի մշտական դասային աստիճան, որը Գերմանիայի պետական դպրոցներում աշխատող ուսուցիչների պաշտոնեական կարգավիճակն է: 1981 թ. դրությամբ գնահատման զեկույցում ուսուցչուհու աշխատանքը որակավորվել էր որպես լիովին բավարար և նշվել է, որ նա վայելում էր ինչպես աշակերտների ու նրանց ծնողների,

այնպես էլ գործընկերների հարգանքը: Այնուհանդերձ, 1982 թ. շրջանային խորհուրդը կարգապահական տույժ է նշանակել ուսուցչուհուն՝ նրան մեղադրելով սահմանադրության այն դրույթներին հավատարիմ մնալու պարտականությունը խախտելու համար, որոնք օրենքով նախատեսված կարգով պետք է հարգեն Գերմանիայի բոլոր քաղաքացիական ծառայողները: Դատական գործի հիմքում ընկած էր այն փաստը, որ ուսուցչուհին մասնակցել է Կոմունիստական կուսակցության քաղաքական գործունեությանը, օրինակ՝ բաժանել է կուսակցության գրականությունը և դաշնային ընտրություններում իր թեկնածությամբ ներկայացրել է այդ կուսակցությունը: Մի շարք դեպքերում դաշնային վարչական դատարանը վճռել է, որ կոմունիստական կուսակցության գործունեության մեջ կարևոր դեր ունեցող քաղաքացիական ծառայողները խախտել են սահմանադրությանը հավատարիմ մնալու իրենց պարտականությունը, քանի որ նրանք, անշուշտ, կիսում էին վերոնշյալ կուսակցության հակասահմանադրական հայացքները: 1987 թ. տեղի վարչական դատարանը որոշել է, որ ուսուցչուհին խախտել է սահմանադրությանը հավատարիմ մնալու իր պարտականությունը, և կարգադրություն է արձակել նրան աշխատանքից ազատելու մասին: Թեև կինը պնդում էր, որ իր կարծիքով կոմունիստական կուսակցությանն անդամակցումը չի հակասում սահմանադրությանը հավատարիմ մնալու պարտականությանը, սակայն Գերմանիայի վերաքննիչ դատարանները հաստատել են նրան աշխատանքից ազատելու մասին որոշումը: Հանձնաժողովը, տասներեք կողմ և մեկ դեմ ձայներով, որոշել է, որ, ի թիվս այլոց, խախտվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, տասնյոթ կողմ և երկու դեմ ձայներով, վճռեց, որ դիմողի գանգատը համապատասխանում է կոնվենցիայի 10-րդ հոդվածին.

> Դատարանը կրկնում է, որ քաղաքացիական ծառայության անցնելու իրավունքը դիտավորյալ չի ընդգրկվել կոնվենցիայում: Հետևաբար, անձին քաղաքացիական ծառայողի աստիճան շնորհելու մերժումը չի կարող ինքնին հիմք լինել կոնվենցիայի շրջանակներում գանգատ ներկայացնելու համար: Այնուհանդերձ, այս ամենը չի նշանակում, որ քաղաքացիական ծառայողի պաշտոնում նշանակված անձը չի կարող գանգատ ներկայացնել աշխատանքից ազատվելու դեպքում, եթե դրանով խախտվել է կոնվենցիայով սահմանված նրա իրավունքներից որևէ մեկը: Քաղաքացիական ծառայողները կոնվենցիայի սահմաններից դուրս չեն մնում… Ազգային մարմինների համաձայն՝ մասնակցելով Գերմանիայի կոմունիստական կուսակցության գործունեությանը և հրաժարվելով նշված կուսակցությունը թողնելուց՝ դիմողը վերոնշյալ համակարգի համար անբարենպաստ հայացքներ է արտահայտել: Այս ամենից հետևում է, որ ազգային մարմիններն իսկապես միջամտել են դիմողի՝ կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված իրավունքին (պարբ. 43–4):

Դատարանը որոշել է, որ ազգային մարմինների միջոցները «նախատեսված են օրենքով» և ուղղված էին ազգային անվտանգությունը պահպանելու, անկարգությունները կանխելու և այլոց իրավունքները պաշտպանելու օրինական նպատակներին:

> Դատարանը նշում է, որ մի շարք մասնակից պետություններ քաղաքացիական ծառայողների վրա դնում են սեփական հայեցողության պարտավորություն: Այս հասկացությունը հատկապես կարևոր է Գերմանիայում Վայմարյան հանրապետության օրոք տեղի ունեցած իրադարձությունների բերումով, որոնց հետևանքով նացիզմի մղձավանջին հաջորդած դաշնային հանրապետության հիմնումից հետո ընդունվեց սահմանադրությունը, որի հիմքում ընկած է «ինքն իրեն պաշտպանելու ունակ ժողովրդավարության» սկզբունքը (պարբ. 50):

Այնուհանդերձ, տասը կողմ և ինը դեմ ձայներով՝ դատարանի աննշան մեծամասնությունը որոշել է, որ «ժողովրդավարական հասարակությունում» անհրաժեշտ չէր տկն Ֆոգթին ազատել աշխատանքից: Մեծամասնությունը եզրակացրել է, որ պատժամիջոցն անհամաչափ է հետևյալ պատճառներով. 1) Գերմանիայի այլ դպրոցներում աշխատանք գտնելու փաստացի անհնարինությունը, 2) դիմողի պաշտոնով պայմանավորված հասարակական անվտանգության հանդեպ սպառնալիքների բացակայությունը, 3) դպրոցում նրա աշխատանքին տրված լիովին բավարար գնահատականը, 4) այն իրողությունը, որ «նույնիսկ մի քանի տարի ձգձգված հետաքննության ընթացքում չի արձանագրվել որևէ դեպք, որ տկն Ֆոգթը Գերմանիայի սահմանադրական կարգի արժեքները պաշտպանելու մասին իր վճռական պնդումներին հակասող հատուկ հայտարարություններ է արել» (պարբ. 60), 5) այն իրողությունը, որ Գերմանիայում կոմունիստական կուսակցությունը չէր արգելվում, ուստիև այդ կուսակցության օգտին դիմողի ծավալած գործունեությունն օրինական էր:

Չհամընկնող կարծիք արտահայտած դատավորները հավատացած էին, որ դիմողին աշխատանքից ազատելը համաչափ արձագանք է հետևյալ փաստերի հիման վրա. 1) քաղաքացիական ծառայողի աստի-

ճան ստանալուց հետո դիմողը ավելի ակտիվ գործունեություն էր ծավալում, 2) Գերմանիայի սահմանադրական կարգի առանձնահատուկ պատմությունը, 3) վերոնշյալ փաստերից բացի՝ պետք է հաշվի առնել, որ «այդ ժամանակ Արևելք-Արևմուտք հակամարտության, ինչպես նաև կոմունիստական վարչակարգի և Արևմտյան Գերմանիայի ժողովրդավարական վարչակարգի միջև անհաշտելի հակասությունների հետևանքով անհրաժեշտ էր հզորացնել ժողովրդավարական կարգը և կանխել դրա կործանումը»:

Տվյալ գործով կայացրած վճիռներում հստակ արտացոլվում է այն գործոնների լայն շրջանակը, այդ թվում՝ սահմանադրական պատմությունը և աշխարհաքաղաքական հարաբերությունները, որոնք դատարանը հակված է ուսումնասիրելու կոնվենցիայի 10-րդ հոդվածը կիրառելիս:

Տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատություն

.....

«Աուտրոնիկ» բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Շվեյցարիայի»

(Autronic AG v Switzerland, A.178, 1990, 12 EHRR 485)

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Տվյալ գործով որպես դիմող հանդես է եկել Շվեյցարիայում գրանցված սահմանափակ պատասխանատվությամբ, էլեկտրոնիկայի բնագավառում մասնագիտացած մի ընկերություն: 1980-ական թթ. սկզբին ընկերությունը վաճառում էր 90 սմ տրամագծով արբանյակային ալեհավաքներ, որոնք նախատեսված են արբանյակներով հեռարձակվող հեռուստահաղորդումները տանն ընդունելու համար: Այդ ժամանակ արբանյակային ալեհավաքի միջոցով Շվեյցարիայում կարելի էր դիտել միայն Խորհրդային Միության «Գ-Հորիզոնտ» արբանյակով հեռարձակվող ծրագրերը: 1982 թ. գարնանը դիմող կազմակերպությունը դիմել է Փոստի և հեռարձակման հարցերով Շվեյցարիայի պետական վարչության գլխավոր գրասենյակի (PTT) տնօրինությանը՝ խնդրելով թույլատրել Բազել քաղաքում կայանալիք տոնավաճառի ժամանակ ցուցադրել նրանց ալեհավաքի միջոցով ընդունվող Խորհրդային Միության հեռուստահաղորդումները: Վարչությունը նամակ է հղել Բեռնում Խորհրդային Միության դեսպանությանը, և վերջինս թույլատրել է տոնավաճառի ընթացքում ցուցադրել այդ հաղորդումները: 1982 թ. ամռանը մեկ այլ ցուցահանդես-վաճառք անցկացնելուց առաջ դիմողը նույն հարցով դիմել է վարչությանը: Նրա դիմումը փոխանցվել է Խորհրդային Միության դեսպանություն, սակայն վերջինս այդպես էլ չի պատասխանել: Ուստի վարչությունը տեղեկացրել է դիմողին, որ չի կարող բավարարել նրա խնդրանքը, իսկ ալեհավաքի միջոցով խորհրդային ծրագրերի չարտոնված ընդունումը կհակասի «Ռադիոհեռարձակման մասին» Շվեյցարիայի կանոնակարգին: Մի քանի ամիս անց դիմողը Փոստի և հեռարձակման հարցերով Շվեյցարիայի պետական վարչությանը խնդրել է դեկլարատիվ որոշում կայացնել առ այն, որ արտասահմանյան արբանյակներով հեռարձակվող չծածկագրված հաղորդումները մասնավոր դիտման նպատակով ընդունելու համար չի պահանջվում նշված հաղորդումները հեռարձակող պետության իշխանությունների համաձայնությունը: 1983 թ. վարչությունը վճռել է, որ կարող է արտոնել հաղորդումների ընդունումը միայն հաղորդումները հեռարձակող պետության իշխանությունների համաձայնությամբ: Դիմողը փորձել էր Շվեյցարիայի դատարաններում վիճարկել այդ որոշումը, սակայն դաշնային դատարանը վճռել է, որ դիմողի կողմից հետապնդվող շահերից որևէ մեկն արժանի չէ պաշտպանության, քանի որ միայն «էքսցենտրիկ մարդիկ» հակված կլինեն գնելու ընկերության սարքավորումները: Դիմողը գանգատ է ներկայացրել հանձնաժողովին՝ պնդելով, որ խախտվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված՝ տեղեկություններ ստանալու, ավելի ճիշտ՝ արտասահմանյան արբանյակներով հեռարձակվող հեռուստահաղորդումներն ընդունելու իրավունքը: Հանձնաժողովի մեծամասնությունը, տասնմեկ կողմ, երկու դեմ և մեկ ձեռնպահ ձայներով, արձանագրել է վերոնշյալ հոդվածի խախտում:

…

Ա. Կոնվենցիայի 10-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ

44. Պատասխանող պետության համաձայն՝ տվյալ դեպքում դիմող կազմակերպության գանգատն ազատ արտահայտվելու իրավունքին չի առնչվում: Տվյալ դեպքում բացառապես տնտեսական շահի համար իրացված ազատ արտահայտվելու իրավունքը մտնում է կոնվենցիայի շրջանակներում չընդգրկված տնտեսական ազատության տիրույթը: Ուստի խնդրո առարկա «տեղեկությունների տարածումը» կոնվենցիայի 10-րդ հոդվածով չի պաշտպանվում:

…

47. Դատարանի կարծիքով՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավական կարգավիճակը, ծավալվող գործունեության առևտրային բնույթը, նաև ազատ արտահայտվելու իրավունքին ներհատուկ բնույթը չեն կարող «Աուտրոնիկ» բաժնետիրական ընկերությունը զրկել կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված պաշտպանության իրավունքից: Նշված հոդվածը կիրառելի է «յուրաքանչյուրի»՝ թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձանց համար: Ավելին, դատարանն արդեն երեք անգամ նշել է, որ այդ հոդվածը կիրառելի է շահույթ հետապնդող բաժնետիրական կազմակերպությունների համար (տե՛ս *«Սանդի թայմզ» թերթի* (*Sunday Times*) գործով 1979 թ. ապրիլի 26-ի վճիռը, շարք A, թիվ 30, *«Մարքթ ինթերնշեներլ ֆեդերեյշն» ՍՊԸ-ի և Քլաուս Բեերմանի* (*Markt Intern Verlag GmbH and Klaus Beermann*) գործով 1989 թ. նոյեմբերի 20-ի վճիռը, շարք A, թիվ 165, ինչպես նաև *«Գրոպերա ռադիո» ընկերության* (*Groppera Radio AG*) գործով 1990 թ. մարտի 28-ի վճիռը, շարք A, թիվ 173): Բացի այդ, կոնվենցիայի 10-րդ հոդվածը վերաբերում է ոչ միայն տեղեկությունների բովանդակությանը, այլև դրանց փոխանցման կամ ստացման միջոցներին, քանի որ այդ միջոցների վրա դրված ցանկացած սահմանափակում անպայման հանգեցնում է միջամտության տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքին: Եվ իսկապես, վերոնշյալ հոդվածի 1-ին կետի վերջին նախադասության մեջ հստակ նշվում է հիմնականում տեղեկատվության փոխանցմամբ զբաղվող որոշ լրատվամիջոցների մասին:

Դիմող կազմակերպությունը կոնվենցիայի կատարումն ապահովող հաստատություններին բողոք է ներկայացրել անկախ սահմաններից տեղեկություններ և գաղափարներ ստանալու, ոչ թե տարածելու իրավունքին միջամտելու առնչությամբ: Դատարանը համամիտ է հանձնաժողովի հետ այն հարցում, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի առաջին երկու նախադասություններով ամրագրված իրավունքից բխում է արբանյակային ալեհավաքի կամ այլ սարքի միջոցով հեռուստահաղորդումների ընդունումը, և կարիք չկա պարզելու այդ իրավունքն իրացնելու պատճառն ու նպատակը: Քանի որ բողոքարկված վարչական և դատական որոշումներով «Աուտրոնիկ» բաժնետիրական ընկերությունը զրկվել է «Գ-Հորիզոնտ» արբանյակի միջոցով հեռարձակվող հաղորդումներն օրինական ընդունելու հնարավորությունից, ապա այդ որոշումները հավասարազոր են ազատ արտահայտվելու իրավունքի իրացման հարցում ազգային մարմինների միջամտության:

…

Բ. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻՆ

…

2. 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏ

53. Հարկ է որոշել՝ գանգատի առարկա դարձած միջամտությունը «նախատեսվա՞ծ էր օրենքով», միտվա՞ծ էր այս հոդվածի 2-րդ կետում թվարկված օրինական նպատակներին և «անհրաժե՞շտ էր ժողովրդավարական հասարակությունում» այդ նպատակներին հասնելու համար, թե՞ ոչ:

(ա) «Օրենքով նախատեսված»

Թվում է, թե կարիք չկա պարզելու այս հարցը, քանի որ «օրենքով նախատեսված» պայմանի բավարարման դեպքում անգամ դատարանը եզրակացնում է, որ միջամտությունը հիմնավորված չէ (տե՛ս ներքոհիշյալ պարբ. 60–3):

(բ) «Օրինական նպատակ»

58. Պատասխանող պետությունը պնդում էր, որ վիճահարույց միջամտությունը ծառայել է կոնվենցիայով ճանաչված երկու նպատակներին:

Նպատակներից մեկը հեռարձակման բնագավառում անկարգությունների կանխումն էր: Տեղեկությունների անսահմանափակ միջազգային շրջանառության հետևանքով հնարավոր քաոսը կանխելու, ինչպես նաև մշակութային և քաղաքական բազմակարծություն երաշխավորելու նպատակով կարևոր էր հաշվի առնել տվյալ պետության տարածքում մատչելի հաճախությունների սահմանափակ թիվը:

Երկրորդ՝ պատասխանող պետությունը պնդում էր, որ միջամտությունն ուղղված էր «գաղտնի ստացված տեղեկությունների բացահայտումը կանխելու նպատակին», այն է՝ պետք էր պահպանել տվյալ հեռուստահաղորդումների հեռարձակման գաղտնիությունը, որը սահմանված է Միջազգային հեռարձակումների մասին կոնվենցիայի 22-րդ հոդվածով:

59. Դատարանը կարծում է, որ միջամտությունն ուղղված էր, ինչպես նշել է պետությունը, կոնվենցիայի դրույթներին լիովին համահունչ երկու նպատակներին, այն է՝ հեռարձակման ոլորտում անկարգությունների խախտումը և գաղտնի տեղեկությունների բացահայտումը կանխելու անհրաժեշտությունը:

(գ) «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ»

60. Դիմող կազմակերպությունը հայտարարել է, որ թույլտվության մերժումը չէր բխում հրատապ սոցիալական անհրաժեշտությունից և պարտադիր չէր գաղտնի տեղեկությունների բացահայտումը կանխելու համար, քանի որ հաղորդումները միայն որոշ հեռուստադիտողներին ցուցադրելու մտադրություն ունեցող հեռարձակողները կծածկագրեին դրանք:

61. Դատարանը հետևողականորեն վճռել է, որ իրավունքներին միջամտելու անհրաժեշտությունը որոշելու հարցում մասնակից պետություններն օժտված են հայեցողության որոշակի սահմանով, որը, սակայն, ուղեկցվում է եվրոպական կառույցների վերահսկողությամբ, իսկ վերջինիս սահմանները կախված են գործի բնույթից: Բոլոր այն դեպքերում, երբ, ինչպես տվյալ գործում, արձանագրվում է միջամտություն կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով երաշխավորված ազատություններին և իրավունքներին, եվրոպական կառույցները պետք է խիստ վերահսկողություն սահմանեն, ինչը պայմանավորված է այդ իրավունքների կարևորությամբ: Դատարանը բազմիցս ընդգծել է այդ իրավունքների էական նշանակությունը:

62. Պատասխանող պետությունը պնդել է, որ գործի հանգամանքները վերանայելիս դատարանը պետք է դրանք դիտարկի ներպետական դատարաններում գործի քննության ժամանակաշրջանի տեսանկյունից և պետք է անտեսի մասնավորապես այդ ժամանակից ի վեր արձանագրված իրավական և տեխնիկական զարգացումները:

Դատարանը նշում է, որ ավելի ուշ արձանագրված զարգացումները կարելի է հաշվի առնել միայն այնքանով, որքանով դրանք նպաստում են համապատասխան կանոնների պատշաճ ըմբռնմանն ու մեկնաբանությանը:

Ինչ վերաբերում է տեխնիկական բնագավառին, ապա արդեն սկսել են կիրառվել հեռուստահաղորդումներ հեռարձակող մի քանի այլ արբանյակներ: Իրավական դաշտում միջազգային մակարդակով արձանագրված զարգացումների շարքը կարելի է դասել 1989 թ. մայիսի 5-ին Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից Անդրսահմանային հեռարձակման մասին եվրոպական կոնվենցիայի ստորագրումը: Իսկ ազգային մակարդակով վերջերս արձանագրված զարգացում կարելի է համարել այն հանգամանքը, որ մի քանի մասնակից պետություն թույլ են տալիս կապի արբանյակներից չծածկագրված հեռուստահաղորդումներ ընդունել առանց այն պետությունների իշխանությունների թույլտվության, որտեղ գտնվում է արբանյակի փոխանցող հաղորդակայանը:

Վերջին հանգամանքն էական նշանակություն ունի, քանի որ, ինչպես պարզվում է, Միջազգային հեռարձակման մասին կոնվենցիան ստորագրած մյուս պետությունները, ինչպես նաև միջազգային կառույցներն այս կոնվենցիայի 22-րդ հոդվածի և այդ հոդվածով ամրագրված «Ռադիոհեռարձակման մասին» կանոնակարգի դրույթների մեկնաբանության դեմ չեն առարկել: Հետևաբար, նշված դրույթների հակառակ մեկնաբանությունը, որով Շվեյցարիայի կառավարությունը փորձել է հիմնավորել իր միջամտությունը դիմողի իրավունքներին, համոզիչ չէ:

63. Ուստի միջամտությունը չի կարելի արդարացնել պատասխանող պետության այն փաստարկով, որի հիմքում ընկած են հեռարձակման արբանյակների առանձնահատկությունները: Տվյալ դեպքում նշված հաղորդումների բնույթը, այն է՝ Խորհրդային Միությունում հեռուստաղիտման համար նախատեսված չծածկագրված հաղորդումներն ինքնին բացառում են «Ռադիոհեռարձակման մասին» կանոնակարգի 1992–1994 թթ. դրույթների իմաստով այդ հաղորդումները որպես «հասարակության լայն զանգվածների դիտման համար չնախատեսված հաղորդումներ» բնորոշելու հնարավորությունը: Նույնիսկ անտեսելով վերոնշյալ միջազգային կանոնները՝ այդ հաղորդումների ընդունումն արգելելու կարիք չկար:

Դատարանում Շվեյցարիայի կառավարությունը բերեց նաև այն փաստարկը, որ հեռարձակման արբանյակներից փոխանցվող հաղորդումների չարտոնված ընդունումն արգելելու միջոցով էր միայն հնարավոր երաշխավորել «միջազգային թղթակցության գաղտնիությունը», քանի որ այլ կերպ անհնար էր նման հաղորդումներ պարունակող ազդանշանները տարբերակել հասարակության լայն զանգվածների դիտման համար նախատեսված հաղորդումների ազդանշաններից: Այդ փաստարկը համոզիչ չէ, քանի որ հանձնաժողովի առջև պատասխանող պետությունն արդեն համաձայնել էր, որ հեռարձակման արբանյակներից փոխանցվող հաղորդումներն արբանյակային ալեհավաքների միջոցով ընդունելու դեպքում գաղտնի տեղեկությունների հայտնաբերման վտանգ չկար:

Դատարանը եզրակացնում է, որ տվյալ դեպքում միջամտությունը դիմողի իրավունքներին «անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում», հետևաբար, արձանագրվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

Տասնվեց կողմ և երկու դեմ ձայներով վճռել է, որ տվյալ դեպքում կոնվենցիայի 10-րդ հոդվածը կիրառելի է, և արձանագրել է այդ հոդվածի խախտում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Նախագահող դատավոր Ռիսդալի գլխավորությամբ մեծամասնություն են կազմել դատավորներ Կրեմոնան, Տոիր Վիլջաուլմսոնը, Գյոլչյուքլուն, Փեթիթին, Ուոլշը, Էվանսը, Մակդոնալդը, Ռուսոն, Բերնհարդտը, Շպիլմանը, Դե Մեյերը, Կարիլյո Սալսեդոն, Մարտենսը, Փալմը և Ֆոյգելը: Դատավորներ Բինդշեդլեր-Ռոբերտը և Մաթշերը չհամընկնող կարծիք են հայտնել.

… Կոնվենցիայի 10-րդ հոդվածը կիրառելու համար անհրաժեշտ է ճվազագույն նույնացում հաստատել այդ հոդվածով ամրագրված իրավունքը պաշտպանելու պահանջ ներկայացնող անձի և փոխանցվող կամ ստացվող «տեղեկատվության» միջև: Այնուհանդերձ, ընկերությունը և տոնավաճառի՝ հեռուստահաղորդումները հավանաբար դիտած այցելուները բոլորովին անտարբեր էին այն տեղեկությունների բովանդակության նկատմամբ, որոնք զուտ պատահականության սկզբունքով հաղորդվել են Խորհրդային Միությունից ռուսերեն հեռարձակվող ծրագրերում: Այդ հաղորդումները հեռարձակելու միակ նպատակն էր արբանյակային ալեհավաքների վաճառքը խթանելու նպատակով ներկայացնել դրանց տեխնիկական բնութագիրը: Այս պայմաններում մենք անհիմն ենք համարում ընկերության հայցը, որում նա հիշատակում է տեղեկություններ տարածելու ազատությունը, հետևաբար, մեր կարծիքով, տվյալ դեպքում 10-րդ հոդվածը կիրառելի չէ (պարբ. 1):

Չհամընկնող կարծիք արտահայտած դատավորները միջազգային հեռարձակումը կարգավորող կոնվենցիաների և արտասահմանյան արբանյակներով հեռարձակվող հաղորդումներն ընդունելու ոլորտում մասնակից պետությունների մեծ մասի փորձով հիմնավորված համարեցին Շվեյցարիայի ազգային մարմինների արձագանքը:

2 1990-ական թթ. ռադիո- և հեռուստահաղորդումներն ուղղակիորեն տանն ընդունելու նպատակով արբանյակների օգտագործումը վերածվեց մեծ առևտրային գործունեության, որում խոշոր լրատվական ընկերությունները միլիարդավոր ներդրումներ էին անում՝ սարքավորումներ ու ծրագրեր ձեռք բերելու և ծածկագրված հաղորդումները բաժանորդներին հեռարձակելու համար:

3 Տեղեկություններ և գաղափարներ տարածելու ազատությունը դատարանը մեկնաբանել է որպես տեղի կաբելային օպերատորի կողմից առևտրային ռադիոհաղորդումներ, այդ թվում՝ թեթև երաժշտություն վերահեռարձակելու իրավունք: *«Գրոպերա ռադիո» բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Շվեյցարիայի* (*Groppera Radio AG v Switzerland,* 1990, 12 EHRR 321, A.173) գործում (տե՛ս ներքոհիշյալ հատվածները) դատարանը հայտարարեց հետևյալը.

… Տվյալ դեպքում դատարանն անհրաժեշտ չի համարում տալ «տեղեկություններ» և «գաղափարներ» եզրույթների ճշգրիտ սահմանումը: Ակնհայտ է, որ կոնվենցիայում նշված «հաղորդում» բառն ուղղակիորեն առնչվում է ազատ արտահայտվելու իրավունքին: Դատարանը համամիտ է հանձնաժողովի հետ այն հարցում, որ 10-րդ հոդվածի 1-ին կետի առաջին երկու նախադասություններով ամրագրված իրավունքը վերաբերում է հաղորդումների՝ ինչպես եթերային, այնպես էլ կաբելային վերահեռարձակմանը՝ ըստ բովանդակության չտարբերակելով այդ հաղորդումները (պարբ. 55):

Ակնհայտ է, որ հեռարձակվող հաղորդումների էությունը թերևս խիստ կարևոր է՝ որոշելու, թե արդյոք պետությունը կարո՞ղ է միջամտությունը այդ հաղորդումները հեռարձակելու իրավունքին հիմնավորել կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով:

4 Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված տեղեկություններ ստանալու իրավունքը մեկնաբանելիս մեծ պալատը հակված չի եղել հաստատելու, որ այդ իրավունքից բխում են կարևոր հարցերի, ինչպես, օրինակ՝ տեղի բնապահպանական սպառնալիքների շուրջ հասարակության իրազեկությունը խթանելու մասով անդամ պետությունների ղեկավար մարմինների վրա դրված ընդհանուր դրական պարտավորությունները: Վերը ներկայացված *«Գուերրան ընդդեմ Իտալիայի»* (*Guerra v Italy*) գործում *(Վճիռների և որոշումների զեկույցներ,* 1998, 26 EHRR 357, 1998-I 210) դատարանը.

վերահաստատում է, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված տեղեկություններ ստանալու ազատության մասին դրույթի համաձայն՝ «պետությանը սկզբունքորեն արգելվում է սահմանափակել անձի՝ այնպիսի տեղեկություններ

ստանալու ազատությունը, որոնք այլ անձինք ցանկանում են փոխանցել նրան» (տե՛ս *«Լեոներն ընդդեմ Շվեդիայի» (Leander v Sweden)* գործով վճիռը, 1987 A.116): Տվյալ գործի հանգամանքներում վերոնշյալ ազատության դրույթների մեկնաբանությամբ չի կարելի պետության վրա դնել իր հայեցողությամբ տեղեկություններ հավաքելու և տարածելու դրական պարտավորություններ (պարբ. 53):

Վերոնշյալ որոշման պատճառով դիմողների համար դժվար կլինի պետական մարմինների գործողություններից պաշտպանել կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով սահմանված տեղեկություններ տարածելու իրավունքը:

«Ռոշն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Roche v United Kingdom) գործով 2005 թ. հոկտեմբերի 19-ի վճռում մեծ պալատը մեկ այլ կազմով միաձայն որոշմամբ որդեգրեց վերոշարադրյալ մոտեցումը:

Ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում

.....

«Գրոպերա ռադիո» բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Շվեյցարիայի» (Groppera Radio AG v Switzerland) A.173 (1990) 12, EHRR 321

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Տվյալ գործով որպես դիմող հանդես են եկել՝ Շվեյցարիայում գրանցված ռադիոհաղորդումներ հեռարձակող մի ընկերություն, ընկերության սեփականատերը և այդտեղ աշխատող երկու լրագրողներ: 1979 թ. մի իտալական մասնավոր ընկերություն ռադիոկայան հիմնեց Շվեյցարիայի սահմանից վեց կիլոմետր հեռավորության վրա՝ Իտալիայի տարածքում գտնվող Պիցո Գրոպերա լեռան լանջին: Այդ կայանն ուներ Եվրոպայում ամենահզոր երկարալիք ռադիոհաղորդիչը և կարող էր հեռարձակվել հյուսիսարևմտյան ուղղությամբ 200 կմ տարածության վրա՝ հասնելով Շվեյցարիայի ազգաբնակչության գրեթե մեկ երրորդին, հատկապես՝ Ցյուրիխի շրջանում: Ռադիոկայանի սեփականատերը հաղորդիչն օգտագործում էր Շվեյցարիայում հեռարձակման պետական մենաշնորհը շրջանցելու համար: 1980-ական թթ. սկզբին նշված ռադիոկայանով հեռարձակվում էին այնպիսի հաղորդումներ, որոնք ամբողջովին ֆինանսավորվում էին շվեյցարացի գովազդատուների կողմից: 1982 թ. Շվեյցարիայի դաշնային կառավարությունը փոփոխություններ կատարեց համապատասխան օրենքում՝ պետության տարածքում թույլատրելով հիմնել տեղական ռադիոկայաններ և դադարեցնելով Շվեյցարիայի Ռադիոհեռարձակման ընկերության մենաշնորհը: «Գրոպերա» ռադիոկայանի սեփականատերը ստացավ Շվեյցարիայի նոր տեղական կայանների լիցենզիաներից մեկը, այն պայմանով, որ նրա ընկերությունը կդադարի իր հաղորդումները հեռարձակել Իտալիայի տարածքում գտնվող լեռան կայանից: Այնուհետև նա վաճառեց «Գրոպերա» ռադիոկայանը դիմող ընկերությանը և դրա ներկայիս սեփականատիրոջը: Դիմող կազմակերպությունը «Սաունդ ռեյդիո» (Sound Radio) անվան տակ շարունակում էր «Գրոպերա» ռադիոկայանից հեռարձակել Ցյուրիխի տարածքում՝ ընդգրկելով թեթև երաժշտություն, լրատվական հաղորդումներ և գովազդ: 1983 թ. Շվեյցարիայի դաշնային կառավարությունը որոշում ընդունեց ընդհանուր ալեհավաքների տեղադրման լիցենզավորում անցկացնելու մասին: Նման լիցենզիաների պահառուները կարող էին տեղական բաշխիչ ցանցի միջոցով իրենց բաժանորդներին վերահեռարձակել հաղորդումները, պայմանով, որ դրանք հեռարձակող ռադիոընկերությունները չխախտեին Միջազգային հեռարձակումների մասին կոնվենցիան: Շվեյցարիայի լիցենզավորված տեղական ընդհանուր ցանցերից մի քանիսը վերահեռարձակում էին դիմող կազմակերպության հաղորդումները: Սակայն 1984 թ. Փոստի և հեռարձակման հարցերով Շվեյցարիայի պետական վարչությունից այդ հեռարձակողներին զգուշացրեցին, որ դիմող կազմակերպության հաղորդումները վերահեռարձակելով՝ նրանք խախտում են լիցենզիայի պայմանները և գործում քրեորեն պատժելի արարք, քանզի վերոնշյալ կազմակերպության ռադիոհեռարձակման գործունեությունը միջազգային կանոններին չի համապատասխանում: Այդ մասին է վկայում, օրինակ, այն փաստը, որ «Գրոպերա» ռադիոկայանն Իտալիայի պետական մարմիններից երբեք լիցենզիա չի ստացել: Լիցենզիաների պահառու կազմակերպություններից մեկը՝ «Մաուր» ընկերությունը, վարչական

բողոքով վիճարկեց Շվեյցարիայի փոստի և հեռարձակման պետական վարչության որոշումը: Սակայն նախքան բողոքի քննությունը «Գրոպերա» ռադիոկայանի հաղորդիչը շանթահարման հետևանքով վնասվել էր և չէր վերականգնվել, ուստի Շվեյցարիայի դաշնային դատարանը վճռեց, որ բողոքի նյութաիրավական հիմքերն ուսումնասիրելու կարիք չկա: Դիմողները հանձնաժողովին բողոք ներկայացրին առ այն, որ տեղական կաբելային հեռուստատեսությամբ իրենց հաղորդումների վերահեռարձակման վրա դրված արգելքով Շվեյցարիայի ազգային մարմինները խախտել են կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված անկախ սահմաններից տեղեկություններ և գաղափարներ տարածելու ազատությունը: Հանձնաժողովը, յոթ կողմ և վեց դեմ ձայներով, արձանագրեց 10-րդ հոդվածի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

Ա. Արձանագրվե՞լ է միջամտություն դիմողների իրավունքներին

Տվյալ դեպքում դատարանն անհրաժեշտ չի համարում «տեղեկություններ» և «գաղափարներ» եզրույթների հստակ սահմանումը տալ: Կոնվենցիայում նշված «հաղորդում» բառը միանշանակ անմիջականորեն վերաբերում է ազատ արտահայտվելու իրավունքին: Դատարանը համամիտ է հանձնաժողովի հետ այն հարցում, որ 10-րդ հոդվածի 1-ին կետի առաջին երկու նախադասություններով ամրագրված իրավունքը վերաբերում է հաղորդումների եթերային և կաբելային վերահեռարձակմանը՝ չտարբերակելով այդ հաղորդումներն ըստ բովանդակության: Վիճարկված վարչական որոշումներն անշուշտ միջամտություն են եղել «Սաունդ ռեյդիո» կայանի հաղորդումների կաբելային հեռարձակման իրավունքին և թույլ չեն տվել «Մաուրի» ընկերության հեռարձակման տարածքում բնակվող բաժանորդներին ընդունել այդ հաղորդումները: Ուստի այդ որոշումները հավասարազոր են վերոնշյալ իրավունքին «ազգային մարմինների միջամտությանը»:

Բ. Միջամտությունը հիմնավորվա՞ծ էր

56. Պատասխանող պետությունը բերեց այն հակափաստարկը, որ միջամտությունն ի վերջո միտված էր վերոնշյալ հոդվածի 1-ին կետի պահպանմանը, որի համաձայն՝ 10-րդ հոդվածը «չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու հեռարձակող ձեռնարկությունների լիցենզավորում»: Պետությունը բերեց ևս մեկ փաստարկ, որի համաձայն՝ միջամտությունը հիմնավորված էր նույն հոդվածի 2-րդ կետով:

Ի. Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ նախադասություն

…

59. Դատարանը համամիտ է պատասխանող պետության հետ այն հարցում, որ տվյալ դեպքում կիրառելի է կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ նախադասությունը: Հարկ է միայն որոշել դրա կիրառելիության շրջանակը:

60. Կոնվենցիայի նախապատրաստական աշխատանքների վերջնական փուլում 10-րդ հոդվածի 1-ին կետում տվյալ նախադասության ընդգրկումը միանշանակ պայմանավորված էր տեխնիկական կամ գործնական բնույթի բացառումներով, օրինակ՝ առկա հաճախությունների սահմանափակ թվով և հաղորդիչներ կառուցելու համար անհրաժեշտ մեծ ներդրումներով: Այդ նախադասությամբ արտացոլվում են նաև որոշ պետությունների՝ քաղաքական առումով ունեցած մտահոգությունները, ասել է թե՝ այն, որ հեռարձակման իրավունքը պետք է լինի պետության մենաշնորհը: Այդ ժամանակներից ի վեր փոխվել են հայացքները, և արձանագրվել է տեխնիկական առաջընթաց, մասնավորապես, բազմաթիվ եվրոպական երկրներում կաբելային հեռարձակումը հանգեցրել է պետության մենաշնորհների վերացմանը և տեղական մասնավոր ռադիոկայանների ստեղծմանը, որոնցով համալրվել են պետության համապատասխան ծառայությունները: Ավելին, պետական լիցենզավորման համակարգերն անհրաժեշտ են ոչ միայն հեռարձակող ձեռնարկությունները պետական մակարդակով ըստ հարկի կարգավորելու, այլև հիմնականում միջազգային կանոնները կենսագործելու համար:

61. Այնուհանդերձ, կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ նախադասության նպատակն ու խնդիրը, ինչպես նաև դրա կիրառման շրջանակը հարկավոր է քննել ամբողջ հոդվածի և, մասնավորապես՝ երկրորդ կետի պահանջների համատեքստում:

Կոնվենցիայի 8-րդ, 9-րդ և 11-րդ հոդվածների 1-ին կետերի որևէ նախադասություն հավասարազոր չէ 10-րդ հոդվածի այդ նախադասությանը, թեպետ դրանք շատ նման են իրենց կառույցով: Նույնը չի կարելի ասել, սակայն, ձևակերպման մասին, բացառությամբ՝ 11-րդ հոդվածի 2-րդ կետի վերջին նախադասության: Այնուամենայնիվ, այդ տեսանկյունից, երկու հոդվածները տարբերվում են իրենց կառույցով: 10-րդ հոդվածի 1-ին կետում արդեն ներկայացվում են մի քանի թույլատրելի սահմանափակումներ, իսկ 11-րդ հոդվածում միայն 2-րդ կետում են նշվում զինված ուժերում ծառայողների, ոստիկանների և պետության ղեկավարների կողմից միավորումներ կազմելու իրավունքի իրացման հնարավոր հատուկ սահմանափակումները: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ այդ սահմանափակումները չեն նախատեսվում 2-րդ կետի առաջին նախադասությամբ ամրագրված պահանջներով, բացառությամբ օրինականության պահանջի՝ ֆր. *légitimes* (օրինական): Այսպիսով, վերոնշյալ երկու հոդվածների համեմատությունից երևում է, որ 10-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ նախադասության շրջանակը

սահմանափակ է այնքանով, որքանով այն նույն կետի առաջին և երկրորդ նախադասություններով ամրագրված սկզբունքի բացառության է վերածվում:

Այս ամենի հիման վրա կարելի է եզրակացնել, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ նախադասությունը կոչված է պարզաբանելու, որ պետություններին թույլատրվում է լիցենզավորման համակարգի միջոցով, մասնավորապես՝ տեխնիկական տեսանկյունից վերահսկել իրենց տարածքում հեռարձակման կազմակերպումը: Սակայն դա չի նշանակում, որ լիցենզավորման միջոցառումներն այլապես չեն ենթարկվում 2-րդ կետի պահանջներին, քանի որ հակառակ դեպքում այդ ամենի արդյունքը կհակասեր ամբողջ 10-րդ հոդվածի առարկային և նպատակին:

62. Համապատասխանաբար, խնդրո առարկա նախադասությունը տվյալ դեպքում կիրառելի է այնքանով, որքանով այն թույլ է տալիս ըստ հարկի վերահսկել հեռարձակումը Շվեյցարիայի տարածքում:

…

64. Ամփոփելով՝ կարելի է ասել, որ միջամտությունը չէր հակասում կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ նախադասությանը: Մնում է միայն որոշել՝ այդ միջամտությունը բավարարե՞լ է նաև 2-րդ կետի պահանջները, այսինքն՝ «նախատեսվա՞ծ էր օրենքով», ուղղվա՞ծ էր օրինական նպատակին կամ նպատակներին և «անհրաժե՞շտ էր ժողովրդավարական հասարակությունում» այդ նպատակներին հասնելու համար:

2. Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետ

(Ա) «Օրենքով նախատեսված»

…Կարճ ասած՝ վիճարկված կանոնների նպատակն էր հնարավորություն տալ դիմողներին և նրանց փաստաբաններին կարգավորելու տվյալ հարցով իրենց վարքագիծը:

(Բ) «Օրինական նպատակ»

69. Պատասխանող պետությունը պնդել է, որ վիճարկված միջամտությամբ հետապնդվել է կոնվենցիայով ճանաչված երկու նպատակ:

Նպատակներից մեկը հեռարձակման բնագավառում «անկարգությունները կանխելն» էր, ընդ որում՝ խնդրո առարկա կանոնն ամրագրված էր ինչպես Միջազգային հեռարձակումների մասին կոնվենցիայում, այնպես էլ «Ռադիոհեռարձակման մասին» Շվեյցարիայի կանոնակարգում և համապարտադիր բնույթ էր կրում: «Սաունդ ռեյդիո» կայանն անտեսել էր հաճախությունների մասին միջազգային կարգի հետևյալ երեք տարրական սկզբունքը.

ա) լիցենզավորման սկզբունք, ըստ որի՝ անհատի կամ ձեռնարկության հիմնած կամ գործարկվող հեռարձակման կայանը պետք է լիցենզիա ստանա («Ռադիոհեռարձակման մասին» Շվեյցարիայի կանոնակարգ, թիվ 2020 կանոն), իսկ «Սաունդ ռեյդիո» ընկերությունը երբեք լիցենզիա չի ստացել Իտալիայի իշխանություններից:

բ) համակարգման սկզբունք, որով պահանջվում է այն պետությունների միջև հատուկ համաձայնագիր կնքել, որտեղ օգտագործվում է 100-108 մեգահերց հաճախությունը («Ռադիոհեռարձակման մասին» Շվեյցարիայի կանոնակարգ, թիվ 584 կանոն), իսկ Շվեյցարիայի և Իտալիայի միջև նման համաձայնագիր չի կնքվել:

գ) հաճախությունները խնայողաբար օգտագործելու սկզբունք (Միջազգային հեռարձակումների մասին կոնվենցիայի 33-րդ հոդված, «Ռադիոհեռարձակման մասին» Շվեյցարիայի կանոնակարգի թիվ 2666 կանոն), իսկ «Պիցո գրոպերա» կայանն ուներ Եվրոպայում ամենահզոր բարձր հաճախությամբ ռադիոհաղորդիչ:

Երկրորդ՝ պատասխանող պետությունը հայտարարել է, որ բողոքարկված միջամտությունը միտված էր «այլ անձանց իրավունքների պաշտպանությանը», քանզի այն նախատեսված էր միջազգային և ազգային մակարդակով հաճախություններն ազնվորեն բաշխելու միջոցով բազմակարծություն ապահովելու համար:

…

70. Դատարանը համարում է, որ խնդրո առարկա միջամտությամբ հետապնդվել են այդ նպատակներից երկուսն էլ, այն է՝ միջազգային հեռարձակման կարգի պահպանումը և այլ անձանց իրավունքների պաշտպանությունը, ընդ որում՝ դրանք լիովին համահունչ են կոնվենցիային:

(Գ) «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ»

71. Դիմողները հայտարարել են, որ իրենց վրա դրված արգելքը հրատապ սոցիալական անհրաժեշտությունից չէր բխում, և հատկապես, դուրս էր ընկնում հետապնդվող նպատակների պահանջների շրջանակից: Այդ արգելքը հավասարազոր է գրաքննության կամ ռադիոկայանի հաղորդումների խափանման:

Պատասխանող պետությունը հայտնել է, որ այլ ելք չուներ՝ հասկանալով, որ Իտալիայի իշխանություններին ուղղված իր դիմումներն ապարդյուն են:

72. Դատարանի նախադեպային պրակտիկայով՝ միջամտության անհրաժեշտությունն ու աստիճանը որոշելիս մասնակից

պետություններն օգտվում են հայեցողության որոշ սահմանից, որը, սակայն, ինչպես համապատասխան օրենսդրության, այնպես էլ այն կիրառելու որոշումների մասով ուղեկցվում է եվրոպական կառույցների վերահսկողությամբ: Այդ վերահսկողությունն իրականացնելիս դատարանը պետք է պարզի՝ պետական մակարդակով ձեռնարկված միջոցներն սկզբունքորեն կարո՞ղ են հիմնավորվել և համաչա՞փ են, թե՞ ոչ (այլ աղբյուրների շարքում տե՛ս *«Մարքթ ինթերն ֆերլագ» ՍՊՀ-ն և Քլաուս Բեերմանն ընդդեմ Գերմանիայի»* (*Markt intern Verlag GmbH and Klaus Beermann v Germany*) գործով 1989 թ. նոյեմբերի 20-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 165, էջ 19–20, պարբ. 33):

73. Տվյալ դեպքում հաստատելու համար, որ միջամտությունն անհամաչափ չի եղել, անհրաժեշտ է միջազգային հեռարձակման կարգն ու այլոց իրավունքները պաշտպանելու պահանջը հակակշռել «Սաունդ ռեյդիո» կայանի հաղորդումների վերահեռարձակման հարցում դիմողների և այլ անձանց շահերին:

Դատարանը նախ կրկնում է, որ 1983 թ. կանոնակարգի ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո Շվեյցարիայի կաբելային հեռարձակման ընկերություններից շատերը դադարեցրին խնդրո առարկա հաղորդումների վերահեռարձակումը: Ավելին, Շվեյցարիայի իշխանությունները երբեք չեն խափանել «Պիցո գրոպերա» ռադիոկայանի հաղորդումները, թեև նրանք այդ հարցով դիմել են Իտալիային և Միջազգային հեռարձակման միությանը: Երրորդ՝ վիճահարույց արգելքը դրվեց Շվեյցարիայում գրանցված «Մաուր» ընկերության վրա, որի բոլոր բաժանորդները բնակվում էին Շվեյցարիայում և շարունակում էին ընդունել մի քանի այլ կայանների հաղորդումները: Եվ վերջին, սակայն առավել կարևոր իրողությունն այն է, որ ընտրված ընթացակարգը կարող էր անհրաժեշտ համարվել օրենքի շրջանցումը կանխելու համար և ոչ թե տվյալ հաղորդման բովանդակության կամ միտումների դեմ ուղղված գրաքննության դրսևորում էր, այլ այնպիսի ռադիոկայանի դեմ կիրառված միջոց, որը պատասխանող պետության իշխանությունները կարող էին հիմնավոր պատճառներով համարել Շվեյցարիայում գործող օրինական հեռարձակման համակարգի կանոնները շրջանցելու նպատակով սահմանի մյուս կողմից հեռարձակող շվեյցարական կայան:

Հետևաբար, տվյալ դեպքում ազգային մարմինները չեն խախտել կոնվենցիայով իրենց վերապահված հայեցողության սահմանը:

Գ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

74. Ի վերջո, կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում չի արձանագրվել, քանի որ վիճարկված միջոցն ընդհանուր առմամբ համահունչ էր նշված հոդվածի 1-ին կետին և բավարարում էր 2-րդ կետի պահանջները:

…

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

…

Տասնվեց կողմ և երեք դեմ ձայներով վճռել է, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածը չի խախտվել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Նախագահող դատավոր Ռիսդալի գլխավորությամբ լիակազմ դատարանի կազմում ընդգրկվել են դատավորներ Կրեմոնան, Տոիր Վիլջաուլմսոնը, Բինդշեդլեր-Ռոբերտը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Պինեյրոն, Ուոլշը, Էվանսը, Մակդոնալդը, Ռուսոն, Շպիլմանը, Վալտիկոսը, Մարտենսը, Փալմը և Ֆոյգելը: Չհամընկնող կարծիք արտահայտած դատավոր Փեթիթին նշել է հետևյալը. «Տեղեկություններ ստանալու ազատությունն ընդգրկող ազատ արտահայտվելու հիմնարար իրավունքը նույնիսկ ավելի էական դեր է կատարում հեռարձակման բնագավառում: Անդրսահմանյան հեռարձակման շնորհիվ է, որ Արևելյան Եվրոպայի երկրները բռնել են ժողովրդավարության ուղին»: Նմանապես, դատավոր Բերնհարդտն իր չհամընկնող կարծիքում հայտնել է. «Անդրսահմանյան հեռարձակման այս ազատությունն արդի ժողովրդավարության էական տարրերից է և 10-րդ հոդվածի մյուս դրույթները մեկնաբանելիս պետք է հաշվի առնվի»: Դատավոր Դե Մեյերը հիմնավորված չի համարել դիմողների հաղորդումների հեռարձակման վրա Շվեյցարիայի իշխանությունների դրած արգելքը, քանզի միջազգային իրավունքի համաձայն՝ դրանց անօրինականությունը չի հաստատվել:

2 *«Գրոպերա» ռադիոկայանի* (*Groppera*) գործում դատարանի՝ կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված լիցենզավորման լիազորության մեկնաբանումը շատ կարևոր է, քանզի այն պարզաբանում է, որ թեև իրենց տարածքում հեռարձակումը կարգավորելու նպատակով պետությունները կարող են օգտվել նշված լիազորությունից, սակայն այդ կարգավորիչ համակարգերը պետք է

բավարարեն կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պայմանները: Հետևաբար, պետությունները չեն կարող միջամտությունը հեռարձակողների իրավունքներին հիմնավորել միայն կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված լիցենզավորման լիազորությամբ, փոխարենը՝ նրանք պետք է ապացուցեն, որ այդ միջամտությունն օրինական էր նշված հոդվածի 2-րդ կետով: Բացի այդ, հեռարձակման տեխնոլոգիան մեծ ազդեցություն է գործում ինչպես ազգային, այնպես էլ միջազգային կարգավորիչ համակարգերի վրա: Ինչպես արդեն նշվել է, մինչև 1990-ական թվականները արտատարածքային հաղորդումներն ավելի հաճախ հեռարձակվել են մեծ տարածություններում ընդունվող արբանյակներով, ոչ թե սահմանափակ օտարերկրյա տարածություն ծածկող վերերկրյա ռադիոհաղորդիչներով: Եվ ավելին, նորարարական թվային հեռարձակման տեխնոլոգիայի շնորհիվ արագ աճում է այն հեռուստա- և ռադիոալիքների թիվը, որոնք կարող են վերահեռարձակվել առկա հաճախություններով: Ուստի պետությունների համար շատ դժվար կլինի փաստարկել, որ հեռարձակման հնարավորությունների սակավությունն իրենց իրավունք է տալիս զբաղեցնելու եղած ալիքների մեծ մասը (տես «*Լենթիա» միավորման* (*Lentia*) գործով կայացված ներքոհիշյալ վճիռը):

3 Հետագայում *«Ինֆորմացիոնսվերայն Լենթիա» միավորումն ընդդեմ Ավստրիայի» (Informationsverein Lentia v Austria),* 1993, 17 EHRR 93, A.276) գործում դատարանի պալատը հստակեցրեց լիակազմ դատարանի՝ լիցենզավորման լիազորության վերոնշյալ մեկնաբանությունը: Այս գործում խոսքն այն մասին է, որ մի շարք անձինք, կազմակերպություններ և մի մասնավոր ընկերություն Ավստրիայում ռադիո- և հեռուստակայաններ հիմնելու ապարդյուն փորձեր են արել: Նրանք չեն կարողացել իրականացնել իրենց մտահղացումը, քանի որ Ավստրիայի սահմանադրական և դաշնային օրենքներով հեռարձակումը պետության մենաշնորհն է և իրականացվում է Ավստրիայի հեռարձակման ընկերության ռադիո- և հեռուստահաղորդումների միջոցով: Դիմողները գանգատ ներկայացրին հանձնաժողովին առ այն, որ հեռարձակման կայանի գործարկման լիցենզիաներ ստանալու անհնարինությամբ խախտվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված տեղեկություններ հաղորդելու իրավունքը: Հանձնաժողովը միաձայն արձանագրեց դիմողներից մեկի՝ 10-րդ հոդվածով սահմանված իրավունքների խախտում, իսկ տասնչորս կողմ և մեկ դեմ ձայներով՝ բոլոր դիմողների՝ նույն հոդվածով սահմանված իրավունքների խախտում: Դատարանը միաձայն ընդունեց պետության այն փաստարկը, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետում ընդգրկված լիցենզավորում անցկացնելու լիազորությունն ազգային մարմիններին հնարավորություն է տալիս իրենց գործառույթն իրականացնելիս, զուտ տեխնիկական նկատառումներից բացի, հաշվի առնելու նաև այլ հարցեր:

Թեև տեխնիկական հայեցակետերի կարևորությունն անվիճարկելի է, սակայն լիցենզիա տալու կամ մերժելու հարցը կարող է պայմանավորված լինել նաև այլ նկատառումներով, այդ թվում՝ առաջարկվող կայանի բնույթով ու նպատակներով, համազգային, շրջանային կամ տեղական մակարդակով հնարավոր ունկնդիրների և հեռուստաղիտողների շրջանակով, հատուկ ունկնդրի և հեռուստաղիտողի իրավունքներով ու պահանջմունքներով, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերից բխող պարտավորություններով:

Այս ամենը կարող է հանգեցնել այնպիսի միջամտությունների դիմողի իրավունքներին, որոնք նույնիսկ կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված նպատակներից որևէ մեկին հակասելու դեպքում օրինական են համարվում 1-ին կետի երրորդ նախադասությամբ: Այնուհանդերձ, կոնվենցիայի դրույթներին նման միջամտությունների համապատասխանությունը պետք է որոշել 2-րդ կետի մյուս պահանջների համաձայն (պարբ. 32):

Հաշվի առնելով, որ Ավստրիայում հեռարձակման պետական մենաշնորհը կարող է նպաստել հաղորդումների որակի բարձրացմանն ու հավասարակշռությանը՝ դատարանը վճռել է, որ լիցենզավորման նման համակարգը չի հակասում պետության՝ լիցենզավորում սահմանելու լիազորությանը: Սակայն հարկավոր էր պարզել՝ այդ համակարգը բավարարո՞ւմ է կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի պայմանները: Պատասխանող պետությունն ընդգծել է հեռուստատեսության ու ռադիոյի լրատվամիջոցների քաղաքական հայեցակետը, ինչպես նաև հաղորդումներով իրադարձությունների անաչառ, բազմակողմանի և հավասարակշռված լուսաբանումն ապահովելու կարևորությունը:

Դատարանը հաճախ ընդգծել է ժողովրդավարական հասարակությունում ազատ արտահայտվելու իրավունքի հիմնարար դերը: Ռադիո- և հեռուստակայաններ հիմնելու վերոնշյալ նախաձեռնությունը չի կարող հաջողվել, եթե այն հիմնավորված

չլինի բազմակարծության սկզբունքով, որի գերագույն երաշխավորը պետությունն է: Այս դիտողությունը հատկապես կիրառելի է հեռուստատեսության և ռադիոյի լրատվամիջոցների պարագայում, որոնց հաղորդումները հաճախ հեռարձակման շատ մեծ ծածկույթ ունեն:

Ի տարբերություն նշված արժեքների պահպանումը երաշխավորող բոլոր այլ միջոցների՝ պետական մենաշնորհն առավել մեծ չափով է սահմանափակում ազատ արտահայտվելու իրավունքը: Նման սահմանափակումների հեռահար բնույթից հետևում է, որ դրանք կարող են հիմնավորվել միայն հրատապ սոցիալական անհրաժեշտությանը համապատասխանելու դեպքում:

Վերջին տասնամյակներում արձանագրված տեխնիկական առաջընթացի արդյունքում այդ սահմանափակումներն այլևս չեն կարող հիմնավորվել առկա հաճախությունների և ալիքների թվի հետ կապված նկատառումներով, ինչն ընդունել է պատասխանող պետությունը: Բացի այդ, տվյալ գործում այդ նկատառումները կորցրել են իրենց գոյության իմաստը՝ հաշվի առնելով Ավստրիայի հեռուստաընդհատողների և ունկնդիրների համար նախատեսված արտասահմանյան հաղորդումների թվի աճը: Ի վերջո, ամենակարևորն այն է, որ չի կարելի վիճարկել նվազ սահմանափակող հնարավոր լուծումների գոյությունը: Բավական է օրինակ բերել որոշ երկրների գործելակերպը, որոնք կա՛մ լիցենզիաներ են տալիս տարբեր հստակ պայմաններով, կա՛մ նախատեսում են անհատների մասնակցության ձևեր պետական ընկերության գործունեությանը (պարբ. 38-39):

Այսպիսով, դատարանը մերժել է պատասխանող պետության այն փաստարկը, որ Ավստրիայի հեռարձակման շուկան իր փոքր ծավալի պատճառով չէր կարող ապահովել մի քանի մասնավոր հեռարձակողների գոյությունը, իսկ տնտեսական գործոնները կհանգեցնեին մասնավոր մենաշնորհների առաջացմանը:

Պատասխանող պետության բերած փաստարկները հերքվում են իրենց տարածքով Ավստրիայի հետ համեմատելի մի քանի եվրոպական պետությունների փորձով, որտեղ մասնավոր և պետական հեռարձակման կայանների գոյակցումը վկայում է պատասխանող պետության մտահոգության անհիմն լինելու մասին, ընդ որում՝ այդ կայանները գործում են երկրից երկիր տարբերվող կանոններին համապատասխան, և դրանց աշխատանքն ուղեկցվում է մասնավոր մենաշնորհի ձևավորումը կանխող միջոցներով (պարբ. 42):

Հետևաբար, դատարանը վճռել է, որ միջամտությունները դիմողների իրավունքներին անհամաչափ էին հետապնդվող նպատակին, ուստիև անհրաժեշտ չէին ժողովրդավարական հասարակությունում: Այսպիսով, արձանագրվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: Մեծ է տվյալ գործով կայացված վճռի նշանակությունը, որը թերևս պետություններին գոհացրել է լիցենզավորման լիազորության սահմանները պարզաբանելու մասով, սակայն միաժամանակ հավասարակշռության է բերել այդ լիազորությունը՝ ընդգծելով կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին լիցենզավորման մասին որոշումների համապատասխանության անհրաժեշտությունը: Բացի այդ, դատարանի վերլուծությունը և հատկապես լրատվամիջոցներում բազմակարծության կարևորության ընդգծումը փաստորեն հնարավորություն չեն տալիս պետություններին արդի ժամանակներում պաշտպանելու այն տեսակետը, որ հեռուստատեսության և ռադիոյի լրատվամիջոցների բնագավառում պետության մենաշնորհը չի հակասում կոնվենցիայի 10-րդ հոդվածին:

Հետագայում *«էյԲիՍի» ռադիոկայանն ընդդեմ Ավստրիայի» (Radio ABC v Austria),* 1997-VI 2188) գործում դատարանը միաձայն վճռել է, որ Ավստրիայի իշխանությունները, փորձելով մեղմացնել ոչ պետական ընկերություններին հեռարձակման լիցենզիա տալու կարգը, խախտել են կոնվենցիայի 10-րդ հոդվածը: 1989 թ. սկսած՝ դիմող ոչ առևտրային կազմակերպությունը մի քանի անգամ ապարդյուն դիմում է ներկայացրել Վիեննայի տարածքում ռադիոկայան գործարկելու լիցենզիա ստանալու համար: Այնուհանդերձ, դատարանը գոհունակությամբ նշել է, որ 1997 թ. Ավստրիան նոր օրենք էր ընդունել հեռարձակման բնագավառում կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները կատարելու համար: *«Թելե 1 Փրիվաթֆեռնզեհզելշաֆթ ՄԲՀ» ընկերությունն ընդդեմ Ավստրիայի» (Tele 1 Privatfernsehgesellschaft MBH v Austria),* վճիռը կայացվել է 2000 թ. հոկտեմբերի 21-ին) գործում դատարանը հրաժարվեց քննել կոնվենցիայի 10-րդ հոդվածին 1997 թ. օրենքի համապատասխանության հարցը, քանի որ, մի կողմից, դիմող կազմակերպությունը արբանյակային հեռարձակման լիցենզիա ստանալու հայտ չէր ներկայացրել, մյուս կողմից՝ Հեռարձակման հարցերով տեսչությանը չէր տեղեկացրել կաբելային հեռարձակման հետ կապված որևէ գործունեություն ծավալելու մասին: Ուստի, դատարանն առհասարակ չքննեց այն հարցը՝ նշված օրենքը բավարարո՞ւմ էր կոնվենցիայի պահանջները:

Հոդված 10(2)

Պարտականություններ և պատասխանատվություն

1 Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխանող արտահայտությունն անմիջական ազդեցություն է գործում հեղինակի կամ հրատարակչի՝ նույն հոդվածի 2-րդ կետով սահմանված պարտականությունների և պատասխանատվության բնույթի վրա: Վերոնշյալ *«Օտտո Փրեմինգեր ինստիտուտն ընդդեմ Ավստրիայի» (Otto Preminger Institute v Austria),* 1994, 19 EHRR 34, A.295-A) գործում դատարանը հայտնել է հետևյալը.

Ինչպես հետևում է կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետում օգտագործված ձևակերպումից, այդ հոդվածի առաջին կետով ամրագրված իրավունքներն ու ազատություններն իրացնող յուրաքանչյուր ոք պետք է համապատասխան «պարտականություններ և պատասխանատվություն ու» ստանձնի: Կրոնական հայացքների ու համոզմունքների համատեքստում այդ պարտականությունների և պատասխանատվության շարքը կարելի է իրավացիորեն դասել այնպիսի արտահայտություններից հնարավորինս խուսափելու պարտավորությունը, որոնք, այլ անձանց անհիմն վիրավորանք պատճառելով, խախտում են նրանց իրավունքները, ուստին հանրությանը հուզող հարցերում առաջընթացն ապահովող հասարակական բանավեճի որևէ ձևին չեն նպաստում (պարբ. 49):

2 Նշված պարտավորությունների բնույթը որոշելիս առանցքային դեր ունի նաև հրապարակման պայմանների քաղաքական և սոցիալական ավելի լայն համատեքստը: *«Էրդողդուն և Ինջեն ընդդեմ Թուրքիայի» ((Erdogdu and Ince v Turkey)*, վճիռը կայացվել է 1999 թ. հուլիսի 8-ին) գործով որպես դիմող հանդես են եկել Ստամբուլում հրատարակվող «Ժողովրդավարական ընդդիմություն» ամսագրի խմբագիրն ու լրագրողներից մեկը: 1992 թ. ամսագրում հրապարակվել է մի թուրք սոցիոլոգի հետ պրն Ինչի անցկացրած հարցազրույցը քրդական հարցի շուրջ: Հարցազրույցի ընթացքում սոցիոլոգը ներկայացրել է քրդական հասարակության իր վերլուծությունը և արտահայտել այն կարծիքը, որ որոշ շրջաններում կարելի էր արձանագրել քրդական պետության ձևավորում: Հետագայում Ստամբուլի ազգային անվտանգության դատարանը մեղավոր է ճանաչել դիմողներին պետության անբաժանելիության խախտմանն ուղղված գաղափարներ տարածելու համար: Երեսունմեկ կողմ և մեկ դեմ ձայներով հանձնաժողովն արձանագրել է 10-րդ հոդվածի խախտում: Դատարանը միաձայն պաշտպանել է հանձնաժողովի կարծիքը և վճռել, որ վերոնշյալ տպագրված հարցազրույցը բռնության հրահրում չի եղել, միաժամանակ ընդգծել է հետևյալը.

…Լրատվամիջոցների աշխատակիցների ազատ արտահայտվելու իրավունքի իրացումն ուղեկցող «պարտականություններն ու պատասխանատվությունը» հատուկ նշանակություն են ստանում ընդհարումների և հարաբերությունների լարվածության պարագայում: Հարկ է հատուկ ուշադրությամբ զննել պետության դեմ բռնության դիմող կազմակերպությունների ներկայացուցիչների կարծիքների հրապարակումը, որպեսզի լրատվամիջոցներն ատելության կամ բռնության գաղափարներ տարածող գործիքի չվերածվեն: Միաժամանակ, այն դեպքերում, երբ նման կարծիքները որպես այդպիսիք չեն կարող դասվել ատելության կամ բռնության հրահրմանն ուղղված գաղափարների կարգը, մասնակից պետությունները չեն կարող տարածքային ամբողջականությունը կամ պետական անվտանգությունը պահպանելու կամ անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու նկատառումով սահմանափակել հասարակության՝ նշված կարծիքների մասին իրազեկված լինելու իրավունքը՝ քրեական օրենսդրության ողջ բեռը դնելով լրագրողների վրա (պարբ. 54):

Հետևաբար, հասարակությունում քաղաքացիական հակամարտության պայմաններում լրատվամիջոցները պետք է զգուշություն ցուցաբերեն՝ բռնի գործողություններ չխրախուսելու համար:

3 Դատարանի մեկնաբանությամբ այս ձևակերպումը լրագրողների վրա դնում է իրենց հոդվածների նյութի ուսումնասիրության հետ կապված պարտավորություններ: *«Բլադեթ Թրոմսոն և Ստենսասան ընդդեմ Նորվեգիայի» (Bladet Tromso and Stensaas v Norway),* 1999 թ. մայիսի 20-ի վճիռ) գործով որպես դիմող հանդես եկող տեղական թերթն ու դրա խմբագիրը մեղավոր ճանաչվեցին փոկերի որսորդական նավի անձնակազմի մասին զրպարտչական հայտարարություններ տպագրելու համար և վնասի փոխհատուցման տույժի ենթարկվեցին: Դիմողները մի շարք հոդվածներ էին տպագրել փոկերի որսորդների վարքի մասին:

Այդ հոդվածներում զետեղված տեղեկությունները հիմնականում տրամադրում էր ոմն անկախ լրագրող՝ պրն Լինդբերգը, որին 1988 թ. մարտ ամսին ձկնապաշարների պահպանման նախարարությունը չվարձատրվող սկզբունքով նշանակեց փոկերի որսորդության տեսուչ: Փոկերի որսորդների նավի վրա մեկ ամիս ծառայելուց հետո նա դիմողներին տրված հարցազրույցում պնդում էր, որ որոշ անձինք փոկերի անօրինական որս էին ծավալում: Այնուհետև դիմողները տպագրեցին Լինդբերգի վերոնշյալ հայտարարությունները, ինչպես նաև նավի անձնակազմի մի քանի անդամների հակափաստարկները: Երկու ամիս անց դիմող Լինդբերգը ձկնապաշարների պահպանման նախարարությանը ներկայացրեց արշավախմբի մասին իր պաշտոնական զեկույցը, որում նա պնդումներ էր անում փոկերի որսը կարգավորող կանոնակարգի մի շարք խախտումների վերաբերյալ և նշում այս զանցանքի համար պատասխանատու նավի անձնակազմի հինգ անդամների անունները: Կառավարությունը որոշեց չհրապարակել զեկույցը, քանի որ այն քրեորեն պատժելի վարքի վերաբերյալ պնդումներ էր պարունակում: Այնուհանդերձ, դիմողները ստացան զեկույցի մեկ օրինակ և նախ հրապարակեցին որոշ հատվածներ, իսկ մի քանի օր անց՝ ամբողջ զեկույցը՝ հանելով Լինդբերգի թվարկած անձնակազմի անդամների անունները: Բացի այդ, տպագրվեց նաև ներկայացրած պնդումների՝ նավի անձնակազմի անդամների հերքումը: 1989 թ. փետրվար ամսին Լինդբերգը ֆիլմ նկարահանեց՝ ընդգրկելով նաև տեսուչի պաշտոնում արված նկարահանումները, որտեղ երևում էին փոկերի որսորդների կողմից նշված կանոնակարգի խախտումները: Ֆիլմը լուսաբանվում էր ինչպես ազգային, այնպես էլ միջազգային հեռուստահաղորդումներով, իսկ Նորվեգիայի կառավարությունը, ի պատասխան, Հետաքննչական հանձնաժողով հիմնադրեց: 1990 թ. հանձնաժողովը զեկուցեց, որ անուններով նշված որսորդների դեմ Լինդբերգի ներկայացրած պնդումների մեծ մասը չի ապացուցվել, սակայն արձանագրվել է որսորդական կանոնակարգի մի քանի խախտում: Այնուհետև նավի անձնակազմին հաջողվեց հասնել նրան, որ Լինդբերգի և դիմողների դեմ զրպարտության մեղադրանքով գործ հարուցվի: Քսանչորս կողմ և յոթ դեմ ձայներով հանձնաժողովը որոշեց, որ Նորվեգիայի դատարանները խախտել են դիմողների՝ կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված իրավունքները: Դատարանում ընդունվեց, որ դիմողների ազատ արտահայտվելու իրավունքը խախտվել է, այդ խախտումը «նախատեսված է օրենքով» և ծառայել է փոկերի որսորդների «հեղինակությունն ու իրավունքները» պաշտպանելու օրինական նպատակին: Վիճարկելի էր մնում միայն այն հարցը, թե արդյոք 10-րդ հոդվածի 2-րդ կետի մնացած պահանջները բավարարվե՞լ են, թե՞ ոչ: Դատարանը վճռել է հետևյալը.

Ազատ արտահայտվելու իրավունքի իրացմանը ներհատուկ «պարտականությունների և պատասխանատվության» բերումով հանրությանը հուզող հարցերը լուսաբանելու համար լրագրողներին կոնվենցիայի 10-րդ հոդվածով տրվում է պաշտպանության իրավունք՝ պայմանով, որ լրագրության էթիկայի կանոններին համապատասխան՝ նրանք բարեխղճորեն կատարեն ճիշտ և հավաստի տեղեկություններ տրամադրելու իրենց առաքելությունը:

Դատարանը նշում է, որ խնդրո առարկա դիտողությունները բովանդակում էին փաստացի հայտարարություններ, ոչ թե սուբյեկտիվ գնահատականներ (համեմատիր՝ *«Լինգենսն ընդդեմ Ավստրիայի»* (*Lingens v Austria*) գործ, A.103 (1986): Բերված հայտարարությունների սկզբնաղբյուրը թերթը չէ, փոխարենը, այդ հայտարարությունները հիմնված են Լինդբերգի զեկույցի վրա կամ ուղղակիորեն մեջբերված են դրանից, ընդ որում՝ թերթն այդ հայտարարությունների իսկությունն անկախ հետաքննությամբ չի ստուգել: Հետևաբար, պետք է պարզել՝ տվյալ դեպքում հատուկ հիմքեր կայի՞ն անհատների հասցեին հնչած զրպարտչական փաստացի հայտարարությունները ստուգելու հասարակ պարտավորությունից թերթին ազատելու համար: Դատարանի կարծիքով՝ այդ հարցի պատասխանը կախված է հատկապես խնդրո առարկա զրպարտանքի բնույթից ու աստիճանից, ինչպես նաև այն հանգամանքից, թե որքանով են հավաստի Լինդբերգի զեկույցում արված հայտարարությունները (պարբ. 65–6):

Դատարանի մեծամասնությունը՝ տասներեք կողմ ձայնով, որոշեց, որ թեև հոդվածում համեմատաբար լուրջ մեղադրանքներ են ներկայացվել, սակայն դրանց բացասական հետևանքները նվազեցվել են, քանի որ դիմողները փոկերի որսորդներին անուններով չեն նշել:

Անդրադառնալով երկրորդ հարցին, այն է՝ պրն Լինդբերգի զեկույցի արժանահավատությանը՝ հարկ է նկատել, որ նա զեկույցը կազմել է ձկնապաշարների պահպանման նախարարության կողմից փոկերի որսի տեսուչ նշանակված լինելու օրոք: Դատարանի կարծիքով՝ հիմնավորված մտահոգության տեղիք տվող հարցերով հասարակական բանավեճին նպաստելու դեպքում մամուլը սովորաբար իրավունք ունի վստահելու պաշտոնական զեկույցների բովանդակությանը և պարտավոր չէ անկախ հետաքննություն անցկացնել: Հակառակ դեպքում կարող է խաթարվել մամուլի՝ հանրային կյանքին հետևողի և այն լուսաբանողի էական դերը (պարբ. 68):

Հետևաբար, դիմողներն իրավունք ունեին վստահելու Լինդբերգի զեկույցի բովանդակության իսկությանը, իսկ զրպարտության մեղադրանքով նրանց նկատմամբ ներպետական դատարանների կայացրած վճիռը 10-րդ հոդվածը խախտող անհամաչափ միջոց է եղել: Սակայն, չհամընկնող կարծիք արտահայտած դատավորները նշել են հետևյալը.

Ժողովրդավարական հասարակությունում շատ քիչ նյութեր կարող են այնչափ կարևոր լինել կամ արժանանալ կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված պաշտպանությանը, որպեսզի հանուն սենսացիոն լուրի զոհաբերվի լրագրության տարրական էթիկան, ինչը նման հանգամանքներում լրագրողներից նաև պահանջում է հոդվածները տպագրության հանձնելուց առաջ ստուգել տրամադրության տակ եղած փաստերի իսկությունը»:

Ուստի դատարանը սովորաբար պահանջում է, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի նշված դրույթի պահանջը բավարարելու համար լրագրողները փաստացի հայտարարություններ տպագրելուց առաջ ստուգեն դրանց իսկությունը: Այնուհանդերձ, դատավորների ճնշող մեծամասնությունը հակված է լրագրողներին թույլատրելու նույնիսկ իրենց հոդվածների համար որպես փաստացի հիմք ընդունել չտպագրված պաշտոնեական զեկույցների բովանդակությունը: Ձեր կարծիքով՝ վերոնշյալ գործով դատարանի կայացրած որոշման վրա ի՞նչ ազդեցություն է գործել այն հանգամանքը, որ դիմողները տպագրել են Լինդբերգի ամբողջ զեկույցը և իրենց անօրինական վարքի մասին հայտարարությունները հերքող որսորդների ներկայացրած առանձին հայտարարությունները:

Ավելի ուշ՝ 2004 թ. նոյեմբերի 16-ին կայացրած վճռով *«Սելիստոն ընդդեմ Ֆինլանդիայի» (Selisto v Finland)* գործում մեծ պալատը, վեց կողմ և մեկ դեմ ձայներով, վճռել է, որ ներպետական դատարանները ենթադրաբար գինեմոլությամբ տառապող մի բժշկի կատարած վիրահատության մասին մի շարք հոդվածներ գրած դիմող լրագրողին զրպարտության մեղադրանքով քրեական դատապարտմամբ խախտել են կոնվենցիայի 10-րդ հոդվածը: Պալատը նշել է, որ դիմողի հոդվածների հիմքում ընկած փաստերի իսկությունը չի վիճարկվել:

60. Կարևոր է նաև այն հանգամանքը, որ 1996 թ. փետրվարի 27-ին տպագրված հոդվածում ներկայացրած իրադարձությունների ու մեջբերումների աղբյուրը նախաքննության արձանագրությունն է, որը պետական փաստաթուղթ է: Դատարանի կարծիքով՝ լրագրողների և լրատվության բնագավառում աշխատող այլ անձանց վրա չի կարելի դնել նման փաստաթղթերում զետեղված փաստարկների իսկությունը ստուգելու ընդհանուր պարտականություն, քանի որ վերջիններս պետք է իրավունք ունենան պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա ազատ լուսաբանելու իրադարձությունները: Հակառակ դեպքում կոնվենցիայի 10-րդ հոդվածը կկորցներ իր ուժը:

4 Դատարանը, կոնվենցիայի 10-րդ հոդվածին համապատասխան, պաշտպանել է այն լրագրողներին, ովքեր մեջբերում են լրատվության բնագավառում աշխատող այլ անձանց խոսքը: *«Թոման ընդդեմ Լյուքսեմբուրգի» ((Thoma v Luxembourg),* վճիռը կայացվել է 2001 թ. մարտի 29-ին) գործով դիմողը մի ռադիոհաղորդավար է, որը բնապահպանական խնդիրներին նվիրված ամենշաբաթյա հաղորդում էր վարում: Հաղորդումներից մեկի ընթացքում նա բազում մեջբերումներ էր անում թերթում տպագրված մեկ այլ լրագրողի՝ Ջոսի Բրաունի հոդվածից, որում վերջինս հանդես էր գալիս կոռուպցիայի մեղադրանքով անտառտնտեսության բազմաթիվ պաշտոնյաների հասցեին: Այնուհետև վաթսուներեք պաշտոնյաներ վարկաբեկման համար դատի են տվել դիմողին և շահել գործը: Դատարանը վճռել է հետևյալը.

64. …Լրագրողների՝ այլ անձանց վիրավորանք կամ վրդովմունք պատճառող կամ նրանց վարկաբեկող հայտարարությունների մեջբերումից հետևողականորեն և ձևականորեն խուսափելու ընդհանուր պարտավորությունը թերևս հակասում է ընթացիկ իրադարձությունները, կարծիքներն ու գաղափարները լուսաբանելու հարցում մամուլի դերակատարմանը: Այդ հաղորդման համառոտ նկարագիրը վկայում է, որ ամեն դեպքում, դիմողը շրջահայացություն է հանդես բերել՝ սկզբից նեթ ընդգծելով, որ ինքը մեջբերում է հեղինակի խոսքերը, և իր գործընկերոջ հոդվածը որակել է «սուր ձևակերպումներով հագեցած»: Բացի այդ, նա դիմել է երրորդ անձին՝ անտառային տարածքների սեփականատիրոջը՝ հարցնելով նրա կարծիքը Ջոսի Բրաունի հոդվածում հաղորդվող տեղեկությունների իսկության մասին:

Ուստի դատարանը որոշել է, որ դիմողի քաղաքացիական գործով կայացված վճիռներն «անհրաժեշտ չէին ժողովրդավարական հասարակությունում», և դրանցով խախտվել է դիմողի ազատ արտահայտվելու իրավունքը:

5 Հեղինակի և հրատարակչի պարտականությունների ու պատասխանատվության շրջանակի վրա ներազդող մեկ այլ գործոն է լրատվամիջոցների տեսակը: *«Երսիլդն ընդդեմ Դանիայի» (Jersild v Denmark,* 1994, 19 EHRR 1, A.298) վերոնշյալ գործը քննելիս դատարանն ընդգծել է հետևյալը.

Լրագրողի «պարտականություններն ու պատասխանատվությունը» քննելիս հարկ է հաշվի առնել, որ տվյալ լրատվամիջոցի հնարավոր ազդեցությունը շատ կարևոր գործոն է, և ընդունված կարծիքի համաձայն՝ հեռուստատեսությունն ու ռադիոն հաճախ շատ ավելի անմիջական և ազդեցիկ են, քան տպագիր լրատվամիջոցները (պարբ. 31):

6 Նշված պարտականությունների և պատասխանատվության աստիճանը մեծապես պայմանավորված է նաև անձի զբաղմունքով: *«Սիմեդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ahmed v UK)* վերոնշյալ գործում դատարանի մեծամասնությունն ավելի հանդուրժողական մոտեցում է որդեգրել տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումների նկատմամբ՝ անելով հետևյալ հայտարարությունը.

…Բոլոր այն դեպքերում, երբ խոսքը դիմողների պես քաղաքացիական ծառայողների ազատ արտահայտվելու իրավունքի մասին է, կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետում մեջբերվող «պարտականություններն ու պատասխանատվությունը» հատուկ նշանակություն են ստանում, ինչի շնորհիվ պատասխանող պետության իշխանություններին վերապահվում է վիճարկված միջամտության համաչափությունը որոշելու հայեցողության սահման (պարբ. 61):

Դատարանը նմանապես պահանջել է արտադատական հրապարակային հայտարարություններ անելիս «սահմանափակել» գործող դատավորների ազատ արտահայտվելու իրավունքի իրացումը (տե՛ս վերոնշյալ *«Վիլեն ընդդեմ Լիխտենշտեյնի» (Wille v Liechtenstein)* գործ):

Ընթացակարգային ձևականություններ, պայմաններ, սահմանափակումներ կամ պատժամիջոցներ

1 Դատարանի մեծ պալատի մեծամասնությունը հայտնել է, որ ազգային իշխանությունների կողմից լրատվամիջոցներով վիճահարույց հոդվածի հրապարակման արգելքը, որը հաճախ անվանվում է «նախնական արգելք», կախված գործի հանգամանքներից, կարելի է հիմնավորել կոնվենցիային այդ արգելքի համապատասխանությամբ (տե՛ս *«Օբզերվեր» և «Գարդիան» պարբերականներն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Observer and Guardian v UK)* ներքոհիշյալ գործը, 1991, 14 EHRR 153, A.216):

Կասկածներից զերծ մնալու համար դատարանը միայն հավելում է, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածն իր դրույթներով չի բացառում հոդվածների տպագրման նախնական արգելքը: Այդ մասին են վկայում ոչ միայն նշված հոդվածի դրույթներում թվարկված «պայմաններ», «սահմանափակումներ», «կանխիչ միջոցներ» և «կանխում» բառերը, այլև՝ *«Սանդի թայմզ» (Sunday Times) թերթի* գործով 1979 թ. և *«Մարքթ ինթերն ֆերլագ» ՍՊԸ-ի և Քլաուս Բեերմանի* (*markt intern Verlag and Klaus Beermann*) գործով 1989 թ. դատարանի կայացրած վճիռները: Մյուս կողմից՝ նախնական արգելքից բխող վտանգները պահանջում են, որ դատարանն առավել հանգամանալից հետաքննություն անցկացնի: Այդ պահանջը հատկապես կարևոր է մամուլում, քանի որ նորությունը պիտանիության կարճ ժամկետ ունեցող ապրանք է, և հրապարակման նույնիսկ կարճ ժամանակահատվածով հետաձգման դեպքում այն կարող է կորցնել իր ամբողջ արժեքն ու հետաքրքրությունը (պարբ. 60):

Դատավոր Դե Մեյերը, ում միացան դատավորներ Փեթիթին, Ռուսոն, Ֆոյգելը և Բիջին, չհամընկնող կարծիք է ներկայացրել՝ պնդելով, որ նախնական արգելքն առհասարակ բացառվում է կոնվենցիայով.

Համաձայն եմ, որ «մամուլին պետք է վերապահել ցանկացած աղբյուրից ստացված նորությունների առանց գրաքննության, արգելող որոշումների կամ նախնական արգելքի հրապարակելու իրավունք» (դատավոր Բլեք, *«Նյու Յորք թայմզ» պարբերականն ընդդեմ Միացյալ Նահանգների»* (*New York Times v United States*), 1971, 403 US 713 at 717, the Pentagon papers case): Խաղաղության պայմաններում ազատ և ժողովրդավարական հասարակությունում խոսք անգամ չի կարող լինել նման իրավունքները սահմանափակելու մասին, հատկապես եթե, ինչպես տվյալ դեպքում, այդ սահմանափակումները կիրառվում են «իշխանությունների կողմից անհարմար դիտվող տեղեկությունները կամ գաղափարները զսպելու համար» (դատավոր Դուգլաս,

նույն տեղում): Հրատապ սոցիալական անհրաժեշտության նկատառումներով հրապարակման ոչ ենթակա նյութեր տպագրող, ինչպես նաև գաղտնիության պահպանման պարտավորությունը խախտող բոլոր անձինք, իհարկե, պետք է դատական պատասխանատվության ենթարկվեն: Այդ անձինք պետք է հետապնդվեն քրեական կարգով, և նրանց կողմից վնաս հասցնելու դեպքում նրանց դեմ կարող է փոխհատուցում վճարելու հայց ներկայացվել: Նման անձանց նկատմամբ կարող են կիրառվել նաև օրենքով նախատեսված այլ պատժամիջոցներ, այդ թվում՝ ըստ իրավիճակի խնդրո առարկա նյութի բռնագրավում ու ոչնչացում, ինչպես նաև՝ ստացված շահույթի բռնագանձում:

Այնուհանդերձ, ոչ մի դեպքում չի կարելի ընդունելի համարել ժամանակավոր կամ մշտական դատական արգելքները, բացառությամբ կոնվենցիայում նշված «պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ», այն էլ միայն «այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը» (15-րդ հոդված):

2 Լիակազմ դատարանը վճռել է, որ հրապարակման վրա նախնական արգելք դնելու թույլտվություն նախատեսող ներպետական օրենքը պետք է բավական հստակ լինի, որպեսզի լրատվամիջոցներն իմանան, թե որ դեպքերում կարող է արգելվել ազատ արտահայտվելու իրավունքի իրացումը: *«Գավեդան ընդդեմ Լեհաստանի»* (*(Gaweda v Poland),* 2002 թ. մարտի 14-ի վճիռ) գործով դիմողը, որը ցանկանում էր երկու պարբերական հրատարակել, 1993 և 1994 թթ. այդ պարբերականների անվանումները գրանցելու դիմում է ներկայացրել Լեհաստանի դատարաններին: Դիմողն առաջարկել է պարբերականները գրանցել հետևյալ անվանումներով՝ «Բարոյականության եվրոպական տրիբունալ» սոցիալական և քաղաքական ամսագիր» և «Գերմանիան՝ Լեհաստանի վաղեմի թշնամի»: Ներպետական դատարանները մերժեցին այդ անվանումներով պարբերականների գրանցումը, քանի որ, ըստ նրանց՝ այդ անվանումները իրականությանը չէին համապատասխանում, ուստիև հակասում էին 1984 թ. «Մամուլի մասին» օրենքին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի լիակազմ պալատը հայտարարել է հետևյալը.

40. Դատարանը համարում է, որ թեև հրապարակումների վրա նախնական արգելք դնելը կոնվենցիայի 10-րդ հոդվածով չի արգելվում, սակայն համապատասխան օրենքով պետք է հստակ նշվեն այն հանգամանքները, երբ նման արգելքները թույլատրելի են, հատկապես, եթե ինչպես տվյալ գործում, արգելքի հետևանքով առհասարակ խափանվում է պարբերականի հրատարակումը: Հստակ օրենքի անհրաժեշտությունը պայմանավորված է այն հնարավոր վտանգով, որ նման նախնական արգելքների բնույթը կարող է վտանգել 10-րդ հոդվածով ամրագրված ազատ արտահայտվելու իրավունքը:

41. Տվյալ դեպքում պարբերականների գրանցման կարգն ուղղորդվում է 1984 թ. «Մամուլի մասին» օրենքով: Այդ օրենքի 20-րդ բաժնի դրույթների համաձայն՝ դատարանը կարող է մերժել պարբերականը գրանցելու դիմումը, եթե միայն վճռի, որ այդ դիմումում ապագա պարբերականի մասին տեղեկություն չի ներկայացվում, կամ կխախտվի գործող որևէ պարբերականի անվանումը պաշտպանելու իրավունքը: Տվյալ գործի քննության ժամանակ «Պարբերականների գրանցման մասին» որոշման 5-րդ բաժնի համաձայն՝ պարբերականների գրանցումը չի թույլատրվում, եթե դա հակասում է գործող կանոններին կամ «հավաստի իրադրությանը»:

42. Դիմողի՝ երկու պարբերականները գրանցելու մասին պահանջի մերժումը դատարանները, ըստ էության, հիմնավորել են որոշման 5-րդ բաժնի դրույթներով, որոնցով պահանջվում է մերժել գրանցումը, եթե այն հակասում է «հավաստի իրադրությանը»: 1993 թ. սեպտեմբերի 9-ին ընդունած որոշմամբ Բիելսկո-Բիալայի շրջանային դատարանը մերժել է պարբերականների գրանցումը՝ համարելով, որ առաջարկվող անվանումից բխում է, որ Քեթիում հիմնադրվել է մի եվրոպական հաստատություն, ինչն անվերապահորեն ճիշտ չէ: Տվյալ գործի շրջանակներում ուսումնասիրվող 1994 թ. փետրվարի 17-ին կայացված որոշմամբ դատարանը գտել է, որ «Գերմանիան՝ Լեհաստանի վաղեմի թշնամին» անվանմամբ պարբերականի գրանցումը կհակասի «հավաստի իրադրությանը», քանզի այդ անվանումը ոչ պատշաճ կերպով շեշտադրում է գերմանալեհական հարաբերությունների բացասական հայեցակետերը՝ ստեղծելով փաստերի անհավասարակշիռ պատկեր:

43. Ինչպես երևում է վերոնշյալից, տվյալ դեպքում դատարանների եզրահանգմամբ «Պարբերականների գրանցման մասին» որոշման 5-րդ բաժնի դրույթներով սահմանված «հավաստի իրադրությանը հակասող» ձևակերպումից բխում է այն դեպքերում գրանցումը մերժելու լիազորությունը, երբ դատարանի կարծիքով՝ անվանումը չի բավարարում ճշմարտության չափանիշի պայմանը, այսինքն՝ առաջարկվող անվանումները, ըստ էության, անհավասարակշիռ պատկեր են ստեղծում ներկա իրավիճակի մասին: Թեև այդ կապակցությամբ օգտագործված եզրույթները երկիմաստ են և նման բնույթի իրավական դրույթներից ակնկալվող հստակությունից զուրկ, սակայն դրանք սահմանել են, որ պարբերականի գրանցումը կարող է մերժվել, եթե միայն գրանցման դիմումը չի համապատասխանում «Մամուլի մասին» օրենքի 20-րդ մասում նշված մանրամասներին: Տվյալ դեպքում դատարանների ավելի մեծ պահանջն առ այն, որ գրանցման ենթակա ամսագրի անվանումն արտահայտի ճշմարիտ տեղեկություններ, նախ և առաջ պատշաճ չէ մամուլի ազատության տեսանկյունից: Առաջին՝ պարբերականի անվանումը, առանձին վերցրած, հայտարարություն չէ, քանի որ դրա հիմնական գործառույթն է ներկայիս և հնարավոր նոր ընթերցողների համար մամուլի շուկայում առանձնացնել տվյալ պարբերականը: Երկրորդ՝ նման մեկնաբանության համար անհրաժեշտ է այն հստակ հիմնավորող օրենսդրական դրույթի գոյությունը: Մի խոսքով,

դատարաններն իրենց մեկնաբանությամբ ներկայացրել են նոր չափորոշիչներ, որոնք հնարավոր չէր կանխատեսել անվանման գրանցումը մերժելու դեպքերը մանրամասնող օրենքի հիման վրա:

…

47. Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդունում է այն իրողությունը, որ գրանցման համակարգի ենթադատական բնույթը մամուլի ազատության իրավունքի արժեքավոր երաշխիքներից է: Այդուհանդերձ, այս բնագավառում ազգային դատարանների ընդունած որոշումները նույնպես պետք է համապատասխանեն 10-րդ հոդվածի սկզբունքներին: Դատարանն ընդգծում է, որ տվյալ դեպքում գրանցման համակարգի ենթադատական բնույթն ինքնին չէր բացառում ազգային դատարանների՝ տպագիր լրատվամիջոցների վրա նախնական արգելք դնելու լիազորությունը, ինչի արդյունքում անվանումների պատճառով արգելվել է պարբերականների տպագրումը:

48. Դատարանը եզրակացնում է, որ ներկա գործում կիրառելի օրենքը բավականին հստակ ղրույթներով չի ձևակերպված, որպեսզի դիմողը կարողանար կարգավորել իր վարքը: Ուստի դիմողի ազատ արտահայտվելու իրավունքի իրացման վրա դրված արգելքը «նախատեսված չէր օրենքով» կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով:

49. Վերոնշյալ նկատառումներից ելնելով՝ դատարանն անհրաժեշտ չի համարում քննել այն հարցը, թե կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված այլ պահանջները բավարարվե՞լ են, թե՞ ոչ: Այդ կապակցությամբ դատարանը հավելում է, որ ամեն դեպքում պատասխանող պետությունը վերոնշյալ պահանջների բավարարման մասին իր եզրակացության օգտին բերված փաստարկները չի հիմնավորել:

50. Համապատասխանաբար, դատարանն արձանագրել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

3 Հետագայում, *«Կումպանան և Մազարեն ընդդեմ Ռումինիայի» (Cumpana and Mazare v Romania),* 2004 թ. դեկտեմբերի 17-ի վճիռ) գործում լիակազմ մեծ պալատը որոշել է, որ երկու պետական պաշտոնյաների զրպարտելու համար երկու լրագրողների վրա դրված մեկ տարի ժամկետով մասնագիտությամբ աշխատելու մասով դատական արգելքը համապատասխանել է «նախնական արգելք» գաղափարին:

118. Անդրադառնալով մեկ տարի ժամկետով մասնագիտությամբ աշխատելու մասով երկու լրագրողների վրա դրված և անվավեր ճանաչված դատական արգելքին՝ դատարանը կրկնում է, որ լրագրողների գործունեության վրա դրված նախնական արգելքները հանգամանալից հետաքննություն են պահանջում և հիմնավորված են համարվում միայն բացառիկ հանգամանքներում: Դատարանը համարում է, որ թեև տվյալ գործի հանգամանքները չեն վկայում, որ խնդրո առարկա պատժամիջոցը գործնականում նշանակալի հետևանքներ է ունեցել դիմողների համար, սակայն այն շատ խիստ է և ոչ մի դեպքում չի կարող հիմնավորվել միայն դիմողների կողմից օրենքը կրկին խախտելու հավանականությամբ:

119. Դատարանը համարում է, որ որպես ժամանակավոր, սակայն ընդհանուր կանխիչ միջոց դիմողների վրա լրագրողի մասնագիտությամբ աշխատելու մասով արգելք դնելով՝ ներպետական դատարանները խախտել են այն սկզբունքը, որի համաձայն՝ ժողովրդավարական հասարակությունում մամուլը պետք է ի վիճակի լինի կատարելու հանրային կյանքին հետևողի և այն լուսաբանողի դերը:

Դատարանն արձանագրել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

«Օրենքով նախատեսված»

«Սանդի թայմզ» թերթի (*Sunday Times*) վերոնշյալ գործում ներկայացվել է այս ձևակերպման դատարանի վերջնական մեկնաբանությունը: Ինչպես առանձին համատեքստերում, օրինակ՝ երդվյալ ատենակալների կողմից սահմանվող վնասների փոխհատուցման հաշվարկի համատեքստում, վկայում է *Տոլստոյ Միլոսլավսկու* (*Tolstoy Miloslavsky*) ներքոհիշյալ գործով կայացրած դատավճիռը, ներպետական իրավական դրույթները կարող են, շատ ընդհանրացված լինելով հանդերձ, բավարարել կոնվենցիայի այս դրույթը: *«Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի» (Rekvényi v Hungary)* վերոնշյալ գործում դատարանը հայտարարել է հետևյալը.

Ներպետական օրենքներից պահանջվող հստակության մակարդակը, որը երբեք չի կարող նախատեսված լինել բոլոր հնարավոր դեպքերում, մեծապես պայմանավորված է տվյալ փաստաթղթի բովանդակությամբ, կիրառման բնագավառով,

ինչպես նաև այն անձանց թվով և կարգավիճակով, ում վրա տարածվում է այդ օրենքը: Այլ օրենսդրական փաստաթղթերի համեմատ՝ սահմանադրական դրույթներից, դրանց ընդհանուր բնույթի բերումով, կարող է պահանջվել հստակության ավելի ցածր մակարդակ» (պարբ. 34):

Քրեական պատժամիջոցներով հիմնավորված դատական արգելքների համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, տասնվեց կողմ և մեկ դեմ ձայներով, որոշել է, որ հասարակական հանգիստը պահպանելու և պարկեշտ բարքերը խախտող վարքը կանխելու նպատակով որսը խանգարող երկու անձանց վրա հաշտարար դատավորների դրած արգելքները հակասում են կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի այդ մասով պահանջվող ճշգրտության աստիճանին *(«Հաշմանը և Հերըփն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Hashman and Harrup v UK)* գործ 2000, Crim LR 185): Երկու դիմողները մեքենայով անցնում էին աղվեսների որսատեղիի մոտ գտնվող ճանապարհով՝ որսորդական փող փչելով և բարձր աղաղակելով: Նրանց նպատակն էր շեղել որսորդական շների ուշադրությունը և փրկել աղվեսներին: Նույն օրը որսորդական շներից մեկը հեռացել է իր ոհմակից և ընկել բեռնատար մեքենայի տակ, սակայն դիմողները պնդում էին, որ իրենք այդ պահին մոտակայքում չեն եղել: Տեղի հաշտարար դատավորներին բողոք է ներկայացվել, և վերջիններս դիմողներին կարգադրել են պահպանել հասարակական հանգիստը և տասներկու ամիս պատշաճ վարք դրսևորել, հակառակ դեպքում նրանք կտուգանվեին 100 ֆունտ ստեռլինգ: Դիմողները բողոք են ներկայացրել գերագույն դատարան, որը, ի թիվս այլոց, անօրինական է համարել դիմողների գործողությունները, սակայն նշել է, որ հաշվի առնելով բռնության չդիմելու իրողությունը՝ չէր կարելի ասել, որ նրանք խախտել են հասարակական հանգիստը: Այդուհանդերձ, դիմողների վարքը, որն այդ ժամանակահատվածում նրանց համերկրացիների մեծ մասի կարծիքով բնորոշվել է որպես «ավելի շուտ սխալ, քան ճիշտ», հակասում էր բարի բարքերին, ուստիև նրանց բողոքը մերժվել է: Դիմողները գանգատ են ներկայացրել հանձնաժողովին՝ ի թիվս այլոց պնդելով կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման մասին: Հանձնաժողովը, քսանհինգ կողմ և չորս դեմ ձայներով, արձանագրել է նշված հոդվածի խախտում: Դատարանը նշել է, որ դիմողները մեղավոր չեն ճանաչվել հասարակական հանգիստը խախտելու համար, ուստի ի տարբերություն ներքոհիշյալ *Ստիլի* (*Steel*) գործով արձակված կարգադրության՝ կարգուկանոն պահպանելու պահանջը նրանց հետագա հնարավոր գործողություններին է վերաբերում: Եվ ավելին. «Հատուկ ուշադրություն դարձնելով տվյալ գործի փաստերին՝ դատարանը չի ընդունում այն տեսակետը, որ դիմողները պետք է ինքնըստինքյան հասկանային՝ ինչ գործողություններ չէր կարելի ձեռնարկել կարգադրությամբ նշված ժամանակաշրջանում» (պարբ. 40): Ուստի կարգադրությունը հակասում է կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետին: Հույժ ցանկալի է, որ 10-րդ հոդվածի 2-րդ կետի այս դրույթով սահմանված քաղաքացիական իրավունքից բխող պարտավորությունների համեմատ՝ դատարանը պահանջի ավելի հստակ ձևակերպել քրեական իրավունքի վրա հիմնված ներպետական դրույթներն ու կարգադրությունները: Եվ իսկապես, 1994 թ. Անգլիայի իրավագիտական հանձնաժողովը հանձնարարել է չեղյալ հայտարարել նախազգուշացման լիազորությունը, քանի որ. «Անձին ներկայացված համապարտադիր հրամանն այնպիսի լայն շրջանակ ունի, որ բավականաչափ հստակ չի նշում այն վարքագիծը, որից պետք է խուսափի տվյալ անձը պարտադիր պատժամիջոցների չենթարկվելու համար» (Binding Over, պարբ. 4.34):

Այն դեպքում, երբ պետական պաշտոնատար անձանց, օրինակ՝ ոստիկանության աշխատակիցների գործողությունները հակասում են ներպետական օրենքներին, դատարանը վճռում է, որ այդ գործողություններն «օրենքով նախատեսված չեն» (տե՛ս *«Ստիլն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Steel v UK)* ներքոհիշյալ գործում Նիդհեմի, Փոլդենի և Քոլի նկատմամբ դատարանի կայացրած վճիռը):

«Ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ»

Վերոհիշյալ *Հենդիսայդի* (*Handyside*) գործում նշվել է դատարանի՝ այս դրույթի մեկնաբանությունը, որի համաձայն՝ պատասխանող պետությունը պարտավորություն է կրում ապացուցելու, որ իր գործողությունները հրատապ սոցիալական անհրաժեշտությամբ են թելադրված: Բացի այդ, դատարանը

քննում է նաև այն հարցը, թե արդյոք պատասխանող պետության վարքը համաչա՞փ արձագանք է հետապնդվող օրինական նպատակին:

……..

«Տոլստոյ Միլոսլավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության»

(Tolstoy Miloslavsky v UK) A.316 (1995) 20 EHRR 442

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Տվյալ գործով որպես դիմող հանդես է եկել հայտնի ռուս գրողի հետնորդ, պատմաբան կոմս Նիկոլայ Տոլստոյ Միլոսլավսկին, որը Մեծ Բրիտանիայի քաղաքացի է: Նա գրել է «Պատերազմական հանցագործություններ և Վինչեստերի քոլեջի տնօրինությունը» («War Crimes and the Wardenship of Winchester College») խորագիրը կրող գրքույկ է հրատարակել, որում պնդում է, որ քոլեջի տնօրենը՝ լորդ Օլդինգթոնը, «պատերազմի ժամանակ այնպիսի դաժան հանցանքներ է գործել, որոնք կարելի է համեմատել նացիստական Գերմանիայի և Խորհրդային Ռուսաստանի առավել անգութ մարդասպանների հանցանքների հետ»: Նշված պնդումները վերաբերել են 1945 թ. ամռանը խորհրդային և տիտոիստական կոմունիստական ուժերին հազարավոր կազակ և հարավսլավացի ռազմագերիների հանձնման ժամանակ Ավստրիայում ավագ սպայի կոչում ունեցող լորդ Օլդինգթոնի ենթադրյալ դերակատարմանը: Լորդ Օլդինգթոնի դեմ բողոք ներկայացրած մեկ այլ անձ 1987 թ. գրքույկ է տարածել է հայտնի պետական դպրոց հանդիսացող Վինչեստերի քոլեջում ուսանող տղաների, նրանց ծնողների, քոլեջի անձնակազմի և նախկին անդամների, ինչպես նաև պատգամավորների և լրատվամիջոցների շրջանում: Լորդ Օլդինգթոնը զրպարտության համար դատի է տվել այդ անհատին, և դիմողն իր իսկ խնդրանքով մասնակցել է այդ գործով ընթացող դատավարությանը: Ամբաստանյալները պահանջել են իրենց հնարավորություն տալ փաստարկներ ներկայացնելու «արդարացման», այսինքն՝ իրենց հրատարակման հիմքում ընկած տեղեկությունների ճշմարտության, և «արդար մեկնաբանության» օգտին: Թեև լորդ Օլդինգթոնը հայցել է մեկ դատավորի դատ, սակայն դիմողը իրացրել է երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատ պահանջելու իր իրավունքը: Դատը տևել է մոտ երկու ամիս, և այդ ընթացքում ինչպես լորդ Օլդինգթոնը, այնպես էլ դիմողը վկայություն են տվել և խաչաձև հարցաքննվել: Գործն ամփոփելով՝ վարող դատավորը տեղեկացրել է երդվյալ ատենակալներին, որ լորդ Օլդինգթոնի օգտին վճիռ կայացնելու դեպքում նրանք պետք է սահմանեն այն գումարի չափը, որով դիմողը պետք է փոխհատուցի իր գրքույկի հրատարակմամբ լորդին հասցրած վնասը: Երդվյալ ատենակալները միաձայն վճիռ են կայացրել լորդ Օլդինգթոնի օգտին՝ դիմողի փաստարկները մերժելով և 1.500.000 ֆունտ ստեռլինգի չափով վնասների փոխհատուցում սահմանելով, որը երեք անգամ գերազանցում է նախկինում զրպարտության համար Անգլիայի դատարաններում երդվյալ ատենակալների կողմից նշանակված փոխհատուցման չափը: Բացի այդ, լորդ Օլդինգթոնի միջնորդությամբ դատավորը որոշում է կայացրել, որով ամբաստանյալներին արգելվում է հրապարակել գրքույկում զետեղված բառերը կամ նմանօրինակ հայտարարությունները: Լորդ Օլդինգթոնն առաջարկել է փոխհատուցման գումարից հանել 1.200 000 ֆունտ ստեռլինգ, սակայն դիմողը հրաժարվել է այդ առաջարկից՝ պնդելով, որ այդ դատն արդարադատության ծաղր էր: Վերաքննիչ դատարանը հրաժարվել է վճիռը բողոքարկելու թույլտվություն տալ դիմողին, եթե նա 125000 ֆունտ ստեռլինգի չափով երաշխիք չտրամադրի՝ ի հատուցումն լորդ Օլդինգթոնի կրած դատական ծախսերի: Դիմողը ի վիճակի չէր նման գումար վճարելու, և նրա բողոքը մերժվել է: Դիմողը լորդ Օլդինգթոնին ոչինչ չի վճարել դատարանի որոշմամբ հասանելիք վնասի և դատական ծախսերի փոխհատուցման գումարից:

Դիմողի գործով դատավարության ընթացքում վերաքննիչ դատարանը կարող էր չեղյալ հայտարարել փոխհատուցման մասին երդվյալ ատենակալների որոշումը, եթե միայն այդ որոշումը կամայական, անբարեխիղճ կամ անողջամիտ լիներ: Սակայն ավելի ուշ *«Ռանթզենն ընդդեմ «Միրոր գրուփ նյուզփեյփերս» ՍՊԸ-ի» (Rantzen v Mirror Group Newspapers, (1986) Ltd* [1993] 4 All ER 975) գործում վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով կոնվենցիայի 10-րդ հոդվածը, վճռել է, որ երդվյալ ատենակալների՝ զրպարտության գործերով փոխհատուցման մասին որոշումներ կայացնելու գրեթե բացարձակ իրավունքը հակասում է նշված հոդվածի 2-րդ կետին: Ուստի նման դեպքերում գործը վարող

դատավորները պետք է ցուցումներ տան երդվյալ ատենակալներին՝ անդրադառնալով փոխհատուցման մասին վերաքննիչ դատարանի կայացրած որոշումներին: Բացի այդ, վերաքննիչ դատարանը պետք է ավելի հանգամանալից քննի մեծ գումար սահմանող երդվյալ ատենակալների որոշումները՝ պարզելու համար, թե արդյոք կա՞ դիմողին հասցված վնասը նշված գումարով փոխհատուցելու անհրաժեշտությունը:

Այնուհետև դիմողը հանձնաժողովին գանգատ է ներկայացրել առ այն, որ խախտվել են կոնվենցիայով սահմանված մի քանի իրավունքներ: Սակայն հանձնաժողովը միաձայն ընդունել է միայն 10-րդ հոդվածի խախտման վերաբերյալ նրա գանգատը:

Ի. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

33. Դիմողը հայտնել է, որ խախտվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածը:

Նա պնդում էր, որ ի վնաս իրեն կայացրած դատավճռում նշված փոխհատուցման չափը չէր կարող «օրենքով նախատեսված» համարվել: Ավելին, գումարի չափը և արգելող որոշման կիրառման տիրույթը համաչափ չեն լորդ Օլդինգթոնի «հեղինակությունը կամ իրավունքները» պաշտպանելու նպատակին, ուստի և «անհրաժեշտ չեն ժողովրդավարական հասարակությունում»:

34. Պատասխանող պետությունը վիճարկել է այս պնդումները: Հանձնաժողովը դիմողի հետ համամիտ էր փոխհատուցման մասին որոշման անհամաչափ լինելու հարցում, սակայն միևնույն ժամանակ կարծիք չէր հայտնել նրա այլ բողոքների մասին:

35. Դատարանը նախ և առաջ ընդգծում է, որ իր քննությանը ներկայացված գործը միայն վնասների փոխհատուցման գումարի և դատարանի արգելող որոշման վերաբերյալ գանգատով է սահմանափակվում: Այդ կապակցությամբ ներկա գործը տարբերվում է մինչ այժմ դատարանի կողմից քննված զրպարտության այլ գործերից, որոնք վերաբերել են կա՛մ միայն դրամական պարտավորություն, կա՛մ և՛ դրամական պարտավորություն, և՛ պատժամիջոց սահմանող որոշման բողոքարկմանը (տե՛ս, օրինակ, *«Լինգենսն ընդդեմ Ավստրիայի»* (*Lingens v Austria*) գործով 1986 թ. հուլիսի 8-ի վճիռը, շարք A, թիվ 103, էջ 24–8, պարբ. 34–47, *«Կաստելսն ընդդեմ Իսպանիայի»* (*Castells v Spain*) գործով 1992 թ. ապրիլի 23-ի վճիռը, շարք A, թիվ 236, էջ 20–4, պարբ. 33–50, ինչպես նաև *«Թորգեյր Թորգեյրսոնն ընդդեմ Իսլանդիայի» (Thorgeir Thorgeirson v Iceland)* գործով 1992 թ. հունիսի 25-ի վճիռը, շարք A, թիվ 239, էջ 24–8, պարբ. 55–70):

Ինչպես փոխհատուցման մասին որոշումը, այնպես էլ արգելող որոշումը միանշանակ միջամտություն են եղել դիմողի՝ կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ազատ արտահայտվելու իրավունքի իրացմանը, ինչը դատարանում չի վիճարկվել: Նման միջամտությունը հակասում է կոնվենցիայի 10-րդ հոդվածին, բացառությամբ այն դեպքերի, երբ այն «նախատեսված է օրենքով», միտված է 10-րդ հոդվածի 2-րդ կետով օրինական համարվող նպատակին կամ նպատակներին, և «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» վերոնշյալ նպատակին կամ նպատակներին հասնելու համար:

Ա. ՈՐՈՇՈՒՄԸ «ՆԱԽԱՏԵՍՎԱ՞Ծ ԷՐ ՕՐԵՆՔՈՎ»

36. Ինչ վերաբերում է փոխհատուցման գումարի մասին որոշմանը, դիմողը գանգատ է ներկայացրել առ այն, որ այդ որոշումը «նախատեսված չէր օրենքով»:

Ի. Ընդհանուր սկզբունքներ

37. Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետում նշված «օրենքով նախատեսված» արտահայտությունը հարկ է մեկնաբանել 8-րդ հոդվածի 2-րդ կետում նշված «օրենքի համաձայն» համապատասխան բառերին վերաբերող ընդհանուր սկզբունքների հիման վրա (տե՛ս *«Սանդի թայմզ» թերթն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Sunday Times v UK (No 1)* 1979 թ. ապրիլի 26-ի վճիռը, շարք A, թիվ 30, էջ 30-1, պարբ. 48–9, համեմատի՛ր *«Մալոունն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Malone v UK*) գործով 1984 թ. օգոստոսի 2-ի վճիռը, շարք A, թիվ 82, էջ 31, պարբ. 66): *«Մարգարետա և Ռոջեր Անդերսոններն ընդդեմ Շվեդիայի»* (*Margareta and Roger Andersson v Sweden*) գործով 1992 թ. փետրվարի 25-ին կայացված վճռում (շարք A, թիվ 226-A, էջ 25, պարբ. 75) նշված սկզբունքները ամփոփվել են հետևյալ կերպ.

> «…նախ և առաջ, տվյալ արտահայտությունը պահանջում է, որ վիճարկված միջոցառումները հիմնավորվեն ներպետական օրենսդրությամբ: Այդ արտահայտությունն առնչվում է նաև օրենքի որակին, որը պետք է մատչելի լինի համապատասխան անձանց և հստակ ձևակերպում ունենա, որպեսզի նրանք անհրաժեշտության դեպքում իրավաբանական օգնության միջոցով կարողանան տվյալ հանգամանքներում պահանջվող մակարդակով կանխատեսել այս կամ այն գործողության հնարավոր հետևանքները: Սեփական հայեցողության իրավունք սահմանող օրենքն ինքնին չի հակասում նշված պահանջին, պայմանով, որ այդ հայեցողության շրջանակն ու իրացման եղանակը տվյալ դեպքում հետապնդվող օրինական նպատակի տեսանկյունից բավական հստակ ներկայացվեն կամայական միջամտությունից անհատի իրավունքներն ըստ հարկի պաշտպանելու համար»:

Բացի այդ, դատարանը կրկնում է, որ «օրենք» բառով նշվում է ոչ միայն ստատուտային, այլև՝ ընդհանուր իրավունքը (տե՛ս վերոնշյալ *«Սանդի թայմզ» թերթի* (*Sunday Times*) գործով կայացրած վճիռը, պարբ. 47):

2. Վերոնշյալ սկզբունքների կիրառում

38. Դիմողը չի հերքել այն իրողությունը, որ փոխհատուցման մասին որոշումը հիմնավորված էր ներպետական օրենսդրությամբ: Սակայն նա բողոք է ներկայացրել առ այն, որ տվյալ օրենքի ձևակերպումից հնարավոր չէր պատշաճ չափով կանխատեսել, որ փոխհատուցման գումարը 1.5 միլիոն ֆունտ ստեռլինգի կիասնի:

Անգլիայի ընդհանուր իրավունքի դրույթներով փոխհատուցման առավելագույն կամ նվազագույն չափը չի սահմանվում: Տվյալ դեպքում դատավորի՝ ցուցումներ տալու շրջանակը խիստ սահմանափակ էր: Չէր կարելի փոխհատուցման հնարավոր գումարներ առաջարկել, իսկ զրպարտության կամ անձին հասցրած վնասի այլ գործերով կայացրած փոխհատուցման մասին որոշումները չպետք է հաշվի առնվեին նույնիսկ համեմատության նկատառումներով: Դատավորը կարող էր ցուցումներ տալ երդվյալ ատենակալներին միայն դրամական մեծ գումարների իսկական արժեքը որոշելու հարցում նրանց օգնելու համար, օրինակ՝ առաջարկելով այդ գումարը համեմատել տան գնի հետ: Տվյալ գործի քննության ժամանակ Անգլիայի օրենսդրությամբ չէր ճանաչվում այնպիսի սկզբունք, որի համաձայն՝ փոխհատուցման գումարը պետք է համաչափ լիներ դիմողի հեղինակությանը պատճառված վնասը չեզոքացնելու նպատակին: Երդվյալ ատենակալները չհիմնավորեցին իրենց որոշումը, իսկ վերաքննիչ դատարանը կարող էր այն անվավեր համարել միայն, եթե որոշումն այնքան անողջամիտ լիներ, որ տպավորություն թողներ, թե այն կայացրել են ոչ թե խելամտությամբ, այլ կամայականությամբ, անբարեխղճությամբ և անողջամտությամբ առաջնորդվող անձինք:

Դիմողն ընդգծել է, որ վերոնշյալ սկզբունքի բացակայության պատճառով գործը վարող դատավորը չէր կարգադրել երդվյալ ատենակալներին ապահովել լորդ Օլդինգթոնի կրած վնասի համեմատ իրենց որոշման համաչափությունը: Ընդհակառակը, դատավորը երդվյալ ատենակալներին խրախուսել էր հաշվի առնել «իսկայական վնասը» և տեղեկացրել, որ «զրպարտության գործերում գոյություն չունի վնասի փոխհատուցման համար նշանակվող գումարի չափանիշ»: Թեև ընդունված որոշումը ենթադրաբար վնասների դիմաց որևէ տուգանք չէր սահմանում, սակայն այն երեք անգամ գերազանցում էր նախկինում զրպարտության գործերով Անգլիայում երդվյալ ատենակալների սահմանած փոխհատուցման գումարը և զգալիորեն գերազանցում էր այն գումարը, որն անձին հասցրած վնասի գործով հատկացվում է մշտական և չափազանց լուրջ ֆիզիկական կամ մտավոր արատ ստացած դիմողին: Դիմողի փաստաբանները չէին կարող կանխատեսել, որ կընդունվի նման մեծ փոխհատուցում սահմանող որոշում:

39. Պատասխանող պետությունը բերել է այն փաստարկը, որ դիմողի զրպարտության գործով ընդունված որոշման նման իրավական պաշտպանության միջոցը պետք է ճկուն լինի՝ կախված ցանկացած առանձին և հատկապես՝ ներկա առանձնահատուկ գործի փաստերից: Միայն նման ճկունության պահպանմամբ կարելի է օրինապես հասնել զրպարտության մասին օրենքով նախատեսված փոխհատուցման նպատակին, ասել է թե՝ լիազորել երդվյալ ատենակալներին ընդհանուր իրավունքի համապատասխան չափորոշիչներով սահմանել նման հանգամանքներում իրենց կողմից պատշաճ համարվող մի գումար: Ամեն դեպքում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կոչված չէր առհասարակ գնահատելու «Զրպարտության մասին» Անգլիայի օրենքը:

40. Նախ և առաջ դատարանը նշում է, որ երդվյալ ատենակալների կարծիքով՝ տվյալ դեպքում զրպարտությունը շատ լուրջ բնույթ ուներ: Եվ իսկապես, գերագույն դատարանում կայացած դատալսումներին դիմողը և նրա փաստաբանն ընդունեցին, որ զրպարտություն արձանագրելու դեպքում երդվյալ ատենակալները շատ մեծ փոխհատուցում կսահմանեն (տե՛ս վերոնշյալ պարբ. 11):

41. Դատարանն ընդունում է, որ անձի հեղինակությանը հասցված վնասի փոխհատուցման հաշվարկմանը վերաբերող պետական օրենքներով չպետք է բացառվի փաստացի հանգամանքների անսահմանափակ բազմազանությունը: Թերևս կարող է որոշ ճկունություն պահանջվել, որպեսզի ատենակալները կարողանան գնահատել տվյալ գործի փաստերով նախատեսված վնասների փոխհատուցումը: Եվ իսկապես, նշված տեսակետն արտացոլվում է տվյալ գործով վճռի մասին երդվյալ ատենակալներին ներկայացրած դատավորի ամփոփագրում: Այս ամենից հետևում է, որ վնասների փոխհատուցման գնահատումը կարգավորող իրավական կանոններով ամրագրված առանձնահատուկ ցուցումների բացակայությունը պետք է դիտվի որպես տվյալ բնագավառում վնասների փոխհատուցման օրենքի առանձնահատկություն:

Հետևաբար, կոնվենցիայի 10-րդ հոդվածում ամրագրված «օրենքով նախատեսված» ձևակերպմամբ չի կարող պահանջվել, որ նույնիսկ համապատասխան իրավաբանական խորհրդակցության միջոցով դիմողը կարողանա որոշ չափով կանխատեսել իր առանձին գործով սահմանվելիք վնասների փոխհատուցման չափը:

42. Բացի այդ, նշվում է, որ վնասների փոխհատուցումը գնահատելու հարցում երդվյալ ատենակալներին սեփական հայեցողության բացարձակ իրավունք չի վերապահվում: Նրանք պետք է հաշվի առնեին այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ անհատի զգացմունքների վիրավորանքը, դատավարության ընթացքում վերապրած անհանգստությունն ու անվստահությունը, ներում հայցելու իրավունքի բացակայությունը, բողոքարկված հարցերի իսկության վերահաստատումը, դիմողի հեղինակության վերականգնումը և այլն: Դատավորը պարտավոր էր նրանց ցուցումներ տալ համապատասխան օրենքների վերաբերյալ: Ավելին, վերաքննիչ դատարանն իրավասու էր, ի թիվս այլոց, հիմնավորման բացակայության պատճառով անվավեր

ճանաչել որոշումը և գործը կրկին քննության ուղարկել: Ուստի պարզ է դառնում, որ թեև համապատասխան պետական օրենքով կարող է չճանաչվել համաչափության սկզբունքը, այդուհանդերձ, վնասի փոխհատուցման մասին որոշումները ենթադրում են մի շարք սահմանափակումներ և երաշխիքներ:

43. Երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատավարություններում վնասների փոխհատուցման գումարի հիմնավորման պակասը տարածված երևույթ է, ինչն ընդհանուր առմամբ անխուսափելի է: Ուստի դիմողի այն հայտարարությունը, որ տվյալ դեպքում չափազանց մեծ փոխհատուցման մասին որոշման կանխատեսելիության բացակայությունը պայմանավորված էր նշված որոշման չհիմնավորված բնույթով, համոզիչ չէ: Ավելին, փաստարկը կարող է կիրառելի լինել փոխհատուցման մասին ցանկացած որոշման պարագայում՝ անկախ այդ որոշման նշանակությունից, և ավելի շատ է վերաբերում ոչ թե փոխհատուցման չափին, այլ՝ հենց երդվյալ ատենակալների դատական համակարգի բուն էությանը:

44. Անդրադառնալով այն փաստին, որ տվյալ բնագավառում կարելի է հիմնավորել ճկունության բարձր աստիճանը և նկատի ունենալով փոխհատուցումը որոշելիս երդվյալ ատենակալների կողմից հաշվի առնվող զանազան չափորոշիչները, ինչպես նաև վերաքննիչ դատարանի կողմից գործի վերանայումը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրակացրել է, որ զրպարտության համար վնասի փոխհատուցմանը վերաբերող համապատասխան իրավական կանոնները բավական հստակ են ձևակերպված, կարճ ասած՝ վնասների փոխհատուցման մասին որոշումը «նախատեսված էր օրենքով»:

Բ. ՎՆԱՍՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆ ՈՒՂՂՎԱ՞Ծ ԷԻՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻՆ

45. Տվյալ գործով կայացրած վնասների փոխհատուցման մասին որոշումը և դատական արգելքը միանշանակ ուղղված էին «այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները» պաշտպանելու օրինական նպատակին: Այս հարցը չի վիճարկվել:

Գ. ՎՆԱՍՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ «ԱՆՀՐԱԺԵ՞Շ ԷՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ»

1. Փոխհատուցման մասին որոշում

46. Հանձնաժողովը դիմողի հետ համամիտ է այն հարցում, որ 1.5 միլիոն ֆունտ ստեռլինգի չափով նշանակված վնասի փոխհատուցումն անհամաչափ էր լորդ Օլդինգթոնի հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու օրինական նպատակին:

47. Պատասխանող պետությունը պնդում էր, որ այդ որոշմամբ սահմանված գումարը լրիվ համաչափ էր լորդ Օլդինգթոնին հասցրած վնասը փոխհատուցելու և նրա հեղինակությունը վերականգնելու նպատակին: Պետությունն ընդգծել է, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված են «պարտականություններ և պատասխանատվություն»: Դիմողի գրքույկը սուտ և անազնիվ տեղեկություններ էր պարունակում և միանշանակ զրպարտության մեղադրանքով դատական գործի տեղիք էր տալիս:

48. Դատարանը սկզբից նեթ հիշեցնում է, որ տվյալ գործի վերանայումը սահմանափակվում է այդ ժամանակ առկա դատական վերահսկողության հանգամանքներում փոխհատուցման գնահատումից հետո երդվյալ ատենակալների կայացրած որոշմամբ և չի տարածվում նրանց կողմից զրպարտության արձանագրման վրա: Այս ամենից հետևում է, որ եթե գանգատը վերաբերեր նաև զրպարտության արձանագրման հարցին, ապա դատարանի կողմից փաստերի գնահատման սահմանն ավելի լայն կլիներ:

Այդ կապակցությամբ հարկ է նաև նշել, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածի պաշտպանության շրջանակից իրականում կամ ենթադրաբար դուրս ընկնող խոսքին հասարակության պատշաճ արձագանքի վերաբերյալ առկա պատկերացումները, կարող են մեծապես տարբերվել՝ կախված մասնակից պետությունից: Տվյալ դեպքում իրավասու ազգային մարմիններն ավելի նպաստավոր դիրքում են, քան Եվրոպական դատարանը՝ գնահատելու նշված խնդիրը, ուստիև այս առումով պետք է օգտվեն հայեցողության ավելի լայն սահմանից:

49. …Այնուամենայնիվ, դատարանը հաշվի է առնում, որ դիմողը և նրա փաստաբանն ընդունում էին, որ զրպարտության մեղադրանքն ապացուցվելու դեպքում երդվյալ ատենակալները շատ մեծ գումարի չափով փոխհատուցում կսահմանեին: Թեպետև պետք է մտապահել այս կարևոր տարրը, սակայն դա չի նշանակում, որ երդվյալ ատենակալները կարող էին ընդունել իրենց հայեցողությամբ ցանկացած հարմար որոշում, քանի որ կոնվենցիայի համաձայն՝ զրպարտության դիմաց վնասի փոխհատուցման մասին որոշման հիմքում պետք է ընկած լինի համաչափության և խաթարված հեղինակությանը պատճառված վնասի ողջամիտ հարաբերակցությունը:

Երդվյալ ատենակալներին ցուցումներ էին տվել ոչ թե պատժամիջոց սահմանել դիմողի նկատմամբ, այլ պարզապես որոշել այն գումարը, որը կփոխհատուցեր լորդ Օլդինգթոնին պատճառած ոչ նյութական վնասը: Նրանց սահմանած գումարը երեք անգամ գերազանցում էր Անգլիայում զրպարտության գործերով մինչ օրս որոշումներով նախատեսված

ամենամեծ գումարը: Նման չափով փոխհատուցման մասին ցանկացած որոշում պետք է կասկածի տակ առնել հատկապես այն դեպքում, եթե գործող հիմնական պետական օրենքով համաչափության պայման չի նախատեսվում:

50. Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ գործի քննության ժամանակ պետական օրենքով երդվյալ ատենակալներին մեծ հայեցողություն էր շնորհվում: Վերաքննիչ դատարանը չէր կարող վնասի փոխհատուցման մասին որոշումը չեղյալ համարել միայն այն հիմնավորմամբ, որ դրանով ամրագրված գումարը չափազանց մեծ էր, փոխարենը դատարանը կկարողանար չեղյալ հայտարարել նշված որոշումը, եթե միայն դրա՝ ողջամիտ անձանց կողմից կայացվելու փաստը հնարավոր լիներ հարցականի տակ առնել՝ պնդելով, որ որոշումն ընդունվել է կամայական, անբարեխիղճ և անողջամիտ կերպով: Ավելի ուշ «*Ռանթզենն ընդդեմ «Միրոր գրուպ նյուզփեյփերս» ՍՊԸ-ի*» (*Rantzen v Mirror Group Newspapers*) գործում վերաքննիչ դատարանը նկատել է, որ երդվյալ ատենակալներին տրված գրեթե անսահմանափակ հայեցողությամբ չեն երաշխավորվում կոնվենցիայի 10-րդ հոդվածի շրջանակներում «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» միջոցները որոշելու համար բավարար չափանիշները: Դատարանը նշել է, որ ընդհանուր իրավունքը ճիշտ հասկանալու դեպքում պարզ է դառնում, որ դրանով դատարաններից պահանջվում է ավելի մանրազնին քննության առնել վնասի փոխհատուցման սահմանված մեծ գումարները, քան սովորական պարագայում:

Անդրադառնալով այն ցուցումներին, որոնք դատավորը կարող էր տալ երդվյալ ատենակալներին՝ վերաքննիչ դատարանը հույս է հայտնել, որ ժամանակի ընթացքում դատարանի մի շարք որոշումներով կհաստատվեն «պատշաճ» փոխհատուցման որոշումների հստակ չափանիշներ: Միաժամանակ, երդվյալ ատենակալներին հարկ է խրախուսել ցանկացած փոխհատուցման որոշում կայացնելիս հաշվի առնել սահմանվող գումարի իրական արժեքը և երաշխավորել, որ յուրաքանչյուր որոշում համաչափ լինի դիմողի կրած վնասին, իսկ սահմանված գումարը՝ բավարար՝ վնասը պատշաճ կերպով փոխհատուցելու և նրա հեղինակությունը վերականգնելու համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը չի կարող չհամաձայնել վերաքննիչ դատարանի վերոնշյալ այն դիտողություններին, որ դիմողի գործով դատավարության և վճռի բողոքարկման ժամանակ դատական վերահսկողության շրջանակում խիստ անհամաչափ որոշման դեմ պատշաճ և արդյունավետ երաշխիքներ չեն առաջարկվել:

51. Ուստի, հաշվի առնելով դիմողի գործով կայացված որոշմամբ սահմանված գումարը, ինչպես նաև նման որոշումների ընդունումը կանխող պատշաճ և արդյունավետ միջոցների բացակայությունը՝ դատարանն արձանագրել է դիմողի՝ կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված իրավունքների խախտում:

2. Դատական արգելք

52. Դիմողը հավելեց, որ դատական արգելքն անհամաչափ էր լորդ Օլդինգթոնի հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու նպատակին: Նշված արգելքն ուներ շատ լայն սահման և ընդունվել էր երդվյալ ատենակալների դատավճռի ազդեցությամբ, ընդ որում, այդ վճիռը չի հիմնավորվել և հնարավոր առավել լայն շրջանակով է մեկնաբանվել դատավորի կողմից: Տվյալ որոշմամբ արգելվել է առհասարակ մեկնաբանել կազակ և հարավսլավացի ռազմագերիների հանձնման գործում լորդ Օլդինգթոնի ունեցած դերակատարումը:

Ամեն դեպքում, փոխհատուցման մասին որոշման հետ միասնության մեջ դիտարկվելու դեպքում դրված դատական արգելքն անհամաչափ էր, քանի որ այդ միջոցները մասամբ նույն գործառույթն են կատարել: Փոխհատուցման որոշումը կայացնելիս երդվյալ ատենակալներին հայտնի չէր, որ դատավորը դատական արգելք դնելու մասին կարգադրություն կարձակի: Ուստի շատ հավանական է, որ ատենակալների որոշումը միտված էր ոչ միայն լորդ Օլդինգթոնի վնասի փոխհատուցմանը, այլև՝ հետագայում դիմողի նյութերի հրապարակման արգելմանը:

53. Պետությունը վիճարկել է վերոնշյալ հայտարարությունները: Նա պնդում էր, որ երդվյալ ատենակալների կայացրած վճռի բերումով դատավորը լիազորված էր կանխել դիմողի կողմից զրպարտության կրկնությունը, ինչին էլ միտված էր դատական արգելքը:

Դ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

55. Ամփոփելով՝ դատարանը եզրակացնում է, որ փոխհատուցման որոշումը «սահմանված է օրենքով», սակայն անհրաժեշտ չէ «ժողովրդավարական հասարակությունում», քանզի հաշվի առնելով այդ որոշմամբ նախատեսված գումարի չափը, ինչպես նաև տվյալ ժամանակահատվածում գործող պետական օրենքը՝ հետապնդվող օրինական նպատակին համաչափությունը չէր հաստատվել: Հետևաբար, վերջին կետը հակասում է 10-րդ հոդվածի դրույթներին: Մյուս կողմից, ինչպես առանձին, այնպես էլ փոխհատուցման որոշման հետ միասին դիտարկված դատական արգելքն այդ հոդվածի խախտում արձանագրելու տեղիք չի տալիս:

…

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ.

վճռել է, որ փոխհատուցման մասին որոշումը «նախատեսված է օրենքով»՝ կոնվենցիայի 10-րդ հոդվածի իմաստով,

վճռել է, որ հաշվի առնելով նշված որոշմամբ սահմանված գումարի չափը, ինչպես նաև տվյալ ժամանակահատվածում գործող ազգային օրենքը՝ փոխհատուցման մասին որոշումն անհրաժեշտ չէր «ժողովրդավարական հասարակությունում», ուստի հանգեցրել է 10-րդ հոդվածով սահմանված դիմողի իրավունքների խախտմանը,

վճռել է, որ ինչպես առանձին, այնպես էլ փոխհատուցման մասին որոշման հետ միասին դիտարկված դատական արգելքը 10-րդ հոդվածի խախտմանը չի հանգեցրել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում ընդգրկված էին նախագահող դատավոր Ռիսդալը և դատավորներ՝ Ուոլշը, Ռուսոն, Փալմը, Ֆոյգելը, Փեքանենը, Ֆրիլենդը, Ռեպիկը և Զեմբրեկը:

2 Վերոնշյալ վճռի 48-րդ կետում տեղ գտած հայտարարություններում նշվում է, որ դատարանի կարծիքով՝ 10-րդ հոդվածով սահմանված պաշտպանության շրջանակը զրպարտանք պարունակող հայտարարությունների վրա չի տարածվում: Ուստի կոնվենցիայի համաձայն՝ նրանց կարգավիճակը նույնացվում է ռասիստական բնույթի կանխամտածված արտահայտության կարգավիճակին (տե՛ս վերոնշյալ *Երսիլդի* (*Jersild*) գործը):

3 Իռլանդիայի կառավարությունը բերեց այն փաստարկը, որ չծնված երեխաների հետ կապված հարցերում դատարանի կողմից կիրառվող համաչափության սկզբունքը պատշաճ դերակատարում չունի: Դատարանը հերքեց այդ պնդումը և հետևեց իր հաստատված սովորությանը, այն է՝ արդյոք բողոքարկված սահմանափակումը «համաչափ է հետապնդվող օրինական նպատակին», թե ոչ (տե՛ս ներքոհիշյալ *«Բաց դուռ» և «Դուբլինի տատմեր» կազմակերպություններն ընդդեմ Իռլանդիայի* (*Open Door and Dublin Well Woman v Ireland*) գործը):

4 *«Կումպանան և Մազարեն ընդդեմ Ռումինիայի»* (*Cumpana and Mazare v Romania,* 2004 թ. դեկտեմբերի 17-ի վճիռ) գործում լիակազմ դատարանի մեծ պալատը քննարկել է փոխքաղաքապետին և դատավորին զրպարտելու համար երկու լրագրողին յոթ ամիս ժամկետով ազատազրկման դատապարտող վճիռները հաստատելու հարցը: Մեծ պալատը որոշեց հետևյալը.

115. Թեև վճռի կայացումը սկզբունքորեն ազգային դատարանների առաքելությունն է, սակայն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համարում է, որ մամուլում հնչեցրած վիրավորական հայտարարությունների համար լրագրողներին ազատազրկելու վճռով կխախտվի կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված նրանց ազատ արտահայտվելու իրավունքը, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքների, այն է՝ եթե այլ իրավունքների կոպիտ խախտում արձանագրվի, օրինակ, ատելություն կամ բռնություն հրահրող կոչերի պարագայում (տե՛ս *mutatis mutandis «Ֆերիդուն Յազարն ընդդեմ Թուրքիայի»* (*Feridun Yazar v Turkey*) գործով 2004 թ. սեպտեմբերի 23-ին կայացրած վճիռը, թիվ 42713/98, պարբ. 27 և *«Սյուրեքը և Օզդեմիրն ընդդեմ Թուրքիայի»* (*Sürek and Özdemir v Turkey* [GC]) գործով 1999 թ. հուլիսի 8-ին կայացրած վճիռը, թիվ 23927/94 և 24277/94, պարբ. 63): Այդ կապակցությամբ դատարանը նշում է Ռումինիայի իշխանությունների վերջերս արձանագրված օրենսդրական նախաձեռնությունները, որոնց արդյունքում քրեական օրենսգրքից հանվել է վիրավորանքի հանցանքը, և վերացվել է զրպարտության համար ազատազրկման պատժամիջոցը:

116. Տվյալ գործի պարագայում, որը ներկայացնում է հանրության համար օրինական հետաքրքրություն ներկայացնող հարցի շուրջ ընթացող բանավեճի համատեքստում անձի զրպարտության դասական դեպք, որևէ կերպ չի կարող արդարացվել ազատազրկումը որպես պատժամիջոց սահմանելու հանգամանքը: Նման պատժամիջոցն իր բուն էությամբ անխուսափելիորեն կհանգեցնի անբարենպաստ հետևանքների, և այն փաստը, որ դիմողները չեն կրել իրենց պատիժը, չի փոխում այդ եզրակացությունը՝ հաշվի առնելով, որ նրանց շնորհված անհատական ներումը Ռումինիայի նախագահի սեփական հայեցողությամբ պայմանավորված միջոց էր: Ավելին, թեև ներման շնորհիվ դատապարտված անձինք ազատվում են իրենց պատիժը կրելու պարտավորությունից, սակայն նրանց դատվածությունը չի վերացվում:

Ուստի նշվել է, որ լրագրողների ազատազրկման պատժամիջոցը բանտարկության ժամանակահատվածում քաղաքացիական իրավունքներից օգտվելու հնարավորությունից զրկող հավելյալ պատժամի-

ջոցների և մեկ տարի ժամկետով որպես լրագրող աշխատելու արգելքի հետ մեկտեղ «ակնհայտորեն անհամաչափ» է համարվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռում և հակասել կոնվենցիայի 10-րդ հոդվածին: Զրպարտիչ հայտարարություններ անելու համար լրագրողների ազատազրկման նկատմամբ դատարանի այդ մոտեցումը ողջունելի առաջընթաց է պաշտոնատար անձանց ենթադրելի կոռուպցիան լուսաբանող լրատվամիջոցների աշխատակիցներին պաշտպանելու առումով:

Ազատ արտահայտվելու իրավունքին միջամտելու օրինական նպատակները

Ազգային անվտանգություն

1 *«Օբզերվեր» և «Գարդիան» թերթերն ընդդեմ Միացյալ Թագավորության* (*Observer and Guardian v UK,* (1991) 14 EHRR 153 A.216) գործում երկու թերթերի հրատարակիչները, խմբագիրները և լրագրողները բողոք ներկայացրեցին Անգլիայի դատարանների ընդունած որոշումների դեմ, որոնցով նրանց արգելվում էր հրատարակել «Սպայքեթչեր» (անգլ. *Spycatcher*) խորագրով տխրահռչակ գրքում պաշտոնեական զանցանքների մասին Փիթեր Ռայթի պնդումները: Նախքան 1976 թ. Ավստրալիա մեկնելը Ռայթը երկար տարիներ աշխատել էր Բրիտանիայի անվտանգության ծառայությունում (կոնվենցիայի դրույթներին համապատասխանության տեսակետից այս կազմակերպության գործունեության օրինականության առնչությամբ տե՛ս վերոնշյալ *Հյուիթի և Հարմանի (Hewitt and Harman*) գործը: Այնուհետև հեղինակը լույս ընծայեց իր հուշագրություններն ամփոփող մի գիրք, որի մեջ նա նաև պնդում էր, որ Բրիտանիայի անվտանգության ծառայությունն ապօրինի գործունեություն էր ծավալում՝ փորձելով տապալել 1974-79 թթ. Բրիտանիայի լեյբորիստական կառավարությունը, և որ այդ ծառայության նախկին պետը Խորհրդային Միության գործակալ էր: 1985 թ. Միացյալ Թագավորության կառավարությունը «Սպայքեթչեր» գրքի հրատարակումն արգելելու հայց ներկայացրեց Ավստրալիայի դատարաններին՝ պնդելով, որ անվտանգության ծառայությունում աշխատելու ընթացքում ձեռք բերված տեղեկությունները տարածելու դեպքում Ռայթը կխախտի իր զբաղեցրած նախկին պաշտոնից բխող գաղտնիության պահպանման պարտավորությունը: Մինչ գործը վարույթում էր Ավստրալիայի դատարաններում, դիմողները գրքի ձեռագրի հիման վրա հոդվածներ տպագրեցին: Ուստի հիմք ընդունելով գաղտնիության պահպանման սկզբունքի խախտումը՝ Անգլիայի գլխավոր դատախազը ներպետական դատարաններին արգելող որոշումներ ընդունելու պահանջ ներկայացրեց՝ դիմող թերթի հրատարակիչների կողմից «Սպայքեթչեր» գրքի նյութի հիման վրա գրված հոդվածների տպագրումն արգելելու համար: Գլխավոր դատախազի փաստարկի ապացույցի հիմքում ընկած են Մեծ Բրիտանիայի կառավարության քարտուղար սըր Ռոբերտ Արմսթրոնգի երդմամբ հաստատված երկու գրավոր ցուցմունք, որոնցում նա հայտնել է, որ Ռայթից ստացված ցանկացած տեղեկությունների հրատարակման դեպքում կարող է անչափ մեծ վնաս հասցվել Մեծ Բրիտանիայի անվտանգության ծառայությանը, ինչի արդյունքում կարող է խափանվել բարեկամ երկրների տածած վստահությունը Մեծ Բրիտանիայի անվտանգության ծառայության նկատմամբ: 1986 թ. հունիս ամսին վերին դատարանը որոշում կայացրեց ի վնաս դիմողների, այն է՝ ժամանակավորապես արգելել նման հոդվածների հրատարակումը՝ հետաձգելով գործի ամբողջական լսումները: Հետագայում՝ 1986 թ. հուլիս ամսին, այդ արգելող որոշումները պաշտպանվեցին վճռաբեկ դատարանում, իսկ 1987 թ. հուլիսի 30-ին՝ Լորդերի պալատում: Այնուամենայնիվ, 1987 թ. հուլիսի 17-ին «Սպայքեթչեր» գիրքը հրատարակվեց ԱՄՆ-ում և դասվեց առավել շատ վաճառվող գրքերի շարքը: Բրիտանիայի իշխանությունները չկանխեցին անհատների կողմից գրքի ներմուծումը Միացյալ Թագավորության տարածք, սակայն լուրջ քայլեր ձեռնարկեցին, որպեսզի գիրքը հնարավոր չլինի ձեռք բերել հանրային գրադարաններում և երկրի գրախանութներում: 1988 թ. հունիսին Ավստրալիայի գերագույն դատարանը հրաժարվեց երկրում արգելել գրքի հրատարակումն այն հիմքերի վրա, որ միջազգային իրավունքի համաձայն՝ Ավստրալիայի դատարանները կոչված չեն պաշտպանելու անվտանգության ծառայության մասով Բրիտանիայի կառավարության կողմից հետապնդվող շահերը: 1988 թ. հոկտեմբերին դիմողների դեմ հարուցված գործի նյութաիրավական քննության ընթաց-

քում Լորդերի պալատի անդամները վճռեցին, որ դիմողների վրա չպետք է արգելք դրվի, քանի որ ամբողջ աշխարհում տարածում գտած «Սպայքեթչեր» գրքի հրատարակմամբ այդ գրքում բերված տեղեկությունների գաղտնիությունն արդեն իսկ քողազերծվել է: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Մեծ Բրիտանիայի անվտանգության ծառայության աշխատողները երդում են տալիս իրենց ողջ կյանքի ընթացքում պահպանել գաղտնիությունը (տե՛ս «*Գլխավոր դատախազն ընդդեմ «Գարդիան նյուզփեյփերս» ՍՊԸ-ի»* գործը (*A-G v Guardian Newspapers Ltd* (No 2) [1988] 3 All ER 545):

Վեց կողմ և հինգ դեմ ձայներով հանձնաժողովը որոշեց, որ 1986 թ. հուլիսի 1-ից մինչև 1987 թ. հուլիսի 30-ն ընկած ժամանակահատվածում դիմողներիվրա դրված ժամանակավոր դատական արգելքները խախտել են կոնվենցիայի 10-րդ հոդվածը: Հանձնաժողովը միաձայն որոշմամբ 1987 թ. հուլիսի 30-ից մինչև 1988 թ. հոկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում դրված դատական արգելքների հետևանքով 10-րդ հոդվածի խախտում արձանագրեց: Դատարանում պատասխանող պետությունը բերեց այն փաստարկը, որ բոլոր դատական արգելքները, ի թիվս այլ նպատակների, անհրաժեշտ էին ազգային անվտանգությունը պահպանելու համար: Դատարանն ընդունեց, որ նշված դատական արգելքներով հետապնդվող նպատակներն օրինական էին 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: Այնուհանդերձ, դատավորների կարծիքները բաժանվեցին այն հարցի շուրջ, թե արդյոք 1986 թ. հուլիսից մինչև 1987 թ. հուլիսն ընկած ժամանակահատվածում կա՞ր արգելող դատական որոշումներ ընդունելու անհրաժեշտություն: Տասնչորս կողմ և տասը դեմ ձայներով դատավորների մեծամասնությունը վճռեց, որ այդ որոշումների անհրաժեշտությունը կար՝ հաշվի առնելով այս համատեքստում ազգային դատարաններին տրված հայեցողությանսահմանը. «Ողջամիտ է ենթադրել, որ Մեծ Բրիտանիայի ազգային անվտանգության ծառայության «ներքին գաղտնիքներին տիրապետող» նախկին ավագ աշխատակից պրն Ռայթի՝ առանց արտոնության իր հուշագրությունները հրատարակելու նախաձեռնությունն առնվազն վտանգ էր ներկայացնում, որ դրանցում բերված որոշ տեղեկությունների հրապարակումը կարող է վնասարար լինել անվտանգության ծառայության համար» (պարբ. 61): Ինչ վերաբերում է 1987 թ. հուլիսի 30-ից մինչև 1988 թ. հոկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում ընդունված դատական արգելքների մասին որոշումներին, ապա դատարանը միաձայն կարծիք արտահայտեց, որ ժողովրդավարական հասարակությունում նման որոշումներ ընդունելու կարիք չկար:

Անդրադառնալով որպես հիմք ընդունված ազգային անվտանգության ծառայության շահերին՝ դատարանը նշում է, որ այս տեսանկյունից գլխավոր դատախազի գործը, ինչպես կասեր Ջ. Սքոթը, «հետաքրքիր կերպարանափոխության» է ենթարկվել: Ինչպես պարզ է դառնում, սըր Ռոբերտ Արմսթրոնգի վկայությունից, արգելող որոշումները սկզբում միտված էին, ի թիվս այլոց, պահպանելու այն տեղեկատվության գաղտնիությունը, որը պետք է թաքուն մնար: Այնուհանդերձ, 1987 թ. հուլիսի 30-ի դրությամբ այդ տեղեկատվությունն արդեն գաղտնազերծվել էր: Մինչ այդ, արգելող որոշումների նպատակը, այսպիսով, սահմանափակվում էր անվտանգության ծառայության արդյունավետության և հեղինակության բարձրացմամբ, առավելապես՝ այդ ծառայության նկատմամբ երրորդ անձանց վստահության պահպանմամբ: Այդ կապակցությամբ պետությունը պարզաբանեց, որ ծառայության նախկին աշխատակիցների կողմից հուշագրությունների չարտոնված հրատարակումը չէր կարող հավանության արժանանալ, և հարկավոր էր ճիշտ ուղու բերել այլ անձանց, ովքեր կարող էին գայթակղվել այդ նախաձեռնությամբ և հետևել պրն Ռայթի օրինակին:

Դատարանն այս նպատակները բավարար չի համարում զանգատի առարկա դարձած և շարունակական բնույթ կրող այդ միջամտությունները հիմնավորելու համար: Տվյալ գործի քննության սկզբից ևեթ կասկածների տեղիք է տվել այն հարցը, թե արդյոք «Օբզերվեր» և «Գարդիան» թերթերի լրագրողների ազատ արտահայտվելու իրավունքի դեմ ձեռնարկված միջոցները կարո՞ղ էին ավելի մեծ ազդեցություն ունենալ վերոնշյալ նպատակների իրագործման հարցում, քան հենց պրն Ռայթի դեմ ձեռնարկված միջոցներով արդեն ստացված արդյունքները: Նախ և առաջ, 1987 թ. հուլիսից հետո դիմողի իրավունքների շարունակական սահմանափակումները թերթերին թույլ չեն տվել գործարկել հասարակությանը մտահոգող և արդեն հայտնի դարձած տեղեկություն հաղորդելու իրենց իրավունքն ու պարտավորությունը (պարբ. 69):

Դատարանի վճիռը հատկանշական է նրանով, որ այն արտահայտում է ստրասբուրգյան «Եվրոպական վերահսկողության սկզբունքի» իրացումն այն որոշմամբ, որ ազգային անվտանգության շահերը պաշտպանելու պետության պնդումը բոլորովին արդարացված չէ 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: է. Բերենդթը «Սպայքեթչերը և խոսքի ազատությունը» (անգլ. Spycatcher and Freedom of Speech) (1989), Public Law 204) հոդվածում մեկնաբանում է ներպետական ընթացակարգերը, իսկ Լին «Սպայքեթչերը Ստրասբուրգում» (անգլ. Spycatcher in Strasbourg) (1992), Public Law 200) հոդվածում մեկնաբանում է «եվրոպական չափանիշները»:

2 *«Սանդի թայմզ» թերթն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Sunday Times v UK*) (1991) *(No 2)* 14 EHRR 229, A.217) գործում դատարանը նմանատիպ վերլուծություն է իրականացրել՝ միաձայն վճռելով, որ ԱՄՆ-ում «Սպայքեթչեր» գրքի հրատարակումից անմիջապես հետո կարիք չկար Անգլիայում դատական արգելք դնել և թույլ չտալ թերթին գրքից մի շարք հատվածներ հրապարակել:

3 Ի պատասխան «Սպայքեթչեր» պատմաշարին՝ 1989 թ. պատասխանող պետությունը «Պաշտոնեական գաղտնիքների մասին» օրենք ընդունեց: Այդ օրենքի առաջին մասով արդեն քրեական հանցանք է համարվում անվտանգության կամ հետախուզական ծառայություններում ներկայումս կամ նախկինում աշխատող անձանց կողմից նշված կազմակերպությունների հետ նրանց առնչության արդյունքում ձեռք բերված անվտանգության կամ հետախուզության հարցերին վերաբերող ցանկացած տեղեկության բացահայտում, բացառությամբ այն դեպքերի, երբ նման տեղեկության բացահայտումը բխում է նրանց պաշտոնեական պարտականություններից: «MI6» հետախուզական ծառայության նախկին աշխատակից Ռիչարդ Թոմլինսոնը 1997 թ. դատապարտվեց Միացյալ Թագավորության սահմաններից դուրս իր հուշագրությունները հրատարակելու մտադրությամբ վերոնշյալ օրենքի դրույթները խախտելու համար և պատժվեց ինն ամիս ազատազրկմամբ:

4 Դատարանը մերժեց նաև մեկ այլ պետության ներկայացրած այն պահանջը, որի համաձայն՝ նմանօրինակ *«Վերենիգինգ Վիքլեդ Բլուֆ» շաբաթաթերթն ընդդեմ Նիդեռլանդների» (Vereniging Weekblad Bluf! v Netherlands)* (1995) 20 EHRR 189, A.306-A) գործում հարկ է նախապատվություն տալ ազգային անվտանգության շահերին, այլ ոչ թե՝ ազատ արտահայտվելու իրավունքին: Դիմողն անդամակցում է ձախ հայացքներին հարող միությանը, որը հրատարակում էր «Բլուֆ» շաբաթաթերթը: 1987 թ. գարնանը շաբաթաթերթի անձնակազմը ձեռք բերեց Հոլանդիայի ազգային անվտանգության ծառայության (BVD) կողմից ներքին շրջանառության համար պատրաստված 1981 թ. եռամսյակային զեկույցը: Զեկույցից հետևում է, որ Հոլանդիայի ազգային անվտանգության ծառայությունը հետաքրքրված էր երկրի կոմունիստական կուսակցության և հակամիջուկային շարժման ծավալած գործունեությամբ: «Բլուֆ» շաբաթաթերթի խմբագիրը որոշեց զեկույցը հրապարակել որպես շաբաթաթերթի տվյալ համարի հավելված, սակայն հավելվածը տարածելուց առաջ գործը քննող դատավորը կարգադրել էր առգրավել ամբողջ տպաքանակը: Այնուհանդերձ, հաջորդ օրը դիմողին հաջողվեց վերաթողարկել այդ համարը և Ամստերդամի փողոցներում վաճառել 2500 օրինակ: Զանգվածային անկարգությունները կանխելու նպատակով իշխանությունները չեն փորձել խոչընդոտել այդ համարի ազատ վաճառքը փողոցներում, սակայն ավելի ուշ դատախազի հրամանով դատարանները կարգադրեցին շրջանառությունից հանել այս համարը: Դիմողը հանձնաժողովին գանգատ ներկայացրեց առ այն, որ շաբաթաթերթի հավելվածի տպագրման և տարածման դադարեցման մասին հրամանները հակասում են 10-րդ հոդվածին: Տասնվեց կողմ և երկու դեմ ձայներով հանձնաժողովն արձանագրեց դիմողի իրավունքների խախտում: Դատարանում դիմողը պնդում էր, որ հրատարակումներն առգրավելու և դրանց տարածումը դադարեցնելու մասով պետությունների ձեռնարկած գործողությունները հակասում են 10-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված «օրենքով նախատեսված» ձևակերպմամբ արտահայտված օրենքի գերակայության սկզբունքին, բացառությամբ այն դեպքերի, երբ նման հրամաններն արձակվում են քրեական գործերով դատավարությունների համատեքստում: Դատավորները միաձայն հերքեցին այդ պնդումը.

> Դատարանը չի կարող ընդունել այն փաստարկը, որ 10-րդ հոդվածով բացառվում է քրեական ընթացակարգերից բացի այլ դեպքերում տպագրված նյութերն առգրավելու և դրանց տարածումն արգելելու մասին հրաման արձակելը: Ազգային մարմինները պետք է ի վիճակի լինեն առանց համապատասխան անձանց դեմ քրեական գործ հարուցելու նման միջոցներ ձեռնարկել միայն գաղտնիության պատժելի բացահայտումը կանխելու նպատակով՝ այն պայմանով, որ պետական օրենսդրությամբ նշված անձանց համար սահմանվեն բավարար ընթացակարգային երաշխիքներ, իսկ Նիդեռլանդների օրենսդրությունը համապատասխանում է այդ պայմանին» (պարբ. 32):

Ուստի ներպետական դատարանների արձակած կարգադրությունները «նախատեսված են օրենքով» և միտված են ազգային անվտանգությունը պահպանելու օրինական նպատակին, քանզի.

> Դատարանն ընդունում է, որ օրենքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական հասարակության բնականոն գործունեությունն ապահովելու համար կարող է պահանջվել Հոլանդիայի ազգային անվտանգության ծառայության նման

հաստատությունների գոյությունը, որոնց աշխատանքի արդյունավետությունը գաղտնիության և անհրաժեշտ պաշտպանության կարիք ունի: Միայն այս դեպքում պետությունը կարող է պաշտպանվել ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքները խարխլելու փորձեր անող անհատների կամ խմբերի գործողություններից: Հաշվի առնելով գործի առանձնահատուկ հանգամանքները՝ արձանագրված միջամտությունը անկասկած ուղղված է եղել ազգային անվտանգության պաշտպանությանը (պարբ. 35-36):

Այնուհանդերձ, դատարանը կասկածի տակ է առել այն հարցը, թե արդյոք վեց տարի առաջ գրված Հոլանդիայի ազգային անվտանգության ծառայության զեկույցում պարունակվող տեղեկատվությունն այնչափ գաղտնի է, որ երկրի իշխանությունները հիմնավորված համարվեին դրա տարածման վրա դրված արգելքը: *«Գարդիան» և «Օբզերվեր»* (*The Guardian and Observer*), ինչպես նաև *«Սանդի թայմզ» (The Sunday Times (No 2)* պարբերականների գործերով նախորդ վճիռների համատեքստում դատարանը նաև նշեց իր կայացրած այն վճիռը, որ արդեն հրապարակված տեղեկատվության բացահայտումը կանխելու կարիք չկար:

Իհարկե, տվյալ գործում տեղեկատվության հրապարակայնության աստիճանը տարբերվում է մյուս գործերից: Այնուհանդերձ, խնդրո առարկա նյութը հայտնի էր դարձել բազմաթիվ անձանց, որոնք իրենց հերթին կարող էին այն փոխանցել այլոց: Բացի այդ, իրադարձություններն արժանացել են զանգվածային լրատվամիջոցների մեկնաբանությանը: Նման իրավիճակում դրված օրինական նպատակին հասնելու համար այլևս հնարավոր չէր հիմնավորել պետական գաղտնիքի պահպանումը և «Բլուֆ» շաբաթաթերթի 267-րդ համարը շրջանառությունից հանելը: Սակայն հավանական կլիներ, որ իրավախախտները դատական հետապնդումների ենթարկվեին (պարբ. 45):

Ուստի դատարանը որոշեց, որ Հոլանդիայի իշխանությունների գործողություններով խախտվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված դիմողի ազատ արտահայտվելու իրավունքը:

Տվյալ վճռից հետևում է, որ դատարանը կրկին իր սեփական գնահատականն է տվել այն հարցին, թե արդյոք նույնիսկ անվտանգության ծառայության նուրբ ոլորտում ազգային շահերը պահանջո՞ւմ են սահմանափակել ազատ արտահայտվելու իրավունքը: Ինչպես պարզվել է, որքան հին է տեղեկատվությունը, և կամ որքան մեծ է այդ տեղեկատվության տարածման շրջանակը, այդքան փոքր է հավանականությունը, որ դատարանն անհրաժեշտ կհամարի հետագայում սահմանափակել դրա հրապարակումը:

Տարածքային ամբողջականություն կամ պետական անվտանգություն

Վերոնշյալ *«Ջեյլանն ընդդեմ Թուրքիայի»* (*Ceylan v Turkey*) գործում դատարանը ճանաչեց տարածքային ամբողջականությունը պահպանելու նպատակը, իսկ «Գրիգորիադեսն ընդդեմ Հունաստանի» (*Grigoriades v Greece*) ներքոհիշյալ գործում պաշտպանեց պետական անվտանգությունը պահպանելու նպատակը:

Անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու նպատակ

1 Այս ձևակերպմամբ նշվում է երկու առանձին նպատակ, իսկ «անկարգություններ» հասկացությունը բավականին ճկուն է և կարող է ներառել հասարակության առանձին խմբերի, օրինակ՝ զինծառայողների շրջանում անկարգությունների կանխումը (տե՛ս *«Էնգել ընդդեմ Նիդեռլանդների»* (*Engel v Netherland*) գործը (1976) 1 EHRR 647, A.22): Նախորդ հատվածներում քննարկվել են այս գործի այլ հայեցակետերը: Դիմողներից երկուսը՝ նորակոչիկներ Դոնան և Շուլը, երեք և չորս ամիս ժամկետով քրեակատարողական հիմնարկում ազատազրկման են դատապարտվել «Alarm» (հայ. «Տագնապ») խորագրով ամսագիրը տպագրելու և այն այլ զինվորներին բաժանելու համար: Այդ համարում կարելի էր կարդալ հետևյալ տողերը.

…Սովորական պատժամիջոցներից բացի՝ բանակի ղեկավարներն իրենց տրամադրության տակ ունեն նաև բազմազան այլ միջոցներ, և ծառայության վայրի փոփոխությունը զինվորին ճնշելու միջոցներից միայն մեկն է: Այս ամենին վերջ կտրվի

միայն այն ժամանակ, երբ իրենց իշխանությունը միայն պատժի և ահաբեկման միջոցով պահպանող այս մարդիկ ստիպված լինեն կարգին աշխատանք փնտրել:

Ռազմական ղեկավարությունը մեղավոր ճանաչեց դիմողներին կարգապահությունը խախտելու միտում ունեցող հոդված հրապարակելու համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանում պատասխանող պետությունը բերեց այն փաստարկը, որ դիմողների ազատ արտահայտվելու իրավունքին միջամտությունը հիմնավորված է բանակում անկարգությունները կանխելու նպատակով: Դատարանը միաձայն վճռեց հետևյալը.

…այս դրույթով սահմանված «կարգ» հասկացությունը վերաբերում է ոչ միայն հասարակական կարգին՝ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 9-րդ հոդվածի 2-րդ կետերի, ինչպես նաև թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, այլ նաև ընդգրկում է այն կարգը, որը պետք է տիրի որևէ հատուկ սոցիալական խմբում: Օրինակ՝ զինվորականների խմբում անկարգությունները կարող են ամբողջ հասարակական կարգի վրա անդրադառնալ: Այս ամենից հետևում է, որ վիճարկված պատժամիջոցները կբավարարեին այս պայմանը՝ կախված նրանից, թե արդյոք դրանք ուղղված էին Նիդեռլանդների զինված ուժերում անկարգությունները կանխելո՞ւ նպատակին, և եթե այո, ապա՝ ինչ չափով:

Հարկ է նշել, որ պրն Դոնայի և պրն Շուլի պնդմամբ կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետում «անկարգությունների կանխումը» միայն «հանցագործությունների կանխման» հետ է դիտարկվում: Դատարանն այդ կարծիքը չի կիսում: Թեև ֆրանսերեն տարբերակում գործածվում է *et* (և) շաղկապը, սակայն անգլերեն տարբերակում կիրառվում է «կամ» տրոհական շաղկապը: Հաշվի առնելով համատեքստը և 10-րդ հոդվածի ընդհանուր համակարգը՝ անգլերեն տարբերակն այս հարցում ավելի հավաստի ուղեցույց է հանդիսանում (պարբ. 98):

Դատարանը նաև որոշեց, որ Հոլանդիայի ռազմական ղեկավարությունը հիմնավոր պատճառներ ուներ եզրակացնելու, որ «Alarm» ամսագրի այդ համարը տպագրելով՝ դիմողները փորձել են խախտել ռազմական կարգապահությունը, և նշված պատժամիջոցներն անհրաժեշտ էին անկարգությունները կանխելու համար: Եվ իսկապես, դատարանը վճռեց, որ «այսպիսով, խոսքը ոչ թե դիմողներին ազատ արտահայտվելու իրավունքից զրկելու, այլ միայն այդ իրավունքը չարաշահելու համար նրանց պատժելու մասին է» (պարբ. 101): Ուստի 10-րդ հոդվածի իրավունքների վերաբերյալ դիմողների պահանջները մերժվել են:

2 Ավելի ուշ, *«Ավստրիայի զինվորների ժողովրդավարական միությունը» և Գուբին ընդդեմ Ավստրիայի»* (*Vereinigung Demokratischer Soldaten Osterreichs and Gubi v Austria* (1994) 20, EHRR 55, A.3 02) գործում դատարանն ավելի հանդուրժողական և պաշտպանողական մոտեցում որդեգրեց զինծառայողների շրջանում քննադատական հոդվածներ տարածելու նկատմամբ: Դիմող միավորումը տպագրում էր *Hedgehog* (թարգ. ոզնի) ամսագիրը, որը նախատեսված էր Ավստրիայի բանակի զինծառայողների համար: Այնուամենայնիվ, Ավստրիայի պաշտպանության նախարարը չթույլատրեց ամսագիրը զորամասերում տարածել նույն ձևով, այն է՝ պետության հաշվին, ինչպես Ավստրիայում տպագրվող այլ երկու զինվորական ամսագրերը: Գուբին նորակոչիկ զինվոր էր, որը ձերբակալվեց իր զորամասում *Hedgehog* ամսագրի համարներից մեկը տարածելու ժամանակ: Հրամանատարը նրան երեք օրով ազատազրկման դատապարտեց ամսագիրը տարածելու համար: Դիմողները գանգատ ներկայացրեցին առ այն, որ իշխանությունների որոշումներով խախտվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածը: Տասներկու կողմ և ինը դեմ ձայներով հանձնաժողովն արձանագրեց այդ հոդվածի խախտում: Դատարանն ընդունեց, որ իշխանությունների գործողություններն ուղղված էին պաշտպանության համակարգում անկարգությունները կանխելու օրինական նպատակին, սակայն վեց կողմ և երեք դեմ ձայներով մեծամասնությունը վճռեց, որ ամսագրի տարածումը մերժելու հարցում իշխանությունների գործողություններն անհամաչափ էին:

Որպես ապացույց բերված *Hedgehog* ամսագրի համարներից և ոչ մեկում անհնազանդության կամ բռնության կոչ չէր արվում, և անգամ կասկածի տակ չէր դրվում բանակի օգտակարության հարցը: Հարկ է նշել, որ շատ համարներում զետեղված էին բողոքներ, բարեփոխումների առաջարկներ, և ընթերցողները խրախուսվում էին իրավաբանական բողոքներ կամ գործ հարուցելու դիմումներ ներկայացնել: Այնուամենայնիվ, անկախ ամսագրի նշված համարների՝ հաճախ բանավեճի բնույթ կրող ոճից, դժվար է ենթադրել, որ դրանց հեղինակներն անցել են թույլատրելի սահմանը միայն այնպիսի գաղափարների քննարկմամբ, որոնք պետք է հանդուրժվեն ժողովրդավարական պետության բանակում, ինչպես նաև այն հասարակությունում, հանուն որի գործում է այդ բանակը (պարբ. 38):

Ութ կողմ և մեկ դեմ ձայներով դատավորների ճնշող մեծամասնությունը նաև վճռեց, որ Գուբիի դեմ հարուցված գործն անհամաչափ արձագանք էր նրա զանցանքին՝ հաշվի առնելով այն ամսագրի բովանդակությունը, որը տարածելիս նա ձերբակալվել է:

Այսպիսով, այժմ թվում է, որ դատարանը կպաշտպանի անդամ պետությունների զինված ուժերում քննադատական հրապարակումների տարածումն այն պայմանով, որ նման ամսագրերը միտված չլինեն խարխլելու զինված ուժերի գոյությունը կամ գործելակերպի արդյունավետությունը: Դատարանի նման մոտեցումը պետք է ողջունելի լինի որպես երաշխիք այս հզոր կազմակերպություններում տեղ գտած մեկուսացման, ինքնագոհության և բռնակալության դեմ: Եվ իսկապես, *«Գրիգորիադեսն ընդդեմ Հունաստանի»* (*Grigoriades v Greece*), (1997) 27 EHRR 464, 1997-VII 2575) գործում մեծ պալատի մեծամասնությունը օրենքի խախտում արձանագրեց, երբ մի նորակոչիկ սպա պատժվել էր հրամանատարին ուղղված նամակում բանակը քննադատելու համար: Այդ նամակում դիմողը գրում էր, որ «բանակը շարունակում է մնալ հանցավոր և ահաբեկչական գործիք, որը, ստեղծելով վախի մթնոլորտ և իսպառ խախտելով արմատական հայացքներ ունեցող երիտասարդների հոգեկան հավասարակշռությունը, հստակորեն միտված է մարդկանց մի այնպիսի գերիշխանության գործիքի պարզ տարրերի վերափոխմանը, որով քայքայվում է մարդկային էությունը, իսկ ընկերության և սիրո վրա հիմնված հարաբերությունները վերածվում են կախվածությամբ պայմանավորված հարաբերությունների»: Ռազմական դատարանները բանակն անարգելու համար մեղավոր ճանաչեցին դիմողին և նրան դատապարտեցին երեք ամսվա ազատազրկման: Դիմողը գանգատ ներկայացրեց հանձնաժողովին, որը քսանութ կողմ և մեկ դեմ ձայներով կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում արձանագրեց: Դատարանն ընդունեց այն իրողությունը, որ դիմողի դատապարտումը միտված էր արդյունավետ զինվորական պաշտպանությանը, ինչն այս դեպքում դիտարկվում էր որպես ազգային և հասարակական անվտանգությունը երաշխավորելու օրինական նպատակ: Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք դիմողի դատապարտումն անհրաժեշտ էր «ժողովրդավարական հասարակությունում»՝ դատարանը վճռեց հետևյալը.

> Ջորամասի դարպասները չեն կարող սահմանափակել կոնվենցիայի 10-րդ հոդվածի կիրառման տիրույթը: Այսպիսով, վերոնշյալ հոդվածը վերաբերում է զինծառայողներին նույն չափով, ինչ մասնակից պետությունների իրավազորության ներքո գտնվող այլ անձանց: Ճիշտ է՝ դիմողի նամակը որոշ վճռական և անզուսպ դիտողություններ է պարունակում Հունաստանի զինված ուժերի մասին: Այնուհանդերձ, դատարանը նշում է, որ այդ դիտողություններն արվել են բանակային կյանքի և որպես հաստատության՝ բանակի մասին ընդհանուր և երկար քննադատության համատեքստում: Դիմողը չի տպագրել կամ ավելի լայն զանգվածների շրջանում չի տարածել նամակը: Այդ նամակը ոչ ստացողի, ոչ էլ որևէ այլ անձի հասցեին որևէ վիրավորանք չէր պարունակում: Հաշվի առնելով այս ամենը՝ դատարանն անընդունելի է համարում զինվորական կարգապահության վրա այդ նամակի բովանդակության գործած իրական ազդեցությունը (պարբ. 45-47):

Հետևաբար, տասներկու կողմ և ութ դեմ ձայներով դատարանը վճռեց, որ դիմողի դատապարտումը հակասում էր կոնվենցիայի 10-րդ հոդվածին:

3 *«Խորհերն ընդդեմ Ավստրիայի»* (*Chorherr v Austria*) (1993) 17 EHRR 358, A.266-B) գործում, որտեղ խոսքը բողոքի ցույցի մասին էր, դատարանը հաշվի առավ անկարգությունները կանխելու նպատակը: 1985 թ. հոկտեմբերին Վիեննայի կառավարության շենքին կից հրապարակում տեղի ունեցավ զինվորական արարողություն Ավստրիայի չեզոքության երեսուներորդ և Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտի քառասուներորդ տարեդարձը նշելու համար: Արարողությանը ներկա է գտնվել մոտ 50000 մարդ: Արարողության ընթացքում դիմողը ընկերոջ հետ քայլում էր մարդկանց շարքերով և բաժանում թռուցիկներ, որոնք կոչ էին անում Ավստրիայի զինված ուժերի կողմից ռազմական ինքնաթիռներ գնելու հարցի վերաբերյալ հանրաքվե պահանջել: Դիմողը ուներ մի ուսապայուսակ, որի հետևի մասում ամրացված էր մեծ չափերի մի թռուցիկ, որը մոտ 50 սմ-ով բարձրանում էր նրա գլխավերևում, և պարունակում էր հետևյալ կարգախոսը. «Ավստրիային պետք չեն ռազմական կործանիչ ինքնաթիռներ»: Դիմողի գործողությունների արդյունքում փակվել էր որոշ մարդկանց տեսադաշտը, ինչն առաջ բերեց նրանց վրդովմունքը: Երկու ոստիկաններ զգուշացրեցին դիմողին, որ ինքը խախտում է հասարակական կարգուկանոնը, և պահանջեցին դադարեցնել բողոքի ցույցը, սակայն դիմողը հրաժարվեց կատարել նրանց պահանջը՝ վկայակոչելով ազատ արտահայտվելու իր իրավունքը, և, ի վերջո, ձերբակալվեց: Ոստիկանության բաժանմունքում նրա դեմ հարուցվեց վարչական գործ, իսկ ավելի ուշ՝ զինվորական արարողության ավարտից մեկուկես ժամ անց,

նրան ազատ արձակեցին: Դիմող Խորխերը ոստիկանների պահվածքի առնչությամբ բողոք ներկայացրեց սահմանադրական դատարան, սակայն նրա դիմումը մերժվեց: Ի վերջո, նրան տուգանեցին 700 շիլինգի չափով՝ հասարակական հանգիստը խանգարելու համար: Դիմողը գանգատ ներկայացրեց հանձնաժողովին՝ ի թիվս այլոց պնդելով կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման մասին: Գործող նախագահի վճռորոշ ձայնով հանձնաժողովն այդ հոդվածի խախտում արձանագրեց: Դատավարության բոլոր կողմերը դատարանում ընդունեցին, որ դիմող Խորխերի դեմ ձեռնարկված միջոցները միջամտություն են 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ազատ արտահայտվելու իրավունքին: Այնուհանդերձ, դատարանի մեծամասնությունը, վեց կողմ և երեք դեմ ձայներով, որոշեց, որ միջամտությունը կարող է արդարացվել 10-րդ հոդվածի 2-րդ կետով: Դատավորների մեծամասնությունը համարում է, որ այդ միջոցները «նախատեսված են օրենքով», միտված էին զինվորական արարողության ժամանակ անկարգությունները կանխելու օրինական նպատակին, և որ Խորխերի վարքին ոստիկանների արձագանքը չի գերազանցել պետության հայեցողության սահմանը և համաչափ էր հետապնդվող նպատակին, քանզի.

…Ավստրիայի զինված ուժերի դեմ ցույցի համար տեղ ընտրելիս պրն Խորխերը պետք է գիտակցեր, որ իր գործողությունները կարող էին անհանգստություն պատճառել և զսպիչ միջոցների առարկա դառնալ, որոնք այդ պարագայում անտեղի չէին (պարբ. 33):

Ուստի զանգվածային բողոքի անցկացման վայրի ընտրությունը կարևոր գործոն է՝ որոշելու, թե արդյոք բողոքի ցույցի մասնակիցների վարքի վրա պետական մարմինների դրված սահմանափակումներն օրինակա՞ն են կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, թե՞ ոչ:

4 *Խորխերի* (*Chorherr*) գործով կայացրած վճռի հիմքում ընկած տրամաբանությունը դատարանը զարգացրել է «Ստիլն ընդդեմ Միացյալ Թագավորության» (*Steel v UK*) գործի շրջանակներում (1998) 28 EHRR 603, 1998-VII): Տվյալ գործով որպես դիմող հանդես են եկել զանգվածային բողոքի տարբեր ձևերին մասնակցած մի քանի անձինք: Վաթսուն այլ մարդկանց հետ միասին տկն Ստիլը փորձում էր խանգարել և խափանել Յորքշիրում տեղի ունեցող կաքավների որսը: Նա քայլում էր կրակել պատրաստվող որսի մասնակիցների առջևով՝ թույլ չտալով նրանց կրակոց արձակել: Ոստիկանները բողոքի մասնակիցներին զգուշացրեցին, որ նրանք դադարեցնեն բողոքի ցույցը, և տեսնելով, որ վերջիններս անտեսում էին նախազգուշացումը, ձերբակալեցին տասներեք ցուցարարների, այդ թվում՝ դիմողին: Դիմողը 44 ժամ անցկացրեց ոստիկանության բաժանմունքում, ինչից հետո Մեծ Բրիտանիայի գերագույն դատարանի քրեական վարչությունը բավարարեց հասարակական հանգիստը խանգարելու մեղադրանքով նրա դեմ ներկայացրած բողոքը: Դատավորը կարգադրեց դիմողին տասներկու ամսվա ընթացքում կամավոր կատարել հասարակական հանգիստը պահպանելու պարտավորությունը, հակառակ դեպքում նա կտուգանվեր 100 ֆունտ գումարի չափով: Նման կարգադրությունը խախտելու դեպքում անձից կարող է բռնագանձվել նշված գումարը: Ստիլը հրաժարվեց կատարել նշված պարտավորությունը և դատապարտվեց քսանութ օր ազատազրկման: Երկրորդ դիմող հանդիսացող տկն Լաշը բողոքի քսանհինգ այլ մասնակիցների հետ Լոնդոնի Արևելյան թաղամասի «M11» մայրուղու հատվածում գտնվող շինարարական հրապարակ ներխուժեց: Ցուցարարները բարձրացան հատման ենթակա ծառերի և շինարարական մեքենաների վրա: Անվտանգության աշխատակիցները մի քանի անգամ շինհրապարակից հեռացրեցին ցուցարարներին, ընդ որում՝ վերջիններս որևէ բռնի գործողության չէին դիմել և սարքավորումներին վնաս չէին հասցրել: Ի վերջո, դիմողին ձերբակալեցին այն պահին, երբ նա կանգնած էր փորատող մեքենայի թափքի տակ և հավանաբար պատրաստվում էր խանգարել հասարակական հանգիստը: Դիմողը ոստիկանության բաժանմունքում տասնյոթ ժամ անցկացրեց, իսկ ավելի ուշ հաշտարար դատարանը նրան մեղադրանք ներկայացրեց: Դատարանը կարգադրեց դիմողին տասներկու ամսվա ընթացքում պահպանել հասարակական հանգիստը, հակառակ դեպքում նա կտուգանվեր 100 ֆունտի չափով: Լաշը հրաժարվեց կատարել այդ պահանջը և յոթ օրով բանտարկվեց: Մյուս դիմողները՝ տկն Նիդհեմը, պրն Փոլդենը և պրն Քոլը, բողոքի ցույցի էին դուրս եկել Լոնդոնում՝ այն շենքի դեմ, որտեղ անցկացվում էր «Կործանիչ ինքնաթիռ II» ժողովը: Դիմողները թռուցիկներ էին բաժանում և դրոշակներ բարձրացնում՝ «Աշխատե՛նք հանուն խաղաղության, այլ ոչ թե պատերազմի» կարգախոսով: Ոստիկանությունը նրանց ձերբակալեց հասարակական հանգիստը խանգարելու համար, յոթ ժամ կալանքի տակ

պահեց, իսկ այնուհետև ազատ արձակեց: Այս իրադարձություններին հաջորդող դատական ընթացակարգերի ժամանակ դատախազությունը որոշեց վկաներ չներգրավել, իսկ հաշտարար դատարանը դիմողների դեմ քննվող գործը կարճեց: Բոլոր դիմողները գանգատ ներկայացրին հանձնաժողովին՝ ի թիվս այլոց նշելով կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված ազատ արտահայտվելու իրավունքի խախտումը: Հանձնաժողովը միաձայն որոշեց, որ այդ հոդվածը չի խախտվել Ստիլի և Լաշի դեպքում, սակայն խախտվել է մյուս դիմողների պարագայում: Մեծ Բրիտանիայի թագավորությունը փորձում էր դատարանում բերել այն փաստարկը, որ 10-րդ հոդվածը կիրառելի չէ Ստիլի և Լաշի գործերում, քանզի նրանց կազմակերպած բողոքի ցույցերը խաղաղ բնույթ չէին կրում: Այս փաստարկը մերժվեց հետևյալ հիմնավորմամբ.

Դատարանը հիշեցնում է, որ առաջին և երկրորդ դիմողները ձերբակալվել են համապատասխանաբար կաքավի որսի և մայրուղու ընդլայնման դեմ բողոքի ցույցերի ժամանակ: Ճիշտ է՝ այդ բողոքի ցույցերն իրականում ստացել են դիմողների կողմից դատապարտվող գործունեությանը ֆիզիկական խոչընդոտի ձև, սակայն դատարանը համարում է, որ այդ ցույցերն ըստ էության ներկայացրել են սեփական կարծիքի արտահայտում՝ 10-րդ հոդվածի իմաստով (տե՛ս, օրինակ, «Խորխերն ընդդեմ Ավստրիայի» (*Chorherr v Austria*) գործը): Ուստի, դիմողների դեմ ձեռնարկած միջոցները հանդիսացել են ազատ արտահայտվելու իրավունքի խախտում (պարբ. 92):

Դատարանը նաև որոշել է, որ Ստիլի և Լաշի ձերբակալությունն ու կալանավորումը «նախատեսված են օրենքով» և միտված են անկարգությունները կանխելու և այլոց իրավունքները պաշտպանելու օրինական նպատակներին: Այնուհանդերձ, դատավորների կարծիքները բաժանվեցին այն հարցի շուրջ, թե արդյոք նման միջոցներն անհրաժե՞շտ էին «ժողովրդավարական հասարակությունում», թե՞ ոչ: Դատարանը հայտարարեց հետևյալը.

Ճիշտ է, որ պետություններին վերապահված է հայեցողության որոշակի սահման՝ գնահատելու ազատ արտահայտվելու իրավունքին միջամտության անհրաժեշտությունը և դրա աստիճանը, հատկապես, եթե խոսքը օրինական գործողությունների խաղաղ ընթացքն ապահովելու համար ողջամիտ և պատշաճ միջոցներ ընտրելու մասին է(տե՛ս *Խորխերի* (*Chorherr*) վերոնշյալ գործով կայացրած վճիռը…), (պարբ.101):

Անդրադառնալով տկն Ստիլի գործին՝ հինգ կողմ և չորս դեմ ձայներով դատավորների աննշան մեծամասնությունը 10-րդ հոդվածի խախտում չի արձանագրել.

Տվյալ դեպքում քառասունչորս ժամն անկասկած ազատազրկման շատ երկար ժամկետ է հանդիսանում: Այնուհանդերձ, դատարանը հիշեցնում է, որ ձերբակալությունից առաջ տկն Ստիլի վարքը լուրջ ֆիզիկական վնասվածքի վտանգ էր ներկայացնում իր և այլոց համար, և որ նա իր պահվածքով մասնակցում էր կաքավների որսի դեմ բողոքի արշավին, որը կարող էր ավարտվել անկարգություններով և բռնությամբ: Հաշվի առնելով հատկապես այն վտանգը, որ ազատ արձակվելուց անմիջապես հետո կինը կարող էր վերսկսել որսի դեմ բողոքի գործունեությունը, ինչպես նաև նման զարգացումների հնարավոր հետևանքները, ընդ որում՝ ոստիկաններն ավելի նպաստավոր դիրքում էին դրանք գնահատելու համար, դատարանն ազատազրկումն անհամաչափ չի համարում (պարբ. 105):

Այնուամենայնիվ, իրենց միասնական և մասնակի չհամընկնող կարծիքում դատավորներ Վալտիկոսն ու Մակարչիկը հայտնել են հետևյալը.

Նույնիսկ հաշվի առնելով մարդու թևավոր բարեկամին պաշտպանելու համար որսի մասնակցի առջև ցատկոտող այդ անձի ծայրահեղ պահվածքը՝ ամեն դեպքում անվիճարկելի է մնում այն իրողությունը, որ քառասունչորս ժամով նրան կալանավորելը, իսկ այնուհետև քսանութ օրով բանտարկելն ակնհայտորեն ծայրահեղ միջոց է հանդիսանում, հատկապես կենդանիների նկատմամբ իրենց սիրով հայտնի անգլիացիների երկրում: Մեր կարծիքով՝ այդ միջոցը հակասում է կոնվենցիային:

Թեև դատարանն ընդունել է, որ տկն Լաշի վարքը թերևս հասարակության համար պակաս վտանգավոր էր, քան տկն Ստիլի վարքը, սակայն բոլոր դատավորները համաձայնել են, որ նրա ձերբակալումը և կալանավորումը պետության համաչափ արձագանք է հանդիսացել: Անդրադառնալով մյուս երեք դիմողներին՝ դատարանը միաձայն վճռել է հետևյալը.

…Տկն Նիդհամի, պրն Փոլդենի և պրն Քոլի դեմ ձեռնարկված միջոցներն ապօրինի են և օրենքով չեն նախատեսվել, քանզի դատարանը չի համոզվել, որ ոստիկաններն ունեին կայուն հիմքեր՝ կանխատեսելու, որ դիմողների խաղաղ բողոքի ցույցերով կարող էր խախտվել հասարակական հանգիստը: Նմանօրինակ պատճառներով դատարանը համարում է, որ դիմողների ազատ արտահայտվելու իրավունքին միջամտությունը նույնպես համաչափ չէր անկարգությունները կանխելու և այլոց իրավունքները պաշտպանելու նպատակներին, ուստի և անհրաժեշտ չէր «ժողովրդավարական հասարակությունում» (պարբ. 110):

Ուստի դատարանն արձանագրեց կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: Այս որոշման դրական հայեցակետերից մեկը դատարանի պատրաստակամությունն է հատկապես խորհրդանշական բնույթ կրող ֆիզիկական վարքագիծը դիտարկել որպես 10-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան ազատ արտահայտվելու իրավունքի տեսակ: Այնուհանդերձ, բոլոր այն դեպքերում, երբ նման պահվածքը սպառնալիք է ներկայացնում հասարակական կարգուկանոնի համար, դատարանն ազգային մարմիններին զգալի ազատություն է տալիս ազատ արտահայտվելու իրավունքի այս տեսակը սահմանափակելու կամ արգելելու համար:

5 *«Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Goodwin v UK*) ներքոհիշյալ գործում Մեծ Բրիտանիայի կառավարությունը փորձում էր գաղտնիությունը խախտող հրապարակումների արգելքը և դատարանն անարգելու համար դիմող լրագրողի դեմ հարուցված գործը հիմնավորել հանցագործությունը կանխելու անհրաժեշտությամբ: Այնուհանդերձ, դատարանը վճռեց, որ տվյալ դեպքում ինքը կոչված չէ որոշելու, թե արդյոք այդ նպատակն առնչվո՞ւմ է գործին, թե ոչ, քանի որ այդ միջամտություններն ուղղված են այլոց իրավունքները պաշտպանելու անվիճարկելի նպատակին:

Առողջությունը կամ բարոյականությունը պաշտպանելու նպատակ

……..

«Բաց դուռ» և «Դուբլինի տատմեր» կազմակերպություններն ընդդեմ Իռլանդիայի» գործ (Open Door and Dublin Well Woman v Ireland) A.246 (1992) 15 EHRR 244

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Սույն գործով որպես դիմող հանդես են եկել՝1) «Օփեն դոր քաունսելինգ» (Open Door Counselling) ոչ առևտրային կազմակերպությունը, որը զբաղվում է Իռլանդիայում բնակվող հղի կանանց խորհրդատվական ծառայությունների մատուցմամբ, 2) «Դաբլին վել վումեն սենթեր» (անգլ. Dublin Well Woman Centre) ոչ առևտրային կազմակերպությունը, որը բժշկական և խորհրդատվական ծառայություններ է մատուցում Դուբլինում բնակվող հղի կանանց, 3) «Դաբլին վել վումեն սենթեր» կազմակերպությունում աշխատող երկու անհատ խորհրդատու և 4) ծննդաբերության տարիքի երկու իռլանդացի կին: 1983 թ. հանրաքվեից հետո Իռլանդիայի սահմանադրությունը համալրվել է 40-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետով, որը սահմանում է. «Պետությունը ճանաչում է չծնված երեխայի կյանքի իրավունքը և, նույն ձևով վերաբերելով մոր կյանքի իրավունքին, օրենքներով երաշխավորում է հարգանքը այդ իրավունքի նկատմամբ և հնարավորության սահմաններում դրա պաշտպանությունն ու վերականգնումը»: 1985 թ. «Հանուն չծնված երեխաների պաշտպանության» Իռլանդիայում գործող միությունը մասնավոր հայց ներկայացրեց դիմող կազմակերպությունների դեմ՝ պնդելով, որ նրանք Իռլանդիայի սահմանադրության 40-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ապօրինի գործունեություն էին ծավալում՝ կանանց խորհրդատվություն տալով Իռլանդիայի սահմաններից դուրս հղիության արհեստական ընդհատման միջոցների վերաբերյալ: Դիմող կազմակերպություններն ընդունել են այն փաստը, որ ի թիվս այլ հարցերի՝ նրանք հղի կանանց հետ խոսել են որպես այլընտրանք հղիության արհեստական ընդհատման մասին և կանանց խնդրանքով կարգավորել են Մեծ Բրիտանիայում գտնվող հիվանդանոցներ նրանց ուղեգրելու հետ կապված հարցերը: Գերագույն դատարանը գտավ, որ դիմող կազմակերպությունների գործունեությունը հակասում էր 40-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետին և մշտական արգելք դրեց նման գործունեության վրա: Դիմողների կողմից այս

որոշման բողոքարկումից հետո գերագույն դատարանը մերժեց նրանց փաստարկները, սակայն փոխեց արգելող որոշումը՝ պահանջվելով, որ «յուրաքանչյուր մեղադրյալ կազմակերպությանը, դրանց աշխատակիցներին կամ գործակալներին առմիշտ արգելվի հղիության արհեստական ընդհատման նպատակով հղի կանանց ուղեգրել արտասահմանյան երկրների որևէ հիվանդանոց, կարգավորել նրանց ուղևորության հետ կապված հարցերը և տեղեկություններ տալ այս կամ այն հիվանդանոցների գտնվելու վայրի և բժիշկների հետ կապվելու միջոցների մասին»: Դիմող կազմակերպություններին հարկադրեցին հատուցել հակառակ կողմի կրած դատական ծախսերը, ինչի հետևանքով «Բաց դուռ» կազմակերպությունը զրկվեց ակտիվներից և դադարեցրեց իր գործունեությունը: Դիմողները գանգատ ներկայացրեցին հանձնաժողովին առ այն, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածին հակասող արգելքով, ի թիվս այլոց, խախտվել է տեղեկություններ տարածելու կամ ստանալու իրավունքը: Ութ կողմ և հինգ դեմ ձայներով հանձնաժողովն արձանագրեց դիմող կազմակերպությունների և նրանց խորհրդատուների, իսկ յոթ կողմ և վեց դեմ ձայներով՝ նաև կին դիմողների իրավունքների խախտում:

Արդարադատության եվրոպական դատարանն իր վարույթում գտնվող նույն գործով վճռեց, որ տվյալ երկրի օրենքների համաձայն՝ բժշկական միջամտությամբ հղիության ընդհատումը դիտվում է որպես ծառայություն՝ Հռոմի համաձայնագրի 60-րդ հոդվածի իմաստով: Այնուհանդերձ, Եվրոպական համայնքի այլ անդամ պետություններում հղիության արհեստական ընդհատման միջոցների մասին Իռլանդիայի ուսանողների միավորումների կողմից տրամադրվող տեղեկությունները չափազանց հեռու էին բժշկական միջամտությամբ հղիությունն իրականում ընդհատելուց և հիմքեր չէին տալիս համարելու, որ նման տեղեկությունների տարածման վրա դրված դատական արգելքները հակասում են Հռոմի համաձայնագրին *(«Հանուն չծնված երեխաների պաշտպանության» միությունը (Իռլանդիա) ընդդեմ Ստեֆեն Գրոգանի»* գործ (*Society for the Protection of Unborn Children (Ireland) Ltd v Stephen Grogan* [1991] ECR I-4685): Իռլանդիայի դատարանները վճիռ կայացրեցին նաև *«Գլխավոր դատախազն ընդդեմ X-ի»* (*A-G v X* [1992] 1 IR 1) տխրահռչակ գործով, որի շրջանակներում գլխավոր դատախազը պահանջում էր դատական արգելք դնել և թույլ չտալ տասնչորս տարեկան աղջկան հղիության արհեստական ընդհատման նպատակով մեկնել Իռլանդիայից, ընդ որում՝ աղջիկը պնդում էր, որ ինքը բռնաբարության զոհ էր դարձել: Գերագույն դատարանը վճռեց, որ Իռլանդիայի սահմանադրության 40-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հղիության ընդհատումն օրինական է, երբ հղիությունը պահպանելու դեպքում մոր կյանքին լուրջ վտանգ է սպառնում: Տվյալ հանգամանքներում աղջիկը ինքնասպանություն գործելու մտադրություն հայտնեց, և գերագույն դատարանն անվավեր ճանաչեց նրա վրա դրված երկրից մեկնելու դատական արգելքը: Իրավական համակարգում այս զարգացումների արդյունքում Իռլանդիայի կառավարությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում հայտարարեց. «…այս պարագայում հարկ է համարել, որ Իռլանդիայի օրենսդրության համաձայն հղիության արհեստական ընդհատման իրավունք ունեցող անձինք պետք է նաև իրավունք ունենան համապատասխան տեղեկություններ ստանալ ինչպես Իռլանդիայում, այնպես էլ արտասահմանում նման ծառայությունների վերաբերյալ»:

…

10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

53. Դիմողները պնդում էին, որ հղիության արհեստական ընդհատման նպատակով արտասահման մեկնող հղի կանանց օգնելու հարցում իրենց վրա դրված գերագույն դատարանի արգելքով խախտվում են դիմող կազմակերպությունների և երկու խորհրդատուի՝ տեղեկություններ հաղորդելու իրավունքը, ինչպես նաև տկն Իքս-ի և տկն Գերաղթիի՝ տեղեկություններ ստանալու իրավունքը: Դիմողներն իրենց գանգատը սահմանափակել են արգելող որոշման այն մասով, որը վերաբերում էր հղի կանանց տեղեկություններ հաղորդելու հարցին, այլ ոչ թե մեկնելու կամ հիվանդանոց ուղեգրելու հետ կապված հարցերի կարգավորմանը (տե՛ս վերոնշյալ 20-րդ կետը):

Ա. ՏԵ՞ՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ ԴԻՄՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ

55. Դատարանը նշում է, որ պատասխանող պետությունն ընդունում է այն իրողությունը, որ արգելող որոշմամբ խախտվել է դիմող կազմակերպությունների՝ տեղեկություններ հաղորդելու իրավունքը: Հաշվի առնելով արգելող որոշման շրջանակը, որով դիմող կազմակերպությունների «աշխատակիցներին կամ գործակալներին» նույնպես արգելվում է օգնել «հղի կանանց»՝ կասկածից վեր է, որ տեղի է ունեցել միջամտություն դիմող խորհրդատուների՝ տեղեկություններ տարածելու, ինչպես նաև տկն Իքս-ի ու տկն Գերաղթիի՝ հղիության ժամանակ տեղեկություններ ստանալու իրավունքներին:

Բ. ԱՐԴՅՈՔ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ «ՆԱԽԱՏԵՍՎԱ՞Ծ ԷՐ ՕՐԵՆՔՈՎ»

60. Հաշվի առնելով Իռլանդիայի օրենսդրությամբ ամրագրված չծնված երեխաների կյանքի իրավունքի պաշտպանության ընդհանուր բարձր աստիճանը և սահմանադրական իրավունքները երաշխավորելու գործում դատավորների կողմից իրենց ստանձնած դերի մեկնաբանությունը՝ պատշաճ իրավաբանական խորհրդատվությամբ պետք է ողջամտորեն կանխատեսվեր դիմողների դեմ գործ հարուցելու հավանականությունը (տե՛ս *«Սանդի թայմզ» թերթն ընդդեմ Մեծ Բրիտանիայի»* (*Sunday Times v UK*) գործով 1979 թ. ապրիլի 26-ի վճիռը, շարք A, թիվ 30, էջ 31, պարբ. 49)։ Այս եզրակացությունը հաստատվում է «Դաբլին վել վումեն» կազմակերպությանը մի իրավաբանի տրված խորհրդով, ըստ որի՝ Իռլանդիայի սահմանադրության 40-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետով կարելի էր արգելել կազմակերպության խորհրդատվական գործունեությունը:

Հետևաբար, դիմողների իրավունքների սահմանափակումը «նախատեսված էր օրենքով»:

Գ. ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆ ՈՒՂՂՎԱ՞Ծ ԷՐ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՕՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ

61. Պատասխանող պետությունը հայտարարեց, որ Իռլանդիայի օրենսդրության նշված դրույթները միտված են այլ անձանց, տվյալ դեպքում՝ չծնված երեխաների իրավունքների և բարոյականության պաշտպանությանը, իսկ համապատասխան դեպքերում՝ նաև հանցագործությունների կանխմանը:

62. Դիմողները չհամաձայնեցին նշված կարծիքին՝ ի թիվս այլոց պնդելով, որ հաշվի առնելով 10-րդ հոդվածի 1-ին կետում և ամբողջ կոնվենցիայում «յուրաքանչյուր ոք» եզրույթի գործածումը՝ անտրամաբանական կլիներ 10-րդ հոդվածի 2-րդ կետում նշված «այլ անձանց իրավունքներ» ձևակերպման մեկնաբանության մեջ ներառել չծնված երեխաների իրավունքները:

63. Դատարանը չի կարող ընդունել այն իրողությունը, որ խնդրո առարկա սահմանափակումները միտված էին հանցագործությունները կանխելու նպատակին, քանի որ, ինչպես արդեն նշվել է, տվյալ տեղեկությունների տրամադրումը և օրենքի շրջանակներից դուրս հղիության արհեստական ընդհատումը քրեական հանցանք չեն հանդիսանում: Այնուհանդերձ, ակնհայտ է, որ Իռլանդիայի օրենսդրությամբ սահմանված չծնված երեխաների կյանքի իրավունքի պաշտպանությունը հիմնված է այդ իրավունքի բնույթին վերաբերող արմատական բարոյական արժեքների վրա, որոնք արտահայտվել են 1983 թ. հանրաքվեում հղիության արհեստական ընդհատման նկատմամբ իռլանդացի ժողովրդի մեծամասնության դրսևորած դիրքորոշմամբ: Ուստի իրավունքների սահմանափակումն ուղղված էր բարոյականության պաշտպանության օրինական նպատակին, որի հայեցակետերից մեկն Իռլանդիայում համարվում է չծնված երեխայի կյանքի իրավունքի պաշտպանությունը: Այս եզրակացության հիման վրա կարիք չկա որոշելու, թե արդյոք 10-րդ հոդվածի 2-րդ կետում գործածված «այլ անձինք» եզրույթը նշո՞ւմ է չծնված երեխաներին:

Դ. ԱՐԴՅՈՔ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆ ԱՆՀՐԱԺԵ՞Շ ԷՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

64. Պատասխանող պետությունը հայտարարեց, որ սահմանափակման «անհրաժեշտությունը» գնահատելիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մոտեցումը պետք է հիմնված լինի այն փաստի վրա, որ Իռլանդիայում չծնված երեխայի իրավունքների պաշտպանությունը կարող է բխել կոնվենցիայի 2-րդ, 17-րդ և 60-րդ հոդվածներից: Պետությունը հավելեց, որ չծնված երեխայի իրավունքների պաշտպանության հարցում նպատակահարմար չէ կիրառել «համաչափության» սկզբունքը: Դատարանը հերթականությամբ քննում է այս հարցերը:

1. Կոնվենցիայի 2-րդ հոդված

65. Պետությունը պնդում էր, որ արգելող որոշումն անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում՝ չծնված երեխայի կյանքի իրավունքը պաշտպանելու համար, իսկ կոնվենցիայի 10-րդ հոդվածը պետք է մեկնաբանել ի թիվս այլոց 2-րդ հոդվածի համատեքստում, որը, պետության պնդմամբ, նույնպես պաշտպանում էր չծնված երեխայի կյանքի իրավունքը: Իռլանդացիների մեծամասնությունը վճռականորեն հաստատել է, որ հղիության արհեստական ընդհատումը սխալ է բարոյականության տեսակետից, և դատարանը սովորաբար չի կարող այլ տեսակետ պարտադրել:

66. Նախ և առաջ՝ դատարանը նշում է, որ տվյալ դեպքում այն կոչված չէ որոշելու, թե արդյոք կոնվենցիայով ամրագրված է հղիության արհեստական ընդհատման իրավունքը, կամ արդյոք կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված կյանքի իրավունքը վերաբերում է սաղմին, թե ոչ: Դիմողները չեն պնդել, որ կոնվենցիայով ամրագրված է հղիության արհեստական ընդհատման իրավունքը, նրանց գանգատը վերաբերում է միայն արգելող որոշման այն մասին, որով սահմանափակվում է նրանց՝ արտասահմանում հղիության արհեստական ընդհատման մասին տեղեկություններ հաղորդելու և ստանալու իրավունքը:

Այսպիսով, հարկ է քննել միայն այն հարցը, թե արդյոք դրված դատական արգելքի համապատասխան մասով հաստատված՝ տեղեկություններ հաղորդելու և ստանալու ազատության սահմանափակումն անհրաժե՞շտ էր ժողովրդավարական հասարակությունում բարոյականությունը պաշտպանելու վերոշարադրյալ օրինական նպատակով (տե՛ս պարբ. 63)։ Այս մոտեցումից հետևում է, որ տվյալ դեպքում կոնվենցիայի 2-րդ հոդվածի վրա հիմնված պետության փաստարկը քննելու կարիք չկա: Մյուս կողմից՝ ստորև դիտարկվում են 17-րդ և 60-րդ հոդվածների վրա հիմնված փաստարկները (տե՛ս պարբ. 78 և 79):

2. Համաչափություն

67. Պետությունն ընդգծել է գերագույն դատարանի որոշման սահմանափակ բնույթը, որով արգելք է դրվում միայն որոշակի տեղեկատվություն հաղորդելու վրա: Հղիության արհեստական ընդհատման հարցի քննարկումն Իռլանդիայում կամ հղիությունն ընդհատելու նպատակով արտասահման գնալու կնոջ իրավունքն առհասարակ չի սահմանափակվել: Բացի այդ, պետությունը պնդում էր, որ սահմանափակման համաչափության հարցում կոնվենցիայի սկզբունքի կիրառումը նպատակահարմար չէ, եթե խոսքը չծնված երեխային կյանքի ընդհատման մասին է: Ի տարբերություն այլ իրավունքների, կյանքի իրավունքը չի կարելի չափել աստիճանաշնված սանդղակով: Այն կա՛մ հարգում են, կա՛մ՝ անտեսում: Հետևաբար, հակադիր կողմերի իրավունքներն ու շահերը կշռադատելու ավանդական մոտեցումը նպատակահարմար չէ այն դեպքում, երբ խոսքը չծնված երեխային կյանքից զրկելու մասին է: Քանի որ կյանքը բոլոր այլ իրավունքներին նախորդող և դրանց իրացումը պայմանավորող հիմնարար արժեք է, ապա կյանքի իրավունքը պաշտպանելու համար կարելի է խախտել այլ իրավունքները, օրինակ՝ ազատ արտահայտվելու իրավունքը, ինչը կարող է անընդունելի լինել պակաս կարևոր իրավունքները պաշտպանելու դեպքում:

Պետությունը շեշտում էր նաև այն իրողությունը, որ արգելող որոշումը կայացնելիս գերագույն դատարանը պարզապես պահպանել է Իռլանդիայի սահմանադրության 40-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետի տրամաբանությունը: Կոնվենցիայի կատարումն ապահովող հաստատությունները կոչված չեն վերանայելու Իռլանդիայի դատարանների այն որոշումը, որով նշված դիմողներիկողմից տեղեկությունների տարածումը նպաստում է չծնված երեխաներին կյանքից զրկելուն:

68. Դատարանը չի կարող համաձայնել, որ բարոյականության պաշտպանության հարցում պետությանը վերապահված հայեցողությունը բացարձակ է և վերանայման ենթակա չէ (նման փաստարկը տե՛ս *mutatis mutandis «Նորիսն ընդդեմ Իռլանդիայի»* (*Norris v Ireland*) գործով 1988 թ. հոկտեմբերի 26-ին կայացրած վճռում, շարք A, թիվ 142, էջ 20, պարբ. 45):

Դատարանն ընդունում է, որ ազգային մարմիններին հայեցողության լայն սահման է վերապահվում բարոյականության պաշտպանության հետ կապված հարցերում, հատկապես տվյալ ոլորտում, որն առնչվում է մարդկային կյանքի բնույթի մասին համոզմունքներին:

Սակայն սեփական հայեցողության այս լիազորությունը բացարձակ բնույթ չի կրում: Այս ոլորտում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես կոչված է վերահսկելու, որ սահմանափակումը չհակասի կոնվենցիային:

69. Ինչ վերաբերում է համաչափության սկզբունքի կիրառմանը, ապա պատասխանող պետության փաստարկից բխում է այն տրամաբանական հետևությունը, որ չծնված երեխայի կյանքի իրավունքը կամ համապատասխան սահմանադրական երաշխիքը պաշտպանելու համար ազգային մարմինների կողմից ձեռնարկված միջոցներն ինքնաբերաբար հիմնավորված են կոնվենցիայով, նույնիսկ եթե հիշատակվում է պակաս կարևոր իրավունքի խախտում: Ազգային մարմիններն սկզբունքորեն ազատ են նման միջոցներ ձեռնարկելու հարցում, եթե նրանք անհրաժեշտ են համարում հարգել կանոնի կամ օրենքի գերակայությունը կամ կենսագործել սահմանադրական իրավունքները: Այնուհանդերձ, ազգային մարմինների գործողությունները պետք է չհակասեն կոնվենցիայով ստանձնած պարտավորություններին և վերահսկվեն կոնվենցիայի կատարումն ապահովող հաստատությունների կողմից: Տվյալ հարցում պետության միջնորդությունն ընդունելը հավասարազոր կլինի կոնվենցիայի 19-րդ հոդվածով դատարանի՝ «Բարձր պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու» առաքելությունից հրաժարվելուն:

70. Հետևաբար, դատարանը պետք է քննի «անհրաժեշտության» հարցը իր նախադեպային իրավունքի սկզբունքների հիման վրա (ի թիվս այլոց՝ տե՛ս *«Օբզերվեր» և «Գարդիան» թերթերն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Observer* and *Guardian v UK*) գործով 1991 թ. նոյեմբերի 26-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 216, էջ 29–30, պարբ. 59): Դատարանը պետք է որոշի, թե արդյոք խնդրո առարկա միջոցները թելադրվա՞ծ էին հրատապ սոցիալական անհրաժեշտությամբ, և հատկապես՝ արդյոք բողոքարկված սահմանափակումը «համաչա՞փ էր հետապնդվող օրինական նպատակին», թե՞ ոչ (տե՛ս նույն տեղում):

72. Թեև պետության կարծիքով համապատասխան սահմանափակումը վերաբերում է միայն տեղեկությունների տրամադրմանը, սակայն հարկ է հիշել, որ Իռլանդիայի օրենքով հղիության արհեստական ընդհատման նպատակով հղի կնոջ արտասահման մեկնելը քրեական հանցանք չի համարվում: Բացի այդ, արգելող որոշմամբ սահմանափակվում է այլ մասնակից երկրներում օրինական համարվող ծառայությունների վերաբերյալ տեղեկություններ ստանալու և հաղորդելու իրավունքը, ինչը կարող է մեծ նշանակություն ունենալ կնոջ առողջության և բարեկեցության համար: Անկախ բարոյական նկատառումներից՝ որոշակի գործունեության մասին տեղեկատվություն հաղորդելու վրա դրված սահմանափակումները, որոնց վրա նախկինում և ներկայումս ազգային մարմիններն աչք են փակել, պահանջում են մանրազնին ուսումնասիրություն կոնվենցիայի կատարումն ապահովող հաստատությունների կողմից ժողովրդավարական հասարակության սկզբունքներին համապատասխանությունը հաստատելու տեսակետից:

73. Դատարանին նախ և առաջ զարմացնում է Իռլանդիայի գերագույն դատարանի որոշման բացարձակ բնույթը, որով «առմիշտ» արգելվում է հղիության արհեստական ընդհատման մասին տեղեկություններ հաղորդել հղի կանանց՝ նրանց տարիքից, առողջական վիճակից կամ հղիությունն ընդհատելու համար խորհրդատվություն հայցելու դրդապատճառներից անկախ: Այդ ժամանակից ի վեր արգելքի չափազանց ընդհանրական բնույթը երևան է եկել *«Գլխավոր դատախազն ընդդեմ X-ի» (A-G v X)* գործում և բանավոր դատալսումներին պատասխանող պետության կողմից այն իրողության ընդունմամբ, որ արգելող որոշումն այլևս չէր վերաբերում այն կանանց, ովքեր այդ գործով գերագույն դատարանի կայացրած վճռում նշված

հանգամանքներում իրավունք չունեին Իռլանդիայում կամ արտասահմանում դիմել հղիության արհեստական ընդհատման:

74. Նշված պատճառն արդեն բավարար է, որպեսզի սահմանափակումը չափազանցված ու անպատշաճ թվա: Ավելին, այս գնահատականն այլ գործոններով է հաստատվում:

75. Նախ և առաջ՝ հարկ է նշել, որ ընդհանուր գանգատ ներկայացրած դիմողները զբաղվում էին հղի կանանց խորհրդատվությամբ, որի շրջանակներում այդ խորհրդատուները հղիության արհեստական ընդհատումը ո՛չ պաշտպանել են, ո՛չ էլ խրախուսել, այլ փոխարենը միայն բացատրել են հնարավոր տարբերակները: Կինն էր որոշում, թե արդյոք պե՞տք էր առաջնորդվել նման տեղեկություններով, թե՞ ոչ: Կասկած չկա, որ խորհրդատվություն ստանալուց հետո որոշ կանայք հրաժարվել են հղիությունն ընդհատելու մտադրությունից: Հետևաբար, տեղեկություններ տրամադրելու և չծնված երեխային կյանքից զրկելու միջև առկա կապն այնքան էլ հստակ չէ, որքան պնդում է պետությունը: Նույնիսկ 1983 թ. սահմանադրության ութերորդ ուղղումից հետո պետական մարմինները փաստորեն հանդուրժել են նման խորհրդատվությունը նախքան տվյալ գործով գերագույն դատարանի կողմից վճռի կայացումը: Եվ ավելին, արտասահմանում հղիության արհեստական ընդհատման մասին դիմողների կողմից տրամադրված տեղեկությունները զանգվածային տարածում չեն ստացել:

76. Պատասխանող պետությունը հիմնավոր չի վիճարկել այն իրողությունը, որ արտասահմանում հղիության արհեստական ընդհատման մասին տեղեկություններն Իռլանդիայում կարելի է ստանալ այլ աղբյուրներից, ինչպես, օրինակ՝ ամսագրերից, հեռախոսագրքերից կամ Մեծ Բրիտանիայի այլ մասերում բնակվող ծանոթներից: Հետևաբար, այս արգելքն ուղղված էր այնպիսի տեղեկությունների տարածման սահմանափակմանը, որոնք արդեն մատչելի էին այլ աղբյուրներից, ընդ որում, չէին վերահսկվում որակավորված մասնագետների կողմից, ուստիև ավելի քիչ էին պաշտպանում կնոջ առողջությունը: Բացի այդ, պարզվում է, որ արգելքը գրեթե չի նպաստում չծնված երեխայի կյանքի իրավունքի պաշտպանությանը, քանզի այն բազմաթիվ իռլանդացի կանանց չի զրկում Մեծ Բրիտանիայում հղիության արհեստական ընդհատման դիմելու հնարավորությունից:

77. Ավելին, պատասխանող պետության կողմից չվիճարկվող փաստերը վկայում են, որ արգելող որոշմամբ վտանգվում է այն կանանց առողջությունը, ովքեր պատշաճ խորհրդատվության պակասի հետևանքով հղիության ավելի ուշ շրջանում փորձում են հղիության արհեստական ընդհատման դիմել, և հղիության արհեստական ընդհատումից հետո բժշկական հսկողությունից չեն օգտվում: Ավելին, արգելող որոշումը կարող է ավելի անբարենպաստ հետևանքներ ունենալ անապահով կանանց համար, ովքեր բավականին կրթված չեն, որպեսզի օգտվեն տեղեկատվության այլընտրանքային աղբյուրներից: Սահմանափակման համաչափությունը գնահատելու համար անշուշտ հարկավոր է հաշվի առնել բոլոր այս հիմնավոր գործոնները:

3. 17-րդ և 60-րդ հոդվածներ

78. Հիշատակելով 17-րդ և 60-րդ հոդվածները՝ պատասխանող պետությունը հայտնել է, որ 10-րդ հոդվածի մեկնաբանությամբ չպետք է սահմանափակվի, վերացվի կամ խախտվի Իռլանդիայի օրենսդրության հատուկ դրույթներով պաշտպանված չծնված երեխայի կյանքի իրավունքը:

79. Կոնվենցիայի շրջանակներում հարցականի տակ չառնելով Իռլանդիայի օրենսդրությամբ սահմանված չծնված երեխայի կյանքի իրավունքի պաշտպանության կարգը՝ դատարանը հիշեցրել է, որ արգելող որոշումը չի խանգարել իռլանդացի կանանց հղիության արհեստական ընդհատման դիմել արտասահմանում, և սահմանափակված տեղեկությունները կարելի էր ստանալ այլ աղբյուրներից (տե՛ս վերոնշյալ 76-րդ կետը): Համապատասխանաբար, իռլանդացի կանանց՝ արտասահմանում հղիության արհեստական ընդհատման դիմելու դեպքերի շարունակականության ամրապնդմանը հավանաբար ավելի է նպաստում ոչ թե 10-րդ հոդվածի մեկնաբանությունը, այլ օրենքի կատարման հարցում Իռլանդիայի դիրքորոշումը:

4. Եզրակացություն

80. Վերոնշյալ հանգամանքներից ելնելով՝ դատարանը եզրակացնում է, որ դիմողների՝ տեղեկություններ ստանալու կամ հաղորդելու ազատության վրա դրված սահմանափակումը համաչափ չէր հետապնդվող նպատակներին: Հետևաբար, խախտվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածը:

…

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

…

Տասնհինգ կողմ և ութ դեմ ձայներով արձանագրեց 10-րդ հոդվածի խախտում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Լիակազմ դատարանում մեծամասնություն են կազմել նախագահող դատավոր Ռիսդալը և դատավորներ՝ Տոիր Վիլջաուլմսոնը, Գյոլչյուքլուն, Մակդոնալդը, Բերնհարդտը, Շպիլմանը, Դե Մեյերը, Վալտիկոսը, Մարտենսը, Փալմը, Ֆոյգելը, Փեքանենը, Լուազուն, Մորինիյան և Ֆրիլենդը: Դատավոր Կրեմոնան որպես իր չհամընկնող կարծիքի հիմքում ընկած փաստարկ ընդգծել է Իռլանդիայի հանրային քաղաքականությունում առանցքային դերակատարում ունեցող չծնված երեխայի կյանքի իրավունքի պաշտպանությունը, որը հաստատել է սահմանադրության 40-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետի ընդունմանը նախորդող սահմանադրական հանրաքվեին մասնակցած ընտրազանգվածը: Նման կարծիք է արտահայտել նաև դատավոր Մաթշերը: Դատավորներ Փեթիթին, Ռուսոն, Լոպես Ռոշան և Բիջին ներկայացրել են հետևյալ համատեղ կարծիքը.

Հավատացած ենք, որ սահմանափակումները հիմնավորված են և ամեն դեպքում չեն անցնում թույլատրելի սահմանները: Դա բոլոր չափանիշներով ևվազագույն միջամտություն էր տեղեկություններ հաղորդելու և ստանալու հայեցակետից ազատ արտահայտվելու իրավունքին, ինչը միտված էր Իռլանդիայի իրավական կարգի սկզբունքների համաձայն այն գերագույն արժեքների պահպանմանը, որոնցից է չծնված երեխայի կյանքի իրավունքը, և ենթակա չէ քննադատության այլ իրավակարգերում կիրառվող սկզբունքների հիման վրա:

Դատավոր Դե Մեյերը համամիտ է մեծամասնության որոշմանը, սակայն մեկ այլ հիմնավորմամբ նա չի կարծում, որ նախկին սահմանափակումները, օրինակ՝ գերագույն դատարանի արգելքը, թույլատրելի են 10-րդ հոդվածով (տե՛ս վերոնշյալ *«Օբզերվեր» և «Գարդիան» թերթերի* (*The Observer and Guardian*) գործով նրա չհամընկնող կարծիքը): Դատավոր Բական արգելող որոշումը համաչափ արձագանք է համարել՝ հաշվի առնելով Իռլանդիայի օրենսդրությամբ ամրագրված չծնված երեխաների սահմանադրական իրավունքները: Արգելող որոշում կայացրած գերագույն դատարանի անդամ հանդիսացող դատավոր Ուոլշի փոխարեն տվյալ դեպքում նշանակված իռլանդացի դատավոր Բլեյնին համարում է, որ Իռլանդիայի սահմանադրության 40-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետը կարելի էր պաշտպանել միմիայն արգելող որոշման միջոցով:

2 Դատարանը պարզաբանեց, որ նա մտադիր չէր կարծիք հայտնել այն վիճահարույց հարցի շուրջ, թե արդյոք վերոնշյալ վճռով կոնվենցիան նախատեսո՞ւմ է հղիության արհեստական ընդհատման իրավունք, թեև այդ հարցին մեծ դեր էր հատկացվում Իռլանդիայի սահմանադրական դրույթներում:

3 Վերոնշյալ որոշումից հետո Իռլանդիայի կառավարությունն առաջարկեց երեք սահմանադրական ուղղում ընդունել: Հանրաքվեին մասնակցած ընտրողների վաթսուն տոկոսը հավանություն տվեց սահմանադրության 40-րդ հոդվածի այս ուղղմանը, որը սահմանում է հետևյալը. «Այս բաժնի 3-րդ ենթաբաժնի դրույթներով չի սահմանափակվում մեկ այլ երկրի օրենքով թույլատրելի ծառայությունների մասին տեղեկություններ փոխանակելու ազատությունը մի այնպիսի պետությունում, որտեղ գործում են օրենքով ամրագրված պայմանները» (սահմանադրության 40-րդ հոդվածի 3-րդ կետի 5-րդ ենթակետ, տե՛ս C A Gearty (ed) *European Civil Liberties and the ECHR* (1997) Martinus Nijhoff: The Hague): Եվրոպական համայնքում այս գործով դատավճռին տրված գնահատականը տե՛ս B Wilkinson, Abortion, the Irish Constitution and the EEC (1992) *Public Law* 20:

4 *«Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Handyside v UK*) գործում Մեծ Բրիտանիային հաջողվեց բարոյականության պաշտպանության նպատակը մեջբերելով՝ հիմնավորել գրքի հրատարակչի դատապարտումն ու նրա գրքի օրինակների ոչնչացումը (տե՛ս վերը՝ էջ 657):

Այլ անձանց հեղինակությունն ու իրավունքները պաշտպանելու նպատակ

1 Պետությունները սովորաբար վկայակոչում են այս նպատակը, երբ ձգտում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանում պաշտպանել զրպարտության գործերով ազգային դատարանների կայացրած վճիռները, օրինակ՝ *Տոլստոյ Միլոսլավսկու* (*Tolstoy Miloslavsky*) գործով վերոնշյալ վճիռը:

2 Դատարանը վճիռ է կայացրել մի շարք գործերով, երբ լրատվամիջոցները ներպետական դատավորների մասին քննադատություն են հրապարակել և այնուհետև ենթարկվել են օրենքով նախատեսված պատժամիջոցների: *«Բարֆոդն ընդդեմ Դանիայի»* (*Barfod v Denmark*, 1989, 13 EHRR 493, A.149) գործում խոսքն այն մասին է, որ Գրենլանդիայի տեղական ինքնակառավարման մարմինները նոր վիճահարույց հարկ սահմանեցին, որը շատ մարդկանց մոտ մեծ դժգոհություն առաջացրեց: Գրենլանդիայի վերին դատարանը, որը բաղկացած էր մեկ մասնագետ դատավորից և իրավաբանական կրթություն չունեցող երկու դատավորից (երկուսն էլ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներ էին), օրինական համարեց այդ հարկը սահմանելու մասին որոշումը: Այնուհետև դիմողը, որը մասնագիտությամբ լրագրող չէր, մի ամսագրի համար քննադատական հոդված գրեց՝ պնդելով, որ իրավաբանական կրթություն չունեցող դատավորները չակերտավոր կատարել են իրենց պարտքը: Մասնագետ դատավորի կարծիքով՝ այս դիտողությունը կարող է հանրության աչքում խարխլել իրավաբանական կրթություն չունեցող դատավորների հեղինակությունը և իրավական համակարգի նկատմամբ վստահությունը: Ուստի նա պահանջեց քրեական գործ հարուցել: Ավելի ուշ դիմողին մեղադրանք ներկայացվեց անձին զրպարտելու համար: Շրջանային դատարանը մեղավոր ճանաչեց նրան և տուգանեց 2000 դանիական կրոն: Անդրադառնալով այս գործով ներկայացված գանգատին՝ Դանիայի գերագույն դատարանը համաձայնեց դիմողի հետ, որ իրավաբանական կրթություն չունեցող երկու դատավորներն իրենց աշխատանքի բերումով պետք է այս գործի քննությանը մասնակցելուց զերծ մնային, սակայն դատարանը պաշտպանեց դիմողի դատապարտումը, քանի որ վերջինս դատավորների հասցեին առանց որևէ ապացույցի ներկայացրել է լուրջ մեղադրանքներ: Տասնչորս կողմ և մեկ դեմ ձայներով հանձնաժողովն արձանագրեց 10-րդ հոդվածի խախտում: Դատարանում դիմողն ընդունեց պետության այն փաստարկը, որ այս դատապարտումը միտված էր այլ անձանց՝ իրավաբանական կրթություն չունեցող դատավորների, իսկ անուղղակիորեն՝ նաև արդարադատության հեղինակության պաշտպանությանը: Դատարանի կայացրած վճռի կիզակետում ընկած էր այն հարցը, թե արդյոք դիմողի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումն անհրաժե՞շտ էր ժողովրդավարական հասարակությունում, թե՞ ոչ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշեց, որ Գրենլանդիայի վերին դատարանը հաստատել էր դիմողի՝ վերոնշյալ հարկի գործով որոշում կայացրած դատարանի կազմը քննադատելու իրավունքը: Այնուհանդերձ,

> անվիճարկելի է մնում գերագույն դատարանի որոշումը, որի համաձայն՝ հաշտարար դատավորներին ներկայացրած մեղադրանքները չեն ապացուցվել: Հետևաբար, պետք է համարել, որ դիմողն իր ներկայացրած մեղադրանքները հիմնավորել էր այն պարզ փաստով, որ հաշտարար դատավորներն աշխատում էին տեղական ինքնակառավարման մարմիններում: Դրանով անշուշտ չէր ապացուցվում դատավորների կողմնակալությունը, և տրամաբանական է, որ դիմողը տեղյակ էր այդ մասին:
>
> Հետևաբար, իրավաբանական կրթություն չունեցող երկու դատավորների հեղինակությունը պաշտպանելու հարցում պետության օրինական շահագրգռությունը չէր հակասում գերագույն դատարանի ենթակառուցվածքների անկողմնակալությանը նվիրված ազատ հասարակական բանավեճին մասնակցելու դիմողի շահերին (պարբ. 33–34):

Այդ իսկ պատճառով դատավորների մեծամասնությունը, վեց կողմ և մեկ դեմ ձայներով, եզրակացրեց, որ դիմողի դատապարտմամբ 10-րդ հոդվածը չի խախտվել:

«Փրագերը և Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի» (*Prager and Oberschlick v Austria*, 1995, 21 EHRR 1, A.313) գործով առաջին դիմողը լրագրող էր, իսկ երկրորդը՝ «Ֆորում» ավստրիական ամսագրի հրատարակիչ (նույն անձանց կողմից ներկայացված այլ դիմումները տե՛ս նախորդ հատվածներում): 1987 թ. ամսագրում հրատարակվեց Փրագերի գրած 13 էջանոց մի հոդված՝ «Զգուշացե՛ք դաժան դատավորներից» խորագրով: Հիմնական եզրահանգումների ամփոփումից հետո հոդվածում մանրամասն ներկայացվել են Վիեննայի

շրջանային քրեական դատարանի ինը անդամների մոտեցումները: Հոդվածի հատվածներում զետեղվել են հետևյալ հայտարարությունները. «Սկզբից ևեթ նրանք ցանկացած մեղադրյալին վերաբերվում են այնպես, կարծես նա արդեն դատապարտվել է», «Ավստրիայի քրեական դատարանի մի քանի դատավոր ընդունակ է ամեն ինչի», «Ոչինչ համեմատելի չէր ոմն Զ դատավորի գոռոզ ահաբեկման հետ», «Զ դատավորը՝ կատաղության տիպար»: Զ դատավորը զրպարտության համար դատի տվեց դիմողներին: Էյզենշտադթի շրջանային դատարանը մեղավոր ճանաչեց Փրագերին և նրան տուգանեց, որը պետք է վճարվեր 120 օրվա ընթացքում՝ օրական 30 ավստրիական շիլինգ: Բացի այդ, Օբերշլիքին կարգադրեցին 30000 ավստրիական շիլինգ վճարել Զ դատավորին հասցրած վնասը փոխհատուցելու համար, իսկ տպաքանակի մնացած մասն առգրավվեց: Վիեննայի վերաքննիչ դատարանը պաշտպանեց վճիռը, սակայն վնասների փոխհատուցումը կրճատեց մինչև 20000 ավստրիական շիլինգ: Հանձնաժողովը, տասնհինգ կողմ և տասներկու դեմ ձայներով, մերժեց 10-րդ հոդվածի խախտման մասին դիմողի պնդումը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդունեց, որ դիմողի իրավունքներին միջամտությունը միտված էր Վիեննայի դատավորների և արդարադատության հեղինակության պաշտպանությանը: Վերահաստատելով այն ընդունված կարծիքը, որ լրատվամիջոցներին վերապահված է հանրությանը հուզող հարցերի մասին տեղեկություններ հաղորդելու դերը՝ դատարանը վճռեց հետևյալը.

Հանրությանը հուզող հարցերի թվին անկասկած դասվում են ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնարար մաս կազմող արդարադատության համակարգի աշխատանքի հետ կապված հարցերը: Մամուլն այնպիսի լրատվամիջոցներից է, որոնց շնորհիվ քաղաքական և հասարակական գործիչները կարող են համոզվել, որ դատավորներն իրենց կարևոր պարտավորությունները կատարում են իրենց վստահված առաքելության հիմքում ընկած նպատակին համապատասխան:

Այնուհանդերձ, հարկ է ուշադրություն դարձնել հասարակական կյանքում արդարադատության համակարգի ունեցած հատուկ դերակատարմանը: Որպես արդարադատության՝ օրենքի գերակայությամբ կառավարվող պետության հիմնարար արժեքի երաշխավորներ՝ այդ համակարգի ներկայացուցիչները պետք է վայելեն հանրության վստահությունն իրենց պարտավորությունները հաջողությամբ կատարելու համար: Ուստի թերևս անհրաժեշտ է այդ վստահությունը պաշտպանել կործանարար ոտնձգությունից, որն ըստ էության անհիմն է, հատկապես՝ հաշվի առնելով այն փաստը, որ քննաղատության ենթարկված դատավորները պետք է զերծ մնան իրենց հասցեին հնչեցրած քննադատությանն արձագանքելուց (պարբ. 34):

Նույնիսկ ընդունելով այն իրողությունը, որ լրագրողների խոսքի ազատությամբ պաշտպանվում է նաև որոշակի չափազանցման դիմելու միջոցը, անգամ՝ սադրիչ հայտարարությունները (պարբ. 37)՝ դատարանի աննշան մեծամասնությունը՝ հինգ կողմ և չորս դեմ ձայներով, եզրակացրեց, որ դիմողների ազատ արտահայտվելու իրավունքին միջամտությունները համաչափ արձագանք են հանդիսացել: Այս որոշումը պայմանավորված է մեծամասնության կարծիքով, որի համաձայն՝ դիմողները բավականաչափ փաստացի ապացույցներով չեն հիմնավորել Վիեննայի դատավորների հասցեին ներկայացրած խիստ բազմաբովանդակ մեղադրանքները:

Դատարանը նաև չէր կարծում, որ պրն Փրագերը կարող էր վկայակոչել իր բարեխղճությունը կամ լրագրության էթիկայի կանոնների պահպանումը: Նրա կողմից արված հետազոտությունները կարծես նման լուրջ մեղադրանքների տեղիք չեն տալիս: Այդ կապակցությամբ բավարար է նշել, որ մինչ դատավոր Զ.-ի վարած դատին մասնակցելը դիմողը, իր իսկ խոսքերով, քրեական գործով դատին երբեք ներկա չէր եղել: Բացի այդ, նա որևէ հնարավորություն չէր տվել դատավորին՝ պատասխանելու իր հասցեին հնչած մեղադրանքներին (պարբ. 37):

Չհամընկնող կարծիք արտահայտած չորս դատավորները տրամագծորեն այլ տեսակետ հայտնեցին հեղինակի անցկացրած հետազոտությունների մասին.

…Պրն Փրագերը, որը սկսել է այս հարցով հետաքրքրվել ակադեմիական գրականություն ընթերցելուց հետո, դատարան է այցելել վեց ամիս, որից երեք ու կես ամիսը՝ ամեն օր, և շատ ժամանակ ու ջանք է նվիրաբերել սոցիոլոգների նկարագրած երևույթները տեղում պարզելու համար, և իրականում ցնցված էր իր հայտնաբերած փաստերով (պարբ. 2):

Այսպիսով, դատավորները հասկացան, որ Ավստրիայի դատարանները հաշվի են առել միայն հոդվածի հատուկ առանձին հատվածները, այլ ոչ թե ամբողջ հոդվածի համատեքստը: Չհամընկնող կարծիք արտահայտած դատավորների համաձայն՝ դիմողների դատապարտումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում:

«Դե Հաեսը և Գիյսելսն ընդդեմ Բելգիայի» (*De Haes and Gijsels v Belgium*), (1997) 25 EHRR 1, 1997-I 198) գործով առաջին դիմողը «Հյումո» շաբաթաթերթի լրագրող է, իսկ երկրորդը՝ նույն շաբաթաթերթի հրատարակիչը: 1986 թ. մի քանի ամիսների ընթացքում դիմողները հինգ ծավալուն հոդված տպագրեցին, որտեղ քննադատում էին Անտվերպենի վերաքննիչ դատարանի դատավորների՝ ամուսնալուծության և երեխայի խնամակալության վիճահարույց գործով կայացրած որոշումը: Այդ գործում խոսքը բելգիացի մի նոտարի մասին էր, որին իր երեխաների խնամակալության իրավունք են տվել՝ անկախ նրա նախկին կնոջ և խնամիների այն չապացուցված հայտարարություններից, որ նոտարը երեխաների հետ կոպիտ էր վարվում: Դիմողները պնդում էին, որ դատարանները պատասխանողի նկատմամբ բարյացակամ վերաբերմունք էին ցուցաբերել նրա ազգակցական և քաղաքական կապերի շնորհիվ: Հոդվածներից մեկում նրանք հայտարարում են. «Վերաքննիչ դատարանի երրորդ բաժնի այն դատավորների մեծամասնությունը, որոնք խնամակալության իրավունք են տվել նոտարին, նույնպես կիսում են ծայրահեղ աջերի հայացքները: Դատավոր Ի. Բ.-ի հայրը բարձրաստիճան պաշտոնյա էր ոստիկանությունում և 1948 թ. դատապարտվել է նացիստական վարչակարգի հետ համագործակցելու համար»: Այնուհետև երկու գործընկերների և գլխավոր փաստաբանի հետ միասին, որոնք բոլորն էլ անվանական քննադատության էին ենթարկվել «Հյումո» ամսագրում, այդ դատավորը դատի տվեց դիմողներին՝ պահանջելով վնասների փոխհատուցում շաբաթաթերթում ենթադրյալ զրպարտիչ քննադատական հոդված տպագրելու համար: Բրյուսելի առաջին ատյանի դատարանը բավարարեց նրանց հայցը և դիմողներից յուրաքանչյուրին կարգադրեց վճարել մեկ ֆրանկ ոչ նյութական վնասի խորհրդանշական փոխհատուցում և շաբաթաթերթում ու վեց օրաթերթերում իրենց հաշվին ամբողջությամբ տպագրել դատավճիռը: Բրյուսելի վերաքննիչ և վճռաբեկ դատարանները մերժեցին դիմողների բողոքները: Ապա դիմողները գանգատ ներկայացրեցին հանձնաժողովին, որը վեց կողմ և երեք դեմ ձայներով արձանագրեց կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդունեց այն իրողությունը, որ դիմողների ազատ արտահայտվելու իրավունքին միջամտություններն ուղղված էին նշված դատավորների և գլխավոր փաստաբանի հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու օրինական նպատակին: Ուստի դատարանն իր ուշադրությունը սևեռեց այն հարցի վրա, թե արդյոք զրպարտության գործերով կայացրած վճիռներն անհրաժե՞շտ էին «ժողովրդավարական հասարակությունում», թե՞ ոչ: Բացի այդ, ինչպես նշվել է, դիմողների հոդվածներում «բազմաթիվ մանրամասն տեղեկություններ են հաղորդվում այն հանգամանքների վերաբերյալ, որոնցում կայացվել են պրն Իքս-ի երեխաների խնամակալության մասին որոշումները»: Այդ տեղեկությունները հիմնված էին պրն Իքս-ի դեմ բերված մեղադրական պնդումների մանրազնին ուսումնասիրության և մի քանի փորձագետների եզրակացությունների վրա, ընդ որում՝ ինչպես հայտնել են, այդ փորձագետները դիմողներին խորհուրդ են տվել երեխաների շահերից ելնելով հրապարակել այդ եզրակացությունները (պարբ. 39): Այնուհանդերձ, դատարանը հակված չէր 10-րդ հոդվածի շրջանակներում պաշտպանել դիմողների քննադատական հայտարարությունների մի մասը.

> Ենթադրյալ քաղաքական կողմնորոշման մասին ակնարկներից մեկը, որը վերաբերում էր քննադատության ենթարկված դատավորներից մեկի հոր անցյալին, անընդունելի է: Անընդունելի է, որ որևէ անձ կարող է անարգանքի ենթարկվել իր ընտանիքի անդամներից մեկի հետ կապված պատճառով: Ինքնին այդ ակնարկը կարող էր հիմնավորել պատժամիջոցը (պարբ. 45):

Սակայն անդրադառնալով հայտարարությունների այլ հատվածներին՝ դատարանի մեծամասնությունը, յոթ կողմ և երկու դեմ ձայներով, հայտարարեց հետևյալը.

> Ներկա գործի նախապատմության հիման վրա դիտարկված մեղադրանքները հավասարազոր են այնպիսի կարծիքի, որի իսկությունն ըստ սահմանման ապացուցման ենթակա չէ: Սակայն նման կարծիքը կարող է անհամաչափ լինել, հատկապես որևէ փաստացի հիմքի բացակայության պայմաններում, նույնը չի կարելի ասել տվյալ դեպքի մասին, որն այս առումով տարբերվում է *Փրագերի և Օբերշլիքի* (*Prager and Oberschlick*) գործից:
>
> Թեև պրն Դեհաեսի և պրն Գիյսելսի դիտողությունները անկասկած խիստ քննադատական բնույթ էին կրում, սակայն դրանք համաչափ են հոդվածներում նշված հարցերի հանգեցրած խառնաշփոթին և վրդովմունքին: Ինչ վերաբերում է լրագրողների վիճահարույց և նույնիսկ ագրեսիվ ոճին, որը դատարանը կարծես դատապարտում է, ապա հարկ է հիշել, որ 10-րդ հոդվածով պաշտպանվում է ոչ միայն արտահայտված գաղափարների և տեղեկությունների էությունը, այլև՝ դրանք հաղորդելու ձևը:

Ի վերջո, դատարանը եզրակացրեց, որ հաշվի առնելով գործի հանգամանքների և խնդիրների լրջությունը՝ դիմողների ազատ արտահայտվելու իրավունքին միջամտելու անհրաժեշտությունը չի ապացուցվել, բացառությամբ դատավորներից մեկի հոր անցյալին հնչած ակնարկի մասով (պարբ. 47–49):

Վերոնշյալ վճիռներից պարզ է դառնում, որ դատարանը միայն այն դեպքերում է 10-րդ հոդվածով պաշտպանում լրատվամիջոցներում ներպետական դատավորների քննադատությունը, երբ դրա հեղինակները կարողանում են փաստերով հիմնավորել իրենց մեղադրանքները: Որքան խիստ է քննադատությունը, այնքան մեծ է արտահայտված կարծիքներն ապացուցելու անհրաժեշտությունը: Դատարանում ավելի դյուրին է հիմնավորել դատական համակարգի վրա ազդող ինստիտուցիոնալ գործոնների վերաբերյալ հնչած քննադատական մեկնաբանությունները, քան դատավորների և ընդհանուր սոցիալական կամ քաղաքական բնույթի դատական որոշումների դեմ ուղղված անձնավորված ոտնձգությունները: Այնուհանդերձ, *Փրագերի և Օբերշլիքի* (*Prager and Oberschlick*) գործում դատարանի մեծամասնության մոտեցումը ապացույցի և հետազոտության շատ մեծ բեռ է դնում լրագրողների վրա:

Այն դեպքում, երբ դատավորը նաև քաղաքական գործիչ է, դատարանը հակված է նման անձանց մասին քննադատական սուբյեկտիվ գնահատական տալու հարցում ավելի մեծ ազատություն վերապահել լրատվամիջոցներին: *«Հիրկո ընդդեմ Սլովակիայի»* (*Hirco v Slovakia*), 2004 թ. հուլիսի 20-ի վճիռ) գործով որպես դիմող հանդես է եկել մի շաբաթաթերթի հրատարակիչ: 1994 թ. նա մի քանի հոդված տպագրեց, որտեղ քննադատում էր մի նախարարի և բանաստեղծի քաղաքացիական գործով ներպետական դատարանների կայացրած որոշումները: Ավելի ուշ, *«Ֆելդեկն ընդդեմ Սլովակիայի»* (*Feldek v Slovakia*) 2001 թ. հուլիսի 12-ի վճիռ) գործում դատարանը որոշեց, որ վերոնշյալ դատավարությամբ խախտվել է 10-րդ հոդվածը: Հոդվածներից մեկում ներկայացվում էր բանաստեղծի փաստաբանի հարցազրույցը, որում նա տալիս է այս գործով դատավարությանը մասնակցած գերագույն դատարանի մի դատավորի անունը և հայտնում, որ նա ընտրություններում իր թեկնածությամբ ներկայացնելու էր մի քաղաքական կուսակցություն, որը շահագրգռված էր դատավարության առարկա դարձած հարցով: Փաստաբանն արտահայտեց այն կարծիքը, որ այս գործով դատավորի ընդունած որոշումը պայմանավորված էր վերջինիս քաղաքական կապերով: Այնուհետև դատավորն իր քաղաքացիական ու մասնագիտական պատիվն անարգելու համար դիմողի դեմ ներկայացրեց վնասի փոխհատուցման հայց, որը բավարարվեց: Դատարանը վճռեց, որ. «46... ընդունելի քննադատության սահմանն ավելի լայն է, եթե խոսքը քաղաքական կյանք մուտք գործող դատավորների մասին է»: Հաշվի առնելով այն փաստերը, որ քննադատական հոդվածները նենգամտորեն չեն տպագրվել, և ներպետական դատարաններում ընթացող դատավարությունները վերաբերել են քաղաքական բանավեճի մաս կազմող կարևոր հարցին, դատարանը միաձայն արձանագրեց կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն քաղաքական գործչի կողմից դատավորի պաշտոն զբաղեցնելու հարցի օրինականությունը որոշելու համար տե՛ս վերոնշյալ *«Պաբլա Կյուն ընդդեմ Ֆինլանդիայի»* (*Pabla Ky v Finland*) գործը:

3 Արդարադատության իրականացումը քննադատող փաստաբանների իրավունքները սահմանափակելու և նրանց պատժելու հարցում դատարանը պետություններին հայեցողության ավելի նեղ սահման է վերապահել: *«Նիկուլան ընդդեմ Ֆինլանդիայի»* (*Nikula v Finland*) 2002 թ. մարտի 21-ի վճիռ) գործում դատարանի քննության առարկա էր դարձել մի արտասովոր իրավիճակ, որտեղ դատապաշտպանը դատապարտվել էր դատախազի վարվելակերպի վերաբերյալ արված իր քննադատական հայտարարությունների համար: Դիմողը ներկայացնում էր խարդախության համար մեղադրվող մի գործարարի շահերը: Դատախազը որոշեց ոչ թե մեղադրանք ներկայացնել նույն գործով զբաղվող ամբաստանյալի եղբորը, այլ նրան դատարան կանչել որպես մեղադրող կողմի վկա: Դիմողն առարկեց իր պաշտպանյալի եղբորը որպես վկա ներգրավելու դեմ և դատարանում հատվածներ կարդաց «Դերերի խախտում և ապացույցներ ներկայացնելու ապօրինի եղանակ» խորագրով հուշագրից: Փաստաթղթից մեջբերումներ անելով՝ նա մեղադրեց դատախազին «մեղադրանքը պաշտպանելու նպատակով մեկ այլ ամբաստանյալին վկայի վերածելու ընթացակարգային ռազմավարություն դրսևորելու, իրեն վերապահված հայեցողության սահմանի դիտավորյալ չարաշահման, դատավարության մասնակիցների դերերը նենգափոխելով ի պաշտոնե ստանձնած իր պարտավորությունները խախտելու և իրավական ապահո-

վությունը վտանգելու համար»: Ամբաստանյալի դատապարտումից և դատավարության ավարտից հետո դատախազը մասնավոր մեղադրանք ներկայացրեց դիմողին: Այնուհետև Ֆինլանդիայի վերաքննիչ դատարանը նրան դատապարտեց անփույթ զրպարտանքի համար և տուգանեց 716 եվրո՝ գումարած 505 եվրո որպես դատախազին պատճառված վնասի փոխհատուցում: Դիմողը վճիռը բողոքարկեց գերագույն դատարանում, որն այն թողեց անփոփոխ, սակայն հաշվի առնելով զանցանքի աննշան բնույթը՝ ազատեց դատապարտյալին նշանակված տուգանքից: Դիմողը Ստրասբուրգի դատարան գանգատ ներկայացրեց առ այն, որ զրպարտության դատապարտմամբ խախտվել է որպես դատապաշտպան իր ազատ արտահայտվելու իրավունքը, ինչը հակասում է կոնվենցիայի 10-րդ հոդվածին: Առաջնորդվելով 10-րդ հոդվածի 2-րդ կետով՝ դատարանը որոշեց, որ դիմողի դատապարտումը «նախատեսված է օրենքով» և ուղղված է դատախազի հեղինակությունը և իրավունքները պաշտպանելու օրինական նպատակին: Ուստի վիճահարույց էր այն հարցը, թե արդյոք դիմողի դատապարտումն «անհրաժե՞շտ էր ժողովրդավարական հասարակությունում»: Դատարանը նշել է, որ փաստաբանները որպես հասարակությունը և դատարանները կապող օղակ առանցքային դեր են կատարում արդարադատության իրականացման հարցում, ուստիև պետք է նպաստեն այդ համակարգի հանդեպ հանրության վստահության պահպանմանը:

46. Թեև փաստաբանները նույնպես իրավունք ունեն հրապարակավ մեկնաբանելու արդարադատության իրականացման հետ կապված հարցերը, սակայն նրանց քննադատությունը չպետք է անցնի որոշակի սահմանները: Այդ կապակցությամբ հարկ է հաշվի առնել տարբեր ներգրավված կողմերի շահերն արդար հավասարակշռության բերելու անհրաժեշտությունը, այդ շահերից են՝ դատական որոշումներից բխող հարցերի վերաբերյալ տեղեկություններ ստանալու հանրության իրավունքը, արդարադատության պատշաճ իրականացման պահանջները և իրավաբանի մասնագիտական արժանապատվությունը: Միջամտության անհրաժեշտությունը գնահատելու հարցում ազգային մարմիններին վերապահված է հայեցողության որոշակի սահման, որը, սակայն, ինչպես համապատասխան կանոնների, այնպես էլ դրանց առնչվող որոշումների մասով ենթակա է եվրոպական կառույցների վերահսկմանը: Այնուհանդերձ, տվյալ դեպքում ակնհայտորեն չկան այնպիսի առանձնահատուկ հանգամանքներ, որոնցից են, օրինակ՝ մասնակից պետություններում խնդրո առարկա սկզբունքների կամ բարոյական հասկացությունների բազմազանությունը ճանաչելու անհրաժեշտության վերաբերյալ միօրինակ կանոնների բացակայությունը, ինչի դեպքում հնարավոր կլիներ հիմնավորել ազգային մարմիններին հայեցողության լայն սահմանի վերապահումը (համեմատի՛ր՝ օրինակ, *«Սանդի թայմզ» ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Sunday Times v the United Kingdom*) գործով 1979 թ. ապրիլի 26-ի վճիռ, շարք A, թիվ 30, էջ 35–7, պարբ. 59 և *«Հենդիսայդն ընդդեմ Միացյալ թագավորության»* (*Handyside v the United Kingdom*) գործով 1976 թ. դեկտեմբերի 7-ի վճիռը, շարք A, թիվ 24):

Դատարանը համարում էր, որ թեև դիմողը մի քանի «անպատշաճ» դիտողություն է արել, սակայն դրանք բոլորն էլ ներկայացվել են դատարանում և վերաբերել են դատախազի կողմից դատական գործին տրված ընթացքին: Դատարանի համաձայն՝ «51…ընթացակարգային համատեքստում դատախազը պետք է հանդուրժողական մոտեցում դրսևորեր որպես դատապաշտպան հանդես եկող դիմողի խիստ քննադատության նկատմամբ»: Դատարանը հայտնեց հետևյալ կարծիքը.

55. Ուստի, նույնիսկ մեղմ քրեական պատժամիջոցով դատապաշտպանի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումը միայն բացառիկ դեպքերում կարող է անհրաժեշտ համարվել ժողովրդավարական հասարակություններում:

Արդյունքում՝ դատարանի ճնշող մեծամասնությունը, հինգ կողմ և երկու դեմ ձայներով, եզրակացրեց, որ դիմողի դատապարտումն անհրաժեշտ չէր «ժողովրդավարական հասարակություններում»:

Դատավորներ Քաֆլիշը և Պաստոր Ռիդրուեխոն արտահայտեցին հետևյալ չհամընկնող կարծիքը.

56. Բաց դատական նիստի ժամանակ դիմողը միանշանակ բավականին լուրջ մեղադրանքներ է ներկայացրել դատախազի հասցեին: Այդ մեղադրանքները հավասարազոր են այնպիսի հայտարարությունների, որ դատախազ Թ-ն ոչ միայն սխալներ է թույլ տվել, ինչը վերջին հաշվով հակաօրինական չէ, այլև չարաշահել է իր պաշտոնեական դիրքը և գործել անազնիվ կերպ: Դա անձին ներկայացվող ամենավատ մեղադրանքն է, անկախ այն փաստից, թե նա պաշտոնատար անձ է, թե դատավոր: Այս հանգամանքը նշանակում է ոչ միայն, որ տվյալ դատական պաշտոնյան ի վիճակի չէ կատարելու իր պարտականությունները և հավանաբար չի կարող զբաղեցնել այլ նմանօրինակ պաշտոն, այլև վարկաբեկում է դատական համակարգը: Այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում ձեռնարկված միջոցն ուղղված էր բավական մեծ կարևորություն ներկայացնող շահերի պաշտպանությանը:
Հաշվի առնելով այն փաստերը, որ Ֆինլանդիայի գերագույն դատարանի որոշմամբ դիմողը ազատվեց տուգանք վճարելու պարտականությունից և քրեական գործով չդատապարտվեց՝ դատավորները համարում են, որ նրա դեմ ձեռնարկված միջոցները համաչափ էին և չեն հակասել կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետին:

Չհամընկնող կարծիք արտահայտած դատավորների վճռի համաձայն՝ հարկավոր է սատարել դատարանի կայացրած վճիռը: Չհամընկնող կարծիք արտահայտած դատավորների փոքրամասնությունը տարբերություն չի դնում դատախազների և դատավորների տարբեր պաշտոնների միջև: Ինչպես ճիշտ բացատրել է դատարանը, նշված պաշտոնները տարբեր են, և դատապաշտպանների՝ դատախազին որպես տվյալ համակարգում իրենց ինստիտուցիոնալ հակառակորդների քննադատելու ազատությունը պետք է ավելի մեծ լինի, քան դատավորների պարագայում, որոնք 6-րդ հոդվածի պահանջները բավարարելու համար պետք է անկախ և անկողմնակալ լինեն: Դատապաշտպանների ազատ արտահայտվելու իրավունքը սահմանափակելու համար ազգային մարմիններին հայեցողության լայն սահման վերապահելու հարցում դատարանի մերժումը շատ կարևոր դերակատարում ունի նաև փաստաբանների՝ իրենց վստահորդների շահերն ըստ հարկի ներկայացնելու կարողությունն ապահովելու համար:

4 «Այլ անձանց իրավունքներ» արտահայտությունը ենթադրում է օրենքով սահմանված իրավունքներ, ինչպիսիք են՝ սեփականության և պայմանագրային իրավունքները: *«Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Goodwin v UK,* 1996 22 EHRR 123, 1996-II 483) գործով որպես դիմող հանդես եկող լրագրողն աշխատանքային պրակտիկա էր անցնում «Ճարտարագետ» (անգլ. *The Engineer*) մասնագիտական ամսագրի հրատարակչությունում: Մի քանի ամիս անց լրագրողը մի աղբյուրից «Թեթրա» (անգլ. Tetra) ընկերության ֆինանսական խնդիրների վերաբերյալ տեղեկանալու անանուն առաջարկ ստացավ: Այդ տեղեկությունները ստուգելու և մեկնաբանություններ ստանալու համար Գուդվինը զանգահարեց «Թեթրա» ընկերություն: Ինչպես պարզվեց, տեղեկությունները քաղված էին «Թեթրա» ընկերության գաղտնի բիզնես պլանի նախնական տարբերակից, ուստի հաջորդ օրն Թեթ ընկերությունը միակողմանի (լատ. *ex parte*) միջնորդություն ներկայացրեց գերագույն դատարան՝ դատական արգելք դնել «Ճարտարագետ» ամսագրի խմբագիրների վրա բիզնես պլանից ստացված ցանկացած տեսակի տեղեկություններ տպագրելու հարցում: Գերագույն դատարանն արգելող որոշում ընդունեց, իսկ «Թեթրա» ընկերությունն այդ որոշման մասին տեղեկացրեց բոլոր ազգային թերթերին և համապատասխան ամսագրերին՝ կանխելով նրանց կողմից բիզնես պլանի մանրամասների բացահայտումը: Այնուհետև գերագույն դատարանը Գուդվինին և նրա աշխատակից խմբագրին կարգադրեց հայտնել տեղեկություններ տրամադրած անձի հետ ունեցած հեռախոսազրույցի ընթացքում արված նշումները, որոնց միջոցով հնարավոր կլիներ բացահայտել այդ անձին, որպեսզի «Թեթրա» ընկերությունը կարողանար դատի տալ նրան: Դատարանը հրաման արձակեց 1981 թ. «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մասին» օրենքի 10-րդ մասի համաձայն, որը սահմանում է հետևյալը. «Ոչ մի դատարան չի կարող պահանջել անձից հայտնել իր պատասխանատվությամբ հրատարակված հոդվածում զետեղված տեղեկատվության աղբյուրը, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանում ապացույցներով հիմնավորում է, որ այդ աղբյուրը բացահայտելու անհրաժեշտությունը բխում է արդարադատության շահերից»: Գուդվինը և նրա գործատու հրատարակիչը հրաժարվեցին կատարել հրամանի պահանջները և բողոքարկեցին այն: Ինչպես Միացյալ Թագավորության վերաքննիչ դատարանը, այնպես էլ Լորդերի պալատը հաստատեցին տեղեկատվության աղբյուրը հայտնելու հրամանը (տե՛ս *«X» ՍՊԸ-ն ընդդեմ «Մորգան-Գրամպիան (Փաբլիշերս)» ՍՊԸ-ի »* գործը *(X Ltd v Morgan-Grampian (Publishers) Ltd* [1990] 2 All ER 1): Սակայն Գուդվինը հրաժարվեց հանձնել իր գրառումները, և մեղավոր ճանաչվեց դատարանն անարգելու համար՝ տուգանվելով 5000 ֆունտով: Նա գանգատ ներկայացրեց հանձնաժողովին առ այն, որ տեղեկատվության աղբյուրը հայտնելու մասին հրամանով և տուգանքով խախտվել են կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված իրավունքները: Հանձնաժողովը՝ տասնմեկ կողմ և վեց դեմ ձայներով, խախտում արձանագրեց: Դատարանում չի վիճարկվել այն հարցը, որ այս միջոցները միտված էին «Թեթրա» ընկերության իրավունքները պաշտպանելու նպատակին, սակայն դատարանը վճռեց հետևյալը.

Լրատվության աղբյուրների պաշտպանությունը մի շարք մասնակից պետությունների օրենսդրությունների և պաշտոնեական կանոնադրությամբ արտացոլված մամուլի ազատության հիմնական նախապայմաններից մեկն է և հաստատվում է լրագրողների ազատություններն ամրագրող մի քանի միջազգային փաստաթղթերով: Նման պաշտպանության բացակայության դեպքում տեղեկատվության աղբյուր հանդիսացող անձինք հանրությանը հուզող խնդիրների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու հարցում թերևս չեն աջակցի լրագրողներին: Հետևաբար, կարող է խաթարվել մամուլի՝ հանրային կյանքին հետևողի և այն լուսաբանողի դերակատարումը, ինչպես նաև ստույգ ու հավաստի տեղեկություններ տրամադրելու կարողությունը: Հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում մամուլի ազատության համար լրատվական աղբյուրները պաշտպանելու կարևորությունը և այդ ազատության իրացման վրա տեղեկատվության աղբյուրը հայտնելու մասին հրամանի գործած հնարավոր անբարենպաստ ազդեցությունը՝ նման միջոցը համատեղելի չէ կոնվենցիայի 10-րդ հոդվածի դրույթների հետ, եթե այն հիմնավորված չէ հանրության շահերից բխող գերակա պահանջով (պարբ. 39):

Դատարանի մեծամասնությունը՝ տասնմեկ կողմ և յոթ դեմ ձայներով, վճռեց, որ Միացյալ Թագավորության գերագույն դատարանի արգելող որոշումն ուղղված էր «Թեթրա» ընկերության գաղտնի ֆինանսական տեղեկատվության հրապարակումը կանխելու նպատակին: Ուստի հարկավոր է պարզել, թե արդյոք անհրաժե՞շտ էր դիմողից պահանջել հայտնել տեղեկատվության աղբյուրը: Դատարանի մեծամասնությունն ընդունեց, որ ընկերությունը հիմնավոր պատճառներ է ունեցել՝ բացահայտելու անհավատարիմ աշխատողին և ձգտելու հետագայում կանխել տեղեկությունների չարտոնված տարածումը, սակայն այս ամենը չէր կարող հանրային գերակա շահ համարվել: Հետևաբար, տեղեկատվության աղբյուրը հայտնելու մասին հրամանով և դիմողի վրա դրված տուգանքով խախտվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածը: Չհամընկնող կարծիք արտահայտած դատավորները համարել են, որ մեծամասնությունը թերագնահատել է «Թեթրա» ընկերության շահերը, իսկ ներպետական դատարաններն ավելի նպաստավոր դիրքում էին՝ այդ շահերը և մյուս կողմից դիմողի և հանրության իրավունքներն արդար հավասարակշռության բերելու համար:

Այս վճիռը շատ մեծ կարևորություն է ներկայացնում լրատվամիջոցների համար, քանզի դրանից հետևում է, որ դատարանը պաշտպանում է տեղեկություններ ստանալու հիմնական միջոցներից մեկը: Այսպիսով, 10-րդ հոդվածը ներառում է լուրեր ստանալու միջոցները, ինչպես նաև ստացված տեղեկությունների բաշխումը (գործի քննարկումը տե՛ս՝ S Tierney, Press Freedom and Public Interest: The Developing Jurisprudence of the European Court of Human Rights [1998] EHRLR 419):

«Ռեմանը և Շմիդտն ընդդեմ Լյուքսեմբուրգի» (*Roemen and Schmit v Luxembourg*), 2003 թ. փետրվարի 25-ի վճիռ) գործում լիակազմ դատարանի պալատը միաձայն որոշմամբ կիրառեց *Գուդվինի* (*Goodwin*) գործի նախադեպը լրագրողի տունը և գրասենյակը դատավորի հրամանով խուզարկելու մասով, ինչն ուղղված էր լրագրողին տեղեկություններ տրամադրած անձի ինքնությունը պարզելու նպատակին: Ներկա գործով առաջին դիմողը հոդված է տպագրել օրաթերթում, որի մեջ հայտնում է, որ նախարարներից մեկը տուգանվել է ավելացված արժեքի հարկի հետ կապված խարդախության համար: Պալատը հայտարարեց հետևյալը.

> 57. …Դատարանը համարում է, որ թեև այդ խուզարկությունն ապարդյուն էր, սակայն տեղեկություններ տրամադրած անձի ինքնությունը հայտնելու կարգադրության համեմատ՝ տեղեկատվության աղբյուրը հայտնաբերելու նպատակով իրականացրած խուզարկությունն ավելի խիստ միջոց էր, քանի որ առանց նախազգուշացնելու լրագրողի աշխատանքի վայր ներխուժած և այն խուզարկելու թույլտվություն ունեցող անձանց վերապահված էր լիազորությունների մեծ շրջանակ. ինչպես նշվել է, նրանց մատչելի էին լրագրողի բոլոր փաստաթղթերը: Դատարանը կրկնում է, որ «լրատվության աղբյուրների գաղտնիության սահմանափակումները շատ մանրազնին ուսումնասիրություն են պահանջում դատարանի կողմից» (տե՛ս վերոնշյալ *Գուդվինի* (*Goodwin*) գործը, պարբ. 40): Այսպիսով, դատարանը համարում է, որ առաջին դիմողի տան և աշխատանքի վայրի խուզարկությունները շատ ավելի են թուլացրել տեղեկատվության աղբյուրների պաշտպանությունը, քան *Գուդվինի* (*Goodwin*) գործով գանգատի առարկա դարձած միջոցառումները:

Պալատը եզրակացրեց, որ այդ խուզարկություններն անհամաչափ միջամտություն են դիմողների ազատ արտահայտվելու իրավունքին և հակասում են կոնվենցիայի 10-րդ հոդվածին:

5 «Այլ անձանց իրավունքները» պաշտպանելու նպատակից է բխում նաև կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված՝ անձի կրոնական համոզմունքների և զգացմունքների նկատմամբ հարգանքի իրավունքը (տե՛ս վերոնշյալ *«Օտտո-Փրեմինգեր համալսարանն ընդդեմ Ավստրիայի»* (*Otto-Preminger-Institute v Austria*) գործը:

6 *«Ահմեդն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Ahmed v the UK*) վերոնշյալ գործով չհամընկնող կարծիք արտահայտած դատավորներ Շպիլմանը, Փեքանենը և Վան Դիժկը զգուշացրել են այն վտանգների մասին, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանն ընդլայնի «իրավունքներ» հասկացության շրջանակը. «Կցանկանայինք շեշտել այն վտանգը, որ չափազանց ընդլայնված այդ հասկացությունը կարող է կորցնել իրեն ներհատուկ իմաստը, եթե որոշվի, որ այդ հասկացությունը ներառում է տեղական մակարդակում արդյունավետ քաղաքական ժողովրդավարության հաստատմանը վերաբերող «իրավունքները» (կետ 1): Այնուհանդերձ, *«Մակգինեսն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*McGuinness v UK*) 8/6/1999) գործով ներկայացրած գանգատի անընդունելիության մասին որոշում կայացնելիս դատարանը շարունակել է այդ հասկացությունը մեկնաբանել լայն իմաստով՝ ընդգրկելով

հիմնական սահմանադրական սկզբունքները: Դիմողը խորհրդարան ընտրվեց Հյուսիսային Իռլանդիայի ընտրողների շահերը ներկայացնելու համար, սակայն Իռլանդիայի հանրապետական Շին Ֆեյն կուսակցության որդեգրած քաղաքականության համաձայն՝ հրաժարվեց միապետին հավատարմության երդում տալուց, ինչը խորհրդարանի անդամներից պահանջվում է իրենց պաշտոնը ստանձնելուց առաջ: Այս ամենի հետևանքով դիմողը զրկվեց իր պաշտոնից, ինչպես նաև խորհրդարանի պատգամավորներին հասանելիք ծառայություններից և առավելություններից: Նա գանգատ ներկայացրեց, որ իր նկատմամբ դրսևորված վերաբերմունքով խախտվել է 10-րդ հոդվածը: Դատարանը դիմողի գանգատն ակնհայտորեն անհիմն համարեց և ընդգծեց հետևյալը.

Ազատ արտահայտվելու իրավունքն առանցքային կարևորություն է ներկայացնում ժողովրդի ընտրված ներկայացուցիչների համար, որոնք կոչված են ուշադրություն հրավիրել ընտրողներին մտահոգող հարցերին և պաշտպանել նրանց շահերը: Մյուս կողմից՝ «այլ անձանց իրավունքների պաշտպանություն» արտահայտությունը հարկ է մեկնաբանել լայն իմաստով՝ ներառելով նաև ժողովրդավարության հիմքում ընկած սահմանադրական իրավունքի սկզբունքների պաշտպանությունը: Տվյալ դեպքում Համայնքների պալատի ընտրյալ ներկայացուցիչների վրա դրված՝ միապետին հավատարմության երդում տալու պարտավորությունը կարող է դիտարկվել որպես Միացյալ Թագավորության սահմանադրական միապետության համակարգի հիմքը կազմող սահմանադրական սկզբունքների նկատմամբ հավատարմության հաստատում, որը կարող է դիտվել որպես հիմնավորված պայման:

7 *«Բաց դուռ» և «Դուբլինի տատմեր» կազմակերպություններն ընդդեմ Իռլանդիայի»* (*Open Door and Dublin Well Woman v Ireland*) գործում դատարանը հակված չէր վճռել, թե արդյոք «այլ անձինք» հասկացությունը ներառո՞ւմ է չծնված երեխաներին, թե՞ ոչ:

Արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակ

1 Դատարանը լայն իմաստով է մեկնաբանել այս նպատակը՝ դրանում ընդգրկելով անհատ դատավորներին լրատվամիջոցներով անհիմն քննադատությունից պաշտպանությունը (տե՛ս վերը, ծնթ. 2) և առհասարակ՝ արդարադատության համակարգի նկատմամբ հանրության վստահության պահպանումը (տե՛ս վերոնշյալ *«Սանդի թայմզ» թերթի* (*The Sunday Times*) գործը):

2 *«Վեբերն ընդդեմ Շվեյցարիայի»* (*Weber v Switzerland*) 1990 12 EHRR 508, A.177) գործում դատարանը միաձայն արձանագրեց կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: Գործով որպես դիմող հանդես է եկել մի ճանաչված շվեյցարացի բնապահպան և լրագրող: 1980 թթ. թերթում դիմողի ազնվությունը կասկածի տակ առնող մի հեգնական նամակ է տպագրվել: Ի պատասխան՝ Վեբերը զրպարտության մասին բողոք ներկայացրեց նամակի հեղինակի դեմ: Գործի քննությանը մասնակցող դատավորը կարգադրեց ներկայացնել դիմողի բնապահպանական միավորման հաշվապահական տվյալները: Վեբերը դժգոհ էր դատավորի վարքից և 1982 թ. մարտի 1-ին քրեական բողոք ներկայացրեց դատավորի դեմ դատական իշխանության չարաշահման և հարկադրման մասին: Հաջորդ օրը Վեբերը մամլո ասուլիս անցկացրեց, որի ժամանակ, ի թիվս այլոց, հայտնեց, որ ինքը քրեական բողոք էր ներկայացրել դատավորի դեմ: Այնուհետև Վեբերը տուգանվեց 300 շվեյցարական ֆրանկով՝ մամլո ասուլիս անցկացնելով դատական քննության գաղտնիությունը խախտելու համար: Հանձնաժողովը միաձայն վճռեց, որ տուգանքը հակասել է կոնվենցիայի 10-րդ հողվածով սահմանված իրավունքներին: Դատարանն ընդունեց այն իրողությունը, որ տուգանքով խախտվել է Վեբերի ազատ արտահայտվելու իրավունքը, թեև իրավունքին այդ միջամտությունը նախատեսված է օրենքով: Դատարանը որոշեց, որ միջամտությունը միտված էր դատական քննության պատշաճ ընթացքը երաշխավորելու օրինական նպատակին, ուստիև «արդարադատության համակարգի հեղինակությունն ու անկողմնակալությունը» պաշտպանելու մասով համապատասխանում էր 10-րդ հոդվածի 2-րդ կետին: Այնուհանդերձ, դատարանը չընդունեց, որ միջամտությունն անհրաժեշտ էր «ժողովրդավարական հասարակությունում»:

Ինչ վերաբերում է այն հայտարարությանը, որ 1982 թ. մարտի 2-ին պրն Վեբերի կողմից վիճարկված պնդումները կարող են

մեկնաբանվել որպես գործի քննությանը մասնակցող դատավորի վրա ճնշում գործադրելու փորձ, ինչը կարող էր կործանիչ հետևանքներ ունենալ գործի հետաքննության պատշաճ ընթացքի համար, ապա դատարանը նշում է, որ այն ժամանակ գործի հետաքննությունը գրեթե ավարտված էր, քանի որ նախորդ օրը դատավորն արդեն դատի էր տվել նամակի հեղինակին, և այդ պահից ի վեր՝ նման փորձի ձեռնարկումն ուշացած և ապարդյուն կլիներ: Հետևաբար, այս տեսակետից դիմողի նկատմամբ պատժամիջոց սահմանելու կարիք չկար (պարբ. 51):

Թեև դիմողը փաստերով շահել է գործը, սակայն պարզ է, որ դատարանի մեկնաբանությամբ նշված օրինական նպատակը միտված էր արգելելու դատավարության մասնակիցներին լրատվամիջոցներով անհարկի ճնշում գործադրել իրենց գործը լսող դատավորների վրա:

3 *«Վորմն ընդդեմ Ավստրիայի»* (*Worm v Austria,* 1997, 25 EHRR 454, 1997-V 1534) գործով որպես դիմող հանդես է եկել մի լրագրող, որը հոդված է տպագրել ավստրիական «Պրոֆիլ» ամսագրում (այդ ամսագրում տպագրվել է *Լինգենսի* (*Lingens*) գործով կայացրած վճռի հիմքում ընկած հոդվածը): Հոդվածը վերաբերում է հարկերից խուսափելու համար ենթադրյալ մեղադրանքով Ֆինանսների նախկին նախարար Անդրոշի քրեական գործով ընթացող դատավարությանը: Դիմող Վորմը գրում է, որ մեղադրյալի ծավալած գործունեությունից «հետևում է միայն այն եզրակացությունը, որ Անդրոշը խուսափում էր հարկերից»: Մի քանի ամիս անց երկու մասնագետ դատավորի և իրավաբանական կրթություն չունեցող երկու դատավորի կազմով դատարանն Անդրոշին դատապարտեց հարկերը վճարելուց խուսափելու համար և տուգանեց 1,8 միլիոն ավստրիական շիլինգով: Այնուհետև Վորմին մեղադրեցին քրեական դատավարության վրա անթույլատրելի ազդեցություն գործելու համար: Վիեննայի շրջանային քրեական դատարանն արդարացրեց նրան, սակայն դատախազը բողոքարկեց այդ վճիռը: Վիեննայի վերաքննիչ դատարանը մեղավոր ճանաչեց Վորմին և տուգանեց 48000 ավստրիական շիլինգով՝ տուգանք վճարելու հավասարազոր պարտավորություն դնելով նաև ամսագրի հրատարակչի վրա: Դիմողը գանգատ ներկայացրեց հանձնաժողովին, որը տասնութ կողմ և տասնմեկ դեմ ձայներով արձանագրեց կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: Դատարանը վճռեց, որ դիմողի դատապարտումը միտված էր «արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու» նպատակին:

«Արդարադատության հեղինակություն» ձևակերպումը մասնավորապես ներառում է այն գաղափարը, որ դատարաններն իրականում և ամբողջ հանրության լայն զանգվածների կարծիքով պատշաճ դատական ատյան են հանդիսանում իրավական վեճերը կարգավորելու և քրեական գործով անձի մեղավորությունը կամ անմեղությունը որոշելու համար: Բացի այդ, ամբողջ հանրությունը հարգում է դատավորներին և վստահ է, որ նրանք կարող են իրականացնել նշված գործառույթը:

«Անաչառություն» ձևակերպմամբ սովորաբար նշվում է կանխակալ կարծիքի կամ կողմնապահության բացակայությունը (տե՛ս *«Պիերսաքն ընդդեմ Բելգիայի»* (*Piersack v Belgium*) գործով կայացրած վճիռը (1982, A.53): Այնուհանդերձ, դատարանը մի քանի անգամ հայտարարել է, որ դատական համակարգի անաչառության պահպանման նպատակն է ապահովել այն վստահությունը, որը ժողովրդավարական հասարակությունում գործող դատարանները պետք է ներշնչեն մեղադրյալին, երբ խոսքը քրեական գործերի մասին է, և առհասարակ հանրության:

Այս ամենից հետևում է, որ «արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը» պահպանելու համար մասնակից պետություններն իրավունք ունեն հաշվի առնելու այն նկատառումները, որոնք վերաբերում են ժողովրդավարական հասարակությունում դատարանների հիմնարար դերի պաշտպանությանը (պարբ. 40):

Անդրադառնալով ժողովրդավարական հասարակությունում դիմողին դատապարտելու անհրաժեշտությանը՝ դատարանը հայտարարեց հետևյալը.

10-րդ հոդվածի 2-րդ կետով «արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով» նախատեսվող ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները թույլ չեն տալիս պետություններին արգելել դատարանների վարույթում գտնվող գործերի վերաբերյալ հանրային քննարկման բոլոր ձևերը: Առհասարակ ընդունվում է այն փաստը, որ դատարանները չեն կարող գործել հասարակությունից դուրս: Թեև դատարանները հանդես են գալիս որպես քրեական գործով անձի մեղավորությունը կամ անմեղությունը որոշող ատյան, դա չի նշանակում, որ դատավարությունից առաջ կամ դատավարության ընթացքում քրեական գործերի առարկան չի կարելի քննարկել այլուր՝ մասնագիտական ամսագրերում, ընդհանուր մամուլում կամ առհասարակ հասարակությունում (տե՛ս *«Սանդի թայմզ» ընդդեմ* (*The Sunday Times (No 1*) գործով կայացրած վճիռը): Արդարադատության պատշաճ իրականացման շահերից բխող սահմանները չանցնելու պարագայում դատավարության վերաբերյալ տեղեկությունների, ներառյալ՝ մեկնաբանությունների հաղորդումը նպաստում է դատավարության հրապարակայնությանը, ուստի և լիովին համահունչ է կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված այն պահանջին, որի համաձայն՝ դատալսումները պետք է լինեն դռնբաց: Լրատվամիջոցները պարտավոր են տարածել նման հարցերին առնչվող տեղեկություններն ու գաղափարները, իսկ հասարակությունն իր հերթին այդ տեղեկությունները ստանալու իրավունք ունի: Այս

ամենն ավելի շատ է վերաբերում այն դեպքերին, երբ դատավարության կողմերից մեկը հասարակական գործիչ է, ինչպես այս գործով դիմողը, որը նախկինում կառավարության անդամ է եղել:

Այնուհանդերձ, հասարակական գործիչները յուրաքանչյուրի նման իրավունք ունեն օգտվելու կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված արդար դատաքննության երաշխիքներից, որոնք քրեական դատավարության դեպքում ներառում են անկողմնակալ դատարանում գործը քննելու իրավունք: Լրագրողները պետք է մտապահեն այս փաստը վարույթում գտնվող քրեական գործերը մեկնաբանելիս, քանի որ թույլատրելի մեկնաբանության սահմանները չեն կարող տարածվել այն հայտարարությունների վրա, որոնցով դիտավորյալ կամ ոչ դիտավորյալ տուժում է անձի արդար դատաքննության արժանանալու հավանականությունը կամ խաթարվում է քրեական արդարադատության իրականացման գործում դատարանների դերակատարման նկատմամբ հանրության վստահությունը (պարբ. 50):

Դատարանի մեծամասնությունը՝ յոթ կողմ և երկու դեմ ձայներով, եզրակացրեց, որ Վիեննայի վերաքննիչ դատարանի կողմից դիմողի դատապարտումը չի գերազանցել պետության հայեցողության սահմանը, ուստի և չի խախտել 10-րդ հոդվածը:

Այս գործը համալրում է *«Սանդի թայմզ» թերթի* (*The Sunday Times (No 1*) գործով կայացրած դատավճիռը (որի խնդրո առարկան էր վարույթում գտնվող քաղաքացիական գործի մեկնաբանությունը մամուլում) և պարզ է դառնում, թե ինչպես է դատարանը վարույթում գտնվող քրեական գործը լրատվամիջոցներով քննարկելու դեպքում կիրառում 10-րդ հոդվածը: *Վորմի* (*Worm*) գործով դատարանի կատարած վերլուծությունում նշվում է, որ նման դատավարությունները մեկնաբանելիս լրագրողները պետք է ավելի մեծ զգուշություն ցուցաբերեն, քան իրական փաստեր հաղորդելիս: Ուշագրավ է, որ դատարանի կարծիքով 10-րդ հոդվածի համաձայն՝ Վիեննայի վերաքննիչ դատարանը կարող էր հաշվի առնել Անդրոշի դատին մասնակցած իրավաբանական կրթություն չունեցող դատավորների խոցելիությունը լրատվամիջոցների մեկնաբանությունների նկատմամբ: Ուստի, լրատվամիջոցները պետք է թերևս ավելի մեծ զգուշություն ցուցաբերեն իրավաբանական կրթություն չունեցող դատավորների կողմից վճռված գործերը մեկնաբանելիս:

4 *«Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի» (Kyprianou v Cyprus*) 2005 թ. դեկտեմբերի 15-ի վճիռ) վերոնշյալ գործում լիակազմ դատարանի մեծ պալատը միաձայն եզրակացրեց, որ քրեական գործով դատին մասնակցող դատավորների հասցեին «անքաղաքավարի» դիտողություններ անելու համար հինգ օր ժամկետով դատապաշտպանի ազատազրկումն անհամաչափ պատժամիջոց էր, որը չէր նպաստում արդարադատության հեղինակությունը մի կողմից, իսկ մյուս կողմից՝ դիմողի ազատ արտահայտվելու իրավունքը պաշտպանելու անհրաժեշտության արդար հավասարակշռությանը: 10-րդ հոդվածի խախտման արձանագրումը վկայում է, որ ներկայումս դատարանը ճանաչում է արդարադատության պատշաճ իրականացման գործում վստահորդներին պաշտպանելու նկատառումով փաստաբանների ազատ արտահայտվելու իրավունքը երաշխավորելու կարևորությունը (տե՛ս նաև վերոնշյալ *Նիկուլայի* (*Nikula*) գործը):

13 ՀՈԴՎԱԾ 11 ՀԱՎԱՔՆԵՐԻ ԵՎ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Դատարանի ընդհանուր մոտեցումը

.....

«Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունն ընդդեմ Թուրքիայի»
(United Communist Party of Turkey v Turkey, 1998-I (1998) 26 EHRR 121)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Տվյալ գործով որպես դիմող հանդես են եկել Թուրքիայի միավորված կոմունիստական լուծարված կուսակցությունը (TBKP), կուսակցության նախագահ պրն Սարղինը և գլխավոր քարտուղար պրն Յաղջին: Կուսակցությունը հիմնվել է 1990 թ. հունիսին: Կազմավորման նույն օրը կուսակցության կանոնադրությունը և ծրագիրն ուղարկվել են վճռաբեկ դատարանում գլխավոր պետական խորհրդատուին՝ սահմանադրությանը և «Քաղաքական կուսակցությունների կարգավորման մասին» թիվ 2820 օրենքին դրանց համապատասխանությունը որոշելու համար: Մի քանի օր անց, երբ կուսակցությունը պատրաստվում էր մասնակցելու ընդհանուր ընտրություններին, դատախազը կուսակցությունը լուծարելու հրաման արձակելու պահանջով դիմել է սահմանադրական դատարան: Դատախազը մի շարք պատճառներով հիմնավորել է նման հրամանագրի անհրաժեշտությունը, որի հիմքում ընկած էր հատկապես քրդական հարցի խաղաղ և ժողովրդավարական լուծմանն ուղղված կուսակցության ծրագիրը: 1991 թ. հուլիսին սահմանադրական դատարանը կուսակցությունը լուծարելու մասին որոշում է ընդունել: Կուսակցությունը լուծարվել է, իսկ նրա ակտիվները փոխանցվել են գանձապետարան: Բացի այդ, անհատ դիմողներին, ինչպես նաև կուսակցության այլ հիմնադիրներին և գործիչներին արգելվել է որևէ այլ քաղաքական մարմնում զբաղեցնել նույն պաշտոնը: Սահմանադրական դատարանն իր որոշումը հիմնավորել է այն փաստով, որ կուսակցությունը, խախտելով թիվ 2820 օրենքը, իր անվանման մեջ գործածել է «կոմունիստական» բառը, իսկ կուսակցության կանոնադրության և ծրագրի մեջ կային այնպիսի հայտարարություններ, որոնք կարող էին վտանգել պետության տարածքային ամբողջականությունը և ազգի միասնությունը՝ խախտելով պետության սահմանադրությունը: Դիմողները գանգատ են ներկայացրել հանձնաժողովին՝ ի թիվս այլոց նշելով, որ կոմունիստական կուսակցության լուծարմամբ խախտվել է կոնվենցիայի 11-րդ հոդվածը: Հանձնաժողովը միաձայն արձանագրել է այդ հոդվածի խախտում:

…

ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ի. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 11-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

18. Դիմողները պնդում էին, որ Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության լուծարմամբ և նրա առաջնորդների, այդ թվում՝ պրն Սարղինի և պրն Յաղջիի վրա դրված այլ քաղաքական կուսակցություններում նման պաշտոններ զբաղեցնելու արգելքով սահմանադրական դատարանը խախտել է կոնվենցիայի 11-րդ հոդվածով ամրագրված միավորման ազատությունը:

Ա. 11-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Դատարանում ներկաների արած հայտարարությունները

(Ա) Պատասխանող պետությունը

19. Պատասխանող պետությունը հայտնել է, որ 11-րդ հոդվածը երբեք կիրառելի չէ քաղաքական կուսակցությունների դեպքում: Եթե կանոնադրության կամ ծրագրի մեջ կուսակցությունը քննադատում է պետության սահմանադրական կարգը, դատարանը պետք է գործի նյութահիրավական հիմքերով ոչ կիրառելի համարի կոնվենցիան կամ կիրառի 17-րդ, ոչ թե 11-րդ հոդվածը:

Նույնիսկ կոնվենցիայի մակերեսային ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ կոնվենցիայի 11-րդ կամ այլ հոդվածներում ոչինչ չի նշվում քաղաքական կուսակցությունների կամ պետությունների սահմանադրական կառույցների մասին: Ուշագրավ է, որ քաղաքական ինստիտուտների մասին հիշատակվում է միայն թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածում, որի ձևակերպմամբ անհատներին որևէ իրավունք չի տրվում, փոխարենը միայն պարտավորություն է դրվում պետությունների վրա:

20. Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության կանոնադրությունը և ծրագիրը միանշանակ հակասել են Թուրքիայի հիմնարար սահմանադրական սկզբունքներին: Նախընտրելով «կոմունիստական» անվանումը՝ Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունը կամա-ակամա անդրադառնում էր կործանարար ուսմունքին և ամբողջատիրական քաղաքական նպատակին, որոնք խաթարում էին Թուրքիայի քաղաքական ու տարածքային ամբողջականությունը և վտանգում հանրային իրավունքի հիմնարար սկզբունքները, օրինակ՝ կառավարման աշխարհիկ կարգը: «Կոմունիզմ» հասկացությունը միշտ ենթադրում է իշխանության զավթում և միտված է այնպիսի քաղաքական կարգի հաստատմանը, որն անընդունելի կլինի ոչ միայն Թուրքիայում, այլև Եվրոպայի խորհրդի այլ անդամ պետություններում: Բացի այդ, որոշ անվանումների գործածումն արգելված է նաև Արևմտյան Եվրոպայի այլ երկրների իրավակարգերում: Այդ կապակցությամբ պատասխանող պետությունը հիշատակել է Գերմանիայի, Լեհաստանի և Պորտուգալիայի սահմանադրությունները: Ամեն դեպքում, Բեռլինի պատի քանդումից հետո 1990 թ. հիմնված Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության և նրա առաջնորդների՝ «կոմունիստական» անվանումն ընտրելու մտադրությունից անկախ, պետության կարծիքով այդ անվանումը չի կարող քաղաքական հայեցակետից զուրկ լինել:

…Պետության հայտարարություններից հետևում է, որ կոնվենցիայի մասնակից պետությունները երբեք մտադիր չեն եղել Ստրասբուրգի դատարանի վերանայմանը ներկայացնել իրենց սահմանադրական ինստիտուտների և հատկապես, այդ պետությունների կարծիքով, իրենց գոյության հիմնական նախապայմանները համարվող սկզբունքները: Այդ իսկ պատճառով, եթե Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության նման մի քաղաքական կուսակցություն հարցականի տակ առներ այդ հաստատությունները կամ սկզբունքները, ապա չէր կարող հայցել կոնվենցիայի կամ նրան կից արձանագրությունների դրույթների կիրառումը:

Կոնվենցիայի 17-րդ հոդվածը կարելի էր ամենից քիչ կիրառել Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության պարագայում, քանի որ կուսակցությունը հարցականի տակ էր առել ինչպես կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները, այնպես էլ դրանով ամրագրված ազատությունները: Այդ կապակցությամբ պետությունը մեջբերել է հանձնաժողովի՝ հետևյալ գործերով կայացրած որոշումները. *«Գլիմերվիհը և Հագենբիքն ընդդեմ Նիդեռլանդների» (Glimmerveen and Hagenbeek v Netherlands,* թիվ 8348/78 և 8406/78, Որոշումներ և զեկույցներ 18, էջ 187), *«Քյուհենն ընդդեմ Գերմանիայի» (Kühnen v Germany,* գանգատ թիվ 12194/86, Որոշումներ և զեկույցներ 56, էջ 205), *«Հ. Վ. Փ-ն և Ք-ն ընդդեմ Ավստրիայի» (H W P and K v Austria*, գանգատ թիվ 12774/87, Որոշումներ և զեկույցներ 62, էջ 216) և *«Ռեմերն ընդդեմ Գերմանիայի»* (*Remer v Germany,* գանգատ թիվ 25096/94, Որոշումներ և զեկույցներ 82-B, էջ 117): Թուրքիայում տեղի ունեցած սարսափելի ահաբեկչական գործողությունների համատեքստում ավելի ակնհայտ է դառնում 17-րդ հոդվածի կիրառմամբ կոնվենցիայի ոչ պատշաճ գործածումն արգելելու անհրաժեշտությունը, քանի որ Թուրքիայի իշխանությունները ստիպված էին արգելել այն «արտահայտությունների» օգտագործումը և «միավորումների» հիմնումը, որոնք անխուսափելիորեն կհրահրեին բռնություն և թշնամանք Թուրքիայի հասարակության տարբեր հատվածներում:

(Բ) Դիմողները

22. Դիմողները պնդում էին, որ 11-րդ հոդվածն անկասկած կիրառելի է քաղաքական կուսակցությունների դեպքում: Նրանք ընդգծել են, որ կոնվենցիայի կիրառման շրջանակը չի կարող սահմանափակվել Թուրքիայի սահմանադրությամբ: Ներպետական օրենսդրությունը հարկ է մեկնաբանել ելնելով կոնվենցիայից, ոչ թե հակառակը:

(Գ) Հանձնաժողովը

23. Հանձնաժողովը հայտնել է այն կարծիքը, որ կոնվենցիայի 11-րդ հոդվածը որևէ միավորմամբ կամ խմբով սահմանափակման մասին ձևակերպում չունի, ոչ էլ ենթադրում է, որ այդ հոդվածը կիրառելի չէ քաղաքական կուսակցությունների պարագայում: Ընդհակառակը, եթե 11-րդ հոդվածը համարվեր ժողովրդավարական համակարգի պատշաճ աշխատանքն ապահովող իրավական երաշխիք, ապա քաղաքական կուսակցությունները կլինեին միավորման՝ այդ հոդվածով պաշտպանվող առավել կարևոր ձևերը: Այդ կապակցությամբ հանձնաժողովը հիշատակել է մի շարք որոշումներ, որոնցում 11-րդ հոդվածի համաձայն քննել է քաղաքական կուսակցությունների գործունեության տարբեր սահմանափակումները և նույնիսկ նման կուսակցությունների լուծարումը՝ այդպիսով ըստ էության ընդունելով, որ 11-րդ հոդվածը կիրառելի է միավորման այդ տեսակի պարագայում (տե՛ս *Գերմանիայի կոմունիստական կուսակցության* (*German*

Communist Party) գործը, գանգատ թիվ 250/57, Տարեգիրք 1, էջ 225, *Հունաստանի* (*Greek*) գործը, Տարեգիրք, 1969, էջ 170, պարբ. 392, *«Ֆրանսիան, Նորվեգիան, Դանիան, Շվեդիան և Նիդեռլանդներն ընդդեմ Թուրքիայի» (France, Norway, Denmark, Sweden and the Netherlands v Turkey)* գործը, գանգատ թիվ 9940–9944/82, Որոշումներ և զեկույցներ DR 35, էջ 143):

Հանձնաժողովի՝ դատարանում ընթացող լսումներին ներկա պատվիրակը նաև հայտնել է, որ կոնվենցիայի 17-րդ հոդվածը կիրառելու կարիք չկար, քանի որ տվյալ գործն անվերապահորեն տարբերվում է այն հազվադեպ գործերից, որոնցում հանձնաժողովը դիմել է այդ հոդվածին: Նման գործերով դիմողների հանցավոր գործողությունները միտված էին բռնության (տե՛ս վերոնշյալ *Գերմանիայի կոմունիստական կուսակցության* (*German Communist Party*) գործը) կամ ատելության (տե՛ս վերոնշյալ *Ռեմերի* (*Remer*) գործը) տարածմանը: Մյուս կողմից՝ Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության կանոնադրության կամ ծրագրի մեջ ամենևին նշված չէր, որ դա հակաժողովրդավարական կուսակցություն է, որը Թուրքիայի ժողովրդավարական և բազմակարծության քաղաքական համակարգը քայքայելու նպատակով ապօրինի կամ հակաժողովրդավարական միջոցների է դիմելու, խրախուսելու է բռնության դիմելը կամ հետապնդելու է ռասիստական կամ այլոց իրավունքների և ազատությունների խախտմանն ուղղված նպատակներ:

2. Դատարանի գնահատումը

24. Դատարանը համարում է, որ 11-րդ հոդվածում նախապես նշվում է՝ քաղաքական կուսակցությունները կարո՞ղ են առաջնորդվել այդ հոդվածով, թե՞ ոչ: Դատարանը հավելում է, որ 11-րդ հոդվածը վերաբերում է «այլոց հետ միավորվելու ազատության իրավունքին, ներառյալ՝ …. արհմիություններ ստեղծելու իրավունքը», ընդ որում՝ «ներառյալ» բառը ակնհայտորեն վկայում է, որ արհմիությունները միավորման ազատության իրացման ձևերից միայն մեկն են: Ուստի չի կարելի, պատասխանող պետության օրինակին հետևելով, եզրակացնել, որ պահի արդիական խնդիրների համատեքստում կոնվենցիայի կազմողները, արհմիությունները հիշատակելով, մտադիր էին 11-րդ հոդվածի կիրառման շրջանակից բացառել քաղաքական կուսակցությունները:

25. Սակայն այն փաստը, որ քաղաքական կուսակցությունները միավորման այն տեսակն են, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարության պատշաճ գործառնության համար, դատարանի կարծիքով, շատ ավելի համոզիչ է, քան 11-րդ հոդվածի ձևակերպումը: Հաշվի առնելով կոնվենցիայի համակարգում ժողովրդավարության նշանակությունը (տե՛ս ներքոհիշյալ պարբ. 45)՝ տրամաբանական է, որ 11-րդ հոդվածի շրջանակում ընդգրկվում են քաղաքական կուսակցությունները:

27. Մյուս կողմից՝ դատարանը նշում է, որ միավորումը, այդ թվում՝ քաղաքական կուսակցությունը, չի կարելի զրկել կոնվենցիայով սահմանված պաշտպանությունից միայն այն պատճառով, որ ազգային մարմինների կարծիքով այդ միավորման գործունեությունը խաթարում է պետության սահմանադրական կառույցները և պահանջում է սահմանափակել դրանք: Ինչպես նախկինում հայտնել է դատարանը, թեև ազգային մարմինները սկզբունքորեն կարող են իրենց հայեցողությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել օրենքի գերակայությունը պահպանելու կամ սահմանադրական իրավունքները կենսագործելու համար, սակայն այդ միջոցները պետք է համահունչ լինեն կոնվենցիայով նրանց ստանձնած պարտավորություններին և վերահսկվեն կոնվենցիայի կատարումն ապահովող հաստատությունների կողմից (տե՛ս *«Բաց դուռ» և «Դուբլինի տատմեր» կազմակերպություններն ընդդեմ Իռլանդիայի» (Open Door and Dublin Well Woman v Ireland)* գործով 1992 թ. հոկտեմբերի 29-ին կայացած վճիռը, շարք A, թիվ 246-A, էջ 29, պարբ. 69):

28. Կոնվենցիայի նախաբանում խոսք կա «քաղաքական ավանդույթների, իդեալների, ազատության և իրավական պետության ընդհանուր ժառանգության» մասին (տե՛ս ստորև՝ պարբ. 45), որոնք փաստորեն հիմնականում ամրագրվում են պետական սահմանադրություններում: Կոնվենցիայով սահմանված իրավունքների համապարտադիր իրացման համակարգի շնորհիվ (տե՛ս «*Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի» (Loizidou v Turkey)* գործով 1995 թ. մարտի 23-ի վճիռը, Նախնական առարկություններ, շարք A, թիվ 310, էջ 26, պարբ. 70), օժանդակ լինելու սկզբունքի համաձայն, կոնվենցիայով հաստատվում, սակայն երբեք չի սահմանափակվում իրավունքների ազգային մակարդակով պաշտպանությունը (կոնվենցիայի 60-րդ հոդված):

29. Բացի այդ, դատարանն ընդգծում է, որ 1-ին հոդվածով պահանջվում է, որ բարձր պայմանավորվող կողմերն «իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովեն այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն կոնվենցիայի I բաժնում»: Կոնվենցիայի 14-րդ հոդվածի, 2-13-րդ հոդվածների և 63-րդ հոդվածի համակցությամբ այդ դրույթով կոնվենցիայի շրջանակը սահմանազատվում է անհատական, նյութաիրավական և տարածական հիմքերով (տե՛ս *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Ireland v UK*) գործով 1978 թ. հունվարի 18-ի վճիռը, շարք A, թիվ 25, էջ 90, պարբ. 238): Այդ դրույթով կանոնների կամ միջոցների առումով տարբերակում չի դրվում, և չի բացառվում մասնակից պետությունների իրավասության ցանկացած հայեցակետի ուսումնասիրությունը կոնվենցիայի համաձայն: Այդ իսկ պատճառով, առհասարակ հարգելով մասնակից պետությունների իրավասությունը, որը գերակայում է սահմանադրության շնորհիվ, դատարանը նրանց կոչ է անում հետևել կոնվենցիայի դրույթներին:

30. Հետևաբար, մասնակից պետությունների քաղաքական և ինստիտուցիոնալ կառույցները պետք է հարգեն կոնվենցիայով ամրագրված իրավունքները և սկզբունքները: Տվյալ համատեքստում շատ անշահ կարևորություն է տրվում այն հարցին, թե արդյոք խոսքը սահմանադրակա՞ն (տե՛ս, օրինակ, *«Գիտոնասն ընդդեմ Հունաստանի»* (*Gitonas v Greece*) գործով

1997 թ. հուլիսի 1-ի վճիռը, Վճիռների և որոշումների զեկույցներ, 1997-V), թե՞ պարզապես օրենսդրական դրույթների մասին է (տե՛ս, օրինակ, *«Մաթյո-Մոհին և Քլերֆայթն ընդդեմ Բելգիայի»* (*Mattieu-Mohin and Clerfayt v Belgium*) գործով 1987 թ. մարտի 2-ի վճիռը, շարք A, թիվ 113): Այն պահից ի վեր, երբ պետությունն իր իրավասությունն իրացնում է նման դրույթների միջոցով, վերջիններս պետք է քննվեն՝ ելնելով կոնվենցիայից:

31. Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում գործերով դատավարության ժամանակ պետության ինստիտուցիոնալ կառույցների և մարդու հիմնարար իրավունքներին նեղ իմաստով վերաբերող տարրերը տարբերակելու փորձը երբեմն կարող է բարդ և նույնիսկ արհեստական լինել: Նույնը նաև վերաբերում է տվյալ գործում խնդրո առարկա լուծարման հրամանագրին: Հաշվի առնելով քաղաքական կուսակցությունների դերը (տե՛ս վերոնշյալ պարբ. 25)՝ նմանօրինակ միջոցները բացասական ազդեցություն են գործում միավորումներ կազմելու ազատության, հետևաբար նաև՝ տվյալ պետության ժողովրդավարության վրա:

32. Այնուհանդերձ, այս ամենը չի նշանակում, որ եթե տվյալ պետության տարածքում գործող որևէ միավորում իր գործունեությամբ վտանգում է պետական հաստատությունները, ապա իշխանությունները զուրկ են այդ հաստատությունները պաշտպանելու իրավունքից: Այդ կապակցությամբ դատարանն ընդգծում է, որ նախկինում ընդունված որոշման համաձայն՝ կոնվենցիայի համակարգին ներհատուկ է մի կողմից ժողովրդավարական համակարգը և մյուս կողմից՝ անձնական իրավունքները պաշտպանելու պահանջների միջև որոշակի համաձայնեցումը (տե՛ս *mutatis mutandis «Կլասսն ընդդեմ Գերմանիայի»* (*Klass v Germany*) գործով 1978 թ. սեպտեմբերի 6-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 28, էջ 28, պարբ. 59): Այդ կարգի համաձայնեցման հասնելու համար իշխանությունների ցանկացած միջամտությունը պետք է համապատասխանի 11-րդ հոդվածի 2-րդ կետին, որը դատարանը դիտարկում է ստորև (տե՛ս 37-րդ և հաջորդ պարբերությունները): Ամբողջական վերանայումից հետո միայն դատարանը նպաստավոր դիրքում կլինի գործի բոլոր հանգամանքներով որոշելու՝ պե՞տք է կիրառել կոնվենցիայի 17-րդ հոդվածը, թե՞ ոչ:

33. Պատասխանող պետությունը հանձնաժողովին ներկայացրել է նաև այն փաստարկը, որ թեև 11-րդ հոդվածով երաշխավորվում է միավորումներ կազմելու ազատությունը, սակայն միաժամանակ չի արգելվում միավորման լուծարումը:

Հանձնաժողովը պաշտպանեց այն տեսակետը, որ միավորման ազատությունը վերաբերում է ոչ միայն քաղաքական կուսակցություն հիմնելու իրավունքին, այլև նման կուսակցության կազմավորվելուն պես երաշխավորում է այդ կուսակցության՝ ազատ քաղաքական գործունեություն ծավալելու իրավունքը:

Դատարանը կրկնում է, որ կոնվենցիան կոչված է երաշխավորելու ոչ թե տեսական կամ վերացական, այլ գործնական և արդյունավետ իրավունքներ (ի թիվս այլ աղբյուրների՝ տե՛ս *«Արտիկոն ընդդեմ Իտալիայի» (Artico v Italy)* գործով 1980 թ. մայիսի 13-ի վճիռը, 1980, շարք A, թիվ 37, էջ 16, պարբ. 33 և *Լոիզիդուի (Loizidou)* վերոնշյալ գործով վճիռը, էջ 27, պարբ. 72): Միավորումներ հիմնելու ազատությամբ սահմանափակվելու դեպքում 11-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը շատ տեսական և անիրական կլիներ, քանի որ այդ դեպքում ազգային մարմիններն անմիջապես կկարողանային, անտեսելով կոնվենցիայի դրույթները, լուծարել նման միավորումը: Այս ամենից հետևում է, որ միավորումն իր ողջ գոյության ընթացքում օգտվում է 11-րդ հոդվածով սահմանված պաշտպանությունից, հետևաբար, երկրի իշխանությունների կողմից միավորման լուծարումը պետք է բավարարի նույն հոդվածի 2-րդ կետի պահանջները (տե՛ս ստորև՝ պարբ. 35–47):

34. Դատարանը եզրակացրել է, որ կոնվենցիայի 11-րդ հոդվածը կիրառելի է տվյալ դեպքում:

Բ. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ 11-ՐԴ ՀՈԴՎԱԾԻՆ

1. Արծանագրվե՞լ է միջամտություն

...

35. Պատասխանող պետությունը հանձնաժողովին ներկայացրել է այն փաստարկը, որ Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության լուծարումը միջամտություն չի եղել պրն Սարղինի և պրն Յաղջիի՝ միավորումներ կազմելու իրավունքին: Այնուհանդերձ, պետությունն այդ փաստարկը դատարանում չի կրկնել:

36. Հանձնաժողովի օրինակով դատարանն արծանագրել է միջամտություն բոլոր երեք դիմողների այդ իրավունքին՝ հաշվի առնելով պրն Սարղինի և պրն Յաղջիի՝ կուսակցության հիմնադրի և առաջնորդի դերը, ինչպես նաև նրանց վրա դրված արգելքը որևէ այլ քաղաքական միավորումում նման պաշտոն զբաղեցնելու համար:

2. Միջամտությունը հիմնավորվա՞ծ էր, թե՞ ոչ

37. Նման միջամտությամբ կխախտվեր կոնվենցիայի 11-րդ հոդվածը, եթե այն «նախատեսված չլիներ օրենքով», ուղղված չլիներ նույն հոդվածի 2-րդ կետով ամրագրված մեկ կամ երկու օրինական նպատակներին, և եթե այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ չլիներ «ժողովրդավարական հասարակությունում»:

(Ա) «Օրենքով նախատեսված»

38. Միջամտությունը հաստատ «նախատեսված էր օրենքով», քանի որ սահմանադրական դատարանի որոշումով ձեռնարկված միջոցների հիմքում ընկած էին 2-րդ, 3-րդ հոդվածի 1-ին կետը, 6-րդ հոդվածը, 10-րդ հոդվածի 1-ին կետը, 14-րդ հոդվածի 1-ին կետը, ինչպես նաև՝ սահմանադրության նախկին 68-րդ հոդվածը և «Քաղաքական կուսակցությունների կարգավորման մասին» թիվ 2820 օրենքի 78-րդ, 81-րդ բաժինները և 96-րդ բաժնի 3-րդ կետը:

(Բ) «Օրինական նպատակ»

39. Պատասխանող պետությունը պնդում էր, որ միջամտությունը հետապնդում էր մի շարք օրինական նպատակներ, դրանք են՝ ազգային և հասարակական անվտանգության, տարածքային ամբողջականության ապահովում, այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանություն:

40. Հանձնաժողովը տարբերակել է Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության լուծարումը հիմնավորելու համար սահմանադրական դատարանի բերած պատճառները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջամտությունը պատճառաբանվում էր կուսակցության անվանման մեջ «կոմունիստական» բառի գործածմամբ, հանձնաժողովը չէր կարծում, որ այդ միջամտությունը կարելի էր հիմնավորել 11-րդ հոդվածում նշված որևէ օրինական նպատակով: Եվ, իսկապես, սահմանադրական դատարանն ընդունել է, որ այդ անվանումից ամենևին չի հետևում, որ Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունը չի հարգի ժողովրդավարական ինստիտուտները կամ կձգտի բռնապետական վարչակարգ հաստատել:

Մյուս կողմից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության լուծարման հիմքում ընկած էր կուսակցության ծրագրում թուրքերի և քրդերի միջև դրված տարբերակումը, հանձնաժողովն արտահայտել է այն կարծիքը, որ կուսակցության լուծարումը կարող է միտված լինել երկրի տարածքային ամբողջականության, ուստիև՝ «ազգային անվտանգության» պահպանմանը: Դա չի նշանակում, որ Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունն ահաբեկչական կազմակերպություն է կամ ահաբեկչությունը սատարող կուսակցություն, սակայն կարող է թվալ, որ այն բացահայտորեն ձգտում է որպես ազգ առանձնացնել քրդերին, իսկ հետո վերաբաշխել Թուրքիայի պետության տարածքը:

41. Հանձնաժողովի օրինակով դատարանը համարում է, որ Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության լուծարումն ուղղված էր 11-րդ հոդվածով ամրագրված առնվազն մեկ «օրինական նպատակին», այն է՝ «ազգային անվտանգության» պահպանմանը:

(Գ) «Ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ»

(թ) Ընդհանուր սկզբունքներ

42. Դատարանը կրկնում է, որ անկախ կոնվենցիայի 11-րդ հոդվածի ինքնուրույն դերից և կիրառման հատուկ ոլորտից՝ տվյալ դեպքում այն պետք է դիտարկվի նաև 10-րդ հոդվածի համակցությամբ: 11-րդ հոդվածով ամրագրված հավաքների և միավորման ազատության նպատակներից է կարծիքներ պաշտպանելու և դրանք արտահայտելու ազատությունը (այլ աղբյուրների շարքում տե՛ս *«Յանգը, Ջեյմսը և Ուեբսթերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Young, James and Webster v UK)* գործով 1981 թ. օգոստոսի 13-ի վճիռը, շարք A, թիվ 44, պարբ. 57 և *«Ֆոգթն ընդդեմ Գերմանիայի» (Vogt v Germany)* գործով 1995 թ. սեպտեմբերի 26-ի վճիռը, շարք A, թիվ 323, պարբ. 64):

43. Դա առավելապես վերաբերում է քաղաքական կուսակցություններին՝ հաշվի առնելով բազմակարծությունը և ժողովրդավարական համակարգի պատշաճ աշխատանքը երաշխավորելու հարցում նրանց հիմնարար դերակատարումը (տե՛ս վերը՝ պարբ. 25):

Դատարանը բազմիցս կրկնել է, որ ժողովրդավարության նախապայմանը բազմակարծությունն է: Այդ իսկ պատճառով 10-րդ հոդվածով ամրագրված ազատ արտահայտվելու իրավունքը, նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն, կիրառելի է ոչ միայն դրական կամ անտարբեր վերաբերմունքի արժանացած, այլև վիրավորական, ցնցող կամ անհանգստություն պատճառող «տեղեկությունների» կամ «գաղափարների» դեպքում (ի թիվս բազում այլ աղբյուրների՝ տե՛ս *Ֆոգթի* (*Vogt*) գործով վերոնշյալ վճիռը, պարբ. 52): Այն փաստը, որ քաղաքական կուսակցությունների գործունեությունն ազատ արտահայտվելու իրավունքի ընդհանուր իրացման մասն է, հնարավորություն է տալիս այդ կուսակցություններին օգտվելու կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածներով նախատեսված պաշտպանությունից:

44. *«Ինֆորմատիոնսֆերայն Լենթիա» միավորումն ընդդեմ Ավստրիայի» (Informationsverein Lentia v Austria)* գործով կայացրած վճռում դատարանը պետությունը ներկայացրել է բազմակարծության սկզբունքի գերագույն երաշխավորի դերում (տե՛ս 1993 թ. նոյեմբերի 24-ի վճիռ, շարք A, թիվ 276, էջ 16, պարբ. 38): Քաղաքականության բնագավառում այդ պարտավորությունը նշանակում է, որ, ի թիվս այլոց, պետությունը պարտավոր է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածին համապատասխան՝ ժամանակ առ ժամանակ գաղտնի քվեարկությամբ ազատ ընտրություններ անցկացնել՝ երաշխավորելով օրենսդիր մարմինն ընտրելու հարցում սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը: Այդ իրավունքն անիրական կլիներ առանց ընտրություններին բազմաթիվ քաղաքական կուսակցությունների մասնակցության, որոնք ներկայացնում են տվյալ երկրի բնակչության շրջանում արտահայտվող զանազան կարծիքները: Ոչ միայն քաղա-

քական հաստատություններում, այլև հասարակական կյանքի բոլոր մակարդակներում այդ զանազան կարծիքները լրատվամիջոցներով փոխանցելով՝ քաղաքական կուսակցություններն անփոխարինելի ներդրում են ունենում քաղաքական բանավեճի առումով, որը ժողովրդավարական հասարակություն անկյունաքարերից է (տե՛ս *«Լինգենսն ընդդեմ Ավստրիայի» (Lingens v Austria)* գործով 1986 թ. հուլիսի 8-ի վճիռը, շարք A, թիվ 103, էջ 26, պարբ. 42 և *«Կաստելսն ընդդեմ Իսպանիայի» (Castells v Spain)* գործով 1992 թ. ապրիլի 23-ի վճիռը, շարք A, թիվ 236, էջ 23, պարբ. 43):

45. Ժողովրդավարությունն անկասկած եվրոպական երկրների հասարակարգի հիմնարար արժեքներից է (տե՛ս *Լոիզիդուի (Loizidou)* գործով վերոնշյալ վճիռը, պարբ. *«Կաստելսն ընդդեմ Իսպանիայի» (Castells v Spain), էջ 27, պարբ.*75):

Դա ակնհայտ է դառնում նախ և առաջ կոնվենցիայի նախաբանից, որտեղ շատ հստակ կապ է հաստատվում կոնվենցիայի և ժողովրդավարության միջև և նշվում է, որ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հետագա իրացման առավել արդյունավետ երաշխիքը, մի կողմից, արդյունավետ քաղաքական ժողովրդավարությունն է, իսկ մյուս կողմից՝ մարդու իրավունքների ընդհանուր ըմբռնումն ու պահպանումը (տե՛ս *Կլասի* (*Klass*) գործով վերոնշյալ վճիռը, պարբ. 59): Նախաբանը նաև հաստատում է, որ եվրոպական երկրներն ունեն քաղաքական ավանդույթների, իդեալների, ազատությունների և իրավական պետության ընդհանուր ժառանգություն: Դատարանը նշել է, որ այդ ընդհանուր ժառանգությունը նաև ընդգրկում է կոնվենցիայով ամրագրված արժեքներ (տե՛ս *«Սերինգի ընդդեմ Միացյալ Թագավորության» (Soering v UK)* գործով 1989 թ. հուլիսի 7-ի վճիռը, շարք A, թիվ 161, պարբ. 88): Դատարանը մի քանի անգամ ընդգծել է, որ կոնվենցիան կոչված է պահպանելու և տարածելու ժողովրդավարական հասարակության իդեալներն ու արժեքները (տե՛ս *«Կյելդսենը, Բուսկ Սադսենը և Պեդերսենն ընդդեմ Դանիայի» (Kjeldsen, Busk Madsen and Pedersen v Denmark)* գործով 1976 թ. դեկտեմբերի 7-ի վճիռը, շարք A, թիվ 23, պարբ. 53, և *Սերինգի* (*Soering*) գործով վերոնշյալ վճիռը, պարբ. 87):

Բացի այդ, կոնվենցիայի 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներով պահանջվում է, որ միջամտությունը դրանցով ամրագրված իրավունքներին որոշվի «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» չափանիշով: Ուստի միջամտությունն այդ իրավունքներից որևէ մեկին կարելի է արդարացնել միայն «ժողովրդավարական հասարակություն» ձևակերպումից բխող անհրաժեշտությամբ: Այսպիսով, ժողովրդավարությունը կոնվենցիայում դիտարկվող միակ քաղաքական մոդելն է, ուստին միայն այս մոդելն է համահունչ կոնվենցիային:

Դատարանն առանձնացրել է կոնվենցիայի՝ ժողովրդավարական հասարակությունը բնորոշող որոշ դրույթներ: Այսպիսով, առաջին իսկ վճռում դատարանը հայտնել է, որ «նախաբանի և կոնվենցիայի այլ դրույթների իմաստով ժողովրդավարական հասարակությունում» դատը պետք է անցկացվի դատավարության կողմերի ներկայությամբ և բաց լինի հանրության համար, և այդ հիմնարար սկզբունքը սահմանվում է կոնվենցիայի 6-րդ հոդվածով (տե՛ս *«Լոլեսն ընդդեմ Իռլանդիայի» (Lawless v Ireland)* գործով 1960 թ. նոյեմբերի 14-ի վճիռը, Դատավարության նախնական առարկություններ և հարցեր, շարք A, թիվ 1, էջ 13): Ներկա գործին հարակից ոլորտի առնչությամբ դատարանը բազմիցս հայտարարել է, որ, օրինակ, ազատ արտահայտվելու իրավունքը ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից է և այդ համակարգի առաջընթացի ու յուրաքանչյուրի կայացման էական նախապայմաններից մեկը (ի թիվս այլ աղբյուրների՝ տե՛ս վերոհիշյալ *Ֆոգթի* (*Vogt*) գործով վճիռը, պարբ. 52): Վերոհիշյալ *Մաթյո-Մոհինի և Քլերֆայթի* (*Mattieu-Mohin and Clerfayt*) գործով կայացրած վճռում դատարանը նաև նշել է արդյունավետ քաղաքական ժողովրդավարությունը բնորոշող սկզբունքն ամրագրող թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի առանցքային նշանակությունը (պարբ. 47):

46. Հետևաբար, պետք է ճշգրտորեն մեկնաբանել 11-րդ հոդվածով սահմանված բացառությունները քաղաքական կուսակցությունների առնչությամբ: Այդ կուսակցությունների միավորման ազատության սահմանափակումները կարող են հիմնավորվել միայն համոզիչ և անհերքելի փաստարկներով: Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետով տվյալ միջոցին դիմելու անհրաժեշտությունը որոշելիս մասնակից պետություններն ունեն հայեցողության միայն նեղ սահմաններ, որն օրենքի, ինչպես նաև այն կիրառելու որոշումների, այդ թվում՝ անկախ դատարանների ընդունած որոշումների մասով ուղեկցվում է եվրոպական կառույցների խիստ վերահսկողությամբ: Դատարանն արդեն վճռել է, որ խորհրդարանի՝ անարգանքի համար դատապարտված անդամի գործով առկա փաստերը պարզելու համար իսկապես անհրաժեշտ էր դիմել նման արդյունավետ ուսումնասիրության (տե՛ս վերոնշյալ *Կաստելսի* (*Castells*) գործով վճիռը, էջ 22-23, պարբ. 42), որն ավելի անհրաժեշտ է այն դեպքում, երբ լուծարվում է մի ամբողջ քաղաքական կուսակցություն, իսկ նրա առաջնորդներին արգելվում է հետագայում զբաղվել նման գործունեությամբ:

47. Ուսումնասիրություն անցկացնելուց հետո դատարանը չպետք է սեփական կարծիքով փոխարինի իրավասու ազգային մարմինների կարծիքը, այլ պետք է, 11-րդ հոդվածին համապատասխան, վերանայի վերջիններիս հայեցողությամբ ընդունված որոշումները: Դա չի նշանակում, որ դատարանը պետք է սահմանափակվի որոշելով՝ պատասխանող պետությունը ողջամտորեն, աչալրջորեն և բարեխղճորեն է օգտվել իր հայեցողության սահմաններից, թե ոչ: Փոխարենը, դատարանը պետք է բողոքարկված միջամտությունը քննի ամբողջ գործի համատեքստում և որոշի՝ արդյոք այն «համաչա՞փ է հետապնդվող օրինական նպատակին», և արդյոք այդ միջամտությունը հիմնավորելու համար ազգային մարմինները «պատշաճ և բավարար» պատճառաբանություննե՞ր են ներկայացրել, թե՞ ոչ: Այսպիսով դատարանը պետք է համոզվի, որ ազգային մարմինների կիրառած չափանիշները համապատասխանում են 11-րդ հոդվածով ամրագրված սկզբունքներին, և ազգային մարմինների որոշման հիմքում ընկած է կարևոր փաստերի ընդունելի գնահատումը (տե՛ս *mutatis mutandis «Երսիլդն ընդդեմ Դանիայի»* (*Jersild v Denmark*) գործով 1994 թ. սեպտեմբերի 23-ի վճիռը, շարք A, թիվ 298, էջ 26, պարբ. 31):

(ii) Տվյալ գործում սկզբունքների կիրառելիությունը

…

(Բ) Դատարանի գնահատումը

51. Սկզբից նեթ դատարանը նշում է, որ Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունը լուծարվել է նախքան որևէ գործունեություն ծավալելը, ուստի լուծարման հրամանագրի հիմքում ընկած են միայն կուսակցության կանոնադրությունն ու ծրագիրը: Այնուհանդերձ, տվյալ գործով սահմանադրական դատարանի կայացրած որոշման համաձայն՝ կասկած չկա, որ այդ փաստաթղթերն արտահայտում են կուսակցության իսկական նպատակներն ու նրա առաջնորդների մտադրությունները (տե՛ս ստորև՝ պարբ 58):

Ուստի դատարանը կարող է վերանայել միայն սահմանադրական դատարանի կողմից պաշտպանված մյուս երկու հիմնավորումները:

53. Առաջին հիմնավորման մեջ նշվում է, որ Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունը, իր անվանման մեջ ընդգրկելով «կոմունիստական» բառը, խախտել է թիվ 2820 օրենքի 96-րդ բաժնի 3-րդ կետը: Սահմանադրական դատարանը վճռել է, որ այդ դրույթով բացառապես ձևական հիմքերով արգելվում էր քաղաքական կուսակցություններ հիմնել, քանի որ օրենքի այդ բաժնում նշված անվանումներից մեկը գործածելու փաստն անգամ բավարար էր այդ օրենքը կիրառելու և այնպիսի քաղաքական կուսակցություն լուծարելու համար, որը Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության պես կխախտեր այդ օրենքը:

54. Դատարանը համարում է, որ լուրջ և բավարար այլ հիմքերի բացակայության պայմաններում քաղաքական կուսակցության լուծարման նման խիստ միջոցը սկզբունքորեն չի կարող հիմնավորվել կուսակցության անվանման ընտրությամբ: Դատարանը մեծ կարևորություն է տալիս նաև սահմանադրական դատարանի այն եզրահանգմանը, որ անկախ իր անվանումից՝ Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունը չէր ձգտում հաստատել մեկ սոցիալական դասակարգի գերիշխանություն, այլ ընդհակառակը, բավարարում էր ժողովրդավարության պահանջները, այդ թվում՝ բազմակարծությունը, ընդհանուր ընտրական իրավունքը և քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքը:

Հետևաբար, քանի որ չկա հիմնավոր ապացույց, որ «կոմունիստական» անվանումն ընտրելով՝ Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունը որդեգրել է երկրի հասարակական կամ պետական կարգը նշանակալիորեն խաթարելու քաղաքականություն, ապա դատարանը չի կարող ընդունել, որ միայն կուսակցության անվանման վրա հիմնված հայտարարությունը կարող է այդ կուսակցության լուծարման տեղիք տալ:

55. Սահմանադրական դատարանում ընդունված երկրորդ հայտարարությունն այն էր, որ Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունը թուրք ազգը պառակտող անջատողական գաղափարներ էր քարոզում:

56. Դատարանը նշում է, որ թեև Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունն իր ծրագրում հիշատակում է քուրդ «ժողովուրդ», «ազգ» և քուրդ «քաղաքացիներ» բառերը, նա քրդերին չի բնորոշում որպես «ազգային փոքրամասնություն» և նրանց գոյությունը ճանաչելուց բացի, այլ պահանջներ չի ներկայացնում, օրինակ՝ նրանց նկատմամբ հատուկ վերաբերմունքի դրսևորում կամ նրանց ավելի շատ իրավունքների ճանաչում, առավել ևս՝ նրանց Թուրքիայի մնացած ազգաբնակչությունից առանձնանալու իրավունքը: Ընդհակառակը, ծրագրում ասվում է. «Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունը պայքարելու է քրդական հարցի խաղաղ, ժողովրդավարական և արդար լուծման համար, որպեսզի քուրդ և թուրք ժողովուրդները կարողանան իրենց կամքով ապրել Թուրքիայի Հանրապետության սահմաններում իրավահավասարության սկզբունքով և իրենց համատեղ շահերի վրա հիմնված ժողովրդավարական համակարգը կատարելագործելու միտումով»:

Կուսակցության ծրագրում ասվում է նաև հետևյալը. «Քրդական հարցը կարող է լուծվել միայն այն դեպքում, եթե կողմերն ի վիճակի լինեն ազատ արտահայտելու իրենց կարծիքը, եթե նրանք համաձայնեն հարցը լուծելու համար բռնության չդիմել և կարողանան մասնակցել քաղաքական կյանքին՝ ներկայացնելով իրենց ազգային ինքնությունը»:

57. Ժողովրդավարության հիմնական առանձնահատկություններից մեկը դատարանը համարում է նույնիսկ խնդրահարույց ներպետական հարցերն առանց բռնության դիմելու և երկխոսության միջոցով լուծելու հնարավորությունը: Ժողովրդավարական հասարակարգի բարգավաճումը պայմանավորված է ազատ արտահայտվելու իրավունքի ապահովմամբ: Այդ տեսանկյունից քաղաքական միավորման գործունեության արգելքը ոչ մի կերպ չի կարելի արդարացնել միայն այն հիմնավորմամբ, որ նա ձգտում է հրապարակավ քննարկել պետության ազգաբնակչության մի մասը կազմող մարդկանց իրավիճակը և ժողովրդավարության կանոններին համապատասխան բոլոր կողմերին բավարարող լուծումներ գտնելու նպատակով մասնակցել պետության քաղաքական կյանքին: Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության ծրագրից հետևում է, որ հենց դա էր նշված բնագավառում կուսակցության նպատակը, ինչի շնորհիվ տվյալ գործը տարբերվում է պետության կողմից հիշատակված այլ գործերից:

58. Հարկ է նշել, որ չի կարելի եզրակացնել, որ կուսակցության քաղաքական ծրագրում կարող են սքողված լինել իր հռչակած գաղափարներից տարբերվող նպատակներ և մտադրություններ: Դա հաստատելու համար հարկ է, մի կողմից, համեմատել ծրագրի բովանդակությունը, իսկ մյուս կողմից՝ կուսակցության գործունեությունը և դիրքորոշումը: Տվյալ դեպքում անհավանական է թվում, որ իրականում Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության կողմից ձեռնարկված որևէ գործողություն հակասեր ծրագրի դրույթներին, քանի որ կուսակցությունը լուծարվել է կազմավորվելուց անմիջապես հետո: Ուստի կուսակցության

նկատմամբ կիրառված պատժամիջոցը պայմանավորված է միայն նրա՝ ազատ արտահայտվելու իրավունքի իրացման վարքագծով:

59. Դատարանը պատրաստ է նաև հաշվի առնել իր քննությանը ներկայացրած բոլոր գործերը, հատկապես ահաբեկչության դեմ պայքարի հետ կապված դժվարությունները (ի թիվս այլ աղբյուրների՝ տե՛ս *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Ireland v UK*) գործով վերոնշյալ վճիռը, 11-րդ պարբերություն և հաջորդները և *«Աքսոյն ընդդեմ Թուրքիայի»* (*Aksoy v Turkey*) գործով 1996 թ. դեկտեմբերի 18-ի վճիռը, Զեկույցներ 1996-VI, պարբ. 70 և 84): Այնուհանդերձ, տվյալ դեպքում, հաշվի առնելով այն փաստը, որ Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունը գործունեություն չի ծավալել, դատարանը որևէ հիմք չի տեսնում եզրակացնելու, որ կուսակցությունն ինչ-որ չափով պատասխանատու է Թուրքիայում ահաբեկչության հետ կապված խնդիրների համար:

60. Բացի այդ, կարիք չկա նաև հիշատակելու 17-րդ հոդվածը, քանի որ Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության կանոնադրությունն ու ծրագիրը բնավ տեղիք չեն տալիս եզրակացնելու, որ կուսակցությունն օգտվել է կոնվենցիայից՝ այդ փաստաթղթում նշված իրավունքներից և ազատություններից որևէ մեկի խախտմանն ուղղված գործունեություն ծավալելու կամ գործողություններ ձեռնարկելու համար (տե՛ս *mutatis mutandis «Լոլեսն ընդդեմ Իռլանդիայի» (Lawless v Ireland)* գործ, 1961 թ. հուլիսի 1-ին կայացրած վճիռ, շարք A, թիվ 3, էջ 45-46, պարբ. 7, նյութաիրավական հիմքեր):

61. Հաշվի առնելով բոլոր վերոնշյալ հանգամանքները՝ Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունն առմիշտ լուծարելու խիստ միջոցը, որի հրամանն արձակվել է կուսակցության գործունեությունն սկսվելուց առաջ և ուղեկցվել նրա առաջնորդների վրա դրված արգելքով քաղաքականության բնագավառում որևէ այլ պաշտոն զբաղեցնելու առնչությամբ, անհամաչափ էր հետապնդվող նպատակին և հակասում էր կոնվենցիայի 11-րդ հոդվածին:

…

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

Արձանագրել է կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում:

…

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Մեծ պալատի կազմում ընդգրկվել են նախագահող դատավոր Բերնհարդտը և դատավորներ՝ Գյոլչյուքլուն, Մաթշերը, Մակդոնալդը, Ռուսոն, Վալտիկոսը, Փալմը, Ֆոյգելը, Փեքանենը, Լուազուն, Մորինիյան, Ֆրիլենդը, Բական, Լոպես Ռոշան, Վիլդհաբերը, Մակարչիկը, Կուրիսը, Լոհմուսը և Վան Դիժկը:

2 Վճռից պարզ է դառնում, որ 11-րդ հոդվածը կիրառելիս դատարանն առաջնորդվում է նույն վերլուծությամբ, ինչ 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածները վկայակոչելու դեպքերում (տե՛ս նախորդ գլուխները): Այդ վերլուծությամբ հարկավոր է պարզել՝ արդյոք արձանագրվե՞լ է «միջամտություն» դիմողի՝ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքներին, և եթե այո, ապա այն կարելի՞ է «հիմնավորել» նույն հոդվածի 2-րդ կետով, այսինքն՝ արդյոք այն «նախատեսվա՞ծ է օրենքով», ուղղվա՞ծ է «օրինական նպատակին», և «անհրաժե՞շտ է ժողովրդավարական հասարակությունում» (տե՛ս վերոնշյալ վճիռը, պարբ. 35 և 37):

3 Դատարանը նաև հակված էր լայն իմաստով մեկնաբանելու միավորման ազատությունը՝ դրա մեջ ընդգրկելով նաև քաղաքական կուսակցություններ հիմնելու իրավունքը, նույնիսկ այն դեպքերում, երբ պետությունը մտավախություն է հայտնում, որ որևէ կուսակցություն կարող է թուլացնել պետության հիմնական սահմանադրական կարգը: Ամեն դեպքում, իր ինստիտուտները կուսակցության գործունեությունից պաշտպանելու համար պետությունը կարող է ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք բավարարում են 11-րդ հոդվածի 2-րդ կետի պայմանները: Այնուհանդերձ, հարկ է ճշգրտորեն մեկնաբանել քաղաքական կուսակցությունների նկատմամբ կիրառվող 11-րդ հոդվածով ամրագրված սահմանափակումները՝ հաշվի առնելով ժողովրդավարական հասարակության պահպանման հարցում կուսակցությունների հիմնարար դերակատարումը: Ուստի դատարանը պետություններին կվերապահի

հայեցողության սահմաններ, որի շրջանակներում նրանք կկարողանան որոշել՝ 11-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված միջամտությունը քաղաքական կուսակցության իրավունքներին անհրաժե՞շտ է նույն հոդվածի 2-րդ կետով, թե՞ ոչ:

4 Տվյալ գործով վճիռ կայացնելիս դատարանը հայտարարել է, որ միավորման ազատությունը չի սահմանափակվում բուն միավորում հիմնելու իրավունքով, այլ պետք է պահպանվի միավորման գոյության ողջ ընթացքում: Եթե պետական մարմինները որևէ միավորում լուծարելու մտադրություն հայտնեն, ապա նրանց գործողությունները պետք է համապատասխանեն 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պայմաններին:

5 Վերոնշյալ գործով դիմող հանդիսացող անհատներից երկուսն էլ նախկինում շահել են կոնվենցիայի շրջանակներում Թուրքիայի դեմ ներկայացրած մեկ այլ գործ: *«Յաղջին և Սարղինն ընդդեմ Թուրքիայի»* գործով (*Yagci and Sargin v Turkey,* 1995, 20 EHRR 505, A.319) գանգատում նրանք բողոքում էին Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության հիմնումից առաջ իշխանությունների դրսևորած վարքագծի դեմ: 1987 թ. դիմողները մամլո ասուլիս անցկացրեցին Բրյուսելում, որի ժամանակ հայտնեցին կուսակցություն հիմնելու նպատակով Թուրքիա վերադառնալու իրենց մտադրության մասին: 1987 թ. նոյեմբերի 16-ին Անկարայում ինքնաթիռից իջնելուց անմիջապես հետո նրանք ձերբակալվեցին: Նրանց մեղադրեցին այնպիսի կազմակերպություն ղեկավարելու համար, որը, ի թիվս այլոց, հետապնդում է հասարակության մեկ խավի գերիշխանությունը հաստատելու անօրինական նպատակ: Ազգային անվտանգության դատարանի հրամանագրով նրանք կալանավորվեցին մինչև դատի օրը: Ի վերջո, 1990 թ. մայիսին դիմողներն ազատ արձակվեցին, և ինչպես հայտնի է դարձել վերոնշյալ գործից, մեկ ամիս անց կուսակցություն հիմնեցին: 1992 թ. հունվարին Թուրքիայի դատարաններն ի վերջո արդարացրեցին դիմողներին, ինչից հետո Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ութ կողմ և մեկ դեմ ձայներով վճռեց, որ իշխանությունների նշված վերաբերմունքով խախտվել են դիմողների՝ 5-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված իրավունքները:

6 Ավելի ուշ մեկ այլ կազմով մեծ պալատը *Միավորված կոմունիստական կուսակցության* (*United Communist Party*) գործում արտահայտված սկզբունքները կիրառեց *«Սոցիալիստական կուսակցությունն ընդդեմ Թուրքիայի»* (*Socialist Party v Turkey,* 1998, 27 EHRR 51, 1998-III) գործում: Տվյալ գործում որպես դիմող հանդես են եկել մեկ այլ թուրքական քաղաքական կուսակցություն և դրա երկու նախագահները: 1988 թ., երբ սոցիալիստական կուսակցությունը պատրաստվում էր մասնակցելու համընդհանուր ընտրություններին, գլխավոր դատախազը կուսակցության լուծարման մասին հրաման արձակելու դիմում ներկայացրեց սահմանադրական դատարան: Սահմանադրական դատարանն այդ դիմումը համարեց չհիմնավորված և մերժեց այն: Սակայն ազգային անվտանգության դատարաններում վտանգավոր քարոզչություն տարածելու կասկածանքով կուսակցության առաջնորդների, այդ թվում և՝ դիմողներից մեկի դեմ քրեական գործ հարուցվեց: Չեղյալ հայտարարվեցին դիմողների դեմ ներկայացված մեղադրանքի հիմքում ընկած օրենսդրական նորմերը, և բոլոր դիմողներն արդարացվեցին: 1991 թ. իշխանությունները պաշտոնապես թույլատրեցին կուսակցությանը մասնակցել համընդհանուր ընտրություններին: Սակայն մի քանի ամիս անց գլխավոր դատախազը կրկին դիմեց դատարան կուսակցությունը լուծարելու հայցով՝ բերելով այն հիմնավորումը, որ կուսակցության ծավալած գործունեությունը խաթարում է պետության տարածքային ամբողջականությունը և ազգի միասնականությունը՝ դրանով իսկ հակասելով սահմանադրությանը: Գլխավոր դատախազը մեջբերել է հատկապես կուսակցության նախընտրական հրապարակումները և կուսակցության նախագահի ելույթները: 1992 թ. հուլիսին սահմանադրական դատարանը որոշում ընդունեց կուսակցությունը լուծարելու մասին, քանի որ վերջինս պաշտպանում էր թուրքերի և քրդերի առանձին պետություններից բաղկացած անկախ դաշնային պետություն հիմնելու գաղափարը: Դիմողները գանգատ ներկայացրեցին հանձնաժողովին, որը միաձայն արձանագրեց 11-րդ հոդվածի խախտում: Դատարանում Թուրքիայի կառավարությունը տվյալ գործը տարբերեց *Միավորված կոմունիստական կուսակցության* (*United Communist Party*) գործից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սոցիալիստական կուսակցության լուծարումը պայմանավորված էր իր հիմնումից հետո ծավալած գործունեությամբ, ոչ թե պարզապես

կուսակցության կանոնադրությամբ և ծրագրով: Ինչպես *Միավորված կոմունիստական կուսակցության* (*United Communist Party*), այնպես էլ սույն գործում, դատարանը միաձայն արձանագրեց միջամտություն դիմողների միավորման ազատությանը, ընդ որում՝ այդ միջամտությունը «նախատեսված էր օրենքով» և ուղղված էր ազգային անվտանգությունը պահպանելու «օրինական նպատակին»: Ուստի հիմնական հարցն այն է, թե արդյոք կուսակցության լուծարումն անհրաժե՞շտ էր «ժողովրդավարական հասարակությունում»: Դատարանը նշեց հետևյալը.

> Կուսակցության նախագահի հայտարարությունները վերլուծելուց հետո դատարանը եզրակացրել է, որ դրանք բնավ չեն կարող համարվել բռնության դիմելու, ապստամբելու կամ ժողովրդավարության սկզբունքներն այլ ձևով մերժելու կոչեր: Ընդհակառակը, մի շարք առիթներով կուսակցության նախագահն ընդգծել է առաջարկվող քաղաքական բարեփոխումն ընտրությունների և հանրաքվեների միջոցով ժողովրդավարության կանոններին համապատասխան հաստատելու անհրաժեշտությունը: Բացի այդ, նա դեմ է արտահայտվել «բռնությունը որպես կուռք պաշտող քաղաքակրթությանը»:
>
> Դատավարություններին պետության ներկայացուցիչը պնդում էր, որ կուսակցության նախագահը հիմնավորել էր «բռնության և ահաբեկչության միջոցներին դիմելը»՝ ընդգծելով, որ «քուրդ ազգը կայացել է աղքատ գյուղացիների պայքարի շնորհիվ, ինչի ընթացքում միահյուսվել են նրանց ճակատագրերը»: Բացի այդ, անդրադառնալով կուսակցության նախագահի՝ ներկաներին ուղղված «ձմեռուկ ցանելու փոխարեն խիզախություն սերմանելու» կոչին՝ պետությունը հայտարարեց, որ նախագահը «հորդորում էր նրանց դադարեցնել բոլոր գործերը, բացի հասարակական կարգի խախտմանն ուղղված գործողություններից»: Ի վերջո, նա ընդվզելու կոչ էր անում «քուրդ ժողովուրդը ոտքի է կանգնում» արտահայտությամբ:
>
> Թեև դատարանն ընդունում է, որ այս հայտարարություններն ուղղված էին ծագումով քուրդ քաղաքացիներին՝ կոչելով նրանց միաբանվել ու որոշ քաղաքական պահանջներ ներկայացնել, սակայն դատարանը բռնության դիմելու կամ ժողովրդավարության կանոնները խախտելու նշույլ իսկ չի հայտնաբերել: Այդ առումով նշված հայտարարությունները գրեթե չեն տարբերվել Եվրոպայի խորհրդի այլ երկրներում գործող քաղաքական միավորումների արված հայտարարություններից:
>
> Դատարանի կարծիքով՝ այն փաստը, որ նման քաղաքական ծրագիրը համատեղելի չէ Թուրքիայի սկզբունքների և կառույցների հետ, չի նշանակում, որ այն չի համապատասխանում նաև ժողովրդավարության սկզբունքներին: Ժողովրդավարության հիմքում ընկած են տարբեր քաղաքական ծրագրեր, նույնիսկ պետության կառուցվածքը հարցականի տակ դնող ծրագրեր առաջարկելու և դրանք քննարկելու հանդուրժողականությունը, եթե դրանք չխաթարեն ժողովրդավարության բուն էությունը (պարբ. 46–47):

Ուստի դատարանը վճռել է, որ կուսակցության լուծարումն անհամաչափ միջոց է, որը հակասում է 11-րդ հոդվածին: Այս վճռի նպատակն է պաշտպանել քաղաքական կուսակցությունների՝ պետության հիմնական գաղափարախոսությունն ու սահմանադրական կառույցները վիճարկող բռնի միջոցներից զերծ քաղաքական արշավներ իրականացնելու իրավունքը, եթե այդ կուսակցությունները հարում են կոնվենցիայով ամրագրված քաղաքական ժողովրդավարության գաղափարին: *Միավորված կոմունիստական կուսակցության* (*United Communist Party*) գործում դատարանն առանձնացրել է ժողովրդավարական հասարակության հիմքը կազմող մի շարք բաղադրատարրեր, այդ թվում՝ ժողովրդի՝ օրենսդիր մարմնի ընտրություններում գաղտնի քվեարկությամբ իր կամքն ազատ արտահայտելու իրավունքը, նման ընտրությունների արդյունքները վիճարկող կուսակցությունների բազմազանությունը, հարգանքը մարդու իրավունքների, հատկապես՝ ազատ արտահայտվելու իրավունքի, ինչպես նաև օրենքի գերակայության նկատմամբ (տե՛ս նաև A. Mowbray, 'The Role of the European Court of Human Rights in the Promotion of Democracy', 1999, *Public Law*, 703):

7 *«Ռեֆահ փարթիսի» («Բարօրություն») կուսակցությունը և այլք ընդդեմ Թուրքիայի» (Refah Partisi (The Welfare Party) and Others v Turkey)* 2003 թ. փետրվարի 13-ի վճիռ) գործում արմատական իսլամական հայացքներ ունեցող քաղաքական կուսակցությունը լուծարելու առնչությամբ մեծ պալատը միաձայն 11-րդ հոդվածի խախտում չի արձանագրել: Որպես դիմող հանդես եկող քաղաքական կուսակցությունը և նրա առաջնորդներից երեքը պնդում էին, որ խախտվել է միավորումներ կազմելու ազատությունը: 1995 թ. Թուրքիայի համընդհանուր ընտրություններից հետո «Ռեֆահը» ազգային խորհրդարանում առավել թվով ներկայացուցիչներ ունեցող քաղաքական կուսակցությունն էր, պատգամավորների ընդհանուր թվից (450) 158-ը այդ կուսակցության անդամներն էին: Նա կոալիցիոն կառավարություն կազմեց մեկ այլ կուսակցության հետ: 1997 թ. մայիսին գլխավոր դատախազը կուսակցությունը լուծարելու պահանջով դիմեց սահմանադրական դատարան՝ ներկայացնելով այն հիմնավորումը, որ կուսակցությունը դարձել էր կառավարման աշխարհիկ կարգի սկզբունքներին հակասող գործունեության կենտրոն: Գլխավոր դատախազը

որպես ապացույց մեջբերեց «Ռեֆահ» կուսակցության առաջնորդների մի շարք հայտարարություններ, որոնցում նրանք, ի թիվս այլոց, քարոզում են Թուրքիայում կառավարման աշխարհիկ կարգի վերացումը, սրբազան պատերազմի՝ «ջիհադի» միջոցով Ղուրանի գերիշխանության և Թուրքիայում իսլամական օրենքի՝ «շարիաթի» հաստատումը: 1998 թ. հունվարին սահմանադրական դատարանի որոշումով «Ռեֆահ» կուսակցությունը լուծարվեց, նրա ակտիվները փոխանցվեցին Թուրքիայի գանձապետարան, իսկ դիմողներն ազատվեցին պատգամավորի պաշտոնից և հինգ տարի ժամկետով զրկվեցին որևէ այլ քաղաքական կուսակցություն ղեկավարելու կամ նման միավորմանն անդամակցելու իրավունքից: Եվրոպական դատարանի պալատը հինգ կողմ և չորս դեմ ձայներով 11-րդ հոդվածով սահմանված որևէ իրավունքի խախտում չի արձանագրել: Այնուհետև մեծ պալատը, 43-րդ հոդվածի համաձայն, թույլատրեց կրկին լսումներ անցկացնել այդ գործով: Մեծ պալատը որոշեց, որ դիմողների գործով ներպետական դատարանների կայացրած վճիռը «նախատեսված էր օրենքով» և ուղղված էր 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված օրինական նպատակներին, այն է՝ ազգային և հասարակական անվտանգության պահպանմանը, անկարգությունների կամ հանցագործությունների կանխմանը և այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը: Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք կուսակցության լուծարումն «անհրաժե՞շտ էր ժողովրդավարական հասարակությունում», մեծ պալատը վճռեց հետևյալը.

98. Այդ կապակցությամբ դատարանը համարում է, որ քաղաքական կուսակցությունը կարող է առաջարկել փոփոխություն մտցնել պետության օրենսդրության, իրավական կամ սահմանադրական կառույցների մեջ երկու նախապայմանների առկայության դեպքում: Առաջին՝ այդ նպատակով ձեռնարկվող միջոցները պետք է օրինական և ժողովրդավարական լինեն, երկրորդ՝ առաջարկվող փոփոխությունը չպետք է հակասի ժողովրդավարության հիմնարար սկզբունքներին: Անշուշտ, այս ամենից հետևում է, որ եթե քաղաքական կուսակցության առաջնորդները բռնության կոչեր են անում կամ առաջադրում ժողովրդավարության սկզբունքների կամ իրավունքների ու ազատությունների ոտնահարմանը կամ վերացմանն ուղղված քաղաքականություն, ապա կուսակցությունը չի կարող հավակնել վերոնշյալ պատճառներով իր նկատմամբ սահմանված պատժամիջոցներից պաշտպանությանը (տե՛ս *«Յազարը և այլք ընդդեմ Թուրքիայի» (Yazar and Others v Turkey)* գործը, թիվ 22723/93, 22724/93 և 22725/93, պարբ. 49, ECHR 2002-II, ինչպես նաև *mutatis mutandis «Ստանկովը և «Իլինդեն» միավորված մակեդոնական կազմակերպությունն ընդդեմ Բուլղարիայի» (Stankov and the United Macedonian Organisation Ilinden v Bulgaria)* գործով վճիռը, թիվ 29221/95 և 29225/95, պարբ. 97, ECHR 2001-IX, *«Սոցիալիստական կուսակցությունը և այլք ընդդեմ Թուրքիայի» (Socialist Party and Others v Turkey)* գործով 1998 թ. մայիսի 25-ի վճիռը, Զեկույցներ 1998-III, էջ 1256–7, պարբ. 46–47):

99. Չի կարելի բացառել այն հնարավորությունը, որ կոնվենցիայի 11-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով ամրագրված իրավունքները պաշտպանող քաղաքական կուսակցությունը կարող է փորձել դրանք մեկնաբանել հօգուտ այնպիսի գործունեության ծավալելու իրավունքի, որն իրականում ուղղված է կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների, ուստիև ժողովրդավարական կարգի խաթարմանը (տե՛ս *«Կոմունիստական կուսակցությունն (KPD) ընդդեմ Գերմանիայի» (Communist Party (KPD) v Germany,* թիվ 250/57) գործով 1957 թ. հուլիսի 20-ին հանձնաժողովի ընդունած որոշումը, Տարեգիրք 1, էջ 222): Հաշվի առնելով կոնվենցիայի և ժողովրդավարության հստակ կապը (տե՛ս վերոնշյալ պարբ. 86–89)՝ ոչ ոքի չի թույլատրվում ժողովրդավարական հասարակության իդեալներն ու արժեքները թուլացնելու կամ քայքայելու նպատակով մեջբերել կոնվենցիայի դրույթները: Բազմակարծության և ժողովրդավարության հիմքում ընկած է անհատների կամ մարդկանց խմբերի կողմից տարբեր բնույթի փոխզիջումներ պահանջող համաձայնությունը, ընդ որում, անհատները պետք է պատրաստ լինեն երբեմն սահմանափակելու իրենց ազատություններից մի քանիսը ամբողջ երկրի առավել հիմնավոր կայունությունը երաշխավորելու համար (տե՛ս *mutatis mutandis «Պետերսենն ընդդեմ Գերմանիայի» (Petersen v Germany)* գործով որոշումը, թիվ 39793/98, ECHR 2001-XII):

Այս համատեքստում դատարանն ամենևին էլ անհավանական չի համարում, որ ժողովրդավարական վարչակարգում քաղաքական կուսակցությունների ձևով կազմավորված և առաջադիմած ամբողջատիրական շարժումները կարող են տապալել ժողովրդավարությունը, ընդ որում հենց Եվրոպայի նորագույն պատմության մեջ կան նման օրինակներ:

100. Այնուհանդերձ, դատարանը կրկնում է, որ պետք է ճշգրտորեն մեկնաբանել քաղաքական կուսակցությունների վերաբերյալ 11-րդ հոդվածով սահմանված բացառությունները. այդ կուսակցությունների միավորման ազատության սահմանափակումները կարող են հիմնավորվել միայն համոզիչ և անհերքելի փաստարկներով: 11-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով նման միջոցի անհրաժեշտությունը որոշելու հարցում մասնակից պետություններին վերապահված են հայեցողության որոշ սահմաններ: Թեև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կոչված չէ իրեն վերագրելու ազգային մարմինների լիազորությունները, որոնք միջազգային դատական ատյանների համեմատ ավելի հարմար դիրքում են նման դեպքերում իրավունքին միջամտելու ճիշտ ժամանակն ընտրելու առումով, սակայն դատարանը պետք է խիստ վերահսկողություն սահմանի ինչպես օրենքի, այնպես էլ դրան վերաբերող որոշումների նկատմամբ, ներառյալ՝ անկախ դատարանների կայացրած որոշումները: Նման խիստ միջոցների, ինչպիսին է ամբողջ քաղաքական կուսակցությունը լուծարելը և նրա առաջնորդներին որոշ ժամկետով գործու-

ներություն ծավալելու իրավունքից զրկելը, կարելի է դիմել միայն ծայրահեղ դեպքերում (տե՛ս հետևյալ վճիռները՝ *Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունը և այլք* (*United Communist Party of Turkey and Others*) գործ, պարբ. 46, *Սոցիալիստական կուսակցությունը և այլք* (*Socialist Party and Others*), պարբ. 50 և *«Ազատություն և ժողովրդավարություն» կուսակցությունն (ÖZDEP) ընդդեմ Թուրքիայի (GC)»* (*Freedom and Democracy Party* (ÖZDEP) *v Turkey* (GC)), թիվ 23885/94, պարբ. 45, ECHR 1999-VIII): Վերոնշյալ 98-րդ պարբերությունում ամրագրված պայմանները բավարարելու դեպքում կրոնական պատկանելությամբ թելադրված բարոյական արժեքներին հարող քաղաքական կուսակցությունը չի կարող իր էությամբ դիտվել որպես կոնվենցիայում ամրագրված հիմնարար ժողովրդավարական սկզբունքներին հակառակ միավորում:

(δ) Քաղաքական կուսակցության անդամների գործողությունների և ելույթների համար պատասխանատվության վերագրումը կուսակցությանը

101. Դատարանը նաև համարում է, որ քաղաքական կուսակցության կանոնադրությունն ու ծրագիրը չեն կարող դիտվել որպես դրա նպատակներն ու մտադրությունները որոշելու միակ չափանիշ: Մասնակից պետությունների քաղաքական փորձը ցույց է տալիս, որ նախկինում ժողովրդավարության հիմնարար սկզբունքներին հակասող նպատակներ հետապնդող քաղաքական կուսակցություններն իշխանության գալուց առաջ պաշտոնական հրապարակումներում չեն բացահայտել նման մտադրություններ: Այդ իսկ պատճառով դատարանը միշտ ընդգծել է, որ կուսակցության քաղաքական ծրագրում կարող են քողարկված լինել նրա հռչակած նպատակներից և մտադրություններից տարբեր գաղափարներ: Հակառակն ապացուցելու համար անհրաժեշտ է համեմատել ծրագրի բովանդակությունը և կուսակցության առաջնորդների ձեռնարկած գործողությունները ու նրանց դիրքորոշումները: Եթե այդ գործողությունները և դիրքորոշումները միասին վերցրած բացահայտեն կուսակցության հիմնական նպատակներն ու մտադրությունները, ապա դրանք կարող են առանցքային դերակատարում ունենալ կուսակցության լուծարման համար (տե՛ս *Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության և այլոց* (*United Communist Party of Turkey*) վերոնշյալ գործը, պարբ. 58 և *Սոցիալիստական կուսակցության և այլոց* (*Socialist Party and Others*) վերոնշյալ գործը, պարբ. 48):

(ε) Կուսակցությունը լուծարելու համար ճիշտ պահի ընտրությունը

102. Բացի այդ, դատարանը համարում է, որ պետությունից չի կարելի պահանջել նախքան որևէ քաղաքական կուսակցության իրավունքներին միջամտելը սպասել մինչ վերջինս զավթի իշխանությունը և սկսի հստակ քայլեր ձեռնարկել սույն կոնվենցիայի և ժողովրդավարության սկզբունքներին հակասող քաղաքականություն իրականացնելու ուղղությամբ, եթե նույնիսկ այդ քաղաքականության վերահաս վտանգն ապացուցված է: Դատարանն ընդունում է, որ եվրոպական կառույցների խիստ վերահսկողությանը ենթակա հանգամանալից հետաքննությունից հետո ազգային դատարանների կողմից նման վտանգ հայտնաբերելու դեպքում պետությունը կարող է «ողջամտորեն կանխել կոնվենցիային հակասող նման քաղաքականության իրականացումը, նախքան հստակ քայլերի միջոցով այդ քաղաքականությունը կյանքի կոչելու փորձեր կարվեն, ինչը կարող է խաթարել հասարակական հանգիստը և երկրի ժողովրդավարական վարչակարգը» (տե՛ս մեծ պալատի կայացրած վճիռը, պարբ. 81):

103. Դատարանն այն կարծիքին է, որ պետությանը վերապահված կանխիչ միջամտության այսպիսի լիազորությունը նույնպես համատեղելի է կոնվենցիայի 1-ին հոդվածով մասնակից պետությունների ստանձնած դրական պարտավորությունների հետ, այն է՝ պաշտպանել իրենց իրավազորության ներքո գտնվող անձանց իրավունքներն ու ազատությունները: Այդ պարտավորությունները վերաբերում են ոչ միայն պետության ներկայացուցիչներին վերագրվող և պետական հաստատություններում տեղի ունեցող գործողությունների կամ բացթողումների արդյունքում կիրառված որևէ միջամտության, այլև ոչ պետական կազմակերպություններում ֆիզիկական անձանց վերագրվող միջամտություններին (օրինակ՝ պետության՝ կյանքի իրավունքի պաշտպանության նպատակով մասնավոր հիվանդանոցներին պատշաճ միջոցներ թելադրելու պարտավորությունը ներկայացված է *«Կալվելլին և Չիլիոն ընդդեմ Իտալիայի» գործում (Calvelli and Ciglio v Italy* (GC), թիվ 32967/96, պարբ. 49, ECHR 2002-I): Քաղաքական կուսակցությունների առաջնային նպատակն է իշխանության գալ և ղեկավարել պետական ապարատի աշխատանքի զգալի մասը, ուստիև դրական պարտավորությունների տեսանկյունից կարելի է արդարացնել մասնակից պետությանը, որը կուսակցությունների վրա դնում է կոնվենցիայով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները հարգելու և պաշտպանելու, ինչպես նաև քաղաքական ծրագրում ժողովրդավարության հիմնարար սկզբունքներին համահունչ դրույթներ առաջադրելու պարտականություն:

….

110. Տվյալ դեպքում կարող է թվալ, որ «Ռեֆահ» կուսակցության որդեգրած քաղաքականությունը մեծ վտանգ էր ներկայացնում կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների համար, ընդ որում, այդ վտանգը կարող էր ավելի իրական և անմիջական դառնալ իշխանության գալուց հետո կուսակցության՝ իր ծրագիրը կյանքի կոչելու իրական հնարավորության պարագայում: Այդ իսկ պատճառով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը չի կարող քննադատել ազգային դատարաններին ավելի վաղ միջոցներ չձեռնարկելու համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրանք կարող էին ժամանակից շուտ միջամտել, երբ այդ վտանգը դեռևս չէր ուրվագծվել: Մյուս կողմից՝ հաշվի առնելով քաղաքական վարչակարգին և հասարակական հանգստին սպառնացող վտանգը՝ դատարանը չի կարող նրանց քննադատել կանխիչ միջոցներն այնքան չհետաձգելու համար, մինչ «Ռեֆահ» կուսակցությունը զավթեր իշխանությունը և սկսեր բուռն գործունեություն ծավալել, օրինակ՝ իր ծրագրերն իրականացնելու նպատակով խորհրդարանի քննարկմանը ներկայացներ համապատասխան օրինագծեր:

Մի խոսքով, դատարանը համարում է, որ տվյալ դեպքում, միջամտության պահն ընտրելով, ազգային մարմինները չեն անցել կոնվենցիայով իրենց վերապահված հայեցողության սահմանները:

Մեծ պալատը որոշել է, որ անհատ դիմողների և «Ռեֆահ» կուսակցության այլ անդամների կողմից արված հայտարարությունները կարելի է վերագրել ամբողջ կուսակցությանը, քանի որ վերջինս նրանց նկատմամբ կարգապահական որևէ գործողության չի դիմել:

119. Դատարանը պատճառ չի տեսնում չընդունելու մեծ պալատի այն եզրակացությունը, որ «Ռեֆահ» կուսակցության կողմից առաջադրված իրավական համակարգերի բազմազանության գաղափարը չի կարող կոնվենցիայի համակարգի հետ համատեղելի լինել: Այս վճռում մեծ պալատը ներկայացրել է հետևյալ հիմնավորումները:

«70… Դատարանը համարում է, որ իրավական համակարգերի բազմազանության մասին «Ռեֆահ» կուսակցության առաջարկը բոլոր իրավահարաբերություններում կհանգեցնի կրոնի տեսանկյունից մարդկանց տարբերակմանը, ինչի հետևանքով նրանք կդասակարգվեն ըստ կրոնական համոզմունքների և իրավունքների ու ազատությունների կարժանանան ոչ թե որպես անձ, այլ որպես այս կամ այն կրոնական շարժման անդամ:

«Դատարանը պաշտպանում է այն կարծիքը, որ նման հասարակության մոդելը չի կարող կոնվենցիայի համակարգի հետ համատեղելի համարվել երկու պատճառով.

Առաջին՝ այս դեպքում պետությունը կզրկվի անձանց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև ժողովրդավարական հասարակությունում բազմազան հավատներ և կրոններ դավանելու ազատության անաչառ երաշխավորի դերից, քանի որ պետությունն անձանց կպարտադրի ենթարկվել ոչ թե վերոնշյալ գործառույթներն իրականացնող պետության կողմից սահմանված կանոններին, այլ այս կամ այն կրոնի դոգմաներին: Սակայն պետության վրա դրված է դրական պարտավորություն՝ իր իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովելու կոնվենցիայով սահմանված բոլոր իրավունքների ու ազատությունների ամբողջական իրացումը և բացառելու դրանց անտեսումը (տե՛ս *mutatis mutandis «Էյրին ընդդեմ Իռլանդիայի» (Airey v Ireland)* գործով 1979 թ. հոկտեմբերի 9-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 32, էջ 14, պարբ. 25):

Երկրորդ՝ նման համակարգի դեպքում հանրային ազատությունները հավասարապես իրացնելու մասով անշուշտ կխախտվեր անհատների միջև անխտրականության սկզբունքը, որը ժողովրդավարության անկյունաքարերից է: Հանրային և մասնավոր իրավունքի բոլոր բնագավառներում անհատներին տարբերակող վերաբերմունքը վստահաբար չի կարող հիմնավորվել կոնվենցիայի դրույթներով, հատկապես՝ 14-րդ հոդվածով, որով արգելվում է խտրականությունը: Նման տարբերակիչ վերաբերմունքի պայմաններում չի կարելի արդար հավասարակշռության բերել իրենց կանոններով պետությունը ղեկավարելու ցանկություն հայտնող որոշ կրոնական խմբերի պահանջները և խաղաղության ու տարբեր կրոնների ու դավանանքների հանդուրժողականության վրա հիմնված ամբողջ հասարակության շահերը» (տե՛ս *«Բելգիայի լեզվաբանական»* (*Belgian Linguistic*) գործով 1968 թ. հուլիսի 23-ի վճիռը, շարք A, թիվ 6, պարբ. 9 և 10, ինչպես նաև *«Աբդուլազիզը, Կաբալեսը և Բալկանդալին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Abdulaziz, Cabales and Balkandali v the United Kingdom)* գործով 1985 թ. մայիսի 28-ի վճիռը, շարք A, թիվ 94, պարբ. 72)»:

…

123. Դատարանը պաշտպանում է մեծ պալատի այն կարծիքը, որ շարիաթը հակասում է կոնվենցիայով ամրագրված ժողովրդավարության հիմնական սկզբունքներին.

«72. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համաձայն է սահմանադրական դատարանի այն կարծիքին, որ կրոնական դոգմաները և կանոնները կուրորեն արտացոլող շարիաթը կարծրացած է: Քաղաքական բազմակարծության կամ մշտապես կատարելագործվող հանրային ազատությունների սկզբունքները տեղ չունեն այդ օրենքում: Դատարանը նաև նշում է, որ շարիաթի կիրառմանը բացահայտորեն վերաբերող բոլոր օրինազանց հայտարարությունները կարդալիս դրանք դժվար է համաձայնեցնել ամբողջ կոնվենցիայով ամրագրված ժողովրդավարության հիմնարար սկզբունքների հետ: Դժվար է հայտարարել ժողովրդավարության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի մասին՝ միաժամանակ սատարելով շարիաթի վրա հիմնված վարչակարգին, որն ակնհայտորեն շեղվում է կոնվենցիայի արժեքային համակարգից, մասնավորապես՝ քրեական օրենսդրության և դատավարության, կանանց իրավական կարգավիճակի և նրանց նկատմամբ գործող կանոնների առումով, ինչպես նաև մասնավոր ու հանրային կյանքի բոլոր ոլորտներին ըստ կրոնական դրույթների միջամտելու մասով: Դատարանի կարծիքով՝ այն քաղաքական կուսակցությունը, որի գործունեությունը հետապնդում է կոնվենցիայի մասնակից պետությունում շարիաթը ներմուծելու նպատակ, թերևս չի կարող համատեղելի լինել ամբողջ կոնվենցիայի հիմքում ընկած ժողովրդավարության իդեալի հետ»:

124. Դատարանը չպետք է մոռանա, որ նախկինում արմատական կրոնական ուսմունքների վրա հիմնված քաղաքական շարժումներին հաջողվել է որոշ մասնակից պետություններում զավթել իշխանությունը և հնարավորություն ստանալ հաստատելու իրենց պատկերացրած հասարակության մոդելը: Ուստի կարծում է, որ կոնվենցիայի դրույթների համաձայն՝ ցանկացած մասնակից պետություն կարող է, ելնելով պատմական փորձից, հակազդել նման քաղաքական շարժումների կազմավորմանը:

125. Բացի այդ, դատարանը նշում է, որ Օսմանյան կայսրությունում որոշ ժամանակ գործել է կրոնական իսլամական վարչակարգ, որի տապալումից և հանրապետության հռչակումից հետո Թուրքիան ընտրեց կառավարման աշխարհիկ կարգի տարատեսակներից մեկը, որի պայմաններում իսլամի և այլ կրոնների տարածումը սահմանափակվել է անհատական դավանանքով: Գիտակցելով Թուրքիայում ժողովրդավարական վարչակարգի պահպանման հարցում կառավարման աշխարհիկ կարգի հանդեպ հարգանք ապահովելու կարևորությունը՝ դատարանը հիմնավորված է համարում Թուրքիայի սահմանադրական դատարանի այն որոշումը, որի համաձայն՝ շարիաթի հաստատմանն ուղղված «Ռեֆահ» կուսակցության քաղաքականությունը հակասում է ժողովրդավարությանը:
…

130. Դատարանը համարում է, որ վերոնշյալ ելույթների մեծ մասում գործածվող «ջիհադ» բառի իմաստից անկախ (որի հիմնական նշանակությունն է «պրբազան պատերազմ, այն է՝ պայքար, որը պետք է մղվի մինչև հասարակությունում իսլամի լիակատար գերակայության հաստատումը»)՝ քաղաքական իշխանության հասնելու միջոցներին առնչվող տերմինաբանության մեջ երկիմաստություն է նկատվել: Այս բոլոր ելույթներում նշվել է իշխանության հասնելու և այն պահպանելու ճանապարհին «Ռեֆահ» կուսակցության առջև ծառացած տարբեր խոչընդոտները հաղթահարելու նպատակով «օրենքի շրջանակներում» ուժ գործադրելու հնարավորության մասին:

131. Դատարանը նաև պաշտպանում է պալատի հետևյալ եզրակացությունը.

> «74.…
>
> Թեև ճիշտ է, որ պետական փաստաթղթերում «Ռեֆահ» կուսակցությունը որպես քաղաքական ներազդման միջոցի՝ ուժի կամ բռնության դիմելու կոչեր չի անում, սակայն նա արագ և գործնական քայլեր չի ձեռնարկել այն կուսակցականներից առանձնանալու համար, ովքեր հրապարակավ հաստատել են անհրաժեշտության դեպքում իրենց խոչընդոտող քաղաքական գործիչների դեմ ուժ գործադրելու գաղափարը: Այս ամենից հետևում է, որ «Ռեֆահ» կուսակցության առաջնորդները չեն հատակեցրել այն հայտարարությունների երկիմաստությունը, որոնցում նշվում է իշխանության հասնելու և այն պահպանելու համար բռնի միջոցների դիմելու հնարավորությունը» (տե՛ս *mutatis mutandis* *«Զանան ընդդեմ Թուրքիայի» (Zana v Turkey)* գործով 1997 թ. նոյեմբերի 25-ին կայացված վճիռը, Զեկույցներ, 1997-VII, էջ 2549, թիվ 58):

(ա) «Հրատապ սոցիալական անհրաժեշտության» ընդհանուր քննություն
132. Տվյալ դեպքում ընդհանուր գնահատական տալով միջամտության համար հրատապ սոցիալական անհրաժեշտության վերաբերյալ վերը թվարկված կետերին՝ դատարանը կարծում է, որ սահմանադրական դատարանի մեջբերած «Ռեֆահ» կուսակցության անդամների և առաջնորդների գործողություններն ու ելույթները վերագրելի են ամբողջ կուսակցությանը: Այդ գործողությունների և ելույթների միջոցով բացահայտվել են կուսակցության հեռահար քաղաքական նպատակները, որոնք ուղղված էին բազում իրավակարգերի շրջանակներում շարիաթի վրա հիմնված վարչակարգի հաստատմանը: Դատարանը նաև հայտարարել է, որ «Ռեֆահ» կուսակցությունը չի բացառել իր քաղաքականությունն իրագործելու և նախատեսված համակարգը պահպանելու նպատակով ուժ գործադրելու հնարավորությունը: Հաշվի առնելով այն փաստը, որ այս ծրագրերը հակասում են «ժողովրդավարական հասարակություն» հասկացությանը, և դրանց կենսագործման իրական հնարավորությունների հետևանքով ժողովրդավարությանն ավելի լուրջ և անխուսափելի վտանգ կսպառնար, մասնակից պետություններին վերապահված հայեցողության նույնիսկ նեղ սահմանների համատեքստում սահմանադրական դատարանի նշանակած պատժամիջոցը դիմողների նկատմամբ բավարարում է հրատապ սոցիալական անհրաժեշտության պահանջը»:

(բ) Բողոքարկված միջոցի համաչափությունը
133. Կուսակցության բերած փաստարկներն ուսումնասիրելուց հետո դատարանը պատճառ չի տեսնում մեծ պալատի կայացրած վճռում զետեղված հետևյալ դատողությունները չընդունելու համար:

> «82. … Նախկինում դատարանը վճռել է, որ քաղաքական կուսակցության լուծարումը՝ դրա առաջնորդների վրա դրված ժամանակավոր արգելքով (խորհրդարանում պաշտոն զբաղեցնելու) խիստ միջոց է, և նման միջոցների կարելի է դիմել միայն ծայրահեղ դեպքերում (տե՛ս նախորդ՝ *«Սոցիալիստական կուսակցությունը և այլք ընդդեմ Թուրքիայի»* (*Socialist Party and Others v Turkey*) գործով վճիռը, պարբ. 51): Տվյալ դեպքում դատարանը եզրակացրել է, որ խնդրո առարկա միջամտությունը բավարարում է հրատապ սոցիալական անհրաժեշտության պայմանը: Հարկ է նաև նշել, որ «Ռեֆահ» կուսակցության լուծարումից հետո նրա ներկայացուցիչներից միայն հինգն են, այդ թվում և դիմողները, ժամանակավորապես ազատվել խորհրդարանում զբաղեցրած իրենց պաշտոնից և զրկվել քաղաքական կուսակցության առաջնորդների իրենց դերակատարումից: Իսկ խորհրդարանի անդամ հանդիսացող մնացած 152 կուսակցականները չեն ազատվել իրենց պաշտոններից և շարունակել են քաղաքական ասպարեզում իրենց բնականոն գործունեությունը: Այդ կապակցությամբ դատարանը համարում է, որ

միջոցի համաչափությունը որոշելիս հարկ է հաշվի առնել նաև միջամտության բնույթի և խստության գործոնները (տե՛ս, օրինակ՝ *«Սյուրեքն ընդդեմ Թուրքիայի»* (*Sürek v Turkey*) գործը, (No 1) [GC], թիվ 26682/95, պարբ. 64, ECHR 1999-IV):

134. Դատարանը նաև նշում է, որ դիմողների հիշատակած դրամական վնասի փոխհատուցումը հիմնականում պայմանավորված է վաստակի կորստով և շահարկման բնույթ ունի: «Ռեֆահ» կուսակցության ակտիվների ցածր արժեքի պարագայում դրանց փոխանցումը գանձապետարան չի կարող որևէ ազդեցություն գործել խնդրո առարկա միջամտության համաչափության վրա: Եվ ավելին, դատարանը նշում է, որ դիմողներից երեքի՝ պրն Նեքմեթին Էրբականի, պրն Սևքեթ Քազանի և պրն Ահմեդ Թեքդալի վրա դրված արգելքը, որի համաձայն՝ նրանք հինգ տարի ժամկետով իրավունք չունեն ծավալելու որոշակի քաղաքական գործունեություն, ժամանակավոր բնույթ ունի: Բացի այդ, կուսակցության լուծարման համար հիմնականում պատասխանատու են կուսակցության նախագահն ու նրա տեղակալները՝ ի պաշտոնե վերոնշյալ եղյթներով հանդես գալու և համապատասխան դիրքորոշումներ որդեգրելու համար:

Այս ամենից հետևում է, որ հետապնդվող նպատակների տեսանկյունից խնդրո առարկա միջամտությունը տվյալ դեպքում չի կարող անհամաչափ համարվել:

4. Դատարանի եզրակացությունը կոնվենցիայի 11-րդ հոդվածի վերաբերյալ

135. «Ռեֆահ» կուսակցությունը լուծարելու և տվյալ գործով այլ դիմողներին որոշ քաղաքական իրավունքներից ժամանակավորապես զրկելու իրողությունը հիմնավորող համոզիչ և անհերքելի փաստարկները մանրազնին վերանայելուց հետո դատարանը համարում է, որ այդ միջամտությունները բավարարել են հրատապ սոցիալական անհրաժեշտության պայմանը և «համաչափ են հետապնդվող նպատակներին»: Հետևաբար, 11-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով կուսակցության լուծարումը կարելի է անհրաժեշտ համարել «ժողովրդավարական հասարակությունում»:

136. Համապատասխանաբար, կոնվենցիայի 11-րդ հոդվածը չի խախտվել:

Ակնհայտ է, որ հաշվի առնելով «Ռեֆահ» կուսակցության առաջնորդների կողմից հաճախ կրկնվող ծայրահեղ տեսակետները, որոնք հակասել են կոնվենցիայով ճանաչված արժեքներին, այդ թվում՝ կրոնական ու քաղաքական բազմակարծությանը և քաղաքական համակարգում փոփոխություն անելու համար բռնության դիմելու արգելքին, մեծ պալատը հանգել է այն եզրակացության, որ կուսակցության լուծարումը համատեղելի է 11-րդ հոդվածի 2-րդ կետի հետ (Թուրքիայի համար կառավարման աշխարհիկ կարգի կարևորության մասին տե՛ս *Լեյլա Շահինի* (*Leyla Sahin*) վերոնշյալ գործը): Մեկնաբանելով «Ռեֆահ» կուսակցության գործը՝ Դ. Մակգոլդրիկը նշել է. «Հարկ է ընդունել, որ իսլամի կրոնական համոզմունքների և ժամանակակից ժողովրդավարական պետությունների համակարգերի միջև կարող են որոշ հարցերով սուր տարաձայնություններ առաջանալ» (Multiculturalism and its Discontents (2005) 5(1), *Human Rights Law Review,* 27, at p. 48):

Հոդված 11(1)

Խաղաղ հավաքների ազատություն

.....

«Էզլինն ընդդեմ Ֆրանսիայի» (Ezelin v France) A.202 (1991) 14 EHRR 362
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Ներկա գործով որպես դիմող հանդես է եկել մի փաստաբան (ֆր. *avocat*), որն աշխատում էր Գվադելուպայի Բաս-Տեր քաղաքում: 1983 թ. նա նախագահում էր Գվադելուպայի փաստաբանների կոլեգիայի արհմիությունը: Նույն տարվա փետրվարին Գվադելուպայի անկախության համար պայքարող մի շարք շարժումներ և արհմիություններ ցույց անցկացրեցին Բաս-Տեր քաղաքում՝ ի նշան բողոքի արհմիության այն երեք ակտիվիստների դատապարտման դեմ, որոնք մեղադրվել են պետական շենքերին քրեորեն պատժելի վնաս հասցնելու համար: Իշխանություններին նախապես ծանուցել են ցույցի մասին, և վերջիններս չեն արգելել դրա անցկացումը: Ոստիկանության տվյալներով՝ երթին մասնակցում էր շուրջ 1000 ցուցարար, որոնք վիրավորական արտահայտություններ էին հնչեցնում մի ոստիկանի հասցեին. «Մի օր դու

պատասխան կտաս ամեն ինչի համար»: Ցուցարարները դատարանների շենքերի առջև հայհոյում էին դատավորներին: Բացի այդ, անհայտ անձինք վարչական շենքի պատերին գրել են դատավորներին հասցեագրված «կավատ» բառը: Ցույցի ընթացքում դիմողը բռնել է մի պաստառ՝ հետևյալ գրությամբ. «Փաստաբանների կոլեգիայի արհմիությունը դեմ է «Անվտանգության և ազատության մասին» օրենքին»: Ցույցին հաջորդած դատական հետաքննության ընթացքում չի հաջողվել պարզել անարգանքի և սպառնալիքի խոսքերի և գրաֆիտիի համար պատասխանատու ցուցարարների ինքնությունը: Այնուհանդերձ, գլխավոր դատախազը Գվադելուպայի փաստաբանների կոլեգիայի նախագահին դիմել է կարգապահությունը, ինչպես նաև փաստաբանի մասնագիտությունը կարգավորող որոշման 106-րդ հոդվածը խախտելու համար դիմողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու հայցով: Ի դեպ, այդ հոդվածով կարգապահական պատժամիջոց է նախատեսվում նույնիսկ ոչ մասնագիտական հարցերին վերաբերող անձեռնմխելիության արտոնությունը կամ հայեցողության սահմանը պահպանելու պարտականությունը խախտելու համար: Փաստաբանների կոլեգիայի խորհուրդը որոշում է կայացրել դիմողի դեմ որևէ կարգապահական պատժամիջոց չկիրառելու մասին, քանի որ դատական հետաքննությամբ որևէ ապացույց չի հայտնաբերվել առ այն, որ նրա արարքները հակասել են 106-րդ հոդվածին: Գլխավոր դատախազն այդ որոշումը բողոքարկել է Բաս-Տերի վերաքննիչ դատարանում, որը մեղավոր է ճանաչել դիմողին և նրան վարչական նկատողության արել: Վերաքննիչ դատարանի կայացրած վճռում ասվում է հետևյալը. «Որևէ պնդում չի արվում, որ պրն Էզլինն ակտիվ մասնակցել է այս ցույցին իր մշտական ներկայությունից և պաստառ բռնելուց բացի այլ գործողություններ ձեռնարկելու միջոցով: Նա ցույցին մասնակցել է փաստաբանի կարգավիճակով, քանի որ նրա բռնած պաստառի վրա նշված էր իր մասնագիտությունը, և հանցավոր ու վիրավորական գործողությունների ընթացքում երբեք չի առանձնացել ցուցարարների շարքերից կամ չի լքել երթը: Փաստաբանների կոլեգիայի՝ իր մասնագիտությունը հրապարակավ հայտնած անդամի նման զանցանքը չի կարող արդարացվել»: Վճռաբեկ դատարանը մերժել է դիմողի բողոքը, ինչից հետո վերջինս գանգատ է ներկայացրել հանձնաժողովին: Հանձնաժողովը՝ տասնհինգ կողմ և վեց դեմ ձայներով, արձանագրել է 11-րդ հոդվածի խախտում:

…

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 11-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

…

37. Ինքնուրույն դերից և կիրառման յուրահատուկ շրջանակից անկախ՝ 11-րդ հոդվածը տվյալ դեպքում հարկ է դիտարկել նաև 10-րդ հոդվածի համակցությամբ (տե՛ս *Յանգի, Ջեյմսի և Ուեբսթերի* (*Young, James and Webster*) գործով 1981 թ. օգոստոսի 13-ի վճիռը, շարք A, թիվ 44, էջ 23, պարբ. 57): 10-րդ հոդվածով ամրագրված անձնական կարծիքի պաշտպանությունը 11-րդ հոդվածով սահմանված խաղաղ հավաքների ազատության նպատակներից մեկն է:

Ա. ԱՐՁԱՆԱԳՐՎԵ՞Լ Է ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆԸ

38. Պատասխանող պետությունը հայտարարել է, որ դիմող պրն Էզլինին վերապահված խաղաղ հավաքների ազատությունը և ազատ արտահայտվելու իրավունքը չեն խախտվել, քանի որ նրան չի արգելվել մասնակցել 1983 թ. փետրվարի 12-ի երթին և մասնագիտական իրավասության շրջանակներում հրապարակավ արտահայտել իր համոզմունքները: Դիմողը վարչական նկատողություն ստացավ միայն ցույցից հետո, ինչը պայմանավորված էր նրա վարքով, որը դատարանի կարծիքով հակասում էր նրա մասնագիտական պարտավորություններին:

39. Դատարանն անընդունելի է համարում այս հայտարարությունը: Կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածների 2-րդ կետում հիշատակված «սահմանափակումներ» բառը մեկնաբանելիս չի կարելի անտեսել ոչ միայն խաղաղ հավաքից առաջ կամ հավաքի ընթացքում, այլև՝ հավաքից հետո ձեռնարկված պատժամիջոցները (համեմատիր՝ հատկապես 10-րդ հոդվածի առնչությամբ, *Հենդիսայդի* (*Handyside*) գործով 1976 թ. դեկտեմբերի 7-ի վճիռ, շարք A, թիվ 24, էջ 21, պարբ. 43 և *Մյուլլերի* (*Müller*) գործով 1988 թ. մայիսի 24-ի վճիռ, շարք A, թիվ 133, էջ 19, պարբ. 28):

40. Երկրորդ՝ պետությունը պնդում է, որ անկախ պրն Էզլինի անձնական մտադրություններից և վարքի խաղաղ բնույթից՝ նրա կողմից բողոքարկված պատժամիջոցով որևէ կերպ չի խախտվել խաղաղ հավաքների ազատությունը, իսկ պատժամիջոցը կիրառվել է այն ժամանակ, երբ իրավիճակն անվերահսկելի է դարձել:

Հանձնաժողովի կարծիքով՝ դիմողը միայն խաղաղ մտադրություններ է ունեցել:

41. Դատարանն ընդգծում է, որ իշխանությունները նախապես ծանուցվել են ցույցի մասին և այն չեն արգելել: Ցույցին մասնակցելով՝ դիմողն օգտվել է խաղաղ հավաքների ազատությունից: Ավելին, Բաս Տեր քաղաքի ոստիկանության գլխավոր

տեսուչի զեկույցը կամ գործի այլ հանգամանքները չեն վկայում այն մասին, որ Էզլինն այլ ցուցարարների նման սպառնացել է դատավորներին և գրաֆիտի արել:

Վերաքննիչ դատարանն ապացուցված է համարել «հանցավոր և վիրավորական գործողությունների ընթացքում ցուցարարներից չառանձնանալու կամ երթը չլքելու» համար դիմողին ներկայացված մեղադրանքը: Վճռաբեկ դատարանը նշել է, որ դիմողը երբեք «չի արտահայտվել այս անկարգությունների դեմ կամ չի լքել երթը՝ այդ օրինազանց գործողություններին չմասնակցելու համար»:

Համապատասխանաբար, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը համարում է, որ տվյալ դեպքում տեղի է ունեցել միջամտություն դիմողի խաղաղ հավաքների ազատությանը:

Բ. ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱՎՈՐՎԱ՞Ծ Է

42. Ուստի պետք է որոշել՝ բողոքարկված պատժամիջոցը «նախատեսվա՞ծ է օրենքով», ուղղվա՞ծ է նշված հոդվածի 2-րդ կետով սահմանված օրինական նպատակներից մեկին կամ մի քանիսին և «անհրաժե՞շտ է ժողովրդավարական հասարակությունում», թե՞ ոչ:

1. «Օրենքով նախատեսված»

…

Տվյալ դեպքում իրավական տեսանկյունից բողոքարկված պատժամիջոցի հիմքում ընկած են միայն փաստաբանի (ֆր. *avocat*) մասնագիտությանը բնորոշ հատուկ կանոնները: 1972 թ. հունիսի 9-ի համապատասխան որոշման 106-րդ հոդվածով հստակ սահմանվում է, որ յուրաքանչյուր փաստաբան նույնիսկ իր մասնագիտական գործունեության շրջանակներից դուրս հատուկ պարտավորություններ ունի, իսկ վճռաբեկ դատարանի որոշման համաձայն՝ այդ պարտավորությունների շարքն է դասվում նաև հարգանքը դատական իշխանության նկատմամբ:

Վերոնշյալ փաստերից հետևում է, որ միջամտությունը «նախատեսված է օրենքով»:

2. «Օրինական նպատակ»

…

47. Ապացույցներից պարզ է դառնում, որ պրն Էզլինի նկատմամբ սահմանված պատժամիջոցը պայմանավորված է այն իրողությամբ, որ նա չի առանձնացել ցուցարարներից՝ անկառավարելի անկարգություններին չմասնակցելու համար: Ինչպես նշեց հանձնաժողովը, իշխանությունների կարծիքով՝ նման վերաբերմունքը վկայում է այն մասին, որ դիմողը՝ որպես փաստաբան, պաշտպանում և ջանասիրաբար սատարում էր նման անկարգությունները: Հետևաբար, միջամտությունն ուղղված է «անկարգությունները կանխելու» օրինական նպատակին:

3. Միջամտության անհրաժեշտությունը ժողովրդավարական հասարակությունում

48. Դիմողը հայտարարել է, որ գանգատի առարկա դարձած միջամտությունն անհրաժեշտ չէր «ժողովրդավարական հասարակությունում»: Նա ասել է, որ այլ ցուցարարների գործողությունների հանդեպ իր բացասական վերաբերմունքն արտահայտելու նպատակով ցույցից հեռանալու պահանջով անտեսվում է իր խաղաղ հավաքների ազատությունը:

49. Մյուս կողմից՝ պետությունը, մասնավորապես, հաշվի առնելով պրն Էզլինի զբաղեցրած փաստաբանի պաշտոնը և իրավիճակի հանգամանքները, հայտարարել է, որ վիճարկված միջոցը լիովին համապատասխանում է հրատապ սոցիալական անհրաժեշտությանը: Ցույցի ընթացքում տեղի ունեցած անկառավարելի անկարգությունների հանդեպ բացասական վերաբերմունք չդրսևորելով՝ դիմողը փաստորեն հավանություն էր տալիս դրանց:

50. Հանձնաժողովը պնդում էր, որ պրն Էզլինի վարքագծի թողած տպավորությամբ պայմանավորված կարգապահական պատժամիջոցը հակասում է հրատապ սոցիալական անհրաժեշտության խիստ պահանջին, ուստի չի կարող անհրաժեշտ համարվել «ժողովրդավարական հասարակությունում»:

51. Դատարանն ամբողջ գործի համատեքստում, հաշվի առնելով տվյալ դեպքում սերտորեն փոխկապակցված խաղաղ հավաքների ազատությունը և ազատ արտահայտվելու իրավունքը, քննել է կարգապահական պատժամիջոցը՝ պարզելու համար, թե արդյոք այն համաչա՞փ էր հետապնդվող օրինական նպատակին:

52. Համաչափության սկզբունքով պահանջվում է արդար հավասարակշռության բերել, մի կողմից, 11-րդ հոդվածի 2-րդ կետում նշված նպատակների պահանջները և, մյուս կողմից, փողոցներում կամ այլ հասարակական վայրերում հավաքված անձանց՝ խոսքով, շարժումներով կամ նույնիսկ լռությամբ իրենց կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի պահանջները: Այդ պահանջներն արդար հավասարակշռության բերելու փորձի արդյունքում փաստաբանները չպետք է կարգապահական պատժամիջոցներից վախենալու պատճառով հրաժարվեն նման դեպքերում իրենց համոզմունքները բացահայտ արտահայտելու մտադրությունից:

53. Հարկ է նշել, որ պրն Էզլինի վրա դրված պատիժը դասվել է 1972 թ. հունիսի 9-ի որոշման 107-րդ հոդվածում թվարկված ամենաթեթև կարգապահական պատժամիջոցների շարքը: Այդ պատժամիջոցը հիմնականում բարոյական բնույթ ուներ, քանի որ դիմողին նույնիսկ ժամանակավորապես չէր արգելվում շարունակել իր մասնագիտական գործունեությունը կամ անդամակցել Փաստաբանների կոլեգիայի խորհրդին: Այնուհանդերձ, դատարանը համարում է, որ խաղաղ հավաքներին, տվյալ դեպքում՝ արտոնված ցույցին մասնակցելու ազատությունն այնքան կարևոր է, որ չի կարող սահմանափակվել նույնիսկ փաստաբանի դեպքում, եթե միայն նա նշված առիթով որևէ դատապարտելի արարք չի գործել:

Մի խոսքով, թեև գանգատի առարկա դարձած պատժամիջոցը նվազագույն է, սակայն այն անհրաժեշտ չէ «ժողովրդավարական հասարակությունում»: Համապատասխանաբար, խախտվել է կոնվենցիայի 11-րդ հոդվածը:

…

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

…

Վեց կողմ և երեք դեմ ձայներով արձանագրել է կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում ընդգրկվել են հետևյալ դատավորները՝ Կրեմոնան, Գյոլչյուքլուն, Ուոլշը, Շպիլմանը, Դե Մեյերը և Փեքանենը: Նախագահող դատավոր Ռիսդալը հայտնել է չհամընկնող կարծիք, քանի որ, նրա համոզմամբ, էզլինի նկատմամբ պատժամիջոց սահմանելիս իշխանությունները չեն խախտել հայեցողության սահմանը՝ հաշվի առնելով իրավաբանների համար հաստատված մասնագիտական վարքագծի կանոնները: Նմանապես, դատավոր Մաթշերի կարծիքով. «Կասկածից վեր է», որ էզլինը կոպտորեն խախտել է «պարկեշտության» բարոյական պարտականությունը, ուստիև նրա վրա դրված նվազագույն պատիժը համաչափ է: Դատավոր Փեթիթին նույնպես համարել է, որ պատժամիջոցը համապատասխանում է Ֆրանսիայի իշխանություններին վերապահված հայեցողության սահմաններին: Դատավորը նաև ընդգծել է հետևյալը. «Դատարանի մեծամասնությունը հանձնաժողովի օրինակով կարևորել է խաղաղ ցույցերին մասնակցելու իրավունքը, սակայն հարց է առաջանում, թե տվյալ գործում կա՞ն անհրաժեշտ պայմաններ նշված սկզբունքը կիրառելու համար»:

2 Սա առաջին դեպքն է, երբ դատարանն արձանագրել է խաղաղ հավաքների իրավունքի խախտում: Այս վճռում տարբերություն չի դրվում մի որոշակի վայրում խաղաղ հավաքներ անցկացնելու և երթեր կազմակերպելու նպատակով հավաքների ազատության միջև: Բացի այդ, դատարանն ընդլայնել է այդ իրավունքի շրջանակը՝ մեկնաբանելով, որ այն խախտվել է երթի մասնակիցների նկատմամբ համապատասխան պատիժներ սահմանելու պատճառով: Այնուհանդերձ, այդ իրավունքն իրացնող անձինք չպետք է դատապարտելի արարքների դիմեն հավաքների ժամանակ: Թեև դատարանը չի հստակեցրել այդ եզրույթի նշանակությունը, այն ենթադրաբար նշում է բողոքի խաղաղ ցույցի հետ անհամատեղելի արարքներ, օրինակ՝ բռնի գործողություններ հակառակորդների կամ ոստիկանների դեմ, որոնք, կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, օրինականորեն փորձում են վերահսկել հավաքները:

3 Այս իրավունքի նկատմամբ իր մոտեցումը դատարանը պարզաբանել է ավելի շուտ՝ *«Բժիշկները հանուն կյանքի» միավորումն ընդդեմ Ավստրիայի» (Plattform Artze fur das Leben v Austria,* 1988, 13 EHRR 204, A.139) գործում, որն ուղղակիորեն վերաբերում է 13-րդ հոդվածին, այսինքն՝ կոնվենցիայով սահմանված իրավունքների խախտման դեպքում իրավական պաշտպանության արդյունավետ ներպետական միջոցների դիմելու իրավունքին: Որպես դիմող հանդես են եկել մի խումբ բժիշկներ, որոնք քարոզարշավ են անցկացրել հղիության արհեստական ընդհատման դեմ: 1980 թ. նրանք ծանուցել են ոստիկանությանը, որ պատրաստվում են պատարագ մատուցել Վերին Ավստրիայի Շթադլ-Փաուրա եկեղեցում, այնուհետև երթ կազմակերպել դեպի հղիության արհեստական ընդհատման վիրահատություններ անող բժշկի հիվանդանոց: Ոստիկանությունը չի առարկել և թույլատրել է երթի ժամանակ անցնել պողոտայով: Այնուհետև ոստիկաններն արգելել են երկու հակացույցերի անցկացումը: Երթի մեկնարկից քիչ առաջ կազմակերպիչները մտավախություն են հայտնել հնարավոր միջադեպերի կապակցությամբ և փոխել իրենց երթուղին՝ որպես նպատակակետ ընտրելով մոտակա բլրի վրա գտնվող եկեղեցին, ոչ թե բժշկի հիվանդանոցը: Ոստիկանները չեն առարկել, սակայն երթի

կազմակերպիչներին զգուշացրել են, որ անհնար կլինի զսպել հակացույցի մասնակիցներին, որոնք կարող են առարկաներ նետել երթի մասնակիցների վրա: Մոտ 500 հակացուցարարներ փորձել են խանգարել պատարագը և երթի ընթացքը՝ աղաղակելով և ձու ու խոտի խրձեր նետելով մասնակիցների վրա: Ի վերջո, երբ ֆիզիկական բռնության վտանգ է առաջացել, զանգվածային անկարգությունների կանխարգելման ոստիկանության հատուկ ստորաբաժանումը կենդանի պատվար է կազմել բողոքի երթի մասնակիցների և հակացուցարարների միջև: Ավելի ուշ միավորումը կարգապահական բողոք է ներկայացրել ոստիկանների դեմ՝ պնդելով, որ նրանք բավարար պաշտպանություն չեն ապահովել միավորման անդամների համար: Վերին Ավստրիայի անվտանգության ծառայությունը մերժել է բողոքը: Ապա միավորումը բողոք է ներկայացրել սահմանադրական դատարան, որը, սակայն, եզրակացրել է, որ նման հարցերն իր իրավասությունից դուրս են: 1982 թ. միավորումը թույլտվություն է ստացել հղիության արհեստական ընդհատման դեմ ևս մեկ բողոքի ցույց անցկացնել Զալցբուրգում՝ Մայր տաճարի հրապարակում: Ցույցի օրը հրապարակում հավաքվել է մոտ 350 հակացուցարար, իսկ ոստիկանները շարվել են նրանց և միավորման առաջնորդների միջև և, ի վերջո, ցուցարարներից և հակացուցարարներից ազատել հրապարակը: Միավորումը բողոք է ներկայացրել հանձնաժողովին՝ պնդելով, որ Ավստրիայի ոստիկանությունը և մյուս պետական մարմինները չեն պաշտպանել միավորման անդամների՝ կոնվենցիայով սահմանված իրավունքները: Հանձնաժողովը միաձայն արձանագրել է 13-րդ հոդվածի խախտում: Դատարանում պատասխանող պետությունը բերել է այն փաստարկը, որ 11-րդ հոդվածը պետությունների վրա ցուցարարներին պաշտպանելու դրական պարտավորություն չի դնում, ուստի միավորումը չի կարող պնդել, որ խախտվել է կոնվենցիայով ամրագրված իր հիմնարար իրավունքներից որևէ մեկը: Դատարանը միաձայն հայտարարել է հետևյալը.

> Ցույցի մասնակիցները կարող են անհանգստություն պատճառել կամ ամիարգալից վերաբերմունք դրսևորել այն անձանց նկատմամբ, ովքեր հակադրվում են իրենց գաղափարներին կամ պահանջներին: Այնուհանդերձ, ցույցի մասնակիցները պետք է կարողանան այնպես անցկացնել ցույցը, որ մտավախություն չառաջանա, որ իրենց հակառակորդները կարող են ֆիզիկական բռնություն գործադրել իրենց նկատմամբ, քանի որ հակառակ դեպքում, այդ մտավախությունը կարող է խանգարել նույն գաղափարները և շահերը պաշտպանող միավորումներին կամ այլ խմբերին հրապարակավ արտահայտել հանրությանը հուզող խիստ վիճահարույց հարցերի շուրջ իրենց կարծիքը: Ժողովրդավարական հասարակությունում հակացույց անցկացնելու իրավունքը չի կարող առաջ բերել ցույցին մասնակցելու իրավունքի արգելք»:
>
> Ուստի խաղաղ հավաքների օրինական և արդյունավետ ազատությունը չի կարող սահմանափակվել միայն պետության չմիջամտելու պարտականությամբ, քանի որ այդ ազատության ըմբռնումը որպես զուտ բացասական պարտավորություն չի համապատասխանում կոնվենցիայի 11-րդ հոդվածի խնդրին ու նպատակին: Ինչպես 8-րդ, այնպես էլ 11-րդ հոդվածով երբեմն պահանջվում է դրական միջոցներ ձեռնարկել, անհրաժեշտության դեպքում՝ նույնիսկ անհատների փոխհարաբերությունների ոլորտում (տե՛ս *mutatis mutandis «X-ը և Y-ի ընդդեմ Նիդեռլանդների» (X and Y v Netherlands)* գործով կայացրած վճիռը, 1985) A.91):
>
> Թեև մասնակից պետությունները պարտավոր են օրինական ցույցերի խաղաղ ընթացքն ապահովելու համար ողջամիտ և պատշաճ միջոցներ ձեռնարկել, նրանք չեն կարող լիակատար խաղաղություն երաշխավորել և միջոցների ընտրության հարցում հայեցողության լայն սահմաններ ունեն: Տվյալ ոլորտում կոնվենցիայի 11-րդ հոդվածով նրանց ստանձնած պարտավորությունը վերաբերում է ձեռնարկվող միջոցներին, ոչ թե հետապնդվող նպատակների արդյունքներին (պարբ. 32 և 34):

Հաշվի առնելով այն փաստը, որ 1980 թ. Զալցբուրգում տեղի ունեցած ցույցի ընթացքում կարգուկանոնը պահպանելու գործում ներգրավվել են բազմաթիվ ոստիկաններ, այդ թվում՝ անկարգությունները կանխող ստորաբաժանումներ, և հարյուր ոստիկան հակացուցարարներից պաշտպանում էր միավորման անդամներին, դատարանը եզրակացրեց հետևյալը. «Այսպիսով, Ավստրիայի իշխանությունները միանշանակ ողջամիտ և պատշաճ միջոցներ են ձեռնարկել» (պարբ. 39): Հետևաբար, քանի որ միավորումը փաստարկելի պահանջ չի ներկայացրել 11-րդ հոդվածի խախտման վերաբերյալ, տվյալ դեպքում 13-րդ հոդվածը կիրառելի չէ: Թեև դիմող միավորումը չի շահել գործը, դատարանի վճռում ներկայացվում է 11-րդ հոդվածի մեկնաբանությունը, որը բարենպաստ է խաղաղ բողոքի ցույցի մասնակիցների իրավունքների պաշտպանության տեսանկյունից՝ պետությունների վրա դնելով ինչպես բացասական, այնպես էլ դրական պարտավորություններ: Այնուհանդերձ, ինչպես պարզ է դառնում 8-րդ հոդվածով ամրագրված հարգանքի դրական պարտավորությունից, դատարանը հայեցողության լայն սահման է վերապահում պետություններին նման դրական պարտավորություններն իրականացնելու հարցում: Դիմողները հաստատ չեն կարող ակնկալել, որ դատարանը կմերժի ցույցերի ժամանակ ոստիկանների ընդունած

որոշումները, որոնք վերաբերում էին «ողջամիտ և պատշաճ միջոցների» ձեռնարկմանը խաղաղ ցույցի մասնակիցների՝ 11-րդ հոդվածով սահմանված իրավունքները պաշտպանելու համար:

4 Հանձնաժողովն արտահայտել է այն կարծիքը, որ նշված իրավունքը կիրառելի է ինչպես մասնավոր ժողովների, այնպես էլ հանրահավաքների դեպքում, իսկ հասարակական վայրերում հավաքներ անցկացնելու համար նախնական արտոնություն ձեռք բերելու ընթացակարգերը միջամտություն չեն խաղաղ հավաքների իրավունքին: Հանձնաժողովը հայտնել է նաև, որ ցույցեր անցկացնելու լիակատար արգելքը կարող է օրինական համարվել 11-րդ հոդվածի 2-րդ կետով: *«Յուրայի խորհուրդը և Յուրայի միությունն ընդդեմ Շվեյցարիայի» (Rassemblement Jurassien and Unité Jurassienne v Switzerland),* 1979, 17 DR 93) գործով որպես դիմող հանդես եկող միավորումները հետապնդել են նաև հետևյալ նպատակները՝ «Բեռնի գերիշխանությունից ազատել Յուրայի բնակիչներին» և «երաշխավորել Յուրայի ամբողջ տարածքի անկախությունը»: 1977 թ. Բեռնի շրջանի գործադիր իշխանությունը որոշել է շրջանի սահմանադրությունից հանել Յուրայի ժողովրդի մասին հիշատակումը: Ի պատասխան այդ որոշման՝ դիմողները ժողով են կազմակերպել, որը պետք է տեղի ունենար Մուտիե քաղաքի հյուրանոցներից մեկում: Նույն օրը Մուտիե քաղաքի ռեստորաններից մեկում հանդիպում են կազմակերպել հակաանջատողական ուժերի ներկայացուցիչները: Այնուհետև Գործադիր խորհուրդը երկու օրով արգելել է Մուտիե քաղաքի սահմաններում անցկացվելիք բոլոր քաղաքական հավաքները, այդ թվում՝ դիմողների ծրագրած ժողովը: Դիմողներն արգելքը բողոքարկել են Շվեյցարիայի դատարաններում, սակայն ապարդյուն: Այնուհետև նրանք գանգատ են ներկայացրել հանձնաժողովին՝ պնդելով, որ, ի թիվս այլոց, խախտվել է կոնվենցիայի 11-րդ հոդվածը: Հանձնաժողովը հայտնել է, որ խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է և հավելել է հետևյալը.

«Որպես այդպիսին՝ այս իրավունքը ներառում է ինչպես մասնավոր ժողովներ, այնպես էլ հասարակական վայրերում հանրահավաքներ անցկացնելու իրավունքը: Ինչ վերաբերում է հանրահավաքներ անցկացնելու իրավունքին, ապա արտոնություն ստանալու հետ կապված ընթացակարգերի անհրաժեշտությունը ոտնձգություն չէ այդ իրավունքի բուն էությանը: Նման ընթացակարգերը միտված են 11-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների բավարարմանը, եթե միայն իշխանություններն ի վիճակի լինեն երաշխավորել հանրահավաքի խաղաղ ընթացքը: Հետևաբար, այդ ընթացակարգերը միջամտություն չեն իրավունքին» (պարբ. 119):

Բացի այդ, հանձնաժողովը, հաշվի առնելով Մուտիե քաղաքում առկա քաղաքական լարվածությունը, աշխարհագրական տեսանկյունից արգելքի սահմանափակ բնույթը և կարճ ժամկետը, համարում էր, որ իշխանությունների ձեռնարկած պատասխան միջոցները համաչափ են: Հետևաբար, դիմողների գանգատն անընդունելի է համարվել: Ավելի ուշ *«Քրիստոնյաներն ընդդեմ ռասիզմի և ֆաշիզմի» միավորումն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Christians Against Racism and Fascism v UK,* 1980, 21 DR 138) գործում հանձնաժողովը հստակեցրել է իր մոտեցումը բոլոր ցույցերի անցկացումն արգելող հրամանների նկատմամբ: Դիմող կազմակերպությունը հիմնվել է մի քանի հարանվանությունների նախածեռնությամբ «ռասիզմի և ֆաշիզմի հիմնախնդիրների շուրջ քրիստոնյա եկեղեցու տեսակետներն ամբողջ աշխարհին հաղորդելու նպատակով»: Միավորումը ծրագրել է իր գործունեության շրջանակներում 1978 թ. ապրիլի 22-ին երթ անցկացնել Սբ Պետրոս մայր տաճարից դեպի Վեստմինստերի տաճար: Այնուհանդերձ, 1978 թ. փետրվարին ներքին գործերի քարտուղարի համաձայնությամբ Մեծ Բրիտանիայի ոստիկանության մայրաքաղաքի բաժնի ոստիկանապետը հրաման է արձակել, որով արգելվում էր երկու ամսվա ընթացքում, այսինքն՝ մինչև 1978 թ. ապրիլի 24-ը, երթեր կազմակերպել Լոնդոնում: Դիմող կազմակերպությանը նույնպես հրամանով արգելվել է անցկացնել նույն թվականի ապրիլի 22-ին նախատեսված երթը: Կազմակերպությունը գանգատ է ներկայացրել հանձնաժողովին՝ պնդելով, որ խախտվել են 11-րդ հոդվածով ամրագրված իր իրավունքները: Հանձնաժողովը հայտարարել է հետևյալը. «Ցույցեր անցկացնելու ընդհանուր արգելքը կարող է հիմնավորվել միայն այն դեպքում, եթե իրական վտանգ լինի, որ դրանց հետևանքով առաջացած անկարգությունները հնարավոր չի լինի կանխել պակաս խիստ միջոցներով»: Այս արգելող հրամանն արձակելուց առաջ Անգլիայում լարված մթնոլորտ էր ստեղծվել «Ազգային ճակատ» (*National Front)* կազմակերպության

երթերի և ցույցերի հետևանքով, որոնք, չնայած ոստիկանության մեծ ուժերի գործադրմանը, զանգվածային անկարգությունների և խռովությունների էին հանգեցրել: Արգելող հրամանագրի արձակմանը նախորդող ժամանակահատվածում պետք է անցկացվեին «Ազգային ճակատ» կազմակերպության նախատեսած մի քանի այլ ցույցեր: Ուստի հանձնաժողովը եզրակացրել է, որ արգելող որոշում արձակելով՝ իշխանությունները ողջամիտ քայլի են դիմել, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմող կազմակերպությունը կարող էր երթն անցկացնել Լոնդոնի սահմաններից դուրս կամ բողոքի դրսևորման այլ միջոց ընտրել, օրինակ՝ հանրահավաքը: Հետևաբար, գանգատն անընդունելի է համարվել: Այսպիսով, իշխանությունները պարտավոր են հիմնավորել ցույցերի բացարձակ արգելքի համեմատ պակաս խիստ միջոցներ կիրառելու անհնարինությունը: Կարելի է ասել, որ որքան մեծ է արգելքի կիրառման ժամկետը, աշխարհագրական շրջանակը և արգելված հավաքների բազմազանությունը, այնքան բարդ է հիմնավորել այդ արգելքը:

5 *«Ջավիթ Անն ընդդեմ Թուրքիայի» (Djavit An v Turkey)* 2003 թ. փետրվարի 20-ի վճիռ) գործով լիակազմ դատարանի պալատն արձանագրել է խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքի խախտում: Գործով որպես դիմող հանդես է եկել Կիպրոսի հյուսիսային հատվածում բնակվող ծագումով թուրք մի քաղաքացի: Նա արտահայտվում էր Կիպրոսում Թուրքիայի իշխանությունների և թուրքական զինված ուժերի ներկայության դեմ: Դիմողը զբաղեցնում էր «Շարժում հանուն անկախ և դաշնային Կիպրոսի» չգրանցված կազմակերպության համակարգողի պաշտոնը, ընդ որում, այդ կազմակերպությունը հիմնել են կիպրոսաբնակ թուրքերը և հույները՝ երկու համայնքների միջև բարիդրացիական հարաբերություններ ձևավորելու նպատակով: 1992-1998 թթ. ընթացքում Կիպրոսի թուրքական իշխանությունները քառասունվեց անգամ մերժել և միայն վեց անգամ բավարարել են դիմողի՝ թուրքական և հունական համայնքների սահմանագիծը հատելու հայցը, երբ նա ցանկանում էր մասնակցել կղզու հունական մասում տեղի ունեցող միջոցառումներին և հանրահավաքներին: Հաշվի առնելով տվյալ գործով թուրք *ad hoc* դատավորի չհամընկնող կարծիքը՝ պալատը որոշել է, որ «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը» կղզու երկու համայնքների սահմանագիծը հատելու համար անհատներին թույլ տալու կարգը սահմանող օրենքներ չունի: Հետևաբար, 11-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, միջամտությունները դիմողի խաղաղ հավաքների իրավունքին «նախատեսված չեն օրենքով»: *Յուրայի խորհրդի* (*Rassemblement Jurassien*) և *«Քրիստոնյաներն ընդդեմ ռասիզմի և ֆաշիզմի» միավորման* (*Christians Against Racism and Fascism*) գործերում դատարանն ընդհանուր առմամբ հաստատել է հանձնաժողովի հետևյալ կարծիքները.

> 56. …Այս իրավունքը ներառում է ինչպես հասարակական վայրերում կազմակերպված մասնավոր ժողովները և հանրահավաքները, այնպես էլ որոշակի վայրում անցկացվող ցույցերն ու զանգվածային երթերը և կարող է իրացվել նաև անհատների և հավաքների կազմակերպիչների կողմից: …Դատարանը համարում է, որ թեև 11-րդ հոդվածի հիմնական նպատակն է պաշտպանել անձի իրավունքները պետական մարմինների կամայական միջամտություններից, այնուհանդերձ այդ հոդվածից կարող են բխել նաև գործնականում նշված իրավունքների իրացումն ապահովելու դրական պարտավորություններ:

6 Մակեդոնացիների ազգային փոքրամասնության շահերը ներկայացնող նույն կազմակերպության մասնակցությամբ երկու գործերում լիակազմ դատարանը որոշել է, որ Բուլղարիայի պետությունը խախտել է վերոնշյալ դրույթը: *«Ստանկովը և «Իլինդեն» միավորված մակեդոնական կազմակերպությունն ընդդեմ Բուլղարիայի»* ((*Stankov and the United Macedonian Organisation Ilinden v Bulgaria*), 2001 թ. հոկտեմբերի 2-ի վճիռ) գործում պալատը՝ վեց կողմ և մեկ դեմ ձայներով, վճռել է, որ 1994-1997 թթ. ընթացքում իշխանությունների կողմից դիմող կազմակերպության՝ զոհվածների հիշատակի օրվան նվիրված հավաքների շարունակական արգելումը չի կարող հիմնավորվել «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» պայմանով: Պալատը որոշել է, որ դիմող կազմակերպության նախորդ հավաքների ընթացքում անկարգություններ տեղի չեն ունեցել, իսկ հավաքի նպատակն էր մարդկանց աննշան փոքրամասնության անունից պաշտպանել ոչ բռնի միջոցներով քաղաքական համակարգի փոփոխության անհրաժեշտությունը: Չորս տարի անց *«Իլինդեն» միավորված մակեդոնական կազմակերպությունը և Իվանովն ընդդեմ Բուլղարիայի» (United Macedonian Organisation Ilinden and Ivanov v Bulgaria)*, 2005 թ. հոկտեմբերի 20-ի վճիռ)

գործում պալատը միաձայն եզրակացրեց, որ 1998-2003 թթ. ընթացքում տասներկու անգամ խախտվել է դիմողների խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքը: Պալատը նաև որոշել է, որ մեկ անգամ, երբ դիմող կազմակերպությունը կարողացել է հանրահավաք անցկացնել, իշխանությունները չեն դիմել բոլոր այն միջոցներին, որոնք նրանք կարող էին ողջամտորեն ձեռնարկել կազմակերպության անդամներին հակացույցի մասնակիցների գործադրած ֆիզիկական բռնությունից պաշտպանելու համար: *«Պիրին» միավորված մակեդոնական կազմակերպությունը և այլք ընդդեմ Բուլղարիայի» (United Macedonian Organisation-PIRIN and Others v Bulgaria)* գործով 2005 թ. հոկտեմբերի 20-ին կայացրած մասնավոր որոշման շրջանակներում պալատը եզրակացրել է, որ 2000 թ. լուծարելով դիմող քաղաքական կուսակցությունը՝ սահմանադրական դատարանը խախտել է 11-րդ հոդվածը: Պալատի միաձայն կայացրած վճռում նշվում է, որ Մակեդոնիայի Պիրինի շրջանի ինքնավարության կամ երկրի կազմից անջատվելու մասին խաղաղ քարոզը բավարար հիմք չէ կազմակերպությունը լուծարելու համար: Ավելի ուշ դատարանը, հինգ կողմ և երկու դեմ ձայներով, խաղաղ հավաքների իրավունքի ևս երկու խախտում է արձանագրել 1998 թ. Սոֆիա քաղաքում նախատեսված «Պիրին» կազմակերպության երկու հանրահավաքների անցկացման արգելքների առնչությամբ: *«Իվանովը և այլք ընդդեմ Բուլղարիայի» (Ivanov and Others v Bulgaria)* 2005 թ. նոյեմբերի 24-ի վճիռ) գործում դատարանը եզրակացրել է, որ իշխանությունների այն համոզմունքը, որ դիմողները հանրահավաքների ժամանակ արտահայտելու էին իրենց անջատողական հայացքները, չի կարող հիմք ծառայել հանրահավաքներն արգելելու համար (հարկ է նշել, որ տվյալ գործով դիմող Իվանովին չպետք է շփոթել նախորդ գործով որպես դիմող հանդես եկող մեկ այլ Իվանովի հետ): *«Իլինդեն» միավորված մակեդոնական կազմակերպությունն ընդդեմ Բուլղարիայի»* (*United Macedonian Organisation Ilinden v Bulgaria*) 2006 թ. հունվարի 19-ի վճիռ) գործով ներկայացվել է մեկ այլ գանգատ 1990-ական թթ. վերջին իշխանությունների կողմից միավորման գրանցումը մերժելու կապակցությամբ: Վեց կողմ և մեկ դեմ ձայներով արձանագրվել է միավորման ազատության խախտում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կազմակերպությունն ուներ միայն 3000 հետևորդ և հանրության վրա նվազագույն ազդեցություն էր գործում՝ պալատն անհամաչափ հիմնավորում է համարում պետության այն փաստարկը, որ միավորման գրանցման մերժումն անհրաժեշտ էր Պիրինի շրջանի բնակիչների մեծամասնության շահերը պաշտպանելու համար: Նշված գործերով բացահայտվում են երկրի այս հատվածի բնակչության նկատմամբ Բուլղարիայի իշխանությունների վարքագծի լուրջ և շարունակական բացթողումները:

7 *«Օլինգերն ընդդեմ Ավստրիայի» (Ollinger v Austria)* 2006 թ. հունիսի 29-ի վճիռ) գործում պալատի ճնշող մեծամասնությունը՝ վեց կողմ և մեկ դեմ ձայներով, որոշել է, որ պետական մարմինները խախտել են Կանաչների կուսակցությունը ներկայացնող խորհրդարանականի խաղաղ հավաքների ազատության իրավունքը՝ արգելելով նրան բողոքի լուռ ցույց անցկացնել այն գերեզմանատանը, որտեղ հավաքվում էին էսէսական (գերմ. *Schutzstaffel*) վետերանները Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհված զինակիցների հիշատակը հարգելու համար: Մինչ այդ Ավստրիայի սահմանադրական դատարանը եզրակացրել է, որ դիմողի կողմից կազմակերպված բողոքի ցույցի վրա դրված արգելքը հիմնավորված է իրենց ազգականների շիրիմներն այցելող անձանց իրավունքների պաշտպանությամբ: Այնուհանդերձ, պալատի որոշմամբ արգելքն անհամաչափ միջոց է համարվել, քանի որ դիմողի հավաքը նախատեսվել է որպես բողոքի լուռ ցույց և գերեզմանատան այցելուների համոզմունքների վրա ազդելու նպատակ չի հետապնդել: Վճռից պարզ է դառնում, որ խաղաղ հավաքները կարգավորելու համար միջոցներ ընտրելիս պետական մարմիններից կարող է պահանջվել արդար հավասարակշռության բերել երեք կողմերի՝ ցուցարարների, հակացույցի մասնակիցների և առհասարակ քաղաքացիների շահերը:

Այլ անձանց հետ միավորվելու ազատության իրավունք

1 Լիակազմ դատարանը վճռել է, որ 11-րդ հոդվածի շրջանակը չի ներառում հանրային իրավունքի սկզբունքով կազմավորված միավորումներ: *«Լե Կոմտը, Վան Լյովեն և Դե Մեյերն ընդդեմ Բելգիայի» (Le Compte, Van Leuven and De Meyere v Belgium,* 1981, 4 EHRR 1, A.43) գործով որպես դիմող հանդես են եկել

բժիշկներ, որոնց դեմ Բելգիայի բժիշկների միավորման դիմումի հիման վրա կարգապահական գործ է հարուցվել, և սահմանվել են պատժամիջոցներ: Բժիշկների միավորումը հիմնվել է Բելգիայի խորհրդարանում ընդունված օրենքի համաձայն, իսկ նրա կարգապահական գործառույթները սահմանվել են թագավորական հրամանագրով: Նշված փաստաթղթով պահանջվում է, որ Բելգիայում աշխատող բոլոր բժիշկներն անդամակցեն միավորմանը: Բելգիայում գործում էին նաև բժիշկների այլ մասնավոր միավորումներ, որոնց նպատակն էր պաշտպանել մասնագիտական շահերը: Դիմողները գանգատ են ներկայացրել հանձնաժողովին առ այն, որ միավորմանն անդամակցելու պարտավորությամբ, ի թիվս այլոց, խախտվում է նրանց միավորվելու ազատությունը, ընդ որում՝ միավորման գոյությունն արդեն իսկ զրոյի է հավասարեցնում միավորումներ կազմելու ազատությունը: Հանձնաժողովը միաձայն որոշմամբ չի արձանագրել կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, քանի որ Բժիշկների կազմակերպությունն այդ հոդվածի իմաստով միավորում չի հանդիսանում: Դատարանը նույնպես միաձայն չի արձանագրել նշված հոդվածի խախտում:

Նախ և առաջ դատարանը նշում է, որ Բելգիայի բժիշկների միավորումը հանրային իրավունքի սկզբունքով կազմավորված հաստատություն է: Միավորումը հիմնվել է ոչ թե անհատների կողմից, այլ՝ օրենսդրության հիման վրա և պետական կառույցների անբաժանելի մասն է կազմում, իսկ միավորման հիմնական մարմինների պաշտոնյաները նշանակվում են միապետի կողմից: Միավորման նպատակները բխում են ընդհանուր շահերից, այն է՝ առողջության պահպանում և համապատասխան օրենսդրության համաձայն՝ բժշկության բնագավառում վերահսկողության սահմանում: Այս վերջին գործառույթի համատեքստում Բժիշկների միավորումը մասնավորապես պարտավոր է գրանցել բուժծառայություններ մատուցող բժիշկներին: Բելգիայի պետության հանձնարարականներն իրագործելու համար միավորումն օրենքով օժտված է ընդհանուր օրենքը գերազանցող բացառիկ իրավունքներով ինչպես վարչական, այնպես էլ իրավաստեղծ և կարգապահական ոլորտներում, և այդ կարգավիճակով միավորումը պետական իշխանությունների գործառույթ է կատարում:

Հաշվի առնելով այս բազմազան գործոնների միասնությունը՝ Բժիշկների կազմակերպությունը չի կարող միավորում համարվել՝ 11-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով: Այնուհանդերձ, առաջանում է ևս մեկ պահանջ, այն է՝ եթե Բելգիայի պետության կողմից միավորման հիմնադրումը միտված չէ բժիշկների իրավունքների խախտմանը, ապա վերջիններիս չի կարելի խոչընդոտել մասնագիտական միավորումներ հիմնել կամ անդամակցել դրանց: Ամբողջատիրական վարչակարգը միշտ դիմել է և շարունակում է դիմել մասնագիտությունների պարտադիր դասակարգմանը փակ կամ բացառիկ անդամակցությամբ կազմակերպությունների միջոցով, որոնք փոխարինում են մասնագիտական միավորումներն ու արհմիությունները: Կոնվենցիայի հեղինակների նպատակն է եղել կանխել միավորումներ կազմելու ազատության նման չարաշահումները:

Դատարանը նշում է, որ Բելգիայում գործում են բժիշկների մասնագիտական շահերը պաշտպանելու նպատակով ստեղծված մի քանի միավորումներ, որոնք պարտադիր անդամակցություն չեն նախատեսում: Տվյալ հանգամանքներում Բժիշկների միավորման գոյությունը, ինչպես նաև դրանից բխող հետևանքները, այսինքն՝ բժիշկների՝ միավորման կազմում գրանցվելու և այդ կազմակերպության մարմիններին ենթարկվելու պարտավորությունը, միանշանակ չի հանգեցնում 11-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքի սահմանափակմանը կամ անտեսմանը (պարբ. 64-65):

Այսպիսով, դատարանը ցանկություն է հայտնել պաշտպանելու ազատ մասնագետների, օրինակ՝ բժիշկների գործունեությունը կարգավորող այն կազմակերպությունների օրինականությունը, որոնք գտնվում են պետության հովանու ներքո: Այնուհանդերձ, դատարանը համապատասխան պարտավորություն է դրել պետությունների վրա, այն է՝ երաշխավորել, որ հանրային իրավունքի համաձայն գործող կազմակերպությունները չկրեն մենաշնորհային բնույթ, իսկ մասնագետները ցանկության դեպքում կարողանան հիմնել նաև այլ լրացուցիչ մասնագիտական միավորումներ և անդամակցել դրանց:

Ավելի ուշ *«Սիգուրդուր Ա Սիգուրյոնսոնն ընդդեմ Իսլանդիայի» (Sigurdur A Sigurjonsson v Iceland,* 1993, 16 EHRR 462, A.264) գործում պատասխանող պետությունը պնդում էր, որ «Ֆրամի» տաքսու վարորդների միավորումը հանրային իրավունքին համաձայն հիմնված մասնագիտական կազմակերպություն է, որը 11-րդ հոդվածի շրջանակից դուրս է մնում: Թեև միավորումը հիմնադրել էին տաքսու վարորդներն իրենց մասնագիտական շահերը պաշտպանելու նպատակով, սակայն այդ կազմակերպությունն իրականացնում էր նաև հանրության շահերին ծառայող գործառույթներ, օրինակ՝ փոխադրամիջոցների վիճակի և որպես տաքսի դրանք օգտագործելու հնարավորության գնահատումը, ինչպես նաև տաքսիների վարձավճարի սահմանումը: Այս հայտարարությունը մերժվել է.

Դատարանը համամիտ է դիմողի և հանձնաժողովի հետ այն հարցում, որ վերոնշյալ հատկանիշները բավարար չեն, որպեսզի «Ֆրամի» կազմակերպությունը համարվի հանրային իրավունքի համաձայն հիմնված այնպիսի կազմակերպություն, որը 11-րդ հոդվածի շրջանակից դուրս է մնում: Հարկ է նշել, որ «Ֆրամի» կազմակերպությունն իրականացնում էր մի քանի գործառույթ, որոնք

որոշ չափով նախատեսվում էին գործող օրենսդրությամբ և ծառայում ոչ միայն կազմակերպության անդամների, այլև հասարակության լայն զանգվածների շահերին: Այնուհանդերձ, համապատասխան կանոնների կիրառումը վերահսկելու դերը նախապես վերապահվել է մեկ այլ հաստատության:

…«Ֆրամի» կազմակերպությունը հիմնվել է մասնավոր իրավունքի սկզբունքով և լիակատար ինքնուրույնություն էր վայելում իր նպատակները, կազմակերպչական և աշխատանքային կարգը սահմանելու հարցում: Ուստի «Ֆրամին» առավելապես մասնավոր իրավունքի սկզբունքով հիմնված կազմակերպություն է, հետևաբար, 11-րդ հոդվածին համապատասխան, այն պետք է «միավորում» համարվի (պարբ. 31):

Դատարանն ընդունում է հանրային իրավունքի համաձայն կազմավորված միավորումների տարբերակման հետևյալ հիմնական չափորոշիչները. ա) իրավունքի տեսակը, որով հիմնված է կազմակերպությունը, բ) կազմակերպության նկատմամբ պետության վերահսկողության և ազդեցության աստիճանը, և գ) կազմակերպության անդամների անձնական նպատակներից զատ հանրային գործառույթներ իրականացնելու շրջանակը:

«Շասանյուն ընդդեմ Ֆրանսիայի» (Chassagnou v France, 1999, In 29 EHRR 615) գործում դատարանը հայտարարել է հետևյալը.

Եթե մասնակից պետությունները կարողանային իրենց հայեցողությամբ «հանրային» կամ «կիսավարչական» կազմակերպությունների շարքը որևէ միավորում դասելով՝ այն չներառել 11-րդ հոդվածի շրջանակում, ապա պետություններն այնքան մեծ ազատություն կունենային, որ նրանց գործողությունները կարող էին հանգել կոնվենցիայի նպատակին և խնդրին հակասող հետևանքների: Ուստի «միավորում» եզրույթն ինքնուրույն նշանակություն ունի, իսկ ազգային օրենքի համաձայն դասակարգումը հարաբերական արժեք է և միայն ելակետ է (պարբ. 100):

Հաշվի առնելով այն հանգամանքները, որ օրինական որսորդական միավորումները ֆիզիկական անձանցից էին բաղկացած, պետության կառույցների անբաժանելի մաս չեն կազմում և ընդհանուր օրենքի շրջանակը գերազանցող արտոնյալ իրավունքներ չեն ունեցել, դատարանը եզրակացրել է, որ այդ կազմակերպությունները «միավորումներ» են, որոնք ներառված են 11-րդ հոդվածի շրջանակում:

2 Քաղաքական կուսակցությունների դեպքում այս իրավունքի կիրառումը ներկայացված է *Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության* (*United Communist Party of Turkey*) և *Սոցիալիստական կուսակցության* (*The Socialist Party*) վերոնշյալ գործերում: *«Սիմեդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ahmed v UK)* վերոնշյալ գործով դիմողները նաև պնդում էին, որ այն որոշումները, որոնցով իրենց արգելվում էր կազմակերպչական և վարչական գործունեություն ծավալել կամ քաղաքական կուսակցություններում պաշտոն զբաղեցնել, հակասում են կոնվենցիայի 11-րդ հոդվածին: Դատարանն ուղղակիորեն չի վճռել, թե արդյոք 11-րդ հոդվածը երաշխավորո՞ւմ է այդ արտոնյալ իրավունքները, թե՞ ոչ:

Դատարանը նշում է, որ 10-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների տեսանկյունից հիմնավորված է համարում միջամտությունը դիմողների՝ 10-րդ հոդվածով ամրագրված իրավունքներին: Ինքնուրույն դերից և կիրառման հատուկ ոլորտից անկախ՝ 11-րդ հոդվածը տվյալ դեպքում նույնպես պետք է դիտարկվի 10-րդ հոդվածի համակցությամբ՝ հաշվի առնելով այն փաստը, որ կարծիք արտահայտելու ազատությունը, ինչպես նաև տեղեկություններ և գաղափարներ ստանալու և հաղորդելու ազատությունը 11-րդ հոդվածով ամրագրված հավաքների և միավորման ազատության նպատակներից մեկն են: Դատարանի կարծիքով՝ վիճարկված միջոցների կիրառումը կանխատեսելու, այդ միջոցներով հետապնդվող նպատակի օրինականության և դրանք կիրառելու անհրաժեշտության վերաբերյալ իր եզրակացությունները բավարարում են 11-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված պահանջները: Դատարանը նաև կրկնում է, որ որոշման համապատասխան մասով սահմանափակվում է դիմողների՝ միայն իրենց քաղաքական կուսակցության վարչական և ներկայացուցչական գործունեությանը մասնակցելու կարողությունը: Որոշումը չի սահմանափակում դիմողների՝ իրենց հայեցողությամբ ցանկացած քաղաքական կուսակցության անդամակցելու իրավունքները:

Համապատասխանաբար, դատարանը համարում է, որ դիմողների՝ կոնվենցիայի 11-րդ հոդվածով ամրագրված իրավունքները չեն խախտվել (պարբ. 70–71):

3 Դատարանը հայտարարել է հետևյալը.

… Միավորումներ կազմելու իրավունքը 11-րդ հոդվածով սահմանված իրավունքի անբաժանելի մասն է, թեպետ այդ հոդվածով հստակ նշվում է արհմիություններ հիմնելու իրավունքը: Քաղաքացիների՝ իրենց ընդհանուր շահերը միասնական ջանքերով պաշտպանելու նպատակով իրավական կազմակերպություն հիմնելու իրավունքը միավորումներ կազմելու ազատության

կարևորագույն հայեցակետերից է, առանց որոնց այդ ազատությունը անիմաստ կլիներ: Ազգային օրենսդրության մեջ այդ ազատությունն ամրագրելու և պետական իշխանությունների կողմից այն կենսագործելու միջոցով է բացահայտվում տվյալ երկրում ժողովրդավարության տեսանկյունից ստեղծված իրավիճակը: Իհարկե, պետություններն իրավունք ունեն համոզվելու, որ միավորումների նպատակը և գործունեությունը չեն հակասում օրենսդրությամբ սահմանված կանոններին, սակայն այդ հարցերը պարզելու նպատակով ձեռնարկված միջոցները պետք է համատեղելի լինեն կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորություններին և վերանայվեն կոնվենցիայի կատարումն ապահովող հաստատություններում (*«Սիդիրոպուլոսն ընդդեմ Հունաստանի» (Sidiropoulos v Greece)*, 1998-IV, պարբ. 40):

Միաձայն կայացրած վճռում դատարանն արձանագրել է 11-րդ հոդվածի խախտում, քանի որ Հունաստանի դատարանների մերժումը «Մակեդոնյան քաղաքակրթության տուն» անվամբ դիմողների հիմնած մշակութային միավորումը գրանցելու մասին դիմումին անհամաչափ արձագանք է ազգային անվտանգությունը պահպանելու և անկարգությունները կանխելու օրինական նպատակներին: Թեև մի քանի հունական թերթերում դիմողներին մեղադրում էին հարևան «Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության» օգտին Հունաստանի տարածքային ամբողջականությունը խաթարելու ձգտումների համար, դատարանը եզրակացրել է, որ առաջարկվող միավորումը որևէ անօրինական նպատակ չէր հետապնդում: Այնուհանդերձ, եթե ավելի ուշ վերոնշյալ միավորումը ծավալեր այլ՝ ապօրինի գործունեություն, ապա Հունաստանի իշխանություններն իրավասու կլինեին լուծարելու միավորումը:

4 Քաղաքական կուսակցությունների գրանցման մերժումով 11-րդ հոդվածը խախտող պետությունների օրինակների շարքը կարելի է դասել *«Մորդովիայի նախագահական կուսակցությունն ընդդեմ Ռուսաստանի» ((Presidential Party of Mordovia v Russia)* 2004 թ. հոկտեմբերի 5-ի վճիռ) գործը, որում դիմող քաղաքական միավորումը վերագրանցելու մերժումը իշխանությունների կողմից հակասում էր ներպետական օրենսդրությանը, ուստիև «օրենքով նախատեսված չէր»: Տվյալ շարքը կարելի է դասել նաև *«Փարթիդուլ կոմունիստիլոր (Նեփեսերիսթի) և Ունգուրիանուն ընդդեմ Ռումինիայի» ((Partidul Comunistilor (Nepeceristi) and Ungureanu v Romania)*, 2005 թ. փետրվարի 3-ի վճիռ) գործը, որում դատարանը որոշել է, որ քանի որ դիմող կազմակերպության կանոնադրությունը և քաղաքական ծրագիրը չեն հակասում ժողովրդավարության սկզբունքներին, ապա Ռումինիայի դատարանների՝ դիմող կոմունիստական կուսակցությունը գրանցելու մերժումը անհամաչափ միջոց էր: Բացի այդ, մեծ կարևորություն տալով մինչ 1989 թ. Ռումինիայում ամբողջատիրական կոմունիզմի պատմությանը՝ դատարանը նշել է, որ մի շարք մասնակից պետություններում գործում են մարքսիզմ քարոզող քաղաքական կուսակցություններ:

5 Դատարանը պաշտպանել է ազգային մարմինների՝ իրենց հայեցողությամբ այնպիսի միավորումների գրանցումը մերժելու իրավունքը, որոնք խաբուսիկ և, թերևս, զրպարտչական բնույթ ունեցող անվանումներ ունեն: *«ԱՓԵՀ Ուլդոզոթեյնեք Զովեթզեգեն, Իվանյին, Ռոթը և Զերդահելյին ընդդեմ Հունգարիայի» ((APEH Uldozotteinek Szovetsege, Ivanyi, Roth and Szerdahelyi v Hungary)*, թիվ 32367/96, որոշումը կայացվել է 1999 թ. օգոստոսի 31-ին) գործով որպես առաջին դիմող հանդես է եկել «ԱՓԵՀ-ի կողմից հետապնդվող անձանց միություն» անվանումը կրող չգրանցված միավորումը, որը հիմնել են այս գործով մյուս դիմողները: ԱՓԵՀ-ը Հունգարիայի հարկային պետական վարչության անվանման հապավումն է: Հունգարիայի գերագույն դատարանը մերժել է միավորման գրանցումը, քանի որ, ի թիվս այլոց, միավորման անվանումը խաբուսիկ էր այն տեսանկյունից, որ միավորումը կարող էր կապված լինել հարկային վարչության հետ, և բացի այդ, անվանումը զրպարտիչ բնույթ ուներ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշել է, որ այլ անվանում ընտրելու դեպքում դիմողները կարող էին հիմնել և գրանցել հարկ վճարողների շահերը ներկայացնող միավորում: Այդ իսկ պատճառով միավորումներ կազմելու իրավունքին կոպիտ միջամտություն չի արձանագրվել, իսկ խաբուսիկ անվանում ունեցող միավորումը գրանցելու հարցում պետական մարմինների մերժումն օրինական է: Հետևաբար, գանգատը բացարձակապես անհիմն է համարվել: Այսպիսով, 11-րդ հոդվածով անձինք իրենց հայեցողությամբ ընտրված ցանկացած անվամբ միավորումներ կազմելու բացարձակ իրավունք չեն ստանում:

6 *«Գորզելիկը և այլք ընդդեմ Լեհաստանի» ((Gorzelik and Others v Poland),* վճիռը կայացվել է 2004 թ. փետրվարի 17-ին) գործում մեծ պալատը միաձայն որոշել է, որ «Սիլեզյան ժողովրդի միություն» կոչվող

կազմակերպությունը գրանցելու հարցում պետական մարմինների մերժումը չի խախտել կոնվենցիայի 11-րդ հոդվածը: Պետական մարմիններն իրենց մերժումը հիմնավորել են միավորման անվանմամբ և կազմակերպության հուշագրի դրույթներով, որտեղ սիլեզիցիները բնորոշվում են որպես «ազգային փոքրամասնություն»: Գրանցվելու դեպքում միավորումը կստանար «ազգային փոքրամասնություն» ներկայացնող կազմակերպություններին ընտրություններում վերապահված արտոնությունները: Մեծ պալատն ընդունել է այն իրողությունը, որ միավորման՝ «ազգային փոքրամասնության» կազմակերպության անունից ներկայանալու և ընտրություններում արտոնություններ պահանջելու կարողության կարգավորումը Լեհաստանի իշխանությունների կողմից պայմանավորված է հրատապ սոցիալական անհրաժեշտությամբ: Եվ ավելին, նշված անունով կազմակերպությունը գրանցելու մերժումը համաչափ միջոց է եղել, քանի որ դիմողները կարող էին մշակութային գործունեություն ծավալելու նպատակով միավորում հիմնել և այն գրանցել մեկ այլ անվամբ, որով չնշվեր, որ միավորման անդամներն ազգային փոքրամասնություն են կազմում:

7 *«Գրանդե օրիենտե դ'Իտալիա դի պալացո Ջուստինիանիին» ընդդեմ Իտալիայի» ((Grande Oriente D'Italia Di Palazzo Giustiniani v Italy)* վճիռը կայացվել է 2001 թ. օգոստոսի 2-ին) գործում լիակազմ դատարանի պալատը միաձայն վճռել է, որ որոշ պետական պաշտոններում, այդ թվում՝ համալսարաններում, ժամանցի և մշակութային կազմակերպությունների պաշտոններում մասոնների առաջադրումը և նշանակումն արգելող տարածաշրջանային օրենքով խախտվում է մասոնների կազմակերպության՝ միավորումներ կազմելու ազատությունը: Դիմող միավորումը հիմնվել է 1805 թ. և մասնավոր իրավունքի համաձայն հիմնված և Իտալիայի օրենքով չճանաչվող կազմակերպություն է, որը համախմբում է մոտ 12500 անդամ ունեցող մի քանի մասոնական օթյակներ: 1996 թ. Մարկեսի շրջանում ընդունվեց մի օրենք, որի համաձայն՝ որոշ պետական պաշտոններ զբաղեցնելու հավակնորդներից պահանջվում էր նաև հայտարարել, որ իրենք մասոնական օթյակի չեն անդամակցում: Դիմողը պնդում էր, որ նման սահմանափակումը միջամտություն է 11-րդ հոդվածով ամրագրված միավորման ազատությանը և կազմակերպության անդամներին զրկում էր այդ շրջանում բազմաթիվ պետական պաշտոններ զբաղեցնելու հնարավորությունից, իսկ նշված օրենքը բացասական պատկերացում է ստեղծում միավորման մասին: Պալատը համարում էր, որ դիմող կազմակերպությունն ընդգրկված է 11-րդ հոդվածի շրջանակում հետևյալ պատճառներով.

15….միավորումը սահմանադրական կառույցները խաթարելու կասկած չէր հարուցում: Բացի այդ, դատարանն առաջնային կարևորություն է տալիս դիմողների այն փաստարկին, որ խնդրո առարկա միջոցը, դիմողների խոսքերով, կարող է միավորման անդամների թվի նվազեցման և օթյակի վարկաբեկման տեսանկյունից վնասակար լինել միավորման համար:

Պալատի դատավորների կարծիքով՝ միջամտությունը «նախատեսված էր օրենքով», և հաշվի առնելով Իտալիայի հասարակական կյանքում որոշ մասոնների ծավալած գործունեության կապակցությամբ վերջերս ծագած հակասությունները՝ կարելի է եզրակացնել, որ շրջանային օրենքը համապատասխանում էր 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ազգային անվտանգությունը պաշտպանելու և անկարգությունները կանխելու օրինական նպատակներին: Ինչ վերաբերում է այն հարցին, թե դիմող միավորման իրավունքների սահմանափակումն անհրաժե՞շտ էր «ժողովրդավարական հասարակությունում», ապա դատարանը հայտարարել է հետևյալը.

24. Դատարանը վիճարկվող միջոցը քննել է ամբողջ գործի համատեքստում՝ որոշելու համար, թե արդյոք այդ միջոցը համաչա՞փ է հետապնդվող օրինական նպատակին:

25. Համաչափության սկզբունքի համաձայն՝ պետք է արդար հավասարակշռության բերել կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դրույթների պահանջները և միավորումներ կազմելու իրավունքի պահանջները: Այդ պահանջներն արդար հավասարակշռության բերելու ձգտումը չպետք է հանգեցնի այնպիսի հետևանքների, որ անհատները, վախենալով պաշտոնը զբաղեցնելու հայտի մերժումից, նման դեպքերում հրաժարվեն միավորումներ կազմելու իրենց իրավունքից:

26. Չի կարելի ասել, որ դիմող կազմակերպության անդամների ընդհանուր թվի համեմատ մեծ թիվ են կազմում միավորմանը ներկայումս կամ հավանաբար հետագայում անդամակցող այնպիսի անձինք, ովքեր կարող են մասոնների կազմակերպությանը միանալու և 1996 թ. օրենքի 5-րդ բաժնում թվարկված պետական պաշտոններին հավակնելու երկընտրանքի առջև կանգնել: Հետևաբար, դիմող կազմակերպությանը հասցվող հնարավոր վնասը նույնպես սահմանափակ բնույթ ունի: Այնուհանդերձ, դատարանը համարում է, որ միավորումներ կազմելու իրավունքն այնքան կարևոր է, որ այն երբեք չի կարող սահմանափակվել, նույնիսկ պետական պաշտոնների հավակնող թեկնածուի դեպքում, եթե միայն նշված անձը միավորմանն անդամակցելու բերումով որևէ դատապարտելի արարք չի գործում: Բացի այդ, նաև պարզ է դառնում, որ միավորումը պատասխանատու է իր անդամների կայացրած որոշումների հետևանքների համար, ասել է թե՝ դիմող միավորման համար նվազագույն հետևանքներ ունենալու դեպքում անգամ գանգատի առարկա դարձած արգելքն անհրաժեշտ չէ «ժողովրդավարական հասարակությունում»:

Ուստի, պալատն արձանագրել է 11-րդ հոդվածի խախտում: Տվյալ գործով կայացված վճռի 26-րդ կետը վկայում է դատարանի կողմից միավորումներ կազմելու իրավունքի հետևողական կիրառման մասին: Մասոնների իրավունքների՝ Մարկեսի շրջանում ընդունված օրենքով ամրագրված սահմանափակման համաչափությունը գնահատելիս հարկ է նշել, որ դա Իտալիայի շրջանների օրենքներով սահմանված միջոցներից ամենախիստն է: Այլ շրջանների օրենքներով պետական պաշտոններին առաջադրված հավակնորդները պարտավոր են հայտնել, թե իրենք որ միավորմանն են անդամակցում, և չպետք է գաղտնի կազմակերպությունների հարեն:

8 «Գրանդե օրիենտե» մասոնական միավորման գործով վճռի կայացման նույն օրը մեկ այլ կազմով պալատը *«Ն. Ֆ-ն ընդդեմ Իտալիայի» ((N.F. v Italy),* վճիռը կայացվել է 2001 թ. օգոստոսի 2-ին) գործում արձանագրել է «Գրանդե օրիենտե դ'Իտալիա դի պալացո Ջուստինիանի» մասոնական միավորման մասնաճյուղին անդամակցելու համար կարգապահական տույժի ենթարկված դատավորի՝ միավորումներ կազմելու ազատության խախտում: 1990 թ. Դատավորների ազգային խորհրդի ընդունած ցուցումներում ասվում է, որ վարքի հատուկ կանոններով ղեկավարվող օրենքով թույլատրված միավորումներին, օրինակ՝ մասոնների կազմակերպությանը դատավորի անդամակցությունը կարող է խնդրահարույց լինել: Այնուհանդերձ, 1991 թ. դիմողն սկսել է անդամակցել Միլանում գործող Ադրիանո Լեմի մասոնական օթյակին: 1992 թ. ամռանը դիմողը մամուլի հաղորդագրություններից տեղեկացել է այն մասին, որ դատախազությունը հետաքննությունն էր սկսել «Գրանդե օրիենտե» մասոնական միավորման դուստր կազմակերպությունների նկատմամբ: Այդ իսկ պատճառով 1992 թ. հոկտեմբերին դիմողը խնդրել է իրեն հեռացնել միավորումից, իսկ հաջորդ ամիս ստացել է միավորման «պասիվ անդամի» կարգավիճակ: 1994 թ. նրան կանչել են Դատավորների ազգային խորհրդի կարգապահական իրավախախտումների բաժին և մեղադրանք ներկայացրել մասոնների կազմակերպությանն անդամակցելով իր պարտականությունների կոպիտ խախտմամբ դատավորների հեղինակությունը վարկաբեկելու համար: Թեև դիմողը պնդում էր, որ Դատավորների ազգային խորհուրդը միայն 1993 թ. է հրապարակել վերանայված ցուցումները, որոնց համաձայն՝ դատավորի պաշտոնն անհամատեղելի է մասոնների կազմակերպությանն անդամակցելու հետ, սակայն կարգապահական իրավախախտումների բաժինը որոշել է, որ դիմողը խախտել է 1946 թ. թիվ 511 Թագավորական օրենսդրական հրամանագրի 18-րդ հոդվածը: Այդ հոդվածը սահմանում է, որ «յուրաքանչյուր դատավոր, ով իր պարտականությունները չի կատարում կամ իրեն վայել վստահությանը և հարգանքին ոչ հարիր վարքագիծ է դրսևորում աշխատանքային գործունեության շրջանակներում կամ դրանցից դուրս, պետք է կարգապահական պատժամիջոցի ենթարկվի»: Կարգապահական իրավախախտումների բաժինը նախազգուշացում է ներկայացրել դիմողին: Այնուհետև Դատավորների ազգային խորհուրդը երկու անգամ առարկել է դիմողի պաշտոնի բարձրացման դեմ՝ հաշվի առնելով կարգապահական նախազգուշացումը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առջև դրված կարևոր խնդիրն էր պարզել՝ դիմողի նկատմամբ կիրառված կարգապահական պատժամիջոցն «օրենքով նախատեսվա՞ծ էր», թե՞ ոչ: Դիմողը պնդում էր, որ այն ժամանակ, երբ ինքը միացել է մասոնների միավորմանը, անհնար էր կանխատեսել, որ այդ կազմակերպությանն անդամակցելը կարող է անհամատեղելի համարվել 1946 թ. հրամանագրով սահմանված դատական գործառույթների հետ:

29. Անդրադառնալով կանխատեսելիության պահանջին՝ դատարանը կրկնում է, որ օրենքը «կանխատեսելի է» այն դեպքում, եթե այն բավական հստակ դրույթներով է ձևակերպված, որպեսզի անհրաժեշտության դեպքում նույնիսկ

համապատասխան խորհրդատվության միջոցով անձը կարողանա կարգավորել իր վարքը (տե՛ս *«Հասանը և Չաուշն ընդդեմ Բուլղարիայի» (Hasan and Chaush v Bulgaria [*GC]) գործը, թիվ 30985/96, պարբ. 84, ECHR 2000-XI):

30. Ուստի հարկ է մասնավորապես որոշել, թե արդյոք ներպետական օրենսդրությամբ բավական հստա՞կ են սահմանվում այն պայմանները, որոնց դեպքում դատավորները չպետք է անդամակցեն մասնական կազմակերպություններին:

31. Նախ՝ դատարանը նշում է, որ 1946 թ. հրամանագրի 18-րդ հոդվածը չի սահմանում, թե դատավորը կարո՞ղ է իրացնել միավորումներ կազմելու իր իրավունքը, և եթե կարող է, ապա՝ ինչպես: Բացի այդ, սահմանադրական դատարանն ընդգծել է, որ այս դրույթն ընդհանուր բնույթ ունի, այն է՝ 1990 թ. Դատավորների ազգային խորհրդի ընդունած ցուցումներում նշվում է, որ մասնների կազմակերպության նման վարքի հատուկ կանոններով ղեկավարվող օրինական միավորումներին անդամակցելու դեպքում դատավորը կարող է լուրջ խնդիրների բախվել: Ուստի Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պետք է որոշի, թե արդյոք վերոնշյալ ցուցումների համաղրությամբ 18-րդ հոդվածով կարելի՞ է հիմնավորել խնդրո առարկա պատժամիջոցի կանխատեսելիությունը: Այդ կապակցությամբ դատարանը նշում է, որ ցուցումներն ընդունվել են մասնական օթյակին դատավորների անդամակցության հատուկ հարցը քննելու համատեքստում, և դատավորների կարգապահությունն ու անկախությունը վերահսկելու համար պատասխանատու Դատավորների ազգային խորհուրդը լիազորված էր նման դրույթներ ընդունել: Այնուհանդերձ, եթե նույնիսկ ցուցումները նախապես վերաբերում էին մասոնների օթյակներին անդամակցությանը, ապա դրանց ձևակերպումը, այն է՝ «անդամակցումը նրբին խնդիրներ է առաջացնում», երկիմա՞նաստ էր և կարո՞ղ էր թողնել այն տպավորությունը, որ խոսքը ոչ բոլոր մասոնական օթյակների մասին է, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ վերոնշյալ ցուցումներն ընդունվել են P2 գաղտնի օթյակի անօրինականության շուրջ Իտալիայում ծավալված մեծ բանավեճից հետո: Եվ իսկապես, ցուցումներով պարզապես սահմանվում է, որ «դատական իշխանության ներկայացուցիչներին ինքնըստինքյան օրենքով արգելվում է անդամակցել 1982 թ. թիվ 17 օրենքում թվարկված միավորումներին»: Այլ միավորումների մասին նշվում է ցուցումների հետևյալ պարբերության մեջ. «Դատավորների ազգային խորհուրդն անհրաժեշտ է համարում արդարադատության և ներում շնորհելու հարցերով նախարարին առաջարկել դատավորների՝ միավորումներ կազմելու իրավունքի սահմանափակումների շրջանակում ներառել այն բոլոր միավորումները, որոնք իրենց կառույցի և նպատակների բերումով հատկապես մեծ պարտավորություններ են դնում իրենց անդամների վրա աստիճանակարգման և համախմբվածության առումով»:

Համապատասխանաբար, 1990 թ. մարտի 22-ի ցուցումները բավական հստակ չեն ձևակերպվել, որպեսզի իրենց մասնագիտության բերումով կրթված և օրենքին ծանոթ դատավորները, նույնիսկ նախորդ բանավեճից ելնելով, հասկանային, որ պաշտոնական մասնական օթյակին անդամակցելու պատճառով իրենց նկատմամբ կարող են պատժամիջոցներ սահմանվել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գնահատումը հաստատվում է այն փաստով, որ Դատավորների ազգային խորհուրդն ինքն էլ է զգացել 1993 թ. հուլիսի 14-ին քննարկվող հարցին անդրադառնալու անհրաժեշտությունը և պարզ ու հստակ հայտարարել, որ դատական գործառույթների իրականացումն անհամատեղելի է մասոնական օթյակներին անդամակցելու հետ:

32. Տվյալ հանգամանքներում դատարանը եզրակացրել է, որ արարքի հետևանքների կանխատեսելիության պայմանը չի բավարարվել, ուստին միջամտությունը դիմողի իրավունքներին օրենքով նախատեսված չէր:

33. Այդ եզրակացության հանգելով՝ դատարանը կարիք չունի համոզվելու, որ նշված միջոցը համապատասխանում էր 11-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված այլ պահանջներին՝ օրինական նպատակին, իրավունքներին միջամտելու անհրաժեշտությանը և որոշ կարգերի համար նախատեսված հատուկ սահմանափակումներին:

34. Համապատասխանաբար, արձանագրվել է կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում:

Դատարանի անդամներից երեքը չհամընկնող կարծիք են արտահայտել, քանի որ ըստ նրանց՝ «լավ պատրաստված» դատավորը, որը ծանոթ է 1980-ական թվականների սկզբին P2 մասոնական օթյակի օրինական լուծարման իրավական նախապատմությանը, պետք է կանխատեսած լիներ, որ մասոնների օթյակներին անդամակցելը Իտալիայում անհամատեղելի է դատական պաշտոնի հետ: Դատավոր Բոնելլոն հայտարարել է հետևյալը. «20…Ինձ զավեշտալի է թվում, որ դիմողն իսկապես կարող էր բարեխղճորեն հավատալ, որ Իտալիայում դատավորը կարող է օրենքի օրինականքով միանալ մասոնական շարժմանը»:

9 Ավելի ուշ *«Մաեստրին ընդդեմ Իտալիայի» ((Maestri v Italy),* վճիռը կայացվել է 2004 թ. փետրվարի 17-ին) գործում մեծ պալատը հանգել է այնպիսի եզրակացության, որը նման էր *Ն.Ֆ.-ի* (*N.F.*) գործով եզրակացությանը: Տվյալ գործով որպես դիմող հանդես է եկել մի դատավոր, որը 1981 թ. մինչև 1993 թ. մարտ ամիսն անդամակցում էր «Գրանդե օրիենտե դ'Իտալիա դի պալացո Ջուստինիանի» մասոնական միավորման դուստր օթյակին: 1995 թ. Դատավորների ազգային խորհուրդը որոշել է, որ նախկինում մասոնների միավորմանն անդամակցելով՝ դիմողը խախտել է 1946 թ. Թագավորական օրենսդրական հրամանագրի 18-րդ հոդվածը, և նա նկատողություն է ստացել: Դիմողը պնդում էր, որ տվյալ պատ-

ժամիջոցը կիրառելու հետևանքով խափանվել է իր կարիերան: Եվս մեկ անգամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առջև դրված հիմնական հարցն այն էր, թե արդյոք մասոնների միավորմանն անդամակցելու հարցում Իտալիայի դատավորների վրա դրված արգելքը բավականաչափ կանխատեսելի՞ էր այն ժամանակ, երբ դիմողը միացել է նշված կազմակերպությանը: Մեծ պալատը վճռել է հետևյալը.

40. Ի վերջո, դատարանն ընդգծում է այն փաստը, որ ի տարբերություն 1993 թ. հուլիսի 14-ի հրամանագրի՝ 1990 թ. մարտի 22-ի բանավեճը ծավալվել է ոչ թե դատավորների կարգապահական վերահսկողության, այլ նրանց ծառայողական առաջընթացի համատեքստում: Ուստի բանավեճի ընդհանուր քննությունից պարզ է դառնում, որ Դատավորների ազգային խորհուրդը բարձրացրել է այն հարցը, թե արդյոք, դատավորների համար նպատակահարմա՞ր է անդամակցել մասոնների միավորմանը, սակայն բանավեճում ամենևին չի նշվել, որ մասոնների միավորմանն անդամակցելը կարող է կարգապահական զանցանք համարվել:

41. Հետևաբար, 1990 թ. մարտի 22-ի հրամանը բավականաչափ հստակ չէր ձևակերպված, որպեսզի իրազեկված և օրենքը լավ իմացող դիմող դատավորը նույնիսկ նախորդող բանավեճի և 1982 թ. ի վեր տեղի ունեցած իրադարձությունների համատեքստում կարողանար հասկանալ, որ մասոնական օթյակին անդամակցելը կարող է պատժամիջոցների պատճառ հանդիսանալ:

Դատարանի որոշումը հաստատվում է այն փաստով, որ Դատավորների ազգային խորհուրդն ինքն էլ է զգացել 1993 թ. հուլիսի 14-ին քննարկվող հարցին կրկին անդրադառնալու անհրաժեշտությունը և պարզ ու հստակ հայտարարել է, որ դատական գործառույթների իրականացումն անհամատեղելի է մասոնների միավորմանն անդամակցելու հետ:

42. Այս պարագայում դատարանը եզրակացրել է, որ կանխատեսելիության պայմանը չի բավարարվել նաև 1990 թ. մարտ ամսին հաջորդած ժամանակաշրջանում, հետևաբար միջամտությունը նախատեսված չէր օրենքով: Ուստի արձանագրվել է կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում:

Վեց դատավոր չհամընկնող կարծիք է արտահայտել, և միասնական չհամընկնող կարծիքում դատավորներ Բոնելլոն, Ստրաժնիչկան, Բիրսանը, Յունգվիրթը և Դել Տուֆոն հայտարարել են հետևյալը.

10. Կարևոր ենք համարում սկզբից նեթ համառոտ վերհիշել որոշ փաստեր, որոնք 1970-ական թվականներից ի վեր խոր հետք են թողել Իտալիայի մասոնության վրա. P2 գաղտնի և անօրինական մասոնական օթյակի հայտնաբերումը, կասկածը, որ մի քանի մասոնական օթյակներ մասնակցում են Իտալիայում ժողովրդավարական վարչակարգի տապալմանն ուղղված կործանարար դավադրություններին, և տվյալներ, որոնց համաձայն՝ Իտալիայի ազատ մասոնների միավորումը սերտ կապեր ունի մաֆիայի, ահաբեկչության և կազմակերպված հանցավորության հետ: Պետք է հաշվի առնել 1984 թ. խորհրդարանական հետաքննչական հանձնաժողովի զեկույցը, որը տրամադրել է հանձնաժողովի նախագահ Թինա Անսելմին, ինչպես նաև այն փաստը, որ Իտալիայի մասոնների միավորման վատ համբավի հետևանքով «Գրանդե օրիենտե» մասոնական օթյակի մեծ վարպետը դուրս է եկել միավորումից և նոր կազմակերպություն հիմնել: Բացի այդ, Բրիտանիայի Ազատ մասոնների միավորումը պաշտոնական որոշում է կայացրել Իտալիայի «Գրանդե օրիենտե» մասոնական միավորումը չճանաչելու մասին և արգելել իր դուստր օթյակների անդամներին կապեր պահպանել իրենց իտալացի եղբայրների հետ:

Ահա վերոնշյալ սոցիալական և պատմական նախապայմաններում են տեղի ունեցել խնդրո առարկա իրադարձությունները, և դիմողը շարունակել է անդամակցել ազատ մասոնների միավորմանը:

Չհամընկնող կարծիք արտահայտած դատավորները «թյուրիմացություն» էին դիտում այն իրողությունը, որ մեծամասնությունը բավական կանխատեսելի չի համարել «մասոնների միավորմանն անդամակցելու հարցում իտալացի դատավորների վրա դրված բացարձակ, համապարտադիր և շարունակական արգելքը»:

Ուշագրավ է, որ ինչպես Ն.Ֆ.-ն, այնպես էլ Մաեստրին շահել են դատական գործը, քանի որ մասոնների միավորմանը դատավորների անդամակցության հարցը հստակ դրույթներով ձևակերպված չէ ներպետական օրենսդրությամբ: Այս վճիռները հիմք չեն այն ընդհանուր սկզբունքի համար, որի համաձայն՝ ազատ մասոնների միավորմանն անդամակցելու հարցում դատավորների վրա դրված արգելքը միշտ հակասում է 11-րդ հոդվածին:

10 Պալատը վճռել է, որ մասնակից պետությունների վրա դրված է անհատների՝ այլ անձանց միավորումներ կազմելու ազատությանը միջամտելու դեպքերով արդյունավետ հետաքննություն անցկացնելու դրական պարտավորությունը: *«Ուրանիո Թոքսոն և այլք ընդդեմ Հունաստանի» (Ouranio Toxo and Others v Greece)* գործով (վճիռը կայացվել է 2005 թ. հոկտեմբերի 20-ին) որպես դիմող

կազմակերպություն հանդես է եկել մի քաղաքական կուսակցություն, որը հիմնվել է Հունաստանում բնակվող ազգային փոքրամասնության՝ մակեդոնացիների շահերը պաշտպանելու նպատակով: Կուսակցության գլխավոր գրասենյակի պատին փակցված էր մի ցուցանակ, որի վրա հունարեն և մակեդոներեն գրված էր կուսակցության անվանումը: Տեղի քահանաները կոչ էին անում իրենց եկեղեցիների հետևորդներին բողոքի ցույց կազմակերպել «Հունաստանի թշնամիների դեմ», իսկ քաղաքային խորհուրդը որոշում է ընդունել դիմող կազմակերպության դեմ բողոքի ցույցեր կազմակերպելու մասին: Ոստիկանները հանել և տարել են ցուցանակը, ինչից հետո գլխավոր գրասենյակի շենքի մոտ հավաքվել են բողոքի ցույցի մասնակիցները, այդ թվում՝ քաղաքապետը և քաղաքային խորհրդի անդամները: Որոշ մարդիկ մուտք են գործել գրասենյակ և հարձակվել անձնակազմի վրա: Թեև 500 մետր հեռավորության վրա գտնվող ոստիկանության բաժանմունքում ահազանգեր են ստացվել, ոչ մի ոստիկան այդպես էլ դիմողներին պաշտպանության չի եկել: Այնուհետև դատախազը հակամարտություն հրահրելու համար մեղադրանք է ներկայացրել անհատ դիմողներին՝ կուսակցության քարտուղարական կազմի անդամներին, ոչ թե գրասենյակ մուտք գործած և անձնակազմի վրա հարձակում գործած անձանց: Պալատը որոշել է, որ պատասխանող պետությունը բացատրություն չէր տվել, թե ինչու դիմողներին կանխատեսելի վտանգից պաշտպանելու համար ոստիկանական ուժեր չեն հատկացվել: Հետևաբար, իշխանությունների գործողությունների և բացթողումների պատճառով խախտվել է դիմողների միավորումներ կազմելու ազատությունը:

11 *«Թյում Հաբեր Սենը և Չինարն ընդդեմ Թուրքիայի» (Tum Haber Sen and Cinar v Turkey)* գործում (վճիռը կայացվել է 2006 թ. փետրվարի 21-ին) պալատը միաձայն վճռել է, որ պետական հատվածի արհմիության լուծարմամբ, որի 40.000 անդամներն աշխատել են փոստում և կապի ծառայություններ մատուցող կազմակերպություններում, խախտվել է 11-րդ հոդվածը: Պալատը որոշել է, որ արհմիությունը լուծարվել է այն պարզ պատճառով, որ նրա անդամները քաղծառայողներ էին: Այնուամենայնիվ, պատասխանող պետությունը բնավ չի հիմնավորել նման միջոցի պահանջը հրատապ սոցիալական անհրաժեշտության պայմանը բավարարելու համար:

12 Պրոֆեսոր Ալքեման նշել է, որ մարդու բնույթին հատուկ է միավորվելու հակումը, իսկ միավորումները հիմնարար դեր ունեն ինչպես անձանց անհատականության, այնպես էլ ամբողջ հասարակության զարգացման գործում: Անդրադառնալով օրինական իրավունքին՝ նա արտահայտել է հետևյալ կարծիքը.

> Ցանկալի է երկու ուղղությամբ ընդլայնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածում ամրագրված «միավորման ազատության» գաղափարի ընդհանուր իմաստը: Այդ գաղափարը պետք է լայն շրջանակ ունենա և ընդգրկի անհատների համագործակցության բոլոր կազմակերպչական և իրավական ձևերը՝ շահույթ ստանալու դրդապատճառից անկախ»: Եվ ավելին, այդ գաղափարը պետք է մանրամասն անդրադառնա կազմակերպությունների իրավական կարգավիճակի վրա և անդամակցության, կառույցի ու ձևականությունների տարբեր հայեցակետեր ներառի: Այսպիսով, 11-րդ հոդվածը սահմանում է այնպիսի համապարփակ շրջանակ, որի միջոցով կարելի է ստուգել իրավունքի ցանկացած միջամտության օրինականությունը և անհրաժեշտությունը (E Alkema, Freedom of association and civil society), 34 A, Yearbook of the European Convention on Human Rights (Dordrecht: Martinus Nijhoff, 1994), 52 at 82):

Հարց է առաջանում, թե որքանով է 11-րդ հոդվածում ամրագրված այս գաղափարը դուրս մնում գործող դատական գործելակերպի շրջանակներից:

Իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունք

.....

«Բելգիայի ոստիկանների ազգային միությունն ընդդեմ Բելգիայի»
(National Union of Belgian Police v Belgium) A.19 (1975) 1 EHRR 578
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմող արհմիությունը հիմնադրվել է 1922 թ. և բաց էր քաղաքային ոստիկանության աշխատակիցների համար: 1961 թ. արհմիությանն անդամակցում էր մոտ 7200 հոգի, սակայն 1974 թ. այդ թիվը կտրուկ նվազել է՝ հասնելով 5700-ի, ընդ որում՝ այդ տարի Բելգիայի քաղաքային ոստիկանությունն ունեցել է մոտ 12000 աշխատակից: Սույն գործով դիմողը պնդում էր, որ միությանն անդամակցող անձանց թվի նվազումը պայմանավորված էր պետության քաղաքականությամբ, որը միտված էր այն միությունների թվի կրճատմանը, որոնք ներկայացնում էին պետական ծառայողների շահերը և արհմիությունների հետ կապված հարցերի մասին խորհրդատվություն էին ստանում կառավարության կողմից: 1961 թ. օրենքի համաձայն՝ թագավորը, ասել է թե՝ կառավարությունը, իրավունք ուներ որոշելու պետական հատվածի աշխատողների շահերը ներկայացնող արհմիություններին տրամադրվող խորհրդատվության տեսակները: Ավելի ուշ, 1966 թ. օգոստոսի 2-ի թագավորական հրամանագրի համաձայն, կառավարությունը խորհրդատվություն էր տրամադրելու միայն պետական ծառայողների «առավել ներկայացուցչական» միություններին, իսկ այս չափանիշը բավարարելու համար շրջանային և քաղաքային բաժինների ամբողջ անձնակազմի համար, ի թիվս այլոց, պետք է հասանելի լիներ այս կամ այն արհմիությանն անդամակցելու հնարավորությունը: Այնուհետև Բելգիայի ներքին գործերի նախարարը հրաժարվել է ընդունել այն իրողությունը, որ դիմող արհմիությունը բավարարում էր վերոնշյալ չափանիշը, քանի որ տեղական ինքնակառավարման մարմինների բոլոր աշխատակիցները չէին կարող անդամակցել արհմիությանը: Կառավարության խորհրդատվությունը կարևոր դեր ուներ արհմիությունների համար, քանի որ այն հնարավորություն էր տալիս արհմիություններին արտահայտելու իրենց կարծիքը նախքան կառավարության վերջնական որոշում ընդունելը: Թեև ներկայացուցչական չճանաչված արհմիությունները զրկվել են կառավարության խորհրդատվական ծառայություններից, դրանք կարող էին, ի թիվս այլոց, հայց ներկայացնել համապատասխան գերատեսչությանը, գրանցվել ընդունելության համար և իրենց անդամներին հուզող հարցեր բարձրացնել: Դիմող արհմիությունը Բելգիայի դատարաններում բողոքարկել է իրեն խորհրդատվություն տրամադրելու հարցում ներքին գործերի նախարարի մերժումը, սակայն Պետական խորհուրդը (ֆր. *Conseil d'Etat*) չի բավարարել բողոքը: Այնուհետև դիմողը գանգատ է ներկայացրել հանձնաժողովին՝ նշելով, որ իրեն խորհրդատվության տրամադրման մերժումով Բելգիայի կառավարությունը խախտել է արհմիության՝ կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված իրավունքները, ինչպես նաև նույն հոդվածով և 14-րդ հոդվածով սահմանված անխտրական վերաբերմունքը: Հանձնաժողովը միաձայն որոշմամբ կոնվենցիայի խախտում չի արձանագրել:

ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

34. Դիմողի գանգատները կարելի է ամփոփել հետևյալ կերպ. Բելգիայի ոստիկանների ազգային միությունը բողոքում է պետության դեմ իրեն այն առավել ներկայացուցչական կազմակերպությունների շարքը չդասելու համար, որոնց 1961 թ. հուլիսի 27-ի օրենքի համաձայն՝ ներքին գործերի նախարարությունը պետք է խորհրդատվություն տրամադրի անձնակազմի կառույցի, մարդկանց աշխատանքի ընդունելու և նրանց պաշտոնը բարձրացնելու, շրջանների և քաղաքների աշխատակիցների նյութական կարգավիճակի ու աշխատավարձի չափի և այլ հարցերի վերաբերյալ: Դիմող արհմիությունը, որին ներքին գործերի նախարարությունը խորհրդատվություն չի տրամադրում ինչպես բոլոր նման հիմնարկների, այնպես էլ քաղաքային ոստիկանության անձնակազմին հուզող հատուկ հարցերի շուրջ, կարծում է, որ հայտնվել է անբարենպաստ վիճակում այն երեք արհմիությունների համեմատ, որոնց 1966 թ. օգոստոսի 2-ի թագավորական հրամանագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կարող են անդամակցել նշված հիմնարկների բոլոր աշխատակիցները: Դիմողը հայտարարում է, որ այս դրույթն

էապես սահմանափակում է իր գործողությունների շրջանակը՝ թերևս հարկադրելով քաղաքային ոստիկանության աշխատակիցներին անդամակցել այն կազմակերպություններին, որոնք «ներկայացուցչական» համարվելով հանդերձ՝ քաղաքական բնույթ ունեն, ինչը հակասում է ոստիկանի «հատուկ կոչմանը»:

I. 11-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

37. Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը»:

38. Հանձնաժողովի մեծամասնությունն արտահայտել է այն կարծիքը, որ վերոնշյալ դրույթի շրջանակը ներառում է խորհրդատվություն ստանալու իրավունքն ընդգրկող արհմիությունների գործունեության առանցքային տարրերը:

Դատարանը նշում է, որ թեև 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ արհմիություններ ստեղծելու իրավունքը ներկայացվում է որպես միավորման ազատության հայեցակետերից մեկը, սակայն նշված հոդվածով չի երաշխավորվում արհմիությունների կամ դրանց անդամների նկատմամբ պետության որոշակի հատուկ վերաբերմունքը, օրինակ՝ կառավարության խորհրդատվական ծառայություններից օգտվելու իրավունքը: Այս վերջին իրավունքը ոչ միայն չի հիշատակվում 11-րդ հոդվածի 1-ին կետում, այլև ընդհանրապես ամրագրված է ոչ բոլոր մասնակից պետությունների պետական օրենքում կամ դատական պրակտիկայում և պարտադիր պայման չի համարվում արհմիություններ հիմնելու իրավունքի արդյունավետ իրականացման համար: Այսպիսով, կառավարության խորհրդատվական ծառայություններից օգտվելու իրավունքը կոնվենցիայով երաշխավորված արհմիություններ ստեղծելու իրավունքի այն ներհատուկ տարրը չէ, որով այդ իրավունքը տարբերվում է կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված «դատարան դիմելու իրավունքից» (տե՛ս *Գոլդերի* (*Golder*) գործով 1975 թ. փետրվարի 21-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 18, էջ 18, պարբ. 36):

Արհմիություններ ստեղծելու իրավունքին վերաբերող հարցերը մանրամասն քննարկվում են Եվրոպայի խորհրդի շրջանակներում մշակված մեկ այլ կոնվենցիայում, այն է՝ 1961 թ. հոկտեմբերի 18-ի Սոցիալական խարտիայում: Խարտիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավոր են «խրախուսել աշխատողների և գործատուների համատեղ խորհրդակցությունները»: Օգտագործված եզրույթի զուսպ բնույթից հետևում է, որ խարտիայով փաստորեն չի երաշխավորվում խորհրդատվական ծառայություններից օգտվելու իրավունքը: Բացի այդ, 20-րդ հոդվածը թույլ է տալիս խարտիան վավերացրած պետություններին չտանձնել 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված պարտավորությունը: Այսպիսով, չի կարելի ենթադրել, որ նման իրավունքն անուղղակիորեն բխում է 1950 թ. կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին կետից, այլապես, այդ ենթադրությունը հավասարազոր կլինի ընդունելու, որ 1961 թ. Սոցիալական խարտիան հետընթաց քայլ է տվյալ բնագավառում:

39. Այնուհանդերձ, դատարանը համաձայն չէ հանձնաժողովի փոքրամասնության արտահայտած այն կարծիքին, որ «իր շահերի պաշտպանության նպատակով» ձևակերպումն անտեղի է: Արհմիությունների գոյության նպատակը հստակ նշող այդ բառերը վկայում են, որ կոնվենցիայով երաշխավորվում է արհմիության՝ գործադուլի միջոցով արհմիության անդամների մասնագիտական շահերը պաշտպանելու իրավունքը, ընդ որում, մասնակից պետությունները պետք է արտոնեն այդ գործադուլը և պայմաններ ստեղծեն դրա անցկացման համար: Դատարանի կարծիքով՝ այս ամենից հետևում է, որ արհմիության անդամներն իրենց շահերը պաշտպանելու համար իրավունք ունեն պահանջելու հաշվի առնել արհմիության տեսակետները: Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պետությունները միանշանակ ազատ են այդ նպատակին հասնելու համար միջոցներ ընտրելու հարցում: Նման միջոցներից է խորհրդատվությունը, որը սակայն միակը չէ: Կոնվենցիայով միայն պահանջվում է, որ պետության օրենսդրությամբ արհմիություններին հնարավորություն տրվի պաշտպանելու իրենց անդամների շահերը, եթե այդ շահերը 11-րդ հոդվածին չեն հակասում:

40. Անվիճարկելի է այն իրողությունը, որ դիմող արհմիությունը կարող է բազմաբնույթ գործունեություն ծավալել, որն անմիջականորեն վերաբերում է պետությանը, օրինակ՝ նա կարող է դիմումներ ներկայացնել և հանդես գալ արհմիության անդամների կամ նրանցից մի քանիսի շահերը պաշտպանելու նախաձեռնությամբ: Ավելին, դիմող արհմիությունը բնավ չի հայտարարում, որ պատասխանող պետությունն անտեսում է նրա ձեռնարկած քայլերը: Տվյալ հանգամանքներում միայն այն փաստը, որ 1961 թ. հուլիսի 27-ի օրենքի համաձայն՝ ներքին գործերի նախարարը խորհրդատվություն չի տրամադրում դիմող արհմիությանը, առանձին վերցրած 11-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չէ:

41. Ինչ վերաբերում է անհատների՝ դիմող արհմիությանն անդամակցելու իրավունքի ենթադրյալ խախտմանը, ապա դատարանն ընդգծում է այն փաստը, որ 1966 թ. օգոստոսի 2-ի թագավորական հրամանագրից անկախ՝ քաղաքային ոստիկանության յուրաքանչյուր աշխատակից շարունակում է օգտվել այդ իրավունքից: Բելգիայի ոստիկանության ազգային արհմիության անդամների թվի դանդաղ, սակայն նկատելի նվազումը թերևս որոշ չափով կարելի է բացատրել ավելի բարենպաստ դիրքում գտնվող այլ արհմիությունների համեմատ դիմող արհմիության դիրքով: Պատճառը կարող է լինել նաև այն, որ նման իրավիճակում դիմող արհմիությանն անդամակցելու օգտակարությունն ու նշանակությունը կարող են իմաստազրկվել: Այնուհանդերձ, այս ամենը պայմանավորված է կառավարության խորհրդատվական ծառայություններից օգտվող կազմակերպությունների թիվը կրճատելու նպատակով Բելգիայի իրականացրած ընդհանուր քաղաքականությամբ: Այս քաղաքականությունը, առանձին վերցրած, չի հակասում արհմիություններ ստեղծելու իրավունքին, քանի որ Մարդու

իրավունքների եվրոպական դատարանի վերահսկողության շրջանակը չի ներառում այդ քաղաքականության իրականացման համար ձեռնարկված միջոցները, եթե միայն այդ միջոցներով չխախտվեն համակցությամբ դիտարկվող 11-րդ և 14-րդ հոդվածները:

42. Այսպիսով, դատարանը, որը կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չի արձանագրել, կոչված չէ հաշվի առնելու նույն հոդվածի 2-րդ կետը, որով հանձնաժողովը և պատասխանող պետությունն իրենց պնդմամբ չեն առաջնորդվել:
…

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

Միաձայն վճռել է, որ 11-րդ հոդվածը չի խախտվել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Լիակազմ դատարանի կազմում ընդգրկվել են նախագահող դատավոր Բալլադորե Պալիերին և դատավորներ՝ Մոզլերը, Ֆերդրոսը, Ռոդենբըրը, Զեքիան, Կրեմոնան, Վիարդան, Օ'Դոնոգին, Պեդերսենը, Վիլջաուլմսոնը, Ռիսդալը, Գանսհոֆ վան դեր Մերշը, Ֆիտցմորիսը և Բինդշեդլեր-Ռոբերտը: Դատավոր Զեքիան արտահայտել է առանձին կարծիք.

Այնուհանդերձ, կգա ժամանակ, թեև չեմ կարող համոզված ասել, որ այն դեռևս չի եկել, երբ կոլեկտիվ համաձայնագիր կնքելու իրավունքի նման կընդունվի և արհմիության բնականոն գործունեության շրջանակներում գերիշխող կհամարվի նաև խորհրդատվություն ստանալու իրավունքը: Այդ պարագայում պետք է ընդունել, որ խորհրդատվությունից օգտվելու իրավունքը ներհատուկ է 11-րդ հոդվածի 1-ին կետին:

Այսպիսով, տասը կողմ և չորս դեմ ձայնով՝ դատարանը մերժել է դիմող արհմիության՝ խտրական վերաբերմունքի (11-րդ և 14-րդ հոդվածներ) կապակցությամբ ներկայացրած գանգատը, քանի որ խորհրդատվության բնագավառում իր վարած քաղաքականությամբ պատասխանող պետությունը հետապնդում էր «արհմիությունների ոլորտում անարխիան» կանխելու օրինական նպատակը:

2 Վերոնշյալ վճռից պարզ է դառնում, որ արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը ոչ թե առանձին իրավունք է, այլ 11-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված միավորման ընդհանուր ազատության մաս է կազմում: Պրոֆեսոր Հեփլին համարում է, որ այս հոդվածով արհմիությունների հատուկ հիշատակումն ուղղված է այն նպատակին, որ անկախ մասնակից պետությունների ներպետական օրենսդրությամբ սահմանված կատեգորիայից և կարգավիճակից՝ արհմիությունները կոնվենցիայի համաձայն «միավորումներ» համարվեն (B Hepple, Freedom to form and join or not to join trade unions, 34A *Yearbook of the European Convention on Human Rights* (Dordrecht: Martinus Nijhoff, 1994), 162 at 168):

3 *«Շվեդիայի մեքենավարների արհմիությունն ընդդեմ Շվեդիայի» (Swedish Engine Drivers' Union v Sweden,* 1976 1 EHRR 617, A.20) գործում դատարանը միաձայն վճռել է, որ այս իրավունքը կիրառելի է գործատուների կարգավիճակով հանդես եկող պետությունների պարագայում: Սույն գործով դիմող արհմիությունը ներկայացնում էր «Շվեդիայի պետական երկաթուղիներ» ծառայությունում աշխատող մեքենավարների մոտ 25 տոկոսը, որոնց մեծամասնությունն անդամակցում էր Շվեդիայի պետական հատվածում աշխատողների երեք հիմնական միավորումներին: 1969 թ. ի վեր Շվեդիայի կոլեկտիվ համաձայնագրերի հարցերով պետական վարչությունը, որը, որպես գործատու, ներկայացնում էր պետությունը, հայտարարում էր, որ դիմող միության հետ չի կնքի կոլեկտիվ համաձայնագրեր մեքենավարներին աշխատանքի ընդունելու և նրանց աշխատանքի պայմանների վերաբերյալ: Նման կոլեկտիվ համաձայնագրեր կնքվելու էին միայն պետական հատվածի աշխատողների հիմնական միավորումների հետ: Այնուհանդերձ, վարչությունը հակված էր դիմող արհմիության հետ շարունակելու մեքենավարների աշխատանքի հետ կապված հարցերով քննարկումները: Արհմիությանը չի հաջողվել Շվեդիայի աշխատանքի հարցերով դատարանում վիճարկել վարչության որոշումը: Ավելի ուշ արհմիությունը գանգատ է ներկայացրել հանձնա-

ժողովին՝ ի թիվս այլոց պնդելով 11-րդ հոդվածով սահմանված իր իրավունքների խախտման մասին: Հանձնաժողովը միաձայն որոշմամբ արձանագրել է, որ կոնվենցիայի խախտում տեղի չի ունեցել: Դատարանում պատասխանող պետությունը պնդել է, որ ըստ կոնվենցիայի պետությունը դիտվում է որպես պետական իշխանության կրող, ոչ թե որպես գործատու: Դատարանը մերժել է այս հայտարարությունը.

Կոնվենցիայի որևէ դրույթ հստակ տարբերակում չի դնում մասնակից պետության՝ պետական՝ որպես իշխանության կրողի գործառույթների և որպես գործատուի պարտավորությունների միջև: Այս տեսանկյունից բացառություն չի կազմում նաև 11-րդ հոդվածը: Ավելին, ճշված հոդվածի 2-րդ կետում, ի վերջո, հստակ նշվում է, որ պետությունը պարտավոր է հարգել իր աշխատավորների՝ խաղաղ հավաքների և միավորումների ազատությունը, որի վրա կարող են «օրինական սահմանափակումներ» դրվել, եթե խոսքը պետության զինված ուժերի, ոստիկանության կամ վարչական ծառայողների մասին է:

Հետևաբար, 11-րդ հոդվածը պարտադիր է «գործատուի կարգավիճակով հանդես եկող պետության» համար՝ անկախ այն հանգամանքից՝ պետության և նրա աշխատողների փոխհարաբերությունները կարգավորվում են հանրային՞ն, թե՞ մասնավոր իրավունքով: Բացի այդ, դատարանը չի համարում, որ պարտավոր է որոշել՝ 11-րդ հոդվածն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կիրառելի՞ է անհատների փոխհարաբերություններում, թե՞ ոչ (պարբ. 37):

Այնուհետև դատարանը բերել է նույն հիմնավորումը, ինչ *Բելգիայի ոստիկանների ազգային միության* (*National Union of Belgian Police*) գործով կայացրած վճռում.

…այս հոդվածով չի սահմանվում արհմիությունների կամ դրանց անդամների նկատմամբ պետության հատուկ վերաբերմունքը, օրինակ՝ արհմիությունների այն իրավունքը, որ պետությունը նրանց հետ պետք է կնքի որևէ կոլեկտիվ համաձայնագիր: Այսպիսով, վերջին իրավունքը 11-րդ հոդվածի 1-ին կետում չի հիշատակվում, սակայն չի կարելի ասել, որ այդ իրավունքն ամրագրված է բոլոր մասնակից պետությունների ազգային օրենքներում կամ դատական պրակտիկայում, կամ կոնվենցիայով երաշխավորված իրավունքին ներհատուկ տարր է կազմում: Այսպիսով, այս իրավունքը հատուկ չէ կոնվենցիայով սահմանված իրավունքին (կետ 39):

Հետևաբար, դատարանը միաձայն չի արձանագրել դիմող արհմիության՝ կոնվենցիայով սահմանված իրավունքների խախտում:

4 *Շվեդիայի մեքենավարների արհմիության* (*Swedish Engine Drivers' Union*) գործով վճիռ կայացրած պալատը դատավորների նույն կազմով լսել է նաև *«Շմիդտը և Դահլշտրյոմն ընդդեմ Շվեդիայի» (Schmidt and Dahlström v Sweden,* 1976, 1 EHRR 632, A.21) գործը: Որպես դիմող հանդես են եկել Շվեդիայի պետական հատվածում աշխատողների շահերը ներկայացնող երկու հիմնական միավորումների դուստր արհմիությունների անդամները: Պրն Շմիդտն իրավագիտության դասախոս էր, իսկ պրն Դահլշտրյոմը՝ շվեդական բանակի սպա: 1971 թ. սկզբին ձախողվեցին դիմողների միավորումների և Շվեդիայի կոլեկտիվ համաձայնագրերի հարցերով պետական վարչության միջև նոր կոլեկտիվ համաձայնագիր կնքելու շուրջ վարվող բանակցությունները: *Շվեդիայի մեքենավարների արհմիության* (*Swedish Engine Drivers' Union*) գործում գանգատ է ներկայացվել նաև կոլեկտիվ համաձայնագրերի պետական վարչության դեմ: Միավորումներն իրենց որոշ անդամներին գործադուլի կոչեր արեցին, սակայն դիմողներից ոչ ոք հարկադրաբար կամ իր իսկ կամքով գործադուլին չմասնակցեց: Ի պատասխան գործադուլի՝ վարչությունը պետական հատվածում աշխատող մի քանի անձանց, այդ թվում՝ պրն Շմիդտին ազատեց աշխատանքից: Մի քանի շաբաթ տևած գործադուլից հետո վարչությունը և միավորումները մի նոր կոլեկտիվ համաձայնագիր ստորագրեցին: Այնուհանդերձ, վարչությունը հրաժարվեց հետին թվով բարձրացնել այն անհատների աշխատավարձերը, ովքեր անդամակցում էին գործադուլի կոչեր անող արհմիություններին: Թեև դիմողները չեն մասնակցել գործադուլին, սակայն գործադուլի կոչեր անող արհմիություններին անդամակցելու պատճառով նրանք զրկվեցին ավելի բարձր աշխատավարձ ստանալու հնարավորությունից: Դիմողները վարչության որոշումը բողոքարկեցին Շվեդիայի աշխատանքի հարցերով դատարանում, որը վճիռ կայացրեց վարչության օգտին: Այնուհետև դիմողները գանգատ ներկայացրեցին հանձնաժողովին՝ պնդելով, որ մերժելով հետին թվով վճարել իրենց ավելի բարձր աշխատավարձերը՝ պետական վարչությունը խախտել է կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված իրավունքները: Հանձնաժողովն ինը կողմ, մեկ դեմ և մեկ ձեռնպահ ձայներով կոնվենցիայի խախտում չի արձանագրել: Դատարանը, տվյալ դեպքում նույնպես առաջնորդվելով կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին կետի նկատմամբ իր որդեգրած կայուն մոտեցմամբ, միաձայն վճռել է, որ

այս հոդվածով արհմիության անդամների նկատմամբ մասնակից պետությունների որևէ հատուկ վերաբերմունք չի սահմանվում: Ուստի, դիմողները հետին թվով ավելի բարձր աշխատավարձ պահանջելու իրավունք չունեին: Անդրադառնալով դիմողների այն հայտարարությանը, որ վարչության որոշման պատճառով նրանք հնարավորություն չեն ունեցել իրացնելու 11-րդ հոդվածով սահմանված գործադուլ անելու իրենց «անօտարելի իրավունքը»՝ դատարանը վճռել է հետևյալը.

… Կոնվենցիան պաշտպանում է գործադուլի միջոցով արհմիության անդամների մասնագիտական շահերը պաշտպանելու իրավունքը, և մասնակից պետությունները պետք է արտոնեն այդ գործադուլները և պայմաններ ստեղծեն դրանց անցկացման համար (տե՛ս *Բելգիայի ոստիկանների ազգային միության* (*National Union of Belgian Police*) գործը): Այնուհանդերձ, 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պետություններն ազատ են այդ նպատակին հասնելու համար միջոցներ ընտրելու հարցում: Նման կարևորագույն միջոցներից է գործադուլ անցկացնելու իրավունքը, սակայն գոյություն ունեն նաև այլ միջոցներ: Կոնվենցիայի 11-րդ հոդվածով հստակ չամրագրված նման իրավունքը կարող է պետական օրենսդրությամբ ենթարկվել այնպիսի կարգավորման, որի ընթացքում երբեմն սահմանափակվի այդ իրավունքի իրացումը: 1961 թ. Սոցիալական խարտիան երաշխավորում է միայն նման կարգավորման ենթակա գործադուլի իրավունքը: 1950 թ. կոնվենցիան իր հերթին պահանջում է, որ 11-րդ հոդվածին չհակասող պայմաններում արհմիությունների անդամներին պետական օրենսդրությամբ հնարավորություն տրվի այդ կազմակերպությունների միջոցով պաշտպանելու իրենց մասնագիտական շահերը: Ներկա գործով գանգատի քննությունից չի երևում, որ դիմողները զրկվել են այդ հնարավորությունից (պարբ. 36):

Հետևաբար, կոնվենցիայով սահմանված իրավունքների խախտում չի արձանագրել:

Արհմիությունների՝ 11-րդ հոդվածից ենթադրաբար բխող, սակայն չամրագրված նյութահիրավական իրավունքների, օրինակ՝ գործադուլ անցկացնելու կամ պետական հատվածում որպես գործատու հանդես եկող կազմակերպությունների կողմից խորհրդատվություն ստանալու իրավունքի գոյությունը ճանաչելու հարցում դատարանի ցուցաբերած դժկամությունն անկասկած պայմանավորված է Եվրոպական սոցիալական խարտիայով սահմանված տնտեսական և սոցիալական իրավունքները ոտնձգությունից զերծ պահելու ցանկությամբ: Ավելին, վերոնշյալ գործերից հետևում է, որ դատարանը հակված չէ ստանձնելու պետական հատվածում գործատուի և աշխատողի միջև ծագած վեճերում վերազգային դատավորի դերը:

5 *«Վիլսոնը և Լրագրողների ազգային արհմիությունը, Փոլմերը, Վայեթը և Երկաթուղային, ծովային ու ցամաքային փոխադրամիջոցների աշխատակիցների ազգային միությունը, Դուլանը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (Wilson and The National Union of Journalist, Palmer, Wyeth and The National Union of Rail, Maritime and Transport Workers, Doolan and Others v United Kingdom)* համատեղ գործերով (վճիռը կայացվել է 2002 թ. հուլիսի 2-ին) լիակազմ դատարանի պալատը միաձայն որոշել է, որ Մեծ Բրիտանիան ըստ հարկի չի պաշտպանել արհմիությունների և դրանց անդամների՝ 11-րդ հոդվածով սահմանված իրավունքները: 1990-ական թթ. սկզբին երկու գործատու կազմակերպություն՝ «Դեյլի մեյլ» (*Daily Mail*) թերթի հրատարակչությունը և մի պահեստային ընկերություն մտադիր էին դադարեցնել դիմող արհմիությունների հետ կնքած կոլեկտիվ համաձայնագրերը: Գործատուներն առաջարկում էին պարգևավճար և ավելի բարձր աշխատավարձ այն աշխատողներին, ովքեր կստորագրեին նոր աշխատանքային պայմանագրեր՝ հրաժարվելով արհմիութենական իրավունքներից: Դիմողները հրաժարվել են ստորագրել նոր պայմանագրերը և վիճարկել են գործատուների քայլերի օրինականությունը: Ի վերջո, Լորդերի պալատը որոշում է կայացրել գործատուների օգտին: Ավելին, պահպանողական կառավարությունն առաջարկել է այնպիսի փոփոխություններ մտցնել «Աշխատանքի մասին» օրենքում, որոնք աշխատողներին կարգելեն վիճարկել բոլոր կամ առանձին աշխատողների հետ գործատուի հարաբերությունները ձևափոխելու քայլերը, եթե, իհարկե, այդ քայլերը ողջամիտ են: Խորհրդարանը հաստատել է 1993 թ. «Արհմիութենական բարեփոխումների և աշխատանքային իրավունքների մասին» օրենքի 13-րդ բաժնի նշված ուղղումը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանում դիմողները պնդում էին, որ 11-րդ հոդվածով ամրագրված իրենց իրավունքների պաշտպանությունը ներպետական օրենսդրությամբ ժամանակին չի ապահովվել, մինչդեռ պատասխանատու լեյբորիստական կառավարությունը փորձում էր պաշտպանվել՝ ընդգծելով Միացյալ Թագավորությունում գործատուների և արհմիությունների միջև կոլեկտիվ համաձայնագրերի կնքման և ճանաչման համակարգի կամավոր բնույթը: Դատարանը վճռել է հետևյալը.

46. …Աշխատավորների՝ իրենց շահերի պաշտպանության նպատակով արհմիությանն անդամակցելու իրավունքի բուն էությունն այն է, որ նրանք իրավասու լինեն պահանջել կամ թույլատրել արհմիությանն իրենց անունից ներկայանալ գործատուին կամ միջոցներ ձեռնարկել իրենց շահերը պաշտպանելու համար: Հակառակ դեպքում իրենց շահերի պաշտպանության նպատակով արհմիությանն անդամակցելու ազատությունը պատրանքի է վերածվում: Հենց պետությունն է երաշխավորում, որ չխախտվի կամ չսահմանափակվի որևէ արհմիության անդամների՝ իրենց գործատուների հետ ունեցած հարաբերությունների կարգավորման շրջանակում արհմիությունը որպես իրենց շահերը ներկայացնող մարմին ընտրելու իրավունքը»:

….

48. Ուստի, տվյալ գործի քննության ժամանակ Միացյալ Թագավորության օրենսդրությամբ գործատուն կարող էր նշանակալիորեն թուլացնել կամ խափանել արհմիության՝ իր անդամների շահերը պաշտպանելու կարողությունը: Դատարանը նշում է, որ ներպետական օրենսդրության այս հայեցակետը քննադատել են Սոցիալական խարտիայի անկախ փորձագետների կոմիտեն և Աշխատանքի միջազգային կազմակերպության միավորումներ կազմելու իրավունքի հարցերով կոմիտեն: Դատարանը համարում է, որ պատասխանող պետությունը, որը գործատուներին թույլատրել է դրամական հատուցմամբ շահագրգռել աշխատողներին հրաժարվել արհմիութենական իրավունքներից, չի կատարել կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված իրավունքները երաշխավորելու իր դրական պարտավորությունը, ինչի հետևանքով խախտվել են դիմող արհմիությունների և անհատ դիմողների՝ այդ հոդվածով ամրագրված իրավունքները:

Թեև վերոնշյալ վճիռն արհմիությունների համար չի ապահովում նրանց պահանջած բոլոր իրավունքները, օրինակ՝ դատարանը հրաժարվել է գործատուներին պարտադրել ճանաչել արհմիությունները 11-րդ հոդվածի շրջանակներում, սակայն վճռից հետևում է, որ մշտական դատարանն արձագանքել է ազատ շուկայական տնտեսության պայմաններում առողջ արհմիութենական համակարգի կարիքներին: Ուշագրավ է, որ 11-րդ հոդվածով սահմանված իրավունքները պաշտպանելու համար պետություններին հայեցողության «լայն» սահման վերապահելու հետ մեկտեղ դատարանը միաձայն վճռել է, որ պատասխանող պետությունը չի կատարել նույն հոդվածով սահմանված իր դրական պարտավորությունները: Եվ իսկապես, քանի որ Միացյալ Թագավորության նախորդ կառավարությունն ապահովել է արհմիությունների՝ իրենց անդամների շահերը ներկայացնելու կարողությունը խաթարող օրենքի ընդունումը, ապա կարելի է համարել, որ Միացյալ Թագավորությունում գործատուների և արհմիությունների միջև կնքվող կոլեկտիվ համաձայնագրերի հետ կապված շահերն արդար հավասարակշռության բերելիս կառավարությունն անհարկի նախապատվություն է տվել կողմերից մեկին: Դատարանի՝ դիմողների օգտին վճիռ կայացնելու պատրաստակամությունը կարող է պայմանավորված լինել նաև այլ միջազգային մարմինների կողմից նման ներպետական օրենքների դատապարտմամբ (վճռի՝ արհմիութենական իրավունքի տեսաբան-փորձագետի մեկնաբանությունը տե՛ս K. D. Ewing, The Implications of Wilson and Palmer (2003) 32 Industrial Law Journal 1):

Միավորման ազատության բացասական իրավունք

……..

«Յանգը, Ջեյմսը և Ուեբսթերն ընդդեմ Միացյալ Թագավորության»

(Young, James and Webster v UK), A.44 (1981) 4 EHRR 38

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Միացյալ Թագավորությունում երկար պատմություն ունեն փակ կազմակերպությունները, որոնք դատարանի բնորոշմամբ «այնպիսի ձեռնարկություններ կամ հիմնարկներ են, որոնք մեկ կամ մի քանի արհմիությունների և միավորումների հետ կնքված համաձայնագրով կամ համաձայնագրերով պարտադրում են որոշ կարգի աշխատակիցներին անդամակցել տվյալ արհմիությանը» (պարբ. 13): Գոյություն են ունեցել այնպիսի ձեռնարկություններ, որտեղ աշխատելու մտադրություն ունեցող անձինք պարտավոր էին նախապես անդամակցել արհմիություններին, և այնպիսի ձեռնարկություններ, որոնց աշխատողները կարող էին արհմիությանը միանալ աշխատանքի ընդունվելուց հետո: 1968 թ. Արհմիությունների և գործատուների միավորումների հարցերով թագավորական հանձնաժողովի մեծամասնությունը հանձնարարել է ավելի մեծ իրավական պաշտպանություն ապահովել այն անձանց համար, ովքեր աշխատանքից

ազատվել են նշված իրավիճակում այս կամ այն արհմիությանն անդամակցելուց հրաժարվելու համար: 1971 թ. պրն Հեթի գլխավորությամբ պահպանողական կառավարությունն առաջադրել է «Աշխատանքային հարաբերությունների մասին» օրենքը, որն աշխատողներին իրավունք է տալիս որևէ արհմիության անդամ չհանդիսանալ կամ հրաժարվել որևէ հատուկ արհմիության անդամ դառնալուց: Սակայն 1974 թ. կրկին իշխանության եկած Լեյբորիստական կուսակցության օրոք ընդունվեց «Արհմիությունների և աշխատանքային հարաբերությունների մասին» օրենքը, որով չեղյալ հայտարարվեց 1971 թ. օրենքը, և սահմանվեց, որ փակ կազմակերպություններում աշխատող և արհմիություններին անդամակցելուց հրաժարվող անձին աշխատանքից ազատելը «անարդար» է համարվում միայն, եթե՝ ա) աշխատողը կրոնական նկատառումներով հրաժարվում է որևէ արհմիության անդամակցելուց, կամ բ) աշխատողը որևէ ողջամիտ պատճառով հրաժարվում է որևէ արհմիության անդամակցելուց: Մի քանի տարի անց՝ 1976 թ., ընդունվեց վերոնշյալ օրենքում ուղղում մտցնող մեկ այլ օրենք, որով այս վերջին հիմնավորումն անվավեր ճանաչվեց: 1975 թ. «Բրիտանական երկաթուղիներ» ընկերությունը համաձայնագիր կնքեց հետևյալ երեք արհմիությունների հետ՝ Երկաթուղայինների ազգային արհմիություն (*NUR*), Տրանսպորտի վարձատրվող անձնակազմի միավորում *(TSSA)* և Շոգեքարշների ինժեներների և հրշեջների միավորված կազմակերպություն *(ASLEF)*: Համաձայնագրով սահմանվում էր, որ նշված երեք արհմիություններից որևէ մեկին անդամակցումն աշխատանքի պարտադիր պայման է «Բրիտանական երկաթուղիներ» ընկերության անձնակազմի որոշ կատեգորիաների համար: Հարկ է նշել, որ նախքան համաձայնագրի ստորագրումը կազմակերպության 250000 աշխատողներից 7000-ը չեն անդամակցել վերոնշյալ արհմիություններին: Ի վերջո, արհմիություններին չանդամակցելու պատճառով աշխատանքից ազատվել է 54 հոգի, այդ թվում նաև՝ տվյալ գործով երեք դիմողները: Պրն Յանգը 1972 թ. ի վեր «Բրիտանական երկաթուղիներ» ընկերությունում աշխատել է որպես գրասենյակային ծառայող: Նա հրաժարվել է վերոնշյալ արհմիություններից որևէ մեկին անդամակցելուց՝ բերելով այն հիմնավորումը, որ համաձայն չէ նրանց քաղաքական հայացքներին: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ Երկաթուղայինների ազգային արհմիության նպատակներից մեկն էր «աշխատել կապիտալիստական հասարակարգը սոցիալիստականով փոխարինելու ուղղությամբ», իսկ Տրանսպորտի վարձատրվող անձնակազմի միավորումը միայն քաղաքական նվիրատվություններ էր անում Լեյբորիստական կուսակցությանը: 1974 թ. ի վեր պրն Զեյմսը որպես սլաքավար է աշխատել «Բրիտանական երկաթուղիներ» ընկերությունում, որտեղ նաև նախկինում էր աշխատել: Պրն Զեյմսը հրաժարվել է Երկաթուղայինների ազգային արհմիությանն անդամակցելուց, որը նրա համար միակ հասանելի արհմիությունն էր, քանի որ, նրա կարծիքով, այդ արհմիությունն ըստ հարկի չէր պաշտպանում իր անդամների շահերը: Պրն Ուեբսթերը որպես գրասենյակային ծառայող է աշխատել «Բրիտանական երկաթուղիներ» ընկերությունում 1958 թ. ի վեր: Նա հրաժարվել է Երկաթուղայինների ազգային արհմիությանը և Տրանսպորտի վարձատրվող անձնակազմի միավորմանն անդամակցելուց, քանի որ դեմ էր արհմիութենական շարժման այդ պահի գործունեությանը: Դիմողները գանգատ են ներկայացրել հանձնաժողովին՝ պնդելով, որ նշված արհմիություններին չանդամակցելու պատճառով իրենց աշխատանքից ազատելու օրինական միջոցը, ի թիվս այլոց, խախտել է 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներով սահմանված մտքի, խղճի ազատությունը, ինչպես նաև ազատ արտահայտվելու և միավորումներ կազմելու իրավունքները: Հանձնաժողովը, տասնչորս կողմ և երեք դեմ ձայներով, արտահայտել է այն կարծիքը, որ տեղի է ունեցել 11-րդ հոդվածի խախտում, իսկ 9-րդ և 10-րդ հոդվածների խախտման վերաբերյալ գանգատները քննելու կարիք չկար:

Օրենքի վերաբերյալ

I. ՆԱԽՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

…Գործի նյութաիրավական հիմքերի քննությունից առաջ պետք է պարզել՝ պատասխանող պետությունը՝ Միացյալ Թագավորությունը, պատասխանատվություն կրո՞ւմ է դիմողների նկատմամբ կիրառված միջոցի համար, թե՞ ոչ:

Պատասխանող պետությունն ընդունել է, որ եթե դատարանը եզրակացնի, որ դիմողների աշխատանքային պայմանագրերի լուծումը միջամտություն է կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված իրավունքներին և անմիջականորեն պայմանավորված է «Արհմիությունների և աշխատողների հարաբերությունների մասին» օրենքով ու այդ օրենքի ուղղմամբ, ապա պետությունը պետք է պատասխանատվություն կրի նման օրենքներ ընդունելու համար:

Հանձնաժողովը նմանօրինակ մոտեցում է որդեգրել իր զեկույցում:

49. Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ բոլոր պայմանավորվող կողմերն «իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն կոնվենցիայում»: Այսպիսով, եթե այդ իրավունքներն ու ազատությունները խախտվեն ներպետական օրենքներում նշված պարտավորությունն անտեսելու հետևանքով, ապա խախտման համար պատասխանատու կլինի պետությունը: Թեև նշված գործի հիմքում ընկած իրադարձությունների անմիջական պատճառն է 1975 թ. «Բրիտանական երկաթուղիներ» ընկերության և երկաթուղայինների արհմիությունների միջև կնքված համաձայնագիրը, սակայն դիմողների գանգատի առարկա դարձած վարվելակերպն օրինական է դարձել այդ պահին գործող ներպետական օրենքով: Այդ իսկ հիմքերով՝ նշված օրենքի հետևանքով կոնվենցիայի որևէ խախտման համար պատասխանատու է պետությունը: Համապատասխանաբար, դատարանը կոչված չէ պարզելու, թե արդյոք պետությունը, ինչպես պնդում են դիմողները, պատասխանատո՞ւ է խախտման համար նաև այն պատճառներով, որ պետք է համարվի գործատու կամ վերահսկում է «Բրիտանական երկաթուղիներ» ընկերությունը:

II. 11-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

…

I. ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ 11-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ

51. Դատարան ներկայացրած գանգատը հիմնականում վերաբերում է այն հարցին, թե արդյոք 11-րդ հոդվածով երաշխավորվո՞ւմ է ոչ միայն միավորման ազատությունը, ներառյալ արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը դրական իմաստով, այլև՝ միավորումներին կամ արհմիություններին անդամակցելու պարտավորություն չկրելու ենթադրյալ «բացասական իրավունքը»:

Թեև հանճնաժողովի մեծամասնությունը հայտնել է, որ կարիք չկա պարզելու նշված հարցը, սակայն դիմողները շարունակ պնդում էին, որ տվյալ հոդվածի տեքստում «բացասական իրավունքը» միանշանակ ենթադրվում է: Համարելով, որ հանճնաժողովն իր եզրակացությամբ փաստորեն նույնպես ճանաչում է առնվազն սահմանափակ բացասական իրավունքը, պատասխանող պետությունը հայտարարել է, որ 11-րդ հոդվածով ամենևին չի ամրագրվում կամ չի երաշխավորվում միավորումներին հարկադրված անդամակցելուց զերծ մնալու իրավունքը: Պետությունը պնդում էր, որ այս իրավունքը միտումնավոր է բացառվել կոնվենցիայից, ինչի մասին վկայում է Նախապատրաստական փաստաթղթերի հետևյալ հատվածը.

> «Հաշվի առնելով այն դժվարությունները, որոնք բխում են որոշ երկրներում գործող փակ կազմակերպությունների համակարգից, համաժողովը ցանկալի չհամարեց կոնվենցիայով ամրագրել մի այնպիսի կանոն, որի համաձայն «ոչ մեկի չի կարելի հարկադրել անդամակցել այս կամ այն միավորմանը», և որը նշված է Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (Բարձրաստիճան պաշտոնյաների համաժողովի 1950 թ. հունիսի 19-ի զեկույց, Նախապատրաստական փաստաթղթերի ժողովածու, հտ. IV, էջ 262):

52. Դատարանը տվյալ դեպքում անհրաժեշտ չի համարում պատասխանել այս հարցին:

Այնուհանդերձ, դատարանը հիշեցնում է, որ արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը միավորումներ կազմելու ազատության հատուկ հայեցակետ է (տե՛ս *Բելգիայի ոստիկանների ազգային միության* (*National Union of Belgian Police*) գործով 1975 թ. հոկտեմբերի 27-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 19, էջ 17, պարբ. 38): Դատարանը հավելում է, որ ազատության գաղափարը ենթադրում է այն իրացնելու առումով ազատ ընտրության որոշակի աստիճան:

Վերոնշյալ փաստարկի համատեքստում ընդունելի է, որ կոնվենցիայի Նախապատրաստական փաստաթղթերի վերոնշյալ հատվածում բերված հիմքերով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 20-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված ընդհանուր կանոնը միտումնավոր բացառվել է և չի կարող կոնվենցիայով սահմանված համարվել, սակայն, այս ամենը չի նշանակում, որ միավորման ազատության բացասական հայեցակետը բացարձակապես ընդգրկված չէ 11-րդ հոդվածում, և որ այս կամ այն արհմիությանն անդամակցելու որևէ հարկադրանք համատեղելի է այդ հոդվածի նպատակի հետ: 11-րդ հոդվածի՝ որպես արհմիություններին անդամակցելու առումով ամեն տեսակի հարկադրանք արտոնող հոդվածի մեկնաբանությունը կխաթարեր դրանով երաշխավորված ազատության բուն էությունը:

53. Դատարանը կրկին ընդգծում է, որ որևէ առանձին դիմումից բխող գործում պետք է ընդհանուր համատեքստը չանտեսելով հանդերձ իր ուշադրությունը հնարավորինս սևեռի այդ գործի շրջանակներում արծարծված հարցերի վրա (տե՛ս, ի թիվս այլոց, *Գուցարդիի* (*Guzzardi*) գործով 1980 թ. նոյեմբերի 6-ի վճիռը, շարք A, թիվ 39, էջ 31–2, պարբ. 88): Համապատասխանաբար, տվյալ դեպքում դատարանը կոչված չէ կոնվենցիայի տեսանկյունից վերանայելու փակ կազմակերպությունների համակարգը կամ կարծիք հայտնելու այդ համակարգի առաջ բերած բոլոր հետևանքների, ինչպես նաև արհմիություններին անդամակցելու հարցում պարտադրանքի ձևերի մասին: Փոխարենը, դատարանը կքննի միայն դիմողների համար այդ համակարգի առաջ բերած հետևանքները:

54. 1975 թ. կնքված համաձայնագրի արդյունքում դիմողների առջև ծառացել է հետևյալ երկընտրանքը՝ կա՛մ անդամակցել ներքոհիշյալ արհմիություններին, կա՛մ ազատվել աշխատանքից, ընդ որում, արհմիություններին անդամակցելը պար-

տաղիր պայման չէր այն ժամանակ, երբ դիմողներն աշխատանքի էին ընդունվել, և նախքան այդ պայմանի հաստատումը նրանցից երկուսն արդեն մի քանի տարի աշխատել էին նշված կազմակերպություններում: Այսպիսով, պրն Ջեյմսն իր մասնագիտության բերումով պետք է անդամակցեր Երկաթուղայինների ազգային արհմիությանը, իսկ պրն Յանգը և պրն Ուեբսթերը՝ Տրանսպորտի վարձատրվող անձնակազմի միավորմանը կամ Երկաթուղայինների ազգային արհմիությանը: Դիմողներից յուրաքանչյուրը համաձայնագրի նշված պայմանը համարում էր միջամտություն իր միավորման ազատությանը, պրն Յանգը և պրն Ուեբսթերն արտահայտվում էին նշված արհմիությունների քաղաքականության և գործունեության դեմ, իսկ պրն Յանգն առարկում էր նաև նշված արհմիությունների քաղաքական դիրքորոշումը:

Դիմողների կարծիքով՝ չհիմնավորված ճնշում համարվող հարկադրանքին չենթարկվելու պատճառով նրանք աշխատանքից ազատվելու մասին ծանուցագրեր են ստացել: Այդ ժամանակ գործող օրենքի համաձայն՝ նրանց աշխատանքից ազատելն «արդարացի» էր, ուստիև չէր կարող հիմք լինել փոխհատուցման պահանջ ներկայացնելու, էլ ուր մնաց դիմողների իրավունքները վերականգնելու կամ նրանց կրկին աշխատանքի ընդունելու համար:

55. Այն իրադրությունը, որում հայտնվել են դիմողները, միանշանակ հակասում է բացասական իմաստով միավորման ազատության հասկացությանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 11-րդ հոդվածը հավասարապես չի երաշխավորում նշված ազատության բացասական և դրական հայեցակետերը, այս կամ այն արհմիությանն անդամակցելու հարկադրանքը միշտ չէ, որ հակասում է կոնվենցիային:

Այնուհանդերձ, աշխատանքից ազատվելու հետևանքով ապրուստի միջոցներից զրկվելու սպառնալիքը հարկադրանքի առավել խիստ ձևերից է, որին տվյալ դեպքում ենթարկվել են այն անձինք, ովքեր «Քրիտանական երկաթուղիներ» ընկերությունում աշխատանքի էին ընդունվել նախքան արհմիություններին անդամակցելու պարտավորության ներմուծումը:

Դատարանի կարծիքով՝ տվյալ գործի հանգամանքներում հարկադրանքի նման միջոցը խաթարում է 11-րդ հոդվածով երաշխավորված միավորման ազատության բուն էությունը և արդեն իսկ վերածվում է միջամտության երեք դիմողների՝ միավորումներ կազմելու իրավունքին:

56. Ներկա գործի մեկ այլ հայեցակետ վերաբերում է դիմողների՝ սեփական կամքով արհմիություններին անդամակցելու ազատության սահմանափակմանը: Եթե անհատին վերապահված սեփական հայեցողությամբ գործելու կամ իր կամքով ընտրություն կատարելու ազատությունը փաստորեն վերածվում է պատրանքի կամ այնքան է սահմանափակվում, որ այլևս գործնական արժեք չի ներկայացնում, ապա անհատը միավորման ազատությունից չի օգտվում: Անգամ հայեցողության սահմանի կամ ընտրության ազատության պարագայում դիմողները պարտավոր կլինեին անդամակցել նշված արհմիություններից որևէ մեկին, քանի որ հակառակ դեպքում նրանք անպայման կազատվեին աշխատանքից:

57. Ավելին, անկախ 11-րդ հոդվածի ինքնուրույն դերից և կիրառման հատուկ ոլորտից՝ նշված հոդվածը տվյալ դեպքում հարկ է դիտարկել 9-րդ և 10-րդ հոդվածների համատեքստում (տե՛ս *mutatis mutandis Կյելդսենի* (*Kjeldsen*), *Բուսկ Մադսենի* (*Busk Madsen*) և *Պեդերսենի* (*Pedersen*) գործով 1976 թ. դեկտեմբերի 7-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 23, էջ 26, պարբ. 52):

Պրն Յանգը և պրն Ուեբսթերն առարկում էին արհմիության քաղաքականության և գործունեության դեմ, իսկ պրն Յանգը՝ նաև Երկաթուղայինների ազգային արհմիության և Տրանսպորտի վարձատրվող անձնակազմի միավորման քաղաքական դիրքորոշման դեմ: Պրն Ջեյմսի առարկություններն այլ բնույթի էին, սակայն նա նույնպես կարևորում էր ընտրություն կատարելու ազատությունը և դրանից եզրահանգում, որ ինքը ոչ մի առավելություն չի ստանա Երկաթուղայինների ազգային արհմիությանն անդամակցելու դեպքում:

11-րդ հոդվածով երաշխավորված միավորման ազատության նկատառումներից է նաև մտքի, խղճի, կրոնի ազատության և ազատ արտահայտվելու իրավունքի տեսքով 9-րդ և 10-րդ հոդվածներով ամրագրված անձնական կարծիքի պաշտպանությունը: Համապատասխանաբար, ինչպես տվյալ դեպքում, սեփական համոզմունքներին հակառակ համոզմունքներ ունեցող արհմիությանն անդամակցելու հարկադրանքի և ճնշման հետևանքով խաթարվում է 11-րդ հոդվածի բուն էությունը:

Այս առումով գանգատի առարկա դարձած առնվազն պրն Յանգի և պրն Ուեբսթերի նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքը միջամտություն է 11-րդ հոդվածով ամրագրված նրանց իրավունքներին:

2. ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

58. Պատասխանող պետությունը հստակ հայտարարել է, որ եթե դատարանն արձանագրեր միջամտություն 9-րդ, 10-րդ կամ 11-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքներից որևէ մեկին, ապա ինքը չէր փաստարկի, որ նման միջամտությունը հիմնավորված է 11-րդ հոդվածի 2-րդ կետով:

Այնուհանդերձ, դատարանը որոշել է իր նախաձեռնությամբ քննել այս հարցը, որին առնչվող որոշ նկատառումներ ներկայացվել են դատարանի տրամադրության տակ եղած փաստաթղթերում և տեղեկություններում:

59. Կոնվենցիայի 11-րդ հոդվածով ամրագրված որևէ իրավունքին միջամտությունը համատեղելի է նշված հոդվածի 2-րդ կետի հետ, եթե միայն այդ միջամտությունը «նախատեսված է օրենքով», միտված է այդ կետով օրինական համարվող նպատակին կամ նպատակներին և «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» այդ նպատակին կամ նպատակներին հասնելու համար (տե՛ս *mutatis mutandis «Սանդի թայմզ» թերթի* (*Sunday Times*) գործով 1979 թ. ապրիլի 26-ին կայացրած վճիռը,

շարք A, թիվ 30, էջ 29, պարբ. 45):

60. Դիմողները պնդում էին, որ իրենց գանգատի հիմքում ընկած սահմանափակումները նշված երեք պայմաններից որևէ մեկը չեն բավարարում:

Դատարանն անհրաժեշտ չի համարում որոշել՝ սահմանափակումները բավարարո՞ւմ են առաջին երկու պայմանը, քանի որ այդ հարցերը լրիվ չեն փաստարկվել դատարանում: Այսպիսով, դատարանը ենթադրում է, որ կոնվենցիայի իմաստով միջամտությունը «նախատեսված է օրենքով» (տե՛ս վերոնշյալ *«Սանդի թայմզ» թերթի* (*Sunday Times*) գործով կայացրած վճիռը, էջ 30-31, պարբ. 46–49) և ուղղված է նաև «այլոց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու» նպատակին, որը 11-րդ հոդվածի 2-րդ կետում թվարկված նպատակներից միակն է, որ կարող է տեղին լինել տվյալ դեպքում:

61. Անդրադառնալով վերջին կետին, ասել է թե՝ օրինական նպատակին կամ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ պայմանին՝ դատարանն իր ուշադրությունը սևեռել է փակ կազմակերպությունների համակարգից բխող մի շարք ընդհանուր առավելությունների վրա, օրինակ՝ աշխատանքային հարաբերություններում առավել կայունությանը նպաստող կոլեկտիվ համաձայնագրերի կարգավորված համակարգի ամրապնդում, արհմիությունների թվի աճի և դրա շնորհիվ արհմիությունների ոլորտում անարխիայի կանխում, կոլեկտիվ բանակցություններ վարելու լիազորության անհավասարության հակազդում, որոշ գործատուների՝ աշխատողների շահերը ներկայացնող մարմնի հետ բանակցելու պահանջի բավարարում, արհմիության որոշ անդամների՝ արհմիությանը չանդամակցող աշխատակիցների հետ չաշխատելու ցանկության բավարարում, երաշխավորում, որ արհմիության ձեռքբերումներից չօգտվեն անդամավճար չմուծող անձինք:

Տվյալ դեպքում նշված փաստարկներին վերաբերող որևէ դիտողություն անտեղի կլիներ, քանի որ փակ կազմակերպությունների համակարգն այս համատեքստում չի քննարկվում (տե՛ս վերոնշյալ պարբ. 53):

62. Մյուս կողմից՝ հարկ է պարզել գանգատի հիմքում ընկած միջամտության «անհրաժեշտությունը», այն է՝ արդյոք «Բրիտանական երկաթուղիներ» ընկերության հետ 1975 թ. համաձայնագիր կնքած արհմիությունների նպատակներին հասնելու համար «ժողովրդավարական հասարակությունում» անհրաժե՞շտ էր օրինականացնել այն դիմողներին աշխատանքից ազատելու միջոցը, ովքեր աշխատանքի էին ընդունվել, երբ արհմիություններին անդամակցելը պարտադիր պայման չէր:

63. *Հենդիսայդի* (*Handyside*) գործով 1976 թ. դեկտեմբերի 7-ին կայացրած վճռում (շարք A, թիվ 24) դատարանը մի շարք սկզբունքներ է առանձնացրել տվյալ միջոցի «անհրաժեշտությունը» գնահատելու համար:

Առաջին՝ տվյալ համատեքստում «անհրաժեշտ» ձևակերպումը զուրկ է այն ճկունությունից, որը բնորոշ է «օգտակար» կամ «ցանկալի» ձևակերպումներին (պարբ. 48): Ուստի և այն փաստը, որ «Բրիտանական երկաթուղիներ» ընկերության՝ միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունելու մասին համաձայնագրով առհասարակ կարող են որոշ առավելություններ սահմանվել, առանձին վերցրած չի հիմնավորում գանգատի առարկա դարձած միջամտության անհրաժեշտությունը:

Երկրորդ՝ բազմակարծությունը, հանդուրժողականությունը և լայնախոհությունը «ժողովրդավարական հասարակության» անկյունաքարերն են (պարբ. 49): Թեև անհատների շահերը երբեմն պետք է ստորադասել խմբի շահերին, սակայն ժողովրդավարության նշանակությունը մեծամասնության կարծիքի գերակայությամբ չի սահմանափակվում: Փոխարենը, պետք է հասնել այնպիսի հավասարակշռության, որն ապահովի փոքրամասնության նկատմամբ արդար և պատշաճ վերաբերմունքի դրսևորում և կանխի գերակա դիրքի յուրաքանչյուր չարաշահում: Համապատասխանաբար, այն փաստը, որ դիմողների դիրքորոշմանը կողմնակից են նրանց գործընկերներից միայն մի քանիսը, նույնպես չի հիմնավորում դատարանում քննության առարկա դարձած միջոցը:

Երրորդ՝ կոնվենցիայով սահմանված յուրաքանչյուր իրավունքի սահմանափակում պետք է համաչափ լինի հետապնդվող օրինական նպատակին (էջ 23, պարբ. 49):

64. Այդ կապակցությամբ դատարանը նշել է, որ 1968 թ. զեկույց ներկայացրած Արհմիությունների և գործատուների միավորումների հարցերով թագավորական հանձնաժողովի մեծամասնությունը համարում էր, որ փակ կազմակերպությունների նորակազմ համակարգում արդեն աշխատող անձանց կարգավիճակն այն ոլորտներից է, որտեղ ցանկալի էին հատուկ պաշտպանության միջոցներ: Բացի այդ, վերջերս կատարված ուսումնասիրություններից հետևում է, որ նախքան 1980 թ. «Զբաղվածության մասին» օրենքի ուժի մեջ մտնելը փակ կազմակերպություններից շատերը չեն պահանջել, որ արդեն աշխատող անձինք անդամակցեն այս կամ այն արհմիությանը (տե՛ս վերոնշյալ պարբ. 13): Դատարանին չի ներկայացվել որևէ հատուկ պատճառ, որով կարելի է հիմնավորել «Բրիտանական երկաթուղիներ» ընկերության աշխատակիցների վրա դրված նման պահանջը: Ավելին, դիմողների տրամադրած և չեղքված վիճակագրական տվյալների համաձայն՝ նույնիսկ արհմիությունների անդամների նշանակալի մեծամասնությունը դեմ է այն պնդմանը, որ լուրջ պատճառներով արհմիությանն անդամակցելուց հրաժարվող անձինք պետք է ազատվեն աշխատանքից: Ի վերջո, 1975 թ. «Բրիտանական երկաթուղիներ» ընկերության աշխատակիցների ավելի քան 95 տոկոսն արդեն անդամակցում է Երկաթուղայինների ազգային արհմիությանը, Տրանսպորտի վարձատրվող անձնակազմի միավորմանը կամ Շոգեքարշների ինժեներների և հրշեջների միավորված կազմակերպությանը:

Այս բոլոր գործոնները վկայում են, որ եթե նույնիսկ գործող օրենքով չէր թույլատրվում հարկադրանքի միջոցներ կիրառել նշված արհմիությանն անդամակցելու դեմ դիմողների պես առարկող անձանց նկատմամբ, «Բրիտանական երկաթուղիներ» ընկերության հետ կնքված համաձայնագրով երկաթուղային տրանսպորտի ոլորտում աշխատողների արհմիություններին երբեք

չէր արգելվում պաշտպանել իրենց անդամների շահերը (տե՛ս *Բելգիայի ոստիկանների ազգային միության* (*National Union of Belgian Police*) վերոնշյալ գործով կայացրած վճիռը, պարբ. 39):

65. Հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները՝ պրն Յանգին, պրն Ջեյմսին և պրն Ուեբսթերին հասցրած վնասը գերազանցել է հակադիր կողմերի շահերն արդար հավասարակշռության բերելու համար անհրաժեշտ զիջումները, ուստիև չի կարող հետապնդվող նպատակներին համաչափ միջոց համարվել: Նույնիսկ ըստ հարկի հաշվի առնելով պետության «հայեցողության սահմանը» (տե՛ս, ի թիվս այլոց, վերոնշյալ *«Սանդի թայմզ» թերթի* (*Sunday Times*) գործով կայացված վճիռը, պարբ. 59)՝ դատարանը համարում է, որ գանգատի առարկա դարձած սահմանափակումները չեն բավարարում 11-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» պայմանը:

Հետևաբար, տեղի է ունեցել 11-րդ հոդվածի խախտում:
…

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

Տասնութ կողմ և երեք դեմ ձայներով արձանագրել է կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Լիակազմ դատարանի կազմում ընդգրկվել են նախագահող դատավոր Վիարդան և դատավորներ Ռիսդալը, Զեքիան, Կրեմոնան, Գանսհոֆ վան դեր Մերշը, Բինդշեդլեր-Ռոբերտը, էվրիգենիսը, Լիշը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Պինեյրո Ֆարինան, Գարսիա դե էնտեռիան, Փեթիթին, Ուոլշը, էվանսը, Մակդոնալդը, Ռուսոն և Բերնհարդտը: Դատարանը միաձայն վճռել է, որ 9-րդ և 10-րդ հոդվածներն առանձին քննելու կարիք չկա, քանի որ դրանք հաշվի են առնվել 11-րդ հոդվածին առնչվող գանգատում: Դատավորներ Գանսհոֆ վան դեր Մերշը, Բինդշեդլեր-Ռոբերտը, Լիշը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Պինեյրո Ֆարինան և Փեթիթին արտահայտել են համընկնող կարծիք՝ պաշտպանելով արհմիություններ ստեղծելու իրավունքի բացասական հայեցակետը.

…Միավորումներ կազմելու ազատության պաշտպանությունն անլիարժեք կլիներ, եթե այդ ազատությունը միայն դրական հայեցակետ ներառեր: Երկու դեպքում էլ խոսքը նույն իրավունքի մասին է: Կոնվենցիայի Նախապատրաստական փաստաթղթերում, որոնք անվիճարկելի չեն, այդ կապակցությամբ նշվում է միայն «ցանկալի չէ» ձևակերպումը, ինչի հիման վրա չի կարելի եզրակացնել, որ արհմիություններ կազմելու ազատության բացասական հայեցակետը նախատեսվում էր բացառել 11-րդ հոդվածից:

Կցանկանայինք ընդգծել, որ նույնիսկ 11-րդ հոդվածի խախտման բացակայության դեպքում մտքի, խղճի, կրոնի ազատության կամ ազատ արտահայտվելու իրավունքի ենթատեքստում կարելի է հիմնավորել միավորմանն անդամակցելու մերժումը: Մեր կարծիքով՝ այն հանգամանքը, որ անձը պարտավոր է պատճառաբանել իր մերժումը, արդեն իսկ միավորումներ կազմելու իրավունքի խախտում է:

Միավորման ազատության ձևերից մեկը համարվող արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը ներառում է սեփական հայեցողության ազատություն, ասել է թե՝ անհատն ազատ է միավորումներին անդամակցելու կամ չանդամակցելու, իսկ առաջին դեպքում՝ նաև միավորում ընտրելու առումով: Սակայն եթե, ինչպես տվյալ դեպքում, արհմիությունների ոլորտում իշխում է մենաշնորհը, ապա միավորման ազատության անբաժանելի տարրը՝ ընտրություն կատարելու հնարավորությունը, փաստորեն պատրանք է:

Ի տարբերություն վերոնշյալ կարծիքի՝ դատավոր Սորենսենը, ում միացել են դատավորներ Տոիր Վիլջաուլմսոնը և Լագերգրենը, արտահայտել է չհամընկնող կարծիք, որ միավորման ազատության բացասական հայեցակետի միանգամայն այլ ըմբռնում է.

…Կոնվենցիայի մշակման պատմությունից միանշանակ պարզ է դառնում, որ մասնակից պետություններին չի հաջողվել համաձայնության գալ տվյալ ոլորտում որևէ միջազգային պարտավորություն ստանձնելու հարցում, փոխարենը, նրանք որոշել են, որ այդ ոլորտը պետք է կարգավորվի միայն ազգային մակարդակով:

Մեկնաբանության որևէ սկզբունքով չի կարելի հիմնավորել 11-րդ հոդվածի շրջանակում այնպիսի հարցի ներառումը, որը դիտավորյալ չի ընդգրկվել կոնվենցիայում և պետք է կարգավորվի յուրաքանչյուր մասնակից պետության ազգային օրենսդրությամբ և ավանդույթներով:

Այսպես կոչված միավորումներ կազմելու դրական և բացասական իրավունքները պարզապես նույն մետաղադրամի երկու երեսը չեն, կամ ինչպես ասում է դատարանը, նույն իրավունքի երկու հայեցակետերը չեն, քանի որ այդ երկու իրավունքների միջև տրամաբանական կապ գոյություն չունի:

Միավորումներ կազմելու դրական իրավունքը պաշտպանում է տնտեսական, մասնագիտական, քաղաքական, մշակութային, ժամանցային կամ այլ բնույթի ընդհանուր շահերի և նպատակների համար անհատների՝ սեփական կամքով միավորումներ կազմելու հնարավորությունը, և այդ պաշտպանությունը միտված է նման ընդհանուր գործունեության խափանմանն ուղղված պետական իշխանությունների միջամտության կանխմանը: Այդ դրական իրավունքը վերաբերում է հասարակական գործունեության ակտիվ մասնակից հանդիսացող անհատին և որոշ իմաստով կոլեկտիվ իրավունք է, քանի որ այն կարող է կենսագործվել միայն բազում անհատների համատեղ ջանքերով: Միավորումներ կազմելու բացասական իրավունքը, ընդհակառակը, միտված է այլ անձանց հետ միավորվելուց անհատի պաշտպանությանը, եթե նա չի ընդունում այդ անձանց հայացքները կամ միավորման նպատակները: Անկախ նրանից, որ երբեմն կարող է նման պաշտպանության մեծ պահանջ առաջանալ, այդ պաշտպանությունը տրամաբանորեն կամ անուղղակիորեն միավորման դրական իրավունքի մաս չի կազմում (պարբ. 2, 5, 6):

Ըստ ձեզ՝ ո՞ր կարծիքն է ներկայացնում 11-րդ հոդվածի պատշաճ մեկնաբանությունը: Արդյոք մեծամասնությունն իսկապե՞ս փորձում էր նոր իրավունք սահմանել:

2 Զավեշտալի էր այն հանգամանքը, որ դատարանում պատասխանող պետության շահերը պետք է ներկայացներ Միացյալ Թագավորության նորանշանակ պահպանողական կառավարությունը տկն Թետչերի գլխավորությամբ: Պետությունը չէր փորձում 11-րդ հոդվածի 2-րդ կետով հիմնավորել դիմողներին աշխատանքից ազատելու միջոցը, ինչն անկասկած պայմանավորված էր նրանով, որ դիմողների հայացքները հարում էին Թետչերի կառավարության գաղափարախոսությանը: Եվ իսկապես, դատարանի այդ վճռի կայացումից մեկ տարի առաջ պահպանողական կառավարությունը օրենսդրական փոփոխություն ապահովեց՝ ընդունելով 1980 թ. «Զբաղվածության մասին» օրենքը, որը, ի թիվս այլոց, սահմանում է, որ այսուհետ «անարդար» է համարվում փակ կազմակերպություններում այն անձանց աշխատանքից ազատելը, ովքեր խղճի ազատության կամ այլ խորին անձնական համոզմունքների նկատառումներով հրաժարվում են անդամակցելուց ցանկացած կամ որևէ առանձին արհմիության:

3 *«Սիբսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Sibson v UK*), 1993 17 EHRR 193, A.258-A) գործում բացահայտվում է վերոնշյալ գործի փաստացի համատեքստը: Դիմողը 1973 թ. ի վեր որպես բեռնատար մեքենայի վարորդ աշխատում էր «Քորթոլդս» խոշոր ընկերության Լանկաշիրի կայաններից մեկում: Նրա աշխատանքը լիովին բավարար է գնահատվել: Մինչև 1985 թ. դիմողն անդամակցել էր Տրանսպորտի և ընդհանուր ոլորտի աշխատողների արհմիությանը, իսկ 1981-1984 թթ. զբաղեցրել էր արհմիության մասնաճյուղի քարտուղարի պաշտոնը: 1985 թ. հուլիսին Սիբսոնը դուրս է եկել արհմիությունից նույն արհմիության անդամներից մեկի դեմ իր ներկայացրած գանգատի նկատմամբ արհմիության դրսևորած վերաբերմունքի պատճառով: Այնուհետև նա անդամագրվել է մեկ այլ արհմիության: Սակայն դիմողի գործընկերներն անմիջապես սուր պարսավանքի են ենթարկել նրան և խոչընդոտել աշխատանքում: Թեև «Քորթոլդս» ընկերության այդ կայանը պաշտոնապես փակ կազմակերպություն չէր համարվում, սակայն գրեթե բոլոր մնացած աշխատակիցներն անդամակցում էին Տրանսպորտի և ընդհանուր ոլորտի աշխատողների արհմիությանը: 1985 թ. հոկտեմբերին կայանի աշխատողների ճնշող մեծամասնությունը քվեարկել է փակ կազմակերպության հետ համաձայնագիր կնքելու և Սիբսոնին աշխատանքից չազատելու դեպքում գործադուլ անելու օգտին: Այնուհետև ընկերությունն առաջարկել է Սիբսոնին կրկին անդամակցել Տրանսպորտի և ընդհանուր ոլորտի աշխատողների արհմիությանը և շարունակել աշխատել նույն կայանում կամ նույն վարձատրությամբ աշխատանքի անցնել մոտակայքում գտնվող մեկ այլ կայանում: Սիբսոնը հեռացել է աշխատանքից՝ պնդելով, որ տնօրինությունն իր վարքով ստիպել է իրեն սեփական կամքով թողնել աշխատանքը: Ի վերջո, վերաքննիչ դատարանը վճռել է, որ աշխատանքային պայմանագրի համաձայն՝ պատասխանող ընկերությունն իրավունք ուներ պահանջել, որ Սիբսոնն աշխատանքի անցնի մեկ այլ կայանում, ուստի դիմողը դիտավորյալ չի ազատվել աշխատանքից: Այնուհետև Սիբսոնը հանձնաժողովին գանգատ է ներկայացրել առ այն, որ Տրանսպորտի և ընդհանուր ոլորտի աշխատողների արհմիությանը կրկին անդամակցելու կամ ընկերության մեկ այլ կայանում աշխատանքի անցնելու հարկադրանքով խախտվում են 11-րդ հոդվածով ամրագրված իրավունքները: Հանձնաժողովն ութ կողմ և

վեց դեմ ձայներով կոնվենցիայի խախտում չի արձանագրել: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռել է, որ դիմողի գործը տարբերվում է *Յանգի, Ջեյմսի և Ուեբսթերի* (*Young, James and Webster*) վերոնշյալ գործից, քանի որ. ա) Սիբսոնը սկզբունքորեն չէր առարկում արհմիությանն անդամակցելու գաղափարին, ուստի, տվյալ դեպքում կիրառելի չեն կոնվենցիայի 9-րդ և 10-րդ հոդվածները, բ) տվյալ դեպքում միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունելու մասին համաձայնագիր գոյություն չի ունեցել, և գ) Սիբսոնին չի ներկայացվել երկընտրանք Տրանսպորտի և ընդհանուր ոլորտի աշխատողների արհմիությանն անդամակցելու կամ աշխատանքից ազատվելու միջև, քանի որ նրան առաջարկել են աշխատանքի անցնել ընկերության մեկ այլ կայանում: Հետևաբար, դատարանը՝ յոթ կողմ և երկու դեմ ձայներով, կոնվենցիայի խախտում չի արձանագրել, քանի որ «…այն Սիբսոնի նկատմամբ դրսևորված վերաբերմունքը չի խաթարել 11-րդ հոդվածով երաշխավորված միավորման ազատության բուն էությունը (պարբ. 29): Այս որոշումից հետևում է, որ դատարանը ճանաչում է միավորումներ կազմելու իրավունքի բացասական հայեցակետի սահմանափակ բնույթը: Դատարանի կողմից քննված գործոնների շարքից պարզ է դառնում, որ որքան շատ անհատի մերժումը պայմանավորված լինի նրա համոզմունքներով և որքան լուրջ հետևանքներ ունենա նրա աշխատանքի համար, այնքան ավելի հավանական է, որ դատարանը կարծանագրի 11-րդ հոդվածի խախտում:

4 *«Սիգուրդուր Ա Սիգուրյոնսոնն ընդդեմ Իսլանդիայի»* (*Sigurdur A, Sigurjonsson v Iceland*), 1993, 16 EHRR 462, A.264) գործում դատարանն ամրապնդել է միավորման ազատության բացասական տարրի իրավագիտական հիմքը: 1983 թ. ընդունված կանոնակարգի համաձայն՝ Ռեյկյավիկում աշխատող տաքսիների վարորդները պարտավոր էին անդամակցել «Ֆրամի» վարորդների միավորմանը, որը 1936 թ. հիմնել են տաքսու վարորդներն ի թիվս այլոց իրենց աշխատանքային ժամերի և դրույքաչափերի վերաբերյալ բանակցելու միջոցով իրենց շահերը պաշտպանելու, ինչպես նաև տաքսու վարորդների համախմբվածությանը նպաստելու և տաքսիների թիվը սահմանափակելու նպատակով: 1984 թ. դիմողը տաքսի ծառայությունում աշխատելու լիցենզիա է ստացել իրավասու պետական կոմիտեից և նույն թվականին անդամակցել «Ֆրամի» միավորմանը: 1985 թ. նա դադարեցրել է անդամավճարի մուծումը և տեղեկացրել միավորմանը, որ մտադիր էր դուրս գալ միավորումից: «Ֆրամի» միավորման հայցով պետական կոմիտեն անվավեր է ճանաչել դիմողի լիցենզիան: Այնուհետև Սիգուրյոնսոնն Իսլանդիայի դատարաններում բողոքարկել է այդ որոշումը: Ի վերջո, Իսլանդիայի գերագույն դատարանը վճռել է, որ «Ֆրամի» միավորմանն անդամակցելու պարտավորությունն ամրագրող կանոնակարգը զուրկ էր օրինական հիմքերից: Այնուհետև 1989 թ. Միացյալ Թագավորության կառավարության շնորհիվ ընդունվել է «Հանրային օգտագործման համար նախատեսված ավտոմեքենաների մասին» նոր օրենքը, որի համաձայն՝ արհմիությանն անդամակցելը տաքսի ծառայություններում աշխատելու համար լիցենզիա ստանալու նախապայման էր: 1989 թ. օրենքի շրջանակներում ընդունվել է ևս մեկ կանոնակարգ (թիվ 308/1989), որով «Ֆրամի» միավորումը տարբեր լիազորություններ է ստացել հանրային շահերը պաշտպանելու ոլորտում, օրինակ՝ որպես տաքսի ծառայող ավտոմեքենաների սարքինության հաստատումը: Դիմողը կրկին անդամակցել է «Ֆրամի» միավորմանը, սակայն արտահայտել այն կարծիքը, որ այդ քայլը հակասում է իր ցանկություններին և շահերին: Նա գանգատ է ներկայացրել հանձնաժողովին, ի թիվս այլոց, 11-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով ամրագրված իրավունքների խախտման կապակցությամբ: Հանձնաժողովը՝ տասնյոթ կողմ և մեկ դեմ ձայներով, արձանագրել է 11-րդ հոդվածի խախտում և միաձայն եզրակացրել, որ 9-րդ և 10-րդ հոդվածների ենթադրյալ խախտումը քննելու կարիք չկա: Դատարանում պատասխանող պետությունը պնդում էր, որ հաշվի առնելով կոնվենցիայի Նախապատրաստական փաստաթղթերը՝ 11-րդ հոդվածի բացասական հայեցակետը պետք է մեկնաբանվի նեղ իմաստով: Ի պատասխան այդ պնդումների՝ դատարանն ընդգծել է, որ *Յանգի, Ջեյմսի և Ուեբսթերի* (*Young, James and Webster*) գործով ավելի շուտ կայացրած վճռում Նախապատրաստական փաստաթղթերին վճռորոշ նշանակություն չէր տրվում» (պարբ. 35): Բացի այդ, դատարանը համարում էր, որ այդ գործով որոշում կայացնելուց հետո միջազգային մակարդակով այդ հարցում նոր միօրինակ մոտեցում է ի հայտ գալիս: 1989 թ. Եվրախորհրդի տասնմեկ անդամ պետություն արդեն ընդունել էր Աշխատավորների հիմնարար սոցիալական իրավունքների մասին համայնքի խարտիան, որի համաձայն՝ աշխատողները և գործատուներն ունեն արհմիություններին կամ մասնագիտական կազմակերպություններին անդամակցելու կամ չանդամակցելու ազատություն: 1961 թ. Եվրոպական սոցիալական խար-

տիայի հարցերով անկախ փորձագետների կոմիտեն համարում էր, որ այդ խարտիային ներհատուկ է միավորումներ ստեղծելու կամ դրանց անդամակցելու բացասական իրավունքը, իսկ Աշխատանքի միջազգային կազմակերպությունը կարծում էր, որ այս կամ այն արհմիությանն անդամակցելու պարտադիր բնույթը հակասում է իր թիվ 87 և 98 կոնվենցիաներին: Ուստի դատարանի մեծամասնությունը (ութ կողմ և մեկ դեմ) վճռել է հետևյալը.

…Հարկ է հիշեցնել, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան գործուն փաստաթուղթ է, որը պետք է մեկնաբանվի արդի պայմաններին համապատասխան (տե՛ս *«Սերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Soering v UK)* գործը, 1989, A.161): Համապատասխանաբար, պետք է համարել, որ 11-րդ հոդվածն ընդգրկում է միավորումներ ստեղծելու կամ դրանց անդամակցելու բացասական իրավունքը: Տվյալ պարագայում դատարանը պետք է որոշի՝ այս իրավունքի դեպքում պե՞տք է առաջնորդվել նույն հիմքերով, ինչ դրական իրավունքի դեպքում (պարբ. 35):

Դատարանը վճռել է, որ «Ֆրամի» միավորմանն իր կամքին հակառակ անդամակցելու առումով դիմողի նկատմամբ 1989 թ. «Հանրային վարձակալման նպատակով օգտագործվող ավտոմեքենաների մասին» օրենքի շրջանակներում կիրառված հարկադրանքը հակասում է 11-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված միավորման ազատությանը: Հետևաբար, պետք էր պարզել՝ միջամտությունը հիմնավորվա՞ծ է նույն հոդվածի 2-րդ կետով, թե՞ ոչ: 1989 թ. օրենքի հիման վրա միջամտությունը «նախատեսված է օրենքով» և ուղղված է «այլ անձանց իրավունքներն ու ազատությունները» պաշտպանելու օրինական նպատակին: Ուստի վիճահարույց է միայն այն հարցը, թե արդյոք միջամտությունն անհրաժե՞շտ էր «ժողովրդավարական հասարակությունում»: Թեև դատարանն ընդունում էր որպես պետական ծառայություն հանդես եկող «Ֆրամի» միավորման դերակատարումը, սակայն չէր համարում, որ հարկադրական անդամակցումը այդ միավորմանը պարտադիր էր դրա գործառույթների իրականացման համար, քանի որ լիցենզավորող պետական կոմիտեն էր իրականացնում տաքսի ծառայության մասին օրենքի կատարման հիմնական վերահսկողությունը: Ընդհանուր առմամբ.

…Թեև պատասխանող պետության բերած հիմնավորումները կարող են կարևոր համարվել, սակայն դրանք բավարար չեն ապացուցելու, որ լիցենզիայից զրկելու սպառնալիքով դիմողին «անհրաժեշտ էր» հարկադրել իր կամքին հակառակ անդամակցել «Ֆրամի» միավորմանը: Մասնավորապես, անկախ Իսլանդիայի հայեցողության սահմանից, զանգատի առարկա դարձած միջոցները հետապնդվող օրինական նպատակին համաչափ չեն եղել: Հետևաբար, տեղի է ունեցել 11-րդ հոդվածի խախտում (պարբ. 41):

Բացի այդ, դատարանը միաձայն վճռել է, որ 9-րդ և 10-րդ հոդվածների խախտման կապակցությամբ դիմողի գանգատները քննելու կարիք չկա: Դատավոր Տոիր Վիլջաուլմսոնը չհամընկնող կարծիք է արտահայտել այն հիմնավորմամբ, որը նա արել էր *Յանգի, Ջեյմսի և Ուեբսթերի (Young, James and Webster*) գործով կայացրած վճռի վերաբերյալ դատարանի փոքրամասնության կարծիքում, այն է՝ կոնվենցիան մշակողները միավորումներ ստեղծելու և դրանց անդամակցելու բացասական իրավունքը 11-րդ հոդվածի 1-ին կետում ընդգրկելու մտադրություն չեն ունեցել. «Կարծում եմ, բացասական իրավունքն այնպես է առանձնանում և հստակ տարբերվում միավորման ազատությունից, որ 11-րդ հոդվածի իրավական մեկնաբանության արդյունքում չի կարելի այդ հոդվածի կիրառման շրջանակում ներառել բացասական իրավունքը»: Այս գործով կայացրած վճռում մեծամասնությունն ընդունում է, որ, ինչպես ասվում է *Յանգի, Ջեյմսի և Ուեբսթերի* (*Young, James and Webster*) գործով կայացրած վճռում, միավորման ազատության «բացասական հայեցակետը» վերածվում է «բացասական իրավունքի», ինչը հիմնականում պայմանավորված է զանազան զուգահեռ միջազգային համաձայնագրերում նույն իրավունքի առկայությամբ: Տվյալ դեպքում կարող է տեղին լինել այն նշումը, որ 1980-ական թթ. եվրոպական մի շարք պետություններում փոփոխություն արձանագրվեց քաղաքական, տնտեսական և սոցիալական առումներով ինդիվիդուալիստական հայացքների օգտին: Այնուհանդերձ, դատարանը զգուշացավ վճիռ կայացնել 11-րդ հոդվածում ակնհայտորեն ընդգրկված դրական իրավունքին զուգահեռ նաև բացասական իրավունքի կարգավիճակի վերաբերյալ:

5 Դատարանը հակված է վճռելու, որ մասնավոր անձանց՝ միավորումներ ստեղծելու և դրանց անդա-

մակցելու բացասական իրավունքը պաշտպանելու նպատակով պետությունները սկզբունքորեն կարող են կրել մասնավոր անձանց և միավորումների տնտեսական հարաբերություններին միջամտելու դրական պարտավորություն: *«Գուստաֆսոնն ընդդեմ Շվեդիայի»* (*Gustafsson v Sweden*), 1996, 22 EHRR 409, 1996-II 637) գործով դիմողը գործարար է, որին սեփականության իրավունքով պատկանում էին Գոթլանդ կղզու մի ամառային ռեստորան և երիտասարդների իջևանատուն: Դիմողը ռեստորանների սեփականատերերի որևէ միավորման չէր անդամակցում, իսկ դա նշանակում է, որ նա չէր համարվում այդ միավորումների և Հյուրանոցների ու ռեստորանների աշխատակիցների արհմիության միջև կնքված ընդհանուր աշխատանքային պայմանագրի կողմերից մեկը և չէր կարող համաձայնագիր ստորագրել այդ արհմիության հետ: Գուստաֆսոնը սկզբունքորեն առարկում էր կոլեկտիվ բանակցությունների դեմ և պնդում էր, որ ընդհանուր աշխատանքային պայմանագրով սահմանված դրույքաչափերի համեմատ նա իր աշխատողներին ավելի շատ էր վարձատրում: 1987 թ. դիմողը հրաժարվել է համաձայնագիր ստորագրելուց Հյուրանոցների ու ռեստորանների աշխատակիցների արհմիության հետ, ինչի հետևանքով արհմիության անդամները «շրջափակել» են ռեստորանը և բողոք արտահայտել: Հաջորդ տարվա ամռանը այլ արհմիություններ, ի նշան Գուստաֆսոնի դեմ բողոքի, համանման քայլերի են դիմել, ինչից հետո դադարեցվել է պարենի առաքումը ռեստորան: Գուստաֆսոնը Շվեդիայի կառավարությանը դիմել է իրավիճակին միջամտելու հայցով, այն է՝ կանխել Հյուրանոցների ու ռեստորանների աշխատակիցների արհմիության կողմից ռեստորանի «շրջափակումը» և համանման միջոցները, սակայն իրավասու պետական մարմինները մերժել են նրա խնդրանքը՝ հայտնելով, որ վիճաբանության կողմերն անհատ քաղաքացիներ են: Շվեդիայի գերագույն վարչական դատարանը մերժել է իրավասու պետական մարմնի որոշման կապակցությամբ Գուստաֆսոնի ներկայացրած բողոքը: Արհմիությունների շարունակական գործողությունների պայմաններում առաջացած դժվարությունների պատճառով 1991 թ. դիմողը վաճառել է ռեստորանը: Նա հանձնաժողովին գանգատ է ներկայացրել առ այն, որ արհմիությունների ձեռնարկած քայլերի առնչությամբ պետական պաշտպանության բացակայության հետևանքով, ի թիվս այլոց, խախտվել է միավորման ազատության բացասական իրավունքը: Հանձնաժողովի մեծամասնությունը (տասներեք կողմ և չորս դեմ ձայների հարաբերակցությամբ) արձանագրել է 11-րդ հոդվածի խախտում: Դատարանը նախ և առաջ դիտարկել է պետության՝ 11-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության սկզբունքները:

Թեև դիմողի գանգատի առարկա դարձած խախտումը հնարավոր դարձավ ներպետական օրենսդրության հետևանքով, սակայն այդ հարցը պետության անմիջական միջամտության ենթակա չէր: Այնուհանդերձ, եթե պարզվեր, որ խախտման պատճառն այն է, որ ներպետական օրենսդրությամբ չեն պաշտպանվել կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված իրավունքները, ապա Շվեդիայի պետությունը պատասխանատվություն կկրեր (տե՛ս *«Սիբսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Sibson v UK*) գործը, 1994, A.258-A): Թեև 11-րդ հոդվածն ըստ էության միտված է պետական իշխանությունների կամայական միջամտություններից անհատի իրավունքների պաշտպանությանը, սակայն այդ հոդվածով կարող են նաև սահմանվել նշված իրավունքների արդյունավետ իրացումը երաշխավորելու դրական պարտավորություններ: Այս ամենից հետևում է, որ միավորման ազատության բացասական իրավունքի արդյունավետ իրացումը երաշխավորելու նպատակով որոշ հանգամանքներում ազգային մարմինները թերևս պարտավոր են պատշաճ և ողջամիտ գործողություններով միջամտել մասնավոր անձանց հարաբերություններին (տե՛ս *mutatis mutandis «Բժիշկները հանուն կյանքի» միավորումն ընդդեմ Ավստրիայի»* (*Artze fur das Leben v Austria,* 1991, A.139) գործով կայացրած վճիռը, պարբ. 45):

Այնուհանդերձ, դատարանն ընդունեց այն իրողությունը, որ 11-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորվում է նաև արհմիության անդամների՝ իրենց մասնագիտական շահերն արհմիութենական գործադուլի միջոցով պաշտպանելու ազատությունը: Ուստի.

Հաշվի առնելով այն սոցիալական և քաղաքական նրբին խնդիրները, որոնք կապված են հակադիր կողմերի շահերի արդար հավասարակշռության և մասնավորապես կոլեկտիվ բանակցությունների համակարգի ընդլայնմանը միտված արհմիութենական գործադուլի իրավունքը սահմանափակող պետական միջամտության գնահատման և խնդրո առարկա ոլորտում ներպետական համակարգերի միջև առկա մեծ տարբերությունների հետ, ձեռնարկվող միջոցներն ընտրելու հարցում մասնակից պետություններին պետք է վերապահել սեփական հայեցողության լայն սահման (պարբ. 46):

Հյուրանոցների ու ռեստորանների աշխատակիցների արհմիության տրամադրած տեղեկատվության հիման վրա պատասխանող պետությունը փորձեց վիճարկել այն հարցը, որ դիմողն առկա կոլեկտիվ

պայմանագրերով սահմանված պայմանների համեմատ ավելի լավ աշխատանքի պայմաններ էր ստեղծել իր աշխատողների համար: Բացի այդ, դիմողն իսկապես վիճարկում էր Շվեդիայի աշխատանքային հարաբերությունների համակարգի հիմքում ընկած սկզբունքները, որոնք արդեն վաթսուն տարի կիրառվել են: Դատարանի մեծամասնությունը, տասներկու կողմ և յոթ դեմ ձայներով, եզրակացրել է, որ դիմողի հիմնական գանգատը

… քաղաքական բնույթ ունի, այն է՝ դիմողը դեմ էր Շվեդիայի կոլեկտիվ բանակցությունների համակարգին: Այնուհանդերձ, կոնվենցիայի 11-րդ հոդվածը, առանձին վերցրած, կոլեկտիվ պայմանագիր չստորագրելու իրավունք չի երաշխավորում (հմմտ.՝ «*Շվեդիայի մեքենավարների արհմիությունն ընդդեմ Շվեդիայի*» (*Swedish Engine Drivers' Union v Sweden*), 1976, A.20 գործը): 11-րդ հոդվածով պետությունների վրա դրված դրական պարտավորությունը, ներառյալ՝ անձնական կարծիքի պաշտպանության հայեցակետը կարող է ընդգրկել նաև կոլեկտիվ բանակցությունների համակարգի աշխատանքի հետ կապված վերաբերմունքը, եթե միայն նման վերաբերմունքը ոտնձգություն է միավորման ազատությանը: Եթե, ինչպես տվյալ դեպքում, արհմիությանն անդամակցելու հարկադրանքն այդ իրավունքի իրացման վրա մեծապես չի ազդում, և եթե անգամ դրա հետևանքով նյութական վնաս է հասցվում, այնուամենայնիվ նման հարկադրանքից չի կարող բխել 11-րդ հոդվածով սահմանված դրական պարտավորությունը:

Ավելին, դիմողը չի հիմնավորել այն հայտարարությունը, որ իր առաջարկած աշխատանքի պայմաններն ավելի բարենպաստ էին, քան կոլեկտիվ համաձայնագրով սահմանված պայմանները: Հաշվի առնելով Շվեդիայում աշխատանքային հարաբերությունները կարգավորող կոլեկտիվ համաձայնագրերի առանձնահատուկ դերն ու նշանակությունը՝ դատարանը պատճառ չի տեսնում կասկածելու, որ արհմիության գործադուլը միտված էր կոնվենցիայի 11-րդ հոդվածին չհակասող օրինական շահերի պաշտպանությանը:

Վերոնշյալ փաստերի համատեքստում, հաշվի առնելով պատասխանող պետությանը վերապահված հայեցողության սահմանը, դատարանը չի կարծում, որ Շվեդիան չի պաշտպանել դիմողի՝ կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված իրավունքները (պարբ. 52-54):

Միավորման ազատության բացասական իրավունքի անորոշ կարգավիճակի, պետությունների՝ 11-րդ հոդվածով սահմանված դրական պարտավորությունների երկիմաստ բնույթի և արհմիությունների հակադիր օրինական շահերի միասնությամբ է թերևս պայմանավորված այն հանգամանքը, որ դատարանը հակված չէր տվյալ դեպքում կոնվենցիայի խախտում արձանագրել: Նախագահ Ռիսդալը և դատավորներ Շպիլմանը, Փալմը, Ֆոյգելը, Փեքանենը, Լուազուն, Մակարչիկը և Ռեպիկն իրենց մասնակի չհամընկնող կարծիքում հայտարարեցին հետևյալը. «Այնուհանդերձ, դատարանի նախադեպային պրակտիկայից հետևում է, որ 11-րդ հոդվածը այնպիսի միջոց չէ, որը կարգավորում է առհասարակ աշխատանքային հարաբերությունները կամ չեզոքացնում աշխատաշուկայում ներգրավված անձանց գործադուլի վնասը»: 1998 թ. հուլիսին դատարանը՝ տասնվեց կողմ և մեկ դեմ ձայների հարաբերակցությամբ, մերժեց վճիռը վերանայելու մասին Գուստաֆսոնի գանգատը, որը մասնակիորեն հիմնավորված էր իր ռեստորանի անձնակազմին աշխատանքի ընդունելու պայմաններին վերաբերող հավելյալ ապացույցներով: Դատարանը հայտնել է, որ այս հավելյալ ապացույցները չէին կարող որոշիչ ազդեցություն գործել կայացրած վճռի վրա, քանի որ դրա հիմքում ընկած է «Շվեդիայում աշխատանքային հարաբերությունները կարգավորող կոլեկտիվ համաձայնագրերի հատուկ դերն ու նշանակությունը» (պարբ. 32):

6 *«Շասսանյու ընդդեմ Ֆրանսիայի» (Chassagnou v France,* 1999, 29 EHRR 615) գործում լիակազմ դատարանն ընդունել է, որ 11-րդ հոդվածն ընդգրկում է միավորումներ կազմելու «բացասական» իրավունքը: Սույն գործով դիմող հողատերերին սեփականության իրավունքով պատկանում էին փոքր հողակտորներ, որոնց վրա տարածվում էր 1964 թ. այսպես կոչված Վերդեյի օրենքը (ֆր. *Loi Verdeille*): Այդ օրենքը պահանջում էր անդամակցել որսորդների համայնքային միավորումներին և թույլատրում էր այդ միավորումների անդամներին որսորդությամբ զբաղվել իրենց պատկանող հողատարածքներում: Անտեսելով էթիկայի նկատառումներով որսորդության դեմ դիմողների ներկայացրած առարկությունները՝ Ֆրանսիայի դատարանները վճռել են, որ դիմողները պարտավոր էին կատարել 1964 թ. օրենքի պահանջները: Այնուհետև դիմողները գանգատ ներկայացրին հանձնաժողովին՝ պնդելով, որ, ի թիվս այլոց, խախտվել է 11-րդ հոդվածով սահմանված սեփական կամքին հակառակ և հարկադրաբար որևէ միավորմանը չանդամակցելու իրենց ազատությունը (ստորև ներկայացվում է դիմողների՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին համապատասխան գանգատը): Հանձնաժողովը՝ քսանչորս կողմ և ութ դեմ ձայների հարաբերակցությամբ, ընդունել է դիմողների գանգատը: Դատարանում ընդունվել է այն իրողությունը, որ որսորդական միավորմանն անդամակցելու օրենքով

սահմանված պարտավորությունը խախտում էր դիմողների՝ միավորումներ կազմելու բացասական իրավունքը: Այնուհանդերձ, պատասխանող պետությունը 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պարտավորությունը փորձում էր հիմնավորել որպես այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության ուղղված օրինական նպատակ, այսինքն՝ որպես որսորդության ժամանցին հնարավորինս շատ անձանց մասնակցությունը ժողովրդավարության սկզբունքով ապահովելու նպատակ: Դատարանի ճնշող մեծամասնությունը՝ տասներկու կողմ և հինգ դեմ ձայների հարաբերակցությամբ, վճռեց, որ օրենքով սահմանված պարտավորություններն «անհրաժեշտ չէին ժողովրդավարական հասարակությունում» և, հետևաբար, խախտում էին 11-րդ հոդվածը:

> Անձնական համոզմունքներին հիմնովին հակասող միավորմանն անդամակցելու հարցում որևէ մեկի վրա օրենքով դրված հարկադրանքը և այդ միավորմանն անդամակցելու բերումով նրա կողմից չընդունվող նպատակների իրագործման համար սեփական հողատարածքի իրավունքները միավորմանը փոխանցելու պարտավորությունը գերազանցում է հակադիր շահերն արդար հավասարակշռության բերելու համար անհրաժեշտ միջոցը և չի կարող հետապնդվող նպատակին համաչափ համարվել (պարբ. 117):

7 *«Սորենսենն ընդդեմ Դանիայի» (Sorensen v Denmark)* և *«Ռասմուսենն ընդդեմ Դանիայի» (Rasmussen v Denmark,* վճիռը կայացվել է 2006 թ. հունվարի 11-ին) գործերում մեծ պալատը որոշել է, որ Դանիայի՝ միայն արհմիությանն անդամակցող անձանց աշխատանքի ընդունելու համակարգը խախտում է «արհմիություններ կազմելու ազատության բացասական իրավունքը»: 1996 թ. մայիս-օգոստոս ամիսներին՝ նախքան ուսումնական տարվա սկիզբը, առաջին գործով դիմողին ժամանակավոր աշխատանք է առաջարկվել Դանիայի սպառողական կոոպերատիվի մաս կազմող մի ընկերությունում: Աշխատանքի առաջարկը ենթադրում էր նշված արհմիությանն անդամակցելու պարտավորություն: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ ընկերությունը կոլեկտիվ համաձայնագիր էր կնքել իր անձնակազմն աշխատանքի ընդունելու պայմանները կարգավորող արհմիության հետ: Առաջին աշխատավարձի հաշվեթերթը ստանալուց հետո դիմողը բացահայտել է, որ իրեն անդամագրել են այդ արհմիությունում և աշխատավարձից պահել անդամավճարը: Նա այդ կապակցությամբ բողոքել է գործատուին, քանի որ ինքն արդեն մեկ այլ արհմիության անդամակցելու դիմում էր ներկայացրել: Արդյունքում դիմողն ազատվել է աշխատանքից: Այնուհետև Դանիայի դատարանները մերժել են դիմողի՝ ընկերության որոշումը վիճարկող փաստարկները՝ վճռելով, որ 1982 թ. «Միավորումներին անդամակցելու պատճառով աշխատանքից հեռացվելուց պաշտպանության մասին» օրենքով (ընդունվել է *Յանգի, Ջեյմսի և Ուեբսթերի* (*Young, James and Webster*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճռի արդյունքում) թույլատրվում էր աշխատանքից ազատել այն անձանց, ովքեր նախապես տեղյակ են եղել, որ նշված միավորմանն անդամակցելն աշխատանքի ընդունվելու պայմանն է: Երկրորդ գործով դիմողն այգեպան է, որը 1980-ական թթ. անդամակցել է մի արհմիության, սակայն չհամաձայնելով դրա քաղաքական հայացքներին, անդամագրվել է մեկ այլ արհմիության: Դիմողը որոշ ժամանակ գործազուրկ մնալուց հետո մի ընկերությունում որպես այգեգործ աշխատելու առաջարկ է ստացել առաջին արհմիությանն անդամակցելու պայմանով: Թեև դիմողը արհմիության քաղաքական հայացքների համակիր չէր, սակայն աշխատանքը ստանալու համար կրկին անդամակցել է այդ արհմիությանը: Դատարանում դիմողներից երկուսը, ի թիվս այլոց, պնդում էին, որ միավորումներ կազմելու ազատության բացասական և դրական իրավունքները հավասարազոր կարգավիճակ ունեն, և ժողովրդավարական հասարակությունում այլևս չի կարելի հիմնավորել միայն արհմիությունների անդամներին աշխատանքի ընդունելու մասին համաձայնագրերի գոյությունը: Պատասխանող պետությունը վիճարկել է այն պնդումը, որ նշված իրավունքի բացասական տարրը հավասարազոր է դրական իրավունքին, և նշել, որ սոցիալական և քաղաքական նրբին հարցերում պետություններին հարկավոր է հայեցողության լայն սահման վերապահել փակ կազմակերպությունների համաձայնագրերի հետ կապված վեճերը կարգավորելու հարցում: Երրորդ կողմի գրավոր մեկնաբանություններում Դանիայի արհմիությունների համադաշնությունը բերում էր այն փաստարկը, որ փակ կազմակերպությունների գոյությունը արդար մրցակցություն ապահովելու և ապօրինի աշխատուժի դեմ պայքարելու տեսանկյունից առանցքային նշանակություն ունի: Համադաշնությունն արտահայտել է այն մտահոգությունը, որ դիմողների օգտին

վճիռ կայացնելու դեպքում կարող է խաթարվել Դանիայի աշխատանքային հարաբերությունների մոդելը, որն արդեն մեկ դարից ավելի է, ինչ վայելում է բազմաթիվ քաղաքական ուժերի աջակցությունը:

55. Դատավարության մասնակիցները հանգամանալից քննել են այն հարցը, թե արդյոք արհմիություններին անդամակցելու ոլորտում միավորումներ կազմելու ազատության բացասական հայեցակետը պե՞տք է դրական իրավունքին հավասարազոր համարվի: Դատարանը նշում է, որ տվյալ հարցում դեռևս հստակ դիրքորոշում չի որդեգրել (տե՛ս վերոնշյալ *Յանգի, Ջեյմսի և Ուեբսթերի* (*Young, James and Webster*) գործը, *Սիգուրդուր Սիգուրյոնսոնի* (*Sigurdur Sigurjonsson*) գործը և այլ համատեքստում՝ *Շասանյոյի և այլոց* (*Chassagnou and Others*) գործը):

56. Դատարանը սկզբունքորեն չի բացառում, որ 11-րդ հոդվածով սահմանված այս իրավունքի բացասական և դրական հայեցակետերը պետք է պաշտպանության նույն մակարդակն ունենան: Այնուհանդերձ, դժվար է այս հարցը որոշել տեսականորեն, քանի որ նման հարցերը կարելի է ըստ հարկի վճռել միայն տվյալ գործի հանգամանքներում: Միաժամանակ, այն պարագայում, եթե անհատը, քաջատեղյակ լինելով, որ արհմիությանն անդամակցումը աշխատանքի ընդունվելու նախապայմանն է, իր առարկություններով հանդերձ՝ համաձայնվում է աշխատել, ապա չի կարելի համարել, որ նա հրաժարվում է միավորումներ կազմելու ազատության բացասական իրավունքից: Համապատասխանաբար, 11-րդ հոդվածով երաշխավորված պաշտպանության շրջանակներում աշխատանքի ընդունվելուց առաջ և հետո արհմիությանն անդամակցելու պայման նախատեսող աշխատանքային պայմանագրերը միմյանցից էապես չեն տարբերվում: Լավագույն դեպքում դատարանը կարող է հաշվի առնել դրանց տարբերակումը որպես գործին կից հանգամանքների և կոնվենցիայի հետ դրանց համատեղելիության հարցի գնահատման տարրերից մեկը:

57. Հարկ է նաև ընդգծել, որ կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ բոլոր մասնակից պետություններն «իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն կոնվենցիայում»: Այս ընդհանուր պարտավորության կատարումը կարող է առաջացնել դրական պարտավորություններ, որոնք ներհատուկ են կոնվենցիայով երաշխավորված իրավունքների արդյունավետ իրացման ապահովմանը: Այսպիսով, թեև 11-րդ հոդվածի համատեքստում սահմանված հիմնական նպատակն իշխանությունների կամայական միջամտությունից անհատի ամրագրված իրավունքների պաշտպանությունն է, սակայն այդ իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու համար ազգային մարմինները որոշ հանգամանքներում կարող են մասնավոր անձանց փոխհարաբերություններին պատշաճ և ողջամիտ գործողություններով միջամտելու պարտավորություն կրել (տե՛ս *mutatis mutandis Յանգի, Ջեյմսի և Ուեբսթերի* (*Young, James and Webster*) վերոնշյալ գործով կայացված վճիռը, պարբ. 49, *Գուստաֆսոնի* (*Gustafsson*) գործով կայացված վճիռը, պարբ. 45 և «*Վիլսոնը, Լրագրողների ազգային միությունը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության*» (*Wilson & the National Union of Journalists and Others v the United Kingdom*) գործով կայացված վճիռը, թիվ 30668/96, 30671/96, և 30678/96, պարբ. 41, ECHR 2002-V):

Տվյալ դեպքում դիմողների զանգատի առարկա դարձած հարցերով պետության անմիջական միջամտություն չէր պահանջվում: Այնուհանդերձ, Դանիան պատասխանատվություն կկրեր, եթե այդ հարցերը պատճառաբանված լինեին նրանով, որ պետությունն իր հերթին օրենքով չի ապահովել դիմողների՝ միավորումներ կազմելու ազատության բացասական իրավունքը:

58. Պետությունների՝ կոնվենցիայի 11-րդ հոդվածով ամրագրված դրական և բացասական պարտավորությունները տարանջատող սահմանագիծը հստակ չի առանձնանում: Այնուհանդերձ, երկու դեպքում էլ կիրառվում են նույն սկզբունքները: Անկախ այն հանգամանքից՝ տվյալ դեպքը վերլուծվում է պետության վրա դրված դրական պարտավորությա՞ն, թե՞ պետական իշխանությունների՝ հիմնավորում պահանջող միջամտության տեսանկյունից, ամեն դեպքում կիրառվող չափորոշիչներն ըստ էության չեն տարբերվում: Այսպես, երկու դեպքում էլ պետք է հաշվի առնել անհատի և ամբողջ հասարակության հակադիր շահերի միջև արդար հավասարակշռության հաստատումը (տե՛ս *mutatis mutandis «Բրոնիոմսկին ընդդեմ Լեհաստանի» (Broniowski v Poland* [GC] գործով կայացված վճիռը, թիվ 31443/96, պարբ. 144, ECHR 2004) և *«Հեթթոնը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (Hatton and Others v the United Kingdom)* [GC] գործով կայացված վճիռը, թիվ 36022/97, պարբ. 98 և հաջորդիվ, ECHR 2003-VIII):

Արհմիութենական իրավունքների համատեքստում հաշվի առնելով աշխատողների ու տնօրինության շահերի արդար հավասարակշռությանը միտված միջոցների մաս կազմող սոցիալական և քաղաքական հարցերի նրբին բնույթը, ինչպես նաև այս ոլորտում ներպետական համակարգերի մեծ տարբերությունները՝ արհմիությունների՝ իրենց անդամների մասնագիտական շահերը պաշտպանելու ազատությունն ապահովելու առնչությամբ մասնակից պետություններին պետք է հայեցողության լայն սահման վերապահել (տե՛ս *«Շվեդիայի մեքենավարների արհմիությունն ընդդեմ Շվեդիայի»* (*Swedish Engine Drivers' Union v Sweden*) գործով 1976 թ. փետրվարի 6-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 20, էջ 14–15, պարբ. 39, *Գուստաֆսոնի* (*Gustafsson*) գործով վերոնշյալ վճիռը, պարբ. 45, *«Սկետինին և այլք ընդդեմ Իտալիայի» (Schettini and Others v Italy)* գործով 2000 թ. նոյեմբերի 9-ին կայացված որոշումը, թիվ 29529/95, ինչպես նաև *«Վիլսոնը, Լրագրողների ազգային միությունը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (Wilson & the National Union of Journalists and Others v UK)* գործով վերոնշյալ վճիռը, պարբ. 44): Այսպիսով, դատարանը մինչ այժմ երբեք մասնակից պետություններին չի քննադատել գործատուի վրա որևէ արհմիությունը ճանաչելու պարտավորություն դնելու կամ պարտադիր կոլեկտիվ բանակցությունների համակարգ ապահովելու հարցում թերանալու համար (տե՛ս *«Վիլսոնը, Լրագրողների ազգային միութ-*

յունը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (*Wilson & the National Union of Journalists and Others v UK*) վերոնշյալ գործով կայացրած վճիռը, պարբ. 44, ինչպես նաև նույն տեղում նշված գործերը):

Այնուհանդերձ, եթե մասնակից պետության ներպետական օրենքներով արհմիություններին և գործատուներին թույլատրվի կնքել միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունելու մասին համաձայնագրեր, որոնք հակասում են կոնվենցիայի 11-րդ հոդվածին ներհատուկ անհատի ազատ ընտրության իրավունքին, ապա պետության հայեցողության սահմանը պետք է սահմանափակվի: Այդ կապակցությամբ դատարանը հիշեցնում է, որ թեև անհատների շահերը պետք է երբեմն ստորադասվեն խմբի շահերին, սակայն ժողովրդավարությունը մեծամասնության կարծիքի գերակայությամբ չի սահմանափակվում: Փոխարենը՝ պետք է հաստատել այնպիսի հավասարակշռության, որն արդար և պատշաճ վերաբերմունք ապահովի փոքրամասնության նկատմամբ և կանխի գերակա դիրքի ցանկացած չարաշահում (տե՛ս *Յանգի, Ջեյմսի և Ուեբսթերի* (*Young, James and Webster*) վերոնշյալ գործով վճիռը, պարբ. 63, ինչպես նաև *Շասսանյուի և այլոց* (*Chassagnou and Others*) գործով վճիռը, պարբ. 112 և 113): Այն հարցը պարզելիս, թե միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունելու մասին պայմանագրերի գոյությունը հանդուրժող մասնակից պետությունը գործում է իր հայեցողության սահմաններում, թե ոչ, հարկ է կարևորել իշխանությունների ներկայացրած հիմնավորումները, ինչպես նաև յուրաքանչյուր առանձին դեպքում 11-րդ հոդվածով սահմանված իրավունքների և շահերի նկատմամբ ոտնձգությունների աստիճանը: Հարկ է նաև հաշվի առնել արհմիությունների ազատության արդյունավետ իրացումն ապահովելու առումով միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունելու մասին համաձայնագրերի նշանակության վերաբերյալ փոփոխվող կարծիքները:

Դատարանը պատճառ չի տեսնում չտարածելու այս մոտեցումը աշխատանքի ընդունվելուց առաջ և հետո արհմիությանն անդամակցելու պայման նախատեսող համաձայնագրերի վրա:

….

63. Ինչ վերաբերում է այն հարցին, թե վտանգվե՞լ են դիմողների անձնական կարծիքներն ու հայացքները, ապա հարկ է նշել, որ դիմողներից երկուսն առարկել են ՍԻԴ (SID) արհմիությանը հարկադրաբար անդամակցելու դեմ, քանի որ չէին կարող որդեգրել այդ արհմիության և Դանիայի արհմիությունների համադաշնության (LO) այլ արհմիությունների քաղաքական հայացքները: Փոխարենը, դիմող Սորենսենն անդամակցել է Դանիայի ազատ արհմիությանը, իսկ դիմող Ռասմուսենը մտադիր է կրկին անդամակցել Քրիստոնյաների արհմիությանը: Պատասխանող պետությունն ընդգծել է, որ «Քաղաքական կուսակցությունների մասնավոր ներդրումների և այդ կուսակցությունների հաշիվների թափանցիկության մասին» օրենքով դիմողները հնարավորություն են ունեցել «ապաքաղաքական անդամակցության» ձևերից որևէ մեկի միջոցով միանալ ՍԻԴ-ին կամ որևէ այլ արհմիության: Այնուհանդերձ, հարկ է ընդգծել, որ նման «ապաքաղաքական անդամակցությունը» նշված արհմիությունում հաստատված անդամավճարի կրճատում չի ենթադրում: Ամեն դեպքում, գոյություն չունի որևէ երաշխիք, որ «ապաքաղաքական անդամակցության» պարագայում նշված արհմիությունից նյութական ներդրումներ ստացող քաղաքական կուսակցություններին անուղղակիորեն աջակցելու պարտավորություն չի նախատեսվում:

64. Այս հանգամանքների բերումով դատարանը եզրակացնում է, որ դիմողներից երկուսին էլ հարկադրել են անդամակցել ՍԻԴ արհմիությանը, ինչը խաթարում է 11-րդ հոդվածով երաշխավորված միավորումներ կազմելու ազատության բուն էությունը:

65. Մնում է պարզել, թե արդյոք միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունելու մասին համաձայնագրերն արտոնելով՝ պատասխանող պետությունը տվյալ հանգամանքներում չի՞ պաշտպանել դիմողների՝ միավորումներ կազմելու ազատության բացասական իրավունքի արդյունավետ իրացումը և այդպիսով խախտել կոնվենցիայի 11-րդ հոդվածը: Դատարանի գնահատման կիզակետում պետք է լինի այն հարցը, թե դիմողների շահերը՝ մի կողմից և մյուս կողմից՝ արհմիություններին իրենց անդամների շահերը պաշտպանելու հնարավորություն տալու անհրաժեշտությունն արդար հավասարակշռության բերվե՞լ են (տե՛ս վերոնշյալ պարբ. 58):

66. Դատարանը նշում է Դանիայի աշխատաշուկայի առանձնահատկությունները, մասնավորապես այն փաստը, որ գործատուների և աշխատողների փոխհարաբերությունները կարգավորվում են կոլեկտիվ և անհատական համաձայնագրերի, աշխատանքային օրենսդրության սկզբունքների, ընդհանուր օրենքների և օրենքով ամրագրված կանոնների համակցությամբ: Ավելին, Դանիայում արդեն երկար ժամանակ գործում է միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունելու մասին համաձայնագրերի համակարգը, թեև նման համաձայնագրերն անօրինական են համարվում պետական հատվածի աշխատաշուկայում և չեն կնքվում մասնավոր հատվածի այն կազմակերպություններում, որոնց վրա տարածվում է Դանիայի գործատուների համադաշնության (DA) և Դանիայի արհմիությունների համադաշնության (LO) կոլեկտիվ համաձայնագիրը: Այսպիսով, միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունելու մասին համաձայնագրերն այժմ վերաբերում են մոտ 220000 վարձու աշխատողների, որոնց թիվը չի գերազանցում Դանիայի աշխատաշուկայում առկա աշխատողների թվի նույնիսկ 10 տոկոսը:

….

68. 2003 թ. և այնուհետև կրկին 2005 թ. հունվարին Դանիայի զբաղվածության հարցերի նախարարը խորհրդարանի քննարկմանը ներկայացրեց «Միավորումներին անդամակցելու պատճառով աշխատանքից հեռացվելուց պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրինագիծը, որը, ի թիվս այլոց, միտված է երաշխավորելու, որ հետագայում

օրինապես չկնքվեն այնպիսի համաձայնագրեր, որոնք գործատուի վրա դնում են միայն միավորումներին կամ նշված միավորման անդամներին աշխատանքի ընդունելու կամ նրանց նախապատվություն տալու պարտավորություն: Այդ օրինագծին կից Բացատրական հուշագրում Դանիայի կառավարությունը, ի թիվս այլոց, հայտնում է, որ իր կարծիքով՝ «առանց աշխատանքի չընդունվելու կամ աշխատանքից ազատվելու վտանգի՝ աշխատողը պետք է ինչպես միավորմանն անդամակցելու, այնպես էլ չանդամակցելու ազատություն ունենա»: Պետությունն անողջամիտ է համարում, որ «կոլեկտիվ համաձայնագրի որևէ դրույթով միավորումներին կամ նշված միավորմանն անդամակցելու ցանկություն չունեցող աշխատողին արգելվում է աշխատանքի ընդունվել որևէ գործատուի կազմակերպությունում կամ շարունակել աշխատել այդտեղ, կամ որ գործատուին կարող է արգելվել հաշվի առնել միայն նման թեկնածուի որակավորումը»:

69. 2003 թ. մայիսի սկզբին պարզ դարձավ, որ օրինագիծը չի արժանացել անհրաժեշտ մեծամասնության հավանությանը և հետ է վերցվել: Այնուհանդերձ, 2004 թ. դեկտեմբերին օրինագիծը կրկին քննարկման ներկայացվեց, 2005 թ. հունվարին խորհրդարանն այն քննարկեց, սակայն կրկին մեծամասնությունն օրենքի փոփոխության օգտին չքվեարկեց:

70. Հարկ է նկատել, որ միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունելու մասին համաձայնագրերի համակարգը Դանիայում իսպառ վերացնելու օրենսդրական փորձերն արտացոլում են մասնակից պետություններում վերջերս արձանագրված միտումը, այն է՝ նման համաձայնագրերն էապես չեն նպաստում արհմիությունների ու դրանց անդամների շահերի պաշտպանությանը, և պետք է ըստ հարկի կարևորվի ապրուստի միջոցներից զրկվելու մտավախության բացակայության պայմաններում անհատների՝ իրենց ընտրած արհմիությանն անդամակցելու իրավունքը: Միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունելու մասին համաձայնագրերի համակարգը, փաստորեն, դեռևս թույլատրելի է միայն մի քանի մասնակից պետություններում, այդ թվում՝ Դանիայում և Իսլանդիայում:

71. Ճիշտ է, որ այս հարցի շուրջ Դանիայում ծավալված բանավեճում Դանիայի արհմիությունների համադաշնությունը արտահայտվեց միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունելու մասին համաձայնագրերի կնքման ոլորտների կրճատման դեմ: Բացի այդ, Դանիայի արհմիությունների համադաշնությունն ընդգծեց վերոնշյալ համաձայնագրերի դրույթների անվավեր ճանաչման հնարավոր լուրջ հետևանքները և, մասնավորապես, որևէ միավորման չանդամակցող փոքր կազմակերպությունների գործատուներին կոլեկտիվ համաձայնագրերի պահանջները պարտադրելու դժվարությունը կամ անհնարինությունը: Այնուհանդերձ, դատարանը համարում է, որ խորհրդարանական կոմիտեի թիվ 7 հարցին պատասխանելիս զբաղվածության հարցերի նախարարն ըստ հարկի փարատել է այս մտահոգությունները, ասել է թե՝ արհմիությանը չանդամակցող գործատուների հետ կնքված կոլեկտիվ բանակցությունների համաձայնագրի՝ միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունելու մասին դրույթի չեղյալ համարումը չի ազդի այն հանգամանքի վրա, որ կոլեկտիվ բանակցությունների համաձայնագիրը պետք է ուժի մեջ մնա, իսկ դրա պայմանները պետք է բավարարվեն: Բացի այդ, դատարանը տեղեկություններ չունի այն մասին, որ Դանիայի արհմիությունների համադաշնության արտահայտած մտահոգությունները նյութականացվել են այն բազում մասնակից պետություններում, որոնք առմիշտ անվավեր են ճանաչել միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունելու մասին համաձայնագրերը:

72. Դատարանը նաև նշում է, որ Դանիայի օրենքների՝ միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունելու մասին համաձայնագրերի կնքումը մասնավոր հատվածում դադարեցնելու միտումը չի հակասում միայն արհմիությանը նախապես անդամակցող անձանց աշխատանքի ընդունելու համաձայնագրերի վերաբերյալ 1961 թ. Սոցիալական խարտիայում ամրագրված մոտեցմանը: Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն իր «XIV-1, XV-1 և XVI-1 եզրակացություններում» նշում է, որ «Միավորումներին անդամակցելու պատճառով աշխատանքից հեռացվելուց պաշտպանության մասին» Դանիայի օրենքով խախտվում է Սոցիալական խարտիայի 5-րդ հոդվածը: Համապատասխանաբար, կառավարական կոմիտեն առաջարկել է այդ կապակցությամբ հանձնարարականներ տալ Դանիային: Հարկ է նշել, որ 2001 թ. փետրվարին կայացած փոխնախարարների 740-րդ հանդիպման ժամանակ ներկայացված այդ առաջարկը անհրաժեշտ մեծամասնության ձայները չստացավ: Այնուհանդերձ, որոշ ժամանակ անց՝ 2002 թ. սեպտեմբերին, Դանիայի կառավարությունը Եվրոպական սոցիալական խարտիայի կառավարական կոմիտեին հայտնեց միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունելու մասին համաձայնագրերն արգելող օրինագիծ առաջարկելու իր մտադրության մասին, և կոմիտեն որոշում կայացրեց այդ օրինագիծը քննել Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի հաջորդ գնահատականը ստանալուց հետո: Որոշ ժամանակ անց, երբ պարզ դարձավ, որ օրինագիծը խորհրդարանի անհրաժեշտ մեծամասնության հավանությանը չի արժանացել և չի ընդունվել, Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն 2004 թ. մարտին ներկայացրած իր «XVII-1 եզրակացություններում» նշեց, որ «Միավորումներին անդամակցելու պատճառով աշխատանքից հեռացվելուց պաշտպանության մասին» Դանիայի օրենքը խախտում էր Սոցիալական խարտիայի 5-րդ հոդվածը: Դրան ի պատասխան՝ Դանիայի կառավարությունը հայտնեց, որ ավելի բարենպաստ պայմաններում կրկին խորհրդարանի քննարկմանը կներկայացնի նշված օրինագիծը:

73. Հարկ է նաև անդրադառնալ 1989 թ. դեկտեմբերի 9-ին Եվրոպական համայնքի տասնմեկ անդամ պետությունների ղեկավարների կամ կառավարությունների ընդունած «Աշխատավորների հիմնարար հանրային իրավունքների մասին Եվրոպական համայնքի խարտիային»: Խարտիայով սահմանվում է, որ յուրաքանչյուր գործատու և աշխատող մասնագիտական կազմակերպություններին կամ արհմիություններին անդամակցելու կամ չանդամակցելու ազատություն

ունի, ընդ որում, նրա ընտրությունը չպետք է բացասական հետևանքներ ունենա նրա անձնական կամ մասնագիտական շահերի համար:

74. 2000 թ. դեկտեմբերի 7-ին Նիցցայում հռչակված «Հիմնարար իրավունքների մասին Եվրոպական Միության խարտիայի» (2000/C 364/01) 12-րդ հոդվածը նվիրված է հավաքների և միավորումների ազատությանը: «Աշխատավորների հիմնարար հանրային իրավունքների մասին Եվրոպական համայնքի խարտիայի» վերոնշյալ դրույթներն առանցքային կարևորություն ունեն Նիցցայի խարտիայի 12-րդ հոդվածի մեկնաբանության համար: Այդ կապակցությամբ հարկ է վերհիշել, որ Նիցցայի խարտիայի 53-րդ հոդվածի համաձայն՝ խարտիան չի մեկնաբանվում ի վնաս մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, որոնք իրենց կիրառման համապատասխան ոլորտում ճանաչվել են Եվրոպական Միության օրենսդրությամբ և միջազգային իրավունքով, ինչպես նաև Եվրոպական միության, Եվրոպական համայնքի և կոնվենցիայի մասնակից պետությունների միջև կնքված միջազգային համաձայնագրերով, ներառյալ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով և անդամ պետությունների սահմանադրություններով:

75. Վերոնշյալ փաստարկները վկայում են, որ մասնակից պետությունները հիմնականում չեն պաշտպանում միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունելու մասին համաձայնագրերը, և վերոնշյալ եվրոպական փաստաթղթերում հստակ սահմանվում է, որ աշխատաշուկայում այդ հանձայնագրերի կիրառումը պարտադիր միջոց չէ արհմիություններին անդամակցելու ազատության արդյունավետ իրացման համար:

76. Հաշվի առնելով տվյալ գործի բոլոր հանգամանքները և արդար հավասարակշռության բերելով հակադիր կողմերի շահերը՝ դատարանն ի վերջո որոշում է, որ պատասխանող պետությունը չի պաշտպանել դիմողների՝ արհմիություններին անդամակցելու ազատության բացասական իրավունքը:

77. Համապատասխանաբար, արձանագրվել է երկու դիմողների՝ կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված իրավունքների խախտում:

Դատավորներ Ռոզակիսը, Բրատցան և Վայիչն իրենց մասնակի միասնական չհամընկնող կարծիքում նշել են, որ երկու դիմողների նկատմամբ կիրառված «հարկադրանքի աստիճանն էապես տարբերվում է»: Թեև այդ դատավորները մեծամասնության հետ համակարծիք էին այն հարցի շուրջ, որ պրն Ռասմուսենի դեպքում աշխատանքից ազատվելու և ապրուստի միջոցներից զրկվելու հնարավոր վտանգը հարկադրանքի լուրջ ձև է, սակայն պրն Սորենսենը, որը պետք է միայն տասը օր աշխատեր և այլ ժամանակավոր աշխատանք գտնելու հարցում դժվարությունների չի բախվել, շատ ավելի աննշան հարկադրանքի է ենթարկվել: Ուստի չհամընկնող կարծիք արտահայտած դատավորները համարում են, որ Սորենսենի՝ 11-րդ հոդվածով սահմանված իրավունքները չեն խախտվել:

Դատավոր Զուպանչիկի հավանությամբ դանիացի դատավոր Լորենցենն արտահայտել է այն չհամընկնող կարծիքը, որ միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունելու մասին համաձայնագրերի հետևանքով դիմողներից ոչ մեկն էլ «էապես» չի տուժել: Լորենցենի կարծիքով՝ պրն Ռասմուսենը չի ապացուցել, որ նշված համաձայնագրերով սահմանափակվել են նրա՝ աշխատանքի ընդունվելու հնարավորությունները:

Հատկանշական է, որ մեծ պալատը դեռևս պատրաստ չէր միանշանակ հայտարարելու, որ միավորումներ կազմելու ազատության բացասական հայեցակետը կամ իրավունքն իր կարգավիճակով հավասարազոր է նույն ազատության դրական հայեցակետին կամ իրավունքին: Այնուհանդերձ, դատարանի կայացրած վճռից հետևում է, որ դատարանը հայեցողության լայն սահման չի վերապահում այն սակավաթիվ մասնակից պետություններին, որոնք թույլատրում են միայն արհմիության անդամներին աշխատանքի ընդունող կազմակերպությունների հիմնումը: Ձեր կարծիքով, եթե Դանիայի օրենսդրությամբ աշխատավորների քաղաքական հայացքների նկատմամբ ավելի մեծ պաշտպանություն սահմանվեր, ապա արդյոք մեծ պալատը կհանգե՞ր այլ եզրակացության:

Հոդված 11(2)

Առաջին նախադասությամբ ամրագրված սահմանափակումները

1 Այս նախադասության բազմաթիվ տարրեր նման են 10-րդ հոդվածի 2-րդ կետի տարրերին: Դատարանը հայտարարել է, որ 10-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների հետ համընկնող 11-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները չբավարարելու պարագայում միջամտությունը 11-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքներին նույն հոդվածի խախտում է, բացառությամբ 11-րդ հոդվածի 2-րդ կետի վերջին նախադասության կիրառման դեպքերի (տե՛ս *«Ֆոգթն ընդդեմ Գերմանիայի»* (*Vogt v Germany*) գործը, 1995, 21 EHRR 205, A.323, պարբ. 66):

2 «Սահմանափակումներ» եզրույթը մեկնաբանելիս հանձնաժողովը հայտնել է, որ այն կարող է 11-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված իրավունքների իրացման բացարձակ արգելք ներառել (տե՛ս *«Յուրայի խորհուրդը և Յուրայի միությունն ընդդեմ Շվեյցարիայի»* (*Rassemblement Jurassien and Unité Jurassienne v Switzerland*) վերոնշյալ գործը, 1979, 17 DR 93:

3 Դատարանը կիրառման լայն շրջանակ է վերապահել «ազգային անվտանգությունը» պահպանելու օրինական նպատակին և ճանաչել պետության տարածքային ամբողջականության պահպանմանը միտված կառավարության միջոցների տեսանկյունից դրա կիրառելիությունը (տե՛ս *«Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունն ընդդեմ Թուրքիայի»* (*United Communist Party of Turkey v Turkey*) վերոնշյալ գործը, 1998 (վերը՝ էջ 765):

4 *«Գ-ն ընդդեմ Գերմանիայի» (G v Germany),* 1989, 60 DR 256) գործում հանձնաժողովը կիրառել է «անկարգությունները կամ հանցագործությունները» կանխելու օրինական նպատակը: Տվյալ գործով դիմողը միջուկային զենքի դեմ բողոքի ցույցի շրջանակներում մասնակցել է Գերմանիայում Միացյալ Նահանգների զորամասի մոտ անցկացրած նստացույցին: Զորամասը շրջապատած ցուցարարների նպատակն էր մի քանի րոպեով դադարեցնել հարակից մայրուղու երթևեկությունը: Ոստիկանները դիմողին և այլ ցուցարարների կարգադրել են ազատել ճանապարհը, սակայն դիմողը հրաժարվել է կատարել պահանջը և հարկադրաբար հեռացվել ճանապարհից: Այնուհետև Գ-ն դատապարտվել է ապօրինի դիմադրության համար և տուգանվել 100 մարկ: Գ-ն գանգատ է ներկայացրել հանձնաժողովին՝ ի թիվս այլոց պնդելով, որ իշխանությունների գործողությունները հանգեցրել են 11-րդ հոդվածով սահմանված խաղաղ հավաքների իրավունքի խախտման: Հանձնաժողովը որոշել է, որ.

> ...սույն գործի հանգամանքներում նստացույցին մասնակցելու համար դիմողի դատապարտումը անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու նպատակով կարող է ողջամտորեն անհրաժեշտ համարվել ժողովրդավարական հասարակությունում: Այդ կապակցությամբ հանձնաժողովն ընդգծում է, որ «դիմողը պատժվել է ոչ թե ցույցին մասնակցելու համար, այլ ցույցի ընթացքում իր դրսևորած որոշակի վարքագծի, այն է՝ ընդհանուր նշանակության ճանապարհը փակելու համար, ինչն ավելի շատ խոչընդոտների է հանգեցրել, քան սովորական պայմաններում խաղաղ հավաքների իրավունքի իրացումը:…Մի կողմից՝ անկարգությունները կանխելու առումով հանրային շահերի, մյուս կողմից՝ նստացույցի նշված ձևն ընտրելու առումով դիմողի և այլ ցուցարարների շահերի համադրումից հետևում է, որ ապօրինի դիմադրության քրեական հանցանքի համար դիմողի դատապարտումը համաչափ էր հետապնդվող նպատակներին» (էջ 263):

Ուստի հանձնաժողովը բացարձակապես անհիմն է համարել տվյալ դիմումը:

5 *«Շասանյոն ընդդեմ Ֆրանսիայի»* (*Chassagnou v France* (1999) վերոնշյալ գործում մեկնաբանվում է «այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու» օրինական նպատակի կիրառման նկատմամբ դատարանի մոտեցումը (վերը՝ էջ 810):

Եթե «այլ անձանց իրավունքներն ու ազատությունները» երաշխավորվում են կոնվենցիայով կամ կից արձանագրություններով, ապա հարկ է ընդունել, որ դրանք պաշտպանելու անհրաժեշտության բերումով պետությունները կարող են սահմանափակել նույն կոնվենցիայով ամրագրված այլ իրավունքները կամ ազատությունները: Յուրաքանչյուր անհատի հիմնարար իրավունքները հավասարակշռության բերելու շարունակական ձգտումը «ժողովրդավարական հասարակության» անկյունաքարն է: Շատ դժվար է հավասարակշռության բերել անհատական շահերը, որոնք կարող են բավական հակասական լինել, և տվյալ ոլորտում մասնակից պետություններին պետք է հայեցողության լայն սահման վերապահել, քանզի ազգային մարմինները սկզբունքորեն ավելի նպաստավոր դիրքում են, քան Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, երբ պարզում են՝ միջամտությունը կոնվենցիայով երաշխավորված որևէ իրավունքին կարո՞ղ է հիմնավորվել հրատապ սոցիալական անհրաժեշտությամբ, թե՞ ոչ:

Իրավիճակն այլ է, եթե կոնվենցիայով ամրագրված որևէ իրավունք կամ ազատություն սահմանափակվում է կոնվենցիայում չշարադրված «իրավունքներն ու ազատությունները» պաշտպանելու համար: Նման դեպքում միջամտությունը կոնվենցիայով սահմանված իրավունքին կարող է հիմնավորվել միայն անվիճարկելի հրամայականներով (պարբ. 113):

Այսպիսով, խնդրո առարկա «այլ անձանց իրավունքների և ազատությունների» աղբյուրն ու բնույթն էին պայմանավորում հակադիր իրավունքները հավասարակշռության բերելու համար պետական իշխանությունների ձեռնարկած միջոցին դատարանի տված գնահատականը և դատարանի՝ դիմողների՝ 11-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված իրավունքների սահմանափակումներն ընդունելու պատրաստակամությունը:

Երկրորդ նախադասությամբ ամրագրված սահմանափակումները

……..

«Քաղաքացիական ծառայողների միությունների խորհուրդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Council of Civil Service Unions v UK) 50 DR 228 (1987)

Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողով

Սույն գործով որպես դիմող հանդես են եկել քաղծառայողների ինը առանձին արհմիությունների գործունեությունը համակարգող մի արհմիություն և կառավարությանն առընթեր կապի վարչությունում ներկայումս և նախկինում աշխատող և քաղծառայող հանդիսացող վեց անձ: Այս վերջին կազմակերպությունը հիմնվել է 1947 թ. որպես կառավարության քաղաքացիական անձնակազմ ունեցող մասնաճյուղ Միացյալ Թագավորության ռազմական և պաշտոնական տեղեկատվության անվտանգությունն ապահովելու և պետության համար ազդանշաններ որսալու և դրանք մեկնաբանելու նպատակով: Ներկա գործով գանգատի ներկայացման դրությամբ կառավարությանը կից կապի վարչության՝ Չելթնեմի և այլ մասնաճյուղերում աշխատում էր մոտ 7000 քաղծառայող:

1947-1984 թթ կառավարությանն առընթեր կապի վարչության անձնակազմին թույլատրվում էր անդամակցել արհմիություններին, և 1982 թ. դրությամբ վարչության 4454 աշխատակից անդամակցում էր անդամավճար գանձող արհմիություններին: 1979-1981 թթ կառավարությանը կից կապի վարչության աշխատակիցների արհմիությունը յոթ անգամ գործադուլ է հայտարարել, որոնք ունեցել են տարբեր դրսևորումներ, օրինակ՝ մեկօրյա գործադուլ և հրաժարում արտաժամյա աշխատանքից: Սովորաբար այս գործադուլները աշխատավարձի բարձրացման և աշխատանքի պայմանների բարելավման նպատակով քաղծառայողների արհմիությունների համազգային քարոզարշավների մաս են կազմել: 1982 թ. «Քաղաքացիական ծառայության մասին» հրամանագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ քաղծառայության նախարարը, որի պաշտոնն այդ ժամանակ զբաղեցնում էր վարչապետ տկն Թետչերը, իրավասու էր «կարգադրություններ կամ հրահանգներ արձակելու ծառայությունը վերահսկելու և բոլոր նման անձանց համար ծառայության պայմաններ ապահովելու նպատակով»: 1983 թ. դեկտեմբերի 22-ին վարչապետը վերոնշյալ 4-րդ հոդվածին համապատասխան բանավոր կարգադրել է վերանայել կառավարությանն առընթեր կապի վարչությունում աշխատող քաղծառայողների աշխատանքի պայմանները և արգելել նրանց անդամակցել որևէ արհմիության, բացի նշված վարչության տնօրենի հաստատած բաժնի անձնակազմի միավորումից:

1984 թ. հունվարի 25-ին Միացյալ Թագավորության արտաքին գործերի նախարարը, որը գերատեսչական պատասխանատվություն է կրում կառավարությանը կից կապի վարչության համար, 1975 թ. «Զբաղվածության ապահովման մասին» օրենքի և 1978 թ. «Զբաղվածության ապահովման (միավորման) մասին» օրենքի համաձայն՝ երկու կարգադրություն է արել առ այն, որ ազգային անվտանգության նկատառումներով կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատողներին պետք էր բացառել այդ օրենքներով սահմանված իրավունքներից օգտվողների շարքից՝ այդպիսով արգելելով նրանց աշխատանքի հարցերով դատարաններ բողոք ներկայացնել: Նույն օրը նախարարը Համայնքների պալատին ծանուցել է կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատողների վրա դրված արհմիություններին անդամակցելու արգելքի մասին: Հաջորդ օրը կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատողները ծանուցում են ստացել, որ նրանց այլևս չի թույլատրվում անդամակցել որևէ գործող արհմիության: Ավելին, գործադուլի մասնակցող յուրաքանչյուր աշխատողի նկատմամբ կարող էր կարգապահական տույժ նշանակվել: Այն անձինք, ովքեր այլևս չէին ցանկանում աշխատել կառավարությանն առընթեր կապի վարչությունում, կարող էին աշխատանքի անցնել քաղծառայության այլ ոլորտում, իսկ եթե թափուր տեղ չգտնվեր, կրճատման պատճառով սահմանված տարիքից շուտ թոշակի անցնելու իրավունք ունեին: Կառավարությանն առընթեր կապի վարչությունում աշխատանքը շարունակող անձինք 1000 ֆունտ ստեռլինգ հավելավճար են ստացել՝ որպես փոխհատուցում արհմիությանն անդամակցելու իրավունքից զրկվելու համար:

1984 թ. փետրվարին Համայնքների պալատի զբաղվածության կոմիտեն, ելնելով կառավարությանն առընթեր կապի վարչության գործադուլի վնասակար հետևանքների առնչությամբ կառավարության մտահոգություններից, քաղծառայողների արհմիություններին և կառավարությանը հանձնարարել է քննարկումներ անցկացնել կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատակիցների արհմիութենական իրավունքները պաշտպանելու նպատակով: Կառավարությունը հրաժարվել է փոխել իր որդեգրած ռազմավարությունը և 1985 թ. հաստատել է կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատակիցների միավորումը: 1987 թ. դրությամբ քաղծառայության նոր պայմաններն արդեն ընդունել էին կառավարությանն առընթեր կապի վարչության բոլոր աշխատողները, բացառությամբ 35 հոգու, ներառյալ մի քանի դիմողները, և այսպիսով վարչության աշխատակիցների 49 տոկոսն անդամակցում էր միավորմանը: Դիմողները դատարանում վիճարկել են արհմիություններին անդամակցելու վերաբերյալ կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատակիցների վրա արգելք դնելու մասին Միացյալ Թագավորության կառավարության որոշումը, սակայն Լորդերի պալատը որոշում է կայացրել կառավարության օգտին. այն հիմնավորմամբ, որ արտաքին գործերի նախարարի գործունեությունը բխում էր ազգային անվտանգության նկատառումներից (տե՛ս *«Քաղծառայողների միությունների խորհուրդն ընդդեմ Քաղաքացիական ծառայության նախարարի» գործը (Council of Civil Service Unions v Minister for the Civil Service),* [1984] 3 All ER 935): Այնուհետև դիմողները հանձնաժողովին գանգատ են ներկայացրել առ այն, որ Միացյալ Թագավորության կառավարության գործողությունների հետևանքով անհատ դիմողները զրկվել են արհմիություններին անդամակցելու իրավունքից, իսկ արհմիությունները՝ կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում իրենց դերից, ինչը հակասում է 11-րդ հոդվածին:

ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Դիմողները կոնվենցիայի 11-րդ հոդվածին համապատասխան գանգատ են ներկայացրել առ այն, որ պատասխանող պետությունը կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատակիցներին զրկել է արհմիություններին անդամակցելու իրավունքից:

…

Հանձնաժողովը դատավարության կողմերի հետ համակարծիք է այն հարցի շուրջ, որ պետական իշխանությունները միջամտել են դիմողների՝ 11-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքի իրացմանը: Միջամտությունն այն է, որ Միացյալ Թագավորության քաղծառայության նախարարի կարգավիճակով հանդես եկող վարչապետի հրահանգների հիման վրա 1984 թ. հունվարի 25-ին արտաքին և թագավորության գործերի նախարարը երկու կարգադրություն արձակեց, որոնց հետևանքով կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատակիցներին արգելվել է անդամակցել որևէ գործող արհմիության:

Այնուհետև հանճնաժողովը պետք է պարզի՝ նման միջամտությունը հիմնավորվա՞ծ է կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետով, թե՞ ոչ: Նախ և առաջ, հանճնաժողովը պետք է որոշի՝ այդ միջամտությունը կարելի՞ է քննել 11-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին կամ երկրորդ նախադասությունների շրջանակներում:

…

Հանճնաժողովն ընդգծում է, որ 11-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին նախադասությամբ ամրագրված են նույն հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքների միջամտությունը հիմնավորելու համար անհրաժեշտ չափորոշիչները: 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասությամբ մասնավորապես սահմանված են պետության կողմից աշխատանքի ընդունված անճանց տարբեր կատեգորիաների համար այս իրավունքների իրացման սահմանափակումները: Հանճնաժողովը կարծում է, որ եթե կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատակիցները պետական վարչակազմում ընդգրկված անդամներ համարվեն, ապա խնդրո առարկա սահմանափակումները հարկ է նախ և առաջ քննել 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասության շրջանակներում: Ուստի հանճնաժողովը պետք է իր ուշադրությունը այս եզրույթների նշանակության և տիրույթի վրա սևեռի:

Այդ կապակցությամբ հանճնաժողովն ընդգծում է, որ մասնավորապես 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասությամբ նշված «պետական վարչակազմի մեջ մտնող անձինք» եզրույթը մեկնաբանելիս դիմողները կարող են հիմք ընդունել բազմաթիվ այլ միջազգային փաստաթղթեր:

Ճիշտ է, որ հանճնաժողովը որոշ դեպքերում դիմել է միջազգային իրավունքին համապատասխան ընդունված այլ միջազգային փաստաթղթերին (տե՛ս *«Շվեդիայի մեքենավարների արհմիությունն ընդդեմ Շվեդիայի»* գործը (*Swedish Engine Drivers' Union v Sweden,* Comm Report 27.5.74, պարբ. 65 և հաջորդիվ, ECHR, շարք B, թիվ 18, էջ 42): Տվյալ դեպքում հանճնաժողովը նշում է, որ, օրինակ՝ 1966 թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 22-րդ հոդվածի 1-ին կետն ապահովում է արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը: 22-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասությունը համընկնում է կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասության հետ, սակայն դաշնագրում նշվում են միայն «զինված ուժերի և ոստիկանության կազմի մեջ մտնող», ոչ թե պետական վարչակազմի մեջ մտնող անձինք: Արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը երաշխավորվում է նաև 1966 թ. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 8-րդ հոդվածի 1-ին կետի (ա) ենթակետով: Սակայն կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետի հետ համընկնող 8-րդ հոդվածի 2-րդ կետում հստակ ընդգրկված է «պետական վարչակազմի մեջ մտնող անձինք» եզրույթը:

Հանճնաժողովի կարծիքով՝ այս տարբերությունները բավարար են ապացուցելու համար, որ միջազգային իրավունքի շրջանակներում գոյություն չունի ստույգ կարծիք «պետական վարչակազմի» մեջ մտնող անճանց արհմիութենական իրավունքների վերաբերյալ, ուստիև հանճնաժողովը չի կարող տվյալ դեպքում ապավինել այդ փաստաթղթերին:

«Պետական վարչակազմի մեջ մտնող անձինք» եզրույթը մեկնաբանելիս դիմողներն ընդգծում են, որ կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասության մեջ նշվում են միայն ոստիկանության ու բանակի անճնակազմը և պաշտոնեական իշխանության իրացման հետ կապված կամ պետության հիմնական գործառույթներն իրականացնող անձինք, օրինակ՝ բարձրաստիճան քաղծառայողները: Հետևաբար, այդ եզրույթը չի կարող տարածվել կառավարությանն առընթեր կապի վարչության բոլոր աշխատակիցների վրա միայն այն պատճառով, որ նրանց աշխատանքն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում է ազգային անվտանգության պահպանմանը: Հակառակ դեպքում, 11-րդ հոդվածի 2-րդ կետում նշված «ի շահ պետական անվտանգության» ձևակերպումը կկորցներ իր իմաստը:

Պատասխանող պետությունը հայտարարել է, որ «պետական վարչակազմի մեջ մտնող անձինք» եզրույթի շրջանակը բարձրաստիճան քաղծառայողներով չի սահմանափակվում: Հակառակ դեպքում դա կհակասեր մի շարք այն պետությունների պրակտիկային, որտեղ պետական ծառայողների իրավունքները սահմանափակելիս հաշվի են առնում ոչ միայն նրանց պատասխանատվության աստիճանը, այլև՝ ծառայության բնույթը: Ռադիոկայանի յուրաքանչյուր աշխատող կամ հեռագրիչ կարող է նույն հաջողությամբ խաթարել կառավարությանն առընթեր կապի վարչության գործառույթը, ուստիև այդ վարչությունը կարող է գործել միայն որպես մեկ անբաժանելի ամբողջություն: «Պետական վարչակազմի մեջ մտնող անձինք» եզրույթն այսպիսով ընդգրկում է այն աշխատողներին, որոնց պարտականությունների կատարումն անհրաժեշտ է պետության՝ կենսական կարևորության գործառույթների պատշաճ իրականացման համար:

Հանճնաժողովը քննել է այն հարցը, թե արդյոք կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատակիցների վրա տարածվո՞ւմ է «պետական վարչակազմի մեջ մտնող անձինք» եզրույթը: Այս բառերի իմաստն ու շրջանակը որոշ չափով անստույգ են, ուստիև հանճնաժողովը չի փորձի տալ դրանց մանրամասն բնութագիրը: Այնուհանդերձ, հանճնաժողովը նշում է, որ տվյալ եզրույթը հիշատակված է 11-րդ հոդվածի 2-րդ կետի նույն նախադասության մեջ, ինչ «զինված ուժերի և ոստիկանության կազմի մեջ մտնող անձինք» եզրույթը: Տվյալ դեպքում հանճնաժողովը գործ ունի հատուկ հաստատության, այն է՝ կառավարությանն առընթեր կապի վարչության հետ, որի կոչումը մեծապես համընկնում է զինված ուժերի և ոստիկանության կոչման հետ, քանզի ուղղակիորեն կամ անուղղակիորեն ապահովելով պատասխանող պետության զինվորական և պաշտոնական տեղեկատվության անվտանգությունը՝ այդ վարչության աշխատակիցները կենսական կարևորություն ունեցող գործառույթ են կատարում ազգային անվտանգությունը պահպանելու տեսանկյունից:

Ուստի հանճնաժողովը համոզվել է, որ կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատակիցները կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասության իմաստով կարող են «պետական վարչակազմի մեջ մտնող անձինք» համարվել: Հետևաբար, հանճնաժողովը պետք է պարզի՝ բավարարվե՞լ են 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասության այլ պայմանները, և մասնավորապես՝ արդյոք այդ դրույթների իմաստով խնդրո առարկա սահմանափակումներն «օրինակա՞ն» էին, թե՞ ոչ:

Դիմողները ընդգծել են, որ կոնվենցիայի համաձայն՝ նշված սահմանափակումները պետք է օրինական լինեն՝ հաշվի առնելով կոնվենցիայի նպատակը, այն է՝ կանխել օրենքով նախատեսված և ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ միջոցներից տարբերվող եղանակներով միջամտությունը մարդու հիմնարար իրավունքներին: Ըստ դիմողների՝ այն հանգամանքը, որ ըստ հարկի չեն նշվում պետության՝ 1975 թ. օրենքի 121-րդ բաժնի 4-րդ կետով և 1978 թ. օրենքի 138-րդ բաժնի 4-րդ կետով սահմանված սեփական հայեցողության լիազորությունների իրացման եղանակները, չի բավարարում 11-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին նախադասությամբ ամրագրված «օրենքով նախատեսված» եզրույթի բնորոշմանը: Ավելին, 1982 թ. կառավարության հրամանագրի 4-րդ հոդվածով սահմանված լիազորություններով ըստ հարկի չեն նշվում համաձայնագրի պայմանները կարգավորող հնարավոր եղանակները: Բացի այդ, ազգային անվտանգությանը սպառնացող վտանգի մասին պետության հայտարարության դատական ստուգում բնավ չի նախատեսվում:

Պատասխանող պետությունը հայտարարել է, որ կառավարությանն առընթեր կապի վարչության անձնակազմի նկատմամբ ձեռնարկված միջոցները 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասության իմաստով օրինական սահմանափակումներ են: 11-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին նախադասության համապատասխան՝ պետությունը պնդում է, որ կառավարության 1982 թ. «Քաղաքացիական ծառայության մասին» հրամանագրի 4-րդ հոդվածը հստակ սահմանում է քաղծառայության նախարարի լիազորությունները: 1975 թ. օրենքի 121-րդ բաժնի 4-րդ կետով և 1978 թ. օրենքի 138-րդ բաժնի 4-րդ կետով հստակ սահմանվում է նախարարի՝ կարգադրություններ արձակելու լիազորությունը: Նախարարի կարգադրության թիրախ դարձած անձանց համար այդ բոլոր դրույթներում բավական պարզ ու հստակ ձևակերպմամբ նշվում են այն պայմանները, երբ կարելի է կարգադրություններ արձակել, ասել է թե՝ այն դեպքերը, երբ ազգային անվտանգության նկատառումներով վերոնշյալ օրենքներով սահմանված պաշտպանության շրջանակից պահանջվում է բացառել քաղծառայողներին:

Հանձնաժողովը հիշեցնում է, որ իր նախադեպային իրավունքի պրակտիկայում հանձնաժողովը նշված համատեքստում կիրառված «օրինական» եզրույթի նշանակության մասին դեռևս կարծիք չի արտահայտել: Այնուհանդերձ, հանձնաժողովը հավատացած է, որ 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասության իմաստով «օրինական» եզրույթը նախ և առաջ նշանակում է, որ խնդրո առարկա միջոցները պետք է առնվազն համապատասխանեն պետության օրենսդրությանը:

Տվյալ դեպքում հանձնաժողովը նշում է, որ կառավարության 1982 թ. «Քաղաքացիական ծառայության մասին» հրամանագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ Միացյալ Թագավորության քաղծառայության նախարարը կարող է կարգավորել քաղծառայողների աշխատանքի պայմանները: Ճիշտ է՝ այս կարգադրության կիրառման ոլորտը բավականին լայն է, քանի որ այն չի վերաբերում միայն արհմիություններին անդամակցելու հարցի կարգավորմանը: Այնուհանդերձ, քաղծառայության նախարարի այս լիազորությունները պետք է դիտարկել 1975 թ. և 1978 թ. «Զբաղվածության ապահովման մասին» այն օրենքների կապակցությամբ, որոնց դրույթները սահմանափակում են կառավարության «Քաղաքացիական ծառայության մասին» հրամանագրում ամրագրված լիազորությունների իրացումը և հիմք ծառայում 1984 թ. փետրվարի 25-ին Միացյալ Թագավորության արտաքին գործերի նախարարի ստորագրած և արձակած կարգադրությունների համար: Մասնավորապես, 1978 թ. օրենքի 138-րդ բաժնի 4-րդ կետը և 1975 թ. օրենքի 121-րդ բաժնի 4-րդ կետը հստակ վերաբերում են ազգային անվտանգության նկատառումներով նման կարգադրություններ արձակելու հարցին: Հանձնաժողովը համարում է, որ խնդրո առարկա միջոցները բավարարել են այս պայմանը, քանզի կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատակիցներն ազգային անվտանգությունը պահպանելու առումով կենսական նշանակության գործառույթներ են կատարում:

Այս օրենքների հիման վրա հանձնաժողովը համարում է, որ համապատասխան իրավական նորմերն ըստ հարկի նշել են արհմիություններին անդամակցությունը կարգավորելու այն հնարավորությունը, որից կարող են օգտվել կառավարությանը կից կապի վարչության աշխատակիցները: Այդ կապակցությամբ հանձնաժողովը հավելում է, որ խնդրո առարկա միջոցները ենթակա էին ներպետական դատարանների դատական վերահսկողությանը: Ուստի հանձնաժողովի կարծիքով վերոնշյալ միջոցները ձեռնարկվել են Միացյալ Թագավորության պետական օրենքներին համապատասխան:

Դիմողները նաև հայտարարել են, որ իրավունքի «օրինական սահմանափակումները» չեն կարող իրավունքի խախտում ենթադրել: Ավելին, կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասությունը նույնպես ենթարկվում է համաչափության սկզբունքին և որպես իրավունքի իրացման հարցում բացառություններ սահմանող դրույթ՝ պետք է մեկնաբանվի նեղ իմաստով, քանի որ հակառակ դեպքում ամբողջ Եվրոպայում պետական հատվածում աշխատող միլիոնավոր անձինք կզրկվեն կոնվենցիայի 11-րդ հոդվածով երաշխավորված պաշտպանությունից: 11-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին նախադասությամբ սահմանված «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» ձևակերպման համատեքստում դիմողները պնդում են, որ նշված միջոցներն անհամաչափ էին, քանի որ կառավարությանն առընթեր կապի վարչության հիմնադրումից 37 տարի անց, իսկ գործադուլից միայն 2.5 տարի անց վարչության աշխատակիցներին արհմիություններին անդամակցելու իրավունքից զրկելը հրատապ սոցիալական անհրաժեշտությամբ թելադրված չէր: Թեև արհմիությունները հակված էին համապատասխան երաշխիքներ առաջարկել, սակայն կարգադրություններն արձակելուց առաջ պատասխանող պետությունը նրանց հետ չի խորհրդակցել և Համայնքների պալատի Զբաղվածության կոմիտեի հանձնարարականները չի կատարել:

Պատասխանող պետությունը հայտարարում է, որ 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասությամբ սահմանված «օրինական» եզրույթը չի կարող մեկնաբանվել որպես այնպիսի պահանջ, որ սահմանափակումները պետք է նաև «անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում»: 11-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին նախադասության համատեքստում պետությունը հայտարարում է, որ կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատողների գործադուլն անկասկած միտված էր պետության թուլացմանը, և միայն պետությունը կարող էր գնահատել այդ գործադուլի

հետևանքները: Կարգադրությունների արձակման ուշացումը կարող է պայմանավորված լինել նրանով, որ պատասխանող պետությունն ամբողջությամբ վերանայում էր ազգային անվտանգության սպառնալիքի կրկնությունը կանխելու համար անհրաժեշտ միջոցները: Պետությունը նաև կարծում է, որ արհմիությունները պատշաճ երաշխիքներ չեն առաջարկել: Կառավարությանն առընթեր կապի վարչության բաժինների աշխատողների միավորման ստեղծմամբ արդար հավասարակշռության են բերվել ազգային անվտանգության շահերը և 11-րդ հոդվածով սահմանված իրավունքները:

Առաջին՝ հանձնաժողովը քննել է դիմողների այն հայտարարությունը, որ 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասությամբ նշված «սահմանափակումներ» եզրույթով չի կարող ամբողջապես բացառվել նույն հոդվածով ամրագրված իրավունքը: Այնուհանդերձ, հանձնաժողովը հիշեցնում է, որ նույն եզրույթը գործածվում է նաև 11-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին նախադասության մեջ, որի դրույթներով հանձնաժողովի մեկնաբանությամբ նույնպես բացարձակապես արգելվում է 11-րդ հոդվածով ամրագրված իրավունքների իրացումը (տե՛ս, օրինակ, *«Յուրայի միավորումը և Յուրայի միությունն ընդդեմ Շվեյցարիայի»* (*Rassemblement Jurassien and Unité Jurassienne v Switzerland*) գործը, թիվ 8191/78, որոշում առ 10.10.79, DR 197 էջ 93): Համապատասխանաբար, 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասության մեջ նշված «սահմանափակումներ» եզրույթն ունի բավական լայն կիրառման շրջանակ խնդրո առարկա միջոցները ներառելու համար:

Երկրորդ՝ հանձնաժողովը հիշում է դիմողների այն հայտարարությունները, որ 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասության «օրինական» եզրույթը ներառում է համաչափության սկզբունքը: Այդ կապակցությամբ հանձնաժողովը կարծում է, որ եթե նույնիսկ «օրինական» (ֆր. légitime) եզրույթը պետական օրենսդրությունից բացի այլ հիմքեր պահանջի, մասնավորապես, կամայականության արգելք, այնուհանդերձ, կասկածից վեր է, որ տվյալ դեպքում նշված պայմանը նույնպես բավարարվել է:

Հանձնաժողովը նշում է իր նախադեպային իրավունքը, որի համաձայն՝ ազգային անվտանգությունը պահպանելու մասով պետություններին պետք է վերապահել հայեցողության լայն սահման (տե՛ս *«Լինդերն ընդդեմ Շվեդիայի»* (*Leander v Sweden*) գործը, Comm Report 17.5.85, պարբ. 68, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, շարք A, թիվ 116, էջ 43):

Տվյալ գործում հանձնաժողովը քննել է վերոնշյալ կարգադրություններն արձակելու վերաբերյալ պատասխանող պետության դիրքորոշումը: Մասնավորապես, պետությունը պետք է ապահովի, որ գործադուլի սպառնալիքի տեսանկյունից այլևս չվտանգվի կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատանքը: 1981 թ. անցկացրած գործադուլին և 1983 թ. մայիսին պետության կողմից կառավարությանն առընթեր կապի վարչության գործառույթների հաստատմանը հաջորդած շրջանում կառավարությունը ժամանակ ու միջոցներ չի ունեցել արհմիությունների հետ բանակցելու համար, իսկ արհմիությունների առաջարկած երաշխիքներն անբավարար է համարել: Կառավարությունը քաջատեղյակ էր, որ կառավարությանն առընթեր կապի վարչությունում կարող են գործադուլ կազմակերպել այդտեղ չաշխատող արհմիությունների ներկայացուցիչները, իսկ վարչության աշխատակիցները՝ որպես արհմիության հավատարիմ անդամներ, մասնակցում են այդ գործադուլին: Այսպիսով, չէր կարելի բացառել, որ կառավարությանն առընթեր կապի վարչությունն ամեն պահի կարող էր գործադուլ հայտարարել: Այդ կապակցությամբ հանձնաժողովը մասնավորապես նշում է, որ տվյալ գործով 1984 թ. նոյեմբերի 2-ին կայացրած վճռում Լորդերի պալատը միաձայն ընդունել է այն իրողությունը, որ կառավարության գործողությունների հիմքում ընկած էին ազգային անվտանգությունը պահպանելու նկատառումներ:

Գործադուլի և կառավարությանն առընթեր կապի վարչության կենսական նշանակություն ունեցող գործառույթների վերաբերյալ ամբողջ նախապատմության համատեքստում հանձնաժողովը պետության ձեռնարկած խիստ միջոցը կամայական չի համարում: Ուստի, 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասությամբ նշված եզրույթի ավելի լայն իմաստով պետության ձեռնարկած միջոցները նույնպես «օրինական» են համարվում:

Այսպիսով, հանձնաժողովը համոզվել է, որ դիմողների՝ 11-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված իրավունքներին միջամտելով հանդերձ՝ խնդրո առարկա միջոցները նույն հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասությամբ հիմնավորված են որպես «պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրացման օրինական սահմանափակումներ»: Ուստի, այլևս կարիք չկա քննելու 11-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին նախադասությամբ սահմանված պայմաններին այդ միջոցների համապատասխանությունը: Այս ամենից հետևում է, որ դիմումի այդ մասը կոնվենցիայի 27-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով միանշանակ անհիմն է:

…

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ

Անընդունելի է համարել դիմումը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Գ. Ս. Մորիսն իր մեկնաբանություններում նշել է, որ «կոնվենցիայի համաձայն՝ արհմիության դիմումի անընդունելիության մասին Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի հայտարարության հետևանքով մեծապես թուլացել են արհմիության՝ Միացյալ Թագավորության դիրքորոշման փոփոխության հասնելու հնարավորությունները» (Freedom of Association and the Interests of the State, էջ 49 in K. D. Ewing, C. A. Gearty, and B. A. Hepple (eds), *Human Rights and Labour Law: Essays*

for Paul O'Higgins (London: Mansell, 1994):

2 Կրկին իշխանության գալուց հետո մի քանի օր անց՝ 1997 թ. մայիսի 15-ին, լեյբորիստական կառավարությունը չեղյալ է հայտարարել կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատողների վրա դրված արհմիություններին անդամակցելու արգելքը, ինչի արդյունքում վերջիններս կկարողանային ազատ անդամակցել այս կամ այն արհմիությանը կամ միավորմանը: Այնուհետև 1997 թ. սեպտեմբերին կառավարությանն առընթեր կապի վարչության պետը, կառավարությանն առընթեր կապի վարչության միավորման նախագահը և քաղծառայողների արհմիությունների գլխավոր քարտուղարները ստորագրել են պարտադիր համաձայնագիր, որը սահմանում է հետևյալը. (ա) կառավարությանն առընթեր կապի վարչության միավորումը ճանաչվել է որպես բացառապես կառավարությանն առընթեր կապի վարչությանը վերաբերող հարցերով խորհրդատվություն տրամադրող և բանակցությունների մասնակցող միավորում, (բ) քաղծառայողների մնացած արհմիությունները ճանաչվել են որպես ամբողջ ծառայությանը վերաբերող հարցերով խորհրդատվություն տրամադրող և միության անհատ անդամների շահերը ներկայացնող մարմին, (գ) արհմիությունները պայմանավորվածություն են ձեռք բերել այնպիսի գործադուլ չհայտարարելու մասին, որը կարող է խափանել կառավարությանն առընթեր կապի վարչության բնականոն աշխատանքը, ընդ որում՝ Միացյալ Թագավորության արտաքին գործերի նախարարն իրավունք ունի վերջնական որոշում կայացնելու գործադուլի կործանարար հետևանքների մասին, և (դ) չկարգավորված վիճաբանությունների դեպքում արհմիությունները միջնորդ դատարան դիմելու միակողմանի իրավունք ունեն: Այս համաձայնագրի արդյունքում Միացյալ Թագավորության արտաքին գործերի նախարարն անվավեր է ճանաչել կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատակիցների՝ արդյունաբերական հարցերով (այժմ աշխատանքի հարցերով) դատարան դիմելու հնարավորությունը սահմանափակող կարգադրությունը: Ներկա դրությամբ արհմիութենական իրավունքներից չհրաժարվելու համար տասնչորս անձ ազատվել է աշխատանքից: 1997 թ. սեպտեմբերի դրությամբ նրանցից ութը դեռևս կենսաթոշակային տարիքի չէին հասել, ուստիև իրավունք ունեին կառավարությանն առընթեր կապի վարչության աշխատանքի ընդունման նոր պայմաններում կրկին աշխատանքի ընդունվելու դիմում ներկայացնել: Այսպիսով, աշխատանքից ազատված անձանցից մեկը որոշ ժամանակ անց նույն ամսվա ընթացքում կրկին աշխատանքի է ընդունվել (արտաքին և թագավորության գործերի նախարարության 1997 թ. սեպտեմբերի 3-ի մամլո հաղորդագրություն):

3 Այնուհետև հանձնաժողովը և դատարանը շարունակ խուսափել են հստակ սահմանել «պետական վարչակազմի մեջ մտնող անձինք» արտահայտությունը: *«Ֆոգթն ընդդեմ Գերմանիայի»* (*Vogt v Germany*) վերոնշյալ գործում հանձնաժողովն արտահայտել է այն կարծիքը, որ պետության կողմից աշխատանքի ընդունված ուսուցչուհին այդ կատեգորիայում չի ընդգրկվում:

Հանձնաժողովը համարում է, որ որպես միջնակարգ դպրոցի ուսուցչուհի հանդես եկող դիմողն այս դրույթի իմաստով «պետական վարչակազմի մեջ մտնող անձ» չի հանդիսացել: Ուսուցչի մասնագիտական գործառույթները տարբերվում են զինված ուժերի և ոստիկանության ծառայողների գործառույթներից (այս չափորոշչի վերաբերյալ տե՛ս *«Քաղծառայողների միությունների խորհուրդն ընդդեմ Միավորված Թագավորության» գործը* (*Council of Civil Service Unions v the UK,* 1987, DR 50) և ըստ էության պետական իշխանության իրականացում չեն ենթադրում (A.323, էջ 52):

Ֆոգթի գործով կայացված վճռում ասվում է.

Դատարանը համամիտ է հանձնաժողովի հետ, որ «պետական վարչակազմ» հասկացությունը պետք է մեկնաբանվի նեղ իմաստով՝ ըստ տվյալ աշխատողի պաշտոնի: Եթե նույնիսկ 11-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ուսուցիչները պետք է «պետական վարչակազմի» մաս համարվեն, ինչը պարզելու անհրաժեշտությունը տվյալ դեպքում դատարանը չի տեսնում, այնուհանդերձ, տկն Ֆոգթին աշխատանքից ազատելը 10-րդ հոդվածի կապակցությամբ նախկինում բերված պատճառներով համաչափ չէ հետապնդվող օրինական նպատակին: Համապատասխանաբար, տեղի է ունեցել 11-րդ հոդվածի խախտում (պարբ. 67–68):

«Պետական վարչակազմ» հասկացությունը նեղ իմաստով մեկնաբանելու դատարանի պատրաստակամությունը պետք է ողջունելի լինի, սակայն հատկանշական է, որ ի տարբերություն հանձնաժողովի՝

դատարանը չի վճռել, որ այդ հասկացության սահմաններում չեն ընդգրկվում պետության կողմից աշխատանքի ընդունված ուսուցիչները: Այնուհանդերձ, վերոնշյալ հայտարարություններից հետևում է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ դիմողը դասվում էր 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասությամբ նշված անձանց կարգը, այնուհանդերձ, ինչպես փաստարկել են *Քաղծառայողների միությունների խորհրդի* (*Council of Civil Service Unions*) գործով դիմողները, դատարանը կիրառում էր համաչափության սկզբունքը: Ամեն դեպքում լիակազմ դատարանը դեռևս հստակ չի մեկնաբանել 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասությունը: Վերոնշյալ *«Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի»* (*Rekvenyi v Hungary*) (վերը՝ էջ 691) գործում դատարանը հայտնել է հետևյալը.

…Այս նախադասության մեջ գործածված «օրինական» եզրույթով նշվում է օրինականության նույն գաղափարը, ինչ կոնվենցիայի այն մնացած դրույթներում, որտեղ գործածվում են նույն կամ նման արտահայտություններ, մասնավորապես՝ 9-րդ հոդվածի 2-րդ կետից մինչև 11-րդ հոդվածն ամրագրված «օրենքին համապատասխան» և «օրենքով նախատեսված» արտահայտությունները: Ինչպես արդեն նշվել է 10-րդ հոդվածի կապակցությամբ, կոնվենցիայով ամրագրված օրինականության հասկացությամբ ոչ միայն հաստատվում է ներպետական օրենսդրության հետ համապատասխանության պահանջը, այլև սահմանվում են ներպետական օրենսդրության որակական պահանջները, ինչպես, օրինակ՝ կանխատեսելիությունը և առհասարակ կամայականության բացակայությունը:

…Տվյալ դեպքում կարիք չկա պարզելու այն վիճահարույց հարցը, թե որքան է խնդրո առարկա միջամտությունը 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասությամբ բացառվում օրինականության պայմանից զատ այդ կետի առաջին նախադասությամբ թվարկված այլ պայմանները բավարարելու առումով: Դատարանը համարում է, որ միջամտությունը դիմողի՝ միավորումներ կազմելու իրավունքին ամեն դեպքում բավարարում էր այդ պայմանները (պարբ 59 և 61):

Վերոնշյալ *«Ահմեդն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Ahmed v UK*) գործում դատարանը չի քննել այն հարցը, թե արդյոք 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասությամբ նշված անձանց կարգը դասվո՞ւմ են նաև տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցները:

Վերոնշյալ *«Գրանդե օրիենտե դ'Իտալիա դի պալացո Ջուստինիանի»* (*Grande Oriente D'Italia Di Palazzo Giustiniani)* գործում (վերը՝ էջ 790) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պալատն անվերապահորեն համարում էր, որ նշված պետական պաշտոններն այս նախադասությամբ ամրագրված կարգը չեն դասվում:

31. Ինչ վերաբերում է այն հարցին՝ 1996 թ. օրենքի 5-րդ բաժնում ընդգրկված պաշտոններն ընդգրկվո՞ւմ են «պետական վարչակազմի» շրջանակում, ապա դատարանը նշում է, որ թեև նշված օրենքի A և B հավելվածներում թվարկված պաշտոնները շրջանի կազմակերպչական կառույցի համակարգի մաս չեն կազմում, սակայն դրանք դասակարգվում են երկու այլ կատեգորիաների՝ պաշտոններ շրջանային կազմակերպություններում և այնպիսի պաշտոններ, որոնց թեկնածուներ առաջադրելու և նշանակելու համար պատասխանատու է շրջանային խորհուրդը: Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ «պետական վարչակազմ» հասկացությունը հարկ է մեկնաբանել նեղ իմաստով՝ ըստ տվյալ անձի զբաղեցրած պաշտոնի» (տե՛ս «*Ֆոգթն ընդդեմ Գերմանիայի» (Vogt v Germany)* գործով 1995 թ. սեպտեմբերի 26-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 323, էջ 31, պարբ. 67): Դատարանը կրկնում է, որ *Ֆոգթի* (*Vogt*) գործում նա անհրաժեշտ չէր համարում պարզել՝ մշտական քաղծառայող հանդիսացող ուսուցիչը պետական վարչակազմի մա՞ս է կազմում, թե՞ ոչ (նույն տեղում, պարբ. 68): Տվյալ գործում դատարանն իր տրամադրության տակ եղած ապացույցների հիման վրա նշում է, որ 1996 թ. օրենքի A և B հավելվածներում նշված պաշտոնների և Իտալիայի Մարկեսի շրջանի միջև կապն անկասկած ավելի ընդհանուր է, քան մշտական ուսուցչուհի հանդիսացող տկն Ֆոգթի և նրա գործատուի պարագայում:

32. Համապատասխանաբար, խնդրո առարկա միջամտությունը չի կարող հիմնավորվել նաև 11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նախադասությամբ:

14 ՀՈԴՎԱԾ 12 ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

.....

Ֆ.-ն ընդդեմ Շվեյցարիայի (F v Switzerland) A.128 (1987 թ.) 10 EHRR 411
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը 1943 թ. ծնված Շվեյցարիայի քաղաքացի էր: 1963 թ. նա ամուսնացել էր օրիորդ Գ.-ի հետ, իսկ 1964 թ. ամուսնալուծվել: 1966 թ. նա ամուսնացել է ամուսնալուծված մի կնոջ հետ: 1978 թ. Ֆ.-ն սկսել է կենակցել մեկ այլ կնոջ հետ, իսկ 1981 թ. նրա կինը դիմել է ապահարզանի, և նրանք ամուսնալուծվել են: Դատարանը մի կարգադրություն է արձակել, որով Ֆ.-ին արգելվում էր մեկ տարվա ընթացքում կրկին ամուսնանալ (Շվեյցարիայի քաղաքացիական օրենսգրքի 150-րդ հոդվածով ապահարզանը թույլատրող դատարանը կարող է մեղավոր կողմի համար սահմանել կրկին ամուսնանալու իրավունքից զրկելու մեկից երեք տարի ժամկետ): 1983 թ. օրիորդ Ն.-ն արձագանքել է դիմողի՝ քարտուղարուհի փնտրելու մասին հայտարարությանը: Չորս օր անց նրանք սկսել են կենակցել, իսկ 1983 թ. զույգն ամուսնացել է: Մեկ շաբաթ անց Ֆ.-ն դիմել է ապահարզանի: Ապրիլի սկզբին նրա կինը լքել է իրենց ընդհանուր տունը, երբ Ֆ.-ն վերականգնել է հարաբերությունները իր նախկին սիրուհու հետ: Նույն տարվա հոկտեմբերին քաղաքացիական դատարանը վճիռ է կայացրել հօգուտ նրա կնոջ՝ կարգադրելով Ֆ.-ին 17.000 շվեյցարական ֆրանկ փոխհատուցում մուծել նախկին կնոջը ոչ նյութական վնաս պատճառելու համար և արգելելով Ֆ.-ին երեք տարվա ընթացքում կրկին ամուսնանալ (քանի որ նա իր անընդունելի վարքագծով ամուսնության քայքայման միակ պատասխանատուն էր): Ներպետական դատարաններում Ֆ.-ի վերաքննիչ բողոքները մերժվել են: 1986 թ. մարտին Ֆ.-ն և նրա կենակիցը հայտարարել են, որ ցանկանում են ամուսնանալ, սակայն իրավասու մարմինները մերժել են ամուսնության թույլտվությունը, քանի որ Ֆ.-ի վրա դրված արգելքը դեռևս ուժի մեջ էր: 1987 թ. հունվարին զույգն ամուսնացել է, երբ արգելքի ժամկետն արդեն ավարտվել էր, իսկ 1987 թ. փետրվարին նրանք երեխա են ունեցել: Ֆ.-ն գանգատ է ներկայացրել հանձնաժողովին՝ պնդելով, որ կրկին ամուսնանալու երեք տարվա արգելքը հակասում էր կոնվենցիայի 12-րդ հոդվածով երաշխավորված իր ամուսնանալու իրավունքին: Տասը կողմ և յոթ դեմ ձայների հարաբերակցությամբ հանձնաժողովը որոշել է, որ տեղի էր ունեցել նշված հոդվածի խախտում:

32. 12-րդ հոդվածը երաշխավորում է տղամարդու և կնոջ ամուսնանալու և ընտանիք ստեղծելու հիմնարար իրավունքը: Այս իրավունքի իրացումն ունի անձնական, սոցիալական և իրավական հետևանքներ: Այն ենթակա է «մասնակից պետությունների ազգային օրենքներին», սակայն «դրանցով նախատեսված սահմանափակումները չեն կարող սահմանափակել կամ նվազեցնել իրավունքն այնպես կամ այն աստիճան, որ տուժի այդ իրավունքի բուն էությունը» (տե՛ս 1986 թ. հոկտեմբերի 17-ի *Ռիսի* (*Rees*) գործով կայացված վճիռը, շարք A, թիվ 106, էջ 19, պարբ. 50):

Եվրոպայի խորհրդի բոլոր մասնակից պետություններում այս «սահմանափակումները» ներկայանում են որպես ընթացակարգային կամ նյութահիրավական կանոններում զետեղված պայմաններ: Այս սահմանափակումները հիմնականում վերաբերում են ամուսնության հրապարակայնությանն ու ծիսակատարությանը, թեև վերջինս հիմնականում վերաբերում է ամուսնանալու ունակությանը, համաձայնությանը և որոշ արգելքներին:

33. Ֆ.-ի վրա դրված սահմանափակումը կիրառվել է ամուսնության իրավունքի իրացումը կարգավորող օրենքներով, քանզի 13-րդ հոդվածը տարբերակում չի մտցնում ամուսնության և կրկնակի ամուսնության միջև:

Դատարանը նշում է, որ այլ մասնակից պետությունների օրենքներում այլևս գոյություն չունի դրույթ կրկին ամուսնանալու համար սպասելաշրջան սահմանելու մասին, քանի որ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունն այն վերացրել է 1976 թ., իսկ Ավստրիան՝ 1983-ին: Այս կապակցությամբ նա մեջբերում է իր այն նախադեպային բազան, համաձայն որի՝ կոնվենցիան պետք է մեկնաբանվի ներկայիս պայմանների համապատասխան (տե՛ս *Էյրիի* (*Airey*) գործով կայացված 1979 թ. հոկտեմբերի 9-ի վճիռը, շարք A, թիվ 32, պարբ. 26): Սակայն այն հանգամանքը, որ աստիճանական

զարգացման արդյունքում երկիրն իր օրենսդրության մեկ հայեցակետով հայտնվում է մեկուսացված վիճակում, ամենևին էլ չի նշանակում, որ այդ դրույթը հակասում է օրենսդրությանը, հատկապես ամուսնության բնագավառում, որը սերտորեն կապված է յուրաքանչյուր հասարակության մշակութային և պատմական ավանդույթների և ընտանիքի վերաբերյալ արմատացած պատկերացումների հետ:

34. Գանգատի առարկա դարձած միջոցը վերջին հաշվով վերածվում է քաղաքացիական պատժամիջոցի: Դաշնային դատարանի նախադեպային իրավունքով կրկին ամուսնանալու վրա արգելք է դրվում ամուսնության քայքայման մեջ վճռական դեր ունեցող բացառիկ լրջության զանցանքի դեպքում:

Թեև քաղաքացիական օրենսգրքի 150-րդ հոդվածը պետական քաղաքականության տեսանկյունից պարտադիր կիրառման ենթակա դրույթ է, սակայն այն դատարաններին տալիս է սեփական հայեցողության որոշակի իրավունք, քանի որ ամուսնական հավատարմության խախտման հետևանքով ապահարզան շնորհելու դեպքում մեղավոր կողմի վրա դրված արգելքի ժամանակաշրջանը կարող է տատանվել մեկից երեք տարի: Տվյալ դեպքում Լոզանի տարածքային քաղաքացիական դատարանն ընտրել է առավելագույն ժամանակաշրջանը՝ հայտարարելով, որ Ֆ.-ն իր անընդունելի վարքագծի պատճառով ամուսնության քայքայման միակ պատասխանատուն էր:

Ուստի ապահարզանը շնորհած դատարանը չի սահմանափակվել ամուսնության քայքայման հետևանքների գնահատմամբ՝ հաստատելով 1983 թ. մայիսի 16-ին ամուսնական զույգի միջև կնքված այն համաձայնագիրը, որով նախատեսվում էր ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցման վճարում: Դատարանը նաև գնահատել է դիմողի նախկին վարքագիծը՝ եզրակացություններ անելով կրկին ամուսնանալու նրա իրավունքի մասին:

35. Պետությունը սկզբում բերել է այն հակափաստարկը, որ 150-րդ հոդվածի կիրառումը տվյալ գործում ոչ ողջամիտ, կամայական կամ անհամաչափ չի եղել: Բողոքի առարկա դարձած պատժամիջոցն անկասկած եղել է միջամտություն ամուսնանալու իրավունքի իրացմանը, սակայն այն չի խախտել այդ իրավունքի բուն էությունը: Ամուսնական զանցանքով պայմանավորված ապահարզանի դեպքում կրկնակի ամուսնությունը ժամանակավորապես արգելելու շվեյցարական համակարգը կարելի է բացատրել օրենսդրի՝ ոչ միայն ամուսնության ինստիտուտը, այլև այլ անձանց իրավունքները, այդ թվում՝ նույնիսկ արգելքի առարկա դարձած անձի իրավունքները պաշտպանելու վճռականությամբ:

36. Դատարանն ընդունում է, որ ամուսնության կայունությունը հանրության շահերից բխող օրինական նպատակ է: Այդուհանդերձ, կասկածներ ունի, թե արդյոք տվյալ դեպքում կիրառված միջոցները համաչա՞փ էին դրված նպատակին հասնելու համար: Շվեյցարիայում ընտանեկան օրենսդրության հետազոտական խումբը, իսկ հետագայում նաև ընտանեկան օրենսդրության բարեփոխումների հարցերով զբաղվող փորձագիտական կոմիտեն ունեցել են կարծես նույն կասկածները և առաջարկել են չեղյալ համարել քաղաքացիական օրենսգրքի 150-րդ հոդվածը:

Ամեն դեպքում դատարանը չի կարող ընդունել այն փաստարկը, որ կրկին ամուսնանալու ժամանակավոր արգելքը նախատեսված է այլոց իրավունքները, մասնավորապես՝ ամուսնալուծված անձի ապագա կնոջ կամ ամուսնու իրավունքները պաշտպանելու համար:

1986 թ. մայիսի 22-ին այն կինը, ում հետ կենակցում էր Ֆ.-ն, կարողացավ ստանալ իր իսկ ապահարզանից հետո նշանակված սպասելաշրջանի կրճատում, որն ուժի մեջ էր մտել դրանից մեկ ամիս առաջ: Ֆ.-ի վրա դրված արգելքի ժամկետն ավարտվեց 1986 թ. դեկտեմբերի 21-ին, որից հետո հնարավոր դարձավ իրականացել քաղաքացիական ակտի անհրաժեշտ գրանցումը: Համապատասխանաբար ամուսնությունը տեղի ունեցավ 1987 թ. հունվարի 23-ին: Մոտ յոթ-ութ ամիս տևած այս ժամանակահատվածում դիմողի ապագա կինը կարող էր համարել, որ անձամբ և ուղղակիորեն տուժում է Ֆ.-ի հանդեպ կիրառած պատժամիջոցից: Հաշվի առնելով, որ այդ կինը ո՛չ անչափահաս էր, ո՛չ էլ հոգեկան հիվանդ, չէր կարելի ասել, որ նրա իրավունքները պաշտպանվել են տվյալ միջոցի կիրառմամբ:

Նման արգելքի կիրառման հետևանքով կարող էր տուժել նաև դեռ չծնված երեխան: Անշուշտ, «ապօրինի զավակ» գաղափարն այլևս գոյություն չունի Շվեյցարիայի օրենսդրության մեջ, որի շրջանակներում արտաամուսնական երեխաները ներկայումս ունեն նույն կարգավիճակը և օգտվում են նույն իրավունքներից, ինչ ամուսնության մեջ ծնված երեխաները: Այդուհանդերձ, արտաամուսնական երեխաները կարող են տուժել որոշակի նախապաշարմունքներից և այսպիսով լինել սոցիալապես խոցելի: Թեև ներկա պարագայում երեխան ծնվել էր իր ծնողների ամուսնությունից մեկ ամիս անց, սակայն ծնողներից մեկի մահվան կամ նույնիսկ իրավաբանական ձևակերպումների ուշացման դեպքում երեխան կծնվեր ամուսնությունից դուրս:

37. Պետությունը նաև նշել է, որ տվյալ անձին խորհելու համար պարտադիր ժամկետի նշանակումն օգնում էր նրան պաշտպանվել ինքն իրենից: Դատարանի տեսանկյունից այս փաստարկը բավարար կշիռ չունի, որպեսզի արդարացնի վիճահարույց միջամտությունը չափահաս և հոգեպես առողջ անձի պարագայում:

38. Բացի այդ, պետությունը որպես փաստարկ մեջբերել է 1986 թ. դեկտեմբերի 18-ին *Ջոնսթընի* (*Johnston*) գործով կայացրած վճիռը, որում նշվել է, որ «մենամուսնության սկզբունքին ճգտող հասարակությունում ապահարզանի արգելումը չի կարող դիտվել որպես 12-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի էությունը խախտող դրույթ» (շարք A, թիվ 112, էջ 24, պարբ. 52): Պետության ներկայացրած դիրքորոշման մեջ այս նույն սկզբունքը վերաբերում էր նաև կրկնակի ամուսնության ժամանակավոր արգելքին: Կրկնակի ամուսնության իրավունքը կարելի է ճանաչել՝ հաշվի առնելով, որ դրա կիրառումը

անպայման կախված էր մեկ այլ իրավունքից, այն է՝ ամուսնալուծվելու իրավունքից, որը չի բխում կոնվենցիայից: Կարճ ասած՝ կրկնակի ամուսնությունը չի կարելի հավասարեցնել առաջին ամուսնությանը:

…Ֆ.-ի իրավիճակը բավականին տարբերվում է պրն Ջոնսթընի իրավիճակից, քանի որ վերջինիս դեպքում քննարկման առարկա էր դարձել դեռևս ամուսնության մեջ գտնվող անձի ապահարզանի դիմելու իրավունքը: Եթե ազգային օրենսդրությունը թույլատրում է ապահարզանը, ինչը կոնվենցիայով ամրագրված պահանջ չէ, ապա 12-րդ հոդվածը ապահովում է ամուսնալուծված անձանց կրկին ամուսնանալու իրավունքը՝ առանց որևէ անողջամիտ սահմանափակման:

39. Դեռևս մնում է պետության այն փաստարկը, ըստ որի՝ նախքան ապահարզանի շնորհումը որպես սպասելաշրջան նախատեսված դատական բաժանման ժամկետը կամ էլ անմեղ ամուսնու (կնոջ)՝ ապահարզանի դեմ առարկելու իրավունքը նույն հետևանքներն ունեն շահագրգիռ անձանց համար, ինչ կրկին ամուսնանալու ժամանակավոր արգելքը: Դատարանը համարում է, որ նման իրավիճակները տարբեր են, և ամեն պարագայում դրանք տեղի են ունենում նախքան ապահարզանի հայտարարումը:

40. Ամփոփելով՝դատարանը նշում է, որ վիճահարույց միջոցը, որն ազդել էր ամուսնանալու իրավունքի բուն էության վրա, հետապնդվող օրինական նպատակներին համաչափ չի եղել: Ուստի, տեղի է ունեցել 12-րդ հոդվածի խախտում:

… ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Որոշում է կայացրել, ինը կողմ և ութ դեմ ձայների հարաբերակցությամբ, որ տեղի է ունեցել 12-րդ հոդվածի խախտում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում ընդգրկված էին նախագահող դատավոր Ռիսդալը և դատավորներ՝ Լագերգրենը, Փեթիթին, Էվանսը, Մակդոնալդը, Ռուսոն, Բերնհարդտը, Շպիլմանը և Կարիյո Սալսեդոն:

2 Դատավորներ Տոիր Վիլջաուլմսոնը, Բինդշեդլեր-Ռոբերտը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Պինեյրո Ֆարինան, Ուոլշը, Դե Մեյերը և Վալտիկոսը ներկայացրել են միասնական առանձին կարծիք, որում նրանք արտահայտել են հետևյալ տեսակետը.

Մեր կարծիքով՝ գործի հանգամանքները չեն վկայում դիմողի հիմնարար իրավունքների խախտման մասին:

Այն հանգամանքները, որոնցում երկու նախորդ ապահարզաններից հետո տվյալ անձի երրորդ ամուսնությունը լուծվել էր, այնպիսին էին, որ երրորդ ապահարզանը շնորհելիս Լոզանի քաղաքացիական դատարանն իրավասու էր նշանակելու նրա համար Շվեյցարիայի քաղաքացիական օրենսգրքի 150-րդ հոդվածով նախատեսված երեք տարվա պարտադիր սպասելաշրջան:

Այսպիսով, դիմողի՝ ամուսնանալու և ընտանիք ստեղծելու իրավունքի իրացման վրա դրված սահմանափակումը չէր ազդում այդ իրավունքի բուն էության վրա: Այն պարզապես ժամանակավոր միջոց էր: Այս միջոցը ոչ կամայական էր, ոչ էլ անողջամիտ: Այն հիմնված էր օրինական նպատակների վրա և կարող էր համարվել դրանց լրջությանը համաչափ: Այդ միջոցը չէր գերազանցում իրավասու ազգային մարմինների լիազորությունները:

Ինչպես դատական, այնպես էլ օրենսդիր մարմինները տվյալ հարցում իրենց հայեցողության իրավունքի համաձայն իրավասու էին համարելու, որ կիրառված սահմանափակումը հիմնավորված էր ոչ միայն ամուսնության ինստիտուտը, այլև այն անձի ապագա ամուսնուն կամ կնոջը պաշտպանելու համար, ով շվեյցարական դատարանների հաստատմամբ թույլ էր տվել հիմնարար ամուսնական իրավունքների կոպիտ խախտում:

Պետությունն ամուսնության հարցում ավելի լայն լիազորություններ ունի, քան այլ բնագավառներում: Այս իրողությունը հատկապես ակնհայտ է դառնում, երբ համեմատում ենք կոնվենցիայի 12-րդ հոդվածում «ազգային օրենքների» կարճ և ոչ սպառիչ մեջբերումը և առավել սահմանազատող և սահմանափակող ձևակերպումները 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների 2-րդ կետերում:

Այս համատեքստում այն կասկածները, թե որքանով է որոշակի իրավական կանոնը համաչափ, տեղին կամ արդյոք պե՞տք է կիրառվի տվյալ պարագայում, բավարար չեն կոնվենցիայի 12-րդ հոդվածով ապահովված իրավունքի խախտում արձանագրելու համար: Նման իրավունքի խախտում արձանագրելու համար հարկ է ցույց տալ, որ պետությունը խաթարել է նշված իրավունքի բուն էությունը կամ սահմանափակել է դրա իրացումը կամայական կամ անողջամիտ եղանակով: Այս գործում դա ցույց չի տրվել:

Չհամընկնող կարծիք արտահայտած դատավորներն ընդգծել են ներպետական իրավական և սոցիալական ոլորտներում ամուսնության ինստիտուտը կարգավորելու համար 12-րդ հոդվածով պետություններին շնորհված լայն լիազորությունները: Նախկին գլուխներում մենք արդեն տեսել ենք, որ 8-11-րդ

հոդվածների 2-րդ կետերի ընդհանուր ձևակերպումները դատարանը մեկնաբանել է առավել սահմանափակող տեսանկյունից: Դատարանի վճռի առանցքային տարրերից էին համաչափության չափանիշի կիրառումը՝ գնահատումը, թե ամուսնանալու իրավունքի հատուկ սահմանափակումները համատեղելի՞ էին 12-րդ հոդվածում սահմանված իրավունքի հետ, և այն իրողության ճանաչումը, որ երբ ազգային օրենսդրությամբ ամուսնալուծությունը թույլատրվում է, ապա 12-րդ հոդվածը երաշխավորում է ամուսնալուծված անձանց կրկին ամուսնանալու իրավունքը՝ որոշակի ողջամիտ սահմանափակումների պայմանով:

3 Մշտական գործող դատարանի մեծ պալատը միաձայն որոշել է, որ տեղի է ունեցել վիրահատված տրանսսեքսուալի ամուսնության իրավունքի խախտում վերոնշյալ *«Քրիսթին Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Christine Goodwin v United Kingdom*) գործով 2002 թ. հուլիսի 11-ին կայացված վճռով (տես վերը՝ էջ 602):

97. Դատարանը հիշեցրել է, որ *«Ռիսն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Rees v UK,* A.106, 1986), *«Քոսին ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Cossey v UK,* A.184, 1990), ինչպես նաև *«Շեֆիլդը և Հորշեմն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Sheffield and Horsham v UK,* 1998-V) գործերի շրջանակներում տրանսսեքսուալների վրա դրված հակառակ սեռի ներկայացուցիչների հետ ամուսնանալու արգելքով չի խախտվել կոնվենցիայի 12-րդ հոդվածը: Վերոնշյալ եզրակացությունն արդարացվում է այն հիմնավորմամբ, որ ամուսնության իրավունքը վերաբերում է հակառակ կենսաբանական սեռերի միջև կնքվող ավանդական ամուսնությանը (տե՛ս *Ռիսի* (*Rees*) գործով վճիռ, էջ 19, պարբ. 49): Ամուսնության իրավունքին համաձայն՝ անձի կենսաբանական սեռի չափանիշի վրա հիմնված դրույթն ընդգրկվել է մասնակից պետությունների լիազորությունների շրջանակում, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան պետական օրենսդրությամբ կարգավորելու ամուսնության իրավունքի իրացմանն առնչվող հարցերը: Նույն տեսակետն ընկած է նաև այն եզրակացության հիմքում, որի համաձայն՝ այն դեպքերում, եթե տրանսսեքսուալների կողմից նշված իրավունքի իրացումը հակասում է տվյալ իրավունքի հիմքում ընկած դրույթներին, ապա համապատասխան պետական օրենքները չեն կարող մեկնաբանվել հօգուտ դիմողների իրավունքների սահմանափակման կամ խախտման (տե՛ս *Քոսիի* (*Cossey*) գործով վճիռը, էջ 18, պարբ. 44–46, *Շեֆիլդի և Հորշեմի* (*Sheffield and Horsham*) գործով վճիռը, էջ 2030, պարբ. 66–67): Դատարանն անդրադարձել է նաև 12-րդ հոդվածի ձևակերպմանը, որի դրույթներով պաշտպանվում է ընտանիքի հիմքում ընկած ամուսնության իրավունքը (տե՛ս վերոնշյալ *Ռիսի* (*Rees*) գործով կայացված վճիռը):

98. Անդրադառնալով 2002 թ. նման համատեքստում արձանագրված իրավիճակին՝ դատարանն ընդգծել է, որ 12-րդ հոդվածով երաշխավորվել է տղամարդու և կնոջ՝ ամուսնանալու և ընտանիք կազմելու հիմնարար իրավունքը: Այնուհանդերձ, վերոնշյալ իրավունքի երկրորդ հայեցակետը նախորդ հայեցակետի նախապայման չէ, և որևէ զույգի երեխա ունենալու անկարողությունը չի կարող ինքնին համարվել այնպիսի գործոն, որով կարող է խախտվել նույն դրույթի առաջին մասով սահմանված իրավունքը:

99. Ամուսնանալու իրավունքի իրականացումը հղի է սոցիալական, անձնական և իրավական հետևանքներով: Վերոնշյալ իրավունքը կարգավորվում է մասնակից պետությունների ներպետական օրենսդրությամբ, սակայն նույնիսկ այդ դեպքում նշված իրավունքը չպետք է սահմանափակվի այնպես, որ խաթարվի իրավունքի բուն էությունը (տե՛ս *Ռիսի* (*Rees*) գործով վճիռը, էջ 19, պարբ. 50, ինչպես նաև *«Ֆ-ն ընդդեմ Շվեյցարիայի»* (*F. v Switzerland*) գործով 1987 թ. դեկտեմբերի 18-ի վճիռը, շարք A, թիվ 128, պարբ. 32):

100. Ճիշտ է՝ 12-րդ հոդվածի առաջին նախադասությունը հստակ անդրադառնում է տղամարդու և կնոջ ամուսնության իրավունքին: Դատարանը համոզված չէ, որ տվյալ գործով վճիռ կայացնելիս կարելի էր եզրակացնել, որ հոդվածի դրույթների հիմքում ընկած է անձի կենսաբանական սեռը որոշելու չափանիշը, ինչպես հայտարարել է դատավոր Օրմրոդը *«Քորբեթն ընդդեմ Քորբեթի» (Corbett v Corbett,* 1971, PR 83) գործի շրջանակներում: Կոնվենցիայի ընդունումից հետո ամուսնության ինստիտուտը սոցիալական մեծ փոփոխություններ է կրել, ինչպես նաև փոփոխություններ, որոնք պայմանավորված են եղել սեռափոխության բնագավառում բժշկության և գիտության զարգացումներով: Ինչպես արդեն նշվել է, դատարանը կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում եզրակացրել է, որ համապատասխան կենսաբանական գործոնների չափանիշն այլևս չի կարող որոշիչ լինել վիրահատված տրանսսեքսուալների սեռափոխությունն իրավաբանորեն ճանաչելու մերժման համար: Գոյություն ունեն այլ կարևոր գործոններ, ինչպիսիք են մասնակից պետությունների բուժաշխատողների և առողջապահության ոլորտում աշխատող պաշտոնյաների կողմից սեռի ինքնության խախտման պայմանի ընդունումը, բուժում տրամադրելու երաշխիքը, այդ թվում՝ վիրահատական միջամտությունն անձին այն սեռին մոտեցնելու նպատակով, որին նա իրեն նույնացնում է, ինչպես նաև այդ սեռից բխող սոցիալական դերի ընկալումը տրանսսեքսուալի կողմից: Դատարանը հավելեց, որ վերջերս ընդունված Մարդու հիմնարար իրավունքների Եվրոպական Միության խարտիայի 9-րդ հոդվածը, որում «տղամարդ և կին» արտահայտությունը միտումնավոր չի մեջբերվում, հստակ տարբերվում է կոնվենցիայի 12-րդ հոդվածից:

101. Այնուհանդերձ, 8-րդ հոդվածով սահմանված անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը չի դասվում 12-րդ հոդվածով սահմանված այն բոլոր հարցերի կարգը, որոնց մասին նշվում է պետական օրենսդրությամբ ամրագրված պայմաններում: Ուստի դատարանի քննության առարկան է դարձել այն հարցը, թե արդյոք պետական օրենսդրության համաձայն՝ անձին իր ծննդյան պահին արձանագրված սեռի վերագրումը եղե՞լ է իր ամուսնանալու իրավունքի այնպիսի սահմանափակում, որով խախտվել է նշված իրավունքի բուն էությունը: Այդ կապակցությամբ դատարանը կարծում է, որ սխալ կլիներ պնդել, թե վիրահատությամբ սեռը փոխած տրանսսեքսուալները չեն զրկվել ամուսնանալու իրենց իրավունքից, քանի որ օրենքի համաձայն՝ նրանք կարող էին ամուսնանալ իրենց նախկին սեռի նկատմամբ հակառակ սեռի ներկայացուցչի հետ: Տվյալ դեպքում հայց ներկայացրած կինը սեռական հարաբերություններ է պահպանում տղամարդու հետ, և ցանկանում է ամուսնանալ միայն տղամարդու հետ, սակայն չունի այդ հնարավորությունը: Ուստի, դատարանի կարծիքով, կինը կարող է պնդել, որ խախտվել է ամուսնանալու իր իրավունքի բուն էությունը:

102. Դատարանը չի նշել որևէ այնպիսի պատճառաբանություն, որի առկայության դեպքում նա կարող էր հանգել այլ եզրակացության: Պատասխանող պետությունը պնդել է, որ նման նրբին ոլորտում ամուսնանալու իրավունքին առնչվող հարցերը պետական օրենսդրությամբ կարգավորելու իրավունքը պետք է պետության հայեցողության սահմաններում վերագրել ներպետական դատարաններին՝ վկայակոչելով այն հնարավոր ազդեցությունը, որ կարող է ունենալ այդ կարգավորումն արդեն կայացած այնպիսի ամուսնությունների վրա, որոնց պարագայում ամուսիններից մեկն տրանսսեքսուալ է: Այնուհանդերձ, ինչպես պարզ է դառնում *«Բելինգերն ընդդեմ Բելինգերի» (Bellinger v Bellinger,* 2001, 3 FCR 1) գործով վճիռ կայացրած վերաքննիչ դատարանի մեծամասնության կարծիքից, ներպետական դատարանները հակված են արտահայտելու այն տեսակետը, որ նման հարցերն ավելի լավ են կարգավորվում պետական օրենսդրությամբ, թեև Միացյալ Թագավորության կառավարությունը ներկայումս նման օրենսդրություն առաջարկելու մտադրություն չունի:

103. Liberty կազմակերպության ներկայացրած նյութերը վկայում են, որ թեև տրանսսեքսուալների ամուսնության երևույթը մեծ տարածում է գտել, ավելի շատ երկրների օրենսդրությամբ սեռափոխության ինքնին գաղափարը ճանաչվում է, բայց տրանսսեքսուալների միջև ամուսնությունը չի թույլատրվում: Ամեն դեպքում, դատարանը չի բավարարվել, որ վերոնշյալ նյութերով կարող է հիմնավորվել այն փաստարկը, որ տվյալ հարցի կարգավորումը հարկ է ամբողջապես վերագրել մասնակից պետությունների հայեցողությանը: Դա հավասարազոր կլիներ այն եզրակացությանը, որ մասնակից պետություններն իրենց հնարավորությունների շրջանակներում կարող են մեծապես խոչընդոտել ամուսնության իրավունքի բոլոր դրսևորումները: Պետություններին տրամադրված հայեցողության սահմանը չի կարող տարածվել նման հարցերի վրա: Թեև մասնակից պետությունները պետք է, ի թիվս այլ հարցերի, սահմանեն այն պայմանները, որոնց համապատասխան՝ տրանսսեքսուալների իրավական կարգավիճակի ճանաչում պահանջող անձը պետք է հիմնավորի, որ ինքը մեծ վնաս է կրել իր սեռի վերաճնակերպման պատճառով, ինչը հանգեցրել է նախկին ամուսնությունները չեղյալ համարելուն և հետագա ամուսնությունների դեպքում կիրառելի ձևակերպումներին, այդ թվում, օրինակ՝ ապագա ամուսիններին տրամադրվող տեղեկատվությունը, սակայն դատարանը որևէ հիմնավորում չի տեսնում տվյալ հանգամանքներում տրանսսեքսուալի ամուսնանալու իրավունքի խախտումն արդարացնելու համար:

104. Տվյալ դեպքում դատարանն արձանագրել է կոնվենցիայի 12-րդ հոդվածի խախտում:

Վերոնշյալ գործով հայց ներկայացրած տրանսսեքսուալների ամուսնանալու իրավունքը սահմանափակելու հարցում պետություններին տրամադրված հայեցողության սահմանը շատ ավելի նեղ է դատարանի նախկին որոշումների համեմատ: Վերոնշյալ 100-րդ կետում հիշատակված 2000 թ. դեկտեմբերի 9-ին ստորագրված Մարդու հիմնարար իրավունքների Եվրոպական Միության խարտիայի 9-րդ հոդվածով սահմանվում է հետևյալը. «Ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքը պետք է երաշխավորվի վերջինիս իրացումը կարգավորող պետական օրենսդրության համապատասխան»:

4 *«Ջոնսթընն ընդդեմ Իռլանդիայի»* (*Johnston v Ireland*, A.112, 1986, 9 EHRR 203) գործի շրջանակներում դատարանը հրաժարվել է մեկնաբանել այն հարցը, թե արդյոք 12-րդ հոդվածում ընդգրկվե՞լ է ամուսնալուծվելու իրավունքը: Տվյալ գործով առկա հանգամանքներն արդեն ներկայացվել են նախորդ հատվածներում (տե՛ս վերը՝ 550):

51. Այն հարցը պարզելու համար, թե արդյոք դիմողները կարո՞ղ են եզրահանգել, որ 12-րդ հոդվածի դրույթներով սահմանվել է նաև ամուսնալուծվելու իրավունքը, դատարանը կփորձի հստակեցնել նշված դրույթի սովորական բնութագրումը դրա նպատակի շրջանակներում (տե՛ս *Գոլդերի* (*Golder*) գործով 1975 թ. փետրվարի 21-ի վճիռը, շարք A, թիվ 18, էջ 14, պարբ. 29, ինչպես նաև Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին կետը):

52. Դատարանը համամիտ է հանձնաժողովի հետ այն հարցում, որ «ամուսնանալու իրավունք» արտահայտության սովորական բնութագրումը պարզ է այն իմաստով, որ այն տարածվում է ամուսնական հարաբերությունների ձևավորման, ոչ թե դրանց քայքայման վրա: Բացի այդ, նշված արտահայտությունը տեղ է գտել այնպիսի համատեքստում, որը հստակ վերաբերում է պետական օրենսդրությանը: Եթե նույնիսկ, ինչպես դիմողներն են նշել, ամուսնալուծվելու արգելքը համարվի ամուսնանալու կարողության սահմանափակում, դատարանի կարծիքով՝ մենամուսնության սկզբունքը պահպանող հասարակության պայմաններում ամուսնանալու իրավունքի նման սահմանափակումը չի կարող համարվել 12-րդ հոդվածի հիմքում ընկած դրույթի խախտում:

Ավելին, ինչպես վկայում են կոնվենցիայի նախապատրաստական փաստաթղթերը, 12-րդ հոդվածի ներքոհիշյալ մեկնաբանումը համապատասխանել է հոդվածի նպատակին: Վերոնշյալ հոդվածը ձևակերպվել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 16-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա, որով սահմանվել է հետևյալը.

> «Չափահաս տղամարդիկ ու կանայք առանց որևէ ցեղային, ազգային կամ կրոնական սահմանափակման ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն: Նրանք հավասար իրավունքներ ունեն ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության ժամանակ»:

Կոմիտեի իրավական և վարչական հարցերով զեկուցող պրն Թեյթգենն ապագա 12-րդ հոդվածում վերոնշյալ պարբերության վերջին նախադասությունը չընդգրկելու պատճառը խորհրդատվական ժողովի մասնակիցներին բացատրելիս ասել է.

> «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի տվյալ հոդվածը հիշատակելիս մենք օգտվել ենք միայն հոդվածի այն մասից, որով սահմանվել է ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքը, ոչ թե ամուսնությունից հետո հավասար իրավունքներ ամրագրող հաջորդ դրույթներից, քանի որ մենք երաշխավորում ենք միայն ամուսնության իրավունքը» (Նախապատրաստական փաստաթղթեր, լիակատար ժողովածու, հտ. I, էջ 268):

Դատարանի կարծիքով՝ նախապատրաստական փաստաթղթերում 12-րդ հոդվածով ամուսնական կապերն ապահարզանով լուծարելու իրավունքը երաշխավորելու որևէ մտադրություն չի նկատվում:

53. Դիմողները բավական մեծ կարևորություն են տալիս կոնվենցիայի նախագծման պահից ի վեր արձանագրված սոցիալական զարգացումներին, մասնավորապես՝ քայքայված ամուսնությունների թվի ենթադրյալ մեծ աճին:

Ճիշտ է, որ կոնվենցիան և դրան կից արձանագրությունները մեկնաբանելիս հարկ է հաշվի առնել արդի պայմանները (մի քանի աղբյուրների շարքում տե՛ս *Մարքսի* (*Marckx*) գործով վճիռը, շարք A, թիվ 31, էջ 26, պարբ. 58): Այնուհանդերձ, դատարանը չի կարող զարգացող մեկնաբանության միջոցով եզրակացնել, որ այս փաստաթղթերը նախատեսում են դրանցում ի սկզբանե չընդգրկված մի իրավունք: Այս պնդումը հատկապես ճիշտ է տվյալ պարագայում, երբ ամուսնալուծվելու իրավունքը միտումնավոր չի ընդգրկվել:

54. Այսպիսով, դատարանի կարծիքով, դիմողները չեն կարող պնդել, որ 12-րդ հոդվածի դրույթներից բխում է ամուսնալուծվելու իրավունքը:

Բացի այդ, դատարանի ներկայացրած պատճառաբանությունն առհասարակ կարևոր է, քանի որ դրանում բացահայտվում են կոնվենցիայով ամրագրված իրավունքների մեկնաբանության նկատմամբ դատարանի դինամիկ մոտեցման սահմանափակումներից մի քանիսը:

5 *«X-ը և Y-ն ընդդեմ Շվեյցարիայի» (X and Y v Switzerland*, 13 DR 241 1978) գործով դիմողներն ամուսնական զույգ էին, որոնք կալանավորվելուց հետո՝ նախաքննության ժամանակ, պահվել են նույն բանտում առանձին: Բանտի ղեկավարությունը հրաժարվել է թույլ տալ դիմողներին բանտարկության ժամանակ սեռական հարաբերություններ ունենալ: Դիմողները հայտնել են 8-րդ և 12-րդ հոդվածների խախտման մասին: Հանձնաժողովը մերժել է ամուսինների դիմումը՝ որպես ակնհայտորեն անհիմն հայտարարություն: 8-րդ հոդվածի առնչությամբ հանձնաժողովն ասել է հետևյալը.

> …Առհասարակ բանտերում անկարգությունների կանխարգելման նպատակով արդարացված է համարվում արգելել բանտարկության մեջ գտնվող ամուսնացած զույգերի սեռական հարաբերությունները: Հանձնաժողովն ընդունում է, որ իրականում բանտի կարգուկանոնը վտանգված կլինի, եթե ամուսնացած բոլոր բանտարկյալներին թույլատրվի շարունակել ապրել ամուսնական կյանքով: Տվյալ դեպքում անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի դրույթներով պահանջվում է, որ բանտի ղեկավարությունը հրաժարվի մշտական վերահսկողություն իրականացնելու իր իրավունքից: Չվերահսկվող այցերը կամ հաղորդակցումը կարող են, ի թիվս այլ խնդիրների, հանգեցնել գաղտնի հաղորդումների փոխանակմանը, թմրամիջոցների կամ նույնիսկ զենքի, ինչպես նաև այլ նման ապրանքների ապօրինի ներմուծմանը, եթե խոսքը հատկապես նախաքննության ժամանակ կալանքի տակ գտնվող այն անձանց մասին է, որոնց կալանավորումը պայմանավորված է ազատ արձակվելու դեպքում

փախուստի դիմելու կամ ապացույցները ոչնչացնելու հավանականությամբ, ուստի նրանց կալանավորման նպատակով հարկավոր է խիստ վերահսկողություն սահմանել նման անձանց այցելուների կամ նույն գործով այլ մեղադրյալների հետ նրանց շփումների նկատմամբ (էջ 243):

Ուստի, դիմողների վրա դրված սեռական հարաբերությունների արգելքը դուրս չի մնացել 8-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների շրջանակից: Հանձնաժողովը նաև վճռել է, որ «8-րդ հոդվածի 2-րդ կետով հիմնավորված միջամտությունն ընտանեկան կյանքին չի կարող միաժամանակ 12-րդ հոդվածի խախտում համարվել»:

«Ալիևն ընդդեմ Ուկրաինայի» (Aliev v Ukraine) գործով 2003 թ. ապրիլի 29-ին կայացրած վճռով նույն մոտեցումն է որդեգրել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեծ պալատը: Մեծ պալատը հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ.

188. Թեև դատարանը հավանություն է տալիս մի քանի եվրոպական պետություններում մեկնարկած բարեփոխումների նախաձեռնություններին՝ ուղղված ամուսինների այցերի կանոնակարգի պարզեցմամբ բանտի պայմանների բարելավմանը, սակայն դատարանը կարծում է, որ ներկա պահին նման այցերի մերժումը կարող է հիմնավորված համարվել անկարգությունների և հանցագործությունների կանխարգելման նկատառումով՝ կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով:

Տվյալ համատեքստում «ներկայումս» բառի գործածումը նշանակում է, որ դատարանը կարող է տվյալ հարցին անդրադառնալ ապագայում: Արհեստական բեղմնավորման միջոցով իր կնոջից երեխա ունենալու հարցում բանտարկյալի նկատմամբ բանտի ղեկավարության սահմանած արգելքը ներկայացվում է վերոնշյալ *«Դիքսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Dickson v UK)* գործով 2006 թ. ապրիլի 18-ին կայացրած վճռում:

6 Բանտարկյալներին ավելի հաճախ էր հաջողվում վիճարկել ամուսնանալու թույլտվության պետական մարմինների մերժումը: Օրինակ՝ *«Համերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Hamer v UK*, 24 DR 5, 1979) գործով դիմողը դատապարտված էր հինգ տարվա ազատազրկման գույքային բնույթի հանցագործության համար: Դատավճռով նախատեսված իր պատիժը կրելուց կարճ ժամանակ անց Համմերը քրեակատարողական հիմնարկի ղեկավարությունից, իսկ այնուհետև ներքին գործերի նախարարից իր ընկերուհու հետ ամուսնանալու թույլտվություն է հայցել: Նշված անձի հետ նա նախքան իր ձերբակալությունը մոտ տասը շաբաթվա ընթացքում ընդհանուր կենցաղ է վարել: 1949 թ. «Ամուսնության մասին» օրենքի համաձայն՝ ամուսնությունները կարող էին անցկացվել միայն հատուկ վայրերում, օրինակ՝ համայնքային եկեղեցում: Ներքին գործերի նախարարը մերժել է դիմողի հայցը՝ վկայակոչելով այն հիմնավորումը, որ պաշտոնական քաղաքականության համաձայն՝ բանտարկյալներին կարելի է ժամանակավորապես ազատ արձակել և թույլատրել մասնակցելու հատուկ վայրում տեղի ունեցող հարսանյաց արարողությանը միայն երեխայի հայրությունը հաստատելու նպատակով: Դիմողը գանգատ է ներկայացրել 12-րդ հոդվածի խախտման վերաբերյալ: Հանձնաժողովը միաձայն այդ հոդվածի խախտում է արձանագրել: Հանձնաժողովը տարբերել է տվյալ դիմողի գործն այն գործերից, որոնց դեպքում բանտարկյալներին չեն թույլատրել սեռական հարաբերություններ ունենալ իրենց ամուսինների հետ ազատազրկման վայրերում, ինչպես, օրինակ՝ վերոնշյալ *«X-ը և Y-ն ընդդեմ Շվեյցարիայի» (X and Y v Switzerland, ծնթ. 5)* գործը:

58. Ամուսնության իրավունքի դեպքում կիրառելի են բազմազան նկատառումներ: Ամուսնության իրավունքը, ըստ էության, ներկայացնում է իրավական հարաբերություններ հաստատելու, ինչպես նաև ընտանեկան կարգավիճակ ձեռք բերելու իրավունք: Բանտարկյալների կողմից տվյալ իրավունքի իրացումը չի սպառնում բանտի անվտանգության կամ կարգուկանոնի պահպանմանը: Մասնավորապես, հարսանյաց արարողությունը կարող է տեղի ունենալ բանտի ղեկավարության վերահսկողության ներքո:

72. Հանձնաժողովը կարծում է, որ նշանակալի ժամկետով ամուսնության իրավունքի իրացման հետաձգումը պետության կողմից առհասարակ հարկ է դիտարկել որպես նշված իրավունքի բուն էության խաթարում: Հանձնաժողովը հավելել է, որ զուտ անձի բանտարկությամբ պայմանավորված որևէ հանրային շահի ընդհանուր նկատառումով չի կարելի արդարացնել միջամտությունը տվյալ գործով դիմող բանտարկյալի ամուսնության իրավունքին: Ինչպես արդեն ընդգծել է հանձնաժողովը, բանտարկյալների ամուսնության թույլտվությունը չի առաջացնում առանձնահատուկ դժվարություններ: Բացի այդ, համապա-

տասխան փաստեր չունենալու պատճառով հանձնաժողովը չի կարող համաձայնել այն ընդհանուր ենթադրությանը, որ բանտարկյալներին ամուսնության թույլտվություն շնորհելն ամեն դեպքում վնասակար հետևանքներ ունի հանրային շահերի համար: Ընդհակառակը, նման դեպքերում ամուսնությունը կարող է ունենալ կայունացնող և վերականգնողական ազդեցություն:

Նախարարների կոմիտեն համամիտ է եղել հանձնաժողովի կարծիքին և դիմողի ամուսնության իրավունքի խախտում է արձանագրել (բանաձև DH(81)5):

«Դրեյփերն ընդդեմ Միացյալ Թագավորության» *(Draper v UK,* 24 DR 73, 1980) գործը քննելիս արձանագրվել է 12-րդ հոդվածի նմանօրինակ խախտում, քանի որ Մեծ Բրիտանիայի պետական մարմինները հրաժարվել են ամուսնանալու թույլտվություն տալ կողոպուտի ժամանակ մարդասպանության համար ցմահ բանտարկության դատապարտված անձին: Պատասխանող պետությունը փորձել է իր մերժումը հիմնավորել այն փաստարկով, որ դիմողը բանտից շուտ ազատ արձակվելու հնարավորություն չուներ և չէր կարող նախքան ազատվելն ապրել իր ապագա կնոջ հետ, ուստի ապօրինի միջամտություն դիմողի ամուսնության իրավունքին տեղի չի ունեցել: Սակայն Միացյալ Թագավորության փաստարկը մերժվել է հետևյալ պատճառաբանությամբ:

60. …Հանձնաժողովը պատշաճ հիմնավորում չի համարում այն փաստարկը, որ դիմողը չէր կարող կենակցել իր կնոջ հետ կամ ամուսնական հարաբերություններ ունենալ ազատազրկման վայրում: Հանձնաժողովի կարծիքով՝ ամուսնության իրավունքի բուն էության հիմքում ընկած է տղամարդու և կնոջ միջև իրավաբանորեն ձևակերպված միության ստեղծումը, և միայն ապագա ամուսինները պետք է որոշեն՝ ցանկություն ունե՞ն կազմելու նման միություն կենակցելու հնարավորությունից զուրկ պայմաններում:

62. Անկախ հանցագործի նկատմամբ կայացրած դատավճռի տեսակից և պատժի ժամկետից՝ որոշակի հանցագործությունների, ինչպես, օրինակ՝ ամուսնու սպանության դեպքում, ամուսնության իրավունքի սահմանափակումը հնարավոր է հիմնավորել հանրային շահերը պաշտպանելու նկատառումով: Այնուհանդերձ, նմանօրինակ սկզբունքներով չի կարելի հիմնավորել բոլոր ցմահ դատապարտյալների ամուսնության իրավունքի ընդհանուր սահմանափակումը:

Նախարարների կոմիտեն նույնպես 12-րդ հոդվածի խախտում է արձանագրել (բանաձև DH(81)4): Ի պատասխան դիմողների օգտին ընդունված վերոնշյալ որոշումներին՝ Միացյալ Թագավորության կառավարությունն առաջնորդվել է 1983 թ. «Ամուսնության մասին» օրենքի այն բաժնով, որով, ի թիվս այլոց, թույլատրվել է ամուսնություններ անցկացնել ազատազրկման վայրերում:

7 *«Բ.-ն և Լ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» (B. and L. v United Kingdom)* գործով 2005 թ. սեպտեմբերի 13-ի վճռում դատարանի մեծ պալատը միաձայն որոշմամբ եզրակացրել է, որ իր հարսի հետ ամուսնանալու հարցում ընդհանուր օրենսդրությամբ սկեսրայրի վրա դրված արգելքով պատասխանող պետությունը խախտել է 12-րդ հոդվածը: Բ.-ի և Ա.-ի ամուսնությունից ծնվել է մեկ որդի՝ Ք.-ն, իսկ 1987 թ. նրանք ամուսնալուծվել են: Այնուհետև դիմող Լ.-ն ամուսնացել է Ք.-ի հետ և նրանք ունեցել են որդի՝ Վ. անունով: 1995 թ., երբ Ք.-ն արդեն լքել էր ընտանիքը, Բ.-ի և Լ.-ի միջև հարաբերություններ են սկսվում, իսկ 1996-ից ի վեր սկսել են կենակցել: Լ.-ն և Ք.-ն ամուսնալուծվել են 1997 թ.: Վ.-ն ապրում է Բ.-ի և Լ.-ի հետ և Բ.-ին անվանում «հայրիկ»: 2002 թ. Բ.-ն փորձել է պարզել՝ կարո՞ղ է ամուսնանալ Լ.-ի հետ: Տեղի Քաղաքացիական կացության ակտերի գրասենյակի գլխավոր տնօրենը տեղեկացրել է Բ.-ին, որ 1946 թ. «Ամուսնության մասին» լրամշակված օրենքով Բ.-ն և Լ.-ն կարող էին ամուսնանալ միայն այն դեպքում, եթե նրանց ամուսինները՝ Ա.-ն և Ք.-ն, մահացած լինեին: Տվյալ գործով դիմողները 12-րդ հոդվածի խախտման վերաբերյալ գանգատ են ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Ի պատասխան վերոնշյալ գանգատի՝ Միացյալ Թագավորության կառավարությունը, ի թիվս այլ փաստարկների, ասել է, որ Բ.-ի և Լ.-ի ամուսնության արգելքը բացարձակ բնույթ չի կրել, քանի որ նրանք կարող էին ամուսնանալ իրենց նախկին ամուսինների մահվան կամ անհատական դիմումների հիման վրա խորհրդարանի թույլտվությունը ստանալու դեպքում: Կառավարությունը նկատել է, որ քսանմեկ մասնակից պետություն բացարձակ և որևէ հիմնավորումներով չպայմանավորված արգելք է դրել վերոնշյալ ամուսնությունների վրա, և պետական իշխանություններն առավել նպաստավոր դիրքում են որոշելու՝ նմանօրինակ ամուսնությունները թույլատրելի՞ են, թե՞ ոչ:

37. Այնուհանդերձ, գործի փաստերը քննելիս դատարանը պետք է հաշվի առնի Միացյալ Թագավորությունում տիրող իրադրությունը: Դատարանն ընդգծել է, որ ամուսնության իրավունքի իրացման նմանօրինակ արգելքը միտված է ծնողների և նրանց զավակների միջև սեռական մրցակցությունը կանխելու, ընտանիքի ամբողջականությունը պահպանելու, ինչպես նաև մեծահասակների փոփոխվող հարաբերությունների հետևանքով երեխաներին սպառնացող հնարավոր վնասը չեզոքացնելու նպատակներին: Անշուշտ, տվյալ դեպքում դիմողների ամուսնության իրավունքի իրացման արգելքի հիմքում ընկած նպատակներն օրինական են:

38. Այնուամենայնիվ, ամուսնության վրա դրված արգելքը չի խոչընդոտում դիմողների նման հարաբերությունները: Տվյալ գործով կայացրած վճռից պարզ է դառնում, որ գոյություն չունեն արդյունապղծության վերաբերյալ օրենք կամ քրեական օրենսգրքի դրույթներ, որոնց միջոցով հնարավոր լիներ կանխել արտաամուսնական կապը, մի կողմից, ամուսնու կամ կնոջ ծնողների և, մյուս կողմից՝ վերջիններիս հարսների կամ փեսաների միջև՝ անկախ այն հանգամանքից՝ նրանք և զավակները բնակվում են նույն տանը, թե ոչ: Հետևաբար, չի կարելի ասել, որ տվյալ դեպքում դիմողների ամուսնության վրա դրված արգելքով կարելի է չեզոքացնել դիմող Լ.-ի որդու ենթադրելի շփոթմունքը կամ հուզական խոցելիությունը:

39. Անդրադառնալով վնասաբեր ազդեցությունից ընտանիքը պաշտպանելու անհրաժեշտությանը՝ դատարանը նշում է, որ «Ամուսնության մասին» օրենքի հնարավոր լրամշակման վերաբերյալ կարծիք հայտնած Լորդերի պալատի խմբի մեծամասնության համաձայն՝ հարկավոր էր վերացնել դիմողների վրա դրված արգելքը, քանի որ վերջինիս հիմքում ընկած էր միայն ավանդույթը, ոչ թե նման արգելքն արդարացնող իրական փաստերը: Ավելի մեծ տարածում գտած վերոնշյալ խմբի փոքրամասնության այն կարծիքը, որ դիմողների ընտանիքում անառողջ միտումները կանխելու նպատակով անհրաժեշտ էր ուժի մեջ թողնել արգելքը, վկայում է տվյալ հարցի վերաբերյալ միանշանակ կարծիքի բացակայության մասին: Եվ ավելին, հակառակ դեպքում տվյալ գործի քննարկման համատեքստում դատարանի կողմից պետական օրենսդրությանը վերագրված կարևորությունը կգերակշռեր մեկ նշանակալի գործոնի առկայությամբ:

40. Միացյալ Թագավորության օրենսդրության համաձայն՝ նման կարգի ազգակցության դեպքում ամուսնության արգելքը բացարձակ բնույթ չունի: Անձինք կարող են ամուսնանալ իրենց անհատական դիմումների հիման վրա խորհրդարանի թույլտվությունը ստանալու դեպքում: Դատարանի տրամադրության տակ եղած տեղեկություններից պարզ է դառնում, որ նմանօրինակ իրավիճակներում հայտնված անհատներին թույլատրվել է ամուսնանալ: Որպես օրինակ կարելի է բերել *Մոնքի* (*Monk*) գործը, որի շրջանակներում դիմողների անհատական դիմումների հիման վրա 1985 թ. ընդունվել է Վալերի Մաերի Հիլի և Ալան Մոնքի ամուսնության իրավունքի իրացման արգելքը վերացնող որոշում, որով մի կնոջ թույլատրվել է ամուսնանալ իր դստեր ամուսնու հետ: Եթե նմանօրինակ գործով դիմողի ընտանիքում կան նաև երեխաներ, ապա, ինչպես հայտարարվել է, ամուսնության վրա դրված արգելքը միտված չէր պետական քաղաքականության համար օգտակար նպատակին: Վերոնշյալ իրավունքի իրացման անկարողության հարցում հաստատված նպատակները և որոշ դեպքերում նշված իրավունքի արգելքի վերացումը հակասում են միմյանց, ինչի հետևանքով խաթարվում է տվյալ միջոցի ողջամտությունն ու տրամաբանությունը: Միացյալ Թագավորության կառավարությունը ներկայացրել է այն փաստարկը, որ ամեն դեպքում շարունակում է գործել ընդհանուր կանոնը, քանի որ տվյալ հարցում խորհրդարանական ընթացակարգերի արդյունքում նախատեսվում է համապատասխան միջոց, որով երաշխավորվում է, որ բացառություններ արվում են միայն այն դեպքերում, եթե դրանք չեն կարող հանգեցնել վնասակար հետևանքների: Դատարանը կցանկանար ասել, որ խորհրդարանական ընթացակարգերում ոչինչ չի նշվել դիմողների ընտանիքում տիրող մթնոլորտի վերաբերյալ արդյունավետ հետաքննություն անցկացնելու մասին: Դատարանը հավելել է, որ նման կարգի ձգձգվող և ծախսատար ստուգման գործընթացն ամեն դեպքում դիմողներին չի առաջարկի գործնականում մատչելի կամ արդյունավետ միջոց իրենց իրավունքները վերականգնելու համար: Դատարանը որոշակի վերապահությամբ է վերաբերվում այն համակարգին, որի դեպքում հարկավոր է հնարավորինս մանրամասն հետաքննություն անցկացնել՝ պարզելու համար՝ չափահաս և հոգեպես առողջ անհատը կարո՞ղ է ամուսնանալ (տե՛ս *mutatis mutandis «Ֆ.-ն ընդդեմ Շվեյցարիայի» (F. v Switzerland)* գործով կայացված վճիռը, պարբ. 35-37):

41. Դատարանը եզրակացրել է, որ տվյալ գործի հանգամանքների համատեքստում տեղի է ունեցել կոնվենցիայի 12-րդ հոդվածի խախտում:

Այսպիսով, որպեսզի հասկանանք, թե ինչու մեծ պալատը թույլատրելի ամուսնական հարաբերությունների վերաբերյալ պետական օրենսդրությամբ սահմանված տեսակետը հաշվի առնելու պատրաստակամություն չի արտահայտել, ապա հարկավոր է գիտակցել, որ բացառությունները կարող են արդարացվել անհատական դիմումի հիման վրա դատարանի թույլտվության ընթացակարգերով:

15 ՀՈԴՎԱԾ 13 ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑԻ ԻՐԱՎՈՒՆՔ

.....

«Սիլվերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Silver v UK) **գործ,** A.61 (1983) 5, EHRR 347
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Այս գործի նախապատմությունն արդեն ներկայացվել է նախորդ հատվածներում:

Ը. 13-ՐԴ ՀՈԴՎԱԾՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՒՄ Է 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՄԲ:

111…. Տվյալ գործով գանգատի ներկայացման տարբեր հնարավոր ուղիները քննելուց հետո հանձնաժողովը եզրակացրել է, որ գոյություն չունեն ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ, ինչի հետևանքով խախտվել է 13-րդ հոդվածը: Միացյալ Թագավորության կառավարությունը պահանջել է դատարանից վճռել, որ տվյալ գործով առկա փաստերը չեն վկայել 13-րդ հոդվածի վերոնշյալ դրույթի խախտման մասին կամ, որպես այլընտրանք, հաստատել, որ նման խախտում չի հայտնաբերվի բանտարկյալների նամակագրությունը կարգավորող վերանայված հրահանգների ուժի մեջ մտնելուց հետո:

112. Վճռելով, որ տվյալ գործի շրջանակը չի տարածվում 1981 թ. դեկտեմբեր ամսից գործող նամակագրության վերահսկման համակարգի վրա՝ դատարանը չի կարող քննել կառավարության այլընտրանքային պահանջը:

113. 13-րդ հոդվածի մեկնաբանության շրջանակներում դատարանի իրավասությունից բխում են հետևյալ սկզբունքները.

(ա) Այն դեպքում, երբ անհատը ներկայացնում է փաստարկելի պահանջ առ այն, որ ինքը տուժել է կոնվենցիայով սահմանված իրավունքների խախտումից, պետք է օգտվի իրավական պաշտպանության միջոցից, որպեսզի պետական մարմինները որոշում կայացնեն նրա բողոքի հիման վրա, իսկ համապատասխան որոշման դեպքում նաև վերականգնվի նրա իրավունքը (տե՛ս վերոնշյալ *Կլասի* (*Klass*) գործով կայացրած վճիռը, շարք A, թիվ 28, էջ 29, պարբ. 64):

(բ) 13-րդ հոդվածում նշված մարմինները պարտադիր չէ, որ լինեն դատական մարմիններ, սակայն այդ դեպքում նրանց լիազորությունները և տրամադրած երաշխիքները պատշաճ գործոն են որոշելու՝ տվյալ իրավական պաշտպանության միջոցն արդյունավետ է, թե ոչ (նույն տեղում, պարբ. 67):

(գ) Թեև իրավական պաշտպանության ոչ մի առանձին վերցրած միջոց ինքնին չի կարող բավարարել 13-րդ հոդվածի պայմանները, սակայն ներպետական օրենսդրությամբ սահմանված իրավական պաշտպանության միջոցների հանրագումարը կարող է բավարարել նման պայմանները (տե՛ս *mutatis mutandis* վերոնշյալ *«X-ի ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*X v UK*) գործով կայացված վճիռը, շարք A, թիվ 46, էջ 26, պարբ. 60, ինչպես նաև *Վան Դրուգենբրոեքի* (*Van Droogenbroeck*) գործով 1982 թ. հունիսի 24-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 50, էջ 32, պարբ. 56):

(դ) Ո՛չ կոնվենցիայի 13-րդ հոդվածով, ո՛չ էլ առհասարակ այլ դրույթներով չի սահմանվում մի այնպիսի միջոց, որի օգնությամբ մասնակից պետությունները կարող էին իրենց ներպետական օրենսդրության համաձայն երաշխավորել կոնվենցիայի դրույթներից որևէ մեկի արդյունավետ իրականացումը: Որպես օրինակ կարելի է բերել կոնվենցիայի դրույթները մասնակից պետությունների օրենսդրության մեջ ընդգրկելու միջոցը (տե՛ս *Շվեդիայի մեքենավարների արհմիության* (*The Swedish Engine Drivers' Union*) գործով 1976 թ. փետրվարի 6-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 20, էջ 18, պարբ. 50):

Վերոնշյալ սկզբունքից հետևում է, որ տվյալ դեպքում 13-րդ հոդվածի կիրառումը կախված է այն միջոցներից, որոնք տվյալ մասնակից պետությունն ընտրել է 1-ին հոդվածով ստանձնած իր պարտավորություններն իրականացնելու համար, այն է՝ ուղղակիորեն երաշխավորել իր իրավազորության ներքո յուրաքանչյուր անհատի՝ 1-ին մասով ամրագրված իրավունքներն ու ազատությունները (տե՛ս վերոնշյալ *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Ireland v UK*) գործով կայացված վճիռը, շարք A, թիվ 25, էջ 91, պարբ. 239):

114. Տվյալ դեպքում դիմողներին առաջարկվել է օգտվել իրենց հասանելի և հանճնաժողովի քննության առարկա դարձած գանգատի ներկայացման միայն չորս ուղիներից, մասնավորապես՝ դիմում այցելուների խորհրդին, դիմում վարչության հարցերով խորհրդարանական հանճնակատարին (խորհրդարանական մարդու իրավունքների պաշտպան), խնդրագիր ներքին գործերի քարտուղարին, ինչպես նաև Անգլիայի դատարաններում դատական գործերի հարուցում:

115. Ինչ վերաբերում է իրավական պաշտպանության միջոցների առաջին երկու ուղիներին, ապա դատարանը, ինչպես նաև հանճնաժողովը, կարծում են, որ նշված ուղիները « պաշտպանության արդյունավետ միջոց» չեն տվյալ դեպքի շրջանակներում:

Այցելուների խորհուրդը չի կարող իրավաբանորեն պարտադրել իր եզրակացությունները, ինչպես նաև ընդունել տկն Քոլնի նման ազատության մեջ գտնվող անհատների դիմումները:

Անդրադառնալով Խորհրդարանական հանճնակատարին՝ բավարար է նշել, որ նա իրավունք չունի իրավաբանորեն պարտադիր որոշում կայացնելու իրավունքների վերականգնման մասին:

116. Ինչ վերաբերում է ներքին գործերի քարտուղարին, ապա նրա դեմ բողոք էր ներկայացվել, որում վիճարկվում էր նամակագրության վերահսկողություն իրականացնելու մասին հրամանի կամ հրահանգի վավերականությունը, քանի որ չէր կարելի համարել, որ նա զբաղեցնում է բավականին անկախ դիրք 13-րդ հոդվածի պահանջները բավարարելու համար (տե՛ս *mutatis mutandis* վերոնշյալ վճիռը *Կլասսի (Klass)* գործով, շարք A, թիվ 28, էջ 26, պարբ. 56): Որպես նշված հանճնարարականների հեղինակ՝ նա իրականում հանդես կգար որպես սեփական գործով վճիռ կայացնող անձ: Այդուհանդերձ, իրավիճակն այլ կերպ կդասավորվեր, եթե գանգատարկուն պնդեր, որ վերահսկողություն սահմանող միջոցն ի հայտ էր եկել նշված հանճնարարականներից որևէ մեկի սխալ կիրառման արդյունքում: Դատարանը բավարարված է, որ նման դեպքերում ներքին գործերի նախարարին ուղղված խնդրագիրն ընդհանուր առմամբ արդյունավետ միջոց կլիներ հանճնարարականին հետևելու իրողությունն ապահովելու համար, եթե բողոքը հիմնավորված լիներ: Այնուամենայնիվ, դատարանը նշում է, որ նույնիսկ այս դեպքերում առնվազն մինչև 1981 թ. դեկտեմբերի 1-ը նման խնդրագրերի ներկայացման համար գործող պայմանները որոշ պարագաներում սահմանափակումներ էին դնում պաշտպանության այս միջոցի առկայության վրա:

117. Քրեակատարողական համակարգի մասին օրենքով և կանոնակարգով Անգլիայի դատարաններն իրենց հերթին օժտված են որոշակի վերահսկիչ իրավասությամբ ներքին գործերի քարտուղարին և քրեակատարողական մարմիններին տրված լիազորությունների նկատմամբ: Այդուհանդերձ, նրանց իրավասությունը սահմանափակվում է նրանով, որ նրանք պետք է որոշեն՝ այդ լիազորությունները իրականացվել են կամայականորեն, անբարեխղճորեն, ոչ պատշաճ շարժառիթով կամ չարաշահումո՞վ, թե՞ ոչ:

Այս կապակցությամբ դիմողները նշել են, որ կոնվենցիան ընդգրկված չի եղել ներպետական օրենսդրության մեջ և չէր կարող ուղղակիորեն վկայակոչվել Անգլիայի դատարաններում, այդուհանդերձ նրանք ընդունել են, որ կոնվենցիան կարող էր երկիմաստ օգտագործվել օրենսդրության մեկնաբանության համար՝ այն ենթադրությամբ, որ այդ օրենսդրությունը համապատասխանում է Միացյալ Թագավորության անդամակցած համաձայնագրերով ստանձնած պարտավորություններին:

118. Դիմողները չեն պնդել, որ միջամտությունը իրենց թղթակցությանը հակասում է Անգլիայի օրենսդրությանը: Հետևելով հանճնաժողովի օրինակին՝ դատարանը որոշել է, որ տվյալ ընթացակարգում բողոքի առարկա դարձած միջոցների մեծ մասն անհամատեղելի է կոնվենցիայի հետ: Պետությունը մեծ մասամբ չէր վիճարկել հանճնաժողովի եզրակացությունները: Դիմողները նաև չեն պնդել, որ Անգլիայի դատարանները կարող էին համարել, որ ձեռնարկած միջոցները եղել են կամայական, անբարեխիղճ, ոչ պատշաճ շարժառիթով կամ չարաշահումով իրականացված միջոցներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կանոնակարգում, համապատասխան հրահանգներում կամ կարգադրություններում ներառված կիրառելի նորմերն անհամատեղելի են կոնվենցիայի հետ, դատարանը համարում է, որ տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում, քանի որ չի ապահովվել նշված հոդվածով պահանջվող իրավական պաշտպանության արդյունավետ միջոցը:

Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ նշված նորմերը համատեղելի էին 8-րդ հոդվածի հետ, առկա իրավական պաշտպանության միջոցների հանրագումարը բավարարում էր 13-րդ հոդվածի պահանջները, առնվազն այն դեպքերում, երբ հնարավոր էր ներքին գործերի նախարարին խնդրագիր ներկայացնել, ընդ որում՝ նման խնդրագիր ներկայացնելու հնարավորությունն ընձեռվում էր ներքին գործերի նախարարի արձակած հանճնարարականների կատարումն ապահովելու համար, իսկ կանոնակարգի առնչությամբ Անգլիայի դատարաններն օժտված էին 117-րդ կետում շարադրված վերահսկիչ իրավասությամբ:

119. Ամփոփելով՝ կարելի է ասել, որ այն դեպքերում, երբ քննարկման առարկա դարձած նորմերն անհամատեղելի էին կոնվենցիայի հետ, և դատարանն արձանագրել էր 8-րդ հոդվածի խախտում, իրավական պաշտպանության արդյունավետ միջոց գոյություն չուներ, ուստի խախտվել է նաև 13-րդ հոդվածը: Մյուս դեպքերում որևէ պատճառ չկա ենթադրելու, որ դիմողների բողոքները պատշաճ կերպով չեն քննվել ներքին գործերի նախարարի կամ Անգլիայի դատարանների կողմից, հետևաբար, 13-րդ հոդվածի խախտում չի արձանագրվել:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

…

Որոշել է, որ արձանագրվել է 13-րդ հոդվածի խախտում՝ վճռի 119-րդ կետում նշված չափով:

…

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում ընդգրկված էին նախագահող դատավոր Վիարդան և դատավորներ Տոիր Վիլջաուլմսոնը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Փեթիթին, էվանսը և Ռուսոն:

2 Նույնիսկ այն դեպքում, երբ դատարանը կոնվենցիայով ամրագրված նյութական իրավունքների խախտում չի հայտնաբերել, դիմողները կարող են ապացուցել, որ խախտման «փաստարկելի պահանջ» ունեն, որի համաձայն՝ պետությունները պետք է նրանց ապահովեն 13-րդ հոդվածի պահանջներին բավարարող արդյունավետ պաշտպանության միջոցով: Օրինակ՝ *«Լինդերն ընդդեմ Շվեդիայի» (Leander v Sweden,* A.116 (1987) 9 EHRR 433) գործով, ինչպես արդեն նշել ենք, պատասխանող պետությունը կարողացավ հիմնավորել 8-րդ հոդվածի 2-րդ կետով դիմողի վերաբերյալ գաղտնի նյութեր պահելու հանգամանքը: Այդուհանդերձ, դատարանը համարեց, որ տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում:

78. …Ներկա ընթացակարգերի սահմաններում 13-րդ հոդվածով ամրագրված «իրավական պաշտպանության արդյունավետ» միջոցը պետք է նշանակի իրավական պաշտպանության միջոց այնքանով, որքանով դա թույլատրում է ազգային անվտանգության նկատառումներով կարևոր պաշտոնների թեկնածուների գաղտնի ստուգումների ցանկացած համակարգի սահմանափակ բնույթը: Ուստի մնում է քննել Շվեդիայի օրենսդրությամբ դիմողին հասանելի իրավական պաշտպանության տարբեր միջոցները՝ պարզելու համար՝ դրանք «արդյունավե՞տ» են եղել այս սահմանափակ իմաստով, թե՞ ոչ (նույնը, էջ 31, պարբ. 61):

79. Կասկած չի կարող լինել, որ դիմողի բողոքները կոնվենցիայի շրջանակներում հարուցել են փաստարկելի պահանջներ առնվազն 8-րդ հոդվածի առնչությամբ, և համապատասխանաբար դիմողն ուներ արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունք իր իրավունքները նշված հոդվածի շրջանակներում պաշտպանելու համար, քանի որ դրանք պաշտպանված էին նաև Շվեդիայի օրենսդրությամբ:

Դատարանը որոշել է, որ Շվեդիայի՝ անձնակազմի հսկողության համակարգը համապատասխանում է 8-րդ հոդվածին: Նման իրավիճակում 13-րդ հոդվածի պահանջները բավարարված կլինեն, եթե գոյություն ունենա ներպետական մի այնպիսի ապարատ, որի միջոցով անհատը կարողանա, համատեքստից բխող սահմանափակումներով հանդերձ, ապահովել համապատասխան օրենքների կատարումը:

80. Պատասխանող պետությունը բերել է այն փաստարկը, որ Շվեդիայի օրենսդրությունը տրամադրում է 13-րդ հոդվածի շրջանակներում բավարար իրավական պաշտպանության միջոցներ, մասնավորապես.

(i) տվյալ պաշտոնին անցնելու համար կանոնավոր հայտ ներկայացնելու հնարավորություն, իսկ հայտի մերժման դեպքում այդ որոշումը կառավարությունում բողոքարկելու հնարավորություն,

(ii) «Մամուլի ազատության մասին» օրենքով ոստիկանության գաղտնի գրառումների մատչելիության պահանջն ազգային ոստիկանության խորհուրդ ներկայացնելու հնարավորություն, իսկ այդ պահանջի մերժման դեպքում հարցը վարչական դատարաններում բողոքարկելու հնարավորություն,

(iii) արդարադատության կանցլերին բողոք ներկայացնելու հնարավորություն [երկրի սահմանադրությամբ պետական մարմինների վերահսկման համար պատասխանատու մարմին],

(iv) խորհրդարանական մարդու իրավունքների պաշտպանին բողոք ներկայացնելու հնարավորություն:

Հանձնաժողովի մեծամասնությունը որոշել է, որ իրավական պաշտպանության այս չորս միջոցները, միասին վերցրած, բավարարում են 13-րդ հոդվածի պահանջները, սակայն դրանցից ոչ մեկն առանձին վերցրած չի բավարարում այդ հոդվածի պահանջները:

81. Դատարանը նշում է, որ ինչպես արդարադատության կանցլերը, այնպես էլ խորհրդարանական մարդու իրավունքների պաշտպանը իրավասություն ունեն ընդունելու անհատական բողոքներ և պարտավոր են քննել նման բողոքները և ապահովել համապատասխան օրենքների պատշաճ կիրառումը ազգային ոստիկանության խորհրդի կողմից: Այս պարտականությունները կատարելիս նշված պաշտոնյաներից երկուսն էլ ոստիկանության գաղտնի նյութերում պարունակվող բոլոր տեղեկությունների մուտք ունեն: Խորհրդարանական մարդու իրավունքների պաշտպանի կայացրած մի քանի որոշումներ վկայում են այն

մասին, որ այդ լիազորություններն օգտագործվել են նաև անձնակազմի հսկողության համակարգի աշխատանքի վերաբերյալ ներկայացրած բողոքների առնչությամբ: Ավելին, երկու պաշտոնյաներն էլ ներկա համատեքստում պետք է համարվեն կառավարությունից անկախ պաշտոնատար անձինք: Այս հանգամանքը բավականին պարզ է խորհրդարանական մարդու իրավունքների պաշտպանի պարագայում: Ինչ վերաբերում է արդարադատության կանցլերին, ապա աշխատակազմի հսկողության համակարգի առնչությամբ վերահսկիչ գործառույթները կատարելիս նա նույնպես կարող է առնվազն գործնականում դիտվել որպես կառավարությունից անկախ մարմին:

82. Մարդու իրավունքների պաշտպանի և արդարադատության կանցլերի կողմից իրականացվող վերահսկման հիմնական թերությունն այն է, որ քրեական և կարգապահական ընթացակարգեր հարուցելու իրենց իրավասությունից բացի, նրանք օժտված չեն իրավաբանորեն պարտադիր որոշումներ կայացնելու լիազորությամբ: Այդուհանդերձ, այս առնչությամբ դատարանը հիշեցնում է անվտանգության նկատառումներով ստուգումների համակարգում ընդգրկված անհատի համար հասանելի յուրաքանչյուր իրավական պաշտպանության միջոցից պահանջվող արդյունավետության անխուսափելիորեն սահմանափակ աստիճանը: Խորհրդարանական մարդու իրավունքների պաշտպանի և արդարադատության կանցլերի կարծիքներն ավանդաբար մեծ հարգանքի են արժանանում շվեդական հասարակությունում և գործնականում միշտ կատարվում են: Թեև այս իրողությունը այնպիսի իրավական պաշտպանության միջոց չէ, որին անհատը կարող է դիմել իր նախաձեռնությամբ, սակայն էական է նաև, որ անձնակազմի հսկման Շվեդիայի համակարգի հատուկ բնութագիրն այն է, որ այդ համակարգը ենթակա է խորհրդարանական զգալի վերահսկողության, մասնավորապես՝ ազգային ոստիկանության խորհրդին անդամակցող խորհրդարանի անդամների միջոցով, որոնք քննում են տեղեկատվություն տրամադրելու յուրաքանչյուր պահանջի դեպք:

83. Պրն Լինդերի կողմից չօգտագործված իրավական պաշտպանության այս միջոցներին պետք է գումարել իրավական պաշտպանության այն միջոցը, որին նա իրականում դիմել է՝ 1980 թ. փետրվարի 5-ին կառավարությանն ուղղված նամակում նշելով, որ անձնակազմի հսկման մասին հանձնարարականի 13-րդ բաժնի դրույթներին հակառակ ազգային ոստիկանության խորհուրդը չի հրավիրել իրեն գաղտնի գրանցամատյանում պարունակվող տեղեկությունների վերաբերյալ իր մեկնաբանությունները գրավոր կամ բանավոր ներկայացնելու համար: Այս առնչությամբ կառավարությունը հայցել է խորհրդի թույլտվությունը, որից հետո պրն Լինդերին հնարավորություն է տրվել պատասխանել, ինչն էլ նա արել է 1980 թ. մարտի 11-ի իր նամակով: 1980 թ. մայիսի 14-ի որոշման մեջ, որը վերաբերում է նաև պրն Լինդերի կողմից 1979 թ. հոկտեմբերի 22-ին և դեկտեմբերի 4-ին ներկայացված բողոքներին, կառավարությունը, այսինքն՝ Նախարարների ողջ կաբինետը մերժել է պրն Լինդերի տարբեր բողոքները:

Դատարանը հիշեցնում է, որ 13-րդ հոդվածում նշված «մարմիններ» արտահայտությունը անպայման նեղ իմաստով դատական մարմիններ չի նշանակում, այլ այն, որ որևէ մարմնի ունեցած լիազորությունները և ընթացակարգային երաշխիքները բավարար են որոշելու՝ տվյալ միջոցը արդյունավետ է, թե ոչ: Խորհրդի համար պարտադիր որոշում կայացնելու կառավարության լիազորության մասին խոսք լինել չի կարող:

84. Ներկա ընթացակարգի շրջանակներում հարկ է մտապահել, որ 13-րդ հոդվածով արդյունավետ համարվող միջոցը պետք է նշանակի մի այնպիսի միջոց, որը կարող է արդյունավետ լինել այնքանով, որքանով դա հնարավոր է՝ հաշվի առնելով ազգային անվտանգության պաշտպանության համար գաղտնի վերահսկողության համակարգին բնորոշ սահմանափակ բնույթը (տե՛ս վերոնշյալ պարբ. 78-79):

Եթե նույնիսկ առանձին վերցրած կառավարությանն ուղղված բողոքը չհամարվեր 13-րդ հոդվածի կատարումն ապահովող իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, միևնույն է, դատարանը համարում է, որ տվյալ գործի մասնավոր հանգամանքներում իրավական պաշտպանության վերոնշյալ միջոցների հանրագումարը (տե՛ս պարբ. 81-83) բավարարում է 13-րդ հոդվածի պահանջները (տե՛ս *mutatis mutandis* *Կլասսի* (*Klass*) գործով կայացված վճիռը, շարք A, թիվ 28, էջ 32, պարբ. 72):

Համապատասխանաբար, դատարանը եզրակացրել է, որ 13-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Երեք դատավոր արտահայտել են այն չհամընկնող կարծիքը, որ իրենք չեն համարում, թե Շվեդիան դիմողին տրամադրել է իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, և առանձնապես մտահոգված են, որ ո՛չ արդարադատության կանցլերը, ո՛չ էլ խորհրդարանական մարդու իրավունքների պաշտպանը իրավաբանորեն պարտադիր որոշումներ չեն կարող կայացնել: Հետագա գործերում (տե՛ս ծանոթագրությունների ստորև բերված 3-րդ պարբերությունը) դատարանը սկսել է ավելի խիստ գնահատել, թե ազգային անվտանգության հարցերին առնչվող որոշումների համար կիրառելի ներպետական իրավական պաշտպանության միջոցները համապատասխանո՞ւմ են 13-րդ հոդվածի պահանջներին:

3 Մի շարք գործերում քննվել է այն հարցը, թե արդյոք Անգլիայի օրենսդրությամբ նախատեսված դատական վերանայման գործընթացը 13-րդ հոդվածով նախատեսված «իրավական պաշտպանության արդյունավե՞տ միջոց» է: Նախկինում նշված *«Սերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Soering v UK)*

գործում դատարանը միաձայն եկել է այն եզրակացության, որ այդ գործընթացը համապատասխանում է 13-րդ հոդվածի պահանջներին:

116. Դիմողի ներկայացրած գանգատում նշվում էր, որ նա Միացյալ Թագավորությունում 3-րդ հոդվածի շրջանակներում իր գանգատի առնչությամբ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չի ունեցել: Հանձնաժողովի մեծամասնությունը եկել է նույն եզրակացության: Սակայն Միացյալ Թագավորության կառավարությունն արտահայտել է իր անհամաձայնությունը՝ բերելով այն փաստարկը, որ 13-րդ հոդվածը չէր կարող կիրառվել տվյալ գործի պարագայում, և միաժամանակ պնդել է, որ ազգային օրենսդրությամբ նախատեսված իրավական պաշտպանության միջոցների հանրագումարը բավարար է:

117. Հաշվի առնելով դատարանի եզրակացությունը 3-րդ հոդվածի վերաբերյալ՝ դիմողի պահանջն այդ հոդվածի շրջանակներում չի կարող դիտվել որպես կոնվենցիայի դրույթների հետ անհամատեղելի կամ որպես նյութաիրավական հիմնավորման տեսանկյունից «ոչ փաստարկելի» պահանջ:

118. Միացյալ Թագավորության կառավարությունը հիմնվում էր մագիստրական դատարաններով, անձին կալանքից ազատելու իրավական միջոցների (habeas corpus) կիրառմամբ և դատական վերանայման դիմումով ապահովված իրավական պաշտպանության միջոցների հանրագումարի վրա:

119. Դատարանը սկսելու է իր քննությունը դատական վերանայմամբ, քանի որ դա ընդունված որոշումը վիճարկելու հիմնական միջոց է:

Ինչպես դիմողը, այնպես էլ հանձնաժողովն այն կարծիքին էին, որ դատական վերանայման տարածման ոլորտը չափազանց նեղ էր, որպեսզի թույլ տա դատարաններին ուսումնասիրել 3-րդ հոդվածի համատեքստում դիմողի կողմից ներկայացված բողոքի առարկան: Դիմողը նաև պնդել է, որ պետական իշխանությունների նկատմամբ ժամանակավոր արգելքներ դնելու իրավասության բացակայությունը լրացուցիչ պատճառ է, որպեսզի դատական վերանայումը համարվի իրավական պաշտպանության ոչ արդյունավետ միջոց:

120. 13-րդ հոդվածը երաշխավորում է ազգային մակարդակով իրավական պաշտպանության միջոցի առկայությունը կոնվենցիայով ամրագրված իրավունքների և ազատությունների էությունը ցանկացած ձևով կենսագործելու նպատակով, որով այդ իրավունքներն ու ազատություններն ապահովվում են ներպետական իրավական համակարգում: 13-րդ հոդվածի ազդեցությունը իրավական պաշտպանության այնպիսի ներպետական միջոցի ստեղծման պահանջն է, որը հնարավորություն կտա ազգային մարմիններին թե՛ անդրադառնալու կոնվենցիայի ներքո ներկայացված համապատասխան բողոքի էությանը, թե՛ համապատասխան աջակցություն տրամադրելու (ի թիվս այլոց, տե՛ս 1983 թ. մարտի 25-ին *Սիլվերի* (*Silver*) գործով կայացված վճիռը (Շարք A, թիվ 61, էջ 42, պարբ. 113 (a)):

121. Դատական վերանայման ընթացակարգի շրջանակներում դատարանը կարող է վճռել, որ գործադիր հայեցողության կիրառումը հակահիրավական է այն հիմնավորմամբ, որ այն վարկաբեկված է ապօրինության, անխելամտության կամ ընթացակարգային անպատեհության հետևանքով: Հանցագործի հանձնման մասին գործում «անխելամտության» չափանիշը այսպես կոչված Վեդնսբերիի սկզբունքների (*Wednesbury principles*) հիման վրա այն կլիներ, որ ոչ մի ողջամիտ նախարար նման հանգամանքներում հանձնման հրաման չէր արձակի (նույն տեղում): Միացյալ Թագավորության կառավարության համաձայն՝ դատարանն իրավասություն ունի անվավեր ճանաչելու փախուստի մեջ գտնվող հանցագործին որևէ երկրին հանձնելու վերաբերյալ վիճարկվող որոշումը, երբ ապացուցված է, որ այնտեղ նրա համար անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի վտանգ կա այն հիմնավորմամբ, որ գործի հանգամանքներից ելնելով՝ ոչ մի ողջամիտ նախարար չէր կարող նման որոշում կայացնել: Թեև կոնվենցիան Միացյալ Թագավորության օրենսդրության մաս չի համարվում, դատարանը բավարարված է նրանով, որ Անգլիայի դատարանները կարող են քննել հանցագործին հանձնելու մասին որոշման «ողջամտությունը» այնպիսի գործոնների հիման վրա, որոնք 3-րդ հոդվածի համատեքստում վկայակոչվել են պրն Սերինգի կողմից կոնվենցիայի կատարումն ապահովող հաստատություններում:

122. Պրն Սերինգը դատական վերանայման դիմում է ներկայացրել habeas corpus-ի հայտի հետ մեկտեղ և ստացել լորդ Ջասթիս Լոյդի բացասական պատասխանը «անխելամտության» հարցի առնչությամբ: Այդուհանդերձ, պրն Ջասթիս Լոյդը բացատրել է, որ պահանջը չի բավարարվել ժամանակից շուտ ներկայացված լինելու պատճառով, քանի որ դատարանների իրավասությունը սկսում էր գործել միայն այն պահից, երբ նախարարն արդեն կայացնում է իր որոշումը (նույն տեղում): Ավելին, պրն Սերինգի բերած փաստարկներն ամենևին էլ այն փաստարկները չէին, որոնք հիմք էին ծառայել կոնվենցիայի դրույթների կատարումն ապահովելու նպատակով ստեղծված հաստատություններին 3-րդ հոդվածի խախտման վերաբերյալ ներկայացված բողոքի բավարարման համար: Տարածքային դատարանում դիմողի շահերը ներկայացնող փաստաբանը սահմանափակվել է այն փաստարկով, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների իշխանությունների հավաստիացումներն արժեզուրկ էին այնքանով, որ որևէ ողջամիտ նախարար դրանք չէր կարող բավարար համարել համաձայնագրի դրույթների ներքո: Այս փաստարկը վերաբերում էր պրն Սերինգի նկատմամբ մահապատժի դատավճռի հավանականությանը, սակայն այնտեղ ոչինչ չէր ասվում մահապատժի դատապարտվելուց հետո նրան սպասող վերաբերմունքի

մասին, ինչն էլ հենց անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի մասին նրա ներկայացրած պահանջի բուն էությունն էր:

Չկար որևէ խանգարող հանգամանք, որ պրն Սերինգը համապատասխան պահին դատական վերանայման դիմում չներկայացներ և կոնվենցիայի դրույթների պահպանումն ապահովող հաստատություններին «մահապատժի դատապարտված անձանց սպասելաժամանակի» երևույթի կապակցությամբ չներկայացներ նույն նյութերը՝ վկայակոչելով «Վեղնսբերիի անխելամտության» սկզբունքը: Նման դիմումն «առավել մանրազնին քննության» կարժանանար՝ հաշվի առնելով խնդրո առարկա մարդու իրավունքի հիմնարար բնույթը: 13-րդ հոդվածի շրջանակներում իրավական պաշտպանության արդյունավետությունը կախված չէ պրն Սերինգի համար դրական արդյունքից (տե՛ս *Շվեդիայի մեքենավարների արհմիության* (*Swedish Engine Drivers' Union*) գործով 1976 թ. փետրվարի 6-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 20, էջ 20, պարբ. 50), և ամեն դեպքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավասու չէր վարկածներ հղանալու, թե ինչ վճիռ կկայացնեին Անգլիայի դատարանները:

123. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կարծիքով՝ այն հանգամանքը, որ Անգլիայի դատարանները պետական որոշման վրա ժամանակավոր արգելք դնելու իրավասություն չունեին, չի նվազեցնում ներկա գործի առնչությամբ դատական վերանայման արդյունավետությունը, քանի որ չկա գործնական ապացույց, որ փախուստի մեջ գտնվող անձը կհանձնվեր պահանջող կողմին նախքան տարածքային դատարանի կողմից ներկայացված դիմումով և դրանով ներկայացված որևէ հնարավոր վերաքննիչ բողոքով որոշման կայացվելու պահը:

124. Դատարանը եզրակացնում է, որ պրն Սերինգի տրամադրության տակ 3-րդ հոդվածի մասով արդյունավետ իրավական պաշտպանության միջոց կար: Հաշվի առնելով այդ իրողությունը՝ կարիք չկա քննելու Միացյալ Թագավորության կառավարության մեջբերած երկու այլ իրավական պաշտպանության միջոցները:

Հետևաբար, 13-րդ հոդվածի խախտում չի արձանագրվել:

Անգլիայի օրենսդրության կիրառման շրջանակներում ներպետական դատարանների՝ պետական որոշումների վրա դատական արգելք, այդ թվում նաև՝ ժամանակավոր արգելք դնելու իրավասությունը մեծապես ընդլայնվել է *«Մ.-ն ընդդեմ ներքին գործերի նախարարության» (M v Home Office,* [1993] 3 All ER 537*)* գործով Լորդերի պալատի կայացրած առանցքային որոշմամբ:

Սակայն ավելի ուշ քննված *«Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Chahal v UK*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միաձայն որոշում է կայացրել 13-րդ հոդվածի խախտման մասին:

141. Դիմողները պնդել են, որ իրենց ներկայացրած պահանջների առումով իրենց հասանելի իրավական պաշտպանության միակ միջոցը կոնվենցիայի 3-րդ, 5-րդ և 8-րդ հոդվածներով դատական վերանայումն էր խորհրդատվական հանձնաժողովի կողմից, ինչը ո՛չ «իրավական պաշտպանության միջոց» էր, ո՛չ էլ «արդյունավետ» էր:

Դիմողների ներկայացմամբ՝ Անգլիայի դատարանների՝ որևէ գործադիր որոշում անվավեր ճանաչելու լիազորությունները անբավարար են 3-րդ հոդվածի շրջանակներում քննվող ապաստանի տրամադրման գործերում, քանի որ դատարանները չէին կարող ուսումնասիրել փաստերը և որոշել՝ բերվե՞լ են բավարար հիմքեր առ այն, որ ընդունող պետությունում գոյություն ունի վատ վերաբերմունքի իրական վտանգ, փոխարենն իրավասու էին միայն որոշելու՝ նախարարի կայացրած որոշումը նման վտանգի գոյության մասին ողջամի՞տ էր «Վեղնսբերիի» սկզբունքներով:

Այս պնդումն առանձնապես ծանրակշիռ է այն դեպքերում, երբ գործադիր մարմինները հիմնվել են ազգային անվտանգության նկատառումներով պայմանավորված փաստարկների վրա: Տվյալ դեպքում այն պնդումը, որ պրն Չահալի արտաքսումը երկրից անհրաժեշտ էր ազգային անվտանգության նկատառումներով, ենթադրում էր, որ Հնդկաստանում նրա նկատմամբ վատ վերաբերմունքի վտանգի և 8-րդ հոդվածում ներառված հարցերի շուրջ արդյունավետ դատական գնահատում իրականացվել չէր կարող: Այս ենթադրությունը նույնպես բացառում էր որևէ արդյունավետ դատական հսկողություն այն հարցի առնչությամբ՝ հեղինակի շարունակական կալանքը հիմնավորվա՞ծ էր, թե՞ ոչ:

142. Պատասխանող պետությունն ընդունել է, որ դատական վերանայման տարածման ոլորտն առավել սահմանափակ է այն դեպքերում, երբ երկրից արտաքսելու մասին կարգադրությունը տրվում էր ազգային անվտանգության նկատառումներով: Այդուհանդերձ, դատարանը նախկինում հայտարարել է, որ եթե խնդրո առարկան ազգային անվտանգության նկատառումներն են, ապա 13-րդ հոդվածով նախատեսված «իրավական պաշտպանության արդյունավետ միջոց» արտահայտությունը պետք է նշանակի «իրավական պաշտպանության հնարավորինս արդյունավետ միջոց»՝ հաշվի առնելով տեղեկատվության գաղտնի աղբյուրների վրա հիմնվելու անհրաժեշտությունը (տե՛ս 1978 թ. սեպտեմբերի 6-ին «*Կլասն ընդդեմ Գերմանիայի» (Klass v Germany)* գործով կայացված վճիռը (շարք A, թիվ 28, էջ 31, պարբ. 69) և 1987 թ. մարտի 26-ին *«Լինդերն ընդդեմ Շվեդիայի» (Leander v Sweden*) գործով կայացված վճիռը (շարք A, թիվ 116, էջ 32, պարբ. 84):

Ավելին, հարկ է մտապահել, որ գործին վերաբերող բոլոր նյութերը, այդ թվում և՝ գաղտնի նյութերը, քննվել են խորհրդատվական հանձնաժողովի կողմից, որի կազմում ընդգրկված էին երկու ավագ դատական պաշտոնյաներ՝ վերաքննիչ դատարանի դատավոր և ներգաղթի հարցերով վերաքննիչ տրիբունալի նախկին նախագահը: Խորհրդատվական հանձնաժողովի առջև քննության ընթացակարգը նախատեսված էր, մի կողմից, բոլոր այն նյութերի անկախ ուսումնասիրության

համար, որոնց վրա հիմնված էր ազգային անվտանգության ընկալվող վտանգը և, մյուս կողմից՝ ապահովելու, որ գաղտնի տեղեկությունները հրապարակավ չբացահայտվեն: Այսպիսով, դրանով ապահովվում է անկախ, կիսադատական քննության ձև:

143. Հանճնաժողովի տեսանկյունց ներկա գործը կարելի է տարբերել *Վիլվարաջահի* (*Vilvarajah*) [A.215 (1991)] գործից, որի վերաբերյալ դատարանը հայտարարել է, որ Անգլիայի դատարաններում դատական վերանայման ընթացակարգը դիմողների համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոց էր 3-րդ հոդվածի շրջանակներում ներկայացրած պահանջներով: Քանի որ նախարարը, հիմնավորելով պրն Չահալին երկրից արտաքսելու և նախքան արտաքսումը նրան կալանավորելու վերաբերյալ կայացրած իր որոշումները, վկայակոչում էր ազգային անվտանգության նկատառումները, ուստի Անգլիայի դատարանների քննության լիազորությունները սահմանափակ էին: Դատարանները չէին կարող ինքնուրույն ուսումնասիրել այն ապացույցները, որոնց հիման վրա նախարարը կայացրել էր իր որոշումն առ այն, որ դիմողն ազգային անվտանգության համար վտանգ էր ներկայացնում, կամ անցկացնել ռիսկերի որևէ գնահատում 3-րդ հոդվածի շրջանակներում: Փոխարենը դատարանները պետք է սահմանափակվեին այն հարցի քննությամբ, թե արդյոք նախարարի կողմից բերված ապացույցները բավարարո՞ւմ էին ներպետական օրենսդրությամբ պահանջվող հավասարակշռությունը:

144. Միջնորդ կազմակերպությունները, այդ թվում նաև՝ Amnesty International և Liberty կազմակերպությունները, այն կարծիքի էին, որ դատական վերանայումը իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չէ այն գործերում, որտեղ վկայակոչվում են ազգային անվտանգության նկատառումները: 13-րդ հոդվածը պահանջում է, որ որևէ անկախ մարմին գնահատի գործի բոլոր փաստերն ու ապացույցները և օժտված լինի նախարարի համար պարտադիր որոշում կայացնելու իրավասությամբ:

145. Դատարանը նշում է, որ 13-րդ հոդվածը երաշխավորում է ազգային մակարդակով այնպիսի իրավական պաշտպանության միջոցի գոյությունը, որով հնարավոր կլինի կենսագործել կոնվենցիայով ամրագրված իրավունքների և ազատությունների բուն էությունը՝ ներպետական իրավական համակարգում դրանց գոյության ցանկացած ձևով: Այսպիսով, 13-րդ հոդվածի ազդեցությունն այն է, որ պարտադրի իրավական պաշտպանության մի այնպիսի ներպետական միջոցի ստեղծում, որը հնարավորություն կտա իրավասու ազգային մարմիններին թե՛ անդրադառնալ կոնվենցիայով նախատեսված իրավունքի խախտման դեմ ներկայացված համապատասխան բողոքի էությանը, թե՛ իրավունքի համապատասխան վերականգնում ապահովել, թեպետև մասնակից պետություններին տրվում է որոշակի լիազորություններ այն հարցում, թե ինչպես նրանք պետք է բավարարեն սույն դրույթով իրենց ստանձնած պարտավորությունները (տե՛ս *Վիլվարաջահի* (*Vilvarajah*) գործով կայացված վճռի վերոնշյալ մեջբերումը):

Ավելին, հարկ է հիշել, որ որոշ պարագաներում ազգային օրենսդրությամբ նախատեսված իրավական պաշտպանության միջոցների հանրագումարը կարող է բավարարել 13-րդ հոդվածների պահանջները (ի թիվս այլոց, տե՛ս վերոնշյալ *Լինդերի* (*Leander*) գործով կայացված վճիռը):

146. Դատարանը չպետք է քննի 13-րդ հոդվածի խախտման մասին պնդումը՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի համակցությամբ՝ հաշվի առնելով, որ դատարանն արդեն արձանագրել է 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում: Անհրաժեշտություն չկա նաև քննելու բողոքը 13-րդ հոդվածի շրջանակներում՝ 8-րդ հոդվածի համակցությամբ, քանի որ դատարանի եզրակացությամբ 8-րդ հոդվածով ներկայացրած բողոքը հիպոթետիկ բնույթ ունի:

147. Արդյունքում մնում է միայն դիմողի առաջին պահանջը 3-րդ հոդվածի շրջանակներում՝ 13-րդ հոդվածի համակցությամբ: Չէր վիճարկվում այն հանգամանքը, որ 3-րդ հոդվածով ներկայացված բողոքը նյութաիրավական հիմքերով փաստարկելի է, և դատարանը համապատասխանաբար կարծում է, որ 13-րդ հոդվածը կիրառելի է (տե՛ս *Վիլվարաջահի* (*Vilvarajah*) գործով կայացված վճռի վերոնշյալ մեջբերումը):

148. Դատարանը հիշեցնում է, որ *Վիլվարաջահի* (*Vilvarajah*) գործով իր կայացրած վճռում (նույն տեղում) արձանագրել է, որ դատական վերանայման ընթացակարգն արդյունավետ պաշտպանության միջոց էր 3-րդ հոդվածով դիմողի ներկայացրած բողոքի առնչությամբ: Դատարանը բավարարված է, որ Անգլիայի դատարաններն իրավասու էին ուսումնասիրելու ապաստան տրամադրելու հայցը մերժելու մասին նախարարի կայացրած որոշումը և ապօրինի համարել այն հիմնավորմամբ, որ այդ որոշումը վարկաբեկված էր ապօրինությամբ, անխելամտությամբ և ընթացակարգային անպատեհությամբ: Մասնավորապես, ընդունվել է, որ դատարանն օժտված է վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու իրավասությամբ, որով փախուստի մեջ գտնվող անձը պետք է ուղարկվի մի երկիր, որտեղ, ըստ ապացույցների, նրա նկատմամբ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի վտանգ կար, այն հիմնավորմամբ, որ ելնելով այս գործի բոլոր հանգամանքներից՝ նման որոշում ոչ մի ողջամիտ նախարար չէր կարող ընդունել:

149. Դատարանը նաև հիշեցնում է, որ այն գործերի քննության դեպքում, որոնցում գոյություն ունի 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի իրական վտանգ, ինչպես երկրից արտաքսման վերաբերյալ տվյալ գործում, այն հանգամանքը, որ տվյալ անձը դիտվում է որպես վտանգ պատասխանող պետության ազգային անվտանգության համար, նյութական նշանակություն չունի:

150. Ճիշտ է, որ ինչպես նշել է պատասխանող պետությունը *Կլասսի* (*Klass*) և *Լիմդերի* (*Leander*) գործերի դեպքում, դատարանը վճռել է, որ 13-րդ հոդվածով պահանջվող իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի միայն «հնարավորինս արդյունավետ» այնպիսի հանգամանքներում, երբ ազգային անվտանգության նկատառումները թույլ չեն տալիս բացահայտել որոշ գաղտնի տեղեկություններ: Այդուհանդերձ, հարկ է մտապահել, որ այդ գործերը վերաբերում էին դաշնագրի 8-րդ և 10-րդ հոդվածներին, և դրանց քննությունը պահանջում էր դատարանից հաշվի առնել պատասխանող պետության կողմից առաջ քաշված ազգային անվտանգության նկատառումները: «Հնարավորինս արդյունավետ» իրավական պաշտպանության միջոցի պահանջն անպատեհ է այնպիսի բողոքի առնչությամբ, երբ արտաքսվելով երկրից՝ անձը կհայտնվի 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի ենթարկվելու իրական վտանգի մեջ, և այդտեղ ազգային անվտանգության վերաբերող հարցերն արդեն նյութական նշանակություն չունեն:

151. Նման պարագայում, երբ վատ վերաբերմունքի ենթարկվելու վտանգն իրականանալու դեպքում հասցվելիք վնասն անդառնալի բնույթ ունի, և երբ դատարանը կարևորում է 3-րդ հոդվածը, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի գաղափարն առաջացնում է պահանջն անկախ մարմնի կողմից քննելու անհրաժեշտություն՝ որոշելու, թե գոյություն ունե՞ն 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի առնչությամբ նման մտավախությունն արդարացնող նյութական հիմքեր: Այս քննությունը պետք է իրականացվի առանց հաշվի առնելու այն արարքները, որոնք տվյալ անձը գործել է երկրից արտաքսումը հիմնավորելու համար, կամ արտաքսող պետության ազգային անվտանգության համար որևէ ենթադրյալ վնասը:

152. Պարտադիր չէ, որ նման քննությունն իրականացվի դատական մարմնի կողմից, սակայն այդ դեպքում համապատասխան մարմնի լիազորությունները և երաշխիքները պետք է բավարար լինեն՝ որոշելու՝ ապահովված իրավական պաշտպանության միջոցներն արդյունավե՞տ են, թե՞ ոչ (տե՛ս *Լիմդերի* (*Leander*) գործով վերոնշյալ վճիռը, էջ 29, պարբ. 77):

153. Սույն գործում ո՛չ խորհրդատվական հանձնաժողովը, ո՛չ էլ դատարանները չէին կարող վերանայել պրն Չահալին Հնդկաստան արտաքսելու մասին ներքին գործերի նախարարի կայացրած որոշումը՝ մեջբերելով միայն վտանգի հարցը և անտեսելով ազգային անվտանգության նկատառումները: Ընդհակառակը, դատարանների մոտեցումն այն է, որ նրանք համոզվեին, որ ներքին գործերի նախարարը պրն Չահալին սպառնացող վտանգը հավասարակշռել է ազգային անվտանգությանը սպառնացող վտանգով: Վերոնշյալ դատողություններից հետևում է, որ կոնվենցիայի 13-րդ հոդվածի առնչությամբ պրն Չահալի ներկայացրած գանգատի շրջանակներում նրան հասանելի իրավական պաշտպանության միջոցները արդյունավետ համարվել չեն կարող:

154. Ավելին, դատարանը նշում է, որ խորհրդատվական հանձնաժողովի ընթացակարգերի շրջանակներում դիմողը, ի թիվս այլոց, իրավունք չուներ իր շահերը ներկայացնելու փաստաբանի միջոցով: Դիմողին ներկայացվել է երկրից արտաքսվելու ծանուցման պատճառների միայն կարճ բնութագիրը, ընդ որում՝ հանձնաժողովը որոշում կայացնելու լիազորություն չի ունեցել, իսկ ներքին գործերի նախարարին հանձնաժողովի տրված խորհուրդը պարտադիր կատարման և հրապարակման ենթակա չէր: Նման հանգամանքներում չի կարելի համարել, որ խորհրդատվական հանձնաժողովը 13-րդ հոդվածի շրջանակներում բավարար ընթացակարգային երաշխիքներ է ապահովում:

155. Հաշվի առնելով ինչպես դատական վերանայման, այնպես էլ խորհրդատվական հանձնաժողովի ընթացակարգերի թերությունների աստիճանը՝ դատարանը չի կարող համարել, որ իրավական պաշտպանության այդ միջոցների հանրագումարը բավարարում է 13-րդ հոդվածը՝ 3-րդ հոդվածի համակցությամբ:

Համապատասխանաբար, տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում:

Չահալի (*Chahal*) գործով որոշիչ գործոն էր այն հանգամանքը, որ Անգլիայի դատարանների վերանայման լիազորությունները սահմանափակ էին այն պնդմամբ, որ վիճարկվող որոշումը կայացվել է ազգային անվտանգության նկատառումներով: Կարևոր է այն, որ *Լիմդերի* (*Leander*) գործում դատարանի վճռով ազգային անվտանգության նկատառումներով կիրառված իրավական պաշտպանության միջոցի պակաս պարտավորեցնող «հնարավորինս արդյունավետ» չափանիշը չէր կիրառվում 13-րդ հոդվածի նկատմամբ, երբ այն հիմնված էր 3-րդ հոդվածի փաստարկելի խախտման վրա, քանի որ այս վերջին դրույթը թույլ չէր տալիս պետություններին որպես նշանակալի գործոն վկայակոչել ազգային անվտանգության հարցերը: *«Սմիթը և Գրեյդին ընդդեմ Միացյալ Թագավորության» (Smith and Grady v UK* տե՛ս վերևում) գործում դատարանը կրկին միաձայն որոշեց, որ 8-րդ հոդվածի շրջանակներում ներկայացված պահանջի առնչությամբ տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում:

131. Դիմողների ներկայացմամբ՝ 13-րդ հոդվածը պարունակում է երկու նվազագույն պահանջ: Առաջին՝ համապատասխան ազգային մարմինը պետք է իրավասություն ունենա քննելու անհատի բողոքի էությունը կոնվենցիայի և ազգային օրենսդրության դրույթներին դրա համապատասխանության առումով, և երկրորդ՝ այդ մարմինը պետք է իրավական պաշտպանության միջոց շնորհելու իրավասություն ունենա, եթե ընդունի, որ անհատի բողոքը հիմնավորված է: Ավելին, 13-րդ

հոդվածով նախատեսված պարտավորությունների տարածման հստակ ոլորտը կախված է լինելու անհատի բողոքի բնույթից: Սույն գործում խոսքն այնպիսի համատարած անխտիր քաղաքականության կիրառման մասին էր, որը միջամտում էր փոքրամասնություն կազմող խմբի՝ 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքներին, ոչ թե, ինչպես *Սերինգի* (*Soering*) և *Վիլվարաջահի* (*Vilvarajah*) գործերում, հանցագործի հանձնման կամ երկրից արտաքսման անհատական դեպքի գնահատման մասին՝ 3-րդ հոդվածի համատեքստում:

132. Դիմողների տեսանկյունից՝ դատական վերանայման իրավական պաշտպանության միջոցը չէր բավարարում 13-րդ հոդվածի այս պահանջներից առաջինը երկու փոխկապակցված պատճառներով: Քանի որ պաշտպանության նախարարության իրականացրած քաղաքականությունը բացառություններ չնախատեսող համատարած անխտիր բնույթ ուներ, ներպետական դատարանները հնարավորություն չունեին քննելու դիմողների անհատական բողոքների նյութաիրավական հիմքերը: Այդուհանդերձ, այս քաղաքականության ազդեցությունը նրանց վրա տարբեր էր՝ կախված գործի բնույթից: Ի տարբերություն այս դեպքի՝ ներպետական դատարաններն իրավասու էին և նույնիսկ պարտավոր «ամենախիստ քննության» առնել *Սերինգի* (*Soering*) և *Վիլվարաջահի* (*Vilvarajah*) վերոնշյալ գործերի անհատական հանգամանքները՝ հանցագործի հանձնման և երկրից արտաքսման վերաբերյալ: Երկրորդ՝ ներպետական դատարաններում չէր կարող դրվել այն հարցը, թե արդյոք հանրության շահերը և դիմողների իրավունքներն արդար հավասարակշռությա՞ն են բերվել: Ներպետական դատարաններում կարող էր դրվել միայն այն հարցը, թե արդյոք ապացուցվե՞լ է, որ տվյալ քաղաքականությունն ընդհանուր առմամբ անխելամիտ էր կամ սխալ, ընդ որում՝ այդ քաղաքականության անխելամտությունն ապացուցելու բեռը դրվում էր դիմողների վրա: Դիմողները պարտավոր էին ցույց տալ, որ այդ քաղաքականությունը ձևավորող մարմինը գործել է անխելամտորեն, և հարկ էր ապացուցել, որ այս շեմը հատվել է՝ նախքան ներպետական դատարանները կկարողանային միջամտել: Ավելին, դիմողները մեջբերել են գերագույն դատարանի և վերաքննիչ դատարանի մեկնաբանությունները որպես վառ ապացույց առ այն, որ նշված դատարաններն իրավասություն չեն ունեցել քննելու կոնվենցիայով նախատեսված իրավունքների խախտման կապակցությամբ ներկայացված բողոքները: Այս համատեքստում *Սերինգի* (*Soering*) և *Վիլվարաջահի (Vilvarajah*) վերոնշյալ գործերը կարելի էր տարբերել տվյալ գործից, քանի որ հանցագործի հանձնման և երկրից արտաքսման առաջարկող գործողությունների դատական վերանայման ընթացակարգում կիրառված թեստային չափանիշը համընկնում էր կոնվենցիայի դեպքում կիրառվող թեստային չափանիշի հետ:

133. Դիմողները նաև պնդում էին, որ դատական վերանայման ընթացակարգերը չէին բավարարում 13-րդ հոդվածի երկրորդ պահանջը, քանի որ ներպետական դատարաններն ի վիճակի չէին իրավական պաշտպանության միջոց տրամադրել, նույնիսկ երբ դիմողների գործը քննած հինգ դատավորներից չորսը համարել են, որ տվյալ քաղաքականությունն արդարացված չի եղել:

134. Թեպետև դիմողներն իրենց բոլոր բողոքների առնչությամբ վկայակոչել են կոնվենցիայի 13-րդ հոդվածը, սակայն դատարանը հիշեցնում է, որ ներկա գործում խնդրո առարկան հիմնականում դիմողների անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքն է: Նման հանգամանքներում դատարանը հարում է այն կարծիքին, որ 13-րդ հոդվածի շրջանակներում դիմողների պահանջներն ավելի ճիշտ է դիտարկել 8-րդ հոդվածի համակցությամբ:

135. Դատարանը հիշեցնում է, որ 13-րդ հոդվածով երաշխավորվում է ազգային մակարդակով իրավական պաշտպանության միջոցի մատչելիությունը՝ կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների բուն էությունն ապահովելու նպատակով, անկախ այն հանգամանքից, թե ինչ դրսևորումներով են պաշտպանվում այդ միջոցները ներպետական իրավական համակարգում: Այսպիսով, նշված հոդվածը նպատակ է հետապնդում պահանջել իրավական պաշտպանության այնպիսի ներպետական միջոցի ապահովում, որը թույլ կտա իրավասու պետական մարմիններին քննել կոնվենցիայի՝ գործին առնչվող դրույթների խախտման մասին բողոքը, ինչպես նաև համապատասխան փոխհատուցում շնորհել: Այնուհանդերձ, 13-րդ հոդվածն ամենևին էլ չի պահանջում կոնվենցիայի կամ իրավական պաշտպանության որևէ հատուկ միջոց ընդգրկել ներպետական օրենսդրության մեջ, ընդ որում՝ մասնակից պետությունները կոնվենցիայի այս դրույթով ստանձնած իրենց պարտավորությունները կատարելու հարցում հայեցողության սահման ունեն: Միաժամանակ 13-րդ հոդվածի շրջանակներում իրավական պաշտպանության միջոցի արդյունավետությունը կախված չէ այն հանգամանքից, որ գործով վճիռը վստահաբար կկայացվի հօգուտ դիմողի (տե՛ս *Վիլվարաջահի* (*Vilvarajah*) գործով դատավճիռը, պարբ. 122):

136. Դատարանը որոշեց, որ տվյալ դեպքում անցկացրած հետաքննության, ինչպես նաև պաշտպանության նախարարության քաղաքականության համաձայն՝ համասեռամոլներին զինվորական ծառայությունից ազատելու արդյունքում խախտվել է դիմողների անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը: Ինչպես պարզ է դառնում պատասխանող պետության գերագույն դատարանի և վերաքննիչ դատարանի դատական վերանայման ընթացակարգերից, կոնվենցիան Անգլիայի օրենսդրության մաս չի կազմել, ուստիև նշված փաստաթղթի դրույթներով չէր կարելի սպառիչ պատասխան տալ այն հարցերին, թե արդյոք վերոնշյալ քաղաքականություն իրականացնելով՝ պետությունը, մասնավորապես, խախտե՞լ է 8-րդ հոդվածով սահմանված դիմողների իրավունքները, կամ արդյոք պետական մարմիններն ապացուցե՞լ են, որ այդ քաղաքականությունը պայմանավորված էր հրատապ սոցիալական անհրաժեշտությամբ կամ համաչափ էր որևէ օրինական նպատակին: Ներպետական դատարանների քննության ենթակա միակ հարցն այն է, թե նշված քաղաքականությունը

կարելի՞ էր «անխելամիտ» համարել, քե՞ ոչ:

137. Ներկա գործում կիրառվել է «իռացիոնալության» այն չափանիշը, որը պարզաբանվել է դատավոր սըր Թոմաս Բինգհեմի վճռում, այսինքն՝ դատարանն իրավունք չուներ, ըստ էության, միջամտելու վարչական պաշտոնում անձի սեփական հայեցողության իրավունքի իրացմանը, բացառությամբ այն դեպքերի, եթե դատարանը համոզված լիներ, որ որոշումն անողջամիտ էր այն իմաստով, որ այն կարելի էր ողջամիտ որոշում կայացնողի համար թույլատրելի պատասխան գործողությունների շարքից դուրս համարել: Պարզելու համար, թե արդյոք որոշում կայացնող անձը գերազանցե՞լ է հայեցողության սահմանը, կարևոր էր մարդու իրավունքների համատեքստը, ուստի, որքան մեծ է միջամտությունը մարդու իրավունքներին, այնքան ավելի մեծ հիմնավորում է պահանջվում, որպեսզի դատարանը համոզվի, որ որոշումը ողջամիտ է: Այնուհանդերձ, բացի այդ, ընդգծվել է, որ անկախ մարդու իրավունքների համատեքստից՝ անխելամտության չափանիշի շեմը, որը տվյալ դեպքում պետք է հատեր դիմողը, բավականին բարձր էր: Դատարանի կարծիքով՝ այդ իրողությունը հաստատվում է հենց գերագույն և վերաքննիչ դատարանների վճիռներով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հայտարարել է, որ վերոնշյալ երկու դատարաններն իրենց կայացրած վճիռներում դրական մեկնաբանություններն են տվել դիմողների՝ պատասխանող պետության կողմից վերոնշյալ քաղաքականությունն արդարացնող պատճառաբանությունը վիճարկող փաստարկների վերաբերյալ: Հաշտարար դատավոր Սայմոն Բրաունը համարել է, որ վարքագծի վրա հիմնված կանոնակարգի օգտին դիմողների փաստարկները շատ ծանրակշիռ էին: Դատավոր Սըր Թոմաս Բինգհեմը որոշել է, որ դիմողների նշված փաստարկները «նշանակալիորեն համոզիչ էին», և հարկավոր էր հանգամանալից ուսումնասիրել դրանք՝ հատուկ ուշադրություն դարձնելով վարքագծի վրա հիմնված կանոնակարգի հնարավոր արդյունավետության վրա: Ավելին, թեև Սայմոն Բրաունը վերջնական եզրակացություն չի արտահայտել կոնվենցիային առնչվող և տվյալ գործի արդյունքում առաջացած խնդիրների վերաբերյալ, սակայն ասել է, որ կոնվենցիայով Մեծ Բրիտանիայի ստանձնած պարտավորությունների առումով «նշված քաղաքականությանը հաշված օրեր են մնացել»: Սըր Թոմաս Բինգհեմն ընդգծել է, որ տվյալ գործով անցկացված հետաքննությունը, ինչպես նաև դիմողներին զինվորական ծառայությունից ազատելը վկայում են, որ պետությունն անտեսել է նրանց անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը: Դատավորը համարել է, որ տվյալ դեպքում տեղին կլիներ քննել այն փաստարկը, թե արդյոք կոնվենցիայի 8-րդ հոդվածով ամրագրված միջամտությունը դիմողների իրավունքներին համաչա՞փ էր, քե՞ ոչ: Այնուամենայնիվ, պետության երկու դատարաններն էլ եզրակացրել են, որ այս քաղաքականությունը չի կարելի ողջամիտ որոշում կայացնողի համար թույլատրելի պատասխան գործողությունների շարքից դուրս համարել, համապատասխանաբար, այն չի կարող «անխելամիտ» համարվել:

138. Նման հանգամանքներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համար պարզ է, որ եթե նույնիսկ դիմողների հիմնական բողոքները նախկինում ներկայացվել և դիտարկվել են ներպետական դատարանների կողմից, ակնհայտ է, որ գերագույն և վերաքննիչ դատարանները կարող էին անխելամիտ համարել պաշտպանության նախարարության քաղաքականությունը միայն անխելամտության չափանիշին համապատասխանության շատ բարձր մակարդակի դեպքում: Արդյունքում ներպետական դատարաններում գրեթե բացառվել է այն հարցի դիտարկումը, թե արդյոք միջամտությունը դիմողների իրավունքներին պայմանավորվա՞ծ է եղել հրատապ սոցիալական անհրաժեշտությամբ կամ ազգային անվտանգության ու հասարակական կարգի պահպանման նպատակներով, որոնք ընկած են կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում ներկայացված բողոքների՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերլուծության հիմքում: Տվյալ գործով ներկայացված դիմումները կարելի է հակադրել Սերինգի (*Soering*) և Վիլվարաջահի (*Vilvarajah*) վերոնշյալ գործերին, որոնք քննելիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրակացրել է, որ հանցագործին հանձնելու և երկրից արտաքսելու մասին նախարարի որոշումների հարցում ներպետական դատարանների կողմից կիրառվող չափանիշը համապատասխանել է կոնվենցիայի 3-րդ հոդվածով ամրագրված դատարանի սեփական մոտեցմանը:

139. Տվյալ հանգամանքներում դատարանը համարում է, որ դիմողները զուրկ էին իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված իրենց անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի պաշտպանության համար: Ուստի տեղի է ունեցել կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

Այսպիսով, այն հարցի պատասխանը, թե արդյոք Անգլիայում դատական վերանայման գործընթացը բավարարո՞ւմ է 13-րդ հոդվածի պահանջները, կախված է տվյալ դիմումի համատեքստից և էությունից: Քանի որ ավանդաբար ներպետական դատական համակարգը հաշվի է նստում կառավարության հետ ազգային անվտանգության նկատառումներով պայմանավորված գործերում, ուստի դատական վերանայման գործընթացը չի բավարարել 13-րդ հոդվածի այն նվազագույն պահանջը, որը վկայակոչվել է *Չահալի* (*Chahal*), ինչպես նաև *Սմիթի և Գրեյդիի* (*Smith and Grady*) գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռներում: Միաժամանակ հարկ է նշել, որ այլ ոլորտներում պատասխանող պետության որոշում կայացնելու սկզբունքը, ինչպես, օրինակ՝ հանցագործի հանձնման և արտաքսման «հասարակ» գործերով որոշումների դեպքում, դատական վերանայումը կարող էր համապատասխանել 13-րդ հոդվածի պահանջներին (օրինակ՝ *Սերինգի* (*Soering*) և *Վիլվարաջահի* (*Vilvarajah*) գործերը):

4 *«Ալ Նաշիֆն ընդդեմ Բուլղարիայի» (Al-Nashif v Bulgaria)* գործով 2002 թ. հունիսի 20-ին կայացրած վճռում դատարանը հստակեցրել է իրավական պաշտպանության ներպետական արդյունավետ միջոցի ընթացակարգային պահանջները ազգային անվտանգության նկատառումներով օտարերկրացիներին արտաքսելու մասին որոշումների օրինականության հարցում: Տվյալ գործով դիմողը 1992 թ. ի վեր Բուլղարիայում օրինական հիմքերով բնակվող, սակայն քաղաքացիություն չունեցող պաղեստինցի էր: 1999 թ. պետական մարմինները չեղյալ հայտարարեցին վերջինիս մշտական կացության թույլտվությունը և կարգադրեցին արտաքսել նրան երկրից այն պատճառաբանությամբ, որ նա կրոնական դասընթացներ էր անցկացնում: Դիմողը հայցել է անցկացնել իրեն արտաքսելու որոշման դատական վերանայում: Այդ կապակցությամբ անձնագրային բաժնից դիմողին ուղղված տեղեկանքը հաստատեց, որ վերոնշյալ որոշումը պայմանավորված էր դիմողի՝ ազգային անվտանգության դեմ ուղղված գործողություններով: Արդյունքում, Սոֆիայի շրջանային դատարանը չկարողացավ անցկացնել դատական վերանայում: Դրանից անմիջապես հետո դիմողն արտաքսվեց Սիրիա: Դատարանի մեծ պալատը հայտարարեց հետևյալը.

137. ….Նույնիսկ այն դեպքում, երբ խոսքը ազգային անվտանգության ենթադրյալ սպառնալիքի մասին է, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի երաշխիքով նվազագույնը պահանջվում է դիմումի հիման վրա իրավասու անկախ մարմնին տեղեկացնել օտարերկրացուն աքսորելու որոշման հիմքում ընկած պատճառաբանության մասին, եթե նույնիսկ այդ պատճառաբանությունը հրապարակման ենթակա չէ: Ազգային անվտանգությանը սպառնացող վտանգի մասին գործադիր իշխանության պնդումները կամայական կամ անողջամիտ համարելու դեպքում վերոնշյալ մարմինը պետք է դրանք հերքելու իրավասություն ունենա: Անհրաժեշտության դեպքում բարեհուսության ստուգումից հետո հատուկ ներկայացուցիչը պետք է հետևի որևէ տեսակի հակադիր ընթացակարգերին: Ավելին, հարկ է պարզել, թե արդյոք վիճարկված միջոցը միջամտությո՞ւն է անհատի ընտանեկան կյանքը հարգելու իրավունքին, և եթե այո, ապա արդար հավասարակշռության բերվե՞լ են քննության հիմքում ընկած պետական շահերը և անհատի իրավունքները:

Հաշվի առնելով դիմողի համար իրավական պաշտպանության որևէ միջոցի մատչելիության հանգամանքը՝ մեծ պալատն արձանագրել է 13-րդ հոդվածի խախտում: Երեք դատավոր չհամընկնող կարծիք է արտահայտել, քանի որ, ըստ նրանց, դիմողը չի ներկայացրել հիմնավոր պահանջ 8-րդ հոդվածի խախտման մասին, հետևաբար, 13-րդ հոդվածը կիրառելի չէր:

5 Լիակազմ դատարանը հետզհետե ավելի խիստ մոտեցում է ցուցաբերում 13-րդ հոդվածի պահանջներին իրավական պաշտպանության անհատական ներպետական միջոցների հանրագումարի համապատասխանությունը որոշելու հարցում: Օրինակ՝ վերոնշյալ *«Փոլ և Օդրի Էդվարդներն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Paul and Audrey Edwards v United Kingdom,* վճիռը կայացվել է 2002 թ. մարտի 14-ին) գործով պատասխանող պետությունը բերել է այն փաստարկը, որ դիմողների որդու սպանության վերաբերյալ հետաքննությունը, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկի ղեկավարության պատասխանատվության ներքո գտնվող որդու նկատմամբ հանցավոր անփութություն ցուցաբերելու համար բանտի ղեկավարությանը դատի տալու հնարավորությունը միասին բավարարում էին 13-րդ հոդվածի պահանջները: Մեծ պալատը միաձայն ընթացակարգային բացթողումներ է արձանագրել հետաքննության մեջ՝ վկայակոչելով, օրինակ, որ դիմողները չէին կարող լիարժեք մասնակցել ներկա գործով դատալսումներին: Մեծ պալատը հաշվի է առել նաև այն փաստը, որ դիմողները չէին կարող փոխհատուցում ստանալ իրենց և իրենց որդուն հասցված ոչ նյութական վնասի համար:

101. Պետության մեջբերած իրավական պաշտպանության միջոցների հանրագումարից անկախ՝ դատարանը եզրակացրել է, որ ներկա գործով դիմողներին մատչելի չէին պատշաճ միջոցներ, որոնցով հաստատվեր, որ պետական մարմինները չեն պաշտպանել նրանց որդու կյանքի իրավունքը, և արդյունքում կայացվեր նրանց հասցված վնասի փոխհատուցման մասին իրավաբանորեն պարտադիր որոշում: Դատարանի կարծիքով՝ դա կազմում է 13-րդ հոդվածով սահմանված իրավական պաշտպանության միջոցների առանցքային բաղադրատարրը զավակից զրկված ծնողի համար:

102. Ուստի, տեղի է ունեցել կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

6 Դատարանը ձևավորել է 13-րդ հոդվածի մեկնաբանության իրավասության մեծ շրջանակ, որով մասնակից պետություններից պահանջվում է հանգամանորեն հետաքննել փաստարկելի պահանջներն առ այն, որ խախտվել են կոնվենցիայով սահմանված նյութահիրավական իրավունքները: Այն

դեպքում, երբ անձի ազգականները կամ ընկերները պնդում են, որ նա ապօրինաբար սպանվել է պետական հիմնարկի անձնակազմի կողմից, դատարանը որոշել է, որ վերոնշյալ հետաքննության անցկացումն անհրաժեշտ է 13-րդ հոդվածի պահանջները բավարարելու համար: Օրինակ՝ *«Քայան ընդդեմ Թուրքիայի» (Kaya v Turkey,* 1998-I) գործով դիմողը պնդել է, որ անվտանգության ծառայողները կրակել և դիտավորյալ սպանել են նրա եղբորը: Ութ կողմ և մեկ դեմ ձայների հարաբերակցությամբ մեծ պալատը վճռել է հետևյալը.

107. Տվյալ գործով դիմողի ներկայացրած գանգատն այն է, որ իրեն և իր մոտ ազգականին զրկել են իրավական պաշտպանության «արդյունավետ» միջոցից, որի շնորհիվ կբացահայտվեին Աբդուլմենաֆ Քայայի սպանության իրական հանգամանքները: Ըստ դատարանի՝ տվյալ գործում դիմողների՝ իշխանությունների կողմից ենթադրաբար խախտված իրավունքի բնույթը հանդիսանում է կոնվենցիայի շրջանակներում հիմնարար իրավունքներից մեկը, որով պետք է պայմանավորվի նաև այն իրավական պաշտպանության միջոցների բնույթը, որոնք հարկավոր է երաշխավորել հօգուտ տուժածի ազգականների: Մասնավորապես, եթե տուժածի ազգականները ներկայացնում են փաստարկելի պահանջ առ այն, որ վերջինս ապօրինաբար սպանվել է պետական ծառայողների կողմից, ապա 13-րդ հոդվածի շրջանակներում իրավական պաշտպանության արդյունավետ միջոց հասկացությամբ, համապատասխան դեպքերում փոխհատուցումից բացի՝ հաստատվում է նաև հանգամանալից հետաքննություն անցկացնելու պահանջ, որի արդյունքում հնարավոր է բացահայտել և պատժել սպանության համար պատասխանատու անձանց: Բացի այդ, հետաքննությանը վերաբերող ընթացակարգերը պետք է մատչելի լինեն ազգականների համար: Տվյալ հայեցակետի հիման վրա կարելի է ասել, որ 13-րդ հոդվածով սահմանված պահանջների շրջանակը գերազանցում է 2-րդ հոդվածով սահմանված հանգամանալից հետաքննություն անցկացնելու մասնակից պետության ընթացակարգային պարտավորությունը:

Լիակազմ մեծ պալատն արձանագրեց 13-րդ հոդվածի խախտում, քանի որ դիմողի եղբոր մահվան վերաբերյալ ներպետական հետաքննությունը լուրջ թերություններ ուներ (օրինակ՝ իշխանություններն անկասկած ընդունել էին այն ենթադրությունը, որ հանգուցյալը անվտանգության ուժերի հետ բախման ընթացքում սպանված ահաբեկիչ է եղել): Նմանապես, մեծ պալատը *«Իլհանն ընդդեմ Թուրքիայի»* (*Ilhan v Turkey*) գործով միաձայն կայացրած վճռում որոշել է, որ «այն դեպքերում, երբ անհատը փաստարկելի պահանջ է ներկայացնում այն մասին, որ ինքը ենթարկվել է խոշտանգումների կամ լրջորեն վատ վերաբերմունքի», 13-րդ հոդվածով պահանջվում էր անցկացնել արդյունավետ հետաքննություն: Քանի որ ներպետական հետաքննության մեջ տեղ էին գտել լուրջ խախտումներ, այդ թվում այն, որ դատախազության կողմից չեն հարցաքննվել այս գործով առանցքային վկաները, ուստի.

103. Այս հիմքերով չի կարելի համարել, որ տեղի է ունեցել արդյունավետ քրեական հետաքննություն 13-րդ հոդվածի շրջանակներում: Հետևաբար դատարանը գտնում է, որ Աբդուլատիֆ Իլհանին հասցրած վնասվածքների առնչությամբ իրավական պաշտպանության արդյունավետ որևէ միջոց չի ապահովվել, և դրանով իրավական այլ միջոցների, այդ թվում՝ փոխհատուցում պահանջելու հնարավորությունը վերացվել է:

Հետևաբար, տեղի է ունեցել կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

Վերոնշյալ վճիռը կարևորություն ունի նաև որպես կապող օղակ ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չապահովելու և հետագայում դիմողի համար իրավունքի վերականգնման այլ ձևերին դիմելու (օրինակ՝ փոխհատուցում) անկարողության միջև՝ որպես դատարանի կողմից 13-րդ հոդվածի խախտման մասին դատարանի կայացրած որոշման առանցքային տարր: Դատարանը նաև կիրառել է 13-րդ հոդվածը այն դիմումների առնչությամբ, որտեղ խոսքը 5-րդ հոդվածի դրույթների խախտումով պետական գործակալների կողմից կազմակերպված ենթադրյալ բռնի անհետացումների մասին էր: Օրինակ՝ տե՛ս վերևում *«Քյուրտն ընդդեմ Թուրքիայի»* գործը (*Kurt v Turkey,* 1998-III) և տե՛ս վերը՝ էջ 259-60:

140.…Դատարանի կարծիքով՝ այն դեպքերում, երբ որևէ անձի ազգականները ներկայացնում են փաստարկելի պահանջ առ այն, որ այդ անձի անհետացումը կազմակերպված է եղել իշխանությունների կողմից, ապա իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի գաղափարը ենթադրում է, որ բացի անհրաժեշտության դեպքում փոխհատուցման վճարումից, պետք է իրականացվի մանրակրկիտ և արդյունավետ հետաքննություն, որով պետք է հայտնաբերվեն և պատժվեն մեղավորները, ընդ որում՝ ազգականների համար հարկ է ապահովել հետաքննության ընթացքին արդյունավետ կերպով հետևելու հնարավորություն (տե՛ս *mutatis mutandis Աքսոյի* (*Aksoy*), *Այդինի* (*Aydin*) և *Քայայի* (*Kaya*) գործերով կայացրած վճիռները): Եթե դիտարկենք 13-րդ հոդվածի պահանջներն այս ձևակերպումների հիման վրա, ապա պարզ է դառնում, որ այդ պահանջներն

ավելի լայն շրջանակ ունեն, քան մասնակից պետության կողմից 5-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունը պետության հսկողության տակ կամ պատասխանատվության ներքո գտնվող անձի անհետացման վերաբերյալ արդյունավետ հետաքննություն անցկացնելու մասին:

Դատարանի ճնշող մեծամասնությունը՝ յոթ կողմ և երկու դեմ ձայներով, վճռեց, որ տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում, քանի որ դատախազությունն իրական հետաքննություն չի անցկացրել ի պատասխան դիմողի՝ իր որդու գտնվելու վայրը պարզելու վերաբերյալ ներկայացրած խնդրագրերի:

13-րդ հոդվածի շրջանակներում արդյունավետ հետաքննության գծով պարտականությունների մանրամասն վերլուծության վերաբերյալ տե՛ս այստեղ՝ A.Mowbray, *The Development of Positive Obligations under the European Convention on Human Rights by the European Court of Human Rights* (Oxford: Hart Publishing, 2004):

7 Մշտական գործող դատարանի մեծ պալատը հայտարարեց 13-րդ հոդվածի տարածման ոլորտի լուրջ ընդլայնման մասին, որով մասնակից պետությունների իրավական համակարգերի վրա պարտավորություն էր դրվում ապահովելու իրավական պաշտպանության միջոցի առկայությունն անձանց քաղաքացիական իրավունքների որոշման կամ այդ պետությունների դեմ ներկայացված քրեական մեղադրանքների գործերով անհիմն ձգձգումների վերաբերյալ ներկայացրած գանգատների համար: *«Կուդլան ընդդեմ Լեհաստանի»* (*Kudla v Poland*) գործով 2000 թ. հոկտեմբերի 26-ին վճիռ էր կայացվել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման մասին: Դիմողը բողոքում էր, որ իր դեմ առաջադրված խարդախության մեղադրանքով Լեհաստանի դատարաններն ինը տարվա ընթացքում վերջնական որոշում չեն կայացրել: Դատարանը վճռեց հետևյալը.

146. Բազմաթիվ նախկին գործերում, որոնցում դատարանն արձանագրել էր 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, դատարանն անհրաժեշտ չի համարել վճիռ կայացնել 13-րդ հոդվածով կից գանգատի վերաբերյալ: Շատ հաճախ սա կատարվում էր այն պատճառով, որ 13-րդ հոդվածի համեմատ 6-րդ հոդվածի 1-ին կետը դիտվում էր որպես *lex specialis,* ասել է թե՝ ընդհանուր օրենքը չեղյալ համարող հատուկ օրենք:

Այսինքն՝ այն դեպքերում, երբ կոնվենցիայով ամրագրված իրավունքը հանդիսանում է ներպետական օրենսդրությամբ ճանաչվող «քաղաքացիական իրավունք», ինչպես, օրինակ՝ սեփականության իրավունքը, ապա 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պաշտպանությունը նույնպես պետք է ապահովվի (տե՛ս օրինակ՝ 1982 թ. սեպտեմբերի 23-ին *«Սպորոնգը և Լյոնրոթն ընդդեմ Շվեդիայի»* (*Sporrong and Lönnroth v Sweden*) գործով կայացրած վճիռը, շարք A, թիվ 52, էջ 31-2, պարբ. 88): Նման պարագաներում 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված երաշխիքները, որոնք նախատեսում են դատական ընթացակարգերի ողջ բազմազանությունը, ավելի խիստ են և ընդգրկում են 13-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները (տե՛ս օրինակ՝ *«Բրուալա Գոմես դե լա Տորեն ընդդեմ Իսպանիայի»* (*Brualla Gómez de la Torre v Spain*) գործով կայացրած վճիռը, 1997-VIII], էջ 29-57, պարբ. 41):

Դատարանը նման տրամաբանություն է կիրառել այն գործերում, որոնցում դիմողի գանգատն ուղղված էր 6-րդ հոդվածի 1-ին կետի «քրեական» հայեցակետի և 13-րդ հոդվածի տիրույթում գտնվող առկա վերաքննիչ կամ վճռաբեկ ընթացակարգերի դեմ (տե՛ս 1989 թ. դեկտեմբերի 19-ին *«Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի»* (*Kamasinski v Austria*) գործով կայացրած վճիռը (շարք A, թիվ 168, էջ 45-6, պարբ. 110) գերագույն դատարանում անվավեր ճանաչման ընթացակարգերի առնչությամբ:

Նման դեպքերում իրավական տեսակետից նպատակահարմար չէ բողոքի նույն առարկան ուսումնասիրել 13-րդ հոդվածի պակաս խիստ պահանջների շրջանակներում:

147. Սակայն տվյալ գործում դրույթների համընկնում և համընդգրկում չկա, քանի որ կոնվենցիայի դրույթի ենթադրյալ խախտումը կայանում է նրանում, որ անհատը ցանկանում է ազգային մարմինների դեմ բողոք ներկայացնել 6-րդ հոդվածի 1-ին կետին հակասող ողջամիտ ժամկետներում դատաքննության իրավունքի խախտման առնչությամբ: Այն հարցը, թե արդյոք սույն գործով հանդես եկող դիմողն իրականում չէ՞ր օգտվել քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների որոշման կամ քրեական մեղադրանքի շրջանակներում ողջամիտ ժամկետներում դատաքննության իրավունքից, առանձին իրավաբանական հարց է և պետք է տարբերվի այն հարցից, թե արդյոք ներպետական օրենսդրությամբ դիմողին հասանելի՞ էր այդ հիմքով բողոք ներկայացնելու արդյունավետ իրավական պաշտպանության միջոցը: Տվյալ դեպքում 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատական ատյաններում որոշման ենթակա հարցը դիմողի դեմ բերված քրեական մեղադրանքն էր, մինչդեռ 13-րդ հոդվածի շրջանակներում ազգային մարմիններին նրա ներկայացրած բողոքն առանձնացված էր դատաքննության անողջամիտ ժամկետի վերաբերյալ բողոքից:

Այնուամենայնիվ, անցյալում քննված համեմատելի գործերում դատարանը հրաժարվել է որոշում կայացնել 13-րդ հոդվածով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի բացակայության վերաբերյալ կից գանգատի մասով՝ համարելով դա ոչ անհրաժեշտ և հաշվի առնելով 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված ողջամիտ

ժամկետի պահանջի արդեն արձանագրած խախտումը (ի թիվս այլ օրինակների տե՛ս *«Պիծատին ընդդեմ Իտալիայի»* (*Pizzatti v Italy)* A.257-C (1993) գործը):

148. Դատարանի կարծիքով՝ ժամանակն է վերանայելու իր նախադեպային բազան շարունակ կուտակվող այն դիմումների առնչությամբ, որտեղ միակ կամ հիմնական պնդումը ողջամիտ ժամկետներում դատական լսում ապահովելու մասին 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված իրավունքի խախտումն է:

Նման խախտումների արձանագրման աճող հաճախականությունը վերջերս հանգեցրել է նրան, որ դատարանն ուշադրություն է հրավիրել ազգային իրավական համակարգերում առկա «կարևոր վտանգի» գոյությանը, որը «արդարադատության իրականացման չափազանց երկար ձգձգումներն են, որոնց համար դատավարող կողմերը չունեն իրավական պաշտպանության որևէ միջոց» (տե՛ս օրինակ՝ *«Բոտտացին ընդդեմ Իտալիայի»* (*Bottazzi v Italy)* [GC], թիվ 34884/97, պարբ. 22, ECHR 1999-V, *«Դի Մաուրոն ընդդեմ Իտալիայի»* (*Di Mauro v Italy)* [GC], թիվ 34256/96, պարբ. 23, ECHR 1999-V, *«Ա.Պ.-ն ընդդեմ Իտալիայի»* (*A.P. v Italy)* [GC], թիվ 35265/97, պարբ. 18, 1999 թ. հուլիսի 28 (ընդգրկված չէ զեկույցում) և *«Ֆեռարին ընդդեմ Իտալիայի»* (*Ferrari v Italy)* [GC], թիվ 33440/96, պարբ. 21, 1999 թ. հուլիսի 28 (ընդգրկված չէ զեկույցում) գործերը):

149. Այս համատեքստում դատարանն անհրաժեշտ չի համարում 13-րդ հոդվածի շրջանակներում դիմողի գանգատն ուսումնասիրել առանձին՝ ի լրումն նրա նկատմամբ ողջամիտ ժամկետներում դատաքննություն չիրականացնելու համար արդեն արձանագրած 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման:

….

152. Մյուս կողմից՝ կոնվենցիայով ձևավորված մարդու իրավունքների պաշտպանության համակարգում 13-րդ հոդվածի դիրքով է պայմանավորված այն, որ 13-րդ հոդվածի ենթադրյալ սահմանափակումները պետք է հասցվեն նվազագույնի:

1-ին հոդվածը (որտեղ ամրագրված է՝ «Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն կոնվենցիայի I բաժնում») նախատեսում է, որ երաշխավորված իրավունքներն ու ազատություններն իրագործելու և կենսագործելու առաջնային պարտավորությունը դրվում է ազգային մարմինների վրա: Այսպիսով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանին ուղղված գանգատների ներկայացման մեխանիզմը երկրորդական է մարդու իրավունքները երաշխավորող ազգային համակարգերի համեմատ: Այս երկրորդական բնույթը զետեղված է կոնվենցիայի 13-րդ հոդվածում և 35-րդ հոդվածի 1-ին կետում:

Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման պահանջն ամրագրող 35-րդ հոդվածի 1-ին կետի նպատակն է մասնակից պետություններին հնարավորություն ընձեռել կանխելու կամ շտկելու իրենց դեմ ներկայացրած գանգատներով մարդու իրավունքների ենթադրյալ խախտումները նախքան դրանց ներկայացվելը դատարան (որպես վերջին ատյան տե՛ս *«Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի»* (*Selmouni v France)* գործը, [GC], թիվ 25803/94, պարբ. 74, ECHR 1999-V) 35-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված կանոնը հիմնված է 13-րդ հոդվածում (որի հետ այդ դրույթը սերտորեն կապված է) ամրագրված այն ենթադրության վրա, որ անհատի՝ կոնվենցիայով նախատեսված իրավունքների ենթադրյալ խախտման համար գոյություն ունի արդյունավետ ներպետական պաշտպանության միջոց (տե՛ս նույն տեղում):

Այս առումով 13-րդ հոդվածը, որտեղ ուղղակիորեն արտահայտվում է պետությունների՝ ամենից առաջ իրենց սեփական իրավական համակարգում մարդու իրավունքները պաշտպանելու պարտավորությունը, հաստատում է ևս մեկ լրացուցիչ երաշխիք, ասել է թե՝ անհատին արդյունավետ կերպով իր իրավունքներն իրացնելու հնարավորություն ընձեռել: Ինչպես պարզ է դառնում նախապատրաստական փաստաթղթերից (տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Նախապատրաստական փաստաթղթերի ժողովածու, հտ. II, էջ 485 և 490, ինչպես նաև հտ. III, էջ 651) 13-րդ հոդվածի նպատակն է տրամադրել միջոց, որի օգնությամբ անհատները դատարանին գանգատների ներկայացման միջազգային մեխանիզմը գործարկելուց առաջ կարողանան կոնվենցիայով ամրագրված իրենց իրավունքների խախտման դիմաց հատուցում ստանալ ազգային մակարդակով: Այս տեսանկյունից անհատի՝ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը պակաս արդյունավետ կլինի, եթե գոյություն չունենա հնարավորություն կոնվենցիայով ամրագրված իրավունքի խախտման համար պահանջը ներկայացնել նախ ազգային մարմնին: 13-րդ հոդվածի պահանջները պետք է դիտվեն որպես 6-րդ հոդվածի 1-ին կետի լրացում, այլ ոչ թե լիովին ծածկվեն անհատներին իրավաբանական ընթացակարգերում անհարկի ձգձգումների չենթարկելու ընդհանուր պարտավորությամբ, որն ամրագրված է այդ հոդվածով:

153. Այնուամենայնիվ, կառավարությունը բերել է այն փաստարկը, որ անհարկի ձգձգվող ընթացակարգերի դեպքում 13-րդ հոդվածով նախատեսված իրավական պաշտպանության միջոցների պահանջը կարևորագույն նշանակություն ունի պետությունների վրա «բողոքարկման իրավունք» հաստատելու նոր պարտավորության, մասնավորապես, նյութահիրավական հիմքերով վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքի համար, որը որպես այդպիսին երաշխավորված է միայն քրեական գործերում՝ կոնվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածով, իսկ գործնականում իրավական պաշտպանության նման միջոցի իրացումը ներպետական դատարաններում կարող է միայն ձգձգել ընթացակարգերը:

154. Դատարանը չի ընդունել պետության ներկայացրած փաստարկները:

Դատական ընթացակարգերի անողջամիտ տևողության դեմ բողոքելու իրավական պաշտպանության միջոցը, որպես այդպիսին, չի ընդգրկում որևէ քրեական մեղադրանքի կամ քաղաքացիական իրավունքների և պարտավորությունների «որոշման» բողոքարկում: Ամեն դեպքում, եթե կոնվենցիայի պահանջները կատարվում են, ապա ինչպես դատարանը վճռել է բազում առիթներով, մասնակից պետությունները որոշակի հայեցողության իրավունք ունեն որոշելու, թե ինչպես պետք է տրամադրեն 13-րդ հոդվածով պահանջվող պաշտպանությունը և հետևեն կոնվենցիայի այս դրույթով իրենց ստանձնած պարտավորություններին (տե՛ս օրինակ՝ *«Քայան ընդդեմ Թուրքիայի»* (*Kaya v Turkey)* գործով 1998 թ. փետրվարի 19-ին կայացրած վճիռը, Զեկույցներ, 1998-I, էջ 329–30, պարբ. 106):

Այն առաջարկության առնչությամբ, որ ևս մեկ իրավական պաշտպանության միջոց պահանջելն էլ ավելի կծանրացնի ներպետական ընթացակարգերը, դատարանը կցանկանար նշել, որ եթե նույնիսկ ներկայումս մասնակից պետությունների իրավական համակարգերում գոյություն չունի ընթացակարգերի չափազանց երկար տևողության հարցում գերակշիռ որևէ օրինաչափություն, միևնույն է, դատարանի նախադեպային բազայից վերցրած օրինակները վկայում են, որ ամենևին էլ անհնար չէ ստեղծել և արդյունավետ կերպով գործարկել նման ընթացակարգեր (տե՛ս օրինակ՝ *«Գոնսալես Մարինն ընդդեմ Իսպանիայի»* (*Gonzalez Marin v Spain*), 39521/98, ECHR 1999-VII և *«Տոմե Մոտան ընդդեմ Պորտուգալիայի»* (*Tomé Mota v Portugal*) (dec.), թիվ 32082/96, ECHR 1999-IX):

155. Եթե պատասխանող պետության փաստարկի համաձայն՝ 13-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի որպես 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված ողջամիտ ժամանակահատվածում դատաքննության իրավունքի նկատմամբ ոչ կիրառելի դրույթ, ապա անհատները պարբերաբար հարկադրված կլինեն իրենց գանգատներն ուղղել Ստրասբուրգի դատարան, ընդ որում, դատարանի կարծիքով ավելի ճիշտ կլիներ, եթե այդ գանգատներին ընթացք տրվեր նախ և առաջ ազգային իրավական համակարգի ներքո: Հեռանկարում ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով կոնվենցիայի ներքո ստեղծված մարդու իրավունքների պաշտպանության համակարգի արդյունավետ աշխատանքը ենթակա է թուլացման:

156. Հաշվի առնելով նախորդ նկատառումները՝ դատարանը համարում է, որ 13-րդ հոդվածի ճշգրիտ մեկնաբանությունն այն է, որ տվյալ դրույթը երաշխավորում է ազգային մարմիններում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի առկայությունը՝ գործը ողջամիտ ժամկետներում լսելու 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված պահանջի ենթադրյալ խախտման դեպքում:

Քանի որ իրավական պաշտպանության նման միջոց Լեհաստանի դատարաններում չի ապահովվել, ուստի դիմողը տուժել է 13-րդ հոդվածի խախտումից (ի լրումն 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված՝ իր դեմ առաջադրված քրեական մեղադրանքով ողջամիտ ժամկետում որոշում կայացնելու իր իրավունքի խախտման): Դատավոր Կասսադեվալը հայտնեց իր անհամաձայնությունը հետևյալ պատճառաբանությամբ.

3. …Մասնակից շատ պետություններում հետզհետե ավելի հաճախ են խախտումներ արձանագրվում միայն կամ հիմնականում ընթացակարգերի չափազանց երկար տևողության պատճառաբանությամբ: Սակայն կոնվենցիայի դրույթներով դատարանը պարտականություն է կրում ուսումնասիրելու և քննելու դատավարության մասնակիցների ներկայացրած դիմումները: Հայտարարել, ինչպես դատարանն է հայտարարում 149-րդ կետում, որ հաշվի առնելով ընթացակարգերի տևողությանն առնչվող դիմումների թիվը՝ ժամանակն է գանգատը քննելու առանձին 13-րդ հոդվածի շրջանակներում, իմ կարծիքով, ավելի շուտ նպատակահարմարության հատկանիշներ ունի, քան օրենքի:

4. Ավելին, չկա վստահություն, որ եվրոպական մակարդակով նախատեսված դատական պաշտպանության մակարդակը կաճի միայն այն պատճառով, որ դատարանն այլևս կարողանալու է արձանագրել կրկնակի խախտում, առաջինը՝ ընթացակարգերի չափազանց երկար տևողությունը, իսկ երկրորդ՝ դրա համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի բացակայությունը: 13-րդ հոդվածի լրացուցիչ խախտում արձանագրելն ինքնին չի կարող ծառայել որոշ մասնակից պետությունների դատական համակարգերում արմատացած հատուկ կառուցվածքային հիմնախնդիրների հաղթահարմանը, բացի կոնվենցիայի հետ անհամատեղելի պրակտիկան արձանագրելու իրողությունից: Այս իրողությունը չի նպաստի դատարանի կողմից ուսումնասիրվող գործերի քանակի նվազեցմանը, առնվազն՝ ոչ մոտ ապագայում:

5. 13-րդ հոդվածի խախտում արձանագրելու նպատակն է սուբսիդիարության սկզբունքի համաձայն պետություններին պարտադրել կատարել իրենց պարտավորությունները և հորդորել նրանց իրենց ներպետական իրավական համակարգերում ստեղծել իրավական պաշտպանության այնպիսի արդյունավետ միջոց, որը հնարավորություն կտա դատավարության կողմերին բողոքելու դատական ընթացակարգերի շատ երկար տևողության կապակցությամբ: Ես լավ չեմ պատկերացնում, թե նման իրավական պաշտպանության միջոցի հաստատման դեպքում ինչպես կարող է դատական ընթացակարգերի անողջամիտ ժամկետի կառուցվածքային հիմնախնդիրը լուծվել այնպիսի պարտավորությամբ, որը, կոնվենցիայի 35-րդ հոդվածի համաձայն, պահանջում է նախ սպառել իրավական պաշտպանության լրացուցիչ միջոցը, որով հնարավորություն է տրվում գանգատ ներկայացնել դատական ընթացակարգերի շատ երկար տևողության կապակցությամբ:

Ոչինչ չի կարող հիմնավորել այն ենթադրությունը, որ նման գանգատի հիմքում ընկած գործով դատաքննությունը

կանցկացվի ավելի ողջամիտ ժամկետում, քան հիմնական ընթացակարգերը: Բացի այդ, հիմք չկա ենթադրելու, որ հիմնական ընթացակարգերն ավելի արագ կանցկացվեն նման հայց ներկայացնելու դեպքում: Ի վերջո, նման իրավիճակի հետևանքներից կտուժի միայն հայց ներկայացրած դատավարության կողմը:

Կուդլայի (*Kudla*) գործով կայացրած վճիռը վկայում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված ողջամիտ ժամկետում դատաքննության երաշխիքի խախտման առնչությամբ դատարանին ներկայացրած բազում դիմումները եղել են այն հիմնական գործոնը, որի ազդեցությամբ մեծ պալատը որդեգրել է 13-րդ հոդվածի նոր մեկնաբանությունը: Հետագայում դատարանի պալատները կիրառել են Կուդլայի (*Kudla*) գործով կայացրած վճիռն այն տարբեր պետությունների դեմ հարուցված գործերում 13-րդ հոդվածով խախտումներ արձանագրելու համար, որտեղ չի երաշխավորվել իրավական պաշտպանության արդյունավետ ներպետական միջոց դատական ընթացակարգերի շատ երկար անողջամիտ տևողության բողոքների համար, այդ թվում տե՛ս *«Նուվոլին ընդդեմ Իտալիայի»* (*Nuvoli v Italy,* 2002 թ. մայիսի 16-ի վճիռ) և *«Ռադոսը և այլք ընդդեմ Խորվաթիայի»* (*Rados and others v Croatia,* 2002 թ. նոյեմբերի 7-ի վճիռ) գործերը:

2004 թ. սեպտեմբերի 17-ին Լեհաստանի խորհրդարանը, ի պատասխան *Կուդլայի (Kudla*) գործի, օրենք ընդունեց, որով անձինք հնարավորություն ստացան վերաքննիչ դատարաններ բողոք ներկայացնել ստորին ատյանի դատարաններում քննվող իրենց գործերով դատական ընթացակարգերի անողջամիտ երկար տևողության կապակցությամբ, իսկ վերաքննիչ դատարաններին լիազորություն տրվեց կարգադրել ստորին ատյանի դատարաններին արագացնել դատական ընթացակարգերը և փոխհատուցում շնորհել բողոքատուներին: 2004 թ. սեպտեմբերի 30-ին Եվրոպական դատարանը հայտարարել է, որ առաջնություն էր տալիս Լեհաստանի դատարաններում դատական ընթացակարգի կապակցությամբ ներկայացված չորս առաջնահերթ բողոքներին: Միաժամանակ դատարանը հետաձգել է Լեհաստանի դեմ ներկայացված մոտ 700 նմանօրինակ գանգատների քննությունը: 2005 թ. մարտի 9-ին դատարանն անընդունելի է համարել դիմումները, քանի որ գանգատարկողները, 2004 թ. Լեհաստանում ընդունված օրենքի համաձայն, դիմում չեն ներկայացրել Լեհաստանի վերաքննիչ դատարաններ, հետևաբար չեն սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները: Մի քանի ամիս անց դատարանը միաձայն որոշեց, որ ողջամիտ ժամկետում դատաքննություն չանցկացնելու բողոքի շրջանակներում պետությունից վնասի փոխհատուցում պահանջելու հնարավորությունը, որը դատավարության կողմերին ընձեռվել է 2004 թ. օրենքի դրույթներով, եղել է 13-րդ հոդվածում ամրագրված իրավական պաշտպանության արդյունավետ միջոց: *«Կրասուսկին ընդդեմ Լեհաստանի»* (*Krasuski v Poland*) գործով 2005 թ. հունիսի 14-ի վճռում մեծ պալատը կայացրել է հետևյալ որոշումը:

66. Դատական ընթացակարգերի վերաբերյալ բողոք ներկայացնելու ներպետական օրենսդրությամբ դիմողին հասանելի միջոցը կոնվենցիայի 13-րդ հոդվածի իմաստով «արդյունավետ» է այն դեպքում, եթե դրանով «կանխվում կամ վերացվում է նշված իրավունքի խախտումը կամ պատշաճ փոխհատուցում է սահմանվում արդեն տեղի ունեցած խախտման դիմաց»: Այսպիսով, 13-րդ հոդվածով այլընտրանք է առաջարկվում, այն է՝ իրավական պաշտպանության միջոցն արդյունավետ է այն դեպքում, եթե այն կարող է կիրառվել ինչպես դատարանների կողմից տվյալ գործով որոշում կայացնելու ընթացքն արագացնելու, այնպես էլ արդեն արձանագրված հետաձգման դիմաց դատավարության կողմին փոխհատուցում սահմանելու նկատառումներով: Տվյալ միջոցի զուտ հատուցողական բնույթը որոշիչ նշանակություն չունի և անկախ է այն հանգամանքից՝ տվյալ խնդրո առարկա ընթացակարգերն ավարտվե՞լ են, թե՞ դեռևս գտնվում են վարույթում (տե՛ս վերոնշյալ *Կուդլայի* (*Kudla*) գործ, պարբ. 158–9, *«Կալդաս Ռամիրես դե Առելյանոն ընդդեմ Իսպանիայի»* (*Caldas Ramirez de Arrellano v Spain*) գործով որոշում, թիվ 68874/01, ECHR 2003-I, *«Միֆսուդ ընդդեմ Ֆրանսիայի»* (*Mifsud v France*) գործով որոշում [GC], թիվ 57220/00, ECHR 2002-VIII, ինչպես նաև *«Պոլինո Թոմասն ընդդեմ Պորտուգալիայի* (*Paulino Tomás v Portugal*) գործով որոշում, թիվ 58698/00, ECHR 2003-VIII):

2. Վերոնշյալ սկզբունքների կիրառելիությունը ներկա գործի շրջանակներում

(ա) 13-րդ հոդվածի կիրառելիությունը

67. Տվյալ դեպքում սույն գործի շրջանակներում 13-րդ հոդվածի կիրառելիությունը չի վիճարկվել: Դատավարության կողմերը համաձայնել են, որ 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան ներկայացրած գանգատը, որն ընդունելի է համարվել դատարանի կողմից, բավարարել է 13-րդ հոդվածի շրջանակներում «փաստարկելիության» չափանիշի պայմանները:

(բ) Համապատասխանություն 13-րդ հոդվածի դրույթներին

68. Դատարանին նախկինում ներկայացված նմանօրինակ գործերի շրջանակներում Լեհաստանի կառավարությանը չի հաջողվել հաստատել, որ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածին համապատասխան՝ քաղաքացիական հայցով ձևավորվել է իրավական պաշտպանության արդյունավետ միջոց: Պատասխանող պետության վերոնշյալ փաստարկները մերժվել են մասնավորապես այն հիմնավորմամբ, որ դրանք չեն հաստատվել գրավոր ապացույցներով, և հիմնավորվել են 2001 թ. դեկտեմբերի 4-ին կայացրած վճռում Լեհաստանի սահմանադրական դատարանի կողմից դրույթի ոչ պաշտոնական մեկնաբանությամբ (լատ. *obiter dictum*), այլ ոչ թե տվյալ հարցին առնչվող որևէ դատական պրակտիկայով (տե՛ս, օրինակ՝ *«Մալաշևիչն ընդդեմ Լեհաստանի»* (*Malasiewicz v Poland*), թիվ 22072/02, պարբ. 32):

69. Այնուհանդերձ, հաշվի առնելով ներպետական օրենսդրության մակարդակում վերջին զարգացումները և հատկապես 2004 թ. ուժի մեջ մտած օրենքը՝ դատարանը հիմնավորված է համարում վերանայել իր նախկին դիրքորոշումը:

Դատարանը եզրակացրել է, որ 2004 թ. ընդունված օրենքի 16-րդ բաժնի դրույթներով հաստատվել է նախկինի համեմատությամբ միանգամայն այլ իրավական դրություն: Անցյալի համեմատ՝ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածում ամրագրված՝ դատական ընթացակարգերի շատ երկար տևողության դիմաց փոխհատուցում պահանջելու հնարավորությունն այժմ հստակ դրվել է օրենսդրական հիմքի վրա: Բացի այդ, 16-րդ բաժնի դրույթներում պարզ նշվում է, որ վերացվել է ողջամիտ ժամկետում գործով դատաքննություն անցկացնելու իրավունքի խախտման դիմաց փոխհատուցման գործերում 417-րդ հոդվածի կիրառելիությանը վերաբերող մինչ այժմ գոյություն ունեցող երկիմաստությունը:

70. Գործով առկա փաստերի հիման վրա դատարանն ապացուցված չի համարում դիմողների այն փաստարկը, որի համաձայն՝ իրավական պաշտպանության տվյալ միջոցն «անիրական» կլինի: Այսպիսով, դիմողը չի վիճարկել նշված միջոցի մատչելիությունը, այլ սահմանափակվել է մի պարզ հայտարարությամբ առ այն, որ նշված միջոցն արդյունավետ չէր լինի, առանց որևէ կերպ հիմնավորելու իր պնդումը: Հաշվի առնելով այն փաստը, որ 2004 թ. ընդունված օրենքն ուժի մեջ է մտել նույն թվականի սեպտեմբերի 17-ին, տվյալ ոլորտում 417-րդ հոդվածի դրույթների վերաբերյալ հաստատված դատական պրակտիկայի բացակայությունը որոշիչ նշանակություն չունի (տե՛ս *mutatis mutandis «Չարժինսկին ընդդեմ Լեհաստանի» (Charzyn´ski v Poland)* գործով կայացրած որոշում, թիվ 15212/03, պարբ. 41, ECHR 2004): Այն փաստը, որ դիմողը չի կարող իր հայցը հիմնավորել 417-րդ հոդվածի՝ իր կարծիքով առավել բարենպաստ լրամշակված դրույթներով, նույնպես ապարդյուն կամ աննպատակ չի դարձնում փոխհատուցում ստանալու նրա փորձը:

71. Ճիշտ է, որ տվյալ իրավական պաշտպանության միջոցի արդյունավետությունը կախված է նրանից, թե Լեհաստանի քաղաքացիական դատարանները կկարողանա՞ն արդյոք հատուկ ջանասիրությամբ և ուշադրությամբ քննել նման գործերը, հատկապես այդ գործերով որոշում կայացնելու համար անհրաժեշտ ժամանակի տեսանկյունից: Ճիշտ է նաև, որ ներպետական օրենսդրության մակարդակով սահմանված փոխհատուցման աստիճանը կարող է կազմել իրավական պաշտպանության միջոցի համապատասխանության որոշման կարևոր բաղադրատարրը (տե՛ս վերոնշյալ *«Պոլինո Թոմասն ընդդեմ Պորտուգալիայի»* (*Paulino Tomás v Portugal*) գործով որոշումը): Այնուհանդերձ, իրավական պաշտպանության օրենքով հաստատված միջոցի առնչությամբ կասկածները պարզապես չեն ազատում դիմողին այդ միջոցին դիմելու պարտավորությունից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը չի կարող ենթադրել, որ Լեհաստանի դատարանները պատշաճ կարգով չեն կիրառի նոր դրույթը:

72. Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը՝ դատարանը կարծում է, որ 2004 թ. սեպտեմբերի 17-ից, ասել է թե՝ նշված օրենքի ուժի մեջ մտնելու պահից ի վեր քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածը բավարար որոշակիություն ստացավ կոնվենցիայի 13-րդ հոդվածի իմաստով՝ իրավական պաշտպանության «արդյունավետ միջոց» համարվելու այն դիմողի համար, որը բողոքում է Լեհաստանում դատական համակարգում ողջամիտ ժամկետում դատաքննության իր իրավունքի խախտման կապակցությամբ:

73. Համապատասխանաբար, տվյալ դեպքում 13-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

«Սուրմելին ընդդեմ Գերմանիայի» (*Surmeli v Germany*) գործով 2006 թ. հունիսի 8-ին կայացրած վճռում դատարանն արձանագրել է 13-րդ հոդվածի խախտում, քանի որ Գերմանիայի օրենսդրությամբ չի սահմանվել իրավական պաշտպանության այնպիսի արդյունավետ միջոց, որը հնարավորություն կտար դիմողին արագացնելու քաղաքացիական դատավարությունը կամ փոխհատուցում ստանալու դատական ընթացակարգերի շատ երկար տևողության դիմաց:

8 Մշտական գործող դատարանը 13-րդ հոդվածը մեկնաբանելիս նշել է, որ սույն հոդվածով անդամ պետություններից պահանջվում է երաշխավորել իրավական պաշտպանության այնպիսի ներպետական միջոց, որով հնարավոր լինի կանխել կոնվենցիային հակասող միջոցառումները, և դրանց գուցեև անդառնալի հետևանքները: *«Կոնկան ընդդեմ Բելգիայի»* (*Conka v Belgium,* 2002 թ. փետրվարի 5-ի վճիռ)

գործով հանդես եկած դիմողները Սլովակիայի քաղաքացիներ էին, որոնց գանգատն այն էր, որ Բելգիայից նրանց արտաքսմամբ, ի թիվս այլոց, խախտվել է 13-րդ հոդվածը, քանի որ նրանք չէին կարող օգտվել մատչելի իրավական պաշտպանության միջոցից: Բելգիայի օրենսդրությամբ նրանք կարող էին հատուկ արագացված ընթացակարգով դիմում ներկայացնել Պետական խորհուրդ (ֆրանս. *Conseil d'Etat*) իրենց՝ երկրից արտաքսելու հրամանները վիճարկելու համար: Այնուհանդերձ, դիմողները պնդել են, որ նշված ընթացակարգը չի համապատասխանել 13-րդ հոդվածի պահանջներին, քանի որ նմանօրինակ դիմումն ինքնաբերաբար չէր կարող հրահանգը կասեցնել այնպիսի ժամկետով, որ մինչ այդ պետական խորհուրդը որոշում կայացներ: Մեծ պալատը կայացրել է հետևյալ որոշումը.

79. Դատարանը կարծում է, որ 13-րդ հոդվածին համապատասխան իրավական պաշտպանության արդյունավետ միջոց հասկացությամբ պահանջվում է, որ նշված միջոցով հնարավոր լինի կանխել կոնվենցիային հակասող միջոցառումների իրականացումը, ինչպես նաև այդ միջոցառումների գուցեև անդառնալի հետևանքները (տե՛ս *mutatis mutandis «Յաբարին ընդդեմ Թուրքիայի»* (*Jabari v Turkey*), 2000-VIII, պարբ. 50) գործով կայացրած վճիռը): Հետևաբար, 13-րդ հոդվածի դրույթները թույլ չեն տալիս, որ նման միջոցառումներն իրականացվեն նախքան ազգային մարմինները քննեն դրանց համապատասխանությունը կոնվենցիային, թեև մասնակից պետություններն ունեն հայեցողության որոշակի սահման՝ որոշելու, թե ինչպես են նրանք կատարում այս դրույթով իրենց ստանձնած պարտավորությունները (տե՛ս *«Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Chahal v UK*) գործը, 1996-V, պարբ. 145):

….

81. Նույնիսկ արագացված ընթացակարգով կատարվող դիմումը կասեցնող ուժ չունի: Սակայն պատասխանող պետությունն ընդգծել է, որ ինչպես սովորաբար արտաքսման գործերով, տվյալ դեպքում պետական խորհրդի համապատասխան վարչության պետը կարող էր ցանկացած պահի, նույնիսկ ոչ աշխատանքային օրերին մի քանի ժամվա ծանուցմամբ դատավարության կողմերին դիմումը քննելու համար դատարան կանչել և համապատասխան դեպքում հրաման արձակել արտաքսման մասին վերոնշյալ կարգադրությունը կասեցնելու մասին: Հարկ է նշել, որ իշխանություններն օրենքով պարտավորված չեն արտաքսման մասին հրամանը կասեցնել մինչև պետական խորհուրդը որոշում կայացնի տվյալ գործով: Այդ իսկ պատճառով վերջինս, օրինակ, հրահանգ է արձակել, որի համաձայն՝ արագացված ընթացակարգով ներկայացրած դիմումի դեպքում պետական խորհրդի քարտուղարը պետք է դատավորի պահանջով կապվի օտարերկրացիների հարցերով նախարարության հետ և պարզի դիմողներին՝ հայրենիք ուղարկելու օրը՝ դրանից բխող ընթացակարգը կարգավորելու նպատակով: Նման համակարգի կապակցությամբ հարկավոր է երկու դիտողություն անել:

82. Առաջին՝ մի համակարգում, որում որոշման կասեցման համար հարկավոր է դիմում ներկայացնել, իսկ դիմումի բավարարումը թողնված է որոշողի հայեցողությանը, չի կարելի բացառել այն վտանգը, որ դիմումը կարող է սխալմամբ մերժվել, մասնավորապես, եթե հետագայում պարզվի, որ դիմումի նյութաիրավական հիմքերը քննելիս դատարանը վճռել է չեղյալ հայտարարել արտաքսման հրամանը կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանելու պատճառով, օրինակ՝ եթե ընդունող երկրում դիմողը ենթարկվի վատ վերաբերմունքի կամ խմբային արտաքսման զոհ դառնա: Նման դեպքերում դիմողի կողմից իրացվող իրավական պաշտպանության միջոցը 13-րդ հոդվածի շրջանակներում բավականին արդյունավետ չի լինի:

83. Երկրորդ՝ եթե նույնիսկ գործնականում անտեսվի վերոնշյալ սխալի վտանգը, ինչը դատարանն ի վիճակի չէ ստուգելու հավաստի ապացույցների բացակայության դեպքում, 13-րդ հոդվածի և կոնվենցիայի այլ դրույթների պահանջները ստանում են երաշխիքի, ոչ թե միայն մտադրության կամ գործնական քայլի ձև: Դա ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը համարվող օրենքի գերակայության հետևանքն է, որն ընկած է կոնվենցիայի բոլոր հոդվածների հիմքում (տե՛ս *mutatis mutandis «Յատրիդհսն ընդդեմ Հունաստանի»* (*Iatridis v Greece* [GC], թիվ 31107/96, պարբ. 58, ECHR, 1999-II) գործով կայացրած վճիռը):

Այնուհանդերձ, ինչպես պարզվում է, պետական մարմինները պարտավոր չեն վարույթի մեջ գտնվող արագացված ընթացակարգով ներկայացված դիմումի պարագայում նույնիսկ նվազագույն ողջամիտ ժամկետով կասեցնել արտաքսման հրամանը, որպեսզի պետական խորհուրդը հնարավորություն ունենա որոշում կայացնելու դիմումի մասին: Ավելին, գործնականում պետական խորհուրդը պետք է հաստատի պետական մարմինների մտադրությունները և համապատասխան միջոցներ ձեռնարկի, սակայն, կարծես, խորհուրդը որևէ նման պարտավորություն չի կրում: Եվ, վերջապես, պետական խորհրդի քարտուղարը դատավորի կարգադրությամբ դիմում է իշխանություններին ներքին ցուցումների հիման վրա, և որևէ նշում չկա, թե ինչ հետևանքներ կլինեն, եթե քարտուղարը չդիմի իշխանություններին: Ի վերջո, օտարերկրացին որևէ երաշխիք չունի, որ պետական խորհուրդը և իշխանությունները բոլոր նմանօրինակ գործերում հետևելու են վերոնշյալ վարվելակերպին, որ պետական խորհուրդը նախքան արտաքսումը կհայտնի իր որոշումը կամ առհասարակ դատաքննություն կանցկացնի նրա գործով, ինչպես նաև, որ պետական մարմինները կտրամադրեն նվազագույն ողջամիտ տարկետում:

Այս գործոններից յուրաքանչյուրը չափազանց անորոշ է դարձնում իրավական պաշտպանության միջոցի իրագործումը և թույլ չի տալիս բավարարել 13-րդ հոդվածի պահանջները:

….

85. Ամփոփելով՝ հարկ է նշել, որ դիմողների համար մատչելի չէր 13-րդ հոդվածի պահանջները բավարարող իրավական պաշտպանության մի այնպիսի միջոց, որով հնարավոր կլիներ թիվ 4 արձանագրության 4-րդ հոդվածին համապատասխան արտահայտել իրենց գանգատը: Ուստի տեղի է ունեցել կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

Երեք դատավորներ չհամընկնող կարծիք հայտնեցին, որ արագացված ընթացակարգով ներկայացրած դիմումները գործնականում կարող էին կասեցնել արտաքսման հրամանների կատարումը: Ավելի ուշ, *«Մամաթկուլովը և Ասկարովն ընդդեմ Թուրքիայի»* (*Mamatkulov and Askarov v Turkey*) գործով 2005 թ. փետրվարի 4-ին կայացրած վճռում մեծ պալատը հաստատել է *Կոնկայի* (*Conka*) գործով վճռի հիմքում ընկած սկզբունքի կիրառումը:

16 ՀՈԴՎԱԾ 14 ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՈՒՄ

.....

«Բելգիայի լեզվաբանական» (Belgian Linguistic (թիվ 2) A.6 (1968) 1) գործ EHRR 252
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Ստորև մանրամասն ներկայացված են տվյալ գործով գանգատի փաստացի նախապատմությունը և դատարանի եզրակացությունները:

8. Կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն՝ սույն կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը երաշխավորվում է առանց որևէ տարբերակման *(ֆր. sans distinction aucune),* ինչպես նաև՝ անկախ լեզվի հատկանիշից, իսկ թիվ 1 արձանագրության 5-րդ հոդվածի դրույթներով տվյալ երաշխիքը նմանապես կիրառվում է փաստաթղթով սահմանված իրավունքների և ազատությունների նկատմամբ: Այս ամենից հետևում է, որ ինչպես թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածը, այնպես էլ կոնվենցիայի 8-րդ հոդվածը դատարանը պետք է մեկնաբանի և կիրառի ոչ միայն առանձին, այլև հաշվի առնելով 14-րդ հոդվածով ամրագրված երաշխիքը:

9. Թեև ճիշտ է, որ վերոնշյալ երաշխիքը ինքնուրույն չի կիրառվում այն իմաստով, որ 14-րդ հոդվածի շրջանակներում այն առնչվում է միայն «կոնվենցիայում ամրագրված իրավունքներին և ազատություններին» և այնպիսի միջոց է, որն ինքնին համապատասխանում է նշված իրավունքներն ու ազատությունները սահմանող հոդվածի պահանջներին, սակայն նշված երաշխիքով հոդվածը կարող է նաև խախտվել, եթե դիտարկվի 14-րդ հոդվածի համակցությամբ, քանի որ այն խտրական բնույթ ունի:

Այսպիսով, մասնակից պետությունների իրավազորության ներքո անձինք չեն կարող եզրակացնել, որ թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածից բխում է պետական մարմիններին հատուկ տեսակի կրթական հաստատություն հիմնելու պահանջ ներկայացնելու իրավունքը, սակայն նման հաստատություն հիմնած պետությունը չի կարող ընդունելության պայմանները սահմանելիս դիմել 14-րդ հոդվածին հակասող խտրական միջոցների:

Կարելի է բերել ընթացակարգերում նշված մեկ այլ օրինակ, որ կոնվենցիայի 6-րդ հոդվածը չի պարտադրում պետություններին ձևավորել վերաքննիչ դատարանների համակարգ: Հետևաբար, այն պետությունները, որոնք հիմնում են նման դատարաններ, գերազանցում են 6-րդ հոդվածով սահմանված իրենց պարտավորությունների սահմանները: Այնուհանդերձ, եթե պետությունն առանց օրինական պատճառի որոշ անձանց զրկեր իրավական պաշտպանության նշված միջոցներից՝ միաժամանակ թույլատրելով նմանօրինակ գանգատ ներկայացրած այլ անձանց օգտվել այդ միջոցներից, ապա պետությունը կխախտեր 6-րդ հոդվածը 14-րդ հոդվածի համակցությամբ:

Նման դեպքերում կխախտվեր 14-րդ հոդվածի համակցությամբ համապատասխան հոդվածում ամրագրված իրավունքը կամ ազատությունը, կարծես նշված հոդվածը կկազմեր իրավունքներ և ազատություններ սահմանող յուրաքանչյուր հոդվածի անբաժանելի մասը: Այդ տեսանկյունից չի կարելի տարբերակում դնել նշված իրավունքների և ազատությունների բնույթի և դրանցից բխող պարտավորությունների, ինչպես նաև այն փաստի միջև, թե տվյալ իրավունքի նկատմամբ հարգալից վերաբերմունքով պահանջվում է դրական գործողությո՞ւն, թե՞ պարզապես ձեռնպահություն: Ավելին, այս մասին բացահայտ վկայում է 14-րդ հոդվածում օգտագործված ձևակերպումների ընդհանուր բնույթը, այն է՝ «…սույն կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է…»:

10. Թեև կոնվենցիայի ֆրանսերեն տարբերակում օգտագործվել է *sans distinction aucune* (առանց որևէ տարբերակման) շատ ընդհանուր արտահայտությունը, սակայն 14-րդ հոդվածով չի արգելվում ընդունված իրավունքների և ազատությունների իրացման նկատմամբ ցանկացած տեսակի վերաբերմունքի տարբերակում դրսևորել: Նշված տարբերակը պետք է մեկնաբանել առավել սահմանափակող բնույթ կրող անգլերեն տարբերակի՝ without discrimination (առանց խտրականության) արտահայտության տեսանկյունից: Ի լրումն և մասնավորապես 14-րդ հոդվածի ֆրանսերեն տարբերակի նման թվացյալ լայն իմաստով մեկնաբանության դեպքում կարելի է ստանալ անհեթեթ արդյունքներ: Եվ իսկապես, կարելի է հանգել այն եզրակացության, որ այն տարբեր իրավական կամ վարչական դրույթները, որոնցով չի երաշխավորվում յուրաքանչյուրի նկատմամբ հավասար վերաբերմունք ընդունված իրավունքների և ազատությունների իրացման հարցում, հակասում են կոնվենցիային: Իրավասու պետական մարմինները հաճախ բախվում են այնպիսի իրավիճակների և հիմնախնդիրների,

որոնք իրենց առանձնահատկությունների պատճառով պահանջում են տարբեր իրավաբանական լուծումներ, և ավելին, որոշ իրավական անհավասարություններ միտում ունեն ուղղելու միայն փաստացի անհավասարությունը: Հետևաբար, վերոնշյալ լայն իմաստով մեկնաբանությունը չի կարող ընդունելի լինել:

Այնուհետև կարևոր է փնտրել այնպիսի չափանիշներ, որոնք հնարավորություն տան որոշելու, թե արդյոք կոնվենցիայում ամրագրված իրավունքներից կամ ազատություններից որևէ մեկի իրացման շրջանակներում տվյալ դեպքում դրսևորված վերաբերմունքի տարբերակումը հակասո՞ւմ է 14-րդ հոդվածին: Տվյալ հարցում առաջնորդվելով բազում ժողովրդավարական պետությունների դատական պրակտիկայից քաղված սկզբունքներով՝ դատարանը հայտնել է, որ եթե նման տարբերակումը հիմնավորված չլինի անաչառ և խելամիտ պատճառաբանությամբ, ապա կխախտվի հավասար վերաբերմունքի սկզբունքը: Նման պատճառաբանության առկայությունը պետք է պարզել քննության առարկա հանդիսացող միջոցի նպատակի, ինչպես նաև ազդեցության համատեքստում՝ հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում առհասարակ գերակշռող սկզբունքները: Կոնվենցիայում ամրագրված իրավունքներից մեկի իրացման շրջանակներում դրսևորված վերաբերմունքի տարբերակումը միայն օրինական նպատակով չէ, որ պետք է հիմնավորվի. 14-րդ հոդվածը նույնպես կխախտվի, եթե ապացուցվի, որ ձեռնարկված միջոցը ողջամտության տեսանկյունից անհամաչափ է առաջադրված նպատակին:

Փորձելով պարզել տվյալ դեպքում կամայական տարբերակման դրսևորումը՝ դատարանը չի կարող անտեսել այն պետության հասարակական կյանքը բնորոշող իրավական և փաստացի առանձնահատկությունները, որը, որպես մասնակից պետություն, պետք է պատասխանատվություն կրի վիճարկված միջոցի համար: Ընդ որում, պետությունը չի կարող ստանձնել իրավասու ազգային մարմիններին վերապահված դերը, քանի որ այդ դեպքում նա կանտեսի օրենքի ընդհանուր կիրառման միջազգային ապարատի սուբսիդիարության բնույթը, որ հաստատված է կոնվենցիայում: Ազգային մարմիններն ունեն կոնվենցիայով կարգավորվող հարցերում իրենց կարծիքով պատշաճ միջոցներ ընտրելու ազատություն: Դատարանը պետք է վերահսկի միայն վերոնշյալ միջոցների համապատասխանությունը կոնվենցիայի պահանջներին:

11. Սույն գործում դատարանը նշում է, որ նույնիսկ թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի համակցությամբ մեկնաբանվելու դեպքում 14-րդ հոդվածը չի երաշխավորում երեխայի և նրա ծնողի՝ իրենց ընտրած լեզվով կրթություն ստանալու իրավունքը: Համադրության մեջ դիտարկվող վերոնշյալ երկու հոդվածների նպատակն ավելի սահմանափակ է, ասել է թե՝ յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է առանց որևէ խտրականության, օրինակ՝ անկախ լեզվի հատկանիշից, երաշխավորի իր իրավազորության ներքո յուրաքանչյուր անձի կրթություն ստանալու իրավունքը:

Այդպիսին է թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի համակցությամբ 14-րդ հոդվածի բնական և ընդունված ճշանակությունը: Ավելին, նշված դրույթների այնպիսի մեկնաբանությունը, ըստ որի՝ պետության իրավազորության ներքո յուրաքանչյուրին պետք է շնորհվի իր ընտրած լեզվով կրթություն ստանալու իրավունք, կարող է հանգեցնել անհեթեթ արդյունքների, քանի որ մասնակից պետությունների ցանկացած տարածքում յուրաքանչյուր ոք կկարողանա ցանկացած լեզվով կրթություն պահանջել:

Դատարանը նշում է, որ լեզուն հասկանալու հետ կապված այն հատուկ իրավունքները, որոնք մասնակից պետությունները ցանկացել են շնորհել յուրաքանչյուրին իրենց իրավազորության ներքո, օրինակ՝ կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ կետում, ինչպես նաև 6-րդ հոդվածի 3-րդ կետի (ա) և (ե) ենթակետերում ամրագրված իրավունքները, հստակ ձևակերպում են ստացել: Այս ամենից հետևում է, որ եթե պետությունները մտադրություն ունենային իրենց իրավազորության ներքո յուրաքանչյուրին շնորհել կրթության լեզուն ընտրելու հատուկ իրավունք, ապա նրանք այն հստակ կամրագրեին թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածում: Այդ իսկ պատճառով դատարանը չի կարող թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի համակցությամբ դիտարկվող 14-րդ հոդվածին վերագրել այնպիսի իմաստ, որով կերաշխավորվի մասնակից պետության իրավազորության ներքո յուրաքանչյուրի՝ իր ընտրած լեզվով կրթության ստանալու իրավունքը:

Ճիշտ է նաև, որ պետք է առանց խտրականության, ներառյալ՝ անկախ լեզվի հատկանիշից, երաշխավորել 14-րդ հոդվածի շնորհիվ թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածով, ինչպես նաև կոնվենցիայի 8-րդ հոդվածով համապատասխանաբար ամրագրված յուրաքանչյուրի կրթության և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքների իրացումը:

12. Ուստի իր քննության հիմքում ընկած հարցերով որոշում կայացնելու համար դատարանը պետք է պարզի, թե արդյոք սույն գործում դրսևորվե՞լ են չհիմնավորված տարբերակումներ, այսինքն՝ խտրական վերաբերմունք, որը բացասական ազդեցություն է գործել 14-րդ հոդվածի համակցությամբ դիտարկվող թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածով և կոնվենցիայի 8-րդ հոդվածով ամրագրված իրավունքների իրացման վրա: Նշված հարցերը քննելիս դատարանը հաշվի է առնելու Բելգիայում տիրող իրավիճակի փաստացի և իրավական առանձնահատկությունները, մասնավորապես այն հանգամանքը, որ Բելգիան հանդիսանում է մի քանի լեզվական շրջաններից բաղկացած բազմալեզու պետություն:

…

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Ստորև մանրամասն ներկայացված է դատարանի կազմը (էջ 1013):

2 Ներկա գործով կայացրած վճիռը վկայում է 14-րդ հոդվածում ամրագրված խտրականության արգելման և կոնվենցիայի, ինչպես նաև կից արձանագրությունների այլ հոդվածներով սահմանված իրավունքների և ազատությունների փոխկախյալ բնույթի մասին: Որոշելու համար, թե արդյոք կոնվենցիայով սահմանված իրավունքների իրացման հարցում դրսևորված վերաբերմունքի տարբերակմամբ խախտվո՞ւմ է 14-րդ հոդվածը, դատարանը կպարզի, թե արդյոք նմանօրինակ տարբերակումը հետապնդո՞ւմ է օրինական նպատակ և համաչա՞փ միջոց է:

3 Վերոնշյալ գործի շրջանակներում 14-րդ հոդվածի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ խտրականության արգելման պահանջը կարող է խախտվել նույնիսկ այն պարագայում, երբ չեն խախտվում կոնվենցիայում ամրագրված համապատասխան նյութական իրավունքները: Որպես դրա ակնհայտ օրինակ կարելի է բերել *«Աբդուլազիզը, Կաբալեսը և Բալկանդալին ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Adulaziz, Cabales and Balkandali v UK,* A.94, 1985, 7 EHRR 471) գործի շրջանակներում արձանագրված խախտումը: Տվյալ գործով դիմողները Միացյալ Թագավորության տարածքում օրինական հիմքերով բնակվող օտարերկրացիներ էին, որոնց գնագատի առարկան այն էր, որ գործող ներգաղթի կանոնների համաձայն՝ նրանց օտարերկրացի ամուսիններին չէր թույլատրվել մուտք գործել նշված պետություն և բնակություն հաստատել իրենց հետ: Դատարանը դիմողների՝ 8-րդ հոդվածում ամրագրված ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտում չի արձանագրել (տե՛ս վերը՝ էջ 551): Սակայն դիմողները պնդել են, որ իրենց նկատմամբ դրսևորվել է խտրական վերաբերմունք, որով խախտվել է 14-րդ հոդվածը:

II. 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՄԲ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

70. Դիմողները պնդել են, որ իրենց ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի պաշտպանության հարցում սեռի, ռասայի, իսկ տկն Բալկանդալիի դեպքում նաև ծննդյան հատկանիշով դրսևորված չհիմնավորված վերաբերմունքի տարբերակման հետևանքով իրենք տուժել են 8-րդ հոդվածի համակցությամբ կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտումից: Վերոնշյալ 14-րդ հոդվածում տրված է հետևյալ ձևակերպումը.

> «Սույն կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:

Եթե դատարանը համարեր, որ սույն գործում կիրառելի է 8-րդ հոդվածը, ապա պատասխանող պետությունը կհերքեր այն փաստը, որ դիմողների նկատմամբ ռասայի հատկանիշով վերաբերմունքի տարբերակում է դրսևորվել, և կհայտներ, որ քանզի սեռի և ծննդյան հատկանիշներով վերաբերմունքի տարբերակման հիմքում ընկած են անաչառ և ողջամիտ պատճառներ, և այն համաչափ է հետապնդվող նպատակներին, ուստի այդպիսի վերաբերմունքը համատեղելի է 14-րդ հոդվածի հետ:

71. Դատարանի նախադեպային բազայում 14-րդ հոդվածը լրացնում է կոնվենցիայի և արձանագրությունների այլ նյութաիրավական դրույթները: Նշված հոդվածը չի կարող ինքնուրույն կիրառում ունենալ, քանի որ այն գործում է միայն այդ դրույթներով երաշխավորված իրավունքների և ազատությունների իրացման կապակցությամբ: Թեև պարտադիր չէ, որ 14-րդ հոդվածի կիրառումը պայմանավորված լինի վերոնշյալ դրույթների խախտմամբ, և այս տեսանկյունից այն ինքնուրույն է, սակայն այն չի կարող կիրառվել, եթե քննության հիմքում ընկած փաստերը չընդգրկվեն նշված դրույթներից մեկի կամ մի քանիսի շրջանակներում (տե՛ս *Ռասմուսենի* (*Rasmussen*) գործով վճիռը, շարք A, թիվ 87, էջ 12, պարբ. 29):

Դատարանը եզրակացրել է, որ սույն գործում կիրառելի է 8-րդ հոդվածը: Թեև Միացյալ Թագավորությունը պարտավոր չէր կացության թույլտվություն տալ պրն Աբդուլազիզին, պրն Կաբալեսին և պրն Բալկանդալիին, և արդյունքում դատարանը չի արձանագրել առանձին վերցրած 8-րդ հոդվածի խախտում, սակայն ներկա գործի փաստերն ընկնում են նշված հոդվածի տիրույթի մեջ:

Այսպիսով, սույն գործում կիրառելի է 14-րդ հոդվածը:

72. 14-րդ հոդվածի համաձայն՝ վերաբերմունքի տարբերակումը խտրական է, եթե այն «անաչառ և ողջամիտ հիմնավորում» չունի, ասել է թե՝ չի հետապնդում «օրինական նպատակ», կամ եթե վերջինիս և ձեռնարկած միջոցի միջև համաչափության ողջամիտ կապ չկա (ի թիվս այլ աղբյուրների տե՛ս *«Բելգիայի լեզվաբանական»* (*Belgian Linguistic*) գործով կայացված վճիռը):

Մասնակից պետություններին վերապահված են հայեցողության որոշակի սահմաններ՝ գնահատելու, թե արդյոք հավասար տարբեր իրավիճակներում արդարացվա՞ծ է տարբերակիչ վերաբերմունքը և որքանով (տե՛ս նույն տեղում վերոնշյալ *Ռասմուսենի* (*Rasmussen*) գործով վճիռը, պարբ. 40): Սակայն տվյալ հարցով վերջնական որոշումը պետք է կայացնի դատարանը:

73. Հաշվի առնելով ներկա գործի առանձնահատուկ հանգամանքները՝ դատարանը կարծում է, որ պետք է հերթականությամբ քննի այն երեք պատճառները, որոնք ենթադրաբար ընկած են եղել խտրական վերաբերմունքի տարբերակման հիմքում:

Բ. ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՍԵՌԻ ՀԱՏԿԱՆԻՇՈՎ

74. Ինչ վերաբերում է սեռի հատկանիշով ենթադրյալ խտրականությանը, ապա չի վիճարկվում, որ 1980 թ. կանոններով Միացյալ Թագավորությունում բնակվող տղամարդու համար ավելի հեշտ է, քան կնոջ, թույլտվություն ստանալ, որպեսզի երկրի քաղաքացի չհանդիսացող իր կինը կարողանա երկիր մուտք գործել և այնտեղ բնակություն հաստատել: Բանավեճը ծավալվել է այն հարցի շուրջ, թե արդյոք այս տարբերակումն անաչառ և ողջամիտ հիմնավորում ունի՞:

75. Պատասխանող պետության համաձայն՝ գանգատի առարկա դարձած տարբերակող վերաբերմունքը նպատակ ունի սահմանափակել «առաջնային ներգաղթը» և հիմնավորված է գործազրկության բարձր մակարդակի պայմաններում աշխատանքի ներքին շուկան պաշտպանելու անհրաժեշտությամբ: Պատասխանող կողմն առավելապես հիմնվում էր այս բնագավառում մասնակից պետություններին վերապահված հայեցողության սահմանների վրա և հատուկ շեշտադրում էր այն, ինչ իր բնորոշմամբ վիճակագրական փաստ էր, ասել է թե՝ տղամարդիկ ավելի մեծ հավանականությամբ աշխատանք կփնտրեն, քան կանայք, ինչի արդյունքում արական սեռի ներգաղթյալներն ավելի մեծ ազդեցություն կունենան աշխատանքի շուկայի վրա, քան իգական սեռի ներգաղթյալները: Ավելին, մասնակից պետության ներկայացմամբ՝ 1980 թ. կանոնների շնորհիվ Միացյալ Թագավորությունում բնակություն հաստատելու թույլտվություն ստացած ամուսինների տարեկան թիվը նվազել է մոտ 5700, ինչը նշանակալի է համարվում: Այս իրողությունը հատկապես ընդգծվում է, երբ նվազումը դիտարկվում է մի քանի տարվա կտրվածքով կուտակային արդյունքի և բնակության թույլտվություն ստացած անձանց ընդհանուր թվի համեմատ:

Այս տեսակետը վիճարկվել է դիմողների կողմից: Նրանց կարծիքով՝ պատասխանող պետության դիրքորոշումն անտեսում է կանանց դերը և այն հանգամանքը, որ տղամարդկանցից շատերը կարող են նաև ինքնազբաղ լինել և նույնիսկ աշխատանք փնտրելու փոխարեն նոր աշխատատեղեր ստեղծել, ինչպես երևում է պրն Բալկանդալիի օրինակից: Ավելին, պատասխանող պետության բերված թիվը՝ 5700 անձ, աննշան է և ամեն դեպքում մի շարք պատճառներով հուսալի տվյալ չէ:

76. Պատասխանող պետությունը նաև պնդում է, որ խնդրո առարկա միջոցները հիմնավորված էին ներգաղթի արդյունավետ վերահսկում իրականացնելու անհրաժեշտությամբ, ինչը ծառայում էր երկրում արդեն հաստատված ներգաղթյալների և տեղացի ազգաբնակչության շահերին: Ներգաղթը հասարակությունում լարվածության պատճառ էր դառնում, իսկ կառավարության նպատակն էր պահպանել հանրային հանգիստը և խիստ ու արդար վերահսկողության միջոցով լավ հարաբերություններ ապահովել Միացյալ Թագավորությունում բնակվող տարբեր համայնքների միջև:

Այս փաստարկին ի պատասխան դիմողները հայտարարել են, որ Միացյալ Թագավորության ազգաբնակչության ռասայական նախապաշարմունքները չեն կարող ներկայացվել որպես խնդրո առարկա միջոցների հիմնավորում:

77. Իր զեկույցում հանձնաժողովը հայտնեց, որ այլ խմբերի ներգաղթի, տարեկան արտագաղթի, գործազրկության և տնտեսական գործունեության ցուցանիշների համատեքստում Միացյալ Թագավորությունում բնակություն հաստատելու նպատակով թույլտվություն ստացած ամուսինների թվի նվազումը տարեկան մոտ 2000 անձով (այդ ժամանակահատվածում կառավարության գնահատականներով) աշխատանքի շուկայի վրա գործած իր ազդեցությամբ չուներ այն ծավալը կամ նշանակությունը, որով հնարավոր լիներ արդարացնել սեռի հատկանիշով տարբերակող վերաբերմունքը և դրա բացասական հետևանքները տուժած կանանց ընտանեկան կյանքի համար: Ավելին, արական սեռի ներգաղթյալներին իրենց ընտանիքների հետ վերամիավորվելու հնարավորություն տալու արմատացած սկզբունքը, որը պատասխանող պետությունը վկայակոչել է որպես կանանց ընդունելու, իսկ ամուսիններին բացառելու քաղաքականության պատճառաբանություն, այլևս չի համապատասխանում սեռերի նկատմամբ հավասար վերաբերմունքի արդի պահանջներին: Չի ապացուցվել նաև, որ խնդրո առարկա կանոնները նպաստել են միջռասայական հարաբերություններին կամ ներգաղթի վերահսկողությանը, քանի որ դրանք կարող են դժգոհություն առաջացնել ներգաղթյալ բնակչության որոշ հատվածներում: Միաժամանակ չի ապացուցվել, որ քաղաքացի չհանդիսացող ամուսինների չարաշահումները սահմանափակելն առավել դժվար է, քան ներգաղթյալների այլ խմբերի չարաշահումները: Հանձնաժողովը միաձայն եզրակացրեց, որ դիմողների ընտանեկան կյանքի իրավունքի իրացումն ապահովելու հարցում արձանագրվել է 14-րդ հոդվածին հակասող խտրականություն՝ սեռի

հատկանիշով, քանի որ համապատասխան կանոնների կիրառումն անհամաչափ է դրանցով ենթադրաբար հետապնդվող նպատակներին:

Դատարանում անցկացվող լսումների ընթացքում հանձնաժողովի պատվիրակը նշեց, որ այս եզրակացությունը չէր կարող փոխվել կառավարության՝ բնակություն հաստատելու թույլտվություն ստացած ամուսինների տարեկան նվազեցման վերաբերյալ թվի արդյունքում, որ կազմում էր շուրջ 5700 անձ:

78. Դատարանն ընդունում է, որ 1980 թ. կանոնները նպատակ էին հետապնդում պաշտպանելու աշխատանքի ներքին շուկան: Այն փաստը, որ, դիմողների պնդմամբ, այս նպատակին ավելի կնպաստեր «նախնիները Միացյալ Թագավորությունից» և «աշխատանքային արձակուրդ» կանոնների վերացումը, ամենևին չի փոփոխում այս եզրակացությունը: Միաժամանակ դատարանը խորհրդարանական բանավեճերում չի տեսնում այդ եզրակացությանը հակասող որևէ անհերքելի ապացույց, ինչի վրա հիմնվել էին նաև դիմողները: Ճիշտ է, որ Միացյալ Թագավորությունում գործազրկությունը 1980 թ. ավելի ցածր էր, քան հետագա տարիներին, սակայն այն արդեն հասել էր զգալի մակարդակի, և նախորդ տարիների համեմատ արձանագրվել էր գործազրկության զգալի աճ:

Թեև վերոնշյալ նպատակն անկասկած օրինական է, սակայն ինքնին չի արդարացնում 1980 թ. կանոններով ամրագրված տարբերակման օրինականությունը՝ Միացյալ Թագավորությունում բնակվող արական և իգական սեռի ներգաղթյալների համար քաղաքացի չհանդիսացող նրանց կանանց կամ հարսնացուների մի կողմից և մյուս կողմից՝ քաղաքացի չհանդիսացող նրանց ամուսինների կամ փեսացուների մուտք գործելու և այնտեղ բնակվելու թույլտվություն ստանալու հնարավորության առումով:

Թեև մասնակից պետություններին տրված է որոշակի «հայեցողության սահման»՝ գնահատելու, թե արդյոք և ինչ աստիճանով են այլ նման պայմաններում առկա տարբերություններն արդարացնում տարբերակող մոտեցումը, սակայն այս սահմանի չափերը տարբերվում են ըստ հանգամանքների, առարկայի և իրավիճակի (տե՛ս *Ռասմուսենի* (*Rasmussen*) գործով կայացրած վերոնշյալ վճիռը, շարք A, թիվ 87, էջ 15, պարբ. 40):

Խնդրո առարկա հարցի առնչությամբ կարելի է ասել, որ սեռերի հավասարության սկզբունքի առաջքաշումը Եվրոպայի խորհրդի մասնակից պետություններում այսօր կարևոր նպատակ է: Սա նշանակում է, որ շատ ծանրակշիռ փաստարկներ պետք է բերվեն, որպեսզի սեռի հատկանիշով վերաբերմունքի տարբերակումը համարվի կոնվենցիայի դրույթներին համապատասխան իրողություն:

79. Դատարանի կարծիքով՝ պատասխանող պետության փաստարկները, որոնք ամփոփված են վերոնշյալ 75-րդ պարբերությունում, համոզիչ չեն:

Գուցեև միջին հաշվարկով ճիշտ է, որ «տնտեսապես ակտիվ» աշխատանքային տարիքի տղամարդկանց տոկոսն ավելի բարձր է, քան կանանց տոկոսը, ընդ որում, Մեծ Բրիտանիայում տղամարդկանց այդ ցուցանիշը կազմում է 90 տոկոս, իսկ կանանց՝ 63 տոկոս, և այդ քանակական ցուցանիշները կիրառելի են նաև ներգաղթյալների դեպքում (վիճակագրական տվյալներով Հնդկաստանից ներգաղթած տղամարդկանց 86 և կանանց 41 տոկոսը, իսկ Կարիբյան ավազանի երկրներից և Գվիանայից ներգաղթած տղամարդկանց 90 և կանանց 70 տոկոսը):

Այնուամենայնիվ, սա չի վկայում Միացյալ Թագավորության աշխատանքի շուկայի վրա ներգաղթյալ կանանց և ամուսինների այդ տարբերությունների գործած ազդեցության փաստացի գոյության մասին, կամ նման ցուցանիշներ կարող էին արձանագրվել, եթե չլիներ 1980 թ. կանոնների ազդեցությունը: Այս առնչությամբ հարկ է հաշվի առնել նաև այլ գործոններ: «Տնտեսապես ակտիվ» արտահայտությունը միշտ չէ, որ նշանակում է աշխատանքի փնտրտուք: Ավելին, թեև աշխատանք փնտրելու հակվածություն ունեցող տղամարդկանց թիվն ավելի մեծ է, քան կանանց թիվը, սակայն մինչև 1980 թ. կանոնների ներմուծումը ներգաղթյալ կանանց թիվն արդեն իսկ զգալիորեն գերազանցում էր ներգաղթյալ ամուսինների թիվը, ընդ որում այդ կանանցից շատերը նույնպես «տնտեսապես ակտիվ» էին: Թեև այդ «տնտեսապես ակտիվ» կանանց զգալի մասն աշխատում էր կես դրույքով, սակայն չի կարելի թերագնահատել աշխատանքի ներքին շուկայի վրա ներգաղթյալ կանանց ազդեցությունը:

Ամեն դեպքում դատարանը համոզված չէ, որ այդուհանդերձ աշխատանքի ներքին շուկայի վրա տղամարդկանց և կանանց թողած ազդեցության հնարավոր տարբերությունը բավական նշանակալից է, որպեսզի արդարացնի գանգատի առարկա դարձած տարբերակող վերաբերմունքը Միացյալ Թագավորությունում բնակություն հաստատած անձի կնոջ կամ ամուսնու հետ վերամիավորվելու հարցում:

80. Այս համատեքստում պատասխանող պետությունն ընդգծում է 1980 թ. կանոններով ամրագրված ամուսինների ներգաղթի սահմանափակումների կարևորությունը, ինչը, ըստ գնահատականների, հանգեցնում է երկրում բնակություն հաստատելու թույլտվություն ստացող ամուսինների թվի նվազեցման տարեկան մոտ 5700 անձով, ոչ թե 2700 անձով, ինչպես նշվել է հանձնաժողովի զեկույցում:

Որևէ եզրահանգում չանելով 5700 թվի ճշգրտության վերաբերյալ՝ դատարանը նկատում է, որ այդ ժամանակահատվածում ենթադրյալ նվազեցումը համընկավ Միացյալ Թագավորությունում գործազրկության ցուցանիշի զգալի աճի հետ, և պատասխանող պետությունն ընդունեց, որ վերոնշյալ կրճատման մի մասը պայմանավորված էր տնտեսական պայմաններով, ոչ թե հենց 1980 թ. կանոններով:

Ամեն դեպքում վերոնշյալ 79-րդ պարբերությունում բերված պատճառներով այս նվազումը չի արդարացնում կանանց և տղամարդկանց նկատմամբ տարբերակված վերաբերմունքի գոյությունը:

81. Դատարանն ընդունում է նաև պատասխանող պետության այն պնդումը, որ 1980 թ. կանոնները նպատակ ունեին նպաստելու հասարակությունում կարգուկանոնի հաստատմանը: Այդուհանդերձ, դատարանը համոզված չէ, որ նշված կանոններում ամրագրված տարբերակումը ամուսինների և կանանց միջև ծառայում է այդ նպատակին:

82. Մնում է պատասխանող պետության բերած այն ավելի ընդհանուր փաստարկը, որ, մասնավորապես, Միացյալ Թագավորությունը 14-րդ հոդվածի խախտում թույլ չի տվել այն հանգամանքի շնորհիվ, որ պետությունը որոշ առումներով ավելի մեծահոգի է գտնվել երկրում բնակություն հաստատած տղամարդկանց քաղաքացի չհանդիսացող կանանց և հարսնացուներին երկիր թողնելու առումով, քան պահանջում էր կոնվենցիան:

Դատարանը չի կարող ընդունել այս փաստարկը: Դատարանը կցանկանար ընդգծել, որ 14-րդ հոդվածն ուղղված է կոնվենցիայով պաշտպանված իրավունքների իրացման հարցում խտրականությունից խուսափելուն այնքանով, որքանով այդ իրավունքների նկատմամբ կոնվենցիայով նախատեսված պահանջները կարող են բավարարվել այլ եղանակներով: 14-րդ հոդվածի շրջանակներում խտրականության գաղափարն ընդգրկում է ընդհանուր դեպքեր, երբ անձը կամ խումբն առանց պատշաճ հիմնավորման արժանանում է մեկ այլ խմբի համեմատ պակաս նպաստավոր վերաբերմունքի, եթե նույնիսկ առավել նպաստավոր վերաբերմունք կոնվենցիայով չի պահանջվում:

83. Այսպիսով, դատարանը եզրակացնում է, որ դիմողները տուժել են սեռի հատկանիշով խտրականությունից՝ ի խախտում 14-ր հոդվածի՝ 8-րդ հոդվածի համակցությամբ:

Գ. ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՌԱՍԱՅԻ ՀԱՏԿԱՆԻՇՈՎ

84. Ռասայի հատկանիշով ենթադրյալ խտրականության առնչությամբ դիմողները հիմնվել են հանճնաժողովի փոքրամասնության կարծիքի վրա: Ի թիվս այլ փաստարկների, դիմողները վկայակոչել են Միացյալ Թագավորության ներգաղթի օրենսդրության ողջ նախապատմությունը:

Այս պահանջին ի պատասխան պետությունը ներկայացրել է այն փաստարկը, որ 1980 թ. կանոնները չունեին ռասայական դրդապատճառ, այլ միայն հետապնդում էին «առաջնային ներգաղթը» սահմանափակելու նպատակ:

Հանձնաժողովի մեծամասնությունը եզրակացրեց, որ այս հայեցակետով 14-րդ հոդվածի խախտում չի արձանագրվել: Ներգաղթային քաղաքականությունների մեծ մասը սահմանափակում է ազատ մուտքի իրավունքը և տարբերակում դնում անձանց քաղաքացիության հիման վրա, ինչն անուղղակիորեն ենթադրում է տարբերակում ռասայի, էթնիկական ծագման և գուցե մաշկի գույնի հատկանիշով: Թեև մասնակից պետությունը չի կարող իրականացնել «զուտ ռասիստական բնույթ» կրող քաղաքականություն, սակայն իր հետ առավել սերտ կապեր ունեցող երկրների քաղաքացիների նկատմամբ նախապատվական վերաբերմունքը «ռասայական խտրականություն» չէ: Միացյալ Թագավորությունում նշված կանոնների գործնական կիրառման նպատակը չէր նշանակում, որ դրանք ռասայական խտրականություն ցուցաբերելու պատճառաբանությամբ էին անընդունելի, քանի որ ռասայի հատկանիշով տարբերակող վերաբերմունքի ապացույցներ չկան:

Մյուս կողմից՝ հանձնաժողովի փոքրամասնությունը նշեց, որ կանոնների հիմնական նպատակն էր կանխել ներգաղթը Նոր համագործակցության երկրներից և Պակիստանից: Սա ամենևին պատահական չէր, քանի որ օրենսդրության պատմությունից երևում է, որ մտադրություն կար «կրճատել գունավոր ներգաղթյալների թիվը»: Այս կանոններն իրենց ազդեցությամբ և նպատակով անուղղակիորեն ռասիստական բնույթ են ունեցել, և, հետևաբար, այս հայեցակետով տիկին *Աբդուլազիզի* (*Abdulaziz*) և տիկին *Կաբալեսի* (*Cabales*) գործերում արձանագրվել է 14-րդ հոդվածի խախտում:

85. Այս առումով դատարանը համամիտ է հանձնաժողովի մեծամասնության հետ:

1980 թ. կանոնները, որոնք կիրառելի են Միացյալ Թագավորություն մուտք գործելու և այնտեղ բնակվելու ցանկություն ունեցող առհասարակ բոլոր «ոչ քաղաքացիների» նկատմամբ, անձանց կամ խմբերի միջև ռասայի կամ էթնիկական ծագման հիման վրա տարբերակում մտցնող դրույթներ չէին պարունակում: Կանոնների 2-րդ կետում ընդգրկված էր ներգաղթի պաշտոնյաներին ուղղված հատուկ մի հրահանգ, այն է՝ իրականացնել պարտականությունները՝ անկախ երկիր գործելու մտադրություն ունեցող անձի ռասայից, մաշկի գույնից կամ կրոնից, և նշված կանոնները կիրառվել են այդ սկզբունքով աշխարհի բոլոր մասերից ներգաղթի իրավունք հայցող անձանց նկատմամբ՝ նրանց ռասայից կամ ծագումից անկախ:

Դատարանն արդեն ընդունել էր, որ 1980 թ. կանոնների հիմնական և բուն նպատակն էր կրճատել «առաջնային ներգաղթը» և պաշտպանել աշխատանքի շուկան գործազրկության բարձր տոկոսի պայմաններում: Դա նշանակում է, որ ներգաղթի սահմանափակման խստացումը հիմնավորված էր ոչ թե երկիր մուտք գործելու ցանկություն ունեցող անձանց ծագման դեմ եղած առարկություններով, այլ տվյալ ժամանակահատվածում ներգաղթի հոսքը սանձելու անհրաժեշտությամբ:

Այն հանգամանքը, որ նշված կանոնների կարգավորման առարկա դարձած զանգվածային ներգաղթի աղբյուրը Նոր համագործակցության երկրներն էին և Պակիստանը, ինչպես նաև այն, որ տվյալ ժամանակահատվածում այդ կանոններն ավելի քիչ էին անդրադարձել սպիտակամորթ, քան այլ անձանց վրա, բավարար պատճառ չէ դրանք ռասիստական կանոններ համարելու համար, քանի որ ստեղծված իրավիճակը բխում էր ոչ թե 1980 թ. կանոնների բովանդակությունից, այլ այն հանգամանքով էր պայմանավորված, որ ներգաղթելու ցանկություն ունեցող անձանց շրջանում որոշ էթնիկական խմբեր առավել մեծ թիվ էին կազմում:

Վերոշարադրյալ հանգամանքներից ելնելով՝ դատարանը եզրակացնում էր, որ 1980 թ. կանոններով ռասայի հատկանիշով տարբերակում չի նախատեսվել, և հետևաբար դրանք խտրական չեն եղել:

86. Համապատասխանաբար, դատարանը եզրակացնում է, որ դիմողները ռասայական խտրականության զոհ չեն դարձել:

Դ. ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՈՎ

87. Տկն Բալկանդալին պնդել է, որ ինքը տուժել է նաև ծննդյան հատկանիշով խտրականությունից նրանով, որ 1980 թ. կանոններով Միացյալ Թագավորությունում, ինչպես նաև նրա գաղութներում բնակություն հաստատած կանանց՝ նշված երկրի քաղաքացի չհանդիսացող ամուսինները կարող էին Մեծ Թագավորությունում կացության թույլտվություն ստանալ միայն այն դեպքում, եթե այդ կանայք կամ նրանց ծնողներից մեկը ծնված լինեին այդ երկրում:

Այն հարցը, որ 1980 թ. կանոններով հաստատվել է ծննդյան հատկանիշով վերաբերմունքի տարբերակում, չի վիճարկվել, ընդ որում, քննարկման առանցքային առարկան է եղել նշված տարբերակման անաչառ և ողջամիտ հիմնավորումը:

Հանձնաժողովի զեկույցի հիման վրա տկն Բալկանդալին հավելել է, որ հետագա ներգաղթի կանոններից նշված տարբերակման վերացումը վկայում է, որ այն նախկինում չի հիմնավորվել:

Պետությունը հայտնել է, որ խնդրո առարկա տարբերակումը հիմնավորված էր այն մտահոգությամբ, որ Միացյալ Թագավորության հետ սերտ կապեր ունեցող կանայք զերծ մնան այն դժվարություններից, որոնց նրանք կբախվեին, եթե ստիպված լինեին տեղափոխվել արտասահման՝ այդտեղ իրենց ամուսինների հետ բնակություն հաստատելու նպատակով:

Հանձնաժողովը համարում էր, որ թեև այս տարբերակումը հետագայում կվերացվի, սակայն հանրային շահերը և ներգաղթի կանոնների գուցե ժամանակավոր բնույթը պահանջում էին, որ նա կարծիք հայտնի: Հանձնաժողովն արտահայտել է այն տեսակետը, որ միայն ծննդյան հատկանիշի վրա հիմնված տարբերակող վերաբերմունքը, որի դեպքում հաշվի չի առնվել անհատի անձնական իրավիճակը, ինչպես նաև նրա արժանիքները, եղել է 14-րդ հոդվածը խախտող խտրականություն:

88. Դատարանը չի կարող համաձայնել հանձնաժողովի կարծիքի հետ: Պետության կողմից նշված նպատակը, անշուշտ, օրինական է ըստ 14-րդ հոդվածի: Ճիշտ է, որ տկն Բալկանդալիի նման, տվյալ երկրում մի քանի տարի բնակություն հաստատած անձը նույնպես կարող է սերտ կապեր ձևավորել, եթե նույնիսկ նա այդտեղ չի ծնվել: Սակայն առհասարակ գոյություն ունեն համոզիչ սոցիալական պատճառներ ծննդյամբ պայմանավորված տվյալ երկրի հետ կապ ունեցող անձանց նկատմամբ հատուկ վերաբերմունք սահմանելու համար: Հետևաբար, տարբերակող վերաբերմունքը պետք է դիտվի որպես անաչառ և ողջամիտ հիմնավորում, և, մասնավորապես, չի ապացուցվել, որ նշված տարբերակման արդյունքում խախտվել է համաչափություն սկզբունքը: Այս եզրակացության վրա չի ազդում այն փաստը, որ ներգաղթի կանոնները հետագայում լրամշակվել են:

89. Այսպիսով, դատարանը վճռել է, որ տկն Բալկանդալին ծննդյան հատկանիշով խտրականությունից չի տուժել:

…..

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

Վճռել է, որ սույն գործում կիրառելի էր 8-րդ հոդվածը, սակայն առանձին վերցրած՝ այն չի խախտվել,

Վճռել է, որ սույն գործում կիրառելի էր 14-րդ հոդվածը,

Վճռել է, որ 14-րդ հոդվածը 8-րդ հոդվածի համակցությամբ խախտվել է դիմողներից յուրաքանչյուրի նկատմամբ սեռի հատկանիշով դրսևորված խտրականության պատճառով:

Սույն գործով վճիռը շատ կարևոր է միայն սեռի հատկանիշի վրա հիմնված վերաբերմունքի տարբերակման նկատմամբ դատարանի վճռի առումով: Զեկույցի 78-րդ կետում նշվում է, որ պետություններն ստանձնում են ապացույցի պարտավորություն 14-րդ հոդվածի պահանջներով նմանօրինակ տարբերակումը հիմնավորելու հարցում:

4 *«Շմիդտն ընդդեմ Գերմանիայի» (Schmidt v Germany,* A.291-B (1994), 18 EHRR 513) գործով մի անձ վիճարկել է Բադեն-Վյուրթեմբերգում բնակվող տղամարդկանց վրա դրված տեղական հրշեջ ջոկատում ծառայելու կամ ծառայության դիմաց մուծում կատարելու իրավական պարտականությունը: Նա պնդել է, որ տղամարդկանց վրա նման բեռ դնելը վերածվում էր, ի թիվս այլ հոդվածների, 14-րդ

հոդվածի համակցությամբ, 4-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետով սահմանված իրավունքների խախտման: Այդ կապակցությամբ պետք է ասել, որ հրշեջ ջոկատում ծառայելու կամ հակառակ դեպքում մուծում կատարելու պարտավորությունը չէր տարածվում նշված երկրամասում բնակվող կանանց վրա, իսկ վերոնշյալ դրույթով պետություններին թույլատրվում է պահանջել, որ անձը «կատարի ցանկացած աշխատանք կամ մատուցի ցանկացած ծառայություն, որոնք կազմում են բնականոն քաղաքացիական պարտավորությունների մի մասը»: Վեց կողմ և երեք դեմ ձայներով՝ դատարանը պաշտպանել է դիմողի՝ անօրինական խտրականության մասին պնդումը:

25. Դիմողի համաձայն՝ երկու սեռերի ներկայացուցիչների իրավահավասարությունը որոշելու հարցում մասնակից պետությունները չեն օգտվում իրենց հայեցողության սահմաններից: Նա պնդել է, որ հրշեջ ջոկատում ծառայությունը համադրելի է ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց համար, և որ երկու սեռերի կենսաբանական տարբերությունները կարելի էր հաշվի առնել բազմազան առաջադրանքների խելամիտ բաժանման միջոցով: Վերաբերմունքի տարբերակումը տվյալ համատեքստում չի կարող պատճառաբանվել միայն կանանց պաշտպանելու մտահոգությամբ: 1991 թ. դրությամբ Գերմանիայի հրշեջ ջոկատներում ծառայել է 68612 կին, և նույնիսկ Բադեն-Վյուրթեմբերգում 1978 թ. ի վեր կանայք ծառայել են հրշեջ ջոկատներում: Ծառայությունից ազատվելու փոխարեն մուծումը զուտ դրամական բնույթ է կրել, քանի որ Բադեն-Վյուրթեմբերգում որևէ տղամարդ երբեք չի կանչվել ծառայության: Ամեն դեպքում տեղի է ունեցել խտրականություն, քանի որ կանայք տղամարդկանց նման կարող էին կատարել անհրաժեշտ մուծումը:

26. Հանձնաժողովն ըստ էության ընդունել է դիմողի փաստարկը:

27. Մյուս կողմից, պատասխանող պետությունը կարծում է, որ տարբերակող վերաբերմունքի հիմքում ընկած են անաչառ և ողջամիտ պատճառներ: Հրշեջ ջոկատում ծառայությունը Բադեն-Վյուրթեմբերգի ավանդական քաղաքացիական պարտականություններից է, որը դաշնային սահմանադրական դատարանը բնորոշել է որպես «հանրային իրավական պարտականությունը կատարելու իսկական և հնարավոր պարտավորություն»: Պետությունը պնդել է, որ նշված պարտականությունը միայն արական սեռի ներկայացուցիչների համար պարտադիր դարձնելու հարցում օրենսդրությամբ հաշվի են առնվել հրշեջ ջոկատում ծառայության հատուկ պահանջները, ինչպես նաև կանանց ֆիզիկական և մտավոր առանձնահատկությունները: Տվյալ դեպքում պետությունը հետապնդել է միայն կանանց պաշտպանելու նպատակ: Ծառայության փոխարեն մուծումը զուտ հատուցողական բնույթ է կրում:

28. Դատարանը նշում է, որ Գերմանիայի երկրամասերից մի քանիսում տվյալ բնագավառում տարբեր պարտականություններ չեն դրվում երկու սեռերի ներկայացուցիչների վրա, և նույնիսկ Բադեն-Վյուրթեմբերգում կանայք ընդունվում են հրշեջ ջոկատում կամավոր ծառայության:

Անկախ այն հանգամանքից՝ այժմ կարո՞ղ է որևէ կերպ հիմնավորվել հրշեջ ջոկատում պարտադիր ծառայությանն առնչվող հարցերում տղամարդկանց և կանանց նկատմամբ տարբերակող վերաբերմունքը, թե ոչ, տվյալ դեպքում վճռական գործոն է այն հանգամանքը, որ նման ծառայության անցնելու պարտավորությունը բացառապես օրինական է և տեսական: Հաշվի առնելով բավականաչափ թվով կամավորների մշտական առկայությունը՝ որևէ տղամարդ գործնականում պարտավոր չէ ծառայել հրշեջ ջոկատում: Ի տարբերություն օրենքի՝ գործնականում դրամական մուծումը կորցրել է իր փոխհատուցման բնույթը և դարձել միակ արդյունավետ պարտականությունը: Նման նյութական փոխհատուցման պարտականությունը սահմանելու պարագայում գրեթե չի կարելի հիմնավորել սեռի հատկանիշով վերաբերմունքի տարբերակումը:

29. Համապատասխանաբար, տեղի է ունեցել կոնվենցիայի, 14-րդ հոդվածի համակցությամբ, 4-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի խախտում:

14-րդ հոդվածին հակասող սեռի հատկանիշով խտրականությունից տուժելու մասին դատարանի որոշման օրինակ է *«Ուիլիսն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Willis v United Kingdom*) գործով 2002 թ. հունիսի 11-ին կայացված վճիռը: Դիմողը և նրա կինն ունեին երկու զավակ, և նրանց ամուսնական կյանքի ընթացքում կինն է հիմնականում ապահովել ընտանիքի եկամուտը: Աշխատելու ժամանակ կինն է կատարել սոցիալական ապահովագրության բոլոր վճարները: Դժբախտաբար, կինը հիվանդացել է քաղցկեղով, և 1995 թ. նոյեմբերին դիմողը թողել է աշխատանքը նրան խնամելու համար: Կինը մահացել է 1996 թ. հունիսին: Այնուհետև նրա ամուսինը դիմել է նպաստների վճարման վարչություն՝ ընտանիքի համար հոգ տանող այրուն հասանելիք նպաստ ստանալու համար: Նշված նպաստում ընդգրկվել են այրիների համար նախատեսված միանվագ վճարը 1.000 ֆունտ ստեռլինգի չափով, այրիացած մայրերի համար նախատեսված 72.50 ֆունտ ստեռլինգի չափով շաբաթական նպաստը, ինչպես նաև նրանց յուրաքանչյուր զավակի համար սահմանված դրամական օժանդակությունը: Վարչությունը տեղեկացրել է դիմողին, որ նման նպաստները նախատեսված չեն կնոջը կորցրած տղամարդկանց համար: Վերջինս գանգատ է

ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ պնդելով, որ խախտվել է 14-րդ հոդվածը՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համակցությամբ: Մեծ պալատը միաձայն վճռել է, որ այրիների նպաստները 1-ին հոդվածի տիրույթի մեջ մտնող նյութական իրավունքներ են: 14-րդ հոդվածի կիրառման առնչությամբ դատարանը վճռել է հետևյալը:

40. Դատարանը նշում է, որ դիմողի կինն աշխատել է նրա հետ ամուսնացած լինելու հիմնական ժամանակահատվածում և կատարել աշխատավարձ ստացող անձի սոցիալական ապահովագրության բոլոր վճարումները ճիշտ այնպես, ինչպես նման իրավիճակում հայտնված տղամարդը: Դատարանն ընդգծում է նաև, որ 1995 թ. նոյեմբերի 3-ին դիմողը թողել է աշխատանքը՝ իր կնոջը խնամելու և զավակներին պահելու նպատակով, և քանի որ նա համեմատաբար քիչ էր վաստակում, նրան ձեռնտու չէր կնոջ մահից հետո աշխատանքի վերադառնալ կես դրույքով: Այս բոլոր փաստարկներից անկախ՝ դիմողն իրավունք ուներ ստանալու այրիացած կանանց համեմատ նշանակալիորեն ավելի փոքր նպաստ:

41. Դատարանն ընդգծում է, որ իշխանությունների՝ այրիների նպաստը և այրիացած մայրերին հասանելիք դրամական օժանդակությունը դիմողին վճարելու մերժման հիմքում ընկած է բացառապես այն փաստը, որ դիմողը տղամարդ է: Չեն վիճարկվել այն հարցերը, որ նշված նպաստը ստանալու համար դիմողը չի բավարարել օրենքով սահմանված այլ պայմանները, և նպաստը ստանալու իրավունքի տեսանկյունից նա հայտնվել է նույն իրավիճակում, ինչ այրիացած կանայք:

42. Դատարանի կարծիքով՝ այրիների նպաստի և այրիացած մայրերին հասանելիք դրամական օժանդակության իրավունքի հարցում կանանց և տղամարդկանց նկատմամբ վերաբերմունքի տարբերակումը, որից տուժել է դիմողը, որևէ «անաչառ կամ ողջամիտ հիմնավորում» չունի:

43. Համապատասխանաբար, տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համակցությամբ կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում:

1999 թ. ընդունված «Կենսաթոշակների և բարեկեցության բարձրացման քաղաքականության ոլորտում բարեփոխումների մասին» օրենքով այրիների նպաստը փոխարինվել է ընտանիքի հիմնական վաստակողին կորցնելու դիմաց հասանելիք նպաստով, ինչպես նաև այրիացած մոր և այլ ծնողին հասանելիք նպաստով: Վերջերս հաստատված նպաստները նախատեսված են այն տղամարդկանց և կանանց համար, ովքեր բավարարել են սահմանված պայմանները:

5 Դատարանը նմանօրինակ մոտեցում է դրսևորել նաև անձի ծննդյան օրինականության հատկանիշի վրա հիմնված վերաբերմունքի տարբերակման հարցում: Օրինակ՝ *«Ինզեն ընդդեմ Ավստրիայի» (Inze v Austria*, A.126 (1987) 10 EHRR 394) գործով դիմողն արտամուսնական զավակ էր, իսկ 1903 թ. ընդունված «Ընտանեկան ագարակների ժառանգման մասին» Կարինթի օրենքով *(Carinthian Hereditary Farms Act)* սահմանվել է, որ նման անշարժ գույք ժառանգելու առավելությունը ապօրինածին զավակների համեմատ պետք է տրվի օրինական զավակներին: Վերոնշյալ օրենսդրության կիրառմամբ Ավստրիայի դատարանները հրաժարվել են ճանաչել դիմողի իրավունքները նրա հանգուցյալ մոր ագարակի նկատմամբ, և ագարակը ժառանգել է դիմողի՝ օրինական ամուսնության շրջանակներում ծնված կրտսեր արյունակից եղբայրը: Դիմողը գանգատ է ներկայացրել հանձնաժողովին՝ պնդելով, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի (սեփականության իրավունք) համակցությամբ կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում: Վեց կողմ և չորս դեմ ձայների հարաբերակցությամբ հանձնաժողովի մեծամասնությունն արձանագրել է վերոնշյալ հոդվածի խախտում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միաձայն կայացրել է հետևյալ որոշումը:

41. Կոնվենցիան գործող փաստաթուղթ է, որը պետք է մեկնաբանվի ներկա պայմաններին համահունչ (բազմազան աղբյուրների շարքում տե՛ս *Ջոնսթոնի* (*Johnston*) գործով 1986 թ. դեկտեմբերի 18-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 112, էջ 25, պարբ. 53): Քաղաքացիական իրավունքների տեսանկյունից ամուսնության շրջանակներում և դրանից դուրս ծնված զավակների հավասարության հարցն այժմ կարևորվում է Եվրոպայի խորհրդի մի շարք անդամ պետություններում, ինչի մասին վկայում է 1975 թ. ընդունված Արտամուսնական զավակների իրավական կարգավիճակի մասին կոնվենցիան, որը ներկայումս կիրառվում է ինը անդամ պետություններում: 1980 թ. մայիսի 28-ին Ավստրիայի Հանրապետությունը վավերացրել է կոնվենցիան մեկ վերապահությամբ, որը, սակայն, չի առնչվում սույն գործի փաստերին: Համապատասխանաբար, պետք է բերել շատ ծանրակշիռ փաստարկներ, որպեսզի արտամուսնական ծննդյան հատկանիշով տարբերա-

կող վերաբերմունքը կոնվենցիայի հետ համատեղելի միջոց համարվի (տե՛ս *mutatis mutandis Աբդուլազիզի, Կաբալեսի և Բալկանդալիի* (*Abdulaziz, Cabales and Balkandali*) գործով վճիռը, շարք A, թիվ 94, էջ 38, պարբ. 78):

42. Պատասխանող պետությունը ներկայացրել է հետևյալ փաստարկները: Հիմնական ժառանգին ընտրելու չափանիշները որոշվել են այն փաստի հիման վրա, որ միայն մեկ ժառանգ կարող էր դառնալ ընտանեկան ագարակի սեփականատեր: Ավելին, նշված չափանիշների հիմքում ընկած էին անաչառ նկատառումներ, մասնավորապես, ժառանգման հարցում օրինական զավակին տրված նախապատվությունը համապատասխանել է հանգուցյալ անձի ենթադրյալ մտադրություններին: Ամեն դեպքում, Պրովինցիալ օրենքի 7-րդ բաժնի 2-րդ հոդվածի դրույթները կիրառելի են միայն կտակի բացակայության դեպքերում ժառանգման հարցը կարգավորելու համար, իսկ այդ դրույթներին առարկող անձը միշտ կարող էր կտակ կազմել:

Ավելին, ծննդյան չափանիշն արտացոլվել է գյուղական բնակչության համոզմունքներում, ինչպես նաև ագարակատերերի կյանքի սոցիալական ու տնտեսական պայմաններում: Այս դեպքում նույնպես, ի տարբերություն օրինական զավակների, արտամուսնական զավակները սովորաբար չեն դաստիարակվել իրենց ծնողների ագարակում և սերտ կապեր չեն հաստատել ագարակի հետ:

Ի վերջո, հարկավոր էր հաշվի առնել հատուկ վերաբերմունքը հանգուցյալ անձի ամուսնու նկատմամբ, որը սովորաբար իրավունք ուներ մնալու ագարակում և օգտվելու հիմնական ժառանգի խնամակալությունից:

43. Հանձնաժողովի օրինակով դատարանը համոզիչ չի համարում պետության փաստարկները, որոնց մեծ մասը հիմնված է հանգուցյալի ենթադրյալ մտադրությունների, արտամուսնական զավակների դաստիարակության վայրի, հանգուցյալի կենդանի ամուսնու ու նրանց օրինական զավակների փոխհարաբերությունների և նման հարցերով այլ ընդհանուր կամ վերացական նկատառումների վրա, որոնք երբեմն կարող են չհամապատասխանել իրականությանը: Օրինակ՝ պրն Ինգեն մինչև 23 տարեկանը դաստիարակվել և աշխատել է խնդրո առարկա ագարակում: Նմանօրինակ կանոնը չի կարող հիմնավորվել վերոնշյալ նկատառումներով:

Թեև ճիշտ է, որ դիմողի մայրը կարող էր կտակ կազմել նրա անունով, սակայն տվյալ դեպքում անփոփոխելի է այն փաստը, որ դիմողն օրենքով զրկվել է կտակ չթողած մոր մահից հետո ագարակը ժառանգելու հնարավորությունից:

44. Դատարանը կարծում է նաև, որ գյուղական բնակչության համոզմունքներին վերաբերող փաստարկում պարզապես արտացոլվում է ավանդական աշխարհայացքը: Պետությունն ինքն էլ ընդունել է գյուղական հասարակության ընթացիկ զարգացումները և համապատասխանաբար կազմել դրանք հաշվի առնող օրինագիծ: Հետագայում ընտանեկան ագարակը ժառանգելու իրավասությունը պետք է հիմնված լինի օբյեկտիվ հանգամանքների, մասնավորապես՝ ագարակային տնտեսություն վարելու պատրաստակամության և տվյալ հողատարածքում մանկությունն անցկացնելու փաստի վրա:

Դատարանը ցանկանում է հաստատել, որ առաջարկվող ուղղումները չեն վկայում, որ նախկին կանոնները հակասել են կոնվենցիային: Այնուամենայնիվ, ուղղումներից պարզ է դառնում, որ խնդրո առարկա օրենսդրության նպատակները կարող էին իրականացվել նաև ամուսնության շրջանակներում կամ դրանից դուրս ծննդյան հատկանիշից բացի այլ չափանիշների կիրառմամբ:

45. Դատարանը եզրակացրել է, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համակցությամբ կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում:

Ավելի վաղ դիտարկված *«Մարքսն ընդդեմ Բելգիայի»* (*Marckx v Belgium,* A.31 (1979) 2 EHRR 330) գործի շրջանակներում դատարանը նշել է հետևյալը.

…Երբ մշակվել է 1950 թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի նախագիծը, բազմաթիվ եվրոպական երկրներում թույլատրելի և ընդունված էր տարբերություն դնել «ապօրինի» և «օրինական» զավակ ունեցող ընտանիքների միջև: Այնուհանդերձ, դատարանը հիշեցնում է, որ սույն կոնվենցիան պետք է մեկնաբանվի ըստ ներկա իրադրության (*Թայրերի* (*Tyrer*) գործով վճիռ, A.26 (1978), պարբ. 31): Սույն գործով դատարանը չի կարող չզարմանալ այն փաստի վրա, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծ մասի ներպետական օրենսդրությունը զարգացել և շարունակում է համապատասխան միջազգային փաստաթղթերի հետ մեկտեղ զարգանալ մայրության անհերքելիության սկզբունքի (լատ. *mater semper certa est*) լիակատար իրավաբանական ճանաչման ուղղությամբ (պարբ. 41):

Ուստի, արդի ժամանակներում դատարանը մեծ կասկածամտությամբ է վերաբերվում կոնվենցիայի իրավունքների կիրառելիության ցանկացած տարբերակմանը, որի հիմքում ընկած է անօրինական ծննդյան հատկանիշը:

6 Դատարանը նույնանման մոտեցում է որդեգրել նաև կոնվենցիայի իրավունքների վրա բացասական ազդեցություն գործող քաղաքացիության հատկանիշով տարբերակող վերաբերմունքի նկատ-

մամբ: Օրինակ, *«Գայգուսուզն ընդդեմ Ավստրիայի»* (*Gaygusuz v Austria* (1996) 23 EHRR 365, Զեկույցներ 1996-IV) գործով դիմողը Թուրքիայի քաղաքացի էր, որը 1973-1984 թթ. աշխատել է Ավստրիայում: Մինչև 1987 թ. մարտը ներառյալ նա Ավստրիայի իշխանություններից ստացել է մի շարք սոցիալական նպաստներ, այդ թվում՝ գործազրկության և հիվանդության նպաստ: Այնուհետև նա դիմում է ներկայացրել իր թոշակը հատուկ դրամական օժանդակության կարգով բարձրացնելու համար: Իշխանությունները մերժել են նրա դիմումը, քանի որ օրենսդրության համաձայն՝ նման օժանդակությունը հասանելի էր միայն Ավստրիայի քաղաքացիություն ունեցող դիմողներին: 1987 թ. սեպտեմբերին դիմողը վերադարձել է Թուրքիա այնտեղ բնակություն հաստատելու մտադրությամբ: Պրն Գայգուսուզը գանգատ է ներկայացրել հանձնաժողովին՝ պնդելով, որ, ի թիվս այլոց, խախտվել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը՝ 14-րդ հոդվածի համակցությամբ: Հանձնաժողովը միաձայն որոշմամբ բավարարել է գանգատը: Հանձնաժողովի օրինակով դատարանը միաձայն արձանագրել է վերոնշյալ հոդվածի խախտում:

Դատարանը կարծում է, որ ներկա գործում կիրառելի օրենքով սահմանված հատուկ դրամական օժանդակություն ստանալու իրավունքը գույքական իրավունք է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում: Ուստի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վերոնշյալ դրույթը կիրառելի է հատուկ դրամական օժանդակություն ստանալու իրավունքի և «հարկեր կամ այլ վճարումներ մուծելու» պարտավորության կապը հիմք ընդունելու անհրաժեշտության բացակայության պայմաններում:

Ավելին, մասնակից պետություններին տրված են հայեցողության որոշակի սահմաններ՝ գնահատելու, թե արդյոք հավասար տարբեր իրավիճակներում արդարացվա՞ծ է տարբերակող վերաբերմունքը, և եթե արդարացված է, ապա՝ որքանով: Այնուհանդերձ, հարկ է ներկայացնել շատ ծանրակշիռ փաստարկներ, որպեսզի դատարանը համարի, որ բացառապես քաղաքացիության հատկանիշով հիմնավորված վերաբերմունքի տարբերակումը համատեղելի է կոնվենցիայի հետ:

Հետևելով հանձնաժողովի օրինակին՝ դատարանը նշել է, որ հատուկ դրամական օժանդակություն ստանալու հարցում ավստրիացիների ու Ավստրիայի քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ վերաբերմունքի տարբերակումը, որից տուժել է պրն Գայգուսուզը, որևէ «անաչառ և ողջամիտ պատճառաբանություն» չունի (պարբ. 41, 42 և 50):

7 *«Հոֆմանն ընդդեմ Ավստրիայի» (Hoffmann v Austria*, A.255-C (1993) 17, EHRR 293) գործի շրջանակներում դատարանն արձանագրել է կրոնի հատկանիշով խտրականություն: Դիմողը 1980 թ. ամուսնացել է իր հավատակից կաթոլիկ տղամարդու հետ: Այնուհետև նրանք ունեցել են երկու զավակ, որոնք կնքվել են որպես կաթոլիկ: Դիմող կինը թողել է կաթոլիկ կրոնը և դարձել Եհովայի վկա: 1983 թ. դիմողն ապահարզանի գործընթաց է սկսել իր ամուսնուց բաժանվելու համար: Նրա գործով դատաքննությունը դեռևս չէր ավարտվել, երբ դիմողը լքել է իր ամուսնուն՝ իր հետ վերցնելով երեխաներին: Ավելի ուշ Ավստրիայի ստորին ատյանի դատարանները դիմողին շնորհել են զավակների խնամակալության իրավունք: Սակայն գերագույն դատարանը ծնողական իրավունքներ է շնորհել դիմողի ամուսնուն՝ հաշվի առնելով, որ նրանց երեխաներն արդեն դաստիարակվում էին դիմողի նոր կրոնական համոզմունքներին համապատասխան, որոնցով կարգավորվող հարցերից է, օրինակ՝ արյան փոխներարկման դեմ առարկելը: Դիմողը գանգատ է ներկայացրել հանձնաժողովին՝ պնդելով, որ իր կրոնական համոզմունքների հատկանիշով խնամակալության իրավունքից իրեն զրկելով՝ պետությունը, ի թիվս այլոց, խախտել է 8-րդ հոդվածը՝ 14-րդ հոդվածի համակցությամբ: Ութ կողմ և վեց դեմ ձայների հարաբերակցությամբ հանձնաժողովն արձանագրել է վերոնշյալ հոդվածների խախտում: Հինգ կողմ և չորս դեմ ձայների աննշան տարբերությամբ դատարանը բավարարել է դիմողի հայցը:

Ուստի Եվրոպական դատարանն ընդունում է, որ դիմողի նկատմամբ դրսևորվել է վերաբերմունքի տարբերակում, և այդ տարբերակման հիմքում ընկած է կրոնական համոզմունքների հատկանիշը: Նշված եզրակացությունն արված է դիմողի կրոնի իրական հետևանքների վերաբերյալ գերագույն դատարանի նկատառումների ոճով և ձևակերպումով:

Անկախ հնարավոր հակափաստարկներից՝ ըստ էության միայն կրոնական համոզմունքների վրա հիմնված վերաբերմունքի տարբերակումն ընդունելի չէ (կետեր 33 և 36):

Չհամընկնող կարծիք արտահայտած դատավորներն ընդհանուր առմամբ նշել են, որ գերագույն դատարանը դիմողի կրոնական համոզմունքների հիման վրա խտրականություն չի դրսևորել նրա նկատմամբ, այլ կարևորել է դիմողի կրոնական համոզմունքների հետևանքները նրա երեխաների բարեկեցության համար:

Սույն գործով դատավորների տարաձայնությունը վկայում է տարբերակող վերաբերմունքի և 14-րդ հոդվածով անօրինական խտրականության հնարավոր աննշան սահմանազատման մասին:

8 Մեծ պալատը միաձայն արձանագրել է անօրինական խտրականություն *«Թլիմենոսն ընդդեմ Հունաստանի»* (*Thlimmenos v Greece*, 6/4/2000) գործով, որի դեպքում դիմողը նույնպես Եհովայի վկա էր: 1983 թ. նա մեղադրվել է զինվորական համազգեստ կրելուց հրաժարվելու համար և զինվորական դատարանի կողմից դատապարտվել չորս տարվա ազատազրկման: Դիմողի մերժումը պայմանավորված էր իր կրոնի խաղաղասեր համոզմունքներով: 1988 թ. նա հաջողությամբ հանձնել է պետական քննությունը արտոնագրված հաշվապահի մասնագիտությամբ զբաղվելու համար, ընդ որում՝ նա երկրորդն էր վաթսուն թեկնածուներից բաղկացած ցուցակում: Սակայն Հունաստանի Արտոնագրված հաշվապահների միավորման գործադիր խորհուրդը չի թույլատրել դիմողին զբաղվել իր մասնագիտությամբ նրա նախկին դատվածության պատճառով: Այնուհետև դիմողը գանգատ է ներկայացրել հանձնաժողովին՝ պնդելով, որ, ի թիվս այլոց, խախտվել է 14-րդ հոդվածը՝ 9-րդ հոդվածի համակցությամբ: Քսաներկու կողմ և վեց դեմ ձայների հարաբերակցությամբ՝ հանձնաժողովը բավարարել է գանգատը:

41. Դատարանը նշում է, որ դիմողը չի նշանակվել արտոնագրված հաշվապահ հրամանին չենթարկվելու և զինվորական համազգեստ հագնելուց հրաժարվելու համար նախկինում դատապարտվելու հետևանքով: Այսպիսով, նշված պաշտոնի այլ թեկնածուների համեմատ՝ դիմողի նկատմամբ տարբերակող վերաբերմունք է դրսևորվել, ինչը նրա՝ որպես դատվածություն ունեցող անձի կարգավիճակի հետևանքն է: Դատարանի կարծիքով՝ այնքանով, որքանով նշված տարբերակումը վերաբերում է որոշակի մասնագիտությամբ զբաղվելու հնարավորությանը, 14-րդ հոդվածի շրջանակը սովորաբար չի տարածվում վերաբերմունքի նման տարբերակման վրա, քանի որ կոնվենցիայում չի ամրագրվում մասնագիտության ազատությունը:

42. Այդուհանդերձ, դիմողի գանգատի առարկան այն չէ, որ նշված մասնագիտությամբ զբաղվելու թույլտվությունը կարգավորող կանոններում տարբերակում է կատարվում դատապարտյալների և այլ անձանց միջև: Ավելի շուտ նրա գանգատը վերաբերում էր այն հանգամանքին, որ համապատասխան օրենքում տարբերակում չի անցկացվում բացառապես կրոնական համոզմունքների պատճառով զանցանքներ գործած և այլ հանցագործությունների համար դատապարտված անձանց միջև: Այս համատեքստում դատարանը նշում է, որ դիմողը «Եհովայի վկաներ» խաղաղասեր համոզմունքներին հարող կրոնական խմբի անդամ է, և նրա գործում չկա որևէ փաստ առ այն, որ զինվորական համազգեստ հագնելուց հրաժարվելու միակ պատճառը՝ դիմողի կրոնով դրա արգելված լինելու մասին պնդումը, չի համապատասխանում իրականությանը: Ըստ էության, դիմողի փաստարկն այն է, որ նրա հանդեպ խտրականություն է ցուցաբերվում կրոնի ազատության հարցում, որը երաշխավորված է կոնվենցիայի 9-րդ հոդվածով, այն առումով, որ դիմողն արժանացել է նույն վերաբերմունքին, ինչ քրեական հանցագործության համար դատապարտված որևէ այլ անձ, քեպետև նրա դատապարտման հանգամանքը հենց կրոնի ազատության իրացման արդյունք է եղել: Գործն այս տեսանկյունից դիտարկելով՝ դատարանն ընդունում է, որ դիմողի գանգատի առարկա «փաստերի համակազմը», ըստ որի՝ նա արտոնագրված հաշվապահի պաշտոնի նշանակման շրջանակներում արժանացել է քրեական հանցանքի համար դատապարտված անձին վերապահված վերաբերմունքի, չնայած այն փաստին, որ նրա դատապարտման պատճառ դարձած հանցանքը դրդված է եղել նրա կրոնական համոզմունքներով, «ընկնում է կոնվենցիայի ամրագրված դրույթի տիրույթում», մասնավորապես 9-րդ հոդվածի շրջանակներում:

43. Այս եզրակացությանը գալու համար դատարանը, ի տարբերություն հանձնաժողովի, անհրաժեշտ չի համարում քննել, թե արդյոք դիմողի բուն դատապարտումը և հետագայում իշխանությունների կողմից նրա նշանակման մերժումը միջամտությո՞ւն է 9-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված նրա իրավունքներին: Մասնավորապես, դատարանը տվյալ դեպքում կարիք չունի անդրադառնալու այն հարցին, թե արդյոք 4-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) ենթակետում տեղ գտած ձևակերպումներից անկախ, նման պատժամիջոցի սահմանումը պարտադիր զինվորական ծառայությունից խղճի կամ կրոնական համոզմունքներով հրաժարվող անձանց նկատմամբ կարո՞ղ է ինքնին խախտել 9-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված մտքի, խղճի և կրոնի ազատությունը:

44. Դատարանը միևչ այժմ համարել է, որ 14-րդ հոդվածի՝ կոնվենցիայով նախատեսված իրավունքների իրացման հարցում խտրականությունից զերծ մնալու իրավունքը խախտվում է, երբ պետությունները նմանօրինակ իրավիճակներում տարբեր անձանց նկատմամբ ցուցաբերում են տարբեր վերաբերմունք՝ առանց որևէ անաչառ և ողջամիտ հիմնավորման (տե՛ս *Ինզեի* (*Inze*) գործով կայացրած վճռի 41-րդ կետը): Այդուհանդերձ, դատարանը համարում է, որ սա 14-րդ հոդվածով խտրականության արգելման միակ հայեցակետը չէ: Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների իրացման հարցում խտրականությունից զերծ մնալու իրավունքը խախտվում է նաև այն ժամանակ, երբ պետությունները, առանց անաչառ և ողջամիտ հիմնավորման, էապես տարբեր իրավիճակներում հայտնված անձանց նկատմամբ տարբեր վերաբերմունք չեն ցուցաբերում:

45. Դրանից հետևում է, որ կոնվենցիայի 14-րդ հոդվածը վերաբերում է դիմողի գանգատին և տվյալ գործի հանգամանքներում կիրառվում է կոնվենցիայի 9-րդ հոդվածի համակցությամբ:

46. Ուսումնասիրության ենթակա հաջորդ հարցն այն է, թե արդյոք պահպանվե՞լ է կոնվենցիայի 14-րդ հոդվածը: Հիմք ընդունելով իր նախադեպային բազան՝ դատարանը պետք է քննի, թե արդյոք դիմողի նկատմամբ դատապարտված այլ անձանց հանդեպ ցուցաբերվող վերաբերմունքից տարբեր վերաբերմունք չցուցաբերելու հանգամանքը հետապնդո՞ւմ էր օրինական նպատակ: Եթե իրականում նպատակն օրինական է եղել, ապա դատարանը պետք է որոշի, թե արդյոք համաչափության ողջամիտ կապ կա՞ օգտագործված միջոցի և հետապնդվող նպատակի միջև (տե՛ս *Ինզեի* (*Inze*) գործով կայացված վերոնշյալ վճիռը՝ նույն տեղում):

47. Դատարանը համարում է, որ սկզբունքորեն պետությունները կարող են օրինական նպատակ ունենալ՝ որոշ հանցագործների թույլ չտալով զբաղվել արտոնագրված հաշվապահի մասնագիտությամբ: Այդուհանդերձ, դատարանը նաև համարում է, որ ի տարբերություն քրեական այլ լուրջ հանցանքների համար դատապարտվածության դեպքերի՝ կրոնական կամ փիլիսոփայական պատճառներով զինվորական համազգեստ հագնելուց հրաժարվելը չի վկայում անազնվության կամ բարոյազրկության մասին, ինչը թույլ չի տա հանցանք գործած անձին զբաղվել այս մասնագիտությամբ: Ուստի բացառելը դիմողին այն հիմնավորմամբ, որ նա այդ մասնագիտության համար հարմար անձ չէ, արդարացված չի եղել: Դատարանը հաշվի է առել պատասխանող պետության այն փաստարկը, որ իրենց երկրի զինված ուժերում ծառայելուց հրաժարվող անձինք պետք է պատշաճ կերպով պատժվեն: Այնուամենայնիվ, դատարանը նաև նշում է, որ դիմողը զինվորական համազգեստ հագնելուց հրաժարվելու համար դատապարտվել է ազատազրկման և կրել է իր պատիժը: Այս պարագայում դատարանը համարում է, որ դիմողի հանդեպ ևս մեկ պատժամիջոց սահմանելն անհամաչափ է: Դրանից հետևում է, որ դիմողի՝ արտոնագրված հաշվապահի մասնագիտությամբ զբաղվելու արգելքն օրինական նպատակ չի հետապնդել: Արդյունքում դատարանը եզրակացնում է, որ դիմողի նկատմամբ քրեական հանցագործության դատապարտված այլ անձանց հանդեպ ցուցաբերվող վերաբերմունքից տարբեր վերաբերմունք չցուցաբերելու համար անհաչառ և ողջամիտ պատճառ չի եղել:

48. Ճիշտ է, որ պատասխանատու մարմիններն օրենքով պարտադրված էին մերժել դիմողի նշանակումը որպես արտոնագրված հաշվապահի և այլ տարբերակ չունեին: Այդուհանդերձ, այս իրողությունը չի կարող ազատել պատասխանող պետությանը կոնվենցիայով նախատեսված պատասխանատվությունից՝ չնայած լսումների ընթացքում պետության ներկայացուցչի բերած փաստարկին: Դատարանը երբեք չի բացառել օրենսդրական դրույթի և կոնվենցիայի ուղղակի հակասումը (ի թիվս այլ գործերի, տե՛ս *«Շասսանյոն ընդդեմ Ֆրանսիայի»* (*Chassagnou v France*, ECHR 1999-III) գործը: Սույն գործում դատարանը համարում է, որ պատասխանող պետությունը, ընդունելով համապատասխան օրենսդրական դրույթը, խախտել է դիմողի՝ կոնվենցիայի 9-րդ հոդվածով ամրագրված իրավունքի իրացման հարցում խտրականությունից զերծ մնալու իրավունքը: Նշված պետությունը խախտել է կոնվենցիան, քանի որ բացառություններ չի ընդգրկել քրեական հանցագործության համար դատապարտված անձանց նկատմամբ արտոնագրված հաշվապահի մասնագիտությամբ զբաղվելու արգելք նախատեսող կանոնում:

49. Ուստի դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում՝ 9-րդ հոդվածի համակցությամբ:

Կրոնական խտրականության հստակ դեպք արձանագրելուց զատ, այս վճիռը շատ կարևոր է կոնվենցիայով նախատեսված խտրականության գաղափարն ընդլայնելու առումով, ինչպես մանրամասնեցված է 44-րդ կետում: Ներկայումս անձանց նկատմամբ տարբեր իրավիճակներում տարբեր վերաբերմունք չցուցաբերելու իրողությունը նույնպես կարող է անօրինական համարվել: Սա 14-րդ հոդվածի շրջանակներում խտրականության սահմանված ձևի (այն է՝ նման իրավիճակներում անձանց նկատմամբ տարբեր վերաբերմունք ցուցաբերել) հակառակ հայեցակետն է: Հետևաբար, պետությունները կոնվենցիայով նախատեսված իրավունքներին առնչվող օրենքներ ընդունելիս կամ ծրագրեր իրականացնելիս պետք է ավելի ուշադիր լինեն անհատների մասնավոր հանգամանքների նկատմամբ:

«Փրեթիի ընդդեմ Միացյալ Թագավորության» (*Pretty v UK*) գործում կարելի է գտնել մի օրինակ, երբ պատասխանող պետությունը կարողացել է արդարացնել անձի նկատմամբ տարբեր վերաբերմունք չցուցաբերելու իրողությունը: 14-րդ հոդվածի շրջանակներում ներկայացրած իր գանգատով դիմողը պնդում էր, որ *Թլիմենոսի (Thlimmenos)* գործի նախադեպը պարտադրում էր ներպետական մարմիններին թույլատրել տիկին Փրեթիի ամուսնուն օրինական կերպով օգնել նրան ինքնասպանություն գործել, քանի որ տիկին Փրեթիի ֆիզիկական տկարությունը թույլ չէր տալիս նրան ինքնուրույն կատարել այդ գործողությունը: Դատարանը միաձայն որոշում կայացրեց, որ

89. Եթե նույնիսկ *Թլիմենոսի* (*Thlimmenos*) գործից բխող սկզբունքը կիրառելի է դիմողի իրավիճակի համար, այնուամենայնիվ, դատարանի կարծիքով, գոյություն ունի անաչառ և ողջամիտ հիմնավորում ինքնասպանություն գործելու ֆիզիկապես ի վիճակի և ֆիզիկապես այդ կարողությունից զուրկ անձանց միջև օրենքում տարբերակում չնախատեսելու համար: Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում դատարանը որոշեց, որ օրենքում բացառություններ չներմուծելու հիմնավոր պատճառներ կան՝ գոհացնելու նրանց, ով չափազանց խոցելի չի համարվում: 14-րդ հոդվածի տեսանկյունից կան նման հիմնավոր պատճառներ առանց օգնության ինքնասպանություն գործելու կարողություն ունեցող և չունեցած անձանց միջև տարբերակում չմտցնելու համար: Այս երկու կարգը բաժանող սահմանագիծը հաճախ կարող է շատ նուրբ լինել, և ինքնասպանություն գործելու կարողությունից զուրկ համարվող անձանց պատասխանատվությունից ազատումն օրենքի վերածելը լրորենջ կխաթարի 1961 թ. ընդունված փաստաթղթով երաշխավորված կյանքի պաշտպանությունը և կբարձրացնի չարաշահումների վտանգը:

90. Հետևաբար, սույն գործում 14-րդ հոդվածի խախտում չի արձանագրվել:

9 Մշտական գործող դատարանը վճռեց, որ անձի սեռական կողմնորոշման վրա հիմնված խտրական վերաբերմունքը հակասում է 14-րդ հոդվածին: *«Սալգեյրո Դա Սիլվա Մուտան ընդդեմ Պորտուգալիայի»* (*Salgueiro Da Silva Mouta v Portugal)* գործում (1999 թ. դեկտեմբերի 21-ի վճիռ) դիմողը 1990 թ. բաժանվել է կնոջից և համասեռական հարաբերություններով սկսել է ապրել մի տղամարդու հետ: Դրան հաջորդող տարում ապահարզանի ընթացակարգերի շրջանակներում դիմողն իր նախկին կնոջ հետ համաձայնության է եկել, որ իրենց համատեղ դուստրը լինելու է կնոջ ծնողական խնամքի տակ, սակայն հայրը պետք է նրա հետ շփվելու իրավունք ունենա: Այդուհանդերձ, նրա նախկին կինը դիմողին իր դստեր հետ շփվելու հնարավորություն չի տվել: Այնուհետև դիմողը ծնողական խնամքն իրեն փոխանցելու կարգադրություն տալու հայցով դիմել է Լիսաբոնի ազգային դատարան: Ընտանեկան դատարանը նման կարգադրություն է տվել, և դիմողի դուստրը վեց ամսվա ընթացքում՝ մինչև նրա ենթադրյալ առևանգումն իր մոր կողմից, ապրել է դիմողի և նրա զուգընկերոջ հետ: Դիմողի նախկին կինն ընտանեկան դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Լիսաբոնի վերաքննիչ դատարան, որը չեղյալ է համարել ստորին ատյանի որոշումը հետևյալ պատճառաբանությամբ.

Այն հանգամանքը, որ երեխայի հայրը, ընդունելով իր համասեռամոլության փաստը, ցանկանում է մեկ այլ տղամարդու հետ ապրել, իրականություն է, որը պետք է ընդունել: Հայտնի է, որ հասարակությունն ավելի և ավելի հանդուրժող է դառնում նման իրավիճակների նկատմամբ: Այդուհանդերձ, չի կարելի պնդել, որ նման մթնոլորտն ամենաառողջն է ու լավագույնս հարմարեցված երեխայի հոգեբանական, սոցիալական և մտավոր զարգացման համար՝ հատկապես հաշվի առնելով մեր հասարակությունում տիրող գերակշռող մոդելը, ինչպես իրավացիորեն ընդգծում է բողոքարկողը: Երեխան պետք է ապրի ավանդական պորտուգալական ընտանիքի միջավայրում, որը չի համապատասխանում նրա հոր ընտրած կենսակերպին, քանի որ վերջինս ապրում է մեկ այլ տղամարդու հետ՝ ամուսնու և կնոջ հարաբերություններում: Մեզ վերապահված չէ որոշել՝ համասեռամոլությունը հիվանդությո՞ւն է, թե՞ նույն սեռի ներկայացուցչի նկատմամբ սեռական կողմնորոշում: Երկու դեպքում էլ դա ոչ բնականոն իրողություն է, իսկ երեխաները չպետք է մեծանան ոչ բնականոն իրավիճակների ստվերում. այդ է թելադրում մարդու էությունը: Եկեք հիշենք, որ հենց [դիմողն էր], որ ճանաչեց այս փաստը 1990 թ. հուլիսի 5-ի իր դիմումում, որում նա նշել էր ամուսնական օջախը վերջնականապես լքելու և իր զուգընկերոջ հետ ապրելու մասին, ինչը՝ որպես որոշում, նորմալ չէ ընդունված չափանիշներով:

Դիմողը գանգատ ներկայացրեց Ստրասբուրգի Մարդու իրավունքների դատարան՝ պնդելով, որ երեխայի խնամակալության իրավունքն իր կնոջը հանձնելու որոշումը հիմնված է իր սեռական կողմնորոշման վրա, ուստի 14-րդ հոդվածի խախտում է՝ 8-րդ հոդվածի համակցությամբ: Մեծ պալատը միաձայն վճռեց հետևյալը.

28.…Դատարանը համապատասխանաբար հարկադրված է եզրակացնելու, որ դիմողը և Մ-ի մայրն արժանացել են տարբեր վերաբերմունքի, ինչը պայմանավորված է դիմողի սեռական կողմնորոշմամբ: Կոնվենցիայի 14-րդ հոդվածն անկասկած ընդգրկում է այդ գաղափարը: Դատարանը կրկնում է, որ այս առնչությամբ նշված դրույթում բերված ցուցակը բացատրական և սպառիչ չէ, ինչի մասին անգլերեն տեքստում վկայում են any ground such as, իսկ ֆրանսերենում՝ *notamment* բառերը (տե՛ս *«Էնգելը և այլք ընդդեմ Նիդեռլանդների»* (*Engel and Others v the Netherlands*) գործով 1976 թ. հունիսի 8-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 22, էջ 30-1, պարբ. 72):

2. Վերաբերմունքի տարբերակման հիմնավորում

29. Կոնվենցիայի ապահովման համար ստեղծված հաստատությունների նախադեպային պրակտիկայի համաձայն՝ վերաբերմունքի տարբերակումը խտրական է 14-րդ հոդվածով սահմանված իմաստով, եթե այն անաչառ և ողջամիտ

հիմնավորում չունի, ասել է թե՝ այն չի հետապնդում օրինական նպատակ, կամ եթե օգտագործված միջոցի և դրված նպատակի միջև ողջամիտ համաչափության կապ չկա:

30. Վերաքննիչ դատարանի որոշումը, անկասկած, օրինական նպատակ ուներ, մասնավորապես՝ պաշտպանել երեխայի առողջությունն ու իրավունքները, ուստի այժմ պետք է ուսումնասիրել, թե արդյոք բավարարվե՞լ է նաև երկրորդ պահանջը:

31. Ըստ դիմողի ներկայացրած նյութերի՝ կայացված վճռի ձևակերպումը հստակ վկայում է, որ երեխայի ծնողական խնամակալությունը մորը հանձնելու որոշումը հիմնված է եղել առավելապես հոր սեռական կողմնորոշման վրա, ինչն անխուսափելիորեն խտրականություն է առաջացնում նրա նկատմամբ՝ երկրորդ ծնողի համեմատ:

32. Պատասխանող պետությունը ներկայացրել է այն փաստարկը, որ ընդհակառակը՝ խնդրո առարկա որոշման մեջ դիմողի համասեռամոլության փաստը պարզապես հիշատակվել է: Վերաքննիչ դատարանի նկատառումները, որ մեջբերել է դիմողը, վճռի համատեքստում պարզապես սոցիոլոգիական կամ նույնիսկ վիճակագրական դիտարկումների բնույթ ունեն: Եթե նույնիսկ վճռի որոշ մասեր կարող էին ենթադրաբար այլ կերպ ձևակերպվել, միևնույն է, կոպիտ կամ անտեղի արտահայտություններն ինքնին կոնվենցիայի խախտում չեն առաջացնում:
...

35. Դատարանի կարծիքով՝ խնդրո առարկա վճռի վերոնշյալ հատվածները, պատասխանող պետության պնդմամբ, անհրաժեշտ կամ անհաջող լինելուց (ասել է թե՝ obiter dictum) զատ, ենթադրում են, որ հենց դիմողի համասեռամոլության փաստն է, որ վերջնական որոշման մեջ վճռական դեր է ունեցել: Այս եզրակացությունը հիմնավորված է այն փաստով, որ վերաքննիչ դատարանը դիմողի երեխայի հետ շփվելու իրավունքի առնչությամբ որոշում կայացնելիս զգուշացրել էր նրան դրսևորել այնպիսի վարվելակերպ, որ երեխան գլխի չընկնի, որ իր հայրն ապրում է մեկ այլ տղամարդու հետ «ամուսնու և կնոջ հարաբերություններով» (տե՛ս նույն տեղում):

36. Ուստի, ելնելով վերոնշյալից՝ դատարանը ստիպված է արձանագրել, որ վերաքննիչ դատարանը տարբերակում է անցկացրել՝ հիմնվելով դիմողի սեռական կողմնորոշմանն առնչվող նկատառումների վրա, իսկ նման տարբերակումն ընդունելի չէ կոնվենցիայի շրջանակներում (տե՛ս *mutatis mutandis Հոֆմանի* (*Hoffmann*) գործով կայացրած վերոնշյալ վճիռը, էջ 60, պարբ. 36):

Ուստի, դատարանը չի կարող հաստատել համաչափության առկայություն ողջամիտ կապ օգտագործված միջոցի և հետապնդվող նպատակի միջև և, հետևաբար, արձանագրում է 8-րդ հոդվածի խախտում՝ 14-րդ հոդվածի համակցությամբ:

«Լ.-Ն և Վ.-Ն ընդդեմ Ավստրիայի» (*L. and V. v Austria*) գործով 2003 թ. հունվարի 9-ին կայացրած վճռով դատարանն էլ ավելի մեծացրեց իր պաշտպանության աստիճանը սեռական կողմնորոշման վրա հիմնված խտրական վերաբերմունքից՝ պահանջելով «առանձնապես կարևոր հիմքեր» այս չափորոշչի օգտագործումը հիմնավորելու համար: Դիմողները 20-30 տարեկան հասակում փոխադարձ համաձայնությամբ համասեռական հարաբերություններ են ունեցել 14-18 տարեկան արական սեռի ներկայացուցիչների հետ: Ավստրիայի մինչև 2002 թ. գործող օրենսդրությամբ քրեական հանցանք էր համարվում 19 տարեկանից բարձր տղամարդկանց համար փոխադարձ համաձայնությամբ համասեռական հարաբերություններ ունենալ 14-18 տարեկան տղաների հետ: Փոխադարձ համաձայնությամբ հետերոսեքսուալ և լեսբիական հարաբերությունները մեծահասակների և 14 տարեկանից բարձր անձանց միջև քրեական հանցանք չէին համարվում: Դիմողները Ստրասբուրգի Մարդու իրավունքների դատարան գանգատ են ներկայացրել առ այն, որ Ավստրիայի դատարանների կողմից իրենց դատապարտումը պայմանական ազատազրկման 14-րդ հոդվածի խախտում է՝ 8-րդ հոդվածի համակցությամբ: Պալատը միաձայն կայացրեց հետևյալ որոշումը.

49. Գործի համար վճռական գործոն է որոշել, թե արդյոք գոյություն ունե՞ր անհաչառ և ողջամիտ հիմնավորում, թե ինչու 14-18 տարիքային խմբի պատանիները մեծահասակ տղամարդկանց հետ սեռական հարաբերություններից պաշտպանության կարիք ունեն, մինչդեռ նույն տարիքային խմբի աղջիկները մեծահասակ տղամարդկանց կամ կանանց հետ նույն հարաբերություններից պաշտպանության կարիք չունեն: Այս կապակցությամբ դատարանը կրկնում է, որ մասնակից պետություններին վերապահված հայեցողության սահմանների չափը տարբեր է՝ կախված գործի հանգամանքներից, առարկայից և նախապատմությունից: Այս առնչությամբ կարևոր գործոններից մեկը կարող է լինել մասնակից պետությունների օրենքներում ընդհանուր դրույթների գոյությունը կամ դրանց բացակայությունը:

50. Տվյալ դեպքում դիմողները նշել են (և այդ իրողությունը չի վիճարկվել պատասխանող պետության կողմից), որ Եվրոպայում համատարած է դառնում այն համոզմունքը, որ հարկ է նույն տարիքային շրջանակները նախատեսել փոխադարձ համաձայնությամբ տարասեռական, լեսբիական և համասեռական հարաբերությունների համար: Նմանապես հանձնաժողովը *Սադերլենդի* (*Sutherland*) [հանձնաժողովի, 1997 թ. հուլիսի 1-ի զեկույց] գործում նշել է, որ «փոխադարձ համաձայնության

տարիքի հարցում հավասար վերաբերմունքն այժմ ճանաչվում է Եվրոպայի խորհրդի մասնակից պետությունների ճնշող մեծամասնությունում» (նշված տեղում, պարբ. 59):

51. Պատասխանող պետության կառավարությունը որպես հիմնավորում ներկայացրել էր սահմանադրական դատարանի 1989 թ. կայացրած վճիռը, որով քրեական օրենսգրքի 209-րդ հոդվածը համարվել է անհրաժեշտ՝ «երիտասարդ պատանիների սեռական զարգացման վրա համասեռական փորձերի վտանգավոր ազդեցությունից» խուսափելու համար: Սակայն այս մոտեցումն այլևս արդիական չէր, քանի որ 1995-ին խորհրդարանական բանավեճ է ծավալվել այս դրույթի հնարավոր վերացման հարցի շուրջ: Դիմողներն իրավացիորեն նշել են, որ խորհրդարանում ցուցմունք տված փորձագետների ճնշող մեծամասնությունը հստակ արտահայտվել է փոխադարձ համաձայնությամբ սեռական բոլոր հարաբերություններում հավասար տարիք սահմանելու օգտին՝ մասնավորապես նշելով, որ դեպքերի մեծ մասում սեռական կողմնորոշումը ձևավորվում է նախքան սեռական հասունացման տարիքը, և, հետևաբար, ապացուցվել է, որ համասեռամոլների կողմից արական սեռի պատանիների «հավաքագրվելու» մասին տեսությունը չի համապատասխանում իրականությանը: Թեև այսպիսով խորհրդարանը ծանոթացավ քննարկվող հարցի գիտական մոտեցման վերոնշյալ փոփոխություններին, սակայն 1996 թ. նոյեմբերին, այսինքն՝ 1997 թ. հունվարին և փետրվարին դիմողների դատապարտումից անմիջապես առաջ, որոշեց օրենսգրքում պահպանել 209-րդ հոդվածը:

52. Քանի որ քրեական օրենսգրքի 209-րդ հոդվածը արտահայտում էր տարասեռական մեծամասնության կանխորոշված նախապաշարմունքը համասեռական փոքրամասնության նկատմամբ, ուստի այս բացասական վերաբերմունքի դրսևորումներն ինքնին չեն կարող դատարանի կողմից համարվել տարբերակող վերաբերմունքի բավարար հիմնավորում, ինչպես, օրինակ՝ այլ՝ ռասայի, ծագման կամ մաշկի գույնի նկատմամբ բացասական վերաբերմունքի պարագայում:

53. Իր եզրակացությունում դատարանն արձանագրեց, որ պատասխանող պետությունը համոզիչ և ծանրակշիռ փաստարկներ չի ներկայացրել, որոնք կհիմնավորեին քրեական օրենսգրքի 209-րդ հոդվածի պահպանումը և, հետևաբար, դիմողների դատապարտումն այդ դրույթով:

54. Համապատասխանաբար, տեղի է ունեցել կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում՝ 8-րդ հոդվածի համակցությամբ:

Նման վերլուծություն է արվել 2003 թ. հունվարի 9-ի վճռով *«S.L.-ն ընդդեմ Ավստրիայի»* (*S.L. v Austria*) գործում, որում 15 տարեկան մի պատանի բողոքում էր, որ վերոշարադրյալ օրենսդրությունը թույլ չի տալիս իրեն փոխադարձ համաձայնությամբ համասեռական հարաբերություններ ունենալ: 2002 թ. Ավստրիայի խորհրդարանն ուղղում մտցրեց քրեական օրենսգրքում՝ արգելելով սեռական հարաբերություններ (տարասեռական, համասեռական կամ լեսբիական) 16 տարեկանից ցածր անձանց հետ, եթե այդ անձը բավական հասուն չէ հասկանալու համար այդ գործողության նշանակությունը:

Սադերլենդի (*Sutherland*) գործով հանձնաժողովի եզրակացությունն ուսումնասիրվում է վերը՝ էջ 509-ում:

«Կարներն ընդդեմ Ավստրիայի» (*Karner v Austria*) գործով 2003 թ. հուլիսի 24-ին կայացրած վճռում, սեռական կողմնորոշման վրա հիմնված վերաբերմունքի տարբերությունը դիտարկելիս, դատարանը կիրառեց միևնույն մոտեցումը, ինչի հետևանքով 14-րդ հոդվածի խախտման մասին գործը քննելիս դատարանը պատասխանող պետությանը շնորհեց հայեցողության «նեղ» սահման: Դիմողը (մահացել է Ստրասբուրգի դատարան դիմում ներկայացնելուց հետո) մի քանի տարի ապրել էր իր համասեռական զուգընկերոջ հետ վերջինիս կողմից վարձակալվող բնակարանում: Երբ դիմողի զուգընկերը մահացել է, բնակարանի տերը նրա դեմ դատական գործ է հարուցել վարձակալության պայմանագիրը դադարեցնելու հայցով: Դիմողը փորձում էր հիմնվել հանգուցյալի «կյանքի զուգընկերոջը» վերապահված վարձակալությունն իրավահաջորդելու օրինական իրավունքի վրա: Գերագույն դատարանը վճռել է, որ այդ արտահայտությունը չի կիրառվում նույն սեռի անձանց նկատմամբ: Ստրասբուրգի Մարդու իրավունքների դատարանում պատասխանող պետությունն ընդունեց, որ դիմողն արժանացել է տարբերակող վերաբերմունքի իր սեռական կողմնորոշման հիման վրա, սակայն բերեց այն փաստարկը, որ դա կատարվել է այն ողջամիտ հիմնավորմամբ, որ ներպետական իրավունքը նպատակ ունի պաշտպանելու ավանդական ընտանիքը: Դատարանը եզրակացրեց, որ դիմողի պահանջն մտնում է 8-րդ հոդվածով նախատեսված իր տան նկատմամբ հարգանքի իրավունքի տիրույթի մեջ, սակայն ավստրիացի *ad hoc* դատավորը չհամընկնող կարծիք արտահայտեց այն հիմնավորմամբ, որ դիմողի մահվան կապակցությամբ գործը պետք է հանվեր վարույթից: Պատասխանող պետության 14-րդ հոդվածի առնչությամբ ներկայացրած հիմնավորման առումով դատարանը հայտարարել է հետևյալը.

41. Ավանդական իմաստով ընտանիքը պաշտպանելու նպատակը բավական վերացական է, իսկ այդ նպատակն իրականացնելու համար կարող են օգտագործվել մի շարք կոնկրետ միջոցներ: Այն գործերում, որտեղ մասնակից պետություններին վերապահված հայեցողությունը նեղ է, ինչպես սեռի կամ սեռական կողմնորոշման վրա հիմնված տարբերակման դեպքում, համաչափության սկզբունքը ոչ միայն պահանջում է, որ ընտրված միջոցը սկզբունքորեն համապատասխանի հետապնդվող նպատակին, այլև պետք է ապացուցվի, որ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է եղել համասեռական հարաբերություններով ապրող անձանց բացառել «Վարձակալության մասին» օրենքի 14-րդ բաժնի շրջանակներից: Դատարանը չի կարծում, որ պատասխանող պետությունը ներկայացրել է նման եզրակացությունը հաստատող որևէ փաստարկ:

42. Համապատասխանաբար, դատարանը կարծում է, որ պետությունը համոզիչ և ծանրակշիռ հիմքեր չի ներկայացրել «Վարձակալության մասին» օրենքի 14-րդ բաժնի 3-րդ կետի նեղ մեկնաբանությունն արդարացնելու համար, ինչի հետևանքով համասեռական զույգի ողջ մնացած զուգընկերը չի կարողացել վկայակոչել այդ դրույթը:

43. Այսպիսով, արձանագրվել է կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում՝ 8-րդ հոդվածի համակցությամբ:

Համասեռամոլի նկատմամբ տարբերակող վերաբերմունքը պետության կողմից հիմնավորվելու օրինակ կարելի է գտնել *«Ֆրետն ընդդեմ Ֆրանսիայի»* (*Frette v France*) 2002 թ. փետրվարի 26-ի վճռում: Դիմողը դիմել է սոցիալական ծառայություններ երեխա որդեգրելու նախնական թույլտվություն ստանալու համար: Պատասխանատու մարմինները մերժել են նրա թույլտվություն ստանալու հայցը նրա «կենսակերպի ընտրության» պատճառով: Դիմողը դատական կարգով բողոքարկել է այդ որոշումը, սակայն, ի վերջո, Պետական խորհուրդը (ֆր. Conseil d'Etat) հաստատել է տրված մերժումը՝ նշելով, որ «չնայած նրա պարզ անձնական հատկանիշների և երեխաներ դաստիարակելու կարողությանը՝ կրթական, հոգեբանական և ընտանեկան տեսանկյունից նրա կենսակերպը չի ապահովում երեխա որդեգրելու համար պահանջվող երաշխիքները»: Պալատը որոշեց, որ թեև կոնվենցիան չի երաշխավորում երեխաներ որդեգրելու իրավունքը, սակայն քանի որ Ֆրանսիայի օրենսդրությամբ յուրաքանչյուր չամուսնացած անձ իրավունք ունի դիմելու երեխա որդեգրելու թույլտվություն ստանալու համար, դիմողի պահանջը մտնում է 8-րդ հոդվածի շրջանակների մեջ: Ֆրանսիայի օրենսդրությամբ համասեռական դիմողների նկատմամբ տարբերակող վերաբերմունքի առնչությամբ փոքրաթիվ մեծամասնությունը (չորս կողմ և երեք դեմ ձայների հարաբերակցությամբ) կայացրեց այն որոշումը, որ հաշվի առնելով մասնակից պետություններում համասեռամոլների կողմից երեխաների որդեգրման հայտերի հարցում ընդհանուր համաձայնության բացակայությունը՝ որդեգրման ենթակա երեխաների շահերը որոշելու հարցում պետություններին պետք է շնորհվի հայեցողության լայն սահմաններ: Հետևաբար, 8-րդ հոդվածի համակցությամբ 14-րդ հոդվածի խախտում չի արձանագրվել:

10 Մեծ պալատը որդեգրել է ավելի զգուշավոր մոտեցում, քան նախնական պալատը, երբ *«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի»* (*Nachova and Others v Bulgaria*) գործով 2005 թ. հուլիսի 6-ի կայացրած վճռում քննել է այն հարցը, թե արդյոք տեղի՞ է ունեցել զինվորականների կողմից ռասայական շարժառիթներով պայմանավորված սպանություն (տե՛ս վերը՝ էջ 146):

1. Հարցն այն էր, թե արդյոք պետությունը պատասխանատվություն կրո՞ւմ էր ռասայական կամ էթնիկական ծագման հիման վրա տուժողի կյանքը խլելու համար:
144. Դատարանը վճռել է, որ պատասխանող պետության գործակալներն ապօրինաբար սպանել են պրն Անգելովին և պրն Պետկովին՝ խախտելով կոնվենցիայի 2-րդ հոդվածը: Դիմողները նաև պնդել են, որ առանձին խախտվել է նաև կոնվենցիայի 14-րդ հոդվածը, քանի որ զոհերի մահվան մեջ դեր է ունեցել ռասայական նախապաշարմունքը:

145. Խտրականություն է դրսևորվում, երբ առանց անհաշառ և ողջամիտ հիմնավորման՝ համեմատաբար նման իրավիճակներում անձանց նկատմամբ ցուցաբերվում է տարբեր վերաբերմունք (տե՛ս *«Ուիլիսն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Willis v the United Kingdom*), թիվ 36042/97, պարբ. 48, ECHR 2002-IV): Ռասայական ատելությամբ պայմանավորված բռնությունն առանձնակի վիրավորանք է մարդու արժանապատվության նկատմամբ, և հաշվի առնելով դրա վտանգավոր հետևանքները՝ իշխանություններից հատուկ ուշադրություն և վճռական պատասխան է պահանջվում: Հենց այս պատճառով իշխանությունները պետք է գործադրեն բոլոր հնարավոր միջոցները ռասիզմի և ռասիստական շարժառիթներով դրդված բռնության դեմ պայքարելու համար՝ դրանով իսկ ամրապնդելով ժողովրդավարական հասարակության գաղափարը, որտեղ բազմազանությունը դիտվում է ոչ թե որպես սպառնալիք այդ հասարակությանը, այլ՝ որպես մշակութային հարստացման աղբյուր: Դատարանն այդ հարցին անդրադառնում է ստորև:

146. 14-րդ հոդվածի խախտման վերաբերյալ դիմողների գանգատի առնչությամբ դատարանի առջև առաջադրանք էր դրված որոշելու, թե արդյոք պրն Անգելովի և պրն Պետկովի մահվան հանգեցրած հրաձգությունում պատճառային գործո՞ն է եղել ռասայական ատելությունը՝ կոնվենցիայի 2-րդ հոդվածի համակցությամբ 14-րդ հոդվածի խախտում արձանագրելու տեսանկյունից:

147. Այս կապակցությամբ դատարանը նշում է, որ ընդունել է «ողջամիտ կասկածներից վեր» ապացույցի չափանիշը: Այդուհանդերձ, դատարանը երբեք նպատակ չի դրել փոխառնել այս չափանիշն օգտագործող ազգային իրավակարգերի մոտեցումը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դերը ոչ թե քրեական գործով մեղքը որոշելն է, այլ մասնակից պետությունների կողմից կոնվենցիայի դրույթների կատարման պատասխանատվությունը վերահսկելը: Կոնվենցիայի 19-րդ հոդվածով դատարանի առաքելության առանձնահատկությունը, այն է՝ հետևել, որ մասնակից պետությունները կատարեն կոնվենցիայում ամրագրված հիմնարար իրավունքներն ապահովելու իրենց պարտավորությունը, պայմանավորում է ապացույցների հարցում նրա մոտեցումը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ընթացակարգերում չկան ապացույցների ընդունելիության որևէ ընթացակարգային արգելք կամ այդ ապացույցների գնահատման որևէ կանխորոշված բանաձև: Դատարանն ընդունում էր այն եզրակացությունները, որոնք, իր կարծիքով, հիմնավորված են բոլոր ապացույցներով, այդ թվում՝ փաստերից և կողմերի ներկայացրած նյութերից բխող եզրահանգումներով: Դատարանում ձևավորված նախադեպային պրակտիկայի համաձայն՝ ապացույցը կարող է բխել բավականին հիմնավորված, պարզ և հետևողական եզրակացությունից կամ փաստերի նման անհերքելի ենթադրություններից: Ավելին, որևէ առանձին եզրակացության հասնելու համար անհրաժեշտ համոզվածության աստիճանը և դրա առնչությամբ ապացույցի բեռի բաշխումը, ըստ էության, կապված են փաստերի առանձնահատկության, ներկայացված պնդման և կոնվենցիայով նախատեսված խնդրո առարկա իրավունքի բնույթի հետ: Դատարանը նաև հատուկ ուշադրությամբ կարևորություն է տալիս մասնակից պետության կողմից հիմնարար իրավունքների խախտման մասին որոշման կայացմանը (ի թիվս այլոց, տե՛ս *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Ireland v the United Kingdom*), 1978 թ. հունվարի 18-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 25, պարբ. 161, *«Ռիբիչն ընդդեմ Ավստրիայի»* (*Ribitsch v Austria*), 1995 թ. դեկտեմբերի 4-ին կայացրած վճիռ, շարք A, թիվ 336, էջ 24, պարբ. 32, *«Աքդիվարը և այլք ընդդեմ Թուրքիայի»* (*Akdivar and Others v Turkey*), 1996 թ. սեպտեմբերի 16-ին կայացրած վճիռը, Զեկույցներ 1996-IV, էջ 1211, պարբ. 68, *«Թանլին ընդդեմ Թուրքիայի»* (*Tanli v Turkey*), թիվ 26129/95, պարբ. 111, ECHR 2001-III, *«Իլաշկուն և այլք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի»* (*Ilascu and Others v Moldova and Russia*) [GC], թիվ 48787/99, պարբ. 26, 2004 թ. հուլիսի 8):

148. Դիմողները մեջբերել են մի քանի առանձին փաստ և պնդել, որ դրանց հիման վրա կարելի է ռասիստական բնույթի գործողության մասին վկայող եզրահանգումներ անել:

149. Առաջին՝ դիմողները հատկանշական են համարել այն փաստը, որ մայոր Գ-ն ինքնաձիգից կրակահերթ է բացել խիտ բնակեցված վայրում՝ անտեսելով այդ գործողության հանրային վտանգը: Հաշվի առնելով, որ նման վարքի համար խելամիտ բացատրություն չկար, դիմողներն այն կարծիքին էին, որ միակ ճշմարտանման բացատրությունը մայոր Գ-ի ռասայական ատելությունն է և այն հանգամանքը, որ նա նույն կերպ չէր վարվի ոչ գնչուական թաղամասում:

150. Այդուհանդերձ, դատարանը նշում է, որ տվյալ հանգամանքներում հրազենի կիրառումը, ցավոք, արգելված չէր համապատասխան ներպետական կանոնակարգերով, ինչը դատարանն արդեն դատապարտել է և բնութագրել որպես աղաղակող թերացում: Զինվորական ոստիկանության աշխատակիցներն իրենց ինքնաձիգ հրազենը կրում էին «կանոնների համաձայն» և հրահանգ էին ստացել ձերբակալությունն իրականացնելու համար գործադրել բոլոր անհրաժեշտ միջոցները: Ուստի չի կարելի բացառել այն հնարավորությունը, որ մայոր Գ-ն պարզապես խստորեն հետևել է կանոններին, և նույն կերպ կվարվեր յուրաքանչյուր նման իրավիճակում՝ անկախ փախուստի դիմած անձանց էթնիկական ծագումից: Թեև համապատասխան կանոնները հիմքում թերի էին և չէին համապատասխանում կոնվենցիայի պահանջներին կյանքի իրավունքի պաշտպանության մասով, սակայն չկա որևէ ապացույց, որ մայոր Գ-ն իր հրազենը չէր գործածի ոչ գնչուական թաղամասում:

151. Դատարանի վերոնշյալ վճռից հետևում է, որ ձերբակալության ժամանակ մայոր Գ-ի վարվելակերպը խիստ քննադատության է արժանի ուժ գործադրելու թույլատրելի սահմանները մեծապես գերազանցելու համար: Այնուհանդերձ, չի կարելի նաև բացառել, որ մայորի պատասխան գործողությունների հիմքում ընկած է հրազենի գործածումը կարգավորող իրավակարգի անբավարարությունը, ինչպես նաև այն փաստը, որ նրա պատրաստությունն անցել է այդ իրավակարգի պայմաններում:

152. Դիմողները հայտարարել են նաև, որ ռազմական ոստիկանության աշխատակիցների մոտեցումն առավելապես պայմանավորված է նրանով, որ նրանց իմացությամբ տուժածները ծագումով գնչու էին: Այնուհանդերձ, հնարավոր չէ վարկածներ առաջադրել այն մասին, թե արդյոք պրն Անգելովի և պրն Պետկովի ծագումը որևէ կերպ անդրադարձե՞լ է ռազմական ոստիկանության աշխատակիցների վերաբերմունքի վրա: Ավելին, որոշակի ապացույցներ կան, որ ոստիկաններից մի քանիսն անձամբ ճանաչել են զոհերից մեկին կամ երկուսին:

153. Դիմողները վկայակոչել են զոհերից մեկի հարևանի՝ պրն Մ. Մ.-ի ցուցմունքը, որի համաձայն՝ կրակոցից անմիջապես

հետո մայոր Գ-ն բղավել է՝ ներա հասցեին գործածելով «դուք, գրողի տարած գնչուներ» արտահայտությունը: Թեև ռասայական անարգանքի մասին վկայող այս ապացույցը կապված է բռնի գործողության հետ, և պատասխանատու մարմինները պետք է ստուգեն նշված ցուցմունքը, սակայն առանձին վերցրած՝ ցուցմունքը բավարար հիմք չի տալիս եզրակացնելու, որ պետությունը պատասխանատու է ռասայական շարժառիթներով դրդված սպանության համար:

154. Ի վերջո, դիմողների փաստարկների հիմքում ընկած են գնչուների նկատմամբ Բուլղարիայի իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի գործադրման բազում դեպքեր, որոնց համար մեղավորները չեն դատապարտվել:

155. Ճիշտ է, որ մի շարք կազմակերպություններ, այդ թվում՝ միջկառավարական մարմինները, մտահոգություն են արտահայտել նման դեպքերի առնչությամբ: Այնուհանդերձ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը չի կարող աչքաթող անել իր հիմնական առաքելությունը, այն է՝ պարզել, թե արդյոք քննվող գործով պրն Անգելովի և պրն Պետկովի մահը պայմանավորվա՞ծ էր ռասայական ատելությամբ:

156. Իր վճռում պալատը որոշել է ապացույցի բեռը դնել պատասխանող պետության վրա՝ հաշվի առնելով այն փաստը, որ ազգային մարմիններն արդյունավետ չեն հետաքննել մահվան դեպքերի ենթադրյալ ռասայական դրդապատճառի առկայությունը: Քանի որ պետությունը չի կարողացել բավարար փաստարկներ բերել պալատին, որ գանգատի հիմքում ընկած դեպքերը ռասայական նկատառումներ չեն ունեցել, ապա պալատն արձանագրել է 14-րդ հոդվածով իրավունքների նյութահիրավական հիմքի խախտում՝ կոնվենցիայի 2-րդ հոդվածի համակցությամբ:

157. Մեծ պալատը կրկին հաստատել է, որ որոշ հանգամանքներում, այն է՝ եթե պետական մարմիններն ունեն ամբողջությամբ կամ մասամբ բացառիկ տեղեկություններ, ինչպես նրանց վերահսկողության տակ եղած անձի մահվան պարագայում, ապա ապացույցի բեռը կարող է դրվել պետական մարմինների վրա, որպեսզի վերջիններս տրամադրեն բավարար և համոզիչ բացատրություններ, հատկապես՝ կալանավորված անձի մահվան վերաբերյալ (տե՛ս *«Սալմանն ընդդեմ Թուրքիայի»* (*Salman v Turkey* [GC], թիվ 21986/93, պարբ. 100, ECHR 2000-VII): Մեծ պալատը չի կարող բացառել այն հնարավորությունը, որ ենթադրյալ խտրականության որոշ դեպքերում կարող է պատասխանող պետությունից պահանջել ապացույցներով հերքել խտրականության մասին վիճահարույց փաստարկը, իսկ եթե պետությունը չկարողանա հերքել այն, ապա պալատն այդ հիմքով կարող է արձանագրել կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում: Այնուհանդերձ, այն դեպքերում, երբ ինչպես սույն գործում, նշվում է, որ բռնի գործողությունը կատարվել է ռասայական նախապաշարմունքով պայմանավորված դրդապատճառներով, ապա նման մոտեցումը հավասարազոր կլինի պատասխանող պետության՝ նշված անձի նկատմամբ կողմնակալ վերաբերմունքի բացակայությունն ապացուցելու պահանջին: Թեև բազմաթիվ պետությունների իրավակարգերում քաղաքականության կամ որոշման խտրական ազդեցությունը կարող է ապացուցվել առանց աշխատանքի կամ ծառայությունների մատուցման բնագավառում ենթադրյալ խտրականությունն ապացուցելու անհրաժեշտության, սակայն այդ մոտեցումը դժվար է հարմարեցնել այն գործերին, երբ նշվում են բռնության հիմքում ընկած ռասայական դրդապատճառները: Լիակազմ մեծ պալատը համամիտ չէ նախնական քննության պալատի հետ այն հարցում, որ ռասայական դրդապատճառով կատարված սպանության վերաբերյալ ազգային մարմինների կողմից արդյունավետ հետաքննություն չիրականացնելու հանգամանքը պետք է ապացույցի բեռը փոխանցի պետությանը՝ կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութահիրավական հայեցակետի համակցությամբ 14-րդ հոդվածի ենթադրյալ խախտման մասով: Իշխանությունների ստանձնած ընթացակարգային պարտավորությունների կատարումն առանձին հարց է, որի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը բերված է ստորև:

158. Ի մի բերելով և գնահատելով սույն գործի բոլոր առանցքային տարրերը՝ դատարանը չի համարում, որ ապացուցվել է պրն Անգելովի և պրն Պետկովի մահվան գործում ռասայական ատելության գործոնը:

159. Այսպիսով դատարանը չի համարում, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում՝ 2-րդ հոդվածի նյութահիրավական հայեցակետի համակցությամբ:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՏ. ԱՐԴՅՈՔ ՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵ՞Լ Է ՀՆԱՐԱՎՈՐ ՌԱՍԱՅԱԿԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՔՆՆԵԼՈՒ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

(ա) Ընդհանուր սկզբունքներ

160. Մեծ պալատը հաստատում է սույն գործով բռնությունների հնարավոր ռասայական դրդապատճառը հետաքննելու գծով մասնակից պետությունների ստանձնած ընթացակարգային պարտավորությունների վերաբերյալ նախնական քննության պալատի պատրաստած վերլուծությունը: Մասնավորապես, պալատը հայտնել է հետևյալը.

> Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դրույթներով պետությունները ստանձնել են անձին կյանքից զրկելու դեպքերի հանգամանալից հետաքննություն անցկացնելու ընդհանուր պարտավորությունը (պարբ. 156–9):

Այդ պարտավորությունը պետք է կատարվի առանց խտրականության, ինչպես պահանջում են կոնվենցիայի 2-րդ հոդվածի դրույթները: Եթե առաջանան կասկածներ, որ բռնության դրսևորումը հրահրվել է ռասայի հատկանիշով, ապա առանձնակի կարևորություն կստանա պետական մարմինների վճռական և անաչառ հետաքննությունը: Այդ կապակցությամբ հարկ է հաշվի առնել ռասայական և էթնիկական ատելության դատապարտումը հասարակության գիտակցության մեջ շարունակաբար ամրապնդելու անհրաժեշտությունը, ինչպես նաև իշխանությունների՝ փոքրամասնությանը ռասայական բռնությունից պաշտպանելու կարողության նկատմամբ վերջինիս վստահությունը պահպանելու անհրաժեշտությունը: Կոնվենցիայի 2-րդ հոդվածով դրական պարտավորությունների կատարումը պահանջում է, որ պետությունը դրսևորի մեկ այլ անձին կյանքից զրկած անձի դեմ քրեական իրավունքի ներպետական իրավակարգով դրույթներ կիրառելու կարողությունը՝ անկախ տուժողի ռասայական կամ էթնիկական պատկանելությունից (տե՛ս *«Մենսոնը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Menson and Others v the United Kingdom*) գործով կայացրած որոշում, թիվ 47916/99, ECHR 2003-V):

Բռնի գործողությունների, և հատկապես՝ պետության գործակալների կողմից պատճառած մահը հետաքննելիս պետական մարմինների վրա դրված է ցանկացած բնույթի ռասայական դրդապատճառ բացահայտելու, ինչպես նաև տվյալ հանցագործության հիմքում ազգային հատկանիշով ատելության կամ նախապաշարմունքի առկայությունը պարզելու լրացուցիչ պարտավորություն: Նշված պարտավորությունը չկատարելու, ինչպես նաև ռասայի հատկանիշով հրահրված բռնի գործողությունների դաժան վերաբերմունքի դրսևորումը նույն սկզբունքներով դիտարկելը, ինչ ռասայական խտրականության բաղադրատարր չունեցող գործերի դեպքում, կնշանակեր անտեսել հիմնարար իրավունքները խարխլող գործողությունների հատուկ բնույթը: Էապես տարբեր իրավիճակներում տարբերակում չանցկացնելու հանգամանքը կարող է 14-րդ հոդվածի դրույթների հետ անհամատեղելի անհիմն վերաբերմունք համարվել (տե՛ս *mutatis mutandis «Թլիմենոսն ընդդեմ Հունաստանի»* (*Thlimmenos v Greece*) գործը, [GC], թիվ 34369/97, պարբ. 44, ECHR 2000-IV): Մասնակից պետությունները հասարակությունում իրենց իրավապահ համակարգի նկատմամբ վստահությունը պահպանելու նկատառումներով պետք է ապահովեն, որ բռնության գործադրմամբ միջադեպերի հետաքննության ժամանակ տարբերակում անցկացվի ուժի չափազանց գործադրման և ռասիստական դրդապատճառներով պայմանավորված մահերի միջև թե՛ իրենց իրավակարգերում, թե՛ գործնականում:

«Հարկ է նշել, որ գործնականում սովորաբար դժվար է ապացուցել ռասիստական դրդապատճառի առկայությունը: Բռնի գործողություններում ռասայական անհանդուրժողականության հնարավոր ենթատեքստը հետաքննելու հարցում պատասխանող պետության պարտավորությունը ջանքերի առավելագույն գործադրմամբ հետաքննություն անցկացնելու պարտավորություն է, ոչ թե բացարձակ պարտավորություն (տե՛ս *mutatis mutandis «Շանաղան ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Shanaghan v the United Kingdom*, թիվ 37715/97, պարբ. 90, ECHR 2001-III) գործը, որտեղ նշվում է հետաքննության ընդհանուր պարտավորության գծով նույն չափանիշը): Նման հանգամանքներում իշխանությունները պետք է դիմեն ողջամիտ քայլերի՝ ապացույցներ հավաքելու և պաշտպանելու համար, ուսումնասիրեն ճշմարտությունը բացահայտելու բոլոր գործնական միջոցները և կայացնեն լիովին հիմնավորված, անկողմնակալ և անաչառ որոշումներ՝ չանտեսելով ռասայական ատելությամբ պայմանավորված բռնության մասին ակնարկվող կասկածելի փաստերը:

161. Մեծ պալատը հավելել է, որ իշխանությունների՝ ռասայական ատելությամբ պայմանավորված վերաբերմունքի և բռնի գործողության հնարավոր կապի առկայության հարցը հետաքննելու պարտավորությունը կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված նրանց ընթացակարգային պարտավորությունների հայեցակետերից մեկն է, սակայն նշված պարտավորությունը կարող է նկատվել նաև որպես 2-րդ հոդվածի համակցությամբ կոնվենցիայի 14-րդ հոդվածում ամրագրված կյանքի իրավունքի իրացումը խտրականությունից զերծ երաշխավորելու նրանց պարտավորություններում: Հաշվի առնելով երկու դրույթների փոխազդեցությունը՝ խնդրո առարկա գործի նման հարցերը կարող են քննվել միայն դրույթներից մեկով, ընդ որում, մյուս դրույթից չի բխի որևէ առանձին հարց. այդ հարցերը կարող են նաև քննվել երկու հոդվածների շրջանակներում: Նշված տարբերակներից մեկի ընտրությունը կախված է յուրաքանչյուր գործի փաստերից և հայտարարությունների բնույթից:

(բ) Սույն գործում նշված սկզբունքների կիրառումը

162. Դատարանն արդեն վճռել է, որ Բուլղարիայի իշխանությունները խախտել են կոնվենցիայի 2-րդ հոդվածը պրն Անգելովի և պրն Պետկովի մահվան դեպքերն արդյունավետ չհետաքննելու պատճառով: Դատարանը կարծում է, որ սույն գործով պետք է առանձին դիտարկել բողոքն առ այն, որ չի քննվել ռասիստական ատելության ենթադրյալ վերաբերմունքի և երկու անձանց սպանության միջև հնարավոր պատճառահետևանքային կապը:

163. Պրն Անգելովի և պրն Պետկովի մահվան դեպքերը քննող մարմինների տրամադրության տակ եղել է զոհերի հարևանի՝ պրն Մ. Մ.-ի ցուցմունքը, որում նա հայտարարել է, որ կրակոցից անմիջապես հետո մայոր Գ.-ն, հրազենը պահելով նրա ուղղությամբ, բղավում էր՝ «գրողի տարած գնչուներ»: Հաշվի առնելով Բուլղարիայում գնչուների նկատմամբ նախապաշարմունքի և թշնամության դրսևորման հայտնի դեպքերի նախապատմությունը՝ պահանջվում էր ստուգել այդ փաստարկը:

164. Ընդօրինակելով նախնական քննության պալատի մոտեցումը՝ մեծ պալատը համարում է, որ ազգային կամ այլ փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ ուժի գործադրմամբ անցկացվող օպերացիաների ընթացքում իրավապահ մարմինների աշխատակիցների ռասիստական բնույթի հայհոյանքի յուրաքանչյուր ապացույց հատկապես կարևոր է՝ պարզելու, թե արդյոք տեղի՞ է ունեցել ատելությամբ հրահրված անօրինական բռնություն: Եթե հետաքննության ընթացքում հայտնաբերվի նման ապացույց, ապա այն պետք է ստուգվի և հաստատվելու դեպքում պետք է անցկացվի փաստերի արդյունավետ քննություն հնարավոր ռասայական դրդապատճառները քողազերծելու համար:

165. Ավելին, այն փաստը, որ մայոր Գ-ն մեծապես գերազանցել է ուժի գործադրման թույլատրելի սահմանները երկու անզեն և դիմադրություն ցույց չտվող անձանց նկատմամբ, նույնպես պահանջում է մանրակրկիտ հետաքննություն:

166. Ի վերջո, սույն գործով զբաղվող քննիչի և դատախազների ունեցած հուսալի տեղեկատվությունը բավարար ազդակ էր դեպքերի նախնական ստուգում անցկացնելու, իսկ դրա արդյունքից կախված՝ նաև նշված երկու անձանց մահվան պատճառների հնարավոր ռասիստական ենթատեքստը պարզելու համար:

167. Սակայն պետական մարմինները ոչինչ չեն արել պրն Մ. Մ.-ի ցուցմունքը ստուգելու համար և չեն հարցաքննել վկաներին: Մայոր Գ-ից չեն պահանջել բացատրել, թե ինչու է նա անհրաժեշտ համարել այդչափ ուժ գործադրել: Իրավասու մարմինները չեն փորձել ստուգել մայոր Գ-ի անձնական գործը և, օրինակ, պարզել, թե արդյոք նա նախկինում դիմե՞լ է նման միջոցների կամ մեղադրվե՞լ է գնչուների նկատմամբ բացասական վերաբերմունք դրսևորելու համար: Հետաքննության վերոնշյալ թերություններն ավելի են խորացել քննիչի և դատախազների վարվելակերպով, ովքեր, ինչպես արդեն նշել է դատարանը, անտեսել են գործին առնչվող կարևոր փաստերը և ավարտած համարել հետաքննությունը՝ պաշտպանելով մայոր Գ-ին դատական հետապնդումներից:

168. Այսպիսով, դատարանը համարում է, որ ազգային մարմինները չեն կատարել 2-րդ հոդվածի համակցությամբ կոնվենցիայի 14-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունը, ասել է թե՝ չեն դիմել բոլոր հնարավոր քայլերի՝ պարզելու, թե արդյոք հանցագործության դրդապատճառներում որևէ դեր ունեցե՞լ է խտրականության գործոնը: Այս ամենից հետևում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում՝ 2-րդ հոդվածի ընթացակարգային հայեցակետի համակցությամբ:

Դատավորներ Կասադեվալը, Հեդիգանը, Մուլարոնին, Ֆուրա-Սանդստրոմը, Գյուլումյանը և Շպիլմանը հանդես են եկել մասնակի չհամընկնող կարծիքով՝ արտահայտելով հետևյալ տեսակետը.

2. Մենք չենք կարող ստորագրել դատարանի որդեգրած այն նոր մոտեցման տակ, որով 14-րդ հոդվածի հնարավոր խախտումը շաղկապվում է 2-րդ հոդվածի առանձին վերցրած նյութահիրավական և ընթացակարգային հայեցակետերին: Գերադասելի է որդեգրել միասնական մոտեցում, քանի որ այն ավելի լավ կարտացոլեր 14-րդ հոդվածի առանձնահատուկ բնույթը, որը չի կարող անկախ գոյություն ունենալ, քանզի այն կիրառվում է միայն կոնվենցիայում ամրագրված իրավունքների և ազատությունների նկատմամբ: Քանի որ նշված հոդվածն առանձին վերցրած կիրառելի չէ, ապա մենք շինծու և անիմաստ ենք համարում տարբերակում անցկացնել նյութահիրավական և ընթացակարգային հայեցակետերի միջև, հատկապես տվյալ գործում: Նաև այն հանգամանքն է խնդրահարույց, որ դեռ շուտ է գնահատել այս նոր մոտեցման անդրադարձը կոնվենցիային կից թիվ 12 արձանագրության կիրառման և մեկնաբանության վրա՝ հաշվի առնելով, որ արձանագրությունը վերջերս է ուժի մեջ մտել այն վավերացրած պետությունների համար:

3. Տարբերություն դնելով նյութահիրավական և ընթացակարգային հայեցակետերի միջև՝ դատարանի մեծամասնությունն արձանագրել է 2-րդ հոդվածի համակցությամբ կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում միայն այն մասով, որ ազգային մարմինները չեն հետաքննել այն հարցը, թե արդյոք պրն Անգելովի և պրն Պետկովի մահվան հանգեցրած դեպքերի հիմքում ընկա՞ծ է եղել ռասայական ատելությունը:

4. Մենք համաձայն ենք այդ եզրակացության հետ, այդուհանդերձ, մի կողմ դրած այդ զուտ ընթացակարգային եզրակացությունը՝ հակված ենք այն կարծիքին, որ միասին վերցրած այլ փաստացի տարրերը չեն վկայում 2-րդ հոդվածի համակցությամբ կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտման մասին:

5. Նշված տարրերից կցանկանայինք նշել այն փաստը, որ ոստիկանները կրակոցներ են արձակել բնակեցված վայրում՝ գյուղի գնչուների թաղամասում՝ անտեսելով հանրային վտանգը, այն հանգամանքը, որ ռազմական ոստիկանության աշխատակիցները տեղյակ էին, որ ազգությամբ գնչու տուժածները զինված և վտանգավոր չէին, որ գնչուների նկատմամբ Բուլղարիայում արձանագրվել են նախապաշարմունքի և թշնամության դրսևորման բազում դեպքեր, որ առաջին դեպքը չէ, երբ Բուլղարիայի դեմ ներկայացված գործերում դատարանը վճռել է, որ իրավապահ մարմինների աշխատակիցները մահացու վնասվածքներ են հասցրել Բուլղարիայում բնակվող գնչուներին: Վերոնշյալ տարրերից է նաև պրն Մ. Մ.-ի ցուցմունքը, ըստ որի՝ կրակելուց անմիջապես հետո մայոր Գ-ն նրա հասցեին բղավել է «Դո՛ւք, գրողի տարած գնչուներ» ռասայական ատելությամբ ներշնչված վիրավորական արտահայտությունը, և վերջապես, պետական մարմինների անգործությունն ու ճշմարտության բացահայտումը խոչընդոտող կոպիտ ընթացակարգային թերությունները:

6. Ճիշտ է, որ ընթացակարգային թերությունները հատուկ գործոն են, որին պետք է բավականին մեծ կարևորություն տալ: Նշված թերություններն առանցքային նշանակություն ունեն ապացույցի բեռը կրող կողմին որոշելու հարցում, քանի որ հենց ներպետական մարմիններն են արդյունավետ միջոցներ ձեռնարկում գործին առնչվող փաստերը պարզելու համար, ուստի դատաքննության խաթարումն անպայման կանդրադառնա հիմնախնդրի բուն էության վերաբերյալ եզրակացության վրա:

7. Այնուհանդերձ, հոդվածի խախտումը սահմանափակելով միայն ընթացակարգային հայեցակետով՝ դատարանը բավարար կարևորություն չի տվել բավական համոզիչ, հստակ և համադրելի անհերքելի վարկածներին, որոնք բխում են գործի փաստացի ապացույցներից, և որոնց հիման վրա կարելի է եզրակացնել 2-րդ հոդվածի համակցությամբ կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտման մասին:

Կարծում եք, որ մեծամասնությունը չափից ավելի՞ շրջահայաց մոտեցում է ցուցաբերել 14-րդ հոդվածի կիրառելիության հարցում: *«Բեկոսը և Կուտրոպուլոսն ընդդեմ Հունաստանի»* (*Bekos and Koutropoulos v Greece*) գործով 2005 թ. դեկտեմբերի 13-ին կայացրած վճռում պալատն ընդօրինակել է *Նաչովայի* (*Nachova*) գործում դատարանի մեծամասնության որդեգրած վերլուծական մոտեցումը: Պալատը եզրակացրել է, որ Հունաստանի ազգային մարմինները, ի թիվս այլոց, խախտել են 3-րդ հոդվածի համակցությամբ 14-րդ հոդվածը, քանի որ նրանք մանրակրկիտ չեն հետաքննել ոստիկանների կողմից երկու գնչուներին ծեծելու փաստի հիմքում ընկած հնարավոր ռասայական դրդապատճառները: Ի դեպ, ոստիկանների նշված վարվելակերպն ինքնին արդեն 3-րդ հոդվածը խախտող անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի դրսևորում է: Ուստի տվյալ դեպքում նույնպես դատարանը հակված էր պետության պաշտոնատար անձանց ռասիստական վարվելակերպի համատեքստում արձանագրել ընթացակարգային խախտում՝ արդյունավետ հետաքննության հայեցակետով, ոչ թե ըստ էության ի պաշտոնե գործած ռասիստական զանցանք: Այնուհանդերձ, պալատի նախագահ Բրատցան հանդես է եկել մեծամասնության վճռի հետ համընկնող կարծիքով և հայտնել իր այն համոզմունքը, որ պետություններից պետք է պահանջվի ապացույցներով հերքել ռասայական դրդապատճառը ավելի շատ դեպքերում, քան նշվել է *Նաչովայի* (*Nachova*) գործի շրջանակներում: Դատավոր Կասադեվալը նույնպես հանդես է եկել առանձին եզրակացությամբ և հայտնել, որ ինքը կողմ է քվեարկել է 14-րդ հոդվածի համակցությամբ 3-րդ հոդվածի նյութահիրավական հիմքի խախտմանն «առանց մեծ վստահության» և «միայն *Նաչովայի* (*Nachova*) գործով վերջերս կայացված որոշման մեջ մեծ պալատի սկզբունքների հետևողականությունը պահպանելու նկատառումներով»: Ակնհայտ է, որ դատավորներից ոմանք լիովին բավարարված չեն *Նաչովայի* (*Nachova*) գործով մեծամասնության մոտեցմամբ:

11 Ներքոհիշյալ *«Տիմիշևն ընդդեմ Ռուսաստանի» (Timishev v Russia)* գործով 2005 թ. դեկտեմբերի 13-ի վճռում պալատը միաձայն հայտարարել է, որ դատարանը մերժում է էթնիկական հատկանիշով խտրականությունը:

58. Պատասխանող պետությունը որևէ պատճառաբանություն չի ներկայացրել ազատ տեղաշարժվելու իրավունքից օգտվելու առումով չեչեն ծագում ունեցող և այլազգի անձանց նկատմամբ վերաբերմունքի տարբերակման կապակցությամբ: Ամեն դեպքում, դատարանը կարծում է, որ բազմակարծության և տարբեր մշակույթների հարգելու սկզբունքների վրա հիմնված արդի ժողովրդավարական հասարակությունում չի կարելի անաչառության տեսանկյունից արդարացնել բացառապես կամ հիմնականում անձի ազգությամբ պայմանավորված տարբերակող վերաբերմունքը:

59. Ի մի բերելով փաստերը և հաշվի առնելով, որ դիմողի ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանափակվել է միայն նրա էթնիկական ծագմամբ, տարբերակող վերաբերմունքը եղել է ռասայական խտրականություն՝ կոնվենցիայի 14-րդ հոդվածի իմաստով:

12 14-րդ հոդվածով ապօրինի խտրականության այն դեպքերը քննելիս, երբ դատարանն արդեն արձանագրել է կոնվենցիայի նյութահիրավական խախտում, դատարանի քաղաքականության բացատրությունը կարելի է գտնել *«Դաջենն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Dudgeon v UK*, A.45 (1981) 4 EHRR 149) գործում:

Եթե վկայակոչվում է կոնվենցիայի որևէ նյութաիրավական հոդված՝ առանձին և 14-րդ հոդվածի համակցությամբ, իսկ առանձին խախտում արձանագրվում է նյութաիրավական հոդվածով, ապա դատարանը առհասարակ կարիք չունի գործը քննելու նաև 14-րդ հոդվածի տեսանկյունից, թեպետև այլ իրավիճակ է ստեղծվում, եթե գործի հիմնարար հայեցակետը խնդրո առարկա իրավունքի իրացման հարցում ցուցաբերված ակնհայտորեն անհավասար վերաբերմունքն է (կետ 67):

Որպես նշված իրադրության օրինակ՝ կարելի է բերել *«Ազիզն ընդդեմ Կիպրոսի»* (*Aziz v Cyprus*) 2004 թ. հունիսի 22-ին կայացրած վճռով գործը: Դիմողը Կիպրոսի քաղաքացի է, որը բնակվում էր Նիկոսիայում: Պատասխանատու մարմինները հրաժարվել են նրան գրանցել ընտրացուցակում՝ իրենց մերժումը հիմնավորելով այն փաստարկով, որ վերջինս պատկանում էր Կիպրոսի թուրքական համայնքին: Ազիզը պնդել է, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածին հակառակ՝ խախտվել է իր քվեարկելու իրավունքը և 14-րդ հոդվածը, ինչը ազգային կամ որևէ ազգային փոքրամասնության պատկանելության հատկանիշով թույլ չի տվել իրեն օգտվել իր իրավունքից: Պալատը միաձայն որոշել է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում՝ 14-րդ հոդվածի համակցությամբ:

36. Դատարանը կարծում է, որ սույն գործում 14-րդ հոդվածի շրջանակներում ներկայացված գանգատը զուտ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի շրջանակներում ներկայացված գանգատի վերահաստատում չէ: Դատարանը նշում է, որ դիմողը Կիպրոսի քաղաքացի է, որը բնակվում է կղզու՝ պատասխանող պետության վերահսկողության ներքո գտնվող տարածքում: Դատարանն ընդգծում է, որ սույն գործում տարբերակող վերաբերմունքը պայմանավորված է հենց դիմողի կիպրոսցի թուրք լինելու փաստով: Նշված տարբերակող վերաբերմունքը, որը հետևում է Կիպրոսի հունական և թուրքական համայնքների բնակչության քվեարկության իրավունքը կարգավորող սահմանադրական դրույթներից, անհնարին էր գործնականում իրացնել:

37. Թեև դատարանը հաշվի է առնում պատասխանող պետության փաստարկները, սակայն, նրա կարծիքով, ազգային մարմինները չեն կարող նշված տարբերակող վերաբերմունքը հիմնավորել ողջամիտ և անաչառ պատճառներով, մասնավորապես, այն փաստի հիման վրա, որ դիմողի իրավիճակում հայտնված կիպրոսցի թուրքերը զրկված են խորհրդարանական ընտրություններին մասնակցելու իրավունքից:

38. Այսպիսով, դատարանը եզրակացրել է, որ խնդրո առարկա իրավունքների իրացման հարցում դրսևորվում է միանշանակ անհավասար վերաբերմունք, որը հարկ է համարել գործի հիմնարար հայեցակետ: Համապատասխանաբար, խախտվել է կոնվենցիայի 14-րդ հոդվածը՝ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի համակցությամբ:

Այլ կերպ ասած, եթե դատարանն արձանագրել է նյութաիրավական իրավունքի համակցությամբ 14-րդ հոդվածի խախտում, ապա կարող է հրաժարվել միայն նյութաիրավական իրավունքի խախտման փաստարկը քննելուց: Օրինակ՝ *Թլիմմենոսի (Thlimmenos)* գործի շրջանակներում (տե՛ս վերը՝ ծնթ. 8) դատարանը հրաժարվել է քննել 9-րդ հոդվածի խախտման հարցը:

13 Լիվինգստոնը եկել է հետևյալ եզրակացության.

Թեև պարզ են 14-րդ հոդվածի՝ որպես հակախտրական դրույթի սահմանափակումները, սակայն պետք է ընդգծել այն փաստը, որ հանճնաժողովը և դատարանը պատրաստ էին ընդլայնելու հոդվածի տիրույթը: Նշված հոդվածի շրջանակներում նախկինում կայացրած մի քանի վճիռներում որոշ դատավորներ ցանկություն են հայտնել սերտ կապ հաստատել 14-րդ հոդվածի և կոնվենցիայի հիշատակված այլ իրավունքների միջև, ինչպես նաև հրաժարվել արձանագրել 14-րդ հոդվածի խախտում, եթե չհերքվեր հիմնական հոդվածով անվերապահորեն երաշխավորված իրավունքը: Հրաժարվելով նման տարբերակից՝ հանճնաժողովը և դատարանը 14-րդ հոդվածն օժտել են ինքնուրույն կիրառությամբ՝ այդպիսով ընդլայնելով կոնվենցիայում ամրագրված որոշ իրավունքների շրջանակը [S. Livingstone, Article 14 and the Prevention of Discrimination in the ECHR) (1997) European Human Rights Law Review 25, p. 33]:

Կոնվենցիայի 14-րդ հոդվածի թույլ կետը, մասնավորապես՝ այն, որ հոդվածն ինքնին խտրականությունն արգելող դրույթ չի պարունակում, լուծվում է նոր թիվ 12 արձանագրությամբ, որի տեքստը կոնվենցիայի հետ միասին զետեղված է գրքի վերջում: Սույն արձանագրության ստեղծմանը ձեռնամուխ են եղել երկու ժամանակակից փորձագիտական խմբեր: Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերով ղեկավար կոմիտեն առաջարկել է կանանց և տղամարդկանց հավասարության հիմնարար իրավունքն ընդգրկել ՄԻԵԿ-ի մեջ՝ համոզված լինելով, որ նման իրավունքի սահմանումը դե յուրե և դե ֆակտո հավասարություն հաստատելու նախապայմաններից է: 1993 թ. Վիեննայում Եվրոպայի խորհրդի

պետությունների և կառավարությունների ղեկավարների գագաթնաժողովի արդյունքում ռասիզմի, այլատյացության, հակահրեականության և անհանդուրժողականության դեմ պայքարելու աշխատանքային ծրագրի շրջանակներում հիմնված Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական կոմիտեն առաջարկել է կազմել մեկ այլ արձանագրություն, որով պետք է առհասարակ արգելվի խտրականությունը՝ ռասայի, մաշկի գույնի, լեզվի, կրոնի, ազգի կամ էթնիկական ծագման հատկանիշով: Նախարարների կոմիտեն երկու առաջարկները քննարկման է ուղարկել Մարդու իրավունքների ղեկավար կոմիտեին: 1997 թ. կոմիտեն առաջարկել է մեկ այլ արձանագրություն կազմել՝ որպես երկու փորձագիտական խմբերի հանձնարարականների իրավաբանական լուծում: 1998 թ. գարնանը Նախարարների կոմիտեի պատվիրակները ղեկավար կոմիտեին լիազորել են ընդլայնել 14-րդ հոդվածի շրջանակը՝ ընդգրկելով խտրականության հիմքերի ոչ սպառիչ ցուցակ: 2000 թ. մարտին, ի թիվս այլոց, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի հետ քննարկումներից հետո ղեկավար կոմիտեն ավարտել է արձանագրության նախագծի կազմումը, որի տեքստը նույն թվականին ընդունել է Նախարարների կոմիտեն:

Թիվ 12 արձանագրության տեքստին կից պաշտոնական բացատրական զեկույցում բերվում են հետևյալ նպատակներն ու դրույթները:

ՆԱԽԱԲԱՆ

14. Նախաբանի առաջին հռչակագրային մասը վերաբերում է օրենքի առջև հավասարության և օրենքով հավասար պաշտպանության սկզբունքին: Այդ սկզբունքը ճանաչվել է մասնակից պետությունների սահմանադրություններով, ինչպես նաև մարդու իրավունքների միջազգային իրավունքով՝ որպես հիմնարար ու հաստատված ընդհանուր սկզբունք և մարդու իրավունքների պաշտպանության առանցքային բաղադրատարր:

15. Թեև օրենքի առջև հավասարության սկզբունքը հստակ ամրագրված չէ ո՛չ կոնվենցիայի 14-րդ հոդվածում, ո՛չ էլ այս արձանագրության 1-ին հոդվածում, սակայն հարկ է նշել, որ անխտրականության և հավասարության սկզբունքները սերտորեն փոխկապակցված են: Օրինակ՝ հավասարության սկզբունքը պահանջում է, որ հավասար իրողությունների նկատմամբ դրսևորվի հավասար, իսկ անհավասար իրողությունների նկատմամբ՝ անհավասար վերաբերմունք: Այլապես, անաչառ և ողջամիտ պատճառաբանության բացակայության դեպքում կարծանագրվի խտրականություն (տե՛ս ներքոհիշյալ կետ 18): Դատարանը 14-րդ հոդվածին առնչվող իր նախադեպային պրակտիկայում արդեն անդրադարձել է «հավասար վերաբերմունք սկզբունքին» (տե՛ս, օրինակ՝ *«Բելգիայի լեզվաբանական»* (*Belgian Linguistic*) գործով 1968 թ. հուլիսի 23-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 6, պարբ. 10) կամ «երկու սեռերի ներկայացուցիչների հավասարությանը» (տե՛ս, օրինակ՝ *«Աբդուլազիզը, Կաբալեսը և Բալկանդալին ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Abdulaziz, Cabales and Balkandali v UK*) գործով 1985 թ. մայիսի 28-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 94, պարբ. 78):

16. Նախաբանի երրորդ հռչակագրային մասը վերաբերում է լիարժեք և արդյունավետ հավասարության հաստատմանը նպաստող միջոցներին և կրկին հաստատում, որ անաչառ և ողջամիտ պատճառաբանությամբ հիմնավորված լինելու դեպքում նման միջոցները չպետք է արգելվեն անխտրականության սկզբունքով: Այս սկզբունքն արդեն ամրագրվել է որոշ գործող միջազգային փաստաթղթերի դրույթներում (տե՛ս, օրինակ՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի 1-ին հոդվածը, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին կետը, ինչպես նաև տարածաշրջանային մակարդակում՝ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետը): Ոչ նպաստավոր դիրքում հայտնված անձանց որոշ խմբերի կամ կարգերի առկայության հանգամանքը կամ փաստացի անհավասարությունը կարող է հիմնավորել այնպիսի միջոցները, որոնք նպաստում են նշված խմբերի և կարգերի հավասարությանը՝ համաչափության սկզբունքի պահպանման համար: Եվ իսկապես, գոյություն ունեն մի քանի միջազգային փաստաթղթեր, որոնցում ընդգրկված են դրական միջոցներ որդեգրելու պարտավորեցնող կամ խրախուսող դրույթներ պետությունների համար (տե՛ս, օրինակ՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետը, Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետը, ինչպես նաև Նախարարների կոմիտեի թիվ R (85) 2 հանձնարարականը մասնակից պետություններին սեռական խտրականության իրավական պաշտպանության վերաբերյալ): Այնուհանդերձ, այդ արձանագրությունը մասնակից պետությունների վրա չի դնում նման միջոցներ ընդունելու որևէ պարտավորություն: Նման ծրագրային պարտավորությունը կարող է անհամադրելի լինել կոնվենցիայի ամբողջ բնույթի և դրա վերահսկող համակարգի հետ, որոնց հիմքում ընկած է դատաքննելիության համար բավարար հստակ ձևակերպումներով ամրագրված անձնական իրավունքների հավաքական երաշխիքը:

1-ԻՆ ՀՈԴՎԱԾ. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԳԵԼՈՒՄ

17. Այս հոդվածը պարունակում է արձանագրության հիմնական նյութահիրավական դրույթները և ձևակերպված է հետևյալ ընդհանուր նկատառումների հիման վրա:

18. Խտրականություն հասկացությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հետևողականորեն մեկնաբանել է կոնվենցիայի 14-րդ հոդվածին առնչվող իր նախադեպային բազայում: Մասնավորապես, նախադեպային պրակտիկան ցույց է տվել, որ տարբերակումները կամ տարբերակող վերաբերմունքը ոչ բոլոր դեպքերում են խտրականություն համարվում: Ինչպես դատարանը նշել է, օրինակ՝ *«Աբդուլազիզը, Կաբալեսը և Բալկանդալին ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Abdulaziz, Cabales and Balkandali v UK*) գործով կայացրած վճռում. «Տարբերակող վերաբերմունքը խտրական է, եթե զուրկ է անաչառ և ողջամիտ հիմնավորումից, ասել է թե՝ այն չի հետապնդում օրինական նպատակ, կամ եթե օգտագործված միջոցի և դրված նպատակի միջև ողջամիտ համաչափության կապ չկա (գործով վճիռը կայացվել է 1985 թ. մայիսի 28-ին, շարք A, թիվ 94, պարբ. 72): 1-ին հոդվածում տեղ գտած «խտրականություն» եզրույթի նշանակությունը ըստ նախատեսվածի պետք է համապատասխանի 14-րդ հոդվածում նշված եզրույթին: 1-ին հոդվածի ֆրանսերեն տարբերակի sans discrimination aucune (թարգ. առանց որևէ խտրականության) ձևակերպումը որոշ չափով տարբերվում է 14-րդ հոդվածի նույն sans distinction aucune (առանց որևէ տարբերակման) ձևակերպումից: Սակայն իմաստային տեսանկյունից որևէ տարբերություն չի նախատեսվել. ընդհակառակը՝ նշված ձևակերպումը տերմինաբանական հարմարեցում է, որը միտված է անգլերեն և ֆրանսերեն տեքստերի համապատասխանեցմամբ 14-րդ հոդվածի իմաստով խտրականություն հասկացությունը լավագույնս արտահայտելուն (այս հարցի մասին տե՛ս *«Բելգիայի լեզվաբանական»* (*Belgian Linguistic*) գործով 1968 թ. հուլիսի 23-ին դատարանի կայացրած վճիռը, շարք A, թիվ 6, պարբ. 10):

19. Քանի որ տարբերակումը կամ տարբերակող վերաբերմունքը միշտ չի խտրականություն համարվում, և անխտրականության սկզբունքն ընդհանուր բնույթ ունի, այն սահմանափակող դրույթի ընդգրկումն արձանագրության մեջ անհրաժեշտ կամ պատշաճ չի համարվել: Օրինակ՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծ մասի, եթե ոչ բոլորի օրենսդրություններում այդ իրավունքների կամ արտոնությունների մասով նախատեսված են որոշակի տարբերակումներ՝ քաղաքացիության հատկանիշով: Նման տարբերակումների ընդունելի դեպքերը բավականին պաշտպանված են վերոնշյալ 18-րդ կետում ներկայացված «խտրականություն» հասկացությամբ, քանի որ անաչառ և ողջամիտ պատճառաբանությամբ հիմնավորված տարբերակումները խտրականություն չեն համարվում: Ավելին, հարկ է հիշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի համաձայն՝ ազգային մարմիններին վերապահված է հայեցողության սահման՝ գնահատելու, թե արդյոք այլ պարագայում տարբեր հավասար իրավիճակներում արդարացվա՞ծ է օրենքով նախատեսված տարբերակող վերաբերմունքը, և եթե այո, ապա՝ որքանով: Հայեցողության սահմանը տարբերվում է՝ կախված գործի հանգամանքներից, բուն էությունից և նախապատմությունից (տե՛ս *«Ռասմուսենն ընդդեմ Դանիայի»* (*Rasmussen v Denmark*) գործով 1984 թ. նոյեմբերի 28-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 87, պարբ. 40): Օրինակ՝ դատարանը մասնակից պետություններին հարկման բնագավառում ռազմավարության ձևավորման և կիրառման մասով շնորհել է հայեցողության լայն սահման (տե՛ս, օրինակ՝ *«Ազգային և պրովինցիալ շինարարական ընկերությունը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*National and Provincial Building Society and Others v UK*) գործով 1997 թ. հոկտեմբերի 3-ին կայացրած որոշումը, Վճիռների և որոշումների զեկույցներ 1997-VII, պարբ. 80):

20. Խտրականությունից զերծ հատկանիշների ցանկը նույնն է, ինչ կոնվենցիայի 14-րդ հոդվածում: Այս լուծումը այլ տարբերակների համեմատ նախընտրելի է համարվել, օրինակ՝ խտրականությունից զերծ լրացուցիչ հատկանիշների միաձուլակ ընդգրկումը (օրինակ՝ ֆիզիկական կամ մտավոր անկարողությունը, սեռական կողմնորոշումը կամ տարիքը): 14-րդ հոդվածի նախագծման ժամանակահատվածի համեմատ՝ արդի հասարակություններում այդ հատկանիշներն առանձնակի կարևորություն են ստացել ոչ թե նախկինում իրազեկության պակասի պատճառով, այլ որովհետև նման ընդգրկումն անհրաժեշտ չէր համարվում իրավական տեսանկյունից, քանի որ խտրականությունից զերծ հատկանիշների ցանկը սպառիչ չէ, և որևէ հատուկ մասնավոր հատկանիշի ընդգրկումը կարող էր հոդվածում չընդգրկված հատկանիշներով խտրականության վերաբերյալ անցանկալի հակառակ մեկնաբանությունների տեղիք տալ: Հարկ է հիշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արդեն կիրառել է 14-րդ հոդվածը՝ դրանում բացահայտորեն չնշված խտրականության հատկանիշների վերաբերյալ (սեռական կողմնորոշման հատկանիշի օրինակ տե՛ս *«Սալգեիրո դա Սիլվա Մուտան ընդդեմ Պորտուգալիայի»* (*Salgueiro da Silva Mouta v Portugal*) գործով 1999 թ. դեկտեմբերի 21-ին կայացված վճիռը):

21. 1-ին հոդվածը նախատեսում է անխտրականության մասին ընդհանուր դրույթ և դրանով իսկ սահմանում պաշտպանության տարածման ոլորտը, որը դուրս է գալիս կոնվենցիայում ամրագրված իրավունքների և ազատությունների իրացման գաղափարի եզրերից:

22. Մասնավորապես՝ 1-ին հոդվածով նախատեսված պաշտպանության լրացուցիչ շրջանակը վերաբերում է այն գործերին, որոնցում անձի նկատմամբ խտրականություն է ցուցաբերվում.

i. ազգային օրենսդրությամբ անհատի համար հատուկ նախատեսված ցանկացած իրավունքի իրացման հարցում,
ii. ազգային օրենսդրությամբ պետական մարմնի կրած պարզ պարտավորությունից եզրահանգելի իրավունքի իրացման հարցում, ասել է թե՝ երբ պետական մարմինն ազգային օրենսդրությամբ պարտավորություն է կրում որդեգրել որևէ առանձին վարվելակերպ,
iii. պետական մարմնի կողմից իր հայեցողական լիազորությունների իրացման հարցում (օրինակ՝ սուբսիդավորման հատկացման հարցում),
iv. պետական մարմնի կողմից ցանկացած այլ գործողություն կամ անգործություն (օրինակ՝ անկարգությունների զսպման ընթացքում իրավապահ մարմինների աշխատակիցների պահվածքը):

23. Այս առումով անհրաժեշտ չի համարվել պարզել, թե այս չորս բաղադրիչներից որն է ամրագրված եղել 1-ին հոդվածի 1-ին կետում, իսկ որը՝ 2-րդում: Այս երկու կետերն իրար լրացնում են, և դրանց համատեղ նպատակն է բոլոր չորս բաղադրիչները ներառել 1-ին հոդվածի շրջանակներում: Պետք է նաև հիշել, որ առաջինից չորրորդ կատեգորիաների միջև եղած համապատասխան փոփոխությունները հստակ սահմանազատված չեն, և ներպետական իրավական համակարգում կարող են կիրառվել տարբեր մոտեցումներ՝ որոշելու, թե որ կարգին է դասվում այս կամ այն դեպքը:

24. 1-ին հոդվածում տեղ գտած ձևակերպումն արտացոլում է հավասարակշռված մոտեցում այս դրույթով կողմերի ստանձնած հնարավոր դրական պարտավորությունների նկատմամբ: Դա վերաբերում է այն հարցին, թե որքանով է 1-ին հոդվածը պարտադրում պետություններին խտրականության կանխման ուղղությամբ միջոցներ ձեռնարկել, եթե նույնիսկ խտրականությունը տեղի է ունենում մասնավոր անձանց հարաբերություններում (այսպես կոչված՝ «անուղղակի հորիզոնական ազդեցություն»): Նույն հարցը ծագում է խտրականության դրսևորման դեպքերում իրավական պաշտպանության միջոցներ ապահովելու առնչությամբ: Թեև նման դրական պարտավորությունները չեն կարող ամբողջովին բացառվել, սակայն 1-ին հոդվածի գերագույն նպատակն է ներկայացնել մասնակից պետությունների բացասական պարտավորությունը, այն է՝ անհատների նկատմամբ խտրականություն չցուցաբերել:

25. Մյուս կողմից՝ 1-ին հոդվածը պաշտպանում է պետական մարմինների կողմից դրսևորվող խտրականությունից: Այս հոդվածը նախատեսված չէ նրա համար, որ մասնակից պետությունների վրա դրվի մասնավոր անձանց հարաբերություններում խտրականության բոլոր դեպքերը կանխելու և կարգավորելու դրական պարտավորություն: Կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը, որը սովորաբար պարունակում է հակիրճ դրույթներով ձևակերպված դատաքննելի անձնական իրավունքներ, ծրագրային այսպիսի լայն պարտավորության տարբեր տարրերը սահմանելու համար այնքան էլ հարմար գործիք չի լինի: Հատուկ հատկանիշներով բացառապես խտրականության վերացմանը նվիրված առանձին կոնվենցիաներում արդեն զետեղված են մանրամասն հատուկ մշակված կանոններ (տե՛ս, օրինակ՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, որոնք մշակվել են Միավորված ազգերի կազմակերպությունում): Պարզ է, որ սույն արձանագրությունը չի կարող մեկնաբանվել որպես խտրականությունից լրացուցիչ պաշտպանություն նախատեսող ներպետական օրենսդրության կամ համաձայնագրերի դրույթները սահմանափակող կամ դրանցից շեղվող փաստաթուղթ:

26. Մյուս կողմից՝ չի կարելի լիովին բացառել, որ 1-ին հոդվածի 1-ին կետով ապահովելու պարտականությունը չի կարող հանգեցնել դրական պարտավորությունների: Օրինակ՝ այս հարցը կարող է ի հայտ գալ, եթե ներպետական օրենսդրության մեջ խտրականության մասով կան ակնհայտ հարցեր: Հատկապես մասնավոր անձանց միջև հարաբերությունների առնչությամբ խտրականությունից պաշտպանություն չապահովելու հանգամանքը կարող է այնքան ընդգծված և լուրջ լինել, որ պետության համար առաջանա ակնհայտ պատասխանատվություն, և ասպարեզ մտնի արձանագրության 1-ին հոդվածը (տե՛ս *mutatis mutandis* 1985 թ. մարտի 26-ին *«X-ը և Y-ն ընդդեմ Նիդեռլանդների»* (*X and Y v the Netherlands*) գործով վճիռը, շարք A, թիվ 91, պարբ. 23-4, 27, 30):

27. Ավելին, 1-ին հոդվածից բխող դրական պարտավորությունների աստիճանը, ամենայն հավանականությամբ, սահմանափակ կլինի: Հարկ է հիշել, որ առաջին կետը սահմանազատված է «օրենքում զետեղված ցանկացած իրավունքի իրացման» մեջբերմամբ, իսկ երկրորդ կետն արգելում է խտրականության դրսևորում պետական մարմնի կողմից: Հարկ է նշել, որ բացի այդ, կոնվենցիայի 1-ին հոդվածն ամրագրում է պետության ընդհանուր պատասխանատվության սահմանագիծը, ինչը հատկապես կարևոր է մասնավոր անձանց միջև խտրականության դեպքերում:

28. Այս նկատառումները վկայում են, որ մասնավոր անձանց հարաբերությունների բնագավառում յուրաքանչյուր դրական պարտավորություն կարող է ամենաշատն անդրադառնալ հանրային ոլորտում դրսևորվող հարաբերություններին, որոնք սովորաբար կարգավորվում են օրենքով, և որոնց նկատմամբ պետությունը կրում է որոշակի պատասխանատվություն (օրինակ՝ աշխատանքի ընդունելու կամայական մերժումը, սննդի վայրեր մուտքի արգելումը կամ մասնավոր անձանցից հանրությանը մատուցվող ծառայությունների արգելումը և այլն): Պետության պատասխան գործողությունների հստակ ձևը, ըստ իրավիճակի, տարբեր է լինելու: Հասկանալի է, որ զուտ անձնական հարցերը չեն շոշափվելու: Նաև հավանականություն կա, որ նման հարցերի կարգավորումը միջամտության վերածվի անհատի՝ կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված մասնավոր և ընտանեկան կյանքի, տան և նամակագրության իրավունքին:

29. 1-ին հոդվածի 1-ին կետում մեջբերվում է «օրենքով նախատեսված ցանկացած իրավունք» արտահայտությունը: Այս արտահայտությունը միտված է սահմանելու այս կետով նախատեսված երաշխիքի տարածման աստիճանը և սահմանափակելու դրա հնարավոր անուղղակի հորիզոնական ազդեցությունը (տե՛ս վերոնշյալ 27-րդ պարբերությունը): Քանի որ կարող են կասկածներ առաջանալ, թե արդյոք այս նախադասությունն ինքնին ծածկո՞ւմ է արձանագրությամբ նախատեսված հիմնական լրացուցիչ շրջանակի բոլոր չորս տարրերը (կարող է հարց առաջանալ մասնավորապես երրորդ և չորրորդ տարրերի առնչությամբ, տե՛ս վերոնշյալ 22-րդ պարբերությունը), ուստի հարկ է հիշել, որ հոդվածի 1-ին և 2-րդ կետերն իրար լրացնում են: Արդյունքն այն է, որ այս չորս տարրերը բոլոր դեպքերում ամբողջությամբ ներառված են 1-ին հոդվածում (տե՛ս վերոնշյալ 23-րդ պարբերությունը): «Օրենք» բառը կարող է նաև ընդգրկել միջազգային իրավունքը, սակայն դա չի նշանակում, որ այս դրույթը Մարդու իրավունքների եվրոպական դատարանին իրավազորություն է տալիս քննելու օրենքի համապատասխանությունն այլ միջազգային գործիքներին:

30. «Պետական մարմին» եզրույթը 2-րդ կետում վերցվել է կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետից և 10-րդ հոդվածի 1-ին կետից և նախատեսված է միևնույն իմաստով: Այդ եզրույթն ընդգրկում է ոչ միայն վարչական մարմիններ, այլև՝ դատարաններ և օրենսդիր մարմիններ (տե՛ս վերոնշյալ 23-րդ պարբերությունը):

Այսպիսով, թեև պետություններն ընդհանուր առմամբ իրավաբանական պարտավորություն չեն կրելու ոչ նպաստավոր վիճակում հայտնված խմբերի կամ անձանց նկատմամբ փոխհատուցողական կամ դրական խտրականության ծրագրեր իրականացնելու համար, սակայն նախաբանում կրկին նշվում է, որ եթե առկա միջոցներն ունեն «անաչառ և ողջամիտ հիմնավորում», ապա դրանք կոնվենցիայի շրջանակներում ապօրինի չեն համարվի: Ավելին, թեև արձանագրության հիմնական նպատակն է արգելել պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից խտրականության դրսևորումը, սակայն բացառիկ դեպքերում պետությունները կարող են պարտավորված լինել միջամտելու՝ մասնավոր անձանց հարաբերություններում խտրականության «լուրջ» դեպքերը կանխելու համար: 12-րդ արձանագրությունն ուժի մեջ է մտել 2005 թ. ապրիլի 1-ին այն վավերացրած պետությունների համար (Ալբանիա, Հայաստան, Բոսնիա և Հերցեգովինա, Խորվաթիա, Կիպրոս, Ֆինլանդիա, Վրաստան, Հոլանդիա, Սան Մարինո, Սերբիա և Մոնտենեգրո և Մակեդոնիայի նախկին Հարավսլավիայի Հանրապետություն): Արձանագրությունը կիրառելի կլինի այլ պետությունների համար, երբ վերջիններս վավերացնեն այն: 14-րդ հոդվածը շարունակելու է կիրառելի լինել կոնվենցիային անդամակցած բոլոր կողմերի համար:

17 ՀՈԴՎԱԾ 15 ՇԵՂՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

«Լոլեսն ընդդեմ Իռլանդիայի» գործ (Lawless v Ireland, No 3) A.3 (1961), EHRR (1 EHRR 15)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

1921 թ. Իռլանդիայի ազատ պետության հիմնադրման պահից ի վեր մի քանի առիթներով ստեղծվել են իրենց «Իռլանդիայի հանրապետական բանակ» (ԻՀԲ) (անգլ. Irish Republican Army-IRA) անվանող և Հյուսիսային Իռլանդիայում Բրիտանիայի տիրապետությանը վերջ տալու նպատակ հետապնդող զինված խմբեր: 1939 թ. ԻՀԲ-ն «պատերազմ հայտարարեց Մեծ Բրիտանիային», իսկ Իռլանդիայի կառավարությունը դրան արձագանքեց «Պետության դեմ հանցագործությունների մասին» 1940 թ. փոփոխությունների (1940 թ. թիվ 2) մասին օրենքի ընդունմամբ, որով պետության նախարարներին շնորհվում էին արտադատական կալանավորման լիազորություններ: 1956-57 թթ. կրկին արձանագրվեց ԻՀԲ-ի բռնությունների մի նոր ալիք, այդ թվում՝ Դուբլին-Բելֆաստ երկաթուղու վրա ռումբի պայթյունը և Հյուսիսային Իռլանդիայում ոստիկանության պարեկային խմբի դարանակալվելը սահմանի մոտ, որի հետևանքով սպանվեց մեկ ոստիկան: Ուստի, 1957 թ. հուլիսի 5-ին Իռլանդիայի կառավարությունը հանդես եկավ մի հայտարարությամբ, որով 1940 թ. ձերբակալության և կալանավորման հատուկ լիազորությունները կրկին կյանքի կոչվեցին: Մի քանի օր անց Իռլանդիայի արտաքին գործերի նախարարը տեղեկացրեց Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին, որ ուժի մեջ է մտել 1940 թ. օրենքը, և իր նամակը պետք է դիտարկվի որպես կոնվենցիայի 15-րդ հոդվածով նախատեսված պարտավորություններից շեղման ծանուցում:

1956 թ. հրազենի ապօրինի պահման մեղադրանքով Իռլանդիայում կայացած դատավարության ընթացքում դիմողը խոստովանել է, որ հանդիսանում է Իռլանդիայի հանրապետական բանակի անդամ: Ներկայացրած մեղադրանքով դիմողն արդարացվել է, սակայն 1957 թ. մայիսին Դուբլինի տարածքային դատարանը նրան մեղավոր է ճանաչել մերկացնող փաստաթղթեր (պարտիզանական կռվի վերաբերյալ) պահելու համար և դատապարտել մեկ ամսվա ազատազրկման: 1957 թ. հուլիսի 13-ին Լոլեսը կալանավորվել է արդարադատության նախարարի՝ 1940 թ. օրենքի դրույթներով արձակած հրամանով, քանի որ նախարարը համարում էր, որ դիմողն զբաղվում է պետության անվտանգության համար վնասակար գործունեությամբ: Լոլեսը պահվում էր Քառայի ուղղիչ ճամբարում: 1957 թ. դեկտեմբերի 11-ին նա ազատ արձակվեց բանավոր պարտավորություն ստանձնելուց հետո առ այն, որ չի զբաղվելու «Պետության դեմ հանցագործությունների մասին» օրենքով նախատեսված որևէ ապօրինի գործունեությամբ: Լոլեսը գանգատ ներկայացրեց Ստրասբուրգի Մարդու իրավունքների դատարան՝ կոնվենցիայով ամրագրված մի շարք իրավունքների, այդ թվում՝ 5-րդ և 6-րդ հոդվածներով նախատեսված ազատության և արդար դատաքննության իրավունքների խախտման առնչությամբ: Իռլանդիայի կառավարությունն իր գործողությունները, ի թիվս այլոց, հիմնավորել է 15-րդ հոդվածով:

22. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ չազատվելով կոնվենցիայով ստանձնած իր բոլոր պարտավորություններից՝ յուրաքանչյուր մասնակից պետության կառավարություն իրավունք ունի պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրության պայմաններում կոնվենցիայով ստանձնած իր պարտավորություններից շեղվող միջոցներ

ձեռնարկել, բացառությամբ 15-րդ հոդվածի 2-րդ կետում նշված պարտավորությունների, եթե նման միջոցները խիստ սահմանափակված են միայն իրավիճակի հրամայականներով պահանջվող գործողություններով և չեն հակասում միջազգային իրավունքով նախատեսված այլ պարտավորությունների, իսկ դատարանին վերապահված է որոշել, թե արդյոք շեղման բացառիկ իրավունքի իրացման համար 15-րդ հոդվածում նախատեսված պայմանները կատարվե՞լ են տվյալ դեպքում, թե՞ ոչ:

(Ա) ԱԶԳԻ ԿՅԱՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

23. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իռլանդիայի կառավարությունը 1957 թ. հուլիսի 5-ին ներկայացրած և 1957 թ. հուլիսի 8-ին պաշտոնական տեղեկագրում հրապարակված հռչակագրով ուժի մեջ է դրել «Պետության դեմ հանցագործությունների մասին» 1940 թ. օրենքի 2-րդ մասով իրեն վերապահված արտակարգ լիազորությունները՝ «հասարակությունում խաղաղության և կարգուկանոնի պահպանումն ապահովելու» նպատակով.

24. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված իր 1957 թ. հուլիսի 20-ի նամակով Իռլանդիայի կառավարությունը միանշանակ հայտարարել է, որ «նշված օրենքի շրջանակներում անձանց կալանավորումն անհրաժեշտ է համարվում հասարակությունում խաղաղության և կարգուկանոնի դեմ ուղղված հանցանքները, ինչպես նաև սահմանադրությամբ չնախատեսված ռազմականացված կամ զինված խմբերի կազմավորումը կանխելու համար».

25. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովին Լոլեսի կողմից ներկայացված գանգատին ի պատասխան Իռլանդիայի կառավարությունը բերել է մի քանի փաստ, որոնցից կարելի է եզրահանգել նշված ժամանակաշրջանում 15-րդ հոդվածով սահմանված իմաստով «ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրության» գոյության մասին.

26. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լոլեսը, ի հիմնավորումն իր դիմումի, ներկայացրել է այն պնդումը, որ եթե նույնիսկ ապացուցվեր վերոնշյալ փաստերի գոյությունը, ապա դա չէր կարող համարվել «ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրություն» 15-րդ հոդվածի իմաստով, և ավելին, վիճարկել է պատասխանող պետության բերած փաստերից մի քանիսը.

27. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոնվենցիայի 28-րդ հոդվածի համաձայն անցկացրած հետաքննությունից հետո հանձնաժողովն իր զեկույցում արտահայտել է մեծամասնության այն կարծիքը, որ «1957 թ. հուլիսին Իռլանդիայում գոյություն ուներ ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրություն կոնվենցիայի 15-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված իմաստով».

28. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոնվենցիայի 15-րդ հոդվածի ընդհանուր համատեքստում «ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրություն» արտահայտության բնական և սովորական իմաստը բավականին պարզ էր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ բառերը վերաբերում են ճգնաժամային բացառիկ դրության, որն ազդում է ողջ ազգաբնակչության վրա և սպառնալիք է պետությունում բնակվող համայնքի կազմակերպված կյանքին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաստատելով այս գաղափարի բնական և սովորական իմաստը՝ դատարանը պետք է որոշի՝ Իռլանդիայի կառավարության 1957 թ. հուլիսի 5-ի հռչակագրի հիմքում ընկած փաստերն ու հանգամանքներն այս գաղափարի շրջանակներո՞ւմ են, թե՞ ոչ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համապատասխան քննությունից հետո դատարանը հաստատել է այդ իրողությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում Իռլանդիայի կառավարության ողջամիտ եզրահանգմամբ արձանագրվել է «ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրություն» մի քանի գործոնների համադրության հիման վրա, մասնավորապես՝ նախ և առաջ Իռլանդիայի Հանրապետության տարածքում հակասահմանադրական գործունեությամբ զբաղվող գաղտնի բանակի գոյությունը, որը բռնություն էր գործադրում իր նպատակներին հասնելու համար, երկրորդ՝ այն փաստը, որ տվյալ բանակը գործում էր նաև պետության սահմաններից դուրս՝ այդպիսով լուրջ վտանգի տակ դնելով Իռլանդիայի Հանրապետության հարաբերությունները հարևան երկրի հետ, երրորդ՝ 1956 թ. աշնանից ի վեր և 1957 թ. առաջին կիսամյակի ողջ ընթացքում արձանագրվել է ահաբեկչական գործողությունների կայուն և տագնապալի աճ.

29. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ չնայած իրավիճակի լրջությանը՝ կառավարությանը հաջողվեց սովորական օրենսդրությամբ նախատեսված միջոցների գործադրմամբ պահպանել պետական հաստատությունների քիչ թե շատ բնականոն աշխատանքը, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հյուսիսային Իռլանդիայի տարածքում՝ սահմանի մոտ, 1957 թ. հուլիսի 3-ի լույս 4-ի գիշերը՝ հուլիսի 12-ին նախորդող ժամանակաշրջանում (պատմական նկատառումներով այս ամսաթիվը հատուկ կարևորություն ունի հասարակական կարգն ու հանգիստը պահպանելու տեսանկյունից), մահացու դարանակալման, Իռլանդիայի Հանրապետության տարածքից ԻՀԲ-ի և դրանից անջատված այլ խմբերի կողմից ապօրինի գործողությունների շարունակման հետևանքով ազգին սպառնացող վերահաս վտանգ կար.

30. Եվ, վերջապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իռլանդիայի կառավարությունը հիմք ուներ Իռլանդիայի Հանրապետությունում ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրություն հայտարարել, ուստի իրավասու էր կոնվենցիայի 15-

րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով նախատեսված նպատակներով և կոնվենցիայով ստանձնած իր պարտավորություններից շեղվող միջոցներ ձեռնարկել:

(Բ) ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՇԵՂՈՒՄՈՎ ՉԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԽԻՍՏ ԼՐՋՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ

31. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 15-րդ հոդվածի 1-ին կետով բարձր պայմանավորվող կողմը կարող է շեղվել կոնվենցիայով նախատեսված իր պարտավորություններից միայն «այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը», հարկ է ուսումնասիրել՝ 1940 թ. օրենքի 2-րդ մասի ուժի մեջ մտնելը 1957 թ. արտակարգ դրությամբ ստեղծված պայմաններում անհրաժե՞շտ միջոց էր, թե՞ ոչ.

32. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմող Լոլեսը հանձնաժողովին ներկայացրել է իր այն փաստարկը, որ եթե նույնիսկ 1957 թ. դրությունն արդարացներ շեղումը կոնվենցիայի դրույթներից, միևնույն է, «Պետության դեմ հանցագործությունների մասին» 1940 թ. փոփոխություններով օրենքի 2-րդ բաժնի գործադրումն ու կիրառումը համաչափ չէին իրավիճակի խիստ պահանջներին.

33. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իռլանդիայի կառավարությունը և դատարանը բերել են այն փաստարկը, որ 1940 թ. օրենքի 2-րդ մասով ձեռնարկված միջոցները տվյալ հանգամանքներում պահանջվում էին դրության լրջությամբ՝ կոնվենցիայի 15-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան.

34. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովի մեծամասնությունը համաձայն էր այս հարցով Իռլանդիայի կառավարության ներկայացրած փաստարկներին, և հանձնաժողովի որոշ անդամներ հաստատված փաստերի հիման վրա արել են այլ իրավական եզրակացություններ.

35. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԻՀԲ-ի և դրանից անջատված խմբերի գործունեությունը վերահսկելու համար 1957 թ. Իռլանդիայի կառավարության տրամադրության տակ եղած միջոցների լույսի ներքո Իռլանդիայի կառավարությունը կարող էր այնպիսի միջոցներ ձեռնարկել, որոնք ավելորդ կդարձնեին այնպիսի խիստ միջոցը, որպիսին առանց դատաքննության կալանավորումն է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս առնչությամբ հիշատակվել է սովորական քրեական իրավունքի կիրառումը, ինչպես նաև 1939 թ. «Պետության դեմ հանցագործությունների մասին» օրենքում նախատեսված հատուկ կամ ռազմական դատարանների ստեղծումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր կլիներ քննել որոշ միջոցներ, ինչպես, օրինակ՝ Իռլանդիայի Հանրապետության և Հյուսիսային Իռլանդիայի միջև սահմանի փակումը.

36. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդուհանդերձ, դատարանի կարծիքով, սովորական օրենսդրության կիրառմամբ 1957 թ. անհնար էր զսպել Իռլանդիայի Հանրապետությանը սպառնացող վտանգը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սովորական քրեական դատարանները և նույնիսկ հատուկ քրեական կամ զինվորական դատարանները բավարար չէին կարգն ու խաղաղությունը վերականգնելու համար, հաշվի առնելով, մասնավորապես, ԻՀԲ-ի և դրանից անջատված խմբերի գործողություններում ներգրավված անձանց դատապարտելու համար անհրաժեշտ ապացույցներ հավաքելը և ազգաբնակչության շրջանում նրանց նկատմամբ վախը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ խմբերն իրենց գործունեությունը ծավալում էին հիմնականում Հյուսիսային Իռլանդիայում, իսկ Իռլանդիայի Հանրապետության տարածքում նրանց գործունեությունը հիմնականում սահմանափակվում էր սահմանակից պետությունում զինված հարձակումների կազմակերպմամբ, ինչը լրացուցիչ խոչընդոտ էր բավարար ապացույցներ հավաքելու համար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանի փակումը չափազանց ծանր անդրադարձ կունենար ողջ ազգաբնակչության վրա՝ դուրս գալով արտակարգ դրությամբ պահանջվող միջոցառումների շրջանակից.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոշարադրյալ միջոցներից ոչ մեկը հնարավորություն չէր տա շտկելու Իռլանդիայում 1957 թ. ստեղծված իրավիճակը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ահաբեկչական գործողություններին մասնակցելու մտադրություն ունենալու մեջ կասկածվող անձանց նկատմամբ 1940 թ. լրամշակված օրենքի համաձայն վարչական կալանքի կիրառումը, թեպետև խիստ միջոց էր, սակայն անհրաժեշտ էր տվյալ հանգամանքներում.

37. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Պետության դեմ հանցագործությունների մասին» 1940 թ. օրենքով նախատեսվում էին մի շարք երաշխիքներ, որոնք կոչված են վարչական կալանքի համակարգի աշխատանքում կանխել չարաշահումները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի կիրառումը խորհրդարանի շարունակական վերահսկողության տակ էր, որը ոչ միայն պարբերաբար մանրամասն և հստակ տեղեկություններ էր ստանում օրենքի կատարման վերաբերյալ, այլև կարող էր ամեն պահի սեփական որոշմամբ անվավեր համարել կառավարության՝ օրենքն ուժի մեջ մտցրած բանաձևը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Պետության դեմ հանցագործությունների մասին» 1940 թ. օրենքը նախատեսում էր հիմնել երեք անդամից բաղկացած «Կալանավորման հարցերով հանձնաժողով», ինչն էլ փաստորեն իրականացրել էր կառավարությունը, ընդ որում, հանձնաժողովի անդամներ են նշանակվել պաշտպանական ուժերի մեկ սպա և երկու դատավոր, հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդրո առարկա օրենքի համաձայն՝ կալանավորված յուրաքանչյուր

անձ կարող էր իր գործը քննության ներկայացնել այդ հանձնաժողովին, իսկ եթե հանձնաժողովը վճռեր ազատ արձակել կալանավորին, ապա այդ որոշումը պարտադիր կլիներ կառավարության համար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանից բացի, սովորական դատարանները կարող էին կալանքի հարցերով այդ հանձնաժողովին հարկադրել իրականացնել նրան վերապահված գործառույթը.

Վերջապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կալանավորման լիազորությունն ուժի մեջ մտցրած հռչակագրից անմիջապես հետո կառավարությունը հրապարակավ հայտարարեց, որ ազատ կարձակի յուրաքանչյուր անձի, ով սահմանադրությունն ու օրենսդրությունը հարգելու և որևէ ապօրինի գործունեությամբ չզբաղվելու պարտավորություն կստանձնի, ընդ որում, այդ պարտավորության ձևակերպումը հետագայում փոխվեց, և դրանով կալանավորված անձից պարզապես պահանջվում էր պարտավորվել հարգել օրենսդրությունը և զերծ մնալ 1940 թ. օրենքին հակասող գործողություններից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձերբակալված անձինք ձերբակալությունից անմիջապես հետո տեղեկացվել են, որ ազատ կարձակվեն, եթե ստանձնեն վերոնշյալ պարտավորությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իռլանդիայի պես ժողովրդավարական երկրում կառավարության կողմից հրապարակավ ազատ արձակելու նման երաշխիքի գոյությունը կառավարության ստանձնած իրավական պարտավորություն էր, այն է՝ ազատ արձակել բոլոր անձանց, ովքեր կստանձնեն վերոնշյալ պարտավորությունը.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոշարադրյալից հետևում է, որ 1940 թ. օրենքով նախատեսված առանց դատաքննության կալանավորումը ենթակա էր վերոնշյալ երաշխիքներին և համարվում էր իրավիճակի խիստ հրամայականներով պարտադրված միջոց՝ կոնվենցիայի 15-րդ հոդվածով սահմանված իմաստով:

38. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լոլեսի առանձին գործում չկա որևէ ապացույց, որ 1940 թ. «Պետության դեմ հանցագործությունների մասին» լրամշակված օրենքով Իռլանդիայի կառավարությանը տրված կալանավորման լիազորությունները կիրառվել են դիմողի դեմ կոնվենցիայի 18-րդ հոդվածով սահմանված իմաստով նախատեսված նպատակից տարբերվող այլ նպատակով կամ կոնվենցիայի 15-րդ հոդվածով սահմանված իմաստով այդ պահին ստեղծված իրավիճակի հրամայականներով պայմանավորված միջոցառման շրջանակներից դուրս, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովը, հաստատելով 1958 թ. իր որոշմամբ դիմողի ներկայացրած գանգատի ընդունելիությունն այն հիմքով, որ դիմողն սպառել էր ներպետական պաշտպանության միջոցները, ընդհակառակը իր զեկույցում նշել է, որ Լոլեսի ընդհանուր վարքագիծը՝ «նրա կապը ԻՀԲ-ի հայտնի անդամ հանդիսացող անձանց հետ, մերկացնող փաստաթղթեր պահելու համար նրա դատվածությունը և այլ հանգամանքներն այնպիսին էին, որ դիմողի նկատմամբ ամենալուրջ կասկածների տեղիք էին տալիս, և անկախ նրանից՝ նա դեռևս հանդիսանում է ԻՀԲ-ի անդամ, թե ոչ, շարունակում էր առնչություն ունենալ ԻՀԲ-ի գործունեության հետ 1957 թ. իր ձերբակալության պահին», հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործից երևում է, որ 1940 թ. օրենքի 2-րդ մասով դիմող Լոլեսի կալանքի սկզբնական շրջանում Իռլանդիայի կառավարությունը տեղեկացրել էր նրան, որ ազատ կարձակվի, եթե ստանձնի գրավոր պարտավորություն «հարգել Իռլանդիայի սահմանադրությունն ու օրենքները» և «չանդամակցել կամ չաջակցել որևէ կազմակերպության, որն ապօրինի է համարվում «Պետության դեմ հանցագործությունների մասին» 1939 թ. օրենքով», հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1957 թ. կառավարությունը կրկնեց իր առաջարկն այլ ձևով, որին դիմող Լոլեսը պատասխանեց դրական՝ ստանձնելով Կալանավորման հարցերով հանձնաժողովի առջև բանավոր պարտավորություն «չզբաղվել «Պետության դեմ հանցագործությունների մասին» 1939 թ. և 1940 թ. օրենքներով նախատեսված որևէ ապօրինի գործունեությամբ» և դրանից անմիջապես հետո համապատասխանաբար ազատ արձակվեց:

(Գ) ԱՅՆ ՀԱՐՑԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ, ԹԵ ԱՐԴՅՈՔ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՇԵՂՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ «ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻ՞ ԷԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄՅՈՒՍ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ»

39. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոնվենցիայի 15-րդ հոդվածի 1-ին կետը լիազորում է բարձր պայմանավորվող կողմերին ձեռնարկել կոնվենցիայով նախատեսված իրենց պարտավորություններից շեղվող միջոցներ, եթե միայն դրանք «անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած մյուս պարտավորությունների հետ».

40. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թեև դատաքննության ընթացքում ո՛չ հանձնաժողովը, ո՛չ Իռլանդիայի կառավարությունը չեն հիշատակել այս դրույթը, իսկ դատարանի գործառույթով, որը, 19-րդ հոդվածի համաձայն, ապահովում է կոնվենցիայով մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունների վերահսկողությունը, պահանջվում է որոշել, թե արդյոք տվյալ դեպքում բառիս բուն իմաստով բավարարվե՞լ է վերոնշյալ պայմանը.

41. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարանը չունի հիմնավոր փաստեր՝ վճռելու, որ ի շեղումն կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների՝ Իռլանդիայի կառավարության ձեռնարկած միջոցը կարող էր հակասել միջազգային իրավունքով պետության ստանձնած այլ պարտավորություններին:

(Դ) ԱՅՆ ՀԱՐՑԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ, ԹԵ ԱՐԴՅՈՔ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ 1957 թ. ՀՈՒԼԻՍԻ 20-ԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿԸ ԲԱՎԱՐԱ՞Ր ՇԱՆՈՒՑՈՒՄ Է ԵՂԵԼ ԸՍՏ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 15-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ

42. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոնվենցիայի 15-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ ըստ նույն հոդվածի 1-ին կետի, յուրաքանչյուր մասնակից պետություն, իրացնելով պարտավորություններից շեղվելու իրավունքը, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ամբողջությամբ իրազեկում է իր ձեռնարկած միջոցների և դրանց դրդապատճառների մասին, ինչպես նաև նշված միջոցների գործողությունը դադարեցնելու մասին.

43. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում 1957 թ. հուլիսի 20-ին Իռլանդիայի կառավարությունը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին դիմել է նամակով՝ տեղեկացնելով նրան, որ 1940 թ. «Պետության դեմ հանցագործությունների մասին» լրամշակված օրենքի 2-րդ մասի դրույթներն ուժի մեջ են մտել 1957 թ. հուլիսի 8-ին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նամակին կից ներկայացվել է 1940 թ. նշված օրենքի առարկայի և բուն օրենքի մասին Իռլանդիայի կառավարության հռչակագրի օրինակները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ նամակում Իռլանդիան պարզաբանել է, որ խնդրո առարկա միջոցառման կիրառումն անհրաժեշտ է համարվել՝ «հասարակությունում խաղաղություն և կարգուկանոն ապահովելու, ինչպես նաև սահմանադրությամբ չնախատեսված ռազմականացված կամ զինված խմբեր պահելը կանխելու համար».

44. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լոլեսը հանձնաժողովի առջև վիճարկել է Իռլանդիայի կառավարության իրավունքը՝ հիմք ընդունելու 1957 թ. հուլիսի 20-ի նամակը որպես 15-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված պարտավորությունից շեղվելու մասին վավերական ծանուցում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լոլեսն ըստ էության հանձնաժողովի առջև վիճարկել է կոնվենցիայի դրույթներից շեղվելու մասին նամակի ծանուցողական բնույթը, քանի որ պետությունն այդ նամակը չէր ուղարկել պարտավորություններից շեղվելու մասին պաշտոնապես ծանուցելու համար (նույնիսկ նամակի նման ծանուցողական բնույթն ընդունելու դեպքում այն չի բավարարել 15-րդ հոդվածի 3-րդ կետի խիստ պահանջները, քանի որ նամակում չի հիմնավորվել անձի կալանավորումն առանց դատի անցկացման, պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության առկայությունը, և ըստ հարկի չի բնորոշվել պետության ձեռնարկած միջոցի բնույթը), հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում դատաքննության ժամանակ հանձնաժողովի հիմնական պատվիրակը հայտնել է Լոլեսի երրորդ փաստարկը, ասել է թե՝ նույնիսկ 1957 թ. հուլիսի 20-ին Գլխավոր քարտուղարին ըստ հարկի ներկայացրած լինելու դեպքում նշված շեղման հիմքում ընկած միջոցները չէին կարող կիրառվել Իռլանդիայի իրավազորության ներքո գտնվող անձանց նկատմամբ մինչև 1957 թ. հոկտեմբերի 23-ը, երբ նամակն առաջին անգամ հրապարակվեց Իռլանդիայում.

45. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովի կարծիքով՝ Իռլանդիայի կառավարությունն ըստ հարկի տեղեկացրել է Գլխավոր քարտուղարին հատուկ միջոցների ձեռնարկման մասին՝ կոնվենցիայի 15-րդ հոդվածի 3-րդ կետի հստակ հիշատակությամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1957 թ. հուլիսի 20-ի նամակի դրույթները և նշված դրույթներն ուժի մեջ դնող նամակին կից ներկայացրած 1940 թ. օրենքի և հռչակագրի օրինակները բավարար էին Գլխավոր քարտուղարին ձեռնարկված միջոցների բնույթը ներկայացնելու համար, և նշելով, որ հուլիսի 20-ի նամակում մանրամասն չեն ներկայացվել ի շեղումն պարտավորությունների՝ Իռլանդիայի կառավարության ձեռնարկած միջոցների դրդապատճառները, հանձնաժողովը միաժամանակ չէր կարող ասել, որ խնդրո առարկա դեպքը բավարար կերպով չի համապատասխանել 15-րդ հոդվածի 3-րդ կետին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ անդրադառնալով Լոլեսի երրորդ փաստարկին՝ հանձնաժողովի պատվիրակները Մարդու իրավունքների եվրոպական դատարանում հավելել են, որ կոնվենցիայի 15-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով պահանջվել է միայն, որ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը տեղեկացվի պարտավորություններից շեղվելու մասին, ընդ որում, Իռլանդիայի կառավարությունը պարտադրված չէր համապատասխան ծանուցում հռչակել իր ներպետական օրենքների շրջանակներում.

46. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին հայտարարությունների ժամանակ Իռլանդիայի կառավարությունը հայցել է դատարանից հանձնաժողովի եզրակացությանը համապատասխան հայտնել, որ 1957 թ. հուլիսի 20-ի նամակը բավարար ծանուցում է եղել կոնվենցիայի 15-րդ հոդվածի 3-րդ կետի շրջանակներում, կամ այլապես հայտարարել, որ տվյալ դեպքում նշված 3-րդ կետի որևէ դրույթ չի հակասել՝ 15-րդ հոդվածի 1-ին կետը հիմք ընդունելու Իռլանդիայի կառավարության իրավունքին.

47. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարանը կոչված է նախ քննելու, թե արդյոք կոնվենցիայի 15-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարն ըստ հարկի է տեղեկացվել թե՛ ձեռնարկված միջոցների, թե՛ դրանց հիմքում ընկած պատճառների մասին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարանի համաձայն՝ հուլիսի 20-ի նամակին կից ներկայացվել են 1940 թ. «Պետության դեմ հանցագործությունների մասին» լրամշակված օրենքի օրինակը և օրենքի 2-րդ մասն ուժի մեջ դնող 1957 թ. հուլիսի 8-ին հրապարակված հուլիսի 5-ի հռչակագրի օրինակը, որում պարզաբանվել է, որ միջոցները ձեռնարկվել են «հասարակությունում խաղաղության և կարգուկանոնի պահպանումն ապահովելու, սահմանադրությամբ թույլատրելի ուժերից զատ ռազմականացված կամ զինված ուժերի կազմավորումը

կանխելու համար», այսպիսով, Իռլանդիայի կառավարությունը Գլխավոր քարտուղարին բավականաչափ տեղեկություններ է տրամադրել ձեռնարկված միջոցների և դրանց հիմքում ընկած պատճառների մասին: Երկրորդ՝ դատարանի կարծիքով, Իռլանդիան տեղեկությունները հայտնել է Գլխավոր քարտուղարին կոնվենցիայով սահմանված պետության պարտավորություններից շեղվող միջոցներն ուժի մեջ դնելուց միայն 12 օր անց, ուստի չի ուշացրել ծանուցումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ի վերջո, կոնվենցիայով չի սահմանվում որևէ հատուկ դրույթ, որի համաձայն՝ նշված մասնակից պետությունը պետք է իր տարածքում հռչակի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցումը պարտավորություններից շեղվելու որոշման մասին.

Հաշվի առնելով դատարանի համապատասխան կարծիքն առ այն, որ տվյալ դեպքում Իռլանդիան որպես մասնակից պետություն կատարել է կոնվենցիայի 15-րդ հոդվածի 3-րդ կետով ստանձնած իր պարտավորությունը՝

48. Այս հիմքերով

ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

(iv) հայտարարում է, որ Լոլեսի՝ 1957 թ. հուլիսի 13-ից մինչև դեկտեմբերի 11-ը տևած կալանավորումը հիմնավորված էր 1957 թ. հուլիսին Իռլանդիայի պետության ստանձնած պարտավորություններից շեղվելու իրավունքով, որը 1957 թ. հուլիսին, կոնվենցիայի 15-րդ հոդվածին համապատասխան, ըստ հարկի իրացրել է Իռլանդիայի պետությունը,

(v) հայտարարում է, որ 1957 թ. հուլիսի 20-ին Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին Իռլանդիայի կառավարության տրամադրած տվյալները հանդիսացել են բավարար ծանուցում կոնվենցիայի 15-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով:

Համապատասխանաբար դատարանը որոշում է, որ սույն գործով բացահայտված փաստերը չեն վկայում, որ Իռլանդիայի իշխանությունները խախտել են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորությունները:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում ընդգրկված էին նախագահող դատավոր Քեսինը և դատավորներ Մարիդակիսը, Ռոդենբերը, Մակգոնիգալը, Բալլադորե Պալիերին, Առնոլդսը և Արիկը:

2 Դատավոր Մարիդակիսը մեծամասնության մոտեցման հետ համընկնող իր առանձին կարծիքն արտահայտելիս ասել է, որ

«ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրություն» ձևակերպումը նշանակում է բավական բացառիկ իրավիճակ, որը վտանգում կամ կարող է վտանգել օրինական կարգով քաղաքացիների արտահայտած կամքին համապատասխան պետական քաղաքականության բնականոն իրականացումը ինչպես երկրի ներսում, այնպես էլ այլ մեծ պետությունների հետ փոխհարաբերություններում:

3 Դատարանի վճռում գործածությունից դուրս եկած ձևակերպումներն ու ոճը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ տվյալ գործն առաջինն էր այդ հաստատության կողմից քննված նման գործերի շարքում: Այնուհանդերձ, դատարանի՝ 28-րդ կետում տեղ գտած «ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրություն» ձևակերպման մեկնաբանությունը կիրառվել է հետագա գործերում:

4 Թեև Իռլանդիայի իշխանությունները հիմնվել են 15-րդ հոդվածի վրա՝ *Լոլեսի* (*Lawless*) գործի շրջանակներում ԻՀԲ-ի ահաբեկչության դեմ պայքարի արտադատական միջոցներն արդարացնելու համար, սակայն երբ Իռլանդիան ավելի ուշ գանգատ ներկայացրեց Մեծ Բրիտանիայի կողմից Հյուսիսային Իռլանդիայում ձերբակալության և կալանավորման արտադատական լիազորությունների կապակցությամբ, ձգտում էր ապացուցել, որ չեն բավարարվել 15-րդ հոդվածի պայմանները: Վերն արդեն (էջ 151) պարզաբանվել է *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Ireland v UK*) գործի նախապատմությունը: Դատարանը վճռել է հետևյալը:

Բ. 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ 15-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՄԲ

202. Դիմող պետությունը պնդել է, որ 1971 թ. օգոստոսի 15-ից մինչև 1975 թ. մարտը Հյուսիսային Իռլանդիայում կիրառվող ազատազրկման արտադատական լիազորությունները լիովին չեն համապատասխանել 15-րդ հոդվածին, հետևաբար, տեղի է ունեցել 5-րդ հոդվածի խախտում:

Հանձնաժողովը միաձայն որոշման չի եկել այս պնդումը չընդունելու հարցի շուրջ, իսկ պատասխանող պետությունը վիճարկել է այն:

…

204. 5-րդ հոդվածը կարծես տեղ չի գտել 15-րդ հոդվածի 2-րդ կետում պաշտպանված դրույթների շարքում, ուստի մասնակից պետություններին վերապահված և նույն 15-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով կարգավորվող «պարտավորություններից շեղվելու իրավունքի» տիրույթում գտնվող հոդվածներից մեկն է:

1. «ԱԶԳԻ ԿՅԱՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

205. 15-րդ հոդվածը կիրառվում է միայն «պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ»: Նման արտակարգ դրության առկայության մասին պարզ վկայում են արդեն ի մի բերված փաստերը, և այդ իրողությունը չի վիճարկվել ո՛չ հանձնաժողովում, ո՛չ էլ դատարանում: Ուստի ձշված ժամանակաշրջանում վեց պետություններում տիրող ճգնաժամն ընդգրկված է 15-րդ հոդվածի տիրույթում:

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀՈՒՅԺ ԼՐՋՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

206. Մասնակից պետությունները կարող են օգտվել պարտավորություններից շեղվելու իրենց իրավունքից միայն «այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը»: Իռլանդիայի կառավարությունը համարում է, որ խախտվել է իրավիճակի հույժ լրջության պահանջը, մինչդեռ Մեծ Բրիտանիայի կառավարությունը և հանձնաժողովը պնդում են հակառակը:

(ա) Դատարանի դերը

207. Դատարանի վերանայման լիազորությունների սահմանափակումները հատկապես ակնհայտ են դառնում, երբ խոսքը 15-րդ հոդվածի մասին է (տե՛ս *«Բելգիայի լեզվաբանական»* (*Belgian Linguistic*) գործի նյութաիրավական հիմքերով 1968 թ. հուլիսի 23-ի վերջնական վճիռը, շարք A, թիվ 24, էջ 22, պարբ. 48):

Ցանկացած մասնակից պետություն ամենից առաջ պետք է «ազգի կյանքի» համար իր կրած պատասխանատվության շրջանակներում որոշի, թե արդյոք «արտակարգ դրությունը» սպառնալի՞ք է ներկայացնում ազգի կյանքին, և եթե այդպես է, ապա ինչ միջոցներ են հարկավոր ձեռնարկել այդ իրավիճակը հաղթահարելու համար: Պահի հրամայականների հետ իրենց անմիջական և շարունակական կապի բերումով ազգային մարմիններն սկզբունքորեն միջազգային ատյանի դատավորի համեմատ ավելի նպաստավոր դրության մեջ են՝ որոշելու թե՛ նման արտակարգ դրության առկայությունը, թե՛ այն կանխելու համար պարտավորություններից շեղվելու իրավունքի բնույթն ու շրջանակը: 15-րդ հոդվածի 1-ին կետով տվյալ հարցում իշխանություններին վերապահվում է հայեցողության լայն սահման:

Այնուհանդերձ, պետություններն այս առումով չեն օգտվում անսահմանափակ իրավազորությունից: Դատարանը, որ 19-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովի հետ պատասխանատու է պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար, լիազորված է որոշում կայացնել այն հարցով, թե արդյոք պետությունները գերազանցե՞լ են ճգնաժամի «բացառապես արտակարգ դրության լրջությամբ պայմանավորված լինելու մասին պահանջի սահմանները (տե՛ս *Լոլեսի* (*Lawless*) գործով 1961 թ. հուլիսի 1-ի վճիռ, շարք A, թիվ 3, էջ 55, պարբ. 22, էջ 57-59, պարբ. 36-38): Այսպիսով, ազգային մարմինների հայեցողության սահմանը լրացված է եվրոպական կառույցների վերահսկողությամբ:

(բ) Ապացույցների հարցեր

… 209. Կոնվենցիայի դրույթներով կամ միջազգային տրիբունալներում կիրառելի ընդհանուր սկզբունքներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պարտավորված չէ հետևել ապացույցների ներկայացման և քննության խիստ կանոններին: Իրեն բավարարելու համար դատարանն իրավասու է հիմնվել, իր կարծիքով, գործին վերաբերող ամեն տեսակի ապացույցների վրա, այդ թվում՝ պետությունների, դրանց հաստատությունների և պաշտոնատար անձանց կողմից ներկայացված համապատասխան փաստաթղթերի կամ հայտարարությունների վրա, անկախ այն հանգամանքից՝ այդ պետությունները հանդես են գալիս պատասխանողի՞, թե՞ դիմողի դերում:

(գ) Գործի նյութաիրավական հիմքերին առնչվող հարցեր

211. Դատարանը պետք է որոշի, թե արդյոք Միացյալ Թագավորությունը գերազանցե՞լ է հույժ անհրաժեշտության պահանջը: Այս նպատակով դատարանը, ինչպես *Լոլեսի* գործի պարագայում (վճիռը կայացվել է 1961 թ. հուլիսի 1-ին, շարք A, թիվ 3, էջ 57-59, պարբ. 36-37), պետք է քննի այն հարցը, թե արդյոք, մի կողմից, 5-րդ հոդվածի 1-ին կետին հակասող ազատազրկումը և մյուս կողմից՝ նույն հոդվածի 2-4-րդ կետերով ամրագրված մակարդակով երաշխիքները չկատարելն անհրաժե՞շտ են եղել, թե՞ ոչ:

(I) Արտադատական ազատազրկմամբ 5-րդ հոդվածի 1-ին կետից շեղվելու անհրաժեշտության հարցի շուրջ

212. Կասկած չկա, որ հատուկ լիազորությունների իրացումը հիմնականում, իսկ մինչև 1973 թ. փետրվարի 5-ը նույնիսկ բացառապես ուղղված է եղել ԻՀԲ-ի ընդհատակյա մարտական կազմակերպության դեմ: Սկզբնական մտադրությունն այն կազմակերպության դեմ պայքարելն էր, որը մեծ սադրիչ դեր է ունեցել Իռլանդիայի ժամանակակից պատմության ողջ ընթացքում և 1971 թ. օգոստոսին ներկայացնում էր հեռահար և վերահաս վտանգ Միացյալ Թագավորության տարածքային ամբողջականության, վեց կոմսությունների հաստատությունների և պրովինցիաների ազգաբնակչության համար: Բախվելով զանգվածային բռնության և ահաբեկչության խնդրին՝ Հյուսիսային Իռլանդիայի կառավարությունը, իսկ այնուհետև՝ ուղղակի կառավարման հաստատումից հետո, նաև Մեծ Բրիտանիայի կառավարությունը ողջամիտ իրավունք ունեին համարելու, որ սովորական օրենսդրությունը բավարար ռեսուրսներ չէր ապահովում ահաբեկչության դեմ պայքարելու համար, և անհրաժեշտ էին սովորական օրենսդրության շրջանակներից դուրս միջոցներ՝ արտադատական ազատազրկման ձևով: Երբ Իռլանդիայի Հանրապետությունը 1957 թ. հայտնվեց լուրջ ճգնաժամի առջև, այդ պետությունը որդեգրեց նույն մոտեցումը, և դատարանը չհամարեց, որ դրության հույժ լրջության պահանջը խախտվել է (*Լոուլեսի* (*Lawless*) գործով 1961 թ. հուլիսի 1-ի վճիռ, շարք A, թիվ 3, էջ 35-36, պարբ. 14 և էջ 57-58, պարբ. 36):

Այդուհանդերձ, զանգատի առարկա դարձած դիմումներից մեկով, մասնավորապես՝ 10-րդ կանոնով, հանցանք կամ զանցանք գործելու կամ խաղաղությունն ու կարգուկանոնը խախտող գործողություններ կատարելու մեջ որևէ կերպ չկասկածվող անձը կարող էր, այնուամենայնիվ, ձերբակալվել բացառապես նրանից այլոց վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Այսպիսի ձերբակալությունը կարող է արդարացվել միայն շատ բացառիկ իրավիճակներում, սակայն Հյուսիսային Իռլանդիայում տիրող իրավիճակն այդ կարգը չէր դասվում: Վկաներից շատերի կողմից ցուցմունք տալու հանգամանքը նրանց ենթարկում էր մեծագույն վտանգի, ընդ որում, իրավասու մարմինները կարող էին որդեգրել այն մոտեցումը, որ նման վկաների ձերբակալությունն անհրաժեշտ է, որպեսզի հնարավոր լինի նրանց հարցաքննել համեմատաբար ապահով իրավիճակում և թույլ չտալ, որ նրանց հետ հաշվեհարդար տեսնեն: Ավելին և նախ և առաջ՝ 10-րդ կանոնը թույլատրում էր ազատազրկում առավելագույնը 48 ժամով:

213. Դատարանը համարում է, որ գործադրված արտադատական միջոցները կարող էին վերոշարադրյալ իրավիճակում ողջամտորեն դիտվել որպես պետական անվտանգության պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ, իսկ 15-րդ հոդվածի համատեքստում դրանց ճանաչվելու դեպքում այդ միջոցների տարածման ոլորտի սահմանափակումը չէր կարող ազդել դրանց ներհատուկ անհրաժեշտության վրա:

214. Իռլանդիայի կառավարության ներկայացրած հայտարարությունում ասվում է, որ փորձը վկայում է արտադատական ազատազրկման անարդյունավետ լինելու մասին: Նույն աղբյուրը նաև պնդում է, որ 1971 թ. օգոստոսի 9-ին ուժի մեջ մտած քաղաքականությունը ոչ միայն չսանձեց ահաբեկչությունը, այլև հանգեցրեց դրա աճին: Հետևաբար, երբ Մեծ Բրիտանիայի կառավարությունն ստանձնեց Հյուսիսային Իռլանդիայի ուղղակի կառավարումը, որոշ չափով մեղմացրեց գործող քաղաքականությունը, իսկ 1975 թ. դեկտեմբերի 5-ին ընդհանրապես հրաժարվեց դրանից: Ստեղծվում է այն տպավորությունը, որ այդ պահից ի վեր, թեպետև արտակարգ դրության ժամանակավոր օրենսդրական նորմերն ընդունվել էին վեց կոմսություններում, մոլեգնող բռնությունը շարունակական բնույթ ուներ, և թեև ուժի մեջ էր մնացել «Արտակարգ դրության պայմաններում փոփոխություններ կատարելու մասին» օրենքը, այնուամենայնիվ, ոչ մի անձ այդ ժամանակահատվածում չի ձերբակալվել: Ըստ դիմող պետության՝ այս իրողությունն ապացուցում է, որ արտադատական ազատազրկումը բացարձակ անհրաժեշտությամբ պայմանավորված միջոց չէր:

Դատարանը չի կարող ընդունել այս փաստարկը:

Անշուշտ, դատարանին վերապահված չէ Մեծ Բրիտանիայի կառավարության փոխարեն գնահատել, թե ինչպիսին պետք է լիներ ահաբեկչության դեմ նրա պայքարում առավել խելամիտ և նպատակահարմար քաղաքականությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանին վերապահված է միայն որոշել 1971 թ. օգոստոսի 9-ից ի վեր կառավարության որդեգրած միջոցների օրինականությունը՝ ըստ կոնվենցիայի դրույթների: Այս նպատակով դատարանը պետք է որոշում կայացնի ոչ թե նշված միջոցների արդյունավետության զուտ հետադարձ քննությամբ, այլ դրանց ընդունման բուն պահին և հետագայում դրանց կիրառման ընթացքում եղած պայմանների և հանգամանքների համատեքստում:

Որդեգրելով այս մոտեցումը՝ դատարանն ընդունում է, որ Միացյալ Թագավորությունը չի գերազանցել 15-րդ հոդվածի 1-ին կետով մասնակից պետություններին վերապահված հայեցողության սահմանը, երբ ձևակերպել է իր այն կարծիքը, որ 1975 թ. օգոստոսից մինչև 1975 թ. մարտն ընկած ժամանակահատվածում արտադատական ազատազրկումն անհրաժեշտ միջոց է եղել:

(II) 5-րդ հոդվածի 2-4-րդ կետերով երաշխիքների կատարումից շեղվելու անհրաժեշտության հարցի շուրջ

215. Այժմ դատարանը պետք է քննի 15-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում իր կողմից արձանագրած 5-րդ հոդվածի 2-4-րդ կետերի դրույթներից լուրջ շեղումների անհրաժեշտության հարցը:

216. Ո՛չ 10-րդ կանոնում, ո՛չ 11-րդ կանոնի 1-ին կետում, ո՛չ էլ «Արտակարգ դրություններում հատուկ միջոցների մասին» օրենքի 10-րդ բաժնում այդ դրույթների շրջանակներում իրականացրած ձերբակալությունների համար որևէ իրավական, դատական կամ վարչական պաշտպանության միջոց չէր նախատեսվում: Թեև 11-րդ կանոնի 1-ի կետով ձերբակալված բոլոր անձինք կարող էին մինչև 1972 թ. նոյեմբերի 7-ը դիմել քաղաքացիական մարմիններ գրավի դիմաց ազատ

արձակվելու միջնորդությամբ, սակայն «Ահաբեկիչների մասին» հրամանը զրկեց նրանց այդ իրավունքից՝ անվավեր դարձնելով 11-րդ կանոնի 4-րդ կետը, որի շրջանակներում էլ հենց նախատեսված էր այդ իրավունքը: Այդուհանդերձ, նման ձերբակալությունների տևողությունը երբեք չի գերազանցել 48 ժամը 10-րդ կանոնի պարագայում, 72 ժամը՝ «Արտակարգ դրություններում հատուկ միջոցների մասին» օրենքի 10-րդ բաժնի պարագայում և գործնականում 72 ժամը՝ 11-րդ կանոնի պարագայում:

217. Նմանապես, 11-րդ կանոնի 2-րդ կետը և «Ահաբեկիչների մասին» հրամանի 4-րդ հոդվածը և «Արտակարգ դրություններում հատուկ միջոցների մասին» օրենքի թիվ 1 հավելվածի 11-րդ կետն իրավական պաշտպանության որևէ միջոց չէին նախատեսում: 11-րդ հոդվածի 2-րդ կետով կալանավորը երբեմն շարունակում էր ավելի քան 28 օր կալանքի տակ պահվել, սակայն կալանավորումը երբեք չի եղել անորոշ ժամկետով, ընդ որում, վարչական մարմնի համաձայնությամբ կալանավորը կարող էր նաև դիմել դատարան գրավի դիմաց ազատ արձակվելու համար (տե՛ս 11-րդ կանոնի 4-րդ կետը և 1971 թ. հոկտեմբերի 12-ին *Մակէլդաֆի* (*McElduff*) գործով կայացրած վճիռը): Մյուս կողմից՝ «Ահաբեկիչների մասին» հրամանի 4-րդ հոդվածով կամ հետագայում «Արտակարգ դրություններում հատուկ միջոցների մասին» օրենքի թիվ 1 լրացման 11-րդ կետով կալանքը կարող էր շարունակվել մինչև հատուկ լիազորի կողմից որոշում կայացնելու պահը, ընդ որում, ոստիկանապետը գործն ուղարկում էր հատուկ լիազորին առաջին 28 օրվա ընթացքում, սակայն վերջինս իր որոշումը կարող էր կայացնել մի քանի շաբաթ անց կամ նույնիսկ վեց ամսվա ընթացքում:

218. «Ահաբեկիչների մասին» հրամանի 5-րդ հոդվածով և 12-րդ կանոնի 1-ին կետով ազատությունից զրկված անձինք շատ դեպքերում ձերբակալվում և կալանքի տակ են պահվում մի քանի տարի: Այնուամենայնիվ, 12-րդ կանոնի 1-ին կետի դրույթներով ստեղծված խորհրդատվական կոմիտեն, չնայած իր ոչ դատական բնույթին, ապահովում էր որոշակի պաշտպանություն, որը չի կարելի անտեսել: «Ահաբեկիչների մասին» հրամանով հատուկ լիազորների նշանակումը և վերաքննիչ տրիբունալի ստեղծումն ապահովում էր լրացուցիչ երաշխիքներ, որոնք որոշ չափով ընդլայնվեցին «Արտակարգ դրություններում հատուկ միջոցների մասին» օրենքով:

219. Բացի այդ, առիթն ի հայտ գալու դեպքում գոյություն ուներ արժեքավոր, թեպետև սահմանափակ, դատական վերանայման հնարավորություն՝ նախատեսված սովորական իրավունքի դրույթներով:

220. Խնդրո առարկա օրենսդրության և պրակտիկայի ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դրանք զարգացել են անհատական ազատության նկատմամբ հարաճուն հարգանքի ուղղությամբ: Անշուշտ, ցանկալի կլիներ հենց սկզբից ավելի ապահով դատական կամ առնվազն վարչական երաշխիքներ ընդգրկել, մանավանդ որ 10-12-րդ կանոններն ընդունվել էին 1956-1957 թթ. և հիմնված էին 1922 թ. ընդունված օրենքի վրա, սակայն առաջին փուլը հետագա փուլերից առանձնացնելն իրատեսական չէր լինի: Երբ պետությունը պայքարում է ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրության դեմ, կարող է անպաշտպան մնալ, եթե նրանից պահանջվի ամեն ինչ միանգամից ապահովել և իր ընտրած միջոցներից յուրաքանչյուրի հետ մեկտեղ հենց սկզբից նախատեսել իրավասու մարմինների պատշաճ աշխատանքի և համայնքում խաղաղության վերականգնման մասով առաջնային պահանջների հետ համատեղելի երաշխիքներ: 15-րդ հոդվածի մեկնաբանությունը պետք է տեղի թողնի աստիճանական իրականացման համար՝ ըստ ստեղծված իրադրության:

Նախ՝ Հյուսիսային Իռլանդիայի կառավարությունն անհաջող փորձեր էր անում լուծել այդ պահին առավել վերահաս խնդիրը, այն է՝ սանձել տարածաշրջանում մոլեգնող բռնությունը: Այս տարածաշրջանի ապագայի համար ուղղակի պատասխանատվություն ստանձնելուց հետո Մեծ Բրիտանիայի կառավարությունն անհապաղ որոշ առումներով մեղմացրեց նախկինում կիրառվող օրենքների խստությունը: Դատարանը քննության առավ այն հարցը, թե արդյոք այդ օրենքները կարո՞ղ էին էլ ավելի մեղմացվել, հատկապես՝ ժամանակավոր կալանքի մասով, սակայն այդ հարցին դատարանը չի կարող հաստատական պատասխան տալ: Հարկ է հիշել, որ այդ ժամանակ նշված երկրներում տիրող ճգնաժամը լրջացել էր, և հետևաբար, հենց այդ իրողությամբ էին արդարացված մեծ շեղումները 5-րդ հոդվածի 2-4-րդ կետերում նախատեսված պարտավորություններից: Հետևելով մասնակից պետություններին վերապահված հայեցողության սահմանի մասին կանոնին՝ դատարանը չի կարծում, որ Միացյալ Թագավորությունն այս առումով գերազանցել է 15-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված հույժ անհրաժեշտության պայմանի պահանջները:

221. Ըստ դիմող պետության՝ 3-րդ հոդվածի անվիճարկելի խախտումները կարևոր են 15-րդ հոդվածի համակցությամբ 5-րդ հոդվածի տեսանկյունից: Դիմողը պնդում է, որ ազատազրկումը նշանակվում էր 3-րդ հոդվածին հակասող պայմաններում կորզված տեղեկությունների հիման վրա և այդպիսով անօրինական էր 15-րդ հոդվածի շրջանակներում: Իռլանդիայի բերած փաստարկը նաև հաստատում է նշված խախտումների գոյությունը, քանզի վիճահարույց օրենսդրական նորմերը թերևս կկանխեին դրանք, եթե համապատասխան անձանց տրամադրվեին այդ դրույթներով նախատեսված իրական երաշխիքները:

Հետևելով պատասխանող պետության և հանձնաժողովի օրինակին՝ դատարանն ընդգծում է, որ 3-րդ և 5-րդ հոդվածներում զետեղված են բավական տարբեր պարտավորություններ: Ավելին, ներկա վճռով արձանագրված 3-րդ հոդվածի խախտումները վկայում են, որ անհրաժեշտ չէր կիրառել գործող արտադատական լիազորությունները:

3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

222. 15-րդ հոդվածի 1-ին կետը միանշանակ արգելում է կոնվենցիայով ստանձնած պարտավորություններից ցանկացած շեղում, որը հակասում է միջազգային իրավունքով ստանձնած այլ պարտավորություններին: Դատարանի տրամադրության տակ եղած տեղեկություններում ոչինչ չի վկայում այն մասին, որ տվյալ դեպքում Միացյալ Թագավորությունն անտեսել է որևէ նման պարտավորություն: Մասնավորապես՝ Իռլանդիայի կառավարությունն այդպես էլ ո՛չ հանձնաժողովին, ո՛չ էլ դատարանին չի ներկայացրել իր 1971 թ. դեկտեմբերի 16-ի դիմումում այս հարցի շուրջ առաջ քաշած պնդման հստակ ձևակերպված կամ շարադրված մանրամասնությունները:

4. 15-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

223. Դատարանը propio motu [սեփական նախաձեռնությամբ] կարծում է, որ 1961 թ. հուլիսի 1-ի *Լոլեսի* (*Lawless*) գործով կայացրած որոշման հիման վրա 1971 թ. օգոստոսի 20-ին, 1973 թ. հունվարի 23-ին և 1973 թ. օգոստոսի 16-ին Մեծ Բրիտանիայի ներկայացրած ծանուցումները բավարարել են 15-րդ հոդվածի պահանջները:

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

224. Դատարանը համապատասխանաբար եկել է այն եզրակացության, որ քանի որ 15-րդ հոդվածի պահանջները կատարվել են, ուստի 5-րդ հոդվածով նախատեսված պարտավորություններից շեղումով կոնվենցիայի դրույթները չեն խախտվել:

Վերոհիշյալ վճռի կարևոր հայեցակետն այն է, որ դրա 207-րդ պարբերությունում դատարանը հստակ ճանաչել է, որ մասնակից պետություններին պետք է շնորհվի հայեցողության լայն սահման 15-րդ հոդվածով նախատեսված սպառնալիքների առաջացումը և նրանց պատասխան գործողությունները որոշելու հարցում: Այս գաղափարի քննարկումը տե՛ս վերը՝ էջ 663:

.....

«Բրենիգանը և Մակբրայդն ընդդեմ Միացյալ Թագավորության»
(Brannigan and McBride v UK) A.258-B (1993) 17 EHRR 539

1972-1992 թթ. ընկած ժամանակահատվածում Հյուսիսային Իռլանդիայում ահաբեկչական գործողությունները խլել են երեք հազար մարդկանց կյանք: Միացյալ Թագավորության այլ հատվածները նույնպես դարձել են բազում ահաբեկչական գործողությունների թիրախ՝ կապված Հյուսիսային Իռլանդիայում ստեղծված իրավիճակի հետ: «Ահաբեկչության կանխման մասին» 1984 թ. օրենքով ոստիկանության աշխատակիցներին տրվել էր Հյուսիսային Իռլանդիայի հետ կապված ահաբեկչական ակտերի կատարման, պատրաստման կամ հրահրման մեջ ողջամիտ հիմքերով կասկածվող անձանց ձերբակալելու և կալանավորելու լիազորություն: Ոստիկանության աշխատակիցները կարող էին նման անձանց կալանավորել առավելագույնը քառասունութ ժամով: Հյուսիսային Իռլանդիայի հարցերով նախարարն այդ օրենքի դրույթներով կարող էր նաև երկարացնել նման անձանց կալանավորումը՝ առավելագույնը ևս հինգ օրով (քանզի արգելված էր անձին ընդհանուր առմամբ յոթ օրից ավելի կալանքի տակ պահել՝ առանց նրան քրեական մեղադրանք ներկայացնելու): 1988 թ. նոյեմբերի 29-ին վերոնշյալ *«Բրոգանն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Brogan v UK)* գործով դատարանը վճռել է, որ չորս օր վեց ժամ նվազագույն ժամկետով կալանավորման մասին օրենքի 12-րդ բաժնի դրույթներով խախտվել է կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը: 1988 թ. դեկտեմբերի 22-ին Միացյալ Թագավորության ներքին գործերի քարտուղարը ելույթ ունեցավ խորհրդարանում՝ բացատրելով ահաբեկչության մեջ կասկածվող անձանց ձերբակալության և կալանավորման դատական հսկողության միջոցների ներկայացման հետ կապված դժվարությունները:

Մենք պետք է ըստ հարկի հաշվի առնենք դատական համակարգի ներկա ծանրաբեռնվածությունը, հատկապես՝ Հյուսիսային Իռլանդիայում, որտեղ պետք է քննվի վերոնշյալ գործերի մեծ մասը: Մեզ նաև մտահոգում է այն հանգամանքը, որ ահաբեկիչների մտադրությունների մասին վկայող տեղեկությունները դատաքննության ընթացքում նրանց այլևս չեն հայտնվում, իսկ մեղադրյալին և նրա շահերը ներկայացնող փաստաբանին մեղադրանքի հիմքում ընկած տեղեկատվությունը ներկայացնելը (առնվազն Միացյալ Թագավորության իրավական ավանդույթներում) պարտադիր երևույթ է:

Միաժամանակ իրավիճակը չի կարող անփոփոխ մնալ: Ես արդեն հստակ հայտնել եմ խորհրդարանի պալատներին, որ մեզ հարկավոր է պահպանել ահաբեկչության հակազդման համար ոստիկանությանն անհրաժեշտ լիազորությունները: Ոստիկանությունը դեռ որոշ կասկածյալներին մինչև յոթ օր ժամկետով կալանավորելու հնարավորության կարիք ունի: Ոստիկանության՝ նման դեպքերն արդյունավետ քննելու կարողությունը կասկածի տակ չառնելու համար կառավարությունը ներկայումս քայլեր է ձեռնարկում Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածով և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածով ստանձնած պարտավորություններից շեղման մասին ծանուցում ներկայացնելու համար: Նշված դրույթների իմաստով Միացյալ Թագավորությունում արձանագրվում է Հյուսիսային Իռլանդիայի հետ կապված ահաբեկչությամբ պայմանավորված արտակարգ դրություն:

1988 թ. դեկտեմբերի 23-ին Միացյալ Թագավորությունը տեղեկացրել է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին, որ կառավարությունն այնպես է իրացրել 15-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պարտավորություններից շեղվելու մասին իրավունքը, որ 1984 թ. օրենքի 12-րդ բաժնում ամրագրված լիազորությունների իրացումը կարող է անհամատեղելի լինել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի հետ: Հայտարարության մեջ նշվել է հետևյալը.

…1988 թ. դեկտեմբերի 6-ին՝ *Բրոգանի* (*Brogan*) գործով վճռի կայացումից հետո, Միացյալ Թագավորության ներքին գործերի քարտուղարը տեղեկացրել է խորհրդարանին, որ ահաբեկչական գործողությունների պայմաններում, հաշվի առնելով ահաբեկիչներին պատժելու հրատապ անհրաժեշտությունը, կառավարության կարծիքով, կալանքի ժամանակահատվածը չպետք է կրճատվի: Նա հայտնել է, որ կառավարությունը քննել է խնդրո առարկա հարցը վճռին արձագանքելու նպատակով: Բացի այդ, 1988 թ. դեկտեմբերի 22-ին քարտուղարը խորհրդարանում հայտարարել է, որ պետությունը դեռևս ցանկանում էր հնարավորության դեպքում գտնել այնպիսի դատական նախադեպ, որով կարող էր վերանայվել և դատավորի կամ դատական համակարգի այլ պաշտոնյայի կողմից թույլատրվել կալանքի ժամկետի երկարացումը: Սակայն կառավարությունը կարող էր վճռական և վերջնական դիրքորոշում որդեգրել միայն քննարկումների և խորհրդակցությունների հավելյալ ժամանակահատվածից հետո: 1988 թ. նոյեմբերի 29-ին նշված գործով վճռի կայացումից ի վեր պետությունը շարունակում էր անհրաժեշտ համարել Հյուսիսային Իռլանդիայում ահաբեկչության հակազդմանն ուղղված վերոնշյալ լիազորությունների իրացումը, որոնց միջոցով կարելի էր ներքին գործերի քարտուղարի պաշտոնական թույլտվությամբ, առանց մեղադրանք ներկայացնելու, հանգամանքներով թելադրված խիստ անհրաժեշտության սահմաններում մինչև հինգ օրով երկարացնել կասկածվող անձանց կալանքի ժամկետը: Դա հնարավորություն կտար անհրաժեշտ տեղեկություններ հավաքելու և պատշաճ հետաքննություն անցկացնելու՝ քրեական գործ հարուցելու անհրաժեշտությունը որոշելու նպատակով: Հաշվի առնելով, որ նշված լիազորությունների իրացումը կարող է անհամատեղելի լինել կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունների հետ՝ կառավարությունն օգտվել է կոնվենցիայի 15-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված պարտավորություններից շեղվելու իրավունքից, որի գործողությունը կդադարեցվի միայն հատուկ ծանուցումից հետո:

Կառավարությունը վերանայել է այն հարցը, թե արդյոք կալանքի ժամկետը երկարացնելու լիազորությունը կարո՞ղ է տրվել ընդհանուր իրավասության դատարաններին, սակայն եզրակացրել է, որ 1989 թ. նոյեմբերի 14-ին խորհրդարանում ընթերցված քարտուղար պրն Դեյվիդ Վեդինգթոնի գրավոր պատասխանում նշված պատճառներով դատարաններին նմանօրինակ որոշումներ կայացնելու լիազորություններ տալը նպատակահարմար չի լինի:

Ահաբեկչության մեջ կասկածվող անձանց կալանքը 48 ժամից ավելի երկարացնելու մասին որոշումները կարող են և նույնիսկ հաճախ ընդունվում են այնպիսի տեղեկությունների հիման վրա, որոնց բնույթն ու աղբյուրը չեն կարող հայտնվել կասկածյալին կամ նրա շահերը ներկայացնող փաստաբանին՝ ոստիկանությանն աջակցող անհատների անվտանգության կամ հետախուզության հետագա արդյունավետ ընթացքն ապահովելու նկատառումներով: Նշված վտանգներից խուսափելու համար ընդունվող ցանկացած նոր ընթացակարգ, որը դատարաններին հնարավորություն կտա որոշում կայացնելիս առաջնորդվել կալանավորին կամ նրա փաստաբանին չտրամադրված տվյալներով, արմատապես կտարբերվի նշված պետության դատական ընթացակարգերի հիմքում ընկած սկզբունքներից: Արդյունքում՝ էապես կխարխլի հասարակության վստահությունն ու հավատը դատական համակարգի անկախության նկատմամբ: Կառավարությունը խիստ դեմ կլինի, եթե ընդունվի նման հետևանքներով հղի ցանկացած նոր ընթացակարգ (1989 թ. նոյեմբերի 14-ի Պաշտոնական զեկույց (*Offficial Report*), ժողովածու 210):

1989 թ. դեկտեմբերի 12-ի հատուկ ծանուցմամբ Միացյալ Թագավորությունը տեղեկացրել է Գլխավոր քարտուղարին այն մասին, որ ահաբեկչության մեջ կասկածվող անձանց կալանքի ժամկետի վերանայման բավարար ընթացակարգ չի սահմանվել, ուստի պարտավորություններից շեղվելու իրավունքը կիրականացվի այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ կլինի ստեղծված իրավիճակում: Խնդրո

առարկա գործով առաջին դիմողը ձերբակալվել է 1989 թ. հունվարի 9-ին, և վերոնշյալ օրենքի 12-րդ բաժնի դրույթներով քարտուղարը թույլատրել է երկարացնել նրա կալանքի տակ պահվելու ժամկետը մինչև հունվարի 15-ը: Այդ ժամանակահատվածում դիմողը հարցաքննվել է քառասուներեք անգամ: Երկրորդ դիմողը ձերբակալվել է նույն թվականի հունվարի 5-ին, և քարտուղարը թույլատրել է նրա կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնել մինչև հունվարի 9-ը: Դիմողները գանգատ են ներկայացրել հանձնաժողով՝ նշելով, որ իրենց կալանավորման ժամկետներով խախտվել է 5-րդ հոդվածի 3-րդ կետը՝ ըստ *Բրոգանի* (*Brogan*) գործի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանության: Ութ կողմ և հինգ դեմ ձայներով՝ հանձնաժողովը եզրակացրել է, որ 1998 թ. դեկտեմբերի 23-ին պարտավորություններից շեղվելու իրավունքի իրականացմամբ Միացյալ Թագավորությունը չի խախտել կոնվենցիան:

37. Նշելով, որ *Բրոգանի* (*Brogan*) գործի շրջանակներում երկու դիմողների կալանքի ժամկետները գերազանցել են նվազագույն ժամկետը, ինչը դատարանի համաձայն՝ հակասել է 5-րդ հոդվածի 3-րդ կետին, Միացյալ Թագավորության կառավարությունն ընդունել է, որ սույն գործում անտեսվել է կարճ ժամկետում մեղադրանք ներկայացնելու պայմանը: Կառավարությունն ընդունել է նաև, որ 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտման մասով փոխհատուցման իրականանալի իրավունքի բացակայության պայմաններում ձեռնարկված միջոցները չեն համապատասխանել նույն հոդվածի 5-րդ կետի պահանջներին:

Հաշվի առնելով *Բրոգանի* (*Brogan*) գործով իր կայացրած վճիռը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշում է, որ անտեսվել են 5-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերը:

38. Սակայն կառավարությունը հավելում է, որ 5-րդ հոդվածի նշված պահանջների անտեսումը համապատասխանել է պետության՝ 15-րդ հոդվածի դրույթների համաձայն պարտավորություններից շեղվելու իրավունքին, որ իրականացվել է 1988 թ. դեկտեմբերի 23-ին:

Ուստի դատարանը պետք է քննի պետության՝ ստանձնած պարտավորություններից շեղվելու իրավունքի օրինականությունը նշված դրույթների համաձայն: Ի սկզբանե պատասխանող պետությունը հիշեցնում է, որ *Բրոգանի* (*Brogan*) գործի շրջանակներում դատարանը միանշանակ չի պատասխանել այն հարցին, թե արդյոք Հյուսիսային Իռլանդիայում ահաբեկչությանը հակազդելու նպատակով կոնվենցիայով Միացյալ Թագավորության ստանձնած որևէ պարտավորությունից շեղումը թույլատրելի՞ էր 15-րդ հոդվածով:

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ՝ 15-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՇԵՂՎԵԼՈՒ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

39. Դիմողները պնդել են, որ 15-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորություններից շեղումը հիմնավորված չի եղել: Այդ փաստարկը վիճարկվել է ինչպես պետության, այնպես էլ հանձնաժողովի կողմից:

1. ԴԱՏԱՐԱՆԻ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԻՆ

41. Դիմողները բերել են այն փաստարկը, որ եթե պետական մարմիններին տրվեր գնահատման հայեցողության լայն սահման 2-րդ և 3-րդ հոդվածներով նախատեսված անշեղելի իրավունքների էական պաշտպանության երաշխիքներից շեղվելու հարցում, ապա այդ միջոցը չէր համապատասխանի 15-րդ հոդվածի 2-րդ կետին: Դա հատկապես վերաբերում էր այն դեպքերին, երբ արտակարգ դրությունը գրեթե մշտական բնույթ է կրում, ինչպես Հյուսիսային Իռլանդիայի պարագայում: Նման պարտավորություններից շեղումն անհամատեղելի կլիներ նաև *Բրոգանի* (*Brogan*) գործով կայացված վճռի հետ, որում դատարանը դատական վերահսկողությունը դիտել է որպես ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը և, ըստ դիմողների, արդեն իսկ պատասխանող պետությանը շնորհել է գնահատման հայեցողության սահման՝ վճռի 58-րդ կետում անդրադառնալով Հյուսիսային Իռլանդիայում ահաբեկչության հետ կապված իրավիճակին (տե՛ս մեջբերված տեղում):

42. Իր ներկայացրած գրավոր հայտարարություններում Amnesty International իրավապաշտպան կազմակերպությունը հայտնել է, որ կալանավորների պաշտպանության համար նախատեսված հիմնարար երաշխիքներից շեղումները քննելիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանից պահանջվում է միշտ և հատկապես՝ արտակարգ դրության ժամանակ հանգամանալից ստուգել պետության ձեռնարկած միջոցների օրինականությունը: Liberty, Interights իրավապաշտպան կազմակերպությունները և Committee on the Administration of Justice-ը (Արդարադատության իրականացման կոմիտե) («Liberty և այլք») իրենց հերթին հայտնել են, որ եթե պետություններին առհասարակ շնորհվի գնահատման հայեցողության սահման, ապա որքան երկար տևի արտակարգ դրությունը, այնքան նեղ կլինի նշված սահմանը:

43. Դատարանը նշում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավոր է իր վրա դրված «ազգի կյանքը» պաշտպանելու պատասխանատվության շրջանակներում որոշել, թե արդյոք «արտակարգ դրությունը» սպառնո՞ւմ է ազգի կյանքին, և եթե այդպես է, ապա ի՞նչ միջոցներ պետք է ձեռնարկել նշված դրությունը վերահսկելու համար: Պահի հրատապ հրամայականների հետ անմիջական և շարունակական առնչության պատճառով ազգային մարմիններն սկզբունքորեն ավելի նպաստավոր դրության մեջ են միջազգային ատյանի դատավորի համեմատ՝ որոշելու ինչպես նման արտակարգ դրության առկայությունը, այնպես էլ այն կանխելու համար անհրաժեշտ պարտավորություններից շեղվելու իրավունքի բնույթն ու շրջանակը: Համապատասխանաբար, տվյալ հարցում ազգային մարմիններին պետք է շնորհվի հայեցողության լայն սահման (տե՛ս *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Ireland v UK*) գործով 1978 թ. հունվարի 18-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 25, էջ 78-79, պարբ. 207):

Այնուհանդերձ, մասնակից պետություններն օժտված չեն անսահմանափակ հայեցողությամբ: Հենց դատարանին է վերապահված որոշելու, թե արդյոք պետությունները, ի թիվս այլոց, գերազանցե՞լ են բացառապես ճգնաժամի հրամայականներով թելադրված պահանջները: Այսպիսով, գնահատման հայեցողության ներպետական սահմանը լրացված է եվրոպական կառույցների վերահսկողությամբ (նույն տեղում): Միաժամանակ վերահսկողություն իրականացնելիս դատարանը պետք է ըստ հարկի գնահատի այն առանցքային գործոնները, որոնցից են՝ պարտավորություններից շեղվելու հետևանքով խաթարված իրավունքների բնույթը, արտակարգ դրության պատճառ դարձած հանգամանքները և ստեղծված իրավիճակի տևողությունը:

2. ԱԶԳԻ ԿՅԱՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ

44. Թեև դիմողները չեն վիճարկել «ազգի կյանքին սպառնացող» արտակարգ դրության գոյությունը, սակայն հայտնել են, որ պետությունը պարտավոր էր նման դրության գոյությունն ապացուցել դատարանում:

45. Այնուհանդերձ, Liberty և այլ իրավապաշտպան կազմակերպություններն իրենց գրավոր հայտարարություններում նշել են, որ տվյալ ժամանակահատվածում ոչինչ այլևս չէր վկայում ճգնաժամային բացառիկ դրության գոյության մասին: Նշված իրավապաշտպան կազմակերպությունները սատարում էին այն տեսակետը, որ իրավիճակի վերանայումը կարող էր առաջացնել պարտավորություններից հետագա շեղում, եթե դրանում վատթարացում արձանագրվեր սկսած 1984 թ. օգոստոսից, երբ կառավարությունը հետ է կանչել ստանձնած պարտավորություններից շեղվելու մասին իր նախորդ ծանուցումը: Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների մշտական խորհրդատվական հանձնաժողովին, ապա նա, ընդհակառակը, կարծում է, որ նշված ժամանակահատվածում Հյուսիսային Իռլանդիայում ստեղծվել է բավական վտանգավոր արտակարգ իրավիճակ, և պետությունն իրավասու էր շեղվել իր ստանձնած պարտավորություններից:

46. Անդրադառնալով Հյուսիսային Իռլանդիայում արձանագրված անկարգություններին՝ ինչպես պատասխանող պետության կառավարությունը, այնպես էլ հանձնաժողովը հայտնել են, որ իրականում ստեղծվել է նման արտակարգ իրավիճակ:

47. Վերհիշելով *«Լոուլեսն ընդդեմ Իռլանդիայի»* (*Lawless v Ireland*, 1961 թ. հուլիսի 1-ի վճիռ, շարք A, թիվ 3, էջ 56, պարբ. 28) գործի և *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Ireland v UK*, տե՛ս մեջբերված տեղում՝ շարք A, թիվ 25, էջ 78, պարբ. 205) գործի առնչությամբ իր նախադեպային պրակտիկան և իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերի հիման վրա գնահատելով Հյուսիսային Իռլանդիայում և Միացյալ Թագավորության այլ տարածքներում ահաբեկչական բռնության շրջանակն ու ազդեցությունը՝ դատարանը համարում է, որ տվյալ ժամանակահատվածում միանշանակ արձանագրվել է արտակարգ դրություն:

Դատարանն անհրաժեշտ չի համարում համեմատել 1984 թ. և 1988 թ. դեկտեմբերին արձանագրված իրավիճակները, քանի որ ստանձնած պարտավորություններից շեղումը հետ կանչելու որոշումը սկզբունքորեն գտնվում էր պետության հայեցողությամբ վճռվող հարցերի շրջանակում, իսկ խնդրո առարկա օրենսդրությունը, ըստ պետության, փաստորեն միանշանակ համապատասխանում էր կոնվենցիայի դրույթներին:

3. ԱՐԴՅՈՔ ՎԵՐՈՆՇՅԱԼ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԹԵԼԱԴՐՎԱ՞Ծ ԷԻՆ ԲԱՑԱՌԱՊԵՍ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ

(ա) Ընդհանուր նկատառումներ

48. Դատարանը հիշեցնում է, որ ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը՝ օրենքի գերակայության սկզբունքը, արտահայտում է 5-րդ հոդվածով նախատեսված հսկողությունը անձանց ազատության իրավունքին գործաղիր մարմինների միջամտությունների նկատմամբ (տե՛ս վերոնշյալ *Բրոգանի* (*Brogan*) գործով կայացված վճիռը, շարք A, թիվ 145-B, էջ 32, պարբ. 58): Դատարանը հավելում է, որ պատասխանող պետության կառավարությունը ներկայացրել է տվյալ գործում վկայակոչված պարտավորություններից շեղվելու մասին ծանուցումը *Բրոգանի* (*Brogan*) գործով վճռի կայացումից հետո կարճ ժամանակ անց: Նշված գործի շրջանակներում դատարանը որոշել էր, որ դիմողներին անհապաղ դատավորի կամ դատական պաշտոնյայի մոտ չտանելու հետևանքով պետությունը խախտել է 5-րդ հոդվածի 3-րդ կետով ստանձնած պարտավորությունները:

Դատարանը պետք է պարտավորություններից շեղվելու փաստը հանգամանալից քննի նշված իրողությունների նախապատմության հիման և հաշվի առնի այն հանգամանքը, որ 1974 թ. ի վեր ուժի մեջ է եղել ձերբակալության և կալանքի լիազորությունը: Այնուհանդերձ, հարկ է ընդգծել, որ սույն գործում առանցքային հարց է ոչ թե ահաբեկչության մեջ կասկածվող անձանց մինչև յոթ օր ժամկետով կալանքի տակ պահելու լիազորությունը, այլ առանց դատական միջամտության այդ լիազորության իրացումը: Եվ իսկապես, դիմողները հետ են վերցրել 5-րդ հոդվածի 1-ին կետով ներկայացրած գանգատը:

(բ) Արդյոք պարտավորություններից շեղումը համարժե՞ք արձագանք է եղել արտակարգ իրավիճակին

49. Դիմողների կարծիքով՝ պարտավորություններից առաջարկվող շեղումը ոչ թե նոր կամ փոխված իրադրությունն արտացոլող, այլ *Բրոգանի* (*Brogan*) գործով կայացած որոշմանն արձագանքող կառավարության պատասխանն էր, որը ներկայացվել էր այդ վճռի հետևանքները շրջանցելու միակ նպատակով:

50. Պատասխանող պետության կառավարությունը և հանձնաժողովը հայտնել են, որ թեև իսկապես հենց վերոնշյալ վճիռն է պարտավորություններից շեղվելու իրավունքի իրականացման սկիզբ դրել, սակայն 1974 թ. ի վեր, իրավիճակի հրամայականներից դրդված, միշտ անհրաժեշտ է եղել ահաբեկչության կանխմանն ուղղված օրենսդրական նորմերում կալանքի ժամկետը երկարացնելու լիազորություններ նախատեսել: Միացյալ Թագավորության ղեկին կանգնած իրարահաջորդ կառավարություններին վերապահված նշված լիազորությունները չեն հակասել 5-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներին, և կարիք չկար ձեռնարկել պարտավորություններից շեղվող միջոցներ: Այնուհանդերձ, ինչպես նշված միջոցները, այնպես էլ շեղումը դրանց հիմքում ընկած պարտավորություններից ուղղակի արձագանքն էին այն արտակարգ իրավիճակին, որը ծառացել էր Միացյալ Թագավորության առջև և դեռևս շարունակում է մնալ արդիական:

51. Դատարանը նախ ընդգծում է, որ 1974 թ. ի վեր պատասխանող պետության կառավարությունն ահաբեկչության հետ կապված հարցերում ձերբակալության և կալանքի ժամկետը երկարացնելու լիազորությունն անհրաժեշտ է համարել: *Բրոգանի* (*Brogan*) գործով կայացված վճռից հետո կառավարությունը պետք է կա՛մ 1984 թ. օրենքի 12-րդ բաժնի համաձայն դատական հսկողություն սահմաներ կալանավորելու որոշման նկատմամբ, կա՛մ հայտարարեր կոնվենցիայով ստանձնած իր համապատասխան պարտավորություններից շեղվելու մասին: Պատասխանող պետությունը որդեգրել է այն դիրքորոշումը, որ ահաբեկչական բնույթի հանցագործությունների հետաքննության և ահաբեկիչների հետապնդման հետ կապված հատուկ դժվարությունների պատճառով 5-րդ հոդվածի 3-րդ կետով դատական հսկողության սահմանումն իրատեսական չէր լինի, հետևաբար, ստանձնած պարտավորություններից շեղումն անխուսափելի էր: Համապատասխանաբար, հաշվի առնելով, որ դատական հսկողությունից դուրս կալանքի ժամկետը երկարացնելու լիազորությունը և 1988 թ. դեկտեմբերի 23-ին կայացրած պարտավորություններից շեղվելու որոշումը միանշանակ կապված են արտակարգ դրության տևողության հետ, ուստի ոչինչ չի վկայում այն մասին, որ պարտավորություններից շեղումը ստեղծված իրադրությունում համաչափ արձագանք չի եղել:

(գ) Արդյոք պարտավորություններից շեղվելու որոշումը վաղաժա՞մ էր

52. Դիմողները հայտարարել են, որ պարտավորություններից շեղվելու որոշումը ժամանակավոր միջոց է եղել, որը չի նախատեսվել 15-րդ հոդվածով, քանի որ 1988 թ. դեկտեմբերի 23-ին Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ներկայացրած ծանուցման համաձայն՝ պետությունը «վճռական ու վերջնական որոշում» չի կայացրել 5-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներից շեղվելու անհրաժեշտության մասին և հավելյալ ժամանակահատված է խնդրել քննարկումներ և խորհրդակցություններ անցկացնելու համար: 1989 թ. նոյեմբերի 14-ին՝ նշված ժամանակաշրջանի ավարտից հետո, Միացյալ Թագավորության ներքին գործերի քարտուղարը հաստատել է պարտավորություններից շեղվելու մասին որոշումը: Նշված եզրակացությունից առաջ 15-րդ հոդվածով չի թույլատրվել շեղվել պետության ստանձնած պարտավորություններից: Եվ ավելին, նույնիսկ այդ ժամանակահատվածի վերջում պատասխանող պետության կառավարությունը չէր քննել, թե դատական իշխանությամբ օժտված պաշտոնատար անձը կարո՞ղ էր բավարարել 5-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված պարտավորությունը:

53. Կառավարությունը պնդել է, որ կալանքի ժամկետը երկարացնելու նկատմամբ դատական վերահսկողություն սահմանելու հնարավորության քննումը չի ազդել պարտավորություններից շեղվելու օրինականության վրա, քանզի հանձնաժողովն ընդգծել է, որ 15-րդ հոդվածի 3-րդ կետով պարտավորություններից շեղվելու արդյունքում ձեռնարկված միջոցները պետք է շարունակաբար վերահսկվեն:

54. Դատարանը չի ընդունում դիմողների այն փաստարկը, որ պարտավորություններից շեղվելու որոշումը կայացվել է վաղաժամ:

Թեև ճիշտ է, որ 15-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորություններից շեղվելու անհրաժեշտության ուսումնասիրության ընթացքում կոնվենցիայի երաշխիքները ժամանակավորապես չեն կասեցվում, սակայն պարտավորություններից շեղվելու մասին ծանուցումից պարզ է դառնում, որ «հաշվի առնելով ահաբեկչական գործողությունների նախապատմությունը և ահաբեկիչներին պատժելու հրատապ անհրաժեշտությունը՝ կառավարությունը համարում է, որ կալանքի

առավելագույն ժամկետը չպետք է կրճատվի»: Սակայն կառավարությունը դեռևս ցանկանում էր «գտնել այնպիսի դատական ընթացակարգ, որով հնարավոր կլիներ վերանայել և դատավորի կամ դատական իշխանությամբ օժտված այլ պաշտոնյայի կողմից լիազորել կալանքի ժամկետի երկարացումը»:

Պարտավորություններից շեղվելու օրինականությունը չի կարելի հարցականի տակ առնել միայն այն պատճառով, որ պետությունը որոշել է տեսնել, թե արդյոք ապագայում հնարավոր կլինի՞ գտնել կոնվենցիայով ամրագրված պարտավորություններն առավել ճշգրտությամբ կատարելու նոր եղանակ: Եվ իրականում երկարատև քննարկումների գործընթացը ոչ միայն համապատասխանում է 15-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված արտակարգ միջոցների կարիքը շարունակաբար քննելու պահանջին, այլև ենթադրվում է բուն համաչափություն հասկացությամբ:

(դ) Հիմնավորվա՞ծ էր կալանքի ժամկետի երկարացման նկատմամբ դատական հսկողության բացակայությունը

55. Դիմողներն անհիմն են համարել կառավարության ներկայացրած այն փաստարկը, որ կալանքի ժամկետի երկարացման վերահսկողությունը դատավորի կամ դատական իշխանությամբ օժտված այլ պաշտոնատար անձի կողմից անհնար էր, կամ կալանքի տևողությունն անհրաժեշտ էր երկարացնել մինչև յոթ օր ժամկետով: Դիմողները չեն ընդունել, որ կալանքի ժամկետի երկարացումը հիմնավորելու համար դատարանին անհրաժեշտ նյութերը կարող էին ավելի գաղտնի լինել, քան habeas corpus-ի [անձին կալանքից ազատելու իրավական միջոցների] ընթացակարգերով նախատեսված նյութերը: Մարդու իրավունքների մշտական հանձնաժողովը և դիմողները նաև ընդգծել են, որ Հյուսիսային Իռլանդիայի դատարանները հաճախ են առիթ ունեցել քննելու գաղտնի տեղեկությունների վրա հիմնված նյութեր, օրինակ՝ գրավի դիմաց ազատ արձակվելու դիմումներում, և նրանց տրամադրության տակ եղել են բավարար ընթացակարգային և ապացույցների երաշխիքներ գաղտնիության պահպանման համար: Որոշ ընթացակարգերի շրջանակներում դատավորները ստիպված են եղել գործել փաստաբանին կամ նրա պաշտպանյալին չհայտնվող նյութերի հիման վրա: Օրինակ՝ իրավիճակն այդպիսին էր հանրային շահերի անձեռնմխելիության մասին գործադիր մարմնի պնդումների պարագայում կամ 1989 թ. Հյուսիսային Իռլանդիայի «Ոստիկանության և քրեական ապացույցների մասին» հրաման/օրդերով կալանքի ժամկետը երկարացնելու մասին ոստիկանության դիմումի դեպքում:

56. Այս մասով կառավարությունը պատասխանել է, որ վերոնշյալ ընթացակարգերից ոչ մեկը չի ընդգրկել միաժամանակ և՛ կալանավորին կամ նրա փաստաբանին նյութերի չբացահայտում, և՛ դատարանի գործադիր ակտ: Բացառություն է կազմել միայն 1989 թ. «Ահաբեկչության կանխման մասին» (ժամանակավոր դրույթներ) օրենքի թիվ 7 հավելվածը, որի համաձայն՝ դատարանը, ի թիվս այլոց, կարող է կարգադրություն արձակել ահաբեկչական գործողությունների հետախուզության հետ առնչվող հատուկ տվյալներ ներկայացնելու և փնտրելու մասին: Այնուհանդերձ, թիվ 7 հավելվածի 8-րդ կետում նշված է, որ եթե դատարանին տեղեկությունների հայտնումն առնչվում է չափազանց գաղտնի հարցին կամ վնասակար է հետաքննության համար, ապա կարգադրություն արձակելու լիազորությամբ կօժտվի ոչ թե դատարանը, այլ համապատասխան նախարարը:

Ընդգծվել է նաև այն հանգամանքը, որ կառավարությունը ստիպված է եղել եզրակացնել, որ ընդհանուր իրավունքի համակարգի շրջանակներում կենսագործելի չէր մի այնպիսի համակարգի ներմուծումը, որը համատեղելի կլիներ 5-րդ հոդվածի 3-րդ կետի հետ և միաժամանակ չէր նվազեցնի ահաբեկչական սպառնալիքին ի պատասխան ձեռնարկվող գործողությունների արդյունավետությունը: Կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշումները կայացվել են այնպիսի տվյալների հիման վրա, որոնց բնույթն ու աղբյուրը կասկածյալին և նրա փաստաբանին չեն հայտնվել ոստիկանության աջակցող անձանց անվտանգությունն ապահովելու կամ հետագայում արժեքավոր տվյալները չկորցնելու նկատառումով: Ավելին, կալանքի ժամկետի երկարացումը թույլատրելու կամ հաստատելու հարցում դատական մարմինների ներգրավումը կարող էր իրական սպառնալիք ներկայացնել դրանց անկախության համար, քանզի դատարանները միանշանակ կդիտվեին որպես հետաքննության և դատաքննության մասնակիցներ:

Բացի այդ, կառավարությունը հիմնավորված չի համարել habeas corpus-ի հետ համեմատությունը, քանի որ կալանքի ժամկետի երկարացումը թույլատրելու կամ հաստատելու հարցում դատական մարմինների ներգրավումը կպահանջեր հավելյալ գաղտնի տեղեկությունների բացահայտում, որոնց հաղորդումը պարտադիր չէր habeas corpus-ի ընթացակարգերում: Մասնավորապես, դատարանին պետք է տրամադրվեն ձերբակալությունից հետո ոստիկանության հարցաքննությունների բնույթի և շրջանակի մանրամասնությունները, այդ թվում՝ հարցաքննված վկաներին առնչվող մանրամասներ, այլ աղբյուրներից ձեռք բերված տվյալները, ինչպես նաև տեղեկություններ ոստիկանության հետաքննության հետագա ընթացքի մասին:

Ի վերջո, լորդ Շաքլթոնը և լորդ Ջելիքոն, ինչպես նաև վիկոնտ Քոլվիլն իրենց զեկույցներում եզրակացրել են, որ ձերբակալությունը և կալանքի ժամկետի երկարացումն ահաբեկչության դեմ պայքարի անբաժանելի մասն էին կազմել: Նշված զեկույցների հեղինակները եզրակացրել են նաև, որ ոստիկանությունում հարցաքննությանը դիմադրելու համար ահաբեկիչների անցած պատրաստությունը խոչընդոտում և ձգձգում էր ահաբեկչական բնույթի հանցագործությունների հետաքննության ընթացքը: Արդյունքում ոստիկանությունը ստիպված էր լայնածավալ ստուգումներ ու հարցաքննություն անցկացնել և սովորականից ավելի մանրազնին հետախուզական աշխատանք և դատական փորձաքննություն իրականացնել:

57. Հանձնաժողովն այն կարծիքին էր, որ կառավարությունն այս հարցում չի գերազանցել իրեն վերապահված

հայեցողության սահմանը:

58. Դատարանը մատնանշում է ահաբեկչության կանխարգելմանն ուղղված օրենսդրական նորմերի իրացմանն անդրադարձող տարբեր զեկույցներում արտահայտված այն կարծիքները, որ ահաբեկչական բնույթի հանցագործությունները հետաքննելու և դրանցով մեղադրանք ներկայացնելու հետ կապված դժվարություններն առանց դատական վերահսկողության կալանքի ժամկետը երկարացնելու անհրաժեշտություն են առաջացնում: Ավելին, դատարանն ընդունել է այդ հատուկ դժվարությունների առկայությունը *Բրոգանի* (*Brogan*) գործով իր կայացրած վերոնշյալ վճռում (տե՛ս շարք A, թիվ 145-B, էջ 33, պարբ. 61):

Բացի այդ, դատարանն ընդգծում է, որ պատասխանող պետությունը շարունակում է հավատացած մնալ, որ էապես կարևոր է կալանավորին և նրա փաստաբանին չհայտնել կալանքի ժամկետի երկարացման հիմքում ընկած տեղեկությունները: Պետությունը նաև կարծում է, որ եթե կալանքի ժամկետը երկարացնելու թույլտվության հարցում ներգրավվեն դատավորները կամ դատական իշխանությամբ օժտված այլ պաշտոնատար անձինք, ապա ընդհանուր իրավունքի երկիմաստ համակարգում կխախտվի դատական իշխանության անկախության սկզբունքը:

Դատարանը նշում է նաև, որ կալանքի ժամկետի երկարացման գործընթացում «դատավոր կամ դատական իշխանությամբ օժտված այլ պաշտոնատար անձ» ձևակերպման ներմուծումն ամենևին էլ չի հանգեցնի 5-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխանող իրավիճակի: Նույն հոդվածի 4-րդ կետի նման, այդ դրույթը հարկ է հասկանալ դատական բնույթի ընթացակարգին հետևելու անհրաժեշտության տեսանկյունից, թեև այդ ընթացակարգը կարող է փոփոխվել այն բոլոր դեպքերում, որոնցով պահանջվում է դատավորի միջամտությունը:

59. Դատարանը չպետք է պատասխանող պետությանը պարտադրի իր կարծիքը տվյալ ժամանակահատվածում արտակարգ իրավիճակի հաղթահարման առավել տեղին և արդյունավետ միջոցների մասին, քանի որ հենց պետությունն է անմիջական պատասխանատվություն կրում, մի կողմից, ահաբեկչության դեմ պայքարելու համար նախատեսված արդյունավետ միջոցներ ձեռնարկելու, իսկ մյուս կողմից՝ անհատների իրավունքները հավասարակշռության մեջ պահելու համար (տե՛ս *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Ireland v UK*) գործով վերոնշյալ վճիռը (շարք A, թիվ 25, էջ 82, պարբ. 214), և *«Կլաասն ընդդեմ Գերմանիայի»* (*Klass v Germany*) գործով 1978 թ. սեպտեմբերի 6-ին կայացրած վճիռը (շարք A, թիվ 28, էջ 23, պարբ. 49): Հյուսիսային Իռլանդիայի պայմաններում, որտեղ դատական համակարգը փոքր է և խոցելի ահաբեկչական հարձակումների նկատմամբ, ինքնաբերաբար հասկանալի է, որ պետությունը շատ է կարևորում այդ համակարգի անկախության հարցը:

60. Այդ նկատառումներից ելնելով՝ չի կարելի ասել, որ գերակա հանգամանքներում դատական հսկողության դեմ որոշում կայացրած պետությունը գերազանցել է հայեցողության սահմանը:

(ե) Կալանքի ժամկետի երկարացման լիազորության չարաշահումը կանխող երաշխիքներ

61. Դիմողները, ինչպես նաև Amnesty International, Liberty և այլ իրավապաշտպան կազմակերպությունները հայտնել են, որ կալանքի ժամկետի երկարացման լիազորության չարաշահումը կանխող երաշխիքներն անբավարար են: Կալանքի ընթացքում անձը լրիվ կտրվում է արտաքին աշխարհից, և նրան չի թույլատրվում թերթեր կարդալ, ռադիո լսել կամ հաղորդակցվել ընտանիքի հետ: Մասնավորապես, Amnesty International կազմակերպությունն ընդգծել է, որ 1988 թ. ՄԱԿ-ի ընդունած «Ամեն տեսակի կալանքի կամ բանտարկության մեջ գտնվող բոլոր անձանց պաշտպանության սկզբունքների մասին» (Գլխավոր ասամբլեայի 1988 թ. դեկտեմբերի 9-ի թիվ 43/173 բանաձև) օրինաշարը բացառում է հաղորդակցությունից զուրկ կալանավորումը և պահանջում կալանավորներին տրամադրել փաստաբանին դիմելու և ընտանիքի անդամների հետ հաղորդակցվելու հնարավորություն: Amnesty International կազմակերպության ներկայացմամբ հատկապես կարևորվել է կասկածյալին դատական իշխանությամբ օժտված պաշտոնատար անձի մոտ անհապաղ բերելու հարցը, քանի որ, ինչպես պարզվել է, Հյուսիսային Իռլանդիայում կիրառված habeas corpus-ը գործնականում արդյունավետ չի եղել: Վերոնշյալ երկու կազմակերպություններն այն կարծիքի են, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետն արտակարգ դրության պայմաններում պետք է շեղում չհամարվի:

Բացի այդ, նշվել է, որ կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշումը գործնականում չի կարող վիճարկվել habeas corpus-ով կամ դատական վերանայմամբ, քանի որ նշված որոշումը քննարկվում է գաղտնի և գրեթե բոլոր դեպքերում կայացվում է: Դրա մասին է վկայում այն փաստը, որ թեպետև կալանքի ժամկետի երկարացման մասին հազարավոր կարգադրություններ են արձակվել, սակայն երբեք փորձ չի արվել վիճարկել այդ որոշումները:

62. Թեև դիմողները և նշված իրավապաշտպան կազմակերպությունները պնդումներ են արել արդյունավետ երաշխիքների բացակայության մասին, սակայն դատարանը բավարարված է պատասխանող պետության այն պնդմամբ, որ այդ երաշխիքներն իրականում գոյություն ունեն և հանդես են գալիս որպես կամայական վարվելակերպից և հաղորդակցությունից զրկված կալանավորումից պաշտպանող միջոց:

63. Առաջին՝ habeas corpus-ի իրավական պաշտպանության միջոցը հնարավորություն է տալիս ստուգելու նախնական ձերբակալության և կալանավորման օրինականությունը: Անվիճարկելի է այն իրողությունը, որ ցանկության դեպքում դիմողները և նրանց փաստաբանները կարող էին օգտվել նշված իրավական պաշտպանության միջոցից: Բացի այդ, այն

կարևոր միջոց է եղել կամայական կալանավորումից պաշտպանության տեսանկյունից (տե՛ս *Բրոգանի* (*Brogan*) գործով վերոնշյալ վճիռը, շարք A, թիվ 145-B, էջ 34-35, պարբ. 63-65): Դատարանը հիշեցնում է, որ ստեղծված իրավիճակում դիմողները հետ են վերցրել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման մասին իրենց գանգատը: Երկրորդ՝ կալանավորներն օժտված են ձերբակալման պահից քառասուներեք ժամ անց իրենց փաստաբանի հետ խորհրդակցելու բացարձակ և օրենքով պաշտպանվող իրավունքով: Փաստորեն սույն գործով երկու դիմողները կարող էին խորհրդակցել իրենց փաստաբանի հետ:

Եվ ավելին, նշված ժամանակահատվածում տվյալ իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն ողջամիտ հիմքերի առկայության դեպքում: Հյուսիսային Իռլանդիայի գերագույն դատարանի կայացրած վճիռներից պարզ է դառնում, որ փաստաբանին դիմելու հնարավորության հետաձգումը ենթակա է դատական վերանայման, և նման քայլի ողջամիտ հիմքերը հաստատելու պարտավորությունը կրում են իրավասու մարմինները: Նշված դեպքերը վկայում են, որ դատական վերանայումը արագ և արդյունավետ միջոց է կամայական մերժման դեպքում փաստաբանին դիմելու հնարավորությունն ապահովելու համար:

Վիճարկման ենթակա չէ նաև այն հարցը, որ կալանավորված անձինք ազգականին կամ ընկերոջն իրենց կալանավորման մասին հայտնելու և բժշկի դիմելու իրավունք ունեն:

65. Ի լրումն վերոնշյալ հիմնական երաշխիքների՝ տվյալ իրավական նորմի նկատմամբ սահմանվել է անկախ կանոնավոր վերանայում, որը պարբերաբար երկարացվել է մինչ 1989 թ.:

(զ) եզրակացություն

66. Հաշվի առնելով Հյուսիսային Իռլանդիայում ահաբեկչական գործունեության վտանգը, պարտավորություններից շեղվելու սահմանափակ շրջանակը, դրա հիմքում ընկած պատճառները, ինչպես նաև պարտավորություններից շեղվելու չարաշահման կանխմանն ուղղված հիմնական երաշխիքների գոյությունը՝ դատարանը հանգել է այն եզրակացության, որ պատասխանող պետությունը չի գերազանցել հայեցողության սահմանը, քանզի պարտավորություններից շեղվելու պահանջը բացառապես թելադրված է եղել տվյալ իրավիճակի հրամայականներով:

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

67. Դատարանը հիշեցնում է, որ կոնվենցիայով ստանձնած պարտավորություններից շեղվող պետությունների կողմից 15-րդ հոդվածի 1-ին կետով ձեռնարկված միջոցները չեն կարող հակասել միջազգային իրավունքով այդ պետության ստանձնած այլ պարտավորություններին:

68. Այս առումով դիմողները դատարանին նախ ներկայացրեցին այն պնդումը, որ Միացյալ Թագավորության կողմից որպես մասնակից կողմ վավերացված 1966 թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածի դրույթներով համաձայնագրային պարտավորություններից շեղումն օրինական համարելու համար անհրաժեշտ է, որ պաշտոնապես արտակարգ դրություն հայտարարվի: Քանի որ նման հայտարարություն երբեք չի արվել, Միացյալ Թագավորության կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով ստանձնած պարտավորություններից շեղվելու իրողությունն անհամատեղելի է միջազգային իրավունքով ստանձնած այլ պարտավորությունների հետ: Դիմողների կարծիքով՝ այս պահանջը ենթադրում է, որ արտակարգ դրությունը պաշտոնապես պետք է հռչակվեր, ոչ թե պարզապես հայտարարվեր խորհրդարանում:

69. Պատասխանող պետության համար վիճահարույց հարց էր մնում, թե արդյոք դաշնագրի 4-րդ հոդվածի շրջանակներում պաշտոնական հռչակումն անհրաժե՞շտ էր, քանի որ արտակարգ դրությունը ստեղծվել էր նախքան Միացյալ Թագավորության կողմից նշված դաշնագրի վավերացումը և շարունակվում է մինչև ներկա պահը: Ամեն դեպքում արտակարգ դրության գոյությունը և ստանձնած պարտավորություններից շեղվելու փաստը 1988 թ. դեկտեմբերի 22-ին Մեծ Բրիտանիայի ներքին գործերի քարտուղարի կողմից հրապարակավ պաշտոնապես հայտարարվել են Համայնքների պալատին: Ավելին, Մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն հանդես չի եկել որևէ ենթադրությամբ, որ ստանձնած պարտավորություններից շեղվելու փաստը կարող էր չբավարարել 4-րդ հոդվածի ձևաբանական պահանջները:

70. Հանձնաժողովի անդամները պատասխանող պետության բերած փաստարկները հիմնավորված են համարել:

71. Դաշնագրի 4-րդ հոդվածում համապատասխանաբար նշվում է.

> «Արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը, և որը հայտարարված է պաշտոնապես…»:

72. Դատարանը նկատում է, որ իրեն վերապահված դերն այն չէ, որ պաշտոնապես որոշի դաշնագրի 4-րդ հոդվածում տեղ գտած «հայտարարված է պաշտոնապես» արտահայտությունը: Այնուամենայնիվ, դատարանը պետք է քննի, թե արդյոք կա՞ այս առնչությամբ դիմողի բերած փաստարկն արդարացնող որևէ ճշմարտանման հիմք:

73. 1988 թ. դեկտեմբերի 22-ին Մեծ Բրիտանիայի ներքին գործերի քարտուղարի՝ Համայնքների պալատին ուղղված հայտարարությունում մանրամասն բացատրվում էին ստանձնած պարտավորություններից շեղվելու մասին կառավարության որոշման հիմքում ընկած պատճառները, և հայտնվում էր, որ քայլեր են ձեռնարկվում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 15-րդ և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածով նախատեսված պարտավորություններից շեղվելու մասին ծանուցում ներկայացնելու համար: Ներքին գործերի քարտուղարը հավելեց, որ վերոնշյալ դրույթների իմաստով Միացյալ Թագավորության Հյուսիսային Իռլանդիայի երկրամասում ստեղծված ահաբեկչական իրավիճակի պայմաններում առաջացել է արտակարգ դրություն:

Դատարանի կարծիքով՝ վերոնշյալ հայտարարությունը, որը եղել է պաշտոնական բնույթի և հանրությանը հայտնել է կառավարության՝ պարտավորություններից շեղվելու մտադրությունների մասին, համապատասխանում է «պաշտոնական հռչակում» հասկացության իմաստին: Ուստի դատարանը համարում է, որ այս առնչությամբ դիմողների փաստարկը հիմնավորված չէ:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

74. Վերոնշյալ քննության հիման վրա դատարանը եզրակացնում է, որ Միացյալ Թագավորության ստանձնած պարտավորություններից շեղվելու իրավունքի իրացումը բավարարում է 15-րդ հոդվածի պահանջները, և, հետևաբար, դիմողները չեն կարող ընդունելի գանգատ ներկայացնել 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտման առնչությամբ: Դրանից հետևում է, որ 5-րդ հոդվածի 5-րդ կետով դիմողներին փոխհատուցում ստանալու իրացվելի իրավունք շնորհելու պարտավորություն չի ծագում:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. որոշում է կայացնում, քսաներկու կողմ և չորս դեմ ձայներով, որ Միացյալ Թագավորության ստանձնած պարտավորություններից շեղվելու իրավունքի իրացումը բավարարում է 15-րդ հոդվածի պահանջները, և, հետևաբար, դիմողները չեն կարող վավերական գանգատ ներկայացնել 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտման վերաբերյալ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Լիակազմ դատարանի կազմում ընդգրկված էին նախագահող դատավոր Ռիսդալը և դատավորներ՝ Բերնհարդտը, Տոիր Վիլջաուլմսոնը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Մակդոնալդը, Ռուսոն, Շպիլմանը, Վալտիկոսը, Մարտենսը, Փալմը, Ֆոյգելը, Փեքանենը, Լուազուն, Մորինիյան, Բիջին, Ֆրիլենդը, Բական, Լոպես Ռոշան, Վիլդհաբերը, Միֆսուդ Բոնիչին և Գոտչևը:

2 Իր չհամընկնող կարծիքում դատավոր Փեթիթին արտահայտել է այն կարծիքը, որ

… Եվրոպայի խորհրդի մասնակից այն պետություններում, որտեղ եղել է ահաբեկչության դեմ պայքարի երկար տարիների փորձ (օրինակ՝ Իտալիա), դատական իշխանությունների դերը ոստիկանության կողմից երկարաժամկետ կալանավորման հարցում պահպանվել է: Համեմատական իրավունքում և քրեական դատավարությունում հնարավոր է գտնել դատական այնպիսի մեխանիզմների օրինակներ, որոնցով պաշտպանվում են ոստիկանության կողմից օգտագործվող և անձնուրությունը պահպանող «իրազեկիչները»: Կարելի է նախատեսել դռնփակ դատական լսումներ: Բրիտանական համակարգում նույնպես կիրառվում է անձեռնմխելիության սկզբունքը, որը հնարավորություն է տալիս դատախազությանը չբացահայտելու մեղադրական եզրակացությունում օգտագործված ցուցմունքների աղբյուրները: Այսպիսով հնարավոր է խուսափել այս փուլում կիրառելի սովորական ընթացակարգային անհարմարություններից (տե՛ս *«Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Edwards v UK*) գործով 1992 թ. դեկտեմբերի 16-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 247-B): Արդյոք ոստիկանությունն իր գործածած որոշ մեթոդները դատարաններից թաքցնելու ցանկություն չունի՞:

Իմ կարծիքով, *Բրենիգանի և Մակբրայդի* (*Brannigan and McBride*) գործում պատասխանող պետության քայլերը դուրս էին հայեցողության սահմանից, որը դատարանը կարող է ճանաչել: Պետք է գերակայի բրիտանական և եվրոպական ավանդույթի այն հիմնարար սկզբունքը, որ կալանավորումը չի կարող երկարացվել չորսից յոթ օր առանց դատավորի մասնակցության, ինչն անձնական ազատությունների և հիմնարար իրավունքների երաշխիքն է:

3 Իր չհամընկնող կարծիքում դատավոր Ուոլշը նկատել է հետևյալը.

2. Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները, մասնավորապես՝ «Պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ» արտահայտությունը, վկայակոչվել են որպես այս քայլի հիմնավորում: Տվյալ դեպքում «ազգ» եզրույթը ենթադրաբար ընդգրկում է ողջ Միացյալ Թագավորությունը: Թեև քաղաքական հողի վրա

բռնությունը Հյուսիսային Իռլանդիայում կարելի է բնութագրել որպես Միացյալ Թագավորության այդ երկրամասի կյանքին սպառնացող վտանգ, սակայն չկան ապացույցներ, որ Միացյալ Թագավորության մնացած մասի, ասել է թե՝ Բրիտանական կղզու կյանքը գտնվում էր Հյուսիսային Իռլանդիայում պատերազմի կամ արտակարգ դրության սպառնալիքի տակ, եթե հաշվի առնենք, որ այդ երկրամասը Բրիտանական կղզուց բաժանված է ծովով և դրա մաս չի կազմում:

3. Ավելին՝ չկան ապացույցներ, որ Հյուսիսային Իռլանդիայի կամ Մեծ Բրիտանիայի դատարանների աշխատանքը տուժել կամ սահմանափակվել է Հյուսիսային Իռլանդիայում պատերազմի կամ արտակարգ դրության հետևանքով: Հենց Միացյալ Թագավորության կառավարությունն է, որ ցանկանում էր սահմանափակել դատարանների աշխատանքը՝ չցանկանալով, որ ձերբակալված անձինք բերվեն դատավորի մոտ, ինչպես նախատեսված է կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետում:

4 Դատավոր Դե Մեյերը հայտնել է չհամընկնող կարծիք հետևյալ հիմնավորմամբ.

… Միացյալ Թագավորության կառավարությունը փորձեց խուսափել *Բրոգանի* (*Brogan*) գործով կայացրած որոշման հետևանքներից և 15-րդ կետի համաձայն՝ կրկին ծանուցում ներկայացրեց պարտավորություններից շեղվելու մասին՝ խնդրո առարկա պրակտիկան շարունակելու նկատառումով: Իմ կարծիքով՝ դա անընդունելի է, պատասխանող պետությանը չի հաջողվել ինձ համոզել, որ անձնական ազատության կանոնից հեռացող այս շեղումը կարող է 1988 թ. առաջ կամ հետո «իրավիճակի խիստ հրամայականներով պայմանավորված» լինել:

5 Դատավոր Մակարչիկի չհամընկնող կարծիքը կարևորում էր հետևյալը.

… Միացյալ Թագավորության կառավարությունը պետք փորձեր ապացուցել դատարանին, որ երկարատև վարչական կալանքն իրականում նպաստում է այն պատճառների վերացմանը, որոնցով պայմանավորված է եղել արտակարգ միջոցների ներմուծումը, ասել է թե՝ ահաբեկչության կանխարգելումն ու հակազդումը: Սակայն, ինչպես տեսնում եմ՝ նման փորձ չի արվել ո՛չ պատասխանող պետության հուշագրում, ո՛չ դրան կից ներկայացվող փաստաթղթերում և ո՛չ էլ դատարանին ներկայացված միջնորդություններում: Փոխարենը՝ պատասխանող պետությունն իր հիմնական փաստարկները կենտրոնացրել է այն հարցի շուրջ, որ դատավորի կողմից սովորական դատական ընթացակարգերից զուրկ երկարատև կալանավորման նկատմամբ դատական վերահսկողություն սահմանելը դատական համակարգի վրա վնասակար ազդեցություն կունենա:

6 Թեև դատարանը հակված չէր ձևաբանորեն նվազեցնել 15-րդ հոդվածի շրջանակներում մասնակից պետություններին արտակարգ դրության դեպքում վերապահված հայեցողության սահմանի աստիճանը, սակայն կայացրած վճռի 43-րդ պարբերությունը վկայում է, որ պարտավորություններից շեղվելու տվյալ դեպքի օրինականությունը գնահատելիս դատարանը հատկապես ուսումնասիրել է այդ հնարավորությունը:

.....

«Աքսոյն ընդդեմ Թուրքիայի» (Aksoy v Turkey, 1996-VI 2287*)*

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

3-րդ հոդվածի շրջանակներում դիմողի ներկայացրած գանգատում շարադրված փաստերը բերվել են 168-րդ էջում: Ի պատասխան դիմողի այն պնդման, որ նա տուժել է 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտումից առնվազն 14 օր դատական վերահսկողությունից զուրկ կալանքի տակ պահվելու հետևանքով, պետությունը փորձել է վկայակոչել 1990 թ. Գլխավոր քարտուղարին իր հանձնած ծանուցումը պարտավորություններից շեղվելու մասին (հետագա լրամշակումներով), որում հատուկ նշվում էին Թուրքիայի առանձին հարավ-արևելյան շրջանները:

68.Դատարանը հիշեցնում է, որ յուրաքանչյուր մասնակից պետության իրավունք է վերապահված «ազգի կյանքի» համար կրած իր պատասխանատվության շրջանակներում որոշել, թե արդյոք ազգի կյանքին սպառնո՞ւմ է «արտակարգ դրություն», և եթե այո, ապա պետությունն ինչ պետք է նախաձեռնի այդ արտակարգ դրությունը հաղթահարելու համար: Քանի որ ազգային մարմինները պահի վերահաս հրամայականներին առնչվում են ուղղակիորեն և շարունակաբար, նրանք սկզբունքորեն ավելի նպաստավոր դիրքում են գտնվում՝ որոշելու նման արտակարգ դրության գոյության փաստը և բնույթը, ինչպես նաև իրավիճակը հաղթահարելու նպատակով պարտավորություններից շեղման աստիճանը: Համապատասխանաբար, այս հարցում ազգային մարմիններին պետք է շնորհվի հայեցողության սահման:

Այնուամենայնիվ, մասնակից պետությունները չեն օգտվում անսահմանափակ հայեցողության իրավունքից: Ի թիվս այլ գործառույթների, դատարաններին է վերապահված որոշելու՝ մասնակից պետությունները գերազանցե՞լ են ճգնաժամի հույժ լրջության պահանջի սահմանները, թե՞ ոչ: Այսպիսով, ազգային մարմինների հայեցողության սահմանը հավելված է եվրոպական կառույցների վերահսկողությամբ: Այս վերահսկողությունն իրականացնելիս դատարանը պետք է ըստ հարկի քննի այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են՝ պարտավորություններից շեղվելու հետևանքով տուժած իրավունքները, արտակարգ իրավիճակի հիմքում ընկած հանգամանքները և արտակարգ դրության տևողությունը (տե՛ս *«Բրեննիգանը և Մակբրայդն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Brannigan and McBride v the United Kingdom*) գործով 1993 թ. մայիսի 26-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 258, էջ 49-50, պարբ. 43):

2. ԱԶԳԻ ԿՅԱՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ

69. Պատասխանող պետության պնդմամբ՝ Թուրքիայի հարավարևելյան շրջաններում ստեղծվել էր «ազգի կյանքին սպառնացող» արտակարգ դրություն, ինչին հանձնաժողովը համաձայնել էր: Դիմողը չի վիճարկել այս հարցը, թեև նա իր ներկայացրած հայտարարությունում նշել է, որ ըստ էության այս հարցը պետք է որոշվի կոնվենցիայի պաշտպանության գործառույթով օժտված մարմինների կողմից:

70. Դատարանն իր տրամադրության տակ եղած նյութերի հիման վրա համարում է, որ Քրդական աշխատավորական կուսակցության ծավալած ահաբեկչական գործունեության աստիճանը և ազդեցությունը Թուրքիայի հարավարևելյան շրջաններում անկասկած առաջացրել է «ազգի կյանքին սպառնացող վտանգ» այդ տարածաշրջանում (տե՛ս *mutatis mutandis «Լոլեսն ընդդեմ Իռլանդիայի»* գործով 1961 թ. հուլիսի 1-ի վճիռը, շարք A, թիվ 3, էջ 56, պարբ. 28, վերոնշյալ *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության» (Ireland v the United Kingdom)* գործով կայացրած վճիռը [A. 25 (1978)], էջ 78, պարբ. 205 և *Բրեննիգանը և Մակբրայդը* (*Brannigan and McBride*) գործով կայացրած վճիռը, էջ 50, պարբ. 47):

3. ԱՐԴՅՈՔ ՉԵՌՆԱՐԿԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԹԵԼԱԴՐՎԱ՞Ծ ԷԻՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՅԺ ԼՐՋՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ

(ա) Առանց դատական վերահսկման կալանքի տևողությունը

71. Կառավարությունը պնդում էր, որ դիմողը, հանդիսանալով Քզլթեփե քաղաքում Քրդական աշխատավորական կուսակցության բաժանմունքի անդամ, ձերբակալվել է 1992 թ. նոյեմբերի 26-ին Քրդական աշխատավորական կուսակցության ահաբեկիչներին աջակցություն ցուցաբերելու մեջ կասկածվող տասներեք այլ անձանց հետ միասին կուսակցական թռուցիկներ բաժանելու ընթացքում: Դիմողը 14 օր կալանքի տակ է պահվել Թուրքիայի այն օրենքի համաձայն, որը թույլ էր տալիս արտակարգ դրության պայմաններում գտնվող շրջանում խմբակային հանցանք գործելու կասկածանքով ձերբակալված անձին մինչև 30 օր պահել կալանքի տակ:

72. Պատասխանող պետությունը պարզաբանեց, որ դիմողի ձերբակալման վայրը գտնվում էր Թուրքիայի պարտավորություններից շեղման մասին ծանուցմամբ հայտարարագրված տարածքում: Պարտավորություններից այս շեղումն անհրաժեշտ էր և արդարացված՝ հաշվի առնելով Թուրքիայում, հատկապես՝ երկրի հարավարևելյան շրջաններում Քրդական աշխատավորական կուսակցության ծավալած ահաբեկչական գործունեությունը: Ահաբեկչական բնույթի հանցագործությունների հետաքննությունն իշխանությունների համար հատուկ դժվարություններ է ներկայացնում, քանի որ ահաբեկչական կազմակերպությունների անդամները վարպետորեն կարող էին դիմադրել հարցաքննությանը, ունենին աջակիցների գաղտնի ցանցեր և զգալի ռեսուրսներից օգտվելու հնարավորություն: Հսկայական ջանքեր և երկար ժամանակ էր հարկավոր հարևան երկրներից ռազմավարական և տեխնիկական աջակցություն ստացող ահաբեկչական կազմակերպության քիրախը դարձած տարածաշրջանում ապացույցներ հավաքելու և ստուգելու համար: Այս դժվարությունները նշանակում էին, որ անհնար էր դատական վերահսկողություն ապահովել ոստիկանության կալանքի տակ գտնվող կասկածյալի համար:

73. Տվյալ գործով դիմողը հայտնել է, որ իրեն կալանավորել են 1992 թ. նոյեմբերի 24-ին և ազատ արձակել նույն թվականի դեկտեմբերի 10-ին: Նա պնդել է, որ հետին թվով ձերբակալությունների ձևակերպումը սովորական երևույթ էր արտակարգ դրության մեջ գտվող այդ տարածաշրջանում:

74. Թեև նա մանրամասն փաստարկներ չի ներկայացրել՝ վիճարկելու Թուրքիայի ստանձնած պարտավորություններից շեղվելու օրինականությունը, սակայն հարցականի տակ է առել այն իրողությունը, թե արդյոք Թուրքիայի հարավարևելյան շրջաններում տիրող իրավիճակում պահանջվե՞լ է առանց դատական վերանայման կասկածյալներին տասնչորս օր կալանքի տակ պահել: Դիմողը հայտնել է, որ Թուրքիայի հարավարևելյան շրջաններում աշխատող դատավորները որևէ վտանգի չէին ենթարկվի, եթե կալանավորման օրինականությունն ավելի հաճախ վերանայելու թույլտվություն և պարտավորություն ստանային:

75. Հանձնաժողովը չի կարողացել վստահաբար պարզել, թե արդյոք դիմողը կալանավորվել է սկսած 1992 թ. նոյեմբերի 24-ի՞ց, թե՞, ինչպես պնդել է կառավարությունը, նույն թվականի նոյեմբերի 26-ից, և հետևաբար առաջնորդվել է այն ենթա-

դրությամբ, որ դիմողն առնվազն 14 օր կալանքի տակ է պահվել առանց դատավորի կամ օրենքով դատական իշխանությամբ օժտված այլ պաշտոնատար անձի մոտ բերվելու:

76. Դատարանը կցանկանար շեշտել կոնվենցիայի շուրջ ստեղծված համակարգում 5-րդ հոդվածի կարևորությունը. այդտեղ զետեղված է մարդու հիմնարար իրավունքներից մեկը, մասնավորապես՝ պաշտպանությունը պետության կողմից կամայական միջամտությունից անհատի ազատության իրավունքին: Անհատի ազատության իրավունքին գործադիր մարմինների միջամտությունների նկատմամբ սահմանված դատական վերահսկողությունը 5-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված երաշխիքի էական բաղադրիչ է, որը միտված է կամայականության վտանգի նվազեցմանն ու օրենքի գերակայության ապահովմանը (տե՛ս վերոնշյալ *Բրոգանը և այլք* (*Brogan and Others)* գործով կայացրած վճռի էջ 32, պարբ. 58): Ավելին, անհապաղ դատական միջամտությունը կարող է հանգեցնել կոնվենցիայի դրույթներով բացարձակապես և անշեղորեն արգելված վատ վերաբերմունքի լուրջ դեպքերի հայտնաբերմանն ու կանխմանը:

77. 68-րդ կետում հիշատակվող *Բրենիգանի և Մակբրայդի* (*Brannigan and McBride*) գործով կայացրած վճռում դատարանը հայտարարեց, որ Միացյալ Թագավորության կառավարությունը չի գերազանցել հայեցողության սահմանը՝ շեղվելով կոնվենցիայի 5-րդ հոդվածով ստանձնած իր պարտավորություններից այն առումով, որ թույլատրվում էր ահաբեկչական բնույթի հանցանքներում կասկածվող անհատներին մինչև յոթ օր ժամկետով պահել կալանքի տակ՝ առանց դատական վերահսկողության:

Տվյալ դեպքում դիմողն առանց դատավորին կամ դատական իշխանությամբ օրենքով օժտված այլ պաշտոնատար անձի մոտ բերվելու կալանքի տակ է պահվել առնվազն տասնչորս օր: Պատասխանող պետությունը փորձել է հիմնավորել ձեռնարկված միջոցը՝ հիշատակելով ոստիկանության կողմից ընդարձակ աշխարհագրական տարածքում անցկացվող հետաքննության հետ կապված հատուկ հրամայականներն այնպիսի իրավիճակում, որտեղ ահաբեկչական կազմակերպությունն արտասահմանից աջակցություն է ստանում (տե՛ս վերոնշյալ 72-րդ պարբերությունը):

78. Թեև դատարանը նախկինում (օրինակ՝ վերոնշյալ *Բրոգանի և այլոց* (*Brogan and Others*) գործ) մի քանի անգամ արտահայտել է այն կարծիքը, որ ահաբեկչական բնույթի հանցագործությունների հետաքննությունը, անկասկած, հատուկ խնդիրներ է դնում իշխանությունների առջև, սակայն դատարանը չի ընդունում առանց դատական միջամտության կասկածյալին տասնչորս օր կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը: Կալանավորման այս ժամկետը չափազանց երկար է, և այսպիսով դիմողը խոցելի է դառնում ոչ միայն ազատության իրավունքին միջամտություններից, այլև խոշտանգումներից զերծ մնալու իր իրավունքի նկատմամբ ոտնձգությունների առումով: Եվ ավելին, պատասխանող պետությունը դատարանում հանգամանալից չի ներկայացրել այն պատճառները, որոնց համաձայն՝ դատական միջամտությունն անհրատեսական է Թուրքիայի հարավարևելյան շրջաններում արձանագրված ահաբեկչության դեմ պայքարի պայմաններում:

(բ) Իրավական պաշտպանության երաշխիքներ

79. Կառավարությունն ընդգծել է, որ ինչպես պարտավորություններից շեղվելու դրույթները, այնպես էլ ազգային օրենսդրությունը բավարար երաշխիքներ են նախատեսում մարդու իրավունքների պաշտպանության համար: Այսպիսով, պարտավորություններից շեղվելու փաստն ինքնին սահմանափակվում է ահաբեկչության դեմ պայքարի համար անհրաժեշտ նվազագույն միջոցով: Կալանքի թույլատրելի ժամկետը նախատեսվել է օրենքով, և կասկածյալի կալանքը սահմանված ժամկետից երկարացնելու ցանկության դեպքում ոստիկանությունը պետք է ստանար դատախազի թույլտվությունը: Թուրքիայի քրեական օրենսգրքի 243-րդ հոդվածով արգելվում են խոշտանգումները, իսկ 135-րդ հոդվածի (ա) ենթակետով սահմանվում է, որ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի որևէ այլ տեսակի կիրառմամբ կորզված որևէ հայտարարություն արժեզուրկ է որպես ապացույց:

80. Դիմողն ընդգծել է, որ բանտարկյալների պաշտպանության երաշխիքների բացակայության հետ մեկտեղ չվերահսկվող կալանքի երկար ժամկետների հետևանքով ստեղծվել են նպաստավոր պայմաններ խոշտանգումների կիրառման համար: Այսպիսով, կալանավորման երրորդ և չորրորդ օրերին դիմողը ենթարկվել է հատկապես դաժան խոշտանգումների, ինչից հետո նրան հանգիստ են թողել վերքերի ապաքինման համար, սակայն դիմողին հասանելի չէին փաստաբանական ծառայությունները, ինչպես նաև բժշկական օգնությունը: Եվ ավելին, հարցաքննության ժամանակ դիմողի աչքերը կապել են, ինչը նշանակում է, որ նա չէր կարող ճանաչել իր նկատմամբ վատ վերաբերմունք դրսևորած անձանց: 1995 թ. փետրվարին Amnesty International իրավապաշտպան կազմակերպության պատրաստած զեկույցները (Turkey: a Policy of Denial («Թուրքիա՝ հերքման քաղաքականություն»), Խոշտանգումների կանխման եվրոպական կոմիտեն և Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեն վկայել են, որ Թուրքիայի քրեական օրենսգրքում ամրագրված թեկուզ ոչ պատշաճ երաշխիքները, որպես կանոն, անտեսվել են արտակարգ դրության մեջ գտնվող տարածաշրջանում:

81. Հանձնաժողովը եզրակացրել է, որ Թուրքիայի օրենսդրությամբ կալանավորներին չեն առաջարկվել բավարար երաշխիքներ, օրինակ՝ ինչպես պարզվել է, բացակայել են habeas corpus-ի անհապաղ պաշտպանության միջոցը, փաստաբանի ծառայությունների կամ բժշկական օգնության մատչելիությունը, ինչպես նաև ընկերոջ կամ ազգականի հետ հաղորդակցվելու հնարավորությունը: Տվյալ հանգամանքներում, թեպետև Թուրքիայի հարավարևելյան շրջաններում լուրջ ահաբեկչա-

կան վտանգ կար, դիմողին առանց դատավորի կամ դատական գործառույթներն իրականացնող այլ պաշտոնյայի մոտ բերելու առնվազն տասնչորս օրով կալանավորելու միջոցը գերազանցել է պատասխանող պետությանը վերապահված հայեցողության սահմանը և չի կարող հիմնավորվել իրավիճակի հրամայականներով:

82. Վերոնշյալ *Բրենիգանի և Մակբրայդի* (*Brannigan and McBride*) գործով վճիռ կայացնելիս դատարանը համոզվել էր, որ Հյուսիսային Իռլանդիայում արդյունավետ երաշխիքներ են իրացվել որպես կամայական վարվելակերպից և հաղորդազուրկ կալանավորումից պաշտպանության կարևոր միջոց: Օրինակ՝ habeas corpus-ով նախատեսված իրավական պաշտպանության միջոցի կիրառմամբ հնարավոր էր ստուգել, թե արդյոք բուն ձերբակալությունը և կալանքն օրինական էին, թե ոչ: Գոյություն ուներ ձերբակալությունից 48 ժամ անց փաստաբանին դիմելու բացարձակ և իրավաբանորեն կենսագործելի իրավունք, ընդ որում, կալանավորված անձինք ունեին ազգականին կամ ընկերոջն իրենց կալանավորման մասին հայտնելու և բժշկի դիմելու իրավունք (մեջբերվող աշխատություն, էջ 55–6, պարբ. 62-3):

83. Փոխարենը՝ դատարանն այնուամենայնիվ համարում է, որ տվյալ դեպքում երկար ժամանակ կալանքի տակ պահվող դիմողը զուրկ է եղել բավարար դատահիրավական երաշխիքներից: Մասնավորապես, փաստաբանի, բժշկի, ազգականի կամ ընկերոջ հետ կապվելու հնարավորությունից զրկումը և կալանքի օրինականությունը ստուգելու նպատակով դատարանի առջև բերվելու որևէ իրատեսական հնարավորության բացակայությունը փաստորեն նշանակում էր, որ դիմողը լիովին հանձնված է եղել իր բանտապահների կամքին:

84. Դատարանը հաշվի է առել Թուրքիայի հարավարևելյան շրջաններում արձանագրված ահաբեկչության անկասկած լուրջ հիմնախնդիրը և դրա հակազդմանն ուղղված նախաձեռնություններում պետության առջև ծառացած դժվարությունները: Այդուհանդերձ, դատարանի համար համոզիչ չի եղել այն փաստարկը, որ հենց իրավիճակի հրամայականներով էր պայմանավորված դիմողի՝ ահաբեկչական բնույթի հանցագործություններին մասնակցելու կասկածանքով կալանավորումը տասնչորս օրով կամ ավելի երկար ժամկետով՝ առանց արտաքին աշխարհի և այլ կալանավորների հետ հաղորդակցվելու և դատավորի կամ դատական իշխանությամբ օժտված այլ պաշտոնատար անձի առջև բերվելու հնարավորության:

4. ԱՐԴՅՈՔ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇԵՂՈՒՄԸ ԲԱՎԱՐԱՐԵ՞Լ Է 15-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

85. Դատարան դիմած անձանցից ոչ ոք չի վիճարկել այն հանգամանքը, որ Թուրքիայի Հանրապետության ստանձնած պարտավորություններից շեղվելու մասին ծանուցումն իրականում բավարարել է 15-րդ հոդվածի 3-րդ կետի ձևաբանական պահանջները, այն է՝ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին լիարժեք իրազեկել ի շեղումն կոնվենցիայի ձեռնարկվող միջոցների և պատճառների մասին:

86. Դատարանն իրավասու է սեփական նախաձեռնությամբ քննելու նշված հարցը (տե՛ս վերոնշյալ *Լոլեսի* (*Lawless*) գործով վճիռը, էջ 55, պարբ. 22 և *«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»* (*Ireland v the United Kingdom*) գործով վճիռը, էջ 84, պարբ. 223), մասնավորապես, թե արդյոք Թուրքիայի ստանձնած պարտավորություններից շեղվելու մասին ծանուցումը պարունակե՞լ է բավարար տեղեկություններ դիմողին առանց դատական վերանայման առնվազն տասնչորս օրով կալանավորելու միջոցի մասին և համապատասխանե՞լ է 15-րդ հոդվածի 3-րդ կետին: Այնուհանդերձ, հաշվի առնելով իր եզրակացությունն առ այն, որ վիճարկված միջոցը չի սահմանափակվել բացառապես իրավիճակի հրամայականներով, դատարանն անհրաժեշտ չի համարում որոշել այդ հարցը (տե՛ս վերոնշյալ 84-րդ պարբերությունը):

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

87. Ի վերջո, դատարանն արձանագրել է կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

…

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

…

3. Ութ կողմ և մեկ դեմ ձայներով, եզրակացրել է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Վերն արդեն մանրամասն ներկայացվել է դատարանի կազմը: Դատավոր Գյոլչյուքլուն չհամընկնող կարծիք է հայտնել, քանի որ, ըստ նրա, դիմող Աքսոյը չի սպառել իրավական պաշտպանության ներպե-

տական միջոցները:

2 *Աքսոյի (Aksoy)* գործը այն սակավաթիվ գործերից է, որոնց շրջանակներում դատարանը վճռել է, որ պատասխանող պետությունը չի բավարարել 15-րդ հոդվածի պայմանները:

3 Ավելի ուշ՝ 1997 թ. նոյեմբերի 26-ին, *«Սաքիկը և այլք ընդդեմ Թուրքիայի»* (*Sakik and Others v Turkey*) գործով վճիռ կայացնելիս դատարանը միաձայն եզրակացրել է, որ վերոնշյալ պարտավորություններից շեղումները չեն առնչվել դիմողների գանգատի առարկային, քանզի վերջիններս կալանավորվել են Թուրքիայի ստանձնած պարտավորություններից շեղումների մասին որոշման մեջ չնշված աշխարհագրական տարածքներում: Տվյալ գործով վեց դիմողները Թուրքիայի Ազգային ժողովի անդամներ էին, որոնք Անկարայում խորհրդարանի շենքից դուրս գալու պահին ձերբակալվել էին դատախազի հրամանով: Դիմողները դատավորի մոտ տարվելուց առաջ տասներկուսից տասնչորս օր կալանքի տակ են պահվել ոստիկանությունում: Դիմողների գանգատի առարկա էր դարձել, ի թիվս այլոց, 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտումը: Պատասխանող պետությունը հայտարարել է, որ իրացրել է 15-րդ հոդվածով սահմանված պարտավորություններից շեղվելու իրավունքը, հետևաբար, 5-րդ հոդվածի որևէ խախտում տեղի չի ունեցել:

35. Դիմողները հայտնել են, որ նշված պարտավորություններից շեղվելու իրավունքը չի առնչվել իրենց նկատմամբ ձեռնարկված միջոցներին: Հանձնաժողովը համամիտ է եղել դիմողների հետ:

36. Դատարանը նշում է, որ 1990 թ. օգոստոսի 6-ին պարտավորություններից շեղվելու մասին թիվ 424, 425 և 430 օրենսդրական որոշումները և 1991 թ. հունվարի 3-ի նամակը, դրանց բովանդակության ամփոփագրի համաձայն, կիրառելի են միայն այն տարածաշրջաններում, որտեղ հայտարարվել է արտակարգ դրություն, իսկ Անկարա քաղաքը նշված որոշմամբ ընդգրկված չէր այդ տարածաշրջանում: Այնուհանդերձ, դիմողները ձերբակալվել ու կալանավորվել են Անկարայում՝ նախ Անկարայի ազգային անվտանգության դատարանին կից աշխատող դատախազի, այնուհետև նույն դատարանի դատավորների կարգադրություններով:

37. Պետությունը հայտարարել է, որ նշված հանգամանքը խոչընդոտ չի հանդիսացել պարտավորություններից շեղվելու միջոցի կիրառման համար: Սույն գործի փաստերի բերումով արտակարգ դրության պայմաններում գտնվող Թուրքիայի հարավարևելյան շրջաններից սկսվող ահաբեկչական գործունեությունը ստացել էր հարատև բնույթ: Ահաբեկչության սպառնալիքը չէր սահմանափակվում Թուրքիայի տարածքի որևէ հատուկ շրջանով: Նշված իրողությունը հարկավոր էր հաշվի առնել, եթե Թուրքիայի պարտավորություններից շեղումը մեկնաբանվեր այդ որոշման նպատակի հիման վրա, այն է՝ երկրի տարածքում որքան հնարավոր է շուտ հաստատել «կոնվենցիայի դրույթներով սահմանված բնականոն իրավիճակը»:

38. *«Աքսոյն ընդդեմ Թուրքիայի»* (*Aksoy v Turkey*) գործով կայացրած վճռում դատարանն արդեն ընդգծել է Թուրքիայի հարավարևելյան շրջաններում արձանագրված ահաբեկչության անվիճարկելի լուրջ հիմնախնդիրը և այն արդյունավետ միջոցներով լուծելու ճանապարհին պետության առջև ծառացած դժվարությունները: Այդ կապակցությամբ դատարանը վճռել է, որ Թուրքիայի հարավարևելյան շրջաններում Քրդստանի աշխատավորական կուսակցության գործունեության շրջանակն ու ազդեցությունը անկասկած հանգեցրել են ազգի կյանքին սպառնացող արտակարգ իրավիճակի (տե՛ս 1996 թ. դեկտեմբերի 8-ին կայացված վճիռը, Վճիռների և որոշումների զեկույցներ, 1996-VI, էջ 2281 և 2284, պարբ. 70 և 84):

39. Այնուհանդերձ, հարկ է նշել, որ 15-րդ հոդվածով թույլատրելի են կոնվենցիայով ստանձնած պարտավորություններից այն շեղումները, որոնք բացառապես թելադրված են դրության հրամայականներով:

40. Սույն գործում դատարանը կխախտեր նշված դրույթի առարկան և նպատակը, եթե Թուրքիայի՝ պարտավորություններից շեղվելու մասին ծանուցման մեջ բացահայտ չնշված երկրամասերի վրա տարածեր շեղման իրավունքի կիրառման ոլորտը: Այս ամենից հետևում է, որ խնդրո առարկա պարտավորություններից շեղումը տեղի չափանիշով կիրառելի չէ սույն գործով բերված փաստերի դեպքում:

Հետևաբար, կարիք չկա որոշելու, թե արդյոք նշված շեղումը բավարարո՞ւմ է 15-րդ հոդվածի պահանջները, թե՞ ոչ:

Այնուհետև դատարանն արձանագրել է 5-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերի խախտում: *Սաքիկի* (*Sakik*) գործով կայացված վճռից երևում է, որ դատարանը նեղ իմաստով է մեկնաբանում պարտավորություններից շեղվելու հայտարարություններում տեղ գտած ձևակերպումները:

18 ՀՈԴՎԱԾՆԵՐ 16, 17 ԵՎ 18

Հոդված 16. Օտարերկրացիների քաղաքական գործունեության սահմանափակում

.....

«Պիերմոնն ընդդեմ Ֆրանսիայի» (Piermont v France) A.314, (1995)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը Գերմանիայի քաղաքացի էր, որ այդ պահին հանդիսանում էր Եվրոպայի խորհրդարանի անդամ և ներկայացնում էր Գերմանիայի կանաչների կուսակցությունը: Դիմողը բնապահպանական և խաղաղասեր հայացքների ջատագով էր: 1986 թ. սկզբին դիմողը ֆրանսիական Պոլինեզիայի ազատագրման ճակատի առաջնորդի հրավերով տեղի խորհրդարանի ընտրարշավի ժամանակ այցելել էր ֆրանսիական Պոլինեզիա: Թահիթի ժամանելուց անմիջապես հետո օդանավակայանի ոստիկանության աշխատակիցները Ֆրանսիայի գերագույն հանձնակատարի հրամանով դիմողին խնդրել են շրջահայաց լինել Ֆրանսիայի ներքին գործերին վերաբերող իր մեկնաբանություններում՝ զգուշացնելով հակառակ դեպքում վտարել նրան երկրի տարածքից: Դրանից հետո դիմողը մասնակցել է երկու խաղաղ հանրահավաքների, որտեղ քննադատել է Ֆրանսիայի կողմից Խաղաղ օվկիանոսում միջուկային զենքի փորձարկումները: Անմիջապես այդ դեպքերից հետո Ֆրանսիայի գերագույն հանձնակատարը դիմողին երկրի տարածքից վտարելու հրաման է արձակել: Դիմողը մեկնել է Ֆրանսիային պատկանող մեկ այլ վայր՝ Նոր Կալեդոնիա, սակայն Ֆրանսիայի գերագույն հանձնակատարի հրամանով նրան արգելել են երկիր մուտք գործել: Պատասխանատու մարմինների այս գործողությունները Ֆրանսիայի դատարաններում վիճարկելու անհաջող փորձերից հետո դիմողը գանգատ ներկայացրեց Ստրասբուրգի Մարդու իրավունքների եվրոպական դատարան, ի թիվս այլոց, 10-րդ հոդվածի խախտման վերաբերյալ: Առարկելով դիմողի գանգատի դեմ՝ պատասխանող պետությունը փորձեց վկայակոչել կոնվենցիայի 16-րդ հոդվածը: Դատարանը վճռեց հետևյալը.

60. Կոնվենցիայի 16-րդ հոդվածը նախատեսում է.
«10-րդ, 11-րդ և 14-րդ հոդվածներում ոչինչ չի կարող խոչընդոտել բարձր պայմանավորվող կողմերին՝ սահմանափակումներ նախատեսելու օտարերկրացիների քաղաքական գործունեության համար»:

61. Ըստ պատասխանող պետության՝ տիկին Պիերմոնն իրավունք չուներ վկայակոչելու Եվրոպայի խորհրդարանի անդամի կամ Եվրոպայի քաղաքացու իր կարգավիճակը և, հետևաբար, պետք է դիտվեր որպես օտարերկրացի 16-րդ հոդվածի շրջանակներում: Պատասխանող պետությունը պնդել է, որ դիմողը հրավիրվել էր ավելի շուտ որպես Գերմանիայի կանաչների կուսակցության, քան Եվրոպայի խորհրդարանի անդամ, և այդ անկախություն պահանջող ցույցի ժամանակ արտահայտել է ընդունող պետության տարածքային ամբողջականության և ազգային պաշտպանության հարցերի շուրջ սեփական հայացքները, ինչը դուրս է համայնքի իրավասության ոլորտից: Ավելին, «Եվրամիության քաղաքացիության» ճանաչումն այդ պահին գործին չէր վերաբերում: Եվ, վերջապես, Եվրոպայի համայնքի անդամ պետություններն իրենց իրավունք են վերապահել սահմանել այն հանգամանքները, որոնց պարագայում կարելի է ձեռք բերել կամ կորցնել քաղաքացիությունը: Համապատասխանաբար, յուրաքանչյուր անձ, ով կոնվենցիայի 10-րդ, 11-րդ և 14-րդ հոդվածներով երաշխավորվող ազատությունների իրացման երկրում չունի այդ երկրի քաղաքացիությունը, պետք է օտարերկրացի համարվի:

62. Դիմողը պատասխանեց, որ 16-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները չէին կիրառվում իր դեպքում, քանի որ ինքն ուներ երկակի կարգավիճակ՝ որպես Եվրոպայի քաղաքացի և Եվրոպական խորհրդարանի անդամ: Դիմողը համարում էր, որ անիմաստ էր պնդել, որ ինքն օտարերկրացի է, երբ իր գործառույթների բնույթը ենթադրում էր շահագրգռություն համայնքի

ողջ տարածքի նկատմամբ:

63. Հանճնաժողովն ընդունեց դիմողի ըստ էության բերած փաստարկները:

64. Դատարանը չի կարող ընդունել Եվրոպայի քաղաքացիության վրա հիմնված փաստարկը, քանզի այդ պահին համայնքի համաձայնագրերով նման քաղաքացիությունը չէր ճանաչվում: Այնուամենայնիվ, դատարանը համարում է, որ Եվրոպական Միության անդամ պետության քաղաքացիությունն ու Եվրոպական խորհրդարանի անդամի կարգավիճակը, և հատկապես այն, որ անդրծովյան տարածքների ազգաբնակչությունը մասնակցում էր Եվրոպական խորհրդարանի ընտրություններին, թույլ չէին տալիս դիմողի նկատմամբ կիրառել կոնվենցիայի 16-րդ հոդվածը:

Ամփոփելով՝ 16-րդ հոդվածի դրույթներով պատասխանող պետությունն իրավունք չուներ սահմանափակելու դիմողի կողմից 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրականացումը:

….

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

…

3. Հինգ կողմ և չորս դեմ ձայներով՝ վճռել է, որ ֆրանսիական Պոլինեզիայում կիրառված միջոցով խախտվել է կոնվենցիայի 10-րդ հոդվածը:

….

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում ընդգրկվել են դատավորներ՝ Փեթիթին, Փալմը, Լուազոն, Մորինիյան և Մակարչիկը: Նախագահող դատավոր Ռիսդալը և դատավորներ Մաթշերը, Ֆրիլենդը և Յունգվիրթը ներկայացրել են միասնական մասնակի չհամընկնող եզրակացություն, որում արտահայտել են հետևյալ տեսակետը.

4. Վճռի 64-րդ պարբերությունում առանց հիմնավորող պատճառաբանության նշվում է. «Եվրոպական Միության անդամ պետության քաղաքացիությունը և ի լրումն՝ Եվրոպայի խորհրդարանի անդամի կարգավիճակը, և հատկապես այն, որ անդրծովյան տարածքների ազգաբնակչությունը մասնակցում էր Եվրոպական խորհրդարանի ընտրություններին, թույլ չեն տալիս դիմողի դեմ կիրառել կոնվենցիայի 16-րդ հոդվածը: Այսպիսով, դատական այս գործողության արդյունքում Եվրոպայի խորհրդարանի անդամներին մասնակից պետությունների կողմից «Եվրոպական համայնքների արտոնությունների մասին» 1965 թ. ապրիլի 8-ի արձանագրությամբ վերապահված արտոնությունների շարքին փաստորեն գումարվում է ևս մեկը: Մենք չենք կարող միանալ այս մոտեցմանը: Տիկին Պիերմոնը, որը Գերմանիայի քաղաքացի էր, քննվող ժամանակաշրջանում (ինչպես նշված է վճռում՝ նախքան համայնքային համաձայնագրում եվրոպական քաղաքացիության ճանաչումը) անկասկած պետք է Ֆրանսիայի օրենսդրության տեսանկյունից դիտվեր որպես օտարերկրացի՝ չնայած Եվրոպական խորհրդարանում ունեցած կարգավիճակին: Ուստի մենք համարում ենք, որ 16-րդ հոդվածը պետք է գոնե որոշակի չափով առնչություն ունենար գործին, քանզի դրանում մեջբերվող «օտարերկրացիներ» արտահայտությունը երկիմաստություն և որևէ բացահայտ բացառություն չի ենթադրում, կամ այդ դրույթից բացառություն եզրահանգելու համար անհրաժեշտ են համոզիչ հիմքեր: Մենք բավարարված չենք բերված այն փաստարկով, որ նման հիմքեր գոյություն ունեն:

5. Այնուամենայնիվ դրանից չի հետևում, որ եթե նույնիսկ 16-րդ հոդվածը կիրառելի լիներ այս դեպքում, մասնակից պետությունն իր բացարձակ հայեցողությամբ օտարերկրացու քաղաքական գործունեության վրա հիմնավորված կերպով կարող էր դնել ցանկացած սահմանափակում՝ չխախտելով 10-րդ հոդվածը: Հարկ է հաշվի առնել այսօրվա աշխարհում քաղաքականության հարաճուն միջազգայնացումը, իսկ սույն դեպքի առումով չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ Եվրոպայի խորհրդարանի անդամը կարող է օրինական հետաքրքրվածություն ունենալ համայնքի տարածաշրջանի գործերում: Վերոնշյալ զարգացումների համատեքստում կարելի է ընդունել, որ 16-րդ հոդվածի շրջանակներում ամրագրված օտարերկրացիների քաղաքական գործունեության սահմանափակումները կարող են որոշակի սահմաններ ենթադրել: Նկատի ունենալով վերոնշյալը և հաշվի առնելով *«Գրոպերա ռադիո» ընկերությունը և այլք ընդդեմ Շվեյցարիայի»* (*Groppera Radio AG and Others v Switzerland*) գործով 1990 թ. մարտի 28-ին կայացրած վճռում (շարք A, թիվ 173) 10-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ նախադասության մեկնաբանության հարցում դատարանի որդեգրած մոտեցումը՝ մենք պետք է ընդունենք, որ ինչպես երևում է նշված նախադասությունից, 16-րդ հոդվածի նպատակն ու առարկան պետք է դիտարկվեն 10-րդ հոդվածի 2-րդ կետի համատեքստում: Մասնավորապես, երբ քննության առարկա է դառնում տվյալ Պիերմոնի ազատ արտահայտվելու իրավունքին միջամտության համաչափությունը, հարկ է հաշվի առնել 16-րդ հոդվածի բովանդակած սկզբունքը:

Չհամընկնող կարծիք հայտնած դատավորները եզրակացրեցին, որ դիմողի նկատմամբ ձեռնարկված գործողությունները ազատ արտահայտվելու նրա իրավունքի համաչափ սահմանափակում էին, քանի որ երկրից արտաքսման մասին կարգադրությունը նրան հանձնվել է միայն այն պահին, երբ նա պատրաստվում էր մեկնել ֆրանսիական Պոլինեզիայից:

2 Թեև մեծամասնությունը և փոքրամասնությունը համաձայնության չեկան դիմողի նկատմամբ 16-րդ հոդվածի կիրառելիության հարցում, սակայն նույնիսկ չհամընկնող կարծիք հայտնած փոքրամասնությունն ընդունեց, որ Եվրոպայի խորհրդի և Եվրոպական Միության զարգացումն ազդում է այդ պետություններում ժողովրդավարական քաղաքականության մեխանիզմների վրա:

3 1992 թ. Մաաստրիխտի համաձայնագրով հաստատվեց Եվրոպական Միության քաղաքացիության գաղափարը ցանկացած անդամ պետության քաղաքացիությունն ունեցող անձի համար (տե՛ս ԵԽ համաձայնագրի 17-22-րդ հոդվածները): Միության քաղաքացիությունը լրացնում է ազգային քաղաքացիությունը: Միության քաղաքացիները, այդ թվում, օգտվում են անդամ պետություններում ազատ տեղաշարժվելու, ինչպես նաև Եվրոպական խորհրդարանի և բնակության երկրում մունիցիպալ ընտրություններին իրենց թեկնածությունը դնելու և քվեարկելու իրավունքներից:

4 1970-ական թվականներից Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը պահանջում է 16-րդ հոդվածն անվավեր ճանաչել:

Հոդված 17. Իրավունքների չարաշահման արգելում

.....

«Նորվուդն ընդդեմ Միացյալ Թագավորության»
(Norwood v United Kingdom) 2004 թ. նոյեմբերի 16-ի որոշում
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը Բրիտանիայի ազգային կուսակցության տարածաշրջանային կազմակերպիչ էր, ընդ որում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշված կուսակցությունը բնութագրեց որպես «ծայրահեղական աջ քաղաքական կուսակցություն»: 2001 թ. նոյեմբերից մինչև 2002 թ. հունվարն ընկած ժամանակահատվածում դիմողն Օսվեսթրիի մոտակայքում գտնվող գյուղում իր բնակարանի լուսամուտին, ի ցույց բոլորին, փակցրել է Բրիտանիայի ազգային կուսակցության մեծ պաստառ: Պաստառի վրա պատկերված էր սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումը Առևտրի համաշխարհային կենտրոնի զույգ աշտարակների վրա, և գրված էր հետևյալը. Islam out of Britain-Protect the British People («Իսլա՛մ, դո՛ւրս կորիր Բրիտանիայից, պաշտպանե՛նք բրիտանացիներին»): Պաստառի վրա պատկերված էր նաև արգելող նշանի մեջ առնված մահիկի ու աստղի խորհրդանիշը: Ոստիկանները քաղաքացու դիմումի հիման վրա հանեցին պաստառը: Այնուհետև դիմողը 1986 թ. «Հասարակական կարգի մասին» օրենքի 5-րդ բաժնի դրույթներով մեղադրվեց ծանրացուցիչ հանգամանքներում կատարված հանցագործության համար (ռասայական կամ կրոնական որևէ խմբի նկատմամբ սպառնալի, վիրավորական կամ նվաստացնող բնույթի գրություն, նշան կամ այլ տեսանելի պատկեր թշնամաբար ի ցույց հանելն այնպիսի անձի տեսադաշտում, ում դա կարող է անարգանք, տագնապ կամ տառապանք պատճառել): Դիմող Նորվուդին 300 ֆունտ ստեռլինգ տուգանք դրվեց, իսկ Մեծ Բրիտանիայի գերագույն դատարանը մերժեց նրա վերաքննիչ բողոքը: Այնուհետև դիմողը 10-րդ հոդվածի խախտման առնչությամբ գանգատ ներկայացրեց Ստրասբուրգի Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Ըստ նրա՝ նշված հոդվածը պաշտպանում է անցանկալի ու սադրիչ կարծիքներ արտահայտելու իրավունքը, իսկ ինքը բնակվում էր այնպիսի գյուղական վայրում, որտեղ ռասայական կամ կրոնական լարվածություն չի արձանագրվել:

… Այնուհանդերձ, դատարանը վկայակոչել է կոնվենցիայի 17-րդ հոդվածը, որը սահմանում է հետևյալը.

> «Սույն կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունեն զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի ու ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է կոնվենցիայով»:

17-րդ հոդվածի ընդհանուր իմաստն է թույլ չտալ տոտալիտար նպատակներ հետապնդող անձանց կամ խմբերին սեփական շահերին ծառայեցնել կոնվենցիայով սահմանված սկզբունքները: Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի օրինակով դատարանը մասնավորապես որոշել է, որ կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված ազատ արտահայտվելու իրավունքը չի կարող մեկնաբանվել 17-րդ հոդվածին հակառակ իմաստով (ի թիվս այլոց, տե՛ս *«W.P.-ն և այլք ընդդեմ Լեհաստանի» (W.P. and Others v Poland)* գործով 2004 թ. սեպտեմբերի 2-ին կայացրած որոշումը, թիվ 42264/98, *«Գարոդին ընդդեմ Ֆրանսիայի»* (*Garaudy v France*) գործով 2003 թ. հունիսի 24-ին կայացրած որոշումը, թիվ 65831/01, *«Շիմանեքն ընդդեմ Ավստրիայի»* (*Schimanek v Austria*) գործով 2000 թ. փետրվարի 1-ին կայացրած որոշումը, թիվ 32307/96, ինչպես նաև *«Գլիմերվեենը և Հագենբեքն ընդդեմ Նիդեռլանդների»* (*Glimmerveen and Hagenbeek v The Netherlands*) գործով 1979 թ. հոկտեմբերի 11-ին հանձնաժողովի որոշումը, թիվ 8348/78 և 8406/78, Որոշումներ և զեկույցներ 18, էջ 187):

Խնդրո առարկա պաստառի վրա զետեղված էր Նյու Յորքի այրվող զույգ աշտարակների լուսանկարը, գրված էր «Իսլա՛մ, դո՛ւրս կորիր Բրիտանիայից, պաշտպանե՛նք բրիտանացիներին» կարգախոսը և պատկերված էր արգելող նշանի մեջ առնված մահիկի ու աստղի խորհրդանիշը: Դատարանն ընդունում է պատասխանող պետության դատարանների գնահատականը և ընդգծում այն հանգամանքը, որ պաստառում զետեղված բառերն ու պատկերները հավասարազոր են Միացյալ Թագավորությունում բնակվող բոլոր մահմեդականների հասցեին ուղղված հրապարակային անարգանքի: Կրոնական խմբի հասցեին արտահայտած նման ընդհանուր և կոպիտ անարգանքը, որով ամբողջ խումբը կապվում է ահաբեկչական բնույթի ծանր հանցագործության հետ, հակասում է կոնվենցիայով սահմանված և երաշխավորված արժեքներին, հատկապես՝ հանդուրժողականությանը, սոցիալական համերաշխությանը և անխտրականությանը: Բնականաբար լուսամուտին նշված պաստառն ի ցույց բոլորի փակցնելով՝ դիմողը գործել է 17-րդ հոդվածի իմաստով սահմանված արարք, որը, հետևաբար, չի կարող պաշտպանվել 10-րդ կամ 14-րդ հոդվածների դրույթներով (տե՛ս վերոնշյալ գործերը, ինչպես նաև *«Երսիլդն ընդդեմ Դանիայի»* (*Jersild v Denmark*) գործով 1994 թ. սեպտեմբերի 23-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 298, պարբ. 35):

Հետևաբար, կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի դրույթներին համապատասխան՝ դիմումը պետք է մերժվի գործի նյութահիրավական հիմքերով (ratione materiae) կոնվենցիային հակասելու պատճառով:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

Անընդունելի է համարում դիմումը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում ընդգրկված էին նախագահող դատավոր Կոստան և դատավորներ Բրատցան, Կաբրալ Բարետոն, Թուրմենը, Բուտկևիչը, Ուգրեխելիձեն և Ֆուրա-Սանդստրոմը:

2 *«W.P.-ն և այլք ընդդեմ Լեհաստանի»* (*W.P. and Others v Poland)* գործով 2004 թ. սեպտեմբերի 2-ին որոշում կայացնելիս դատարանը միաձայն անընդունելի է համարել դիմողների գանգատն այն մասին, որ «Բոլշևիզմի ու սիոնիզմի լեհ զոհերի ազգային և հայրենասիրական միավորում» հիմնելու արգելքով Լեհաստանի իշխանությունները խախտել են 11-րդ և 14-րդ հոդվածները:

2. Դատարանն ընդգծում է, որ 17-րդ հոդվածի ընդհանուր նպատակն է թույլ չտալ տոտալիտար գաղափարախոսությանը հարող խմբերին իրենց շահերին ծառայեցնել կոնվենցիայով սահմանված սկզբունքները: Նշված նպատակին հասնելու համար պարտադիր չէ իրավունքներից ու ազատություններից որևէ մեկի վերացմանն ուղղված գործունեությամբ զբաղվող անձանց զրկել բոլոր երաշխավորված իրավունքներից ու ազատություններից: 17-րդ հոդվածի շրջանակը, ըստ էության, տարածվում է այնպիսի իրավունքների վրա, որոնց մեկնաբանության դեպքում դյուրին կլինի եզրակացնելու փորձ անել, որ դրանցից բխում է կոնվենցիայի ցանկացած իրավունքի ու ազատության վերացմանն ուղղված գործունեությանն անձամբ մասնակցելու իրավունքը (տե՛ս *«Ջ. Գլիմերվեենը և Ջ. Հագենբեքն ընդդեմ Նիդեռլանդների»* (*J. Glimmerveen and J. Hagenbeek v The Netherlands*) գործով 1979 թ. հոկտեմբերի 11-ին հանձնաժողովի ընդունած որոշումը, թիվ 8348/78 և 8406/78, Որոշումներ և զեկույցներ 18, էջ 187, *«Ռոջեր Գարոդին ընդդեմ Ֆրանսիայի»* (*Roger Garaudy v France*) գործով 2003 թ. հունիսի 24-ին կայացրած որոշումը, թիվ 65831/01):

Անդրադառնալով սույն գործի փաստերին՝ դատարանը նշում է, որ «Բոլշևիզմի ու սիոնիզմի լեհ զոհերի ազգային և հայրենասիրական միավորման» հուշագրի 6-րդ, 12-րդ և 15-րդ կետերում տեղ են գտել հայտարարություններ հրեաների փոքրամասնության կողմից լեհերի հետապնդումների և նրանց միջև առկա անհավասարության մասին: Դատարանը պատասխանող պետության հետ համամիտ է այն հարցում, որ նշված գաղափարները կարող են դիտարկվել որպես հակահրեականություն վերածնող գաղափարներ: Դիմողների ռասիստական դիրքորոշումների մասին են վկայում նաև դատարանում նրանց արած մի քանի հայտարարություններ: Հետևաբար, դատարանը համոզվել է, որ սույն գործով առկա ապացույցները հիմնավորում են 17-րդ հոդվածը կիրառելու անհրաժեշտությունը (համեմատի՛ր *«Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունը և այլք ընդդեմ Թուրքիայի» (United Communist Party of Turkey and Others v Turkey)* գործով 1998 թ. հունվարի 30-ին կայացրած վճիռը, Վճիռների և որոշումների զեկույցներ 1998-I, պարբ. 60):

Դիմողները, ըստ էության, փորձում են 11-րդ հոդվածն ընդունել որպես կոնվենցիայով հաստատված հիմք կոնվենցիայի ձևակերպմանն ու ոճին հակասող գործունեությամբ զբաղվելու իրավունքի համար, որը շնորհելու դեպքում կհանգեցնի կոնվենցիայում ամրագրված իրավունքների ու ազատությունների վերացման:

Հետևաբար, դատարանը կարծում է, որ կոնվենցիայի 17-րդ հոդվածի դրույթների բերումով դիմողները չեն կարող 11-րդ հոդվածի հիման վրա վիճարկել «Բոլշևիզմի ու սիոնիզմի լեհ զոհերի ազգային և հայրենասիրական միավորում» հիմնելու արգելքը:

3. Բացի այդ, կոնվենցիայի 11-րդ հոդվածի համակցությամբ 14-րդ հոդվածի շրջանակում դիմողները գանգատ են ներկայացրել այն մասին, որ «հրեանպաստ վերահսկողության տակ գտնվող այսպես կոչված Լեհաստանի երրորդ հանրապետության դատական համակարգով» էքնիկական լեհերին արգելվել է միավորումներ կազմել:

Պետությունը հայտարարել է, որ գործով առկա փաստերը չեն վկայել դիմողների նկատմամբ խտրականության մասին:

Դատարանը կրկին ընդգծում է, որ հակահրեական ձևակերպումներով հագեցած նշված անարգող գանգատով դիմողները, ըստ էության, փորձում են 11-րդ հոդվածի համակցությամբ 14-րդ հոդվածն ընդունել որպես կոնվենցիայով հաստատված հիմք կոնվենցիայի ձևակերպմանն ու ոճին հակասող գործունեությամբ զբաղվելու իրավունքի համար, որը շնորհելու դեպքում կհանգեցնի կոնվենցիայում ամրագրված իրավունքների ու ազատությունների վերացման:

Հետևաբար, դատարանը կարծում է, որ կոնվենցիայի 17-րդ հոդվածի դրույթների բերումով դիմողները չեն կարող հիմք ընդունել 14-րդ հոդվածը՝ 11-րդ հոդվածի համակցությամբ:

Վերոնշյալ որոշման 2-րդ կետում տեղ գտած 17-րդ հոդվածի կիրառման տիրույթի վերաբերյալ դատարանի տեսակետները վկայում են, որ դատարանը կշռադատված մոտեցում է դրսևորում տվյալ դրույթի կիրառման նկատմամբ: Կոնվենցիայով ամրագրված արժեքներին հակասող գաղափարներ տարածելու փորձեր անող անձանց համատեքստում 17-րդ հոդվածը հատկապես կիրառելի է այն դեպքում, երբ նշված անձինք փորձում են վկայակոչել 10-րդ և 11-րդ հոդվածները:

3 Գանգատներն անընդունելի համարելիս 17-րդ հոդվածի կիրառման այլ օրինակներից են *«Գարոդին ընդդեմ Ֆրանսիայի»* (*Garaudy v France*) գործի շրջանակներում իսլամ ընդունած անձին դատապարտելու մասին 2003 թ. հունիսի 24-ին կայացրած որոշումը՝ հոլոքոստը և մարդկության դեմ նացիստների հանցագործությունները ժխտող գիրք գրելու ու այն հրատարակելու համար և *«Գլիմերվեենը և Հագենբեքն ընդդեմ Նիդեռլանդների»* (*Glimmerveen and Hagenbeek v The Netherlands*, 18 DR 196 (1979) գործի շրջանակներում անձանց դատապարտումը՝ ռասայական խտրականություն հրահրող թռուցիկներ հետագայում բաժանելու նպատակով պահելու համար:

Հոդված 18. Իրավունքների նկատմամբ սահմանափակումների կիրառման սահմանները

.....

«Գուսինսկին ընդդեմ Ռուսաստանի» (Gusinskiy v Russia) 2004 թ. մայիսի 19-ի վճիռ
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Սույն գործով դիմողը Ռուսաստանի և Իսրայելի քաղաքացի է, որը նախկինում հանդիսացել է «Մեդիա մոստ» ռուսական մասնավոր լրատվական ընկերության նախագահը և հիմնական բաժնետերը: 2000 թ.

հակասություններ են առաջացել «Մեդիա մոստ» ընկերության և պետության հսկողության տակ գործող «Գազպրոմ» գազարդյունաբերական մենաշնորհային ընկերության միջև: Վեճի առարկա էր դարձել «Մեդիա մոստ» ընկերության պարտքը «Գազպրոմ» ընկերությանը: 2000 թ. հունիսի 13-ին դիմողը ձերբակալվել և կալանավորվել է խարդախության կասկածանքով: Պրն Գուսինսկու կալանավորման ընթացքում մամուլի և զանգվածային հաղորդակցության միջոցների գործող նախարարն առաջարկել է հանել նրա դեմ ներկայացված քրեական մեղադրանքը «Գազպրոմ» ընկերությանը վերջինիս սահմանած գնով «Մեդիա մոստը» վաճառելու դեպքում: Միաժամանակ «Գազպրոմ» ընկերությունն առաջարկել է Գուսինսկուն նման համաձայնագիր ստորագրել: Գուսինսկին կալանքից ազատ է արձակվել նույն թվականի հունիսի 16-ին երկրից չհեռանալու ստորագրության դիմաց: Հուլիսի 20-ին Գուսինսկին համաձայնագիր է ստորագրել «Գազպրոմ» ընկերության հետ, որով, ի թիվս այլոց, նախատեսվել է նրա դեմ հարուցված քրեական գործի կարճումը: Վեց օր անց հատուկ գործերով քննիչը կարճել է Գուսինսկու գործը և չեղյալ հայտարարել արտասահման մեկնելու արգելքի մասին կարգադրությունը: Դիմողն անմիջապես հեռացել է Ռուսաստանից: Նրա մեկնելուց հետո «Մեդիա մոստ» ընկերությունը հրաժարվում էր կատարել «Հուլիսյան համաձայնագրի» պայմանները և պնդում էր, որ Գուսինսկին հարկադրված է եղել կնքել այդ համաձայնագիրը: Դիմողը, ի թիվս այլոց, պնդել է, որ ինքը կալանավորվել է պետական լիազորության չարաշահման հետևանքով, և իշխանությունները փորձել են իրեն ստիպել անշահավետ պայմաններով վաճառել իր ընկերությունը պետական ձեռնարկությանը: Գուսինսկին վկայակոչել է կոնվենցիայի 18-րդ հոդվածը, որը սահմանում է հետևյալը. «Նշված իրավունքների և ազատությունների՝ սույն կոնվենցիայով թույլատրվող սահմանափակումները չեն կիրառվում որևէ այլ նպատակով, բացի այն, որի համար դրանք նախատեսվել են»: Ի պատասխան՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախնական քննության պալատը միաձայն վճռել է հետևյալը.

73. Դատարանը հիշեցնում է, որ կոնվենցիայի 18-րդ հոդվածը ինքնուրույն դեր չունի: Այն կարող է կիրառվել միայն կոնվենցիայի այլ հոդվածների համակցությամբ: Այնուհանդերձ, թեև առանձին վերցրած 18-րդ հոդվածը չի խախտվում, սակայն այլ հոդվածի համակցությամբ այն կարող է խախտվել: Եվ ավելին, 18-րդ հոդվածի դրույթներից հետևում է, որ խախտումը կարող է արձանագրվել միայն այն դեպքում, երբ տվյալ իրավունքը կամ ազատությունը ենթարկվում է կոնվենցիայով թույլատրվող սահմանափակումների (տե՛ս *«Կամա ընդդեմ Նիդեռլանդների»* (*Kamma v The Netherlands*) գործը, թիվ 4771/71, 1974 թ. հուլիսի 14-ի հանձնաժողովի զեկույց, (DR) 1, էջ 4, *«Օաթեսն ընդդեմ Լեհաստանի»* (*Oates v Poland*) գործով 2000 թ. մայիսի 11-ի որոշումը, թիվ 35036/97):

74. Վերը ներկայացվել է դատարանի այն եզրակացությունը, որ դիմողին ազատազրկել են «իրավախախտում կատարելու հիմնավոր կասկածանքով նրան իրավասու դատական մարմնին ներկայացնելու համար»: Այնուհանդերձ, կոնվենցիայի 18-րդ հոդվածին համապատասխան արված հայտարարությունները քննելիս դատարանը պետք է պարզի՝ արդյո՞ք կալանավորումը կիրառվել է ի լրումն 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետով սահմանված դրույթների և դրանցից տարբերվող որևէ այլ նկատառումով, ուստիև հակասել է 18-րդ հոդվածին:

75. Պատասխանող պետությունը չի վիճարկել այն հարցը, որ «Հուլիսյան համաձայնագրում», այն է՝ համաձայնագրին կից թիվ 6 հավելվածում, պետության կողմից վերահսկվող «Գազպրոմ» ընկերությանը դիմողին պատկանող լրատվամիջոցների վաճառքի հետ էր կապվում «Ռուսկոյե վիդեո» ընկերության կասկածյալ խարդախության հետաքննությունը: Պետությունը չի վիճարկել նաև այն հարցը, որ թիվ 6 հավելվածը ստորագրել է մամուլի և զանգվածային լրատվության միջոցների գործող նախարարը: Ի վերջո, պետությունը չի ժխտել այն փաստը, որ 2000 թ. հուլիսի 26-ին պրն Նիկոլաևը դիմողի դեմ հարուցված գործը կարճել է այն իրողության հիման վրա, որ դիմողը պետության կողմից վերահսկվող ընկերությանը «Մեդիա մոստ» ընկերության բաժնետոմսերի փոխանցմամբ հատուցել է նշված խարդախության հետևանքով պատճառված վնասը:

…

76. Դատարանի կարծիքով՝ քրեական դատավարության և նախակալանքի նման հանրային իրավունքի հարցերը միտված չեն գործածվելու առևտրային բանակցությունների ռազմավարություններում: Այն փաստերը, որ «Գազպրոմ» ընկերությունն առաջարկել է դիմողին ստորագրել «Հուլիսյան համաձայնագիրը», երբ վերջինս բանտում էր, որ նախարարն իր ստորագրությամբ հաստատել է համաձայնագիրը, և պետական քննչական մարմինների աշխատակիցն ավելի ուշ իրագործել է նշված համաձայնագրի պայմանները՝ ազատելով Գուսինսկուն մեղադրանքներից, հիմնովին վկայում են, որ դիմողին դատական հետապնդման ենթարկելու նպատակը նրան վախեցնելն էր:

77. Նման հանգամանքներում դատարանը կարող է եզրակացնել միայն, որ 5-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետին

համապատասխան դիմողին ազատազրկել են ոչ միայն իրավախախտում կատարելու հիմնավոր կասկածանքով նրան իրավասու դատական մարմնին ներկայացնելու համար, այլև՝ ուրիշ տարբեր պատճառներով:

78. Համապատասխանաբար, տեղի է ունեցել 18-րդ հոդվածի խախտում՝ կոնվենցիայի 5-րդ հոդվածի համակցությամբ:

….

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

1. *Վճռել է,* որ տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում:

2. *Վճռել է, որ տեղի է* ունեցել կոնվենցիայի 18-րդ հոդվածի խախտում՝ 5-րդ հոդվածի համակցությամբ:

….

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում ընդգրկվել են նախագահ Ռոզակիսը և դատավորներ Լորենցենը, Թուլքենսը, Բոտուչարովան, Կովլերը, Զագրեբելսկին և Հաջիևը:

2 Սա դիմողի կողմից 18-րդ հոդվածի հաջողված կիրառման նշանակալի, սակայն հազվադեպ օրինակ է: Անհրաժեշտ է ողջունել պետության առևտրային շահերից ելնելով քրեական դատավարության և կալանքի կիրառման հստակ մերժումը դատարանի կողմից: *Գուսինսկու* գործը վեր հանեց բարձրաստիճան պաշտոնյայի և պետական գործարար ձեռնարկության անհանգստություն հարուցող միջամտությունները Ռուսաստանի քրեական արդարադատության համակարգի գործունեությանը:

19 ՀՈԴՎԱԾ 41 (ՆԱԽԿԻՆ ՀՈԴՎԱԾ 50) ԱՐԴԱՐԱՑԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄ

Դատարանի վաղ շրջանի մոտեցումը արդարացի բավարարմանը

«Դե Վիլդեն, Օոմսը և Վերսիփն ընդդեմ Բելգիայի»
(De Wilde, Ooms and Versyp v Belgium) (No 2) A.14 (1972) 1 EHRR 438
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Նախկինում կայացված իր որոշման մեջ (տե՛ս վերը՝ էջ 324) դատարանը որոշել էր, որ Բելգիան խախտել է բացահայտ թափառաշրջիկ հանդիսացող դիմողների՝ սեփական կալանավորման օրինականությունը դատական կարգով վիճարկելու իրավունքը, որը սահմանված է 5-րդ հոդվածի 4-րդ կետով: Ըստ այդմ, դիմողները դիմել էին Բելգիայի կառավարությանը՝ փոխհատուցում ստանալու համար: Այն բանից հետո, երբ դիմումը մերժվել էր, նրանք միջնորդել էին հանձնաժողովին, համաձայն 50-րդ հոդվածի, փոխհատուցման իրենց պահանջը փոխանցել դատարանին: Հանձնաժողովը գործը փոխանցել էր, սակայն կառավարությունը վիճարկել էր այն՝ պնդելով, որ դիմողների միջնորդությունն անընդունելի է և անհիմն:

I. ԴԻՄՈՂՆԵՐԻ ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

14. 1971 թ. հոկտեմբերին և 1972 թ. հունվարին ներկայացրած իր գրավոր նկատառումներում [written observations], ինչպես նաև բանավոր դատաքննության ժամանակ, կառավարությունը դատարանին միջնորդել էր որոշել.

> «որ դիմողների անունից հանձնաժողովին ներկայացված փոխհատուցման դիմումներն ընդունելի չեն, քանի որ չեն սպառվել իրավական պաշտպանության ներպետական միջոցները»:

15. Այդ բացատրությունը հիմնավորելու համար կառավարությունն առաջին հերթին հիմնվում է կոնվենցիայի 26-րդ հոդվածի վրա՝ պնդելով, որ այդ դրույթը վերաբերում է ոչ միայն սկզբնական գանգատին, որը ֆիզիկական անձի կողմից ներկայացվել էր հանձնաժողովին համաձայն 25-րդ հոդվածի, այլև փոխհատուցման պահանջին, որը նա ներկայացրել էր այն բանից հետո, երբ դատարանը որոշել էր, որ վերջինիս դեպքում առկա է կոնվենցիայով երաշխավորված իրավունքի խախտում:

26-րդ հոդվածում նշվում է. «Հանձնաժողովը, միջազգային իրավունքի ընդհանուր ճանաչման արժանացած կանոններին համապատասխան, խնդրով կարող է զբաղվել միայն իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցների սպառումից հետո ... ». այնուհետև 27-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ «հանձնաժողովը մերժում է իրեն ներկայացված ցանկացած գանգատ, որն անընդունելի է համարում համաձայն 26-րդ հոդվածի»: Հետևաբար, այս վերջին դրույթը սահմանում է պայման, որին ենթակա է հանձնաժողովի՝ տվյալ գործով «զբաղվելը». այն վերաբերում է այդ մարմնին ներկայացված «գանգատներին»: Այլ կերպ ասած՝ այս դրույթը վերաբերում է գործը վարույթ ընդունելուն, ինչը տեղավորվում է կոնվենցիայի III բաժնի շրջանակներում: Ներկա գործերն այլևս չեն առնչվում վարույթ ընդունելու ընթացակարգերին. փոխարենը, դրանք առնչվում են IV բաժնին համապատասխան դատարան բերված գործի քննության վերջին փուլին՝ այն գործերի քննության ավարտից հետո, որոնց հանձնաժողովում հիմք էին դրել Ժակ Դե Վիլդեի [Jacques De Wilde], Ֆրանց Օոմսի [Franz Ooms] և Էդգար Վերսիփի [Edgard Versyp] գանգատները: Երեք դիմողների ներկայացրած պահանջները նոր գանգատներ չեն. դրանք վերաբերում են դատարանի արձանագրած խախտման առումով փոխհատուցման որոշմանը դատարանի կողմից և ոչ մի կապ չունեն կոնվենցիայի 25-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածների համաձայն հանձնաժողովի կողմից գործը վարույթ ընդունելու հետ: Թեև հանձնաժողովը փոխանցել է դրանք դատարանին, նա այդ արել է առանց որևէ կից հաշվետվության և բացառապես դատարանին աջակցելու նպատակով, ինչը նա, ընդհանուր կերպով, անում է իր կանոնակարգի թիվ 71 կանոնին համապատասխան:

Հետևաբար, դատարանը, ինչպես հանձնաժողովի պատվիրակները, այն կարծիքին է, որ տվյալ հարցում 26-րդ հոդվածը

կիրառելի չէ:

16. Անընդունելիության ճանաչումը պնդող իր դիմումում կառավարությունը մի երկրորդ փաստարկ է ներկայացրել՝ հիմնված 50-րդ հոդվածի վրա. քանի որ դիմողները չեն սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, չէին կարող պարզել, համաձայն կառավարության, որ Բելգիայի ներպետական օրենսդրությունն «ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն» 1971 թ. հունիսի 18-ի որոշմամբ ճանաչված խախտման հետևանքների համար. դրանից հետևում էր, որ վնասի վոխհատուցման նրանց պահանջներն անընդունելի են:

Դատարանի կարծիքով՝ վերը մեջբերված նախադասության հատվածն ընդամենը նշում է կանոն, որը վերաբերում է գործի էությանը [a rule going to the merits]: Եթե կոնվենցիան մշակողները նպատակ ունենային «արդարացի բավարարման» պահանջների ընդունելիությունը ենթակա դարձնել մինչ այդ ներպետական իրավական միջոցների կիրառմանը, նրանք կհոգային, որ դա արտացոլվեր 50-րդ հոդվածում՝ ինչպես արել էին 26-րդ հոդվածում՝ համակցված 27-րդ հոդվածի 3-րդ կետի հետ՝ հանձնաժողովին ուղղված զանգատների առնչությամբ: Նրանց մտադրության նման բացահայտ բացակայության պայմաններում դատարանը չի կարող ընդունել այն կարծիքը, համաձայն որի՝ 50-րդ հոդվածը, ըստ էության, հռչակում է միևնույն կանոնը, ինչ 26-րդ հոդվածը:

Ավելին, 50-րդ հոդվածը բխում է որոշակի կետերից, որոնք տեղ են գտել դասական տիպի համաձայնագրերում. օրինակ՝ 1921 թ. Արբիտրաժի և հաշտարարության մասին գերմանա-շվեյցարական համաձայնագրի [German-Swiss Treaty on Arbitration and Conciliation] 10-րդ հոդվածը և 1928 թ. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին Ժենևի ընդհանուր օրենքի [Geneva General Act of the Pacific Settlement of International Disputes] 32-րդ հոդվածը, որոնք որևէ կապ չունեն իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման սկզբունքի հետ:

Ի լրումն, եթե տուժած անձն իր իրավունքների խախտման վերաբերյալ Ստրասբուրգ բողոքելուց առաջ, ապարդյուն սպառելով իրավական պաշտպանության ներպետական միջոցները, պարտավոր լիներ նույն բանն անել երկրորդ անգամ մինչև դատարանից արդարացի բավարարում ստանալու հնարավորությունը, կոնվենցիայով սահմանված ընթացակարգի ամբողջական տևողությունը դժվար թե համապատասխաներ մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության գաղափարին: Նման պահանջը կհանգեցներ այնպիսի իրավիճակի, որն անհամատեղելի կլիներ կոնվենցիայի նպատակի և խնդրի հետ:

17. Հետևաբար, դատարանը որևէ պատճառ չի տեսնում դիտարկվող պահանջներն անընդունելի հռչակելու համար և կանցնի դրանց հանգամանքների ըստ էության քննությանը:

II. ԴԻՄՈՂՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

18. Գործերի դիտարկման տվյալ փուլը պտտվում է կոնվենցիայի 50-րդ հոդվածի շուրջ, որը սահմանում է.

> «Եթե դատարանը համարում է, որ Բարձր պայմանավորվող կողմի իրավական կամ ցանկացած այլ իշխանության ընդունած որոշումը կամ միջոցն ամբողջությամբ կամ մասնակիորեն հակասում է սույն կոնվենցիայից բխող պարտավորություններին, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքը ընձեռում է նման որոշման կամ միջոցի հետևանքների համար միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում տրամադրել»:

19. 1971 թ. հոկտեմբերին և 1972 թ. հունվարին ներկայացրած իր գրավոր նկատառումներում, ինչպես նաև բանավոր դատավարության ժամանակ կառավարությունը դատարանին միջնորդել էր որոշել.
— որ ներկա գործերում չեն ապահովվել 50-րդ հոդվածի կիրառման համար պահանջվող պայմանները.
— որ դիմողներին արդարացի բավարարում տրամադրելն անհրաժեշտ չէ:

Փետրվարի 14-ի կեսօրին կայացած նիստում հանձնաժողովի ներկայացրած վերջնական բացատրությունը հետևյալն էր.

> «Չի՞ բարեհաճի դատարանը դիմողներին համապատասխան բավարարում տալ՝ նկատի ունենալով, որ Բելգիայի իրավունքում իրավական պաշտպանության նոր միջոց է ներդրվել 1971 թ. հունիսի 18-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճռից հետո, և, այդպիսով, անուղղակիորեն հետևելով պարոնայք Դե Վիլդեի, Օոմսի և Վերսիփի՝ հանձնաժողով ներկայացրած դիմումներին»:

20. Կառավարությունը, մասնավորապես, բացատրություն է ներկայացրել, որ Բելգիայի ներպետական օրենսդրությունը երկրի դատարաններին թույլ է տալիս պետությանը պարտադրել փոխհատուցել վերջինիս պատճառով առաջացած անօրինական իրավիճակի հետևանքով պատճառված վնասը՝ անկախ այն հանգամանքից՝ այդ իրավիճակը ներպետական օրենսդրության կանոնների՞, թե՞ միջազգային օրենսդրության կանոնների խախտում է: Դրանից հետևում է, որ դիմողները պետք է դիմեին ազգային դատարաններ. քանի որ նրանք դա չեն արել, վնասների փոխհատուցման նրանց պահանջները ոչ միայն անընդունելի են (տե՛ս վերը բերված պարբ. 16), այլև անհիմն:

Դատարանը չի կարող ընդունել այս տեսակետը:

Կասկածից վեր է, որ համաձայնագրերը, որոնցից փոխ է առնվել 50-րդ հոդվածի տեքստը, առավելապես հաշվի են առել այն դեպքերը, երբ պատճառված վնասի բնույթը հնարավոր էր դարձնում խախտման հետևանքների լիակատար վերացումը, սակայն երկրի համապատասխան ներպետական իրավունքը թույլ չէր տալիս այդ անել: Այդուհանդերձ, 50-րդ հոդվածի այն դրույթները,

որոնք ճանաչում են դատարանի՝ տուժած կողմին արդարացի բավարարում տրամադրելու իրավասությունը, վերաբերում են նաև այն դեպքին, երբ նախնական իրավական կարգի *restitutio in integrum* [լիակատար վերականգնման] անհնարինությունը բխում է վնասի բուն էությունից. իսկապես, առողջ բանականությունից ելնելով պետք է *a fortiori* [առավել ևս] այդպես լինի: Դատարանը պատճառ չի տեսնում, առաջին, ինչպես և երկրորդ դեպքում, թե ինչու պետք է իրավունք չունենա տուժած անձանց տրամադրել արդարացի բավարարում, որը նրանք չեն ստացել պատասխանող երկրի կառավարությունից:

Տվյալ գործերի առումով հստակ առկա է այդ դիրքորոշումը: Ո՛չ Բելգիայի ներպետական օրենսդրությունը, իրականում ո՛չ էլ իրավունքի որևէ հավանական համակարգ չի կարող հնարավոր դարձնել այն փաստի հետևանքների վերացումը, որ երեք դիմողները հնարավորություն չեն ունեցել օգտվելու իրենց կալանքի օրինականությունը որոշելու համար դատարան դիմելու իրավունքից՝ երաշխավորված 5-րդ հոդվածի 4-րդ կետով: Ավելին, Բելգիայի կառավարությունը մերժել է Դե Վիլդեին, Օոմսին և Վերսիփին նրանց պահանջած բավարարման տրամադրումը:

Հետևաբար, սոսկ այն փաստը, որ դիմողները կարող էին և դեռևս կարող են վնասի փոխհատուցման պահանջով դիմել Բելգիայի դատարան, դատարանին չի պարտադրում, որպես չհիմնավորված, մերժել այդ դիմումները, ընդ որում՝ ոչ ավելի, քան դրանց ընդունելիության առումով խոչընդոտ հարուցելը (տե՛ս վերը բերված պարբ. 16):

21. Այն դեպքում, երբ խախտման հետևանքները հնարավոր է վերացնել միայն մասամբ, 50-րդ հոդվածի կիրառմամբ «արդարացի փոխհատուցման» տրամադրումը պահանջում է, որ.

(i) դատարանը որոշած լինի, որ պայմանավորվող կողմի իշխանության «ընդունած որոշումը կամ միջոց[ը]... հակաս[ում է] ... կոնվենցիայից բխող պարտավորություններին».

(ii) առկա լինի «տուժող կողմ».

(iii) դատարանը պետք է «անհրաժեշտ[...]» համարի արդարացի բավարարման տրամադրումը:

Կառավարության համաձայն՝ տվյալ գործում այս պայմաններից և ոչ մեկը չի բավարարվել:

22. Առաջին՝ պնդում է արվում, որ դատարանի 1971 թ. հունիսի 18-ի վճիռն ընդամենը հանգեցրել է մի իրավիճակի, որը հետևանք է «նախաեղեսային իրավունքի մասին օրենսդրության որոշակի թերության», ինչը «որոշում» կամ «միջոց» չէ:

Դատարանը չի կարող ընդունել այդ տեսակետը: Իրեն ներկայացված այն գործերում, որոնց գոյությունը պայմանավորված է 25-րդ հոդվածի համաձայն ներկայացված գանգատներով, դատարանից ակնկալվել է որոշում կայացնել ոչ թե կոնվենցիայի հետ Բելգիայի իրավունքի դրույթների համատեղելիությանը վերաբերող վերացական խնդրի, այլ դիմողների համար օրենքի դրույթների կիրառության որոշակի դեպքի առնչությամբ: Կոնվենցիայի պահանջները չկատարելուց բխող պարտավորությանն առնչվող հարցերում, ամեն դեպքում, գործողությունների և անգործության միջև տարբերակում մտցնելու հիմք չկա:

23. Չի կարելի ժխտել նաև «տուժող կողմի» գոյությունը: 50-րդ հոդվածի համատեքստում այս բառակապակցությունը պետք է դիտվի որպես «զոհ» բառի (ինչպես այն կիրառված է 25-րդ հոդվածում) հոմանիշ. դրանք նշանակում են անձ, որի վրա ուղղակիորեն ազդել է տվյալ գործողությունը կամ անգործությունը: Դե Վիլդեն, Օոմսը և Վերսիփը, ում հանձնաժողովն իրավամբ համարում է զոհ՝ ճանաչելով նրանց գանգատների ընդունելիությունը, հանդիսանում են նաև «տուժող կողմ»:

24. Մյուս կողմից՝ կառավարությունը ճիշտ է, երբ կասկածի տակ է առնում վնասի առկայությունը: Գանգատարկուներից յուրաքանչյուրը, որպես արդարացի բավարարում, պահանջում է 300 բելգիական ֆրանկ կալանքի յուրաքանչյուր օրվա դիմաց: Որպեսզի այս պահանջը բավարարվեր, անհրաժեշտ կլիներ, որ նրանց ազատազրկումը պատճառված լիներ նրանց կալանքի օրինականությունը որոշելու համար դատարան դիմելու որևէ իրավունքի բացակայությամբ, ինչի վերաբերյալ դատարանը որոշած լիներ, որ այն հակասում է կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետին: Սակայն սա այդ դեպքը չէ: 1971 թ. հունիսի 18-ի իր վճռում դատարանը «երեք դիմողներին կառավարության տրամադրության տակ դնելու մեջ թե՛ խախտում, թե՛ կամայականություն» չի հայտնաբերել և չուներ «որևէ պատճառ՝ արդյունքում տեղ գտած կալանքը համարելու անհամատեղելի կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետի հետ»: Հետևաբար, դատարանը չի տեսնում, թե ինչպե՞ս կարող էր ընդամենը 5-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված պահանջների առումով գործի հետ կապված օրինականությունը ստուգելը հնարավորություն տար դիմողներին ազատ արձակվելու ավելի վաղ:

Ավելին, դիմողները հանձնաժողովի, ավելի ուշ նաև՝ հանձնաժողովի պատվիրակների առումով օգտվել են անվճար իրավաբանական օգնությունից և որևէ հիշատակություն չեն արել այն ծախսերի վերաբերյալ, որոնք իրենք կատարել են առանց հատուցման:

Վերջապես, դատարանը չի համարում, որ տվյալ գործերում որևէ բարոյական վնաս կարող էր հասցված լինել 5-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին համապատասխանող իրավական պաշտպանության միջոցի բացակայությամբ:

25. Թեև վերը նշված պատճառներով դատարանը կարծում է, որ պետք է մերժի դիմողների պահանջած բավարարման տրամադրումը, սակայն նշում է, որ Բելգիան, ինչպես 1972 թ. հունվարի 18-ին նշել է Նախարարների կոմիտեն՝ կապված կոնվենցիայի 54-րդ հոդվածի հետ, ձեռնարկել է օրենսդրական միջոցներ՝ նպատակ ունենալով թափառաշրջիկության վերաբերյալ գործերում ապահովել կոնվենցիայի կիրառումն այդ երկրում:

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է.

1. Միաձայն, որ դիմողների՝ վնասների վերաբերյալ պահանջներն ընդունելի են և

2. Տասնչորս կողմ և մեկ դեմ ձայների հարաբերակցությամբ, որ դիմողների՝ վնասների վերաբերյալ պահանջները լավ հիմնավորված չեն:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահող Ուոլդոկը և դատավորներ Բալլադորե Պալիերին, Քեսինը, Հոլմբեքը, Վերդրոսը, Ռոլինը, Ռոդենբըրը, Ռոսը, Ուոլդը, Մոզլերը, Զեքիան, Ֆավրեն, Կրեմոնան, Վիարդան և Սիգուրյոնսոնը: Դատավորներ Հոլմբեքը, Ռոսը և Ուոլդը համընկնող կարծիք են հրապարակել, որում պաշտպանում են 50-րդ հոդվածի այլ մեկնաբանություն:

Հայտնի փաստ է, որ այս հոդվածը մոդելավորվել է մի շարք արբիտրաժային համաձայնագրերում տեղ գտած կետերից, օր.՝ 1921 թ. Արբիտրաժի և հաշտարարության մասին գերմանա-շվեյցարական համաձայնագրի 10-րդ հոդվածը և 1928 թ. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին Ժնևի ընդհանուր օրենքի 32-րդ հոդվածը: Այդ կետերը ներառվել են այնպիսի իրավիճակների համար, երբ պետությունը, որը թեև պատրաստակամ է կատարելու իր միջազգային պարտավորությունները, սակայն սահմանադրական պատճառներով չի կարող այդ անել՝ առանց իր սահմանադրությունը փոխելու: Դրանք արբիտրաժային դատարանին այս պարտավորությունը այլ տեսակի արդար բավարարում [equitable satisfaction] վճարելու պարտավորության փոխակերպման իրավասություն են տալիս:

Մենք ենթադրում ենք, որ 50-րդ հոդվածը ծառայում է միևնույն նպատակին, ինչ այս մոդելային հոդվածները, և այն պետք է համապատասխան մեկնաբանություն ստանա: Դրա հիման վրա ակնհայտ է դառնում, որ այդ հոդվածը, իր շարադրանքի համաձայն, կիրառելի չէ դատարանին ներկայացված գործերի նկատմամբ...

Մեր կարծիքով՝ դիմողները որևէ ապացույց չեն ներկայացրել առ այն, որ Բելգիայի օրենսդրությունը թույլ չի տալիս լիարժեք փոխհատուցում իրականացնել, մինչդեռ Բելգիայի ներկայացուցիչը համոզիչ կերպով փաստարկել է, որ Բելգիայի օրենսդրությունը իրավական պաշտպանության միջոցներ է տրամադրում՝ լիակատար փոխհատուցման հասնելու համար: Հետևությունն այն է, որ 50-րդ հոդվածի կիրառման պայմանը չի ապահովվել (կետ 2, 3 և 5):

Դատավոր Զեքիան անհամաձայնություն էր արտահայտել այնքանով, որ թույլատրելի էր համարել դիմողների կողմից իրենց ծախսերի փոխհատուցումը պահանջելը:

Նրանք անշուշտ իրավունք ունեն փոխհատուցում ստանալու հանձնաժողովի և այս դատարանի առումով իրենց կատարած հավելյալ ծախսերի դիմաց: Ճիշտ է, մենք հաստատ չգիտենք՝ նման ծախսեր տե՞ղ են գտել, թե՞ ոչ, և, եթե տեղ են գտել, ապա ի՞նչ չափով, սակայն այդ հարցը, ենթադրում եմ, կարելի է հեշտությամբ ուղղել այս դատարանի մատենավորման բաժնին՝ ճշգրտման և դրանով զբաղվելու համար: Իմ կարծիքով՝ դիմողները չպետք է կորցնեն կատարած ծախսերը իրենց իրավունքներին հետամուտ լինելիս, ինչպես նրանք դա արել են (պարբ. 10):

2 Դատարանի վերը բերված վճիռը կարևոր է ոչ միայն 50-րդ հոդվածի անհստակ ձևակերպման ակունքները պարզաբանելու տեսանկյունից, այլև սույն հոդվածով փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ դատարանի մոտեցումը պարզելու առումով: Դատարանը որոշել է, որ արդարացի բավարարման միջնորդություններն առանձին դիմումներ չեն՝ ենթակա 25-27-րդ (այժմ 35-րդ հոդված) հոդվածներում շարադրված ընդունելիության չափանիշներին, այլ համարվում են դատարանի կողմից այն գործերի քննության վերջին փուլը, որոնց առնչությամբ արդեն իսկ որոշել է, որ պատասխանող պետությունը խախտել է դիմողների՝ կոնվենցիայով երաշխավորված իրավունքները: Բացի այդ, մեծ նշանակություն ուներ դատարանի շեշտադրումն իր՝ որպես արդարացի բավարարման հարցով դատավորի դերին:

3 Վաղ նախադեպային իրավունքի հետազոտություններից մեկում մեկնաբանը եզրակացրել էր, որ.

«Իրավական պաշտպանության միջոց ապահովելու մղումով՝ դատարանը մեծապես անտեսել է 50-րդ հոդվածի՝ որպես իր իրավասություններն անտեղի սահմանափակումների ենթարկող հոդվածի կոնկրետ ձևակերպումները և մշակման նախապատմությունը» [C D Gray, Remedies For Individuals Under The European Convention On Human Rights (1981) 6 *Human Rights Review* 153, p. 171]:

Արդարացի բավարարման արդի տեսակները

Հիմնվելով վաղ գործերում ձևավորված հենքի վրա՝ դատարանն այժմ պատրաստակամ է դիտարկելու հաջողության հասած դիմողներին ֆինանսական բավարարման տեսքով արդարացի փոխհատուցման տրամադրումը՝ (ա) «դրամական վնասի» և (բ) «ոչ դրամական վնասի» դիմաց, որոնք եղել են կոնվենցիայով ամրագրված նրանց իրավունքների խախտման հետևանք և նաև (գ) այդ իրավունքները պաշտպանելիս կատարված օրինական ծախսերի և ծախքերի դիմաց: Ստորև բերված են մի շարք օրինակներ, թե ինչպես է դատարանը կիրառել 50-րդ հոդվածն այս տեսակներից յուրաքանչյուրի դեպքում: Թիվ 11 արձանագրությամբ, որն ուժի մեջ մտավ 1998 թ. նոյեմբերին, 50-րդ հոդվածի տեքստը փոփոխվեց՝ սահմանելով.

«Եթե դատարանը որոշում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել (հոդված 41):

Դրամական վնաս

1 Նախկին միապետին և թագավորական ընտանիքի նախկին անդամներին պատկանող անշարժ և անձնական գույքի բռնագրավման դիմաց փոխհատուցման վերաբերյալ բարդ և քաղաքականապես զգայուն վճիռ է կայացրել մեծ պալատը *«Հունաստանի նախկին թագավորը և այլք ընդդեմ Հունաստանի»* գործով. 2002 թ. նոյեմբերի 28-ի դատավճիռ (դիմողների գանգատների էական հանգամանքներին վերաբերող ավելի վաղ կայացված վճռի ուսումնասիրության համար տե՛ս ստորև՝ էջ 993): Արդարացի բավարարմանը վերաբերող դատական գործընթացում դիմողները պնդում էին, որ իրենց գույքի վերականգնումը՝ ոչ դրամական վնասի և դատական ծախսերի փոխհատուցման հետ միասին, կկազմի *restitutio in integrum* [լիովին վերականգնում, վերականգնում նախկին իրավունքներով]: Իրենց սեփականությունը հետ չստանալու դեպքում նրանք ակնկալում էին լիակատար փոխհատուցում՝ հիմնված գույքի ներկա արժեքի վրա: Կառավարությունը կարծիք է հայտնել, որ դատարանի կողմից խախտման արձանագրումը կամ խորհրդանշական գումարի հատկացումը կարող է միանգամայն համարվել արդարացի բավարարման տրամադրում: Կառավարության համար «դիմողի» սեփականության «փոխանցումը» մեծ նշանակություն ուներ, քանի որ այն կապված էր Հունաստանում միապետությունից հանրապետություն սահմանադրական անցման հետ:

44. Այդ կապակցությամբ կառավարությունը ցանկանում է հիշեցնել դատարանին այս ոլորտում XX դարի եվրոպական հայտնի նախադեպերի մասին, այն է՝ վարչակարգի փոփոխությանը միապետությունից խորհրդարանական կառավարման հանրապետական ձևի, մասնավորապես, Պորտուգալիայում (1910), Գերմանիայում և Ավստրայում (1919), Հունաստանում (1924), Իսպանիայում (1931) և Իտալիայում (1946): Թեև ռեժիմի այդ փոփոխությունների միջև տարբերություններ կային, այնուամենայնիվ դրանք ընդհանուր գիծ ունեն, որը բնութագրում է նախկին թագավորական ընտանիքներին պատկանող ունեցվածքի ճակատագիրը. բացառությամբ Պորտուգալիայի թագավոր Մանուել II-ի, եվրոպական բոլոր նախկին միապետների կամ կայսրերի մասնավոր ունեցվածքը այս կամ այն կերպ օտարվել է առանց փոխհատուցման կամ առանց ամբողջական փոխհատուցման: Նման երկար պատմություն ունեցող գործելակերպը, որն արդարացված է ոչ թե քաղաքական հրատապությամբ, այլ նկատի առնելով նախկինում թագավորական ընտանիքներին շնորհված արտոնությունները և արմատական սահմանադրական փոփոխությունների (միապետությունների վերացման) կենսագործումն ապահովելու անհրաժեշտությունը, պետք է հաշվի առնել արդարացի բավարարում տրամադրելիս: Դատարանը չպետք է անտեսի Հունաստան պետության իրավունքը՝ «լուծելու մի հարց, որը նա համարում է իր հանրապետության կարգավիճակին վնաս հասցնող» (տե՛ս դատարանի վճռի պարբ. 88)՝ ծավալուն փոխհատուցման տրամադրման միջոցով, որի վճարումը, ամենայն հավանականությամբ, լուրջ ֆինանսական հետևանքներ կունենա Հունաստանի Հանրապետության համար:

Եթե դատարանը որոշեր հատկացնել փոխհատուցումը, կառավարությունը պնդում էր, *ի թիվս այլոց*, որ Տատոյի [Tatoi] ոչ բոլոր կալվածքները պետք է ներառվեն (որովհետև նախկին թագավորը 1992 թ.

դրանց մի մասը նվիրել էր մի հիմնադրամի), չպետք է կիրառվի գույքի առանձին բաղկացուցիչների շուկայական արժեքը (քանի որ կալվածքներն այնքան մեծ էին, որ անհնար էր համարժեք գործարքներ գտնել Հունաստանում, որոնք կարող էին օգտագործվել համեմատության համար), պետք է կիրառվի գույքի «օբյեկտիվ» արժեքը (հիմնված ժառանգությունների և օտարված գույքի հարկվող արժեքների ներպետական սխեմայի վրա): Արտոնությունները և հարկերից ազատումը (օր.՝ հունական թագին շնորհված ազատումը ժառանգության հարկից), որոնք անցյալում շնորհվել էին նախկին թագավորական ընտանիքին, համաձայն կառավարության, նույնպես պետք է ներառվեն դրամական վնասի հաշվարկման մեջ: Կառավարությունը վիճարկում էր նաև դիմողների պահանջած անձնական իրերի կարգավիճակը. նրա կարծիքով՝ դրանք պետության ղեկավարին մատուցված նվերներ էին: Ոչ դրամական վնասի հատուցման վերաբերյալ կառավարությունը.

69. …նշում է, որ դիմողների պնդումները, թե իրենք քաղաքական հետապնդման զոհեր են, մերժվել է հանձնաժողովի կողմից, որը որոշել էր նաև, որ կոնվենցիայի 3-րդ, 6-րդ և 8-րդ հոդվածներով դիմողների իրավունքների խախտում տեղ չի գտել (տե՛ս հանձնաժողովի որոշումը 1998 թ. ապրիլի 21-ի դիմումի ընդունելիության վերաբերյալ, չհրապարակված)՝ այդ կետի շուրջ նկատելով. «որ հակառակի մասին դիմողների պնդումները, թերևս, ամենաանհիաջողն են, եթե նկատի առնենք Հունաստանի քաղաքականության մեջ առաջին դիմողի խաղացած հակասահմանադրական դերը 1967 թ. երկրից հեռանալուց առաջ. 1967 թ. ապրիլի 21-ի ռազմական հեղաշրջումից հետո նշանակելով գնդապետների կառավարություն՝ նախկին թագավորը խաթարեց ... խորհրդարանական ժողովրդավարության և օրենքի գերակայության բուն հիմքերը, այսինքն՝ ժողովրդավարական կառավարման հիմքերը, որոնց պաշտպանությունը Եվրոպայի խորհրդի raison d'être-ն է [ֆրանս.՝ գոյության իմաստ]»:

70. Վերը նշվածը նկատի ունենալով՝ կառավարությունը պարզաբանել է, որ «Հունաստանի Հանրապետությունը նախկին միապետին գեթ մեկ դրահմա էլ չի տա»՝ հաշվի առնելով «դիմողների պահանջների նշանակալի քաղաքական բնույթը»:

Վերջապես, կառավարությունը նշում է, որ դիմողները կարող էին այցելել իրենց նախնիների գերեզմանները՝ պայմանով, որ կատարեին ներպետական օրինական պահանջները (ներառյալ Հունաստանի Հանրապետության ճանաչումը, պաշտոնական տիտղոսների պահանջներից հրաժարվելը և պետական ռեգիստրում (գրանցամատյանում) գրանցվելը անունով և ազգանունով):

Որպես սկիզբ՝ մեծ պալատը շեշտում է, որ եթե կոնվենցիայի խախտման բնույթը թույլ տար *restitutio in integrum* ապա պատասխանող պետությունը պիտի լիներ նման միջոցներ նախաձեռնողը: Այնուամենայնիվ, եթե ազգային օրենսդրությունը *restitutio in integrum* չի թույլատրում, դատարանն իրավասու է արդարացի փոխհատուցում տրամադրել՝ համաձայն 41-րդ հոդվածի: Ավելին, սեփականության օտարմանը վերաբերող գործերում.

75. Նման սեփականազրկման օրինականությունն անխուսափելիորեն ազդում է պատասխանող պետության կողմից տրվելիք հատուցումը որոշելու չափանիշների վրա, քանի որ օրինական կերպով սեփականությունը վերցնելու դրամական հետևանքները չեն կարող հավասարեցվել ապօրինի սեփականազրկման հետևանքներին: Այդ կապակցությամբ դատարանների և արբիտրաժային դատարանների միջազգային նախադեպային իրավունքը դատարանի համար արժեքավոր ուղեցույց է, թեև այդ նախադեպային իրավունքն առավելապես վերաբերում է արդյունաբերական և առևտրային ձեռնարկումներին, այդ ոլորտում ձևավորված սկզբունքները տեղին են այնպիսի իրավիճակների առումով, ինչպիսին է ներկա գործում տեղ գտածը: «*Ամոկո» միջազգային ֆինանսական կորպորացիայի* (*Amoco International Finance Corporation*) գործում Գանգատների քննության իրանա-ամերիկյան դատարանը [Iran-United States Claims Tribunal] նշում է, հղում կատարելով Արդարադատության միջազգային դատարանի [Permanent Court of International Justice] վճռին՝ *Խորժուվի գործարանին վերաբերող գործով* (*Case Concerning the Factory at Chorzów*) (1928 թ. սեպտեմբերի 13-ի վճիռ, *Դատավճիռների ժողովածու*, շարք A, No 17, էջ 47), որ.

> «անհրաժեշտ է հստակ տարբերակում մտցնել օրինական և ապօրինի էքսպրոպրիացիայի (սեփականազրկման) միջև, քանի որ այն կանոնները, որոնք կիրառվում են էքսպրոպրիացիայի ենթարկող պետության կողմից վճարվելիք փոխհատուցման նկատմամբ, տարբերվում են՝ կախված վերցնելու իրավական բնութագրումից»: («*Ամոկո» միջազգային ֆինանսական կորպորացիան ընդդեմ Իրանի*» (*Amoco International Finance Corporation v Iran*), 1987 թ. հուլիսի 14-ի դատարանի որոշում [Interlocutory Award], Գանգատների քննության իրանա-ամերիկյան դատարանի հաշվետվություններ (1987-II), էջ 192) :

Հետևաբար, մեծ պալատը համարում է, որ այն դեպքում, երբ սեփականազրկումը, որպես այդպիսին, ապօրինի չի եղել, դրան հետևող փոխհատուցումը չպետք է նախատեսված լինի տվյալ սեփականության նկատմամբ կատարված միջամտության բոլոր հետևանքները վերացնելու համար: Այս դեպքում.

78. …Քանի որ արձանագրված խախտման էությունը փոխհատուցման բացակայությունն է, ոչ թե սեփականությունը վերցնելուն հատուկ ապօրինությունը, պարտադիր չէ, որ փոխհատուցումն արտացոլի սեփականության ամբողջական արժեքը: Պատշաճ փոխհատուցման իր որոնման մեջ դատարանը պետք է ուղեցույց փնտրի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ նախադեպային իրավունքում արտահայտված ընդհանուր չափորոշիչներում, համաձայն որոնց՝ սեփականությունը վերցնելը՝ առանց դրա արժեքին ողջամիտ կերպով առնչվող չափով գումարի վճարման, սովորաբար համարվում է անհամաչափ միջամտություն, ինչը չի կարող համարվել թույլատրելի՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն (տե՛ս «*Ջեյմսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության*» (*James and Others v the United Kingdom*), 1986 թ. փետրվարի 21-ի վճիռ, սերիա A, թիվ 98, էջ 36, պարբ. 54): Այնուամենայնիվ, թեև ճշմարիտ է, որ նույնիսկ օրինական օտարման շատ դեպքերում, ինչպիսիք են, օրինակ, ճանապարհների կառուցման կամ այլ պետական կարիքների համար հող վերցնելու առանձին դեպքերը, միայն ամբողջական փոխհատուցումը կարող է համարվել սեփականության արժեքին ողջամիտ կերպով առնչվող, այս կանոնն առանց բացառությունների չէ: Ինչպես նշվում է «*Ջեյմսն ընդդեմ Միացյալ Թագավորության*» վերը հիշատակված գործում, «հանրային շահի» օրինական նպատակները, ինչպիսիք հետապնդվում են տնտեսական բարեփոխումների միջոցներով կամ ավելի մեծ սոցիալական արդարության հասնելու համար նախատեսված միջոցներով, կարող են պահանջել ավելի քիչ, քան շուկայական լրիվ արժեքն է (նույնը): Դատարանը համարում է, որ ամբողջական փոխհատուցումից պակաս հատուցում կարող է հավասարապես, եթե ոչ *a fortiori*, պահանջվել այն դեպքում, երբ սեփականությունը վերցնելուն են դիմել՝ նպատակ ունենալով ամբողջացնել «երկրի սահմանադրական կարգի այնպիսի հիմնարար փոփոխություններ, ինչպիսին է միապետությունից հանրապետության անցումը» (տե՛ս վճռի պարբ. 87):

79. Որպես եզրակացություն՝ եթե կառավարությունն ինքնուրույն չի որոշում սեփականությունը հետ վերադարձնել դիմողներին, դատարանը պատշաճ է համարում միանվագ վճարումը՝ հիմնվելով, որքան հնարավոր է, վերցված սեփականության արժեքին «ողջամիտ կերպով առնչվող» գումարի, այսինքն՝ այն գումարի վրա, որը դատարանն ընդունելի համարած կլիներ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն, եթե Հունաստանը դիմողներին փոխհատուցում տրամադրած լիներ: Այդ գումարը որոշելիս դատարանը հաշվի կառնի յուրաքանչյուր դիմողի պահանջները, շարժական գույքի հարցը, կողմերի ներկայացրած գնահատումները և դրամական վնասի հաշվարկման հնարավոր տարբերակները, ինչպես նաև սեփականազրկման և ներկա վճռի միջև ընկած ժամանակահատվածը: Դատարանը համարում է, որ տվյալ գործի եզակի հանգամանքներում, արդարության (անաչառության) իրավունքի նորմերին [equitable considerations] դիմելը հատկապես պահանջված է դառնում:

Մեծ պալատն ընդունեց դիմողների միջնորդությունը, որ նրանց դրամական վնասը գնահատելիս յուրաքանչյուր դիմողի վնասն առանձին գնահատվի: Պալատը համաձայնեց նաև, որ Տատոյի կալվածքներն ամբողջությամբ պետք է ներառվեն արդարացի փոխհատուցման գնահատման մեջ, քանի որ հիմնադրամի վերաբերյալ պայմանագիրը վերացվել է հետագայում ընդունված օրենքով: Ինչևէ, այն փաստը, որ դիմողների ունեցվածքի նշանակալի հատվածներ նվիրաբերվել կամ վաճառվել են իրենց նախկին տերերին խորհրդանշական գումարի դիմաց, նույնպես գործոն էր, որը հարկ էր հաշվի առնել դատարանի կողմից տրամադրվելիք փոխհատուցման ծավալը գնահատելիս: Դատավորները որոշեցին, որ «սկզբունքորեն, դատարանը համարում է, որ առաջին դիմողը պետք է փոխհատուցում ստանա դեռևս Հունաստանում գտնվող իր անձնական իրերի դիմաց» (պարբ. 84): Քանի որ կողմերը ընդհանուր հայտարարի չէին գալիս դրանց մանրամասների վերաբերյալ, դատարանը անաչառ կերպով որոշեց նրանց դրամական արժեքի դիմաց փոխհատուցումը ներառել ընդհանուր միանվագ գումարի մեջ:

Մեծ պալատը դրամական վնասի չափը որոշելիս վճռեց հիմք չընդունել դիմողների սեփականության շուկայական արժեքը: Դա արվեց երկու պատճառով: Առաջին՝ կողմերի ներկայացրած փորձագետների գնահատականների մեծ անհամապատասխանությունը (դիմողները ներկայացրել էին փորձագետի հաշվարկած 472 միլիոն եվրո կազմող ընդհանուր գումար, մինչդեռ կառավարությունը ներկայացնող երկու փորձագետները ստացել էին ընդհանուր հաշվարկով 550 միլիոն եվրո և 346 միլիոն եվրո կազմող գումարներ): Երկրորդ՝ որովհետև օտարման բնույթը նշանակում էր, որ լիակատար փոխհատուցման անհրաժեշտություն չկա: Հետևաբար, դատարանն ընդունեց «օբյեկտիվ» արժեքի մեթոդը: Կողմերը համաձայնեցին Մոն Ռեպոյի նստավայրի կալվածքների օբյեկտիվ արժեքի (17,5 միլիոն եվրո) շուրջ, սակայն համաձայնության չեկան Պոլիդենդրիի (դիմողների կողմից՝ 56 միլիոն եվրո, իսկ կառավարության կողմից՝ 31 միլիոն եվրո) և Տատոյի (դիմողների կողմից՝ 198 միլիոն եվրո, իսկ կառավարության կողմից՝ 21,8 միլիոն եվրո՝ հաշվի առնելով հիմնադրամին տրված հողատարածքը) շուրջ:

Մեծ պալատի հաջորդ խոշոր որոշումը վերաբերում էր այն հարցին, թե անհրաժե՞շտ է նվազեցնել վճարվելիք արդարացի փոխհատուցման գումարը՝ հաշվի առնելով անցյալում թագավորական ընտանիքի ստացած արտոնությունները և առավելությունները:

95. Դատարանը նշում է, որ իր վճռի 98-րդ պարբերության մեջ սահմանել է.

> «... ինչ վերաբերում է կառավարության ներկայացրած փաստարկին, որ փոխհատուցման հարցն անուղղակիորեն լուծվել է, դատարանն առաջին հերթին նշում է, որ օրենքի ուժ ունեցող թիվ 225/1973 որոշմամբ նախատեսված փոխհատուցումը չի վերաբերում սույն գործին, և միջամտության, որի վերաբերյալ բողոքում էին դիմողները, իրավական միակ հիմքը թիվ 2215/1994 օրենքն է: Միաժամանակ հանգամանքները, որոնց հղում է կատարում կառավարությունը, չեն կարող համարվել փոխհատուցման վճարում: Այս առումով դատարանը համաձայնում է դիմողների հետ, երբ նրանք պնդում են, որ դիտարկվող օտարման համատեքստում չկան հաշվանցման ենթակա փոխադարձ պարտքեր: Թագավորական ընտանիքին նախկինում շնորհված արտոնությունները կամ հարկերից ազատումը և նախկին թագավորական ընտանիքի ունեցած դեբետավորված հարկային պարտավորությունների ամբողջական դուրս գրումը ուղղակիորեն չեն առնչվում համաչափության հարցին, սակայն հնարավոր է, որ հաշվի առնվեն՝ կոնվենցիայի 41-րդ հոդվածով արդարացի փոխհատուցման դիմողների պահանջների ճշգրիտ գնահատում կատարելու համար»:

96. Ելնելով այդ որոշումից՝ դատարանը համաձայնում է կառավարության հետ, երբ վերջինս պնդում է, որ դիմողներին ենթադրաբար հասցված դրամական վնասը պետք է կրճատվի՝ հաշվի առնելով խնդրո առարկա սեփականության առումով նախկինում տրամադրված արտոնությունները և այլ առավելությունները:

97. Այնուամենայնիվ, դատարանը համարում է, որ դրամական կորուստը չի կարող հաշվարկվել պարզապես որպես սեփականության «օբյեկտիվ արժեքի» և հիպոթետիկ հարկային բեռի ներկա դրամական արժեքի թվաբանական տարբերություն, քանի որ դա համազոր կլինի դատարանի կողմից նախկին թագավորական ընտանիքի նկատմամբ հարկային պարտավորությունների հետադարձ սահմանման: Կողմերի ներկայացրած հաշվարկների միջև դարձյալ էական տարբերություն կար:

Գանգատարկուները հաշվարկել էին, որ իրենց նախնիների ունեցած արտոնությունները կազմել են 33 միլիոն եվրո, մինչդեռ կառավարությունը ներկայացրել էր 579 միլիոն եվրոյի գումար: Մեծ պալատը համաձայնեց դիմողների կողմից հանդես եկող գնահատողների հետ, որ կառավարության ներկայացրած ընդհանուր գումարը «էապես ուռճացված» է:

99. ... Այդ թվերն ընդունելու պարագայում ստացվում է, որ դիմողները Հունաստանին պարտք են մի գումար, ... որը նույնիսկ գերազանցում է սեփականության շուկայական արժեքը ... ինչպես այն հաշվարկված է կառավարության սեփական գնահատողների կողմից... Դատարանը պատրաստ չէ ընդունելու այդ եզրակացությունը:

Հետևաբար, մեծ պալատը (միաձայն), անաչառ կերպով, որպես դրամական վնասի դիմաց փոխհատուցում, առաջին դիմողին շնորհում է 12 միլիոն եվրո, երկրորդ դիմողին՝ 900.000 եվրո, իսկ երրորդ դիմողին՝ 300.000 եվրո:

Ոչ դրամական վնասի վերաբերյալ մեծ պալատը նշում է, որ.

101. Դատարանը ցանկանում է շեշտել, որ իր խնդիրը չէ ուսումնասիրել ո՛չ առաջին դիմողի խաղացած դերը Հունաստանի քաղաքական կյանքում՝ մինչև 1967 թ.՝ նրա մեկնումը երկրից, ո՛չ էլ այն պատճառները, որոնք 1974 թ. հանգեցրին միապետության տապալմանը: Թեև դատարանը չի կարող անտեսել գործի քաղաքական հնչերանգները, և չի էլ անտեսել, կասկածից վեր է, որ դատարանի դերը չէ կողմերի հետ բանավեճի մեջ մտնել, թե ո՛վ է մեղավոր նրանց միջև առկա վեճի համար:

102. Ավածը հաշվի առնելով՝ դատարանը համարում է (իրեն հաշիվ տալով, թե ինչ է դրված սեղանին, և այն ինչ յուրահատուկ կողմեր ունի), որ ոչ դրամական վնասի առումով որևէ հատուկ հարց չի բարձրանում, ներառյալ՝ թագավորական շիրիմներին այցելելու հնարավորություն ունենալու խնդիրը:

Վերջապես, դիմողները պահանջում էին գրեթե 984.000 ֆունտ ստեռլինգ՝ որպես ծախսերի և ծախքերի փոխհատուցում: Կառավարությունը համարում էր, որ պահանջված գումարները չափից դուրս մեծ էին: Մեծ պալատը համաձայնեց, որ ընդհանուր գումարը չափազանց մեծ է, մանավանդ որ նախկին հանձնաժողովը դիմողների շատ գանգատներ մերժել էր: Հաշվի առնելով վճարների չափերը Միացյալ Թագավորությունում և 41-րդ հոդվածով արծարծված բարդ հարցերը՝ դատարանը դիմողներին շնորհեց 500.000 եվրո՝ նրանց ծախսերի առումով:

Դատավճիռը միապետության ավարտին առնչվող, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթների համաձայն գնահատված ֆինանսական ծախսերի եզակի և ուշագրավ ուսումնասիրություն է: Ի

վերջո, մեծ պալատը դրամական վնասի և դատական ծախսերի առումով արդարացի փոխհատուցման շատ ավելի փոքր գումարներ տրամադրեց, քան պահանջել էին կողմերը. օրինակ՝ դիմողները պահանջում էին 472 միլիոն եվրո՝ դրամական վնասի դիմաց, իսկ կառավարությունը դրան հակադրվում էր՝ վստահեցնելով, որ դիմողների նախնիները ստացել են 579 միլիոն եվրոյին համարժեք ֆիսկալ և այլ արտոնություններ: Այնուամենայնիվ, դիմողների կրած դրամական վնասի դիմաց շնորհված 13,2 միլիոն եվրոյի ընդհանուր փոխհատուցումը նշանակալի գումար էր՝ որպես դատարանի կողմից տրամադրված գումար: Նախադեպային իրավունքի տեսանկյունից վճիռը կարևոր էր մեծ պալատի կողմից այն հանգամանքների գնահատման առումով, որոնց պարագայում, կոնվենցիայի համաձայն, հանուն «հանրային շահի» օտարման դեպքում լիակատար փոխհատուցում չի պահանջվում (41-րդ հոդված և թիվ 1 արձանագրության 1-ին հոդված): Նախկին թագավորական ընտանիքին սեփականությունից զրկելը՝ որպես հանրապետության վերածվելու սահմանադրական փոփոխության մաս, անցյալում տեղ գտած նախադեպային իրավունքով ճանաչված տնտեսական բարեփոխումների միջոցների հետ միասին (օր.՝ օդանավեր և նավեր արտադրող ընկերությունների ազգայնացումը «*Լիթգոուն ընդդեմ Միացյալ Թագավորության*» (*Lithgow v United Kingdom*) գործում, A.102 (1986)), գնահատվեց որպես այդ տեսակին պատկանող: Մեծ պալատի կողմից ընդունելը, որ այն եղանակը, որով նախկին թագավորական ընտանիքը ձեռք է բերել իր սեփականությունը (օր.՝ որպես պետական իշխանություններից ստացված նվերներ) կարող է որպես գործոն ներառվել դրամական վնասի չափը հաշվարկելու գործում, նույնպես, ամենայն հավանականությամբ, կնվազեցնի կոնվենցիայի համաձայն վճարվելիք գումարների չափը, եթե սեփականությունն օտարվել է ազգային ժողովրդավարական խորհրդարանի հրահանգով: Այս դիտարկումներն օգնում են բացատրելու, թե ինչու մեծ պալատը շատ ավելի քիչ տրամադրեց, քան պահանջել էին դիմողները:

2 Որոշվել է, որ անձի տան գնի անկումը, որը վերագրելի է պետության գործողություններին կամ անգործությանը, ինչը կոնվենցիայի խախտում է, դրամական վնաս է: «*Լոպես Օստրան ընդդեմ Իսպանիայի*» (*Lopez Ostra v Spain*) գործում (A.303-C (1994) 20 EHRR 279, վերը՝ էջ 573), Իսպանիայի իշխանությունները պատասխանատու համարվեցին լուրջ արդյունաբերական աղտոտման համար, ինչը դիմողի՝ 8-րդ հոդվածով սահմանված տան (բնակարանի) և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի խախտում է: Տիկին Լոպես Օստրան պահանջում էր արդարացի բավարարում 7 միլիոն պեսետի չափով՝ որպես նոր բնակարանի գին, 2,5 միլիոն պեսետ՝ իր անցանկալի տեղափոխության հետ կապված անհարմարության համար, 295.000 պեսետ՝ նոր տանը հաստատվելու հետ կապված ծախսերի դիմաց, 12 միլիոն պեսետ՝ իր նախկին տանը աղտոտման պայմաններում բնակությամբ պատճառված տառապանքի դիմաց և 3 միլիոն պեսետ՝ իր դստեր լուրջ հիվանդության (աղտոտման հետևանքով առաջացած) պատճառով կրած անհանգստության համար: Հանձնաժողովը և կառավարությունը որոշեցին, որ այդ գումարներն ուռճացված են: Դատարանը որոշեց, որ.

... Տիկին Օստրան որոշակի վնաս է կրել 8-րդ հոդվածի խախտման հետևանքով: Նրա նախկին բնակարանը պետք է որ արժեզրկված լիներ, իսկ տեղափոխվելու պարտավորությունը պետք է որ ենթադրեր ծախսեր և անհարմարություն: Մյուս կողմից՝ նրան նոր տան գինը հատուցելու պատճառ չկա, քանի որ նա պահել է իր նախկին տունը: Անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ մեկ տարի շարունակ տեղական իշխանությունները վճարել են Լորկայի կենտրոնում դիմողի և նրա ընտանիքի զբաղեցրած բնակարանի վարձը, և գործը քննող դատավորի կողմից թափոնների վերամշակման գործարանը ժամանակավորապես փակվել էր 1993 թ. հոկտեմբերի 27-ին:

Ավելին, դիմողին անհերքելիորեն պատճառվել է նաև ոչ դրամական վնաս: Ի հավելումն գործարանից եկող գազային գոլորշիների, աղմուկի և հոտերի առաջացրած գրգռվածության՝ նա տառապանք և անհանգստություն է կրել, երբ տեսել է, որ այդ իրավիճակը չի փոխվում, և իր դստեր առողջությունը վատթարանում է:

Վնասի ընդունված տեսակները թույլ չեն տալիս ճշգրիտ քանակական գնահատում իրականացնել: Արդարացի հիմքով, համաձայն 50-րդ հոդվածի գնահատում կատարելով, դատարանը տիկին Լոպես Օստրային հատկացնում է 4 միլիոն պեսետ (պարբ. 65):

3 Այն դեպքերում, երբ անձը քրեական հանցագործության համար ենթարկվել է տուգանքի, և այդ հանցագործության համար դատապարտումը դատարանը համարել է կոնվենցիայի խախտում, վճարված գումարը կարելի է պահանջել՝ որպես դրամական վնաս: Օրինակ՝ «*Երսիլդն ընդդեմ Դանիայի*» (*Jersild v*

Denmark) գործում (A.298 (1994) 19 EHRR 1, վերը՝ էջ 687) դիմող լրագրողը դատապարտվել և տուգանվել է Դանիայի դատարանների կողմից այն բանի համար, որ օգնել և դրդել էր ուրիշներին՝ նվաստացնող (ռասիստական) հայտարարություններ անել: Դատարանը որոշել է, որ նրա դատապարտումը խախտում է դիմողի արտահայտման ազատության իրավունքը, որը երաշխավորված է 10-րդ հոդվածով: Գանգատարկուն փորձում էր փոխհատուցում ստանալ տուգանքի (1000 դանիական կրոն) դիմաց՝ որպես դրամական վնաս՝ համաձայն 50-րդ հոդվածի: Իր վճռում դատարանը նշել է. «Կառավարությունը չի առարկում, և դատարանը համարում է, որ գումարը պետք է հատկացվի» (պարբ. 41): Նաև «*Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի*» (*Oberschlick v Austria*) գործում (A.204 (1991) 19 EHRR 389, վերը՝ էջ 676) դատապարտվել էր մեկ այլ լրագրող, երբ նրա դեմ մասնավոր հայց էր ներկայացվել զազրախոսության համար: Ավստրիայի դատարանները, *ի թիվս այլոց,* տուգանել էին դիմողին: Այդ գումարի առումով արդարացի փոխհատուցման նրա պահանջը բավարարվեց դատարանի կողմից:

Գանգատարկուն առաջին հերթին փորձում է հետ ստանալ այն գումարները, որոնք համապատասխանում են Ավստրիայի դատարանների կողմից սահմանված տուգանքին (4000 շիլինգ) և մասնավոր մեղադրողին վճարված ծախսերին (14,123.84 շիլինգ): Ելնելով այն հանգամանքից, որ նշվածների և դատարանի կողմից հայտնաբերված 10-րդ հոդվածի խախտման միջև ուղիղ կապ կա, դիմողը, ինչպես և համաձայնում է կառավարությունը, իրավունք ունի վերականգնելու 18,123.84 շիլինգ կազմող ամբողջ գումարը (պարբ. 66):

Այնուամենայնիվ, դատարանը միշտ չէ նույնքան պատրաստակամ եղել հաջողության հասած դիմողներին արդարացի բավարարում տրամադրելու հարցում՝ քրեական հանցագործության համար նրանց նկատմամբ սահմանված տուգանքների առումով: «*Շմաուցերն ընդդեմ Ավստրիայի*» (*Schmautzer v Austria*) գործում (A.328-A (1995) 21 EHRR 511) դատարանը որոշել է, որ վարչական իշխանությունների կողմից դիմողի նկատմամբ տուգանքի սահմանումը ավտոմեքենան առանց ամրագոտին կապելու վարելու համար խախտում է 6-րդ հոդվածի 1-ին կետը: Այնուհետև դիմողը պահանջել է, որ իրեն հետ վճարվի տուգանքի գումարին համարժեք գումար՝ որպես դրամական վնասի փոխհատուցում:

Կառավարությունն առարկեց, որ դատարանն իրավասու չէ վերացնելու ազգային դատարանների սահմանած պատիժը կամ կարգադրելու, որ տուգանքը հետ վճարվի: Ավելին, նա չէր կարող հատուցում տալիս ենթադրություններ անել, թե ինչպիսին եղած կլիներ դատական գործընթացի արդյունքը, եթե դիմողը հնարավորություն ունենար օգտվելու դատարանից՝ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

Դատարանը համաձայնում է: Դատարանը չի կարող ենթադրություններ անել, թե ինչպիսին եղած կլիներ տվյալ դատական գործընթացի արդյունքը, եթե կոնվենցիայի խախտում եղած չլիներ: Դատարանը համարում է, որ, ելնելով գործի հանգամանքներից, սույն վճիռը դիմողին բավարար հատուցում է տալիս (պարբ. 43-44):

Անշուշտ, Ավստրիայի կառավարությունը քրեական հանցագործության համար սահմանված տուգանքի՝ 50-րդ հոդվածով վերականգնելիության վերաբերյալ ուրիշ դիրքորոշում էր որդեգրել *Շմաուցերի* գործում՝ համեմատած *Օբերշլիքի* գործում արտահայտած իր ավելի վաղ դիրքորոշման հետ: Այդ գործերը կարելի է տարբերել նաև նրանով, որ *Շմաուցերի* գործում տեղ էր գտել ընթացակարգային խախտում, մինչդեռ *Օբերշլիքի* գործում՝ նյութական իրավունքի խախտում:

Մշտական գործող դատարանը նույնպես շրջահայացություն է ցուցաբերել, երբ որոշել է, թե հա՞րկ է փոխհատուցում հատկացնել դրամական վնասի դիմաց, որն առաջացել է քրեական հանցագործության վերաբերյալ ներպետական դատական գործընթացի արդյունքում սահմանված տուգանքներից, որի առնչությամբ դատարանը հետագայում որոշել է, որ խախտվել են մեղադրյալի ընթացակարգային իրավունքները: Օրինակ՝ «*Բլումն ընդդեմ Ավստրայի*» (*Blum v Austria*) գործում (2005 թ. փետրվարի 3-ի վճիռ) դիմող ֆերմերը դատապարտվել էր աշխատանքի թույլտվություն չունեցող օտարերկրացի աշխատող վերցնելու համար: Դիմողը տուգանվել էր մոտավորապես 1100 եվրոյի չափով: Նա պնդում էր, որ ներպետական դատական գործընթացում խախտվել է 6-րդ հոդվածի 1-ին կետը, քանի որ նրա գործի առումով վերջնական որոշում կայացնելու համար պահանջվել էր ավելի քան հինգ տարի: Պալատը միաձայն որոշեց, որ խախտվել է հոդվածում նշված ողջամիտ ժամկետի պահանջը: Բլումը պահանջում էր փոխհատուցել իր կրած դրամական վնասը, որ կրել էր տուգանք վճարելու պատճառով: Այդ վնասի փոխհատուցման պահանջը մերժվեց.

45. Դատարանը որևէ պատճառահետևանքային կապ չի տեսնում արձանագրված խախտման և ենթադրաբար հասցված դրամական վնասի միջև: Հետևաբար մերժում է այդ պահանջը:

Ի՞նչ եք կարծում, արդյոք նման մոտեցում որդեգրելով՝ դատարանն անուղղակի կերպով չի՞ հաստատում դիմողի ըստ էության դատապարտումը:

Ոչ դրամական վնաս

1 Դիմողները, ովքեր, ի խախտումն կոնվենցիայի, ենթարկվել են չափից դուրս երկար տևողությամբ կալանքի, փոխհատուցում են պահանջել ոչ դրամական վնասի դիմաց: Երկու թուրք ակտիվիստներ, ովքեր երկուսուկես տարի նախնական կալանքի տակ էին պահվել, հաջողությամբ վկայակոչեցին 5-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «*Յաղջին և Սարղինն ընդդեմ Թուրքիայի*» (*Yagci and Sargin v Turkey*) գործում (A.319 (1995) 20 EHRR 505, տե՛ս վերը՝ էջ 773): Նրանք միջնորդություն ներկայացրեցին չորոշակիացված չափով փոխհատուցման համար՝ համաձայն 50-րդ հոդվածի: Դատարանը սահմանեց, որ.

... նկատի առնելով յուրահատուկ հանգամանքները, … դիմողները կրել են ոչ դրամական վնաս, որը չի կարող հատուցվել ... սույն վճռով խախտումների արձանագրմամբ: Դատարանը նրանցից յուրաքանչյուրին հատկացնում է 30.000 (ֆրանսիական ֆրանկ)՝ վնասի նշված տեսակի համար (պարբ. 75):

Համապատասխան գործոններ համարվեցին Թուրքիայի իշխանությունների՝ դիմողների տևական կալանքի համար համոզիչ պատճառներ ներկայացնելու անկարողությունը և ազգային անվտանգության դատարանի՝ կարծրատիպային ձևակերպումների գործածումն իր նշանակած կալանքի թույլտվություններում:

Ինչևէ, նոր մշտական գործող դատարանը նման պահանջներին արձագանքելու առումով պառակտված էր: «*Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի*» (*Nikolova v Bulgaria*) գործում (25/3/1999) դատարանը միաձայն որոշել է, որ պատասխանող պետությունը խախտել է դիմողի՝ 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված իրավունքները, երբ վերջինս խոշոր չափերի պետական միջոցների յուրացման մեղադրանքով երեքուկես ամիս պահվել է նախնական կալանքի տակ՝ առանց կալանքի օրինականության պատշաճ դատաքննության: Դիմողն արդարացի փոխհատուցում էր ակնկալում վկայակոչված ոչ դրամական վնասի համար, և նրա պահանջը աջակցություն գտավ հանձնաժողովում: Սակայն դատարանի մեծամասնությունը՝ տասնմեկ ձայն, մերժեց նրա միջնորդությունը:

Դատարանը հիշեցնում է, որ որոշ գործերում, որոնք վերաբերում են 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի խախտմանը, բավարարել է ոչ դրամական վնասի դիմաց համեմատաբար փոքր գումարների փոխհատուցման պահանջները (տե՛ս «*Վան Դրուգենբրոեք ընդդեմ Բելգիայի*» (*Van Droogenbroeck v Belgium)* գործը, A.63 (1983) ...): Այդուհանդերձ, 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերից մեկի կամ դրանց համակցված խախտմանը վերաբերող ավելի ուշ տեղ գտած գործերում դատարանը մերժել է նման պահանջները (տե՛ս «*Պաուելսն ընդդեմ Բելգիայի*» (*Pauwels v Belgium*), A.135 (1988) ...): Այդ վճիռներից մի քանիսում դատարանը նշել է, որ արդարացի փոխհատուցում կարող է տրվել միայն ազատազրկումից բխող վնասի դեպքում, որը դիմողը չէր կրի, եթե օգտված լիներ 5-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված երաշխիքներից, և եզրակացրել է, ըստ հանգամանքների, որ խախտման արձանագրումը բավարար արդարացի փոխհատուցում է կրած ոչ դրամական վնասի համար:

Սույն գործում դատարանը վերը բերված նախադեպային իրավունքից շեղվելու պատճառ չի տեսնում: Դատարանը չի կարող ենթադրել՝ դիմողը կկալանավորվե՞ր, թե՞ ոչ, եթե կոնվենցիայի խախտում տեղ գտած չլիներ: Ինչ վերաբերում է կալանքի ընթացքում պատշաճ ընթացակարգային երաշխիքների բացակայությամբ պայմանավորված նրա ենթադրաբար ապրած ընկճվածությանը, դատարանը կարծում է, որ, գործի կոնկրետ հանգամանքներում, խախտման արձանագրումը բավարար է (պարբ. 76):

Դատավոր Բոնելլոն, միանալով դատավոր Մարուստեին, գրել է մասնակի չհամընկնող կարծիք, որում նշել է, որ.

Ես ամբողջովին անբավարար և անընդունելի եմ համարում այն, որ դատարանը «բավարարում է» տուժողի հիմնարար իրավունքի ոտնահարումը՝ նրան պարզապես մի իրավական ձևակերպում տրամադրելով:

Կոնվենցիան դատարանի համար սահմանում է երկու առանձին գործառույթ. առաջին՝ որոշել՝ եղե՞լ է հիմնարար իրավունքի

խախտում, և երկրորդ՝ «արդարացի փոխհատուցում» տալ այն դեպքում, եթե խախտումը հաստատվել է: Դատարանն իրար է խառնել այս երկու սահմանազատված գործառույթները: Նրան թվում է, թե առաջինն իրականացնելով՝ ազատվում է երկրորդն իրականացնելու պարտականությունից:

Այդպես գործելով՝ դատարանը տապալում է իր թե՛ դատական, թե՛ ճանաչողական գործառույթները: Պետությունը, որը խախտել է կոնվենցիան, ըստ էության անպատիժ է թողնվում: Արդարացի փոխհատուցման տրամադրումը, բացի տուժողի հիմնարար իրավունքի վերականգնումից, ծառայում է որպես կոնկրետ զգուշացում շեղված կառավարությունների համար: Այդպիսով կոնվենցիայի իրականացման ամենահամոզիչ գործիքը մնում է չօգտագործված:

Միակ «իրավական» փաստարկը, որը հանգեցրել է հօգուտ ոչ դրամական վնասի դիմաց որևէ փոխհատուցում վճարելու մերժման, հիմնված է եղել 41-րդ հոդվածի լայնորեն հայտնի անհաջող շարադրանքի վրա:

Դատարանը կարծես թե իրեն իրավասու է զգում մերժելու տուժողին տրվելիք արդարացի փոխհատուցումը՝ «անհրաժեշտության դեպքում» պայմանի ուժով: Սա, ենթադրում եմ, ոչ ճիշտ կառուցվածք է վերագրում 41-րդ հոդվածին: «Անհրաժեշտության դեպքում»-ը վերաբերում է միայն այն դեպքերին, երբ համընկնում են 41-րդ հոդվածում շարադրված երկու պայմաններն էլ, այսինքն՝ կոնվենցիայի խախտման արձանագրումը և որոշ մասնակի հատուցում տրամադրելու՝ ներպետական համակարգի կարողությունը: Երբ այս երկու պայմանները համակցվում են (և միայն ու միայն այդ դեպքում), դատարանը կարող է անտեղի համարել հավելյալ արդարացի փոխհատուցման տրամադրումը: Ահա սա է հստակորեն ձևակերպված 41-րդ հոդվածում:

Այնպիսի գործերում, ինչպիսին սույն գործն է, որտեղ ներպետական օրենսդրությունը որևէ բավարարում չի նախատեսում, «անհրաժեշտության դեպքում» պայմանը դառնում է ոչ տեղին, և կոնվենցիան փոխհատուցում տրամադրել-չտրամադրելու հարցում դատարանին որևէ այլ ճանապարհ չի թողնում ...

Իհարկե, դատարանին կոչ է արվում տրվելիք փոխհատուցման չափը գնահատելիս զգուշավոր և հավասարակշիռ մոտեցում ցուցաբերել: Որոշ դեպքերում հատկացվածը կարող է և պետք է լինի նոմինալ կամ նույնիսկ ձևական: Ես չէի քվեարկի հանուն նրա, որ սերիական բռնաբարողին նշանակալի փոխհատուցում հատկացվեր, եթե ձևական առումով ոտնահարված լիներ նրա ընտանեկան կյանքի իրավունքի ինչ-որ մի կողմ: Ոչ էլ չափից դուրս շռայլ կգտնվեի թմրանյութերի շրջանառությամբ զբաղվողին տրվող փոխհատուցման կապակցությամբ, այն բանի համար, որ նրա թարգմանիչը որակավորման թեստ չի անցել:

Ինձ հիասթափեցնում է այն, որ ամեն մի դատարան տուժողի «մանրը» պակաս է վերադարձնում: Ես քվեարկել եմ դրա դեմ:

Նմանապես, դատավոր Ֆիշբախը, որին միացել էին դատավորներ Կուրիսը և Կասադեվալը, արդարացի փոխհատուցման հետ կապված առարկություն հայտնեց:

Մենք համարում ենք, որ դիմողին նախնական կալանքի տակ պահելը, ինչը տևել է երեքուկես ամսից ավելի՝ առանց բավարար երաշխիքների և, հետևաբար, ի խախտումն կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի, պետք է տուժողի մեջ առաջացրած լիներ անհանգստության և ճնշվածության զգացումներ, այնպես որ խախտման զուտ արձանագրումը չի կարող ինքնին բավարար լինել նրա կրած ոչ դրամական վնասը փոխհատուցելու համար...

Մենք համաձայն չենք նաև մեծամասնության պատճառաբանությանը՝ ուշ շրջանում տեղ գտած նախադեպային իրավունքին արված հղումով...

Մենք հարում ենք այն կարծիքին, որ ոչ դրամական վնասի դիմաց փոխհատուցման խնդիրը պետք է որոշվի յուրաքանչյուր գործի կոնկրետ հանգամանքներով, մինչդեռ ներկայացված հիմնավորման մեջ մեծամասնության կողմից որդեգրված սկզբունքն այնպիսին է, որ ի սկզբանե սահմանափակում է 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի ոտնահարման զոհը հանդիսացողների կրած ոչ դրամական վնասի շրջանակը:

Դատավոր Գրիվը նույնպես մասնակի չհամընկնող կարծիք հրապարակեց, որում նշեց, որ.

Ինչպես տվյալ գործում մատնացույց է արել մեծամասնությունը, դատարանի որոշումները, այնուամենայնիվ, այդ գործերում հետևողական չեն եղել, այլ հետևել են գործ առ գործ մոտեցմանը՝ նույնիսկ երբ, ինչպես տվյալ գործում է, հաստատվել են 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի խախտումները:

Իմ կարծիքով՝ այս պարագայում դատարանի համար նախընտրելի կլիներ իր հայեցողությամբ տուժող կողմին որոշակի արդարացի բավարարում տալ՝ թեկուզ ձևական բնույթի, ոչ թե պարզապես հայտարարել, թե միայն խախտման կամ խախտումների արձանագրման փաստը բավարար արդարացի փոխհատուցում է կրած ոչ դրամական վնասի համար: Յուրաքանչյուր առանձին գործում հարցն արդեն տվյալ հանգամանքներում արդարացի բավարարում հանդիսացող գումարի չափը որոշելը կլիներ: Չեմ կարող որևէ պատճառ գտնել այս գործում բացառություն կատարելու համար:

Հետագայում «*TW-ն ընդդեմ Մալթայի*» (*TW v Malta*) գործում (1999) 29 EHRR 185) դատարանը կրկին միաձայն որոշեց, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում սեփական դստեր նկատմամբ սեռական և ֆիզիկական ոտնձգությունների համար մեղադրվող դիմողի տասնիննօրյա նախնական կալանքի առնչությամբ: Տասնչորս դատավորները կողմ քվեարկեցին նրա պահանջած ենթադրյալ ոչ դրամական վնասի դիմաց որևէ արդարացի բավարարում չտրամադրելուն: Դատավոր Բոնելլոն՝ ազգությամբ մալթացի դատավորը, մեկ այլ մասնակի չհամընկնող կարծիք հայտնեց, որը կրկնում էր (բառացի) նրա

վերը բերված տեսակետները: Դատավորներ Թուլքենսը և Կասադեվալը նույնպես անհամաձայնություն արտահայտեցին՝ հօգուտ դիմողին արդարացի փոխհատուցման վճարման, որովհետև.

... Մենք անշուշտ չենք կարող պնդել, որ դիմողի կալանքը կդադարեցվեր, եթե նա հասած լիներ իր կալանքի շուտափույթ դատական վերանայմանը, սակայն այդ երաշխիքի բացակայության պատճառով դիմողը, ամենայն հավանականությամբ, որոշակի ոչ դրամական վնաս է կրել, որն ամբողջապես չի փոխհատուցվել խախտման արձանագրմամբ: ...Քանի որ կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետը, ասելով այն մասին, թե ինչ է պահանջվում ներպետական օրենսդրությունից, բացահայտորեն սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման», առավել ևս պատճառ կա, մեր կարծիքով, համարելու, որ սոսկ այն փաստը, որ դատարանը խախտում է արձանագրել, բավարար չէ հասցված որևէ վնաս հատուցելու համար: Հետևաբար, սույն գործում դատարանը պետք է որոշ չափով դրամական բավարարում հատկացրած լիներ, մանավանդ որ դիմողի պահանջած գումարը ողջամիտ էր և այդ առումով կարող էր արդարացի հիմքով բավարարում լինել:

Մեծ պալատը միաձայն 1000 ֆունտ ստեռլինգ փոխհատուցում հատկացրեց յոթանասունամյա մի տղամարդու նրա կրած ոչ դրամական վնասի դիմաց, ով կասկածվում էր բռնաբարության փորձի համար, և ում մերժել էին գրավի դիմաց ազատ արձակելը՝ ըստ 1994 թ. «Քրեական արդարադատության և հասարակական կարգի մասին» օրենքի 25-րդ բաժնի (որովհետև նա նախկինում դատապարտվել էր մարդասպանության համար). «*Կաբալերոն ընդդեմ Մեծ-ի*» (*Caballero v UK*), (2000] Crim LR 587: Կառավարությունն ընդունում էր, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում: Դատարանը նշեց, որ.

31. Սույն գործում դիմողը երդմամբ հաստատված գրավոր ցուցմունքում նշել է, ինչը չի վիճարկվել կառավարության կողմից, որ եթե չլիներ 1994 թ. օրենքի 25-րդ բաժինը, նա մինչև իր դատավարությունը գրավի դիմաց արձակվելու բավականին մեծ շանսեր կունենար: Դիմողը պնդում է նաև, որ մինչև իր դատավարությունը գրավի դիմաց արձակելը կարող էր ազատության մեջ իր անցկացրած վերջին օրերը լինել, եթե նկատի առնվի զառամյալ տարիքը, վատառողջությունը և երկարատև պատիժը [հետագայում նա դատապարտվեց, *ի թիվս այլոց*, բռնաբարության փորձի համար և արժանացավ ցմահ ազատազրկման]. այս հայտարարությունն էլ է կառավարությունը թողել առանց մեկնաբանության: Դատարանն անաչառ կերպով [on an equitable basis] դիմողին հատկացնում է 1000 ֆունտ ստեռլինգ փոխհատուցում ոչ դրամական վնասի դիմաց:

Պալատը միաձայն տարբերակում մտցրեց այն դիմողների միջև, որոնց նկատմամբ տեղի էր ունեցել 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, և նրանց, ովքեր հաջողությամբ վկայակոչել են 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը *«Բիթը և այլք ընդդեմ Մեծ-ի» (Beet and Others v UK)* գործում (2005 թ. մարտի 1-ի վճիռ):

46. Ինչ վերաբերում է Բիթի նկատմամբ արձանագրված 5-րդ հոդվածի խախտմանը, դատարանը հիշեցնում է, որ կալանքն ապօրինի էր համարել այն պատճառով, որ դատավորներն իրավասու չէին կալանքի վերաբերյալ որոշում կայացնել, քանի որ պատշաճ կերպով չէին ճշտել դիմողի միջոցները: Ճշմարիտ է, ինչպես նշում է կառավարությունը, որ այն գործերում, որոնք վերաբերում են 5-րդ հոդվածին առնչվող ընթացակարգային թերություններին՝ մասնավորապես 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի առումով, դատարանը սահմանել է, որ արդարացի բավարարում հարկ է հատկացնել միայն ազատությունից զրկելու հետևանքով պատճառված վնասի դիմաց, որից դիմողը զերծ կլիներ, եթե օգտված լիներ բացակայող երաշխիքներից (օրինակ՝ «*Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի*» (*Nikolova v Bulgaria*) [GC], թիվ 31195/96, ECHR 1999-II, պարբ. 76): Այդուհանդերձ, այն դեպքերում, երբ արձանագրվում է բուն կալանքի ապօրինությունը՝ համաձայն 5-րդ հոդվածի 1-ին կետի, կարելի է նշել, որ դատարանը, ընդհանուր առմամբ, փոխհատուցում տրամադրում է, ինչը կարևորում է ազատության իրավունքը, որը չի կարող վերացվել՝ բացառությամբ ներպետական օրենսդրությամբ նախատեսված դեպքերի և օրենքի գերակայության սկզբունքին համապատասխան: Ինչպես կալանքի տևողությունը, այնպես էլ գործի հանգամանքներով բացահայտված կամայականության աստիճանը կարող են փոխհատուցում հատկացնելու հիմնավորության վրա ազդող գործոն լինել (օրինակ՝ «*Կոնկան և այլք ընդդեմ Բելգիայի*» (*Conka and Others v Belgium*), թիվ 51564/99, ECHR 2002-I, «*Ասանիձեն ընդդեմ Վրաստանի*» (*Assanidzé v Georgia*), թիվ 71503/01, ECHR 2004 - ...): Վնասի գնահատման ներպետական տարբերակները որոշիչ չեն կամ, բոլոր դեպքերում, կիրառելի չեն կոնվենցիայով ներկայացված գանգատների առումով:

47. Հետևաբար, սույն գործում, անաչառ կերպով գնահատում կատարելով, դատարանը տեղին է համարում դիմողին հատուցում տրամադրելը: Հաշվի առնելով գործի հանգամանքները՝ ներառյալ հիմնավորվածության կամ օժանդակ փաստաթղթերի պակասը, դատարանը հատկացնում է 5.000 եվրո:

Այդպիսով, 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով հաջողության հասած դիմողների համար ներկայում

շատ դժվար է ոչ դրամական վնասի դիմաց փոխհատուցում ստանալ:

2 Պետական պաշտոնյաների (ինչպիսիք են ոստիկանության աշխատակիցները) ֆիզիկական ոտնձգությունների (ինչը խախտում է 3-րդ հոդվածը) զոհերը կարող են պահանջել ոչ դրամական վնասի փոխհատուցում: Օրինակ՝ թմրանյութերի վաճառքի համար կասկածվող անձը (Ռիբիչ) բողոքում էր, որ հարցաքննության համար բերման ենթարկվելու ընթացքում ոստիկանության աշխատակցի հարձակման է ենթարկվել: Նա թևի կապտուկի մասին բժշկական եզրակացություն է վերցրել: Դատարանը որոշել է, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում, քանի որ պատասխանող պետությունը չէր կարողացել համոզիչ բացատրություն ներկայացնել, թե ինչպե՞ս կարող էին այդ վնասվածքները հասցված լինել օրինական ճանապարհով: 50-րդ հոդվածի առնչությամբ

Պրն Ռիբիչը հայտարարում էր, որ իրեն պատճառվել է ոչ դրամական վնաս, որն ինքը գնահատում է 250.000 շիլինգ:

Կառավարությունը հարցի վերաբերյալ որևէ դիտողություն չի ներկայացրել:

Հանձնաժողովի պատվիրակը պնդում էր, որ անհրաժեշտ է հատկացնել համեմատաբար մեծ գումար, որպեսզի պրն Ռիբիչի դրության մեջ հայտնված մարդիկ դատարան դիմելու խթան ունենան: Դատարանը կարծում է, որ դիմողին անհերքելի ոչ դրամական վնաս է հասցվել: Հաշվի առնելով տարբեր համապատասխան գործոնները և անաչառ գնահատում կատարելով, ինչպես պահանջվում է 50-րդ հոդվածով, դատարանը հատկացնում է 100.000 շիլինգ («*Ռիբիչն ընդդեմ Ավստրիայի*» (*Ribitsch v Austria*), A.336 (1995), պարբ. 43-46, (տե՛ս վերը՝ էջ 181)]:

3 Այն դեպքերում, երբ դիմողները զրկվել են իրենց շահերը լիարժեք ներկայացնելու հնարավորությունից, քանի որ այն մարմինները, որոնք որոշում էին նրանց գործերը, չեն պահպանել համապատասխանությունը ինստիտուցիոնալ և ընթացակարգային երաշխիքներին, ինչպես պահանջում է կոնվենցիան, դատարանը հոժարությամբ դիտարկել է ոչ դրամական վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելու հարցը: «*Մակմայքլն ընդդեմ ՄԹ-ի*» (*McMichael v UK*) գործում (A.308 (1995) 20 EHRR 205, տե՛ս վերը՝ էջ 558) դիմողները հաջողությամբ փաստարկում էին, որ շոտլանդացի երեխաների գործով քննության ժամանակ իշխանությունների մերժումը սոցիալական ապահովության վերաբերյալ պաշտոնական հաշվետվությունները տեսնելու թույլտվության հարցում շոտլանդացի երեխաների ընտանեկան կյանքի հանդեպ հարգանքի իրավունքի (հոդված 8) ոտնահարում է: Կիրառելով 50-րդ հոդվածը՝ դատարանը սահմանել է, որ

Թեև հնարավոր է, որ տվյալ դիմողներն իրական հնարավորությունների այնքան կորուստ ունեցած չլինեն, որքան նախորդ դիմողները, ում հնարավորություն չէր տրվել օգտվելու իրավական պաշտպանության համապատասխան միջոցներից, չի կարելի վստահությամբ ասել, որ խնդրո առարկա հանդիսացող ընթացակարգային թերության բացակայությունը նրանց համար որևէ գործնական օգուտ չէր բերի: Ինչն առավել կարևոր է, դատարանն ընդունում է, որ խնամակալության վերաբերյալ գործի հետ կապված երկու դիմողների կողմից էլ վերապրած ակնհայտ տրավմայի, անհանգստության և անարդարության զգացողության որոշ մասը, թեև ոչ առյուծի բաժինը, հարկ է վերագրել նրան, որ վերջիններս չեն կարողացել տեսնել տվյալ գաղտնի փաստաթղթերը և հաշվետվությունները: Հետևաբար, հրահանգվում է ֆինանսական փոխհատուցում տրամադրել: Անաչառ գնահատում կատարելով՝ ինչպես պահանջվում է ևս հոդվածի պայմանների, դատարանը դիմողներին միասին տրամադրում է 8000 ֆունտ ստեռլինգ գումար (պարբ. 103):

Դատարանի ներկայացրած հիմնավորման վերջին մասը ցույց է տալիս նաև, որ այն դեպքերում, երբ հաջողության հասած դիմողները կարողանում են ապացուցել, որ տառապանք և անհանգստություն են կրել պաշտոնատար անձանց կողմից կոնվենցիայի պահանջները չկատարելու հետևանքով, նրանք կարող են ներկայացնել դա որպես ոչ դրամական վնասի մի ձև: Դատարանը վնասի այդ վերջին տեսակն է վկայակոչել *Լոպես Օստրայի* գործում (վերը՝ էջ 573):

4 Պալատը միաձայն «*Ռիկարդի Պիձատին ընդդեմ Իտալիայի*» (*Riccardi Pizzati v Italy*) գործով 2004 թ. նոյեմբերի 10-ի վճռում բացատրել է այն մեթոդաբանությունը, որ կիրառվում է ներպետական դատարաններում ընթացող դատավարություններում տեղ գտած անհարկի ձգձգումների (ինչը 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է) զոհ դարձած դիմողներին հասցված ոչ դրամական վնասի դիմաց տրվող գումարի հաշվարկման ժամանակ: Իտալիայի դատարաններից ավելի քան քսանվեց տարի էր պահանջվել՝ դիմողի և նրա հարևանի միջև գույքային վեճի վերաբերյալ որոշման հանգելու համար:

Վերաքննիչ դատարանը դա համարել է ողջամիտ ժամկետի երաշխիքի խախտում և որպես ձգձգումների հետևանքով կրած ոչ դրամական վնասի փոխհատուցում՝ դիմողին շնորհել է 5000 եվրո (նա պահանջել էր 103.000 եվրո): Պալատն արձանագրել է 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում և.

26. Ինչ վերաբերում է դատական գործընթացի երկարատևության հետևանքով կրած ոչ դրամական վնասի անաչառ գնահատմանը, ապա դատարանը համարում է, որ դատական գործընթացի յուրաքանչյուր տարվա (և ոչ թե ձգձգման յուրաքանչյուր տարվա) համար 1000-1500 եվրո տատանվող գումարը կարող է հիմք կազմող թիվ լինել համապատասխան հաշվարկի համար: Ներպետական դատական գործընթացի ելքը (անկախ նրանից, դիմողը գործը տանուլ է տալիս, հաղթում է, թե հաշտություն է կնքվում) նշանակություն չունի ոչ դրամական վնասի համար, որը հասցվել է դատավարության տևողության պատճառով:

Համախառն գումարը կավելացվի 2000 եվրոյով, եթե վեճի առումով սեղանին դրվածը նշանակալի է, ինչպես, օրինակ՝ աշխատանքի իրավունքին, քաղաքացիական կարգավիճակին և իրավունակությանը, կենսաթոշակներին վերաբերող գործերում կամ հատկապես լուրջ դատավարություններում, որոնք առնչվում են անձի առողջությանը կամ կյանքին:

Փոխհատուցման հիմնական գումարը կնվազեցվի՝ հաշվի առնելով դատական գործընթացում գործով զբաղվող դատարանների թիվը, դիմողի վարքագիծը՝ հատկապես չհիմնավորված հետաձգման ամիսների կամ տարիների առնչությամբ, որի համար պատասխանատու է դիմողը, վեճում որոշվելիքի կարևորությունը, օրինակ՝ երբ հարցի ֆինանսական կողմը քիչ կարևորություն ունի դիմողի համար, ինչպես նաև դիտարկվող երկրի կենսամակարդակը: Նվազեցում կարող է նախատեսվել նաև այն դեպքում, երբ դիմողը դատավարությունում համառոտ է ներգրավված եղել՝ որպես ժառանգորդ իր կարգավիճակում:

Գումարը կարող է նվազեցվել նաև այն դեպքում, երբ դիմողն արդեն իսկ ներպետական դատավարության արդյունքում ձեռք է բերել խախտումն արձանագրող որոշումը և, օգտվելով իրավական պաշտպանության ներպետական միջոցից, որոշակի գումար ստացել: Անկախ այն փաստից, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցի գոյությունը լիովին համապատասխանում է կոնվենցիայում ներդրված ստորին մակարդակներին պատվիրակելու սկզբունքին [subsidiarity principle], իրավական պաշտպանության նման միջոցն ավելի մոտ և մատչելի է, քան դատարանին ներկայացված գանգատը, ավելի արագ է և կիրառում է դիմողի հարազատ լեզուն. այդպիսով, այն առավելություններ ունի, որ անհրաժեշտ է հաշվի առնել:

....

30. Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է ոչ դրամական վնասին, դատարանը համարում է, որ այն դատական գործընթացների համար, որոնք մեկ ատյանում տևում են ավելի քան քսանվեց տարի, 46.000 եվրոն կարող է համարվել արդարացի գումար: Ինչևէ, դատարանը նշում է, որ դիմողի վարքագիծն իրականում փոքր չափով, բայց նպաստել է դատական գործընթացի ձգձգմանը: Համապատասխանաբար, դատարանը համարում է, որ դիմողին հարկ է հատկացնել 36.000 եվրո՝ հանած 30%, հաշվի առնելով ներպետական դատարանի կողմից խախտման արձանագրումը (տե՛ս վերը՝ պարբ. 26), այսինքն՝ 25.200 եվրո:

31. Այդ գումարից անհրաժեշտ է հանել նաև ներպետական մակարդակում դիմողին հատկացված փոխհատուցման գումարը, որը կազմում է 5000 եվրո: Համապատասխանաբար, դիմողը, որպես ոչ դրամական վնասի դիմաց փոխհատուցում՝ ստանում է 20.200 եվրո՝ գումարած կիրառելի հարկերը:

Կարծում եք արդա՞ր էր պալատի կողմից դիմողի փոխհատուցման նվազեցումը 10.000 եվրոյով, այն բանի համար, որ նա «փոքր չափով» նպաստել է ներպետական դատական գործընթացի ձգձգմանը: Մեծ պալատի հետագա քննության արդյունքում (տե՛ս վերը՝ էջ 447-48) դատարանը միաձայն որոշել է, որ պետության ներսում 5000 եվրոյի հատկացումը (դատարանի կողմից հատկացվող գումարի 14 տոկոսը) «ակնհայտորեն անհիմն» էր: Այնուամենայնիվ, մեծ պալատը ոչ դրամական վնասի դիմաց հատկացվող փոխհատուցումը նվազեցրեց մինչև 11.200 եվրո՝ հաշվի առնելով իրավական պաշտպանության ներպետական միջոցի առկայությունը («Պինտոյի օրենքի» համաձայն): Հավելյալ 1600 եվրո շնորհվեց՝ փոխհատուցելու համար դիմողի ապրած «հիասթափությունը», որ ստիպված է եղել ավելի քան մեկ տարի սպասել, մինչև տեղական իշխանությունները վճարեն «Պինտոյի օրենքով» հասանելիք փոխհատուցումը: Այդպիսով, մեծ պալատը պետություններին զգալի զեղչ էր տրամադրում 41-րդ հոդվածի առումով, եթե վերջիններս փոխհատուցում էին տրամադրում իրավական պաշտպանության ներպետական միջոցի կիրառմամբ (եթե նույնիսկ հետագայում այն դատարանի կողմից համարվում էր կոնվենցիայի պահանջները չբավարարող):

5 Դատարանը պատրաստակամ է գտնվել իրավաբանական անձանց/միությունների կրած ոչ դրամական վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելու հարցում: Օրինակ՝ «*Մահմեդական համայնքի գերագույն սուրբ խորհուրդն ընդդեմ Բուլղարիայի*» (*Supreme Holy Council of the Muslim Community v Bulgaria*) գործում (2004 թ. դեկտեմբերի 16-ի վճիռ, տե՛ս վերը՝ էջ 645-46) Պալատը միաձայն սահմանել է,

որ.

116. …Պետության անհիմն միջամտությունը կրոնական համայնքի կազմակերպության գործերին պետք է որ դիմող կազմակերպությանը ոչ դրամական վնաս հասցրած լիներ: Անաչառ կերպով որոշում կայացնելով՝ դատարանը 5000 եվրո է հատկացնում ոչ դրամական վնասի դիմաց, որը պետք է վճարվի պրն Ն. Գենջևին՝ որպես դիմող կազմակերպության ներկայացուցչի:

Դատական ծախսեր և ծախքեր

1 Առանցքային չափանիշները, որոնք դատարանը կիրառում է, երբ որոշում է՝ կոնվենցիայով սահմանված իրավունքները հաստատելու կամ պաշտպանելու նպատակով իրականացված օրինական ծախսերի և ծախքերի դիմաց համապատասխան դիմողներին 50-րդ հոդվածով գումար հատկացնի, թե ոչ և, եթե այո, ապա ինչ չափի, նշվել են Ձիբրալթարի հրաձգության գործում («*Մակքենն ընդդեմ ՄԹ-ի*» (*McCann v UK*), A.324 (1995) 21 EHRR 97, տե՛ս վերը՝ էջ 81) որպես. «... միակ ծախսեր, որոնք կատարվել են իրապես և անհրաժեշտաբար և, ողջամիտ սահմաններում ... վերականգնելի են ծախսերի սույն դասով» (պարբ. 220): Պահանջը, համաձայն որի՝ ծախսերը պետք է «իրապես» կատարված լինեն, բերվել էր այն նպատակով, որ դիմողները չկարողանան որևէ արդարացի բավարարում ստանալ ջիբրալթարյան գործով նախաքննության հետ կապված իրենց օրինական ծախսերի առումով, քանի որ նրանց իրավական ներկայացուցիչներն աշխատել էին անվճար: Հետևաբար, դատարանը որոշել է, որ.

Այս կապակցությամբ պնդում չի արվել, որ նրանք որևէ պարտավորություն են ունեցել այս մասով պահանջած գումարները վճարելու իրենց դատապաշտպանին: Այդ հանգամանքներում, 50-րդ հոդվածի համաձայն, չի կարող պահանջ ներկայացվել տվյալ ծախսերի առումով, քանի որ դրանք իրապես չեն կատարվել (պարբ. 221):

Այսպիսով, 50-րդ հոդվածի համաձայն, վերականգնելի են միայն այն մասնագիտական ծախսերը, որոնք դիմողը վճարելու օրինական պարտականություն ունի: Հետևաբար, մարդու իրավունքներով զբաղվող իրավաբանները պետք է իրենց հաճախորդներին հաշիվ ներկայացնեն ՄԻԵԿ-ի հետ առնչություն ունեցող աշխատանքի համար, եթե նույնիսկ նրանք հակված են հրաժարվելու վարձավճարներից՝ ելնելով էթիկական/հանրային շահի նկատառումներից, որովհետև եթե հաջողության հասած դիմողները պաշտոնապես չեն պարտավորվել վճարելու վարձավճարները, դրանք վերականգնելի չեն լինի 50-րդ/41-րդ հոդվածով:

2 Ինչ վերաբերում է այն պայմանին, որ ծախսերը և ծախքերը պետք է կատարված լինեն «անհրաժեշտաբար», «*Տոլստոյ Միլոսլավսկին ընդդեմ ՄԹ-ի*» (*Tolstoy Miloslavsky v UK*) գործում (A.323 (1995) 20 EHRR 442, վերը՝ էջ 734) դիմողը, *ի թիվս այլոց*, 104.000 շվեյցարական ֆրանկ էր պահանջում գանգատը հանձնաժողովին ներկայացնելու համար իր խորհրդատուին վճարած մասնագիտական վճարների և ծախսերի դիմաց: Կառավարությունը միջնորդել էր դատարանին քննադատական հայացք ձգել ծախսերի դիմաց պահանջված գումարին: Դատարանը հայտարարեց, որ «չի կարծում, թե բոլոր ծախսերը և ծախքերը կատարվել են անհրաժեշտաբար» (պարբ. 78), հետևաբար, դիմողի՝ արդարացի բավարարման պահանջի այդ մասով հատկացնում է ընդհանուր առմամբ 40.000 շվեցարական ֆրանկ: Միաժամանակ, դատարանը որոշեց, որ պահանջի ընդհանուր գումարը հարկ է նվազեցնել, քանի որ «դիմողը կոնվենցիայով հաջողության է հասել իր գանգատներից միայն մեկի մասով» (նույնը): Այս որոշումը ցույց է տալիս, որ օրինական ծախսերը և ծախքերը, որոնք կատարվել են դիմողի գործի տանուլ տված կողմերի առումով, ամենայն հավանականությամբ չեն կարող հավակնել 50-րդ/41-րդ հոդվածով նախատեսված փոխհատուցման:

3 Ծախսերի ողջամտությունը դատարանը գնահատել է «*Պապամիխալոպուլոսն ընդդեմ Հունաստանի*» (*Papamichalopoulos v Greece*) գործում, A.330-B (1995) 21 EHRR 439: Դիմողները հաջողությամբ փաստարկել էին, որ կառավարության կողմից 1967 թ. իրենց սեփականության բռնագրավումը և դրա

դիմաց հետագայում փոխհատուցում չտրամադրելը խախտել են իրենց սեփականության իրավունքը՝ սահմանված թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով: Այնուհետև, նրանք արդարացի բավարարում էին պահանջել, *ի թիվս այլոց*, իրենց կատարած օրինական ծախսերի և ծախքերի դիմաց, որը նրանք գնահատում էին մոտավորապես 3 միլիոն դրահմա:

Դատարանը նշում է, որ դիմողները վերը նշված գումարները հաշվարկել են՝ հիմնվելով համապատասխան ազգային մասշտաբների վրա ... և ոչ դրամական վնասի դիմաց իրենց պահանջածին համամասնորեն:

...

Հաստատված նախադեպային իրավունք է, որ դատարանը կաշկանդված չէ այս ոլորտում ներպետական պրակտիկայի կանոններով ...

Հետևաբար, դատարանը չի կարող դիմողների պահանջները բավարարել ամբողջությամբ, որի չափն անառարկելիորեն շատ մեծ է: Այնուամենայնիվ, ելնելով գործի հանգամանքներից, ներպետական թե՛ դատական, թե՛ վարչական բազմաթիվ և տևական գործընթացներից, այն փաստից, որ դիմողների իրավախորհրդատուն մասնակցել է բանակցությունների՝ նպատակ ունենալով հաշտության հասնել գործում, ինչպես նաև՝ 50-րդ հոդվածի կիրառության հարցի հատուկ բարդությունից, դատարանը ողջամիտ է համարում նրանց հատկացնել 65 միլիոն դրահմա, ներառյալ ավելացված արժեքի հարկը (պարբ. 47):

Այս հիմնավորումից պարզ է դառնում, որ դատարանը հատուկ ուշադրություն է դարձնում դիմողների իրավաբանների կողմից իրականում կատարված աշխատանքին (օրինակ՝ ծախսված ժամանակին), երբ գնահատում է վարձավճարների համապատասխան աստիճանը: Թեև օրինական ծախսերի և ծախքերի հաշվարկման ներպետական մեթոդները որոշիչ չեն դատարանի համար, նա կարող է «որոշակի օժանդակություն քաղել դրանցից» (*Տոլստոյ Միլոսլավսկու* գործ, պարբ. 77): Նշված գործում հանձնաժողովի պատվիրակը դատարանին միջնորդեց դիտարկել միատեսակ (այսինքն՝ համաեվրոպական) չափորոշչի ընդունման հարցը՝ 50-րդ հոդվածով վարձավճարների ողջամիտ չափի հաշվարկման համար: Ինչևէ, դատարանը մերժեց այդ կոչը, որովհետև, «հաշվի առնելով ներկայումս պայմանավորվող պետություններում վարձավճարների չափերի իսկայական տարբերությունները, միասնական մոտեցումը ըստ 50-րդ հոդվածի վարձավճարների գնահատմանը նպատակահարմար չէ» (նույնը): Իսկապես, Եվրոպայի խորհրդին անդամակցող պետությունների թվի աճին զուգընթաց՝ հավանական է, որ մեծանում է նաև պետություններում վարձավճարների չափերի տարբերությունը, ինչն էլ ավելի է հեռացնում ընդհանուր չափորոշչի սահմանումը:

4 Դատարանը հակված է եղել թույլատրել դիմողներին փոխհատուցում պահանջել ներպետական դատարաններում կոնվենցիայով սահմանված իրենց իրավունքները պաշտպանելիս կատարած օրինական ծախսերի և ծախքերի դիմաց: Օրինակ՝ *Օբերշլիքի* գործում (վերը՝ էջ 676) դիմողը 9753 շիլինգ էր պահանջում Ավստրիայի քրեական դատարաններում իր պաշտպանության իրականացման առնչությամբ: Դատարանը պարզեց, որ. «այդ ծախսերն անհրաժեշտ է հաշվի առնել, քանի որ դրանք կատարվել են դատարանի կողմից հայտնաբերված խախտումները կանխելու կամ դրանց հետևանքները վերացնելու նպատակով: Գումարը, որն ընդունվել է կառավարության կողմից, դատարանը ողջամիտ է համարում և, հետևաբար, հատկացնում է ամբողջությամբ» (պարբ. 70):

5 Դատարանը պատրաստակամ չի գտնվել թույլատրել պետություններին՝ փոխհատուցում պահանջել իրենց օրինական ծախսերի և ծախքերի դիմաց, երբ նրանց ներկայացրած միջպետական գանգատը հաջողությամբ է պսակվել կամ երբ, նախկին ստրասբուրգյան վերահսկողության համակարգով, իրենց քաղաքացու գործը փոխանցել են դատարանին (տե՛ս ներկայիս 36-րդ հոդվածը): «*Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի*» (*Loizidou v Turkey*) գործում (50-րդ հոդված), 1998-IV, դատավորները միաձայն որոշել են, որ.

48. Դատարանը հիշեցնում է այն ընդհանուր սկզբունքը, որ միջազգային դատարաններում շարունակելի գործերի հետ կապված ծախսերը կատարում են իրենք՝ պետությունները (տե՛ս, օրինակ՝ Արդարադատության միջազգային դատարանի կանոնադրության (օրենսդրական ակտի) 64-րդ հոդվածը և այդ դատարանի խորհրդատվական կարծիքը՝ «ՄԱԿ-ի վարչական դատարանի թիվ 158 վճռի վերանայման դիմումի» վերաբերյալ ICJ Զեկույցներ, 1993, էջ 211, պարբ. 96): Դատարանը համարում է, որ այս կանոնը նույնիսկ ավելի մեծ կիրառություն ունի, երբ, հաշվի առնելով կոնվենցիայի՝ որպես եվրոպական հասարակական կարգը սահմանող գործիքի հատուկ բնույթը՝ բարձր պայմանավորվող կողմերը գործեր են հարուցում կոնվենցիայի ապահովումն իրականացնող հաստատություններում, լինի դա [նախկին] 24-րդ հոդվածի թե [նախկին] 48-րդ հոդվածի (գ) կետի կիրառմամբ՝

որպես կոնվենցիայով սահմանված իրավունքների հավաքական իրավակիրառության մաս, կամ [նախկին] 48-րդ հոդվածի (բ) կետի կիրառմամբ՝ իրենց քաղաքացիների իրավունքները պաշտպանելու նպատակով: Սկզբունքորեն, դատարանի կարծիքով, պատշաճ չէ, որ պետությունները, որոնք, *ի թիվս այլոց,* հանդես են գալիս կոնվենցիան ընդունած երկրների համայնքի՝ որպես ամբողջության շահերի հետապնդման տեսանկյունից, եթե նույնիսկ դրանք համընկնում են իրենց իսկ շահերի հետ, դա անելու համար փոխհատուցում ստանան իրենց ծախսերի և ծախքերի դիմաց:

Հետևաբար, դատարանը մերժում է Կիպրոսի կառավարության պահանջը ծախսերի և ծախքերի փոխհատուցման վերաբերյալ:

Ընդհանուր հարցեր

1996 թ. դատարանը, սկզբնական կազմով, ընդհանուր գործելակերպ որդեգրեց, ըստ որի՝ հաջողության հասած դիմողներին տոկոս էր վճարվում՝ պատասխանող երկրների կողմից արդարացի փոխհատուցման հատկացումն ուշացնելու համար: Պետություններին տրվում էր երեք ամիս՝ սկսած դատարանի՝ արդարացի բավարարման գումարը մանրամասնող վճռի օրվանից: Եթե նշված ժամանակահատվածում վճարումը չէր կատարվում, ապա այդ գումարին սկսում էր պարզ տոկոս ավելանալ: Դատարանը տոկոսադրույքը սահմանեց պատասխանող երկրում գերակայող, օրենքով սահմանված տոկոսադրույքին համապատասխան: Այս գործելակերպը պաշտոնական ձևակերպում ստացավ 1998 թ. նոյեմբերի մշտական գործող դատարանի ընդունած «Դատավարական կանոններում» [Rules of Court]: Մեծ պալատը «*Քրիսթին Գուդվինն ընդդեմ ՄԹ-ի*» (*Christine Goodwin v UK*) գործում (2002 թ. հուլիսի 11-ի վճիռ, տե՛ս վերը՝ էջ 604-605) փոխեց այս համակարգը՝ հաշվի առնելով մի շարք անդամ պետությունների անցնելը եվրոյի:

121. Դիմողը պահանջում է փոխհատուցել օրինական ծախսերը և ծախքերը. իրավախորհրդատուների վարձավճարի դիմաց՝ 17.000 ֆունտ ստեռլինգ և ավագ ու կրտսեր դատապաշտպանների վարձավճարների դիմաց՝ 24.550 ֆունտ ստեռլինգ: Դատական նիստին մասնակցելու ճանապարհածախսը, ժամանակավոր կացարանի և այլ հարակից ծախսերի հետ միասին, համաձայն ներկայացված պահանջի, կազմել են 2822 ֆունտ ստեռլինգ: Այս ամենը միասին կազմում է 44.372 ֆունտ ստեռլինգ:

122. Կառավարությունը մեկնաբանում է, որ նշված գումարն ուռճացված է՝ համեմատած Միացյալ Թագավորությունից ստացված այլ գործերի հետ և, մասնավորապես, 39.000 ֆունտ ստեռլինգ գումարը, որը պահանջվում է համեմատաբար ուշ շրջանի համար, որի ընթացքում դիմողի ներկա իրավախորհրդատուները ծանոթացել են գործի հանգամանքներին, ինչը կարող էր վերաբերել միայն համակցված նկատառումներին և դատարանում լսումներին:

123. Դատարանը, հաշվի առնելով սույն գործի բարդության աստիճանը և գործում որդեգրված ընթացակարգերը, կարծում է, որ օրինական ծախսերի և ծախքերի դիմաց դիմողի պահանջած գումարները, որոնց համար աշխատաժամերի կամ վարձավճարների սակագների տեսքով մանրամասներ չեն ներկայացվել, մեծ են: Նկատի ունենալով Միացյալ Թագավորությանը վերաբերող այլ գործերով հատկացված գումարների չափը և հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի կողմից վճարված իրավաբանական օգնության գումարները, դատարանն այս մասով հատկացնում է 39.000 եվրո՝ կիրառելի ավելացված արժեքի հարկի գումարի հետ միասին: Հատկացումն արվում է եվրոյով, որը փոխարկվում է ֆունտ ստեռլինգի վճարման օրը, քանի որ դատարանը պատշաճ է համարում, որ այսուհետ կոնվենցիայի 41-րդ հոդվածով նախատեսվող արդարացի փոխհատուցման բոլոր հատկացումները սկզբունքորեն հիմնված լինեն եվրոյի՝ որպես հիմնական արժույթի վրա:

Գ. ՏՈԿՈՍ ՈՒՇԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

124. Քանի որ փոխհատուցումն արտահայտվում է եվրոյով, որը վճարման օրը փոխարկվում է ազգային արժույթի, դատարանը համարում է, որ ուշացման համար տոկոսը նույնպես պետք է արտացոլի եվրոյի՝ որպես հիմնական արժույթի ընտրությունը: Դատարանը տեղին է համարում որպես ընդհանուր կանոն ընդունել, որ եվրոյով արտահայտված գումարների վճարման ուշացման համար տոկոսի դրույքաչափը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի վարկերի սահմանային տոկոսադրույքի վրա, որին հարկ է ավելացնել երեք տոկոսային կետ:

Դատավորներ Ֆիշբախը և Թուրմենը կարծիքներ հրապարակեցին ուշացման համար նախատեսված տոկոսի ֆիքսված դրույքաչափ սահմանելու օգտին: Դատավոր Գրիվը մասնակի համընկնող կարծիք

հրապարակեց, որում նշում էր.

... Դատավորների միջև համաձայնություն կա, որ եվրոն ընդունելի հիմնական արժույթ է 41-րդ հոդվածով արված բոլոր հատկացումների համար: Դատարանը ցանկանում է, որ նման հատկացումները վճարվեն արագ, իսկ ուշացման տոկոսը նախատեսված է որպես արագ վճարման խթան՝ չունենալով պատժիչ բնույթ: Մինչ այստեղ ես լիովին համաձայն եմ:

Համաձայն դատարանի նոր քաղաքականության՝ փոխհատուցումը տրվում է եվրոյով, որը վճարման օրը փոխարկվում է ազգային արժույթի: Սա նշանակում է, որ սույն գործում դիմողը փոխհատուցման արժեքի առումով կորուստ կունենա, եթե նրա ազգային արժույթը՝ ֆունտ ստեռլինգը, շարունակի կայունանալ եվրոյի նկատմամբ: Վճարման օրը ազգային արժույթի կատարված փոխարկումը՝ ի հակադրություն դատավճռի օրը կատարված փոխարկման, շահավետ կլինի այն դիմողների համար, ում երկրների արժույթը եվրոն է, կամ ում ազգային արժույթը եվրոյի հետ համաքայլ է կամ նրանից թույլ: Մյուս բոլոր դիմողները փոփոխված քաղաքականության պարագայում կորուստներ կկրեն: Սա, իմ կարծիքով, հակասում է 14-րդ հոդվածի դրույթներին՝ համակցված 41-րդ հոդվածի հետ: Ավելին, այն հակասում է դատարանի դիրքորոշմանը, ըստ որի՝ փոխհատուցման տրամադրումը պետք է հնարավորինս արդար լինի, ինչը նշանակում է փոխհատուցման գումարի հնարավորինս ճշգրիտ որոշում:

Վերջին խնդիրը հիմնավորում է համարվում նաև դատարանի նախկին գործելակերպը փոփոխելու համար, երբ առանձին որոշակի գործերով դատարանի որոշումների համար որպես հիմք օգտագործվում էր վճարման ուշացման համար անդամ պետությունում գործող դրույքաչափը:

Մեծամասնությունը փորձում է ապահովել, որ փոխհատուցման տրամադրումն արդարացի լինի՝ օգտագործելով փոփոխվող տոկոսադրույքներ՝ այնպես, ինչպես դրանք տատանվում են վճարման ուշացման ժամանակահատվածում: Օգտագործվելու է Եվրոպական կենտրոնական բանկի (ԵԿԲ) կողմից առևտրային բանկերին մեկ օրվա ընթացքում փոխառություն տրամադրելիս գործածվող փոխառության սահմանային տոկոսադրույքը՝ գումարած երեք տոկոսային կետ: Սույն գործում, ինչպես նաև մեծ թվով այլ գործերում, սա դիմողներին ավելի ցածր տոկոսադրույք է տալիս վճարման ուշացման համար, քան դատարանի կողմից նախկինում օգտագործվող ազգային տոկոսադրույքն էր:

Վարկերի սահմանային տոկոսադրույքը բանկերի կողմից ԵԿԲ-ին վճարված տոկոսն է, երբ նրանց անհապաղ փոխառություն է անհրաժեշտ լինում: Այսինքն՝ դա այն դրույքաչափն է, որը ձևավորում է դրամի առևտրային շուկայի առաստաղը. և այն դատարան դիմողների համար գործնական նվազ հետաքրքրություն է ներկայացնում, եթե ընդհանրապես ներկայացնում է: Կոնվենցիային մասնակից պետություններից յուրաքանչյուրում նախատեսված՝ վճարման ուշացման դեպքում կիրառվող տոկոսադրույքներն իրենց մասով արտացոլում են արժույթի ազգային շուկաներում առկա իրավիճակը՝ այն դիմողների կողմից վճարվելիք դրույքաչափի առումով, ովքեր կարող են որոշում կայացնել վարկ վերցնել արդարացի փոխհատուցման վճարմանը սպասելու ընթացքում: Ուստի վճարման ուշացման դեպքում կիրառվող ազգային տոկոսադրույքները անհատներին այնպես են փոխհատուցում, ինչպես չի փոխհատուցում դատարանի մեծամասնության կողմից հավանության արժանացած նոր տոկոսադրույքը:

Ավելին, կարծում եմ, որ փոխհատուցում ստացող դիմողը պետք է ինքը ի վիճակի լինի տեղեկանալու, թե արդարացի բավարարման վճարման ուշացման պարագայում ինչ տոկոսադրույք է կիրառվում: Եվրոպայում բոլոր դիմողներն այնքան էլ հեշտությամբ չեն կարող պարզել վարկերի սահմանային տոկոսադրույքը, որն օգտագործվում է ԵԿԲ-ի կողմից առևտրային բանկերին մեկ օրվա ընթացքում վարկ տրամադրելիս: Դրույքաչափը բավական երկար ժամանակ կայուն է եղել, սակայն, անհրաժեշտության դեպքում, այն կարող է սահմանվել ամենշաբաթյա կամ ամենօրյա կտրվածքով: Թեև պետությունն է պատասխանատու ապացուցելու համար, որ, դատավճռին համապատասխան, վճարել է դիմողին, իսկ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն պատասխանատու է դա ստուգելու համար, ես համարում եմ, որ դա հավելյալ բյուրոկրատական ընթացակարգ է, որը դիմողների համար ավելի է դժվարացնում գործընթացին ինքնուրույն հետևելը: Ամեն դեպքում, հիմքը, որի վրա դատարանը սահմանում է վճարման ուշացման դեպքում կիրառվող նոր տոկոսադրույքը, այլևս կապ չունի այն իրական տոկոսադրույքի հետ, որը կարիք կունենա վճարել դիմողին, ով, արդարացի բավարարման վճարմանը սպասելիս, որպես միջանկյալ լուծում, վարկ է վերցնում: Այն չի փոխհատուցվում նոր տատանվող տոկոսադրույքով, և արդարության այս բավական վերացական փնտրտուքից ելնելով, իմ կարծիքով, չարժե նոր պրոտեզիալ բյուրոկրատական ընթացակարգ մտցնել:

Չնայած նրա փաստարկների տնտեսական հիմնավորվածությանը՝ դատարանը հետագա գործերում առաջնորդվեց մեծամասնության որդեգրած մոտեցմամբ:

Արդարացի բավարարման պահանջների սահմանափակումները

1 Գործը շահած դիմողները կանոնավոր կերպով դիմում են դատարան, որպեսզի վերջինս պաշտոնական հայտարարություն կամ օրդեր (հրահանգ) ընդունի պատասխանող երկրի դեմ: Ինչևէ, դատարանը մշտապես կրկնում է, որ իրավասու չէ պետությանը պարտադրելու որոշակի գործողություններ կատարել (կամ դրանցից զերծ մնալ): «*Յաղջին և Սարդինն ընդդեմ Թուրքիայի*» գործում

(վերը՝ էջ 925) դիմողները դատարանին խնդրում էին դիմել Թուրքիային, որպեսզի վերջինս համապատասխանի կոնվենցիան վավերացնելիս ստանձնած պարտավորություններին (դիմողները նաև մանրամասնում էին իրավական պաշտպանության մի շարք միջոցներ, որոնք, իրենց կարծիքով, կվերացնեին Թուրքիայի օրենսդրության թերությունները): Խնդրանքը մերժվեց, որովհետև.

Դատարանը նշում է, որ կոնվենցիան իրեն իրավասություն չի ընձեռում համաձայնել նման խնդրանքին: Դատարանը վերստին հայտարարում է, որ պետություններն իրենք են ընտրում, թե ինչ միջոցներ օգտագործեն իրենց ներպետական իրավական համակարգերում կոնվենցիայի դրույթներին համապատասխանելու համար կամ այն իրավիճակը շտկելու համար, որը կոնվենցիայի խախտման պատճառ է դարձել (պարբ. 81):

Համանման կերպով, *Տոլստոյ Միլոսլավսկու* գործում (վերը՝ էջ 930) դիմողը դատարանին միջնորդում էր «հռչակագրային» բնույթի վճիռ կայացնել, ըստ որի՝ ինքը պարտավորված կլիներ, եթե առհասարակ պարտավորված լիներ, վճարել լորդ Ալդինգթոնին վնասների դիմաց այնքան, որքան բավարար կլիներ համարժեք փոխհատուցման համար, և Բրիտանիայի կառավարությունը կապահովագրեր իրեն, եթե իրենից ավելի մեծ գումար պահանջեին: Այս միջնորդությունը մերժվեց, քանի որ «դատարանն իրավասու չէ, համաձայն կոնվենցիայի 50-րդ հոդվածի, այնպիսի հայտարարություն անել, ինչպիսին խնդրում է անել դիմողը» (պարբ. 72):

Ընդհանուր առմամբ, մշտական գործող դատարանը համանման արձագանք է որդեգրել: Ինչևէ, «*Ասանիձեն ընդդեմ Վրաստանի*» (*Assanidze v Georgia*) գործում (2004 թ. ապրիլի 8-ի վճիռ, և տե՛ս վերը՝ էջ 63) մեծ պալատը միաձայն պաշտոնապես հրահանգե լ է, որ «պատասխանող կողմը պարտավոր է հնարավորինս վաղ ժամկետում ապահովել դիմողի արձակումը»՝ ի լրումն ոչ դրամական և դրամական վնասի դիմաց նրան վճարվող 150,000 եվրոյի:

202. Ինչ վերաբերում է այն միջոցներին, որոնք պետք է ձեռնարկի Վրաստանը Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ, որպեսզի վերացնի արձանագրված խախտումը, դատարանը վերստին հայտարարում է, որ իր վճիռները, ըստ էության, հռչակագրային բնույթ ունեն, և, ընդհանուր առմամբ, առաջին հերթին դիտարկվող պետության խնդիրն է ընտրել, թե ինչ միջոց պետք է օգտագործել ներպետական իրավական կարգում, որպեսզի կատարվի կոնվենցիայի 46-րդ հոդվածով ստանձնած իրավական պարտավորությունը, պայմանով, որ այդ միջոցը համատեղելի է դատարանի վճռով սահմանված եզրակացությունների հետ (տե՛ս, այլ պետությունների շարքում, «*Սկոցարին և Ջուննտան ընդդեմ Իտալիայի*» (*Scozzari and Giunta v Italy*) [GC], թիվ 39221/98 և 41963/98, պարբ. 249, ECHR 2000 VIII, «*Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի*» (*Brumarescu v Romania*) (արդարացի փոխհատուցում) [GC], թիվ 28342/95, պարբ. 20, ECHR 2001-I, «*Աքդիվարը և այլք ընդդեմ Թուրքիայի*» (*Akdivar and Others v Turkey*) 1998 թ. ապրիլի 1-ի վճիռ (50-րդ հոդված), Զեկույցներ 1998-II, էջ 723-4, պարբ. 47, «*Մարքսն ընդդեմ Բելգիայի*» (*Marckx v Belgium*) 1979 թ. հունիսի 13-ի վճիռ, շարք A, թիվ 31, պարբ. 58): Դատավճռի իրականացման եղանակը երկրների հայեցողությանը թողնելն արտացոլում է ընտրության ազատությունը, որն ամրակցված է կոնվենցիայով պայմանավորվող պետությունների առաջնային պարտավորությանը՝ ապահովել երաշխավորված իրավունքները և ազատությունները (1-ին հոդված) (*mutatis mutandis* «*Պապամիխալոպուլոսն ընդդեմ Հունաստանի*» (*Papamichalopoulos v Greece*) 1995 թ. օգոստոսի 31-ի վճիռ (50-րդ հոդված), շարք A, թիվ 330-B, էջ 58-9, պարբ. 34):

Այնուամենայնիվ, իր բնույթի պատճառով սույն գործով արձանագրված խախտումը որևէ իրական ընտրություն չի թողնում այն վերացնելու համար պահանջվող միջոցի առումով:

203. Այս պայմաններում, հաշվի առնելով գործի յուրահատուկ հանգամանքները և կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի և 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտումը վերջ դնելու հրատապ անհրաժեշտությունը՝ ... դատարանը համարում է, որ պետությունը պետք է հնարավորինս վաղ ժամկետում ապահովի ղիմողի արձակումը:

Դատավոր Կոստան համընկնող կարծիք հրապարակեց, որում վերապահումներ արեց դատարանի՝ իրավական պաշտպանությանը վերաբերող նախադեպային իրավունքում տեղ գտած այս զարգացումների վերաբերյալ: Նա համարում էր, որ.

7. Որքան կոնկրետ է լինում վճռի շարադրանքը, այնքան Նախարարների կոմիտեի համար իրավական տեսանկյունից հեշտ է դառնում պետությունների նկատմամբ սահմանված միջոցների իրականացման վերահսկողությունը: Սակայն միշտ չէ, որ դա ճիշտ է քաղաքական առումներով, քանի որ, եթե այն իրականացվելիք միջոցների հարցում ընտրություն չի պարունակում, պատասխանող պետությանը մնում է միայն մեկ այլընտրանք՝ կա՛մ ենթարկվել դատարանի վճռին (որի դեպքում ամեն ինչ լավ է դասավորվում), կա՛մ գնալ իրավիճակն առկախելու ռիսկին:

Սակայն, սկզբունքորեն, նա կարծում էր, որ «անտրամաբանական և նույնիսկ անբարոյական կլիներ Վրաստանին (իրավական) միջոցների ընտրության հնարավորություն տալ, երբ կամայական կալանավորմանը վերջ դնելու միակ միջոցը բանտարկյալին ազատ արձակելն է»: Անշուշտ, դիմողի տևական ապօրինի կալանքն այն որոշիչ գործոնն է, որը թելադրել է մեծ պալատին *Ասանիձեի* գործով նման որոշում հրապարակել: 2005 թ. հունվարի 21-ին դատական տարվա սկիզբը նշանավորող իր ելույթում նախագահ Վիլդհաբերը նշել է, որ *Ասանիձեի* գործով վճռի հրապարակման հաջորդ օրը դիմողն ազատ է արձակվել Աջարիայում գտնվող բանտից:

Մեկ այլ մեծ պալատ պետություններին հրահանգում էր «ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դեռևս ազատազրկման մեջ գտնվող դիմողների կամայական կալանավորմանը վերջ դնելու և նրանց անհապաղ ազատ արձակումն ապահովելու ուղղությամբ» «*Իլաշկուն և այլք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի*» (*Ilascu and Others v Moldova and Russia*) գործում (2004 թ. հուլիսի 8-ի վճիռ, տե՛ս նաև վերը՝ էջ 65):

«*Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի*» (*Broniowski v Poland*) գործում (2004 թ. հունիսի 22-ի վճիռ, տե՛ս նաև վերը՝ էջ 47), ելնելով ներպետական օրենսդրության և վարչարարության համակարգային անկարողությունից *Բուգ գետի* գործով բազմաթիվ դիմողների սեփականության իրավունքներն ապահովելու հարցում՝ մեծ պալատը նշում է, որ Լեհաստանը պարտավոր է «համապատասխան իրավական միջոցների և վարչական գործելակերպերի միջոցով ապահովել *Բուգ գետի* գործով մնացյալ դիմողների՝ խնդրո առարկա սեփականության իրավունքների իրականացումը կամ փոխարենը համարժեք փոխհատուցում տրամադրել»: Այդպիսով, լիակազմ դատարանը պատրաստ է, բացառիկ դեպքերում, ցուցումներ հրապարակել, երբ ոտնահարվել են ազատությունից տարբեր այլ իրավունքներ:

2 Դատարանը դիմողներից պահանջում է արդարացի բավարարման պահանջ ներկայացնելիս խստորեն համապատասխանել իր դատավարական կանոններին: Օրինակ՝ «*Վենդիտելլին ընդդեմ Իտալիայի*» (*Vendittelli v Italy*, A.293-A,1994) գործում դիմողի իրավաբանը սահմանված ժամանակամիջոցում արդարացի փոխհատուցման պահանջը չի ներկայացրել: Դատարանը, երբ արձանագրվել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում, մերժել է արդարացի փոխհատուցման պահանջը.

44.…Եթե նույնիսկ հաշվի առնենք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը հավաքելու դժվարությունը, դատարանը կարծում է, որ այս գործով հատկացված ժամանակը բավարար էր այս պահանջները ներկայացնելու համար:

Նկատի ունենալով վերը նշվածը՝ պահանջները հարկ է մերժել՝ որպես ժամանակին չներկայացված:

Այս խիստ մոտեցումը շարունակվեց լիակազմ դատարանում: Օրինակ՝ «*Ժինիևսկին ընդդեմ Ֆրանսիայի*» (*Giniewski v France*) գործում (2006 թ. հունվարի 31-ի վճիռ) պալատը միաձայն արձանագրեց, որ դիմողի առնչությամբ խախտվել է 10-րդ հոդվածը: Բայց քանի որ վերջինս սահմանված ժամակահատվածում արդարացի փոխհատուցման պահանջ չի ներկայացրել, նրա օգտին որևէ հատկացում չարվեց:

3 Թեև դատարանը չի ողջունում, երբ պետությունը նախկինում ներկայացված պահանջը միացնում է 41-րդ հոդվածի համաձայն տրամադրվող արդարացի փոխհատուցման գումարին, այնուամենայնիվ կոնվենցիայով նման քայլն արգելելու օրինական իրավասություն չունի: «*Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի*» (*Selmouni v France*, (1999) 29 EHRR 403) գործում (վերը՝ էջ 173) դատարանը նշում է, որ.

132. Գանգատարկուն ուշադրություն է հրավիրում, որ իրեն պարտավորեցրել են վճարել, իրենց դեմ դատական գործընթացի արդյունքում դատապարտված այլ անձանց հետ միասին և առանձին, մաքսային տուգանք՝ տասներկու միլիոն ֆրանսիական ֆրանկի չափով: Համապատասխանաբար, դիմողը միջնորդում է դատարանին, որպեսզի վերջինս իր վճռում նշի, որ 41-րդ հոդվածի համաձայն տրամադրված գումարներն անհրաժեշտ է բացառել դիմողի միջոցների վրա դրվող կալանքից:

133. Դատարանը համարում է, որ 41-րդ հոդվածի համաձայն՝ ֆիքսված և դատարանի վճռով կատարման ուժ ստացած փոխհատուցումը հարկ է ազատել դիմողի միջոցների վրա դրվող կալանքից: Անհասկանալի կլիներ դիմողին գումար հատկացնել որպես, *ի թիվս այլոց*, կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում համարվող վատ վերաբերմունքի և այդ խախտման փաստն ապացուցելու համար կատարված ծախսերի և ծախքերի դիմաց փոխհատուցում, եթե պետությունն ինքն այնուհետև

այդ գումարի առումով պետք է հանդիսանար թե՛ պարտատեր, թե՛ պարտապան: Թեև խնդրո առարկա գումարները բնույթով տարբեր են, դատարանը համարում է, որ ոչ դրամական վնասի դիմաց հատկացված փոխհատուցման իմաստն անխուսափելիորեն կխեղաթյուրվեր, իսկ 41-րդ հոդվածի համակարգը՝ կխաթարվեր, եթե նման իրավիճակը բավարարող համարվեր: Այնուամենայնիվ, դատարանն իրավասու չէ բավարարելու նման միջնորդությունը ... Հետևաբար, դատարանը ստիպված է այս կետը թողնել Ֆրանսիայի իշխանությունների հայեցողությանը:

Եզրակացություններ

Հեղինակի նախածեռնած ուսումնասիրությամբ պարզվում է, որ.

Ժամանակակից գործերը ցույց են տալիս, որ դատարանը պատրաստակամ է վարույթ ընդունել մի բավական լայն շրջանակի գործեր, որոնք դասակարգվում են ըստ դրամական վնասի, ոչ դրամական վնասի և ծախսերի/ծախքերի սահմանված տեսակների: Ինչևէ, գործնականում դատարանը մեծ զգուշավորություն է դրսևորում, երբ խոսքը վնասի դիմաց արդարացի փոխհատուցման բուն տրամադրման մասին է: Ինչպես պարզվեց, վերջին տարիներին դիմողները համեմատաբար շատ քիչ դեպքերում են հաջողության հասել այս տեսակների գծով փոխհատուցում ստանալու հարցում: Ավելին, նույնիսկ եթե դատարանը հատկացնում է նման փոխհատուցում, գումարը սովորաբար շատ ավելի փոքր է լինում, քան դիմողի պահանջածը: Ծախսերի/ծախքերի փոխհատուցման պահանջները ավելի շատ դեպքերում են հաջողության հասնում՝ պայմանով, որ դիմողները կարողանում են ապացուցել, որ ծախսերը/ծախքերն իրականում կատարվել են և որ դրանք ողջամիտ չափեր ունեն ...

Դատարանի կողմից 50-րդ հոդվածի կիրառության տարբեր կողմերը լուրջ մտահոգություններ են առաջացնում նախադեպային իրավունքի հետևողականության առնչությամբ (օրինակ՝ քրեական տուգանքները որպես դրամական վնաս դիտելու հարցի առումով ...): Այլ վճիռները չափազանց անհասկանալի են այն առումով, թե ինչի հիման վրա է դատարանը հատկացրել փոխհատուցման հենց այդ գումարը: Բացի այդ, դատարանն արդարացի փոխհատուցման պահանջները քննելիս բարոյական դատողություններ է անում տարբեր կարգի դիմողների բնույթի մասին, ինչպիսիք են նախկինում դատապարտված հանցագործները և ահաբեկիչները: Ինչևէ, դատարանը, ընդհանուր առմամբ, այդ դիտարկումների համար հստակ հողումներ չի անում և չի արդարացնում դրանց օգտագործումը: Դատարանը 50-րդ հոդվածի վերաբերյալ նախադեպային իրավունքում տեղ գտած այդ թերությունները վերացնելու կարիք ունի, եթե մտադիր է հաջողության հասնող դիմողների համար բավարարման ավելի հետևողական համակարգ ապահովել: Ավելին, 50-րդ հոդվածի արդար, բաց և հետևողական կիրառումը բխում է թե՛ դիմողների, թե՛ պետությունների շահերից [A R Mowbray, The European Court of Human Rights' Approach to Just Satisfaction [1997] Public Law 647, էջ 658-9]:

2006 թ. աշնանը դատարանի գրանցման բաժինը մասնագիտացված ստորաբաժանում հիմնեց, որն արդարացի փոխհատուցման տրամադրման գործընթացում պետք է հետևողականություն և պարզեցում ապահովի: Կասկածից վեր է, որ այն ծանր առաջադրանք է ստացել:

20 ՀՈԴՎԱԾ 47 ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դատարանի կողմից խորհրդատվական եզրակացություն տալու իրավասության մասին որոշումը

Մարդու իրավունքների եվրոպական դատարան
2004 թ. հունիսի 2

1991 թ. դեկտեմբերի 8-ին ԽՍՀՄ փլուզումից հետո Բելառուսի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի առաջնորդները ստորագրեցին մի համաձայնագիր, որը վերաբերում էր Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) ստեղծմանը: 1991 թ. դեկտեմբերի 21-ին տասնմեկ պետությունների (Ադրբեջան, Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղըզստան, Մոլդովա, Ռուսաստանի Դաշնություն, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան և Ուկրաինա) ղեկավարները ստորագրեցին նշված համաձայնագրին կից մի արձանագրություն, որով հիմնեցին ԱՊՀ-ն: Վրաստանը ԱՊՀ-ին միացավ 1993-ին: ԱՊՀ երկրները մշակեցին Անկախ Պետությունների Համագործակցության Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիան, որը 1995 թ. ներկայացվեց մասնակից պետությունների ստորագրմանը: Այս կոնվենցիան ուժի մեջ մտավ 1998 թ., երբ վավերացվեց Բելառուսի, Ղրղըզստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կողմից: ԱՊՀ կոնվենցիան պարունակում է մի շարք էական իրավունքներ և պարտավորություններ, որոնք արտահայտված են ՄԻԵԿ-ի նման ձևակերպումներով: ԱՊՀ կոնվենցիան նախատեսում է ԱՊՀ Մարդու իրավունքների հանձնաժողովի ստեղծում, որպեսզի այն, ի թիվս այլոց, ուսումնասիրի անձանց անհատական դիմումները մասնակից պետությունների կողմից ԱՊՀ կոնվենցիայի հայտարարվող խախտումների վերաբերյալ (2004 թ. հունիսի դրությամբ ԱՊՀ հանձնաժողովը դեռևս չէր ստեղծվել):

ԱՊՀ կոնվենցիայի մշակմանը հետևեցին Եվրոպայի խորհրդում ծագած մտահոգությունները՝ կապված Եվրոպայի խորհրդի անդամակցության ձգտող ԱՊՀ մասնակից պետություններում ԱՊՀ կոնվենցիայի և ՄԻԵԿ-ի վավերացման հնարավոր անհամատեղելիության հետ: Ի հետևանս, երբ Մոլդովան և Ուկրաինան դիմեցին, որպեսզի միանան Եվրոպայի խորհրդին, համաձայնեցին չվավերացնել ԱՊՀ կոնվենցիան: Ռուսաստանը, Եվրոպայի խորհրդին ներկայացված իր դիմումի մեջ հանձն առավ ապահովել, որ ԱՊՀ կոնվենցիան չի խանգարի ՄԻԵԿ-ում ամրագրված ընթացակարգին և երաշխիքներին: 2001 թ. մայիսին Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովն ընդունեց թիվ 1249 բանաձևը (2001), որում Վեհաժողովն արտահայտեց իր շարունակվող մտահոգությունը ԱՊՀ կոնվենցիայի և ՄԻԵԿ-ի համատեղելիության առնչությամբ: Վեհաժողովը համարեց, որ ԱՊՀ կոնվենցիան տրամադրում է պակաս պաշտպանություն թե՛ ամրագրված երաշխիքների բովանդակության, թե՛ հարկադիր կատարման կարգերի անկախության տեսանկյունից: Միաժամանակ, վեհաժողովն ընդունեց թիվ 1519 առաջարկությունը (2001).

... [Վ]եհաժողովը, նկատի առնելով ԱՊՀ հանձնաժողովի՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության կառույցի թուլությունը (վերջինիս վերահսկման մեխանիզմի, քաղաքական բնույթի, կայացված որոշումների օրինական բնույթի, հանձնաժողովի անդամների անկողմնակալության, անկախության և իրավազորության տեսանկյունից), և համարելով, որ ԱՊՀ հանձնաժողովին չի կարելի վերաբերվել որպես «միջազգային քննության կամ կարգավորման մեկ այլ ընթացակարգի», Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածի 2(բ) կետի իմաստով, առաջարկում է, որ Նախարարների կոմիտեն դիմի Մարդու իրավունքների եվրոպական դատարան, որպեսզի տվյալ հարցի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածի 2(բ) կետի մեկնաբանման վերաբերյալ խորհրդա-

տվական եզրակացություն տա:

2001 թ. հունիսին Նախարարների կոմիտեն նախարարների տեղակալների հանդիպման ժամանակ համաձայնեց ընդունել Խորհրդարանական վեհաժողովի խորհուրդը, և 2002 թ. հունվարին Նախարարների կոմիտեի նախագահը դիմեց դատարան, որպեսզի վերջինս, համաձայն ՄԻԵԿ-ի 47-րդ հոդվածի, տա խորհրդատվական եզրակացություն վերը հիշատակված առաջարկության մեջ բարձրացված խնդրի վերաբերյալ:

Համաձայն ՄԻԵԿ-ի 31(բ) հոդվածի՝ դիմումը մակագրվեց դատարանի մեծ պալատին, և քննարկումներից հետո դատարանը ՄԻԵԿ-ին մասնակից բոլոր պետություններին տեղեկացրեց այն մասին, որ պատրաստ է ստանալու նրանց գրավոր մեկնաբանությունները (որոնք այս փուլում պետք է սահմանափակվեն այն հարցով, թե արդյոք դիմումը տեղավորվո՞ւմ է դատարանի խորհրդատվական իրավասության սահմաններում): Տասը պետություններ ներկայացրեցին մեկնաբանություններ:

22. Գրավոր մեկնաբանություններ ներկայացրած տասը կառավարություններից վեցն այն կարծիքին էին, որ դատարանն իրավասու չէր խորհրդատվական եզրակացություն տալու իրեն ներկայացված խնդրի վերաբերյալ: Չեխիայի Հանրապետության, Գերմանիայի և Ուկրաինայի կառավարությունները համարեցին, որ տվյալ խնդիրը հստակորեն դուրս է դատարանի խորհրդատվական իրավասության սահմաններից, որովհետև դրա վրա տարածվում է 47-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված բացառության երկրորդ մասը, քանի որ այն վերաբերում է մի հարցի, «որը դատարանը կամ Նախարարների կոմիտեն պետք է որ ստիպված լինեին դիտարկելու ի հետևանս նման քննության, որը կարող էր հարուցվել համաձայն կոնվենցիայի», այն է՝ արդյոք ԱՊՀ հանձնաժողովի ընդունած ընթացակարգը «միջազգային հետաքննության կամ կարգավորման մեկ այլ ընթացակարգ» է՝ ելնելով 35-րդ հոդվածի 2(բ) կետի նպատակներից: Ռուսաստանի Դաշնության կառավարությունը նրոշեց, որ չնայած երկրորդ հարցին դատարանի դրական պատասխանելը կարող էր ծառայել որպես իրավասության պակասը հաստատող լրացուցիչ փաստարկ, երկու կոնվենցիաների գոյակցության խնդիրը որևէ պարագայում կոնվենցիայի և դրա արձանագրությունների մեկնաբանմանը վերաբերող իրավական հարց չէ: Նմանապես, Վրաստանի կառավարությունն արտահայտեց մի տեսակետ, ըստ որի՝ դատարանը չի ունեցել խորհրդատվական իրավասություն՝ քննելու երկու կոնվենցիաների գոյակցության խնդիրը, քանի որ դատարանը լիազորված չէր որոշելու այլ միջազգային գործիքների իրավական դերը»: Նրանք նաև հիշատակում էին հայցային վարույթի համատեքստում հարցի առաջացման հնարավորությունը: Վերջապես, Մոլդովայի կառավարությունը համաձայնեց, առանց որևէ հստակ հիմնավորում նշելու, որ դատարանն իրավասություն չուներ:

23. Մյուս չորս կառավարությունները, որոնք գրավոր մեկնաբանություններ էին ներկայացրել, այն կարծիքին էին, որ դատարանն իսկապես ուներ իրեն ներկայացված խնդրի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն տալու իրավասություն: Մալթայի կառավարությունը գտնում էր, որ դիմումը չի առնչվել որևէ հարցի, որը կարող էր դիտարկված լինել դատարանի կամ Նախարարների կոմիտեի կողմից՝ կոնվենցիայի համաձայն ընթացք ստացած քննության արդյունքում, քանի որ տվյալ հարցը կապված չի եղել դատարանում արդեն իսկ հարուցված կամ Նախարարների կոմիտեի քննության առարկա դարձած որևէ դատական գործի հետ: Ապա այս կառավարությունները գտան, որ տվյալ խնդիրը վերաբերում էր կոնվենցիայի 55-րդ հոդվածի մեկնաբանմանը: Թուրքիայի կառավարությունը նույնպես համարեց, որ դատարանն իրավասություն ուներ, քանի որ խնդրագիրը չէր առնչվել որևէ կոնկրետ դիմումի: Լեհաստանի և Սլովակիայի կառավարություններն ընդհանուր առմամբ կողմնակից էին, որ դատարանը տար խորհրդատվական եզրակացություն, չնայած նրանք որոշակի վերապահումներ էին արտահայտել այն դեպքի համար, որ տվյալ հարցը բարձրացնող ցանկացած գործ գործնականում պետք է լավի դատարանում: Այս կապակցությամբ Սլովակիայի կառավարությունը նշեց, որ դատարանի իրավասությունը չէր բացառվի 47-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ, եթե խորհրդատվական եզրակացությունն «իր բովանդակությամբ ավելի շատ ընդհանուր բնույթի լիներ, քան կոնկրետ»:

III. ԴԱՏԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

24. Նախ՝ դատարանը նշում է, որ կոնվենցիայի 47-րդ հոդվածով ներկայացված դիմումները կարող են առնչվել միայն իրավական խնդիրների, որոնք վերաբերում են կոնվենցիայի և կոնվենցիայի արձանագրության մեկնաբանմանը: Դատարանը համարում է, որ չնայած Նախարարների կոմիտեի խնդրագիրն ընդհանուր առմամբ վերաբերում է Անկախ Պետությունների Համագործակցության Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համակեցությանը, դատարանից չի ակնկալվում տեսականորեն քննել, թե արդյոք ԱՊՀ համակարգը կամ ԱՊՀ հանձնաժողովը համապատասխանո՞ւմ են կոնվենցիային, կամ թե ինչպե՞ս այդ կառույցներին դիմելը կարող է խանգարել դատարանի մատչելիությանը: Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1519 (2001) առաջարկության (որին հատուկ հղում է անում դատարանը) ձևակերպումներից պարզ է, որ դիմումն ըստ էության առնչվում է այն կոնկրետ հարցին, թե արդյոք ԱՊՀ հանձնաժողովը կարո՞ղ է համարվել «միջազգային քննության կամ կարգավորման մեկ այլ ընթացակարգ»՝ համաձայն կոնվենցիայի 35-րդ հոդվածի 2(բ) կետի իմաստի: Իսկապես,

առաջարկության մեջ ասվում է, որ Նախարարների կոմիտեն դիմի՝ ստանալու խորհրդատվական կարծիք «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածի 2(բ) կետի մեկնաբանման վերաբերյալ՝ կապված այս որոշակի հարցի հետ»: Հետևաբար, դատարանը բավարարված է այն հանգամանքով, որ խորհրդատվական կարծիք ստանալու դիմումը վերաբերում է մի իրավական հարցի, որը վերաբերում է կոնվենցիայի մեկնաբանմանը:

25. Հաջորդ քայլով դատարանը պարտավոր է պարզել, թե արդյոք խորհրդատվական կարծիք տալու իր իրավասությունը բացառվո՞ւմ է կոնվենցիայի 47-րդ հոդվածի 2-րդ կետով, այն հիմքով, որ դիմումը բարձրացնում է մի հարց, որն առնչվում է կոնվենցիայի 1-ին բաժնում և կոնվենցիայի արձանագրություններում սահմանված իրավունքների և ազատությունների բովանդակությանը կամ ընդգրկմանը, կամ բարձրացնում է որևէ այլ հարց, որը դատարանը կամ Նախարարների կոմիտեն կարող էին քննարկել ցանկացած այնպիսի լսումների արդյունքում, որոնք կարող էին տեղի ունենալ կոնվենցիային համապատասխան: Կոմիտեն ինքնին ակնհայտ է համարում այն, որ դիմումի մեջ բարձրացված հարցը չի առնչվում կոնվենցիայում և դրան կից արձանագրություններում սահմանված իրավունքների և ազատությունների բովանդակությանը կամ ընդգրկմանը: Այնուամենայնիվ, կոմիտեն անհրաժեշտ է համարում ուսումնասիրել, թե արդյոք տվյալ հարցն այնպիսի՞ն է, որ դատարանը կամ Նախարարների կոմիտեն կարող էին քննարկել՝ կապված ըստ կոնվենցիայի հարուցված վարույթների հետ:

26. Դատարանը հիշեցնում է, որ ստեղծվել է՝ ապահովելու կոնվենցիայով և դրան կից արձանագրություններով բարձր պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը (կոնվենցիայի 19-րդ հոդված), և համաձայն 32-րդ հոդվածի 1-ին կետի՝ դատարանի իրավասությունը տարածվում է «այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանմանն ու կիրառմանը, որոնք իրեն հանձնվում են 33-րդ, 34-րդ և 47-րդ հոդվածների դրույթներով նախատեսված դեպքերում»: Դատարանի տեսակետից հստակ երևում է, որ 47-րդ հոդվածի 2-րդ կետում հիշատակված «վարույթը» նրանք են, որոնք հարուցվել են կոնվենցիայի կա՛մ 33-րդ հոդվածով (միջպետական հայցեր) կա՛մ 34-րդ հոդվածով (անհատական գանգատներ) գանգատի ներկայացմամբ:

27. Ի լրումն՝ դատարանը նկատում է, որ կոնվենցիայի 35-րդ հոդվածը սահմանում է այն դիմումների ընդունելիության պայմանները, որոնք ներկայացվել են 33-րդ և 34-րդ հոդվածներով, և համաձայն 35-րդ հոդվածի 4-րդ կետի՝ դատարանը «մերժում է իրեն հանձնված ցանկացած գանգատ, որն անընդունելի է համարում»: Հետևաբար, դատարանի պարտականություններից է կոնվենցիայի հիման վրա հարուցված քննությունների իրականացման ընթացքում ուսումնասիրել՝ դիմումը հակասո՞ւմ է անընդունելիության հիմքերից որևէ մեկին, և, մասնավորապես, կապված 34-րդ հոդվածով ներկայացված անհատական դիմումների հետ, թե բովանդակային առումով նույն հարցն արդեն իսկ ներկայացվե՞լ է միջազգային քննության կամ կարգավորման մեկ այլ ընթացակարգի: Ուստի դատարանը համարում է, որ հետևյալ արտահայտությունը՝ «ցանկացած այլ հարց, որը դատարանը կամ Նախարարների կոմիտեն կարող էին քննարկել ցանկացած այնպիսի լսումների արդյունքում, որոնք կարող էին տեղի ունենալ կոնվենցիային համապատասխան», ներառում է հարցեր, որոնք վերաբերում են կոնվենցիայի 33-րդ և 34-րդ հոդվածներով ներկայացված դիմումներին: Դատարանն այս կապակցությամբ նկատում է, որ «ցանկացած այլ հարց» ձևակերպումը կարող է միայն վերաբերել այնպիսի հարցերի, որոնք չեն առնչվում կոնվենցիայում և դրան կից արձանագրություններում ամրագրված իրավունքների կամ ազատությունների բովանդակությանը կամ ընդգրկմանը, քանի որ այդ առումով դատարանի խորհրդատվական իրավասությունը հատկապես կանխվում է 47-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին մասով:

28. Այս մոտեցման համար դատարանն աջակցություն է գտնում է կոնվենցիայի թիվ 2 արձանագրության *Նախապատրաստական փաստաթղթերում*, որոնցից բխեցնում է, որ դատարանին խորհրդատվական իրավասությամբ օժտելու միտումը նպատակ ունի փոխլրացնելու դատարանի՝ կոնվենցիայի նախկին 48-րդ հոդվածով գոյություն ունեցող դատական իրավասությունը, այսինքն՝ դատարանի իրավասությունը՝ քննել անհատական դիմումներ կամ միջպետական բողոքներ (որոնք այն ժամանակ դատարան կարող էին ներկայացվել միայն մասնակից պետության կամ նախկինում գործող՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի (հանձնաժողովի) կողմից): Այսպիսով, տարբերակում մտցվեց այն հարցերի միջև, որոնք տեղավորվում էին դատարանի՝ գոյություն ունեցող իրավասության շրջանակում (որը նախկին 45-րդ հոդվածի հիման վրա տարածվում էր «բոլոր այն գործերի վրա, որոնք վերաբերում են սույն կոնվենցիայի մեկնաբանմանը և կիրառմանը, որոնք բարձր պայմանավորվող կողմերը կամ հանձնաժողովը ներկայացնում են դատարան՝ համաձայն 48-րդ հոդվածի»), և այլ հարցերի, որոնք վերաբերում են կոնվենցիայի մեկնաբանմանը և չէին կարող ծագել նման գործերի քննության կապակցությամբ: Նպատակը դատարանին օժտելն էր «կոնվենցիան մեկնաբանելու ընդհանուր իրավասությամբ, ինչը հետևաբար կներառեր այնպիսի հարցեր, որոնք ծագում են կոնվենցիայի կիրառումից, ոչ թե «հայցային վարույթից»» (տե՛ս AS/Jur(11)8, AS/Jur(11)25 rev. 2 և Փաստաթուղթ թիվ 1061): Հարցերի ներկայացված օրինակները, որոնք կարող էին ծագել այս ընդհանուր իրավասության շրջանակներում, հիմնականում վերաբերում էին ընթացակարգային այնպիսի կետերի, ինչպիսիք են դատավորների ընտրությունը, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի պարտականությունները ըստ կոնվենցիայի և Նախարարների կոմիտեի ընթացակարգը դատավճիռների ի կատար ածման գործում իր դերի իրականացման համար: Ի լրումն, 1962 թ. հունիսին մշակված՝ թիվ 2 արձանագրության նախագծի վերաբերյալ մեկնաբանությունն ամրագրում էր, որ դատարանի կողմից խորհրդատվական եզրակացություններ տալու իրավասության սահմանափակումների առարկան «դատարանի խորհրդատվական իրավա-

սության կիրառումը կանխելն էր այն հարցերի առնչությամբ, որոնք կարող էին տեղավորվել դատարանի հիմնական գործառույթի, այն է՝ դատական գործառույթի շրջանակում» (տե՛ս CM(62)147 rev.): Այս կապակցությամբ ավելացվեց, հատուկ հղում կատարելով սահմանափակումների երկրորդ մասի ներառման պատճառներին, որ «դատարանը կամ Նախարարների կոմիտեն, վարույթը սկսվելու պատճառով, գուցե ստիպված լինեն դիտարկելու այլ հարցեր, քան իրավունքների և ազատությունների բովանդակությանը և ընդգրկմանը վերաբերող հարցերն են»: Բացատրության եղանակով նշված էր, որ նպատակը բացառելն էր, ի թիվս այլոց, «իրավասության կամ ընթացակարգի հետ կապված հարցերը, որոնք, վարույթը սկսվելու պատճառով, կարող են ներկայացվել կոնվենցիայով նախատեսված մարմիններին»: Այսպիսով, «դատարանի խորհրդատվական իրավասությունը չի տարածվում այնպիսի հարցերի վրա, որոնք վերաբերում են դիմումների ընդունելիության պայմաններին» (*նույն տեղում*): Այս առնչությամբ դատարանը նշում է, որ չնայած կոնվենցիայի մեկնաբանման և կիրառման առումով դատարանն այդ ժամանակահատվածում գերագույն իրավասություն ուներ, ներառյալ՝ ընդունելիության չափանիշները, ընդունելիության հարցերը հիմնականում հանձնաժողովի իրավասության տակ էին, մինչդեռ այժմ կոնվենցիան սահմանում է, որ հենց դատարանն է պատասխանատու դիմումների ընդունելիությունն ուսումնասիրելու համար:

29. Դատարանը նշում է, որ այն հարցը, թե արդյոք անհատական դիմումի մեջ բարձրացված խնդիրն արդեն ներկայացվե՞լ է միջազգային քննության կամ կարգավորման մեկ այլ ընթացակարգի, անհատական դիմումների համատեքստում իրականում հանձնաժողովի կողմից լուծում է ստացել անցյալի մի շարք դեպքերում՝ կապված այն նմանօրինակ դրույթի հետ, որը բովանդակում էր կոնվենցիայի նախկին 27-րդ հոդվածի 1(բ) կետը: Մի քանի որոշումներում հանձնաժողովը եզրակացրեց, որ խնդիրը «բովանդակային առումով նույնը» չէր, և հետևաբար՝ անհրաժեշտ չհամարեց քննել, թե արդյոք խնդրո առարկա մյուս ընթացակարգը համապատասխանո՞ւմ էր կոնվենցիայի նախկին 27-րդ հոդվածի 1(բ) կետի ձևակերպմանը (տե՛ս *«Քաղծառայողների միությունների խորհուրդն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Council of Civil Service Unions v the United Kingdom)*, թիվ 11603/85, 1987 թ. հունվարի 20-ի որոշում, Որոշումներ և զեկույցներ 50, էջ 228, որը վերաբերում էր Աշխատանքի միջազգային կազմակերպության Միավորումներ կազմելու ազատության հարցերով կոմիտեին (դիմողները նույնը չեն), և *«Պաուգերն ընդդեմ Ավստրիայի» (Pauger v Austria)*, թիվ 16717/90, 1995 թ. հունվարի 9-ի որոշում, Որոշումներ և զեկույցներ 80, էջ 24 (խնդիրը տարբեր է) և *«Պելտոնենն ընդդեմ Ֆինլանդիայի» (Peltonen v Finland)*, թիվ 19583/92, 1995 թ. փետրվարի 20-ի որոշում, Որոշումներ և զեկույցներ 80, էջ 38 (դիմողները տարբեր են), որոնք երկուսն էլ վերաբերում են Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտեին): Այլ դեպքերում, այնուամենայնիվ, հանձնաժողովն ընդունել է, չնայած ոչ բացահայտ կերպով, որ մյուս ընթացակարգը, որին ներկայացվել է այդ նույն խնդիրը, իսկապես «միջազգային քննության կամ կարգավորման մեկ այլ ընթացակարգ» է (տե՛ս *«Կալսեռադա Ֆորնիելեսը և Կաբեսա Մատոն ընդդեմ Իսպանիայի» (Calcerrada Fornieles and Cabeza Mato v Spain)*, թիվ 17512/90, 1992 թ. հուլիսի 6-ի որոշում, Որոշումներ և զեկույցներ 73, էջ 214, *«Պաուգերն ընդդեմ Ավստրիայի» (Pauger v Austria)*, թիվ 24872/94, 1995 թ. հունվարի 9-ի որոշում, Որոշումներ և զեկույցներ 80, էջ 170, և *«C .W.-ն ընդդեմ Ֆինլանդիայի» (C.W. v Finland)*, թիվ 17230/90, 1991 թ. հոկտեմբերի 9-ի որոշում, չհաղորդված, որոնք բոլորն էլ վերաբերում են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեին, և *«Սերեսեդա Մարտինն ընդդեմ Իսպանիայի» (Cereceda Martin v Spain)*, թիվ 16358/90, 1992 թ. հոկտեմբերի 12-ի որոշում, Որոշումներ և զեկույցներ 73, էջ 120, որը վերաբերում է Աշխատանքի միջազգային կազմակերպության Միավորումներ կազմելու ազատության հարցերով կոմիտեին, որոնք բոլորն էլ անընդունելի են հայտարարվել՝ համաձայն 27-րդ հոդվածի 1(բ) կետի կիրառման):

30. Առավել նշանակալի է այն, որ երկու այլ գործերով հանձնաժողովը հստակ արտահայտվել է այն մասին, որ զուտ այն փաստը, որ տվյալ խնդիրը ներկայացվել է միջազգային քննության կամ կարգավորման մեկ այլ ընթացակարգի, ինքնին բավարար չէ՝ բացառելու համար հանձնաժողովի իրավասությունը, և անհրաժեշտ էր նաև որակական գնահատում, որպեսզի ապահովվի ընթացակարգի իրականացումը՝ համաձայն որոշակի չափանիշների: Այսպես, *«Լուկանովն ընդդեմ Բուլղարիայի» (Lukanov v Bulgaria)* (թիվ 21915/93, 1995 թ. հունվարի 12-ի որոշում, Որոշումներ և զեկույցներ 80, էջ 108) գործով հանձնաժողովը ստիպված էր քննարկել, թե արդյոք Միջխորհրդարանական միության Մարդու իրավունքների կոմիտեի կողմից դիմողի վիճակի քննության ընթացակարգը կարո՞ղ էր համարվել «միջազգային քննության կամ կարգավորման մեկ այլ ընթացակարգ»: Այն եզրակացությանը հանգելու ճանապարհին, ըստ որի՝ ընթացակարգն այդպիսին չէ, հանձնաժողովը կարծիք հայտնեց, որ «մեկ այլ ընթացակարգ» եզրույթը վերաբերում է «դատական կամ քվազիդատական վարույթին՝ նման այն վարույթներին, որոնք ամրագրվել են կոնվենցիայով», և «միջազգային քննություն կամ կարգավորում» եզրույթը վերաբերում է մասնակից պետությունների կողմից ստեղծված կառույցներին և ընթացակարգերին, այդպիսով բացառելով ոչ կառավարական մարմինները, ինչպիսին, ըստ հանձնաժողովի, Միջխորհրդարանական միությունն է: Նույն կերպ, *«Վառնավան և այլք ընդդեմ Թուրքիայի» (Varnava and others v Turkey)* (թիվ 16064-6/90 և թիվ 16068-73/90, 1998 թ. ապրիլի 14-ի որոշում, Որոշումներ և զեկույցներ 93, էջ 5) գործով, որը վերաբերում էր Միավորված ազգերի կազմակերպության Կիպրոսում անհետ կորած անձանց հարցերով կոմիտեին, հանձնաժողովը ոչ միայն պնդեց, որ նախատեսված ընթացակարգերը վերաբերում են այն վարույթներին, որոնք հարուցվել են դիմողի կողմից ձևականորեն կամ ըստ բովանդակության «միջնորդություն» ներկայացնելու միջոցով, այլև հաշվի առավ կոմիտեի կողմից քննություն վարելու կարողությունների սահմանափակ բնույթը և այն փաստը, որ կոմիտեն չէր կարող որևէ անհետ կորած անձի մահվան համար պատասխանատվությունը դնել որևէ մեկի վրա: Հետևաբար, այս դեպքերում հանձնաժողովը որդեգրել է մի մոտեցում, ըստ որի՝ ընդունելիության՝ իր կողմից իրականացվող քննության համատեքստում

ճշտում էր, թե արդյոք որևէ կոնկրետ ընթացակարգ տեղավորվո՞ւմ է կոնվենցիայի նախկին 27-րդ հոդվածի 1(բ) կետի շրջանակներում:

31. Դատարանը հրավիրվել է՝ քննելու 35-րդ հոդվածի 2(բ) կետով ներկայացված հարցերը միայն չափազանց սահմանափակ թվով դեպքերում (տե՛ս *«Յաջմուրդերելին ընդդեմ Թուրքիայի» (Yagmurdereli v Turkey)*, թիվ 29590/96, 2001 թ. փետրվարի 13-ի որոշում, որի դեպքում դատարանը նշել էր, որ քանզի Թուրքիան չի վավերացրել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրությունը, այդ նույն հարցը չէր կարող ներկայացվել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեին, և *«Սմիռնովան ընդդեմ Ռուսաստանի» (Smirnova v Russia)*, թիվ 46133/99 և թիվ 48183/99, 2002 թ. հոկտեմբերի 3-ի որոշում, որի դեպքում դատարանը վճռել է, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեին ներկայացված խնդիրը «բովանդակությամբ նույնը չէ», տե՛ս նաև *«Հարտմանն ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (Hartman v the Czech Republic)*, թիվ 53341/99, 2002 թ. դեկտեմբերի 17-ի որոշում, որի դեպքում խնդիրը չդիտարկվեց, քանի որ հայտարարվեց անընդունելի՝ մեկ այլ հիմքով, և *«Ֆոլգերեն ընդդեմ Նորվեգիայի» (Folgerø v Norway)*, թիվ 15472/02, որը պատասխանող կառավարությանն է փոխանցվել 2003 թ. դեկտեմբերի 4-ին. վերջին երկու գործերը վերաբերում էին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեին): Այսուհանդերձ, դատարանը հավանություն է տալիս հանձնաժողովի այս մոտեցմանը և համարում, որ հանձնաժողովի որոշումները, մասնավորապես՝ *Լուկանովի* և *Վառնավայի* գործերով ընդունված որոշումները, միանգամայն բավարար կերպով ցույց են տալիս, որ կոնվենցիայի 34-րդ հոդվածով հարուցված վարույթների համատեքստում կարող է պահանջվել այն հարցի ուսումնասիրությունը, թե արդյոք միևնույն հարցն արդեն իսկ ներկայացվե՞լ է միջազգային քննության կամ կարգավորման մեկ այլ ընթացակարգի, և նման ուսումնասիրությունը չի սահմանափակվում ձևական ստուգմամբ, այլ, երբ տեղին է, հասնում է մինչև պարզելը, թե արդյոք վերադաս մարմնի բնույթը, ընթացակարգը, որին վերջինս հետևում է, և այդ մարմնի որոշումների ազդեցությունն այնպիսի՞ն են, որ 35-րդ հոդվածի 2(բ) կետով բացառվում է դատարանի իրավասությունը: Հետևաբար, սկզբունքորեն բացառվում է այն հարցը, թե արդյոք որևէ կոնկրետ ընթացակարգի տեղավորվելը 35-րդ հոդվածի 2(բ) կետի սահմաններում մի հարց է, որը դատարանը գուցե ստիպված լինի դիտարկել այն վարույթների կապակցությամբ, որոնք հարուցվել են՝ համաձայն կոնվենցիայի և դատարանի խորհրդատվական իրավասության:

32. Ինչ վերաբերում է ԱՊՀ կոնվենցիայով հաստատված հատուկ ընթացակարգին, այն է՝ ԱՊՀ հանձնաժողովի կողմից դիմումների ուսումնասիրությունը, դատարանը նշում է, որ կոնվենցիայի մասնակից պետություններից մեկը՝ Ռուսաստանի Դաշնությունը, վավերացրել է նաև ԱՊՀ կոնվենցիան, մինչդեռ կոնվենցիային հետագայում միացած հինգ մասնակից պետությունները անդամակցում են նաև Անկախ Պետությունների Համագործակցությանը. դրանք են՝ Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան: Թվարկված պետություններից երեքը (Հայաստանը, Վրաստանը և Մոլդովան) ստորագրել են ԱՊՀ կոնվենցիան: ԱՊՀ կոնվենցիան մտել է ուժի մեջ: Ավելին, այդ կոնվենցիայի բազմաթիվ էական դրույթներ կրկնում են այն դրույթները, որոնց մեկնաբանումը և կիրառումը դատարանի պարտավորությունն է: Այս պարագայում դատարանը կարծում է, որ չի կարելի բացառել, որ այն հարցը, թե արդյոք ԱՊՀ հանձնաժողովի տրամադրության տակ եղած ընթացակարգը կարո՞ղ է համարվել «միջազգային քննության կամ կարգավորման մեկ այլ ընթացակարգ»՝ 35-րդ հոդվածի 2(բ) կետի իմաստով, հարկ է քննարկել ապագայում՝ կոնվենցիայի 34-րդ հոդվածով ներկայացված անհատական դիմումի՝ դատարանի կողմից քննության համատեքստում: Ավելին, ինչպես նշվեց վերը, սա կարող է հանգեցնել, ի թիվս այլոց, ԱՊՀ հանձնաժողովի անկախության և անկողմնակալության, դրա ընթացակարգերի բնույթի և կայացրած որոշումների ազդեցության վերլուծության:

33. Վերջապես, դատարանը նշում է, որ որոշ կառավարություններ, որոնք ներկայացրել են գրավոր մեկնաբանություններ, համարել են, որ դատարանը զրկված չէ խորհրդատվական եզրակացություն տալու իրավունքից, եթե նրան ուղղված խնդրագիրը չի առնչվում որևէ կոնկրետ դիմումի, որի առնչությամբ դատարանը դեռևս վճիռ չի կայացրել: Դատարանի համոզմամբ՝ 47-րդ հոդվածի 2-րդ կետի մեկնաբանման առնչությամբ այս մոտեցումը չի արտացոլում այդ դրույթի բառացի ձևակերպումը, որը վերաբերում է «այնպիսի վարույթների, որոնք *կարող են* հարուցվել համաձայն կոնվենցիայի» [շեղագիրն ավելացվել է], ոչ թե վարույթների, որոնք արդեն իսկ փաստացիորեն հարուցվել են: Ի լրումն՝ թիվ 2 արձանագրության նախագծի վերաբերյալ ներկայացված մեկնաբանությունը հստակ պնդում է, որ հիշատակված վարույթները եղել են «անցյալ, ներկա, ապագա կամ պարզապես հիպոթետիկ» (տե՛ս CM(62)147, վերանայված): Դատարանը համարում է, որ իր խորհրդատվական իրավասությունը բացառող դրույթների նպատակը խուսափելն է այն հնարավոր իրավիճակից, որի պայմաններում դատարանը խորհրդատվական եզրակացությամբ որդեգրում է մի դիրքորոշում, որը կարող է վնասել հետագա քննությանը մի դիմումի, որը ներկայացված կլինի ըստ կոնվենցիայի 33-րդ և 34-րդ հոդվածների, և էական չէ այն, որ նման դիմում չի ներկայացվել և գուցե երբևէ չներկայացվի: Այս առումով, դատարանը կրկին հիշատակում է *Նախապատրաստական փաստաթղթերը*, որոնցում նշված է, որ անհրաժեշտ է «ապահովել, որ դատարանը երբեք չդրվի այնպիսի դժվար կացության մեջ, երբ իր տեսակետն արտահայտելու խնդրագիր ստանալու արդյունքում պահանջվում է անմիջական կամ միջնորդավորված եզրահանգում անել մի իրավական հարցի վերաբերյալ, որի հետ հետագայում գուցե ստիպված լինի առնչվել՝ որպես իր վարույթում գտնվող որևէ գործում օգտագործվող հիմնական նկատառում» (տե՛ս CM(61)91): Դատարանը, հետևաբար, համարում է, որ իր խորհրդատվական իրավասությունը բացառելու համար բավարար է, որ իրեն ներկայացված իրավական հարցը լինի այնպիսին, որի վերաբերյալ հնարավոր է՝ ապագայում դատարանից պահանջվի անդրադառնալ այդ հարցին՝ իր հիմնական դատական գործառույթն

իրականացնելիս, այսինքն՝ կոնկրետ գործի ընդունելիությունը կամ հանգամանքները քննելիս:

34. Վերջապես, դատարանն ի գիտություն է ընդունում Մալթայի կառավարության տեսակետն այն մասին, որ դատարանից ըստ էության պահանջվում է մեկնաբանություն տալ կոնվենցիայի 55-րդ հոդվածի վերաբերյալ և որոշել մեկ այլ տարածաշրջանային կարգավորման փոխհարաբերությունը կոնվենցիայի հետ: Այս առումով դատարանը հիշում է իր վերոնշյալ (պարբ. 24) եզրակացությունն այն մասին, որ Նախարարների կոմիտեի կողմից իրեն ներկայացված խնդրագիրն իրականում վերաբերում է մի ավելի կոնկրետ հարցի, այն է՝ արդյոք ԱՊՀ համակարգը կարո՞ղ է համարվել «միջազգային քննության կամ կարգավորման մեկ այլ ընթացակարգ»՝ կոնվենցիայի 35-րդ հոդվածի 2(բ) կետի նպատակներից ելնելով: Հետևաբար, դատարանը կարծում է, որ խնդրագրի նպատակը երկու կոնվենցիաների գոյակցության ընդհանուր հարցի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն ստանալը չէ, և որ հետևաբար՝ դատարանից չի պահանջվել տվյալ որոշման համատեքստում անդրադառնալ ցանկացած խնդրի, որը ծագում է կոնվենցիայի 55-րդ հոդվածից:

35. Ամփոփելով՝ դատարանը կարծում է, որ խորհրդատվական եզրակացություն ստանալու խնդրագիրը վերաբերում է մի հարցի, որը հնարավոր է, որ դատարանը ստիպված լինի դիտարկել կոնվենցիայի համաձայն հարուցված որևէ վարույթի կապակցությամբ, և, հետևաբար, իրեն ուղղված այդ խնդրի առնչությամբ դատարանը խորհրդատվական եզրակացություն տալու իրավասություն չունի:

Այս հիմքերով դատարանը միաձայն

Որոշում է, որ խորհրդատվական եզրակացություն ստանալու խնդրագիրն իր իրավասության սահմաններից դուրս է, ինչպես այն սահմանված է կոնվենցիայի 47-րդ հոդվածում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Մեծ պալատի կազմում ընդգրկված էին նախագահ Վիլդհաբերը և դատավորներ Ռոզակիսը, Կոստան, Ռեսը, Բրատցան, Քաֆլիշը, Թուրմենը, Բիրսանը, Բուտկևիչը, Վայիչը, Պելոնպաան, Բական, Մարուստեն, Կովլերը, Զագրեբելսկին, Մուլարոնին և Ֆուրա-Սանդստրոմը:

2 Խորհրդատվական եզրակացություններ տալու իրավասությամբ դատարանին ի սկզբանե օժտել է թիվ 2 արձանագրությունը, որն ուժի մեջ մտավ 1970 թ.: Վերը հիշատակվածը դատարանին ուղղված առաջին խնդրագիրն էր: Այս մեխանիզմն օգտագործելու նկատմամբ Նախարարների կոմիտեի կողմից դրված սահմանափակման և մեծ պալատի կողմից սեփական հայեցողության սահմանների վերաբերյալ մեկնաբանությունների (մասնավորապես՝ տե՛ս այդ որոշման 28-րդ պարբերությունը) հիման վրա արդյոք կարծո՞ւմ եք, որ այս լիազորությունը որևէ գործնական նշանակություն ունի:

21 ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՈԴՎԱԾ 1 ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Դատարանի ընդհանուր մոտեցումը

.....

«Սպորոնգը և Լյոնրոթն ընդդեմ Շվեդիայի»
(Sporrong and Lönnroth v Sweden) A.52 (1982) 5 EHRR 35
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

«Սպորոնգ իսթեյթ» [Sporrong Estate] ընկերությանը (որն իրավաբանական անձ էր) պատկանում էր որոշակի գույք Ստոկհոլմի կենտրոնական թաղամասերից մեկում: 1956 թ. հուլիսին կառավարությունը Ստոկհոլմի քաղաքային խորհրդին ըստ գոտիների օտարման (հանրային կարիքների համար մասնավոր գույքի սեփականազրկում) թույլտվություն տվեց, որը տարածվում էր 164 միավոր գույքի վրա, ներառյալ՝ Սպորոնգին պատկանող սեփականությունը: Քաղաքային խորհուրդը նախատեսում էր կառուցել վերգետնյա կամուրջ, որն անցնելու էր նշված տարածքով, իսկ կամրջի մի հենասյունը, ըստ նախագծի, տեղադրվելու էր «Սպորոնգ իսթեյթին» պատկանող հողում: Գործող օրենսդրության համաձայն՝ կառավարությունը սահմանեց հնգամյա ժամանակահատված, որի ընթացքում օտարումը պետք է իրականացվեր (այդ ժամանակահատվածում խորհուրդը պետք է գույքի սեփանականատիրոջը կամ սեփականատերերին հրավիրեր անշարժ գույքի դատարան՝ որոշելու համար փոխհատուցման չափը): Հետագայում, խորհրդի խնդրանքով, կառավարությունը 1961, 1964, 1968 և 1969 թթ. երկարաձգեց Սպորոնգին պատկանող գույքի առնչությամբ հատկացված ժամանակը: 1975 թ. մայիսին խորհուրդը ներկայացրեց վերանայված պլաններ, որոնց համաձայն՝ Սպորոնգին պատկանող գույքը չէր օգտագործվելու և գոյություն ունեցող շինությունը պետք է պահպանվեր: Չորս տարի անց կառավարությունը չեղյալ հայտարարեց Սպորոնգին պատկանող գույքի օտարման թույլտվությունը: 1954-1979 թ. Սպորոնգին պատկանող գույքի նկատմամբ Ստոկհոլմի տարածքային վարչական խորհրդի կողմից կիրառվեց նաև շինարարություն իրականացնելու արգելք: Այս հրամանների գործողության ժամկետի ողջ ընթացքում «Սպորոնգ իսթեյթը» երբևէ չի փորձել վաճառել իր գույքը: Տկն Լյոնրոթին պատկանում էր Ստոկհոլմի մեկ այլ թաղամասում գտնվող գույքի երեք քառորդը: 1971 թ. սեպտեմբերին Շվեդիայի կառավարությունը խորհրդին լիազորեց օտարման ենթարկել 115 միավոր սեփականություն, ներառյալ՝ տկն Լյոնրոթին պատկանող գույքը, քանի որ խորհուրդն առաջարկել էր այդ վայրում կառուցել մի բազմահարկ ավտոկայանատեղի: Հետագայում խորհուրդը հրաժարվեց այդ առաջարկից, և 1979 թ. սեպտեմբերին օտարման թույլտվությունը չեղյալ հայտարարվեց: 1968 թ. մինչև 1980 թվականը տկն Լյոնրոթին պատկանող գույքը նաև ենթարկվեց շինարարություն իրականացնելու արգելքի: Այս հրամանների գործողության ժամկետի ընթացքում տկն Լյոնրոթը յոթ անգամ փորձել է վաճառել իր գույքը, սակայն հեռանկարային գնորդները խորհրդի հետ խորհրդակցելուց հետո հրաժարվել են գույքը ձեռք բերելու մտքից: Դիմողները գանգատ են ներկայացրել հանձնաժողովին՝ հայտարարելով, որ Շվեդիայի իշխանությունների կողմից տեղի է ունեցել չհիմնավորված միջամտություն սեփական գույքից անարգել օգտվելու իրենց իրավունքին, որը երաշխավորված է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով: Հանձնաժողովը՝ տասը կողմ և երեք դեմ ձայների հարաբերակ-

ցությամբ, որոշեց, որ այդ դրույթի խախտում տեղի չի ունեցել:

Իրավունքի վերաբերյալ

I. ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՂ ԽԱԽՏՈՒՄԸ

56. Դիմողները բողոքել են այն ժամանակահատվածի տևողությունից, որի ընթացքում ուժի մեջ են եղել օտարում իրականացնելու թույլտվությունները՝ զուգակցված շինարարության արգելքներով, որոնց ենթարկվել է իրենց գույքը: Նրանց կարծիքով, նշվածը կարելի է որակել որպես չհիմնավորված միջամտություն սեփական գույքից անարգել օգտվելու իրենց իրավունքին՝ երաշխավորված է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով, որի ձևակերպումը հետևյալն է.

> «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իր գույքից անարգել օգտվելու իրավունք ունի: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփական գույքից՝ բացառությամբ հանրային շահերի պաշտպանության համար և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններով:
>
> Վերոնշյալ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության իրավունքը կիրառել այնպիսի օրենքներ, որոնք նա անհրաժեշտ է համարում սեփականության՝ ընդհանուր շահերին համապատասխան օգտագործման վերահսկողությունն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

57. *Մարքսի (Marckx)* գործով 1979 թ. հունիսի 13-ին կայացրած վճռում դատարանը նշված հոդվածի (թիվ 1 արձ., հոդվ.1) առարկան նկարագրեց հետևյալ կերպ.

> «Ճանաչելով այն, որ յուրաքանչյուր ոք ունի սեփական գույքից անարգել օգտվելու իրավունք, 1-ին հոդվածը ըստ էության երաշխավորում է սեփականության իրավունքը: Սա այն հստակ տպավորությունն է, որ թողնում են «գույք» [possessions] և «գույքի օգտագործում» [use of property] (ֆրանսերեն՝ biens, propriété, usage des biens) հասկացությունները: Նախապատրաստական փաստաթղթերը, իրենց հերթին, անվերապահորեն հաստատում են սա. նախագիծը մշակողները շարունակաբար խոսում էին «սեփականության իրավունքից» [right of property] կամ «սեփականության նկատմամբ իրավունքից» [right to property], որպեսզի նկարագրեն ներկայում գործող 1-ին հոդվածին նախորդող հետագա նախագծերում արտացոլված հիմնական առարկան» (շարք A, թիվ 31, էջ 27, պարբ. 63):

Հարկ է պարզել, թե արդյոք դիմողներն իրավունք ունեի՞ն բողոքելու այս իրավունքի նկատմամբ միջամտությունից, և, եթե ունեին, նման միջամտությունը հիմնավորվա՞ծ էր:

1. ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՄՈՂՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ

58. Դիմողները չեն վիճարկում՝ օտարում իրականացնելու խնդրահարույց թույլտվությունները և շինարարության խնդրահարույց արգելքներն ինքնին օրինակա՞ն են եղել, թե՞ ոչ: Մյուս կողմից՝ նրանք բողոքել են Ստոկհոլմի քաղաքային իշխանություններին օտարման դիմաց փոխհատուցման չափը որոշելու համար դատական վարույթ հարուցելու նպատակով հատկացված ժամկետների տևողությունից (հինգ տարի, որը հետագայում երկարաձգվել է ևս երեք տարով, ապա՝ հինգ տարով և, վերջապես, տասը տարով «Սպորոնգ իսթեյթի» դեպքում, և տասը տարով՝ տկն Լյոնրոթի դեպքում ...): Նրանք նաև բողոքել են այն իրողության դեմ, որ օտարման թույլտվությունները և շինարարության արգելքները երկար ժամանակ (քսաներեք տարի և ութ տարի՝ թույլտվությունների դեպքում, քսանհինգ տարի և տասներկու տարի՝ արգելքների դեպքում) ուժի մեջ են մնացել: Նրանք մատնացույց են արել իրենց սեփականության իրավունքի վրա ունեցած բացասական հետևանքները, որոնք, ըստ նրանց պնդման, պայմանավորված են եղել այդ միջոցառումներով, երբ դրանք համակցվել են նման կերպ: Դիմողները նաև հայտարարել են, որ կորցրել են սովորական շուկայական գներով սեփական գույքը վաճառելու հնարավորությունը: Նրանք հավելել են, որ իրենք չափազանց մեծ ռիսկի դիմած կլինեին, եթե իրենց գույքի վրա ծախսեր կատարեին, և որ միևնույն է, եթե իրենք աշխատանքներ կատարած լինեին շինարարության թույլտվություն ստանալուց հետո, ապա ստիպված պետք է լինեին օտարման դեպքում որևէ փոխհատուցում չպահանջել այդ աշխատանքների արդյունքում տեղի ունեցած կապիտալի թանկացման դիմաց: Նրանք նաև հայտարարել են, որ եթե փորձեին անշարժ գույքի վարկ ստանալ, ապա այդ գործում կհանդիպեին դժվարությունների: Ի վերջո, դիմողները հիշատակել են, որ իրենց պատկանող հողում որևէ «նոր շինարարություն» արգելված է եղել:

Չնայած դիմողները չեն պնդել, որ իրենք ձևականորեն և անշրջելիորեն զրկված են եղել իրենց գույքից, «Սպորոնգ իսթեյթը» և տկն Լյոնրոթը հայտարարել են, որ խնդրահարույց թույլտվությունները և արգելքները իրենց գույքից օգտվելու և իրենց գույքն օտարելու հնարավորությունը և լիազորությունը ենթարկել են այնպիսի սահմանափակումների, որոնք եղել են չափազանց և չեն առաջացրել որևէ փոխհատուցում: Հետևաբար, այն ժամանակահատվածում, երբ խնդրահարույց

միջոցառումներն ուժի մեջ են եղել, նրանց սեփականության իրավունքը, ինչպես իրենք են պնդում, իմաստազրկվել է:

59. Կառավարությունն ընդունել է, որ շուկայական ուժերը գուցե ավելի են դժվարացնում այնպիսի գույքը վաճառելը կամ վարձակալության տալը, որի նկատմամբ տրված է օտարման թույլտվություն, և նման թույլտվությունը ինչքան երկար մնա ուժի մեջ, այնքան այս խնդիրն ավելի կլրջանա: Կառավարությունը նաև ընդունել է, որ շինարարության արգելքները սահմանափակել են սեփականության իրավունքի նորմալ իրացումը: Այնուամենայնիվ, իշխանության ներկայացուցիչները հաստատել են, որ նման թույլտվությունները և արգելքները քաղաքի հատակագծի էական մասն են և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով չեն խախտում սեփականատերերի՝ «սեփական գույքից անարգել օգտվելու» իրավունքները:

60. Դատարանը չի կարող ընդունել այս փաստարկը:

Չնայած օտարման թույլտվությունը որևէ կերպ չփոխեց սեփականատերերի՝ սեփական գույքից օգտվելու և այն օտարելու իրավունքը՝ ամրագրված օրենքում, այնուամենայնիվ գործնականում զգալիորեն նվազեցրեց այդ իրավունքի իրացումը: Դա նաև ազդեց սեփականության բուն էության վրա՝ այն առումով, որ դեպքից առաջ ճանաչեց, որ ցանկացած օտարում օրինական կլինի, և Ստոկհոլմի քաղաքային իշխանություններին լիազորեց օտարում իրականացնել բոլոր այն դեպքերում, երբ նա հարմար կգտնի: Դիմողների գույքային իրավունքները, ըստ այդմ, դարձան խոցելի և չեղյալ հայտարարվելու ենթակա:

Շինարարության արգելքը, մյուս կողմից, անկասկած սահմանափակել է դիմողների՝ սեփական գույքն օգտագործելու իրավունքը:

Դատարանը նաև այն կարծիքին է, որ թույլտվությունները և արգելքները սկզբունքորեն պետք է ուսումնասիրվեն միասին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վերլուծությունը կարող է պահանջել, որ դրանց միջև տարբերակում մտցվի: Սրա պատճառն այն է, որ նույնիսկ չնայած այս միջոցների միջև անհրաժեշտաբար որևէ իրավական կապ գոյություն չի ունեցել, ... և չնայած դրանց իրավազորության ժամանակահատվածները տարբեր են եղել, դրանք եղել են փոխլրացնող և ունեցել են մեկ միասնական նպատակ՝ նպաստել քաղաքի զարգացմանը՝ համաձայն այս նպատակով մշակված հետագա հատակագծերի:

Հետևաբար, տեղի է ունեցել միջամտություն դիմողների սեփականության իրավունքին, և, ինչպես տեղին նկատեց հանճնաժողովը, այդ միջամտության հետևանքներն անկասկած ավելի լուրջ են եղել՝ երկար ժամանակ օտարման թույլտվությունների և շինարարության արգելքների համակցված կիրառման հետևանքով:

2. ԴԻՄՈՂՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

61. Հարկ է դեռ պարզել, թե արդյոք դատարանի հայտնաբերած միջամտությունը խախտե՞լ է 1-ին հոդվածը, թե՞ ոչ:

Այդ հոդվածը (թիվ 1 արձ., հոդվ. 1) բաղկացած է երեք առանձին կանոններից: Առաջին կանոնը, որն ընդհանուր բնույթի է, սահմանում է սեփականությունից անարգել օգտվելու սկզբունքը. այն ամրագրված է առաջին պարբերության առաջին նախադասության մեջ: Երկրորդ կանոնը վերաբերում է ունեզրկմանը և դրա համար որոշակի պայմաններ է սահմանում. այս կանոնն ամրագրված է նույն պարբերության երկրորդ նախադասության մեջ: Երրորդ կանոնը ճանաչում է այն, որ պետություններն իրավունք ունեն, այլոց թվում, վերահսկելու գույքի օգտագործումը՝ հանրության շահերին համապատասխան, գործադրելով այնպիսի օրենքներ, ինչպիսիք անհրաժեշտ են համարում այդ նպատակին հասնելու համար. այս կանոնն ամրագրված է երկրորդ պարբերության մեջ:

Մինչ քննարկելը, թե արդյոք պահպանվե՞լ է առաջին կանոնը, դատարանը պարտավոր է որոշել՝ վերջին երկու կանոններն այս դեպքում կիրառելի՞ են:

(ա) Առաջին պարբերության երկրորդ նախադասության կիրառելիությունը

62. Նախ և առաջ հարկ է հիշեցնել այն, որ Շվեդիայի իշխանությունները դիմողների գույքը օտարման ենթարկելու հետագա քայլեր չեն կատարել: Հետևաբար, դիմողները որևէ ժամանակահատվածում ձևական առումով չեն «զրկվել իրենց գույքից». նրանք իրենց գույքն օգտագործելու, վաճառելու, կտակելու, նվիրաբերելու կամ գրավի տակ դնելու իրավունք են ունեցել:

63. Ձևականորեն օտարման, այսինքն՝ սեփականության փոխանցման բացակայության պայմաններում դատարանը կարծում է, որ հարկ է վերանալ արտաքին դրսևորումներից և քննել բողոքի հիմքում ընկած իրավիճակի հանգամանքները: ... Քանի որ կոնվենցիայի նպատակն է երաշխավորել «գործնական և արդյունավետ» իրավունքներ (տե՛ս *Էյրհի (Airey)* գործով 1979 թ. հոկտեմբերի 9-ին կայացրած վճիռը, շարք A, թիվ 32, էջ 12, պարբ. 24), հարկ է պարզել՝ այդ իրավիճակը հանգե՞լ է փաստացի օտարման, ինչպես պնդել են դիմողները:

Դատարանի կարծիքով՝ այն բոլոր ազդեցությունները, որոնց վերաբերյալ դիմողները բողոքել են (տե՛ս վերը, պարբ. 58) բխել են դիտարկվող գույքն օտարելու հնարավորությունների կրճատումից: Այդ ազդեցությունների պատճառ են դարձել սեփականության իրավունքի նկատմամբ կիրառված սահմանափակումները, ինչի հետևանքով այդ իրավունքն անմիջապես հիմնազրկվել է, ինչպես նաև շինությունների արժեքի սահմանափակումների ունեցած հետևանքները: Այսուհանդերձ, չնայած խնդրահարույց իրավունքը կորցրել է իր բովանդակության մի մասը, այն չի վերացել: Կիրառված

միջոցների ազդեցությունն այնպիսին չէ, որ հնարավոր լինի այն հավասարեցնել ունեզրկման: Դատարանն այս կապակցությամբ կարծում է, որ դիմողները կարող էին շարունակել օգտվել իրենց գույքից, և չնայած օտարման թույլտվությունների և շինարարության արգելքների ազդեցության պատճառով Ստոկհոլմում անշարժ գույք վաճառելն ավելի էր դժվարացել, գոյություն է ունեցել գույքը վաճառելու հնարավորություն: Համաձայն կառավարության տրամադրած տեղեկությունների՝ վաճառքի մի քանի տասնյակ գործարք իրականացվել է: ...

Հետևաբար, դիտարկվող գործում առաջին պարբերության երկրորդ նախադասությունը կիրառելու հնարավորություն չի եղել:

(բ) Երկրորդ պարբերության կիրառելիությունը

64. Շինարարության արգելքները հստակորեն կարելի է որակել որպես վերահսկողություն «[դիմողների] գույքի օգտագործման» նկատմամբ՝ համաձայն երկրորդ պարբերության իմաստի:

65. Մյուս կողմից՝ օտարման թույլտվության նպատակը չի եղել նման օգտագործումը սահմանափակելը կամ վերահսկելը: Քանի որ դա եղել է առաջին քայլը մի ընթացակարգում, որը հանգեցնելու էր ունեզրկման, ապա դա տեղավորվել է երկրորդ պարբերության սահմաններում: Դա հարկ է ուսումնասիրել առաջին պարբերության առաջին նախադասության համատեքստում:

(գ) Առաջին պարբերության առաջին նախադասության պահանջների կատարումը՝ օտարման թույլտվության առնչությամբ

66. Դիմողների գանգատները, նախ և առաջ, վերաբերում էին Ստոկհոլմ քաղաքին հատկացված ժամկետներին, որոնք, ըստ դիմողների, հակասել են թե՛ Շվեդիայի օրենսդրությանը, թե՛ կոնվենցիային: ...

69. Այն փաստը, որ թույլտվությունները թե՛ առաջին պարբերության երկրորդ նախադասության, թե՛ երկրորդ պարբերության սահմաններից դուրս էին, չի նշանակում, որ նշված իրավունքին միջամտությունը խախտել է առաջին պարբերության առաջին նախադասությամբ սահմանված կանոնը:

Վերջին դրույթի նպատակներից ելնելով՝ դատարանը պարտավոր է որոշել, թե արդյոք գտնվե՞լ է արդարացի հավասարակշռություն համայնքի ընդհանուր շահից բխող պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև (տե՛ս *«Բելգիայի լեզվաբանական» (Belgian Linguistic)* գործի շրջանակներում 1968 թ. հուլիսի 23-ին կայացված վճիռը, *mutatis mutandis*, շարք A, թիվ 6, էջ 32, պարբ. 5): Այս հավասարակշռության փնտրտուքն առկա է կոնվենցիայի ամբողջ տեքստում, նաև արտացոլված է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կառուցվածքում:

Կառավարության լիազոր ներկայացուցիչն ընդունել է նման հավասարակշռության հասնելու անհրաժեշտությունը: 1982 թ. փետրվարի 23-ի առավոտյան նիստում նա նշել է, որ, համաձայն «Օտարման մասին օրենքի» [Expropriation Act], արգելվում է օտարման թույլտվություն տալ, եթե տվյալ հանրային նպատակին կարելի է հասնել այլ եղանակով: Սա գնահատելիս լիարժեք ուշադրության պետք է արժանանան թե՛ անհատի շահերը, թե՛ հանրային շահերը:

Դատարանն անուշադրության չմատնեց օրենսդրության վերաբերյալ հնչեցվող այս մտահոգությունը: Ավելին, դատարանը բնական համարեց այն, որ այնպիսի բարդ և դժվարին ոլորտում, ինչպիսին է խոշոր քաղաքների զարգացումը, պայմանավորվող պետությունները պետք է օգտվեն հայեցողության սահմանից, որպեսզի կարողանան իրականացնել քաղաքի հատակագծման իրենց քաղաքականությունը: Այսուամենայնիվ, դատարանը չի կարող չգործադրել վերահայման իր իրավասությունը և պարտավոր է պարզել, թե արդյոք պահպանվե՞լ է անհրաժեշտ հավասարակշռությունն այնպիսի եղանակով, որը համահունչ է դիմողների՝ «[սեփական] գույքից խաղաղ կերպով օգտվելու» իրավունքին՝ համաձայն 1-ին հոդվածի առաջին պարբերության իմաստի:

70. Դիտարկվող ժամանակահատվածում գործող օրենքի բնորոշ գծերից մեկը դրա ոչ ճկուն լինելն էր: Բացառությամբ օտարման թույլտվությունն ամբողջապես չեղյալ հայտարարելու, ինչի համար պահանջվում էր քաղաքապետարանի համաձայնությունը, օրենքով նախատեսված չէր որևէ այլ միջոց, որով ավելի ուշ հնարավոր լիներ փոփոխության ենթարկել տվյալ գույքի սեփականատերերի վիճակը: Դատարանն այս կապակցությամբ նշում է, որ Ստոկհոլմի քաղաքային իշխանություններին տրամադրված թույլտվությունները տրվել էին՝ «Սպորոնգ իսթեյթի» դեպքում՝ հինգ տարի ժամկետով (որը հետագայում երկարաձգվեց երեք, ապա՝ հինգ և, վերջապես, տասը տարի ժամկետներով), իսկ տկն Լյոնրոթի դեպքում՝ տասը տարի ժամկետով: Ներկայացվող դեպքերի ժամանակ դրանք ուժի մեջ են եղել՝ համապատասխանաբար՝ քսանհինգ տարի և ութ տարի տևողությամբ: Այս ժամանակահատվածի ողջ ընթացքում դիմողները կատարյալ անորոշության մեջ են եղել՝ կապված իրենց գույքի ճակատագրի հետ, և իրավունք չեն ունեցել այն բանի, որ Շվեդիայի կառավարությունը հաշվի առնի ցանկացած դժվարություն, որին, հնարավոր է, իրենք բախվեին: Հանճնաժողովի զեկույցը ներկայացնում է նման դժվարությունների մի օրինակ: Տկն Լյոնրոթը կառավարությանը խնդրել էր չեղյալ հայտարարել օտարման թույլտվությունը: Քաղաքային խորհուրդը պատասխանել էր, որ գոյություն ունեցող հատակագծերը որևէ շեղում թույլ չեն տալիս: Իր հերթին, կառավարությունը նշված խնդրագիրը մերժել է այն հիմքով, որ առանց քաղաքային խորհրդի հստակ համաձայնության՝ իրենք չեն կարող դադարեցնել թույլտվության գործողությունը:...

Դատարանն անուշադրության չի մատնել Ստոկհոլմ քաղաքի շահը, որն արտահայտվում էր քաղաքի հատակագծերի իրականացման նպատակով գույքի օտարման տարբերակ ունենալով: Այսուամենայնիվ, դատարանը պատճառ

չի տեսնում, թե ինչու պետք է Շվեդիայի օրենսդրությունը բացառեր ողջամիտ ժամանակահատվածներով քաղաքի շահերի և գույքի սեփականատերերի շահերի վերագնահատման հնարավորությունն այն երկարատև ժամանակահատվածների ընթացքում, որոնք հատկացվում են յուրաքանչյուր թույլտվության համար, և որոնց ընթացքում դրանք պահպանում են իրենց իրավական ուժը: Դիտարկվող գործում նման հնարավորության բացակայությունն առավել ևս անընդունելի էր այն պատճառով, որ քաղաքի հատակագծման նախագծերը, որոնք հիմք էին ծառայել օտարման թույլտվություններ տալու համար, և միաժամանակ դիմողների գույքի հետագա օգտագործման նախատեսվող եղանակը մի քանի անգամ ենթարկվել են փոփոխությունների...

72. Դատարանը նաև կարծում է, որ շինարարության արգելքների գոյությունն այս ողջ ընթացքում էլ ավելի են խորացրել օտարման թույլտվությունների գործողության ժամկետների ունեցած վնասարար ազդեցությունը: Դիմողների սեփականության իրավունքի լիարժեք իրացումը խաթարվել է «Սպորոնգ իսթեյթի» դեպքում ամբողջ քսանհինգ տարվա, իսկ տկն Լյոնրոթի դեպքում՝ տասներկու տարվա ընթացքում: Այս կապակցությամբ դատարանը նշում է, որ 1967 թ. խորհրդարանական մարդու իրավունքների պաշտպանը համարել է, որ գույքի սեփականատերերի վրա բացասական ազդեցությունները, որոնք կարող են բխել երկարաձգված արգելքներից, անհամատեղելի են այն մոտեցման հետ, որ պետք է ձեռք բերի օրենքի գերակայությամբ կառավարվող պետությունը...

73. Համադրված լինելով այսպիսի եղանակով՝ միջոցառումների նշված երկու շարքերը ստեղծել են մի իրավիճակ, որը խախտել է այն արդարացի հավասարակշռությունը, որը պետք է առկա լիներ սեփականության իրավունքի պաշտպանության և ընդհանուր շահի առաջադրած պահանջների միջև. «Սպորոնգ իսթեյթը» և տկն Լյոնրոթը կրել են անճնական և չափազանց ծանր բեռ, որը կարելի էր օրինական համարել միայն այն դեպքում, եթե նրանք ժամկետների կրճատման հասնելու կամ փոխհատուցում պահանջելու հնարավորություն ունենային: Ընդհակառակը, համապատասխան ժամանակահատվածում Շվեդիայի օրենսդրությունից վերացվել են այս հնարավորությունները, և այն դեռևս բացառում է փոխհատուցման հնարավորությունը:

Դատարանի կարծիքով՝ այս փուլում տեղին չէ պարզելը՝ դիմողների նկատմամբ իրականում կիրառվե՞լ է կանխակալ մոտեցում, թե՞ ոչ (տե՛ս *Մարքսի (Marckx)* գործով կայացված վճիռը՝ mutatis mutandis, շարք A, թիվ 31, էջ 13, պարբ. 27). հենց նրանց իրավական վիճակից էր բխում այն, որ այլևս հնարավոր չէր գտնել պահանջվող հավասարակշռությունը:

74. Խնդրո առարկա թույլտվությունները, որոնց հետևանքներն ավելի էին ծանրացել շինարարություն իրականացնելու նկատմամբ արգելքների պատճառով, այսպիսով, խախտել են 1-ին հոդվածը, և սա երկու դիմողներին էլ վերաբերում է:

(դ) Շինարարության արգելքների առնչությամբ 1-ին հոդվածի պահպանումը

75. Հաշվի առնելով վերոնշյալը՝ դատարանը անհրաժեշտ չի համարում պարզել, թե արդյոք շինարարության արգելքները, առանձին վերցված, ո՞նպես խախտել են 1-ին հոդվածը:

…

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Տասը կողմ և ինը դեմ ձայների հարաբերակցությամբ վճռում է, որ երկու դիմողների դեպքում էլ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում ...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Մեծամասնությունը ներկայացնում էին նախագահ Վիարդան և դատավորներ Գանսհոֆ վան դեր Մերշը, Բինդշեդլեր-Ռոբերտը, Լիշը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Պինեյրո Ֆարինան, Գարսիա դե Էնտեռիան, Փեթիթին և Ռուսոն: Դատարանը 1-ին հոդվածի տեքստում առանձնացրել է երեք կանոն: Այսուհանդերձ, հեշտ խնդիր չէ որոշելը, թե որոշակի որ փաստական համատեքստում որ կանոնն է պետք կիրառել: Իսկապես, վերոնշյալ գործով ութ դատավոր (Զեքիա, Կրեմոնա, Տոիր Վիլջաուլմսոն, Լագերգրեն, Էվանս, Մակդոնալդ, Բերնհարդտ և Ձերսինգ) որոշել է, որ Շվեդիայի իշխանությունների գործողությունները պետք է գնահատվեն երրորդ կանոնի համաձայն (որն արտացոլված է 1-ին հոդվածի երկրորդ պարբերության մեջ):

Ակնհայտ է, որ որպեսզի կիրառվի երկրորդ պարբերությունը, մասնավոր գույքի օգտագործման նկատմամբ սահմանափակումները սեփականատիրոջը պետք է թույլ տան ունենալ առնվազն մի որոշակի աստիճանի ազատություն, այլապես սահմանափակումները հասնում են այն աստիճանի, որ վերածվում են ունեզրկման. նման դեպքում «օգտագործման» որևէ հնարավորություն չի մնում: Սակայն երկրորդ պարբերության կիրառելիության դեմ վճռական նշանակություն չի

կարող ունենալ այն, որ ձեռնարկված միջոցների վերջնական արդյունքը կարող է լինել դիտարկվող գույքի օտարումը: Այն դեպքերում, երբ գույքի օգտագործումը, չնայած՝ սահմանափակված, դեռևս հնարավոր է, այս դրույթը մնում է կիրառելի, եթե նույնիսկ այդ միջոցների կիրառման հիմքում ընկած նպատակն ի վերջո սեփականությունից զրկելն է: Սա տվյալ գործի շրջանակներում հաստատվում է այն փաստով, որ իրականում ունեզրկում այդպես էլ երբեք տեղի չի ունեցել: Սեփականատիրոջ կողմից գույքի օգտագործումը երբեք չի դադարեցվել պետության գործողության հետևանքով: Այն ժամանակավորապես սահմանափակվել է՝ նկատի առնելով ապագա հնարավոր օտարումները:

Մեր կարծիքով՝ հետևաբար, երկրորդ պարբերությունը կիրառելի է այն միջոցների նկատմամբ, որոնց վերաբերյալ բողոքել են դիտարկվող գործի շրջանակներում (միասնական չհամընկնող կարծիք, պարբ. 3):

Չհամընկնող կարծիք հայտնած դատավորները եզրակացրին, որ պետության կողմից դիմողների գույքի առնչությամբ ձեռնարկված միջոցները չեն անցել օրինական նպատակի սահմանը, որը թույլատրված է երրորդ կանոնի համաձայն:

2 Ավելի ուշ կայացրած վճռով (A.88. (1984)) դատարանը (տասներկու կողմ, հինգ դեմ ձայների հարաբերակցությամբ) որոշեց, որ Շվեդիան պարտավոր է վճարել արդարացի փոխհատուցում՝ 800.000 շվեդական կրոն, «Սպորոնգ իսթեյթի» կրած վնասների դիմաց և 200.000 շվեդական կրոն՝ տկն Լյոնրոթի կրած վնասների դիմաց:

3 Հետագայում դատարանը 1-ին հոդվածում ամրագրված երեք կանոնները միաձայն ընդունված վճռով մեկնաբանեց որպես փոխկապակցված կանոններ. *«Ջեյմսն ընդդեմ Միացյալ Թագավորության» (James v UK)* A.98 (1986) 8 EHRR 123 գործով (ստորև՝ էջ 979):

Երեք կանոնները, այնուամենայնիվ, առանձին չեն՝ փոխկապված չլինելու իմաստով: Երկրորդ և երրորդ կանոնները վերաբերում են սեփական գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտության որոշակի դեպքերի և, հետևաբար, պետք է մեկնաբանվեն առաջին կանոնում ամրագրված ընդհանուր սկզբունքին համապատասխան (պարբ. 37):

4 Ժամանակակից գործերում դատարանը միտում ունի կիրառելու արդարացի հավասարակշռության ընդհանուր մի չափանիշ, որպեսզի գնահատի մասնավոր գույքի նկատմամբ կառավարության միջամտությունների օրինականությունը՝ անկախ այն հանգամանքից, թե որոշակի որ կանոնն է կիրառելի 1-ին հոդվածով: Օրինակ՝ *«Իմմոբիլիարե Սաֆֆին ընդդեմ Իտալիայի» (Immobiliare Saffi v Italy)* (1999 թ. հուլիսի 28) գործով՝ դիմող ընկերությանը պատկանում էր մի բնակարան, և 1983 թ. ընթացքում ընկերությունը դատարանից ստացավ մի վճիռ, ըստ որի՝ կենվորից պահանջվում էր ազատել բնակարանը: Այսուհանդերձ, 11 տարվա ընթացքում ընկերությունը չկարողացավ ձեռք բերել ոստիկանության օժանդակությունը, որպեսզի հարկադրաբար կիրառվի գույքին վերաբերող այդ հրահանգը. պատճառը կառավարության՝ նման վճիռների կատարմանը խանգարող քաղաքականությունն էր (որը մշակվել էր բնակարանային լրջագույն ճգնաժամը հաղթահարելու նպատակով): Դատարանը պետության գործելակերպը բնորոշեց որպես վերահսկողություն դիմողի՝ 1-ին հոդվածի երկրորդ պարբերությամբ սեփական գույքի օգտագործման նկատմամբ (երրորդ կանոն):

49. Դատարանը վերահաստատում է, որ որևէ միջամտություն, մասնավորապես այնպիսին, որը կարող է դիտարկվել ըստ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ պարբերության, պարտադիր պետք է ապահովի «արդարացի հավասարակշռություն» հանրային շահի և անձի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև: Այսպիսի հավասարակշռության հասնելու մտահոգությունն արտացոլված է 1-ին հոդվածի՝ որպես ամբողջության կառուցվածքում և, հետևաբար, նաև այդ հոդվածի 2-րդ պարբերության մեջ: Կիրառված միջոցի և հետապնդված նպատակի միջև պարտադիր պետք է գոյություն ունենա համաչափության ողջամիտ հարաբերություն: Երբ դատարանը որոշում է՝ այս պահանջը բավարարվե՞լ է, թե՞ ոչ, ճանաչում է, որ պետությունն իրավունք ունի օգտվելու հայեցողության սահմանից՝ կապված ինչպես հարկադրման միջոցների ընտրության հետ, այնպես էլ պարզելու, թե արդյոք այդ հարկադրման հետևանքներն արդարացված են հանրային շահով՝ դիտարկվող օրենքի առարկային հասնելու նպատակով: Այնպիսի ոլորտներում, ինչպիսին է բնակության վայրը, որը առանցքային դեր է խաղում ժամանակակից հասարակությունների սոցիալական ապահովության և տնտեսական քաղաքականություններում, դատարանը հարգելու է օրենսդրի որոշումը առ այն, թե ինչն է հանրային շահ, բացառությամբ այն դեպքերի, երբ նման որոշումն ակնհայտորեն զուրկ է ողջամիտ հիմնավորումից: ...

Դատավորները համակարծիք էին իրենց եզրակացության մեջ, որ դիմողը ենթակա է եղել չափազանց ծանր բեռի, որը դիմողի՝ կոնվենցիայով նախատեսված գույքային իրավունքի և հանրային շահից բխող պահանջների միջև արդարացի հավասարակշռության արտահայտություն չի եղել: Սա հիմնավորվում է գույքի պատկանելության վճռի կատարմանը սպասելու երկար տևողությամբ, դիմողի՝ ներպետական դատարաններում գույքի պատկանելության վճռի հարկադիր կատարման ուշացումը բողոքարկելու անկարողությամբ և ուշացման դիմաց փոխհատուցման բացակայությամբ: Ելնելով վերոշարադրյալից՝ դատարանը գտավ 1-ին հոդվածի խախտում և Իտալիային հրահանգեց դիմողին վճարել 28 միլիոն լիրա փոխհատուցում կրած ֆինանսական վնասների դիմաց (կապված բնակարանից ստացվելիք վարձավճարի կորստի հետ):

5 Դատարանն արդարացի հավասարակշռության առումով փորձաքննությունն օգտագործել է՝ ընդգծելու համար 1-ին հոդվածով փոխհատուցում ստանալու ընդհանուր իրավունքը այն դեպքերում, երբ կառավարությունները մասնավոր գույքը վերցնում են՝ հանուն հանրային շահերի. տե՛ս *Ջեյմս* (ստորև՝ էջ 979), պարբ. 54 և *Լիթգոու* (ստորև՝ էջ 938): *«Սուրբ վանքերն ընդդեմ Հունաստանի» (Holy Monasteries v Greece)* A.301-A (1994) 20 EHRR 1 գործով դիմողները մի խումբ միջնադարյան եկեղեցական մարմիններ էին՝ հիմնված իններորդ և տասներեքերորդ դարերում: Դրանց նկատմամբ կիրառվել էր 1987 թ. ընդունված մի օրենք, ըստ որի՝ պետությունը պետք է դառնա ողջ եկեղեցական գույքի սեփականատերը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ վանքերը կներկայացնեին պահանջվող ապացույցներ առ այն, որ այդ գույքի սեփականության իրավունքը պատկանում է իրենց (սա խնդրահարույց էր, քանի որ, Հունաստանի օրենքի համաձայն, իրական գույքային գործարքների գրանցումը պարտադիր էր դարձել 1856 թ. ի վեր, իսկ ժառանգության գործարքների գրանցումը՝ 1946 թ. ի վեր): 1987 թ. ընդունված օրենքը եկեղեցիների համար գործնականում որևէ փոխհատուցում չէր նախատեսում: Դատարանը հայտարարեց հետևյալը.

> 71. Համապատասխան օրենսդրությամբ նախատեսված փոխհատուցման պայմանները ենթակա են գնահատման, թե արդյոք վիճարկվող միջոցառումը հարգո՞ւմ է անհրաժեշտ արդարացի հավասարակշռության պահանջը և, որ կարևոր է, արդյոք այդ միջոցառումն անհամաչափ բեռ չէ՞ դիմողների համար: Այս առումով գույքը վերցնելը՝ առանց դրա արժեքի և գումարի վճարման ողջամիտ հարաբերակցության, որպես կանոն, կորակվի որպես անհամաչափ միջամտություն, իսկ փոխհատուցման լիակատար բացակայությունը կարող է 1-ին հոդվածով համարվել հիմնավորված միայն բացառիկ հանգամանքներում: Այնուամենայնիվ, 1-ին հոդվածը չի երաշխավորում ամբողջական փոխհատուցման իրավունք ցանկացած հանգամանքներում, քանի որ «հանրային շահի» օրինական նպատակները կարող են պահանջել շուկայական արժեքից պակաս չափով փոխհատուցում ...

Դատավորները համակարծիք էին իրենց որոշման մեջ, որ պետությունը վանքերը զրկել է իրենց պատկանող գույքից՝ համաձայն 1-ին հոդվածի երկրորդ նախադասության (երկրորդ կանոն) իմաստի: Ի լրումն՝ 1987 թ. ընդունված օրենքը «նշանակալի բեռ» է դրել իրենց գույքից զրկված վանքերի վրա, և այդպիսով՝ չի կարողացել պահպանել արդարացի հավասարակշռություն վանքերի շահերի և հանրային շահերի միջև: Հետևաբար, տեղի է ունեցել 1-ին հոդվածի խախտում այն վանքերի նկատմամբ, որոնք վանական համալիրների գույքի սեփականության հարցով չեն կարողացել հասնել կառավարության հետ կամավոր համաձայնության: Պետության կողմից մասնավոր գույքի բռնագրավման ենթարկված անձանց տրվելիք փոխհատուցումների վերջին վճարումների չափից դուրս ուշացումները նույնպես պետք է որակվեն որպես 1-ին հոդվածով նախատեսված արդարացի հավասարակշռության պահանջի խախտում: *«Ալմեյդա Գառեթը, Մասկարենհաշ Ֆալկաոն ընդդեմ Պորտուգալիայի» (Almeida Garrett, Mascarenhas Falcao v Portugal)* (2000 թ. հունվարի 11) գործով դատարանը միաձայն էր որոշում կայացնելիս, ըստ որի՝ դիմողների նկատմամբ, որոնք իրենց հողերի նկատմամբ մոտ քսանհինգ տարի առաջ իրականացված օտարման (որպես 1974 թ. հեղափոխությունից հետո նախաձեռնված ագրարային բարեփոխումների մի մաս) դիմաց չէին ստացել վերջնական փոխհատուցում, տեղի է ունեցել այս դրույթի խախտում: Դատարանը որոշեց, որ դիմողներին վերջնական փոխհատուցում չտալը միջամտություն է սեփական գույքից անարգել օգտվելու իրավունքին: Ավելին, դիմողների ապրած անորոշությունը՝ կապված այն հարցի հետ, թե երբ իրենք կստանան իրենց հասանելիք փոխհատուցումը, նշանակել է, որ տուժել են «չափազանց ծանր բեռից», որը խախտել է

պահանջվող արդարացի հավասարակշռությունը:

Հազվադեպ օրինակներից մեկը, երբ դատարանը որոշել է, որ գույքից զրկումը, առանց փոխհատուցման վճարման, օրինական է 1-ին հոդվածով, տեղի է ունեցել Գերմանիայի վերամիավորման համատեքստում: *«Յանը և այլք ընդդեմ Գերմանիայի» (Jahn and Others v Germany)* գործով (վճիռը կայացվել է 2005 թ. հունիսի 30-ին) մեծ պալատը բախվեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրական արձագանքին՝ այն անձանց, ովքեր պահանջում էին վերականգնել իրենց սեփականության իրավունքները, որոնք խախտվել էին կոմունիստական իշխանության կողմից իրականացված հողերի օտարման հետևանքով: 1945 թ. օտարման ենթարկվեցին և պետական հողային պաշարին ավելացվեցին այն անձանց հողերը, ում տնօրինած հողի մակերեսը գերազանցում էր 100 հեկտարը: Այնուհետև այս պետական հողերից ութական հեկտար մակերեսով հողակտորներ էին հատկացվել «նոր ֆերմերներին»: Նրանք իրավունք էին ստացել այս հողակտորները փոխանցել իրենց ժառանգներին, պայմանով, որ դրանց մի որոշակի մասը պետք է օգտագործվեր գյուղատնտեսական նպատակներով: Վաղ 1990-ականներին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության խորհրդարանն ընդունեց մի օրենք (հայտնի՝ որպես «Մոդրոուի օրենք»՝ Պետական խորհրդի նախագահի անունով), որը վերացրեց այս հողերի օտարման նկատմամբ կիրառվող բոլոր սահմանափակումները: 1990 թ. հոկտեմբերին, երբ տեղի ունեցավ Գերմանիայի վերամիավորումը, «Մոդրոուի օրենքը» դարձավ Գերմանիայի Դաշնային Հանրապետության իրավունքի մի մասը: 1992 թ. Գերմանիայի խորհրդարանն ընդունեց «Սեփականության իրավունքների մասին» օրենքի երկրորդ լրացումը, որի նպատակն էր վերականգնել ժառանգների՝ նոր ֆերմերների նկատմամբ սեփականության իրավունքներն այն վիճակով, որը գոյություն էր ունեցել մինչև «Մոդրոուի օրենքի» կիրառումը: 1992 թ. ընդունված օրենքի համաձայն՝ ժառանգները կարող էին որպես ժառանգություն նման հող ստանալ միայն այն դեպքում, եթե 1990 թ. (կամ նախորդող տասը տարիների ընթացքում) մշակել են այն: Եթե ժառանգները նման գործունեության մեջ ներգրավված չէին, ապա հողերի նկատմամբ իրավունքները փոխանցվում էին այն երկրամասի հարկային իշխանություններին, որտեղ գտնվում էր տվյալ գույքը (առանց ժառանգներին որևէ փոխհատուցման վճարման): Բոլոր դիմողները նոր ֆերմերների ժառանգներ էին, ովքեր նշված ժամանակահատվածում գյուղատնտեսական գործունեություն չէին իրականացրել: Գերմանիայի դատարանները պաշտպանեցին հողերի նկատմամբ հարկային իշխանությունների ներկայացրած պահանջները: Այնուհետև դիմողները գանգատ ներկայացրեցին դատարան՝ պնդելով, որ տեղի է ունեցել 1-ին հոդվածի խախտում: Պալատը միաձայն վճիռ կայացրեց (2004 թ. հունվարի 22) այն մասին, որ կառավարությունն անօրինական կերպով դիմողներին զրկել է իրենց սեփականությունից՝ խախտելով 1-ին հոդվածը: Կառավարությունը պահանջեց գործի վերաքննություն մեծ պալատում: Վերջինս, ձայների գերակշիռ մեծամասնությամբ (տասնմեկ կողմ, վեց դեմ), բեկանեց պալատի վճիռը:

107. 1992 թ. հուլիսի 14-ին Գերմանիայի՝ 1990 թ. հոկտեմբերի 3-ին ուժի մեջ մտած վերամիավորումից երկու տարի չանցած, Գերմանիայի օրենսդրական մարմինը, ելնելով արդարացիության և սոցիալական արդարության վերականգնման նպատակներից, փորձեց շտկել «Մոդրոուի օրենքի» հետևանքները:

108. 1992 թ. հուլիսի 14-ին ընդունված «Սեփականության իրավունքների մասին» օրենքի (որը հիմնված էր ԳԴՀ-ում հողային ռեֆորմների մասին հրամանագրերով և պատկանելության փոփոխության մասին հրամանագրերով սահմանված սկզբունքների վրա) երկրորդ լրամշակման հիմնական նպատակը բոլոր հողային ռեֆորմների արդյունքում հող ձեռք բերած ժառանգներին այնպիսի պայմանների մեջ դնելն էր, որոնցում նրանք հայտնված կլինեին, եթե ժամանակին այդ սկզբունքները պատշաճ կերպով կիրառված լինեին: Սրա նպատակն էր կանխել հողերը փոխանցելու պայմանները չկատարած ժառանգների անարդարացի առավելություն ստանալն այն անձանց նկատմամբ, ովքեր ժամանակին ստիպված էին եղել հողը վերադարձնել պետական հողային պաշար, քանի որ իրենց հողն ինքնուրույն չէին մշակել և չէին անդամակցել որևէ գյուղատնտեսական կոոպերատիվի:

(iv) Եզրակացություն

109. Դատարանը նշում է, որ նախկինում իրենից արդեն իսկ պահանջվել է վճիռ կայացնել այն մասին, թե արդյոք սոցիալական արդարության հասնելու նպատակով տնտեսական այդ հատվածը բարեփոխելուն ուղղված (տե՛ս *Ջեյմսը և այլք (James and Others)* գործը, որը քննվել էր 1-ին հոդվածի առաջին պարբերության երկրորդ նախադասության համաձայն և վերաբերում էր վարձակալության հիմունքներով հողի երկարատև սեփականության բրիտանական

համակարգի բարեփոխմանը) կամ, հանրային շահերից ելնելով (տե՛ս *«Ազգային և պրովինցիալ շինարարական միությունը, Լիդզի մշտական շինարարական միությունը և Յորքշիրի շինարարական միությունն ընդդեմ Միացյալ Թագավորության» (National & Provincial Building Society, Leeds Permanent Building Society and Yorkshire Building Society v the United Kingdom)* գործը, վճիռը կայացվել է 1997 թ. հոկտեմբերի 23-ին, *Վճիռների և որոշումների զեկույցներ,* 1997-VII, որը քննվել էր 1-ին հոդվածի երկրորդ պարբերության համաձայն և վերաբերում էր հետադարձ իրավական ուժ ունեցող հարկային օրենսդրությանը), նախկինում ընդունված որևէ օրենքի թերությունները շտկելու նպատակով օրենսդիր մարմնի միջամտությունը հարգե՞լ է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով համապատասխան շահերի միջև «արդարացի հավասարակշռության» պահանջը:

110. Հարկ է նկատել, որ դիտարկվող գործի և վերոնշյալ գործերի միջև գոյություն ունեն որոշակի նմանություններ այն առումով, որ 1992 թ. Գերմանիայի օրենսդիր մարմինը ձգտել էր սոցիալական արդարության նպատակներից ելնելով՝ շտկել «Մողրոուի օրենքում» առկա թերությունները: Այն տարբերվում է *«Ջեյմսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (James and Others v the United Kingdom)* գործից, մասնավորապես այն առումով, որ, այնուամենայնիվ, «Սեփականության իրավունքների մասին» օրենքի երկրորդ տարբերակը դիմողների համար որևէ փոխհատուցում չի նախատեսում:

111. Ինչպես դատարանը նշել է վերը ... փոխհատուցման լիակատար բացակայությունը կարող է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով համարվել արդարացի միայն բացառիկ հանգամանքներում:

112. Այդ պատճառով դատարանը պարտավոր է քննել Գերմանիայի վերամիավորման եզակի համատեքստում, թե արդյոք այս գործի հատուկ հանգամանքները կարո՞ղ են համարվել բացառիկ հանգամանքներ՝ արդարացնելով որևէ փոխհատուցման բացակայությունը:

113. Այդ կապակցությամբ դատարանը վերահաստատում է, որ քաղաքական և տնտեսական ռեժիմի փոփոխության համատեքստում օրենքներ ընդունելիս պետությունն ունի հայեցողության լայն սահման (տե՛ս, այլոց թվում, *«Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի» (Kopecky´ v Slovakia)* [GC], թիվ 44912/98, պարբ. 35, ECHR 2004-IX, և *Զվոլսկի և Զվոլսկա [Zvolsky´ and Zvolská)* [ECHR 2002-XI], պարբ. 67-8 և 72): Դատարանն այս կետը վերահաստատեց՝ նաև կապված Գերմանիայի վերամիավորման եզակի համատեքստում օրենքների ընդունման հետ (տե՛ս, բոլորովին վերջերս, *«Ֆոն Մալցանը և այլք ընդդեմ Գերմանիայի» (von Maltzan and Others v Germany)* (dec.) [GC], թիվ 71916/01, թիվ 71917/01 և թիվ 10260/02, պարբ. 77 և 111-12, ECHR 2005):

114. 2004 թ. հունվարի 22-ին կայացրած իր վճռում պալատն արձանագրեց, որ որպեսզի պահպանվեր համաչափության սկզբունքը, Գերմանիայի օրենսդիր մարմինը «չէր կարող ի շահ պետության՝ դիմողներին զրկել իրենց գույքից՝ առանց նախատեսելու, որ նրանք ստանան համարժեք փոխհատուցում» (տե՛ս պարբ. 91): Պալատը եզրակացրեց, որ «եթե նույնիսկ Գերմանիայի վերամիավորմանը վերաբերող հանգամանքները պետք է համարվեն բացառիկ, դիմողների գույքը պետության կողմից վերցվելու դիմաց որևէ փոխհատուցման բացակայությունը խախտել է, ի վնաս դիմողների, արդարացի հավասարակշռությունը, որը պետք է պահպանվեր մասնավոր սեփականության պաշտպանության և հանրային շահերից բխող պահանջների միջև» (տե՛ս պարբ. 93):

115. Այսուհանդերձ, դատարանը չի պաշտպանում նշված կետի վերաբերյալ պալատի կարծիքը:

116. Դատարանի կարծիքով՝ երեք գործոններ այդ առումով վճռորոշ նշանակություն ունեն.

(i) Առաջին՝ հանգամանքները, որոնց պայմաններում ուժի մեջ մտավ «Մողրոուի օրենքը», որն ընդունվել էր ոչ ժողովրդավարական ճանապարհով ընտրված խորհրդարանի կողմից, երկու վարչակարգերի միջև ընկած անցումային ժամանակահատվածում, որն անխուսափելիորեն արտահայտվում էր վայրիվերումներով ու անորոշությամբ: Նման պայմաններում, եթե նույնիսկ դիմողները սեփականության նկատմամբ ձեռք էին բերել ձևական իրավունք, չէին կարող վստահ լինել, որ իրենց իրավական կարգավիճակը կպահպանվեր, մասնավորապես՝ այն պատճառով, որ «Մողրոուի օրենքում» ժառանգների մասին որևէ հիշատակման բացակայության պայմաններում նրանց վիճակը, ովքեր ինքնուրույն չէին զբաղվել հողագործությամբ և չէին հանդիսացել գյուղատնտեսական որևէ կոոպերատիվի անդամ, մնացել էր խոցելի՝ նույնիսկ այն բանից հետո, երբ այդ օրենքն ուժի մեջ էր մտել:

(ii) Երկրորդ՝ այն համեմատաբար կարճ ժամանակահատվածը, որն ընկած է եղել Գերմանիայի վերամիավորման և «Սեփականության իրավունքների մասին» օրենքի երկրորդ լրացման կիրառման միջև: Հաշվի առնելով այն հսկայական անելիքը, որին բախվել էր Գերմանիայի օրենսդիր մարմինը, երբ զբաղվում էր, այլ հարցերի շարքում, բոլոր այն համալիր խնդիրներով, որոնք վերաբերում էին ժողովրդավարական, շուկայական տնտեսության անցնելու շրջանում սեփականության իրավունքներին, ներառյալ այն խնդիրները, որոնք առնչվում էին հողային բարեփոխումների չեզոքացմանը, կարելի է համարել, որ Գերմանիայի օրենսդիր մարմինը միջամտել է ողջամիտ ժամկետում, որպեսզի շտկի «Մողրոուի

օրենքի» (իր կարծիքով՝ անարդար) հետևանքները: Գերմանիայի խորհրդարանին չի կարելի քննադատել այս օրենքի ամբողջական կիրառումը ձախողելու համար այն նույն օրը, երբ ուժի մեջ մտավ Գերմանիայի վերամիավորումը.

(iii) Երրորդ՝ «Սեփականության իրավունքների մասին» օրենքի երկրորդ լրամշակման պատճառները: Այս կապակցությամբ չի կարելի համարել, որ ԳԴՀ-ի խորհրդարանը գործել է ոչ խելամիտ ձևով, երբ համարել է, որ, սոցիալական արդարության նպատակներից ելնելով՝ պարտավոր է շտկել «Մողրոուի օրենքի» հետևանքներն այնպես, որ հողային ռեֆորմի շնորհիվ ստացած հողերի նկատմամբ ժառանգների կողմից լիարժեք սեփականության իրավունքի ձեռք բերումը կախված չլինի ժամանակին ԳԴՀ-ի իշխանությունների իրականացրած որևէ գործողությունից կամ անգործությունից: Նույն կերպ, դաշնային սահմանադրական դատարանի իրականացրած համապատասխան շահերի միջև հավասարակշռության հասնելու պահանջը, մասնավորապես՝ այս դատարանի կողմից 2000 թ. հոկտեմբերի 6-ին կայացված ղեկավար որոշման մեջ, որում ուսումնասիրվում էր այդ լրամշակվող օրենքի և «Հիմնարար օրենքի» [Basic Law] համապատասխանությունը, թվում է, կամայական չի եղել: Հաշվի առնելով այն չսպասված եկամուտը, որից «Մողրոուի օրենքի» շնորհիվ անկասկած շահել են դիմողները՝ հողային բարեփոխման համաձայն ստացած հողերի ժառանգների նկատմամբ ԳԴՀ-ում կիրառվող կանոնների շնորհիվ, այն փաստը, որ դա կատարվել է առանց որևէ փոխհատուցման վճարման, անհամաչափ չի եղել (տե՛ս *mutatis mutandis Ազգային և պրովինցիալ շինարարական միությունը* [*National & Provincial Building Society*], մեջբերված վերը, պարբ. 80-83): Հարկ է նաև այս կապակցությամբ նշել, որ «Սեփականության իրավունքների մասին օրենքի» երկրորդ լրամշակումից միայն պետությունը չէ, որ շահել է. որոշ դեպքերում այդ օրենքը նախատեսում էր հողի վերաբաժանում ֆերմերներին:

117. Նկատի առնելով բոլոր վերոշարադրյալ նկատառումները և հաշվի առնելով, մասնավորապես, ժառանգների իրավական կարգավիճակի անորոշությունը և սոցիալական արդարության հիմքերը, որոնց վրա հենվել են Գերմանիայի իշխանությունները, դատարանը եզրակացնում է, որ Գերմանիայի վերամիավորման եզակի համատեքստում որևէ փոխհատուցման բացակայությունը չի խախտել «արդարացի հավասարակշռությունը», որը պետք է ապահովվի սեփականության պաշտպանության և հանրային շահերից բխող պահանջների միջև:

Հետևաբար, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Կարծում եք, որ նշված հանգամանքները բավարար չափով բացառի՞կ էին, որպեսզի արդարացնեին փոխհատուցման բացակայությունը՝ համաձայն 1992 թ. ընդունված օրենքի: Նախորդ կոմունիստական իշխանությունների կողմից գույքի օտարման առնչությամբ Գերմանիայի Դաշնային Հանրապետության արձագանքի մեկ այլ կողմը դիտարկված է *Ֆոն Մալցանի (von Maltzan)* գործում. տե՛ս ստորև՝ էջ 964-65:

6 Հայտարարվել էր, որ 1-ին հոդվածի նախնական հիմնարար պահանջն այն է, որ պետությունները պարտավոր են գործել «օրինական» եղանակով (այս հայեցակարգի շուրջ ավելի մանրամասն քննարկման համար տե՛ս *«Անտրիշն ընդդեմ Ֆրանսիայի» (Hentrich v France)* գործը, ստորև՝ էջ 991): *«Յատրիդիսն ընդդեմ Հունաստանի» (Iatridis v Greece)* (1999) 30 EHRR 97 գործում 1950 թ. մի հողատեր, համապատասխան թույլտվությունները ձեռք բերելուց հետո կառուցել էր մի բացօթյա կինոթատրոն («Իլիուպոլիս» կինոթատրոնը): Երեք տարի անց գյուղատնտեսության նախարարը հրաժարվել է ճանաչել, որ, այլոց թվում, հողատիրոջն է պատկանում նաև այն հողը, որտեղ կառուցվել էր կինոթատրոնը: Հողատերը փորձել է սեփականության իր իրավունքները հաստատել դատարաններում, բայց հաջողության չի հասել: Այնուամենայնիվ, երբ նա մահացել է (1976 թ.), նրա ժառանգները ստացել են ժառանգության հարկի վճարման պահանջ՝ այն հողի նկատմամբ, որտեղ կառուցվել էր կինոթատրոնը: Նրանք այդ հարկը վճարել են 1982 թ.: 1978 թ. ժառանգները կինոթատրոնը լիզինգով տրամադրել են դիմողին, ով վերանորոգել է այն: 1985 թ. ընթացքում Ատտիկայի պրեֆեկտուրան դիմողին տեղեկացրել է, որ այն հողը, որտեղ կառուցվել է կինոթատրոնը, պատկանել է պետությանը, և դիմողի կողմից այդ հողը պահելն անթույլատրելի է: 1988 թ. Պետական հողերի կառավարման մարմինը [State Lands Authority] կինոթատրոնը հանձնել է տեղական քաղաքային խորհրդին: 1989 թ. մարտ ամսվա ընթացքում Ատտիկայի պրեֆեկտուրան դիմողին հրահանգել է ազատել կինոթատրոնը, իսկ հրահանգը ներկայացրել է՝ փակցնելով այն կինոթատրոնի դռանը: Հաջորդ օրը, մինչ դիմողը բացակայել է, տեղական քաղաքային խորհուրդը ներկայացնող պաշտոնյաներն ի կատար են ածել նշված հրահանգը շենք ներխուժելով: Դիմողը շենքն ազատելու մասին հրահանգը բողոքարկել է Աթենքի շրջանային դատարանում, և 1989 թ. հոկտեմբերին այդ դատարանը չեղյալ է հայտարարել նշված հրահանգը (քանի որ որևէ երրորդ կողմ անհիմն կերպով չէր զբաղեցնում գույքը): Դիմողը

բազմիցս դիմել է իշխանություններին, որպեսզի ստանա կինոթատրոնի տնօրինման իրավունք, սակայն քաղաքային խորհուրդը շարունակել է զբաղեցնել և շահագործել կինոթատրոնը: 1996 թ. դիմողը գանգատ է ներկայացրել հանձնաժողովին՝ պնդելով, այլոց շարքում, որ տեղի է ունեցել 1-ին հոդվածի խախտում: Տասնչորս կողմ, մեկ դեմ ձայների հարաբերակցությամբ՝ հանձնաժողովը որոշել է, որ տեղի է ունեցել խախտում: Դատարանը միաձայն որոշել է, որ պետությունը միջամտել է դիմողի սեփականությանը:

54. …Այս համատեքստում դատարանը նախ նկատում է, որ կինոթատրոնի գտնվելու վայրի նկատմամբ սեփականության հարցը 1953 թ. ի վեր եղել է կինոթատրոնը վարձակալության տված անձանց և պետության միջև վեճի առարկա, և այս վեճը սույն վճռի կայացման օրվա դրությամբ դեռևս լուծված չի եղել: Դատարանը չի կարող այս գործով որոշում կայացնելիս ստանձնել ներպետական դատարանների դերը և որոշել՝ արդյոք խնդրահարույց հողը պատկանե՞լ է պետությանը, կամ արդյոք Կ.Ն.-ի [K.N.] (հողատերը) ժառանգների և դիմողի միջև գույքի լիզինգով վարձակալումը Հունաստանի օրենքով ունեցե՞լ է իրավական ուժ: Դատարանը կսահմանափակվի՝ նկատելով, որ, նախքան դիմողի վտարումը, վերջինս ֆորմալ տեսանկյունից օրինական վարձակալման հիման վրա տասնմեկ տարի շահագործել է կինոթատրոնը՝ առանց իշխանությունների կողմից որևէ միջամտության, ինչի արդյունքում դիմողը ձևավորել է հաճախորդների մի բազմություն, որը տվյալ դեպքում հանդես է եկել որպես ունեցվածք, և դատարանը հաշվի է առնում այն դերը, որը Հունաստանի տեղական մշակութային կյանքում խաղում են բացօթյա կինոթատրոնները, և այն փաստը, որ նման կինոթատրոնի հաճախորդների բազմությունը հիմնականում կազմված է տեղի բնակիչներից:

55. Դատարանը հաշվի է առնում այն, որ դիմողը, ով ունեցել է իր կողմից վարձակալված կինոթատրոնը շահագործելու հատուկ արտոնագիր, Իլիուպոլիսի քաղաքային խորհրդի կողմից վտարվել է կինոթատրոնից և իր ձեռնարկությունը որևէ այլ տեղ չի հիմնել: Դատարանը նաև նկատում է, որ չնայած վտարման հրահանգը չեղյալ հայտարարող դատական որոշման առկայությանը, պրն Յատրիդիսն ի վիճակի չէ վերականգնել կինոթատրոնի նկատմամբ իր տիրապետումը, որովհետև ֆինանսների նախարարը հրաժարվում է անվավեր ճանաչել կինոթատրոնի հանձնումը քաղաքային խորհրդին:... Այդ հանգամանքներում տեղի է ունեցել միջամտություն դիմողի սեփականության իրավունքներին: Քանի որ նա ընդամենը վարձակալում է իր ձեռնարկության շենքը, այս միջամտությունը ո՛չ օտարում է, ո՛չ էլ գույքի օգտագործումը վերահսկելու օրինակ, սակայն տեղավորվում է 1-ին հոդվածի առաջին պարբերության առաջին նախադասության շրջանակներում:

56. Դիմողն ուշադրություն է հրավիրել այն փաստի վրա, որ տասը տարի անց այն օրից, երբ առաջին ատյանի դատարանը չեղյալ հայտարարեց վտարման մասին հրահանգը, պետությունը շարունակում էր կամայականորեն և ապօրինաբար զբաղեցնել կինոթատրոնի շենքը և հրաժարվում էր այն վերադարձնել իրեն:

57. Կառավարությունը վիճարկել է այս պնդումը և մատնանշել, որ կինոթատրոնի գտնվելու վայրը մաս է կազմել մի շատ ավելի մեծ տարածքի, որը պատկանել է պետությանը:

58. Դատարանը վերահաստատում է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին և ամենակարևոր պահանջն այն է, որ պետական իշխանության կողմից սեփականության անարգել օգտագործման նկատմամբ յուրաքանչյուր միջամտություն պետք է լինի օրինական. առաջին պարբերության երկրորդ նախադասությունը սեփականությունից զրկում թույլատրում է միայն «օրենքով նախատեսված դեպքերում», իսկ երկրորդ պարբերությունը ճանաչում է, որ պետություններն իրավունք ունեն «օրենքների» հարկադիր կատարման միջոցով վերահսկել սեփականության օգտագործումը: Ավելին, օրենքի գերակայությունը՝ ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը, ընդգծված է կոնվենցիայի բոլոր հոդվածներում ... և պետության կամ այլ պետական իշխանության վրա պարտավորություն է դնում՝ ենթարկվել իր դեմ կայացված դատական հրահանգներին կամ որոշումներին: ... Այնուհետև նշվում է, որ այն հարցը, թե արդյոք համայնքի հանրային շահից բխող պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև պահպանվե՞լ է արդարացի հավասարակշռություն (տե՛ս *«Սպորոնգը և Լյոնրոթն ընդդեմ Շվեդիայի» (Sporrong and Lönnroth v Sweden)* գործով 1982 թ. սեպտեմբերի 23-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 52, 15 26, պարբ. 69), դառնում է ռելևանտ միայն այն ժամանակ, երբ հաստատվում է, որ վիճահարույց միջամտությունը բավարարել է օրինական լինելու պահանջը և կամայական չի եղել:

61. …1989 թ. մարտի 17-ին դիմողի վտարումը ներպետական օրենսդրությունում միանշանակ ունեցել է իրավական հիմք, այն է՝ վտարման մասին վարչական հրահանգը, որը տրվել էր 1989 թ. փետրվարի 9-ին՝ պետության վերահսկողության տակ գտնվող մարմնի՝ Ատտիկայի պրեֆեկտուրայի հողերի կառավարման վարչության կողմից, իսկ այդ ժամանակաընթացքում կինոթատրոնը Հողերի կառավարման պետական մարմնի կողմից փոխանցվել էր Իլիուպոլիսի քաղաքային խորհրդին: Այնուամենայնիվ, Աթենքի առաջին ատյանի դատարանը արագացված ընթացակարգով լսել է գործը և կասեցրել վտարման հրահանգի գործողությունը՝ այն հիմքերով, որ չեն բավարարվել դրա ընդունման համար անհրաժեշտ պայմանները: Այս որոշումը որևէ կերպ չի բողոքարկվել: Այդ պահից սկսած՝ դիմողի վտարումը, հետևաբար,

դադարել է որևէ իրավական հիմք ունենալուց, իսկ Իլիուպոլիսի քաղաքային խորհուրդը վերածվել է տարածքն ապօրինի զբաղեցնողի և պետք է կինոթատրոնը վերադարձրած լիներ դիմողին, ինչն իրականում առաջարկվել էր բոլոր այն մարմինների կողմից, որոնց դիմել էր ֆինանսների նախարարը՝ կարծիք ստանալու նպատակով, մասնավորապես՝ ֆինանսների նախարարությանը, պետական իրավական խորհրդին և հողերի կառավարման պետական մարմնին: ... Ավելի որոշակի՝ վերջին հիշատակված կառույցն առաջարկել էր, որ նախարարը պետք է չեղյալ հայտարարի կինոթատրոնի փոխանցումը քաղաքային խորհրդին, վերականգնի պրն Յատրիդիսի կողմից կինոթատրոնի օգտագործումը և վերահաստատի նրան իր կողմից վարձակալված տարածքում: Նախարարը, այսուհանդերձ, հրաժարվել է հաստատել այդ առաջարկը, ինչն անհրաժեշտ էր, եթե դիմողը պետք է վերահաստատվեր իր վարձակալած շենքում:

62. Դատարանը, ինչպես հանձնաժողովը, կարծում է, որ վիճահարույց միջամտությունը բացահայտ խախտում է Հունաստանի օրենքները և, համապատասխանաբար, անհամատեղելի է դիմողի՝ սեփական գույքից անարգել օգտվելու իրավունքի հետ: Այս եզրակացության պարագայում այլևս հարկ չկա պարզելու, թե արդյոք պահպանվե՞լ է արդարացի հավասարակշռությունը համայնքի ընդհանուր շահերից բխող պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև:

Այսպիսով, տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

Հետևաբար, պետությունները պարտավոր են ապահովել, որ մասնավոր սեփականության նկատմամբ միջամտության հանգեցնող իրենց գործողությունները համապատասխանեն ներպետական իրավական պահանջներին (սրանք իրենց հերթին պետք է նաև բավարարեն կոնվենցիայում ամրագրված՝ օրենքի գերակայության վերաբերյալ պարտավորությունների պահանջները, ինչպիսին է կանխատեսելիությունը): Դատարանը համոզվելուց հետո միայն, որ այս պայմանը բավարարված է, կքննի, թե արդյոք տվյալ միջամտությունը հաջողությա՞մբ է անցնում հոդվածում ամրագրված հավասարակշռություն ապահովելու քննությունը:

7 Վերջին ժամանակներս դատարանը հայտարարել է, որ պետական իշխանության մարմինների կողմից մասնավոր սեփականության նկատմամբ իրականացված միջամտությունները պարտադիր պետք է բխեն օրինական հանրային շահերի նպատակից, այլապես տվյալ դեպքում պետք է կիրառվի 1-ին հոդվածով սահմանված կանոնը:

111. Ցանկացած միջամտություն կոնվենցիայով ճանաչված որևէ իրավունքի կամ ազատության իրացմանը պետք է ... հետապնդի օրինական նպատակ, ինչպես կարելի է եզրակացնել կոնվենցիայի 18-րդ հոդվածից: Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում ներառված «արդարացի հավասարակշռության» սկզբունքն ինքնին ենթադրում է, որ գոյություն ունի համայնքի ընդհանուր շահ: Ավելին, հարկ է վերահաստատել, որ 1-ին հոդվածում ներառված տարբեր կանոններն առանձնացված չեն միմյանց հետ շաղկապված չլինելու իմաստով, և երկրորդ ու երրորդ կանոնները վերաբերում են միայն որոշակի դեպքերի: ... Սրա արդյունքներից մեկն այն է, որ երկրորդ նախադասության համաձայն պահանջվող «հանրային շահի» գոյությունը կամ երկրորդ պարբերության մեջ հիշատակված «ընդհանուր շահի» գոյությունը, փաստորեն, առաջին նախադասության մեջ ամրագրված սկզբունքի հետևանքներն են, այսինքն՝ սեփական գույքն անարգել օգտագործելու իրավունքի իրացման նկատմամբ որևէ միջամտություն, համաձայն 1-ին հոդվածի առաջին նախադասության իմաստի, պետք է նաև հետապնդի հանրային շահից բխող որևէ նպատակ (*«Բեյելերն ընդդեմ Իտալիայի» (Beyeler v Italy)* (ստորև՝ էջ 976)):

Այդ գործով դատարանը վճռել է, որ պետության կողմից արվեստի ստեղծագործությունների շուկայի նկատմամբ վերահսկողությունն ունեցել է հիմնավոր նպատակ՝ կապված ազգի մշակութային ժառանգությունը պաշտպանելու նկատառումների հետ:

«Գույքի» գաղափարը

1 *«Մարքսն ընդդեմ Բելգիայի» (Marckx v Belgium)* գործով (վերը՝ էջ 549) դատարանը նկատել է, որ «... այս հոդվածը (թիվ 1 արձ., հոդվ. 1) ավելին չի անում, քան յուրաքանչյուրի՝ «սեփական» գույքից անարգել օգտվելու իրավունքն ամրագրելը, հետևաբար, այն տարածվում է միայն անձի գոյություն ունեցող գույքի վրա, և այն չի երաշխավորում գույք ձեռք բերելու իրավունքը, լինի դա կտակի բացակայության հիմքով թե կամավոր օտարման միջոցով» (պարբ. 50): Հետևաբար, դատարանը 1-ին

հոդվածի որևէ խախտում չգտավ, երբ Բելգիայի օրենքը ապօրինի զավակներին օժտեց ժառանգության պակաս իրավունքներով, քան օրինական զավակներին (այսուհանդերձ, դատարանի անդամների մեծամասնությունը, տասը կողմ, հինգ դեմ ձայների հարաբերակցությամբ, վճռեց, որ ներպետական օրենսդրությունը խախտում է 14-րդ հոդվածը՝ դիտարկված 1-ին հոդվածի համակցությամբ): Ելնելով վերը բերված բացատրությունից՝ դիմողները կարող են միայն հղում կատարել 1-ին հոդվածին, եթե ունեն նախապես գոյություն ունեցած գույք, որը, ըստ նրանց հայտարարության, ենթարկվել է վնասակար միջամտության պետական իշխանության մարմինների կողմից կամ նրանց համաձայնությամբ:

2 Բացի ավանդական անշարժ գույքի հետ կապված շահերից, ինչպիսիք են հողը և շինությունները, որոնք *Սպորոնգը և Լյոնրոթը (Sporrong and Lnnroth)* գործում պատկանել են դիմողներին (վերը), դատարանը հակված է եղել ճանաչելու, որ ոչ շոշափելի սեփականության մի ամբողջ շարք տեղավորվում է 1-ին հոդվածում ամրագրված՝ «գույքի» գաղափարի շրջանակներում: Օրինակ՝ *«Թրե Թրակտորեր Ակտիեբոլագն ընդդեմ Շվեդիայի» (Tre Traktörer Aktiebolag v Sweden)*, A.159 (1989) 13 EHRR 309 գործում դիմող ընկերությանը պատկանել էր մի ռեստորան («Կարդինալ») Հելսինգբորգ քաղաքում: Տվյալ երկրամասի վարչական խորհուրդը 1980 թ. ի վեր ընկերությանը տրամադրել էր ռեստորանում ալկոհոլային խմիչքներ մատուցելու արտոնագիր: 1981 թ. ընթացքում ընկերության գործունեության հարկային աուդիտը, որ իրականացրեց այս խորհուրդը, բացահայտեց անհամապատասխանություններ ալկոհոլային խմիչքների վաճառքի վերաբերյալ գրանցումներում (որոնց ընդհանուր ծավալը, համաձայն գնահատականների, գերազանցում էր համապատասխան ժամանակահատվածում ընկերության ամբողջ շրջանառության 10 տոկոսը): Դրա հետևանքով խորհուրդը կասեցրեց ընկերության՝ ալկոհոլային խմիչքներ մատուցելու արտոնագիրը: Ընկերությունը պնդել է, որ արտոնագրի այդ կասեցումը իրենց ստիպել է փակել ռեստորանը: Մի քանի ամիս անց ռեստորանը դիմողը վաճառեց 1,5 միլիոն շվեդական կրոնով: Դիմողը պնդում էր, որ արտոնագրի կասեցումը խախտել է 1-ին հոդվածը: Հանձնաժողովը՝ տասը կողմ, մեկ դեմ ձայների հարաբերակցությամբ, մերժեց այդ պնդումը: Դատարանում կառավարությունն առարկեց, որ արտոնագիրը չի կարող «գույք» համարվել: Դատարանը չընդունեց այս եզրույթի վերաբերյալ կառավարության սահմանափակող տեսակետը.

> Այնուամենայնիվ, ինչպես հանձնաժողովը, դատարանը նույնպես այն կարծիքին է, որ «Կարդինալի» շահագործման հետ կապված տնտեսական շահերը «գույք» են՝ համաձայն արձանագրության 1-ին հոդվածի: Իսկապես, դատարանն արդեն որոշել էր, որ արտոնագրի պահպանումը դիմող ընկերության բիզնեսի շարունակման առումով առանցքային պայմաններից մեկն է, և դրա չեղյալ հայտարարումն ունեցել է վնասակար հետևանքներ ռեստորանի «գուդվիլի»՝ ոչ նյութական ակտիվների [goodwill] և արժեքի վրա...
>
> Այսպիսով, նման կասեցումը, այս գործի հանգամանքներից ելնելով, միջամտություն է [դիմողի] «[սեփական] գույքից անարգել օգտվելու իրավունքին» (պարբ. 53):

Այնուամենայնիվ, դատարանը միաձայն եզրակացրեց, որ արտոնագրի կասեցումը 1-ին հոդվածի երկրորդ պարբերությամբ (երրորդ կանոն) եղել է օրինական, քանի որ պետությանը հաջողվել է հասնել դիմող ընկերության տնտեսական շահերի և սեփական քաղաքացիների կողմից ալկոհոլի սպառման վերաբերյալ Շվեդիայի սոցիալական քաղաքականության միջև հավասարակշռության: Վճռի 53-րդ պարբերությունը բացահայտում է գույքի մասին դատարանի ըմբռնումը, ըստ որի «գույք» հասկացությունը ներառում է ոչ նյութական առևտրային շահերը, ինչպիսին է կայացած բիզնեսների «գուդվիլը» (այսինքն՝ որևէ ընկերության հեղինակության ֆինանսական արժեքը): Որդեգրելով այս եզրույթի լայն մեկնաբանություն՝ դատարանը ձգտել է ընդլայնել 1-ին հոդվածով նախատեսված պաշտպանության շրջանակը:

3 Իրենց հատկացված մի հողակտորի (որը գրանցված է եղել պաշտոնական ռեգիստրում) մշակման նպատակով նախագծման թույլտվությունը *«Փայն Վելի Դիվելոփմենթս» ՍՊԸ-ն ընդդեմ Իռլանդիայի» (Pine Valley Developments Ltd v Ireland)*, A.222 (1991) 14 EHRR 319 գործում ներկայացվել էր որպես

հողատիրոջ գույքի մի բաղադրիչ: Դիմողները հողի մշակներ էին, ովքեր 1978 թ. գնել էին Դուբլինի սահմաններից դուրս գտնվող մի հողակտոր: Հողի ձեռք բերման պահին այդ գյուղական վայրին տրվել էր արդյունաբերական պահեստներ և գրասենյակներ կառուցելու նպատակով նախագծելու թույլտվություն: 1982 թ. գերագույն դատարանը վճռեց, որ նախագծման թույլտվությունը *ultra vires է* [լիազորությունների գերազանցմամբ] և հետևաբար առ ոչինչ է: Դատարանը նկատեց, որ.

> ... Երբ «Փայն Վելի» ընկերությունը ձեռք է բերել այդ հողակտորը, դա իրականացրել է՝ հիմնվելով այն թույլտվության վրա, որը պատշաճ կերպով գրանցվել էր այդ նպատակով պահվող պետական ռեգիստրում, և որի վերաբերյալ ընկերությունը բոլոր հիմքերն ունեցել է ենթադրելու, որ այն վավերական է: ... Այդ թույլտվությունը նպաստավոր որոշում է տարածքի առաջարկվող զարգացման սկզբունքի առնչությամբ, որը իշխանության՝ պլանավորման համար պատասխանատու մարմնի կողմից չէր կարող վերաբացվել: ... Այս հանգամանքներում անտեղի ձևական կլիներ համարելը, որ գերագույն դատարանի վճիռը միջամտություն չի եղել: Նախքան դրա տրամադրումը, դիմողներն ունեցել են առնվազն օրինական ակնկալիք, որ կարող են իրականացնել տարածքի՝ իրենց կողմից առաջարկված զարգացումը, իսկ դա պետք է համարել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նպատակներից ելնելով՝ վիճելի սեփականության բաղադրիչ մաս ...
>
> Այսպիսով, դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել միջամտություն «Հիլի հոլդինգզ» ընկերության և պրն Հիլիի (դիմողները/տարածքը մշակողները, ովքեր 1981 թ. այդ հողատարածքը գնել էին «Փայն Վելի Դիվելոփմենթս» ՍՊԸ-ից) սեփական գույքից անարգել օգտվելու իրավունքին (պարբ. 51 և 53):

Դատարանը (միաձայն) որոշեց, որ «Հիլի հոլդինգզ» ընկերությունը և պրն Հիլին տուժել են 14-րդ հոդվածի համակցությամբ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտումից, քանի որ, ի տարբերություն այլ սեփականատերերի, ովքեր կրել էին գերագույն դատարանի վճռի ազդեցությունը, նրանց տրամադրված նախագծի մշակման թույլտվությունը հետին թվով չէր վավերացվել: Այս վճիռը ցույց է տալիս, որ դատարանը հողի մշակման թույլտվության շնորհմամբ տրված օրինական իրավունքները ճանաչում է որպես շահ, որը կարող է տեղավորվել 1-ին հոդվածի շրջանակներում: Հստակ է այն, որ նման իրավունքները համապատասխան հողատերերին կարող են արժենալ զգալի գումարներ: Իսկապես, դատարանը կրած դրամական վնասների դիմաց «Հիլի հոլդինգզ» ընկերությանը և պրն Հիլիին նշանակեց 1.200.000 իռլանդական ֆունտ փոխհատուցում (1982 թ. տվյալ տարածքի՝ հատակագծի նախագծման թույլտվությամբ արժեքի և այդ տարածքի արժեքի տարբերությունը, երբ գերագույն դատարանը նախագծման թույլտվության շնորհումը չեղյալ հայտարարեց, ներառյալ՝ այդ օրվանից ի վեր հաշվված տոկոսագումարները). 50-րդ հոդվածի վերաբերյալ վճռի հիմքով, A.246-B (1993):

Մշտապես գործող դատարանի մեծ պալատը *«Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի» (Kopecky v Slovakia)* գործում ավելի մանրամասն բացատրեց 1-ին հոդվածով «օրինական ակնկալում» հասկացությունը, ստորև՝ ծնթ. 8:

4 Իրենց հատկացված գույքի նկատմամբ վաճառողների սեփականության պայմանագրային հիմքով պահպանումը (մինչև պայմանագրով նախատեսված բոլոր գումարների վճարումը գնորդի կողմից) դատարանի կողմից *«Գասուս Դոսիեր ունդ Ֆորդերտեքնիկ» ԲԲԸ-ն ընդդեմ Նիդեռլանդների» (Gasus Dosier-und Fordertechnik GmbH v Netherlands)* A.306-B (1995) 20 EHRR 403 գործով համարվել է պաշտպանված գույք: Գերմանիայում հիմնված դիմող ընկերությունը 1980 թ. հունիսին մի հոլանդական ընկերությունից («Ատլաս») ստացել էր բետոնի շաղախիչի մատակարարման պատվեր: Դիմողը համաձայնել էր մատակարարել այդ տեխնիկան՝ համաձայն վաճառքի իրենց ստանդարտ պայմանների (ըստ որոնց՝ վաճառողը պահպանում էր մատակարարված ապրանքների նկատմամբ սեփականությունը՝ մինչև ամբողջ հասանելիք գումարների ստացումը): 1980 թ. հուլիսին վաճառողը «Ատլասին» ուղարկել է հաշիվ-ապրանքագրեր՝ 125.000 գերմանական մարկ ընդհանուր ծավալով, իսկ վերջինը վճարել է 21.000 գերմանական մարկ: Բետոնի շաղախիչը տեղադրվել է «Ատլասին» պատկանող շինությունում 1980 թ. հուլիս 28-ից օգոստոսի 2-ը (այդ սարքավորումը կշռում էր հինգ տոննա): Այսուհանդերձ, 1980 թ. հուլիսի 31-ին Նիդեռլանդների հարկային կատարածուն (իրացնելով օրենքով սահմանված իր լիազորությունները) հարկադիր վաճառքի նպատակով բռնագրավեց «Ատլասի» տարածքում գտնվող բոլոր շարժական ակտիվները, ներառյալ՝ բետոնի շաղախիչը, որպեսզի վճարի «Ատլասի» կուտակած հարկային պարտավորությունների դիմաց: Այնուհետև բետոնի շաղախիչը և

«Ատլասի» մյուս ակտիվները վաճառվեցին մեկ այլ ընկերության, իսկ վաճառքից ստացված հասույթն օգտագործվեց հարկերի գծով պարտքերը և մեկ այլ վարկատուի պահանջները բավարարելու համար: Դիմողը գանգատ ներկայացրեց հանձնաժողովին՝ հայտարարելով, այլոց շարքում, որ Հոլանդիայի իշխանություններն իրեն զրկել են իրեն պատկանող գույքից՝ խախտելով 1-ին հոդվածը: Նախագահի վճռորոշ ձայնի շնորհիվ հանձնաժողովը որոշեց, որ խախտում չի եղել: Դատարանում կառավարությունը պնդեց, որ բետոնի շաղախիչի բռնագրավման պահին այն այլևս դիմող ընկերության սեփականությունը չի եղել: Դատարանը չընդունեց այդ փաստարկը:

53. Դատարանը հիշեցնում է, որ «գույքի» [possessions] (ֆրանսերեն՝ «biens») գաղափարը թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում ինքնուրույն իմաստ ունի, որը հաստատ սահմանափակված չէ ֆիզիկական ապրանքների սեփականությամբ. որոշակի այլ իրավունքներ և շահեր, որոնք հանդիսանում են ակտիվներ, նույնպես կարող են համարվել «սեփականության իրավունքներ» և այդպիսով՝ «գույք», ըստ այս հոդվածի նպատակների: Տվյալ համատեքստում, հետևաբար, էական չէ՝ բետոնի շաղախիչի նկատմամբ «Գասուսի» իրավունքը հարկ է դիտել որպես սեփականությա՞ն իրավունք, թե՞ գույքի [*in rem*] ապահովության իրավունք: Ամեն դեպքում բետոնի շաղախիչի բռնագրավումը և վաճառքը «միջամտություն» են եղել դիմող ընկերության՝ «գույքից» «անարգել օգտվելու» իրավունքին՝ համաձայն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստի:

Այնուամենայնիվ, դատարանի մեծամասնությունը՝ վեց կողմ, երեք դեմ ձայների հարաբերակցությամբ, եզրակացրեց, որ կառավարության գործողությունները կարելի է արդարացնել 1-ին հոդվածի երկրորդ պարբերությամբ (երրորդ կանոն):

66. Դատարանը նախ նշում է, որ հարկային իշխանություններին այնպիսի լիազորությամբ օժտելը, որը նրանց թույլ է տալիս որոշակի երրորդ կողմերի (ինչպես, օրինակ՝ ապրանքների մի որևէ վաճառող, որը պահպանում է ապրանքի նկատմամբ իր իրավունքը) պատկանող ապրանքների միջոցով վերստանալ հարկային պարտքերի գումարները, ինքնըստինքյան չի հանգեցնում եզրակացության, որ չի պահպանվել արդարացի հավասարակշռություն ընդհանուր շահերի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև: Փաստացի պարտապանի տնօրինության տակ գտնվող, սակայն անվանապես մի երրորդ կողմի պատկանող ապրանքների միջոցով գումարներ վերստանալու լիազորությունը ընդունված միջոց է՝ հարկադիր կատարման ընթացակարգերում պարտատիրոջ դիրքերն ուժեղացնելու նպատակով. այն չի կարող թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջների հետ անհամատեղելի համարվել: Հետևաբար, որևէ օրենսդիր մարմին սկզբունքորեն կարող է դիմել այդ գործիքի օգնությանը, որպեսզի, ի շահ հանրության, ապահովի, որ հարկահավաքումից ստացվեն որքան հնարավոր է շատ միջոցներ, և հարկերի գծով պարտքերի ստացումը տեղի ունենա այնքան արագ, որքան հնարավոր է: Այսուհանդերձ, չի կարելի անուշադրության մատնել այն, որ չարաշահումների վտանգից անկախ, օրենսդրության այն տեսակը, որով պետությունն ինքն իր համար ստեղծում է նման լիազորություններ, նույնը չէ, ինչ օրենսդրության այն տեսակը, որը նման լիազորություններով օժտում է մասնավոր վարկատուների սահմանափակ կատեգորիաների: Հետևաբար, այս դեպքում անհրաժեշտ է իրականացնել այս խնդրի հետագա ուսումնասիրություն:

Մեծամասնությունը համարեց, որ բռնագրավումն ու վաճառքը դիմողի նկատմամբ եղել են համաչափ գործողություններ, քանի որ վերջինս կարող էր իր շահերը պաշտպանել՝ «Ատլաս» ընկերությունից պահանջելով վճարել ամբողջ գումարը նախքան սարքավորումը մատակարարելը: Ի հակադրություն, այս կարծիքի հետ չհամաձայնողները հավատացած էին, որ կառավարության գործողությունները չեն բավարարել 1-ին հոդվածի՝ արդարացի հավասարակշռության «փորձաքննության» պահանջները:

5 Գույքի հայեցակարգը կիրառելու հարցում դատարանի ճկունությունը ցայտուն է ներկայացված *«Ազգային և պրովինցիալ շինարարական միությունն ընդդեմ Միացյալ Թագավորության» (National & Provincial Building Society v UK) (1997) 25 EHRR 127, 1997-VII* գործում: 1985 թ. ընթացքում կառավարությունը հայտարարել է շինարարական ընկերությունների կողմից կառավարվող խնայողական հաշիվներից եկամտահարկի հավաքման մի նոր եղանակի մասին: 1986 թ. հունիսին «Վուլրիչի շինարարական միությունը» նախաձեռնեց դատական կարգով ստուգման վարույթ՝ պնդելով, որ նոր հարկային համակարգին տանող անցումային շրջանը կարգավորող «Կանոնները» *ultra vires* են: Ապա, մեկ տարի անց, «Վուլրիչը» նախաձեռնեց մի առանձին վարույթ՝ ընդդեմ հարկային տեսչության՝ պահանջելով այն գումարների վերավճարում, որոնք ընկերությունը վճարել էր վիճահարույց «Կանոնների» համաձայն: 1990 թ. հոկտեմբերին Լորդերի պալատը պաշտպանեց «Վուլրիչի» կողմից նշված

«Կանոնների» օրինականության վիճարկումը: Դրանից անմիջապես հետո դիմող միությունները նախաձեռնեցին վարույթ ընդդեմ հարկային տեսչության՝ ըստ «Կանոնների» իրենց կողմից վճարված գումարների վերավճարման նպատակով: Կառավարությունն իրեն ապահովագրեց՝ 1991 թ. ընդունել տալով մի օրենք, որը (1) հետին թվով օրինականացրեց «Կանոնները» և (2) վերացրեց շինարարական միությունների՝ «Կանոնները» վիճարկելու իրավունքը, եթե նրանք իրենց օրինական գործողությունները չէին սկսել մինչև 1986 թ. հուլիսը: 1992 թ. Լորդերի պալատը նաև պաշտպանեց «Վուլրիչի»՝ վերավճարման մասին պահանջը: Պալատը որոշեց, որ քաղաքացիներն իրավունք ունեն հետ ստանալու այն գումարները, որոնք վճարել են պետական իշխանության որևէ մարմնի, եթե դա տեղի է ունեցել *ultra vires* պահանջի հետևանքով: Դիմող միությունները հանձնաժողովին բողոք ներկայացրեցին առ այն, որ 1991 թ. ընդունված օրենքը միջամտել է «Կանոնների» համաձայն իրենց վճարած գումարները հետ ստանալու իրավունքին և հետևաբար խախտել է 1-ին հոդվածը: Հանձնաժողովը, տասներեք կողմ և երեք դեմ ձայների հարաբերակցությամբ, որոշեց, որ խախտում չի եղել: Դատարանը որոշեց, որ.

70. Չնայած դատարանը եզրակացություն չներկայացրեց առ այն, թե կարելի՞ էր համարել, որ դիմող միությունների ներկայացրած պահանջներից որևէ մեկը գույք է, դատարանը, ինչպես հանձնաժողովը ... պատրաստ է վարույթ սկսել այն աշխատանքային ենթադրության հիման վրա, որ ըստ [1992 թ. Լորդերի պալատի ընդունած «Վուլրիչի» հարցով] որոշման՝ դիմող միություններն իսկապես ունեցել են գույք՝ նախնական վիճակի վերականգնման օրինական իրավունքների տեսքով, ինչին նրանք ձգտել են հասնել ուղղակի և անուղղակի ճանապարհներով, 1991 և 1992 թթ. հարուցված տարբեր դատական վարույթների միջոցով: Այդպես վարվելով՝ դատարանը մատնանշում է, որ այն փաստարկները, որոնք առաջ էին քաշվել ի պաշտպանություն նրանց այն պնդման, որ իրենք գույք են ունեցել, անքակտելիորեն կապված են նրանց այն բողոքների հետ, որ անարդարացիորեն զրկել են իրենց գույքից: Հետևաբար, դատարանը կարծում է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի է ուսումնասիրելու համար, թե արդյոք տեղի՞ է ունեցել միջամտություն նրանց իրավական պահանջներին, և եթե տեղի է ունեցել, այդ միջամտությունը հիմնավորվա՞ծ էր տվյալ հանգամանքներում:

Ապա դատարանը գնահատական տվեց ըստ 1-ին հոդվածի երկրորդ պարբերության (երրորդ կանոն) պետության գործողություններին: Նշանակալի գործոն էր այն, որ դատարանը ճանաչեց, որ.

Իրականում գոյություն ունի ակնհայտ և համոզիչ հանրային շահ, որ երաշխավորվի, որ նոր հարկային ռեժիմի անցնելիս մասնավոր կառույցները չստանան չսպասված եկամուտներ և Մեծ Բրիտանիայի ֆինանսների նախարարությանը չզրկեն հասույթից պարզապես պատճառաբանելով, որ իրավազորող հարկային օրենսդրության մեջ առկա են ոչ միտումնավոր թերություններ, առավել ևս, երբ նման կառույցները հետևել են առաջարկի նախագծի շուրջ խորհրդարանում տեղի ունեցած քննարկումներին և չնայած համաձայն չեն ներկայացվող առաջարկին, հստակ հասկացել են, որ խորհրդարանը հաստատ մտադրություն ունի այդ առաջարկը ներառել օրենսդրության մեջ (պարբ. 81):

Հետևաբար, դատավորները միաձայն էին՝ եզրակացնելով, որ 1-ին հոդվածի խախտում տեղի չի ունեցել, քանի որ պետության գործողությունը «... չի խաթարել հավասարակշռությունը, որին պարտադիր պետք է հասնել դիմող միությունների՝ նախնական վիճակի վերականգնման իրավունքների պաշտպանության և հանրային շահի՝ հարկերի վճարում ապահովելու միջև» (պարբ. 83): Վերոնշյալ վճռում (և մինչ այդ ներկայացված «*Գասուս Դոսիերի» (Gasus Dosier)* գործում) գոյություն ունի մի որոշակի համաչափություն, քանի որ դատարանը պատրաստակամ էր օրինական իրավունքների և շահերի մի լայն սպեկտր ճանաչելու որպես գույք դասակարգվելու հնարավորություն ունեցող, այնուամենայնիվ, դատարանը նաև հանդուրժող էր այն բանի նկատմամբ, որ պետությունները կարիք ունեն էական վերահսկողություն իրականացնելու նման գույքի նկատմամբ, որպեսզի հնարավոր լինի պահպանել իրենց ներպետական հարկային համակարգերի ամբողջականությունը և արդյունավետությունը:

6 «Գույքի» ընդլայնված հասկացության սահմանները մասամբ բացահայտվեցին *«Սիերվա Օսորիո դե Մոսկովոն ընդդեմ Իսպանիայի» (Cierva Osorio De Moscovo v Spain)* (վճիռը կայացվել է 1999 թ. հոկտեմբերի 28-ին) գործում, երբ դատարանի մի բաժինը գանգատը հայտարարեց *ratione materiae* անընդունելի: Իգական սեռի դիմողը բողոքել էր առ այն, որ Իսպանիայում ազնվական տիտղոսները փոխանցվում են նախևառաջ արական սեռի ժառանգներին, և այս նախապատվությունը ոտնահարել է

կոնվենցիայով նախատեսված իր իրավունքները: Այսուհանդերձ, դատարանը վճռեց, որ ազնվական տիտղոսը չի տեղավորվում 1-ին հոդվածով ամրագրված «գույք» հասկացության սահմաններում: Հավանականությունը, որ նման տիտղոսը կարող է ենթարկվել առևտրային շահագործման (օրինակ՝ որպես ապրանքանշան), բավարար չէր այն գույք դարձնելու համար: Հետևաբար, ոչ բոլոր անշոշափելի ակտիվներն են դատարանի կողմից բնութագրվում որպես գույք: Միգուցե այս դիմումի պարագայում դատարանը համարեց, որ տիտղոսի/ակտիվի ֆինանսական արժեքը չափազանց սպեկուլյատիվ էր, որպեսզի արժանանար 1-ին հոդվածի պաշտպանությանը:

7 Պալատը միաձայն որոշեց, որ հայրիշխանական համակարգը, որի պայմաններում արական սեռի չափահասներն ամուսնացել են, կառուցել տներ, ապրել իրենց հայրերին պատկանող հողի վրա կառուցված տներում և զբաղվել գյուղատնտեսական աշխատանքով, *«Դոգանը և այլք ընդդեմ Թուրքիայի» (Dogan and Others v Turkey)* գործի շրջանակներում 1-ին հոդվածի համաձայն հանդիսացել է գույք (տե՛ս վերը՝ էջ 581, այս վճռի այն ասպեկտի համար, որը վերաբերել է հոդված 8-ին): Դիմողները պնդեցին, որ իշխանությունների կողմից ինը տարի շարունակ իրենց գյուղ մտնելն արգելելը (ըստ կառավարության՝ անվտանգության հիմքերով) խախտել է 1-ին հոդվածը:

139. Դատարանը նշում է, որ իրենից չի պահանջվում որոշել, թե արդյոք տիտղոսը հաստատող փաստաթղթի բացակայության պայմաններում դիմողները ներպետական իրավունքով ունե՞ն սեփականության իրավունքներ: Այս պարբերության մեջ ծագող հարցն այն է, թե արդյոք դիմողների իրականացրած ընդհանուր տնտեսական գործունեությունը եղե՞լ է «գույք»՝ տեղավորվելով թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված պաշտպանության սահմաններում: Այս առումով, դատարանը նշում է, որ կասկածից վեր է, որ բոլոր դիմողները մինչև 1994 թ. ապրել են Բոյդաշ [Boydaş] գյուղում: Չնայած նրանք գրանցված սեփականություն չեն ունեցել, կա՛մ իրենց սեփական տները կառուցել են իրենց նախնիների հողի վրա, կա՛մ էլ ապրել են տներում, որոնք պատկանել են իրենց հայրերին, և մշակել են վերջիններիս պատկանած հողը: Ի լրումն՝ դատարանը նշում է, որ դիմողներն ունեցել են չվիճարկվող իրավունքներ գյուղում առկա ընդհանուր հողերի նկատմամբ, ինչպիսիք են արոտավայրը, արածեցնելու և անտառածածկ հողերը, և նրանք իրենց ապրուստը հոգացել են անասնապահության և անտառահատության միջոցով: Համապատասխանաբար, դատարանի կարծիքով, այս բոլոր տնտեսական ռեսուրսները և դրանցից դիմողների ստացած հասույթը կարելի է որակել որպես «գույք»՝ 1-ին հոդվածի նպատակներից ելնելով:

Այնուհետև պալատը բացահայտեց դիմողների՝ սեփական գույքից անարգել օգտվելու իրավունքի խախտում, քանի որ նրանք իշխանությունների կողմից ենթարկվել էին չափազանց ծանր բեռի (նրանց չէր տրամադրվել բնակության/զբաղվածության որևէ այլընտրանքային տարբերակ): Սա մի չափազանց նշանակալի վճիռ էր՝ հաշվի առնելով գյուղերից բնակիչների տեղահանման տարածվածությունը Թուրքիայի այն հատվածներում, որոնք 1990-ական թվականներին ենթակա էին արտակարգ իրավիճակների ազդեցությանը (*Դոգանի (Dogan)* գործի քննության ընթացքում կառավարությունը հայտարարեց, որ մոտ 380.000 մարդ տեղահանվել է):

8 Դատարանը ստացել է բազմաթիվ գանգատներ, որոնք վերաբերում են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մասնակից պետությունների նախկին կոմունիստական կառավարությունների կողմից բռնագրավված գույքի վերականգնմանը կամ դրա դիմաց փոխհատուցմանը: Մեծ պալատն ուսումնասիրեց դատարանի կողմից նման պահանջների առնչությամբ 1-ին հոդվածի կիրառումը *«Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի» (Kopecky v Slovakia)* գործի շրջանակներում, որով վճիռը կայացվել է 2004 թ. սեպտեմբերի 28-ին: Դիմողի հորը 1959 թ. մեղադրել են, հակառակ օրենքի, 131 ոսկյա և 2151 արծաթյա մետաղադրամներ պահելու մեջ: Նա դատապարտվել է մեկ տարվա ազատազրկման, տուգանվել, իսկ մետաղադրամները բռնագանձվել են: Արձանագրությունները ցույց են տվել, որ մետաղադրամները դիմողի հորից վերցվել և փորձաքննության են ենթարկվել փորձագետի կողմից 1958 թ. դեկտեմբերին Բրատիսլավայում՝ շրջանային ադմինիստրացիայի շենքում: Մետաղադրամների հետագա գտնվելու վայրը հնարավոր չէ պարզել: 1992 թ. դիմողը պահանջեց մետաղադրամների վերականգնում՝ համաձայն 1991 թ. ընդունված «Արտադատական ռեաբիլիտացիաների մասին» օրենքի (նրա հոր դատապարտումը 1992 թ. գարնանը կասեցվեց Սլովակիայի Հանրապետության գերագույն դատարանի կողմից): Սենիկայի շրջանային դատարանը ներքին գործերի նախարարությանը հրահան-

գեց մետաղադրամները վերադարձնել դիմողին, քանի որ դրանց գտնվելու վայրի մասին վերջին վկայությունը վերաբերել է Շրջանային ադմինիստրացիայի շինությանը: Նախարարությունից ստացված բողոքարկման հիման վրա գերագույն դատարանը վճռեց, որ 1991 թ. օրենքը դիմողներից պահանջում է ցույց տալ, թե որտեղ է գտնվել համապատասխան գույքը այն օրը, երբ այդ օրենքը մտել է ուժի մեջ: Դիմողն ի վիճակի չի եղել բավարարելու այդ պահանջը, և, հետևաբար, իշխանությունները պարտավոր չէին մետաղադրամները վերադարձնել դիմողին: Վերջինս բողոքեց Եվրոպական դատարան՝ հայտարարելով, որ իր պահանջի մերժումը իրեն զրկել է իր հոր գույքից անարգել օգտվելու հնարավորությունից, ինչը 1-ին հոդվածի խախտում է: Դատարանը որոշեց, որ.

35. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով՝ կոնվենցիայով ստեղծված հաստատությունների պրակտիկայի արդյունքում հաստատվել են հետևյալ՝ հարցին առնչվող սկզբունքները.

(ա) Սեփականության կամ մեկ այլ գույքային [in *rem*] իրավունքից զրկումը սկզբունքորեն ակնթարթային գործողություն է և չի առաջացնում «իրավունքից զրկման» շարունակական իրավիճակ (տե՛ս *«Մալհուսն ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (Malhous v the Czech Republic)* (dec.) [GC] գործը, թիվ 33071/96, ECHR 2000-XII և հաջորդները):

(բ) Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը չի երաշխավորում սեփականության ձեռք բերման իրավունք (տե՛ս *«Վան դեր Մեսելն ընդդեմ Բելգիայի» (Van der Mussele v Belgium)*, 1983 թ. նոյեմբերի 23-ի վճիռ, շարք A, թիվ 70, էջ 23, պարբ. 48, և *«Սլիվենկոն և այլք ընդդեմ Լատվիայի» (Slivenko and Others v Latvia)* (dec.) [GC], թիվ 48321/99, պարբ. 121, ECHR 2002-II):

(գ) Դիմողը կարող է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման մասին հայտարարել միայն այնքանով, որքանով վիճարկվող որոշումները առնչվում են իր «գույքին»՝ համաձայն այս հոդվածում ներառված իմաստի: «Գույքը» կարող է լինել կա՛մ «առկա գույք», կա՛մ ակտիվներ, ներառյալ՝ պահանջներ, որոնց վերաբերյալ դիմողը կարող է պնդել, որ ինքն առնվազն ունի սեփականության իրավունքից արդյունավետորեն օգտվելու «օրինական ակնկալիք»: Սրան հակառակ, որևէ սեփականության իրավունքի ճանաչման հույսը, որը դիմողի համար անհնար է եղել արդյունավետորեն իրացնել, չի կարող համարվել «գույք»՝ համաձայն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստի, ոչ էլ որևէ պայմանական պահանջ, որն ուժը կորցնում է այդ պայմանի չկատարման հետևանքով, կարող է համարվել «գույք» (տե՛ս *«Լիխտենշտեյնի արքայազն Հանս-Ադամ Երկրորդն ընդդեմ Գերմանիայի» (Prince Hans-Adam II of Liechtenstein v Germany)* [GC], թիվ 42527/98, պարբ. 82 և 83, ECHR 2001-VIII և *«Գրացինգերը և Գրացինգերովան ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (Gratzinger and Gratzingerova v the Czech Republic)* (dec.) [GC], թիվ 39794/98, պարբ. 69, ECHR 2002-VII):

(դ) Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես մասնակից պետությունների նկատմամբ որևէ ընդհանուր պարտավորություն սահմանող, համաձայն որի՝ նրանք պարտավոր են վերականգնել այն գույքը, որը փոխանցվել է իրենց մինչև իրենց կողմից կոնվենցիայի վավերացումը: Ոչ էլ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածն է որևէ սահմանափակում դնում մասնակից պետությունների ազատության վրա գույքի վերականգնման ծավալները որոշելու հարցում և այն ընտրության հարցում, թե ինչ պայմաններում են համաձայն վերականգնել նախկին սեփականատերերի գույքային իրավունքները (տե՛ս *«Յանտներն ընդդեմ Սլովակիայի» (Jantner v Slovakia)*, թիվ 39050/97, պարբ. 34, 2003 թ. մարտի 4):

Մասնավորապես, նախկին սեփականատերերի որոշակի կատեգորիաների՝ նման իրավունքից զրկելու հարցում մասնակից պետություններն օգտվում են հայեցողության լայն սահմանից: Այն դեպքերում, երբ սեփականատերերի որոշակի կատեգորիաներ նման եղանակով բացառվում են, վերականգնման մասին նրանց պահանջները չեն կարող ծառայել որպես «օրինական ակնկալման» հիմք՝ մտնելով թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի տրամադրած պաշտպանության տակ (տե՛ս, այլ աղբյուրների շարքում, *Գրացինգերը և Գրացինգերովան (Gratzinger and Gratzingerova)* գործը, մեջբերված վերը՝ պարբ. 70-74):

Մյուս կողմից, երբ մասնակից պետությունը կոնվենցիան և դրան կից թիվ 1 արձանագրությունը վավերացնելուց հետո ընդունում է այնպիսի օրենսդրություն, որը նախատեսում է նախորդ վարչակարգի օրոք բռնագրավված գույքի ամբողջական կամ մասնակի վերականգնում, ապա նման օրենսդրությունը կարող է համարվել նոր գույքային իրավունք ստեղծող, որը պաշտպանված է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով, այն անձանց դեպքում, ովքեր բավարարում են այդ իրավունքի համար սահմանված պահանջները: Նույնը կարող է վերաբերել մինչ վավերացումն ընդունված օրենսդրությամբ սահմանված վերականգնման կամ փոխհատուցման ընթացակարգերին, եթե նման օրենսդրությունն ուժի մեջ է մնացել տվյալ մասնակից պետության կողմից թիվ 1 արձանագրության վավերացումից հետո (տե՛ս *«Բրոնիոովսկին ընդդեմ Լեհաստանի» (Broniowski v Poland)* [GC] գործը, 31443/96, պարբ. 125, ECHR 2004-...):

2. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՍՈՒՅՆ ԳՈՐԾԻ ՆԿԱՏՄԱՄԲ

(ա) Ընդհանուր նկատառումներ

36. Դատարանը նախ ի գիտություն է ընդունում այն ընդհանուր համատեքստը, որում ընդունվել է համապատասխան օրենսդրությունը: Ինչպես մի քանի այլ պետություններ, որոնք 1980-ական թթ. վերջին անցել են կառավարման ժողովրդավարական համակարգի, Սլովակիայի իրավանախորդ պետությունը ռեաբիլիտացիայի և վերականգնման մասին ընդունել է մի շարք օրենքներ՝ նախորդ կոմունիստական վարչակարգի պայմաններում կատարված և ժողովրդավարական հասարակության սկզբունքների հետ անհամատեղելի որոշակի սխալների արդյունքների վերացման նպատակով:

37. Ռեաբիլիտացիա, բռնագրավված գույքի վերականգնում կամ նման գույքի դիմաց փոխհատուցում նախատեսող օրենքների ընդունումն ակնհայտորեն ներառել է բարոյական, իրավական, քաղաքական և տնտեսական բնույթի բազմակողմանի խնդիրների համապարփակ դիտարկում: Մեկ այլ համատեքստում դատարանը վճռել էր, որ մասնակից պետությունների ազգային իշխանությունները հանրային մտահոգություններն ապահովագրելու միջոցների խնդրի գոյությունը գնահատելիս և սոցիալական ու տնտեսական քաղաքականություն իրականացնելիս հայեցողության լայն սահման ունեն (տե՛ս *«Հունաստանի նախկին թագավորը և այլք ընդդեմ Հունաստանի» (The Former King of Greece and Others v Greece)* [GC] գործը, թիվ 25701/94, պարբ. 87, ECHR 2000-XII):

38. Նույնպիսի մոտեցումն *a fortiori* տեղին է ռեաբիլիտացիայի և վերականգնման մասին վերոնշյալ համատեքստում ընդունված օրենքների դեպքում, ինչպիսին է «Արտադատական ռեաբիլիտացիաների մասին» օրենքը՝ ընդունված 1991 թ.: Մասնավորապես, դատարանը վերահաստատում է, որ կոնվենցիան մասնակից պետությունների համար չի սահմանում նախքան իրենց կողմից կոնվենցիան վավերացնելը կատարված սխալների կամ հասցված վնասի փոխհատուցում տրամադրելու որևէ հատուկ պարտավորություն: Նմանապես, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը չի կարելի մեկնաբանել այնպես, որ այն սահմանափակի մասնակից պետությունների՝ այն պայմաններն ընտրելու ազատությունը, որոնց դեպքում իրենք համաձայն են վերադարձնել այն գույքը, որը փոխանցվել է իրենց միևչև իրենց կողմից կոնվենցիայի վավերացումը (տե՛ս վերը՝ պարբ. 35):

39. Այն փաստը, որ 1991 թ. ընդունված՝ «Արտադատական ռեաբիլիտացիաների մասին» օրենքով վերականգնման ընդգրկումը սահմանափակ է, և գույքի վերականգնումը ենթակա է բազմաթիվ պայմանների, փաստորեն, որպես այդպիսին, չի խախտում դիմողի՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված իրավունքները:

40. Սա չի նշանակում, որ որևէ առանձին վերցված գործի շրջանակներում ազգային իշխանությունների կողմից համապատասխան իրավական դրույթների իրականացումը չի կարող խնդիրներ առաջացնել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առնչությամբ: Այնուամենայնիվ, մինչ դիտարկելը, թե արդյոք պրն Կոպեցկու (Mr Kopecky՛) նկատմամբ համապատասխան օրենքի կիրառման եղանակը միջամտությո՞ւն է եղել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված նրա իրավունքներին, դատարանը պարտավոր է պարզել՝ վերականգնման մասին նրա պահանջը կարո՞ղ է, հոդվածի իմաստից ելնելով, որակվել որպես «գույք»:

(բ) Գոյությո՞ւն է ունեցել «առկա գույք»

41. Վերականգնման մասին իր հայցը դիմողը հիմնավորեց 1991 թ. ընդունված «Արտադատական ռեաբիլիտացիաների մասին» օրենքի դրույթներով: Այն չի նախատեսում իրեն վերապահված սեփականության իրավունքի վերականգնում առանց դատարանի միջամտության: Դիմողի կողմից հիշատակված շահը, հետևաբար, հայցի էության մեջ է և, ըստ այդմ, չի կարող բնութագրվել որպես «առկա գույք»՝ համաձայն դատարանի նախադեպային իրավունքի: Նշվածը դատարանում չի վիճարկվել:

(գ) Արդյոք դիմողն ունեցե՞լ է «գույք»

42. Հետևաբար, մնում է պարզել, թե արդյոք այդ հայցը եղե՞լ է «գույք», այսինքն՝ արդյոք այն բավարար չափով հիմնավորվա՞ծ է եղել, որպեսզի հայտնվի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով տրամադրված իրավական երաշխիքների պաշտպանության տակ: Այս համատեքստում կարող է նաև կարևոր լինել այն հանգամանքը, թե մետաղադրամներից իրապես օգտվելու հնարավորություն ստանալու «օրինական ակնկալումը» դիմողի մեջ բողոքարկվող վարույթի համատեքստո՞ւմ է ծագել (տե՛ս վերը՝ պարբ. 35):

….

(i) «Օրինական ակնկալում» հասկացությունը

45. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համատեքստում «օրինական ակնկալում» հասկացությունն առաջին անգամ դատարանն արծարծել է *«Փայն Վելի Դիվելոփմենթս» ՍՊՀ-ն և այլք ընդդեմ Իռլանդիայի» (Pine Valley Developments Ltd v Ireland)* գործի շրջանակներում (վճիռը կայացվել է 1991 թ. նոյեմբերի 29-ին, շարք A, թիվ 222, էջ 23, պարբ. 51): Այս

գործով դատարանը որոշեց, որ «օրինական ակնկալում» է ծագել այն ժամանակ, երբ ընկերությանը շնորհվել է նախագիծ մշակելու թույլտվություն, որի վրա հիմնվելով՝ դիմող ընկերությունները ձեռք էին բերել հող՝ այն մշակելու նպատակով: Նախագծելու թույլտվությունը, որը չէր կարող չեղյալ հայտարարվել նախագծման համար պատասխանատու իշխանության մարմնի կողմից, «դիմող ընկերության սեփականության բաղկացուցիչ մասն» է (տե՛ս վճռի վերը մեջբերված պարբ. 51):

46. Ավելի ուշ տեղի ունեցած գործերից մեկով դիմողը տեղական իշխանության մարմնից 22 տարով լիզինգով հող էր ձեռք էր բերել, պայմանով, որ պետք է վճարի տարեկան հողային ռենտա՝ այն տարբերակով, որ ժամկետի ավարտին իրավունք ունի նոր ժամկետով թարմացնել լիզինգի տևողությունը և, լիզինգի պայմաններին համապատասխան՝ սեփական ծախսերով կառուցել էր մի շարք շինություններ թեթև արդյունաբերական օգտագործման համար, որոնք հանձնել էր վարձակալությամբ: Դատարանը որոշեց, որ պետք է համարել՝ դիմողն ունեցել է առնվազն «օրինական ակնկալում», որ կկարողանա օգտվել լիզինգի պայմանագիրը թարմացնելու հնարավորությունից, և սա, համաձայն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նպատակների, պետք է որակվի որպես «լիզինգի պայմանագրով ... նրան շնորհված սեփականության իրավունքներին կից» (տե՛ս *«Ստրեչն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Stretch v the United Kingdom)* գործը, թիվ 44277/98, պարբ. 35, 2003 թ. հունիսի 24):

47. Վերոնշյալ գործերում դրանց առնչվող անձինք իրավունք ունեին հիմնվել այն փաստի վրա, որ այն օրենսդրական ակտը, որի հիման վրա իրենք ստանձնել էին ֆինանսական պարտավորություններ, հետին թվով չեղյալ չէին հայտարարվի՝ ի վնաս իրենց: Գործերի այս համախմբում «օրինական ակնկալումը», այսպիսով, հիմնված է մի օրենսդրական ակտի նկատմամբ ողջամտորեն հիմնավորված վստահության վրա, որն ամուր իրավական հիմք ունի և ազդում է սեփականության իրավունքների վրա:

48. «Օրինական ակնկալում» հասկացության մեկ այլ կողմը նկարագրվել է *«Պրեսոս կոմպանիա Նավիերա Ս.Ա.-ն և այլք ընդդեմ Բելգիայի» (Pressos Compania Naviera S.A. and Others v Belgium)* (վճիռը կայացվել է 1995 թ. նոյեմբերի 20-ին, շարք A, թիվ 332, էջ 21, պարբ. 31): Գործը վերաբերել է վնասների մասին պահանջների, որոնք ծագել են տեղափոխման ժամանակ տեղի ունեցած պատահարների արդյունքում, որոնց պատճառը, համաձայն հայտարարության, եղել է բելգիացի օդաչուների անփութությունը: Նավագնացության տեղական կանոնների համաձայն՝ նման պահանջներն ուժի մեջ են մտնում վնասը տեղի ունենալու պահից: Դատարանը այդ պահանջները որակեց որպես «գույք», որը մտնում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պաշտպանության տակ: Ապա դատարանը նշեց, որ վճռաբեկ դատարանի մի շարք վճիռների հիման վրա դիմողները կարող էին պնդել՝ իրենք «օրինական ակնկալում» են ունեցել, որ խնդրո առարկա պատահարներից բխող իրենց պահանջները կորակվեին նավագնացության մասին ընդհանուր օրենքի համաձայն:

Դատարանը բացահայտ չհայտարարեց, որ «օրինական ակնկալումը» եղել է սեփականության որևէ իրավունքի բաղադրիչ տարրը կամ կցված է եղել նման իրավունքի, ինչպես վարվել էր *«Փայն Վելի Դիվելոփմենթս» ՍՊԸ-ն և այլք» (Pine Valley Developments Ltd and Others)* գործի շրջանակներում և ինչպես պատրաստվում էր վարվել *Ստրեչի (Stretch)* գործի շրջանակներում (հիշատակումները տե՛ս վերը՝ պարբ. 45-46): Այսուհանդերձ, ենթադրելի էր այն, որ որևէ նման ակնկալում չէր կարող իրականանալ մի այնպիսի «գույքի» բացակայությամբ, որը կտեղավորվեր թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակում, տվյալ դեպքում՝ քաղաքացիական պահանջի [claim in tort]: *«Պրեսոս կոմպանիա Նավիերա Ս.Ա.-ն և այլք» (Pressos Compania Naviera S.A. and Others)* գործում բացահայտված «օրինական ակնկալումը» ինքնին գույքային շահ հաստատող հանգամանք չէր և վերաբերում էր այն եղանակին, որով «գույք» որակվող պահանջը կդիտարկվեր ներպետական իրավունքով, մասնավորապես՝ վերաբերում էր այն փաստի վրա հիմնվելուն, որ պետք է շարունակեր ազգային դատարանների կողմից հաստատված նախադեպային իրավունքի կիրառումը արդեն իսկ տեղի ունեցած վնասի դեպքերում:

49. Մի շարք գործերով դատարանը համարել է, որ դիմողներն «օրինական ակնկալում» չեն ունեցել այն դեպքերում, երբ հնարավոր չէր պնդել, որ նրանք ունեցել են տվյալ ժամանակահատվածում կիրարկելի պահանջ, որը բավարար չափով հիմնավորված է եղել: Չեխիայի Հանրապետության դեմ հարուցված գործերից մեկում, որում դիմողների սեփականությունը վերականգնելու մասին հայցը՝ 1991 թ. ընդունված ըստ «Արտադատական ռեաբիլիտացիաների մասին» օրենքի, մերժվեց, որովհետև նրանք չէին բավարարել օրենքով նախատեսված էական կարգավիճակային պայմաններից մեկը (պատասխանող պետության քաղաքացիությունը), գանգատը բավարար չափով հիմնավորված չէր՝ ըստ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նպատակների: Այդպիսով, դատարանը որոշեց, որ տարբերություն կա պարզապես վերականգնման հույսի, որքան էլ այդ հույսը հասկանալի լինի, և «օրինական ակնկալման» միջև, որը պարտադիր կերպով պետք է ավելի որոշակի բնույթ ունենա, քան պարզապես հույսը, և պետք է հիմնված լինի այնպիսի իրավական դրույթի կամ օրենսդրական ակտի վրա, ինչպիսին է դատարանի վճիռը (տե՛ս *Գրացինգերը և Գրացինգերովան (Gratzinger and Gratzingerova)* գործը, որի վճիռը մեջբերված է վերը՝ պարբ. 73):

50. Նույն կերպ, չի կարելի ասել, որ որևէ «օրինական ակնկալում» ծագում է այն դեպքերում, երբ գոյություն ունի բանավեճ ներպետական իրավունքի ճիշտ մեկնաբանման և կիրառման շուրջ, և դիմողի ներկայացրած փաստարկները, ըստ այդմ, մերժվում են տեղական դատարաններում: *Յանտների (Jantner)* գործով (մեջբերված է վերը՝ պարբ. 29-33) սեփակա-

նության վերականգնման մասին դիմողի հայցը մերժվել էր, քանի որ ազգային դատարանները որոշել էին, որ նա հիմնական բնակություն չի հաստատել Սլովակիայում՝ համաձայն համապատասխան օրենքի կիրառման: Այս որոշումը վիճարկվել էր դիմողի կողմից, նա համարել էր, որ ինքը ապահովել է վերականգնման մասին հայցի բավարարման համար օրենքով նախատեսված բոլոր պահանջները: Դատարանը վճռեց, որ համապատասխան օրենքով, ինչպես դա մեկնաբանվել և կիրառվել է այդ երկրի իշխանությունների կողմից, դիմողն իրավունք չի ունեցել և ոչ էլ հայց է ունեցել, որոնք հնարավոր կլիներ որակել որպես «օրինական ակնկալում»՝ համաձայն դատարանի նախադեպային իրավունքի, որը վերաբերում է վիճահարույց սեփականության վերականգնմանը:

51. *Գրացինգերի և Գրացինգերովայի (Gratzinger and Gratzingerova)* և *Յանտների (Jantner)* գործերով, որոնք վերաբերում էին սեփականության վերականգնման համար գանգատների, կարելի է համարել, որ փաստացի խնդրո առարկան ոչ այնքան «օրինական ակնկալումն» էր՝ համաձայն *«Փայն Վելի Դիվելոփմենթս» ՍՊՀ-ի և այլք» (Pine Valley Developments Ltd and Others)* գործով կայացված վճռում սահմանված սկզբունքների (տե՛ս վերը՝ պարբ. 45-47), այլ ավելի շուտ այն հարցն էր, թե արդյոք դիմողներն ունեցե՞լ են այնպիսի հայց, որը հանդիսացել է «գույք», ինչպես դա սահմանվել էր *«Պրեսոս կոմպանիա Նավիերա Ս.Ա.-ի և այլք» (Pressos Compania Naviera S.A. and Others)* գործի շրջանակներում (տե՛ս վերը՝ պարբ. 48): Սեփականության վերականգնման հարցով երկու վերոհիշյալ գործերի դեպքում չի կարելի ասել, որ դիմողներն ունեցել են գույքային իրավունքներ, որոնց վրա բացասական ազդեցություն է ունեցել այն, որ իրենք հիմնվել են տվյալ օրենսդրական ակտի վրա: Ավելին, քանի որ նրանք չէին կարողացել բավարարել սեփականության վերականգնման համար օրենքով նախատեսված անհրաժեշտ պայմաններից մեկը, ի տարբերություն *Պրեսոս կոմպանիա Նավիերա Ս.Ա.-ի և այլք* գործում առկա իրավիճակի՝ գոյություն չի ունեցել բավարար չափով հիմնավորված գույքային շահ, որին հնարավոր լիներ կցել «օրինական ակնկալում»:

52. Ելնելով վերոնշյալից՝ կարելի է եզրակացնել, որ դատարանի նախադեպային իրավունքը չի նախատեսում «իսկական բանավեճի» կամ «վիճարկելի հայցի» գոյություն՝ որպես մի չափանիշի, որով որոշում են, թե արդյոք կա՞ «օրինական ակնկալում»՝ պաշտպանված թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով: ...Դատարանն այն կարծիքին է, որ եթե հայցի բուն բովանդակության մեջ գույքային շահ կա, այն կարող է համարվել «գույք» միայն այն ժամանակ, երբ բավարար հիմք ունի ազգային իրավունքում, օրինակ՝ այն դեպքերում, երբ գոյություն ունի ներպետական դատարանների կողմից ձևավորված նախադեպային իրավունք, որը հաստատում է այն:

(ii) Դիրքորոշումը սույն գործում

53. Տվյալ գործում դիմողի որևէ կոնկրետ գույքային շահ չի տուժել այն պատճառով, որ նա հիմնվել է որևէ որոշակի իրավական ակտի վրա: Հետևաբար չի կարելի ասել, որ նա ունեցել է «օրինական ակնկալում», ինչպես դա սահմանված է *«Փայն Վելի Դիվելոփմենթս» ՍՊՀ-ի և այլք* գործի շրջանակներում: Նախադեպային իրավունքի վերոնշյալ վերլուծության համաձայն՝ դատարանը դեռևս պետք է քննի՝ այնուամենայնիվ եղե՞լ է բավարար իրավական հիմք՝ ի պաշտպանություն դիմողի հայցի, որպեսզի ապահովվեր դրա որակումը որպես «գույք»՝ այն իմաստով, որն առկա է *Պրեսոս կոմպանիա Նավիերա Ս.Ա.-ի և այլք* գործում:

54. Համապատասխանաբար, դատարանի համար սկզբունքային հարցն այն է, թե արդյոք ներպետական իրավունքի մեջ գոյություն է ունեցե՞լ բավարար հիմք, ինչպես դա մեկնաբանվել է տեղական դատարանների կողմից, որպեսզի դիմողի հայցը որակվեր որպես «գույք»՝ համաձայն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի: Այս առումով վիճարկվող միակ կետն այն է, թե արդյոք կարելի՞ է ասել, որ դիմողը բավարարել է այն պահանջը, որ նա պետք է ցույց տա, թե «որտեղ է սեփականությունը», ինչպես դա ամրագրված է 1991 թ. ընդունված՝ «Արտադատական ռեաբիլիտացիաների մասին» օրենքի հոդված 5(1)-ում: Մասնավորապես, դիմողը համարում էր, որ, հակառակ Բրատիսլավայի շրջանային դատարանի և գերագույն դատարանի որոշումների, ինքն այդ պահանջը բավարարել է՝ ցույց տալով, թե երբ և ինչպես է այդ սեփականությունը փոխանցվել պետությանը, քանի որ իշխանության իրավասու մարմինը ունակ չի եղել բացատրելու, թե հետագայում ինչ են եղել մետաղադրամները:

55. Իրենց համապատասխան վճիռներում Բրատիսլավայի շրջանային դատարանը և գերագույն դատարանը որոշեցին, որ 1991 թ. ընդունված «Արտադատական ռեաբիլիտացիաների մասին» օրենքի հոդված 5(1)-ը պարունակել է պարտավորություն, այն է՝ ցույց տալ, թե խնդրո առարկա շարժական գույքը որտեղ է գտնվել 1991 թ. ապրիլի 1-ի դրությամբ, երբ այդ օրենքը մտել է ուժի մեջ: Ի լրումն՝ գերագույն դատարանը որոշեց, որ «Արտադատական ռեաբիլիտացիաների մասին» օրենքի հոդված 5(1)-ով շարժական գույքի վերականգնման հայցը կարող էր վերաբերել միայն այն որոշակի գույքին, որն իրականում բռնագրավվել է պետության կողմից, ոչ թե նույն բնույթի տարբեր օբյեկտների: Այս որոշումը համահունչ էր մեկ այլ նման գործով այս դատարանի կողմից ավելի վաղ կայացված վճռին: Շրջանային դատարանը և գերագույն դատարանը որոշեցին, որ դիմողի ներկայացրած ապացույցները և հենց շրջանային դատարանի ձեռք բերած լրացուցիչ ապացույցները բավարար ապացույց չեն եղել, որ 1991 թ. ներքին գործերի նախարարությանը դեռևս պատկանել են այն մետաղադրամները, որոնք դիմողի պապից բռնագրավվել են 1958 թ.:

56. Դատարանը, նկատի առնելով իրեն հասու տեղեկությունները և համարելով, որ ինքն օժտված է ընդամենը սահմա-

նափակ լիազորությամբ՝ դիտարկելու ազգային դատարանների (որոնք ներպետական իրավունքը մեկնաբանելու և կիրառելու հարցում առաջնային պատասխանատվություն ունեն) կողմից, համաձայն հայտարարությունների, փաստերի կամ օրենքների առնչությամբ թույլ տրված սխալները (տե՛ս *«Գարսիա Ռուիսն ընդդեմ Իսպանիայի» (García Ruiz v Spain)* [GC], թիվ 30544/96, պարբ. 28, ECHR 1999-I, և *«Քոփն ընդդեմ Շվեյցարիայի» (Kopp v Switzerland)*, վճիռը կայացվել է 1998 թ. մարտի 25-ին, Վճիռների և որոշումների զեկույցներ, 1998-II, էջ 540, պարբ. 59), Բրատիսլավայի շրջանային դատարանի և գերագույն դատարանի՝ դիմողի հայցի վերաբերյալ վճիռներ կայացնելու եղանակում կամայականության որևէ դրսևորում չի գտնում: Հետևաբար, որևէ հիմք չկա, որի հիման վրա դատարանը կարողանար հանգել խնդրո առարկա պահանջը դիմողի կողմից բավարարվելու մասին որևէ այլ եզրակացության:

….

59. Ճշմարիտ է այն, որ Սենիկայի շրջանային դատարանը, որը հայցի վերաբերյալ վճիռ էր կայացրել որպես առաջին ատյանի դատարան, որոշել էր, որ դիմողի համար գործնականում հնարավոր չի եղել իրացնել պայմանը, որը վերաբերում է գույքի ճշգրիտ վայրին, և հրահանգել էր, որ մետաղադրամները վերադարձվեն դիմողին: Հետագայում առաջին ատյանի վճիռը իրավազորության երկու մակարդակների ավելի բարձր դատարանների կողմից չեղյալ հայտարարվեց՝ միևնույն վարույթի համատեքստում և մինչև այն ձեռք կբերեր վերջնական և կատարման համար պարտադիր ուժ: Այսպիսով, Սենիկայի շրջանային դատարանի կայացրած վճիռը դիմողին չօժտեց մետաղադրամների վերականգնման՝ կատարման ենթակա իրավունքով (տե՛ս *mutatis mutandis «Հունական «Ստրան» նավթավերամշակման գործարանները և Ստրատիս Անդրեադիսն ընդդեմ Հունաստանի» (Stran Greek Refineries and Stratis Andreadis v Greece)*, վճիռը կայացվել է 1994 թ. դեկտեմբերի 9-ին, շարք A, թիվ 301-B, էջ 84, պարբ. 59): Այս վճիռը, հետևաբար, բավարար չէր, որպեսզի առաջացներ գույքային շահ, որը հնարավոր կլիներ որակել որպես «գույք»:

60. Այս հանգամանքներում դատարանը որոշում է, որ դիմողը սեփականության վերականգնման իր հայցի համատեքստում որևէ «գույք» չի ունեցել՝ համաձայն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին նախադասության իմաստի: Հետևաբար, այդ դրույթի տրամադրած իրավական երաշխիքները կիրառելի չեն սույն գործի նկատմամբ:

61. Հետևաբար, տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

Չորս դատավորներ անհամաձայնություն հայտնեցին, նրանք համարում էին, որ դիմողը «օրինական ակնկալում» է ունեցել առ այն, որ մետաղադրամները կվերադարձվեն իրեն: Դատավորներ Ռեսը, Շտայները և Բոռեգո Բոռեգոն տեսակետ հայտնեցին, որ «փոխհատուցման եղանակի և պահանջների ընդգրկման վերաբերյալ կանոնները պետք է մեկնաբանվեն այնպես, որ դրանք չխանգարեն փոխհատուցմանը և վերականգնմանն ավելի շատ, քան անհրաժեշտ է»:

Կոպեցկու (Kopecky) գործով մեծ պալատի վճիռը բացահայտում է, որ 1-ին հոդվածը մասնակից պետություններին չի պարտավորեցնում ապահովել նախորդ ամբողջատիրական վարչակարգերի կողմից կոնվենցիայի վավերացումից առաջ բռնագրավված սեփականության վերականգնում (կամ դրա դիմաց փոխհատուցում): Ավելին, այն դեպքերում, երբ պետությունները վավերացումից հետո ընդունում են վերականգնման/փոխհատուցման մեխանիզմներ, դատարանի կողմից նրանց կիատկացվի հայեցողության լայն սահման՝ սահմանելու համար մասնակցության իրավունք ունենալու պայմանները: Բնականաբար, դատարանն ընդունեց այն, որ սրանք չափազանց քաղաքականացված որոշումներ են, որոնք ընդունվել են, որպես կանոն, տնտեսապես թերզարգացած այնպիսի պետություններում, որոնք դրամատիկ սոցիալական և տնտեսական բարեփոխումներ էին անցկացնում:

Հետագա *«Ֆոն Մալցանը և այլք ընդդեմ Գերմանիայի» (von Maltzan and Others v Germany)* գործով, որի վճիռը կայացվեց 2005 թ. մարտի 2-ին, մեկ այլ մեծ պալատ որդեգրեց նույնանման դիրքորոշում Գերմանիայում ընդունված այն օրենսդրական մեխանիզմի նկատմամբ, որը նախատեսված էր այն անձանց փոխհատուցման համար, ում սեփականությունը բռնագրավվել էր 1945-1949 թթ. Գերմանիայի՝ խորհրդային ուժերի կողմից գրավյալ գոտում, և 1949 թ. հետո՝ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում: Յոթանասունմեկ դիմողները բողոքել էին, որ վերամիավորմանը հաջորդած ժամանակահատվածում փոխհատուցման մեխանիզմը նրանց տվել է բռնագրավված սեփականության իրական արժեքի շատ ավելի փոքր մասը: Կառավարությունն առարկել էր, որ դիմումները *ratione materiae* անհամատեղելի են եղել կոնվենցիայի հետ, քանի որ դիմողները որևէ գույքային իրավունք չեն ունեցել այն ժամանակ, երբ 1990 թ. ընթացքում կոնվենցիան ուժի մեջ է մտել նոր Լանդերի [Lander] (այսինքն՝ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության նախկին տարածքի) առնչությամբ, ոչ էլ որևէ այլ փոխհատուցման «օրինական ակնկալում» են ձեռք բերել, քան

այն, որը տրամադրվել է վերամիավորմանը հաջորդած շրջանի օրենսդրական մեխանիզմով: Մեծ պալատը որոշեց, որ.

110. Դատարանը վերահաստատում է այն, որ իրեն ներկայացված մի շարք գործերով, որոնք առնչվել են Գերմանիայի վերամիավորմանը, դատարանը հղում է կատարել այդ վերամիավորման եզակի համատեքստին և այն հսկայական անելիքին, որ ունեցել է Գերմանիայի օրենսդիր մարմինը, երբ զբաղվել է բոլոր այն համալիր խնդիրներով, որոնք անխուսափելիորեն ծագել են կոմունիստական վարչակարգից ժողովրդավարական, շուկայական տնտեսության վրա հիմնված համակարգի անցման ժամանակահատվածում (տե՛ս, բազմաթիվ այլ աղբյուրների թվում, *«Կունան ընդդեմ Գերմանիայի» (Kuna v Germany)*, (dec.), թիվ 52449/99, ECHR 2001-V):

Տվյալ գործում, որոշելով շտկել օտար օկուպացիոն ուժի կամ մեկ այլ ինքնիշխան պետության հրահրմամբ իրականացված գործողություններից բխող անարդարությունները կամ վնասը, Գերմանիայի օրենսդիր մարմինը ստիպված էր ընտրել որոշակի տարբերակներ՝ ելնելով հանրային շահից: Այդ կապակցությամբ, ընդունելով օրենսդրություն, որը կարգավորում է Գերմանիայի վերամիավորումից հետո սեփականության և փոխհատուցման հարցեր, նա հաշվի է առել, այլ խնդիրների շարքում, «հակամարտող շահերի միջև սոցիալապես ընդունելի հավասարակշռության», «իրավական որոշակիության և հստակության», «սեփականության իրավունքի» և «իրավական խաղաղության» գաղափարները, որոնք ներառված են եղել «Համատեղ հռչակագրում»: Նույն կերպ, Հիմնական օրենքին այդ օրենսդրության համապատասխանության հարցն ուսումնասիրելիս դաշնային սահմանադրական դատարանը նշեց «սոցիալական արդարության և օրենքի գերակայության» սկզբունքները, ինչպես նաև՝ «կամայականության արգելումը»:

111. Ինչպես դատարանը հայտարարել էր վերը, այն դեպքերում, երբ որևէ պետություն որոշում է շտկել այնպիսի գործողությունների հետևանքները, որոնք անհամատեղելի են ժողովրդավարական իշխանության սկզբունքների հետ, բայց որոնց համար ինքը պատասխանատու չէ, այդ քաղաքականությունն իրականացնելիս պետությունն օգտվում է հայեցողության լայն սահմանից:

112. Գերմանիայի վերամիավորումից հետո ընդունված օրենսդրական ակտերի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողները հույս ունեին կա՛մ հասնել իրենց սեփականության վերականգնման, կա՛մ փոխհատուցման, կա՛մ վնասների հատուցման, որը համարժեք կլիներ իրենց սեփականության իրական արժեքին: Այնուամենայնիվ, այն համոզմունքը, թե այն ժամանակ ուժի մեջ եղած օրենքները կփոխվեին հօգուտ դիմողների, չի կարող համարվել «օրինական ակնկալման» ձև՝ համաձայն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի: Ինչպես բազմիցս դատարանը նշել է, տարբերություն կա պարզապես հույսի, որքան էլ այդ հույսը հասկանալի լինի, և օրինական ակնկալման միջև, որը պարտադիր պետք է ավելի որոշակի բնույթ ունենա և հիմնված լինի որևէ իրավական ակտի վրա կամ ամուր հիմք ունենա ներպետական նախադեպային իրավունքում (տե՛ս, այլոց շարքում, *Գրացինգերը և Գրացինգերովան (Gratzinger and Gratzingerova)* գործը, մեջբերված վերը՝ պարբ. 73 և *Կոպեցկու (Kopecky)* գործը՝ մեջբերված վերը, պարբ. 52): Դիտարկվող գործում ո՛չ «Համատեղ հռչակագիրը», ո՛չ էլ դաշնային սահմանադրական դատարանի առաջնորդող առաջին վճիռը՝ հողային ռեֆորմների վերաբերյալ, դիմողներին չեն օժտել այնպիսի իրավունքներով, որոնք կգերազանցեին խնդրո առարկա օրենքներով նրանց տրված իրավունքները:

113. Դատարանը եզրակացնում է, որ դիմողները ցույց չեն տվել որ իրենք ունեցել են պահանջներ, որոնք բավարար չափով հիմնավորված են եղել, որպեսզի դառնային կատարման համար պարտադիր, և, հետևաբար, նրանք չեն կարող պնդել, որ ունեցել են «գույք», ինչպես դա սահմանված է թիվ 1 արձանագրության հոդված 1-ում: Հետևաբար, ո՛չ խնդրո առարկա օրենսդրական ակտերը, ո՛չ էլ դաշնային սահմանադրական դատարանի վճիռները կամ որոշումները միջամտություն չեն եղել սեփական գույքից անարգել օգտվելու հարցում, իսկ հայցում ներկայացված փաստերը չեն տեղավորվում թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի սահմաններում:

114. Նշվածից հետևում է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով ներկայացված գանգատները, ելնելով դիտարկվող նյութի հանգամանքներից, անհամատեղելի են կոնվենցիայի դրույթների հետ՝ համաձայն 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստի, և դրանք ենթակա են մերժման՝ համաձայն 35-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստի:

Մեծ պալատը վերոնշյալ որոշմանը հանգեց ձայների մեծամասնությամբ, բայց քանի որ դա ընդունելիությանը վերաբերող որոշում էր (թեև հույժ կարևոր որոշում էր, որով վճռվում էր Գերմանիայի համար համապետական կարևորության մի խնդիր), մեծամասնության տեսակարար կշիռը չբացահայտվեց, և չհամընկնող որևէ կարծիք չհրապարակվեց:

9 Մեծ պալատը *«Ստեքը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (Stec and Others v United Kingdom)* գործով (վճիռը կայացվել է 2005 թ. հուլիսի 6-ին) սոցիալական ապահովության նպաստները որպես «գույք» դասակարգելու հարցում որդեգրեց մի նոր և ընդգրկուն մոտեցում: Գանգատարկուները

հայտարարել էին, որ վաստակի նվազման նպաստ (ՎՆՆ) և թոշակի անցնելու նպաստ (ԹՆ) ստանալու իրավունակության հարցում սեռական խտրականություն գոյություն ունի, ինչը խախտում է 14-րդ հոդվածը՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համակցությամբ: Կառավարությունը պատասխանեց, որ բողոքը, ելնելով դիտարկվող նյութի հանգամանքներից, անհամատեղելի է, քանի որ ոչ մասնակցային [non-contributory] նպաստների վրա արձանագրության 1-ին հոդվածը չի տարածվում:

42. Դատարանն ի գիտություն է ընդունում այն, որ ՎՆՆ-ն և ԹՆ-ն ոչ մասնակցային նպաստներ են՝ այնքանով, որքանով դրանք 1990 թ. ի վեր ֆինանսավորվել են ընդհանուր հարկման միջոցով, ոչ թե ազգային ապահովագրության համակարգի միջոցով: Չնայած նպաստներ ստանալու իրավունք ունեն միայն այն աշխատողները կամ նախկին աշխատողները, ում վաստակելու կարողությունը տուժել է աշխատավայրում տեղի ունեցած պատահարի կամ մասնագիտական հիվանդության հետևանքով, նպաստ ստանալը պայմանավորված չէ Ազգային ապահովագրական հիմնադրամին կատարված որևէ վճարմամբ կամ մի որոշակի քանակի վճարումներով:

43. Հանձնաժողովը կոնվենցիայով նախատեսված առաջին մարմինն էր, որը դիտարկելու էր, թե որքանով է թոշակներ և այլ նպաստներ ստանալու իրավունքը պաշտպանված թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով: Հանձնաժողովը կիրառեց այն սկզբունքը, ըստ որի՝ այդ հոդվածը սոցիալական ապահովության նպաստ կամ թոշակ ստանալու որևէ իրավունքով չի օժտել: Պարտադիր վճարումները, օրինակ, որևէ կենսաթոշակային հիմնադրամի կամ որևէ սոցիալական ապահովագրության համակարգի այնուամենայնիվ կարող են նման իրավունք առաջացնել այն դեպքերում, եթե ուղղակի կապ է եղել կատարված վճարումների մակարդակի և նշանակված նպաստների միջև: Հակառակ դեպքում դիմողը երբևէ հիմնադրամում ճանաչելի և պահանջելու ենթակա մասնաբաժին չի ունեցել (տե՛ս, օրինակ՝ *«Մյուլլերն ընդդեմ Ավստրիայի» (Müller v Austria)*, թիվ 5849/72, հանձնաժողովի որոշում՝ ընդունված 1975 թ. հոկտեմբերի 1-ին, DR 3, էջ 25, *«Գ.-ն ընդդեմ Ավստրիայի» (G v Austria)*, թիվ 10094/82, Հանձնաժողովի որոշում՝ ընդունված 1984 թ. մայիսի 14-ին, DR 38, էջ 84, *«Դե Քլայնե Շտաարմանն ընդդեմ Նիդեռլանդների» (De Kleine Staarman v The Netherlands)*, թիվ 10503/83, Հանձնաժողովի որոշում՝ ընդունված 1985 թ. մայիսի 16-ին, DR 42, էջ 162):

44. Այս հարցով դատարանի առաջին վճիռը *«Գայգուսուզն ընդդեմ Ավստրիայի» (Gaygusuz v Austria)* [1996-IV] գործով էր: Դիմողը, որ Թուրքիայի քաղաքացի էր, 1973 թ. մինչև 1987 թ. ապրել էր Ավստրիայում: 1973 թ. մինչև 1984 թ. աշխատել էր, սակայն 1984 թ. մինչև 1987 թ. նա կա՛մ գործազուրկ էր եղել, կա՛մ պաշտոնապես համարվել էր անաշխատունակ: 1986 թ. հուլիսից մինչև 1987 թ. մարտ նրան վճարվել է իր կենսաթոշակի կանխավճար՝ գործազրկության նպաստի ձևով: Երբ այս նպաստի վճարումն սպառվել է, նա դիմել է կենսաթոշակի մեկ այլ կանխավճար ստանալու համար՝ «արտակարգ դրության օժանդակության» տեսքով: Այսպիսի վճարման համար գոյություն են ունեցել մի քանի նախապայմաններ: Դիմողը պետք է լիներ գործազուրկ, բայց աշխատունակ և պատրաստ աշխատելու, նա պետք է սպառած լիներ գործազրկության նպաստ ստանալու իր իրավունքը, պետք է լիներ ծայրահեղ կարիքի մեջ, և նրա ազգային պատկանելությունը պետք է լիներ ավստրիացի: Դիմողը բավարարել էր բոլոր չափանիշները՝ բացառությամբ ավստրիացի լինելու պահանջի: Մասնավորապես, ինչպես պարզեց դատարանը, դիմողը գործազրկության նպաստ ստանալու իրավունք է ունեցել, քանի որ կատարել է գործազրկության ապահովագրական վճարումներ նույն կերպ, ինչպես կատարել է Ավստրիայի յուրաքանչյուր աշխատող, իսկ այդ նպաստը ստանալու նրա իրավունքը սպառվել է այն ժամանակ, երբ նա դիմել է արտակարգ դրության օժանդակություն ստանալու համար: Դատարանի վճռի 21-րդ պարբերության մեջ, ի լրումն, նշվել էր, որ գործազրկության նպաստի գումարը «մասամբ գոյացել է յուրաքանչյուր աշխատողի կողմից կատարված գործազրկության ապահովագրական վճարումներից և մասամբ՝ կառավարության տրամադրած տարբեր պետական աղբյուրներից»: «Հիմնադրամը», որից վճարվել են նպաստները, հետևաբար, ամբողջությամբ չի ֆինանսավորվել աշխատողների կամ գործատուների կատարած վճարումներից:

45. Դիտարկվող գործի կողմերը անհամաձայնություն են հայտնում այն կապակցությամբ, թե արդյոք այն փաստը, որ պրն Գայգուսուզը կատարել է գործազրկության ապահովագրական վճարումներ, էակա՞ն նշանակություն ունի դատարանի այն որոշման համար, ըստ որի՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը տվյալ դեպքում կիրառելի է: Դիմողները հայտարարում են, որ դատարանի որոշման առանցքային հիմքը, ինչպես դա ամրագրվել է վճռի 41-րդ պարբերության մեջ, եղել է այն, որ.

> «Արտակարգ իրավիճակներում օժանդակության իրավունքը, ինչպես դա նախատեսված է գործող օրենսդրությամբ, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նպատակներից ելնելով՝ գույքային իրավունք է»:

Իր կողմից կառավարությունը հիմնվում է 39-րդ պարբերության վրա, որում դատարանն ընդգծել է, որ վճարումների կատարումը գործազրկության նպաստների վճարման համար նախապայման է եղել, և

> «հետևաբար, այն դեպքերում, երբ նման վճարումներ չեն կատարվել, արտակարգ իրավիճակներում օժանդակության իրավունք գոյություն չունի»:

Նրանք պնդում են, որ դատարանը չէր որոշի, որ արտակարգ իրավիճակներում օժանդակությունը տեղավորվում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում, եթե դա ստանալու իրավունակությունը կախված չլիներ նախօրոք վճարումներ կատարած լինելու հանգամանքից:

46. Մեծ պալատն ընդունում է, որ *Գայգուսուզի* գործով վճիռն այս կարևոր հարցով երկիմաստ է եղել: Սա արտացոլված է այն փաստում, որ հետագայում իրավասության երկու առանձին ուղղություններ են ի հայտ եկել կոնվենցիայով ստեղծված մարմինների նախադեպային իրավունքում: Հանձնաժողովը, և որոշ դեպքերում՝ դատարանը, շարունակել է համարել, որ սոցիալական ապահովության որևէ նպաստի կամ թոշակի նկատմամբ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի գործողությունը տարածվում է միայն այն դեպքերում, երբ տվյալ նպաստը ֆինանսավորող հիմնադրամին կատարվել են մասնակցային վճարումներ (տե՛ս, *«Շրաբյետը և Քլարքն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Szrabjet and Clarke v the United Kingdom)*, թիվ 27004/95 և թիվ 27011/95, հանձնաժողովը որոշում է կայացրել 1997 թ. հոկտեմբերի 23-ին, *«Քարլինն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Carlin v the United Kingdom)*, թիվ 27537/95, հանձնաժողովը որոշում է կայացրել 1997 թ. դեկտեմբերի 3-ին, *«Քոուքը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (Coke and Others v the United Kingdom)*, թիվ 38696/97, հանձնաժողովը որոշում է կայացրել 1999 թ. սեպտեմբերի 9-ին, *«Ստավիցկին ընդդեմ Լեհաստանի» (Stawicki v Poland)* (dec.), թիվ 47711/99, 2000 թ. փետրվարի 10, *«Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի» (Jankovic v Croatia)* (dec.), թիվ 43440/98, 2000 թ. հոկտեմբերի 12, *«Քոլսն ընդդեմ Գերմանիայի» (Kohls v Germany)* (dec.), թիվ 72719/01, 2003 թ. նոյեմբերի 13, *«Կյարտան Ասմունդսոնն ընդդեմ Իսլանդիայի» (Kjartan Asmundsson v Iceland)*, թիվ 60669/00, որոշումը կայացվել է 2004 թ. հոկտեմբերի 12-ին, իսկ պալատը որոշում է կայացրել 2002 թ. հունիսի 20-ին *«Ազինաս ընդդեմ Կիպրոսի» (Azinas v Cyprus)* գործով, թիվ 56679/00, պարբ. 32-34, որին, այնուամենայնիվ, փոխարինել է մեծ պալատի կողմից 2004 թ. ապրիլի 28-ին կայացված որոշումը, որով հայցը վճռվել է այլ հիմքով): Այլ հայցերով, այդուհանդերձ, դատարանը որոշել է, որ սոցիալական ապահովության նպաստը, անգամ ոչ մասնակցային համակարգում, կարող է համարվել գույք՝ համաձայն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նպատակների (տե՛ս *«Բուխենն ընդդեմ Չեխիայի Հանրապետության» (Buchen v the Czech Republic)*, թիվ 36541/97, պարբ. 46, 2002 թ. նոյեմբերի 26, *«Կուա Պուարեն ընդդեմ Ֆրանսիայի» (Koua Poirrez v France)*, թիվ 40892/98, պարբ. 42, ECHR 2003-X, *«Վեսելս-Բերգերվոետն ընդդեմ Նիդեռլանդների» (Wessels-Bergervoet v The Netherlands)*, թիվ 34462/97, ECHR 2002-IV, *«Վան դեն Բոուվհույսենը և Շուրինգն ընդդեմ Նիդեռլանդների» (Van den Bouwhuijsen and Schuring v The Netherlands)* (dec.), թիվ 44658/98, 2003 թ. դեկտեմբերի 16):

ii. Մոտեցումը, որը պետք է կիրառվի հետայսու

47. Այս համատեքստի պայմաններում անհրաժեշտ է նորովի ուսումնասիրել այն հարցը, թե արդյոք սոցիալական ապահովության ոչ մասնակցային նպաստը պե՞տք է արժանանա թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված պաշտպանությանը: Քանի որ կոնվենցիան նախ և առաջ մարդու իրավունքների պաշտպանության մի համակարգ է, դատարանը պարտավոր է հաշվի առնել պատասխանող պետության ներսում և ընդհանրապես մասնակից պետություններում փոփոխվող պայմանները, և կոնվենցիան պարտավոր է մեկնաբանել ու կիրառել այնպիսի եղանակով, որը կոնվենցիայով ամրագրված իրավունքները դարձնում է գործնական և արդյունավետ, ոչ թե տեսական և երևակայական (տե՛ս *«Քրիսթին Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Christine Goodwin v the United Kingdom)* [GC], թիվ 28957/95, պարբ. 74, ECHR 2002-VI):

48. Նաև պարտադիր է, որ կոնվենցիան ընկալվի որպես մեկ ամբողջություն և մեկնաբանվի այնպես, որ խթանվի կոնվենցիայի տարբեր դրույթների միջև ներքին միասնականությունը և ներդաշնակությունը (*«Կլասսը և այլք ընդդեմ Գերմանիայի» (Klass and Others v Germany)*, վճիռը կայացվել է 1978 թ. սեպտեմբերի 6-ին, շարք A, թիվ 28, պարբ. 68, ինչպես նաև տե՛ս *«Մաաուիան ընդդեմ Ֆրանսիայի» (Maaouia v France)* [GC], թիվ 39652/98, պարբ. 36, ECHR 2000-X և *«Կուդլան ընդդեմ Լեհաստանի» (Kudła v Poland* [GC], թիվ 30210/96, պարբ. 152, ECHR 2000-XI): Այս առումով հիշատակման արժանի է այն, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիության վերաբերյալ իր նախադեպային իրավունքում դատարանն ի սկզբանե որոշել էր, որ այն հայցերը, որոնք բացառապես վերաբերում էին մասնակցային համակարգերի մաս կազմող սոցիալական ապահովության նպաստներին, մասնավոր ապահովագրական համակարգերին նմանության պատճառով բավականաչափ անձնական և տնտեսական բնույթի էին, որպեսզի հանդիսանային «քաղաքացիական իրավունքների սահմանման» նպատակով վեճերի առարկա (տե՛ս *«Ֆելդբրյուգգեն ընդդեմ Նիդեռլանդների» (Feldbrugge v The Netherlands) և «Դյոմելանդն ընդդեմ Գերմանիայի» (Deumeland v Germany)*, երկու վճիռներն էլ կայացվել են 1986 թ. մայիսի 29-ին, շարք A, թիվ 99 և թիվ 100): Այնուամենայնիվ, *«Սալեզին ընդդեմ Իտալիայի» (Salesi v Italy)* գործով, որի վճիռը կայացվել է 1993 թ. փետրվարի 23-ին (շարք A, թիվ 257-A), որոշվեց, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը պետք է կիրառվի նաև այնպիսի վեճի դեպքում, որը վերաբերում է սոցիալական ապահովության որևէ ոչ մասնակցային նպաստ ստանալու իրավունքին, երբ դատարանն ընդգծեց, որ դիմողն ունեցել է սոցիալական նպաստներ ստանալու անհատական և տնտեսական բնույթի վկայակոչելի իրավունք: Այդպիսով, դատարանը հրաժարվեց մասնավոր ապահովագրական համակարգերի հետ համեմատությունից և անհատի ու պետության միջև «պայմանագրի» որևէ տեսակի առկայության պահանջից: *«Շուլեր-Զգրագգեն ընդդեմ Շվեյցարիայի» (Schuler-Zgraggen v Switzerland)* (վճիռը կայացվել է 1993 թ. հունիսի 24-ին, շարք A, թիվ 263, պարբ. 46), դատարանը վճռեց, որ.

«... օրենքի հետագա մշակումը ... և վերաբերմունքի հավասարության սկզբունքը հիմնավորում են այն տեսակետը, որ այսօր ընդհանուր կանոնն այն է, որը 6-րդ հոդվածի 1-ին կետն իսկապես կիրառելի է սոցիալական ապահովագրության ոլորտում, ներառյալ՝ անգամ սոցիալական ապահովության օժանդակությունը»:

49. Կոնվենցիայի՝ որպես մեկ ամբողջության միասնական տրամաբանության շահերից է այն, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում ներառված՝ «գույքի» ինքնուրույն հայեցակարգը հարկ է մեկնաբանել այնպիսի եղանակով, որը համահունչ է 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ դրամական իրավունքների հայեցակարգին: Առավել ևս կարևոր է որդեգրել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի այնպիսի մեկնաբանություն, որը կխուսափի վերաբերմունքի հարցում այնպիսի տարբերակումների հիման վրա անհավասարություններից, որոնք մեր օրերում համարվում են անտրամաբանական և ոչ հարատև:

50. Դատարանի մոտեցումը թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին պետք է արտացոլի այն իրական եղանակը, որով ներկայումս կազմակերպվում է սոցիալական ապահովությունը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում: Պարզ է, որ այդ պետություններում և առանձին պետությունների մեծամասնությունում գոյություն ունի սոցիալական ապահովության նպաստների մի ընդարձակ ցուցակ, որը մշակվել է, որպեսզի անձանց օժտի իրավունակությամբ, որը բխում է իրավունքից: Նպաստները ֆինանսավորվում են բազմապիսի եղանակներով. դրանց որոշ մասը վճարվում է մասնակիցների կողմից մի որոշակի հիմնադրամի կատարված վճարումներից, որոշ մասը կախված է դիմողի մասնակցության պատմությունից, բազմաթիվ նպաստներ վճարվում են ընդհանուր հարկումից ստացված գումարներով՝ օրենքով սահմանված կարգավիճակի հիման վրա... ՎՆՆ-ն և ԹՆ-ն ասվածի լավ օրինակներ են: Ի սկզբանե ֆինանսավորվելով ազգային ապահովագրական հիմնադրամի միջոցներով՝ 1990 թ. ի վեր դրանք ֆինանսավորվել են ընդհանուր հարկման միջոցով: Հաշվի առնելով ֆինանսավորման եղանակների բազմազանությունը և սոցիալական ապահովության համակարգերի մեծամասնությունում նպաստների փոխշաղկապված բնույթը՝ հետզհետե ավելի արհեստական է թվում համարելը, որ միայն որոշակի հիմնադրամի կատարվող վճարումներից ֆինանսավորվող նպաստներն են տեղավորվում թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի սահմաններում: Ավելին, բացառելը այն նպաստները, որոնք ֆինանսավորվում են ընդհանուր հարկահավաքման միջոցներից, կնշանակեր անուշադրության մատնել այն փաստը, որ այս վերջին տեսակի համակարգով բազմաթիվ դիմողներ նաև մասնակցում են դրա ֆինանսավորմանը հարկեր վճարելու միջոցով:

51. Ժամանակակից ժողովրդավարական պետության մեջ բազմաթիվ անհատներ իրենց ողջ կյանքի ընթացքում կամ որոշակի հատվածում գոյատևման համար ամբողջովին կախված են սոցիալական անվտանգության և սոցիալական ապահովության նպաստներից: Բազմաթիվ ներպետական իրավական համակարգեր ընդունում են, որ այսպիսի անհատները որոշակիության և անվտանգության կարիք ունեն, և նախատեսում են նպաստներ, որոնք պետք է վճարվեն որպես իրավունք՝ իրավունակության պայմանների բավարարման դեպքում: Այն դեպքերում, երբ անհատը, ներպետական օրենսդրության համաձայն, սոցիալական ապահովության նպաստ ստանալու վկայակոչելի իրավունք ունի, այդ շահի կարևորությունը պետք է նաև արտահայտվի վճռելով, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի է:

52. Վերջապես և ի պատասխան կառավարության պնդման՝ դատարանը համարում է, որ եզրակացնելը, թե ոչ մասնակցային նպաստ ստանալու իրավունքը տեղավորվում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի սահմաններում, «Սոցիալական խարտիայի» դրույթներն ավելի անօգուտ չի դարձնում, քան նույն եզրակացությանը հանգելը՝ կապված մասնակցային նպաստի հետ: Այն դեպքում, երբ կոնվենցիան ըստ էության սահմանում է քաղաքացիական և քաղաքական իրավունքներ, դրանց մեծ մասից բխում են սոցիալական կամ տնտեսական բնույթի հետևանքներ: Ջուտ այն փաստը, որ կոնվենցիայի որևէ մեկնաբանություն կարող է տարածվել դեպի սոցիալական և տնտեսական իրավունքների ոլորտ, չպետք է վճռորոշ գործոն դառնա նման մեկնաբանության դեմ. գոյություն չունի «հերմետիկ» բաժանում, որն այդ ոլորտը տարանջատեր կոնվենցիայի պաշտպանության տակ գտնվող դաշտից (տե՛ս *«Էյրիի ընդդեմ Իռլանդիայի» (Airey v Ireland)*, վճիռը կայացվել է 1979 թ. հոկտեմբերի 9-ին, շարք A, թիվ 32, պարբ. 26):

53. Ամփոփենք. եթե դեռևս կարելի է պնդել, որ նախաղեպային իրավունքում գոյություն ունի որևէ տարբերություն մասնակցային և ոչ մասնակցային նպաստների միջև՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կիրառելիության նպատակներից ելնելով, ապա նման տարբերակման շարունակական կիրառումն արդարացնելու համար որևէ հիմք չկա:

54. Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել, որ այն սկզբունքները, որոնք ամփոփվել են *«Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի» (Kopecky v Slovakia)* [GC] գործում, թիվ 44912/98, պարբ. 35, ECHR 2004-IX, որոնք ընդհանրապես կիրառելի են թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով դիտարկվող գործերում, հավասարապես ռելևանտ են սոցիալական ապահովության նպաստների դեպքում: Մասնավորապես, այս հոդվածը չի ստեղծում սեփականություն ձեռք բերելու իրավունք: Այն որևէ սահմանափակման չի ենթարկում մասնակից պետության ազատությունը՝ որոշելու՝ ունենալ թե ոչ սոցիալական անվտանգության համակարգի որևէ տարբերակ կամ որևէ նման համակարգով ընտրել տրամադրվող նպաստների տեսակներն ու գումարների չափերը (տե՛ս *mutatis mutandis Կոպեցկու* գործը [GC], պարբ. 35(դ)): Եթե, այսուհանդերձ, որևէ մասնակից պետություն ունի գործող օրենսդրություն, որը սոցիալական ապահովության նպաստի վճարումը

նախատեսում է որպես իրավունք (անկախ այն հանգամանքից՝ դրանք պայմանավորվում են նախօրոք մասնակցային վճարումներ կատարելով, թե ոչ), հարկ է համարել, որ այդպիսի օրենսդրությունն առաջացնում է գույքային շահ, որը տեղավորվում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի սահմաններում այն անձանց համար, ովքեր բավարարում են այդ հոդվածի պահանջները (նույն տեղում):

55. Այնպիսի գործերով, ինչպիսին դիտարկվողն է, որը վերաբերում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համակցությամբ՝ 14-րդ հոդվածով ներկայացված մի գանգատի այն մասին, որ դիմողին զրկել են մի որոշակի նպաստից ամբողջությամբ կամ դրա մի մասից այնպիսի խտրական հիմքով, որի վրա տարածվում է 14-րդ հոդվածի գործողությունը, համապատասխան հարցն այն է, թե արդյոք նա կունենա՞ր ներպետական օրենսդրությամբ իրացման ենթակա իրավունք (բայց այն իրավունակության պայմանի համար, որի վերաբերյալ բողոքում է դիմողը)՝ ստանալու խնդրո առարկա նպաստը (տե՛ս *Գայգուսուզի* գործը, որը մեջբերված է վերը): Թեև թիվ 1 արձանագրությունը չի ներառում սոցիալական անվտանգության որևէ տեսակի վճար ստանալու իրավունք, եթե պետությունն այնուամենայնիվ որոշում է ստեղծել նպաստների համակարգ, պարտավոր է դա անել այնպիսի ձևով, որը չի հակասում 14-րդ հոդվածին:

56. Ասվածից հետևում է, որ դիմողների շահերը տեղավորվում են թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի և այդ հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքի սահմաններում: Այսքանը բավարար է, որպեսզի 14-րդ հոդվածը համարվի կիրառելի:

Հետևաբար, մեծ պալատը, ձայների մեծամասնությամբ, գանգատներից մի քանիսը հայտարարեց ընդունելի: Այսպիսով, այժմ որոշելիս՝ սոցիալական ապահովության որևէ որոշակի նպաստ «գույք» է, թե ոչ, վճռորոշ գործոնն այն է, թե արդյոք տվյալ դիմողը ներպետական օրենսդրությամբ ունի՞ դրա իրավունքը:

Ավելի ուշ կայացված մի վճռով (ապրիլի 12, 2006 թ.) մեծ պալատը, տասնվեց կողմ, մեկ դեմ ձայներով, որոշեց, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համակցությամբ 14-րդ հոդվածի որևէ խախտում չի եղել, քանի որ նպաստներ պահանջելու համար սահմանված տարբեր տարիքային սահմանափակումները հիմնված են եղել թոշակի անցնելու տարիքների վրա (որոնք մշակվել են, որպեսզի կանանց փոխհատուցվի պատմականորեն նրանց վաստակելու նվազ կարողության դիմաց՝ համեմատած տղամարդկանց հետ):

10 Որևէ ապրանքանիշ, որը վերջնականապես գրանցվել է իշխանության իրավասու մարմնի կողմից, համաձայն ազգային օրենսդրության, «գույք» է. *«Անհոյզեր-Բուշ Ինքորփորեյթիդն» ընդդեմ Պորտուգալիայի» (Anheuser-Busch Inc. v Portugal)*, վճիռը կայացվել է 2005 թ. հոկտեմբերի 11-ին: Այս գործում դիմողը, որ ամերիկյան ընկերություն էր, դիմել է Պորտուգալիայի արդյունաբերական սեփականության ազգային ինստիտուտին «Բուդվայզերը» [Budweiser] որպես իր գարեջրի ապրանքանիշ գրանցելու համար: Ինստիտուտը թույլ չի տվել անմիջապես գրանցել, քանի որ չեխոսլովակյան մի ընկերություն՝ «Բուդեյովիցկի Բուդվար» [Budejovicky Budvar], արդեն իսկ գրանցել էր «Բուդվայզեր Բիերը» [Budweiser Bier]՝ որպես իր գարեջրի ծագման տեղանուն [designation of origin]: Գանգատարկու ընկերությունը կարողացավ ստանալ դատարանի մի վճիռ, որով չեղյալ հայտարարվեց չեխական ծագումը, և ինստիտուտը գրանցեց «Բուդվայզեր» ապրանքանիշը: Չեխական ընկերությունը բողոքարկեց այդ վճիռը, և, ի վերջո, Պորտուգալիայի գերագույն դատարանը չեղյալ հայտարարեց դիմողի ապրանքանիշի գրանցումը: Եվրոպական դատարանը (հինգ կողմ, երեք դեմ ձայներով) որոշեց, որ նախքան ապրանքանիշի վերջնական գրանցումը դիմողը օրենքով հիմնավորված ակնկալում չի ունեցել, որը կտեղավորվեր թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում:

Առաջին կանոնը. գույքից անարգել օգտվելու սկզբունքը

«Պապամիխալոպուլոսն ընդդեմ Հունաստանի»
(Papamichalopoulos v Greece) A.260-B (1993) 16 EHRR 440
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողները Ագիա Մարինա Լոիմիկու տարածքում (Մարաթոնի մոտ, Ատտիկա) գյուղատնտեսական հողի սեփականատերերը կամ համասեփականատերերն էին: 1963 թ. նրանք Հունաստանի տուրիզմի գրասենյակից ստացել էին իրենց հողի վրա հյուրանոցային համալիր կառուցելու թույլտվություն: Այսուհանդերձ, 1967 թ. օգոստոսին ռազմական դիկտատուրան (տե՛ս վերը՝ էջ 170, *Հունաստանի* գործը) ապահովեց թիվ 109/1967 օրենքի ընդունումը, որով Ագիա Մարինայի մոտ գտնվող 1.165.000 քմ մակերեսով մի տարածք փոխանցվեց Ռազմածովային հիմնադրամին: Դիմողներից տասը, ովքեր հանդիսանում էին նշված հողի սեփականատերերը, դիմեցին Աթենքի առաջին ատյանի դատարանի պետական փաստաբանին՝ խնդրելով ձեռնարկել միջանկյալ միջոցներ և վերականգնել նախնական վիճակը: 1968 թ. հուլիսին պետական փաստաբանը արձակեց դիմումները բավարարող հրահանգներ: Սակայն Ռազմածովային հիմնադրամը շարունակեց աշխատանքները՝ նշված հողում նավատորմի ռազմակայան և սպաների համար նախատեսված հանգստյան գոտի կառուցելու նպատակով: 1969 թ. նոյեմբերի ընթացքում մի թագավորական հրամանագրով Մարինա Լոիմիկուի ամբողջ շրջանը հայտարարվեց «նավատորմի ամրոց»: 1974 թ. ժողովրդավարության վերականգնումից հետո երկու դիմողների հայրը նախածեռնեց վարույթ Աթենքի առաջին ատյանի դատարանում՝ հաստատելու համար համապատասխան հողերի որոշ մասերի նկատմամբ իր իրավունքները: 1976 թ. կայացված վճռով դատարանը պաշտպանեց դիմողի սեփականության իրավունքները և հայտարարեց, որ ռազմածովային ուժերը պարտավոր են վերադարձնել հողը: Երբ դիմողը և դատական հարկադիր կատարողը գնացել են ռազմակայանի մուտքի մոտ՝ փոխանցելու համար Ռազմածովային հիմնադրամի վերաբերյալ դատարանի վճիռը, հրամանատարը հրաժարվել է ընդունել նրանց: Այնուհետև պաշտպանության նախարարը դիմողներին տեղեկացրել է, որ ռազմակայանի կառուցումը կանխել է նրանց հողի վերադարձը, բայց կառավարությունը կփորձի նրանց հատկացնել այլընտրանքային հող: Դիմողների համար որևէ հող չգտնվեց: 1988 թ. դիմողները գանգատ ներկայացրեցին հանձնաժողով՝ հայտարարելով, որ տեղի է ունեցել 1-ին հոդվածի խախտում, քանի որ իրենց զրկել են սեփական գույքից անարգել օգտվելուց, ինչի դիմաց որևէ փոխհատուցում չեն ստացել: Հանձնաժողովը միաձայն որոշեց, որ տեղի է ունեցել խախտում: Դատարանը որոշեց, որ.

41. Վիճահարույց հողի զբաղեցումը Ռազմածովային հիմնադրամի կողմից հստակ միջամտություն է եղել դիմողների՝ սեփական գույքից անարգել օգտվելու իրավունքի իրացմանը: Միջամտության նպատակը չի եղել գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողությունը՝ համաձայն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ կետի իմաստի: Ավելին, դիմողները երբեք պաշտոնապես չեն սեփականազրկվել (ենթարկվել օտարման). թիվ 109/1967 օրենքը խնդրո առարկա հողի սեփականությունը չի փոխանցել Ռազմածովային հիմնադրամին:

42. Քանի որ կոնվենցիան նախատեսված է երաշխավորելու համար այնպիսի իրավունքներ, որոնք «գործնական և արդյունավետ» են, հարկ է հավաստիանալ՝ իրավիճակը, որից բողոքում են, կարելի՞ է այնուամենայնիվ որակել որպես դեֆակտո օտարում, ինչպես պնդել են դիմողները (տե՛ս, այլ աղբյուրների թվում, *«Սպորոնգը և Լյոնրոթն ընդդեմ Շվեդիայի» (Sporrong and Lönnroth v Sweden)* գործը, որի վճիռը կայացվել է 1982 թ. սեպտեմբերի 23-ին, շարք A, թիվ 52, էջ 24, պարբ. 63):

43. Հարկ է հիշել, որ 1967 թ. այն ժամանակ գործող ռազմական կառավարության կողմից ընդունված մի օրենքով Ռազմածովային հիմնադրամը իր տնօրինության տակ է վերցրել մի ընդարձակ հողատարածք, որն ընդգրկել է դիմողների հողը: Հիմնադրամն այնտեղ հիմնել է մի ռազմածովային բազա և սպաների ու նրանց ընտանիքների համար նախատեսված հանգստյան գոտի:

Այդ օրվանից ի վեր դիմողները հնարավորություն չեն ունեցել օգտագործելու իրենց սեփականությունը կամ վաճա-

ռելու, կտակելու, գրավ դնելու կամ նվիրելու այն: Պրն Պետրոս Պապամիխալոպուլոսին, ով միակն էր, ում հաջողվել էր ստանալ դատարանի վերջնական վճիռ, որով Ռազմածովային հիմնադրամին կարգադրվում էր նրան վերադարձնել սեփականությունը, նույնիսկ մերժել էին մուտք գործել սեփականության տարածք ...

44. Դատարանը, այնուամենայնիվ, ի գիտություն է ընդունում այն, որ դեռևս 1969 թ. իշխանությունները Ռազմածովային հիմնադրամի ուշադրությունն են հրավիրել այն փաստի վրա, որ հողի մի մասը օտարման ենթակա չի եղել... Ժողովրդավարության վերահաստատումից հետո նրանք միջոցներ են որոնել՝ վերականգնելու համար դիմողներին պատճառված վնասը: Այսպես, 1980 թ. նրանք խորհուրդ են տվել, եթե հողի վերադարձն անհնար է, ապա առնվազն այն փոխանակել հավասար արժողության մեկ այլ հողակտորով: ...Այս նախաձեռնությունը հանգեցրել է թիվ 1341/1983 օրենքի ընդունմանը, որը մշակվել էր, որպեսզի հնարավորինս արագ կարգավորվեր (հենց վճռաբեկ դատարանի 1988 թ. հունվարի 8-ին կայացրած վճռին համապատասխան) 1967 թ. ծագած հիմնախնդիրը: ...Օտարման հարցերով Աբենքի երկրորդ հանձնաժողովը 1983 թ. ճանաչեց նրանց բոլորի սեփականության իրավունքը, ... հետևաբար դիմողները սպասում էին խոստացված հողակտորի հատկացմանը: Այնուամենայնիվ, ո՛չ Ատտիկայում, ո՛չ Պիերիայում գտնվող հողատարածքները հնարավոր չի եղել օգտագործել առաջարկված մեխանիզմի համար... 1992 թ. դիմողները փորձել են ստանալ «Սեմելի սեփականության» մի հատվածը, սակայն դարձյալ առանց որևէ հաջողության ...

45. Դատարանը համարում է, որ վիճահարույց հողակտորն օտարելու ունակության իսպառ կորուստը, ի լրումն՝ բողոքարկվող իրավիճակը շտկելու նպատակով մինչ այժմ գործադրված ջանքերի ապարդյուն լինելը հանգեցրել են դիմողների համար բավական լուրջ հետևանքների, ովքեր փաստացի (դե ֆակտո) ունեզրկվել են մի այնպիսի եղանակով, որը հակասում է սեփական գույքից անարգել օգտվելու իրենց իրավունքին:

46. Որպես եզրակացություն. տեղի է ունեցել և շարունակում է տեղի ունենալ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
....

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

... 2. Եզրակացնում է, որ տեղի է ունեցել և շարունակում է տեղի ունենալ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում ...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Բերնհարդտը, դատավորներ Գյոլչյուքլուն, Շպիլմանը, Վալտիկոսը, Փեքանենը, Մորինիյան, Բիջին, Վիլդհաբերը և Մակարչիկը:

2 Դատարանի կողմից «դե ֆակտո» օտարման հիշատակումը՝ բնութագրելու համար պետության իրականացրած գործողությունը, որն իրականում, եթե ոչ ֆորմալ իրավական տեսանկյունից, վերացնում է սեփականատիրոջ՝ իր գույքը օգտագործելու կամ օտարելու ունակությունը, առաջին անգամ ձևակերպվել է *Սպորոնգի* և *Լյոնդրոթի* գործերով (տե՛ս վերը): Նման իրավիճակների նկատմամբ 1-ին հոդվածի առաջին կանոնի կիրառումը պետություններին թույլ չի տալիս փորձել կիրառել երկրորդ կանոնով սահմանված տեխնիկական պաշտպանությունը առ այն, որ վիճարկվող գործողությունները սեփականատերերին չեն զրկել համապատասխան գույքի նկատմամբ սեփականության իրենց իրավունքներից:

3 Հունական դիկտատուրայի մեկ այլ գործողություն հիմք դարձավ *«Հունական «Ստրան» նավթավերամշակման գործարանները և Ստրատիս Անդրեադիսն ընդդեմ Հունաստանի» (Stran Greek Refineries and Stratis Andreadis v Greece)* A.301-B (1994) 19 EHRR 293 գործի ծագման համար: 1972 թ. հուլիսին ռազմական խունտան պայմանագիր կնքեց երկրորդ դիմողի հետ, որպեսզի առաջին դիմողը (որի միակ սեփականատերն ինքն էր) Աթենքի մերձակայքում կառուցի նավթավերամշակման մի գործարան, որի արժեքը գնահատվել է 76 միլիոն դոլար: Պայմանագիրը պետությանը պարտավորեցնում էր մինչև տարեվերջ հողատարածք տրամադրել նավթավերամշակման գործարանի կառուցման համար: Թագավորական հրամանագրով երկրորդ դիմողին թույլատրվել էր ներգրավել 58 միլիոն դոլար՝ նախագծի ֆինանսավորման համար: Պետությունը չի տրամադրել նշված հողը և,

ժողովրդավարության վերականգնումից հետո՝ 1977 թ. նախարարական մի հանձնաժողով լուծել է պայմանագիրը: 1978 թ. նոյեմբերին առաջին դիմողը Աթենքի առաջին ատյանի դատարանում հայց է ներկայացրել ընդդեմ պետության՝ պայմանագրի համաձայն կատարված ծախսերի դիմաց փոխհատուցում ստանալու նպատակով: Երկու տարի անց կառավարությունը փորձել է հղում կատարել պայմանագրում ամրագրված մի պայմանի, որը վերաբերում էր համաձայնագրից ծագող վեճերի կարգավորման համար արբիտրաժային դատարանի ստեղծմանը: Արբիտրաժային դատարանն իր վճիռը կայացրել է 1984 թ., երբ որոշել է, որ պետությունը պատասխանատվություն է կրում ընկերության ունեցած կորուստների 70 տոկոսի համար (ինչը կազմում էր ավելի քան 16 միլիոն դոլար): Ապա կառավարությունը դիմել է սովորական դատարաններ՝ բեկանելու համար արբիտրաժային դատարանի վճիռը: Թե՛ առաջին ատյանի դատարանը և թե՛ վերաքննիչ դատարանը ուժի մեջ են թողել հիշյալ վճիռը: Այն ժամանակ, երբ հայցը գտնվում էր վճռաբեկ դատարանի վարույթում, խորհրդարանը ընդունել է թիվ 1701/1987 օրենքը, որով նախատեսվում էր, որ 1967-1974 թթ. դիկտատուրայի կողմից կնքված պայմանագրերի դեպքում դրանցում ներառված բոլոր պայմանները (ներառյալ արբիտրաժի մասին դրույթը) չեղյալ են հայտարարվում: 1990 թ. Հունաստանի դատարանները չեղյալ հայտարարեցին արբիտրաժային դատարանի՝ 1984 թ. կայացված վճիռը: Դիմողները հանձնաժողովին բողոքել են՝ հայտարարելով, այլոց շարքում, որ թիվ 1701 օրենքի ընդունումը և կիրառումն իրենց զրկել են սեփականության իրենց իրավունքներից (ներառյալ 1984 թ. արբիտրաժային վճիռը), ինչը 1-ին հոդվածի խախտում է: Հանձնաժողովը միաձայն որոշեց, որ տեղի է ունեցել այդ դրույթի խախտում: Դատարանը նախ հետազոտեց, թե արդյոք դիմողներն ունեցե՞լ են որևէ «գույք»՝ համաձայն 1-ին հոդվածի: Սա ներառում էր պարզելը, թե արդյոք «արբիտրաժային դատարանի վճիռն առաջացրե՞լ է պարտք՝ բավարար չափով հիմնավորված, որպեսզի ենթակա լինի հարկադիր կատարման» (պարբ. 59): Դատավորները եզրակացրեցին, որ 1984 թ. ընդունված վճիռը բավարարել է այս չափանիշը, որովհետև «ըստ օգտագործված ձևակերպումների՝ այդ վճիռը եղել է վերջնական և կատարման համար պարտադիր. դրանով չի պահանջվել հարկադրման որևէ լրացուցիչ միջոցառում, և դրան հակառակ որևէ սովորական կամ հատուկ բողոք չի ներկայացվել: ... Համաձայն Հունաստանի օրենսդրության՝ արբիտրաժային դատարանների վճիռները վերջնական վճռի ուժ ունեն և համարվում են պարտադիր կատարման համար» (պարբ. 61): Դատարանը նաև որոշեց, որ թիվ 1701 օրենքը եղել է միջամտություն դիմողների գույքի նկատմամբ՝ նրանց զրկելով 1984 թ. կայացված վճռի հարկադիր կատարման հնարավորությունից: Այդ դեպքում անհրաժեշտ էր որոշել, թե արդյոք նշված միջամտությունը կարո՞ղ էր արդարացվել 1-ին հոդվածի առաջին կանոնով: Կառավարությունը չհամաձայնեց՝ պնդելով, որ օրենսդրական միջոցները անհրաժեշտ են եղել՝ «ռազմական վարչախմբի ունեցած վատ համբավից հասարակական կյանքը ձերբազատելու և Հունաստանի ժողովրդի իշխանությունը և ժողովրդավարական ինստիտուտները պաշտպանելու կամքը հայտարարելու համար» (պարբ. 70): Դիմողները պնդեցին, որ դիկտատորական վարչախմբի հետ ունեցած յուրաքանչյուր իրավական հարաբերություն ժողովրդավարության վերահաստատումից հետո անվավեր համարելն արդարացի չէ:

72. Դատարանը կասկածի տակ չառավ այն, որ Հունաստանի ժողովրդավարական պետության համար անհրաժեշտ է եղել լուծել մի պայմանագիր, որը նա համարել է իր տնտեսական շահերի տեսանկյունից վնասակար: Իսկապես, համաձայն միջազգային դատարանների և արբիտրաժային դատարանների նախադեպային իրավունքի, յուրաքանչյուր պետություն մասնավոր անձանց հետ կնքված որևէ պայմանագրում փոփոխություն մտցնելու կամ նույնիսկ դրա գործողությունը դադարեցնելու սուվերեն իրավունք ունի, պայմանով, որ պետությունը դրա դիմաց փոխհատուցում վճարի (*Շուֆելդտի (Shufeldt)* գործով արբիտրաժային վճիռ, ընդունված՝ 1930 թ. հուլիսի 24-ին, Միջազգային արբիտրաժային վճիռների մասին զեկույցներ, Ազգերի լիգա, հտ. II, էջ 1095): Այս երկուսն արտացոլում են այն ըմբռնումը, որ պետության բարձր շահերը գերակայում են պայմանագրային պարտավորությունների նկատմամբ, և հաշվի են առնում պայմանագրային հարաբերություններում արդարացի հավասարակշռություն պահպանելու անհրաժեշտությունը: Այսուհանդերձ, որևէ պայմանագրի միակողմանի դադարեցումը չի կարող ուժի մեջ մտնել պայմանագրի որոշակի էական դրույթների դեպքում, ինչպիսին է արբիտրաժի մասին դրույթը: Նման դրույթի որևէ ավտորիտար փոփոխություն իրականացնելու միջոցով գործող մեխանիզմը ձևափոխելը կողմերից որևէ մեկին հնարավորություն կտար խուսափելու ընդդատությունից այն վեճի շրջանակում, որի առնչությամբ արբիտրաժի վերաբերյալ հատուկ դրույթ է ներառվել (*Լոզինգերի (Losinger)* գործով վճիռ, կայացվել է 1935 թ. հոկտեմբերի 11-ին, Միջազգային քրեական մշտական դատարան, շարք C, թիվ 78, էջ 110 և արբիտրաժային վճիռներ *«Լենա Գոլդֆիլդզ» ՍՊԸ-ն ընդդեմ խորհրդային*

կառավարության» (Lena Goldfields Co Ltd v Soviet Government), Միջազգային հանրային իրավունքին առնչվող գործերի տարեկան զեկույցներ և հատընտիր, հտ. 5 (1929-1930) (գործ թիվ 258), և *«Տեքսաքո օվերսիզ պետրոլեում քամփընին» և Կալիֆոռնիայի ասիական նավթային ընկերությունն ընդդեմ Լիբիայի Արաբական Հանրապետության կառավարության» (Texaco Overseas Petroleum Company and California Asiatic Oil Company v Government of the Arab Republic of Libya)*, 1975 թ. նոյեմբերի 27-ին կայացված նախնական վճիռ, Միջազգային իրավունքի զեկույցներ, հտ. 53, 1979, էջ 393):

73. Այս կապակցությամբ դատարանը նշում է, որ Հունաստանի իրավական համակարգը ճանաչում է այն սկզբունքը, որ արբիտրաժին վերաբերող դրույթներն անկախ են, ... և Աթենքի առաջին ատյանի դատարանը ... Աթենքի վերաքննիչ դատարանը ... և, ամենայն հավանականությամբ, վճռաբեկ դատարանի զեկուցող դատավորը ... դիտարկվող գործում կիրառել են այս սկզբունքը: Ավելին, երկու դատարանները որոշել են, որ դիմողների պահանջները, որոնք ծագել են նախքան պայմանագրի դադարեցումը, այդպիսով չեն կորցրել իրենց ուժը:

Հետևաբար, պետությունը պարտավորություն էր կրում դիմողներին վճարել այն գումարները, որոնց վերաբերյալ կայացվել է ընդդեմ պետության վճիռ արբիտրաժի ընթացակարգի ավարտին, մի ընթացակարգ, որը պետությունն էր ընտրել և որի օրինականությունն ընդունվել էր մինչև վճռաբեկ դատարանում անցկացված լսումների օրը:

74. Որոշելով վճռաբեկ դատարանում ընթացող դատաքննության փուլում միջամտել մի օրենքով, որը հանգեցրել է խնդրահարույց պայմանագրի լուծման, որպեսզի չեղյալ հայտարարվեր արբիտրաժի մասին դրույթը, և ուժը կորցրած ճանաչել արբիտրաժի կողմից 1984 թ. փետրվարի 27-ին կայացված վճիռը, օրենսդիր մարմինը խախտեց, ի վնաս դիմողների, այն հավասարակշռությունը, որը պետք է պահպանվեր սեփականության իրավունքի պաշտպանության և հանրային շահից բխող պահանջների միջև:

75. Հետևաբար, տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

Վճիռը ցուցադրում է, ևս մեկ անգամ, դատարանի համապարփակ վերաբերմունքը գույք հասկացության նկատմամբ. տվյալ դեպքում՝ ընդգրկելու կատարման համար պարտադիր արբիտրաժային վճիռը: Ավելին, թեպետ դատարանը պատրաստ էր ճանաչելու (ղեկավարվելով միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով, որոնք ձևակերպվել են միջազգային այլ դատարանների կողմից) մասնավոր անձանց և ընկերությունների հետ պայմանագրային կարգավորումների նկատմամբ պետությունների սուվերեն իշխանությունը, այնուամենայնիվ, մասնակից պետություններից պահանջել էր կատարել արդարացի հավասարակշռություն ապահովելու մասին պարտավորությունը, որը ամրագրված է 1-ին հոդվածում: Այդ իսկ պատճառով դատարանը կառավարությանը հրահանգեց դիմողներին վճարել փոխհատուցում պատճառված դրամական վնասների դիմաց, որոնք պետք է կազմեին 1984 թ. կայացված արբիտրաժային վճռից բխող ճշգրիտ հանրագումարը՝ ավելացրած պարզ տոկոս՝ արբիտրաժային վճռի կայացման օրվանից ի վեր 6 տոկոս հաշվարկով:

4 Դատարանը, տասնմեկ կողմ և վեց դեմ ձայների հարաբերակցությամբ, վճռեց, որ Հյուսիսային Կիպրոսում գտնվող սեփական տարածք մուտքի հնարավորությունից հողատիրոջը թուրքական զինվորական անձնակազմի կողմից զրկելը հանդիսացել է առաջին կանոնի խախտում *«Լոիզիդոու ընդդեմ Թուրքիայի» (Loizidou v Turkey)* գործում (տե՛ս վերը՝ էջ 571):

63. Այսուհանդերձ, քանի որ դիմողին 1974 թ. ի վեր թույլ չէին տվել մուտք գործել իր հողատարածք, նա փաստացի կորցրել էր դրա նկատմամբ ամբողջ վերահսկողությունը, ինչպես նաև սեփական գույքն օգտագործելու և դրանից օգտվելու բոլոր հնարավորությունները: Մուտքի հնարավորությունից շարունակաբար զրկելը, հետևաբար, պետք է որակվի որպես միջամտություն նրա՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված իրավունքներին: Նման միջամտությունը չի կարող, դիտարկվող գործի բացառիկ հանգամանքներում, որոնք հիշատակել են դիմողը և Կիպրոսի կառավարությունը [այն է՝ Թուրքիայի կողմից Հյուսիսային Կիպրոսի ռազմական օկուպացիան], համարվել ո՛չ սեփականությունից զրկում, ո՛չ էլ օգտագործման նկատմամբ վերահսկողությունից զրկում՝ համաձայն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ կետերի իմաստի: Այդուամենայնիվ, այն հստակորեն տեղավորվում է այդ դրույթի առաջին նախադասության իմաստի շրջանակում՝ որպես միջամտություն գույքից անարգել օգտվելուն: Այս տեսանկյունից դատարանը նկատում է, որ խանգարելը կարող է որակվել որպես կոնվենցիայի խախտում՝ պարզապես նույն կերպ, ինչ իրավական խոչընդոտն է որակվում (տե՛ս *mutatis mutandis «Էյրին ընդդեմ Իռլանդիայի» (Airey v Ireland)* գործով 1979 թ. հոկտեմբերի 9-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 32, էջ 14, պարբ. 25):

64. Անհրաժեշտության դոկտրինի՝ որպես ՀԿԹՀ-ի (Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն (ՀԿԹՀ) միավոր, որը, որպես կանոն, չի ճանաչվում միջազգային հանրության կողմից) գործողությունների համար հիմնավորման և

այն փաստի թռուցիկ հիշատակումից բացի, որ սեփականության իրավունքները միջհամայնքային բանակցությունների առարկա են, Թուրքիայի իշխանությունները չեն ձգտել որևէ բացատրություն ներկայացնել, որը կհիմնավորեր վերոնշյալ միջամտությունը դիմողի գույքային իրավունքներին, ինչը վերագրվում է Թուրքիային:

Այնուամենայնիվ, չի բացատրվել, թե ինչպես կարող էր 1974 թ. կղզի թուրքական ներխուժմանը հաջորդող տարիներին տեղահանված կիպրոսցի թուրք փախստականներին վերաբնակեցնելու անհրաժեշտությունն արդարացնել դիմողի գույքային իրավունքների բացարձակ անտեսումը՝ մուտքի հնարավորությունից լիակատար և շարունակական կերպով զրկելու և առանց փոխհատուցման նպատակային օտարման ձևով:

Ոչ էլ այն փաստը, որ սեփականության իրավունքները միջհամայնքային բանակցությունների առարկա են եղել, որոնց մասնակցել են Կիպրոսի երկու համայնքները, կարող է ծառայել որպես ներկայացված իրավիճակի հիմնավորում՝ համաձայն կոնվենցիայի:

Նման հանգամանքներում դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել և շարունակում է տեղի ունենալ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

Արդարացի փոխհատուցման հարցով հետագա քննության ընթացքում դատարանը, տասնչորս կողմ և երեք դեմ ձայների հարաբերակցությամբ, վճռեց, որ Թուրքիան պետք է դիմողին վճարի 300.000 կիպրական ֆունտ պատճառված ֆինանսական վնասների դիմաց: Այս գումարի հիմքում դիմողի կողմից սեփական հողն օգտագործելու հնարավորության կորուստն էր (այն հաշվարկվել էր՝ ելնելով հողի տարեկան ռենտայի չափից, որը դիմողը կկարողանար գանձել, եթե Հյուսիսային Կիպրոսում գտնվող իր սեփականություն մուտքի և այդ գույքի նկատմամբ վերահսկողության հնարավորություն ունենար): Ի լրումն՝ տասնհինգ կողմ և երկու դեմ ձայներով, դատարանը վճռեց, որ տկն Լոիզիդուն իր կրած ոչ ֆինանսական վնասների դիմաց պետք է ստանա 20.000 կիպրական ֆունտ:

Դատարանն այն կարծիքին է, որ այս պարբերությամբ պետք է փոխհատուցում նախատեսվի՝ կապված այն տառապանքների և անօգնականության ու հուսախաբության զգացումների հետ, որոնք դիմողն ունեցած պետք է լիներ տարիների ընթացքում այն պատճառով, որ ի վիճակի չէ օգտագործել իր սեփականությունն այնպես, ինչպես հարմար է գտնում: Այդուհանդերձ, որպես հանձնաժողովի պատվիրակ, դատարանը ցանկանում է շեշտել, որ դիտարկվող գործը վերաբերում է անհատական գանգատի, որն առնչվում է դիմողի անձնական հանգամանքներին, ոչ թե Հյուսիսային Կիպրոսում կիպրոսցի հույների գույքային իրավունքների առումով ընդհանուր իրավիճակին... (*«Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի» (Loizidou v Turkey) (հոդվ. 50)*, 1998-IV, պարբ. 39-40):

Դատարանի զգուշավորությունը, որն արտահայտվեց շեշտելով, որ նա իր ուշադրությունը սևեռել է դիմողի գործի որոշակի հանգամանքների վրա, հարկ է ընկալել ավելի ընդարձակ համատեքստում՝ կապված Եվրոպայի խորհրդի համար շարունակվող այն խոշոր իրավական (և քաղաքական) բարդությունների հետ, որոնք առաջացել են Հյուսիսային Կիպրոսի՝ թուրքական օկուպացման հետևանքով:

5 Մշտապես գործող դատարանի մեծ պալատը Հյուսիսային Կիպրոսի իշխանությունների/թուրքական ուժերի կողմից տեղահանված կիպրոսցի հույներին (և նրանց ընտանիքներին) կղզու հյուսիսում տեղակայված նրանց սեփականություն մուտքի հնարավորությունից լիակատար կերպով զրկելու հարցը, ինչպես նաև նման անձանցից սեփականության իրավունքը (առանց փոխհատուցման) «ՀԿԹՀ» իշխանություններին/կիպրոսցի թուրքերին և թուրք վերաբնակվողներին հանձնելու հարցը քննել է *«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի» (Cyprus v Turkey)* գործում (տես վերը՝ էջ 131): Կիպրոսի կառավարությունն առարեց՝ պնդելով, որ մոտ 211.000 կիպրոսցի հույն է տեղահանվել, իսկ նրանց գույքային իրավունքները ենթարկվել են միջամտության՝ խախտելով 1-ին հոդվածը:

184. Դատարանը համաձայն է հանձնաժողովի վերլուծությանը: Նա նկատում է, որ հանձնաժողովն ապացույցներով հիմնավորված է համարել այն, որ առնվազն 1989 թ. հունիսից ի վեր «ՀԿԹՀ»-ի իշխանությունները այլևս չեն ճանաչել կիպրոսցի հույների՝ Հյուսիսային Կիպրոսում գտնվող իրենց գույքի նկատմամբ սեփականության որևէ իրավունք: Խնդրահարույց սեփականությունից այս միտումնավոր զրկումը ամրագրվել է սահմանադրական դրույթով՝ «ՀԿԹՀ սահմանադրության հոդված 159», որը գործնականում կիրառվել է «Թիվ 52/1995 օրենքով»: Թվում է, որ տեղահանված անձանց գույքի նկատմամբ միջամտության օրինականությունը անվիճարկելի է «ՀԿԹՀ»-ի դատարաններում: Համապատասխանաբար, այս դեպքում չի պահանջվում, որ տուժած անձինք օգտագործեն իրավական պաշտպանության ներպետական միջոցները՝ իրենց բողոքների պաշտպանությունն ապահովելու համար:

185. Հետագայում դատարանը նշում է, որ դիմող կառավարության բողոքների էությունն այն չէ, որ տեղի է ունեցել տեղահանված անձանց գույքի պաշտոնական և ապօրինի օտարում, այլ որ այդ անձինք, իրենց սեփականություն մուտք գործելու հնարավորությունից շարունակաբար զրկվելու պատճառով կորցրել են վերահսկողությունը իրենց հողի նկատմամբ, ինչպես նաև դրանից օգտվելու ամեն մի հնարավորություն: Ինչպես դատարանը նշել էր նախկինում, ... կիպրոսցի հույն անձանց Հյուսիսային Կիպրոսի տարածքից ֆիզիկապես դուրս մղումը իրականացվել է որպես «ՀԿԹՀ»-ի քաղաքականություն կամ գործելակերպ: Համապատասխանաբար, միջոցների սպառման պահանջն այս հանգամանքներում կիրառելի չէ:

186. Դատարանը նշում է *Լոիզիդուի* գործով իր եզրակացությունը (*ըստ էության*), որ չի կարող համարվել, թե կոնկրետ այդ դիմողը «ՀԿԹՀ սահմանադրության հոդված 159»-ի (մի դրույթ, որը դատարանն անվավեր է հայտարարել՝ ելնելով կոնվենցիայի նպատակներից) գործողության արդյունքում կորցրել է սեփական գույքի նկատմամբ իր իրավունքը (էջ 2231, պարբ. 44): Այս եզրակացության վրա չի ազդում «Թիվ 52/1995 օրենքի» գործողությունը: Դատարանը հավելում է, որ, չնայած վերջինը *Լոիզիդուի* գործի շրջանակներում դատարանում չի հիշատակվել, դրան չի կարող ավելի մեծ իրավական վավերականություն տրվել, քան դրա «մայր» «հոդված 159»-ին, որի իրականացմանն է այն ձգտում:

187. Դատարանը համոզված է, որ *Լոիզիդուի* գործով իր օգտագործած թե՛ հիմնավորումները և թե՛ ընդունած եզրակացությունը (*ըստ էության*) հավասարապես կիրառելի են տեղահանված կիպրոսցի հույների նկատմամբ, ովքեր, ինչպես տկն Լոիզիդուն, անկարող են մուտք գործել Հյուսիսային Կիպրոսում գտնվող իրենց սեփականություն «ՀԿԹՀ» իշխանությունների կողմից այդ սեփականություն ֆիզիկապես մուտք գործելու նկատմամբ դրված սահմանափակումների պատճառով: Իրենց սեփականություն մուտք գործելու հնարավորությունից շարունակաբար և ամբողջապես զրկելը, համաձայն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին նախադասության իմաստի, հստակ միջամտություն է տեղահանված կիպրոսցի հույների՝ սեփական գույքից անարգել օգտվելու իրավունքին: Ապա դատարանը նշում է, որ, ինչ վերաբերում է նպատակադրված օտարմանը (ունեզրկմանը), ապա տեղահանված անձանց որևէ փոխհատուցում չի վճարվել՝ կապված այն միջամտությունների հետ, որոնցից նրանք տուժել են և շարունակում են տուժել՝ իրենց գույքային իրավունքների առումով:

188. Դատարանը նշում է, որ պատասխանող կառավարությունը հանձնաժողովում ընթացող քննության ընթացքում ձգտել է արդարացնել այդ միջամտությունը՝ հիշատակելով միջհամայնքային բանակցությունները և կիպրոսցի թուրք փախստականներին վերաբնակեցնելու կարիքը: Այնուամենայնիվ, նման խնդրագրեր *Լոիզիդուի* գործի շրջանակներում ներկայացվել են պատասխանող կառավարության կողմից և մերժվել ըստ էության կայացված վճռում (էջ 2237-2238, պարբ. 64): Դատարանը դիտարկվող գործի շրջանակներում վերստին այդ հիմնավորումները քննարկելու որևէ պատճառ չի տեսնում:

189. Ելնելով վերոնշյալ պատճառներից՝ դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շարունակական խախտում՝ այն փաստի հիմքով, որ Հյուսիսային Կիպրոսում գտնվող գույքի կիպրոսցի հույն սեփականատերերը զրկված են իրենց սեփականություն մուտք գործելու, այն վերահսկելու, օգտագործելու և վայելելու հնարավորությունից, ինչպես նաև սեփականության իրենց իրավունքների նկատմամբ միջամտության դիմաց որևէ փոխհատուցումից:

Դատավոր Ֆուադը՝ *ad hoc* թուրք դատավորը, անհամաձայնություն է հայտնել, քանի որ համարում էր, որ անդամների մեծամասնությունը բավարար կարևորություն չի տվել 1963-1974 թթ. տեղի ունեցած «աղետալի իրադարձություններին», որոնք «կղզին բառացիորեն կտոր-կտոր են արել», կամ Միավորված ազգերի կազմակերպության հետագա ներգրավմանը Կիպրոսի հիմնախնդիրների լուծմանը հասնելու գործում:

6 Դատարանը կիրառել է առաջին կանոնը, որի դեպքում որևէ գործի փաստական և իրավական բարդությունը «թույլ չի տալիս այն դասակարգել որևէ ճշգրիտ կարգում» (պարբ. 106): *«Բեյելերն ընդդեմ Իտալիայի» (Beyeler v Italy)* (2000 թ. հունվարի 5) գործում դիմողն արվեստի գործերի մի շվեյցարացի առևտրական/հավաքորդ/մշտական գնորդ էր, ով 1977 թ. օգտվել էր մի իտալացի գործակալի ծառայություններից՝ իտալացի տիրոջից գնելու համար Վան Գոգի ստեղծագործություններից մեկը (600 միլիոն լիր գնով): Իտալիայի իշխանությունները տեղեկացված չեն եղել այն մասին, որ պրն Բեյելերը մինչև 1983 թ. հանդիսացել է այդ նկարի փաստացի տերը: Հետագայում դիմողի և իշխանությունների միջև տեղի են ունեցել բազմաթիվ հաղորդակցություններ, որոնք վերաբերել են այդ ստեղծագործության սեփականության և ցուցադրության հարցերին: 1988 թ. մշակութային ժառանգության նախարարությունը նշել է, որ հետաքրքրված է նկարը գնելու հարցում, սակայն պետա-

կան միջոցները սահմանափակ են եղել: Դիմողն առաջարկել է այն պետությանը վաճառել 11 միլիոն դոլարով: Երեք ամիս անց նա նկարը 8,5 միլիոն դոլարով վաճառել է Վենետիկի «Փեգի Գուգենհայմ» հավաքածուին: Դրանից հետո իշխանությունները ձգտել են իրացնել իրենց՝ նկարը 1977 թ. վաճառքի գնով և առաջնահերթության կարգով ձեռք բերելու օրինական իրավունքը [statutory right]: Դիմողն իշխանությունների հայցը վիճարկել է Իտալիայի դատարաններում: Այսուհանդերձ, վերջինները վճռել են՝ քանի որ 1977 թ. առքուվաճառքի կողմերի ճշգրիտ բացահայտում տեղի չի ունեցել, իշխանություններն իրավունք ունեին 1988 թ. իրացնել առաջնահերթության իրավազորությունը: Դիմողը բողոք է ներկայացրել հանձնաժողով, սակայն մեծամասնությունը (քսան կողմ և տասը դեմ ձայներով) այն կարծիքին էր, որ նա երբևէ չի դարձել այդ նկարի օրինական սեփականատերը, և 1-ին հոդվածի որևէ խախտում տեղի չի ունեցել: Հաշվի առնելով գործակալ լինելու մասին Իտալիայի օրենսդրությունը և իշխանությունների ու դիմողի միջև տեղի ունեցած հաղորդակցությունը՝ դատարանը եզրակացրել է, որ վերջինը 1977 թ. նկարի վաճառքից ի վեր դրա նկատմամբ ունեցել է «սեփականատիրական շահ, որը ճանաչվել է Իտալիայի օրենսդրությամբ»: Ի լրումն՝ այդ շահը եղել է «գույք» [possession]՝ համաձայն 1-ին հոդվածի նպատակների: Անդամների մեծամասնությունը՝ տասնվեց կողմ և մեկ դեմ ձայներով, որոշել է, որ պետության գործողությունները չեն բավարարել արդարացի հավասարակշռության չափանիշը, քանի որ.

120. …1988 թ. դիմելով պատժիչ գործողության այն հիմքով, որ դիմողը լրացրել է թերի հայտարարագիր, մի փաստ, որի մասին իշխանությունները տեղեկացել են մոտ հինգ տարի առաջ, դժվար թե համարվի արդարացված: Այս կապակցությամբ հարկ է շեշտել, որ այն դեպքերում, երբ խնդրո առարկա է ընդհանուրի շահը, պետական իշխանություններն են կրում ճիշտ ժամանակին, ճիշտ ձևով և հնարավորինս հետևողականորեն գործելու պարտավորությունը:

121. Գործերի նման ընթացքը մշակութային ժառանգության նախարարությանը հնարավորություն տվեց 1988 թ. նկարը ձեռք բերել դրա շուկայական արժեքից զգալիորեն ցածր գնով: Նկատի առնելով իշխանությունների գործողությունները 1983 թ. մինչև 1988 թ. նոյեմբեր, դատարանը համարում է, որ նրանք այդ ժամանակահատվածում գոյություն ունեցած անորոշությունից (որին իշխանությունները մեծապես նպաստել են) քաղել են անարդարացի օգուտներ: Անկախ դիմողի ազգությունից՝ նման հարստացումը անհամատեղելի է «արդարացի հավասարակշռության» պահանջի հետ:

122. Նկատի առնելով բոլոր վերոշարադրյալ գործոնները և պայմանները, որոնց համաձայն 1988 թ. իրացվել է առաջնահերթության իրավունքը, դատարանը եզրակացնում է, որ դիմողն ստիպված է եղել կրելու անհամաչափ և չափազանց ծանր բեռ: Հետևաբար, տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

Համամի՞տ եք դատավոր Ֆերարի Բրավոյի՝ անհամաձայնություն արտահայտող գնահատականին՝ «…ես շատ լուրջ կասկածներ ունեմ վեճի երկու կողմերի առաջ քաշած փաստարկների բարոյական հիմքի առնչությամբ»:

7 Միավորված մեծ պալատը հետևեց *Բեյելերի* գործում ընդունված մոտեցմանը և կիրառեց առաջին կանոնը, երբ բախվեց մի չափազանց բարդ գործի, որն առնչվում էր Երկրորդ համաշխարհային պատերազմում նացիստների պարտությունից հետո Լեհաստանի սահմանների վերաձևման շարունակվող հետևանքներին: *«Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի» (Broniowski v Poland)* գործը, որի վճիռը կայացվել է 2004 թ. հունիսի 22-ին, եղել է առաջնորդող գործը (նմանօրինակ 167 դիմումներ սպասում էին դատարանում քննության իրենց հերթին, իսկ Լեհաստանի կառավարությունն ընդունել էր, որ մոտ 80.000 անձ տուժել է), որը վերաբերել է Լեհաստանի իշխանությունների՝ փոխհատուցում վճարելու պարբերական անկարողությանը իրենց բոլոր քաղաքացիներին, ովքեր հայրենադարձվել են Բուգ գետից այն կողմ գտնվող նախկին լեհական տարածքներից և, հետևաբար, ստիպված են եղել լքելու այդ տարածքներում գտնվող իրենց սեփականությունը: Լեհաստանին մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը պատկանած տարածքներն ընդգրկել են Բուգ գետից արևելք ընկնող հսկայական հատվածներ (ժամանակակից Բելառուսի, Ուկրաինայի և Լիտվայի տարածքում): 1939 թ. ԽՍՀՄ-ը ներխուժեց այդ տարածքներ: 1944 թ. ընթացքում Լեհաստանի ազգային ազատագրության կոմիտեն «Հանրապետական համաձայնագրեր» ստորագրեց Ուկրաինայի, Բելառուսի և Լիտվայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների հետ՝ համաձայնելով Բուգ գետից (Լեհաստանի արևելյան նոր սահմանը) արևելք ընկնող տարածքներից լեհ քաղաքացիների հայրենադարձությանը և ընդու-

նելով պարտավորություն՝ փոխհատուցում վճարել նման անձանց՝ լքված տարածքներում կորցրած սեփականության դիմաց: 1944-53 թթ. նման համաձայնագրերով ավելի քանի 1,2 միլիոն մարդ հայրենադարձվեց Լեհաստան: Լեհաստանի օրենսդրությունը նախատեսում էր, որ նման անձինք կկարողանան ձեռք բերել պետությանը պատկանող հող և գույք՝ ստանալով նպաստ այն չափով, ինչ արժեք ունեցել է նրանց կողմից Բուգ գետից այն կողմ գտնվող տարածքներում հարկադրաբար լքված գույքը: Այսուհանդերձ, մինչ ժամանակն անցնում էր, Լեհաստանի իշխանությունները կրճատում էին պետական ունեցվածքի չափը, որը հատկացված էր դիմողների փոխհատուցման համար: Դիմողը, ում տատին պատկանել են մի տուն և հողատարածք այն հատվածում, որն այժմ Ուկրաինայի Լվով քաղաքն է, պնդում էր, որ իր ընտանիքը Լեհաստանի իշխանություններից որպես փոխհատուցում ստացել է այդ ունեցվածքի արժեքի ընդամենը 2 տոկոսը, և դա եղել է միջամտություն 1-ին հոդվածով պաշտպանված գույքային իրավունքներին: Քանի որ տեղական դատարանները չէին ընդունել, որ դիմողը կառավարությունից «վարկի իրավունք» է ունեցել՝ կապված իր տատի ունեցվածքի հետ, մեծ պալատը որոշել է, որ դա «գույք» է եղել՝ համաձայն 1-ին հոդվածի իմաստի: Այն հարցի կապակցությամբ, թե արդյոք կառավարությունն ապահովե՞լ է արդարացի հավասարակշռություն դիմողի շահերի և լեհական հասարակության՝ որպես ամբողջության, շահերի միջև.

182. Դատարանն ընդունում է, որ այնպիսի իրավիճակներում, ինչպիսին դիտարկվող դեպքն է, որոնք առնչվում են մի ընդգրկուն, բայց հակասական օրենսդրական մեխանիզմի, որն ամբողջ երկրի վրա ունի հսկայական տնտեսական ազդեցություն, համապետական իշխանությունները պարտավոր են զգալի ազատություն ունենալ ոչ միայն գույքային իրավունքների նկատմամբ հարգանք ապահովելուն կամ երկրի ներսում սեփականատիրական հարաբերությունները կարգավորելուն ուղղված միջոցները, այլև դրանց իրականացման ճիշտ ժամանակն ընտրելու հարցում: Միջոցների ընտրությունը կարող է անհրաժեշտաբար ընդգրկել որոշումներ, որոնք սահմանափակում են փոխհատուցումը՝ գույքն իր շուկայական արժեքից ցածր գնով վերցնելու կամ շուկայական արժեքից ցածր գնի մակարդակով վերականգնելու դիմաց: Այսպիսով, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը չի երաշխավորում բոլոր հանգամանքներում ամբողջական փոխհատուցում ստանալու իրավունք (տե՛ս *«Ջեյմսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (James and Others v UK)*, A. 98 (1986) գործը, պարբ. 54):

Խնդրո առարկա իրավունքները, ինչպես նաև պետության տնտեսությունը և իրավական համակարգը ձևափոխելու գործընթացի ազդեցությունը կրող տարբեր անձանց օգուտները և կորուստները հավասարակշռելը բացառիկ դժվար գործ է: Նման հանգամանքներում, ըստ էության, պատասխանող պետությանը հայեցողության լայն սահման պետք է տրվի:

Այնուամենայնիվ, դատարանը ցանկանում է վերստին շեշտել, որ ինչքան էլ այդ հայեցողության սահմանը զգալի չափերի լինի, այն անսահմանափակ չէ, և պետության ունեցած ազատության իրացումը, նույնիսկ պետության ամենաբարդ բարեփոխումների համատեքստում, չի կարող հանգեցնել այնպիսի հետևանքների, որոնք հակասեն կոնվենցիայի չափորոշիչներին:

183. Մինչ դատարանն ընդունում է, որ երկրի քաղաքական և տնտեսական համակարգի արմատական բարեփոխումը, ինչպես նաև երկրի ֆինանսների վիճակը, կարող են արդարացնել *Բուգ գետի* գործով դիմողներին տրվելիք փոխհատուցման խիստ սահմանափակումները, Լեհաստան պետությունը չի կարողացել ներկայացնել բավարար հիմքեր, որոնք կարդարացնեին, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն, այն, թե ինչ աստիճանի է պետությունը շարունակաբար, երկար տարիների ընթացքում, հրաժարվել այն իրավունքի իրացումից, որով, համաձայն Լեհաստանի օրենսդրության, օժտվել էր դիմողը, ինչպես *Բուգ գետի* գործով հազարավոր այլ անձինք:

184. Կոնվենցիայի հիմքում ընկած օրենքի գերակայությունը և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում ամրագրված օրինականության սկզբունքը պետություններից պահանջում են ոչ միայն կանխատեսելի և հաստատուն կերպով հարգել և կիրառել իրենց ընդունած օրենքները, այլև, որպես այս պարտավորության եզրակացություն, ապահովել իրավական և գործնական պայմաններ դրանց իրականացման համար: Սույն գործի համատեքստում Լեհաստանի իշխանությունների պարտավորությունը օրենքի տառի և պետության կողմից կիրառվող պրակտիկայի միջև գոյություն ունեցող անհամապատասխանությունը վերացնելն էր, որը խանգարել է դիմողի սեփականության իրավունքի արդյունավետ իրացումը: Այդ սկզբունքները Լեհաստան պետությունից պահանջել էին նաև ողջամիտ ժամկետներում, համապատասխան և հետևողական ձևով իրականացնել այն օրենսդրական խոստումները, որոնք նա տվել է Բուգ գետի հետ կապված պահանջների կարգավորման կապակցությամբ: Սա հանրային և ընդհանուր կարևոր շահի հարց էր: Ինչպես իրավացիորեն մատնանշել էր Լեհաստանի սահմանադրական դատարանը, պետության և պետության ստեղծած օրենքի հանդեպ քաղաքացիների օրինական վստահությունը պահպանելու հրամայականը, որը ներհատուկ է օրենքի գերակայությանը, իշխանություններից պահանջում էր իրավական համակարգում վերացնել չգործող դրույթները և շտկել արտաօրենսդրական գործելակերպերը:

185. Դիտարկվող գործում, ինչպես հավաստել են Լեհաստանի դատարանները, և ինչպես հաստատվել է դատարանի՝ պատասխանող պետության վարքի վերլուծությամբ, դիմողի վարկ ստանալու իրավունքի իրացման նկատմամբ հաջորդական սահմանափակումներ դնելով և կիրառելով այնպիսի գործելակերպ, որը գործնականում այդ իրավունքը դարձրել է անիրագործելի և անօգտագործելի, այն վերածել է պատրանքի և վերացրել այդ իրավունքի բուն էությունը:

Անորոշության այն վիճակը, որում հայտնվել է դիմողը՝ ի հետևանք երկար տարիների ընթացքում շարունակվող ուշացումների և խոչընդոտների, որոնց համար պատասխանատու են եղել ազգային իշխանությունները, ինքնին անհամատեղելի է եղել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածից բխող սեփական գույքից անարգել օգտվելն ապահովելու պարտավորության հետ, ընդ որում՝ ողջամիտ ժամկետներում, համապատասխան և հետևողական ձևով գործելու պարտականության հետ զուգորդված, այն դեպքերում, երբ խնդիրն առնչվում է որևէ հանրային շահի:

186. Ի լրումն՝ դիմողի վիճակը բարդացել էր այն պատճառով, որ այն, ինչ դարձել էր գործնականում անիրագործելի իրավունք, իրավական տեսանկյունից վերացվել էր 2003 թ. դեկտեմբերին ընդունված օրենսդրությամբ, ինչի հետևանքով դիմողը կորցրել է փոխհատուցում ստանալու իր՝ մինչ այդ գոյություն ունեցող իրավունքը: Ավելին, այս օրենսդրությունը ներմուծեց վերաբերմունքի տարբերություն *Բուգ գետի* գործով պահանջատերերի միջև այնքանով, որ նրանք, ովքեր երբևէ որևէ փոխհատուցում չէին ստացել, ստացան այնքան գումար, որը, չնայած 50.000 լեհական զլոտիի չափով վերին սահմանի առկայությանը, իրենց հասանելիքի կոնկրետ համամասնություն (15%) էր, մինչդեռ դիմողի վիճակում գտնվող դիմողները, ովքեր արդեն իսկ ստացել էին շատ ավելի ցածր տոկոս կազմող փոխհատուցում, որևէ հավելյալ գումար չստացան:

Ինչպես նշվեց վերը (տե՛ս պարբ. 134 և 182), թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պետությունն իրավունք ունի իրականացնելու գույքի, ներառյալ՝ օրենսդրությամբ սահմանված փոխհատուցման որևէ իրավունքի, սեփականության օտարում, և կրճատել, նույնիսկ՝ զգալիորեն, օրենսդրությամբ նախատեսված փոխհատուցման մակարդակները: Սա մասնավորապես վերաբերում է այն իրավիճակներին, որոնց դեպքում փոխհատուցման իրավունքը չի բխում պատասխանող պետության կողմից նախկինում անհատական գույքի առգրավման փաստից, այլ ձևակերպված է՝ նվազեցնելու համար գույքի առգրավման կամ կորստի առաջացրած հետևանքները, որոնք չեն վերագրվում այդ պետությանը: Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը պահանջում է, որ պետության կողմից առգրավված գույքի դիմաց տրված փոխհատուցման գումարը «ողջամիտ ձևով կապված» լինի դրա արժեքի հետ (տե՛ս պարբ. 176): Դատարանը չէ, որ պետք է առանց պատշաճ հղումների ասի, թե դիտարկվող գործի դեպքում որն է լինելու փոխհատուցման «ողջամիտ» մակարդակը: Այսուհանդերձ, հաշվի առնելով այն, որ, ինչպես ընդունել է կառավարությունը, դիմողի ընտանիքն ստացել է ընդամենը 2%-ն այն փոխհատուցման, որը պետք է ստանար այն օրենսդրությամբ, որը կիրառելի էր նախքան Լեհաստանի համար արձանագրության ուժի մեջ մտնելը, դատարանը որևէ համոզիչ պատճառ չի գտնում է, թե ինչու նման աննշան գումար ստանալն ինքնին պետք է նրան զրկի *Բուգ գետի* գործով այլ պահանջատերերի հետ հավասար հիմունքներով առնվազն իր հասանելիքի մի մասն ստանալու հնարավորությունից:

(դ) Ընդհանուր եզրակացություն

187. Նկատի առնելով բոլոր վերը հիշատակված գործոնները և, մասնավորապես, դիմողի վրա երկար տարիների ընթացքում Բուգ գետի հետ կապված օրենսդրական մեխանիզմի գործնականում կիրառման ազդեցությունը, դատարանը եզրակացնում է, որ, որպես անհատ, նա ստիպված է եղել կրել ոչ համամասնորեն ու չափազանց ծանր բեռ, ինչը չի կարող արդարացվել իշխանությունների կողմից հետապնդվող ընդհանուր համայնքային օրինական շահի տեսանկյունից:

Հետևաբար, այս դիմողի դեպքում տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

Հաշվի առնելով *Բուգ գետի* գործով համակարգային խնդիրը՝ պահանջատերերի նկատմամբ Լեհաստանի իշխանությունների վերաբերմունքի առումով, որի մասին նշել էր մեծ պալատը, վերջինս վճռել էր, որ. «պատասխանող պետությունը պարտավոր է, համապատասխան իրավական միջոցների և վարչական պրակտիկայի միջոցով, ապահովել խնդրո առարկա գույքային իրավունքի իրացումը՝ *Բուգ գետի* գործով մնացած պահանջատերերի առնչությամբ, կամ դրա փոխարեն նրանց տրամադրել համարժեք փոխհատուցում՝ համաձայն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված գույքային իրավունքների պաշտպանության սկզբունքների: Այս համատեքստում մեծ պալատը համարել է, որ դիմողի կրած դրամական/ոչ դրամական վնասի փոխհատուցման հարցը որոշման ենթակա լինելու համար պատրաստ չէ և պետք է առանձնացվի՝ հաշվի առնելով հնարավոր որևէ համաձայնություն, որին կարող են հասնել դիմողը և կառավարությունը՝ գումարած կառավարության ձեռնարկած ցանկացած այլ միջոց՝ ի պատասխան դատարանի կայացրած վճռի: Մինչ կառավարության կողմից իրականացվում են ընդհանուր կարգի միջոցառումներ, դատարանը հետաձգում է *Բուգ գետի* գործով պահանջատերերի կողմից ներկայացված մյուս հայցերի քննությունը: Դիմողի և կառավարության միջև հաշտության համաձայնություն է կնքվել 2005 թ. սեպտեմբերին (տե՛ս վերը՝ էջ 41): *Բրոնիովսկու (Broniowski)* գործը ակնառու ձևով բացահայտում է, թե ինչպես պատմական տարածքային վեճերի

(Բուգ գետը որպես Լեհաստանի արևելյան սահման օգտագործելու վիճելի խնդիրը ծագել է դեռ 1919 թ.) հետևանքով առաջացած տևական խնդիրները, որոնց ազդեցությունը կրում են մասնակից պետությունները, կարող են կոնվենցիայով բարձրացվել անհատական գանգատների միջոցով: Մեծ պալատի ռազմավարությունը՝ ուղղված *Բուգ գետի* գործով մնացած բոլոր պահանջատերերի համար 1-ին հոդվածին համահունչ մի ընդհանուր լուծում պարունակող համաձայնության խրախուսմանը, չափազանց ցանկալի է՝ թե՛ արդարության և թե՛ սեփական աշխատանքի կրիտիկական ծավալի տեսանկյունից:

8 Մեծ պալատը միաձայն որոշեց, որ օրենսդրությունը, որն անողոքաբար սահմանափակում է այն վնասները, որոնց դիմաց ծնողները առողջապահության բնագավառի կառավարման մարմիններից կարող են պահանջել փոխհատուցում՝ կապված անփութության հետևանքով հղիության ընթացքում չբացահայտված լուրջ արատներով ծնված իրենց երեխաների հետ, ոտնահարում է *«Դրաոնն ընդդեմ Ֆրանսիայի» (Draon v France)* և *«Մորիսն ընդդեմ Ֆրանսիայի» (Maurice v France)* գործերով 2005 թ. հոկտեմբերի 6-ին կայացված վճիռներում առկա այս դրույթը: Դիմողները ծնողներ էին, ում երեխաները ծնվել էին նման արատներով: Պետական բժշկական կառավարման մարմինների կողմից թույլ տրված սխալները հանգեցրել էին նրան, որ դիմողներին մինչև երեխաների ծնվելը չէին զգուշացրել այդ արատների մասին: Ծնողները դատի էին տվել հիվանդանոցներին: Մինչ նրանց գործերը քննվում էին դատարաններում, Ֆրանսիայի խորհրդարանը 2002 թ. մարտի 4-ին ընդունեց մի օրենք՝ «Քուշների օրենքը», որով նախատեսվում էր, որ այդպիսի ծնողներն այլևս իրավունք չեն ունենալու վնասների փոխհատուցում պահանջել երեխայի կյանքի ողջ ընթացքում հաշմանդամության հետևանքով առաջացող հատուկ դժվարությունների դիմաց: Այս օրենքը կիրառվեց դիմողների պահանջների նկատմամբ, ինչի հետևանքով նրանք ստացան փոխհատուցման շատ ավելի փոքր գումարներ, քան կստանային նախկինում հաստատված նախադեպային իրավունքի համաձայն: Դիմողները բողոքեցին, որ այդ օրենքի ընդունումը ոտնահարել է իրենց՝ սեփական ունեցվածքից անարգել օգտվելու իրավունքը: Մեծ պալատը որոշեց, որ դիմողներն ունեցել են ունեցվածք՝ իրենց երեխաների հաշմանդամության առնչությամբ լիարժեք փոխհատուցում պահանջելու հաստատված իրավունքի տեսքով: Օրենքը վերացրել է վնասներին վերաբերող մի արժեքավոր պարբերություն: Համաձայն մեծ պալատի վճռի՝ օրենքի կիրառումը դիմողների գործի վարույթում խախտել է հանրային շահի և դիմողների՝ սեփական ունեցվածքից (գույքից) անարգել օգտվելու իրավունքի միջև արդարացի հավասարակշռությունը: Հետևաբար, տեղի է ունեցել 1-ին հոդվածի խախտում: Ի՞նչ եք կարծում, այլ արդյունք կլինե՞ր, եթե օրենքը տարածվեր միայն դրա ընդունումից հետո ծագող հարաբերությունների վրա: Որպես հետևանք՝ Դրաոնների ընտանիքից և Մորիսների ընտանիքից յուրաքանչյուրն ստացավ 2,4 միլիոն եվրո արդարացի փոխհատուցում:

Երկրորդ կանոնը. ունեցվածքից զրկումը

.....

«Ջեյմսն ընդդեմ Միացյալ Թագավորության»
(James v UK) A.98 (1986) 8 EHRR 123
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողները (ներառյալ՝ Ջերալդ Քևընդիշը՝ Վեստմինստերի վեցերորդ դուքսը) հոգաբարձուներ էին, որոնք գործում էին Վեստմինստերի երկրորդ դուքսի կտակի համաձայն: Վեստմինստերների ընտանիքը և ընտանիքի հոգաբարձուները Լոնդոնի կենտրոնում զարգացրել են Բելգրավիա կալվածքը՝ բաղկացած 2000 տներից, որը դարձել էր մայրաքաղաքի ամենացանկալի (և ամենաթանկարժեք) բնակելի թաղամասերից մեկը: Գործնականում Բելգրավիա կալվածքի մեջ մտնող ողջ գույքը գտնվում էր երկարաժամկետ վարձակալության պայմաններում (անշարժ գույքի տոկոսադրույքի երկու տեսակ.

(i) շինության վարձակալություն, որպես կանոն՝ 99 տարի տևողությամբ, որի դեպքում բնակվողը վճարում է հողի ռենտա՝ հաստատված զուտ տարածքի արժեքի հետ փոխկապվածությամբ, պարտավորվում է այդ տարածքում տուն կառուցել և վարձակալության պայմանագրի ավարտին այն հանձնել հողատիրոջը, և (ii) պարգևավճարային [premium] վարձակալություն, որի դեպքում բնակվողը հողատիրոջը վճարում է մի խոշոր գումար՝ տուն ստանալու դիմաց, իսկ հետագայում վճարում է ռենտա): Բնակիչների տեսանկյունից վարձակալությունը միջոցների վատնում է, որովհետև վարձակալության պայմանագրի ավարտին բնակվողի իրավունքները դադարում են, իսկ հողատերն առանց որևէ վճարի ստանում է այդ հողի վրա կառուցված շինությունը: Վարձակալության երկարաժամկետ պայմանագրերը լայնորեն կիրառվում էին Անգլիայում և Ուելսում XIX դարի քաղաքաշինության զարգացման ընթացքում: Այսուհանդերձ, 1880-ական թվականներից ի վեր բնակիչները սկսեցին պահանջել «վարձակալության պայմաններից ազատում», այսինքն՝ իրենց տների «ֆրիհոլդը» [freehold] (լիակատար սեփականության իրավունքը) հարկադրաբար ձեռք բերելու իրավունք: 1960-ական թվականներին Լեյբորիստական կուսակցությունը իրավունքների այդպիսի տրամադրումը դարձրեց իր հետապնդած տնտեսական քաղաքականության բաղադրիչ: Իր իշխանության տարիներին այս կուսակցությունն ապահովեց «Վարձակալության բարեփոխման մասին» օրենքի (1967) ընդունումը, որը հետագայում լրամշակվեց 1974 թ. ընդունված մեկ այլ օրենքով: 1967 թ. ընդունված օրենքը երկարաժամկետ վարձակալներին օժտեց սեփականության իրենց իրավունքը՝ մոտավորապես տարածքի ունեցած արժեքով ստիպողաբար գնելու իրավունքով: 1974 թ. ընդունված օրենսդրությունը գնելու իրավունքը տարածեց նաև իրենց ենթակայության տակ գտնվող ավելի թանկարժեք կացարանների երկարաժամկետ վարձակալությամբ բնակիչների վրա, ովքեր ավելի բարձր գին են վճարում (հողատարածքի և տան մոտավոր արժեքի հիման վրա): Օրենքով նախատեսված մեխանիզմը նախատեսում էր, որ եթե բնակիչները և հողատերերը չեն կարողանում համաձայնության գալ «ֆրիհոլդ»-ների դիմաց տրվելիք փոխհատուցման գումարների հարցում, ապա անկախ դատարաններն են որոշում վճարվելիք գումարների չափերը: 1979-1983 թթ. դիմողների թվից մոտ ութսուն բնակիչ իրացրեցին օրենսդրությամբ սահմանված իրենց իրավունքը, որպեսզի ձեռք բերեն իրենց տների նկատմամբ սեփականության իրավունք: Այս դեպքերից յուրաքանչյուրում վճարված գումարը համաձայնեցվել էր բանակցությունների միջոցով: Տվյալ անձանցից առնվազն 25-ը, համաձայն գործող օրենսդրական մեխանիզմի, վաճառել են սեփականության իրենց իրավունքը այն ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում (դիմողները հայտարարել էին, որ նախկին վարձակալները 32.000-ից մինչև 182.000 ֆունտ ստեռլինգի շահույթ են ստացել): Դրա հետևանքով դիմողները հանձնաժողովին բողոքել էին, որ վերոնշյալ օրենսդրությամբ ունեցվածքի նկատմամբ սեփականության իրենց իրավունքները ստիպողաբար փոխանցելը խախտել է 1-ին հոդվածը: Հանձնաժողովը միաձայն որոշեց, որ որևէ խախտում չի եղել:

Բ. ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ («ՈՒՆԵՋՐԿՄԱՆ ԿԱՆՈՆԸ»)

1. ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ

38. Դատարանը համարում է, որ դիմողները, վիճարկվող օրենսդրության հետևանքով, «զրկվել են [իրենց] ունեցվածքից»՝ համաձայն 1-ին հոդվածի երկրորդ նախադասության իմաստի: Այս կետը դատարանում չէր վիճարկվել:

2. «ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻ». ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԻՆՔ ՈՐՊԵՍ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

39. Դիմողների առաջին վեճն այն մասին էր, որ ըստ «հանրային շահի» փորձաքննությունը, որն առկա է ունեզրկման մասին կանոնում, բավարարվում է, եթե ունեցվածքն առգրավվում է ընդհանուր առմամբ համայնքի օգտին ծառայեցվելու պետական նպատակով, և այդ պատճառով գույքի փոխանցումը մեկ անձից մյուսը միայն վերջինիս մասնավոր օգուտի համար երբեք չի կարող համարվել «հանուն հանրային շահի»: Նրանց պնդմամբ՝ վիճարկվող օրենսդրությունը այս պայմանը չի բավարարում:

Հանձնաժողովը և կառավարությունը, մյուս կողմից, համակարծիք էին՝ համարելով, որ ունեցվածքի հարկադիր փոխանցումը մեկ անհատից մեկ ուրիշ անհատի սկզբունքորեն կարող է համարվել «հանուն հանրային շահի», եթե ունեցվածքը վերցնելը իրականացվում է՝ հետապնդելով օրինական սոցիալական քաղաքականություն:

40. Դատարանը համաձայն է դիմողների այն պնդմանը, որ ունեցվածքից զրկումը, որն իրականացվում է միայն այն պատճառով, որ մասնավոր օգուտներ տրվեն որևէ մասնավոր անձի, չի կարող լինել «հանուն հանրային շահի»: Այսուհանդերձ, ունեցվածքի փոխանցումը մեկ անհատից մեկ ուրիշի, կախված հանգամանքներից, օրինական միջոց է՝ հանրային շահի առաջմղման համար: Այս կապակցությամբ, նույնիսկ այն դեպքերում, երբ գործող փաստաթղթերում օգտագործվում են այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «հանրային (պետական) օգտագործման համար», մասնակից պետությունների սահմանադրություններում, օրենսդրության մեջ և նախադեպային իրավունքում հնարավոր չէ գտնել մի ընդհանուր սկզբունք, որը կարդարացներ հանրային շահ հասկացությունը որպես մասնավոր կողմերի միջև ապօրինի հարկադիր փոխանցում ընկալելը: Նույնը կարելի է ասել որոշ այլ ժողովրդավարական երկրների մասին. այսպես, դիմողները և կառավարությունը որպես փաստարկ մեջբերեցին Ամերիկայի Միացյալ Նահանգների գերագույն դատարանի մի վճիռ, որը վերաբերում էր Հավայան կղզիներում գործող մի նահանգային օրենքի, համաձայն որի՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վարձակալության հանձնողներից ստիպողաբար փոխանցվում էր վարձակալներին, որպեսզի նվազեցվեր հողի սեփականության կոնցենտրացման աստիճանը (*«Հավայան կղզիների բնակարանային վարչությունն ընդդեմ Միդկիֆֆի» (Hawaii Housing Authority v Midkiff)* 104 S Ct 2321 [1984]):

41. Ոչ էլ անգլերեն «հանուն հանրային շահի» [in the public interest] արտահայտությունն է ընկալվում այնպես, որ փոխանցված ունեցվածքը պետք է օգտագործման հանձնվի լայն հանրությանը, կամ որ համայնքն ընդհանրապես կամ էլ համայնքի մի զգալի հատվածը պետք է ուղղակիորեն օգտվեն գույքի առգրավումից: Սեփականության առգրավումը մի այնպիսի քաղաքականություն հետապնդելով, որը մշակվել է՝ խորացնելու սոցիալական արդարությունը համայնքի ներսում, ճշգրտորեն կարող է նկարագրվել որպես «հանուն հանրային շահի»: Մասնավորապես, մասնավոր անձանց պայմանագրային կամ գույքային իրավունքները կարգավորող օրենքի համակարգի արդարացիությունը հանրային մտահոգության առարկա է, և, հետևաբար, նման արդարություն հաստատելու նպատակ ունեցող օրենսդրական միջոցները կարող են լինել «հանուն հանրային շահի», եթե նույնիսկ դրանք ներառում են գույքի հարկադիր փոխանցում մի անհատից մյուսին:

42. Ֆրանսերեն «հանրային օգուտի խնդրի համար» [*pour cause d'utilité publique*] արտահայտությունը, որն օգտագործված է 1-ին հոդվածի ֆրանսերեն տեքստում, իսկապես կարող է հասկացվել որպես նեղ իմաստ ունեցող, համաձայն դիմողների պնդումների, ինչպես երևում է որոշ, սակայն ոչ բոլոր մասնակից պետությունների ներպետական օրենսդրությամբ, որտեղ կարելի է գտնել այս արտահայտությունը կամ դրան համարժեք արտահայտություն՝ ունեցվածքի օտարման համատեքստում: Այնուամենայնիվ, դա վճռորոշ չէ, քանի որ կոնվենցիայում ներառված բազմաթիվ հասկացություններ դատարանի նախադեպային իրավունքով ճանաչվել են որպես «ինքնուրույն» իմաստ ունեցող: Ավելին, «հանրային օգուտ» [utilité publique] բառերը նաև կարող են ունենալ ավելի լայն իմաստ՝ ընդգրկելով ձեռնարկված օտարման միջոցները, որոնք ուղղված են այնպիսի քաղաքականության իրագործմանը, որը, համաձայն հաշվարկների, պետք է խորացնի սոցիալական արդարությունը:

Դատարանը, ինչպես հանձնաժողովը, համարում է, որ նման մեկնաբանումը լավագույնս միատեղում է անգլերեն և ֆրանսերեն տեքստերի լեզուները՝ հաշվի առնելով 1-ին հոդվածի առարկան և նպատակը (տե՛ս 1969 թ.՝ Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 33-րդ հոդվածը և *«Սանդի Թայմզի» (Sunday Times)* գործով կայացված վճիռը (ընդունվել է 1979 թ. ապրիլի 26-ին), շարք A, թիվ 30, էջ 30, պարբ. 48), որի հիմնական նպատակն է պաշտպանել ունեցվածքը կամայական առգրավումից:

43. Դիմողները հայտարարել էին, որ տարբեր արտահայտությունների («հանրային շահ»՝ 1-ին հոդվածի առաջին պարբերությունում, և «ընդհանուր շահ»՝ երկրորդ պարբերությունում) օգտագործումը միևնույն համատեքստում պետք է, համաձայնագրերի մեկնաբանման լայնորեն ճանաչված սկզբունքի համաձայն, ենթադրաբար նշանակի տարբեր հասկացություններ հիշատակելու մտադրություն: Նրանք 1-ին հոդվածը մեկնաբանել էին որպես պետությանը ավելի շատ ազատություն տվող՝ ինչ-որ մեկի ունեցվածքի օգտագործումը վերահսկելու հարցում, քան այդ ունեցվածքը տվյալ անձից վերցնելու հարցում:

Դատարանի կարծիքով՝ եթե նույնիսկ դիտարկվող խնդրի շուրջ 1-ին հոդվածում գոյություն ունենային տարբերություններ «հանրային շահ» և «ընդհանուր շահ» հասկացությունների միջև, ապա դիմողների կողմից հայտարարվող տեսակի որևէ հիմնարար տարբերակում հնարավոր չէ կատարել դրանց միջև:

44. Գանգատարկուները ընդունեցին, որ միջոցառումները, որոնք մշակվել են՝ ապահովելու համար տնտեսական առավելությունների արդարացի բաշխում, օրինակ՝ հարկահավաքման միջոցով, արտոնված են 1-ին հոդվածով, սակայն, նրանք այդպես էին պնդում միայն երկրորդ պարբերությամբ և ոչ առաջին պարբերությամբ: Դատարանը, այնուամենայնիվ, որևէ համոզիչ պատճառ չի տեսնում, թե ինչու պետությանը 1-ին հոդվածով պետք է արգելվի իրականացնել նման քաղաքականություն՝ ունեցվածքից զրկելու միջոցին դիմելով:

45. Ելնելով նշված պատճառներից, դատարանը հանգում է այն նույն եզրակացության, ինչ հանձնաժողովը. ունեցվածքի առգրավումը, որն իրագործվել է հանուն օրինական սոցիալական, տնտեսական կամ այլ քաղաքականության հետապնդման, կարող է համարվել «հանուն հանրային շահի», եթե նույնիսկ համայնքը, որպես ամբողջություն, ուղղակիորեն չի

օգտագործում կամ օգտվում վերցված գույքից: Վարձակալության բարեփոխումներին ուղղված օրենսդրությունը, հետևաբար, այս հիմքով՝ *ipso facto* 1-ին հոդվածի խախտում չէ: Համապատասխանաբար, անհրաժեշտ է պարզել, թե արդյոք այլ առումներով այդ օրենսդրությունը բավարարե՞լ է «հանրային շահի» չափանիշը և մնացյալ պահանջները, որոնք ամրագրված են 1-ին հոդվածի երկրորդ նախադասության մեջ:

3. ԱՐԴՅՈՔ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ՍԱՀՄԱՆՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈ՞Ւ ԷՐ «ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ» ՉԱՓԱՆԻՇԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԵՎ ԳՈՒՅՔԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆԻՑ ԲԽՈՂ ՄՅՈՒՍ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

(ա) Հայեցողության սահման

46. Սեփական հասարակության և դրա կարիքների մասին անմիջական գիտելիքներ ունենալու շնորհիվ պետությունների ազգային իշխանությունները սկզբունքորեն ավելի լավ պայմաններում են, քան միջազգային դատավորը, երբ գնահատվում է, թե ինչն է «հանուն հանրային շահի»: Կոնվենցիայով սահմանված պաշտպանության համակարգով, այսպիսով, ազգային իշխանություններն են, որ պետք է իրականացնեն նախնական գնահատում՝ թե՛ հանրային մտահոգության մի այնպիսի հիմնախնդրի գոյության, որը հիմք է տալիս կիրառելու ունեցվածքի առգրավման միջոցներ և թե՛ ձեռնարկվելիք վերականգնողական (փոխհատուցման) գործողությունների (տե՛ս *mutatis mutandis Հենդիսայդի (Handyside)* գործով 1976 թ. դեկտեմբերի 7-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 24, էջ 22, պարբ. 48): Այստեղ, ինչպես այլ բնագավառներում, որոնց վրա տարածվում են կոնվենցիայով սահմանված իրավական երաշխիքները, ազգային իշխանությունները, համապատասխանաբար, օգտվում են հայեցողության որոշակի սահմանից:

Ի լրումն՝ «հանրային շահի» գաղափարն անհրաժեշտաբար ընդգրկուն է: Մասնավորապես, ինչպես նշեց հանձնաժողովը, ունեցվածքի առգրավման մասին օրենքներ ընդունելու որոշումը, որպես կանոն, ընդգրկում է քաղաքական, տնտեսական և սոցիալական հարցերի դիտարկում, որոնց վերաբերյալ կարծիքները ժողովրդավարական հասարակություններում կարող են, բնականաբար, զգալիորեն տարբերվել: Դատարանը, բնական համարելով այն, որ սոցիալական և տնտեսական քաղաքականություն իրականացնելու հարցում օրենսդիր մարմնին տրված հայեցողության սահմանը պետք է լայն լինի, կհարգի օրենսդիր մարմնի որոշումն այն մասին, թե ինչն է «հանուն հանրային շահի», եթե այդ որոշումն ակնհայտորեն առանց պատշաճ հիմնավորման չէ: Այլ կերպ ասած՝ չնայած դատարանը չի կարող իր սեփական գնահատումը փոխարինել ազգային իշխանությունների կատարած գնահատմամբ, դատարանը պարտավոր է վերանայել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով վիճարկվող միջոցները և, այդպիսով, ուսումնասիրել այն փաստերը, որոնց առնչությամբ են գործել ազգային իշխանությունները:

(բ) Վիճարկվող օրենսդրության նպատակը սկզբունքորեն և փաստական տեսանկյունից օրինակա՞ն էր

47. 1967 թ. ընդունված օրենքի նպատակն էր ... շտկել վարձակալ բնակիչների նկատմամբ անարդարությունը, որի առնչությամբ կարծիք կար, որ այն վարձու բնակարանի երկարաժամկետ վարձակալության համակարգի գործողության հետևանք է: ... Օրենքը մշակվել էր՝ բարեփոխելու համար գործող օրենքը, որի մասին ասվում էր, որ այն «անարդարացի է վարձակալի նկատմամբ», և օրենքի ուժ տալ այն բանին, ինչը նկարագրվում էր որպես տարածքը զբաղեցնող բնակչի «բարոյական իրավունք» տան սեփականության նկատմամբ ...

Սոցիալական անարդարություն համարվող երևույթների վերացումը ժողովրդավարական օրենսդիր մարմնի գործառույթների մի օրինակ է: Ավելի որոշակի՝ ժամանակակից հասարակությունները բնակչության բնակարանային պայմանները համարում են առաջնային սոցիալական կարիք, որի կարգավորումը չի կարելի ամբողջապես թողնել շուկայական ուժերի հայեցողությանը: Հայեցողության սահմանը բավականաչափ լայն է՝ ընդգրկելու համար օրենսդրությունը, որն ուղղված է ազգաբնակչության բնակարանային խնդրի լուծման ավելի մեծ սոցիալական արդարության ապահովմանը, նույնիսկ այն դեպքերում, երբ նման օրենսդրությունը միջամտում է մասնավոր կողմերի միջև գոյություն ունեցող պայմանագրային հարաբերություններին և որևէ անմիջական նպաստ չի բերում պետությանը կամ ողջ համայնքին: Հետևաբար, սկզբունքորեն վարձակալության բարեփոխումներին ուղղված օրենսդրության հետապնդած նպատակը օրինական է:

48. Դիմողները կարծիք էին հայտնել, որ 1967 թ. օրենքն ընդունվել էր ոչ թե հանրային օգուտ ապահովելու նպատակով, այլ իրականում զուտ քաղաքական դրդապատճառներ է ունեցել՝ ծառայելով այդ ժամանակ իշխանության ղեկին գտնվող լեյբորիստական կառավարության համար ձայների ապահովմանը:

Այնուամենայնիվ, դատարանը նշում է, որ Անգլիայում և Ուելսում անցկացված վարձակալության ոլորտի բարեփոխումները գրեթե մեկ դար տևողությամբ եղել են հանրային մտահոգությունների առարկա, և այն ժամանակ, երբ ընդունվեց 1967 թ. օրենքը, վարձակալության պայմաններից ազատումը որպես սկզբունք ընդունվեց բոլոր խոշոր քաղաքական կուսակցությունների կողմից ... Դատարանը չի համարում, որ այնպիսի քաղաքական նկատառումները, որոնք գուցե ազդեցություն են ունեցել օրենսդրական գործընթացի վրա, երբ սոցիալ-տնտեսական օրենսդրությունը ստիպված էր ավելի կամ պակաս չափով արտացոլել քաղաքական մոտեցումները, 1967 թ. ընդունված օրենքի հետապնդած նպատակը զրկում են «հանուն հանրային շահի» օրինական լինելուց: ... Դատարանը, հետևաբար,

համաձայնում է հանճնաժողովի եզրակացությանը. Միացյալ Թագավորության խորհրդարանի համոզմունքը, որ գոյություն ունի սոցիալական անարդարություն, չի եղել այնպիսին, որը կարելի լիներ բնութագրել որպես ակնհայտորեն չհիմնավորված:

(գ) Նպատակին հասնելու համար ընտրված միջոցներ

50. Սա, այնուամենայնիվ, չի կարգավորում հարցը: Անձին իր ունեցվածքից զրկող միջոցը ոչ միայն պետք է հետապնդի, ինչպես փաստական հիմքով, այնպես էլ սկզբունքորեն, օրինական նպատակ «հանուն հանրային շահի», այլև պարտադիր պետք է լինի իրավաչափության ողջամիտ հարաբերակցություն կիրառված միջոցների և այն նպատակի միջև, որին ձգտում են հասնել: ... Այս վերջին պահանջն այլ ձևակերպմամբ արտահայտվել է *Սպորոնգի (Sporrong)* և *Լյոնրոթի (Lönnroth)* գործերով կայացված վճռում՝ համայնքի ընդհանուր շահերից բխող պահանջների և անձի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև «արդարացի հավասարակշռություն» հասկացությամբ, որը պետք է պահպանել (շարք A, թիվ 52, էջ 26, պարբ. 69): Անհրաժեշտ հավասարակշռությանը հնարավոր չի լինի հասնել, եթե տվյալ անձը ստիպված է կրել «անհատական և չափազանց ծանր բեռ (նույն տեղում, էջ 28, պարբ. 73): Չնայած դատարանն այդ վճռում խոսում էր սեփական ունեցվածքից անարգել օգտվելու ընդհանուր կանոնի համատեքստում, որն ամրագրված է առաջին պարբերության առաջին նախադասության մեջ, մատնանշել էր, որ «այս հավասարակշռության որոնումը ... արտացոլված է 1-ին հոդվածի կառուցվածքում»՝ ընդհանրապես (նույն տեղում, էջ 26, պարբ. 69): ... Դատարանը համարում է, որ միջոցը պետք է լինի տեղին՝ իր նպատակին հասնելու տեսանկյունից, և ի լրումն՝ չպետք է անհամաչափ լինի: Փաստացի այդպե՞ս է եղել, թե՞ ոչ՝ կուսումնասիրվի ստորև, երբ կդիտարկվեն դիմողների տարբեր փաստարկները:

(I) Վարձակալության պայմաններից ազատման սկզբունքը

51. Ըստ դիմողների՝ բնակվելու ապահովությունը, որ բնակվողներն արդեն իսկ ունեին գործող օրենքով ... համարժեք պատասխան էր, իսկ բարոյական հայտարարվող իրավունքին, այն է՝ ունեցվածքից զրկելուն օրենքի ուժ տալու նպատակով մշակված միջոցների դրակոնյան բնույթը չափազանց հեռուն գնաց: ... Տարածքը զբաղեցնող վարձակալը խորհրդարանի կողմից համարվում էր տան սեփականության նկատմամբ «բարոյական իրավունք» ունեցող, և, գործող օրենսդրությամբ, գանձվում էր ոչ համարժեք վարձ: ... Օրենսդիր մարմնի մտահոգությունը ոչ թե պարզապես ավելի արդարացի կերպով կարգավորելն էր հողատիրոջ և բնակվողի միջև հարաբերությունները, այլ որպես անարդարություն ընկալվող այն երևույթը շտկելը, որը վերաբերում էր սեփականատիրության բուն էությանը: Տան և հողի նկատմամբ սեփականության լիակատար իրավունքը ստիպողաբար բնակվողին փոխանցելու մեխանիզմ նախատեսելը, հողատիրոջ համար ֆինանսական փոխհատուցում սահմանելով հանդերձ, ինքնին չի կարող տվյալ հանգամանքներում որակվել որպես օրենքը շտկելու ոչ տեղին կամ ոչ համարժեք եղանակ, որպեսզի այդ մտահոգությունը փարատվի:

(II) Գնահատվող արժեքի սահմանները

52. Ինչ վերաբերում է վարձակալումից ազատման համար սահմանված պայմաններին, դիմողները պնդել էին, որ օրենսդրության ընդգրկումը միայն գնահատման որոշակի արժեքից ցածր արժեք ունեցող տներով սահմանափակելը ... կամայականության տարր է մտցնում: ... Դատարանը նշում է, որ համաձայն կառավարության չվիճարկվող գնահատականի՝ Անգլիայում և Ուելսում երկարաժամկետ վարձակալության տրված բոլոր բնակելի տները, բացառությամբ դրանց մեկ կամ երկու տոկոսի, ընդգրկվել են 1967 թ. ընդունված օրենքի գործողության շրջանակում: ... Գնահատվող արժեքի սահմանափակումներ մտցնելու նպատակով այս օրենքի շուրջ քննարկումների ժամանակ կառավարության անունից տրված բացատրությունները ... չեն կարող չեղյալ համարվել, իբրև թե դրանք իռացիոնալ են: ... Ոչ էլ դատարանը կարող է համարել, որ 1974 թ. ընդունված օրենքում կատարված փոփոխությունը, որով սահմանվեց, որ ունեցվածքի մի ավելի թանկարժեք կարգ ենթակա է վարձակալումից ազատման (վարձակալներին իրավունքներով օժտելու), ... հայտնվել է պետության հայեցողության սահմանից դուրս:

(III) Փոխհատուցում

53. Դիմողները նաև բողոքել էին օրենքով սահմանված փոխհատուցման պայմանների առնչությամբ:

54. (ա) *Իրավունք [Entitlement]:* Ծագող առաջին հարցն այն է, թե արդյոք ըստ 1-ին հոդվածի առաջին պարբերության երկրորդ նախադասության փոխհատուցման առկայությունը և չափը վերաբերո՞ւմ են նյութական փոխհատուցման, այն դեպքում, երբ հոդվածի տեքստն այդ մասին լռում է: Հանճնաժողովը, որի հետ համաձայն էին թե՛ կառավարությունը և թե՛ դիմողները, 1-ին հոդվածը մեկնաբանեց այնպես, որ այն ընդհանրապես ենթադրաբար պահանջում է փոխհատուցման վճարում՝ որպես որևէ մեկի ունեցվածքն առգրավելու համար անհրաժեշտ պայման՝ պայմանագրի կողմ հանդիսացող պետության իրավասության սահմաններում:

Ինչպես հանճնաժողովը, այնպես էլ դատարանը նկատում է, որ մասնակից պետությունների իրավական համակարգերով ունեցվածքի առգրավումը հանուն հանրային շահի, առանց փոխհատուցման վճարման, համարվում է արդարացվող միայն բացառիկ հանգամանքներում, որոնք դիտարկվող դեպքում տեղին չեն: Ինչ վերաբերում է 1-ին հոդվածին, դրանից բխող սեփականության իրավունքի պաշտպանությունը հիմնականում վերացական կլիներ և անարդյունավետ՝ որևէ համարժեք սկզբունքի բացակայության դեպքում: Հստակ է՝ փոխհատուցման պայմանները ենթակա են գնահատ-

ման, թե արդյոք վիճարկվող օրենսդրությունն ապահովո՞ւմ է արդարացի հավասարակշռություն բախվող տարբեր շահերի միջև և, մասնավորապես, արդյոք այն անհամարժեք բեռ չի՞ դնում դիմողների ուսերին (տե՛ս վերոնշյալ *Սպորոնգի և Լյոնրոթի (Sporrong and Lönnroth)* գործով վճիռը, շարք A, թիվ 52, էջ 26 և 28, պարբ. 69 և 73):

Ապա դատարանն ընդունում է հանճնաժողովի եզրակացությունը, որը վերաբերում է փոխհատուցման չափորոշչին. ունեցվածքի առգրավումը՝ առանց դրա արժեքի ողջամիտ հարաբերակցությամբ գումարի վճարման, որպես կանոն, անհամաչափ միջամտություն է, որը չի կարող արդարացվել 1-ին հոդվածով: Այնուամենայնիվ, 1-ին հոդվածը չի երաշխավորում ցանկացած հանգամանքներում ամբողջական փոխհատուցում ստանալու իրավունք: «Հանրային շահից» բխող օրինական նպատակները, ինչպիսիք են այն նպատակները, որ հետապնդում էին տնտեսական բարեփոխումներին ուղղված միջոցները կամ սոցիալական արդարության ավելի բարձր մակարդակի հասնելու համար մշակված միջոցները, կարող են պահանջել ամբողջ շուկայական արժեքի չափով փոխհատուցումից պակաս փոխհատուցում: Ի լրումն՝ դատարանի վերանայման լիազորությունը սահմանափակվում է՝ հավաստիանալով, թե արդյոք փոխհատուցման պայմանների ընտրությունն այս ոլորտում պետության հայեցողության լայն սահմանից դո՞ւրս է գտնվում ...

55. *(բ) Փաստերի վերաբերյալ դիմողների դժգոհությունները*: Փոխհատուցման վերաբերյալ դիմողների դժգոհությունները բաժանվում են երկու մասի: Նախ՝ գնահատման համար հիմք ընդունված 1967 թ. արժեքը դիմողներին չի տրամադրում վարձակալությունից հանված ունեցվածքի ամբողջ շուկայական արժեքը: ... Երկրորդ՝ թե՛ 1967 թ. և թե՛ 1974 թ. հիմքերով գույքը գնահատվել է այն ամսաթվով, որ օրը բնակվողը գրավոր տեղեկացրել է գույքը ձեռք բերելու իր ցանկության մասին: ... Այս դեպքում բողոքն այն մասին էր, որ հողատերը կորուստ է ունենում գնահատման օրվա և գործարքի ամփոփիչ վճարման օրվա միջև տարբերության հետևանքով:

56. Ինչ վերաբերում է բողոքների առաջին մասին, ապա գնահատման համար 1967 թ. արժեքը հիմք ընդունելը, որի արդյունքում բնակվողը վճարում է մոտավորապես այնքան, որքան տարածքի արժեքն է, սակայն ոչինչ չի վճարում այդ տարածքում առկա շինությունների դիմաց, հստակորեն և միտումնավոր ձևով ի նպաստ բնակվողի է: Սա մշակվել էր՝ օրենքի ուժ տալու այն տեսակետին, որն ընկած էր վիճարկվող ողջ օրենսդրության հիմքում, այն է՝ «արդարության իրավունքով քարերը և բետոնը պատկանում են որակավորված վարձակալին»՝ այն գումարի պատճառով, որը նա (կամ իր նախորդը, ով ուներ նույնպիսի իրավունք) սկզբում վճարել է որպես խոշոր մուծում, իսկ հետագայում, տարիների ընթացքում, գումարներ է ծախսել տան վերանորոգումների, պահպանության և բարեկարգումների համար: ... Երկարաժամկետ վարձակալության բարեփոխումներ նախատեսող օրենսդրության հետապնդած նպատակն է կանխել որպես անարդար ընկալվող հարստացումը, որը բաժին կհասներ հողատիրոջը գույքի վերադարձի ժամանակ: Ելնելով այդ նպատակից, որը դատարանի կողմից ճանաչվել էր օրինական՝ ելնելով 1-ին հոդվածի նպատակներից, չէր հիմնավորվել, հաշվի առնելով պատասխանող պետության ունեցած հայեցողության լայն սահմանը, որ 1967 թ. գնահատման հիմքն այնպիսին չէ, որ կարողանա ապահովել արդարացի հավասարակշռություն ներգրավված մասնավոր կողմերի շահերի միջև և այդպիսով՝ հասարակության ընդհանուր շահի և հողատիրոջ՝ սեփականության իրավունքի միջև:

57. Ինչ վերաբերում է բողոքի երկրորդ մասին, հնարավոր է, ինչպես ցույց են տվել դիմողների նկատմամբ տեղի ունեցած վարձակալումից ազատման դեպքերի հանգամանքները (տե՛ս վերը՝ պարբ. 29(v)), որ գնահատման օրվա և գույքի արժեքի վճարման օրվա միջև ուշացումներ լինեն, երբեմն՝ երկարատև: Մյուս կողմից՝ հողատերը, ով կարծում է, որ վարձակալումից ազատման գործընթացը միտումնավոր ձևով կամ ոչ անհրաժեշտաբար երկարաձգվում է, ազատ կարող է այդ հարցը ներկայացնել իրավասու դատարան: ... Դատարանն այդպիսով եզրակացնում է, որ վիճարկվող օրենսդրությամբ սահմանված փոխհատուցման ընթացակարգերն ինքնին չեն հանգեցնում այնպիսի աստիճանի ուշացումների, որ պարունակեն 1-ին հոդվածի խախտում:

58. *(գ) Միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներ*: Դիմողներն այլընտրանքային տեսակետում պնդում էին, որ 1-ին հոդվածի երկրորդ նախադասության մեջ «միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների» հիշատակումը նշանակում է, որ օտարերկրացիների ունեցվածքի օտարման դիմաց ճիշտ ժամանակին, համարժեք և արդյունավետ փոխհատուցում վճարելու մասին միջազգային իրավունքի պահանջը, նրանք այդպես էին պնդում, կիրառելի է նաև տեղացիների նկատմամբ:

59. Հանճնաժողովը հետևողականորեն համարել է, որ խնդրո առարկա սկզբունքները կիրառելի չեն որևէ պետության կողմից իր քաղաքացիների գույքի առգրավման դեպքում: Կառավարությունը պաշտպանեց այս տեսակետը: Նմանապես, դատարանը համաձայն է այդ տեսակետին՝ հետևյալ պատճառներով:

60. Առաջին՝ զուտ որպես միջազգային ընդհանուր իրավունքի հարց, խնդրո առարկա սկզբունքները կիրառելի են բացառապես քաղաքացի չհանդիսացող անձանց նկատմամբ: Դրանք հատուկ մշակվել էին օտարերկրացիների համար: Որպես այդպիսին՝ այս սկզբունքները չեն առնչվում պետությունների կողմից իրենց քաղաքացիների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքին:

61. Ի պաշտպանություն իրենց փաստարկի՝ դիմողներն առաջին հերթին հիմնվում էին 1-ին հոդվածի փաստացի տեքստի

վրա: Նրանց պնդմամբ՝ քանի որ երկրորդ նախադասությունը սկսվում է «Ոչ ոք» բառերով, անհնար է այդ նախադասության իմաստը բացատրել այնպես, թե այն նշանակում է, որ այն դեպքում, երբ յուրաքանչյուրն իրավունք ունի օգտվելու այն երաշխիքներից, որոնք տրամադրվում են «հանուն հանրային շահի» և «օրենքով նախատեսված պայմանների ենթակա» արտահայտություններով, միայն քաղաքացի չհանդիսացող անձինք իրավունք ունեն օգտվելու այն երաշխիքներից, որոնք տրամադրվում են «միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով ... նախատեսված պայմանների ենթակա» արտահայտությամբ: Ի լրումն՝ նրանք մատնանշել են, որ այն դեպքերում, երբ կոնվենցիայի հեղինակները նպատակ են ունեցել տարբերակում մտցնել տեղացիների և օտարերկրացիների միջև, դա արել են բացահայտորեն, ինչպես ցույց է տրված 16-րդ հոդվածով:

Չնայած դիմողների փաստարկը որոշակի ուժ ունի քերականական կազմության շնորհիվ, այլ մեկնաբանման համար գոյություն ունեն համոզիչ պատճառներ: Դատարանն առավել բնական է համարում թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներին կատարված հղումը բացատրել այնպես, որ դրանք նշանակում են, որ այդ սկզբունքները ներառված են այդ հոդվածում, սակայն միայն այն գործողությունների առնչությամբ, որոնց նկատմամբ դրանք, որպես կանոն, կիրառելի են, այսինքն՝ տվյալ պետության գործողությունները օտարերկրացիների նկատմամբ: Ավելին, հարկ է հասկանալ, որ ցանկացած միջազգային պայմանագրի բառեր ունեն կանոնավոր իմաստ (տե՛ս 1969 թ.՝ Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածը), իսկ խնդրո առարկա արտահայտությունը մեկնաբանելն այնպես, թե այն միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները տարածում է իրենց կիրառելիության սովորական ոլորտից դուրս, պակաս համահունչ է օգտագործված եզրույթների կանոնավոր իմաստին, չասենք արդեն դրանց համատեքստի մասին:

62. Ապա դիմողները պնդեցին, որ, համաձայն հանձնաժողովի մեկնաբանության, 1-ին հոդվածում միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների հիշատակումը ավելորդ կլիներ, քանի որ օտարերկրացիներն արդեն իսկ վայելում էին դրա պաշտպանությունը:

Դատարանը համաձայն չէ այս տեսակետին: Կարելի է համարել, որ այդ հիշատակման ներառումը ծառայում է առնվազն երկու նպատակի: Առաջին՝ այն օտարերկրացիներին հնարավորություն է տալիս սեփական իրավունքների պաշտպանության համար ուղղակիորեն դիմել կոնվենցիայի սահմանած մեխանիզմների օգնությանը՝ միջազգային իրավունքի համապատասխան սկզբունքների հիմքով, այն դեպքում, երբ այլապես նրանք ստիպված կլինեին իրավունքների պաշտպանության համար դիմել դիվանագիտական ուղիների կամ վեճերի կարգավորման այլ հնարավոր միջոցների օգնությանը: Երկրորդ՝ հիշատակումն ապահովում է, որ քաղաքացի չհանդիսացող անձանց դիրքը պաշտպանված լինի, այն իմաստով, որ դա բացառի որևէ հնարավոր պնդում, թե թիվ 1 արձանագրության՝ ուժի մեջ մտնելը հանգեցրել է նրանց իրավունքների նվազման: Այս առնչությամբ նաև արժանահիշատակ է, որ 1-ին հոդվածը բացահայտ նախատեսում է, որ ունեցվածքից զրկումը պարտադիր պետք է իրականացվի «հանուն հանրային շահի». քանի որ այսպիսի պահանջ մշտապես ընդգրկված է եղել միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներում, այս ակնառու դրույթն ինքնին ավելորդ կլիներ, եթե 1-ին հոդվածի արդյունքում այդ սկզբունքները կիրառելի դառնային ինչպես տեղացիների, այնպես էլ օտարերկրացիների նկատմամբ:

63. Վերջապես, դիմողները մատնանշել էին, որ համարելը, թե միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները կիրառելի չեն պետության կողմից իր քաղաքացիների ունեցվածքն առգրավելու դեպքերում, հնարավորություն կտար ազգության հիման վրա տարբերակում կատարելու: Նրանք ասում էին, որ սա անհամատեղելի կլիներ երկու դրույթների հետ, որոնք ներառված են թիվ 1 արձանագրության մեջ՝ դրա 5-րդ հոդվածի միջոցով: Կոնվենցիայի 1-ին հոդվածը, որը պայմանագրի կողմ հանդիսացող պետություններին պարտավորեցնում է իրենց իրավազորության սահմաններում յուրաքանչյուրի համար ապահովել երաշխավորված իրավունքների և ազատությունների իրացումը, և կոնվենցիայի 14-րդ հոդվածը, որն ամրագրում է խտրականությունից զերծ լինելու սկզբունքը:

Ինչ վերաբերում է կոնվենցիայի 1-ին հոդվածին, ճշմարիտ է այն, որ կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների հոդվածների մեծ մասով տեղացիները և օտարերկրացիները վայելում են միևնույն պաշտպանությունը, սակայն սա չի արգելում բացառությունները, պայմանով, որ դրա մասին պետք է նշվի առանձին տեքստով (տե՛ս, օրինակ՝ կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3(բ) կետը, 5-րդ հոդվածի 1(գ) կետը և 16-րդ հոդվածը, թիվ 4 արձանագրության 3-րդ և 4-րդ հոդվածները):

Ինչ վերաբերում է կոնվենցիայի 14-րդ հոդվածին, դատարանը հետևողականորեն պնդել է, որ վերաբերմունքի տարբերությունները խտրականություն չեն, եթե դրանք ունեն «օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում» (տե՛ս, որպես ամենաթարմ վճիռ, *Աբդուլազիզի, Կաբալեսի և Բալկանդալիի (Abdulaziz, Cabales and Balkandali)* գործով 1985 թ. մայիսի 28-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 94, էջ 35-36, պարբ. 72):

Հատկապես, ինչ վերաբերում է գույքի՝ սոցիալական բարեփոխումների համատեքստում իրականացված առգրավմանը, ապա, փոխհատուցման հարցով տեղացիների և օտարերկրացիների միջև տարբերակում կատարելու համար կարող են գոյություն ունենալ պատշաճ հիմքեր: Նախ՝ օտարերկրացիներն ավելի խոցելի են ներպետական օրենսդրության նկատմամբ. ի տարբերություն տեղացիների, նրանք, որպես կանոն, որևէ մասնակցություն չունեն օրենսդրության հեղինակների ընտրությանը կամ պատվիրակմանը, ոչ էլ նրանց հետ խորհրդակցել են այդ օրենսդրությունն ընդունելիս: Երկրորդ՝ չնայած ունեցվածքից զրկումը պարտադիր կարգով միշտ պետք է իրականացվի հանուն հանրային շահի, քաղաքացիների և քաղաքացի չհանդիսացող անձանց նկատմամբ կարող են կիրառվել տարբեր նկատառումներ, և շատ

հնարավոր է, որ գոյություն ունենա հիմնավոր պատճառ՝ քաղաքացիներից պահանջելու, որպեսզի նրանք հանուն հանրային շահի կրեն ավելի ծանր բեռ, քան այլ պետությունների քաղաքացիները:

64. Գործ ունենալով մի այնպիսի տեքստի հետ, որի մեկնաբանությունն առաջացրել է նման անհամաձայնություններ, դատարանը տեղին է համարում օգնության համար դիմել Նախապատրաստական փաստաթղթերին՝ որպես մեկնաբանման օժանդակ միջոցի (տե՛ս Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 32-րդ հոդվածը):

Նախապատրաստական փաստաթղթերի ուսումնասիրությունը բացահայտում է, որ փոխհատուցում ստանալու իրավունքի մասին 1-ին հոդվածի առաջին նախագծերում առկա հստակ հիշատակումը տեքստից հանվել է՝ նկատելիորեն բախվելով Միացյալ Թագավորության և այլ պետությունների դիմադրությանը: Հետագայում ավելացվել է միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների մասին հիշատակումը, ինչի առնչությամբ մի քանի հայտարարություն է արվել այն մասին, որ դրանք պաշտպանում են միայն օտարերկրացիներին: Այսպես, երբ Գերմանիայի կառավարությունը հայտարարել է, թե իրենք չեն կարող ընդունել տեքստը, եթե դրանում հստակորեն չճանաչվի, որ այդ սկզբունքներն ընդգրկում են օտարման դեպքում փոխհատուցում վճարելու պարտավորություն, շվեդական պատվիրակությունը մատնանշել է, որ այդ սկզբունքները վերաբերում են միայն պետության և քաղաքացի չհանդիսացող անձանց միջև հարաբերություններին: Եվ այդ ժամանակ գերմանական և բելգիական պատվիրակությունների խնդրանքով համաձայնություն է կայացել այն մասին, որ «միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները, իրենց ներկա բովանդակությամբ, առաջացնում են պարտավորություն՝ օտարման դեպքերում փոխհատուցում վճարել քաղաքացի չհանդիսացող անձանց»:

Ամեն ինչից զատ, 1952 թ. մարտի 19-ին ընդունված իրենց թիվ (52)1 բանաձևով, որով հաստատվում էր արձանագրության տեքստը, և այն բացվում էր ստորագրությունների համար, Նախարարների կոմիտեն հստակորեն նշեց, որ, «ինչ վերաբերում է 1-ին հոդվածին, միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներն իրենց ներկա բովանդակությամբ առաջացնում են պարտավորություն՝ օտարման դեպքերում փոխհատուցում վճարել քաղաքացի չհանդիսացող անձանց»: Նկատի առնելով բանակցությունների ողջ պատմությունը՝ դատարանը համարում է, որ այս բանաձևը պետք է ընդունվի որպես հստակ նշան, որ միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների հիշատակումը նպատակ չուներ ներառել տեղացիներին:

Համապատասխանաբար, Նախապատրաստական փաստաթղթերը չեն պաշտպանում այն մեկնաբանությունը, որը պնդում էին դիմողները:

65. Վերջապես, ցույց չտրվեց, որ թիվ 1 արձանագրությունն ուժի մեջ մտնելուց ի վեր պետությունների գործելակերպը զարգացել է այն աստիճանի, որ կարելի է ասել, թե այս իրավական գործիքի կողմերը դրանում արված հղումը միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներին համարում են կիրառելի սեփական քաղաքացիների նկատմամբ իրենց վերաբերմունքի առնչությամբ: Բերված ապացույցները մատնանշում են ճիշտ հակառակը:

66. Բոլոր այս պատճառներից ելնելով՝ դատարանը եզրակացնում է, որ միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները կիրառելի չեն սեփական քաղաքացիների գույքը պետության կողմից առգրավվելու դեպքում:

67. *(դ) «Օրենքով նախատեսված պայմաններ»:* Որպես այլընտրանք, դիմողները պնդել էին, որ ունեցվածքից զրկումը՝ առանց փոխհատուցման վճարման կամ այնպիսի փոխհատուցմամբ, որն անարդար կամ սխալ է, չի բավարարում հոդված 1-ում ներառված այն պահանջը, որ զրկումը պետք է լինի «ենթակա օրենքով նախատեսված պայմաններին»՝ մեկնաբանելով այս արտահայտությունը որպես ոչ միայն զուտ ներպետական իրավունքը, այլև բոլոր մասնակից պետությունների համար ընդհանուր՝ իրավունքի հիմնարար սկզբունքները հիշատակող: Ըստ նրանց հայտարարության՝ ունեցվածքի առգրավումը կլինի կամայական և, հետևաբար՝ այս իմաստով «օրենքով նախատեսված պայմաններին» հակասող, եթե, ինչպես տեղի է ունեցել իրենց դեպքում, ունեցվածքը վերցնելու դիմաց որպես փոխհատուցում վճարված գումարը որևէ ողջամիտ հարաբերակցության մեջ չէ առգրավված գույքի արժեքի հետ:

Դատարանը պարբերաբար որոշել է՝ «օրենք» [law] և «օրինական» [lawful] եզրույթները կոնվենցիայում «պարզապես հղում չեն ներպետական իրավունքին, այլ նաև [առնչվում են] օրենքի որակին՝ պահանջելով, որ այն լինի օրենքի գերակայությանը համապատասխան» (տե՛ս, որպես ամենաթարմ վճիռ, *Մալոնեի (Malone)* գործով 1984 թ. օգոստոսի 2-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 82, էջ 32, պարբ. 67): Այնուամենայնիվ, ելնելով փաստերից, ... հիմք չկա համարելու, որ դիմողների ունեցվածքի ազատումը վարձակալումից եղել է կամայական՝ երկարաժամկետ վարձակալության բարեփոխմանը վերաբերող օրենսդրությամբ նախատեսված փոխհատուցման պայմանների պատճառով: Մնացյալի վերաբերյալ, դատարանի կարծիքով, այլ նման պահանջները, ինչպիսիք կարող են ներառվել «օրենքով նախատեսված պայմանների ենթակա» արտահայտության մեջ, դիմողների ունեցվածքի առգրավման հանգամանքներում բավարարվել են: ...

(IV) Վարձակալությունից ազատման յուրաքանչյուր առաջարկվող դեպքի՝ ողջամիտ լինելու մասին անկախ դիտարկման բացակայությունը

68. Գանգատարկուները բողոքել էին այն մասին, որ երկարաժամկետ վարձակալության բարեփոխումներ նախատեսող օրենսդրության կիրառումն անհետևողական է, քանի որ այն չի նախատեսում որևէ մեխանիզմ, որի միջոցով հողատերը

կարող է, ցանկացած կոնկրետ դեպքում, հասնել կամ վարձակալումից ազատման հիմնավորման, կամ այն սկզբունքների անկախ դիտարկման, որոնց հիման վրա պետք է հաշվարկվի փոխհատուցումը, միայն այն բանից հետո, երբ կհաստատվի, որ տվյալ վարձակալությունը տեղավորվում է նշված օրենսդրության շրջանակում: ... Առաջին հերթին խորհրդարանն է, որ պետք է գնահատի առավելություններն ու անբարենպաստ հանգամանքները, որոնք բխում են հնարավոր տարբեր օրենսդրական այլընտրանքներից... Հաշվի առնելով այն փաստը, որ համաձայն գնահատականների՝ օրենսդրությունն ազդելու էր Անգլիայում և Ուելսում երկարաժամկետ վարձակալության տրված 1.25 միլիոն բնակելի տների 98-99 տոկոսի վրա, ... խորհրդարանի կողմից ընտրված համակարգը չի կարող ինքնըստինքյան հայտարարվել որպես իռացիոնալ կամ անտեղի:

(V) Անհատական գործարքներ

69. Գանգատարկուները, ի վերջո, հայտարարեցին, որ եթե նույնիսկ երկարաժամկետ վարձակալությունից ազատումը սկզբունքորեն կարող է լինել «հանուն հանրային շահի», այն 80 անհատական գործարքները, որոնց վերաբերյալ ներկայացվել են բողոքներ ... հիմնավորված չեն եղել... Խորհրդարանը որոշել է, որ հողատերերը, որոնց վրա տարածվում է նշված օրենսդրությունը, պետք է զրկվեն անարդարացի համարված հարստացման հնարավորությունից, որը, հակառակ դեպքում, նրանք կունենային՝ սեփականության իրավունքների վերականգնման հետ՝ վտանգելով մի շարք «անարժան» վարձակալների կողմից «հսկայական շահույթներ» արձանագրելու հնարավորությունը: Դա եղել էր խորհրդարանի սկզբունքային որոշումը, որը դատարանը չի կարող համարել այնքան չհիմնավորված, որ այն լինի պետության հայեցողության սահմանից դուրս: Ոչ էլ գործող օրենսդրության կիրառումը, մասնավորապես՝ ինչպես ցույց տվեցին դիմողներին վերաբերող 80 գործարքները, ցուցադրում է, թե անոմալիաների ծավալն այնպիսին է, որ օրենսդրությունը 1-ին հոդվածով համարվի անընդունելի: Ավելին, բողոքների առիթ հանդիսացած բոլոր կոնկրետ գործարքները, նույնիսկ նրանք, որոնց դեպքում վարձակալները «հսկայական շահույթներ» են արձանագրել՝ անմիջապես վաճառելով գույքը, դիմողները ստացել են այնպիսի սահմանված փոխհատուցում այն բանի դիմաց, ինչ խորհրդարանը համարել է նրանց՝ որպես հողատերերի, արդարացի իրավունքը: ... Ցանկացած զրկանք, որը ծագել է «հսկայական շահույթներ» արձանագրելու արդյունքում, կրել են ոչ թե դիմողները, ում կորուստը և փոխհատուցումը ենթակա չեն եղել դրա ազդեցությանը, այլ երկարաժամկետ վարձակալությունից ազատվող վարձակալից առաջ նման իրավունք ունեցողները ... Համապատասխանաբար, 1-ին հոդվածի համաձայն պահանջվող հավասարակշռությունը չի խախտվել:

4. ԱՄՓՈՓՈՒՄ

70. Որպես ամփոփում, այսպիսով, երկրորդ նախադասության յուրաքանչյուր պահանջ բավարարվել է՝ կապված վիճարկվող ունեզրկման հետ, որից տուժել են դիմողները:

գ. Առաջին պարբերության առաջին նախադասություն («անարգել օգտվելու մասին կանոնը»)

71. Որպես այլընտրանք և ի հավելումն՝ դիմողները պնդել էին, որ ոտնահարվել է ունեցվածքից անարգել օգտվելու իրենց իրավունքը, ինչպես այն երաշխավորված է 1-ին հոդվածի առաջին նախադասությամբ:

Այն կանոնը (երկրորդ նախադասության մեջ), որի համաձայն՝ ունեցվածքից զրկումը պետք է ենթակա լինի որոշակի պայմանների, վերաբերում է ունեցվածքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ միջամտության մի կոնկրետ տեսակի, իրականում՝ դրա ամենաարմատական եղանակին... երկրորդ նախադասությունը լրացնում է առաջին նախադասության մեջ ամրագրված ընդհանուր սկզբունքը և դրա գործողության սահմանափակումներ մտցնում: Միևնույն ժամանակ, անհնար է պատկերացնել, որ դիտարկվող գործի նկատմամբ այդ ընդհանուր սկզբունքի կիրառումը պետք է հանգեցնի որևէ այլ եզրակացության, քան այն, որին արդեն իսկ հանգել է դատարանը՝ կիրառելով երկրորդ նախադասությունը:

դ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

72. Ո՛չ 1967 թ. ընդունված՝ երկարաժամկետ վարձակալության բարեփոխման մասին օրենքի սահմանած պայմանների հետևանքով, ո՛չ էլ դիմողների ունեցվածքին վերաբերող՝ երկարաժամկետ վարձակալումից ազատման գործարքների կոնկրետ հանգամանքների հետևանքով տեղի չի ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

….

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

Վճռում է, որ ... թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ... խախտում տեղի չի ունեցել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում ընդգրկված էին նախագահ Ռիսդալը և դատավորներ Գանսոֆ վան դեր Մերշը, Կրեմոնան, Վիարդան, Տոիր Վիլջաուլմսոնը, Բինդշեդլեր-Ռոբերտը, Էվրիգենիսը, Լագերգրենը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Պինեյրո Ֆարինան, Փեթիթին, Ուոլշը, Էվանսը, Ռուսոն, Բերնհարդտը, Ձերսինգը և Շպիլմանը:

2 Դատավոր Տոիր Վիլջաուլմսոնը ներկայացրել է համընկնող կարծիք, որում արտահայտել է տեսակետ այն մասին, որ 1-ին հոդվածը չի պարունակում փոխհատուցում ստանալու իրավունք այն դեպքերում, երբ անձի ունեցվածքը ենթարկվել է էքսպրոպրիացիայի:

Հոդվածի տեքստում փոխհատուցման մասին որևէ հիշատակում չկա: Իմ կարծիքով՝ պետք է լիներ նման հիշատակում, եթե հոդվածի նպատակներից մեկը եղել է փոխհատուցման իրավունքի երաշխավորումը: Հոդվածի տեքստի, ինչպես այն կա, բուն իմաստը, հետևաբար, այն է, որ այն կապ չունի փոխհատուցման հետ:

Եթե զգացվի, այնուամենայնիվ, որ անհրաժեշտ է վերահաստատել այս իմաստը՝ դիմելով մեկնաբանության օժանդակ միջոցների, ապա Նախապատրաստական փաստաթղթերը մատնանշում են միևնույն եզրակացությունը, այն է՝ 1-ին հոդվածը չի օժտում փոխհատուցում ստանալու իրավունքով: Առնչվող կետերը հետևյալն են:

Նախարարների կոմիտեն 1950 թ. նոյեմբերին ուսումնասիրեց Խորհրդարանի Խորհրդակցական վեհաժողովի կողմից Մարդու իրավունքների կոնվենցիայի նախագծում առաջարկված փոփոխությունները: Երբ ակնհայտ դարձավ, որ որոշ խնդիրների շուրջ հնարավոր չէ արագորեն հասնել համաձայնության, որոշվեց, որ դրանք պետք է հանվեն նախագծի տեքստից և հավելյալ վերլուծության համար ներկայացվեն փորձագետների կոմիտեին: Այս խնդիրներից մեկը սեփականության իրավունքն էր: Վեհաժողովի առաջարկած փոփոխության մեջ չէր խոսվում փոխհատուցման մասին: Չնայած դրան՝ մասնակից պետությունների մեծամասնությունը վճռեց, որ պետք է երաշխավորվի փոխհատուցում և, համապատասխանաբար, փորձագետների կոմիտեի ներկայացրած տեքստը պարունակում էր դրա վերաբերյալ մտքեր (տե՛ս «Նախապատրաստական փաստաթղթերի ժողովածու» հրատարակությունը, հտ. VII, էջ 208 և 223-4): Մի շարք կառավարություններ, այսուհանդերձ, չհամաձայնեցին կոնվենցիայի մեջ ներառել փոխհատուցման սկզբունքը, իսկ դրա հիշատակումը հետագայում տեքստից հանվեց: Այն մասին, թե ինչպես է տեքստը փոփոխվել նախագծման ընթացքում, հակիրճ խոսվում է Գլխավոր քարտուղարի՝ 1951 թ. սեպտեմբերի 18-ի մեկնաբանության մեջ (նշվ. հղումը, հտ. VIII, էջ 4-10):

Հաշվի առնելով այս ամենը, ես ստիպված եմ եզրակացնել, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առարկան և նպատակը այնքան հեռուն չեն գնացել, որպեսզի ընդգրկեին փոխհատուցման իրավունքի իրավական երաշխիք: Նույնիսկ եթե կոնվենցիան պետք է մեկնաբանվի այսօրվա պայմաններին համահունչ, ես չեմ կարողանում տեսնել որևէ զարգացում, որն այժմ կկարողանար հիմնավորել 1-ին հոդվածի մեկ այլ մեկնաբանություն:

Արդյոք կարծո՞ւմ եք, որ դատարանը ճիշտ էր, երբ գտավ, որ 1-ին հոդվածը ենթադրում է փոխհատուցման իրավունքի առկայություն:

3 Դատավորներ Բինդշեդլեր-Ռոբերտը, Գյոլչյուքլուն, Մաթշերը, Փեթիթին, Ռուսոն և Շպիլմանը ներկայացրեցին համընկնող կարծիք, որում հայտարարեցին հետևյալը.

Վճռի 66-րդ պարբերությամբ հաստատում է, որ միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները կիրառելի չեն պետության կողմից իր քաղաքացիների ունեցվածքն առգրավելու դեպքերում:

Այնուամենայնիվ, հարկ է ճանաչել, որ 60-65-րդ պարբերություններում ամրագրված տրամաբանությունը, ընդհանուր առմամբ, հեռու է համոզիչ լինելուց, թեև այն չի պարունակում որոշ ոչ էական փաստարկներ (օրինակ՝ 64-րդ պարբերությունում նախագծի մշակման պատմության հիշատակումը: Այսուհանդերձ, հարկ է հիշել, որ հաճախ վտանգավոր է պատմության վրա չափից դուրս շատ հենվելը):

Ամեն դեպքում, վճռով ընդունված թեզը հանգեցնում է կոնվենցիայիով տեղացիների և օտարերկրացիների նկատմամբ վերաբերմունքի տարբերության, ինչը բացահայտորեն կոնֆլիկտի մեջ է թե՛ կոնվենցիայի հիմքում ընկած ոգու և թե՛ կոնվենցիայի ընդհանուր կառուցվածքի հետ (տե՛ս 1-ին հոդվածը): Այս սկզբունքից եզակի բացառությունները մշտապես կամ հստակորեն ամրագրվում են (համեմատի՛ր, օրինակ՝ կոնվենցիայի 16-րդ հոդվածը և թիվ 4 արձանագրության 3-րդ և 4-րդ հոդվածները), կամ էլ այնպիսի ձևով են ներկայացվում, որ կասկածի որևէ տեղ չի մնում (օրինակ՝ կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1(գ) կետը):

Վճիռը բավարար պատասխան չի տալիս այս հարցին, որը, մեր կարծիքով, կոնվենցիայի մեկնաբանության համար ունի հիմնարար կարևորություն: Մենք նույնիսկ այն կարծիքի ենք, որ 61-րդ և 63-րդ պարբերություններում մշակված փաստարկները թույլ են և, ընդհանուր առմամբ, մեկնաբանության սկզբունքները, որոնց վրա հիմնված է վճիռը, առնչվում

են ընդամենը որոշ մանրամասների հետ:

Ավելին, չպետք է մոռանալ, որ տարբեր մասնակից պետություններում իրավաբանական միտքը ծայրահեղ հակասական է խնդրո առարկա հարցի վերաբերյալ, և ներկայումս հարաճուն աջակցություն կա նրանց հանդեպ, ովքեր համարում են, որ միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ կիրառելի են տեղացիների նկատմամբ:

Միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների ճկունությունն այս ոլորտում նաև կարելի է նկատել միջազգային դատարանի մի շարք վճիռներից, որոնք այդ սկզբունքները ճկուն ձևով կիրառում են «երրորդ աշխարհի» զարգացող պետություններում ազգայնացումների նկատմամբ:

Այս հանգամանքներում մենք կգերադասեինք, որ այդ խնդիրն այդ վճռով չլուծվեր, հատկապես՝ որովհետև վճռում ամրագրված վերջնական եզրակացությանը հանգելու համար այն վճռորոշ չէ...

Այնուամենայնիվ, *Լիթգոուի (Lithgow)* (ստորև՝ թիվ 5 ծնթ.)՝ վերջերս քննված գործով դատարանը վերահաստատեց *Ջեյմսի (James)* գործով կայացրած իր վճիռն այն մասին, որ «միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները» կիրառելի չեն այն դեպքերում, երբ պետությունը վերցնում է իր սեփական քաղաքացիների գույքը:

4 Դատարանի վերոնշյալ վճիռը շատ կարևոր է երկրորդ կանոնի բաղադրիչ տարրերի մշակման համար: Այժմ պարզ է, որ պետությունների՝ սոցիալական (վերաբաշխողական) արդարության ծրագրերը տեղավորվում են այդ կանոնի օրինական նպատակների շրջանակում: Ի հավելումն՝ դատարանը նշեց հայեցողության սահմանի իր հայեցակարգը (տե՛ս վերը՝ էջ 663)՝ պետություններին զգալի ինքնուրույնություն տրամադրելու համար, որպեսզի վերջիններս որոշեն, թե ինչ տեսակի սոցիալական և տնտեսական ծրագրերն են «հանուն հանրային շահի»: Միայն այն դեպքերում, երբ տվյալ պետության խորհրդարանը նման ծրագիր ընդունում է «ակնհայտորեն առանց ողջամիտ հիմնավորման», դատարանն այն կհամարի «հանրային շահից» չբխող: Դատարանը նաև բացատրեց, որ այդ ծրագրերի կիրառումը կոնկրետ անհատների նկատմամբ պարտադիր պետք է բավարարի իրավաչափության սկզբունքը: Իսկապես, արդարացի հավասարակշռության չափանիշը (որը ձևակերպվել էր *Սպորոնգի և Լյոնրոթի* գործով) այս պահանջի հոմանիշն էր: Վերջապես, «օրենքով նախատեսված պայմաններ» արտահայտությունը դատարանը մեկնաբանեց, որ այն նշանակում է, որ այդ ծրագրերը մանրամասնող ներպետական օրենքները պարտադիր պետք է համապատասխանեն կոնվենցիայով հաստատված «օրենքի գերակայություն» որակներին (ինչպիսիք են՝ մատչելիությունը, կանխատեսելիությունը և կամայականության բացառումը). հավելյալ վերլուծության համար տե՛ս *«Անտրիշն ընդդեմ Ֆրանսիայի» (Hentrich v France)*, ստորև՝ ծնթ. 6:

5 Ունեցվածքից զրկելու մեկ այլ տեսակ՝ ազգայնացումը, դատարանի կողմից ուսումնասիրվել է *«Լիթգոուն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Lithgow v UK)*, A.102 (1986) 8 EHRR 329 գործի շրջանակում: Մի տպավորիչ վճռով դատարանը ընդլայնեց երկրորդ կանոնով պետություններին տրամադրված հայեցողության լայն սահմանը՝ ներառելու համար փոխհատուցման պայմանների սահմանումը, ինչպես նաև՝ որոշումը, թե երբ պետք է տեղի ունենա գույքից զրկումը (տե՛ս վերը *Ջեյմսի (James)* գործը): Դիմողները, որոնք կազմված էին ընկերություններից և անհատներից, տուժել էին իրենց շահերի մի որոշակի մասի ազգայնացումից՝ համաձայն «Արդյունաբերության նավաշինության և օդանավաշինության ճյուղերի մասին» օրենքի (1977 թվական): Լեյբորիստական կուսակցությունն իր 1974 թ. նախընտրական ծրագրում խոստացել էր ազգայնացնել այս արտադրությունները: Իշխանության գալուց հետո՝ 1974 թ. հուլիսին, լեյբորիստական կառավարությունը հայտարարեց, որ արդյունաբերության՝ խնդրո առարկա ճյուղերը պետք է դարձվեն պետական սեփականություն: Այդ կառավարությունը 1974 թ. հոկտեմբերի համապետական ընտրություններում ստացավ ընդհանուր ձայների մեծամասնությունը, իսկ 1975 թ. մարտին արդյունաբերության նախարարը Համայնքների պալատում ներկայացրեց մի օրինագիծ, որն այդ ճյուղերի ազգայնացումը մտցնում էր ուժի մեջ: Նախարարը նաև բացատրեց արդյունաբերության այդ երկու ճյուղերի սեփականատերերին փոխհատուցելու եղանակը (ընդհանուր առմամբ, նրանք պետք է 1974 թ. փետրվարին լեյբորիստական կառավարության ընտրությանը նախորդող վեց ամիսների ընթացքում ստանային իրենց պաշտոնական մասնաբաժնի միջին արժեքը): Խորհրդարանական երկարատև ընթացակարգերից հետո (որոնք ներառում էին լուրջ

անհամաձայնություններ Համայնքների պալատի և Լորդերի պալատի միջև) ազգայնացման մասին օրինագիծը 1977 թ. մարտին ստացավ «թագավորական համաձայնություն»: Դիմողները հանձնաժողովին բողոքեցին՝ հայտարարելով, որ արդյունաբերության այդ երկու ճյուղերում իրենց սեփականատիրական շահերի ազգայնացման դիմաց իրենց ստացած փոխհատուցումը եղել է զգալիորեն ոչ համարժեք և այդ իսկ պատճառով խախտել է 1-ին հոդվածը: Տասներեք կողմ և երեք դեմ ձայներով՝ հանձնաժողովը մերժեց բողոքը: Դատարանը հստակեցրեց ունեցվածքից զրկելու դեպքում փոխհատուցում վճարելու՝ պետությունների պարտականության բնույթը՝ որոշելով, որ.

109….Փոխհատուցում վճարելու պարտավորությունը առավելապես բխում է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում, եթե այն ընկալում ենք որպես մեկ ամբողջություն, պարունակվող մի ոչ բացահայտ պայմանից ..., այլ ոչ թե ինքնին «հանրային շահի» պահանջից: Այս վերջին պահանջն առնչվում է փաստացի ունեզրկման հիմնավորմանը և դրդապատճառներին՝ խնդիրներ, որոնց վերաբերյալ դիմողները գանգատ չեն ներկայացրել:

….

Ե. ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

121. Ապա դատարանն ընդունում է հանձնաժողովի եզրակացությունը, որը վերաբերում է փոխհատուցման ստանդարտին. ունեցվածքի առգրավումը՝ առանց դրա արժեքի ողջամիտ հարաբերակցությամբ գումարի վճարման, որպես կանոն, հանդիսանում է անհամաչափ միջամտություն, որը չի կարող 1-ին հոդվածով համարվել արդարանալի: Այնուամենայնիվ, 1-ին հոդվածը չի երաշխավորում ցանկացած հանգամանքներում ամբողջական փոխհատուցում ստանալու իրավունք, քանի որ «հանրային շահից» բխող օրինական նպատակները, ինչպիսիք են այն նպատակները, որ հետապնդում են տնտեսական բարեփոխումներին ուղղված միջոցառումները կամ սոցիալական արդարության ավելի բարձր մակարդակի հասնելու համար մշակված միջոցառումները, կարող են պահանջել ամբողջ շուկայական արժեքի չափով փոխհատուցումից պակաս փոխհատուցում (տե՛ս վերը հիշատակված *Ջեյմսի (James)* գործով կայացված վճիռը, շարք A, թիվ 98, էջ 36, պարբ. 54):

Այս կապակցությամբ դիմողներն անհամաձայնություն հայտնեցին առ այն, որ, ինչ վերաբերում է փոխհատուցման չափորոշչին, որևէ տարբերակում չի կարելի կատարել ազգայնացման և պետության կողմից ունեցվածքի՝ այլ տեսակի առգրավումների միջև, ինչպիսին է հանրային նպատակներից ելնելով հողի հարկադիր ձեռքբերումը:

Դատարանը չի կարող համաձայնել: Ինչպես առգրավված գույքի բնույթը, այնպես էլ գույքի առգրավման հանգամանքներն այս երկու տեսակի դեպքերում առաջ են բերում տարբեր նկատառումներ, որոնք հանրային շահի և առնչվող մասնավոր շահերի միջև արդարացի հավասարակշռությունը որոշելիս բոլոր հիմքերն ունեն՝ հաշվի առնվելու: Մի ամբողջ արդյունաբերություն ազգայնացնելու նպատակով խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների գնահատումն ինքնին շատ ավելի բարդ գործողություն է, քան, օրինակ, հարկադիր կարգով ձեռք բերվող հողի գնահատումը և, որպես կանոն, պահանջում է հատուկ օրենսդրություն, որը կարող է կիրառվել առնչվող անխտիր բոլոր ձեռնարկումների դեպքում: Համապատասխանաբար, այն պայմանով, որ վերոնշյալ հավասարակշռությունը պահպանվում է, ազգայնացման դեպքում պահանջվող փոխհատուցման չափորոշիչը կարող է տարբերվել գույքի առգրավման այլ դեպքերում պահանջվողից:

122. Չվիճարկելով այն, որ պետությունն օգտվել է հայեցողության սահմանից՝ որոշելիս, թե արդյոք տվյալ սեփականատերը պետք է զրկվի իր գույքից, դիմողները հայտարարեցին, որ հանձնաժողովն այս նախադրյալի հիման վրա սխալ է եզրակացրել, որ պետությունը հայեցողության լայն սահման է ունեցել նաև այն պայմանները որոշելիս, որոնց հիման վրա պետք է առգրավվեր ունեցվածքը:

Դատարանը չի կարող ընդունել այս փաստարկը: Ազգայնացման մասին օրենսդրություն ընդունելու որոշումն ընդհանրապես ընդգրկում է տարբեր այնպիսի հարցերի դիտարկում, որոնց վերաբերյալ կարծիքները ժողովրդավարական հասարակության մեջ կարող են զգալիորեն տարբերվել: Քանի որ ազգային իշխանություններն անմիջականորեն են տեղյակ իրենց հասարակության, դրա կարիքների և ռեսուրսների մասին, այս ոլորտում միջոցառումների պատշաճությունը գնահատելու համար նրանք սկզբունքորեն ավելի լավ վիճակում են, քան որևէ միջազգային դատավոր, և, հետևաբար, իշխանություններին հասու՝ հայեցողության սահմանը պետք է լինի լայն: Դատարանի կարծիքով՝ այս տեսակետից արհեստական կլինի փոխհատուցման պայմաններին վերաբերող որոշումը բաժանել ազգայնացման մասին կայացված փաստացի որոշումից, քանի որ վերջինի վրա ազդող գործոններն անհրաժեշտաբար կազդեն նաև նախորդի վրա: Համապատասխանաբար, տվյալ գործով դատարանի՝ վերանայման իրավունքը սահմանափակ է. այն կարող է միայն ստուգել, թե արդյոք փոխհատուցմանը վերաբերող որոշումները դո՞ւրս են եղել Միացյալ Թագավորության հայեցողության լայն սահմանից: Դատարանը հարգելու է այս կապակցությամբ օրենսդիր մարմնի կայացրած որոշումը, բացառությամբ եթե այդ որոշումն ակնհայտորեն զուրկ է ողջամիտ հիմնավորումից:

Ապա դատարանը, ձայների տարբեր հարաբերակցությամբ (տասնյոթ կողմ, մեկ դեմից մինչև տասներեք կողմ, հինգ դեմ), եզրակացրեց, որ 1977 թ. օրենքով նախատեսված՝ փոխհատուցման

հաշվարկի եղանակը գտնվել է այդ պետության հայեցողության սահմանում, իսկ փոխհատուցման չափերը որոշելու ժամկետների (1973-74) և ազգայնացումն իրականացնելու օրերի (1977 թ. ապրիլի 29՝ ավիաշինական ընկերությունների դեպքում և 1977 թ. հուլիսի 1՝ նավաշինական ընկերությունների դեպքում, երբ պետությունն իր ձեռքը վերցրեց արդյունաբերության այդ ճյուղերը) միջև տարբերությունը (ուշացումը) չի խախտել 1-ին հոդվածը: Հետևաբար, դատարանը հիմնվում էր մասնակից պետությունների ժողովրդավարական հաստատությունների քաղաքական որոշումների վրա՝ կապված հետևյալ որոշումների հետ. (i) ազգայնացնել արդյունաբերության առանձին ճյուղեր, և (ii) ազգայնացված գույքի առնչությամբ ինչպես հաշվարկել փոխհատուցումը: Միայն այն դեպքերում, երբ նման որոշումներն «ակնհայտորեն զուրկ են ողջամիտ հիմք(եր)ից», դատարանը կհամարի, որ 1-ին հոդվածը խախտվել է: Ներկայումս արևմտյան կառավարությունների մեծամասնությունը հետ է կանգնել արդյունաբերության ճյուղերի՝ պետական սեփականության գաղափարախոսությունից՝ հօգուտ շուկայական ուժերի, որոնք ենթակա են կարգավորման պետական (և վերպետական, օրինակ՝ Եվրոպական Միության միջոցով) իշխանությունների կողմից:

6 *«Անտրիշն ընդդեմ Ֆրանսիայի» (Hentrich v France)* A.296-A (1994) 18 EHRR 440 գործով, դատարանը ձևակերպեց «օրենքով նախատեսված պայմաններ» արտահայտության իմաստը և հոդված 1-ում ներառված՝ համաչափության պահանջը, որի նպատակն է ընթացակարգային պարտավորություններ սահմանել այն պետությունների համար, որոնք ձգտում են անձանց զրկել սեփական գույքից: Գանգատարկուն և նրա ամուսինը Ստրասբուրգում գնել էին մոտավորապես 7000 քմ հող՝ վճարելով 150.000 ֆրանսիական ֆրանկ: Հարկերի վճարման հիման վրա, առքի գործարքը հարկային ծառայության տեղական գրասենյակի կողմից գրանցվել էր 1979 թ. օգոստոսին: 1980 թ. փետրվարին մի հարկահավաք դիմողին տեղեկացրել էր այն մասին, որ Պետական եկամուտների հանձնակատարը համարում է, որ իր հողի ձեռք բերման գինը եղել է չափազանց ցածր, և, հետևաբար, Գանձապետարանն իրացնում է գնման առաջնահերթություն ունենալու՝ իր օրինական իրավունքը, որպեսզի հողը ձեռք բերի պայմանագրային գնով՝ գումարած տասը տոկոս հավելավճար: Գանգատարկուն փորձել է առաջնահերթություն ունենալով ձեռք բերման որոշումը բողոքարկել ներպետական դատարաններում, բայց հաջողության չի հասել: Ապա նա բողոքել է հանձնաժողովին՝ հայտարարելով, որ տեղի է ունեցել 1-ին հոդվածի խախտում: Այդ մարմինը, տասներկու կողմ և մեկ դեմ ձայներով, վճռել է, որ 1-ին հոդվածի խախտում տեղի չի ունեցել: Դատարանն ի գիտություն է ընդունում այն, որ 1980-1986 թթ. Ֆրանսիայի իշխանություններն առաջնահերթություն ունենալու իրենց իրավունքը իրացրել են ընդամենը ութսունութ անգամ, և որ դիմողի գործով վճռաբեկ դատարանի վճռից ի վեր (1987)՝ այդ իրավունքը չի կիրառվել: Կառավարությունը չի վիճարկել այն, որ դիմողը զրկվել է իր ունեցվածքից՝ պետության՝ առաջնահերթություն ունենալու իրավունքի կիրառման արդյունքում: Հետևաբար, դատարանն իր ուշադրությունը կենտրոնացրեց այն հարցի վրա, թե արդյոք երկրորդ կանոնում ամրագրված պայմանները բավարարվե՞լ են:

Ա. ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

…

39.…Դատարանը վերահաստատում է, որ «հանրային շահի» գաղափարը անհրաժեշտաբար ընդգրկուն է, և որ պետություններն ունեն հայեցողության որոշակի սահման, որպեսզի ձևակերպեն և կազմակերպեն իրենց հարկային քաղաքականությունը, սահմանեն ընթացակարգեր (ինչպես, օրինակ՝ առաջնահերթություն ունենալու իրավունքը)՝ հարկերի վճարում ապահովելու նպատակով: Դատարանն ընդունում է, որ հարկերի վճարումից խուսափումը կանխելը օրինական նպատակ է, որը բխում է հանրության շահից: Դատարանը դիտարկվող գործով պարտավոր չէ որոշել, թե արդյոք առաջնահերթություն ունենալու իրավունքը կարո՞ղ է օրենքի հիման վրա ձևակերպվել այնպես, որ այն կարգավորի նաև անշարժ գույքի շուկան:

Բ. ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

40. Համաձայն Տիկին Անտրիշի պնդման՝ առաջնահերթություն ունենալու ընթացակարգը եղել է կամայական, քանի որ հարկային ծառայությունն իր որոշման հիմնավորումներ չի ներկայացրել, և, հետևաբար՝ հարկատուն հնարավորություն

չի ունեցել՝ իմանալու կամ քննադատելու դրա հիմնավորումները: ... Մինչ առաջնահերթություն ունենալու իրավունքի համակարգը որևէ քննադատության տեղ չի թողնում, քանի որ պետության անկախության մի հատկանիշ է, նույնը ճշմարիտ չէ այն դեպքերում, երբ այդ իրավունքի կիրառումը խտրական է, և, միևնույն ժամանակ, ընթացակարգը արդարացի չէ:

Տվյալ գործում առաջնահերթություն ունենալու իրավունքը կիրառվել է կամայականորեն և եղել է դժվարությամբ կանխատեսելի, և դրա ընթացքում չեն ապահովվել հիմնարար ընթացակարգային երաշխիքները: Մասնավորապես, ընդհանուր հարկային օրենսգրքի 668-րդ հոդվածը, ինչպես դա մինչև դիտարկվող ժամանակահատվածը մեկնաբանվում էր վճռաբեկ դատարանի կողմից և ինչպես կիրառվել էր դիմողի նկատմամբ, պահանջվող չափով չի բավարարել ճշգրտության և կանխատեսելիության պահանջները, որոնք ենթադրվում են իրավունքի հայեցակարգից՝ համաձայն կոնվենցիայի իմաստի:

Առաջնահերթության իրավունքի կիրառման մասին որոշումը չի կարող օրինական լինել, եթե բացակայում է մրցակցային վարույթը, որը համապատասխանում է կողմերի հավասարության սկզբունքին, իրավունքներով օժտող փաստարկը, որը պետք է ներկայացվեր ցածր գնահատման հարցի և, հետևաբար, պետական եկամուտների գործակալության դիրքորոշման վերաբերյալ. սրանք այն բոլոր բաղադրիչներն են, որոնք տվյալ գործի շրջանակներում բացակայում էին:

Դատարանն ի գիտություն է ընդունում այն, որ Ֆրանսիայի իրավական համակարգը այս առումով փաստացի ձևափոխվել էր. այժմ պարտադիր է, որ առաջնահերթության իրավունքի կիրառման մասին վարչական որոշումների պատճառները համապատասխանեն մրցակցային սկզբունքին: Այսուհանդերձ, դատարանը ստիպված է նկատել, որ այս փոփոխությունը դիմողին հասու չի եղել, չնայած կարող էր լինել:

Գ. ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ

43. Ըստ տկն Անտրիշի՝ փաստը, որ առաջնահերթության իրավունքի կիրառման հետևանքից, որը նա որակեց որպես պատվազրկող, իր պաշտպանությունը եղել է անհնար, այդ միջոցառումը վերածել է ոչ համաչափ միջոցառման, ինչպես էքսպրոպրիացիայի դիմաց վճարված փոխհատուցման ոչ համարժեք լինելու դեպքում: ...

45. Միջամտության համաչափությունը գնահատելու համար դատարանը դիտարկում է կամայականությունից պաշտպանվածության մակարդակը, որը տրամադրվում է այս գործի վարույթի շրջանակներում:

46. Տվյալ դեպքում դատավարությունն իրականացրած և բողոքարկումը քննած դատարանները ներպետական իրավունքը մեկնաբանեցին այնպես, որ դրանք պետությանը թույլ տվեցին օգտվել առաջնահերթության իր իրավունքից՝ ստիպված չլինելով ներկայացնել իր որոշման փաստական և օրենքից բխող հիմքերը:

47. Դատարանն առաջին հերթին նշում է, որ պետական եկամուտների մարմինը կարող է, առաջնահերթության իր իրավունքի իրացման ճանապարհով, իրեն փոխարինել մեկ այլ գնորդով, նույնիսկ այնպիսի մարմինը, որը գործում է բացարձակ բարեխղճորեն, զուտ որպես այլոց զգուշացում հարկերից խուսափելու որևէ գայթակղության դեմ: Առաջնահերթության կարգով գնման իրավունքը, որը կարծես թե իր համարժեքը չունի կոնվենցիայի մասնակից այլ պետությունների հարկային համակարգերում, չի գործում մշտական պարբերականությամբ, այսինքն՝ ամեն անգամ, երբ գինը ավելի կամ պակաս հստակությամբ իրականից ցածր մակարդակի է սահմանվում, այլ միայն հազվադեպ և գրեթե անկանխատեսելի ձևով: Ավելին, պետությունն իրեն հասու այլ հարմար եղանակներ ունի՝ հարկերից խուսափելու հարցում տարհամոզելու համար, այն դեպքերում, երբ այն լուրջ հիմքեր ունի կասկածելու, որ նման բան է տեղի ունենում. օրինակ՝ այն կարող է ձեռնարկել իրավական վարույթ՝ վերականգնելու համար չվճարված հարկերը և, եթե անհրաժեշտ է, նշանակել հարկային տուգանքներ: Այս ընթացակարգերի պարբերական օգտագործումը, զուգորդված քրեական վարույթ նախաձեռնելու վտանգի հետ, պետք է որ բավարար «զենք» լինի:

48. Դատարանը համարում է, որ համաչափության հարցը պետք է դիտարկվի նաև ցանկացած գնորդի կրած ռիսկի տեսանկյունից, որի էությունն այն է, որ գնորդը կարող է ենթարկվել առաջնահերթության իրավունքի կիրառման և, հետևաբար՝ պատժվել իր գույքի կորստով՝ բացառապես գնի հնարավոր ցածր գնահատումները կանխելու շահերից ելնելով: Առաջնահերթության իրավունքի իրացումը հանգեցնում է բավարար չափով լուրջ հետևանքների, որպեսզի այս միջոցառումը ձեռք բերի խստության մի որոշակի աստիճան: Վճարված գումարը (գումարած 10 տոկոս), ծախսերը և պայմանագրից բխող՝ բարեխղճորեն կատարված ծախքերը պարզապես փոխհատուցելը չի կարող բավարար լինել՝ փոխհատուցելու համար առանց որևէ խաբեության նպատակի ձեռքբերված գույքի կորուստը:

49. Նկատի առնելով նշված բոլոր գործոնները՝ դատարանը համարում է, որ, որպես առաջնահերթության իրավունքի կիրառման մի առանձին դիտարկվող զոհ, տկն Անտրիշը «կրել է անհատական և չափազանց ծանր բեռ», որը կարող էր համարվել իրավաչափ միայն այն դեպքում, եթե նա հնարավորություն ունենար (ինչը մերժվել էր) արդյունավետորեն վիճարկելու իր դեմ կիրառված միջոցառումը. «արդարացի հավասարակշռությունը, որին պետք է հասնել սեփականության իրավունքի պաշտպանության և ընդհանուր շահերից բխող պահանջների միջև», հետևաբար, խախտվել է (տե՛ս *mutatis*

mutandis «Սպորոնգը և Լյոնրոթն ընդդեմ Շվեդիայի» (Sporrong and Lönnroth v Sweden) գործով 1982 թ. սեպտեմբերի 23-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 52, էջ 28, պարբ. 73...

Դ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

50. Համապատասխանաբար, տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում (հինգ կողմ, չորս դեմ ձայներով) ...

Դատարանի վճիռը հստակորեն ամրապնդում է գույքի սեփականատերերի դիրքերը՝ նրանց հնարավորություն տալով պաշտպանել 1-ին հոդվածից բխող իրենց ընթացակարգային իրավունքները (ի հավելումն 6-րդ հոդվածով իրենց ինստիտուցիոնալ իրավունքների): Արդյո՞ք կարծում եք, որ դատարանի որոշման կայացման համար էական էր այն հանգամանքը, որ ոչ մի այլ մասնակից պետություն չի իրացնում առաջնահերթության նման լիազորություն անշարժ գույքի վաճառքի նկատմամբ (արվեստի գործերի վաճառքի դեպքում առաջնահերթության լիազորության մասին տե՛ս *«Բեյելերն ընդդեմ Իտալիայի» (Beyeler v Italy)* (վերը՝ էջ 976):

7 Մի բավական քաղաքական հենք ունեցող ունեզրկում մեծ պալատը համարեց 1-ին հոդվածի խախտում՝ *«Հունաստանի նախկին թագավորը և այլք ընդդեմ Հունաստանի» (The Former King of Greece and Others v Greece)* գործում, որի վճիռը կայացվեց 2000 թ. նոյեմբերի 23-ին: Դիմողներն էին՝ Հունաստանի նախկին թագավոր Կոնստանտինոսը (էդինբուրգի դուքսի զարմիկներից), նրա քույրը և մորաքույրը: Նախկին թագավորը գահ ելավ 1964 թ., երբ 24 տարեկան էր: 1967 թ. ապրիլին տեղի ունեցավ զինված հեղաշրջում, իսկ այդ տարվա դեկտեմբերին թագավորը լքեց Հունաստանը: Ռազմական դիկտատուրան միապետական ժողովրդավարությունը պահպանեց մինչև 1973 թվականը՝ չնայած թագավորի կամավոր աքսորին: 1973 թ. հունիսին դիկտատուրան մտադրվեց նախկին թագավորին և նրա ժառանգներին հայտարարել գահընկեց արված և հաստատեց նախագահական-խորհրդարանական հանրապետություն: Մի քանի ամիս անց դիկտատուրան ընդունեց մի օրենսդրական հրաման (թիվ 225/1973), համաձայն որի նախկին թագավորի և թագավորական ընտանիքի ողջ շարժական և անշարժ գույքը բռնագրավվեց: Որպես փոխհատուցում տրամադրվեց 120 միլիոն դրահմա, որի նկատմամբ պահանջը պետք է ներկայացվեր մինչև 1975 թ. վերջ (նախկին թագավորը և նրա ընտանիքը երբեք պահանջ չներկայացրեցին): 1974 թ. ռազմական դիկտատուրային փոխարինեց մի քաղաքացիական կառավարություն, և այդ տարվա դեկտեմբերին ընտրազանգվածը քվեարկեց խորհրդարանական հանրապետության օգտին: 1974-1979 թթ. նախկին թագավորի ունեցվածքի կառավարումն իրականացրեց մի խորհրդարանական կոմիտե: 1980-ական թվականների ընթացքում տեղի ունեցան բանակցություններ սոցիալիստական կառավարության և նախկին թագավորի միջև, որոնք վերաբերում էին թագավորի ունեցվածքին և դրան առնչվող հարկային պարտավորություններին: 1992 թ. պահպանողական կառավարությունը և նախկին թագավորը հասան համաձայնության, ըստ որի վերջինս որոշ հողակտորներ վաճառեց պետությանը՝ համաձայնեցված գումարի դիմաց, և համաձայնեց վճարել մի սահմանված գումար՝ իր (և իր ընտանիքի) հարկային պարտավորությունների դիմաց: 1993 թ. ընթացքում սոցիալիստները վերադարձան իշխանության և հաջորդ տարի ապահովեցին թիվ 2215/1994 օրենքի ընդունումը, որի համաձայն, ի թիվս այլոց, չեղյալ հայտարարվեց 1992 թ. կնքված համաձայնագիրը, և որը նախատեսում էր, որ պետությունը պետք է դառնար դիմողներին պատկանող ողջ ունեցվածքի սեփականատերը: Վերջիններս փորձեցին օրենքը վիճարկել Հունաստանի դատարաններում, սակայն հատուկ գերագույն դատարանը պաշտպանեց այդ միջոցառման սահմանադրականությունը: Ապա դիմողները գանգատ ներկայացրեցին հանձնաժողով՝ հայտարարելով, որ խախտվել է, ի թիվս այլոց, սեփականության իրենց իրավունքը, որը երաշխավորված է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով: Հանձնաժողովը (միաձայն) պաշտպանեց նրանց բողոքը, և գործն ուղարկվեց դատարան:

Կառավարությունը փորձեց փաստարկել, որ ունեցվածքը, որը, ըստ հայտարարությունների, պատկանում է դիմողներին, կապված է եղել պետության գլխի պաշտոնի հետ և, հետևաբար, դուրս է 1-ին հոդվածով պաշտպանված «գույք» հասկացության սահմաններից: Դատարանը նշեց իր կողմից

հաստատված դատական պրակտիկան, ըստ որի «գույք» հասկացությունն ունի ինքնուրույն իմաստ: Հաշվի առնելով դիմողների վկայություններն այն մասին, որ իրենց նախնիները ունեցվածքի մի մասը ձեռք են բերել իրենց մասնավոր ֆինանսական միջոցներով, բազմաթիվ անգամներ հողակտորների սեփականության իրավունքները փոխանցել են իրենց ընտանիքի տարբեր անդամների և երրորդ կողմերի, իսկ 1974-1996 թթ. ներկայացրել են եկամուտների հայտարարագրեր և այդ ունեցվածքի համար վճարել հարկեր, դատարանի մեծ պալատը վճռեց, որ.

65….չնայած դատարանն ընդունում է, որ թագավորական ունեցվածքը շատ առումներով վայելել է հատուկ կարգավիճակ, այն փաստը, որ Հունաստան պետությունն ինքը շարունակաբար դրան վերաբերվել է որպես մասնավոր սեփականության և չի մշակել կանոնների մի ընդհանուր համախումբ, որը կկառավարեր այդ ունեցվածքի կարգավիճակը, դատարանին թույլ չի տալիս եզրակացնել, որ այն ունեցել է *sui generis* (իր տեսակի մեջ եզակի) և քվազիհանրային բնույթ, ինչից կհետևեր, որ այն երբեք չի պատկանել նախկին թագավորական ընտանիքին:

66. Այդ պատճառով դատարանն այն կարծիքին է, որ համապատասխան ունեցվածքը պատկանել է դիմողներին՝ որպես մասնավոր անձանց, այլ ոչ թե որպես թագավորական ընտանիքի անդամների. հետևաբար, վիճահարույց հողակտորները հանդիսացել են «գույք»՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նպատակներից ելնելով, որը կիրառելի է խնդրո առարկա գործի նկատմամբ:

Դատարանը նաև որոշեց, որ թիվ 2215/1994 օրենքը հանգեցրել է դիմողների ունեցվածքից «զրկման», ինչը տեղավորվում է 1-ին հոդվածի երկրորդ կանոնի շրջանակում: Չնայած դիմողների այն պնդման, որ թիվ 2215 օրենքը եղել է կամանայական և խտրական միջոց, մեծ պալատը, ընդունելով Հունաստանի հատուկ գերագույն դատարանի վճիռը, որով հաստատվել էր այս միջոցի սահմանադրականությունը, վճռեց, որ օրենքը բավարարել է 1-ին հոդվածով նախատեսված պայմանը, որ ունեցվածքից զրկումը «նախատեսված է օրենքով»:

Դատարանի քննած հաջորդ հարցն այն էր, թե արդյոք դիմողների ունեցվածքի առգրավումը հետապնդե՞լ է օրինական նպատակ՝ «հանուն հանրային շահի»: Կառավարության կողմից հիշատակվել են երկու հիմնական նպատակներ: Առաջին. բնապահպանական և հնագիտական նկատառումներ՝ կապված այդ հողատարածքներում գտնվող հատուկ վայրերի պաշտպանության հետ: Երկրորդ. Հունաստանի՝ որպես հանրապետության սահմանադրական կարգը պահպանելու հանրային շահը: Կրկին, հետևելով իր նախադեպային իրավունքին, դատարանը հայտարարեց, որ.

87….սեփական հասարակության և դրա կարիքների մասին անմիջական գիտելիքներ ունենալու շնորհիվ՝ պետությունների ազգային իշխանությունները սկզբունքորեն ավելի լավ դիրքերում են, քան միջազգային դատավորը՝ գնահատելու համար, թե ինչն է «հանուն հանրային շահի»: Կոնվենցիայով սահմանված պաշտպանության համակարգով, այսպիսով, ազգային իշխանություններն են, որ պետք է իրականացնեն նախնական գնահատում՝ հանրային մտահոգության մի այնպիսի հիմնախնդրի գոյության, որը հիմք է տալիս կիրառելու ունեցվածքի առգրավման միջոցառումներ: Այստեղ, ինչպես այլ բնագավառներում, որոնց վրա տարածվում են կոնվենցիայով սահմանված իրավական երաշխիքները, ազգային իշխանությունները, համապատասխանաբար, օգտվում են հայեցողության որոշակի սահմանից: Ի հավելումն, «հանրային շահի» գաղափարը անհրաժեշտաբար ընդգրկուն է: Մասնավորապես, ունեցվածքի առգրավման մասին օրենքներ ընդունելու որոշումը, որպես կանոն, ընդգրկում է քաղաքական, տնտեսական և սոցիալական հարցերի դիտարկում: Դատարանը, բնական համարելով այն, որ սոցիալական և տնտեսական քաղաքականություն իրականացնելու հարցում օրենսդիր մարմնին տրված՝ հայեցողության սահմանը պետք է լինի լայն, հարգելու է օրենսդիր մարմնի որոշումն այն մասին, թե ինչն է «հանուն հանրային շահի», բացառությամբ եթե այդ որոշումն ակնհայտորեն զուրկ է ողջամիտ հիմնավորումից (տե՛ս *«Ջեյմսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (James and Others v the United Kingdom)* գործով 1986 թ. փետրվարի 21-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 98, էջ 32, պարբ. 46): Նույնն անհրաժեշտաբար, եթե ոչ *a fortiori* վերաբերում է տվյալ երկրի սահմանադրական կարգի այնպիսի հիմնարար փոփոխությունների, ինչպիսին է անցումը միապետությունից հանրապետություն:

Մեծ պալատը որևէ վկայություն չգտավ՝ սատարելու համար կառավարության հայտարարած առաջին նպատակը, այն է՝ բնապահպանական/հնագիտական: Այնուամենայնիվ, դատարանը հավանություն տվեց երկրորդ նպատակին. «88. … Դատարանը չի կասկածում, որ Հունաստան պետության համար անհրաժեշտ էր լուծել մի խնդիր, որը նա համարել է վնասակար իր՝ որպես հանրապետության համար»:

1-ին հոդվածի՝ գնահատման ենթակա վերջին բաղադրիչն այն էր, թե արդյոք դիմողների ունեզրկումը պահպանե՞լ է համայնքի ընդհանուր շահերի և դիմողների հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռությունը: Այս խնդրի հատկորոշումը կենտրոնացավ դիմողների այն գանգատի շուրջ, որ թիվ 2215/1994 օրենքը չի նախատեսել իրենց վճարելիք որևէ փոխհատուցում: Դատարանը գտավ, որ.

89.…Համապատասխան օրենսդրությամբ փոխհատուցման պայմանները էական նշանակություն ունեն գնահատելիս, թե արդյոք վիճարկվող միջոցառումը հարգո՞ւմ է պահանջվող արդարացի հավասարակշռությունը և, մասնավորապես, արդյոք անհամաչափ ծանր բե՞ռ է դնում դիմողների ուսերին: Այս կապակցությամբ դատարանն արդեն իսկ որոշել է, որ ունեցվածքի առգրավումն առանց այնպիսի գումարի վճարման, որը ողջամիտ հարաբերակցության մեջ կլինի դրա արժեքի հետ, որպես կանոն, անհամաչափ միջամտություն է, և փոխհատուցման լիակատար բացակայությունը կարող է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով արդարացվող համարվել միայն բացառիկ հանգամանքներում (տե՛ս *«Սուրբ վանքերն ընդդեմ Հունաստանի» (Holy Monasteries v Greece)* գործով 1994 թ. դեկտեմբերի 9-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 301-A, էջ 35, պարբ. 71):

90. Դիտարկվող գործով, փոխհատուցում նախատեսող որևէ դրույթ թիվ 2215/1994 օրենքում գոյություն չունի: Հաշվի առնելով այն փաստը, որ արդեն հաստատվել է, որ խնդրո առարկա միջամտությունը բավարարել է օրինական լինելու պահանջը և կամայական չի եղել, փոխհատուցման բացակայությունը դիմողների ունեզրկումը *eo ipso* (այդպիսով) սխալ չի դարձնում (տե՛ս *a contrario* (ընդհակառակը), *«Պապամիխալոպուլոսն ընդդեմ Հունաստանի» (Papamichalopoulos and Others v Greece)* (հոդված 50) գործով 1995 թ. հոկտեմբերի 31-ին կայացված վճիռը, շարք A, թիվ 330-B, էջ 59-60, պարբ. 36): Հետևաբար, հարկ է դեռ ուսումնասիրել, թե արդյոք իրավաչափ էքսպրոպրիացիայի համատեքստում դիմողները ստիպված են եղել կրել անհամաչափ և չափազանց ծանր բեռ:

Կառավարությունը պնդեց, որ դիմողների ունեզրկումն առանց փոխհատուցման վճարման տեղավորվել է «բացառիկ հանգամանքներ» կատեգորիայի սահմաններում, որովհետև դիմողները (և նրանց նախնիները) այդ ունեցվածքը ձեռք էին բերել որպես իրենց թագավորական պարտականությունների բաղադրիչ և նախկին թագավորական կալվածքների համար նրանց տրամադրվել էին արտոնություններ (ներառյալ՝ հարկերից ազատումը): Այսուհանդերձ, դատարանը չընդունեց այս պնդումը.

98. Դատարանը համարում է, որ կառավարությունը չի կարողացել համոզիչ բացատրություն տալ այն մասին, թե ինչու Հունաստանի իշխանությունները որևէ փոխհատուցում չեն վճարել դիմողներին՝ նրանց ունեցվածքը վերցնելու դիմաց: Դատարանն ընդունում է, որ Հունաստանը կարող էր, ազնիվ նպատակներից ելնելով, համարել, որ բացառիկ հանգամանքներն արդարացրել են փոխհատուցման բացակայությունը, սակայն այս գնահատականը օբյեկտիվորեն հիմնավորված չէ:

Առաջին հերթին դատարանը մատնաշում է, որ առգրավված ունեցվածքի առնվազն մի մասը գնվել է դիմողների սեփականատեր նախնիների կողմից և վճարվել է նրանց մասնավոր ֆինանսական միջոցներից: Ավելին, ունեցվածքի վերջին առգրավման ժամանակ, 1973 թ., փոխհատուցում տրամադրվել է: Հետևաբար, դատարանը գտնում է, որ դիմողներն ունեցել են օրինական ակնկալիք, որ Հունաստանի օրենսդիր մարմինը կփոխհատուցի իրենց ունեցվածքը վերցնելու դիմաց:

Ի հավելումն՝ ինչ վերաբերում է կառավարության այն փաստարկին, որ փոխհատուցման հարցին եղել է անուղղակի անդրադարձ, դատարանը նախ նշում է, որ թիվ 225/1973 օրենսդրական ակտով նախատեսված փոխհատուցումը տվյալ գործի հետ առնչություն չունի, այն դեպքում, երբ միջամտության միակ օրենսդրական հիմքը եղել է թիվ 2215/1994 օրենքը, որի դեմ դիմողները բողոքում են: Ի հավելումն՝ այն հանգամանքները, որոնց հղում է կատարում կառավարությունը, չեն կարող համարվել փոխհատուցման վճարում: Այս կապակցությամբ դատարանը համաձայն է դիմողների հետ, երբ նրանք պնդում են, որ խնդրո առարկա էքսպրոպրիացիայի համատեքստում գոյություն չունեն երկուստեք կամ երկկողմանի պարտքեր, որոնք պետք է փոխադարձաբար մարվեն: Թագավորական ընտանիքին անցյալում տրամադրված արտոնությունները կամ հարկերից ազատումը և նախկին թագավորական ընտանիքի պարտքերի չեղյալ հայտարարումը անմիջական կապ չունեն համաչափության խնդրի հետ, սակայն հնարավոր է, որ հաշվի առնվեին, որպեսզի կատարվեր կոնվենցիայի հոդված 41-ի համաձայն՝ արդարացի բավարարում ստանալու համար դիմողների պահանջների ճշգրիտ գնահատում:

99. Հետևաբար, դատարանն այն կարծիքի է, որ դիմողների ունեցվածքի առգրավման դիմաց որևէ փոխհատուցման բացակայությունը խախտում է, ի վնաս դիմողների, ունեցվածքի պաշտպանության և հանրային շահերից բխող պահանջների միջև արդարացի հավասարակշռությունը:

Հետևաբար, տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

Չնայած տասնհինգ դատավոր որոշեց, որ տեղի է ունեցել 1-ին հոդվածի խախտում, երկուսը (դատավորներ Կումանտոսը և Զուպանչիկը) անհամաձայնություն հայտնեցին: Նրանք համարում էին, որ 1-ին հոդվածը կիրառելի է մասնավոր գույքի նկատմամբ, այլ ոչ թե «այնպիսի գույքի նկատմամբ, որը հատկացվել է որոշակի անձանց՝ կապված վերջիններիս հանրային պարտականությունների հետ, նույնիսկ այն դեպքերում, երբ այդպիսի գույքը պահպանում է որոշ հատկություններ, որոնք կարգավորվում են մասնավոր իրավունքի միջոցով»: Նրանց կարծիքով, այն փաստերը, որ (1) դիմողների կալվածքների մի զգալի մասը պետական մարմինների կողմից տրված է եղել նրանց նախնիներին, (2) այս գույքը ենթակա է եղել հարկման և ժառանգման արտոնյալ ռեժիմի, և (3) քաղաքական բարենպաստության ժամանակներում այս գույքի նկատմամբ թագավորական ընտանիքի իրավունքները հաստատվել են հատուկ օրենքներով, նշանակել են, որ այդ կալվածքները դուրս են եղել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պաշտպանության դաշտից:

Իրավագիտական տեսանկյունից վերը բերված վճիռը նշանակալի կարևորություն ունի, քանի որ հաստատում է 1-ին հոդվածով գույքի ինքնուրույն հայեցակարգի լայն ընդգրկումը: Մեծ պալատը պատրաստակամ էր՝ ընդունելու, որ անշարժ գույքը տեղավորվում է այս հայեցակարգի սահմաններում նույնիսկ այն դեպքերում, երբ այն թագավորական ընտանիքի կողմից ձեռք է բերվել/պահվել է իրավականորեն արտոնյալ պայմաններում: Չնայած դատարանը, հետևելով հաստատված նախադեպային իրավունքին, Հունաստանի օրենսդիր մարմնին օժտեց հայեցողության լայն սահմանով՝ գնահատելու համար, թե արդյոք գոյություն է ունեցել «հանրային շահ», որն արդարացրել է դիմողներին իրենց կալվածքներից զրկելը, դատարանը մերժեց կառավարության կողմից որպես իրավաչափ ներկայացվող նպատակներից մեկը: Կառավարության անկարողությունը՝ ներկայացնել օժանդակ ապացույցներ այն մասին, որ ունեզրկումն ուղղված է եղել այդ կալվածքների սահմաններում գտնվող բնապահպանական/հնագիտական վայրերի պահպանությանը, նվազեցրեց այս՝ ըստ պնդումների՝ հանրային շահից բխող նպատակի արժանահավատությունը: Այսպիսով, նույնիսկ այն դեպքերում, երբ պետությունները կոնվենցիայի համաձայն ունեն գործողությունների զգալի ազատություն, դատարանը ապահովելու է, որ իր իրականացրած եվրոպական վերահսկողությունը զուտ տեսական դեր չէ, այլ մի գործնական երաշխիք՝ ընդդեմ ազգային իշխանությունների կողմից կամայական վարքի: Գանգատարկուների ունեցվածքի առգրավման հիմքային քաղաքական համատեքստը բացահայտվել է «Թայմզ» [The Times] լրագրի կողմից: Ըստ Ալան Համիլթոնի՝ «Թագավոր Կոնստանտինի հողերը 1994 թ. առգրավվել են Կոստաս Միցոտակիսի կառավարության կողմից՝ զայրացած այն բանից, որ նախկին միապետը և նրա ընտանիքը ոտք էին դրել Հունաստան՝ Սալոնիկի օդանավակայանում, որպեսզի ուղևորություն իրականացնեին հունական կղզիներով» (2000 թ. նոյեմբերի 24): Մի առանձին վճռով, կայացված 2002 թ. նոյեմբերի 28-ին, մեծ պալատը դիմողներին նշանակեց 13.2 միլիոն եվրո՝ որպես նրանց կրած դրամական վնասների փոխհատուցում (տե՛ս վերը՝ էջ 919 [հոդվ. 41]):

8 Պալատում ձայները զգալիորեն բաժանվել էին այն հարցի շուրջ, թե արդյոք անշարժ գույքի զարգացմամբ զբաղվող մի ընկերություն զրկվել է իր գույքից՝ յուրացմամբ սեփականատիրության մասին Անգլիայի օրենքի կիրառման արդյունքում՝ *«Ջ.Ա. Փայ» (Օքսֆորդ) ՍՊԸ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» [J.A. Pye (Oxford) Ltd v United Kingdom)* գործով 2005 թ. նոյեմբերի 15-ին կայացված վճռով: Գանգատարկու ընկերությունը Բերքշիրում գտնվող քսաներեք հեկտար գյուղատնտեսական հողի գրանցված սեփականատերն էր: Մինչև 1983 թ. դեկտեմբեր դիմողը մի հարևան ֆերմերի թույլատրել է զբաղեցնել այդ հողը և այն որպես արոտավայր օգտագործելու: Այդ ամիս դիմողի անունից գործող մի դատական փորձագետ գրավոր դիմել է ֆերմերին և տեղեկացրել, որ նա պարտավոր է ազատել հողը: 1984 թ. հունվարին դիմողը մերժել է ֆերմերի խնդրանքը՝ երկարաձգել արոտավայրի մասին համաձայնագիրը, քանի որ դիմողը ցանկացել է դիմել՝ նախագծման թույլտվություն ստանալու համար, որպեսզի զարգացնի հողակտորը: Այսուհանդերձ, ֆերմերը շարունակել է զբաղեցնել արոտավայրը (1984 թ. հունիսին դիմողն համաձայնել է թույլ տալ, որ ֆերմերը հնձի և օգտագործի այդ հողի վրա աճած խոտը՝ վճարման դիմաց): Գանգատարկուն չի պատասխանել ֆերմերի խնդրանքներին՝ երկարաձգել արոտավայրի մասին համաձայնագիրը: 1984 թ. սեպտեմբերից սկսած՝ ֆերմերը շարունակել է զբաղեցնել և օգտագործել դիմողի հողը՝ առանց

վերջինիս թույլտվության: 1997 թ. ֆերմերը Հողային ռեգիստրում գրանցել է նախազգուշացում՝ ընդդեմ հողի նկատմամբ դիմողի սեփականության իրավունքի, որն ինքը ձեռք է բերել յուրացմամբ սեփականատիրության միջոցով (1980 թ. ընդունված՝ «Սահմանափակման մասին» օրենքը և 1925 թ. ընդունված՝ «Հողի գրանցման մասին» օրենքը նախատեսում էին, որ յուրացմամբ սեփականատիրության տասներկու տարիներից հետո ենթադրվում է, որ հողի գրանցված տերը հողը պահում է ապօրինաբար այն զբաղեցնողի հայեցողությամբ): Գանգատարկու ընկերությունը վիճարկեց ֆերմերի պահանջը (ընկերությունը պնդում էր, որ հողն արժե առնվազն 10 միլիոն ֆունտ ստեռլինգ) ներպետական դատարաններում: Ի վերջո, Լորդերի պալատը որոշում ընդունեց ի նպաստ ֆերմերի: Լորդ Բինգեմը խիստ քննադատաբար արտահայտվեց յուրացմամբ սեփականատիրության մասին օրենքի գործողության վերաբերյալ, ինչպես այն կիրառվել է դիմող ընկերության նկատմամբ (2002 թ. ընդունված՝ «Հողի գրանցման մասին» օրենքը ընդլայնեց ապօրինի զբաղեցնողների դեմ գրանցված հողատերերի ընթացակարգային և բովանդակային պաշտպանությունը, սակայն այս օրենքը հետադարձ ուժ չուներ): Գանգատարկուն չէր կարող հիմնվել 1998 թ. ընդունված՝ «Մարդու իրավունքների մասին» օրենքի վրա, քանի որ այն նույնպես հետադարձ ուժ չուներ: Գանգատարկուն բողոք ներկայացրեց Ստրասբուրգ՝ հայտարարելով, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում: Պալատն աննշան մեծամասնությամբ (չորս կողմ և երեք դեմ ձայներով) գտավ, որ պատասխանող պետությունն է պատասխանատու դիմողի ունեզրկման համար, որովհետև օրենսդրությունն է, որ տարածքն ապօրինաբար զբաղեցնողին իրավունք է տվել՝ ստանալ հողի նկատմամբ սեփականություն: Այնուհետև մեծամասնությունը գտավ, որ եթե ընթացակարգային պաշտպանության բացակայությունը (այսինքն՝ գրանցված հողատերերին օրենքով նախատեսված իրազեկում այն մասին, որ տարածքն ապօրինաբար զբաղեցնող մեկը փորձում է յուրացմամբ սեփականատիրության պահանջ ներկայացնել) զուգակցվում է տարածքներն ապօրինաբար զբաղեցնողների կողմից գրանցված հողատերերին փոխհատուցում վճարելու որևէ իրավական պարտականության բացակայությամբ, ապա դրանից բխող չափազանց ծանր բեռը, որը, համաձայն օրենսդրության, կրում է դիմողը, անարդարացի հավասարակշռություն է հանրային շահից բխող պահանջների և դիմողի՝ սեփական գույքն անարգել օգտագործելու իրավունքի միջև: Հետևաբար, պետությունը խախտել է 1-ին հոդվածը:

Դատավորներ Մարուստեն, Գաոլիչկին և Բոռեգո Բորեգոն հրապարակեցին միասնական չհամընկնող կարծիք, որում նրանք արտահայտեցին հետևյալ տեսակետը.

2. Այս գործում իրական «մեղավորը», եթե ընդհանրապես «մեղք» եղել է, դիմող ընկերություններն են, այլ ոչ թե կառավարությունը: Պետք է միշտ հիշել, որ դիմող ընկերությունը մասնավոր անձ չի եղել կամ էլ մի սովորական ընկերություն, որը ենթադրաբար ունեցել է սահմանափակ գիտելիքներ անշարժ գույքը կարգավորող համապատասխան օրենսդրության վերաբերյալ: Դրանք անշարժ գույքի զարգացման մասնագիտացված, պրոֆեսիոնալ ընկերություններ էին, և նման ընկերությունն ունեցել է կամ պարտավոր է եղել ունենալ լիարժեք գիտելիք համապատասխան օրենսդրության և առնչվող պարտականությունների վերաբերյալ: ... Կառավարությունը ուրիշ ոչինչ չի արել, բացի մի մեխանիզմ գործարկելուց, որը մի հարաբերականորեն երկարատև ժամանակահատվածի վերջում, ճշգրտում է հողի սեփականատիրությունը՝ արտացոլելու համար այն փաստը, որ յուրացմամբ սեփականատիրությանն ուղղված որևէ գործողություն ժամանակային արգելք ունի:

Տիրապետումը (սեփականատիրությունը) իր մեջ կրում է ոչ միայն իրավունքներ, այլ նաև մշտապես՝ որոշ պարտականություններ: Համապատասխան օրենսդրության նպատակը եղել է հողատիրոջը աշխատասեր դարձնելը, գույքը պաշտպանելը և «սեփական իրավունքների վրա չքնելը»... Այս կոնկրետ դեպքում պարտականությունը (ոչինչ չանել, քան 12 տարվա ընթացքում վերատիրապետում ստանալուն ուղղված գործողություն նախաձեռնելը) չի կարող համարվել չափազանց կամ ոչ ողջամիտ:

Մինչ մեծամասնությունն ակնհայտորեն տպավորվել էր որոշ տեղացի դատավորների և իրավական հանձնաժողովի կողմից նախկին իրավական ռեժիմի հասցեին հնչած քննադատությունից, արդյոք կարծո՞ւմ եք, որ դիմող ընկերությունը տուժել է իր գույքային իրավունքների ոչ համաչափ կորստից: 2006 թ. ապրիլին մեծ պալատը գործն ընդունեց 43-րդ հոդվածով վերաքննության:

Երրորդ կանոնը. պետությունների՝ սեփականության օգտագործումը վերահսկելու իրավունքը

«Շասանյուն ընդդեմ Ֆրանսիայի» (Chassagnou v France) (1999) 29 EHRR 615
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Նախքան 1789 թ. Ֆրանսիական հեղափոխությունը, միայն ազնվականությունն ուներ որս անելու իրավունք: Հեղափոխությունից հետո այդ իրավունքը տրվեց հողի սեփականատերերին: Այդուհանդերձ, նախադեպային իրավունքով սահմանվեց լռելյայն համաձայնության գաղափարը, որը որսորդներին այլոց սեփականությունը հանդիսացող հողատարածքներում որս անելու իրավունք էր վերապահում, պայմանով, եթե տվյալ սեփականատերը հստակ կերպով դեմ չի արտահայտվել դրան (օրինակ՝ իր հողատարածքում «մասնավոր որսատեղի» ցուցանակներ տեղադրելով): Ֆրանսիայի հարավում, որտեղ սեփականություն հանդիսացող հողակտորները հիմնականում փոքր էին, լռելյայն համաձայնության տեսությունը հանգեցրեց որսորդության գրեթե անսահմանափակ ազատության (այս երևույթը ստացավ հանրային որսորդություն [*chasse banale*] անվանումը): Արդյունքը եղավ փաստացի չկարգավորվող որսորդությունը և մի շարք տարածաշրջաններում տարբեր որսատեսակների վերացումը: Որպես հետևանք՝ 1964 թ. ընդունվեց «Լուա Վերդեյը» *[Loi Verdeille]* (Օրենք թիվ 64-696): Սույնով նախատեսվում էր արտոնված որսորդության համայնքային միավորումների (*associations communales de chasse agrees* - ACCA) ստեղծում՝ որսի տեխնիկական կազմակերպման, որսապաշարների պահպանության և վնասատուների ոչնչացման վիճակը բարելավելու նպատակով: Սույն օրենքով՝ սահմանված չափսերից փոքր հողատարածքների սեփականատերերը (սահմանված չափսերը տարբեր *դեպարտամենտներում* տարբեր էին) պարտավորվում էին դառնալ իրենց համայնքում ստեղծված որևէ ACCA-ի անդամ և նրան փոխանցել իրենց հողատարածքի նկատմամբ որսորդական իրավունքները՝ համայնքային որսատեղիների ստեղծման նպատակով: 1996 թ. դրությամբ՝ ACCA-ներ ստեղծվել էին 390 *դեպարտամենտների* 851 համայնքներում: Գանգատարկուները ACCA-ի սուբյեկտ հանդիսացող փոքր հողատարածքների սեփականատերեր էին, ովքեր, բարոյական սկզբունքներից ելնելով, առարկում էին որսորդության դեմ: Ներպետական դատարանները մերժեցին թույլ տալ, որ նրանք իրենց հողատարածքում դադարեցնեն որսորդությունը: Հողատերերը գանգատ ներկայացրեցին հանձնաժողովին՝ պնդելով, ի թիվս այլոց, որ խախտվել է 1-ին հոդվածը (վերը՝ էջ 809-810-ում արդեն իսկ քննարկվել է 11-րդ հոդվածով նրանց ներկայացրած գանգատը): Քսանյոթ կողմ, հինգ դեմ ձայներով՝ հանձնաժողովը որոշեց, որ տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:

Ա. ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՈԴՎԱԾ 1-Ի ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

71. Դատարանի առջև կանգնածները համաձայնեցին, որ հողատարածքում որսորդական իրավունքների պարտադիր փոխանցումը ACCA-ին, համաձայն Loi Verdeille-ի, պետք է մեկնաբանվեր՝ ելնելով թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունից, որը պետությանն է վերապահում սեփականության օգտագործումը ընդհանուր շահերից ելնելով վերահսկելու նպատակով այնպիսի օրենքների ընդունման իրավունքը, ինչպիսիք անհրաժեշտ կհամարի: Մյուս կողմից՝ նրանք համաձայն չէին այն հարցում, թե արդյոք փաստացի տեղի է ունեցել միջամտություն դիմողների՝ իրենց սեփականությունն օգտագործելու իրավունքին:

72. Գանգատարկուները ներկայացրեցին, որ իրենց հողատարածքի նկատմամբ որոսորդական իրավունքները, իրենց կամքին հակառակ և առանց փոխհատուցման կամ քննարկման, որևէ ACCA-ի հանձնելը հանդիսացել է սեփական գույքն օգտագործելու իրենց իրավունքի ոչ սովորական ոտնահարում, առաջին հերթին այն պատճառով, որ նրանք պարտավոր են հանդուրժել որսորդների ներկայությունն իրենց հողատարածքում, միևչդեռ, բարոյական նկատառումներից ելնելով, իրենք դեմ են որսորդությանը, և երկրորդ՝ որ նրանք անկարող էին իրենց պատկանող հողատարածքն օգտագործել բնական արգելոց ստեղծելու նպատակով, ուր որսը արգելված կլիներ:

73. Կառավարությունը, մյուս կողմից, ներկայացրեց, որ դիմողի սեփականության իրավունքին միջամտությունը չնչին է, քանի որ ըստ էության նրանք չեն զրկվել սեփական գույքն օգտագործելու՝ իրենց իրավունքից: Loi Verdeille-ը չի վերացրել որսի իրավունքը, որը սեփականության իրավունքի բաղադրիչներից մեկն է, այլ միայն նախատեսել է մեղմել հողի սեփականատերերի կողմից այդ իրավունքի կիրառման բացառիկությունը: Միակ բանը, որ դիմողները կորցրել էին, իրենց հողատարածքում այլ մարդկանց որսորդությունն արգելելու իրավունքն էր: Սակայն որս արվում էր միայն տարվա վեց ամիսներին և Գյուղական տարածքների մասին օրենսգրքի հոդված L. 222-10-ը հստակորեն նախատեսում է, որ ցանկացած բնակավայրից 150 մ շառավղի շրջանակներում (7 հա ընդհանուր տարածքով) ACCA-ի անդամները չպետք է որս անեն:

74. Դատարանը կարծում է, որ թեպետ դիմողները չեն զրկվել իրենց սեփականությունն օգտագործելու, վարձակալությամբ տրամադրելու կամ վաճառելու իրավունքից, սակայն իրենց հողատարածքի նկատմամբ իրենց որսորդական իրավունքների հարկադիր փոխանցումը որևէ ACCA-ի զրկում է նրանց որսի իրավունքից օգտվելու հնարավորությունից, ինչը ուղղակիորեն կապված է սեփականության իրավունքի հետ, ինչպես նրանք հարմար կգտնեն: Սույն գործում դիմողները չեն ցանկանում որս անել իրենց սեփական հողատարածքում և առարկում են այն փաստի դեմ, որ ուրիշները կարող են գալ իրենց հողատարածք և որս անել: Սակայն, բարոյական նկատառումներով որսին դեմ լինելով հանդերձ, նրանք պարտավոր են ամեն տարի իրենց հողատարածքում հանդուրժել զինված մարդկանց և որսաշների ներկայությունը: Օգտագործելու իրավունքի ազատ իրացման այս սահմանափակումը աներկբա միջամտություն է դիմողների կողմից, որպես սեփականատերեր, իրենց իրավունքներից օգտվելու նկատմամբ: Հետևաբար, 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը այս գործում կիրառելի է:

Բ. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ

75. Վաղուց հաստատված նախադեպային իրավունք է այն, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը պետք է մեկնաբանվի՝ ելնելով հոդվածի առաջին նախադասության մեջ սահմանված սկզբունքից: Հետևաբար, միջամտությունը պետք է «արդարացի հավասարակշռություն» պահպանի համայնքի ընդհանուր շահերից բխող պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև: Այս հավասարակշռության ձգտումը արտացոլված է 1-ին հոդվածի կառուցվածքում՝ որպես ամբողջություն, և հետևաբար՝ նաև դրա երկրորդ պարբերությունում. կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև պետք է լինի հիմնավոր համաչափություն: Որոշելիս, թե արդյոք այս պահանջը բավարարված է, դատարանը ճանաչում է, որ պետությունը տիրապետում է հայեցողության լայն սահմանի՝ ինչպես ի կատար ածման միջոցների կապակցությամբ, այնպես էլ որոշելիս, թե արդյոք հարկադիր կատարման հետևանքներն արդարացվա՞ծ են ընդհանուր շահի տեսանկյունից՝ համաձայն խնդրո առարկա օրենքի առարկայի...

1. ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

76. Գանգատարկուները վիճարկեցին Loi Verdeille-ի նպատակի օրինականությունը: Նրանք ներկայացրեցին, որ այն ընդունվել է՝ ելնելով ոչ թե ընդհանուր շահից, այլ միայն ի շահ մարդկանց առանձին խմբի, մասնավորապես՝ որսորդների, քանի որ օրենքը սահմանում է, որ ACCA-ների նպատակն է «բարելավել որսի տեխնիկական կազմակերպումն այնպես, որ որսը [հնարավոր լինի] իրականացնել ավելի գոհացուցիչ եղանակով»: Օրենքը վայրի կենդանական աշխարհը դիտարկում է միայն որպես «որս», այլ կերպ ասած՝ դիտարկում է կենդանական աշխարհի այն տեսակները, որոնք ավանդաբար որսի թիրախ են: Ինչ վերաբերում է վնասատուների ոչնչացմանը, որին ևս, ըստ նախատեսվածի, պետք է նպաստեր ACCA-ների ստեղծումը, դիմողները ներկայացրեցին, որ անգամ այն վայրերում, ուր ACCA է կազմավորվել, վնասատուներին վերացնելու իրավունքը բացառապես հողի սեփականատիրոջ մենաշնորհն է՝ այն անձանց, ում պատկանում է տարածքը, կամ վարձակալող գյուղատնտեսներին (Գյուղական տարածքների մասին օրենսգրքի հոդված L.227-8) և ACCA-ին կարող է միայն տրամադրվել անհրաժեշտության դեպքում:

77. Այնուհետև դիմողները ներկայացրեցին, որ Loi Verdeille-ի իրականացման մանրամասն կանոնները պարզ դարձրեցին, որ առկա չէ որևէ արդարացուցիչ ընդհանուր շահ: Հողատարածքի նկատմամբ որսորդական իրավունքների հարկադիր փոխանցումը որսորդների միավորումներին Ֆրանսիայի օրենսդրության մեջ այն սկզբունքին արված վերապահում էր, համաձայն որի՝ ոչ ոք իրավունք չունի մեկ այլ անձի հողատարածքում որս անել՝ առանց տիրոջ համաձայնության, իրավունք, որը նաև ենթադրում է, ըստ դիմողների պնդման, որս չանելու իրավունք: Loi Verdeille-ը, սակայն, արհամարհեց անձնական համոզմունքները, քանի որ այն նույնիսկ չդիտարկեց այն հնարավորությունը, որ կարող են լինել հողի սեփականատերեր, ովքեր չեն ցանկանա որս անել: Եվ, վերջապես, որսապաշարների արդյունավետ շահագործման նկատառումով բնավ կարիք չկար գնման առաջնահերթ իրավունք ընձեռող որևէ մեխանիզմի, ինչպիսին ներդրվում է Loi Verdeille-ով: Նրանք պնդեցին, որ ուժի մեջ մտնելուց ավելի քան երեսուն տարի անց Ֆրանսիայի 36.200

քաղաքային համայնքներից միայն մոտ 9.200-ն ունեին ACCA-ներ, որոնցից մոտավորապես 8700-ը ստեղծվել են պարտադիր ծրագրի ներդրման արդյունքում, և ընդամենը 500-ն են ձևավորվել կամավորության սկզբունքով՝ հողի սեփականատերերի մեծամասնության համաձայնությամբ: Loi Verdeille-ը կիրառելի չէր երեք *դեպարտամենտներում*՝ Ստորին Ռեն, Վերին Ռեն և Մոսել կամ պետությանը կամ տեղական և տարածքային իշխանություններին պատկանող հանրային սեփականության նկատմամբ: Ըստ դիմողների՝ այն փաստը, որ ծրագիրը համընդհանուր կիրառություն չի ունեցել, ապացուցում է, որ գոյություն չունի ընդհանուր շահ. ACCA-ների գոյության նպատակը պարզապես որսորդություն իրականացնելն է՝ որպես ժամանցի միջոց: Նրանք ներկայացրեցին, որ Ֆրանսիայում որսորդների շահախումբը, թեպետև կազմում է բնակչության ընդամենը 3 տոկոսը, սակայն պարտադրեց իր քաղաքականությունը և այն առաջ մղեց այնպիսի օրենքների միջոցով, որոնք խախտում են բնության նկատմամբ ավելի հոգատար՝ Եվրոպական համայնքային օրենքը և միջազգային իրավունքի նորմերը: Որպես վերջինիս ապացույց՝ նրանք մեջբերեցին այն փաստը, որ Ֆրանսիան միակ եվրոպական երկիրն է, որը թույլատրել է չվող թռչունների որսը փետրվար ամսին՝ հակառակ Եվրոպական տնտեսական համայնքի (ԵՏՀ) Արդարադատության դատարանի վճռի, Պետական խորհրդի 1995-ի մարտի 10-ի վճռի և ԵՏՀ-ի հանճնարարականը կիրառող երկրի բոլոր վարչական դատարանների ավելի քան հարյուր վճիռների:

78. Կառավարությունը փաստարկեց, որ պարզունակ կլիներ Loi Verdeille-ի ընդհանուր հետաքրքրությունը գնահատել միայն զուտ որսորդների օգտի համար որսորդությունը բարելավելու միջոց լինելու տեսանկյունից: Վայրի կենդանական աշխարհի պաշարները և հարգանքը սեփականության նկատմամբ, և ցանքատարածքները՝ այս ամենը շահել են որսորդության պատշաճ կազմակերպումից: Կառավարությունը մատնանշեց, որ Ֆրանսիայի գյուղական վայրերում ավանդաբար որսորդությունը շատ ամուր արմատներ ունեցող զբաղմունք է: Այդուհանդերձ, օրենքը, որ ոչ ոք իրավունք չունի որս անել իրեն չպատկանող հողատարածքում, բազում տարիներ հաշվի չի առնվել Ֆրանսիայի կեսից ավելին կազմող տարածքում: Loi Verdeille-ի հիմնական խնդիրներից մեկը, հետևաբար, եղել է կառավարման միավորի ստեղծումը, առանց որի անհնար էր դարձել որսի արդյունավետ կազմակերպումը՝ միաժամանակ հոգ տանելով շրջակա միջավայրի հանդեպ: Ի լրումն՝ ACCA-ները կրթական դեր ունեցան՝ շնորհիվ միավորման գործերին և որսորդական քաղաքականության ձևավորմանը որսորդների մասնակցության և շնորհիվ միավորման կանոններով ու որսորդության կանոնակարգով նախատեսված ինքնավերահսկման կանոնի, որը պարտադիր է բոլոր անդամների համար, անկախ այն բանից՝ որսորդնե՞ր են նրանք, թե՞ ոչ, որով նախատեսվում են դրանք ամրապնդող պատժամիջոցներ: Կառավարությունը նաև չընդունեց դիմողների փաստարկն առ այն, թե քանի որ Loi Verdeille-ը չի կիրառվել Ֆրանսիայի ամբողջ տարածքում, ապա այն ոչ մի կերպ չի ծառայել ընդհանուր շահին: Նրանք պնդեցին, որ ժողովրդավարության պայմաններում դրա կիրառումը կարող էր տարածվել ամբողջ երկրում, մասնավորապես՝ երբ որևէ ACCA-ի պարտադիր ստեղծումն իրականացվում է միայն դեպարտամենտի խորհրդի, Գյուղատնտեսության պալատի և տվյալ *դեպարտամենտում* Որսորդների ֆեդերացիայի խորհրդակցությունից հետո, ինչպես նաև այլ դեպքերում՝ միավորման ստեղծումը կամավորության հիմունքներով: Վերջապես, օրենքը չէր կարող կիրառվել Ֆրանսիայի բոլոր անկյուններում, քանի որ որսատեղիները մեկտեղելու կարիքը պայմանավորված է առանձին *դեպարտամենտների* աշխարհագրությամբ: Օրինակ՝ ACCA-ներ ձևավորելու հարց չէր կարող առաջանալ լեռնային կամ խիտ կառուցապատված տարածքներում, կամ էլ այն *դեպարտամենտներում*, որտեղ որսորդությունն արդեն իսկ կազմակերպված էր:

79. Դատարանը համարում է, որ, նկատի առնելով այն նպատակները, որ ACCA-ներին են վերագրվում Loi Verdeille-ով, որոնք թվարկված են օրենքի առաջին բաժնում, ինչպես նաև սույն խնդրի վերաբերյալ տրված բացատրությունները, անկասկած ընդհանուր շահից է բխում չկարգավորված որսորդությունից խուսափումը և որսապաշարների արդյունավետ կառավարումը:

2. ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ

80. Գանգատարկուները պնդեցին, որ իրենց հողատարածքի նկատմամբ որսորդական իրավունքների հարկադիր փոխանցումը որևէ ACCA-ի անհամաչափ միջամտություն էր իրենց գույքից անարգել օգտվելու իրավունքին: Նրանք նշեցին, որ իրենք այս փոխանցումից խուսափելու որևէ հնարավորություն չեն ունեցել, չնայած այն դիմումներին, որ իրենք ներկայացրել են ACCA-ներին կամ պրեֆեկտներին՝ ձգտելով իրենց սեփականությունները դուրս բերել տվյալ ACCA-ի որսատարածքներից: Նրանք պնդեցին, որ որսապաշարների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու համար հարկ չկար փոքր հողատարածքները դնել որսորդների միավորումների տրամադրության տակ: Այն *դեպարտամենտներում* կամ բնակավայրերում, որտեղ ACCA-ներ չկան, այն փաստը, որ որոշ հողատերեր չեն ցանկացել որսորդությամբ զբաղվել կամ իրենց հողատարածքում արգելել են որսը, որևէ խնդիր չի առաջացրել՝ ոչ որոշակի կենդանատեսակների բազմացման և ոչ էլ վնասատու կոչված տեսակների կապակցությամբ, որոնց վերացնելու իրավունք ունեն միայն հողատերերը:

81. Կառավարությունը չընդունեց այս փաստարկը: Նրանք պնդեցին, որ Loi Verdeille-ը միջոցների մեծ ընտրություն է ապահովում, որոնց շնորհիվ դրա կիրառումից խուսափել ցանկացող հողատերերը կարող են դա անել: Այդ կապակցությամբ նրանք հղում կատարեցին այն փաստին, որ դիմողներն ազատ էին՝ պարսպապատելու իրենց հողատարածք-

ները (Գյուղական տարածքների մասին օրենսգրքի հոդվածներ L. 222-10 և L. 224-3, տե՛ս պարբ. 46-ը վերևում), օրենսգրքի հոդված R. 222-54-ի համաձայն՝ իրենց հողատարածքին կից ձեռք բերել լրացուցիչ հողատարածք՝ ստեղծելով մեկ ընդհանուր հողակտոր, որը կգերազանցի օրենքի հոդված L. 222-13-ում սահմանված նվազագույն տարածքի չափը .... կամ ACCA-ներին առաջարկել իրենց հողատարածքը ընդգրկել այն որսաարգելոցներում, որ օրենքի հոդված L. 222-21-ի համաձայն պարտավոր է ստեղծել յուրաքանչյուր ACCA:

Ի լրումն, դիմողները կարող էին առաջարկել նախարարին կամ պրեֆեկտին՝ իրենց հողատարածքն ընդգրկել որսաարգելոցներում կամ որսի և վայրի բնության արգելոցներում (օրենքի հոդվածներ L. 222-25 և R. 222-83): ... Նմանապես, նրանք կարող էին առաջարկած լինել, որ իրենց հողատարածքը սահմանվի որպես բնության՝ պետության կողմից պահպանվող տարածք, կամ դիմած լինեին, որ այն համարվի բնության՝ կամավոր պահպանվող տարածք (Գյուղական տարածքների մասին օրենսգրքի հոդվածներ L. 242-1 և L. 242-11): ...

Կառավարությունն այնուհետև ընդգծեց, որ սեփականատերերը հարկադրված չեն եղել իրենց որսորդական իրավունքներն առանց որևէ փոխհատուցման փոխանցել որևէ ACCA-ի. ճիշտ է, նրանք կորցրել են որս անելու իրենց բացառիկ իրավունքը, բայց այդ կորուստը փոխհատուցվել է նրանով, որ իրենք էլ իրենց հերթին կարող են որս անել ACCA-ի որսատարածքներում:

Ավելին, հարկադիր փոխանցումը հողատերերին փոխհատուցման իրավունք է ընձեռում, երբ նրանք եկամտի նախկին աղբյուրից զրկվելու հետևանքով շահույթ են կորցրել (Գյուղական տարածքների մասին օրենսգրքի հոդված L. 222-16...):

82. Դատարանը համարում է, որ կառավարության կողմից հիշատակված տարբերակներից և ոչ մեկը գործնականում չէր կարող դիմողներին ազատել իրենց հողատարածքում որսորդական իրավունքները ACCA-ին փոխանցելու՝ օրենքով ամրագրված պարտավորությունից: Այն մասնավորապես նշում է, որ պարիսպը, որի մասին ասվում է հոդված 224-3-ում, պետք է լինի շարունակական, անընդմեջ, և որ այն հնարավոր չլինի խախտել ոչ որսի կենդանիների, ոչ էլ մարդկանց կողմից, ինչը ենթադրում է, որ այն պետք է ունենա որոշակի ամրություն և բարձրություն: Գանգատարկուներից չէր կարելի պահանջել նշանակալի ծախսեր կատարել՝ իրենց հողատարածքների նկատմամբ որսորդական իրավունքները ACCA-ներին փոխանցելու պարտավորությունից խուսափելու համար: Այս պահանջն էլ ավելի անհիմն է թվում, քանի որ խնդրո առարկա հողատարածքը գյուղատնտեսական նպատակներով օգտագործելու ֆինանսական նպատակահարմարությունը, բացի տիկին Մոնտիոնի գույքից, այդպիսի պարսպի կառուցմամբ մեծապես կվտանգվի:

Ինչ վերաբերում է այն պնդմանը, թե դիմողներն ազատ էին՝ առաջարկելու, որ իրենց հողատարածքն ընդգրկվի արգելոցի կազմում կամ համարվի բնության՝ պետության կողմից պահպանվող տարածք, դատարանը կարծում է, որ ոչ ACCA-ները, որ նախարարը և ոչ էլ պրեֆեկտը պարտավոր չեն բավարարել այսպիսի խնդրագրերը, ինչպես վկայում են սույն գործում դիմողների խնդրանքների առկա մերժումները: ... Վերջապես, ինչպես երևում է բնության՝ պետության կողմից պահպանվող տարածքների վերաբերյալ դրույթներից, ... դիմողները չէին կարող պահանջել՝ բավարարել հողատարածքը պետության կողմից պահպանվող տարածք հռչակելու հատուկ պայմանները:

Ինչ վերաբերում է կառավարության հիշատակած՝ օրենքով նախատեսված փոխհատուցման տարբեր ձևերին, դատարանն այն կարծիքին է, որ սա չի կարող համարվել օգտագործման իրավունքի կորստի դեմ տրվող արդար փոխհատուցում: Պարզ է, որ 1964 թ. ընդունված Loi Verdeille-ով նախատեսվում էր հարկադրաբար իրենց տարածքում որսի իրավունքները փոխանցած յուրաքանչյուր հողատիրոջ իր տարածքում որսի բացառիկ իրավունքից զրկվելու դիմաց փոխհատուցել մի կից իրավունքի տրամադրմամբ՝ որս անել համայնքի՝ ACCA-ի վերահսկողության տակ գտնվող ողջ տարածքում: Սակայն, այդ փոխհատուցումը արժեք ունի միայն այն դեպքում, եթե բոլոր շահագրգիռ հողատերերը որսորդներ են, կամ նրանց համար ընդունելի է որսորդությունը: Բայց 1964-ին ընդունված օրենքը չի նախատեսում փոխհատուցման որևէ միջոց այն հողատերերի համար, ովքեր դեմ են որսորդությանը, ովքեր, ըստ էության, չեն ցանկանում որևէ առավելություն կամ շահույթ քաղել որսի իրավունքից, որի իրացումն իրենց համար մերժելի է: Նմանապես, եկամտի նախկին աղբյուրից զրկվելու հետևանքով շահույթի կորստի փոխհատուցումը վերաբերում է միայն այն հողատերերին, ովքեր իրենց համայնքում ACCA-ի ստեղծումից առաջ եկամուտ են ստացել իրենց որսորդական իրավունքների իրացումից, օրինակ՝ հողատարածքները վճարի դիմաց տրամադրելով այլոց. սույն գործի դիմողների դեպքում նման բան տեղի չի ունեցել:

Քանի որ նրանց պատկանող տարածքներն ավելի փոքր են, քան հիմնավորված մերժման համար պահանջվող նվազագույնն է ... ուստի դիմողները չէին կարող խուսափել իրենց տարածքների նկատմամբ որսորդական իրավունքները իրենց համայնքներում ձևավորված ACCA-ին հարկադիր կերպով փոխանցելուց:

83. Այդուհանդերձ, այսպիսի հարկադիր փոխանցումը շեղում է քաղաքացիական օրենսգրքի հոդված 544-ում սահմանված ընդհանուր սկզբունքից, ըստ որի՝ սեփականատիրություն նշանակում է իրերի բացարձակ օգտագործման և տնօրինման իրավունք, պայմանով, որ տվյալ անձն այն չի օգտագործում օրենքով արգելված եղանակով: Ֆրանսիայի օրենսդրության մեջ սեփականության իրավունքի բաղադրիչներից մեկը հանդիսացող որսի իրավունքի հարկադիր փոխանցումը նաև շեղում է Գյուղական տարածքների մասին օրենսգրքի հոդված L. 222-1-ում սահմանված սկզբունքից, որի համաձայն՝ ոչ ոք չի կարող մեկ այլ անձի պատկանող տարածքում որս անել առանց սեփականատիրոջ համաձայնության: Այնուհետև դատարանը նշում է, որ համաձայն հոդված R. 228-1-ի՝ այդ դրույթը խախտողները ենթակա են պատժի՝ 5-րդ դասի իրավախախտումների համար նախատեսված տուգանքներով: Վերջապես, հարկ է նշել,

որ Ֆրանսիայի օրենսդրության մեջ (հոդված R. 227-7) հողատերերն անձնական պատասխանատվություն են կրում վնասատուների ոչնչացման համար, և այս պատասխանատվությունը, անհրաժեշտության դեպքում, կարող է որևէ ACCA-ի կամ սեփականատիրոջ ընտրությամբ՝ որևէ մեկ այլ մարդու փոխանցվել միայն գրավոր կերպով:

84. Դատարանն այնուհետև նկատում է, որ 1964 թ. Loi Verdeille-ի ընդունումից հետո, որն ի սկզբանե չէր տարածվում Ստորին Ռեն, Վերին Ռեն և Մոսել *դեպարտամենտների* վրա, Ֆրանսիայի քաղաքային համայնքների՝ խնդրո առարկա 93 *դեպարտամենտներից* միայն 29-ը ենթարկվեցին ACCA-ների հարկադիր ստեղծման ռեժիմին, որ ACCA-ները կամավորության հիմունքներով ստեղծվել են ընդամենը 851 համայնքներում, և որ օրենքը տարածվում է միայն 20 հեկտարից պակաս տարածք ունեցող հողատարածքների վրա՝ դուրս թողնելով ինչպես ընդարձակ մասնավոր հողատարածքները, այնպես էլ պետական հողերը: ...

85. Որպես եզրակացություն՝ չնայած ընդունման պահին Loi Verdeille-ի օրինական նպատակներին, դատարանը համարում է, որ դրանով սահմանված հարկադիր փոխանցման համակարգի արդյունքում դիմողները հայտնվել են մի այնպիսի իրավիճակում, երբ խախտվում է արդարացի հավասարակշռությունը, որին պետք է հասնել սեփականության իրավունքի պաշտպանության և ընդհանուր շահերից բխող պահանջների միջև: Փոքր հողատերերին հարկադրելը՝ փոխանցել իրենց հողատարածքում որսի իրավունքները, որպեսզի ուրիշները կարողանան օգտագործել դրանք՝ սեփականատերերի համոզմունքներին բոլորովին չհամապատասխանող եղանակով՝ անհամաչափ պարտավորություն է առաջադրում, որը չի արդարացվում թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով: Ուստի, տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:
….

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

Տասներկու կողմ, հինգ դեմ ձայներով՝ որոշում է, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում: ...

Միաձայն որոշում է, որ պատասխանող պետությունը ինը դիմողներից յուրաքանչյուրին պետք է վճարի ... 30.000 ֆրանսիական ֆրանկ գումար՝ ոչ նյութական վնասի դիմաց....

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմը՝ նախագահ Վիլդհաբեր, դատավորներ Փալմը, Մակարչիկը, Կուրիսը, Ֆուրմանը, Յունգվիրթը, Ֆիշբախը, Վային, Թոմասենը, Ցացա-Նիկոլովսկան, Բական և Լևիցը:

2 Դատավոր Քաֆլիշը, որին միացավ նաև դատավոր Պանտիրուն, ներկայացրեց մասնակի չհամընկնող կարծիք, որում տեսակետ հայտնեց, որ.

... Սույն գործում բողոքարկվող օրենսդրությունը ունի երեք խնդիր, մասնավորապես՝ կարգավորել ժամանցային գործունեություն, որը, չկարգավորված մնալու դեպքում, իրական վտանգ կներկայացներ, ժողովրդավարացնել որսորդությունը և ձևավորել որսապաշարների շրջահայաց և արդյունավետ կառավարման համակարգ՝ այսպիսով նաև ապահովելով շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Այսպիսով, ի տարբերություն դատարանի մեծամասնության, գուցե կարծիք ձևավորվի, որ, առանձին վերցրած, խնդրո առարկա հոդվածի խախտում տեղի չի ունեցել, հաշվի առնելով այն նպատակի կարևորությունը, որը հետապնդում է Loi Verdeille-ը, որն ավելին է, քան պարզապես ժամանցը կարգավորելը, ունի տնտեսական և բնապահպանական կողմեր, հաշվի առնելով հայեցողության այն սահմանը, որ տրամադրվել է իշխանություններին՝ այդ նպատակին հասնելու միջոցների ընտրության հարցում, և հաշվի առնելով այն, որ տվյալ նպատակի և դրան հասնելու համար որդեգրված միջոցների միջև որևէ ակնառու անհամաչափություն գոյություն չունի:

3 Իր չհամընկնող կարծիքում դատավոր Կոստան նշեց.

3. Ամենից զատ, հարկ է նշել, որ մոտ երեսունհինգ տարի կիրառված Loi Verdeille-ի առարկան և արդյունքը եղել է Ֆրանսիայում որսորդության կարգավորումը, հատկապես՝ Ֆրանսիայի հարավում, որտեղ, շնորհիվ գյուղական հողատարածքների ստորաբաժանման և որսի չափազանց մեծ ազատության, որսորդությունը (հայտնի է որպես «հանրային որսորդություն») գրեթե դարձել էր «բոլորի համար անվճար» զբաղմունք: Սա վատ ազդեցություն էր ունեցել որսի, ցանքսերի և, վերջին հաշվով, ողջ էկոհամակարգի վրա: Քնավ սահմանափակված չլինելով որսորդների եսակեն-

տրոն շահերն ապահովելու նպատակով՝ Loi Verdeille-ն հետապնդում է ընդհանուր շահ ներկայացնող իրական նպատակ, մասնավորապես՝ մեղմել հողատարածքների մասնատվածության ազդեցությունը և կանխել ապօրինի որսը, միևնույն ժամանակ՝ նպաստել վնասատուների վերացմանը և հնարավոր դարձնել արգելոցների ստեղծումը: ...

10. Ընդունելով հանդերձ, որ պետք է հավասարակշռություն պահպանվի ընդհանուր շահի և սեփականության օգտագործման նկատմամբ այս սահմանափակ միջամտության միջև, ես չեմ համարում, որ կշեռքի երկրորդ նժարն ավելի ծանր է, քան առաջինը, եթե իհարկե չենք տրվում սեփականության իրավունքը ֆետիշացնելու գայթակղությանը, ինչը, իմ կարծիքով, սխալ կլիներ: Մենք չպետք է անհնար դարձնենք քաղաքների նախագծումը, տարածաշրջանի զարգացումը, հանրային աշխատանքները, հողատարածքների համախմբումը և մնացածը: Կարելի է լիովին կողմ լինել ազատությանն ու իրավունքի գերակայությանը, ինչպես կոնվենցիայի հայրերն էին կողմ, առանց անձնական ազատությունը անպայմանորեն դարձնելու բացարձակ կամ իրավունքի գերակայության սկզբունքից ընդհանուր շահը բացառելու, ինչն ակնհայտորեն մտադիր չէին անել կոնվենցիան մշակողները: Ինչ վերաբերում է որսորդությանը՝ ոլորտ, ուր յուրաքանչյուր պետություն պետք է ունենա հայեցողության լայն սահման, և որսորդության քաղաքականություն իրականացնելու համար եվրոպական շատ պետություններում գործում են մասնավոր սեփականության իրավունքը սահմանափակող օրենքներ, ինձ թվում է, որ դատարանի որոշումը խիստ անհատակենտրոն ուղղվածություն ունի, ինչը շատ կբարդացնի այս կարգի քաղաքականության իրագործումը: Ամեն դեպքում ես մեծապես դժվարանում եմ սույն գործում գտնել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում: ...

4 Այլ գործերի համար, որոնց շրջանակում դատարանը կոնվենցիայի տարբեր դրույթներով քննարկել է որսորդության դեմ հայցեր, տես. *«Ստիլն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Steel v UK)* (1998), էջ 705 և *«Հաշմանը և Հերրփն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Hashman and Harrup v UK)* (1999), էջ 693:

5 *Շասանյուի* գործով դատավճիռը ցույց է տալիս, որ երրորդ կանոնը կիրառելիս դատարանը հետևում է 1-ին հոդվածի մեկնաբանման ընդհանուր մոտեցմանը: Այն ներառում է «արդարացի հավասարակշռության» չափանիշի և դրա բաղկացուցիչ տարրի՝ համաչափության պահանջի կիրառումը:

6 Մաքսային իշխանությունների լիազորությունները երրորդ կանոնով գնահատվել են *«Էյր Կանադան» ընդդեմ Միացյալ Թագավորության» (Air Canada v UK)* A.316-A (1995) 20 EHRR 150 գործում: 1983-1987 թվականների ընթացքում բազմաթիվ պատահարներ էին տեղի ունեցել, որոնք հարուցել էին Բրիտանական մաքսային և ակցիզային ծառայության մտահոգությունները՝ կապված «Հիթրոու» օդանավակայանում դիմող ընկերության սահմանած անվտանգության ընթացակարգերի համաչափության հետ: 1983-84 թվականների ընթացքում բեռների մի շարք խմբաքանակներ, որ, մաքսայինի համոզմամբ, թմրամիջոցներ էին պարունակում, անհետացել էին դիմողի տարանցիկ բեռների պահոցից: 1986-ի մարտին Հնդկաստանից ժամանած բեռներում հայտնաբերվեց 809 կգ կանեփի խեժ: Երկու ամիս անց 300 կգ կանեփի խեժ էլ առգրավվեց Թաիլանդից ժամանած բեռի մեջ (ընկերության աշխատակիցներից երկուսն այս ներկրման կապակցությամբ հետագայում դատապարտվեցին): Մաքսային ծառայությունը գրություն ուղարկեց ընկերություն՝ մտահոգություն հայտնելով «Էյր Կանադայի» աշխատակիցների աջակցությամբ մեծ քանակությամբ թմրամիջոցներ մաքսանենգ ճանապարհով երկիր ներկրելու կապակցությամբ: 1986-ի դեկտեմբերին մաքսայինը գրություններ ուղարկեց «Հիթրոու» օդանավակայանից օգտվող բոլոր ավիաընկերություններին՝ նրանց զգուշացնելով հնարավոր տուգանքների մասին (ներառյալ օդանավերի կալանքն ու առգրավումը), եթե նրանց ինքնաթիռներում հայտնաբերվեն թմրամիջոցներ: 1987-ի ապրիլի 27-ին «Հիթրոու» օդանավակայանում վայրէջք կատարեց դիմողին պատկանող «Թրայսթար» օդանավը (արժեքը՝ 60 միլիոն ֆունտ ստեռլինգ): Օդանավում հայտնաբերվեց 331 կգ կանեփի խեժ (որի՝ վերջնական սպառողին վաճառքի գինը 800,000 ֆունտ է): 1987-ի մայիսի 1-ի առավոտյան, մինչ ուղևորները սպասում էին ինքնաթիռ բարձրանալուն, Մաքսայինի աշխատակիցները իրացրեցին օդանավը որպես բռնագրավման առարկա կալանելու՝ օրենքով նախատեսված իրենց լիազորությունները: Ավելի ուշ այդ օրը, Մաքսայինի հանձնակատարները օդանավը հետ վերադարձրեցին դիմողին՝ տուգանքի (50.000 ֆունտ ստեռլինգ) վճարման դիմաց: Դիմողի փորձերը՝ Անգլիայի դատարաններում վիճարկելու մաքսայինի հանձնակատարների գործողությունները, անհաջողության մատնվեցին:

Այնուհետև ընկերությունը գանգատ ներկայացրեց Հանձնաժողովին: Այն որոշեց, որ 1-ին հոդվածի խախտում չի եղել (հինը կողմ, հինգ դեմ ձայներ): Դատարանը որոշեց, որ.

33….օդանավի կալանքը հանգեցրել է դրա օգտագործման ժամանակավոր սահմանափակման և չի ներառել սեփականության իրավունքի փոխանցում, և, երկրորդ՝ վերաքննիչ դատարանի վճիռը՝ սեփականությունը բռնագրավման ենթակա համարելու մասին, չի հանգեցրել «Էյր Կանադային» սեփականատիրությունից զրկելուն, քանի որ օդանավը կալանքից ազատելու համար պահանջվող գումարը վճարվել էր: ...

34. Ի լրումն, օրենսդրությամբ սահմանված մեխանիզմից հստակ երևում է, որ օդանավի «ազատ արձակումը» որոշակի գումարի վճարման դիմաց, ըստ էության, միջոցառում էր՝ ի կատարումն քաղաքականության, որի նպատակն է կանխել փոխադրողների կողմից, ի թիվս այլոց, արգելված թմրանյութերի ներկրումը Միացյալ Թագավորություն: Որպես այդպիսին, այն կարող է որակվել որպես սեփականության օգտագործման վերահսկում: Ուստի, 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունն է, որ կիրառելի է սույն գործում: ...

Բ. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

35. Մնում է որոշել, թե արդյոք դիմողի սեփականության իրավունքներին միջամտությունը չի հակասում թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությամբ պետությանը տրված իրավունքին՝ «կիրառել այնպիսի օրենքներ, ինչպիսիք այն անհրաժեշտ կհամարի՝ սեփականության՝ ընդհանուր շահերից բխող օգտագործումը վերահսկելու համար»:

36. Համաձայն դատարանի վաղուց հաստատված նախադեպային իրավունքի՝ 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը պետք է մեկնաբանվի այդ հոդվածի առաջին նախադասությամբ սահմանված սկզբունքին համապատասխան: ...

41. Թեպետ հանձնակատարներին տրված՝ բռնագրավման լիազորության շրջանակը ... տպավորիչ է, դիմողի օդանավի կալանումը և վճարի դիմաց դրա ազատումը անկասկած բացառիկ միջոցառումներ էին, որոնց դիմել էին՝ ընկերության անվտանգության ընթացակարգերը բարելավելու նկատառումով: Այս միջոցները ձեռնարկվեցին այն բանից հետո, երբ հայտնաբերվեց 331 կգ կանեփի խեժ պարունակող մի բեռնարկղ, որի տեղափոխումը ուղեկցվել էր փոխադրման պահանջների մի շարք խախտումներով: ... Ավելին, այս պատահարն ամենավերջինն էր անվտանգության հետ կապված, ըստ հայտարարությունների, բացթողումների երկար շարքում, որոնց վրա հրավիրվել էր «Էյր Կանադայի» ուշադրությունը, ներառյալ՝ 1983-87 թվականների ընթացքում Միացյալ Թագավորություն թմրամիջոցների ապօրինի ներկրման դեպքերը: ... Մասնավորապես, «Էյր Կանադան», այլ օպերատորների հետ միասին, 1986 թ. դեկտեմբերի 15-ին հանձնակատարների ուղարկած նամակով զգուշացվել էր, որ արգելված ապրանքների փոխադրման դեպքում իրենք կգործադրեն 1979 թ. ընդունված օրենքով իրենց վերապահված լիազորությունները, որոնք ներառում են օդանավի կալանումն ու բռնագրավումը:

42. Այս համատեքստում կասկած չի կարող լինել, որ ձեռնարկված միջոցները համապատասխանում էին թմրամիջոցների միջազգային առևտրի դեմ պայքարելու ընդհանուր շահին:

47. Վերջապես, հաշվի առնելով բեռնարկղերում հայտնաբերված կանեփի մեծ քանակությունը, դրա՝ վերջնական սպառողին վաճառքի գինը, ինչպես նաև՝ բռնագրավված օդանավի արժեքը, դատարանը չի կարծում, որ 50.000 ֆունտ ստեռլինգ վճարելու պահանջը անհամաչափ է հետապնդվող նպատակին, այն է՝ Միացյալ Թագավորություն արգելված թմրամիջոցների ներկրման կանխարգելումը:

48. Նկատի ունենալով վերոնշյալը, ինչպես նաև այս ոլորտում պետության հայեցողության սահմանը, այն գտնում է, որ, դիտարկվող գործի հանգամանքներում, ձեռք է բերվել արդարացի հավասարակշռություն: Այսպիսով, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում տեղի չի ունեցել (հինգ կողմ, չորս դեմ ձայներով):

Ուստի, դատարանը պատրաստ է ճանաչելու, որ մաքսային իշխանությունների կողմից մասնավոր սեփականության վերահսկման դրակոնյան լիազորությունների կիրառումը համապատասխանում է երրորդ կանոնին, այն դեպքերում, երբ խնդրո առարկա սեփականությունը ներգրավված է մաքսային կանոնների լուրջ խախտումներում: Երրորդ կանոնում ներառված համաչափության բաղադրիչը հուշում է, որ որքան ավելի լուրջ է ներպետական մաքսային արգելքների խախտումը (օրինակ՝ որքան ավելի մեծ է հայտնաբերված ապօրինի ապրանքների արժեքը), այնքան ավելի ընդգրկուն կարող են լինել մաքսային իշխանությունների՝ սեփականության վերահսկման լիազորությունները: Որևէ անձի կողմից մաքսային կարգերի խախտումների շարունակականությունը լրացուցիչ փաստարկ է, որն

արդարացնում է մաքսային իշխանությունների կողմից տվյալ անձի սեփականության նկատմամբ վերահսկման նշանակալի լիազորությունների բանեցումը: Բրիտանիայի իշխանությունների լիազորությունների վերլուծության համար տե՛ս նաև՝ Ա.Ռ. Մաուբրեյ «Մաքսային և ակցիզային ծառայության կողմից վարույթից հրաժարումը. իրավական հետևանքների հաշվարկ» [A. R. Mowbray, The Compounding of Proceedings by the Customs and Excise: Calculating the Legal Implications] (1988) British Tax Review 290:

7 Սեփականության օգտագործումը վերահսկելու՝ պետությունների կարողությունը, որպեսզի հնարավոր լինի «ապահովել հարկերի վճարումը», քննվել է *«Գասուս Դոսիեր ունդ Ֆորդերտեքնիկ» ԲԲԸ-ն ընդդեմ Նիդեռլանդների» (Gasus Dosier-und Fordertechnik Gmb v The Netherlands*) գործում (դիտարկված է վերը՝ էջ 956): Դատարանը երրորդ կանոնի այդ հայեցակետի համատեքստն ու կիրառումը մանրամասնեց հետևյալ կերպ.

59…. Դատարանի կարծիքով՝ ամենաբնական մոտեցումն այն է, որ «Գասուսի» բողոքները քննության առնվեն որպես «հարկերի վճարումն ապահովելու» հարց, որը ենթակա է 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունում նշված կանոնին: Այդ պարբերությունը հստակորեն մասնակից պետություններին է վերապահում այնպիսի օրենքներ ընդունելու իրավունքը, ինչպիսիք իրենք անհրաժեշտ կհամարեն՝ հարկերի վճարումն ապահովելու համար: Թե որքանով են կարևորել կոնվենցիայի հեղինակները 1-ին հոդվածի երկրորդ պարբերության այս հայեցակետը, կարելի է գնահատել այն փաստով, որ այն փուլում, երբ առաջարկվող տեքստը չէր պարունակում հարկերի այսպիսի միանշանակ հիշատակում, այն արդեն իսկ հասկացվում էր այնպես, որ պահպանում է պետությունների լիազորությունը՝ ընդունելու այնպիսի հարկային օրենքներ, ինչպիսիք նրանք ցանկալի կհամարեն՝ մշտական պայմանով, որ այս բնագավառում ձեռնարկվող միջոցները չեն վերածվի կամայական բռնագրավման (տե՛ս Սըր Դեվիդ Մաքսվել-Ֆայֆ, Իրավական և վարչական հարցերի կոմիտեի զեկուցող, Խորհրդակցական վեհաժողովի երկրորդ նստաշրջան, տասնվեցերորդ նիստ (1950 թ. օգոստոսի 25), Նախապատրաստական փաստաթղթերի ժողովածու, հտ. VI, էջ 140, առաջարկվող հոդված 10A-ի վերաբերյալ մեկնաբանություններ, նույն տեղում, էջ 68):

Այն փաստը, որ հարկային տվյալ օրենսդրությունը հարկային իշխանություններին հնարավորություն է ընձեռում, որոշակի պայմաններում, փոխհատուցել հարկային պարտքերը երրորդ կողմի ակտիվների հաշվին, հիմք չի տալիս որևէ այլ եզրակացության, քան այդ կիրառելի կանոնի դեպքում է: Նմանապես, ինքնին բավարար չէ 1845 թ. ընդունված օրենքի 16(3) հոդվածը բնութագրել որպես կամայական բռնագրավման լիազորություն շնորհող դրույթ:

Մի որոշակի պարտատիրոջ լիազորություն տալը՝ փոխհատուցում ստանալու այն ապրանքների հաշվին, որոնք, թեպետև փաստացի գտնվում են պարտապանի տրամադրության տակ, սակայն իրավաբանորեն երրորդ կողմի սեփականությունն են, մի շարք իրավական համակարգերում պարտատիրոջ դիրքերը կատարողական վարույթներում ամրապնդելու ընդունելի մեթոդ է: Նիդեռլանդների օրենքով, որ գործում էր խնդրո առարկա ժամանակաշրջանում, հողատերերը համարժեք իշխանություն ունեին՝ կապված չվճարված վարձավճարների հետ, ինչպես նրանք ունեին Ֆրանսիայի և Բելգիայի օրենքներով: Կառավարությունը հղում կատարեց նաև այլ մասնակից պետությունների հարկային օրենքներին, որոնք առանձին գործերում համանման լիազորություններ են տալիս հարկային իշխանություններին: Հետևաբար, այն փաստը, որ Նիդեռլանդների օրենսդրությունը վերացականորեն նպաստում է հարկային պարտապանների դեմ կատարողական վարույթներում հարկային իշխանությունների դիրքերի ամրապնդմանը, չի արդարացնում այն եզրակացությունը, թե 1845 թ. ընդունված օրենքը կամ դրա 16(3) հոդվածը ուղղված չէ «հարկերի վճարումն ապահովելուն», կամ որ այդ հոդվածով տրամադրվող լիազորությունների կիրառումը «բռնագրավում» է՝ «կամայական» կամ ոչ, և ոչ թե հարկային պարտքը փոխհատուցելու եղանակ:

Գ. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ

60. Ինչպես բխում է նախորդ պարբերությունից, սույն գործը վերաբերում է պետությունների իրավունքին՝ գործադրել այնպիսի օրենքներ, ինչպիսիք նրանք անհրաժեշտ կհամարեն՝ հանուն «հարկերի վճարումն ապահովելու»:

Սույն գործում դատարանի խնդիրը չէ պարզել, թե արդյոք այս իրավունքը, ինչպես կարող է թվալ դրույթի ձևակերպումից, սահմանափակվում է ընթացակարգային հարկային օրենսդրությամբ (այն է՝ օրենքներ, որոնք կարգավորում են հարկման կարգը, ներառյալ հարկային պարտավորությունների կատարումը), թե այն նաև կարգավորում է բովանդակային հարկային օրենսդրությունը (այն է՝ օրենքներ, որոնք սահմանում են հարկման հանգամանքները, ինչպես նաև վճարվելիք գումարների չափը): 1845 թ. ընդունված օրենքը, որը վիճարկվում է տվյալ գործի շրջանակում, միանշանակ ընթացակարգային հարկային օրենք էր:

Նման օրենքների ընդունմամբ օրենսդիր մարմնին տրվում է հայեցողության լայն սահման, հատկապես կապված այն հարցի հետ, թե արդյոք հարկային իշխանությունները հարկադիր հարկահավաքության ավելի լա՞յն լիազորություն-

ներ պետք է ունենան, քան ունեն սովորական պարտատերերը՝ առևտրային պարտքերի հարկադիր փոխհատուցման համար: Դատարանը հաշվի կառնի այս հարցերում օրենսդիր մարմնի գնահատականը, եթե այն զուրկ չէ ողջամիտ հիմքից:

Հարկային լիազորություններ են կիրառվել նաև *Ազգային և պրովինցիալ շինարարական միության (National & Provincial Building Society)* գործում, տե՛ս վերը՝ էջ 957:

9 Պալատը միաձայն որոշեց, որ *«Հուտտեն-Չապսկան ընդդեմ Լեհաստանի» (Hutten-Czapska v Poland)* գործում, որի դատավճիռը կայացվել է 2005 թ. փետրվարի 22-ին, առկա է այս կանոնի համակարգային խախտում՝ կապված Լեհաստանի օրենսդրության հետ, որով կարգավորվում է հողի մասնավոր սեփականատերերի կողմից գանձման ենթակա վարձավճարների և վարձակալությունը դադարեցնելու նրանց կարողության սահմանափակման խնդիրները: Դիմողին էր պատկանում Գդինում գտնվող մի տուն՝ փոքրիկ հողակտորով, որը նախկինում պատկանել էր նրա ծնողներին: Կոմունիստական իշխանության տարիներին տունը ենթակա է եղել պետական կառավարման և իշխանությունների որոշմամբ զբաղեցվել է տարբեր անձանց կողմից: Լեհաստանում ժողովրդավարական կարգի վերականգնումից հետո 1990 թ. դիմողը ձեռք է բերում դատարանի կարգադրություն, որով ամրագրվում է նրա սեփականության իրավունքը այդ տան նկատմամբ: Հաջորդ տարի նա անցնում է այդ սեփականության վարմանը: Սակայն, հաջորդ տարիներին ընդունվեցին օրենքներ, որոնք խիստ սահմանափակումներ դրեցին այնտեղ հաստատված վարձակալներից գանձվող վարձավճարն ավելացնելու նրա կարողության վրա և որոնք թույլ չէին տալիս, որ նա դադարեցնի նրանց վարձակալությունը: Լեհաստանի սահմանադրական դատարանը այս օրենսդրական դրույթներից մի քանիսը ճանաչեց իբրև սահմանադրությանը չհամապատասխանող, քանի որ, ի թիվս այլոց, գանձման ենթակա ցածր վարձավճարները հողատերերին հնարավորություն էին տալիս ծածկել իրենց գույքի պահպանման ծախսերի միայն 60 տոկոսը: Եվրոպական դատարան ներկայացրած իր գանգատում դիմողը պնդում էր, որ այս սահմանափակումները վնաս են հասցնում սեփականության իր իրավունքի էությանը: Պալատը որոշեց, որ.

185. Ինչպես դատարանն արդեն նշել է շատ դեպքերում, այնպիսի ոլորտներում, ինչպիսին է բնակչության բնակարանային ապահովումը, պետություններն անհրաժեշտաբար ունեն հայեցողության լայն սահման՝ ոչ միայն կապված ընդհանուր մտահոգության առարկա հանդիսացող խնդրի գոյության հետ, որը անձնական սեփականության վերահսկման միջոցառումներ է պահանջում, այլև կապված միջոցների ընտրության և դրանց կիրառման հետ: Պետության վերահսկողությունը վարձավճարի չափի նկատմամբ այս միջոցներից մեկն է, և դրա կիրառումը հաճախ կարող է գանձման ենթակա վարձավճարի չափի էական նվազման պատճառ լինել (տե՛ս, մասնավորապես, *«Մելլաքերը և այլք (ընդդեմ Ավստրիայի)» (Mellacher and Others (v Austria))*, A. 169 (1989)) գործը, պարբ. 45):

Նաև, այնպիսի իրավիճակներում, ինչպիսին առկա է սույն գործում, երբ վարձակալության վճարի վերահսկման գործարկումը հղի է համընդգրկուն հետևանքներով՝ մեծ թվով անհատների համար, և տնտեսական և սոցիալական էական հետևանքներով՝ ամբողջ երկրի համար, իշխանությունները պետք է նշանակալի հայեցողության սահման ունենան ոչ միայն սեփականության օգտագործման վերահսկման եղանակի ընտրության և վերահսկման աստիճանի որոշման, այլ նաև տվյալ օրենքների գործադրման համապատասխան ժամանակացույցի որոշման հարցում: Այդուհանդերձ, այդ հայեցողությունը, որքան էլ նշանակալի, անսահմանափակ չէ, և դրա գործածումը, նույնիսկ պետությունում իրականացվող ամենահամալիր բարեփոխումների համատեքստում, չի կարող հանգեցնել կոնվենցիայի չափանիշներից շեղվող հետևանքների (տե՛ս *Բրոնիովսկու (Broniowski)* գործը, պարբ. 182):

186. Դատարանը կրկին հաստատում է, որ Լեհաստանում բնակարանային ապահովության հետ կապված դժվարին իրավիճակը, մասնավորապես՝ բնակարանների սուր պակասը և շուկայում բնակարանների ձեռք բերման բարձր գները, ինչպես նաև կոմունիստական վարչակարգից ժառանգված՝ բնակարանների բաշխման ծայրահեղ քարացած համակարգը, արդարացնում են ոչ միայն երկրում հիմնարար տնտեսական, քաղաքական և իրավական բարեփոխումների իրականացման ընթացքում վարձակալներին պաշտպանող, բարեփոխիչ օրենսդրության ներդրումը, այլև ցածր՝ շուկայական գնին զիջող վարձակալության վճարի սահմանումը: Այդուհանդերձ, դատարանն արդարացված չի համարում այն, որ պետությունը շարունակական կերպով դիմողին և այլ հողատերերին խնդրո առարկա ողջ ժամանակահատվածում չի ապահովել պահպանման ծախսերը հոգալու համար անհրաժեշտ գումարով, իսկ բնակարանների վարձակալությունից ստացվող անգամ նվազագույն շահույթի մասին ավելորդ է խոսել:

187. Մոտ հինգ տարի առաջ Լեհաստանի սահմանադրական դատարանը գտավ, որ վարձակալության վճարների վերահսկման համակարգը՝ հիմնված անհրաժեշտաբար և անխուսափելիորեն հողատերերի կորուստներ առաջացնող դրույքների վրա, հանգեցրել էր բնակարանային ոլորտի բարեփոխման հետևանքով սոցիալական բեռի անհամաչափ, չարդարացված և կամայական բաշխման, և որ այդ բարեփոխումը գլխավորապես կենսագործվել էր հողատերերի հաշվին: Դատարանն այդ պնդումը կրկնեց իր հետագա վճիռներում՝ հստակորեն նշելով, որ մինչև 2004 թ. դեկտեմբերի 31-ը վարձակալության վճարների վերահսկման համակարգը չվերացնելը կարող է հանգեցնել իրավունքի գերակայության սահմանադրական սկզբունքի խախտման և սասանել պետության նկատմամբ քաղաքացիների վստահությունը: Այն քանիցս որոշել է, որ ձեռնարկված միջոցները հավասարազոր են եղել հողատերերի սեփականության իրավունքների շարունակական խախտման: Դատարանն ընդգծեց, որ այն եղանակը, որով իշխանությունները հաշվարկել են վարձակալության վճարների ավելացումները, հողատերերի համար, զուտ մաթեմատիկական պատճառներով, անհնար է դարձրել վարձակալությունից եկամտի ստացումը կամ գոնե պահպանության ծախսերի ծածկումը:

Այդ պարագայում Լեհաստանի իշխանությունները պարտավոր էին վերացնել կամ գոնե անհրաժեշտ արագությամբ շտկել իրավիճակը, որը հայտարարվել է դիմողի՝ սեփականության հիմնարար իրավունքից բխող պահանջներին հակասող, համաձայն սահմանադրական դատարանի կայացրած վճիռների: Ավելին, թիվ 1 արձանագրության հոդված 1-ում ամրագրված իրավաչափության սկզբունքը և այդ կանոնից բխող՝ օրենքի կանխատեսելիության սկզբունքը պետությունից պահանջել էին կատարել իր օրենսդրական խոստումը և վերացնել վարձակալության վճարների վերահսկման դրույթը, ինչը բնավ չի բացառում որևէ այլ եղանակով վարձակալների իրավունքները պաշտպանելու ընթացակարգերի ընդունումը:

188. Նկատի առնելով բոլոր հանգամանքները և, ավելի կոնկրետ, այն հետևանքները, որ վարձակալության վճարների վերահսկման ծրագիրը ունեցել է դիմողի՝ իր ունեցվածքից հանգիստ կերպով օգտվելու իրավունքի վրա, դատարանը կարծում է, որ իշխանությունները անհամաչափ և չափազանց ծանր բեռ են դրել նրա վրա, ինչը չի կարող արդարացվել նրանց կողմից հետապնդվող՝ համայնքի որևէ օրինական շահով:

Ուստի, տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

Գիտակցելով, որ իր վճիռն ազդելու է Լեհաստանի 100.000 հողատերերի և 600.000-900.000 վարձակալների վրա, պալատը հայտարարեց, որ 46-րդ հոդվածով պատասխանող կառավարությունը պետք է «193. ... համապատասխան իրավական և/կամ այլ միջոցներով դիմողի և համանման իրավիճակում գտնվող այլ անձանց համար ապահովի վարձակալության վճարի ողջամիտ չափ կամ նրանց ապահովի այնպիսի մեխանիզմով, որը կմեղմացնի սեփականության իրավունքի վրա պետության կողմից վարձակալության վճարների բարձրացումը վերահսկելու վերոնշյալ հետևանքները»: Այդուհանդերձ, պետությունն ինքն է որոշում, թե որն է ողջամիտ վարձավճարը կամ մեղմացման հարմար մեխանիզմը: Երկարաժամկետ դրակոնյան սահմանափակումները, որ դրված են եղել դիմողի վրա՝ իր սեփականությունը վերահսկելու հարցում, որոնք ներառել են ինչպես էական ֆինանսական կորուստներ, այնպես էլ սեփական ունեցվածքը զբաղեցնելու հնարավորությունից զրկում, նշանակել են, որ պետությանը «հայեցողության լայն սահման» տրամադրելով հանդերձ՝ արդարացի հավասարակշռություն չի պահպանվել դիմողի իրավունքների և հասարակության՝ որպես ամբողջություն, շահերի միջև: Արդյոք կարծո՞ւմ եք, որ նշանակալի էր այն, որ Լեհաստանի սահմանադրական դատարանը մի քանի դեպքերում խնդրո առարկա ներպետական օրենսդրական ակտերը համարել է սահմանադրությանը չհամապատասխանող:

Հետագայում կառավարությունը 43-րդ հոդվածով գործը վերաքննելու միջնորդություն ներկայացրեց մեծ պալատին, որն ընդունվեց: Այնուամենայնիվ, մեծ պալատը միաձայն որոշեց, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում: Մեծ պալատը (2006 թ. հունիսի 19-ին ընդունված վճռով) համաձայնեց պալատի գնահատականին՝ նկատելով, որ.

224.…սույն գործում սեփականության իրավունքի խախտումը կապված չէ միայն գանձվող վարձավճարի չափի հետ, այլ, ավելի շուտ, վարձավճարի որոշման թերի դրույթների և հողատերերի իրավունքների վրա դրված տարատեսակ սահմանափակումների համադրությունն է՝ կապված վարձակալության դադարեցման, իրենց վրա օրենքով դրված ֆինանսական բեռի և իրավական որևէ ճանապարհի կամ միջոցի բացակայության հետ, որը նրանց համար հնարավոր կդարձներ փոխհատուցել կամ մեղմացնել գույքի պահպանման կապակցությամբ կրած կորուստները կամ, հիմնավորված դեպքերում, պետությունից ստանալ անհրաժեշտ վերանորոգումների սուբսիդավորում:

22 ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Դատարանի ընդհանուր մոտեցումը

«Բելգիայի լեզվաբանական» գործ
(Belgian Linguistic case) (No 2) A.6 (1968) 1 EHRR 252
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Երբ Բելգիան 1830 թ. անկախություն ստացավ, գործնականում բաղկացած էր երկու հատվածներից՝ ֆլամանդական (որտեղ բնակիչները հիմնականում խոսում էին ֆլամանդերեն) և վալոնյան (որտեղ բնակչությունը հիմնականում խոսում էր ֆրանսերեն): Պետական բազմաթիվ գործընթացներ իրականացվում էին ֆրանսերեն (օր.՝ դատավարությունները): Ֆրանսերենը գերակայում էր նաև կրթության ոլորտում: 1900-1930 թթ. ընթացքում ժողովրդականություն ձեռք բերեց ֆլամանդական անջատողական շարժումը, որի արդյունքում 1932 թ. ընդունվեց օրենք, որով ֆրանսերենը և ֆլամանդերենը հավասար կարգավիճակ ստացան: 1963 թ. ընդունվեց նոր օրենք, որը պետության տարածքը բաժանեց չորս լեզվական շրջանների. ֆլամանդական, ֆրանսիական, գերմանական շրջանների և Բրյուսելի կոնուրբացիայի: Առաջին երեք շրջաններում պաշտոնական նպատակների համար օրենքը պահանջում էր բացառապես գործածել համապատասխանաբար ֆլամանդերենը, ֆրանսերենը և գերմաներենը: Բրյուսելի մերձակայքում բնակվող բազմալեզու համայնքների համար գործում էին հատուկ դրույթներ: Օրենքը սահմանում էր, որ ընդհանուր առմամբ պետության կողմից ֆինանսավորվող դպրոցներում պետք է դասավանդեն միայն իրենց շրջանում գործող համապատասխան պաշտոնական լեզվով, և պետական միջոցներ չեն հատկացվում այն մասնավոր դպրոցներին, որոնք չեն դասավանդում նաև համապատասխան պաշտոնական լեզվով: Բելգիայի ֆլամանդերեն խոսող շրջաններում բնակվող ֆրանսիախոս ծնողների (ավելի քան 800 երեխաների) կողմից հանձնաժողովին էր ներկայացվել վեց դիմում, որոնք վիճարկում էին նշված օրենքի տարբեր կետեր: Դիմողները պնդում էին, որ խախտվել են 14-րդ և 8-րդ հոդվածները, ինչպես նաև թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածը: Հանձնաժողովը հայտնել էր, որ օրենքը չի խախտում թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի առաջին նախադասությունը (ինը կողմ և երեք դեմ ձայներով), ինչպես նաև այդ հոդվածի երկրորդ նախադասությունը (միաձայն): Սակայն, *ի թիվս այլոց*, օրենքի այն հատվածները, որոնք վերաբերում էին Լյովենին և Բրյուսելի մերձակայքում գտնվող համայնքներին և որոնք որոշ երեխաների թույլ չէին տալիս հաճախել ֆրանսիալեզու դպրոցներ՝ բացառապես նրանց ծնողների բնակության վայրերի հիման վրա, խախտում են թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի առաջին նախադասությունը՝ 14-րդ հոդվածի համակցությամբ:

1. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

…

3. Այս հոդվածի առաջին նախադասության համաձայն՝ «ոչ ոքի չի կարելի մերժել կրթության իրավունքը»:

Չնայած իր բացասական ձևակերպմանը, սույն դրույթն օգտագործում է «իրավունք» եզրույթը և խոսում «կրթության իրավունք[ի]» մասին: Նույն կերպ, արձանագրության նախաբանը սահմանում է, որ արձանագրության խնդիրը «իրավունքների և ազատությունների» հավաքական իրականացման ապահովումն է: Հետևաբար, կասկածից վեր է, որ թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածն իսկապես պահպանում է իրավունքը:

Այնուամենայնիվ, հարկ է ճշտել այդ իրավունքի բովանդակությունը և դրանով պետությունների համար սահմանվող պարտավորության շրջանակները:

Բացասական ձևակերպումն ընդգծում է, ինչը հաստատվում է նաև «նախապատրաստական աշխատանքով» (հատկապես հետևյալ փաստաթղթերով՝ CM/WP VI (51) 7, էջ 4 և AS/JA (3) 13, էջ 4), որ պայմանավորվող կողմերը չեն ճանաչում կրթության այնպիսի իրավունք, որը նրանց կպարտավորեցներ սեփական միջոցների հաշվին ստեղծել կամ սուբսիդավորել որևէ տեսակի կամ որևէ մակարդակի կրթություն: Այնուամենայնիվ, սրանից չի կարելի եզրակացնել, որ պետությունը թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի պաշտպանությունը վայելող նման իրավունքի հանդեպ հարգանք ապահովելու դրական պարտավորություն չի կրում: Քանի որ «իրավունքը», որպես այդպիսին, գոյություն ունի, այն կոնվենցիայի 1-ին հոդվածի ուժով երաշխավորվում է պայմանավորվող պետության իրավազորության ներքո գտնվող բոլոր անձանց համար:

Արձանագրության 2-րդ հոդվածի իմաստով «կրթության իրավունքի» գործողության ոլորտը որոշելիս դատարանը պետք է մտապահի սույն դրույթի նպատակը: Այս համատեքստում կարելի է նշել, որ այն ժամանակ, երբ արձանագրությունը բացվեց ստորագրության համար, Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետություններն ունեին և հիմա էլ ունեն ընդհանուր և պաշտոնապես ընդունված կրթական համակարգ: Հետևաբար, յուրաքանչյուր պետության վրա նման համակարգ ստեղծելու պարտավորություն դնելու որևէ խնդիր չի եղել և ներկայումս էլ չկա. խոսքն ընդամենը պայմանավորվող կողմերի իրավազորության ներքո գտնվող անձանց համար ուսանելու տվյալ ժամանակ գոյություն ունեցող միջոցներից օգտվելու իրավունքը, սկզբունքորեն, երաշխավորելու մասին է:

Կոնվենցիան որոշակի պարտավորություններ չի սահմանում նշված միջոցների չափի կամ դրանց կազմակերպման և սուբսիդավորման վերաբերյալ: Մասնավորապես, 2-րդ հոդվածի առաջին նախադասությունը չի սահմանում, թե ինչ լեզվով պիտի իրականացվի կրթությունը, որպեսզի կրթության իրավունքը համարվի հարգված: Այն չի պարունակում հստակ դրույթներ, ինչպիսիք առկա են 5-րդ հոդվածի 2-րդ մասում և 6-րդ հոդվածի 3-րդ մասի (ա) և (ե) ենթակետերում: Սակայն կրթության իրավունքն անիմաստ կլիներ, եթե հօգուտ շահառուների չենթադրեր պետական լեզվով կամ պետական լեզուներից մեկով, կախված հանգամանքներից, կրթություն ստանալու իրավունքը:

4. Արձանագրության 2-րդ հոդվածի առաջին նախադասությունը, հետևաբար, առաջին հերթին երաշխավորում է տվյալ ժամանակ գոյություն ունեցող կրթական հաստատություններից օգտվելու իրավունքը, սակայն այդ օգտվելը կրթության իրավունքի ընդամենը մի մասն է: Որպեսզի «կրթության իրավունքը» արդյունավետ լինի, անհրաժեշտ է նաև, որ, ի թիվս այլոց, շահառու հանդիսացող անհատը հնարավորություն ունենա օգուտ ստանալու իր ստացած կրթությունից, ինչը նշանակում է ստացած ուսման որևէ տեսքով պաշտոնական ճանաչման իրավունք ունենալ՝ համաձայն յուրաքանչյուր երկրում գործող կանոնների . . .

5. Արձանագրության 2-րդ հոդվածի առաջին նախադասությամբ երաշխավորված կրթության իրավունքի բուն էությունն է պահանջում պետական կարգավորում. կարգավորում, որը, պայմանավորված համայնքի և անհատների կարիքներով և ռեսուրսներով, կարող է տարբեր լինել ժամանակի և տարածության մեջ: Կարիք չկա նշելու, որ նման կարգավորումը երբեք չպետք է վնասի կրթության իրավունքի էությունը կամ հակասի կոնվենցիայով սահմանված մյուս իրավունքներին:

Դատարանը համարում է, որ ընդհանուր նպատակը, որն իրենց համար Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի միջնորդությամբ սահմանել են պայմանավորվող կողմերը, մարդու հիմնարար իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովումն է: Եվ դա, անկասկած, ոչ միայն այն պատմական համատեքստի շնորհիվ, որում կնքվել է կոնվենցիան, այլև մեր դարի սոցիալական և տեխնիկական զարգացումների շնորհիվ, որոնք պետություններին նշանակալի հնարավորություններ են տրամադրում այդ իրավունքների իրացումը կարգավորելու համար: Հետևաբար, կոնվենցիան արդարացիորեն հավասարակշռում է, մի կողմից, համայնքի ընդհանուր շահերի պաշտպանությունը և, մյուս կողմից, հարգանքը մարդու հիմնարար իրավունքներին՝ վերջինիս տալով առանձնակի կարևորություն:

6. Թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը չի երաշխավորում կրթության իրավունքը. սա հստակ ցույց է տալիս նախադասության ձևակերպումը.

> «...Պետությունը կրթության և ուսուցման բնագավառում իր ստանձնած ցանկացած գործառույթ իրականացնելիս հարգում է ծնողների՝ զավակների համար իրենց կրոնական ու փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքը»:

Այս դրույթը չի պարտավորեցնում պետություններին կրթության և ուսուցման բնագավառում հարգել ծնողների լեզվական նախապատվությունները, այլ միայն նրանց կրոնական և փիլիսոփայական համոզմունքները: «Կրոնական» և «փիլիսոփայական» եզրույթներն այնպես մեկնաբանել, որ նրանք ներառեն լեզվական նախապատվությունները, կնշանակի խեղել դրանց սովորական և ընդունված իմաստը և կոնվենցիայում ընթերցել մի բան, որն այնտեղ պարզապես չկա: Ավելին, «նախապատրաստական աշխատանքը» հաստատում է, որ 2-րդ հոդվածի երկրորդ նախադասության խնդիրն ամենևին ապահովելը չէ, որ պետությունը հարգի ծնողների՝ իրենց երեխաներին այլ լեզվով կրթության տալու իրավունքը, ոչ թե խնդրո առարկա պետության լեզվով. և իսկապես, 1951 թ. Փորձագետների կոմիտեն, որը զբաղվում էր արձանագրության մշակմամբ, մի կողմ դրեց ասվածի ոգով ձևակերպված մի առաջարկություն: Կոմիտեի մի շարք անդամներ համարում էին, որ այն շոշափում է էքնիկ փոքրամասնությունների հիմնախնդրի կողմերից մեկը և, հետևաբար, դուրս է կոնվենցիայի գործողության ոլորտից (տե՛ս

Doc CM (51) 33 վերջը, էջ 3): Հետևաբար, 2-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը չի առնչվում սույն գործում բարձրացված խնդրին:

…

7. Առաջին հարցը բացառապես վերաբերում է 1932 և 1963 թթ. օրենքների այն դրույթներին, որոնք թույլ չէին տալիս կամ թույլ չեն տալիս պետությանը միալեզու համարվող շրջաններում ստեղծել կամ սուբսիդավորել դպրոցներ, որոնք չեն համապատասխանում ընդհանուր լեզվական պահանջներին:

Սույն գործում տվյալ հարցը վերաբերում է նրան, որ պետությունը հրաժարվում է ֆլամանդական միալեզու շրջանում ստեղծել կամ սուբսիդավորել տարրական դպրոցական կրթություն (որը Բելգիայում պարտադիր է), որտեղ որպես դասավանդման լեզու գործածվի ֆրանսերենը:

Նման հրաժարումն անհամատեղելի չէ արձանագրության 2-րդ հոդվածի առաջին նախադասության պահանջների հետ: Այդ դրույթը մեկնաբանելիս դատարանն արդեն իսկ համարել է, որ այն չի սահմանում այնպիսի դպրոցներ ստեղծելու կամ սուբսիդավորելու իրավունք, որտեղ կրթությունն իրականացվում է տվյալ լեզվով: 2-րդ հոդվածի առաջին նախադասությունը որևէ լեզվական պահանջ չի ներառում: Այն երաշխավորում է տվյալ ժամանակ գոյություն ունեցող կրթական հաստատություններից օգտվելու իրավունքը և, յուրաքանչյուր երկրում գործող կանոններին համապատասխան, ստացած կրթության այս կամ այն տեսքով պաշտոնական ճանաչման իրավունքը. ընդ որում, այս վերջին իրավունքը չի առնչվում այստեղ քննարկվող կետին: Միալեզու շրջաններում թե՛ ֆրանսիախոս, թե՛ ֆլամանդախոս երեխաները կարող են օգտվել պետական կամ սուբսիդավորվող կրթությունից, այսինքն՝ այդ շրջանի լեզվով տրամադրվող կրթությունից:

…

13. Իրավիճակը, որին առնչվում է բարձրացված երկրորդ հարցը, շաղկապված է առաջինում տեղ գտածին: Առաջինում նշված իրավական դրույթներն անհնարին են դարձնում ֆլամանդական միալեզու շրջանում այնպիսի պետական դպրոցների ստեղծումը կամ սուբսիդավորումը, որտեղ դասավանդումն իրականացվում է ֆրանսերեն: Իրավական և վարչական միջոցները, որոնց վերաբերում է երկրորդ հարցը, պարզապես լրացում են դրանց. դրանք հակված են կանխելու «փառը լեզուներով» դպրոցների գործունեությունը, որոնք միալեզու շրջանում, տվյալ դեպքում՝ ֆլամանդական միալեզու շրջանում չսուբսիդավորվող դասարանների տեսքով և ի լրումն այդ շրջանի լեզվով անցկացվող դասավանդման տրամադրում են ամբողջական կամ մասնակի կրթություն՝ այլ լեզվով: Հետևաբար, խնդրո առարկա դրույթների մի ամբողջ շարք է, որն ունի ընդհանուր նպատակ, այն է՝ շրջանի լեզվական համասեռության պաշտպանությունը:

Դատարանի՝ երկրորդ հարցին տված պատասխանը նույնն է, ինչ արդեն տրվել էր առաջինին:

Վիճարկվող դրույթները չեն խախտում ո՛չ արձանագրության 2-րդ հոդվածը, ո՛չ էլ կոնվենցիայի 8-րդ հոդվածը:

Քանի որ արձանագրության 2-րդ հոդվածի առաջին նախադասությունը, ինքնին, որևէ կերպ չի ազդում պետությունների՝ մասնավոր դպրոցները սուբսիդավորելու կամ չսուբսիդավորելու ազատության վրա, սուբսիդավորման մերժումն այնպիսի դպրոցներին, որոնք չեն բավարարում պետության սահմանած նման սուբսիդիաների տրամադրումը պայմանավորող պահանջները, տվյալ դեպքում՝ պայմանը, որ դասավանդումը պետք է բացառապես իրականացվի լեզվական օրենսդրությանը համապատասխան, չի առնչվում այս հոդվածի գործողության ոլորտին:

...

32. Դատարանը հերթականությամբ ուսումնասիրում է, մի կողմից, Լյովենում և Հեվերլիում, մյուս կողմից՝ հատուկ հաստատություններ ունեցող վեց համայնքներում ֆրանսերենով կրթությունը կարգավորող իրավական և վարչական միջոցները:

Լյովենը և Հեվերլին ֆլամանդական միալեզու շրջանում են: Թեև օրենսդիրն այստեղ թույլատրել է ֆրանսերենով իրականացվող կրթությունը, դա արվել է, առաջին հերթին, հաշվի առնելով Լյովենի համալսարանի երկլեզու բնույթից բխող կարիքները: Այս երկու համայնքներում ֆրանսերենով կրթության գործառնությունը կարգավորող սկզբունքները որոշիչ են նաև այդ կրթությունը ստանալու համար ընդունելության չափանիշների առումով: Հետևաբար, վիճարկվող դրույթներով (1963 թ. հուլիսի 30-ի օրենքի վերջում տեղ գտած բաժին 7 և 1963 թ. օգոստոսի 2-ի և 1966 թ. նոյեմբերի 30-ի թագավորական հրամանագրեր) տրվող առավելությունները կախման մեջ են դրանց նպատակից: Ըստ էության, դրանք տրվում են Լյովենի համալսարանի ֆրանսիախոս դասախոսական անձնակազմին, աշխատակազմին և ուսանողներին, որոնց բացակայության պարագայում այդ հաստատություններն այլևս չեն կարող պահպանել իրենց երկլեզու բնույթը: Նմանապես, եթե Լյովենում և Հեվերլիում ղեռևս ֆրանսիալեզու դասարաններ կան ֆլամանդական միալեզու շրջանից դուրս բնակվող ֆրանսիախոս ընտանիքների երեխաների համար, ապա դա այն պատճառով է, որ դրանք Լյովենի երկլեզու համալսարանի համար ծառայում են որպես դասախոսների վերապատրաստման դասընթացներ: Ինչ վերաբերում է օտարերկրացի որոշ երեխաների տրվող արտոնությանը, ապա դա արդարացվում է միջազգային հարաբերություններում բարեկրթության ավանդույթներով: Հետևաբար, այն ֆրանսիախոս երեխաների բացառումը, ովքեր բնակվում են ֆլամանդական միալեզու շրջանում, և որոնց ծնողները դասախոսական անձնակազմի անդամներ, ուսանողներ կամ Լյովենի համալսարանի աշխատակիցներ չեն, խտրական միջոց չէ օրենսդրի սահմանած որոշակի նպատակի օրինականության պարագայում:

Իրավիճակը միանգամայն տարբեր է «հատուկ հաստատություններ ունեցող» այն վեց համայնքների պարագայում, որոնք տեղակայված են երկլեզու պետության մայրաքաղաք և միջազգային կենտրոն հանդիսացող Բրյուսելի շրջակայքում: Համաձայն դատարանին տրամադրված տվյալների՝ ֆրանսիախոս ընտանիքների թիվն այդ համայնքներում բավականին մեծ է. համայնքները, այդպիսով, մինչև որոշակի աստիճան, «փառը» բնույթ ունեցող գոտի են:

Հենց այդ փաստը հաշվի առնելով է, որ 1963 թ. օգոստոսի 2-ի օրենքի 7-րդ բաժինը հեռանում է տարածքային սկզբունքից՝ ինչպես նշում է դատարանը երրորդ հարցի կապակցությամբ: Դրա առաջին պարբերությունից, իսկապես, պարզվում է, որ նշված վեց համայնքներն այլևս չեն կազմում ֆլամանդական միալեզու շրջանի մաս, այլ հանդիսանում են «առանձին վարչատարածքային միավոր»՝ օժտված սեփական «հատուկ կարգավիճակով»: Սրանից երկրորդ պարբերության մեջ ձևակերպվում է հետևանքների առաջին համախումբը. այն, ըստ էության, սահմանում է, որ դիտարկվող վեց համայնքները «վարչական հարցերում» գործածում են երկլեզու համակարգ: Ինչ վերաբերում է երրորդ պարբերությանը, որի համապատասխանությունը կոնվենցիայի 8-րդ և 14-րդ հոդվածներին և արձանագրության 2-րդ հոդվածին վիճարկում են դիմողները, ապա այն վերաբերում է «կրթական հարցերին»: Այն սահմանում է, որ վեց համայնքներում դասավանդման լեզուն ֆլամանդերենն է. այդուհանդերձ, այն պահանջում է նաև, որ ի շահ երեխաների, ում մայրենի կամ սովորաբար գործածվող լեզուն ֆրանսերենն է, նախադպրոցական և տարրական կրթության մակարդակներում կազմակերպվի ֆրանսերենով պետական կամ սուբսիդավորված կրթություն՝ պայմանով, որ նման կրթության համար դիմեն տասնվեց ընտանիքների գլխավորներ: Ինչևէ, այս կրթությունը հասանելի չէ այն երեխաների համար, ում ծնողները բնակվում են նշված համայնքներից դուրս: Մյուս կողմից, այս համայնքներում ֆլամանդերենով ուսուցանվող դասարաններում սկզբունքորեն կարող են սովորել բոլոր երեխաները՝ անկախ նրանց մայրենի կամ սովորաբար գործածվող լեզվից և ծնողների բնակության վայրից: Բնակության վայրին վերաբերող պայմանը, հետևաբար, վերաբերում է երկու լեզվական խմբերից միայն մեկին, և դատարանը խնդիր ունի պարզել, թե արդյոք դրա արդյունքում խտրականություն կա՞՝ ի հակադրություն կոնվենցիայի 14-րդ հոդվածի՝ արձանագրության 2-րդ հոդվածի առաջին նախադասության կամ կոնվենցիայի 8-րդ հոդվածի համակցությամբ:

Նման միջոցն արդարացված չէ կոնվենցիայի պահանջների տեսանկյունից՝ այն առումով, որ այն խտրական վերաբերմունք է ներառում որոշ անհատների նկատմամբ՝ հիմնված նույնիսկ ավելի շատ լեզվի, քան բնակության վայրի վրա:

Առաջին՝ այս միջոցը հավասարաչափ չի կիրառվում ազգային լեզուներից մեկը կամ մյուսը գործածող ընտանիքների նկատմամբ: Ֆլամանդերեն խոսող երեխաները, ովքեր բնակվում են ֆրանսիախոս միալեզու շրջանում, որը, ի միջի այլոց, բավականին մոտ է գտնվում, կարող են սովորել վեց համայնքների ֆլամանդերենով ուսուցանվող դպրոցներում, մինչդեռ ֆրանսիախոս երեխաները, ովքեր բնակվում են ֆլամանդական միալեզու շրջանում, չեն կարող սովորել նշված համայնքների ֆրանսիալեզու դպրոցներում: Նմանապես, վեց համայնքների ֆլամանդերենով ուսուցանվող դասարանները բաց են ֆլամանդական միալեզու համայնքի ֆլամանդերեն խոսող երեխաների համար, մինչդեռ այդ համայնքներում ֆրանսերենով ուսուցանվող դասարանները փակ են նշված շրջանի ֆրանսիախոս երեխաների համար:

Ավելին, նման իրավիճակը հակասության մեջ է հայտնվում այն իրողության հետ, որը ծագում է ֆրանսիախոս դպրոցներում սովորելու հնարավորությունից Բրյուսելի ընդլայնված տարածքում, քանի որ վերջիններս բաց են ֆրանսիախոս երեխաների համար՝ անկախ նրանց ծնողների բնակության վայրից (1963 թ. հուլիսի 30-ի օրենքի 5-րդ և 19-րդ բաժիններ):

Հետևաբար, ստացվում է, որ բնակության վայրի պայմանը սահմանված չէ հանուն դպրոցների շահերի, լինի դա վարչական թե ֆինանսական մղումներով. դիմողների պարագայում այն բացառապես բխում է լեզվին վերաբերող նկատառումներից: Ավելին, խնդրո առարկա միջոցը, դիմողների մեծամասնության և նրանց երեխաների դեպքում, ամբողջությամբ չի հարգում կիրառվող միջոցների և դրված նպատակի միջև համաչափության պահանջը: Այդ առնչությամբ դատարանը, մասնավորապես, մատնացույց է անում, որ «հատուկ հաստատություններ ունեցող» վեց համայնքների պետական կամ սուբսիդավորված ֆրանսիախոս դպրոցներում սովորելու անհնարինությունն ազդում է դիմողների երեխաների վրա՝ նրանց կողմից կրթության իրավունքի իրացման առումով, առավել ևս, որ նրանց բնակության համայնքներում նման դպրոցներ գոյություն չունեն:

Կրթության իրավունքից օգտվելը, ինչպես դատարանն է այն հասկանում, իսկ ավելի ճշգրիտ՝ գոյություն ունեցող դպրոցներում սովորելու իրավունքից օգտվելը, հետևաբար, այն կետում չէ, երբ այն երաշխավորված է բոլորի համար առանց խտրականության՝ մասնավորապես լեզվական հիմքով: Այլ կերպ ասած՝ դիտարկվող միջոցը, այդ առումով, անհամատեղելի է արձանագրության 2-րդ հոդվածի առաջին նախադասության հետ՝ կոնվենցիայի 14-րդ հոդվածի համակցությամբ . . .

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Որոշում է, ութ կողմ և յոթ դեմ ձայներով, որ 1963 թ. օգոստոսի 2-ի օրենքի 7-րդ բաժնի 3-րդ մասը չի համապատասխանում կոնվենցիայի 14-րդ հոդվածի պահանջներին՝ ընթերցված արձանագրության 2-րդ հոդվածի առաջին նախադասության հետ համակցությամբ, այնքանով, որ այն որոշ երեխաների թույլ չի տալիս, բացառապես նրանց ծնողների բնակության վայրի հիման վրա, սովորել ֆրանսիալեզու դպրոցներում, որոնք գտնվում են Բրյուսելի մերձակայքում տեղակայված վեց համայնքներում՝ օժտված հատուկ կարգավիճակով, և որոնցից մեկն էլ Կրաայնեմն է:

Տվյալ դիմողներին իրավունք է վերապահում, պատեհության պարագայում, դիմել, այդ կոնկրետ կետի առնչությամբ՝ արդարացի փոխհատուցում ստանալու համար.

2. Որոշում է միաձայն, խնդրո մյուս առարկաների առումով, որ դիմողների կողմից վկայակոչված կոնվենցիայի որևէ հոդվածի (հոդվ. 8, հոդվ. 14) կամ արձանագրության որևէ հոդվածի (թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվ.) խախտում չի եղել և չկա ներկայումս:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Քեսիևը և դատավորներ Վերդրոսը, Բալլադորե Պալիերին, Մոզլերը, Զեքիան, Ֆավրեն, Կրեմոնան և Ուոլդոկը: Դատավորներ Հոլմբեքը, Մարիդակիսը, Ռոդենբերը, Ռոսը, Ուոլդը, Վիարդան և Մաստը չհամընկնող կարծիքներ հրապարակեցին, որոնցում արտահայտում էին այն կարծիքը, որ, *ի թիվս այլոց*, Բրյուսելի շրջակայքում գտնվող համայնքներում գործող կրթական հատուկ պայմանները դիմողների վրա անհամաչափ բեռ չեն դնում և, հետևաբար, չեն խախտում կոնվենցիան:

2 Վերը բերված վճիռը դատարանի կողմից 2-րդ հոդվածի բովանդակության հստակեցման առաջին փորձն էր: Հոդվածի առաջին նախադասության բացասական ձևակերպումը, համակցված հոդվածի մշակման ոչ միանշանակ նախապատմության հետ, սահմանափակում էին դատարանի՝ այդ դրույթի բովանդակած իրավունքի ծավալին ընդգրկուն մեկնաբանություն տալու կարողությունը: Այդուհանդերձ, դատարանը որոշեց, որ անհատների համար գոյություն ունեն առկա կրթական հաստատություններից օգտվելու իրավունքը և անհատների՝ ստացած կրթության պաշտոնական ճանաչման իրավունքը: Ինչևէ, որևէ որոշակի տեսակի կրթական հաստատություն հիմնելու կամ ֆինանսավորելու պարտավորություն պետությունները չեն կրում: Իսկապես, դատարանը բացահայտորեն համարում է, որ 2-րդ հոդվածի առաջին նախադասությունը պետություններին իրավունք է վերապահում ինքնուրույն որոշելու՝ սուբսիդավորե՞լ, թե՞ չսուբսիդավորել մասնավոր դպրոցները: Դատարանը նաև ընդունում է պետության՝ կրթության իրավունքը կարգավորելու իրավունքը:

3 Ավելի ուշ տեղ գտած *«Կյելդսենը, Բուսկ Մադսենը և Պեդերսենն ընդդեմ Դանիայի»* (*Kjeldsen, Busk Madsen and Pedersen v Denmark*) գործում (որին անդրադարձ է արված ստորև՝ էջ 1016), դատարանը նշել էր, որ «ինչպես ցույց է տալիս վերջինիս բուն կառուցվածքը, 2-րդ հոդվածը ներկայացնում է մի ամբողջություն, որում գերակայում է առաջին նախադասությունը» (պարբ. 52): Հետևաբար, երկրորդ նախադասության մեջ ներառված իրավունքը առաջին նախադասությամբ սահմանվող կրթության հիմնարար իրավունքի «հավելումն» է [adjunct]:

4 Լիակազմ դատարանի մեծ պալատն այս հոդվածի խախտում է արձանագրել «*Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի*» (*Cyprus v Turkey*) գործում, տե՛ս վերը՝ էջ 124: Դիմող կառավարությունը վստահեցնում էր, որ հյուսիսում ծագումով հույն կիպրոսցի երեխաների համար միջնակարգ դպրոցների բացակայությունը (այդ տարածքում միջնակարգ դպրոցներում ուսումը կա՛մ թուրքերենով էր, կա՛մ անգլերենով) խախտում է երեխաների կրթության իրավունքը և նրանց ծնողների՝ իրենց երեխաներին սեփական կրոնական և փիլիսոփայական համոզմունքների համաձայն կրթություն տալու իրավունքը: Մեծ պալատը, տասնվեց կողմ և մեկ դեմ ձայների հարաբերակցությամբ, որոշեց, որ.

277. Դատարանը նշում է, որ Հյուսիսային Կիպրոսում բնակվող ծագումով հույն կիպրոսցի ծնողների երեխաները, որոնք ցանկություն ունեն հունարեն միջնակարգ կրթություն ստանալ, ստիպված են տեղափոխվել հարավային հատվածում գտնվող դպրոցներ, քանի որ այսպես կոչված «ՀԿԹՀ»-ում («Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն») նման հաստատություն պարզապես գոյություն չունի այն ժամանակից ի վեր, ինչ Կիպրոսի թուրքական իշխանությունները որոշում կայացրին դրանք վերացնել: Այսպիսով, ինչպես հայտնի է, 12 տարեկանը լրանալուն պես, երեխաները կարող են շարունակել իրենց կրթությունը հյուսիսում գտնվող կա՛մ թուրքալեզու, կա՛մ անգլիալեզու դպրոցներում: Համապատասխանաբար, բառի խիստ իմաստով, այստեղ չի մերժվում կրթության իրավունքը, ինչը պայմանավորվող կողմի վրա տարածվող առաջնային պարտավորությունն է՝ համաձայն թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի առաջին նախադասության (տե՛ս «*Կյելդսենը, Բուսկ Մադսենը և Պեդերսենն ընդդեմ Դանիայի*», 1976 թ. դեկտեմբերի 7-ի վճիռ, շարք A, թիվ 23, էջ 25-6, պարբ. 52): Ավելին, այս դրույթը չի սահմանում, թե ինչ լեզվով պետք է տրամադրվի կրթությունը, որպեսզի հարգվի կրթության իրավունքը (տե՛ս վերը բերված «*Բելգիայի լեզվաբանական*» գործով վճիռը, էջ 30-1, պարբ. 3):

278. Այնուամենայնիվ, դատարանի կարծիքով, ծագումով հույն կիպրոսցի ծնողների համար իրենց երեխաների կրթությունը հյուսիսում շարունակելու տարբերական իրատեսական չէ, եթե հաշվի առնվի այն փաստը, որ դիտարկվող երեխաներն արդեն իսկ իրենց տարրական կրթությունը ստացել են տեղի հունական դպրոցներում: Իշխանությունները, անկասկած, քաջատեղյակ են, որ ծագումով հույն կիպրոսցի ծնողների ցանկությունն է, որ իրենց երեխաները դպրոցական կրթությունն ավարտեն հունարենով:

Այն, որ այսպես կոչված «ՀԿԹՀ»-ի իշխանությունները, հունարենով տարրական դպրոցական կրթություն տրամադրելու պատասխանատվությունը ստանձնելով հանդերձ, չեն ապահովում հունարենով կրթության տրամադրման շարունակությունը միջնակարգ կրթության օղակում, պետք է իրականում դիտել որպես խնդրո առարկա իրավունքի էության մերժում: Չի կարելի համարել, որ, անկլավում մնացած ծագումով հույն կիպրոսցիների լեզվական ավանդույթին համապատասխան, հարավում միջնակարգ կրթության տրամադրումը բավարար է թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածով սահմանված պարտավորությունը կատարելու համար՝ հաշվի առնելով այդ տարբերակի ազդեցությունը ընտանիքի կյանքի վրա [հյուսիսի իշխանությունները թույլ չէին տալիս արական սեռի 16 տարեկանից բարձր այն ներկայացուցիչներին և իգական սեռի 18 տարեկանից բարձր այն ներկայացուցիչներին, ովքեր իրենց կրթությունը հարավում են ստացել, հիմնական բնակության վերադառնալ հյուսիս]:

279. Դատարանը նշում է նաև, որ դիմող կառավարությունը ևս մեկ գանգատ է ներկայացնում տարրական կրթության և ուսուցչական թափուր տեղերը լրացնելու վերաբերյալ «ՀԿԹՀ»-ի իշխանությունների ցուցաբերած վերաբերմունքի կապակցությամբ: Ինչպես հանձնաժողովը, դատարանը համարում է, որ, որպես ամբողջություն վերցված, առկա ապացույցները չեն բացահայտում այնպիսի վարչական գործելակերպի գոյություն, որը մերժում է կրթության իրավունքը տարրական կրթության օղակում:

280. Ելնելով վերը բերված նկատառումներից՝ դատարանը եզրակացնում է, որ խախտվել է թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածը՝ Հյուսիսային Կիպրոսում բնակվող ծագումով հույն կիպրոսցիների առումով, այնքանով որ նրանց համար առկա չեն միջնակարգ կրթության համապատասխան հաստատություններ:

Մեծ պալատի վճռով անուղղակիորեն արձանագրվեց, որ ոտնահարվել են թե՛ միջնակարգ դպրոցի հունական ծագմամբ կիպրոսցի աշակերտների, թե՛ նրանց ծնողների՝ 2-րդ հոդվածով սահմանված իրավունքները:

5 «*Լեյլա Շահինն ընդդեմ Թուրքիայի*» (*Leyla Sahin v Turkey*) գործում՝ 2005 թ. նոյեմբերի 10-ի վճիռ (տե՛ս նաև վերը՝ էջ 648), մեծ պալատը որոշեց, որ բարձրագույն կրթական հաստատությունները նույնպես գտնվում են այս դրույթի գործողության ոլորտում:

136. Դատարանի հայացքից չի վրիպում այն փաստը, որ կրթության իրավունքի զարգացումը, այն պարագայում, երբ այդ իրավունքի բովանդակությունը տարբեր է տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում՝ ըստ տնտեսական և սոցիալական հանգամանքների, հիմնականում կախված է համայնքի ռեսուրսներից և կարիքներից: Սակայն խիստ կարևոր է, որ կոնվենցիան մեկնաբանվի և կիրառվի այնպես, որ դրա իրավունքները գործնական և արդյունավետ լինեն, ոչ թե տեսական և վերացական: Ավելին, կոնվենցիան գործում գործիք է, որը պետք է մեկնաբանվի տվյալ ժամանակի պայմանների լույսի ներքո («*Մարքսն ընդդեմ Բելգիայի*» (*Marckx v Belgium*), 1979 թ. հունիսի 13-ի վճիռ, շարք A, թիվ 31, էջ 19, պարբ. 41, «*Էյրին ընդդեմ Իռլանդիայի*» (*Airey v Ireland*), 1979 թ. հոկտեմբերի 9-ի վճիռ, շարք A, թիվ 32, էջ 14-15, պարբ. 26, և, որպես ամենաուշը տեղ գտածը՝ «*Մամաթկուլովը և Ասկարովն ընդդեմ Թուրքիայի*» (*Mamatkulov and Askarov v Turkey*) [GC], թիվ 46827/99 և թիվ 46951/99, պարբ. 121, 4-ը փետրվարի, 2005): Թեև 2-րդ հոդվածի առաջին նախադասությունն ըստ էության սահմանում է տարրական և միջնակարգ կրթությունից օգտվելու հնարավորությունը, չկա այնպիսի անջրանցիկ բաժանարար, որը կառանձնացներ բարձրագույն կրթությունը կրթության այլ տեսակներից: Եվրոպայի խորհուրդը վերջերս ընդունած մի շարք գործիքներում շեշտել է բարձրագույն կրթության առանցքային դերը և կարևորությունը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների առաջխաղացման և ժողովրդավարության ամրապնդման համար (տե՛ս, *ի թիվս այլոց*, Հանձնարարական թիվ R (98) 3 և Հանձնարարական թիվ 1353 (1998)): Ինչպես նշված է Եվրոպական տարածաշրջանի բարձրագույն կրթության որակավորման ճանաչման կոնվենցիայում [Convention on the Recognition of Qualifications concerning Higher Education in the European Region], բարձրագույն կրթությունը «կարևոր նշանակություն ունի գիտելիքների ձեռքբերման ու կատարելագործման հարցում» և «բացառիկ մշակութային և գիտական հարստություն է ինչպես անհատների, այնպես էլ հասարակության համար»:

137. Հետևաբար, դժվար է պատկերացնել, որ տվյալ ժամանակ գոյություն ունեցող բարձրագույն կրթական հաստատությունները չեն գտնվում թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի առաջին նախադասության գործողության ոլորտում: Թեև այդ հոդվածը պայմանավորվող կողմերի համար չի սահմանում բարձրագույն կրթական հաստատություններ հիմնելու պարտականություն, ցանկացած պետություն, որը հիմնում է նման հաստատություններ, պարտավորություն է կրում դրանցից օգտվելու արդյունավետ իրավունք ապահովել: Ժողովրդավարական հասարակությունում կրթության իրավունքը, առանց որի հնարավոր չէ պատկերացնել մարդու իրավունքների առաջընթացը, այնպիսի հիմնարար դեր է խաղում, որ թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի սահմանափակող մեկնաբանությունը չի համապատասխանի այդ դրույթի նպատակին և խնդրին (տե՛ս *mutatis mutandis* վերը մեջբերված «*Բելգիայի լեզվաբանական» գործ*, էջ 33, պարբ. 9, և «*Դելկուրն ընդդեմ Բելգիայի*» (*Delcourt v Belgium*), 1970 թ. հունվարի 17-ի վճիռ, շարք A, թիվ 1, էջ 14, պարբ. 25):

…

141. Նախորդող բոլոր դիտարկումներից պարզ է դառնում, որ տվյալ ժամանակ գոյություն ունեցող յուրաքանչյուր բարձրագույն կրթական հաստատություն գտնվում է թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի առաջին նախադասության գործողության

ոլորտում, քանի որ նման կրթական հաստատություններից օգտվելու իրավունքն այդ դրույթով սահմանված իրավունքի անքակտելի մասն է: Սա ընդլայնված (էքստենսիվ) մեկնաբանություն չէ, որը պայմանավորվող երկրներին ստիպում է նոր պարտավորություններ ստանձնել: Այն հիմնվում է թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի առաջին նախադասության բուն եզրույթների վրա՝ ընթերցված դրա համատեքստում և հաշվի առնելով կոնվենցիայի՝ այդ նորմատիվ պայմանագրի խնդիրը և նպատակը (տե՛ս *mutatis mutandis* «*Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության*» (*Golder v the United Kingdom*), 1975 թ. փետրվարի 21-ի վճիռ, շարք A, թիվ 18, էջ 18, պարբ. 36):

Այնուամենայնիվ, մեծ պալատի բացարձակ մեծամասնությունը (տասնվեց կողմ, մեկ դեմ) որոշել էր, որ համալսարանում մահմեդական գլխաշոր կապելու արգելքը դիմողի կրթության իրավունքի խախտում չէ: Հետևելով դիմողի՝ 9-րդ հոդվածով ներկայացված դիմումի նկատմամբ կիրառված հիմնավորմանը, մեծ պալատը եզրակացրել է, որ դրված սահմանափակումը կանխատեսելի էր, հետապնդում էր օրինական նպատակներ և համաչափ էր:

6 Մեծ պալատը միաձայն որոշեց, որ չեչեն ներգաղթյալի երեխաներին չընդունելը, որպեսզի նրանք շարունակեն իրենց կրթությունը հարևան հանրապետությունում գտնվող դպրոցում, ուր նրանք տեղափոխվել էին, խախտում է 2-րդ հոդվածը. «*Տիմիշևն ընդդեմ Ռուսաստանի*» (*Timishev v Russia*), 2005 թ. դեկտեմբերի 13-ի վճիռ:

2-րդ հոդվածի առաջին նախադասություն

«Քեմփբելը և Քոզանսն ընդդեմ ՄԹ-ի»
(Campbell and Cosans v UK) A.48 (1982) 4 EHRR 293
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Այս գործի նախապատմությունը նկարագրված է վերը՝ էջ 234:

III. ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

39. Տիկին Քոզանսը պնդում էր, որ դպրոցից հեռացվելու հետևանքով ... իր որդի Ջեֆրին զրկվել է կրթության իրավունքից՝ հակառակ 2-րդ հոդվածի առաջին նախադասության:

Հանճնաժողովն անհարկի էր համարել քննել այդ հարցը՝ համարելով, որ այն տարրալուծվում է երկրորդ նախադասության խախտման արձանագրմամբ: Կառավարությունը ներկայացված այլընտրանքային գանգատում ընդունեց այս տեսակետը, սակայն նրա սկզբունքային պնդումն այն էր, որ կրթական հաստատություններից օգտվելու իրավունքը, որը երաշխավորվում է առաջին նախադասությամբ, կարող է ենթակա լինել ողջամիտ պահանջների, և քանի որ Ջեֆրիի հեռացումը նրա և նրա ծնողների՝ նման պահանջն ընդունելուց հրաժարվելու հետևանք է, խախտում տեղի չի ունեցել:

40. Դատարանը համարում է, որ հարցն անհրաժեշտ է քննել: Իհարկե, տիկին Քոզանսի որդի Ջեֆրիի հաճախած դպրոցում մարմնական պատժի՝ որպես կարգապահական միջոցի գոյությունն ընկած է տիկին Քոզանսի՝ 2-րդ հոդվածին վերաբերող երկու պնդումների հիմքում էլ, սակայն նրա երկու պնդումների փաստական հիմքերի միջև էական տարբերություն կա: Երկրորդ նախադասության դեպքում իրավիճակը, որի համար գանգատ էր ներկայացվել, դպրոց հաճախելուն էր վերաբերում, և դատարանից օգնություն է հայցվել որոշակի գործելակերպի առնչությամբ, մինչդեռ առաջին նախադասության պարագայում խոսքը դպրոց հաճախելն արգելելու փաստի մասին է. վերջին իրավիճակի հետևանքները շատ ավելի հեռուն կարող են գնալ, քան առաջինինը: Համապատասխանաբար, գործը հասել է առանձին գանգատի, այլ ոչ պարզապես հավելյալ օրինական ներկայացման կամ փաստարկի . . .

Կրկին՝ 2-րդ հոդվածը կազմում է ամբողջություն, որտեղ գերակայում է նրա առաջին նախադասությունը, իսկ երկրորդ նախադասության մեջ ընդգրկված իրավունքը կրթության հիմնարար իրավունքի «հավելում» է (տե՛ս . . . *Կյելդսենի, Բուսկ Մադսենի և Պեդերսենի* գործով վճիռը, էջ 25-6, պարբ. 52):

Վերջապես, նշանակալի տարբերություն կա երկու պահանջների իրավական հիմքերի միջև, քանի որ մեկը վերաբերում է ծնողի իրավունքին, մյուսը՝ երեխայի իրավունքին:

Հետևաբար, առաջին նախադասությամբ առաջ եկած հարցը չի տարրալուծվում երկրորդ նախադասության խախտման արձանագրմամբ:

41. 2-րդ հոդվածի առաջին նախադասությամբ երաշխավորված կրթության իրավունքն իր բուն էությամբ ենթադրում է պետական կարգավորում, սակայն նման կարգավորումը երբեք չպետք է վնասի այդ իրավունքի գոյությունը և ոչ էլ հակասության մեջ լինի կոնվենցիայով և դրա արձանագրություններով սահմանված այլ իրավունքների հետ (տե՛ս 1968 թ. հուլիսի 23-ի ըստ էության վճիռը՝ «*Բելգիայի լեզվաբանական*» գործի առումով, շարք A, թիվ 6, էջ 32, պարբ. 5):

Ջեֆրի Քոզանսի հեռացումը, որն ուժի մեջ մնաց գրեթե ամբողջ ուսումնական տարին, պայմանավորված էր նրանով, որ նա և նրա ծնողները հրաժարվում էին ընդունել, որ նա ենթարկվի մարմնական պատժի կամ ենթակա է մարմնական պատժի . . . Տղայի վերադարձը դպրոց կարող էր տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե նրա ծնողները գործեին հակառակ իրենց համոզմունքների, համոզմունքներ, որոնք Միացյալ Թագավորությունը պարտավորվել է հարգել՝ համաձայն 2-րդ հոդվածի երկրորդ նախադասության… Կրթական հաստատությունից օգտվելու համար սահմանված պայմանը, որն այս կերպ հակասության մեջ է թիվ 1 արձանագրությամբ սահմանված մեկ այլ իրավունքի հետ, չի կարող համարվել ողջամիտ և ցանկացած պարագայում դուրս է մնում 2-րդ հոդվածով պետության՝ կարգավորման առումով ունեցած իրավասության շրջանակներից:

Հետևաբար, Ջեֆրի Քոզանսի դեպքում տեղի է ունեցել նշված հոդվածի առաջին նախադասության խախտում:

…

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

…

Վեց կողմ և մեկ դեմ ձայներով՝ որոշում է, որ Ջեֆրի Քոզանսի դեպքում տեղի է ունեցել նշված հոդվածի առաջին նախադասության խախտում . . .

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Ռիսդալը և դատավորներ Կրեմոնան, Տոիր Վիլջաուլմսոնը, Լիշը, Փեթիթին և Մակդոնալդը: Դատավոր Էվանսը, որը ներկայացնում էր Մեծ Բրիտանիան, առարկեց, քանի որ համարում էր, որ դիմողների անձնական մոտեցումները դպրոցներում մարմնական պատժի կիրառության վերաբերյալ չեն կարող անվերապահորեն ընդունվել որպես դատապարտման հիմք՝ ըստ 2-րդ հոդվածի երկրորդ նախադասության. հետևաբար, վերջինիս կարծիքով, այն, որ դպրոցը հրաժարվում էր Ձեֆրիին հետ ընդունել, քանի դեռ նա չի ընդունել կարգապահության առումով դպրոցի քաղաքականությունը, հարկ է համարել ողջամիտ պահանջ, որը չի խախտում 2-րդ հոդվածի առաջին նախադասությունը:

2 Վերը նկարագրված վճիռը ցույց է տալիս պետական ֆինանսավորմամբ դպրոցներից աշակերտներին հեռացնելու առումով պետությունների ունեցած իրավասությունների սահմանները:

2-րդ հոդվածի երկրորդ նախադասություն

……

«Կյելդսենը, Բուսկ Մադսենը և Պեդերսենն ընդդեմ Դանիայի»
(Kjeldsen, Busk Madsen and Pedersen v Denmark) A.23 (1976) 1 EHRR 711
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դանիայի կառավարությունը մտահոգված էր 1960-ականների սկզբներին անցանկալի հղիությունների թվաքանակի աճով, և, արդյունքում, փորձագետների հանձնաժողով էր ստեղծել, որը պետք է ուսումնասիրեր դպրոցներում սեռական կրթության խնդիրը: Հանձնաժողովը զեկույց ներկայացրեց 1968 թ. և առաջարկեց սեռական դաստիարակության հարցերը ներառել պետական դպրոցների ուսումնական ծրագրով ուսուցանվող պարտադիր առարկաների ցանկում (ինչպես արվել էր Շվեդիայում մի քանի

տարի առաջ): 1970 թ. Դանիայի խորհրդարանը միաձայն ընդունեց օրենք, որով սեռական կրթությունն ավելացվեց այն առարկաներին, որոնք ներառված էին պետական դպրոցների պարտադիր ուսումնական ծրագրում: Դրան հաջորդեցին կրթության նախարարության համապատասխան շրջաբերականները և հրահանգները, որոնք մանրամասնում էին պետական դպրոցներում սեռական կրթության բովանդակությունը և ձևաչափը: Դպրոցի առաջին տարում (6 տարեկան աշակերտների համար) դասավանդումը սկսվում էր ընտանիք հասկացությունից և դպրոցի հինգերորդից յոթերորդ տարիների ընթացքում ուսուցանվող թեմաները ներառում էին սեռական օրգանները, սեռական հասունացումը և սեռական գործողությունները (օրինակ՝ սեռական հարաբերությունը): Դիմողները ծնողների երեք խումբ էին, որոնց մասնագիտությունները ներառում էին հոգևորականությունը և դասավանդումը. նրանք ունեին դպրոցական տարիքի երեխաներ: Դիմողները բողոքում էին պետական դպրոցներում պարտադիր սեռական կրթության դեմ, և երբ իշխանությունները մերժեցին նրանց երեխաներին այդ դասերից ազատելու խնդրանքը, նրանք դիմեցին հանձնաժողովին՝ հայտարարելով, որ խախտվել են իրենց քրիստոնեական սկզբունքները՝ ի խախտումն թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի: Հանձնաժողովը կարծիք արտահայտեց, որ, *ի թիվս այլոց*, սեռական կրթության դանիական համակարգը չի խախտում թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածը (յոթ կողմ և յոթ դեմ ձայներով, որոշիչ դեր խաղաց նախագահողի ձայնը՝ տրված հօգուտ պետության):

I. ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ

49. Դիմողները վկայակոչում են թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածը, որը սահմանում է, որ.

> «Ոչ ոքի չի կարելի մերժել կրթության իրավունքը: Պետությունը, կրթության և ուսուցման բնագավառում իր ստանձնած ցանկացած գործառույթ իրականացնելիս հարգում է ծնողների՝ զավակների համար իրենց կրոնական ու փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն ու ուսուցում ապահովելու իրավունքը»:

50. Հանձնաժողովում իր հիմնավորման մեջ կառավարությունը հայտարարում է, որ 2-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը չի վերաբերում պետական դպրոցներին … Սակայն նրա փաստարկները դրանից հետո որոշակի փոփոխություններ են կրել: 1976 թ. մարտի 8-ի իր հայտարարության մեջ և 1976 թ. հունիսի 1-ի և 2-ի դատական նիստերում կառավարությունն ընդունեց, որ մասնավոր դպրոցների գոյությունը, թերևս, անհրաժեշտաբար բոլոր դեպքերում չի նշանակում, որ նշված նախադասության խախտում չկա: Այդուհանդերձ, կառավարությունը շեշտում էր, որ Դանիան ծնողներին չի ստիպել իրենց երեխաներին վստահել պետական դպրոցներին. պետությունը թույլ է տալիս ծնողներին իրենց երեխաներին կրթության տալ կամ կազմակերպել նրանց կրթությունը տանը կամ, ամենակարևորը, ուղարկել նրանց մասնավոր կրթական հաստատություններ, որոնց պետությունը շատ նշանակալի սուբսիդիաներ է հատկացնում՝ դրանով ստանձնելով «կրթության և ուսուցման վերաբերյալ որոշակի գործառույթ»՝ 2-րդ հոդվածի իմաստով: Դրանով Դանիան, ինչպես ներկայացված էր, ազատվում էր նշված դրույթի երկրորդ նախադասությունից բխող պարտավորություններից:

Դատարանը նշում է, որ Դանիայում մասնավոր դպրոցները գոյություն ունեն կրթության պետական համակարգի հետ կողք կողքի: 2-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը պարտադիր է պայմանավորվող պետությունների համար՝ յուրաքանչյուր և ամեն գործառույթի իրականացման պարագայում (այն նշում է «ցանկացած գործառույթ»), որ նրանք ձեռնարկում են կրթության և ուսուցման ոլորտում՝ ներառյալ նրանք, որոնց մեջ մտնում են պետական (հանրային) կրթության կազմակերպումը և ֆինանսավորումը:

Ավելին, 2-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը պետք է ընթերցել առաջինի հետ միասին, որով սահմանվում է կրթության իրավունքը բոլորի համար: Այս հիմնարար իրավունքի վրա է, որ պատվաստվում է ծնողների՝ սեփական կրոնական և փիլիսոփայական համոզմունքները հարգելու իրավունքը, իսկ առաջին նախադասությունը, ինչպես և երկրորդը, տարբերակում չի մտցնում պետական և մասնավոր ուսուցման միջև:

Նախապատրաստական փաստաթղթերը, որոնք, անկասկած, առանձնակի նշանակություն ունեն այնպիսի կետի պարագայում, որը նման երկարաշունչ և բուռն քննարկումների պատճառ էր դարձել, հաստատում են 2-րդ հոդվածի առաջին ընթերցումից բխող մեկնաբանությունը: Թեև դրանք անառարկելիորեն ցույց են տալիս, ինչպես հիշեցնում է կառավարությունը, այն կարևորությունը, որ տալիս են ուսման ազատությանը Խորհրդակցական վեհաժողովի բազմաթիվ անդամներ և մի շարք կառավարություններ, ասել է թե՝ մասնավոր դպրոցներ հիմնելու ազատությանը, Նախապատրաստական փաստաթղթերը, չնայած դրան, այդ ազատությունը երաշխավորելուց այն կողմ չանցնելու մտադրություն չեն բացահայտում: Ի տարբերություն մի շարք ավելի վաղ տարբերակների, ի վերջո, ընդունված տեքստը բացահայտորեն չի նշում այդ ազատությունը. և հանձնաժողովի պատվիրակների բազմաթիվ միջամտությունները և առաջարկությունները ցույց են տալիս, որ ուշադրությունից դուրս չի մնացել պետական ուսուցման ոլորտում ծնողների կրոնական և փիլիսոփայական համոզմունքների հանդեպ հարգանք ապահովելու անհրաժեշտությունը:

2-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը, կարճ ասած, նպատակ ունի ապահովելու կրթության ոլորտում բազմակար-

ծության հնարավորությունը, ինչը կարևորագույն նշանակություն ունի «ժողովրդավարական հասարակության» (ինչպես այն հասկացվում է կոնվենցիայում) պահպանման համար: Նկատի ունենալով ժամանակակից պետության հզորությունը՝ առաջին հերթին պետական ուսուցման միջոցով է, որ այս նպատակը պետք է իրականանա:

Այդպիսով, դատարանը եզրակացնում է, ինչպես միաձայն կերպով արել էր հանձնաժողովը, որ դանիական պետական դպրոցները դուրս չեն մնում թիվ 1 արձանագրության իրավասությունից: Այն հարցի ուսումնասիրության ընթացքում, թե արդյոք խախտվե՞լ է 2-րդ հոդվածը, սակայն, դատարանը չի կարող մոռանալ, որ կրթության և ուսուցման առումով Դանիայի ստանձնած գործառույթները ներառում են մասնավոր դպրոցներին նշանակալի օգնության հատկացումը: Թեև այս դպրոցներին դիմելը ծնողներից որոշակի զոհողություններ է պահանջում, ինչն արդարացիորեն նշել էին դիմողները, այլընտրանքային լուծումը, որ նրանք տալիս են, գործոն է, որը չի կարելի անտեսել սույն գործում: Հանձնաժողովի մեծամասնության անունից հանդես եկող պատվիրակն ընդունեց, որ այդ գործոնին բավարար ուշադրություն չի հատկացվել զեկույցի 152-րդ և 153-րդ պարբերություններում:

51. Կառավարությունը, որպես այլընտրանք, միջնորդում էր ընդունել, որ թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը, ենթադրելով, որ այն վերաբերում է նույնիսկ պետական դպրոցներին, որտեղ հաճախումը պարտադիր չէ, միայն նախատեսում է ծնողների՝ իրենց երեխաներին «կոնկրետ դավանանքի վերաբերող կրոնական դասավանդում» ներառող դասերից ազատելու իրավունքը:

Դատարանը համաձայն չէ այդ կարծիքին: 2-րդ հոդվածը, որը վերաբերում է կրթության և ուսուցման առումով պետության յուրաքանչյուր գործառույթի, թույլ չի տալիս տարբերակում մտցնել կրոնական դասավանդման և այլ առարկաների միջև: Այն պետություններին պատվիրում է ողջ պետական կրթական ծրագրի ընթացքում հարգել ծնողների համոզմունքները, լինեն դրանք կրոնական թե փիլիսոփայական:

52. Ինչպես ցույց է տալիս բուն կառուցվածքը, 2-րդ հոդվածը ամբողջություն է, որում գերակայում է առաջին նախադասությունը: Հանձն առնելով, որ չի կարելի «մերժել կրթության իրավունքը», պայմանավորվող պետություններն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի երաշխավորում են «տվյալ ժամանակ գոյություն ունեցող կրթական հաստատություններից օգտվելու իրավունքը», որպեսզի «հնարավորություն ունենա օգուտ քաղելու իր կրթությունից»՝ «ստացած ուսման պաշտոնական ճանաչման» միջոցով (1968 թ. հուլիսի 23-ի ըստ էության վճիռ՝ «*Բելգիայի լեզվաբանական*» գործով, շարք A, թիվ 6, էջ 30-32, պարբ. 3-5):

2-րդ հոդվածի երկրորդ հոդվածով սահմանված իրավունքը կրթության հիմնարար իրավունքի հավելումն է (վերը բերված պարբ. 50): Քանի որ ծնողներն են առաջին հերթին պատասխանատու իրենց երեխաների «կրթության և ուսուցման» համար, սեփական երեխաների հանդեպ բնական պարտականության կատարման միտմամբ է, որ ծնողները կարող են պահանջել պետությունից՝ հարգել իրենց կրոնական և փիլիսոփայական համոզմունքները: Այդպիսով, նրանց իրավունքը համապատասխանում է մի պատասխանատվության, որը սերտորեն կապված է կրթության իրավունքից օգտվելու և այդ իրավունքն իրացնելու հետ:

Մյուս կողմից՝ «կոնվենցիայի և արձանագրության դրույթները հարկ է ընթերցել որպես ամբողջություն» (1968 թ. հուլիսի 23-ի վերը հիշատակված վճիռ, նույնը, էջ 30, պարբ. 1): Համապատասխանաբար, 2-րդ հոդվածի երկու նախադասությունները պետք է ընթերցել ոչ միայն մեկը մյուսի լույսի ներքո, այլև, մասնավորապես, կոնվենցիայի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածների, որոնք հռչակում են յուրաքանչյուրի՝ ներառյալ ծնողների և երեխաների, «անձնական ու ընտանեկան կյանքի ... հարգանքի», «մտքի, խղճի և կրոնի ազատության» և «տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատության» իրավունքը:

53. Նախորդ պարբերությունից առաջին հերթին հետևում է, որ ուսումնական ծրագրի պլանավորումը և հաստատումը, սկզբունքորեն, պայմանավորվող պետությունների իրավազորության տակ են: Սա հիմնականում ներառում է նպատակահարմարության հարցերը, որոնց առումով դատարանը չէ, որ պետք է որոշումներ կայացնի, և որոնց լուծումը կարող է օրինականորեն տարբեր լինել՝ կախված երկրից և դարաշրջանից: Մասնավորապես, արձանագրության 2-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը պետություններին չի արգելում ուսուցման և կրթության միջոցով տեղեկություններ կամ գիտելիք հաղորդել, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կրոնական կամ փիլիսոփայական (աշխարհայացքային) բնույթ ունեն: Այն նույնիսկ թույլ չի տալիս ծնողներին բողոքել ուսումնական ծրագրում նման ուսուցման և կրթության ներառման դեմ, քանի որ այլապես ողջ ինստիտուցիոնալացված ուսուցումը կկանգներ անհնարինն ապացուցելու վտանգի առջև: Իրականում դպրոցում դասավանդվող բազմաթիվ առարկաների դեպքում շատ դժվար է թվում մեծ կամ փոքր չափով որոշակի փիլիսոփայական բնույթ կամ հետևանքներ չունենալը: Ասվածը ճիշտ է նաև կրոնական ուղղվածության վերաբերյալ, եթե հիշենք այն, որ կրոնները շատ լայն դոգմատիկ և բարոյական միավոր են ձևավորում, որն ունի կամ կարող է ունենալ փիլիսոփայական, տիեզերաբանական կամ բարոյական բնույթի բոլոր հարցերի պատասխանները:

2-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը, մյուս կողմից, ենթադրում է, որ պետությունը կրթության և ուսուցման առումով իր ստանձնած գործառույթներն իրականացնելիս պետք է հոգ տանի, որ ուսումնական ծրագրում ներառված տեղեկությունները և գիտելիքը հաղորդվեն օբյեկտիվ, քննադատական և բազմակարծիք ձևով: Պետությանն արգելված է այնպիսի գաղափարների ներդրման նպատակ հետապնդել, որը կարող է ենթադրաբար ծնողների կրոնական և փիլիսոփայական համոզմունքները չհարգել: Սա է այն սահմանը, որը չպետք է անցնել:

Նման մեկնաբանությունը, միաժամանակ, համահունչ է թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի առաջին նախադասությանը, կոնվենցիայի 8-10-րդ հոդվածներին և բուն կոնվենցիայի ընդհանուր ոգուն՝ գործիքի, որը ստեղծվել է ժողովրդավարական

հասարակության իղեալները և արժեքները պահպանելու և առաջ մղելու համար:

54. Վիճարկվող օրենսդրությունը՝ վերը բերված մեկնաբանությամբ, արձանագրության 2-րդ հոդվածով քննելու համար անհրաժեշտ է, խուսափելով որևէ գնահատական տալուց օրենսդրության նպատակահարմարությանը, անդրադառնալ այն նյութական իրավիճակին, որին այն փորձում էր և փորձում է հասնել:

Դանիայի օրենսդիրը, որը չէր զլացել նախապես ստանալ որակյալ փորձագետների կարծիքը, հստակորեն որպես մեկնակետ է վերցրել այն քաջ հայտնի փաստը, որ ներկայումս Դանիայի երեխաներն առանց դժվարության և մի քանի աղբյուրներից ձեռք են բերում իրենց հետաքրքրող տեղեկությունները սեռական կյանքի վերաբերյալ: Այդ թեմայի վերաբերյալ պետական դպրոցներում առկա դասավանդումն ուղղված է ոչ այնքան նրանց այնպիսի գիտելիք հաղորդելուն, որը նրանք չունեն կամ չեն կարող ձեռք բերել այլ միջոցներով, որքան այդ գիտելիքը ճիշտ, ճշգրիտ, օբյեկտիվ և գիտական եղանակով տալուն: Դասավանդումը, ինչպես նախատեսված և կազմակերպված է վիճարկվող օրենսդրությամբ, սկզբունքորեն միտված է աշակերտներին ավելի որակյալ տեղեկություններ տրամադրելուն. սա բխում է, *ի թիվս այլոց*, 1971 թ. ապրիլին հրապարակված «Ուղեցույցի» նախաբանից:

Նույնիսկ այս կերպ սահմանափակված, նման դասավանդումն անկասկած չի կարող ուսուցիչների առումով բացառել որոշակի գնահատականները, որոնք կարող են ներս սողոսկել կրոնական և փիլիսոփայական ոլորտներ. քանի որ այդ ոլորտում գործ ունենք հարցերի հետ, որոնց պարագայում փաստերի գնահատումը հեշտությամբ բերում է արժեքային դատողությունների: Հանձնաժողովի փոքրամասնությունը իրավամբ շեշտել է սա: 1971 թ. հունիսի 8-ի և 1972 թ. հունիսի 15-ի հրահանգները և շրջաբերականները, 1971 թ. ապրիլի «Ուղեցույցը» և դատարանի ուշադրությանը ներկայացված մյուս նյութերը … հստակորեն ցույց են տալիս, որ Դանիան, երեխաներին ժամանակին տալով բացատրություններ, որոնք նա օգտակար է համարում, փորձում է նրանց զգուշացնել իր տեսանկյունից անհանգստացնող երևույթների մասին, ինչպիսիք են, օրինակ՝ արտաամուսնական կապից ծնունդների, հղիության ճարահատյալ ընդհատումների (աբորտների) և սեռավարակների չափից դուրս մեծ թվերը: Պետական իշխանությունները ցանկանում են այնպես անել, որ աշակերտները, երբ ժամանակը գա, կարողանան «այդ առումով հոգ տանել իրենց մասին և հոգածություն դրսևորել ուրիշների հանդեպ», «իրենք իրենց կամ այլոց չնետեն դժվարությունների մեջ միայն գիտելիքների պակասի պատճառով» (1972 թ. հունիսի 15-ի հրահանգի բաժին 1):

Այս դիտարկումներն իսկապես բարոյական կարգի են, սակայն դրանք բնույթով շատ ընդհանուր են և չեն բերում հանրային շահի՝ ինչպես այն հասկանում է ժողովրդավարական պետությունը, սահմանները հատելուն: Վիճարկվող օրենսդրության քննությունն իրականում պարզում է, որ այն որևէ կերպ սեռական վարքագծի որոշակի տեսակի ջատագովությանն ուղղված գաղափարական մշակման փորձ չէ: Այն չի զբաղվում սեքսի գովերգմամբ կամ աշակերտներին չի դրդում ժամանակից շուտ այնպիսի բաներով զբաղվել, որոնք վտանգավոր են նրանց կայունության, առողջության կամ ապագայի համար, կամ որոնք շատ ծնողներ պախարակելի են համարում: Բացի այդ, այն չի ազդում ծնողների՝ իրենց երեխաներին լուսավորելու և խորհուրդ տալու, իրենց՝ որպես սովորեցնողի երեխաների առնչությամբ բնական ծնողական գործառույթների իրականացման կամ երեխաներին, ծնողների կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան, որոշակի ուղի առաջնորդելու իրավունքի վրա:

Անշուշտ, չարաշահումներ կարող են տեղ գտնել այն եղանակի առումով, որով տվյալ դպրոցը կամ ուսուցիչը կիրառում է ուժի մեջ գտնվող դրույթները, և իրավասու մարմինները ծայրահեղ հոգածություն դրսևորելու պարտականություն են կրում, ապահովելու, որ ծնողների կրոնական և փիլիսոփայական համոզմունքներն այս օղակում չանտեսվեն անբարեխղճության, դատողության բացակայության կամ անպատշաճ դավանափոխության պատճառով: . . . Դատարանը, հետևաբար, հանգում է եզրակացության, որ վիճարկվող օրենսդրությունն ինքնին որևէ կերպ չի վիրավորում դիմողների կրոնական և փիլիսոփայական համոզմունքներն այնքանով, որքանով արգելված է արձանագրության 2-րդ հոդվածի երկրորդ նախադասությամբ՝ մեկնաբանված իր առաջին նախադասության և ամբողջ կոնվենցիայի լույսի ներքո:

Բացի այդ, Դանիան կարևոր հնարավորություն է պահպանում այն ծնողների համար, ովքեր, հանուն իրենց կրոնական դավանանքի կամ հայացքների, ցանկանում են իրենց երեխաներին դուրս պահել ինտեգրված սեռական կրթությունից: Երկիրը ծնողներին թույլ է տալիս կա՛մ իրենց երեխաներին վստահել մասնավոր դպրոցներին, որոնք այդ առումով ավազ խիստ պարտավորություններ են կրում և, ավելին, մեծապես սուբսիդավորվում են պետության կողմից, … կա՛մ երեխաներին կրթել կամ նրանց կրթությունը կազմակերպել տանը՝ ենթակա լինելով անժխտելի զոհաբերությունների և անհարմարությունների, որոնց առաջ կանգնում են այդ այլընտրանքային լուծումներից որևէ մեկին դիմելիս:

…

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

Վեց կողմ և մեկ դեմ ձայներով որոշում է, որ թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

…

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Պալիերին և դատավորներ Զեքիան, Պեդերսենը, Պետրենը, Ռիսդալը և Էվրիգենիսը: Դատավոր Վերդրոսը չհամընկնող կարծիք հրապարակեց, որում արտահայտում

էր այն տեսակետը, որ.

Պետական դպրոցների մասին Դանիայի օրենքը որևէ կերպ դուրս չի թողնում օրենսդրից տարբեր կրոնական համոզմունքներ ունեցող ծնողների երեխաներին սեռական կրթության ամենատարբեր դասընթացների հաճախելուց: Հետևաբար, անհրաժեշտ է եզրակացնել, որ Դանիայի օրենքը, վերը նշված սահմաններում, համահունչ է թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի երկրորդ նախադասությանը:

2 Դատարանի վճիռը բացահայտում է, որ 2-րդ հոդվածի երկրորդ նախադասության հիմնական նպատակն աշակերտներին պետական դպրոցներում առկա կրթության այնպիսի մեթոդներից և ձևերից պաշտպանելն է, որոնք գաղափարական հրահանգավորում են: Ըստ այս դրույթի՝ պետությունները պարտավոր են ապահովել, որ նման դպրոցներում կրթությունը և ուսուցումն իրականացվեն օբյեկտիվ և բազմակարծիք եղանակով: Հետևաբար, պետական կրթությունը չպետք է կառավարությունների կողմից օգտագործվի որպես քարոզչության գործիք:

3 Հանձնաժողովը պարզել է, որ այն, որ բրիտանական տեղական կրթության հարցերը կարգավորող մարմինը հրաժարվել է թույլ տալ երկու երեխաների ընդունել միասեռ միջնակարգ դպրոցներ, քանի որ այդ դպրոցներն ազատ տեղեր չեն ունեցել, չի հանգեցնում գաղափարական մշակման հանրակրթական դպրոցում՝ ի խախտումն նրանց ծնողների՝ 2-րդ հոդվածով պաշտպանված հայացքների. տե՛ս «*W-ն և D M-ն ու M-ն և HI-ն ընդդեմ ՄԹ-ի*» (*W & D M and M & HI v UK*) 37 DR 96 (1984):

…այս գործում չկա որևէ ապացույց, որը կմատնանշեր, որ դիմողների երեխաներն իրենց հաճախած համապատասխան հանրակրթական դպրոցներում ենթարկվում են գաղափարական մշակման, կամ երեխաների ուսուցումը չի անցկացվում օբյեկտիվ, քննադատական կամ բազմակարծիք եղանակով: Ավելին, որևէ պնդում չկա առ այն, որ հանրակրթական համակարգը դիմողներին զրկում է սեփական երեխաների կրթության առնչությամբ իրենց հիմնական դերը կատարելու, մասնավորապես, սեփական արժեքները և փիլիսոփայական համոզմունքները փոխանցելու հնարավորությունից: Ելնելով վերը բերված դիտարկումներից՝ հանձնաժողովը եզրակացնում է, որ չի կարելի պնդել, որ պատասխանող կառավարությունն անցել է թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածով ստանձնած իր պարտավորությունների սահմանները:

Սրանից հետևում է, որ գործի այս մասը բացահայտորեն անհիմն է . . . (էջ 100)

4 Հանձնաժողովը, որպեսզի անձանց համար մասնավոր դպրոցներ հիմնելու իրավունք ապահովի, դատարանի հայտարարությունները *Կյելդսենի և այլոց* (*Kjeldsen et al*) գործով զարգացրեց «*Քրիստոնեական դպրոցների Ինգրիդ Յորդեբոյի հիմնադրամը և Ինգրիդ Յորդեբոն ընդդեմ Շվեդիայի*» (*Ingrid Jordebo Foundation of Christian Schools and Ingrid Jordebo v Sweden*) գործում, 51 DR 125 (1987): Տիկին Յորդեբոն 1976 թ. իր աշխատանքը սկսած մասնավոր դպրոցի (որը վարում էր հիմնադրամը) տնօրենն էր: Առաջին մի քանի տարիների ընթացքում դպրոցն ուներ դպրոցական կրթության առաջին փուլի համար նախատեսված դասարաններ, որոնք գործում էին տեղական կառավարման մարմնի դպրոցական խորհրդի թույլտվությամբ: 1983 թ. դիմողները դիմեցին դպրոցական խորհրդին՝ դպրոցական կրթության միջին և վերին փուլերի համար նախատեսված դասարաններ ունենալու թույլտվության համար: Դպրոցական խորհուրդը մերժեց դիմողների դիմումը, որովհետև չէր համարում, որ դիմողների ուսուցիչներն ունեն ավելի բարդ ուսուցման համար անհրաժեշտ որակավորում ու հմտություններ: Դիմողները գանգատ ներկայացրեցին թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի խախտման դեմ:

Հանձնաժողովը համարում է, որ «*Կյելդսենը, Բուսկ Մադսենը և Պեդերսենն ընդդեմ Դանիայի*» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռից (A.23, պարբ. 50) բխում է, որ թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածը երաշխավորում է մասնավոր դպրոց հիմնելու և վարելու իրավունքը: Այնուամենայնիվ, այդպիսի իրավունքը չի կարող լինել առանց պայմանների: Այն պետք է գտնվի պետական կարգավորման ներքո, որպեսզի, որպես ամբողջություն, պատշաճ կրթական համակարգ ապահովվի: …Քննելով սույն գործը, մասնավորապես հիմնադրամին պարտադիր դպրոցի վերին փուլերը վարելը թույլ չտալու պատճառները, հանձնաժողովը համարում է, որ այդ մերժումը համատեղելի է թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի հետ: …Այստեղից հետևում է, որ այդ առումով գանգատը ակներևաբար անհիմն է . . . (էջ 128-129):

Արդյոք ճի՞շտ էր հանձնաժողովը, երբ համարում էր, որ այս իրավունքը ենթադրվում է թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածով:

5 Դատարանը *Քեմփբելի և Քոզանսի* գործում հավելյալ ուղղություններ տվեց երկրորդ նախադասության առանցքային տարրերի մեկնաբանության վերաբերյալ, ներառյալ՝ դրույթում ամփոփված կրթական տարբեր գործառույթները և «փիլիսոփայական համոզմունքների» իմաստը:

II. ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ:

32. Տկն Քեմփբելը և տկն Քոզանսը պնդում էին, որ իրենց երեխաների հաճախած դպրոցներում որպես կարգապահական միջոց մարմնական պատիժը կիրառվելու պատճառով խախտվել են այդ հոդվածի երկրորդ նախադասությամբ սահմանված իրենց իրավունքները:

Կառավարությունը մի շարք հիմքերով վիճարկում էր հանձնաժողովի մեծամասնության եզրակացությունը, որ նման խախտում տեղի է ունեցել:

33. Կառավարությունը, առաջին հերթին, հայտարարում է, որ դպրոցի ներքին վարչարարությանը վերաբերող գործառույթները, ինչպիսին է կարգապահությունը, օժանդակ են և «կրթությանը» կամ «ուսուցմանը» վերաբերող գործառույթներ չեն՝ 2-րդ հոդվածի իմաստով, իսկ նշված եզրույթները նշանակում են, համապատասխանաբար, շենքային պայմանների ապահովում և տեղեկությունների տրամադրում:

Դատարանը մատնացույց է անում, որ երեխաների կրթությունն այն ամբողջական գործընթացն է, որի միջոցով ցանկացած հասարակությունում չափահասները փորձում են երիտասարդներին փոխանցել իրենց համոզմունքները, մշակույթը և այլ արժեքներ, մինչդեռ ուսուցումը կամ դասավանդումը, մասնավորապես, վերաբերում են գիտելիքների փոխանցմանը և մտավոր զարգացմանը:

Դատարանը համարում է, որ որոշակիորեն արհեստական կլինի ներքին վարչարարությանը վերաբերող հարցերը տարանջատել՝ իբրև թե դրանք դուրս են 2-րդ հոդվածի գործողության ոլորտից: Մարմնական պատժի կիրառումը, ինչ-որ իմաստով, կարելի է անվանել դպրոցի ներքին վարչարարության մաս, սակայն երբ կիրառվում է, այն գործընթացի անբաժանելի բաղկացուցիչն է, որի միջոցով դպրոցը փորձում է հասնել այն նպատակին, հանուն որի ստեղծվել է, ներառյալ՝ իր աշակերտների բնավորության և մտավոր կարողությունների զարգացումը և ձևավորումը: Ավելին, ինչպես դատարանը մատնացույց է արել *Կյելդսենի, Բուսկ Մադսենի և Պեդերսենի* գործով իր 1976 թ. դեկտեմբերի 7-ի վճռում (շարք A, թիվ 23, էջ 24, պարբ. 50), 2-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը պարտադիր է պայմանավորվող պետությունների համար՝ «յուրաքանչյուր և ամեն» գործառույթի պարագայում, որ նրանք նախաձեռնում են կրթության և ուսուցման ոլորտում, այնպես որ այն փաստը, որ տվյալ գործառույթը կարող է օժանդակ լինել, այս համատեքստում որևէ նշանակություն չունի:

34. Կառավարությունը որպես փաստարկ նշում էր նաև, որ Շոտլանդիայում կրթության ոլորտում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ստանձնած «գործառույթները» չեն տարածվում կարգապահական հարցերի վրա:

Կարող է ճշմարիտ լինել, որ խնդրո առարկա դպրոցներում կարգապահության ամենօրյա ապահովման հարցը թողնվում է առանձին ուսուցիչներին: Երբ վերջիններս մարմնական պատիժ են կիրառում, նրանք իրականացնում են ոչ պետության կողմից իրենց պատվիրակված իրավասությունը, իրավասություն, որը նրանց տրվել է ընդհանուր իրավունքով՝ նրանց՝ որպես ուսուցչի կարգավիճակի շնորհիվ, և այդ առումով օրենքը կարող է փոխվել միայն խորհրդարանի ընդունած օրենքով … Այդուհանդերձ, Շոտլանդիայում կրթության առումով պետությունն է ստանձնել ընդհանուր քաղաքականության ձևավորման պատասխանատվությունը, …իսկ դիմողների երեխաների հաճախած դպրոցները պետական դպրոցներ էին: Կարգապահությունը կրթական համակարգի անբաժանելի, պարտադիր մասն է, որի հետևանքով Շոտլանդիայում պետության ստանձնած գործառույթները պետք է ընդլայնել այնպես, որ դրանք ներառեն կարգապահության հարցն ընդհանրապես, եթե նույնիսկ չներառեն ամենօրյա ապահովումը: Իսկապես, սա հաստատում է այն փաստը, որ կենտրոնական և տեղական իշխանությունները մասնակցել են համապատասխան կանոնակարգի մշակմանը, և կառավարությունն ինքը որդեգրել է մարմնական պատժի վերացման քաղաքականություն …

35. Երրորդ՝ ըստ կառավարության ներկայացման, փիլիսոփայական համոզմունքները հարգելու պարտավորությունը ծագում է միայն տեղեկությունների և գիտելիքի բովանդակության և դրանց հաղորդման ձևի առնչությամբ, ոչ թե դպրոցի վարչարարության բոլոր կողմերի առումով:

Ինչպես մատնացույց է անում կառավարությունը, *Կյելդսենի, Բուսկ Մադսենի և Պեդերսենի* գործով վճռում նշվում է (էջ 26, պարբ. 53).

> «2-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը …. ենթադրում է, որ պետությունը կրթության և ուսուցման առումով իր ստանձնած գործառույթներն իրականացնելիս պետք է հոգ տանի, որ ուսումնական ծրագրում ներառված տեղեկությունները և գիտելիքը հաղորդվեն օբյեկտիվ, քննադատական և բազմակարծիք ձևով: Պետությանն արգելված է այնպիսի գաղափարների ներդրման [indoctrination] նպատակ հետապնդել, որը կարելի է համարել ծնողների կրոնական և փիլիսոփայական համոզմունքները չհարգել: Սա է այն սահմանը, որը չպետք է անցնել»:

Այնուամենայնիվ, այդ գործը վերաբերում էր դասավանդման բովանդակությանը, մինչդեռ 2-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը գործողության ավելի լայն ոլորտ ունի, ինչպես ցույց է տրվում նրա ընդհանրական ձևակերպումներով: Սա դատարանի կողմից հաստատվում է միևնույն վճռում, երբ վերջինս որոշում է, որ նշված նախադասությունը պարտադիր է պայմանավորվող պետությունների համար, երբ վերջիններս, ի թիվս այլոց, իրականացնում են գործառույթ, որի «մեջ մտնում են պետական (հանրային) կրթության կազմակերպումը և ֆինանսավորումը» (էջ 24, պարբ. 50): Իսկ սույն գործում այս ոլորտում պատասխանող երկրի ստանձնած գործառույթները տարածվում են մինչև ընդհանրապես շոտլանդական կրթական համակարգի վերահսկողությունը, ինչը պետք է ներառի նաև կարգապահության հարցերը (տե՛ս վերը բերված պարբ. 34):

36. Կառավարությունը վիճարկում է նաև հանձնաժողովի մեծամասնության այն եզրակացությունը, որ դիմողների տեսակետները մարմնական պատժի կիրառման վերաբերյալ «փիլիսոփայական համոզմունքներ» են՝ պնդելով, ի թիվս այլոց, որ այդ արտահայտությունը չի տարածվում դպրոցի ներքին վարչարարության (ինչպիսին է կարգապահության հարցը) վերաբերյալ հնչած կարծիքների վրա, և եթե մեծամասնությունը ճիշտ լիներ, կստացվեր, որ կարգապահության ապահովման այլ եղանակների կամ ընդհանրապես կարգապահության դեմ ուղղված առարկությունները «փիլիսոփայական համոզմունքներ» չհամարելու պատճառ չկա:

Իր սովորական իմաստով «համոզմունքներ» բառը, առանձին վերցված, «կարծիք» կամ «գաղափարներ» բառերի հոմանիշը չէ՝ ինչպես դրանք գործածված են կոնվենցիայի 10-րդ հոդվածում, որը երաշխավորում է արտահայտման ազատությունը. այն ավելի մոտ է 9-րդ հոդվածում (որը երաշխավորում է մտքի, խղճի և կրոնի ազատությունը) գործածված «համոզմունքներ» [beliefs] (ֆրանսերեն տեքստում՝ convictions) բառին և նշանակում է հայացքներ, որոնք ձեռք են բերում համոզչության, լրջության, միասնականության և կարևորության որոշակի աստիճան:

Ինչ վերաբերում է «փիլիսոփայական» ածականին, դատարանը չի կարող տալ դրա սպառիչ սահմանումը, իսկ Նախապատրաստական փաստաթղթերից քիչ օգնություն կարելի է ստանալ դրա ճշգրիտ նշանակության առումով: Հանձնաժողովը նշում է, որ «փիլիսոփայություն» բառը բազմաթիվ իմաստներ ունի. այն օգտագործվում է մտքի լիակատար կերպով մշակված համակարգի կամ, բավականին ազատորեն, առավել կամ պակաս սովորական հարցերի վերաբերյալ տեսակետների հղում տալու համար: Դատարանը համաձայն է հանձնաժողովի հետ, որ այս երկու ծայրահեղություններից և ոչ մեկը չի կարող ընդունելի լինել 2-րդ հոդվածը մեկնաբանելու տեսանկյունից. առաջինը չափազանց նեղ սահմանափակում կմտցնի բոլոր ծնողների համար երաշխավորված իրավունքի գործողության ոլորտի համար, իսկ երկրորդը կարող է հանգեցնել անբավարար կշիռ կամ բովանդակություն ունեցող հարցերի ներառմանը:

Կոնվենցիան, ներառյալ 17-րդ հոդվածը, դիտարկելով որպես ամբողջություն, տվյալ համատեքստում «փիլիսոփայական համոզմունքներ» արտահայտությունը, դատարանի կարծիքով, նշանակում է այնպիսի համոզմունքներ, որոնք արժե հարգել «ժողովրդավարական հասարակությունում» (տե՛ս ամենաուշը տեղ գտած *Յանգի, Ջեյմսի և Ուեբսթերի* (*Young, James and Webster*) գործով 1981 թ. օգոստոսի 13-ի վճիռը, շարք A, թիվ 44, էջ 25, պարբ. 63), և որոնք անհամատեղելի չեն մարդու արժանապատվության հետ, ի լրումն, դրանք չպետք է հակասեն երեխայի՝ կրթության հիմնարար իրավունքին, ամբողջ 2-րդ հոդվածին, որում գերակայում է առաջին նախադասությունը (տե՛ս վերը բերված *Կյելդսենի, Բուսկ Մադսենի և Պեդերսենի* գործով վճիռը, էջ 25-26, պարբ. 52):

Դիմողների հայացքները վերաբերում են մարդկային կյանքի և վարքագծի մի ծանրակշիռ և էական կողմի, այն է՝ անձի ամբողջականությանը, մարմնական պատժի սահմանման իրավաչափությանը կամ ընդհակառակը, և նման պատժի վտանգով պայմանավորված տառապանքի բացառմանը: Դրանք հայացքներ են, որոնք բավարարում են վերը բերված բազմատեսակ չափանիշներից յուրաքանչյուրը. հենց այդ է, որ դրանք տարբերում է կարծիքներից, որոնք կարող են առկա լինել կարգապահության ապահովման այլ եղանակների կամ ընդհանրապես կարգապահության վերաբերյալ:

37. Կառավարությունը, որպես այլընտրանք, միջնորդում էր համարել, որ դիմողների համոզմունքները հարգելու պարտավորությունը բավարարվել է կարգապահական նկատառումներով կիրառվող մարմնական պատիժն աստիճանաբար վերացնելուն ուղղված քաղաքականության ընդունմամբ: Նա ավելացնում էր, որ ցանկացած այլ լուծում անհամատեղելի կլինի կարգապահության ապահովման այս եղանակի կողմնակիցների և հակառակորդների միջև հավասարակշռություն ապահովելու անհրաժեշտության հետ և արձանագրության ստորագրման ժամանակ Միացյալ Թագավորության կողմից 2-րդ հոդվածի առումով մտցված վերապահման պայմանների հետ, որոնցում ասվում է.

> « … ելնելով Միացյալ Թագավորության գործող «Կրթության մասին» օրենքների որոշակի դրույթներից՝ 2-րդ հոդվածի երկրորդ նախադասության մեջ հաստատված սկզբունքը Միացյալ Թագավորության կողմից ընդունվում է միայն այնքանով, որքանով այն համատեղելի է արդյունավետ դասավանդման և ուսուցման տրամադրման ու ոչ ողջամիտ պետական ծախսերից խուսափելու հետ»:

Դատարանը չի կարող ընդունել այս հիմնավորումները:

(ա) Թեև նշված քաղաքականության ընդունումը հստակ նախանշում է տեղաշարժ՝ դեպի դիմողների որդեգրած դիրքորոշում, այն «հարգանք» չէ նրանց համոզմունքների նկատմամբ: Ինչպես հաստատվում է այն փաստով, որ 2-րդ հոդվածի մշակման ընթացքում «նկատի առնել» բառերը փոխարինվել են «հարգել» բառով (տե՛ս CDH (67) 2 էջ 163), վերջին բառը ավելին է նշանակում, քան «ընդունելը» կամ «հաշվի առնելը». ի լրումն առաջին հերթին բացասական նախաձեռնության՝ այն պետության

համար ենթադրում է նաև դրական պարտավորություն (տե՛ս *mutatis mutandis*] *Մարքսի* (*Marckx*) գործով 1979 թ. հունիսի 13-ի վճիռը, շարք A, թիվ 31, էջ 15, պարբ. 31): Այդպիսով, այս ոլորտում ծնողների համոզմունքները հարգելու պարտականությունը չի կարող վերացվել առկա հակադիր կարծիքների միջև հավասարակշռություն ապահովելու ենթադրյալ անհրաժեշտությամբ, ոչ էլ կառավարության՝ մարմնական պատժի աստիճանական վերացմանն ուղղված քաղաքականությունն ինքնին կարող է բավարար լինել այդ պարտականության կատարման համար:

Դատարանն ընդունում է, որ նկարագրված որոշ լուծումներ, ինչպիսին, օրինակ՝ երկակի համակարգի ստեղծումն է, որտեղ յուրաքանչյուր հատվածում կլինեն առանձին դպրոցներ այն ծնողների երեխաների համար, ովքեր մերժում են մարմնական պատիժը, անհամատեղելի կլինեն, հատկապես առկա տնտեսական իրավիճակում, ոչ ողջամիտ պետական ծախսերից խուսափելու հետ: Սակայն դատարանը ապացուցված չի համարում, որ դիմողների համոզմունքները հարգելու այլ միջոցները, ինչպիսին է կոնկրետ դպրոցում առանձին աշակերտների ազատման համակարգը, անհրաժեշտաբար անհամատեղելի կլինեն «արդյունավետ դասավանդման և ուսուցման տրամադրման ու ոչ ողջամիտ պետական ծախսերից խուսափելու հետ»:

38. Համապատասխանաբար, տկն Քեմփբելը և տկն Քոզանսը հանդիսացել են թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի երկրորդ նախադասության խախտման զոհեր:

Վերը նկարագրված վճիռը պարզ է դարձնում, որ պետական դպրոցներում կարգապահության հարցերը պետք է համապատասխանեն թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածի երկու նախադասությունների պահանջներին: Մասնավոր դպրոցներում կարգապահական պատիժների առումով 3-րդ հոդվածի կիրառության համար տե՛ս «*Կոստելլո-Ռոբերթսն ընդդեմ ՄԹ-ի*» *(Costello-Roberts v UK)* (վերը՝ էջ 234):

6 *«Բելգիայի լեզվաբանական»* գործով վճռում (վերը), մենք արդեն տեսել ենք, որ ծնողների լեզվական նախապատվությունները դասակարգվում են որպես «կրոնական» կամ «փիլիսոփայական» համոզմունքներ:

7 Կրոնական համոզմունքների օրինակ կարող են ծառայել Եհովայի վկաների համոզմունքները *«Վալսամիսն ընդդեմ Հունաստանի» (Valsamis v Greece)* գործում, (1996) 24 EHRR 294, 1996-VI 2312 (նախապատմության համար տե՛ս վերը՝ էջ 639): Դատարանը՝ յոթ կողմ և երկու դեմ ձայներով, եզրակացրեց, որ կառավարության կողմից դիմողների խաղաղասիրական (պացիֆիստական) համոզմունքների հանդեպ հարգանքի բացակայություն չի եղել, երբ մերժել է Հունաստանի ազգային օրվա կապակցությամբ անցկացվող պարտադիր դպրոցական շքերթից նրանց դստերն ազատելը:

8 Հանձնաժողովը շեշտում է նաև պետությունների հարգելու պարտականության սահմանափակումները՝ *«Խ-ն ընդդեմ ՄԹ-ի»* (*Խ ն ՄԿ*) գործում 14 DR 179 (1978): Գանգատարկու ծնողը ցանկանում էր Հյուսիսային Իռլանդիայում հիմնված տեսնել որևէ կրոնական դավանանք չքարոզող դպրոցներ (նա պնդում էր, որ տեղի պետական դպրոցները կրում են բողոքականության ազդեցությունը, իսկ մասնավոր դպրոցները՝ կաթոլիկ եկեղեցու): Մասնավոր անձինք, ովքեր ցանկանում էին կրոնական դավանանք չքարոզող նոր դպրոցներ հիմնել, պետք է ֆինանսավորեին կապիտալ ծախսերի 15 տոկոսը, իսկ պետությունը՝ վճարեր մնացյալը: Դիմողը բողոքում էր, որ կրթության հարցերով տեղական իշխանությունների հրաժարումը իր (և իր նման ծնողների) երեխաների համար նախատեսված նոր ինտեգրված դպրոցի հիմնադրման բոլոր ծախսերը ֆինանսավորելուց հանգեցնում է նրան, որ չեն հարգվում իր կրոնական և փիլիսոփայական համոզմունքները: *Կյելդսենի* և *«Բելգիայի լեզվաբանական»* գործերով վճիռներից մեջբերումներ անելուց հետո հանձնաժողովը նշում է.

Համապատասխանաբար, հոդվածը մեկնաբանելով որպես ամբողջություն, պետությունը, 2-րդ հոդվածի երկրորդ նախադասության առումով, ծնողների կրոնական և փիլիսոփայական համոզմունքները հարգելու նպատակով կրթության որևէ տեսակ սուբսիդավորելու դրական պարտավորություն չի կրում: 2-րդ հոդվածով իր ունեցած պարտավորությունները կատարելու համար բավարար է ծնողների կրոնական և փիլիսոփայական համոզմունքների հանդեպ հարգանքը փաստել կրթության գոյություն ունեցող և զարգացող համակարգում (էջ 180):

Հետևաբար, հանձնաժողովը դիմումը համարեց անընդունելի:

23 ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾ. ԱԶԱՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ

.....

«Մեթյուս ընդդեմ ՄԹ-ի» (Matthews v UK) (1999) Թայմս [The Times], 3-ը մարտի
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Ջիբրալթարը Միացյալ Թագավորության կախյալ տարածք է, սակայն ՄԹ-ի մաս չի կազմում: ՄԹ-ի խորհրդարանը Ջիբրալթարի բարձրագույն օրենսդիր մարմինն է, այնուամենայնիվ, այդ տարածքի համար գործող օրենսդրության մեծ մասն ընդունել է տեղական օրենսդիրը (Օրենսդիր ժողովը [House of Assembly]): Ջիբրալթարը միանալու մասին համաձայնագրի [Treaty of Accession] ուժով դուրս է թողնված ԵՀ համաձայնագրի մի շարք հատվածներից (ինչպիսիք են՝ ապրանքների ազատ շրջանառությունը և ընդհանուր գյուղատնտեսական շուկան): ԵՀ օրենսդրությունը Ջիբրալթարի համար գործում է, *ի թիվս այլոց,* մարդկանց ազատ տեղաշարժման և սպառողների պաշտպանության առնչությամբ: Եվրոպական համայնքների (նախկինում) արտաքին գործերի նախարարների կողմից 1976 թ. ստորագրված օրենքը սահմանում էր, որ Եվրոպական խորհրդարանի ընտրությունները ՄԹ-ի կախյալ տարածքներին չեն վերաբերում: 1994 թ. տկն Մեթյուսը դիմել է Ջիբրալթարում ընտրացուցակների ձևավորման պատասխանատուին՝ Եվրոպական խորհրդարանի առաջիկա ընտրություններին որպես ընտրող գրանցվելու համար: Վերջինս մերժել էր նրա դիմումը, որովհետև 1976 թ. օրենքով Ջիբրալթարը դուրս էր մնում Եվրոպական խորհրդարանի ընտրություններից: Այնուհետև տկն Մեթյուսը գանգատ է ներկայացրել հանձնաժողով՝ պնդելով, որ ոտնահարվել են թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները: Հանձնաժողովը, տասնմեկ կողմ և վեց դեմ ձայների հարաբերակցությամբ, նշված դրույթի խախտում չի արձանագրել:

ԻՆՉ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՕՐԵՆՔԻՆ

I. ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

Դիմողը պնդում էր, որ խախտվել է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը, որը սահմանում է.

> «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս»:

25. Կառավարությունը հայտարարել է, որ երեք հիմնական պատճառով թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը կիրառելի չէ սույն գործի փաստերի նկատմամբ կամ, այլ կերպ ասած, այդ դրույթի խախտում տեղի չի ունեցել:

Ա. ԱՐԴՅՈՔ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈ՞Ւ Է ՋԻԲՐԱԼԹԱՐՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԱՆՑԿԱՑՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

26. Ըստ կառավարության՝ իրականում դիմողների առարկությունները վերաբերում էին Եվրոպական Միության խորհրդի թիվ 76/787 որոշմանը և 1976 թ. օրենքին, որը վերաբերում է Եվրոպական խորհրդարանի ընտրություններին ... Նշված օրենքը, որն ունի համաձայնագրի կարգավիճակ, ընդունվել է Եվրոպական համայնքի շրջանակներում և Միացյալ

Թագավորության կողմից չի կարող միակողմանիորեն վերացվել կամ փոփոխվել: Կառավարությունն ընդգծում է, որ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը քանիցս հրաժարվել է Եվրոպական համայնքի իրավակարգին ենթակա հարցերը դարձնել ըստ կոնվենցիայի ուսումնասիրության առարկա: Թեև կառավարությունն ընդունում էր, որ կարող են լինել այնպիսի հանգամանքներ, երբ պայմանավորվող կողմը, ստանձնելով որոշակի համաձայնագրային պարտավորություններ, որոնք անհամատեղելի են կոնվենցիայի հետ, խախտում է իր պարտավորությունները, սակայն համարում էր, որ սույն գործում, որը վերաբերում էր Եվրոպական համայնքի շրջանակներում ընդունված տեքստերին, իրադրությունն այլ է: Այդպիսով, Եվրոպական համայնքի ընդունած կամ վերջինիս պահանջներից բխող օրենքները չեն կարող վերագրվել անդամ պետություններին՝ միասին կամ առանձին-առանձին, հատկապես երբ այդ օրենքները վերաբերում են հենց Համայնքի սահմանադրական մարմնի ընտրություններին: Դատավարության ընթացքում կառավարությունը կարծիք հայտնեց, որ որպեսզի որևէ պետություն ըստ կոնվենցիայի պատասխանատվության կանչվի, անհրաժեշտ է, որ այդ պետությունը դժգոհության առարկա օրենքի նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրավազորություն ունենա: Այն դրույթների պարագայում, որոնք վերաբերում էին Եվրոպական խորհրդարանի ընտրություններին, Միացյալ Թագավորությունը նման կարգի վերահսկողություն չունի:

27. Դիմողն անհամաձայնություն է արտահայտում: Նրա կարծիքով՝ Խորհրդի որոշումը և 1976 թ. օրենքը միջազգային համաձայնագիր են, ոչ թե այնպիսի մի հաստատության ակտ (օրենք), որի որոշումները ենթակա չեն կոնվենցիայով վերանայման: Այդպիսով, նա համարում է, որ կառավարությունը շարունակում է ըստ կոնվենցիայի պատասխանատու մնալ Խորհրդի որոշման և 1976 թ. օրենքի ունեցած հետևանքների համար: Այլընտրանքային տարբերակում, այն է՝ եթե Խորհրդի որոշումը և 1976 թ. օրենքն այնպես են մեկնաբանվում, որ նախատեսում են իրավասությունների փոխանցում Համայնքի մարմիններին, դիմողը, հղում կատարելով հանձնաժողովի նախադեպային իրավունքին, պնդում է, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով սահմանված իր իրավունքների որևէ համարժեք պաշտպանության բացակայության դեպքում կառավարությունը, ցանկացած պարագայում, ըստ կոնվենցիայի պատասխանատվություն է կրում:

28. Հանձնաժողովի մեծամասնությունն այդ կետի վերաբերյալ կարծիք չարտահայտեց, թեև դրան անդրադարձներ եղան համընկնող և չհամընկնող կարծիքներում:

29. Կոնվենցիայի 1-ին հոդվածը բարձր պայմանավորվող կողմերից պահանջում է «իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահով[ել] այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն կոնվենցիայ[ում]»: 1-ին հոդվածը որևէ տարբերակում չի մտցնում դիտարկվող կանոնի կամ միջոցի տեսակի առումով, և անդամ պետության «իրավազորության» որևէ հատվածը չի բացառում ըստ կոնվենցիայի ուսումնասիրությունից (տե՛ս «*Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունն ընդդեմ Թուրքիայի*» (*United Communist Party of Turkey v Turkey*) գործով 1998 թ. հունվարի 30-ի վճիռը, *Վճիռների և որոշումների զեկույցներ*, 1998-I, էջ 17-18, պարբ. 29):

30. Դատարանը նշում է, որ կողմերը չեն վիճարկում, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը գործում է Ջիբրալթարում: Այն հիշեցնում է, որ կոնվենցիայի գործողությունը տարածվել է Ջիբրալթարի վրա Միացյալ Թագավորության 1953 թ. հոկտեմբերի 23-ի հռչակագրով ... և 1988 թ. փետրվարի 25-ից թիվ 1 արձանագրությունը կիրառելի է Ջիբրալթարում: Հետևաբար, այստեղ հստակ առկա է տարածքային «իրավազորություն»՝ կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով:

31. Այդուհանդերձ, դատարանը պետք է որոշի, թե արդյոք Միացյալ Թագավորությունը, անկախ Եվրոպական խորհրդարանի՝ որպես ԵՀ մարմնի ընտրությունների բնույթից, կարո՞ղ է կոնվենցիայի 1-ին հոդվածի պատասխանատու համարվել Ջիբրալթարում Եվրոպական խորհրդարանի ընտրություններ չանցկացվելու համար, այն է՝ արդյոք Միացյալ Թագավորությունը պարտավո՞ր է «ապահով[ել]» Եվրոպական խորհրդարանի ընտրությունները՝ անկախ նրանից, որ այդ ընտրությունները վերաբերում են Եվրոպական համայնքին:

32. Դատարանը համարում է, որ ԵՀ օրենքները, որպես այդպիսին, չեն կարող վիճարկվել դատարանում, քանի որ ԵՀ-ն պայմանավորվող կողմ չի հանդիսանում: Կոնվենցիան չի բացառում իրավասության փոխանցումը միջազգային կազմակերպություններին՝ պայմանով, որ կոնվենցիայի իրավունքները շարունակում են «ապահովված» մնալ: Հետևաբար, անդամ պետությունների պատասխանատվությունը շարունակվում է նույնիսկ այդպիսի փոխանցումից հետո:

33. Սույն գործում կոնվենցիայի ենթադրյալ խախտում է բխում է 1976 թ. օրենքի հավելվածից, որին Միացյալ Թագավորությունը միացել է Մաաստրիխտի համաձայնագրով Եվրոպական խորհրդարանի ընդլայնված իրավազորության հետ միասին: Խորհրդի որոշումը և 1976 թ. օրենքը ... և Մաաստրիխտի համաձայնագիրը՝ ԵՏՀ համաձայնագրի իր փոփոխություններով, միջազգային գործիքներ են, որոնց ազատորեն միացել է Միացյալ Թագավորությունը: Իսկապես, 1976 թ. օրենքը չի կարող վիճարկվել Եվրոպական դատարանում հենց այն պատճառով, որ այն Համայնքի «նորմալ» օրենք չէ, այլ համաձայնագիր՝ Համայնքի իրավական կարգի շրջանակներում: Մաաստրիխտի համաձայնագիրը նույնպես Համայնքի օրենք չէ, այլ համաձայնագիր, որով ի կատար է ածվել ԵՏՀ համաձայնագրի վերանայումը: Միացյալ Թագավորությունը Մաաստրիխտի համաձայնագրի մյուս բոլոր անդամների հետ միասին, կոնվենցիայի 1-ին հոդվածով և, մասնավորապես, թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով, *ratione materiae* պատասխանատու է այդ համա-

ձայնագրի հետևանքների համար:

34. Որոշելու համար, թե Միացյալ Թագավորությունը Ջիբրալթարում Եվրոպական խորհրդարանի ընտրությունների առումով ինչ չափով է պատասխանատու թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով սահմանված իրավունքների «ապահովման» համար, դատարանը հիշեցնում է, որ կոնվենցիան նախատեսված է այնպիսի իրավունքների երաշխավորման համար, որոնք ոչ թե տեսական ու վերացական են, այլ գործնական և արդյունավետ (տե՛ս, օրինակ, *Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության* գործով վերը հիշատակված վճիռը, էջ 18-19, պարբ. 33): Չի վիճարկվում, որ Եվրոպական համայնքի օրենսդրական գործընթացից ծնունդ առած օրենսդրությունը Ջիբրալթարի բնակչության վրա ազդում է ճիշտ այնպես, ինչպես օրենսդրությունը, որը Օրենսդիր ժողովի միջոցով մուտք է գործում ներպետական իրավակարգ: Այդ առումով եվրոպական և ներպետական օրենսդրության միջև տարբերություն չկա, և պատճառ չկա, թե ինչու Միացյալ Թագավորությունը չպետք է պարտավոր լինի «ապահովել» թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով սահմանված իրավունքները եվրոպական օրենսդրության առնչությամբ, այնպես, ինչպես գործում է այդ իրավունքների «ապահովման» պարտավորությունը զուտ ներպետական օրենսդրության պարագայում: Մասնավորապես, այն կարծիքը, որ Միացյալ Թագավորությունը կարող է արդյունավետ վերահսկողություն չունենալ դժգոհության առարկա իրավիճակի նկատմամբ, չի կարող ազդել դիրքորոշման վրա, քանի որ Միացյալ Թագավորության պատասխանատվությունն ածանցվում է նրանից, որ վերջինս համաձայնագրային պարտավորություններ է ստանձնել Ջիբրալթարի առումով թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի կիրառելի դառնալուց հետո, այն է՝ Մաաստրիխտի համաձայնագրի շրջանակներում Խորհրդի որոշման և 1976 թ. օրենքով վերջինիս ունեցած պարտավորությունների հետ միասին: Այնուհետև, դատարանը նշում է, որ միանալով ԵՀ համաձայնագրին, Միացյալ Թագավորությունը համաձայնել է, որ, համաձայնագրի 227-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով ԵՀ օրենսդրության էական հատվածներ կիրառելի լինեն Ջիբրալթարի նկատմամբ ...

35. Այստեղից հետևում է, որ Միացյալ Թագավորությունը կոնվենցիայի 1-ին հոդվածով պատասխանատու է Ջիբրալթարում թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների ապահովման համար՝ անկախ այն հանգամանքից՝ ընտրությունները բացառապես ներպետակա՞ն են, թե՞ եվրոպական:

Բ. ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԸ ԿԻՐԱՌԵԼԻ՞ Է ԱՅՆՊԻՍԻ ՄԱՐՄՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ԻՆՉՊԻՍԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆ Է

36. Կառավարությունը պնդում է, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով սահմանված նախաձեռնությունն անհրաժեշտաբար սահմանափակվում է ամբողջապես կոնվենցիայի անդամների, այսինքն՝ ինքնիշխան պետությունների իրավազորության շրջանակներում գտնվող հարցերով: Կառավարությունը պնդում է, որ Ջիբրալթարում «օրենսդիր իշխանությունը» հանդիսանում է Օրենսդիր ժողովը, և Ջիբրալթարի համատեքստում հենց այդ մարմնին է վերաբերում թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը: Կառավարության կարծիքով՝ չկա որևէ հիմք, որի վրա կոնվենցիան կարողանա մի առանձին, վերազգային կազմակերպության խորհրդարանի ընտրությունների առումով պարտավորություններ սահմանել պայմանավորվող կողմերի համար, և պնդում է, որ դա հատկապես այդպես է, երբ Եվրոպական համայնքի անդամ պետություններն իրենց սեփական իրավազորությունն են սահմանափակել այդ առումով, և երբ թե՛ ինքը՝ Եվրոպական խորհրդարանը, թե՛ նրա հիմնական ընտրական ընթացակարգերը նախատեսվել են սեփական իրավական համակարգի համաձայն, ոչ թե վերջինիս անդամ երկրների իրավական համակարգերի:

37. Դիմողը հղում է կատարում Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի նախկին որոշումներին, որտեղ Եվրոպական խորհրդարանի վերաբերյալ գանգատները քննվել են ըստ էության, այսինքն՝ իրականում հանձնաժողովն ընդունել է, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը կիրառելի է Եվրոպական խորհրդարանի ընտրությունների նկատմամբ (տե՛ս, օրինակ՝ «*Լինդսին ընդդեմ ՄԹ-ի*» (*Lindsay v UK*), գանգատ թիվ 8364/78, 1978 թ. մարտի 8-ի որոշում, Որոշումներ և զեկույցներ 15, էջ 247, և «*Տետն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Tête v France*), գանգատ թիվ 11123/84, 1987 թ. դեկտեմբերի 9-ի որոշում, Որոշումներ և զեկույցներ 54, էջ 52): Նա համաձայնում է հանձնաժողովի՝ հատուկ չհամընկնող կարծիք արտահայտած անդամների հետ, ովքեր չէին ընդունում, որ քանի որ Եվրոպական խորհրդարանը գոյություն չի ունեցել թիվ 1 արձանագրության մշակման ժամանակ, անհրաժեշտաբար դուրս է մնում արձանագրության 3-րդ հոդվածից:

38. Հանձնաժողովի մեծամասնությունն իր հիմնավորումը բխեցրել էր իրավասությանը վերաբերող այս կետից: Հանձնաժողովը համարում է, որ «որոշելը, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը կիրառելի է վերազգային ներկայացուցչական մարմինների նկատմամբ, կնշանակի ընդլայնել 3-րդ հոդվածի գործողության ոլորտը՝ կոնվենցիան մշակողների նախատեսածից և այդ դրույթի խնդրից ու նպատակից անդին: ... 3-րդ հոդվածի դերն այն է, որ ապահովվի կանոնավոր պարբերականությամբ ազգային կամ տեղական օրենսդիր մարմինների, այն է՝ Ջիբրալթարի պարագայում Օրենսդիր ժողովի ընտրությունների անցկացումը (տե՛ս հանձնաժողովի հաշվետվության պարբ. 63):

39. Այն, որ կոնվենցիան գործուն փաստաթուղթ է, որն անհրաժեշտ է մեկնաբանել տվյալ օրվա պայմաններին համապատասխան, արմատացած է դատարանի նախադեպային իրավունքում (տե՛ս, ի թիվս այլոց, «*Լոիզիդուն ընդդեմ Թուր-*

քիայի» (*Loizidou v Turkey*) գործով 1995 թ. մարտի 23-ի վճիռը (նախնական առարկություններ), շարք A, թիվ 310, էջ 26-27, պարբ. 71, հետագա հղումով): Լոկ այն փաստը, որ մարմինը նախատեսված չի եղել կոնվենցիան մշակողների կողմից, չի կարող այդ մարմնին թույլ չտալ գտնվել կոնվենցիայի գործողության ոլորտում: Այնքանով, որ պայմանավորվող կողմերը միջազգային համաձայնագրերով կազմակերպում են ընդհանուր սահմանադրական կամ խորհրդարանական կառույցներ, դատարանը պետք է կոնվենցիան և դրա արձանագրությունները մեկնաբանելիս հաշվի առնի այդ փոխադարձաբար համաձայնեցված կառույցները: Մնում է որոշել այն հարցը, թե արդյոք այնպիսի մարմինը, ինչպիսին է Եվրոպական խորհրդարանը, այդուհանդերձ, դո՞ւրս է մնում թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածից:

40. Դատարանը հիշեցնում է, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածում «օրենսդիր իշխանություն» բառակապակցությունը անհրաժեշտաբար չի նշանակում ազգային խորհրդարան. նշված բառակապակցությունը հարկ է մեկնաբանել ըստ դիտարկվող երկրի սահմանադրական կառուցվածքի: «*Մաթյո-Մոհին և Քլերֆայթն ընդդեմ Բելգիայի*» *(Mathieu-Mohin and Clerfayt v Belgium)* գործում 1980 թ. սահմանադրական բարեփոխումները Ֆլամանդական խորհրդին օժտել էին բավարար իրավասություններով և իշխանությամբ, որպեսզի վերջինս, Ֆրանսիական համայնքային խորհրդի և Վալոնյան շրջանային խորհրդի հետ միասին, վերածվի բելգիական «օրենսդիր իշխանության» բաղկացուցիչ մասի՝ ի լրումն Ներկայացուցիչների պալատի և Սենատի (տե՛ս «*Մաթյո-Մոհին և Քլերֆայթն ընդդեմ Բելգիայի*» գործով 1987 թ. մարտի 2-ի վճիռը, շարք A, թիվ 113, էջ 23, պարբ. 53, տե՛ս նաև հանձնաժողովի որոշումները շրջանային խորհրդարանի առնչությամբ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ՝ Ավստրիայում (գանգատ թիվ 7008/75, 1976 թ. հուլիսի 12-ի որոշում, DR 6, էջ 120) և Գերմանիայում (գանգատ թիվ 27311/95, 1995 թ. սեպտեմբերի 11-ի որոշում, DR 82-A, էջ 158)):

41. Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ ԵՀ օրենսդրության բնորոշ գծերից է, որ նման օրենսդրությունը տեղավորվում է ներպետական օրենսդրության կողքին և իրականում առաջնային է նրա նկատմամբ (տե՛ս, օրինակ՝ «*Կոստան ընդդեմ ԷՆԵԼ-ի*» (*Costa v ENEL*), 6/64 [1964) ECR 585, 7 «*Ամինիստրացիոնե դել Ֆինանցե դելլո Ստատոն ընդդեմ «Սիմենտալ» ԲԲ-ի*» (*Amministrazione delle Finanze dello Stato v Simmenthal SpA*), 106/77 [1978] ECR 629): Այդ առումով Ջիբրալթարը նույն վիճակում է, ինչ Եվրոպական Միության այլ հատվածները:

42. Դատարանը վերստին նշում է, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը սահմանում է արդյունավետ քաղաքական ժողովրդավարության բնութագրիչ (տե՛ս վերը հիշատակված «*Մաթյո-Մոհին և Քլերֆայթն ընդդեմ Բելգիայի*» գործով վճիռը, էջ 22, պարբ. 47 և վերը հիշատակված «*Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցությունն ընդդեմ Թուրքիայի*» գործով վճիռը, էջ 21-22, պարբ. 45): Սույն գործում փաստարկ չի բերվել, որ Ջիբրալթարի ժողովրդի համար գոյություն ունի Եվրոպական խորհրդարանում ընտրական ճանապարհով ներկայացվածությունն ապահովելու այլընտրանքային միջոց, և դատարանը նման իրողության նշաններ չի տեսնում:

43. Դատարանն այդպիսով համարում է, որ կառավարության այն պնդումն ընդունելը, թե Եվրոպական խորհրդարանի գործունեության շրջանակը դուրս է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի գործողության ոլորտից, կնշանակի աղճատման վտանգի ենթարկել այն հիմնարար գործիքներից մեկը, որի միջոցով կարող է ապահովվել «արդյունավետ քաղաքական ժողովրդավարությունը»:

44. Այստեղից հետևում է, որ չի ներկայացվել որևէ պատճառ, որը կարող էր հիմնավորել Եվրոպական խորհրդարանը թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածում հղում արված ընտրությունների ոլորտից դուրս թողնելը, այն հիմքով, որ այն վերազգային, ոչ թե զուտ ներպետական ներկայացուցչական մարմին է:

Գ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՋԻԲՐԱԼԹԱՐՈՒՄ ՈՒՆԵ՞Ր «ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ» ՀԱՏԿԱՆԻՇԵՐԸ

45. Կառավարությունը պնդում էր, որ Եվրոպական խորհրդարանը շարունակում է զուրկ մնալ օրենսդիր իշխանության երկու ամենահիմնարար բնորոշիչներից՝ օրենսդրական նախաձեռնություն դրսևորելու իշխանությունից և այդ օրենսդրությունն ընդունելու իշխանությունից: Կառավարությունն այն կարծիքին էր, որ, այն ժամանակից ի վեր, ինչ հանձնաժողովը վերջին անգամ դիտարկել էր հարցը վերը նշված *Տեոհ* գործով վճռում (տե՛ս վերը բերված պարբ. 37), Եվրոպական խորհրդարանի իրավասություններում և գործառույթներում տեղ գտած միակ փոփոխությունը՝ ԵՀ համաձայնագրի 189բ հոդվածով տեղ գտած ընթացակարգը, ավելի փոքր բան էր առաջարկում, քան նույնիսկ Խորհրդի հետ համատեղ որոշումներ կայացնելու իրավասությունն է, և ցանկացած պարագայում վերաբերում էր Համայնքի օրենսդրական գործունեության արդյունքի միայն մի փոքր մասին:

46. Դիմողն այդ առումով որպես իր մեկնակետ էր վերցրել այն, որ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովն արձանագրել էր, որ 1986 թ. «Միասնական Եվրոպայի մասին» օրենքի ուժի մեջ մտնելը Եվրոպական խորհրդարանին չօժտեց այն անհրաժեշտ իրավասություններով և գործառույթներով, որ վերջինս համարվեր «օրենսդիր իշխանություն» (տե՛ս վերը նշված *Տեոհ* գործով վճիռը): Դիմողը պնդում էր, որ Մաաստրիխտի համաձայնագիրն այն աստիճանի է

մեծացրել այդ իրավասությունները, որ Եվրոպական խորհրդարանը սոսկ խորհրդատվական և վերահսկողական մարմնից այժմ վերափոխվել է այնպիսի մարմնի, որը ստանձնել էր կամ առնվազն մասամբ ստանձնել է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի իմաստով օրենսդիր մարմինների իրավասություններն ու գործառույթները: Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս: Դիմողը Եվրոպական խորհրդարանի իրավասությունները նկարագրում էր ոչ միայն Մաաստրիխտի համաձայնագրի ավելացրած նոր հարցերի առումով, այլև հղում անելով նրա նախկին իրավասություններին, մասնավորապես նրանց, որոնք ավելացվել էին «Միասնական Եվրոպայի մասին» 1986 թ. օրենքով:

47. Հանձնաժողովը չի քննել այս կետը, քանի որ համարել է, որ 3-րդ հոդվածը չի վերաբերում վերազգային ներկայացուցչական մարմիններին:

48. Որոշելու համար, թե արդյոք Եվրոպական խորհրդարանը Ջիբրալթարում, թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի նկատառումներով, կարելի՞ է համարել «օրենսդիր իշխանություն» կամ դրա մաս, դատարանը պետք է նկատի ունենա Եվրոպական համայնքի *իր տեսակի մեջ եզակի* բնույթը, որն ամեն առումով չէ, որ հետևում է բազմաթիվ այլ պետություններում սովորաբար հանդիպող կառուցվածքին, որոնց մոտ առկա է գործադիր և օրենսդիր իշխանությունների միջև շատ թե քիչ հստակ տարանջատում: Ընդհակառակը, ԵՀ-ում օրենսդրական գործընթացը ներառում է Եվրոպական խորհրդարանի, Խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի մասնակցությունը:

49. Դատարանը պետք է ապահովի, որ «արդյունավետ քաղաքական ժողովրդավարությունը» պատշաճ կերպով մատուցվի այն տարածքներում, որտեղ գործում է կոնվենցիան, և այդ համատեքստում պետք է դիտարկի ոչ միայն մարմնի խստորեն օրենսդիր իրավասությունները, այլև տվյալ մարմնի դերն ընդհանուր օրենսդրական գործընթացում:

50. Մաաստրիխտի համաձայնագրից ի վեր Եվրոպական խորհրդարանի իրավասություններն այլևս չեն նկարագրվում որպես «խորհրդակցական և վերահսկողական»: Այդ բառերի վերացումը հարկ է ընդունել որպես նշան, որ Եվրոպական խորհրդարանը դադարել է զուտ խորհրդակցական մարմին լինելուց և սկսել է դառնալ այնպիսի մարմին, որը որոշիչ դեր է խաղալու Եվրոպական համայնքի օրենսդրական գործընթացում: ԵՀ համաձայնագրի 137-րդ հոդվածի փոփոխությանը, սակայն, չի կարելի ավելի մեծ տեղ հատկացնել, քան որպես Մաաստրիխտի համաձայնագրի հեղինակների մտադրությունները ցույց տվող նշան: Միայն քննելով Եվրոպական խորհրդարանի իրական իրավասությունները Եվրոպական համայնքի օրենսդրական գործընթացի՝ որպես ամբողջության, համատեքստում, դատարանը կարող է որոշել՝ Եվրոպական խորհրդարանը Ջիբրալթարում գործո՞ւմ է որպես «օրենսդիր իշխանություն» կամ դրա մաս:

51. Եվրոպական խորհրդարանի դերը Համայնքի օրինաստեղծ գործընթացում կախված է դիտարկվող հարցերից ... Այն դեպքերում, երբ որևէ նորմ կամ դիրեկտիվ է ընդունվում խորհրդակցական ընթացակարգի միջոցով (օրինակ՝ ԵՀ համաձայնագրի 99-րդ կամ 100-րդ հոդվածներով), կախված որոշակի դրույթից, կարող է առաջանալ Եվրոպական խորհրդարանի հետ խորհրդակցելու անհրաժեշտություն: Նման դեպքերում Եվրոպական խորհրդարանի դերը սահմանափակ է: Այն դեպքերում, երբ ԵՀ համաձայնագիրը պահանջում է օգտագործել հոդված 189գ-ով սահմանված ընթացակարգը, հարցի վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի դիրքորոշման նկատմամբ կարող է գերակայել միաձայն Խորհուրդը: Այնուամենայնիվ, այն պարագայում, երբ ԵՀ համաձայնագիրը պահանջում է հետևել հոդված 189բ-ով սահմանված ընթացակարգին, Խորհուրդը չի կարող միջոցներ ձեռնարկել Եվրոպական խորհրդարանի կամքին հակառակ: Վերջապես, այն դեպքում, երբ օգտագործվում է այսպես կոչված «համաձայնության ընթացակարգը» (ինչպես հղում է արված ԵՀ համաձայնագրի հոդված 138բ-ի առաջին պարբերությունում)՝ այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են նոր անդամ պետությունների ընդունումը և միջազգային պայմանագրերի որոշակի տեսակների կնքումը, մինչև նման միջոցի անցկացումն անհրաժեշտ է ստանալ Եվրոպական խորհրդարանի համաձայնությունը: Ի լրումն օրենսդրության անցկացման գործին այս ներգրավվածության՝ Եվրոպական խորհրդարանն ունի նաև Եվրոպական հանձնաժողովում նշանակման և ազատման հետ կապված գործառույթներ: Այդպիսով, այն Եվրոպական հանձնաժողովին անվստահություն հայտնելու իրավունք ունի, որն ի վերջո կարող է հանգեցնել նրան, որ Եվրոպական հանձնաժողովը, որպես մարմին, հրաժարական տա (144-րդ հոդված). նրա համաձայնությունն անհրաժեշտ է Եվրոպական հանձնաժողովում նշանակում ստանալու համար (158-րդ հոդված). մինչև բյուջեն ընդունելն անհրաժեշտ է նրա համաձայնությունը (203-րդ հոդված). նա է հաստատում Եվրոպական հանձնաժողովի կողմից բյուջեի կատարումը և այդտեղ վերահսկողական իրավասություններ ունի Եվրոպական հանձնաժողովի նկատմամբ (206-րդ հոդված): Ավելին, թեև Եվրոպական խորհրդարանը պաշտոնապես իրավասու չէ հանդես գալու օրենսդրական նախաձեռնությամբ, իրավունք ունի դիմելու Եվրոպական հանձնաժողովին՝ առաջարկներ ներկայացնելով այնպիսի հարցերի վերաբերյալ, որոնց առումով, իր կարծիքով, պահանջվում է Համայնքի օրենքի առկայություն (հոդված 138բ):

52. Ինչ վերաբերում է այն համատեքստին, որում գործում է Եվրոպական խորհրդարանը, դատարանն այն կարծիքին է, որ Եվրոպական խորհրդարանը Համայնքի համակարգում ներկայացնում է ժողովրդավարական, քաղաքական հաշվետվողականության մի սկզբունքային ձև: Դատարանը համարում է, որ ինչպիսին էլ լինեն նրա սահմանափակում-

ները, Եվրոպական խորհրդարանը, որը ժողովրդավարական լեգիտիմություն է ձեռք բերում համընդհանուր ընտրական իրավունքի միջոցով ուղղակի ընտրության արդյունքում, պետք է դիտարկել որպես Եվրոպական համայնքի կառույցի մաս, որը լավագույնս է արտացոլում «արդյունավետ քաղաքական ժողովրդավարությանը» վերաբերող մտահոգությունները:

53. Եթե նույնիսկ պատշաճ կերպով հաշվի է առնվում այն փաստը, որ Ջիբրալթարը դուրս է թողնված Համայնքի գործունեության որոշակի ոլորտներից, ... մնում են նշանակալի ոլորտներ, որտեղ Համայնքի գործունեությունն ուղղակի ազդեցություն ունի Ջիբրալթարում: Ավելին, ինչպես մատնացույց է անում դիմողը, ԵՀ համաձայնագրի 189բ հոդվածին համապատասխան ձեռնարկված միջոցները, որոնք ազդում են Ջիբրալթարի վրա, վերաբերում են այնպիսի կարևոր հարցերի, ինչպիսիք են ավտոճանապարհների անվտանգությունը, անարդարացի պայմանագրային պայմանները և օդի աղտոտումը շարժիչով տրանսպորտային միջոցների արտանետումներով, ինչպես նաև այն բոլոր միջոցները, որոնք վերաբերում էին ներքին շուկայի ամբողջացմանը:

54. Դատարանը, այդպիսով, համարում է, որ Եվրոպական խորհրդարանը բավականաչափ ներգրավված է որոշակի օրենսդրական գործընթացների մեջ, որոնք տանում են օրենսդրության ընդունման՝ ԵՀ համաձայնագրի հոդված 189բ-ի և 189գ-ի համաձայն, ինչպես նաև բավականաչափ ներգրավված է Եվրոպական համայնքի գործունեության ընդհանուր ժողովրդավարական վերահսկողության մեջ, որպեսզի համարվի Ջիբրալթարի «օրենսդիր իշխանության» մաս՝ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի նկատառումներով:

…

Ե. 1994 Թ. ՋԻԲՐԱԼԹԱՐՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԱՆՑԿԱՑՆԵԼԸ ՀԱՄԱՏԵՂԵԼԻ՞ ԷՐ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԵՏ

60. Կառավարությունը հայտարարում էր, որ եթե նույնիսկ համարենք, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը վերաբերում է Եվրոպական խորհրդարանին, Ջիբրալթարում 1994 թ. ընտրություններ չանցկացնելն այդ դրույթի խախտում չի առաջացրել, փոխարենը տեղավորվում էր պետության հայեցողության սահմաններում: Կառավարությունը նշում էր, որ 1994 թ. ընտրություններում Միացյալ Թագավորությունն օգտվել է միամանդատ ընտրատարածքային, պարզ մեծամասնության համակարգից: Ջիբրալթարն առանձին ընտրատարածք համարելը կխեղաթյուրեր ընտրական գործընթացը, քանի որ մոտ 30.000 կազմող նրա բնակչությունն ավելի քիչ է, քան Միացյալ Թագավորությունից Եվրոպական խորհրդարանում յուրաքանչյուր տեղին ընկնող բնակչության միջին թվաքանակի 5 տոկոսը: Այլընտրանքը, որը կլիներ ընտրատարածքների սահմանների այնպիսի փոփոխությունը, որ Ջիբրալթարը ներառվեր նոր կամ գոյություն ունեցող ընտրատարածքում, նույնքան անհնարին էր, քանի որ Ջիբրալթարը Միացյալ Թագավորության մաս չէր հանդիսանում և Միացյալ Թագավորության որևէ որոշակի ընտրատարածքի հետ ամուր պատմական կամ այլ կապ չուներ:

61. Դիմողը ներկայացնում էր, որ ամբողջովին զրկվել է 1994 թ. ընտրություններին մասնակցելու իրավունքից: Նա նշում էր, որ հիմնարար իրավունքների պաշտպանությունը չի կարող կախված լինել այն հանգամանքից՝ կա՞ն, թե՞ չկան նախընտրելի այլընտրանքներ տվյալ համակարգին:

62. Հանձնաժողովը, քանի որ չէր որոշել, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը կիրառելի է, չէր քննել՝ Ջիբրալթարում ընտրությունների բացակայությունը համատեղելի՞ էր այդ դրույթի հետ, թե՞ ոչ:

63. Դատարանը հիշեցնում է, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով սահմանված իրավունքները բացարձակ չեն և կարող են ենթակա լինել սահմանափակումների: Պայմանավորվող պետությունները, քվեարկության իրավունքի նկատմամբ պայմաններ սահմանելու առումով, հայեցողության բավական լայն սահմաններ են վայելում, սակայն դատարանի՝ որպես վերջին ատյանի խնդիրն է, որոշելը, թե արդյոք պահպանվե՞լ են թիվ 1 արձանագրության պահանջները: Դատարանը պետք է բավարարված լինի, որ տվյալ պայմանները չեն կրճատում ընտրական իրավունքը մինչև այն աստիճան, որ խաթարվի նրա բուն էությունը և այն զրկվի իր արդյունավետությունից, որ տվյալ պայմանները սահմանվել են օրինական նպատակի հասնելու համար, և կիրառվող միջոցները անհամաչափ չեն: Մասնավորապես, նման պայմանները չպետք է խոչընդոտեն «ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս» (տե՛ս վերը նշված *«Մաթյո-Մոհին և Քլերֆայթն ընդդեմ Բելգիայի»* գործով վճիռը, էջ 23, պարբ. 52):

64. Դատարանը սկզբում հստակ է դարձնում, որ օրենսդիր իշխանություն ընտրելիս ժողովրդի կամքի ազատ արտահայտումն ապահովող ընտրական համակարգի ընտրությունը, լինի հիմնված համամասնական համակարգի, պարզ մեծամասնական համակարգի թե մեկ այլ համակարգի վրա, այնպիսի հարց է, որի առումով պետությունն ունի հայեցողության լայն սահման: Այնուամենայնիվ, սույն գործում դիմողը, որպես Ջիբրալթարի բնակիչ, ամբողջությամբ զրկվել էր Եվրոպական խորհրդարանի անդամների ընտրության կապակցությամբ իր կարծիքն արտահայտելու հնարավորությունից: Այս իրադրությունը միևնույնը չէ, ինչ այն անճանց դրությունը, ովքեր չեն կարող մասնակցել

ընտրություններին, որովհետև ապրում են տվյալ իրավազորությունից դուրս, քանի որ նման անհատները թուլացրել են կապը՝ իրենց և տվյալ իրավազորության միջև: Սույն գործում, ինչպես որոշեց դատարանը (տե՛ս վերը բերված պարբ. 34), Եվրոպական համայնքից ծագող օրենսդրությունը կազմում է Ջիբրալթարի օրենսդրության մի մասը, և դիմողը գտնվում է նրա ուղղակի ազդեցության ներքո:

65. Սույն գործի հանգամանքներում մերժվել է դիմողի ընտրական իրավունքի բուն էությունը, ինչը երաշխավորված է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով: Դրանից հետևում է, որ տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:

…

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

Տասնհինգ կողմ և երկու դեմ ձայներով՝ որոշում է, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում ...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Վիլդհաբերը և դատավորներ Փալմը, Ֆերարի Բրավոն, Գաուկուր Յորունդսոնը, Ռեսը, Կաբրալ Բարետոն, Կոստան, Ֆուրմանը, Ֆիշբախը, Վային, Հեդիգանը, Թոմասենը, Ցացա-Նիկոլովսկան, Պանտիրուն, Թրաժան:

2 Դատավորներ Ֆրիլենդը և Յունգվիրթը հրապարակեցին համատեղ համընկնող կարծիք, որում, *ի թիվս այլոց*, պաշտպանեցին հանձնաժողովի մեծամասնության այն կարծիքը, որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը կիրառելի է ոչ թե միջազգային օրենսդիր մարմինների, այլ ազգային կամ տեղական օրենսդիր մարմինների համար:

«Այնուհետև, դրույթի ծավալը սահմանափակելով մինչև ներպետական ոլորտում գտնվող մարմիններ և բացառելով ցանկացած վերազգային ներկայացուցչական մարմին, դատարանը խուսափում է դրսի մարմնի կողմից նման մարմնի բնութագրիչների վերլուծության հետ կապված անորոշությունից և աչառությունից, որոնք, ինչպես փորձն է ցույց տվել, ամենայն հավանականությամբ ո՛չ հստակ են, ո՛չ էլ կայուն» (պարբ. 3):

Նրանք նաև կասկածում էին՝ Եվրոպական խորհրդարանը բավականաչա՞փ է հասունացել «օրենսդիր իշխանության» համար, քանի որ այն չունի օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու և օրենսդրություն ընդունելու իրավասություն:

3 Դատարանի վճիռը առաջ բերեց թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի դինամիկ մեկնաբանություն, որը սահմանափակված չէր ներպետական օրենսդիր մարմիններով, որոնք գոյություն ունեին, երբ կոնվենցիայի հեղինակները ստեղծում էին այն: Հոդվածի ոլորտն ընդլայնելով մինչև Եվրոպական խորհրդարան՝ դատարանը փորձում էր վերականգնել Եվրոպական Միության կառույցներում գոյություն ունեցող ժողովրդավարության դեֆիցիտը՝ օգնելով ապահովել, որ բոլոր այն մարդիկ, ովքեր կրում են ԵՀ օրենքների նշանակալի ազդեցությունը, առնվազն հնարավորություն ունենան անդամներ ընտրել Եվրոպական խորհրդարանում: ՄԹ-ի համար ընտրական իրավունքի ընդլայնմանը, որպեսզի նման ընտրությունները ներառեն Ջիբրալթարի բնակիչներին, հասնելու իրավական (և քաղաքական) բարդությունն այն է, որ Եվրոպական Միության մեկ այլ անդամ՝ Իսպանիան, այդ տարածքի նկատմամբ ինքնիշխանության նկրտումներ ուներ:

Լուծումը, որը որդեգրվել էր 2004 թ. Եվրոպական խորհրդարանի ընտրությունների համար, Ջիբրալթարը Հարավարևմտյան Անգլիայի ընտրատեղամասին միացնելն էր: Ջիբրալթարի 20.000 ընտրողներն ավելացվեցին Հարավարևմտյան Անգլիայի 3,8 միլիոն ընտրողներին: Մի շարք թեկնածուներ նախընտրական շրջանում այցելեցին Ջիբրալթար՝ ընտրողների ձայները շահելու քարոզարշավ անելու նպատակով:

4 Դատարանը երկու ենթադրվող իրավունքներ գտավ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածում,

որոնք իրավակիրառելի էին անհատների կողմից (օրենսդիր մարմին ընտրելու և այդտեղ ընտրվելու), երբ առաջին անգամ մեկնաբանեց այդ հոդվածը «*Մաթյո-Մոհին և Քլերֆայթն ընդդեմ Բելգիայի*» գործում, A.113 (1987) 10 EHRR 1: Երկու դիմողները խորհրդարանի բելգիացի ֆրանսիախոս անդամներ էին, ովքեր բնակվում էին Բրյուսելի ֆլամանդական թաղամասում: Համաձայն Բելգիայում առկա փոխանցված լեզվական սահմանադրական միջոցների՝ դիմողները չէին կարող մասնակցել Ֆլամանդական խորհրդի որոշումների կայացման գործընթացին, որն իրավասություններ էր իրականացնում իրենց շրջանում: Հետևաբար, դիմողները բողոքում էին, որ իրենց բացառումը Ֆլամանդական խորհրդից խախտում է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը: Հանձնաժողովը, տասը կողմ, մեկ դեմ ձայներով, արձանագրեց այդ դրույթի խախտում: Դատարանի կարծիքով.

47. Համաձայն կոնվենցիայի նախաբանի՝ մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները լավագույնս պահպանվում են «արդյունավետ քաղաքական ժողովրդավարության» պայմաններում: Քանի որ այն ժողովրդավարությունը բնութագրող սկզբունք է սահմանում, թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը, համապատասխանաբար, առաջնային կարևորություն է ստանում կոնվենցիայի համակարգում:

48. Այն դեպքում, երբ կոնվենցիայի և թիվ 1, 4, 6 և 7 արձանագրությունների գրեթե բոլոր նյութական դրույթները գործածում են «յուրաքանչյուր ոք իրավունք ունի» կամ «ոչ ոք չպետք է» բառակապակցությունները, 3-րդ հոդվածն օգտագործում է «բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են» արտահայտությունը: Երբեմն սրանից եզրակացություն է արվում, որ այդ հոդվածը չի սահմանում անձնական իրավունքներ կամ ազատություններ, որոնք «ուղղակիորեն ապահովվում են յուրաքանչյուրի համար», ով գտնվում է այդ կողմերի իրավազորության ներքո (տե՛ս «*Իռլանդիան ընդդեմ ՄԹ-ի*» (*Ireland v UK*) գործով 1978 թ. հունվարի 18-ի վճիռը, շարք A, թիվ 25, էջ 91, պարբ. 239), այլ բացառապես պարտավորություններ է սահմանում պետությունների միջև:

Եթե դա այդպես լիներ, տկն Մաթյո-Մոհինի և պրն Քլերֆայթի՝ հանձնաժողովին ներկայացրած գանգատն ընդունելի չէր լինի, քանի որ կոնվենցիայի 25-րդ հոդվածի համաձայն՝ միայն այն անձը, ով պնդում է, որ հանդիսանում է իր իրավունքների և ազատությունների խախտման զոհը, իրավասու է գանգատ ներկայացնելու հանձնաժողովին:

49. Նման սահմանափակող մեկնաբանությունը քննության չի դիմանում: Համաձայն իր նախաբանի՝ թիվ 1 արձանագրությունն ապահովում է «այնպիսի իրավունքների և ազատությունների հավաքական իրականացումն ապահովող քայլեր, որոնք ուրիշ են, քան ... կոնվենցիայի ... I բաժնում արդեն ընդգրկվածները». ավելին, արձանագրության 5-րդ հոդվածը սահմանում է. «Բարձր պայմանավորվող կողմերի հարաբերություններում սույն արձանագրության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածների դրույթները դիտվում են որպես կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ», որի բոլոր դրույթները, ներառյալ 25-րդ հոդվածը «կիրառվում են համապատասխանաբար»: Ավելին, թիվ 4 արձանագրության նախաբանը վկայակոչում է, *ի թիվս այլոց*, «իրավունքներ[ը] և ազատություններ[ը]», որոնք պաշտպանված են թիվ 1 արձանագրության «1-3-րդ հոդվածներով»:

Եվ ոչ էլ թիվ 1 արձանագրության Նախապատրաստական փաստաթղթերն են 3-րդ հոդվածի առնչությամբ անհատական գանգատ ներկայացնելու իրավունքի գործողությունը բացառելու որևէ մտադրություն բացահայտում, մինչդեռ երկար ժամանակ քննարկվել էր այդ հարցը դատարանի իրավազորությունից հանելու գաղափարը միայն այն բանի համար, որ վերջնականապես մի կողմ դրվեր: Նախապատրաստական փաստաթղթերը հաճախ նաև հղում են անում «քաղաքական ազատությանը», «քաղաքական իրավունքներին», «անձի քաղաքական իրավունքներին և ազատություններին», «ազատ ընտրությունների իրավունքին» և «ընտրական իրավունքին»:

50. Համապատասխանաբար, դատարանի առջև կանգնածները համաձայնել էին այս կետին, 3-րդ հոդվածի ձևակերպման միջպետական նրբերանգները չեն արտացոլում նյութի որևէ տարբերություն կոնվենցիայի և արձանագրությունների այլ նյութական դրույթներից: Դրա պատճառը, կարծես թե, ավելի շուտ կարելի է գտնել ստանձնած հանձնառությանն ավելի մեծ պաշտոնականություն հաղորդելու ցանկության մեջ և այն փաստի մեջ, որ խնդրո առարկա ոլորտում առաջնային պարտավորությունը չի վերաբերում զերծ մնալուն կամ չմիջամտելուն, ինչպես քաղաքացիական և քաղաքական իրավունքների մեծամասնության դեպքում, այլ վերաբերում է պետության կողմից ժողովրդավարական ընտրություններ «անցկացնելու» դրական պարտավորության ընդունմանը:

51. Ինչ վերաբերում է 3-րդ հոդվածով նման կերպ սահմանված իրավունքների բնույթին, հանձնաժողովի որդեգրած տեսակետը զարգացում է ապրել: Ազատ ընտրություններ անցկացնելու «ինստիտուցիոնալ» իրավունքի գաղափարից (թիվ 1028/61 դիմումի ընդունելիության վերաբերյալ 1961 թ. սեպտեմբերի 18-ի որոշում, «*X-ն ընդդեմ Բելգիայի*» (*X v Belgium*) գործ, Կոնվենցիայի տարեգիրք, հտ. 4, էջ 338) հանձնաժողովն անցել է «համընդհանուր ընտրական իրավունքի» հայեցակարգին (տե՛ս, մասնավորապես, թիվ 2728/66 դիմումի ընդունելիության վերաբերյալ 1967 թ. հոկտեմբերի 6-ի որոշումը, «*X-ն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության*», նշվ. տեղում, հտ. 10, էջ 338) և այնուհետև, որպես հետևանք, մասնակցության սուբյեկտիվ իրավունքի հայեցակարգին՝ «օրենսդիր մարմին ընտրելու իրավունք» և «այդտեղ ընտրվելու իրավունք» (տե՛ս, մասնավորապես, nos. 6745-6746/76 դիմումների ընդունելիության վերաբերյալ 1975 թ.

մայիսի 30-ի որոշումը, «*W-ն, X-ը, Y-ը և Z-ն ընդդեմ Բելգիայի* (*W, X, Y and Z v Belgium*), նշվ. տեղում, հտ. 18, էջ 244): Դատարանը հաստատում է այս վերջին հայեցակարգը:

52. Խնդրո առարկա իրավունքները բացարձակ չեն: Քանի որ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը դրանք ճանաչում է առանց հստակ արտահայտված պայմաններով դրանք արտահայտելու, չենք խոսում արդեն սահմանելու մասին, տեղ է մնացել ենթադրյալ սահմանափակումների համար (տե՛ս *mutatis mutandis Գոլդերի* (Golder) գործով 1975 թ. փետրվարի 21-ի վճիռը, շարք A, թիվ 18, էջ 18-19, պարբ. 38): Իրենց ներքին իրավակարգերում պետությունները ընտրելու և ընտրվելու իրավունքները ենթարկում են սահմանափակումների, որոնք, սկզբունքորեն, չեն բացառվում 3-րդ հոդվածով (*Նախապատրաստական փաստաթղթերի* ժողովածու, հտ. III, էջ 264 և հտ. IV, էջ 24): Դրանք այս ոլորտում ունեն հայեցողության լայն սահման, սակայն դատարանի՝ որպես վերջին ատյանի խնդիրն է, որոշել, թե արդյոք պահպանվե՞լ են թիվ 1 արձանագրության պահանջները: Դատարանը պետք է բավարարված լինի, որ տվյալ պայմանները չեն կրճատում ընտրական իրավունքը մինչև այն աստիճան, որ խաթարվի նրա բուն էությունը, և այն զրկվի իր արդյունավետությունից, որ տվյալ պայմանները սահմանվել են օրինական նպատակի հասնելու համար, և որ կիրառվող միջոցները անհամաչափ չեն (տե՛ս այլ նախադեպերի մեջ և *mutatis mutandis Լիթգոուի (Lithgow)* գործով 1986 թ. հուլիսի 8-ի վճիռը, շարք A, թիվ 102, էջ 71, պարբ. 194): Մասնավորապես, նման պայմանները չպետք է խոչընդոտեն «ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս»:

53. Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը վերաբերում է միայն «օրենսդիր իշխանության» կամ առնվազն վերջինիս որևէ պալատի ընտրություններին, եթե այն ունի երկուսը կամ ավելին (Նախապատրաստական փաստաթղթեր, հտ. VIII, էջ 46, 50 և 52): «Օրենսդիր իշխանություն» բառակապակցությունը անհրաժեշտաբար չի նշանակում ազգային խորհրդարան. այդ բառակապակցությունը հարկ է մեկնաբանել ըստ դիտարկվող երկրի սահմանադրական կառուցվածքի:

Դատարանը նշում է, որ 1980 թ. սահմանադրական բարեփոխումները Ֆլամանդական խորհրդին օժտել էին բավարար իրավասություններով և իշխանությամբ, որպեսզի վերջինս, Ֆրանսիական համայնքային խորհրդի և Վալոնյան շրջանային խորհրդի հետ միասին, վերածվի Բելգիայի «օրենսդիր իշխանության» բաղկացուցիչ մասի՝ ի լրումն Ներկայացուցիչների պալատի և Սենատի ... Դատարանի առջև կանգնածները համաձայնել էին այս կետին:

54. Ինչ վերաբերում է «օրենսդիր իշխանության» ձևավորման եղանակին, թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը նախատեսում է միայն «ազատ ընտրություններ»՝ «ողջամիտ պարբերականությամբ», «գաղտնի քվեարկությամբ» և «այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս»: Ըստ այդմ, այն «կոնկրետ համակարգ ներդնելու պարտավորություն» չի ստեղծում (Նախապատրաստական փաստաթղթեր, հտ. VII, էջ 130, 202 և 210 և հտ. VIII, էջ 14), ինչպիսին, օրինակ, համամասնական ներկայացուցչությունն է կամ պարզ մեծամասնությամբ ընտրությունը մեկ կամ երկու քվեարկությամբ:

Այստեղ նույնպես դատարանն ընդունում է, որ պայմանավորվող պետությունները հայեցողության լայն սահման ունեն՝ հաշվի առնելով, որ հարցին վերաբերող նրանց օրենսդրությունները տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում տարբեր են:

Ընտրական համակարգերը փորձում են իրականացնել այնպիսի խնդիրներ, որոնք երբեմն հազիվ են համատեղելի միմյանց հետ. մի կողմից՝ բավականաչափ ճշգրտորեն արտացոլել մարդկանց կարծիքները և մյուս կողմից՝ մտքերի ընթացքն այնպես ուղղել, որ նպաստի բավականաչափ հստակ և տրամաբանված քաղաքական կամքի ձևավորմանը: Այս հանգամանքներում, «այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս» արտահայտությունը, ըստ էության, ենթադրում է, բացի արտահայտման ազատությունից (որն արդեն պաշտպանված է կոնվենցիայի 10-րդ հոդվածով), բոլոր քաղաքացիների հանդեպ վերաբերմունքի հավասարության սկզբունքը, երբ նրանք իրացնում են ընտրելու և ընտրվելու իրենց իրավունքը:

Այնուամենայնիվ, դրանից չի հետևում, որ բոլոր ձայները պետք է անհրաժեշտաբար ունենան հավասար կշիռ՝ ընտրությունների ելքի առումով, կամ որ բոլոր թեկնածուները պետք է ունենան հաղթելու հավասար հնարավորություններ: Այդպես, որևէ ընտրական համակարգ չի կարող վերացնել «կորցրած ձայները»:

Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի նկատառումներով՝ ցանկացած ընտրական համակարգ պետք է գնահատվի՝ ելնելով դիտարկվող երկրի քաղաքական էվոլյուցիայից. այն հատկանիշները, որոնք անթույլատրելի են մի համակարգի համատեքստում, կարող են արդարացված լինել մեկ այլ համակարգի համատեքստում, առնվազն քանի դեռ այդ ընտրված համակարգը տրամադրում է պայմաններ, որոնք կապահովեն «ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս»:

Դատարանի մեծամասնությունը, տասներեք կողմ և հինգ դեմ ձայների հարաբերակցությամբ, եզրակացրեց, որ Բելգիայի լեզվաբանական կառուցվածքը (կոմպոզիցիան) և նրա՝ Ֆլամանդական խորհրդին անդամակցելու սահմանափակումների սահմանադրական պատմությունը չեն խախտում թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը: Դատավճիռը բացահայտում է, որ այդ հոդվածից հետևող իրավունքները հեռու են բացարձակ լինելուց, և դատարանը պետություններին օժտում է հայե-

ցողության նշանակալի սահմանով, որի ներսում նրանք կարող են ստեղծել ընտրական համակարգեր և օրենսդիր մարմիններ՝ ըստ իրենց յուրահատուկ ազգային պահանջների:

5 Դատարանի հարգանքը ազգային ընտրական համակարգերի նկատմամբ իր արտահայտությունն է գտել նաև «*Գիտոնասն ընդդեմ Հունաստանի*» (Gitonas v Greece] գործում (1997) 26 EHRR 691, Զեկույցներ 1997-IV, որում դատարանը միաձայն որոշեց, որ դիմողին զրկելով Հունաստանի խորհրդարանի ընտրություններին մասնակցելուց՝ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը չի խախտվել: Համաձայն Հունաստանի սահմանադրության՝ նախկին պետական ծառայողների որոշակի խմբեր իրավունք չունեն առաջադրվել խորհրդարանում իրենց պետական ծառայությունն ավարտելուց հետո երեք տարի ժամանակահատվածում: Դիմողները, որոնք բարձր պաշտոններ էին զբաղեցրել պետական հատվածում, օրինակ՝ պետական հեռուստաալիքների տնօրեններ էին, բողոքում էին, որ խորհրդարանական ընտրություններում առաջադրվելու հնարավորությունից զրկվելը ոտնահարում է օրենսդիր իշխանություն ընտրելու և ընտրվելու իրենց ենթադրվող իրավունքները, որոնք սահմանված են թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով: Հանձնաժողովը, փոփոխական մեծամասնությամբ, արձանագրեց հոդվածով դիմողների իրավունքների ոտնահարում: Դատարանը որոշեց, որ.

> ... Պետությունները նշանակալի ինքնուրույնություն են վայելում իրենց սահմանադրական կարգերի այն կանոնների առումով, որոնք կարգավորում են խորհրդարանականների կարգավիճակը, ներառյալ՝ խորհրդարանում ընտրվելու իրավունք չունենալու չափանիշները: Քխելով ընդհանուր մտահոգությունից (խորհրդարանի անդամների անկախության ապահովում, սակայն նաև ընտրազանգվածի ընտրության ազատության ապահովումով)՝ չափանիշները, սակայն, տարբերվում են ըստ յուրաքանչյուր պետությանը հատուկ պատմական և քաղաքական գործոնների: Եվրոպայի խորհրդի անդամ բազմաթիվ պետությունների սահմանադրություններով և ընտրական օրենսդրություններով նախատեսված իրավիճակների քիվը ցույց է տալիս խնդրո առարկայի հնարավոր տարբերակների բազմազանությունը: Սակայն, այդուհանդերձ, այդ չափանիշներից որևէ մեկը չի կարող համարվել ավելի հիմնավոր, քան ցանկացած ուրիշը, պայմանով, որ այն երաշխավորում է մարդկանց կամարտահայտումը՝ ազատ, արդար և կանոնավոր ընտրությունների միջոցով (պարբ. 39):

Դատարանը եզրակացրեց, որ դիմողների՝ Հունաստանի խորհրդարանում առաջադրվելու իրավունք չունենալը ո՛չ կամայական է, ո՛չ էլ անհամաչափ: Նախկին բարձրաստիճան պետական ծառայողների՝ խորհրդարանում առաջադրվելու իրավունքի առնչությամբ ազգային սահմանափակումների հաստատումը դատարանով ուղղված է ընտրություններում արդարության ապահովմանը՝ կանխելով նման անձանց կողմից իրենց նախկին պետական դիրքի ընձեռած հեղինակության ու իշխանության չարաշահումը: Հետագայում «*Ահմեդն ընդդեմ ՄԹ-ի*» *(Ahmed v UK)* գործում (վերը՝ էջ 690) դատարանը պաշտպանեց նաև այն սահմանափակումները, որոնք սահմանված էին տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների որոշակի խմբերի համար՝ տեղական խորհուրդներում, Միացյալ Թագավորության խորհրդարանում և Եվրոպական խորհրդարանում ընտրվելու առնչությամբ, ինչպես նաև ոստիկանության աշխատակիցների նկատմամբ Հունգարիայի խորհրդարանում առաջադրվելու առնչությամբ գործող սահմանափակումները՝ *«Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի»* (*Rekvenyi v Hungary*) գործում (վերը՝ էջ 692):

6 Դժբախտաբար, «*Ահմեդն ընդդեմ ՄԹ-ի*» գործում (վերը՝ էջ 690) դատարանը որոշում չկայացրեց՝ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածը վերաբերո՞ւմ է տեղական իշխանությունների ընտրություններին, թե՞ ոչ: Սա ցավալի էր, քանի որ այն տեղական իշխանությունների դեպքում, որոնք նշանակալի կառավարական իրավասություններ ունեն (ներառյալ ենթաօրենսդրական ակտերի ընդունումը), այդտեղ ընտրությունները, սկզբունքորեն, պետք է ենթակա լինեն նշված հոդվածի պահանջներին: Նախադեպային իրավունքի նման զարգացումը կհամապատասխաներ *Մաթյո-Մոհինի* և *Մեթյուսի* գործերով վերը հիշատակված վճիռներին:

7 Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի և 10-րդ հոդվածի միջև հարաբերությունը դատարանը քննել է *«Բոումանն ընդդեմ ՄԹ-ի» (Bowman v UK)* գործում (վերը՝ էջ 689):

8 Մեծ պալատը միաձայն արձանագրեց ընտրելու ենթադրվող իրավունքի խախտում, երբ անձը, ով անմեղ էր ճանաչվել մաֆիայի տիպի կազմակերպության անդամ հանդիսանալու քրեական մեղադրանքով, հանվել էր ընտրացուցակներից՝ «*Լաբիտան ընդդեմ Իտալիայի*» (*Labita v Italy*) (6-ը ապրիլի 2000 թ.): Դիմողը ձերբակալվել էր 1992 թ. ապրիլին նման մի կազմակերպության անդամակցելու կասկածանքով: Մինչև դատավարությունը նա պահվել էր բանտում: 1992 թ. սեպտեմբերին շրջանային դատարանը խափանման միջոց էր կիրառել դիմողի նկատմամբ: Հետագայում այդ միջոցը կասեցվեց մինչև դիմողի դատավարության ավարտը: 1994 թ. նոյեմբերին նա արդարացվեց և ազատ արձակվեց կալանքից: Ավելի ուշ՝ այդ ամսվա ընթացքում, դիմողի նկատմամբ խափանման միջոցը վերականգնվեց: Նախագահի 1967 թ. հրամանի համաձայն՝ այն անձինք, ում հանդեպ կիրառվում էին այդ միջոցները, զրկվում էին նաև ընտրական իրավունքից: Հետևաբար, 1995 թ. հունվարին տեղական ընտրական հանձնաժողովը դիմողի անունը հանեց ընտրացուցակից: 1997 թ. նոյեմբերին, երբ Լաբիտայի նկատմամբ խափանման միջոցը դադարեցվեց, նա վերականգնվեց ընտրացուցակներում: Դիմողը պնդում էր, *ի թիվս այլոց,* որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում, և հանձնաժողովն այդ դրույթի խախտում արձանագրեց (քսաներեք կողմ, հինգ դեմ ձայներով): Դատարանում կառավարությունը հայտարարեց, որ ընտրական իրավունքից զրկելու կանոններն ուղղված են կանխելու մաֆիայի ազդեցությունը ընտրովի մարմինների վրա:

> Դատարանը կասկած չունի, որ այն անձանց ընտրական իրավունքը ժամանակավորապես դադարեցնելը, ում դեմ ներկայացված են մաֆիայի անդամ հանդիսանալու ապացույցներ, հետապնդում է օրինական նպատակ: Այնուամենայնիվ, դատարանը կարծում է, որ թեև դիմողի դեմ ոստիկանական վերահսկողության հատուկ միջոցը սույն գործում սահմանվել էր դատավարության ընթացքում, այն չի կիրառվել մինչև դատավարության ավարտը, երբ դիմողն արդարացվել է այն հիմքով, որ «նա տվյալ հանցագործությունը չի կատարել»: Դատարանը չի ընդունում կառավարության արտահայտած տեսակետը, որ դատավարության ընթացքում չեն ժխտվել դիմողի մեղքն ապացուցող լուրջ փաստերը: Այս պնդումը հակասում է Տրապանիի շրջանային դատարանի ... և Պալերմոյի վերաքննիչ դատարանի վճիռների բովանդակությանը: ... Հետևաբար, երբ նրա անունը հանվեց ընտրացուցակից, որևէ որոշակի ապացույց չկար, որի վրա հնարավոր լիներ «կասկած» հիմնել, թե դիմողը պատկանում է մաֆիային ...
>
> Այդ հանգամանքներից ելնելով՝ դատարանը չի կարող խնդրո առարկա միջոցը համարել համաչափ:
>
> Հետևաբար, տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում (պարբ. 203):

Հետևաբար, այն պահից, երբ անձն արդարացվում է հակաժողովրդավարական քրեական կազմակերպությանն անդամակցելու մեղադրանքից, պետությունները, ընդհանուր առմամբ, չեն կարող նման անձանց զրկել թիվ 1 արձանագրության 3 հոդվածում ձևակերպված իրենց քաղաքական իրավունքներից:

9 Միացյալ պալատը *«Պոդկոլզինան ընդդեմ Լատվիայի»* (*Podkolzina v Latvia*) գործում (2002 թ. ապրիլի 9-ի վճիռ) որոշեց, որ պետություններն իրավասու են սահմանելու ազգային խորհրդարանում օգտագործվելիք պաշտոնական լեզուն: Այնուամենայնիվ, խորհրդարան մտնել փորձող թեկնածուների համար ցանկացած լեզվական պահանջ պետք է կիրառվի արդար և համաչափ կերպով: Դիմողը բնակչության ռուսախոս փոքրամասնության ներկայացուցիչ էր (որը կազմում էր ընդհանուրի 40 տոկոսը): Լատվիայի ընտրական օրենսդրությունը պահանջում էր, որ խորհրդարանի անդամության թեկնածուները պետք է ունենան հավաստագիր առ այն, որ թեկնածուն տիրապետում է պաշտոնական լեզու համարվող լատվիերենի «երրորդ աստիճանին»: Դիմողի անունը և լեզվական հավաստագիրը (տրամադրված պաշտոնական կոմիտեի կողմից) ներկայացվել էին Կենտրոնական ընտրական հանձնաժողով Ազգային համաձայնություն կուսակցության կողմից, որը 1998 թ. համընդհանուր ընտրությունների ժամանակ փորձում էր դիմողին գրանցել որպես իր թեկնածուներից մեկը: Մի քանի օր անց Լեզվի պետական տեսչությունում աշխատող մի քննող տեսուչ այցելում է դիմողի աշխատանքի վայր (նախապես դիմողին որևէ կերպ այդ մասին չի զգուշացվել): Տեսուչը լատվիերենով զրույցի էր բռնվել դիմողի հետ և հարցրել, թե ինչու է նա սատարում Ազգային համաձայնություն կուսակցությանը: Հաջորդ օրը տեսուչը վերադառնում է երեք վերահսկողների հետ միասին և դիմողից պահանջում լատվիերեն շարադրություն գրել: Դիմողն այլայլվում և պատռում է շարադրության թերթիկը: Լեզվի պետական տեսչությունը տեղեկացնում է Կենտրոնական ընտրական հանձնա-

ժողովին, որ դիմողը չի տիրապետում լատվիերենի «երրորդ աստիճանին», և հանձնաժողովը դիմողին հանում է թեկնածուների ցուցակից: Լատվիայի դատարանները մերժեցին դիմողի՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման բողոքարկումը: Դիմողը այնուհետև գանգատ ներկայացրեց դատարան՝ պնդելով, որ խախտվել է իր՝ որպես ընտրության թեկնածու հանդես գալու իրավունքը, որը երաշխավորված է 3-րդ հոդվածով: Դատարանը որոշեց.

33. …Պետությունները նշանակալի ինքնուրույնություն են վայելում իրենց սահմանադրական կարգերի այն կանոնների առումով, որոնք կարգավորում են խորհրդարանի անդամների կարգավիճակը, ներառյալ այն չափանիշները, որոնց հիման վրա զրկվում են խորհրդարանում ընտրվելու իրավունքից: Թեև դրանք ընդհանուր ծագում ունեն թե՛ ընտրվող ներկայացուցիչների անկախությունը, թե՛ ընտրողների ազատությունն ապահովելու անհրաժեշտության առումով, այդ չափանիշները տարբերվում են յուրաքանչյուր պետությանը հատուկ պատմական և քաղաքական գործոններին համապատասխան: Եվրոպայի խորհրդի անդամ բազմաթիվ պետությունների սահմանադրություններով և ընտրական օրենսդրություններով նախատեսված իրավիճակների մեծ քանակությունը ցույց է տալիս այդ ոլորտում հնարավոր տարբերակների բազմազանությունը: Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի նկատառումներով՝ ցանկացած ընտրական համակարգ պետք է գնահատվի՝ ելնելով դիտարկվող երկրի քաղաքական էվոլյուցիայից, այնպես որ այն հատկանիշները, որոնք անթույլատրելի են մեկ համակարգի համատեքստում, կարող են արդարացված լինել մեկ այլ համակարգի համատեքստում: Սակայն այդ առումով պետության հայեցողության շրջանակը սահմանափակվում է 3-րդ հոդվածի հիմնարար սկզբունքը (այն է՝ «ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս») հարգելու պարտավորությամբ (տե՛ս *Մաթյո-Մոհիի և Քլերֆայթի* գործը, էջ 23-4, պարբ. 54):

34. Սույն գործում դատարանը նշում է, որ դիմողը թեկնածուների ցուցակից հանվել է համաձայն «Խորհրդարանական ընտրությունների մասին» օրենքի 5-րդ բաժնի 7-րդ կետի, որով անձինք, ովքեր «բարձր» աստիճանի չեն տիրապետում լատվիերենին, առաջադրվելու իրավունք չունեն: Ըստ կառավարության ներկայացման՝ թեկնածուների համար սահմանված լատվիերեն հասկանալու և խոսելու պարտավորությունը թելադրված է խորհրդարանի, որտեղ միակ աշխատանքային լեզուն լատվիերենն է, պատշաճ գործունեությունն ապահովելու անհրաժեշտությամբ: Կառավարությունը, մասնավորապես, շեշտում էր, որ այդ դրույթի նպատակը խորհրդարանի անդամներին թույլ տալն էր ակտիվորեն մասնակցել Ներկայացուցիչների պալատի աշխատանքներին և արդյունավետ կերպով պաշտպանել իրենց ընտրողների շահերը:

Դատարանը չի կարող վիճարկել այս փաստարկը: Դատարանը համարում է, որ յուրաքանչյուր պետության՝ իր սեփական ինստիտուցիոնալ համակարգի բնականոն գործունեությունն ապահովելու հարցում շահագրգռությունը անվիճարկելիորեն օրինական է: Ասվածն առավել ևս վերաբերում է ազգային խորհրդարանին, որն օժտված է օրենսդիր իշխանությամբ և առաջնային դեր է խաղում ժողովրդավարական պետություններում: Համանման կերպով, նկատի առնելով ազգային առանձնահատկությունները հարգելու վերը շարադրված սկզբունքը, դատարանը պարտավոր չէ դիրքորոշում ընդունել ազգային խորհրդարանի աշխատանքային լեզվի վերաբերյալ: Այդ որոշումը, որը պայմանավորված է յուրաքանչյուր երկրին հատուկ պատմական և քաղաքական առանձնահատկություններով, սկզբունքորեն, այնպիսին է, որ այն կարող է կայացնել միայն տվյալ պետությունը: Համապատասխանաբար, նկատի առնելով պատասխանող պետության հայեցողության սահմանը, դատարանը եզրակացնում է, որ ազգային խորհրդարանի ընտրությունների թեկնածուից պահանջելը, որ վերջինս բավարար չափով տիրապետի պաշտոնական լեզվին, հետապնդում է օրինական նպատակ:

Այդուհանդերձ, երբ դատարանը քննում էր թեկնածուին գրանցված թեկնածուների ցուցակից հանելու որոշման համաչափությունը, պալատը «զարմանք» արտահայտեց, որ թեկնածուին հարցաքննել են նրա քաղաքական նախապատվությունների վերաբերյալ, և դատարանը որոշեց, որ թեկնածուն ենթարկվել է մի գործընթացի, որը համատեղելի չէ «ընթացակարգային արդարության պահանջների» հետ: Հետևաբար, պալատը միաձայն եզրակացրեց, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում:

Պոդկոլզինայի գործով վճիռը կրկին ցույց է տալիս դատարանի զգայունությունը անդամ պետությունների սահմանադրական և քաղաքական պատմության նկատմամբ: Սակայն դատարանը նաև պաշտպանում է պոտենցիալ թեկնածուներին գրանցման անարդար ընթացակարգերի ենթարկվելուց:

10 Լիակազմ դատարանի պալատը «*Ազիզն ընդդեմ Կիպրոսի*» (*Aziz v Cyprus*) գործում (2004 թ. հունիսի 22-ի վճիռ) միաձայն որոշեց, որ Կիպրոսը խախտել է Կիպրոսում փոքրամասնություն կազմող թուրքական համայնքի անդամի, ով բնակվում էր կղզու հարավային հատվածում, համընդհանուր ընտրություններին մասնակցելու իրավունքը: Դիմողը բնակվում էր Նիկոսիայում և դեմ էր Թուրքիայի

ռազմական ներխուժմանը կղզու հյուսիս: Կիպրոսի սահմանադրությունն ուժի մեջ էր մտել 1960 թ. և նախատեսում էր երկու առանձին ընտրացուցակ՝ մեկը Կիպրոսի հունական համայնքի համար, մյուսը՝ թուրքական համայնքի: 1963 թ. Կիպրոսի խորհրդարանի ծագումով թուրք անդամների աշխատանքը կասեցվեց, և դիմողն այլևս չէր կարող մասնակցել խորհրդարանի հետագա համընդհանուր ընտրություններից և ոչ մեկին: Կառավարությունը ներկայացրեց, որ Կիպրոսի թուրքական համայնքի մեծամասնության բացակայությունն էր (հարավում բնակվում էր ընդամենը 1,089 ծագումով թուրք կիպրոսցի), որ թույլ չէր տալիս դիմողին անդամներ ընտրել խորհրդարանում ծագումով թուրք կիպրոսցիներին հատկացված տեղերի համար (տեղերի 30 տոկոսը): Պալատը որոշեց, որ.

29. Թեև դատարանը նշում է, որ պետությունները նշանակալի ինքնուրույնություն են վայելում իրենց սահմանադրական կարգերում կանոնների սահմանման առումով, որոնք կարգավորում են խորհրդարանական ընտրությունները և խորհրդարանի կառուցվածքը, և համապատասխան չափանիշները կարող են տարբերվել՝ պայմանավորված յուրաքանչյուր երկրին հատուկ պատմական և քաղաքական առանձնահատկություններով, այդ կանոնները չպետք է լինեն այնպիսին, որ որոշ անձանց կամ անձանց խմբերի բացառեն երկրի քաղաքական կյանքին մասնակցությունից և, մասնավորապես, օրենսդիր իշխանության ընտրությունից, իրավունք, որը երաշխավորված է թե՛ կոնվենցիայով և թե՛ բոլոր պայմանավորվող պետությունների սահմանադրություններով:

30. Սույն գործում, դատարանը նշում է, որ Կիպրոսում տեղ գտած արտառոց իրավիճակն ավելի էր վատթարացել թուրքական ռազմական միավորումների կողմից հյուսիսային Կիպրոսի օկուպացիայից հետո և շարունակել էր այդպիսին մնալ վերջին երեսուն տարիների ընթացքում: Դատարանը, այնուհետև կարծում է, որ թեև համապատասխան սահմանադրական դրույթները հայտարարվել են ուժը կորցրած, ակնհայտորեն առկա է այնպիսի օրենսդրության բացակայություն, որը հնարավորություն կտար լուծելու նշված իրավիճակի արդյունքում ի հայտ եկած խնդիրներ: Հետևաբար, դիմողը՝ որպես Կիպրոսի թուրքական համայնքի անդամ, որ բնակվում էր Կիպրոսի՝ կառավարության վերահսկողության ներքո գտնվող հատվածում, զրկված է եղել երկրի Ներկայացուցիչների պալատի անդամների ընտրության առումով իր կարծիքն արտահայտելու որևէ հնարավորությունից. այն երկրի, որի քաղաքացին է հանդիսանում և որտեղ ապրել է միշտ:

31. Դատարանը, ելնելով վերը բերված հանգամանքներից, համարում է, որ խաթարվել է դիմողի ընտրական իրավունքի (ինչպես այն երաշխավորված է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով) բուն էությունը: Դրանից հետևում է, որ տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:

Պալատը նաև որոշեց, որ դիմողի ընտրական իրավունքի մերժումը խախտում է նաև 14-րդ հոդվածը՝ թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի համակցությամբ: Ըստ դատարանի վճռի՝ Կիպրոսի իշխանությունները չէին կարողացել ողջամիտ և օբյեկտիվ հիմքերով հիմնավորել դիմողի (ծագումով թուրք կիպրոսցի) նկատմամբ վերաբերմունքի տարբերությունը ծագումով հույն կիպրոսցիների նկատմամբ վերաբերմունքից: Հետևաբար, տեղ է գտել «38... . վերաբերմունքի հստակ անհավասարություն՝ խնդրո առարկա իրավունքից օգտվելու առումով, որը պետք է համարել գործի հիմնարար կողմը»: Տասնամյակները, որոնց ընթացքում դիմողը զրկված է եղել ընտրական իրավունքից, կարծես թե պալատի կողմից 3-րդ հոդվածի կիրառման առանցքային տարրն է.

11 Պալատը հարգալից մոտեցում է որդեգրել պետության՝ խորհրդարանական թեկնածուների համար բնակության վայրի առումով պահանջներ սահմանելու իրավասության նկատմամբ «*Մելնիչենկոն ընդդեմ Ուկրաինայի*» (*Melnychenko v Ukraine*) գործում՝ 2004 թ. հոկտեմբերի 19-ի վճիռ:

56. Ինչ վերաբերում է ընտրվելու իրավունքին առնչվող բնակության վայրին վերաբերող պայմանին, որպես այդպիսին, դատարանը երբեք կարծիք չի արտահայտել այդ կետի վերաբերյալ: Այնուամենայնիվ, ընտրելու առանձին իրավունքի առումով դատարանը որոշել է, որ այն, *որպես այդպիսին*, ոչ ողջամիտ կամ կամայական պահանջ չէ (տե՛ս «*Հիլբեն ընդդեմ Լիխտենշտեյնի*» *(Hilbe v Liechtenstein)* (dec.), թիվ 31981/96, ECHR 1999-VI): Դատարանը համարում է, որ ընտրելու համար բնակության վայրի պահանջը կարող է արդարացված լինել հետևյալ հիմքերով. (1) ենթադրությունը, որ ռեզիդենտ չհանդիսացող քաղաքացին նվազ անմիջականորեն և շարունակաբար է մտահոգված երկրի առօրյա խնդիրներով և ավելի քիչ տեղեկություններ ունի դրանց մասին. (2) կարծիքի ազատ արտահայտումն ապահովելու նպատակով, արտասահմանում բնակվող քաղաքացիներին խորհրդարանական թեկնածուների կողմից տարբեր նախընտրական հարցերի ներկայացման անգործնականությունը, երբեմն՝ անցանկալիությունը (որոշ դեպքերում՝ անհնարինությունը). (3) ռեզիդենտ քաղաքացիների ազդեցությունը թեկնածուների ընտրության և նրանց նախընտրական

ծրագրերի ձևակերպման վրա. և (4) խորհրդարանական ընտրություններում քվեարկելու իրավունքի և այդպիսով ընտրված քաղաքական մարմինների ընդունած ակտերի ուղղակի ազդեցությունը կրելու միջև առկա համահարաբերակցությունը («*Պոլակկոն և Գարոֆալոն ընդդեմ Իտալիայի*» *(Polacco and Garofalo v Italy)*, թիվ 23450/94, հանձնաժողովի 1997 թ. սեպտեմբերի 15-ի որոշում՝ հղում անելով հանձնաժողովի նախկին նախադեպային իրավունքին):

57. Այնուամենայնիվ, դատարանն ընդունում է, որ խորհրդարանում ընտրվելու իրավունքի առումով, ի տարբերություն ընտրելու իրավունքի, կարող են սահմանվել ավելի խիստ պահանջներ ... Այդպիսով, դատարանը ամբողջովին չի բացառում հինգ տարվա անընդմեջ բնակության պահանջը խորհրդարանի պոտենցիալ թեկնածուների համար: Հնարավոր է, որ այդ պահանջը պատշաճ է համարվում, որպեսզի թույլ տա նման անձանց բավարար գիտելիքներ կուտակել ազգային խորհրդարանի խնդիրներին առնչվող հարցերի վերաբերյալ:

Այդուհանդերձ, պալատը որոշել է նաև, որ.

59. …Ընտրության ժամանակ որպես թեկնածու հանդես գալու իրավունքը, որը երաշխավորված է թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածով և ներհատուկ է իրապես ժողովրդավար իշխանության հայեցակարգին, պարզապես երևութական կդառնար, եթե հնարավոր լիներ մարդուն ցանկացած պահի կամայականորեն զրկել դրանից: Հետևաբար, թեև ճշմարիտ է, որ պետությունները հայեցողության լայն սահման ունեն, երբ ընդհանրական կերպով սահմանում են ընտրվելու իրավունք ունենալու պայմանները, այն սկզբունքը, որ իրավունքները պետք է արդյունավետ լինեն, պահանջում է, որ ընտրվելու իրավունքի որոշման ընթացակարգը բավարար երաշխիքներ պարունակի՝ կանխելու համար կամայական որոշումները:

Զգալի մեծամասնությունը՝ վեց կողմ և մեկ դեմ ձայներով, որոշեց, որ տեղի է ունեցել այդ հոդվածի խախտում, քանի որ Ուկրաինայի իշխանությունները մերժել են գրանցել դիմողին (Ուկրաինայի քաղաքացի, ով, որպես քաղաքական վտարանդի, բնակվում էր ԱՄՆ-ում) որպես խորհրդարանի թեկնածուի, թեև վերջինս օրինական կերպով գրանցված բնակության վայր ուներ Ուկրաինայում:

12 Մեծ պալատի մեծամասնությունը (տասներկու կողմ, հինգ դեմ) որոշեց, որ բանտարկության մեջ գտնվող բոլոր դատապարտված անձանց ընտրական իրավունքի ինքնաբերաբար դադարեցումը (թե՛ խորհրդարանական, թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում) խախտում է 3-րդ հոդվածը՝ *«Հիրսթն ընդդեմ Միացյալ Թագավորության» (Hirst v United Kingdom)* գործում (թիվ 2)՝ 2005 թ. հոկտեմբերի 6-ի վճիռ: Դիմողը 1980 թ. դատապարտվել էր սպանության համար և դատապարտվել հայեցողական ցմահ ազատազրկման: Նա 2004 թ., հատուկ թույլտվությամբ, ժամանակավորապես ազատ էր արձակվել ազատազրկման վայրից: Համաձայն 1983 թ. «Ազգաբնակչության ներկայացվածության մասին» օրենքի 3-րդ բաժնի՝ նրա ընտրական իրավունքը բանտարկության ժամանակահատվածում դադարեցվել էր: Կառավարությունը բոլոր դատապարտված անձանց ընտրական իրավունքի դադարեցումը փորձում էր արդարացնել հետևյալ երկակի նպատակներով՝ հանցագործությունների կանխման/իրավախախտների պատժման և քաղաքացիական պատասխանատվության ընդլայնման: Մեծամասնությունն ընդունեց, որ դրանք օրինական նպատակներ են՝ համաձայն 3-րդ հոդվածի: Այդուհանդերձ, նրանք չէին կարծում, որ ՄԹ-ի սահմանած ընդհանուր արգելքը համաչափ սահմանափակում է.

82. ...1983 թ. օրենքի 3-րդ բաժինը շարունակում է կոպիտ գործիք մնալ: Այն անձանց մի նշանակալի խմբի զրկում է կոնվենցիայով սահմանված ընտրական իրավունքից և դա անում է առանց խտրություն դնելու: Այդ դրույթն ընդհանուր սահմանափակում է մտցնում բոլոր դատապարտված անձանց համար, ովքեր գտնվում են բանտում: Այն ինքնաբերաբար կիրառվում է նման բանտարկյալների նկատմամբ՝ առանց հաշվի առնելու նրանց ազատազրկման ժամկետը, նրանց կատարած հանցագործության բնույթը կամ ծանրությունը ու նրանց անհատական հանգամանքները: Կոնվենցիայի կենսականորեն կարևոր իրավունքի այդպիսի ընդհանուր, ինքնաբերաբար գործող և խտրություն չդնող սահմանափակումը պետք է դիտել որպես հայեցողության ընդունելի սահմանից դուրս գտնվող, ինչքան էլ այդ շրջանակը լայն լինի, և որպես թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի հետ անհամատեղելի:

Չհամընկնող կարծիք հայտնած դատավորները՝ նախագահող Վիլդհաբերի գլխավորությամբ, կարծում էին.

9. Մեր կարծիքն այն խնդրի վերաբերյալ, թե արդյոք բանտարկության մեջ գտնվող անձանց պե՞տք է թույլատրվի մասնակցել համընդհանուր կամ այլ ընտրությունների, փոքր նշանակություն ունի: Հաշվի առնելով հարցի զգայուն քաղաքական բնույթը, պայմանավորվող պետությունների իրավական համակարգերի բազմազանությունը և նման իրավունքի համար բավարար չափով հստակ հիմքի բացակայությունը թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածում՝ մենք չենք կարող ընդունել, որ դատարանի խնդիրն է ազգային իրավական համակարգերի համար պարտավորություն սահմանելը, որ վերջիններս կա՛մ վերացնեն բանտարկյալների ընտրական իրավունքի դադարեցումը, կա՛մ թույլատրեն այն շատ սահմանափակ չափով:

Անշուշտ, մեծամասնությանը դուր չեկավ բանտարկյալների ընտրական իրավունքի դադարեցման ընդհանուր բնույթը, որը նախատեսված էր Բրիտանիայի օրենսդրությամբ: *Հիրսթի* գործով որոշումը ցույց տվեց, որ, չնայած հայեցողության լայն սահմանին, որը պաշտոնապես տրվում է պետություններին 3-րդ հոդվածով իրենց ընտրական առանձնահատկությունները սահմանելու համար, մշտական գործող դատարանն ավելի ու ավելի է հակվում այն կարծիքին, որ ժողովրդավարական իրավունքների վրա դրվող նշանակալի սահմանափակումները խախտում են այս դրույթը:

13 Մեծ պալատը «*Ջդանոկան ընդդեմ Լատվիայի*» (*Zdanoka v Latvia*) գործում (2000 թ. մարտի 16-ի վճիռ), տասներեք կողմ, չորս դեմ ձայներով, որոշեց, որ 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել այն արգելքի առումով, որը սահմանվել էր կոմունիստական կուսակցության նախկին բարձրաստիճան անդամի նկատմամբ (ով անցյալում, անկախ և ժողովրդավարական պետության վերականգնման ընթացքում, ներգրավված էր եղել հեղաշրջման տապալված փորձերում), երբ վերջինս ցանկանում էր համապետական ընտրություններում հանդես գալ որպես թեկնածու: Դատարանը որոշեց, որ.

133. Թեև նման միջոցը հազիվ թե հնարավոր լինի ընդունելի համարել մեկ քաղաքական համակարգի համատեքստում, օրինակ՝ այն երկրում, որն ունի ժողովրդավարական հաստատությունների՝ բազմաթիվ տասնամյակների կամ հարյուրամյակների պատմություն ունեցող կայացած համակարգ, այդուհանդերձ, այն կարող է ընդունելի համարվել Լատվիայի պարագայում՝ ելնելով այն պատմաքաղաքական համատեքստից, որը հանգեցրել է այդ միջոցի ընդունմանը, և հաշվի առնելով նոր ժողովրդավարական կարգի դեմ ուղղված սպառնալիքը, որը գալիս է այն գաղափարների վերածննդից, որոնց եթե թույլ տրվի հիմքեր գցել, կարող են նախկին վարչակարգը վերականգնելու ունակություն ձեռք բերել:

Այնուամենայնիվ, մեծամասնությունն իր աջակցությունը հայտնեց այն մտքին, որ արգելքի նկատմամբ ժամանակային սահմանափակում կիրառվի: Իր չհամընկնող կարծիքում դատավոր Զուպանչիկը նշեց.

... Ես վայրկյան անգամ չեմ կասկածում, որ Լատվիայի իշխանությունները թույլ կտային տկն Ջդանոկային առաջադրվել Լատվիայի համապետական ընտրություններում, եթե խնդիրը միայն նրա կոմունիստական *անցյալը* լիներ: Եվ ոչ էլ *ներկայումս* իր կոմունիստական հայացքներից հրաժարվելուց և հետ կանգնելուց նրա հրաժարվելն է իրական պատճառը: Լատվիայի ներպետական տեսակետը վերաբերում է ոչ ավելի (և ոչ պակաս), քան տկն Ջդանոկայի *ապագա* քաղաքական վտանգավորությանը: Սա կապված է այն ժողովրդագրական փաստի հետ, որ Լատվիայի ներկայիս բնակչության երեսուն տոկոսը ռուսերեն է խոսում: Ենթադրաբար, սա վտանգում է ինքնիշխանամետ բնիկ (ավտոխտոն) մեծամասնության իշխանությունը, հանուն որի էլ, առաջին հերթին, տեղի ունեցավ Լատվիայի (և մյուս երկու մերձբալթյան պետությունների) անջատումը Խորհրդային Միությունից:

Պոդկոլզինայի գործով (վերը բերված ծնթ. 9) հաջողության հասած դիմողը պատկանում էր ռուսախոս փոքրամասնությանը:

14 Հեղինակի՝ դատարանի նախադեպային իրավունքի ընդհանուր վերլուծությունը հանգեցրեց հետևյալ եզրակացություններին.

Մեր վերլուծած գործերը, անշուշտ, ի ցույց են դնում դատարանի շարունակական աջակցությունը ներկայացուցչական ժողովրդավարությանը՝ տարբեր սահմանադրական ժառանգություն ունեցող անդամ պետությունների ընդլայնվող շրջանակում: Այնուհետև, վերջին ժամանակներում դատարանը եվրոպական ժողովրդավարության մղելն օգտագործել է որպես ուղեցույց կոնվենցիայի մի շարք իրավունքների, ներառյալ կրոնի ազատության, արտահայտման ազատության, միավորման ազատության և ազատ ընտրություններում ընտրելու և ընտրվելու իրավունքների մեկնաբանման և կիրառման համար: Ավելին, փաստական համատեքստը, որի մեջ դատարանը հարկ է ունեցել կիրառել կոնվենցիան, ընդգրկել է

ժողովրդավարական քաղաքական գործընթացի բազմաթիվ բաղկացուցիչներ, ինչպիսիք են քաղաքական կուսակցությունների ստեղծումը և լուծարումը, ընդդիմադիր քաղաքական գործիչների կողմից կառավարության քաղաքականության քննադատությունը, թեկնածուների՝ ընտրովի մարմիններում առաջադրվելու իրավունքը, քաղաքացիների՝ ընտրություններին մասնակցելու իրավունքը, քաղաքականության մեջ ազդեցիկ խմբերի՝ ընտրողների կողմից թեկնածուներին տրվող նախապատվության վրա ազդելու կարողությունը և ընտրված քաղաքական գործիչների խղճի և կրոնի ազատությունը: Դատարանը եվրոպական ժողովրդավարության իր հայեցակարգն օգտագործել է երկու հիմնական նպատակով: Առաջին՝ որպես օգնություն՝ կոնվենցիայի որոշակի իրավունքների գործողության ոլորտը որոշելու հարցում: Ինչպես տեսանք, դատարանը *Մեթյուսի* գործում ընդգրկուն մեկնաբանություն տվեց թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի ոլորտին, այնպես որ այն ներառեց Եվրոպական խորհրդարանը՝ մեծապես հենվելով այն կարծիքի վրա, որ տեղին է Եվրոպական խորհրդարանի ընտրությունները ենթակա դարձնել այդ դրույթի պահանջներին, քանի որ վերջինս «սահմանում է արդյունավետ քաղաքական ժողովրդավարության բնութագրիչ»: Համանման կերպով, դատարանը *Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության* գործում անդրադարձել է հայտարարեց, որ քաղաքական կուսակցությունները 11-րդ հոդվածի պաշտպանության տակ են դատական այն կարծիքի շնորհիվ, որ դրանք «հանդիսանում են միավորումներ կազմելու ձև, որը կարևորագույն նշանակություն ունի ժողովրդավարության պատշաճ գործունեության համար»: Երկրորդ՝ դատարանը նշված հայեցակարգը վկայակոչել է որպես ուղեցույց գործող պետության գործողությունների իր վերանայման ինտենսիվության աստիճանը կոնվենցիայի տարբեր դրույթներին համապատասխան որոշելիս: Օրինակ՝ դատարանը *Ինջալի* (*Incal*) գործում նշում է, որ «ամենամանրակրկիտ քննության» է ենթարկելու պետության միջամտությունը ընդդիմադիր քաղաքական գործչի արտահայտման ազատությանը՝ ժողովրդավարական գործընթացի անխափանության համար քաղաքական ելույթների այս տեսակի կարևորության պատճառով: Նմանապես, պետության՝ քաղաքական կուսակցություն լուծարելու քայլերը ենթակա կլինեն «եվրոպական խստագույն հսկողության», ինչպես նշում է դատարանը *Թուրքիայի միավորված կոմունիստական կուսակցության* գործում:

Ընդհանուր առմամբ, պետությունները կարող են վստահ լինել, որ դատարանը, որպես կանոն, նրանց օժտում է հայեցողության լայն սահմանով, որպեսզի նրանք իրենց ներպետական ընտրական օրենսդրության մանրամասները ձևավորեն համաձայն իրենց ազգային քաղաքական պատմության և տվյալ սահմանադրական համակարգի պահանջների, ինչպես տեսանք *Գիտոնասի* և *Սիմեղի* գործերում: Սակայն այդ շրջանակն անսահմանափակ չէ, ինչպես պարզվեց *Ռոմանի* և *Մեթյուսի* մեր ավելի վաղ տեղ գտած ուսումնասիրությունից: *Գիտոնասի* գործով վճիռը նաև ցույց է տալիս, որ դատարանը չի ցանկանում ստանձնել ընդհանուր համաեվրոպական ընտրական դատարանի դեր, որը կքններ ընտրովի մարմիններում առաջադրվող առանձին թեկնածուների ներպետական իրավունքի հարցը: Ավելին, պետությունները կարող են վկայակոչել ժողովրդավարության գործնական պահանջները պաշտպանելու անհրաժեշտությունը՝ որպես կոնվենցիայի 8-11-րդ հոդվածներով անհատների իրավունքների սահմանափակման օրինական արդարացում, եթե նույնիսկ ազգային սահմանադրական կարգի համար լուրջ սպառնալիք չկա, ինչպես *Սիմեղի* գործում էր: Բնականաբար, դատարանը կգնահատի, թե արդյոք վիճարկվող սահմանափակումը համապատասխանո՞ւմ է հիմնավոր «անհետաձգելի սոցիալական կարիքի» և համաչափության պահանջներին, որոնք պարփակված են կոնվենցիայի այն պահանջում, ըստ որի՝ պետության գործողությունները պետք է լինեն «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»:

Անհատները շահել են դատարանի կողմից եվրոպական ժողովրդավարության մոդելի օգտագործումից, քանի որ այն նպաստել է վճիռներին, որոնցով վերջիններս իրավունք են ստացել, *ի թիվս այլոց*, քաղաքական կուսակցություններ հիմնել, մասնակցել եվրոպական ընտրությունների և պաշտպանել իրենց խղճի և կրոնի ազատությունը, երբ ընտրվել են ազգային խորհրդարաններում: Իսկապես, *Մեթյուսի* և *Բուսկարինիի* գործերով վճիռները ցույց են տալիս, որ նոր մշտական գործող դատարանը նշված մոդելի հասուն կիրառություն է որդեգրում, ինչը պաշտպանում է անհատներին՝ որպես ընտրողներ և քաղաքական գործիչներ: Հետևաբար, կարող ենք եզրակացնել, որ ներկայումս դատարանը ժողովրդավարության իր հայեցակարգը, ընդհանուր առմամբ, զարգացրել և կիրառել է աստիճանաբար ավելացնելու եղանակով, ինչով փորձ է արվել ընդլայնել և ապահովել անդամ պետությունների քաղաքական գործընթացների կենսունակությունը: [A Mowbray, The Role of The European Court of Human Rights in the Promotion of Democracy [1999] *Public Law* 703, էջ 723-5:]

24 ԹԻՎ 4 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1. Պարտքի համար ազատազրկման արգելումը

«*Գոկտանն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Goktan v France*) գործում (2002 թ. հուլիսի 2-ի վճիռ և տե՛ս ստորև՝ էջ 1062), պալատը միաձայն որոշեց, որ 1-ին հոդվածը չի վերաբերում քրեական հանցագործությունների համար սահմանված տուգանքների առումով գանձապետարան չվճարված դրամական միջոցներ ունենալու [դեֆոլտ] հետևանքով ազատազրկման ֆրանսիական համակարգին, քանի որ 1-ին հոդվածը վերաբերում է պայմանագրային պարտավորությունների հետևանքով առաջացող պարտքերին: Այդուհանդերձ, «51. [դ]ատարանը վերապահումներ ունի արտահայտելու, որպես այդպիսին, չվճարման դիմաց ձերբակալության համակարգի վերաբերյալ. այն ազատազրկման արխահիկ միջոց է, որը հասանելի է միայն գանձապետարանին [Treasury]...»

Հոդված 2. Տեղաշարժման ազատությունը

.....

«Նապիյալոն ընդդեմ Խորվաթիայի» (Napijalo v Croatia), 13-ը նոյեմբերի, 2003 թ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը, ով Խորվաթիայի քաղաքացի էր, 1999 թ. փետրվարի 6-ին ավտոմեքենայով գալիս էր Բոսնիա և Հերցեգովինայից: Սահմանին նրան կանգնեցրել է խորվաթական մաքսային տեսուչը, որը որոշել է, որ դիմողը մաքսային իրավախախտում է կատարել՝ չհայտարարագրելով որոշակի ապրանքներ (չորս ստվարաթղթե տուփ ծխախոտ և երկու լիտր բուսական ձեթ՝ դրված ավտոմեքենայի հետևի նստելատեղին): Մաքսավորը սահմանել է տույժ՝ մոտ 30 եվրոյի չափով, սակայն քանի որ դիմողը իր մոտ բավականաչափ գումար չի ունեցել տույժը վճարելու համար, մաքսային ծառայողը վերցրել էր դիմողի անձնագիրը: 1999 թ. փետրվարի 10-ին դիմողը գրել է մաքսային վարչությանը՝ խնդրելով վերադարձնել իր անձնագիրը: Վերջինս պատասխանել է, որ նրա անձնագրի առգրավումը նախատեսված է օրենքով: Մաքսային վարչությունը չի վերադարձրել անձնագիրը, թեև դիմողի դեմ որևէ հայց չէր ներկայացվել, այլ ուղարկել է այն ոստիկանություն: Դիմողը 1999 թ. մարտին քաղաքացիական դատավարություն է սկսել ֆինանսների նախարարության դեմ՝ փորձելով, *ի թիվս այլոց*, հետ ստանալ իր անձնագիրը: Դատարանները չեն կարգադրել վերադարձնել այն: 2001 թ. ապրիլին դիմողը կարողացել է հետ ստանալ իր անձնագիրը ոստիկանությունից: Նա բողոքել է դատարան՝ պնդելով, *ի թիվս այլոց*, որ անձնագրի առգրավմամբ խախտվել է իր՝ Խորվաթիան լքելու և տեղաշարժման ազատությունը, որը երաշխավորված է թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի 2-րդ կետով:

68. Դատարանը վերստին հայտարարում է, որ տեղաշարժման ազատության իրավունքը՝ ինչպես այն երաշխավորված է թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, նախատեսված է յուրաքանչյուր անձի համար որևէ տարածքի սահմաններում կամ տարածքը թողնելու տեղաշարժման ազատություն ապահովելու համար, որը ենթադրում է անձի ընտրությամբ այնպիսի երկիր մեկնելու իրավունքը, որը նրան ընդունում է (տե՛ս *mutatis mutandis «Պելտոնենն ընդդեմ Ֆինլանդիայի» (Peltonen v Finland)* գործը, հանձնաժողովի 1995 թ. փետրվարի 20-ի որոշում, Որոշումներ և զեկույցներ (DR) 80-A, էջ 43, պարբ. 31, և «*Բաումանն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Baumann v France*) գործ, 2001 թ. մայիսի 22-ի վճիռ, *Վճիռների և որոշումների զեկույցներ,* 2001-V, էջ 217, պարբ. 61): Սրանից հետևում է, որ տեղաշարժման ազատությունն արգելում է ցանկացած միջոց, որը կարող է խախտել այդ իրավունքը կամ սահմանափակել դրա իրացումը, որը չի բավարարում միջոցի համար սահմանված այն պահանջը, ըստ որի՝ այն կարող է համարվել «անհրաժեշտ ... ժողովրդավարական հասարակությունում»՝ ուղղված վերը նշված

հոդվածի 3-րդ կետում վկայակոչված օրինական նպատակների իրականացմանը:

69. Համապատասխանաբար, դատարանը կարծում է՝ այն միջոցը, որի հետևանքով անձը զրկվում է ինքնությունը հաստատող փաստաթղթից, ինչպիսին է, օրինակ՝ անձնագիրը, անկասկած միջամտություն է տեղաշարժման ազատության իրացմանը (տե՛ս mutatis mutandis «*Մ.-ն ընդդեմ Գերմանիայի*» (*M. v Germany*) գործը, դիմում թիվ 10307/83, հանձնաժողովի 1984 թ. մարտի 6-ի որոշում, DR 37, էջ 113 և վերը մեջբերված «*Բաումանն ընդդեմ Ֆրանսիայի*» գործը, էջ 217, պարբ. 62):
….

73. Դատարանը կարծում է, որ դիմողի անձնագրի առգրավման հետևանքով նա չէր կարողացել, առնվազն սկսած այն վերադարձնելու համար դիմումի ներկայացման օրվանից՝ 1999 թ. փետրվարի 10-ից, հետ ստանալ: Համապատասխանաբար, դատարանը համարում է, որ դիմողը զրկված է եղել ինքնությունը հաստատող փաստաթուղթն օգտագործելու հնարավորությունից, ինչը, եթե դիմողը նման ցանկություն դրսևորեր, հնարավորություն չէր տա նրան լքելու երկիրը: Հետևաբար, դատարանը կարծում է, որ դիմողի տեղաշարժման ազատությունը սահմանափակվել է այնպիսի եղանակով, որը միջամտություն է կոնվենցիայի թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի իմաստով (տե՛ս *mutatis mutandis «Գուցարդին ընդդեմ Իտալիայի»* (*Guzzardi v Italy*) գործը, 1980 թ. նոյեմբերի 6-ի վճիռ, շարք A, թիվ 39, էջ 33, պարբ. 92, «*Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի*» (*Raimondo v Italy*) գործը, 1994 թ. փետրվարի 22-ի վճիռ, շարք A, թիվ 281-1, էջ 19, պարբ. 39 և «*Լաբիտան ընդդեմ Իտալիայի*» (*Labita v Italy*) գործը [GC], Զեկույցներ 2000-IV, էջ 38-39, պարբ. 193, ինչպես նաև վերը մեջբերված «*Բաումանն ընդդեմ Ֆրանսիայի*» գործը, էջ 217, պարբ. 63 և, *a contrario*, «*Պիերմոնն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Piermont v France*), 1995 թ. ապրիլի 27-ի վճիռ, շարք A, թիվ 314, էջ 20, պարբ. 44):

74. Մնում է որոշել՝ այդ սահմանափակումը «նախատեսվա՞ծ է օրենքով» և «անհրաժե՞շտ [է] ժողովրդավարական հասարակությունում»:

2. «ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ» ՄԻՋՈՑԻ ՊԱՀԱՆՋԸ

75. Կառավարությունը պնդում էր, որ դիմողի անձնագրի առգրավումը օրենքով նախատեսված է եղել, որոշակի՝ «Ճամփորդական փաստաթղթերի մասին» օրենքի 34-րդ և 35-րդ բաժիններով:

76. Դիմողը այդ հարցին չի անդրադարձել:

77. Ելնելով կատարված եզրակացությունից (տե՛ս ստորև՝ պարբ. 82), դատարանը անհրաժեշտ չի համարում քննել այդ հարցը:

3. «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ՄԻՋՈՑԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՕՐԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԵՏԱՊՆԴՄԱՆԸ

78. Դատարանը պետք է քննի այն հարցը, թե արդյոք անձնագիրն առգրավելը և պահելը կարելի՞ է համարել միջոց, որն «անհրաժեշտ [է] ժողովրդավարական հասարակությունում»՝ երրորդ պարբերության իմաստով:

79. Դատարանն առաջին հերթին նշում է, որ թեև դիմողը հրաժարվել է վճարել սահմանված տույժը, ենթադրաբար կատարված որևէ մաքսային իրավախախտման համար նրա դեմ որևէ գործ չի հարուցվել: Հետամուտ չլինելով դիմողի անձնագիրը առգրավելու նախնական շարժառիթին՝ իշխանությունները կորցրել են անձնագիրը պահելու բոլոր հիմքերը: Հետևաբար, դիմողը չէր կարող պարզել իր անձնագրից շարունակաբար զրկված լինելու հիմքերը:

80. Դատարանը նշում է նաև, որ թեև ոստիկանությունն անձնագիրը վերադարձնելու նախաձեռնություն է ցուցաբերել, Զագրեբի քաղաքային դատարանը մերժել է դիմողի միջնորդությունը, որ, որպես ժամանակավոր միջոց, անձնագիրը վերադարձվի իրեն: Այդպիսով, ստացվում է, որ թե՛ ոստիկանության ներսում և թե՛ ոստիկանության և դատական մարմինների միջև բացակայել են համագործակցությունը և համակարգումը: Պատշաճ վարչական ընթացակարգերի այս բացակայությունը հանգեցրել է, *ի թիվս այլոց*, նրան, որ դիմողը տևական ժամանակ չի կարողացել մեկնել արտասահման:

81. Ելնելով գործի զարգացումից և անձնագրի վերադարձման համար քաղաքացիական դատավարության ելքից՝ դատարանը նշում է, որ դիմողին մաքսային իրավախախտման որևէ մեղադրանք չի առաջադրվել, և քաղաքացիական դատավարության այդ կողմն ավարտվել է նրանով, որ ոստիկանությունը վերադարձրել է անձնագիրը: Այդ կապակցությամբ դատարանը որևէ արդարացում չի տեսնում մաքսային վարչության կողմից դիմողի անձնագիրը վերադարձնելը մերժելու կամ Զագրեբի քաղաքային դատարանի կողմից ժամանակավոր միջոցի վերաբերյալ դիմողի միջնորդությունը մերժելու համար, երկուսն էլ հանգեցրել են դիմողի անձնագրի շարունակվող առգրավմանը և դիմողի տեղաշարժվելու ազատությանը շարունակվող միջամտությանը:

82. Ելնելով վերը բերվածից՝ դատարանը որոշում է, որ միջամտությունը դիմողի տեղաշարժվելու ազատությանը այնպիսի միջոց չէ, որն «անհրաժեշտ [է] ժողովրդավարական հասարակությունում»՝ համաչափ հետապնդված նպատակներին (տե՛ս վերը մեջբերված «*Լաբիտան ընդդեմ Իտալիայի*» գործը, էջ 147, պարբ. 197 և վերը մեջբերված «*Բաումանն ընդդեմ Ֆրանսիայի*» գործը, էջ 219, պարբ. 67):

Համապատասխանաբար, տեղի է ունեցել թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի խախտում:

….

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

….

3. *Որոշում է*, որ տեղի է ունեցել թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում.

….

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Ռոզակիսը և դատավորներ Թուլքենսը, Վայիչը, Լևիցը, Բոտուչարովան, Կովլերը և Զագրեբելսկին:

2 *Նապիյալոյի* գործով որոշման բանալին իշխանությունների կողմից դիմողի անձնագիրն ավելի քան երկու տարի պահելու համար ընդունելի հիմնավորում չներկայացնելն էր՝ հաշվի առնելով, որ դիմողի նկատմամբ ենթադրյալ մաքսային իրավախախտման համար որևէ հետապնդում չէր իրականացվել:

3 Ավելի վաղ տեղ գտած *«Բաումանն ընդդեմ Ֆրանսիայի»* գործում, 2001-V, դատարանը խիստ պառակտված էր այն հարցի շուրջ, թե արդյոք դիմողի գերմանական անձնագրի առգրավումը Ֆրանսիայի ոստիկանության կողմից, դիմողի ընկերուհուն վերաբերող քրեական գործի հետաքննության շրջանակներում, 2-րդ հոդվածի խախտո՞ւմ էր, թե՞ ոչ: Մեծամասնությունը (չորս կողմ և երեք դեմ ձայներով) եզրակացրեց, որ ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ չէր, որ նախնական քննության ավարտից հետո Ֆրանսիայի իշխանությունները պահեին դիմողի անձնագիրը, առավել ևս, որ դիմողը ո՛չ վկա էր, ո՛չ էլ հետապնդման մեջ էր: Ի հակադրություն՝ չհամընկնող կարծիք հայտնած դատավորները չէին կարծում, որ դիմողի տեղաշարժվելու ազատությունը Ֆրանսիայում միջամտության է ենթարկվել, քանի որ վերջինս Գերմանիա էր վերադարձել մինչև ոստիկանության կողմից նրա անձնագրի առգրավումը:

4 Թե՛ նախնական և թե՛ մշտական գործող դատարանը որոշել էր, որ Իտալիայի դատարանների կողմից մաֆիայի անդամ հանդիսանալու համար կասկածվող անձանց նկատմամբ սահմանված հսկողության հատուկ միջոցները խախտում են 2-րդ հոդվածը: «*Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի*» գործում, A.281-A (1994), դիմողը ձերբակալվել էր 1984 թ.՝ մաֆիայի տիպի կազմակերպության անդամ հանդիսանալու կասկածանքով: 1985 թ., մեղադրողի միջնորդության համաձայն, համապատասխան շրջանային դատարանը կարգադրել էր դիմողին պահել ոստիկանական հատուկ հսկողության տակ (ինչը պահանջում էր, որ նա, *ի թիվս այլոց*, ոստիկանությանը տեղեկացներ տնից դուրս գալու մասին, տուն վերադառնար մինչև երեկոյան ժամը 9-ը և տնից դուրս չգար մինչև առավոտյան ժամը 7-ը): Հսկողության միջոցներն ուժի մեջ էին մտել, երբ 1986 թ. հունվարին դիմողի վրայից հանվել էին քրեական մեղադրանքները: Դիմողը բողոք էր ներկայացրել հսկողության հատուկ միջոցների դեմ և, 1986 թ. հուլիսին՝ մասնավոր դատաքննության ընթացքում, վերաքննիչ դատարանը վերացրել էր այդ միջոցները: Վերաքննիչ դատարանի որոշումը գրանցում էր ստացել 1986 թ. դեկտեմբերի 2-ին, և դատական ակտերի գրանցման բաժինն այդ մասին տեղեկացրել էր ոստիկանությանը: Տեղի կարաբիներները (ոստիկանները) միջոցների դադարեցման մասին դիմողին տեղեկացրել էին 1986 թ. դեկտեմբերի 20-ին: Դիմողը գանգատ էր ներկայացրել Ստրասբուրգ՝ պնդելով, որ միջոցները իր տեղաշարժվելու ազատության խախտում են: Պալատը միաձայն որոշեց, որ ժողովրդավարական հասարակության համար մաֆիայի ներկայացրած

սպառնալիքը և իշխանությունների՝ հանցագործությունները կանխելու նպատակը արդարացնում են նման միջոցների սահմանումը: Ավելին, դիմողի նկատմամբ սահմանված միջոցները համաչափ են մինչև 1986 թ. հուլիսին վերաքննիչ դատարանի կողմից դրանց վերացումը:

39. …Մնում է դիտարկել հուլիսի 4-ից մինչև ղեկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածը, երբ դիմողը ծանուցվել է որոշման մասին: Նույնիսկ եթե ընդունենք, որ այդ որոշումը, որն ընդունվել է մասնավոր դատաքննության ընթացքում, չէր կարող օրինական ուժի մեջ մտնել մինչև համապատասխան գրանցում ստանալը, դատարանը դժվարանում է հասկանալ, թե ինչու պիտի գրեթե հինգ ամիս ձգձգվեր որոշման՝ ուժի մեջ մտնելու հիմքերի նախապատրաստումը, այն դեպքում, երբ այն անմիջապես ենթակա էր կատարման և վերաբերում էր հիմնարար իրավունքի, այն է՝ ըստ սեփական հայեցողության գալու-գնալու դիմողի ազատությանը. ավելին, դիմողին դադարեցման մասին տասնութ օր չէր տեղեկացվել:

40. Դատարանը եզրակացնում է, որ առնվազն 1986 թ. ղեկտեմբերի 2-20-ը խնդրո առարկա միջամտությունը ո՛չ սահմանված է եղել օրենքով, ո՛չ էլ՝ անհրաժեշտ: Համապատասխանաբար, տեղի է ունեցել թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի խախտում:

Այդպիսով, *Ռայմոնդոյի* գործում միջոցները սահմանող կարգադրությունների դադարեցման գործընթացում տեղ գտած ձգձգումներն են պատճառ դարձել, որ դատարանն արձանագրի 2-րդ հոդվածի խախտում: Իտալիայի իրավական համակարգում հանդիպող կանոնավոր ձգձգումների մասին արդեն նշել ենք 6-րդ հոդվածի առնչությամբ (վերը՝ էջ 446-47):

«*Լաբիտան ընդդեմ Իտալիայի*» գործում (վերը՝ էջ 1035) դիմողի նկատմամբ սահմանված կանխարգելիչ միջոցները, որոնք ուժի մեջ են մտել նրա արդարացումից հետո, ներառում են տնից դուրս գալիս իշխանություններին տեղեկացնելը, մինչև երեկոյան ժամը 9-ը տուն վերադառնալը, տնից դուրս չգալը մինչև առավոտյան ժամը 7-ը և բարեր ու հանրային վայրեր չայցելելը: Այդ միջոցները շարունակվեցին երեք տարի: Մեծ պալատը միաձայն հետևեց *Ռայմոնդոյի* գործին՝ եզրակացնելով, որ հսկողության հատուկ միջոցներն օրինական նպատակի համար էին և նախատեսված էին օրենքով:

195. Այնուամենայնիվ, միջոցները պետք է լինեին նաև «անհրաժեշտ ... ժողովրդավարական հասարակությունում», որպեսզի իրագործվեին այդ օրինական նպատակները:

Այդ կապակցությամբ դատարանը համարում է, որ օրինական է համարվում, որ ձեռնարկվեն կանխարգելիչ միջոցներ, ներառյալ՝ հատուկ հսկողությունը այն անձանց նկատմամբ, ովքեր կասկածվում են մաֆիայի անդամ լինելու համար, նույնիսկ մինչև դատապարտումը, քանի որ դրանք միտված են հանցագործությունների կանխմանը: Ավելին, արդարացումը նման միջոցներն անհրաժեշտաբար չի զրկում բոլոր հիմքերից, քանի որ դատավարության ընթացքում հավաքված փաստերը, թեև կարող է չբավարարեն դատապարտման հասնելու համար, սակայն կարող են արդարացնել հիմնավոր անհանգստությունները, որ տվյալ անձը կարող է ապագայում հանցագործություններ կատարել:

196. Սույն գործում դիմողին հատուկ հսկողության տակ պահելու որոշումը կայացվել էր 1993 թ. մայիսի 10-ին, այն ժամանակ, երբ ակնհայտորեն կային որոշ ապացույցներ, որ նա հանդիսանում է մաֆիայի անդամ, սակայն միջոցն ուժի մեջ չէր մտել մինչև 1994 թ. նոյեմբերի 19-ը, այն բանից հետո, երբ նա արդարացվել էր Տրապանիի շրջանային դատարանի կողմից:

Դատարանը քննել է այն հիմքերը, որոնց վրա հիմնվել են Իտալիայի դատարանները՝ դիմողի արդարացումից հետո միջոցի վերացումը մերժելիս, այն է՝ Բ. Ֆ.-ի [B.F.'s, 'pentito'՝ նախկին մաֆիոզ, որը հետագայում սկսել է համագործակցել իշխանությունների հետ] վստահեցումը, որ դիմողը կապեր ունի մաֆիոզ կլանի հետ, ինչն ապացուցվում էր այն փաստով, որ նրա քրոջ՝ մահացած ամուսինը եղել է հիմնական կլանի պարագլուխը (Տրապանիի շրջանային դատարանի 1996 թ. հունիսի 11-ի որոշում) և այն փաստը, որ «դիմողն իր վարած կենսաձևը որևէ իրական փոփոխության չի ենթարկել և ոչ էլ ցույց է տվել, որ իսկապես զղջում է» (Տրապանիի շրջանային դատարանի 1997 թ. հոկտեմբերի 21-ի որոշում):

Դատարանը չի տեսնում, թե ինչպես կարող է սոսկ այն փաստը, որ դիմողի կինը մաֆիայի պարագլխի, մինչև վերջինիս մահը, քույրն է եղել, արդարացնել նրա դեմ կիրառված նման խիստ միջոցները, այն դեպքում, երբ բացակայում է որևէ այլ որոշակի ապացույց առ այն, որ իրական վտանգ կա, որ նա հանցագործություն կկատարի: Ինչ վերաբերում է նրա վարած կենսաձևին և զղջմանը, դատարանն ուշադրություն է դարձնում այն փաստին, որ դիմողը, ով որևէ առումով հանցագործ անցյալ չունի, արդարացվել է մաֆիայի անդամ հանդիսանալու մեղադրանքից այն հիմքով, որ մեղադրանքը հիմնավորող որևէ որոշակի ապացույց ձեռք չի բերվել ո՛չ նախաքննության, ո՛չ էլ դատավարության ընթացքում:

197. Ամփոփելով և չբերագնահատելով մաֆիայի ներկայացրած սպառնալիքը՝ դատարանը եզրակացնում է, որ դիմողի տեղաշարժվելու ազատության սահմանափակումները չեն կարող համարվել «անհրաժեշտ ... ժողովրդավարական հասարակությունում»:

Հետևաբար, տեղի է ունեցել թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի խախտում:

Այդպիսով, թեև մեծ պալատը պատրաստակամ էր քննարկել անձի տեղաշարժվելու ազատությունը սահմանափակող կանխարգելիչ միջոցների օրինականությունը, որոնք սահմանվել էին նախկին ամբաստանյալի նկատմամբ, որին արդարացրել էին, դատարանը, հասկանալի է, պահանջեց, որ պետությունն ապացուցի, որ գոյություն ունեն ապացույցներ, որոնք արդարացնում են նման միջոցները:

5 Իտալիայի մեկ այլ կարգադրություն, որով սահմանափակվում էր սնանկ ճանաչվածի տեղաշարժման ազատությունը, համարվեց 2-րդ հոդվածը խախտող՝ «*Լուորդոն ընդդեմ Իտալիայի*» (*Luordo v Italy*) գործում (2003 թ. հուլիսի 17-ի վճիռ): Դիմողը շրջանային դատարանի կողմից սնանկ էր ճանաչվել 1984 թ. նոյեմբերին, և այդ դատարանը նրա սնանկությունը վերացրել էր 1999 թ. հուլիսին: Իտալիայի օրենսդրության համաձայն՝ դիմողը իր սնանկության ժամանակահատվածում չէր կարող հեռանալ իր բնակության վայրից՝ առանց սնանկության հարցերով դատավորի թույլտվության: Դիմողը պնդում էր, *ի թիվս այլոց*, որ այդ սահմանափակումը խախտել է իր տեղաշարժման ազատությունը: Պալատը որոշեց, որ սահմանափակումը նախատեսված էր օրենքով և օրինական նպատակ էր հետապնդում (դիմողի պարտատերերի շահերի պաշտպանությունը):

96. Դատարանը սկզբում նշում է, որ դիմողի տեղաշարժի ազատության նկատմամբ կիրառված սահմանափակումն ինքնին քննադատության ենթակա չէ: Այնուամենայնիվ, այդ համակարգի հետ կապված վտանգն այն է, որ այն կարող է անհիմն կերպով սահմանափակել դիմողի ազատորեն տեղաշարժվելու հնարավորությունը, եթե հատկապես դատավարությունը ձգձգվում է, ինչպես տեղ ուներ սույն գործում, այն տևել էր տասնչորս տարի և ութ ամիս ...

Հետևաբար, դատարանը կարծում է, որ դատավարության ողջ ընթացքում դիմողի տեղաշարժի ազատությունը սահմանափակելն արդարացված չէր, քանի որ, թեև սկզբունքորեն, բնակության վայրից հեռանալու իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ է հետապնդված նպատակին հասնելու համար, ժամանակի ընթացքում այդ անհրաժեշտությունը նվազում է: Թեև գործում որևէ բան ցույց չէր տալիս, որ դիմողը ցանկություն է ունեցել հեռանալու իր բնակության վայրից, կամ հրաժարվել են դա թույլ տալ նրան, դատարանի կարծիքով, դատավարության տևողությունը խախտում է այն հավասարակշռությունը, որը պետք է ապահովված լիներ սնանկի պարտատերերին վճարումն ապահովելու ընդհանուր շահի և դիմողի անձնական շահի՝ տեղաշարժի ազատության միջև: Համապատասխանաբար, միջամտությունը դիմողի ազատությանը անհամաչափ է հետապնդված նպատակին:

97. Ելնելով վերոշարադրյալից, դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել դիմողի տեղաշարժի ազատության (ինչպես այն երաշխավորված է թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածով) խախտում:

Ինչպես *Ռայմոնդոյի* գործում, սահմանափակումների տևական ժամանակահատվածը, որը պայմանավորված էր Իտալիայի իրավական համակարգում տեղ գտած ուշացումներով, պատճառ դարձավ, որ դատարանը խախտում արձանագրի *Լուորդոյի* գործով:

6 Պալատը միաձայն որոշեց, որ «*Դենիզջին և այլք ընդդեմ Կիպրոսի*» (*Denizci and Others v Cyprus*) գործում (2001 թ. մայիսի 23-ի վճիռ) Կիպրոսը խախտել է 2-րդ հոդվածը դիմողների նկատմամբ ոստիկանության աշխատակիցների (ներառյալ Կենտրոնական հետախուզական գործակալության անդամները) սահմանած խիստ սահմանափակումների պատճառով: Ինը դիմողները Կիպրոսի քաղաքացիներ էին, ովքեր բնակվել են Կիպրոսի հյուսիսում: Երբ նրանք տեղափոխվել էին հարավ, ոստիկանության աշխատակիցները դիմողներին ասել են, թե որ քաղաքներում նրանք կարող են բնակություն հաստատել (աշխատակիցները որոշ դիմողներ ապահովեցին բնակարաններով): Ոստիկանությունը պահանջել էր, որ դիմողներն իրենց տեղեկացնեն, երբ այլ բնակարան տեղափոխվելիս լինեն, ինչպես նաև երբ որոշեն մեկնել հյուսիս՝ իրենց հարազատներին այցելելու: Դիմողները պնդում էին, *ի թիվս այլոց*, որ իրենց տեղաշարժի սահմանափակումները և ոստիկանության կողմից նրանց մանրակրկիտ մոնիթորինգը խախտել են 2-րդ հոդվածը:

405….Դատարանը նշում է, որ պատասխանող կառավարության կողմից դիմողների տեղաշարժի սահմանափակումների համար որևէ օրինական հիմք չի բերվել: Ավելին, պատասխանող կառավարությունը չի պնդել, որ այդ միջոցն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված օրինական նպատակներից որևէ մեկին հասնելու համար:

406. Դատարանը եզրակացնում է, որ դիմողների տեղաշարժի ազատության սահմանափակումները ո՛չ նախատեսված էին

օրենքով, ո՛չ էլ անհրաժեշտ էին: Համապատասխանաբար, տեղի է ունեցել թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի խախտում:

Այդպիսով, ոստիկանության աշխատակիցների գործողությունները ներպետական օրենսդրության մեջ որևէ հիմք չունեին:

7 «*Տիմիշևն ընդդեմ Ռուսաստանի*» (*Timishev v Russia*) գործում (2005 թ. դեկտեմբերի 13-ի վճիռ) միացյալ պալատը որոշեց, որ ոստիկանության բարձրաստիճան ներկայացուցչի կողմից ենթականերին տրված բանավոր հրահանգը, որ վերջիններս թույլ չտան «չեչեններին» մուտք գործել Կաբարդինո-Բալկարիայի Հանրապետության տարածք, խախտում է այդ դրույթն առանձին և 14-րդ հոդվածի հետ համակցությամբ (գործի այդ կողմի համար տե՛ս վերը՝ էջ 876-77): Դիմողը, ով Ռուսաստանի քաղաքացի էր, ծնվել և ապրել է Չեչնիայի Հանրապետությունում: Նա ստիպված է եղել ընտանիքի հետ միասին թողնել հանրապետությունը, երբ նրա ունեցվածքը Գրոզնիում ոչնչացվել էր (1994-ին): 1996 թ. ի վեր, նրանք, որպես գաղթականներ, բնակվում էին Կաբարդինո-Բալկարիայի Հանրապետությունում: 1999 թ. հունիսին դիմողը մեքենայով Ինգուշեթիայի Հանրապետությունից մեկնել է Կաբարդինո- Բալկարիայի Հանրապետությունում գտնվող իր տուն, երբ ոստիկանության աշխատակիցները Ուրուխի անցակետում, որը գտնվում է երկու հանրապետությունների վարչական սահմանում, հրաժարվել են նրան մտնել Կաբարդինո-Բալկարիայի Հանրապետություն: Նա ստիպված է եղել 300 կմ ճանապարհ կտրել՝ մեկ այլ անցակետով հանրապետություն մուտք գործելու համար:

Պալատը որոշեց.

45. Դատարանը նշում է, որ թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի կառուցվածքը համանման է կոնվենցիայի 8-11-րդ հոդվածների կառուցվածքին: Թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի երաշխիքների հետ համատեղելի լինելու համար վիճարկվող սահմանափակումը պետք է լինի «օրենքով նախատեսված», հետապնդի 3-րդ պարբերությամբ նախատեսված մեկ կամ մի քանի օրինական նպատակներ և լինի «անհրաժեշտ ... ժողովրդավարական հասարակությունում» (տե՛ս «*Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի*» գործը, 1994 թ. փետրվարի 22-ի վճիռ, շարք A, թիվ 281-A, էջ 19, պարբ. 39) կամ, երբ սահմանափակումը վերաբերում է միայն որոշակի ոլորտների, «արդարացվ[ած] է ... ժողովրդավարական հասարակության հասարակական շահերով»՝ ինչպես սահմանված է 4-րդ պարբերությամբ:

46. Կառավարությունը պնդում էր, որ սահմանափակումը սահմանվել է համաձայն «Ոստիկանության մասին» օրենքի բաժին 11(22)-ի՝ նպատակ ունենալով զսպել քրեական հանցագործությունները և երաշխավորել հասարակական անվտանգությունը: Դիմողն առարկում էր՝ պնդելով, որ սահմանափակումն անհարկի ծավալուն է և, հետևաբար, դրանով հետապնդվող նպատակը՝ չափազանց վերացական:

47. Դատարանը պարտավոր չէ որոշում կայացնել այն ընդհանուր հարցի շուրջ, թե արդյոք Ինգուշեթիայում և Կաբարդինո-Բալկարիայի Հանրապետությունում այդ ժամանակ առկա քաղաքական և սոցիալական իրավիճակը պահանջո՞ւմ էր դաշնային ավտոճանապարհին հսկիչ անցակետեր տեղադրել և ինքնության մանրակրկիտ զննություն իրականացնել: Դատարանի որոշելիք խնդիրը սահմանափակվում է սույն գործի որոշակի հանգամանքներով, այն է՝ արդյոք դիմողին Կաբարդինո-Բալկարիայի վարչական սահմանը հատել թույլ չտալն օրինակա՞ն հիմք ուներ:

48. Դատախազության և Կաբարդինո-Բալկարիայի ներքին գործերի նախարարության արած հարցումների արդյունքում պարզվել է, որ խնդրո առարկա սահմանափակումը մտցվել է Կաբարդինո-Բալկարիայի ներքին գործերի նախարարության հասարակական անվտանգության ոստիկանության պետի տեղակալ, գնդապետ Էֆենդիևի բանավոր հրամանի հիման վրա: Ինչպես երևում է, հրամանը պատշաճ կերպով պաշտոնական տեսքի չի բերվել կամ չի արձանագրվել որևէ այլ նկատելի կերպով, ինչը հնարավորություն կտար դատարանին գնահատելու դրա բովանդակությունը, գործողության ոլորտը և իրավական հիմքը: Իրականում «Ոստիկանության մասին» օրենքի բաժին 11(22)-ին արված հղումն առաջին անգամ ի հայտ եկավ կառավարության առարկություններում՝ դատաքննության ընթացքում: Ամեն դեպքում, դատախազության կարծիքով, տվյալ հրամանը Ռուսաստանի սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված տեղաշարժման ազատության սահմանադրական իրավունքի խախտում է:

49. Համապատասխանաբար, դատարանը համարում է, որ դիմողի տեղաշարժման ազատության սահմանափակումն օրենքով նախատեսված չէ: Այս որոշումը վերացնում է այն հարցը քննության առնելու նպատակահարմարությունը, թե արդյոք այն անհրաժե՞շտ է ժողովրդավարական հասարակությունում:

Հետևաբար, տեղի է ունեցել թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի խախտում:

Այնուամենայնիվ, ինչպես երևում է, վերը նկարագրված ոտնահարումը եզակի դեպք չէ, ինչն ար-

տացոլվեց «*Գարտուկաևն ընդդեմ Ռուսաստանի*» (*Gartukayev v Russia*) գործում (2005 թ. դեկտեմբերի 13-ի վճիռ), որում դատարանն արձանագրեց 2-րդ հոդվածի առանձին խախտում չեչեն մեկ այլ բնակչի նկատմամբ, ում ավելի ուշ՝ 2000 թ., թույլ չէին տվել մուտք գործել Կաբարդինո-Բալկարիայի Հանրապետություն մեկ ուրիշ անցակետում: Այս գործում ոստիկանությունը կիրառել է մի չհրապարակված նորմ, որը պահանջում էր, որ Չեչնիայի նախկին բնակիչները պետք է ներգաղթյալի քարտ ներկայացնեն, որպեսզի թույլտվություն ստանան մուտք գործել Կաբարդինո-Բալկարիայի Հանրապետություն: Դատարանը եզրակացրեց, որ քանի որ այդ նորմը Ռուսաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակված չի եղել, դիմողի տեղաշարժման ազատության սահմանափակումն «օրենքով նախատեսված» չէ՝ 2-րդ հոդվածին համապատասխան: Այդպիսով, ևս մեկ անգամ (2-րդ հոդվածի խախտումների համար տե՛ս վերը՝ էջ 101-102), Ռուսաստանի իշխանությունների արձագանքը չեչենական հակամարտությանը չէր համապատասխանում կոնվենցիայով սահմանված նրանց պարտավորություններին:

8 Պալատը «*Ռիներն ընդդեմ Բուլղարիայի*» (*Riener v Bulgaria*) գործում (2006 թ. մայիսի 23-ի վճիռ) միաձայն որոշեց, որ առնվազն 150.000 եվրո հարկային պարտավորություն կուտակած, երկքաղաքացիություն ունեցող անձի համար երկիրը լքելու նկատմամբ սահմանված արգելքը դասվում է հասարակական կարգի պահպանման և այլ անձանց իրավունքների պաշտպանության օրինական նպատակների թվին: Այնուամենայնիվ, պալատը որոշեց նաև, որ արգելքի պահպանումը ինը տարի շարունակ՝ առանց դրա անհրաժեշտության պատշաճ վերանայման, անհամաչափ միջամտություն է դիմողի իրավունքին և խախտում է 2-րդ հոդվածը:

124. Դատարանի կարծիքով՝ իշխանություններն իրավունք չունեն երկարատև սահմանափակումներ մտցնել անձի տեղաշարժման ազատության նկատմամբ՝ առանց իրենց հիմնավորումների պարբերական վերագնահատման հարցերի առնչությամբ, օրինակ՝ արդյոք համապատասխան ֆիսկալ մարմինները ողջամի՞տ ջանքեր են գործադրել այլ միջոցներով պարտավորությունը հավաքելու ուղղությամբ, թե՞ ոչ, և հավանականությունը, որ պարտապանի՝ երկիրը լքելը կնվազեցնի պարտքը ստանալու շանսերը:

Վճիռը խելամիտ հավասարակշռության էր հասել անձի իրավունքների և համայնքի՝ հարկային պարտավորությունների վճարումն ապահովելու շահերի միջև:

Հոդված 3. Քաղաքացիների արտաքսման արգելումը

Դենիզջիի (վերը) գործում դիմողները պնդում էին նաև, որ իրենց բռնի արտաքսումը Կիպրոսի հարավից հյուսիսային հատված խախտել է թիվ 4 արձանագրության 3-րդ հոդվածը: Կառավարությունը չպատասխանեց այդ պնդմանը՝ բացի այն, որ մերժում էր դիմողների կողմից փաստերի ներկայացումը: Պալատը միաձայն նշեց, որ դիմողները չեն պնդում, որ արտաքսվել են այլ երկրի տարածք: Ավելին, Կիպրոսի Հանրապետությունը միակ լեգիտիմ կառավարությունն է Կիպրոսում: Հետևաբար, հաշվի առնելով թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի առումով իր հայտնաբերածը, պալատը պարզել է, որ իր համար անհրաժեշտ չէ դիտարկել, թե արդյոք 3-րդ հոդվածը կիրառելի՞ է սույն գործի նկատմամբ: Սա դատարանին հնարավորություն տվեց խուսափելու 3-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ որոշում կայացնելու անհրաժեշտությունից՝ այն համատեքստում, երբ քաղաքացին արտաքսվում է պաշտոնապես պետության կազմում գտնվող տարածք, որը փաստացի չի վերահսկվում կառավարության կողմից:

Հոդված 4. Օտարերկրացիների հավաքական արտաքսման արգելումը

«Կոնկան ընդդեմ Բելգիայի» (Conka v Belgium), 5 փետրվարի, 2002 թ.
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողները ծագումով գնչու Սլովակիայի քաղաքացիներ էին: Նրանք Բելգիա էին եկել 1998 թ. վերջին՝ պնդելով, որ Սլովակիայում հետապնդումների են ենթարկվել սափրագլուխների (սքինհեդներ) կողմից, իսկ ոստիկանությունը հրաժարվել է նրանց պաշտպանել: 1999 թ. մարտին ներքին գործերի նախարարը մերժել էր նրանց՝ քաղաքական ապաստան տրամադրելու դիմումները՝ այն հիմքով, որ վերջիններս բավարար ապացույցներ չեն ներկայացրել Սլովակիայում տեղի ունեցած հետապնդումների վերաբերյալ: Նախարարը հրահանգել էր նրանց հինգ օրվա ընթացքում թողնել Բելգիան: Դիմողները բողոքներ էին ներկայացրել Փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարին: Այնուհետև, պրն Կոնկան չէր ներկայացել գլխավոր հանձնակատարի գրասենյակում նշանակված հանդիպմանը: Տկն Կոնկային գլխավոր հանձնակատարի ներկայացուցիչները լսել էին բելգիական բանտում, որտեղ նա սպասում էր իր դատավարությանը՝ գողության մեղադրանքով: 1999 թ. հունիսին գլխավոր հանձնակատարը մերժեց դիմողների բողոքները (պրն Կոնկայինը, որովհետև վերջինս չէր ներկայացել հանդիպմանը՝ առանց հիմնավոր պատճառի, իսկ տկն Կոնկայինը, որովհետև գլխավոր հանձնակատարը լուրջ կասկածներ էր հայտնել վերջինիս վստահելիության և ներկայացրած եղելության վերաբերյալ): Դիմողներին հրահանգվել էր լքել Բելգիան մինչև հունիսի վերջը (տկն Կոնկան մինչ այդ կրում էր իր բանտարկությունը): Դիմողները դատական կարգով կանտոնի խորհրդից պահանջեցին վերանայել գլխավոր հանձնակատարի որոշումները: Նրանց դիմումները կասեցվեցին 1999 թ. հոկտեմբերին, քանի որ նրանք չէին վճարել պահանջվող դատական ծախսերը:

1999 թ. սեպտեմբերի վերջին դիմողները և մի շարք այլ սլովակ գնչուների ընտանիքներ, որոնք ապրում էին Գենտում, ֆլամանդերեն և սլովակերեն գրված նամակներ ստացան ոստիկանությունից, որով նրանցից պահանջվում էր հոկտեմբերի 1-ին ներկայանալ ոստիկանության բաժին, որպեսզի հնարավոր լիներ ամփոփել քաղաքական ապաստանի համար նրանց դիմումներին վերաբերող գործերը: Երբ նրանք մտան ոստիկանության բաժին, որտեղ ներկա էր սլովակերենի թարգմանիչը, նրանց հանձնեցին Բելգիան լքելու նոր հրամաններ՝ թվագրված սեպտեմբերի 29-ով, և վերջիններս կալանվեցին մինչև երկրից դուրս բերվելը: Որոշ գնչուների մարդասիրական նկատառումներով թույլ տրվեց լքել ոստիկանության բաժինը, սակայն դիմողներին տեղափոխեցին տարանցիկ փակ կենտրոն: Այնտեղ գտնվելու ընթացքում սլովակ ընտանիքներին այցելեցին Սլովակիայի հյուպատոսը, Բելգիայի խորհրդարանի անդամների մի պատվիրակություն և տարբեր ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Դիմողների իրավաբանը միջնորդեց իշխանություններին մարդասիրական նկատառումներով իր պաշտպանյալներին չվտարել երկրից: Սլովակիայի յոթանասուն քաղաքացիներ, ներառյալ՝ դիմողները, հետ ուղարկվեցին Սլովակիա 1999 թ. հոկտեմբերի 5-ին: 1999 թ. դեկտեմբերին Բելգիայի ներքին գործերի նախարարը խորհրդարանին զեկուցեց, որ «Գենտում Սլովակիայի քաղաքացի հանդիսացող ապաստան որոնողների մեծ կուտակման պատճառով համապատասխան միջոցներ են ձեռնարկվել նրանց Սլովակիա կոլեկտիվ հայրենադարձության համար... Գործողությունը նախապատրաստված է եղել պատշաճ կերպով, եթե նույնիսկ Գենտի ոստիկանության ուղարկած նամակների անհաջող ձևակերպումը որոշ սլովակների մոտ թյուրիմացության պատճառ եղած լինի»:

Դիմողները գանգատ ներկայացրին դատարան՝ պնդելով, *ի թիվս այլոց*, որ Սլովակիայից նրանց տարհանումը հավաքական արտաքսում է, որն արգելված է թիվ 4 արձանագրության 4-րդ հոդվածով:

59. Դատարանը վերստին վկայակոչում է իր նախադեպային իրավունքը, որի համաձայն հավաքական արտաքսումը՝ թիվ 4 արձանագրության 4-րդ հոդվածի իմաստով, հարկ է հասկանալ որպես ցանկացած միջոց, որն օտարերկրացիներին՝ որպես խմբի, ստիպում է լքել երկիրը, բացառությամբ, երբ այդ միջոցը ձեռնարկված է նշված խմբի յուրաքանչյուր անհատ օտարերկրացու առանձին դեպքի ողջամիտ և օբյեկտիվ քննության հիման վրա (տե՛ս *Անդրիչի* (*Andric*) գործը [*ընդդեմ*

Շվեդիայի] (dec.) թիվ 45917/99, 23 փետրվարի 1999 թ.]): Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ երբ էլ ապահովվում է վերոնշյալ պայմանը, արտաքսման հրամանի ի կատար ածման հիմքն այլևս դեր չի խաղում որոշելու համար՝ ապահովվե՞լ է համապատասխանությունը թիվ 4 արձանագրության 4-րդ հոդվածին:

60. Սույն գործում դիմողների՝ ապաստան տրամադրելու դիմումները մերժվել էին 1999 թ. մարտի 3-ին, և որոշումներն ուժի մեջ էին թողնվել 1999 թ. հունիսի 18-ին: 1999 թ. մարտի 3-ի որոշումները պարունակում էին ղրանց հիմնավորումները և ուղեկցվում էին միևնույն օրով թվագրված հրամանով, որով պահանջվում էր, որ դիմողները լքեն տարածքը: Դրանք կայացվել էին յուրաքանչյուր դիմողի անձնական հանգամանքների քննության արդյունքում՝ հիմնված նրանց երդմամբ հաստատված գրավոր ցուցմունքների վրա: 1999 թ. հունիսի 18-ի որոշումները նույնպես խարսխված էին դիմողների անձնական հանգամանքներին վերաբերող հիմնավորումների վրա և վկայակոչում էին 1999 թ. մարտի 3-ի հրամանը՝ երկրի տարածքը լքելու մասին, որն ուժի մեջ էր թողնվել արագացված ընթացակարգով բողոքի քննության արդյունքում:

61. Այնուամենայնիվ, դատարանը նշում է, որ կալանման և վտարման խնդրո առարկա հրամանները արձակվել են ի կատարումն տարածքը լքելու մասին 1999 թ. սեպտեմբերի 29-ի հրամանի. այդ հրամանը տրվել է բացառապես «Օտարերկրացիների մասին» օրենքի 7-րդ բաժնի առաջին պարբերության 2-րդ կետի հիման վրա, և դիմողների անձնական հանգամանքներին արված միակ հղումը վերաբերում է այն փաստին, որ Բելգիայում նրանք գտնվել են երեք ամսից ավելի: Մասնավորապես, փաստաթղթում որևէ հղում չկար ապաստան տրամադրելու համար նրանց դիմումներին կամ 1999 թ. մարտի 3-ի և հունիսի 18-ի որոշումներին: Հարկ է ընդունել, որ այդ որոշումների հետ կար նաև տարածքը լքելու որոշումը, սակայն այդ հրամանն ինքնին թույլ չէր տալիս ձերբակալել դիմողներին: Հետևաբար, դիմողների ձերբակալությունն առաջին անգամ հրահանգվել է 1999 թ. սեպտեմբերի 29-ին՝ այնպիսի իրավական հիմքով, որն առնչություն չունի ապաստանի համար նրանց դիմումներին, սակայն, այդուհանդերձ, բավարար է վիճարկվող միջոցների իրականացման համար: Այդ հանգամանքներում և հաշվի առնելով դիմողների հետ միևնույն ճակատագրին արժանացած միևնույն ծագումն ունեցող անձանց նշանակալի թիվը, դատարանը համարում է, որ կիրառված ընթացակարգը հնարավորություն չի տալիս փարատելու բոլոր կասկածներն առ այն, որ արտաքսումը հավաքական է եղել:

62. Կասկածներն ամրապնդվում են մի շարք գործոններով. առաջին՝ մինչև դիմողների արտաքսումը խնդրո առարկա քաղաքական իշխանությունները հայտարարել էին, որ նման կարգի գործողություններ են իրականացնելու և ցուցումներ էին տվել համապատասխան մարմիններին՝ դրանք իրականացնելու համար: Երկրորդ՝ դիտարկվող բոլոր օտարերկրացիներին հրահանգվել էր ոստիկանության բաժին ներկայանալ միաժամանակ: Երրորդ՝ երկրի տարածքը լքելու և կալանավորման վերաբերյալ նրանց հանձնված հրամանները շարադրված էին միևնույն կերպ: Չորրորդ՝ օտարերկրացիների համար շատ դժվար էր եղել իրավաբանի հետ կապ հաստատելը: Եվ, վերջապես, քաղաքական ապաստանի վերաբերյալ ընթացակարգը չէր ամփոփվել:

63. Կարճ ասած՝ ոստիկանության բաժին ներկայանալու մասին օտարերկրացիներին ծանուցագրեր հանձնելու և նրանց արտաքսման միջև ընկած ժամանակահատվածի որևէ փուլում ընթացակարգը բավարար երաշխիքներ չի տրամադրել, որոնք ցույց կտային, որ դիտարկվող անձանցից յուրաքանչյուրի անձնական հանգամանքներն իսկապես և անհատապես հաշվի են առնվել:

Հետևաբար, տեղի է ունեցել թիվ 4 արձանագրության 4-րդ հոդվածի խախտում:

….

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

….

5. *Որոշում է*, չորս կողմ և երեք դեմ ձայների հարաբերակցությամբ, որ տեղի է ունեցել կոնվենցիայի թիվ 4 արձանագրության 4-րդ հոդվածի խախտում.

….

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Կոստան և դատավորներ Ֆուրմանը, Կուրիսը, Յունգվիրթը, Բրատցան, Թրաժան և Վելաերսը:

2 Դատավոր Յունգվիրթը, որին միացել էր դատավոր Կուրիսը, հրապարակեց մասնակի չհամընկնող կարծիք: Նրա համոզված էր, որ դիմողների անձնական հանգամանքները Բելգիայի իշխանությունների կողմից դիտարկվել են մինչև նրանց արտաքսումը:

Յուրաքանչյուր որոշում ուղեկցվում էր տարածքը լքելու հրամանով: Քանի որ դիմողները չէին ենթարկվել, միջոցներ էին ձեռնարկվել նրանց ստիպողական արտաքսումն ապահովելու համար: Դիմողներին ծանուցագրեր էին հանձնվել՝ Գենտի ոստիկանության բաժին ներկայանալու պահանջով, որտեղ իրականացվել է նրանց գործերի վերջնական քննությունը: Գենտի ոստիկանությունը կապ է հաստատել օտարերկրացիների հարցերով զբաղվող մարմնի հետ: Այն օտարերկրացիները, ում ապաստան տրամադրելու դիմումները մերժվել էին, և ովքեր իրավունք չունեին մնալ Բելգիայում որևէ այլ հիմքով, զրկվել էին իրենց ազատությունից և հայրենադարձվել որպես խմբի մաս: Փաստը, որ նրանցից ոմանց թույլ էր տրվել վերադառնալ տուն նրանց անձնական հանգամանքները ճշտելուց և պարզելուց հետո, որ նրանց ներգաղթյալի կարգավիճակը կարգին է, ցույց է տալիս, որ նույնիսկ վտարման գործընթացի ուշ փուլում անցկացվել է վերջնական անհատական քննություն:

Փաստը, որ արտաքսման հրամաններն ի կատար են ածվել խմբի ընկատմամբ, և Սլովակիայի մոտ յոթանասուն քաղաքացիներ միասին հայրենադարձվել են օդային ճանապարհով, չի նշանակում, որ տեղ է գտել «հավաքական արտաքսում»՝ թիվ 4 արձանագրության 4-րդ հոդվածի իմաստով, քանի որ օտարերկրացի յուրաքանչյուր արտաքսյալի անձնական հանգամանքները քննության են առնվել երեք պարագայում: Այն, որ 1999 թ. սեպտեմբերի 29-ի որոշումները հղում չեն կատարում 1999 թ. մարտի 3-ի և 1999 թ. հունիսի 18-ի որոշումների հիմնավորումներին, այլ ընդամենը վկայակոչում են դիտարկվող անձանց ապօրինի դրությունը (տե՛ս «Օտարերկրացիների մասին» օրենքի 7-րդ բաժնի առաջին պարբերության 2-րդ կետը), փոփոխության չի ենթարկում այն փաստը, որ օտարերկրացիների անձնական հանգամանքները քննության են առնվել և բավարար հիմնավորում է տրամադրում՝ դիտարկման առարկա արտաքսումների համար: Այդ կապակցությամբ համաձայն եմ «*Անդրիչն ընդդեմ Շվեդիայի*» գործով որոշման մեջ արտահայտված կարծիքին. «Փաստը, որ մի շարք օտարերկրացիներ համանման որոշումներ են ստանում, չի հանգեցնում այն եզրակացության, որ առկա է հավաքական արտաքսում, երբ յուրաքանչյուր անձի հնարավորություն է տրվել իրավասու մարմիններին փաստարկներ ներկայացնելու սեփական արտաքսման դեմ՝ անհատական հիմունքներով»:

Ավելին, այդ դրույթը, իմ կարծիքով, պետություններին չի արգելում, տնտեսելու կամ արդյունավետության նկատառումներով, խմբավորել մարդկանց, ովքեր, համանման ընթացակարգային գործողությունների արդյունքում, պետք է արտաքսվեն միևնույն երկիր:

Այդ դիտարկումներն ինձ հանգեցնում են այն եզրակացության, որ թիվ 4 արձանագրության 4-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

3 Դատավոր Վելաերսը, բելգիացի *ad hoc* դատավորը, իր մասնակի համընկնող/մասնակի չհամընկնող կարծիքում նույնպես կարծում էր, որ դիմողների անձնական հանգամանքները քննության են առնվել այն օրը, երբ նրանք կալանավորվել են Գենտի ոստիկանության բաժնում: Կարծում եք, որ Բելգիայի իշխանությունները ծրագրել և իրականացրել են հավաքական արտաքսո՞ւմ:

4 *Կոնկայի* գործում 13-րդ հոդվածին առնչվող կողմերը քննության են առնվել վերը՝ էջ 852-53-ում:

5 Ավելի վաղ տեղ գտած «*Անդրիչն ընդդեմ Շվեդիայի*» գործով ընդունելիության առումով 1999 թ. փետրվարի 23-ի որոշման մեջ, որը մեջբերվել է *Կոնկայի* գործում, դիմողը Խորվաթիայի քաղաքացի էր, փորձել էր 1994 թ. ընթացքում քաղաքական ապաստան ստանալ Շվեդիայում: Մի շարք բողոքարկումներից հետո նրա դիմումը մերժվեց 1998 թ. (1999 թ. իշխանությունները կասեցրին նրա վտարումը դիմողի վատառողջության պատճառով): Շվեդիայի կառավարությունը 1996 թ. հայտարարեց, որ համարում է, որ Խորվաթիայի քաղաքացիները, ընդհանուր առմամբ, այժմ պաշտպանություն են գտնում Խորվաթիայում: Դիմողը բողոքում էր դատարանին, որ Խորվաթիա իր վտարումը կխախտի 4-րդ հոդվածը: Միացյալ պալատը վերջինիս դիմումն անընդունելի համարեց, որովհետև.

Դատարանը կարծում է, որ հավաքական արտաքսումը պետք է հասկանալ որպես ցանկացած միջոց, որն օտարերկրացիներին՝ որպես խմբի, ստիպում է լքել երկիրը, բացառությամբ, երբ այդ միջոցը ձեռնարկված է նշված խմբի յուրաքանչյուր անհատ օտարերկրացու առանձին դեպքի ողջամիտ և օբյեկտիվ քննության հիման վրա: Ավելին, այն փաստը, որ մի շարք օտարերկրացիներ համանման որոշումներ են ստանում, չի հանգեցնում այն եզրակացության, որ առկա է հավաքական արտաքսում, երբ յուրաքանչյուր անձի հնարավորություն է տրվել իրավասու մարմիններին փաստարկներ ներկայացնել սեփական արտաքսման դեմ՝ անհատական հիմունքներով (տե՛ս դիմում թիվ 14209/88, 1988 թ. դեկտեմբերի 16-ի որոշում, DR 59, էջ 274):

Սույն գործում դատարանը նշում է, որ Շվեդիայի կառավարությունը 1994 թ. մայիսի 26-ի և 1996 թ. նոյեմբերի 28-ի իր որոշումներում ցուցումներ հրապարակեց՝ միաժամանակ Բոսնիայի և Խորվաթիայի քաղաքացիություն ունեցող անձանց կողմից ներկայացված ապաստան հայցող դիմումների գնահատման համար: Կառավարությունը որոշեց, որ Բոսնիա-Հերցեգովինայում առկա իրադրության պատճառով այդ անձինք չեն կարող հետ ուղարկվել այդ երկիր: Առանցքային հարցը, այդպիսով, այն էր, թե արդյոք նրանք պաշտպանություն կգտնե՞ն Խորվաթիայում: Ավելին, դիմողի գործը քննելիս Ներգաղթի ազգային խորհուրդը և Օտարերկրացիների գանգատարկման խորհուրդը հաշվի էին առել ընդհանուր իրավիճակը Խորվաթիայում երկքաղաքացիություն ունեցող անձանց համար:

Սակայն դիմողը անհատական գանգատներ է ներկայացրել ներգաղթի հարցերով զբաղվող համապատասխան մարմիններին և կարողացել է ներկայացնել իր կամեցած ցանկացած փաստարկ՝ Խորվաթիա իր հավանական արտաքսման դեմ: Իշխանությունները ոչ միայն հաշվի են առել Խորվաթիայում առկա ընդհանուր իրավիճակը, այլև դիմողի հայտարարությունները՝ իր սեփական դրության նախապատմության և վերադարձի դեպքում իրեն ենթադրաբար սպասող վտանգների մասին: Նրա գանգատները մերժելիս իշխանություններն անհատական որոշում են հրապարակել դիմողի դրության վերաբերյալ: Ավելին, 1998 թ. դեկտեմբերի 9-ի որոշմամբ Օտարերկրացիների գանգատարկման խորհուրդը կասեցրել է դիմողի վտարման որոշումը՝ հաշվի առնելով վերջինիս հոգեկան վատառողջությունը:

Այս հանգամանքներում դատարանը համարում է, որ դիմողների հնարավոր վտարումը կոնվենցիայի թիվ 4 արձանագրության 4-րդ հոդվածի իմաստով հավաքական արտաքսման որևէ նշան չի բացահայտում:

25 ԹԻՎ 7 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1. Օտարերկրացիների արտաքսմանը վերաբերող ընթացակարգային երաշխիքները

«Լուպսան ընդդեմ Ռումինիայի» (Lupsa v Romania), 8-ը հունիսի, 2006 թ.
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը Սերբիայի քաղաքացի էր, օրինական կերպով բնակվում և աշխատում էր Ռումինիայում 1989-2003 թթ.: 1994 թ. ի վեր նա ապրում էր մի ռումինուհու հետ, և նրանք 2002 թ. երեխա էին ունեցել: 2003 թ. օգոստոսին Ռումինիայի սահմանապահ ոստիկանությունը եկել էր նրա տուն և երկրից արտաքսել: Նրա իրավաբանը փորձել էր դատական կարգով հասնել այդ որոշման վերանայմանը, և դատավարության ընթացքում պետական մեղադրողը ներկայացրել էր արտաքսման հրամանի կրկնօրինակը, որում նշված էր եղել, որ դիմողը «անցանկալի անձ» է հանդիսանում, և «բավարար ու լուրջ հետախուզական տվյալներ կան, որ նա ներգրավված է եղել այնպիսի գործողություններում, որոնք կարող են սպառնալ ազգային անվտանգությանը»: Դիմողի իրավաբանը փորձել էր հասնել նիստի հետաձգմանը, որպեսզի կարողանար դիմողին ուղարկել հրամանի պատճենը և ստանալ նրա պատասխանը: Մեղադրողը չէր առարկել նրա միջնորդությանը, սակայն Բուխարեստի վերաքննիչ դատարանը հրաժարվել էր բավարարել այն և մերժել էր դիմողի՝ դատական վերանայման հայցը: Ստրասբուրգի դատարանում դիմողը պնդում էր, *ի թիվս այլոց*, որ Ռումինիայի իշխանությունները խախտել են 1-ին հոդվածում ընդգրկված ընթացակարգային երաշխիքները:

52. Դատարանն այնուհետև նշում է, որ վերը նշված երաշխիքները վերաբերում են միայն այն օտարերկրացիներին, ովքեր օրինական կերպով բնակվում են այս արձանագրությունը վավերացրած պետության տարածքում (տե՛ս «*Սեյդովիչը և Սուլեյմանովիչն ընդդեմ Իտալիայի*» (*Sejdovic and Sulejmanovic v Italy)* (dec.), թիվ 57575/00, 14 մարտի, 2002 թ., և «*Սուլեյմանովիչը և Սուլթանովիչն ընդդեմ Իտալիայի*» (*Sulejmanovic and Sultanovic v Italy*) (dec.), թիվ 57574/00, 14 մարտի, 2002 թ.):

53. Դատարանը նշում է, որ սույն գործում չի վիճարկվում, որ դիմողն արտաքսման ժամանակ օրինական կերպով է բնակվել Ռումինիայի տարածքում: Համապատասխանաբար, թեև նա արտաքսվել է հրատապ կերպով ազգային անվտանգության նկատառումներով, ինչն այնպիսի դեպք է, որը թույլատրված է 1-ին հոդվածի 2-րդ կետով, դիմողն արտաքսումից հետո իրավունք ուներ օգտվելու 1-ին կետում առկա երաշխիքներից (տե՛ս թիվ 7 արձանագրության բացատրական զեկույցը):

54. Դատարանը նշում է, որ առաջին երաշխիքը, որը տրվում է այդ հոդվածում վկայակոչված անձանց, այն է, որ նրանք չեն կարող արտաքսվել, բացառությամբ «ի կատարումն օրենքին համապատասխան ընդունված որոշման»:

55. Քանի որ «օրենքին» բառը վերաբերում է ներպետական օրենսդրությանը, դրան արված հղումը՝ ինչպես կոնվենցիայի բոլոր դրույթները, վերաբերում է ոչ միայն ներպետական օրենսդրության մեջ իրավական հիմքի գոյությանը, այլև խնդրո առարկա օրենքի որակին. այն պետք է մատչելի և կանխատեսելի լինի, նաև միջոցներ տրամադրի կոնվենցիայով սահմանված իրավունքների նկատմամբ պետական իշխանությունների կամայական միջամտություններից պաշտպանվելու համար ...

56. Դատարանը վերստին հնչեցնում է կոնվենցիայի 8-րդ հոդվածով ներկայացված գանգատի քննության առումով արված եզրակացությունը, այն է՝ որ թիվ 194/2002 արտակարգ հրահանգը, որը եղել է գանգատարկուի արտաքսման իրավական հիմքը, նրան չի տրամադրել նվազագույն երաշխիքներ իշխանությունների կամայական գործողությունների դեմ:

57. Հետևաբար այն է, որ թեև դիմողը արտաքսվել է ի կատարումն օրենքին համապատասխան ընդունված որոշման, տեղի է

ունեցել թիվ 7 արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ այն առումով, որ օրենքը չի բավարարել կոնվենցիայի պահանջները:

58. Ամեն դեպքում, դատարանը համարում է, որ ներպետական իշխանությունները խախտել են նաև այն երաշխիքները, որոնց իրավունքը դիմողը պետք է ունենար նշված հոդվածի 1-ին կետի (ա) և (բ) ենթակետերով:

59. Այդ կապակցությամբ դատարանը նշում է, որ իշխանությունները դիմողին նույնիսկ ամենաչնչին չափով չեն ներկայացրել նրան մեղսագրվող իրավախախտումը, իսկ պետական մեղադրողը մինչև վերաքննիչ դատարանում ընթացող դատական նիստի օրը նրան չի ուղարկել նրա դեմ կայացված հրամանը: Ավելին, դատարանը նշում է, որ վերաքննիչ դատարանը մերժել է նիստը հետաձգելու բոլոր միջնորդությունները՝ դրանով թույլ չտալով դիմողի իրավաբանին ուսումնասիրել վերը նշված հրամանը և ապացույցներ ներկայացնել՝ պաշտպանելու համար հրամանի դատական կարգով վերանայման իր դիմումը:

60. Վերստին հայտարարելով, որ կոնվենցիայի կամ նրան կից արձանագրությունների յուրաքանչյուր դրույթ պետք է մեկնաբանվի այնպես, որ երաշխավորի իրավունքներն այնպես, որ դրանք լինեն գործնական և արդյունավետ, ոչ թե տեսական և վերացական, դատարանը համարում է, որ սույն գործում վերաքննիչ դատարանի կատարած զուտ ձևական դատավարության պայմաններում դիմողն իրականում ունակ չի եղել հասնելու իր գործի քննությանը՝ ըստ սեփական արտաքսումը խոչընդոտող հիմնավորումների:

61. Հետևաբար, տեղի է ունեցել թիվ 7 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
….

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ
….

3. Որոշում է, որ տեղի է ունեցել թիվ 7 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:
….

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Զուպանչիկը և դատավորներ Հեդիգանը, Քաֆլիշը, Բիրսանը, Գյուլումյանը, Մայերը և Տոիր Բյորգվինսոնը:

2 *Լուպսայի* գործով վճիռը բացահայտում է, որ դատարանը պատրաստակամ է հստակ կերպով մանրակրկիտ վերլուծության ենթարկել թե՛ ներպետական նյութական իրավունքի բնութագրիչները, թե՛ իրավական պաշտպանության ընթացակարգային միջոցները, որոնք հասանելի են օրինական կերպով բնակվող օտարերկրացիներին նույնիսկ այն դեպքերում, երբ պետությունները վստահեցնում են, որ արտաքսումը հիմնված է ազգային անվտանգության նկատառումների վրա:

Հոդված 2. Քրեական գործերով գանգատարկման իրավունքը

……

«Կրոմբախն ընդդեմ Ֆրանսիայի» (Krombach v France), 13 փետրվարի, 2001 թ.
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դիմողը Գերմանիայի քաղաքացի էր: 1977 թ. որպես կնոջը կորցրած տղամարդ՝ երկու երեխաներով, ամուսնացել էր երկու երեխա ունեցող ամուսնալուծված ֆրանսուհու հետ: 1982 թ. հուլիսին, գանգատարկուի կնոջ որդին և դուստրը, որը տասնչորս տարեկան էր և Ֆրանսիայի քաղաքացի, դպրոցական արձակուրդն անց էին կացնում դիմողի տանը՝ Գերմանիայում: Մի երեկո՝ օրը ուիսկոնսերֆինգով զբաղվելով անցկացնելուց հետո, դուստրը տուն էր վերադարձել՝ բողոքելով, որ հոգնած է և ոչ բավականաչափ արևահարված: Դիմողը, ինչպես մի քանի անգամ արել էր նախկինում, նրան երկաթի պարունակությամբ խառնուրդ էր ներարկել (որը վաճառվում է որպես սակավար-

յունության դեմ բուժական միջոց): Հաջորդ առավոտյան, մոտավորապես ժամը 9-ն անց 30-ին, դիմողը իր խորթ աղջկան մահացած էր գտել ննջարանում: Նա փորձել էր վերակենդանացնել աղջկան՝ տարբեր նյութեր ներարկելով. շտապօգնություն էր կանչել: Բժիշկն աղջկա մարմինը հետազոտել էր մոտավորապես ժամը 10-ն անց 20 րոպեին և բռնության որևէ հետք չէր հայտնաբերել՝ չհաշված կրծքավանդակին և թևին առկա ներարկման հետքերը: Բժշկի գնահատմամբ՝ աղջիկը մահացել էր մոտավորապես գիշերվա ժամը 3-ին: Գերմանիայի իշխանությունները մահվան պատահարի հետ կապված մի շարք հետաքննություններ էին անցկացրել, և 1987 թ. Մյունխենի վերաքննիչ դատարանը հաստատել էր պետական մեղադրողի որոշումը՝ դիմողին որևէ հանցագործության համար մեղադրանք չներկայացնելու վերաբերյալ:

1984 թ. աղջկա հարազատ հայրը, որը Ֆրանսիայի քաղաքացի էր, անհայտ անձի (անձանց) կողմից իր դստեր չկանխամտածված սպանության վերաբերյալ հանցագործության մասին հայտարարություն էր ներկայացրել դատական հետաքննությունը վարող փարիզյան դատավորին: Այդպիսով մեկնարկեց ֆրանսիական հետաքննությունը, և 1991 թ. փետրվարին հետաքննությունը վարող փարիզյան դատավորը դիմողին մեղադրանք ներկայացրեց հարձակման համար, որը հանգեցրել է չկանխամտածված մահվան (Ֆրանսիայի քրեադատավարական օրենսգրքի համաձայն՝ օտարերկրացին, ով Ֆրանսիայի տարածքից դուրս լուրջ հանցագործություն է կատարել Ֆրանսիայի քաղաքացու նկատմամբ, կարող է դատվել Ֆրանսիայի օրենսդրության համաձայն): Փարիզի վերաքննիչ դատարանի մեղադրանքի ներկայացման բաժնի 1993 թ. ապրիլին կայացրած վճռով դիմողին պարտավորեցվեց կանգնել Փարիզի արտագնա դատարանի առջև՝ չկանխամտածված սպանության մեղադրանքով: 1995 թ. փետրվարին դիմողը տեղեկացրեց արտագնա դատարանի նախագահին, որ ցանկանում է՝ իրեն ներկայացնի իրավաբանը: 1995 թ. մարտի 1-ին դիմողի ֆրանսիացի իրավաբանը, որին օգնում էր գերմանացի իրավաբան, արտագնա դատարանին բացատրություններ ներկայացրեց՝ հիմնված, *ի թիվս այլոց*, կոնվենցիայի 6-րդ հոդվածի վրա: Մարտի 9-ին արտագնա դատարանը որոշեց, որ դիմողը մեղավոր է իր խորթ աղջկա նկատմամբ դիտավորյալ հարձակում գործելու համար, որը չկանխամտածված կերպով հանգեցրել է վերջինիս մահվանը, և դիմողին դատապարտեց տասնհինգ տարվա ազատազրկման: Արտագնա դատարանը դիմողի իրավաբաններին տեղեկացրեց նաև, որ, քրեադատավարական օրենսգրքի համաձայն՝ բացակա պատասխանողներին արգելվում է ներկայանալ իրավաբանի միջոցով, և, հետևաբար, նրանց բացատրություններն անընդունելի են համարվել: 1995 թ. հունիսին վճռաբեկ դատարանը որոշեց, որ արտագնա դատարանի վճռի դեմ դիմողի բողոքն անընդունելի է՝ համաձայն քրեադատավարական օրենսգրքի, քանի որ նա, անհարգալից վերաբերմունք ցույց տալով դատարանի նկատմամբ, չի մասնակցել սեփական դատավարությանը:

Դիմողը գանգատ ներկայացրեց դատարան՝ պնդելով, *ի թիվս այլոց*, որ վճռաբեկ դատարան բողոք ներկայացնելու արգելքը, որտեղ պատասխանողը դատապարտվել է *in absentia*, խախտում է թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածը:

96. Դատարանը վերստին հայտարարում է, որ պայմանավորվող պետությունները, սկզբունքորեն, օգտվում են հայեցողության լայն սահմանից, երբ որոշում են, թե ինչպես պետք է կիրառվի կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածով սահմանված իրավունքը: Այդպիսով, ավելի բարձր ատյանի դատարանի կողմից դատապարտման կամ սահմանված պատժի վերանայումը կարող է վերաբերել կա՛մ փաստերի հարցերին և օրենքի հարցերին միասին, կա՛մ բացառապես օրենքի հարցերին: Ավելին, որոշ երկրներում մեղադրյալը, որը ցանկանում է բողոք ներկայացնել, երբեմն կարող է ստիպված լինել այդ անելու համար թույլտվություն ստանալ: Այնուամենայնիվ, տվյալ դրույթում նշված դատական կարգով վերանայման իրավունքի ցանկացած սահմանափակում, որը առկա է ներպետական օրենսդրությունում, պետք է, կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի մեջ ընդգրկված դատարանին դիմելու իրավունքի նմանությամբ, օրինական նպատակ հետապնդի և չխախտի այդ իրավունքի բուն էությունը (տե՛ս «*Հազերն ընդդեմ Շվեյցարիայի*» (*Haser v Switzerland*) (dec.), թիվ 33050/96, 27 ապրիլի, 2000 թ., չհրապարակված): Այս կանոնն ինքնին համատեղելի է 2-րդ հոդվածի 2-րդ կետով թույլատրված բացառության հետ և պաշտպանություն է գտնում այդ հոդվածի մեկնաբանության վերաբերյալ ֆրանսիական կողմի հայտարարության մեջ, որն ասում է. « ... 2-րդ հոդվածի 1-ին կետի իմաստին համապատասխան՝ ավելի բարձր ատյանի դատարանի կողմից վերանայումը կարող է սահմանափակվել օրենքի կիրառման նկատմամբ վերահսկողությամբ՝ ինչպիսին է գանգատարկումը գերագույն դատարան»:

97. Տվյալ ժամանակ Ֆրանսիայի օրենսդրությամբ որևէ հնարավորություն չկար սովորական գանգատ ներկայացնելու արտագնա դատարանի վճռի դեմ, քանի որ մատչելի միակ գանգատարկումը օրենքի հարցերի գանգատարկումն էր: Առաջին հայացքից քրեական դատավարության ֆրանսիական կանոնները, հետևաբար, թվում է թե, համապատասխանում են թիվ 7 արձանագրության

2-րդ հոդվածին (տե՛ս «*Լոևենգուտն ընդդեմ Ֆրանսիայի*» (*Loewenguth v France*) (dec.), թիվ 53183/99, ECHR 2000-VI, և «*Դեպերուայ ընդդեմ Ֆրանսիայի*» (*Deperrois v France*) (dec.), թիվ 48203/99, 22 հունիսի, 2000 թ., չի հրապարակվել դատական որոշումների չհրապարակված):

98. Այնուամենայնիվ, դատարանը նշում է, որ արձանագրության մեկնաբանության վերաբերյալ ֆրանսիական կողմի հայտարարությունը չի վերաբերում քրեադատավարական օրենսգրքի 636-րդ հոդվածին, որը բացահայտ կերպով սահմանում է, որ հեռակա դատավարության [trial *in absentia*] արդյունքում դատապարտված անձինք իրավունք չունեն բողոք ներկայացնելու վճռաբեկ դատարան: Հետևաբար, դիմողը իրավասության մեկ աստիճանում իր հեռակա դատապարտման դեմ դատարանում «իրավական պաշտպանության միջոց» չուներ:

99. Դիմողի գանգատը սույն գործում այն էր, որ նա իրավունք չուներ հեռակա դատավարության բուն ընթացակարգի դեմ բողոք ներկայացնելու վճռաբեկ դատարան: Դատարանը համարում է, որ այն փաստը, որ մեղադրյալը կարող է ներողություն խնդրել դատարանի նկատմամբ դրսևորած անհարգալից վերաբերմունքի համար, այս կապակցությամբ որոշիչ չէ, քանի որ թեև դա կարող է հնարավորություն տալ մեղադրյալին հասնելու սեփական գործի ամբողջական վերանայմանը իր ներկայությամբ, այդպիսով, ձերբակալության պարագայում, պետության համար սահմանվող դրական պարտավորությունը, ըստ էության, նախատեսված է մրցակցային գործընթացը և քրեական հանցագործության համար մեղադրվող անձի պաշտպանության իրավունքները երաշխավորելու համար:

100. Սույն գործում դիմողը ցանկանում էր թե՛ պաշտպանվել ներկայացված մեղադրանքներից ըստ էության, թե՛ նախնական ընթացակարգային առարկություն ներկայացնել: Դատարանը ծանրակշիռ է համարում այն փաստը, որ դիմողը չի կարողացել հասնել պաշտպանության իրավաբաններին գործը ներկայացնել թույլ չտալու վերաբերյալ արտագնա դատարանի որոշման օրինականության վերանայմանը առնվազն վճռաբեկ դատարանում (տե՛ս *mutatis mutandis* *Պուատրիմոլի* (*Poitrimol*) գործը [*ընդդեմ Ֆրանսիայի*] A. 277-A (1993)] պարբ. 38 վերջում. *Վան Գեյզեգեմի* (*Van Geyseghem*) գործը [*ընդդեմ Բելգիայի*], ECHR 1999-I] պարբ. և հակառակը՝ վերը մեջբերված *Հազերի* գործը):

Քրեադատավարական օրենսգրքի՝ 630-րդ և 639-րդ հոդվածների ուժով դիմողը, մի կողմից, արտագնա դատարանում չէր կարող ներկայացված լինել և չէր ներկայացվել իրավաբանի միջոցով, իսկ մյուս կողմից՝ չէր կարող բողոք ներկայացնել վճռաբեկ դատարան, քանի որ հեռակա մեղադրյալ [defendant *in absentia*] էր հանդիսանում: Հետևաբար, առաջին ատյանում պաշտպանվելու կամ իր դատապարտումն ավելի բարձր ատյանի դատարանում բողոքարկելու իրական հնարավորություն չուներ:

Հետևաբար, տեղի է ունեցել նաև կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի խախտում:

….

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

….

3. Որոշում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի խախտում:

….

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Ֆուրմանը և դատավորներ Կոստան, Լուկայդեսը, Կուրիսը, Թուլքենսը, Յունգվիրթը և Բրատցան:

2 *Կրոմբախի* գործով վճռի 96-րդ պարբերությունում հստակ է դարձնում, որ թեև պետությունները հայեցողության լայն սահմաններ ունեն 2-րդ հոդվածով նախատեսված վերանայման գործողության ոլորտի և մատչելիության կարգավորման համար, ներպետական օրենսդրությունը չպետք է խաթարի այս իրավունքը, և սահմանված ցանկացած սահմանափակում պետք է հետապնդի օրինական նպատակ:

3 *«Պապոնն ընդդեմ Ֆրանսիայի»* (*Papon v France*) գործում (2002 թ. հուլիսի 25-ի վճիռ) դիմողը պնդում էր, որ բողոքարկման իր իրավունքից զրկվելը՝ քրեադատավարական օրենսգրքով, այն պատճառով, որ հրաժարվել է ինքնակամ ներկայանալ կալանման, խախտել է, *ի թիվս այլոց*, 2-րդ հոդվածը: Պապոնը 1942-1944 թթ. հանդիսացել է Ժիրոնդի պրեֆեկտուրայի գլխավոր քարտուղարը: Ֆրանսիայի ազատագրումից հետո ներքին գործերի նախարարությունը որոշել էր, որ նրան հարկ է թույլատրել շարունակել պետական ծառայությունը, քանի որ օկուպացիայի ընթացքում բարեհաճ վերաբերմունք էր ցույց տվել Դիմադրությանը: Արդյունքում նա մի շարք կարևոր պաշտոններ էր

զբաղեցրել, ներառյալ՝ Փարիզի ոստիկանության կոմիսարի և քաղաքի ղեկավարի պաշտոնները: 1981 թ., երբ նա զբաղեցնում էր ֆինանսների նախարարի պաշտոնը, լրատվամիջոցները սկսեցին քննադատական նյութեր հրապարակել օկուպացիայի տարիներին նրա գործունեության վերաբերյալ: 1983 թ. նրան ներկայացվեց մարդկության դեմ հանցագործություններ կատարելու մեղադրանք: Ժիրոնդի արտագնա դատարանում նրա դատավարությունը մեկնարկեց 1997 թ. հոկտեմբերին: 1998 թ. ապրիլին արտագնա դատարանը նրան մեղավոր ճանաչեց մարդկության դեմ կատարած հանցագործությունների համար (1942 և 1944 թթ. հրեաների ապօրինի ձերբակալություններին և կեղծ բանտարկություններին նպաստելը և մասնակցելը, որոնց այնուհետև տեղափոխում էին համակենտրոնացման ճամբարներ): Նա դատապարտվեց տասը տարվա ազատազրկման: Դիմողը բողոք ներկայացրեց օրենքի հարցերի վերաբերյալ՝ իր դատապարտման դեմ, և միջնորդեց իրեն ազատել կալանքի տակ առնվելու համար ինքնակամ ներկայանալու պարտավորությունից: Վճռաբեկ դատարանը մերժեց այդ պարտավորությունից ազատելու նրա միջնորդությունը: Սակայն դիմողը փախավ Շվեյցարիա (ավելի ուշ Շվեյցարիայի իշխանությունները նրանից պահանջել էին լքել Շվեյցարիան, և դատարան գանգատի ներկայացման ժամանակ նա արդեն բանտարկված էր Ֆրանսիայում): 1999 թ. հոկտեմբերին դիմողի իրավաբանների բացատրությունները լսելուց հետո վճռաբեկ դատարանը որոշեց, որ դիմողը զրկվել է բողոքարկման իր իրավունքից, քանի որ հրաժարվել է ինքնակամ ներկայանալ կալանքի տակ առնվելու համար: Եվրոպական դատարանի միացյալ պալատը շատ հակիրճ մերժեց 2-րդ հոդվածի խախտման վերաբերյալ վերջինիս պնդումը:

106. Դատարանն արդեն առիթ ունեցել է որոշում կայացնելու, որ տվյալ ժամանակ ուժի մեջ գտնվող ֆրանսիական համակարգը սկզբունքորեն համատեղելի է թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի հետ (տե՛ս, մասնավորապես, *Կրոմբախի* գործը, պարբ. 97, և այդտեղ մեջբերված որոշումները):

Սա *Կրոմբախի* գործով վճռի բավականին միակողմանի ընկալում է ներկայացնում: Այդուհանդերձ, պալատը *Պապոնի* գործով միաձայն որոշել է, որ դիմողին օրենքի հարցերի առումով բողոք ներկայացնելու իրավունքից զրկելն այն պատճառով, որ նա ինքնակամ չի ներկայացել կալանքի տակ առնվելու համար, դատարան դիմելու նրա իրավունքին անհամաչափ միջամտություն է և ոտնահարում է 6-րդ հոդվածի 1-ին կետը: Ֆրանսիացի դատավոր Կոստան մի անսովոր «հայտարարություն» արեց, որում նշում էր.

Դիմողը պնդում էր, որ մարդկության դեմ հանցագործություններին նպաստելու և դրանց մասնակցելու համար իր դատապարտմանը վերաբերող դատավարության ընթացքում տասնմեկ կետով ոտնահարվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան: Նրա ներկայացրածից ընդունելի է համարվել միայն մեկ կետը, ինչն անխուսափելի էր՝ հաշվի առնելով նախադեպային իրավունքը, որը նույնն է բոլորի համար: Հետևաբար, ես քվեարկել եմ համապատասխանաբար.

Այդ խախտումը տեղի էր գտել այն պատճառով, որ վճռաբեկ դատարանը կիրառել էր քրեադատավարական օրենսգրքի մի դրույթ, որը վերացվել էր մի քանի ամիս անց՝ 2000 թ. հունիսի 15-ի օրենքով: Եվս մի քանի ամիս, և Ֆրանսիան ընդհանրապես չէր համարվի այդ խախտումը կատարող: Այս դիտարկումը, իմ կարծիքով, ծառայում է ապագայի համար տվյալ վճռի նշանակությունը և ազդեցությունն ընդգծելու համար, ինչպես այն փաստը, որ դիմողի՝ դրամական և ոչ դրամական վնասների համար արդարացի փոխհատուցման պահանջները մերժվել են:

4 Որպեսզի գանգատարկման ընթացակարգը ունակ լինի բավարարելու 2-րդ հոդվածը, պետք է ուղղակիորեն մատչելի լինի պատասխանողին: «*Գուրեպկան ընդդեմ Ուկրաինայի*» (*Gurepka v Ukraine*) գործում (2005 թ. սեպտեմբերի 6-ի վճիռ) դիմողը դատախազ էր, ում դատի էին տվել զրպարտության համար: Դիմողը չէր մասնակցել զրպարտության գործով մի շարք դատական նիստերի (նա պնդում էր, որ, *ի թիվս այլոց*, հիվանդ է եղել): Շրջանային դատարանը «վարչական վարույթ» էր սկսել վերջինիս դեմ՝ նիստերին բացակայելու պատճառով: Դեկտեմբերի 1-ին դիմողը մասնակցել էր լսումների, որտեղ շրջանային դատարանը նրա նկատմամբ յոթնօրյա վարչական կալանք էր սահմանել՝ նախորդ նիստերից կրկնվող բացակայությունների համար: Նա կալանավորվել էր և տեղափոխվել խուց: Հաջորդ օրը նրա գործատուն՝ Ղրիմի Ինքնավար Հանրապետության գլխավոր դատախազությունը, արտակարգ բողոք ներկայացրեց Ղրիմի Ինքնավար Հանրապետության գերագույն դատարան՝ պնդելով, որ դիմողի հանդեպ պատժամիջոց պետք է նշանակվեր համաձայն գլխավոր դատախազության կարգապահական ստա-

տուտի, ոչ թե վարչական դատավարության: Գլխավոր դատախազության ներկայացրած բողոքի արդյունքը դիմողի վարչական կալանքի կասեցումն էր: Վերջինս ազատ արձակվեց: Հաջորդ օրը գերագույն դատարանի նախագահը մերժեց բողոքը, և դիմողը ստիպված եղավ կրել բանտարկության ժամանակահատվածի մնացորդը: Դիմողը բողոքեց Ստրասբուրգ առ այն, որ, *ի թիվս այլոց*, իր հանդեպ խախտվել է 2-րդ հոդվածը: Պալատը միաձայն սահմանեց, որ, հաշվի առնելով բանտարկության պատժամիջոցի ծանրությունը, դիմողի դեմ «վարչական դատավարությունը» կոնվենցիայի նկատառումներով հարկ է դասակարգել որպես «քրեական»:

60. Դատարանը քննության է առել Վարչական իրավախախտումների օրենսգրքով սահմանված արտակարգ վերանայման ընթացակարգը: Այն կարող է նախաձեռնվել միայն դատախազի կողմից կամ գերագույն դատարանի նախագահի միջնորդությամբ: Ելնելով նրանից, որ այդ ընթացակարգն ուղղակիորեն մատչելի չի եղել դատավարության կողմին և կախված չի եղել վերջինիս ներկայացրած միջնորդություններից կամ փաստարկներից, դատարանը համարում է, որ այն, կոնվենցիայի նկատառումներով, բավարար արդյունավետություն ունեցող իրավական պաշտպանության միջոց չէ:

Հետևաբար, պալատն արձանագրեց թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի խախտում:

Հոդված 4. Կրկին չդատվելու և չպատժվելու իրավունք

.....

«Գրադինգերն ընդդեմ Ավստրիայի» (Gradinger v Austria) A.328-C (1995)
Մարդու իրավունքների եվրոպական դատարան

1987 թ. հունվարի 1-ի վաղ առավոտյան դիմողն իր մեքենան վարելիս վթարի պատճառ էր հանդիսացել, ինչը հանգեցրել էր մի հեծանվորդի մահվան: Համաձայն դիմողից վերցված փորձանմուշի, որը հետազոտվել էր այն հիվանդանոցում, ուր նրան տեղափոխել էին վթարից հետո, նրա արյան մեջ հայտնաբերված ալկոհոլի պարունակությունը կազմել էր 0.8 գրամ՝ մեկ լիտրում: 1987 թ. մայիսի 15-ին Սբ Պյոլտենի շրջանային դատարանը դիմողին մեղավոր ճանաչեց անփութության հետևանքով մահվան պատճառ դառնալու համար՝ ըստ քրեական օրենսգրքի 80-րդ հոդվածի: Համաձայն վճռի՝ դիմողը մինչև պատահարը ալկոհոլ էր օգտագործել, սակայն ոչ այն աստիճանի, որ դատապարտվեր ավելի ծանր հանցագործության համար՝ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ մասով, անփութության հետևանքով մահվան պատճառ դառնալու համար, որը տեղի է ունեցել ալկոհոլի ազդեցությամբ: Դիմողը դատապարտվել էր 200-օրյա տույժի՝ օրական 160 շիլինգի չափով, կամ 100 օր ազատազրկման՝ չվճարման դեպքում: 1987 թ. հուլիսի 16-ին Սբ Պյոլտենի շրջանային ղեկավար մարմինը դատապարտման հրաման արձակեց, որով 1960 թ. «Ճանապարհային երթևեկության մասին» օրենքի խախտմամբ ալկոհոլ օգտագործած վիճակում մեքենա վարելու համար 12.000 շիլինգ տույժ էր սահմանվում՝ չվճարման դեպքում երկու շաբաթ ազատազրկմամբ: Ղեկավար մարմինը դիմողի վերաբերյալ մեկ այլ բժշկական տեղեկանք էր ձեռք բերել, որը եզրակացնում էր, հաշվի առնելով պատահարի և հիվանդանոցում արյան փորձանմուշը վերցնելու միջև ընկած ժամանակահատվածը՝ դիմողի արյան մեջ ալկոհոլի պարունակությունը պետք է, որ պատահարի ժամանակ մեկ լիտրում առնվազն 0.95 գրամ եղած լիներ: Դիմողը, առանց հաջողության հասնելու, բողոք էր ներկայացրել Ստորին Ավստրիայի տարածաշրջանային կառավարություն և սահմանադրական դատարան: Նա, այնուհետև, գանգատ էր ներկայացրել Ստրասբուրգ՝ պնդելով, *ի թիվս այլոց*, որ իրեն տուգանելով, շրջանային ղեկավար մարմինը խախտել է թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածը, քանի որ պատժվել է երկու անգամ՝ այն փաստերի առումով, որոնք հանգեցրել էին շրջանային դատարանի կողմից իր առաջին դատապարտմանը:

53. Ինչպես Հանձնաժողովը, դատարանը որոշում է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի նպատակը վերջնական որոշմամբ եզրափակված քրեական դատավարության կրկնությունն արգելելն է: Այդ դրույթը, հետևաբար, կիրառելի չէ մինչև նոր դատավարության մեկնարկը: Սույն գործում, այնքանով, որ նոր դատավարությունը որոշմամբ իր եզրափակմանն է հասել ավելի

ուշ, քան թիվ 7 արձանագրությունը մտել է ուժի մեջ … *ratione temporis* կիրառելիության պայմանները բավարարվել են:

Գ. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻՆ

54. Ի պատասխան պրն Գրադինգերի փաստարկներին ... որոնք հանճնաժողովն ընդունել է ըստ էության, կառավարությունը հաստատում է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածը չի արգելում հաջորդաբար կիրառել խնդրո առարկա այդ երկու դրույթները: Դրանք տարբեր են բնույթով և հետապնդում են տարբեր նպատակներ. եթե քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ մասը պատիժ է նախատեսում ալկոհոլի ազդեցության տակ կատարված սպանության համար, «Ճանապարհային երթևեկության մասին» օրենքի 5-րդ բաժինը պատիժ է սահմանում անսթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու սոսկ փաստի համար: Առաջինը նախատեսված է մահվան պատճառ հանդիսացած և հասարակական անվտանգությանը սպառնացող արարքները պատժելու համար, իսկ երկրորդը՝ ճանապարհային անվտանգ երթևեկություն ապահովելու համար:

55. Դատարանը նշում է, որ, ըստ Սբ Պյոլտենի շրջանային դատարանի՝ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ մասում վկայակոչված ծանրացուցիչ հանգամանքը, այն է՝ արյան մեջ ալկոհոլի՝ մեկ լիտրում 0.8 գրամ և ավելի պարունակությունը, դիմողի առումով կիրառելի չի եղել: Մյուս կողմից՝ վարչական իշխանությունները գտել են, որ որպեսզի դիմողի գործը տեղավորվի «Ճանապարհային երթևեկության մասին» օրենքի 5-րդ բաժնի շրջանակներում, անհրաժեշտ է, որ առկա լինի ալկոհոլի համապատասխան պարունակություն: Դատարանը լիովին տեղյակ է, որ քննության առարկա դրույթները տարբերվում են ոչ միայն նախատեսվող հանցագործությունների առումով, այլև, ինչն ավելի կարևոր է, իրենց բնույթի և նպատակի առումով: Դատարանը նաև նշում է, որ «Ճանապարհային երթևեկության մասին» օրենքի 5-րդ բաժնով նախատեսված հանցանքը ներկայացնում է քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ մասով պատժվող հանցանքի միայն մեկ կողմը: Այդուհանդերձ, երկու վիճարկվող որոշումներն էլ հիմնված են միևնույն արարքի վրա: Համապատասխանաբար, տեղի է ունեցել թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի խախտում:

….

ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

….

5. Որոշում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի խախտում:

….

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դատարանի կազմում էին նախագահ Ռիսդալը և դատավորներ Մաթշերը, Փեթիթին, Մակդոնալդը, Մարտենսը, Ֆոյգելը, Մորինիյան, Ֆրիլենդը և Մակարչիկը:

2 Ավելի ուշ տեղ գտած *«Օլիվեյրան ընդդեմ Շվեյցարիայի» (Oliveira v Switzerland)* գործում (1998 թ. հուլիսի 30-ի վճիռ) նախնական կազմով դատարանի զգալի մեծամասնությունը (ութ կողմ և մեկ դեմ ձայն) հրաժարվեց նախադեպ ընդունել *Գրադինգերի* գործը՝ շեշտելով, որ մեկ արարքը կարող է հանդիսանալ մեկից ավելի քրեական հանցագործություն: 1990 թ. դեկտեմբերին Ցյուրիխի սառցապատ ճանապարհներից մեկով վարելիս տկն Օլիվեյրայի մեքենան շեղվել էր դեպի ճանապարհի հակառակ կողմը և լուրջ վնասվածքներ պատճառել մեկ այլ վարորդի: 1991 թ. օգոստոսին Ցյուրիխի ոստիկանության մագիստրատը (ոստիկանական դատարանի նախագահը) «Ճանապարհային երթևեկության մասին» դաշնային օրենքի համաձայն՝ նրան մեղավոր ճանաչեց տրանսպորտային միջոցի կառավարումը կորցնելու համար: Նա տուգանվեց 200 շվեյցարական ֆրանկ: 1993 թ. հունվարին շրջանային դատախազությունը նրան տուգանեց՝ 2.000 շվեյցարական ֆրանկով, անփութության հետևանքով մարմնական վնասվածք պատճառելու համար, ինչն արգելված է Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածով: Տկն Օլիվեյրան տուգանքի մասին այդ որոշումը վիճարկեց Ցյուրիխի շրջանային դատարանում, որը տուգանքի չափը նվազեցրեց մինչև 1.500 շվեյցարական ֆրանկ և անվավեր ճանաչեց 200 շվեյցարական ֆրանկի տուգանքը, որն ավելի վաղ սահմանել էր ոստիկանության մագիստրատը: Դաշնային դատարանը մերժեց նրա հաջորդ բողոքը՝ նշելով, որ շրջանային դատարանը խուսափել է նրան կրկնակի պատժի ենթարկելու հետևանքներից, քանի որ անվավեր է ճանաչել առաջին տուգանքը: Այդուհանդերձ, նա գանգատ ներկայացրեց Ստրասբուրգ՝ պնդելով, որ տեղի է ունեցել 4-րդ

հոդվածի խախտում:

26. Սա մեկ արարքով տարբեր հանցագործությունների բնորոշ օրինակ է (*concours idéal d'infractions*, ֆր.՝ *հանցագործությունների իդեալական համակցություն*): Այս հասկացության բնութագրող գիծն այն է, որ մեկ քրեական արարքը բաժանվում է երկու առանձին հանցագործությունների, տվյալ դեպքում՝ տրանսպորտային միջոցը չկառավարելու և անփութության հետևանքով պատճառված մարմնական վնասվածքի: Նման դեպքերում, առավել մեծ պատիժը սովորաբար կլանում է ավելի փոքրը:

Այդ իրավիճակում որևէ բան չի խախտում թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածը, քանի որ այդ դրույթն արգելում է մարդուն երկու անգամ դատել միևնույն հանցագործության համար, մինչդեռ այն դեպքերում, որոնք վերաբերում են տարբեր հանցագործություններ հանդիսացող մեկ արարքի, մեկ քրեական արարքը երկու առանձին հանցագործություն է:

27. Հարկ է նշել, որ միևնույն քրեական արարքից բխող երկու հանցագործությունների վերաբերյալ պատժի սահմանման առումով արդարադատության պատշաճ իրականացումն ապահովող սկզբունքներին ավելի համահունչ կլիներ, եթե դրանք ընդունվեին միևնույն դատարանի կողմից՝ դատավարության մեկ համախմբի շրջանակներում: Իրականում, հենց այդպես էլ պետք է եղած լիներ սույն գործում, այսինքն՝ ոստիկանության մագիստրատը, հաշվի առնելով այն փաստը, որ վնաս կրած կողմի ստացած լուրջ վնասվածքները դուրս են իր իրավասության սահմաններից, պետք է գործն ուղարկած լիներ շրջանային դատախազին, ով որոշում կկայացներ միասին երկու հանցագործությունների վերաբերյալ: Այն փաստը, որ հենց այդ ընթացակարգով չեն առաջնորդվել տկն *Օլիվեյրայի* գործում, այնուամենայնիվ, նշանակություն չունի թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածին համապատասխանության առումով, քանի որ այդ դրույթը չի արգելում առանձին հանցագործությունների, նույնիսկ եթե դրանք բոլորն առաջ են եկել մեկ քրեական արարքից, քննությունը տարբեր դատարանների կողմից, հատկապես երբ, ինչպես սույն գործում, տուգանքները կուտակային (կումուլյատիվ) չեն, և ավելի փոքրը կլանվում է ավելի մեծի կողմից:

28. Սույն գործը, այդ իսկ պատճառով, տարբերվում է *Գրադինգերի* վերը մեջբերված գործից, որտեղ երկու տարբեր դատարանները չհամընկնող եզրակացությունների էին հանգել դիմողի արյան մեջ ալկոհոլի պարունակության վերաբերյալ:

29. Որպես եզրակացություն՝ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Իր չհամընկնող կարծիքում դատավոր Ռեպիկը *Գրադինգերի* գործի վերաբերյալ նշում էր.

... Հետևաբար, կասկածից վեր է, որ արարքի նյութական, օբյեկտիվ կողմը (*actus reus*) և, մասնավորապես, նույնականությունն է, որ դատարանը համարել է չափանիշ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի իմաստով «հանցագործությունը» որոշելիս: Ես լիովին պաշտպանում եմ դատարանի որոշումն այդ գործով: Այն թույլ չի տալիս, որ մեկ, լավ սահմանված *actus reus-ը* մասերի բաժանվի՝ դրա որոշ յուրահատուկ կողմերը փոփոխելու միջոցով, և միևնույն անձը մեկից ավելի անգամ հետապնդման ենթարկվի միևնույն դեպքի առնչությամբ՝ տարբեր իրավական որակումների արդյունքում:

Այնուամենայնիվ, դատարանը սույն գործում ընտրեց միանգամայն հակառակ լուծում՝ այն իմաստով, որ իրավական որակումն ընդունեց որպես «հանցագործությունը» որոշելու չափանիշ: «Մեկ քրեական արարքի» տարբերվող իրավական որակումը բավարար եղավ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածում պարունակվող *non bis in idem* [*միևնույն արարքի համար պատասխանատվության ենթարկելն արգելող*] երաշխիքը դուրս մղելու համար:

Այդուհանդերձ, *Գրադինգերի* գործի և *Օլիվեյրայի* գործի միջև հնարավոր չէ տեսնել այնպիսի տարբերություն, որը կարող է արդարացնել այս երկու՝ միմյանց ամբողջովին հակասող որոշումները: Երկու դեպքում էլ արարքը, որը հանգեցրել էր հետապնդման, նույնական էր: Երկու դեպքում էլ մեղադրյալին առաջինը դատապարտած դատարանի սխալի պատճառով, *actus-ի* մի կողմը հաշվի չէր առնվել դատապարտման մեջ: Վերջապես, երկու գործերում էլ միևնույն արարքը, ծանրացված հանգամանքով, որն առաջին դատարանը հաշվի չէր առել, հանգեցրել էր երկրորդ դատապարտմանը՝ մեկ այլ իրավական որակմամբ:

….

3 Մշտական գործող դատարանը «*Ֆրանց Ֆիշերն ընդդեմ Ավստրիայի*» (*Franz Fischer v Austria*) գործում (2001 թ. մայիսի 29-ի վճիռ) ընդունեց, որ իր նախորդի մոտեցումները *Գրադինգերի* և *Օլիվեյրայի* գործերում «ինչ-որ չափով հակասական էին»: Ֆիշերը ալկոհոլ օգտագործած վիճակում երթևեկելիս հարվածել էր հեծանվորդի, որը կյանքի հետ անհամատեղելի վնասվածքներ էր ստացել: 1996 թ. դեկտեմբերին Սբ Պյոլտենի շրջանային ղեկավար մարմինը՝ միևնույն մարմինը, ինչ *Գրադինգերի* գործում էր, նրան մեղավոր ճանաչեց ճանապարհային երթևեկության մի շարք խախտումների համար: Դրանք ներառում էին ալկոհոլ օգտագործած վիճակում վարելը, ինչն արգելված է «Ճանապարհային երթևեկության մասին» օրենքով: Նա դատապարտվեց տույժի՝ 22.010 շիլինգի չափով (չվճարելու դեպքում՝ ինը օր ազատազրկման): 1997 թ. մարտին Սբ Պյոլտենի շրջանային դատարանը (որը նույնպես նույն դատարանն էր, ինչ *Գրադինգերի* գործում) Ֆիշերին մեղավոր ճանաչեց՝ համաձայն քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի,

անսթափ վիճակում անփութության հետևանքով պատճառած մահվան համար: Նա դատապարտվեց վեց ամսվա ազատազրկման: Դրա հետևանքով նա գանգատ ներկայացրեց Ստրասբուրգ՝ պնդելով, որ տեղի է ունեցել 4-րդ հոդվածի խախտում: Պալատը միաձայն որոշեց, որ.

25. Դատարանը համարում է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի շարադրանքը հղում չի կատարում «միևնույն հանցագործությանը», այլ «կրկին» դատվելուն և պատժվելուն՝ այնպիսի հանցագործության համար, որի համար դիմողն արդեն վերջնական կերպով արդարացվել կամ մեղավոր է ճանաչվել: Այդպիսով, թեև ճիշտ է, որ սոսկ այն փաստը, որ մեկ արարքը մեկից ավելի հանցագործություն է, չի հակասում այս հոդվածին, դատարանը չպետք է իրեն սահմանափակի՝ կարծելով, որ դիմողը մեկ արարքի հիման վրա դատվել և պատժվել է անվանապես տարբեր հանցագործությունների համար: Դատարանը, Ավստրալիայի սահմանադրական դատարանի նման, նշում է, որ կան գործեր, որտեղ մեկ գործողությունը, առաջին հայացքից, մեկից ավելի հանցագործություն է, մինչդեռ ավելի ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարկ է հետապնդել միայն մեկ հանցագործությունը, քանի որ այն պարփակում է մյուսների մեջ պարունակվող բոլոր իրավախախտումները: Ակնհայտ օրինակ կարող է ծառայել այն գործողությունը, որը երկու հանցագործություն է, որոնցից մեկը պարունակում է ճիշտ նույն տարրերը, ինչ մյուսը՝ գումարած ևս մեկը: Կարող են լինել այլ գործեր, որտեղ հանցագործությունները չնչին չափով են համընկնում: Այդպիսով, այն դեպքում, երբ միևնույն արարքի վրա հիմնված տարբեր հանցագործությունները հետապնդվում են հաջորդաբար՝ մեկը՝ մյուսի վերաբերյալ վերջնական որոշման կայացումից հետո, դատարանը պետք է քննության առնի՝ նման հանցագործություններն ունե՞ն միևնույն հիմնական տարրերը, թե՞ ոչ:

….

27. Կարելի է նաև առարկել, որ սա է, որ տարբերում է *Գրաղինգերի* գործը *Օլիվեյրայի* գործից: *Գրաղինգերի* գործում տրանսպորտային միջոցն ալկոհոլ օգտագործած վիճակում վարելու վարչական իրավախախտման հիմնական տարրերը չէին տարբերվում նրանցից, որոնք հանդիսանում էին քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ պարբերության հատուկ հանգամանքները, այն է՝ տրանսպորտային միջոց վարելը՝ արյան մեջ ունենալով մեկ լիտրում ալկոհոլի 0.8 գրամ և ավելի պարունակություն: Մինչդեռ Օլիվեյրայի գործում քննության առարկա հանցագործությունների հիմնական տարրերի միջև նման ակնհայտ համընկնում չկար:

28. Սույն գործում դիմողն առաջին անգամ մեղավոր էր ճանաչվել վարչական իշխանությունների կողմից՝ ալկոհոլ օգտագործած վիճակում վարելու համար՝ համաձայն «Ճանապարհային երթևեկության մասին» օրենքի 5(1) և 99(1)(ա) բաժինների: Հետագա քրեական դատավարությունում նա մեղավոր էր ճանաչվել անփութության հետևանքով մահ պատճառելու համար՝ որպես հատուկ տարր ունենալով քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված «անսթափ վիճակում»-ը: Դատարանը նշում է, որ *Գրաղինգերի* և սույն գործի միջև կա երկու տարբերություն. դատավարությունները կատարվել են հակառակ հաջորդականությամբ, և վարչական մարմնի ու քրեական դատարանների փաստական գնահատման միջև հակասություններ չկան, քանի որ երկուսն էլ որոշել են, որ դիմողի արյան մեջ ալկոհոլի պարունակությունը գերազանցում է մեկ լիտրում 0.8 գրամը:

29. Այդուհանդերձ, դատարանը համարում է, որ այդ տարբերությունները որոշիչ չեն: Ինչպես ասվեց վերը, հարցը, թե արդյոք *non bis in idem* սկզբունքը խախտվե՞լ է, թե՞ ոչ, վերաբերում է խնդրո առարկա երկու հանցագործությունների միջև հարաբերությանը և, հետևաբար, չի կարող կախված լինել այն հերթականությունից, որով անցկացվում են համապատասխան դատավարությունները: Ինչ վերաբերում է այն փաստին, որ պրն Գրաղինգերի վրա չէր տարածվել քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված հատուկ տարրը, սակայն վերջինս դատապարտվել է ալկոհոլ օգտագործած վիճակում վարելու համար, մինչդեռ տվյալ դիմողը դատապարտվել է երկու իրավախախտումների համար էլ, դատարանը կրկնում է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածը չի վերաբերում երկու անգամ չպատժվելու իրավունքին, այլ խոսում է երկու անգամ չդատվելու իրավունքի մասին: Սույն գործում որոշիչ է այն, որ դիմողը, մեկ արարքի հիման վրա, դատվել և պատժվել է երկու անգամ, քանի որ «Ճանապարհային երթևեկության մասին» օրենքի 5(1) և 99(1)(ա) բաժինների համաձայն՝ ալկոհոլ օգտագործած վիճակում վարելու վարչական իրավախախտումը և քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված հատուկ հանգամանքները, ինչպես դրանք մեկնաբանվել են դատարանների կողմից, իրենց էական տարրերի առումով չեն տարբերվում:

….

31. Վերջապես, դատարանը կարծում է, որ այս գործին նման գործում պայմանավորվող պետությունն ազատ է որոշելու, թե այս երկու իրավախախտումներից ո՛ր մեկը ենթարկի հետապնդման: Դատարանը նշում է նաև, որ սահմանադրական դատարանի 1996 թ. դեկտեմբերի 5-ի վճռից հետո իրավական դրությունն Ավստրիայում փոխվել է, այնպես որ ներկայումս «Ճանապարհային երթևեկության մասին» օրենքի 5(1) և 99(1)(ա) բաժինների համաձայն՝ ալկոհոլ օգտագործած վիճակում վարելու վարչական իրավախախտումը չի հետապնդվի, եթե փաստերը նաև բացահայտեն իրավախախտման հատուկ տարրեր՝ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ:

Այնուամենայնիվ, տվյալ ժամանակ դիմողը դատվել և պատժվել է միևնույն էական տարրերը պարունակող երկու իրավախախտումների համար էլ:

32. Այդպիսով, տեղի է ունեցել թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի խախտում:

Այսպես, դատարանը կենտրոնանում է այն հարցի շուրջ, թե արդյոք դիմողը երկու անգամ դատվե՞լ, թե՞ պատժվել է երկու կամ ավելի համանման իրավախախտումների համար, որոնք բխում են միևնույն փաստական հանգամանքներից: Այդ մոտեցումը կիրառվել է համանման գործերում՝ ներառյալ *«W.F. -ն ընդդեմ Ավստրիայի»* (*W.F. v Austria*)՝ 2002 թ. մայիսի 30-ի վճիռ, և *«Սայլերն ընդդեմ Ավստրիայի»* (*Sailer v Austria*)՝ 2002 թ. հուլիսի 25-ի վճիռ:

4 *«Գոկտանն ընդդեմ Ֆրանսիայի»* (*Goktan v France*) գործում (2002 թ. հուլիսի 2-ի վճիռ) միացյալ պալատը մերժեց դիմողի բողոքն առ այն, որ ինքը երկու անգամ պատժվել է միևնույն հանցանքի համար: Դիմողը 1991 թ. Ստրասբուրգի քրեական դատարանի կողմից մեղավոր էր ճանաչվել քրեական հանցագործությունների համար, որոնք ներառում էին թմրամիջոցների ներկրումը և ապօրինաբար ապրանքներ ներմուծելու մաքսային իրավախախտումը: Քրեական դատարանը նրան դատապարտել էր հինգ տարվա ազատազրկման՝ քրեական հանցագործությունների համար, և 400.000 ֆրանսիական ֆրանկ մաքսային տույժ էր սահմանել՝ մաքսային իրավախախտման համար: Դրանից հետո պետական մեղադրողը դիմողի դեմ մաքսային տույժը չվճարելու դեպքում հավելյալ երկու տարվա ազատազրկման օրդեր էր ապահովել: Դիմողը պնդում էր, որ այս վերջին օրդերը խախտում է 4-րդ հոդվածը, քանի որ այն իր համար նշանակում էր միևնույն հանցագործության համար բանտարկության երկու իրար հաջորդող ժամանակահատվածներ: Պալատը մերժեց այդ փաստարկը.

50. Իրականում դատարանը համարում է, որ սույն գործում մեկ քրեական դատարանը միևնույն անձին դատել է միևնույն քրեական արարքի համար, այն է՝ թմրամիջոցների ապօրինի ներկրման համար: Այլ կերպ ասած, ինչպես վերը մեջբերված *Օլիվեյրայի* գործում, մեկ քրեական արարքը երկու առանձին իրավախախտում է՝ ընդհանուր քրեական իրավունքով հանցագործություն և մաքսային իրավախախտում: Ինչպես *Օլիվեյրայի* գործում, սա կարելի է համարել նաև տարբեր օրենքների տված սահմանումներին համապատասխանող միևնույն արարքի օրինակ (*concours idéal de qualifications*, *ֆր.*՝ *որակումների իդեալական համակցություն*), և ավելի քան պատճառ կա այդ նախադեպը սույն գործի վրա տարածելու համար (քանի որ *Օլիվեյրայի* գործում պատասխանողը մեղավոր էր ճանաչվել երկու դատարանների կողմից: Թեև դատարանը ափսոսանք էր հայտնել, որ դա համատեղելի չէ արդարադատության պատշաճ իրականացման հետ, այնուամենայնիվ, որոշեց, որ խախտում տեղի չի ունեցել):

5 Պալատը պաշտպանեց գերագույն դատարանի նախագահության նախածեռնած հսկողության կարգով դատական վերանայման օրինականությունը *«Նիկիտինն ընդդեմ Ռուսաստանի»* (*Nikitin v Russia*) գործում (2004 թ. հուլիսի 20-ի վճիռ): Դիմողը, որ նախկին ծովային սպա էր, 1995 թ. սկսել էր աշխատել նորվեգական ոչ կառավարական կազմակերպության (հասարակական կազմակերպության) համար: Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայությունը խուզարկություն էր կատարել կազմակերպության Մուրմանսկի գրասենյակում և, արդյունքում, դիմողին մեղադրել մի շարք ծանր հանցագործությունների, ներառյալ՝ հայրենիքի դավաճանության համար: Նրա դատավարության մեկնարկից քիչ հետո Սանկտ Պետերբուրգի քաղաքային դատարանը հետաձգել էր դատավարությունը՝ լրացուցիչ քննության համար, որովհետև, *ի թիվս այլոց*, մեղադրանքն անորոշ էր և հստակ չէր, թե արդյոք այդ կազմակերպությունում դիմողի աշխատանքը ներառո՞ւմ էր պաշտոնեական գաղտնիքների օգտագործում: Մեղադրողը վիճարկել էր քաղաքային դատարանի որոշումը, սակայն գերագույն դատարանն այն ուժի մեջ էր թողել: Մեկ տարի անց քաղաքային դատարանը հանել էր բոլոր մեղադրանքները: Մեղադրողն առանց հաջողության հասնելու բողոք էր ներկայացրել գերագույն դատարան: Մի քանի շաբաթ անց գլխավոր դատախազը միջնորդել էր գերագույն դատարանի նախագահությանը՝ գործը ենթարկել հսկողության կարգով դատական վերանայման՝ պնդելով, որ, *ի թիվս այլոց*, վճիռը սխալ է կիրառել օրենքը, և մեղադրանքն անհստակ է եղել: Նախագահությունը չորս ամիս անց մերժել էր միջնորդությունը՝ նշելով, որ դատավարության թերությունները մեղադրող կողմի պատասխանատվությունն են: 2002 թ. սահմանադրական դատարանը որոշեց, որ հսկողության կարգով դատական վերանայման կողմերը, ներառյալ՝ արդարացման վճռի վերացումը ոչ լիարժեք քննության հիմքով, չեն համապատասխանում սահմանադրությանը: Դիմողը Եվրոպական դատարանի առջև պնդում էր, որ հսկողության կարգով դատական վերանայումը, որը տեղի էր ունեցել իր վերջնական

արդարացումից հետո, խախտել է 4-րդ հոդվածը:

35. Դատարանը նշում է, որ քրեական դատավարությունների կրկնությունից (դուբլիկացիայից) պաշտպանությունը այն հատուկ երաշխիքներից մեկն է, որը նմանեցվում է քրեական դատավարություններում արդարացի դատաքննության ընդհանուր երաշխիքին: Դատարանը վերստին հայտարարում է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի նպատակը վերջնական որոշմամբ եզրափակված քրեական դատավարության կրկնությունն արգելելն է (տե՛ս, մյուս աղբյուրների շարքում, «*Գրաունիզերն ընդդեմ Ավստրիայի*»՝ 1995 թ. հոկտեմբերի 23-ի վճիռ, շարք A, թիվ 328-C, էջ 65, պարբ. 53): Դատարանը նշում է նաև, որ դատավարության կամ պատժի կրկնման հարցը առանցքային դիրք է զբաղեցնում իրավական խնդրում, որին անդրադառնում է թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածը: «*Օլիվեյրան ընդդեմ Շվեյցարիայի*» գործում (1998 թ. հուլիսի 30-ի վճիռ, *Վճիռների և որոշումների զեկույցներ* 1998-V) այն փաստը, որ դատավարությունների երկու համախմբում ձևակերպված պատժամիջոցները կուտակային չէին, տեղին գտնվեց որոշելիս, որ այդ դրույթի խախտում տեղի չի ունեցել, երբ դատավարությունների երկու համախումբ է անցկացվել մեկ գործողության առումով (էջ 1998, պարբ. 27):

36. Անդրադառնալով արդարացման վճռի՝ հսկողության կարգով դատական վերանայմանը, որն իրականացվել է այնպիսի հանգամանքներում, ինչպիսիք սույն գործինն են, դատարանն առաջին հերթին պետք է պարզի, թե թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի որ տարրերն են առկա, եթե ընդհանրապես առկա են, այդ դատավարություններում: Այդ նպատակով դատարանը կդիտարկի հետևյալ հարցերը.

— արդյոք միևչև հսկողության կարգով վերանայումը եղե՞լ է «վերջնական» որոշում, թե՞ հսկողության կարգով վերանայումը սովորական ընթացակարգի մաս է և ինքն է տրամադրում վերջնական որոշումը.

— արդյոք դիմողը նախագահության կողմից «երկրորդ անգամ դատվ[ե՞լ]» է. և

— արդյոք դիմողը գլխավոր դատախազի միջնորդության ուժով դարձե՞լ է «երկրորդ անգամ դատվ[ելու] [ենթակա]*:

Վերջապես, դատարանը կդիտարկի, թե արդյոք այս գործի հիման վրա հսկողության կարգով դատական վերանայումը կարո՞ղ էր սկզբունքորեն հանգեցնել քրեական հետապնդման որևէ ձևով կրկնության՝ ի հակադրություն թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածով տրամադրվող պաշտպանության:

1. Արդյոք դիմողը «վերջնականապես արդարացվե՞լ» էր մինչև հսկողության կարգով դատական վերանայումը

37. Համաձայն կոնվենցիայի թիվ 7 արձանագրության բացատրական զեկույցի, որը հղում է անում Քրեական դատավճիռների միջազգային վավերականության մասին եվրոպական կոնվենցիային, «*որոշումը վերջնական է, «եթե, համաձայն ավանդական արտահայտության, այն ձեռք է բերել res judicata-ի [մեկ անգամ որոշված գործի կրկնական քննության անթույլատրելիության սկզբունք]* ուժ: Այս դեպքում է, որ այն դառնում է անշրջելի, այսինքն՝ երբ այլևս իրավական պաշտպանության որևէ այլ սովորական միջոց մատչելի չէ, կամ երբ կողմերը սպառել են նման միջոցները և կամ թույլ են տվել, որ լրանա սահմանված ժամկետը՝ առանց դիմելու դրանց օգնությանը»:

38. Դատարանը նշում է, որ դատավարական իրավունքն այդ ժամանակ որոշ պաշտոնատար անձանց հնարավորություն էր տալիս վիճարկել ուժի մեջ դատավճիռը: Հսկողության կարգով դատական վերանայման հիմքերը նույնն էին, ինչ սովորական գանգատ ներկայացնելունը: Արդարացման վճիռների առնչությամբ հսկողության կարգով դատական վերանայման միջնորդությունները կարող էին ներկայացվել վճռի՝ օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում: Եթե, ենթադրենք, նախագահությունը բավարարում է գլխավոր դատախազի միջնորդությունը, և դատավարությունը վերսկսվում է, դրան հետևող որոշումն էլ կհամարվի դիմողի քրեական գործով միակ վճիռը՝ առանց միաժամանակ ուժի մեջ գտնվող որևէ այլ որոշման, և հենց այդ որոշումն էլ կլինի «վերջնական»: Այդպիսով, ինչպես երևում է, այդ ժամանակ Ռուսաստանում առկա ներպետական իրավական համակարգը որոշումները, ինչպիսին սույն գործով արդարացման որոշումն էր, չէր դիտարկում որպես «վերջնական»՝ մինչև չլրանար հսկողության կարգով դատական վերանայման համար դիմում ներկայացնելու սահմանված ժամկետը: Այդ հիմքով գերագույն դատարանի նախագահության 2000 թ. մայիսի 30-ի որոշումը՝ գործը հսկողության կարգով դատական վերանայման համար չընդունելու վերաբերյալ, կհանդիսանա այս գործով «վերջնական» որոշումը: Նման մեկնաբանության պարագայում թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածը սույն գործի առումով որևէ կիրառություն չունի, քանի որ դատարանին ներկայացված բոլոր որոշումները վերաբերում են դատավարությունների մեկ համախմբի:

38. Այնուամենայնիվ, դատարանը վերստին արձանագրում է, որ վերջնական վճռի անվավեր ճանաչման համար հսկողության կարգով վերանայման դիմումը արտակարգ գանգատի ձև է՝ այն առումով, որ այն ուղղակիորեն հասանելի չէ քրեական գործով պատասխանող կողմին, և դրա կիրառումը կախված է իրավասու պաշտոնատար անձանց հայեցողությունից: Դատարանը, օրինակ, չի ընդունել, որ հսկողության կարգով դատական վերանայումն իրավական պաշտպանության արդյունավետ

* «Ենթակա» [liable] բառը թիվ 7 արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունում՝ 4-րդ հոդվածի 1-ին մասում, որպես այդպիսին բացակայում է- *ծան. թարգմ.*:

ներպետական միջոց է թե՛ քաղաքացիական, թե՛ քրեական համատեքստերում (տե՛ս «*Տումիլովիչն ընդդեմ Ռուսաստանի*» (*Tumilovich v Russia*) (dec.), թիվ 47033/99, 22 հունիսի 1999 թ., «*Բերձենիշվիլին ընդդեմ Ռուսաստանի*» (*Berdzenishvili v Russia*) (dec.), թիվ 31697/03, 29 հունվարի, 2004 թ.) և որոշել է, որ հսկողության կարգով դատական վերանայման արդյունքում վճռի անվավեր ճանաչումը կարող է խնդիրներ առաջացնել սկզբնական վճռին տրվող իրավական որոշակիության առումով (տե՛ս «*Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի*» (*Brumarescu v Romania*) [GC], թիվ 28342/95, պարբ. 62, ECHR 1999-VII, և «*Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի*» (*Ryabykh v Russia*), թիվ 52854/99, պարբ. 56-8, 24 հուլիսի, 2003 թ.): Հետևաբար, դատարանը հետևյալ պարբերություններում կենթադրի, որ գանգատի առումով 2000 թ. ապրիլի 17-ի վճիռը, որով դիմողի արդարացումը մնինույն օրը վերջնական ուժ ստացավ, հանդիսանում էր «վերջնական որոշում»՝ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի նկատառումներով:

2. Արդյո՞ք դիմողը «երկրորդ անգամ դատվ[ե՞լ]» է նախագահության կողմից

40. Դատարանը համարում է, որ արդարացման վճռի՝ հսկողության կարգով դատական վերանայման համար գլխավոր դատախազի միջնորդությունը քննվել է նախագահության կողմից: Նրա որոշելիք հարցն այդ փուլում սահմանափակվում էր նրանով, թե արդյոք հա՞րկ է բավարարել հսկողության կարգով դատական վերանայման միջնորդությունը: Սույն գործի հանգամանքներում նախագահությունը վերանայման միջնորդությունը չէր բավարարել, և վերջնական որոշումը մնաց 2000 թ. ապրիլի 17-ի որոշումը:

41. Դրանից հետևում է, որ դիմողը «երկրորդ անգամ» չի «դատվ[ել]» կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով դատավարությունում, որով գերագույն դատարանի նախագահությունը մերժեց գլխավոր դատախազության միջնորդությունը դիմողի արդարացման վճռի հսկողության կարգով դատական վերանայման վերաբերյալ:

3. Արդյոք դիմողը «երկրորդ անգամ դատ[վելու] [ենթակա՞]» էր

42. Դատարանն այնուհետև դիտարկում է, թե արդյոք դիմողը «երկրորդ անգամ դատ[վելու] [ենթակա՞]» էր, ինչպես պնդում էր: Դատարանը նշում է, որ եթե միջնորդությունը բավարարված լիներ, նախագահությունը պարտավորված կլիներ, քրեադատավարական օրենսգրքի այն ժամանակ 380-րդ հոդվածով, ընտրել տարբերակներից մեկը [ներառյալ վճռի անվավեր ճանաչումը և հետապնդման դադարեցումը կամ ատյաններից ցանկացածում մեղադրանքների առումով նոր դատաքննություն նշանակելը]: Կարևոր է նշել, որ նախագահությունն իրավասու չէր միևնույն դատավարությունում նոր որոշում կայացնել ըստ էության, այլ ընդամենը որոշել՝ բավարարե՞լ գլխավոր դատախազի միջնորդությունը, թե՞ ոչ:

43. Հետևաբար, ստացվում է, որ այս գործում դատավարության վերսկսման հավանականությունը չափազանց հեռու կամ անուղղակի էր՝ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին կետի նկատառումներով «ենթակա» հանդիսանալուց:

44. Թեև նախորդ 40-43-րդ պարբերություններում քննարկված տարրերն ինքնին բավարար են ցույց տալու համար, որ այս գործում հսկողության կարգով դատական վերանայումը չի հանգեցրել թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի խախտման, դատարանը նշում է, որ միևնույն եզրակացությանը հանգելու համար կա մի նշանակալի և, այդպիսով, ավելի կարևոր պատճառ: Դատարանը համարում է, որ այս գործում առանցքային կետն այն է, որ հսկողության կարգով դատական վերանայումը որևէ պարագայում չէր կարող քրեական դատավարության կրկնություն լինել թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, հետևյալ պատճառներով:

45. Դատարանն այն կարծիքին է, որ թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածը հստակ տարբերակում է մտցնում երկրորդ հետապնդման կամ դատավարության, որն արգելվում է այս հոդվածի առաջին կետով, և արտակարգ հանգամանքներում դատավարության վերսկսման միջև, որը նախատեսվում է նրա երկրորդ կետով: Թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետն ուղղակիորեն նախատեսում է այն հնարավորությունը, որ անհատը կարող է միևնույն մեղադրանքով ենթարկվել հետապնդման, ներպետական օրենսդրությանը համապատասխան, եթե գործը վերանայվել է նոր ի հայտ եկած փաստերի կամ նախորդ քննությունում բացահայտված էական թերությունների հետևանքով:

46. Դատարանը նշում է, որ տվյալ ժամանակ ուժի մեջ եղած ռուսաստանյան օրենսդրությունը թույլ էր տալիս, որ քրեական գործով վերջնական որոշումը վերանայվի՝ նոր կամ նոր բացահայտված փաստերի կամ էական թերությունների հիմքով (քրեադատավարական օրենսգրքի 384-390-րդ հոդվածներ): Այս ընթացակարգն ակնհայտորեն տեղավորվում է թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետի գործողության ոլորտում: Այնուամենայնիվ, դատարանը նշում է, որ, ի լրումն, գոյություն ուներ նաև համակարգ, որը հնարավորություն էր տալիս վերանայել գործը՝ օրենքի հարցերին և ընթացակարգին վերաբերող դատական սխալի հիմքով (հսկողության կարգով դատական վերանայում, քրեադատավարական օրենսգրքի 371-383-րդ հոդվածներ): Նման դատավարությունների առարկան մնում էին նույն քրեական մեղադրանքը և դրա վերաբերյալ նախորդ որոշման օրինականությունը: Եթե միջնորդությունը բավարարվեր, և դատավարությունը վերսկսվեր հետագա քննության համար, հսկողության կարգով դատական վերանայման վերջնական արդյունքը կլիներ դատարանների կողմից նախկինում ընդունված բոլոր որոշումների անվավեր ճանաչումը և նոր որոշմամբ քրեական մեղադրանքի սահմանումը: Այդքանով,

հսկողության կարգով դատական վերանայման արդյունքը նույնն է, ինչ գործի վերանայման (վերաբացման*) դեպքում, որովհետև երկուսն էլ նախորդ դատավարության շարունակման ձև են: Հետևաբար, դատարանը եզրակացնում է, որ *ne bis in idem* սկզբունքի նկատառումներով, հսկողության կարգով դատական վերանայումը կարող է դիտվել որպես թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետի գործողության ոլորտին պատկանող վերանայման (վերաբացման) հատուկ տեսակ:

47. Դիմողի փաստարկը, որ հսկողության կարգով դատական վերանայումն անհրաժեշտ չէր և գործընթացի չարաշահում էր, նշանակություն չունի թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածին համապատասխանության հարցի տեսանկյունից. Ձևը, որով գործադրվել է իրավասությունը, վերաբերում է քրեական դատավարության ընդհանուր արդարացիությանը, սակայն չի կարող որոշիչ լինել պարզելիս՝ ընթացակարգը «վերանայ[ո՞ւմ]» (վերաբացում) է, թե՞ «երկրորդ անգամ դատ[վել]»: Հիմնվելով սույն գործի փաստերի վրա, գործընթացը, որն ուղղված էր հսկողության կարգով դատական վերանայման հասնելուն, փորձում էր վերանայել (վերաբացել) դատավարությունը, ոչ թե փորձում էր «երկրորդ անգամ դատ[ել]»:

48. Վերջապես, դատարանը նշում է, որ սույն գործում չի վիճարկվում համապատասխանությունը թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված օրինականության պահանջին:

49. Դատարանը եզրակացնում է, որ դիմողը ենթակա չի եղել կրկին դատվելու կամ պատժվելու՝ կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, և, համապատասխանաբար, այդ դրույթի խախտում տեղի չի ունեցել:

Սա կարևոր վճիռ է, որն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում այն մասին, թե ինչպես է դատարանը մեկնաբանում 4-րդ հոդվածի 2-րդ կետը: Ի՞նչ եք կարծում, արդյոք դատարանը չափազանց շռա՞յլ է գտնվել Ռուսաստանի նկատմամբ՝ հսկողության կարգով դատական վերանայման գործընթացը դասակարգելով որպես վերաբացում, որը պատկանում է 4-րդ հոդվածի 2-րդ կետին:

* Անգլերեն տեքստում օգտագործված է «reopening» բառը, որը թիվ 7 արձանագրության հայերեն տարբերակում թարգմանված է որպես «վերանայում»- *ծան. թարգմ.*:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ ՓՈՓՈԽՎԱԾ ԹԻՎ 11 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ԹԻՎ 1, 4, 6, 7, 12 ԵՎ 13 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Կոնվենցիայի տեքստը փոփոխված է 1970թ. սեպտեմբերի 21-ին ուժի մեջ մտած թիվ 3 արձանագրությամբ, 1971թ. դեկտեմբերի 20-ին ուժի մեջ մտած թիվ 5 արձանագրությամբ և 1990թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտած թիվ 8 արձանագրությամբ, որն ընդգրկում է նաև թիվ 2 արձանագրության տեքստը, որը 1970թ. սեպտեմբերի 21-ին ուժի մեջ մտնելուց ի վեր իր հոդված 5-ի կետ 3-ի համաձայն Կոնվենցիայի բաղկացուցիչ մասն է: Բոլոր դրույթները, որոնք լրացվել կամ փոփոխվել են նշված արձանագրություններով, փոխարինված են 1998 թ. նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտած թիվ 11 արձանագրությամբ: Վերջինիս ուժի մեջ մտնելուց ի վեր դադարում են գործել 1994 թ. հոկտեմբերի 1-ին ուժի մեջ մտած թիվ 9 արձանագրությունը, և թիվ 10 արձանագրությունը կորցնում է իր նպատակը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի քարտուղարություն
Սեպտեմբեր 2003

ԿՈՆՎԵՆՑԻԱ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հռոմ, 1950 թ. նոյեմբերի 4

Սույն արձանագրությունը ստորագրած կառավարությունները, լինելով Եվրոպայի խորհրդի անդամներ,

նկատի ունենալով 1948 թվականի դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հռչակած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը,

նկատի ունենալով, որ սույն Հռչակագիրը նպատակ ունի ապահովելու այնտեղ հռչակված իրավունքների համընդհանուր և արդյունավետ ճանաչումն ու պահպանումը,

նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավել միասնություն ձեռք բերելն է, և որ այդ նպատակին հասնելու միջոցներից մեկը մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պահպանումը և հետագա իրականացումն է,

կրկին հավաստելով իրենց խորին հավատը այդ հիմնարար ազատությունների նկատմամբ, որոնք արդարության ու խաղաղության հիմքն են աշխարհում, և որոնց լիարժեք պահպանումը կախված է, մի կողմից, քաղաքական արդյունավետ ժողովրդավարությունից և, մյուս կողմից, դրանց հիմնաքար հանդիսացող մարդու իրավունքների ընդհանուր ըմբռնումից ու պահպանումից,

համակված վճռականությամբ՝ որպես միասնական հայացքներ և քաղաքական ավանդույթների, իդեալների, ազատության և իրավական պետության ընդհանուր ժառանգություն ունեցող եվրոպական երկրների կառավարություններ՝ առաջին քայլերն անել Համընդհանուր հռչակագրում ամրագրված որոշ իրավունքների հավաքական իրականացման ճանապարհին,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1. Մարդու իրավունքները հարգելու պարտականությունը

Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի Բաժին I-ում:

ԲԱԺԻՆ I. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 2. Կյանքի իրավունք

1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը:

2. Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝

ա) ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,

բ) օրինական ձերբակալում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,

գ) խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար:

Հոդված 3. Խոշտանգումների արգելում

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Հոդված 4. Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում:

2. Ոչ ոք չպետք է պարտադրվի կատարելու պարտադիր կամ հարկադիր աշխատանք:

3. Սույն հոդվածի նպատակների համար «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում՝

ա) ցանկացած աշխատանք, որը սովորաբար պահանջվում է կատարել սույն Կոնվենցիայի Հոդված 5-ի դրույթների համաձայն կալանքի տակ գտնվելու կամ նման կալանքից պայմանականորեն ազատված լինելու ընթացքում,

բ) զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզմունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը,

գ) ցանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ բարեկեցությանն սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում,

դ) սովորական քաղաքացիական պարտականությունների մաս կազմող ցանկացած աշխատանք կամ ծառայություն:

Հոդված 5. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

ա) անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,

բ) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ

դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

դ) անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,

ե) անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

զ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն, և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:

Հոդված 6. Արդար դատաքննության իրավունք

1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ դրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կվնասեր արդարադատության շահերը:

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ) բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ) պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե) օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

Հոդված 7. Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա

1. Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին:

2. Սույն հոդվածը չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալ և պատժել որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան, համարվել է քրեական հանցագործություն:

Հոդված 8. Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 9. Մտքի, խղճի և կրոնի ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:

2. Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների:

Հոդված 10. Արտահայտվելու ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Հոդված 11. Հավաքների և միավորման ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ:

Հոդված 12. Ամուսնության իրավունք

Ամուսնական տարիքի հասած տղամարդիկ ու կանայք ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք՝ այդ իրավունքի իրականացումը կարգավորող ներպետական օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 13. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք

Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Հոդված 14. Խտրականության արգելում

Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

Հոդված 15. Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում

1. Պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ձեռնարկել միջոցառումներ՝ ի շեղումն սույն Կոնվենցիայով ամրագրված իր պարտավորությունների՝ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ:

2. Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու Հոդված 2-ից՝ բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ, կամ Հոդված 3-ի, Հոդված 4-ի կետ 1-ի և Հոդված 7-ի դրույթներից:

3. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, օգտագործելով շեղվելու այդ իրավունքը, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ամբողջությամբ իրազեկում է իր կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը ծանուցվում է նաև այդ միջոցառումների գործողությունը դադարեցնելու և Կոնվենցիայի դրույթների լիակատար իրագործումը վերսկսելու մասին:

Հոդված 16. Օտարերկրացիների քաղաքական գործունեության սահմանափակում

Հոդվածներ 10-ում, 11-ում և 14-ում ոչինչ չի կարող խոչընդոտել Բարձր պայմանավորվող կողմերին՝ սահմանափակումներ նախատեսելու օտարերկրացիների քաղաքական գործունեության համար:

Հոդված 17. Իրավունքների չարաշահման արգելում

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունեն զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է

սույն Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով:

Հոդված 18. Իրավունքների նկատմամբ սահմանափակումների կիրառման սահմանները

Նշված իրավունքների և ազատությունների՝ սույն Կոնվենցիայով թույլատրվող սահմանափակումները չեն կիրառվում որևէ այլ նպատակով, բացի այն, որի համար դրանք նախատեսվել են:

ԲԱԺԻՆ II . ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Հոդված 19. Դատարանի հիմնումը

Սույն Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով Բարձր պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար հիմնվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարան (այսուհետև՝ Դատարան): Այն գործում է մշտական հիմունքով:

Հոդված 20. Դատավորների թիվը

Դատարանի դատավորների թիվը հավասար է Բարձր պայմանավորվող կողմերի թվին:

Հոդված 21. Դատավորներին ներկայացվող պահանջները

1. Դատավորները պետք է ունենան բարոյական բարձր նկարագիր և բավարարեն դատական բարձր պաշտոններում նշանակվելիս ներկայացվող պահանջները կամ լինեն ճանաչված իրազեկ իրավագետներ:

2. Դատավորները Դատարանի աշխատանքին մասնակցում են անձամբ:

3. Պաշտոնավարության ժամկետի ընթացքում դատավորները չպետք է իրականացնեն որևէ գործունեություն, որն անհամատեղելի է նրանց անկախության, անաչառության կամ նրանց աշխատանքի մշտական բնույթից բխող պահանջների հետ. սույն կետի դրույթների կիրառման առնչությամբ ծագող հարցերը լուծում է Դատարանը:

Հոդված 22. Դատավորների ընտրությունները

1. Խորհրդարանական վեհաժողովն ընտրում է յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմի դատավորին Բարձր պայմանավորվող կողմի առաջադրած երեք թեկնածուների ցուցակից՝ քվեների մեծամասնությամբ:

2. Նույն ընթացակարգը կիրառվում է նոր Բարձր պայմանավորվող կողմի միանալու դեպքում Դատարանի կազմը, ինչպես և առաջացող թափուր տեղերը համալրելիս:

Հոդված 23. Պաշտոնավարության ժամկետը

1. Դատավորներն ընտրվում են վեց տարի ժամկետով: Նրանք կարող են վերընտրվել: Սակայն առաջին ընտրության ժամանակ ընտրված դատավորների կեսի պաշտոնավարության ժամկետը երեք տարի է:

2. Դատավորները, որոնց պաշտոնավարության ժամկետը պետք է լրանա առաջին երեք տարվա ավարտին, որոշվում են իրենց ընտրվելուց անմիջապես հետո՝ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից անցկացվող վիճակահանությամբ:

3. Յուրաքանչյուր երեք տարին մեկ Դատարանի կազմի, ըստ հնարավորին, կիսով չափ նորացումն ապահովելու նպատակով Խորհրդարանական վեհաժողովը կարող է մինչև ցանկացած հաջորդ ընտրություններն անցկացնելը որոշում ընդունել, որ մեկ կամ մի քանի ընտրվող դատավորների պաշտոնավարության ժամկետը կամ ժամկետները լինեն այլ, քան վեց տարին է, բայց ամեն դեպքում ոչ ավելի, քան ինը և ոչ պակաս, քան երեք տարի:

4. Այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է պաշտոնավարության մեկից ավելի ժամկետի, և Խորհրդարանական վեհաժողովը կիրառում է նախորդ կետի դրույթները, պաշտոնավարության ժամկետը որոշում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը՝ ընտրություններից անմիջապես հետո անցկացվող վիճակահանությամբ:

5. Այն դատավորը, որն ընտրվել է պաշտոնավարության ժամկետը դեռևս չլրացած դատավորին փոխարինելու համար, այդ պաշտոնն զբաղեցնում է նախորդ դատավորի լիազորությունների ժամկետից մնացած ժամանակահատվածում:

6. Դատավորների պաշտոնավարության ժամկետն ավարտվում է, երբ լրանում է նրանց 70 տարին:

7. Դատավորները պաշտոնավարում են մինչև փոխարինվելը: Նրանք, սակայն, փոխարինվելուց հետո շարունակում են քննել իրենց կողմից արդեն քննության առնված գործերը:

Հոդված 24. Պաշտոնից հեռացնելը

Դատավորը պաշտոնից կարող է հեռացվել միայն այն դեպքում, եթե մյուս դատավորները քվեների երկու երրորդի մեծամասնությամբ որոշում են ընդունում այն մասին, որ նա այլևս չի համապատասխանում ներկայացվող պահանջներին:

Հոդված 25. Քարտուղարությունը և իրավական հարցերով քարտուղարները

Դատարանն ունի Քարտուղարություն, որի գործառույթներն ու կազմակերպումը սահմանվում են Դատարանի ընթացակարգի կանոններով: Դատարանն օգտվում է իրավական հարցերով քարտուղարների ծառայություններից:

Հոդված 26. Դատարանի լիագումար նիստերը

Լիագումար նիստերում Դատարանը՝

ա) ընտրում է իր Նախագահին և Նախագահի մեկ կամ երկու տեղակալի՝ երեք տարի ժամկետով. նրանք կարող են վերընտրվել,

բ) ձևավորում է Պալատներ, որոնք ստեղծվում են որոշակի ժամկետով,

գ) ընտրում է Դատարանի պալատների նախագահներ. նրանք կարող են վերընտրվել,

դ) ընդունում է Դատարանի ընթացակարգի կանոնները,

ե) ընտրում է Քարտուղար և Քարտուղարի մեկ կամ մի քանի տեղակալ:

Հոդված 27. Կոմիտեները, Պալատները և Մեծ պալատը

1. Իրեն հանձնված գործերը քննելու համար Դատարանը նիստեր գումարում է երեք դատավորից կազմված կոմիտեներում, յոթ դատավորից կազմված Պալատներում և տասնյոթ դատավորից կազմված Մեծ պալատում: Դատարանի Պալատները որոշակի ժամկետով կազմում են կոմիտեներ:

2. Շահագրգիռ մասնակից պետությունից ընտրված դատավորը Պալատի և Մեծ պալատի ex officio անդամ է. նման դատավորի բացակայության դեպքում, կամ եթե նա չի կարող մասնակցել նիստին, այդ պետությունը նշանակում է որևէ այլ անձի, որը հանդես է գալիս որպես դատավոր:

3. Մեծ պալատի կազմի մեջ մտնում են նաև Դատարանի նախագահը, Դատարանի նախագահի տեղակալները, Պալատների նախագահները և Դատարանի այլ դատավորները, որոնք ընտրվում են Դատարանի ընթացակարգի կանոններին համապատասխան: Երբ գործը, Հոդված 43-ի դրույթներին համապատասխան, հանձնվում է Մեծ պալատ, որևէ դատավոր, որն ընդգրկված է եղել որոշում կայացրած Պալատում, չի կարող մասնակցել Մեծ պալատի նիստերին՝ բացառությամբ վերոնշյալ Պալատի նախագահի և շահագրգիռ մասնակից կողմի դատավորի:

Հոդված 28. Կոմիտեների հայտարարությունները գանգատի անընդունելիության մասին

Կոմիտեն միաձայն որոշմամբ կարող է անընդունելի հայտարարել Հոդված 34-ին համապատասխան ներկայացված անհատական գանգատը կամ այն հանել քննության ենթակա գործերի ցուցակից, եթե նման որոշում կարող է ընդունվել առանց գանգատի լրացուցիչ ուսումնասիրման: Այդ որոշումը վերջնական է:

Հոդված 29. Պալատների որոշումները գանգատի ընդունելիության մասին և ըստ էության

1. Եթե Հոդված 28-ին համապատասխան որոշում չի ընդունվում, Պալատը որոշում է կայացնում Հոդված 34-ին համապատասխան ներկայացված անհատական գանգատի ընդունելիության մասին և ըստ էության:

2. Պալատը որոշում է կայացնում Հոդված 33-ին համապատասխան պետության ներկայացրած գանգատի ընդունելիության մասին և ըստ էության:

3. Գանգատի ընդունելիության մասին որոշումը կայացվում է առանձին, եթե դատարանը բացառության կարգով հակառակը չի որոշում:

Հոդված 30. Ընդդատության զիջումը Մեծ պալատին

Եթե Պալատի քննության ներքո գտնվող գործը հանգեցնում է Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն առնչվող լուրջ հարցի, կամ եթե Պալատի քննության ներքո գտնվող հարցի լուծումը կարող է հակասել Դատարանի ավելի վաղ կայացրած որոշմանը, Պալատը կարող է, մինչև որոշումը կայացնելը, ցանկացած ժամանակ ընդդատությունը զիջել Մեծ պալատին, եթե կողմերից ոչ մեկը չի առարկում:

Հոդված 31. Մեծ պալատի լիազորությունները

Մեծ պալատը՝

ա) քննության է առնում Հոդվածներ 33-ին կամ 34-ին համապատասխան ներկայացված գանգատները, եթե Պալատը Հոդված 30-ի դրույթների հիման վրա զիջել է ընդդատությունը, կամ եթե գործը նրան է հանձնվել Հոդված 43-ի դրույթներին համապատասխան,

բ) քննության է առնում խորհրդատվական եզրակացություններ տալու մասին Հոդված 47-ի դրույթներին համապատասխան ներկայացված խնդրանքները:

Հոդված 32. Դատարանի իրավազորությունը

1. Դատարանի իրավազորությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը, և որոնք իրեն հանձնվում են Հոդվածներ 33-ի, 34-ի և 47-ի դրույթներով նախատեսված դեպքերում:

2. Դատարանի իրավազորության շուրջ եղած վեճի դեպքում հարցը լուծում է Դատարանը:

Հոդված 33. Միջպետական գործեր

Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է Դատարան դիմել Կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների դրույթների ցանկացած ենթադրվող խախտման հարցով, որը թույլ է տվել մեկ այլ Բարձր պայմանավորվող կողմ:

Հոդված 34. Անհատական գանգատներ

Դատարանը կարող է գանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են սույն Կոնվենցիայով կամ դրան կից Արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման զոհ: Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչընդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացմանը:

Հոդված 35. Ընդունելիության պայմանները

1. Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, և վեց ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը:

2. Դատարանը քննության չի ընդունում Հոդված 34-ին համապատասխան ներկայացված ոչ մի անհատական գանգատ, եթե այն՝

   ա) անանուն է կամ,

   բ) ըստ էության այն նույն հարցն է, որը Դատարանն արդեն քննել է կամ որն արդեն հանձնվել է միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի և չի բովանդակում գործին առնչվող նոր տեղեկություններ:

3. Դատարանն անընդունելի է համարում Հոդված 34-ին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ այն անհամատեղելի է սույն Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների դրույթների հետ կամ ակնհայտորեն անհիմն է կամ հանդիսանում է գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում:

4. Դատարանը մերժում է իրեն հանձնված ցանկացած գանգատ, որն անընդունելի է համարում սույն հոդվածին համապատասխան: Դատարանը կարող է դա անել քննության ցանկացած փուլում:

Հոդված 36. Երրորդ կողմի մասնակցությունը

1. Պալատի կամ Մեծ պալատի կողմից քննության առնվող ցանկացած գործի կապակցությամբ յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ, որի քաղաքացին է դիմողը, իրավունք ունի ներկայացնելու գրավոր դիտողություններ և մասնակցելու լսումներին:

2. Ելնելով արդարադատությունը պատշաճ կերպով իրականացնելու շահերից՝ Դատարանի նախագահը կարող է ցանկացած Բարձր պայմանավորվող կողմի, որը գործի կողմ չէ, կամ ցանկացած շահագրգիռ անձի, որը դիմող չէ, հրավիրել՝ ներկայացնելու գրավոր դիտողություններ կամ մասնակցելու լսումներին:

Հոդված 37. Գանգատը ցուցակից հանելը

1. Դատարանը քննության ցանկացած փուլում կարող է որոշել գանգատը հանել գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այն եզրակացության, թե՝

   ա) դիմողը մտադիր չէ հետամուտ լինել իր գանգատին,

   բ) վեճն արդեն կարգավորվել է,

   գ) Դատարանի կողմից հիմք ընդունված որևէ այլ պատճառով գանգատի քննությունը շարունակելն արդարացված չէ:

Այդուհանդերձ, Դատարանը շարունակում է գանգատի քննությունը, եթե դա է պահանջում սույն Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով սահմանված իրավունքների հարգումը:

2. Դատարանը կարող է որոշել գանգատը վերստին ընդգրկել գործերի ցուցակում, եթե գտնում է, որ հանգամանքներն արդարացնում են դա:

Հոդված 38. Գործի քննությունը և բարեկամական կարգավորման ընթացակարգը

1. Եթե Դատարանը գանգատը հայտարարում է ընդունելի, այն՝

   ա) նախաձեռնում է գործի քննությունը կողմերի կամ նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ և, եթե անհրաժեշտ է, իրականացնում է հետաքննություն, որի արդյունավետ իրականացման համար գործին առնչվող պետությունները ապահովում են անհրաժեշտ բոլոր պայմանները,

բ) իր ծառայությունն է տրամադրում գործին առնչվող կողմերին՝ սույն Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով սահմանված իրավունքների պահպանման հիման վրա հարցի բարեկամական կարգավորումն ապահովելու նպատակով:

2) կետ 1-ի «բ» ենթակետին համապատասխան իրականացվող քննությունը խորհրդապահական է:

Հոդված 39. Բարեկամական կարգավորում ձեռք բերելը

Բարեկամական կարգավորման դեպքում Դատարանը գործը հանում է իր ցուցակից՝ կայացնելով որոշում, որում տրվում է փաստերի և ձեռք բերված լուծման հակիրճ շարադրանքը:

Հոդված 40. Դռնբաց լսումները և փաստաթղթերի մատչելիությունը

1. Լսումները դռնբաց են, եթե Դատարանը բացառիկ հանգամանքներում այլ որոշում չի ընդունում:

2. Քարտուղարությանն ի պահ հանձնված փաստաթղթերը մատչելի են հանրությանը, եթե Դատարանի նախագահը այլ որոշում չի ընդունում:

Հոդված 41. Արդարացի բավարարումը

Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:

Հոդված 42. Պալատների վճիռները

Պալատների վճիռները վերջնական են դառնում Հոդված 44-ի կետ 2-ի դրույթներին համապատասխան:

Հոդված 43. Գործի հանձնումը Մեծ պալատին

1. Պալատի՝ վճիռ կայացնելու օրվանից հետո երեք ամսվա ընթացքում գործի ցանկացած կողմ բացառիկ դեպքերում կարող է պահանջել, որ գործը հանձնվի Մեծ պալատին:

2. Մեծ պալատի հինգ դատավորից բաղկացած հանձնախումբն ընդունում է պահանջը, եթե գործն արծարծում է այնպիսի լուրջ հարց, որը վերաբերում է Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների մեկնաբանմանը կամ կիրառմանը կամ ընդհանուր կարևորության այլ լուրջ հարցի:

3. Եթե հանձնախումբն ընդունում է պահանջը, ապա Մեծ պալատը գործը լուծում է՝ վճիռ կայացնելով:

Հոդված 44. Վերջնական վճիռները

1. Մեծ պալատի վճիռը վերջնական է:

2. Պալատի վճիռը դառնում է վերջնական, եթե՝

ա) կողմերը հայտարարում են, որ չեն պահանջի գործի հանձնում Մեծ պալատին, կամ

բ) վճռի կայացումից հետո երեք ամսվա ընթացքում չի պահանջվում գործի հանձնում Մեծ պալատին, կամ

գ) Մեծ պալատի հանձնախումբը, Հոդված 43-ին համապատասխան, մերժում է գործը հանձնելու պահանջը:

3. Վերջնական վճիռը ենթակա է հրապարակման:

Հոդված 45. Վճիռների և որոշումների պատճառաբանումը

1. Ինչպես վճիռները, այնպես էլ գանգատների ընդունելիության կամ անընդունելիության մասին որոշումները պետք է լինեն պատճառաբանված:

2. Եթե վճիռը ամբողջությամբ կամ մասամբ չի արտահայտում դատավորների միաձայն կարծիքը, ապա ցանկացած դատավոր իրավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք:

Հոդված 46. Վճիռների պարտադիր ուժն ու կատարումը

1. Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են:

2. Դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտե, որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ:

Հոդված 47. Խորհրդատվական եզրակացությունները

1. Նախարարների կոմիտեի խնդրանքով Դատարանը կարող է խորհրդատվական եզրակացություններ տալ Կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների մեկնաբանմանը վերաբերող իրավական հարցերի առնչությամբ:

2. Նման եզրակացությունները չպետք է շոշափեն այն հարցերը, որոնք վերաբերում են Կոնվենցիայի Բաժին I-ում և դրան կից Արձանագրություններում սահմանված իրավունքների կամ ազատությունների բովանդակությանը կամ ընդգրկմանը, կամ՝ ցանկացած այլ հարց, որը Դատարանը կամ Նախարարների կոմիտեն կարող էին քննարկել ցանկացած այնպիսի լսումների արդյունքում, որոնք կարող էին տեղի ունենալ Կոնվենցիային համապատասխան:

3. Դատարանի խորհրդատվական եզրակացություն խնդրելու մասին Նախարարների կոմիտեի որոշումն ընդունվում է կոմիտեի նիստերին մասնակցելու իրավունք ունեցող ներկայացուցիչների քվեների մեծամասնությամբ:

Հոդված 48. Դատարանի խորհրդատվական իրավազորությունը

Դատարանը որոշում է, թե արդյոք խորհրդատվական եզրակացության համար Նախարարների կոմիտեի ներկայացրած խնդրանքը Հոդված 47-ով սահմանված իր իրավասության շրջանակում է:

Հոդված 49. Խորհրդատվական եզրակացությունների պատճառաբանությունը

1. Դատարանի խորհրդատվական եզրակացությունները պետք է լինեն պատճառաբանված:

2. Եթե խորհրդատվական եզրակացությունն ամբողջությամբ կամ մասամբ չի արտահայտում դատավորների միաձայն կարծիքը, ապա ցանկացած դատավոր իրավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք:

3. Դատարանի խորհրդատվական եզրակացությունն ուղարկվում է Նախարարների կոմիտե:

Հոդված 50. Դատարանի պահպանման ծախսերը

Դատարանի գործունեության հետ կապված ծախսերը կրում է Եվրոպայի խորհուրդը:

Հոդված 51. Դատավորների արտոնություններն ու անձեռնմխելիությունը

Դատավորներն իրենց գործառույթները կատարելու ընթացքում օգտվում են Եվրոպայի խորհրդի Կանոնադրության Հոդված 40-ով և դրա հիման վրա կնքված համաձայնագրերով նախատեսված արտոնություններից ու անձեռնմխելիությունից:

ԲԱԺԻՆ III. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 52. Գլխավոր քարտուղարի պահանջները

Յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ, ի պատասխան Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի պահանջի, ներկայացնում է պարզաբանումներ այն կարգի վերաբերյալ, որով իր ներպետական իրավունքն ապահովում է Կոնվենցիայի ցանկացած դրույթի արդյունավետ իրականացումը:

Հոդված 53. Մարդու առկա իրավունքների երաշխավորումը

Սույն Կոնվենցիայում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես մարդու այն իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակում կամ շեղում, որոնք կարող են երաշխավորվել ցանկացած Բարձր պայմանավորվող կողմի օրենսդրությամբ կամ նրա մասնակցությամբ որևէ այլ համաձայնագրով:

Հոդված 54. Նախարարների կոմիտեի լիազորությունները

Սույն Կոնվենցիայում ոչինչ ի վնաս չէ Նախարարների կոմիտեի լիազորություններին, որոնք նրան վերապահված են Եվրոպայի խորհրդի Կանոնադրությամբ:

Հոդված 55. Վեճերի կարգավորման այլ միջոցներից հրաժարվելը

Բարձր պայմանավորվող կողմերը համաձայնում են, որ, բացառությամբ հատուկ համաձայնագրի, իրենք չեն օգտվի իրենց միջև գործող պայմանագրերից, կոնվենցիաներից կամ հռչակագրերից՝ սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման առնչությամբ ծագած վեճը գանգատի միջոցով կարգավորման այլ միջոցների ներկայացնելու նպատակով, քան նրանք, որոնք նախատեսված են սույն Կոնվենցիայով:

Հոդված 56. Տարածքային կիրառումը

1. Ցանկացած պետություն վավերացնելիս կամ հետագայում ցանկացած ժամանակ կարող է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով հայտարարել, որ սույն Կոնվենցիան, սույն հոդվածի կետ 4-ի համաձայն, տարածվում է այն բոլոր տարածքների կամ դրանցից ցանկացածի վրա, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է:

2. Կոնվենցիայի գործողությունը ծանուցագրի մեջ նշված տարածքի կամ տարածքների վրա տարածվում է այդ ծանուցագիրը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի ստանալուց հետո 30-րդ օրվանից:

3. Սույն Կոնվենցիայի դրույթները հիշյալ տարածքներում կիրառվում են՝ պատշաճորեն հաշվի առնելով տեղական պահանջները:

4. Ցանկացած պետություն, որը սույն հոդվածի կետ 1-ին համապատասխան հայտարարություն է արել, հետագայում ցանկացած ժամանակ կարող է մեկ կամ մի քանի տարածքների կողմից, որոնց վերաբերում է այդ հայտարարությունը, հայտարարել, որ ինքը ճանաչում է անհատներից, ոչ կառավարական կազմակերպություններից կամ անհատների խմբերից գանգատներ ստանալու Դատարանի իրավասությունը, ինչպես դա նախատեսված է Կոնվենցիայի Հոդված 34-ով:

Հոդված 57. Վերապահումները

1. Ցանկացած պետություն սույն Կոնվենցիան ստորագրելիս կամ վավերագիրն ի պահ հանձնելիս կարող է վերապահում անել Կոնվենցիայի ցանկացած դրույթի վերաբերյալ՝ այն առումով, որ այդ ժամանակ իր տարածքում գործող այս կամ այն օրենքը չի համապատասխանում այդ դրույթին: Սույն հոդվածը ընդհանուր բնույթի վերապահումներ չի թույլատրում:

2. Սույն հոդվածի դրույթներին համապատասխան կատարված ցանկացած վերապահում պետք է բովանդակի համապատասխան օրենքի հակիրճ շարադրանքը:

Հոդված 58. Չեղյալ հայտարարումը

1. Բարձր պայմանավորվող կողմը կարող է սույն Կոնվենցիան չեղյալ հայտարարել Կոնվենցիային մասնակից դառնալու պահից սկսած հինգ տարի անց միայն և Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցում ուղարկելու պահից սկսած վեց ամիսը լրանալուց հետո. Գլխավոր քարտուղարն այդ մասին իրազեկ է պահում մյուս Բարձր պայմանավորվող կողմերին:

2. Չեղյալ հայտարարելը համապատասխան Բարձր պայմանավորվող կողմին չի ազատում սույն Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորություններից ցանկացած գործողության կապակցությամբ, որը կարող էր այդ պարտավորությունների խախտում լինել և նրա կողմից կատարվել մինչև չեղյալ հայտարարման ուժի մեջ մտնելու ժամկետը:

3. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, որը դադարում է Եվրոպայի խորհրդի անդամ լինելուց, նույն պայմաններով դադարում է սույն Կոնվենցիային մասնակից լինելուց:

4. Կոնվենցիան կարող է, նախորդ կետերի դրույթներին համապատասխան, չեղյալ հայտարարվել ցանկացած տարածքի նկատմամբ, որի վրա տարածվում է նրա գործողությունը Հոդված 56-ի դրույթների համաձայն:

Հոդված 59. Ստորագրումը և վավերացումը

1. Սույն Կոնվենցիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում տասներորդ վավերագիրն ի պահ հանձնելուց հետո:

3. Կոնվենցիան ստորագրած այն պետությունների համար, որոնք Կոնվենցիան վավերացնելու են հետագայում, վերջինս ուժի մեջ է մտնում նրանց վավերագրերն ի պահ հանձնելու ամսաթվից:

4. Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններին ծանուցում է Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու, այն վավերացրած Բարձր պայմանավորվող կողմերի և բոլոր այն վավերագրերը ի պահ հանձնվելու մասին, որոնք կարող են ստացվել հետագայում:

Կատարված է Հռոմում 1950 թվականի նոյեմբերի 4-ին՝ մեկ օրինակով, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք պահվում են Եվրոպայի խորհրդի արխիվում: Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Կոնվենցիան ստորագրած բոլոր պետություններին:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ

Փարիզ, 1952 թ. մարտի 20-ը

Սույն արձանագրությունը ստորագրած կառավարությունները, լինելով Եվրոպայի խորհրդի անդամներ,

համակված վճռականությամբ՝ ձեռնարկելու որոշ այնպիսի իրավունքների և ազատությունների կոլեկտիվ իրականացումն ապահովող քայլեր, որոնք այլ են, քան 1950թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) Բաժին I-ում ընդգրկվածները,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1. Սեփականության պաշտպանություն

Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իր գույքից անարգել օգտվելու իրավունք ունի: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփական գույքից՝ բացառությամբ հանրային շահերի պաշտպանության համար և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններով:

Վերոնշյալ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության իրավունքը կիրառել այնպիսի օրենքներ, որոնք այն անհրաժեշտ է համարում սեփականության՝ ընդհանուր շահերին համապատասխան օգտագործման վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

Հոդված 2. Կրթության իրավունք

Ոչ մեկին չի կարելի մերժել կրթության իրավունքը: Պետությունը կրթության և ուսուցման բնագավառում իր ստանձնած ցանկացած գործառույթ իրականացնելիս հարգում է ծնողների՝ զավակների համար իրենց կրոնական ու փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքը:

Հոդված 3. Ազատ ընտրությունների իրավունք

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս:

Հոդված 4. Տարածքային կիրառումը

Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ստորագրելիս կամ վավերացնելիս կամ դրանից հետո ցանկացած ժամանակ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հղել հայտարարություն՝ նշելով այն շրջանակները, որի սահմաններում այն պարտավորվում է կիրառել սույն Արձանագրության դրույթները այն տարածքների նկատմամբ, որոնց միջազգային հարաբերությունների համար պատասխանատու է:

Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, որը նախորդ կետին համապատասխան հայտարարություն է հղել, կարող է ժամանակ առ ժամանակ հետագա հայտարարություններ հղել ցանկացած նախորդ հայտարարության պայմանների փոփոխման կամ ցանկացած տարածքի նկատմամբ սույն Արձանագրության դրույթների կիրառման դադարեցման մասին:

Սույն հոդվածին համապատասխան արված հայտարարությունը դիտվում է որպես Կոնվենցիայի Հոդված 56-ի կետ 1-ին համապատասխան արված հայտարարություն:

Հոդված 5. Հարաբերությունը Կոնվենցիային

Բարձր պայմանավորվող կողմերի հարաբերություններում սույն Արձանագրության Հոդվածներ 1-ի, 2-ի, 3-ի և 4-ի դրույթները դիտվում են որպես Կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ, և Կոնվենցիայի բոլոր դրույթները կիրառվում են համապատասխանաբար:

Հոդված 6. Ստորագրումը և վավերացումը

Սույն Արձանագրությունը բաց է Եվրոպայի խորհրդի այն անդամների ստորագրման համար, որոնք ստորագրել են Կոնվենցիան. այն ենթակա է վավերացման Կոնվենցիայի վավերացման հետ միաժամանակ կամ այն վավերացնելուց հետո: Արձանագրությունն ուժի մեջ է մտնում տասներորդ վավերագիրն ի պահ հանձնելուց հետո: Հետագայում վավերացնող ցանկացած ստորագրող պետության համար Արձանագրությունն ուժի մեջ է մտնում նրա վավերագիրն ի պահ հանձնելու պահից:

Վավերագրերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին, որը վավերացումների մասին ծանուցում է բոլոր անդամ պետություններին:

Կատարված է Փարիզում 1952 թվականի մարտի 20-ին՝ մեկ օրինակով, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք պահվում են Եվրոպայի խորհրդի արխիվում: Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր կառավարության:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՈՐՈՇ ԱՅՆՊԻՍԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ԱՅԼ ԵՆ, ՔԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՎ ՆՐԱՆ ԿԻՑ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՐԴԵՆ ԸՆԴԳՐԿՎԱԾՆԵՐԸ

Ստրասբուրգ, 1963 թ. սեպտեմբերի 16-ը

Սույն արձանագրությունը ստորագրած կառավարությունները, լինելով Եվրոպայի խորհրդի անդամներ,

համակված վճռականությամբ՝ ձեռնարկելու որոշ այնպիսի իրավունքների և ազատությունների կոլեկտիվ իրականացումն ապահովող քայլեր, որոնք այլ են, քան 1950 թվականի նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) Բաժին I-ում և դրան կից՝ 1952 թ. մարտի 20-ին Փարիզում ստորագրված Թիվ 1 արձանագրության Հոդվածներ 1-3-ում արդեն ընգրկվածները,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1. Պարտքի համար ազատազրկման արգելումը

Ոչ մեկին չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ նա ի վիճակի չէ կատարելու պայմանագրային որևէ պարտավորություն:

Հոդված 2. Տեղաշարժի ազատությունը

1. Որևէ պետության տարածքում օրինական կարգով գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու և ազատորեն բնակության վայր ընտրելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած երկրից, ներառյալ իր սեփական երկիրը, հեռանալու իրավունք:

3. Այդ իրավունքների իրականացման նկատմամբ չպետք է կիրառվի որևէ սահմանափակում, բացառությամբ այն սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության ապահովության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Կետ 1-ում շարադրված իրավունքները ևս կարող են որոշ ոլորտներում ենթարկվել սահմանափակումների, որոնք կիրառվում են օրենքին համապատասխան և արդարացվում են ժողովրդավարական հասարակության հանրային շահերով:

Հոդված 3. Քաղաքացիների արտաքսման արգելումը

1. Ոչ մեկին չի կարելի անհատապես կամ կոլեկտիվ կերպով արտաքսել այն պետության տարածքից, որի քաղաքացին է նա:

2. Ոչ մեկին չի կարելի զրկել այն պետության տարածք մուտք գործելու իրավունքից, որի քաղաքացին է նա:

Հոդված 4. Օտարերկրացիների կոլեկտիվ արտաքսման արգելումը

Օտարերկրացիների կոլեկտիվ արտաքսումն արգելվում է:

Հոդված 5. Տարածքային կիրառումը

1. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է սույն Արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացնելիս կամ դրանից հետո ցանկացած ժամանակ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հղել հայտարարություն՝ նշելով այն շրջանակները, որի սահմաններում այն պարտավորվում է կիրառել սույն Արձանագրության դրույթները այն տարածքների նկատմամբ, որոնց միջազգային հարաբերությունների համար պատասխանատու է:

2. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, որը նախորդ կետին համապատասխան հայտարարություն է հղել, կարող է ժամանակ առ ժամանակ հետագա հայտարարություններ հղել ցանկացած նախորդ հայտարարության պայմանների փոփոխման կամ ցանկացած տարածքի նկատմամբ սույն Արձանագրության դրույթների կիրառման դադարեցման մասին:

3. Սույն հոդվածին համապատասխան արված հայտարարությունը դիտվում է որպես Կոնվենցիայի Հոդված 56-ի Կետ 1-ին համապատասխան արված հայտարարություն:

4. Ցանկացած պետության տարածք, որի նկատմամբ սույն Արձանագրությունը կիրառվում է այդ պետության կողմից այն վավերացվելու կամ ընդունվելու ուժով, և ցանկացած տարածք, որի նկատմամբ սույն Արձանագրությունը կիրառվում է սույն հոդվածին համապատասխան այդ պետության հայտարարության ուժով, Հոդվածներ 2-ի և 3-ի նպատակների համար համարվում է ինքնուրույն տարածք:

5. Յուրաքանչյուր պետություն, որը սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կետերի համաձայն հայտարարություն է արել, դրանից հետո ցանկացած ժամանակ կարող է մեկ կամ մի քանի տարածքների կողմից, որոնց վերաբերում է հայտարարությունը, հայտարարել, որ այն ընդունում է Դատարանի՝ անհատներից, ոչ կառավարական կազմակերպություններից կամ անհատների խմբերից սույն Արձանագրության Հոդվածներ 1-4-ից բոլորի կամ ցանկացածի կապակցությամբ Կոնվենցիայի Հոդված 34-ով նախատեսված գանգատներ ստանալու իրավասությունը:

Հոդված 6. Հարաբերությունը Կոնվենցիային

Բարձր պայմանավորվող կողմերի հարաբերություններում սույն Արձանագրության Հոդվածներ 1-5-ի դրույթները դիտվում են որպես Կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ, և Կոնվենցիայի բոլոր դրույթները կիրառվում են համապատասխանաբար:

Հոդված 7. Ստորագրումը և վավերացումը

1. Սույն Արձանագրությունը բաց է Եվրոպայի խորհրդի այն անդամների ստորագրման համար, որոնք ստորագրել են Կոնվենցիան. այն ենթակա է վավերացման Կոնվենցիայի վավերացման հետ միաժամանակ կամ այն վավերացնելուց հետո: Արձանագրությունն ուժի մեջ է մտնում հինգերորդ վավերագիրն ի պահ հանձնելուց հետո: Հետագայում վավերացնող ցանկացած ստորագրող պետության համար Արձանագրությունն ուժի մեջ է մտնում դրա վավերագիրն ի պահ հանձնելու պահից:

2. Վավերագրերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին, որը վավերացումների մասին ծանուցում է բոլոր անդամ պետություններին:

   Ի հավաստումն որի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալներն ստորագրեցին սույն Արձանագրությունը:

   Կատարված է Ստրասբուրգում 1963 թվականի սեպտեմբերի 16-ին՝ մեկ օրինակով, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք պահվում են Եվրոպայի խորհրդի արխիվում: Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր պետության:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՍԱՀԱՊԱՏԺԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ստրասբուրգ, 1983 թ. ապրիլի 28-ը

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, որոնք ստորագրել են 1950 թվականի նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային (այսուհետև՝ Կոնվենցիա) կից սույն Արձանագրությունը,

նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի անդամ որոշ պետություններում տեղի ունեցած զարգացումն արտահայտում է մահապատիժը վերացնելու օգտին առկա ընդհանուր միտումը,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1. Մահապատժի վերացումը

Մահապատիժը վերացվում է: Ոչ մեկին չի կարելի մահապատժի դատապարտել կամ մահապատժի ենթարկել:

Հոդված 2. Մահապատիժը պատերազմի ժամանակ

Պետությունը կարող է իր օրենսդրության մեջ մահապատիժ նախատեսել պատերազմի ժամանակ կամ պատերազմի անխուսափելի սպառնալիքի դեպքում կատարված գործողությունների համար. նման պատիժը կիրառվում է միայն օրենքով սահմանված դեպքերում և դրա դրույթներին համապատասխան: Պետությունը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հաղորդում է այդ օրենսդրության համապատասխան դրույթները:

Հոդված 3. Շեղումների արգելումը

Սույն Արձանագրության դրույթներից շեղումներ չեն թույլատրվում Կոնվենցիայի Հոդված 15-ի հիման վրա:

Հոդված 4. Վերապահումների արգելումը

Սույն Արձանագրության դրույթների նկատմամբ վերապահումներ չեն թույլատրվում Կոնվենցիայի Հոդված 57-ի հիման վրա:

Հոդված 5. Տարածքային կիրառումը

1. Ցանկացած պետություն ստորագրելիս կամ վավերագիրը, ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Արձանագրությունը:

2. Ցանկացած պետություն կարող է ավելի ուշ՝ ցանկացած պահի, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հղած հայտարարությամբ սույն Արձանագրության կիրառումը տարածել հայտարարության մեջ նշված որևէ այլ տարածքի նկատմամբ: Այդ տարածքի նկատմամբ Արձանագրությունն ուժի մեջ է մտնում նման հայտարարությունը Գլխավոր քարտուղարի ստանալու ամսաթվին հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Նախորդ երկու կետերի հիման վրա արված ցանկացած հայտարարություն, որը վերաբերում է դրանում նշված այս կամ այն տարածքին, կարող է չեղյալ հայտարարվել Գլխավոր քարտուղարին ուղարկված ծանուցագրի միջոցով: Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրվանից, որը հաջորդում է նման ծանուցագիրը Գլխավոր քարտուղարի ստանալու ամսաթվին:

Հոդված 6. Հարաբերությունը Կոնվենցիային

Մասնակից պետությունների հարաբերություններում սույն Արձանագրության Հոդվածներ 1-5-ը դիտվում են որպես Կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ, և Կոնվենցիայի բոլոր դրույթները կիրառվում են համապատասխանաբար:

Հոդված 7. Ստորագրումը և վավերացումը

Սույն Արձանագրությունը բաց է Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունը չի կարող սույն Արձանագրությունը վավերացնել, ընդունել կամ հաստատել՝ առանց միաժամանակ կամ դրանից առաջ Կոնվենցիան վավերացնելու: Վավերագրերը, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Հոդված 8. Ուժի մեջ մտնելը

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ամսաթվին հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Եվրոպայի խորհրդի անդամ հինգ պետություններ, Հոդված 7-ի դրույթներին համապատասխան, իրենց համաձայնությունն են արտահայտում Արձանագրությամբ պարտավորություններ ստանձնելու կապակցությամբ:

2. Ցանկացած անդամ պետության համար, որն Արձանագրությամբ պարտավորություն ստանձնելու իր համաձայնությունը հայտնում է հետագայում, Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրվանից, որը հաջորդում է վավերագիրը կամ ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվան:

Հոդված 9. Ավանդապահի գործառույթները

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ծանուցում է՝

ա. ցանկացած ստորագրման մասին,

բ. վավերագիրը, ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին,

գ. Հոդվածներ 5-ի և 8-ի համապատասխան՝ սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվա մասին,

դ. սույն Արձանագրությանը վերաբերող ցանկացած այլ գործողության, ծանուցման կամ հայտարարության մասին:

Ի հավաստումն որի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալներն ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Ստրասբուրգում 1983 թվականի ապրիլի 28-ին՝ մեկ օրինակով, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք պահվում են Եվրոպայի խորհրդի արխիվում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի խորհրդի անդամ յուրաքանչյուր պետության:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ

Ստրասբուրգ, 1984 թ. նոյեմբերի 22-ը

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, որոնք ստորագրել են սույն Արձանագրությունը,

լի վճռականությամբ՝ ձեռնարկելու այնպիսի քայլեր, որոնք կապահովեն որոշ իրավունքների և ազատությունների կոլեկտիվ իրականացումը 1950թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) միջոցով,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1. Օտարերկրացիների արտաքսմանը վերաբերող ընթացակարգային երաշխիքները

1. Որևէ պետության տարածքում օրինական կարգով բնակվող օտարերկրացին չի կարող այնտեղից արտաքսվել այլ կերպ, քան ի կատարումն օրենքին համապատասխան ընդունված որոշման: Նա պետք է հնարավորություն ունենա.

ա) փաստարկներ ներկայացնելու իր արտաքսման դեմ,

բ) վերանայել տալու իր գործը և

գ) այդ նպատակով ներկայացվելու իրավասու մարմնի կամ այդ մարմնի նշանակած մեկ կամ մի քանի անձանց առջև:

2. Օտարերկրացին կարող է արտաքսվել նախքան սույն հոդվածի 1-ին կետի «ա», «բ» և «գ» ենթակետերում նշված իր իրավունքների իրականացումը, եթե արտաքսումն անհրաժեշտ է ի շահ հասարակական կարգի կամ պատճառաբանվում է պետական անվտանգության նկատառումներով:

Հոդված 2. Քրեական գործերով գանգատարկման իրավունքը

1. Քրեական հանցագործություն կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր դատապարտումը կամ դատավճիռը վերանայվի վերադաս դատական ատյանի կողմից: Այդ իրավունքի իրականացումը, ներառյալ դրա իրականացման հիմքերը, կարգավորվում է օրենքով:

2. Այդ իրավունքից կարող են բացառություններ արվել օրենքով սահմանված աննշան հանցագործությունների առնչությամբ, կամ երբ տվյալ անձը դատվել է ամենաբարձր ատյանի կողմից, որը հանդես է եկել որպես առաջին ատյանի դատարան, կամ դատապարտված է եղել այդ անձի արդարացման դեմ վճռաբեկ գանգատի քննարկումից հետո:

Հոդված 3. Փոխհատուցումը սխալ դատապարտման դեպքում

Եթե որևէ անձ վերջնական դատավճռով մեղավոր է ճանաչվել քրեական հանցագործություն կատարելու մեջ, և եթե հետագայում նրա նկատմամբ կայացված դատավճիռը չեղյալ է հայտարարվել, կամ նա ներման է ենթարկվել այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որևէ փաստ համոզիչ կերպով ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա նման դատապարտման հետևանքով պատիժ կրած անձը փոխհատուցում է ստանում տվյալ պետության օրենքին կամ պրակտիկային համապատասխան, եթե չի ապացուցվում, որ ժամանակին այդ փաստը չբացահայտելը լիովին կամ մասամբ կախված չի եղել տվյալ անձից:

Հոդված 4. Կրկին անգամ չդատվելու և չպատժվելու իրավունքը

1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավազորության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա:

3. Սույն հոդվածի դրույթներից շեղում չի թույլատրվում Կոնվենցիայի Հոդված 15-ի հիման վրա:

Հոդված 5. Հավասարություն ամուսինների միջև

Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության դեպքում ամուսինները հավասար իրավունքներ և մասնավոր իրավական բնույթի հավասար պատասխանատվություն ունեն փոխադարձ հարաբերություններում և իրենց երեխաների հետ ունեցած հարաբերություններում: Սույն հոդվածը պետություններին չի խոչընդոտում ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են երեխաների շահերը պաշտպանելու համար:

Հոդված 6. Տարածքային կիրառումը

1. Ցանկացած պետություն ստորագրելիս կամ իր վավերագիրը կամ ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց վրա տարածվում է սույն Արձանագրության

գործողությունը, և նշել այն ծավալը, որով տվյալ պետությունը պարտավորվում է սույն Արձանագրության դրույթները կիրառել այդ տարածքի կամ տարածքների նկատմամբ:

2. Ցանկացած պետություն կարող է ավելի ուշ՝ ցանկացած պահի, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հղած հայտարարությամբ սույն Արձանագրության կիրառումը տարածել հայտարարության մեջ նշված որևէ այլ տարածքի նկատմամբ: Այդ տարածքի նկատմամբ Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրվանից, որն սկսվում է նման հայտարարությունը Գլխավոր քարտուղարի ստանալու ամսաթվին հաջորդող երկամսյա ժամկետը լրանալուց հետո:

3. Նախորդ երկու կետերի հիման վրա արված ցանկացած հայտարարություն, որը վերաբերում է դրանում նշված այս կամ այն տարածքին, կարող է չեղյալ հայտարարվել կամ փոփոխվել Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով: Չեղյալ հայտարարումը կամ փոփոխությունն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որն սկսվում է նման ծանուցագիրը Գլխավոր քարտուղարի ստանալու ամսաթվին հաջորդող երկամսյա ժամկետը լրանալուց հետո:

4. Սույն հոդվածի համապատասխան արված հայտարարությունը դիտվում է որպես Կոնվենցիայի 56-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան արված հայտարարություն:

5. Ցանկացած պետության տարածք, որի նկատմամբ սույն Արձանագրությունը կիրառվում է այդ պետության կողմից այն վավերացվելու, ընդունվելու կամ հաստատվելու ուժով, և ցանկացած տարածք, որի նկատմամբ սույն Արձանագրությունը կիրառվում է այդ պետության՝ սույն հոդվածին համապատասխան արված հայտարարության ուժով, Հոդված 1-ում պետության տարածքը վկայակոչելու նպատակով կարող են դիտվել որպես առանձին տարածքներ:

6. Յուրաքանչյուր պետություն, որը սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կետերի համաձայն հայտարարություն է արել, դրանից հետո ցանկացած ժամանակ կարող է մեկ կամ մի քանի տարածքների անունից, որոնց վերաբերում է հայտարարությունը, հայտարարել, որ ինքն ընդունում է Դատարանի՝ անհատներից, ոչ կառավարական կազմակերպություններից կամ անհատների խմբերից՝ սույն Արձանագրության Հոդվածներ 1-5-ի կապակցությամբ Կոնվենցիայի Հոդված 34-ով նախատեսված գանգատներ ստանալու իրավասությունը:

Հոդված 7. Հարաբերությունը Կոնվենցիային

Մասնակից պետությունների հարաբերություններում սույն Արձանագրության Հոդվածներ 1-6-ը դիտվում են որպես Կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ, և Կոնվենցիայի բոլոր դրույթները կիրառվում են համապատասխանաբար:

Հոդված 8. Ստորագրումը և վավերացումը

Սույն Արձանագրությունը բաց է Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունը չի կարող սույն Արձանագրությունը վավերացնել, ընդունել կամ հաստատել՝ առանց միաժամանակ կամ դրանից առաջ Կոնվենցիան վավերացնելու: Վավերագրերը, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Հոդված 9. Ուժի մեջ մտնելը

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն երկամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Եվրոպայի խորհրդի անդամ յոթ պետություն, Հոդված 8-ի համապատասխան, իրենց համաձայնությունն են հայտնում սույն Արձանագրությամբ պարտավորություններ ստանձնելու կապակցությամբ:

2. Ցանկացած անդամ պետության համար, որն Արձանագրությամբ պարտավորություն ստանձնելու իր համաձայնությունը հայտնում է հետագայում, այն ուժի մեջ է մտնում վավերագիրը կամ ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ հանձնելուց հետո երկամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Հոդված 10. Ավանդապահի գործառույթները

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետություններին ծանուցում է՝

ա. ցանկացած ստորագրման մասին,

բ. վավերագիրը, ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին,

գ. Հոդվածներ 6-ի և 9-ի համապատասխան՝ սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվա մասին,

դ. սույն Արձանագրությանը վերաբերող ցանկացած այլ գործողության, ծանուցման կամ հայտարարության մասին:

Ի հավաստումն որի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալներն ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Ստրասբուրգում 1984 թվականի նոյեմբերի 22-ին՝ մեկ օրինակով, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք պահվում են Եվրոպայի խորհրդի արխիվում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի խորհրդի անդամ յուրաքանչյուր պետության:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ

Հռոմ, 2000 թ. նոյեմբերի 4-ը

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, որոնք ստորագրել են սույն Արձանագրությունը,

հաշվի առնելով այն հիմնարար սկզբունքը, որի համաձայն բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև և ունեն օրենքով պաշտպանվելու հավասար իրավունք,

համակված վճռականությամբ ձեռնարկել նոր միջոցներ՝ խթանելու բոլոր անձանց հավասարությունը՝ 1950 թվականի նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայով (այսուհետև՝ Կոնվենցիա) նախատեսված խտրականության ընդհանուր արգելումը միասնականորեն գործադրելու միջոցով,

կրկին հավաստելով, որ խտրականության բացառման սկզբունքը չի խոչընդոտում Կողմ պետություններին միջոցներ՝ ձեռնարկել ապահովելու լիարժեք և արդյունավետ հավասարություն՝ պայմանով, որ նրանք ունեն անաչառ և ողջամիտ արդարացում նման միջոցների համար,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1. Խտրականության ընդհանուր արգելում

1. Օրենքով սահմանված ցանկացած իրավունքի կիրառումը պետք է երաշխավորվի առանց խտրականության որև դրսևորման, օրինակ՝ սեռի, ռասայի, գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության պատկանելիության, սեփականության, ծննդյան կամ այլ կարգավիճակի հիման վրա:

2. Ոչ ոք չի կարող պետական իշխանության կողմից ենթարկվել խտրականության որևէ դրսևորման՝ ինչպես օրինակ կետ 1-ում նշված հիմքերով:

Հոդված 2. Տարածքային կիրառումը

1. Ցանկացած պետություն ստորագրելիս կամ վավերագիրը, ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Արձանագրությունը:

2. Ցանկացած պետություն կարող է ավելի ուշ՝ ցանկացած պահի, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հղած հայտարարությամբ սույն Արձանագրության կիրառումը տարածել հայտարարության մեջ նշված որևէ այլ տարածքի նկատմամբ: Այդ տարածքի նկատմամբ Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից նման հայտարարությունը ստանալու պահից սկսած երեք ամիսներին հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Նախորդ երկու կետերի հիման վրա արված ցանկացած հայտարարություն, որը վերաբերում է դրանում նշված այս կամ այն տարածքին, կարող է չեղյալ հայտարարվել կամ փոփոխվել Գլխավոր քարտուղարին ծանուցագիր ուղար-

կելու միջոցով: Չեղյալ հայտարարումը կամ փոփոխությունն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից նման ծանուցագիրը ստանալու պահից սկսած երեք ամիսներին հաջորդող ամսվա առաջին օրը:

4. Սույն հոդվածի համապատասխան արված հայտարարությունը դիտվում է որպես Կոնվենցիայի Հոդված 56-ի կետ 1-ին համապատասխան արված հայտարարություն:

5. Յուրաքանչյուր պետություն, որը սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կետերի համաձայն հայտարարություն է արել, դրանից հետո ցանկացած ժամանակ կարող է մեկ կամ մի քանի տարածքների առնչությամբ, որոնց վերաբերում է հայտարարությունը, հայտարարել, որ ինքն ընդունում է Դատարանի՝ անհատներից, ոչ կառավարական կազմակերպություններից կամ անհատների խմբերից՝ սույն Արձանագրության Հոդված 1-ի կապակցությամբ Կոնվենցիայի Հոդված 34-ով նախատեսված գանգատներ ստանալու իրավասությունը:

Հոդված 3. Հարաբերությունը Կոնվենցիային

Արձանագրության կողմ պետությունների առնչությամբ սույն Արձանագրության Հոդվածներ 1-ը և 2-ը դիտվում են որպես Կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ, և Կոնվենցիայի բոլոր դրույթները կիրառվում են համապատասխանաբար:

Հոդված 4. Ստորագրումը և վավերացումը

Սույն Արձանագրությունը բաց է Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունը չի կարող սույն Արձանագրությունը վավերացնել, ընդունել կամ հաստատել՝ առանց նախապես կամ միաժամանակ Կոնվենցիան վավերացնելու: Վավերագրերը, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Հոդված 5. Ուժի մեջ մտնելը

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն եռամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Եվրոպայի խորհրդի անդամ տասը պետություն, Հոդված 4-ի համապատասխան, իրենց համաձայնությունն են հայտնում Արձանագրությամբ պարտավորություններ ստանձնելու կապակցությամբ:

2. Ցանկացած անդամ պետության համար, որն Արձանագրությամբ պարտավորություն ստանձնելու իր համաձայնությունը հայտնում է հետագայում, Արձանագրությունն ուժի մեջ է մտնում վավերագիրը կամ ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելու ամսաթվից հետո եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Հոդված 6. Ավանդապահի գործառույթները

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններին ծանուցում է՝

ա. ցանկացած ստորագրման մասին,

բ. վավերագիրը, ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին,

գ. Հոդվածներ 2-ի և 5-ի համապատասխան՝ սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվա մասին,

դ. սույն Արձանագրությանը վերաբերող ցանկացած այլ գործողության, ծանուցման կամ հայտարարության մասին:

Ի հավաստումն որի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալներն ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Հռոմում 2000թ. նոյեմբերի 4-ին՝ մեկ օրինակով, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք պահվում են Եվրոպայի խորհրդի արխիվում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՑԱՆԿԱՑԱԾ ՀԱՆԳԱՍՏԱՆՔՈՒՄ ՍԱՀԱՊԱՏԺԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վիլնյուս, 2002 թ. մայիսի 3-ը

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, որոնք ստորագրել են սույն Արձանագրությունը,

համոզված լինելով, որ յուրաքանչյուրի կյանքի իրավունքը հիմնարար արժեք է ժողովրդավարական հասարակությունում և, որ մահապատժի վերացումն էական է այս իրավունքի պաշտպանության և բոլոր մարդկանց անօտարելի արժանապատվության լիրաժեք ճանաչման համար,

ցանկանալով ամրապնդել 1950 թվականի նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով (այսուհետև՝ Կոնվենցիա) նախատեսված կյանքի իրավունքի պաշտպանությունը,

նկատի առնելով, որ Կոնվենցիային կից 1983 թվականի ապրիլի 28-ին Ստրասբուրգում ստորագրված մահապատժի վերացման վերաբերյալ Թիվ 6 արձանագրությունը չի բացառում մահապատժի կիրառումը պատերազմի ժամանակ կամ պատերազմի անմիջական սպառնալիքի դեպքում կատարված գործողությունների համար,

համակված վճռականությամբ ձեռնարկել վերջին քայլը ցանկացած հանգամանքում մահապատժի վերացման գործընթացում,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1. Մահապատժի վերացումը

Մահապատիժը վերացվում է: Ոչ ոք չպետք է մահապատժի դատապարտվի կամ մահապատժի ենթարկվի:

Հոդված 2. Շեղումների արգելումը

Սույն Արձանագրության դրույթներից շեղումներ չեն թույլատրվում Կոնվենցիայի Հոդված 15-ի հիման վրա:

Հոդված 3. Վերապահումների արգելումը

Սույն Արձանագրության դրույթների նկատմամբ վերապահումներ չեն թույլատրվում Կոնվենցիայի Հոդված 57-ի հիման վրա:

Հոդված 4. Տարածքային կիրառումը

1. Ցանկացած պետություն ստորագրելիս կամ վավերագիրը, ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Արձանագրությունը:

2. Ցանկացած պետություն կարող է ավելի ուշ՝ ցանկացած պահի, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հղած հայտարարությամբ սույն Արձանագրության կիրառումը տարածել հայտարարության մեջ նշված որևէ այլ տարածքի նկատմամբ: Այդ տարածքի նկատմամբ Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից նման հայտարարությունը ստանալու պահից սկսած երեք ամիսներին հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Նախորդ երկու կետերի հիման վրա արված ցանկացած հայտարարություն, որը վերաբերում է դրանում նշված այս կամ այն տարածքին, կարող է չեղյալ հայտարարվել կամ փոփոխվել Գլխավոր քարտուղարին ծանուցագիր ուղարկելու միջոցով: Չեղյալ հայտարարումը կամ փոփոխությունն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից նման ծանուցագիրը ստանալու պահից սկսած երեք ամիսներին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 5. Հարաբերությունը Կոնվենցիային

Արձանագրության կողմ պետությունների առնչությամբ սույն Արձանագրության Հոդվածներ 1-4-ը դիտվում են որպես Կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ, և Կոնվենցիայի բոլոր դրույթները կիրառվում են համապատասխանաբար:

Հոդված 6. Ստորագրումը և վավերացումը

Սույն Արձանագրությունը բաց է Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունը չի կարող սույն Արձանագրությունը վավերացնել, ընդունել կամ հաստատել՝ առանց նախապես կամ միաժամանակ Կոնվենցիան վավերացնելու: Վավերագրերը, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Հոդված 7. Ուժի մեջ մտնելը

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն եռամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը, երբ Եվրոպայի խորհրդի անդամ տասը պետություն, Հոդված 6-ի համապատասխան, իրենց համաձայնությունն են հայտնում Արձանագրությամբ պարտավորություններ ստանձնելու կապակցությամբ:

2. Ցանկացած անդամ պետության համար, որն Արձանագրությամբ պարտավորություն ստանձնելու իր համաձայնությունը հայտնում է հետագայում, Արձանագրությունն ուժի մեջ է մտնում վավերագիրը կամ ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելու ամսաթվից հետո եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Հոդված 8. Ավանդապահի գործառույթները

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններին ծանուցում է՝

ա. ցանկացած ստորագրման մասին,

բ. վավերագիրը, ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին,

գ. Հոդվածներ 4-ի և 7-ի համապատասխան՝ սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվա մասին,

դ. սույն Արձանագրությանը վերաբերող ցանկացած այլ գործողության, ծանուցման կամ հայտարարության մասին:

Ի հավաստումն որի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալներն ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Վիլնյուսում 2002 թվականի մայիսի 3-ին՝ մեկ օրինակով, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք պահվում են Եվրոպայի խորհրդի արխիվում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ, ՈՐՈՎ ՓՈՓՈԽՎՈՒՄ Է ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ստրասբուրգ, 2004 թ. մայիսի 13-ը

Նախաբան

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, որոնք ստորագրել են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի, ստորագրված 1950թ. նոյեմբերի 4-ին Հռոմում (այսուհետև՝ Կոնվենցիա), սույն Արձանագրությունը՝

հաշվի առնելով 2000 թ. նոյեմբերի 3-ին և 4-ին Հռոմում տեղի ունեցած՝ Մարդու իրավունքների վերաբերյալ Եվրոպական նախարարների համաժողովի ընդունած Թիվ 1 բանաձևը և Հռչակագիրը,

հաշվի առնելով 2001 թ. նոյեմբերի 8-ին, 2002 թ. նոյեմբերի 7-ին և 2003թ. մայիսի 15-ին Նախարարների կոմիտեի համապատասխանաբար 109-րդ, 111-րդ և 112-րդ նիստերին ընդունված Հռչակագրերը,

հաշվի առնելով Խորհրդարանական վեհաժողովի 2004թ. ապրիլի 28-ին ընդունած Թիվ 251 (2004) կարծիքը,

նկատի ունենալով Կոնվենցիայի որոշ դրույթների անհապաղ փոփոխման անհրաժեշտությունը՝ երկար ժամանակահատվածում վերահսկման համակարգի արդյունավետությունը պահպանելու և բարելավելու նպատակով, հիմնականում հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի աշխատանքի ծավալի շարունակական աճը,

նկատի ունենալով մասնավորապես, որ անհրաժեշտ է երաշխավորել, որ Դատարանը շարունակի կատարել Եվրոպայում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում իր նշանակալի դերը,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1

Կոնվենցիայի Հոդված 22-ի կետ 2-ը հանվում է:

Հոդված 2

Կոնվենցայի Հոդված 23-ը փոփոխվում է հետևյալ կերպ.

«Հոդված 23. Պաշտոնավարության ժամկետը և պաշտոնից հեռացնելը

1. Դատավորներն ընտրվում են ինը տարի ժամկետով: Նրանք չեն կարող վերընտրվել:

2. Դատավորների պաշտոնավարության ժամկետն ավարտվում է, երբ լրանում է նրանց 70 տարին:

3. Դատավորները պաշտոնավարում են մինչև փոխարինվելը: Նրանք, սակայն, փոխարինվելուց հետո շարունակում են քննել իրենց կողմից արդեն քննության առնված գործերը:

4. Դատավորը պաշտոնից կարող է հեռացվել միայն այն դեպքում, եթե մյուս դատավորները քվեների երկու երրորդ մեծամասնությամբ որոշում են ընդունում այն մասին, որ դատավորն այլևս չի համապատասխանում ներկայացվող պահանջներին»:

Հոդված 3

Կոնվենցիայի Հոդված 24-ը հանվում է:

Հոդված 4

Կոնվենցիայի Հոդված 25-ը դառնում է Հոդված 24 և փոփոխվում է հետևյալ կերպ.

«Հոդված 24. Քարտուղարությունը և զեկուցողները

1. Դատարանն ունի Քարտուղարություն, որի գործառույթները և կազմակերպումը սահմանվում են Դատարանի կանոնակարգով:

2. Միանձնյա կազմով նիստերին Դատարանին օգնում են զեկուցողները, ովքեր գործում են Դատարանի նախագահի իրավասության ներքո: Նրանք Դատարանի Քարտուղարության մասն են կազմում»:

Հոդված 5

Կոնվենցիայի Հոդված 26-ը դառնում է Հոդված 25 («Դատարանի լիագումար նիստերը») և փոփոխվում հետևյալ կերպ.

1. Կետ դ-ի վերջում ստորակետը փոխարինվում է կետ-ստորակետով, և «և» բառը հանվում է:

2. Կետ ե-ի վերջում վերջակետը փոխարինվում է ստորակետով:

3. Ավելացվում է նոր կետ զ-ն՝ հետևյալ բովանդակությամբ.

«զ. պահանջ է ներկայացնում՝ Հոդված 26-ի կետ 2-ի համաձայն»:

Հոդված 6

Կոնվենցիայի Հոդված 27 դառնում է Հոդված 26 և փոփոխվում է հետևյալ կերպ.

«Հոդված 26. Միանձնյա դատավորը, կոմիտեները, Պալատները և Մեծ պալատը

1. Իրեն հանձնված գործերը քննելու համար Դատարանը նիստերը գումարում է միանձնյա, երեք դատավորից կազմված Կոմիտեներում, յոթ դատավորից կազմված Պալատներում և տասնյոթ դատավորից կազմված Մեծ պալատում: Դատարանի Պալատները որոշակի ժամկետով կազմում են Կոմիտեներ:

2. Լրակազմ Դատարանի խնդրանքով Նախարարների կոմիտեն կարող է մեծամասնական որոշմամբ և որոշակի ժամկետով Պալատների դատավորների թիվը նվազեցնել մինչև հինգի:

3. Միանձնյա կազմով դատարանը չի քննում գանգատներն այն Բարձր պայմանավորվող կողմի դեմ, որի առնչությամբ տվյալ դատավորն ընտրվել է:

4. Գործին առնչվող Բարձր պայմանավորվող կողմից ընտրված դատավորը ex officio մասնակցում է Պալատի և Մեծ պալատի նիստերին: Եթե նման դատավոր չկա, կամ եթե այդ դատավորը չի կարող մասնակցել նիստին, ապա որպես դատավոր նիստին մասնակցում է այդ Կողմի նախապես ներկայացրած ցուցակից Դատարանի նախագահի կողմից ընտրված անձը:

5. Մեծ պալատի կազմի մեջ մտնում են նաև դատարանի նախագահը, Դատարանի նախագահի տեղակալները, Պալատների նախագահները և Դատարանի կանոնակարգի համապատասխան ընտրված այլ դատավորներ: Երբ գործը Հոդված 43-ի դրույթներին համապատասխան հանձնվում է Մեծ պալատ, որևէ դատավոր, որն ընդգրկված է եղել որոշում կայացրած Պալատում, չի կարող մասնակցել Մեծ պալատի նիստերին՝ բացառությամբ վերոնշյալ Պալատի նախագահի և շահագրգիռ մասնակից կողմի դատավորի»:

Հոդված 7

Նոր Հոդված 26-ից հետո Կոնվենցիայում ներառվում է նոր Հոդված 27-ը՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 27. Միանձնյա դատավորների իրավասությունը

1. Միանձնյա դատավորը կարող է անընդունելիության որոշում կայացնել կամ Դատարանի գործերի ցուցակից հանել Հոդված 34-ի համաձայն ներկայացված գանգատը, եթե նման որոշում կարելի է կայացնել առանց լրացուցիչ քննության:

2. Որոշումը վերջնական է:

3. Եթե միանձնյա դատավորը գործն անընդունելի չի համարում կամ այն չի հանում ցուցակից, նա այն փոխանցում է որևէ կոմիտեի կամ Պալատի հետագա քննության նպատակով»:

Հոդված 8

Կովնենցիայի Հոդված 28-ը փոփոխվում է հետևյալ կերպ.

«Հոդված 28. Կոմիտեների իրավասությունը

1. Հոդված 34-ի համաձայն հանձնված գանգատների առնչությամբ Կոմիտեն կարող է միաձայն քվեարկությամբ.

   ա. անընդունելի համարել գանգատը կամ հանել այն գործերի ցուցակից, եթե նման որոշում կարող է կայացվել առանց հետագա քննության, կամ

   բ. ընդունելի համարել այն և միաժամանակ որոշում կայացնել ըստ էության, եթե գործի հիմքում ընկած խնդիրը, որը վերաբերում է Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների մեկնաբանությանը կամ կիրառմանը, արդեն իսկ Դատարանի կողմից հաստատված նախադեպային իրավունքի շրջանակներում է:

2. Կետ 1-ի համաձայն որոշումները և վճիռները վերջնական են:

3. Եթե գործին առնչվող Բարձր պայանավորվող կողմի առնչությամբ ընտրված դատավորը կոմիտեի անդամ չէ, Կոմիտեն կարող է դատավարության ցանկացած փուլում հրավիրել վերոհիշյալ դատավորին՝ Կոմիտեի անդամներից մեկի տեղը զբաղեցնելու նպատակով, ի նկատի առնելով բոլոր առնչվող գործոնները, այդ թվում՝ արդյոք այդ Կողմը դեմ է կետ 1.բ-ով նախատեսված ընթացակարգին»:

Հոդված 9

Կոնվենցիայի Հոդված 29-ը փոփոխվում է հետևյալ կերպ.

1. Կետ 1-ը փոփոխվում է հետևյալ կերպ. «Եթե Հոդվածներ 27-ի կամ 28-ի համապատասխան որոշում չի ընդունվում կամ Հոդված 28-ի համապատասխան վճիռ չի կայացվում, Պալատը որոշում է կայացնում Հոդված 34-ին համապատասխան ներկայացված անհատական գանգատի ընդունելիության մասին և ըստ էության: Գանգատի ընդունելիության որոշումը կարող է առանձին կայացվել:»

2. Կետ 2-ի վերջում նոր նախադասություն է ավելացվում հետևյալ բովանդակությամբ. «Ընդունելության որոշումը կայացվում է առանձին, եթե Դատարանը բացառության կարգով հակառակը չի որոշում:»

3. Կետ 3-ը հանվում է:

Հոդված 10

Կոնվենցիայի Հոդված 31-ը փոփոխվում է հետևյալ կերպ.

1. Կետ ա-ի վերջում «և» բառը հանվում է:

2. Կետ բ-ն դառնում է կետ գ, և ներառվում է նոր կետ բ՝ հետևյալ բովանդակությամբ.

«բ. որոշում է կայացնում Հոդված 46-ի կետ 4-ի համապատասխան Նախարարների կոմիտեի կողմից Դատարանին հղված խնդիրների շուրջ, և»:

Հոդված 11

Կոնվենցիայի Հոդված 32-ը փոփոխվում է հետևյալ կերպ.

Կետ 1-ի վերջում՝ 34 թվից հետո, ներառվում է ստորակետ և 46 թիվը:

Հոդված 12

Կոնվենցիայի Հոդված 35-ի կետ 3-ը փոփոխվում է հետևյալ կերպ.

«3. Դատարանն անընդունելի է համարում Հոդված 34-ին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ.

ա. գանգատն անհամատեղելի է Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների դրույթների հետ, ակնհայտորեն անհիմն է կամ գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում է, կամ

բ. դիմորդը էական վնաս չի կրել, եթե Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով սահմանված մարդու իրավունքների պահպանումը չի պահանջում գանգատի ըստ էության քննում և այն պայմանով, որ ոչ մի գործ չի կարող մերժվել այն հիմքով, որը պատշաճ չի քննվել ներպետական դատարանի կողմից»:

Հոդված 13

Կոնվենցիայի Հոդված 36-ի վերջին նոր կետ 3 է ներառվում՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Պալատի կամ Մեծ պալատի կողմից քննության առնվող ցանկացած գործի կապակցությամբ, Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը կարող է գրավոր դիտողություններ ներկայացնել և մասնակցել լսումներին»:

Հոդված 14

Կոնվենցիայի Հոդված 38-ը փոփոխվում է հետևյալ կերպ.

«Հոդված 38. Գործի քննությունը

Դատարանը գործը քննում է կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ և, անհրաժեշտության դեպքում, հետաքննություն է նախաձեռնում, որի արդյունավետ իրականացման համար գործին առնչվող Բարձր պայմանավորվող կողմերն ապահովում են բոլոր անհրաժեշտ հարմարությունները»:

Հոդված 15

Կոնվենցիայի Հոդված 39-ը փոփոխվում է հետևյալ կերպ.

«Հոդված 39. Բարեկամական կարգավորում

1. Դատավարության ցանկացած փուլում Դատարանը կարող է իր ծառայությունը տրամադրել գործին առնչվող կողմերին՝ Կոնվենցիայով և նրան կից Արձանագրություններով սահմանված մարդու իրավունքների պահպանման հիման վրա հարցի բարեկամական կարգավորումն ապահովելու նպատակով:

2. Կետ 1-ի համապատասխան իրականացվող գործընթացը գաղտնի է:

3. Բարեկամական կարգավորման դեպքում Դատարանը գործը հանում է իր ցուցակից՝ կայացնելով որոշում, որում միայն ներկայացվում է փաստերի և ձեռքբերված լուծման հակիրճ շարադրանքը:

4. Այս որոշումը փոխանցվում է Նախարարների կոմիտեին, որը վերահսկում է որոշման մեջ սահմանված բարեկամական կարգավորման պայմանների կատարումը»:

Հոդված 16

Կոնվենցիայի Հոդված 46-ը փոփոխվում է հետևյալ կերպ.

«Հոդված 46. Վճիռների պարտադիր ուժն ու կատարումը

1. Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որի կողմ են հանդիսանում:

2. Դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտե, որը վերահսկում է դրա կատարումը:

3. Եթե Նախարարների կոմիտեն գտնում է, որ վերջնական վճռի կատարման վերահսկումը խոչընդոտվում է վճռի մեկնաբանման խնդրով պայմանավորված, այն կարող է դիմում ներկայացնել Դատարանին հարցի մեկնաբանության վերաբերյալ որոշում ներկայացնելու պահանջով: Դիմում ներկայացնելու որոշումը կայացվում է Կոմիտեի իրավասու ներկայացուցիչների քվեների երկու երրորդ մեծամասնությամբ:

4. Եթե Նախարարների կոմիտեն գտնում է, որ Բարձր պայմանավորվող կողմը հրաժարվում է կատարել այն գործի առումով վերջնական վճիռը, որի կողմ է հանդիսանում, այն կարող է տվյալ Կողմին պաշտոնական ծանուցումից հետո և Կոմիտեի իրավասու ներկայացուցիչների քվեների երկու երրորդ մեծամասնությամբ ընդունված որոշմամբ Դատարանին հարց հղել՝ արդյոք տվյալ Կողմը չի կատարել իր պարտավորությունը կետ 1-ի համապատասխան:

5. Եթե Դատարանը կետ 1-ի խախտում է գտնում, այն գործը հղում է Նախարարների կոմիտե՝ ձեռնարկվելիք միջոցառումները քննարկելու նկատառումով: Եթե դատարանը կետ 1-ի խախտում չի գտնում, այն գործը հղում է Նախարարների կոմիտե, որը փակում է գործի քննությունը»:

Հոդված 17

Կոնվենցիայի Հոդված 59-ը պետք է փոփոխվի հետևյալ կերպ.
1. Ներառվում է նոր կետ 2՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Եվրոպական միությունը կարող է միանալ սույն Կոնվենցիային»:

2. Կետեր 2-ը, 3-ը և 4-ը դառնում են համապատասխանաբար կետեր 3, 4 և 5:

Եզրափակիչ և անցումային դրույթներ

Հոդված 18

1. Սույն Արձանագրությունը բաց է ստորագրման Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար, որոնք պարտավորված լինելու իրենց համաձայնությունը արտահայտում են՝

   ա. ստորագրությամբ՝ առանց վավերացման, ընդունման կամ հաստատման առնչությամբ վերապահության, կամ

   բ. վավերացման, ընդունման կամ հաստատման ենթակա ստորագրությամբ՝ հետագայում վավերացման, ընդունման կամ հաստատման պայմանով:

2. Վավերագրերը, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Հոդված 19

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կոնվենցիայի բոլոր Կողմերի՝ Հոդված 18-ի դրույթներին համապատասխան սույն Արձանագրությամբ պարտավորություններ ստանձնելու համաձայնությունն արտահայտելու ամսաթվից հետո ընկած եռամսյա ժամանակատվածի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 20

1. Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո դրա դրույթները կիրառելի են Դատարանում հերթագրված գանգատների, ինչպես նաև այն բոլոր վճիռների առնչությամբ, որոնց կատարումը Նախարարների կոմիտեի վերահսկողության ներքո է:

2. Սույն Արձանագրության Հոդված 12-ով Կոնվենցիայի Հոդված 35-ի կետ 3.բ-ում ներառված ընդունելիության նոր չափանիշը կիրառելի չէ այն գանգատների առնչությամբ, որոնք ընդունելի կհամարվեն մինչև սույն Արձանագրության ուժի մեջ մտնելը: Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո հաջորդ երկու տարիների ընթացքում նոր չափանիշը կարող է կիրառվել միայն Դատարանի Պալատների և Մեծ պալատի կողմից:

Հոդված 21

Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթվին պաշտոնավարման առաջին ժամկետում գործող դատավորների պաշտոնավարման ժամկետը ipso jure երկարացվում է այնպես, որպեսզի ընդհանուր ժամկետը կազմի ինը տարի: Մյուս դատավորները կավարտեն իրենց պաշտոնավարության ժամկետը, որը ipso jure երկարացվում է երկու տարով:

Հոդված 22

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ծանուցում է.

ա. ցանկացած ստորագրման մասին,
բ. ցանկացած վավերագիր, ընդունման կամ հաստատման փաստաթուղթ ի պահ հանձնելու մասին,
գ. Հոդված 19-ի համապատասխան՝ սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու ամսաթիվը, և
դ. սույն Արձանագրությանը վերաբերող ցանկացած այլ գործողության, ծանուցման կամ հայտարարության մասին:

Ի հավաստումն որի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալներս ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կնքված է Ստրասբուրգում 2004թ. մայիսի 13-ին՝ մեկ օրինակով, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք պահվում են Եվրոպայի խորհրդի արխիվներում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի խորհրդի անդամ յուրաքանչյուր պետության:

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ

աբորտ
խորհրդատվություն, արտահայտման ազատություն 749-754
ցույց 782-783
բժշկի սխալի պատճառով 108-111
իրավունք 520-522
կյանքի իրավունք, և 106–8
ազատություն
դրա հայեցակարգը 249-59
բանտարկություն կղզում, կասկածյալին նման բանտարկության ենթարկելը 249-52
ազատությունից զրկում
ապաստան որոնողներ, դրանց պահումը 253-55
աքսորը՝ որպես 252
գործի հանգամանքները 252
բանտարկության փակ տարածքում լինելու խնդիրը 253
գործոնների համադրությունը 249-50
համապատասխանությունը ներպետական օրենքներին, դրա սկզբունքը 254
փոխհատուցում, դրա իրավունքը 347-48
տարեց անձ, տեղավորումը տանը 256-57
«արտակարգ հանձնում» [extraordinary rendition], դրա ծրագիրը 262
և տեղաշարժվելու ազատության սահմանափակումը 253
արդյունքում որևէ քրեական վարույթ չնախաձեռնելը, դրա արդյունքը 282
օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրեր 255-56
հանցագործության կանխարգելում, դրա նպատակով 282
որպես կանխարգելիչ միջոցառում 251
օրենքով նախատեսված ընթացակարգ, դրան համապատասխան 263-65
հոգեբուժական հիվանդանոց, բանտարկությունն այդտեղ 257-58
հոգեբուժական բաժանմունք, պահումն այդտեղ՝ ծնողի պահանջով 255-56
պետության պատասխանատվությունը 257-58
ազատության սահմանափակումներ, դրանց տարբերակումը 250
ազատություն, դրա իրավունքը
կամայական կալանավորում, ազատությունը դրանից 259
ձերբակալություն և կալանք, ալկոհոլամոլների դեպքում ընդունելի հիմքերը 295-98
իրավասու դատարան, դատապարտումը այդպիսի դատարանի կողմից 266-71
դատարանի վճիռ, դրան չենթարկվելը 271-77
արտաքսում կամ հանձնում, այդ նպատակով 298-304 *տե՛ս նաև* **արտաքսում, հանձնում**
անչափահասների կրթության վերահսկողություն և այլն 284-86
հոգեկան խանգարումներով անձինք 290-95
օրենքով սահմանված պարտավորություն, այն չկատարելը 271-77
քրեական հանցագործության վերաբերյալ հիմնավոր կասկած 277-84
ՍԻԱՎ վարակի փոխանցում, դրա կանխարգելման նպատակով 287-89
ավտոմատ գրավի դիմաց ազատ արձակման մերժում 317-18
համայնքի պաշտպանության հետ հավասարակշռումը 263
շեղումներ դրանից 313
կալանք, դրա պատճառների մասին տեղեկացումը 304-306
կալանքի օրինականության վերահսկողության միջոց (habeas corpus), դա որպես պաշտպանության իրավական միջոց 311
դրա կարևորությունը 321
կալանքի օրինականությունը 302
դա վիճարկելը դատարանում 323-24
թափառաշրջիկներ, նրանց վերաբերող գործեր 320-21
կամավոր հանձնվելու գործողություն դեպքում 320-21
կալանքի տակ վերցված անձ, նրա համար հաշվետու լինելու պարտավորությունը 259-63
ֆիզիկական 249
նախնական կալանք, դրա տևողությունը 306-320 *տե՛ս նաև* **կալանք**
դատախազներ, նրանց վերահսկողությունը 306
ողջամիտ ժամկետում դատավարություն 306-320
ներում ստացած բանտարկյալին ազատ արձակելու մերժումը 63-67
հատուկ վերահսկողություն, դրան ենթակա անձը 250
կոնվենցիայի տեքստը 1070-71
ազգայնացում
որպես ունեցվածքից զրկում 986
փոխհատուցման չափորոշիչ 986-87
ալկոհոլամոլներ (զինեմոլներ, հարբեցողներ)
կալանքի թույլատրելի հիմքեր 298–301
եզրույթի իմաստը 299–301
ահաբեկչություն
ձերբակալություն և կալանավորում, սրանց համար թույլատրելի հիմքերը 279-84
անվտանգության ստուգում, դրա ենթարկվելու պարտավորություն 274-75
աղտոտում
տան նկատմամբ հարգանքի իրավունք, դրա նկատմամբ միջամտությունը 568-69

ամուսիններ
հավասարություն նրանց միջև 1086
ամուսնանալ, դրա իրավունքը
վերստին ամուսնանալու արգելք, դրա միջոցով խախտումը 825-28
սկեսրայրի և հարսի ամուսնանալու իրավունքը 832-33
դրա սահմանափակումները 825
ներպետական օրենքներ, դրանց ենթակա լինելը 828
հակառակ սեռի անձանց հետ 828
բանտարկյալների 830-31
ամուսնալուծվելու իրավունքը չներառելը 829-30
սեռական հարաբերություններ բանտում, դրանց նկատմամբ կիրառելի չլինելը 830
սոցիալական, անձնական և իրավական հետևանքները 828
կայունություն, այդպիսի նպատակը 826
կոնվենցիայի տեքստը 1073
տրանսսեքսուալ անձանց իրավունքը 828-29
այլ պետության հանձնելը [էքստրադիցիա]
դրա շահավետ նպատակը 201
3-րդ հոդվածի խախտում, որպես 204-8
անխուսափելի և խիստ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արժանանալ 200
պայմանները 264
կոնվենցիայի չափորոշիչների կիրառումը 200-1
երկիր, որտեղ մահապատիժը վերացված է 207
մահապատժի վտանգ
ամբաստանյալի տարիքը և հոգեկան վիճակը հաշվի առնելը 206–7
հավաստիացումների համար միջնորդություն 198
3-րդ հոդվածի խախտում, որպես 204-208
պայմանները մահապատժի դատապարտվածների խցում, տեղինությունը 206
մինչ այդ կալանքի տևողությունը 206
իրական 202-4
«մահապատժի դատապարտված անձանց համար նախատեսված խցերում» պահվելու երևույթ, դրան ենթարկվելը 199-208
կալանք՝ դրա սպասող 298-304
դիմումի վերաբերյալ որոշումը, միջանկյալ միջոցներ՝ դրա սպասող 34-36
դրա կանխատեսելի հետևանքները արդյոք խախտում են 3-րդ հոդվածը 202
անմարդկային վերաբերմունք, արդյոք 198–216
կոնվենցիայի պոտենցիալ խախտման գոյությունը 201
ավարտին հասցնելու համար պահանջված ժամանակը հաշվի առնելը 298-302
Համաձայնագրի կանոնները 263
անկախ և անկողմնակալ դատարան, դրա իրավունքը
Գերնսիի կառավարիչը, նրա գործառույթները 443-45
ռազմական դատարանի նիստեր հրավիրող պաշտոնյաներ, նրանց գործառույթները 446-49
դատապաշտպան, անհարգալից վերաբերմունք նրա կողմից 443-54
խորհրդարանի պատգամավորը որպես վերաքննիչ դատարանի փորձագետ անդամ 445-46
դատավորի ամուսին, նրա և պաշտպանության կողմի միջև զգալի ֆինանսական գործարքներ 452-53
անկախ (դատարան), դրա իմաստը 454
ցմահ ազատազրկում, դրա նշանակումը 454
զինվորական դատավորներ 454-57
կուսակցական պատկանելություն, դրա տեղինությունը 445
գնահատման սուբյեկտիվ և օբյեկտիվ մոտեցումները 449-50
սուբյեկտիվ կանխակալություն, դրա հաստատումը 450-52, 454
դատարաններ (տրիբունալներ), դրանց շարքը 457
անմարդկային վերաբերմունք
որը պատճառում է փաստացի մարմնական վնասվածք 204
մանուկ մեղադրյալի նկատմամբ 185-89
փոխհատուցում դրա դիմաց 180
արտաքսելիս 208-14
կալանավորին վնասվածքներ պատճառելը 180-81
կալանք, դրա պայմանները 189-98
անհետ կորած անձնավորություն, նման անձի հարազատների նկատմամբ ցուցաբերված 184-87
նման գործողություն կատարելու միջոցով ձեռք բերված ապացույց 433
հանձնում (էքստրադիցիա) կամ արտաքսում 199-216 *տե՛ս նաև* **հանձնում** (էքստրադիցիա)
հարկադրական կերակրում 192-93
հարկադրական բժշկական օգնություն 196-97
դրա լրջությունը 179
առողջության խնամք, կալանավորներին մատուցվող խնամքի որակը 196
հերոինից կախվածություն, բանտարկյալի օրգանիզմից դրա հեռացման հետևանքով առաջացած ախտանշանները չբուժելը 195-96
տներ, դրանց քանդումը 189
վնասվածքներ, պատճառահետևանքային կապը դրանց հետ 178-79
հոգեկան տառապանք 182-89
հոգեկան հիվանդ անձ, նրա նկատմամբ այդպիսի վերաբերմունքը 192-95
խստության նվազագույն աստիճան 179
փոքրամասնություն հանդիսացող խմբի նկատմամբ 209
ֆիզիկական բռնություն 178-82
կանխամտածված 204
մասնավոր անձինք, նրանց գործողությունները 214
ուժգին ֆիզիկական և հոգեկան տառապանք 182

միայնակ բանտարկություն 191, 194,197-98
մերկ խուզարկություն 191-92
բացահայտ խոշտանգում 167, 155
վերաբերմունք, որը հանդիսանում է 201
դատավարություն և բանտարկություն, դրանց հետևանքները 188
գիտակցությունը կորցրած բանտարկյալներ, նրանց շղթայելը 198
անմեղություն, անմեղության կանխավարկած 459-67
ապացուցման բեռը, դրա անընդունելի վերաբաշխումը 464
քաղաքացիական հայցեր, որոնք հիմնվում են այնպիսի իրադարձությունների վրա, որոնք արդեն իսկ հանդիսացել են քրեական վարույթի առարկա 467
ծախսեր, դրանց առնչվելը 459-60
քրեական և փոխհատուցման վարույթ, դրանց փոխհարաբերությունը 465-67
ֆինանսական առգրավման վարույթ թմրանյութերի մաքսանենգությամբ զբաղվելու համար դատապարտված անձի դեմ, կիրառելի չէ այդ դեպքում 465
դատական իշխանություն, իրավախախտում դրա կողմից 462-63
օրենքի կամ փաստերի կանխավարկածներ, դրանց արդյունքը 463-64
պաշտպանության իրավունք, այն իրացնելու անկարողությունը 460
դա ոտնահարող հայտարարություններ պետական պաշտոնյայի կողմից 461
խիստ պատասխանատվություն, դրան ենթակա օրինախախտումները 464
կոնվենցիայի տեքստը 1072
անվտանգություն
դրա իրավունքը, կոնվենցիայի տեքստը 1070-71
անչափահաս
մարդասպանություն գործած անչափահասների անորոշ ժամկետով ազատազրկում 344-46
անչափահասներ
կրթության վերահսկում և այլն, կալանավորումն այդ հիմքով 284-86
անուն
ունենալու իրավունք 521-23
ապօրինի տնօրինում
գույքից զրկում ինչ-որ մեկի կողմից 996-97
առաջին ատյանի դատարանում քննություն, դրա թերությունները 437
արբիտրաժային որոշում
իրավակիրառելի պարտավորություն, դրա ծագելը 971–72
արդար դատաքննություն, դրա իրավունքը
մրցակցային վարույթի իրավունք 421
խախտման արձանագրումը 437
ամբաստանյալ երեխաներ 434-37
քաղաքացիական իրավունքներ և պարտավորություններ, վարչական վարույթի որոշումը
տնողությունը 361
բացառումը 357
անձամբ ներկա լինելու [մասնակցելու] իրավունքը 398-400
երեխաներին վերաբերող գործերի քննարկումներ 554-55
գանգատ, որը ներառում է դրա վերաբերյալ հարց 356-57
դրա հասկացությունը 358
վիճաբանություններ 374-78
վեճեր, ապացույցը 374-78
[«զենքերի հավասարություն»] կողմերի հավասարություն 419-20
հողային գործարքների համար թույլտվություն 355–58
բնույթը 358–9
անձնական և տնտեսական բնույթը 366–7
քաղաքական 373-74
մասնավոր իրավունքի շուրջ առաջացած վեճեր 359-60
մասնավոր իրավունքին բնորոշ առանձնահատկությունները 366-67
հանրային իրավունքով սահմանված իրավունքները 365-66
պետական ծառայողների և պետական մարմինների միջև վեճերի բացառումը 369-72
անշարժ գույքի սեփականությանը վերաբերող 365
դրանից օգտվելու իրավունքը 398
արտոնագիր ունենալու իրավունքին վերաբերող դատավարություն 363
սոցիալական ապահովագրության և անապահովության նպաստների առումով 365-69
հարկային վարույթներ 372-74
կոնվենցիայի տեքստը 1071
ոչ արհեստավարժ պահվածքի համար վարույթ 358
բժշկությամբ զբաղվելու թույլտվության չեղյալ հայտարարման վերաբերյալ վարույթ 360, 362
կլինիկա վարելու թույլտվության չեղյալ հայտարարման վերաբերյալ վարույթ 360, 358, 362
դրույթին համապատասխանելը 363-64
ծախսերի վերաբերյալ դատական որոշումներ 440
դատարան, բացարձակ առավելությունից օգտվելու իրավունքը, հետևանքը 409-11
իրավաբանի օգնությունից, դատարանի առջև կանգնելն առանց այդպիսի օգնության 398-400
ծախսերի վճարումից 412
դատարան դիմելու իրական հնարավորություն 398
ֆրանսերեն տեքստից, ֆրանսերեն նշումներ 395
ենթադրվող սահմանափակումներից 397
ներհատուկ իրավունքից 396
բանավոր թարգմանությունից 396-97
իրավական օգնությունից, դրա տրամադրում 399-400

սահմանափակումից, դրա արդյունքից 400-402
ամուսնական գործով վարույթ 398-400
պատգամավորական անձեռնմխելիությունից, դրա արդյունքից 410
ոստիկանական անձեռնմխելիությունից, դրա արդյունքից 402-403
կիրառությունից 400
բանտից, բռնություն բանտում 394-400
փախստականների քաղաքացիական հայց ներկայացնելու հնարավորությունից, դրանց գնահատումը 407
կարգավորումից 401, 404
գործողությունների սահմանափակումներից 400, 404
ազգային անվտանգության ապահովումից, դրա արդյունքից 402
պետական անձեռնմխելիությունից, դրա արդյունքից 403-409
հայտարարությունից 395
նյութական և ընթացակարգային սահմանափակումներից 411-42

ապրանքային նշան
գույքը՝ որպես 967

արհեստակցական միություններ
ընտրում, դրա սահմանափակումներ 801
փակված խանութներ, դրանց գոյությունը 798-800
կոլեկտիվ համաձայնագրեր, դրանց կարևորությունը 807
կոլեկտիվ սակարկման (պայմանագրային) պայմանավորվածություններ 797-8
ճանաչելու պարտականությունը 798
մեքենավարների 796-7
Հաղորդակցության ուղիների պետական վարչությունում 814-19
մասնագիտական շահեր, դրանք պաշտպանելու իրավունք 807
ոստիկանության աշխատակիցների 793-5
պետական հատված, արհմիությունը լուծարելը որպես 11-րդ հոդվածի խախտում 793
պատկանելու իրավունքի վերացումը 814
չանդամակցելու իրավունք դրա գոյությանը միջամտություն 800-801
միջամտություն դրա հիմնավորմանը 801-803
պատասխանող պետություն, դրա պատասխանատվությունը 799
շահերի պաշտպանության նպատակով կազմելու և անդամակցելու իրավունք 793-98
Սոցիալական խարտիա 794, 805
անդամների նկատմամբ հատուկ վերաբերմունքը, կոնվենցիան չի երաշխավորում 797
անսահմանափակ բնույթ կրող նյութական (հիմնական) իրավունքներ 797

արտակարգ իրավիճակներ
չարաշահման ժամանակ պարտավորություններից շեղվելը, կանխող երաշխիքները 898-99, 903-904
դատարանի մոտեցումը 895
դատարանի վերանայման լիազորությունները 889
կալանքը դրա աշխարհագրական տարածքից դուրս 905
դրա պարագայում առանց դատական վերանայման կալանքը 901-906
կալանքի լիազորությունները 883-901
ապացույցները 890
չափը 905
իրավիճակի հույժ լրջությամբ պայմանավորված 889-92
արտադատական կարգով ազատությունից զրկելը 889-91
ձևական պահանջները 904
համարժեք արձագանք, որպես 896
երաշխիքներ, դրանցից 891-92
դատական վերահսկողություն, դրանց հիմնավորված բացակայություն 897-987
օրինականություն, դրա գնահատումը 900-901
խստորեն պահանջվող միջոցներ 885-86
խստորեն պահանջվող միջոցներ 896-99, 902-903
նյութաիրավական հիմքերը [էական հանգամանքները] 890-92
Հյուսիսային Իռլանդիայում 883-901
ծանուցում 887-88, 892
միջազգային օրենսդրությամբ սահմանված այլ պարտավորություններ, դրանք չկատարելը 886-87, 892, 899-900
վաղաժամկետ 896-97
կոնվենցիայի տեքստը 1074
օրինականությունը 893-900
երկար տևողությունը 901
ազգի կյանքին սպառնացող 884, 888-89, 895

արտահայտում, դրա ազատությունը
հղիության արհեստական ընդհատման [աբորտի] վերաբերյալ խորհրդատվություն 741-46
գեղարվեստական ստեղծագործության միջոցով միջամտությունը
ժողովրդավարական հասարակության պայմաններում անհրաժեշտությունը 697-99
օրենքով սահմանված լինելը 696-97
հետապնդվող նպատակների օրինականությունը 697
անպարկեշտ տեղեկատվության հրապարակումը, նկարների՝ այդպիսին հանդիսանալը 695-99
քաղաքական հայտարարություն կամ ուղերձ 700-701
ստեղծագործությունների մատչելիությունը սահմանափակելը 700
հեռարձակումը, հեռուստատեսություն կամ կինո, լիցենզավորումը 716-21

գրաքննություն, դրա միջամտությունը 636
առևտրային քննադատություն, արծագանքը դրան 706
պաշտպանության աստիճանը 706
ծառայություններից նախկինում օգտվող անձինք, նրանց ուղղված շրջաբերական նամակ 707
պատմությունը 710
դատական ծախքերը վճարելու հնարավորություն չունեցող ամբաստանյալներ, նրանց տրամադրվող իրավաբանական օգնությունը 709-10
միջամտությունը անհրաժեշտությունը ժողովրդավարական հասարակությունում 704-5
օրենքով սահմանված լինելը 703
հետապնդվող նպատակների օրինականությունը 703-4
իրավաբան, գովազդ նրա կողմից 707-9
հասարակական ընտրության տեսության տնտեսական վերլուծություն 711
փոքր և միջին ընկերություններ, նրանց շահերի պաշտպանությունը 702-6
դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք, հրապարակման կանխում դրա սպառնալիքի տակ 667-73
դատական գործեր, դրանց քննադատությունը 746-51
զրպարտության վնասներ, դրանց չափը 728-734
պարտականություններ և պատասխանատվություն 659, 721-24
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մոտեցումը 657-73
օտարերկրյա արբանյակների միջոցով հաղորդումներ ընդունելը 712-75
սահմանված կարգը պայմանները, սահմանափակումները կամ տուգանքները, որոնք ենթակա են ժողովրդավարական հասարակության պայմաններում անհրաժեշտության 728-34
հետևանքները 724-27
օրենքով սահմանված 727-28
ժողովրդավարական հասարակության ձևավորում, որպես 659
տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու իրավունքը 712-15
միջամտությունը անհրաժեշտություն ժողովրդավարական հասարակությունում 659-61, 670-72, 679-80
օրենքով սահմանված լինելը 668-69, 680
հետապնդվող նպատակների օրինականությունը 669-70
դատավորների իշխանության և անկողմնակալության պահպանումը 753-55
կարգուկանոն պահպանելը կամ հանցագործությունը կանխելը 737-41
առողջության և բարոյականության պաշտպանությունը 741-46
ազգային անվտանգության պաշտպանությունը 734-36
հասարակական կարգի պաշտպանությունը 736
այլոց համբավի կամ իրավունքների պաշտպանությունը 746-53
տարածքային ամբողջականության պահպանումը 736
բարոյականության պաշտպանության նպատակով 658, 660
պետական իշխանությունների [մարմինների] կողմից 658, 668
սահմանափակումներ և տուգանքներ 658
լրագրողների պաշտպանությունը 751-52
հայեցողության սահման 659-60
անպարկեշտ գրքի հրատարակում 657-61
կարծիքներ ունենալը 711-12
լուսանկարների հրապարակումը 602-3
քաղաքական ասպարեզում մեկնաբանության ընդունելի սահմանները 677
մասնավոր սեփականություն մուտք գործելն այդ նպատակով 662-63
գովազդը 692-95
թեկնածուների հայացքները, դրանց մասին լոբբիստական խմբերի կողմից ընտրողների տեղեկացումը 686-88
քաղաքացիական ծառայողներ, նրանց քննադատությունը 682
իրավասության առնչությամբ հակասություն 690-92
քրեական տեղեկություններ, դրանց մանրամասների հրապարակումը 676
քննադատական հոդվածների հրապարակումը 673-75
լրատվամիջոցների զրպարտչական հայտարարություններին հակադարձելու ունակություն 681
ընտրված ներկայացուցչի համար կարևորությունը 678
կառավարության հաստատություններին ուղղված 677-78
դատավոր, նրա գիտական հայացքները 690-92
տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողները, քաղաքականությանը նրանց մասնակցությունն արգելելը 688-89
հարցազրույցների վրա հիմնված տեղեկատվության տրամադրումը 684-85
կարծիքների և գործունեության պատճառով պետական աշխատողին աշխատանքից հեռացնելը 711-12
ընդդիմադիր քաղաքական գործիչների կողմից բարձրաձայնված 678
հասարակական հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր, նաև 683-84
ոստիկանության աշխատակիցների քաղաքական գործունեության սահմանափակումը 689-90

քաղաքական բանավեճում կարծիքների արտահայտումը 680
բանտապահների հասցեին արված դիտողություններ 682-83
ժողովրդավարական ներկայացուցչական հանրային հաստատություններում 681
հանրային չհանդիսացող 683
այլոց համբավի պաշտպանությունը 674
հարկային հարցերի վերաբերյալ 684
Թուրքիայի կառավարության կողմից քրդերի նկատմամբ վերաբերմունքի քննադատությունը 678-79
անօրինական ռասիստական հայացքների արտահայտում 685-86
բռնության կոչեր 679-80
դրական պարտավորություններ 661-62
հրապարակում, քաղաքական և սոցիալական համատեքստ 722
ռասիստական հայացքների արտահայտում հեռուստահաղորդման ժամանակ 685-86
անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի հետ հավասարակշռումը 602-604
իրավունքների և սահմանափակումների հարաբերությունը 673
իմաստը 721
կոնվենցիայի տեքստը 1073
թափոորոշչի համապարփակությունը 666

արտաքսում
մարմնական պատիժ, կանգնելու դրա առաջ 216
կալանք՝ դրա սպասումով 298-304
ընտանեկան կյանք, որպես դրա հանդեպ հարգանքի իրավունքի խախտում 548-52
անմարդկային վերաբերմունք հանդիպել 208-14
արդյոք դա է 198-216
բժշկական խնամք, դրա բացակայությանը բախվելը 211-15
ազգային անվտանգության հիմքերով, այդ մասին որոշում 844-45
հանրային բարօրություն, երբ ներկայությունը հակասում է 209-210
արտաքսված անձի համար վտանգի գնահատում 220-11
կատարելու համար անհրաժեշտ ժամանակը, տեղինությունը 298-302

բանտարկություն
կալանք *տե՛ս* **կալանք**
ցմահ ազատազրկում *տե՛ս* **ցմահ ազատազրկում**

բռնաբարություն
խոշտանգումը, որպես 171-72
կնոջ 491-95

Բելգիա
փաստաբաններ աշխատանքի ընդունումը նրանց կողմից 238
հարկադիր աշխատանք, դրանում մեղադրելը 237-44
ստաժորներ, ֆինանսավորումը 237-38
կանոններ նրանց համար 237
կրթություն, դրա լեզուն 1009-1013
թափառաշրջիկներ, դրանց կալանավորումը 320-24

բժշկական արձանագրություններ
գաղտնազերծումը՝ որպես անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի խախտում 526-27
ՄԻԱՎ վարակակրություն, գաղտնազերծելու պահանջը 526-27

բողոքարկում (գանգատարկում)
ուղղակիորեն մատչելի պատասխանողին 1057
կամավոր կերպով կալանքի տակ առնվելու չներկայանալը, բողոք ներկայացնելու իրավունքից զրկելը 1056-57
դրա իրավունքը քրեական գործերով 1028, 1054-57

բուսակերություն
որպես հավատք 638

գնչուներ
քաղաքային խորհրդին պատկանող վագոն-տնակի տեղամաս, արտաքսում այդպիսի տեղամասից 576-77
ավանդական կենսակերպ, դրա նկատմամբ հարգանքի իրավունք 604-605

գործողությունների սահմանափակում
անհատական գանգատներ 27-8
որպես դատարանին դիմելու իրավունքի սահմանափակում 400-402

գրավի դիմաց ազատ արձակում
դրա ավտոմատ մերժումը 317-318

դատավարություն
արդար դատավարություն, դրա իրավունքը *տե՛ս* **արդար դատավարություն, դրա իրավունքը**

դատավճիռ, դրա հրապարակումը 457-59

դատարանի վճիռների իրականացում, դրա ձախողումը 412-43

դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք
ընդհանուր իրավունք, օրենքով սահմանված կարգով վերափոխում 673
հրապարակման կանխում դրա սպառնալիքի տակ 667-73

դատաքննության ընթացակարգ
համապատասխանությունը՝ որպես քննության մեխանիզմ 84-85
սպանության օրինականություն, այդ մասին դատավճիռը 82
արտաքսում, դրա արգելումը 1083

երեխա
լքված, նրան տեղեկությունների տրամադրումը 598-99
որդեգրում
համասեռամոլներ, խտրականություն ընդդեմ 871
պետական կարգավորում 561-62
ամբաստանյալ, վերաբերմունքը նրա նկատմամբ 185-89
նրա հետ շփվելն արգելելը 560
ապօրինի խտրականություն նրա դեմ 863-65
նրա կարգավիճակը 545-46

մոր ինքնության գաղտնիության պահպանում, դրա ֆրանսիական համակարգը 599
ծնողների հետ վերամիավորվելուն ուղղված դրական քայլեր 561
պետության խնամակալության տակ վերցնելը
նման որոշումների վիճարկումը 552-59
հաղորդակցությունը ծնողների հետ, դրա սահմանափակումը 559-60
տեղեկությունների բացահայտում, պատասխանատվությունը դրա համար 556
հայեցողություն ընթացակարգում 551
փաստաթղթեր և տեղեկություններ, դրանց մատչելիությունը 552-55
արտակարգ խնամքի և սովորական խնամքի կարգադրություններ, դրանց քննությունը 558-59
արդար ընթացակարգեր որդեգրելը 552
արդար դատաքննություն, դրա իրավունքը 552-53
միջամտություն ընտանեկան կյանքի հանդեպ հարգանքի իրավունքին, որպես 552-53
խնամքի տրամադրման վայր 557
հայեցողության սահման 553, 558
նորածին երեխա 558
երեխաների ծնողներ, արդար հավասարակշռություն նրանց շահերի միջև 559-60
ծնողներ, որոշումներում ներգրավվելը 551-52, 557
գրառումներ, դրանցից օգտվելու իրավունք 598-99
իրավունքների սահմանափակումներ, դրանց հիմնավորումները 558-59

Եվրոպական խորհրդարան
Եվրոպական համայնքի օրենսդրական գործընթաց, դերն այդտեղ 1029
Ջիբրալթար, ընտրություններ չանցկացնել այնտեղ 1025-31
օրենսդիր մարմին, արդյոք դրա բնութագրերն ունի այն Ջիբրալթարում 1028-30
ազատ ընտրությունների իրավունք, դրա կիրառությունը 1027-28

Եվրոպայի խորհուրդ
Նախարարների կոմիտե 8
գործունեության վերլուծություն 13
դիմումներ, դրանց որոշումը 13
սահմանադրական հիմք 13
գնահատման խումբ 51-52
որոշումներ ընդունելու նախնական իրավասություն, դրա վերացումը 14
լիազորությունները 1081
Մարդու իրավունքների մշտական հանձնաժողով 53-54
Խորհրդակցական վեհաժողով 1949
Իրավական և վարչական հարցերի կոմիտե
առաջին նիստ 2-10
կոնվենցիայի նախագիծ 7-9
դրա ձևավորումը 1
Գլխավոր քարտուղար, նրա հարցապնդումները 1081

Եվրոպայի կոնգրես
հռչակագիրը 1-2

Եվրոպական շարժման միջազգային խորհուրդ
Եվրոպական Միության սկզբունքների հռչակագիրը 2

Եվրոպական շարժում
Միջազգային կոմիտեն, դրա ձևավորումը 1
Միջազգային խորհուրդը, Եվրոպական Միության սկզբունքների հռչակագիրը 2
Միջազգային դատական բաժինը 2

երդվյալ ատենակալի ծառայություն
պարտադիր ծառայություն 246-47

երդվյալ ատենակալներ
սուբյեկտիվ կանխակալություն, դրա հաստատումը 450-52

«զենքերի հավասարություն» (կողմերի հավասարությունը)
քաղաքացիական վարույթի շրջանակներում 419-20
համապատասխան փաստերի բացահայտումը 413-18
ինստիտուցիոնալ կարգադրություններ 418-19
հանրային շահի հիմքով պաշտպանված փաստեր 416

զինված հակամարտություն
միջազգային մարդասիրական իրավունք, դրանով կարգավորվող 70-71

զինված ուժեր
հոմոսեքսուալիստներ այնտեղ 511-18
ռասայական խտրականության, դրա հետ գործ ունենալը 515-16
կրոնական համոզմունքներ, պաշտոնից ազատելն այդ հիմքով 639-41
սեռական բռնություն (ոտնձգություններ) և հալածանք, դրանց հետ գործ ունենալը 516
առողջական հատուկ ռիսկեր, դրանց մասին տեղեկությունների իրավունքը 605-606
զրպարտչական հայտարարություններ, այդ դեպքում իրավունքների վերականգնումը 410-11

զրպարտություն
վնասներ, դրանց չափը 728-734
արտահայտման ազատություն տե՛ս **արտահայտում, դրա ազատությունը**

ընտանեկան կյանք, *տե՛ս* **անձնական և ընտանեկան կյանք, դրանց նկատմամբ ընտրություններ**
ազատ, դրանց իրավունքը
թեկնածուներ, նրանց իրավունքները 1031-33
նախադեպային իրավունք, դրա վերլուծությունը 1039
Եվրոպական խորհրդարան դիմելը 1027
Ֆլամանդական խորհուրդ 1031-33
Ջիբրալթարում 1025-31
Հունաստանի խորհրդարանական ընտրություններին մասնակցելու իրավունք չունենալը 1033-34
անհատների կողմից իրավակիրառելի 1031
տեղական իշխանություններ 1034

քրեական մեղադրանքներից արդարացված անձի բացառումը 1034-35
արձանագրության տեքստը 1082
ծագումով թուրք կիպրոսցի փոքրամասնության ընտրելու իրավունքը 1036-37
ազգային խորհրդարանի լեզուն սահմանելը 1035-36
Հունաստանի խորհրդարանում ընտրվելու իրավունքը 1033-34
ենթադրվող 1031
լեզվական պահանջներ 1031-33, 1035-36
հեղաշրջման փորձի մասնակցած անձանց նկատմամբ արգելքը 1038
բնակության վայրի պահանջները 1037
դատապարտված անձանց ընտրելու իրավունքը, դրանից զրկելը 1038
ենթադրյալ 1031

թարգմանիչ
ունենալու իրավունքը 478-81
թափառաշրջիկներ
Բելգիա, կալանք Բելգիայում 320-24
սահմանումը 322
կալանավորման իրավականությունը, դա վիճարկելը 320-4
իրավունքների ոտնահարում, արդարացի բավարարում 915-19

ինքնասպանություն
օգնություն ստանալով, դրա արգելքը 532
օգնություն գործելու համար, նման խնդրանք 114-15,166-67
անձ, ով ի վիճակի չէ ինքնասպանություն գործել, խտրականություն ընդդեմ նրա 867
Իտալիա, դատավարական ուշացումներ Իտալիայում 441-42
իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, դրա իրավունքը
հանրագումարի համապատասխանությունը 845
գանգատների ուղիները 837
քաղաքացիական դատավարությունն արագացնելը 850-52
նամակագրությանը միջամտելու դեմ 835-37
պետական որոշման վրա ժամանակավոր արգելք դնելու իրավասություն չունենալը 840
դրա մեկնաբանությունը 835-37
դատական [կարգով] վերանայումը՝ որպես 838-44
իրավաբանորեն պարտադիր [պարտադիր իրավական] ուժ ունեցող կարծիք հրապարակելու իրավասության բացակայություն 838
իմաստը 837
պետական մարմիններից 835
ազգային անվտանգության հարցեր 838, 841-45
բնույթը 837-38
երբ չի արձանագրվում կոնվենցիայի նյութական իրավունքի խախտում 837
կոնվենցիայի տեքստը 1073
անհիմն ձգձգումների վերաբերյալ բողոքների առումով 846–50
կոնվենցիայի նյութական իրավունքների խախտման հետաքննությունը 845
իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառում
վարչարարական պրակտիկա, որը պահանջը դարձնում է անօգուտ 29
ընդունելիության չափանիշները, որպես 26-9
ապացուցման բեռը 27-8
միջպետական դիմումները, որոնք կապված չեն այդ պարտավորությամբ 27
իրավունքների սահմանափակումներ, դրանց կիրառման սահմանափակում
դիմողը հաջողությամբ ճշում է 913
գանգատ, որը կապված է այլ հողվածների հետ 911-13
ազատություն, դրա սահմանափակումը 911-12
կոնվենցիայի տեքստը 1074
իրավունքների չարաշահում
արգելում 1074

լռություն, լռություն պահպանելու իրավունք
սա ոտնահարող դեպքեր 431-33
կալանավորները Հյուսիսային Իռլանդիայում, հարցերին պատասխանելու պահանջ 430
հերոինի գործածության դադարեցում, մեղադրյալներ, ովքեր տուժում են դրանից 429
դրանից բխող եզրակացություններ 422-30
միջազգային ստանդարտ, որպես 423
լուծողական (փսխում) առաջացնող դեղամիջոցների հարկադրական կիրառություն 433

խաղաղասիրություն (պացիֆիզմ)
որպես հավատամք 636-37
պաշտպանության ծախսեր, դրանց հետ կապված հարկեր վճարելուց հրաժարում 637
Եհովայի վկաներ, նրանց հավատքը 638
խոշտանգում
Աթենքի ոստիկանության կողմից 170-71
«բաստինադո» (փայտով հարվածելը) 170
փոխհատուցում ստանալը 158,169
դրա հայեցակարգը 159-60
մարմնական պատիժը՝ որպես 164-66
մասնավոր անձանց կողմից քրեորեն պատժելի անբարյացակամ վերաբերմունք ցուցաբերելը, դա հետաքննելու պահանջը 163-4
մահապատժի դատապարտվածների խուց, զոհին պահելը՝ առանց իրավական հիմքի 175-6
սահմանում 173
այն կանխամտածված կերպով պատճառելը 168
կանխամտածված վատ վերաբերմունքը՝ որպես 172-73
Եվրոպական Միության անդամ պետության կողմից 174
դրա ապացույցը 167-8
«ֆալանգա» 170

ստիպողական կերակրելը՝ որպես 176-7
վատ վերաբերմունքի ձևերը՝ որակված որպես 168, 172-6
վատ վերաբերմունք, դաժանության նվազագույն մակարդակ 154-5
անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք, դրա տարբերակումը 167
զոհ չհանդիսացող իրավաբանական անձինք 160
վատ վերաբերմունք, որը հանդիսանում է 159-60
Հյուսիսային Իռլանդիայում, այդ մասին հայտարարություններ
գանգատի ընդունելիությունը 158
Բելիքինլեր-ում [Ballykinler] 156-57
գործը 152-60
փոխհատուցում, այն ստանալը 158
դատարանի կազմը 159
հետագա կարգադրություններ, դրանց վերաբերյալ Իռլանդիայի պահանջը 157-8
դրա վերաբերյալ որոշումը 158
առարկող կարծիքներ 159-60
հարցաքննության կենտրոններում 155
էությունը, դրան վերաբերող հարցեր 154-58
չբողոքարկված բռնություններ 153-54
ոստիկանության զորանոցներում 156
դրան վերաբերող նախաձեռնությունը 153
տարբեր վայրերում 157
պաշտոնական քննություն, այն անցկացնելու պարտավորությունը 161-63
«պաղեստինյան կախաղան» 167-8
քաղաքական կալանավորներ, նրանց հանդեպ կիրառված 170
կանխարգելելու նպատակով դրական քայլեր, դրանք ձեռնարկելու պահանջը 164
գործող պրակտիկան 160
արգելում
բացարձակ տեսակետից 168
քաղաքացիական և քրեական վարույթ, կանոնի արդյունքը դրանց ժամանակ 405
դատարան, դրա մոտեցումը 151-67
դատարան, դիմելու իրավունքը 405-406
բացառություններ, որ դրան ենթակա չեն 160, 201, 226
թարգմանություն 204
որպես բացարձակ նորմ 404
կոնվենցիայի տեքստը 1070
ապացուցում, դրան վերաբերող հարցեր 154
կալանավորի բռնաբարությունը՝ որպես 171-2
դրան վերաբերող հասկացություններ 155
ուժեղ ցավ և տառապանք, դրանք պատճառելը 173-4
պետական պաշտոնյաներ, ոչ պատշաճ վերաբերմունք նրանց կողմից 170
պետության պատասխանատվությունը դրա համար 165
ՄԱԿ-ի կոնվենցիան 201

խոշտանգում
սեփականության պաշտպանությունը, մոտեցումը դրա վերաբերյալ 943-54 *տե՛ս նաև* **սեփականություն**
թիվ 11 արձանագրության համակարգը
նախապատմություն 14-15
ստեղծումը 15
թիվ 14 արձանագրության համակարգը 51-83
դռնբաց լսումները 1078
զեկուցողները 1094
դիմումների գնահատումը 56
գրասենյակի ղեկավարը 19
տեղակալը 61
գրասենյակը 20, 1075, 1094
«հաշտության համաձայնության» միավոր, դրա վերաբերյալ առաջարկը 60-61
իրավաբաններ, վերապատրաստումը 61
փուլային կարգով ընդլայնում 53
արբանյակային/սատելիտային գրասենյակներ, դրանց վերաբերյալ առաջարկը 60
կրթության իրավունքը, մոտեցումը դրա վերաբերյալ 1009-1015 *տե՛ս նաև* **կրթություն**
կյանքի իրավունքը, մոտեցումը դրա վերաբերյալ 81-115 *տե՛ս նաև* **կյանք, դրա իրավունքը**
սպասարկվող գործերի թվաքանակի աճ 48
բաժիններ 18
միացյալ, կառուցվածքի ուրվագծումը 14
միանձնյա դատավորով կազմավորումը 56
գործը ցուցակից հանելը 42-46
տեքստը 1069-98
երրորդ կողմի միջամտությունը մինչև 1075
երեք դատավորների կոմիտեներ, դրանց իրավասությունների ընդարձակումը 56-57
միակողմանի հայտարարություն, դրա ընդունումը 42-46
գործերին անդրադառնալու տարբեր մակարդակներ 52
աշխատանքային մեթոդների վերանայումը 60
աշխատածավալի ճգնաժամային վիճակ, դրա հանգուցալուծման տարբերակները 52

խոռվություն
այն ճնշելու համար ձեռնարկված միջոց 145-7

խտրականություն
դրա մեղադրանքների քննությունը դատարանի կողմից 828
«Բելգիայի լեզվաբանական գործ» 639-41
ծննդյան հիման վրա 861
վերաբերմունքի տարբերությունը, դրա որոշումը 856
ընտրացուցակում գրանցել հրաժարվելը 876
էթնիկ 876
կնոջը կորցրած տղամարդուն դրամական օժանդակություն վճարելու առումով 863
ընդհանուր արգելումը 1089
համասեռամոլներ, ամուսնական համաձայնության տարիք 870

ծննդյան օրինականության հատկանիշի հիման վրա 863-65
տղամարդկանց նկատմամբ սահմանված օրինական պարտականությունները 861
ազգության հիման վրա տարբերակված մոտեցում, որն ազդում է կոնվենցիայով սահմանված իրավունքների վրա 865
անաչառ և ողջամիտ հիմքերի վրա հիմնված՝ վերաբերմունքի տարբերություն 861
հանցագործներին կոնկրետ մասնագիտությամբ զբաղվել թույլ չտալը 866-67
դրական 880
հավասարության սկզբունքը 877
դրա արգելումը
ընդհանուր 878-81
անկախ 877
մեկնաբանումը 856
սահմանափակումները 877
անխտրականության հիմքերի ցանկը 879
դրական պարտավորությունները 880
քիվ 12 արձանագրությունը 877-881, 1089-90
պետական իշխանությունների կողմից 880-81
ամուսիններին թույլ չտալը մուտք գործել և հաստատվել ՄԹ-ում 857–62
օրենքով սահմանված իրավունքներ 880
պաշտպանության տարածման ոլորտը 879
նյութական իրավունքների և ազատությունների հետ առնչությունը 857
կոնվենցիայի տեքստը 1073
ռասայի հիման վրա 860-61
ռասայական շարժառիթներով սպանություն 871-876
ռասիստական շարժառիթները հետաքննելու պարտավորություն 873-76
կրոնի հիման վրա 865-67
սեռի հիման վրա 857-60
սեռական կողմնորոշման հիման վրա 868-71
նյութական իրավունքի խախտում 877
ինքնասպանություն, անձինք, որոնք ունակ չեն այդ կատարել 867
չհիմնավորված տարբերակումների գոյությունը 856-57

ծառայությունից հրաժարվող՝ համոզմունքներից ելնելով
պարտադիր զինվորական կամ քաղաքացիական ծառայություն, նրանց հանդեպ հարկադիր աշխատանքի մասին պնդումներ 245-46

ծուղակը գցելը
այդ միջոցով ձեռք բերված ապացույցներ 416-18

կալանք
կամայական, ազատությունը դրանից 258
ապաստան որոնողի 303
գրավի դիմաց ազատ արձակելու ավտոմատ մերժումը 317-318
համայնքային հարկ, այն չվճարելը 275
դատապարտում, դրա հետևանքով և դրանից կախված 266
դատարանի որոշմամբ 323
պարտավորությունների մասնակի վերացումը արտակարգ դրության պարագայում 883–901 տե՛ս նաև **արտակարգ դրություն**
քննությանը սպասելիս 272-74
տնական ժամանակահատվածներ, փոխհատուցում դրա դիմաց 925-27
խարդախության կասկածանքով 277-79
հիմքերը վիճարկելը 335
կալանավորված անձի գինեկոլոգիական հետազոտությունը որպես միջամտություն նրա անձնական կյանքին 532-33
վերանայմանը ենթարկված դատական նիստեր, հրապարակային լինելու պահանջի բացակայություն 326
անորոշ ժամկետով 344-46
կալանված անձին դրա անհրաժեշտության պատճառների մասին տեղեկացնելը 1072
բավարարությունը 304-306
թույլտվության՝ դատական կարգով վերանայումը 306
հիմնավորման դադարելը գոյություն ունենալ 335
օրինականությունը 302
պահանջները 263
որոշման օրինականությունը, դրա վերահսկման իրավունքը 322, 333
օրինականությունը, վիճարկող դատարանում 323–24
ազգային անվտանգության հիմքերով, այդ մասին որոշում 324
ընթացակարգային երաշխիքներ 324
թափառաշրջիկներ, նրանց վերաբերող գործեր 320-24
կամավոր հայտնելու դեպքում 320-24
ցմահ ազատազրկում տե՛ս **ցմահ ազատազրկում**
մտավոր թերզարգացած անձի 327-31
զինվորական անձնակազմի ներկայացուցչի 307-308
օրինականությանը վերաբերող նոր հարցերի բարձրացումը 332
պաշտոնատար անձի կողմից, որը լիազորված է դատական իշխանություն իրականացնել 306-307
տևողությունը 306-320
հարբեցողների նկատմամբ կիրառելու թույլատրելի հիմքերը 295-98
իրավասու դատարան, դատապարտումը դրա կողմից 266-71
դատարանի որոշում, դրան չենթարկվելը 271-77
արտաքսելը կամ այլ երկրին հանձնելը, դրա համար 298-304 տե՛ս **նաև արտաքսում, այլ երկրի հանձնելը**
կրթության [դաստիարակության] վերահսկողություն և այլն, անչափահասների 284-86
մտավոր թերզարգացած անձինք 290-95
օրենքով նախատեսված պարտավորություն, այն չկատարելը 271-77

քրեական հանցագործության ողջամիտ կասկած 277-284
անձն այդ վիճակում, հաշիվ տալու պարտավորություն 259-263
նախնական վարույթ, վստահությունը խախտելու վերաբերյալ գործի ժամանակ 374
վարույթի իրականացումը 319
տնտեսական հանցագործություններ, դրանց առումով 318–20
հիմքերը 319
դատական վերահսկողություն 306-307
առավելագույն երկարություն, այն չներառելը 317-318
անհապաղություն, դրա գնահատումը 312
ողջամիտ ժամկետ, իմաստը 313, 316
ահաբեկչության համար կասկածյալների 308-11
հասարակական կարգի նկատմամբ սպառնալիքի, դրա գոյությունը 311-12
ինքնությունը բացահայտել հրաժարվելու առումով 276-77
զինվորական ծառայություն իրականացնելուց հրաժարվելու համար 269–70
նախնական կալանքի երկարացում, զենքերի հավասարությունը դրա համար դիմելիս 326
անվտանգության նկատառումներով ստուգման համար 274-75
ահաբեկչության կասկածանքով 279–284
ՄԻԱՎ վարակի փոխանցումը կանխելու նպատակով 287–89
ապօրինի կալանք, փոխհատուցումը դրա դիմաց 347–48

կենդանիներ
ծիսական զոհաբերություն [կրոնական պահանջների համաձայն կենդանիների մորթ , դրա իրավունքը 647

կինո
արտահայտման ազատություն, լիցենզավորում 716-721

կիրառում [իրավակիրառություն]
համակարգերի բարեփոխումը 51

կյանք, դրա իրավունքը
դատարանի մոտեցումը դրան 81-115
դրա սկիզբը 108-110
քաղաքացիական կամավորներ՝ անվտանգության մասնագիտացված ուժերի հետ գործակցությամբ, պատասխանատվությունը նրանց գործողությունների համար 102-104
քրեական իրավունքի արդյունավետ միջոցներ, դրանց միջոցով պաշտպանությունը 117
մահապատիժ 132-44, 204 *տե՛ս* նաև մահապատիժ
կյանքից զրկումը, դրա հիմնավորումը 82
անհետացումներ, դրանց համար պատասխանատվությունը 104-5
ընտանեկան վեճ, ոստիկանության կողմից ուժի կիրառումը նման վեճերում 98-100
բանտարկյալների վաղաժամ ազատ արձակում, պաշտպանության պարտավորությունը այդ դեպքում 122-23
սպանությունների արդյունավետ հետաքննություն, դա նախաձեռնելու՝ պետությունների պարտականությունը 120-21, 128-32
ապացույցների գնահատում դրա առնչությամբ 85-86
բացառություններ
օրինականորեն կալանավորված անձանց փախուստ, դրա կանխարգելումը 144-5
օրինական ձերբակալություն, որպես հետևանք 144-5
ապստամբություն կամ խռովություն, դա ճնշելու նպատակով ձեռնարկված գործողություն 145-7
անօրինական բռնություն, դրանից պաշտպանությունը 90, 144
անհարկի (թույլատրելի սահմաններն անցնող) ուժ, դրա կիրառումը 98
վտանգի ենթակա կյանքը չպաշտպանելը 118-20
սաղմ, սաղմի իրավունքը 105-10
ուժ, դրա կիրառման բացարձակ անհրաժեշտություն 82, 98-99
Ջիբրալթար, կոնվենցիայի դրույթի կիրառումը Իռլանդիայի հանրապետական բանակի (ԻՀԲ) [IRA] իրականացրած սպանությունների նկատմամբ 85-94
դատարանի կազմը 94
գործողության ծրագրումը և անցկացումը
առնչվող փաստարկները 88-90
վերահսկումը և կազմակերպումը 91-93
դատարանի կողմից դրա գնահատումը 90-93
առարկող կարծիք 93-98
հաշվի առած գործոններ 90
հետախուզության գնահատականները 88-89
զինվորներ, նրանց գործողությունները 90-91
դատավճռի քննադատություն 98
առարկող տեսակետ 93-98
ապացույցի գնահատում, դրա նկատմամբ մոտեցումը 85-6
փաստեր 81-82
դատաքննության ընթացակարգեր, դրանց համապատասխանությունը՝ որպես քննության մեխանիզմ 84-85
դատավճիռ 93
կանխամտածված սպանություններ, այդ մասին հայտարարություն (մեղադրանք) 86-88
վնասակար շինություններ կամ գործունեություն, դրանք կարգավորելու պահանջ 12-3
ինքնասպանություն գործելու հարցում օգնություն, դրա համար խնդրանք 114-15, 166-67
պատանդներ պահել, նման իրավիճակում 98-100
անհատական կյանքը փրկող բուժօգնություն, այն չտրամադրելը 123-24

վնասվածք ստացած կալանավորներ, նրանց բժշկական օգնություն 122
դատաքննության ընթացակարգեր, դրանց համապատասխանությունը՝ որպես քննության մեխանիզմ 84-85
դատաքննության ընթացակարգով կայացված վճիռ
ապացույցներ, դրանց գնահատումը 85-6
կարևորությունը 85
օրինական սպանության վերաբերյալ 82
դիտավորյալ սպանություն 147
միջազգային պաշտպանությունը 498-99
թարգմանություն
առաջին 98
ընդհանուր մոտեցումը 82-83
կյանքը պաշտպանելու պարտավորությունը 83-85
սպանություն դարանակալման ժամանակ 100-101
սպանություններ կամ հարձակում, կանխարգելել չկարողանալը 117-18
մահացու պայթյուն, խուսափել չկարողանալը 124-7
մահացու ուժ և պոտենցիալ մահացու ուժ, դրա կիրառումը 110-13
պետության պատասխանատվությունը մահվան համար, ապացուցման չափորոշիչ 104
հայեցողության սահման 109-10
բժշկական ծառայություններ, դրանց տրամադրումը 123
ռազմական գործողություններ, դրանց ընթացքում քաղաքացիական անձանց նկատմամբ խնամքի պակասը 101-102
բեղմնավորման պահը, այդ պահից սկսած 106, 109
ազգային օրենքներ և պրակտիկա, դրանց համապատասխանությունը կոնվենցիային 83
դրա բացասական կողմը 115
ոչ դիտավորյալ սպանություններ 98
կյանքը պաշտպանելու պարտավորություն 83-85
պետական պաշտոնյաների կողմից ֆիզիկական վերաբերմունք, որը չի հանգեցրել մահվան, այդ կերպ ոտնահարումը 111-12
զենքի կիրառումը ոստիկանության կողմից 112-13
բանտարկյալ, պաշտպանելու դրական պարտավորություն 121-22
կյանքի պաշտպանություն, այդ անելու դրական պարտավորություն 114, 116-27
ռասայական շարժառիթներով պայմանավորված սպանություն 871-76
և մեռնելու իրավունքը 115
միջուկային փորձարկումների առաջացրած ռիսկը առողջության համար, դրանց մասին չզգուշացնելը 116
անվտանգության միջոցներ, ձեռնարկելը 125
անվտանգության ուժերի գործողություններ, մոտակայքում գտնվողների համար վտանգը 101
պետական գործակալներ
նրանց գործողությունների ուսումնասիրություն 98
նրանց կողմից ավելորդ (թույլատրելի սահմաններն անցնող) ուժի կիրառումը 146
նրանց կողմից սպանությունները 84
կոնվենցիայի տեքստը 1070
չծնված երեխայի 105-10
կոնվենցիայով դիմումներ
ընդունելիություն
կոնվենցիայի հետ անհամատեղելի վարչարարական պրակտիկա, պարզելը 29
կոմիտեն, որը որոշում է 34
դրա չափանիշները 30-31, 1076–77, 1096
իրավական պաշտպանության ներպետական միջոցներ, դրանց սպառումը 26-29
համընդհանուր կարևորություն ունեցող գործ 26
անընդունելիություն, դրա հռչակումը 54
պետական իշխանության կողմից 23
անբարենպաստ լուրջ պայմանից դիմողի տուժելը 57
համակարգի օժանդակ բնույթը, դրա շեշտադրումը 28
էական խնդիր, դիմումներ, որոնք նման խնդիր չեն բարձրացնում 54-55
ընդունելիության որոշումը տե՛ս **ընդունելիություն**
Նախարարների կոմիտե, դրա կողմից 14
ընթացակարգերի գծապատկեր 19
մեծ պալատի կողմից 33
«Ընթացակարգային հրահանգներ» 20
«Դատարանի կանոններ» 20
գանգատի փաստեր, դրանց հաստատումը 38
հաշտության համաձայնություն 39-43
այն գտնելը 1077
միջպետական գործում 40-43
որոնելը 1077, 1096-7
միավորներ, դրա առաջարկը 60-61
անհատական
ընդունելի, մի շարք 33
անանուն չլինելու անհրաժեշտություն 30
կոնվենցիայի դրույթները 1076
կոնվենցիայի դրույթների հետ անհամատեղելի չլինելու անհրաժեշտությունը 30-31
ընդունելիության չափանիշները 30, 54-55
դիմողի մահը, շարունակությունը դրանից հետո 25-26, 42
այլ դիմումից էականորեն տարբերվելու անհրաժեշտությունը 30
ապացույցներ, դրանց ներկայացումը 38
կեղծ փաստաթղթեր 31
խումբ, դրա կողմից 23
ածը 51-52
չհիմնավորված 31
սահմանափակման ժամկետ 29-30
ըստ էության քննություն 38-39
մունիցիպալ կառավարմամբ քաղաքի կողմից 23
էական խնդիր, նման խնդիր չբարձրացնող 54-55
միջազգային հետաքննության այլ ընթացակարգ, 30

անձինք, որոնք ներկայացնում են 22-23
իրավունք, դրա հիմնական պարտավորությունը 77
դիմումի իրավունք, դրա չարաշահումը 31
դիմողների շրջանակը 23
ձնագնդի էֆեկտ [կարևորագույն վճիռների լայնածավալ լուսաբանում] 52
դրա համար ժամանակը 29-30
զոհ, դրա կոնցեպցիան 24-25
խախտում, որին ենթարկվել է 24-25
գրավոր դիտողություններ 38-39
միջպետական 20, 28-29, 1076
հաշտության համաձայնություն 40-42
նոր միջազգային համակարգ, դրա գործարկումը 11
սկզբնական համակարգի գծապատկեր, որը ցույց է տալիս 12
ինստիտուցիոնալ խնդիրները 11–15
Հանճնաժողովի զեկուցող, գնահատում նրա կողմից 56
վերասահմանում 60
դուրս թողնելը 1077
կրթություն
կարգապահություն, դրա ապահովումը 1021-23
գաղափարների ներդրում, դրանից պաշտպանությունը 1019-1020
դրա լեզուն 1009-1013
Հյուսիսային Իռլանդիա, տեղի անխտրական դպրոցները 1024
ծնողներ, նրանց լեզվական նախապատվությունները 1010
կրոնական և փիլիսոփայական [աշխարհայացքային] համոզմունքները 1010, 1017-20, 1023
պատասխանատվությունը 1018
բազմակարծության հնարավորությունը 1018
մասնավոր դպրոցներ, դրանք ստեղծելու իրավունքը 1020-21
կրոնական 1010
իրավունք կրթական հաստատություններից օգտվելու հնարավորության 1010-12
«Բելգիայի լեզվաբանական գործ» 1009-13
դրա բովանդակությունը 1010-14
Եվրոպական դատարանի մոտեցումը 1009-15
բարձրագույն կրթության 1014-15
մահմեդական հագուստին առնչվող պահանջներ 1015
դրա բացասական ձևակերպումը 1009-1010
հարևան հանրապետություններում 1015
Հյուսիսային Կիպրոս, տեղի դասավանդման լեզուն 1013-14
ծնողների կրոնական և փիլիսոփայական [աշխարհայացքային] համոզմունքների 1010, 1017-20, 1023
գործողության ոլորտը 1010
սեռական կրթություն 1017-20
պետական կարգավորում 1010
դպրոցից հեռացվելու հետևանքները 1015-16
արձանագրության տեքստը 1080
ուսումնական ծրագրի կազմման և հաստատման պատասխանատվությունը 1018-19
կրոն
խտրականություն հիմնված 865-67
ազատություն *տես* **մտքի, խղճի և դավանանքի ազատություն**
ծնողներ, նրանց համոզմունքները 1010, 1017-20, 1023

habeas corpus (անձին կալանքից ազատելու իրավական միջոց, կալանքի օրինականության վերահսկողության միջոց)
իրավական պաշտպանության միջոցի առկայություն 899
որպես կամայականության դեմ ուղղված զսպամիջոց, 334
կալանքի քննությունը դատարանի կողմից 333-34
իրավական պաշտպանության միջոց 311

Համայնքների պալատ
վիճաբանություններ, բացարձակ արտոնություն 409-11
համասեռամոլներ
որդեգրում, այս հարցում խտրականություն 871
համաձայնություն տալու տարիքը 509-511, 870
զինված ուժերում 511-17
փոխադարձ համաձայնությամբ սեռական վարք, դրան վերաբերող օրինախախտումներ 518-19, 607, 611, 615
հայեցողության սահման
դրա կիրառումը 664
արտահայտվելու առևտրային ազատություն 706
դրա հայեցակարգը 663-64
հակամարտություններ, դրանցից խուսափումը 665
փոխհամաձայնության (կոնսենսուսի) չափորոշիչը 664
ունեցվածքից զրկելու կանոնը 978
տարբերվող, դրա կիրառումը 666
արտահայտվել, դրա ազատությունը 659-60
գործոններ, որոնք ազդում են դրա շրջանակի վրա 666
ընտանեկան և մասնավոր կյանք, դրանց նկատմամբ հարգանքի իրավունքը 611
որպես ոչ ճշգրիտ իրավական սկզբունք 665
որպես դատաքննության եղանակ 664
փաստաբանների վարք, դրա կարգավորումը 782
ազգային կառավարություններ և ստրասբուրգյան հաստատություններ, դրանց սահմանազատող դերերը 664-61
դրան ընդդիմությունը 666-67
դրա ծագումը 665-66
քաղաքական գովազդ, դրա սահմանափակումը 694-95
հանրային խնամք, երեխան այդպիսի պայմաններում 555, 558
մտքի, խղճի և դավանանքի, ազատություն 629, 635
սկզբունքի կիրառումը 666-67

հաշմանդամ անձ
հատուկ օժանդակ հարմարություններ, դրանց հատկացումն ապահովելը 599-60
հավաքներ և միավորում, դրանց ազատությունը
անդամների գործողությունները և ելույթները, դրանց վերագրումը կուսակցությանը 776
կիրառում, վերլուծական հիմքը 772
շարունակությունը կազմակերպության գոյության ամբողջ ընթացքում 773
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մոտեցումը 765-79
բացառություններ, դրանց ճշգրիտ մեկնաբանությունը 775
միավորման ազատությունը այլոց հետ, դրա հիմնարար բնույթի իրավունքը 793
մասոնական միավորում 790-93
հետաքննելու դրական պարտավորությունը 793-94
հանրային իրավունքի սկզբունքով կազմավորված միավորումներ 786-88
կազմակերպության գրանցումը մերժելը 789-90
միջամտություն
ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ 769-71
քաղաքական կուսակցության լուծարումը որպես 765-79
justification 769
դրա օրինական նպատակը 769
օրենքով նախատեսված 769
հրատապ սոցիալական անհրաժեշտություն, դրա քննությունը 778
համաչափությունը 778
այլ անձանց իրավունքներ և ազատություններ, քաղաքական կուսակցության գործունեություն, որն ուղղված է խախտմանը 775
պետական իշխանությունների տեսակետը գործունեության վերաբերյալ, դրա անհրաժեշտությունը 767
միավորումներ կազմելու բացասական իրավունք՝ հակառակ համոզմունքներին, անդամակցելու պարտավորության բացակայություն 807
միայն արհմիությանն անդամակցելուց հետո անձանց աշխատանքի ընդունող կազմակերպություններ, դրանց գոյությունը 798-800
պետության՝ միջամտելու պարտականությունը 806
դրանց գոյությանը միջամտելը 800-801
հիմնավորումը 801-803
իրավագիտական հիմքը 805
դրական իրավունքը, կապը դրա հետ 804, 809-810
միայն արհմիությանն անդամակցելուց հետո անձանց աշխատանքի ընդունելու համակարգեր, դրանց կողմից ոտնահարումը 808-812
դրա սահմանափակ բնույթը 805
պատասխանող պետություն, նրա պատասխանատվությունը 799
կարգավիճակը 813
տաքսի ծառայությունում աշխատելու արտոնագիր, դրա պահանջը 805-806
դրա անորոշ կարգավիճակը 807
միության կողմից շրջափակում, պաշտպանություն դրա դեմ 806
խաղաղ հավաքներ, դրանց մասնակցելու իրավունքը
աբորտ, ցույց դրա դեմ 782-83
ցույցերի արգելում, հիմնավորված 784
ոտնահարումը, դրա հայտնաբերումը 782, 785
միջամտություն ժողովրդավարական հասարակությանը, դրա դեպքում անհրաժեշտությունը 781-82
հիմնավորումը 781-82
իրավաբան-դատապաշտպանի մասնակցությունը ցույցի, նրա նկատմամբ հետապնդումը 779-81
դրա օրինական նպատակը 781
օրենքով նախատեսված 781
հայեցողության սահման 782
փոքրամասնություններ, դրանց ներկայացնող կազմակերպությունները 785
Կիպրոսի երկու համայնքների սահմանագիծը հատելու թույլտվություն, այն տալ հրաժարվելը 785
մասնավոր ժողովներ և հանրային հավաքներ, կիրառումը դրանց նկատմամբ 784
լուռ բողոք, դրա արգելումը 786
քաղաքական կուսակցություն, դրա լուծարումը 765-79
իրավունքների իրացման սահմանափակումները
պետության վարչակազմ, դրա անդամները 823-824
անկարգություններ կամ հանցագործություն, դրա կանխումը 817
կառավարության հաղորդակցության հարցերով կենտրոնակայան, այդտեղ 818-823
դրա մեկնաբանությունը 817
օրինական կերպով դրա սահմանումը 818-824
ազգային անվտանգություն, դրա պաշտպանությունը 817
օրենքով նախատեսված 817
այլ անձանց իրավունքներ և ազատություններ, դրանց պաշտպանությունը 817-818
գործողության ոլորտը 766-68, 779, 786
կոնվենցիայի տեքստը 1073
արհեստակցական միություններ, դրանք կազմելու և դրանց անդամակցելու իրավունքը 794-99 տե՛ս **նաև արհեստակցական միություններ**
ապաստան որոնողներ
կոլեկտիվ արտաքսում 1047-52
կալանք 303
ազատությունից զրկելը 253-55
հարգանքի իրավունք
հարկադիր կամ ստիպողական աշխատանք
պարտադիր զինվորական կամ քաղաքացիական ծառայություն 245-46

քրեական հանցագործին ռեաբիլիտացիայի ենթարկելու փորձ 244
հայեցակարգը սահմանազատող չափանիշները 241
կենցաղային աշխատանքներ, որոնք ներգաղթյալը հարկադրված է կատարել 245
բանավոր թարգմանություն 241
երդվյալ ատենակալի ծառայություն 246-47
ձեռքի աշխատանք, դրանով սահմանափակված չլինելը 239
իմաստը 238-39
չվճարվող աշխատանքը որպես 241, 243
սովորական քաղաքացիական պարտավորություններ, աշխատանքը որպես դրանց մի մաս 238, 247
պատիժ, պատժի սպառնալիք 239-40
նախնական համաձայնություն, դրա արդյունքը 240
արգելում, կոնվենցիայի տեքստը 1070
ստաժոր-փաստաբանի 237-44
վճարվող աշխատանքը որպես 242

հարկեր
ունեցվածքն ապահովագրող վճարներ, դրանց վերահսկումը 1000-1001
հեռախոսների գաղտնալսում, *տե՛ս* **նամակագրություն հեռարձակում**
արտահայտման ազատություն, լիցենզավորում 716
պետական մենաշնորհ 720-21

հեռուստատեսություն
արտահայտվելու ազատություն, արտոնագրում 716-21

Հոգեկան առողջության տրիբունալ (դատարան)
որոշումների վերանայումը դրա կողմից 334

հոգեկան հիվանդության պատճառով անմեղսունակ անձինք
համապատասխան հաստատություն, այդտեղ բուժվելու իրավունք 292
ազատության սահմանափակում, դրա պարբերական վերանայում 334
քրեական գործով դատապարտում, դրան հետևող կալանք 332-35
նրանց կալանավորումը 327-31
դրա համար թույլատրելի հիմքերը 290-95
ոչ պաշտոնական հաճախորդներ 293
անառողջ դատողության տեր անձ, դրա իմաստը 319-20 327-28

Հյուսիսային Իռլանդիա
քաղաքացիական իրավունքների քարոզարշավ 151
համայնքներ 151
կալանավորներ, հարցերին պատասխանելու պահանջ 430
ուղղակի կառավարում Հյուսիսային Իռլանդիայի նկատմամբ 152
ԻՀԲ-ի ահաբեկչական արշավ 151-52, 308-11
խոշտանգումներ, դրանց մասին հայտարարություններ 152-60

ձերբակալություն
դրա երկրում գրանցված ինքնաթիռում 264
խարդախության կասկածանքով 277-79
օրինական, այդ իրականացնելու համար բռնության կիրառում 144-45
անդամ չհանդիսացող պետության գործակալներ, դրանց կողմից բռնվելը 264–65
թույլատրելի հիմքեր
ալկոհոլամոլների, համար 295-98
իրավասու դատարան, դրա կողմից դատապարտումը 266-71
դատարանի կարգադրություն, դրան չենթարկվելը 271-77
արտաքսում կամ հանձնում, դրանց համար 290–6 տե՛ս նաև **արտաքսում, հանձնում**
կրթական վերահսկողություն, և այլն, անչափահասների նկատմամբ 284-86
հոգեկան խախտումներ ունեցող անձինք 290-95
օրենքով սահմանված պարտավորություն, այն չկատարելը 271-77
ողջամիտ կասկած՝ քրեական հանցագործություն կատարելու 277-84
այլ պետության տարածք, այդտեղ 263
ահաբեկչություն, դրա կասկածանքով 278-84
օրենքի խախտում, որպես 264
անօրինական, դրա համար փոխհատուցումը 347-48

մահապատիժ
վերացումը 132, 1084-85, 1092
3-րդ հողված, այն չխախտելը 204
Բրիտանիա, վերացումն այնտեղ 208
«մահապատժի դատապարտված անձանց համար նախատեսված խցերում» պահվելու երևույթ, դրան ենթարկվելը 199–208
ի կատար ածման հետաձգումը, դրա անխուսափելիությունը 207
կանխարգելման դոկտրին 142
իրականացումը 135
սահմանումը 135-40
անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք, որպես 206
անշրջելի վերացում 142-43
պայմանավորվող երկրների գործելակերպը 137
արգելումը 139, 141
թիվ 13 արձանագրություն 132
կյանքի իրավունքը, և 132–44
այլ պետության հանձնելու վտանգ
ամբաստանյալի տարիքը և մտավոր վիճակը, դրանց անհրաժեշտությունը 206-207
հավաստիացում, դրա խնդրանքը 198
3-րդ հողվածի խախտում, որպես 204–208
պայմանները մահապատժի դատապարտված անձանց խցերում, տեղինությունը 206
մինչ այդ կալանքի տևողությունը 206
իրական 202-204
Թուրքիայում 132-140
անարդար դատաքննության հետևանքով 136, 139

պատերազմի ժամանակ 1082
մասնավոր (անձնական) և ընտանեկան կյանք, դրա նկատմամբ հարգանքի իրավունք
լքված երեխա, տեղեկատվության տրամադրում նրան 598-99
հղիության արհեստական ընդհատում (աբորտ), դրա իրավունքը 516-21
որդեգրում, դրա կարգավորումը 561-62
օտարերկրացիներ, նրանց արտաքսելու հետևանքը 548-52
կենսաբանական և սոցիալական իրականություն, այն ճանաչելու պահանջ 545
քաղաքացիական իրավունքով տրամադրված՝ պաշտպանության իրավական միջոցներ 591
քրեական իրավունքի դրույթներ, դրանց անհրաժեշտությունը 590-92
ներառյալ որոշումներ՝ ծնող դառնալու կամ չդառնալու վերաբերյալ 540
ազատությունից զրկում, տարածումը դրա վրա 521
հաշմանդամ անձանց դեպքում 599-600
Հոլանդիայում ծնունդների գրանցման համակարգ, մարտահրավեր դրան 545
զբաղվածություն, դրա նկատմամբ սահմանափակումներ 538-39
դրա էվոլյուցիոն մեկնաբանությունը 593
ընտանեկան կյանք
որպես բուն (հիմնական) ընտանիք 546-47
դուստր/թոռնուհի և ծնողներ/տատ և պապ, նրանց միջև հարաբերությունները 546-7
դե ֆակտո հարաբերություններ 552, 542
ամուսնալուծված ծնող և երեխա, նրանց միջև հարաբերությունները 548, 559
դրա գոյությունը 541-42
չափի որոշումը 551
ամուսնություն, ոչ միայն ամուսնության վրա հիմնված 542
դրա իմաստը 545-6
ժամանակակից հասարակական գործիչներ, նրանց դիրքը 603
օտարերկրացի ամուսիններ, բրիտանացի կանանց միանալու թույլտվության մերժում 547-8
արտահայտվելու ազատություն, դրանց միջև հավասարակշռությունը 602-604
սեռափոխության վիրահատություն, անձ, ով ենթարկվում է նման վիրահատության 541-44
անձնական կյանքի գաղտնիության ընդհանուր իրավունք, այն չապահովելը 601
տուն *տե՛ս* **տուն, դրա նկատմամբ հարգանքի իրավունք**
տուն և բիզնես գրասենյակ, կիրառելիությունը դրանց նկատմամբ 508
ապօրինի երեխաներ (զավակներ), նրանց կարգավիճակը 545-46
անհատներ, նրանց միջև հարաբերությունները 590
միջամտություն
ծնողների կամքին հակառակ երեխայի նկատմամբ դիամորֆինի կիրառությանը 537-8
փակ հեռուստատեսային ցանցով ցուցադրված լուսանկարներ, գաղտնազերծումը լրատվամիջոցներով 528-30
գաղտնի ձայնագրում 527-28
ժողովրդավարական հասարակություն, անհրաժեշտությունն այդտեղ 611-13
շեղում կամ հանցագործություն, դրանք կանխելու նպատակով 613-14
երկրի տնտեսական բարեկեցություն, որպես հիմնավորում 613
նախկին խորհրդային գործակալություն, հաղորդակցվող անձանց քարտադարան 524-25
կալանավորի գինեկոլոգիական հետազոտություն 532-33
առողջություն, դրա պաշտպանության համար 615
տեղեկատվություն, հավաքումը և պահումը 525
օրենք, դրան համապատասխան 608-11
օրենսդրություն, դրա միջոցով 607-608
դրա օրինական նպատակը 529-30, 613-15
հայեցողության սահման 611
բժշկական գրանցումներ և տեղեկություններ, դրանց գաղտնազերծումը 526-27
զինվորական պաշտոնյա, պահանջ՝ լքելու Լատվիայի տարածքը 533-37
բարոյականություն, դրա պաշտպանության նպատակով 615
ազգային անվտանգություն, դրա նկատմամբ սպառնալիք 611, 613
դրա բնույթը 508-509
անհրաժեշտ լինելը 508-509, 512, 518
անձնագիր, դրա առգրավումը և պահումը 540
պետական իշխանությունների կողմից 607-8
հասարակական անվտանգություն, որպես հիմնավորում 613
այլոց իրավունքներ և ազատություններ, դրա պաշտպանությունը 615
խուզարկության սանկցիա, այդ խնդիրը 612-13
գաղտնի ֆայլեր (գործեր), դրանց պահումը և օգտագործումը 523-25
տեսաճանաչման ընթացակարգ, պատկերի օգտագործումն այդ ընթացքում 530-31
ողջ ընտանիքը, արտաքսումը 535-36
ապահովման միջոցներ 590-91
մտավոր արատ ունեցող անձինք (հետամնացներ), նրանց նկատմամբ սեռական բնույթի գործողություններ 590-92

փոքրամասնություններ, նրանց ավանդական կենսակերպերին օժանդակելու պարտավորություն 604-605
լուսանկարներ, հրապարակումը՝ ի խախտումն անձնական կյանքի գաղտնիության 601-605
դրական պարտավորությունը 592-93, 602, 607
մասնավոր կյանք
հասկացության սահմանումը 507-509
սպառիչ սահմանում, ենթակա չէ սպառիչ սահմանման 532
ընդգրկումը (սահմանները), դրա որոշումը 551
մայր և մեռելածին երեխա, նրանց միջև հարաբերությունը 539-40
անուն, ունենալու իրավունքը 521-23
երեխայի նկատմամբ հայրություն, դրա որոշումը 531-32
անձնական ինքնուրույնություն, դրա սկզբունքը 532
անձնական ինքնություն, հայեցակարգը տարածվում է դրա տարբեր կողմերի վրա 601-602
ֆիզիկական և բարոյական կայունության (անձեռնմխելիության) տեսանկյունը 521, 590
մասնագիտական կամ ձեռնարկատիրական գործունեություն, ներառյալ դա 508, 538
սեռական հարաբերություններ, դրանց գաղտնիությունը 518-19
ներառյալ սեռական կյանքը 509-12, 517
հասկացության ընդլայնումը 540
և ազգային անվտանգության պաշտպանություն 538-39
երեխաների հանդեպ հասարակական խնամք, այդպիսի ենթադրություն 552-59 *տե՛ս նաև* **երեխա**
ծննդյան վկայականում հոր անվան գրանցումը մերժելը 541-44
հարգանք, դրա բնույթը 606-607
սոցիալական ապահովության վճարներ, դրանք կատարելը 600
կոնվենցիայի տեքստը 1072-73
զոհ, բողոք 591

մարդկության դեմ կատարած հանցագործություններ
նախկին ԳԴՀ-ի քրեական օրենսգրքի կիրառություն 500
մարդու իրավունքներ, դրանք հարգելու պարտավորությունը
պետական իշխանության մարմինների գործողություններ և բացթողումներ, դրանց համար պատասխանատվությունը 75
պետության գործակալներ, դրանց գործողությունները 71
Աջարական Ինքնավար Հանրապետություն, դրա կողմից 63-67
զինված հակամարտության ժամանակ 70
բողոք իրավասության շրջանակից դուրս 68-69
իրավասության գաղափարը, դրա մեկնաբանումը 65
այն դեպքերում, երբ մասնակից պետությունը զրկված է իրավասություն իրականացնելու հնարավորությունից 66
եվրոպական հասարակական կարգում 70
գոյություն ունեցող իրավական երաշխիքները 1079
ապօրինի վարչակարգ, համագործակցությունը դրա հետ 71
ենթադրվող դրական պարտավորություններ, դրանց իրավաբանական հիմքը 79
միջազգային պատասխանատվություն 64
իրավասություն, դրա շրջանակներում տեղավորվող 78-79
ակնհայտորեն անբավարար պաշտպանություն 77-8
պետության տարածք, այդ տարածքից դուրս 67-69, 73-74
քաղաքացի չհանդիսացող անձանց 74
հատվող (overlapping) պարտավորություններ 74
կանխավարկած, դրա բողոքարկումը 75-79
ներված կալանավորին ազատելու մերժում 63-67
Ռուսաստանի Դաշնություն, ՌԴ-ի կողմից վավերացումից առաջ և հետո 71-73
անջատողական վարչակարգ, դրա համար պատասխանատվությունը 65, 71
մասնակից պետությունների 63-67
կոնվենցիայի տեքստը 1069
շեմ 78
Մարդու իրավունքների եվրոպական դատարան
վարչական անձնակազմ 18
խորհրդատվական իրավասությունը
դրա շրջանակները 938-939
կոնվենցիայի տեքստը 1079
խորհրդատվական եզրակացություններ
այն տալու իրավասություն 942
այն տալու իրավասության մասին որոշումը 937-42
կոնվենցիայի տեքստը 1079-80
նշանակումն այնտեղ 15–16
թեկնածուներ, դրանց համար բանաձևը 17
պալատները 18
դիմումների ընդունելիությունը, դրա որոշումը 30
ձևավորումը 1075
վերջնական վճիռները 1078
մեծ պալատը, իրավասությունները նրան վերապահելը 36
վճիռները 1078
կոմիտեները 10
իրավասությունը 1095
ընդունելիության վերաբերյալ և ըստ էության որոշումներ 1076, 1095-96
դիմումի ընդունելիության որոշումը 30
ձևավորումը 1018
անընդունելիությունը, դրա հռչակումը 50, 1076
կազմը 15–17
կոնվենցիայի օրենքը, դրա կիրառությունը 47
ծախսերը 20
ձևավորումը 1078

ապացուցելիության չափանիշը 47-48
գործի քննությունը 1077, 1096
պահպանման ծախսերը 1079
ֆինանսական միջոցները 54
նախկին և ներկա անդամները 16
հավաքների և միավորումներ կազմելու ազատությունը, մոտեցումը դրանց հանդեպ 765-79
արտահայտման ազատությունը, մոտեցումը դրա հանդեպ 657-73
մտքի, խղճի և կրոնի ազատությունը, մոտեցումը դրանց հանդեպ 627-636
մշտական [լիակազմ], դրա ստեղծումը 15
ապագա տարբերակների քննարկումը 60
մեծ պալատի ստեղծումը 1075
վերջնական վճիռներ 1078
իրավասության փոխանցումը 36
անդամները 1075
լիազորությունները 1078, 1096
գործի հանձնումը 1078
ընդդատության զիջումը դրան 1076
փոխանցելու դիմումը 48-49
ժամանակավոր միջոցներ դրա կողմից 33-8
ժամանակավոր որոշումներ 50
դատավորներ
տարիքային սահմանափակում 15
նշանակումը 15-16
պաշտոնից հեռացնելը 1075, 1094
ընտրությունները 13, 16, 1017
անձամբ մասնակցությունը 18
նոր դատարանը, նրանց 15
առաջադրումը 15-16
թիվը 1074
ներկայացվող պահանջները 1074
արտոնություններն ու անձեռնմխելիությունը 1079
թեկնածությունների ուսումնասիրումը 16
միանձնյա 1094-95
միանձնյա կազմ 56
կարգավիճակը 18-9
պաշտոնավարության ժամկետը 1075, 1094
վճիռներ
պարտադիր ուժը 1078, 1097
պալատների 1078
կայացումը 46
կիրառումը 58
կատարումը 49-52, 57-58, 1078, 1097
վերջնական 1078
«նախնական վճիռ» [պիլոտային վճիռ] 47-8, 75
հիմնավորումը 1078
դատական կոմիտեի մասին առաջարկը 61
դատական աշխատանքի կազմակերպումը 59
իրավազորությունը 1076
արդարացի փոխհատուցում, մոտեցումը դրա հանդեպ 915-19, 1021 *տե՛ս նաև*
Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
ընդունումը 9
փոփոխությունը 1033–8
բարեփոխումները, որոնք ներառում էին 50
դրա հիման վրա ներկայացված դիմումները *տե՛ս* **կոնվենցիայով դիմումներ**
չեղյալ հայտարարումը 1080
նախագծումը [մշակումը] 7–9
Ջիբրալթար, տարածումը նրա վրա 1026
ինստիտուցիոնալ հարցեր, դրանցում փոփոխությունների կատարումը 9
արձանագրություն 1081-83
արձանագրություն թիվ 4 1083-84
արձանագրություն թիվ 6 1084-86
արձանագրություն թիվ 7 1087-90
արձանագրություն թիվ 12 877-81, 1089-90
արձանագրություն թիվ 13 1091-92
արձանագրություն թիվ 14 1093-98
բարեփոխումներ 9–10
վերապահումները 1080
ստորագրումը և վավերացումը 1080
տարածքային կիրառումը 1079, 1081
Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողով
կազմը 11
լուծարումը 13
անդամների ընտրությունը 11, 13
դատարանի հետ միավորումը, դրա գաղափարը 14
դիմում ներկայացնելու՝ անհատների իրավունքը 9
մարմնական պատիժ
3-րդ հոդված, դրա շրջանակներում 166-68
նվաստացնող պատիժը, որպես 227-35
իրականացման ուշացում 229
արտաքսում, որի արդյունքում ստանում է 218
ներպետական օրենսդրություն, դրա փոփոխությունը 167
կիրառումը 229
ինստիտուցիոնալացված բռնությունը, որպես 230
դատական 228-31
դրա բնույթը 229
հասարակական կարծիք, վրդովված 228
դպրոցներում 1016, 1036-38
վերացումը 235
ոչ պետական ֆինանսավորմամբ 231, 234
պետական ֆինանսավորմամբ 232-34
Մեն կղզի
մահապատիժ այդտեղ 225-30
դատական վերանայում
իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, արդյոք այդպիսին է 838-44
մտքի, խղճի, դավանանքի ազատություն
սկզբունքների կիրառումը 628-630
զինված ուժեր, դրանց կողմից իրացվող 639-641
համոզմունքների ոտնահարում, դրանից պաշտպանությունը 633-34
եկեղեցիների կառուցման և գործունեության իրավասություն 648-53
քաղաքացիական պաշտպանության դասընթացներ, դրանց մասնակցելուց հրաժարվելը 637
պայմանագրային պարտավորություն, դրա արդյունքը 641-42
քննադատական դիրքորոշումներ, դրանք

արտահայտելու իրավունքը 634
զրպարտություն և ծաղր, դրանցից պաշտպանությունը 633
Մարդու իրավունքների եվրոպական դատարան, դրա մոտեցումը 627-636
ներառյալ որևէ դավանանք չհետապնդելու ազատությունը 639
ուրբաթօրյա աղոթքներ, դրանց հաճախող մահմեդականներ 641
ընդհանուր սկզբունքներ 628
միջամտություն, անհրաժեշտությունը ժողովրդավարական հասարակությունում 629-30, 650-52
դրա գոյությունը 648-49
դրա հիմնավորումը 649-52
օրենք, օրենքով նախատեսված 649
դրա օրինական նպատակը 629, 649-50
օրենքով սահմանված 628
մահմեդական հագուստ, դրա հետ կապված արգելքներ 646-48
Եհովայի վկաներ, ձերբակալություն դավանափոխության համար 627-30
դրա համար հիմնավորումներ 631
շաբաթ օրերին դպրոց հաճախելու իրավական պարտավորություն, դրանից ազատվելը 653
կրոնական համոզմունքների արտահայտում, դրա իրավունքը 628, 669-48
հայեցողության սահման 629, 635
զինվորական պաշտոնյաներ, նրանց կողմից իրականացված դավանափոխությունը 632
նախարարի պաշտոնը բռնազավթած 642-44
ոչ կրոնական համոզմունքներ, դրանից պաշտպանությունը 638
ոչ կրոնական փիլիսոփայական համոզմունքներ, կիրառումը դրանց դեպքում 630
խաղաղասիրություն 636-38
դավանափոխություն, դրա սահմանումը 630-31
պաշտպանված համոզմունքներ 636-39
դրա նպատակը 631
կրոնական առաջնորդներ և կազմակերպություններ, դրանց վերաբերյալ որոշումների վրա ազդող քաղաքական որոշումներ 644-45
և կենդանիների ծիսական սպանդ 646
դպրոցական շքերթներ խնդրանք, որպեսզի երեխաները ազատվեն դրանցից 638
դրա ընդգրկումը 636
կոնվենցիայի տեքստը 1073

Նամակագրություն
գրասենյակից 579
միջամտություն դրա թույլատրմանը 584
քրեական հանցագործություններ 584
պաշտպանության արդյունավետ միջոց, դրա իրավունքը 835-837
դրա ապացույցը 580-82
գոյությունը, դրա սահմանումը 579-80
տան հեռախոս, դրա վերաբերյալ 580-82
գաղտնալսման միջոցով 578-82
օրենքին համապատասխան 608-611
դրա օրինականությունը 582-83
դրա անհրաժեշտությունը 589
բանտարկյալների նկատմամբ 586–8, 608-611
հեռախոսների գրանցում 583-84
հեռախոսի գաղտնալսում, դրա կարգավորումը 584-87
սնանկության գծով հոգաբարձու, նրա լիազորությունները 588-89
թույլտվությունը 584
աշխատավայրում 578–79
գրավոր նամակագրությունը, դրա գաղտնի ընթերցումը 587–88
բանտարկյալներին միջոցներ տրամադրելու դրական պարտավորությունները 606

Ներման խորհուրդ
սպանություն գործած անչափահասների անորոշ ժամկետով ազատազրկում, դրա վերանայումը 344-46
գործառույթները 337
անկախություն 337
որոշումների դատական վերանայում 338
ցմահ դատապարտում, դրա վերանայում 336-37
հանձնաժողովներ 336
հետ կանչված՝ ցմահ ազատազրկված բանտարկյալ, նրա անհատականության քննարկումը 325-26
Խորհրդի կողմից վերանայման ժամկետը 342

նվաստացուցիչ պատիժ
մարմնական պատիժը որպես 225-233
ստորացում կամ նվաստացում [debasement], դրա աստիճանը 226
թույլ ուժգնության պահանջ 235
հրապարակայնությունը, անհրաժեշտությունը 227

նվաստացուցիչ վերաբերմունք
մարմնի խուզարկություն, դրան ենթարկվելու պահանջ 218
հաշմանդամ կալանավորների 220
ապացույցներ՝ ձեռք բերված դրա դրսևորման միջոցով 433
վախ, տառապանք և նվաստացում, նման զգացումների առաջացումը 204, 223
սնունդ, նախնական կալանքի տակ գտնվող անձին չտալը 223
գլուխը խուզելը 216-18
արվամոլների նկատմամբ 225
ստորացնելն ու նվաստացնելը 216–19, 221, 223
բռնություն, դրա ուժգնությունը 216
թույլ ուժգնության պահանջ 235
գերբնակեցված և հակասանիտարական միջավայր, այդտեղ կալանավորումը 220
կալանքի վատ ֆիզիկական պայմաններ 219-22
ռասայական խտրականությունը որպես 223-24
նախնական կալանքի հաստատություն, պայմանները

այդտեղից տեղափոխելը 222
սեռական խտրականությունը որպես 224
սեռական կողմնորոշում, խտրականությունն այդ հիմքով 225
կեղտոտ հագուստ, այն փոխել չթույլատրելը 223
մերկ խուզարկություն 191-92
արտահայտված խոշտանգում 167, 155
վերաբերմունք, որը հանդիսանում է 201
շատ ծեր հիվանդ բանտարկյալ, նրա ուշացած արձակումը 222

որդեգրում
համասեռամոլներ, խտրականություն ընդդեմ 823
պետական կարգավորում 565–66

պատգամավորական անձեռնմխելիությունը
և արդար դատավարության իրավունքը 409-11
պատերազմի հանցագործություններ
դրանց համար պատիժը 505
պաշտոնեական գաղտնիքներ
տեղեկությունների գաղտնազերծում, այդ հանցանքը 735
պարտք
բանտարկում դրա համար, արգելում 1041, 1082
պետության անձեռնմխելիություն
դատարան, դատարան դիմելու իրավունք 403-406
զբաղվածություն օտարերկրյա դեսպանություններում, դրան վերաբերող պահանջներ 406-407
սեռական խտրականությանը վերաբերող պահանջներ, դրանք արգելափակելը 406-407
զինվոր և պետքարտուղար, հայց ընդդեմ նրանց 408-409
պետության կողմից խոշտանգումներ, դրանց մասին հայտարարություններ 403-406
պետության պատասխանատվություն
և անհատական պատասխանատվություն 499-500

Ջիբրալթար
Եվրոպական համայնքի օրենքը, դրա կիրառումը 1025
Եվրոպական խորհրդարանի ընտրություններ, դրանց մասնակցելու իրավունք չունենալը 1025-31
Եվրոպական կոնվենցիա, դրա տարածումը 1026

ռասայական խտրականություն
որպես նվաստացնող վերաբերմունք 223-24

սեռական խտրականություն
նվաստացնող վերաբերմունքը՝ որպես 224
հիմքերը 857-60
սոցիալական ապահովության գումարների վճարում 863
պետության անձեռնմխելիությունը արգելափակում 406-407
սեռական կողմնորոշում
դրա վրա հիմնված խտրականություն 868-71
այդ հիմքով խտրականությունը որպես նվաստացնող վերաբերմունք 225
սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունք
ոտնահարող դեպքեր 431-33
Հյուսիսային Իռլանդիայի կալանավորները, հարցերին պատասխանելու պահանջ 430
ավտոմեքենայի վարորդ, տեղեկություններ հաղորդելու պարտավորություն 431-33
լուծողական (փսխում) առաջացնող դեղամիջոցների ստիպողական կիրառություն 433
արտոնություն ընդդեմ 422-25
առևտրի և արդյունաբերության դեպարտամենտին տրամադրված հայտարարագրերի օգտագործումը 428
սեփականության օգտագործումը, այդ առումով տե՛ս վարձակալության պայմաններից ազատում, սեփականություն
սխալ դատապարտման դեպքում 1085
սոցիալական ապահովության նպաստներ
գույքը՝ որպես 964-67
սոցիալական ապահովություն
սեռական խտրականությունը վճարման առնչությամբ 863
ստիպողաբար (բռնի) կերակրում
որպես անմարդկային վերաբերմունք 192-93
որպես խոշտանգում 176-177
ստրկություն *տե՛ս նաև* **հարկադիր կամ ստիպողական աշխատանք**
արգելում, կոնվենցիայի տեքստը 1070
սրբապղծություն
քրեական օրենք դրա մասին 636
Անգլիայի օրենք, իրավախախտում դրա շրջանակներում 633
տեսանյութեր, դրանց նկատմամբ սահմանափակումները 635

վարձակալության պայմաններից ազատում
փոխհատուցում
դրա պայմանները 983
դրա իրավունքը 980
դրա՝ հստակորեն սահմանված իրավունքը 983
դրա հետ կապված բողոքները 980-81
միջազգային իրավունք, դրա ընդհանուր սկզբունքները 981-83
որպես ուներզրկում 976-84
անհատական գործարքներ, չհիմնավորված 983
դրա սկզբունքը 979
գնահատվող արժեքի սահմանները 980
ողջամտություն, դրա անկախ դիտարկման բացակայություն 983
վեճերի կարգավորում
դրա միջոցները 1079
վկա
անանուն, նրա կողմից հայտարարություն 473-8
բժշկի այցելություն և բժշկական քննություն, դրա իրավունքը 473-8
վկաների ահաբեկում 477

վկաների պաշտպանության ծրագրեր 477
վրեժխնդրություն, վախը դրանից 476
վտարում
անմարդկային վերաբերմունքի ենթարկվել 208-14

տեղաշարժ, դրա ազատություն
դրա միջազգային պաշտպանության ազատություն 499
դրա նպատակը 1041
տեղաշարժի իրավունքի սահմանափակումը
սնանկների դեպքում 1045
չեչենների դեպքում 1046-47
քրեական հետաքննություն, անձնագիրը պահելը այդ ընթացքում 1043
անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում 1042
նախկին պաշտպանյալի դեպքում 1045
հիմնավորումը 1043
օրենքի, օրենքի համապատասխան 1042
դրա օրինական նպատակը 1042
Հյուսիսային Կիպրոսում 1045
անձնագիր, պահումը մաքսային ծառայողի կողմից 1041-43
ոստիկանության կողմից 1045-46
հատուկ վերահսկման միջոցառումներ 1043-44
տեղաշարժվելու՝ հիմնավորված արգելք 1047
կոնվենցիայի տեքստը 1082
տվյալներ
անձնական, դրանցից օգտվելու իրավունք 596-97
տրանսսեքսուալ անձինք
ծննդյան վկայականներ, դրանցում փոփոխություններ կատարելը 593-4
խնամակալության տակ գտնվող անձինք (խնամառուներ), նրանց ճանաչումը 552-3
ընտանեկան կյանք, դրա իրավունքը 541-4
նրանց կողմից բարձրացված հարցեր 593-4
իրավական դիրքորոշումը 593-6
ծնողական իրավունքներ, դրանց մերժումը 541-4
մասնավոր կյանք, դրա նկատմամբ հարգանքի իրավունք 593-6
ամուսնանալու իրավունք 828-9
օրենքով նախատեսված դրույթներ 596
տուն, տան նկատմամբ հարգանքի իրավունք
տունը որպես ինքնուրույն հայեցակարգ 577
քիմիական գործարան, դրա առաջացրած ռիսկերը 569
ընկերության իրավունքը 566
Կիպրոս, տեղահանված անձինք Կիպրոսում 567-68
տան ստեղծում 563
Գերնսի, պահանջվող արտոնագրերը 563-65
միջամտություն
քաղաքային խորհրդին պատկանող վագոն-տնակի տեղամասի նկատմամբ, գնչուների տարհանումն այդ վայրից 576-77
դատարանի որոշում, պահանջ, որ տարհանումը կատարվի դրա համաձայն 578
ժողովրդավարական հասարակություն, անհրաժեշտ է նման հասարակություններում 564-65
բնապահպանական բողոքներ, դատարանի մոտեցումը նման բողոքներին 572-73
շրջակա միջավայրի աղտոտում, դրա միջոցով 568-69, 574-75
հիմնավորումը 564-65
տարածքը զբաղեցնելու արտոնագիր, դրա պահանջը 563-64
անվտանգության ուժերի կողմից 575-76
ահաբեկչական գործողությունների հետևանքով 575-76
ցիանիդի օգտագործում հանքում, դրա առաջացրած վտանգը 573
«տուն» հասկացության մեկնաբանում, դրա սահմանափակումները 566-67
աղմուկ, դրա արդյունքը 569-74
մասնագիտական կամ գրասենյակային (բիզնես) հաստատություններ (տարածք), տուն՝ ներառյալ դրանք 565-66
զբաղեցնելու արտոնագիր տալը մերժելը 563-65
ազգային օրենքի համաձայն օրինականորեն հաստատված բնակարան 565
սանիտարական անվտանգության գոտի, տունն այդտեղ 574-75
որպես տուն դասակարգված երկրորդ սեփականությունը 567
անօրինական խուզարկություններ, դրանք հետաքննելու պարտավորությունը 578

ցմահ ազատազրկում
շարունակվող կալանք, այն վիճարկելու իրավական միջոցները 339-43
հայեցողական պարտադիր տարբերակված 342-43
դրա բնույթը և նպատակը 340
Ներման խորհուրդ, վերանայումը դրա կողմից 336-38
անհատականության խանգարում, խանգարում ունեցող հանցագործ 340
պաշտպանվելու նպատակով 340
հետ կանչված ցմահ բանտարկյալ, նրա անհատականության քննարկում 325-26
արտոնագրով ազատ արձակում
հետ կանչում 335-39
հետ կանչված բանտարկյալ, դրան առնչվող ընթացակարգային թերություն 337
վերանայում, խորհրդատվական գործառույթներ 337
սոցիալական պաշտպանություն և ռեաբիլիտացիա, դրա նպատակով 336
պարտադիր ազատազրկում
դրա ժամկետը 340-41, 343, 346
սահմանումը 454

ցուցմունքներն ունկնդրելու անկարողություն 437

ունեցվածք (գույք, սեփականություն)
արբիտրաժային դատարանի վճիռ 969-70
օգտագործման հնարավորությունից զրկվելու դիմաց փոխհատուցումը 997
մաքսային իշխանություններ, նրանց լիազորությունները 999
արժեքի կորուստ 923
արդարացի հավասարակշռության չափանիշ 998
որսորդության նպատակով 993-98
միջամտության նպատակով 995-96
իրավունքներին չհակասելը 999-1000
համաչափությունը (համամասնությունը) 996-97
թարգմանություն 998
օրենսդրություն, նպատակները 997
այդ հողի վրա որսորդություն կատարելու դեմ առարկություն, դրա արդյունքը 993-98
հարկերի վճարում, դա ապահովելու նպատակով 1000-1001
նախկին միապետի ունեցվածք, խլելը 919-23
համաչափությունը (համամասնությունը) 1000
վարձավճարներ, որոնք գանձվում են մասնավոր հողատերերի կողմից, դրա վերահսկումը 1001-1003
կանոն 945, 948
օդանավի գրավումը և առգրավումը 999
կանոնների լուրջ խախտումներ, գույքի ներգրավվածությունը խախտումներում 1000
օգտագործման վերահսկողությունը 946
ունեցվածքից զրկումը յուրացմամբ
սեփականատիրության միջոցով 992-93
փոխհատուցում, առանց դրա վճարման 949-51
կանոնի բաղադրիչ տարրերը 985
օրենքով նախատեսված պայմանների համաձայն 983, 987
Հունաստանի նախկին թագավորին պատկանող 989-92
դրա օրինականությունը 988
վարձակալության պայմաններից ազատման միջոցով 976-84
օրենսդրության օրինական նպատակը 979
հայեցողության սահման 978
ազգայնացում 986
քաղաքական 989-92
առաջնահերթություն ունենալու ընթացակարգ 987-89
ընթացակարգային իրավունքներ, դրանց հաստատումը 989
համաչափություն 988-89
հանրային շահի չափանիշը 977-78, 988
կանոն 945, 977
սոցիալական բարեփոխում, դրա համատեքստում 982, 985
փոխհատուցման ստանդարտ 986-87
էքսպրոպրիացիա (ունեցվածքի բռնի օտարում), փոխհատուցում դրա դիմաց 984
նախկին կոմունիստական կառավարություններ, բռնագրավում դրանց կողմից 958-64
միջամտություն իրավունքի նկատմամբ
ներպետական իրավական պահանջներ, դրանց համապատասխանությունը 953
դրանց գոյությունը 944-45
արդարացի հավասարակշռություն, դրան հասնելը 948-49
արդար փոխհատուցում, դրա վճարումը 948
դրա հիմնավորումը 945-47, 969
հիմնավոր հանրային շահի նպատակ 953
բարեփոխում, դրա նպատակով 950
անարգել օգտվելը
փոխհատուցում ի ծնե հաշմանդամության համար, օրենսդրորեն նվազեցվող 975-76
դե ֆակտո էքսպրոպրիացիա 969
մուտքի հնարավորությունից զրկում զինվորական անձնակազմի կողմից 970-72
միջամտություն 952-53
Ռազմածովային հիմնադրամ, հողի փոխանցում այդ հիմնադրամին 967-68
պատկանելություն 954
առաջնահերթություն ունենալու իրավունք, դրա իրացումը 972-73
դրա սկզբունքը 967-68
սահմանների վերագծում 973-75
դրա կանոնը 945
չհիմնավորված միջամտություն դրա նկատմամբ 943-47
տիրապետելը
որպես արբիտրաժային (դատարանի) վճիռ 969-70
դրա ինքնուրույն հայեցակարգը 992
հայեցակարգի սահմանները 957
հայեցակարգը 954-67
մուտքի հնարավորության մերժումը 957-58
հատկացված գույք, դրա պայմանագրային հիմքով պահումը 955-56
գոյություն ունեցող 958-60
նախկին կոմունիստական կառավարություններ, բռնագրավում դրանց կողմից 958-64
ոչ շոշափելի ակտիվներ 954
հիմնավոր ակնկալիք 960-62
արտոնագիր 954
նախագծի մշակման թույլտվությունը որպես 955
անարգել օգտագործումը 954
գումարներ վերստանալը 956
ձեռք բերելու իրավունք 954
ապրանքային նշանը որպես 967
սոցիալական ապահովության նպաստները որպես 964-67
պաշտպանությունը
Եվրոպական դատարանի մոտեցման 943-54

էքսպրոպրիացիայի թույլտվությունների, դրա արդյունքը 943-47
օրինական եղանակով, պետությունը պետք է գործի 952
գույքից անարգել օգտվելը, չարդարացվող միջամտությունը դրա նկատմամբ 943-47
կանոններ դրա համար 945
արձանագրության տեքստը 1071
խլելը, դրա դիմաց փոխհատուցում 919-25
ultra vires (լիազորությունների գերազանցմամբ) պահանջ 956-957

փախուստ
օրինական կերպով կալանավորված անձանց 144-145
փաստաբան, փաստաբան ունենալու հնարավորություն 425
իրավաբանական օգնություն, դրա իրավունքը 469-73
զրպարտության հայցով գործ, այդպիսի գործով իրավաբանական օգնության բացակայություն 421-22
պաշտպանվելու իրավունքի սահմանափակում 414-16
վերաքննիչ բողոքը լսելու օրվա մասին ծանուցում, նման ծանուցում չստանալը 437
կողմին լսելու հնարավորություն 420-21
մասնակցություն քրեական դատավարությունների 434-37
հրապարակային դատավարություն 438-39
ողջամիտ ժամկետ, վարույթի տևողությունը 440-43
սեփական անձի դեմ ցուցմունք չտալը, նման արտոնություն ունենալը 422-25
լռություն պահպանելը, դրա իրավունքը 422-25
կոնվենցիայի տեքստը 1072
առևտրի և արդյունաբերության դեպարտամենտին տրամադրված հայտարարագրերի օգտագործումը 428
փոխհատուցում
իրավական հարցերով քարտուղարները 1075
կևական արդյունավետություն, դրա մասին հռչակագիրը 54
անդամները 13
միացումը հանձնաժողովին, դրա գաղափարը 14
ըստ էության գործեր, դրանց ուշադրություն դարձնելը 59
նորի ստեղծումը 15
հնի գոյության դադարումը 15
կազմակերպումը 16
սկզբնական՝ ոչ մշտական 13
լիագումար նիստերը 1075, 1094
դիմումները քննության առնելը մերժելու իրավասություն 54
նախագահը 18
խոշտանգման արգելումը, մոտեցումը դրա վերաբերյալ 151–67 *տե՛ս նաև*
փաստերի բացահայտում 413-418
փոխհատուցում
ի ծնե հաշմանդամության համար 975
ծախսեր և ծախքեր, դրա համար 930-31
տոկոս՝ ուշացման համար 932-33
գրավի մերժումը, դրա համար 927
տառապանք և անհանգստություն, դրանց համար 928
չափից դուրս երկար տևողությամբ կալանք, դրա համար 925-27
արդարացի փոխհատուցում (բավարարում)
դիմումներ դրա համար 933
տվյալ գործեր 935
արդի տեսակները 919-31
քրեական տուգանք, դրա հատուցումը 924
վնաս, դրա առկայությունը 917
հատկացման ուշացում, ուշացման համար տոկոս 931-32
վաղ մոտեցումները դրա նկատմամբ 915-19
տուժող կողմ 917
միջամտություն սեփականության իրավունքին՝ այդ պատճառով 948
պահանջների սահմանափակում 933-35
մոդելը 918
անհատակ ձևակերպումներ, դրանց գործածությունը 918
նախորդ պահանջ, դրա վրա դրված կալանք 935
նախկին միապետի սեփականություն, դրա բռնագրավումը 919-24
ծախսերի փոխհատուցում 918
դրա դիմումներ 918-919
մասնագիտացված ստորաբաժանում, դրա հիմնումը 936
կոնվենցիայի տեքստը 1078
իրավաբանական անձինք, նրանց կրած ոչ դրամական վնասը 929
շահերը լիարժեք կերպով ներկայացնելու հնարավորությունից զրկվելու դիմաց 927
ոչ դրամական վնասի դիմաց 925-30
դրամական վնասի դիմաց 919-25
ֆիզիկական ոտնձգությունների դիմաց 927
դատավարություններում տեղ գտած անհարկի ձգձգումների դիմաց 927-28
փոքրամասնություններ
անմարդկային վերաբերմունք նրանց նկատմամբ 209

քաղաքական կուսակցություն
հոդված 11, դրա կիրառումը 772-73, 779
քաղաքացիներ
քրեական հանցագործություն
գործողություն կամ անգործություն ազգային կամ միջազգային օրենսդրության մեջ
սկզբունքների կիրառություն 493-95
նախկին ԳԴՀ, քրեական օրենսգրքի կիրառում 495-503
ընդհանուր սկզբունքներ 492-93
հետ-Գերմանիայի վերամիավորում 495-503
հետադարձության ուժով նշանակված պատիժ 503-505
կոնվենցիայի տեքստը 1072
կին, նրա բռնաբարությունը 491-95
ամբաստանյալին ուղղակիորեն հասանելի գանգատարկում 1057

կալանքի տակ առնվելու համար ինքնակամ ներկայանալը, այդ պատճառով դրա իրավունքից զրկելը 1056–57
դրա իրավունքը քրեական գործերում 1085, 1054-57
կրկնակի վտանգ 1085
արդար դատաքննություն, դրա իրավունքը տե՛ս **արդար դատաքննություն, դրա իրավունքը**
պատասխանատվության կանոններ, դրանց զարգացումը 495
երկրորդ անգամ չդատվելու կամ չպատժվելու իրավունքը
հաջորդական հարցեր 1058
նոր դատավարություններ սկսելը 1058
տարրերի հատում 1060-61
միևնույն իրավախախտումը, դրան չվերաբերելը 1060
հսկողության կարգով դատական վերանայում 1062-64
արձանագրության տեքստը 1085
մեկ արարք, որը հանդիսանում է ավելի քան մեկ 1059-62
ռազմական հանցագործություններ, դրա պատիժը 497
սխալ դատապարտում, փոխհատուցումն այդ դեպքում 1085

քրեական մեղադրանք
եզրույթի ինքնուրույն բնույթը 382-84
արտոնյալ կարգավիճակի խախտմանը վերաբերող վարույթ 388-399
պատժաչափի որոշում, ներառյալ 394
ներպետական վարույթ տվյալ կատեգորիայում, չափանիշներ 383
ոստիկանության սարքած ծուղակ, դրա կիրառումը 416-18
մեղադրանքի գոյությունը 379-82
տվյալ կատեգորիայից հանված վարքագծի ձևեր 384
բարոյական զտման («լյուստրացիայի») հարցով վարույթ 394
համաձայն ռազմական կարգապահական օրենքի 375-82
նվազագույն իրավունքներ
կոնվենցիայի տեքստի վերաբերյալ 1072
թարգմանիչ ունենալու 478-81
իրավաբանական օժանդակություն ստանալու 469-73
մեղադրանքի բնույթի և պատճառի վերաբերյալ տեղեկություններ ստանալու 468
պաշտպանության նախապատրաստության համար ժամանակ և հարմարություններ ունենալու 469
վկայակոչման և վկաների հարցաքննության իրավունք 473-78
բանտային կարգապահական դրույթներ, և
մեղադրանքի բնույթը 391-92
տարբերակում 390-91
ազգային (ներպետական) իրավախախտումների դասակարգումը 391
բանտարկյալի կողմից իրավախախտման բնույթը 390
պատժի բնույթը և սաստկությունը, դրա տեղին լինելը 392-93
պատժիչ նպատակ 387
կանոնակարգային իրավախախտումներ 384-86

քրեական վարույթի տևողությունը 357

օտարերկրացիներ
իրավունքների չարաշահում, արգելման նպատակը 909–11
դիմում (գանգատ) 912-13
արտահայտման ազատությունը, և 909-910
կոնվենցիայի տեքստը 1074
արտաքսում
կոլեկտիվ, դրա արգելումը 1048-51, 1082
քաղաքական ապաստան որոնողներ 1048-51
ընթացակարգային երաշխիքներ 1053-54, 1028
արգելումը 1048
քաղաքական գործունեություն, սահմանափակումներ ներքին հարցերում, բացասական մեկնաբանություններ 907-909
ԵԽ անդամի 907-909
կոնվենցիայի տեքստ 1074
առանց ներկայության, բացակայությամբ [in absentia] դատապարտում 1054-56

Թարգմանիչներ՝ Միեր Մանուկյան
Գոհար Ղանթարչյան
Արմեն Այվազյան
Անահիտ Գրիգորյան

Խմբագիր՝ Անահիտ Հարությունյան

Տպագրված է «Բավիղ» ՍՊԸ տպարանում
Թուղթը՝ Օֆսեթ 1/16, 73.25 տպագրական մամուլ
Տպաքանակը՝ 1000
Հասցե՝ ք. Երևան, Կ. Ուլնեցու 68
Հեռ.՝ (37410)20-80-85
E mail: bavigh@mail.ru
www.bavigh.am